ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (նախագահ), ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ (փոխնախագահ-գլխ. խմբագիր),
ԼԵՆՍԵՐ ԱՂԱԼՈՎՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ, ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ,
ՌԱԴԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀՐԱՆՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ, ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ, ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2019

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

ԳԻՏԱԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ (հատորի պատասխանատու), ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ, ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՄԵՆ ԲՈՒԴԱՂՅԱՆ, ՌՈՒԶԱՆ ԵՍԱՅԱՆ, ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ, ԺԱՆՆԱ ՋՈՒՐԱԲՅԱՆ, ՎԱԼԻԴԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, ԾՈՎԻՆԱՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ԱՆԻ ՄՈՒՇԵՂՅԱՆ, ԱՍՏՂԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ, ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ, ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒԽԿՅԱՆ, ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ, ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ, ԱԼԻՆԱ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 78:030
ԳՄԴ 85.31+92
Հ 240

Տպագրված է պետական պատվերով

Հ 240 Հայ երաժշտության հանրագիտարան/ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր) և ուրիշներ, -Եր.: «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն», 2019, 712 էջ:

ՀԱՏՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ

Պատասխանատու քարտուղար՝ Հասմիկ Գուլակյան

Արվեստի և ճարտարապետության խմբագրությունը
Վալիդա Մելքումյան (վարիչ), ավագ գիտխմբագիրներ՝ Անի Մուշեղյան, Լուիզա Առաքելյան, Գոհար Շագոյան

Բառացանկի, մատենագիտության և սրբագրության բաժինը
Գայանե Դրացյան (վարիչ), Օֆելյա Միքայելյան (ավագ գիտխմբագիր-ոճաբան), Ժանետա Սարգսյան (ավագ գիտխմբագիր-մատենագետ), Շուշանիկ Դուրգարյան (ավագ սրբագրիչ), Լուսինե Մաթևոսյան (սրբագրիչ)

Համակարգչային բաժինը
Աննա Ղազարյան (վարիչ), Գայանե Աղամալյան, Մարինե Այունց, Մարինե Բեյբության, Աղավնի Ժամկոչյան, Անահիտ Յայլոյան

Պատկերների մշակումը՝ Անդրանիկ Գրիգորյանի

Կազմը՝ Արամ Ուռուտյանի

Տեքստը շարվել է Էդիկ Ղաբուզյանի «GHEA Narek Serif» տառատեսակով:

ՀՏԴ 78:030
ԳՄԴ 85.31+92

ISBN 978-5-89700-047-0

© Հայկական հանրագիտարան. հրատ., 2019

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Հայ երաժշտության հանրագիտարանը» առաջինն է հայ իրականության մեջ, որն ամփոփում է հայ երաժշտարվեստի սկզբնավորումն ու զարգացումը, նրա առանձնահատկություններն ու նվաճումները, նաև ստեղծագործական ու կատարողական արվեստների նշանավոր գործիչների կարևորագույն ձեռքբերումներն ու ավանդույթները և այլն: Հանրագիտարանը կազմվել է «Հայկական սովետական հանրագիտարանի» (հ. 1–12+1, 1974–87), «Հայկական համառոտ հանրագիտարանի» (1990–2003), «Ով, ով է. հայեր» (2005–07) կենսագրական հանրագիտարանի և այլ բառարանային ու հանրագիտական գրականության համապատասխան նյութերի համակողմանի օգտագործումով, որոնք համալրվել են վերջին տարիներին հայ երաժշտարվեստում տեղի ունեցած կարևոր փոփոխություններով ու իրադարձություններով:

Հանրագիտարանը ներառում է տարբեր ծավալների (համընդգրկունից մինչև համառոտ տեղեկատվական) մասնագիտական հասկացություններ, կենսագրական և այլ հոդվածներ:

Զգալիորեն ընդարձակ են պատմատեսական (մասնավորապես՝ հայ հոգևոր երաժշտությանը վերաբերող) հոդվածները, որոնք ընդգրկում են տվյալ հարցի պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը՝ վերջին շրջանի զարգացումներով:

Հայ երաժշտության դասականների կենսագրություններն առանձնանում են ազգային ու համաշխարհային երաժշտության մեջ նրանց ունեցած դերի շեշտադրումով և լավագույն գործերի համառոտ վերլուծություններով:

Համեմատաբար համառոտ հոդվածներով են ներկայացված հայ երաժշտության և երաժշտարվեստի զարգացման մեջ նկատելի վաստակ ունեցող գործիչները:

Փոքր՝ տեղեկատվական բնույթի են որոշակի ճանաչում ունեցող ստեղծագործողների կենսագրությունները, մյուսները՝ հիմնականում անսամբլներում, երգչախմբերում և այլուր ընդգրկված երգիչ-երգչուհիներ, երաժիշտներ և ուրիշներ, տրված են համապատասխան ոլորտի մասին ընդհանուր հոդվածներում:

Հանրագիտարանում մեծ տեղ է հատկացված երաժշտական գործիքներին, գործիքներ պատրաստող վարպետներին, նաև ՀՀ, Սփյուռքի երաժշտական (թատրոններ, ընկերություններ, համերգային կազմակերպություններ և այլն), ուսումնական և գիտական հաստատություններին,

երաժշտական կոլեկտիվներին (երգչախմբեր, նվագախմբեր ևն), երաժշտական մամուլին ու գրականությանը: Ներկայացված են հանրապետական երաժշտական փառատոները, մրցույթները, մրցանակաբաշխությունները: Հիշատակվում է նաև հայ երաժիշտների մասնակցությունը տեղական և միջազգային մրցույթներին:

Հանրագիտարանն ստեղծվել է հանրապետության երաժիշտ-մասնագետների համակողմանի աջակցությամբ, առանձին հարցեր քննարկվել են Հայաստանի կոմպոզիտորների միությունում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Նյութի զգալի մասը մասնագիտական փոխընթերցման է ենթարկվել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում՝ արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանի ղեկավարությամբ: Նրանց և մյուս բոլոր աջակիցներին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Հոդվածների զգալի մասը պատկերազարդ է՝ նոտային օրինակներ, աղյուսակներ, սխեմաներ և այլն, որոնք էապես լրացնում են ներկայացված նյութը:

Հանրագիտարանը նախատեսված է երաժիշտների, տեսաբանների, մանկավարժների, ուսանողների, նաև երաժշտասեր ընթերցողների համար:

«Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»

Ա

Ա ԿԱՊԵԼԼԱ (իտալ.՝ a cappella – ինչպես *կապելլայով*, վաղ շրջանում՝ լատ.՝ a capella, alla capella), առանց նվագակցության բազմաձայն խմբերգեցողությունը կամ մեներգեցողությունը (սկզբնապես՝ գործիք. նվագակցությամբ), նաև այդպիսի կատարման համար գրված ստեղծագործությունը, երաժշտ. գրության այդօրինակ եղանակն ու ոճը: Ա կ.՝ որպես խմբերգ. արվ-ի ոճ, սկզբնավորվել է միջնադարում՝ եղել պաշտամունք. բազմաձայն երաժշտության հիմնական ոճերից: Ծաղկել է Վերածննդի նիդեղանդ. (Ժ. Դեպրե, Օ. Լասսո) և հռոմեական (Ջ. Պալեստրինա և ուր.) դպրոցների վարպետների (կիրառել են միայն դիատոնիկ ձայնակարգեր, խուսափել փոքր տևողությամբ հնչյուններից ևն) շնորհիվ: Եզրույթը շրջանառվել է XVII դ-ի վերջից: Ա կ. ոճը տարածվել է ինչպես մասնագիտացված, այնպես էլ ժող., նաև աշխարհիկ երաժշտության մեջ, Վերածննդի շրջանի կոմպոզիտորների գործերում, առավելապես՝ *մադրիգալներում*:

ՀԱԵ-ում կիրառվում է բացառապես խմբերգ. արվ-ի Ա կ. երգեցողությունը՝ Ք. Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի Պատարագներ, մեներգեր ու խմբերգեր («Գարուն ա», «Կալի երգ», «Առավոտուն բարի լուս», «Սիփանա քաջեր» ևն): Ա կ. խմբերգեր են գրել Ա. Հարությունյանը, Գ. Չթչյանը, Է. Հովհաննիսյանը, Է. Հարությունյանը, Ս. Աղաջանյանը, Տ. Մանսուրյանը, Ռ. Պետրոսյանը, Ե. Երկանյանը, Վ. Աճեմյանը, Վ. Բաբայանը, Կ. Պետրոսյանը, Վ. Շարաֆյանը, Ա. Ղազարյանը, Ա. Ազիզյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հակոբջանյանը, Գ. Բադալյանը, Հ. Մազլումյանը և ուր.:

ԱԲԱԼՅԱՆ Բորիս Գեորգիի (ծ. 28.10.1947), խմբավար, դիրիժոր: ՌԴ արվ. վաստ. գործիչ (2005): Ավարտել է Լենինգրադի Մ. Ի. Գլինկայի անվ. խմբերգ. ուսումնարանը, նաև կոնսերվատորիան և ասպիրանտուրան: 1973-ից դասավանդում է Լենինգրադի կոնսերվատորիային կից երաժշտ. ուսումնարանում (դիրիժորություն): 1987-ին հիմնադրել է «Արվեստի օրենքով» (“Lege Artis”) կամեր. երգչախումբը, որը մի շարք միջազգ. մրցույթների դափնեկիր է:

ԱԲԱՋՅԱՆ Աշոտ Արամի (22.04.1922, Ալեքսանդրապոլ–04.03.1957, Կիև), ֆագոտահար, մանկավարժ: Սովորել է ԵՊԿում (1946–48, Ա. Գալստյանի դասարան), ավարտել ՄՊԿ (1952, Ի. Ի. Կոստլանի դասարան): 1945–48-ին՝ ԵՕՔԹ, 1948–53-ին՝ Մոսկվայի մարզի ֆիլհարմոնիայի, 1953–1957-ին՝ Կիևի ՕՔԹ սիմֆ. նվագախմբերի մենակատար: 1955–57-ին դասավանդել է Կիևի կոնսերվատորիայում:



Բորիս Աբաջյան

Երիտասարդների և ուսանողների համաշխ. 2-րդ (3-րդ մրց., 1949, Բուդապեշտ), 3-րդ (1951, Բեռլին) փառատոների և «Պրահայի գարուն» միջազգ. մրցույթի (Ա. Ռեյխի անվ., 1953, Պրահա) 1-ին մրց-ներ:

Աշոտ Աբաջյան

Գրկ. *Барсамян А., Из истории Ереванской государственной консерватории им. Комитаса, Музыкальная Армения, № 2, 2000; Маилян Г., Фагот в Армении, Е., 2009.*

ԱԲԱՋՅԱՆ Ելենա Ավետիքի (29.05.1922, Թիֆլիս–2015, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: 1926-ից ապրել է Լենինականում, ստացել է սկզբն. երաժշտ. կրթություն: 1934-ին մասնակցել է պատանի շնորհալիների հանրապետ. օլիմպիադային (1-ին մրց.): 1939–40-ին սովորել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1945, Ռ. Անդրիասյանի դասարան): 1945-ից դասավանդել է ԵՊԿ դաշնամուրի բաժնում (պրոֆ.՝ 1992-ից), միաժամանակ, 1947–52-ին՝ Երևանի Ա. Սպենդիարյանի, 1950–2006-ին՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցներում: 1970-ից՝ «Երաժիշտ» թերթի խմբ.: Կազմել և խմբագրել է հայ կոմպոզիտորների դաշնամուր. ստեղծագործությունների մի շարք ուս. ձեռնարկներ, հեղինակ է մեթոդ. ձեռնարկների:

Ելենա Աբաջյան

Մենահամերգներով հանդես է եկել նվագախմբերի հետ:

ԱԲԱՋՅԱՆ Հրաչյա Բագրատի (1919, Երևան–1990, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է ՄՊԿ (1947, Կ. Գ. Մոստրասի դասարան): 1947-ից՝ Սպենդիարյանի անվ. քառյակի, 1953–63-ին՝ ԵՊԿ եռյակի ջութակահար: 1950–90-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1972-ից, ամբիոնի վարիչ՝ 1966–78-ին): Հեղինակ է (Ա. Շամշյանի հետ) ջութակահարների համար ձեռնարկի (3 պրակ, 1961, 1966, 1968):

ԱԲԲՐԵՎԻԱՏՈՒՐԱ (իտալ.՝ abbreviatura – կրճատում), կրճատող, նոտագրությունը պարզեցնող նշաններ երաժշտության մեջ: Առավել գործած. նշաններից է ռեպրիզը՝ երաժշտ. ստեղծագործության կամ նրա մասերի, հատվածների, անգամ՝ տակտերի սկզբում և վերջում գրառվող կրկնության նշան:

Վոլտա



Ռեպրիզ

Երբ ստեղծագործության որևէ հատված կրկնվում է նույնությամբ, ապա նշանը գրառվում է կրկնվող հատվածի սկզբում և վերջում:

Երբ ստեղծագործության կրկնվող հատված պետք է կատարել այլ վերջավորությամբ, ապա հատվածի վերջում գրվում է վոլտա (իտալ.՝ volta – կրկին, շրջել), որը ցույց է տալիս թե՛ առաջին, թե՛ երկրորդ վերջավորությունները:

ԵՐԳԱՀԱՅՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ
ՀԱՐ ՈՐԴԱՒՔ ԵՐԻՒ ՀԱՅ ԿԱՐԴԻ ԽՒԱՄԱՒԱԻՒ
ՄԵՏԻ ՊԱՏՇԱՃ ԵՒ ՀԱՅՈՒՄՆ ՅՈՒՐՑ
ՏՒԱՌ ԵՒ
ԵՐԿՈՒՐ ՅՈՒՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ
Դ'ԵՂՅՈՒ ԱՄՊԱՐՔ

Է. Արգարի «Պատարագամատոյց» գրքի (1920) փիփղոսաթերթը

Երբ երաժշտ. ստեղծագործությունը բաղկացած է 3 հատվածից, որոնցից 3-րդը 1-ինի կրկնությունն է, ապա այն նորից գրառելու փոխարեն 1-ին հատվածի վերջում գրում են Fine (իտալ.՝ fine – վերջ), իսկ 2-րդի վերջում՝ Da capo al Fine (իտալ.՝ կրկնել սկզբից մինչև Fine բառը):

Կրկնվող հատվածի սկիզբը երբեմն ցույց է տրվում 𝄋 (իտալ.՝ segno–ազդանշան) նշանով: Այդ դեպքում երաժշտ. հատվածի վերջում, որից հետո անհրաժեշտ է կատարել կրկնվող հատվածը, նշվում է Dal segno (իտալ.՝ կրկնել ազդանշանից):

Գործածական են նաև տակտը կրկնող (օր.՝ 1), տակտի մեջ մի խումբ նոտաներ կրկնող (օր.՝ 2), ձայներն օկտավայով տեղափոխող և օկտավան կրկնապատկող (տրեմոլո, մելիզմներ) և այլ նոտագր. նշանները:

Օր. 1

Օր. 2

Ա. կիրառվում է նաև երաժշտ. տերմինները (օր.՝ crescendo – cresc., Pedal – Ped կամ P, Tonica – T ևն), գործիքների անվանումները (օր.՝ flauto – fl, Contrabassi – C-b) համառոտագրելիս:

ԱԲԳԱՐ (ԱԲԳԱՐՅԱՆ) Էմի Հարությունի (29.10.1863–1942, Կալկաթա), երաժշտագետ, մանկավարժ, խմբավար: Երաժշտ. կրթությունը կատարելագործել է Անգլիայում և Գերմանիայում: 1880-ական թթ-ին վերադարձել է Կալկաթա, զբաղվել հայ հոգևոր երաժշտության ուսումնասիրությամբ: Հեղինակ է երաժշտարվ-ին (այդ թվում՝ հայ երաժշտությանը) վերաբերող հոդվածների, որոնք հրապարակվել են եվրոպ. մամուլում: Եվրոպ. նոտագրությամբ ձայնագրել և քառաձայն երգեցողության համար ներդաշնակել է հայ հոգևոր երգարվ-ի Նոր Ջուղայի (հնդկահայերի) ավանդույթը ներկայացնող երգասացությունները, որոնք առանձին հատորներով հրատարակվել են 1896–1920-ին Կալկաթայում և Լայպցիգում: Հատորները ներառում են Սբ Պատարագի, Ավագ շաբաթվա, Սբ Ծննդյան և Սբ Զատկի հոգևոր երգերը և այլ հարակից նյութեր: Բոլոր ժող-ներում բնագրային տեքստերը ներկայացված են անգլ. թարգմանությամբ և տառադարձությամբ: 1898-ին Կալկաթայի Մարդասիր. ճեմարանում հիմնադրել է երգչախումբ (ղեկավարել է մինչև 1930-ական թթ.), դասավանդել հայ հոգևոր երաժշտություն և եվրոպ. երաժշտության

տեսություն: Ա. իր գրառած Նոր Ջուղայի Պատարագի մեղեդիների հիման վրա ստեղծել է բազմաձայն մշակումներ, որոնց մեծ մասը պահպանվել է սևագիր տարբերակներով:

Երկ. *Պատարագամատոյց զոր օրինակ երգի ըստ կարգի ի ժամանակի Մեծի պահոց եւ յառտս փօնից, գրեալ ըստ արդի ձայնագրութեան յէմի Արգարէ, Կալկաթա, 1896/97: Ձայնագրութիւն հինգ ժամերգութեանց Ասագ շաբաթու. համաձայն կանոնաց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայոց, գրեալ ըստ արդի ձայնագրութեան յէմի Արգարէ, Լայպցիգ, 1902: Երգաբանութիւնք Ճրագալոյցի Ծննդեան եւ Ջատկի եւ կարգի ջուր օրհնելոյ Ծննդեան. համաձայն կանոնաց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայոց, գրեալ ըստ արդի ձայնագրութեան յէմի Արգարէ, Լայպցիգ, 1908: Պատարագամատոյց զոր օրինակ երգի ըստ կարգի ի ժամանակի Մեծի պահոց եւ յառտս փօնից, մասք Ա–Գ (երկրորդ տպագրութիւն ընդարձակեալ), Լայպցիգ, 1920:*

Գրկ. *Գ ու շ ա կ ե ա ն Թ., Ամրողջ երկեր, հ. Ջ, Հնդկահայք, Երուսաղէմ, 1941, Գ ա լ ս ք յ ա ն Ջ., Հայ երաժշտության նվիրյալը, Հայրենիքի ձայն, 1989, մարտի 29: Բ ր ու տ ե ա ն Յ., Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996: Կ ո մ ի տ ա ս, Երկերի ժողովածու, հ. 8, Ե., 1998: Ա մ ի ր ա ղ յ ա ն Գ., Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց երգվածքում, Ե., 2016: S e t h M. J., Armenians in India, Calcutta, 1937.*

Գայանե Ամիրաղյան

ԱԲԳԱՐՅԱՆ Սեպուհ Լևոնի (12.06.1930, Նիկոզիա–05.08.2014, Նիկոզիա), դիրիժոր, կոմպոզիտոր, երգիչ, ռադիոհաղորդավար: Վաղ տարիքում ընտանիքի հետ տեղափոխվել է Բեյրութ, սովորել է Սուրբ Նշան դպրոցում, աշակերտել Էդուարդ Տարոնյանին և Բարսեղ Կանաչյանին: 1943–ից ապրել է Հալեպում. ավարտել է Մելգոնյան կրթ. հաստատությունը (1954), ապա ուսումը շարունակել է Փարիզում: Վերադառնալով Կիպրոս՝ աշխատել է վարժարանում, հիմնադրել հայկ. ռադիոհաղորդում, որտեղ աշխատել է շուրջ 46 տարի: 2000–14–ին՝ «Գոհար» սիմֆ. նվագախմբի և երգչախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: Հեղինակ է օրատորիաների, երգերի, կամեր. և սիմֆ. երկերի, որոնք կատարվել են Կիպրոսում, Լիբանանում, ԱՄՆ–ում, Տոկիոյում, Փարիզում և այլուր:

ԱԲՈՎՅԱՆ Մելանյա Հարությունի (ծ. 07.05.1944, ք. Ալավերդի), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): Ավարտել է ԵՊԿ (1972): 1972–ից՝ ՀԽՍՀ հեռուստառադիոյի, 1974–ից՝ նաև Հայֆիլհարմոնիայի մեներգչուհի. երգացանկում՝ արիաներ հայ, ռուս և արևմտաեվրոպացի դաս. կոմպոզիտորների օպերաներից, ռոմանսներ, երգեր, ժամանակակից հայ կոմպոզիտորների վոկալ շարքեր, միջնադար. տաղեր ու շարականներ: Հավաքել և մշակել է ժող. երգեր: Ա–ի կատարմամբ հայտնի են «Ծամթել», «Նարոյ–նարոյ», «Ձանիման», «Նանի բալամ», «Մի լա մայրիկ» և այլ երգեր: 1988–ից ապրում է ԱՄՆ–ում:

Մելանյա Աբովյանը եղույթի պահին

Միջազգ. մրցույթների (1971՝ Մոսկվա, ժող. երգի միջազգ. կոնգրես, 1973՝ Վրոնեժ, Համամիութ. երգի մրցույթ, ոսկե մեդալ և 1–ին կարգի դիպլոմ, 1973՝ Բեռլին, Համաշխ. X փառատոն, ոսկե մեդալ և 1–ին կարգի մրց., 1974՝ Ալմաթի, Ասիայի և Աֆրիկայի երկրների VI փառատոն, լավագույն կատարողի դիպլոմ) դափնեկիր:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Արամ Լևի (ծ. 17.02.1960, Երևան), խմբագիր, հրապարակախոս, հաղորդավար, լրագրող, երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1988): Ավարտել է ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (1983): 1986–91–ին՝ ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ի գիտաշխատող, գիտ. քարտուղար, 1991–92–ին՝ «Ա1+» ստուդիայի, 1994–ից՝ «Առավոտ» թերթի գլխ. խմբագիր, 1992–94–ին՝ ՀՀ նախագահի մամուլի քարտուղար: 1998–ից վարում է «Ա1+»–ի «Բ. Տ.» հաղորդաշարը (2012–ից հեռարձակվում է «Արմնյուզ» հեռուստաալիքով): 2004–ին ղեկավարել է «Առավոտ» հեռուստաընկերությունը: 2011–ից աշխատում է «Շանթ» հեռուստաընկերությունում («Հորիզոն» լրատվ. ծրագիր): Դասավանդում է ՀՊՄՀ–ում: 2014–16–ին վարել է ՀՀ Հանր. հեռուստաընկերության «Արտկանոն» հաղորդաշարը:

Սեպուհ Աբգարյանը եղույթի պահին

Երևանի Սամուլի ակումբի ամենամյա մրց. (2002):

Երկ. *Գերմանական կվինտետ. Ազատ գրառումներ Բեթհովենի, Շուբերտի, Շումանի, Բրամսի և Բրուքների մասին, Ե., 2018:*

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Էդուարդ Ասլանի (22.05.1923, Թիֆլիս–20.12.1986, Երևան), կոմպոզիտոր, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1950, Ս. Բարխուդարյանի դասարան) և դաշնամուրի (Ա. Թուլաշվիլու դասարան)

Էդուարդ Աբրահամյան

Մեղեա Աբրահամյան

Մեղեա Աբրահամյանը երեսփի պահին

Մարինե Աբրահամյանը երեսփի պահին

բաժինները: 1951–53-ին կատարելագործվել է Մոսկվայում: 1961-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1982-ից):

Գրել է «Հայրենիքիս» սիմֆ. պոեմը (1950), «Պարային սյուիտ»՝ սիմֆ. նվագախմբի համար, դաշնամուր. գործեր՝ 2 կոնցերտ (1950, 1953), սոնատ (1954), 24 պրելյուդ (1972–76), վարիացիաներ, կոնցերտ. պիեսներ («Կոխ», 1961, ևն), կոնցերտ. սկերցո՝ շեփորի և դաշնամուրի (1957), «Ձոն բարեկամության»՝ երգչախմբի և նվագախմբի (1958), սկերցո՝ դաշնամուրի, ջութակի և թավջութակի (1976) համար, դաշնամուր. պիեսներ (1974), մանրանվագներ, երաժշտ. դրամաներ և այլ գործեր: Ռոմանսներից (60-ից ավելի) առավել ճանաչված են Ա. Իսահակյանի խոսքերով գրած «Ես երգիչ եմ», «Սև աչերեն», «Հայրենիքիս», «Գիշերն եկավ» ևն:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Մարինե Աբրահամի (ծ. 25.11.1951, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (2008): Ավարտել է (էքստեռն) Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը, ՄՊԿ դաշնամուրի բաժինը (1975, Յ. Ֆլիերի դասարան): 1975-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: 1989-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1999-ից): Կոմիտասի անվ. միջազգ. փառատոնի (2011, Գերմանիա) կազմակերպիչներից և գեղ. ղեկ.: Ելույթներ է ունեցել դիրիժորներ Վ. Բ. Դուդարովայի, Պ.Լ. Կոգանի, Կ. Յամադայի, Դ. Դ. Շոստակովիչի, Հ. Չեքիջյանի, Դ. Խանջյանի, Ն. Արմանի, Ա. Ղարաբեկյանի ղեկավարած նվագախմբերի հետ. երկացանկում՝ դաս., ռոմանտիկ, իմպրեսիոնիստ և արդի կոմպոզիտորների գործերից: Հանդես է եկել նաև անսամբլ. կատարումներով՝ Մ. Վ. Պլետնյովի, Յ. Ա. Բաշմետի հետ: Ճանաչվել է «Համաշխարհային դաշնամուրային գրականության ընտրանի», «Ձոն Յ. Ֆլիերին» համերգաշարերով:

Միջազգ. մրցույթների դափնեկիր (1974, Չեխիա, 1979, Իսպանիա):

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Մեղեա Վարդանի (ծ. 08.03.1932, Երևան), թավջութակահարուհի: ՀՀ ժող. արտիստ (1980): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1950, դասատուներ՝ Կ. Խիզանյան, Լ.Գրիգորյան), ՄՊԿ (1956, Մ. Լ. Ռոստրոպովիչի դասարան): 1956-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: 1957-ից դասավանդել է Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1962-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1981-ից): Հայ կոմպոզիտորների բազմաթիվ երկերի առաջին կատարողն է:

Ա-ի կատարող. ոճն առանձնանում է հուզականությամբ, քնարականությամբ, ինչերանգի բազմերանգությամբ և տեխ. վարպետությամբ: Նպաստել է ազգ. կատարող. դպրոցի զարգացմանը: Մենահամերգներով շրջագայել է Ռումինիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իսլանդիայում, Արգենտինայում, Սիրիայում, Կորեայում և այլուր: Կազմել և խմբագրել է «Թավջութակի սոնատներ» (նոտա, 1987) ժող-ը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1973), Հ. Վիհանի անվ. թավջութակահարների միջազգ. մրցույթի (2-րդ մրց., 1955, Պրահա) դափնեկիր, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2012):

Երկ. *Կատարողի մտորումներ: Հուշեր, Ե., 2014:*

Գրկ. *Բարսամյան Ա., Սարյան Ա., Մեղեա Աբրահամյան, Ե., 2000:*

ԱԳՈԳԻԿԱ (< հուն. ἀγωγή – տանել), անտիկ երաժշտության տեսության մեջ՝ շարժման արագություն, տեմպ, ռիթմից (նաև չափից) աննշան շեղումները (արագացում, դանդաղեցում, ձայնի սովորականից ավելի երկար պահում ևն)՝ երաժշտ. ֆրազներն առավել արտահայտիչ հնչեցնելու համար, որոնք չեն նշվում նոտաներում:

«Ա.» հասկացությունը ներմուծել է երաժշտության տեսաբան և պատմաբան Հ. Ռիմանը 1884-ին՝ հիմնական սկզբունք համարելով նաև պաուզայի տևողության մեծացումը (Ա-ի շեշտադրում) թույլ մասերի հաշվին: Սակայն գործնականում հաճախ երկարացվում է դրանց տևողությունը: Տես նաև *Շեշտ*:

ԱԴ ԼԻԲԻՏՈՒՄ (լատ.՝ ad libitum – ըստ ցանկության, ըստ հայեցողության), 1. նշում նոտաներում, որով ստեղծագոր-

ծության տվյալ հատվածը կարող է մեկնաբանվել կատարողի հայեցողությամբ՝ փոխել տեմպը և նրբերագները, հանել երաժշտ. որևէ հատված (օր.՝ Ա. լ. Կադենցիա) կամ նշան (օր.՝ ֆերմատա) ևն: 2. Նշում տիտղոսաթերթում, որը հնարավորություն է տալիս ստեղծագործությունից հանել նոտաներում նշած որևէ երաժշտ. գործիք (գործիքներ): Ա. լ. իր նշանակությամբ հակադիր է «օբլիգատո» (լատ.՝ obligatus – պարտադիր, անհրաժեշտ) եզրույթին:

ԱԴԱՄՅԱՆ Աննա Ժորիկի (ծ. 05.04. 1980, Երևան), դաշնակահարուհի: Արվեստագիտ. թեկնածու (2013), դոցենտ (2017): Ավարտել է ԵՊԿ (2003) և ասպիրանտուրան (2012): 2000-ից՝ «Հովեր» պետ. կամեր. երգչախմբում: 2005–08-ին դասավանդել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. քոլեջում, 2012-ից՝ ՀՊՄՀ-ում: Որպես դաշնակահարուհի՝ հանդես է եկել մենեղգիչների և երգչախմբերի, գործիք. անսամբլների հետ: 2007–08-ին մենահամերգներով շրջագայել է Իտալիայի քաղաքներում:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ դաշնամուր. արվ-ի պատմությանը, երաժշտ. կրթությանը, մշակութ. առնչություններին: Կազմել է «Հայ երաժշտության պոլիֆոնիկ նմուշներ» (2016) ձեռնարկը:

Երկ. *Տիգրան Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործությունը, Ե., 2015:*

ԱԴԱՄՅԱՆ Արշակ Աբգարի [22.04(04. 05).1884, Բաքու–17.02.1956, Երևան], գեղագետ, երաժշտագետ, կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): ***Ադամյան*** քույրերի եղբայրը: Սովորել է Բեռլինի Յ. Շտեռնի կոնսերվատորիայի դաշնամուրի և կոմպոզիցիայի ֆակ-ներում (1904–06), ավարտել Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբանության ֆակ-ը (1910): 1921–24-ին՝ Թիֆլիսի Հայարտան նախագահ, 1924–26-ին՝ ԵՊԿ տնօրեն, 1926–36-ին՝ Անդրկովկասի Աշխ-ի կենտր. ինստ-ի արվ-ի հարցերով խորհրդատու, 1936–43-ին՝ Լենինգրադի թատրոնի և երաժշտության ինստ-ի գիտ. քարտուղար, միաժամանակ՝ կոնսերվատորիայի տես-կոմպոզիտոր. ֆակ-ի դեկան, 1950–56-ին դասավանդել է ԵՊԿ-ում և ԵԳԹԻ-ում:

Ուսումնասիրել է գեղ. պատկերավոր մտածողության գործընթացը, անդրադարձել հին հայկ. գեղագիտ. մտքի յուրատիպությանը: Հեղինակ է «Գեղագիտական հայացքները Միջնադարյան Հայաստանում» (ռուս., 1955) աշխ-յան, եվրոպացի մի շարք գեղագետների մասին ակնարկների: Գրել է դաշնամուր. քայլերգ (1934), հայկ. օպերաների լիբրետտոներ:

Երկ. *Статьи об искусстве, М., 1961; Эстетика Рамо (1683–1764), Вопросы теории и эстетики музыки, вып. 2, Л., 1963; Статьи по эстетике, Е., 1967; Вопросы эстетики и теории искусства, М., 1978.*

Գրկ. *Фарбштейн А., Аршак Адамян, Е., 1989.*



Արշակ Ադամյան

ԱԴԱՄՅԱՆ Գուրգեն Լևոնի [07(20).12. 1911, Օդեսա–28.07.1987, Երևան), թավջութակահար, կոմպոզիտոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1968): Ավարտել է ԵՊԿ (1932, Լ. Էդելմանի դասարան) և ՄՊԿ (1937, Ս. Մ. Կոզոլուպովի դասարան) թավջութակի բաժինները, ասպիրանտուրան (1939, ղեկ.՝ Ե. Մ. Գուզիկով): 1932-ից հանդես է եկել մենահամերգներով, 1932–55-ին՝ Սպենդիարյանի անվ. քառյակի թավջութակահար: 1939-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1972-ից): Ստեղծագործությունն առանձնանում են քնարականությամբ և ընդգծված ազգ. կոլորիտով:

Գուրգեն Ադամյան

Գրել է «Արագած պար» (1949)՝ լար. քառյակի, կոնցերտներ (1961–70)՝ 2 թավջութակի և նվագախմբի, «Ֆանտազիա» (1965)՝ թավջութակի և դաշնամուրի, սյուիտ (1967)՝ թավջութակի, կոնտրաբասի, դաշնամուրի, հարված. գործիքների և անսամբլի համար, «Կոնցերտինո» (1970), սոնատ-պոեմ (1973), «Արտաշատի պար» (1950), «Շիրակի» (1952), «Քնարական երգ», «Գարնանային», «Հիշողություն» (երեքն էլ՝ 1955), «Էլեգիա» (1958), «Տոնական» (1980), «Էսկիմոսյան մեղեդիներ» (1979)՝ լար. քառյակի համար, և այլ գործեր: Մշակել է ժող. երգեր ու պարեր, թավջութակի և դաշնամուրի համար փոխադրել հայ կոմպոզիտորների կամեր-գործիք. երկերից: Հեղինակ է թավջութակի և դաշնամուրի պիեսների ժող-ի:

Ադամյան քույրեր

ԱԴԱՄՅԱՆ քույրեր, դաշնակահարուհիներ, 1. Հեղինե Աբգարի Ա. (ամուսնական ազգանունը՝ Հայրանյան, 1881, Բաքու–1960, ք. Լեգնից՝ Գերմանիա): 2. Եվգինե Աբգարի Ա. (ամուսնական ազգանունը՝ Գարագաշյան, 1883, Բաքու–1945, Փարիզ): Արշակ ***Ադամյանի*** քույրերը:

Ավարտել են Ժնևի երաժշտ. ակադ-ը (1904, Վ. Ռայնբերգի դասարան) և Բեռլինի Յ. Շտեռնի կոնսերվատորիան (1908, Մ. Կաուզեի բարձրագույն վարպետության դասարան): Զուգանվագով հանդես են եկել Արմ. Եվրոպայի և Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, Կ. Սեն-Սանսի, Կ. Ռայնեկեի, Ա. Ս. Արենսկու, Ս. Վ. Ռախմանինովի և ուր. ստեղծագործություններ՝ 2 դաշնամուրի համար: Նրանց կատարող. ոճն առանձնացել է բարձր վարպետությամբ, ոգեշունչ ու նրբագեղ նվագով, նուրբ երանգավորմամբ, հախուռն դինամիկայով, անսամբլ. ներդաշնակությամբ:

Գրկ. *Հակոբյան Հ., Ադամյան քույրեր: Կյանքի և երաժշտական գործունեության մասին, Ե., 1973: Druk von S. M. Geidel., Die Schwestern Hulana und Eugunie Adamyan, Lpz.*

Հատված Արամ Խաչատրյանի «Սպարտրակ» բալետի «Ադաջոյից»

ԱԴԱԶՈ (իտալ.՝ adagio – դանդաղ, հանդարտ), 1. երաժշտ. դանդաղ տեմպ, լենտոյից, լարգոյից և գրավեից քիչ ավելի



արագ (րոպեում՝ մետրոնոմի 57–76 հարված): Ըստ գերմանացի կոմպոզիտոր Յ. Յ. Քվանցի (1752)՝ Ա. նախապես նշանակել է հանդարտ: Ինչպես երաժշտ. ստեղծագործության մեջ կատարման համար նշված այլ ցուցումներ, այնպես էլ Ա. գրվում է երաժշտ. երկի սկզբում: Մինչև XIX դ. Ա. նշանակել է, որ երաժշտ. տվյալ հատվածը պետք է նվագել ստեղծագործության նախն. տեմպից ավելի դանդաղ, և ցայսօր համարվում է երաժշտ. դանդաղ տեմպ:

Ա-ով գրված երաժշտ. փոքրածավալ ստեղծագործությունը կամ բազմամաս երկի մասը կոչվում է ա դ ա ջ ե տ տ ո՝ փոքր Ա., որը, ի տարբերություն Ա-ի, առավել աշխույժ է: 2. Սովորաբար՝ Ա-ով գրված խոհաքնար. երաժշտ. պիեսի կամ բազմամաս ստեղծագործության որևէ մասի անվանումը (եթե գործն այլ անվանում չունի): Ըստ կառուցվածքի՝ հիմնականում տրոհվում է A–B–A բաժինների: 3. Բալետում՝ հիմնականում դանդաղ, քնար. մենապար կամ զուգապար: 4. Դաս. պարի մասերից, որտեղ ներառված են դանդաղ վարժություններ: Ա. հաճախ գործածվում է որպես այլ եզրույթների (Ա. ասսայի, Ա. կանտաբիլե ևն) լրացում:

ԱՋԱՑ ՁԵՎ, երաժշտ. կառուցվածք, ընդհանուր գծերով տիպ. ձևերից որևէ մեկին հարող կամ դրա էապես փոփոխված տարբերակը: Որոշ դեպքերում Ա. ձ. են անվանում նաև ոչ սովորական կառուցվածքով ձևերը: Ա. ձ-երը հիմնականում գործածում են խոշոր կտավի գործերում (պոեմ, բալլադ, ֆանտազիա ևն). այն կոմպոզիտորի յուրօրինակ մտահղացումն է, որի հետևանքով ողջ կազմավորման բաղադրիչ (հաճախ՝ հակադիր) մասերը զարգանում են առավել միաձույլ: Հաճախ զարգացման գլխ. դրամատուրգ. շեշտը կրում է ռեպրիզը կամ կոդան: Ստեղծագործության բովանդակությունը, ներքին դրամատուրգիան անմիջականորեն պայմանավորում են ձևակազմավորման գործընթացը՝ որոշակիորեն փոփոխելով և հստակեցնելով ձևի արտաքին ուրվագիծը: Որքան յուրօրինակ է մտահղացումը, այնքան անհատականացված է ձև-սխեման, որով պայմանավորված է տվյալ երկի գեղ. արժեքը:

ԱՋԱՑ ՈՃ, 1. նեղ իմաստով՝ արևմտաեվրոպ. պրոֆեսիոնալ պոլիֆոնիկ երաժշտությունը XVII դ-ից: Ա. ո-ում գերիշխող մաժոր և մինոր ձայնակարգ. համակարգերի ձայնակարգահարմոնիկ և հնչերանգ. առանձնահատկությունները համադրված են ***խիպ ոճի*** ընդհանուր օրինաչափութ-

յուններին (թռիչքի լրացումը սահուն շարժումով կամ թռիչքին հակառակ ուղղությամբ, թռիչքի նախապատրաստում սահուն շարժումով՝ թռիչքին հակառակ ուղղությամբ, միևնույն ուղղությամբ մաքուր կվարտա և մաքուր կվինտա քայլերից խուսափում, դիսոնանսների նախապատրաստումը և լուծումը, անցողիկ և օժանդակ հնչյունների կիրառումը, շարժումը զուգահեռ անկատար կոնսոնանսներով, զուգահեռ կատարյալ ինտերվալների՝ պրիմայի, օկտավայի, կվինտայի արգելումը ևն)։_Միաժամանակ՝ Ա. ո–ում որոշակիորեն նկատվում են ակորդների ֆունկցիոնալ հարաբերակցություններ, ազատորեն օգտագործվում են տարատեսակ թռիչքներ՝ բոլոր հնարավոր ինտերվալներով (վարընթաց և վերընթաց), միևնույն հնչյունի բազմակի կրկնումը:

Ա. ո–ի պոլիֆոնիայում դիսոնանսների և կոնսոնանսների փոխհարաբերությունը պայմանավորված է խիստ ոճում կիրառվող օրինաչափություններով: Զարգացած է նաև ռիթմիկ պատկերը, կիրառվում են տարբեր տևողությունների զուգակցումներ և համադրումներ, սուր ռիթմիկ բախումներ, սինկոպաներ, կետագծ. և լոմբարդ. ռիթմեր ևն: Ի տարբերություն խիստ ոճի՝ Ա. ո–ում դիսոնանսները լուծվում են կոնսոնանսների և՛ վերևի, և՛ ներքևի ձայներում ինչպես վերընթաց, այնպես էլ վարընթաց շարժմամբ՝ նախապատրաստված հապաղումներով՝ սահուն շարժմամբ ու թռիչքով, դիատոնիկ և խրոմատիկ անցողիկ և օժանդակ հնչյուններով, զուգահեռ անկատար կոնսոնանսներով (տերցիաներ, սեքստաներ, սեքստակորդներ). միաժամանակ անհրաժեշտ է խուսափել զուգահեռ և թաքնված պրիմաներից, օկտավաներից, կվինտաներից:

Ա. ո–ում մեղեդիների թեմաների պոլիֆոնիկ բնույթը պայմանավորված է «թաքնված պոլիֆոնիայի» (միաձայն մեղեդու ծավալումը տարբեր ռեգիստրներում, որը տարածության մեջ ստեղծում է մեղեդային գծերի պատրանք) առկայությամբ, որն առաջանում է հակառակ ուղղության հաջորդաբար թռիչքներից կամ մետրական ուժեղ մասերում հնչյունների մեղեդային կապի հետևանքով. այս 2 սկզբունքները հաճախ կարող են հանդես գալ միաժամանակ: «Ա. ո.» հասկացության (XIX դ–ի վերջից և XXI դ–ում) նոր ձայնակարգ–տոնայն. և մետրառիթմիկ առանձնահատկություններով պայմանավորված՝ առաջանում են բազմատոնալ, բազմաձայնակարգ., բազմաֆունկցիոնալ, բազմառիթմիկ և բազմամետրական կերտվածքներ: Գործնականում կիրառվում են զուգահեռ (դիսոնանս ու կոնսոնանս ինտերվալներով և ակորդներով) և ժապավենաձև բազմաշերտ շարժումներ:

Ա. ո–ում լայնորեն օգտագործվում են երաժշտ. տարբեր գործիքներ և խիստ ոճից սերող նմանակման ձևեր: 2. Պոլիֆոնիայի (կոնտրապունկտ) ուս. դասընթացի 2–րդ բաժինը:

Ա.ԶԱՐՅԱՆ Դավիթ Վրույրի (12.03. 1952, Երևան–29.03.2003, զոհվել է ավտովթարից, Բոստոն՝ ԱՄՆ), դաշնակահար, կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի, կոմպոզիցիայի (1975, Ա. Հարությունյանի դասարան) բաժինները: 1972–75–ին՝ ԵՌԹ երաժշտ. ղեկ., ապա հանդես է եկել ջազ. անսամբլներում: 1983–ին հիմնադրել է ջազ. եռյակ (դաշնամուր՝ Ա., կոնտրաբաս՝ Գևորգ Գևորգյան, հարված. գործիքներ՝ Գրիգորի Բալագյան), մասնակցել փառատոների: 1989–ից ապրել է ԱՄՆում: Դասավանդել է Բոստոնի «Բերկլի» երաժշտ. քոլեջում, Քեմբրիջի երաժշտ. դպրոցում, Փրովիդենսի «Բրաուն» համալսարանում ևն: Ելույթներ է ունեցել ԱՄՆ–ի առաջնակարգ համերգասրահներում, Գերմանիայում, Լեհաստանում, նաև Մոսկվայում:

Դավիթ Ազարյանը ելույթի պահին

Ճանաչված են Ա–ի «Ձոն Դենին», «Դիլիժանս», «Մայր ցամաք», «Ձոն ուսուցչին» և այլ ջազ. կոմպոզիցիաներ: Գրել է նաև կամեր–գործիք. երկեր, երաժշտություն՝ թատրոնի և կինոյի համար: Ձայնագրել է երաժշտ. ալբոմներ (1987, 1999):

Միջազգ. մրցույթների (1–ին մրց., 1976, Բաքու, 1988, Լիտվա) դափնեկիր:

Ա.ԶԲԱՐ Ա.ԴԱՄ [1816, գ. Փարաքար (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)–1844], աշուղ: Հորինել է սիրային, բարոյախրատ., երգիծ. երգեր ու դաստաններ՝ հայ., պարսկ. և թուրք.: Հայտնի են «Ասում ես դիմացի», «Քցել ես սրտիս մեջը», «Երգ ի վերա ավերման Ակոռի գեղջ», «Մեծ եւ Փոքր Մասիսներու վէճը», «Մի անիլ» երգերը: Նրան ճանաչել և գնահատել է Խաչատուր Աբովյանը:

ԱԶԳԱԿԻՑ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, տարբեր տոնայնությունների ֆունկցիոնալ ազգակցությունը, որը որոշվում է նրանց տոնիկաների փոխհարաբերությամբ և ընդհանուր ակորդների առկայությամբ: Տարբերում են տոնայնությունների ազգակցության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգերը:

Առաջին կարգի ազգակից են այն տոնայնությունները, որոնց տոնիկական եռահնչյունները տվյալ տոնայնության կազմում են: Յուրաքանչյուր մաժոր և մինոր տոնայնություն ունի առաջին կարգի 6 Ա. տ.:

Մաժորին 1-ին կարգի ազգակից տոնայնություններն են զուգահեռ մինորը, սուբդոմինանտ. և դոմինանտ. մաժորները՝ իրենց զուգահեռ մինորներով և հարմոնիկ սուբդոմինանտ. մինորը:



Մինորին 1-ին կարգի ազգակից են զուգահեռ մաժորը, սուբդոմինանտ. և դոմինանտ. մինորները՝ իրենց զուգահեռ մաժորներով և հարմոնիկ դոմինանտ. մաժորը:



Երկրորդ կարգի ազգակից են այն տոնայնությունները, որոնք տարբերվում են բանալու 2 նշանով և ունեն 2 ընդհանուր (ոչ տոնիկական ֆունկցիայի) եռահնչյուններ (կվինտային շրջանում նրանց միջև գտնվող տոնայնությունների տոնիկական եռահնչյունները): Յուրաքանչյուր տոնայնություն ունի 2-րդ կարգի ազգակից 4 տոնայնություն, որոնք տվյալ մաժորի կրկնակի դոմինանտ. և կրկնակի սուբդոմինանտ. մաժորներն են՝ իրենց զուգահեռ մինորներով, իսկ տվյալ մինորին՝ նեապոլյան ու դորիական սուբդոմինանտ. տոնայնությունները՝ իրենց զուգահեռներով: Այսինքն՝ մաժոր տոնայնությանը 2-րդ կարգի ազգակից են տոնիկայից մեծ սեկունդա վեր և վար մաժորները՝ իրենց զուգահեռ մինորներով (օր.՝ C-dur-ի համար՝ B-dur, g-moll, D-dur և h-moll), մինորի տոնայնությունը՝ տոնիկայից վեր և վար մինորները՝ իրենց զուգահեռ մաժորներով (օր.՝ a-moll-ին 2-րդ կարգի ազգակից են՝ h-moll, D-dur, g-moll և B-dur):

Երրորդ կարգի ազգակից տոնայնությունների խումբը միավորում է 8 տոնայնություն, որոնք ունեն 1 ընդհանուր եռահնչյուն միայն հարմոնիկ ձայնակարգում և տարբերվում են բանալու 3–5 նշանով: Մաժորի համար դրանք հետևյալներն են՝ տոնիկայից փոքր սեկունդա վեր մաժորը՝ իր զուգահեռ մինորով, փոքր տերցիա վեր մաժորը՝ իր զուգահեռ մինորով, նաև մեծ տերցիա վեր, փոքր սեկունդա վար, փոքր տերցիա վար և մեծ տերցիա վար մաժորները (օր.՝ C-dur-ին 3-րդ կարգի ազգակից են՝ Des-dur-b-moll, Es-dur-c-moll, E-dur, H-dur, A-dur և As-dur), մինորի համար՝ փոքր սեկունդա վար մինորը՝ իր զուգահեռ մաժորով, փոքր տերցիա վար մինորը՝ իր զուգահեռ մաժորով, մեծ տերցիա վար մինորը, փոքր սեկունդա վեր, փոքր տերցիա վեր և մեծ տերցիա վեր մինորները (օր.՝ a-moll-ին 3-րդ կարգի ազգակից են՝ gis-moll-H-dur, fis-moll-A-dur, f-moll, b-moll, c-moll, cis-moll):

Չորրորդ (հեռավոր) կարգի ազգակից տոնայնությունների խումբը միավորում է 5 տոնայնություն (չհաշված էնհարմոնիկ փոխարինումները), որոնք տոնիկաների բարդ ֆունկցիոնալ կապերի դեպքում թե՛ բնական, թե՛ հարմոնիկ ձայնակարգում չունեն ընդհանուր եռահնչյուն: Մաժորին 4-րդ կարգի ազգակից են՝ տոնիկայից եռատոն հեռավորության մաժորը՝ իր զուգահեռ մինորով, տոնիկական, սուբդոմինանտ. և դոմինանտ. տոնայնությունների համատերցիային մինորները (օր.՝ C-dur-ին 4-րդ կարգի ազգակից են՝ Fis-dur-dis-moll, cis-moll, fis-moll, gis-moll), մինորին՝ եռատոն հեռավորության մինորը՝ իր զուգահեռ մաժորով, տոնիկական, սուբդոմինանտ. և դոմինանտ. տոնայնությունների համատերցիային մաժորները (օր.՝ a-moll-ին 4-րդ կարգի ազգակից են՝ dis-moll-Fis-dur, As-dur, Des-dur, Es-dur):

Աննա Աասպրյան

ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, կիրառ. նշանակության երաժշտություն. օգտագործվում է հին ժամանակներից՝ բնակչությանը տեղեկություններ հաղորդելու կամ նրանց գործողությունները ուղղորդելու համար: Կատարվում են փող. (շեփոր, հեծելափող, հրետանափող, հետևակափող, նավատորմափողակ) և հարված. (տարբեր տրամաչափերի թմբուկներ, լիտավրներ) երաժշտ. գործիքներով: Ընդգրկում է որսորդ., հովվական, զինվոր., արարող., սպորտ. և այլ ազդանշաններ:

Ա. ե. լայնորեն օգտագործվում է զորավարժությունների, զինվոր. արարողակարգերի ժամանակ և կենցաղում: Ա. ե. նպաստել է զորահանդես. և զորայուն. քայլերգերի ձևավորմանը:

ԱԶԻԶՅԱՆ Աննա Էրզինելերի (ծ. 28.08.1965, ք. Աշտարակ), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (1994-ից): Ավարտել է Աշտարակի Ա. Այվազյանի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1980, դասատու՝ Ս. Ազարյան) և կոմպոզիցիայի (դասատու՝ Ռ. Ամիրխանյան), Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (1984, դասատու՝ Կ. Հարությունյան), ԵՊԿ կոմպոզիցիայի (1990, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1990-ից դասավանդում է Աշտարակի Ա. Այվազյանի անվ. երաժշտ. դպրոցում (1993–2014-ին՝ փոխտնօրեն): 2005-ին Աշտարակի Կարմրավոր եկեղեցուն կից հիմնադրել է «Զվարթունք» մանկ. երգչախումբը. երկացանկում՝ հոգևոր երգեր:

Գրել է դաշնամուր. պիեսներ, «Մտորում» (1984) ֆուգետան, «Երեք տաղ միջնադարյան բանաստեղծների խոսքերով» (1985), «Երկու տաղ Խաչատուր Կեչառեցու խոսքերով» (1986), «Վարուժանյան» (1985–86), «Կաթիլ մի արտոսր ի շիրիմ Դուրյանի» (1990), «Մայրական» (2001–03) և այլ խմբերգաշարեր, «Քառաձայն ֆուգա E dur կամ X մաժոր» (1987), խմբերգ. ստեղծագործություններ [«Աղոթք» (1988, ըստ Դ. Վարուժանի և Գրիգոր Աղթամարցու), «Տաղ ծննդյան» (2001, ըստ Գրիգոր Նարեկացու)], խմբերգ. ներկայացումներ [«Ձարդին խենթը» (1993), «Ջուգահեռ» (2005–08), «Պոչատ աղվեսը» (2011–13)], երգեր [«Քասախ» (1993, ըստ Գ. Գևորգյանի), «Հրաժեշտ այբբենարանին» (2002, ըստ Ս. Կապուտիկյանի), սկերցո՝ դաշնամուրի և ֆլեյտայի (երկուսն էլ՝ 1984), ռոնդո (1987)՝ կամեր. նվագախմբի, կոնցերտ. նախերգանք (1993)՝ դաշնամուրի և կամեր. նվագախմբի, «Հեյ ջան, տղերք» (1999, ըստ Հ. Թումանյանի)՝ մենակատարի, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, «Ձայնք ծնանին ի ձայնէ» (2011, ըստ Է. Ավետյանի)՝ խառը երգչախմբի համար:

Համամիութ. մրցույթի 3-րդ մրց. (1987, Մոսկվա), Կոմպոզիտորների 5-րդ համառուսաստան. «21-րդ դարի երգչախմբային լաբորատորիա» մրցույթի դիպլոմ (2012, Ս. Պետերբուրգ):

ԱԶՆԱՎՈՒՐ Շառլ [Ազնավուրյան Վաղինակ Միքայելի, 22.05.1924, Փարիզ – 01.10.2018, Մուրիես (Ֆրանսիա)], երգիչ, կոմպոզիտոր, բանաստեղծ, դերասան: Հայաստանի Ազգ. հերոս (2004): Աիդա *Ազնավուրյանի* եղբայրը: Ստեղծագործել է ֆրանս.: Վաղ տարիքում ծանոթ է եղել Սայաթ-Նովայի, հայ տաղերգուների, Օմար Խայամի ստեղծագործություններին: 1944-ին գրել է առաջին երգը՝ «Ես հարբած եմ»: 1946-ին ֆրանսիացի հանրաճանաչ երգչուհի Է. Պիաֆի հովանավորությամբ «Կոմպանիոն դը լա շանսոն» խմբի հետ համերգներով շրջագայել է Ֆրանսիայում և Շվեյցարիայում, 1953-ին Է. Պիաֆի հետ՝ Մարոկկոյում: Երգեր է գրել Է. Պիաֆի, Ժ. Բեկոյի, Է. Կոնստանտինի և ուր. համար: Համընդհանուր ճանաչման է արժանացել 1959-ին Փարիզի «Օլիմպիա» համերգասրահում ելույթից հետո: Իր նվագախմբով հանդես է եկել աշխարհի լավագույն բեմահարթակներում (Երևանում առաջին համերգը՝ 1964-ին):

Աննա Ազիզյան



Շառլ Ազնավուր

Ա-ի ստեղծագործությունը բանաստեղծության, երգ-երաժշտության (նուրբ գործիքավորմամբ), դերասան. արվ-ի ինքնատիպ համադրում է: Նրա երգերը (1000-ից ավելի), որոնք սերում են ֆրանս. շանսոններից, հայկ. տաղերից ու մեղեդիներից, անկեղծ են, ճշմարտացի ու կենսալի («Սիրո թմբուկները», «Մամա», «Սա է վերջը», «Ալելուիա», «Ավե Մարիա», «Բոհեմ», «Տուր մեզ այսօր», «Երկու կիթառ», «Սիրուց հետո», «Հավերժական սեր», «Ոչ մոդայիկ ուրախություններ», «Ես ոչինչ չեմ մոռացել», «Ես արդեն ներկայացրի», «Սա է վերջը», «Նա», «Ինչպես ասում են», «Տար ինձ», «Քաղաքը», «Մեռնել հանուն սիրո», «Զահելություն», «Իզաբել» ևն): Այս երգերով բեմում բազմազան նովելների մի շարք է ներկայացրել՝ օգտագործելով դերասան. արվ-ի յուրօրինակ արտահայտչամիջոցներ: Հեղինակ է նաև օպերետ. երաժշտության:

Շ. Ազնավուրը ելույթի պահին

Ջուգերգերով հանդես է եկել Ֆ. Սինատրայի, Ս. Դիոնի, Լ. Պավարոտիի, Պ. Դոմինգոյի, Լ. Մինելիի, Մ. Մաթոյի, Պ. Կաասի և ուր. հետ: Ա-ի ձայնը համարում են «նոր ժամանակների ձայնական ամենակարևոր իրողությունը» («Ֆրանսիական երգի պատվո ժապավեններ» մրց.): Ա. ստեղ-



Շ. Ազնավուրի «Անցած օրեր» (2004) գրքի շապիկը

ծագործ–արտիստ. անհատականությամբ ստեղծել է ինքնատիպ դպրոց: 1991–ին հրատարակել է իր երգերի տեքստերի և կարճ արձակի ժող.՝ «Des nots a l'affice»: 1996–ին նրա անունն ընդգրկվել է Երգերի հեղինակների փառքի սրահում:

Ա–ի նոր երգերի համաշխ. պրեմիերան տեղի է ունեցել Մոսկվայում (2007): Նրա ռեալիստ. պոեզիային բնորոշ են պատկերների ու զգացողության թարմությունը, հոգեկան պոռթկումները («Իսկ ես անկյունում», «Եվ սակայն», «Պետք է գիտենալ», «Քաղաքը», «Գնաց ուրիշ սիրո հետ», «Հավերժության ճանապարհը» ևն):

Հայկ. թեմայով է գրել «Ձան» և «Քնքուշ Հայաստան» երգերը: Դստեր՝ Սեդա Ազնավուրի հետ կատարել է Սայաթ–Նովայի «Աշխարհումս» երգը:

Ա. երգել է նաև իսպ., իտալ., անգլ., գերմ., սակայն խոստովանել է. «Իմ ոճը տիպիկ ֆրանսիացի երգչի ոճ է»: Նրա երգերը կատարել են Ռ. Չառլզը, Բ. Դիլանը, Շ. Քեյսին, Խ. Իգլեսիասը, Ֆ. Աստերը, Բ. Կրուբին և ուր.:

Ա–ի կինոկերպարները չարին անհաղորդ, բարոյապես մաքուր, խոցելի մարդիկ են («Գլուխը պատը», 1959, «Կրակեցեք դաշնակահարի վրա», 1960, «Հռենոսի անցումը», 1960, «Թոբրուք տանող տաքսին», 1961, «Սատանան և տասը պատվիրանները», 1961, «Փոստատարը գնում է պատերազմ», 1966, «Արարատ», 2002, «Հայր Գորիո», 2004, ևն): Հեղինակ է «Monsieur Carnaval» (1965), «Douchka» (1973), «Lotrek» (2004) օպերետների, նաև մի քանի ֆիլմերի երաժշտության: Գրել է «Ազնավուրը Ազնավուրի մասին» (1975), «Անցած օրեր» (2004) հուշագրությունները:

Ադիա Ազնավուրյանը եղբոր պահին

1988–ի Սպիտակի երկրաշարժից հետո բազմիցս այցելել է Հայաստան, եղել աղետի գոտում: Փարիզում ստեղծել է երկրաշարժից տուժածների օգնության «Ազնավուրը Հայաստանին» հիմնադրամը, ներկայացուցչություն բացել Երևանում: Ժորժ *Կառվարենցի* հետ գրել է «Քեզ համար, Հայաստան» երգը, որի տեսահոլովակը (վաճառվել է 2 մլն օրինակ) թողարկել է Ֆրանսիայի 90 երգչի և դերասանի մասնակցությամբ:

Ա. առաջին ֆրանսիացի կատարողն է, որ Եվրոպայում ստացել է պլատինե ձայնասկավառակ:

1995–ից՝ ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով պատվավոր դեսպան, ՅՈՒՆԵՍԿՕ–ի մշտ. պատվիրակը ՀՀ–ում, 2009–ից՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Շվեյցարիայում: Ա–ի անունով կոչվել են հրապարակներ Երևանում, Գյումրիում (կանգնեցվել է նրա հուշարձանը, 2000, քանդ.՝ Ս. Պետրոսյան), Վաղարշապատի դրամատիկ. թատրոնը: Մոմե արձանը դրվել է Մադամ Տյուսոյի թանգարանում (2004, Փարիզ): «Բյուրեղյա աստղ» (1959), «Ֆրանսիայի լավագույն դերասան» (1961), Էդիսոնի անվ. (1963, 1971, 1980), «Ոսկե առյուծ» (1971, Վենետիկի կփ), Բ. Լեթաշի անվ. (1987), Պատվավոր «Սեզար» (1997), «Հայակ» մրցանակաբաշխության, Ռ. Մամուլյանի անվ. Հատուկ (2014, Երևան), «Ֆեբիոֆեստ» միջազգ. 25–րդ կփ–ի «Քրիստիան» (2018, Պրահա) մրց–ներ, «Վաստակ և անձնվիրություն հանուն ֆրանսիայի» կազմակերպության Մեծ ոսկե մեդալ (1995), ԼՂՀ «Գրիգոր Լուսավորիչ» (2009), ՀԳՄ Թեքեյան մշակութ. միության «Արարատ» (2009), ֆրանսիայի «Պատվո լեգեոն» (1997), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1998), Լեոպոլդ II–ի (2004, Բելգիա), Կանադայի «Պատվո ասպետ» (2008) շքանշաններ ևն:

Երկ. *Մեր սրտի չափով, Ե., 1968: Ազնավուրը Ազնավուրի մասին, Ե., 1976: Ազնավուրը ծանոթ և անծանոթ, Ե., 1991: Երգեր և բանաստեղծություններ, Ե., 1999: Քեզ համար իմ Հայաստան, Բաթում, 2000: Անցած օրեր: Հուշեր, Ե., 2004: Երգեր, Ե., 2005: Aznavour par Aznavour, P., 1970. A voix basse, P., 2009.*

Գրկ. *Բրուտյան Յ., Սփյուռքի հայ երաժիշտները, Ե., 1968: Երգնկյան Յ., Էկրանի Ազնավուրը, ՍՍ, 1969, № 6: Ազնավուրը կինոյում, կազմ., խմբ.՝ Յ. Հակոբյան, Ե., 1993: Դոլուխանյան Ա., Շառլ Ազնավուրը բանաստեղծ, Ե., 2002: Ազնավուր–Կառվարենց Ա., Ափարիկս: Իմ փոքրիկ եղբայրը, Ե., 2012: Զաքարյան Հ., Շառլ Ազնավուր, Ե., 2016: Salques I., Charles Aznavour, P., 1964.*

Աննա Աապտրյան

ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ Ադիդա Միքայելի (ծ. 13.01.1923, Սալոնիկ), երգչուհի: Շառլ *Ազնավուրի* քույրը, Ժորժ *Կառվարենցի* կինը: Երաժշտ. կրթությունն ստացել է Փարիզում (դաշնամուր), երգարվ–ի դասեր է առել հորից: Վաղ տարիքից երգել է հայկ. երգեր: 9–10 տարեկանում խաղացել է Ֆրանսիայի մանկ. թատրոնում, որի հետ շրջագայել է Եվրոպայի մի շարք

քաղաքներում: 1942-ին տեղի է ունեցել Ա-ի առաջին համերգը Փարիզի հայության համար, որին մասնակցել են նաև հայրը և ֆրանսուհի հարսը (Շ. Ազնավուրի կինը). երգացանկում՝ հատվածներ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայից, Սայաթ-Նովայի, նաև հայ, անգլիացի, ֆրանսիացի կոմպոզիտորների երգեր: 1964-ին Շ. Ազնավուրի հետ համերգ. ծրագրով այցելել է Հայաստան: 1956–61-ին ապրել է Կանադայում, մասնակցել փառատոների:

ԱԶՆԱՈՒՐՅԱՆ Սոֆա Մաթևոսի [ծ. 03.07.1959, ք. Կրասնոդար (ՌԴ)], կոմպոզիտոր, երաժշտագետ: ՀԿՄ (1998-ից) անդամ: Ավարտել է Կրասնոդարի երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1974), Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվ. երաժշտ. ուսումնարանի կոմպոզիցիայի և տեսության (1978), ԵՊԿ կոմպոզիցիայի և տեսության (1983, Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները: 1988-ից դասավանդում է ԵՊՄՀ-ում, ԵԳԹԻ-ում, 2000-ից՝ ԵՊԿ հրատարակչության և «Երաժշտական Հայաստան» ամսագրի, 2012-ից՝ «Երաժիշտ» թերթի խմբ.:

Գրել է «Ինձ տվեցիր աչքեր» (1982, ըստ Շ. Ազնավուրի)՝ ձայնի և էստրադսիմֆ. նվագախմբի, պոեմ (1983)՝ ձայնի, կամեր. նվագախմբի, ֆանտազիա (1984)՝ կոնտրաբասի և սիմֆ. նվագախմբի, «Չորս պիես» (1985)՝ կամեր. նվագախմբի, չակոնա (1982)՝ դաշնամուրի, ջութակի և թավջութակի, «Տունն այս բարի» (ըստ՝ Ա. Մանուկյանի) հիմնը՝ խառը երգչախմբի, երգեհոնի և զանգերի, «Մարալ հոյ» (2002)՝ երգչախմբի և դաշնամուրի համար, դաշնամուր. տրիո (1984), «Հույս» (2004, ըստ Զ. Գիպպիուսի), «Համլետ» (2007, ըստ Վ. Շեքսպիրի) մոնոօպերաները, «Հայաստան» (2006, ըստ Օ. և Ն. Մանդելշտամների) կամեր. օպերան, վոկալ շարքեր, ռոմաններ, երգեր («Կրկեսում», Բեյրութում «Վանա ձայն» ռադիոկայանի երգի մրցույթի լավագույն երգ, 1982), «Չիկարելիի արկածները» (2014) մանկ. օպերա, «Մանկական ալբոմ»՝ դաշնամուրի համար (19 պիես, 2004), մանկ. շարքեր («7 երգ ժողովրդական տեքստերով», «7 երգ ռուս բանաստեղծների խոսքերով») և այլ գործեր, մշակել է ժող. երգեր:

Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. մրցույթի դափնեկիր (1982, Մոսկվա):

ԱԹԱ. [Սայիլյան Աթա Սուջոյի, 1852, գ. Քարաշեն (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–1942], աշուղ: Աշուղ. հին երգերի ու ասքերի հմուտ կատարող: Աշակերտել է ղարաբաղցի աշուղ Հաթամին: Հորինել է խրատ. և երգիծ. երգեր՝ հայ. և թուրք. («Զորավար Անդրանիկ», «Երգ Կիրովի մասին», «Ընծա հավը», «Մի ողբերգություն» ևն): Նվագել է սազ և ջութակ: Հանդես է եկել Այսրկովկասում, Մերձ. ու Միջին Արևելքի մի շարք երկրներում:

Աթա

ԱԹԱԲԵԿՅԱՆ Անժելա Երվանդի (ծ. 11.04.1938, Երևան), քանոնահարուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1986): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1955), ԵՊԿ (1983): 1956–1993-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար: 1959–2000-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում, 1983-ից, միաժամանակ՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2003-ից): Կազմել և խմբագրել է ժող., մեթոդ. ձեռնարկներ: 1972-ից գործում է Ա-ի հիմնադրած «Աթաբեկյան քույրեր» վոկալ-գործիք. անսամբլը: Նպաստել է քանոնի կատարող. արտահայտչամիջոցների ընդլայնմանը, նվագացանկի հարստացմանը, գործիքի տարածմանն աշխարհում:

Սոֆա Ազնաուրյան

Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Ավստրալիայում, Հունաստանում և այլուր: Խ. Ավետիսյանի, Է. Բաղդասարյանի, Ա. Սաթունցի, Խ. Ներսիսյանի, Մ. Բեգլարյանի, Ա. Մերանգուլյանի և ուր. բազմաթիվ երկերի առաջին կատարողն է: Ա-ի կատարումներն առանձնացել են տեխ. վարպետությամբ, քնարականությամբ և հուզականությամբ: «Ծրագրեր երաժշտական և արվեստի դպրոցների ժողովրդական նվագարանների մասնագիտական դասարանների» (2009) գրքի կազմողներից:

Հանրապետ. 1-ին (ոսկե մեդալ, 1957), Համամիութ. (1-ին կարգի դիպլոմ, 1957) երիտասարդ. փառատոների, Էստրադայի արտիստների համամիութ. մրցույթի (1958) դափնեկիր:

Անժելա Աթաբեկյան

Երկ. *Հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ընտրանի քանոնի համար, Ե., 2007: Հայ կոմպոզիտորների կոնցերտների և ռապսոդիաների ժողովածու քանոնի համար, Ե., 2008: Քանոնի համար գրված և փոխադրված ստեղծագործությունների ժողովածու, Ե., 2008:*

Գրկ. *Հովհաննիսյան Ծ., Անժելա Աթաբեկյան, Ե., 2007:*

Ռոբերտ Աթայան

Կարինե Աթանեսյան

ԱԹԱՅԱՆ Ռոբերտ Արշակի (07.11.1915, Թեհրան–05.05.1994, Լոս Անջելես, թաղված է Երևանում), երաժշտագետ, կոմպոզիտոր: Մարջան ***Միխթարյանի*** ամուսինը: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Արվեստագիտ. թեկնածու (1955): Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1941, Վ. Տալյանի դասարան), ՀԽՍՀ ԳԱ արվ-ի պատմության և տեսության բաժնին կից ասպիրանտուրան (ղեկ.՝ Ք. Քուշնարյան): 1944-ից դասավանդել է ԵՊԿ-ում (երաժշտության տեսության և կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ՝ 1962-ից, պրոֆ.՝ 1977-ից), 1948-ից, միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի պատմության և տեսության բաժնի (1958-ից՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ.) գիտաշխատող:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ միջնադար., գեղջկ., աշուղ., պրոֆեսիոնալ երաժշտության պատմությանն ու տեսությանը, անդրադարձել է խազ. նոտագրության վերծանման խնդիրներին: Գործունեության կարևոր մասը XIX դ-ի վերջի և XX դ-ի սկզբի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների հավաքագրումն ու հրատարակումն է. առավել ուշագրավը Կոմիտասի երկերի առաջին ակադեմ. հրատարակությունն է: Յուրաքանչյուր հատորում զետեղված են նաև ներած. հոդվածներ և վերլուծ. ծանոթագրություններ: Ա-ի նմանատիպ աշխատություններից են «Մակար Եկմալյան. Խմբերգեր և մեներգեր» (1970), «Կանաչյան Բարսեղ. Մեներգեր, խմբերգեր» (1969), «Կարա-Մուրզա Քրիստափոր. Խմբերգեր» (1978), «Գրիգոր Սյունի. Խմբերգեր» (2013) ժողովները: Հեղինակ է նաև «Երաժշտության տարրական տեսություն» (համահեղ.՝ Տ. Տեր-Մարտիրոսյան, 1949, լրց. հրտ.՝ 2006), «Հայկական ձայնագրություն» (1950), «Գուսան Հավասի» (1963) ձեռնարկների: Գրել է կամեր-գործիք. և վոկալ երկեր, խմբերգեր, մշակել ժող. և գուսան. երգեր, միջնադար. տաղեր:

ՀՀ «Պատվո նշան» շքանշան (1971):

Երկ. *Արմեն Տիգրանյան. Կյանքը երաժշտական- հասարակական գործունեությունը և ստեղծագործությունը, Ե., 1955: Հայկական խազային նոտագրություն, Ե., 1959; Комитас - собиратель и исследователь армянской народной песни (VII Международный конгресс антропологических и этнографических наук), М., 1952; Музыка и современность, М., 1962; Армянская народная песня, М., 1965; Армен Тигранян, М., 1966; Современный музыкальный язык в произведениях советских армянских композиторов, в сб.; Komitas comme collectionneur et explorateur des chansons populaires arméniennes, M., 1964; Armenische Chasen, «Beiträge zur Musikwissenschaft», B., 1968, H. ½; Les chants des maitres armeniens du moyen age, Musica antiqua, II. Bydgoszcz, 1969.*

Նազենիկ Սարգսյան

ԱԹԱՆԱՍՅԱՆ Նունե Ռոմեոյի (ծ. 31.07.1967, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2014): Ավարտել է ԵՊԿ (1990, Մ. Հարությունյանի դասարան): 1993-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2017-ից): 2000-ից՝ Հայաստանի կամեր. երգչախմբի երգչուհի:

Հեղինակ է հայ երաժշտ. բանագիտությանը վերաբերող ուսումնասիրությունների, նաև գիտ. հոդվածների («Ստեփան Դեմուրյան: Հայ ժողովրդական երգեր», 2013, «Սահակ Ամատունի: Ժողովրդական երգերի ձայնագրյալ ժողովածու», 2014, ևն):

ԱԹԱՆԵՍՅԱՆ Կարինե Լևոնի (11.12.1947, Բաքու–15.08.2006, Երևան), խմբավար, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ խմբավարության բաժինը (1971), վերապատրաստվել Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ում (1982, Վ. Պ. Չիստյակովի և Բ. Պոզդնյակովի դասարաններ): 1970–2006-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2000-ից): Մշակել է խմբավարության ուսուցման երկամյա պարտադիր ծրագիր (1982) ՀՀ երաժշտ. բուհերի և ուս. հաստատությունների համար: 1985-ից խմբավար-մասնագետներ է պատրաստել Գյումրիի և Վանաձորի երաժշտ. ուսումնարաններում:

Հեղինակ է երաժշտ. բարձրագույն ուս. հաստատությունների համար մի շարք գիտամեթոդ. ձեռնարկների («Դիրիժորություն», 1980, «Դիրիժորության դասավանդման, գործիքավորման և նվագախմբի պարտիտուրների ընթերցման մեթոդիկա», 1982, «Խմբավարական արվեստի պատմության և տեսության հաձնարարվող գրականություն», 1992, բոլորը՝ ռուս.):

ԱԼԱԼԵՄՋՅԱՆ (Ալչջյան) Նահապետ (1917, Կ. Պոլիս–1973, Փարիզ), թավջութակահար: Էժենի ***Ալեայանի*** հայրը: Կ. Պոլսում թավջութակի դասեր է առել Հարություն Սինանյանից (տես ***Սինանյան ընտանիք***): 1937-ից սովորել է Կ. Պոլսի կոնսերվատորիայում: Հանդես է եկել մենահամերգներով, եղել «Գեհարդ» քառյակի և քաղաքապետարանի նվագախմբի թավջութակահարը: 1946-ից ապրել է Փարիզում, կատարելագործվել

Շ. Բարջի ղեկավարությամբ: 1950-ին արժանացել է Լ. Բելլանի մրցույթի 1-ին մրց-ի: Փարիզում եղել է «Կոլոն», «Լ'Ամուրիո», 1954-ից՝ «Շուտո» (նաև վարչության և տնօրինության անդամ) նվագախմբերի թավջութակահարը: Ելույթներ է ունեցել նաև կնոջ՝ դաշնակահարուհի Աիդա Մյուհենտիայանի հետ:

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Հենրիկ Կարապետի (16.02.1935, Լենինական–11.07.1998, Երևան), երգիչ (բաս): ՀԽՍՀ ժող. արտիստ (1984): Ավարտել է ԵՊԿ (1960): 1959-ից՝ ԵՕԲԹ մեներգիչ: Դերերգերից են՝ Օհան (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Նադիր շահ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Դավիթ Բեկ (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Արշակ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Դոն Բազիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Լեպորելլո (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»): Նկարահանվել է կինոյում («Հրդեհ», 1983, «Օտար խաղեր», 1986, «Խոշոր շահում», 1980, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

Գրկ. *Պլուգյան Վ., Հենրիկ Ալավերդյան, Ե., 1989:*

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Մարգարիտա Լևի [ծ. 19.06.1961, ք. Կրասնի Սուլի (ՌԴ Դոնի Ռոստովի երկրամասում)], երգչուհի (սոպրանո): Ավարտել է Օդեսայի պետ. կոնսերվատորիան (1986): 1986-ից՝ Օդեսայի ՕԲԹ երգչուհի, 1994-ից՝ մեներգչուհի. դերերգերից են՝ Լաուրետտա, Նելլա, Չիո-Չիո սան, Մյուզետտա (Ջ. Պուչչինիի «Ջաննի Սկիկկի», «Չիո-Չիո սան», «Բոհեմ»), Եվրիդիկե (Ք. Վ. Գլյուկի «Օրփեոս և Եվրիդիկե»), Ռոզինա, Կոմսուհի (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»), Տատյանա (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Վիոլետտա, Լեոնորա (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Տրուբադուր»), Միքայելա (Ժ. Բիզեի «Կարմեն»), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ») ևն: Համերգ. երկացանկում՝ Մ. Ի. Գլինկայի, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի, Ս. Վ. Ռախմանինովի, Կ. Դեբյուսիի, Մ. Ռավելի, Յ. Շտրաուսի, Ռ. Վագների և ուր. կամեր. գործերից:

Հյուրախաղերով շրջագայել է Գերմանիայում, Ճապոնիայում, Ֆինլանդիայում, Ավստրիալիայում, ԱՄՆ-ում և այլուր:

«Գեորգ Օտս» համամիութ. փառատոնի 1-ին (1988, Տալլին), «Մարիա Կալլաս» միջազգ. փառատոնի 2-րդ (1989, Աթենք) մրց-ներ:

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Նաիրուհի Իսահակի (ծ. 25.06.1941, Ստեփանակերտ), երգչուհի-պարուհի: Ադրբ. ԽՍՀ (1982), ԼՂՀ (2000) ժող. արտիստ: Ավարտել է Ստեփանակերտի երաժշտ. ուսումնարանը (1968) և մանկավարժ. ինստ-ը (1980): 1958-ից՝ Ղարաբաղի երգի-պարի անսամբլի մեներգչուհի, պարուհի, 1978-ից՝ «Ղարաբաղ» էստրադ. անսամբլի մեներգչուհի: Երգացանկում՝ հայ և այլ ժող-ների երգեր:

Հյուրախաղերով շրջագայել է Ֆրանսիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Իրանում:

Նաիրուհի Ալավերդյանը ելույթի պահին

ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2001):

Գրկ. *Օհանջանյան Ն., Արցախյան բեմի թագուհին (Նաիրուհի Ալավերդյանի 60-ամյակի կապակցությամբ), Ե., 2002: Նաիրուհի [Երգչուհի Նաիրուհի Ալավերդյանի կյանքն ու ստեղծագործությունը], կազմ. և խմբ.՝ Ա.Մովսիսյանի, Ե., 2013:*

ԱԼԵԱՏՈՐԻԿԱ (< լատ. alea – զառ, իտալ.՝ aleatorio – հանդգնորեն, պատահականությունից կախված), երաժշտության ստեղծման և կատարման եղանակ: Ստեղծագործության հիմքում՝ ինչյունների պատահականորեն ընտրված հաջորդականություն: Կատարելիս նույնպես թույլատրվում են «պատահականություններ»՝ սկսել որևէ հատվածից, առանձին հատվածներ բաց թողնել կամ տեղափոխել, փոխել տեմպը ևն:

ԱԼԵԼՈՒ, ալելուիա [դաս. ուղղագրությամբ՝ ալէլուիա, երբ.՝ hallelŭ jăh hallelŭ – գովեցեք, jăh (կրճատված՝ jăhve-ից) Տիրոջը (Յահվեին), հուն.՝ ἀλληλ-ουια)], 1. ցնծուն օրհներգություն, առաջացել է երբ. ժամերգության գոհաբան. բացականչություններից, ապա ընդգրկվել քրիստ. պաշտամունքի մեջ: 2. Հայկ. միջնադար. հոգևոր ***փոխերգի*** տեսակ, որը հաճախ աչքի է ընկնում զարդոլորուն մեղեդիով: Հորինվել է Դավթի սաղմոսատների կամ նրանց հարասությամբ ստեղծված քառ-

Հենրիկ Ալավերդյան

Հ. Ալավերդյանը Օհանի դերում (Ա. Տիգրանյանի «Անուշ»)

Մարգարիտա Ալավերդյան

Գուրգեն Ալեմշահ



Ալեքսանդր Ալեքսանդրյան

յակների հիման վրա և սկսվում հատուկ եղանակավորված «ալէլուիա» բառով (որտեղից՝ «ալէլուք» – ալելուներ): Յուրաքանչյուր տոնի համար գրված են 8-ական (ԱՁ-ից մինչև ԴԿ) Ա-ներ, որոնք երգում են՝ ըստ օրվա ձայնի: Բացառություն են Ծննդյան, Ճրագալույցի, Քառասնօրյա Գալստյան (Տյառնընդառաջի), Հրեշտակապետաց, Ղազարու Հարության, Ծաղկազարդի, Ավագ շաբաթվա և Վարդավառի Ա-ները, որոնք երգում են համապատասխան օրերին՝ անկախ օրվա ձայնից: Ա. Գիշերային ժամերգության վերջին երգն է. երգում են Տերունի տոներին: Կազմված է 3 տնից (սաղմոս, փոխ, փառք)՝ որպես Սբ Երրորդության նշանակ: Սկզբում, մեջտեղում և վերջում երգում են 3-ական «ալելուիա»՝ նույնպես Սբ Երրորդության խորհրդով: Սբ Հրեշտակապետաց տոնի Ա-ին կից երգում են Թագաւոր յաւիտեան՝ «Երկինք եւ երկիր գոհանան զքէն»: Երբ օրվա ձայնը «ԱՁ» է, Փառքից հետո, նախքան «ալելուիաները» երգում են «Դասք հրեշտակաց» կցուրդը: Ա-ի 4 հիմնական մեղեդիներն են՝ Ծննդյան, Հարության, Խաչի և Ողոգոմյան (ծանր և թեթև տարբերակներով): Ատենի կամ Մայր ժամագրքում պահպանված են Ծննդյան, Քառասնօրյա Գալստյան, Հարության, Համբարձման, Հոգեգալուստի, Խաչի, Եկեղեցու, Հրեշտակապետաց, Ղազարու Հարության, Ծաղկազարդի, Ավագ շաբաթվա, Պայծառակերպության Ա-ները:

Գրկ. *Մանդինեան Ս., Ապրուածապաշտութիւն Հայաստանեայց ողղափառ եկեղեցւոյ, մասն առաջին, Վաղ-պատ, 1872: Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Վաղ-պատ, 1877: Օրմանեան Մ., Ծիսագիտութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1977: Չէպէճեան Ղ., Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986: Պողարեան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990: Նույնի, Ծիսական բառարան, Ե., 1991: Ժամագիրք ապենի, Զ տպագր. (նմանատպ. 1915 Դ տպագր.), Վաղ-պատ, 1999: Կոմանեան Ա., Հայ ծիսական պաշտամունքը, Բէյրութ, 2001: Պալեան Խ., Ժամակարգութիւնք Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, Ե., 2005:*

Արթուր Վարդանյան

ԱԼԵՄՇԱՀ Գուրգեն Միքայելի [22.05.1907, Պարտիզակ–14.12.1947, Դետրոյտ, (ԱՄՆ)], խմբավար, կոմպոզիտոր: Սովորել է Կ. Պոլսի Մխիթարյան, Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարաններում, ավարտել Միլանի կոնսերվատորիան (1930): Դասավանդել է Փարիզի Սամուել-Մուրադյան վարժարանում: Ղեկավարել է «Կիլիկիա» (նաև հիմնադիր), «Ալագյազ», 1939–47-ին՝ «Սիփան-Կոմիտաս» երգչախմբերը: Գրել է «Իմ հեռավոր հայրենիք» խմբերգը, «Արևելյան գիշերներ» (1931), «Հեքիաթ», «Երկու պատմվածք հազար ու մեկ գիշերներից», «Հայկական ժողովրդական պարեր»՝ սիմֆ. նվագախմբի համար, «Ավարայրի պատերազմը» վոկալ-սիմֆ. երկը (1934), «Վարդավառ» (1932), «Ծովինար» երաժշտ. պատկերները, երգեր («Բուխարիկ», «Իմ երգը», «Ես սիրեցի», «Իմ յարը», «Աղվորներուն», «Նազերով», «Ծաղիկ էի», «Իղձ», «Սիրելիս», «Պճինկո» ևն), կինոերաժշտություն, մշակել է ժող. երգեր («Հոյ նար», «Շուշո», «Անուշիկ յար ջան» ևն): Ա-ի ստեղծագործությունը սերտորեն կապված է հայ ժող. ու դաս. երաժշտության ավանդույթներին: Սիմֆ. և խմբերգ. երկերով (Կոմիտաս, Ա. Սպենդիարյան, Ա. Տիգրանյան, Տ. Չուխաճյան, Ք. Կարա-Մուրզա և ուր.) որպես խմբավար և դիրիժոր հանդես է եկել Ֆրանսիայում, Իտալիայում և ԱՄՆ-ում:

Ըստ Սաթևոս Մուրադյանի

ԱԼԵՅԱՆ (Ալալեմջյան) Էժենի Նահապետի [ծ. 29.12.1952, Սեն Նյոյի (Ֆրանսիա)], կոմպոզիտոր, դաշնակահարուհի: Նահապետ ***Ալալեմջյանի*** դուստրը: Ավարտել է Ֆոնտենբլոյի կոնսերվատորիան (1974): Որպես դաշնակահարուհի՝ համերգներով հանդես է եկել Եվրոպայի մի շարք քաղաքներում, նաև ՀՀ-ում՝ Գյումրիում, Սպիտակում, Էջմիածնում, Երևանում (1988, 1993): Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Յ. Բրամսի, Ֆ. Շոպենի, Մ. Ռավելի երկերի լավագույն մեկնաբաններից է:

Գրել է «Ախթամար» բալետը, «Ամազոնուհի» օպերան (բեմ.՝ 2002, Փարիզ, 2003, Երևան), «Պոռթկում» դաշնամուր. ֆանտազիան, երգեր (ըստ Վ. Շեքսպիրի սոնետների) և այլ երկեր, որտեղ համադրել է հայ ազգ. և ժամանակակից երաժշտության ավանդույթներն ու հնարքները:

ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ Ալեքսանդր Ալեքսանդրի [08(20).09.1889, Շուշի–30.12.1978, Երևան], կոմպոզիտոր, թառահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1965): 1902-ին՝ Գրիգոր ***Մյունու*** ժող. գործիքների անսամբլի թառահար, ապա՝ այլ անսամբլների ղեկ.: 1921-ից Հայաստանում հիմնադրել և ղեկավարել է ժող. գործիքների առաջին խմբերը: 1930–36-ին դասավանդել է ԵՊԿ-ում: 1936–37-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող.

գործիքների նվագախմբի, 1938–67-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի գործիք. մասի ղեկ.: Ժող. գործիքների անսամբլի համար գրել է 2 սյուիտ, պարային պիեսներ, երգեր («Սիրելի Հայաստան», «Հայկական ռոմանս», «Ինչո՞ւ ես լռում»), պարեղանակներ («Դիլիջան», «Նազելի», «Սևանի», «Նունե» ևն), մշակել «Հոյ իմ նազանի յարը», «Մոկաց հարսներ», «Ես պուճուր եմ, ոսկե ջուր եմ» և այլ երգեր:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Լիանա Ռոբերտի (ծ. 05.12.1980, Երևան), դաշնակահարուհի, երգչուհի (սոպրանո): Ավարտել է ԵՊԿ երգեցողության բաժինը (2005, Ս. Դանիելյանի դասարան): Սովորելու տարիներին հանդես է եկել ԵՕԲԹ-ում (Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Վիոլետտա՝

Լիանա Ալեքսանյանը Վիոլետտայի դերում (Ջ. Վերդիի «Տրավիատա»)

Ջ. Վերդիի «Տրավիատա»), մասնակցել «Concours international de Chant» (2004, 3-րդ մրց., Թուլուզ), «Hans Gabor Belvedere» (2004, դիպլոմ, Վիեննա), «Competizione dell'opera» (2007, դիպլոմ, Դրեզդեն) մրցույթներին: 2006–10-ին՝ Բոառնեշվայգի օպեր. թատրոնի (Գերմանիա) մեներգչուհի: Դերերգերից են՝ Զիլդա, Ռեզդեմոնա, Ամելիա, Վիոլետտա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Օթելլո», «Սիմոն Բոկկանեգրա», «Տրավիատա»), Միմի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Տատյանա (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին») ևն: Համբուրգի օպեր. թատրոնում երգել է Լյուչիա դի Լամերմուր (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Բլանշ (Ֆ. Պուլենկի «Կարմելիտանների երկխոսությունը»), Միքայելա (Ժ. Բիզեի «Կարմեն») ևն: Հանդես է եկել նաև Օսլոյի, Վիեննայի, Բեռնի, Շտուտգարտի, Դյուսելդորֆի, Քյոլնի (Գերմանիա), «Կոլոն» (Արգենտինա), Միլանի «Լա Սկալա» և այլ օպեր. թատրոններում (Չիո-Չիո սան՝ Ջ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ», Դոննա Աննա՝ Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», ևն):

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Սվետլանա Վլադիմիրի (ծ. 31.01.1965, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (1991, 2013–16-ին՝ պատասխանատու քարտ.): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի տեսության (1982, դասատու՝ Է. Բաղդասարյան), ԵՊԿ դաշնամուրի (Ն. Շամախյանի դասարան), կոմպոզիցիայի (Ղ. Սարյանի դասարան) բաժինները (1988) և ասպիրանտուրան (1991): Վարպետության դասեր է առել անգլիացի կոմպոզիտոր Ջ. Մաքլաուդից: 1988–2009-ին դասավանդել է ԵՊԿ-ում:

Գրել է «Պիոներական քայլերգ» (1979), «Մոխրոտը» (2008, ըստ Շ. Պերոյի, բեմ.՝ Երևանի երաժշտ. կամեր. թատրոն, 2008) մյուզիքլը, «Գիշերային զրույց Նարեկացու հետ» (1987–88, ըստ Վ. Դավթյանի)՝ սիմֆ. նվագախմբի, խառը երգչախմբի, ձայնի, ասմունքողի, «Նվիրումի խորալ մեդիտացիա Ղազարոս Սարյանի հիշատակին» (2008)՝ կամեր. նվագախմբի համար, խմբերգ. երկեր (ըստ Վ. Դավթյանի, Մ. Մեծարենցի, Ներսես Շնորհալու, Ներսես Մոկացու, Նաղաշ Հովնաթանի), դաշնամուր. գործեր՝ «Միտք» (1984–85, 3 դաշնամուր. պիես), «Տարափոխումներ» (2008–09, «Էլեգիա», «Արևին», «Հ. Գ. Հրաժեշտ») կոմպոզիցիան՝ ջութակի և դաշնամուրի, «Twilight» (2009, ըստ Ջ. Բայրոնի)՝ ձայնի և դաշնամուրի, սոնատ (1983–84)՝ թավջութակի և դաշնամուրի համար, «Երեք երգ Սոնա Վանի խոսքերով» (2013), շուրջ 30 էստրադ. երգեր ու գործիք. կոմպոզիցիաներ ևն:

Համամիութ. երաժշտ. ընկերության Հատուկ (1985, Մոսկվա), «Nashville International Stroke Conference» միջազգ. (2009–10, ԱՄՆ), Հանրապետ. երիտասարդ. երգի (1987, Երևան) մրցույթների 3-րդ մրց-ներ:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Տիրան Հովհաննեսի [02.04.1881, Կ. Պոլիս–17.06.1954, Շամոնի (Ֆրանսիա)], թավջութակահար, կոմպոզիտոր, դիրիժոր: Սովորել է Դրեզդենի կոնսերվատորիայում (1896–1901), աշակերտել գերմանացի թավջութակահար, կոմպոզիտոր Ֆ. Գրյուցմախերին և գերմանացի դաշնակահար Ֆ. Դրեզեկեին: Նվագել է Յ. Բրամսի ղեկավարած նվագախմբում, ելույթներ է ունեցել ջութակահար Յ. Յոախիմի հետ: 1903-ից ապրել է Փարիզում: Մասնակցել է Հայ մտավոր. (1917) և Հայ

Տիրան Ալեքսանյան

ազգ. ազատ. (1919) միությունների հիմնադրմանը: Դասավանդել է Փարիզի «Էքոլ նորմալ դը մյուզիք»-ում (1919–37, պրոֆ.) և Նյու Յորքի Ջուլիարդի բարձրագույն երաժշտ. դպրոցում (1937–54):

Տ. Ալեքսանյանը (ձախից) իսպանացի թավջութակահար Պ. Կազալսի հետ (1949)

Կազմել և ֆրանս. հրատարակել է թավջութակի ուսուցման դասընթաց (առաջաբանը՝ իսպանացի թավջութակահար Պաբլո Կազալսի): Կատարող. փայլուն տեխնիկայի շնորհիվ դասվել է աշխարհի առաջնակարգ թավջութակահարների շարքը: Մտերիմ և նամակագր. կապեր է ունեցել Ա. Չոպանյանի հետ: Համագործակցել է Ռ. Շտրաուսի, Ա. Նիկիշի, Գ. Մահլերի և ուր. հետ: Ղեկավարել է սիմֆ. նվագախմբեր:

Գրել է երգեր (ֆրանսիացի բանաստեղծների խոսքերով), երաժշտություն՝ Ա. Չոպանյանի 2 դրամայի, «Հայկական սյուիտ» (Կոմիտասի «Խորհուրդ խորին», «Օրոր», «Ալագյազ», «Հով արեք», «Տեր ողորմեա», «Ով զարմանալի» երգերի մշակումները)՝ թավջութակի և դաշնամուրի համար: Խմբագրել է Յ. Ս. Բախի մի շարք սյուիտներ՝ մենակատար թավջութակի համար:

Թաթուլ Ալթունյան

Երկ. *L'enseignement du violoncelle, P., 1914; Traité Théorique et Pratique du violoncelle, P., 1922.*

Գրկ. *Թևոդիկ, Ամենուն պարեցոյցը, 1928, էջ 445–447:*

Ըստ Սաթևոս Մուրադյանի

ԱԼԹՈՒՆՅԱՆ Թաթուլ Տիգրանի [2(15).10.1901, Ադանա–29.11.1973, Երևան], խմբավար, հոբոյահար, մանկավարժ, հաս. գործիչ, խմբերգ. արվ-ի վարպետ:

Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը (1977)

Ռուբեն և Ժիրայր *Ալթունյանների* հայրը: ՀԽՍՀ (1945), ԽՍՀՄ (1965) ժող. արտիստ: Ավարտել է ԵՊԿ խմբավարության (1928, Ռ. Մելիքյանի, Ս. Մելիքյանի, Ա. Եգորովի դասարաններ), Լենինգրադի կոնսերվատորիայի հոբոյի (1934, Վ. Շպեռլինգի, Ֆ. Նեյմանի դասարաններ) բաժինները: 1934-ից դասավանդել է ԵՊԿ-ում (խմբավարություն, պրոֆ.՝ 1971-ից): 1958-ից՝ Հայաստանի երգչախմբ. ընկերության նախագահ, 1966–69-ին՝ երգչախմբի ղեկ.: 1935–36-ին վերակազմել և ղեկավարել է ԵՊԿ, 1937–39 և 1947–49-ին ղեկավարել է Հայաստանի պետ. երգչախմբերը, 1938–1970-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլը (1974-ից՝ Ա-ի անվ.):

Ա-ի ղեկավարությամբ ինքնատիպ մեկնաբանությամբ են հնչել Կոմիտասի («Գարուն ա», «Կալի երգը», «Սոնա յար», «Լո, լո», «Անձրևն եկավ», «Քաղհան»), Ք. Կարա-Մուրզայի («Գացեք, տեսեք», «Քինչ ու զինչ»), Ս. Մելիքյանի («Թխկոնդա», «Պիլիբի») երգերը, հայկ. ժող. երգերի մշակումներ, հայկ., ռուս., արևմտաեվրոպ. խմբերգ. բազմաթիվ ստեղծագործություններ: Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի համար մշակել է ժող. ստեղծագործությունը բեմ. հնչողությամբ ներկայացնելու ոճ, որով մատուցել է Կոմիտասի, Ս. Մելիքյանի, նաև իր ձայնագրած ժող. երգերը, պարեղանակները («Հոյ, իմ Նազանի յարը», «Նուբար, Նուբար», «Հոպինա», «Խամ-բաջի», «Քա, դե եսիմ», «Յաման յար» ևն) և գուսան. երգեր:

Անսամբլի հետ համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Հունգարիայում, Ալբանիայում, Լիբանանում, Եգիպտոսում: Հայկ. գաղթավայրերում նպաստել է ինքնագործ խմբերի կատարող. արվ-ի մակարդակի բարձրացմանը:

Ա-ի անունով են կոչվել Կահիրեի, Բուենոս Այրեսի և մի շարք այլ հայկ. անսամբլներ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

Երկ. *Հայ ժողովրդական երգեր և պարեր Թ. Ալթունյանի մշակմամբ երգի ու պարի անսամբլի համար, հ. 1–3, Ե., 1954–64:*

Գրկ. *Խանջյան Հ., Երգը կանչում է, Ե., 1961: Բրուտյան Մ., Թաթուլ Ալթունյան, Ե., 1962: Սարյան Ա., Թաթուլ Ալթունյանը և հայ երգն ու պարը, Ե., 2008: Խոսք Թաթուլ Ալթունյանի մասին (կազմ.՝ Վ. Բալյան), Ե., 1977:*

Ըստ Սարգարիտ Բրուտյանի

ԱԼԹՈՒՆՅԱՆ Ժիրայր Թաթուլի (ծ. 23.08.1946, Երևան), խմբավար: Թաթուլ *Ալթունյանի* որդին, Ռուբեն *Ալթունյանի* եղբայրը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1964, դասատու՝ Ա. Բայբուրթյան), ԵՊԿ խմբավարության (1972, Թ. Ալթունյանի դասարան) բաժինները: 1974-ին Հայաստանի

երգչախմբային ընկերության, 1974–89-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի (2004-ից՝ գեղ. ղեկ.), 1989–2001-ին՝ «Քնար» (Հալեպ), «Սպենդիարյան» (Դամասկոս),

Ժիրայր Ալթունյանը ելույթի պահին

1999-ին՝ «Արարատ» (Իրան) երգչախմբերի խմբավար:

ԱԼԹՈՒՆՅԱՆ Ռուբեն Թաթուլի (ծ. 31.03.1939, Երևան), ալտահար, կոմպոզիտոր: Թաթուլ ***Ալթունյանի*** որդին, Ժիրայր ***Ալթունյանի*** եղբայրը: ՀՀ վաստ. արտիստ (1983), ՀՀ արվ. վաստ. գործիչ (2009): ՀԿՄ անդամ (1970-ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի ջութակի, ԵՊԿ ալտի (1964, Ա. Շամշյանի դասարան), կոմպոզիցիայի (1970, Ղ. Սարյանի դասարան) բաժինները: 1983–96-ին՝ Հայաստանի գուսան. և ժող. երգի անսամբլի հիմնադիր-գեղ. ղեկ., 1987–90-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1968-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1990-ից, ամբիոնի վարիչ՝ 1998–2006), 1974–77-ին, միաժամանակ՝ Հավանայի (Կուբա) կոնսերվատորիայում:

Գրել է սիմֆոնիա (1980), լար. կվարտետներ (1962, 1996), «Հիշատակարան երաժշտապետին» (1969, խոսք՝ Հ. Մաթևոսյանի) կանտատը՝ մենակատարի, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, սիմֆոնիետ (1997)՝ կամեր. նվագախմբի, «Թափուր անդաստան» (1998)՝ դուդուկի, զուռնայի և կամեր. նվագախմբի, հիմն-օրհներգ (1999, նվիրված է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին)՝ խառը երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, կոնցերտ-սիմֆոնիա (2000)՝ ջութակի, ալտի և սիմֆ. նվագախմբի, «Հոգևոր նախերգանք» (2001) և «Խաչատրիանա» (2013)՝ կամեր. նվագախմբի, «Հորովել», «Ասերգեր» և «Կոմիտասիանա» (2011)՝ ժող. գործիքների նվագախմբի համար, «Հարազատ մեղեդիներ» (2001), «Մատյան ողբերգության» բալետ-օրատորիան (ըստ Գրիգոր Նարեկացու, 2010), դաշնամուր. տրիո (2012), կիներաժշտություն, մանկ. երաժշտություն: Անսամբլների, գործիքների, մենակատարների համար մշակել է «Թագվորագովք» և «Սայաթ-Նովա» ծես-հանդեսները, նաև հոգևոր, ժող., հայրենասիր. երգեր ու պարեր:

ՀՀ Պետ. (2001), Այսրկովկաս. մրցույթի 1-ին (1965), Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. 2-րդ մրցույթի 2-րդ (1969) մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009):

ԱԼԻԽԱՆՅԱՆ Նվարդ Միքայելի (08.09.1896, Տրապիզոն–03.05.1977, Երևան), դերասանուհի, երգչուհի: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1956): 1896-ին ընտանիքը տեղափոխվել է Բաթում: Չայնը մշակել է Թիֆլիսում (Կոմիտասի խորհրդով), ապա երգել Կոմիտասի երգչախմբում: 1916–19-ին երաժշտ. կոմեդիայի խմբում խաղացել է և՛ դրամաներում, և՛ երաժշտ. կատակերգություններում (Անուշ՝ «Անուշ»՝ ըստ Հ. Թումանյանի, ևն): 1919–20-ին հանդես է եկել Վահրամ Փափազյանի դրամատիկ. խմբում (Դեզդեմոնա, Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ»), 1924–27-ին՝ Դոնի Ռոստովի ռուս. և հայկ. երաժշտ. թատրոններում: 1938-ին տեղափոխվել է Երևան, ընդունվել Ջ. Զաբարլու անվ. ադրբ. թատրոն, խաղացել նաև երաժշտ. ներկայացումներում (Գյուլչոհրա, Շահասանամ՝ Ու. Հաջիբեկովի «Արշին մալ ալան», «Աշուղ Ղարիբ», ևն): 1942-ից՝ ԵԵԿԹ դերասանուհի (Սիլվա, Մարիցա՝ Ի. Կալմանի «Սիլվա», «Մարիցա», Ուստիան՝ Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Պայծառ՝ Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ», ևն): Բնութագր-երաժշտ. դերերից են՝ Շողիկ («Ուշ լինի, նուշ լինի»), Նազլու («Կարինե»), Խաթուն («Մեծ հարսանիք»), Օլիվիա («Տասնմեկ անհայտներ»), Տիկին Թոփչիբաշևա («Կապկազ թամաշա») ևն:

Գրկ. *Սարգսյան Ս., Միրելի անուններ, Ե., 1986:*

ԱԼԻԽԱՆՈՎ (Ալիխանյան) Կոստանդին (Կոնստանտին) Միքայելի (1849, Թիֆլիս–1931, Թիֆլիս), դաշնակահար, մանկավարժ, հաս. գործիչ: Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբանության բաժինը (1872) և կոնսերվատորիան (1876, Թ. Լեշետիցկու դասարան): Թիֆլիսի Նոր երաժշտ. դպրոցի (1876), ուսումնարանի (1886), Ռուս. երաժշտ. ընկերության Թիֆլիսի բաժանմունքի հիմնադիրներից (1895-ին՝ նախագահ):

Ռուբեն Ալթունյան

Նվարդ Ալիխանյան

Կոստանդին Ալիխանով

Տիգրան Ալիխանով



«Ալմաստ» օպերայի առաջին բեմադրության ազդագիրը (1933, ԵՕԹԹ)

Թիֆլիսի կոնսերվատորիայի համերգ. դահլիճի կառուցման (1917) բարերարը: 1882-ին ընտրվել է Ս. Պետերբուրգի կայսեր. երաժշտ. ընկերության առաջին տնօրինության կազմում: Մտերիմ կապեր է ունեցել Պ. Ի. Չայկովսկու հետ, ֆինանսապես աջակցել է Ֆ. Ի. Շալյապինին՝ Թիֆլիսում երգի դասեր առնելու ռուս երգիչ և մանկավարժ Դ. Ա. Ուսատովից:

ԱԼԻԽԱՆՈՎ Տիգրան Աբրահամի (ծ. 22.01.1943, Մոսկվա), դաշնակահար, մանկավարժ: ՌԴ ժող. արտիստ (2002): Ավարտել է ՄՊԿ (1966): 1966–73-ին դասավանդել է Մոսկվայի մանկավարժ. ինստ-ում, 1971-ից՝ ՄՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1992-ից, պրոֆ., 2005–09-ին՝ ռեկտոր): Վարպետության դասընթացներ է անցել ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Իսպանիայի մի շարք կոնսերվատորիաներում: Հյուրախաղերով հանդես է եկել Եվրոպայում, ԱՄՆ-ում, Աֆրիկայում: Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Ֆ. Լիստի, Ի. Ֆ. Ստրավինսկու, Պ. Հինդեմիթի, Ա. Գ. Շնիտկեի, Է. Վ. Դենիսովի, Ա. Խաչատրյանի ստեղծագործություններից: Է. Դենիսովի, Յ. Բուցկոյի, Գ. Բանշչիկովի, Գ. Ֆրիդի և այլ կոմպոզիտորների երկերի առաջին կատարողն է: Թողարկել է ձայնասկավառակներ: Հեղինակ է գիտամեթոդ. ձեռնարկների:

Մ. Լոնգի և Ժ. Տիբոյի անվ. միջազգ. (1967, Փարիզ), Հեղինակ. իրավունքի հունգ. գործակալության (1985) մրցույթների դափնեկիր:

«ԱԼՄԱՍՏ», հայկ. առաջին դաս. օպերան: Երաժշտությունը գրել է Ալեքսանդր *Սպենդիարյանը*, լիբրետտոն (ռուս.)՝ Սոֆյա Պառնոկը 1917–18-ին (ըստ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի): Կլավիրն ավարտվել է 1923-ին, գործիքավորումը՝ 1928-ին (IV գործողությունը գործիքավորել է Մաքսիմիլիան *Շտեյներբերգը*):

Տեսարան «Ալմաստ» օպերայի բեմադրությունից

«Ա.» հոգեբան-փիլիսոփայական բնույթի երաժշտ. դրամա է, արտացոլում է հայ ժողովրդի հերոս-ազատագր. պայքարը: Առաջին անգամ բեմադրվել է 1930-ին Մոսկվայի Մեծ թատրոնի մասնաճյուղում (Ալմաստ՝ Մ. Մակսակովա), ապա՝ Օդեսայում (1930, ուկր.), Թիֆլիսում (1932, վրաց.), Տաշքենդում (1953), Նովոսիբիրսկում (1972): ՀԽՍՀ-ում բեմադրվել է Երևանում 1933-ին՝ ԵՕԹԹ բացմանը (լիբրետտոյի թարգմ.՝ Տ. Հախումյանի): Վերաբեմադրվել է 1939, 1969, 1971, 2009-ին: Գլխ. դերերգերը կատարել են՝ Ալմաստ՝ Թ. Շահնազարյան, Տ. Սազանդարյան, Մ. Չմշկյան, Գ. Գալաչյան, Օ. Գաբայան, Թաթուլ՝ Պ. Լիսիցյան, Մ. Երկաթ, Ա. Կարապետյան, Նադիր շահ՝ Լ. Իսեցկի (Հովհաննիսյան), Ն. Հովհաննիսյան, Գ. Պողոսյան, Հ. Ալավերդյան, Աշուղ՝ Գ.

«Ալմաստ» օպերայի բեմադրության զգեստների էսքիզներ (նկ.՝ Մարտիրոս Սարյան)

Գաբրիելյան, Վ. Միրաքյան և ուր., դիրիժորներ՝ Ս. Ստոլերման, Գ. Բուդաղյան, Ա. Քաթանյան, Օ. Դուրյան, Յ. Դավթյան, ռեժ-ներ՝ Ա. Բուրջալյան, Գ. Հովհաննիսյան, Վ. Բագրատունի, Վ. Մ. Աճեմյան, Գ. Իսահակյան, նկարիչներ՝ Մ. Սարյան, Մ. Արուտչյան, Խ. Եսայան, Մ. Ավետիսյան:

Օպերան 1951-ին, ռուս և ֆրանսիացի կատարողներով, բեմադրվել է Փարիզի «Մյուզուալիթե» պալատում (նվագախմբի մասը կատարվել է 2 դաշնամուրով): Կլավիրը հրատարակվել է Երևանում 1971-ին (լիբրետտոյի նոր թարգմ.՝ Պ. Միքայելյանի):

Գրկ. *Սպենդիարով Ա., Ալմաստ: Օպերա չորս գործողությամբ, ԵԼԺ, հ. 10, 11, Ե., 1971, 1984:*

Ըստ Գեորգի Գյոդակյանի

Ա.Լ.Մ.Ա.Ս (Միլիտոնյան Զեմֆիրա Հովհաննեսի, 12.12.1948, Երևան), աշուղ: Արցախյան գոյամարտի մասնակից: Ավարտել է ԵՊՄԻ: 2005-ին ձեռնադրվել է աշուղ: «Ալմաստ» ժող. գործիքների անսամբլի հիմնադիր-գեղ. ղեկ.: Առավել ճանաչված են նրա «Աշուղներ», «Գիտեմ կգաս», «Ծով ես, ծով ես» և այլ երգեր: Հրատարակվել է Ա-ի «Հայ երգի կանչ» (2008) երգարանը:

Ա.Լ.Մ.Ա.Խ.Յ.Ա.Ն Ժան [ծ. 06.10.1932, ք. Կոկինիա (Հունաստան)], կոմպոզիտոր, խմբավար: 1947-ին տեղափոխվել է Բուենոս Այրես, ավարտել կոնսերվատորիան, աշակերտել է Ա. Խինաստերիային (կոմպոզիցիա),Պ. Վ. Կոստային (խմբավարություն) և Ռ. Կինսկուն: 1957-ին հիմնադրել է և ղեկավարել «Հայ երաժշտության բարեկամներ» ընկերությունը, «Արաքս» երգչախումբը, որի հետ հանդես է եկել նաև Մերձ. Արևելքի երկրներում:

Գրել է «Զարթոնք» կանտատը, սիմֆոնիա, ջութակի կոնցերտ, տրիո (հոբոյ, կլառնետ, ֆագոտ), կվինտետ (կլառնետ և լար. քառյակ), սոնատ (կլառնետ և դաշնամուր), մեներգեր, խմբերգեր, դաշնամուր. ստեղծագործություններ («Հայկական այուիտ», 1956, վարիացիաներ, պրելյուդներ), որտեղ համադրել է հայկ. ինչերանգ. ռիթմը և արգենտին. ժող. երաժշտության որոշ տարրեր:

1960–2012-ին հեղինակ. համերգներով բազմիցս այցելել է Հայաստան:

ՀԱԵ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1972), «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ», ՄՏԿԿ «Կիլիկյան ասպետ» (երկուսն էլ՝ 1982) շքանշաններ, ՀԿՄ Կոմիտասի անվ. մրց. (1987), ՀՀ ՄՆ «Կոմիտաս» (2011), ոսկե (2012), ՀՀ «Մովսես Խորենացի» (2013) մեդալներ:

Երկ. *Վոկալ խմբերգային ստեղծագործություններ, Ե., 2013:*

Գրկ. *Բրուտեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1966: Հասասյան Կ., Ժան Ալմոխյան. Երաժշտությունից անդին, Բուենոս Այրես, 2013/14: Luigi di Carli, Jean Almouhian: Màs allà de la Musica. Buenos Aires, 2014.*

Ա.Լ.Ո.Յ.Ա.Ն Լևոն Մելիքի (04.12.1925, Թիֆլիս–14.04.1998, Երևան), ֆլեյտահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1957): Ավարտել է ԵՊԿ (1952): 1946–98-ին՝ ԵՕԲԹ նվագախմբի մենակատար: Դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1990-ից): Մենահամերգներով շրջագայել է Բուլղարիայում, Ֆիլիպիններում, Գերմանիայում և այլուր:

Միջազգ. մրցույթների, Երիտասարդության և ուսանողների համաշխ. փառատոնի (Մոսկվա, 1957) դափնեկիր:

Ա.Լ.Տ (< լատ. altus – բարձր), 1. կանանց ցածր երգչաձայն (մեցցո սոպրանո, կոնտրալտո): 2. Մանկ. (տղաների) ցածր երգչաձայն: Հետագայում Ա. են կոչվել երգչախմբի մանկ. բոլոր ցածր երգչաձայները. ռեգիստրը՝ g(a) – es²(e²): Միջնադար. երգչախմբերում տենորը (տենորից բարձր կամ ցածր ձայնը կոչվել է կոնտրտենոր) երգել է հիմնական մեղեդին, իսկ տղաների երգամասը, որը տենորից բարձր էր շարադրված, Ա.: Դիապազոնը՝ g(a)–e²(f²): 3. Երգամաս երգչախմբում, որը կատարում են մանկ. կամ կանանց ցածր (մեցցո սոպրանո, կոնտրալտո) ձայները: XVIII դ-ի վերջին օպերաների խմբերգ. պարտիտուրներում կանանց ցածր ձայնն անվանել են մեցցո սոպրանո, ըստ որի՝ կանանց երգչախմբում տարբերել են երգչաձայների սոպրանո, մեցցո սոպրանո և կոնտրալտո տեսակները: Որոշ վոկալ-սիմֆ. երկերում (կանտատ, օրատորիա ևն) և առանց նվագակցության խմբերգ. ստեղծագործություններում պահպանվել է «Ա.» անվանումը: 4. Ջութակի կառուցվածքով, նրանից փոքր-ինչ մեծ (թավ ձայնով) նույն ընտանիքի աղեղնավոր երաժշտ. գործիք (իտալ. և անգլ.՝ viola, ֆրանս.՝ alto, գերմ.՝ Bratsche): Ձևավորվել է XVI–XVII դդ-ում: Մինչև XVIII դ. տարբերել են Ա-ի, այսպես կոչված, «ձեռքի վիոլա» (< իտալ. viola da braccio) և «ոտնակով վիոլա» (< լատ. viola da gamba) տեսակները: XVII դ-ում «ձեռքի վիոլան» օգտագործվել է անսամբլի կազմում, XVIII դ-ում (որոշ ձևափոխություններով)՝ որպես մենակատար, XIX դ-ից՝ նաև նվագախմբ. և անսամբլ. գործիք:

Ա. նոտագրվում է ըստ ալտի և ջութակի բանալիների, նվագում են ջութակի նման: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է, պատյանի երկ.՝ մոտ 390–460 *մմ*: Ձայնարտաբերումը կատարվում է հիմնականում լարերի վրայով աղեղը սահեցնելով (arco) կամ պիցցիկատոյով: Լարերը՝ դո-սոլ-ռե-լա (c–g–d′–a′): 5. Պղնձե փող. երաժշտ. գործիք՝ մի բեմոլ լարվածքով (in Es), դիապազոնը՝ A–b¹, նոտագրվում է ըստ ջութակի բանալու, հնչում է գրվածից մեծ սեքստա

Ալմաստ

Ժան Ալմոխյան

Լևոն Ալոյան

Ալտ

ներքև: Որպես նվագակցող գործիք՝ օգտագործում են փող. նվագախմբերում և անսամբլներում: 6. Մի շարք փող. գործիքների տեսակների անվան բաղադրիչը (ալտ-կլառնետ, ալտ-հոբոյ, ալտ-տրոմբոն, ալտ-սաքսոֆոն ևն):

XIX դ-ից կամեր. և սիմֆ. նվագախմբերում ընդգրկում են ալտ-ֆլեյտան՝ անգլ. եղջերափողը, ալտ-կլառնետը [in Es և in F, ինչում է սովորական կլառնետից (լարվածքը՝ in B) կվարտա կամ կվինտա ներքև] և ալտ-տրոմբոնը [in Es և in F, ինչում է տենոր-տրոմբոնից (լարվածքը՝ in B) վերև]: 7. Հարմոնիայի դասընթացում՝ քառաձայնի 2-րդ ձայնը: Քառաձայնի ի հայտ գալուց ի վեր տարբերել են կոնտրտենոր-ալտ և կոնտրտենոր-բաս ձայները, որոնք հետագայում անվանել են «ալտ» և «բաս»:

Վաղ շրջանի երաժշտ. գործերում (քառաձայն, ա կապելլա, XV դ.) Ա-ի երգամասը կատարել են տղամարդիկ, XVI–XVII դդ-ում՝ երբեմն 1-ին տենորը:

ԱԼՏԵՐԱՑԻԱ (< լատ. alteratio – փոփոխություն), ածանցում, 1. Ինչյունաշարի հիմնական աստիճանների (դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի) իջեցում կամ բարձրացում 1 կամ 2 կիսատոնով (առանց ինչյունի անունը փոխելու), որի միջոցով հավասարաչափ տեմպերացված լարվածքի յուրաքանչյուր ինչյունից կարելի է կառուցել մաժոր և մինոր տոնայնություններ: Գրառում են հատուկ նշաններով, որոնք կոչվում են խրոմատիզմի (նաև խրոմատիկ, ըստ Կոմիտասի՝ կիսաձայնական) կամ ածանցման նշաններ՝ դիեզ, բեմոլ, դուբլդիեզ և դուբլբեմոլ, վերացումը՝ բեկար (ածանցման ձայնանիշն իր սկզբն. վիճակին վերադարձնող):

Ալտերացիայի նշաններ

դիեզ	♯
բեմոլ	♭
բեկար	♮
դուբլդիեզ	𝄪
դուբլբեմոլ	𝄫

Դիեզը տվյալ աստիճանի կամ ինչյունի կիսատոնով բարձրացումն է, բեմոլը՝ կիսատոնով իջեցումը, դուբլդիեզը՝ 2 կիսատոնով (կամ 1 տոնով) բարձրացումը, դուբլբեմոլը՝ 2 կիսատոնով (կամ 1 տոնով) իջեցումը: Նոտայից առաջ դրվում է նրան վերաբերող Ա-ի նշանը, որը գործում է մինչև տակտի ավարտը, եթե նոտայից առաջ չկա բեկարի նշան: Ա-ի դեպքում համադրվում են նրա նշանի և ինչյունի անվանումները (օր.՝ սի բեմոլ): Հավասարաչափ տեմպերացված լարվածքում օկտավայի տարբեր բարձրության 12 ինչյունները երաժշտության մեջ օգտագործվում են շուրջ 35 անվանումով, որոնցից միայն 7-ն ունեն հիմնական անուններ (դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի), մյուսներն Ա-ի նշանների միջոցով ձեռք են բերում ձևափոխված կամ ածանցյալ անվանումներ:

Ա-ի նշանները գործածվում են որպես բանալու և պատահական նշաններ: Հնչյունները տառերով նշելու դեպքում դիեզ և բեմոլ նշանները փոխարինվում են տառ. ածանցներով. դիեզը՝ is (օր.՝ դո դիեզի տառ. նշումը՝ cis), բեմոլը՝ es (օր.՝ ռե բեմոլի տառ. նշումը՝ des), դուբլդիեզը՝ isis (օր.՝ դո դուբլդիեզի տառ. նշումը՝ cisis), դուբլբեմոլը՝ eses (օր.՝ ռե դուբլբեմոլի տառ. նշումը՝ deses): Առանձնանում է միայն սի բեմոլը, որը նշվում է B տառով: Այս բացառությունը, նաև հնչյունաշարի հիմնական աստիճանների տառ. նշումներում այբբեն. կարգի խախտումը պայմանավորված են XI դ-ից պահպանված տառ. նշումների համակարգով, որտեղ հնչյունաշարի I աստիճանը համարվել է լա-ն և նշանակվել A-ով, ուստի աստիճանների հերթականությունը եղել է ըստ լատ. այբուբենի՝ A, B, C, D, E, F, G (ավելի ուշ հաջորդել է H-ը):

Տառ. նշումներն ընդգրկել են 2 ½ օկտավայից փոքր-ինչ ավելի հնչյունաշար: Մեծ օկտավայի լա-ն և նրանից վեր 6 հնչյունները նշվել են մեծատառերով, փոքր օկտավայի լա-ն և նրանից վեր 6 հնչյունները՝ փոքրատառերով, 1-ին օկտավայի լա-ից մինչև 2-րդի մի-ն՝ կրկնակի փոքրատառերով:

B-ն գործածվել է սի բեմոլ և սի նշանակությամբ: Տարբերելու համար սի բեմոլը նշվել է կլոր գրվող տառով (B) և կոչվել Բ ռոնդ (ֆրանս.՝ B rond – կլոր) կամ Բ մոլ (ֆրանս.՝ B mol – փափուկ), իսկ սի-ն՝ քառակուսի տառով և կոչվել Բ կառե (ֆրանս.՝ B carré – քառակուսի) կամ Բ դուռ (ֆրանս.՝ B dur – կոշտ): Ավելի ուշ, երբ սի հնչյունը նշվել է առանձին՝ H տառով, B-ն մնացել է որպես սի բեմոլի տառ. նշում: Բ կառե-ից առաջացել են բեկար, Բ մոլ-ից՝ բեմոլ անվանումները: Դիեզ անվանումը ներմուծվել է հինհուն. երաժշտության տեսությունից, որտեղ այն գործածվել է դիատոնիկ կիսատոն, ապա՝ քառորդ տոն ինտերվալի նշանակությամբ:

Ալտերացված աստիճանների տառ. նշումներում բացառություն են (բարեհնչության համար) լա բեմոլը (գրվում և կարդացվում է as՝ aes-ի փոխարեն) և մի բեմոլը (es՝ ees-ի փոխարեն):

ԱԼՏԵՐԱՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏԱՌԱՅԻՆ ՆՇՈՒՄՆԵՐԸ

Դո դիեզ – cis	Դո դուբլդիեզ – cisis
Ռե դիեզ – dis	Ռե դուբլդիեզ – disis
Մի դիեզ – eis	Մի դուբլդիեզ – eisis
Ֆա դիեզ – fis	Ֆա դուբլդիեզ – fisis
Սոլ դիեզ – gis	Սոլ դուբլդիեզ – gisis
Լա դիեզ – ais	Լա դուբլդիեզ – aisis
Սի դիեզ – his	Սի դուբլդիեզ – hisis
Դո բեմոլ – ces	Դո դուբլբեմոլ – ceses
Ռե բեմոլ – des	Ռե դուբլբեմոլ – deses
Մի բեմոլ – es	Մի դուբլբեմոլ – eses
Ֆա բեմոլ – fes	Ֆա դուբլբեմոլ – feses
Սոլ բեմոլ – ges	Սոլ դուբլբեմոլ – geses
Լա բեմոլ – as	Լա դուբլբեմոլ – ases
Սի բեմոլ – b	Սի դուբլբեմոլ – bes

2. Ձայնակարգի հիմնական աստիճանների կամ հնչյունների բարձրացումը կամ իջեցումը կես տոնով: Տարբերում են ձ ա յ ն ա կ ա ր գ ա յ ի ն (ալտերացվում են ձայնակարգի անկայուն աստիճանները՝ նրանց ձգողականությունն առավել սրելու, ուժեղացնելու համար) և զ ա ր տ ո ւ ղ ա յ ի ն կամ մ ո դ ո ւ լ ա ց ի ո ն (ալտերացվում են ձայնակարգի բոլոր աստիճանները, որոնք պայմանավորում են որևէ նոր տոնայնության անցնելու անհրաժեշտությունը) Ա-ները:

ԱԼՈՒՄՅԱՆ Սամվել Սմբատի (03.05.1941, Երևան–07.09.1987, Բուխարեստ, թաղված է Մոսկվայում), դաշնակահար, մանկավարժ: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1964, դասատուներ՝ Շ. Ափոյան, Ա. Մելիք-Հայկազյան), ՄՊԿ դաշնամուրի բաժինները և ասպիրանտուրան (1966, երկուսն էլ՝ ղեկ.՝ Յ. Ֆլիեր): 1966–68-ին դասավանդել է ԵՊԿ-ում, 1968-ից՝ ՄՊԿ-ում (դոցենտ՝ 1979-ից):

Հանդես է եկել որպես մենակատար, անսամբլների (ջութակահարներ՝ Լ. Կոգան, Ա. Մելնիկով, թավջութակահարներ՝ Վ. Սարաջյան, Ի. Գավրիշև, կլառնետահար՝ Լ. Միխայլով) և նվագախմբերի հետ: Համերգներով շրջագայել է բազմաթիվ քաղաքներում: Երկացանկում՝ դաս., ռոմանտիկ և XX դ-ի կոմպոզիտորների (Վ. Ա. Մոցարտ, Լ. վան Բեթհովեն, Ֆ. Շուման, Ֆ. Շոպեն, Ֆ. Լիստ, Յ. Բրամս, Ս. Ս. Պրոկոֆև, Ա. Բաբաջանյան և ուր.) գործերից, նաև «Դաշնամուրային ֆանտազիաների» համերգաշարը (1983–84, Մոսկվա, Փոքր դահլիճ): Կատարումներին բնորոշ էին տեքստին հարազատ մեկնաբանությունը, հուզականությունը: Ունի ձայնագրություններ՝ որպես մենակատար, նաև կամեր. անսամբլների հետ:

Ա-ի հիշատակին ՄՊԿ-ում կազմակերպվում են համերգներ և երեկոներ:

Դաշնակահարների Բ. Սմետանայի անվ. (3-րդ մրց., 1963, Պրահա), Երաժիշտ կատարողների Ջ. Էնեսկուի անվ. (1-ին մրց., 1967, Բուխարեստ) միջազգ., Համամիութ. (1-ին մրց., 1970, Կիև) մրցույթների դափնեկիր:

Գրկ. *Григорьев Л., Платек Я., Современные пианисты, М., 1990; Кротов В., Самвел Алумян. Жизнь и судьба музыканта, М.,1997; Апоян Ш., Незабываемые имена. Очерки о пианистах-армянах, Е., 2008.*

Սամվել Ալումյան

ԱԽՇԱՐՈՒՄՈՎ Դմիտրի Վլադիմիրի (20.09.1864, Օդեսա–1938, Աշխաբադ), ջութակահար, դիրիժոր, կոմպոզիտոր: Ս. Պետերբուրգում ջութակի դասեր է առել Պ. Կրասնոկուտսկուց, երաժշտության՝ Ռուբելից, 1884–85-ին աշակերտել է Լ. Առուերին, ապա աշխատել Վիեննայում: 1929–38-ին դասավանդել է Աշխաբադի երաժշտ. ուսումնարանում: 1880-ական թթ-ից համերգներով շրջագայել է Վիեննայում, Բեռլինում, Մոսկվայում, Պոլտավայում: 1898-ին Պոլտավայում հիմնադրել է սիմֆ. նվագախումբ (համերգներով հանդես է եկել Ռուսաստանում), 1899-ին՝ Ռուս. կայսեր. երաժշտ. ընկերությունը, որին կից 1904-ին բացել է երաժշտ. ուսումնարան (տնօրեն՝ Ա.):



Դմիտրի Ախշարումով

Գրել է պիեսներ՝ ջութակի, էլեգիա՝ լար., ֆանտազիա՝ սիմֆ. նվագախմբերի համար, ռոմանսներ և այլ գործեր:

Գրկ. *Кауфман Л., Д. В. Ахшарумов, Киев, 1971.*

ԱԽՎԵՐԴՅԱՆ Գևորգ Ախվերդիի (05.06.1818, Թիֆլիս–17.11.1861, Թիֆլիս), բանասեր, բժիշկ, բանահավաք: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1834), ՄՊՀ բժշկության բաժինը (1839): Ղեկավարել է Կովկաս. ուս. օկրուգի դասագրքեր հաստատող կոմիտեի հայոց լեզվի բաժինը: Հայտնաբերել է Սայաթ-Նովայի «Դավթարը», որտեղ ընդգրկված էր հայատառ ադրբ. 114, վրացատառ 46 հայկ. և մի քանի վրաց. երգեր: Հայկ. երգերը վերծանել է, նրանց գրառման համար մշակել

Գևորգ Ախվերդյան

Սոֆյա Ակիմովա

հնչյունների տառադարձման համակարգ: 1852-ին Մոսկվայում հրատարակել է Սայաթ-Նովային նվիրված գիրք («Գուսանք», հ. 1): Ա-ի հավաքած հայ աշուղ. երգերի հաջորդ հատորը («Գուսանք», հ. 2) լույս է տեսել 1903-ին Թիֆլիսում (դստեր՝ Մ. Ախվերդյանի հրատարակությամբ):

Գրկ. *Ա վ ե տ ի ս յ ա ն Ա., Գևորգ Ախվերդյան [կյանքն ու գործունեությունը], Ե., 1963: Մ ա դ ո յ ա ն Գ., Գևորգ Ախվերդյան, Ե., 1969:*

ԱԿԻՄՈՎԱ (նախնիները՝ Հեքիմյան) Սոֆյա Վլադիմիրի [15(27).03.1887, Թիֆլիս–16.01.1972, Լենինգրադ], երգչուհի (քնարադրամատիկ. սոպրանո), մանկավարժ: Ուզբ. ԽՍՀ վաստ. արտիստ (1944): Ա-ի՝ երգարվ-ի նկատմամբ կողմնորոշմանը նպաստել են Նադեժդա *Պապայանը* և Հեղինե *Ղորղանյանը*: Ավարտել է Լայպցիգի կոնսերվատորիայի դաշնամուրի (1909) բաժինը: 1913-ին դիրիժոր Ս. Կասնիցկու հրավերով Ս. Պետերբուրգում ելույթ է ունեցել Ռ. Վագների ծննդյան 100-ամյակին նվիրված համերգում: Դասավանդել է Լենինգրադի կոնսերվատորիայում (1919–52, ընդհատումով, պրոֆ.՝1939-ից): 1913–29-ին՝ Լենինգրադի Մարիինյան թատրոնի առաջատար մեներգչուհի: Ռ. Վագների օպերաների դերերգերի՝ Ելիզավետա («Տանհոյզեր»), Էլզա («Լոենգրին»), Զիգլինդե («Վալկիրիա»), Բրյունհիլդե («Զիգֆրիդ»), Գուտրունե («Աստվածների կործանումը») լավագույն մեկնաբաններից էր, մասնակցել է նաև նրա «Թռչող հոլանդացին», «Տրիստան և Իզոլդա» օպերաների, Յ. Ս. Բախի «Տառապանքներն ըստ Մատթեոսի» պասսիոնի, Գ. Հենդելի «Սամսոն» օրատորիայի, Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմի», Ռ. Շումանի «Դրախտը և փերին» կանտատի համերգ. կատարումներին: Երկացանկում (շուրջ 600)՝ նաև Կոմիտասի, Ռ. Մելիքյանի, Ա. Սպենդիարյանի վոկալ գործերից:

Ա-ի երաժշտ. կերպարներն աչքի են ընկել հոգեբան. խորությամբ, վառ արտահայտչականությամբ, դրամատիզմով:

Երկ. *Воспоминания певицы, Л., 1978.*

Գրկ. *Ա ր զ ու մ ա ն յ ա ն Ա., Էջեր մի կյանքից, ՍՄ, 1969, № 6: Т и г р а н о в Г., Жизнь, отданная искусству: Очерк жизни и творчества С. В. Акимивой, Е., 1978.*

Ըստ Գևորգ Տիգրանովի

ԱԿՈՐԴ (ֆրանս.՝ accord, իտալ.՝ accordo, < լատ. accordo – համաձայնեցնել, այլ մեկնաբանությամբ՝ < հուն. χορδή – լար), հ ա մ ա հ ն չ յ ու ն, հնչյունների միաանություն. բաղկացած է տարբեր բարձրության (տարբանուն) 3 և ավելի հնչյուններից, որոնք դասավորված են տերցիաներով:

«Ա.» եզրույթը սահմանել է երաժշտության գերմանացի տեսաբան Ի. Գ. Վալտերը («Musicalisches Lexikon oder Musicalische Bibliothec», 1732): Մինչ այդ Ա. են համարվել տարբեր ինտերվալները (երբեմն՝ միայն *կոնսոնանս*) և միաժամանակ հնչող մի քանի հնչյունների համադրումը:

Դաս. հարմոնիայում Ա-ներն ընդգրկում են 3, 4 կամ 5 (հազվադեպ՝ 6, 7) հնչյուն: Ըստ հնչյունների քանակի և նրանց ինտերվալ. փոխհարաբերության՝ տարբերում են Ա-ի տերցկվինտակորդ (եռահնչյուն), սեպտակորդ (քառահնչյուն), նոնակորդ (հնգահնչյուն), ունդեցիմակորդ (վեցահնչյուն), տերցդեցիմակորդ (յոթահնչյուն) և այլ տեսակները:

Ե ռ ա հ ն չ յ ու ն ը կազմված է 3 (երբեմն՝ 2, կոչվում է թերի) հնչյունից, որոնք դասավորված են տերցիաներով: Կրճատ նշանակվում է $^{3}_{5}$ կամ $^{5}_{3}$, քանի որ հիմնական և կենտրոնի հնչյունների միջև տարածությունը կազմում է տերցիա, իսկ հիմնական և վերևի հնչյուններինը՝ կվինտա ինտերվալ (այստեղից՝ եռահնչյունի «տերցկվինտակորդ» անվանումը): Տարբերում են մաժոր և մինոր ձայնակարգերի աստիճաններից կազմվող եռահնչյունի մաժոր (կամ մեծ), մինոր (կամ փոքր), մծցվ. և փքցվ. տեսակները:

Մաժոր (կամ մեծ) եռահնչյունի 1-ին տերցիան (հիմնական և տերցիային տոների միջև) մեծ է, իսկ 2-րդը (տերցիային և կվինտային տոների միջև)՝ փոքր: Հիմքից հաշված՝ մաժոր եռահնչյունը կազմված է մեծ տերցիայից և մաքուր կվինտայից՝ կառուցված բնական մաժոր ձայնակարգի I, IV, V, բնական մինոր ձայնակարգի III, VI, VII, հարմոնիկ մինորի V և մելոդիկ մինորի IV ու V աստիճանների վրա:



Մինոր (կամ փոքր) եռահնչյունի 1-ին տերցիան փոքր է, 2-րդը՝ մեծ: Հիմքից հաշված՝ մինոր եռահնչյունը կազմված է փոքր տերցիայից և մաքուր կվինտայից՝ բնական մինոր ձայնակարգի I, IV, V, բնական մաժոր ձայնակարգի II, III, VI,

հարմոնիկ մինորի IV և մելոդիկ մինորի II աստիճանների վրա:

Մծցվ. եռահնչյունը կազմված է 2 մեծ տերցիաներից, հիմքից հաշված՝ մեծ տերցիայից և մծցվ. կվինտայից՝ հարմոնիկ մաժորի VI և հարմոնիկ ու մելոդիկ մինորի III աստիճանների վրա: Բնական մաժորում և բնական մինորում մծցվ. եռահնչյուններ չկան:



Փքցվ. եռահնչյունը կազմված է 2 փոքր տերցիաներից, հիմքից հաշված՝ փոքր տերցիայից և փքցվ. կվինտայից: Բնական մաժորի VII և բնական մինորի II աստիճանների վրա կառուցված եռահնչյուններ փքցվ. են: Փքցվ. եռահնչյունները կազմվում են նաև հարմոնիկ մաժորի II, մելոդիկ մինորի VI և հարմոնիկ ու մելոդիկ մինորների VII աստիճանների վրա:

Մաժոր (կամ մեծ) և մինոր (կամ փոքր) եռահնչյունները կոնսոնանս Ա-ներ են, քանի որ հիմքում ինտերվալները կոնսոնանս են (մեծ և փոքր տերցիա, մաքուր կվինտա), իսկ մծցվ. և փքցվ. եռահնչյունները՝ դիսոնանս, քանի որ նրանց կազմում կան դիսոնանս ինտերվալներ (մծցվ. կվինտա, փքցվ. կվինտա): Եռահնչյունն Ա-ի հիմն. տիպն է: Կոնսոնանս եռահնչյունը XVII–XIX դդ-ում եղել է ակորդագիտության հիմքը: Մաժոր և մինոր եռահնչյունները համարվել են եվրոպ. երաժշտության 2 գլխ. ձայնակարգ. կենտրոնները:

Ալտերացված մաժոր (կամ մեծ) և մինոր (կամ փոքր) ձայնակարգերի աստիճանների վրա կառուցվում են մի շարք այլ ալտերացված եռահնչյուններ: Ձայնակարգի I աստիճանի վրա կառուցված եռահնչյունը կոչվում է տոնիկային կամ տոնիկա (T), IV-ը՝ սուբդոմինանտ. կամ սուբդոմինանտա (S), V-ը՝ դոմինանտ. կամ դոմինանտա (D): Տոնիկայի սուբդոմինանտա և դոմինանտա հիմքով կառուցված հնչյունները գլխավոր են: Տոնիկան կազմված է կայուն հնչյուններից, որը մաժոր և մինոր ձայնակարգերում ամենակայուն միակ եռահնչյունն է:

Բազմաձայն երաժշտության մեջ տոնիկան հանդես է գալիս որպես ձայնակարգի գլխ. հենակետ, քանի որ մեղեդիական, ռիթմական և մետրական համապատասխան պայմաններում այն կարող է արտահայտել մտքի ավարտվածություն և եզրափակման համար ստեղծել անհրաժեշտ կայունություն: Սուբդոմինանտան և դոմինանտան թեև կոնսոնանս եռահնչյուններ են, սակայն համեմատաբար անկայուն են:

Եռահնչյունը լինում է հիմնական դրությամբ, երբ նրա հիմքում ընկած է հիմնական հնչյունը, և շրջված, երբ հիմքում ընկած են տերցիային կամ կվինտային տոները: Եռահնչյունն ունի 2 շրջվածք՝ 1-ինի հիմքում տերցիային տոնն է և կոչվում է սեքստակորդ (նշանակվում է՝ $_6$), 2-րդի հիմքում՝ կվինտային տոնը, և կոչվում է կվարտսեքստակորդ (նշանակվում է $^4_6$ կամ $^6_4$):



Սեպտակորդը կազմված է տերցիաներով դասավորված 4 տարբեր բարձրության հնչյուններից: Սեպտակորդը կառուցում են եռահնչյունին 1 տերցիա ավելացնելով: Որոշ դեպքերում սեպտակորդը կարող է լինել թերի (3 հնչյունից): Բնորոշվում է հիմքի և գագաթի միջև սեպտիմա ինտերվալով (այստեղից՝ անվանումը): Մաժոր և մինոր ձայնակարգերի աստիճաններից կազմված սեպտակորդները, ըստ ներքին կառուցվածքի (պայմանավորված՝ Ա-ի եռահնչյունով և սեպտիմայով), բաժանվում են 7 հիմնական տեսակների՝ մեծ մաժոր, փոքր մաժոր, մեծ մինոր, փոքր մինոր, մծցվ. կամ կիսամեծացված, կիսափոքրացված կամ ձգտող և փքցվ.:

եռահնչյուն

Մեծ մաժոր սեպտակորդի հիմքում մաժոր եռահնչյունն է, իսկ հիմքի և գագաթի միջև՝ մեծ սեպտիման: Հանդիպում է բնական մաժորի I և IV, բնական մինորի III և VI աստիճանների վրա:

եռահնչյուն

Փոքր մաժոր սեպտակորդի հիմքում մաժոր եռահնչյունն է, իսկ հիմքի և գագաթի միջև՝ փոքր սեպտիման: Հանդիպում է բնական մաժորի և հարմոնիկ ու մելոդիկ մինորի V, նաև բնական մինորի VII և մելոդիկ մինորի IV աստիճանների վրա:

Մեծ մինոր սեպտակորդի հիմքում մինոր եռահնչյունն է, իսկ հիմքի և գագաթի միջև՝ մեծ սեպտիման: Հանդիպում

է հարմոնիկ մաժորի IV և մելոդիկ մինորի I աստիճանի վրա:



Փոքր մինոր սեպտակորդի հիմքում մինոր եռահնչյունն է, իսկ հիմքի և գագաթի միջև՝ փոքր սեպտիման: Հանդիպում է բնական մաժորի II, III և VI, բնական մինորի I, IV և V, մելոդիկ մինորի II աստիճանների վրա:

Կիսափոքրացված կամ ձգտող սեպտակորդի հիմքում փքցվ. եռահնչյունն է, իսկ հիմքի և գագաթի միջև՝ փոքր սեպտիման: Հանդիպում է բնական մաժորի VII և մինորի II, հարմոնիկ մաժորի II և մելոդիկ մինորի VI և VII ասիճանների վրա:

Փքցվ. սեպտակորդի հիմքում փքցվ. են և՛ հիմքի եռահնչյունը, և՛ սեպտիմա ինտերվալը: Հանդիպում է հարմոնիկ մաժորի և հարմոնիկ մինորի VII աստիճանի վրա:

Սեպտակորդի հիմնական տեսակներից բացի՝ հանդիպում է նաև **կիսամեծացված** կամ **մծցվ.** տեսակը, որը կազմված է մծցվ. եռահնչյունից և մեծ սեպտիմայից: Հանդիպում է հարմոնիկ մաժորի VI և մելոդիկ մինորի III աստիճանների վրա:

Առավել գործածական են բնական մաժորի և հարմոնիկ մաժորի ու մինորի V (կոչվում է դոմինանտսեպտակորդ, նշվում է V_7 կամ D_7), II (նշվում է S_7 կամ II_7) և VII (կոչվում է ձգտող, նշվում է VII_7) աստիճանների սեպտակորդները (կոչվում են նաև գլխ.):

Սեպտակորդն ունի 3 շրջվածք՝ կվինտսեքստակորդ ($_5^6$ կամ $^6_5$, ակորդի հիմքում տերցիային տոնն է), տերցկվարտակորդ ($_3^4$ կամ $^4_3$, ակորդի հիմքում կվինտային տոնն է) և սեկունդակորդ ($_2$, ակորդի հիմքում սեպտիմային տոնն է): Առավել գործածական են դոմինանտսեպտակորդ (D_7), սուբդոմինանտսեպտակորդ (II_7) իրենց շրջվածքներով:

Ալտերացված մաժոր և մինոր ձայնակարգերի աստիճանների վրա հանդիպում են նաև մի շարք այլ սեպտակորդներ:

Սեպտակորդները (մասնավորապես՝ գլխ. սեպտակորդը, որը կազմված է միայն անկայուն հնչյուններից) դիսոնանս և անկայուն Ա-ներ են:

Նոնակորդը կազմված է 5 հնչյունից (նշանակվում է 9 թվանշանով): Տարբերում են նոնակորդի մեծ (նոնակորդի նոնային տոնը հիմնականի հետ կազմում է մեծ նոնա) ու փոքր (նոնակորդի նոնային տոնը հիմնականի հետ կազմում է փոքր նոնա) տեսակներ:

Առավել գործածական են բնական մաժորի և հարմոնիկ մինորի V աստիճանի վրա կառուցված դոմինանտային (D_9) և բնական մաժորի և հարմոնիկ մինորի II աստիճանի վրա կառուցված սուբդոմինանտային (S_9) նոնակորդները (գործածվում են միայն հիմնական դրությամբ, մյուսները և նրանց շրջվածքները հիմնականում պատահական զուգորդումներ են):

Ունդեցիմակորդը կազմված է տերցիաներով դասավորված 6 տարբեր բարձրության հնչյուններից (նշանակվում է 11 թվանշանով): Ունդեցիմակորդը կազմվում է սեպտակորդին ևս 1 տերցիա ավելացնելով: Որոշ դեպքերում ունդեցիմակորդը կարող է լինել թերի (5 հնչյունից): Բնորոշվում է հիմքի և գագաթի միջև ունդեցիմա ինտերվալով (այստեղից՝ անվանումը):

Տերցդեցիմակորդը կազմված է տերցիաներով դասավորված 7 տարբեր բարձրության հնչյուններից (նշանակվում է 13 թվանշանով): Տերցդեցիմակորդը կազմվում է ունդեցիմակորդին ևս 1 տերցիա ավելացնելով: Որոշ դեպքերում տերցդեցիմակորդը կարող է լինել թերի (6 հնչյունից): Բնորոշվում է հիմքի և գագաթի միջև տերցդեցիմա ինտերվալով (այստեղից՝ անվանումը):

Ա-ի կառուցվածքը բնորոշող հնչյունները (տոներ) կոչվում են ակորդային կամ հարմոնիկ տոներ:



Տերցիային կառուցվածքի Ա-ում յուրաքանչյուր տոն, ըստ տեղի, ունի անվանում և նշանակվում է համապատասխան ինտերվալի արաբ. թվանշանով՝ հիմնական տոն կամ պրիմա (1), տերցիային տոն կամ տերցիա (3), կվինտային տոն կամ կվինտա (5), սեպտիմային տոն կամ սեպտիմա (7), նոնային տոն կամ նոնա (9): Ունդեցիման և հաջորդ տերցիային շերտերը, որոնք խախտում են Ա-ի ֆունկցիոնալ հստակությունը, կիրառվում են որպես բացառություն: Ա-ային տոները կարող են հանդես գալ հարմոնիկ և մելոդիկ ֆիգուրացիաներում:

Տերցիաներով կամ նեղ դասավորությամբ Ա-ի ամենացածր տոնը կոչվում է հիմնական կամ պրիմային, հաջորդները՝ ըստ հիմնական տոնի հետ ունեցած ինտերվալ. հարաբերության՝ տերցիային (տերցիա), կվինտային (կվինտա), սեպտիմային (սեպտիմա), նոնային (նոնա), հազվադեպ՝ ունդեցիմային ևն: Ա-ային տոները նշանակվում են նաև ինտերվալներին համապատասխան արաբ. թվանշաններով: Ա-ի դասավորությունը փոխելիս (հնչյունների կրկնապատկում, եռապատկում ևն, օկտավա վեր կամ վար փոխադրում) տոները պահպանում են իրենց անվանումները: Ա-ի հիմնական տոնի փոխադրումը վերևի կամ միջին ձայն կոչվում է Ա-ի շրջվածք: Ա-ները կառուցվում են ձայնակարգի 7 աստիճանների վրա: Նշվում են հռոմ. թվանշաններով և համապատասխանում են ձայնակարգի այն աստիճանին, որի վրա կառուցվում է Ա.:

Ըստ դասավորության՝ Ա-ները լինում են խիտ (կոչվում է նաև նեղ), լայն և խառը: Նեղ է կոչվում Ա-ի այնպիսի դասավորությունը, որի դեպքում վերևի կից ձայների միջև (սոպրանո-ալտ, ալտ-տենոր) տարածությունը չի գերազանցում կվարտա ինտերվալը:

Լայն է կոչվում Ա-ի այնպիսի դասավորությունը, որի դեպքում վերևի կից ձայների միջև տարածությունը կվինտայից օկտավա է:

Ա-ի խառը դասավորության դեպքում ձայների մի զույգը (ներքևի կամ վերևի) դասավորված է նեղ, իսկ մյուսը՝ լայն (հանդիպում է եռահնչյունների և սեպտակորդների շրջվածքների դեպքում):

Ա-ի այնպիսի դասավորությունը, որի ժամանակ ձայներից որևէ մեկը իրենից վերև գտնվողից բարձր է կամ իրենից վար գտնվողից ցածր է, կոչվում է ձայների խաչաձևում, որը դասվում է արգելված քայլերի շարքին: Ա-ի դասավորությունը քառաձայն դարձվածքում որոշվում է միայն վերևի 3 (ալտ, տենոր, սոպրանո) ձայներով, ֆունկցիան՝ ձայնակարգի տոնիկայի և Ա-ի հարաբերակցությամբ, իսկ հնչյունակազմությունը (գունային)՝ ինտերվալների կազմությամբ, ռեգիստրով, նաև երաժշտ. համատեքստով: Ըստ բնական հնչյունաշարի օբերտոնների դասավորության՝ դաս. հարմոնիկ մտածողությունը հիմնված է տերցիային կառուցվածքի Ա-ների վրա:

Ա-ի մեղեդային (մելոդիկ) դրությունը բնորոշվում է հիմքի ձայնով:

Երբ Ա-ի հիմքում (ներքևի ձայնում) հիմնական տոնն է, անվանում են Ա-ի հիմնական դրություն: Ա-ի վերևի ձայնով (գագաթով, քառաձայն դասավորության մեջ՝ սոպրանոյով կամ մեղեդիով) բնորոշում են նրա մելոդիկ դրությունը: Եռահնչյունը կարող է լինել հիմնական (կամ պրիմայի), տերցիային (կամ տերցիայի), կվինտային (կամ կվինտայի) տոնի մելոդիկ դրությամբ, սեպտակորդը՝ նաև սեպտիմային (կամ սեպտիմայի), նոնակորդը՝ նոնային (կամ նոնայի), ունդեցիմակորդը՝ ունդեցիմային (կամ ունդեցիմայի) տոնի մելոդիկ դրությամբ: Ա-ի մելոդիկ դրությունը նշանակում են նրա ինտերվալներին համապատասխան արաբ. թվանշաններով՝ 1, 3, 5, 7, 9, 11:

Ա-ները միացվում են հարմոնիկ և մելոդիկ ձևերով: Հարմոնիկ միացման

դեպքում ընդհանուր տոները մնում են տեղում՝ միևնույն ձայնում: Հարմոնիկ ձևով կարող են միացվել կվարտա-կվինտային և տերցիային փոխհարաբերության բոլոր Ա-ները (եռահնչյուն, սեպտակորդ, նոնակորդ, ունդեցիմակորդ) և սեկունդային փոխհարաբերության սեպտակորդները, որտեղ կան ընդհանուր տոներ: Մելոդիկ միացման ժամանակ բոլոր ձայները շարժվում են՝ անկախ ընդհանուր տոների առկայությունից: Սեկունդային փոխհարաբերության եռահնչյունները միացվում են միայն մելոդիկ ձևով, քանի որ նրանք չունեն ընդհանուր տոն, կվարտա-կվինտային և տերցիային փոխհարաբերության եռահնչյուններն ու սեպտակորդները՝ թե՛ հարմոնիկ, թե՛ մելոդիկ ձևով: Ա-ի այն դրությունը, երբ նրա հիմքում հիմնական



տոնի փոխարեն տերցիային, կվինտային, սեպտիմային տոնն է, կոչվում է Ա-ի շրջվածք: Տարբերում են Ա-ի սեքստակորդ, կվինտսեքստակորդ, կվարտսեքստակորդ, տերցկվարտակորդ, սեկունդակորդ շրջվածքները:

XX դ-ից Ա-ների կառուցվածքն ու փոխհարաբերությունները ենթակվել են ձևափոխման. աճել է տերցիային կառուցվածքի Ա-ների բաղկացուցիչ տոների քանակը, առավել գործածական դարձել՝ ձայնակարգի բոլոր աստիճանների սեպտակորդները, նոնակորդները, ունդեցիմակորդները և տերցդեցիմակորդները ևն: Վերջիններս լինելով բազմաֆունկցիոնալ դիսոնանսող համահնչյուններ՝ առավել գունեղ ու լարված հնչողություն ունեն և փոխարինում են նույն աստիճանի եռահնչյուններին:

Ակորդեոն

XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին Ա.Ն. Սկրյաբինը, Չ. Այվզը և Ա. Շյոնբերգը ձգտել են խուսափել դաս. երաժշտության լեզվի կազմավորման օրինաչափություններից, համարելով, որ մաժորամինորային համակարգի արտահայտչամիջոցներն սպառված են: Նրանց երաժշտության ոճ. առանձնահատկություններից մեկը դիսոնանսների ազատ կիրառումն է անկախ կոնսոնանսներից (ըստ վերջինների օգտագործման սկզբունքի և տոնայնական կենտրոնի):

Դոդեկաֆոն տեխնիկայում Ա. կորցրել է ինքնուրույնությունը՝ ածանցվելով հնչյունների հաջորդականությունից՝ սերիայից և նրա պոլիֆոնիկ ձևափոխումներից:

Հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում լայնորեն կիրառվում են կվարտա-կվինտային, կվինտա-օկտավային, կվարտա-սեկունդային և այլ Ա-ներ:

ԱԿՈՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտության տեսության բաժին. ուսումնասիրում է տերցիային կառուցվածքի ակորդները՝ իրենց հատկանիշներով (տեսակ, կառուցվածք, դասավորություն, մելոդիկ դրություն ևն)՝ անկախ նրանց ֆունկցիոնալ հարաբերություններից: Ա. մասամբ՝ երաժշտության տարր. տեսության, ամբողջությամբ հարմոնիայի բաղկացուցիչ մասն է:

ԱԿՈՐԴԵՈՆ (ֆրանս.՝ accordéon), 1. ձախ ձեռքի համար պատրաստի ակորդներով օդահունչ լեզվակավոր գործիքների ընդհանուր անվանումը: Արտոնագիրը տրվել է Ֆ. Բուշմանին (1822, Բեռլին), 2-րդը՝ Կ. Դամիանին (1829, Վիեննա)՝ գործիքն անվանելու համար: 1910-ական թթ-ից «Ա.» անվանել են միայն խրոմատիկ հնչյունաշարով հարմոնները:

Ա-ները տարբերում են ըստ մեծության: Մեծ Ա. աջ կողմում ունի 41 ստեղն (փոքր օկտավայի ֆա-ից 3-րդ օկտավայի լա), ձախում՝ 100–140 կոճակավոր ստեղներ: Ա-ների մեծ մասն ունի ռեգիստրային փոխարկիչներ, որոնցով հնարավոր է կրկնապատկել բոլոր հնչյունները ունիսոնով կամ օկտավայով, փոխել հնչյունների տեմբրը: Դիապազոնի մեծության պատճառով նոտագրվում է 2 հնգագծի վրա՝ սոլ-ի և ֆա-ի բանալիներով:

2. Ռուսաստանում հաճախ «Ա.» են անվանում նաև աջ ձեռքի համար դաշնամուրի տիպի ստեղնաշարով բայանը:

«ԱԿՈՒՆՔ», ժող. երգի-պարի անսամբլ, պետական: Հիմնադրվել է 1976-ին Երևանում (հիմնադիր-ղեկ.՝ Սամրո Մուրադյան, հոր՝ հայրիկ ***Մուրադյանի*** աջակցությամբ): Անսամբլը ղեկավարել են նաև Ջավեն ***Թազակյանը*** (1987–88), Հ. Փանոսյանը (1988–2003), Ս. Ալավերդյանը (2003–16), 2016-ից՝ Արթուր ***Շահնազար***-

յանը: Առաջին համերգը տեղի է ունեցել 1977-ին: Անսամբլը բաղկացած է շուրջ 30 երաժիշտ-կատարողներից (Սարգիս Բաղդասարյան, Հասմիկ Հարությունյան, Արեգ Միքայելյան, Նարինե Զաքարյան, Անդրանիկ Հովհաննիսյան, դուդուկահար Գագիկ Քոչարյան և ուր.): Երկացանկում՝ Սասունին, Մուշին, Վանին, Ծովքին, Բայազետին, Էրզրումին, Շատախին, Իգդիրին, Տարոնին, Ալաշկերտին, նաև ՀՀ մարզերին բնորոշ ժող., ծիս., պատմահայրենասիր., ավանդ. թեմատիկ երգերի ու պարերի բացառիկ նմուշներ («Ուստա չալե», «Յարըմ Գորանի», «Լաչինի Մանան», «Ախչի Հոռոմ», «Անուշ-անուշ», «Զատիկ-զատիկ», «Տրինա», «Ուրֆանե», «Արի՛ Զորավար», «Հոյ Նար», «Շիրխանի», «Նավավարի երգը», «Քինչ ու զինչ տամ», «Սանդի երգը», «Հալել եմ յեղը», «Մեր թագվորն ինչ պիտեր», «Հորովել», «Արցախի կալերգ», «Շախկր-շուխկր» ևն): Անսամբլի համերգ. ծրագրում են նաև Կոմիտասի քիչ կատարված երգերը, նաև «Սասունցիների պար», «Գովնդ», «Քոչարի», «Յարխուշտա» և այլ պարեր: Նվագախումբը բաղկացած է ժող. գործիքներից՝ երկուական դուդուկ (զուռնա, շվի, սրինգ, բլուլ) և դհոլ (թմբուկ):

«Ա.» մասնակցել է մի շարք փառատոների, մրցույթների և մրցանակաբաշխությունների (Ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության «Տարվա լավագույն ազգագրական անսամբլ», 2007): Թողարկել է ձայնասկավառակ (2010, Երևան): Անսամբլի (նաև նրա մասնակցությամբ) երգացանկի հիման վրա նկարահանվել են «Երգի ակունքներում», «Տարոն աշխարհ», «Երգի վերադարձը» երաժշտ. ֆիլմերը:

«Ա.» հյուրախաղերով շրջագայել է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, ՌԴ-ում, Հնդկաստանում, Էստոնիայում, Բելգիայում, Սիրիայում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Թուրքմենստանում, Թուրքիայում և այլուր:

ԱՀԱՐՈՆՅԱՆ Անթառամ (Գեղուհի, 1924, Մինտեվիդեո – մ. թ. անհտ), դաշնակահարուհի: Աշակերտել է լեհ դաշնակահար Կոլիշերին, կատարելագործվել գերմանացի դաշնակահար Վ. Գիզեքինգի ղեկավարությամբ: 1952-ին տեղափոխվել է Բուենոս Այրես, հաճախել նշանավոր դաշնակահարներ Մալբուխի և Կոնսուելոյի, ապա՝ Լ. Սպենայի կոմպոզիցիայի դասընթացներին: Հանդես է եկել մենահամերգներով (երկացանկում՝ Ֆ. Լիստի, Ռ. Շումանի, Վ. Ա. Մոցարտի, Կ. Սեն-Սանսի, Կ. Դեբյուսիի, Լ. վան Բեթհովենի գործերից), ելույթներ է ունեցել նաև Բուենոս Այրեսի նշանավոր «Պեսինա» լար. քառյակի, իսպանացի դաշնակահարուհի Ն. Զիակոսայի (դուետ) և ուր. հետ: Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում կատարել է Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Կ. Զաքարյանի տրիոների, Է. Հովհաննիսյանի ջութակի և դաշնամուրի սոնատների դաշնամուրի նվագամասերը, հանդես եկել համերգ-դասախոսություններով՝ նվիրված Կոմիտասին, Ա. Սպենդիարյանին, Ա. Տիգրանյանին, Սայաթ-Նովային, Ա. Խաչատրյանին, Ա. Բաբաջանյանին: 1960-ին Մոնտեվիդեոյի «Սոդրի» պետ. թատերասրահի գարնան. համերգաշրջանը բացվել է հայկ. երաժշտությանը նվիրված համերգով, որի կազմակերպիչն ու մասնակիցն էր Ա.: 1975-ից՝ Ուրուգվայի երաժշտ. խորհրդի և դաշնակահարների միջազգ. մրցանակաբաշխության ընդհանուր քարտուղար, Հվ. Աֆրիկայում կազմակերպված միջազգ. փառատոների (1982, 1984, 1986, 1988) հանձնախմբերի անդամ:

Անթառամ Ահարոնյան

«Ակունք» ժող. երգի-պարի անսամբլը

3.

Արթուր Ահարոնյան

Ռուբեն Ահարոնյան

Վահև Ահարոնյանը ելույթի պահին

Երևանում հանդես է եկել Զոյա Պետրոսյանի (ջութակ) և Ռուբեն Կարապետյանի (կլառնետ) հետ՝ եռյակով:

ԱՀԱՐՈՆՅԱՆ Արթուր Էմանուելի (ծ. 1962, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար: Ֆրանսիայի Դ. Միյոյի անվ. կոնսերվատորիայի պրոֆ. (2002): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1986), կոմպոզիցիայի (1987, Է. Բաղդասարյանի, Տ. Մանսուրյանի դասարաններ) բաժինները և ասպիրանտուրան (1989): Որպես դաշնակահար և կոմպոզիտոր՝ մասնակցել է միջազգ. փառատոների, վարել վարպետության դասեր:

Հեղինակ է «Գրազ» կամեր. օպերայի (1990), «Ձոնաթանի բալլադը» (2004) սիմֆ. պոեմի, ջութակի 2 կոնցերտի (1-ինը՝ 2007, նվիրված է Սերգեյ Խաչատրյանին, 2-րդը՝ 2011, լար. նվագախմբի և հարված. գործիքի համար), կինոյի և թատրոնի երաժշտության («Անտիգոնե», 1986, «Հայաստանի վերջին արքաները», 1994, «Օլիմպի ճիչը», 2015, ևն), երգերի և այլ գործերի:

Պ. Լանտյեի անվ. կամեր. (1996, Փարիզ), կոմպոզիտորների (2007, Անտիբ) միջազգ. մրցույթների 1-ին մրց-ներ ևն:

ԱՀԱՐՈՆՅԱՆ Ռուբեն Միքայելի (ծ. 24.05.1947, Ռիգա), ջութակահար: ՀՀ ժող. արտիստ (1980): Ավարտել է ՄՊԿ (1971, Յ. Յանկելևիչի դասարան) և ասպիրանտուրան (1974, ղեկ.՝ Լ. Կոգան): 1971–2000-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1986-ից): 1983–1996-ին՝ Հայաստանի կամեր. անսամբլի գեղ. ղեկ., 1996-ից՝ Մոսկվայի Ա. Պ. Բորոդինի անվ. լար. քառյակի ղեկ. և 1-ին ջութակ: Հայ մի շարք կոմպոզիտորների ջութակի երկերի առաջին կատարողն է: Հյուրախաղերով հանդես է եկել բազմաթիվ երկրներում:

Այսրկովկաս. (1-ին մրց., 1965, Թբիլիսի), Համամիութ. (2-րդ մրց., 1965, Մոսկվա), միջազգ. [Պ. Ի. Չայկովսկու անվ. III և IV (6-րդ մրց., 1966, Մոսկվա, 2-րդ մրց., 1974), Ջ. Էնեսկուի անվ. (2-րդ մրց., 1970, Բուխարեստ), Մոնրեալի (1-ին մրց., 1972)] մրցույթների դափնեկիր, ՀԼԿԵՄ (1968), ՀՀ (1988), ՌԴ (2001) Պետ. մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), ՄՆ ոսկե (2012) մեդալներ:

Գրկ. *Золотова И., Рубен Агаронян, Е., 1989.*

ԱՀԱՐՈՆՅԱՆ Վահե Գրիգորի (20.10.1933, Սոֆիա–15.09.1994, Երևան), դաշնակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1974): Հայրենադարձել է 1946-ին: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1957): 1960–94-ին դասավանդել է նույն կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1987-ից, ամբիոնի վարիչ՝ 1987–94), միաժամանակ՝ Վանաձորի, Երևանի երաժշտ. ուսումնարաններում, դպրոցներում: Համագործակցել է դիրիժորներ Դ. Խանջյանի, Գ. Օբերֆրանկի (Հունգարիա), մենակատարներ Ժ. Տեր-Մերգերյանի, Ս. Նավասարդյանի, Վ. Մոկացյանի, Ն. Նովիկի, Ռ. Խարաջանյանի և ուր. հետ: Նվագացանկում՝ եվրոպացի, հայ դաս. և ժամանակակից կոմպոզիտորների երկերից:

Համամիութ. (1957, Մոսկվա), Այսրկովկաս. (1960, Բաքու) մրցույթների դափնեկիր:

Գրկ. *Будагян А., Ваге Агаронян, Е., 2011.*

ԱՂԱԲԱԲՈՎ Սերգեյ Արտեմի [25.10.1926, Մախաչկալա (Դաղստան)–23.10.1959, ավիավթարի զոհ], կոմպոզիտոր: Ավարտել է Մախաչկալայի երաժշտ. ուսումնարանի խմբավարության և դիրիժորության (1951), ՄՊԿ կոմպոզիցիայի (1956, Ա. Ն. Ալեքսանդրովի դասարան) բաժինները, սովորել ասպիրանտուրայում (ղեկ.՝ Յ. Ա. Շապորին): Նպաստել է Դաղստանի պրոֆեսիոնալ երաժշտ. մշակույթի զարգացմանը. մասնակցել է բանագիտ. արշավախմբի աշխ-ներին: Դաղստան. առաջին սիմֆոնիայի (1959) հեղինակն է: Գրել է նաև սյուիտ՝ ջութակի և դաշնամուրի (1951), «Դաղստանյան սյուիտ» (1954, լեզգիների ժող. մեղեդիների թեմաներով)՝ նվագախմբի, «Պոեմ-ռապսոդիա» (1959)՝ ջութակի և դաշնամուրի համար, «Անցյալի պոեզիայից» (1956), «Հայկական պոեզիայից» (1957–58) վոկալ շարքերը, «Աստ ազատության մասին», «Աշխատանքի օրը» (երկուսն էլ՝ 1958) կանտատները, նաև երգեր և այլ գործեր: Մշակել է ժող. երգեր (1958, ժող.):

Երկ. *Деятели музыкального искусства Дагестана, Махачкала, 1960.*

Գրկ. *Якубов М., Сергей Агабабов, М., 1966.*

ԱՂԱԲԱԼՅԱՆ Լիդիա Սիմոնի (ծ. 07.10.1933, Լենինական), կոմպոզիտոր: ԽՍՀՄ ԿՄ անդամ (1958): Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ը (1957, Ն. Ի. Պեյկոյի և Ա. Խաչատրյանի դասարան): 1959–66-ին աշխատել է Նովոսիբիրսկի կոնսերվատորիայում, 1966–77-ին՝ Քիշնևի արվ-ի պետ. ինստ-ում, ապա վերադարձել է Հայաստան: 1973–74-ին ստեղծել է «Մանկական

անկյուն» դաշնամուր. շարքը, որը շատ բարձր է գնահատվել:

Գրել է «Արա Գեղեցիկ» (1958) օպերան, սյուիտ (1956)՝ նվագախմբի համար, դաշնամուր. կվինտետ (1955), լար. կվարտետ (1954), տրիո (1953, տավիղ, ֆլեյտա և ալտ), դաշնամուր. վարիացիաներ (1951), պիեսներ՝ մանուկների (1950), նաև ջութակի և դաշնամուրի (1951) համար:

ԱՂԱՋԱՐՅԱՆ Միլդա Միտրևի (ծ. 15.03.1943, Երևան), տավղահարուհի, մանկավարժ: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1995): Ավարտել է Մոսկվայի Գնեսինների

Միլդա Աղաջարյան

անվ. երաժշտ. ուսումնարանը (1962), ՄՊԿ (1967) և ասպիրանտուրան (1970): 1962–91-ին դասավանդել է Մոսկվայի Ի. Օ. Դունաևսկու անվ. մանկ. (դաշնամուր, տավիղ) երաժշտ. դպրոցում, Գնեսինների անվ. երաժշտ. (տավիղ) ուսումնարանում: Գնեսինների անվ. երաժշտ. ակադ-ի դոցենտ (1991-ից), ապա՝ պրոֆ.: 1991–94-ին, միաժամանակ՝ Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվ. մեծ սիմֆ. նվագախմբի տավղահարների խմբի համակարգող: Հանդես է եկել նաև մենահամերգներով անվանի երաժիշտ-կատարողների հետ: Վարպետության դասեր է վարել Ճապոնիայում (1995, 1996, 2009), Ֆրանսիայում (2001), Մեծ Բրիտանիայում (2004, 2008), Իռլանդիայում (2005), Հունգարիայում (2005, 2007), Շվեյցարիայում (2006):

Բազմաթիվ միջազգ. մրցույթների և մրցանակաբաշխությունների հանձնախմբերի անդամ՝ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հունգարիայում, Իսպանիայում, Ճապոնիայում, ՌԴ-ում, Ուելսում: «Ռուսական կատարողական արվեստը» հիմնադրամի դափնեկիր (2002–03 և 2004–05):

ԱՂԱՄԱԼՅԱՆ Սարգիս Սերգեյի (ծ. 19.10.1978, Երևան), երգիչ (տենոր): ՀՀ վաստ. արտիստ (2017): Սովորել է Երևանի Մանկ. ձայնի պահպանման երաժշտ. դպրոցում (1986–96), ավարտել ԵՊԿ (2001, երկուսն էլ՝ Վ. Հարությունյանի դասարան): 1996–2015-ին երգել է Մայր աթոռ Սբ Էջմիածնի, 1996-ից՝ Հայաստանի պետ. (2003-ից՝ մեներգիչ) երգչախմբերում, 2005–08-ին՝ ԵՊԿ օպեր. ստուդիայի, 2007-ից՝ ԵՕԲԹ մեներգիչ: Որպես հրավիրյալ մեներգիչ հանդես է եկել «Գոհար» սիմֆ. նվագախմբի և երգչախմբի, Հայաստանի ֆիլհարմոնիկ, Երիտասարդ. և կամեր. նվագախմբերի հետ:

Դերերգերից են՝ Ռինուչչո, Պանգ, Կավարադոսի (Ջ. Պուչչինիի «Ջանի Սկիկկի», «Տուրանդոտ», «Տոսկա»), Էդգարդո, Պողիկտոս (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր», «Պողիկտոս»), Տուրիդու (Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ»), Պոլլիոն (Վ. Բելլինիի «Նորմա»), Ռադամես (Ջ. Վերդիի «Աիդա), Տիրիթ (Տ. Չուխաճյանի «Արշակ Բ»), Սարո, Սանթուր (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ»), Շեյխ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Քրիստոս (Է. Սադոյանի «Գրիգոր Լուսավորիչ»), Դահիճ, Ճիվաղ, Մունետիկ (Ա. Տերտերյանի «Երկրաշարժ»), Ծաղրածու (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա») ևն: Կամեր. երկացանկում՝ Մ. Եկմալյանի, Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ա. Տիգրանյանի, Վ. Կոտոյանի երկերից:



Սերգեյ Աղաբաբով

Սարգիս Աղամալյանը կլոյթի պահին

ԱՂԱՅԱՆ Մուշեղ Ղազարոսի (17.11.1883, Թիֆլիս–11.09.1966, Երևան), երաժշտագետ, կոմպոզիտոր, երգիչ (բարիտոն): Գրող Ղազարոս Աղայանի որդին: Արվեստագիտ. թեկնածու (1957): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1939): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա աշակերտել Մակար *Եկմալյանին*: Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի երգեցողության (1911) և ՄՊԿ խմբավարության (1930) բաժիններում: 1930-ից ապրել է Երևանում: 1934–39-ին՝ ՀԿՄ նախագահ, 1939–53-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության և երաժշտության տեսության բաժնի գիտաշխատող: Համերգներով հանդես է եկել Երևանում, Թիֆլիսում և Մոսկվայում:



Մուշեղ Աղայան

Շարա *Տալյանի* հետ կազմել ու հրատարակել է Սայաթ-Նովայի (1946) և Զիվանու (1955) երգերի նոտագրած ժող-նեղը, կազմել է Կոմիտասի «Ազգագրական ժողովածու»-ի 2-րդ գիրքը (1950), խմբագրել Ս. Մելիքյանի «Հայ ժողովրդական երգեր ու պարեղանակներ» (հ. 1, 2, 1949,



Սերգեյ Աղաջանյան



Լորետա Աղասարյան

Աղեղ

1952), Շերամի երգերի (1959) ժող-ները: Գրել է երգեր, ռոմանսներ, խմբերգեր, ձայնագրել ու մշակել ժող. և գուսան. երգեր («Ջան յարո ջան», «Կարմիր վարդ», «Ջաղցի դռնով», «Գյուլիզարի բաղի բլբուլը», «Հայաստան» ևն):

Երկ. *Երաժշտական ակնարկներ, Մ., 1927: Հայ գուսանները և գուսանա-աշուղական արվեստը, Ե., 1959:*

ԱՂԱՋԱՆՅԱՆ Սերգեյ Համբարձումի [01.09.1929, Փեհլեևի (այժմ՝ Էնզելի՝ Իրան)–09.01.2005, Երևան], կոմպոզիտոր, ջութակահար: ՀԿՄ անդամ (1975-ից): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1981): Պրոֆ.՝ 1987-ից: Ավարտել է Թեհրանի կոնսերվատորիայի ջութակի (1950, Ս. Խուցիևի դասարան), ԵՊԿ ջութակի (1959, Ա. Շամշյանի դասարան), կոմպոզիցիայի (1975, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1959–71-ին՝ ՀԽՍՀ Հեռուստառադիոպետկոմի երաժշտ. հաղորդումների խմբ., 1964-ից՝ ԵՊԻ կամեր. նվագախմբի ղեկ.: 1959-ից դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: Գրել է «Կոնցերտինո» (1969)՝ 2 կլառնետի և դաշնամուրի, «Պոլիմոնոդիաներ» (1972–79, ըստ «Հավիկ», «Հավուն-հավուն» և միջնադար այլ տաղերի, նաև շարականների)՝ լար. նվագախմբի, «Խաչքար» (1972)՝ ֆլեյտայի, կլառնետի և ֆագոտի, «Պոլիմոնոդիկ կանտատ» (1975)՝ երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, «Մենախոսություն» (1982) սոնատ-ֆանտազիան՝ մենանվագ թավջութակի, կոնցերտ (1986)՝ փող. նվագախմբի, «Օմար Խայամի քառյակները» (1971) երգաշարը՝ ձայնի և դաշնամուրի համար, կանտատ (ըստ Խոսրովիդուխտի շարականի), խմբերգեր («Մաշտոցյան 4 երգ», 1972, «Պոեմ՝ նվիրված հողին», 1974, «Ողջո՛ւյն, Արարատ», 1994, ևն), վոկալ գործեր («Ակնա կոունկ», 1972, «Հայ արի զինվոր», 1972, «Ձոն հիշատակի», 1997), «Երեք պիես դաշնամուրի համար» («Լքված վանքը», «Մամոռոտ տապանաքարի մոտ», «Տագնապ», 2001):

ՀԼԿԵՄ (1976), Ս. Ս. Պրոկոֆևի անվ. 3-րդ միջազգ. մրցույթի (1999, Ս. Պետերբուրգ) 1-ին մրց-ներ:

ԱՂԱՋԱՆՈՎ Արտեմ Պետրոսի (15.05.1913, Կարս–29.08.1989, Մոսկվա), երաժշտագետ, մանկավարժ: Ուզբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1950): Արվեստագիտ. թեկնածու (1952): Պրոֆ. (1987): Ավարտել է ՄՊԿ բանֆակը (1930), ՄՊԿ (1939, Ս. Ի. Սպոսոբինի, Լ. Ա. Մաազելի դասարաններ): Սովորելու տարիներին դասավանդել է ՄՊԿ-ին կից երաժշտ. ուսումնարանում, 1939-ից՝ ՄՊԿ-ում (փոխտնօրեն՝ 1948–51-ին), միաժամանակ, 1939–41-ին՝ ԽՍՀՄ ռադիոպետկոմի երաժշտ. բաժնի գլխ. խմբ.: Սաներից է նաև Առնո *Բաբաջանյանը*:

Հեղինակ է «Սոլֆեջոյի դասընթաց» (1965, 1974, 1985) ուս. ձեռնարկի, սիմֆ., խմբերգ., կամեր. երկերի, կինոյի և թատրոնի երաժշտության, մշակել է հայկ., ուզբ., թուրքմ. ժող. երգեր: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

Որդին՝ Արտեմ Ա. (ծ. 03.02.1958, Մոսկվա), կոմպոզիտոր, դաշնակահար: Ավարտել է ՄՊԿ կոմպոզիցիայի (Ս. Բալասանյանի, Ն. Ն. Սիդելնիկովի դասարաններ) և դաշնամուրի (Վ. Վ. Գոռնոստաևայի դասարան) բաժինները: Գրել է սիմֆ. գործեր:

Երկ. *Сборник двухголосных диктантов из музыкальной литературы, [ноты], М., 1947; Русские народные музыкальные инструменты, М., 1949; Четырехголосные диктанты, М., 1961.*

ԱՂԱՍԱՐՅԱՆ Լորետա Սամվելի (31.08.1946–30.01.2017, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու: 1958-ից սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1964-ից՝ ԵՊԿ երաժշտության տեսության, ապա՝ դաշնամուրի բաժիններում, 1970-ից՝ Մոսկվայի արվ-ի պատմության ինստ-ի ասպիրանտուրայում:

1974-ից դասավանդել է ՀՊՄՀ-ում (1987–2008-ին՝ երաժշտության տեսության և մեթոդիկայի, 2015–17-ին՝ երաժշտության մանկավարժության ամբիոնների վարիչ), 1987–89-ին՝ ԵՊԿ-ում:

Երկ. *Երաժշտական երկերի վերլուծության, Ե., 1998: Вопросы формообразования в симфониях Г. Малера, Е., 2002.*

ԱՂԵՂ (իտալ.՝ arco – աղեղ), լար. երաժշտ. գործիքների մաս. փայտե ձողիկի ծայրերին (գլխիկին և կոճղիկին) ամրացված արհեստ. կամ ձիու մազերի փունջ, որը հպվելով (քսվելով) լարերին՝ հնչեցնում է դրանք: Պրոֆեսիոնալ աղեղն. երաժշտ. գործիքների Ա-ները բաղկացած են աղեղնափայտից (ճկուն փայտ), որի վերևի ծայրն ավարտվում է S-աձև գլխիկով, ստորինը՝ կոճղիկով, և մետաղե պտուտակից, որը կոճղիկն ամրացնում է աղեղնափայտին: Պտուտակը շարժվելով՝ կոճղիկը որոշակիորեն

մոտեցնում է աղեղնափայտի ծայրին՝ անհրաժեշտ չափով ձգելով մազափունջը: Նվագելուց առաջ մազափնջին բևեկնախեժ են քսում՝ ավելի մաքուր և հնչեղ ձայն ստանալու համար: Առավել հագեցած և արտահայտիչ հնչողության համար Ա. հիմնականում հպում են հենարանի (իշուկ) և նվագակոթի միջակա տարածության կեսին, հնչեղ և սուր հնչյունի համար նոտաներում նշվում է սուլ պոնտիչելլո (իտալ.՝ sul ponticello, կրճատ՝ sul p – հենարանի մոտ)]՝ լարակալին մոտ, մեղմ և նուրբ հնչյունի համար՝ նվագակոթին նոտաներում նշվում է սուլ տաստո (իտալ.՝ sul tasto, կրճատ՝ sul t – նվագակոթի մոտ)]: Չոր, հատու հնչյուններ ստանալու համար աղեղնափայտով հարվածում են լարերին (նոտաներում նշվում է կոլ լենյո, իտալ.՝ col legno – փայտով):

ԱՃԵՄՅԱՆ Ալեքսանդր Վարդանի (25.08.1925, Թիֆլիս–10.10.1987, Երևան), կոմպոզիտոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1984): Վարդան Մ. ***Ամեմյանի*** որդին, Վարդան Ա. ***Ամեմյանի*** հայրը: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1955, Գ. Եղիազարյանի դասարան): 1971–87-ին դասավանդել է նույն կոնսերվատորիայում: Հայկ. սիմֆ. երաժշտություն (2-րդ սիմֆոնիա) առաջինն է ներմուծել ձայնը (սոպրանո):

Ա-ի ստեղծագործություններն առանձնանում են բովանդակության խորությամբ, գեղ. մտահղացումների բազմազանությամբ: Գրել է 7 սիմֆոնիա (1955–84, 5-րդը՝ «Սասունցի Դավիթ»՝ երգչախմբի և նվագախմբի համար, 6-րդը՝ «Յոթ երգ Հայաստանի մասին»՝ ըստ Գ. Էմինի, 7-րդը՝ «Դասական»), «Հովվերգական սիմֆոնիետ» (1972), «Տոնական նախերգանք» (1986), պոեմ-ռապսոդիա (1957)՝ սիմֆ. նվագախմբի համար, բալետ. սյուիտ (1961), կոնցերտինոներ (1949՝ ջութակի և դաշնամուրի, 1951՝ շեփորի և դաշնամուրի համար), «Խոհեր» (1969, Հովհաննես Թլկուրանցու խոսքերով), վոկալ-գործիք. շարք («Տաղ գարնան», «Բանք սիրոյ», «Տաղ վասն հոգւոյ», «Աղօթք»), ռոմանսներ, էստրադ. երգեր, թատրոնի և կինոյի երաժշտություն: Ա-ի «Լորիկ», «Տոնական», «Երեկոյան Երևան» երգերին բնորոշ են քնարականությունն ու հուզականությունը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1975):

Գրկ. *Զուրաբյան Ժ., Ամեմյան Ալեքսանդր (1925–1987), Ե., 1997:*

ԱՃԵՄՅԱՆ Արուս Վարդանի (ծ. 16.05. 1983, Երևան), դաշնակահարուհի: ՀՀ վաստ. արտիստ (2014): Վարդան Ա. ***Ամեմյանի*** դուստրը: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (2000), ԵՊԿ (2004) և ասպիրանտուրան (2005, ղեկ.՝ Ռ. Թանդիլյան): Մասնակցել է Դ. Պոլակի, Ն. Ա. Պետրովի, Գ. Չեռնի-Ստեֆանսկայի, Մ. Ս. Վոսկրեսենսկու, Ն. Յուժանինի, Օ. Մ. Յաբլոնսկայայի, Մ. Պրեսլերի և Ն. Սվետլանովայի վարպետության դասընթացներին: Եղել է Վ. Թ. Սպիվակովի միջազգ. բարեգործ., «Կոնստանտին Օրբելյան» հիմնադրամների, International Cultural Exchange Fund-ի առաջին կարգի կրթաթոշակառու:

Ալեքսանդր Ամեմյան

1996-ից մենահամերգներով հանդես է եկել ՀՀ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Կիպրոսում, Չինաստանում, Կանադայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Բրազիլիայում, Ուրուգվայում և այլուր: 1997-ից Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ կատարել է մի շարք կոմպոզիտորների կոնցերտներ (Կ. Սեն-Սանսի 2-րդ, Ս. Ս. Պրոկոֆևի 1-ին, Մ. Ռավելի 1-ին, Ս. Վ. Ռախմանինովի 2-րդ, Վ. Ա. Մոցարտի 20-րդ, նաև Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի և ուր.): Հանդես է եկել «Մոսկվայի վիրտուոզներ» անսամբլի հետ (ղեկ.՝ Վ. Թ. Սպիվակով, 2001, Երևան): 2003-ին Մոսկվայի կամեր. նվագախմբի հետ (գեղ. ղեկ.՝ Կ. Հ. Օրբելյան) շրջագայել է (6 համերգ) Բրազիլիայում և Ուրուգվայում. երկացանկում՝ Դ. Դ. Շոստակովիչի 1-ին և Յ. Հայդնի Ռե մաժոր կոնցերտնեը: 2003-ին հրավիրվել է կատարելու Ա. Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտը «Murfreesboro» ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ (ղեկ.՝ Լ. Հարվին):



Արուս Ամեմյան

Մասնակցել է Կոլմարի (2001, Ֆրանսիա), Օքսֆորդի 3-րդ (2001, Անգլիա), «Մողենայի գիշերներ» (2004, Իտալիա) միջազգ. փառատոներին: Թողարկել է լազեր. ձայներիզ (2008, AMC ընկերություն), ձայնասկավառակ (2008): «Ամադեուս-95» մրցույթի, «Իմ հանրապետությունը 5 տարեկան է» փառատոնի (երկուսն էլ՝ 1995), «Շնորհալիներ-98» մրցույթի 1-ին (1998), Ա. Բաբաջանյանի անվ. հանրապետ. մրցույթի 1-ին և Հատուկ (2000), «International Cultural Exchange Fund»-ի 1-ին (2000), ՀՀ նախագահի (2009) մրց-



Գևորգ Աճեմյան

ներ, Ֆ. Շոպենի մահվան 150-ամյակին նվիրված դաշնակահարների միջազգ. համաժողովի «Լավագույն մենակատար» դիպլոմ (ԱՄՆ, 1999):

ԱՃԵՄՅԱՆ Գևորգ Վարդգեսի (05.03.1923, Բաքու–09.04.1998, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1977): Ավարտել է ԵՊԿ (1951): 1951–98-ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում: 1958-ին կազմակերպել և ղեկավարել է պատանի ջութակահարների անսամբլը (1970-ից՝ ՀԽՍՀ հեռուստառադիոյի ջութակահարների, 1998-ից՝ Ա-ի անվ.): Անսամբլի համար փոխադրել և մշակել է հայ, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների գործերից («Մանրանվագներ: Մշակումներ ջութակահարների անսամբլի համար դաշնամուրի նվագակցությամբ», 2001, 2008, «Մշակումներ ջութակահարների անսամբլի և դաշնամուրի համար Արամ

ՀԽՍՀ հեռուստառադիոյի ջութակահարների անսամբլը (կենտրոնում՝ Գևորգ Աճեմյան, 1978)

Խաչատրյանի բալետներից», 2003): Ա-ի մշակումները ժամանակին հիացրել են Դ. Դ. Շոստակովիչին, Տ. Ն. Խրեննիկովին և ուր.:

Կինը՝ Անահիտ Ներսեսի Ա. (Բեկզադյան, ծ. 03.01.1944, Բեյրութ), ջութակահար, դիրիժոր: ՀՀ վաստ. մանկավարժ (2010): Պրոֆ. (1997): Հայրենադարձել է 1946-ին: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1962, դասատու՝ Տ. Հայրապետյան), ԵՊԿ (1967, Ա. Շամշյանի դասարան) ջութակի բաժինները և ասպիրանտուրան (1969, ղեկ.՝ Ա. Շամշյան): 1968-ից՝ ՀԽՍՀ հեռուստառադիոյի ջութակահարների անսամբլի ջութակահար (1998–2010-ին՝ գեղ. ղեկ.): 1970-ից դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1972-ից՝ ԵՊԿ-ում, 1998–2010-ին, միաժամանակ՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի ջութակահարների անսամբլի ղեկ.:

Դուստրը՝ Աննա Ա. (ծ. 02.06.1965, Երևան), դաշնակահարուհի: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1983), ԵՊԿ (1988, Ս. Սարաջյանի դասարան) և ասպիրանտուրան (2005, ղեկ.՝ Ս. Սարաջյան): 1988-ից դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 2005–13-ին՝ ԵՊԿ-ում (ասիստենտ), 2010-ից՝ ՀՀ հեռուստառադիոյի ջութակահարների անսամբլի գեղ. ղեկ.: Հրատարակել է (Անահիտ Ա-ի հետ) Գևորգ Ա-ի մշակումները (հ. 1–5, 2000–15):

Հեղինակ է «Գևորգ Աճեմյանի երգող ջութակները» գրքի (2011):

Հովհաննես Աճեմյան

ԱՃԵՄՅԱՆ Հովհաննես (1838, Կ. Պոլիս–1895, Կ. Պոլիս), երգիչ (տենոր): Հայոց առաջին կոմիկ.՝ «Արիֆի խորամանկությունը» օպերայի լիբրետտոյի (ըստ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզորի») հեղինակը: Սովորել է Կ. Պոլսի հայկ. և ֆրանս. դպրոցներում: Ա. ժամանակի եվրոպ. երաժշտ. կրթությամբ առաջին երգիչներից էր, նաև եվրոպ. ձայնագրության լավագույն գիտակներից:

Տիրապետել է իտալ-ին և ֆրանս-ին, հայտնի էր նաև որպես թարգմանիչ (Ա. Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը»), երաժշտ. քննադատ, բեմարվ-ին կատարելապես տիրապետող արվեստագետ:

Ա. մասնակցել է հայկ. և ֆրանս. թատերախմբերի ներկայացումներին: 1870-ական թթ-ի կեսերին հանդես է եկել Տ. Չուխաճյանի ղեկավարությամբ գործող հայկ. «Օսմանյան օպերային թատերախմբում» (Արիֆ, Խուրշիդ բեյ՝ Տ. Չուխաճյանի «Արիֆի խորամանկությունը», «Լերլերիջի Հոր-հոր աղա»): Ճանաչվել է մասնավորապես Արիֆի դերակատարմամբ: «Արիֆի խարդախությունը» կոմիկ. օպերայի՝ հատվածաբար հրատարակված կլավիրի տիտղոսաթերթերին (նաև նոտատետրերը վաճառող գրախանութ-ցուցափեղկերին) զետեղվել են Ա-ի լուսանկարները:

1860-ական թթ-ի 1-ին կեսից համագործակցել է Տ. Չուխաճյանի հետ. եղել է նրա «Գարուն» ռոմանսի (ըստ Մ. Պեշիկթաշլյանի, հայկ. ռոմանսի անդրանիկ նմուշներից) առաջին կատարողը:

Կյանքի վերջին տարիներին զբաղվել է խմբագր. աշխ-ով, աշխատակցել Կ. Պոլսի ֆրանս. մամուլին: Խմբագրել է Կ. Պոլսում լույս տեսնող «Phare du Bosphore» («Ֆար դու Բոսֆոր») ֆրանս. թերթը, երաժշտագիտ. ուշագրավ հոդվածներ հրապարակել հայկ. (այդ թվում՝ «Արևելք», «Ճէրիտէ ի Շարգիյե») և ֆրանս. մամուլում: Որպես

երաժշտագետ-քննադատ՝ նա առաջիններից է արժանվույնս գնահատել Տ. Չուխաճյանի ստեղծագործության դերն ու նշանակությունը:

Ա.-ի երաժշտագիտ-քննադատ. հոդվածներն սկզբնավորել են հայ հոգևոր երաժշտության բարեփոխման և բազմաձայն մշակման անհրաժեշտության մասին ծավալված սուր բանավեճը:

Գրկ. *Շարաման, Թրքահայ բեմը եւ իր գործիչները, ԿՊ, 1914: Պեշիկթաշլեան Ն., Թատերական դէմքեր, Աթթիլիաս, 1969: Սպենդիարեան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 2, Ե., 1969: Մուրադյան Մ., Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դ. և XX դարասկիզբ), Ե., 1989: Ասատրյան Ա., Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011: Tuglaci Pars, Turkish Bands of Past and Present, Istanbul, 1986.*

Անահ Ասատրյան

Ա.ՃԵՄՅԱՆ Վարդան Ալեքսանդրի (ծ. 27.04.1956, Երևան), կոմպոզիտոր: Ալեքսանդր ***Ամեմյանի*** որդին, Արուս ***Ամեմյանի*** հայրը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2010): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցը (1969), ԵՊԿ (1973, Ղ. Սարյանի դասարան): 1978-ից դասավանդել է Քանաքեռավան գ-ի հանրակրթ. (երաժշտ. դասարանի հիմնադիրը, գործել է մինչև 1984-ը), 1986–88-ին՝ Երևանի Ա. Հեքիմյանի անվ., 1995–2003-ին՝ Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցներում, 1986-ից, միաժամանակ՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2001-ից, կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ՝ 2002-ից):

Գրել է «Կիկոսի մահը» (1978), «Պաղտասար աղբար» (անավարտ, ըստ Հ. Պարոնյանի) օպերաները, «Տասներկուերորդ գիշեր» (ըստ Վ. Շեքսպիրի, 1999) մյուզիքլը, 4 սիմֆոնիա [1986, 1990 (նվիրված է Ա. Ամեմյանին), 2004 (նվիրված է Է. Միրզոյանին), 2014], «Տոնական նախերգանք» (1995, 2000), «Սայաթ-Նովա» նախերգանքը՝ լար. նվագախմբի, «Տաղ գարնան և սիրո» (ըստ Գրիգորիս Աղթամարցու տաղերի, 2001)՝ սոպրանոյի և լար. նվագախմբի, «Որմնանկարներ» (2001, Հայաստանում քրիստոնեությունը որպես պետ. կրոն ընդունման 1700-ամյակին)՝ դաշնամուրի, «Rubato» (2000)՝ դաշնամուրի, պոեմներ՝ երգչախմբի («Քարեր, քարեր Հայաստանի», ըստ Հ. Սահյանի, 2009, «1915», 2011, ըստ Պ. Սևակի), «Հնչյունի թատրոն» (2001, 2011) կոնցերտ. պոեմներ՝ դաշնամուրի և լար. նվագախմբի, «Բալլադ զինվորի մասին» (1998)՝ ձայնի և կամեր. նվագախմբի, կվինտետ՝ պիկոլո ֆլեյտայի, տուբայի, վիբրոֆոնի, կոնտրաբասի և դաշնամուրի, կոնցերտներ՝ սոպրանոյի, մեցցո սոպրանոյի և նվագախմբի (1981), նվագախմբի (1981), թավջութակի և նվագախմբի (1994), դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի (2006), «Նովել»՝ ջութակի և դաշնամուրի (2014) համար, Կոնցերտ-ֆանտազիա (1996, Ա. Տերտերյանի հիշատակին), «Արտամետյան գիշերներ» (ըստ Գ. Սահարու, 1980), «Հայաստան» (խոսք՝ Հ. Շիրազի, 1985) վոկալ շարքերը և այլ գործեր:

Վարդան Ալեքսանդրի Ամեմյան

Հեղինակ է ժող., նաև Սայաթ-Նովայի երգերի թեմաներով (2000, լար. նվագախմբի համար) մշակումների:

ՀՀ Պետ. (2015), ՀԼԿԵՄ (1987), թավջութակի կոնցերտի մրցույթի 2-րդ (1993), Էստրադ. երգի հանրապետ. մրցույթի 1-ին (1993–94), ՀՀ ՊՆ «Զինվորական երգ» հանրապետ. մրցույթի մրց-ներ:

Գրկ. *Рухкян М., Театр звука Вардана Аджемяна, Е., 2015.*

Ա.ՃԵՄՅԱՆ Վարդան Մկրտչի [02(15).9.1905, Վան–24.01.1977, Երևան], ռեժ.: ՀԽՍՀ (1945), ԽՍՀՄ (1965) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1975): Ալեքսանդր ***Ամեմյանի*** հայրը: Ավարտել է Երևանի գեղարդ. ուսումնարանը (1924), Մոսկվայի հայկ. ստուդիան (1926): Լենինականի դրամատիկ. թատրոնի հիմնադիրներից (1928–33-ին՝ դերասան, 1928–46-ին՝ ռեժ., 1931–38-ին՝ նաև գեղ. ղեկ.), 1939-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի (1953-ից՝ գլխ.) ռեժ., 1947–50-ին՝ ԵԵԿՄԹ գլխ. ռեժ.: 1944-ից դասավանդել է ԵԳԹԻ-ում (պրոֆ.՝ 1964-ից): Բեմադրել է Ա. Այվազյանի «Թափառնիկոս» (1937), Հ. Ստեփանյանի «Հե-

Վարդան Մկրտչի Ամեմյան

Տեսարան Հ. Ստեփանյանի «Հերոսուհին» օպերայի բեմադրությունից (1951, ռեժ.՝ Վ. Ամեմյան)

րոսուհի» (1950), Տ. Չուխաճյանի «Լբլեբիջի» (1951), Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (1956), «Անուշ» (1969), Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» (1971) և այլ օպերաներ (բոլորը՝ ԵՕԲԹ), Շիրվանզադեի «Մորգանի խնամին», Հ. Պարոնյանի «Շողոքորթն», Գ. Սունդուկյանի «Եվ այլն կամ Նոր Դիոգենես» (երեքն էլ՝ 1948), Ի. Դունաևսկու «Ազատաշունչ հողմը» (1950), Տ. Չուխաճյանի «Կարինե» (1951) և այլ երաժշտ. կատակերգություններ (բոլորը՝ ԵԵԿԹ), որտեղ ժանրի ավանդ. ձևերին հակադրել է ճշմարիտ, հավաստի լուծումներ:

ՀԽՍՀ ԳԽ պատգմ. (1955–67, 1971–75): ԽՍՀՄ (1951), ՀԽՍՀ (1971) Պետ. մրց-ներ:

ԱՃԵՄՅԱՆ ՔՈՒՅՐԵՐ, երաժիշտներ, Մարո Ա. (09.07.1920, Լոզան–18.09.1978, ԱՄՆ), դաշնակահարուհի, և Անահիտ Ա. (26.01.1924, Նյու Յորք–18.06.2016, Նյու Յորք), ջութակահարուհի: Նախն. երաժշտ. կրթությունն ստացել են մորից: Ավարտել են Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցը: Մարոն 5 տարեկանում Նյու Յորքում մասնակցել է մանկ. երաժշտ. մրցույթի, արժանացել ոսկե մեդալի: Նրա առաջին մենահամերգը տեղի է ունեցել 1940-ին Նյու Յորքի «Թաուն Հոլլ» համերգասրահում: 1942-ին ԱՄՆ-ում առաջին անգամ կատարել է Ա. Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտը: Հետագայում նրա դաշնամուր. փոխադրությամբ ինչել է նաև «Սուսերով պարը» (Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետից): 1946-ին հանդես է եկել Ալան *Հովհաննեսի* և ամերիկացի կոմպոզիտորների՝ իր համար գրված ստեղծագործությունների կատարումներով: ԱՄՆ-ի ԿՄ դափնեկիր (1951): 1981-ին Ջուլիարդի բարձրագույն երաժշտ. դպրոցը սահմանել է նրա անվ. կրթաթոշակ:

Ամեմյան քույրեր

Որպես մենակատար՝ Անահիտ Ա. ելույթներ է ունեցել նշանավոր դիրիժորներ Լ. Ստոկովսկու, Դ. Միտրոպուլոսի, Ի. Սոլոմոնի ղեկավարությամբ, երկար տարիներ եղել է «Կլարիոն Կոնցերտս»-ի, Բոստոնի «Կոմպոզիտորական քառյակի» ջութակահար: Համերգներով հանդես է եկել Երևանում (1963, 1972), շրջագայել է նաև Ռումինիայում, Բուլղարիայում, Հնդկաստանում, Չինաստանում, ԽՍՀՄ-ում, Միջին Արևելքի երկրներում: Համագործակցել է «Walter W. Naumberg Foundation»-ի հետ (1-ին մրց., 1946), Նյու Յորքի «Թաուն Հոլլ» մրցույթի «Մադմուազել Մագազին» մեդալ:



Կոնստանտին Ամեմով

1948-ին քույրերը համերգներով շրջագայել են ԱՄՆ-ում, Կանադայում, Եվրոպայում և այլուր. երկացանկում՝ Ա. Հովհաննեսի, Է. Կրժենեկի, Լ. Հարիսոնի, Բ. Վերերի և ուր. ստեղծագործություններից՝ նոր, ինքնատիպ մեկնաբանմամբ: Հիշարժան է նաև «Երեք դարերի ճանաչված դուետներ» խորագրով փառատոնի շրջանակներում նրանց համերգաշարը («Դասական շրջան», «Ռոմանտիկ շրջան», «Ժամանակակից երաժշտություն»):

«Donaueschingen Musiktage» փառատոնի (1951, Դոնաուեշինգեն, Գերմանիա), «Ալեանս» («Լորելեռն» մրց., 1952) փառատոների դափնեկիրներ:

ԱՃԵՄՈՎ (Ամեմյան) Կոնստանտին Քրիստափորի [08(21).03.1911, Մոսկվա–9.06.1985, Մոսկվա], դաշնակահար, երաժշտ. քննադատ: Արվեստագիտ. թեկնածու (1956): Աշակերտել է դաշնակահար Կ. Ն. Իգումնովին և երգեհոնահար, կոմպոզիտոր Ա. Ֆ. Գեդիկեին: 1944–84-ին դասավանդել է ՄՊԿ-ում (կամեր. անսամբլի դասարան, պրոֆ.՝ 1967-ից), 1953–73-ին, միաժամանակ՝ Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ում (դաշնամուրի դասարան): 1941–58-ին՝ Համամիութ. ռադիոյի երաժշտ. բաժնի խմբ., մի շարք երաժշտ. հաղորդումների հեղինակ և խմբ.:

Հրատարակության է պատրաստել Ա. Ֆ. Գեդիկեի հոդվածների և հիշողությունների (1960, Մոսկվա), ֆրանսիացի դաշնակահար Ա. Կորտոյի (1965, Մոսկվա) հոդվածների ժող-ները:

Երկ. *Незабываемое воспоминание. Очерки и статьи, М., 1972.*

ԱՄԱԼՅԱՆ Դավիթ Վարդանի (ծ. 01.02.1974, Երևան), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2011): Ավարտել է Երևանի Ա. Գաբրիելյանի անվ. երաժշտ. դպրոցը (1989, դաշնամուր, շվի), Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանի ջազ. և դաշնամուրի (1993), ԵՊԿ ժող. գործիքների (1998) բաժինները: Գրել է 60-ից ավելի երգեր (Ա-ի, նաև դաս. և ժամանակակից բանաստեղծների խոսքերով): Երգացանկում՝ հիմնականում հայրենասիր. երգեր: Համերգներով շրջագայել է Հայաստանում, ԼՂՀ-ում, Մոսկվայում,

Պարսկաստանում, Բրյուսելում և այլուր, հեղինակ. մենահամերգներով՝ ՀՀ-ում (Սիսիան, Քաջարան, Գյումրի, Երևան ևն), Ստեփանակերտում: Համագործակցել է Ռուբեն *Հախվերդյանի* և «Բարդ» ակումբի անդամների հետ: 2002-ին ԵԵԿԹ-ում բեմադրվել է Ա-ի «Արծվաբույն» պիեսը (նվիրված է ՀՀ Ազգ. հերոս Վազգեն Սարգսյանին): Թողարկել է ձայնասկավառակ («Հոգու ինչյուն», 2004), տեսասկավառակ («Եվս մի ինչյուն», 2006), նկարահանել է տեսահոլովակներ («Հոգու ինչյուն»,

Դավիթ Ամալյանը կլույթի պահին

«Օրորոցային», երկուսն էլ՝ 2001, «Գիշեր», 2002, «Տապանագիր», 2003, «Կտակ», 2010՝ Ռ. Հախվերդյանի հետ): Մասնակցել է Արցախյան ազատամարտին (1990–94): 1994-ից պարբերաբար կազմակերպում է համերգ. հուշ-երեկոներ՝նվիրված զոհված ազատամարտիկներին:

«Սայաթ-Նովա» երգի համահայկ. մրցանակաբաշխության Գլխ. մրց. (2001):

ԱՄԱՆԱԿ (պիլ.՝ ամանա – ժամանակ), անտիկ երաժշտության մեջ՝ երգեցող. «կարճ վանկի» տևողությունը՝որպես չափ. (մետր.) միավոր: Հայ միջնադար. երգաստեղծության և խազագրության մեջ Ա. համարվել է հարաբեր. տևողություն: Եղել են 4 (կամ երգեցող. «վանկեր»)՝ կարճ, միջակ, մեծ և մեծագույն Ա-ներ՝ համապատասխանաբար 1/8, 1/4, 2/4 և 4/4 ու ավելի չափ. (մետր.) մոտավոր արժեքներով: Խազագրության մեջ 2 նշան՝ «սուղ» (o) ու «երկար» (~), ցույց են տալիս լոկ Ա. («սուղը»՝ կարճ Ա., «երկարը»՝ մեծ Ա. և մեծագույն Ա.): Մյուս խազանշանների մեծ մասը ցույց է տալիս նաև Ա.: Օր.՝ «փուշը»՝ միջակ Ա., «պարոյկը»՝ մեծ Ա., «ղումը»՝ մեծագույն Ա.:

Նոր հայկ. ձայնագրության ստեղծումից հետո Ա. երբեմն գործածվել է նաև տեմպի ու բախումի նշանակությամբ:

Ըստ Նիկողոս Թահմիզյանի

ԱՄԱՏՈՒՆԻ Շուշանիկ (Սուսաննա) Բաբկենի (28.02.1924, Երևան–20.03.2010, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1988): Պրոֆ. (1997): ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1966): ՀԿՄ անդամ (1987-ից): Ավարտել է Երևանի ուսուցչական երկամյա ինստ-ի ֆիզմաթ. ֆակ-ը (1943), Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանը (1944), Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ի պատմա-տեսա-կոմպոզիցիայի բաժինը (1955): 1951–53-ին դասավանդել է Երևանի պարարվ-ի ուսումնարանում, 1953–71-ին՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1965-ից՝ ԵՊԿ-ում:

Շուշանիկ Ամատունի

Հեղինակ է «Երաժշտական գրականություն 6-րդ դասարանցիների համար» (1972), «Երաժշտական գրականություն 7-րդ դասարանցիների համար» (1981) դասագրքերի, մեթոդ. ձեռնարկների, 5 գրքի, հայկ. և ռուս. մամուլում տպագրված շուրջ 50 գիտ. հոդվածների: Տես. ուսումնասիրություններն ու վերլուծությունները վերաբերում են Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Ա. Բաբաջանյանի, Ա. Հարությունյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Հ. Ստեփանյանի, Գ. Չթչյանի և ուր. ստեղծագործությունների մեղեդիական և ոճ. առանձնահատկություններին:

Երկ. *Арно Бабаджанян. Инструментальное творчество. Исследование, Е., 1965; Жизнь и творчество Гегуни Читчян, Е., 2003.*

Սահակ Ամատունի

ԱՄԱՏՈՒՆԻ Սահակ (Բաղդասարյան Բաղդասար) Գևորգի (22.01.1856, Օշական–19.11.1917, Վաղարշապատ), բառաբանագիր, Սայր աթոռ Սբ Էջմիածնի միաբանության անդամ, վարդապետ: Երկար տարիներ թղթակցել է «Արարատ» ամսագրին, տպագրել թարգմանություններ, բանաստեղծություններ և ընդարձակ հոդվածաշար՝ շարականների մասին: 1911-ին հրատարակել է «Հին եւ նոր պարականոն ու անաւեր շարականներ» գիրքը, որտեղ ամփոփել է բազմաթիվ ձեռագրերից իր քաղած շարականները:

Լուսին Ամարա

ԱՄԱՐԱ (Արմաղանյան) Լուսին Գևորգի [ծ. 01.03.1927, ք. Հարթֆորդ (Քոննեքտիքութի նահանգ՝ ԱՄՆ)], երգչուհի (սոպրանո): Սովորել է Արևմուտքի երաժշտ. ակադ-ում (1947), Հվ. Կալիֆոռնիայի համալսարանում (1949–50): 1944–57-ին ձայ-

Լ. Ամարան Միմիի դերում (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»)

Աննա Ամբակումյան

Սերգեյ Ամեդյան

նամարզության դասեր է առել Ս. Այզներ Էմիսից: 1950-ից՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի» մեներգչուհի:

Կատարել է 40-ից ավելի գլխ. դերերգեր՝ Դոննա Էլվիրա, Պամինա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», «Կախարդական սրինգ»), Աիդա, Լեոնորա, Դեզդեմոնա (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», «Օթելլո»), Միմի, Տոսկա, Չիո-Չիո սան, Լյու (Ջ. Պուչչինիի «Բոհեմ», «Տոսկա», «Չիո-Չիո սան», «Տուրանդոտ»), Եվրիդիկե (Ք. Գլյուկի «Օրփեոս և Եվրիդիկե»), Տատյանա (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Միքայելա, Ֆրասկիտա (Ժ. Բիզեի «Կարմեն»), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Նեդդա (Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ»), Անտոնինա (Ժ. Օֆֆենբախի «Հոֆմանի հեքիաթները»), Էլեկտրա (Ֆ. Շուբերտի «Էլեկտրա»), Հելսվիգ (Ռ. Վագների «Վալկիրիա») ևն: Հանդես է եկել Չինաստանի, Ճապոնիայի, Հվ. Ամերիկայի, Եվրոպայի բոլոր բարձրակարգ. օպեր. թատրոններում: Համերգ. երգացանկում՝ Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի, Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմի» սոպրանոյի երգամասերը, նաև Կոմիտասի ստեղծագործություններից:

ԵՕԲԹ-ում հանդես է եկել Աիդայի (Ջ. Վերդիի «Աիդա») դերերգով, մենահամերգներով (1965, 1991) շրջագայել է նաև Թբիլիսիում, Մոսկվայում, Լենինգրադում, Եվրոպայում:

Երգիչների համաամերիկ. «Սթյուարտ Քենթ» մրցույթի 1-ին մրց. (1948, Լոս Անջելես):

ԱՄԲԱԿՈՒՄՅԱՆ Աննա Ալեքսանդրի (18.10.1919, Երևան–21.09.1999, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1973): Արվեստագիտ. թեկնածու (1954): Ավարտել է ՄՊԿ (1945) և ասպիրանտուրան (1948, ղեկ-ներ՝ Կ. Ն. Իգումնով, Լ. Ն. Օբորին): 1940-ական թթ-ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1948-ից՝ ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1968-ից, պրոֆ.՝ 1972-ից): Հանդես է եկել մենահամերգներով, նաև սիմֆ. նվագախմբի հետ. նվագացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Գ. Հենդելի, Է. Գրիգի, Ֆ. Լիստի, Պ. Ի. Չայկովսկու, Ս. Վ. Ռախմանինովի, Կոմիտասի, Գ. Չթչյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի և ուր. ստեղագործություններից:

Ա-ի՝ Կոմիտասի պարերի («Երանգի», «Ունաբի», «Մարալի», «Շուշիկի», «Հետ ու առաջ», «Կարնո շորոր») կատարումներին (1972, նաև ձայնագրվել է) բնորոշ էին պատկերավորությունը, պարաշարի միասնականությունը, որտեղ համադրված են դրամատիկ., քնար., աշխույժ կատակ. կերպարներ, համարներ: Վարպետորեն են ինչում ժող. գործիքների գունագեղ ձայնանմանակումները:

Կազմել և խմբագրել է «Կոնցերտային պիեսներ դաշնամուրի համար» (1971) նոտաների գիրքը:

Երկ. *Мои педагогические принципы, Е., 2000.*

Գրկ. *Тигранова И., Музыка – моя жизнь: Творческий путь А. А. Амбакумян, М., 1994.*

ԱՄԵԴՅԱՆ Սերգեյ Լևոնի (08.08.1929, Թիֆլիս–16.08.2015, Մոսկվա, թաղված է Երևանի քաղաք. պանթեոնում), հորոյահար, մանկավարժ: ՌԴ վաստ. արտիստ (1976): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1948), ՄՊԿ (1952, Մ. Ա. Իվանովի դասարան), ԵՊԿ (1953, Ս. Ասոյանի դասարան) հորոյի բաժինները: 1948–51-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի մենակատար, 1953-ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի սիմֆ. նվագախմբում (բեմի տեսուչ՝ 1997-ից): 1958–65-ին դասավանդել է ՄՊԿ-ին կից երաժշտ. դպրոցում:

ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» II աստիճանի շքանշան (2001):

ԱՄԻՐ ՕՂԼԻ [մոտ 1740, Բուրվարի գավառ (Պարսկաստանի Սպահանի նահանգ)–07.05.1826, Նոր Ջուղա, աշուղ: Պարսկահայ աշուղ. երգիծ. գրկ-յան հիմնադիրը: Շրջել է Չարմահալի գավառում, եղել Բասրայում, Բաղդադում և այլուր, մասնակցել ու հաղթել է աշուղ. մրցույթներում: Երգերը գրել է Նոր Ջուղայի բարբառով:

Գրկ. *Երեմեան Ա., Պարսկահայ աշուղներ: Աշուղ Ամիր Օղլի, Վնտ., 1930:*

ԱՄԻՐԱՋԱՆՈՎ Պավել Իվանի [Ամիրաջանյան Պողոս Հովհաննեսի, 20.09(2.10).1879, ք. Գորի (Վրաստան)–10.11.1940, Բաքու], երգիչ (տենոր), ռեժ.: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1933): Թիֆլիսի ռեալ. դպրոցն ավարտելուց հետո երգեցողության դասեր է առել ՄՊԿ-ում (Ու. Սազետտիի դասարան): 1900-ական թթ-ին, որպես երգիչ, տարբեր խմբերի հետ

շրջագայել է Դոնի Ռոստովում, Բաքվում, Վլադիկավկազում, Եկատերինոդարում և այլուր: 1902–06-ին Վարշավայում և Լոձում (Լեհաստան) հանդես է եկել օպերաներում, օպերետներում: 1913–22-ին Բաքվում ղեկավարել է օպերա-օպերետ. խումբ. բեմադրել է Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», Ջ. Վերդիի «Տրավիատա» և այլ օպերաներ: 1920–24-ին՝ Բաքվի ՕԲԹ, 1925–27-ին՝ Տաշքենդի Դրամայի և երաժշտ. թատրոնի, 1927–28-ին՝ օպեր. թատրոնի, 1929-ին՝ Կիսլովոդսկի ՕԲԹ տնօրեն: Այսրկովկասում Ա-ի բեմադրությամբ առաջին անգամ ներկայացվել է Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» օպերետը (1912, նաև ռուս., կատարել է Խուրշիդ բեյի դերը): Բաքվի ՕԲԹ-ում նպաստել է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրությանը (1941):

ԱՄԻՐԱՂՅԱՆ Գայանե Աշոտի [ծ. 24.08.1983, Կուրգան (ՌԴ)], երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2012): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության (2002), ԵՊԿ վոկալ-տես. ֆակ-ի երաժշտագիտության (2007) բաժինները, ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (2012, ղեկ.՝ Մ. Նավոյան): «Վէմ» ռադիոկայանում վարել է «Երաժշտական կամուրջ» (2011–13) և «Տաղարան» (2013–17) հեղինակ. հաղորդաշարերը: 2012-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի սփյուռքահայ արվ-ի և միջազգ. կապերի, 2016-ից՝ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող: Վիեննայի Մոնոդիայի ուսումնասիրության միջազգ. ընկերության անդամ (2016-ից):

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ հոգևոր երաժշտության պատմությանն ու տեսությանը (մասնավորապես՝ հայոց ութձայն համակարգի մեթոդաբանությանը), նաև համեմատ. միջնադարագիտությանը:

Երկ. *Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ հնդկահայոց երգվածքում, Ե., 2016:*

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ (Կնյազև) Նաթան Աբրահամի (07.03.1872, Կ. Պոլիս–04.10.1949, Սոֆիա), կոմպոզիտոր, խմբավար, երգեհոնահար, մանկավարժ: Վաղ տարիքում ծնողների հետ ապրել է Թավրիզում, ապա՝ Թիֆլիսում (ստացել է նախն. երաժշտ. կրթություն), 1888-ին՝ Հելսինգֆորսում (Ֆինլանդիա): Սովորել է տեղի կոնսերվատորիայում (1892–96), ավարտել Մյունխենի պետ. երաժշտ. ակադ-ը: Որպես երգեհոնահար՝ հանդես է եկել Գերմանիայի, Բուլղարիայի (Վառնա, Պլովդիվ, Սոֆիա) քաղաքներում, դասավանդել է երգ, երաժշտության տեսություն, դաշնամուր (սաներից էր Բարսեղ *Կանաչյանը*), մասնակցել է բուլղ. օպերայի հիմնադրմանը: 1908-ին մեկնել է Ռուսաստան: Երգեհոնի դասեր է վարել Օդեսայի կայսեր. երաժշտ. վարժարանում, ղեկավարել տեղի օպեր. թատրոնը: Բաքվում ստեղծել է հայկ. երգչախմբեր: 1910-ին՝ Սոֆիայի «Բուլղարական օպերային ընկերության» (1921-ից՝ ժող. օպերա) խմբավար, 1912-ին՝ Բոստոնի օպեր. թատրոնի երգչախմբի ղեկ. և երգեհոնահար:

Գրել է «Իվանկո» (1917, բեմ.՝ 1932), «Ռալիցա» (1936) օպերաները, շուրջ 200 աշխարհիկ և հոգևոր երգեր (հայ., ռուս., բուլղ., գերմ., անգլ., շվեդ. տեքստերով), «Գյորգյովդեն» բալլադը, «Հաջի Դիմիտր» բալետը, «Քրիստոս» օրատորիան, «Բուֆֆ» (1940) օպերետը:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Շառլ (ծ. 19.01.1945, Ֆրեզնո), կոմպոզիտոր, ավանգարդիզմի ներկայացուցիչ: Ավարտել է Ֆրեզնոյի (1967) և Սան Ֆրանցիսկոյի (1969) համալսարանները, «Միլս» քոլեջում կատարելագործվել էլեկտրոն. երաժշտության և ձայնագրման ոլորտներում: 1969-ից ստեղծագործում է լեքսիգրաֆիկ երաժշտության ոճով, որի հիմնական տարրերն են գրական խոսքը, խորեոգրաֆիան և գրական երկի բեմավորումը: Խոսքի աբստրակտ ընկալման հասնելու համար Ա. ստեղծել է արհեստ. հարված. ձայների տեխ. տարբեր համադրություններ, ռիթմիկ ձայնամիջոցներ: Որպես գրական խոսք՝ օգտագործել է հիմնականում Գ. Սթեյնի արձակ և չափածո գործերից, որոնք բեմադրել է համակարգչ. նկարների, պատկերների պրոյեկցիաների և սլայդների միջոցով: Խորեոգրաֆիկ մասը կատարել են բալետի արտիստներ: Այդ ոճով գրել է 5 խոշոր երկեր («Բեյ Արեա դաշտի ձայները» ևն), որտեղ օգտագործել է նաև սինթեզատոր:

Ա-ի և մի շարք այլ նշանավոր երաժիշտների (Ջ. Քեյջ, Լ. Անդերսոն, Ք. Աշլի և ուր.) ավանգարդ ոճի երկեր ընդգրկված են միևնույն անթոլոգիայում:

Պավել Ամիրագո (բացիկ՝ Ա-ի ինքնագրով)



Նաթան Ամիրխանյան



Ռոբերտ Ամիրխանյան

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Ռոբերտ Բաբկենի (ծ. 16.11.1939, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ ժող. արտիստ (1987): Ավարտել է ԵՊԿ (1969, Է. Միրզոյանի դասարան): 1970-ից դասավանդում է նույն կոնսերվատորիայում (ամբիոնի վարիչ, պրոֆ.՝ 1987-ից): 1969–72-ին՝ ՀԽՍՀ ռադիոյի երաժշտ. խմբ.: 1991–2013-ին՝ ՀԿՄ նախագահ: 1999–2003-ին՝ ՀՀ ԱԺ պատգամավոր:

Գրել է դաշնամուրի կոնցերտ (1969), «Երևանյան ռապսոդիա» (2005)՝ դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի համար, «Քաղքենին ազնվական» (բեմ.՝ 1979, ԵԵԿԹ) օպերետը, «Ատամնաբույժն արևելյան» (բեմ.՝1976, ԵԵԿԹ), «Դինգ-դոնգ» (1979), «Շախ և մատ» (1986) մյուզիքլները, լար. կվարտետ (1969, 1-ին մրց., Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. մրցույթ), «Կանտատ սիրո»(2012, պրեմիերան Գերմանիայում՝ Հայդենհայմի սիմֆ. նվագախմբի և երգչախմբի կատարմամբ),

Ռ. Ամիրխանյանը ելույթի պահին

«Պոետի սիրտը» (նվիրված է Մ. Մանուշյանին, 2015) կանտատները, երգաշարեր («Առաջին խոսքն իմ», 1977, «Ես այն օրվանից գոյություն առա», 1978, երկուսն էլ խոսք՝ Ա. Կիրակոսյանի, «Քարը», 1982, խոսք՝ Վ. Դավթյանի, «Քեզ հետ՝ առանց քեզ», խոսք՝ Ե. Չարենցի, «Մենուհին», խոսք՝ Թ. Հովհաննիսյանի), խմբերգեր («Էջ Միածինն ի հօրէ», խոսք՝ Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսի, «Հայր մեր» ավանդ. աղոթքի տեքստով, «Խաչեալ իմ երկիր», խոսք՝ Ա. Կիրակոսյանի), «Երդվում եմ քեզ, իմ երկիր», խոսք՝ Ա-ի), օրհներգեր (ԵՊՀ-ի, Սիսիանի, Վանաձորի, Գրենոբլի Հայ կենտրոնի համար ևն), երգեր («Երկիր Հայրենի», «Հայի աչքեր», խոսք՝ Սարմենի, «Կարմիր ծաղիկ մը գարունի», խոսք՝ Մ. Մեծարենցի, «Ժպտա», խոսք՝ Յ. Սահակյանի, «Իմ մութ ամպոտ երկինքես», խոսք՝ Վ. Թեքեյանի,«Իմ հեռավոր ճամփի վրա», խոսք՝ Մ. Մարգարյանի, «Կարոտ», խոսք՝ Ռ. Դավոյանի,«Քեզ հետ իմ սեր», «Այնպես ուզում եմ», «Երկու կռունկ»,«Օրորոցային», «Ուր եք, տղաներ», 1973՝ Բեռլինի համաշխ. փառատոնի 1-ին մրց., «Աշնան մեղեդի», 1975՝ Սոպոտի միջազգ. փառատոնի 3-րդ մրց.,«Երգն էլ ունի հոգի», 1988՝ Բելգրադի միջազգ. մրցույթի 3-րդ մրց., ևն), կինոերաժշտություն («Հեղնար աղբյուր», «Հայրիկ», «Մոռացված հեքիաթների կիրճը», «Հրդեհ», «Օտար խաղեր», «Գաղտնի խորհրդականը» և այլ գեղ., «Մի կաթիլ մեղր», «Շերտավոր վագրը», «Պույ-պույ մուկիկը», «Լուր-դա-լուր», «Աբու Հասանի մաշիկները», «Ձախորդ Փանոսը» և այլ մուլտ. ֆիլմեր):

Բելգրար Ամիրջանյան

ՀԼԿԵՄ (1971), ՀամԼԿԵՄ (1980), ՀՀ Պետ. (2012), ՌԴ «Համերաշխություն» (2017) մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1998), «Պատվո նշան» (2017), ՌԴ «Դաշնության աստղ» (2010) շքանշաններ, երգի միջազգ. մրցույթների (1969, Բեյրութ, 1978, Մոսկվա, 1983, Սոչի) դափնեկիր:

Երկ. *Երգեր, ե., 2000: Դաշնամուրային պիեսներ, ե., 2009: Մանկական խմբերգեր, ե., 2012:*

Աննա Խաչատրյան

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ (Ամիրջան) Բեգլար Աստվածատուրի (02.07.1868, Թիֆլիս–18.05.1937, Թիֆլիս), երգիչ (բարիտոն), մանկավարժ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1876–86), Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1886–89, Կ. Էվերարդիի, Ս. Գաբելի դասարաններ), ավարտել է Միլանի կոնսերվատորիան (1894, Ս. Ռոնկոնիի դասարան): Երգել է Ս. Պետերբուրգի հայկ. եկեղեցու (ղեկ.՝ Մ. Եկմալյան) երգչախմբում: 1894–95-ին իտալ. խմբերից մեկի հետ ելույթներ է ունեցել Միլանում («Լա Սկալա» թատրոն), Վենետիկում, Ձենովայում, Տուրինում, Կիոջիայում և այլ քաղաքներում: 1895–1903-ին հանդես է եկել Իտալիայի «Նոր Էրմիտաժ» օպեր., Մոսկվայի Մեծ, 1903–04-ին՝ Թիֆլիսի արքուն. թատրոններում, 1904–16-ին՝ Ս. Պետերբուրգի ժող. տան օպերայում: 1914-ին Մոսկվայում Դևի դերերգով մասնակցել է Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դև» օպերայի հայ. ներկայացմանը, որը կազմակերպել էին Հայ օպեր. արտիստների ընկերությունը և Ա.: 1916-ին վերադարձել է Թիֆլիս: Խորհրդ. տարիներին հիմնադրել է 5 երաժշտ. դպրոցներ և դասավանդել մինչև 1932-ը: Թիֆլիսում նկարահանվել է «Շակիր» (1931, ռեժ.՝ Լ. Էսակիա) վրաց. առաջին հնչուն գեղ. ֆիլմում:

Համարվել է ժամանակի լավագույն բարիտոններից. երգել է շուրջ 50 օպերայում (Ամոնասրո, Ռիգոլետտո, Ժերմոն, Կոմս դի Լունա՝ Ջ. Վերդիի «Աիդա», «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Տրուբադուր», Վալենտին՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Դև՝ Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դև», ևն): Ելույթներ է ունեցել Պերմի, Իրկուտսկի, Կազանի, Օդեսայի,

Սիմֆերոպոլի, Աստրախանի, Կիևի, Նիժնի Նովգորոդի, Բաքվի օպեր. թատրոններում, համերգներով հանդես է եկել Նադեժդա *Պապայանի*, Ն. Արցիբաշևայի հետ. երգացանկում՝ առավելապես հայ կոմպոզիտորների գործերից: Ջերմ կապեր է ունեցել հայ կոմպոզիտորների, մասնավորապես՝ Կոմիտասի, Մակար Եկմալյանի և ուր. հետ: Ա-ի արվ-ը բարձր են գնահատել Ա. Գ. Ռուբինշտեյնը, Հ. Այվազովսկին:

Թողարկել է 5 ձայնապնակ (1904, Թիֆլիս):

Գրկ. Թադևոսյան Ա., Բեզլար Ամիրջան, Ե., 1975: *Գոռ Սալնազարյան*

ԱՄՅԱՆ Ռազմիկ Գառնիկի (ծ. 08.01. 1982, Ստեփանակերտ), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2017): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցը (2001), ԵՊԿ վոկալ-դաս. բաժինը (2005, Ս. Կալաասարյանի դասարան), միաժամանակ՝ Հայաստանի երգի պետ. թատրոնը (2005): Մասնակցել է «Ամադեուս» (1998), «Новая волна» (2006), «5 звезд» (2008) միջազգ. և այլ փառատոների: Երգացանկում՝ ժող., գուսան., աշուղ. և ժամանակակից կոմպոզիտորների գործերից («Իմ աշխարհն ես», «Քեզ համար», «Շիրազի գովքը», «Յարո ջան», «Քամ-քամ», «Չունի աշխարհը քեզ նման», «Աշուղ սազով» ևն): Թողարկել է ձայնասկավառակներ և տեսահոլովակներ: «Ոսկե քնար» (2007), «7 երգ» (2008), «Ակորդ» (2009), «Տաշիր» (2009, Մոսկվա), «Լավագույն երգ» (2009) ազգ. երաժշտ. մրցանակաբաշխությունների, «Լավագույն երգիչ» և այլ մրց-ներ: Համերգներով շրջագայել է ԱՄՆ-ում, եվրոպ. մի շարք երկրներում:

ԱՄՊԼԻՏՈՒԴ, լայնույթ (< լատ. amplitudo–մեծություն, լայնություն), տատանող. շարժման բնութագրերից. տատանման ընթացքում մարմնի (ինչյունի աղբյուր) առավելագույն շեղման մեծությունը հավասարակշռության դիրքից, ինչող մարմնի տատանման թափը, որով պայմանավորված է ինչյունի ուժգնությունը (կամ մեղմությունը):

ԱՅՎԱԶՈՎՍԿԻ Արթուր (Հարություն) Մկրտչի [15.08.1923, Սալոնիկ (Հունաստան)–02.09.1997, Օդեսա], երգիչ (քնար. տենոր): ՀՀ ժող. արտիստ (1960): Հայրենադարձել է 1947-ին: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1950, դասատու՝ Տ. Նալբանդյան), ԵՊԿ (1978): ԵՀՊ-ում կուրացել է: 1947–54-ին և 1965-ից՝ Հայֆիլհարմոնիայի, ապա՝ Օդեսայի օպեր. թատրոնի մենակատար: Կատարող. արվ-ն առանձնացել է հուզականությամբ, քնարականությամբ, անմիջականությամբ: Ելույթներ է ունեցել Ռումինիայում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում, Կանադայում և այլուր. երկացանկում՝ արիաներ Ա. Սկառլատիի, Ջ. Պերգոլեզիի, Գ. Դոնիցետտիի և ուր. օպերաներից, Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Դ. Դ. Շոստակովիչի, Ռ. Մ. Գլիերի ռոմանսներից, իտալ. և իսպ. ժող. երգեր (կիթառի նվագակցությամբ): Նկարահանվել է «Սիրտն է երգում» (1956, Հայֆիլմ) կինոնկարում (սցենարը՝ Ա-ի կենսագրության հիման վրա):

Վոկալիստների համամիութ. մրցույթի, Երիտասարդների և ուսանողների միջազգ. փառատոնի (երկուսն էլ՝ 1957, Մոսկվա) դափնեկիր:

Գրկ. Штих М., Путь артиста, Советская музыка, 1956, №1.

ԱՅՎԻՆՅԱՆ Իզաբելլա Պողոսի (04. 02.1928, Կրասնոդար–1996, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (1965): Ավարտել է Կրասնոդարի երաժշտ. դպրոցը (1947), երաժշտ. ուսումնարանը (1951), ԵՊԿ (1955, Թ. Շահնազարյանի դասարան), սովորել ՄՊԿ դաշնամուրի բաժնում (1951–52): 1955-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1983-ից): Որպես Հայֆիլհարմոնիայի մեներգչուհի, նաև Հայաստանի պետ. երգչախմբի հետ հանդես է եկել ԽՍՀՄ քաղաքներում, մասնակցել կամեր. համերգների Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում և այլուր: Երկացանկում՝ Վ. Ա. Մոցարտի, Ջ. Վերդիի, Գ. Ֆորեի, Ջ. Ռոսսինիի ռեքվիեմների, Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի, Ֆ. Շուբերտի կանտատի սոպրանոյի երգամասերը, Ջ. Պուչչինիի, Կ. Դեբյուսիի,

Ռազմիկ Ամյանը ելույթի պահին

Արթուր Այվինյանը ելույթի պահին

Իզաբելլա Այվինյան

Արտեմի Այվազյան

Յ. Սիբելիուսի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Է. Միրզոյանի, Է. Հովհաննիսյանի, Ա. Բաբաջանյանի և ուր. երկերից: Սաներից Ա. Կալուստովը, Կ. Կարապետյանը, Վ. Նիկսալյանը երգիչների այսրկովկաս. մրցույթի դափնեկիրներ են:

ԱՅՎԱԶՅԱՆ Արտեմի (Հարություն) Սերգեյի [26.06(09.07).1902, Բաքու–14.11.1975, Երևան], կոմպոզիտոր, թավջութակահար: Լյուբով *Լազարևայի* ամուսինը: Հայ ազգ. էստրադ. երաժշտության հիմնադիրը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1962): Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիայի թավջութակի (1923, Կ. Մինյար-Բելոռուչևի դասարան) բաժինը, ՄՊԿ (1932, Գ. Կոզոլուպովայի դասարան), Բարձրագույն վարպետության դպրոցը (1935): Երևանում կոմպոզիցիայի դասեր է առել Ալեքսանդր *Սպենդիարյանից*, եղել նորաբաց կոնսերվատորիայի թավջութակի առաջին դասատուն: 1927–30-ին՝ Լենինականի երաժշտ. ստուդիայի տնօրեն, որտեղ հիմնադրել է սիմֆ. նվագախումբ: 1938-ին ստեղծել է Հայաստանի պետ. էստրադ. նվագախումբը (1938–56-ին՝ գեղ. ղեկ.), միաժամանակ, 1940–42-ին՝ Հայֆիլհարմոնիայի, 1943–45-ին՝ ԵԵԿԹ գեղ. ղեկ.:

Գրել է «Թափառնիկոս» (1936), «Պարոն Մինթոնը Փարիզում» (1963) կոմիկ. օպերաները (երկուսն էլ՝ բեմ. ԵՕԲԹ-ում): Ճանաչված են նրա «Հայաստան», «Ջան Երևան», «Հայրենիք», «Կարինե», «Գյուլնարա», «Քարավան» և այլ երգեր, որտեղ զուգորդել է էստրադ. երաժշտության բնորոշ հատկանիշները և հայկ. ժող. մեղեդիների ռիթմն ու ինչերանգները: Խորհրդահայ առաջին օպերետների հեղինակն է՝ «Ատամնաբույժն արևելյան» (բեմ.՝ 1944), «Աշուղ Մուրադ» (բեմ.՝ 1945), «Երջանիկ օր» (բեմ.՝ 1945), «Սեր աստղերի տակ» (բեմ.՝ 1969, բոլորը՝ ԵԵԿԹ): Գրել է նաև սյուիտներ (1948, 1955), թավջութակի (1947), ձայնի (1949) կոնցերտներ, կվարտետներ (1950, 1955), կինոերաժշտություն («Ձյունե թագուհին», «Սոյուզմուլտֆիլմ», 1957, «Պոեմ Հայաստանի մասին», 1960, վավերագր., ևն):

Երաժիշտ-կատարողների համամիութ. 1-ին մրցույթի (1933) դափնեկիր, Վենետիկի կինոփառատոնի 1-ին մրց.:

ԱՅՎԱԶՅԱՆ Իսկուհի (ծ. թ. անհտ, Կ. Պոլիս–1900), երգչուհի (սոպրանո), դաշնակահարուհի: Երաժշտ. կրթությունն ստացել է Իտալիայում, ապա՝ Փարիզի կոնսերվատորիայում: 1800-ական թթ-ի կեսերին համերգներով հանդես է եկել Կ. Պոլսում և Եվրոպայի քաղաքներում: Երգել է նաև օպերայում. դերերից են՝ Մինիոն (Ա. Թոմայի «Մինիոն»), Վիոլետտա (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Սելինա (Ջ. Մեյերբերի «Աֆրիկուհին») ևն: Դաշնամուր. կատարումներն աչքի են ընկել ինքնատիպ մեկնաբանություններով:

ԱՅՎԱԶՅԱՆ Հակոբոս (ծ. թ. անհտ, Կ. Պոլիս– 1918), երաժիշտ: Սովորել է Կ. Պոլսի Նարեկյան վարժարանում, ապա՝ Արմաշի դպրեվանքում, ավարտել Բրուսայի շերամապահության ուսումնարանը: Տիրապետել է նոր հայկ. ձայնագրությանը, Հայ եկեղեցու տարեկան շրջանի երգասացություններին, քաղաք. մասնագիտացված երաժշտության հիմունքներին: Ինքնուրույն յուրացրել է եվրոպ. նոտային համակարգը, սովորել նվագել ուդ, ջութակ: Ուսումնառության վաղ տարիներից մասնակցել է ժամերգությունների և իր գեղեցիկ ձայնով ու երաժշտ. լսողությամբ արժանացել Համբարձում *Չերչյանի* ուշադրությանը: 1891–1915-ին (ընդմիջումով)՝ Արմաշի դպրեվանքի երաժշտության ուսուցիչ, մեծապես նպաստել է եկեղեց. գործիչների երաժշտ. կրթությանն ու ճաշակի ձևավորմանը:

1915-ին ձերբակալվել է, տարագրվել, հալածանքների ենթարկվել և մահացել բանտում:

Ա-ի ձեռագրերը փրկել է որդին՝ Գեղամը (հայրենադարձել է 1959-ին). դրանք հանձնել է ԳԱԹ-ին: Առանձնապես ուշագրավ են «Արևելյան երաժշտության ձեռնարկը» և դրան առնչվող «Հայ եկեղեցական ձայնագրության դասագիրքը» (անավարտ), որտեղ հայ երաժշտ. համակարգի ձայնաստիճանները, 8 ձայնեղանակներն ու դրանց դարձվածքները ներկայացված են համապատասխան մերձավորարլ. անվանումներով ու համարժեքներով (հայկ. ձայնագրության նշաններով):

Ա-ի ձեռնարկը (1901, արևմտահայ.) ուշմիջնադար. երաժշտ. մշակույթի յուրատիպ դրսևորումներից է. հարում է նախակոմիտաս. շրջանի հայ եկեղեց. երաժիշտների տես-գործն. թեքումով սակավաթիվ աշխներին (ուշագրավ է Թամբուրի Հարութինի համանուն՝ «Արևելյան երաժշտության ձեռնարկը»), որտեղ հաստատագրված և դասակարգված են շուրջ 100՝ սերնդե-

սերունդ բանավոր փոխանցված ավանդ. եղանակներ, չափակշռույթ. տիպական բանաձևեր (ուսուլներ)՝ իրենց ձայնելևէջ. կանոնների տես. և գործն. արժեքավոր պարզաբանումներով: Ա–ի «Ձեռնարկը» արևմտահայերենից ռուս. է թարգմանել, մանրամասն մեկնաբանություններով և առաջաբան հոդվածով հրատարակել է Նիկողոս *Թահմիզյանը*:

Երկ. *Руководство по восточной музыке, пер. с западноармянского, пред. и коммент. Н. К. Тагмизяна, Е., 1990.*

Լիլիթ Երնջակյան

ԱՅՎԱԶՅԱՆ Հովհաննես Վիգենի (ծ. 03.03.1983, Երևան), երգիչ (տենոր): Ավարտել է ԵՊԿ վոկալ–տես. բաժինը (2011, Ս. Դանիելյանի դասարան): Կատարելագործվել է երգի «Մարիո դել Մոնակո–Ռենատա Տեբալդի» միջազգ. ակադ–ում: 1997–2001–ին՝ Երևանի Սպայի տան երգի անսամբլում, ապա՝ ԵՕԲԹ, 2010–ից՝ Տորոնտոյի «Opera Belcanto of South Simcoe» թատրոնի մեներգիչ (Տուրիդու՝ Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ», ևն), 2013–ից հանդես է եկել Մոսկվայի «Նոր օպերա», Մեծ, ապա՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան (1–ին դերերգը՝ Կավարադոսսի, Ջ. Պուչչինիի «Տոսկա»), Թաթարստանի օպեր. և բալետի թատրոններում. դերերգերից են՝ Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ռադամես, Ալֆրեդ,Դոն Ալվարո, Դոն Կառլոս (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրավիատա», «Ճակատագրի ուժը», «Դոն Կառլոս»), Կանիո (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ»), Լենսկի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին») ևն:

Մասնակցել է Պ. Դոմինգոյի անվ. «Օպերալիա» միջազգ. մրցույթին (2012):

Մեներգիչների միջազգ. մրցույթի (2005, Փհենյան՝ Հս. Կորեա) Գլխ., ՀՀ նախագահի (2009), օպեր. մեներգիչների Գ. Գասպարյանի անվ. միջազգ. մրցույթի 1–ին (2008, Երևան), մեներգիչների Տ. Սազանդարյանի անվ. երիտասարդ կատարողների հանրապետ. մրցույթի 2–րդ (2007, Երևան) և այլ մրց–ներ:

ԱՅՏԸՆՅԱՆ Արսեն (Վիչեն) Պետրոսի [07(19).01.1825, Կ. Պոլիս–08(21).07.1902, Վիեննա], լեզվաբան, բանասեր, երաժիշտ: ՎննՄՄ անդամ (1842), աբբահայր (1886): Լինելով խոշոր հայագետ և ուսուցչապետ՝ Ա. նպաստել է նաև հայ երաժշտարվ–ի զարգացմանը: Նախապես երգերը գրառել է եվրոպ. նոտագրությամբ՝ ներդաշնակելով երգեհոնի նվագակցությամբ: 1816–ին Կ. Պոլսում խորհրդակցելով անվանի մասնագետ երաժիշտների հետ՝ պատրաստել է Պատարագի եղանակները՝ զանազան տարբերակներով, նաև մի շարք հայտնի շարականներ, որտեղ նկատելի էին ասոր. և հուն. ազդեցությունները: Հայկ. հոգևոր երգերի վերականգնված օրինակները վերստուգելու փորձերին ընդգրկել է նաև Վիեննայի Ամբրոսյան ընկերության պրոֆ. Հ. Բեռմին, որը հուն. և ասոր. երգեցողության հմուտ վարպետ էր:

Ա. 1854–ից ուսումնասիրել է հայ հոգևոր երգերը, ձերբազատել մաքուր հայկականը օտար ազդեցություններից, որն էլ իր հերթին նպաստել է Պատարագի սրբագրմանը: Հ. Բեռմն իր երգչախմբով այն կատարել է 1884–ին Վիեննայում՝ արժանանալով բարձր գնահատականի:

Գրկ. *Մանանեան Գ., Կենսագրական ակնարկ գեր. Արսէն արքեպիսկոպոս Այտընեան աբբայի..., Վնն., 1895:*

Հովհաննես Այվազյանը Կլոյթի պահին

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, Շիրակունի, Շիրակավանցի [մոտ 605–610, գ. Շիրակավան կամ Անեանք (Շիրակի գավառ)–մոտ 686–690], գիտնական, մատենագիր, տոմարագետ, մանկավարժ, երաժշտագետ: Շիրակավանի դպրեվանքի դպրոցում սովորել է օտար լեզուներ, ճարտասանություն, գրչություն, մանրանկարչություն, Տրապիզոնում 8 տարի ուսանել հույն գիտնական Տյուքիկոսի դպրոցում: 661–ին վերադարձել է Շիրակավան:

Արսեն Այտընյան

Ա. Շ. հայ իրականության մեջ և Մերձ. Արևելքում ամբողջ. ներկայացրել է երաժշտ. ինչականության մասին ալեքսանդրյան գիտնականների առաջավոր ուսմունքը: Կազմել է ձայնագիտության ալեքսանդրյան «տասնակարգեան աղիւսակի» հայկ. տարբերակը, որը հայ երաժշտագիտությունը հարստացրել է ձայներին, ձայնամիջոցներին և ձայնաշարերի կառուցվածքին վերաբերող նոր գաղափարներով: Նրան է վերագրվում նաև «Յաղագս գիտութեան ձայնից» գրվածքը, որը նվիրված է հայկ. ութձայն համակարգի ձայնեղանակների մեկնությանը:

Անանիա Շիրակացի

Հեղինակ է Հինանց ժամանակամիջոցում Աձ–Դկ 8 ծավալուն հարցնակարգերի մեծ մասի և Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի «քաղցրալուր» շարականների: Խորապես ուսումնասիրել է հայ շարականերգության և ժամագրքի երգասացությունների հին ու ժամանա–

կի ավանդույթները. դրանք գործածել է ստեղծագործաբար և կանխորոշել զարգացման նոր ուղիներ:

Ա. Շ–ու անունով Երևանում և Գյումրիում կոչվել են փողոցներ, համալսարան, սահմանվել է ՀՀ պետ. մեդալ:

Գրկ. *Թահմիզյան Ն., Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսության, ԲՄ, № 5, 1960: Արևշատյան Ա., «Յաղագս գիտութեան ձայնից» հեղինակի հարցի շուրջ. Անանիա Նարեկացի, թե՞ Անանիա Շիրակացի, ՊԲՀ, №1, 2014:*

Նարինե Անանիկյան

ԱՆԱՆԻԿՅԱՆ Նարինե Արմենի (ծ. 19.04.1976, Երևան), երգչուհի (մեցցո սոպրանո): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի, ԵՊԿ մեներգեցողության (2000) բաժինները: 2000–01-ին՝ ԵՊԿ-ին կից օպեր. ստուդիայի, 2001-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ադալջիզա (Վ. Բելլինիի «Նորմա), Ազուչենա (Ջ. Վերդիի «Տրուբադուր») ևն, երգել է նաև Ջ. Պուչչինիի, Ջ. Ռոսսինիի, Կ. Սեն-Սանսի, Պ. Ի. Չայկովսկու, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի, Ա. Վիվալդիի («Տիգրան Մեծ»), Ա. Տիգրանյանի, Տ. Չուխաճյանի օպերաներում: Եղել է մի շարք կոմպոզիտորների առաջին գործերի կատարողը (Ջ. Սանուկյանի «Արցունքների սիմֆոնիա», Դ. Սաքոյանի «Սաղմոս», Ջ. Հարբիսոնի «Հյուսիս և Հարավ» շարքը, Ա. Հովհաննեսի «Մագնիֆիկատ» ևն): Համերգ. երկացանկում՝ հայ, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ռոմանսներ:

Ա. Իսահակյանի անվ. հանրապետ., Ֆ. Վինյասի անվ. (Իսպանիա) միջազգ. մրցույթների դափնեկիր:



Պաորո Անանյան

ԱՆԱՆՅԱՆ Արմեն Ալեքսանդրի (05.08.1946, Երևան– 05.09.2001, Երևան), երաժշտագետ: Կարեն ***Անանյանի*** հայրը: Արվեստագիտ. թեկնածու (1983): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1966), ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (1973): Սայաթ-Նովայի անվ. կրթաթոշակառու: 1974-ից դասավանդել է ԵՊՄԻ-ում, միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող:

Երկ. *Эмин Аристакесян, Е., 1984.*

ԱՆԱՆՅԱՆ Կարեն Արմենի (ծ. 27.02.1976, Երևան), կոմպոզիտոր: Արմեն ***Անանյանի*** որդին: Արվեստագիտ. թեկնածու (2000): ՀԿՄ անդամ (2004-ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1993), ԵՊԿ դաշնամուրի (1998, երկուսն էլ՝ Ն. Ահարոնյանի դասարան) և կոմպոզիցիայի (2001, Ղ. Սարյանի և Ա. Սմբատյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2000, Վ. Սարգսյանի դասարան): 2002-ին Ֆրանսիայում վարպետության դասեր է առել Վ. Երեսկոյից, 2003–04-ին Մոսկվայում՝ Կարեն ***Խաչատրյանից*** և Ռ. Ա. Լեդենյովից: 2000-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2006-ից): 2007–16-ին՝ ՀՀ ՊՆ գլխ. շտաբի փող. նվագախմբում:

Գրել է սիմֆ. պատկերներ՝ «Տեսիլ» (2004), «Սուրբ Ծննդյան երեք երգ» (2005)՝ լար. նվագախմբի, «Ոգեկոչում» (2007, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին)՝ դուդուկի, շվիի և լար. նվագախմբի, կոնցերտ-ֆանտազիա (2006)՝ դաշնամուրի և լար. նվագախմբի, «Ձոն խաղաղության» (2007)՝ ջինվոր. փող. նվագախմբի, «Ճանապարհորդություն Ամերիկայով» (2007, Ջ. Գերշվինի հիշատակին)՝ ջութակի և լար. նվագախմբի, կոնցերտ (2011, 4-մասանոց)՝ դաշնամուրի, լար. նվագախմբի և հարված. գործիքների,

Կարեն Անանյան

«Legend» (2011)՝ լար. նվագախմբի համար, կոնցերտ-ռապսոդիա և այլ գործեր: Կատարել է փոխադրումներ և մշակումներ:

Մասնակցել է փող. նվագախմբերի միջազգ. (2008, Ս. Պետերբուրգ), Բեյրութի (2009), Նիկոսիայի (2010) ջազ. փառատոներին:

«1900+» միջազգ. մրցույթի (2011) դափնեկիր, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» I աստիճանի մեդալ (2013):

Երկ. *Ջազային կոմպոզիցիաներ, Ե. 2006: Фортепианные сочинения, Е., 2002.*

ԱՆԱՆՅԱՆ Պաոլո (1880, Կ. Պոլիս–1942), երգիչ (բաս, բարիտոն): Երաժշտ. կրթություն ստացել է Իտալիայում, ապա՝ Ֆրանսիայում: Մեկ տարի երգել է Փարիզի «Օպերա-կոմիկ», 4 տարի՝ Մոնտե Կառլոյի

օպեր. թատրոններում: Բոստոնի օպեր., ապա՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա» թատրոնների մենակատար (Գրենվիլ՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», Անջելոտտի՝ Ջ. Պուչչինիի «Տոսկա», ևն): 1921–29-ին երգել է Ֆ. Ի. Շալյապինի խաղընկերությամբ (Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Շ. Գունոյի «Ֆաուստ», Ժ. Մասնեի «Դոն Կիխոտ»): Երաժշտ. բացառիկ տվյալների շնորհիվ հանդես է եկել նաև բարիտոն. դերերգերով (Վալենտին՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Սանչո՝ Ժ. Մասնեի «Դոն Կիխոտ»): Չեխ նշանավոր երգչուհի Է. Դեստինովայի հետ հանդես է եկել Ջ. Պուչչինիի «Աղջիկն Արևմուտքից» օպերայում: Երգել է Ջ. Վերդիի «Օթելլո», Ջ. Պուչչինիի «Մանոն Լեսկո», Գ. Դոնիցետտիի «Սիրո նեկտար», Է. Լալոյի «Իզ քաղաքի արքան» և այլ օպերաներում: Եղել է հանրաճանաչ երգիչներ Բ. Ջիլլիի, Տ. Սկիպայի խաղընկերը, երկար տարիներ հանդես եկել դիրիժոր Ա. Տոսկանինիի ղեկավարությամբ:

ԱՆԱՍՅԱՆ Արմեն Հենրիկի (ծ. 30.06.1963, Երևան), ջութակահար, դիրիժոր: Հենրիկ ***Անասյանի*** որդին: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցը (1978), Լոս Անջելեսի համալսարանի երաժշտ. բաժինը (1989), կատարելագործվել Գերմանիայում (1990), Նյու Յորքում (1990): 1990-ից՝ Գերմանիայում, 1992-ից Լոս Անջելեսում ղեկավարել է կամեր. նվագախմբեր (1994–98-ին՝ Յանիի նվագախումբը), 1993-ից՝ «Խաչատրյան» քառյակի 1-ին ջութակ, 1998-ից՝ ԵՕՔԹ նվագախմբի ջութակահար:

ԱՆԱՍՅԱՆ Հենրիկ Հակոբի (ծ. 10.04.1937, Երևան), դիրիժոր, կոմպոզիտոր, գրող, հաս. գործիչ: Արմեն ***Անասյանի*** հայրը: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1961), ԵՊԿ դիրիժորության բաժինը (1966, Մ. Մալունցյանի դասարան): 1962–78-ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի երաժշտ. խմբ., 1966–74-ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի, 1974–77-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի դիրիժոր: 1978-ից ապրում է Լոս Անջելեսում (ԱՄՆ): 1978-ին Լոս Անջելեսում հիմնադրել է «Սիփան» երգչախումբը, 1987-ին Սիդնեյում՝ երգի-պարի անսամբլ, «Սարդարապատ» երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ. (1981-ից): Ստեղծել է «Սրբազան համերգ» շարքը (1992-ից՝ «Սիփան» երգչախմբի կատարմամբ, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին): Ներկայացրել է Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (1984, գործիքավորումը՝ Ա-ի) և «Անուշ» (1994, Անուշ՝ Ա. Նշանյան, Սարո՝ Արամ Անասյան) օպերաների համերգ. կատարումները: Հեղինակ. համերգներով հանդես է եկել Նյու Յորքում, Բոստոնում, Չիկագոյում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Ստամբուլում, Երևանում («Սիփան» երգչախմբի հետ, 1990, 1991, 1997, 2012): Մինրեապոլում և Տորոնտոյում (2002), Նյու Յորքում և Լոս Անջելեսում (2004), Սիդնեյում (2006) ղեկավարել է Արա ***Գևորգյանի*** հեղինակ. համերգները: 1999-ին Ա. (որդու՝ Արմեն ***Անասյանի*** հետ) ներկայացրել է Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտը (Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգաշրջանի բացմանը): Գրել է «Ափ մը հող», «Արազիս», «Դուքան-դար» և այլ երգեր, «Իմ հայրենիք», «Հայրենիքի կարոտ», «Կռունկի կանչով» և այլ խմբերգեր, «Ճանապարհ» սիմֆ. պոեմը, «Սայաթ-Նովա» սյուիտը, «Երկիր Նաիրի» կանտատը, «Հաղթանակ», «Սայաթ-Նովայի կանչով», «Ղանթարի կանչով» սիմֆ. պարերը, մշակել է մի շարք ժող., աշուղ., գուսան. երգեր անսամբլների համար: Հրատարակել է «Լուռ ցավեր» (1990), «Այս եմ ես…» (հ. 1-7, 1994–2016), «Վերջին հեքիաթը» (2007) գրական, «Իմ Հայրենիք» (1997), «Գնա, Կռունկ» (1997), «Հայրենիք և սեր» (2004, երեքն էլ՝ ժող.) երաժշտ. գործերը:

ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2009):

ԱՆԱՍՏԱՍՅԱՆ Հովհաննես [ծ. 1933, Բուրգաս (Բուլղարիա)], ալտահար: Ավարտել է Բուլղարիայի կոնսերվատորիան, կատարելագործվել Փարիզում (1963-ից): 1965-ից՝ Բուլղարիայի ռադիոյի սիմֆ. նվագախմբի մենակատար, որի հետ համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Իտալիայում, Չեխոսլովակիայում, Գերմանիայում, Ռումինիայում և Հայաստանում (1968): 1970-ական թթ-ից ապրում է Անտվերպենում. եղել է սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստերը: Հիմնադրել է «Սևան» լար. քառյակը. երկացանկում՝ Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ա. Դվորժակի, Կոմիտասի, Ա. Բաբաջանյանի, Է. Միրզոյանի, Ա. Այվազյանի, Գ. Ղազարոսյանի և ուր. գործերից: 1968-ին մենանվագով հանդես է եկել հայկ. հեռուստառադիոյով,

Արմեն Անասյան

Հենրիկ Անասյան

4.

Անգլիական եղջերափող

Անդրեն ելույթի պահին

Ալլա Անդրեասյանը Չանիփրայի դերում (Գ. Ս. Միլրոփինի «Չանիփրայի համբույրը»)

ապա ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի հետ կատարել է Գ. Ֆ. Տելեմանի 4-մասանոց կոնցերտը (ալտի և նվագախմբի համար): 1973-ին մասնակցել է Բրյուսելի արքուն. կոնսերվատորիայում կազմակերպված հայկ. համերգին:

Հիմնադրել է «Ամադեուս» մրցույթ-փառատոնը, որն անցկացվել է Երևանում (1992-ից), Գյումրիում (1993-ից), Սպիտակում, Վանաձորում և Արցախում (1994-ից, 2012-ին՝ Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակի առթիվ):

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՂՋԵՐԱՓՈՂ (անգլ.՝ english horn, իտալ.՝ corno inglese), ալտային հոբոյ, փայտե փող. երաժշտ. գործիք: Կառուցվածքը և դիապազոնը նույնն են, ինչ հոբոյինը. տեխնիկապես առավել ճկուն է, ձայնը՝ թանձր, ռնգային, փափուկ և հյութեղ, արտահայտիչ հնչերանգով: Լարվածքը ֆա (in F) է, հնչում է գրվածից մաքուր կվինտա ներքև: Նվագախմբում գործածում են որպես նվագակցող և մենակատար գործիք:

ԱՆԴՐԵ (Հովնանյան Անդրեյ Սերգեյի, ծ. 07.08.1979, Ստեփանակերտ), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2014): 1985-ից հաճախել է Ստեփանակերտի Կոմիտասի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի դասընթացները: 9 տարեկանում գրել է իր առաջին՝ «Աղոթք» երգը, 15-ում հաղթել է «Ճանապարհ դեպի Վերածնունդ» երաժշտ. մրցույթում: Որպես մեներգիչ՝ հանդես է եկել «Ղարաբաղ» փոփ-ջազ. խմբում, 1998–2002-ին՝ Հայաստանի երգի պետ. թատրոնում: 2001-ին Ի. Դ. Կորզոնի հրավերով ելույթ է ունեցել Մոսկվայի «Ռոսիա» համերգասրահում: Ջուգերգով հանդես է եկել փոփ երգչուհի Ս. Ջեյդի հետ՝ «Come back» երգով: 2002-ին նկարահանել է իր առաջին տեսահոլովակը («Հորովել»): 2006-ին Ա. առաջինն է Հայաստանը ներկայացրել «Եվրատեսիլ» երգի մրցույթին (8-րդ տեղ, Հատուկ մրց.): Համերգներով շրջագայել է Գերմանիայում, Ֆրանսիայում, Նիդեռլանդներում, Իրանում, Լիբանանում, Սիրիայում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում և այլուր: Երգացանկում՝ «Անցա գնացի», «Սոնե լե-լե», «1000 անգամ», «Միայն սեր», «Իմ հոգի», «Ես եմ», «Երջանկության գաղտնիքը» ևն: Թողարկել է 6 ձայնասկավառակ (2003–14):

«Golden Skif» (1-ին տեղ, 2001, Դոնեցկ՝ Ուկրաինա), «Золотой шлягер» (3-րդ տեղ, 2001, Մոգիլյով՝ Բելառուս) միջազգ. երաժշտ. մրցույթների, «Ասիայի ձայն» (5 մրց., 2002, Ալմաթի), «Ֆեստոս» («Ոսկե դիպլոմ», 2003, Մոսկվա), «Ասիա» երգի («Նոր գերազանց երգիչ», 2003, Շանհայ) և այլ փառատոների ու մրցույթների դափնեկիր:

ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾԿԵԱՑԻ ՊԱՐՈՆՏԵՐ, տաղերգու: Ենթադրվում է, որ ապրել է XVII դ-ում: Հայտնի է նրա 4 տաղը: Երգել է գարնան, վայելքի բերկրանքը («Տաղ վարդի եւ պլպուլի...», Մնոնդ, ձեռ. № 2339, «Տաղ սեղանոյ եւ ուրախութեան», ձեռ. № 3751): Նրա երգերում արտացոլվել են նաև հայ ժողովրդի հինավուրց ցավի՝ պանդխտության վիշտն ու տառապանքը («Տաղ ղարիպի...», ձեռ. № 2339, «Տաղ ի վերայ ղարիպի...», ձեռ. № 8274, նաև Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 412):

Հասմիկ Սահակյան

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Ալլա Եգորի (31.12.1917, Տաշքենդ–11.12.2003, Երևան), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (1967): Ավարտել է ԵՊԿ (1950): 1937–47-ին՝ ԵՌԹ, 1947-ից՝ ԵԵԿԹ դերասանուհի: Հանդես է եկել օպերետներում՝ Բայադերա, Մարիցա (Ի. Կալմանի «Բայադերա», «Մարիցա»), Կարինե (Տ. Չուխաճյանի «Կարինե»), Սաֆֆի (Յ. Շտրաուսի «Գնչուական բարոն»), Գյուլչոհրա (Ռ. Հաջիբեկովի «Արշին մալ-ալան»), Չանիտա (Գ. Ս. Միլյուտինի «Չանիտայի համբույրը»), երաժշտ. ներկայացումներում՝ Կատարինե (Վ. Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը»), Նատաշա (Շիրվանզադեի «Մորգանի խնամին») ևն:

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Նվարդ Արամի (ծ. 04.11.1952, Ստամբուլ), դիրիժոր: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը, սովորել Փարիզի կոնսերվատորիայի դիրիժորության բաժնում, Ամստերդամի կոնսերվատորիայում: 1976–79-ին՝ Փարիզի «Գրանդ օպերայի» գլխ. դիրիժորի ասիստենտ: Կատարելագործվել է Դարմշտադտում (Գերմանիա) և Փարիզում (ղեկ.՝ Պ. Բուլեզ): 1980-ից՝ «Պոլիխրոմիա» անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր (շուրջ 25 տարի): Անսամբլի երգացանկում ընդգրկել է ժամանակակից երաժշտության 500-ից ավելի նոր ստեղծագործություններ:

Ա., որպես հրավիրյալ դիրիժոր, 1990-ական թթ-ին աշխատել է ԵՕԲԹ-ում:

Համագործակցել է Ուրուգվայի, Բրազիլիայի, ԱՄՆ-ի տարբեր նվագախմբերի, կոմպոզիտոր Է. Մորիկոնեի հետ, համերգներով հանդես եկել Եվրոպայում: 1999–2005-ին՝ Թիանջինի քաղաքի (Չինաստան) սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ.: 2005-ին հրավիրվել է ՌԴ: 2010-ին այցելել է ՀՀ: Թուրք դիրիժոր Ջ. Մանսուրինի հետ Թուրքիայում ղեկավարել է հայ-թուրք.

Նվարդ Անդրեասյան

երիտասարդ. նվագախմբի (կազմում՝ Երևանի և Գյումրիի, նաև Թուրքիայի տարբեր քաղաքների կոնսերվատորիաների 35 երաժիշտներ) համերգները:

Երիտասարդ դիրիժորների միջազգ. մրցույթի Մեծ մրց. (1980, Բեզանսոն՝ Ֆրանսիա):

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ (Անդրիասով) Իոսիֆ Արշակի (07.04.1933, Մոսկվա–16.11.2000, Նյու Յորք), կոմպոզիտոր: Ավարտել է ՄՊԿ (1963):

Գրել է 3 սիմֆոնիա, կոնցերտներ՝ շեփորի, կլառնետի, գալարափողի և սիմֆ. նվագախմբերի համար, կամեր. նվագախմբի հնգամաս վարիացիաներ, դաշնամուր. տրիո, «Երկիր-հայրենիքին» կանտատը, նաև մի շարք գործիք. երկեր: Ա-ի գործերից կատարվել են ԱՄՆ-ի Ռոդ Այլենդ նահանգի Նյուպորտի երաժշտ. փառատոնում, տարբեր մրցույթներում: 1979-ից ապրել է Մանհեթենում (Նյու Յորք): 2002-ին Երևանում առաջին անգամ կատարվել են Ա-ի երկերը:

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ Ռոբերտ Քրիստափորի [25.08 (07.09).1913, Թիֆլիս–20.08.1971, Երևան], դաշնակահար, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Թիֆլիսի (1927), ապա՝ Լենինգրադի (1935, Լ. Վ. Նիկոլաևի դասարան) կոնսերվատորիաները: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ մի շարք քաղաքներում: 1938–71-ին դասավանդել է ԵՊԿ-ում (դաշնամուրի բաժին, պրոֆ.՝ 1964-ից): Գրել է դաշնամուր. գործեր («Երկու էտյուդ», «Երկու պար», 1955, «Կոնցերտ», 1958, «Նաիրի», 1965, պոեմ), դաշնամուրի համար փոխադրել և մշակել է Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Ռ. Մելիքյանի երգերից:

Երևանում գործում է Ա-ի անվ. երաժշտ. դպրոց:

Գրկ. *Апоян Ш., Роберт Андриасян, Е., 1984.*

ԱՆՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՏԵՄՊԵՐԱՑՎԱԾ ԼԱՐՎԱԾՔ, օկտավայի բաժանումը 12 (երբեմն՝ 14, 31) անհավասար մասերի: Ա. տ. լ-ում օկտավայի հնչյունների միջև Պյութագորասի կամ սինտոնիկ կոմայի անհավասար բաժանման դեպքում նույնանուն ինտերվալները հիմնականում անհավասար էին, որի հետևանքով բացակայում էր էնհարմոնիզմը (հետագայում մի քանի հնչյուններ էնհարմոնիկորեն հավասարեցվել են): Ա. տ. լ. կարելի էր նվագել սահմանափակ տոնայնություններով (2–3 դիեզ կամ բեմոլ ունեցող), որտեղ կային կեղծ, ոչ ճիշտ հնչող ինտերվալներ և ակորդներ: Այդ լարվածքները մինչև ***հավասարաչափ տեմպերացված լարվածքի*** վերջնական հաստատումը բավարարել են տվյալ ժամանակաշրջանի երաժշտ. պահանջները:

Իոսիֆ Անդրիասյան

Ռոբերտ Անդրիասյան

ԱՆՀԵՄԻՏՈՆ ՀՆՉՅՈՒՆԱՉԱՐ (հուն.՝ an – առանց, hemi – կիսա, ton – հնչյուն), առանց կիսատոների հնչյունաշար (տես ***Պենտատոնիկա***), հակառակը հեմիտոնային հնչյունաշարն է (կիսատոներով հնչյունաշար):

ԱՆՍԱՄԲԼ (ֆրանս.՝ ensemble – միասին), 1. միասին հանդես եկող երաժիշտ- կատարողների խումբ՝ սովորաբար կազմված փոքր երգչախմբից և նվագախմբից: Յուրաքանչյուր երաժիշտ կատարվող երկում ունի իր նվագաբաժինը (երգաբաժինը): Երաժիշտների թվով պայմանավորված՝ տարբերում են Ա-ի հետևյալ տեսակները.

ա. Դուետ (իտալ.՝ duetto, < լատ. duo – երկու), երկյակ, զուգերգ, զուգանվագ, 2 կատարողից բաղկացած Ա. (դաշնամուրի և ջութակի ևն), նաև նրանց համար գրված վոկալ կամ գործիք. պիեսները (նվագակցությամբ):

Եռյակ

բ. Տրիո (իտալ.՝ trio, < լատ. tres, tria – երեք), եռյակ, 3 կատարողից բաղկացած գործիք. կամ վոկալ (տերցետ. իտալ.՝ terzetto, լատ.՝ tertus-

երեք) Ա. (լար., փող. ևն), նաև նրանց համար գրված երաժշտ. երկերը: Առավել տարածված են դաշնամուր. (ջութակ, թավջութակ, դաշնամուր) և լար. (2 ջութակ և թավջութակ, ջութակ, թավջութակ և ալտ) տրիոները:

Գ. Կվարտետ (< լատ. quartos – չորրորդ), քառյակ, 4 կատարողից բաղկացած վոկալ կամ գործիք. Ա. (լար.՝ 2 ջութակ, ալտ, թավջութակ, փող.՝ փող, գալարափող, տրոմբոն, տուբա կամ ֆլեյտա, կլառնետ, ֆագոտ, հոբոյ, խառը՝ ֆլեյտա, հոբոյ, թավջութակ, դաշնամուր կամ ջութակ, կլառնետ, դաշնամուր, տրոմբոն, ևն), նաև նրանց համար գրված ստեղծագործությունները: Առավել տարածված են լար. կվարտետները:

Ղազարոս Սարյանի անվան լարային քառյակը

Դ. Կվինտետ (< լատ. quintus – հինգերորդ), հնգյակ, 5 կատարողից բաղկացած գործիք. կամ վոկալ Ա., նաև նրանց համար գրված երաժշտ. երկերը: Տարածված են համասեռ (5 լար. աղեղն., 5 փայտե փող., 5 պղնձե փող. ևն) և խառը (աղեղն. գործիքներ՝ դաշնամուրի կամ փող. կամ տավիղի հետ) կվինտետները: Դաշնամուր. կվինտետը սովորաբար բաղկացած է դաշնամուրից և լար. քառյակից, փողայինը՝ ֆլեյտայից, հոբոյից, կլառնետից, ֆագոտից և գալարափողից, ջազայինը՝ սաքսոֆոնից, փողից, դաշնամուրից (կամ կիթառ), կվինտետ-բասից և հարված. գործիքից: Երաժշտ. երկերից կարևոր են լար. (2 ջութակ, 2 ալտ, թավջութակ կամ 2 ջութակ, 2 թավջութակ, ալտ), դաշնամուր. (դաշնամուր և 4 այլ գործիքներ) և փող. (հաճախ՝ ֆլեյտա, հոբոյ, կլառնետ, ֆագոտ, գալարափող) կվինտետները:

Ե. Սեքստետ (< լատ. sextus – վեց), 6 կատարողից բաղկացած գործիք. կամ վոկալ Ա., նաև նրանց համար գրված երաժշտ. երկերը: Դաս. լար. սեքստետն ընդգրկում է 4 ջութակ, ալտ, թավջութակ: Հայտնի են նաև այլ կազմեր՝ փող. գործիքներ և դաշնամուր, խառը՝ լար. և փող. գործիքներ (մոտ է դիվերտիսմենտին և գործիք. սերենադին): Օպերայում սեքստետը գործողության ֆինալի բաղկացուցիչ մասն է: Որպես կամեր. անսամբլի ժանր՝ գրվում է սոնատ-սիմֆ. ցիկլի ձևով:

Զ. Սեպտետ (< լատ. septem – յոթ), 7 կատարողից բաղկացած գործիք. կամ վոկալ Ա., նաև նրանց համար գրված երաժշտ. երկերը: Օպերայում սովորաբար գործողության ֆինալի բաղկացուցիչ մասն է, հազվադեպ՝ ինքնուրույն երկ՝ 7 երգիչների համար՝ նվագախմբի նվագակցությամբ: Որպես կամեր. անսամբլի ժանր՝ ունի խառը կազմ և մոտ է դիվերտիսմենտին ու սերենադին: Երբեմն գրվում է սոնատ. ձևով:

Է. Օկտետ (< լատ. octo – ութ), 8 կատարողից բաղկացած գործիք. կամ վոկալ Ա., նաև ստեղծագործություն՝ 8 գործիքի, երբեմն՝ 8 երգչաձայնի համար: Վոկալ օկտետը գրվում է տարբեր կազմերի նվագակցությամբ կամ առանց նրա:

Գործիքայինը երևան է եկել XVIII դ-ի 2-րդ կեսից: Որպես ժանր՝ հարում է դիվերտիսմենտին և սերենադին: XIX դ-ից սոնատ. ձևով գրված բազմամաս ստեղծագործություն է:

Ը. Նոնետ (իտալ.՝ nonetto, < լատ. nonus – իններորդ), 9 կատարողից բաղկացած գործիք. կամ վոկալ Ա., նաև նրանց համար գրված երաժշտ. երկերը: Նոնետում սովորաբար ընդգրկում են լար. կվարտետ կամ կվինտետ և փայտե փող. գործիքներ: Գործիք. նոնետը սովորաբար սոնատ-սիմֆ. բազմամաս կամեր. երկ է: Խառը գործիք. կազմում այն մոտ է գործիք. սերենադի ժանրին:

Երևան է եկել XIX դ-ում:

Թ. Դեցիմետ (< լատ. decimus – տասներորդ, decem – տասն), 10 կատարողից բաղկացած գործիք. կամ վոկալ Ա., նաև նրանց համար գրված երաժշտ. երկերը: Տարածված և մշտ. Ա-ներից չէ: Վոկալ դեցիմետը կարող է ուղեկցվել գործիքներով (դաշնամուր, նվագախումբ) կամ երգչախմբով:

ԱՆՍԱՄԲԼ ԵՐԳԻ ԵՎ ՊԱՐԻ (ժող. երգի և պարի անսամբլներ), գեղ. կոլեկտիվ, որտեղ համադրված են երգեցողությունը (երգչախումբ, երգիչների անսամբլ, մեներգիչներ), գործիք. երաժշտությունը (նվագախումբ կամ ժող. գործիքների ան-

սամբլ, դաշնամուր ևն), պարը, նաև գեղ. խոսքը (ասմունք, երկխոսություններ ևն): Ծրագիրը սովորաբար թատերականաց-

«Հորովել» երգի-պարի անսամբլը (Վանաձոր)

ված է, կարող է ունենալ միջանցիկ թեմա կամ կազմված լինել առանձին համարներից: Խորհրդ. տարիներին հիմնադրված խոշոր կոլեկտիվներից են Ա. Վ. Ալեքսանդրովի անվ. խորհրդ. բանակի երգի-պարի (1928), ԽՍՀՄ ժող. պարի (1937), «Բերյոզկա» ժող. պարի (1948), Հայկ. ժող. երգի-պարի (1938), Հայաստանի պարի պետ. (1958), Լիտվ. «Լետուվա» երգի-պարի (1940), Ղազախ. երգի-պարի պետ. (1955), Վրաց. ժող. պարի (1945), Ուզբ. երգի-պարի պետ. (1939), Ուզբ. «Բախոր» պարի պետ. (1957), Ուկր. պարի պետ. (1954) և այլ անսամբլներ:

«Սասնա ծռեր» ժողովրդական երգի-պարի անսամբլը (Երևան)

Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի օրինակով կոլեկտիվներ են ստեղծվել նաև Սփյուռքում՝ ԱՄՆ-ում, Լիբանանում, Ֆրանսիայում, Արգենտինայում, Բուլղարիայում, Իրանում, Կանադայում, Եգիպտոսում և այլուր:

ԱՆՏԻՖՈՆԱՅԻՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, 2 երգչախմբի կամ մեներգչի և երգչախմբի փոխնեվոխ երգեցողությունը: Ծագել է հինհուն. ողբերգությունից, որտեղ սովորաբար երգչախումբը բաժանված էր 2 կիսաերգչախմբի (կիրառվել է նաև հինհրեական տաճար. երգեցողության մեջ): Մ. թ. սկզբին այն ներմուծվել է քրիստ. մշակույթ (Իգնատիոս Անտիոքացի Աստվածակիր եպիսկոպոս, կաթոլիկ. եկեղեցում՝ Ամբրոսիոս Մեդիոլանացի եպիսկոպոս): Ա. ե-յան սկզբունքը տարածվել է Իտալիայում, իսկ վաղքրիստ. շրջանում դարձել երգասացության ամենատարածված ձևերից: Հետագայում այն լայնորեն օգտագործել են բոլոր ժամանակների բազմաթիվ կոմպոզիտորներ: Ա. ե. կատարել են տղամարդկանց և մանկ. երգչախմբերը, ուշ շրջանում կաթոլիկ. եկեղեցում՝ քահանան, երգչախմբերի մասերը՝ ամբողջ. երգչախումբը: Հայկ. պաշտամունք. երգեցողության մեջ այդ ձևը կոչվում է ***փոխ***:

Ա. ե. սերել է ժող. երգարվ-ից, մասնավորապես՝ շուրջպար. շղթայակապ կառուցվածքի երգերից: Խմբի մի մասը մեղեդու 1 նախադասությունն ավարտում է, իսկ մյուս մասը նրանից վերցնում է վերջին բառերը և պատասխանում նույն կամ նոր նախադասությամբ՝ ստեղծելով յուրօրինակ երկձայնություն: Ա. ե. կիրառվում է նաև ժող. և կոմպոզիտոր. գործիք. երաժշտության մեջ: Կոմիտասի երկերից Ա. ե-յան նմուշներ են «Էն դիզան», «Եղնիկ», «Օրոր», «Սև ա չորանի շունը» և այլ խմբերգեր:

Հայ գեղջկական պարեղանակների անտիֆոնի նմուշ

ԱՆՏՐԱԿՏ (ֆրանս.՝ entr'acte), երաժշտ. պիես. կատարվում է օպեր. և դրամատիկ. ներկայացումների գործողությունների կամ տեսարանների միջև:

ԱՆՏՈՒՆԻ, հայկ. ժող. երգի տեսակ: Բանաստեղծական առումով՝ հնագույն գուսան. հայրենների մի ճյուղը, որը ժողովրդականացել, ապա «Ա.» անվանումով գրառվել է XVI–XIX դդ-ում: Բովանդակությամբ հարսանեկան, սիրային, լացի, օրորոցի և հատկապես պանդխտության երգեր են:

Ա-ներում պահպանվել են հայրենների հիմնական կերպար. կարգն ու բովանդակությունը: Նրանց գրաբարախառն միջին հայ-ը կրել է տեղ. (մասնավորապես՝ Անի) բարբառի ազդեցությունը, երբեմն էլ

փոփոխելով բանաստեղծ. չափն ու ռիթմը, կառուցվածքը (սկզբն. ութտող որոշ ոտանավորներ միացել և կազմել են համեմատաբար ծավալուն ամբողջություններ)՝ առաջացրել են միևնույն հայրենի փոփոխակ Ա-ներ: Պահպանել են նաև հայրենների արտահայտման սեղմությունը, նրբությունը, պատկերավորությունը, ոտանավորի երաժշտականությունը: Ձևով և բովանդակությամբ Ա-ները բուն ազգ. երգեր են:

Երաժշտական առումով՝ միջնադար. գուսան. եղանակների ժողովրդականացած տեսակ, որը կառուցվածք. մի շարք հատկանիշներով միջին տեղ է գրավում բուն ժող. և տաղային մեղեդիների միջև: Ա-ներին բնորոշ են զարդարուն ոճի և ազատ իմպրովիզացիայի հանդարտ, սակայն ներքուստ լարված, «քաղցրանվագ» քնար. կամ քնարադրամատիկ. միատիպ մեղեդիները, ուստի կոչել են «անտունի-



Հատված անտունիից (գրառումը՝ Կոմիտասի)

եղանակ» ընդհանուր անվանումով: Երգելիս (երբեմն՝ նվագակցությամբ) ընդմիջվել են ասերգ. կամ արտասան. դարձվածքներով. սովորաբար յուրաքանչյուր տողից առաջ ինչել է «հա յար» կամ «հայ յար» կրկնակը: Լինելով համեմատաբար բարդ կառուցվածքի երգեր՝ քչերին է հաջողվել դրանք կատարել: Կատարման տեղն ու ժամանակն ազատ են եղել, մասնավորապես երգել են օտարության մեջ կամ պանդուխտին հիշելիս (լավագույն նմուշներից է «Կռունկ» երգը): Սիրային Ա-ները ինչել են խնջույքների ևն ժամանակ:

Ա-ների մի քանի եղանակ ընդգրկված են Կոմիտասի ձայնագրած Ակնա ժող. երգերում: Երբեմն երաժիշտ բանասերներն Ա. են անվանել հայ պանդուխտի (անտուն) վիշտն ու կարոտն արտահայտող միջնադար. երգերը:

Ա-ների բովանդակությունն ունի բազմաթիվ մոտիվներ (հրաժեշտ, բաժանում, կարոտ, սեր, սպասում, սուգ ևն):

Ա-ներ են հորինել նաև պրոֆեսիոնալ երգիչներն ու միջնադար. գուսանները, որոնցից լավագույնները ժողովրդականացվել են:

Ա-ի ձայնակարգը կվարտա-սեպտիմային հենքով էոլական մինորն է. կազմված է 2 էոլական մինորից (սոլ և դո տոնիկաներով): Երգերի հնչողությանը թարմություն ու գունեղություն են հաղորդում ձայնակարգ. հարուստ ալտերացիաները: Երաժշտ. լեզուն ցայտուն է, դրամատուրգիան՝ բարդ: Երգերը ծավալուն են, ունեն մեծ դիապազոն, ձայնակարգ. հարուստ հիմք, մետրական ազատ հենք, ռիթմի կազմակերպման ասերգ-իմպրովիզացիայի սկզբունք, երգի կառուցվածք. մասնատվածություն (Ա-ներում, պայմանավորված արտահայտվող տրամադրությունների խորությամբ ու ծայրագույն հուզականությամբ, մոդուլացումների ու շեղումների միջոցով զուգորդվում ու գումարվում են տարբեր ձայնակարգերի մեծ հնչյունաշարերը):

Գրկ. *Ճանիկեան Հ., Հանութիւնք Ակնայ, Թ., 1895: Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, [հ. 1], Ե., 1931: Նույնի, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Չոպանեան Ա., Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940: Աբեղյան Մ., Ժողովրդական խաղիկներ, Ե., 1940: Նույնի, Հայրենների հարաւնոթյունը և անտունիներ, Երկ., հ. 2, Ե., 1967: Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Ե., 1959: Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008:*

«ԱՆՏՈՒՆԻ», մեներգ, Կոմիտասի ստեղծագործությունը՝ դաշնամուրի նվագակցությամբ: Հիմքում տնազուրկ պանդուխտի ծանր հոգեվիճակն արտահայտող գեղջկ. երգ է, որն իր բանաստեղծ. և երաժշտ. խոր բովանդակությամբ ընդհանրացնում է հայ ժող. երգերի այդ ժանրի (տես ***Պանդխտության երգեր***) լավագույն հատկանիշները: «Ա.»-ի տեքստն առաջին անգամ գրառել և տպագրել է Գարեգին Սրվանձտյանը՝ «Ռշտունցիների երգ» վերնագրով («Մանանա», 1876): Այս և ժող. այլ տարբերակների հիման վրա, Կոմիտասի և Մանուկ Աբեղյանի լրացումով ու խմբագրումով, 1903-ին լույս է տեսել Վաղարշապատում («Հազար ու մի խաղ» երգարան): Մեղեդին հայ երաժշտ. ազգագրության բացառիկ արժեքավոր նմուշներից է, որը հայտնաբերել և մշակել է Կոմիտասը (հրտ.՝ 1907, Փարիզ, «Հայ քնար» հավաքածու):

«Ա.» դրամատիկ., ողբերգ. երգ-մենախոսություն է, որտեղ խտացված են

Կոմիտասի արվ–ի, մասնավորապես՝ ինքնատիպ ներդաշնակության և դաշնամուր. շարադրաձևի կարևորագույն հատկանիշները: «Ա.» հայ դաս. երաժշտության անկրկնելի երկերից է:

Հատված Կոմիտասի «Անտունի» երգից

Գրկ. *Բ ր ու տ յ ա ն Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Ե., 4–րդ վերափոխ. հրտ., 2014, էջ 222–231:*

Ըստ Ռոբերտ Աթայանի

«Ա.», հայկ. առաջին ազգ. օպերան. ժող. երաժշտ. լեզվով ազգ. օպեր. գրկ–յան մեջ ձևավորել է ոճ. նոր ուղղություն: Երաժշտությունը, լիբրետտոն (ըստ Հ. Թումանյանի) գրել է Արմեն *Տիգրանյանը* 1908–12–ին Ալեքսանդրապոլում: Տարբեր առիթներով կատարվել են օպերայի որոշ հատվածներ: 1908–ին «Աղբյուր–Տարազ» ամսագրի 25–ամյա հոբելյանի առիթով Թիֆլիսում բեմադրվել է «Անուշի» 2–րդ գործողության 1–ին պատկերը, 1911–ին Ալեքսանդրապոլի օրիորդաց միջնակարգ դպրոցում (որտեղ պաշտոնավարել է Ա. Տիգրանյանը)՝ 2 պատկեր (Սարոյի՝ «Աղջի անաստված» սերենադը հետնաբեմից կատարել է հեղինակը):

Օպերան առաջին անգամ բեմադրվել է 1912–ի օգոստ. 4–ին Ալեքսանդրապոլի Ժող. տանը (ռեժ.՝ Ա. Տիգրանյան, դիրիժոր՝ Գ. Յ. Բուրկովիչ): Ներկայացմանը մասնակցել են՝ Անուշ՝ Աստղիկ Մարիկյան, Սարո՝ Շարա Տալյան, Մոսի՝ Վարդան Մարտիրոսյան (երկուսն էլ՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սաներ), Անուշի մայր՝ Արևհատ Տալյան (Շերամի դուստրը):

1913 և 1920–ին օպերան հեղինակի ղեկավարությամբ ներկայացվել է Երևանի «Զանփոլադյան» թատրոնում (1916–ին՝ քաղաք. ժողովարանի դահլիճում), ապա՝ Ալեքսանդրապոլում, Դիլիջանում, Թիֆլիսում, Բաքվում, Կ. Պոլսում, Գորիում, Ախալցխայում, Գանձակում, Նոր Նախիջևանում, Գրոզնիում, Բաթումում, Եկատերինոդարում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Շուշիում և այլուր:

«Ա.» լրիվ նվագախմբով, պրոֆեսիոնալ կատարողներով և հեղինակի ղեկավարությամբ ներկայացվել է Հ. Թումանյանի ծննդյան 50–ամյակին՝ Թիֆլիսի Արտիստ. թատրոնում (1919):

ԵՕԲԹ–ում բեմադրվել է 1935–ին, վերաբեմադրվել 1939, 1956, 1969, 1994, 2003–ին: Գլխ. դերերգերը կատարել են՝ Անուշ՝ Հ. Դանիելյան, Թ. Խաչատրյան, Գ. Գասպարյան, Ե. Վարդանյան, Ա. Թութունջյան, Ա. Հեքիմբաշյան, Հ. Հացագործյան, Ա. Մխիթարյան, Հ. Պապյան, Ա. Սեյրանյան, Լ. Թորոսյան, Ա. Գյուլբուդաղյան, Սարո՝ Շ. Տալյան, Ա. Պետրոսյան, Գ. Գրիգորյան, Լ. Ավետիսյան, Տ. Լևոնյան,

Ս. Ավանյան, Մոսի՝ Ն. Սերդոբով, Պ. Լիսիցյան, Վ. Գրիգորյան և ուր., դիրիժորներ՝ Ս. Շաթիրյան, Մ. Թավրիզյան, Ռ. Ստեփանյան, Օ. Դուրյան, Յ. Դավթյան, Կ. Դուրգարյան, ռեժ–ներ՝ Ա. Գուլակյան, Վ. Աճեմյան, Տ. Լևոնյան, Գ. Գրիգորյան, նկարիչներ՝ Մ. Արուտչյան, Պ. Անանյան, Ա. Միրզոյան, Ռ. Նալբանդյան և ուր.:

«Ա.»–ի հայկ. բեմադրությունը ներկայացվել է Մոսկվայում (1939, 1956, 1969) և ԽՍՀՄ այլ քաղաքներում: Բեմադրվել է Բաքվում (1941, 1956), Մարսելում (1970) և Փարիզում (1972): Կլավիրը հայ. և ռուս. հրատարակվել է Երևանում 1954–ին:

Գրկ. *Աթայան Ռ., Մուրադյան Մ., Արմեն Տիգրանյան. Կյանքը, երաժշտական–հասարակական գործունեությունը և ստեղծագործությունը, Ե., 1955: Արմեն Տիգրանյան. Հոդվածներ, նամակներ, հուշեր (կազմ.՝ Ա. Թադևոսյան), Ե., 1981: Լ ե ո ն յ ա ն Տ., Իմ «Անուշը», Ե., 1995:*

Մաննա Աասպրյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ, աշխ–ի ընթացքում ստեղծված և նրան ուղեկցող ժող. երգեր: Ունի 2 տեսակ՝ երկրագործ.

«Անուշ» օպերայի առաջին բեմադրության ազդագիրը (1912, Ալեքսանդրապոլ)

Տեսարան «Անուշ» օպերայի բեմադրությունից (1994, ռեժ.՝ Տ. Լևոնյան)

Անահիտ Միխիթարյանը Անուշի դերում (2012)

Աշխույժ



Աշուղ

կամ հորովելներ (Կոմիտասը երբեմն անվանում է շինականի կամ բնության երգեր) և կանանց Ա. ե., որոնք պայմանավորված են տղամարդկանց (դաշտային) և կանանց (տնային)՝ բնույթով իրարից նկատելիորեն տարբերվող աշխ-ներով: Երկրագործ. Ա. ե. (գութաներգ, կալերգ, սայլերգ, խուրձ կրելու հորովել ևն) գեղջուկի երկրագործ. (վար, ցանք, կալ, հունձ, հաշան, խոտհունձ, սայլ բարձել ևն) բազմապիսի աշխ-ների գեղ. արտացոլումն են, որտեղ շինականը, արհեստավորը սոցիալ. ծանր վիճակի և հոգսերի մասին պատմում է գութանին, արորին ու եզանը:

Կանանց Ա. ե-ում դրսևորվում են գեղջկուհու զանազան աշխ-ները [կովկիթ, խնոցի հարել, բուրդ զգել, թել մանել (ճախարակի երգեր), սանդ ծեծել, քաղհան ու չանաք, կար ու կարկատան, լվացք անել, հաց թխել, ինձվորին հաց տանել ևն]:

Ի տարբերություն տղամարդկանց Ա. ե-ի՝ կանանց երգերը հիմնականում զուրկ են իմպրովիզացիոն բնույթից, բացականչական, նկարագր. և ընդօրինակման տարրերից, առավել ընդգծված են ռիթմը, շարժման կանոնավորությունը (թույլ և ուժեղ վանկերի համաչափ հաջորդումներ)՝ պայմանավորված աշխ-ների հիմքում ընկած ձեռքի կազմակերպված կանոնավոր ու համաչափ շարժումներով, որոնցից բխում է երգերի բանաստեղծ. խոսքի համաչափ ռիթմը՝ հանգերի ներդաշնակությամբ, վանկերի հավասարակշռությամբ (օր.՝ քաղհան, միօրինակ շարժումներ ևն): Ա. ե-ում հաճախ կարող են հանդիպել նաև քնար. երգեր ու պարերգեր: Կանանց Ա. ե-ին բնորոշ են հիմնականում էոլական մինոր ձայնակարգերը, դինամիկությունն ու քնարականությունը:

Ա. ե-ին բնորոշ մոտիվներ են պարունակում նաև սիրո, հարսանեկան, վիճակի երգ-խաղիկները, նաև հայրենները: Բազմաթիվ Ա. ե. ստեղծվել են հնագույն ժամանակներում և պարունակում են հմայական աղոթքի երանգներ: Խորհրդ. շրջանում Ա. ե-ում երևան են եկել կոլեկտիվ աշխատանքը, տրակտորն ու կոմբայնը գովերգող մոտիվներ:

Գրկ. *Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Ե., 1959 (էջ 429): Հայ ավանդական երաժշտություն (կազմ., նոտագր., ծնթգր. և առաջաբան՝ Ա. Մուրադյանի), Ե., 2008: Հայ երկրագործի աշխատանքային երգեր (կազմ.՝ Ջ. Թոփալկյան), Ե., 2009:*

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԱՇԽՈՒՅԺ [Գրիգորյան Խաչատուր Սուքիասի, 24.10.1884, գ. Ղազնաֆար (այժմ՝ գ. Արագած՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–1.11.1961], աշուղ: Չորս տարեկանում կորցրել է տեսողությունը: Երգել է ջութակի նվագակցությամբ: Հեղինակ է 2000-ից ավելի երգերի, բազմաթիվ հեքիաթ-սիրավեպերի ու պոեմների: «Ա.» անունով նրան կնքել է Գարեգին ***Լևոնյանը***՝ կենսուրախ բնավորության համար: Վաղ շրջանի ստեղծագործություններում խարազանել է անարդարությունն ու կեղծիքը, գովերգել հայրենիքն ու նոր կյանք կառուցող մարդուն («Մեր նոր աշխարհ», «Ձան հայրենիք», «Նոր Երևան», «Դաշտերի հերոսուհին» ևն):

Ա-ի երգերն ամփոփված են «Աշուղ Աշխուժի քնարը» (1908), «Ժողովրդի ընտրյալները» (1938), «Աշուղական» (1947), «Քնար» (1955), «Աղբյուր» (1958), «Ընտրանի» (2014) ժող-ներում:

ԱՇՈՏ [Աշոտ Հայրապետի Դաղալյան, 12(25).04.1907, Գորիս–28.01.1989, Երևան, թաղված է Գորիսում], գուսան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): Հանդես է եկել 1928-ից («Աշուղ եմ», «Վառող սեր» ևն): Ա-ի երգերին հատուկ է թեմատիկ բազմազա-



Աշուղը կոյթի պահին

նությունը, մեղեդիներում օգտագործել է ասերգի, երգի և պարերգի արտահայտչամիջոցներ: Հարազատ մնալով հայ ժող. երգարվ-ի ձայնաելևէջ., ռիթմ., կառուցվածք. ձևերի ավանդ. միջոցներին՝ Ա. ստեղծել է երգերի նոր, ինքնատիպ երաժշտ. լեզու: Նրա երգերը («Ձանգեզուրի բարի ծնունդ», «Էն սարերը», «Սարվորի երգը», «Սյունյաց սարեր», «Պախրա», «Հուշարձան աղբյուր», «Հով սարեր, մով սարեր», «Սարի սիրուն յար», «Ո՛ւր է», «Գուսանն էն է», «Արի բաղերով», «Յար առանց քեզ

ինչիս է պետք», «Օջախում», «Սերս վանքում Տաթևի» ևն) հայկ. գուսան. երգարվ-ի լավագույն նմուշներից են: Երևանում լույս են տեսել նրա երգերի՝ «Գուսանական երգեր» (1946), «Գուսանի սերը» (1955, լրց. և նոտագրված՝ 1958-ին) և այլ ժող-ներ:

Երկ. *Միրո կրակներ, Ե., 1974: Սրտի նվագներ, Ե., 1979: Ծովապտիկ, Ե., 1982: Լեռները կանչում են, Ե., 1988: Սրտնյաց սարեր: Երգերի ընտրանի, Ե., 2004:*

Գրկ. *Առաքելյան Ե., Հազաթաթավ երգեր ստեղծողը, «Կոլտնտուր-լուսավորական աշխատանք», 1965, № 1: Գասպարյան Ս., Գուսան Աշուղ, «Կոլտնտուր-լուսավորական աշխատանք», 1967, № 8: Կարապետյան Ա., Գուսան Աշուղի բանաստեղծական աշխարհը, Գորիս, 1985:*

Հայր Սանուկ Սանուկյանի

ԱՇՈՏ ՏԱՆԻԱ (իսկական անուն-ազգանունը՝ Հարությունյան Տատյանա Աշոտի, ծ. 1937, Թեհրան), դաշնակահարուհի: Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է Թեհրանում: Ավարտել է Փարիզի կոնսերվատորիան (Ժ. Ֆիվրեի և Ն. Բուլանժեի դասարաններ), ապա կատարելագործվել Մոսկվայում (ղեկ.՝ Լ. Ն. Օբորին): Սովորելու տարիներին մասնակցել է Ժնևի միջազգ., Մ. Լոնգի և Ժ. Տիբոյի անվ. միջազգ. VII (1959) մրցույթներին:

Համերգներով հանդես է եկել Թեհրանում, նաև Իտալիայում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում, Լեհաստանում, ԱՄՆ-ում, Միջին Արևելքում: Որպես մենակատար՝ ելույթներ է ունեցել դիրիժորներ Լ. Ֆլիչի, Դ. Զինմանի, Մ. Կորբոզի, Պ. Բելուջջիի հետ: Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Ֆ. Շոպենի, Ֆ. Լիստի, Բ. Բարտոկի, Պ. Հինդեմիթի, Ս. Վ. Ռախմանինովի, Ս. Ս. Պրոկոֆևի, Դ. Դ. Շոստակովիչի և ուր. ստեղծագործություններից:

Նուրբ և մանրամասն մեկնաբանությամբ աչքի են ընկնում մասնավորապես Ֆ. Շոպենի էտյուդների, մազուրկաների, կոնցերտի կատարումները: 1961-ին (ամուսնու՝ դաշնակահար Ս. Կոստայի հետ) համերգներով հանդես է եկել Երևանում: Ապրում է Ֆրանսիայում:

Միջազգ. մրցույթների 2-րդ (1958, Վարշավա՝ Ֆ. Շոպենի մահվան 110-րդ տարելիցին), 3-րդ (1960, Վարշավա՝ Ֆ. Շոպենի ծննդյան 150-ամյակին) մրց-ներ:

ԱՇՈՒՂ (արաբ.-սիրահար), հայերի, Արևելքի մի շարք երկրների ժող. պրոֆեսիոնալ երաժիշտ, բանաստեղծ-երգիչ: Զուգորդելով իր ստեղծած բանաստեղծությունն ավանդ. կամ իր հորինած մեղեդու հետ՝ կատարել է այն՝ նվագակցելով որևէ երաժշտ. գործիքով: Եղել են գյուղ., քաղաք. ու պալատ. Ա-ներ, որոնք արտահայտել են հաս. ինչողության գաղափարներ ու հույզեր: Մենակ կամ երկուսով (երկխոսել կամ մրցել), նվագածուների խմբի հետ հրապարակներում, սրճարաններում, նաև հարսանիքների, խնջույքների, ժող. տոնախմբությունների և ուխտագնացությունների ժամանակ կատարել են այլ Ա-ների ստեղծագործություններ:

Հայ Ա-ները հանդես են եկել դեռևս XVI դ-ի կեսին, սակայն պրոֆեսիոնալ աշուղ. արվ-ը տարածվել է XVII–XVIII դդ-ում: Պայմանավորված պատմաքաղ. հանգամանքներով՝ այն կազմավորվել է ոչ թե բուն Հայաստանում, այլ հայկ. գաղթավայրերում (Նոր Զուղա, Աստրախան, Կ. Պոլիս, Թիֆլիս): XVII–XVIII դդ-ում Նոր Զուղայի Ա-ները (Էգազ, Ղուլ Արզունի, Բադեր օղլի Ղազար, Ամիր օղլի, Ղուլ Հարություն Սալմաստցի և ուր.) հիմնադրել են իրանահայ աշուղ. դպրոցը: XVIII դ-ում կազմավորվել է վիրահայ դպրոցը (Շամչի Մելքոն, Սայաթ-Նովա, Բուդաղ Օղլան, Քիչիկ Նովա, Ֆրեյդուն և ուր.), որի ներկայացուցիչները հիմնականում ապրել և ստեղծագործել են Թիֆլիսում: Դպրոցներ են ստեղծվել նաև Թուրքիայում (XVII–XVIII դդ.), Հս. Կովկասում, Գանձակում և Բաքվում (XIX դ.): Եղել են նաև թափառական Ա-ներ, որոնք իրենց երգերն ստեղծել են ժող. խոսակց. լեզվով (նաև թուրք., պարսկ., վրաց.):

XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին նշանավոր Ա-ները հորինել են հիմնականում (ապա՝ բացառապես) հայ-ով: 1850–60-ական թթ-ին աշուղ. արվ-ը լայնորեն տարածվել է նաև Երևանում, Ալեքսանդրապոլում, Սյունիքի և Արարատյան գավառներում: Ստեղծվել են ***Շիրինի*** դպրոցը՝ Երևան կենտրոնով (Ազբար Ադամ, ***Հավեսի***, ***Սնդուլ***, Զատի), և ազգ. աշուղ. նոր դպրոցը՝ Ալեքսանդրապոլ կենտրոնով (***Զիվանի, Զամալի, Սազայի, Ֆիզահի,*** Լիսանի, Խայաթի, ***Պայծառն, Շերամ***):

Հայ Ա-ներն իրենց արվ-ի մի քանի էական հատկանիշներով սկզբում բազմաթիվ ընդհանրություններ են ունեցել Մերձ. Արևելքի այլազգի Ա-ների հետ: Նրանք, որպես կատարողներ, տվյալ շրջապատում տիրապետող լեզվի կամ հայ-ի որևէ բարբառի միջոցով հայ ժողովրդին

Աշուղ Տանիա

«Աշուղ Զիվանի» (նկարիչ՝ Հակոբ Կոջոյան)

ծանոթացրել են արլ. մի շարք վեպերի, սիրավեպերի ու հեքիաթների («Ռոստամ Զալ», «Շահ Իսմայիլ», «Ասլի և Քյարամ», «Քյոռօղլի», «Լեյլի և Մեջնուն», «Սիաբենտո և Խաջե Զարե»): Ա-ներն իրենց արծարծած թեմաները (սեր, փիլ. մտորում,

«Սայաթ-Նովա» (նկարիչ՝ Մարտիրոս Սարյան, 1923)

բարոյական խրատ, պատմ. իրադարձություն, հայրենասիրություն, սոցիալ. ու կենցաղ. խնդիրներ) մարմնավորելու համար անդրադարձել են Մերձ. Արևելքի, նաև ազգ. գուսան., քաղաք., գեղջկ., ժող., եկեղեց. երգարվ-ի ակունքներին ու տաղերգուների արվ-ին՝ նշանակալի ավանդ ներմուծելով աշուղ. ստեղծագործության գանձարան: Այդ միջավայրում է ձևավորվել Սայաթ-Նովայի արվ-ը:

«Հայ աշուղներ» գրքի (1937) տիտղոսաթերթը

XX դ-ում աշուղ. դպրոցներ այլևս չկային, սակայն հանդես են եկել մի շարք նշանավոր Ա-ներ՝ Հավասի, Շահենն, Աշոտ, ապա՝ Ծովյան, Ռազմիկ և ուր.: 1970-ական թթ-ից հայ Ա-ներն իրենց անվանել են գուսաններ, 1990-ական թթ-ից վերականգնել են «Ա.» անվանումը: Նոր սերնդի Ա-ները (Հայկազուն, Աստղանուշ, Ռազմար, Լեյլի, Ալմաստ և ուր.) հետևում են և զարգացնում մեծ վարպետների ավանդույթները:

Տես նաև *Աշուղական երաժշտություն*, *Աշուղական չափեր*:

Գրկ. *Ախվերդյան Գ., Հայ աշուղներ, Թ., 1903 (Դուսանք, հ. 2): Լևոնյան Գ., Աշուղներ և նրանց արվեստը, Ե., 1944: Հայ աշուղներ, [հ.] 1, Ե., 1961: Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008:*

Ըստ Նիկողոս Թահմիզյանի

«Աշղղ-Ղարիբի և Շահ-Սանամի հեքեաթը» գրքի (1904, Ալեքսանդրապոլ) շապիկը

«ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ», արլ. աշուղ. սիրավեպ, երաժշտաբանաստեղծ. դրվագներով ընդմիջվող արձակ պատմություն (դաստան, ասք): Ձևավորվել է XVII դ-ում: Տարածված է Մերձ. և Միջին Արևելքի ժողովուրդների՝ պարսիկների, թուրքերի, հայերի, ուզբեկների, տաջիկների և այլ ազգերի երաժշտապատմող. ավանդույթում:

«Ա. Ղ.»-ի առաջին գրառումներն ու հրապարկումները կատարվել են Թիֆլիսում. 1837-ին Մ.Յ. Լերմոնտովը գրի է առել «Աշիկ Կերիբ» հեքիաթը (հրտ.՝ 1846), որը հետագայում թարգմանվել է հայ. (1857), կաբարդին. (1864), վրաց. (1865), ադրբ. համանուն դաստգահը՝ 1892-ին: «Ա. Ղ.»-ի թեմայով գրվել են երաժշտ. երկեր (Ու. Հաջիբեկով, Ռ. Գլիեր և ուր.): Սիրավեպը բազմաթիվ տարբերակներով լայնորեն կենցաղավարել է հայ ժող-պրոֆեսիոնալ երաժշտարվ-ում: Ջիվանու գրառած և փոխադրած «Ա. Ղ.» արլ. ավանդ. ասքի հեղինակ. մեկնակերպ է՝ պանդուխտ ղարիբ-սիրահարի ազգ. մեկնությամբ, որի երաժշտ. բաղադրիչն առանձնանում է հայ ժող. ու գուսան-աշուղ. արվ-ի քնար-սիրային ոլորտին բնորոշ մեղեդային մտածողությամբ: Ջիվանու «Ա. Ղ.»-ի երգերի մի մասը («Ղարիբի հրաժեշտը», «Գլխիդ մատաղ լինիմ, հարցընեմ մի բան», «Երանի ձեզ, որ գնում եք Հայրենիք», «Օտար երկրից վերադարձա», «Լսիր, ով վարպետ») դարձել է չափանմուշ ժող-պրոֆեսիոնալ երաժիշտների համար և ընդգրկվել կատարող. երկացանկում՝ նպաստելով նրանց ժողովրդականացմանն ու տարբերակների բազմացմանը: «Ա. Ղ.»-ի ժամանակակից ժանր. մեկնաբանություններից է Ս.Փարաջանովի «Աշուղ Ղարիբ» գեղ. ֆիլմը:

Գրկ. *Տէր-Ադեքսանդրեան Գ., Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մաս 1, Թ., 1885, էջ 334–341: Ջիվանի, Աշղղ Ղարիբի հեքեաթը, փոխադր. տաճկերենից, Ալեքսանդրապոլ, 1887: Լիլիթ Երնջակյան*

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ժող. քաղաք. երգ ու նվագի վրա հիմնված, կայուն ավանդույթներով պրոֆեսիոնալ արվ.: Նրան բնորոշ մեղեդիները գյուղ. և քաղաք. ժող. երգերի եղանակների համեմատությամբ ավելի ծավալուն են, թեմաները՝ բազմազան, որոնք աչքի են ընկնում չափածո խոսքերով պայմանավորված նպատակ. շեշտադրությամբ ու կոմպոզիցիայի ակնհայտ գծերով: Ա. ե-յան մեջ հաճախ օգտագործվում են երգի քառյակ. ձևերը (կրկնակով, առանց կրկնակի են՝ խորացնելով մեղեդին տնից տուն տարբերակելու սկզբունքը), միաժամանակ մշակվում ավելի բարդ ձևեր: Կիրառվում են մեղեդու ծավալման ասերգ., երգ. և պարերգ. (առանձին-առանձին կամ հարակցված) սկզբունքները:

Հայ Ա. ե-յան մեջ մեղեդիների ելևէջ. հիմքը շուրջ 20 ձայնեղանակներ են, որոնք հանդիպում են նաև հայկ. գեղջկ., քաղաք.

ժող. ու հոգևոր երգարվ-ում: Առավել գործածական են ալտերացված հնչյունաշարով եղանակները: Հայ աշուղների երգերում ռիթմ. բազմազան գծագրերն ընդհանրապես հիմնված են մետր. որոշակի ցանցի վրա, որը գոյանում է պարզ, բարդ և խառը չափերից: Հաճախ օգտագործվում է միայն 6/8 չափը՝ «տեղաշարժված» յամբի պատկերով:

Կիրառվում են նաև 5/8, 7/8, 8/8 չափերը: Հայ աշուղ. երգ-նվագը կատարող. ուրույն դպրոց է. ի տարբերություն ժող. երգի՝ համերգային է. պահանջում է ունկնդիրներ և ունի նրանց վրա ներգործելու յուրահատուկ միտում:

Աշուղ. կատարող. արվ-ի անքակտելի հատկանիշներից է իմպրովիզացիան, որը կատարվող երգն ու նվագը երբեմն նկատելիորեն մոտեցնում է տեղում հանպատրաստից հորինված ստեղծագործությանը: Հայ աշուղները տարբեր վայրերում և ժամանակներում իրենց երգը նվագակցել են երաժշտ. գործիքներով (սանթուր, քանոն, քամանչա, սազ, թամբուր, թառ, չոնգուր, քաման, ջութակ): Աշուղի նվագն ամեն մի երգի (երբեմն՝ նաև տան) սկզբում և վերջում կատարում է նաև նախաբանի ու եզրափակման դեր:

Գրկ. *Հայ աշուղներ, հ. 1լ, Ե., 1961: Շիրակի հայ աշուղները (կազմ. և առաջաբան՝ Կ. Դուրգարյանի), Ե., 1986: Թահմիզյան Ն., Սայեաթ-Նովան և հայ գուսանա-աշուղական երգ-երաժշտութիւնը, Փասատենա, 1995: Երնջակյան Լ., Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Ե., 2009: Հայ աշուղագիտությունը և արդի հիմնախնդիրները, գիտաժողովի զեկուցումների ժող., Ե., 2005:*

Ըստ Նիկողոս Թահմիզյանի

ԱՇՈՒՂԱԿԱՆ ՉԱՓԵՐ, երգելու համար հորինված վանկ. ոտանավորների տեսակներ: Հայկ. Ա. չ. տարբերվում են բանաստեղծ. և գուսան. չափերից: Տողի ամբողջությունը, որպես մեծ ռիթմ. միություն, պահվում է տողավերջի հաստատուն պաուզայով և հանգերով, որոնք լինում են զորեղ, հաճախ՝ կազմված հանգաբառից հետո կրկնվող նույն բառերով: Ամենակարճ չափը 5-վանկանի բայթավուրն է, որի փոփոխված ձևը քյուշեթն է: Տարածված չափերից են 10-վանկանի գյաֆը («Փոքր ինչ դադարիր // Նավ ալեկոծման», Գյուրջի Նավե), 11-վանկանի ղոշման («Եթե մեղավո՛րը մընա անպատիժ, աշխա՛րհը // կեցություն չի՛ լինի երբեք»), 11-վանկանի դաստանը («Ի՞նչ կենդանի // փոքրին կուլ տա՛լ է // ուզո՛ւմ, ձրկի փուշ կը՛ // լինի, կըխը-րի բուկը», Զիվանի) ևն: Հայտնի չափեր են նաև բայաթին, դյուբեյթը, եղաք-լաման, մուխամմազը, ղազելը, դիվանին, ռուբային, վարսաղը, շարքին, դաստանը:

Գրկ. *Լևոնյան Գ., Աշուղական արվեստը, Երկ., Ե., 1963: Աբեղյան Մ., Հայոց լեզվի պատմաչափություն, Երկ., հ. 5, Ե., 1971:*

ԱՊԼԻԿԱՏՈՒՐԱ (լատ.՝ applico – դնել վրան, սեղմել, հպել), նվագելիս մատների դասավորությունը և օգտագործման հաջորդականությունը: Կարևոր նշանակություն ունի կատարող. արվ-ում: Հարմար Ա. կատարողին հնարավորություն է տալիս նվազագույն ուժ գործադրելով՝ հաղթահարել տեխ. և ստեղծագործ. բարդությունները: Ա-ի ընտրությունը պայմանավորված է կատարվող ստեղծագործության մեկնաբանությամբ և կատարողի ֆիզ. ու տեխ. հնարավորություններով: Առավել պարզ Ա. ունեն 3 կամ 4 կափույրով պղնձե, ապա՝ փայտե փող., իսկ ամենաբարդն ու դժվարը՝ ստեղն. և լար. երաժշտ. գործիքները: Ա. նշվում է արաբ. թվանշաններով, որոնք դրվում են նոտաներից փոքր-ինչ վերև կամ ներքև:

Ապլիկատուրայի օրինակ (կիթառի համար)

ԱՊՈԹԵՈԶ (հուն.՝ ἀποθεόσις – աստվածացում), 1. որևէ հերոսի կամ իրադարձության հանդիսավոր փառաբանումը երաժշտ. երգի (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայի, Տ. Չուխաճյանի «Կարինե» օպերետի ավարտները, Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան ևն), բեմ. ներկայացման, տոն. հանդեսի, համերգ. ծրագրի եզրափակիչ տեսարանում:

2. Գործիք. ստեղծագործության անվանում նշանավոր երաժիշտների հիշատակին՝ 1720-ական թթ-ի Ֆրանսիայում:

ԱՌԱՋՆԱԽԱՂ, պրեմիերա (ֆրանս.՝ premiere – առաջին), առաջին ներկայացումը՝ բեմադրության առաջին վճարովի ցուցադրումը (տոմսի արժեքը սովորաբար ավելի բարձր է, քան հերթական ներկայացումներինը): Ծրագրում նշվում է տվյալ ներկայացման Ա-ի տարեթիվը, ամիս-ամսաթիվը:

ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ, Առաքել Պոռեցի (մոտ 1380, գ. Պոռ՝ Բաղեշի հարևանությամբ՝ Վասպուրական–11.01.1454),

«Առաքել Սյունեցի», մանրանկար (1693, Սաշտոց, Մխոնդ., ձեռ. № 1225)

Աթանես Առաքելյան

Արա Առաքելյանը ելույթի պահին

տաղերգու, մատենագիր, երաժիշտ: Հոգևոր երաժշտաբանաստեղծ. արվ–ի դաս. շրջանի վերջին ստեղծագործողներից: Աշակերտել է *Գրիգոր Խլաթեցուն*, որը փաստում է նրա խազագետ լինելը: Տաղաչափել է հայ երաժշտության պատմության մեջ առանձնահատուկ՝ Հովասափի և Բարաղամի մասին վարքաբան. միջնադար. վեպը («Տաղ Հովասափու», 1434): Ըստ հիշատակարանի և խազավոր ձեռագրերում հանդիպող ցուցումների՝ ենթադրվում է, որ այն եղանակավոր պատմվել ու հատվածաբար երգվել է:

Գրել է տաղեր, գանձեր, ողբեր և այլ երգեր, որոնք ամփոփված են գրչագիր ժող–ներում:

Գրկ. *Առաքել Բաղիշեցի XV դ. (ուսումնասիր., բնագրեր և ծնթգր.՝ Ա. Ղալֆինյանի), Ե., 1971:*

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ (մոտ 1350–1425), տաղերգու, փիլիսոփա, քերական, երաժշտության տեսաբան, եկեղեց. գործիչ: 1407–ից՝ Սյունյաց արքեպիսկոպոս: Կրթությունն ստացել է Տաթևի համալսարանում, աշակերտել Հովհան Որոտնեցուն և *Գրիգոր Տաթևացուն*:

Ա. Ս. հայ միջնադար. երաժշտ. մշակույթի լավագույն գիտակներից է և բանաստեղծ–երաժիշտ: Երաժշտատես. և գեղագիտ. հայացքներն արտահայտել է «Մեկնութիւն քերականին» երկի մի շարք հատվածներում: Ենթադրվում է, որ նրա «Ադամգիրքը» (1403, հրտ.՝ 1721) ունեցել է նաև երաժշտ. ձևավորում. որոշ հատվածներ երգել են տաղերի ձևով: Ա. Ս–ու տաղերից շատերը հաստատուն տեղ ունեն միջնադար. ժող–ներում (Գանձարաններ, Տաղարաններ և Սաշտոց): Տաղերից մի քանիսը, մտնելով հայոց Պատարագ, իրենց եղանակներով գոյատևել են մինչև մեր ժամանակները («Դասքընհրեական», «Ով պարտիզպան»):

Երկ. *Յաղագս քերականութեան համառօտ լուծմունք, Լոս Անջելես, 1982 (աշխ.պատիր.՝ Լ. Խաչերյանի):*

Գրկ. *Մադոյան Ա., Առաքել Սյունեցի բանաստեղծը, Ե., 1987: Արևշատյան Ա., «Սաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991:*

ԱՌԱՔԵԼՅԱՆ Աթանես Լիպարիտի (ծ. 22.10.1955, Երևան), դիրիժոր, խմբավար: Ավարտել է Երևանի Սայաթ–Նովայի անվ. երաժշտ. դպրոցի ջութակի (1971), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1975), ԵՊԿ (1982) խմբավար. բաժինները և ասպիրանտուրան (1989, ղեկ.՝ Ռ. Մանգասարյան, օպեր–սիմֆ. դիրիժորություն՝ ղեկ.՝ Յ. Դավթյան), կատարելագործվել Մոսկվայում (1985, ղեկ.՝ Վ. Ն. Մինին): 1978–85–ին՝ Երևանի Հ. Դանիելյանի անվ. երաժշտ., 1981–85–ին՝ Ղ. Սարյանի անվ. արվ–ի դպրոցների խմբավար, 1984–88–ին՝ Հայաստանի երգչախմբ. ընկերության (2008–ից՝ փոխնախագահ), 1988–96–ին՝ Երաժշտ. մանկ. թատրոնի, 2005–ից՝ ԵՕԲԹ–ի (Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ա. Խաչատրյանի «Սպարտակ», «Լորկիանա», Ժ. Բիզե–Ռ. Շչեդրինի «Կարմեն–սյուիտ» բալետ., Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Ա. Տիգրանյանի «Անուշ» և այլ օպեր. ներկայացումներ) դիրիժոր, 1993–2008–ին՝ Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանի տնօրեն: 1990–ից դասավանդում է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 2003–ից):

ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2005):

Քույրը՝ Կարինե Ա. (13.11.1951, Երևան), խմբավար, դիրիժոր: Ավարտել է Երևանի Սայաթ–Նովայի անվ. երաժշտ. դպրոցը (1959), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1971, դասատու՝ Դ. Զալյան), ԵՊԿ (1976, Ռ. Մանգասարյանի դասարան) խմբավար. բաժինները և ասպիրանտուրան (1981): 1974–ից՝ Երևանի վոկալ–երգչախմբ. դպրոցի խմբավար (խմբավարության բաժնի վարիչ՝ 1980–ից), 1976–2010–ին՝ Ռ. Մելիքյանի երաժշտ. ուսումնարանի երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1982–ից դասավանդում է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 2003) և Երևանի Ղ. Սարյանի անվ. արվ–ի դպրոցում:

ՀՀ «Երգող Հայաստան» մրցույթի 1–ին մրց. (1997), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2011):

ԱՌԱՔԵԼՅԱՆ Արա (ծ. 02.06.1991, Երևան), սաքսոֆոնահար: Ավարտել է Երևանի Սայաթ–Նովայի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (Է. Մելքոնյանի դասարան), սաքսոֆոնի և կիթառի, ԵՊԿ փող. (2011) բաժինները: Դասավանդում է Երևանի Սայաթ–Նովայի անվ. երաժշտ. դպրոցում: Հայաստանի պատանի սաքսոֆոնահարների միության խորհրդի նախագահ: Համագործակցում է Հայաստանի պետ. ջազ. նվագախմբի հետ:

Համերգներով շրջագայել է Գերմանիայում, Շվեդիայում, Վրաստանում, Եգիպտոսում և այլուր: 2011–ին մասնակցել է «Կովկաս ջազ» փառատոնին: Նույն թվա–

կանից՝ ԵՕԲԹ նվագախմբի մենակատար: Թողարկել է 3 տեսասկավառակ: 2013-ից՝ Տորոնտոյի «Sheraton Cadwell» ջազ. նվագախմբի առաջին սաքսոֆոնահարը:

«Golden Note» փառատոնի դափնեկիր (2005), Սաքսոֆոնահարների առաջին մրցույթի 2-րդ (2008, Երևան), «Վերածնունդ» միջազգ. մրցույթ-փառատոնի 1-ին (2009, 2011, Գյումրի) մրց-ներ:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Գրիգոր Աշոտի (ծ. 15.06.1963, Երևան), թավջութակահար, դիրիժոր, կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցը (1980, դասատուներ՝ Ա. Բերբերյան, Ա. Սաթյան), ԵՊԿ թավջութակի (1985, Ա. Չաուշյանի դասարան), կոմպոզիցիայի (1986, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1990–96-ին՝ «Փյունիկ» ժող. գործիքների անսամբլի ղեկ., 1991–94-ին՝ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի երաժշտ. դպրոցի տնօրեն, 2006–08-ին՝ հայ միջնադար. երաժշտության «Օշական» անսամբլի գեղ. ղեկ. և դիրիժոր, 2007–12-ին՝ նույնանուն եռյակի, 2015–16-ին՝ “Les Violons d’Arménie” լար. կվինտետի մենակատար և գեղ. ղեկ.: Խմբերի հետ համերգներով շրջագայել է Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Կանադայում և այլուր: Կվինտետի հետ ներկայացրել է «Աշխարհի պարեր» (Մ. Ռավել, Բ. Բարտոկ, Ի. Ֆ. Ստրավինսկի, Կոմիտաս, Գ. Ֆորե և ուր.), 2013-ին Մոնրեալում՝ որպես կոմպոզիտոր և մենակատար («Վիվա Վոյս» երգչախմբի հետ)՝ «Կոմիտասը և հայ միջնադարյան երաժշտություն» ծրագրերը: 2014-ին, որպես դիրիժոր և կոմպոզիտոր, Հայ միջնադար. և բարոկկո երաժշտություն օպեր. թատրոնի նվագախմբի հետ համերգներով հանդես է եկել ԵՕԲԹ-ում, 2015-ին՝ «Պառնասուս» անսամբլի կազմում, հայ երաժշտությանը նվիրված համերգներով՝ Զութֆենների (Հոլանդիա) թավջութակի միջազգ. փառատոնում: Ստեղծել է լար. գործիքների նոր ընտանիք (կատարել է հայկ., նաև եվրոպ. բարոկկոյի և ռոմանտիզմի դարաշրջանի ստեղծագործություններ), 1993-ին (Մարտին *Երիցյանի* հետ)՝ հայկ. վիոլա (կամ ջութ) գործիքը (երկացանկում՝ Յ. Ս. Բախի թավջութակի 5 սյուիտ, ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ):

Գրել է «Գոհար վարդ» (2004), «Աչքն ծով» (2006, երկուսն էլ՝ ըստ Գրիգոր Նարեկացու) սիմֆ. պոեմները, «Արևի երգ և պար» (2014)՝ լար. նվագախմբի, «Օրհնե ձիան» (1997) խմբերգը, տրիո (1982)՝ 3 թավջութակի, հոգևոր պրելյուդներ (2016)՝ դաշնամուրի համար, կվարտետ (2013), փող. կվինտետ (2014) և այլ գործեր: Մշակել է հայ հոգևոր ստեղծագործություններ:

Թավջութակահարների այսրկովկաս. մրցույթի 2-րդ (1984), Լլանգոլլենի փառատոնի 1-ին (2006, Ուելս՝ Անգլիա, հայկ. վիոլա) մրց-ներ:

Գրիգոր Ա. Առաքելյանը կլոյթի պահին

ԱՌԱՔԵԼՅԱՆ Գրիգոր Մարկի [13 (26).01.1894, Դոնի Ռոստով–մ. թ. անհտ], կոմպոզիտոր, դիրիժոր: Թուրքմ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1952): Ավարտել է Դոնի Ռոստովի հայկ. ուսուցչ. սեմինարիան (1915), սովորել երաժշտ. տեխնիկումի դիրիժոր-խմբերգ. բաժնում (1916–20): 1923–27-ին՝ Աշխաբադի երաժշտ. կոմեդիայի թատրոնի, 1927–40-ին՝ Թուրքմենիայի ռադիոյի և ֆիլհարմոնիայի նվագախմբի դիրիժոր, 1942–62-ին (ընդհատումներով)՝ ֆիլհարմոնիայի գեղ. ղեկ.:

Գրել է «Թուրքմենիայի մեղեդիներ» և մանկ. պար. (երկուսն էլ՝ 1949) սյուիտները, նախերգանք՝ թուրքմ. թեմաներով (երեքն էլ՝ նվագախմբի համար), պիեսներ, դաշնամուր. տրիո, լար. կվարտետ, «Կոնցերտային քայլերգ»: Մշակել է ԽՍՀՄ ժողովուրդների երգեր՝ ձայնի և նվագախմբի, փոխադրել մի շարք կոմպոզիտորների գործերից՝ ժող. գործիքների նվագախմբի համար ևն:



Սերգեյ Առաքելյան

ԱՌԱՔԵԼՅԱՆ Սերգեյ Մնացականի (ծ. 25.05.1931, Երևան), դերասան, արվեստաբան: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2009): Ավարտել է ԵԳԹԻ (1954): Երևանի պիոներների պալատում աշակերտել է Արուս Ոսկանյանին, Դանիել Ղազարյանին, Կարո Զաքարյանին, Ազատ Մանուկյանին: 1951-ին Բաթումում հիմնադրել է հայկ. թատերախումբ (բեմադրել է պիեսներ), 1954–62-ին՝ ԵԵԿԹ դերասան, 1959–79-ին՝ Աբովյանի (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզ) մշակույթի տան գեղ. ղեկ. և ռեժ.: 1960-ին մշակույթի տանը կից ստեղծել է օպեր. ստուդիա, 1979–93-ին՝ բաժնի վարիչ ԳԱԹ-ում: Հավաքել է Սայաթ-Նովային, նաև գրկ-յան և արվ-ի այլ գործիչներին վերաբերող բազմաթիվ նյութեր, անձն. իրեր, լուսանկարներ, բացառիկ ձեռագրեր, վավերագրեր ևն: 1993–98-ին՝ «Զորավար Անդրանիկ» մշակույթի կենտրոնի տնօրեն, համանուն թանգա-



Սերգեյ Առաքելյանի «Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» գրքի (2017) շապիկը

րանի հիմնադիր (2006, Ի. Բեգլարյանի հետ), 1976–84-ին՝ Ա. Մերանգուլյանի անվ. ժող. գործիքների անսամբլի, 1984-ից (ընդհատումով)՝ ԵՕԲԹ թանգարանի (ստեղծել է բազմաթիվ ֆոնդեր) տնօրեն, 1996–2014-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի, 2004-ից, միաժամանակ՝ ԵԵԿԹ թանգարանների վարիչ: Հեղինակ է «Հայ մշակույթի մեծերը» մատենաշարի:

ՀՀ Թատերարվ-ի հանրապետ. փառատոնի (1971) դափնեկիր, «Արտավազդ» մրց. (2001, 2006), ՄՆ (2009, 2016), «Ջորավար Անդրանիկ» (2009) ոսկե, Երգարվ-ի միության «Գոհար Գասպարյան» և այլ մեդալներ:

Երկ. *Ավետյանա Գրիգորյան, Ե., 2002: Կարպ Խաչվանքյան, Ե., 2003: Օֆելյա Համբարձումյան, Ե., 2006: Գոհար Գասպարյան, Ե., 2007: Հովհաննես Չեքիջյան, Ե., 2014: Դարի ձայնը, Ե., 2015: Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ե., 2017: Արաքսյա Գյուլզադյան, Ե., 2018:*

ԱՌԱՔԵԼՅԱՆ Սուրեն (1887, Շուշի–1979, Թեհրան), ջութակագործ: 1903-ից սովորել է Թիֆլիսի կոնսերվատորիայում, 1906–09-ին Պրահայում աշակերտել է ջութակագործ Կ. Դվորժակին: Ավարտել է Պրահայի կոնսերվատորիան (1910), սովորել է Բեռլինի կայսեր. կոնսերվատորիայում (1910–11): Ջութակի մասին նրա աշխ-ները որպես դասագրքեր օգտագործել են Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում: 1922-ին թառահար, իրան. դաստգահների համակարգի առաջին նոտագրող Ալի-Նաղի Վազիրիի հետ հիմնադրել է Իրանի առաջին կոնսերվատորիան, որտեղ դասավանդել է կամեր. երաժշտություն և թավջութակ:

Հոդվածներ է հրապարակել «Ժուռնալ դը Թեհրան» ֆրանս. պարբ-ում: Նրա «Թավջութակ» (ֆրանս.) աշխ-ը թարգմանվել է գերմ. և անգլ.: Ձայնագրել է պարսկ. մեղեդիներ:

«ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍԱՐԱՀ, Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճ (1936-ից), 2003-ից՝ Ա. Բաբաջանյանի անվ.: 1900-ին կառուցված գիմնազիայի հանդիսասրահը (գործել է որպես մշակույթի կենտրոն) 1932-ին դարձել է համերգասրահ: Համերգասրահում տեղի են ունենում համերգներ, փառատոներ, հյուրեկ խմբերի և արտիստների ելույթներ, հավաքներ, շնորհանդեսներ, հանդիսավոր ժողովներ, ասուլիսներ, հոբելյան. երեկոներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ: Շենքի 1-ին հարկում ճեմասրահն է, հանդերձարանները, վարչ.

«Առնո Բաբաջանյան» համերգասրահը

աշխատողների առանձնասենյակները, փորձասրահը, մամլո սրահը, 2-րդ հարկում՝ ճեմասրահը, 300-տեղանոց դահլիճը (ժամանակակից տեխ. սարքերով հագեցած), դիմահարդարման սենյակը, աշխատասենյակները ևն: Շենքի ինտերիերը զարդարում է Մարտիրոս Սարյանի էսքիզով «Հայաստան» վիտրաժը (1965, նկարիչ Հենրիկ Սիրավյանի մասնակցությամբ):

«Առնո Բաբաջանյան» համերգասրահի դահլիճը

ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏ, գեղ. խոսքի եղանակավոր և իմաստավորված արտասանություն (ոգումն, առովասություն, առասացություն, առերգություն և ասերգություն): Ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի Ա. ա. ծագումով կապված է ժող. բանահյուսությանը: Զարգացման որոշակի աստիճանի է հասել հեթանոս. Հայաստանում՝ գուսան-վիպասանների ***թվելյաց երգերում***, հելլենիստ. թատրոններում՝ եղանակավոր արտասանություններում, քրմերի ու քրմուհիների պաշտամունք. ասերգերում: V դ-ից հայ իրականության մեջ ծաղկել է ազգ. եկեղեց. ***թվերգը***, որտեղ յուրովի է դրսևորվել Ա. ա.:

Միջին դարերում մշակվել է նաև եկեղեց. առոգանության գրավոր նշանների համակարգ (տես ***Խազեր***), որը հիմնականում օգտագործվել է մարգարեական գրքերում ու Ավետարաններում: Հիմնական նշաններն են՝ գլխ. քերական-երաժշտ. կրկնակի նշանակության «միջակետ» (.),

«ստորակետ» (,), «բութ» (՝) ու «վերջակետ» (։)՝ նաև որպես երաժշտ. տրոհության նշաններ, «շեշտ» (՛) ու «պարոյկ» կամ «հարցուկ» (՞)՝ նաև որպես շեշտադրության նշաններ, «սուղ» (՟) ու «երկար» (՛)՝ նաև որպես հատուկ տևողության նշաններ:

Գրկ. *Աթայան Ռ., Հայկական հազային նոտագրությունը, Ե., 1959: Komitas, Die Armenische Kirchenmusik, «Sammelbände der internationalen Musik-gesellschaft», Heft I, 1899.*

Ընտ Նիկողոս Թահմիզյանի

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ Անի Գուրգենի (ծ. 23.07.1985, Երևան), դաշնակահարուհի: Արվեստագիտ. թեկնածու (2014): Ավարտել է ԵՊԿ (2007) և ասպիրանտուրան (2011, երկուսն էլ՝ ղեկ.՝ Ա. Բոգդանյան): Համերգներով և մենահամերգներով հանդես է եկել ՀՀ-ում, Իրանում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում և այլուր:

Դաշնակահարների միջազգ. մրցույթի ժյուրիի անդամ (2016, Իտալիա):

Ուսումնասիրությունները վերաբերում են ժամանակակից հայկ. դաշնամուր. երաժշտությանը:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009), Դաշնակահարների միջազգ. մրցույթների դափնեկիր (Իսպանիա, Բելգիա, Իտալիա):

ԱՍԱՏՐՅԱՆ Աննա Գրիգորի (ծ. 01.09.1968, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (2008), պրոֆ. (2012): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): ՀԿՄ (2013-ից, վարչության՝ 2017-ից), ՀԹԳՄ (1993) անդամ: Ավարտել է Երևանի Մանկ. ձայնի պահպանման երաժշտ. դպրոցը (1983), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի երաժշտ. տեսության (1987), ԵՊԿ վոկալ-տես. ֆակ-ի երաժշտագիտության (1992, Է. Փաշինյանի դասարան) բաժինները, ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (2001, ղեկ.՝ Գ. Գյոդակյան): 1991–2003-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 2000–02-ին՝ Հայկ. բաց համալսարանի երաժշտագիտության ֆակ-ի դեկան և գիտ. խորհրդի անդամ: 2002-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող (2003-ից՝ գիտ. քարտուղար, գիտ. խորհրդի անդամ, 2005-ից՝ փոխտնօրեն՝ գիտ. գծով, 2009–16-ին՝ սփյուռքահայ արվ-ի և միջազգ. կապերի բաժնի վարիչ, 2016-ից՝ երաժշտության բաժնի վարիչ): «Կանթեղ» գիտ. պարբ-ի գլխ. խմբ.:

Ուսումնասիրությունները վերաբերում են նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության պատմությանը: Հեղինակ է մենագրությունների, գիտ. հոդվածների, որոնք տպագրվել են ՀՀ, նաև արտերկրի գիտ. ժող-ներում և հանդեսներում:

ՀՀ ԿԳՆ «Արդյունավետ աշխատող» մրցույթների հաղթող (2014, 2016):

ՀԱԵ եկեղեց. ներկայացուցչ. ժողովի պատգամավոր՝ Արարատ. հայրապետ. թեմից (2014, 2017), Հումանիզմի հիմնախնդիրների ակադ-ի փոխնախագահ, Բնության և հաս-յան մասին միջազգ. ակադ-ի, «Ակունք» գիտ. հոդվածների ժող-ի խմբագր. (2013), Կոմիտասի թանգարան-ինստ-ի գիտ. (2015), ԵՕԲԹ-ի աջակցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդների անդամ, «Տիգրան Չուխաճյան» հիմնադրամի հիմնադիր և գործադիր կոմիտեի նախագահ (2002-ից):

ՀՀ ԿԳՆ (2008), Երևանի քաղաքապետի (2016) ոսկե, Ֆ. Նանսեն հիմնադրամի (2014) մեդալներ:

Երկ. *«Արշակ Բ» հայոց անդրանիկ օպերան, Ե., 2006: Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Ե., 2007: «Զեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, Ե., 2009: Ամենայն հայոց մաեստրոն Հովհաննես Չեքիջյան, Ե., 2009: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, Ե., 2010: Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011: Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Լիբանանահայ թատրոն, Ե., 2011: Լիբանանահայ երաժշտություն. Արուսյակ Այնթապլյան, Ե., 2012: Ավագ Պետրոսյան-100 (համահեղ.), Ե., 2012: Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար–XX դարի սկիզբ), (համահեղ.), Ե., 2015: Հայաստանի կոմպոզիտորների միություն-85, Ե., 2017:*

Գրկ. *Աննա Ասատրյան, Ե., 2018 (Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն № 7)*

Լիլիթ Արտեմյան

Աննա Ասատրյան

ԱՍԱՏՐՅԱՆ Արամ Հաբեթի (03.03.1953, Վաղարշապատ–07.11.2006, Վաղարշապատ), երգիչ, երգերի հեղինակ: 1985-ին ստեղծել է սեփ. խումբ և համերգներով շրջագայել Ասիայի, Եվրոպայի երկրներում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում և այլուր: Հայտնի են նրա «Անկախ Հայաստան», «Մեղավոր աչքերով», «Հայ ենք մենք», «Սիրո պատմություն», «Սուրբ Սարգիս» և այլ երգեր:

Որդին՝ Արտաշ Ա. (ծ. 13.12.1976, Երևան) և թոռը՝ Գրիշա Ա. (ծ. 2003) նույնպես երգիչներ են:

Արամ Հ. Ասատրյանը ելույթի պահին

ԱՍԱՏՐՅԱՆ Արամ Դերենիկի (ծ. 22.12.1970, Երևան), ջութակահար: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցը (1985, դասատուներ՝ Վ. Ահարոնյան,

Կ. Ջանփոլադյան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1989, դասատու՝ Յ. Պողոսյան), ԵՊԿ (1994, Ա. Բոգդանյանի և Ա. Մկրտչյանի դասարաններ) և ասպիրանտուրան (1996, ղեկ.՝ Ա. Մկրտչյան): 1997-ից դասավանդում է ԵՊԿ-ում: 1991-ին հիմնադրել է (Էդուարդ *Թոփչյանի* հետ) «Սերենադ» կամեր. նվագախումբը (երաժշտ. մրցույթ-փառատոնի մրց., 1995, Իտալիա), 1990-ական թթ-ի սկզբին (բաս.կիթառահար Վ. Պապայանի հետ)՝ ռոք խումբ (հետագայում կոչվել է «Օկսենհեմ»), 2013-ին (Ա. Թորոսյանի, Ս. Ազարյանի, Վ. Գրիգորյանի հետ)՝ Է. Միրզոյանի անվ. քառյակը (1-ին ջութակ՝ Ա., «Վերածնունդ» միջազգ. մրցույթ-փառատոնի Մեծ մրց., 2013, Գյումրի): 1992-ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի 1-ին ջութակ:

Արամ Դ. Ասպրյանը ելույթի պահին

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2016):

ԱՍԱՏՐՅԱՆ Արթուր (Ասատուր) Կարապետի (ծ. 30.05.1960, Երևան), ալտահար, պրոդյուսեր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1967–79), ԵՊԿ ալտի բաժինը (1985): 1985–87-ին դասավանդել է Նորաշեն գ-ի (այժմ՝ ՀՀ Արարատի մարզում) երաժշտ. դպրոցում, 1987–92-ին՝ Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում (ջութակի դասարան): 1995-ից՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի տնօրեն:

Արթուր Ասպրյան

Ա-ի նախաձեռնությամբ անցկացվել են «Ասպպ» ամենամյա մրցանակաբաշխությունը, «Ընծա» ամենամյա համահայկ. մրցույթ-փառատոնը (ԼՂՀ): Հաշմանդամ երեխաների աջակցության համար կազմակերպել է «Փյունիկ» համերգաշարը, ԼՂՀ անկախության և Շուշիի ազատագրման տարեդարձին նվիրված համերգ-միջոցառումներ, «Մենք վերանորոգում ենք մեր թատրոնը» վերնագրով 10 համերգ՝ Երևանի «Արամ Խաչատրյան» համերգասրահում: 1997-ից՝ Հայաստանի պետ. ջազ-նվագախմբի, նաև երգիչներ Ա. Լևոնյանի, Շ. Պետրոսյանի, Արամոյի, Է. Պետրոսյանի, Զ. Բաբայանի թատերականացված մենահամերգների, 2008-ից՝ Ինգա և Անուշ Արշակյանների պրոդյուսերը, «Հայկական ջազը 70 տարեկան է» ՀԿ տնօրենը:

Զեննի Ասպրյան

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007):

ԱՍԱՏՐՅԱՆ Զեննի Գեղամի (ծ. 1949, Երևան), կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1969, դասատու՝ Է. Բաղդասարյան) և ԵՊԿ (1975, Գ. Եղիազարյանի դասարան): 1976–89-ին դասավանդել է Երևանի № 1 արվ-ի դպրոցում, 1989-ից՝ ԵՊԿ-ում:

Հեղինակ է «Քաջ Նազար» (1975) բալետի, լար. կվարտետների (1969–71), «Կոմիտասյան մեղեդիներ» ֆանտազիայի՝ ֆլեյտայի և դաշնամուրի, կամեր. «Արևածագ» (2007) երաժշտ. պատկերի՝ նվագախմբի և դաշնամուրի, պոեմի (2008)՝ ջութակի և դաշնամուրի համար, «Ապրենք խաղաղ կամ Մկների ժողովը» (2010) մյուզիքլի, մադրիգալների, ձայնի և գործիք. անսամբլի համար երկերի (Նահապետ Քուչակի խոսքերով), «Աշեցոց Բինգյոլ» պաստորալի (երկուսն էլ՝ 2002, խառը երգչախմբի համար), «Տարվա եղանակներ» (Կոմիտասի խոսքերով, 2004), «Տէր, լուր ձայն իմում» (2012) կանտատների, «Մնորում-ներ» (2005), «Հայաստան» (2006) օրատորիայի, դաշնամուր. մանրանվագների, «Վահագնի ծնունդը», «Աղերս» խմբերգ. շարքերի, ջութակի մենանվագի, վոկալ-գործիք. պատկերների, խմբերգերի, մանկ. երգերի, դաշնամուրի, ժող. գործիքների պիեսների, փոխադրությունների և այլ գործերի:

ԱՍԱՏՐՅԱՆ Զոն Յոլակի (ծ. 16.03.1936, Լենինական), կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակ-ը (1959), ԵՊԿ (1968, Է. Միրզոյանի դասարան):

Գրել է «Իմ Հայաստան» (համահեղ., 1971) կանտատը, լար. կվարտետ (1966), լար. տրիո (1962), «Երաժշտություն նվագախմբի համար» (1968), «Փոքր սյուիտ» (1970)՝ լար. նվագախմբի և կլավեսինի, սոնատներ (1960՝ ջութակի և դաշնամուրի, 1964՝ ֆլեյտայի և դաշնամուրի, 1972՝ թավջութակի և դաշնամուրի համար), երգաշարեր (Պ. Սևակի խոսքերով, 1965, ձայն, կլավեսին և լար. քառյակ, Մ. Մեծարենցի խոսքերով, 1970, ձայն, ֆլեյտա, ալտ և դաշնամուր, ևն), ռոմանսներ, երգեր, թատրոնի և կինոյի երաժշտություն:

ԱՍԱՏՐՅԱՆ Ռուբեն Մինասի (ծ. 31.10.1959, Երևան), ջութակահար, դիրիժոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2012): Ավարտել է Երևանի Մ. Միրզոյանի անվ. երաժշտ. դպրոցը (1977), Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանը (1981), ԵՊԿ ջութակի բաժինը (1986, Զ. Պետրոսյանի դասարան), սովորել դիրիժորության (Ռ. Մանգասարյանի դասարան),

կոմպոզիցիայի (Ղ. Սարյանի դասարան) բաժիններում, ՄՊԿ-ում անցել է դիրիժորության դասընթացներ: 1982–89-ին դասավանդել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում, 2002-ից՝ ԵՊԿ-ում (դոցենտ, 2015-ից՝ վոկալ-տես. ֆակ-ի դեկան), 2013–16-ին՝ Մայր աթոռ Սբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (նաև երգչախմբի ղեկ.):

Կ. Սարաջյանի անվ. սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1989-ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար, 1999-ից՝ դիրիժոր, 2003-ից՝ ԵՕԲԹ-ի դիրիժոր: 1981-ին հիմնադրել է «Վերածնունդ» անսամբլը, 1994-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի մենակատարների անսամբլը, կազմակերպել համերգներ. երկացանկում՝ դաս., ժամանակակից և հայ կոմպոզիտորների գործեր:

Ա-ի ղեկավարությամբ առաջին անգամ կատարվել են հայ ժամանակակից կոմպոզիտորների մի շարք ստեղծագործություններ՝ Ա. Տերտերյանի 1-ին սիմֆոնիան, Վ. Բաբայանի ջութակի և թավջութակի կոնցերտը, Ա. Բաբայանի թավջութակի 2 կոնցերտը, Գ. Հովհաննիսյանի «Սիմֆոնիետը» ևն (մի մասը ձայնագրվել է): Երկացանկում՝ նաև Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Պ. Ի. Չայկովսկու, Յ. Բրամսի, Ա. Բրուքների, Գ. Մահլերի, Ա. Տերտերյանի (գրեթե բոլոր սիմֆոնիաները) և ուր. գործերից: 2008-ին՝ Ա. Տերտերյանի «Երկրաշարժ», «Կրակե օղակ» (պրեմիերան՝ 2014-ին՝ Շուշիի բերդի տարածքում) օպերաների բեմադրող-դիրիժոր: ԵՕԲԹ-ում ղեկավարել է Ջ. Վերդիի «Տրավիատա», «Տրուբադուր» օպերաները, Պ. Ի. Չայկովսկու «Ռոմեո և Ջուլիետ», Ա. Ադանի «Ժիզել», Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետները: Որպես դիրիժոր՝ հանդես է եկել Սոչիի (2006), Վրաստանի ազգ. սիմֆ. (2009, 2013), Լիբանանի ֆիլհարմոնիկ (2011) նվագախմբերի հետ: Հյուրախաղերով շրջագայել է ՌԴ-ում, Հունաստանում, Վրաստանում, Լիբանանում, ԱՄԷ-ում և այլուր:

Գրկ. *Հովհաննիսյան Թ., Դիրիժորը: Ռոբերտ Աստրյան. արվեստագետի դիմանկար, Ե., 2003:*

ԱՍԱՏՐՅԱՆ Վազգեն Ժորժի (ծ. 22.09.1958, Երևան), կոնտրաբասահար, բաս կիթառահար, հարված. գործիքներ նվագող: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2014): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանը (դասատու՝ Լ. Նալյան), սովորել Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում (2 տարի, դասատու՝ Հ. Միհերյան, երկուսն էլ՝ կոնտրաբասի բաժին), Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ում (1985-ից): Աշխատել է Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբում, 1981–83-ին՝ «Յվետի» խմբի (ղեկ.՝ Ս. Նամին, Մոսկվա) բաս կիթառահար և թմբկահար, 1983-ից՝ Երևանի մարզահամերգ. համալիրի գլխ. ինչյուն. ռեժ., 2015–18-ին՝ տնօրեն:

1980-ական թթ-ին Լևոն ***Մալխասյանի*** հետ կազմակերպել է մի քանի ջազ. փառատոներ, 1983–85-ին դասավանդել է Գեղագիտության ազգ. կենտրոնում: «Յուրմալա-89» միջազգ. երաժշտ. մրցույթի, 1990-ին՝ Մոսկվայի «Սոյուզկոնցերտ» միավորման ծրագրերի տնօրեն, ԽՍՀՄ կենտրոն. հեռուստատեսության «Տարվա երգ» նախագծի փոխտնօրեն: 1994–2007-ին ապրել է Փարիզում: 2005-ին Երևանում հիմնադրել է «Երգում է 70-ականների Երևանը» նվագախումբը (նաև գեղ. ղեկ.) և նույնանուն նախագիծը. կազմակերպել է համերգներ, հեռուստանախագծեր: Լոս Անջելեսում հանդես եկել է հյուրախաղերով:

Մի շարք հեռուստածրագրերի հեղինակ է, «Երևան Ջազ-ֆեստ» փառատոնի կազմակերպիչը (1983, 1985, 2000, 2006, 2015–17), «Ջազ» ընկերակցության (2015) համանախագահը: Հիմնադրել և ղեկավարել է «Փարիզյան սուրճ» (1995–2007), «Ֆրանսիական սուրճ» (2010, Ա. Աղաբաբյանի հետ) ընկերությունները:

ՌԴ «Պետրոս Առաջին» I կարգի ոսկե մեդալ (2008, Մոսկվա):

Գոհար Շագոյան

ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Ասատուր) Հակոբ Հովհաննեսի [03.03.1903, գ. Չոմախլու, (Կեսարիայի գավառ)–11.08.2003, Նյու Ջերսի՝ ԱՄՆ], գրող, երաժշտագետ: 1920-ից ապրել է ԱՄՆ-ում: 1928-ին հետևել է Կոլումբիայի համալսարանի երեկոյան դասընթացներին:

Ա-ի «Կոմիտաս վարդապետ. հայ երգը» (1962) աշխ-ը՝ նվիրված է Կոմիտասի ստեղծագործությանը, գեղագիտ. սկզբունքներին, հոգևոր և ժող. երաժշտության հետ նրա առնչություններին, իսկ «Կոմիտաս վարդապետի հետ» (1994) երկում նույն թեման լրացրել է հաջորդ տարիներին կատարած ուսումնասիրություններով, նորահայտ իրողություններով և գնահատականներով: «Հարիւրամեակ» (1978)

Ռոբերտ Աստրյան

Վազգեն Աստրյանը եղոյթի պահին

Հակոբ Աապտուրյան

հատորն ամփոփում է հուշեր, տպավորություններ զանազան հանդիպումներից և իրադարձություններից, որտեղ Ա. արտահայտել է իր խոհերը հայ երաժշտության էության, երաժշտարվ–ի ազգ. հատկանիշների վերաբերյալ («Անտունի» թատերապարը», «Յոբելեանական համերգ», «Կոմիտասի թանգարանը» ևն):

Գրել է երգեր, հանդես է եկել որպես երգիչ. երգացանկում՝ Կոմիտասի, Ռ. Մելիքյանի, Բ. Կանաչյանի, Ա. Հովհաննեսի ժող. երգերի մշակումներից, որոնք լույս են տեսել ձայնապնակով՝ «Հայ երգ» (1917, Նյու Յորք) վերնագրով:

Ա–ի «Հովակիմի թոռները» (1965), «Հովակիմի թոռնորդիները» (1982), «Տօ, լաճ տնաւեր» (1986) վեպերը հայրենի հողից կտրված հայերի մասին են: Հեղինակ է նաև «Անդաստան» (1946) բանաստեղծությունների ժող–ի, «Քարի եւ հողի պատմութիւն» (1969) տպավորությունների, «Պարոյր Սեւակի հետ» (1971) գրքերի, «Վերջալոյսի յոյզեր» (1996) ակնարկի և այլ գործերի:

ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (1984):

Գրկ. *Թամրազյան Հ., Հակոբ Աապտուրյան: Կյանքը և գործը, Ե., 1993: Բրուտյան Մ., Հակոբ Աապտուրյան. սփյուռքահայ գրողն ու երաժիշտը, Ե., 1999:*

Նինա Ասատուրովան Ժենևվևայի դերում (Ռ. Շումանի «Ժենևվևա»)

ԱՍԱՏՈՒՐՈՎԱ (Տեր–Ասատուրովա) Նինա Ալեքսանդրի (1874, Թիֆլիս–մ. թ. անհտ), երգչուհի (դրամատիկ. սոպրանո): Սովորել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանի վոկալ բաժնում, ավարտել Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան (1897, Կ. Ֆեռնի–Ջիրալդոնիի և Օ. Պալեչեկի դասարաններ): 1896–ին Ս. Պետերբուրգի Միխայլովյան թատրոնում առաջինն է կատարել Ժենևվևայի դերերգը (Ռ. Շումանի «Ժենևվևա»): Դերերգերից են նաև՝ Գորիսլավա (Մ. Ի. Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա»), Նատաշա, Դոննա Աննա (Ա. Ս. Դարգոմիժսկու «Ջրահարսը», «Քարե հյուրը»), Քսենյա (Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով»), Մաշա (Է. Ֆ. Նապրավնիկի «Դուբրովսկի»), Լիզա, Մարիա, Տատյանա (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», «Մազեպա», «Եվգենի Օնեգին»), Վալենտինա (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ»), Աիդա, Դեզդեմոնա (Ջ. Վերդիի «Աիդա», «Օթելլո») ևն:

Համերգներով հանդես է եկել Պերմում, Կազանում, Սարատովում, Մոսկվայում, Թիֆլիսում և այլուր: Համագործակցել է դիրիժորներ Ա. Պ. Ասլանովի, Ե.Ե.Պլոտնիկովի, Ա. Ա.Էյխենվալդի հետ: Ա. աչքի է ընկել ձայնի հաճելի տեմբրով և ինչողությամբ, վոկալ տեխնիկայի բարձր մակարդակով, բեմ. վարպետությամբ:

ԱՄԵՐԳ, recitative (իտալ.՝ recitativo, < recitare – արտասանել), վոկալ (հիմնականում՝ միաձայն) երաժշտության տեսակ. բնույթով մոտ է բնական խոսքի երգեցիկ արտասանությանը: Ա–ում պահպանվում են երաժշտ. կառուցվածքը, ռիթմի համեմատ. ազատությունը, գրական տեքստի յուրաքանչյուր վանկի կատարումը (մեծ մասամբ՝ երաժշտ. 1 հնչյունով), բառ. և իմաստ. շեշտերը, օգտագործվում են արտասանության ինտոնացիան ու հուզ. երանգները, բնորոշ չեն թեմատիկ կրկնությունը և համաչափությունը:

Ա–ի ծագումը (XVII դ.) պայմանավորված է օպերայի և նրան մոտ ժանրերի (օրատորիա և կանտատ), նաև ռոմանսի երևան գալով: Սովորաբար Ա. օպերայում նախորդում է արիային կամ երգ. այլ համարների: XVII–XVIII դդ–ում իտալ. օպերայում ձևավորվել են Ա–ի չոր (սեկկո՝ secco) և նվագակցությամբ (ակկոմպանյատո՝ accompagnato) տեսակները: Ա–ի ոճը հանդիպում է նաև գործիք. երաժշտության մեջ:

Հայկ. ժող., գուսան–աշուղ. և հոգևոր երգերում (***թվելյաց երգեր***, «Սասնա ծռեր» էպոսի երգվող հատվածների մեծ մասը, Ավետարանի ընթերցումը, սաղմոսերգությունը ևն) ինագույն ժամանակներից կիրառում են բուն Ա. կամ Ա–ային ոճը: Տես նաև *Թվելոգ*:

«ԱՍԼԱՄԱԶՅԱՆ» ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌՅԱԿ, հիմնադրվել է 1955–ին Հալեպում՝ Սերգեյ ***Ասլամազյանի*** անունով: Կազմում՝

«Ասլամազյան» լարային քառյակը

Հ. Չամսարյան (1–ին ջութակ), Ռ. Ճեպեճյան (2–րդ ջութակ, 1960–ից՝ Ն. Տապաշյան, 1966–ից՝ Ա. Մանուկյան), Ջ. Ռուբենյան (ալտ, 1960–ից՝ Ս. Մանիշակյան), Հ. Կա–

րա-Օղլանյան (թավջութակ)։ Գործել է մինչև 1975-ը։

ԱՍԼԱՄԱԶՅԱՆ Սերգեյ (Սարգիս) Զաքարի [02(14).02.1897, ք. Մոզդոկ–27.09.1978, Մոսկվա], թավջութակահար, մանկավարժ։ ՀԽՍՀ ժող. արտիստ (1945)։ Սովորել է Եկատերինոդարի երաժշտ. ուսումնարանում (1912–15, դասատու՝ Հ. Մերկ), ՄՊԿ-ում (1915–18, 1922–27, Ս. Մ. Կոզոլուպովի դասարան)։ 1937-ից դասավանդել է նույն կոնսերվատորիայում (1947-ից՝ թավջութակի և քառյակի դասարանի պրոֆ.)։ Կոմիտասի անվ. քառյակի հիմնադիր-անդամներից (1925–68, թավջութակահար)։ Լար. քառյակի, լար. նվագախմբի ու թավջութակահարների անսամբլի համար մշակել է հայ, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններից (Գ. Հենդելի «Պասսակալիա», Ն. Պագանինիի «24-րդ կապրիս» ևն), որոնց բնորոշ են ներդաշնակության նրբությունը, ձևի ամփոփ ավարտվածությունը, գործիքավորման գունեղությունը, անսամբլ. նվագի հնարքների հմուտ օգտագործումը։ Կոմիտասի մի շարք երգերի մշակումները («Շողեր ջան», «Հաբրբան», «Չինար ես», «Գարուն ա», «Քելեր, ցոլեր», «Երկինքն ամպել ա» ևն) հայկ. կվարտետ. գրկ-յան լավագույն էջերից են և նպաստել են նրա զարգացմանը։ Ա-ի պատվին ստեղծվել է ***«Ասլամազյան» լարային քառյակը*** (1955–75)։

ՀԽՍՀ «Պատվո նշան» շքանշան (1939), ԽՍՀՄ (1946), ՀԽՍՀ (1965) պետ. մրց-ներ։

Գրկ. *Թադևոսյան Ա., Մեծ Կոմիտասի անունով, Ե., 1959: Մարկոսյան Ա., Կոմիտաս քառյակ: Չորս դիմանկար, Ե., 2006: Давидян Р., Саркис Асламазян, Е., 1972.*

«ԱՍԼԱՆ ԱՂԱ», հայ ժող. վիպերգ։ Կրում է հին հավատալիքների և միջնադար. կենսահայեցողության դրոշմ։ Ասլան աղան, տեղեկանալով աղքատ մի մարդու մահվան մասին, վրդովվում է և մենամարտի հրավիրում Գաբրիել հրեշտակին, սակայն պարտվում է և ծանր հիվանդանում։ Հոգեառը պահանջում է Ասլան աղայի կամ հարազատներից որևէ մեկի հոգին. հայրն ու մայրը չեն համաձայնում, պատրաստակամություն է հայտնում կինը՝ Սարգարիտը։ Աստված սիրո այդ անձնազոհության համար Ասլան աղային ու նրա կնոջը երկար կյանք է պարգևում։ Վիպերգի հերոսն «իդեալական տիրակալի», «ժողովրդի պաշտպանի» կերպար է։

«Ա. ա.» արժեքավոր գեղ. ստեղծագործություն է. երգվել է ամբողջովին կամ հատվածաբար, ունի տարբերակներ։

Գրկ. *Յովսէփեան Գ., Քշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից, Թ., 1892: Աբեղյան Մ., Երկ., հ. 1, Ե., 1966: Ընտիր էջեր հայ գրականության, Ե., 1946:*

ԱՍԼԱՆՅԱՆ Նուբար Աբրահամի (ծ. 1943, Աթենք), կոմպոզիտոր։ ՀԿՄ (1982-ից), Իսրայելի ԿՄ անդամ։ Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (դասատու՝ Գ. Հախինյան) և ԵՊԿ (1973, Գ. Եղիազարյանի դասարան)։ Ապրում է Հայֆայում։

Ստեղծագործություններում օգտագործել է ժող. երգեր և մեղեդիներ։ Գրել է «Նա գնաց» (1995) երգը, «Էնտերբե-20» սոնատը (1996)՝ մենանվագ թավջութակի, «Բերքի տոն» (1982) կանտատը՝ ա կապելլա երգչախմբի, կոնցերտին (1977)՝ շեփորի և լար. նվագախմբի, «Քայլերգ-պոեմ» (1965, 2000)՝ փող. նվագախմբի, «Հիմն Արցախին» (1990)՝ խառը երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, «Սարերում» (2001) սյուիտը՝ փայտե փող. գործիքների և դաշնամուրի համար, «Պոեմ Էլեգիա» (2007, Հ. Դինքի հիշատակին), լար. և փող. կվարտետներ, «Քելե լաօ, քելե էրթանք մըր էրկիր» (1977, նվիրված է Շ. Ազնավուրին և Ք. Քըրքորյանին) և այլ գործեր։

Ա-ի ստեղծագործությունները կատարվել են ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Կանադայում, Հարավսլավիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Կորեայում, Գերմանիայում, Իսրայելում, ՀՀ-ում և այլուր։

Հայֆայի քաղաքապետարանի հատուկ դիպլոմ և մեդալ (2013)։

ԱՍԼԱՆՅԱՆ Վահե (13.03.1918, Բոստոն–մ. թ. անհտ), դիրիժոր։ Ստենֆորդի համալսարանի դ-ր (1965)։ Ավարտել է Բոստոնի համալսարանը (1940, բակալավր), Կլերմոնի բարձրագույն դպրոցը (1950, վարպետ)։ Բերկշիրի (ԱՄՆ) երաժշտ. կենտրոնի դիրիժոր, Ստենֆորդի տղամարդկանց ակումբի և համալսարանի երգչախմբի դիրիժոր ու խմբավար։ Դասավանդել է Ռիչարդսոնի (Կալիֆոռնիա) բարձրագույն դպրոցում (1946–50), Ստենֆորդի համալսարանում (1962–68), Հարթնել քոլեջում (1950-ից)։ Ղեկավարել է Կալիֆոռնիայի եկեղեց. երաժշտության (1956-ից) և Նեապոլի ժամանակակից ամերիկ. ու իտալ. երաժշտության (1959-ից) փառատոները։

Սերգեյ Ասլամազյան

«Ասլան աղա» վիպերգի էսքիզ (1912, նկ.՝ Եղիշե Թադևոսյան)

Նուբար Ասլանյան



Ալեքսանդր Ասլանով

Օլգա Ասլանովան Վալենտինայի դերում (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ»)

Ասպղիկ

Կալիֆոռնիայի երաժշտ. քոլեջների (1974–76), Հս. Կալիֆոռնիայի երաժշտ. հրատարակիչների ընկերակցությունների նախագահ:

Հեղինակ է «Եկեղեցական խմբերգային երաժշտությունը XVIII դարի Իտալիայում», «Կալիֆոռնիայի եկեղեցական երաժշտությունը», «Եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը հայ մշակույթում», «Վիվալդիի կամերային պատարագը. ոճական վերլուծություն և կատարողական խմբակցություն» աշխ-ների:

Ֆուլբրայթի (1958, 1959), Մարթա Ռոքֆելլերի (1959) մրց-ներ:

ԱՍԼԱՆՈՎ (Ասլանյան) Ալեքսանդր Պետրոսի (10.10.1874, Բաքու–11.07.1960, Դետրոյտ), դիրիժոր: Ավարտել է Մոսկվայի ֆիլհարմոնիկ ընկերության երաժշտադրամատիկ. ուսումնարանը: 1908-ին Բաքվում հիմնադրել է սիմֆ.նվագախումբ: 1912–17-ին՝ Ս. Պետերբուրգի Պավլովյան, 1912–18-ին, միաժամանակ՝ Մարիինյան թատրոնի սիմֆ. նվագախմբերի ղեկ.: Ա-ի հրավերով Ս. Ս. Պրոկոֆևը Պավլովյան սիմֆ. նվագախմբի հետ 1912-ին կատարել է իր դաշնամուր. 1-ին, 1913-ին՝ 2-րդ կոնցերտները, որոնք ռուս կոմպոզիտորի առաջին մուտքն էին համերգ. բեմահարթակ:

1918–20-ին սիմֆ. համերգներ և օպեր. ներկայացումներ է ղեկավարել Թիֆլիսում ու Բաքվում, 1921–22-ին՝ Փարիզում, Նիսում և այլ քաղաքներում: 1923-ից ապրել է Նյու Յորքում: 1924-ին կնոջ՝ երգչուհի Ն. Էյխենվալդի հետ հիմնադրել է ձայնավարժության ստուդիա (գործել է մինչև 1951-ը), որտեղ կրթել է առաջնակարգ երգիչների (նաև հայ) մի քանի սերունդ:

Հրատարակել է հայկ. երգերի ժող., գրել հայկ. երաժշտ. երկեր դաշնամուրի, վերադաշնակել և մշակել մի շարք գործեր նվագախմբի համար:

Գրկ. *Прокофьев С., Материалы, документы, воспоминания, М., 1956.*

ԱՍԼԱՆՈՎԱ Օլգա Նիկոլայի (1882, Ուկրաինա–1949), երգչուհի (դրամատիկ. սոպրանո): 1930–40-ական թթ-ին դասավանդել է Օդեսայի պետ. կոնսերվատորիայում (պրոֆ.): Առաջին օպեր. դերերգերը՝ Զապոլսկայա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Պան վոյեվոդա», 1904), Հուդիթ (Ս. Ն. Սերովի «Հուդիթ», 1903): Երգել է Պերմի (1899), Կազանի, Սարատովի (1901–02), Խարկովի (1904–05), Ս. Պետերբուրգի («Նոր օպերա»), Նիժնի Նովգորոդի, Վիտեբսկի, Մինսկի (1907), Վիլնոյի (1907–08), Օդեսայի (1908, 1916–18), Աստրախանի (1910), Կուրսկի (1912), Եկատերինբուրգի (1913) օպեր. թատրոններում: Դերերգերից են՝ Գորիսլավա, Անտոնիդա (Մ. Ի. Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա», «Կյանքը ցարի համար»), Աիդա, Լեոնորա (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր»), Յարոսլավնա (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր»), Թամարա (Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դևը»), Տատյանա, Նաստասյա, Լիզա (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Կախարդուհին», «Պիկովայա դամա»), Մարինա (Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով»), Կուպավա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Զյունանուշը») ևն:

«ԱՍԼԻ ԵՎ ՔՅԱՐԱՄ», արլ. ժող. երգախառն սիրավեպ: Ստեղծվել է XVII–XVIII դդ-ում: Գովերգում է հայուհի Ասլիի (իսկական անունը՝ Մարիամ) և մահմեդ. Քյարամի ազնիվ ու անդավաճան սերը: Ողբերգ. ավարտ ունեցող եզակի սիրավեպերից է: Հայ. մշակել է (1888) ***Զիվանին***:

ԱՍՏԻՃԱՆ (երաժշտ.), ինչյունաշարի յուրաքանչյուր ինչյունը: Ամբողջ. ինչյունաշարում հիմնական և բնույթով տարբեր Ա-ները 7-ն են, որոնք ընդգրկված են 1 օկտավայում և ունեն վանկ. անուններ՝ դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, տառ. նշումներ՝ c, d, e, f, g, a, h: Օկտավայում մյուս 5 ինչյունից յուրաքանչյուրը թեև ինքնուրույն է, սակայն, որպես ինչյունաշարի Ա., համարվում է հարևան 2 հիմնական Ա-ներից մեկի բարձրացումը (օր.՝ դո-դիեզ՝ cis) կամ մյուսի իջեցումը (օր.՝ ռե-բեմոլ՝ des): «Ա.» են անվանում նաև ձայնակարգի յուրաքանչյուր ինչյունը և եռաինչյունը, որոնք նշվում են թվահամարներով և նույնպես ունեն անվանումներ: Մաժոր և մինոր ձայնակարգերը պարունակում են 7-ական Ա.: I-ն անվանում են տոնիկա, II-ը՝ վերևի ձգտող, III-ը՝ վերևի մեդիանտ, IV-ը՝ սուբդոմինանտ, V-ը՝ դոմինանտ, VI-ը՝ ներքևի մեդիանտ, VII-ը՝ ներքևի ձգտող՝ ըստ տոնիկայի շուրջ իրենց ձևավորության ու դիրքի: Ձայնակարգի բոլոր ինչյունների Ա-ական հաջորդականությունն անվանում են գամմա: Տես նաև ***Ալտերացիա***:

ԱՍՏՂԻԿ (Գանթարճյան Ամպեր Սահակի, 1852, Կ. Պոլիս–01.05.1884, Կ. Պոլիս), դերասանուհի, երգչուհի (կոնտրալտո): ***Միրանույշի*** քույրը: 1870-ից

Կ. Պոլսում խաղացել է Հակոբ *Վարդովյանի*, Պ. Մաղաքյանի դրամատիկ., 1872–78-ին, միաժամանակ՝ Սերովբե *Պենկլյանի* օպերետ. թատերախմբերում, որի հետ 1881-ի վերջերից շրջագայել է Արշիպելագի կղզիներում (Լիմնոս, Սամոս ևն) և Հունաստանում: Դերերգերից ուշագրավ են՝ Տիկին Լանժ (Շ. Լեքոկի «Մադամ Անգո»), Պարիս (Ժ. Օֆֆենբախի «Գեղեցկուհի Հելինե», երկուսն էլ՝ 1875): Եղել է նաև պարուհի:

Գրկ. *Շ ա ր ա մ ա ն, Թրքահայ բեմը եւ իր գործիչները, ԿՊ, 1914: Մ կ ր տ չ ի ա ն Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 2, Ե., 1969:*

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ, Աստվածաշունչ մատյան, Սուրբ գիրք, Գիրք գրոց, Աստծու խոսք, Կենաց խոսք: Աստծու խոսքերի, օրենքների, պատվիրանների, կանխասացությունների, գործերի ու մարդկության հետ Փրկչական ծրագրի ամբողջությունը: Քրիստ. եկեղեցու Սբ գիրքը: «Ա.» անվանումը հատուկ է միայն Հայ եկեղեցուն, մյուս եկեղեցիներն օգտագործում են հուն. Բիբլիա (ταβιβλια – գիրք, գրքեր) բառը: Գրել են Աստծու ընտրյալ շուրջ 40 մարգարեները, ավետարանիչները և առաքյալները: Բաղկացած է տարբեր ժամանակներում գրված 75 տարաբնույթ և ավարտուն գրքերից (երր., հուն., մասամբ՝ արամեերեն), որոնք միասնական ամբողջություն են և ներդաշնակորեն լրացնում են միմյանց (բովանդակությունը՝ օրենք, տարեգրություն, պատմություն, վարք, մարգարեություն, իմաստություն, առակ, հոգևոր երգ, սաղմոս, փիլիսոփայական խորհրդածություն, Ավետարան, քարոզ, նամակ, հայտնություն):

Ա-ի (աստվածաշնչականություն) ամենակարևոր առանձնահատկությունը աստված. ծագումն է, որը պայմանավորում է նրա անառարկելի հեղինակությունը, տարբերությունը այլ գրական ստեղծագործություններից: Ա. Աստծու և մարդկության փոխհարաբերության իսկական վկայարան է. այստեղ Աստված բացահայտում է իրեն, միջամտում մարդկանց կյանքին, ուխտ կնքում նրանց հետ, մարդիկ իրենց ազատ կամքով ընտրում են «կյանքն ու մահը, բարին ու չարը» (Բ Օր. 30:15):

Բաղկացած է Հին և Նոր կտակարաններից (Հին ուխտ, Նոր ուխտ): Հիսուս Քրիստոսի գալստյան մարգարեացումն ու նախապատրաստումն է:

Ընդհանրական եկեղեցին, 3 տիեզ. ժողովներում զբաղված լինելով հրատապ խնդիրներով, չի անդրադարձել Սբ Գրքի կանոնին, որի պատճառով տարբեր եկեղեցիներ, չնչին տարբերություններով, ինքնուրույնաբար են մոտեցել այս խնդրին: Հայ եկեղեցում առաջին պաշտոն. կանոնը սահմանվել է 768-ին Պարտավի Ա եկեղեց. ժողովում՝ Սիոն Ա Բավոնեցի կաթողիկոսի գլխավորությամբ: Ժողովից պահպանված պատառիկներով հնարավոր չէ ամբողջ. պատկերացում ունենալ միջնադար. հայկ. սուրբգրային կանոնի մասին: Այժմ Հայոց կանոնը բաղկացած է 75 գրքից (48-ը՝ Հին կտակարան, 27-ը՝ Նոր կտակարան): Աստվածաշնչ. գրքերի գլուխների ժամանակակից բաժանումը 1240-ին ի մի է բերել Դոմինիկյան միաբանության ֆրանսիացի գիտնական Հուգոնը: Հայկ. ձեռագրերում, լատ. Վուլգատայի օրինակով, գլուխների բաժանումը կատարել է Հայոց Հեթում Բ արքան: Հին կտակարանը բաժանել է համարների Նաթան Երբայեցին (XV դ.): 1555-ին Ա. համարակալել է փարիզաբնակ գիտնական, տպագրիչ Ռոբերտ Սթիվենսը: XVII դ-ից այս նորամուծությունը թափանցել է հայկ. բնագրեր:

Ա. թարգմանված է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով: Առաջին անգամ հայ. թարգմանվել է V դ-ում՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթև կաթողիկոսի նախաձեռնությամբ՝ գրերի գյուտից անմիջապես հետո:

Հայ եկեղեցու ողջ ծեսը (7 Խորհուրդներ, Սբ Պատարագ, Ժամերգություններ, օրհնության կարգեր ևն) հիմնված է Ա-ի վրա: Ա-ից են վերցված նաև պահքի, ողորմության, աղոթքի և բարեպաշտ. այլ սովորություններ, նաև պաշտամունքի տարբեր առարկաներ (մյուռոն, խաչ, սկիհ, քշոց, խունկ ևն):

Աստվածաշնչ. մարգարեությունները և ավետարան. հատվածները Հայ եկեղեցում հնչյունավորվում են երգեցիկ ընթերցանության միջոցով: Ընթերցումներին պարտադիր կերպով նախորդում և հաջորդում է սաղմոսի ընթերցումը, ընդ որում, հաջորդող սաղմոսը «Ալէլուիա, ալէլուիա» կոչով նույնպես երգվում է: Ավետարանից առաջ երգվում է «Ալէլուիա, օրթի՛, պռոսխում է, ասէ Աստուած» (Ալելուիա, ոտքի՛, ուշադրությո՛ւն, Աստված է խոսում): Որոշ

Աստվածաշնչի հայերեն առաջին հրատարակության տիտղոսաթերթը (1666, Ամստերդամ)

«Երրորդության»,«Ադամ և Եվա», «Ահարոն և Մովսես», մանրանկարներ (1358, Աստվածաշունչ, նկ.՝ Սարգիս Պիծակ, Մխիթ., ձեռ. № 2627)

օրերի նախընթաց Ավետարանի ընթերցանության սաղմոնները երգվում են հատուկ մեղեդիով՝ ԳՋ ձայնեղանակի հիմքով: Ավագ ուրբաթ օրվա Խավարման կարգի սաղմոնների մեղեդիները բնորոշ են այդ օրվան: Մարգարեությունների և Ավետարանների վերջավորություններն ունեն բնորոշ մեղեդային ձևեր: Սաղմոսները եկեղեց. արարողությունների և, մասնավորապես, ժամերգությունների ժամանակ ընթերցվում են թվերգով՝ իրար հաջորդող 3–4 հնչյունների սահմանում, իսկ սաղմոսների կանոնագլուխները՝ «ձայնիվ»՝ իրենց հատուկ մեղեդիներով (տես ***Սաղմոսերգություն***):

Մարգարեություններն ու Ավետարանները երգելով կարդալու մասին Ներսես Լամբրոնացին Պատարագի մեկնության իր աշխ-յան մեջ գրել է. «Զի ազդումն երաժշտական եղանակին, ըստ որումն ունի զօրութիւն, ընդոստուցեալ զարթուսցէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին, քանզի չիք ինչ՝ որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն՝ որպէս զերգոցն ձայն»:

Ա-յան պատումների հիման վրա են գրվել նաև շարականների մեծ մասը և բազմաթիվ հոգևոր երգեր:

Ա-ում հիշատակվում են մի շարք երաժշտ. գործիքներ՝ տավիղ, սրինգ, քնար, փող, թմբուկ ևն:

Գրկ. *Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն Պատարագի, Երուսաղէմ, 1842: Յուշարձան Ապրուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500-ամեակի, Երուսաղէմ, 1938: Անաստան Հ., Հայկական մատենագիտութիւն, հ. 2, Ե., 1976: Եղիազարեան Բ., Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, գիրք 1–5, Անթիլիաս, 1976: Պողարեան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990: Պետրոսյան Ե., Ներածություն Նոր Կտակարանի, Ս. Էջմիածին, 1996: Մանուկեան Ա., Ապրուածաշունչ մատեանը, Թեհրան, 1998: Ներածություն Հին կտակարանի (աշխատասիր.՝ Գ. Դարբինյանի), Ս. Էջմիածին, 2000: Ապրուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Ս. Էջմիածին, 2014:*

Լևոն Ասլանյան

ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ Լևոն Արամի (1922, Կ. Պոլիս–19.10.2002, Երևան), կոմպոզիտոր: 1923–47-ին ապրել է Ֆրանսիայում: Ավարտել է Կաննի կոնսերվատորիան (1943): Հայրենադարձել է 1947-ին: 1951–72-ին՝ Հայպետհրատի երաժշտ. խմբ.:

Գրել է «Փայտփորիկ» (1962) մանկ. կանտատը՝ նվագախմբի և երգչախմբի, «Սաղմոսային ռապսոդիա» (1994)՝ թավջութակի և լար. նվագախմբի, «Դիմակներ և դեմքեր» (1994)՝ լար. նվագախմբի, «Տարածական կառույցներ»՝ կամեր. անսամբլի, «Ինտեգրալ» (10 վարիացիա՝ լատիշ. ժող. երգերի թեմաներով)՝ 2 դաշնամուրի համար, սիմֆոնիաներ («Սովետական», 1947, «Կոմիտասի հիշատակին», 1970), սյուիտ (1948), «Մելոգոնիա» (Ա. Բաբաջանյանի հիշատակին, 1983) կոնցերտը, «Հավիկ» (1964, 2-րդ հրտ.՝ 1987) նախերգը, «Արյունոտ մատնահետքեր» (1995), դաշնամուր. գործեր («Պարտիտ», 1964, «Նախերգ և մոտետ», 1969, «Չորս պրելյուդ», 1949, ևն), «Հայաստան» (1971, երիտասարդության հիմնը) խմբերգը, կամեր-վոկալ երկեր, երգեր («Վերադարձ», 1948, «Կաքավ», 1969, ևն), ռոմանսներ: Խմբագրել է հայ կոմպոզիտորների մի շարք ստեղծագործություններ, նաև Շեբամի, Զիվանու, Աշոտի երգերից:

Արթուր Վարդանյան

ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ԵՐԳԱՍԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Ավագ շաբաթվա բոլոր օրերին կատարվող երգերը: Ավագ շաբաթը Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի ու չարչարանքի վերջին շաբաթն է. կանոնների մշակումը վերագրվում է Սահակ Ա Պարթևին: «Անեղն ի Հօրէ», «Իմաստուն կուսանքն», «Որ յաթոռ փառաց», «Այսօր ի կատարումն» օրհնությունները և Ավագ շաբաթվա «Կենդանին յաւիտենից», «Կուսածին մարմնով» շարականների հեղինակը Ներսես Շնորհալին է: Շաբաթվա ընթացքում երգվում են նաև բազմաթիվ այլ հոգևոր երգեր՝ «Ի սկզբանէ Տէր» (Ավագ երկուշաբթի), «Տարցին թագաւորի» (Ավագ երեքշաբթի), «Խորհեցան» (Ավագ չորեքշաբթի), «Որսացան զանձն» (Ավագ հինգշաբթի) առավոտերգերը: Շաբաթվա երգերից են Ավագ հինգշաբթի օրվա «Զահեղ զանքնին, զխորհուրդ խորին» գանձի 2 պատկերները՝ «Այս խորհուրդ լցաւ»-ն ու «Սիրտ իմ սասանին», որոնց հեղինակը Մխիթար Այրիվանեցին է (XIII դ.): Խաչելության դրվագներ են անանուն հեղինակների «Տիրամայրն» և «Ուր ես, մայր իմ» տաղերը:

ԱՎԱԳՅԱՆ Կարապետ (Կարպիս) Գալուստի [01.09.1908, Վառնա (Բուլղարիա)–11.07.1967, Բուխարեստ], ջութակահար: Ավարտել է Բուխարեստի պետ. կոնսերվատորիան: Դասավանդել է Զինվ. երաժշտ. ինստ-ում (1940–48), Չ. Պորումբեսկուի անվ. կոնսերվատորիայում

(պրոֆ.՝ 1949-ից, ամբիոնի վարիչ՝ 1962-ից): Ա-ին աշակերտել են ուսանողներ ԱՄՆ-ից, Շվեդիայից, Ֆինլանդիայից, Չինաստանից, Շվեյցարիայից և այլ երկրներից: Եղել է Պ. Ի. Չայկովսկու, Ջ. Էնեսկուի անվ. միջազգ. մրցույթների հանձնախմբի անդամ, վարպետության դասեր է վարել Սիենայում (Իտալիա) և Ստոկհոլմում:

Գրել է Ռ. Կրեյցերի, Դ. Ռոդեի, Ֆ. Ֆիորիլոյի, Ջ. Էնեսկուի, Ժ. Ֆ. Մազասի ստեղծագործություններին վերաբերող աշխ-ներ, «Նոր ներդրումներ ձախ ձեռքի տեխնիկայի զարգացման մեջ» մեթոդ. ձեռնարկը, որը նորամուծություն էր ջութակի դասավանդման մեջ:

Ա. մասնակցել է ռումինահայ համայնքի մշակույթի և հաս. կյանքի կազմակերպմանը: 1969-ից Բուխարեստում նրա տանը գործում է ցուցահանդես-թանգարան, որտեղ ցուցադրվում է Ա-ի հազվագյուտ գեղ. իրերի հավաքածուն:

Պարգևատրվել է Ռումինիայի շքանշաններով:

ԱՎԱԳՅԱՆ Ջորջ (Գևորգ) Մեսրոպի [15.03.1919, Արմավիր (ՌԴ)–22.11.2017, Նյու Յորք], երաժշտագետ-ձայնագրող, պրոդյուսեր: Ջութակահար Անահիտ *Ամեմյանի* ամուսինը: 1923-ից ապրել է ԱՄՆ-ում: 1941-ին ավարտել է Յեյլի համալսարանը (բակալավր): 1939-ին Չիկագոյում թողարկել է իր ջազ. մեղեդիների ձայնապնակը: «Ավագյան Kº» ֆիրմայի (մասնաճյուղեր՝ Փարիզում, Բրյուսելում, Թեհրանում) հիմնադիր նախագահ (1939, Նյու Յորք): 1951–58-ին՝ «Warner Brothers» կինոընկերության երաժշտ. ձայնագրումների տնօրենն, 1957-ից՝ ԱՄՆ-ի Ձայնագրման արվ-ի ազգ. ակադ-ի նախագահության անդամ (մի շարք նորարարությունների հեղինակ): Եղել է Լ. Արմսթրոնգի, Մ. Դևիսի, Բ. Գուդմենի և ուր. պրոդյուսերը: Կոլումբիայի համալսարանում վարել է ջազի պատմության դասընթացներ: 1998-ին Երևանում մասնակցել է միջազգ. ջազ. փառատոնի:

Համահեղինակ է «Ռոք երաժշտության ձայնապնակային գրառում» գրքի: Եղբոր՝ կինոռեժ. Արա Ավագյանի հետ մասնակցել է մի շարք ամերիկ. ֆիլմերի ստեղծմանը («Ամառային օրվա ջազը», «Ստրավինսկի» ևն):

Անունը գրանցված է Ջազի փառքի սրահի պատին: «Գրեմմի» մրց. (1961), Լենինի շքանշան (1990):

ԱՎԱՆԳԱՐԴԻԶՄ (ֆրանս.՝ avant-gardisme, < avant garde – առաջապոր) երաժշտության մեջ, ստեղծագործ. հոսանքների պայման. անվանումը XX դ-ում: Ա-ի կողմնակիցները խստորեն ընդդիմացել են երաժշտարվ-ում ձևավորված պայման. նորմերին, ձգտել արմատապես փոխել նրանց հիմքերը, կանխորոշել XX դ-ի 1-ին կեսի արվ-ի որոշ հոսանքներ (էքսպրեսիոնիզմ, դադաիզմ, ֆուտուրիզմ, սյուրռեալիզմ, աբստրակտ արվ. ևն): Նորվիեննական դպրոցի կոմպոզիտորները, ժխտելով տոնայնական երաժշտության տրամաբանությունը (տես ***Ատոնալ երաժշտություն***), հենվել են ավստրիացի կոմպոզիտոր և տեսաբան Ա. Շյոնբերգի (տես ***Սերիական տեխնիկա***) մշակած կոմպոզիցիայի նոր համակարգի վրա: 1950-ական թթ-ին երևան է եկել այդ համակարգի տարատեսակը՝ պուանտիլիզմը, որի հետևորդն էր ավստրիացի կոմպոզիտոր Ա. ֆոն Վեբեռնը:

Հայ երաժշտության մեջ Ա-ի նշանավոր ներկայացուցիչներից են Տ. Մանսուրյանը, Ջ. Ասատրյանը, Մ. Իսրայելյանը, Վ. Բաբայանը, Ա. Զոհրաբյանը, Ա. Սաթյանը, Հ. Մելիքյանը, Ե. Երկանյանը, Յ. Հարությունյանը, Ռ. Սարգսյանը, Հ. Դելալյանը և ուր.:

ԱՎԱՆԵՍՈՎ Արթուր Յուրիի (ծ. 09.12.1980, Մոսկվա), դաշնակահար, կոմպոզիտոր: Արվեստագիտ. թեկնածու (2005): Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի (2002, Ս. Ռոստոմյանի դասարան), դաշնամուրի (Ե. Աբաջյանի դասարան) և ասպիրանտուրայի կոմպոզիցիայի ու երաժշտագիտության բաժինները: Միաժամանակ վարպետության դասեր է առել արտերկրում, մասնագիտացել ժամանակակից դաշնամուր. երաժշտության կատարող. արվ-ում (2003–05-ին՝ Շվեյցարիայում, 2007-ին՝ Գերմանիայի Ֆրայբուրգ ք-ում): ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող: Դասավանդում է ԵՊԿ-ում և Հայաստանի Ամերիկ. համալսարանում:

Հանդես է եկել ժամանակակից երաժշտ. երկերի կատարմամբ: Շվեյցար. «Laboratorium» միջազգ. և հայ-վրաց. «Convergence» նոր երաժշտության անսամբլների հիմնադիր-անդամներից: Ելույթներ է ունեցել անվանի երաժիշտներ Պ. Բուլեզի, Ռ. դը Սարամի, Ք. Քաշքաշյանի, Ա.



Ջորջ Ավագյան

Արթուր Ավանեսովը ելույթի պահին

Լեխների, Թ. Առնոլդի, Տ. Մանսուրյանի, Մ. Պողոսյանի, «Seattle Chamber Players» խմբի և ուր. հետ: Գործերից կատարվել են միջազգ. փառատոներում (Շվեյցարիա, ԱՄՆ, Ճապոնիա, Ավստրիա, Նիդեռլանդներ, Իտալիա, Կանադա, Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Կիպրոս, Լիբանան, Իրան ևն) և համերգներում:



Արա Ավանյան

ԱՎԱՆՅԱՆ Արա Արտուշի [ծ. 13.08.1967, գ. Լիճք (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], երգիչ (տենոր): Ավարտել է Մարտունու երաժշտ. դպրոցի ակորդեոնի, Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի ժող. գործիքների (1987), ԵՊԿ մեներգեցողության (1995, Ս. Դանիելյանի դասարան) բաժինները: 1995-ին հանդես է եկել Սարոյի (Ա. Տիգրանյանի «Անուշ», Մոսկվայի օպեր. թատրոն), Պողիկտոսի (Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս», Մոսկվայի Մեծ թատրոն) դերերգերով: 1998-ին մասնակցել է եվրոպ. առաջին «Բաբել» միջազգ. փառատոնին (երգացանկում՝ Կոմիտասի գործերից):

1993–2015-ին (ընդմիջումով)՝ ԵՕԲԹ (Սարո՝ Ա. Տիգրանյանի «Անուշ»), 1997-ից՝ Ստրասբուրգի, 2006–07-ին՝ «Անգեր-Նանթես», 2008–10-ին՝ Մոնտե Կառլոյի օպեր. թատրոնների մեներգիչ: 2012-ին Ռադամեսի (Ջ. Վերդիի «Աիդա») դերերգով մասնակցել է «Օպերա բաց երկնքի տակ» («Opera en plain air») միջազգ. փառատոնին (Ֆրանսիա): 1998-ից հանդես է եկել Ստրասբուրգի Մայր տաճարում: Դերերգերից են՝ Կասիո (Ջ. Վերդիի «Օթելլո»), Առլեկինի, Պեպպե (Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ»), Պոլլիոն (Վ. Բելլինիի «Նորմա») ևն: Մեծ եղեռնի տարելիցներին ելույթներ է ունենում համերգներով. երգացանկում՝ հայ հոգևոր և Կոմիտասի երգերից: 2005–2006-ին դասավանդել է ԵՊԿ-ում: 2013–2014-ին՝ մեներգիչների վերապատրաստման խորհրդական (Հվ. Օսիա): Համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Լոնդոնում, Ֆինլանդիայում:

«Բացառիկ կարգի մրցանակ» (1994, Երևան), Վոկալիստների Ֆ. Վինիասի անվ. փառատոնի (1997, Բարսելոն), Վոկալիստների ամենամյա (ք. Մարմանդ, Ֆրանսիա) մրցույթի, «Բաբել» փառատոնի (Ստրասբուրգ, երկուսն էլ՝ 1999) դափնեկիր, Ա. Իսահակյանի անվ., «Bell Canto» մրցույթների 1-ին, Կոմիտասի անվ. մրցույթի 2-րդ մրց-ներ:

Արևիկ Ավդալբեգյան

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ Արևիկ Թադևոսի (ծ. 12.13.1922, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1955): Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցը (1933, էքստեռն), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1939/40), ԵՊԿ (1946, երեքն էլ՝ Ա. Մնացականյանի, 1943-ից՝ Կ. Ն. Իգումնովի դասարաններ), ՄՊԿ և ասպիրանտուրան (երկուսն էլ՝ 1949, ղեկ.՝ Լ. Ն. Օբորինի): 1950–51, 1960–74-ին դասավանդել է ԵՊԿ-ում:

ՀՄՊ (1941–45) տարիներին հանդես է եկել ռազմաճակատում: Որպես մենակատար՝ ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ (դիրիժորներ՝ Մ. Մալունցյան, Կ. Կանդրաշին, Վ. Այվազյան, Կ. Սարաջև, Նիյազի) ելույթներ է ունեցել Հայաստանում, Ռուսաստանում, Մոնղոլիայում, համագործակցել է Կոմիտասի անվ., Ա. Սպենդիարյանի անվ. քառյակների, նաև Ա. Բաբաջանյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի և ուր. հետ: Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ռ. Շումանի, Ֆ. Շոպենի, Ֆ. Լիստի, Յ. Բրամսի, Ս. Վ. Ռախմանինովի, Ա. Տիգրանյանի, Ա. Խաչատրյանի երկերից (կան ձայնագրություններ): Ա-ի կատարող. ոճին բնորոշ էին ռոմանտիկ. զգացումները, վառ խառնվածքը, հարուստ տեմբրը: Որպես մենակատար՝ Հայֆիլհարմոնիայի համերգ. խմբերի հետ շրջագայել է Հունգարիայում, Ալբանիայում, Սիրիայում, Լիբանանում, Մոնղոլիայում: 1988-ից ապրում է Իտալիայում:

Համերգ. գործունեությունը շարունակել է դուստրերի՝ Նունե, Տաթևիկ, նաև թոռնուհու՝ Աննա (մի քանի միջազգ. մրցույթների դափնեկիր) Հայրապետյանների հետ. երկացանկում՝ Յ. Ս. Բախի հազվադեպ կատարվող կլավեսինի կրկնակի, եռակի կոնցերտները:

Երկ. *Արևիկ Ավդալբեգյան. Հուշագրական նոթեր, հոդվածներ, Ե., 2012:*

Շուշանիկ Ափոյան

ԱՎԵՍՅԱՆ Կարապետ Վարդանի (ծ. 28.04.1979, Բեյրութ), կոմպոզիտոր, դիրիժոր: Լիբանանի ԿՄ անդամ (2011-ից): Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի (2006, Ա. Զոհրաբյանի դասարան) և դիրիժորության (2007, Ա. Ղարաբեկյանի դասարան) բաժինները: Վերադառնալով Լիբանան՝ նշանակվել է «Բարսեղ Կանաչյան» երաժշտ. քոլեջի տեսության բաժնի ղեկ. (2007), ստեղծել է կա-

մեր. նվագախումբ (2009, Ս. Քեչեկի հետ): 2008–ից՝ Լիբանանի պետ. ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր և պետ. կոնսերվատորիայի դասախոս, 2007–11-ին՝ Մերձ. Արևելքի Աստվածաբան. ճեմարանի երգչախմբի ղեկ. և դասախոս: 2009–12-ին ղեկավարել է Բեյրութի «Արմիս» երգչախումբը, մասնակցել «Բեյրութ Չանց» միջազգ. փառատոնին: 2010-ից դասավանդում է Բեյրութի Արաբ. համալսարանի ճարտ-յան բաժնում: 2012 և 2014-ին կատարելագործվել է դիրիժորության միջազգ. վարպետաց դասընթացներում (Փարիզ և Չիկագո): «Սուրբ Միշել» ինստ-ի Երիտասարդ. կամեր. նվագախմբի հիմնադիր-ղեկ. (2013), 2014-ից՝ Լիբանանի ազգ. երիտասարդ. նվագախմբի գլխ. դիրիժոր:

Հեղինակ է սիմֆ., կամեր., խմբերգ. ստեղծագործությունների, մշակել է լիբանան. ժող. երգեր՝ էստրադ. նվագախմբի համար:

Գրել է սոնատին (2002)՝ կլառնետի և դաշնամուրի, «Յոլուն աստղեր» (Հ. Թումանյանի խոսքերով, 2002)՝ երգչախմբի, թեմա և վարիացիաներ (2003)՝ դաշնամուրի, «Երեք հայրեն Քուչակէն» (2004) վոկալ շարք՝ մեցցո սոպրանոյի և դաշնամուրի, սիմֆ. պատկեր (2006)՝ նվագախմբի, սոնատ (2005)՝ ջութակի և դաշնամուրի համար, դաշնամուր. կվարտետ (2003), լար. կվարտետ (2008) և այլ գործեր:

Կոմպոզիտորների Ղ. Սարյանի անվ. մրցույթի 3-րդ մրց. (2004, Երևան):

ԱՎԵՏԱՐԱՆ, Աստվածաշնչի 2 հիմնական մասերից երկրորդի՝ Նոր կտակարանի առաջին 4 գրքերի ընդհանուր (կոչվում է նաև Քառամատյան) և դրանցից յուրաքանչյուրի անվանումը: Ըստ քրիստ. գաղափարախոսության՝ Ա. մարդու և Աստծու միջև կնքված հաշտությունն է, որով մարդ արարածը Երկնային արքայությունը ժառանգելու շնորհն է ստացել Հիսուս Քրիստոսի միջոցով: Ա. մարդկության փրկության համար աշխարհ ուղարկված Աստծու Որդի Հիսուս Քրիստոսի քարոզչության (վարդապետության) ամփոփումն է:

Չորս Ավետարաններն են՝ Ավետարան ըստ Մատթեոսի, Ավետարան ըստ Մարկոսի, Ավետարան ըստ Ղուկասի, Ավետարան ըստ Հովհաննեսի:

Ա-ները գրվել են տարբեր հանգամանքներում. յուրաքանչյուրն ունի Հիսուսի անձը, դեպքերը և ուսուցումները շարադրելու ուրույն մոտեցումը: Բոլոր ավետարանիչների նպատակը միայն Հիսուս Քրիստոսի կենսագրությունը, նաև Սուրբ Հարության իրողությունը ներկայացնելն է:

Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարանները ձևի, բովանդակության և լեզվի ընդհանրության համար անվանվել են Համատեսական Ավետարաններ (synoptique), որոնք առավելապես ներկայացրել են Հիսուսի մարդկային, իսկ Հովհաննու Ավետարանը (գրվել է մյուսներից ուշ)՝ նրա աստված. հատկանիշները:

II դ-ից ի հայտ են եկել պարականոն, կեղծանուն Ավետարանները (Պետրոսի Ավետարան, Հակոբոսի Ավետարան, Թովմասի Ավետարան, Մարիամի Ավետարան, Նիկոդեմոսի Ավետարան ևն), սակայն եկեղեցու հայրերը կանոնական են համարել միայն Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանները:

Հայ իրականության մեջ, նախքան գրերի գյուտը, Ա-ներն ընթերցվել են հուն. ու ասոր. և տեղում թարգմանվել ու բացատրվել: Գրերի գյուտից հետո թարգմանվել են հայ. և դարձել Հայ եկեղեցու ծիսակարգի անքակտելի մաս: Ա-ները Հայ եկեղեցում ընթերցվում են միայն երգելով: Եկեղեցու հայրերը եկեղեց. տոների և զանազան առիթների համար սահմանել են ընթերցման կարգ: Ճաշու Ա-ներն ընթերցվում են մեկ հիմնական մեղեդային կառուցվածքով: Տարբերվում է միայն Պատարագի ժամանակ ընթերցվող Ա-ի վերջավորությունը, որն ունի վերընթաց շարժում՝ կառուցված մաժոր լադում:

Առանձին մեղեդային կառուցվածք ունի Յուղաբերից Ա.: Այն ընթերցվում է միայն կիրակի օրերին՝ Առավոտյան ժամերգության «Իւղաբերից կարգի» ժամանակ, որը մեղեդային առումով համապատասխանում է դրանից առաջ երգվող ռեպլիկների կամ «Ավետարանի պատասխանների» (Պռօսխումէ, Ասէ Աստուած» ևն) ասերգի մեղեդուն:

Գրկ. *Նոր Կտակարան և Սաղմոսներ, 2-րդ վերանայված հրտ., Ե., 2014:*

Արթուր Վարդանյան

Մարկոսի Ավետարանի անվանաթերթը, մանրանկար (1232, Ասրվածաշունչ, Մխիթ., ձեռ. № 6785)

Ավետարանի կազմ (1607, Մխիթ., ձեռ. № 6785)

ԱՎԵՏԻՍ, երաժշտության մեջ՝ 1. Քրիստոսի ծնունդն ավետող ու գովերգող հոգևոր երգերի տեսակ: Գրական խոսքի յուրաքանչյուր տողի սկզբում կամ վերջում և կամ կրկնակում առկա է

«ավետիս» բառը: Շարականների ու տաղերի որոշակի հատված գրված է Ա-ի ձևով [Սովսես Խորենացուն վերագրվող Ծննդյան և Աստվածահայտնության ութօրեքի շարականներից («Խորհուրդ մեծ և սքանչելի»), նաև Ներսես Շնորհալու տաղերից («Նոր ծաղիկ») մի քանիսը]:

2. Բարբառներում պահպանված ժող. համանուն երգեր, որոնք կրում են հեթանոս., մասնավորապես՝ հին հայկ. Ամանորի երգերի մոտիվներ և պատկերների մնացուկներ: Դրանց մի մասը կոչվում է նաև *ալելու*՝ երգի մեջ այդ բառի պարբեր. կրկնության պատճառով:

Գրկ. *Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941, էջ 108–109: Մանուկյան Մ., Ժողովրդական ավետիսներ, Ս. Էջմիածին, 1995:*

Արդա Ավետիսյան

«ԱՎԵՏԻՍ», երաժշտ. միություն Շվեյցարիայում: Հիմնադրվել է 2011-ին՝ շվեյցարաբնակ օպեր. երգչուհի Վարդուհի *Խաչատրյանի* նախաձեռնությամբ: Նպատակը Եվրոպայում հայ մշակույթը տարածելն է և հայ երաժիշտներին ներկայացնելը: Ժնևի հեղինակավոր «Վիկտորիա Հոլլ» համերգասրահում կազմակերպում է տարեկան 2–3 համերգ, որոնց մասնակցում է տեղի «Ավետիս» փառատոն. նվագախումբը (երաժիշտների մի մասը շվեյցարաբնակ հայեր են): Նվագախմբի ելույթները ղեկավարում են նաև այլ դիրիժորներ (Հ. Արզումանյան, Վահագն *Պապյան* և ուր.), համերգներին մասնակցել են Շ. (ջութակ) և Ս. (թավջութակ) Սիրանոսյանները, Բ. Թումանյանը, Հ. Այվազյանը և ուր.: Նվագացանկում՝ հայ և եվրոպացի կոմպոզիտորների երկերից:

Սարհաննա Տիգրանյան



Եկատերինա Ավետիսյան

ԱՎԵՏԻՍՅԱՆ Աիդա Կոնստանտինի (07.04.1932, Երևան–22.06.2017, Վանաձոր), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2014): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (դասատու՝ Ա. Մնացականյան) և կոմպոզիցիայի (դասատու՝ Է. Միրզոյան), ԵՊԿ կոմպոզիցիայի (1955, Է. Միրզոյանի դասարան) և դաշնամուրի (Յ. Հայրապետյանի դասարան) բաժինները: Հաճախել է դաշնակահարների վերապատրաստման դասընթացներ (1982, 1987): 1955-ին դասավանդել է Էջմիածնի երաժշտ. դպրոցում, 1956-ից՝ Կիրովականի Մ. Թավրիզյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: 1965–66-ին՝ Կիրովականի Շ. Տալյանի անվ. երաժշտ. դպրոցի տնօրեն:

Որպես դաշնակահարուհի՝ համերգներով հանդես է եկել Հայաստանում, Լեհաստանում, Ուկրաինայում, Վրաստանում և այլուր:

Գրել է «Իմ մայրիկ», «Ինչո՞ւ մենք իրարից հեռացանք» (խոսք՝ Ա. Սարգսյանի), «Կարոտ», «Իմ կյանքը բեմն է» (խոսք՝ Է. Դավիդյանի), «Կռունկներ» (խոսք՝ Ն. Մադոյանի), «Թե չգայիր, գարունը չէր գա» (խոսք՝ Ա. Ղումաշյանի), «Ամանոր», «Սև կատու» (երկուսն էլ՝ խոսք՝ Ս. Խալաթյանի), 5 մանկ. (խոսք՝ Ս. Կապուտիկյանի), «Քո աչերը» (խոսք՝ Հ. Ղուկասյանի), «Ինչու է կատուն ուտելուց հետո լվացվում» (խոսք՝ Հ. Մուրադյանի) երգերը, «Քնարական» և «Հայկական պար»՝ քանոնահարների անսամբլի համար, և այլ գործեր:

Դաշնամուր. ստեղծագործություններն ընդգրկված են երաժշտ. ուսումնարանների և կոնսերվատորիայի ուս. ծրագրերում:

Գրկ. *Պապանյան Ն., Աիդա Ավետիսյանի կյանքն ու ստեղծագործությունը, Վանաձոր, 2007:*

ԱՎԵՏԻՍՅԱՆ Եկատերինա Արամի (ծ. 28.04.1956, Մոսկվա), խմբավար, կոմպոզիտոր, մանկավարժ: Պրոֆ.: Ավարտել է Մոսկվայի Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի անվ. երաժշտ. ուսումնարանը, ԵՊԿ խմբավարության բաժինը (Հ. Չեքիջյանի դասարան): 1999-ից՝ Համառուս. երաժշտ. ընկերության պատվավոր, երգչախմբ. մրցույթների միջազգ. հանձնախմբի անդամ: Մոսկվայում յուրացրել է ուղղափառ եկեղեցու երգացանկը և եկեղեց. օրենսգիրքը (ղեկ.՝ քահանա Ա. Ստանկո): Երկար տարիներ երգել է Մոսկվայի տաճարներում, ղեկավարել երգչախմբեր. 2001-ից՝ Սբ Միխայիլի տաճարի եկեղեց. երգչախմբի ղեկ.: 1991-ին (ամուսնու՝ երաժիշտ, Սբ Աստվածամոր տաճարի վանահայր Սիմեոնի հետ) Մոսկվայի Գնեսինների անվ. մանկավարժ. երաժշտ. դպրոցում ստեղծել է «Մոսկովյան զանգակներ» երգչախումբը (տեղի և միջազգ. փառատոներում արժանացել է բարձր պարգևների), նաև «Բարի լուր» անսամբլի, «Մոսկովյան զանգեր» երիտասարդ. երգչախմբի գեղ. ղեկ.:

Գրել է մի շարք ստեղծագործություններ, կատարել մշակումներ երգչախմբի համար: Հեղինակ է խմբերգ. ստեղծագործությունների 3 ժող-ի, թողարկել է 3

ձայնասկավառակ: Երկացանկում՝ 400-ից ավելի գործեր:

Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի II-ի պատվոգիր (2004), «Գարմոնիա Միրա» (2006), Եկատերինա Մեծի II աստիճանի (2007) շքանշաններ:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Թամարա Կոնստանտինի, Թամարա թագուհի (18.04.1918, Տաշքենդ–14.06.2012, Կիև), երգչուհի: Հայտնի է աշխարհի ժողովուրդների երգերի կատարումով: Ուկրաինայի վաստ. արտիստ (2008): Սովորել է Տաշքենդի և Մոսկվայի կոնսերվատորիաներում: 1947–1987-ին՝ Կիևի ֆիլհարմոնիայի մեներգչուհի: Ղեկավարել է ինքնագործ խմբեր, հոդվածներ տպագրել ուկր. «Վերածնունդ» և «Ուկրաինական թատրոն» ամսագրերում:

Հեղինակ է «Անմոռանալին» (1998) հուշագրության, «Իմ ճակատագիրը երգն է» (2007) գրքի:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Խաչատուր Մելիակի (14.04.1926, Լենինական–27.06.1996, Երևան), քանոնահար, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): ՀՀ ժող. արտիստ (1984): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (դասատու՝ Գ. Եղիազարյան), ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1960, Է. Միրզոյանի դասարան): 1950-ից դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1972-ից (ընդհատումով)՝ ԵՊԿ-ում (պրոֆ՝. 1986-ից): 1958–72-ին՝ Հայաստանի պարի պետ. անսամբլի գործիք. մասի, 1972–78-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ.:

Գրել է «Տոնական նախերգանք» (1959), «Անահիտ» (1964) բալետը, «Վարդավառ» (1972), «Տաղեր սիրո, պանդխտության ու հայրենյաց» (1983, 1990) կանտատները, «Քարավան» (1960), «Կախարդված ծաղիկներ» (1961), «Սևան» (1963), «Զարթոնք» (1978) երաժշտ. խորեոգրաֆիկ պատկերները, սյուիտներ (1956, «Պարային սյուիտ», 1969, «Մանկական պատկերներ», 1970), սոնատներ, կոնցերտ (1954)՝ քանոնի և փոքր սիմֆ. նվագախմբի համար, թատրոնի և կինոյի երաժշտություն («Եթե գաք մեզ մոտ՝ Հաղպատ», 1965, վավերագր., Երևանի փաստավավերագր. ֆիլմերի ստուդիա, «Խաթաբալա», 1971, գեղ., Հայֆիլմ): Ճանաչված են Ա-ի «Իմ անուշ տավիղ», «Մախմուր աղջիկ», «Ասում են թե», «Անահիտ», «Անուրջներ», «Ծաղկեփունջ» երգերն ու պարեղանակները: Կատարելագործել է հայկ. քանոնի նվագի տեխնիկան, մշակել կատարող. նոր հնարքներ:

Հեղինակ է «Քանոնի ձեռնարկի» (մաս 1–2, 1969, 1986, 2008), «Դուդուկի ձեռնարկի» (1987):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1985), Երիտասարդության և ուսանողների համաշխ. III (1951, Բեռլին) և IV (1957, Մոսկվա) փառատոների դափնեկիր:

Որդին՝ Միքայել Ա. (ծ. 18.05.1966, Երևան), դիրիժոր: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի կոմպոզիցիայի (1984), ԵՊԿ դիրիժորության (1989, Հ. Ոսկանյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (1991, ղեկ.՝ Օ. Դուրյան): 1998–99-ին՝ Հայաստանի, Գլենդելի (1999, նաև հիմնադիր) ֆիլհարմոնիկ նվագախմբերի գլխ. դիրիժոր, Լոս Անջելեսի Իրանահայ միության երգչախմբի խմբավար:

Թամարա Ավետիսյան

Խաչատուր Ավետիսյան

Նարինե Ավետիսյան

Գրկ. *Արագյան Թ., Խաչատուր Ավետիսյան. Կյանքն ու գործունեությունը, Ե., 1973: Խաչատրյան Վ., Խաչատուր Ավետիսյան. «Իմ անուշ տավիղ», [Հուշեր], Ե., 2005:*

ԱՎԵՏԻՍՅԱՆ Նարինե Զավենի (ծ. 09.03.1969, Երևան), դաշնակահարուհի, երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2004): ՀԿՄ անդամ (2005-ից): Մասնագիտ. կրթության որակի ապահովման համակարգի փորձագետ (2013-ից): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1988, դասատու՝ Ն. Շահպարոնյան), ԵՊԿ դաշնամուրի (1993, Մ. Մխիթարյանի դասարան) և ասպիրանտուրայի երաժշտագիտության (2000, ղեկ.՝ Ի. Տիգրանովա) բաժինները, ԵՊՀ «Հոգեբանության» դասընթացները (2012):

1997–2001-ին դասավանդել է Երևանի Կ. Սարաջյանի անվ. երաժշտ. դպրոցում, 2001-ից՝ ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2007-ից), 2011-ից՝ Կրթության որակի ներքին ապահովման բաժնի վարիչ: 2006–10-ին՝ *«Արեգ»* հրտ-յան տնօրեն:

Կրթ. և ստեղծագործ. «Flashmob» (2012, 2014, 2016), «Արվեստի բուհերի շաբաթ» (2015, 2016) և այլ նախագծերի հեղինակ և կազմակերպիչ: Ձայնագրել է Ա. Տերտերյանի I և II սիմֆոնիաների խտասկավառակը:

2015-ից՝ Ս. Պետերբուրգի «Աշակույթ և ապագա» հիմնադրամի և «Տերտերյանի ժամանակը» միջազգ. փառատոնի Հա-



Նելլի Ավետիսյան

Արտաշես Ավետյանը երևույթի պահին



Սարինե Ավթանդիլյան

յաստանի ներկայացուցիչ: 2016-ից՝ «Ավետ Տերտերյան» ամենամյա փառատոնի (գ. Հայրավանք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ) հիմնադիր-ղեկ.: Հեղինակ է գիտ. և հրապարակախոս. հոդվածների, կազմել է «Գեորգի Գրիգորի Տիգրանով-100» (2008) ժող-ը:

«Հայ երաժշտագիտության հեռանկարներ» մրց. (2009), ՀԱԵ մեդալ (2015, Ս. Պետերբուրգ):

ԱՎԵՏԻՍՅԱՆ Նելլի Ֆեոդորի (ծ. 09.08.1946, Երևան), երաժշտագետ: Հենրիկ ***Մնացականյանի*** կինը, Ռուբեն ***Մնացականյանի*** մայրը: Արվեստագիտ. թեկնածու (2009): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2014): ՀԿՄ (1994-ից, վարչության՝ 2013-ից) անդամ, երաժշտ. թատրոնի և կինոերաժշտության մասնաճյուղի ղեկ.: Փարիզի «Արարատ» գիտության միջազգ. ակադ-ի թղթակից անդամ (2017): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1965), ԵՊԿ (1971, Մ. Հարությունյանի դասարան), 1978-ին սովորել է Մոսկվայի կոնսերվատորիայի երաժշտության տեսության բաժնում (Ե. Վ. Նազայկինսկու դասարան), 1986-ին կատարելագործվել Բուդապեշտի Ֆ. Լիստի անվ. երաժշտ. ակադ-ում (Զ. Պոնգրացի և Դ. Կուրտագի դասարաններ): 1997–2001-ին դասավանդել է Երևանի Կ. Սարաջյանի անվ. երաժշտ. դպրոցում, 1971-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1994-ից), 2001-ից՝ ԵԳԱ-ում, ապա՝ ԵՊՀ-ում:

Ա-ի նախաձեռնությամբ հավաքվել և հրատարակվել են Արցախի կոմպոզիտորների վոկալ, գործիք. և դաշնամուր. ստեղծագործությունների 3 ժող.: Կազմել է «Երաժշտագիտական աշխատությունների ժողովածու» (2000, 2003), «XX դարի հայ երաժշտության դասականները» (2006), «Ալեքսանդր Սպենդիարյանը և ժամանակը» (2011), «Արամ Խաչատրյանը և արդի աշխարհը» (2014) ժող-ները, հեղինակ է «Երաժշտության աշխարհում. Օպերա» (2003) հանրամատչելի հանրագիտարանի:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2016):

ԱՎԵՏԻՍՅԱՆ (Տեր-Ավետիսյան) Տելեմաք Պետրոսի [10(23).07.1907, Երևան–22.11.1974, Երևան], թավջութակահար, կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): 1930-ից կոմպոզիցիայի դասեր է առել Սպիրիդոն ***Մելիքյանից***: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի (1935, Հ. Ստեփանյանի դասարան) և թավջութակի (1940, Ա. Այվազյանի դասարան) բաժինները, սովորել Մոսկվայի հայկ. մշակույթի տան երաժշտ. ստուդիայում (1950–52): 1927–34-ին, որպես թավջութակահար, հանդես է եկել սիմֆ. նվագախմբերում: 1934–36-ին՝ Լենինականի դրամատիկ. թատրոնի, 1936–48-ին՝ ԵՊՀԹ երաժշտ. մասի, ապա՝ ՀԽՍՀ ժող. ստեղծագործության տան երաժշտ. բաժնի վարիչ, ԼՂԻՄ երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ.:

Գրել է լար. կվարտետ (1940), կվինտետ (1941)՝ լար. կվարտետի և ֆլեյտայի, «Բաղձանք» (1950, ըստ Հ. Շիրազի), «Պիոներական» (1952) կանտատները՝ մանկ. երգչախմբի և նվագախմբի, սյուիտներ՝ լար. քառյակի (1955) և նվագախմբի (1966), 6 պիես (1967)՝ թավջութակի և դաշնամուրի, «Էլեգիա», «Ռոնդո» (երկուսն էլ՝ 1967)՝ թավջութակի և դաշնամուրի, խմբերգեր, գործեր՝ երգի-պարի անսամբլի համար, խմբերգ. սյուիտ «Սասունցի Դավիթ» (ա կապելլա, 1962), երգեր, ռոմանսներ, «Հազարան բլբուլ» (1959) օպերան, «Ղարաբաղյան հարսանիք» (1961) երաժշտ. կատակերգությունը և այլ գործեր:

ԱՎԵՏՅԱՆ Արտաշես Վահանի (ծ. 14.08.1942, Թեհրան), երգիչ: Լոլա ***Խմայանցի*** ամուսինը: 14 տարեկանում կիթառի դասեր է առել գերմանացի Է. Մորեից, երգեցողության դասեր՝ Ա. Սարգսյանից: Դպրոց. տարիներին ստեղծել է երաժշտ. խումբ, որի հետ համերգներով շրջագայել է Իրանի քաղաքներում: 1963-ին հայրենադարձել է: 1973–86-ին՝ Հայաստանի ռադիոյի էստրադ-սիմֆ., 1986–90-ին՝ Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբերի մենակատար: Հեղինակ է 30-ից ավելի երգերի: Երգացանկում՝ «Մանուշակ», «Կարոտսել», «Սիրուն աղջիկ Հայաստանի», «Գիշերն եկավ, զով հովն ընկավ», «Պատահական հանդիպում», «Սիրո ամառ», «Ով սիրուն, սիրուն», «Անձրև», «Երևան», «Ռազմաճակատային քույր», «Կռունկներ», «Անունդ վախով եմ տալիս», «Կարինե», «Քարավան», «Բինգյոլ» և այլ երգեր:

Համերգներով շրջագայել է ՀԽՍՀ-ում, ԽՍՀՄ-ում, արտերկրում: Ձայնագրել է 250-ից ավելի երգեր, նկարահանել տեսահոլովակներ: 1990-ից ապրում է ԱՄՆ-ում:

ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆ Սարինե Բենիկի [ծ. 25.10.1967, ք. Մարտակերտ (ԼՂՀ)], խմբավար, երաժշտագետ, մանկավարժ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2014):

Խմբերգ. երաժշտության միջազգ. ֆեդերացիայի անդամ (2006-ից): Ավարտել է Վոլգոգրադի արվ-ի ուսումնարանի խմբավարության, ԵՊԿ խմբավարության ու երաժշտագիտության (1993) բաժինները և ասպիրանտուրան (1999): Վարպետության դասընթացներ է անցել Գերմանիայում: 1996-ից *«Սպեղանի»* երգչախմբի հիմնադիր-գեղ. ղեկ. և խմբավար, 1994–2002-ին՝ Հայաստանի երաժշտ. ընկերության երգչախմբի խմբավար, 1998-ին՝ Ռադիոյի սիմֆ. նվագախմբին կից խառը երգչախմբի դիրիժոր, 2015-ից՝ Կոմիտասի թանգարան-ինստ-ի փոխտնօրեն: 1993–2008-ին դասավանդել է Երևանի Ա. Տեր-Ղևոնդյանի անվ., 2010-ից՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. (նաև երգչախմբի ղեկ.) երաժշտ. դպրոցներում և ԵՊԿ-ում, 2001–04-ին՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. քոլեջում: Հիմնադրել է մի շարք մանկ., նաև խառը երգչախմբեր: Ա-ի նախաձեռնությամբ Շուշիում իրականացվել են Ա. Բաբաևի «Արծվաբերդ» (2013), Ա. Տերտերյանի «Կրակե օղակ» (2014), Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» (2017) օպերաների բեմադրությունները, 2015-ին՝ Ջ. Վերդիի «Ռեքվիեմ»-ի կատարումը Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում: «Սպեղանի» երգչախմբի հետ հյուրախաղերով շրջագայել է Արցախում, ՌԴ-ում, Լիբանանում, Իտալիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Լիտվայում, մասնակցել միջազգ. փառատոների, արժանացել պարգևների:

Հայաստանի երաժշտ. ընկերության «Կոմիտաս» (2008), ՀՀ ՄՆ ոսկե (2010), ՀՀ «Մովսես Խորենացի» (2011), ԼՂՀ «Երախտագիտություն» (2014) մեդալներ:

ԱՎՇԱՐՅԱՆ ընտանիք, 1. Միքայել Միքայելի Ա. (ծ. 1930, Դետրոյտ), ջութակահար: Ընտանիքի ավագ որդին՝ Կարապետ և Մարգարիտ Ա-ների եղբայրը: Ավարտել է Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցը (1951, դասատու՝ Ի. Կալայան), Միչիգանի համալսարանը (1958, ղեկ.՝ Ջ. Ռոսսի): Առաջին մենահամերգը՝ 1947-ին: Դասավանդել է Օկլահոմայի համալսարանում (պրոֆ.), եղել եռյակի ջութակահարը: Նվագել է նաև Ջուլիարդի, Միչիգանի համալսարանների, Անն Արբորի, Դետրոյտի, Օկլահոմայի, Ջոփլինի սիմֆ. նվագախմբերում, եղել Նորմայի երիտասարդ. սիմֆ. նվագախմբի դիրիժորը: 2. Կարապետ (Շառլ) Ա. (ծ. 1940, Անն Արբոր), ջութակահար: Միքայել և Մարգարիտ Ա-ների եղբայրը: Աշակերտել է Միքայել Ա-ին (Օկլահոմայի համալսարան), ապա՝ Ի. Կալայանին (Ֆիլադելֆիա): Հանդես է եկել մենահամերգներով, նաև նվագախմբերի հետ: Եղել է Ֆիլադելֆիայի և Քլիվլենդի սիմֆ. նվագախմբերի լավագույն անդամներից կազմված նվագախմբի ջութակահար, համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Իսպանիայում, Իտալիայում, ԽՍՀՄ-ում: 3. Մարգարիտ Ա. (ծ. 1934, Դետրոյտ), երգչուհի: Միքայել և Կարապետ Ա-ների քույրը: Երաժշտ. կրթությունն ստացել է Նյու Յորքում, ձայնը մշակել է Բ. Գերեյսի ղեկավարությամբ: Հանդես է եկել և՛ օպեր., և՛ Բրոդվեյի երաժշտ. ներկայացումներում: Ամերիկ. ազգ. երգչախմբի հետ շրջագայել է Ամերիկայում: Ա-ները հանդես են եկել նաև համատեղ համերգներով:

Միքայել Ավշարյան

Կարապետ Ավշարյան

Մարգարիտ Ավշարյան

Գրկ. *Բրուտեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհահռչակ ընծաւղները, Ե., 1996:*

Ա.ՏՈՆԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտություն՝ առանց տոնայնության: Առաջացել է XX դ-ի սկզբին, մեծ տեղ գրավել Նոր վիեննական դպրոցի կոմպոզիտորների (Ա. Շյոնբերգ, Ա. Բերգ, Ա. Վեբեռն) ստեղծագործություններում: Ա. ե-յան հիմնական հատկանիշը ձայնակարգհարմոնիկ փոխհարաբերությունների, հետևաբար նաև տոնիկայի բացակայությունն է: 1922-ին Ա. Շյոնբերգը ստեղծել է «միայն միմյանց հետ հարաբերակցված 12 տոներով» կառուցվածքի եղանակը (հետագայում կոչվել է դոդեկաֆոնիա), ըստ որի՝ կարելի էր Ա. ե. ենթարկել որոշակի կանոնի:

Ա. ե-յան գեղագիտ. սկզբունքները սերտորեն պայմանավորված են էքսպրեսիոնիզմով, նրա մեթոդը, ոճը, ձևն ու տարրերն օգտագործում են տարբեր ուղղությունների կոմպոզիտորներ: XX դ-ի մի շարք կոմպոզիտորներ (Ա. Հոնեգեր, Կ. Օրֆ, Պ. Հինդեմիթ, Ս. Ս. Պրոկոֆև, Դ. Դ. Շոստակովիչ և ուր.) իրենց ստեղծագործության մեջ պահել են տոնայնության սկզբունքները:

Ժամանակակից երաժշտության մեջ տոնայնության և ոչ տոնայնության հակադրությունը սովորաբար օգտագործում են որևէ առանձնահատուկ մտահղացում իրագործելու համար: Ա. ե-յան տարրեր

Դմիտրի Ատովմյան

Լևոն Ատովմյան

Մարի Արագյան

Թերեզա Արագյան

են օգտագործել նաև Ա. Բաբաջանյանը, Տ. Մանսուրյանը, Ա. Տերտերյանը, Վ. Բաբայանը, Ա. Զոհրաբյանը, Մ. Իսրայելյանը և ուր.:

ԱՏՈՎՄՅԱՆ Դմիտրի Լևոնի (02.02.1952, Մոսկվա–15.12.2004, Մոսկվա), կոմպոզիտոր, դիրիժոր, գործիքավորող: Լևոն ***Ատովմյանի*** որդին: Ավարտել է Մոսկվայի զինվ. երաժշտ. դպրոցը (1970), ՄՊԿ զինվ. դիրիժորների ֆակ-ը: 1973–74-ին՝ «Մոսկվացիներ» անսամբլի, 1974–76-ին՝ Մոսկվայի մանրապատումների թատրոնի երաժշտ. ղեկ., մի շարք ներկայացումների երաժշտության և գործիքավորման հեղինակ: 1976–85-ին՝ Պետհամերգի «Բարեկամների մեղեդիներ» ծրագրի երաժշտ. ղեկ., 1977–90-ին՝ «Մելոդիա» անսամբլի և ձայնագրման ստուդիայի, 1979-ին՝ «Ռեցիտալ» անսամբլի վերադաշնակող, 1985–89-ին՝ ՌԽՖՍՀ պետ. էստրադ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Վերադաշնակել է Մոսկվայի «Իմ սիրելի մայրաքաղաք» (1996) օրհներգը, գրել է կինոերաժշտություն [«Ռոմանս սիրահարների մասին», 1974, «Ա՛խ, վողևիլ, վողևիլ», 1979, «Դ'Արտանյանը և երեք հրացանակիրները» (Մ. Ի. Դունաևսկու հետ), 1979, «Կառնավալ», 1981, «Բարի գիշեր», 1992, «Բուրժուայի ծննդյան օրը» (սերիալ), 1999, «Նվիրիր ինձ լուսնի լույս», 2000, ևն]:

ԱՏՈՎՄՅԱՆ Լևոն Թադևոսի [12(25).1901, Աշխաբադ–16.01.1973, Մոսկվա], կոմպոզիտոր, հաս. գործիչ: Դմիտրի ***Ատովմյանի*** հայրը: 1936-ից՝ Թուրքմ. ԽՍՀ արվ-ի գործերի վարչության ղեկ., 1939–1948-ին՝ ԽՍՀՄ երաժշտ. ֆոնդի (Մոսկվա) տնօրեն և փոխնախագահ, 1953–1963-ին՝ Կինեմատոգրաֆիայի կոմիտեի նվագախմբի տնօրեն և գեղ. ղեկ.: Գրել է նվագախմբ., դաշնամուր. գործեր, երգեր, թատրոնի երաժշտություն, գործիքավորել մի շարք կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Ն. Յ. Մյասկովսկու 25-րդ սիմֆոնիան (op. 69) նվիրված է Ա-ին:

ԱՏՏԱԿԿԱ (իտալ.՝ attaccare – հարձակվել), 1. երգեցողության մեջ՝ ձայն. ապարատի անցումը շնչական դրությունից երգչականի կամ խոսքայինի: Ձայնալարերի առավելագույն լարվածության դեպքում օդը դժվարությամբ է մղվում (կոշտ Ա.) և արտաբերվում է թույլ ձայն, իսկ նվազ լարվածության (փափուկ Ա.) ժամանակ՝ ավելի ուժգին ձայն: 2. Դաշնամուր նվագելիս ձեռքերի անսպասելի լարումը՝ առոգանությունը շեշտելու համար: 3. Յուցում նոտաներում՝ երաժշտ. ստեղծագործության մեջ հաջորդ բաժնին անմիջապես անցնելու մասին:

ԱՐԱԲԵՍԿ (ֆրանս.՝ arabesque, իտալ.՝ arabesco – արաբական), նրբագեղ, ճկուն, զարդուղոր, մեղեդային երաժշտ. նախշուն փոքր պիեսներ (նաև երաժշտ. մանր երկերի ժող-ները): Ա-ի առաջին օրինակը գրել է Ռ. Շումանը (1839): Դաշնամուրի համար Ա-ներ են գրել Ն. Գադեն, Ա.Կ. Լյադովը, Ա.Ս. Արենսկին, Կ. Դեբյուսին, Դ. Բալասանյանը և ուր.:

Ըստ Նիկողոս Թահմիզյանի

ԱՐԱԳՅԱՆ Մարի Գաբրիելի (ծ. թ. անհտ–1955), երգչուհի (սոպրանո): 1922-ին Իզմիրից գաղթել է ԱՄՆ, 1951-ին հաստատվել Դետրոյտում: 1938–55-ին համերգ. ծրագրով հանդես է եկել ամերիկ. լավագույն բեմահարթակներում: Երգացանկում՝ Յ. Ս. Բախի, Գ. Ֆ. Հենդելի, Դ. Սկառլատտիի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շուբերտի, Յ. Շտրաուսի, Կ. Սեն-Սանսի, նաև Կոմիտասի, Գ. Սյունու, Ա. Հովհաննեսի, Գ. Ղազարոսյանի, Հ. Բերբերյանի, Ա. Սպենդիարյանի, Գ. Ալեմշահի, Հ. Ստեփանյանի, Ա. Սաթյանի և ուր. գործերից:

Գրել է երաժշտ. երկեր, եղել Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի» դիրիժոր, Պ. Չիմարայի երգերի (ըստ Հ. Հայնեի, Ա. Նեգրիի, Ի. Լիի բանաստեղծությունների) առաջին կատարողը՝ հեղինակի նվագակցությամբ:

ԱՐԱՋՅԱՆ Թերեզա Միքայելի (22.02.1921, Երևան–2011, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1955): Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցը (1937), ԵՊԿ պատմատես. բաժինը (1944, ղեկ.՝ Զ. Վարդանյանի դասարան), ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1953, ղեկ.՝ Գ. Տիգրանով): Դասավանդել է Երևանի Ա. Սպենդիարյանի (1939–40) և Պ. Ի. Չայկովսկու անվ. (1941–43) երաժշտ. դպրոցներում, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (1943–61), 1948-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1995-ից):

Հեղինակ է «Էդվարդ Միրզոյան» (1963), «Խաչատուր Ավետիսյան. կյանքն ու գործունեությունը» (1973), «Գրիգոր Հախին-

յան. կոմպոզիտորի մասին» (1974), «Արամ Սաթունց» (1971) գրքերի, կազմել է «Ուրախ ձայներ» (1979) ժող-ը ևն:

ԱՐԱՋՈՎԱ Իզաբելլա Կոնստանտինի (ծ. 25.09.1936, Դոնի Ռոստով՝ Ռուսաստան), կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1958), ԵՊԿ (1967, Է. Միրզոյանի դասարան) և Լենինգրադի կոնսերվատորիան (1963, Օ. Ա. Եվլախովի դասարան): Դասավանդել է ՀՊՄԻ-ում և Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում:

Գրել է «Սոնատին» (1960)՝ դաշնամուրի, «Վարիացիաներ» (1961)՝ մենանվագ թավջութակի, «Ֆանտազիա» (1964)՝ 2 դաշնամուրի, «Վեց ալեգորիա» (1969) վոկալ շարքը՝ ձայնի և դաշնամուրի (ըստ Վ. Գրիգորյանի), «Տրիպտիխ» (1971, ըստ Ս. Կապուտիկյանի)՝ երգչախմբի և նվագախմբի համար, լար. կվարտետներ (1965, 1991), «Պոլիֆոնիկ խմբերգ» (1966, Ս. Կապուտիկյանի խոսքերով), նվագախմբ. կոնցերտ (1967), «Էլեգիա» (1969), «Երեք ճապոնական բանաստեղծություններ» (1979), 3 սոնատ (1983–1985), «Հինգ հետադարձ հայացք» (1983), «Պերպետում մոբիլե» (1985), «The World is Just a Dream»(«Աշխարհը պարզապես երազ է», 1988, ըստ ճապոն. միջնադար. պոեզիայի), «Աղոթք» (1996) և այլ գործեր:

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍԱՐԱՀ, հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճ, 2003-ից՝ Ա. Խաչատրյանի անվ.:

«Արամ Խաչատրյան» համերգասրահ

Համերգասրահը ԵՕՌԹ շենքի (1936, ճարտ.՝ Ա. Թամանյան) մի մասն է, որը նախատեսված է 1300 հանդիսականի համար: 1981–83-ին դահլիճը հիմնովին նորոգվել է. լրացվել է բեմի մեխ. սարքավորումը, փոխվել են նախասրահի, ճեմասրահի հարդարման շինանյութերը (գրանիտ, մարմար ևն): Դահլիճում բացի համերգներից, կազմակերպվում են այլ միջոցառումներ, նախասրահում՝ ցուցահանդեսներ ևն: Դահլիճի

«Արամ Խաչատրյան» համերգասրահի դահլիճը

ներսը հարդարված է հայկ. զարդանախշերով խորաքանդակներով: Գլխ. մուտքի առջև տեղադրված է Ա. Խաչատրյանի արձանը (1999, քանդ.՝ Յ. Պետրոսյան):

ԱՐԱՄՈ (Գևորգյան Արամ Ավրորայի, ծ. 24.01.1968, Երևան), երգիչ, թմբկահար, դերասան: Էմմա ***Պետրոսյանի*** ամուսինը: ՀՀ վաստ. արտիստ (2009): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. դպրոցի հարված. գործիքների, ԵԳԹԻ դերասան. (1989, ղեկ.՝ Խ. Աբրահամյան) բաժինները: 1978-ից՝ «Արևիկ» մանկ. վոկալ-գործիք. անսամբլի թմբկահար, 1986–92-ին՝ Հայաստանի էստրադ. նվագախմբի երգիչ և թմբկահար, 1994–97-ին՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի երգիչ (նաև հիմնադիրներից): Համագործակցել է երգիչներ Ի. Կորզոնի, Ս. Պավլիաշվիլու, Ա. Մալինինի, Ի. Պոնորովսկայայի, կոմպոզիտորներ Ռ. Ամիրխանյանի, Կ. Օրբելյանի, Ա. Սաթյանի, Ս. Շաքարյանի, Ս. Լուսիկյանի, Ա. Սմբատյանի, երաժիշտ-կատարողներ Վ. Հայրապետյանի, Ա. Հյուսնունցի, Լ. Մալխասյանի և ուր. հետ: Թողարկել է «Սև և սպիտակ» (2000), «Վերադարձ դեպի տուն» (2010, երկուսն էլ՝ Է. Պետրոսյանի հետ), «Երևանի» (2003) ձայնասկավառակները, նկարահանել տեսահոլովակներ: Խաղացել է թատեր. ներկայացումներում (Ժ. Անանյանի «Կեսգիշերին», Վ. Ե. Պետրոսյանի «Մեր մանկության մանգոն», Է. Պետրոսյանի «Սև դառը շոկոլադ» ևն), նկարահանվել կինոյում («Մեր բակը-2», 1997, «Որոգայթ», 2017, երկուսն էլ՝ հեռուստաֆիլմ, «Սպիտակ գառան երազը», 2013, գեղ. ֆիլմ, ևն):

Իզաբելլա Արազովա

Արամոն ելույթի պահին

Երգիչների միջազգ. մրցույթի («Հանդիսատեսի համակրանք» մրց. և 2-րդ տեղ, 1989, Յուրմալա) դափնեկիր:

ԱՐԱԲԱՏՅԱՆ Վահագն Գեորգիի [8(21).08.1902, Թիֆլիս–25.09.1983, Մոսկվա], կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիայի ջութակի (1916–21, Մ. Վասիլևի դասարան), Օդեսայի կոնսերվատորիայի տես-կոմպոզիցիայի (1938, Պ. Սոլչանովի, Ա. Պավլենկոյի, Ն. Վիլինսկու դասարաններ) բաժինները: 1963-ից ապրել է Մոսկվայում: Գրել է «Գագիկ» (1945), «Չարիկն ու Քաջարիկը» (1957), «Կարմիր գաթա», «Սեդրակի օրը» (երկուսն էլ՝ 1954) մանկ. օպերաները, «Հարճը» (1947) բալետը, «Լենին» (1940) ռեքվիեմը՝ նվագախմբի, երգչախմբի և ձայնի, «Հայաստան», «Հոկտեմբեր» (երկուսն էլ՝ 1937), «Հայրենիք» (1946) սիմֆոնիաները՝ նվագախմբի, պիեսներ (1920–59)՝ դաշնամուրի համար, «Շահնամե» (1938), «Հայաստանը Հայրենական պատերազմում» (1942), «Հարձակում» (1945) և այլ սիմֆ. պոեմներ, «Հայկական կապրիչչո» (1938), «Առատություն» (1950) կանտատը, «Էլեգիա» (1948, Կոմիտասի հիշատակին), ռոմաններ, երգեր, խմբերգեր, մշակել է հայկ., ուկր. ժող. և այլ երգեր:

ԱՐԱԲԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԵՐԱԺՇՏԱԽՄԲԵՐ, Արարատյան հայրապետ. թեմի առաջնորդ. փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ հիմնադրվել են մի շարք անսամբլներ և երգչախմբեր:

«Ծաղկազարդ», վոկալ անսամբլ, հիմնադրվել է 2007-ին (գեղ. ղեկ.՝ Լ. Գրիգորյան), կազմը՝ Ռ. Հովսեփյան, Լ. Գևորգյան, Ա. Ավետիքյան, Մ. Հովհաննիսյան, Բ. Ամարյան, Հ. Ղազարյան, դաշնակահարուհի և երգեհոնահարուհի Է. Սամվելյան: Երգացանկում՝ եվրոպացի և ռուս կոմպոզիտորների, նաև Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Ա. Տիգրանյանի, Ա. Բաբաջանյանի և ուր. ստեղծագործություններից, հայ ազգ., հոգևոր երգեր: Համերգներով շրջագայել է ՌԴ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ավստրալիայում, Գերմանիայում, Հորդանանում, Լեհաստանում և այլ երկրներում: ՀՀ-ում մասնակցել է համերգների, փառատոների, կիրակի և տոն. օրերին՝ Սբ Սարգիս եկեղեցում մատուցվող Սբ Պատարագին:

«Ծաղկազարդ» վոկալ անսամբլը

ՀՀ ՄՆ Կոմիտասի անվ. մեդալ (2017):

«Մանկունք», մանկ. երգչախումբ, կազմավորվել է 2010-ին Սբ Սարգիս եկեղեցում՝ տղամարդկանց՝ նախկին համանուն երգչախմբի հիման վրա (ղեկ.՝ Ն. Հայրապետյան): Խմբի 20 անդամներից ոմանք նվագում են նաև երաժշտ. գործիքներ (ջութակ, դաշնամուր, թավջութակ), իրենց կատարումներով լրացնում են երգեցողությունը: Երգացանկում՝ Կոմիտասի, նաև ժող. երգերի մշակումներ ու հոգևոր երգեր:

«Արարատ», Սբ Սարգիս եկեղեցու երիտասարդաց միության երգչախումբ, ստեղծվել է 2013-ին (գեղ. ղեկ.՝ Գ. Հարությունյան)՝ Սբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Պետրոս ավագ քահանա Մալյանի նախաձեռնությամբ: Բացի եկեղեցու ծիս. արարողակարգերից (Սբ Պատարագ, ժամերգություններ)՝ երգչախումբը հանդես է գալիս նաև համերգներով. երգացանկում՝ հայ հոգևոր և աշխարհիկ խմբերգեր, ռուս և եվրոպացի դաս. կոմպոզիտորների երկեր: 2016-ին Գյումրիում մասնակցել է «Վերածնունդ» 8-րդ միջազգ. մրցույթ-փառատոնին (2-րդ կարգի մրց., Գ. Հարությունյանը՝ «Լավագույն խմբավար» կոչում):

«Նշխարք», վոկալ անսամբլ, ստեղծվել է 2015-ին (խմբավար՝ Հ. Օհանյան)՝ Պետրոս ավագ քահանա Մալյանի նախաձեռնությամբ: Երգացանկում՝ Վերածննդի դարաշրջանից մինչև ժամանակակից կոմպոզիտորների հոգևոր և աշխարհիկ խմբերգեր: 2016-ին մասնակցել է Գյումրիի «Վերածնունդ» 8-րդ միջազգ. (Մեծ մրց.), Տավուշի թեմի «Հաղարծին» ամենամյա հոգևոր փառատոներին:

«Գանձեր», երգչախումբ, ստեղծվել է 2015-ին (գեղ. ղեկ.՝ սարկավագ Վ. Նաջարյան, խմբավար՝ Վ. Սմբիկոնյան)՝ Սբ Աստվածածին կաթողիկե և Սբ Աննա եկեղեցիներում հոգևոր երգերի ուսուցման շրջանակում: Կազմավորել է նաև պրոֆեսիոնալ քառաձայն 15-հոգանոց երգչախումբ (2018):

Լարային քառյակ, կազմավորվել է 2016-ին՝ Պետրոս ավագ քահանա Մալյանի նախաձեռնությամբ (ղեկ.՝ Հ. Մակիյան): Նվագացանկում՝ դաս. և ժամանակակից կոմպոզիտորների, Կոմիտասի գործերից, հայ հոգևոր երաժշտության անտիպ նմուշների փոխադրումներ ու ժող. երգերի մշակումներ:

«Նշխարք» վոկալ անսամբլը

«Խնկենի», Երևանի Նոր Նորք համայնքի Սբ Մարիամ Աստվածածին եկեղեցու երիտասարդաց միության 15-հոգանոց երգչախումբը, ձևավորվել է 2017-ին՝ Նշան քահանա Ալավերդյանի նախաձեռնությամբ (խմբավար՝ Լ. Սաֆարյան):

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԵՐԳԵՐ, արևածագին նվիրված երգեր: Հիմնական բովանդակային առանցքը լույսի, խորհրդաբանորեն՝ աստված. էության փառաբանումն է: Նախաքրիստ. շրջանում կապվել են արևի պաշտամունքի հետ և, հավանաբար, առնչվել մեհենա. երգային ավանդույթին:

Հայ եկեղեցու 9 ժամերգությունից մեկը նվիրված է արևագալին: Ըստ Մ. արքեպիսկոպոս Օրմանյանի՝ VII դ-ում, Հայոց կաթողիկոս Եզր Ա Փառաժնակերտցու կարգադրությամբ, Առավոտյան ժամերգության վերջին հատվածը զատելով, հատուկ կազմվել է Արևագալի ժամերգություն:

Արևագալի ժամերգությունը մեկնաբանել են Ստեփանոս Սյունեցին (VIII դ.) և Խոսրով Անձևացին (X դ.): Մինչև XII դ. Արևագալի ժամերգությունը ներառել է ժամին պատշաճ սաղմոնները: XII դ-ում Ներսես Շնորհալին, անդրադառնալով այս ժամերգությանը, արևագալի համար ստեղծել է 4 նոր երգ՝ «Յարեւելից մինչ ի մուտս», «Ճրագնաւորք Աստուծոյ», «Լոյս, արարիչ լուսոյ» և «Ճանապարհ եւ ճշմարտութիւն»՝ յուրաքանչյուրին կցելով 1-ական հորդորակ: Ըստ առկա տեսակետի՝ այս ստեղծագործությունները միջնադար. հոգևոր երգարվ-ում երգի ժանրի ձևավորման առաջին դրսևորումներից են և կազմավորվել են հոգևոր երգի ժանրերի, նաև հեթանոս. պաշտամունք. արվ-ի հիման վրա: Մասնավորապես՝ ակնարկվում է միջնադարում տարածված հայկ. արևորդիներ աղանդի պաշտամունք., ծիս. երգարվ-ի հետ ունեցած կապը:

Գիշերային և Արևագալի ժամերգությունները փոխարինել են միմյանց, մեկի համար սահմանված օրերին մյուսը չի կատարվել: Այժմ արևագալը ժամերգվում է միայն Մեծ պահքի շրջանում:

Գրկ. *Աբեղյան Մ., Երկ., հ. 3, Ե., 1968: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Արեւագալի եւ Հակրամի երգեր, կազմ.՝ Լ. Չիլինկիրեան, Անթիլիաս, 1979: Պողարեան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990:*

Միհեր Նավոյան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է Թիֆլիսում 1907-ին՝ Վ. Քեշիշյանի նախաձեռնությամբ: Նվագախումբը (թառ, քամանչա, շվի, դուդուկ, ջութակ, ֆլեյտա ևն) բաղկացած էր 30 հոգուց: Երկացանկում՝ հայկ., վրաց., պարսկ., քրդ. և այլ եղանակներ (նվագախմբի համար՝ Վ. Քեշիշյանի մշակումները): Առաջին համերգները Թիֆլիսում արլ. երաժշտության բազմաձայն կատարման լուրջ փորձերից էին: Նվագախումբը 1907-ի ամռանը ելույթներ է ունեցել նաև Ալեքսանդրապոլում: Նյութ. խնդիրների պատճառով դադարել է գործելուց:

Ըստ Մաթևոս Մուրադյանի

Աննա Արևշատյան

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Աննա Սենի (ծ. 07.11.1951, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (2001): Պրոֆ. (2007): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): ՀԿՄ անդամ (1982-ից, երաժշտագիտ. մասնաճյուղի ղեկ.՝ 2018-ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի տեսության (1970, դասատու՝ Ա. Սարյան), ԵՊԿ երաժշտագիտության (1975, Ռ. Ստեփանյանի դասարան) բաժինները: 1976-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ում (2002-ից՝ երաժշտ. բաժնի առաջատար գիտաշխատող, 1992–2005-ին՝ Հոգևոր երաժշտության թեմատիկ խմբի ղեկ.), 1993–2001-ին՝ Հայկ. հանրագիտարանի գիտխմբ., 2000-ից, միաժամանակ՝ Հայ հոգևոր երաժշտության պետ. կենտրոնի գիտաշխատող: 1990-ից դասավանդում է ԵՊԿ-ում:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ միջնադար. երաժշտության պատմությանը, տեսությանը, գեղագիտությանը, կոմիտասագիտությանն ու հայ արդի

Ա. Արևշատյանի «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ» գրքի (2003) շապիկը

Հարություն Արզումանյան

կոմպոզիտորների ստեղծագործությանը: Կազմել է գիտ. հոդվածների ժող-ներ, «Մանրուսում» տարեգիրքը: Հեղինակ է շուրջ 100 գիտ. հոդվածների և ուսումնասիրությունների, որոնք տպագրվել են Ռուսաստանում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Լիբանանում: Բյուզանդագիտ. (2006), Հայագիտ. (2016) ուսումնասիրությունների միջազգ. ընկերակցությունների, Վիեննայի Սինոդիայի ուսումնասիրման միջազգ. ընկերության (2012), Կոմիտասի թանգարան-ինստ-ի գիտ. (2015), «Երաժշտական Հայաստան» (1998-ից), «Հայ կոմպոզիտոր» (2017-ից) ամսագրերի խմբ. խորհուրդների անդամ: ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2013):

Երկ. *«Սաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Ե., 2003: Հոգևոր երգեր, 2-րդ հրտ., Ե., 2011: Ձայնեղանակների ոսմունքը միջնադարյան Հայաստանում, Ե., 2013: Գրիգոր Գապաասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը, Ե., 2013: Անիի երաժշտական մշակույթը, Ե., 2014: Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ, Ե., 2015: Григор Гапасакалян: Книга о музыке, пер. с грабара, введение и прим. А. С. Аревшатян, Е., 2017.*

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ Հարություն Սևակի (ծ. 01.11.1971, Երևան), դիրիժոր, մանկավարժ: Բանասիր. գիտ. թեկնածու (1999): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի ջութակի (1987, դասատուներ՝ Կ. Ջանփոլադյան, Լ. Մկրտչյան), ԵՊԿ օպեր. և սիմֆ. դիրիժորության (1999, Ա. Քաթանյանի, Է. Խաչատրյանի դասարաններ) բաժինները, ԵՊՀ բանասիր. ֆակ-ը (1993) և ՀՀ ԳԱԱ գրկ-յան ինստ-ի ասպիրանտուրան (1996), կատարելագործվել է Մյունխենի երաժշտ. բարձրագույն դպրոցում (2002–03): Դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.):

1999-ից՝ ԵՕԲԹ դիրիժոր. ղեկավարել է Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Տրավիատա» (երկուսն էլ՝ 2000), «Աիդա» (2010), Ս. Վ. Ռախմանինովի «Ալեկո» (2005), Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (2007), «Ալմաստ» (2009), Ա. Խաչատրյանի «Դիմակահանդես», Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս» (երկուսն էլ՝ 2017), Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ» (2019) և այլ օպեր. ներկայացումներ: Եղել է Յ. Սիբելիուսի «Սագա» սիմֆ. պոեմի, Ռ. Շտրաուսի «Վարդերի ասպետը» օպերայի որոշ հատվածների, Գ. Ֆորեի «Պելեաս և Մելիզանդա» սյուիտի և այլ գործերի առաջին մեկնաբանը Հայաստանում: Ա-ին բնորոշ են ստեղծագործության պարտիտուրի մանրակրկիտ իմացությունը, կոմպոզիտոր. տեքստին հարազատ մեկնաբանությունը, զուսպ դիրիժոր. մանուալ տեխնիկան: Սիմֆ. և կամեր. երկացանկով հանդես է եկել Գերմանիայում, Իտալիայում, Բուլղարիայում, Լատվիայում, Շվեյցարիայում, Լեհաստանում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Վրաստանում, Խորվաթիայում, Թայլանդում և այլուր: 2018-ից՝ ԵԵԿՄ գլխ. դիրիժոր: «Նոր անուններ», «Վերադարձի», «Ազգային պատկերասրահ» միջազգ. փառատոների դիրիժորը:

Դիրիժորների համահայկ. մրցույթի հաղթող և Գլխ. մրց. (1999, Երևան), Գ. Ֆիտելբերգի անվ. դիրիժորների VII միջազգ. մրցույթի 3-րդ մրց. (2003, Կատովիցե, Լեհաստան), Վ. Ժորդանիայի անվ. դիրիժորների V և այլ մրցույթների դափնեկիր (2005), ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» մեդալ:

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ Նունե Սուրենի (ծ. 18.01.1966, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (1996): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (դաշնամուր, դասատու՝ Շ. Բաբայան), ԵՊԿ դաշնամուրի (1988, Մ. Մխիթարյանի դասարան), կոմպոզիցիայի (1991, Է. Միրզոյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (1993, ղեկ.՝ Է. Միրզոյան): 1984–85-ին դասավանդել է Չարենցավանի, 1984–90-ին, միաժամանակ՝ Քասախի երաժշտ. դպրոցներում, 2007–13-ին՝ Երևանի էստրադ. և ջազ. արվ-ի պետ. քոլեջում, 1990-ից՝ ԵՊԿ կոնցերտմայստեր և Հայաստանի ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբի մենակատար, 1994–96-ին՝ ՀՀ ռադիոյի երաժշտ. հաղորդումների գլխ. խմբ.: Համերգներով հանդես է եկել Անգլիայում, Ֆրանսիայում, Թեհրանում:

Գրել է սիմֆոնիա (1992)՝ լար. նվագախմբի համար, լար. կվարտետ (1987), դաշնամուրի (1991), ջութակի (1997), քամանչայի (2010) կոնցերտներ, տրիո (1990)՝ դաշնամուրի, ջութակի և թավջութակի, սեքստետ (1994)՝ ֆլեյտայի, հոբոյի, ֆագոտի, ջութակի, ալտի և թավջութակի, «Հուշերի փունջ» (2003)՝ լար. նվագախմբի և դաշնամուրի, «Դիալոգներ» (2004)՝ լար. նվագախմբի, ֆլեյտայի և հոբոյի համար, խմբերգեր, ռոմանսներ (ըստ Նահապետ Քուչակի, 1996, ևն)՝ ձայնի և դաշնամուրի համար, մանկ. եր-

գեր («Զարմանալի կատուն», «Մանկության երկիր», երկուսն էլ՝ 1996), ֆանտազիա (2016):

Մասնակցել է «Mohawk Music Festival» (2006, 2007, 2010, Օրեգոն՝ ԱՄՆ), «Fajr International Music Festival» (2007, 2011, Իրան) փառատոներին:

Մանկ. երգի մրցույթի դափնեկիր (1996), «Զինվորական երգ» հանրապետ. մրցույթի «Վազգեն Սարգսյան» մրց. (1997):

ԱՐՋՈՒՆԻ ՆՈՐՋՈՒԼԱՅԵՑԻ, Ղուլ Արզունի (մոտ 1650–մոտ 1750), աշուղ, Նոր Ջուղայի աշուղ. դպրոցի հիմնադիր (Էգազի հետ): Ա. Ն-ուց պահպանվել է խրատ., երգիծ., կրոնաբարոյական 9 երգ: Ուշագրավ են «Խրատ», «Գրիչ», «Սուտ բարեկամ», «Խաղ ի վերա Կալկաթա» երգերը՝ հիմնականում Նոր Ջուղայի բարբառով: Կրոնաբարոյական խաղերի լեզուն մոտ է նոր գրական հայ-ին:

Գրկ. *Սահակյան Հ., Հայ աշուղներ. 17–18 դդ., Ե., 1961:*

ԱՐԻԱ (իտալ.՝ aria), մեներգ, կառուցվածքով ավարտուն դրվագ օպերայում, օպերետում (XIX դ-ի կեսից), օրատորիայում և կանտատում. կատարում է երգիչը՝ սիմֆ. նվագախմբի (երգչախմբի) հետ:

Եզրույթը հայտնի է XV դ-ից: Օպերայի դրամատուրգիական զարգացման մեջ գրեթե նույնն է, ինչ մենախոսությունը՝ դրամայում: Ա. հերոսի ձգտումները և հոգեկան ապրումները բացահայտող գլխ. միջոցն է, աչքի է ընկնում երգայնությամբ: Դաս. օպերայում, որպես կանոն, նրան նախորդում է ասերգը: Ա-ի տեսակներն են ***արիետտան, արիոզոն, կավատինան***: Երբեմն «Ա.» են անվանում երգեցիկ բնույթի գործիք. պիեսները:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԱՐԻԵՏՏԱ (իտալ.՝ arietta), ոչ մեծ արիա: Սովորաբար աչքի է ընկնում պարզ հորինվածքով, հանդարտ տեմպով և մեղեդու երգայնությամբ: Առավել բնորոշ է ֆրանս. կոմիկ. օպերային:

ԱՐԻՈԶՈ (իտալ.՝ arioso), մեներգ. դրվագ օպերայում (օրատորիայում, կանտատում): Սովորաբար արիայից փոքր է՝ գրված ազատ հորինվածքով, հաճախ՝ ասերգին բնորոշ ձևով (Արշակի՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Ալմաստի՝ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» Ա-ները):

ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ Էմին (Էմիլ) Ասպետի (19.11.1936, Երևան–19.04.1996, Մոսկվա), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1977): Ավարտել է ԵՊԿ (1961) և ասպիրանտուրան (1964, երկուսն էլ ղեկ.՝ Գ. Եղիազարյան): 1957–64-ին դասավանդել է Երևանի Ա. Տեր-Ղևոնդյանի անվ. երաժշտ. դպրոցում, 1969-ից՝ ՀՊՄԻ-ում: 1973–86-ին՝ ՀԿՄ, 1974-ից՝ ԽՍՀՄ ԿՄ վարչության քարտուղար:

Նոնան Արզումանյան

Գրել է «Պրոմեթևս» (բեմ.՝ 1967, Երևան) բալետը, 5 սիմֆոնիա (1962–65), 2 սիմֆոնիետ (1969, 1983), ալտի (1963), գալարափողի (1982), ջութակի (1987) կոնցերտներ, «Կոմունարների պատը Փարիզում» (1972), «Երգ եռաձայն» (1973), «Զոն Հայաստանին» (1977, ա կապելլա) խմբերգ. պոեմները, «Սահակ Պարթևի 5 շարականները» (1972) վոկալ շարքը, դաշնամուր. («Ֆանտաստիկական վարիացիաներ», 1965, կապրիչչո, 1967, սոնատ, 1971, ևն), կամեր. («Պոլիֆոնիկ վարիացիաներ», 1960՝ լար. կվարտետի, սյուիտ, 1955՝ լար. կվինտետի, «Պոեմ», 1959՝ դաշնամուր. կվինտետի համար, ևն), գործիք. և այլ գործեր, երգեր, կինոերաժշտություն («Լալվարի որսկանը»՝ ըստ Վ. Միրաքյանի «Լալվարի որսը» պոեմի, 1966, Հայֆիլմ): ՀամԼԿԵՄ մրց. (1968):

Էմին Արիստակեսյան

ՀԽՍՀ «Պատվո նշան» շքանշան (1986):

Երկ. *Вторая симфония: Для большого симфонического оркестра, М., 1980; Альбом фортепианных пьес для детей и юношества, М., 1987; Концерт для скрипки с оркестром, Е., 1999.*

Գրկ. *Ананян А., Эмин Аристакесян, Е., 1984.*

ԱՐԾՐՈՒՆԻ Շահան (ծ. 8.06.1943, Ստամբուլ), դաշնակահար, կոմպոզիտոր: Ավարտել է Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցը (1968): Հեղինակ է երաժշտ. բազմաթիվ նախաձեռնությունների, որոնցով նպաստել է ազգ. երաժշտ. մշակույթի զարգացմանն ու տարածմանը: Համերգներով շրջագայել է ԱՄՆ, Եվրոպայի մի շարք քաղաքներում, նաև Մոսկվայում ու Երևանում: Ա. Խաչատրյանի գրեթե բոլոր դաշնամուր. երկերի լավագույն մեկնաբաններից է (Ա. Խաչատրյանի անվ. մրցանակաբաշխության 1-ին մրց., 1969). 2 ձայնասկավառակով ներկայացրել է կոմպոզիտորի «Մանկական ալբոմի» 2 պրակները:

Շահան Արծրունի

Հայ դաշնամուր. գրկ-յան ընտրանին լրացրել է «Հայ երաժշտության անթոլոգիա» վերնագրով 4 ձայնասկավառակով:

Հայ երաժշտությանը նվիրված մի շարք գիտաժողովներ է կազմակերպել Կոլումբիայի, Հվ. Կալիֆոռնիայի նահանգներում: Նյու Յորքում լույս է տեսել Ա–ու «Ոսկե–փորիկ» (հայ., անգլ.) աշխ–ը, որտեղ զետեղված են հայ հոգևոր երաժշտության բազմաթիվ բարձրարժեք նմուշներ:

2017–ին բարեգործ. համերգներով հանդես է եկել ՀՀ–ում և ԼՂՀ–ում:

Վահան Արծրունի

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2015):

ԱՐԾՐՈՒՆԻ Վահան Արտաշեսի (ծ. 05.12.1965, Երևան), երգիչ, կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի բժշկ. ինստ–ը և օրդինատուրան (1991), ԵՊԿ (1994, Գ. Գասպարյանի դասարան): Ստեղծագործում է երաժշտության մի շարք ոլորտներում՝ կամերայինից մինչև ռոք և ֆյուժն, էլեկտրոնայինից՝ սիմֆ. և հոգևոր երաժշտություն: Հավատարիմ մնալով հայ երաժշտության ավանդույթներին, համադրելով ազգ., ակադեմ. և ժամանակակից երաժշտության արտահայտչամիջոցները՝ մշակել է մշակույթի ուրույն տեսակ և արժեհամակարգ: Գրել է «Կոմիտաս. Տասը Հայտնություն» (ըստ Կոմիտասի բանաստեղծությունների) վոկալ–գործիք. շարքը, երգաշարեր՝ ըստ Ռ. Դավոյանի, սեփ. բանաստեղծությունների, «Ասորական այբուբեն» (մանկ., ասոր., 26 երգ), գործիք. ստեղծագործություններ ռոք խմբի, նաև ռոք խմբի, երգչախմբի, կամեր. և սիմֆ. նվագախմբերի համար, մշակումներից են՝ «Մաշտոց. Սրբազան Մարգարիտներ» (Մեսրոպ Մաշտոցի 11 շարականները)՝ ձայնի, մանկ. երգչախմբի, կամեր. նվագախմբի և փողային գործիքների, «Sacred Episodes» (Արևելքի Ասոր. եկեղեցու Սբ Պատարագ)՝ ձայնի, սիմֆ. նվագախմբի և մեծ երգչախմբի, «Sacred Rituals» (Արևելքի Ասոր. եկեղեցու սրբազան ծեսեր)՝ ձայնի, սիմֆ. նվագախմբի, մեծ երգչախմբի և ազգ. երաժշտ. գործիքների համար:

Վերգինե Արծրունի

Հեղինակ է նաև մնջախաղի, թատեր. 5 ներկայացումների, վավերագր. 17, գեղ. խաղարկ. 2, անիմացիոն 6 ֆիլմերի, բալետի և ակտուալ արվ–ի բազմաթիվ ակցիաների և ցուցադրությունների համար երաժշտության: Թողարկել է 14 ձայնասկավառակ–ալբոմ և տեսասկավառակ: Հրատարակել է «Փշուր մը» ժող–ը (2004, Կոմիտասի բանաստեղծությունները): Ա–ի «Cruzaid» ձայնասկավառակը ընդգրկվել է «Musea records»–ի «Un Vojage En Progressif» լավագույն նախագծերի տասնյակում (2003, Ֆրանսիա):

«Լիստոպադ»–2009» VII միջազգ. կինոփառատոնի (2005, Մինսկ), ՀԹԳՄ «Արտավազդ» (2016) մրց–ներ:

ԱՐԾՐՈՒՆԻ Վերգինե Բագրատի (14.07.1884, Թիֆլիս–07.03.1966, Լենինգրադ), երգչուհի (դրամատիկ. սոպրանո), մանկավարժ: Երաժշտ. կրթությունն ստացել է Ս. Պետերբուրգում: 1911–14–ին կատարելագործվել է Փարիզում և Ցյուրիխում: 1914–ին Ցյուրիխի օպեր. թատրոնում կատարել է Բրունհիլդայի դերերգը (Ռ. Վագների «Վալկիրիա»): 1908–11–ին համերգներով շրջագայել է Ս. Պետերբուրգում, Սարատովում, Սամարայում, 1914–1916–ին՝ Փարիզում, Ցյուրիխում: 1916–22–ին Պետրոգրադի, Սարատովի, Թիֆլիսի օպեր. թատրոններում հանդես է եկել Տոսկայի (Ջ. Պուչչինիի «Տոսկա»), Ռաքելի (Ֆ. Հալևիի «Կարդինալի դուստրը»), Աիդայի (Ջ. Վերդիի «Աիդա») և այլ դերերգերով: 1922–ից մենահամերգներով նպաստել է հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածմանը, տպագրել է վոկալ արվ–ի տեսությանը վերաբերող հոդվածներ: 1942–46–ին դասավանդել է ԵՊԿ–ում և երաժշտ. ուսումնարանում, 1948–54–ին՝ Լենինգրադի թատեր. ինստ–ում:

«ԱՐՁԱԳԱՆՔ», 1. երաժշտ. խումբ: Հիմնադրվել է 1969–ին Երևանում՝ Արտավազդ Բայաթյանի և Եղիշե Պետրոսյանի նախաձեռնությամբ (նաև ղեկ–ներ): Խմբի կազմում՝ Ա. Բայաթյան (վոկալ), Ե. Պետրոսյան (կիթառ), Հ. Ասատրյան (ստեղնաշար. գործիքներ), Վ. Հայրապետյան (հարված. գործիքներ), Վ. Օհանյան (բաս–կիթառ): Երգերի երաժշտության և տեքստի հեղինակները հիմնականում խմբի անդամներն են: Երգացանկում՝ «Ծնունդդ շնորհավոր» (հայ., ֆրանս., իսպ.), «Իմ ընկեր», «Անձրև», «Քեզ համար», «Կենցաղային երգ», «Մենախոսություն», «Աննկատ անցան» են: Թողարկել է տեսահոլովակ (1995): «Ոսկե կամերտոն» համամիութ. մրցույթի 1–ին մրց. (1982):

2. Ձայնագրման ստուդիա: Հիմնադրել են Ա. Բայաթյանը և Ե. Պետրոսյանը 1990–ին Երևանում: Ձայնագրում է դաս., ժող., հոգևոր, խմբերգ. ստեղծագործություններ, կինոերաժշտություն, ալբոմներ, կազմակերպում համերգներ, շնորհանդեսներ, թողարկում ձայնասկավառակներ, նկարա–

հանում տեսահոլովակներ ևն: Ընդգրկված է CMC Records ձայնագրման ստուդիաների միության մեջ, համագործակցում է Naxos World ընկերության հետ, 1999-ից՝ Rounder Group ֆիրմայի ներկայացուցիչը ՀՀ-ում:

Ստուդիան նաև պրոդյուսեր. կենտրոն է, որի նախաձեռնությամբ հրավիրվում են երգիչներ արտերկրից, կազմակերպվում մրցույթներ («Բոհեմ» ևն):

2000-04-ին Ե. Պետրոսյանի մտահղացմամբ իրագործվել է «Արձագանք շոու» ամենամյա նախագիծը:

«Արձագանք պրո»-ն նույնպես «Ա.»-ի օղակներից է, որն առաջարկում է հեռահաղորդակցության, ձայն., լուս. և իրազեկման սարքավորումներ: Կատարում է նաև մոնտաժման, նախագծման աշխ-ներ:

«Ա.» ռադիոկայանը հիմնադրվել է 1997-ին: Հեռարձակում է Լիբանանի «Սևան» և Բրազիլիայի «Արմենիա Էթեռ-

«Արձագանք» խումբը կլույթի պահին

նա» ռադիոկայանների հաղորդումներից: 2014-ից համագործակցում է «21tv»-ի հետ: «Լավագույն ժամանցային ռադիոկայան» մրց. (2003): 2005-ին հիմնադրվել է նաև «Արձագանք ինտերնեյշնըլ» հայ-ֆրանս. ընկերակցությունը. հայկ. մշակույթը ներկայացնում է Եվրոպայում, եվրոպականը (առավելապես՝ ֆրանս.)՝ ՀՀ-ում: Կազմակերպում է համերգներ, փառատոներ, զբաղվում CD-ների թողարկմամբ և վաճառքով համաշխ. շուկայում: Նրա շնորհիվ հայ արտիստները մենահամերգներով հանդես են գալիս Եվրոպայում, մասնակցում միջազգ. նախագծերի:

«ԱՐՁԵՉ», հրատարակչություն: Գործել է 1999-2010-ին Երևանում, հրատարակիչ՝ Հրաչյա *Մելիքյան*: Հրատարակել է երաժշտ. գրկ-յուն. տպագրել է Ա. Տերտերյանի «Լարային կվարտետներ № 1, 2» (2004), Մ. Իսրայելյանի «Երեք սոնատ»՝ թավջութակի և դաշնամուրի համար (2005), Ա. Զոհրաբյանի սոնատը՝ դաշնամուրի համար (2005), Ա. Բաբաջանյանի «Երգեր» (2006), Ռ. Ամիրխանյանի «Երաժշտություն ռուս պոետների բանաստեղծություններով» (ռուս., 2006), Ա. Լուսինյանի «Սիմֆոնիա № 2» (Simfonia-Requiem, 2006) նոտային, «Ղազարոս Սարյանը և նրա ժամանակը» (2001, ժող., կազմ.՝ Ա. Սարյան), «Ավանդույթ և նորարարություն. Ավետ Տերտերյան-75» (2005), «Գեորգի Գրիգորի Տիգրանով-100» (2008, ժող., կազմ.՝ Ն. Ավետիսյան), «Ժողովրդական ստեղծագործություն և կոմպոզիտորական արվեստ» (2006, երկուսն էլ՝ միջազգ. գիտաժողովի նյութեր) երաժշտագիտ. և այլ երկեր:

ԱՐՄԱՂԱՆՅԱՆ Նարե Միհերի (ծ. 21.01.1989, Կիրովական), դաշնակահարուհի: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (2004, դասատու՝ Ա. Գուրգենով), Վիեննայի երաժշտության և կատարող. արվ-ների (2010, Հ. Մեջիմորեկի, Ա. Կույումջյանի դասարաններ), Հաննովերի երաժշտության, թատրոնի և հաղորդակցության (2012, Ա. Վարդիի դասարան), Էլիզաբեթ թագուհու (2016, Լ. Լորթիի դասարան, Վիեննա) համալսարանները: Վարպետության դասեր է առել Տ. Զելիկմանից, Վ. Մերժանովից, Բ. Գյոցկեից, Լ. Ֆլեյշերից, Ա. Հյուիթից և ուր.: Հյուրախաղերով շրջագայել է Ավստրիայում, Բելգիայում, Դանիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում և այլուր, հանդես եկել Վիեննայի «Մյուզիքֆեռայն», «Կոնցերտ հաուզ», Դյուսելդորֆի «Տոնհալլեն», Շտուտգարտի «Լիդերհալլեն» և այլ համերգասրահներում: Նվագել է Հայաստանի ֆիլհարմոնիկ և սիմֆ., Կոպենհագենի ֆիլհարմոնիկ, Բոխումի, Մալայզիայի, Հոնկոնգի սիմֆ., Ստոկհոլմի թագավոր. և այլ նվագախմբերի, համագործակցել է դիրիժորներ Պ. Ռինգբորգի, Մ. Սանդելինգի, Զ. Գաֆֆիգանի, Կ. Կարաբիցի, Լ. Ֆոսթերի, Հ. Գրիֆիցի և ուր. հետ: Երկացանկում՝ Ա. Խաչատրյանի, Պ. Ի. Չայկովսկու, Ս. Վ. Ռախմանինովի, Ս. Ս. Պրոկոֆևի, Ռ. Շումանի, Յ. Ս. Բախի, Ֆ. Լիստի, Լ. վան Բեթհովենի, Մ. Ա. Բալակիրևի, Ա. Ն. Սկրյաբինի և ուր. երկերից: Վարպետության դասընթացներ է վարել ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Շվեդիայում, Մալայզիայում, ՀՀ-ում, ԼՂՀ-ում:

Ֆ. Շոպենի անվ. դաշնակահարների (1-ին մրց., 1997, Հարավսլավիա), Վալենսիայի (2-րդ մրց., 2007), Մոնրեալի (1-ին մրց., 2008) միջազգ., «Dr. Josef Dichter»

«Արձէշ»-ի հրատարակած գրքերից

Նարե Արմաղանյան

Նորայր Արման

(1-ին մրց., 2005, Վիեննա), «Sparkasse Wörtersee» (1-ին մրց., 2009, Կլագենֆուրտ՝ Ավստրիա) և այլ մրցույթների դափնեկիր, «Միցարտի մրցանակ» (2012, Դորտմունդ), ՀՀ ՄՆ «Կոմիտաս» մեդալ (2016):

ԱՐՄԱՆ Նորայր, Նուրհան (ծ. 1948, Կ. Պոլիս), ջութակահար: 13 տարեկանից հանդես է եկել նվագախմբերի հետ և մենահամերգներով, արժանացել մրց-ների: 1970–82-ին ապրել է ԱՄՆ-ում. հանդես է եկել Կալիֆոռնիայի կամեր. նվագախմբում: 1977–78-ին, որպես կոնցերտմայստեր և մենակատար, մասնակցել է Նյու Յորքի Բրոգբորդի փառատոնին (կատարել է Յ. Ս. Բախի լա-մինոր կոնցերտը): Նվագել է նաև Ֆլորիդայի սիմֆ., Լոս Անջելեսի Հայ սիմֆ. երաժշտության ընկերակցության նվագախմբերում: 1982-ին տեղափոխվել է Կանադա:

Եղել է «North Bay» նվագախմբի երաժշտ. տնօրենը, «Northern Symphony Festival» և «North Bay» (երկուսն էլ՝ 1984) փառատոների հիմնադիրը, 1985-ից՝ թագավոր. կոնսերվատորիայի դիրիժորության բաժնի տեսուչ, 1986-ից՝ «Նյու Բրաունսվիք» սիմֆ. և կամեր. նվագախմբերի երաժշտ. տնօրեն: 1990-ից ղեկավարել է սիմֆ. նվագախմբեր Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Լիտվայում, Ռուսաստանում և այլուր: 1992, 1993 և 1995-ին Երևանում ղեկավարել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի մի շարք համերգներ. երկացանկում՝ Վ. Ա. Միցարտի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Մենդելսոնի, Յ. Ս. Բախի, Ռ. Շումանի, Բ. Բրիտտենի, Լ. Ճգնավորյանի երկերից: Դիրիժոր. արվ-ին բնորոշ է դասականին հարող կուռ տրամաբան. մեկնաբանությունը:



Ռոզի Արմեն

ԱՐՄԵՆ (Հովհաննիսյան) Ռոզի Խուրշուդի (ծ. 01.05.1943, Փարիզ), երգչուհի: Առաջին անգամ ելույթ է ունեցել 1961-ին՝ հեռուստատեսությամբ, ձայնագրել առաջին ձայնասկավառակը: 1963-ին համերգներով շրջագայել է Մերձ. Արևելքում. Իրանում ծանոթացել և մտերմացել է թագուհի Ֆարահ Փահլևիի հետ, մասնակցել նրա թագադրմանը:

1965-ին առաջին անգամ համերգով այցելել է Հայաստան, ապա նրան հրավիրել են Մոսկվա, որտեղ հանդես է եկել 12 համերգով, 1996-ին մասնակցել Ա. Բաբաջանյանին նվիրված համերգին: 2002-ին ծննդյան տարեդարձը նշել է Մոսկվայում. մենահամերգին ներկա են եղել նաև Կ. Ա. Օրբելյանը և Ի. Կորզոնը: Երգացանկում՝ նաև հայկ. դաս. ու ժող. երգեր: 1968-ին շրջագայել է Եվրոպայում, մասնակցել մրցանակաբաշխությունների: 1972-ին հյուրախաղերով այցելել է ԱՄՆ: Նույն թվականին ձայնագրել է հայ. երգերի «Երևան» («Yerevan») ալբոմը: 1979-ին ելույթներ է ունեցել Միշել Լեգրանի հետ, ձայնագրել «Windmills of My Heart» հանրահայտ երգը: 2005-ին Երևանում մասնակցել է «1970-ականների Երևանը» համերգ. ծրագրին: Թողարկել է 17 ձայնասկավառակ, 12 ալբոմ (այդ թվում՝ Խուլիո Իգլեսիասի հետ՝ «Gwendolyne»):

ՀՀ ՄՆ «Կոմիտաս» (2013), ոսկե (2013) մեդալներ, «Պատվո նշան» շքանշան (2015):

ԱՐՄԵՆ ՔԵՅ (Մանուկյան Արմենուհի Ռոբերտի, 02.11.1915, Չիկագո–03.10.2011, Նյու Յորք), երգչուհի, դերասանուհի: Առաջին ելույթը՝ 1935-ին: Որպես մեներգչուհի՝

Արմեն Քեյը ելույթի պահին

հանդես է եկել Նաշվիլի WSM ռադիոկայանով, մասնակցել մի շարք ռադիոշոուների («Դանի Թոմաս», «Քարնեյշն Միլք» ևն), վարել «Դադարեցրեք երաժշտությունը» հաղորդումը: 1956-ից հեռուստատեսությամբ ներկայացրել է «Արմեն Քեյ» շոուն, կատարել ժող. երգեր:

Նկարահանվել է «Սեր և ամուսնություն» բազմասերիանոց հեռուստաֆիլմում: 1961-ից համագործակցել է «Մետրո Գոլդուին Մայեր» կինոստուդիայի հետ, նկարահանվել 16 ֆիլմ-մյուզիքլում («Տեղներդ վեր ընկեք», «Էյ, եկ թվիսթ պարենք», «Ջիմի Բ-ն և Անդրեն» ևն): Թատրոնում հանդես է եկել «Փոքրիկ աշխարհ, ողջույն» և «Արյունարբու Մերին» ներկայացումներում: Մենահամերգներով շրջագայել է ԱՄՆ բազմաթիվ քաղաքներում:

ԱՐՄԵՆՅԱՆ Գևորգ Արտաշեսի (05.01.1920, Թիֆլիս–10.04.2005, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): ՀՀ ժող. արտիստ (1985): ՀԿՄ ան-

դամ (1950)։ Ավարտել է Թիֆլիսի (1941) և Երևանի (1948) երաժշտ. ուսումնարանները, ԵՊԿ (1953, Գ. Եղիազարյանի դասարան), Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1958, ղեկ.՝ Բ. Ա. Արապով)։ Մասնակցել է ՀՄՊ-ին (1941–45)։

1948–51-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1958-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1983-ից)։ 1968–70-ին՝ ԵՕԹ տնօրեն և գեղ. ղեկ.։

Գրել է «Լուր դա լուր» (1949) սիմֆ. պոեմը, կոնցերտ (1954)՝ ֆլեյտայի և սիմֆ. նվագախմբի համար, «Մարո», «Խաչատուր Աբովյան» (1958, բեմ.՝ 1960), «Խորտակում» (1968, բեմ.՝ 1968, Երևան, 1972՝ Պերմ), «Սիրո կոզի» (2001) օպերաները, «Ասք Հայաստանի մասին» (1951), «Կոմունիստներ» (1976), «Վարպետի սիրտը» (1982) կանտատները, «Քաջ Նազար» (1987) սիմֆ. հեքիաթ-բալետը, «Եղիշե Չարենց» (1957), «Վարդգես Սուրենյանցի պատկերասրահում» (1963), «Քաջ Նազար» (1981) սիմֆ. սյուիտները, «Ղողանջներ» (1981), «Նվիրում» (1984) վոկալ շարքերը, գործիք. պիեսներ (այդ թվում՝ ժող. գործիքների), ռոմանսներ, երգեր («Ռու իմ հպարտ հայ աղջիկ» ևն), խմբերգեր (առանց նվագակցության), կինոերաժշտություն («Նվագախմբի տղաները», 1960, «Տերտերին ուխտը», 1964, երկուսն էլ՝ Հայֆիլմ)։

Հեղինակ է «Գործիքագիտության հիմունքներ» (2012) դասագրքի։

Գրկ. *Գրիգորյան Ք., Գևորգ Արմենյան. Կյանքը և գործունեությունը, Ե., 1981։*

ԱՐՄԵՆՅԱՆ Բաֆֆի (Պարույր, ծ. 04.06.1942, Կահիրե), դաշնակահար, դիրիժոր, խմբավար, կոմպոզիտոր։ Ավարտել է Վիեննայի երաժշտ. ակադ-ը (1962), կատարելագործվել դիրիժոր Հ. Սվարովսկու, խմբավար Ռ. Շմիդտի և դաշնակահար Ա. Ուլի ղեկավարությամբ։ 1969-ից ապրում է Կանադայում։ Նույն թվականից՝ «Ատլանտիկ սիմֆոնիկ», ապա՝ «Կլիգեն» օպեր. ընկերության նվագախմբերի դիրիժոր, 1972–93-ին՝ Քիչներ-Վաթերլոոյի, 1973–76-ին՝ նաև Ստաֆորդի սիմֆ. նվագախմբերի գեղ. ղեկ. և դիրիժոր։ Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Յ. Բրամսի, Ռ. Շտրաուսի, Գ. Մահլերի և ուր. գործերից։

Ղեկավարել է Ռ. Վագների «Վալկիրիա», «Պարսիֆալ», Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», Ռ. Շտրաուսի «Սալոմե» և այլ օպերաներ, նաև Ժ. Օֆֆենբախի «Գեղեցկուհի Հեղինեն» և Յ. Շտրաուսի մի շարք օպերետներ։ 1981-ին Միչիգանի օպեր. թատրոնի խմբով Դետրոյտում ներկայացրել է Ա. Տիգրանյանի «Անուշ» (ռեժ.՝ Ժ. Փափազյան) օպերան։

Գևորգ Արմենյան

Գրել է 3 նախերգանք (ըստ Սոֆոկլեսի «Անտիգոնե», Արիստոֆանեսի «Թռչուններ», Եվրիպիդեսի «Ագամեմնոն» ողբերգությունների), սյուիտ՝ 2 դաշնամուրի համար, «Պասսիոն» կանտատը և այլ գործեր։ 1994-ին Երևանում ղեկավարել է Գ. Մահլերի 1-ին սիմֆոնիան, Ռ. Շտրաուսի թավջութակի կոնցերտը, 1995-ին՝ Պ. Ի. Չայկովսկու 4-րդ և Լ. վան Բեթհովենի 5-րդ սիմֆոնիաները, Յ. Բրամսի «Ակադեմիական նախերգանքը», Ռ. Շտրաուսի «Իրիկնային չորս երգը» (մեներգչուհի՝ Հ. Հացագործյան), Լ. վան Բեթհովենի դաշնամուրի 4-րդ կոնցերտը (մենակատար՝ Ա. Ներսիսյան)։ Մի շարք ստեղծագործություններ (Պ. Ի. Չայկովսկու 4-րդ, Լ. վան Բեթհովենի 5-րդ սիմֆոնիաները ևն) Ա-ի ղեկավարությամբ ինչել են նորովի։

Բաֆֆի Արմենյան

Հ. ֆոն Կարայանի անվ. մրցույթի 2-րդ մրց. (1966, 1967), Կանադայի շքանշան (1986)։

Գրկ. *Բուրեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996։*

«ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ», առաջին հայկ. օպերան։ Երաժշտությունը գրել է Տիգրան *Չուխաճյանը* Կ. Պոլսում 1868-ին՝ թատեր. գործիչ, դրամատուրգ Թ. Թերզյանի լիբրետտոյի հիման վրա, որը, որպես գրական երկ, հրատարակվել է Կ. Պոլսում (1871)։ Տ. Չուխաճյանը, մարմնավորելով լիբրետտոյի քնար. հիմնական հատկանիշը և բացահայտելով դրամատիկ. ու հերոս. շեղումները, ստեղծել է եվրոպ. «մեծ օպերայի» լայնաշունչ երկ։ Լիբրետտոյի հիմքը Հայոց արքա Արշակ Երկրորդի և թագուհի Օլիմպիայի, իշխանուհի Փառանձեմի, իշխաններ Գնելի և Տիրիթի, նաև Հայաստանի, Պարսկաստանի և Բյուզանդիայի մասին Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու հաղորդած վիպախառն տեղեկություններն են։ Գործողությունը կատարվում է Արմավիրում 365–367-ին։ Օպերան բեմադրվել է 1869-ին (3 ներկայացում)։ Նախերգանքն առաջին անգամ ինչել է 1868-ի վերջերին՝ իտալ. քառյակի կատարմամբ՝ Տ. Չուխաճյանի ղեկավարությամբ (Կ. Պոլիս, Զմյուռնիա, Վենետիկ, Նեապոլ, Վիեննա՝ 1873, Փարիզ՝ 1891)։

«Արշակ Երկրորդ» օպերայի ներկայացման ազդագիրը (1945)

1900-ին (Տ. Չուխաճյանի մահից հետո) Հարություն ***Մինանյանը*** նախերգանքը վերածել է կլավիրի, սեփ. միջոցներով տպագրել 700 օրինակ, վաճառել և հա-

«Արշակ Երկրորդ» օպերայի ձեռագիր պարտիտուրը

սույթով 1907-ին Իզմիրի գերեզմանատանը կանգնեցրել կոմպոզիտորի մահարձանը:

1942-ին Գևորգ ***Տիգրանովը*** հայտնաբերել է օպերայի պարտիտուրը և հանձնել ԵՕԲԹ-ին: Օպերան բեմադրելու համար Արմեն ***Գուլակյանը*** գրել է նոր լիբրետտո՝ ընդգծելով հայրենասիրությունը (երաժշտ. խմբ-ներ՝ Ա. Շահվերդյան, Լ. Խոջա-Էյ-

Տեսարան «Արշակ Երկրորդ» օպերայի բեմադրությունից (1945, ռեժ.՝ Ա. Գուլակյան)

նաթյան): Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1945-ին (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1946)՝ Մ՝իքայել ***Թավրիզյանի*** ղեկավարությամբ. ներկայացմանը մասնակցել են՝ Օլիմպիա՝ Հ. Դանիելյան, Փառանձեմ՝ Տ. Սազանդարյան, Արշակ Երկրորդ՝ Շ. Տալյան և Պ. Լիսիցյան, Տիրիթ՝ Ա. Պետրոսյան:

1956-ին՝ Մոսկվայում հայ գրկ-յան և արվ-ի տասնօրյակին, «Արշակ Երկրոր-

դը» 2-րդ անգամ ներկայացվել է Մեծ թատրոնում՝ Ս. Չարեքյանի ղեկավարությամբ (ռեժ.՝ Վ. Վարդանյան, Օլիմպիա՝ Գ. Գասպարյան, Արշակ Երկրորդ՝ Մ. Երկաթ,

Տեսարան «Արշակ Երկրորդ» օպերայի բեմադրությունից (1984, ռեժ.՝ Տ. Լևոնյան)

Ներսես՝ Ն. Հովհաննիսյան): Վերջին գործողության մեջ ավելացել է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» պար. ինտերմեդիան:

«Արշակ Երկրորդը» 3-րդ անգամ բեմադրվել է 1971-ին. դիրիժոր՝ Օ. Դուրյան, նկարիչ՝ Ռ. Նալբանդյան, Արշակ Երկրորդ՝ Մ. Երկաթ, Օլիմպիա՝ Գ. Գասպարյան, Փառանձեմ՝ Գ. Գալաչյան, Ներսես՝ Ն. Հովհաննիսյան, Վասակ՝ Հ. Ալավերդյան: 1984-ին օպերան բեմադրել է ռեժ. Տ. Լևոնյանը. դիրիժոր՝ Հ. Չեքիջյան, նկարիչ՝ Ե. Սաֆրոնով: 2001-ին Սան Ֆրանցիսկոյում տեղի է ունեցել «Արշակ

Տեսարան «Արշակ Երկրորդ» օպերայի բեմադրությունից (2007, ռեժ.՝ Գ. Գրիգորյան)

Երկրորդ»-ի համաշխ. պրեմիերան՝ Լ. Ճգնավորյանի ղեկավարությամբ (6 ներկայացում). մասնակցել են Հ. Պապյանը, Տ. և Հ. Մարտիրոսյանները, նաև ամերիկացի, ֆրանսիացի, վրացի, բուլղար, իրանցի և այլ երգիչներ (երգել են հայ.):

Վերջին՝ 2007-ի բեմադրության ռեժ-ը Գ. Գրիգորյանն է. դիրիժոր՝ Կ. Դուրգար-

յան, խմբավար՝ Կ. Սարգսյան, Արշակ Երկրորդ՝ Գ. Հակոբյան, Օլիմպիա՝ Ա. Մխիթարյան, Փառանձեմ՝ Ք. Սահակյան, Տիրիթ՝ Գ. Գրիգորյան:

Գրկ. *Գյոդակյան Գ., Տիգրան Չուխաջյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Ե., 1971: Թահմիզեան Ն., Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Փասատենա, 1999: Ասատրյան Ա., «Արշակ Բ»: Հայոց անդրանիկ օպերան, Ե., 2006: Նույնի, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011: Тигранов Г., Армянский музыкальный театр. Очерки и материалы, т. 1, Е., 1956; Геодакян Г., Пути формирования армянской музыкальной классики, Е., 2006; Tahmizian N., The Life & Works of Dikran Tchouhadjian, Pasadena, CA, 2001.*

Աննա Ասատրյան

ԱՐՇԱԿՅԱՆ ՔՈՒՅՐԵՐ, երգչուհիներ: Անուշ Աշոտի Ա. (ծ. 24.12.1980, Երևան): ՀՀ վաստ. արտիստ (2014): Ավարտել է Երևանի Ա. Ալամազյանի անվ. երաժշտ. դպրոցը, Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (2001), ԵՊԿ ջազ-վոկալ բաժինը (2005): 1999-ին հանդես է եկել Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Ինգա Աշոտի Ա. (ծ. 12.03.1982, Երևան): ՀՀ վաստ. արտիստ (2014): Ավարտել է Երևանի Ա. Ալամազյանի անվ. երաժշտ. դպրոցը, Ա. Բաբաջանյանի անվ. ուսումնարանի ջութակի բաժինը (2002), ԵՊԿ (2005): Սովորելու տարիներին նվագել է Գ. Ածեմյանի անվ. ջութակահարների անսամբլում:

2000-ից աշխատել են Հայաստանի երգի պետ. թատրոնում, հանդես եկել համերգներով, այդ թվում՝ Լոս Անջելեսի «Ալեքս» թատրոնում (2002): 2003-ից ելույթներ են ունենում միասին (դուետ)՝ իրենց նվագախմբով: Երգացանկում՝ հայկ. ժող., էստրադ., նաև Արթուր Գրիգորյանի և Անուշ Ա-ի հեղինակած երգերից: Երգի թատրոնի հետ համերգներով շրջագայել են ՀՀ-ում, մենահամերգներով՝ ԱՄՆ-ում, Արգենտինայում, նաև Թեհրանում, Տորոնտոյում, Փարիզում և այլուր: 2011-ին նկարահանել են «Ճանապարհ» համերգ-տեսաֆիլմը: 2009-ին «Նոր պար» երգով Հայաստանը ներկայացրել են «Եվրատեսիլ» երգի մրցույթում (Մոսկվա): Թողարկել են ալբոմներ («Մենք ենք, այս սարերը», 2003, «Թամզարա», 2006, «Մենք ենք, մեր սարերը», 2009), սինգլներ («Թամզարա», 2006, «Խլպանե», 2006, «Հարսանեկան», 2007, «Ձմե-Ձմե», 2009, «Գութան», 2009, «You will not be Alone», 2009, «Մեր Երևան», 2011), նկարահանել տեսահոլովակներ («Թամզարա», 2004, «Իմ անունը Հայաստան է», 2011, «Ապրելու ապրիլ», 2015, ևն):

Արշակյան քույրերը ելույթի պահին

ՀՀ նախագահի մրց. (2004), «Լավագույն կանացի փոփ-ռետրո ալբոմ» (2004, Հոլիվուդ), «Տարվա լավագույն դուետ» (2009), «Տարվա ամենաոճային տեսահոլովակ» (2011, «Իմ անունը Հայաստան է») և այլ մրց-ներ:

ԱՐՊԵՋՋՈ (իտալ.՝ arpeggio, <arpeggiare – տավիղ նվագել), ակորդի կատարման եղանակ, երբ ակորդ. տոները հնչում են ոչ միաժամանակ, այլ արագընթաց հաջորդականությամբ, հիմնականում՝ վարից վեր: Նշվում է Ա-ով (arpeggio, կրճատ՝ arp.) կամ ակորդի ձախ կողմում՝ ուղղահայաց ալիքաձև գծով: Գործածվում է տավիղի, կլավեսինի, դաշնամուրի և երաժշտ. այլ գործիքների համար:

Հազվադեպ լինում են նաև այսպիսի նշանակումներ՝

Արպեջջոյի օրինակ

Ալ. Սպենդիարյան

Նոտագրության մեջ Ա. երբեմն փոխարինում են արպեջջատո (իտալ.՝ arpeggiato) նշանով:

Անի Մուշեղյան

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, հիմնադրվել է 1958-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի պատմության և տեսության բաժանմունքի (գործել է 1948-ից, վարիչներ՝ Ք. Քուշնարյան, Մ. Սարյան, Վ. Հարությունյան, Ռ. Զարյան) հիման վրա:

Ուսումնասիրում է հին և միջին դարերի, նորագույն շրջանի, ժամանակակից հայ ճարտարապետությունը, երաժշտությունը,

Մ. Ռոխկյան, Ա. Արևշատյան, Լ. Երնջակյան, Ա. Պետրոսյան (նստած՝ ձախից), Տ. Շախկուլյան, Լ. Արտեմյան, Ա. Ասատրյան (բաժնի վարիչ), Հ. Մանուկյան, Գ. Ամիրաղյան (կանգնած)

կերպարվ-ը, թատրոնը, կինոն, հավաքում, ճշգրտում Հայաստանի պատմության ու մշակույթի հուշարձանների տվյալները, մասնակցում պեղումների, հրատարակում աշխ-ներ, հայ դասականների ժառանգությունը, մատենաշարեր ևն:

Ինստ-ում գործում են ճարտարապետության, կերպարվ-ի, թատրոնի, երաժշտության և այլ բաժիններ: Երաժշտության բաժինը ղեկավարել են Մ. Մուրադյանը (1958–1965), Գ. Գյոդակյանը (1966–2015),

Ինստիտուտի Ա. Քոչարյանի անվ. ձայնադարանում. ձախից՝ Հ. Պիկիչյան, Զ. Թագակչյան (վարիչ)

Ա. Ասատրյանը (2016-ից): 1966-ից (1981–83-ին ընդհատվել է) գործում է ժող. երաժշտության բաժինը. ղեկ-ներ՝ Մ. Մանուկյան (1981), Մ. Մուրադյան (1983–84), Կ. Խուդաբաշյան (1984–2005), Մ. Նավոյան (2005-ից): Բաժինը հայ երաժշտագիտության միակ գիտ. կենտրոնն է, որտեղ ուսումնասիրում են հայ երաժշտության պատմության և տեսության հիմնախնդիրները, պատրաստում հայ արվ-ի դասականների ստեղծագործությունների, հուշագրությունների, նամականիների ակադեմ. հրատարակությունները:

Ինստ-ում ուսումնասիրում են հայ դաս. և հոգևոր երաժշտության հարուստ ժառանգությունը, նաև ժամանակակից երաժշտարվ-ը:

Հայ երաժշտագիտության մեջ նշանակալի ձեռքբերումներից են մասնավորապես Ք. Քուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» (ռուս., 1958), Գ. Տիգրանովի «Հայ երաժշտական թատրոն» (ռուս., 1956–1988, հ. 1–4, ՀԽՍՀ Պետ. մրց.) աշխ-ները:

Հայ հին և միջնադար., դաս. երաժշտության ժանրերի զարգացման պատմությանը, երաժշտ. առնչություններին, ժող. պրոֆեսիոնալ երաժշտության ուսումնասիրությանը, նաև Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Կոմիտասին, նոր և նորագույն ժամանակների հայ նշանավոր կոմպոզիտորներին են նվիրված Գ. Տիգրանովի, Ա. Քոչարյանի, Մ. Սուրադյանի, Ն. Թահմիզյանի, Ռ. Աթայանի, Գ. Գյոդակյանի, Կ. Խուդաբաշյանի, Մ. Տեր-Սիմոնյանի, Մ. Ռոխկյանի, Ա. Գրիգորյանի, Ռ. Մազմանյանի, Լ. Երնջակյանի, Ա. Արևշատյանի, Ա. Ասատրյանի, Մ. Նավոյանի, Ն. Սարգսյանի, Տ. Շախկուլյանի, Գ. Ամիրաղյանի, Լ. Արտեմյանի և ուր. մենագրությունները: Ընդհանուր առմամբ լուսաբանվել է հայ երաժշտության ու երաժշտ. կյանքի որոշ շրջափուլերի, նաև նրանց ամբողջ. պատմությունը: Կարևոր տեղ են գրավում տարեգրությանը վերաբերող աշխ-ները:

Ինստ-ի կարևորագույն նպատակներից է ազգ. երաժշտ. մշակույթի դասականների ստեղծագործ. ժառանգության հրատարակումը: Հրատարակել է Ալեքսանդր Սպենդիարյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի (հ. 1–11, 1943–85), Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ի ակադեմ. հրատարակությունը (հ. 1–14, 1960–2006). 1–6 հատորները (ընդգրկում են աշխարհիկ գործերը) լույս են տեսել Ռ. Աթայանի, 7–14-րդը (հոգևոր ստեղծագործությունները ու ազգագր. ժառանգությունը)՝ Գ. Գյոդակյանի ջանքերով:

Պետ. պատվերի շրջանակներում լույս է տեսել «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարը (հ. 1–13, 2008–15, գլխ. խմբ.՝ Կ. Խուդաբաշյան):

Ինստ-ում տասնամյակներ շարունակ հավաքել, համակարգել, վերծանել և ուսումնասիրել են հայ ժող. երաժշտության նմուշները, քարտավորել ու անձնագրավորել դրանք, ձեռնամուխ եղել ժող. երաժշտության համակարգչ. բանկի ստեղծմանը:

Ինստ-ի ասպիրանտուրան մեծ ավանդ ունի գիտ. կադրեր պատրաստելու ոլորտում:

Ինստ-ում գործում են արվեստագիտության գիտ. աստիճաններ շնորհող մասնագիտ. խորհուրդը (1995-ից, նախագահ՝ Հ. Հովհաննիսյան) և թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովը (ղեկ.՝ Յ. Խաչիկյան, ապա՝ Ա. Ասատրյան):

Ինստ-ի ձայնադարանը (վարիչ՝ Զ. Թագակչյան) բացառիկ և արժեքավոր երաժշտաբանահյուս. սկզբնաղբյուր է: 1920-ական թթ-ից գրանցված գիտարշավների նյութերն ընդգրկում են ՀՀ բոլոր մարզերում, նաև Վրաստանում՝ Ջավախքի (Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ախալցխայի, Ծալկայի շրջաններ), Բոլնիսի, Մառնեուլի, Թելավի շրջաններում ու Թբիլիսիում, Աբխազ. ԻՀ, ՌԴ Ռոստովի մարզում և Կրասնոդարի երկրամասի հայաշատ, Ադրբեջանի հայաբնակ (Կիրովաբադ, Շամխոր) վայրերում գրառված երաժշտաբանահյուս. հարուստ հավաքածուներ: Ձայնադարանում կան ՀՀ ներգաղթած բանասացներից գրառած արևմտահայ երաժշտարվ-ի 3000-ից ավելի նմուշներ: Հնչյուն. վավերագրերի հավաքածուն ներառում է գրեթե ողջ պատմ. Հայաստանի երաժշտ. մշակույթը:

Ձայնադարանը հարուստ է նաև ժող. ստեղծագործության բազմաժանր ինքնատիպ նմուշներով: Առաջին ձայնագրությունները (500 նմուշ) կատարել է Ք. Քուշնարյանը, որը 1927 և 1929-ին ղեկավարել է Լենինգրադի թատրոնի և երաժշտության ինստ-ի՝ Հայաստանում ժող. երգեր հավաքող գիտարշավները: Խոշոր ու արժեքավոր հավաքածուներ են Ա. Քոչարյանի (924 նմուշ), Ս. Լիսիցյանի, Վ. Սամվելյանի, Մ. Մուրադյանի և Ալ. Թաղևոսյանի ֆոնդերը: 1960-ական թթ-ից մեծ տեղ են գրավում Հ. Գրքաշարյանի, Մ. Մանուկյանի, Ռ. Աթայանի, Ա. Փահլևանյանի, Զ. Թագակչյանի, Կ. Խուդաբաշյանի, Դ. Դերոյանի, Ա. Մուրադյանի, Ն. Ձաուարիի, Հ. Պիկիչյանի գիտարշավների նյութերը:

Արվ-ի ինստ-ի տնօրեններ՝ Ռուբեն Զարյան (1958–87), Լևոն Հախվերդյան (1987–2003), 2003-ից՝ Արարատ Աղասյան:

Գրկ. Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ - 50, Ե., 2010:

Անահա Ասատրյան

«ԱՐՏ ՎՈՅՍԻՍ» ("Art Voices"), հայկ. ջազ. սեքստետ: Հիմնադրվել է 2005-ին Երևանում (հիմնադիրներ՝սաքսոֆոնահար Ա. Գրիգորյան և դաշնակահար Մ. Ղազարյան): Կազմում՝ Մ. Ղազարյան (ստեղնաշար. գործիքներ), Է. Ավետիսյան (բաս կիթառ), Պ. Նահապետյան (հարված. գործիքներ), Ա. Գրիգորյան (սաքսոֆոն), Լ. Պուչինյան (շեփոր), Ա. Մարգարյան (բլուլ, զուռնա):

Խումբը մասնակցել է Բրիտ. խորհրդի երևանյան գրասենյակի կազմակերպած «Tomorrow's Warriors» ջազ. կրթ. ծրագրին (2005), ամենամյա «Jazz Appreciation Month», «Երևան-2006» 3-րդ միջազգ. ջազ. փառատոներին (երկուսն էլ՝ 2006): «Եվրոֆեստ 2009»-ում (Բուխարեստ) ճանաչվել է լավագույնը: Հանդես է եկել նաև Մոսկվայում, Ֆրանսիայում: Երկացանկում՝ սեփ. ստեղծագործություններից (էթնո ջազ ոճով), որտեղ հայկ. ավանդ. երաժշտությունը համադրել են համաշխ. ջազ. երաժշտության լավագույն ավանդույթների հետ:

ԱՐՏԵՄՅԱՆ Լիլիթ Ռոբերտի (ծ. 16.07.1985, Երևան), դաշնակահարուհի, երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2012): ՀԿՄ անդամ (2017-ից): Ավարտել է ԵՊԿ (2007, Ա. Բոգդանյանի դասարան) և ասպիրանտուրան (2011, ղեկ-ներ՝ Ա. Բոգդանյան, Մ. Կոկժան): 2011–14-ին դասավանդել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում: 2014-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող (2014-ից՝ սփյուռքահայ արվ-ի և միջազգ. կապերի բաժնի գիտաշխատող, 2016-ից՝ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող): ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի Երիտասարդ արվեստաբանների խորհրդի փոխնախագահ (2014-ից): Միջազգ. (ՀՀ, ՌԴ, Սիլդովա, ԳԴեմՀ) և հանրապետ. մրցույթների դափնեկիր: Մասնակցել է բազմաթիվ միջազգ. փառատոների և մրցույթների, համերգներով, մենահամերգներով հանդես եկել ՀՀ-ում և արտերկրում:

Ուսումնասիրությունները վերաբերում են ժամանակակից հայ երաժշտությանը և

Տիգրան Չուխաջյանի ստեղծագործությունը (գիտ. նպաշրջանի նյութեր, 2015) ժող-ի շապիկը



Լիլիթ Արտեմյանի «XX դարի նոր կոմպոզիցիոն տեխնիկաներ և գրվածք ջազային դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները» գրքի (2015) շապիկը

հայ դաշնամուր. երաժշտության կատարող. արվ–ին:

Երկ. *XX դարի նոր կոմպոզիցիոն տեխնոլոգիաներով գրված հայկական դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները, Ե., 2015:*

ԱՐՏԵՄ ԽԱՉԱՏՈՒՐ (Արտյոմ Զիվանի Խաչատրյան, ծ. 18.10.1968, Լենինական), թառահար, կոմպոզիտոր: ՀՀ վաստ. արտիստ (2008): Ավարտել է Լենինականի Ք. Կարա–Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանի (դասատու՝ Մ. Մինասյան), ԵՊԿ թառի (1993, Հ. Դարբինյանի դասարան) բաժինները, սովորել կոմպոզիցիայի (1992–95, Խ. Ավետիսյանի դասարան) բաժնում: 1985–87-ին՝ Գյումրիի ժող. գործիքների նվագախմբի թառահար, «Գանձասար» երգի-պարի, 1989–92-ին՝ «Սայաթ-Նովա» աշուղ. երգի անսամբլների թառահար (նաև գործիք. մասի ղեկ.), 2013-ից՝ «Ալմաստ» ժող. գործիքների անսամբլի, 2015-ից՝ «Նարեկացի» ժող. գործիքների նվագախմբի գեղ. ղեկ.:

Արտեմ Խաչատուրը Լոռվա պահին

Գրել է կոնցերտ՝ թառի և ժող. նվագախմբի համար (1993), մշակել երգեր, պարեղանակներ, նախանվագներ: Համերգներով հանդես է եկել արտերկրում:

Հանրապետության նվագախմբերի մրցույթի Գլխ. (2016), «Սայաթ-Նովա» հանրապետ. մրցույթի 1-ին մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007):

Սարհաննա Տիգրանյան

ԱՐՏԻԿՈՒԼԱՑԻԱ (լատ.՝ articulato, < articulo – մասնատել, արտաբերել հոդաբաշխ կերպով), արտաբերություն, հնչյունաբերություն, հնչյունների հաջորդ. արտաբերման միջոց՝ ձայնով և երաժշտ. գործիքով. բնորոշվում է միաձուլությամբ կամ մասնատվածությամբ: Ա-ի հիմնական տեսակներն են լեգատոն և ստակկատոն, գործածվում են նաև նրանց տարատեսակները (non legato – մասնատված, բայց ոչ կտրուկ ընդհատ կատարում, legatissimo – սերտորեն կապված), այլ տեսակներից են գլիսսանդոն, պորտամենտոն: Ա. տեխնիկապես պայմանավորված է մեջքի, դաստակի, աղեղի շարժման զանազան հնարքներով, մատների հարվածներով ևն: Երգեցողության մեջ կապված է ձայն. ապարատի օգտագործման հետ: Կարևոր նշանակություն ունի երաժշտ. երկի մեկնաբանման գեղ. արտահայտչականության համար:

ԱՐՑԱԽԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, հիմնադրվել է 2004-ին Ստեփանակերտում: Հիմնադիր-գեղ. ղեկ. և դիրիժոր՝ Գևորգ *Մուրադյան*, տնօրեն՝ Ս. Սարգսյան: Նվագախումբը ձևավորվել է Երևանի երաժիշտներից: Նվագացանկում՝ եվրոպացի և հայ կոմպոզիտորների երկեր, հայկ. ժող. երգերի

Արցախի կամերային նվագախումբը

ու միջնադար. մեղեդիների մշակումներ: Կատարող. արվ-ն առանձնանում է պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, երկերի ինքնատիպ մեկնաբանությամբ:

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, ստեղծվել է 1991-ին՝ երաժիշտ Ն. Գրիգորյանի (տնօրեն և գեղ. ղեկ.) նախաձեռնությամբ: Երգացանկում՝ հայ և համաշխ. դաս. երաժշտության նմուշներ: Մասնակցել է մի շարք միջազգ. փառատոների ու մրցույթների, արժանացել մրց-ների:

Արցախի պետական երգչախումբը

Միջազգ. փառատոների ոսկե (2003, Բարսելոն), արծաթե (2009, Ավստրիա) մեդալներ ևն:

ԱՈՒԹԵՆՏԻԿ ԿԱՏԱՐՈՒՄ (< հուն. αυθεντικός – իսկական, ճշմարիտ), անցյալի երաժշտության կատարումը տվյալ դարաշրջանի երաժշտ. գործիքներով և երաժշտապատմ. տվյալների (վոկալ և գործիք. արտիկուլացիայի բնույթն ու

միջոցները, մելիզմների վերծանումը, տեմպերացիայի համակարգը, դինամիկ և ագոգիկ առոգանության իրագործման սկզբունքները ևն) հիման վրա:

1950–70-ական թթ-ին Ա. կ-ման տարածմանը նպաստել են նշանավոր երաժիշտներ Ն. Գրինբերգը, Դ. Սանոուն և ուր., որոնք ժամանակակից ունկնդիրին ներկայացրել են միջնադարի և Վերածննդի շրջանի կենցաղ. երաժշտությունը, վերածնել կոնտրատենորով երգեցողության արվ-ը ևն:

Բազմաթիվ երկրներում գործում են անսամբլներ, որոնք մասնագիտացված են միջնադարի, Վերածննդի և բարոկկոյի շրջանների երաժշտության Ա. կ-մամբ, որի տարածումը պայմանավորված է XX դ-ի 2-րդ կեսի մարդուն բնորոշ պատմականության բարձր զգացողությամբ: Ա. կ-մամբ հնագույն երաժշտությունը ընդգծված ռիթմայնությամբ կամ, հակառակը, ագոգիկ ազատությամբ և չոր, երբեմն՝ փոքր-ինչ սուր, զգայականությունից զուրկ հնչողությամբ մոտ է ժամանակակից ընկալմանը:

ԱՓՈՅԱՆ Շուշանիկ Հարությունի (17.10.1922, Երևան–09.10.2015), երաժշտագետ, դաշնակահարուհի: Արվեստագիտ. թեկնածու (1963), պրոֆ. (1987): ՀԿՄ անդամ (1960): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1947), երաժշտագիտ. (1948) բաժինները: Դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. (1947–80-ին՝ ընմիջումով), Լենինգրադի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվ. (1953–55) երաժշտ. դպրոցներում, Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (1955–62), 1957-ից՝ ԵՊԿ-ում (1980–90-ին՝ պատմության և տեսության, կատարող. արվ-ի և մանկավարժության ամբիոնների վարիչ):

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ կատարող. արվ-ի պատմությանն ու տեսությանը՝ «Խորհրդային Հայաստանի դաշնամուրային երաժշտությունը» (ռուս., 1968), «Ռոբերտ Անդրիասյան» (ռուս., 1984), «XX դարի դաշնամուրային մանկավարժության և կատարողական արվեստի պատմությունից» (քրեստոմատիա, համահեղ., 1998), «Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն. 1850–1920» (դասագիրք, 2006) և այլ աշխ-ներ:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

Երկ. *Ռոբերտ Անդրէասեանը դաշնակահար եւ մանկավարժ, Ատթիլիաս, 1999: Հայաստանի դաշնամուրային մշակույթի պատմությունից, Ե., 2003: Незабываемые имена. Очерки о пианистах-армянах, Е., 2008.*

ԱՓՐԻԿՅԱՆ Կարապետ (Կարպիս) (ծ. 06.10.1926, Ալեքսանդրիա), կոմպոզիտոր, խմբավար: Երաժշտության դասեր է առել իտալացի երաժիշտ Ֆրապիչչինիից: 1944-ից՝ Ալեքսանդրիայի Պողոսյան ազգ. վարժարանի երաժշտության դասատու: 1948-ին հիմնադրել է «Համազգային երգչախումբը»: 1953-ին, որպես կոմպոզիտոր, դիրիժոր և տեսաբան, կատարելագործվել է Փարիզի «Էքոլ նորմալ դը մյուզիք» երաժշտ. դպրոցում: Նույն թվականից ղեկավարել է «Սիփան-Կոմիտաս» երգչախումբը, որի հետ շրջագայել է Ֆրանսիայի քաղաքներում, նաև Բրյուսելում, Ամստերդամում, Մյունխենում, Ժնևում, Յուրիխում և Վենետիկում. երկացանկում՝ հայ հոգևոր, ժող., դաս. երգեր, նաև Յ. Ս. Բախի, Շ. Գունոյի, Ժ. Ֆ. Ռամոյի և այլ կոմպոզիտորների գործերից: Երգչախումբը մասնակցել է մի շարք միջազգ. փառատոների Վենետիկում, Կաննում, Փարիզում և այլուր: Ա. երգչախմբի համար մշակել է բազմաթիվ հոգևոր և ժող. երգեր, գրել է նաև մեներգեր, խմբերգեր («Գարահիսար», «Էս գիշեր», «Ողբ Վասպուրականի», «Մենք պետք է կռվենք», «Իբրև արծիվ»), «Միերի ուխտը» օրատորիան, պրելյուդ, որոնք աչքի են ընկնում ազգ. ոճով: 1991-ին այցելել է Երևան:

ՀԱԵ «Ներսես Շնորհալի» շքանշան (1989):

Շուշանիկ Ափոյան

ԱՔՉԵԼՅԱՆ Արթուր (ծ. 28.12.1984, Երևան), կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊԿ (2007, Վարդան Ա. Աճեմյանի դասարան): 2008-ին տեղափոխվել է Շվեյցարիա: Նույն թվականին ընդունվել է Ժնևի երաժշտ. բարձրագույն դպրոցը, որտեղ կատարելագործվել է Մ. Ժարրելի դասարանում: Մասնակցել է կանաղ. «Domaine Forget» և անգլ. «Arditti» քառյակների մասնագիտ. դասընթացներին: Համագործակցել է ճանաչված անսամբլների («Insomnio», Հոլանդիա, «Contrechamps», Ժնև, «Nouvel Ensemble Moderne», Քվեբեկ) և երաժիշտների (Ա. Ավանեսով, Հ.Մելիքյան և ուր.) հետ:



Կարապետ Ափրիկյան

Կոմպոզիտորների միջազգ. մրցույթների դափնեկիր (1-ին մրց., 2007, «Pre-Art», Յուրիխ, Յուրգենսոնի անվ., 3-րդ մրց.,

Աֆեթ Էֆենդի

2010, Մոսկվա, «Գաուդեամուս», պատվավոր դիպլոմ, 2010, Հոլանդիա):

ԱՖԵԹ ԷՖԵՆԴԻ, Ուդի Հաբեթ (Մսրլյան Հաբեթ Ավետիսի, 30.12.1847, Կ. Պոլիս–14.01.1922, Կ. Պոլիս), ուդահար: Երաժշտության առաջին դասերն առել է հորից: Ելույթներ է ունեցել Կ. Պոլսի մի շարք երաժշտ. խմբերի հետ, միաժամանակ մասնավոր դասերով կրթել երիտասարդ երաժիշտների: Ուդ նվագելու համար նրան անվանել են Ա ֆ ե թ (նշանակում է նվաճող):

Գրել է երգեր («Մի մեղադրեք ինձ, բարեկամներ», «Հովվական երգ», «Ինձ իմ վարդից թող հարցնեն», «Չունեմ բողոք ոչ մեկին» ևն), երաժշտություն՝ ուդի, քանոնի, սազի համար: 1905–08-ին հրատարակել է «Սազ և խոսք» (թուրք.) երաժշտ. հանդեսը:

Պողոս Աֆեյան

ԱՖԵՅԱՆ Պողոս Պետրոսի [30.04.1924, Պլովդիվ (Բուլղարիա)–18.02.1969, Պլովդիվ], ռեժ., երգիչ: Գործունեությունն սկսել է Սոֆիայի ժող. օպերայի երգչախմբում: Առաջին բեմադրությունը՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ» օպերան (1956, Պլովդիվի ժող. օպերա): 1959–69-ին (ընդհատումներով)՝ նույն օպերայի գլխ. ռեժ.: Բեմադրել է նաև Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Աիդա», Ժ. Բիզեի «Կարմենն», Լ. Բեռնստայնի «Վեստսայդյան պատմություն», Ֆ. Լոուի «Իմ չքնաղ լեդի» (բուլղ. բեմում՝ առաջին անգամ), Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի հարսանիքը», Դ. Չիմառոզայի «Գաղտնի ամուսնություն», Պ. Խաջիևի «Անզուսպ կտրիճ», Գ. Աթանասովի «Գերգանա» և այլ օպերաներ: 1965–66-ին՝ ԵՕԲԹ գլխ. ռեժ. (Ռ. Վագների «Տանհոյզեր», Ջ. Մենոտտիի «Հյուպատոս»): Օպերաներ է բեմադրել նաև Վորոնեժի և Կույբիշևի օպեր. թատրոններում: Արվ–ին բնորոշ էին բեմ. գործողության և երաժշտ. կերպարների օրգ. միաձուլումը, հոգեբան. խորությունը:

Տեսարան Ջ. Մենոտտիի «Հյուպատոս» օպերայի բեմադրությունից (1966, ռեժ.՝ Պ. Աֆեյան, ԵՕԲԹ)

Բ

ԲԱԲԱԵՎ Անդրեյ Հովհաննեսի [27.12.1923, գ. Մամնա (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում)–21.10.1964, Մոսկվա, կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1958): Ավարտել է Բաքվի կոնսերվատորիան (1950, Ու. Հաջիբեկովի, Կ. Կարաևի դասարաններ), կատարելագործվել է ՄՊԿ ասպիրանտուրայում (1950–53, ղեկ.՝ Յ. Ա. Շապորին): 1936-ից թառահար՝ Ադրբ. ռադիոյի ժող. գործիքների նվագախմբում: Մասնակցել է ՀՄՊ-ին (1941–45): Բաքվի կայազորի երգի-պարի, 1946–47-ին՝ սազահարների անսամբլների ղեկ., 1947–50-ին՝ Բաքվի ֆիլհարմոնիայի երգի-պարի անսամբլի խմբավար: 1950-ից ապրել է Մոսկվայում:

Գրել է «Երիտասարդություն» սիմֆ. նախերգանքը (1948), դաշնամուր. տրիո (1948), կոնցերտ (համահեղ., 1949)՝ դաշնամուրի և ժող. գործիքների նվագախմբի, կոնցերտ. ռապսոդիա՝ փոքր սիմֆ. նվագախմբի (1955), 2 այուիտ՝ ժող. գործիքների նվագախմբի համար, սիմֆոնիաներ (1-ինը նվիրված է նավթագործներին, 1950), 2 կանտատ (1947, 1954), երգեր («Միայն սիրելիներն ունեն նման աչքեր», «Վառնա», «Մի՛ հեռանա», «Սիրելի աչքեր», «Ես հանդիպեցի մի աղջկա», «Կարոտում եմ քեզ» ևն), «Բարեկամություն» պոեմ-նախերգանքը (1962), «Հնդկական ֆանտազիա» (1958), երաժշտություն թատրոնի և կինոյի համար («Այյոշկայի հեքիաթները», «Մի հանցագործության պատմություն», «Լռություն չի լինի», «Սիրահարված ամպը», «Բանաստեղծի ճակատագիրը», «Կրակը լեռներում» ևն), մշակել է ժող. երգեր: Ստեղծագործության մեջ առանձնանում է «Արծվաբերդ» օպերան (լիբրետոն՝ Գ. Բորյանի և Ջ. Վարդանյանի, բեմ.՝ 1957, ռեժ.՝ Վ. Վարդանյան, ԵՕԲԹ), որը ժամանակակից թեմայով հայկ. լավագույն օպերաներից է: Վերաբեմադրվել է 1961-ին (ռեժ.՝ Ե. Չանգա): Նրա հաջողությունը պայմանավորել են ժող. երաժշտ. լեզուն, հերոսների բնավորությունների ճշմարտացի մարմնավորումը, հարուստ մեղեդին ևն: Օպերան ներկայացվել է նաև Սվերդլովսկում (այժմ՝ Եկատերինբուրգ, 1964), Դոնեցկում (1965), Մոսկվայում՝ Կենտրոն. հեռուստատեսությամբ (1966), Կազանում (1973), ԼՂՀ-ում՝ 2013-ի սեպտ. 1-ին Շուշիի ռեալ. ուսումնարանի բացօթյա տարածքում (մասնակցել են Երևանի մնջախաղի թատրոնը, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Արցախի պետ., «Հովեր», «Մռական» կամեր. երգչախմբերը, Արցախի պարի պետ. անսամբլը, օպեր. մենակատարներ Հայաստանից ու Արցախից (ռեժ.՝ Ժ. Դադասյան, գեղ. ղեկ.՝ Ս. Ավթանդիլյան, դիրիժոր՝ Է. Թոփչյան), «Հովեր»

Տեսարան Ա. Բաբաևի «Արծվաբերդ» օպերայի բեմադրությունից (1957, ռեժ.՝ Վ. Վարդանյան)

երգչախումբը: Միջոցառումը նվիրված էր Արցախի անկախության հռչակման օրվան: Բ-ի 2-րդ՝ «Պաղտասար աղբար» կոմիկ. օպերան (1964) անավարտ է:

Գրկ. *Зак В., Андрей Бабаев, М., 1968.*

Ըստ Գեորգի Գյոդակյանի

ԲԱԲԱԹՈՐՈՍՅԱՆ Ստեփան Միհրանի (ծ. 06.02.1957, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ (1982-ից, վարչության՝ 2013-ից) անդամ, Խմբերգ. և մանկապատանեկան երաժշտության մասնաճյուղի նախագահ (2013-ից):

Ավարտել է Երևանի երաժշտ. մանկավարժ. ուսումնարանը (1976), ԵՊԿ (1981) և ասպիրանտուրան (1985, երկուսն էլ ղեկ.՝ Գ. Եղիազարյան): 1983–2006-ին դասավանդել է Երևանի Ս. Ասլամազյանի անվ. երաժշտ. դպրոցում, 1987–89-ին, միաժամանակ՝ ՀՊՄՀ-ում, 1991-ից՝ Էստրադ.

Անդրեյ Բաբաև

Ստեփան Բաբաթորոսյան

Արուս Բաբայան

և ջազ. արվ-ի պետ. քոլեջում, 1998-ից՝ ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2006-ից): 1996–99-ին՝ ՀՀ ՊՆ «Զինուժ» ծրագրի և «Ասպար» ռադիոհաղորդման երաժշտ. խմբ.:

Գրել է «Կանտատ Օգյուստ Ռոդենն» (խոսք՝ Մ. Կանսուզյանի), «Սիմֆոնիկ մանրանվագներ», սոնատ՝ թավջութակի և դաշնամուրի, պիեսներ՝ դաշնամուրի, ֆլեյտայի և դաշնամուրի, «Ֆուգա-սոնատ»՝ շվիի, բլուլի և դուդուկի (1986-ին՝ Համամիութ. մրցույթի 3-րդ մրց.) համար, լար. կվարտետ, խմբերգ. երկեր՝ «Կարմիր նժույգներ» (ըստ Ե. Չարենցի, 1997, Համամիութ. մրցույթի դիպլոմ), «Իրիկվան երգեր» շարքը (ըստ Մ. Մեծարենցի), «Աստվածածին երկնային»՝ կանանց երգչախմբի համար (կանոն. տեքստ), «Հոգևոր առակներ» (ըստ Վ. Այգեկցու, երգչախմբ. ներկայացում՝ մենակատարների, կամեր. նվագախմբի և երգչախմբի համար, Հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության մրցույթի 1-ին մրց.), թատրոնի և կինոյի երաժշտություն:

Հայտնի են նաև «Բզեզի երազը» (խոսք՝ Է. Միլիտոնյանի), «Ծաղրածուն և ծաղրածուն» (ըստ Յ. Սահակյանի, ռադիոյի մանկ. երգի մրցույթի 2-րդ մրց.), «Կճուճն ու ճուտը» («Սայաթ-Նովա» և «Արևիկ-Քենդի» երգի մրցույթների 1-ին մրց.), «Մեր գյուղի գարունը», «Բարի օր» (խոսք՝ Յ. Սահակյանի) խմբերգերը՝ մանկ. երգչախմբի համար, «Շարային քայլերգ» (խոսք՝ Հ. Սրապյանի), «Ցնծա՛, Հայոց աշխարհ», «Նամակ ռազմաճակատից» (երկուսն էլ՝ Յ. Սահակյանի խոսքերով, Հայրենասիր. երգի մրցույթի 1-ին մրց.), էստրադ. երգերը՝ «Ինձ տվեցին աչքեր», «Պետք է կարենալ» (խոսք՝ Շ. Ազնավուրի), «Լաց չլինես» (խոսք՝ Ռ. Մարուխյանի) ևն: «Քայլենք հպարտ հայորդիներ» զինվոր. երգերի ժող-ի (1997) խմբագիրն է, հոդվածների հեղինակ:

ԲԱԲԱԼՅԱՆ Արուս Գրիգորի [12(25).06.1893, Թիֆլիս–11.05.1982, Թբիլիսի], երգչուհի (քնար. սոպրանո), մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1954): Սովորել է Պետրոգրադի կոնսերվատորիայում, ավարտել Թիֆլիսի կոնսերվատորիան (1921): 1921-ին ամուսնու՝ Ռոմանոս ***Մելիքյանի*** հետ հրավիրվել է Երևան, մասնակցել կոնսերվատորիայի հիմնադրմանը: Նույն թվականից դասավանդել է երաժշտ. ստուդիայում, 1923-ից ԵՊԿ-ում եղել է մեներգեցողության առաջին դասատուն: 1921–25-ին, որպես դաշնակահարուհի և երգչուհի, հանդես է եկել համերգներով: 1927–36-ին՝ Թբիլիսիի հայկ. դրամատիկ. թատրոնի երաժշտ. մասի ղեկ., 1930–35-ին, միաժամանակ՝ Կ. Մարջանիշվիլու անվ. թատրոնի կոնցերտմայստեր: 1947–54-ին դասավանդել է Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանում: Գրել է թատեր. երաժշտություն (Հ. Բ. Սթոունի «Քեռի Թոմասի խրճիթը», Է. Վոյնիչի «Բոռ», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»):

Գրկ. *Բրուտյան Յ., Արուս Բաբայան, Ե., 1979:*

ԲԱԲԱԽԱՆՅԱՆ Արմեն Վլադիմիրի (ծ. 09.11.1967, Երևան), դաշնակահար: ՀՀ վաստ. արտիստ (2008): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1990) և ասպիրանտուրան (1992, երկուսն էլ ղեկ.՝ Ա. Բոգդանյան), Յեյլի համալսարանի ասպիրանտուրան (1994, ղեկ.՝ Կ. Ֆրենկ): «Հայաստանի ժառանգություն» դաշնակահարների համահայկ. միջազգ. մրցույթի (1999, 2001) հիմնադիր-գեղ. ղեկ., «Կադանս» անսամբլի հիմնադիր (2004), ՀՀ և ԼՂՀ տաղանդավոր երաժիշտ-կատարողների բացահայտման և զարգացման ծրագրի ղեկ. (2013-ից): 1992-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2001-ից, դեկան՝ 2011–18-ին):

Արմեն Բաբախանյանը ելույթի պահին

Որպես մենակատար՝ ելույթ է ունեցել Սլովենիայի Բիրմինգհեմի սիմֆ., Ս. Պետերբուրգի Իսրայելի ֆիլհարմոնիկ, Մոսկվայի պետ. սիմֆ., Անգլիայի թագավոր. ֆիլհարմոնիկ, Շոտլանդիայի թագավոր., Իռլանդիայի ազգ., ԱՄՆ-ի ազգ. սիմֆ., նվագախմբերի հետ: Վարպետության դասեր է վարել ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում, Իսլանդիայում, Ճապոնիայում, Կորեայում, Իտալիայում,

Սլովենիայում, ՌԴ-ում և Վրաստանում: Թողարկել է 4 ձայնասկավառակ (Ա. Խաչատրյանի դաշնամուր. ստեղծագործությունների ամբողջ. հավաքածուն, Հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության «Տարվա լավագույն դասական ալբոմ», 2007, ԱՄՆ): 2013-ից իրագործում է «Հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիա» նախագիծը, որը միտված է հայ կոմպոզիտորների դաշնամուր. ստեղծագործությունների (XIX դ-ի 2-րդ կեսից ցայսօր) ձայնագրությանն ու թողարկմանը (թողարկվել են Տ. Չուխաճյանի, Ն. Տիգրանյանի, Ս. Էլմասի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի դաշնամուր. երկերի խտասալիկները):

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009), «Ջինա Բախաուեր», «Վիլյամ Կապել», «Վան Կլայբեռն», «Ցինցինատի» (բոլորն էլ՝ ԱՄՆ), «Դուբլին» (Իռլանդիա), «Լիդս» (Անգլիա), «Պանչո Վլադիգերով» (Բուլղարիա), «Պալոմա Օ'Շեա» (Իսպանիա) միջազգ. մրցույթների դափնեկիր:

Լիլիթ Արտեմյան

ԲԱԲԱՅԱՆ Աշոտ Վարդանի (ծ. 01.06.1952, Երևան), կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊԿ (1978, Է. Միրզոյանի դասարան): 1993–2004-ին դասավանդել է Երևանի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցում: 1990–95-ին՝ Հայաստանի ԹՄՄ երաժշտարվ-ի բաժնի վարիչ (նաև հիմնադիրներից), 1994–2000-ին՝ Հայաստանի հանր. ռադիոյի «Շարական» անսամբլի տնօրեն, 1998–2002-ին՝ ՀՀ ՄՆ գլխ. մասնագետ, 2003-ից՝ խորհրդական ԵՕԲԹ-ում: Գրել է «Հարճը» օպերան (ըստ Դ. Վարուժանի, 1994), «Կապույտ հավերժություն» սիմֆոնիա-կանտատը (1970, ըստ Լ. Միրիջանյանի)՝ երգչախմբի և նվագախմբի համար, ալտի և նվագախմբի կոնցերտները (1974, 1981), «Երգ կռունկի մասին» (1977, ըստ Գ. Էմինի), «Շուշիի վերադարձը» (Շուշիի ազատագրման 10-ամյակին, ըստ Յ. Սահակյանի, 2002) կանտատները, «Հոգեհանգստյան մեղեդի» դաշնամուր. կվարտետը (1984), «Մագնիֆիկատ»-ը՝ 3 մեներգչի, երգչախմբի և նվագախմբի (1982, ըստ միջնադար. «մեծացուսցե»-ների), «Ռեքվիեմ»-ը՝ 4 մեներգչի, երգչախմբի և նվագախմբի (նվիրված է ՀՄՊ-ին, ըստ Ռ. Ի. Ռոժդեստվենսկու, թարգմ.՝ Վ. Դավթյանի, 1984), «Հայկ և Բել» օրատորիան (ըստ Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ի, 1986)՝ 5 մեներգչի, երգչախմբի և ոչ ավանդ. կազմով նվագախմբի, «Սպիտակ» սիմֆոնիան՝ մենակատար ալտի, մեծ սիմֆ., ժող. գործիքների նվագախմբերի, մնջախաղի թատրոնի (կինոկադրերի ցուցադրմամբ, 1988-ի երկրաշարժի զոհերի հիշատակին, 1989–2008), «Պոեմ»՝ բարիտոնի, երգչախմբի և նվագախմբի (ըստ Վ. Թեքեյանի, 1995), «Սիրիուս» կոնցերտ-ֆանտազիա՝ 2 թավջութակի և նվագախմբի (1995), գալարափողի և դաշնամուրի (2001) համար, «Դոդեկաֆոնիայի արվեստ» շարքը (18 մանրանվագ, 2003), սոնատներ, «Հայրեններ» (ըստ Նահապետ Քուչակի), «Ափսոսանք», «Ցնորք ծաղիկ» (ըստ Ա. Մանուկյանի), վոկալ շարքեր (ըստ Ռ. Լալայանի, Հ. Կարճիկյանի, Հ. Սահյանի, Խ. Հրաչյանի): Հեղինակ. համերգներով հանդես է եկել Երևանում, Մոսկվայում, Թբիլիսիում, Գորկիում և Նովոսիբիրսկում:

Աշոտ Բաբայան

Համամիութ. (1978, Մոսկվա), Հանրապետ. (1983, 1993, 1997) մրցույթների, Համամիութ. փառատոնի (1985, Մոսկվա) դափնեկիր:

ԲԱԲԱՅԱՆ Զարուհի Հայկարամի (ծ. 27.12.1975, Երևան), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2014): Ավարտել է ՀՄՊՀ կենսաբանության ֆակ-ը (1997), ԵՊԿ վոկալ-ջազ. բաժինը (2003): 1993-ից՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի մեներգչուհի, Գեղագիտ. կենտրոնի «Վաղորդյան կաթիլներ» և «Ձեզլ» մանկապատանեկան էստրադ. խմբերի խմբավար: 2004-ին մասնակցել է «Պարում են աստղերը» մրցույթին (1-ին մրց.): Առաջին մենահամերգը՝ 2005-ին՝ Հայաստանի պետ. ջազ. նվագախմբի հետ («Պարի և հոգու» թատրոնի մասնակցությամբ, ղեկ.՝ Ս. Դևոյան): Հիմնադրել է երգի ստուդիա (2009) Երևանում: 2012-ին «Զարուհի Բաբայանը բանակի կողքին» բարեգործ. ծրագրով հանդես է եկել ՀՀ ԶՈւ և ԼՂՀ ՊԲ զորամասերում (համերգաշարը եզրափակել է մեծ համերգով Երևանում): Մենահամերգներով շրջագայել է ՌԴ-ում, Լիբանանում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Ուրուգվայում և այլուր: Թողարկել է ձայնասկավառակներ (2001, 2006, 2012):

Զարուհի Բաբայանը կլույթի պահին

«Սայաթ-Նովա» մրցույթի 1-ին (2000, Երևան), «Տարվա լավագույն երգչուհի»,

Մարգարիտ Բաբայան

Շուշանիկ Հ. Բաբայան

«Լավագույն փոփ-ֆոլք» (երկուսն էլ՝ 2002, Լոս Անջելես) և այլ մրց-ներ:

ԲԱԲԱՅԱՆ Մարգարիտ Ավետիքի [24.12.1874, Գոթա (Գերմանիա)–18.10.1968, Փարիզ], երգչուհի (մեցցո սոպրանո), դաշնակահարուհի, երաժշտագետ, մանկավարժ: Շուշանիկ ***Բաբայանի*** քույրը: Սովորել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի բաժնում (դասատուներ՝ Մ. Մ. Իպոլիտով-Իվանով, Կ. Ալիխանով): Համերգներով հանդես է եկել Այսրկովկասի քաղաքներում: Առանձին գրքույկով հրատարակել է Վ. Վիլդերի «Լյուդվիգ վան Բեթհովեն» աշխ-յան հայ. վերապատումը (1896): Եղել է «Արձագանք» և «Մշակ» հանդեսների, «Кавказ» (ռուս.) և «Новое обозрение» (ռուս.) թերթերի երաժշտ. քննադատ, աշխատակցել է «Լարուս» (ֆրանս.) հանրագիտարանին: Երաժշտաքննադատ. հոդվածներ է գրել հայ և օտար երաժիշտների՝ Ն. Պապայանի, Բ. Ամիրջանյանի, Ա. Սազինիի, Ա. Պորտենի, Ս. Մետների և ուր. մասին: Փարիզում ձայնավարժության դասեր է առել Պ. Վիարդոյից և Ա. դը Պադիլլայից: 1901-ից մեներգեցողություն է դասավանդել Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում: 1904-ից ապրել է Փարիզում, համերգներով հանդես եկել Եվրոպայի երկրներում. երգացանկում՝ հին շրջանի, XIX դ-ի եվրոպացի, ռուս, հայ, նաև ժամանակակից կոմպոզիտորների գործերից:

Եղել է «Կոլոն-Լամուրյո» համերգ. ընկերության մենակատար, առաջինն է կատարել ճանաչված կոմպոզիտորների մշակած ֆրանս. ժող. երգերը (Մ. Ռավելի «Հինգ հունական ժողովրդական երգերը»՝ ձայնի ու դաշնամուրի համար, 1904, ևն): Բ-ի խնդրանքով Մ. Ռավելը ներդաշնակել է ու նրան ձոնել «Tripatos» պարեղանակի մշակումը: 1907–08-ին հանդես է եկել թեմատիկ համերգաշարով. երկացանկում՝ հայկ. և ռուս., ապա՝ X–XVI դդ-ի ֆրանս. պալատ. և տրուբադուրների երգեր, առանձին համերգ. ծրագրերով կատարել է XVII-ի գերմ. վոկալ երաժշտության բազմաթիվ նմուշներ, Յ. Ս. Բախի աշխարհիկ կանտատները: Համերգներում ներկայացրել է նաև արիաներ Լ. Ռոսսիի օպերաներից, Մ. Պ. Մուսորգսկու անտիպ երգերը, Գ. դը Սաշոյի, Է. Բլոկի, Դե Ֆալլայի, Կոմիտասի, Ի. Ֆ. Ստրավինսկու, Կ. Դեբյուսիի, Գ. Ֆորեի, Ֆ. Պուլենկի և ուր. գործերից: Ուսումնասիրել է տարբեր ժողովուրդների երաժշտ. բանահյուսությունը, եղել է այդ ժող. երգերի լավագույն մեկնաբանը:

Համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Բելգիայում, Իտալիայում, Իսպանիայում և այլուր: Աչքի է ընկել հարուստ ու ճկուն ձայնով, նուրբ և պարզ կատարումներով, ստեղծագործության բնույթի և ոճի ճիշտ ընկալումով: 1902-ին ծանոթացել է ***Կոմիտասի*** հետ, Փարիզում մասնակցել նրա համերգներին (1906, 1914): Կոմիտասի և Ա. Չոպանյանի հետ հանդես է եկել համերգ-դասախոսություններով:

Բ. մանկավարժ. գործունեություն է ծավալել Թիֆլիսում, ապա՝ Փարիզում: Փարիզում նրա հիմնադրած վոկալ ստուդիան հովանավորել են Կ. Դեբյուսին, Գ. Ֆորեն, Վ. դ'Էնդին և ուր.: 1911-ին բացել է նաև մեներգեցողության վարժարան, որը 1951-ին արժանացել է Համաֆրանս. ստուգատեսի մրց-ին: Կոմիտասը Բ-ի համար գրել է երգչական սկզբունքների «Տասը պատվիրանքները» (հետագայում Բ. ուղարկել է Հայաստան), որով առաջնորդվել է երգչուհին:

Բ-ի սաներից են ամերիկացի Ու. Կիվենը, պորտուգալացի Ժ. Սամբաեոն, Արմենակ ***Շահմուրադյանը***, Ի. Բլբուլյանը և ուր.:

Ֆրանս. երգի վարպետների միության և Երաժշտագետների ընկերության անդամ, ֆրանս. ռադիոյի պաշտոն. մեկնաբան:

Աջակցել է «Հայր Կոմիտասի ընկերների խնամատար հանձնաժողովին»: Հավաքել է Կոմիտասի ձեռագրերը, հրատարակել որոշ գործեր, նրա մասին գրել հոդվածաշար:

Անահտ Ասատրյան

ԲԱԲԱՅԱՆ (Լալուա-Բաբայան) Շուշանիկ Ավետիքի [19(31).05.1879, Թիֆլիս–28.01.1952, Փարիզ], դաշնակահարուհի: Մարգարիտ ***Բաբայանի*** քույրը: 1886-ին ընդունվել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարան, աշակերտել Մ. Զ. Գաբաևային: 1904-ից ապրել է Փարիզում. կատարելագործվել է Վ. Լանդովսկայի ղեկավարությամբ: Զբաղվել է մանկավարժ. աշխատանքով: Հանդես է եկել առավելապես հայկ. դաշնամուր. երկերի կատարումներով:

ԲԱԲԱՅԱՆ Շուշանիկ (Սուսաննա) Հովհաննեսի (ծ. 1947, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: 1952-ից ապրել է Պենզայում (ՌԴ). սովորել է Պենզա-

յի երաժշտ. դպրոցում, ապա՝ երաժշտ. ուսումնարանում (դաշնամուրի բաժին): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (Ն. Ն. Պոզնյակովսկայայի դասարան): 1972–86-ին՝ ՀԽՍՀ ՄՆ ուս-մեթոդ. բաժնի մեթոդիստ: 1972-ից դասավանդել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ., 1975-ից՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցներում, 1979-ից՝ ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2003-ից):

Մենահամերգներով հանդես է եկել ՀՀ քաղաքներում (Գյումրի, Աբովյան ևն): 1979 և 1984-ին Լենինգրադի կոնսերվատորիայում մասնակցել է Ն. Ն. Պոզնյակովսկայայի ծննդյան 90-և 95-ամյակներին նվիրված համերգներին: Հեղինակ է գիտ. և մեթոդ. ձեռնարկների («Դաշնամուրային պոլիֆոնիկ ստեղծագործություններ 1–4-րդ դասարանցիների համար», 2011, «Դաշնամուրային պոլիֆոնիկ ստեղծագործություններ 5–7-րդ դասարանցիների համար»), «Բազմաձայն երաժշտական մտածողության ձևավորումը ուսանող-դաշնակահարների մոտ» աշխ-յան, Գ. Սարաջևի, Մ. Մխիթարյանի մասին մենագրությունների:

ԲԱԲԱՋԱՆ Վահրամ Օհանի (ծ. 19.08.1948, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2014): ԽՍՀՄ ԿՄ անդամ (1973-ից): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1972, Վ. Ահարոնյանի դասարան) և կոմպոզիցիայի (1973, Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները: 2003-ից դասավանդում է նույն կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 2018-ից): Առաջին ստեղծագործությունները գրել է վաղ տարիքում (սիմֆոնիա՝ լար. նվագախմբի համար, 1957, «Տնակը» օպերան՝ ըստ Ս. Մարշակի, 1958):

Հարել է ավանգարդիզմին, ապա՝ նեոռոմանտիզմին և էքսպրեսիոնիզմին: Գրել է օպերաներ («Համլետ», 1990, «Մուսա լեռան 40 օրը», ըստ Ֆ. Վերֆելի, լիբրետտոն՝ Բ-ի, 2004, ևն), բալետներ («Պիգմալիոն», 1975, «Փոքրիկ իշխանը», ըստ Ա. Ս. Էքզյուպերիի, լիբրետտոն՝ Բ-ի, 1998, ևն), օրատորիաներ («Հիսուսն է խոսում», 1991, «Քրիստոսի կյանքից», 1995), «1915 թիվ» կանտատը (1995)՝ սոպրանոյի, բարիտոնի, խառը երգչախմբի և մեծ սիմֆ. նվագախմբի համար, 9 սիմֆոնիա [1964–2009, 3-րդը (1972, ըստ Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարու», Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետ. մրց.՝ 1975), 4-րդը՝«Katharsis», 1977, 6-րդը՝ «Ողբերգական», 1985)], 2 սիմֆ. («Վաղորդյան զանգեր», 1969, «Գիշերը Գառնիում», 1978), «Անտունի» խորեոգրաֆիկ (1969) պոեմները, 18 կոնցերտ [5-ը՝ դաշնամուր. (1965–2003), երգեհոնի (1967), լար. կվարտետի (1978), թավջութակի (1992), կոնտրաբասի (1997), ջութակի (2005) համար, ևն], կամեր. («Pentimento»՝ կամեր. նվագախմբի համար, 1975, ևն), խմբերգ. («Սգացող Հայաստանին», 1989, «Լեռան քարոզը», 2008, ևն) երկեր, լար. կվարտետներ, դաշնամուր. կվարտետ, փող. կվինտետ, 38 սոնատ [ջութակի (1975, 1978, 2005, 2017), թավջութակի և դաշնամուրի (2010), ալտի և դաշնամուրի (1985), ալտի (2000), դաշնամուրի և լիտավրների (1970), երգեհոնի (1982) համար, ևն], «Requiem»՝ լար. նվագախմբի (1983), «Կոմպոզիտորների դիմակահանդես» (1971), 64 վարիացիա՝ դաշնամուրի համար, վոկալ շարքեր («Աշնանային երգեր», «Աշունը Կիսո լեռներում», «Չորս դեղին բալլադ» ևն), մանկ. երաժշտություն [«Մանկական ալբոմ» (1957–2007) ևն]: Վարպետության դասեր է վարել մի շարք երկրներում: Ստեղծագործությունները կատարվել են ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ավստրիայում, Անգլիայում, Ճապոնիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Կանադայում, ՌԴ-ում և այլուր: 1999, 2000 և 2001-ին արժանացել է Սաքսոնիայի ՄՆ և Margarethen-Stiftung (Գերմանիա) դրամաշնորհների: Բ-ի գործերը հրատարակվել են ՀՀ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում, ՌԴ-ում:

1998, 2005 և 2018-ին՝ ՀՀ-ում, 2014-ին Ֆրանսիայում կազմակերպվել են նրա երաժշտության փառատոներ:

ՀԼԿԵՄ (1982), ԹՄՄ (2009), Համաշխ. հայկ. կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության «Լավագույն ստեղծագործության համար» (2009) մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2011):

Վահրամ Բաբայան

Առնո Բաբաջանյան

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Առնո Հարությունի (22.01.1921, Երևան–11.11.1983, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1952), ՀԽՍՀ (1960), ԽՍՀՄ (1971) ժող. արտիստ: ՀԿՄ անդամ (1943): 1929-ին ընդունվել է ԵՊԿ-ին կից երաժշտ. դպրոցը, 1938-ին՝ Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանի վերջին կուրսը (Ե. Ֆ. Գնեսինայի դաշնամուրի և Վ.

Յ. Շեբալինի կոմպոզիցիայի դասարան-ներ), ավարտել է ՄՊԿ դաշնամուրի (1948, Կ. Ն. Իգումնովի դասարան), ԵՊԿ կոմ-պոզիցիայի (1947, Վ. Տալյանի դասարան) բաժինները, միաժամանակ կատարելա-գործվել է Մոսկվայի Հայ մշակույթի տան երաժշտ. ստուդիայում (1946–48, ղեկ-ներ՝ Հ. Լիտինսկի, Ն. Պեյկո և Վ. Յուկերման): Որպես դաշնա-կահար՝ առավելապես ճանաչվել է իր ստեղծագործությունների կատարմամբ: 1950–56-ին դա-սավանդել է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 1956-ին): 1956-ից ապրել է Մոսկ-վայում: 9 տարեկանում գրել է «Պիոներական քայլերգը» (հրատարակվել է Ե. Չարենցի աջակցությամբ):

Ա. Բաբաջանյանը ևղոյթի պահին

Բ-ի ստեղծագործ. ոճը ձևավորվել է Արամ ***Խաչատրյանի*** և Ս. Վ. Ռախմա-նինովի ազդեցությամբ (դաշնամուրի և ջութակի կոնցերտներ): Ստեղծագործ. անհատականությունը նկատվել է դե-ռևս դաշնամուրի և նվագախմբի համար գրած մոնումենտալ, ռոմանտիկ «Հերո-սական բալլադում» (1950, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951) և դաշնամուր. տրիոյում (1952): Դրամատիկ սուր հակադրություններով, երաժշտ. լեզվի դինամիկ հագեցվածութ-յամբ առանձնանում են ջութակի և դաշ-նամուրի սոնատը (1959), թավջութակի կոնցերտը (1962): Նշանակալի գործերից

Ա. Բաբաջանյանի արձանը Երևանում (2003)

են «Վաղարշապատի պարը», «Էքսպրոմ-տը», «Պրելյուդը» (Երիտասարդության և ուսանողների համաշխ. 1-ին փառատոնի 1-ին մրց.՝ 1947, Պրահա), ժամանակի նո-րարար. շնչով են ստեղծվել «Պոլիֆոնիկ սոնատը» (1947, 2-րդ խմբ.՝ 1956), «Վեց պատկերը» (1965, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1967), № 3 կվարտետը (1976), ճանաչված են «Էլեգիան» (1978, Ա. Խաչատրյանի հիշա-տակին), «Պարը» (1942)՝ 2 դաշնամուրի համար, «Հայկական ռապսոդիան» (1950), «Տոնական նախերգանքը» (վերջին երեքը՝ Ալեքսանդր ***Հարությունյանի*** հետ), «Նոկ-տյուռնը» (1980), դաշնամուրի (1944), ջու-թակի (1948) կոնցերտները:

Բ-ի մեղեդային բացառիկ տաղանդը, խոր զգացմունքայնությունն առավելա-գույնս դրսևորվել են հայրենասիր., քնար. երգերում, թատրոնի (Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», Գ. Սունդուկյանի անվ. թատրոն) ու կինոյի («Հասցեատիրոջ որոնումները», 1955, «Ամպրոպի արահե-տով», 1956, «Առաջին սիրո երգը», 1958, Ղազարոս ***Սարյանի*** հետ, «Հարսնացուն հյուսիսից», 1975, «Բաղդասարը բաժան-վում է կնոջից», 1976, «Երջանկության մե-խանիկան», 1982, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1983, ևն) երաժշտության մեջ: Հանրահայտ են «Երկրագնդի լավագույն քաղաքը», «Կա-մուրջներ», «Գուշակի՛ր ցանկությունս», «Մի՛ շտապիր», «Երաժշտություն» և այլ երգեր, որոնք կատարվել են ԽՍՀՄ-ում և արտերկրում:

Մոսկվայում (1991) և Երևանում (1996) ստեղծվել են «Առնո Բաբաջանյան» հիմ-նադրամները:

Երևանում Բ-ի անունով են կոչվել Հայ-ֆիլհարմոնիայի Փոքր դահլիճը, փողոց, երաժշտ. ուսումնարան, երգի միջազգ. մրցույթ, կանգնեցվել է հուշարձան (2003, քանդ.՝ Դ. Բեջանյան): Բ-ի «Պոեմը» ընդ-գրկվել է Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթի մասնակիցների պարտադիր երկացանկում: Բ-ի 90-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ը 2012-ին կազմակեր-պել է նրա ստեղծագործությանը նվիրված գիտաժողով:

Գրկ. *Թաշչյան Ս., Առնո Բաբաջանյան, Ե., 1961: Մեր Առնոն, Ե., 2006: Նվիրվում է Առ-նո Բաբաջանյանին, [Գիտաժողովի նյութեր], Ե., 2008: Григорян А., Арно Бабаджанян, М., 1961; Аматуни С., Арно Бабаджанян. Инстру-ментальное творчество. Исследование, Е., 1985; Тер-Оганян М., Арно Бабаджанян, М., 2001.*

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Արսեն Արտյոմի (ծ. 11.03.1986, Երևան), կոմպոզիտոր, երգիչ: Արվեստագիտ. թեկնածու (2010): ՀԿՄ անդամ: Ավարտել է ԵՊԿ մեներգեցո-ղության (Ս. Դանիելյանի դասարան), կոմպոզիցիայի (Լ. Չաուշյանի դասարան, երկուսն էլ՝ 2008) բաժինները և ասպի-րանտուրան (2011): 2010-ին հիմնադրել և ղեկավարում է Հայ երիտասարդ կոմպո-

գիտորների և կատարողների միավորումը: 2012-ին կատարելագործվել է Մյունխենի Երաժշտության և թատրոնի բարձրագույն դպրոցում (ղեկ.՝ Յ. Մյուլեր-Վիլանդ):

Հեղինակ է վոկալ, կամեր. և սիմֆ. ստեղծագործությունների, թատեր. երաժշտության («Փայտե մարդը», ըստ Ս. Զորյանի, 2009, Երևանի Համազգ. թատրոն, ևն):

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Կարինե Վլադիմիրի (ծ. 1.12.1968, Երևան), երգչուհի (սոպրանո): Ավարտել է ԵՊԿ (1966, Տ. Սազանդարյանի դասարան), ապա ուսումը շարունակել է Միլանում (Իտալիա), կատարելագործվել Զ. Կանետտիի ղեկավարությամբ: 1999-ին տեղափոխվել է Գերմանիա:

Կոբլենց ք-ի օպեր. թատրոնում կատարել է Կոմսուհու (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»), Մադամ Բատերֆլայի (Զ. Պուչչինիի «Չիո-Չիո սան») դերերգերը: 2001-03-ին՝ Բիլեֆելդի վեստֆալյան, 2003-ից՝ Շտուտգարտի օպեր. թատրոնների երգչուհի: Դերեզերից են՝ Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Դեզդեմոնա, Լեոնորա (Զ. Վերդիի «Օթելլո», «Ճակատագրի ուժը»), Կոմսուհի, Էլեկտրա (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը», «Իդոմենեո») ևն: Ելույթներ է ունեցել Համբուրգում, Հաննովերում, Վիսբադենում, Մանհայմում, Մայնի Ֆրանկֆուրտում: Համագործակցել է դիրիժորներ Վ. Գերգիևի, Պ. Կոնի, Հ. Ռիլինգի, Շառ Լյույ Չինի, նաև նվագախմբերի հետ համերգ. կատարումներով հանդես է եկել Հայաստանում, Հունաստանում, Իսրայելում, Տոկիոյում (Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիա): 2007-ի ապրիլի 24-ին Բեռլինում կատարել է Կոմիտասի, Բ. Կանաչյանի ստեղծագործություններից:

Նկարահանվել է «Մի փոքր կարեկցանք» (2008, երգչուհի Ֆլորիա Տավայի դերը) ֆիլմում: Թողարկել է ձայնասկավառակ:

Ավստրո-գերմ. երգեցողության (1997), «Competizione Dell» օպեր. Հատուկ (1998, Համբուրգ) մրց-ներ, ՀՀ «Տարվա լավագույն երգչուհի» (2001, 2003), ՀՀ ՄՆ «Կոմիտաս» մեդալ:

ԲԱԲԱՍՅԱՆ Օլգա Հայրապետի (13.06.1898, Երևան–27.05.1969, Երևան), դաշնակահարուհի: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1957): Երաժշտ. նախն. կրթությունն ստացել է Երևանում: Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիան (1920), կատարելագործվել Լենինգրադի կոնսերվատորիայում (1926): 1927-ից դասավանդել է ԵՊԿ-ում (դաշնամուրի ամբիոնի հիմնադիր, դոցենտ՝ 1940-ից), 1929-ից՝ Երևանի 1-ին մանկ. մասնագիտացված քառամյա երաժշտ. դպրոցում (1930-ից՝ Ա. Սպենդիարյանի անվ.): 1946-ից հանդես է եկել Հայկ. ռադիոպետկոմի առաջին հայկ. եռյակի կազմում:

ՀԽՍՀ «Պատվո նշան» շքանշան:

ԲԱԳԱՏԵԼ (ֆրանս.՝ bagatelle – փոքր նրբագեղ իր), կատարման համար ոչ բարդ, փոքր պիես, մանրանվագ՝ որևէ գործիքի (հիմնականում՝ դաշնամուրի) կամ գործիք. անսամբլի համար: Եզրույթն առաջին անգամ օգտագործել է Ֆ. Կուպերենը («Les bagatelles» կլավեսինի համար, 1717): Լ. վան Բեթհովենի և նրան հաջորդող կոմպոզիտորների ստեղծագործություններում Բ. վերածվել է գործիք. ժանրի: Բ-ներ են գրել Ֆ. Լիստը, Բ. Բարտոկը, Ա. Վեբեռնը, Յ. Սիբելիուսը, Ա. Դվորժակը, Ա. Կ. Լյադովը, Տ. Մանսուրյանը («Հինգ բագատել» դաշնամուր. տրիոյի համար, 1985), Ա. Սաթյանը («Վեց բագատել» դաշնամուրի համար, 1982) և ուր.:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Սուրեն Վահագնի (ծ. 17.03.1963, Երևան), թավջութակահար: Վահագն ***Բագրատունու*** որդին: Միչիգանի պետ. համալսարանի պատվավոր պրոֆ.: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1980, դասատու՝ Զ. Սարգսյան), ՄՊԿ (1989, Ն. Ն. Շախովսկայայի դասարան), Բոստոնի «Նյու Ինգլանդ» կոնսերվատորիան (1993, Լ. Լեսսերի դասարան), սովորել է ԵՊԿ-ում (1980–82, Զ. Սարգսյանի դասարան): 1990–95-ին դասավանդել է Բոստոնի «Նյու Ինգլանդ», 1995–2000-ին՝ Իլինոյսի (պրոֆ.) համալսարաններում: Մասնակցել է մի շարք միջազգ. փառատոների, համերգներով շրջագայել ԽՍՀՄ-ում, Հվ. Ամերիկայի, Ասիայի, Հվ. Աֆրիկայի երկրներում:

Երաժիշտ-կատարողների հանրապետ. (1-ին մրց., 1980, Երևան), Այսրկովկաս. (1-ին մրց., 1981, Երևան), Պ. Ի. Չայկովսկու անվ. թավջութակահարների (արծաթե մեդալ, 1986, Մոսկվա), Վ. Գուիի անվ. (1-ին մրց., 1988, Ֆլորենցիա) մրցույթների դափնեկիր:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Վահագն Վաչեի (12.03.1938, Երևան–01.07.1991, Երևան), ռեժիսոր: Սուրեն ***Բագրատունու*** հայրը: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1977), ժող. արտիստ (1983): Ավարտել է ԵԳԹԻ դե-

Կարինե Բաբաջանյանը Տոսկայի դերում (Զ. Պուչչինիի «Տոսկա»)

Օլգա Բաբասյան

Սուրեն Բագրատունին կլոյթի պահին

Վահագն Բագրատունի

Էդուարդ Բաղալյանը ելույթի պահին



Հովհաննես Բաղալյան

րասան. (1960) և Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ի ռեժ. (1965) բաժինները: 1964–66-ին՝ Սարատովի ՕԲԹ, 1966–74-ին՝ ԵՕԲԹ (1968–74-ին՝ գլխ. ռեժ.) ռեժ., 1974-ից՝ Նովոսիբիրսկի ՕԲԹ գլխ. ռեժ.: 1964–66-ին դասավանդել է Սարատովի, 1974-ից՝ Նովոսիբիրսկի (պրոֆ.՝ 1982-ից) կոնսերվատորիաներում, 1966–74-ին՝ ԵՊԿ-ում: Բեմադրել է Զ. Փալիաշվիլու «Դաիսի» (1965, Սարատովի ՕԲԹ), Ա. Տերտերյանի «Կրակե օղակ» (1967, Լ. Միխայլովի հետ), Գ. Արմենյանի «Խորտակում» (1968), Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» (1969), Զ. Վերդիի «Դոն Կառլոս» (1970), Ժ. Բիզեի «Կարմեն» (1972, բոլորը՝ ԵՕԲԹ), Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ» (1974), Պ. Ի. Չայկովսկու «Օղեանի կույսը» (1974), Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր» (1987, երեքն էլ՝ Նովոսիբիրսկի ՕԲԹ) և այլ օպերաներ:

ԲԱԴԱԼՅԱՆ Էդուարդ Գևորգի (15.10.1937, Երևան–15.12.1995, Երևան), կիթառահար, կոմպոզիտոր, մանկավարժ: Նունե ***Պողոսյանի*** հայրը: Դաս. կիթառի դպրոցի հիմնադիրը Հայաստանում: Ավարտել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվ-ի ուսումնարանը (1957), Մոսկվայի Արվ-ների ժող. համալսարանի հարմոնիայի (1965), դաս. կիթառի (1975, Ա. Իվանով-Կրամսկոյի դասարան) հեռակա բաժինները: 1973-ից՝ Հայհամերգի և Սոյուզկոնցերտի մենակատար: 1968-ին՝ Երևանի Տ. Չուխաճյանի անվ. (Հայաստանում՝ առաջին), 1978-ին՝ Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցներում, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ., Ա. Օստրովսկու անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարաններում բացել է կիթառի դասարաններ: Նպաստել է դաս. կիթառի երկացանկի տարածմանը, կիթառահարների նոր սերնդի դաստիարակմանը:

Գրել է կիթառի 48 պիես, «Ադաջո» պոեմը՝ կիթառի և կամեր. նվագախմբի համար, մշակել և փոխադրել է հայ և այլազգի կոմպոզիտորների բազմաթիվ մենանվագ և անսամբլ. երկեր: Բ-ի գործերի մեծ մասն ընդգրկվել է երաժշտ. հավաքածուներում («Կոնցերտային պիեսներ վեցլարանի կիթառի համար», «Կիթառահարի նվագացանկը», «Սկսնակ կիթառահարի ալբոմ» ևն):

Համերգներով շրջագայել է Վրաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Մոլդովայում, Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում, Ղազախստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում, Ղրղըզստանում, Տաջիկստանում:

Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. Վեյսի, Ռ. դե Վիզեի, Ֆ. Տառեգայի, Ֆ. Սոռի, Ա. Սեգովիայի, Լ. Բրաուերի, Ա. Բարիոսի, Ա. Մ. Իվանով-Կրամսկոյի, Մ. Պոնսեի, Ի. Ալբենիսի, Ֆ. Տոռոբայի, Է. Վիլլա-Լոբոսի, Ա. Յուպանկի, նաև իր գործերից և հայկ. ժող. մեղեդիների մշակումներ: Ունի ֆոնդ. ձայնագրություններ ՀՀ ռադիոյում:

«Բյուրեղապակե լարեր» (1981–83, Դոնեցկ, 1991, Մարիուպոլ), «Ղրիմյան լարեր» մարզ. II (1989, Ղրիմ), «Կիթառի երաժշտության օրեր» (1990, Դնեպրոպետրովսկ), Կիթառի երաժշտության համամիութ. (1991, Չելյաբինսկ) փառատոների դափնեկիր:

Երկ. *Խոսքովանություն: Պիեսներ և մշակումներ դասական կիթառի համար, Ե., 2014:*

ԲԱԴԱԼՅԱՆ Հովհաննես Համբարձումի [15.12.1924, գ. Շավարին (Համադանի մոտ՝ Իրան)–19.08.2001, Երևան], երգիչ (տենոր): ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (1946–49), ավարտել ԵՊԿ (էքստեռն, 1986): 1949–54-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի, 1954–2001-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլների մենակատար: 1982–2000-ին դասավանդել է ԵՊԿ-ում (հայկ. ժող. երգեցողություն): Երգացանկում՝ հայ դաս. ու ժամանակակից հեղինակների (Խ. Ավետիսյանի «Որտեղ գտնեմ քեզ», «Երբ

Հ. Բաղալյանը ելույթի պահին

կանչում ես ինձ», Ա. Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի», Ն. Գալանդերյանի «Դու նորից եկել ես», «Ափսոսանք»), ժող. («Հորովել», «Խանիման-ջանիման», «Սարերի հովին մեռնեմ»), աշուղ. (Ջիվանու «Ազգ իմ», Սայաթ-Նովայի «Քամանչա», «Քանի վուր ջանիմ» ևն) երգեր, նաև Կոմիտասի («Հայաստան», «Մայրենի լեզու»

ևն), սփյուռքահայ կոմպոզիտորների (Ա. Հովհաննեսի «Յար Նազանի», Գ. Ալեմշահի «Իմ երգը» ևն) գործերից: Կատարումներն աչքի են ընկել քնարականությամբ, մեղեդային նուրբ ելևէջներով: Հեղինակ է երգերի («Միայն մայրս չիմանա» ևն): Հյուրախաղերով հանդես է եկել արտերկրում:

Կազմել է «Սարերի հովին մեռնեմ» (2011) երգարանը: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

Դուստրը՝ Նունե Բ. (ծ. 17.07.1963, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2014): Ավարտել է ԵՊԿ (1989, Տ. Սազանդարյանի դասարան) և ասպիրանտուրան (1992): 1999-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերից են՝ Վիոլետտա, Լեոնորա (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Տրուբադուր»), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Ժորժետտա (Ջ. Պուչչինիի «Թիկնոց»), Նեդդա (Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ»), Պամինա (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ»), Ադալջիզա (Վ. Բելլինիի «Նորմա») ևն: Հանդես է եկել նաև Հայաստանի ֆիլհարմոնիկ և կամեր. նվագախմբերի հետ: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Շվեյցարիայում, Լիբանանում, ԱՄԷ-ում և այլուր:

ԲԱՋԻԼ (Բարսեղյան) Լյուդվիգ Գասպարի [15.04.1931, Համադան (Իրան)–17.08.1990, Մյունխեն], խմբավար, ջութակահար, կոմպոզիտոր: Ավարտել է Հռոմի «Սանտա Չեչիլիա» կոնսերվատորիայի ջութակի (1954) և կամեր. երաժշտության (1956) բաժինները, հաճախել կոմպոզիցիայի դասընթացների: 1959–61-ին՝ Թեհրանի «Արարատ» միության երգչախմբի, ապա՝ «Հայ երգ» հաստատության հիմնադիրներից, 1961–65-ին՝ երգչախմբի ղեկ.: 1965-ից ապրել է Մյունխենում:

Գրել է երգեր և խմբերգեր (Դ. Վարուժանի, Գրիգոր Նարեկացու, Սիամանթոյի խոսքերով), լար. կվարտետներ («Անիի լքված եկեղեցիները», «Վարդավառին» ևն), պիեսներ՝ ֆլեյտայի, լար. նվագախմբի, երկեր՝ ջութակի, թավջութակի, երաժշտ. պատկեր (Սիամանթոյի «Աղոթքի» խոսքերով)՝ մեներգչուհու, կանանց երգչախմբի և նվագախմբի համար: Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայի համար գրած երաժշտության մեջ յուրովի է օգտագործել հայ ժող. և միջնադար. հոգևոր երաժշտության ելևէջ. ու ռիթմական հատկանիշները: Մշակել է ժող. և աշուղ. երգեր: Ստեղծագործությունները տպագրվել են Իտալիայում («Արդի հայ երաժշտություն» մատենաշարով) և Թեհրանում:

ԲԱԼԱԲԱՆՅԱՆ Նիկիտա (Մկրտիչ) Կարապետի (1895, Դոնի Ռոստով–անհետացել է 1948-ին, Երևան), ջութակահար, ալտահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): Ավարտել է Դոնի Ռոստովի երաժշտ. ուսումնարանը և Պետրոգրադի կոնսերվատորիան (1920): 1936–38-ին՝ Կոմիտասի անվ. քառյակի ալտահար, 1938–47-ին՝ 2-րդ ջութակահար:

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ Դավիթ Գագիկի (ծ. 10.10.1983, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ (2006, 2017-ից՝ վարչության) անդամ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (2000, դասատու՝ Ա. Պիվազյան), ԵՊԿ կոմպոզիցիայի (2005, Ա. Զոհրաբյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2008, ղեկ.՝ Ա. Զոհրաբյան): 2002-ին՝ դաշնակահար «Կենտրոն» հեռուստատեսությունում, 2009–13-ին՝ ասիստենտ ԵՊԿ կոմպոզիցիայի ամբիոնում:

Հեղինակ է նվագախմբ., կամեր., դաշնամուր., խմբերգ. և վոկալ ստեղծագործությունների, որոնք կատարվել են Հայաստանում, Գերմանիայում [«The Pillow Tagh» («The Pillow Song»), Հաննովեր, 2014, ևն], Իտալիայում, Ռուսաստանում, Վրաստանում, Բրազիլիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Բելգիայում, Իսրայելում: Որոշ գործեր հրատարակել են «Sordino» և «Da Vinci» երաժշտ. հրատարակչությունները:

Ուշագրավ գործերից են՝ «Դուո» (2002) ֆլեյտայի և ալտի, «Կոմպոզիցիա»՝ փայտե փող. կվինտետի (Բ. Բրիտտենի 90-ամյակին նվիրված մրցույթի 2-րդ մրց.), «Postlude In Memoriam…»՝ ջութակի և դաշնամուրի («Նարեկացի» արվ-ի

Լյուդվիգ Բազիլ

Միքայել Տերյան, Նիկիտա Բալաբանյան (ձախից՝ կանգնած), Ավետ Գաբրիելյան, Սարգիս Ապամազյան (ձախից՝ նստած)

Դավիթ Բալասանյան

միության մրցանակաբաշխության Գլխ. մրց., երկուսն էլ՝ 2003, Երևան) համար, «Ծաղկե պարտեզը խավարում» (Սիչուանի կոնսերվատորիայի VI մրցույթի 3-րդ մրց., 2010, Չինաստան) և այլ երկեր:

«Նարեկացի» արվ-ի միության և ՀԿՄ մրցույթի 1-ին մրց. (2016, Երևան):

Երկ. *Արահետներ, բանաստեղծությունների ժող., Ե., 2001: Մինոլոգ-ֆանտազիա մենակատար կլառնետի համար, Օսակա, 2018:*

Սերգեյ Բալասանյան

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ (Բալասանյանց) Սերգեյ Արտեմի [13(26).08.1902, Աշխաբադ–03.06.1982, Մոսկվա], կոմպոզիտոր, հաս. գործիչ: Տաջիկ. ԽՍՀ (1957), ՌԽՖՍՀ ժող. (1978) արտիստ, ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1964): Տաջիկ. երաժշտ. թատրոնի հիմնադիրներից: Ավարտել է ՄՊԿ պատմատես. ֆակ-ը (1935): 1948–51, 1955–82-ին դասավանդել է նույն կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1965-ից, կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ՝ 1962–71-ին): 1928–30-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի երաժշտ. մասի ղեկ., 1931–36-ին՝ Համամիութ. ռադիոյի երաժշտ. խմբ., 1949–53-ին՝ ԽՍՀՄ ՆԽ-ին կից ռադիոտեղեկատվության գլխ. վարչության պետի տեղակալ, 1953–54-ին՝ ՌԽՖՍՀ մշակույթի նախարար, 1963-ից՝ ՌԽՖՍՀ ԿՄ քարտուղար:

Հայկական բալետի բալետմայստերներ



Իլյա Արբատով

Բ-ի ստեղծագործությունը կապված է Արևելքի ժողովուրդների երաժշտարվ-ի ավանդույթների հետ և առանձնանում է լեզվի գունագեղությամբ ու արտահայտչականությամբ: Տաջիկ. առաջին՝ «Վոսեի ապստամբությունը» օպերայի (բեմ.՝ 1939, Տաջիկ. ՕԲԹ, Դուշանբե) հեղինակն է: Գրել է նաև «Լոլա» երաժշտ. ներկայացումը (բեմ.՝ 1939, համահեղ.՝ Ս. Ուրբախ), «Դարբին Կովան» (բեմ.՝ 1941, համահեղ.՝ Շ. Բոբոկալոնով), «Բախտիոր և Նիսո» (բեմ.՝ 1954) օպերաները, «Լեյլի և Մեջնուն» (բեմ.՝ 1947, Դուշանբե, 1973՝ Երևան), «Շաքունթալա» (բեմ.՝ 1963, Լատվիայի ՕԲԹ, Ռիգա) բալետները:

Զարեհ Մուրադյան

Բ-ի ստեղծագործության մեջ գերակշռում է հայկ. թեման՝ «Հայկական ռապսոդիա» (1944), «Յոթ հայկական երգ» (1955), «Ութ պիես հայկական ժողովրդական թեմաներով» (1970), սիմֆ. ստեղծագործություններ, ռոմանսներ՝ Ա. Իսահակյանի (1944) և Վ. Տերյանի (1955) խոսքերով, «Կոմիտասի ինը երգը» (1957)՝ ձայնի և սիմֆ. նվագախմբի համար, «Լենին» վոկալ շարքից 2 հատված՝ Հ. Շիրազի և Գ. Էմինի խոսքերով (1972): Դաշնամուրի համար մշակել է Կոմիտասի ձայնագրած 100 ժող. երգերը («Հայաստանի երգերը», 1969): Ուշագրավ են նաև «Աֆղանական սյուիտ» (1956), «Ինդոնեզիայի կղզիները» (1960), «Ռապսոդիա Ռ. Թագորի երգերի թեմաներով» (1961) գործերը՝ սիմֆ. նվագախմբի, սիմֆոնիան՝ երգչախմբի (1968) համար: Ձայնագրել է ԽՍՀՄ, Արևելքի (Հնդկաստան, Աֆղանստան, Ինդոնեզիա, Իրան) և Աֆրիկայի երկրների 500 ժող. երգ:

ԽՍՀՄ Պետ. (1949), Ձ. Ներուի անվ. (1969) մրց-ներ:

Երկ. *С. А. Баласанян: Статьи. Воспоминания. Письма (сост. К. С. Баласанян), М., 2003.*

Գրկ. *Шахназарова Н., Головинский Г., С. Баласанян, М., 1972.*

ԲԱԼԲԱՔՅԱՆ Սարգիս Արտավազդի (ծ. 12.07.1988, Երևան), կոնտրաբասահար: Արվեստագիտ. թեկնածու (2015): Ավարտել է ԵՊԿ նվագախմբ. ֆակ-ը (2010, Ս. Հայրապետյանի դասարան) և ասպիրանտուրան (2015, ղեկ.՝ Ն. Ավետիսյան): 2006-ից հանդես է եկել Հայաստանի պետ. երիտասարդ. (2014-ից՝ տնօրենն) և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբերում: Մասնակցել է միջազգ. փառատոների, համերգներով շրջագայել արտերկրում:

Ուսումնասիրությունները վերաբերում են կոնտրաբասի ժամանակակից կատարող. արվ-ին, հայ երաժշտությանը:

ԲԱԼԵՏ (ֆրանս.՝ ballet, իտալ.՝ balletto, լատ.՝ bollare – պարել), բեմարվ-ի տեսակ, ներկայացում, որի բովանդակությունն արտահայտվում է պար-երաժշտ. կերպարների միջոցով: Սյուժեն շարադրվում է լիբրետտոյում, որի հիման վրա ստեղծվում է երաժշտությունը, ապա՝ պարն ու մնջախաղը, դեկորներն ու զգեստները:

Տարբերում են Բ-ի քնար., էպիկ., դրամատիկ., կատակերգ., ողբերգ. ժանրերը: Որպես ինքնուրույն արվ.՝ ձևավորվել է XVIII դ-ում Անգլիայում, Ավստրիայում, ապա՝ Ֆրանսիայում:

Հայկ. բեմ. պարն ու Բ. ձևավորվել են XIX դ-ի կեսին: Բ-ի առաջին մշտ. խումբը գործել է Կ. Պոլսի «Արամյան թատրոնում», որտեղ հայտնի էին պարողներ Գևորգ Չիլինկիրյանը (Ջեննե Գևորգ), Թագուհին, Անտիկը, Սառին և ուր.: Բեմ. պարի զարգացմանը նպաստել է հայ օպերետ. թատրոնը, որտեղ պար. տեսարաններում հանդես են եկել դերասանուհիներ Աննիկ Չուհաճյանը, Գոհարիկ Շիրինյանը, Վիրգինիա Գարագաշյանը, Աստղիկը: Պարե-

րը բեմադրել է Երանոս Չափրաստը, որը հիմնադրել է նաև կենցաղ. հանդիսապարի դպրոցներ Կ. Պոլսում (1868), ապա՝ Զմյուռնիայում և Ադանայում:

1860–70-ական թթ–ից պարեր են ստեղծել Գալուստ Կոստանդյանը, դերասաններ Գարեգին Ռշտունին և Սերովբե Պենկլյանը: Կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանն առաջինն է ստեղծել բալետ. ինտերմեդիաներ «Արշակ Երկրորդ», «Զեմիրե» օպերաներում, պար. դրվագներ՝ «Արիֆ», «Քեռսե Քեհյա», «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» կոմիկ. օպերաներում: 1870-ական թթ–ից արևելահայ թատրոնում կատարվել են հայկ. և կովկաս. քաղաք. պարեր թե՛ հայ դրամատուրգների (Հ. Գուրգենբեկյան, Մ. Տեր-Գրիգորյան, Գ. Սունդուկյան և ուր.) պիեսների բեմադրություններում, թե՛ համերգներում: 1900-ին Վիկտորիա Խաչիկյանը (Կ. Պոլիս) Փարիզում արլ. պարերով մասնակցել է համաշխ. փառատոնի:

XX դ–ի սկզբին Արշակ Պենկլյանի, Ամիրագոյի, Հովսեփ Ոսկանյանի, նաև Բաղդասարյան-Սուրաբյանի օպերետ. խմբերում պարերով հանդես են եկել դերասանուհիներ Արուս Ոսկանյանը, Լյուսի Սևումյանը, Մաշա Սուրաբյանը: 1910-ական թթ–ին բալետի արտիստ Կորգանովը ելույթներ է ունեցել Բաքվում՝ Սայիլյանների թատրոնում, Ամիրագոյի օպերետ. խմբում, 1920-ական թթ–ից եղել է Բաքվի ՕԲԹ մենապարող: Բաքվում է ստեղծագործել պարերի բեմադրող Սերգեյ Կևորկովը, որը նպաստել է նաև ադրբ. ազգ. բալետի զարգացմանը: Նույն թվականներին մեծ համբավ է վայելել Արմեն Օհանյանը (Սոֆյա Փիրբուդաղյան), որն արլ. պարերում օգտագործել է ամերիկացի պարուհի Այսեդորա Դունկանի «ազատ» ոճը: 1920-ական թթ–ին Թիֆլիսի ՕԲԹ-ում կովկաս. պարերով հանդես է եկել Ալբերտը (Գ. Շահինով): Հ. Ոսկանյանի, Գրիգոր Սյունու և ուր. օպերետներում նույնպես առանձնակի տեղ են ունեցել կովկաս. ու հայկ. պարերը: Հիշարժան են նաև Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի պար. տեսարանները: 1917-ին Սրբուհի Լիսիցյանը Թիֆլիսում հիմնադրել է Արտասանության, ռիթմի և պլաստիկայի ստուդիա (1923-ին վերակազմավորվել է Ռիթմի և պլաստիկայի ինստ-ի), որը համերգներով հանդես է եկել Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում: Ստուդիայի շրջանավարտներ Նազելի և Թամար Լիսիցյանները, Թամար Ադամյանը, Աննա Դուրինյանը, Հասմիկ Սիրունյանը, Շողիկ Վարոյանը և ուր. մեծ ներդրում ունեն հայ պարարվ-ի կատարող., բեմադրության ու դասավանդման ոլորտներում:

Խորհրդային շրջանի բալետը: Պրոֆեսիոնալ բալետ. արվ-ը Հայաստանում զարգացել է խորհրդ. իշխանության հաստատումից հետո: 1920-ական թթ–ին Բ–ի մի շարք հայ արտիստներ [Սերգեյ Սերգեև (Վարդանբաբով), Մ. Գորսկի (Տեր-Ղևոնդյան), Գ. Բարխուդարով, Դմիտրի Շիկանյան, Լ. Բեկտաբեկովա, Կ. Էջուբովա, Լ. Լեոնով, Հ. Ապրեսով և ուր.], կրթություն ստանալով Թիֆլիսում՝ Մ. Պերինիի և Մ. Սիրդկինի, Բաքվում՝ Ս. Կևորկովի ստուդիաներում, դարձել են Թիֆլիսի ՕԲԹ մենապարողներ:

Հայկ. ազգ. Բ–ի հիմնադիրներից Ի. Արբատովը (Եղիա Յաղուբյան) նույնպես աշխատել է Թիֆլիսի, Բաքվի, Տաշքենդի, Կազանի և այլ օպեր. թատրոններում: Համերգ. ծրագրերում պարերով հանդես են եկել Վ. Արիստակեսյանը, Ն. Լիսիցյանը, Մ. Լիսիցյանը, Թ. Լիսիցյանը, Ա. Ախշարումյանը, Բաքվում՝ Ն. Սաֆարյանը (Սաֆարովա), Թիֆլիսում՝ Ս. Լիսիցյանը, Թ. Ադամյանը, Գ. Բարխուդարովը: Ն. Լիսիցյանը և Վ. Արիստակեսյանը Երևանում բեմադրել են պար. տեսարաններ: 1922-ից Մ. Վանշիրի ղեկավարությամբ գործել է Դոնի Ռոստովի երաժշտ. կոմեդիայի հայկ. թատրոնը, իսկ 1923-ին Շարա Տալյանը Լենինականում կազմակերպել է օպերա-օպերետ. թատերախումբ. բալետի խմբում էին Թ. Ճաբուկիանին, Ս. Գորսկին (նաև պարերի բեմադրող) և ուր., բալետ. տեսարաններ են բեմադրել Ս. Սերգեևը, Ս. Լիսիցյանը, Դ. Շիկանյանը: Պարերով աչքի են ընկել նաև այդ օպերետ. խմբերի դերասանուհիներ Ե. Լուսինյանը, Մ. Սեդմարը, Ա. Ղումաշյանը և ուր.:

1923–24-ին Երևանում գործել են Ս. Մխիթարյանի կենցաղ. պարերի և Վ. Ավետիքյանի ռիթմի ու պլաստիկայի դպրոցները: 1924-ին Վ. Արիստակեսյանը հիմնադրել է պարարվ-ի ստուդիա, որտեղ դասավանդել են հայկ., կովկաս., դաս. և բնութագր. պարեր: 1926-ին ստուդիայի սաների մասնակցությամբ բեմադրվել է Հայաստանում առաջին բալետ. ներկայացումը՝ Լ. Դելիբի «Կոպելիան»: Ստու-

Հայկական բալետի բալետմայստերներ



Ազատ Ղարիբյան



Մաքսիմ Մարտիրոսյան

Եվգենի Չանգա

Վանուշ Խանամիրյանը Սպարտակի դերում (Ա. Խաչատրյանի «Սպարտակ»)

Տեսարան Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ» բալետի բեմադրությունից. Դոն Կիխոտ՝ Ռոդոլֆ Խառապյան, Կիտրի՝ Նաղեժդա Դավթյան

դիան ավարտելուց հետո Է. Մանուկյանը, Պ. Բուռնազյանը, Մ. Ալավերդյանը, Զ. Մուրադյանը դարձել են Հայկ. ժող. երգի-պարի պետ. անսամբլի ու ԵՕԲԹ-ի (1933) մենապարողներ և բալետմայստերներ: 1962-ին Իջևանում հիմնադրվել է բալետի ստուդիա (հիմնադիր-ղեկ.՝ Ժ. Խաչատրյան), 1979-ին Երևանում՝ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության կամեր. բալետի խումբը (ղեկ. և բալետմայստեր՝ Ռ. Խառատյան): 1933-ին Վլադիմիր Պրեսնյակովը հիմնադրել է Երևանի ՕԲԹ բալետ. խումբը և կից բալետի ստուդիան (1934): Բալետի խումբն առաջին անգամ հանդես է եկել Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի պար. տեսարաններում (1933, բալետմայստերներ՝ Վ. Պրեսնյակով, Վ. Արիստակեսյան): 1938-ին թատերախումբը համալրվել է Լենինգրադի պարարվ-ի ուսումնարանի շրջանավարտներով: Բալետմայստեր Յ. Ռեյնեկեն բեմադրել է առաջին բալետ. ներկայացումը՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը» (1935), Ե. Կուզնեցովը՝ պարեր՝ Ա. Ս. Դարգոմիժսկու «Ջրահարսը» օպերայում:

Հայկ. ազգ. պրոֆեսիոնալ պարարվ-ի սկզբունքները մշակվել են ազգ. օպերաներում. պարեր են բեմադրել Վ. Արիստակեսյանը (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Ա. Տիգրանյանի «Անուշ», 1935), Ս. Լիսիցյանը (Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար», 1934, «Լուսաբացին», 1938), Ի. Արբատովը (Ռ. Դրիգոյի «Առլեկինադա», 1938, Բ. Վ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը», 1939, Ա. Տիգրանյանի «Անուշ», Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»): 1939-ին Արամ Խաչատրյանը գրել է ազգ. առաջին՝ «Երջանկություն» Բ., որի բեմադրության մեջ Ի. Արբատովը համադրել է դաս. Բ-ի և հայկ. ժող. պարերի ձևերն ու լեզուն: 1940–41-ին Մ. Մոիսեևի ղեկավարությամբ բեմադրվել են Ա. Կ. Գլազունովի «Ռայմոնդա», Ա. Տեր-Վևոնդյանի «Անահիտ», Չ. Պունիի «Սապատավոր ձիուկը» Բ-ները:

1945–60-ական թթ-ին խաղացանկը համալրվել է ազգ. Բ-ներով՝ Ա. Խաչատրյանի «Գայանե» (1947, բալետմայստեր՝ Ն. Անիսիմովա), «Խանդութ» (ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության, 1951, բալետմայստերներ՝ Վ. Վարկովիցկի, Զ. Մուրադյան, 1960, բալետմայստերներ՝ Զ. Մուրադյան, Լ. Լավրովսկի), Գ. Եղիազարյանի «Սևան» (1956), Է. Հովհաննիսյանի «Մարմար» (1957, երկուսն էլ՝ բալետմայստեր Ի. Արբատով), Է. Խաղագործյանի «Սոնա» (1957, բալետմայստերներ՝ Զ. Մուրադյան, Ա. Ղարիբյան) են: Բեմադրվել են նաև ռուս և արևմտաեվրոպացի դաս. կոմպոզիտորների Բ-ներ՝ «Շեհերազադե» (ըստ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի սիմֆ. սյուիտի, 1947, բալետմայստեր՝ Վ. Բուրմայստեր), Լ. Դելիբի «Կոպելիա» (1948, բալետմայստերներ՝ Վ. Իվաշկին, Զ. Մուրադյան), Ի. Վ. Սիրոզովի «Բժիշկ Այբոլիտ», Ռ. Մ. Գլիերի «Պղնձե հեծյալը» (երկուսն էլ՝ 1949, բալետմայստեր՝ Ի. Արբատով), «Կարմիր կակաչ» (1951, բալետմայստեր՝ Գ. Յազվինսկի), Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ» (1954, բալետմայստեր՝ Զ. Մուրադյան), Պ. Ի. Չայկովսկու

Տեսարան Ա. Ադանի «Ժիզել» բալետի բեմադրությունից (1960, ԵՕԲԹ)

«Կարապի լիճը» (1955, բալետմայստեր՝ Վ. Վարկովիցկի) են:

1940–50-ական թթ-ին հայկ. բալետի առաջատար պարողներն էին Լյուբով Վոինովա-Շիկանյանը, Ռուսուդան Թավրիզյանը, Ելենա Արարատովան, Պավլինե Բուռնազյանը, Սարգիս Սարգսյանը, Զարեհ Մուրադյանը, Գ. Գեորգիյանը, երիտասարդ պարող-պարուհիներ Թերեզա Գրիգորյանը, Սիլվա Մինասյանը, Վանուշ Խանամիրյանը, Ֆրունզե Ելանյանը, Ազատ Ղարիբյանը, որոնք մեծապես նպաստել են ազգ. կատարող. ոճի ձևավորմանը: 1947-ին Լենինգրադից հրավիրված արտիստներ Լյուդմիլա Սեմանովան, Իրինա Ուշակովան և Վ. Բորիսովն իրենց արվ-ով հայկ. Բ. հարստացրել են լենինգրադ. պարարվ-ի դպրոցի կատարող. ավանդույթներով: 1950-ական թթ-ին թատերախումբը համալրվել է նոր պարողներով՝ Բելա Հովնանյան, Վիլեն Գալստյան, Աննա Մարիկյան, Ջուլիետ Քալանթար-

յան, Նորայր Մեհրաբյան: 1960-ական թթ-ից խմբի առաջատարներից էին Էլվիրա Մնացականյանը, Հովհաննես Դիվանյանը, Ռուդոլֆ Խառատյանը, Ռաֆայել Ավնիկյանը, Սերգեյ Պետրոսյանը, Թամար Այդինյանը, Նադեժդա Դավթյանը, Բելա Խուդինյանը, Ելենա Պավլիդին, Նադեժդա Խառատյանը:

1960-70-ական թթ-ին հայ կոմպոզիտորներն ստեղծել են մի շարք բալետ. պարտիտուրներ, որտեղ համադրված են սիմֆ. երաժշտության և երաժշտ. թատրոնի ձևերն ու արտահայտչամիջոցները (Է. Արիստակեսյանի «Պրոմեթևս», Կ. Օրբելյանի «Անմահություն» Բ-ները, Ե. Երկանյանի «Օրեսթես» և «Էդիպ արքա» խորեոգրաֆիկ սիմֆոնիաները, Է. Հովհաննիսյանի «Անտունի» Բ.՝ խմբերգ. դրվագներով, «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը): Ընդլայնվել է նաև Բ-ի թեմատիկան (Է. Հովհաննիսյանի «Հավերժական կուռք», Գ. Եղիազարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ», Գ. Հախինյանի «Ախթամար», «Ռուբենի», «Լոռեցի Սաքո», Ա. Խաչատրյանի «Դիմակահանդես», Ս. Շաքարյանի «Ֆիզիկոսներ», Բ. Սակիլարիի «Չոփչոփիկ», Հ. Մելիք-Սիուրադյանի «Կարմիր գլխարկ», ևն): 1961-67-ին Ե. Չանգայի ղեկավարությամբ բեմադրվել են Ա. Խաչատրյանի «Սպարտակ» (1961), Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը» (1963), Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ» (1965), Է. Արիստակեսյանի «Պրոմեթևս» (1967) և այլ բալետներ: Մ. Մարտիրոսյանը (1967-71-ին և 1989-92-ին՝ ԵՕԲԹ գլխ. բալետմայստեր) իր բեմադրություններով (Գ. Եղիազարյանի «Անուրջների լիճը», 1967, Է. Հովհաննիսյանի «Անտունի», Կ. Օրբելյանի «Անմահություն», երկուսն էլ՝ 1969, Ա. Խաչատրյանի «Գայանե», 1970, ևն) ազգ. պարարվ-ը հարստացրել է գեղ. նոր արտահայտչամիջոցներով: 1972-ից (ընդհատումներով) բալետի խումբը ղեկավարում է Վ. Գալստյանը, բեմադրություններից են Է. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը (1976), Արամ Խաչատրյանի «Գայանե» (1974), «Սպարտակ» (1978) Բ-ները: 1973-ից թատրոնում է աշխատել բալետմայստեր Ա. Ասատրյանը (Ս. Բալասանյանի «Լեյլի և Մեջնուն»՝ 1973, Կ. Օրբելյանի «Անմահություն»՝ 1975, Է. Միրզոյանի «Լույսի սիմֆոնիա»՝ 1977, Մ. Ռավելի «Դափնիս և Քլոյե»՝ 1980, Գ. Եղիազարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ»՝ 1982, ևն): Մ. Մնացականյանը բեմադրել է Է. Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» (1966) և 1 գործողությամբ «Համլետ» (Դ. Դ. Շոստակովիչի երաժշտությամբ), «Սպերաբալիլիս» (Բ. Բարտոկի երաժշտությամբ), «Լորկիանա» (իսպ. ժող. երաժշտությամբ) Բ-ները:

1960-80-ական թթ-ին ԵՕԲԹ-ում Բ-ներ են բեմադրել Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Օդեսայի ՕԲԹ-ների բալետմայստերներ Ս. Սերգեևը, Ն. Դուդինսկայան, Յ. Ժդանովը, Օ. Վինոգրադովը, Տ. Նիկիտինան, Գ. Ալեքսիձեն, Ն. Ռիժենկոն, Վ. Սմիռնով-Գոլովանովը: Տարբեր տարիների բալետ. ներկայացումներ են ղեկավարել դիրիժորներ Կ. Սարաջևը, Գ. Բուդաղյանը, Հ. Ոսկանյանը, Ա. Քաթանյանը, Դ. Շիկանյանը, Ռ. Ստեփանյանը, Գ. Վարժապետյանը, Յ. Դավթյանը, Վ. Չարչօղլյանը և ուր.: Ներկայացումները ձևավորել են Ս. Ալաջալովը, Ս. Արուտչյանը, Ա. Միրզոյանը, Կ. Մինասյանը, Մ. Ավետիսյանը, Ա. Շաքարյանը, Ռ. Նալբանդյանը, Ա. Դանդուրյանը, Բ. Մեսերերը, Մ. Արուտչյանը, Խ. Եսայանը, Ռ. Էլիբեկյանը, Ա. Չաքմաքչյանը և ուր.: 1970-80-ական թթ-ին թատերախմբում էին նաև երիտասարդ պարողներ Ս. Աբրահամյանը, Ս. Բարանովը, Գ. Գալստյանը, Գ. Շաքարյանը, Մ. Գյուրջյանը, Ե. Հայրապետյանը և ուր., դասատու-փորձավարներ Ե. Արաբատովան, Ի. Ուշակովան, Բ. Հովնանյանը, Դ. Ալեքսանյանը, Մ. Սիուրադյանը:

Տևսարան Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի բեմադրությունից. Սպարտակ՝ Վիլեն Գալստյան, Ֆրիգիա՝ Ջուլիետ Քալանթարյան (1961, ԵՕԲԹ)

Տևսարան Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի բեմադրությունից (1971, ԵՕԲԹ)

1990-ական թթ-ից բեմադրվել են Ս. Լուսիկյանի «Ճպուռն ու մրջյունը», Տ. Մանսուրյանի «Ձյունե թագուհին» (1990), Լ. Ճգնավորյանի «Օթելլո» (1993), Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը» (1998, բալետմայստեր՝ Մ. Մարտիրոսյան), Ժ. Բիզե-Ռ. Շչեդրինի

Տեսարան Գ. Եղիազարյանի «Ախա Գեղեցիկ և Շամիրամ» բալետի բեմադրությունից. Շամիրամ՝ Էլվիրա Մնացականյան, Նինոս՝ Հովհաննես Դիվանյան (1973, ԵՕԹԹ)

Կարո Բալթայան

Արուսյակ Բալթայան

«Կարմեն-սյուիտը» (1998, բալետմայստեր՝ Ա. Գրիգորյան), Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ» (1999), Ա. Խաչատրյանի «Գայանե» (2004, երկուսն էլ՝ բալետմայստեր՝ Վ. Գալստյան), «Հավերժություն» (2003, բալետմայստեր՝ Մ. Մարտիրոսյան), «Սպարտակ» (2009, բալետմայստեր՝ Յ. Ն. Գրիգորովիչ), Է. Հովհաննիսյանի «Վարդանանք» (2008), «Ստաբատ մատեր» (ըստ Ջ. Պերգոլեզիի երաժշտության), «Բախի կրքերը» (ըստ Յ. Ս. Բախի երաժշտության, երկուսն էլ՝ 2010), Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» (2011), Մ. Ռավելի «Բոլերո» (2012, բոլորը՝ բալետմայստեր՝ Ռ. Խառատյան) և այլ Բ-ներ: Բ-ի զարգացմանը նպաստել են դիրիժորներ Օ. Դուրյանը, Յ. Դավթյանը, Կ. Դուրգարյանը և ուր.: 1990-ական թթ-ից թատերախումբը համալրվել է երիտասարդ պարողներով՝ Ս. Առուստամյան, Մ. Դիվանյան, Ս. Փիրումյան, Ժ. Սարխոշյան, Մ. Հովհաննիսյան, Ս. Վարդանյան, Ի. Մկրտումյան, Հ. Հարությունյան, Ա. Սարգսյան, Ռ. Մուրադյան, Ս. Ավետիսյան, Ջ. Հարությունյան, Ա. Գևորգյան, Ն. Մարտիրոսյան, Ս. Փիրումյան և ուր.:

Գրկ. *Շ ա ր ա ս ա ն, Թրքահայ բեմը եւ իր գործիչները (1850–1908), ԿՊ, 1914: Մ կ ր տ չ ե ա ն Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, 2, Ե., 1962, 1969: Ակ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն, [Ալբոմ], կազմ.՝ Կ. Մարկոսյան, Ե., 1984: Ա ս ա տ ր յ ա ն Ա., Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011: Ա ռ ա ք ե լ յ ա ն Ս., Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ե., 2017: Саргсян Н., Ашот Асатурян – хореограф последней трети XX века, Е., 2011.*

ԲԱԼԵՏՄԱՅՍՏԵՐ (գերմ.՝ Ballettmeister – բալետի վարպետ), ***բալետի***, համերգ. խորեոգրաֆիկ համարների, նաև օպերայում, օպերետում, մյուզիքլում, դրամատիկ. ներկայացման մեջ պար. տեսարանների, մենապարերի հեղինակ և բեմադրող-ռեժ.: Հենվելով գրական սցենարի՝ լիբրետտոյի թեմատիկ զարգացման և երաժշտ. կառուցվածք. ձևերի, ներկայացման նկարչ-դեկորատիվ ձևավորման վրա, օգտագործելով պարի և մնջախաղի արտահայտչամիջոցները՝ ստեղծում է բալետի բեմ. գործողության ռեժ. կոմպոզիցիան և խորեոգրաֆիկ տեքստը: Բեմադրման տարբեր փուլերում համագործակցում է կոմպոզիտորի, դիրիժորի, նկարչի, սցենարիստի և դրամատիկ. տեսարանների ռեժիսորի հետ: Գեղ. մտահղացման իրագործումն անմիջականորեն պայմանավորված է պարող-արտիստներով: Բալետի բեմադրությանը մեծապես նպաստում է նաև բալետմայստեր-փորձավարը, որի շնորհիվ պարողները յուրացնում են դերապարերը:

Հայկ. բալետի ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստել են Բ-ներ Ի. Արբատովը, Ա. Ղարիբյանը, Վ. Գալստյանը, Մ. Մարտիրոսյանը, Ե. Չանգան, Ջ. Մուրադյանը, Ա. Ասատրյանը և ուր.:

ԲԱԼԹԱՅԱՆ Կարո Սարգսի [ծ. 1934, Պլովդիվ (Բուլղարիա)], ջութակահար, մանկավարժ: Սարգիս ***Բալթայանի*** որդին: Ավարտել է Պլովդիվի կոնսերվատորիան (1959): Շուրջ 30 տարի դասավանդել է տեղի երաժշտ. ակադ-ում: 1991-ին Պլովդիվում հիմնադրել է Հայկ. մշակույթի և արվ-ի ընկերակցությունը, եղել նրա նախագահը: Որպես լավագույն մանկավարժ՝ ընտրվել է Քեմբրիջի կենսագր. միջազգ. կենտրոնի անդամ: 1999-ին առաջին ելույթն ունեցել է «Քառնեգի Հոլլում» (ԱՄՆ): Նվագել սովորել է 4 տարեկանում՝ «Դոբրին Պետիով» բարձրագույն երաժշտ. դպրոցում (ղեկ.՝ Ռ. Իվանչևա): Եղել է Լոս Անջելեսի «Քոլբուռն» կոնսերվատորիայի պրոֆ. և Օրանժ Քաունթի արվ-ների դպրոցի դաշնամուրի ծրագրերի համակարգող: «Կիրիլ և Մեֆոդի» շքանշան (Բուլղարիա):

Բ-ի դուստրը՝ Արուսյակ Բ. (ծ. 18.05.1971, Պլովդիվ), ջութակահարուհի: Ավարտել է Պլովդիվի «Դոբրին Պետիով» բարձրագույն երաժշտ. դպրոցը, ապա՝ ԱՄՆ-ի Կենտր. Արկանզասի համալսարանը (բակալավրի աստիճան): Բրիտ. խորհրդի կրթաթոշակով ուսումը շարունակել է Լոնդոնի երաժշտության և դրամայի «Հիլդհոլ» դպրոցում (ղեկ.՝ Ի. Նիման): Երաժշտության մագիստրոսի աստիճան ստացել է Հվ. Կալիֆոռնիայի համալսարանում (2003, ղեկ.՝ Մ. Չալիֆուրի):

Հանդես է գալիս Լոս Անջելեսի ֆիլհարմոնիայի սիմֆ., «Նյու Վեսթ» սիմֆ. և կամեր. նվագախմբերի հետ: Մենահամերգներով շրջագայել է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Չեխիայում: 1993-ին Հոլանդիայում թողարկել է խտասալիկ (Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտը):

Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. (1990, Նյու Յորք), Wid-American («Լեոպոլդ Շոպմեյքեր» մրց., 1991, 1995, Կանզաս Սիթի), «Բեթհովեն ակումբի» («Ռուդոլֆ Լիպիցեր» մրց., 1996, Իտալիա), «Maurice Warshaw» (Մեծ Բրիտանիա, 1997), Բերբանկի ֆիլհարմոնիկ (Մեծ մրց., 2002) և այլ մրցույթների դափնեկիր:

Որդին՝ Սարգիս Բ. կրտսեր (ծ. 1976, Պլովդիվ), դաշնակահար: Ավարտել է Ատելայտի (ԱՄՆ) երաժշտ. քոլեջը: Քրոջ՝ Արուսյակի հետ 1999-ին հրավիրվել է Լոս Անջելես՝ հանդես գալու միջազգ. գալա համերգում, 2000-ին Լաս Վեգաս՝ դաշնամուրի մանկավարժության համաշխ. կոնվենցիային: «Դոբրին Պետիով» երաժշտ. բարձրագույն դպրոցում շահել է կրթաթոշակ՝ Կալիֆոռնիայի Հվ. համալսարանում սովորելու համար: 2002-06-ին՝ պրոֆ. Ջ. Փերիի օգնական-դասախոս, 2005-08-ին՝ Կալիֆոռնիայի պետ. համալսարանի դաշնամուրի ֆակ-ի անդամ, ապա՝ Ալաբամայի համալսարանի (ք. Հանդսվիլ) երաժշտության դոցենտ: «Դաշնամուրի վիրտուոզներ» (1987, Չեխոսլովակիա) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր: USC դաշնամուր. համերգ-մրցույթի հաղթող (1999):

Գրկ. *Բրուտեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996, էջ 262-263:*

ԲԱԼԹԱՅԱՆ Սարգիս Կարոյի (1897-1989), խմբավար, կոմպոզիտոր, մանկավարժ: Կարո *Բալթայանի* հայրը: 1920-ից դասավանդել է Պլովդիվի դպրոցներում: Գրել է երգեր, խմբերգեր ու պարեղանակներ, նաև «Վարդ և սեր» (1932), «Անառակ որդին» (1942), «Մոլորված ամուսիններ» (1947), «Կարմիր զինվոր» (1947) երաժշտ. կատակերգությունները, «Միգանուշների պարը» (1921) բալետը և այլ գործեր: 1944-ից ղեկավարել է «Երևան» միության Պլովդիվի մասնաճյուղի 100-հոգանոց երգչախումբը (1952-ից՝ Ա. Խաչատրյանի անվ.). երկացանկում՝ հայ, բուլղար և այլազգի դաս. կոմպոզիտորների խմբերգ. երկերից: Բ. երգչախմբի հիման վրա ստեղծել է օպեր. խումբ, որը 1933-51-ին Պլովդիվում, Վառնայում և Սոֆիայում ներկայացրել է իր, նաև բուլղ. և դաս. երաժշտ. կատակերգություններ:

«Կիրիլ և Մեֆոդի» շքանշան (1952, Բուլղարիա):

Գրկ. *Բրուտյան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996, էջ 261-262:*

ԲԱԼԻԵՎ Նիկիտա Ֆեոդորովիչ (Բալյան Մկրտիչ) (1877, այլ տվյալներով՝ 1886, Նոր Նախիջևան-03.09.1936, ԱՄՆ), էստրադայի արտիստ (կոնֆերանսիե), ռեժ.: 1906-11-ին՝ ՄԳԹ դերասան: 1908-ին Մոսկվայում հիմնադրել և ղեկավարել է «Չղջիկ» թատրոն-կաբարեն, որն իր տեսակով եզակի էր Ռուսաստանի թատերարվ-ում: Թատրոնում բեմադրվել են փոքր պիեսներ, օպերաներ, կազմակերպվել համերգներ, ցուցադրվել հանպատրաստից ստեղծված զավեշտապատումներ:

Բ. օժտված էր վառ երևակայությամբ, հումորի նուրբ զգացողությամբ, ռեժ. բարձր վարպետությամբ: Թատեր. և օպեր. բեմադրություններին, համերգներին մասնակցել են հայազգի արվեստագետներ Թ. Դեյկարխանովան, Թ. Օգանեսովան, Ե. Թումանովան, Գ. և Ա. Բուրջալյանները, Ն. Լ. Տարասովը (Թորոսյան):

Բ. սերտ կապեր է ունեցել մոսկվաբնակ հայ մտավորականների հետ, ելույթներով հաճախ հանդես է եկել Լազարյան ճեմարանում, մասնակցել Նոր Նախիջևանի հայության գեղ-հաս. գործունեությանը: 1920-ին «Չղջիկ» թատրոնի մի խմբով շրջագայել է Փարիզում, Նյու Յորքում: 1926-ին Փարիզում Մ. Սարյանի ձևավորմամբ բեմադրել է «Զուլեյկա» մնջախաղ-ներկայացումը:

Գրկ. *Эфрос Н., Театр «Летучая мышь» Н. Ф. Балиева, 1918; М. Кузнецов Е., Из прошлого русской эстрады, М., 1958, с. 298-309.*

ԲԱԼԼԱԴ (ֆրանս.՝ ballade, պրովանս.՝ balada, < լատ. ballo – պարել), նախապես՝ ժող. պարերգ: Միջնադարում՝ ռոման. ժողովուրդների քնար. խմբային պարերգ՝ կրկներգով: XII-XIII դդ-ում եղել է տրուբադուրների և տրուվերների երաժշտաբանաստեղծ. կարևոր ժանրերից: Վերածննդի դարաշրջանում Բ. դարձել է քնար. բնույթի, ձևավորվել է նրա բազմաձայն տեսակը (առավել զարգացած նմուշներ ստեղծել է Գ. դը Մաշոն՝ Ֆրանսիայում): XV դ-ում այն մոտեցել է շանսոնին: Աստիճանաբար (հատկապես՝ Անգլիայում) ձևավորվել է որպես պատմող., սյուժետ. բնույթի երգ (կատարել են մենակատար երգիչն ու երգչախումբը):

Վոկալ Բ-ի վերելքը պայմանավորված էր XVIII դ-ի կեսի պրոֆեսիոնալ պոեզիա-

Սարգիս Բալթայան (կրտսեր)

Նիկիտա Բալիև

Ն. Բալիևի «Չղջիկ» թատրոնի 1923-1924-ի թատերաշրջանի ծրագիրը

յում Բ–ի վերածննդի հետ: Ռոմանտիզմի շրջանում երաժշտության մեջ ձևավորվել է գործիք. Բ., որտեղ էպիկ. պատումը համադրվել է սուր դրամատիկ., հաճախ՝ սյուժետ. զարգացման, իսկ դաշնամուր. քնարականությունը՝ գեղանկարչ. պատկերների հետ: Լավագույն նմուշներ են Ֆ. Շոպենի 4 Բ–ները:

Յուրի Բալյան

Ժամանակակից երաժշտության մեջ տարբերում են Բ–ի բանահյուս., հերոս. և այլ տեսակներ:

Հայ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ հայտնի են Ա. Սպենդիարյանի «Ձկնորսն ու փերին», Ռ. Մելիքյանի «Ծերուկ ալևոր կար մի թագավոր», Ա. Խաչատրյանի «Բալլադ բասի համար», Ա. Տեր–Ղևոնդյանի «Բալլադ 26 կոմիսարների մասին» (ձայնի և նվագախմբի համար), Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադը»՝ դաշնամուրի և նվագախմբի համար, Հ. Ստեփանյանի, Ա. Հարությունյանի դաշնամուրի և այլ Բ–ներ:

ԲԱԼԼԱԴԱՅԻՆ ՕՊԵՐԱ (անգլ.՝ ballad opera), կոմիկ. օպերայի անգլ. տեսակը. տարածվել է XVIII դ–ում Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում: Ծագումը կապված է օպերա–երկխոսության և անգլ. երգիծ. կոմեդիայի հետ: Բ. օ. հաճախ սուր երգիծ. բնույթի է, երբեմն էլ պալատ. օպերա–սերիաների պարոդիա է: Երգերն ու պարերն ընդմիջվել են բանահյուսությունից փոխառած (կամ կոմպոզիտորների ստեղծած) խոսք. պատկերներով: Բ. օ–ի առաջին դաս. նմուշը Յ. Ք. Փեփուշի «Աղքատների օպերան» է (1728), որտեղ համարները կառուցված են երգ. մոնտաժի սկզբունքով: Այդ օպերայի նմանակումներից առավել հայտնի է Կ. Վեյլի «Երեքգրոշանոց օպերան» (ըստ Բ. Բրեխտի, 1928):



Վլադիլեն Բալյան

Բ. օ–ի ազդեցությամբ ստեղծվել է նաև գերմ. զինգշպիլը (կոմիկ. օպերայի տեսակ):

ԲԱԼՅԱՆ Յուրի Արմենակի (ծ. 21.10. 1938, Երևան), շեփորահար: ՀՀ վաստ. արտիստ (1990): Ավարտել է ԵՊԿ (1965, Մ. Խաչատրյանի դասարան) և ասպիրանտուրան: 1960–66–ին՝ ԵՕՖԹ սիմֆ. նվագախմբի մենակատար, 1966–ից՝ Ֆիլհարմոնիկ նվագախմբի կոնցերտմայստեր, շեփորահար: 1967–ից դասավանդում է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 1991–ից, ամբիոնի վարիչ՝ 1992–2002): Կատարել է շեփորի (նվագախմբի և դաշնամուրի հետ) համար գրեթե բոլոր կոնցերտները, ֆանտազիաները, սկերցոները, նաև Ա. Հարությունյանի, Ա. Աճեմյանի, Բ. Կոտոյանի, Յ. Հայդնի, Ջ. Գերշվինի և ուր. երկերից: Եղել է հայ կոմպոզիտորների շեփորի համար ստեղծագործությունների առաջին կատարողը:

Գրել է գործեր շեփորի և դաշնամուրի, փող. գործիքների եռյակի, քառյակի, կվինտետի, փող. նվագախմբի համար («Տասներկու ստեղծագործություն շեփորի և դաշնամուրի համար», 2008, «Մանկական պիեսներ շեփորի և դաշնամուրի համար», 2012): Բ–ի կատարումներն առանձնանում են թավշե հնչողությամբ, տեխ. վարպետությամբ: Հանդես է եկել Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և այլ քաղաքների սիմֆ. նվագախմբերի հետ:

ԽՍՀՄ համամիութ. մրցույթի (1963, Լենինգրադ), Հանրապետ. փառատոնի (1965, ոսկե մեդալ) դափնեկիր:

ԲԱԼՅԱՆ Վլադիլեն Ալեքսանդրի (ծ. 25. 04.1924, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1990), ՀՀ ժող. արտիստ (2011): Ավարտել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը, ԵՊԿ խմբավարության (1952) և կոմպոզիցիայի (1967) բաժինները: 1952–54–ին՝ Լենինականի Ք. Կարա–Մուրզայի անվ. երաժշտ., 1955–61–ին՝ Երևանի պարարվ–ի ուսումնարանների, 1964–66–ին՝ Հայֆիլհարմոնիայի տնօրեն, 1961–64–ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի երաժշտ. հաղորդումների գլխ. խմբագիր, 1966–72–ին՝ Ա. Սպենդիարյանի տուն–թանգարանի հիմնադիր–տնօրեն, 1972–75–ին՝ Հայաստանի էստրադ. նվագախմբի գեղ. ղեկ. և տնօրեն, 1981–86–ին՝ Հայաստանի ժող. գործիքների նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

Գրել է «Հազարան բլբուլ» բալետ. սյուիտը, «Ամբոխները խելագարված» պոետորիան, ռեքվիեմ՝ ա կապելլա երգչախմբի համար, «Սիրո անուն առեղծվածը», «Ճակատագիր» կամեր. օպերաները, «3 էջ կնոջ օրագրից»՝ ձայնի և դաշնամուր. տրիոյի համար, մյուզիքլներ, 2 վոկալ շարքեր, ռոմանսներ, երգեր («Սերս գաղտնի թող մնա», «Գյումրի–Լենինական», «Տարիներ հետո», «Կուզես լինեմ», «Սուսալեռ», «Քեզ հետ, Հայաստան» ևն):

Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգ. ակադ–ի անդամ (2001):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002):

Երկ. *Թաթուլ Ալթունյան, Ե., 1977: Սերս գաղտնի թող մնա: Երգեր, ռոմանսներ, խմբերգեր, Ե., 1991: Ամեն տեսակ երգ երգեցի: Երգերի ընտրանի, Ե., 2008: Мои песни – о любви, М., 1998; Страницы из дневника композитора, М., 1999; И все они были… Страницы из дневника композитора, Е., 2016.*

Գրկ. *Հովհաննիսյան Թ., Միրո առեղծվածը: Էջեր կոմպոզիտորի կյանքից, Ե., 1999:*

ԲԱԼՈՒԼՅԱՆ-ՔՈՒՉՈՒԿՅԱՆ (Դել Գրանդե) Սեդա Տիգրանի (ծ. 1936, Բեյրութ), երգչուհի (մեցցո սոպրանո): Ավարտել է Լիբանանի արվ-ի ակադ-ը (1958), Վենետիկի կոնսերվատորիան, կատարելագործվել Հռոմում (ղեկ.՝ Մ. Գարբոնե): 1959-ին Վենետիկի «Լա Ֆենիչե» օպեր. թատրոնում կազմակերպված երաժշտ. փառատոնում, որպես մենակատարուհի, երգել է 2 օրատորիայում: 1960-ից Դոննա Ավրորայի (Դ. Չիմառոզայի «Ձանինի և Բեռնարդոնի») դերերգով հանդես է եկել Վենետիկի, Նեապոլի և այլ քաղաքների օպեր. թատրոններում: Դերերգերից են նաև Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն), Ազուչենա, Էբոլի, Ամներիս (Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Դոն Կառլոս», «Աիդա»), Ադալջիզա, Լիզա (Վ. Բելլինիի «Նորմա», «Սոմնամբուլա») ևն:

Համերգներով (իտալացի կոմպոզիտորների, նաև հայկ. երգեր, օպեր. արիաներ) շրջագայել է նաև Բեյրութում, Դամասկոսում, Հալեպում և Թեհրանում: 1991-ին բարեգործ. առաքելությամբ այցելել է ՀՀ:

ԲԱԽՏԻԿՅԱՆ Արայիկ Սերյոժայի (ծ. 13.02.1962, ք. Գավառ), դուդուկահար: Ավարտել է ԵՊԿ (1987) և ասպիրանտուրան (1991, ղեկ.՝ Ջ. Գասպարյան): 1988–91-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: 2000-ից բնակվում է Փարիզում: 2011-ին հիմնադրել է երաժշտ. դպրոց: Մասնակցել է միջազգ. փառատոների: Հանդես է եկել սիմֆ. նվագախմբերի (Բեռլինի ֆիլհարմոնիկ ևն), անսամբլների հետ, երգեհոնի նվագակցությամբ: Կատարումները հնչել են ֆիլմերում և ներկայացումներում: Համերգներով շրջագայել է ՀՀ-ում, Կանադայում, Ասիայի և Եվրոպայի երկրներում. նվագացանկում՝ հայ (այդ թվում՝ Ա. Տերտերյանի 3-րդ սիմֆոնիան) և գերմանացի կոմպոզիտորների երկերից:

Սայաթ-Նովայի անվ. հանրապետ. մրցույթի (1987), Լլանգոլլենի միջազգ. փառատոնի (2004) 1-ին մրց-ներ:

ԲԱԿՈՒՆՑ Ակսել Վահանի (22.11.1946, Երևան–13.01.2012, Երևան), կոնտրաբասահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2006): Աննա *Բակունցի* հայրը: Ավարտել է ԵՊԿ (1968): Նվագել է Երևանի «Կոունկ» (1966–69, նաև հիմնադիրներից), «Սերպանտին» (1969-ից, 1971–81-ին՝ գեղ. ղեկ.) անսամբլներում, 1969–72-ին, միաժամանակ՝ «Լ. Մալխասյան, Ա. Թութունջյան, Ա. Ջաքարյան, Ա. Բակունց» քառյակում: 1985-ից՝ Հայհամերգի էստրադ. ստուդիայի (1996-ից՝ Երևանի էստրադ. և ջազ. արվ-ի քոլեջ) հիմնադիր-տնօրենը (1986–92-ին՝ նաև գեղ. ղեկ.):

Ակսել Բակունցը կլոյթի պահին

Այսրկովկաս. երաժիշտ-կատարողների 3-րդ մրցույթի դափնեկիր (1969, Երևան), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2010):

ԲԱԿՈՒՆՑ Աննա Ակսելի (ծ. 1971, Երևան), երգեհոնահարուհի: Ակսել Վ. *Բակունցի* դուստրը: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ., Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցները, ԵՊԿ տեսության բաժինը (1993) և ասպիրանտուրան (2000), հաճախել երգեհոնի դասընթացներին (Վ. Ստամբոլցյանի դասարան): Կատարելագործվել է Համբուրգի բարձրագույն երաժշտ. ակադ-ում (ղեկ-ներ.՝ Վ. Յերեր՝ երգեհոն, Դ. Վագլեր՝ երգեհոն. կոմպոզիցիա): 2008-ից դասավանդում է ԵՊԿ-ում (երգեհոն), Երևանի էստրադ. և ջազ. արվ-ի պետ. քոլեջում (դաշնամուր):

Արայիկ Բախտիկյան

Մենահամերգներով շրջագայել է Գերմանիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, համագործակցել հանրահայտ նվագախմբերի և դիրիժորների հետ: Որպես մենակատարուհի՝ հանդես է եկել դիրիժորներ Վ. Մարտիրոսյանի, Տ. Հեքեքյանի, Ռ. Մլքեյանի, Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ: 2014-ից մենահամերգներով Ս. Պետերբուրգում պարբերաբար մասնակցում է միջազգ. երգեհոն. փառատոներին («Սպիտակ գիշերների ռոմանտիկ երգեհոնները», «Երգեհոնային դպրոցներ՝ Արևմուտք-Արևելք»). նվագացանկում՝ արևմտաեվրոպ. և հայ հոգևոր երաժշտության, նաև ժամանակակից հայ կոմպոզիտորների չկատարված ստեղծագործություններ:

Աննա Բակունց

Երգեհոնահարների Յ. Ս. Բախի անվ. միջազգ. մրցույթի «Յոհան Սեբաստիան Բախ» մրց. (2000, Լայպցիգ):



Բաղդասար Դպիրի «Տաղեր» գրքի (2007) շապիկը

ԲԱՂԴԱՍԱՐ ԴՊԻՐ, Պաղտասար Դպիր, Գրիգորյան, Կեսարյան, Կոստանդնուպոլսեցի (07.06.1683–30.07.1768, Կ. Պոլիս), բանաստեղծ, երաժիշտ, գիտնական, հրատարակիչ: Սովորել է Կ. Պոլսի մասնավոր վարժարանում, աշակերտել Էջմիածնի կաթողիկոս. նվիրակ Աստվածատուր եպիսկոպոս Զուղայեցուն: 1741-ից՝ Գում Գափուի դպրանոցի տեսուչ: Ստեղծագործ. որոշակի վերաբերմունք է ցուցաբերել հայ հին գուսան., նաև ժամանակի արլ. ու աշուղ. երգարվ-ի նկատմամբ («Տաղարան փոքրիկ Պաղտասար Դպրի ասացեալ զանազան գունով», 1723): Աշխարհիկ, մասնավորապես՝ սիրային տաղերի եղանակներում օգտագործել

Հարված Բաղդասար Դպիրի «Ի ննջմանէդ արքայական» տաղից

է հայկ. ավանդ., աշուղ., հին եկեղեց., նաև արլ. երաժշտության տարրեր:

Բ. Դ-ից պահպանվել է «Ի ննջմանէդ արքայական» (1707) սիրային տաղը, որն ընկալվում է նաև որպես այլաբանորեն շարադրված հայրենասիր. երգ: Դասավանդել է մայրենի լեզվի քերականություն, երաժշտություն և այլ առարկաներ, կազմել ու հրատարակել է դրանց ուսուցման դասագրքեր: Շուրջ 40 տարի (1720–60) կազմել և խմբագրել է բազմաթիվ հայագիտ. երկերի բնագրեր, հրատարակել դաս. հեղինակների մի շարք գործեր:

Երկ. *Տաղիկներ սիրոյ և կարօտանաց, Ե., 1958: Տաղիկներ, 1985: Տաղեր, Ե., 2007:*

Գրկ. *Լ ևոնյան Գ., Պաղտասար Դպիր քերական, բանաստեղծ և երաժիշտ 18-րդ դարում, «Տեղեկագիր ՀԽՍՀ գիտ. և արվեստի ինստ-ի», 1927, № 2:*

Անահիտ Բաղդասարյան

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Անահիտ Հովհաննեսի (ծ. 27.09.1947, Լենինական), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1990), դոցենտ (2009): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի բաժինը (1965, դասատու՝ Է. Ոսկանյան), ԵՊԿ վոկալ-տես. ֆակ-ը (1973, Գ. Չերոտարյանի դասարան): 1970–73-ին դասավանդել է Երևանի Ք. Քուշնարյանի անվ., 1992–95-ին՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցներում, 1973–82-ին՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1973–75-ին՝ ՀՊՄԻ-ում, 1982-ից՝ ԵՊԿ-ում, միաժամանակ՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ժող. երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ ժող., աշուղ., հոգևոր երաժշտությանը, կոմպոզիտոր. ստեղծագործությանը: Խմբագրել է «Չայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (Վաղ-պատ, 1878, 2012) և «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ» (Վաղ-պատ, 1877, 2017) հատորների՝ նոր հայկ. ձայնագրությունից եվրոպ. նոտագրութամբ փոխադրությունները (խմբ.՝ Ա. Մուշեղյան): Կազմել է Կ. Խուդաբաշյանի «Կենսամատենագիտությունը» (1999), հեղինակ է «Հայկական ժողովրդական նվագարաններ» (2008, Ա. Փահլևանյանի հետ), «Հայկական նոտագրության ձեռնարկի» (2010):

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Արև Գրիգորի (02.04.1913, Շուշի–17.02.1994, Երևան), պարուհի, երգչուհի: ՀԽՍՀ ժող. (1961)

Ա. Բաղդասարյանը կոստի պահին

արտիստ: Ավարտել է Բաքվի տնտեսագիտության ինստ-ը (1936), պարարվ-ի ուսումնարանը (1941): 1937-ին՝ Ադրբեջանի ժող. երգի-պարի անսամբլի մենապարուհի: 1942-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենա-

կատարուհի, 1946–48-ին հանդես է եկել Արտեմի *Այվազյանի* ջազ. նվագախմբում, 1955-ից՝ Հայկ. ժող., 1985–87-ին՝ «Բարեկամություն» երգի-պարի անսամբլների մենակատարուհի (նաև ղեկ.): Համադրել է երգը, պարը և դերասան. խաղը:

Երգացանկում նկատելի տեղ են գրավել հայ ժող. կենցաղ. տեսարանները («Նախշուն բաջի» ևն), աշխարհի ժողովուրդների ազգ. պարեր: Ուշագրավ են նաև «Գարնան ձայնը», «Սիրելի մարդիկ», «Աստղիկ, աստղիկ», «Զանգեզուր» և այլ պարերգեր: ՀՄՊ (1941–45) ժամանակ համերգներով հանդես է եկել ռազմաճակատում: Հյուրախաղերով շրջագայել է Վիետնամում, Բիրմայում, Չինաստանում, Նեպալում, Հնդկաստանում, Բելգիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Սիրիայում, Կանադայում, ԱՄՆ-ում և այլուր, կատարել այդ երկրների ազգ. պարեր:

«Բարեկամություն» երգի-պարի անսամբլը կոչվել է Բ-ի անունով: Երևանում «Ղարաբաղցի կինը» քանդակը (քանդ.՝ Դավիթ Երևանցի) ստեղծվել է Բ-ի կերպարով:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1956):

Գրկ. *Արաքսմանյան Ա., Արև Բաղդասարյան, Ե., 1973: Ավագյան Կ., Արև Բաղդասարյան: Ստեղծագործական կյանքի էջեր, Ե., 1998: Նույնի, Արև Բաղդասարյան: Այսպես էր ծագում արևը..., Ե., 2013:*

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (Բաղդասարյանց) Եղիշե Ալեքսանդրի [12.02.1881, Շուշի–29.05.1919, Արմավիր (ՌԴ)], կոմպոզիտոր, խմբավար, հաս. գործիչ: Սովորել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1901-ից, Ա. Կ. Լյադովի դասարան): Կովկասի հայաբնակ քաղաքներում (Բաքու, Արմավիր, Շուշի և այլուր) ստեղծել է երգչախմբեր և ժող. գործիքների նվագախմբեր, որպես խմբավար և դիրիժոր՝ հանդես եկել համերգներով: Հիմնադրել է և գլխավորել Մոսկվայի հայկ. երգչախմբ. ընկերությունը (1910-ական թթ.): Երաժշտության տեսություն է դասավանդել Մոսկվայի Լազարյան ճեմարանում:

Բ. մասնակցել է ծովանկարիչ Հ. Այվազովսկու հիշատակին նվիրված «Գեղարվեստական ալբոմ»-ի (Ս. Պետերբուրգ, 1903), «Արցունքներ» ժող-ի (Ս. Պետերբուրգ, 1907) կազմմանն ու հրատարակմանը: Հեղինակ է երգերի, խմբերգերի, ռոմանսների, «Քրիստոս» օրատորիայի, նաև ժող. երգերի ու շարականների դաշնակումների: Հավանաբար գրել է նաև «Անուշ» (1909, ըստ Հ. Թումանյանի), «Արտավազդ Բ» (ըստ Հարություն Թումանյանի) օպերաները, «Անտառի մանուկ» (ըստ Ղ. Աղայանի) մանկ. երաժշտ. պատկերը: Մեղեդայնությամբ առանձնանում են «Աղջի բախտավոր» («Անուշ») և «Կործանվեցավ չարն իսպառ» («Արտավազդ Բ») խմբերգերը, «Մի լար, բլբուլ» (խոսք՝ Ա. Ծատուրյանի) երգը:

Գրկ. *Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, XIX–XX դդ., Ե., 1959, էջ 236: Բրուտյան Յ., Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Ե., 2000:*

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Էդուարդ Հովհաննեսի (14.11.1922, Երևան–05.11.1987, Երևան), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1947, Գ. Սարաջևի դասարան) և կոմպոզիցիայի (1950, Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները, կատարելագործվել Մոսկվայի Հայ մշակույթի տան երաժշտ. ստուդիայում (1951–53): 1953-ից դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում (կոմպոզիցիա), 1961–87-ին՝ ԵՊԿ-ում (հարմոնիա և կոմպոզիցիա): 1956–66-ին՝ ՀԽՍՀ ռադիոյի և հեռուստատեսության գործիք. կվինտետի ղեկ.: Գրել է սիմֆ. պոեմ (1950), սոնատ (1950)՝ կլառնետի և դաշնամուրի, նախերգանք (1953)՝ սիմֆ. նվագախմբի, ռապսոդիա՝ ջութակի և նվագախմբի (1958), կոնցերտ (1972)՝ դաշնամուրի և նվագախմբի համար, 24 դաշնամուր. պրելյուդներ (1948–60), «Շախմատ» (1960) բալետը, դաշնամուր. կվինտետ (1952), երգեր, ռոմաններ, երաժշտություն՝ թատրոնի (Գ. Տեր-Գրիգորյանի «Մեռնող Ֆլորա», Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», Գ. Սունդուկյանի «Պեպո», Հ. Թումանյանի «Ոսկի քաղաք» ևն), կինոյի («Տժվժիկ», «Երանկյունի», «Ձրիհորի մոտ», «Ձորի Միրոն») համար: Մշակել է հայկ. ժող. պարեր՝ դաշնամուրի համար (4-րդ լրց. հրտ., 1983): Կազմել է «Էստրադային երգեր: Դաշնամուրի նվագակցությամբ» (1981) նոտաների գիրքը:

Ըստ Մարգարիտ Տեր-Սիմոնյանի

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Էդուարդ Սերգեյի [05.12.1928, ք. Մարի (Թուրքմենստան)–06.01.2015, Երևան], երգիչ (տենոր): ՀՀ վաստ. արտիստ (1957): Ավարտել է Բաքվի կոնսերվատորիային կից երաժշտ.



Եղիշե Բաղդասարյան



Էդուարդ Հ. Բաղդասարյան

Էդուարդ Ս. Բաղդասարյանը ելույթի պահին

Լյուկ Արամ Բաղդասարյանը ելույթի պահին

Ռաֆայել Բաղդասարյան

Ռոս Բաղդասարյան

դպրոցը (1949, դասատուներ՝ Ն. Վալացցի, Ս. Միքայելյան), կոնսերվատորիան (1954, Ս. Միքայելյանի դասարան): 1952–54-ին՝ Ադրբեջանի ֆիլհարմոնիայի, 1954–63-ին՝ ԵՕԲԹ, 1963–91-ին՝ Հայֆիլհարմոնիայի մեներգիչ, 1993–96-ին՝ «Հայեր» անսամբլի տնօրեն: Դերերգերից են՝ Ֆաուստ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Ալֆրեդ, Հերցոգ (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո»), Կոմս Ալմավիվա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Կարեն (Ա. Բաբաևի «Արծվաբերդ») ևն: Հեղինակ է համերգ. ծրագրերի («Հին ռուսական և գնչուական ռոմանսի երեկո», «Հին և հայկական ռոմանսի երեկո», «Ռուսական և հայկական երաժշտություն», «Առնո Բաբաջանյանի երգերը» ևն):

Մեներգիչների IV համաշխ. փառատոնի արծաթե մեդալ (1957, Մոսկվա):

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Լյուկ Արամ (ծ. 1967, Ժնև), դաշնակահար, դիրիժոր: Ավարտել է Ժնևի կոնսերվատորիայի դաշնամուրի (1988) և դիրիժորության (1991) բաժինները, կատարելագործվել Վիեննայում, Ֆլորենցիայում, Միլանում: 1987-ից մասնակցել է մի շարք մրցույթների (դարձել է դափնեկիր), նվագել դաշնամուր. եռյակում, կամեր. նվագախմբում և այլ անսամբլներում:

Համերգներով շրջագայել է Եվրոպայի երկրներում, Կանադայում, Արգենտինայում: Բ-ի նվագախմբի հետ ելույթներ են ունեցել նշանավոր երաժիշտներ Շվեյցարիայից, Իտալիայից, Իսպանիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից ևն: 1996-ին, որպես դիրիժոր, 2 անգամ հանդես է եկել Երևանում (երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի 4-րդ սիմֆոնիան, դաշնամուրի 2-րդ կոնցերտը, Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայի նախերգանքը, Մ. Բրուխի ջութակի կոնցերտը, Ռ. Շումանի 1-ին սիմֆոնիան, Վ. Աճեմյանի «Տոնական նախերգանքը»), 2002 և 2012-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

Գրեհեմի (2002), Վիեննայի (2005) դիրիժորների մրցույթների դափնեկիր:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ռաֆայել Հովհաննեսի (24.01.1937, գ. Սառնաղբյուր՝ ՀՀ Շիրակի մարզում–22.12.2016, Մոսկվա), կլառնետահար, դիրիժոր, մանկավարժ: ՀՀ վաստ. (1979), ՌԴ ժող. (2003) արտիստ: Պրոֆ. (1997): Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանի (1957) կլառնետի, ՄՊԿ կլառնետի (1962), դիրիժորության (1978) բաժինները և ասպիրանտուրան (1965): 1963–85-ին դասավանդել է ՄՊԿ-ին կից Երաժշտ. ուսումնարանում, 1985-ից՝ ՄՊԿ-ում: Վարպետության դասեր է վարել Մոսկվայում, Երևանում, Լոս Անջելեսում, Ֆիլադելֆիայում և այլուր: 1968-ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի նվագախմբի մենակատար. երկացանկում՝ Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Յ. Բրամսի, Ֆ. Շուբերտի, Կ. Դեբյուսիի, Մ. Ռավելի, Ա. Բերգի, Օ. Մեսսիանի, Ի. Ֆ. Ստրավինսկու, Ս. Ս. Պրոկոֆևի, Ռ. Կ. Շչեդրինի, Ա. Խաչատրյանի և ուր. կլառնետի մենանվագ և նվագախմբ. ստեղծագործություններից: Ի. Ֆ. Ստրավինսկու «Էվոնի-կոնցերտ»-ի, Բ. Բարտոկի «Կոնտրաստներ» տրիոյի (Գ. Յ. Ֆեյգինի և Վ. Դ. Աշկենազիի հետ), Տ. Օլախի մենանվագ սոնատների, Լ. Կ. Կնիպպերի, Է. Խաղագործյանի, Ա. Ս. Լեմանի կոնցերտների (երեքն էլ՝ նվիրված Բ-ին) և այլ երկերի առաջին կատարողն է Մոսկվայում: Հեղինակ է «Ժամանակակից կլառնետահարի տեխնիկան» գրքի:

ԽՍՀՄ երիտասարդության միութ. փառատոնի (1957, Մոսկվա), մի շարք մրցույթների (2-րդ մրց., 1963, Լենինգրադ, ևն) դափնեկիր:

ՌԴ «Պատվո նշան» շքանան:

Երկ. *Инструментальные духовые ансамбли Бетховена, М., 1989; Бетховен. Квинтет для фортепиано и четырех духовых (Анализ исполнительских проблем), М., 1995.*

Գրկ. *Кларнетисты – виртуозы сегодня, Лондон, 1990.*

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ռոս (Անդրանիկ), Դեյվիդ Սեսիլ (27.01.1919, Ֆրեզնո–16.01.1973, Բևեռլի Հիլզ՝ Հոլիվուդ), կոմպոզիտոր, դերասան: Գրել է երգեր Վ. Սարոյանի խոսքերով. փոփ երաժշտությունը համադրել է հայկ. մեղեդուն («Եկ իմ տուն», «Վհուկ բժիշկը» ևն): Հիմնադրել է ջազ. նվագախումբ, հանդես եկել հեռուստատեսությամբ, թողարկել ձայնապնակներ («Շերտասկյուռի երգը», 1958, ևն): Նկարահանվել է «Երեք հանցագործներ», «Գոռոզն ու սրբապիղծը», «Չինացի Վիկտորը», «Բակ նայող պատուհանը» և այլ ֆիլմերում:

ԲԱՅՐԱՔԴԱՐՅԱՆ Իզաբել (ծ. 1.02.1974, ք. Զահլե՝ Լիբանան), երգչուհի (սոպրանո): 1988-ին տեղափոխվել է Տորոնտո (Կանադա), որտեղ 1993-ին երգեցողության դասեր է առել Ջ. Մայքլից. նրա խորհրդով 1997-ին մասնակցել է Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի»

մրցույթին և ընդգրկվել 10 լավագույնների շարքում (2000 մասնակից): Դերերգերից են՝ Պամինա (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», առաջին գլխ. դերերգը), Քեթրին (Վ. Բոլկոմի «Տեսարան կամրջից», «Մետրոպոլիտեն օպերա»), Մարիա (Լ. Բեռնսթայնի «Վեստսայդյան պատմություն», «Լա Սկալա»), Սյուզան, Յերլինա (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»՝ Փարիզ, «Դոն Ժուան»՝ Զալցբուրգ):

Համերգ. ծրագրով ելույթներ է ունեցել Չիկագոյում, Դրեզդենում, Լոնդոնում, Միլանում, Նյու Յորքում, Փարիզում, Զալցբուրգում, Սան Ֆրանցիսկոյում, Տորոնտոյում, Երևանում (2004, 2005, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ): Թողարկել է մի շարք ձայնասկավառակներ (առաջինը՝ հայ հոգևոր երգերի ժող.): Երգացանկում՝ նաև շարականներ, հայ հոգևոր երգերի Կոմիտասի մշակումներից: Նրա ձայնը հնչել է նաև մի շարք ֆիլմերում (Ա. Էգոյանի «Արարատ»՝ Կոմիտասի ստեղծագործությունների կատարմամբ, «Մատանիների տիրակալը» ևն):

«Մետրոպոլիտեն օպերայի» Պ. Դոմինգոյի մրցույթի 1-ին մրց. (1997), Եղիսաբեթ թագուհու ոսկե մեդալ (2000, Լոնդոն):

ԲԱՆԱԼԻ, նշան հնգագծի սկզբում (նաև մեջտեղում, երբ փոխվում է Բ.), որը սահմանում է հնչյունների բացարձակ բարձրությունը գրառելու կարգը. ցույց է տալիս որևէ հնչյունի տեղը հնգագծի վրա, ըստ որի՝ որոշակիանում են մյուս հնչյունների բարձրությունները: Տարբերում են 1-ին օկտավայի սոլ, դո և փոքր օկտավայի ֆա Բ-ներ, որոնք գրվում են հնգագծի տարբեր տեղերում: Գործածվում են ձայնի կամ երաժշտ. գործիքի համար: Տարբերում են սոլ-ի Բ-ների հինֆրանս. (հնգագծի 1-ին տողում) և ջութակի (հնգագծի 2-րդ տողում) տեսակները.

Դո-ն ունի սոպրանոյի (կամ դիսկանտի), մեցցո սոպրանոյի, ալտի, տենորի, բարիտոնի Բ-ներ՝



Ֆա-ն՝ բարիտոնի, բասի, ցածր բասի: Տենորի ձայնաբաժինը գրառելու համար գործածվում են (կոչվում են տենորի Բ.) նաև սոլ-ի Բ-ու հետևյալ տեսակները՝



Մինչև XVII դ., հատկապես՝ երգչի ձայնը գրառելիս, խուսափել են մեծ թվով օժանդակ գծեր գործածելուց (վերևի կամ ներքևի 2-րդ օժանդակ գիծը գործածվել է հազվադեպ), որի հետևանքով սոլ, դո և ֆա Բ-ներից յուրաքանչյուրը դրվել է հնգագծի տարբեր գծերի վրա (պայմանավորված ձայնի բարձրությամբ կամ ցածրությամբ) և կոչվել նոր անուններով:

Այժմ բարձր հնչյունաշարով ձայների և երաժշտ. գործիքների համար գործածվում է ջութակի, ցածրի համար՝ բասի Բ.: Օգտագործվում են նաև ալտի Բ.՝ ալտի (լար. աղեղնավոր գործիքի) և տենորի դո Բ.՝ երբեմն թավջութակի, ֆագոտի և տրոմբոնի համար: Դաշնամուր. երկերում, պայմանավորված դիապազոնի մեծությամբ, միաժամանակ գործածվում են ջութակի և բասի Բ-ներ: Բ-ների արտաքին տեսքը ձևավորվել է լատ. G (սոլ), C (դո) և F (ֆա) տառերի ձևափոխումից:

Տես նաև *Նոտագրություն*:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԲԱՆԱԼՈՒ ՆՇԱՆՆԵՐ, ալտերացիայի նշանները. դրվում են բանալուց հետո (ընորոշում է ձայնակարգատոնայնությունը) կամ մինչև Բ. ն-ի փոփոխումը: Ստեղծագործության մեջ Բ. ն-ի ազդեցությունը տարածվում է բոլոր օկտավաների նոտաների վրա: Բ. ն. ունեն որոշակի հաջորդականություն և գրառման ձև:

Բանալու նշանները սի մաժորում

ԲԱՆԱՀԱՎԱՔ, բանահյուսության նյութեր հավաքող, գրառող: «Բ.» եզրույթն օգտագործվում է նաև ազգ., ժող. երգ-երաժշտության, պարարվ-ի նյութեր հավաքող-գրանցողի իմաստով: Որպես գիտ. հասկացություն՝ հայ իրականության մեջ երևան է եկել XIX դ-ի 2-րդ կեսին՝ հայ բանագիտության ձևավորմանը զուգընթաց:

Իզաբել Բայրաքդարյան



Ա. Ղանալանյանի «Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր» գրքի (1954) շապիկը

Հրաչուհի Բաանցը Ադրիանայի դերում (Ֆ. Շիլեայի «Ադրիանա Լևկովյուր»)

Բանահավաքչ. գործը հիմնականում սկսել է Գ. Սրվանձտյանը, ապա՝ Կոմիտասը, Վ. Սրվանձտյանը, Գ. Հովսեփյանը, Ս. Հայկունին, Գ. Տեր-Աղեքսանդրյանը, Տ. Նավասարդյանը, Գ. Շերենցը, Ե. Լալայանը, Ս. Մելիքյանը, Ս. Լիսիցյանը, Վ. Բունին, Ա. Գևոնյանը, Ա. Բրուտյանը, Հ. Սուրադյանը, Ա. Փահլևանյանը, Ա. Սահակյանը, Մ. Բրուտյանը, Զ. Թագակչյանը, Ժ. Խաչատրյանը, Է. Պետրոսյանը, Հ. Պիկիչյանը և ուր., որոնց ջանքերով հավաքվել և հրատարակվել է բանահյուս., ազգագր., երաժշտ. և պարարվ-ի հարուստ նյութ:

Նախախորհրդ. շրջանում բանահավաքչությունը կատարվել է հիմնականում անհատների նախաձեռնությամբ և գրառման պարզունակ եղանակներով: Խորհրդ. տարիներից այն իրագործվում է հիմնականում գիտ. հաստատությունների կազմակերպած արշավախմբերով և տեխ. նորագույն միջոցներով:

Գրկ. *Աբեղյան Մ., Երկ., [հ.] 1, Ե., 1966, էջ 13–14: Դանանալանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, պր. 1, Ե., 1945: Նույնի, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Ե., 1986:*

ԲԱՍ (իտալ.՝ basso, ֆրանս.՝ basse – ցածր), 1. տղամարդու ամենացածր երգչաձայնը: Տարբերում են բարձր կամ երգուն և ցածր կամ խոր (basso profundo), օպերայում՝ նաև բնութագր., կոմիկ. (basso buffo) Բ-եր: Երգչախմբերում (բացառապես) օգտագործվող ամենացածր Բ-երը՝ Բ. օկտավիստները, կարող են իջնել մինչև կոնտրօկտավայի սոլ-ը (ֆա-ն) ներառյալ: Օկտավիստների ձայները գեղեցիկ և ազդեցիկ են հնչում առավելապես ա կապելլա խմբերգերում: Բարձր Բ. լինում է քնար. (առավել մեղմ, դիապազոնը՝ G–f¹) և դրամատիկ. (դիապազոնը՝ F–e¹): Ցածր Բ. ներքևի ռեգիստրում առանձնանում է խորք. և լիակատար, վերևում՝ լարված հնչողությամբ [դիապազոնը՝ (G, D)E – d¹(e¹)]: Բ-ի համար գրված դերերգերից են՝ Նադիր շահ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Դավիթ Բեկ (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Դոն Բազիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Լեպորելլո (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան») ևն: 2. Բարձր և ցածր Բ-երի ստեղծած ձայների խումբը երգչախմբում կամ վոկալ անսամբլում. տարբերում են առաջին (կատարում են բարիտոնները) և երկրորդ Բ-եր: 3. Բազմաձայն երաժշտ. հյուսվածքում՝ ամենացածր ձայնը: 4. Պղնձե փող. երաժշտ. գործիք (սաքսոհոռն գործիքների ընտանիքից), գործածվում է փող. նվագախմբում: 5. Երաժշտ. մի շարք գործիքների տեսակ (Բ-կլառնետ, Բ-սաքսոֆոն, Բ-բալալայկա ևն): 6. Ընդհանրապես ցածր ռեգիստրի գործիքներ՝ կոնտրաբաս, բասոլյա, բասետլյա ևն:

ԲԱՍ ԲԱՐԻՏՈՆ, տղամարդու երգչաձայն: Ունի բասի ինչերանգ, սակայն երգիչը կարող է համեմատաբար ազատ երգել նաև բարիտոնի ձայնահատվածում (տեսսիտուրայում) գրված ստեղծագործություններ:

ԲԱՍԵՆՅ Հրաչուհի Վարուժանի (ծ. 30.07.1979, Երևան), երգչուհի (սոպրանո): Սովորել է Երևանի Ս. Ասլամազյանի անվ. երաժշտ. դպրոցում (1989–94, դասատուներ՝ Ա. Ադամյան, Ա. Գեղամյան, Ծ. Մեհրաբյան), ավարտել Հ. Դանիելյանի անվ. երաժշտ. դպրոցը (1995, դասատու՝ Լ. Սարգսյան, երկուսն էլ՝ ջութակի բաժին), ԵՊԿ մենակատարության բաժինը (2003, Գ. Գեղամյանի դասարան): 1995–96-ին ձայնամշակման մասնավոր դասեր է առել երգչուհի Իզաբելլա *Այդինյանից*: Ուսմանը զուգահեռ երգել է ԵՊԿ օպեր. ստուդիայում. երկացանկում՝ նաև Ա. Հովհաննեսի, Է. Հովհաննիսյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Վ. Բալյանի, Ռ. Ամիրխանյանի և ուր. ստեղծագործություններից, համագործակցել է Շահան *Արծրունու*, «Գոհար» նվագախմբի հետ, 2000-05-ին՝ «Տաղարան» անսամբլի մենակատար, 2008-ից՝ Նյուրնբերգի օպեր. թատրոնի մենակատարուհի: Դերերգերից են՝ Միմի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Դեզդեմոնա, Վիոլետտա (Ջ. Վերդիի «Օթելլո», «Տրավիատա»), Միքայելա (Ժ. Բիզեի «Կարմեն»), Թերեզա (Հ. Բեռլիոզի «Բենվենուտո Չելլինի»), Գիշերվա թագուհի (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ»), Վալենտինա (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ») ևն: Եվրոպայի ամենամեծ՝ «Երաժշտական շուրջերկրյա ճամփորդություն» բացօթյա համերգին (2011, Նյուրնբերգ) կատարել է Ա. Հարությունյանի «Երգիր ինձ համար», Ա. Դոլուխանյանի «Ծիծեռնակ», Ա. Բաբաջանյանի «Վոկալիզ» ստեղծագործությունները:

2012-ին վարպետության դասեր է առել երգչուհի, Վյուրցբուրգի կոնսերվատորիայի պրոֆ. Շ. Սթյուդերից: 2016-ին Ֆրանցիսկոս պապի ՀՀ կատարած այցի

առիթով բացօթյա համերգում հանդես է եկել Գ. Քեոսայանի «Ավե Մարիա» ստեղծագործությամբ, «Արամ Խաչատրյան» համերգասրահում՝ Լեոնորայի, Աիդայի (Ջ. Վերդիի «Ճակատագրի ուժը», «Աիդա»), Միմիի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Թել Ավիվի օպեր. թատրոնում՝ Նորմայի (Վ. Բելլինիի «Նորմա») դերերգերով:

Թողարկել է ձայնասկավառակներ («Սուրբ Պատարագ. Հայաստանեայց եկեղեցւոյ», 2002, «Բոլոր ժամանակների սիրված երգեր», 2003, «Սիրո հուշեր», 2005, «Հայրեններ», 2010, ևն):

Ա. Իսահակյանի անվ. վոկալիստների V հանրապետ. մրցույթի 1-ին (1997), «Վերդիյան ձայներ» միջազգ. մրցույթի 2-րդ (Բուսսետո, 2013), ՀՀ ՄՆ «Կոմիտաս» (2016) և ՄՆ ոսկե (2016) մեդալներ:

ԲԱՎԵՅԱՆ Գուրգեն Ռոբերտի (02.05.1986, Երևան), երգիչ (դրամատիկ. տենոր): Արվեստագիտ. թեկնածու (2011): Ավարտել է ԵՊԿ (2008, Վ. Հարությունյանի դասարան) և ասպիրանտուրան (2011, ղեկ.՝ Մ. Կոկժան): 2005–13-ին՝ ԵՊԿ օպեր. ստուդիայի, 2008–13-ին, միաժամանակ՝ ԵՕԲԹ մեներգիչ (Ֆիգարո՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Օնեգին՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», ևն), 2010–12-ին՝ «Գոհար» սիմֆ. նվագախմբի մենակատար: 2013–15-ին սովորել է Ֆրանկֆուրտի բարձրագույն երաժշտ. դպրոցում (Հ. Ֆասբենդերի դասարան): Ելույթներ է ունեցել «Սերենադ» կամեր., Հայաստանի ֆիլհարմոնիկ, երիտասարդ. նվագախմբերի, Մենակատարների պետ. անսամբլի և այլ խմբերի հետ:

Համերգներով շրջագայել է Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Անգլիայում, Բելգիայում, Լիբանանում և այլուր: Կամեր. երկացանկում՝ Տ. Մանսուրյանի, Ռ. Ամիրխանյանի, Վ. Շարաֆյանի, Վ. Մանուկյանի և ուր. գործերից: 2014-ից՝ Ֆրանկֆուրտի օպեր. թատրոնի օպեր. ստուդիայի անդամ:

Տ. Սազանդարյանի (2006), Գ. Գասպարյանի (2008) անվ. հանրապետ., Պ. Լիսիցյանի անվ. միջազգ. (2013, Վլադիկավկազ) մրցույթների դափնեկիր, ՀՀ նախագահի մրց. (2010):

ԲԱՏՈՒԼ, հայկ. ժող. պարերգ. կատարում են հիմնականում երիտասարդները՝ փոխեփոխ երգեցողությամբ:

Բ. շուրջպար է, վերագրում են «Վերվերի» (Թըռնոցի) կամ «Թամզարա» պարաձևին: Բ-ի բովանդակությունը հիմնականում սիրային խաղիկներ են՝ ուղղված Բատոլա անունով աղջկան: Այս պարն անցյալում պարել են «թաղալու ասելով», երբեմն՝ զուռնա-դհոլի նվագակցությամբ:

Գրկ. *Կիլիչյան Ն., Հայկական պարերի համանուն պոպուլյան զուգահեռները, ՊՀՀ, № 2, 2008: Лисициан С., Старинные пляски и театральные представления арм. народа, Е., т. 1, 1958, с. 390–391.*

Մարիաննա Տիգրանյան

ԲԱՐԴ ԵՌԱՄԱՍ ՁԵՎ, երաժշտ. սիմետրիկ ձև. բաղկացած է 3 խոշոր մասերից, որոնք պարբերությունից մեծ կառուցվածքներ են. 3-րդը 1-ինի կամ նրա ձևափոխված կրկնությունն է (ռեպրիզ): Մասերը նույնպես տրոհվում են հատվածների՝ պարզ երկմաս կամ պարզ եռամաս ձևերի, որն էլ կոչվում է կազմածո, իսկ եթե մասերը զուրկ են պարբերականությունից և չեն բաժանվում հատվածների՝ ոչ կազմածո:

Կազմածո Բ. ե. ձ-ի սխեման.

$$\frac{A}{a+b} \qquad \frac{C}{c+d} \qquad \frac{A}{a+b}$$

կամ a + b + a կամ c + d + c կամ a + b + a:

Գործնականում յուրաքանչյուր խոշոր մասում հնարավոր են պարզ ձևերի տարբեր համակցություններ (օր.՝ երբ ծայրերի մասերն ունեն եռամաս, միջին մասը՝ երկմաս կառուցվածք): Մասնատվածությունից և խայտաբղետությունից խուսափելու համար բաժինները հենվում են 1 թեմայի վրա, որի շնորհիվ նրանց ներսում հակադրությունը հասնում է նվազագույնի: Այս առումով՝ հիմնական հակադրությունը, որպես կոնտրաստ-համադրում, առաջանում է միջին մասում և ծայրամասերի միջև, ավելի ստույգ՝ 1-ին մասից 2-րդին անցնելիս (առանց նախապատրաստման)՝ ցեզուրայից հետո: Միջին մասն ընդհանրապես շարադրվում է կա՛մ համանուն, կա՛մ սուբդոմինանտ. ուղղվածության տոնայնություններով: Հակադրությունը միջին մասի և ծայրամասերի միջև արտահայտվում է տարբեր ձևերով, հաճախ՝ հակադիր նշանակության լեզվ. տարրերի օգտագործմամբ, որի դեպքում հնարավոր է կոնտրաստ առաջանա շարժուն ծայրամասերի և հանդարտ, երգային բնույթի միջին մասի միջև: Այն առավել ընդգծվում է, երբ մաժորը հակադրվում է մինորին, տուտտին՝ մենանվագին, վերևի ռեգիս-

Գուրգեն Բավեյանը ելույթի պահին

տրը՝ ներքևինին, ակորդ. շարադրանքը՝ մեղեդիացված ֆիգուրացիաներով հարուստ շարադրանքին ևն: Հակադրություն ստեղծելու համար օգտագործում են կոմպոզիցիոն տարբեր հնարքներ (այդ թվում՝ տեմպի փոփոխություններ): Բ. ե. ձ-ի 1-ին բաժինը պարբերությունից մեծ միասեռ կառուցվածք է (ընդհանրապես 1 թեմայի վրա հիմնված պարզ երկմաս կամ եռամաս ձև): Գործնականում, բացի այս 2 ձևերից, հանդիպում են նաև այլ կառուցվածքներ: Առաջին բաժինը հիմնականում գրվում է միջանցիկ, ազատ զարգացման սկզբունքով (նախատիպը՝ XVIII դ-ի հնագույն Da capo արիան)՝ վարիացիոն և սոնատ. ձևերով: Հաճախ հանդիպում է ձայնակարգահարմոնիկ բազմազանություն՝ մոտիվ. ինտենսիվ զարգացումով (հանգեցնում է մասի բարձրակետին): Այս ամենի շնորհիվ ամրապնդվում են սկզբն. թեմատիկ նյութը և նրա տոնայն. հիմքերը. նույն նպատակն ունի նաև 1-ին մասի վերջում հանդիպող ռեպրիզը:

Բ. ե. ձ-ի 2-րդ մասը հիմնականում պարզ երկմաս է կամ եռամաս, հազվադեպ՝ պարբերության ձևով, և կոչվում է տրիո (եզրույթը շրջանառվում է XVIII դ-ից, երբ 2-րդ մասը հարաբեր. ինքնուրույն ստեղծագործություն էր՝ 3 գործիքի համար): Որոշ դեպքերում «տրիո» բառի փոխարեն գրվում է maggiore (երբ ձևը շարադված է մինոր տոնայնությամբ) կամ minore (երբ ստեղծագործությունը գրված է մաժոր տոնայնությամբ): 2-րդ մասը, հակառակ 1-ինի, միասեռ է, կառուցվածքով՝ հավասարակշռված, հարմոնիկ առումով՝ փակ, որի պատճառով տրիոն և ռեպրիզը հաճախ կապվում են անցումով, որը մեղմացնում է նրանց միջև հակադրությունը: Պարզ կառուցվածք չունեցող տրիոյի դեպքում առկա է ձայնակարգատոնայն. (որոշ դեպքերում՝ նաև թեմատիկ անկայունություն) միջանցիկ ազատ զարգացումը՝ էպիզոդը: Էպիզոդում դինամիկ զարգացումը և շաժման անընդհատությունը գերիշխում են կառուցվածք.՝ արխիտեկտոնիկ հավասարակշռվածությանը:

Բ. ե. ձ-ի 3-րդ մասը՝ ռեպրիզը, սովորաբար լինում է ճշգրիտ և փոփոխված: Երբ ռեպրիզում նույնությամբ կրկնվում է 1-ին մասը (կոչվում է ճշգրիտ), տրիոյի վերջում գրվում է Da capo, որը նշանակում է կրկնել սկզբից: Այսպիսի ռեպրիզներն արտաքուստ կարող են թվալ կայուն, սակայն իրականում կատարմամբ և ընկալմամբ պայմանավորված ընդհանուր համատեքստով՝ անխուսափելիորեն տարբերվում են 1-ին մասից և նրա հետ չեն նույնանում: Փոփոխված ռեպրիզի տարբերակները բազմազան են:

Որոշ դեպքերում հնարավոր է ռեպրիզի համառոտ շարադանք, երբ կրկնվում է 1-ին մասի միայն մեկ հատվածը (հաճախ՝ առաջին պարբերությունը). ի տարբերություն լրիվ ռեպրիզի՝ այն կոչում են թերի: Փոփոխված ռեպրիզները հանդես են գալիս 2 հիմնական ձևերով: Երբ ռեպրիզի փոփոխություններն 1-ին մասի համեմատությամբ աննշան են և նոր որակ չեն ստեղծում, ապա 3-րդ մասն անվանում են տարբերակ. ռեպրիզ, որտեղ հաճախ հանդիպում են մեղեդու շրջազարդում օժանդակ հնչյուններով կամ ռիթմի ու հարմոնիայի աննշան ձևափոխություններ: Ռեպրիզը կոչվում է դինամիկ, եթե թեմատիկ նյութի ձևափոխությունները, մետրառիթմ., ձայնակարգատոնայն. ոլորտները, ինտոնացիոն կազմը ենթարկվում են այնպիսի փոփոխությունների, որոնք ստեղծում են նոր որակ: Տարբեր մասերի թեմատիկ նյութերի վրա կառուցված դինամիկ ռեպրիզը կոչվում է համադրված:

Բ. ե. ձ. (հատկապես եթե ինքնուրույն ստեղծագործություն է) ունի նախաբան, որն ինտոնացիոն թեմատիկ առումով պայմանավորված է հետագա շարադրանքով: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ նախաբանը գրված է ինքնուրույն երաժշտ. նյութի հիման վրա:

Բ. ե. ձ-ի ներքին դրամատուրգիան, մասշտաբայնությունը և մասերի հակադրությունները որոշ դեպքերում պայմանավորում են ձևի վերջում եզրափակիչ մասի կամ կոդայի երևան գալը: Կոդան, ի տարբերություն եզրափակիչ մասի, ունի ընդհանրացնող բնույթ, քանի որ նրա մեջ շարունակվում և ավարտվում է ձևի ներքին դրամատուրգիան: Թեմատիկ-ինտոնացիոն առումով՝ կոդան հաճախ կապված է նախորդ մասերի հետ, որով սկսվում է զարգացման նոր փուլ, թերևս առավել ինտենսիվ և ընդհանրացնող, քան նախորդները: Կոդայում հիմնական տոնայնությամբ տրիոյի հազվադեպ հանդիպող թեմատիկ նյութը եռամաս ձևին հաղորդում է սոնատ. կառուցվածքին բնորոշ հատկանիշներ:

Բ. ե. ձ-երը երևան են եկել XVIII դ-ի սկզբին՝ իտալ. հնագույն Da capo արիայի, նաև հնագույն սյուիտում նույնատիպ պարերի համադրման հիման վրա (Da capo արիայում միջին մասից հետո կրկնվում էր 1-ինը, իսկ սյուիտում 1-ին և 2-րդ մենուետներից հետո՝ 1-ինը՝ որպես ռեպրիզ)։ Այս ձևի կազմավորմանը նպաստել է հնագույն կոնցերտը, որտեղ փոխընդմեջ միմյանց հաջորդել են մենանվագը և տուտտին։

Բ. ե. ձ-ում կոնտրաստ-համադրման բացարձակ դրսևորման հետևանքով ձևավորվել են տարբեր ժանրերի, ինչպես գործիք., այնպես էլ վոկալ և բազմամաս ստեղծագործություններ (սոնատների, սիմֆոնիաների, սյուիտների դանդաղ մասեր)։ Բ. ե. ձ-ով են գրվում բազմաթիվ ինքնուրույն ստեղծագործություններ՝ մենուետներ, սկերցոներ, վալսեր, նոկտյուռններ, քայլերգեր ևն։

Գրկ. *Դերոյան Ն., Երաժշտական արևեղծագործության վերլուծություն, [Դասագիրք], Ե., 1985: Способин И., Музыкальная форма, М., 1984.*

Անի Մուշեղյան

ԲԱՐԴ ԵՐԿՄԱՍ ՁԵՎ, երաժշտ. ձև, բաղկացած է 2 մասից, որոնցից յուրաքանչյուրը (կամ միայն 1-ինը) առավել բարդ է, քան պարբերությունը։ Մասերը համադրվում են՝ ըստ թեմայի, ֆակտուրայի և տոնայնության։ Ձևի հնագույն նմուշներ հանդիպում են XVI–XVII դդ-ի սյուիտներում (դուբլ - Da capo՝ համադրվում են 2 համանուն, սակայն տարբեր պարեր)։ Բարդ ձևերի չափանիշ. տեսակները ձևավորվել են Վիեննայի դաս. դպրոցի կոմպոզիտորների գործերում։ Առավել տարածված են Բ. ե. ձ-երը (պարեր, քայլերգեր՝ սկերցոներ, սոնատա-սիմֆ. ցիկլի դանդաղ մասեր՝ տարբեր ժանրերի գործիք., վոկալ ստեղծագործություններ ևն)։

Բ. ե. ձ-երում (հնագույն օրինակներում մասերը գրվել են նույն տոնայնություններով) 1-ին մասն ունի նախաբանի (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Սադկո» օպերայում՝ Վեդենեցյան հյուրի 2 երգը), իսկ 2-րդը՝ եզրափակչի (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան» օպերայում Դոն Ժուանի և Ցերլինայի դուետինոն) կամ կրկներգի (Մ. Ի. Գլինկայի «Բոլերո» ռոմանսը) բնույթ։ Այն առավել տարածված է վոկալ ստեղծագործություններում, քանի որ առանց ռեպրիզի հակադրումը պահանջում է բովանդակ. հաստատում տեքստում, բեմավիճակում (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայում Լիզայի արիոզոն)։ Գործիք. երկերում կարող է կապվել թաքնված ծրագր. ենթատեքստով (Ֆ. Շոպենի նոկտյուռնը՝ g-moll op.15)։

Հակադիր մասերից բաղկացած ձևի կազմման սկզբունքն առավել բնորոշ է XIX–XX դդ-ի երաժշտությանը և ունի բազմապիսի գործածություն։ Այն ընկած է նաև կազմածո ձևերի (չունեն մասերի հաստատագրված քանակ) և նրանց դասավորության հիմքում (օր.՝ Ֆ. Շոպենի վալսը՝ Es-dur op. 18, որի սխեման է՝ ABCDA + կոդա)։ XIX դ-ի 2-րդ կեսին և XX դ-ում բազմաթիվ Բ. ե. ձ-երում մասերի հակադրությունն ուժեղանում է մինչև տեմպի տարբերությունները, որով մոտենում է հակադիր-կազմածո ձևերին։

Վարուժան Բարթիկյան

ԲԱՐԹԻԿՅԱՆ Վարուժան Պարթևի (ծ. 1960, Երևան), թավջութակահար։ Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1978, դասատու՝ Ա. Չաուշյան), ԵՊԿ (1982, Ա. Չաուշյանի դասարան)։ 1982-ից՝ Երևանի լար. քառյակի թավջութակահար, որի հետ համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Նորվեգիայում, Հունգարիայում, Գերմանիայում, Հաբսպուրգիայում, Շվեդիայում, ԱՄՆ-ում և այլուր (երկացանկում՝ հայ, ռուս և այլ կոմպոզիտորների գործերից)։ 1988-ին դասավանդել է ԵՊԿ-ում։ 1989-ից ապրում է Լիսաբոնում. որպես մենակատար, նաև «Գյուլպենկյան» նվագախմբի հետ հանդես է եկել մենահամերգներով։ 1991-ին Լիսաբոնում ստեղծել է «Բարթիկյան» եռյակը (դաշնակահար՝ Մ. Գալ, կլառնետահար՝ Է. Գեորգի, թավջութակահար՝ Բ.)։ 2001-ից «Cappella Quartet»-ի թավջութակահարն է, 2005-ին հանդես է եկել ջութակահար Ֆ. Դևրիասի և դաշնակահար Ֆ. Պինտո-Ռիբեյրոյի հետ։ Համագործակցել է պորտուգալացի կոմպոզիտոր Ա. Վ. դ' Ամմիդայի հետ, համերգներով շրջագայել Պորտուգալիայում և արտերկրում։ Դասավանդում է «Պիաժե» ինստ-ում։

Թավջութակահարների (3-րդ մրց., 1981, Թբիլիսի), Ա. Պ. Բորոդինի անվ. լար. քառյակների (2-րդ մրց., 1983, Տալլին) համամիութ. մրցույթների դափնեկիր։

ԲԱՐԻՏՈՆ (իտալ.՝ baritone – ցածր հնչող), 1. տղամարդու երգչաձայն բասի և տենորի միջակայքում. դիապազոնը՝ մեծ օկտավայի լա-ից մինչև 1-ին օկտավայի

Սանուկ Բարիքյանը ելույթի պահին

Սարգիս Բարխուդարյան

սոլ–ը (լա բեմոլը): Տարբերում են Բ–ի քնար. (առավել փափուկ և ճկուն՝ մոտ է դրամատիկ. տենորին) և դրամատիկ. (առավել առնական և ուժգին՝ մոտ է բասին) տեսակները: Նոտագրվում են բասի բանալիով: Բ–ի համար են գրված Արշակ Երկրորդի (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Թաթուլի (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Կամոյի (Գ. Հախինյանի «Լեգենդի մարդը»), Ռիգոլետտոյի (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո»), Գրյազնոյի (Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովի «Թագավորի հարսնացուն») և այլ դերեր: 2. Պղնձե փող. երաժշտ. գործիքներ՝ սի բեմոլ լարվածքով, դիապազոնը՝ մեծ օկտավայի ֆա–ից մինչև 2–րդ օկտավայի դո–ն, նոտագրվում է ջութակի բանալիով և հնչում մեծ նոնա ցածր: Մենանվագ, նվագախմբ., նաև նվագակցող գործիք է: 3. Բաս. աղեղնավոր երաժշտ. գործիք. բացի 6–7 հիմնական լարերից՝ ունեցել է նաև 7–20 և ավելի ռեզոնանսող լարեր: Տարածված էր XVII–XVIII դդ–ում, առավելապես՝ Գերմանիայում և Ավստրիայում:

ԲԱՐԻՔՅԱՆ Մանուկ Ստեփանի (15.09.1920, Ադանա–21.12.1987, Լոնդոն), ջութակահար, դիրիժոր: Ապրել է Կիպրոսում: Աշակերտել է երաժիշտ–մանկավարժ Վ. Պետելյանին: 1936–ին տեղափոխվել է Լոնդոն, սովորել Երաժշտության եռաստիճան քոլեջում (1936–39): Ժնևի միջազգ. մրցույթում արժանացել է մրց–ի (1946) և նշանակվել Լիվերպուլի ֆիլհարմոնիայի նվագախմբի կոնցերտմայստեր: 1948–ից՝ Լոնդոնի ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր և մենակատար, Թագավոր. երաժշտ. ակադ–ի պրոֆ. (1959): Հանդես է եկել Եվրոպայի և Ասիայի գրեթե բոլոր երկրների առաջնակարգ բեմերում, եղել անգլիացի մի շարք կոմպոզիտորների (Բ. Բրիտտեն և ուր.) երկերի առաջին կատարողը: Նվագել է Հ. ֆոն Կարայանի, Յ. Կուբելիկի, Ա. Տոսկանինիի և ուր. անվանի դիրիժորների ղեկավարությամբ: Հանդես է եկել նաև որպես դիրիժոր:

1974–ին՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթի հանձնախմբի անդամ: 1962, 1965–ին համերգներով ելույթներ է ունեցել Երևանում և Մոսկվայում:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Սարգիս Վասիլի [26.08(07.09).1887, Թիֆլիս–25.10.1973, Թբիլիսի, թաղված է Երևանում], կոմպոզիտոր, մանկավարժ: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1936), ՀԽՍՀ ժող. արտիստ (1960): Ավարտել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանի տեսության և սոլֆեջջոյի (1907, դասատու՝ Զ. Փալիաշվիլի), Պետրոգրադի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1915, Վ. Պ. Կալաֆատիի, Մ. Օ. Շտեյնբերգի, Յ. Վիտոլի դասարաններ) բաժինները, սովորել է Բեռլինի Թագավոր. կոնսերվատորիայի դաշնամուրի բաժնում (1907–09, Հ. Շուլցի դասարան):

Բեռլինում սովորելու տարիներին Սպիրիդոն ***Մելիքյանի*** հետ կազմակերպել է համերգներ հայ ուսանողների ուժերով, 1915–ից Պետրոգրադում հանդես է եկել որպես դաշնակահար: 1923–54–ին դասավանդել է Թիֆլիսի կոնսերվատորիայում (նաև ամբիոնի վարիչ), միաժամանակ, 1934–37–ին՝ ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 1941–ից):

Ստեղծագործել է 1903–ից («Վալս՝ դաշնամուրի համար», «Օրորոցային», «Հրաժեշտի երգ», «Իմ տրամադրությունը», նաև քայլերգեր ևն):

Բ–ի «Արևելյան չորս պարերը» (1910–13) նպաստել են հայկ. դաշնամուր. ստեղծագործության զարգացմանը: Գրել է նաև դաշնամուր. պիեսների 2 շարք (1910–18, 1915–23), «Անուշ» (1917) սիմֆ. պոեմը, «Անդրֆեդերացիա» (1932) սյուիտը, «Նարինե» (1938) բալետը, 25 պիես–մանրանվագ (1942–43), «1943» նախերգանքը, «Քեռի քույչի» (1945, բեմ՝. 1946, ԵԵԿԹ) մանկ. օպերան, ռոմանսներ, երաժշտություն՝ թատրոնի (Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», 1941, Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի», 1940, ևն) և կինոյի («Կարո», 1937, «Տերն ու ծառան», 1962, երկուսն էլ՝ Հայֆիլմ) համար, մշակել է ժող. և աշուղ. երգեր: Բ–ի սաներից են Ա. Հարությունյանը, Է. Աբրահամյանը, Է. Միրզոյանը, Ղ. Սարյանը, Շ. Մշվելիձեն, Գ. Կիլաձեն, Ա. Անդրիաշվիլին, Օ. Թաքթաքիշվիլին և ուր.:

Գրկ. *Տեր–Սիմոնյան Մ., Սարգիս Բարխուդարյան, Ե., 1968: Магакян М., Саркис Бархударян. Очерк жизни и творчества, Е., 1978; Шавердян А., Очерки по истории армянской музыки XIX–XX вв., М., 1959, с. 163–165.*

ԲԱՐԿԱՐՈԼ (իտալ.՝ barcarola, < barca – նավակ), նախապես՝ վենետիկցի գոնդոլավարների երգ, ապա՝ քնար. պիես: Երաժշտ. չափը՝ 6/8: Մեղեդին մեղմ է, «օրորվող», մոնոտոն ռիթմով, մինոր ձայնակարգով: XVIII դ–ում դարձել է պրոֆեսիոնալ երաժշտության ժանր, առավել տարածվել է XIX դ–ում: Ենթարկվել է որոշ

փոփոխությունների՝ օգտագործում են մաժոր ձայնակարգը, չափը՝ 12/8, 3/4 ևն:

Բ. իրենց օպերաներում օգտագործել են Ջ. Պաիզիելլոն, Ֆ. Օբերը, Ջ. Ռոսսինին, Ժ. Օֆֆենբախը և ուր., որպես կամեր. վոկալ երաժշտության ժանրի՝ անդրադարձել են Ֆ. Շուբերտը, Մ. Ի. Գլինկան և ուր.: Բ-ներ են գրել Ֆ. Շոպենը, Պ. Ի. Չայկովսկին, Ս. Էլմասը, Ա. Այվազյանը, Ա. Սաթյանը և ուր.:



Հատված Ա. Այվազյանի թավջութակի բարկարոլից

ԲԱՐՁՐԱԽՈՍ, երաժշտության, խոսքի և այլ հնչյունների վերարտադրման էլեկտրաձայն. կամ մեխ. սարք: Բաղկացած է էլեկտրամեխ. (ձայն. հաճախության էլեկտր. տատանումները փոխակերպում է դիաֆրագմայի մեխ. տատանումների) և մեխ. ձայն. (դիաֆրագմայի մեխ. տատանումները փոխակերպում է ձայն. դաշտի) համակարգերից: Տարբերում են պիեզոէլեկտր., պնևմատիկ, կոնդենսատոր., էլեկտրամագնիս. և, լայնորեն կիրառվող, ձայնի վերարտադրման բարձրորակ հնչողության էլեկտրադինամիկ Բ-ներ: Վերջիններում ձայն. հաճախության հոսանքը շրջահոսում է հաստատուն մագնիս. դաշտում տեղավորված կոճը, որը տատանվում է իր առանցքի ուղղությամբ, իսկ նրան միացված կոնաձև դիֆուզորը ճառագայթում է ձայն. ալիքներ: Էլեկտրադինամիկ Բ-ների անվան. հզորությունը 0,025–100 *Վտ* է, վերարտադրման հաճախության շերտը՝ 50–12 000 *Հց*:

ԲԱՐՁՐԱԿԵՏ, երաժշտ. ստեղծագործության կամ նրա համեմատաբար ավարտուն մասի զարգացման բարձրագույն կետը, առավելագույն լարվածության պահը: Բ-ով պայմանավորված՝ զարգացման արդյունավետությունը XVIII դ-ից դարձել է ընդհանուր օրինաչափություն եվրոպ. (նաև նրա հետ կապված) երաժշտ. մտքի համար: Բ-ի սկզբունքը գործում է երաժշտ. բոլոր ձևերում (ֆրազ, նախադասություն ևն), և ամբողջ ձևն այդ առումով դառնում է Բ-ի համակարգ:

Բ. մեղեդու կամ ամբողջ ստեղծագործության մեջ ոսկե հատման կետի մերձակայքում է (հնչյունը կամ հնչյունախումբը, որոնք մեղեդու 2-րդ կեսի կառուցվածքի ռեգիստր. գագաթն են, ևն): Երբ գլխ. Բ. դառնում է երգի իմաստ. կենտրոնը, ապա հաջորդում է ձևի սկզբունք. ավարտը: Բ-ի կառուցման բաղադրիչներն են հնչյունի բարձրությունը, բարձր դինամիկան, ձայնակարգի անկայունությունը, ֆակտուրան, գործիքավորումը և այլ արտահայտչամիջոցներ:

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, հնչյունի ֆիզ. հատկություն, որով պայմանավորված է տատանումների հաճախությունը. որքան մեծ է տատանումների քանակը 1 *վրկ*-ում, այնքան բարձր է հնչյունը, և հակառակը: Տարբերում են Բ-յան բացարձակ (որոշվում է տատանումների քանակով) և հարաբերական (որոշվում է հնչյունների ինտերվալ. հարաբերակցությամբ) տեսակները:

Երաժշտ. համակարգի (երաժշտ. հնչյունաշար) յուրաքանչյուր հնչյուն ունի իր բացարձակ Բ., որն անհրաժեշտ է երաժշտ. գործիքները լարելիս, որևէ երաժշտ. գործիքի կամ երգչաձայնի համար գրված ստեղծագործությունն այլ երաժշտ. գործիքի կամ երգչաձայնի համար փոխադրելիս ևն: Հարաբեր. Բ-յամբ որոշվում են ձայնակարգերն ու ինտերվալները (երաժշտ. մտածողության ամենակարևոր տարրերը), նաև երաժշտության հնչյունների հաջորդականությունը, ակորդների կառուցվածքը ևն:

ԲԱՐՈԿԿՈ (իտալ.՝ barocco – արտասովոր, տարօրինակ), գեղ. ոճ արվ-ում (XVI դ.–XVIII դ-ի 1-ին կես): Երաժշտության մեջ Բ-ի խնդրի շուրջ բանավեճերը հայտնի են 1910-ական թթ-ից (առավելապես՝ գերմ. երաժշտագիտության մեջ). մասնավորապես Կ. Գուդլիտը և Գ. Վյոլֆինն իրենց աշխ-ներում առաջադրել են Բ-ի հայեցակարգը՝ որպես այդ շրջանի ողջ արևմտաեվրոպ. արվ-ի ոճ: Գերմանացի և ամերիկացի ժամանակակից որոշ երաժշտագետներ, հենվելով որոշ կառուցվածք. ընդհանրությունների վրա, Բ-ի միասն. դարաշրջան են համարում (անտեսելով կլասիցիզմը) կոմպոզիտորներ Ջ. Գաբրիելիից և Կ. Մոնտեվերդիից մինչև

Բարձրախոս

Աննա Բարսամյան



Բարսեղ Ճոնի «Մեկնութիւն սրբոյն Ավետարանին, որ ըստ Մարկոսի» (Կ. Պոլիս, 1826) գրքի տիտղոսաթերթը

Զեմֆիրա Բարսեղյան

Յ. Ս. Բախը և Գ. Հենդելը: Ֆրանսիացի երաժշտագետները, հակառակը, հակված են կլասիցիզմին, անգամ ժխտում են Բ-ի գոյությունը:

Եվրոպ. երկրների երաժշտարվ-ում երևան են եկել կոմպոզիցիոն տեխնիկայի մի շարք ընդհանուր հատկանիշներ, որոնք հիմնվել են մաժոր-մինոր համակարգի և ֆունկցիոնալ հարմոնիայի ձևավորման վրա (ակորդների և նրանց ֆունկցիոնալ հարաբերակցության ըմբռնում, գեներալ-բասի հաստատում, տակտաբաժանման գործածում ևն), նաև գործիք. նոր ժանրեր (պարտիտ, սոնատ, ռիչերկար, ֆուգա, կոնցերտ ևն): Բ-ի շրջանն ընդգրկել է միմյանցից տարբեր, երբեմն իրար հակասող երևույթներ:

Խորհրդ. շրջանի երաժշտագետները Բ. ոճում առաջնային են համարել ոչ թե ձևական-տեխ. հատկանիշները, այլ երաժշտ. կերպարների և ընդհանրապես արտահայտչական բնույթը (վեհություն, ճոխություն, դեկորատիվություն ևն):

ԲԱՐՍԱՄՅԱՆ (Ծառուկյան) Աննա Ալեքսանդրի (28.06.1915, Ալեքսանդրապոլ–11.08.2016, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1955): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1983): ՀԿՄ անդամ (1956): Ավարտել է Լենինականի շինարար. (1932) և երաժշտ. (1936, դաշնամուրի բաժին) տեխնիկումները, ԵՊԿ (1942, Զ. Վարդանյանի դասարան), ՄՊԿ ասպիրանտուրան (1949, ղեկ.՝ Ռ. Գրուբեր): 1938-ից դասավանդել է Երևանի երաժշտ. տեխնիկումում, Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1950-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1986-ից, պրոֆ-խորհրդատու՝ 2003-ից):

Գրել է «Սովետահայ երգարվեստը» (ռուս., 1960, հայ., 1973, համահեղ.՝ Մ. Բրուտյան), «Հայ երաժշտության պատմություն» (դասագիրք, 1968, 2-րդ հրտ.՝ 1996, համահեղ.՝ Մ. Հարությունյան), «Սովետահայ երաժշտությունը» (համահեղ., 1981), «Հայ երաժշտության դասականները» (1986), «Մեղեա Աբրահամյան» (2000, համահեղ.՝ Ա. Սարյան) աշխ-ները: Խմբագրել է Մ. Մուրադյանի «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» («Հայկական երաժշտական մշակույթի պատմություն», հ. 2, 1970), Ա. Թաղևոսյանի «Բեգլար Ամիրջան» (1975), Թ. Արազյանի «Միքայել Մազմանյան» (1977) աշխ-ները:

Հեղինակ է մի շարք երաժշտ. ռադիոհաղորդումների:

ՀԽՍՀ «Պատվո նշան» շքանշան (1968):

Երկ. *«Алмаст» А. А. Спендиарова, М., 1958; История армянской музыки, ч. 1 [учебник для консерваторий](совм. с М. Г. Арутюнян), Е., 1968; А. Спендиаров, Е., 1972; Песня и романс в творчестве армянских советских композиторов (в кн.: Музыка Советской Армении, Е., 1973).*

ԲԱՐՍԵՂ ՃՈՆ, VII դ-ի երգահան, երաժիշտ-տեսաբան: Շիրակի Դպրեվանքի («Կարմիր վանք», կոչվել է նաև Բ. Ճ-ի անունով) վանահայր: VII դ-ի վերջին Հայ եկեղեցում հոգևոր երգերն այնքան էին բազմացել, որ ծեսի և արարողության խնդիրներով զբաղվելը դարձել էր անհրաժեշտություն: Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի (641–661) հանձնարարությամբ և Դվինի 645-ի ժողովի հավանությամբ Բ. Ճ. ձեռնարկել է հայկ. հոգևոր կցուրդ երգերի հավաքման, ընտրման ու կանոնացման աշխ-ը, որը նշանակալի երևույթ էր հայ և ընդհանրապես արլ. քրիստ. երաժշտության պատմության մեջ: Նրա կազմած «Ճոնընտիր» ժող-ը դարձել է ավելի ուշ կանոնացված Շարակնոցի հիմքն ու միաձուլվել նրան: Նախաձեռնել է նաև կցուրդներին վերաբերող ութձայն համակարգի հաստատման հնագույն փորձը: Գրել է փառաբան. 24 երգ (5-ում փառաբանվում է Փրկիչը): Բ. Ճ-ի՝ երգեր հորինելու մասին վկայում է Վարդան Արևելցին Սբ Ծննդյան «Անթառամ ծաղիկ» շարականի մեկնության մեջ:

Գրկ. *Թահմիզյան Ն., Բարսեղ Ճոնը և հայ մանրագիրացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում, ԲԵՀ, 1973, № 1:*

ԲԱՐՍԵՂՅԱՆ Զեմֆիրա Սամսոնի (ծ. 31.08.1936, Երևան), դաշնակահարուհի: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1983): Պրոֆ. (1991): Սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում: Ավարտել ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1958, Գ. Սաթաջևի դասարան): 1964-ից դասավանդում է նույն կոնսերվատորիայում (ամբիոնի վարիչ՝ 1985–93-ին): Հանդես է եկել մենահամերգներով, սիմֆ. նվագախմբի և անսամբլների հետ, նաև ժան ***Տեր-Մերգերյանի*** հետ:

Բ-ի կատարումներն առանձնանում են երաժշտականությամբ, թեմատիկ նյութի խոր զգացողությամբ, կառուցվածք. ձևի ճշմարիտ ընկալմամբ: Մասնակցել է հեղինակավոր մրցույթների, արժանացել

մրց-ների: Որպես մենակատար և նվագակցող՝ հանդես է եկել Հունգարիայում, Բուլղարիայում, Շվեդիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլուր:

ԲԱՐՈՒՏՉԵՎԱ Էռա-Սոֆյա Սուրենի (ծ. 09.03.1934, Բաքու), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1966), Ռուսաստանի բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ: ԽՍՀՄ ԿՄ անդամ (1981-ից): Ավարտել է Բաքվի միջնակարգ երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1951), ԵՊԿ երաժշտագիտության (1956, Գ. Տիգրանովի դասարան) բաժինները, Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (ղեկ.՝ Գ. Տիգրանով): 1958-ից դասավանդում է Լենինգրադի կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1999-ից): 1969-ից՝ կոնսերվատորիայի թանգարանի հիմնադիր-ղեկ.:

Հեղինակ է «Ընտանիք. ճակատագրի նախշերը պատմության ուղիներում», «...Եվ սիրտն իմ չի մոռանա. ժամանակակիցների դիմանկարներ» (2004), «Գեորգի Ալեքսիձե. Խորեոգրաֆ՝ Աստծո կամոք» (2006, երեքն էլ՝ ռուս.) մենագրությունների, 250-ից ավելի գիտ. և հրապարակախոս. հոդվածների (Grove և MGG հանրագիտարաններում), կինոսցենարի (4 մասից, նվիրված է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիային): Ուսումնասիրությունները վերաբերում են Ա. Խաչատրյանի ստեղծագործությանը, հայ կինոերաժշտությանը, Լենինգրադի երաժշտ. անսամբլներին, մենակատարներին, դիրիժորներին, երաժշտության և պարարվ-ի խնդիրներին:

ԲԱՅ ԼԱՐ, լար. երաժշտ. գործիքների լար, որը հնչում է իր ողջ երկարությամբ (լարակալից մինչև շեմիկը): Սատադրումը (ապլիկատուրան) նշանակելիս Բ. լ. նշվում է 0 թվանշանով:

ԲԱՅԱՐՁԱԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, գործիք. երաժշտության պայման. անվանում, որը պայմանավորված չէ որևէ ծրագրով: Տես նաև *Ծրագրային երաժշտություն*:

ԲԱՅԱՐՁԱԿ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ, մարդու՝ 1 կամ մի քանի երաժշտ. ձայների բացարձակ բարձրությունը (չհամեմատելով մեկ այլ՝ նախապես հայտնի ձայնի բարձրության հետ) ընկալելու, պատկերացնելու և վերարտադրելու ունակությունը: Տես նաև *Երաժշտական լսողություն*:

ԲԵ, նոր հայկ. ձայնագրության համակարգի հիմնական հնչյունաշարի (դո նոտայով սկսվող միքսոլիդիական ձայնակարգ) 4-րդ հնչյունը: Լրիվ անվանումը՝ բենկորճ:

ԲԵԲՈՒՏՈՎ (Բեհբութով) Վալերի Միխայիլի [06(18).12.1885–01.11.1961, Միսխոր (Ղրիմ), թաղված է Մոսկվայում], հայազգի ռեժ.: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1934), Թաթար. ԻԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): 1922–23-ին ղեկավարել է Մոսկվայի «Ռոմանեսկ» գնչուական, 1924-ից՝ Դաս. բուֆոնադի (հետագայում՝ երաժշտ. կոմեդիայի) թատրոնները, որտեղ ձգտել է բարեփոխել օպերետը: Բեմադրել է Ժ. Օֆֆենբախի «Գեղեցկուհի Հեղինե», Յ. Շտրաուսի «Գնչուների բարոն» և այլ օպերետներ, պիեսներ՝ Մոսկվայի, Վիտեբսկի և այլ թատրոններում: 1945-ից աշխատել է Կազանի Գ. Քամալի անվ. թատրոնում. բեմադրել է Վ. Շեքսպիրի «Լիր արքա», Ժ. Բիզեի «Կարմեն» և այլ ներկայացումներ: 1928-ին, իր ղեկավարած թատրոնի հետ, հյուրախաղերով հանդես է եկել Երևանում:

Էռա-Սոֆյա Բարուտչևա

Վալերի Բեհբութով

Գրկ. *Янковский М., Советский театр оперетты, Л.–М., 1962.*

ԲԵԳԼԱՐՅԱՆ Մանվել Կարապետի (30.11.1922, Թիֆլիս–19.11.2002, Երևան), դիրիժոր, կոմպոզիտոր, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1982): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1951, Հ. Բոգդանյանի դասարան) և կոմպոզիցիայի (1959, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1974–1995-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Նրա ղեկավարությամբ անսամբլը համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ բազմաթիվ քաղաքներում և արտերկրում:

1981-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1999-ից): Ունի ֆոնդ. ձայնագրություններ:

ԲԵԼԿԱՆՏՈ (իտալ.՝ bel canto, belcanto – գեղեցիկ երգեցողություն), երգեցողության թեթև և նուրբ ոճ. բնորոշ էր XVII դ-ի կես–XIX դ-ի 1-ին կեսի իտալ. վոկալ արվ-ին, լայն առումով՝ վոկալ կատարման երգայնությունը: Բ. ոճի կատարողի առանձնահատկությունը ձայնի տիրապետման կատարյալ տեխնիկան է (անթերի կանտիլենա, վիրտուոզ կոլորատուրա, հուզ., գեղեցիկ երգչական տոն ևն): Առաջացել է վոկալ երաժշտության հոմոֆոն ոճի զարգացմամբ, իտալ. օպերայի ձևավորմամբ (XVII դ-ի սկիզբ): Հետագայում պահպանելով գեղ-գեղագիտ. հիմքը՝ աստիճանա-

Մանվել Բեգլարյան

Հրանտ Բեկլարյան

Էդուարդ Բեյլերյան

բար հարստացել է նոր գեղ. հնարքներով և գույներով: Նախկին պաթետիկ. ոճը (Կ. Մոնտեվերդիի, Ֆ. Կավալլիի, Ա. Սկառլատիի և ուր. օպերաները) հիմնված էր արտահայտիչ կանտիլենայի, վերամբարձ բանաստեղծ. տեքստի, ոչ մեծ կոլորատուր. զարդարանքի վրա, որոնք ներմուծվել են դրամատիկ. էֆեկտների համար, իսկ կատարումները եղել են հուզ., պաթետիկ. (երգիչներ՝ Պ. Տոզի, Ա. Ստրադելլա և ուր.):

Բ–ի, այսպես կոչված, խրոխտ վիրտուոզ ոճում (XVIII դ.–XIX դ–ի 1–ին քառորդ) գերակշռել է կոլորատուրան: Երգեցողության արվ–ն առավել աչքի է ընկել երգչի տեխ. հնարավորություններով (երկարատև շնչառություն, բարդ պասսաժների, կադենցիաների կատարում ևն): Առավել ճանաչվել են Բոլոնիայի, Հռոմի, Ֆլորենցիայի, Վենետիկի, Միլանի, հատկապես՝ Նեապոլի դպրոցները: Դաս. Բ–ի դարաշրջանն ավարտվել է Ջ. Վերդիի օպերաներով, որոնց բնորոշ է մեղմ կոլորատուրան: Կանտիլենան դարձել է առավել դրամատիկ., հարստացել է նրբերանգներով, ուժգնացել է վոկալ պարտիաների հնչողությունը: «Բ.» եզրույթը կորցրել է նախկին իմաստը և նշանակել է ձայնի բոլոր միջոցների կատարյալ տիրապետում:

Ժամանակակից իտալ. Բ. շարունակում է մնալ երգչական տոնի, կանտիլենայի ևնի դաս. գեղեցկության չափանիշ, որը երգեցողության հիմքն է:

ԲԵԿԼԱՐՅԱՆ Հրանտ Պողոսի (01.12. 1927, Թիֆլիս–05.07.2002, Նյու Յորք), կոմպոզիտոր: Երաժշտագիտ. դ–ր (1958): Ավարտել է Միչիգանի համալսարանի երաժշտության մասնաճյուղը (1951): 1961–69–ին՝ Նյու Յորքի «Ժամանակակից երաժշտություն» կազմակերպության, 1969–ից՝ Կալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես, հայ երաժշտության ամբիոնի հիմնադիր՝ 1979) երաժշտության, կինոյի և դրամայի մասնաճյուղերի, 1983–ից՝ Ֆլորիդայի երաժշտության և արվ–ի ինստ–ի տնօրեն: Որոշ երկերում օգտագործել է հայկ. ժող. երաժշտության հնչերանգներ, իսկ «Սիմֆոնիկ դիվերտիսմենտում» առկա է շարժման ռիթմիկ զարգացում՝ երաժշտ. տեմպերի փոփոխություններով: «Յոթ բլուրների արձագանքը» կանտատում և «Փառք Քրիստոսին» խմբերգում նկատելի են հայ հոգևոր երգի տարրեր: Ուշագրավ է ձայնի (սոպրանո) և փոքր նվագախմբի համար գրած երգաշարը (ըստ հնդկացիների «To Maniton» պոեմի): Հեղինակ է նաև կվինտետի, ջութակի, թավջութակի սոնատների և այլ գործերի: Բ–ի երկերն առանձնանում են լեզվի և ոճի թարմությամբ, արդիականությամբ:

Արժեքավոր են նաև կոմպոզիտորի գեղագիտ. հայացքները, որոնք բացառում են կոմպոզիցիայում մտացածին բարդությունները, կարևորում բովանդակության հստակ դրսևորումը:

Հեղինակ. համերգով հանդես է եկել Երևանում (1978):

«Ֆի Սա Ալֆա» (2–րդ մրց.՝ 1952), Ջ. Գերշվինի անվ. միջազգ. (1–ին մրց.՝ 1959, երկուսն էլ՝ ԱՄՆ) մրցույթների դափնեկիր:

ԲԵՄԱՀԱՐԹԱԿ, էստրադա (ֆրանս.՝ estrade, < լատ. stratum – հարթակ), բեմի պարզ տեսակ, մշտական կամ ժամանակավոր կառույց՝ երաժիշտների, դերասանների, հռետորների ելույթների համար, համերգասրահների, ակումբների, մշակույթի պալատների ևնի անհրաժեշտ բաղկացուցիչ մաս: Բացօթյա համերգների համար նախատեսված Բ. վերջափակվում է գոգավոր (խորանաձև) պատով՝ ձայնն առավել լսելի դարձնելու համար:

ԲԵՅԼԵՐՅԱՆ Էդուարդ Հայկի (ծ. 14.11. 1948, Երևան), կոմպոզիտոր, ջութակահար: Ավարտել է ԵՊԿ ջութակի (1971, Ա. Բոգդանյանի դասարան), կոմպոզիցիայի (1983, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1970–75–ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ., 1975–80–ին՝ Հայաստանի պետ. սիմֆ., 1980–2002–ին և 2007–ից՝ ԵՕՔԹ, 2002–07–ին, միաժամանակ՝ Լ. Ճգնավորյանի կամեր. նվագախմբերի ջութակահար: 1971–92–ին՝ Երևանի № 8 երաժշտ. դպրոցի լար. բաժնի ղեկ.: Նվագախմբերի կազմում մասնակցել է փառատոների, հյուրախաղերով շրջագայել է շուրջ 30 երկրում:

Գրել է «Պիես՝ ֆագոտի և դաշնամուրի համար» (1972), լար. կվարտետներ («Պասսակալիա և ֆուգա», 1972, «Լարային կվարտետ», 1982) և փող. երկեր («Երկու պիես փողային կվարտետի համար», 1973), դաշնամուր. պրելյուդներ (1974), ստեղծագործություններ՝ ձայնի և դաշնամուրի համար («Դարձյալ…», 1975, «Մթությունը…», 1976), «Քարանձավում…» (ձայնի և գործիք. անսամբլի համար, 1977), «Պոլիֆոնիկ վարիացիաներ» (սիմֆ. նվա-

գախմբի համար, 1983), «Երեք պիես ալտի համար» (1984), «Երկու դուետ ջութակի և ալտի համար» (1986), «Պիես կամերային նվագախմբի համար» (1990), «Երկու պիես կամերային նվագախմբի համար» (2002), «Հայաստան» (2006, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի համար), կինոերաժշտություն («Կվարտետ», 1987, «Արխիվային գործ», 1988, երկուսն էլ՝ Հայֆիլմ, «Խոյի համաստեղությունը», 1988, Մոսֆիլմ) և այլ գործեր:

ԲԵՆԵՖԻՍ (ֆրանս.՝ benefice – եկամուտ, օգուտ), համերգ, ներկայացում կամ հանդես, որի հասույթն ամբողջովին կամ մասամբ հատկացվում էր որևէ արտիստի (կամ կոլեկտիվի): Նյութ. օգնության այդ ձևն ուներ նաև մեծարման որոշակի իմաստ: Սկզբնավորվել է Ֆրանսիայում (1735), ապա տարածվել այլ երկրներում (նաև Հայաստանում): ԽՍՀՄ-ում վերացվել է 1925-ից, վերականգնվել (նաև ՀՀ-ում) 1990-ական թթ-ից՝ իմաստ. որոշ փոփոխություններով:

ԲԵՐԲԵՐՅԱՆ Ավետիս Անդրանիկի (ծ. 21.11. 1966, Երևան), կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի թավջութակի (1979), ԵՊԿ կոմպոզիցիայի (1984, Է. Հովհաննիսյանի դասարան) բաժինները: 1980-ական թթ-ին՝ Երևանի «Մետրո» թատրոնի երաժշտ. ղեկ., որտեղ ստեղծել է «Տերն ու ծառան», «Կախարդված արքայազնը» և այլ երաժշտ. ներկայացումներ: 1993–2000-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգ-հյուրախաղ. բաժնի տնօրեն, 2012-ից՝ «Գալա Արտ» ցուցասրահի հիմնադիր-տնօրեն, 2014–17-ին՝ ՀԿՄ փոխնախագահ: 1988-ին աշխատել է Երևանի արվ-ի կենտրոնում, որտեղ հիմնադրել է Երիտասարդ տաղանդների կամեր. նվագախումբը և Մանկ. ջազ. երգչախումբը (Մ. Ի. Գլինկայի անվ. մրցույթի դափնեկիր, 1990, Լիպեցկ, Գլխ. մրց., 1991, Թբիլիսի):

Գրել է պոեմ՝ ջութակի և սիմֆ. նվագախմբի, «Մայրամուտ» (Ա. Բաբաջանյանի հիշատակին)՝ դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի, «Ճանապարհ դեպի լեռը»՝ շեփորի և սիմֆ. նվագախմբի համար, «Անձրևոտ օր», «Քամիներից այն կողմ», «Ռապսոդիա» սիմֆ. երկերը, «Ճակատամարտ», «Ճանապարհը», «Գրոսսո», «Հետապնդում», «Արաբական արշավանքներ» սիմֆ. պատկերները, «Ադաջո», «Կապրիչչո»՝ սիմֆ. նվագախմբի, «Միայնություն» պիեսը՝ թավջութակի և դաշնամուրի, «Ադաջետտո»՝ թավջութակի և սիմֆ. նվագախմբի, «Ելի՛ր, ով հայ» բալլադը՝ սոպրանոյի, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի համար, «Փորձության ճանապարհ», «Իմ մայր», նաև Շուշիի (2012) ու Արտաշատի (2012) օրհներգերը, կինոերաժշտություն («Տեր փրկյա նրանց», 1988, Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին) և այլ գործեր: 2011-ին Բ-ի ստեղծագործությունները կատարել են ԱՄՆ-ի «Օքլանդ Իսթ Բեյ» սիմֆ. նվագախումբը և երգչախումբը:

Ավետիս Բերբերյան

«Երիտասարդ կոմպոզիտորներ» մրցույթի Գլխ. (1985, Չեխոսլովակիա), «Սայաթ-Նովա» համահայկ. ամենամյա երգի մրցանակաբաշխության (2000, Երևան) Գլխ., «Այո՛» ամենամյա երգի մրցանակաբաշխության 2-րդ (1998, Երևան), Սաքսոֆոնահարների 1-ին հանրապետ. մրցույթի 3-րդ (2000, Երևան) մրց-ներ:

ԲԵՐԲԵՐՅԱՆ Արա Հարությունի (14.05.1930, Դետրոյտ–21.02.2005, Ֆլորիդա), երգիչ (բաս): Սովորել է Դետրոյտի հանր. վարժարանում, ապա՝ Միչիգանի համալսարանում, միաժամանակ երգել է երգչախմբերում: Երգեցողության դասեր է առել Ք. Ռեստերմանից: Համալսարանում հանդես է եկել Բարտոլոյի դերերգով (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»), ապա ընդունվել տեղի ուսանող. օպեր. խումբ: 1958-ին Աբրահամի դերերգով մասնակցել է Է. Լադերմանի «Սառա» հեռուստաներկայացմանը, ապա համերգներ է ունեցել Վաշինգտոնի «Ֆիլիպս» պատկերասրահում, մի քանի մեներգերով հանդես է եկել Ֆիլադելֆիայի սիմֆ. նվագախմբի հետ: 1959-ին տեղափոխվել է Նյու Յորք, համագործակցել Նյու Օռլեանի օպեր. ընկերության հետ: Դերերգերից են (շուրջ 100)՝ Մեֆիստոֆել (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Ֆիլիպ (Ջ. Վերդիի «Դոն Կառլոս»), Դոն Բազիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ֆիգարո, Լեպորելլո (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը», «Դոն Ժուան») ևն: Ջ. Վերդիի, Յ. Բրամսի և Վ. Ա. Մոցարտի ռեքվիեմներում, Յ. Հայդնի «Աշխարհի ստեղծումը» և այլ երկերում կատարել է բասի երգամասերը: 1962-ին Նյու Յորքում ելույթ է ունեցել «Լինքոլն» մեծ համերգասրահի բացմանը: 1979-ից

Արա Բերբերյան

Լիդա Բևրբևրյան

Քեթի Բևրբևրյան

Մարինա Բևրկո

երգել է Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայում», մշտապես մասնակցել հայկ. երեկույթներին, տոնահանդեսներին. երկացանկում՝ Ա. Խաչատրյանի, Հ. Պերպերյանի, Ա. Տիգրանյանի գործերից:

1970-ին մենահամերգով հանդես է եկել Երևանում. երգացանկում՝ Կոմիտասի «Մոկաց Միրզա», «Երկինքն ամպել է», «Հով արեք», Ա. Հովհաննեսի «Արարատ», «Սիրտս նման է հայրենի լեռներին», «Լալեզար», Ա. Տիգրանյանի «Աչքս ճամփին», Վ. Կոտոյանի «Քնարական» և այլ երգեր:

ԲԵՐԲԵՐՅԱՆ Լիդա Արմենակի (ծ. 20.05.1938, Երևան), երաժշտագետ, արվեստաբան: 1938-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Թավրիզ: Սովորել է տեղի Թամարյան, Թեհրանի Մուշեղ Դավթյան և Մարիամյան (միջնակարգ) դպրոցներում: Հաճախել է Թեհրանի ազատ կոնսերվատորիան (1965–70, Տ. Խառատյանի և Փ. Բարքեշլիի դասարաններ), սովորել Թեհրանի համալսարանի գեղարվ-ի ֆակ-ի դաշնամուրի և արվեստաբանության բաժիններում: 1967-ից վերլուծ., քննադատ. հոդվածներով հանդես է եկել մամուլում (հայ., պարսկ.), հայ արվ-ին վերաբերող զեկույցներով՝ Իրանագետների միջազգ. III (1972, Թեհրան) և IV (1973, Շիրազ) համագումարներում, Էքս-էն-Պրովանսի (Ֆրանսիա), նաև Թեհրանի Իսլամ. ազատ համալսարաններում (2000) և հայկ. միություններում: 1986-ին Հայաստանում դասախոսություններ է կարդացել ԳԱԱ արվ-ի ինստ-ում, Մատենադարանում, Սբ Էջմիածնի Վեհարանում, Իրանահայերի միությունում: 1982-ից դասավանդում է Թեհրանի հայոց թեմի հայրենագիտ. երեկոյան դասընթացներում («Հայ երաժշտության պատմական զարգացումը» առարկան, դաշնամուր): Կազմակերպել է բազմաթիվ համերգներ («Կրոնական երաժշտական երեկո», «Շարականներ և տաղեր: Ե–Ժ տաղեր», 1984), «Ս. Ներսես Շնորհալի», «Շարականների երեկո», 1986, «Կարոս խաչ», «Առավոտ լուսո», 1986): Մասնակցել է հայկ. ներկայացումների, կինոնկարների երաժշտ. ձևավորման աշխ-ներին:

Հեղինակ է «Էմանուել Մելիք-Ասլանյան. դաշնակահար-կոմպոզիտոր» (2007) գրքի:

ԲԵՐԲԵՐՅԱՆ Քեթի Վահանի (Երվանդի), [04.07.1925, Էթլբորո՝ Մասսաչուսեթսի նահանգ (ԱՄՆ)–06.03.1983, Հռոմ], երգչուհի (քնար. սոպրանո): Ճանաչվել է Կ. Մոնտեվերդիի, ժամանակակից ավանգարդ ոճի երաժշտության, հայկ. ժող. երգերի և սեփ. ստեղծագործությունների կատարմամբ: Վաղ տարիքում երգեցողության, դաշնամուրի, ազգ. պարի մասնավոր դասեր է առել: 1937-ին ավարտել է Նյու Յորքի աղջիկների «Ջուլիա Ռիչման» ավագ դպրոցը: Երիտասարդ տարիքում մասնակցել է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի ներկայացումներին (կազմակերպել են հայ արտիստները): Սովորել է Նյու Յորքի համալսարանում, հաճախել է Կոլումբիայի համալսարանի թատրոնի և երաժշտության երեկոյան դասընթացներին: 1948-ին Փարիզում երաժշտության դասեր է առել Մ. Ֆրյադից: 1949-ից ապրել է Միլանում, երգարվ-ը կատարելագործել Ջ. դել Վիգոյի ղեկավարությամբ: Ամուսնացել է իտալացի կոմպոզիտոր Լ. Բերիոյի հետ, որը մեծապես նպաստել է նրա երգարվ-ի առաջընթացին: Բեմարվ-ի դասեր է առել թատրոնի անգլիացի ռեժ. Պ. Բրուքից: Հանդես է եկել բազմաթիվ դերերգերով (նախընտրել է Ժ. Մասնեի, Կ. Դեբյուսիի, Ժ. Բիզեի և ուր. օպերաները): Համագործակցել է ժամանակի կոմպոզիտորների, մասնավորապես՝ Ի. Ֆ. Ստրավինսկու հետ, որի ղեկավարությամբ մասնակցել է նրա 2 ձայնասկավառակի ստեղծմանը:

Բ-ի ամենաճանաչված ստեղծագործությունը «Ստրիպսոդիա» (1966) վոկալ երկն է: Երկացանկում՝ նաև Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Գ. Ալեմշահի, Գ. Ղազարոսյանի գործերից, հայկ. ժող. երգեր: Նրա համար երգեր են գրել Ի. Ֆ. Ստրավինսկին, Լ. Բերիոն («Շրջանակներ», «Էպիֆանիա», «Սեքվենցիա III», «Տարբեր ժողովուրդների երգեր»), Ջ. Քեյջը, Ա. Պուսերը (փոքր օպերա՝ Բ-ի և Լ. Բերիոյի հիշատակին, 2003) և ուր.:

Դասավանդել է Վանկուվերի համալսարանում, Տորոնտոյի, Քյոլնի, Միլանի կոնսերվատորիաներում, գրել հոդվածներ ժամանակակից երգարվ-ի մասին:

Արժանացել է մրց-ների Հռոմի, Վենետիկի, Վարշավայի, Պալերմոյի, Ամստերդամի և այլ միջազգ. փառատոներում:

ԲԵՐԿՈ Մարինա Ալեքսանդրի (13.08.1921, Կիև–12.03.2008, Թել Ավիվ, թաղված է Երևանում), երաժշտագետ: ՀԿՄ անդամ (1958-ից): Արամ *Քաթանյանի* կինը: Ավարտել է Սվերդլովսկի կոնսերվատո-

րիան (1946): 1947–56-ին դասավանդել է նույն կոնսերվատորիայում: 1958-ից ապրել է Երևանում: 1959-ից՝ Հայֆիլմի երաժշտ. խմբագիր: Կազմել և խմբագրել է «Հայկական ԽՍՀ երաժշտական մշակույթը» գիրքը (1985):

1998-ից ապրել է Իսրայելում:

Երկ. *Կոմիտասի անվան կոնսերվատորիա, Ե., 1973: Геворк Будагян, Е., 1989; Константин Орбелян, Е., 1990; Лазарь Сарьян, Е., 1994.*

ԲԵՔԱՐՅԱՆ Յոլակ Վաղինակի [30.10.1922, Ադիս Աբեբա–23.08.1980, ք. Սարտավաալա (Կարելիա՝ ՌԴ), թաղված է Երևանում], ջութակահար, կոմպոզիտոր, մանկավարժ: 1925-ին հայրենադարձել է: Ավարտել է ԵՊԿ ջութակի (1947) և կոմպոզիցիայի (1960) բաժինները: Աշխատել է Հայաստանի սիմֆ. նվագախմբում, դասավանդել Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում, ՀՊՄԻ-ում:

Գրել է «Փարվանա» (1969) պոեմը, «Ազատության երգ» (1966), «Ալագյազի մանիներ» (1975), «Տոնական նախերգանք» (1972) կանտատները, «Կերպարներ» (1980) դաշնամուր. կվինտետը, սյուիտներ՝ ֆլեյտայի (1971), ջութակահարների անսամբլի (1973) համար, սիմֆ. նախերգանք (1961), երգեր, խմբերգեր: Համահեղինակ է «Սոլֆեջջո» ուս. ձեռնարկի (1980):

ԲԺՇԿՅԱՆ Մինաս Սանուկի (15.10.1777, Տրապիզոն–26.11.1851, Վենետիկ), բանասեր, մանկավարժ, պատմաբան, ազգագրագետ, քերական, երաժշտագետ: ՎնտՄՄ անդամ, վարդապետ (1804): Սովորել է Տրապիզոնում, ապա՝ ՎնտՄՄ դպրոցում: 1808-ից մանկավարժ. գործունեություն է ծավալել Կ. Պոլսում, Տրապիզոնում բացել է դպրոցներ: 1825-ից ապրել է Ղրիմի Ղարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ) ք-ում, որտեղ հիմնադրել է եկեղեցի և դպրոց: 1845-ին մեկնել է Սևաստոպոլ, ապա՝ Վենետիկ:

Նրա «Քերականութիւն բազմալեզու» (1844) աշխ-ն արժանացել է Ռուս. կայսրության Մեծ ոսկե մեդալի: Ուսումնասիրել է նաև ազգ. երգարվ-ի, միջնադար. խազագրերի և նոր հայկ. ձայնագրության համակարգը: Լինելով Համբարձում *Լիմոնճյանի* ժամանակակիցը՝ արձանագրել է տեղեկություններ նրա կյանքի ու գործունեության մասին, նրա խորհրդով և օգնությամբ շարադրել հայ երաժշտությանը վերաբերող նոթեր:

Հեղինակ է երաժշտագիտ. «Երաժշտութիւն, որ է համառօտ տեղեկութիւն երաժշտական սկզբանց եւ ելեւէջութեանց եղանակաց եւ նշանագրաց խազից» (1815) անտիպ աշխ-յան:

Գրկ. *Հիսարլեան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան, ԿՊ, 1914, էջ 8: Տայեան Ղ., Հայ արդի ձայնագրութիւնը եւ Մինաս Բժշկեան, «Գեղունի», 1927, էջ 60:*

ԲԻՍ (< լատ. bis – կրկնակի), 1. խրախուս., հավանության բացականչություն համերգում՝ կատարման համար: Արտահայտում է նաև կատարածը կրկնելու պահանջ: 2. Նոտագրության մեջ՝ նշում տակտում՝ 2 անգամ կատարելու համար:

ԲԼՅՈՒԶ (< անգլ. blues, blue devils – վիատություն, թախիծ), ամերիկացի նեգրերի քնար. մեներգ: Հայտնի է XIX դ-ի 2-րդ կեսից: 1920-ական թթ-ին ձևավորվել է, այսպես կոչված, դաս. կամ քաղաք. Բ.: Սկզբնապես կատարվել է բանջոյով, կիթառով, ավելի ուշ՝ դաշնամուրով կամ գործիք. անսամբլով: Քնար. Բ-ի տեքստերում արտացոլվել են սոցիալ. բողոքի մոտիվներ: Բ-ին բնորոշ են տոնայնության փոփոխականությունը, շեշտասահ ռիթմերը, խառը չափը, վարիացիոն ձևը:

Բ-ի ծագմանը նպաստել է կոմպոզիտոր Ու. Հենդին («Մեմֆիս-Բլյուզ», 1912, «Սենտ-Լյուիս-Բլյուզ», 1914, ևն):

Դաս. Բ-ի կատարողներից են Չ. Հիլը, Բ. Սմիթը, Դ. Ունթերսփունը և ուր.:

Բ. ազդել է ջազի և փոփ երաժշտության ձևավորման վրա: Առանձնահատկություններն օգտագործել են XX դ-ի մի շարք կոմպոզիտորներ (Ջ. Գերշվին, «Ռապսոդիա բլյուզի ոճով»՝ դաշնամուրի և նվագախմբի համար, Մ. Ռավել, սոնատ՝ ջութակի և դաշնամուրի համար, 2-րդ մաս, և ուր.):

ԲԼՈՒԼ, բլուր, հայկ., քրդ. փող. երաժշտ. գործիք: Մնամեջ բաց սրնգի տեսակ է. ունի 8 ձայնանցք (7-ը՝ երեսի, 1-ը՝ հակառակ կողմում): Հնչյունաշարը դիատոնիկ է, տեմբրը՝ մեղմ, թավշյա: Տարածված է Հայաստանում:

ԲՆԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՇԱՐ, հնչյունը կազմավորող մասնակի տոների (հիմնական տոնի և նրա օբերտոնների) շարքը: Բ. հ-ում մասնակի տոների բարձրությունները միմյանց հարաբերում են ըստ թվերի բնական շարքի (1, 2, 3, 4, 5 ևն): Բ. հ-ի ստորին, լսող. ընկալման համար առավել մատչելի մասնակի տոները (մինչև 6-րդը ներառյալ) կազմում են մաժոր եռահնչյուն: Բ. հ. էականորեն



Յոլակ Բեքարյան

Մինաս Բժշկյան

Բլուլ

Անահիտ Բոգդանյան

Արա Բոգդանյան

Հրաչյա Բոգդանյան

նպաստում է երաժշտ. ինչյունի տեմբրի ձևավորմանը, կարևոր դեր ունի փող. (ստորին մասնակի տոները արտաբերվում են առանց փոխելու փողի երկարությունը), լար. գործիքների նվագներում:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԲՈԳԴԱՆՅԱՆ Անահիտ Հրաչյայի (16.10.1945, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: Հրաչյա ***Բոգդանյանի*** դուստրը, Արա ***Բոգդանյանի*** քույրը: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1968, Ռ. Անդրիասյանի դասարան) և ՄՊԿ ասպիրանտուրան (1970, ղեկ.՝ Վ. Գոռնոստաևա): 1970-ից դասավանդում է ԵՊԿ դաշնամուրի ամբիոնում (պրոֆ.՝ 1996-ից, ամբիոնի վարիչ՝ 1995–2000-ին): Նրա սաներից Ա. Բաբախանյանը, Լ. Արտեմյանը, Ա. Առուշանյանը և ուր. միջազգ. և հանրապետ. մրցույթների դափնեկիրներ են: Մի շարք հանրապետ. մրցույթների հանձնախմբերի անդամ է, Ռ. Անդրիասյանի անվ. հանրապետ. մրցույթի հիմնադիրը և հանձնախմբի նախագահը (2003): Վարպետության դասեր է վարել ՌԴ-ում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում և Իռլանդիայում:

Հեղինակ է մեթոդ. ձեռնարկների՝ «Ստեղծագործական սկզբի դաստիարակման որոշ հարցեր» (1987), «Մեթոդական ցուցումներ Լ. Չաուշյանի և Ռ. Սարգսյանի դաշնամուրային սոնատների կատարման համար» (1987), «Հոչակավոր դաշնակահար և մանկավարժ, պրոֆեսոր Ռ. Ք. Անդրիասյան» (1987), «Հայ դաշնամուրային սոնատ» (քրեստոմատիա, 2-րդ մաս) և հոդվածների:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2015):

ԲՈԳԴԱՆՅԱՆ Արա Հրաչյայի (ծ. 27.06.1943, Երևան), ջութակահար: Հրաչյա ***Բոգդանյանի*** որդին, Անահիտ ***Բոգդանյանի*** եղբայրը: ՌԴ արվ. վաստ. գործիչ: Ավարտել է Երևանի հատուկ երաժշտ. դպրոցը, ՄՊԿ ջութակի բաժինը և ասպիրանտուրան (1972, Դ. Ֆ. Օյստրախի դասարան): 1968-ից դասավանդել է ԵՊԿ-ում, 1995-ից՝ ՄՊԿ-ում (պրոֆ.), միաժամանակ՝ Մոսկվայի երաժշտ. դպրոցում և Ֆ. Շոպենի անվ. երաժշտ. քոլեջում: Վարպետության դասեր է վարել Հվ. Կորեայում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում: 1968-ից հանդես է եկել մենահամերգներով, նաև եռյակի կազմում (1975-ից), շրջագայել է Բուլղարիայում, Իսպանիայում, Ալժիրում, ԱՄՆ-ում և այլուր: Հեղինակ է գիտամեթոդ. ձեռնարկների՝ «Երաժշտական հիշողության հարցեր» (1977) ևն, կազմել է «Սպենդիարով՝ 5 պիես» (մշակում, 1976), «Պագանինի: Կապրիսներ՝ դաշնամուրի նվագակցությամբ», «Հայ կոմպոզիտորների պիեսների ժողովածու» (1982) ժող-ների:

Ջութակահարների միջազգ., ՌԴ ԿՄ (1-ին մրց., երկուսն էլ՝ 1968) մրցույթների դափնեկիր:

ԲՈԳԴԱՆՅԱՆ Հրաչյա (Հրաչիկ) Կարապետի [09 (22).10.1913, Դոնի Ռոստով–29.12.1987, Երևան], ջութակահար, մանկավարժ: Արա և Անահիտ ***Բոգդանյանների*** հայրը: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է ԵՊԿ (1931), ՄՊԿ (1936): Հանդես է եկել մենահամերգներով և սիմֆ. նվագախմբի հետ: 1932–56-ին (ընդհատումներով)՝ Ա. Սպենդիարյանի անվ. քառյակի կազմում (1-ին ջութակ): 1940-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1958-ից, ամբիոնի վարիչ՝ 1964–78-ին): Կազմել և խմբագրել է (Ա. Շամշյանի հետ) հայ կոմպոզիտորների ջութակի պիեսների 2 ժող.:

Գրկ. *Բուդաղյան Ա., Հրաչյա Բոգդանյան, Ե., 1994:*

ԲՈՅԱՋՅԱՆ Արա Արիստակեսի (1896, Կ. Պոլիս–1920, Կ. Պոլիս), ջութակահար, կոմպոզիտոր: Ջութակ նվագել է վաղ տարիքից, հետագայում կատարելագործվել է Գերմանիայում և Ֆրանսիայում, դասեր առել չեխ ջութակահար և կոմպոզիտոր Յ. Կուբելիկից: Մենահամերգներով հանդես է եկել Կ. Պոլսում. երկացանկում՝ Վ. Ա. Մոցարտի, Ն. Պագանինիի, Պ. Սարասատեի, Ռ. Շումանի ստեղծագործություններից:

Գրել է դաշնամուր. տրիո, «Իրիկնային երգ» («Chant du soir», հրտ.՝ Լայպցիգ) սերենադը, «Հայ և հույն գաղթականների ողբը» («Plainte des déportes arméniens et grecs», հրտ.՝ Կ. Պոլիս), պիեսներ և այլ գործեր:

ԲՈՅԱՋՅԱՆ Գևորգ (1944, Ստամբուլ–1985, Իտալիա), երգիչ (քնար. տենոր): Երգել է հայկ. եկեղեցիներում և երգչախմբերում, 1962-ից՝ Ստամբուլի քաղաքապետարանի երգչախմբի կազմում: Առաջին անգամ, որպես մենակատար, հանդես է եկել 1968-ին՝ Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր» օպերայում: 1972-ից՝ Ստամբուլի պետ. օպեր. թատրոնի մեներգիչ. կատարել է գլխ. դերերգեր Գ. Դոնիցետտիի «Դոն Պասկուալե», Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան», Շ. Գունոյի «Ֆաուստ» և այլ օպերանե-

րում, նաև Կ. Օրֆի «Կարմինա Բուրանա» բեմ. կանտատում: 1973-ին մասնակցել է Զալցբուրգում և Ստամբուլում (արվ-ի 1-ին), 1974-ին՝ Իռլանդիայում կազմակերպված փառատոներին: 1970-ական թթ-ի վերջերին տեղափոխվել է Իտալիա, ապա 4 տարի երգել է Լոնդոնի օպեր. թատրոնում: Հանդես է եկել համերգներով, կատարել նաև հայկ. երգեր: 1980-ին Ժնևում երգել է արիաներ Ջ. Վերդիի «Տրավիատա», Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», Ջ. Պուչչինիի «Տոսկա» և այլ օպերաներից, նաև Մ. Եկմալյանի, Է. Հովհաննիսյանի, Գ. Արմենյանի և ուր. երգերից:

ԲՈՅԱՋՅԱՆ Կարպիս (Կարապետ, ծ. 1946, Բեյրութ), երգիչ (բարիտոն): Ավարտել է Բեյրութի կոնսերվատորիան, կատարելագործվել Բոլոնիայի կոնսերվատորիայում, միաժամանակ ձայնը մշակել նշանավոր երգիչ-մանկավարժների ղեկավարությամբ: Նույն շրջանում Տուրինի և Տրիեստի օպեր. թատրոններում հանդես է եկել Ռիգոլետտոյի (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո»), 1975-ին Վերոնայի օպեր. թատրոնում՝ Դոն Կառլոսի (Ջ. Վերդիի «Դոն Կառլոս») դերերգերով: Երգել է նաև Համբուրգի, Վիեննայի, Շտուտգարտի, Մյունխենի, Նյու Յորքի («Մետրոպոլիտեն օպերա») և այլ օպեր. թատրոններում (Ամոնասրո, Յագո՝ Ջ. Վերդիի «Աիդա», «Օթելլո», Դոն Ժուան՝ Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», Էսկամիլիո՝ Ժ. Բիզեի «Կարմեն», ևն): Բ-ի երգեցողությունն իտալ. մամուլում բնորոշել են որպես «արվեստի բացառիկ կատարելություն»: Հանդես է եկել նշանավոր երգիչներ Պ. Դոմինգոյի, Մ. Կաբալիեի և ուր. հետ:

ԲՈՅԱՋՅԱՆ Հայկ Արսենի (ծ. 15.05.1938, Փարիզ), կոմպոզիտոր: 1948-ից ապրել է Բուենոս Այրեսում: Ավարտել է Ֆ. Լիստի անվ. կոնսերվատորիան: 1958-ին տեղափոխվել է Բոստոն, կատարելագործվել «Նյու Ինգլանդ» կոնսերվատորիայում: Արվ-ի ինքնատիպությունը դրսևորվել է նրա ստեղծագործ. ոճում. առաջնայինը համարել է երկի գաղափարը, ոգին ու ասելիքը, որոնք միահյուսել է ատոնալ, բազմատոնալ, 12-աստիճան. երաժշտ. ոճերի տարրերով:

Գրել է «Սիմֆոնիա մինիմա», «Տպավորություններ», «Պատկեր» (Հ. Շիրազի հիշատակին) սիմֆ. երկերը, «Ծովի շշնջյունները» տրիոն, «Մենախոսություն» ֆան-

տազիան՝ ձայնի և դաշնամուրի, պիեսներ՝ դաշնամուրի, ջութակի, ֆլեյտայի համար, սոնատներ («Գրեմմի» մրց.՝ դաշնամուր. 3-րդ սոնատի համար), փող. կվինտետ, «Canticle N 2»՝ թավջութակի և դաշնամուրի համար, դաշնամուր. «32 վարիացիա Բախի թեմայով» ևն: Առանձնանում է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված «Լռության պահ» օրատորիան (ասմունքող, մեներգչուհի, նվագախումբ և երգչախումբ), որն առաջին անգամ կատարվել է Քեմբրիջի «Սանդերս» թատերասրահում (1986-ի ապրիլ):

Այցելել է Երևան և Գյումրի (1983, 1987, 1994):

ԲՐՈՒՏՅԱՆ Արշակ Հովհաննեսի [21.09(03.10).1864, գ. Դաշղալա (այժմ՝ գ. Քարբերդ՝ ՀՀ Շիրակի մարզում)–25.08.1936, Լենինական], երաժիշտ, մանկավարժ, բանահավաք, նկարիչ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1882), որպես նկարիչ՝ կատարելագործվել Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ում (1903): Դասավանդել է Ալեքսանդրապոլի դպրոցներում, 1895-ին հավաքել է շուրջ 500 երգ: Ձայնագրել և կորստից փրկել է Ջիվանու, Խայաթիի և այլ աշուղների երգեր, գրառել հոգևոր երգեր: Հիմնադրել է և ղեկավարել երգչախմբեր, նպաստել բազմաձայնության տարածմանը: Ստեղծել է Ա. Մխիթարյանցի, Գ. Լևոնյանի, Թ. Անտիկյանի և ուր. դիմանկարներ, նաև սրբապատկերներ տեղի հայկ. և հուն. եկեղեցիների համար: Բ-ի անունով է կոչվում երաժշտ. դպրոց Գյումրիում:

Երկ. *Դասագիրք հայկական եկեղեցական ձայնագրութեան, Վաղ-պապ, 1890: Ռամկական մրմունջներ, Ալեքսանդրապոլ, 1895, 1898, 1901, 1904:*

ԲՐՈՒՏՅԱՆ Մարգարիտ (Մարգո) Արամի (23.05.1922, Ալեքսանդրապոլ–28.09.2002, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1955): Ավարտել է ԵՊԿ (1946), ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1951): 1946-ից դասավանդել է ԵՊԿ-ում (վոկալ-տես. ֆակ-ի դեկան՝ 1977–81-ին, հայ երաժշտության բանագիտության ամբիոնի վարիչ՝ 1988–92-ին, պրոֆ.՝ 1982-ից), 1938–50-ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: 1946–51-ին՝ Հայֆիլհարմոնիայի երաժշտ. խմբ. և ծրագրերի բաժնի վարիչ (կազմակերպել է առաջին երաժշտ. դա-

Հայկ Բոյաջյանը կոպթի պահին



Արշակ Բրուտյան

Մարգարիտ Բրուտյան

Ցիցիլիա Բրուտյան



Արմեն Բուդաղյան

Գևորգ Բուդաղյան

սախոսությունները), 1969–92-ին՝ ժող. երաժշտության ստեղծագործության կաբինետի գիտ. ղեկ. (նաև հիմնադիր), 1972-ից՝ ՀԿՄ բանահյուսության հանձնաժողովի նախագահ:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայկ. ժող. երաժշտությանը և երաժշտ. բանագիտությանը: Գրել է մենագրություններ, երաժշտագիտ. հոդվածներ, ուսումնամեթոդ. ձեռնարկներ («Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր», ձեռնարկ, «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», 4 լրց. և բրփխ. հրտ., 2014): Հ. Էլոյանի հետ կազմել է «Հայ մոնոդիկ երաժշտություն 1794–1991» (1991) գիրքը:

Երկ. *Թաթուլ Ալթունյան, Ե., 1962: Սրեփան Դեմուրյան, Ե., 1969: Վարդգես Տալյան, Ե., 1978: Հակոբ Աապտուրյան. սփյուռքահայ գրողն ու երաժիշտը, Ե., 1999:*

Գրկ. *Կիրակոսյան Ա., Մարգարիտ Արամի Բրուտյան, Ե., 2007 (Նյութեր կենսամատենագիտության 2):*

ԲՐՈՒՏՅԱՆ Ցիցիլիա Գևորգի (24.09.1920, Թիֆլիս–21.03.2000, Երևան), երաժշտագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊԿ պատմատես. բաժինը (1942), ՄՊԿ ասպիրանտուրան (1951): 1957-ից դասավանդել է ՀՊՄԻ-ում (նաև ամբիոնի վարիչ): 1953-ից մամուլում հրապարակել է հայ երաժշտությանը, նաև սփյուռքահայ երաժիշտների մի քանի սերունդների ստեղծագործությանը, կատարող. արվ-ին և երաժշտատես. մտքին վերաբերող հոդվածներ:

Լույս են տեսել Բ-ի «Շարա Տալյան» (1956), «Արամ Տեր-Հովհաննիսյան» (1962), «Հայրենաբաղձ հնչյուններ» (1962, 1964), «Սփյուռքի հայ երաժիշտները» (1968), «Կոմիտաս» (1969), «Արուս Բաբալյան» (1979), «Սփյուռքահայ երաժշտական մշակույթը» (1982), «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները» (1996), «Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ» (2000) աշխ-ները:

ԲՈՒԴԱՂՅԱՆ Արմեն Գևորգի (ծ. 05.11.1936, Երևան), երաժշտագետ: Գևորգ ***Բուդաղյանի*** որդին: Արվեստագիտ. թեկնածու (1970): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Պրոֆ. (1989): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1960, Հ. Բոգդանյանի դասարան), երաժշտագիտության (1963, Գ. Տիգրանովի դասարան) բաժինները, Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1967, ղեկ.՝ Գ. Տիգրանով): 1967-ից դասավանդում է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1978–82-ին), միաժամանակ՝ ԵԹԿՊԻ-ում (1991-ից): 1963-ից՝ Հայֆիլհարմոնիայի և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի խմբ. և դասախոս:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ երաժշտության պատմությանը, տեսությանը և կատարող. արվ-ին: Հեղինակ է «Ջութակի սոնատը հայ երաժշտության մեջ» (1984), «Հրաչյա Բոգդանյան» (1994), «Ալեքսանդր Չաուշյան» (1995, երեքն էլ՝ հայ.), «Կարպ Սավելևիչ Դոմբաև» (1996), «Ջութակահար Հակոբ Վարդանյան» (1998), «Ավետ Գաբրիելյանը ուղու սկզբում» (1999), «Վահե Ահարոնյան» (2001), «Վիլլի Մոկացյան» (2002), «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա – 85: 1923–2008» (2008), «Դմիտրի Նիկոլաևիչ Լեկգեր» (2012), «Ջավեն Վարդանյան» (2013), «Ջարեհ Սարգսյան...» (2014), «Կոնստանտին Մելիք-Վրթանեսյան» (2016), «Աննա Մնացականյան...» (2017, բոլորը՝ ռուս.), համահեղինակ՝ «Վիլհելմ Շպեռլինգ» (ռուս., 2016) և այլ գրքերի:

ԲՈՒԴԱՂՅԱՆ Գևորգ Երվանդի [04 (16).10.1899, Բաքու–11.04.1978, Երևան], դիրիժոր, հաս. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): Արմեն ***Բուդաղյանի*** հայրը: Ավարտել է ՄՊԿ օպեր. սիմֆ. դիրիժորության բաժինը (1929, Կ. Սարաջևի դասարան): 1922–29-ին՝ Մոսկվայի հայ երաժշտ. կոլեկտիվի նախագահ: 1929–78-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1950-ից, պրոռեկտոր՝ 1934–36, 1949–58-ին): 1932–58-ին՝ ԵՕԲԹ հիմնադիր-դիրիժորներից, որտեղ ղեկավարել է Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար», Կ. Զաքարյանի «Մարջան», Ա. Տեր-Ղևոնդյանի «Արևի ցոլքերում», Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», ռուս. և արևմտաեվրոպ. դաս. մի շարք օպերաների բեմադրություններ: Ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության՝ գրել է «Խանդութ» երաժշտ. կոմպոզիցիան (1945), եղել նրա «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմ. հրատ-յան (11 հատոր) խմբ.:

ԲՈՒՆԱԹՅԱՆ Սիլվա Արտաշեսի [12.02.1917, Վլադիկավկազ (Հս. Օսիա՝ ՌԴ)–2010, Երևան], դաշնակահարուհի: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1974): Սկզբն.

երաժշտ. կրթությունն ստացել է ծննդավայրում: 1931-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Ֆրունզե (այժմ՝ Բիշքեկ՝ Ղրղըզստան), ուսումը շարունակել արվ-ի դպրոցի դաշնամուրի բաժնում: Ավարտել է Դոնի Ռոստովի երաժշտ. տեխնիկումը (1935), Լենինգրադի կոնսերվատորիան (1940, Ն. Ի. Գոլուբովսկայայի դասարան): 1938–40-ին դասավանդել է Լենինգրադի մասնագիտ. երաժշտ. դպրոցում (մեծահասակների համար), 1946-ից՝ ԵՊԿ դաշնամուրի բաժնում (ամբիոնի վարիչ՝ 1975–93-ին, պրոֆ.՝ 1978-ից): 1940–46-ին՝ ԵՕԲԹ նվագախմբի դաշնակահար. մասնակցել է բազմաթիվ ներկայացումների և սիմֆ. համերգների, այդ թվում՝ Դ. Դ. Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիայի կատարմանը (1942, դիրիժոր՝ Մ. Թավրիզյան), 1944-ին՝ Կովկաս. հանրապետությունների երաժշտ. փառատոնին (Թբիլիսի): 1940–70-ական թթ-ին հանդես է եկել մենահամարգներով:

Գրկ. *Кокжаев М., Сильва Бунатян [О представителе арм. фортепиан. школы], Е., 2005.*

ԲՈՒՆԻ (Բունիաթյան) Վարդան Գևորգի [15(27).02.1888, Վաղարշապատ–05.06.1960, Երևան], կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1952): Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, երգել Կոմիտասի երգչախմբում: Հավաքել և մշակել է ժող. երգեր ու պարեղանակներ: Գրել է երգեր, գործիք. պիեսներ, խմբերգեր (հայտնի է «Սասունցի Դավիթ» էպիկ. երգաշարը՝ ժող. գործիքների նվագախմբի նվագակցությամբ), երաժշտ. կատակերգություններ՝ «Եվա», «Եվայի աղջիկը», «Հեղափոխության փեսաները»: Նվագել է թառ, քամանչա և այլ գործիքներ: 1908-ից հիմնադրել և ղեկավարել է երգչախմբեր, վոկալ-գործիք. անսամբլներ, համերգներով հանդես եկել Հայաստանում, Ռուսաստանի հայաշատ վայրերում:

Ժող. գործիքների նվագախմբի դիապազոնն ընդարձակելու և սիմֆ. նվագախմբին մոտեցնելու նպատակով ստեղծել է սազի, թառի, քամանչայի, քամանի, թութակի (2 տեսակ), բլուլի, դուդուկի (տարբեր ռեգիստրների 3 տեսակ) և զուռնայի ռեգիստր. տեսակներ (օգտագործվում են նաև Դաղստանում և Տաջիկստանում), որոնք արժանացել են Ալեքսանդր ***Սպենդիարյանի*** դրվատանքին:

Բ-ի կատարելագործած գործիքներով կազմավորած «Արևելյան վերակառուցված սիմֆոնիկ նվագախումբը» գործել է Երևանում (1925–36):

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ Տիգրան (ծ. 09.08.1991, Երևան), երգեհոնահար, երաժշտագետ: Սովորել է ԵՊԿ տեսության բաժնում (2008), ավարտել երգեհոնի բաժինը (2014, Վ. Ստամբոլցյանի, Ա. Բակունցի դասարաններ): 2014–15-ին՝ Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի փոխտնօրեն, «Perform Me» միջազգ. փառատոնի կազմակերպիչներից: 2011-ից, որպես երգեհոնահար, հանդես է եկել Երևանի Կամեր. երաժշտության կենտրոնի ամենամյա երգեհոն. համերգներին: Մասնակցել է «2nd Armenian Young Composers Festival» (2012), World Organ Day (2013), «Verdi 200» (2013), 3rd New Names International Festival of Young Musician-Performers (2013), «World Choral Day» (2014) և այլ փառատոների, միջազգ. և հանրապետ. երաժշտագիտ. կոնֆերանսների: 2016-ից ապրում է Օբեռլինում (ԱՄՆ):

Սիլվա Բունաթյան

Վ. Ս. Յվետիկովի անվ. դաշնակահարների 3-րդ (2-րդ մրց., 2012, Եկատերինբուրգ՝ ՌԴ), Ի. Բրաուդոյի անվ. երգեհոնահարների 2-րդ (Հատուկ մրց., 2014, Ս. Պետերբուրգ) միջազգ. մրցույթների դափնեկիր:

Վարդան Բունի

ԲՈՒՐԱԴԱ Թեոդոր [3.10.1839, Յասսի (Ռումինիա)–17.02.1923], ռումինահայ ազգագրագետ, երաժշտագետ, բանահավաք, ջութակահար: Ռումինիայի ակադ-ի անդամ (1877-ից): Իրավաբան. և երաժշտ. կրթություն ստացել է Փարիզում: 1862–1909-ին համերգներով հանդես է եկել Ռումինիայում, Ռուսաստանում և այլուր: Յասսիում հրատարակել է «Երաժշտական ալմանախ» (1875–77), դասավանդել տեղի կոնսերվատորիայում (1877–1901): Ռում. պատմ. երաժշտագիտության հիմնադիրը, առաջին երաժշտագիտ. բառարանի հեղինակը և ռում. ազգ. էթնոերաժշտագիտության սկզբնավորողներից: Հավաքել է ռումին. երաժշտ. բանահյուսության գործեր, հայտնաբերել հայկ. երգ ու պարի հետքեր Ռումինիայում («Արմենյասկ» պարը ևն):



Թեոդոր Բուրադա

Գրել է երկեր՝ ջութակի, դաշնամուրի, ջութակի և դաշնամուրի համար: Հեղինակ է «Եղերերգեր» (1878), «Հարսանեկան սովորույթներ» (1889) աշխ-ների:

Երկ. *Opere, v. 1–4, Buc., 1974–1980.*

Արշակ Բուրջալյան

ԲՈՒՐՋԱԼՅԱՆ (Բուրջալով) Արշակ Սերգեյի [26.12.1879 (07.01.1880), Աստրախան (Ռուսաստան)–04.09.1946, Մոսկվա], ռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1934): Հայ ռեժ. արվ-ի հիմնադիրներից: Մեծապես նպաստել է դրամատիկ. և օպեր. ազգ. թատրոնների սկզբունքների հաստատմանը: Ավարտել է Աստրախանի ռեալ. և Ս. Պետերբուրգի ծով. առևտր. ուսումնարանները: Աշխատել է Մոսկվայի

Տեսարան Ժ. Բիզեի «Կարմեն» օպերայի բեմադրությունից (1934, ռեժ.՝ Ա. Բուրջալյան)

և Դոնի Ռոստովի (1908–21), Թիֆլիսի Հայ դրամայի (1922–30, ընդհատումով), Հայաստանի Առաջին պետ. (այժմ՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն, 1923–27) և այլ թատրոններում: Բեմադրել է Մոլիերի «Երևակայական հիվանդ» (1922), Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» (1924), Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» (1926), «Համլետ» (1942), Շիրվանզադեի «Մորգանի խնամին» (1927) և այլ գործեր: 1932-ին մասնակցել է ԵՕԲԹ հիմնադրմանը (մինչև 1937-ը՝ գլխ. ռեժ.): Աշակել է օպեր. ռեժ. արվ-ի սկզբունքներ, բացահայտել օրինաչափություններ, որոնք գործածվել են խորհրդ. օպեր. արվ-ում: Բեմադրել է Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Շ. Գունոյի «Ֆաուստ» (բոլորը՝ 1933), Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», Ժ. Բիզեի «Կարմեն», Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան» (բոլորը՝ 1934), «Տոսկա» (1937), Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար» (1935), Լ. Դելիբի «Լակմե», Ի. Ի. Զերժինսկու «Խաղաղ Դոն» (երկուսն էլ՝ 1937), Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» (1940) օպերաները:

Գրկ. *Արշակ Բուրջալյան: Հոդվածներ, նամակներ, ժամանակակիցները նրա մասին, Ե., 1959:*

Գ

ԳԱԲԱՅԱՆ Օլգա Ալեքսանդրի (ծ. 27.12.1940, Երևան), երգչուհի (մեցցո սոպրանո): ՀՀ ժող. արտիստ (1984): Ավարտել է ԵՊԿ (1966, Ա. Քարամյանի դասարան): 1966-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի: 1992-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2003-ից): Խաղացանկում՝ հայկ., ռուս. և արևմտաեվրոպ. դաս. ու ժամանակակից օպերաների լավագույն դերերգերից՝ Ալմաստ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Փառանձեմ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Թամար (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Աննա (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ամներիս, Ազուչենա, Էբոլի (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», «Դոն Կառլոս»), Ադալջիզա (Վ. Բելլինիի «Նորմա») ևն: Գ-ի արվ-ին բնորոշ են կատարող. բարձր վարպետությունը, երաժշտականությունը: Համերգ. ծրագրով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, Ռումինիայում, Լիբանանում, Սիրիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլուր:

Երաժիշտ-կատարողների այսրկովկաս. մրցույթի (1965, Թբիլիսի, 3-րդ մրց.) դափնեկիր, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ (2016):

Գրկ. *Օլգա Գաբայան. Մեցցո-սոպրանո: Արիաներ, ռոմանսներ և երգեր, կազմ.՝ Ա. Գալոստյան, Ա. Քոչարյան, Ե., 2013:*

ԳԱԲԲԻԵԼՅԱՆ Ավետ (Տեր-Գաբրիելյան Ավդեյ) Կարապետի [7(19).04.1899, Դոնի Ռոստով–19.06.1983, Մոսկվա, թաղված է Երևանում], ջութակահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): Ավարտել է Դոնի Ռոստովի երաժշտ. ուսումնարանը (1921), ՄՊԿ (1929, Լ. Մ. Ցեյտլինի դասարան): 1922–23-ին դասավանդել է Երևանի երաժշտ. ստուդիայում, 1923–24 և 1941–44-ին՝ ԵՊԿ-ում (ջութակի և անսամբլի դասարաններ, պատվավոր պրոֆ.՝ 1974-ից), 1938–79-ին՝ ՄՊԿ-ում (անսամբլի, 1946–54-ին՝ նաև ջութակի դասարաններ, պրոֆ.՝ 1976-ից): 1925-ին՝ Մոսկվայի հայ ուսանող երաժիշտներից կազմված լար. քառյակի (հետագայում՝ Կոմիտասի անվ. քառյակ, մինչև 1974-ը՝ 1-ին ջութակ) ղեկ.: Նվագացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Վ. Ա. Մոցարտի, Պ. Ի. Չայկովսկու, Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտները, Է. Լալոյի «Իսպանական սիմֆոնիան»: Հանդես է եկել դաշնակահարներ Ա. Գոլդենվեյզերի, Կ. Ն. Իգումնովի, Հ. Գ. Նեյհաուզի, Վ. Կ. Մերժանովի և ուր., նաև նվագախմբերի հետ, համերգ. ծրագրերում՝ ջութակի համար գրված լավագույն գործերից: Կատարումներն առանձնացել են վարպետությամբ, ռոմանտիկ. ոգեշնչվածությամբ, իմպրովիզացիոն անմիջականությամբ: Գ-ի անունը գրանցված է ՄՊԿ առավել աչքի ընկնող շրջանավարտների մարմարե «Պատվո տախտակին» (1929): Երևանում գործում է Գ-ի անվ. երաժշտ. դպրոց:

Երաժիշտ-կատարողներ համամիութ. մրցույթի դափնեկիր (1935, Լենինգրադ, 2-րդ մրց.), ԽՍՀՄ (1946), ՀԽՍՀ (1965) Պետ. մրց-ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1939):

Գրկ. *Թադևոսյան Ա., Մեծ Կոմիտասի անունով, Ե., 1959: Մարկոսյան Ա., Կոմիտաս քառյակ: Չորս դիմանկար, Ե., 2006: Давидян Р., Авет Габриелян, Е., 1974; Будагян А., Авет Габриелян в начале пути, Е., 1999.*

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ (Տեր-Գաբրիելյան) Գալուստ Գևորգի (16.04.1905, Քութայիս–14.06.1969, Թբիլիսի, թաղված է Երևանում), երգիչ (քնար. տենոր): ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): Ավարտել է ՄՊԿ (1938): 1938–59-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ. դերերգերից են՝ Աշուղ, Շեյխ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Սարո, Սանթուր (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ»), Սարոյան (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Տիրիթ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Լևոնիկ (Ա. Այվազյանի «Թափառնիկոս»), Ֆաուստ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Լենսկի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Ռուդոլֆ (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Ալֆրեդ (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Ջերալդ (Լ. Դելիբի «Լակմե») ևն:

Գ-ի կատարումներն աչքի են ընկել բեմերաժշտ. կերպարի հավաստիությամբ:

Օլգա Գաբայան

Օ. Գաբայանը Ադալջիզայի դերում (Վ. Բելլինիի «Նորմա»)

Ավետ Գաբրիելյանը ելույթի պահին

Գալուստ Գաբրիելյան

ԳԱԴԵՄՋՅԱՆ Ժիրայր (ծ. 1964, Բուխարեստ), դաշնակահար: Սովորել է Բուխարեստի «Ջորջե Էնեսկու» երաժշտ. ուսումնարանում, ապա՝ «Չիպրիան Պորումբեսկու» կոնսերվատորիայում: Երկացանկում՝ Դ. Սկառլատտիի, Գ. Հենդելի, Ա. Սկրյաբինի, Ա. Խաչատրյանի ստեղծագործություններից:

Դաշնակահարների մրցույթների (1979, 1983, Իտալիա) դափնեկիր:

Նիկոլ Գալանդերյան

ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ Մարիա Նիկոլայի [13.05.1903, Թիֆլիս–07.07.1988, Տյուբինգեն (Գերմանիա)], դաշնակահարուհի: Ավարտել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանը (1921, 1924-ից՝ կոնսերվատորիա): 1921-ից կատարելագործվել է Բեռլինում: Համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Իսպանիայում, Իտալիայում, Բելգիայում, Դանիայում և այլուր:

Ուշագրավ են Գ-ի ելույթները երգիչ Ֆ. Շալյապինի հետ. 1936–38-ին նվագակցել է նրան, միաժամանակ հանդես է եկել նաև որպես մենակատար: Բեռլինի, Հռոմի, Բոլոնիայի հնագույն գրադարաններում հայտնաբերել է Յ. Ս. Բախի տոհմի ներկայացուցիչների, հին շրջանի իտալացի ու իսպանացի կոմպոզիտորների բազմաթիվ

«Գողթան» երգչախումբը (հիմնադիր՝ Նիկոլ Գալանդերյան՝ կենտրոնում, 1942, Թեհրան)

ստեղծագործություններ և հանդես եկել նրանց ինքնատիպ կատարումներով: Նվագացանկում՝ Վ. Լոբոսի, Ջ. Գերշվինի, Բ. Բրիտտենի, Ս. Վ. Ռախմանինովի, Ս. Ս. Պրոկոֆևի, Դ. Դ. Շոստակովիչի, Կոմիտասի, Ա. Հարությունյանի («Կոնցերտինո»), Ա. Բաբաջանյանի («Կապրիչչո»), Ա. Խաչատրյանի և ուր. երկերից: Գ-ի կատարմամբ թողարկվել են ձայնասկավառակներ («Կ. Ֆ. Է. Բախի կլավիրային կոնցերտները», «Ռուսական երաժշտություն» ևն):

ԳԱԼԱՆԴԵՐՅԱՆ Նիկոլ Գասպարի [07.09.1881, Ակն (Արմ. Հայաստան)–02.03.1944, Թեհրան], կոմպոզիտոր, քաղաք. երգ-ռոմանսի հիմնադիրը հայ երգարվ-ում: 1890-ական թթ-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Վառնա, որտեղ շարունակել է ուսումը, սովորել սրինգ նվագել: 1900–03-ին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (աշակերտել է ***Կոմիտասին***), երգել դպիրների խմբում: Ուսանելու տարիներին ծանոթացել է հայկ. ձայնանիշների՝ խազերի և եկեղեց. երաժշտության նրբություններին, հետագայում սովորել, ուսումնասիրել և ձայնանիշներով տպագրված Պատարագը փոխադրել է եվրոպ. նոտաների: Երգեցողություն է դասավանդել Բուլղարիայի Վառնա, Շումեն ք-ների, նաև Թեհրանի հայկ. դպրոցներում: 1911-ից ապրել է Թեհրանում: Սովորել է կիթառ, ջութակ և դաշնամուր նվագել: 1925-ին ստեղծել է «Գողթան» (1942-ից՝ «Գալանդերյան») երգչախումբը:

Գրել է ռոմաններ, խմբերգեր, մանրանվագներ՝ ջութակի, թավջութակի, դաշնամուրի համար, մանկ. օպերաներ և երգեր, նաև Վ. Տերյանի («Կարուսել»), Ե. Չարենցի («Ես իմ անուշ Հայաստանի»), Դևի («Լույսերը մարան»), Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Մ. Մեծարենցի, Վ. Գյոթեի («Փոքրիկ տղան») և ուր. խոսքերով՝ քաղաք. ժող. երգերի ոճով, մշակել ժող. երգեր: Լավագույն երգ-ռոմանսներից են՝ «Արդյոք ո՞ւր ես», «Ես սիրում եմ», «Հեռանալ մոռանալ», «Կապույտ աղջիկ», «Ափսոսանք», «Դու նորից եկել ես», «Ծիրանավառ գիշերներ», «Կանցնին օրեր», «Այնպես նազիկ» ևն: Գեղջկական ժող. երգի ինտոնացիոն-ռիթմ. տարրերով է առանձնանում «Ակնա հարսանիք» խմբերգերի շարքը («Այ իմ աղուր», «Ժամէն կուգայ», «Բարի լուսուն, աղուր», «Թագուրի մէր, դուն դուրս արի», «Քալէ հարսնուկ», «Մարալօ» ևն): Ժող. պարերգերի նմանությամբ են ստեղծված «Դալիլո», «Չիլո-Չիլո», «Վարդ եմ քաղել», «Վայ լէ, լէ» և այլ խմբերգեր:

Հեղինակ է նաև «Լալվարի որսը» (ըստ Վ. Միրաքյանի, բեմ.՝ Թեհրանում, 1928, 1930), «Փարվանա» (ըստ Հ. Թումանյանի, 1932), «Հովիվը» (ըստ Վ. Փափազյանի

«Լուր-դա-լուր» զրույցի, 1933), նաև մանկ. «Չարի վերջը», «Պողոս-Պետրոս», «Պապն ու շաղգամը», «Կնունք-կնունք», «Ուլիկը» և այլ օպերաների, «Ծիծեռնակ», «Լորիկ», «Անբախտ փիսո», «Ծիտիկի հարսանիքը», «Կաչաղակ» մանկ. երգերի, «Գյուղական էսքիզներ» խմբերգերի շարքի և այլ գործերի: Նրա երգերի լավագույն կատարողներից են Հ. Բաղդասարյանը, Վ. Խաչատրյանը, Վ. Սամվելյանը, Ռ. Մաթևոսյանը և ուր.:

Երկ. *Յոյների եւ յոյների մրմունջներ: Երգեր եւ ռոմանսներ, խոտան, կազմ.՝ Յ. Բեքարյան, Ե., 1995: Օպերաներ, խոտան, բնագր. հրտ.՝ Մ. Մոշեղյան, Ե., 2003:*

Գրկ. *Երեմեան Ա., Երգահան Նիկոլ Գալանդէրեան, Թեհրան, 1947: Բրուտյան Յ., Սփյուռքահայ երաժիշտները, Ե., 1968, էջ 188–200: Տէր-Յովհաննիսեան Ա., Յուշեր երգահան Նիկոլ Գալանդէրեանի մասին, Թեհրան, 1962:*

ԳԱԼԱՉՅԱՆ Գոհար Համբարձումի (12.12.1923, Երևան–09.09.2008, Երևան), երգչուհի (մեցցո սոպրանո): ՀՀ ժող. արտիստ (1967): Ավարտել է ԵՊԿ (1952, Թ. Շահնազարյանի դասարան): 1952–56-ին և 1960-ից՝ ԵՕԲԹ, 1956–59-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգչուհի: 1979-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1997-ից): Դերերգերից են՝ Լյուդմիլա (Բ. Սմետանայի «Վաճառված հարսնացուն»), Օլգա, Կոմսուհի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա»), Փառանձեմ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Ալմաստ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Սոնա (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Ամներիս, Էբոլի, Ազուչենա (Ջ. Վերդիի «Աիդա», «Դոն Կառլոս», «Տրուբադուր»), Աննա (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա»), Լյուբաշա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Իոկաստե (Ի. Ֆ. Ստրավինսկու «Էդիպ արքա»), Ադալջիզա (Վ. Բելլինիի «Նորմա») ևն: Մոսկվայի Մեծ թատրոնում հանդես է եկել Ամներիսի, Ուլրիվայի, Մադալենայի (Ջ. Վերդիի «Աիդա», «Դիմակահանդես-պարահանդես», «Ռիգոլետտո»), Կոնչակովայի (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր») և այլ դերերգերով: Երգացանկում՝ Յ. Ս. Բախի, Գ. Ֆ. Հենդելի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շուբերտի, Ս. Վ. Ռախմանինովի, նաև Կոմիտասի «Ծիրանի ծառ», «Կռունկ», Ռ. Մելիքյանի «Մի լար», «Ես բլբուլ եմ» երգերը, «Օրորոցային» (Ա. Հարությունյանի «Հայրենիք» կանտատից) և այլ ստեղծագործություններ:

Արվ-ին բնորոշ էին կատարող. վարպետությունը, նուրբ զգացողությունը, բեմ. կեցվածքը: Հյուրախաղերով շրջագայել է ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆինլանդիայում, Հունաստանում, Ռումինիայում, Գերմանիայում, Իրաքում, Լիբանանում, Սենեգալում և այլուր:

Գրկ. *Մարկոսյան Կ., Գոհար Գալաչյան, Ե., 1985:*

Գոհար Գալաչյան

ԳԱԼԱՐԱՓՈՂ, փող. երաժշտ. գործիք: Եզրույթը շրջանառվել է հայ միջնադար. մատենագրության մեջ: Ենթադրվում է, որ ծագումն ավելի հին է: Գ. են կոչվել գալարված ընով եղջյուրե, փայտե, պղնձե փող. մի շարք գործիքներ: Ընդհանուր հատկանիշներով համատիպ երաժշտ. գործիքներ հնում օգտագործել են նաև այլ ժողովուրդներ: Գ-ի կատարելագործված տեսակներն այժմ ընդգրկված են սիմֆ. նվագախմբի փայտե և պղնձե փող. գործիքների խմբերում:

Գ. Գալաչյանը Ամներիսի դերում (Ջ. Վերդիի «Աիդա»)

ԳԱԼՈՅԱՆ Էդուարդ Արտաշեսի (15.09.1929, Երևան–19.07.1979), լիտավրահար: Ուդմուրտ. ԻԽՍՀ վաստ. արտիստ (1973): 1948-ից նվագել է Հայաստանի սիմֆ., 1953-ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի, 1974-ից՝ ԽՍՀՄ Կենտր. հեռուստատեսության և համամիութ. ռադիոյի Մեծ սիմֆ. նվագախմբերում: Հանդես է եկել նաև որպես մենակատար և անսամբլների հետ: 1975–77-ին դասավանդել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանում:

Գալարափող

Հեղինակ է երաժշտ. գործերի, նաև «Լիտավրի նվագի գործնական մեթոդ» (1974), «Ռիթմիկ էտյուդներ՝ վարիացիաներ հարվածային գործիքների համար» (1977) ձեռնարկների:

ԳԱԼՍՏՅԱՆ Յուրի Նորայրի (ծ. 07.01.1952, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (1984-ից): ՀՀ արվ. վաստ. գործիչ: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի և կոմպոզիցիայի (1966, դասատու՝ Գ. Հովունց), Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1970, դասատու՝ Կ. Մալխասյան) և կոմպոզիցիայի (դասատու՝ Ս. Ջրբաշյան), ԵՊԿ դաշնամուրի (1976, Կ. Մալխասյանի դասարան), կոմպոզիցիայի (1982, Ղ. Սարյանի դասարան), դիրիժորության (1998, Է. Խաչատրյանի դասարան) բաժինները: 1976–80-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում, 1980–81-ին՝ Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնա-

Յուրի Գալստյան

Ռոպսան Գալստյան

Սերգեյ Գալստյանը Աշողի դերում (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»)

Ջոլիետ Գալստյան-Էվերետը կտոյթի պահին

րանում, 1982-ից՝ ԵՊԿ-ում: 1988–91-ին՝ ՀԿՄ ժամանակակից երաժշտության նվագախմբի գեղ. ղեկ.:

Գրել է պիեսներ, սոնատներ՝ դաշնամուրի (1967), գալարափողի և դաշնամուրի (1978), կվինտետներ՝ շեփորի, կլառնետի, գալարափողի, դաշնամուրի և հարված. գործիքների (1976), շվիի և լար. քառյակի (1980), կոնցերտներ՝ կամեր. նվագախմբի (1981, 2008), ժող. գործիքների (1984, 2014), «Մտորումներ» (2001)՝ կամեր. երգչախմբի, «Էսքիզներ» (2003)՝ խառը երգչախմբի, «Խաղեր» (2007)՝ ժող. գործիքների, «Երգ» (2012)՝ ֆլեյտայի և դաշնամուրի, «Երկխոսություն» (2013)՝ 2 կլառնետի համար, «Պատանեկան ալբոմ» (1967), «Սիմֆոնիկ պոեմ» (1968), փող. կվարտետ (1968), «Սիմֆոնիկ պատկեր» (1977), «Դիլիջանյան էսքիզներ» (2010), դաշնամուր. պրելյուդների շարք (1981–84, 2 տետր), թատեր. երաժշտություն:

Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. մրցույթ-փառատոնի դափնեկիր (1981, 1983), Մանկ. երգի հանրապետ. մրցույթի 3-րդ (1983), Սայաթ-Նովայի ծննդյան 275-ամյակին նվիրված մրցույթի Հատուկ (1987) մրց-ներ:

ԳԱԼՍՏՅԱՆ Ռուսլան Սարգսի [ծ. 28.09.1941, ք. Ալավերդի (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], կոմպոզիտոր: Սովորել է Երևանի Կ. Սարաջևի անվ. երաժշտ. դպրոցի ջութակի բաժնում, ավարտել Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանի ալտի (1958), ԵՊԿ կոմպոզիցիայի (1969) բաժինները: 1970–74-ին աշխատել է Երևանի դպրոցականների գեղ. դաստիարակության տանը (գործիքավորում, բաժնի վարիչ), 1991-ից՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմում (երաժշտ. բաժնի խմբ.): 2004-ից դասավանդել է Երևանի Տ. Չուխաճյանի անվ. երաժշտ. դպրոցում:

Գրել է 4 լար. կվարտետ (1963–66), Սիմֆոնիա-պոեմ (1968), Խորեոգրաֆիկ սիմֆոնիա, գործիք. պիեսներ (մենանվագներ, դուետներ), կոնցերտներ՝ ալտի և կամեր. նվագախմբի, ջութակի, ալտի, հարված. գործիքների և կամեր. նվագախմբի, սոնատներ՝ մենանվագ ջութակի, մենանվագ ալտի, 4 կվարտետ՝ փայտե փող. գործիքների, կոնցերտ՝ ֆլեյտայի և կամեր. նվագախմբի համար, կինոյի («Սիրո աստղ» ևն) և թատրոնի երաժշտություն, երգեր, օրհներգեր: Հրատարակել է «Լարային կվարտետ № 3», «Սոնատ մենանվագ ջութակի համար», «45-ի գարունը» (երգ) գործերը:

Համամիութ. մրցույթի դափնեկիր (1969, Լենինգրադ), ՀՀ ՄՆ Կոմիտասի անվ. մեդալ:

ԳԱԼՍՏՅԱՆ Սերգեյ Արտյոմի (05.11.1924, Լենինական–26.06.2001, Երևան), երգիչ (քնար. բարիտոն): ՀՀ ժող. արտիստ (1967): Ավարտել է ՄՊԿ (1949): 1969–74-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ. դերերգերից են՝ Օնեգին, Ելեցկի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա»), Ժերմոն (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Ջոն Սորել (Ջ. Կ. Մենոտտիի «Հյուպատոս»), Ֆիգարո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ֆրեդերիկ (Լ. Դելիբի «Լակմե»), Վալենտին (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Խաչեղբայր (Ա. Սպենդիարյանի «Անուշ»), Արշակ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ») ևն: Համերգ. երգացանկում՝ հայկ. և այլ ժող. երգեր:

ԳԱԼՍՏՅԱՆ-ԷՎԵՐՏՍ Ջուլիետ Վիլենի (ծ. 20.12.1971, Երևան), երգչուհի (սոպրանո): Ապրում և ստեղծագործում է Ժնևում: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի և վոկալ բաժինները (1995): Սովորելու տարիներին, որպես դաշնակահար, հանդես է եկել մենահամերգներով և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ. երկացանկում՝ Կ. Սեն-Սանսի, Մ. Ռավելի, Ս. Ս. Պրոկոֆևի և ուր. ստեղծագործություններից: 1996-ից, որպես հրավիրյալ մեներգչուհի, երգել է Տուրինի «Տեատրո Ռեջիո», Վենետիկի «Լա Ֆենիչե», Ժնևի Մեծ թատրոն, Փարիզի «Օպերա-Բաստիլ», նաև Լոնդոնի, Ցյուրիխի, Տոկիոյի և այլ նշանավոր օպեր. թատրոններում. դերերգերից են՝ Միմի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Քսենյա (Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով»), Ցերլինա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Ատլանտա, Իրեն (Գ. Ֆ. Հենդելի «Քսերքսես», «Թեոդորա»), Աղջիկ-ծաղիկ (Ռ. Վագների «Պարսիֆալ») ևն: Մասնակցել է միջազգ. փառատոների՝ Զալցբուրգում (Ավստրիա), Բերգենում (Նորվեգիա), Լիոնում, Փարիզում, Նյու Յորքում և այլուր: Հանդես է եկել աշխարհահռչակ երգիչներ Բ. Տերֆիլի, Թ. Ալենի, Չ. Բարտոլիի, Բ. Ֆրիտտոլիի, համագործակցել նշանավոր դիրիժորներ Վ. Քրիստիի, Մ. Պլասոնի, Ն. Առնոնկուրի, Կ. Պիդոյի, Ջ. Կոնլոնի, Ա. Ջուրդանի հետ: Կամեր. երգացանկում՝ համաշխ. և հայ կոմպոզիտորների ստեղ-

ծագործություններից: Նկարահանվել է օպեր. 2 ֆիլմում:

Միջազգ. մրցույթների (Մ. Կալլասի անվ. Մեծ մրց., Հունաստան, Զ. Վիոտտիի անվ. 1-ին մրց., Իտալիա, «Ջուլիան Գայառե» 2-րդ մրց., Իսպանիա, բոլորը՝ 1995, ևն) դափնեկիր:

ԳԱԼՖԱՅԱՆ Գրիգոր (22.12.1873, Բուրսա–02.06.1949, Ֆրեզնո), կոմպոզիտոր: Երաժշտ. կրթությունն ստացել է Փարիզում, աշակերտել Վ. դ'Էնդիին: Փարիզում և Մանչեստրում հայ երաժշտության մասին հանդես է եկել դասախոսություններով, տպագրել հոդվածներ: 1905-ին Փարիզում հրատարակել է «Կռունկ» թերթը (հայ., ֆրանս.): 1911-ին տեղի է ունեցել նրա առաջին հեղինակ. համերգը: 1913-ից ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում եղել է Հայ եկեղեցու դպրապետ, ղեկավարել է երգի մի շարք փառատոներ: 1918-ից ապրել է Ֆրեզնոյում:

Գրել է շուրջ 150 երաժշտ. գործեր, առավելապես՝ հայրենասիր. երգեր՝ սեփական տեքստերով («Ապրի՛ր, Հայաստան», «Փա՛ռք քեզ, Հայաստան», «Հույսը», «Ինչո՞ւ Լուսին», «Ալեչարչար», «Վեր կաց», «Մինչև երբ» ևն): Ստեղծագործության մեջ առանձնանում է «Պատարագը»՝ մեներգիչների, երգչախմբի և երգեհոնի համար:

ԳԱՄՄԱ, հուն. այբուբենի 3-րդ տառը, որով X դ-ից նշվել է երաժշտ. համակարգի ամենացածր հնչյունը՝ մեծ օկտավայի սոլ-ը, հետագայում՝ այդ հնչյունով սկսվող շարքը, ձայնակարգի բոլոր աստիճանների հաջորդականությունը՝ դեպի վեր կամ վար: Գ-ներն անվանվում են ձայնակարգերի անուններով: Մաժոր և մինոր Գ-ներն օկտավայի սահմաններում ընդգրկում են 7, պենտատոնը՝ 5, ամբողջ տոներով գամման՝ 6, տոն-կիսատոնը՝ 8 աստիճան, որոնք նույն հարաբերությամբ կարող են կրկնվել մի քանի օկտավա տարածությամբ: Տարբերում են Գ-ի դիատոնիկ և խրոմատիկ տեսակները:

Խրոմատիկ Գ-ի հնչյունները միմյանց հաջորդում են խրոմատիկ և դիատոնիկ կիսատոներով: Խրոմատիկ Գ. ինքնուրույն ձայնակարգ չի համարվում. կապված է որևէ դիատոնիկ մաժոր կամ մինոր Գ-ի հետ և ստացվում է տվյալ մաժոր կամ մինոր դիատոնիկ Գ-ի ամբողջ տոները կիսատոների վերածելիս: Խրոմատիկ Գ-ների ուղղագրությունը հիմնված է ազգակից տոնայնությունների վրա. յուրաքանչյուր տոնայնության խրոմատիկ Գ-ում գործածվում են միայն մոտ ազգակից տոնայնությունների խրոմատիկ նշանները:

Ուղղագրությունը պահպանելու համար մաժորի խրոմատիկ Գ. վերընթաց կարգում կառուցվում է դեպի վեր՝ ամբողջ տոն կազմող աստիճանների (բացառությամբ VI-ի, փոխարենը կիսատոնով իջեցվում է VII-ը) խրոմատիկ բարձրացումով: Վարընթաց կարգում կառուցվում է դեպի վար ամբողջ տոն կազմող բոլոր աստիճանների (բացառությամբ V-ի, փոխարենը կիսատոնով բարձրացվում է IV-ը) խրոմատիկ իջեցումով: Մինորի վերընթաց խրոմատիկ Գ. կառուցվում է զուգահեռ մաժորի նշաններով:

Խրոմատիկ գամմա դո մաժորում՝ վերընթաց



Խրոմատիկ գամմա դո մաժորում՝ վարընթաց

Մինոր վերընթաց խրոմատիկ Գ. շարժման ժամանակ բոլոր աստիճանները (բացառությամբ I-ի, փոխարենը կիսատոնով իջեցվում է II-ը) կիսատոնով բարձրացվում են: Լա մինոր խրոմատիկ Գ. վերընթաց կարգում ունի նույն նշանները, ինչ դո մաժորը վերընթաց կարգում



Խրոմատիկ գամմա լա մինորում՝ վերընթաց

Մինոր վարընթաց խրոմատիկ Գ. կազմվում է համանուն մաժորի նշաններով: Լա մինոր խրոմատիկ Գ. վարընթաց կարգում ունի նույն նշանները, ինչ դո մաժորը վարընթաց կարգում



Խրոմատիկ գամմա լա մինորում՝ վարընթաց

Դիատոնիկ Գ. կառուցված է դիատոնիկ կիսատոներով, տոներով և տոն-կիսատոնով: Դիատոնիկ են մաժոր և մինոր բնական ձայնակարգերն ու պենտատոնիկան:

Ամբողջ տոների հաջորդականությունից կազմված Գ. կոչվում է ամբողջատոն, իսկ վերջինիս հնչյունները միավորող

համակարգերը՝ ամբողջ տոնային (կամ ամբողջատոն) ձայնակարգ: Ամբողջատոն Գ.օկտավայի սահմաններում ունի 6, տոն–կիսատոն գամման՝ 8 աստիճան: Ուղղագրությունն ազատ է:



Ամբողջատոն և տոն–կիսատոն Գ–ներն իրենց «արտասովոր» բնույթի շնորհիվ հաճախ կիրառվում են հեքիաթ., նկարագրող. և կատակերգ. բնույթի ստեղծագործություններում:

Դիատոնիկ Գ–ով գրված երաժշտությունը թողնում է ֆանտաստիկ, միաժամանակ՝ անկենդան ու անշարժ տպավորություն: Վաղ շրջանի օրինակ է Վ. Ա. Մոցարտի «Երաժշտական կատակ»–ը (K.–V.522), որը հետագայում օգտագործել են Մ. Ի. Գլինկան, Ա. Ս. Դարգոմիժսկին, Ա. Պ. Բորոդինը, Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովը, Կ. Դեբյուսին, Ա. Խաչատրյանը և ուր.:

Անի Մուշեղյան



«Փոքրիկ գանձարան» (1739, Կ. Պոլիս, հեղ.՝ Թոմա Գեմբացի)

ԳԱՆՁ, հայ միջնադար. հոգևոր երգարվ–ի ժանր: Սերել է ժամագրք. հնագույն քարոզից: Սկզբնավորել է ***Գրիգոր Նարեկացին***, որի այս ժանրի գործերի առաջին բառից («Գանձ լուսոյ...», «Գանձ բաղձալի...» ևն) նմանօրինակ երկերն անվանվել են «Գ.»–եր: Հետագայում այն ձեռք է բերել ժանր. իմաստ, որով ստեղծագործել են հայ միջնադարի մի շարք բանաստեղծ–երաժիշտներ (Ներսես Շնորհալի, Մխիթար Այրիվանեցի և ուր., մինչև վերջին խոշոր գանձագիր Գրիգոր Խլաթեցին): Գ. հնագույն եղանակավոր քարոզից ժառանգել է կրկնակը և վերջնամասը:

Երաժշտ. առումով՝ Գ. ունի վանկ. կառուցվածք, սաղմոսատիպ, պարզ մեղեդի և ծավալվում է պատմող. ասերգի հունով: Գ. ժող. երգարվ–ի ազդեցությամբ կրել է որոշ փոփոխություններ: Հայտնի են զուտ ծիս., մեռելաթաղի Գ–եր, որոնք, ըստ էության, մեներգեր են՝ ոճով նման ժող. ողբերին: Մեռելաթաղի որոշ Գ–եր պահպանվել են մեղեդիներով:

Գ–երն ամփոփվել են ***Գանձարաններում***, ուշ միջնադարում՝ նաև ***Տաղարաններում*** և ***Մաշտոցներում***:

«Գանձարան–տաղարան» (1740, Կ. Պոլիս)՝ հայկական երաժշտական խազերով

Գրկ. *Մկրտիչ Նաղաշ, Բանաստեղծություններ (աշխատասիր.՝ Է. Խոնդկարյանի), Ե., 1965: Առաքել Բաղիշեցի, Բանաստեղծություններ (աշխատասիր.՝ Ա. Ղազինյանի), Ե., 1971: Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր (աշխատասիր.՝ Ա. Քյոշկերյանի), Ե., 1981: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Նույնի, Քարոզի ժանրը հայ հոգևոր երգապատեղծության մեջ, ՊԲՀ, 1992, № 2–3: Նույնի, Le genre du K'aroz (sermon melodisé) dans le chant sacre arménien, "Revue des études arméniennes", 24, 1993; Նույնի, Гандз – духовный гимн в творчестве Григора Нарекаци. Истоки жанра, Opera musicologica, 2016, № 3, 5–14; Բախինեան Հ., Գրիգոր Նարեկացու Գանձարանը, Լիբանան, 2016:*

Անահտ Արևշատյան

ԳԱՆՁԱՐԱՆ, հայկ. միջնադար. երաժշտածիս. ձեռագիր խազավոր մատյան. ընդգրկում է եկեղեց. տարվա տոներին նվիրված հանդիսավոր (ութձայնի կանոններից ազատ) երգաշարերը կամ գանձշարքերը, որոնց ստեղծումը վերագրվում է ***Գրիգոր Նարեկացուն***: Գանձ–շարքը սովորաբար բաղկացած է 2–4 միավորից. 1. շարքը բացող բուն գանձը, որը պատմում է տվյալ տոնի առանցքի՝ իրադարձության կամ անձի մասին:

2. Տաղը հուզմունք է արտահայտում իրադարձության հանդեպ:

3. Մեղեդին առավել խորացնում է շարքի հուզ. տրամադրությունը:

4. Փոխը կամ հորդորակն ամփոփում և ունկնդրի հիշողության մեջ ամրապնդում է արտահայտած գաղափարներն ու տրամադրությունները:

Գ. կառուցվածքով երգարան–ժող. է, որտեղ արտացոլված է հոգևոր հիմներգության, տաղատիպ ժանրերի ծաղկումը X–XIV դդ–ում. ձևավորվել է, հավանաբար, X–XI դդ–ում: Մինչև XIV դ–ի վերջը ժող–ներն ընդգրկել են միայն գանձեր, կամ գանձերն ու տաղերը ներկայացվել են առանձին բաժիններով (Մտնդ., ձեռ. № 1394, 4068, Փարիզի ազգ. գրադարան, ձեռ. № 79, 1271, վերջինը հնագույնն է պահպանված Գ–ներից): Հետագայում գանձը, տաղը, մեղեդին և փոխը զետեղվել են համապատասխան շարքերով:

Գ–ի ձևավորմանը և հարստացմանը մեծապես նպաստել են Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Կոստանդին Սսեցին, Մխիթար Այրիվանեցին, Գրիգոր Խլաթեցին (XIV դ.):

Ուշ միջնադարում Գ–ին բնորոշ էին աշխարհականացման միտումը, միայն ծիս. կիրառության կամ ժող. ծագման ստեղծագործությունների (մեռելաթաղի գանձեր, պսակի տաղեր ևն) ընդգրկումը: Բազմաթիվ Գ–ներից ուշագրավ են՝ Մտնդ–ի ձեռ. № 7785 (XIV դ., Ղրիմ), ձեռ. № 3503 (1394, Սիս), ձեռ. № 5521 (XV դ., Աղթամար), Երուսաղեմի մատենադարանի ձեռ. № 231 (XIII դ.) ևն:

Գրկ. *Քյոշկերյան Ա., Գրիգոր Նարեկացու գանձերն ու գանձարանների սկզբնավորումը, ԲՄ, № 10, 1971: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5–15–րդ դդ., 1985: Հարությունյան Է., Մխիթար Այրիվանեցի, Ե., 1985: Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր (աշխատասիր.՝ Ա. Քյոշկերյանի), Ե., 1987: Արևշատյան Ա., «Սաշփոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Բախչինեան Հ., Գրիգոր Նարեկացու Գանձարանը, Լիբանան, 2016:*

ԳԱՍՊԱՍԱՔԱԼՅԱՆ Գրիգոր Գասպարի (1740, Կեսարիա–1808, Կ. Պոլիս), բանաստեղծ, երաժիշտ, խազագետ: Սովորել է Կեսարիայի Սբ Կարապետ վանքի ժառանգավորաց դպրոցում, ստացել դպրության աստիճան: Ուսումը շարունակել է Կ. Պոլսի Մայր դպրանոցում:

Հեղինակ է երաժշտագիտ. 4 աշխ–յան, որոնցից իր օրոք հրատարակվել են 1–ինը («Գրքոյկ որ կոչի Նուագարան», Կ. Պոլիս, 1794) և 3–րդը («Գիրք երաժշտական», Կ. Պոլիս, 1803): 2–րդ աշխ–ը՝ «Համառօտութիւն երաժշտականի գիտութեան», լույս է տեսել 1973–ին Երևանում, ԲՄ, № 11, իսկ 4–րդը՝ «Գիրք ութից ձայնից» (ըստ տվյալների՝ ամենածավալունը), կորել է ԱՀՊ ժամանակ՝ Կեսարիայի Սբ Դանիել վանքի մատենադարանի հայկ. 85 ձեռագրերի հետ:

Քաջատեղյակ լինելով ազգ. (նաև հուն. ու արլ.) երաժշտարվ–ի միջնադար. ավանդույթներին և զարգացման ժամանակակից խնդիրներին՝ երկասիրություններում գրել է երաժշտարվ–ի ծագման, ներգործության ուժի, աշխարհիկ ու եկեղեց. ստորաբաժանումների մասին, շոշափել ձայների տեսակների, ձայնեղանակների առաջացման ու երաժշտ. գործիքների ստեղծման խնդիրներ, անդրադարձել հայ երաժշտության ձայնեղանակներին, չափին ու կշռույթին, տաղաչափությանը և խազագրությանը: Փորձել է խազագրության արվ–ը դուրս բերել ճգնաժամ. վիճակից և նույնիսկ ստեղծել է խազագրերի նոր, ավելի ճշգրիտ համակարգ՝ շաղախված հայկ., ուշբյուզ. և ընդհանուր արլ. տարրերով: Գ. փաստորեն սկզբնավորել է հայ արդի խազաբան. գիտությունը:

Գ–ի երաժշտագիտ. աշխ–ներն ունեն նաև երգարաններ (բաժին կամ հավելված), որտեղ ընդգրկված են հայտնի կամ տարածված որևէ եղանակի (երբեմն՝ նաև Գ–ի ստեղծած մեղեդու) հետ զուգորդվելու ենթակա ավանդ. տաղեր ու իր հորինած բանաստեղծությունները: «Գիրք երաժշտական»–ին կից հրատարակել է «Նուագարան երաժշտական», առանձին՝ «Գրքոյկս կոչեցեալ Երգարան»երգարանները (1803, Կ. Պոլիս):

Երկ. *Книга о музыке..., пер. с грабара, введение А. С. Аревшатяна, примеч. А. С. Аревшатяна и Л. О. Акопяна, Е., 2017.*

Գրկ. *Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. 2, Կահիրե, 1937, էջ 1555: Աթայան Ռ., Գրիգոր Գապաւաքալյանը և խազաբանությունը, ԲՄ, 1960, № 5: Թահմիզյան Ն., Գրիգոր Գապաւաքալյանի «Համառօտութիւն երաժշտական գիտութեան» անտիպ աշխատությունը, ԲՄ, 1973, № 11: Արևշատյան Ա., Գրիգոր Գապաւաքալյանի «Գիրք ութից ձայնից» ձեռնարկը («Մանրուսում», հ. Գ), Ե., 2009: Գրիգոր Գապաւաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը, Ե., 2013:*



Գրիգոր Գապաւաքալյանի «Նուագարան երաժշտական» (1803) գրքի փիփղոսաթերթը

ԳԱՍՊԱՐՅԱՆ (Խաչատրյան) Գոհար Միքայելի (14.12.1924, Կահիրե–16.05.2007, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): Բելկանտո ոճի խոշոր վարպետներից: ՀՀ (1953), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1984): Տիգրան *Լևոնյանի* կինը: Սովորել է Կահիրեի ֆրանս. քոլեջում, ստացել է նաև երաժշտ. կրթություն (1936–39), միաժամանակ երգել է երգչախմբերում: Հետագայում երգեցողության դասեր է առել Է. Ֆելդմանից և Վ. Կարրոյից: 1940–ից ելույթներ է ունեցել Կահիրեում, 1947–ին՝ Եգիպտոսի ռադիոյի մեներգչուհի: 1948–ին հայրենադարձել է: 1949–ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի (առաջին դերերգը՝ Լակմե, Լ. Դելիբի «Լակմե»): 1964–ից դասավանդել է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 1973–ից):

Գոհար Գասպարյան

Գ–ի ձայնն օժտված էր ընդարձակ դիապազոնով (փոքր օկտավայի սոլ–ից մինչև 3–րդ օկտավայի լա–ն), ճկունությամբ, երանգների հարստությամբ, անցումների թեթևությամբ, արվ–ն առանձնացել է երաժշտ. երկի գաղափարագեղ. բովանդակության խոր դրսևորմամբ ու համոզիչ իմաստավորմամբ, կատարող. բարձր

Գ. Գասպարյանը Օլիմպիայի դերում (Տ. Հոֆմանյանի «Արշակ երկրորդ»)

Գ. Գասպարյանը Նորմայի դերում (Վ. Բելլինիի «Նորմա»)

Ջիվան Գասպարյան

Ավագ և կրտսեր Գասպարյաններ

տեխնիկայով: Կատարել է 23 օպերաների գլխ. դերերգեր՝ Անուշ, Շուշան (Ա. Տիգրանյանի «Անուշ, «Դավիթ Բեկ»), Օլիմպիա, Կարինե (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», «Լերլերիջի Հոր-հոր աղա»), Գոհար (Հ. Ստեփանյանի «Հերոսուհի»), Ռոզինա (Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Լուչիա (Գ. Դոնիցետտիի «Լուչիա դի Լամերմուր»), Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Վիոլետտա, Ջիլդա (Զ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո»), Մարֆա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն») ևն: Համերգ. ծրագրում՝ 500-ից ավելի ստեղծագործություն (Յ. Ս. Բախ, Գ. Ֆ. Հենդել, Վ. Ա. Մոցարտ, Յ. Շտրաուս, Է. Գրիգ, Ռ. Գլիեր, Պ. Ի. Չայկովսկի, Ս. Վ. Ռախմանինով, Կոմիտաս, Մ. Եկմալյան, Ռ. Մելիքյան, Ա. Սպենդիարյան և ուր.), ունեցել է 4000-ից ավելի համերգներ:

Հանդես է եկել նաև թեմատիկ համերգներով. երկացանկում՝ իտալացի վարպետների գործեր, հայ հոգևոր երաժշտություն, Կոմիտասի երկերից, օպեր. սիրված դերերգեր (Մանոնի ծիծաղը՝ Դ. Ֆ. Օբերի «Մանոն Լեսկո», Ամինա՝ Վ. Բելլինիի «Սոմնամբուլա», Դինորա՝ Զ. Մեյերբերի «Դինորա», Օֆելյայի խելագարության տեսարանը՝ Շ. Թոմայի «Համլետ», Տիկին՝ Ժ. Օֆֆենբախի «Հոֆմանի հեքիաթները», Շամախանի թագուհի՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ», ևն): Առավել ուշագրավ էր XIX–XX դդ-ի կոմպոզիտորների ստեղծագործություններից (Վ. Շեքսպիրի թեմաներով) կազմված ծրագիրը:

Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Բուլղարիայում, Հունգարիայում, Իրանում, Ճապոնիայում, Եգիպտոսում, Հվ. Ամերիկայի երկրներում, ԱՄՆ-ում, Անգլիայում և այլուր: 1956-ին Մոսկվայում մասնակցել է հայ գրկ-յան և արվ-ի տասնօրյակին:

«Կարինե» (1967, ըստ Տ. Չուխաճյանի «Լերլերիջի Հոր-հոր աղա» օպերայի), «Անուշ» (1983), «Արշակ Երկրորդ» (1988) կինոնկարներում կատարել է, համապատասխանաբար, Անուշի, Կարինեի և Օլիմպիայի դերերգերը, նաև Կարինեի երգը «Լեռնային լճի գաղտնիքը» (1954, ըստ Վ. Անանյանի «Սևանի ափին» վիպակի) ֆիլմում: «Անուշ», «Արշակ Երկրորդ», «Դավիթ Բեկ» օպերաները ձայնագրվել են նրա կատարմամբ:

Ա. Իսահակյանը նրան անվանել է «Հայաստանի սոխակ», իսկ Զ. Դոլուխանյանը գրել է. «Նման տիտաններ, ինչպիսին Գոհար Գասպարյանն է, ծնվում են հարյուր տարին մեկ: Համաշխ. դասականների ամենաբարդ գործերը, որոնք թվում է, թե անհնար է կատարել, գասպարյանական մեկնաբանությամբ նոր կյանք են ստանում: Գոհարը վոկալ աստղ է»:

ՀՀ-ում անցկացվում է Գ-ի անվ. վոկալիստների հանրապետ. մրցույթ:

ՀԽՍՀ (1959–63), ԽՍՀՄ (1966–74) ԳԽ պատգամավոր, Երևանի պատվավոր քաղաքացի (1984):

ԽՍՀՄ (1951), ՀԽՍՀ (1965) Պետ. մրցներ, Լենինի (1984), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1997) շքանշաններ:

Գրկ. *Թադևոսյան Ա., Գոհար Գասպարյան, Ե., 1959: Մանուկյան Հ., Իմ ութ և կես տարիները Գոհար Գասպարյանի հետ [Հուշագրություն], Ե., 2004: Մելիք-Իսրայելյան Ա., Գոհար Գասպարյան ֆենոմենը: Համաշխարհային ճանաչում ձեռք բերած անհատի դիմանկարը խորհրդային մամուլի էջերում, Ե., 2007: Նույնի, Երբ աշխարհն է ծափահարում, Ե., 2010: Դավթյան Ռ., Հայոց սոխակը. Գոհար Գասպարյան, Ե., 2008: Վերհուշ [Գոհար Գասպարյան], կազմ.՝ Ս. Գասպարյան, Ա. Ճաղարյան, Ե., 2015: Առաքելյան Ս., Գոհար Գասպարյան, [Ալբոմ-ժողովածու], Ե., 2017: Захарян О., Гоар Гаспарян и ее вокальная школа, Е., 2005.*

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ջիվան Արամայիսի [ծ. 12.10.1928, գ. Սոլակ (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզում)], դուդուկահար: ՀՀ ժող. արտիստ (1978): Դուդուկ նվագել սովորել է ինքնուրույն՝ 6 տարեկանում: Ավարտել է ԵՊԿ (1985): 1949–81-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի, 1986-ից՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի մենակատար: 1982-ից դասավանդում է ԵՊԿ-ում: 1948-ին Մոսկվայում ելույթ է ունեցել սիրող. ազգ. երգի-պարի անսամբլի, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Համերգներով հանդես է եկել մի շարք երկրներում: 1980–90-ական թթ-ին աշխատել է ԱՄՆ-ում:

Համագործակցել է Ս. Թանգյանի, Ա. Վոլլենվայդերի, Հ. Ռիչիի, Հ. Յիմմերի, Բ. Մեյի, Բ. Գրեբենշչիկովի, Ի. Ալլեգրովայի, Վ. Պրեսնյակովի, Ի. Կրուտոյի, Մ. Բրուքի և ուր. հետ: 2010-ին Է. Ռիվասի հետ հանդես է եկել «Եվրատեսիլ» երգի մրցույթում, կատարել դուդուկի նվագամասը: 2011-ին

Մոսկվայում մասնակցել է «Երեք լեգենդ Կրեմլում» համերգին, հանդես եկել ՌԴ նախագահ. նվագախմբի և Մոսկվայի Սրետենսկի վանքի տղամարդկանց երգչախմբի հետ: Համերգին մասնակցել է նաև թոռը՝ Ջիվան Գ. կրտսերը, հանդես եկել երգիչներ Ք. Տիտովչենկոյի, Լ. Ավետիսյանի, ջութակահարուհի Ի. Ռիդնայի և ուր. հետ:

Կատարումները հնչել են «Ռոնին» (1998), «Օնեգին» (1999), «Գլադիատոր» (2000), «Սիրանա» (2005), «Արյունոտ տղամարդ» (2006, բոլորը՝ ԱՄՆ), «Ձյուն և մոխիր» (2015, ՌԴ) և այլ ֆիլմերում: Թողարկել է 20-ից ավելի ձայնասկավառակներ, կատարել 1000-ից ավելի ձայնագրություններ:

Երևանում տեղադրվել է «Ուշացած լուսանկար» արձանախումբը (նվիրված՝ Վաչե Հովսեփյանին, Լևոն Մադոյանին և Գ-ին, 2015, քանդ.՝ Դ. Մինասյան):

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի (1-ին մրց., 1957, Մոսկվա), Էստրադայի արտիստների համամիութ. III (1-ին մրց., 1958, Մոսկվա), Ասիայի և Աֆրիկայի երկրների ժող. ստեղծագործությունների կատարողների միջազգ. (Մեծ մրց., 1973, Տաշքենդ) մրցույթների դափնեկիր: ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2001), «Ոսկե գլոբուս» (2001), «Երաժշտական արվեստին մատուցած ծառայությունների համար» միջազգ. WOMEX (2002) մրց-ներ:

Թոռը՝ **Ջիվան Գ.** կրտսեր (ծ. 23.10.1982, Երևան), դուդուկահար: Նվագել սովորել է պապից: Մասնակցել է փառատոների: Հանդես է եկել Ջուկերոյի, Ա. Վոլլենվայդերի, Բ. Գրեբենշչիկովի, Մ. Բրուքի և այլ հայտնի երաժիշտների, Լոնդոնի ֆիլհարմոնիկ նվագախմբի, հաճախ՝ նաև Ջ-ի հետ: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Եվրոպայում, Կանադայում:

Դուդուկահարների միջազգ. փառատոնի 1-ին մրց. և ոսկե մեդալ (2011):

ԳԱՍՊԱՐՅԱՆ Սամսոն Գասպարի [12(25).11.1909, Բայազետ (Էրզրումի նահանգ)–11.07.1974, Երևան], երաժշտագետ, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): Արվեստագիտ. թեկնածու (1962): Ավարտել է ԵՊԿ (1952): 1928-ից դասավանդել է ԵՊԿ-ում (1937-ին՝ պատմատես. բաժնի, 1939-ին՝ 7 ամբիոնների հիմնադիր, 1938–40-ին՝ ռեկտոր) և Երևանի երաժշտ. այլ ուս. հաստատություններում: 1943–45-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի տնօրեն, 1947–49-ին՝ ՀԽՍՀ կինեմատոգրաֆիայի նախարար, 1949–54-ին՝ ԵԿԻԹ տնօրեն, 1954-ից՝ ՀԽՍՀ մշակույթի փոխնախարար: Հեղինակ է «Ալեքսանդր Սպենդիարով» (1951), «Հայկանուշ Դանիելյան» (1958), «Կոմիտաս» (1947, 1961, ռուս.՝ 1969) գրքերի, որոնք կարևոր ներդրում են հայ երաժշտագիտության մեջ: Ձայնագրել է քրդ. ժող. երգեր:

Սամսոն Գասպարյան

ԳԱՎԱՖՅԱՆ քույրեր, ջութակահարներ: 1956-ին ընտանիքի հետ տեղափոխվել են ԱՄՆ: Աշակերտել են մի քանի նշանավոր երաժիշտ-մանկավարժների, այդ թվում՝ Իվան *Գալամյանին*: Ա ն ի Գ. (ծ. 10.05.1948, Ստամբուլ): Յեյլի երաժշտ. դպրոցի պրոֆ.: Որպես մենակատար՝ հանդես է եկել Դետրոյտի, Բոստոնի նվագախմբերում (Ա. Խաչատրյանի անվ. մրցույթի 1-ին մրց.): Ջուլիարդի նվագախմբի կոնցերտմայստեր (3 տարի): Համերգներով շրջագայել է ԱՄՆ-ում, Եվրոպայի երկրներում, արժանացել մրց-ների: Որդին՝ Մ ե թ յ ո ւ ն, նույնպես ջութակահար է: Ա ի դ ա Գ. (ծ. 1953, Կ. Պոլիս): Ավարտել է Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցը: Համերգներով հանդես է եկել բազմաթիվ երկրներում (Ջութակահարների միջազգ. VI մրցանակաբաշխության 1-ին մրց., Լիսաբոն, 1973, ևն): Ճանաչվել է հիմնականում Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Վ. Ա. Մոցարտի, Բ. Բարտոկի երկերի կատարումներով: Եղել է նաև «Թաշ» քառյակի 1-ին ջութակը: Ա. Խաչատրյանի անվ. մրցույթի 1-ին մրց. (1977):

Գավաֆյան քույրեր

ԳԱՐԱԳԱՇ Մարի Լուիզ (1901, Կ. Պոլիս–1989), Մ ա լ ի զ ա, երգչուհի (կոլորատուր. սոպրանո): Բեմելը՝ Կ. Պոլսում 1929-ին: 1934-ին հաջողությամբ հանդես է եկել Վիոլետտայի դերերգով (Ջ. Վերդիի «Տրավիատա»), ապա Միլանում կատարելագործվել է ճանաչված մանկավարժ-երգչուհի Է. Պիկկոլիի ղեկավարությամբ: Մի քանի տարի եղել է Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնի մենակատար. դերերգերից են՝ Նորինա, Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Դոն Պասկուալե», «Լյուչիա դի Լամերմուր»), Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ») ևն: 1937-ին նույն խաղացան-

կով, նաև Ջիլդայի (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո») դերերգով հանդես է եկել Փարիզի օպեր. թատրոնում, միաժամանակ ելույթներ ունեցել մենահամերգներով: Վերադառնալով Կ. Պոլիս՝ դասավանդել է ձայնագրություն: Հիմնադրել է կանանց երկձայն երգչախումբ. երկացանկում՝ հոգևոր և աշխարհիկ երգեր:

Գրկ. *Բրուտեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհագիր ընձիւղները, Ե., 1996:*

Սիրվարդ Գարամանուկյան

ԳԱՐԱԳԱՇՅԱՆ Սեդա (ծ. 1942, Բուխարեստ), դաշնակահարուհի: Արաքս *Սվաճյան-Գարագաշյանի* դուստրը: Նախն. երաժշտ. կրթությունն ստացել է Բուխարեստում, ապա կատարելագործվել Բելգիայում, Գերմանիայում, Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցում: 1962-ին (մշակութ. փոխադարձ կապերի ծրագրով՝ 14 այլ աշակերտների հետ) համերգներով հանդես է եկել Օդեսայում, Յալթայում, Սոչիում, ավելի ուշ՝ Բեյրութում, Կ. Պոլսում: 1966-ին տեղափոխվել է ԱՄՆ, դասավանդել երաժշտ. դպրոցներում (այդ թվում՝ Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցում 1969–70 ուս. տարում):

Բրյուսելում և Գերմանիայում անցկացվող Երիտասարդ երաժիշտների մրցույթում (1969) արժանացել է 1-ին մրց-ի՝ Յ. Բրամսի և բելգիացի կոմպոզիտորների երկերի լավագույն կատարման համար:

Գևորգի Գարանյան

ԳԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ (Կալպակյան) Սիրվարդ (01.12.1912, Ստամբուլ–19.10.2008, Ստամբուլ), կոմպոզիտոր, խմբավար, հաս. գործիչ: Դաշնամուր նվագել է 5 տարեկանից: Հաճախել է Ստամբուլի Տատյան և Եսայան վարժարանները, ավարտել կոնսերվատորիայի դաշնամուրի, երաժշտության տեսության և պատմության բաժինները (1939, Ս. Բաբելյանի, Լ. Ամարի, Ֆ. Ստատսերի դասարաններ):

Գրել է երկեր՝ դաշնամուրի, լար. քառյակի համար, մեներգեր, խմբերգեր, ռոմանսներ, վոկալ մանրապատումներ, «Վաղվա արվեստագետները» օպերետը, «Դժվար տարի», «Ախթամար» (ըստ Հ. Թումանյանի), «Երգ Պետրոս Դուրյանի» պոեմները՝ երգչախմբի և նվագախմբի համար, և այլ գործեր: Արժեքավոր են Գ-ի «Ընտիր երգեր», «Մանկական երգեր» պրակները: «Ախթամար» վոկալ-սիմֆ. գործի հիման վրա նկարահանվել է կինոնկար (ցուցադրվել է 2004-ին):

Ստեղծագործություններում համադրելով արլ., հայկ., նաև միջնադար. երաժշտության տարրեր՝ հասել է վառ պատկերավորության:

1992-ին՝ Նյու Յորքում, 1999 և 2000-ին Երևանում տեղի են ունեցել Գ-ի հեղինակ. համերգները: ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մաշտոց» շքանշան:

Գրկ. *Սարյան Ա., Երաժշտութեամբ իմաստաւորված կեանք. Սիրվարդ Գարամանուկի կեանքն ու ստեղծագործութիւնը, Ե., 2007:*

ԳԱՐԱՅԱՆ Մելիք Հայկի (ծ. 18.09.1938, Կ. Պոլիս), կոմպոզիտոր, մանկավարժ: 15 տարեկանից հաճախել է կոնսերվատորիա: 1957-ին հաստատվել է Սանտյագոյում, 10 տարի սովորել տեղի համալսարանի երաժշտության բաժնում (տեսություն, կոմպոզիցիա, երգեհոն, ղեկ-ներ՝ Կ. Բոտտո Վալլարինո, Գ. Շմիդտ): 1974-ին տեղափոխվել է Վիեննա, հրավիրվել Զալցբուրգի «Մոցարտեում» երաժշտ. ակադ.՝ դասախոսություններ կարդալու լատինամերիկ. երաժշտության մասին, ապա դասավանդել է սոլֆեջջո, հարմոնիա, պոլիֆոնիա:

Երաժշտ. գործերից ուշագրավ է «Էլեգիան»՝ ձայնի և կամեր. նվագախմբի համար, որտեղ համադրված են իսպ. երաժշտալեզվի և հայկ. ինչերանգների տարրեր: «Աբստրակտ երգերը»՝ ձայնի և ֆլեյտայի համար, կառուցված են սիլլաբների (տրամաբանության և լեզվամտածողության արտահայտման ձև) վրա, որտեղ կարևորվում է կարճ մտահանգումը (սիլլոգիզմ): Գրել է նաև խմբերգեր («Երգեր», Պ. Ներուդայի խոսքերով), երկեր՝ կամեր., լար. նվագախմբերի համար:

ԳԱՐԱՆՅԱՆ Գեորգի Արամի [15.08.1934, Մոսկվա–11.01.2010, Կրասնոդար (ՌԴ), թաղված է Մոսկվայում], դիրիժոր, կոմպոզիտոր, սաքսոֆոնահար: ՌԴ ժող. արտիստ (1993): ԽՍՀՄ ԿՄ (1975), Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միության (1996) անդամ: Ավարտել է ՄՊԿ (1957): 1958-ից, որպես մենակատար և նվագակցող, հանդես է եկել ջազ. և էստրադ. նվագախմբերում: 1966–68-ին՝ Համամիութ. ռադիոյի էստրադ. նվագախմբի մենակատար, կոնցերտմայստեր և դիրիժոր (1970-ից՝ գլխ. դիրիժոր), 1972–79-ին՝ ԽՍՀՄ կինեմատոգրաֆիայի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1973–82-ին՝ «Մելոդիա» անսամբլի ղեկ.: Անսամբլը

ձայնագրել է 16 ձայնասկավառակ և 9 փոքր ալբոմ-ձայնապնակներ:

Կատարումները հնչել են մի շարք ֆիլմերում («Ադամանդե ձեռք», «Մենք ջազից ենք», «Գարնանային բլյուզ», «Դե սպասիր», մուլտֆիլմ, ևն): Ջազ. նվագախմբեր է հիմնադրել Մոսկվայում (1991), Կրասնոդարում (1998):

Գրել է դիվերտիսմենտ՝ ջազ. նվագախմբի (1970), երաժշտություն՝ թատրոնի և կինոյի համար («Իրիկնային լաբիրինթոս», 1981, «Նրա երիտասարդության դեղատոմսը», 1984, երկուսն էլ՝ Մոսֆիլմ, ևն): 1990-ական թթ-ին ստեղծել է «Մոսկովյան բիգ-բենդ», 1998-ից ղեկավարել է Կրասնոդարի մունիցիպալ բիգ-բենդը, 2003-06-ին՝ Օ. Լունդստրեմի անվ. ջազ. երաժշտության պետ. կամեր. նվագախումբը, «Մելոդիա» անսամբլի հիմքի վրա ստեղծել է «Գեորգի Գարանյան բիգ-բենդը»:

Հեղինակ է «Էստրադային-գործիքային և վոկալ-գործիքային անսամբլների գործիքավորում» (1983, 1986) և «Էստրադային և ջազային գործիքավորման հիմունքներ» (2010) դասագրքերի:

Բազմաթիվ միջազգ. (Պրահա, Մումբա, Հավանա, Վարշավա, Ֆինլանդիա, Իսրայել) ջազ. փառատոների դափնեկիր է: ՌԴ Պետ. մրց. (2000), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» IV աստիճանի շքանշան (2004), «Պատվո շքանշան» (1999), Պետրոս Մեծի շքանշան:

ԳԵՂԱՄՅԱՆ Գայանե Պարույրի (ծ. 05.12.1960, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀՀ արվ. վաստ. գործիչ: Ավարտել է ԵՊԿ (1988, Ա. Սարաջևայի դասարան) և ասպիրանտուրան (1993): 1995-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2006-ից): 1993-2013-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Իոլանտա, Լիզա (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա», «Պիկովայա դամա»), Նեդդա (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ»), Ամելիա, Լեոնորա, Աիդա (Ջ. Վերդիի «Պարահանդես-դիմակահանդես», «Տրուբադուր», «Աիդա»), Մադամ Բատերֆլայ (Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան»), Դոննա Էլվիրա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Կլարա (Ջ. Գերշվինի «Պորգի և Բես») ևն: Սաներից են Հրաչուհի *Բաանցը*, Պերճ *Քարագյանը*, Լ. Ղազարյանը, Ա. Ջախարյանը, Հ. Թորոսյանը և ուր.: Հյուրախաղերով շրջագայել է Արգենտինայում, ԱՄՆ-ում, Բրազիլիայում, Կորեայում, Սերբիայում, Իտալիայում, Ռուսաստանում և այլուր: Ձայնագրել է 4 ձայնասկավառակ: Հանրապետ. (1980), Մ. Գլինկայի անվ. XII միջազգ. (1987, Բաքու) մրցույթների դիպլոմ, XX միջազգ. մրցույթ-փառատոնի (2002, Կորեա) ոսկե գավաթ:

«ԳԵՂԱՐԴ» ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ, հիմնադրվել է Գեղարդում 2001-ին (հիմնադիր-խմբավար՝ Անահիտ *Պապայան*, գեղ. ղեկ.՝ Միհեր *Նավոյան*): Խումբը Գեղարդավանքում մասնակցում է Սբ Պատարագի երգեցողությանը: Երկացանկում՝ V-XV դդ-ի հայ միջնադար. մոնոդիաներ (մենակատար. և խմբային կատարումներով), հայ հոգևոր և ժող. երգերի խմբերգ. մշակումներ, հայ արդի, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Գայանե Գեղամյանը ելույթի պահին

Համերգներով շրջագայել է Գերմանիայում, Ավստրիայում, Ֆինլանդիայում, Չեխիայում, Բելառուսում, Լեհաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Լիբանանում, Շվեդիայում, Ռուսաստանում: Ստրասբուրում, Շտուտգարտում, Փարիզում, Բեյրութում, Ս. Պետերբուրգում մասնակցել է հոգևոր երաժշտության,

«Գեղարդ» երգեցիկ խումբը

Մոսկվայում՝ Ջատկական, Ջալցբուրգում՝ երաժշտության ու դրամայի (երկուսն էլ՝ 2016) միջազգ. փառատոներին:

Խումբը ձայնագրել է 3 լազեր. սկավառակ («Հայ երաժշտություն», 2002, «Հայկական խորան», 2005, «Խորհուրդ խորին», 2013):

«Կոլոժսկի բլագովեստ» (Մեծ մրց., Գրոդնո) ուղղափառ երգասացությունների, «Հայնովկայի եկեղեցական երաժշտության օրեր» (1-ին մրց., Հայնովկա) միջազգ. մրցույթների (երկուսն էլ՝ 2010) դափնեկիր:

Մագդալինա Գենջյան



Վիրջիլ Գեորգիու

ԳԵՆՋՅԱՆ Մագդալինա Ղուկասի (1856, Ստավրոպոլ–04.09.1940, Երևան), երգչուհի (քնար. սոպրանո), մանկավարժ: Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան (1890): 1897–1927-ին դասավանդել է Կազանում, 1927–39-ին՝ ԵՊԿ-ում: Ելույթներ է ունեցել Դոնի Ռոստովում, Թիֆլիսում, Բաքվում, Ս. Պետերբուրգում և այլուր: Մարգարիտի դերերգով հանդես է եկել Շ. Գունոյի «Ֆաուստ» օպերայի հայ. առաջին բեմադրության մեջ (1890)՝ Բաքվում: Դերերգերից են՝ նաև Լեոնորա, Աիդա (Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Աիդա»), Իզոլդա (Ռ. Վագների «Տրիստան և Իզոլդա») ևն: 1891-ին Ս. Պետերբուրգում կատարել է ռուս. և հայկ. երգեր («Ո՛վ, ինչ անուշ», «Երազ» ևն), մասնակցել սիմֆ. համերգների:

ԳԵՈՐԳԻԱՆ Արմեն Հակոբի [26.10(08.11).1904, Բաքու–07.03.1993, Մոսկվա], թավջութակահար, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է ՄՊԿ (1926, Ա. Ա. Բրանդուկովի դասարան): 1927–57-ին՝ Ռուսաստանի համամիութ. ռադիոյի եռյակի, 1968–72-ին՝ Կոմիտասի անվ. քառյակի թավջութակահար: 1927-ից դասավանդել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանում, 1944-ից՝ Երաժշտամանկավարժ. ինստ-ում (պրոֆ.՝ 1960-ից): Հյուրախաղերով հանդես է եկել մի շարք երկրներում:

Դուստրը՝ Կարինե Գ. (05.01.1944, Մոսկվա), թավջութակահարուհի: Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանի (1961), ՄՊԿ (1967, Մ. Լ. Ռոստրոպովիչի դասարան) թավջութակի բաժինները: 1970-ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար: 1980-ից ապրում է Լոնդոնում: 1983-ից դասավանդել է Դետմոլդի (Գերմանիա) երաժշտ. ուսումնարանում, 2003-ից՝ Երաժշտության թագավոր. հս. քոլեջում (Մանչեստր): 1989-ից վարպետության դասեր է վարել Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Ավստրիայում: Հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ում, Անգլիայում, Կանադայում, Շվեդիայում, Գերմանիայում, Լեհաստանում և այլուր. նվագացանկում՝ թավջութակի և նվագախմբի շուրջ 40 կոնցերտ, բազմաթիվ կամեր. ու գործիք. երկեր: Ա. Շնիտկեի, Է. Դենիսովի, Ս. Գուբայդուլինայի, Տ. Սանսուրյանի, Ք. Պենդերեցկու, Ա. Խաչատրյանի (թավջութակի և նվագախմբի ռապսոդիայի, հեղինակի ղեկավարությամբ) ստեղծագործությունների առաջին կատարողն է:

Թավջութակահարների համառուս. (1961, 3-րդ մրց.), Համամիութ. (1965, 1-ին մրց., Մոսկվա) և Պ. Ի. Չայկովսկու անվ. (1966, 1-ին մրց.) մրցույթների դափնեկիր:

ԳԵՈՐԳԻՈՒ Վիրջիլ [22.03.1905, Ռոման (Ռումինիա)–07.03.1977, Բուխարեստ], ռումինահայ դաշնակահար, կոմպոզիտոր, բանաստեղծ: Ավարտել է Բուխարեստի կոնսերվատորիան (1926), կատարելագործվել Վիեննայում և Փարիզում: Բուխարեստի ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի հետ հյուրախաղերով շրջագայել է մի շարք երկրներում, այդ թվում՝ ԽՍՀՄ-ում (1958, 1967): Երկացանկում՝ նաև հայ կոմպոզիտորների գործերից:

Գրել է սիմֆ. կոնցերտ (1950)՝ դաշնամուրի և նվագախմբի, կամեր. սյուիտ (1959)՝ ջութակի և դաշնամուրի, կապրիչչո (1964)՝ կլառնետի և դաշնամուրի համար, Օրատորիա (1956) և այլ ստեղծագործություններ:

Հեղինակ է բանաստեղծությունների 10 ժող-ի («Արևելքի երգերը», 1928, «Պոեմներ», 1956, «Սոնետներ», 1965, «Բանաստեղծություններ», 1968, 1987, ևն), նաև երաժշտագիտ. աշխ-ների:

ԳԵՎՈՆՅԱՆ (Տեր-Կարապետյան) Արմենուհի Գեղամի (1902, Մուշ–20.06.2002, Փարիզ), երգչուհի: Ավարտել է Կ. Պոլսի Եսայան վարժարանը (1920): Փարիզում երգեցողության դասեր է առել Մարգարիտ *Բաբայանից*, ծանոթացել Արմենակ *Շահմուրադյանի* երգարվ-ին: 1930-ական թթ-ից հավաքել, մշակել և տարածել է Տարոնի ժող. երգերը: Առաջին համերգը տեղի է ունեցել 1948-ին Փարիզում: 1964–1978-ին համերգներով շրջագայել է ԱՄՆ-ի հայաշատ քաղաքներում, Լիբանանում, Սիրիայում, Կ. Պոլսում, Վենետիկում, Հայաստանում: Կազմել և 1978-ին Երևանում հրատարակել է «Տարոնի ժողովրդական երգեր» գրքույկը, 1989-ին Փարիզում թողարկել է «Տարոնի և այլ ժողովրդական երգեր» ձայնասկավառակը: Հոդվածներ է տպագրել սփյուռքահայ մամուլում («Փարիզեն Հալեպ», «Մշո աշխարհ», «Առաքելոց վանքին դուռը» ևն):

Երկ. *Գիւլիզար (Յուշեր), Ե., 1992:*

ԳԵՎՈՐԳ Դ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Մեծագործ (Քերեստեճյան Գրիգոր Պետրոսի, 05.07.1813, Կ. Պոլիս–06.12.1882, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1866–ից: Սովորել է Կ. Պոլսի Գում Գափուի ժառանգավորաց վարժարանում: 1874–ին հիմնադրել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ապա՝ Էջմիածնի թանգարանը, կարգավորել է վանքի տպարանն ու մատենադարանը, նախաձեռնել «Արարատ» ամսագրի հրատարակումը (1868–ից): Օշականում՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա, կառուցել է եկեղեցի: Եղել է հմուտ շարականագետ. միակերպել և կանոնավորել է հայ հոգևոր երաժշտությունը: 1873–74–ին Կ. Պոլսից Էջմիածին է հրավիրել Նիկողայոս ***Թաշճյանին*** և Կ. Պաղտատյանին՝ կազմակերպելու Համբարձում ***Լիմոնճյանի*** ստեղծած նոր հայկ. ձայնագրության համակարգի ուսուցումն ու տարածման աշխ–ները (Ն. Թաշճյանի սաներից 25–ը եղել են այդ համակարգով ձայնագրության ուսուցիչներ), ավարտին է հասցրել Մովսես Սյունեցու և Սիմեոն Ա Երևանցու՝ ազգ. դպրոցներում երգեցողության դրվածքի կարգավորման գործը:

Գրկ. *Աբեղեան Մ., Գեւորգ Դ Մեծագործ կաթողիկոս Ամենայն հայոց, Վաղ–պապ, 1899: Օրմանեան Մ., Ազգապատում, հ. 1–3, մաս 2, Բեյրութ, 1961:*

ԳԵՎՈՐԳ ՍԿԵՎՌԱՑԻ, Լամբրոնացի, Սսեցի (ծ. թ. անհտ–1301), գրիչ, լեզվաբան, մեկնիչ, հռետոր, մատենագիր, երաժիշտ–տեսաբան: Աշակերտել է մորեղբորը՝ Գրիգոր Սկևռացուն, Բջնիի Գրիգոր արքեպիսկոպոսին, ապա՝ Վարդան Արևելցուն: Ընդօրինակել է մատյաններ: Հորինել է բազմաթիվ ներբողյաններ, խրատներ, նաև գանձեր, որոնցից մի քանիսը ձեռագրերում հանդիպում են որպես տաղեր: Գ. Ս–ուն են վերագրվում Գրիգոր Խուլի Շարակնոցի («Խլկցի») շարականների ուղղումն ու խմբագրումը: Գործնականում մշակելով առոգանության խազանշանների երաժշտ. գործածության կատարելագործված սկզբունքներ՝ նոր մակարդակի է հասցրել միջնադար. երաժշտածիս. երգարանների արվ–ը:

Գրկ. *Թահմիզյան Ն., Հինևական խաղերի միակցությունը, ԲՄ, № 9, 1969:*

ԳԵՎՈՐԳՅԱՆ Արա Կառլենի (ծ. 19.04.1960, Երևան), կոմպոզիտոր, պրոդյուսեր: Վալյա ***Սամվելյանի*** որդին: ՀՀ վաստ. արտիստ (2004): Սովորել է Երևանի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցում, ավարտել № 8 գեղարվ–ի ուսումնարանը, ՀՊՄՀ մշակույթի ֆակ–ի գործիք. կատարողականության (փող. և էստրադ. գործիքներ) բաժինը (1987): 1987–99–ին դասավանդել է նույն ինստ–ում (դիրիժորություն, մշակույթի ֆակ–ի երաժշտության ամբիոնի վարիչ՝ 2005–ից): 1983–ից՝ «Ռալլի» նվագախմբում, 1992–99–ին՝ Հայկ. հեռուստատեսության «3–րդ ալիք» ծրագրի երաժշտ. ղեկ.:

Հիմնադրել է ժող. գործիքների նվագախումբ (կազմում՝ 40 երաժիշտ), հետագայում՝ Հայաստանի ազգ. նվագարանների պետ. նվագախումբ: Մեծ եղեռնի 90–ամյակի կապակցությամբ գրել է «Ադանա» երգը, որը թարգմանվել ու ձայնագրվել է 20 լեզվով և կատարվել Երևանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝ տարբեր երկրներից ժամանած հայտնի երգիչների մասնակցությամբ: Թողարկել է «Օվկիանոսից այն կողմ» (1995), «Նոստալջի» (1997), «Անի» (1999), «Խոր վիրապ» (2001) ձայներիզները, «Վաղարշապատ» (2009, ԱՄՆ) ձայնասկավառակը: Ստեղծել է ***քանոնի*** բաս տեսակը:

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի

Համերգներով շրջագայել է մի շարք երկրներում, համագործակցել ճանաչված նվագախմբերի, երաժիշտների հետ:

Գրել է երաժշտություն կինոյի («Քրմուհի», «Խնկարկում», «Յար խուշտա» ևն), թատրոնի («Բարի գալուստ», «Կռունկներ, ետ դարձեք» ևն), սպորտ. միջոցառումների ևնի համար:

ՌԴ «Միխայիլ Լոմոնոսով» շքանշան, Երևանի քաղաքապետի, «Կարոտ» փառատոնի (Մոսկվա), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի, ՀՀ ՄՆ (2002) ոսկե մեդալներ:

Արա Գևորգյան

ԳԵՎՈՐԳՅԱՆ Կոմիտաս Հրանտի (ծ. 1947, Երևան), դիրիժոր: Սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում: 1979–ից ապրում է Փարիզում, որտեղ շարունակել է երաժշտ. կրթությունը (դիրիժորություն): 1984–ին մասնակցել է սիմֆ. նվագախմբերի դիրիժորների մրցույթին, արժանացել 1–ին մրց–ի և ոսկե մեդալի (երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի 5–րդ սիմֆոնիան, Կ. Դեբյուսիի «Պարեր տավղի և լարային նվագախմբի համար», Դ. Դ. Շոստակովիչի «Նախերգանք ռուսական և ղրղըզական թեմաներով» գործերը): Ղեկավարել է նաև Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու երգչախումբը: Փա-

Համլետ Գևորգյանը ելույթի պահին

Յուրի Գևորգյան

րիզում հրատարակել է «Երաժշտական բառարան» (1989), որն ընդգրկում է 1500 երաժշտ. եզրույթների բացատրություններ՝ դրանց հուն., իտալ., իսպ., ֆրանս., գերմ., անգլ., լեհ. արմատներով: 1985-ին՝ Փարիզի կոնսերվատորիայի շրջանավարտների քննական հանձնաժողովի անդամ: Հավաքել է Տ. Ալեքսանյանին, Ի. Կալամյանին առնչվող նյութեր (բացիկներ, նամակներ, լուսանկարներ, փաստաթղթեր ևն): 2015-ին այցելել է Երևան: Կոմիտասի թանգարան-ինստիտուտին նվիրել է Կոմիտասին վերաբերող շուրջ 100 արժեքավոր նյութեր:

ԳԵՎՈՐԳՅԱՆ Համլետ Զելիմի (ծ. 07.05.1974, Լենինական), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2015): Սովորել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում (միաժամանակ երգել է Պիոներների պալատի ժող. գործիքների անսամբլում): Ավարտել է ԵՊԿ ժող. երգեցողության բաժինը (1997, Հ. Բաղդասարյանի դասարան): 1996-ից ծառայել է ՀՀ ԶՈւ-ում (առաջատար երգիչ): Մասնակցել է բազմաթիվ մրցույթների և փառատոների, հայկ. ժող. երգը ներկայացրել Սիդնուքում. երգացանկում՝ հայկ. ժող., գուսան. և աշուղ., նաև հայ կոմպոզիտորների երգերից: Մենահամերգներով հանդես է եկել Ջավախքում, Կապանում, Գյումրիում, Երևանում, Գլենդելում, Մարսելում, Հալեպում, Իժևսկում, Կազանում, Սամարայում, Լիբանանում, Արգենտինայում, Ուրուգվայում, Ավստրալիայում, Եվրոպայում (5 երկիր) և այլուր: Թողարկել է «Դու ես» (2005), «Ծիրան» (2008) ձայնասկավառակները, «Մենք ենք» (2006), «Ժառանգորդը» (2008) և այլ տեսասկավառակներ:

Ա. Իսահակյանի անվ. ժող. երգի մրցույթի (1998), «Հանուն հավատի, հայրենիքի և սիրո» երգի (1999), էստրադ. երգի «Կռունկ» (2005), «Կարոտ» (2008) փառատոների դափնեկիր, «Տարվա լավագույն երգիչ» (2006, Կալիֆոռնիա՝ ԱՄՆ), (2009, «Տաշիր» մրցանակաբաշխություն, Մոսկվա) ևն:

ԳԵՎՈՐԳՅԱՆ Յուրի Ալեքսանդրի (15.7.1931, Թիֆլիս–11.05.2016), կոմպոզիտոր, ջութակահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ: Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիայի ջութակի (1953), ԵՊԿ կոմպոզիցիայի (1958, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1960–2002-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում: Գրել է օպերաներ («Խարույկ», «Վերք Հայաստանի», «Տառո»), 3 երաժշտ. կոմեդիա, սիմֆոնիա, սիմֆոնիետ, կոնցերտ՝ շրթհարմոնի (կամ սաքսոֆոնի) և կամեր. նվագախմբի, 3 պիես («Աղոթք», «Վալս», «Լեռնցիների պար»)՝ կամեր. նվագախմբի, սաքսոֆոնահարների քառյակի, 4 պիես՝ «Կերպարներ», կանտատ, թավջութակի 2 սոնատ, պիեսների ժող.՝ դաշնամուրի և ջութակի (հրտ.՝ Վիեննա, Երևան) համար, մանկ. և էստրադ. երգեր, ռոմանսներ (Վ. Տերյանի խոսքերով) և այլ գործեր:

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ջոն Անդրանիկի (ծ. 27.12.1937, Երևան), թավջութակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1984): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1955, դասատու՝ Ա. Հ. Չաուշյան), ԵՊԿ (1960) և ասպիրանտուրան (1964, ղեկ.՝ Լ. Գրիգորյան): 1961–68-ին՝ ԵՊԿ եռյակի, 1971–78-ին՝ քառյակի թավջութակահար, 1969–74-ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոյի սիմֆ., 1976–91-ին՝ ԵՕԲԹ նվագախմբերի կոնցերտմայստեր: 1965–69-ին աշխատել է Սիրիայում, 1974–76-ին՝ Կուբայում: 1964–91-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1988-ից): 1991-ից ապրում է ԱՄՆ-ում: 1995–2010-ին (տարբեր տարիների)՝ Վաշինգտոնի, Ֆերֆաքսի, Առլինգտոնի, Ալեքսանդրիայի սիմֆ. նվագախմբերի կոնցերտմայստեր, միաժամանակ՝ Վիրջինիայի և Ֆերֆաքսի երաժշտ. ստուդիաների դասատու: 2008-ից՝ Ֆերֆաքսի «Ջոն Գևորգյան» երաժշտ. ստուդիայի ղեկ. (նաև հիմնադիրը): Կազմել և խմբագրել է «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային տրիոների ժողովածուն» (ռուս., 1987):

Երիտասարդ կատարողների այսրկովկաս. մրցույթի 1-ին մրց. (1960, Բաքու):

ԳԵՏԻԿՅԱՆ Մարիան (ծ. թ. անհտ), ֆլեյտահարուհի: Ավարտել է Բոստոնի համալսարանը (1986), ստացել երաժշտության բակալավրի կոչում: Եղել է Բոստոնի Փոփս, Քնար. օպերայի նվագախմբերի առաջին ֆլեյտահարուհին, 1993-ից մշտապես մասնակցել Հարվարդի կամեր. նվագախմբի, Callisto և Vanguard եռյակների ելույթներին: Դասավանդել է Բոստոնի կոնսերվատորիայում և համալսարանի արվ-ների դպրոցում: 1996-ին Երևանում Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ հանդես է եկել Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտի (ֆլեյտայի համար

փոխադրել է «ֆլեյտայի արքա», Փարիզի կոնսերվատորիայի պրոֆ. Ժ-Պ. Ռամպալը) կատարմամբ, որն առանձնացել է փայլուն տեխնիկայով, նրբերանգների բացառիկ հարստությամբ:

Ազգ. ֆիլհարմոնիկ ընկերության երիտասարդ մենակատարների, Մ. Պապուցակիսի անվ. և այլ մրցույթների 1-ին մրց-ներ:

ԳԵՐԳԻԵՎ Վալերի Աբիսալի (ծ. 02.05.1953, Մոսկվա), օս դիրիժոր: ՌԴ ժող. արտիստ (1996): Ավարտել է Վլադիկավկազի երաժշտ. ուսումնարանը, Լենինգրադի կոնսերվատորիան (1977, Ի. Ա. Մուսինի դասարան): 1978-ից՝ Լենինգրադի ՕԲԹ (այժմ՝ Մարիինյան թատրոն) նվագախմբի դիրիժորի ասիստենտ (1988-ից՝ գեղ. ղեկ. և գլխ. ռեժ., 1996-ից՝ գեղ. ղեկ. և տնօրեն): 1981–85-ին՝ Հայաս-

Վալերի Գերգիևը ելույթի պահին

տանի պետ. սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր. հարստացրել է երկացանկը հայ ժամանակակից կոմպոզիտորների (Ղ. Սարյան, Ա. Տերտերյան և ուր.) ստեղծագործություններով: Մարիինյան թատրոնում կազմակերպել է մի շարք փառատոներ՝ նվիրված ռուս նշանավոր կոմպոզիտորների ծննդյան տարելիցներին, թատրոնի երկացանկում ընդգրկել է Ռ. Վագների գործերից («Լոենգրին», «Նիբելունգի մատանին» ևն): 1995–2008-ին՝ Ռոտերդամի, 2015-ից՝ Մյունխենի ֆիլհարմոնիկ, 2007–15-ին՝ Լոնդոնի սիմֆ., 2013-ից՝ ԱՄՆ-ի Ազգ. երիտասարդ. նվագախմբերի գլխ. դիրիժոր:

ՌԴ Պետ. մրց. (1993, 1998, 2015), «Ավեք սանդր Նևսկի» (2016), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2009) շքանշաններ:

ԳԻԼԱՆՅԱՆ Դավիթ Հայկի (1950–2015), կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1965, Գ. Հովունցի դասարան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսում-

Դավիթ Գիլանյան

նարանի կոմպոզիցիայի (1969, Է. Բաղդասարյանի դասարան) և դաշնամուրի (Ռ. Շուգարովի դասարան), ԵՊԿ կոմպոզիցիայի (1974, Ղ. Սարյանի դասարան) և երգեհոնի (Վ. Ստամբոլցյանի դասարան) բաժինները: 1981-ին կատարելագործվել է Շտրալզունդ (Գերմանիա) ք-ում՝ երգեհոնահար Դ. Փրոսթի ղեկավարությամբ: 2000–07-ին ԵՊԿ-ում դասավանդել է երգեհոնի տեսություն և պատմություն:

Հեղինակ է «Երգեհոնագիտության նեռածություն» (1999) աշխ-յան:

ԳԼԻՍՍԱՆԴՈ (իտալ.՝ glissando, < ֆրանս. glisser – սահել), սահանցիկ, երաժշտ. ստեղծագործության (վոկալ կամ գործիք.) կատարման ժամանակ հնչյունների արտաբերման եղանակ, որի դեպքում հնչյունների մի շարքից որոշակիորեն ընկալվում են առաջինի և վերջինի բարձրությունները: Իրագործվում է որևէ լարի (ջութակ, կիթառ ևն), մի շարք լարերի (տավիղ, քանոն ևն) կամ ստեղների (դաշնամուր, բայան) վրայով մատների սահուն և արագ անցման միջոցով: Կիրառվում է նաև փող., հարված. և այլ գործիքների կատարման ժամանակ: Նոտագրության մեջ նշվում է ալիքաձև գծով կամ տառերով:

Գլիսանդո

ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆ Էդգար Գագիկի (ծ. 15.04.1978, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2011): ՀԿՄ անդամ (2013): Ավարտել է ԵՊՀ կիրառ. մաթեմատիկայի (1999) ֆակ-ը, ԵՊԿ կոմպոզիցիայի (2004, Ե. Երզնկյանի դասարան) բաժինը և ասպիրանտուրան (2010, ղեկ.՝ Ա. Սաթյան): 2008-ին ստեղծել է արյան հիվանդություններով տառապող երեխաների բուժմանն աջակցող «Օգնեմ» բարեգործ. հիմնադրամը (հոգաբարձուների խորհրդի նախագահ): 2011-ից՝ Երևանի Ք. Քուշնարյանի անվ. արվ-ի դպրոցի տնօրեն: 2016-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում և Կրթության միջազգ. ակադ-ում:

Էդգար Գյանջումյան

Գրել է «Ցնծության առավոտ» սյուիտը (առաջին անգամ հնչել է Մոսկվայում՝ Կրեմլի համերգասրահում՝ Ռուսաստանի ազգ. սիմֆ. նվագախմբի և Ջիվան ***Գասպարյանի*** կատարմամբ), վոկալ շարքեր («Հավատա և աղոթիր», «Հայրենիք»), «Ընկերիս» կանտատը (ըստ Հ. Թումանյանի բանաստեղծությունների) խմբերգ. ստեղծագործություններ, «Կարոտի ծառեր» մանկ. մյուզիքլը, դաշնամուր. վարիացիաներ, շուրջ 200 պիես և երգեր,

Գևորգի Գյոդակյան

Ջեյմս Գյոզալյան

Դավիթ Գյուլամիրյան

երաժշտություն՝ «Ռոմեո և Ջուլիետ» ներկայացման համար:

2002-ին «Ամերիկա-Ռուսաստան. մշակույթի զարգացման հիմնադրամի» պատվերով գրել է «Հավերժության ոգի» գործիք. երկը (ԱՄՆ-ում սեպտ. 11-ի ահաբեկչության զոհերի հիշատակին կատարել են Ջ. Գասպարյանը և ուր. ճանաչված երաժիշտներ): Թողարկել է «Նոր դարի երգարան» (2001), «Հավերժության ոգի» (2002), «Սիրո մասին» (2004), «Հավատա և աղոթիր» (2008), «Սիրված և նոր» (2010) վերնագրերով ձայնասկավառակներ:

«Armenian Music Awards» («Լավագույն երգ»), «Լավագույն սկավառակ» (2001), «Երևանին նվիրված լավագույն երգ» (2001), «Կռունկ» (2005), «Ոսկե քնար» (2005) և այլ մրց-ներ:

ԳՅՈԴԱԿՅԱՆ Գեորգի (Գևորգ) Շմավոնի (12.08.1928, Լենինական–20.12.2015, Երևան), երաժշտագետ: Ալինա ***Փահլևանյանի*** ամուսինը: Արվեստագիտ. դ-ր (2007), պրոֆ. (1997-ից): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1980): ՀԿՄ (1959-ից, վարչության քարտուղար՝ 1973–91), ԽՍՀՄ ԿՄ (1971–91) անդամ: Ավարտել է ԵՊԿ տես-կոմպոզիտոր. (1951, Գ. Տիգրանովի դասարան) և դաշնամուրի (1952, Գ. Սարաջյանի դասարան) բաժինները, ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրան (1956), ուսումնառությունն անցկացրել ՄՊԿ-ում (տեսության ամբիոն, ղեկ.՝ Բ. Մ. Յարուստովսկի): 1957-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արվ-ի տեսության և պատմության բաժանմունքում (1958-ից՝ արվ-ի ինստ.), 1960-ից՝ արվ-ի ինստ-ի գիտ. քարտուղար և գիտ. խորհրդի անդամ, 1965–2015-ին՝ երաժշտության բաժնի վարիչ, 1979–2005-ին՝ փոխտնօրեն, 2005–15-ին՝ տնօրենի խորհրդական: 1973-ից դասավանդել է ԵՊԿ-ում: Աշխ-ները վերաբերում են երաժշտության պատմությանն ու տեսությանը: Հեղինակ է նաև գիտ. հոդվածների, որոնք լույս են տեսել ՀՀ, ՌԴ, Վրաստանի, Ուզբեկստանի, Գերմանիայի գիտ. ժող-ներում և հանդեսներում: Պատրաստել է Կոմիտասի երկերի 7–14-րդ հատորների (1997–2006) հրատ-ները:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011), ԽՍՀՄ ԿՄ մրց. (1973):

Երկ. *Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1960: Ակնարկներ հայ արվեստի պատմության, գիրք 1. Ակնարկ հայ երաժշտության պատմության, Ե., 1963 (համահեղ.): Տիգրան Չուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Ե., 1971: Կոմիտաս, Ե., 2000: Էջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009: Комитас, Е., 1969; Пути формирования армянской музыкальной классики, Е., 2006; Komitas, Y., 2014.*

Գրկ. *Գևորգ Գյոդակյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն, կազմ.՝ Ա. Աասպրյան, Ե., 2004:*

Անահտ Աասպրյան

ԳՅՈՋԱԼՅԱՆ Ջեյմս Արմենակի (25.07.1925, Լենինական–1987, Երևան), խմբավար, կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է Լենինականի մանկավարժ. ուսումնարանը (1944), միաժամանակ հաճախել երաժշտ. դպրոցի պարապմունքներին, ապա սովորել է Ք. Կարա-Մուրզայի անվ., Երևանի Ռ. Մելիքյանի անվ. (1944–46, ջութակ և խմբավարություն) երաժշտ. ուսումնարաններում, ավարտել ԵՊԿ խմբավարության բաժինը (1951, Թ. Ալթունյանի դասարան), կատարելագործվել Մոսկվայում (1952–53, ղեկ-ներ՝ Ա. Լ. Սվեշնիկով, Կ. Բ. Պտիցա, Ա. Ս. Ստեպանով և ուր.): 1953–61-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի դիրիժոր-խմբավար: 1961–87-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1978-ից): Հեղինակ է երգերի և խմբերգերի («Վերածնված Հայաստան», «Քնարական», «Սպասում», «Հայրենասերներ» ևն), նաև մեթոդ. ձեռնարկների:

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ Դավիթ Ժորայի (ծ. 17.05.1986, Երևան), կլառնետահար: Արվեստագիտ. թեկնածու (2011): Ավարտել է Երևանի Ս. Ջրբաշյանի անվ. երաժշտ. դպրոցի կլառնետի (2000, դասատու՝ Ա. Սահակյան), ԵՊԿ փող. (2008, Ա. Սուրադյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2011):

2005-ից՝ Հայաստանի երիտասարդ. սիմֆ. նվագախմբի կլառնետահարների կոնցերտմայստեր, 2009–18-ին՝ ԵՕԲԹ կլառնետահարների խմբի փոխկոնցերտմայստեր: 2010-ից «Convergence New Music Ensemble»-ի կազմում համերգներով շրջագայել է Եվրոպայի մի շարք երկրներում: 2011-ին մասնակցել է «Young Euro Classic» միջազգ. երաժշտ., 2013-ին՝ Ա. Խաչատրյանի անվ. եռյակի հետ՝ ՌԴ Արխանգելսկ և Սևերոդվինա քաղաքներում (նվիրված՝ Ա. Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին), 2015-ից Ա. Հարությունյանի անվ. քառյակի հետ՝ Լիբանանում («Ալ-Բուստան» փառատոնում), Մոսկվայում, Ենայում (Գերմանիա), Չինաստանում (6 քաղաքում) և այլուր տեղի ունեցած փառատոներին:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2016):

ԳՅՈՒԼԶԱԴՅԱՆ Արաքսյա Կարապետի (05.06.1907, Ալեքսանդրապոլ–07.10.1980, Երևան), երգչուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1960): Սովորել է Ալեքսանդրապոլի Արղության օրիորդաց գիմնազիայում, 7 տարեկանից երգել է Սբ Աստվածածին եկեղեցում: 1927-ից՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի, 1951–67-ին՝ Հայֆիլհարմոնիայի մեներգչուհի. երգացանկում՝ հայկ. ժող. ու աշուղ. (հիմնականում՝ *Շերամ* և *Սայաթ-Նովա*), նաև հայ կոմպոզիտորների (300-ից ավելի) և այլ ժողովուրդների երգեր ու ռոմանսներ: 1939 և 1956-ին Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի տասնօրյակներին, հյուրախաղերով շրջագայել ԽՍՀՄ բազմաթիվ քաղաքներում: ՀՄՊ-ի (1941–45) ժամանակ համերգներով հանդես է եկել ռազմաճակատներում և հոսպիտալներում: Շերամի երգերի լավագույն մեկնաբաններից էր («Քեզանից մաս չունեմ», «Շորորա», «Դուն իմ մուսան ես», «Ճամփորդ ես, ճամփիդ ղուրբան» ևն), որոնց մեծ մասն աշուղը գրել է Գ-ի համար: Նրա արվ-ը յուրատեսակ դպրոց է դարձել նոր սերնդի ժող. երգիչ-երգչուհիների կատարող. արվ-ի ձևավորման համար:

Գրկ. *Արաքսյա Գյուլզադյան. Հուշեր, հոդվածներ, կարծիքներ (կազմ.՝ Վ. Մելքումյան, Գ. Ալեքսանյան), Ե., 2010: Առաքելյան Ս., Արաքսյա Գյուլզադյան, Ե., 2018:*

ԳՅՈՒՄՐԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, հիմնադրվել է 1986-ին Լենինականում, գեղ. ղեկ. ու գլխ. դիրիժոր՝ ՀՀ արվ. վաստ. գործիչ Զեմմա *Քաղցրիկյան*, տնօրեն՝ ՀՀ մշակույթի վաստ. գործիչ՝ Մ. Մալխասյան: Նվագախմբի խորհրդատուն

Գյումրիի ժողովրդական գործիքների նվագախումբը

կոմպոզիտոր Խաչատուր *Ավետիսյանն* էր, տնօրենը՝ Մ. Բաբոյանը (1986–94), գեղ. ղեկ. ու գլխ. դիրիժորը՝ Զ. Խաչատրյանը (1986–2001): Նվագախմբում ընդգրկված են քանոն, քամանչա, թառ, ուդ, դհոլ, շվի, դուդուկ, զուռնա, բլուլ, պկու: Նվագացանկում՝ հայկ. ժող., հայրենասիր. և աշուղ. երգեր: Մասնակցել է «Պահպանենք մեր մշակույթը», «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկ. II, III, աշուղ. արվ-ի կովկաս., «Եղեգան փող» ժող., գուսան. երգարվ-ի համահայկ., բանահյուս. (1994, Բաղդադ), ժող. ստեղծագործության «Ընկերակցություն» (ք. Ազով՝ ՌԴ) միջազգ. փառատոներին: Նվագախումբն արժանացել է «Ծիծեռնակ» ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության «Տարվա լավագույն նվագախումբ» և «Տարվա լավագույն ալբոմ» (Խաչատուր Ավետիսյանի «Քեզ եմ հիշում» ալբոմի համար, 2018) մրց-ների:

ՀՀ ՄՆ «Կոմիտաս» մեդալ (2012), Գյումրիի քաղաքապետարանի «Գյումրիի զինանշան» հուշանվեր (2012), ՀԵԸ «Կոմիտաս» հուշամեդալ (2012):

ԳՅՈՒՄՐԻԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական (1993-ից), հիմնադրվել է 1991-ին՝ Գյումրիի մշակույթի կենտրոնում՝ Լորիս *Ճգնավորյանի* նախաձեռնությամբ և տեղի կատարող. ուժերով: 1991–92-ին գլխ. դիրիժոր՝ Ս. Մացոյան, 1993–98-ին գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Ռ. Մլքեյան, 1998–2010-ին՝ Ս. Ադամյան, 2010-ից՝ Ե. Վարոսյան: Երկացանկում՝

Գյումրիի սիմֆոնիկ նվագախումբը

հայ և եվրոպացի կոմպոզիտորների սիմֆ. ստեղծագործություններից:

ԳՅՈՒՆԱՉՅԱՆ Ալիկ Յաշայի (ծ. 08.12.1954, Գյումրի), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2015): 1962-ից՝ Գյումրիի Սայանի անվ. երգի-պարի անսամբլում: Երկացանկում՝ հայ ժող., աշուղ. և այլ երգեր: Հայտնի են Գ-ի «Մամ ջան, մամ ջան», «Պիտի գնանք»,« Իմ հասակը», «Երեքնուկ» և այլ երգերի կատարումները:

Հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ և արտերկրի քաղաքներում:

Գյումրիի պատվավոր վարպետ (2011), պատվավոր քաղաքացի (2014), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

Արաքսյա Գյուլզադյան

Ա. Գյուլզադյանը ելույթի պահին

Ալիկ Գյունաշյանը ելույթի պահին

Գոհար Խաչատրյան՝ «Գոհար» նվագախմբի հիմնադիր

ԳՅՈՒՐՋԻ ՆԱՎԸ (Սողոմոնյան Սահակ Աբրահամի, 22.02.1818, Երևան–29.11.1860-ական թթ.), աշուղ: Հորինել է երգեր սիրո և բարոյախոս. թեմաներով: Ճանաչված են «Կողբա ավերումն», «Խոլերա ցավո վերա», «Արի քու ցավը տանեմ», «Մարախ և թրթուր» և այլ երգեր: Ամենատարածվածը «Իմ սրտին աղ ես արել, ջիգյարս դաղ ես արել...» երգն է, որն առանձնանում է տաղ. լայնաշունչ մեղեդիով:

Գ. Ն–ից պահպանված շուրջ 40 երգերի մեծ մասը տպագրվել է հեղինակի օրոք՝ «Նոր քնար Հայաստանի» տետրերում: Նրա երգերը հետագայում զետեղվել են Գ. Ախվերդյանի, Գ. Լևոնյանի, Գ. Թարվերդյանի ժող–ներում և մի շարք երգարաններում:

«ԳՈՀԱՐ» (“KOHAR“), սիմֆ. նվագախումբ և երգչախումբ: Լիբանանցի բարերար Գոհար և նրա որդիներ Հարութ, Շահե, Նար Խաչատուրյանների նախաձեռնությամբ 1999–ին Գյումրիում հիմնադրվել է «Գ.» համալիրը՝ 1988–ի

«Գոհար» սիմֆոնիկ նվագախումբը և երգչախումբը

երկրաշարժից հետո մշակութ. կյանքին սատարելու նպատակով: Հանդես է գալիս Կիլիկիայի դրոշի ներքո: 1999–ից համալիրում գործում է դպրոց, որտեղ անվճար սովորում են 100–ից ավելի սաներ, որոնց մեծ մասը հանդես է գալիս «Գ.»–ի երգչախմբում և նվագախմբում, մասնակցում միջազգ. մրցույթ–փառատոների: 2000–ին հիմնադրվել են սիմֆ. նվագախումբն ու երգչախումբը (կազմում՝ 150 երաժիշտ, 12–15 երգիչ–մեներգիչ, 15 պարող, 2000–14–ին՝ գեղ. ղեկ. և դիրիժոր Սեպուհ ***Աբգարյան***, 2014–ից՝ գեղ. ղեկ. Գրիգոր Կուզիկյան, գլխ. դիրիժոր՝ Նատալի Գալստյան): Համերգներով հանդես է եկել Կիպրոսում (2002), Լիբանանում (2002, 2010, 2015–ին՝ 100 երգով), Թուրքիայում (2005), ՌԴ–ում (2006), ԱՄՆ–ում (2007), Կանադայում (2007), Սիբիայում (2009), Ուրուգվայում, Արգենտինայում, Բրազիլիայում (2012), որոնց հասույթը տրամադրվել է հյուրընկալող երկրի հայկ. կրթօջախներին:

«Գ.»–ի ուշագրավ ելույթներից է 2011–ի մայիսի 28–ի համերգը Երևանի Ազատության հրապարակում՝ հայ ճանաչված երգիչների մասնակցությամբ, 3D եռաչափ արտապատկերման շոու–ներկայացմամբ: Երգացանկում՝ բոլոր ժամանակների սիրված հայկ. երգեր՝ նորովի և ինքնատիպ մեկնաբանությամբ:

Թողարկել է ինտերակտիվ խտասկավառակներ և Blu–ray տեսաերիզներ:

Խաչատրյան ընտանիքի նախաձեռնությամբ Բեյրութում 2012–ից գործում է գրադարան, որն ընդգրկում է հայկ. երգարաններ (նաև սեփ. հրատարակության), երաժշտ. ձեռնարկներ և բառարաններ:

Հայկ. արվ–ում ունեցած մեծ ավանդի և հայանպաստ գործունեության համար Գ. Խաչատուրյանն արժանացել է Գյումրիի պատվավոր քաղաքացու կոչման (2002), ՀԱԵ «Սբ Ներսես Շնորհալի» (2005), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2015) շքանշանների, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալի (2009), Հռոմի Ֆրանցիսկոս պապի առաքել. օրհնագրի (2016):

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ, հայ ժող. վեպի՝ վիպասանքի երգերի և զրույցների շարք, որը պատմել և երգել են Գողթն գավառի երգիչ–վիպասանները: Նրանց և Գ. ե–ի մասին առաջին վկայությունները պահպանվել են Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»–ում (V դ.): Հեղինակի վկայած «Հայոց երգք վիպասանաց», «Երգք թվելյաց», «Ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան» եզրույթները հոմանիշներ են և նույն երևույթի տարբեր անվանումներ: Ենթադրվում է, որ Գողթան երգիչ–վիպասանները երգել ու պատմել են Տիգրանի, Երվանդի, Արտաշեսի վիպ. ճյուղերն իրենց մանրամասներով՝ վիպասանքն ամբողջությամբ: Այնուամենայնիվ, ըստ Մովսես Խորենացու, եթե վիպասանքը ոչ ամբողջությամբ, ապա նրա Արտաշեսյան շարքը (Արտաշատի շինարարությունը, Արտաշեսի ամուսնությունը, վիշապազուների պատերազմը, Արտաշեսի զավակների թշնամությունը Սմբատի և իրար դեմ, Արտաշեսի մահն ու անեծքը Արտավազդին) պատմել ու երգել են երգիչները:

Երկ. *Էմին Մ., Վէպք հնոյն Հայաստանի, Մ., 1850: Մովսես Խորենացի, Պատմություն*

Հայոց, Ե., 1981: Աբեղյան Մ., Երկ., հ. 1, Ե., 1966: Գրիգորյան Շ., Հայոց հին գրասանական երգերը, Ե., 1971:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ, Գողթն գավառի աշխարհիկ երգ-երաժշտության հորինող-կատարողներ: Գողթնում առավել երկար ու վառ են պահպանվել հեթանոս Հայաստանի բարքերն ու սովորույթները, հավատալիքները, նախնիների սխրագործությունների մասին հիշողությունները, կենցաղավարել հերոսացված հայ ցեղապետներին ու միապետներին նվիրված «Երգք թվելյաց» և «Վիպասանությունք» կոչվող երաժշտաբանաստեղծ. ստեղծագործությունները: Դրանք ստեղծողկատարողներին Մովսես Խորենացին անվանել է «Գ. ե.» («Երգիչքն Գողթան») և նրանց պատմածից գրի առել մի քանի վեպեր Տիգրանի և Աժդահակի, Արտաշեսի և Արտավազդի մասին:

ԳՈՃՅԱՆ Միհրան Հայկի (ծ. 1940, Բեյրութ), ջութակահար: Վարուժան *Գոճյանի* եղբայրը: Ավարտել է Փարիզի կոնսերվատորիան, կատարելագործվել Յ. Հայֆեցի ղեկավարությամբ: Հանդես է եկել մենահամերգներով: Քլիվլենդի, Կանզասի, Վաշինգտոնի սիմֆ. նվագախմբերի կոնցերտմայստեր: Արժանացել է միջազգ. մրց-ների:

ԳՈՃՅԱՆ Վարուժան Հայկի [12.03.1938, Բեյրութ–04.03.1993, Սանտա Բարբարա (ԱՄՆ)], ջութակահար, դիրիժոր: Միհրան *Գոճյանի* եղբայրը: Ավարտել է Փարիզի կոնսերվատորիան (աշակերտել է Ի. Գալամյանին և Յ. Հայֆեցին), Ֆիլադելֆիայի երաժշտ. ինստ-ը, դիրիժոր. արվ. սովորել Վիեննայում (ղեկ.՝ Հ. Սվարովսկի): 1956-ին՝ Լոս Անջելեսի ֆիլհարմոնիկ նվագախմբի կոնցերտմայստեր: Որպես ջութակահար՝ մենահամերգներով հանդես է եկել ԱՄՆ-ում, Եվրոպայում (1-ին մրց., Սորենտո, 1971, ևն), Միջին Արևելքում: Ղեկավարել է Չիկագոյի, Նյու Յորքի, Ֆիլադելֆիայի, Ստոկհոլմի (մոտ 15 տարի) սիմֆ. նվագախմբերը: 1968-ին Լոս Անջելեսում հիմնադրել է Հայ սիմֆ. երաժշտության ընկերությունը (նաև դիրիժոր): 1973–80-ին՝ Ստոկհոլմի սիմֆ. նվագախմբի գլխ., Սիեթլի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1984–85-ին՝ Յուտայի սիմֆ. նվագախմբի ղեկ., 1985-ից՝ Սանտա Բարբարայի սիմֆ. նվագախմբի տնօրեն: Կազմակերպել է ամենամյա համերգներ. երկացանկում՝ նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից: Համերգներով հանդես է եկել նաև Երևանում (1973, 1992):

ԳՈՆԳ (մալայերեն՝ gong), հարված. երաժշտ. գործիք: Լայնորեն տարածված է Հվ-արլ. Ասիայի ժողովուրդների մեջ: Կորացված եզրերով բրոնզե սկավառակ է, ինչում է հատուկ փայտե թակիչի հարվածով: Օգտագործվում է որպես ազդանշան. գործիք (պարերի, տիկնիկ. թատրոնի ներկայացումների ժամանակ), նաև ինդոնեզ. ազգ. գամելան նվագախմբում: Օպեր. և սիմֆ. նվագախմբերում ընդգրկված է Գ-ի տամ-տամ տեսակը:



Վարուժան Գոճյան

ԳՈՎՔ (գովասանք, գովաբանություն, գովերգություն, գովերգ), ժող. և մասնագիտացված երգաստեղծության մեջ լայն իմաստով Գ. են օրորոց. (մանկան Գ.), սիրո և վիճակի (յարի Գ.), հարսանեկան (հարսի, փեսի, խնամիների Գ.), պանդխտության (ծննդավայրի, հայրենիքի Գ.) երգերը և մահերգերը (որպես հարազատի Գ.), նեղ իմաստով՝ մահերգն ու ողբը, իսկ առավել հին առումով՝ մահացած հերոսի սխրանքների, շինարարության և այլ օգտաշատ գործունեության իդեալականացված պատկերումը: Հնագույն ու նախն. այս Գ-ի մեջ են բյուրեղացել արվ-ի վիպ. ու քնար. նախասկիզբները:

Գոնգ

ԳՈՐԾԻՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ երաժշտական, գիտություն երաժշտ. գործիքների կառուցվածքի, ձայն. (ակուստիկ.) և արտահայտչական հատկանիշների ու դասակարգման մասին (ընդգրկում է նաև զարգացման պատմությունը): Առնչվում է երաժշտ. ձայնագիտության, գործիքաշինության, երաժշտագիտության և ազգագրության հետ:

Որպես երաժշտագիտության ինքնուրույն ոլորտ՝ ձևավորվել է XIX դ-ի 2-րդ կեսին:

Ըստ Գևորգ Արմենյանի

ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտ. գործիքների համար ստեղծված երաժշտություն: Տարբերում են մենակատար (նվագակցությամբ կամ առանց նրա), անսամբլ. և նվագախմբ. տեսակները:

ԳՈՐԾԻՔԱՎՈՐՈՒՄ, լար., փող., սիմֆ. նվագախմբերի կամ գործիք. այլ անսամբլի համար երաժշտ. երկի շարադրման արվ.: Հիմնված է յուրաքանչյուր գործիքի (նրանց միատարր և բազմատարր զուգորդումների) տեխ. ու արտահայտչական հնարավորությունների առավել արդյունավետ օգտագոր-

Գրամոֆոն

ծելու, նրանից (ըստ ստեղծագործության մտահղացման) համապատասխան ինչողություն ու երանգ ստանալու, մասնավորապես՝ ուժային ու գունային հակադրություններ ստեղծելու վրա: Որպես կանոն՝ երաժշտ. երկի ստեղծման բուն գործընթացի մասն է կամ շարունակությունը:

Գ–ման զարգացումը պայմանավորվել է երաժշտարվ–ի ընդհանուր զարգացմամբ, ոճերի հաջորդափոխմամբ, նոր գործիքների ստեղծմամբ և հների բարելավմամբ, նվագի տեխնիկայի կատարելագործմամբ: XVII դ–ում կիրառվել է նվագախմբ. երաժշտության պարտիտուրի շարադրումը. մինչ այդ կոմպոզիտորներն իրենց երկերը չեն գործիքավորել, ուստի նույն երկը տարբեր նվագախմբերում հնչել է տարբեր: Գ–ման կայուն և առավել արդյունավետ ավանդույթ են ստեղծել Վիեննայի դաս. դպրոցի ներկայացուցիչներ Յ. Հայդնը, Վ. Ա. Մոցարտը, Լ.վան Բեթհովենը: Նրանց ժամանակաշրջանից մինչև Յ. Բրամսը, ըստ Գ–ման ավանդ. տեխնիկայի, անհրաժեշտ էր ջութակներին կարևոր նվագամաս հատկացնել, նվազեցնել փայտե փող. գործիքների ու գալարափողի գործածումը, փողը և տրոմբոնն օգտագործել զանգված. հնչողության ծայրագույն էֆեկտների, հարված. գործիքները՝ առավելապես ռիթմի համար:

Գ–ման արվ–ը ծաղկել է XIX–XX դդ–ում՝ ծրագր. երաժշտության գեղ. սկզբունքների և ռոմանտիկ. օպերայի զարգացմանը համընթաց: Հ. Բեռլիոզը, Ֆ. Լիստը, Ռ. Վագները մեծացրել են նվագախումբը, որոշ նվագամասեր տարբերակել առավել նրբորեն, մասնավորապես կարևորել են փող. մենանվագ գործիքների դերը: Ռ. Շտրաուսը, Մ. Ռավելը, Ի. Ֆ. Ստրավինսկին, Բ. Բարտոկն ազատորեն օգտվել են նվագախմբ. գույներից, հաճախ լար. գործիքներին հաղորդել գունային էֆեկտ, փողայիններին (մասնավորապես՝ փողին)՝ գլխ. մեղեդիական նվագամասը, հարվածայիններին՝ ինքնուրույնություն: Գ–ման միջոցով սիմֆ. նվագախմբի արտահայտչական հնարավորություններն ընդլայնել են նաև Մ. Ի. Գլինկան, Պ. Ի. Չայկովսկին, Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովը և ուր.: Նրանց ավանդույթները զարգացրել են խորհրդ. շրջանի կոմպոզիտորները:

Գ. կոմպոզիտորի անհատականությունն ու ոճի առանձնահատկություններն արտահայտող միջոցներից է: Այս առումով առանձնանում են Ա. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Գ. Եղիազարյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Ա. Տերտերյանի, Տ. Մանսուրյանի, Ա. Սաթյանի և ուր. երկերը:

Ըստ Գևորգ Արմենյանի

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (< լատ. actus – գործողություն), 1. երաժշտաբեմ. ստեղծագործության ավարտուն մասերից, որոնք միմյանցից բաժանվում են միջնարարով: Գ. հաճախ բաժանվում է տեսարանների, դրվագների (էպիզոդ) և այլ հատվածների: Բեմ. երկը կարող է ունենալ 1–5 Գ. (օպերա–բուֆը՝ 2, ֆրանս. մեծ օպերան՝ 5, Ռ. Վագների օպերաները՝ հիմնականում 3): XX դ–ից օպերայում նկատվում է Գ–յան քանակի նվազում (Զ. Պուչչինիի, Ռ. Շտրաուսի, Դ. Միյոյի, Պ. Հինդեմիթի, Ս. Վ. Ռախմանինովի 1 գործողությամբ երկերը):

2. Անգլիայում, այսպես կոչված, Եղիսաբեթյան թատրոնում (XVI դ–ի վերջ) պիեսի մասերը միմյանցից առանձնանում են երաժշտությամբ:

ԳՐԱՄՈՖՈՆ (< հուն. γράμμα – այստեղ՝ գրանցում և φωνή – ինչյուն, ձայն), ձայնասկավառակից ձայնի վերարտադրման սարք: Կազմված է սկավառակը պտտող զսպանակ. մեխանիզմից և ձայնը վերարտադրող հարմարանքից (ասեղնակիր մեմբրան և ձայնափող): Սկավառակի պարուրաձև ակոսիկով շարժվող ասեղի ծայրի տատանումները փոխանցվում են մեմբրանին, որի ճառագայթած ձայն. տատանումներն ուժեղացվում են ձայնափողի միջոցով: Կարճ ձայնափողով Գ. հայտնի է «պատեֆոն» անունով: Տարածված էր մինչև 1940–ական թթ., հետագայում փոխարինվել է էլեկտրանվագարկիչով: Ստեղծման սկզբն. շրջանում Գ. եղել է նաև ձայնագրող սարք:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾԿԵՑԻ, Գանձասաց, XV դ–ի տաղերգու, վարդապետ: Գրել է գանձեր և տաղեր, հավանաբար՝ նաև եղանակավորել: Լավագույն տաղը՝ «Մեղեդի ապաշխարհութեան»–ը, գրել է *Ներսես Շնորհալու* «Ողբերգութիւն անձին զղջացելոյ» տաղի ոգով, որտեղ հիշատակում է իր մեղքերը, զղջում և ողորմություն հայցում: Տաղը վերագրվել է նաև *Գրիգոր Խլաթեցուն*, կարծիք կար նաև երկուսի նույնության մասին: Ուշագրավ մի տաղ էլ նվիրել է Գրիգոր Ա Լուսավորչին:

ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ [մոտ 1093, Կիլիկիայի Տլուք գավառի Ծովք դղյակ–1166, Հռոմկլա (Կիլիկիա)], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1113-ից: Ներսես ***Շնորհալու*** եղբայրը: Սովորել է Քեսունի Կարմիր վանքում՝ նախ՝ Գրիգոր Բ Վկայասեր, ապա՝ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսների հսկողությամբ:

Գրել է բազմաթիվ շարականներ, տաղեր և այլ գործեր: Հիշարժան են նրա՝ ***Շարակնոցի*** Աստվածածնի Ավետյաց «Խորհուրդ անճառ» և Երկրորդ Ծաղկազարդի «Մեծահրաշ այս խորհուրդ» կանոնները, ***Գանձարանի*** Գրիգոր Լուսավորչին նվիրված «Ի յեղս արեւու արեւ մեզ արեւմտից» և Զրօրինեքի «Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ» տաղերը: Վերջին տաղը պահպանվել է մեղեդիով և հայ տաղերգության գլուխգործոցներից է, ունի երաժշտաբանաստեղծ. եզակի արժանիքներ. արտացոլում է կիլիկյան երգարվին բնորոշ առանձնահատկություններ: Պահպանված մի քանի տարբերակները ձայնագրել են Եղիա ***Տլտեեյանը*** և Նիկողայոս ***Թաշչյանը***, քառաձայն երգչախմբի համար մշակել է ***Կոմիտասը***:

Հատված Գրիգոր Գ Պահլավունու «Ով զարմանալի» տաղից

Գրկ. *Թահմիզյան Ն., Երաժշտությունը հայկական Կիլիկիայում, Ե., 1989:*

ԳՐԻԳՈՐ ԳՌՁԻԿ, Այրիվանեցի, VII–VIII դդ–ի գիտնական, երաժիշտ: Այրիվանքի (Գեղարդավանք) միաբան: ***Ստեփանոս Սյունեցու*** հետ Աթենքում ուսումնասիրել է փիլիսոփայություն, աստվածաշնչյան բնագրեր և մեկնություններ: Վերադառնալով՝ հաստատվել է Այրիվանքում: Ըստ ***Մխիթար Այրիվանեցու***՝ մեղադրվել է գոռոզամտության մեջ՝ հավանաբար երաժշտ. արվ–ում մեծ վարպետության հասնելու համար:

Գ. Գ–ին են վերագրվում հոգևոր երգեր՝ դավթյան սաղմոսների նմանությամբ, Ճրագալույցի, Կադմոսի, Հեղինեի (ըստ Ն. Թահմիզյանի՝ բյուզանդացի անհայտ հեղինակներ են, որոնց անունները հիշատակվել են աղավաղված), Ռոմանոս Երգեցողի երգերի և այլ ստեղծագործությունների եղանակավորումները: Ն. Թահմիզյանի մեկնությամբ՝ Գ. Գ. այդ հեղինակների (հատկապես՝ Ռոմանոս Երգեցողի) վանկ. տիպի ստեղծագործությունները վերաեղանակավորել է զարդոլորուն ոճով:

Գ. Գ–ի երգերից առավել հիշատակվում է գիշերային ժամի (տես ***Ժամերգություն***) «Օրհնեսցուքը» (պահպանվել է 1 սկսվածք): Առաջին առավոտերգերի և մեսեղինների հեղինակը հավանաբար Գ. Գ. է: Ենթադրվում է, որ նրա ստեղծագործություններն ամփոփվել են ավելի ուշ ստեղծված ***Մանրուսում*** (կամ Խազգիրք) ժող–ներում: Երկար տարիներ ճգնել է Այրիվանքի մերձակա քարայրերից մեկում, որտեղ և վախճանվել է: Նրա հիշատակին համարվող գերեզմանի վրա կառուցվել է մատուռ:

Գրիգոր Գ Պահլավունի

Գրկ. *Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873: Յովսէփեան Գ., Մխիթար Այրիվանեցի (նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր), Երուսաղէմ, 1931: Թահմիզյան Ն., Գրիգոր Գռգիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը, ԲԵՀ, 1968, № 3:*

Միհր Նավոյան

ԳՐԻԳՈՐ Է ԱՆԱՎԱՐԶԵՑԻ, Սսեցի, Մածքարեցի, Երգեցողն (1240–1307), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1293-ից: Սովորել է Մեծ քարի (Մեծ այրի) վանքում, հետագայում եղել է այդ ուխտի առաջնորդը՝ Անարզաբայի արքեպիսկոպոս: Կաթողիկոս. աթոռը Հռոմկլայից տեղափոխել է (1301) Սիս:

Գրիգոր Է Անավարզեցի

Գ. Է Ա. եղել է երևելի բանաստեղծ-երաժիշտ: Հորինել է գանձեր, տաղեր, տոներին նվիրված շարականներ, որոնք ամփոփվել են 30-ից ավելի կանոններում: Լատ. ծեսի համապատասխանությամբ՝ նորամուծություններ է կատարել ***Ժամագրքում***, ***Հայսմավուրքում***, ***Շարակնոցում***: Սակայն նրա շարականներից ու կանոններից ոչ մեկը չի գործածվում (XIV դ–ում խափանել է ***Գրիգոր Տաթևացին***): Նրանից պահպանվել է 1

«Գրիգոր Խլաթեցի», մանրանկար (1419, Մտնդ., ձեռ. № 3714)

«Մանուչն և Գրիգոր Մագիստրոս», մանրանկար (1763–64, Մտնդ., ձեռ. № 6988)

Աննա Արևշատյանի «Գրիգոր Մագիստրոսը շարակնագիր և գեղագետ» գրքի (2015) շապիկը

կարգադրություն՝ Առավոտյան ժամերգության «Մեծացուսցէ» կարգի ամբողջացումն ու ամենօրյա կիրառումը:

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ, Վկայասեր, Ծերենց, Բզնունեցի [1349, Խլաթ (Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառ)–27.05.1425, Ցիպնավանք], մատենագիր, բանաստեղծ, երգիչ, գանձասաց, տաղասաց: Նախն. կրթությունն ստացել է Խլաթում, սովորել Ցիպնավանքի Վարդան Ճգնավորի (1361–67), Ապրակունյաց (1378–86, աշակերտել է Հովհան Որոտնեցուն), Խառաբաստավանքի (1386–88, աշակերտել է Սարգիս վարդապետ Ապրակունեցուն) դպրոցներում:

Գ. Խ. ունեցել է հմուտ երգչի համբավ: Հավաքել է նախորդների և ժամանակակիցների ստեղծագործություններից, որպես խազագետ-գրիչ և տեսաբան-խմբ.՝ կազմել է երգարաններ: Երաժշտածիսագիտ. նշանակություն ունեն նրա «Խրատ ժամատեղաց», «Գովութիւն Սաղմոսի» գրվածքները: Առոգանության նշանների որոշ կիրառությունների ուսումնասիրությամբ ուշագրավ են Գ. Խ-ու կազմած Ճառընտիրն ու Հայսմաւուրքը՝ հայ միջնադար. հոգևոր երգարվ-ի պատմ. հեղաշրջման որոշ խնդիրների լուսաբանմամբ (Մտնդ., ձեռ. № 4011, 5328, 8366): Նա, փաստորեն, *Գանձարանի* նոր խմբագրության հեղինակն է. ավելացրել է նոր միավորներ, ստեղծել գանձ-մեղեդի-տաղահորդորակ նոր շարքեր, կորստից փրկել մի շարք հին գործեր:

Գրկ. *Մաթևոսյան Ա., Մարաբյան Ս., Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Ե., 2000:*

ԳՐԻԳՈՐ ԽՈՒԼ, Գրիգոր Վարժապետ, XIII դ-ի երաժիշտ, խազագետ, տեսաբան: Ապրել և աշխատել է Կիլիկիայում: Եղել է Սսի նշանավոր վարժապետներից և «առաջին քարտուղարը»: Հայ հոգևոր երգարվ-ի անխառն և անաղարտ զարգացման սկզբունք. ջատագովներից էր: Ըստ ավանդության՝ երաժշտության աշխարհիկ-նորաձև այլազան արտահայտություններ չլսելու, չգայթակղվելու համար «մոմով խցանել է» ականջները՝ ստանալով «Խուլ» մականունը:

Գ. Խ-ի գործունեությունը հատկապես նշանավորվել է շարականների կանոնակարգմամբ: Նրա խմբագրած Շարակնոցը կոչվել է իր անունով՝ «Խլկցի» կամ «Բուն Սսու» (հիմքում՝ հայ հոգևոր երգարվ-ի Սսի ավանդույթը): XIII դ-ի երաժիշտ-տեսաբան Գևորգ Սկևռացու Շարակնոցի խմբագրման հիմքում «Խլկցի»-ն է, որի մասին է վկայում Առաքել Սյունեցու «Լուծումն, Սահմանաց Դաւթի Անյաղթի» աշխ-ը: Պահպանվել են բազմաթիվ ընդօրինակություններ (լավագույնը՝1269, ՎննՄՄ ձեռագրատուն, № 145), որոնցից մեկի (արտագրված՝ 1309-ին) մասին վկայում է Ղևոնդ Ալիշանը:

Գրկ. *Ալիշան Ղ., Միսռան, Վնտ., 1885: Պողարեան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990:*

Միհր Նավոյան

ԳՐԻԳՈՐ ԿԱՖԱՅԵՑԻ, XV–XVI դդ-ի տաղասաց, գիտնական-երաժիշտ: Կազմել է և խմբագրել ուշ միջնադարին բնորոշ Գանձարան, որի մասին հիշատակված է 1561-ի գրչագիր մի հիշատակարանում: Ձեռագրերում նրա անունով հանդիպում է 1 տաղ՝ 1488-ին նահատակված Աստվածատուր Կաֆայեցու հիշատակին:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ, Գրիգոր Մագիստրոս Բջնեցի (մոտ 990–1058), գիտնական, փիլիսոփա, բանաստեղծ, քաղ. և ռազմ. գործիչ, շարականագիր, տաղասաց: Կրթությունն ստացել է Անիում, ապա՝ Կ. Պոլսում: Նկատելի հետք է թողել միջնադար. հայ մշակույթի պատմության մեջ, նպաստել է գիտության և արվ-ի, գրկ-յան և ճարտարապետության զարգացմանը: Հայտնի է նաև որպես շարականագիր և տաղասաց: Աշխարհիկ այն հեղինակներից է, որոնց հոգևոր երգերը եկեղեցին կանոնացրել է և ներմուծել *Շարակնոց*: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ նա հեղինակել է Խաչի Նավակատյաց Ե օրվա «Ջորս ըստ պատկերի քում» շարականը, ըստ Հակոբ Սսեցու՝ նաև նույն կանոնակարգի Դ օրվա «Խաչն կենարար» օրհնությունը: Որոշ ձեռագիր Գանձարաններում զետեղված է նրա «Կարապետ սուրբ հաւատոյ» սկզբնատողով խազագրված տաղը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին:

Գ. Մ. Պ-ու «Մենկնութիւնք քերականին» երկում և Թղթերում (նամակներ) անդրադարձել է երաժշտության տեսության, գեղագիտության և այլ խնդիրների: Նրա նամականին նաև Անիի հարուստ երաժշտ. կյանքի մասին վկայող կարևոր աղբյուր է:

Երկ. *Տաղասացութիւն ներհուն առն Գրիգորի Մագիստրոսի ողղափառ իշխանի, Կ. Պ., 1825: Տաղասացութիւնք Գրիգոր Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վնտ., 1868:*

Գրկ. *Արևշատյան Ա., Անիի երաժշտական մշակույթը, Ե., 2014: Նույնի, Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ, Ե., 2015:*

Աննա Արևշատյան

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, սուրբ Գրիգոր Նարեկացի (հավանաբար՝ 947–1003-ից հետո, գ. Նարեկ), բանաստեղծ, երաժիշտ, ՀԱԵ տոնելի սուրբ: 2015-ին Հռոմի Ֆրանցիսկոս պապը Գ. Ն-ուն շնորհել է «Տիեզերական եկեղեցու վարդապետի» տիտղոս (36-րդը, 2-րդը՝ Արևելքում), Վատիկանում տեղադրվել է նրա արձանը (2018, բարձր.՝ 2 մ, բրոնզ, քանդ.՝ Դավիթ Երևանցի): Կրթությունն ստացել և, որպես կուսակրոն հոգևորական, դաստիարակվել է Նարեկավանքի բարձրագույն տիպի դպրոցում:

Նրա գործերից մեզ են հասել «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի» (977) երկը, «Ապրանից Ս. Խաչի պատմութիւնը» (980-ական թթ.), մի քանի ներբողներ (Տիրամորը, խաչին, առաքյալներին, Հակոբ Մծբնա եպիսկոպոսին), գանձեր, տաղեր, փոխեր և այլ գործեր:

Գ. Ն-ու ստեղծագործության գլուխգործոցը «Մատեան ողբերգութեան» (1001–03) պոեմն է (95 գլուխ, 10 000-ից ավելի տող):

X դ-ի 2-րդ կեսին հայ հոգևոր երգի նոր ժող-ի՝ Գանձարանի կամ հոգևոր Տաղարանի սկզբնավորողն է: Ըստ պահպանված 36 բանաստեղծությունների (5-ի հեղինակ. պատկանելությունը երկբայելի է)՝ նա է ստեղծել ժող-ի համակարգը՝ գանձարանների շարքերով, որոնցից յուրաքանչյուրը (գանձ-տաղ-մեղեդի և հորդորակ) միավորներով համապատասխանում է եկեղեց. տոնակարգին, և ամեն մեկը խոսքի ու երաժշտության 1 ցիկլ է:

Գ. Ն. եղանակավորել է սեփ. բանաստեղծությունները, որոնցից պահպանվել են միայն 6-ի մեղեդիները. ձայնագրվել են նոր ժամանակներում: Մյուսների երաժշտությունն անհայտ է՝ խազերի վերծանված չլինելու պատճառով: Հեղինակն առավելապես տաղերում և մեղեդիներում պատկերել է մարդու հուզ. աշխարհը՝ կապված քրիստ. հավատի ու պաշտամունքի հետ:

Գ. Ն-ու ստեղծագործությունը սերտորեն կապված է հայկ. մասնագիտացված երգարվ-ի զարգացման նախորդ (V–IX դդ.) և հաջորդ (XI–XV դդ.) փուլերով: Նա հեղաբեկում է արել միջնադար. հայ երգարվ-ում առավելապես իր տաղերով, որոնց երաժշտ. բաղադրիչներում կիրառել է մեղեդիական ազատ, ավելի բարձր ոճ՝ հաղթահարելով ութձայնի հին եղանակների կազմության՝ տվյալ պատմաշրջանի համար արդեն քարացած ձևերը: Գ. Ն-ու բազմաթիվ տաղերից մեզ են հասել 5-ը (1-ը՝ Ն. Թաշճյանի, 4-ը՝ Կոմիտասի ձայնագրություններով)՝ քնարադրամատիկ. «Աչքըն ծովը», վիպ. «Հաւիկը», հոետոր. «Ահեղ ձայնս», պատմող. «Սայլն այն իջանէր» և խոհաքնար. «Հաւուն-հաւունը», որոնք առանձնանում են ձայնաելևէջ. և կշռութ. հարստությամբ, համաձայնութ. անցումների հարուստ երանգապնակով և կառուցվածքի ավարտունությամբ: Ն. Թաշճյանը ժամագրքում, Շարականոցում և Պատարագամատոյցում ընդգրկել է, համապատասխանաբար, «Ընկալ քաղցրութեամբ»

«Մոտը Գրիգոր Նարեկացի», մանրանկար (1173, Մխիթ., ձեռ. № 1568)



աղոթքը, «Փառք Քրիստոսի ամենազօր Յարութեան» շարականը և «Աչքըն ծով» ու «Հաւուն-հաւուն» տաղերը:

Հատված Գրիգոր Նարեկացու «Հաւիկ» պաղից

Երկ. *Մատեան ողբերգութեան, աշխատասիր.՝ Պ. Խաչատրյանի, Ա. Ղազինյանի, Ե., 1985: Տաղեր և գանձեր, աշխատասիր.՝ Ա. Քոշկերյանի, Ե., 1981: Մեկնութիւն Երգ երգոցի, Էջմիածին, 2007: Ներբողներ և գանձեր, Ե., 2017:*

Գրկ. *Թահմիզյան Ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Բախչինեան Հ., Գրիգոր Նարեկացու Գանձարանը. Վերծանութիւն եւ քննութիւն, Լիբանան, 2016:*

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՎՌԱՑԻ, Լամբրոնացի (մոտ 1160/70-ական թթ., Կիլիկիայի Լամբրոն ամրոց–մոտ 1230-ական թթ.), մատենագիր, մեկնիչ, բանաստեղծ, երաժիշտ, շարականագիր, թարգմանիչ: Սովորել է Կիլիկիայի Սկևռա վանքի նշանավոր դպրանոցում, որտեղ հետագայում դասավանդել է:



Գրիգոր Նարեկացու արձանը (2018, Վատիկան)

Նպաստել է հայկ. երաժշտաբանաստեղծ. մասնագիտացված արվ-ի զարգացմանը: Շարականները գրել է երաժշտության՝ տեղի դպրոցի լավագույն ավանդույթ-

«Սուրբ Գրիգոր Տաթևացի», մանրանկար (1449, Մատն., ձեռ. № 1203)



Գրիգոր Տաթևացու «Երգ երգոցի մեկնությունը» գրքի (2007) շապիկը



«Գրիգորիս Աղթամարցին եւ իւր գաղերը» գրքի (1898) տիտղոսաթերթը

ներով: Նշանակալի է Հովհաննես Մկրտչի ծննդյան կանոնի «Արեգականն արդարութեան» սկզբնատողով շարականը (ակրոստիքոս): ***Ներսես Լամբրոնացու*** աշակերտն ու մտերիմն էր, որի հանձնարարությամբ հայ. է թարգմանել Սաղմոսի մեկնությունը:

Գրկ. *Ալիշան Ղ., Սիսուան, Վնտ., 1885:*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, [աշխարհիկ անունը՝ Խութլուշահ, 1346, Թմոր ամրոց (Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ջավախք գավառ)–1409, Տաթևի վանք], աստվածաբան, փիլիսոփա, րաբունապետ, եկեղեց. գործիչ: ՀԱԵ սուրբ հայրերից և վարդապետներից, տոնելի սուրբ: Սովորել է Տաթևի վանքի դպրոցում, աշակերտել Հովհան Որոտնեցուն, որի մահից հետո գլխավորել է Ապրակունիսի և Տաթևի բարձրագույն դպրոցները:

Գ. Տ. 1390-ին իր աշակերտների հետ տեղափոխվել է Տաթևի վանք, որտեղ մինչև կյանքի վերջը շարունակել է իր գիտամանկավարժ. գործունեությունը: Նրա ղեկավարությամբ Տաթևի դպրոցը, որը վերածվել էր համալսարանի, հասել է իր ծաղկման գագաթնակետին՝ դառնալով գիտության, մշակույթի, արվ-ի, հոգևոր կյանքի համահայկ. կենտրոն: Համալսարանում դասավանդել է աստվածաբանություն, Հին և Նոր կտակարանների մեկնություն, փիլիսոփայություն, երաժշտություն, երաժշտության տեսություն, երգեցողություն և այլ գիտություններ:

«Գիրք հարցմանց» աշխ-յան մեջ Գ. Տ. արծարծել է երաժշտության ծիս., տես. ու գեղագիտ. կարևոր խնդիրներ, որի «Վասն ձայնից հարցումն» ԽԸ (48) գլուխը նվիրված է հայ եկեղեց. ձայնեղանակաների տեսությանը: Ամփոփել և ի մի է բերել Հայաստանում ձայնեղանականների մասին ուսմունքի նախընթաց ողջ ուղին՝ ընդգրկելով ինչպես նախաքրիստ., հեթանոս. ավանդույթների արձագանքները (ձայնեղանականների ծագումը բնության երևույթներից կամ կենդան. աշխարհից և արհեստներից, փոխկապվածությունը 4 տարերքների հետ), այնպես էլ հետագայի աստվածաշնչյան ըմբռնումներն ու հայեցակարգերը (դատողությունները ձայնեղանականների և կատարյալ թվի շուրջ են): Գ. Տ. բնորոշել է ձայների տեսակները՝ արծարծելով նաև երաժշտ. ինչյունի և խոսքի հարաբերակցության խնդիրը հոգևոր («երգ շարականաց») և աշխարհիկ («ձայնաւոր երգ») երաժշտության մեջ: Նա ինչյունները ստորաբաժանել է 5 տեսակի՝ ա. անձայն, մտովի, բ. առանց խոսքի, գ. խոսքի առավելությամբ՝ ինչպես շարականներում, դ. երաժշտ. բաղադրիչի առավելությամբ՝ ինչպես տաղերում («ձայնաւոր երգ»), ե. խոսքի ու ձայնի հավասարազոր առկայությամբ՝ ինչպես սովորական խոսքի ելևէջներում:

«Վասն ձայնից հարցումն» համահավաք աշխ-յան մեջ նա զետեղել է նաև շարականների հեղինակների առավել հավաստի ցուցակը, որտեղ ժամանակագր. կարգով նշված են շարականերգության դաս. շրջանի երգահանների անունները: «Գիրք հարցմանց»-ի մեկ այլ բաժնում մանրամասնորեն անդրադարձել է Սաղմոսարանի՝ հատկապես 8 կանոնագլուխների մեկնությանը, որտեղ դրսևորել է պաշտոներգության ծիս-գործնականության փայլուն իմացություն:

Երկ. *Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993: Մեկնութիւն սաղմոսաց, կազմ.՝ Ա. Քոշկերյան, Ե., 1993: Ոսկեփորիկ, թրգմ., ծնթգր.՝ Հ. Քյոսեյանի, Ե., 1995: Երգ երգոցի մեկնությունը, թրգմ., առաջաբանը՝ Խ. Գրիգորյանի, Ե., 2007:*

Գրկ. *Թահմիզյան Ն., Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԼՀԳ, 1971, №5:*

Աննա Արևշատյան

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ, XVI դ-ի 1-ին կեսի մատենագիր, բանաստեղծ, գանձասաց, մանրանկարիչ: Աղթամարի կաթողիկոս (մոտ 1512–44): Սերում է Վասպուրականի Արծրունյաց թագավոր. տնից: Աշակերտել է Արճեշի Ուռնկարի Սբ Նշան վանքի վանահայր և գիտամշակութ. դպրոցի առաջնորդ Գրիգոր վարդապետ Րաբունուն և գրիչ, ծաղկող, բանաստեղծ Հովսեփ վարդապետ Աղթամարցուն: Ժառանգության արժեքավոր մասն են նրա գանձերն ու տաղերը, որոնք զետեղվել են միջնադար. գրչագիր Գանձարաններում. նշանակալի է Ուռնկարի Սբ Նշանին նվիրված գանձը՝ հորդորակով և մեղեդիով: Ուշագրավ են այլաբան., հաճախ վարդի ու բլբուլի սիրավեպ ընկալվող տաղերը («Գարունն երեկ…», «Գարունն է բացուեր…», «Յամէն առաւօտ եւ լոյս»), որոնց կրոն. թեմաները հագեցված են բնության գեղեցիկ նկարագրություններով՝ միահյուսված աշխարհիկ մոտիվներով:

Գ. Ա-ու տաղերը թարգմանվել են անգլ. (Ղ. Ալիշան, 1852), ֆրանս. (Ա. Չոպանյան, 1906), ռուս. (Կ. Կոստանյանց, 1913) և այլ լեզուներով:

Երկ. *Տաղեր, Ե., 1984:*

Գրկ. *Գրիգորիս Աղթամարցին եւ իւր գաղերը, հրտ.՝ Կ. Կոստանեանց, Թ., 1898: Յովսէփեան Գ., Գրիգորիս Աղթամարցի, Արարատ, 1919, № 1–12: Ակինեան Ն., Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վնն., 1958: Գրիգորիս Աղթամարցի. XVI դ., ուսումնասիր., բնական բնագրեր և ծնթգր.՝ Մ. Ավդալբեգյանի, Ե., 1963:*

Աննա Արևշատյան

ԳՐԻԳՈՐՅԱՆ Անահիտ Հրաչիկի (15.05.1933, Երևան–19.07.2017, Փարիզ), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1970): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տես-կոմպոզիտոր. (1952), ԵՊԿ երաժշտագիտության (1957, Պ. Ի. Չայկովսկու անվ. կրթաթոշակառու) բաժինները, ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1961): 1963-ից՝ ՀԽՍՀ ԳԱ գիտաշխատող: 1960–64-ին դասավանդել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1964–76-ին՝ ԵՊԿ-ում: 2013-ից ապրել է Փարիզում:

Նշանակալի վաստակ ունի հատկապես հայ կամեր-վոկալ երաժշտության ուսումնասիրության ոլորտում:

Երկ. *Անցյալ դարի երաժշտական կյանքի էջերից, Ե., 2012: Арно Бабаджанян, М., 1961; Армянская камерно-вокальная музыка, Е., 1982; У истоков искусства музыки (Опыт музыкальной палеонтологии), Е., 2008.*

Աննա Ասատրյան

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ասատուր Գրիգորի (1914–1977), ջութակահար, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու (1950): Պրոֆ. (1963): Ավարտել է ՄՊԿ ջութակի (1937, Կ. Գ. Մոստրասի դասարան) և ասպիրանտուրայի քառյակի (1939, ղեկ.՝ Է. Մ. Գուզիկով) բաժինները: 1932–40-ին՝ Ա. Սպենդիարյանի անվ. քառյակի կազմում (Հ. Բոգդանյանի, Ա. Ազատյանի, Գ. Ադամյանի հետ), 1936-ին՝ ՄՊԿ համերգ. խմբում (6 ամիս հյուրախաղեր Արկտիկայում): Վ. Վ. Նեչաևի, Գ. Ռ. Գինզբուրգի և Լ. Ի Ռոյզմանի հետ (անսամբլ) համերգներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Դոնի Ռոստովում, Խարկովում և այլ քաղաքներում: 1945-ից դասավանդել է ՄՊԿ-ում (նվագախմբ. ֆակ-ի դեկան՝ 1959–65-ին):

Հեղինակ է մի շարք մեթոդ. ձեռնարկների («Գամմաներ և արպեջջոներ», 1956, 2007, 2018, ևն):

ԳՐԻԳՈՐՅԱՆ Արթուր (Արտաշես) Գրիգորի (ծ. 31.07.1958, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2003), ՀՀ ժող. արտիստ (2011): Ավարտել է Երևանի Տ. Չուխաճյանի անվ. երաժշտ. դպրոցը (1975), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1979), Մոսկվայի թատերարվ-ի պետ. ինստ-ը (1991): 1992–94-ին՝ Հայաստանի պետ. ջազային նվագախմբի գեղ. ղեկ., 1994-ից՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի հիմնադիր-ղեկ.: Հեղինակ է «Այո», «777», «Ասուպ», «Ընծա», Հայաստանի «Զաքյան» ֆոնդի հովանավորչական ամենամյա հեղինակ-կատարողների մրցանակաբաշխությունների, «Հենց այսպես», «Տես» հեռուստահաղորդումների, «Կանաչ գոտի», «Արցախի ձայներ» և այլ նախագծերի: Գրել է երգեր, մանկ. մյուզիքլներ, կազմակերպել համերգներ:

Ասատուր Գրիգորյան

ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» (2005), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2008) մեդալներ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Արմինե Ռոմիկի (ծ. 30.09.1967, Երևան), դաշնակահար: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1985, դասատու՝ Կ. Սմբատյան), ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1990, Գ. Սարաջյանի դասարան) և ասպիրանտուրան (1993, ղեկ.՝ Ս. Սարաջյան): Դասավանդում է ԵՊԿ-ում: «Սոնետ» դաշնամուր. դուետի հիմնադիրն է (2003, Ս. Բարսեղյանի հետ): 2005-ից՝ Ա. Խաչատրյանի անվ. եռյակի կազմում: Եռյակի անդամների հետ ստեղծել է «Դասական երաժշտության զարգացման հիմնադրամ» (2010), որի նպատակը հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները տարածելն ու շնորհալի պատանի երաժիշտներին աջակցելն է: Հայաստանում կազմակերպել է նվագակցության արվ-ի առաջին (2005), «Արամ Խաչատրյանի 105-ամյակին նվիրված հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների» (2008) փառատոները, Ա. Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգ. գիտաժողով (2013): Հեղինակ է «24 պրելյուդ» ժող-ի (2007):

Արթուր Գրիգորյան

Նվագացանկում՝ Ա. Խաչատրյանի, Է. Միրզոյանի, Ա. Հարությունյանի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Շոպենի, Յ. Բրամսի, Կ. Դեբյուսիի, Ս. Վ. Ռախմանինովի, Պ. Ի. Չայկովսկու և ուր. գործերից: Հայ կոմպոզիտորների մի շարք գործեր նվիրված են Գ-ին:

2004-ից՝ Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն: Թողարկել է «Արամ Խաչատրյան. անհայտ էջեր» և այլ խտասալիկներ:

Արմինե Գրիգորյան

Արևեն Գրիգորյան



Գարեգին Գրիգորյան

Դաշնակահարների միջազգ. մրցույթի կրկնակի դափնեկիր (2003, Հռոմ), Հռոմի պատգամավորների պալատի, Լեհաստանի մշակույթի և ազգ. ժառանգության նախարարի (2013) շքանշաններ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Արսեն Հովսեփի, Մ[illegible]ո [ծ. 07.12.1968, ք. Կամիշլի (Սիրիա)], երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2008): Հայրենադարձել է 1987-ին: Ավարտել է ԵՊԿ (1993, Հ. Բադալյանի դասարան) և ասպիրանտուրան (1998): Սովորելու տարիներին երգել է «Ակունք» երգի-պարի անսամբլում: 2004-ին հիմնադրել է Հ. Բադալյանի անվ. դպրոցը, դպրոցի սաներից կազմված՝ «Հայ երգասաններ», 2010-ին՝ «Փոքրիկ հայ երգասաններ» մեներգիչների խմբերը, 2011-ին՝ «Մրրո» նվագախումբը, նաև «Հայրենասիրական երգի-պարի, 2014-ին՝ «Գութան» ժող. երգի-պարի ամենամյա փառատոները: Հայկ. հեռուստատեսության Հ1 ալիքում ներկայացրել է «Մրրո» (1997, հայկ. ժող., հայրենասիր. երգեր), «Մենք ենք, մեր սարերը» (2007) երաժշտ. ծրագրերը: Գ-ի երգացանկում՝ ազգ., հայկ. ժող., հայրենասիր., գուսան. և աշուղ., նաև հայ կոմպոզիտորների երգեր:

Թողարկել է «Խիո-Խանե», «Հով գիշեր, զով գիշեր», «Յարը մարդու յարա կուտա», «Մեջս կյանք չմնաց» տեսահոլովակները, «Մրրո» ձայնասկավառակը ևն:

«Կռունկ» երաժշտ. փառատոնի «Լավագույն ժողովրդական երգիչ» (2004, Երևան), Ազգ. (2008), «Տաշիր» համահայկ. (2008) երաժշտ. մրցանակաբաշխությունների «Տարվա լավագույն ժողովրդական երգիչ» և այլ մրց-ներ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Արսեն Ռոբերտի, Ասո (ծ. 22.01.1974, Երևան), երգիչ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի օպեր. երգեցողության բաժինը (1999, դասատու՝ Վ. Խաչատրյան), ԵՊԿ (2002, օպեր. երգեցողություն՝ Ս. Կոլոսարյանի դասարան, ապա՝ ժող. երգեցողություն, Ռ. Մաթևոսյանի դասարան) և ասպիրանտուրան (2004, ղեկ.՝ Ա. Ոսկանյան): 2004-ից դասավանդում է ԵՊԿ ժող. երգեցողության ամբիոնում: Թողարկել է 6 տեսահոլովակ:

«Սայաթ-Նովա» ամենամյա մրցանակաբաշխության 1-ին և «Տարվա ժողովրդական երգիչ» մրց-ներ (երկուսն էլ՝ 2001):

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գարեգին Գուրգենի (31.07.1946, Երևան–15.10.1994, Քիշնև), դաշնակահար, կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (դասատու՝ Ն. Ստեփանյան) և կոմպոզիցիայի (1965, դասատու՝ Ս. Ջրբաշյան) բաժինները, ԵՊԿ դաշնամուրի (1970, Ս. Ալումյանի, Յ. Հայրապետյանի դասարաններ), ասիստենտուրայի ու ստաժավորման (1981, ղեկ.՝ Յ. Հայրապետյան) և կոմպոզիցիայի (1984, Է. Միրզոյանի դասարան) բաժինները, սովորել երգեհոնի դասարանում (ղեկ.՝ Վ. Ստամբոլցյան): 1971-ից դասավանդում է ԵՊԿ-ում:

Գրել է սիմֆոնիա, դաշնամուր. տրիո, կոնցերտներ՝ թավջութակի, ջութակի և դաշնամուրի, մանկ. և պատանեկան ալբոմներ՝ դաշնամուրի, «Մազնիֆիկատ»՝ երգչախմբի, երգեհոնի և սիմֆ. նվագախմբի, «Հայաստան» օրատորիան՝ ձայնի, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, սոնատներ՝ թավջութակի, ջութակի և դաշնամուրի, տոկկատ և արիա՝ ֆլեյտայի, «Կարոտ» էստրադ. երգը՝ սաքսոֆոնի և էստրադ. նվագախմբի, սոնատ-մետամորֆոզ՝ երգեհոնի համար, «Մանկական պատկերներ մեծահասակների համար» դաշնամուր. զուգանվագները, վոկալ շարքեր (Վ. Տերյանի և Նարեկացու խոսքերով), կվարտետներ, ռոմանսներ: Երգեհոնի համար գրած գործերի զգալի մասը նվիրել է Վ. Ստամբոլցյանին, որի մեկնաբանությամբ հնչել են Ս. Պետերբուրգում, Ռիգայում, Լվովում, Քիշնևում:

Հեղինակ է «Դաշնամուրային ստեղծագործություններ» (1996), «Դաշնամուրային սոնատներ» (№1 և №3 պրակներ, 2003), «Ստեղծագործություններ երգեհոնի համար» (2004), «Մանկական պատկերներ մեծահասակների համար. դաշնամուրային զուգանվագներ» (2012) ձեռնարկների:

Երիտասարդության և ուսանողների այսրկովկաս. 3-րդ մրցույթի դափնեկիր (1969):

Գրկ. *Шахсуварян С., Гарегин Григорян. Пианист и композитор, Е., 2016.*

Սուրեն Շահսուվարյան

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գեղամ Միհրանի (29.01.1951, Երևան–23.03.2016, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), երգիչ (քնարադրամատիկ. տենոր), ռեժ.: Լիտվ. ԽՍՀ վաստ. (1982), ՀԽՍՀ ժող. (1985) արտիստ: Ավարտել է ԵՊԿ (1977, Ս. Դանիելյանի դասարան), կատարելագործվել Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում (1978–79): 1976–80 և 1985-ից (2000–07-ին, 2015–16-ին՝ նաև գեղ. ղեկ.)՝ ԵՕԲԹ, 1980–85-ին՝ Վիլնյուսի

օպեր. թատրոնի մեներգիչ: 1980–86-ին դասավանդել է Վիլնյուսի կոնսերվատորիայում: Դերերգերից են՝ Էդգար (Ա. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Տիրիթ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Սայաթ-Նովա (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա»), Աշուղ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Կոմս Ալմավիվա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ֆաուստ (Շ. Գունոյի «Ֆաուստ») ևն: ԵՕԲԹ-ում բեմադրել է Ջ. Վերդիի «Տրավիատա» (2000), Ա. Տիգրանյանի «Անուշ» (2003), «Դավիթ Բեկ» (2007), Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» (2007) օպերաները:

Նրա ղեկավարման տարիներին հրավիրյալ ռեժ-ները թատրոնում բեմադրել են Ժ. Բիզեի «Կարմեն», Վ. Բելլինիի «Նորմա», Ս. Վ. Ռախմանինովի «Ալեկո», Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան» օպերաները, Ա. Խաչատրյանի «Գայանե», Մավիսակալյան-Ճգնավորյանի «Սուրբ Հռիփսիմե և Տրդատ», Ռ. Կ. Շչեդրինի «Կարմեն-սյուիտ» բալետները, համերգ. կատարմամբ ներկայացվել են Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա», Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», Ա. Վիվալդիի «Տիգրան Մեծ» օպերաները, թատրոնի գեղ. կազմի մասնակցությամբ Գառնիի տաճարում նկարահանվել է Վ. Բելլինիի «Նորմա» ֆիլմ-օպերան (2005, ռեժ՝ Բ. Հայրապետյան):

Գ. հանդես է եկել նաև «Լա Սկալա» (Ջ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ», «Տոսկա», Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն» ևն), «Մետրոպոլիտեն օպերա» (Ջ. Վերդիի «Այիդա», «Պարահանդես-դիմակահանդես», Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր», Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ» ևն), Լոնդոնի թագավոր. (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Վիլնյուսի (Ջ. Վերդիի «Դոն Կառլոս», Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո» ևն), նաև Տոկիոյի, Փարիզի, Վիեննայի, Բեռլինի, Ամստերդամի, Մոնտե Կառլոյի, Ջենովայի և այլ օպեր. թատրոններում: Լոնդոնի «Քովենտ Գարդեն» օպեր. թատրոնում կատարել է Լենսկու դերերգը (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին») նոր մեկնաբանությամբ (քննադատներն անվանել են «երաժշտական ոսկի»):

Գ. ճանաչվել է XX դ-ի լավագույն տենոր: Համագործակցել է հանրաճանաչ երգիչների՝ Լ. Պավարոտտիի, Պ. Դոմինգոյի, Լ. Պրայսի, Մ. Ֆրենիի, դիրիժորների՝ Վ. Գերգիևի, Ե. Սվետլանովի, ռեժ-ների՝ Ա. Ս. Կոնչալովսկու, Ֆ. Զեֆիրելլիի, Ջ. դել Մոնակոյի, Հ. դե Անիայի և ուր. հետ:

1990-ական թթ-ից մասնակցել է «Choregies d'Orange» (Ֆրանսիա), «Ravenna Festival» (Իտալիա), «Puccini Festival» (Իտալիա), «Salzburg Festival» (Ավստրիա) և այլ միջազգ. փառատոների:

1989–96-ին՝ «Tours Festival»-ի (Ֆրանսիա) հանձնախմբի անդամ:

Ձայնագրվել է («Philips Classics Records»-ի պատվերով) Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն», Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», «Իոլանտա», Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Սադկո», Ջ. Վերդիի «Ճակատագրի ուժը» օպերաներում, նկարահանվել «Պիկովայա դամա» (Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոն), «Պատերազմ և խաղաղություն» (Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոն, «Քովենտ Գարդեն», «Մետրոպոլիտեն-օպերա», «Լա Սկալա»), «Սադկո», «Ճակատագրի ուժը», «Ալմաստ» (1985), «Արշակ Երկրորդ» (1988, վերջին երկուսը՝ Հայֆիլմ) ֆիլմ-օպերաներում:

Գեղամ Գրիգորյան

Գ. Գրիգորյանը Ռադամեսի դերում (Ջ. Վերդիի «Այիդա»)

Տեսարան Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայի բեմադրությունից (ռեժ.՝ Գ. Գրիգորյան, 2007)

Ա. Սպենդիարյանի անվ. (1970), Այսրկովկաս. երաժիշտների (1972), Մ. Ի. Գլինկայի անվ. համամիութ. (Թբիլիսի, 1975, 3-րդ մրց.), Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. VII (Մոսկվա, 1982, 2-րդ մրց.) և այլ մրցույթների դափնեկիր, ՀՀ «Մովսես Խորենացի» (2006), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» I աստիճանի (2011) մեդալներ:

Լևոն Ռ. Գրիգորյան

Համբարձում Գրիգորյան

ԳՐԻԳՈՐՅԱՆ Լևոն Արամի (18.06.1915, Թիֆլիս–07.10.2001, Իսպանիա), թավջութակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1961): Ավարտել է ՄՊԿ (1939): 1941–44-ին՝ Հայֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի, 1944–48-ին՝ դաշնամուր. եռյակի թավջութակահար, 1945–49-ին՝ պետ. սիմֆ. նվագախմբի թավջութակահարների խմբի կոնցերտմայստեր: 1945–92-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1977-ից), երաժշտ. դպրոցներում, Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում: Գրել է թավջութակի և նվագախմբի կոնցերտ, թավջութակի պիեսներ, հեղինակ է մշակումների ու փոխադրումների: Սաներից է Մեդեա ***Արրահամյանը***: 1992-ից ապրել է Հունգարիայում, ապա՝ Իսպանիայում:

Երկ. *От трех до семи, Е., 1986.*

ԳՐԻԳՈՐՅԱՆ Լևոն (1886, Թավրիզ–1957, Թեհրան), ջութակահար, խմբավար: Ռուբեն և Հենրի ***Գրիգորյանների*** հայրը: Ավարտել է Բրյուսելի թագավոր. կոնսերվատորիայի ջութակի բաժինը: Թավրիզում և Թեհրանում շուրջ 40 տարի զբաղվել է մանկավարժությամբ (ջութակ): Հիմնադրել է «Գուսան» երգչախումբն ու նվագախումբը: Հանդես է եկել համերգներով:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Լևոն Ռուբենի (ծ. 1945, Թեհրան), դաշնակահար, դիրիժոր: Միչիգանի համալսարանի պրոֆ. (1984): Ռուբեն ***Գրիգորյանի*** որդին, Հենրի ***Գրիգորյանի*** եղբայրը: 7 տարեկանում մենահամերգներով հանդես է եկել Թեհրանում: 1952-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Բոստոն: Ավարտել է Նյու Ինգլանդի կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը (1961), սովորել Թանգլվուդի երաժշտ. կենտրոնի դիրիժորության (1961–62) բաժնում, կատարելագործվել նշանավոր դիրիժորների (նաև Հարրի Բելյանի) ղեկավարությամբ:

Որպես դաշնակահար՝ հանդես է եկել համերգներով: 1971–86-ին ղեկավարել է Օուենսբորոյի սիմֆ. նվագախումբը՝ այն դարձնելով երկրի առաջատար նվագախմբերից: Մի շարք երկրներում (Եվրոպայի, Հվ. Ամերիկայի ևն) ղեկավարել է սիմֆ. նվագախմբեր: Երևանում ելույթներ է ունեցել 1991 և 1993-ին (երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի 7-րդ սիմֆոնիան, Յ. Հայդնի ռե-մաժոր կոնցերտը, Լ. Բեռնստայնի «Վեստսայդյան պատմություն» մյուզիքլը, սիմֆ. պարեր):

Գ-ի որդին՝ Արա Գ. (ծ. 1971), 1988-ից Իսթ Լեսինգի բարձրագույն դպրոցի լար. կվարտետի 1-ին ջութակն է և սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստերը, դուստրերը՝ Անին (ծ. 1974) և Ալիսիան (ծ. 1982), նույնպես ջութակահարներ են:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Համբարձում Գրիգորի (09.05.1893, Թավրիզ–1976, Թեհրան), կոմպոզիտոր, խմբավար: Ավարտել է Ատրպատականի թեմ. կենտր. դպրոցը (1913, Թավրիզ), սովորել է Փարիզի «Scola Cantorum» երգեցողության դպրոցում (1924–27), աշակերտել է կոմպոզիտոր Վ. դ'Էնդիին: Ուսանել է նաև Սորբոնի համալսարանում: 1927-ից դասավանդել է Ղազվինի, Ռեշտի, Թեհրանի երաժշտ. դպրոցներում: 1928-ին Թեհրանում հիմնադրել է «Կոմիտաս» երգչախումբը (ղեկ.՝ մինչև 1969-ը): Գրել է մեներգեր և խմբերգեր, նաև արլ. էսքիզներ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Հենրի Լևոնի (ծ. 1924, Թավրիզ), ջութակահար: Լևոն ***Գրիգորյանի*** որդին, Ռուբեն ***Գրիգորյանի*** եղբայրը: Ավարտել է Թեհրանի և Բոստոնի կոնսերվատորիաները (1957): Բոստոնի «Փոփս» նվագախմբի հետ, Ա. Ֆիդլերի ղեկավարությամբ, համերգներով շրջագայել է մի շարք երկրներում: 1966-ին հանդես է եկել ԱՄՆ արմ. նահանգներում՝ դաշնակահար Ռ. Սկոդավայի հետ: 2 անգամ այցելել է Երևան:

Դուստրը՝ Նաիրի Գ. (ծ. 1957), ջութակահար: Ավարտել է Մինեսոտայի համալսարանը: Նրան, որպես պարգև, տրվել է «Vuillaume» ընտանիքի նշանավոր ջութակը (պատրաստվել է 1826-ին Ֆրանսիայում): Հայր և դուստր Գ-ները 1989-ին Մինեսոտայում մասնակցել են Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման նպատակով կազմակերպված մի շարք բարեգործ. համերգին:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Հրանտ Արամի (13.04.1919, Սուխում–27.01.1962, Յակուտսկ), կոմպոզիտոր, բանահավաք: Յակուտ. ԻԽՍՀ (1957), ՌԽՖՍՀ (1958) արվ. վաստ. գործիչ: Ավարտել է ՄՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1952, Ե. Կ. Գոլուբևի դասարան): 1953-ից աշխատել է Յակուտսկում: 1940–47-ին՝ Հեռավորարլ. 1-ին բանակի երգի-պարի անսամբլի ջութակահար և կոմպոզիտոր: Զբաղվել է յակուտ. երաժշտ. բանահյուս. գործերի հավաքմամբ, մանկավարժ. և

ստեղծագործ. գործունեությամբ: 1953-ից դասավանդել է Յակուտսկի երաժշտ. ուսումնարանում, 1956-ին հիմնադրել տեսության-ստեղծագործության բաժին:

Գրել է «Լոռկուտ և Նյուրգուսուն» (1958), «Տոն սարերում» (ըստ Հ. Թումանյանի) օպերաները, «Երջանկության քարը» բալետը, «Հյուսիսային ծաղիկ» օպերետը (երկուսն էլ՝ 1961), երգեր, ռոմանսներ և խմբերգեր՝ յակուտ բանաստեղծների խոսքերով, երաժշտություն՝ թատրոնի համար, մշակել ժող. երգեր: Յակուտ. երաժշտությունը հարստացրել է նոր ժանրերով՝ կոնցերտ՝ ջութակի և նվագախմբի (1954), սոնատ՝ ջութակի և դաշնամուրի (1959) համար, օրատորիա (1955), դաշնամուրի 25 պրելյուդ («Մտորումներ Լենայի ափերին», 1961), «Արեգակը Չինաստանի վրա» կանտատը, սիմֆ. երգեր: Գ-ի խմբագրությամբ հրատարակվել է յակուտ. ժող. երգերի 2 ժող.:

Գրկ. *Шниткe А., О творчестве Г. Григоряна, СМ, 1960, № 5; Грант Григорян. Воспоминания, очерки, статьи [ред.-сост. В. Зак], М., 1971; Грант Григорян [Жизнь и творчество, отв. ред., сост. Г. Г. Алексеева], Якутск, 2000.*

ԳՐԻԳՈՐՅԱՆ Նաիրա Գագիկի (ծ. 21.10.1972, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2014): Ավարտել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանի տեսության (1992), ԵՊԿ երաժշտագիտության (1997) բաժինները և ասպիրանտուրան (2001): 1994-ից դասավանդում է Երևանի Սայաթ-Նովայի անվ. (տես. առարկաներ), 2016-ից, միաժամանակ՝ Կ. Սարաջյանի անվ. երաժշտ. դպրոցներում:

Զեկուցումներով հանդես է եկել հանրապետ. և միջազգ. գիտաժողովներում: Հեղինակ է գիտ. հոդվածների:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Նոնո (ծ. 1927, Բուխարեստ), կոմպոզիտոր, երաժշտության տեսաբան, մանկավարժ: Ավարտել է Բուխարեստի համալսարանի դիվանագիտության ֆակ-ը, կոնսերվատորիայի կոմպոզիցիայի և տեսության բաժինները: 1947-ից (դեռևս ուսանելու տարիներից) ղեկավարել է ռադիոյի ուսանող. էստրադ. նվագախումբը, «Սայաթ-Նովա» երգի-պարի անսամբլը, եղել մասնագետ խմբավարների վարչության անդամ: Դասավանդել է Բուխարեստի ազգ. վարժարանում (1955–59, տնօրեն), Մանկավարժ. ինստ-ում (1959–62, ամբիոնի վարիչ): 1962-ից ապրել է ԱՄՆ-ում. հիմնադրել է մասնավոր կոնսերվատորիա: Գրել է (ռում. և հայկ.) մի քանի տասնյակ էստրադ. երգեր: 1970-ին այցելել է Հայաստան, ներկայացրել իր ստեղծագործությունները:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Շամվոն Հրաչի (ծ. 21.01.1986, Երևան), ֆագոտահար, դիրիժոր: Արվեստագիտ. թեկնածու (2009): Ավարտել է ԵՊԿ ֆագոտի (2007, Գ. Մաիլյանի դասարան) բաժինը, ապա սովորել Յուրիխի Արվ-ների համալսարանի ֆագոտի (Զ. Մանդոլեզիի, Ռու. Դենզլերի դասարաններ) և դիրիժորության (Մ. Կիշոցիի դասարան) բաժիններում: Վարպետության դասեր է առել ֆագոտահարներ Ս. Շվեյգերտից (Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախումբ, սոլո ֆագոտ), Գ. Նունեզից («Ռոյալ Կոնցերտգեբաու» նվագախումբ, սոլո ֆագոտ), Ս. Ացոլինիից և ուր., կամեր. երաժշտություն է սովորել Հ. Գրիգորյանից, Մ. Ֆրուտիգերից, Ֆ. Ռասինից, Մ. Ռացից, Է. Շմիդից, Զ. Մանդոլեզիից և ուր.:

Հրանտ Գրիգորյան

Նվագել է դիրիժորներ Վ. Գերգիևի, Մ. Թանգի, Դ. Զինմանի, Ք. Դևիսի, Ֆ. Ագուդինի, Մ. Վենդերգի, Կ. Դուրգարյանի և ուր. ղեկավարությամբ: Մենահամերգներ է ունեցել Մ. Բուրգի (հոբոյ), Մ. Ֆրուտիգերի (հոբոյ), Դ. Չենայի (ֆագոտ) և ուր. երաժիշտների հետ:

Հանդես է եկել Մյունխենի երիտասարդ. ֆիլհարմոնիկ, Յուրիխի «Տոնհալե» նվագախմբերի հետ: Մոսկվայում մասնակցել է Զատկի փառատոնին (գեղ. ղեկ. և դիրիժոր՝ Վ. Գերգիև):

Շամվոն Գրիգորյան

ԵՕԲԹ հիմնադրամի հիմնադիրներից և տնօրեն, Ա. Հարությունյանի անվ. փող. գործիքների ամենամյա միջազգ. փառատոնի հիմնադիր (2017): Հեղինակել և իրագործել է մի շարք նախագծեր («Համերգ ճեմասրահում», «Օրկեստր+», «Օպերային արվեստը ՀՀ մարզերում և Արցախում», «Օպերային արվեստը կրթօջախներում», «Օպերային արվեստը սահմանամերձ գոտիների զորամասերում», «Հեքիաթն է կանչում» ևն):

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռուբեն Լևոնի [23.09(06.10).1915, Թիֆլիս–28.03.1991, Բոստոն], ջութակահար, կոմպոզիտոր, դիրիժոր: Լևոն *Գրիգորյանի* որդին, Լևոն *Գրիգորյանի* (կրտսերի) հայրը, Հենրի *Գրիգորյանի* եղբայրը: Սովորել է Թեհրանի կոնսերվատորիայի ջութակի, Փա-

Ռոբեն Գրիգորյան

Վլադիմիր Գրիգորյան

Էդուարդ Գրիկուրով

րիզի «Էքոլ նորմալ դը մյուզիք» երաժշտ. դպրոցի կոմպոզիցիայի (ղեկ.՝ Ա. Հոնեգեր) և կոնսերվատորիայի դիրիժորության բաժիններում: 1946–51-ին դասավանդել է Թեհրանի կոնսերվատորիայում (1948–51-ին՝ տնօրեն և սիմֆ. նվագախմբի դիրիժոր): 1952-ից ապրել է Բոստոնում:

1953-ին հիմնադրել է «Կոմիտաս» քառյակը (1-ին ջութակ՝ Գ.), եղել համանուն երգչախմբի խմբավարը (1955-ից), Պորտլենդ Մեյնի (1959–62), կանանց (1964–66) սիմֆ. և այլ նվագախմբերի դիրիժոր: 1952-ից Բոստոնի սիմֆ. նվագախմբի հետ կազմակերպել և ղեկավարել է հայկ. սիմֆ. երաժշտության համերգներ. երկացանկում՝ հայ կոմպոզիտորների տարբեր ժանրերի երկեր: 1970 և 1972-ին Երևանում ղեկավարել է սիմֆ. նվագախմբի համերգներ. աչքի է ընկել մեկնաբանման հստակությամբ:

Գրել է երգեր, խմբերգեր, գործիք. պիեսներ, «Նաիրի», «Տատրագոմի հարսը» «Ռեքվիեմ», «Իրանական սյուիտ», «Հայկական սյուիտ» սիմֆ. պոեմները, լար. կվարտետներ, սիմֆոնիա, «Շողոքորթը» (ըստ Հ. Պարոնյանի) օպերետը և այլ գործեր: Գ-ի ստեղծագործությունը սերում է հայ հոգևոր, ժող., աշուղ. մեղեդիներից: Մշակել է հայկ. ժող. երգեր և միջնադար. տաղեր, հավաքել և հրատարակել է իրան. ժող. երգեր: Գ. մեծ ներդրում ունի նաև իրան. պրոֆեսիոնալ և ժող. երաժշտության մեջ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վլադիմիր Ռուբենի (ծ. 1954, Երևան), քամանչահար: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի քամանչայի և խմբավարության, ԵՊԿ նվագախմբ. դիրիժորության (1984) բաժինները: 1972–75-ին՝ Հայկ. երգի-պարի անսամբլի քամանչահար, 1975–93-ին (ընդմիջումով)՝ Պարի պետ. անսամբլի քամանչահար և գործիք. մասի ղեկ.: Կատարելագործել է քամանչան՝ լայնացնելով կոթը (վերևից՝ ներքև), ստեղծել է աղեղի հատուկ հարմարանք: 1993-ից (շուրջ 10 տարի) գործել է Մեքսիկայում. համալսարանի երաժշտ. ֆակ-ում դասավանդել է խմբավարություն: Ապրում է ԱՄՆ-ում:

Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Կանադայում և այլուր. նվագացանկում՝ ժող., աշուղ., նաև հայ, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների դաս. ստեղծագործություններ: Թողարկել է ձայնասկավառակ (2010, Լոս Անջելես):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրկնակի շքանշան (Ֆրանսիա), «Armenian Music Awards Grammy Winner in USA» մրցանակաբաշխության ոսկե մեդալ (2010):

ԳՐԻԿՈՒՐՈՎ Էդուարդ Պետրոսի (29.03(11.04).1907, Թիֆլիս–13.12.1982, Լենինգրադ), դիրիժոր, մանկավարժ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1957): Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1927), Լենինգրադի կոնսերվատորիայի դիրիժորության (1933) բաժինները: 1937-ից՝ Լենինգրադի Փոքր օպեր. թատրոնի դիրիժոր, 1944–56 և 1964–69-ին՝ գլխ. դիրիժոր, 1956–60-ին՝ Լենինգրադի ՕԲԹ գլխ. դիրիժոր: 1934–35, 1946–53-ին և 1960-ից դասավանդել է Լենինգրադի կոնսերվատորիայի դիրիժորության բաժնում (պրոֆ.՝ 1971-ից):

Բեմադրել է Ջ. Վերդիի «Ֆալստաֆ» (1941), Պ. Ի. Չայկովսկու «Վոյեվոդա» (1949), Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն», Դ. Դ. Շոստակովիչի «Կատերինա Իզմայլովա» (1955), Ժ. Բիզեի «Կարմեն» (1956), Ս. Մ. Սլոնիմսկու «Վիրինեա» (1967) օպերաները, Կ. Կարաևի «Յոթ գեղեցկուհի» (1953) բալետը ևն:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ԳՈՒԹԱՆ (Քայմակչյան) Ալին Բենիամինի (ծ. 1969, Ստամբուլ), երգչուհի (կոլորատուր. սոպրանո): 1979-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Կանադա: Երաժշտ. կրթությունն ստացել է Մոնրեալի «Բրիթիշ Կոլոմբիա», ապա՝ Քվեբեքի «Լավալ» համալսարաններում: Բացառիկ ձայնի շնորհիվ 18 տարեկանում Վանկուվերի օպեր. թատրոնում հանդես է եկել Լորայի դերերգով (Բ. Բրիտտենի «Պտուտակի գալար»): 1994-ին արժանանալով Կանադայի Կառավարության կրթաթոշակին՝ 1995-ին հաճախել է Վիեննայի ամառ. դասընթացներին, հաղթել «Մետրոպոլիտեն օպերայի» ընդունելության մրցույթում (առաջին ելույթը՝ սիմֆ. նվագախմբի հետ): Հանդես է եկել նաև Նյու Յորքի «Լինքոլն կենտրոնում», Արիզոնայի (ԱՄՆ), Օնտարիոյի (Կանադա) և Ավինիոնի (Ֆրանսիա) օպեր. թատրոններում. դերերգերից են՝ Լակմե (Լ. Դելիբի «Լակմե»), Աննա (Ի. Ֆ. Ստրավինսկու «Ռեյքս պրոգրես»), Գիշերային թագուհի (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ») ևն: Կանադայում շուրջ 600 անգամ հանդես է եկել Կ. Մ. Վեբերի «Օպերայի ուրվական» մյուզիքլում: Հա-

մերգ. ծրագրերում՝ Ռ. Գլիերի կոնցերտի, Կ. Օրֆի «Կարմինա Բուրանայի», Գ. Հենդելի Մեսսայի կոլորատուր. սոպրանոյի երգամասերը, նաև մեներգեր: Ելույթներ է ունեցել Վանկուվերի սիմֆ., Համիլտոնի ֆիլհարմոնիկ և այլ նվագախմբերի հետ: 2008-ին ԵՕԲԹ-ում հանդես է եկել Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայում, ապա՝ մենահամերգով: Երգեցողություն է դասավանդում «Լամբադ» ստուդիայում:

Վոկալիստների Լ. Պավարոտտիի անվ. միջազգ., Ջ. Պուչչինիի անվ. հիմնադրամի, Մոնրեալի սիմֆ. նվագախմբի վոկալիստների (2-րդ մրց.), Վանկուվերի օպեր. ընկերության (1-ին մրց.) մրցույթների դափնեկիր:

ԳՈՒԼԱԿՅԱՆ Արմեն Կարապետի [20.10(01.11).1899, Թիֆլիս–22.09.1960, Երևան], ռեժ., դրամատուրգ, թատեր. գործիչ, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1940): 1921-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1919-ին սովորել է ռեժ. Օ. Սևումյանի, 1921–25-ին՝ Մոսկվայի հայկ.

Տեսարան Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրությունից (1935, ռեժ.՝ Ա. Գուլակյան)

դրամատիկ. ստուդիաներում, հաճախել նաև թատերարվ-ի ինստ-ի մասնագիտ. դասընթացը: 1925-ին՝ Թիֆլիսի Հայպետդրամայի թատրոնի, 1927-ից՝ Հայաստանի Առաջին պետ. թատրոնի (այժմ՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն) ռեժ., 1930–1953-ին (ընդհատումով)՝ Գ. Սունդուկյանի անվ., 1955–56-ին՝ Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. ռուս. թատրոնների գլխ. ռեժ.: Բեմադրել է Գ. Սունդուկյանի «Խաթաբալա» (1927), «Պեպո» (1929, 1948), Ա. Գլեբովի «Ինգա» (1929), Ե. Յանովսկու «Յասում» (1930), Ա. Օստրովսկու «Ամպրոպ» (1935), Գ. Տեր-Գրիգորյանի «Այս աստղերը մերն են» (1949, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1950) և այլ պիեսներ, որոնց բնորոշ են գաղափար. մտահղացման բեմավիճակները, կերպարի հոգեբան. և պլաստիկ. ամբողջակա-

նությունը: 1938–45, 1958–60-ին՝ ԵՕԲԹ գլխ. ռեժ.: Բեմադրել է Ա. Տիգրանյանի «Անուշ» (1935, 1939, 1950, 1956), «Դավիթ Բեկ» (1952, 1953), Ժ. Բիզեի «Կարմեն» (1941), Ջ. Վերդիի «Աիդա» (1941), «Օթելլո» (1942), «Պարահանդես-դիմակահանդես» (1960), Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին» (1942), Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ» (1943), Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան» (1944), Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» (1945, լիբրետտոն՝ Գ-ի), Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա» (1947), Շ. Գունոյի «Ֆաուստ» (1958), Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» (1960) օպերաները, որոնք առանձնացել են մոնումենտալ ընդհանրացումներով: 1944–60-ին դասավանդել է ԵԳԹԻ-ում (պրոֆ.՝ 1945-ից):

Գրկ. *Հարությունյան Բ., Արմեն Գուլակյան (Կյանքը և ստեղծագործությունը), Ե., 1964: Նույնի, Արմեն Գուլակյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն. 1899–1960, Ե., 1985: Վանյան Գ., Արմեն Գուլակյանի ստեղծագործական կյանքը և արվեստը, Ե., 2014:*

ԳՈՒԼԱՆՅԱՆ Արուս (Արուսյակ) Հրաչիկի [ծ. 02.11.1957, Ծովագյուղ (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2011): Ավարտել է Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլին կից երգի ստուդիան (1978): 1992–2004-ին՝ «Սայաթ-Նովա» աշուղ. երգի և «Կարին» ժող. գործիքների անսամբլների մեներգչուհի: 2004-ից՝ «Նազանի» ժող. գործիքների անսամբլի հիմնադիր-գեղ. ղեկ.:

1997-ից դասավանդում է Երևանի Ջիվանու անվ. աշուղ. դպրոցում:

Երգացանկում՝ հայկ. ժող., գուս. և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

ԳՈՒԼԵԳԻՆԱ (Մեյթարջյան) Մարիա Աղասու (ծ. 09.08.1959, Օդեսա), երգչուհի (դրամատիկ. սոպրանո): Բել. ԽՍՀ վաստ. (1987), Հս. Օսիայի Հանրապետության ժող. (2013) արտիստ: Ավարտել է Օդեսայի կոնսերվատորիան (1983, Ա. Ժամագործյանի դասարան), կատարելագործվել է Մոսկվայում: 1983–86-ին՝ Բելառուսի ՕԲԹ մեներգչուհի: 1987-ին հանդես է եկել Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում՝ Ամելիայի դերերգով (Ջ. Վերդիի «Դիմակահանդես», Լուչանո Պավարոտտիի խաղընկերությամբ): 1989-ին տեղափոխվել է Գերմանիա (Համբուրգ): Ելույթներ է ունեցել Բեռլինում, Սան Ֆրանցիսկոյում, Չիկագոյում, Լոնդոնում, Հռոմում, Մոնտե Կառլոյում: Դերերգերից են՝ Աիդա (Ջ. Վերդիի «Աի-

Ալին Գոթան

Արմեն Գուլակյան



Արուս Գուլանյան

Մարիա Գուլեգինան ելույթի պահին

դա», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», 1999), Գիշերային թագուհի (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ»), Լեոնորա (Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո»), Աբիգել, Էլիզաբեթ, Լեդի Մակբեթ, Ինես, Էլվիրա, Օդաբելլա (Ջ. Վերդիի «Նաբուկկո», «Դոն Կառլոս», «Մակբեթ», «Տրուբադուր», «Սիցիլիական ժամերգություն», «Էռնանի և Աթիլլա»), Մանոն (Ջ. Պուչչինիի «Մանոն Լեսկո»), Լիզա (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»), Բեատրիչե (Ֆ. ֆոն Սուպեի «Բոկաչչո»):

1990-ին համերգներով հանդես է եկել Երևանում:

Ապրում է Լյուքսեմբուրգում:

ԳՈՒՆԱՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտության զուգակցումը գունալուս. էֆեկտների հետ: XVIII դ-ում երաժշտության ֆրանսիացի տեսաբան Լ. Բ. Կաստելը փորձել է ստեղծել սարք, որը կլավեսինի հնչյունների հետ պիտի տար նրանց գուն. հաջորդականությունը՝ ըստ Ի. Նյուտոնի ձայնագունային պատկերացումների: Գոյություն ունեն էլեկտր., էլեկտրոն. ձայնագուն. հատուկ սարքավորումներ:

Դասանը երգում է հարսանիքին (XVI դ-ի մանրանկար)

ԳՈՒՆԱՎՈՐ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ, սի-նոպսիա, տեսող. և լսող. տպավորությունների զուգորդում: Ձայնի և գույնի կապն ուսումնասիրել են դեռևս Հին աշխարհում: Մաժոր և մինոր ձայնակարգերը հակադրելիս մաժորը սովորաբար ընկալվում է որպես «լուսավոր», «պայծառ», մինորը՝ «փայլատ», «մեղմ», «ստվերապատ»: Նման տպավորություն են ստեղծում նաև տարբեր ռեգիստրները, հնչերանգները ևն, որոնք լայնորեն օգտագործվում են ծրագր. երաժշտության մեջ: Մի շարք երաժիշտներ առավել սուբյեկտիվ տպավորություններ ունեն.

«Գուսան» երգչախումբը (1910, հիմնադիր՝ Կոմիտաս)

յուրաքանչյուր տոնայնություն, ակորդ, հնչերանգ ընդհանրացնում են որևէ գույնի որոշակի պատկերացման հետ և հակառակը (օր.՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը դո մաժոր տոնայնությունը պատկերացնում էր ճերմակ գույնով, ռե մաժորը՝ դեղին, արևագույն, ֆա մաժորը՝ բաց կանաչ, լա մաժորը՝ վարդագույն, ևն):

Ա. Ն. Սկրյաբինի պատկերացումներն այլ էին՝ միայն ռե-ն էր համընկնում ոսկեգույնի, արևագույնի հետ: Տարբերում էր դիեզավոր և բեմոլավոր տոնայնությունների, նաև էնհարմոնիկ հավասար տոնայնությունների գույները: Դեռևս Ի. Նյուտոնը դո-ն կապել է կարմրի, ռե-ն՝ նարնջագույնի, մի-ն՝ դեղինի հետ, ևն: Անգլիացի կոմպոզիտոր Ա. Բլիսը գրել է «Գունային սիմֆոնիան» (1891), որը բաղկացած է ծիրանագույն, կարմիր, երկնագույն, կանաչ մասերից:

ԳՈՒՍԱՆ, ստեղծագործող և կատարող արվեստագետ հին և միջնադար. Հայաստանում: Վաղմիջնադար. հայ. թարգմանություններում և բնագրերում Գ. գործածվել է որպես հուն. միմոս (μίμος) բառի համարժեք: Ներառում է ընդհանր. իմաստ, որը համապատասխանում է նոր ժամանակների «արտիստ» հասկացությանը: Երգիչներին, նվագածուներին, պարողներին, պատմաառասպել. զրույցներ և վիպերգեր ավանդողներին, ժող. հրապարակ. թատրոնի դերասաններին (աճպարարներ, լարախաղացներ, խեղկատակներ ևն) անվանել են Գ., իսկ կին Գ-ին՝ վարձակ: Գործածվել են նաև «գուսանական», «գուսանամոլ», «կատակագուսան» և այլ անվանումներ: Ուշ միջնադարում հայ իրականության մեջ Գ-ների որոշ խմբերի վերանվանել են աշուղներ և սազանդարներ, այլ խմբեր, յուրացնելով աշուղ. արվ-ի տեսությունը, իրապես դարձել են աշուղներ՝ կրելով նաև Գ-ների ստեղծագործ. և կատարող. լավագույն ավանդույթները:

1970-ական թթ-ից վերականգնվել է «Գ.» անվանումը (Աշոտ, Ռազմիկ, Ծովյան, Զաքարյան, Բագրատ և ուր.):

Տես նաև *Աշուղ*, *Աշուղական երաժշտություն*, *Աշուղական չափեր*, *Գուսանական երաժշտություն*:

Գրկ. *Լ ևոնյան Գ., Թատրոնը Հին Հայաստանում, Ե., 1941: Գրիգորյան Շ., Հայոց հին գուսանական երգերը, Ե., 1971: Նույնի, Հայ աշուղական գրականության պատմություն, Ե., 2003:*

«ԳՈՒՍԱՆ», խառը երգչախումբ. հիմնադրել է *Կոմիտասը* 1910-ին (1914–15-ին՝ «Հայ գուսան») Կ. Պոլսում: Համերգները տեղի են ունեցել Բերայի «Պտի Շան» թատրոնի «Յունիոն Ֆրանսեզ»-ի և այլ սրահներում (կազմը՝ 300, 1912-ից՝ 200

հոգի)։ Ունեցել է պրոֆեսիոնալ բարձր մակարդակ, հանդես եկել բազմազան կազմերով, մեծաթիվ ձայնաբաժանումներով ու մեներգիչներով։ Կատարել է Կոմիտասի խմբերգերի, պարերգերի, նաև հոգևոր ստեղծագործությունների ընդարձակ շարեր, «Պատարագը», հայրենասիր. երգերի մշակումներ և արևմտաեվրոպացի հեղինակների որոշ գործեր (մասնավորապես՝ հատվածներ Ջ. Վերդիի և Ռ. Վագների օպերաներից)։ Համերգները հաճախ ուղեկցվել են Կոմիտասի բանավոր կամ տպագրված բացատրականներով։ «Գ.»-ի ելույթները եղել են Կ. Պոլսի ընդհանուր երաժշտ. և հայ ազգ. կյանքի կարևոր երևույթներից (1913-ի հոկտ. 25-ի ելույթը նվիրվել է հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակներին)։ Երգչախմբում մասնագիտ. պատրաստություն են ձեռք բերել Կոմիտասի հինգ սաները (Բարսեղ Կանաչյան, Վարդան Սարգսյան, Միհրան Թումաճան, Վաղարշակ Սրվանձտյան, Հայկ Սեմերճյան)։

Գործել է մինչև 1915-ը։

«ԳՈՒԽԱՆ», խառը երգչախումբ. հիմնադրել է Բարսեղ *Կանաչյանը* Բեյրութում, գործել է 1933–61-ին։ Առաջին համերգը տեղի է ունեցել Բեյրութի «Մեմորիալ Հոլլ» թատրոնում (կազմը՝ 70 հոգի)։ Ելույթներ է ունեցել նաև Դամասկոսում, Հալեպում, Լաթաքիայում, Ալեքսանդրետում, Տրիպոլիում, Զահլեում. երգացանկում՝ Կոմիտասի, հայ ժող. և հոգևոր, արաբ. և քրդ. ժող. երգեր, նաև Բ. Կանաչյանի խմբերգերը («Նանոր», «Տալիլո», «Օրոր», «Հոյնար», «Լուսնակը ելավ» ևն), հատվածներ՝ «Աբեղա» (ըստ Լ. Շանթի «Հին աստվածներ» պիեսի) օպերայից։ Լիբանանի «Մայրինեղի Ա կարգի» պատվո նշան։

ԳՈՒԽԱՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, հայ երաժշտարվ-ի ճյուղերից, որի ստեղծողները պատմ. տարբեր շրջաններում եղել են վիպասանները, *գուսաններն* ու *վարձակները*, ուշ միջնադարում և նոր ժամանակներում՝ *աշուղները*։ Նեղ առումով՝ գուսանների և վարձակների արվեստն է, որը հարատևել է XV–XVI դդ-ում։ Ժառանգելով վիպասանների ստեղծագործության ժանր. բազմազանությունը (առասպելապատմ., դիցաբանա-հերոսածիս. և ռազմ., տոն. երգեր, ներբողներ)՝ գուսանները հարստացրել (սեղանի, խնջույքի, սիրո, գարնան և այլ երգեր) և էապես նորոգել

«Գուսան» երգչախումբը (1956, հիմնադիր՝ Բարսեղ Կանաչյան՝ կենտրոնում)

են նրանց բովանդակությունը։ Գուսան. երգերը, հատկապես՝ հայրենները, գրավոր ամրագրվել են, ավելի ուշ, խոշոր շարքերով ընդգրկվել գրչագիր *Տաղարաններում*։ Երաժշտ. գրառումները (Կոմիտասի ձայնագրած «Մի լար, մայրիկ», «Գիշեր ցերեկ», «Օրոր», «Անտունի», «Քաշ հարեն») սակավ են։ Հովհաննես Երզնկացին, Առաքել Սյունեցին, Հակոբ Ղրիմեցին և ուր. իրենց գրվածքներում կարևորել և անդրադարձել են գուսան. նվագին և նրա տես. խնդիրներին։

ԳՈՒԽՐԳԵՆՈՎ Ալեքսանդր Շալվոյի (18.02.1951, Լվով–19.06.2011, Երևան), դաշնակահար, մանկավարժ։ Պրոֆ. (2004)։ Սովորել է Լվովի կոնսերվատորիայում (1969–71), ավարտել ԵՊԿ (1974) և ասպիրանտուրան (1978, երկուսն էլ՝ ղեկ. Ա. Ամբակումյան)։ 1974-ից դասավանդել է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 2004–11-ին)։ Կազմել է «Հայ կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունների ժողովածու»-ն (ռուս., 1990), համահեղինակ է «Օտարալեզու երաժշտական բառարան»-ի (2004)։

Ալեքսանդր Գուրգենով

Դաշնակահարների համաուկր. (1969–71), այսրկովկաս. (1972) մրցույթների դափնեկիր։

Դ

Գևորգ Դաբաղյան

Էդուարդ Դայանը ելույթի պահին

Հայկ Դանգաս

ԴԱԲԱՂՅԱՆ Գևորգ Գուրգենի (ծ. 12.01.1965, Երևան), դուդուկահար, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (2017): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի կլառնետի (դասատու՝ Ս. Շինդյան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1984, Խ. Խաչատրյանի դասարան), ԵՊԿ (1989, Ա. Պետրոսյանի դասարան) դուդուկի բաժինները և ասպիրանտուրան (1992, ղեկ.՝ Խ. Ավետիսյան): 1980–96-ին՝ *«Ակունք»* անսամբլի մենակատար: 1988-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2009-ից): 1992-ին հիմնադրել է «Շողակն» ժող. անսամբլը. երկացանկում՝ հայ միջնադար., հոգևոր երաժշտություն, ժող., աշուղ. երգեր, մուղամներ, ժամանակակից կոմպոզիտորների գործեր: Թողարկել է լազեր. սկավառակներ (մրց-ներ՝ 1994, 1995, 2002, Գլխ. մրց.՝ 2003, բոլորը՝ ԱՄՆ), նաև «Շողակն» անսամբլի, Կոմիտասի անվ. քառյակի, Հայաստանի կամեր. նվագախմբի, արաբ ուդահար Ռ. Աբուլ-Խալիլի հետ (2004): Համագործակցել է թավջութակահար Յո-Յո Մայի, ջութակահար Գ. Կրեմերի, ալտահար Յ. Ա. Բաշմետի, սաքսոֆոնահար Յ. Գարբարեկի և ուր. հետ: Կազմել է «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ դուդուկի համար» ժող-ը (2008): Երաժշտ. մի շարք ծրագրերի հեղինակ է և մասնակից: Դ-ի կատարումներն ինչել են Ա. Էգոյանի «Արարատ» (Հատուկ մրց., Կանադա), Պ. և Վ. Տավիանի եղբայրների «Արտույտների ագարակը» և այլ ֆիլմերում: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Լեհաստանում, Շվեյցարիայում, Կանադայում, Չինաստանում, Հվ. Ամերիկայում և այլուր:

Արևելքի ժող. գործիքների միջազգ. (Մեծ մրց., 1990, Դուշանբե), «Սայաթ-Նովա» հանրապետ. (1-ին կարգի դիպլոմ, 1991, 1992, Երևան) մրցույթների դափնեկիր:

Եղբորորդին՝ Գ ու ր գ ե ն Լևոնի Դ. (ծ. 10.03.1988, Երևան), երգիչ: Երգել է 4 տարեկանից (1-ին ձայնագրությունը՝ 1995-ին): Ավարտել է ԵՊԿ վոկալ-տես. ֆակ-ի խմբավարության բաժինը (2010, Դ. Ղազարյանի դասարան): Երգացանկում՝ հայկ. ժող., գուսան. և այլ երգեր:

Գ. Գասպարյանի անվ. ոսկե մեդալ (1996), «Հայաստան» համահայկ. հիմնադրամի «Ճանապարհ դեպի ապագա» մրցույթի մրց. («Տարվա լավագույն ժողովրդական և գուսանական երգերի կատարող»):

ԴԱՅԱՆ Էդուարդ Արամայիսի (28.10.1930, Երևան–14.07.2009, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1983): Ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան (1954): 1955–60-ին՝ Նովոսիբիրսկի ֆիլհարմոնիկ, ՕՔԹ նվագախմբերի, լար. քառյակի ջութակահար: Դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1961-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1984-ից, որակավորման բարձրացման ֆակ-ի դեկան՝ 1976-ից, պրոռեկտոր՝ 1987–89-ին, ասպիրանտուրայի բաժնի վարիչ՝ 1995-ից): Որպես մենակատար՝ ելույթներ է ունեցել Չինաստանում, ԱՊՀ երկրներում: Հեղինակ է մեթոդ. ձեռնարկների:

Համամիութ. փառատոնի դափնեկիր (1957, Մոսկվա):

ԴԱՆԶԱՍ (Բինայան) Հայկ Քրիստափորի [10(22).05.1899, Նոր Նախիջևան–22.03.1972, Երևան], դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1950): Իզաբելլա *Դանզասի* ամուսինը: Սովորել է Նոր Նախիջևանի հայկ. հոգևոր սեմինարիայում, ապա՝ Խարկովի համալսարանի իրավաբ. ֆակ-ում: Մասնագիտ. կրթություն ստացել է Դոնի Ռոստովում, 2 տարի սովորել ՄԳԹ-ի դերասան Ա. Պ. Խաոլամովի դրամատիկ. դասընթացներում: Բեմ. գործունեությունն սկսել է 1919-ին Դոնի Ռոստովի ռուս. թատրոնում: 1920-ից, որպես դրամատիկ., օպերետ. դերասան և ռեժիսոր, հանդես է եկել նաև Թիֆլիսի, Բաքվի, Կրասնոդարի, Լենինականի հայկ. թատրոններում: Եղել է Դոնի Ռոստովի հայկ.

խորհրդ. առաջին թատրոնի (1922), ԵԿԱԹ (1942) հիմնադիրներից: 1924-ից հանդես է եկել Շարա ***Տալյանի*** հիմնադրած ու ղեկավարած Լենինականի օպերա-օպերետ. խմբում, ապա որոշ ժամանակ եղել տեղի աշխատանք. բորսային կից երաժշտ. կոմեդիայի թատերախմբի գեղ. ղեկ. ու գլխ. ռեժ.: Վերադառնալով Դոնի Ռոստով՝ շարունակել է աշխատել օպերետ. խմբում, որտեղ նրա հետ հանդես է եկել (1926-ից) կինը՝ Իզաբելլան: 1942-ից աշխատել է ԵԿԱԹ-ում, իր բեմադրություններով ու դերակատարումներով նպաստել թատրոնի գեղ. մակարդակի բարձրացմանը: Լավագույն դերերից են՝ Բոնի (Ի. Կալմանի «Սիլվա», 1925, 1933, 1939, 1942), Ֆլորիդոր (Ֆ. Էրվեի «Մադմուազել Նիտուշ», 1933), Ալֆրեդ (Բ. Շոուի «Պիգմալիոն», 1935), Նազար (Ա. Այվազյանի «Քաջ Նազար»՝ ըստ Դ. Դեմիրճյանի, 1948), Ստեֆան (Յ. Շտրաուսի «Գնչուների բարոն», 1952), Չոկան (Վ. Կոտոյանի «Սիրո հովիտը», 1954): Բեմադրել է Ի. Կալմանի «Սիլվա» (1923, 1933), Ֆ. Լեհարի «Մարիցա» (1925, 1933, 1943), «Կենսուրախ այրին» (1933) օպերետները, Գ. Սունդուկյանի «Խաթաբալա» (1937) կատակերգությունը և այլ գործեր: Դ. տիրապետել է օպերետ. ժանրի արտահայտչամիջոցներին և վերամարմնավորման արվ-ին, նպաստել հայկ. օպերետ. արվ-ի կատարող. ավանդույթների հաստատմանն ու զարգացմանը:

Գրկ. *Սարգսյան Ս., Սիրելի անուններ, Ե., 1967: Լալայանց Հ., Դանզասներ, Ե., 1973:*

ԴԱՆԶԱՍ (Կոզոդյան) Իզաբելլա Գրիգորի [03(16).12.1903, Նոր Նախիջևան–06.09.1994, Երևան], դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1950): Հայկ ***Դանզասի*** կինը: Ավարտել է Դոնի Ռոստովի երաժշտ. տեխնիկումը (1929): Բեմ. գործունեությունն սկսել է 1926-ին Դոնի Ռոստովում: Հանդես է եկել Թբիլիսիի, Բաքվի, Կրասնոդարի, Լենինականի թատրոններում, 1942-ից՝ ԵԿԱԹ-ում, խաղացել դրամատիկ. և երաժշտ. ներկայացումներում: Դերերից են՝ Էլզա (Բ. Շոուի «Պիգմալիոն»), Նատաշա (Շիրվանզադեի «Մորգանի խնամին»), Ուստիան (Ա. Այվազյանի «Քաջ Նազար»՝ ըստ Դ. Դեմիրճյանի), Միրաբելլա (Յ. Շտրաուսի «Գնչուների բարոն»), Կատերինա, Բեատրիչե (Վ. Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը», «Մեծ աղմուկ ոչնչից») ևն: Դ-ի արվ-ին բնորոշ էին կոմեդիա-օպերետ. ժանրի նուրբ զգացողությունը, բեմ. փայլն ու գրավչությունը: ՀՀ «Պատվո նշան» շքանշան (1945):

Գրկ. *Սարգսյան Ս., Սիրելի անուններ, Ե., 1967: Լալայանց Հ., Դանզասներ, Ե., 1973:*

ԴԱՆԻԵԼ, Աշըղ Դոնի, Տոնի [Սարգսյան, մոտ 1740, գ. Դաշբուլաղ (այժմ՝ Ադրբեջանի Շաքիի շրջանում)–1845], աշուղ: Դ-ի երգերը տպագրվել են հայ և թուրք աշուղների ժող-ներում: 1967-ին հայտնաբերվել են նրա երգերից (ձեռագիր). այժմ պահվում են Մտնդ-ում (ձեռ. № 9003):

Երկ. *Տոխակ Հայաստանի, Մ., 1895: Հայ աշուղներ (հավաք. և կազմ.՝ Գ. Թարվերդյան), Ե., 1937:*

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ (Դանիելյան Գրիշա Արշավիրի, ծ. 18.01.1946, Երևան), ջութակահար, դիրիժոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի ջութակի (1964, դասատու՝ Տ. Հայրապետյան), ԵՊԿ լար. (1964, ժ. Տեր-Մերգերյանի դասարան), երաժշտագիտության (1967, Ռ. Աթայանի դասարան), օպեր-սիմֆ. դիրիժորության (1974, Մ. Մալունցյանի դասարան), ՄՊԿ ասպիրանտուրայի դիրիժորության (1985, Գ. Ն. Ռոժդեստվենսկու դասարան) բաժինները: Դասավանդել է Երևանի Տ. Չուխաջյանի անվ. երաժշտ. դպրոցում (1967–69), Ա. Բաբաջանյանի անվ. (1966–72), Լենինականի (1973), Կապանի երաժշտ. (1974–77) ուսումնարաններում, ԵՊԿ-ում (1994-ից): 1977–79-ին՝ Լենինականի պետ. կամեր. նվագախմբի գեղ. ղեկ., 1979–82-ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի դիրիժորի ասիստենտ: Հիմնադրել և ղեկավարել է հնագույն երաժշտության ***«Շարական»*** (1982–86-ին՝ «Տաղարան»), ***«Գանձեր»*** (1986–91) անսամբլները: 1997-ից աշխատում է Հոգևոր երաժշտության կենտրոնում (2006–07-ին՝ երգչախմբի դիրիժոր), 2003-ից «ՎԷՄ» ռադիոկայանում վարում է «Համաշխարհային դասական երաժշտություն» հաղորդաշարը: Մշակել է հայկ. ժող. և հոգևոր երգեր, միջնադար. մեղեդիներ, հրատարակել է «Հայաստանը երգերում» (հոգևոր, ժող., աշուղ., ազգայրենասիր., նաև հեղինակ. երգեր, հ. 1–4, 2001–09), «Երգեհոնային գրքույկ» (հոգևոր երգերի փոխադրություններ՝ երգեհոնի համար, համահեղ.՝ Վ. Ստամբոլցյան, 2005):

Տևսարան Ի. Կալմանի «Կրկեսի իշխանուհին» օպերետի բեմադրությունից (1947, ԵԿԱԹ). Տոնի՝ Հ. Դանզաս, Սարկ Գիբսոն՝ Ի. Դանզաս

Իզաբելլա Դանզաս



Դանիել Երաժիշտ

Հայկանուշ Դանիելյան

Հ. Դանիելյանը Սարգարիտի դերում (Շ. Գունոյի «Ֆաուստ»)

Սերգեյ Դանիելյան

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2016):

Երկ. *Հրաշամանուկներ [Ակնարկներ], հ. 1–2, 2007, 2010: Ամենեն մաքուր հայելին ցեղին..., Ե., 2008: Սրտեիան Լռասիկյան, Ե., 2012: Կոմիտասը և այլ մեծեր, 2013:*

Գրկ. *Մանթյան Վ., Դանիել Երաժիշտ. Որն է աշխարհ Հայաստան [Ակնարկներ], 2009:*

ԴԱՆԻԵԼ-ԲԵԿ Նելլի Ալեքսանդրի [24.11.1924, Զոլոտոնոշա (Ուկրաինա)–09.02.1996, Երևան], դաշնակահար, կոնցերտմայստեր: ՀՀ վաստ. արտիստ (1967): Ավարտել է ՄՊԿ (1951, Ս. Հ. Նեյհաուզի դասարան): 1951–96-ին՝ ԵՊԿ, 1967–96-ին, միաժամանակ՝ ՀՀ հեռուստառադիոյի կոնցերտմայստեր: Նվագակցել է Ն. Հովհաննիսյանին, Հ. Ալավերդյանին, Է. Ուզունյանին, Մ. Երկաթին, Գ. Գրիգորյանին, Ա. Ցիցիկյանին, Ժ. Տեր-Մերգերյանին, Ռ. Ահարոնյանին, Ռ. Մաթևոսյանին և ուր.: Ունի շուրջ 250 ֆոնդ. ձայնագրություն:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Զեմֆիրա Ալեքսանդրի (ծ. 17.05.1961, Երևան), երգչուհի (սոպրանո): Ավարտել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանի, ԵՊԿ (Տ. Սազանդարյանի դասարան) երգեցողության բաժինները, ասպիրանտուրան (1994):

Որպես մեներգչուհի՝ հանդես է եկել Հայաստանի պետ., 1993-ից՝ Մայր աթոռ Սբ Էջմիածնի երգչախմբերում, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, 1997–99-ին՝ ԵՕԲԹ-ում: Դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2002-ից): Համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Անգլիայում, Իռլանդիայում, Հունաստանում, Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, ԱՊՀ այլ քաղաքներում. երկացանկում՝ Ջ. Վերդիի («Ռեքվիեմ»), Ա. Վիվալդիի («Գլորիա»), Ջ. Ռոսսինիի («Ստաբատ Մատեր»), Սայաթ-Նովայի, Ա. Հարությունյանի, Գ. Հախինյանի և ուր. գործերից:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Հայկանուշ Բաղդասարի [03(15).12.1893, Թիֆլիս–19.04.1958, Երևան], երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): Մարիաննա ***Հարությունյանի*** մայրը: ԽՍՀՄ ժող. արտիստ (1939): Հայ վոկալ արվ-ի խոշոր վարպետներից: Ավարտել է Պետրոգրադի կոնսերվատորիան (1920, Ն. Ա. Իրեցկայայի դասարան): 1920–22-ին երգել է Պետրոգրադի երաժշտ. կոմեդիայի թատրոնում, հանդես եկել նաև համերգներով: 1922–32-ին՝ Թիֆլիսի օպեր. թատրոնի, 1932-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Լևոն ***Իսեգկու*** և Շարա ***Տալյանի*** հետ մասնակցել է ***Լևինականի օպերա-օպերետային խմբի*** ներկայացումներին (1924): Դասավանդել է ԵՊԿ-ում (1943–51, պրոֆ՝. 1949-ից), եղել Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի տնօրեն (1949–52):

Դ-ի երգեցողությունն առանձնացել է գեղ. կատարելությամբ և հազվագյուտ վարպետությամբ, ձայնը հավասարապես մաքուր է հնչել բոլոր ռեգիստրներում, արվ-ին բնորոշ էին վոկալ արտահայտչամիջոցների հարստությունն ու բազմազանությունը, սքանչելի կանտիլենան, երաժշտության արտահայտման նրբությունն ու անմիջականությունը: Առավել ճանաչված դերերգերից էին՝ Ջիլդա, Վիոլետտա, Դեզդեմոնա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», 1933, «Տրավիատա», 1936, «Օթելլո», 1942), Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», 1933), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ», 1933), Մադամ Բատերֆլայ (Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան», 1934), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ», 1935), Լակմե (Լ. Դելիբի «Լակմե», 1937), Սոֆի (Ա. Այվազյանի «Թափառնիկոս», 1938), Մարֆա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն», 1940), Նիգյար (Ու. Հաջիբեկովի «Քյոռօղլի», 1942), Անտոնիդա (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», 1942), Մարգարիտ Վալուա (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ», 1943), Մարո (Ջ. Փալիաշվիլու «Դաիսի», 1943), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», 1945):

Կամեր. երկացանկում՝ Պ. Ի. Չայկովսկու, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի, Ս. Վ. Ռախմանինովի, Ա. Կ. Գլազունովի ռոմանսներից ու երգերից: Դ. հայ երգի ու ռոմանսի նուրբ մեկնաբաններից էր: Առավել խորությամբ և հուզական են հնչել «Ծիծեռնակ», Կոմիտասի «Ալագյազ բարձր սարին», «Չինար ես», «Ծիրանի ծառ», «Քելե-քելե», «Քելեր, ցոլեր», «Էս առուն» երգերը, Ա. Սպենդիարյանի «Առ սիրուհիս», «Թաթարական օրորոցային», Ռ. Մելիքյանի «Սև կաքավիկ», «Շափաղ կուտաս», «Ծիլ-ծիլա» ռոմանսները և այլ ստեղծագործություններ: Դ-ի անունով Երևանում գործում է երաժշտ. դպրոց: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

Գրկ. *Գասպարյան Ս., Հայկանուշ Դանիելյան, Ե., 1958: Барсова В., На вершине артистического счастья, в сб.: Дружба, 2 книга, Е., 1960, с. 463–470.*

ԴԱՆԻԵԼՅԱՆ Սերգեյ Պետրոսի (ծ. 31.07.1929, Բաքու–04.12.2009, Երևան), երգիչ (դրամատիկ. տենոր)։ ՀԽՍՀ ժող. արտիստ (1967)։ Ավարտել է ԵԳԹԻ ռեժ. ֆակ-ը (1969), ԵՊԿ (1973)։ 1957-ից՝ ԵՕԹԹ մեներգիչ, 1985–87-ին՝ Ուլան Բատորի օպեր. թատրոնի խորհրդատու և դասատու։ 1968-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1992-ից)։ Դերերգերից են՝ Արամ (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Աբովյան, Մանվել (Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան», «Խորտակում»), Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ռադամես, Օթելլո (Ջ. Վերդիի «Աիդա», «Օթելլո»), Կանիո (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ»), Տանհոյզեր (Ռ. Վագների «Տանհոյզեր») ևն։

ԴԱՇՆԱՄՈՒՐ, ֆ ո ր տ ե պ ի ա ն ո (< իտալ. forte – ամուր, ուժգին և piano – դաշն, մեղմ), լար. ստեղն. հարված. երաժշտ. գործիք։ Լարերը, նվագող մեխանիզմը և հնչերեսը տեղադրված են հորիզոն. դիրքով արկղատիպ պատյանում։ Դիապազոնը՝ 5–5 $^1/_2$-ից մինչև 7–7 $^1/_4$ օկտավա (հազվադեպ՝ ավելի)՝ սուբկոնտր օկտավայի լա-ից մինչև 4-րդ օկտավայի լա-ն կամ դո-ն (A_2–a^4)։ Տարբերում են սենյակի (երկ.՝ 1,9 *մ*), սրահի (2,1–2,4 *մ*) համար և համերգ. (2,4–3 *մ*) Դ-ներ։ Ստեղծել են վարպետներ Բ. Քրիստոֆորին (Ֆլորենցիա, 1709–11), Ժ. Մարիուսը (Փարիզ, 1716–17), Կ. Գ. Շրյոտերը (Նորդհաուզեն, 1717–21) XVIII դ-ի սկզբին՝ գրեթե միաժամանակ։ Ի տարբերություն մինչ այդ տարածված ***կլավեսինի*** և ***կլավիկորդի***՝ Դ-ի լարերը հնչեցվում են ֆիլցով (նուրբ թաղիք) պատած փայտե մուրճիկներով, ըստ ցանկության՝ մեղմ կամ ուժգին (որտեղից՝ pianoforte, ապա՝ fortepiano կամ piano անվանումը)։ XVIII դ-ի 2-րդ կեսին Դ. կատարելագործել են Ա. Բեքերսը («անգլիական» մեխանիկա), Ի. Ա. Շտեյնը («վիեննական» մեխանիկա), Ս. Էրարը («կրկնակի ռեպետիցիայի» մեխանիկա), Յ. Ֆ. Բլյուտները, Ի. Բյոզենդորֆերը և ուր.։ 1800-ին՝ ամերիկացի Ջ. Ի. Հոքինսը, 1801-ին ավստրիացի Մ. Մյուլլերն ստեղծել են (միմյանցից անկախ) ուղղաձիգ լարերով, հնչերեսով և մեխանիզմով դաշնակը (ֆրանս.՝ pianino)։ Արդի Դ. ունի կրկնակի ռեպետիցիայի մեխանիկա և 2 ոտնակ։ Առանձնանում է փոքրաչափ դաշնամուրի տեսակը՝ մինիպիանոն (բարձր.՝ մինչև 1 *մ*, երկ.՝ 1200–1250 *մմ*, լայն.՝ 390–400 *մմ*, քաշը՝ 120–125 *կգ*)։ Մեխանիզմը տեղադրված է ստեղնաշարից ներքև։ Լարերն ու ստեղները կարճացված են։ Դիապազոնը 6 ½ օկտավա է (C_1–g^4)։ Մինիպիանոն երևան է եկել ԱՄՆ-ում (1930-ական թթ-ին) և եվրոպ. երկրներում։

Մեծ դիապազոնի, հարուստ հնչողության, դինամիկ. հնարավորությունների և տեխ. շարժունության շնորհիվ Դ. լայնորեն տարածվել է՝ մեծապես նպաստելով երաժշտարվ-ի զարգացմանը։ Նոտագրվում է ջութակի և բասի բանալիներով։ Գործածվում է որպես մենակատար, նվագակցող, անսամբլ. և նվագախմբ. գործիք։ 1963–91-ին Երևանում գործել է Դ-ի գործարան. թողարկել է «Երևան», «Սևան», «Կոմիտաս», «Անուշ» մակնիշների Դ-ներ։

Մ. Դանիելյանը Դոն Խոսեի դերում (Ժ. Բիզեի «Կարմեն»)

Դաշնամուր

ԴԱՎԹՅԱՆ Արաքսյա Աշոտի [22.04.1949, գ. Ղալաչա (այժմ՝ գ. Բերդավան՝ ՀՀ Տավուշի մարզում)–27.07.2010, Մոսկվա], երգչուհի (սոպրանո)։ ՀՀ ժող. արտիստ (2004)։ Ավարտել է ԵՊԿ (1975)։ 1975–86-ին՝ նույն կոնսերվատորիայի օպեր. ստուդիայի, 1986–92-ին՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմի սիմֆ. նվագախմբի մեներգչուհի։ 1996-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1997-ից), 1997-ից՝ ՄՊԿ-ում։ Համագործակցել է ճանաչված նվագախմբերի, անվանի դիրիժորներ Յ. Ա. Բաշմետի, Ս. Սոնդեցկիսի, Կ. Օրբելյանի, Գ. Ալբրեխտի, Հ. Գրաֆի և ուր. հետ։ 2001-ին կազմակերպել է վոկալ երաժշտության փառատոն, որին մասնակցել են ՌԴ և ԱՊՀ երկրների երիտասարդ կատարողներ։ Հյուրախաղերով (նաև «Մոսկվայի վիրտուոզներ» նվագախմբի հետ, ղեկ.՝ Վ. Թ. Սպիվակով) շրջագայել է Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ճապոնիայում. երգացանկում՝ արևմտաեվրոպացի, հայ դաս. և ժամանակակից կոմպոզիտորների գործերից։ Նկարահանվել է ռեժ. Ռ. Խամդամովի «Վոկալ զուգահեռներ» ֆիլմում։ Բազմիցս մասնակցել է հանրապետ. և միջազգ. մրցույթների։

Արաքսյա Դավթյան

Մ. Ի. Գլինկայի անվ. վոկալիստների համամիութ. (1979), Ջ. Բ. Վիոտիի անվ. միջազգ. (1986, Իտալիա) մրցույթների դափնեկիր։

ԴԱՎԹՅԱՆ Դավիթ Գրիգորի [1877, Տրապիզոն–25.04 (08.05).1911, ք. Մարզվան (Ամասիայի գավառ)], ջութակահար։ Ավարտել է Վենետիկի Մուրադ-Ռափա-

Դավիթ Դավթյան

Հայկ Դավթյան

Յուրի Դավթյանը ելույթի պահին

յելյան վարժարանը, ապա՝ Բրյուսելի կոնսերվատորիայի ջութակի բաժինը (1900), կատարելագործվել Պրահայում՝ նշանավոր չեխ ջութակահար Օ. Շևչիկի ղեկավարությամբ: Համերգներով հանդես է եկել Բրյուսելում, Փարիզում, Վենետիկում, Կ. Պոլսում, Եգիպտոսում, 1906-ից՝ Թիֆլիսում, Երևանում, Կարսում, Ռուսաստանում: Դ-ի արվ-ը բարձր են գնահատել իսպանացի ջութակահար և կոմպոզիտոր Պաբլո Սարասատեն, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: 1904-ից դասավանդել է Բրյուսելի կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1904-ից), 1908-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, միաժամանակ շարունակել է համերգ. գործունեությունը: Գրել է «Հայու հոգին», «Կիլիկիո արցունքներ», «Անուշ հիշատակներ» և այլ մանրանվագներ:

Միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1904, Բրյուսել):

ԴԱՎԹՅԱՆ Հայկ Յուրիի (ծ. 13.03.1963, Մոսկվա), ջութակահար, դիրիժոր: Յուրի ***Դավթյանի*** որդին: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1980, դասատու՝ Տ. Հայրապետյան), ԵՊԿ ջութակի (1985, Է. Թադևոսյանի դասարան), կոմպոզիցիայի (1986, Ղ. Սարյանի դասարան), դիրիժորության (1990, Յ. Դավթյանի դասարան) բաժինները: 1987–91-ին՝ ԵՕՖԹ, 1991-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1990–91-ին՝ ՀԿՄ նվագախմբի ղեկ.: 1991-ին տեղափոխվել է Ֆրանսիա, որտեղ ստեղծել է «Նաիրի» դուետը (1991-ից՝ դաշնակահար Ա. Ահարոնյանի հետ): 1993-ից դասավանդել է Սեն Մանդե ք-ի (ջութակ, անսամբլ), 2004–13-ին՝ Ստրասբուրի ազգ. (մենակատար և նվագախմբ. դիրիժոր), 2013-ից՝ Սերժի Պանտուազի (ջութակ, նաև նվագախմբ. դիրիժոր), 2015-ից՝ Փարիզի ազգ. (ջութակ) կոնսերվատորիաներում: 1992–97-ին՝ Թուր և Մասսի ք-ների սիմֆ. նվագախմբերի մենակատար, 1993–97-ին՝ Լիտվայի ազգ. օպերայի, Ուլյանովսկի սիմֆ., Սոֆիայի կամեր., Ֆրանշ-Կոնտեի նվագախմբերի դիրիժոր, 2000–04-ին՝ Սեն Մանդեի նվագախմբի մենակատար: 1994–96-ին որպես մենակատար հանդես է եկել Պերիգորի «Բեյնաքյան գիշերներ», 2000–02-ին, որպես դիրիժոր, Փարիզի լիրիկ. նվագախմբի հետ՝ «Ուազի անտառային» (Ֆրանսիա) փառատոներում, 1992–2002-ին համագործակցել է Փարիզի օպերայի և Ֆրանսիայի ռադիոյի ֆիլհարմոնիկ, 2003-ին՝ Տորոնտոյի (Կանադա) սիմֆ., 1998-ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ (Մ. Մետեռլինկի դրամայի համար գրված սյուիտը) նվագախմբերի հետ: Իր հիմնադրած «Խրոմա» կվինտետի (1999–2004) հետ համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Ավստրիայում, Հունգարիայում: 2007-ին ստեղծել է նաև «Նաիրի» կվինտետը: Ձայնագրել է (Ա. Ահարոնյանի հետ) Ա. Խաչատրյանի, Է. Բաղդասարյանի, Կոմիտասի, Ղ. Սարյանի, Է. Միրզոյանի, Ա. Սպենդիարյանի ստեղծագործություններից (փոխադրումները՝ Դ-ի, Ա. Ահարոնյանի), Լ. Բոկկերինիի կվինտետը (կիթառահար Պ. Իվանեզի հետ), Կոմիտասի մեղեդիների հիման վրա՝ Ս. Ասլամազյանի և Ռ. Ալթունյանի մանրանվագները և այլ գործեր: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ում և Արլ. Եվրոպայում:

Հայաստանի երիտասարդ կատարողների հանրապետ. մրցույթի Գլխ. (1980), Այսրկովկաս. մրցույթի 2-րդ (1981), «Պիեռ Լանտիե» միջազգ. մրցույթի Մեծ (1996, Փարիզ) մրց-ներ:

ԴԱՎԹՅԱՆ Յուրի Հայկի (ծ. 10.06.1929, Կիրովական), դիրիժոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1972), ՀԽՍՀ ժող. արտիստ (1984): Պրոֆ. (1979): Հայկ ***Դավթյանի*** հայրը: Ավարտել է ԵՊԿ նվագախմբ. դիրիժորության և տեսության բաժինները (1952, Կ. Սարաջևի և Գ. Տիգրանովի դասարաններ): 1962–63-ին վարպետության դասեր է առել Ի. Բ. Մարկևիչից: Աշխատել է ԽՍՀՄ պետ. նվագախմբում՝ որպես ստաժոր: 1953–63, 1966–74 և 1976-ին՝ ԵՕՖԹ դիրիժոր (1973–74, 1980–2000-ին՝ գլխ. դիրիժոր), 1964–66-ին՝ Սարատովի օպեր. թատրոնի, 1966–68 և 1992–94-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ., 2007–08-ին՝ ԵԵԿԹ նվագախմբերի գլխ. դիրիժոր: 1969-ից դասավանդել է ԵՊԿ-ում: Ղեկավարել է Ա. Բաբաևի «Արծվաբերդ» (1957), Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (1981), «Անուշ» (1994), Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» (1983, 2009), Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի» (1987), Ջ. Վերդիի «Օթելլո» (1995),

Ռ. Լեռնկավալլոյի «Պայացներ» (1996), Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» (2011) և այլ օպեր., Գ. Եղիազարյանի «Սևան» (1956), Ս. Բալասանյանի «Լեյլի և Մեջնուն» (1973) բալետ. և այլ ներկայացումներ, նաև ԽՍՀՄ պետ., Մոսկվայի Մեծ, Լենինգրադի Մարիինյան թատրոնների և այլ նվագախմբեր: Թողարկել է ձայնասկավառակներ: Համերգներով հանդես է եկել Ռումինիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում:

ԴԱՎԹՅԱՆ Նորայր Զավենի [ծ. 01.01.1950, գ. Ծաղկաշեն (այժմ՝ գ. Սիգավետ՝ ՀՀ Արարատի մարզում)], քամանչահար, դիրիժոր: ՀՀ վաստ. արտիստ (2008): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի քամանչայի (1970, դասատու՝ Մ. Խաչատրյան), ՀՊՄԻ երաժշտության (ղեկ.՝ Է. Ծատուրյան, 1974), ԵՊԿ քամանչա, դիրիժորություն (Էքստեռն, 1991) բաժինները: 1970–96-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի քամանչահար, 2005-ից՝ Հայաստանի ազգ. նվագարանների պետ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1976–82-ին դասավանդել է Էջմիածնի ակումբագրադարան. տեխնիկումում, 1978-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1998-ից, երկուսն էլ՝ քամանչայի դասարան), ղեկավարել է նաև ԵՊԿ ուսանող. նվագախումբը (1984–2010): Համերգներով շրջագայել է Ռուսաստանում, Ուկրաինայում, Լատվիայում, Լիտվայում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Կանադայում, Ավստրալիայում, Հնդկաստանում, Արգենտինայում, Բրազիլիայում և այլուր: Կատարել է բազմաթիվ մշակումներ և գործիքավորումներ՝ անսամբլների և նվագախմբերի համար, ունի 100-ից ավելի ֆոնդ. ձայնագրություններ: Համամիութ., հանրապետ. և միջազգ. մրցույթ-փառատոներում արժանացել է մրց-ների: Հրատարակել է «Ձեռնարկ քամանչայի համար» (1980), «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ քամանչայի համար» (2008) ժող., «Ձեռնարկ-ժողովածու քամանչայի համար» (2016), ծրագրեր՝ քամանչայի համար (1977, 1984, 2008):

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2010):

Երկ. *Ստեղծագործություններ ազգային նվագարանների նվագախմբի համար, [Նոտրա], Ե., 2017:*

ԴԱՎԹՅԱՆ Ռոմեն Աբրահամի (ծ. 10.10.1937, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1990): ՀԿՄ անդամ: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1966, Է. Միրզոյանի դասարան): 1970–93-ին՝ ՀՀ ՄՆ արվ-ի գլխ. վարչության պետ և փոխնախարար, 1987–88-ին՝ ԵՕԲԹ, 1989–90-ին՝ Հայհամերգի տնօրեն և գեղ. ղեկ.: 1985-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1992-ից): Գրել է «Հանուն երջանկության», «Աղջիկն ու մահը» բալետները, նաև համանուն սիմֆ. սյուիտները, «Պարային» և «Ֆանտաստիկ պոեմ»՝ սիմֆ. նվագախմբի համար, նաև դուետներ, տրիո, փող. և լար. կվարտետներ, «Հումորեսկ», «Անուրջներ» և «Վալս-կապրիս»՝ ջութակահարների անսամբլի, պոեմ՝ 2 դաշնամուրի, սոնատ՝ մենանվագ ջութակի համար, դաշնամուրի տոկկատ, ջութակի և դաշնամուրի պրելյուդ, կինոերաժշտություն և այլ գործեր:

Համամիութ. մրցույթների դափնեկիր (1967, 1969, 1971): ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2008):

ԴԱՎԻԴՅԱՆ Ռաֆայել Ռուբենի (22.04.1923, Թիֆլիս–03.02.1997, Մոսկվա), ջութակահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1963): ԵՊԿ պատվ. պրոֆ. (1985): Ավարտել է ՄՊԿ (1950): 1947–70-ին՝ Կոմիտասի անվ. քառյակի 2-րդ ջութակ: 1961-ից դասավանդել է ՄՊԿ-ում (պրոֆ.՝ 1976-ից, դեկան՝ 1983-ից): 1993 և 1996-ին՝ Դ. Դ. Շոստակովիչի անվ. լար. քառյակների միջազգ. մրցույթների հանձնախմբի անդամ: Հեղինակ է «Սարգիս Ասլամազյան» (1972), «Կոմիտասի անվան կվարտետը» (1974), «Ավետ Գաբրիելյան» (1974), «Կվարտետային արվեստ» (1984), «Շոստակովիչի կվարտետները» (2013, բոլորը՝ ռուս.) գրքերի: ՀՀ Պետ. մրց. (1965):

Գրկ. *Մարկոսյան Ա., Կոմիտաս քառյակ: Չորս դիմանկար, Ե., 2006:*

ԴԱՎԻԴՈՎ Ալեքսանդր (Կարապետյան Արսեն) Դավթի [04(16).01.1850, Վաղարշապատ–20.01(02.02).1911, Ս. Պետերբուրգ], երգիչ (տենոր): Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում: 1869–71-ին հանդես է եկել Թիֆլիսի հայկ. թատրոնում, 1871–72-ին՝ իտալ. օպեր. խմբում, ապա՝ Վլադիկավկազի, Բրյանսկի, Ռոստովի և այլ ք-ների թատրոններում, 1876-ից՝ Մոսկվայի հանրամատչելի թատրոնում, ապա՝ Մոսկվայի արտիստ. խմբակում (Ժ. Օֆֆենբախի «Կապույտ մորուք»,

Նորայր Դավթյան



Ռոմեն Դավթյան



Ռաֆայել Դավիդյան

Ալեքսանդր Դավիդովը Պարիսի դերում (Ժ. Օֆֆենբահի «Երգեցիկ թռչուններ»)

«Դավիթ Անհաղթ», մանրանկար (1651–54, Ժող., Սիմեոն., ձեռ. № 1764)

«Երգեցիկ թռչուններ» և այլ օպերետներ), 1879–82-ին՝ Սոսկվայի Փոքր, 1883-ից՝ «Էրմիտաժ» և այլ թատրոններում: Առավել ճանաչվել է Անտիպի («Գնչուական երգեր՝ ըստ գործող անձանց»), Տորոպկայի (Ա. Ն. Վերստովսկու «Ասկոլդի գերեզմանը») դերերգերով, գնչուական ռոմանսների ինքնատիպ կատարումներով («Ձույգ աչխետ ձիեր», «Հեռացի՛ր», «Լա՛ց եղիր, մի՛ թաքցրու հեկեկոցդ» ևն). նրան անվանել են «գնչուական ռոմանսի արքա»: Հանդես է եկել նաև մելոդեկլամացիայով: 1892-ին մենահամերգով ելույթ է ունեցել Փարիզում. երկացանկում՝ նաև հայկ. երգեր:

Գրկ. *Давыдов В. Н., Рассказ о прошлом, М.–Л., 1962; Кончина короля цыганского романса А. Д. Давыдова, «Петербургская газета», 1911, 21 янв., № 20.*

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, Դավիթ Ներգինացի, Դավիթ Արմենիոս [մոտ 475, գ. Ներգին (Տարոնի գավառ)–VI դ-ի կես, Հաղպատ, հետագայում աճյունն ամփոփվել է Մշո Առաքելոց վանքում], փիլիսոփա, տրամաբան, նորպլատոնականության Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչ, ՀԱԵ տոնելի սուրբ: Սովորել է Ալեքսանդրիայում՝ Օլիմպիոդորոս Կրտսերի փիլ. դպրոցում՝ Փիլ. բանավեճերում հաղթանակների համար ստացել է «Անհաղթ» պատվանունը: Նա տրամաբ. գիտ-յան հիմնադիրն է Հայաստանում, գլխավորել է հունաբան դպրոցը, վճռական դեր խաղացել փիլ. (նաև երաժշտատես.) ճշգրիտ տերմինաբանության մեջ: Դ. Ա-ին վերագրվող բազմաթիվ երկերից նրան են պատկանում «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն «Ներածութեաննն» Պորփիւրի», «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի» (երեքն էլ՝ հուն., ապա թարգմանվել են հայ.) և «Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտելի» աշխ-ները:

Դ. Ա., ըստ ավանդության, հորինել է հոգևոր և աշխարհիկ երգեր, սակայն առավել հայտնի են նրա երաժշտատես. ըմբռնումները, որոնք էական ազդեցություն են ունեցել միջնադար. Հայաստանի երաժշտ. տեսագեղագիտ. մտքի զարգացման վրա: «Սահմանք իմաստասիրութեան» երկում անդրադարձել է երաժշտության ճանաչող., դաստիարակչական նշանակությանը և զգայական ազդեցությանը: Հիմնվելով Ալեքսանդրյան դպրոցի նորպլատոնականների աշխարհայացքի վրա՝ Դ. Ա. արծարծել է երաժշտարվ-ի էության խնդիրը՝ տարբերակելով երաժշտարվ-ի նյութ. և աննյութ. հատկանիշները: Հետևելով անտիկ աշխարհում ընդունված դասակարգմանը՝ նա երաժշտությունը թվաբանության, երկրաչափության և աստղաբաշխության հետ դասում է մաթեմատիկայի, այսինքն՝ քառյակ գիտությունների համակարգին, հաստատում է քանակի կատեգորիայի որոշիչ նշանակությունը երաժշտության մեջ, որտեղ բարձրությունն ու տևողությունն արտահայտվում են քանակ. և թվային հարաբերությունների միջոցով: Ուստի՝ երաժշտությունը բնությամբ աննյութական է, նյութականը՝ երաժշտ. գործիքներն են: Դ. Ա. իր երկերում արտահայտել է նաև անտիկ աշխարհում լայնորեն տարածված ձայնի (հնչյունի) և ներդաշնակության մասին ուսմունքները: Ըստ նրա՝ ձայնը (հնչյունը) օդի տատանումն է, որն ազդում է մարդու լսողության օրգանների վրա: Ձայները դասակարգում է հոդաբաշխ (բնորոշ են մարդուն) և անհոդաբաշխ (բնորոշ են կենդանիներին և անշունչ առարկաներին) հնչյունների: Հիմնվելով Պլատոնի, Արիստոտելի և Զենոնի գաղափարների վրա՝ հնչյունները դասակարգել է ըստ կատարելության և իմաստավորվածության աստիճանի: «Սահմանք իմաստասիրութեան» երկում, անդրադառնալով ներդաշնակության հենքին (կամ Օրփեոսյան լարվածքին), տալիս է նրա 4 անդամների (ինտերվալների) հին հայկ. անունները՝ «կիսաբոլոր», «երկպատիկ», «մակեռակ» և «մակքառակ»: Խոսելով երաժշտության զգայական ներազդեցության մասին՝ Դ. Ա., որպես օրինակ, մեջբերում է Ալեքսանդր Մակեդոնացու մասին հայտնի առասպելը, հիշատակում է ողբերն ու մրմունջները, որոնք, իրենց հնչողությամբ համապատասխան տրամադրություն ստեղծելով, ներազդում են մարդու վրա:

Գրկ. *Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977.*

Աննա Արևշատյան

ԴԱՎԻԹ ՍԱԼԱՁՈՐՑԻ, Որբիկ, XVII դ-ի տաղասաց: Ծնվել է Կարնո գավառի Սալաձոր գ-ում: Եղել է հոգևորական: Ուշագրավ է նրա «Գովասանք ծաղկանց» տաղը, որը բնության զարթոնքի գովերգ է: Դ. Ս-ի կրոն. բովանդակության երգերից

հայտնի են «Հայր արարիչ Տէր կենդանի», «Քեզի համրօվ օր էր տրուած», «Երգ Աստուածածնայ»:

Գրկ. *Մրմանձպյան Գ., Համով-հոտով, ԿՊ, 1884, էջ 278–285:*

ԴԱՎԻԹ ՔԵՐԱԿԱՆ, Դավիթ Մեկնիչ, V–VI դդ-ի քերական: Երբեմն նույնացվում է *Դավիթ Անհաղթի* հետ: Պահպանվել է նրա «Մեկնութիւն քերականին» աշխ-ը, որտեղ նկատելի է հակվածությունը ռացիոնալիզմին և «քերականական արվեստի» բանական հիմունքների ջատագովությանը: Մարդու բնության մեջ առանձնացրել է «ոգի բանական» և «մարմին գործնական» հատկանիշները, որոնք լինում են չար, բարի և միջակ: Քննելով բարու բոլոր դրսևորումները՝ կարևորել է «քերթողական արվեստը», որտեղ ընդգրկել է քերականությունը: Աշխ-յան մեջ անդրադարձել է նաև գեղագիտ. խնդիրներին, առաջադրել արվ-ի և օբյեկտիվ իրականության փոխհարաբերության խնդիրը: Արվ-ը բաժանել է չար, միջակ, բարի տեսակների. վերջինի առանձնահատկությունները դիտարկել է հոգևոր երաժշտության մեջ: Նկատի առնելով երաժշտության հուզականությունն ու ներգործության ուժը՝ երաժշտությանը վերաբերող իր ասույթներում ձգտել է ցույց տալ, թե ինչպիսին պետք է լինի երաժշտությունը և ում պետք է ծառայի այն:

Գրկ. *Թահմիզյան Ն., Էջեր հայկական վաղ միջնադարյան երաժշտական գեղագիտության, Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ. հաս. գիտ., 1961, № 2: Музыкальная эстетика стран Востока [Раздел "Армения"], Л., 1966.*

ԴԱՐԲԻՆՅԱՆ (Կուզնեցովա) Բելլա Պավելի (17.12.1936, Կիրովական–23.08.2005, Երևան), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (1966): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1959), սովորել ԵՊԿ-ում (1959–62, Տ. Սազանդարյանի դասարան), ապա՝ Մոսկվայի Մեծ թատրոնին կից ստուդիայում (1961): Հանդես է եկել Կարմենի (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ազուչենայի, Ամներիսի (Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Աիդա») դերերգերով, հետագայում նախընտրել է էստրադ. ոճը: 1961–66-ին՝ Հայաստանի պետ. էստրադ., 1966–96-ին՝ Ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբերի մեներգչուհի. երգացանկում՝ Ա. Բաբաջանյանի, Ա. Աճեմյանի, Ռ. Ամիրխանյանի և ուր. էստրադ., նաև գուս., ժող. երգեր («Զեփյուռի նման», «Յար առանց քեզ», «Ծառերը ծաղկում են», «Մայրիկիս», «Մանուշակաձոր», «Օջախում», «Սասնա ծուռ» ևն), ռոմանսներ: Համերգներով հանդես է եկել ՀՀ-ում, ԱՄՆ-ում (1997, 1999, 2003) և այլուր: Թողարկել է 2 ձայնասկավառակ: Այսրկովկաս. էստրադ. երգի մրցույթի ոսկե (1966, Երևան), ՀՀ «Մովսես Խորենացի» (2001) մեդալներ:

Բելլա Դարբինյան

Գրկ. *Բելլա Դարբինյան: Երբ ակունքը սիրտն է (կազմ.՝ Հ. Զալյան), Ե., 1998:*

ԴԱՐԲԻՆՅԱՆ Հովհաննես Ասատուրի (15.07.1940, Բեյրութ–01.03.2016, Երևան), թառահար, խմբավար: ՀՀ վաստ. արտիստ (2010): Պրոֆ. (2004): 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (դասատու՝ Շ. Բեգլարյան), ԵՊԿ խմբավարության (1967, Մ. Մազմանյանի դասարան) և ժող. գործիքների (2001) բաժինները: 1960–80-ին դասավանդել է Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում, 1980-ից՝ ԵՊԿ-ում: 1969–1972-ին՝ Հայաստանի երգչախմբ. ընկերության, 1993-ից՝ Սբ Էջմիածնի Մայր տաճարի երգչախմբի խմբավար: Երկացանկում՝ հայկ. ժող., աշուղ., հոգևոր, նաև Կոմիտասի երգերից: Հյուրախաղերով շրջագայել է Բելգիայում, Լիբանանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում և այլուր: Հեղինակ է երաժշտագիտ. և հայ երաժիշտներին վերաբերող ուս. ձեռնարկների («Թառի ձեռնարկ», 1980, «Հայկական ժողովրդական պարեղանակներ», 1998, «Թառի ուսուցարան», 1998, «Հայ թառահարներ», 2004, «Հայ քամանչահարներ, քանոնահարներ, ուդահարներ», 2005, «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ թառի համար», 2008, ժող-ներ):

Բ. Դարբինյանը ելույթի պահին

Երկ. *Ապրող հիշողություն [Կենսագրական հուշեր], Ե., 2005:*

Գրկ. *Կիրակոսյան Ա., Հովհաննես Դարբինյան. Խմբավարն ու թառահարը, Ե., 2000:*

ԴԱՐՅԱՆ Անիտա Կարապետի (26.04.1927, Դետրոյտ–01.02.2015, Նյու Յորք), երգչուհի (սոպրանո): Սովորել է Ջուլիարդի բարձրագույն երաժշտ. դպրոցում (Նյու Յորք), ապա՝ Ֆիլադելֆիայի «Կյորտիս» երաժշտ. հաստատությունում: Աշխատել է հեռուստատեսությունում, մասնակցել կատակերգ. շոու-ներկայացումների: Ձայն. բացառիկ տվյալների և նախասիրությունների շնորհիվ հանդես է եկել երաժշտ. տարբեր ժանրերով՝ օպեր., կամեր. երգեցողության, նաև զուգակցել է ստեղծագործ. զանազան

Հովհաննես Դարբինյան

Անիտրա Դարյան

Դափ



Հարություն Դելլալյան

ոճեր: Դ-ի ձայնն օժտված էր 4 օկտավա դիապազոնով, ունակ էր արտաբերելու էլ. երաժշտ. գործիքների ձայնին նմանվող հնչյուններ: Կատարել է դերերգեր Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնություն», Ժ. Օֆֆենբախի «Հոֆմանի հեքիաթները», Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո» (Լեոնորա), Ջ. Վերդիի «Տրավիատա» (Վիոլետտա), Ջ. Պուչչինիի «Տոսկա» (Տոսկա), «Բոհեմ», Ժ. Բիզեի «Կարմեն» օպերաներից: 1966-ից հանդես է եկել Նյու Յորքի ֆիլհարմոնիկ, նաև ամերիկ. լավագույն սիմֆ. նվագախմբերի հետ: Ձայնագրությունները հնչել են կինոնկարներում:

Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթի դափնեկիր (1970):

ԴԱՓ, դահիրա, դայրա, ղավալ, հայկ. ժող. հարված. երաժշտ. գործիք: Կազմված է փայտե կլոր շրջանակից (պատրաստված է խաղողի փայտից)՝ մի կողմը կաշվե (այծի, հորթի կամ ոչխարի, այժմ՝ ձկան) թաղանթով պատած: Տրամագիծը՝ մոտ 35,5 *սմ*, շրջանակի երկ.՝ 45 *սմ*: Շրջանակի ներսի կողմից կախված են մետաղե օղեր, բոժոժներ, արծաթե դրամներ և ձայնահան այլ իրեր: Նվագում են ձեռքի ափերով կամ մատներով զարկելով թաղանթին, նաև թափահարելով: Դ. օգտագործվել է սազանդարների (թառ, քամանչա և Դ.), նաև ժող. գործիքների անսամբլներում ու նվագախմբերում: Ըստ պեղած նյութերի, ժայռերի, խաչքարերի, տապանաքարերի քանդականախշերի, միջնադար. մանրանկարների, նաև պատմիչների վկայությունների՝ Հին Հայաստանում ծիսակատարությունների և ռազմերթերի ժամանակ օգտագործել են բազմատեսակ երաժշտ. գործիքներ, այդ թվում՝ Դ.: Բազմազան ձևերով ու անվանումներով Դ-եր գործածվում են Արևելքում և Արևմուտքում:

Գրկ. *Քոչարյան Ա., Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008:*

ԴԵԲՅՈՒՏ (ֆրանս.՝ debut – սկիզբ), բեմել, երգչի, բալետի արտիստի, բալետմայստերի, դիրիժորի, խմբավարի և ուր. առաջին ելույթը տվյալ թատրոնում կամ որևէ այլ բեմում:

ԴԵԼԼԱԼՅԱՆ (Թելլալյան) Հարություն Երվանդի (08.08.1937, Աթենք–23.04.1990, Երևան), կոմպոզիտոր, մանկավարժ: 1947-ին հայրենադարձել է: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի տեսության և կոմպոզիցիայի (1972, Է. Բաղդասարյանի դասարան), ԵՊԿ կոմպոզիցիայի (1977, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: ՀԿՄ անդամ (1979-ից): 1985-ին (առաջին անգամ) Նյու Յորքի «Քառնեգի Հոլլում» Արթուր ***Փաւիագյանը*** կատարել է Դ-ի «Նվիրում Կոմիտասին» (1982) սոնատը, 1986-ին Բոստոնի սիմֆ-կամեր. նվագախումբը (գեղ. ղեկ.՝ Ա. Ղարաբեկյան) Բոստոնի «Ջորդան Հոլլում»՝ «Տոպոֆոնո» կոնցերտը (1985, դաշնամուրի, գալարափողի և կամեր. նվագախմբի համար, Կալիֆոռնիայի կինոյի և հեռուստատեսության «Ոսկե փառապսակ» մրց. և «Գերաստղ» դիպլոմ, 1987): Գրել է նաև «Փեփուշ» մանկ. օպերան (1975), սիմֆոնիաներ (1977, 1982, 1985), «Հուշարձան նահատակների» կանտատ-ռեքվիեմը (1985), «Ձրաասյզ արև» դրամատիկ. կանտատը (1988), «Ecloga» կոնցերտը՝ ֆլեյտայի, դաշնամուրի, հարված. գործիքների և կամեր. նվագախմբի (1986), սոնատներ՝ թավջութակի և դաշնամուրի (1976), ջութակի և դաշնամուրի (1978), «Մեդիտացիաներ»՝ կլառնետի և դաշնամուրի (1981) համար, կամեր. վոկալ-գործիք. երկեր՝ «Stabat Mater» (1972), «Կոմիտասական» (1972), «Երբ իջնում է մթնշաղը»՝ Վ. Տերյանի, Գ. Էմինի, Ա. Իսահակյանի տեքստերով (1984), «Լռության րոպե»՝ ա կապելլա կանանց երգչախմբի համար (1986) և այլ գործեր: Դ-ի ստեղծագործությունները հնչել են Հայաստանում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլուր: Երևանում գործում է «Դելլալյան տրիոն», որի կազմում Դ-ի դուստրերն են՝ Նարինե (ջութակ), Մարինա (դաշնամուր) Դելլալյանները, և Լևոն Մուրադյանը (թավջութակ): Դ-ի երաժշտությունն օգտագործել են ֆիլմերում («Կարճ հաղորդագրություն», «Երկիր Նաիրի», «Վազգեն Սարգսյան» ևն): Հեղինակ է «Փայտյա փողային գործիքներ» ձեռնարկի (1991):

Գրկ. *Հովհաննիսյան Թ., Հարություն Դելլալյան. կյանքի և ստեղծագործության ուրվագիծ, Ե., 1992: Նվիրումի հնչյուններ (կազմ.՝ Դելլալյան Ն.), Ե., 2005:*

ԴԵԿԱ (< գերմ. Decke – կափարիչ), որոշ լար. գործիքների բաղադրիչ, որն ուժեղացնում և անդրադարձնում է հնչյունը: Պատրաստում են անդրադարձնող

փայտից կամ այլ նյութերից (կաշի ևն): Հիջակի և բանջոյի Դ. փոխարինում է մեմբրանին: Լարերի տատանումները Դ-ին փոխանցվում են հենարանի միջոցով: Ջութակի, կիթառի վերին Դ. ունի ձայնաղարձիչ անցքեր: Դաշնամուրի Դ. ստեղնաշարի տակ է (պատյանի մեջ):

ԴԵՄԻՐՃՅԱՆ Միհրան Հովակիմի (12.03.1950, Երևան–30.04.2016, Երևան), ուդահար, ուդի վարպետ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2014): Ուդ նվագել սովորել է քամանչահար Հ. Ավետիքյանից: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1969), ԵՊԿ (1986, երկուսն էլ՝ Կ. Արիստակեսյանի դասարան), միաժամանակ հաճախել Էդվարդ *Բաղդասարյանի* ստեղծագործ. դասարանը: Աշխատել է Հայկ. երգի-պարի պետ. (1971), Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների (1974-ից) անսամբլներում: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Անգլիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ավստրիայում, Եգիպտոսում և այլուր: 1974-ից դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ., Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարաններում, 1986-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2006-ից): 1999-ին հիմնադրել է «Ազատություն» ժող. գործիքների անսամբլը: Հեղինակ է կոնսերվատորիայի ժող. գործիքների բաժնի (1988), նաև երաժշտ. դպրոցների 1–5-րդ դասարանների (համահեղ., 1980) ուդի դասավանդման ծրագրերի, «Դու կրակ աչերով» (2003), «Պիեսներ ուդի (քանոնի) համար» (2006), «Ուդի հայկական դպրոց» (2006), «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ ուդի համար» (2008, կազմող) ժող-ների: Դ-ի պատրաստած ուդը պահվում է Բելգիայի թանգարաններից մեկում: Գրել է գործեր ուդի և քանոնի համար՝ «Պիես», «Արևելյան պար», «Կոնցերտային էքսպրոմտ», կատարել է բազմաթիվ մշակումներ ու փոխադրումներ:

Սայաթ-Նովայի անվ. հանրապետ. մրցույթի դափնեկիր (Երևան, 1987):

Մարիաննա Տիգրանյան

ԴԵՄՈՒՐՅԱՆ Ստեփան Գուրգենի [12 (24).06.1872, Թիֆլիս–13.01.1934, Երևան], երգիչ, խմբավար, երաժիշտ-ազգագրագետ, կոմպոզիտոր, մանկավարժ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1892, խմբավարության դասատու՝ Մ. Եկմալյան), կատարելագործվել Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1898–1901, Ս. Ի. Գաբելի երգեցողության դասարան): 1892–1934-ին մանկավարժ. և խմբավար. գործունեություն է ծավալել Շուշիում, Գորիսում, Երևանում, Լենինականում, Ռուսաստանի քաղաքներում, տարածել հայկ. երգը: Հեղինակ է երաժշտ. գործիքներին և մուղամներին վերաբերող հոդվածների: Կազմել և հայ իրականության մեջ առաջին անգամ եվրոպ. ձայնանիշերով հրատարակել է «Քնար» երգարանը (1907, Ս. Պետերբուրգ): Գրել է երգեր (նաև մանկ.), մեղեդիներ՝ սրնգի համար, «Հարեմ» օպերան (անավարտ, տեքստը՝ Հ. Հայրապետյանի), հավաքել և մշակել է հայկ. ժող. երգեր: Դ-ի երգերը հրատարակվել են Բաքվում (1926) և Երևանում (1934): Շուշիում բեմադրել է Ա. Մայիլյանի «Գյուլնազ տատի հեքիաթը» (1917), Շուշիում և Պյատիգորսկում (1921)՝ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերաները:

Գրկ. *Բրուտյան Մ., Ստեփան Դեմուրյան, Ե., 1969:*

Միհրան Դեմիրճյան

Ստեփան Դեմուրյան

ԴԵՐՈՅԱՆ (Տերոյան) Նովալիս Վաբրազդատի (10.02.1929, Երևան–25.07.1995, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու (1971): Պրոֆ. (1983): Ավարտել է ԵՊԿ (1955, ղեկ.՝ Ս. Վ. Կոպտև): 1956–59-ին՝ ՀՀ հանր. գրադարանի երաժշտ. կաբինետի վարիչ, 1959–62-ին՝ հեռուստաստուդիայի երաժշտ. հաղորդումների պատասխանատու խմբ.: 1962–64-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1962–95-ին՝ ԵՊԿ-ում (պրոռեկտոր՝ 1970–73-ին, երաժշտության տեսության ամբիոնի վարիչ՝ 1973–74-ին):

Ուսումնասիրությունները վերաբերում են երաժշտության տեսությանը, գեղագիտությանն ու ընդհանուր մշակութաբանությանը: Հեղինակ է «Երաժշտական ստեղծագործության վերլուծություն» (1985) դասագրքի: Լույս է տեսել Դ-ի «Երկեր» ժող-ը (2015, կազմող, ներածության և ծանոթագրությունների հեղ.՝ Ծ. Մովսիսյան), որտեղ զետեղված են նրա երաժշտատես., մշակութաբան-գեղագիտ. և գրական-հրապարակախոս. երկերը («Երաժշտական ստեղծագործության ամբողջականության հարցի շուրջ» աշխ-ը, մի շարք ուսումնասիրություններ՝ «Ինվարիանտի պրոբլեմը երաժշտության

Նովալիս Դերոյան

մեջ», «Մետրառիթմական հակասության դիալեկտիկական բնույթը», «Հայ ժողովրդական երգի պոլիֆոնիան» ևն): Դ–ի՝ որպես մտավորականի, անհատականության լիարժեք անդրադարձն է «Մարիամի խաչելությունը» ինքնակենսագր. վիպակը: Հրապարակախոս. նոթերը վերաբերում են 1980–90–ական թթ–ի բարդ ու հակաս., նաև ողբերգ. իրադարձություններին:

ԴԻԱՊԱԶՈՆ (< հուն. διά πασῶν (χορδῶν) – բոլոր լարերի վրայով), ձայնաածավալ, 1. հինհուն. երաժշտ. տերմին, օկտավայի կոնսոնանս ինտերվալի անվանումը: 2. Երգեհոնի լաբիալ փողերի որոշ ռեգիստրների անվանումն Անգլիայում: 3. Մոդել, ըստ որի պատրաստում են երգեհոնի փողերը, բացում փայտե փող. գործիքների ձայնանցքերը: 4. Ֆրանսիայում՝ փող. գործիքի կամ երգեհոնի փողի մենզուրան, նաև տոն՝ գործիքները



Դիապազոն

լարելու համար: 5. Տարբեր բարձրության ձայների այն շարքը (ամենացածրից՝ ամենաբարձրը), որը կարելի է կատարել երգչական ձայնով: Դ. որոշվում է նրանց ամենաներքևի և ամենավերևի արտաբերած հնչյուններով (օր.՝ ***սոպրանոյի*** Դ.՝ 1–ին օկտավայի c^1–ից մինչև 3–րդ օկտավայի e^3–ն): Դ. ունեն երգչական բոլոր ձայների տեսակները, նաև երգչախմբերը ևն: 6. Ձայնաածավալի հնչյունների այն շարքը (ամենացածրից՝ ամենաբարձրը), որը կարելի է կատարել որևէ երաժշտ. գործիքով: Դ. որոշվում է դրանց ամենաներքևի և ամենավերևի հնչյուններով (օր.՝ դաշնամուրի Դ.՝ սուբկոնտրօկտավայի լա–ից մինչև 5–րդ օկտավայի դո–ն): Դ. ունեն նաև նվագախմբերը, անսամբլները ևն: 7. Երաժշտ. ստեղծագործության ձայնաածավալը կամ նվագաբաժիններից (երգաբաժիններից) որևէ մեկը՝ որոշակի գործիքի կամ ձայնի համար: Հաճախ ռոմանսների և երգերի սկզբում նշվում է Դ. (երգաբաժնի ձայնաածավալը), որը հնարավորություն է տալիս որոշելու, թե տվյալ երկը որքանով է համապատասխանում երգչի ձայն. հնարավորություններին:

ԴԻԱՏՈՆԻԿԱ (< հուն. διατονικός – ձգված, տոնից տոն անցնող), դիատոնիզմ, երաժշտության մեջ հնչյուն. (նաև ձայնակարգ.) որևէ համակարգի աստիճանների հարադրությունը նրանց բնական, անփոփոխ վիճակում (ի տարբերություն ***խրոմատիզմի***): Օգտագործվում են դիատոնիկ հնչյունաշար, դիատոնիկ տոներ և կիսատոներ, ձայնակարգեր, գամմաներ, ինտերվալներ, համահնչյուններ, ակորդներ, դիատոնիկ հարմոնիա և մոդուլացում հասկացությունները: Դ. ընդգրկում է դաս. երաժշտության հիմնական հնչյունաշարը և նրա աստիճաններից կազմված բնական ու հարմոնիկ ***մաժոր*** և ***մինոր*** ձայնակարգերը՝ բուն բնական կոչվող ձայնակարգերը, յուրաքանչյուր ժողովրդի երաժշտության յուրատեսակ, դասականից տարբերվող հիմնական հնչյունաշարերն ու ձայնակարգերը, նրանց աստիճաններով կազմվող գամմաները, ինտերվալները, համահնչյունները ևն:

Հայ ժող. երաժշտության հիմնական դիատոնիկ հնչյունաշարը կազմված է միմյանց կցված մաժոր քառալարերից, որոնց III աստիճանները բնական վիճակում հավասարաչափ տեմպերացվածից փոքր–ինչ ցածր են: Այդ հնչյունաշարի տարբեր աստիճաններից գոյանում են հայ ժող. երաժշտության դիատոնիկ ձայնակարգերը: Դիատոնիկ հնչյունաշարի վրա հիմնվող (կամ դիատոնիկ) երաժշտությանը բնորոշ են արտահայտչամիջոցների հստակությունը, պարզությունը, ժող. ինքնատիպությունը: Սովորաբար ժող. երաժշտությունը դիատոնիկ է: Արևմտաեվրոպ. դաս. երաժշտությունը Վերածննդի շրջանի խիստ Դ–ից (Ժ. դե Պրե, Ջ. Պ. Պալեստրինա և ուր.) անցել է դեպի ձայնակարգ. և հարմոնիկ միջոցների խրոմատիկ բարդացման ու հարստացման (Ռ. Վագներ) փուլ:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԴԻՆԱՄԻԿԱ (< հուն. δύναμις – ուժ, զորություն), 1. ուսմունք հնչողության ուժգնության մասին: Երաժշտ. երկի բովանդակության (բնույթի, տրամաբանության) բացահայտումը մեծապես պայմանավորված է նրա հնչման հարաբեր. ուժգնությամբ, կատարման ընթացքում նրա փոփոխություններով, մասնավորապես՝ դինամիկ. հակադրությունների գործածմամբ: Դ-ի երանգները նոտաներում նշվում են մեծ մասամբ իտալ. կրճատագրված բառերով և հատուկ նշաններով (հայկ. խազերում՝ ձայնուժի հատուկ նշաններով՝ ըստ Կոմիտասի), որոնք կոչվում են Դ-ի նշաններ: Դրանք են՝ պիանո պիանիսսիմո (ppp, չափազանց մեղմ), պիանիսսիմո (pp, շատ մեղմ), պիանո (p, մեղմ), մեցցո պիանո (mp, ոչ շատ մեղմ), մեցցո ֆորտե (mf, ոչ շատ ուժգին), ֆորտե (f, ուժգին), ֆորտիսսիմո (ff, շատ ուժգին), ֆորտե ֆորտիսիմո (fff, չափազանց ուժգին), երբեմն՝ նաև 4 և 5 պիանո և ֆորտե (pppp, ffff): Հնչողության աստիճան. ուժգնացումը նշվում է կրեշչենդո, դեկրեշչենդո կամ դիմինուենդո նշաններով: Անսպասելիորեն ուժեղից թույլի կամ թույլից ուժեղի անցումը նշանակվում է սուբիտո (subito – հանկարծակի) բառով, որը դրվում է պիանո և ֆորտե բառերից առաջ: Որևէ հնչյունի կամ համահնչյունի հանկարծակի ուժգին շեշտումը նշվում է սֆորցանդո բառով (sf): Ուժգնության աստիճանը փոխելու համար հաճախ գործածվում են պիու (piu – ավելի), մոսո (moso – պակաս) և այլ բառեր: Այդուհանդերձ, երաժշտ. երկի կատարումը որոշակիորեն պայմանավորված է նաև կատարողի գեղագիտ. և ստեղծագործ. մեկնաբանմամբ:

2. *Երաժշտական ձայնագիտության* բաժին. ուսումնասիրում է երաժշտ. գործիքների հնչման ուժային հնարավորությունները, նպաստում գործիքաշինությանը:

ԴԻՍԿԱՆՏ (լատ.՝ discantus – խոտորվող երգեցողություն), 1. XII դ-ից լատ. հիմներգության մեջ հանպատրաստից կատարվող զարդարուն մեղեդի, որը երգել են հիմնական մեղեդուց (հիմնից) բարձր՝ որպես նրա դեկորատիվ լրացում (կոնտրապունկտի պարզ տեսակներով): 2. XIII դ-ից՝ միասն. ռիթմի և կոնսոնանս հնչման վրա հիմնված եռաձայնության տեսակ: 3. Երգչախմբում վերին ձայնի և ձայնաբաժնի հին անվանումը (սոպրանո, որի բանալին կոչվել է նաև Դ-ի բանալի): 4. Պատանի երգիչների բարձր ձայն: Դիապազոնը՝ 1-ին օկտավայի ռե-ից (d^1, երբեմն՝ դո-ից c^1) մինչև 2-րդ օկտավայի սոլ-ը (g^2, երբեմն՝ լա-ից a^2): Դ. են կոչվում նաև տվյալ ձայնն ունեցող երգիչները, նաև երգչախմբում այն երգաբաժինը, որը նախատեսված է մանկ. կամ կանանց բարձր ձայների (սոպրանոներ) համար:

ԴԻՍԿՈՏԵԿ (< ֆրանս. disque – շրջան, ձայնասկավառակ և հուն.՝ θήκη – զետեղարան, պահոց), 1. գրամոֆոն. ձայնապնակների (ձայնասկավառակ) հավաքածու: Այժմ այդ իմաստով հաճախ օգտագործում են «ձայնադարան» եզրույթը: 2. Բնակ-

Դիսկոտեկ Երևանում

չության (առավելապես՝ երիտասարդների) երաժշտ. ժամանցի կազմակերպման ձևերից: «Դ.» եզրույթն առաջացել է 1930-ական թթ-ին Ֆրանսիայում՝ ջազի երկրպագուների շրջանում: Դ-ի երաժշտ. ծրագիրը (մեկնաբանում է դիսկ-ժոկեյը) օգտագործում են ոչ միայն որպես պարի նվագակցություն, այլ նաև որպես նոր էստրադ. հանրամատչելի երաժշտության գովազդ: 1970-ական թթ-ի կեսերին լայնորեն տարածվել է դիսկո պար. ժանրը (նաև դիսկո ոճը), որը նպաստել է դիսկո-ակումբների ստեղծմանը (ինքնագործ ստեղծագործ. խմբեր՝ երաժշտության, արվ-ի նկատմամբ ընդհանուր հետաքրքրություններով):

Նաիրա Դիվանյան

ԴԻՎԱՆՅԱՆ Նաիրա Միայի (ծ. 15.10.1965, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (1996-ից): Ավարտել է Երևանի Հ. Դանիելյանի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի և կոմպոզիցիայի (1981), Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանի տեսության և կոմպոզիցիայի (1985, ղեկ.՝ Ա. Սաթյան), ԵՊԿ կոմպոզիցիայի, վոկալ-տես. (1990) բաժինները և ասպիրանտուրան (1994): 1985–92-ին դասավանդել է Երևանի Բ.

Դիրիժորի՝ երկմաս, եռամաս, քառամաս և վեցամաս տակտավորման սխեմաների գրաֆիկական պատկերներ

Կանաչյանի անվ. և Ս. Զրբաշյանի անվ. երաժշտ. դպրոցներում, Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում: 1996–2012-ին՝ «Արևներ» մանկապատանեկան անսամբլում, 2012-ից՝ Հ. Դանիելյանի անվ. արվ-ի դպրոցի տնօրեն:

Գրել է խմբերգեր, գործիք. պիեսներ, ջութակի և դաշնամուրի սոնատ, 2 կվարտետ, մանկ. և էստրադ. երգեր, սիմֆ. պոեմ, «Ձոն Խրիմյան Հայրիկին» կանտատը՝ խառը երգչախմբի և սիմֆ. նվագախմբի համար: Հայաստանի հանր. ռադիոյի և հեռուստատեսության բազմաթիվ երաժշտ. ծրագրերի (1995-ից՝ «Մտորում են երաժիշտները», «Դիսոնանս», «Հակակշիռ», 1996-ից՝ «Արևիկ», 1997-ից՝ «Կամերտոն»), 2000–08-ին՝ «ԱրմենԱկոր» հեռուստաընկերության «Համանվագ» հաղորդաշարի հեղինակ-վարող, սցենարիստ, ռեժ., երաժշտ. մեկնաբան, 2009-ից՝ ATV հեռուստաընկերության «Արևներ» մանկ. հաղորդաշարի ռեժ. և երաժշտ. խմբ.:

ՀՀ հանր. ռադիոյի «Տարվա լավագույն երաժիշտ-մեկնաբան» (2000), Ազգ. առաջին երաժշտ. մրցանակաբաշխության «Տարվա լավագույն երաժշտական հաղորդավար» (2003) մրց-ներ:

ԴԻՎԵՐՏԻՄԵՆՏ (< ֆրանս. divertissement – զվարճալիք, զվարճություն), 1. թատրոնում. XVII–XVIII դդ-ում՝ երաժշտաբեմ. (դրամատիկ. ներկայացում, օպերա, բալետ ևն) ներկայացման բովանդակությանն անմիջապես չառնչվող, ներդրված կամ եզրափակիչ (սովորաբար՝ դյուրությամբ ընկալվող) մաս՝ բաղկացած զվարճալի պարերից, երգերից, կատակ. տեսարաններից: 1870-ական թթ-ին Դ. առանձնացել է որպես էստրադ. թատրոնների և բալագանների ինքնուրույն համերգ. ծրագիր: 2. Երաժշտության մեջ. նախապես եղել է թեթև բնույթի բազմամաս (4–10) գործիք. ստեղծագործություն: Հորինել են գործիք. տարբեր կազմերի համար, ընդգրկել սոնատի, սյուիտի հատկանիշները (Յ. Հայդն, Վ. Ա. Մոցարտ և ուր.): XIX դ-ում սակավ բացառություններով (Ֆ. Շուբերտի «Հունգարական դիվերտիսմենտ»՝ 4 ձեռքով դաշնամուրի համար, Վ. Բելլինիի «Սոմնամբուլա» օպերայի թեմաներով՝ դաշնամուրի և լար. քառյակի համար, Մ. Գլինկայի «Փայլուն դիվերտիսմենտ» ևն) Դ. վերածվել է պոպուրիի կամ վարիացիաների նմանվող սալոն. երաժշտության ժանրի: XX դ-ից «Դ.» տերմինը գործածվում է որպես բալետի համարներից կազմված սյուիտ (օր.՝ Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետում): Երբեմն ստեղծվում են XVIII դ-ի Դ-ի ոճավորված տիպի գործեր:

Դհոլ

ԴԻՐԻԺՈՐ (< ֆրանս. diriger – ուղղություն տալ, ղեկավարել), երաժշտ. ստեղծագործության կոլեկտիվ կատարումը (նվագախումբ, անսամբլ, երգչախումբ, օպեր. և բալետ. խմբեր ևն) ղեկավարող անձ, որն ապահովում է կատարման անսամբլ. ներդաշնակությունը, տեխ. կատարելությունը, ձգտում կատարող երաժիշտներին հաղորդել ստեղծագործության իր մեկնաբանությունը, գեղ. մտահղացումները: Դ-ի տեխնիկան հիմնված է ձեռքերի շարժումների հատուկ մշակված համակարգի վրա, էական են նաև հայացքը, դիմախաղը:

Դ. պետք է օժտված լինի երաժշտատես. պատրաստականությամբ, նուրբ լսողությամբ, երաժշտ. լավ հիշողությամբ ևն: Կատարման ժամանակ Դ. կանգնում է դիրիժոր. նոտակալի առջև (Ռ. Վագներից սկսած՝ մեջքով դահլիճին), ղեկավարում դիրիժոր. փայտիկով (առաջինն օգտագործել է Ի. Մոզելը, 1812, Վիեննա) կամ ձեռքերով:

Փորձերի ընթացքում Դ. մշակում է երաժշտության տակտը, ըստ պարտիտուրի՝ հետևում յուրաքանչյուր երաժշտի նվագին: Հաճախ կոմպոզիտորն է՝ որպես Դ., ղեկավարում նվագախումբը կամ երգչախումբը (կամ երկուսը միասին)՝ իր ստեղծագործությունը ներկայացնելիս:

Ճանաչված Դ-ներից են Կ. Սարաջևը, Ա. Մելիք-Փաշաևը, Մ. Թավրիզյանը, Ա. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Սալունցյանը, Օ. Դուրյանը, Դ. Խանջյանը, Հ. Չեքիջյանը, Լ. Ճգնավորյանը, Ա. Ղարաբեկյանը, Կ. Դուրգարյանը, Է. Թոփչյանը, Ս. Սմբատյանը և ուր.:

ԴՀՈԼ, հայկ. ժող. երկկողմանի հարված. երաժշտ. գործիք, երկթաղանթ գլանաձև թմբուկ: Պատրաստում են փայտից (ուռենու, ընկուզենու կամ սոճու) և մետաղից (պողպատ, արույր ևն), երբեմն՝ ակրիլային պլաստիկատից: Կարմիր, դեղին կամ չներկված գլանաձև ռեզոնատորի 2 բաց կողմերը ծածկված են կաշվե (այծի, ոչխարի, հորթի, նաև արհեստ.) թաղանթով, մի կողմը հաստ է՝ բասային, մյուսը՝ բարակ՝ դիսկանտային: Կաշիները ձգում են (ձայնի բարձրությունը կարգավորվում

է ձգվածության աստիճանով) բարակ թոկով: Բարձր.՝ 30 *սմ*, տրամագիծը՝ 33 *սմ* (խոշորներինը՝ 37 և 49 *սմ*):

Նվագում են փայտե (նաև բամբուկ, եղեգ) 2 (հաստ և բարակ) տարբեր մեծության թակիչներով կամ մատներով ու ափերով: Հնում գործածել են ռազմի ժամանակ: Հիմնականում նվագակցող գործիք է, ընդգրկված է նաև զուռնա-հարների և դուդուկահարների (երբեմն՝ սազանդարների) անսամբլներում և ժող. նվագախմբերում: Դ-ի տիպի ազգ. երաժշտ. գործիքներ ունեն նաև մի շարք այլ ժողովուրդներ:

Գրկ. *Քոչարյան Ա., Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008:*

ԴՈԴԵԿԱՖՈՆԻԱ (< հուն. δώδεκα – տասներկու և φωνή – ձայն, 12 ձայն), ստեղծագործ. մեթոդ երաժշտության մեջ: Սկզբնավորվել է 1910-ական թթ-ին՝ պայմանավորված ***ատոնալ երաժշտության*** զարգացմամբ: Առաջին փորձերը կատարել է ավստրիացի կոմպոզիտոր Յ. Մ. Հաուերը, մշակել ու գործածել է ավստրիացի կոմպոզիտոր Ա. Շյոնբերգը, ապա՝ նրա աշակերտները՝ Ա. Վեբեռնը, Ա. Բերգը և ուր.: Դ-ի մեթոդով գրված ստեղծագործությունը հենվում է խրոմատիկ ձայնաշարի 12 ձայններից (առանց կրկնվելու) կազմված որոշակի շարքի վրա (***«սերիա»***), որը դառնում է ստեղծագործության ինտոնացիոն հիմքը և, շարունակ ձևափոխվելով, կրկնվում է: Գործածվում են հիմնական ձևով և դրա խեցգետնաքայլով, շրջված (***«ինվերսիա»***) և դրա խեցգետնաքայլով: Մի շարք կոմպոզիտորներ Դ-ի տեխնիկան կիրառում են երաժշտության ձայնակարգ-տոնայն. հիմքով:

Հայկ. երաժշտության մեջ ուշագրավ է Ա. Բաբաջանյանի «Վեց պատկեր» դաշնամուր. շարքը (գրել է Դ-ի եղանակով), որտեղ սերիա-թեմաները բխում են հայկ. ժող. երաժշտության ինտոնացիաներից: Տես նաև ***Սերիական երաժշտություն***:

Գրկ. *Денисов Э., Додекафония и проблемы современной композиторской техники, в сб.: Музыка и современность, в. 6, М., 1969; Schönberg A., Style and Idea, N. Y., [1950]; Krěnek E., Zwölftonkontrapunkt–Studien, Mainz, 1952.*

Ըստ Էդուարդ Փաշինյանի

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ալեքսանդր Պողոսի [19.05(01.06).1910, Թիֆլիս–15.01.1968, Մոսկվա], կոմպոզիտոր, դաշնակահար: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1958): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1932), աշակերտել Ս. Ի. Սավշինսկուն և Ն. Յ. Մյասկովսկուն: 1937–40 և 1941–46-ին (ընդմիջումով) դասավանդել է ԵՊԿ-ում: 1946-ից ապրել է Մոսկվայում: Դ-ի ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում երգերն ու ռոմանսները: Հանրահայտ են նրա «Երևանյան գիշերները», «Փոստատարի երգը», «Իմ հայրենիք» և այլ երգեր: Մշակել է հայկ. և այլ ժողովուրդների երգեր: Գրել է «Սևաստոպոլի հերոսները» (1948), «Լենինի ուղիով» (1963) կանտատները, «Տոնական սիմֆոնիա» (1950), «Հայկական կապրիչչո» (1952), 2 կոնցերտ՝ դաշնամուրի և նվագախմբի համար (1947, 1954), «Գեղեցկության մրցույթ» երաժշտ. դրամատ (բեմ.՝ 1967, Մոսկվայի օպերետի թատրոն) և այլ գործեր:

Գրկ. *Александр Долуханян: Воспоминания и статьи о композиторе (сост. Олинская И.), М., 1988.*

Մարգարիտ Հարությունյան



Ալեքսանդր Դոլուխանյան

ԴՈԼՈՒԽԱՆՈՎԱ Զարա Աղասու (Դոլուխանյան Զարուհի, օրիորդ. ազգանունը՝ Մակարյան, 15.03.1918, Մոսկվա–04.12.2007, Մոսկվա), երգչուհի (մեցցո սոպրանո): ՀԽՍՀ (1955), ՌԽՖՍՀ (1956) ժող. արտիստ: Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանը (1933) և մանկավարժ. ինստ-ը (1957): 1941-ից ԵՕԲԹ-ում հանդես է եկել Օլգայի, Պոլինայի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա»), Գայանեի (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Զիբելի (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Դունյաշայի (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն») և այլ դերերգերով: 1944-ից՝ Համամիութ. ռադիոյի և հեռուստատեսության, 1959–82-ին՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մեներգչուհի: 1972-ից դասավանդել է Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ում (պրոֆ.՝ 1983-ից, ամբիոնի վարիչ՝ 1980–85-ին): Դ-ի ձայնն առանձնանում էր կոլորատուր. մեցցո սոպրանոյում հազվադեպ հանդիպող գեղեցիկ տեմբրով և մեծ դիապազոնով (2 $^1/_2$ օկտավա), առավել տպավորիչ էր ցածր ռեգիստրի հագեցած, թավշե ձայնի և թեթև, փայլուն կոլորատուրայի զուգորդումը: Դ. կատարել է ինչպես տեխ. ազատություն և ձայնի հատուկ շարժունակություն պահանջող վիրտուոզ. գործեր (Ռոզինա՝

Զարա Դոլուխանովա

Զ. Դոլուխանովան Միլովզորի դերում (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»)

Զ. Դոլուխանովան Դունյաշայի դերում (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»)

Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», նաև Զ. Ռոսսինիի «Նեապոլյան տարանտելլա»-ն, Վ. Ա. Մոցարտի «Ալելու»-ն), այնպես էլ լայնաշունչ մեղեդայնությամբ և ներքին դրամատիզմով առանձնացող երկեր (Տոսկա՝ Զ. Պուչչինիի «Տոսկա», Դալիլա՝ Կ. Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա»): Երգացանկում՝ Յ. Ս. Բախի, Գ. Ֆ. Հենդելի, Վ. Շուբերտի, Ռ. Շումանի, Գ. Մահլերի, Դ. Դ. Շոստակովիչի, Ս. Ս. Պրոկոֆևի, Ռ. Կ. Շչեդրինի (վերջին երեքը գործեր են գրել Դ-ի համար), Պ. Ի. Չայկովսկու, Ս. Վ. Ռախմանինովի, նաև Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Հարությունյանի, Վ. Կոտոյանի, Մ. Թարիվերդիևի ստեղծագործություններից և հայկ. ժող. երգեր: Համերգներով շրջագայել է ԱՄՆ-ում, Կանադայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Հունաստանում, Լեհաստանում և այլուր: ԽՍՀՄ Պետ. (1951), Լենինյան (1966), Երգիչների միջազգ. մրցույթի 1-ին (1949, Բուդապեշտ) մրց-ներ:

Գրկ. *Յակովենկո Ս., Մոգական Զարուհի Դոլուխանյանը, Ե., 2009: Михайловская Н., Зара Долуханова, М., 1958; Тимохин В., Зара Долуханова: Творческий портрет, М., 1977.*

Ըստ Գեորգի Գյոդակյանի

Կարպ Դոմբաև

ԴՈՄԲԱԵՎ Գրիգորի Սավելիի [Դոմբայանց Գրիգոր Սահակի, 16(29).06.1905, Ցարիցին (այժմ՝ Վոլգոգրադ)–1986], դաշնակահար, երաժշտագետ, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Կարպ *Դոմբաևի* եղբայրը: Ավարտել է Հյուսիսկովկաս. պետ. համալսարանի հաս. գիտների ֆակ-ը և Դոնի Ռոստովի երաժշտագործնական ինստ-ի դաշնամուրի բաժինը (1927): Պրոֆ. (1968): 1925–31-ին՝ Դոնի Ռոստովի ռադիոկոմիտեի, «Սպարտակ», Ա. Վ. Լունաչարսկու անվ. թատրոնների, Լենինգրադի կոնսերվատորիայի դաշնակահար, 1932–37-ին՝ Դոնի Ռոստովի երաժշտ. ուսումնարանի դասատու (տնօրեն՝ 1934–37-ին), 1935–38-ին՝ Ազով-Սևծով. երկրամասի ֆիլհարմոնիայի հիմնադիր-տնօրեն և գեղ. ղեկ., 1942–44-ին՝ Երևանի երաժշտ. ուսումնարանի տնօրեն և դասատու, 1944–47-ին՝ Հայֆիլհարմոնիայի տնօրեն և գեղ. ղեկ., 1947–49-ին՝ ՀԽՍՀ ՆԽ-ին կից արվ-ի գործերի վարչության պետ, 1944–50-ին, միաժամանակ՝ ԵՊԿ դասախոս, 1950–72-ին՝ Գորկու կոնսերվատորիայի տնօրեն և կամեր. անսամբլի վարիչ, 1972–75-ին՝ Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ի պրոֆ. (1975-ից՝ խորհրդատու), 1957–74-ին՝ ԽՍՀՄ ԿՄ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ:

Կազմել է «Պ. Ի. Չայկովսկու երաժշտական ժառանգությունը» և «Պ. Ի. Չայկովսկին և համաշխարհային մշակույթը» (երկուսն էլ՝ ռուս., 1958) տեղեկատուները:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1961):

Երկ. *Творчество Петра Ильича Чайковского: В материалах и документах, М., 1958.*

ԴՈՄԲԱԵՎ Կարպ Սավելիի [Դոմբայանց Կարապետ Սահակի, 08(21).03.1910, Ցարիցին (այժմ՝ Վոլգոգրադ)–28.03.2000, Երևան], ջութակահար, մանկավարժ: Գրիգորի *Դոմբաևի* եղբայրը: ՀԽՍՀ արվ. վաստ.գործիչ (1957): ԵՊԿ պրոֆ. (1954-ից): Սովորել է Լենինգրադի կոնսերվատորիայում (1927–29, Ի. Ա. Զելիխմանի դասարան) և ՄՊԿ-ում (1932–37, Բ. Օ. Սիբորի դասարան): 1940–63 և 1970–2000-ին (ընդմիջումով) դասավանդել է ԵՊԿ-ում (պրոռեկտոր՝ 1940–49-ին, բաժնի վարիչ՝ 1950–60-ին), 1963–70-ին՝ Բաքվի կոնսերվատորիայում: Սաներից են Հ. Վարդանյանը, Ռ. Ահարոնյանը, Ա. Ցիցիկյանը, Լ. Մամիկոնյանը, Ժ. Տեր-Մերգերյանը, Պ. Հայկազյանը, Գ. Հովունցը, Գ. Ածեմյանը, Ա. Բուդաղյանը, Զ. Սահակյանցը և ուր.: Ջութակի և դաշնամուրի համար փոխադրել է Կոմիտասի «Քելեր, ցոլերը», «Կաքավիկը», «Վաղարշապատի պարը», նաև Ռ. Մելիքյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Է. Բաղդասարյանի և ուր. գործերից:

ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1997):

Գրկ. *Будагян А., Карп Савельевич Домбаев, Е., 1996.*

ԴՈՄԻՆԱՆՏ (լատ.՝ dominanta – իշխող), ***մաժոր*** և ***մինոր*** ձայնակարգերի V աստիճանը և նրա վրա կառուցված ***ակորդը***, որն ունի տոնիկայի մեջ լուծվելու պարզ արտահայտված ձգտում: Դ-ի դեր են կատարում նաև նույն ձայնակարգերի VII և III աստիճանների ակորդները: Նշվում է D տառով:

Դոմինանտային ալտերացված ակորդներ մաժորում: Մաժոր ձայնակարգի II աստիճանի իջեցման և բարձրացման հետևանքով ի հայտ են գալիս մի

շարք նոր ակորդներ՝ V^{5}, V^{+5}_{7}, V^{+5}, V^{5}_{7}, VII^{-3},VII^{-3}_{7}, VII^{+3}, VII^{+3}_{7} և դրանց շրջվածքները (V^{+5}_{9},V^{5}_{9}), ըստ որում, ալտերացված VII_{7} և V_{9} օգտագործվում են և՛ բնական, և՛ հարմոնիկ մաժորում:

Հնարավոր է II աստիճանի միաժամանակյա բարձրացումն ու իջեցումը (օր.՝ $V_{4}^{6\,+5}$): Զայնակարգի IV աստիճանի բարձրացման հետևանքով առաջանում են հետևյալ Դ–ային ալտերացված ակորդները՝ V^{+7}_{7}, երբեմն՝ $V_{9\,+5}^{+7\,+5}$ (պրոկոֆևյան Դ.) կամ $VII_{7\,+3}^{+5}$:

Դոմինանտային ալտերացված ակորդներ մինորում: Մինոր ձայնակարգի II աստիճանի իջեցման հետևանքով ի հայտ են գալիս նույն ակորդները, ինչ մաժորում, սակայն իջեցումով (բացառությամբ ձայնակարգի IV աստիճանի, որի հետևանքով առաջանում են V^{7}_{7} և VII^{-5}_{7} ակորդներն իրենց շրջվածքներով):



Դոմինանտային փոքրացված սեպտակորդ: Հարմոնիկ մաժորի և մինորի VII աստիճանի վրա կառուցված փքցվ. սեպտակորդը: Նշվում է VII_{7}:

Դոմինանտ սեպտակորդ: Մաժորի և հարմոնիկ մինորի V աստիճանի վրա կառուցված սեպտակորդը: Նշվում է V_{7} կամ D_{7}: Կառուցվածքով փոքր մաժոր սեպտակորդ է: Լուծվում է թերի տոնիկական եռահնչյան մեջ. բաց է թողնված կվինտային տոնը,



եռապատկված՝ հիմնական տոնը: Ունի 3 շրջվածք՝ դոմինանտկվինտսեքստակորդ (V^5_6, բնորոշվում է ակորդի հիմքում ընկած տերցիային տոնով, լուծվում է տոնիկական լրիվ եռահնչյան մեջ՝ կրկնապատկված հիմնական տոնով), դոմինանտտերցկվարտակորդ (V^3_4, բնորոշվում է ակորդի հիմքում ընկած կվինտային տոնով, լուծվում է տոնիկական լրիվ եռահնչյան մեջ՝ կրկնապատկված հիմնական տոնով) և դոմինանտսեկունդակորդ (V_2, բնորոշվում է ակորդի հիմքում սեպտիմային տոնով, լուծվում է տոնիկական սեքստակորդի մեջ՝ կրկնապատկված հիմնական տոնով), որոնք լուծվում են՝ ըստ ձայնակարգ. ձգողականության տոնիկայի մեջ:

Եթե դոմինանտսեպտակորդը և նրա շրջվածքները լուծվում են ոչ թե տոնիկայի, այլ մեկ ուրիշ աստիճանի ակորդի մեջ, ապա այն համարվում է հարմոնիկ շարժման բնական լուծման ընթացքի խախտում:

ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, հիմնադրվել է 1919-ին Նոր Նախիջևանում՝ «Հայ դերասանների կոոպերատիվ ընկերություն» անվամբ (ղեկ.՝ Հ. Նանասյան): Խմբում ընդգրկվել են պրոֆեսիոնալ երգիչներ, անվանի երաժիշտներ և պարողներ՝ Աննա Ղումաշյան, Եվա Լուսինյան, Մարտին Լուսինյան, Նվարդ Ալիխանյան, Տիգրան Այվազյան, Միքայել Համբարձումյան (Վանշիր), Հայկ Շխիյան, Հայկ Դանզաս (ռեժ.), Միքայել Ալիխանյան և ուր., դիրիժորներ՝ Եղիա Շապոշնիկով, Ներսես Զաքիյան և Գրիգոր Առաքելյան: Առաջին ներկայացումը Դեկկեր-Շենկի «Հաջի Մուրադ» օպերետն էր (թարգմ.՝ Ալեքսանդր Արեյանի), ապա՝ Ի. Կալմանի «Սիլվան», Ջ. Ջոնի «Գեյշան», Ա. Արեյանի «Պըլը-Պուդի» երգախառն կոմեդիան, որոնք աննախընթաց հաջողություն են ունեցել ոչ միայն Նոր Նախիջևանում, Դոնի Ռոստովում, այլև Հս. Կովկասի հայաշատ այլ քաղաքներում: Թատրոնում բեմադրվել են նաև Ի. Կալմանի «Բայադերա», Ֆ. Լեհարի «Կենսուրախ այրին», Վ. Վալենտինովի «Հրո քրմուհին», Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» օպերետները, Շիրվանզադեի «Պատվի համար», Լ. Շանթի «Հին աստվածներ» և այլ դրամատիկ. գործեր: Թատրոնն ունեցել է նվագախումբ և երգչախումբ: Հյուրախաղերով հանդես է եկել Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և Ալեքսանդրապոլում (մոտ 2 ամիս): Փակվել է 1933-ին:

Գրկ. *Մարգսյան Ս., Միրելի անուններ, Ե., 1967:*

ԴՈՒԴՈՒԿ, նայ, նեյ, հայկականը՝ ծիրանափող, գլանափող, կրկնակի լեզվակավոր փող. երաժշտ. գործիք: Դ-ի տեսակները տարածված են Մերձ. Արևելքում, Ճապոնիայում, Չինաստանում, Կովկասում և այլուր: Հնագույն նմուշները հայտնաբերվել են Հին Եգիպտոսում (տարիքը՝ 3500–4000): Ըստ պատմ. որոշ աղբյուրների՝ Դ. գործածվել է դեռևս մ. թ. ա. 1200-ից: Հայկ. Դ-ի պատմությունն սկզբնավորվել է Տիգրան Բ Մեծ արքայի (մ. թ. ա. 95–մ. թ. ա. 55) ժամանակներից:

Հայկ. Դ. առավելապես պատրաստում են ծիրանենու կամ տանձենու փայտից: Բաղկացած է փողից (երկ.՝ 28, 30,5, 33, կամ 40 *սմ*), որի վերևի մասում հագցված է կրկնակի լեզվակավոր եղեգնյա ծվանը (պատրաստում են ամբողջ. եղեգից)՝ դա-

միշը (երկ.՝ 9–14 *սմ*): Փողն ունի 8, հակառակ կողմում՝ 1 կամ 2 ձայնանցք:

Դ. ունի դիատոնիկ հնչյունաշար (կատարող. հնարների շնորհիվ դուդուկահարը կարող է վերարտադրել լրիվ խրոմատիկ հնչյունաշար), 1,5 օկտավա դիապազոն: Փող. այլ գործիքներից առանձնանում է թավշյա նուրբ տեմբրով և հուզականությամբ:

Ծվանի միջին մասում շարժ. օղակն է՝ լարվածքը կարգավորելու համար: Ընդգրկվում է ժող. գործիքների և այլ անսամբլներում: 1920-ական թթ-ին Վարդան *Բունին* ստեղծել է նվագախմբ. Դ-ների 3 տեսակ: Նշանավոր դուդուկահարներից են Գ. Շուլավերցին, Գևոն, Մ. Մարգարյանը, Լ. Մադոյանը, Վ. Հովսեփյանը, Ջ.Գասպարյանը, Գ. Մինասովը (Մինասյան), Գ. Դաբաղյանը, Կ. Սեյրանյանը, Լ. Մինասյանը և ուր.: Դ-ի երաժշտությունը 1980-ական թթ-ից օգտագործվում է ամերիկ. և այլ ֆիլմերի երաժշտության մեջ:

2005-ին հայկ. Դ-ի նվագը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխ. ոչ նյութ. մշակութ.

ժառանգության գլուխգործոցներից: Մոսկվայում «Մոսկվիչ» մշակութ. կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվում է Դ-ի ամենամյա փառատոն (2014-ից):

Գրկ. *Քոչարյան Ա., Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008: Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ դուդուկի համար (կազմ.՝ Գ. Դաբաղյան, Վ. Հովհաննիսյան), Ե., 2008:*

Ընդ. Արամ Քոչարյանի

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ Կարեն Թագվորի (ծ. 14.03.1969, Երևան), դիրիժոր, ֆլեյտահար: ՀՀ վաստ. արտիստ (2006): Ավարտել է ԵՊԿ ֆլեյտայի (1994), դիրիժորության (1996) բաժինները, կատարելագործվել Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1997, Ի. Ա. Մուսինի դասարան): 1991–99-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ֆլեյտահար, 1997-ից՝ Երևանի կամեր. երաժշտ. թատրոնի երաժշտ. ղեկ. և դիրիժոր, 1999–2001-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի 2-րդ դիրիժոր, 2001–15-ին՝ ԵՕԲԹ գլխ. դիրիժոր և

Կարեն Դուրգարյանը փորձի ժամանակ

երաժշտ. ղեկ.: Ղեկավարել է Վ. Ամեմյանի «Կիկոսի մահը», Բ. Բրիտենի «Ոսկե ունայնություն», Վ. Բելլինիի «Նորմա», Ա. Վիվալդիի «Տիգրան Մեծ», Ժ. Բիզեի «Կարմեն», Պ. Ի. Չայկովսկու «Օպրիչնիկ» (2002), «Եվգենի Օնեգին» (2003, երկուսն էլ՝ Իտալիա), Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան» (2003, Հունաստան) օպերաները, Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետները և այլ բեմադրություններ, նաև Տուրինի, Լիսաբոնի օպեր. թատրոնների սիմֆ. նվագախմբերը: Արաբ երգչուհի Ֆեյրուզի հետ հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Լիբանանում, Քուվեյթում, Ավստրալիայում և այլուր: 2005-ին Ստամբուլում ներկայացրել է Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետը: 2006-ին ղեկավարել է Ս. Պետերբուրգի ֆիլհարմոնիկ նվագախումբը (բացել է «Օլիմպոս» միջազգ. երաժշտ. 11-րդ փառատոնը), 2008-ին՝ Դամասկոսի արաբ. մշակութ. փառատոնի միջազգ. նվագախումբն ու երգչախումբը: Եղել է «Բրիտենը և Հայաստանը» միջազգ. փառատոնի ղեկ. (1996, Երևան):

ՀՀ Ա. Խաչատրյանի անվ. ոսկե (2004), «Մովսես Խորենացի» (2009) մեդալներ, վարչապետի հուշամեդալ (2013):

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ Հմայակ Խաչիկի (ծ. 01.06.1942, Լենինական), ջութակահար, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ: Ավարտել է ԵՊԿ (1967): 1962–69-ին՝ Հայաստանի կամեր. նվագախմբի, 1982–94-ին՝ «Մոսկվայի վիրտուոզներ» կամեր. անսամբլի մենակատար, 1972–82-ին՝ ԽՍՀՄ պետ. սիմֆ. նվագախմբի ջութակահար, 1990-ին՝ Աստուրիայի (Իսպանիա) սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր: Մասնակցել է «Ս. Պետերբուրգի Ծննդյան հանդիպումներ» (1993), Ֆրանսիայի (1994, 1995), Իսպանիայի (2003) միջազգ. երաժշտ. փառատոներին: Վարպետության դասեր է վարել Իսպանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում:

ԴՈՒՐՅԱՆ Լին (Տիրատուրյան Նվարդ) Արմենի (29.06.1933, Լիոն–17.05.2014, Փարիզ), երգչուհի (մեցցո սոպրանո): Սովորել է Լիոնի կոնսերվատորիայում: 1957-ին տեղափոխվել է Փարիզ: «Կոնցերտ մյուզիկրեն» խմբի հետ ելույթներ է ունեցել Հոլանդիայում, Բելգիայում: 1963-ից՝ Փարիզի «Գրանդ օպերա»-ի երգչախմբի երգչուհի, 1966-ից՝ նույն թատրոնի մենակատար երգչուհի: Առավել ճանաչվել է Էբոլիի, Աիդայի, Ազուչենայի (Ջ. Վերդիի «Դոն Կառլոս», «Աիդա», «Տրուբադուր»), Կարմենի (Ժ. Բիզեի «Կարմեն») դերերգերով: Համերգ. երկացանկում՝ Կոմիտասի, Գ. Սյունու, Ա. Մեսումենցի և ուր. երգերից: Հյուրախաղերով շրջագայել է Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում, Արգենտինայում: 1972 և 2005-ին համերգներով այցելել է Երևան, վարպետության դասեր վարել 2003-ին:

ԴՈՒՐՅԱՆ Օհան (Խաչատուրյան Օհանես) Խաչատուրի (08.09.1922, Երուսաղեմ–06.01.2011, Երևան), դիրիժոր, կոմպոզիտոր: Ալիս *Շահմիրյանի* ամուսինը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): Ավարտել է Երուսաղեմի կոնսերվատորիան

Կարեն Դուրգարյան

Հմայակ Դուրգարյան

Լին Դուրյան

Օհան Դուրյան

(1945), կատարելագործվել Փարիզում, Վիեննայում: 1957–74, 1991–2002-ին ապրել և գործել է Երևանում: 1957–60-ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1960–65, 1972–74-ին՝ գլխ. դիրիժոր, 1967–74, 1991–94-ին՝ Հայաստանի ռադիոյի (1999-ից՝ Դ-ի անվ.) սիմֆ. նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ., 1971–72, 1999–2002-ին՝ ԵՕԲԹ գլխ. դիրիժոր (Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Տրավիատա» ևն), 1962–69-ին (պարբերաբար)՝ Լայպցիգի օպեր. թատրոնի երաժշտ. ղեկ. և «Գևանդհաուզ» սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1987–90-ին՝ Ավինյոնի օպեր. թատրոնի երաժշտ. ղեկ. և սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր: Ղեկավարել է աշխարհի ավելի քան 100, այդ թվում՝ Վիեննայի օպերայի և Բեռլինի ֆիլհարմոնիայի «Ֆոն Կարայան» նվագախմբերը: Դ. հայ կոմպոզիտորների մի շարք սիմֆ. գործերի առաջին մեկնաբանն է: Նրա դիրիժոր. անհատականությանը բնորոշ են վառ տեմպերամենտը, կատարման հուզականությունը, խտությունը, ստեղծագործ. մտքի և մեկնաբանման ինքնատիպությունը: Գրել է «Ձոն Հայրենիքիս» (խոսք՝ Ա. Իսահակյանի, 1945), 4 պաստորալ՝ կամեր. նվագախմբի համար (1952–53), օրատորիա՝ Կոմիտասի երկերի թեմաներով (1955), «Կոմիտասական» 2 սիմֆ. սյուիտ (1962, 1971) ևն:

Օ. Դուրյանը ելույթի պահին

ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1997), «Մովսես Խորենացի» մեդալ (1996), Ֆրանսիայի Գրկ-յան և արվ-ի ասպետ (1998):

Գրկ. *Մահտեսյան Ռ., Խոսող ձեռքեր, Ե., 1999:*

Ե

ԵԴԻԳԱՐՅԱՆ Վյաչեսլավ Արշավիրի (ծ. 23.08.1947, Բաքու), դաշնակահար, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու (2004), դոցենտ (2005): Ավարտել է Բաքվի Ա. Զեյնալլիի անվ. երաժշտ. ուսումնարանի (1965, դասատու՝ Ռ. Լևինա), Բաքվի կոնսերվատորիայի (1970) դաշնամուրի բաժինները: 1970–74-ին աշխատել է Սումգայիթի երաժշտ. ուսումնարանում (դաշնամուրի բաժնի վարիչ՝ 1972–74-ին): 1974-ից դասավանդել է ՀՊՄԻ-ում (ամբիոնի վարիչ՝ 2009–12-ին), 1974–85-ին, միաժամանակ՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: Համերգներով հանդես է եկել որպես մենակատար (նաև կամեր. անսամբլի հետ) և կոնցերտմայստեր:

Հեղինակ է «Դաշնամուրի դասավանդման մեթոդիկա» (1999) ձեռնարկի:

Երկ. *Рапсодия „Наши старые песни“ в ракурсе фортепианного стиля А. Арутюняна, Е., 2004; Фортепианное творчество Александра Арутюняна: Исследование, Е., 2011.*

ԵԼԱՆԳԵՋՅԱՆ Խուան Ռեյնալդո Սամուել (Ելանկէօզեան Հովհաննես) Հովսեփի (ծ. 18.12.1950, Բուենոս Այրես), կոմպոզիտոր, երաժշտագետ: Երաժշտագիտ. դ-ր (2004): ՀԳՄ և ՀԿՄ անդամ: Ավարտել է Արգենտինայի «Կաթողիկե» համալսարանը (1982), ԵՊԿ երաժշտագիտության (1984) և կոմպոզիցիայի (2001) բաժինները: Դասավանդում է «Կաթողիկե» համալսարանի մշակույթի ինստ-ում (պրոֆ.՝ 1996-ից):

Գրել է «Նախնիներից» (1974) պիեսը՝ թավջութակի, «Կատարսիս» (1977)՝ դաշնամուրի և դերասանի, «Արյան սյուիտ»՝ դաշնամուրի (1991, Արցախի հերոսամարտի զոհերի հիշատակին) համար, «Երկխոսություն» (1983) տրիոն, դաշնամուրի 3 պիես («Ձրաներկեր», «Կիլիկիա», «Մատաղ», 1983), «Մարող լույսի երգեր» (1991), «Պատանեկան երգեր» (1991) վոկալ շարքերը (Ե-ի խոսքերով), «Հայոց աստվածները կամ Սենյակ Վահագնի» (2001) սիմֆ. պոեմը և այլ գործեր՝ ժամանակակից կոմպոզիտոր. տեխնիկայով, հայկ. և լատինամերիկ. երաժշտության տարրերի համադրմամբ: Ե-ի ստեղծագործությունները կատարվել են Բուենոս Այրեսում, Երևանում, Փարիզում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Բուլղարիայում, Թուրքիայում և այլուր:

Հեղինակ է երաժշտագիտ. աշխ-ների, «Սրինգ», «Զիմ Կիլիկիա» վեպերի և «Արյուն» (իսպ., 1993) բանաստեղծությունների ժող-ի:

Վյաչեսլավ Եդիգարյան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, քրիստ. ժամասացության հետ կատարվող երաժշտություն, ինուց աշխարհում տարածված հոգևոր երաժշտության տեսակ, միջնադարի երաժշտաբանաստեղծ. մասնագիտացված արվ.: Յուրաքանչյուր եկեղեցի (ուղղափառ, կաթոլիկ., բողոք., հայ լուսավորչ.) մշակել է պաշտամունքի երաժշտ. ձևավորման իր սկզբունքները, տեսակներն ու ձևերը, որոնք ունեն էական տարբերություններ և պայմանավորված են առանձին երկրների, ժողովուրդների երաժշտ. մշակույթի պատմ. զարգացման պայմաններով ու առանձնահատկություններով:

Հուն. ուղղափառ եկեղեցու երաժշտությունը հիմնված է եկեղեց. ձայնեղանակներին խարսխված խիստ դիատոնիկ երգեցողության ու ազատ խոսք. ռիթմիկայի վրա և հաճախ ուղեկցվում է ձայնառությամբ: Ռուս. ուղղափառ եկեղեցու երաժշտության հիմքում «զնամեննի ռասպև»-ն է, կաթոլիկականինը՝ գրիգորյան, լյութերականինը՝ բողոք. խորալները, հայ լուսավորչականինը՝ շարականերգությունը: Ուղղափառ եկեղեցում ժամերգությունը կատարվում է եկեղեցասլավոն. լեզվով՝ առանց նվագակցության, կաթոլիկ. եկեղեցում՝ լատ. (1962–65-ի կաթոլիկ. եկեղեցու XXI տիեզ. ժողովի թույլտվությամբ՝ նաև մայրենի լեզուներով)՝ պրոֆեսիոնալ երգիչների ա կապելլա երգեցողությամբ կամ երաժշտ. գործիքների (երգեհոն, նվագախումբ) նվագակցությամբ, լյութեր. եկեղեցում՝ տվյալ ժողովրդի մայրենի լեզվով՝ բոլոր ծխականների մասնակցությամբ, երգեհոնի կամ այլ գործիքների նվագակ-

Խուան Ելանգեջյան

Մակար Եկմալյան

ցությամբ: ՀԱԵ ժամերգությունը կատարվում է հայ.:

Գրկ. *Երգեր հոգևոր արթնութեան եղանակներով (հաւաքեց եւ թրգմ.՝ Ա. Քէմալեան), Ֆրեզնո, 1931: Տէր Է ա ն Խ., Ընթացք հայ եկեղեցական երաժշտութեան, Վնտ., 1958: Պ ա տ մ ա գ ր ե ա ն Ա., Հայ երգը դարերի միջից, Բեյրութ, 1977: Մեղեդիներ, տաղեր եւ գանձեր Հայաստանեայց եկեղեցւոյ, Անթիլիաս, 1990: Հոգևոր երգեր [Շարականներ, տաղեր, մեղեդիներ և պատարագի երգաստացութիւններ], կազմ., խմբ. և առաջաբանը՝ Ա. Արևշատյանի, Ե., 1998:*

ԵԿՄԱԼՅԱՆ Մակար Գրիգորի [21.01(02.02).1856, Վաղարշապատ–06(19).03.1905, Թիֆլիս], կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: Ավարտել է Սբ Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը (1872), Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան (1888). աշակերտել է Յ. Յոհաննսենին, Ա. Կ. Լյադովին, Ն. Կ. Սոլովյովին, Լ. Սակետտիին, մասնագիտացել Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի դասարանում: 1873–74-ին Նիկողայոս *Թաշճյանի* ղեկավարությամբ վարժվել է հայկ. նոտագրությանը, մասնակցել հայ հոգևոր երաժշտ. մատյանների նորոգմանը (հայկ. նոտագրությամբ) և հրատարակմանը: 1874–77-ին Գևորգյան ճեմարանում դասավանդել է երգեցողություն և հայ եկեղեց. երաժշտության տեսություն, միաժամանակ հաճախել է այդ հաստատության մի քանի դասընթացների: Ս. Պետերբուրգում ուսանելու տարիներին եղել է Հայ եկեղեցու դպրապետ-խմբավար: 1891-ից ապրել է Թիֆլիսում. երաժշտություն է դասավանդել Ներսիսյան դպրոցում, ղեկավարել տղամարդկանց երգչախումբը: 1893–94-ին երաժշտության տեսություն է դասավանդել Ռուս. կայսեր. երաժշտ. ընկերության Թիֆլիսի բաժանմունքի ուսումնարանում, եղել նրա ղեկ-ը: Կյանքի վերջին շրջանում կորցրել է հոգեկան հավասարակշռությունը:

Հատված Մ. Եկմալյանի «Ով Հայոց աշխարհ» երգից

Մ. Եկմալյանի «Երգեցողութիւնք սրբոյ պատարագի» գրքի (2017) կազմը

Ե–ի վաղ շրջանի ստեղծագործություններում նկատելի է գերմ. ռոմանտիկ. երաժշտության ազդեցությունը: Թեև նա գիտակցաբար և նպատակաուղղված հակվել է ազգ. երաժշտության ակունքներին, և նրա ոճի ձևավորման ու բյուրեղացման համար հիմքը ազգ. երաժշտությունն էր՝ իր ժող., ժողովրդապրոֆեսիոնալ և հոգևոր ճյուղերով, այնուամենայնիվ, Ե–ի ստեղծած բազմաձայնությունը հենվում է եվրոպ. և ռուս. երաժշտության մշակած սկզբունքների վրա:

Ստեղծագործ. ժառանգությունը (պահպանվել է նկատելի կորուստներով) ընդգրկում է տարբեր ժանրերի երկեր՝ դաշնամուր. նոկտյուռն, սիմֆ. նախերգանք, «Ռոզայի դեգերումները» կանտատը (ըստ Մ. Հոռնի հեքիաթի)՝ սիմֆ. նվագախմբի, երգչախմբի, մեներգիչների համար (պահպանվել են հատվածներ): Ե–ի երգ. ժառանգության (հատկապես գլուխգործոցի՝ «Պատարագի») առանցքը հոգևոր, աշխարհիկ երգերի մշակումներն են (մեներգ՝ նվագակցությամբ, խմբերգ): Մինչ «Պատարագի» հրատարակումն ու ամբողջ. կատարումը՝ նրա որոշ հատվածներ («Սուրբ Աստուած», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», «Հայր մեր», «Տէր ողորմեա» ևն) Ներսիսյան դպրոցի երգչախումբը կատարել է եկեղեցում, հետագայում՝ նաև համերգներում:

Ե. մշակել է եկեղեցում կատարվող շարականներ («Նորահրաշ»՝ քառաձայն խառը կազմի համար), հոգևոր երգեր («Աշխարհ ամենայն»՝ տղամարդկանց եռաձայն կազմի համար) ևն: Ե–ի աշխարհիկ երգ. ժառանգությունն ընդգրկում է ժող., քաղաք., աշուղ., նաև տարբեր թեմաներով երգերի մշակումներ և իր ստեղծած մեղեդիներով երգեր: Ժողովրդականություն են վայելում հատկապես նրա ազգ-հայրենասիր. երգերը՝ «Ով Հայոց աշխարհ», «Լռեց, ամպերը եկան ծածկեցին երկինք», «Պլպուլն Ավարայրի» ևն:

«Երգեցողութիւնք սրբոյ պատարագի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ» ստեղծագործությունը (1892, հրտ.՝ 1896) հիմնված է հոգևոր ավանդ. եղանակ-

ների վրա: Աշակված է 3 տարբերակով՝ եռաձայն և քառաձայն՝ տղամարդկանց, քառաձայն՝ խառը երգչախմբերի, մենակատարների և նվագակցության համար (վերջինիս նվագամասը կարող է մենակատարվել նաև որպես ստեղծագործության կլավիր):

«Պատարագը», սահմանված կարգով, քննել և բարձր են գնահատել Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի և կայսեր. կապելլայի խորհուրդները (1893), հետագայում՝ նաև եվրոպացի նշանավոր երաժիշտներ (Ֆ. Լիստ, Կ. Սեն-Սանս, Լ. Բուրգո-Դյուկուդրե):

1895-ին Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի (1911–30-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանց) միջնորդությամբ, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու (Խրիմյան Հայրիկ) հայրապետ. կոնդակով ՀԱԵ պաշտոնապես ընդունել է «Պատարագը», որով հիմք է դրվել ծեսում նրա բազմաձայն կատարմանը (թեև, նախքան այդ, որոշ հոգևոր երգերի բազմաձայն կատարումներ թույլատրվել են Կ. Պոլսում):

1890-ական թթ-ին Ե-ի գործունեությունը մեծապես նպաստել է խմբերգ. արվ-ի մակարդակի բարձրացմանը: Հայ պրոֆեսիոնալ երաժշտ. դպրոցի սկզբնավորումը պայմանավորվել է նաև Ե-ի արվ-ով:

Ե-ին աշակերտել են Կոմիտասը, Արմենակ Շահմուրադյանը, Շարա Տալյանը, Մուշեղ Աղայանը, Արամ Տեր-Հովհաննիսյանը, Անտոն Մայիլյանը, Ազատ Սանուկյանը, Արմեն Տիգրանյանը և ուր.:

Երկ. *Խմբերգեր և մեներգեր, [Նոտաի], Ե., 1970:*

Գրկ. *Մելիքյան Ռ., Եկմալյանի հիշատակին, «Թատրոն և երաժշտություն», 1915, № 6–7: Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Աթայան Ռ., Եկմալյանի մշակած նորահայտ գեղջուկ երգերը, ՍՍ, 1968, № 12: Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դ. և XX դարասկզբում, Ե., 1970 (Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, հ. 2): Թահմիզյան Ն., Սմբատ Եկմալյան. Կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1981: Հարությունյան Մ., Բարսամյան Ա., Հայ երաժշտության պատմություն, Ե., 1996: Սմբատ Եկմալյան: Վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ, կազմ.՝ Ա. Թադևոսյան, Ե., 2006: Армянские композиторы (сост.: Р. А. Атаян, М. О. Мурадян, А. Г. Татевосян), Е., 1956; Шавердян А., Очерки по истории армянской музыки XIX–XX веков, М., 1959; Худабашян К. Э., Особенности гармонии в произведениях М. Екмаляна, ВЕҲ, 1968, № 2: Սմբատ Եկմալյան: Համառոտ բիբլիոգրաֆիա, կազմ.՝ Ն. Թեյմուրազյան, Ե., 1959:*

Միհր Նավոյան

ԵՂԻԱ ՄԵԾ ՎԱՐԴԱՊԵՏ, XII–XIII դդ-ի նշանավոր վարդապետ, երաժիշտ, Հավուց թառի վանահայր: Մասնակցել է Լոռիում գումարված եկեղեց. ժողովին (XIII դ-ի 1-ին տասնամյակ): Նպաստել է պաշտոներգության կատարող. մակարդակի բարձրացմանը, բարեկարգել և կանոնավորել մենակատար (սոլո) և խմբային երգեցողությունը՝ ըստ խազավոր ընտիր մատյանների: Վախճանվել և թաղվել է Հավուց թառում:

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ ԿԱՐՆԵՑԻ Աստվածատուրի [1689, գ. Կրման (Կիսկիմի գավառի Խոտորջուր գավառակ)–1750, Կարին], վաճառական, դիվանագետ, բանահավաք: Սովորել է Կարինի հայկ. դպրոցում: Ապրել է Շամախիում, Թավրիզում: 1717–24-ին ծառայել է Արևելահնդ. ընկերության Թավրիզի բաժանմունքում, 1724-ին գլխավորել է Եվրոպա մեկնող պարսկ. դիվանագիտ. պատվիրակությունը: Շրջագայել է բազմաթիվ երկրներում:

Գրառել է հայկ. և թուրք. բանահյուս. նյութեր, «Քյոռօղլու» տարբերակներ, հայ և թուրք աշուղների, բանաստեղծների երգեր ու տաղեր: Նրա արխիվը (հաշվեմատյաններ, նամակներ, բանահյուս. նյութեր, եզոպոսի առակների թարգմանություններ՝ ֆրանս-ից, ևն) պահվում է ՌԴ արտաքին քաղաքականության արխիվում («Հայաստանի հետ Ռուսաստանի հարաբերությունների ֆոնդ»), «Հուշամատյանը» (ձեռագիր)՝ ՎննՄՄ մատենադարանում:

Երկ. Եղիա Կարնեցու Դիվանը (առաջաբան և ծնթգր.՝ Ա. Գ. Աբրահամյանի), Ե., 1968: Թուրքերեն-հայերեն բառարան, աշխատասիր.՝ Բ. Չոգասզյանի, Ե., 1986:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Գրիգոր Եղիազարի [08(21).12.1908, գ. Բլուր (Սուրմալուի գավառ)–04.11.1988, Երևան], կոմպոզիտոր, մանկավարժ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1977): 1953–57-ին՝ ՀԿՄ նախագահ: Հայ արդի կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրներից: Ավարտել է ՄՊԿ-ին կից երաժշտ. ուսումնարանը (1930), ՄՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1935, Ն. Յ. Մյասկովսկու դասարան): 1938-ից դասավանդել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժնում (պրոֆ.՝ 1959-ից, ռեկտոր՝ 1954–60-ին):

Ե-ի ստեղծագործության մեջ իշխող թեման հայ ժողովրդի ծանր, սակայն հերոս. անցյալն է, որի մասին նա խորհում է առասպելի ու դյուցազն. պատումի, այլաբանության միջոցով՝ ժողովրդին

«Եղիա Ապտուածատրեան Մուշեղեան եւ իր գրական արտադրութիւնները» գրքի (1927) տիտղոսաթերթը

Գրիգոր Եղիազարյան

Տեսարան Գ. Եղիազարյանի «Սևան» բալետի բեմադրությունից (1956, ԵՕԲԹ)

Նարինե Եղիյանը Յերլինայի դերում (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»)



Եղջերափող

մշտապես սերտորեն կապված տեսնելով հայրենի բնաշխարհի հետ: Գործերն առանձնանում են գաղափար. հագեցվածությամբ, էպիկ. շնչով, ժող. երգի ելևէջների ստեղծագործաբար օգտագործմամբ: Գրել է «Հայաստան» (1942), «Արևածագին» (1952) սիմֆ. պոեմները, «Ռապսոդիա» (1939), «Քնարական պատկեր» (1939), «Խորեոգրաֆիկ պատկեր» (1943), «Հրազդան» սիմֆոնիան (1960), պիեսներ, ռոմանսներ, թատրոնի և կինոյի երաժշտություն: Առավել ճանաչված են «Սևան» (1956, 2-րդ խմբ.՝ «Անուրջների լիճը», 1968), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (1973) բալետները:

Ե-ին աշակերտել են Գևորգ Արմենյանը, Ալեքսանդր Ամեմյանը, Էմին Արիստակեսյանը, Էդուարդ Բաղդասարյանը, Գրիգոր Հախինյանը, Էդգար Հովհաննիսյանը, Գեղունի Չթչյանը, Մարտուն Իսրայելյանը, Երվանդ Երկանյանը և ուր.:

Հայ կոմպոզիտոր. արվ-ի IX փառատոնը (2018, Երևան) նվիրվել է Ե-ի ծննդյան 110-ամյակին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1970), Աշխ. կարմիր դրոշի շքանշան (2):

Երկ. Армянские народные танцы: Сюита для симфонического оркестра, М., 1977.

Գրկ. Խուդաբաշյան Կ., Գրիգոր Եղիազարյան, Ե., 1966: Գյոդակյան Գ., Բալետի երկրորդ կյանքը, ՍՄ, 1969, № 1: Բալյան Վ., Խոսք ուսուցչի մասին, Ե., 2010: Աապտյան Ա., Հայաստանի կոմպոզիտորների միություն - 85, Ե., 2017: Еолян И., Григор Егиазарян, М., 1968.

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Լևոն [1862, Շուշի–1927, Բրաշով (Ռումինիա)], խմբավար, բանահավաք: Երկար տարիներ գործել է Փարիզում, ապա մեկնել է Հարավսլավիա: 1925-ից ապրել է Ռումինիայում. ղեկավարել է երգչախմբեր, հայ երաժշտության մասին հոդվածներ է տպագրել տեղի «Գացետա», «Տրանսիլվանիա» և այլ թերթերում: Հավաքել է Արցախի և հայկ. այլ գավառների մի շարք հայկ. ժող., աշուղ. երգեր, որոնցից շուրջ 40-ը հրատարակել է «Ցավի ծաղիկը» ժող-ում: Նրա հավաքած բանահյուս. նմուշներից ռումին կոմպոզիտոր Ջ. Էնեսկուն և իտալացի կոմպոզիտոր Օ. Ռեսպիգին մշակել և բազմաձայնել են երգչախմբի համար:

ԵՂԻՅԱՆ Նարինե Միշայի (ծ. 16.12.1981, Երևան), երգչուհի (սոպրանո): Ավարտել է ԵՊԿ (2006, Ն. Փիրումովայի դասարան) և ասպիրանտուրան (2008), Բեռլինի պետ. օպեր. թատրոնի միջազգ. օպեր. ստուդիան (2013): Արժանացել է «Ռիխարդ Վագներ» և «Լիզ Մուն» մշակույթի ու երաժշտության հիմնադրամների կրթաթոշակների: Վարպետության դասեր է առել Բ. Ֆասբենդերից, Դ. Պոլասկիից, Ռ. Թոռեկելից և ուր.: 2013-ից՝ Բեռլինի պետ. օպեր. թատրոնի մեներգչուհի. դերերգերից են՝ Տերալտ (Ջ. Վերդիի «Դոն Կառլոս»), Պամինա, Յերլինա (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», «Դոն Ժուան»), Ամոր (Ք. Վ. Գլյուկի «Օրփեոս և Եվրիդիկե»), Բարբարա (Գ. Թելեմանի «Էմմա և Էգինհարդ»), Վոգլինդե (Ռ. Վագների «Հռենոսի ոսկին»), Ջանետ (Գ. Դոնիցետտիի «Սիրո ըմպելիք»), Մարցելինա (Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո»), Իոլանտա (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա») ևն: Մասնակցել է համերգների Բեռլինում, Փարիզում, Տերեցինում (Չեխիա), Իսպանիայում, մենահամերգներ է ունեցել Բեռլինի օպեր. թատրոնում (2015): Ելույթներ է ունեցել դիրիժորներ Ֆ. Մարկովիչի, Ա. Ռեբշտայնի, Հ. Գրիֆիտսի, Ռ. Յակոբսի, Բ. Բայլի և ուր. ղեկավարությամբ: Երկացանկում՝ Ռ. Շտրաուսի գործերից:

ՀՀ նախագահի մրց. (2007), Տ. Սազանդարյանի անվ. մեներգիչների հանրապետ. (2006), «Հանս Գաբոր» (2006, Վիեննա), «Նոր ձայներ» (Հատուկ մրց., 2009, Գերմանիա), Պ. Դոմինգոյի «Օպերալիա» (2011, Մոսկվա) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ԵՂՋԵՐԱՓՈՂ, փող. մունդշտուկավոր հնագույն երաժշտ. գործիք: Պատրաստվել է կենդանու սնամեջ եղջյուրից, հետագայում՝ փայտից, փայտի կեղևից, ոսկորից կամ մետաղից: XVI դ-ում ավելացրել են հնչյունի բարձրությունը փոփոխող անցքեր, ապա՝ փականներ: Կոնաձև փողակով բազմաթիվ փող. երաժշտ. գործիքների նախատիպն է: Օգտագործվում է հիմնականում որպես հովվական, որսորդ., փոստ. և ռազմ. ազդանշան. գործիք:

Ե. հնագույն ժամանակներից Հայաստանում լայնորեն կիրառվել է հիմնականում հոգևոր և աշխարհիկ ծեսերի, որսի, ռազմարշավների ևն ժամանակ: Հայտնի է եղել նաև որսորդ. փող, ռազմ. փող, հաղթության փող, նշանափող, ահազնափող, հոբելյան. փող (ըստ պատմագիրների՝ կիրառվել է զոհաբերության ժամանակ, կոչվել է նաև նվիրափող) անվանումներով:

Հայաստանում Ե–ի նմուշներ են հայտնաբերվել Սևանի ավազանի Զաղալու (այժմ՝ Ծովակ) գ–ում (1906–08, թվագրվում է մ. թ. ա. I հզ–ով), Գեղարդի տաճարի ներսի պատի քանդակի վրա:

Գրկ. Քոչարյան Ա., Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008:

ԵՆԹԱԶԱՅՆ երաժշտական բազմաձայն ֆակտուրայում, 1. հիմնական եղանակի ճյուղավորումից առաջացող տարբերակ–եղանակը, որը երբեմն միաձուլվում է հիմնականի հետ, երբեմն դառնում ինքնուրույն:

Ե–ային պոլիֆոնիան ռուս., մասամբ՝ ուկր. ու բելառուս. ժող. երաժշտության ազգ. ինքնատիպ հատկանիշներից է, որն արտահայտվել է նաև կոմպոզիտոր. երկերում:

2. Հիմնական եղանակի հետ ընթացող, նրա բնորոշ ելևէջներից կամ նրանց տարբերակումներից կազմված ձայն, որն ընդգծում է հիմնական եղանակի մեղեդիական ինքնատիպությունը: Այսպիսի Ե–եր Կոմիտասը հաճախ օգտագործել է իր խմբերգերում:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԵՌԱՆԿՅՈՒՆԻ (իտալ.՝ triangolo, ֆրանս. և անգլ.՝ triangle, գերմ.՝ Triangel), որոշակի բարձրություն չունեցող հարված. երաժշտ. գործիք: Պատրաստում են պողպատից կամ ալյումինից: Ստեղծվել է XVI դ–ում: Ձայնարտաբերման համար կախում են կաշեփոկից կամ լարից և հարվածում մետաղե (հազվադեպ՝ փայտե) ձողիկով: Ունի փայլուն և զրնգուն հնչերանգ: Նոտագրվում է ջութակի բանալիով: XVIII դ–ից օգտագործվում է զիմֆոնր., ապա՝ սիմֆ. նվագախմբերում և գործիք. անսամբլներում: Առաջին ստեղծագործությունը, որտեղ Ե. ունի առավել ինքնուրույն նվագամաս, Ֆ. Լիստի 1–ին կոնցերտն է՝ դաշնամուրի և նվագախմբի համար:

ԵՍԱՅԱՆ Նունե Մարտիկի (ծ. 05.08. 1969, Երևան), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2006): Երգել է 5 տարեկանից: Սովորել է ԵՊԻ–ում (1986–87), Երևանի էստրադ–ջազ. քոլեջում (1987–89, դասատուներ՝ Տ. Հովհաննիսյան, Ա. Գրիգորյան): 1990–ից՝ Հայաստանի էստրադ. նվագախմբի մեներգչուհի: 1993–95–ին երաժշտ. գործունեությունը շարունակել է Սիրիայում: 1995–ին ստեղծել է նվագախումբ: Երգացանկում՝ աշուղ. երգերի մշակումներ (Սայաթ–Նովա, Շերամ, Հավասի, Աշոտ), ժամանակակից հայ կոմպոզիտորների (Ա. Գրիգորյան, Է. Դյանջումյան և ուր.) գործեր: Լավագույն կատարումներից են՝ «Դլե յաման», «Ձյուն», «Ինչու ես քեզ սիրեցի», «Սեր իմ», «Հայ ենք մենք», «Գետաշեն» և այլ երգեր: Համերգներով հանդես է եկել ԱՄՆ–ում, Կանադայում, Եվրոպայում, Միջին Արևելքում և այլուր: Համագործակցել է ճանաչված երգիչներ Պատրիկ Ֆիորիի և Անդիի հետ: Թողարկել է «Ով ինչ գիտի» (1997), «Աշխարհ» (1999), «Նունե» (2000), «Սայաթ–Նովա» (2002), «Դլե յաման» (2006), «Sold out» (2011) և այլ ձայնասկավառակներ: Նկարահանել է 20–ից ավելի տեսահոլովակ:

«Այո», «Միսս սոուլ» հեռուստատես. մրց–ների 1–ին մրց. (1989, Երևան):

«ԵՎՐԱՏԵՍԻԼ» (անգլ.՝ Eurovision Song Contest, ֆրանս.՝ Concurs Evrovision de la Chanson), երգի ամենամյա հեռուստամրցույթ: Անցկացվում է 1956–ից՝ Եվրոպ. հեռուստահեռարձակողների միության անդամ երկրների միջև: Մասնակիցները ներկայանում են ուղիղ եթերում՝ 1 երգով՝ կենդանի ինչողությամբ: Հեռարձակվում է նաև ռադիոյով, 2000–ից՝ համացանցով, որին քվեարկում է յուրաքանչյուր մասնակից երկիր՝ մյուսների օգտին տալով սահմանված չափի միավորներ (մինչև 12 միավոր):

ՀՀ մրցույթին մասնակցում է 2006–ից.

2018–ին՝ Սևակ Խանաղյանը («Քամի», 10–րդ տեղ),

2017–ին՝ Արծվիկը (Արծվիկ Հարությունյան, «Ճախրիր ինձ հետ», 18–րդ տեղ),

2016–ին՝ Իվետա Մուկուչյանը («Սիրո ալիք», 7–րդ տեղ),

2015–ին՝ «Geneology» խումբը («Առերեսվիր ստվերին», 16–րդ տեղ),

2014–ին՝ Արամ Mp3 («Միայնակ չէ», 4–րդ տեղ),

2013–ին՝ «Դորիանս» ռոք խումբը («Loveli planet», 18–րդ տեղ),

2012–ի մրցույթին ՀՀ չի մասնակցել,

2011–ին՝ Էմմին («Բում–բում», եզրափակիչ չի անցել, կիսաեզրափակիչում՝ 12–րդ տեղ),

2010–ին՝ Եվա Ռիվասը («Ծիրանի կորիզ», 7–րդ տեղ),

2009–ին՝ Ինգա և Անուշ Արշակյանները («Ձան–ջան», 10–րդ տեղ),

2008–ին՝ Սիրուշոն («Քելե–քելե», 4–րդ տեղ),

Եռանկյունի

Նունե Եսայանը կլոյթի պահին

«Երաժիշտ» ամսաթերթի գլխագիրը

Սաթևոս Մուրադյանի «Հայկական երաժշտական մշակույթի պատմություն» (1970) գրքի կազմը

Կոմիտասի «Երկերի ժողովածուի» (գիրք Ա, հ. 9, 1999) տիպողոսաթերթը

2007–ին՝ Հայկոն (Հայկ Հակոբյան, «Any time you sead», 8–րդ տեղ),

2006–ին՝ Անդրեն (Անդրեյ Հովնանյան, «Without your love», 6–րդ տեղ):

2003–ից անցկացվում է նաև մանկ. «Ե.», որին մասնակցում են մասնակից երկրների (ՀՀ՝ 2007–ից) 9–14 տարեկան երեխաները:

«ԵՐԱԺԻՇՏ», երաժշտ., մշակութ., տեղեկատվ. հանրապետ. ամսաթերթ, ԵՊԿ պաշտոնաթերթը: Լույս է տենում 2005–ից Երևանում: Հիմնադիրներ՝ Սերգեյ Սարաջյան, Գոհար Շագոյան, գլխ. խմբ–ներ՝ Աննա Գևորգյան (2005–07), Տաթև Ամիրյան (2007–08), Հասմիկ Համբարյան (2008–12), Շուշան Այվազյան (2012–14 և 2016–ից), Արմինե Աթոյան (2014–16): Լուսաբանում է ՀՀ–ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող երաժշտ. կարևոր իրադարձությունները, կոնսերվատորիայի ներդրումը մշակութ. կյանքում, հայ և օտարազգի ճանաչված երաժիշտների ելույթները ՀՀ–ում և արտերկրում, տպագրում է մշակութ. կապերին, հոգևոր երաժշտությանը, արվին վերաբերող նյութեր: Տարածվում է նաև մի շարք երկրներում:

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, գործել է 1965–2017–ին Երևանում: Հավաքածուն ձևավորվել է նվիրաբերված երաժշտ. գրականության, պարտիտուրների, օպերաների կլավիրների և նոտագիր այլ նյութերի հիման վրա, որը եզակի էր Այսրկովկասում: Ուներ սպասարկման, ընթերցասրահի, հավաքածուի համալրման, մշակման, օգտագործման, պահպանման, ձայնունկնդրման, հանրության հետ կապերի և տեղեկատու մատենագիտության բաժիններ: Տնօրեն՝ Գուլո Նահատակյան: Լուծարվել է 2017–ին. գրք. ֆոնդի մի մասը տրվել է Ազգային գրադարանին, մյուսը՝ Կոմիտասի ինստիտուտ–թանգարանին:

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտություն երաժշտության մասին, արվեստագիտության բաժին. ընդգրկում է երաժշտության տեսությունը, երաժշտության պատմությունը, երաժշտ. ազգագրությունը, երաժշտ. քննադատությունը, ինքնուրույն նշանակություն են ձեռք բերել նաև երաժշտ. ձայնագիտությունը, հոգեբանությունը և սոցիոլոգիան:

Հայ երաժշտագիտ. միտքը սկզբնավորվել է հնագույն ժամանակներում և մոնոդիկ մասնագիտացված երգ. ստեղծագործության հետ զարգացել միջնադար. տես. այլ գիտություններին զուգընթաց: Սակայն տես. օրինաչափությունները շարադրելու օբյեկտիվ դժվարությունները խոչընդոտել են միջնադար. հայ Ե–յան ինքնուրույնացումն ու զարգացումը:

Միջնադարում երաժշտ. տես. մտքի առավել հայտնի նվաճումներից են ձայնի, ներդաշնակության հենքի (***Դավիթ Անհաղթ***), հնչականության մասին (***Անանիա Շիրակացի***) ուսմունքները, ձայնեղանակների համակարգումը, խազագրության արվ–ն ու խազագիտությունը: ***Խազագրությունը*** ձևավորվել է VIII դ–ում. գաղափարի ծագումն ու սկզբն. իրագործումը կապված են ***Սյունեցու*** անվան հետ: Խազագրության հետագա մշակմանն ու տարածմանը նպաստել են Գրիգոր Գոզիկը (Այրիվանեցի), Խաչատուր Տարոնացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Խուլը, Գևորգ Սկևռացին, Թովմա Մեծոփեցին և ուր.: Պահպանվել է գրչագիր խազավոր շուրջ 2000 մատյան (ավելի քան 1000–ը՝ Մոնդ–ում):

XVII–XVIII դդ–ում հայ գիտնականները միջնադար. ինքնուրույն ու թարգման. մատենագրությունից բանաքաղելու միջոցով ստեղծել են ամբողջ. երաժշտատես. հոդվածներ: Նրանք իրենց գիտելիքները նորովի համալրելու նպատակով օգտվել են արլ. երաժշտագիտ. աղբյուրներից, բյուզ. ձայնագրագիտությունից, արևմտաեվրոպ. երաժշտության տեսությունից, որոնք արտացոլված են Ավետիք Պաղտասարյանի, Զեննե Պողոսի, Խաչատուր Էրզրումցու և Մխիթար Սեբաստացու աշխ–ներում:

XVI–XVIII դդ–ում խազերը կարդալը հետզհետե մոռացվել է: Գրիգոր ***Գապպասաքալյանը***, միջնադարին բնորոշ երաժշտատես. ու գեղագիտ. դրույթները ձևակերպելուն և դասակարգելուն զուգընթաց, փորձել է ստեղծել նոր ձայնագրության համակարգ: Թեև նրա փորձը չի հաջողվել, սակայն սկզբնավորել է հայ արդի խազաբան. գիտությունը՝ խթանելով նոր հայկ. ձայնագրության ստեղծումը, որի հեղինակը Համբարձում ***Լիմոնճյանն*** է:

Հ. Լիմոնճյանը, ուսումնասիրելով հայկ., համադրաբար՝ նաև հուն., պարսկ. ու թուրք. մասնագիտացված մոնոդիկ երաժշտությունը և եվրոպ. երաժշտության տեսությունը, հայկ. խազագրության համակարգի հիման վրա ստեղծել է նոր

հայկ. ձայնագրությունը (1813–15), ինարավորություն է ընձեռել ձայնագրելու բանավոր պահպանված միջնադար. հարուստ ժառանգությունը և փրկելու կորստից:

XIX դ–ի 2–րդ կեսի հայ Ե–յան առավել կարևոր ձեռքբերումներից են Կ. Պոլսում՝ Եղիա ***Տևրեայանի*** ուսումնասիրությունները շարականների ու խազերի մասին, Վաղարշապատում՝ Նիկողայոս ***Թաշճյանի***՝ հոգևոր երաժշտության միջնադար. լավագույն նմուշների համեմատաբար լիակատար ձայնագրումն ու ձայնեղանակների նոր համակարգումը, որոնք դարձել են հետագա բազմակողմանի և արդյունավետ ուսումնասիրությունների աղբյուր: XIX դ–ի վերջին քառորդին սկիզբ է առել ժող. եղանակների հավաքագրումը (առաջին գրառողներից էր Սահակ ***Ամատունին***). ժող. երգը դարձել է բազմաձայն երաժշտ. միջոցներով ազգ. նոր երաժշտություն ստեղծելու հիմքը, ազգ. Ե–յան ուսումնասիրության հիմնական առարկան:

Նախախորհրդ. շրջանի հայկ. Ե–յան կարևորագույն նվաճումները պայմանավորված են ***Կոմիտասի*** գործունեությամբ: Նրա շնորհիվ նոր մակարդակի է հասել հայ հոգևոր երաժշտության ուսումնասիրությունը, որտեղ դիտարկվել են շարականների կառուցվածքի, տաղաչափության, հոգևոր երաժշտության տեսակների, եկեղեց. ձայնեղանակների տեսության, նաև Սանրուսման գրքերի հետազոտման խնդիրները, որոնք առաջին անգամ են ներկայացվել եվրոպ. գիտ. հանրությանը:

Կոմպոզիտոր–երաժշտագետն իր գիտատես. աշխ–ներով բացահայտել է հայ հոգևոր ու ժող. երգերի կազմությունը՝ ապացուցելով, որ դրանք «քույր–եղբայր» են՝ մեղեդիական կառուցվածքի բնորոշ սկզբունքներով, ձայների ժամանակային և բարձրության հարաբերությունների առումներով: Նա ուսումնասիրել է նաև միջնադար. խազային նոտագրությունը. գիտ. կարևոր արժեք ունեն առոգանության խազագրության համակարգի կոմիտասյան վերծանումը և շարականների խազերի բնութագրությունը:

Մինչխորհրդ. տարիներից սկսել են գործել նաև Նիկողայոս ***Տիգրանյանը*** (պարսկ. մուղամների հավաքագրում, հայկ. ժող. պարերի ու պարեղանակների ուսումնասիրում), Սպիրիդոն ***Մելիքյանը*** (ժող. երաժշտության հավաքում և միջնադար. հայ երաժշտության տես. ուսումնասիրում): Առանձնանում են Բարսեղ Ղորղանյանի (Վասիլի Կորգանով)՝ Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ջ. Վերդիի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող ուսումնասիրությունները, այսրկովկաս. ժողովուրդների երաժշտության ու Ե–յան մասին հոդվածները:

Խորհրդ. Հայաստանում Ե. շարունակել է նախորդ շրջանի հայ Ե–յան, մասնավորապես՝ կոմիտաս. ավանդույթները: 1921–ին հիմնադրված Էջմիածնի մշակութպատմ. ինստ–ը 1925–ին վերակազմավորվել է Գիտության և արվ–ի ինստ–ի, որտեղ կարևորվել են երաժշտության (նաև ժող.) խնդիրները:

1934–ին կազմակերպված ԳՀ կաբինետը (հիմնադիր՝ Արամ ***Քոչարյան***), 1938–ին անջատվելով կոնսերվատորիայից, դարձել է Ռ. Մելիքյանի անվ. ԳՀ կաբինետ (1944–ին՝ ՀԽՍՀ ԳԱ երաժշտության պատմության և տեսության, 1948–ին՝ արվ–ների պատմության և տեսության բաժանմունք): 1937–ին կոնսերվատորիայում բացվել է երաժշտագիտ. բաժանմունք (հիմնադիրներ՝ Զավեն Վարդանյան, Սամսոն Գասպարյան, Կոստանդին Մելիք–Վրթանեսյան):

1958–ին հիմնադրվել է ՀԽՍՀ ԳԱ արվ–ի ինստ–ը, որի երաժշտության բաժինը դարձել է հայկ. Ե–յան կենտրոն (վարիչ՝ Մաթևոս Մուրադյան): 1966–ից ինստ–ում գործում են երաժշտության և ժող. երաժշտության բաժիններ:

Խորհրդ. շրջանի հայ Ե. զբաղվել է հիմնականում երաժշտության պատմության և տեսության, ժող. երաժշտության, միջնադար. մասնագիտացված մոնոդիկ երաժշտության, երաժշտ. գեղագիտության, XIX–XX դդ–ի դաս. ժառանգության և ժամանակակից երաժշտարվ–ի ուսումնասիրմամբ: Հատկապես կարևորվել են մանկավարժ. գործունեությունը և ազգ. երաժշտ. դասագրքերի [Մ. Բրուտյանի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» (1971, 1983), Ն. Դերոյանի «Երաժշտական ստեղծագործության վերլուծություն» (1985), Է. Փաշինյանի «Հարմոնիա» (1987) ննվ, երաժշտ. գիտահանրամատչելի գրկ–յան ստեղծումը, խորհրդահայ կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածումը: Հայ Ե–յան մեջ առանձնացել են երաժշտ. հնագրության (կապված է գլխավորապես խազագրության հետ)

Գրիգոր Փիթեճյանի «Քրիստափոր Կարա-Մուրզա» գրքի (2013) շապիկը

Գևորգ Տիգրանովի «Հայկական երաժշտական թատրոն» գրքի (ռուս., հ. 1–4, 1956–89) կազմը

Քրիստափոր Քոշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» գրքի (2008) կազմը

Տուանննա Ամպրոնու «Առնո Բաբաջանյան» գրքի (ռուս., 1980) շապիկը

Նիկողոս Թահմիզյանի «Արդի խաչարանութիւն» գրքի (2003) կազմը



Ալինա Փահլևանյանի «Կարոտ խաչ» վիպական ասքի նորահայտ պատրումները» գրքի (2004) շապիկը

և երաժշտաբանասիր. (մասնավորապես՝ բնագրագիտ.) աշխատանքները՝ վերականգնելու համար դաս. երաժշտ. ժառանգությունը, որի մեծ մասը սևագիր է և դժվարընթեռնելի:

Ժող. երաժշտության գրառումն ու հրապարակումը խորհրդ. տարիներին շարունակել են Ս. Մելիքյանը (Գիտության և արվ-ի ինստ.), Քրիստափոր ***Քուշնարյանը*** (Լենինգրադի թատրոնի և երաժշտության ինստ.), Ա. Քոչարյանը (Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ԳՀ կաբինետ), նաև ՀԽՍՀ ԳԱ երաժշտության պատմության և տեսության բաժանմունքը, Արվ-ի ինստ-ը (Մ. Մուրադյան, Վարդան ***Սամվելյան***), ԵՊԿ ժող. երաժշտության կաբինետը (Մ. Բրուտյան): Նույն աշխ-ները սեփ. նախաձեռնությամբ կատարել են Սաշա Օգանեզաշվիլին, Մուշեղ Աղայանը, Շարա Տալյանը, Վարդան Բունին, Վազգեն Տալյանը, Թաթուլ Ալթունյանը և ուր.: Գեղջկական երգերից ու պարերգերից բացի՝ գրառվել են նաև գյուղ. ու քաղաք. գործիք. երաժշտության նմուշներ, քաղաք. ժող. երգեր և աշուղ. երաժշտության ավանդ. ձևերն ու անհատ աշուղների ստեղծագործությունները: Կարևորվել են «Սասնա ծռեր» էպոսի երաժշտ. հատվածների գրառումները (Ա. Քոչարյան), որն սկսել էր Կոմիտասը: Խորհրդահայ կոմպոզիտոր. ստեղծագործության և ե-յան զարգացման համար առանձնապես նշանակալի են Կոմիտասի գրառած այն երգերը, որոնք հրապարակվել են 1931-ին («Ժողովրդական երգեր. Ազգագրական ժողովածու»): Հայաստանում հավաքվել և հրատարակվել են նաև տեղաբնակ քրդերի երգերը (Ն. Ջաուարի, Ջ. Ջալիլ): Սկսվել են հայկ. ժող. երաժշտության՝ հաշվիչ մեքենաների համար պատրաստվող քարտագրության հիմունքները (Վ. Հոշովսկի):

Հրատարակվել է Ք. Քուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» (ռուս.՝ 1958, հայ.՝ 2008) հիմնարար աշխ-ը, որը վերաբերում է հայկ. ժող., գուսան-աշուղ. և հոգևոր երաժշտության պատմ. զարգացման ու տես. առանձնահատկությունների օրինաչափությունների բացահայտմանը: Ք. Քուշնարյանը հետազոտել է նաև Վերածննդի շրջանի երաժշտությունը, մշակել մոնոդիայի տեսությունը, լուսաբանել հայկ. մոնոդիայի ձայնակարգ. հիմքը: Ռոբերտ ***Աթայանը*** մշակել է հայկ. երաժշտ. ինագրության հիմունքները, ուսումնասիրել հայ միջնադար. նոտագրության պատմության և տեսության հիմնական հարցերը («Հայկական խազային նոտագրությունը», 1959):

Դաս. և խորհրդ. կոմպոզիտոր. երաժշտությունն ուսումնասիրվել է բովանդակ. 3 ընդգրկումով. 1. առանձին կոմպոզիտորների կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը (Ք. Կարա-Մուրզա, Մ. Եկմալյան, Կոմիտաս, Ն. Տիգրանյան, Ա. Սպենդիարյան, Ռ. Մելիքյան, Ա. Տիգրանյան, Ա. Խաչատրյան, Ա. Բաբաջանյան, Է. Միրզոյան, Գ. Եգիազարյան և ուր.): 2. Երաժշտ. ժանրեր [Գ. Տիգրանովի «Հայկական երաժշտական թատրոնը» (ռուս., հ. 1–4, 1956–89), Շ. Ափոյանի «Դաշնամուրային երաժշտությունը Խորհրդային Հայաստանում» (ռուս., 1968), «Սովետական Հայաստանի երաժշտությունը» (հոդվածների ժող., 1973), Մ. Ռուխկյանի «Հայկական սիմֆոնիան: Հետազոտական ակնարկներ» (ռուս., 1980) ևն]: 3. Հայ երաժշտության պատմության ընդհանր. ուսումնասիրություն [Ա. Շահվերդյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկներ. XIX–XX դդ.» (1959), Ք. Քուշնարյանի, Մ. Մուրադյանի և Գ. Գյոդակյանի «Ակնարկ հայ երաժշտության պատմության» (1963), Մ. Մուրադյանի «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» (1970) և «Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դար և XX դարասկիզբ)» (1989), Յ. Բրուտյանի «Սփյուռքահայ երաժշտական մշակույթը» (1982) ևն]:

Երաժշտ. միջնադարագիտության ասպարեզում կարևոր են Ն. Թահմիզյանի «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ» (1973), «Հին Հայաստանի երաժշտության տեսությունը» (ռուս., 1977) և «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ.» (1985) մենագրությունները:

Ծավալուն աշխատանքներ են կատարվել հայ երաժշտ. ժառանգության գիտ. հրատարակության առումով [Ա. Սպենդիարյանի «Երկերի լիակատար ժողովածուն» (հ. 1–11, 1943–84, խմբ.՝ Գ. Բուդաղյան), Սայաթ-Նովայի ստեղծագործությունները (1949), Կոմիտասի «Ազգագրական» (1950) և «Երկեր» (1960–82) ժող-ները, Ս. Մելիքյանի «Հայ ժողովրդական երգեր և պարեր» (2 գրքով, 1949–52), Բ. Կանաչյանի (1968),

Մ. Եկմալյանի (1970) խմբերգերն ու մեներգերը, Ք. Կարա-Մուրզայի խմբերգերը (1968), Արմեն Տիգրանյանի «Անուշ» (1954, 1981) և «Դավիթ Բեկ» (1981) օպերաների կլավիրները, Ռ. Մելիքյանի «Զառ-Վառ» (1949), «Զմրուխտի» (1983) շարքերը, Ա. Տեր-Ղևոնդյանի ընտիր վոկալ ստեղծագործությունները (1975) ևն:

Տպագրվել են նաև դասականների՝ Կոմիտասի, Ս. Մելիքյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Սպենդիարյանի, Ա. Տիգրանյանի, Ն. Տիգրանյանի, Ա. Խաչատրյանի և ուր. նամականիներ, հոդվածների և հուշերի ժող-ներ:

Կարևորվել են տարեգրային աշխատները՝ Մ. Սպենդիարովայի «Ալեքսանդր Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը» (ռուս., 1975), Ռ. Մազմանյանի «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920–45)» (1979) և «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946–60)» (1986) ևն:

1990-ական թթ-ից հայ Ե. զարգանում է 3 հիմնական ուղղություններով՝ հայ երաժշտության պատմության ու տեսության խնդիրներ, երաժշտ. ժառանգության գիտ. հրատարակություն և ժող. ստեղծագործության ուսումնասիրություն:

Լույս են տեսել հայ երաժշտության պատմությունն ընդհանրացնող աշխ-ներ՝ Յ. Բրուտյանի «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները» (1996), Ս. Սարգսյանի «Հայ երաժշտությունը XX դարի համատեքստում» (ռուս., 2002), Շ. Ափոյանի «Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն. 1850–1920» (2006), Գ. Գյոդակյանի «Հայ դասական երաժշտության ձևավորման ուղիները» (ռուս., 2006), «Էջեր հայ երաժշտության պատմությունից» (2009), Ի. Զոլոտովայի «Հայաստանում պիանիզմի զարգացման ուղիները (XX դարի երկրորդ կես)» (ռուս., 2010), Ա. Արևշատյանի «Անիի երաժշտական մշակույթը» (2014) ևն:

Հայ երաժշտ. թատրոնի ամբողջ. պատմության կարևոր հատված է ներկայացրել Ա. Ասատրյանը «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը» մենագրության (2011) մեջ:

Հայ երաժշտության երևելի դեմքերին նվիրված աշխ-ներ են ստեղծել Մ. Բերկոն («Ղազարոս Սարյան», ռուս., 1994), Ա. Բուդաղյանը [«Հրաչյա Բոգդանյան», ռուս., 1994), «Ալեքսանդր Չաուշյան» (ռուս., 1995), «Կարապ Դոմբաև» (ռուս., 1998), «Հակոբ Վարդանյան» (ռուս., 1998), «Ավետ Գաբրիելյանը ուղու սկզբում» (ռուս., 1999), «Վիլլի Մոկացյան» (ռուս., 2002), «Դմիտրի Լեգկեր» (ռուս., 2012), «Զավեն Վարդանյան» (ռուս., 2016), «Աննա Մնացականյան» (ռուս., 2017)], Ն. Թահմիզյանը [«Տիգրան Չուխաճեան. Կեանքը եւ ստեղծագործութիւնը» (Փասադենա, 1999, անգլ.՝ 2001), Գ. Գյոդակյանը («Կոմիտաս», 2000), Մ. Տեր-Օհանյանը («Առնո Բաբաջանյան», ռուս., 2001)], Մ. Ռուխկյանը [«Ավետ Տերտերյան. ստեղծագործությունը և կյանքը» (ռուս., 2003), «Դիմանկարներ» (ռուս., 2009), «Վարդան Ամեմյանի հնչյունի թատրոնը» (ռուս., 2015)], Մ. Կոկժաևը («Ալեքսանդր Հարությունյան. կոմպոզիտորական ոճի առանձնահատկությունները», ռուս., 2006), Ա. Ասատրյանը [«Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան» (2009), «Ավագ Պետրոսյան–100» (համահեղ.՝ Արա Պետրոսյան, 2012)], Ն. Սարգսյանը («Աշոտ Ասատրյան. XX դարի վերջին երեք տասնամյակի պարուսույցը», ռուս., 2011), Լիլիթ Եփրեմյանը («Էդվարդ Միրզոյանը նամակներում և երկխոսություններում», ռուս., 2012), Ծ. Մովսիսյանը («Էդգար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները», 2012), Ա. Արևշատյանը [«Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը» (2013), «Գրիգոր Սազիստրոսը շարականագիր և գեղագետ» (2015)] ևն:

Երաժշտության տեսությանն են վերաբերում Կ. Զաղացպանյանի «Ազգային երաժշտության ռիթմերի հետքերով» (ռուս., 1999), Մ. Նավոյանի «Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում» (2001), Ժ. Զուրաբյանի «1950–61 թթ. հայ սիմֆոնիկ երաժշտության ինտոնացիոն ակունքները և թեմատիզմի ազգային ինքնատիպությունը» (ռուս., 2002), «Սինոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում» (2014), «Զայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում» (մենագրություն, քննական բնագրեր և աշխարհաբար թարգմանություն)» (2013) և այլ մենագրություններ:

Շուրջ 15 տարվա ընդմիջումից հետո ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ը վերսկսել է երաժշտ. ժառանգության գիտ. հրատարակություն-

Ռոբերտ Աթայանի «Հայկական խազային նոտագրությունը» գրքի (1959) կազմը

Լիլիթ Երնջակյանի «Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխարնչությունների համատեքստում» գրքի (2009) շապիկը



Գևորգի Գյոդակյանի «Էջեր հայ երաժշտության պատմությունից» գրքի (2009) շապիկը



Աննա Արևշատյանի «Անիի երաժշտական մշակույթը» գրքի (2014) շապիկը



Մարգարիտ Բրուտյանի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» գրքի (2014) շապիկը

«Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի (պրակ XIII, 2015) շապիկը

ները. տպագրվել են Կոմիտասի երկերի ժող-ի ակադեմ. հրատարակության 7–14-րդ (1997–2006) հատորները (պատրաստել է Գ. Գյոդակյանը): Լույս են տեսել նաև Ռ. Մելիքյանի «Աշնան տողեր» շարքը (2009), Գ. Սյունու խմբերգների ժող-ը, նաև Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Ա. Խաչատրյանի, Է. Հովհաննիսյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Ղ. Սարյանի նամականիները, հուշագրությունները, հոդվածների ժող-ները ևն:

Երաժշտ. կոլեկտիվների գործունեությանն են նվիրված Ա. Ասատրյանի «Հայաստանի պետական երգչախումբ» (2009), «Հայաստանի կոմպոզիտորների միություն-85» (2017, ՀԿՄ մրց.՝ 2018) աշխ-ները: Լ. Սահակյանը հանրագումարի է բերել հայ Ե-յան որոշ ճյուղեր («Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ», 2010):

Երաժշտ. արևելագիտության ոլորտում կարևոր են Լ. Երնջակյանի «Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից» (1991), «Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական առնչությունների համատեքստում» (2009), երաժշտ. ինէաբանության մեջ՝ Ա. Գրիգորյանի «Երաժշտարվեստի ակունքներում» (ռուս., 2008) աշխ-ները:

Երաժշտագետների ուսումնասիրության կարևորագույն ոլորտներից է Սփյուռքի հայկ. երաժշտությունը. հրատարակվել են Ա. Սարյանի «Սիրվարդ Գարամանուկ: Երաժշտությամբ իմաստավորված կյանք» (2007), Ա. Ասատրյանի «Արուսյակ Այնթապլյան» (2012), Լ. Երնջակյանի «Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութային խաչուղիներում» (2015) մենագրությունները:

Լույս են տեսել երաժշտ. բանագիտությանը վերաբերող աշխ-ներ՝ Մ. Թումաճանի «Հայրենի երգ ու բան» ժող-ի 1–4 հատորները (1972, 1982, 1986, 2005, 1-ին հատորը հրատարակության պատրաստել է Մ. Թումաճանը): Լույս են տեսել նաև «Հայ ավանդական երաժշտություն» (գլխ. խմբ.՝ Կ. Խուդաբաշյան, պր. I–XIII, 2008–15), «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» (1984-ից գլխ. խմբ.՝ Ա. Փահլևանյան) մատենաշարերը, Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջներ» (2002), Ա. Փահլևանյանի «Կարոս խաչ» վիպական ասքի նորահայտ պատումները» (2004), Ա. Քոչարյանի «Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում» (2008) աշխ-ները, Ա. Սարյանի «Հայ քաղաքային ժողովրդական երգերի ընտրանին» (2010) ևն:

Հրատարակվել են Է. Փաշինյանի «Պոլիֆոնիա» (1998), Զ. Տեր-Ղազարյանի «Արևմտաեվրոպական երաժշտության պատմություն. Հին աշխարհից մինչև ԺԹ դար» (2014), վերահրատարակվել են Ն. Դերոյանի «Երկերը» (2015, կազմ.՝ Ծ. Մովսիսյան), Մ. Հարությունյանի և Ա. Բարսամյանի «Հայ երաժշտության պատմություն» (1996), Մ. Բրուտյանի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» (2004) բուհ. դասագրքերը:

ՀՀ-ում կազմակերպվում են հայ երաժշտության պատմությանն ու տեսությանը վերաբերող հանրապետ. և միջազգ. գիտ. նստաշրջաններ, հայ երաժշտագետները զեկուցումներով հանդես են գալիս արտերկրում կազմակերպված գիտաժողովներում:

Ե-յանը վերաբերող խնդիրների հետազոտությամբ զբաղվում են նաև երիտասարդ մասնագետները. հրատարակվել են Ա. Թամրազյանի «Մարդու կազմության տեսության վերաիմաստավորումը հայ միջնադարյան մեկնողական ավանդույթում» (2013), Տ. Շախկուլյանի «Կոմիտասի ստեղծագործական վաղ շրջանը» (2014), Ա. Ադամյանի «Տիգրան Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործությունը» (2015), Լ. Արտեմյանի «XX դարի նոր կոմպոզիցիոն տեխնոլոգիաներով գրված հայկական դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները» (2015), Գ. Ամիրաղյանի «Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց երգվածքում» (2016) աշխ-ները:

Հայաստանում հայ Ե-յան կենտրոնի՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի երաժշտության բաժնի անցած ուղին ամփոփել է Ա. Ասատրյանը՝ «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50» (2010) մենագրության մեջ:

Երաժշտագետ կադրեր է պատրաստում ԵՊԿ, որի գործունեությունն ամբողջացրել է Ա. Բուդաղյանը՝ «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա-85» (ռուս., 2008) գրքում:

Տես *Երաժշտություն* հոդվածի գրկ-ը:

Ընդ. Ռոբերտ Աթայանի, Աննա Ասատրյան

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ, երաժշտական բանագիտություն, երաժշտագիտության և ազգագրության ճյուղ. ուսումնասիրում

է ժող. երաժշտ. ստեղծագործությունը, երաժշտ. կենցաղը՝ պատմ. զարգացման ընթացքում՝ անմիջական զննումների և գիտ. փաստագրության, երաժշտ. նմուշների գրառումների, գրառված եղանակների և խոսքերի գաղափարագեղագիտ., ոճ. և կառուցվածք. (ձայնակարգ. կառուցվածք, մելոդիկա, ռիթմիկա, բազմաձայնություն, երգչախմբ. և գործիք. ֆակտուրա ևն) վերլուծման, երաժշտ. համակարգերի և ժող. գործիքների լարվածքի որոշման եղանակներով: Ե. ա-յան խնդիրը տարբեր դարաշրջանների ժող. երաժշտ. ստեղծագործությունների հայտնաբերումն է, երաժշտության ազգ-ոճ. հատկանիշների պարզաբանումը, երաժշտության դերը ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության մեջ և ժամանակակից հաս. կյանքում ու կենցաղում, ժող. երաժշտության, բանաստեղծության և պարերի փոխադարձ կապի, ժող. երաժշտության ու կոմպոզիտորների ստեղծագործության փոխազդեցության, տարբեր ժողովուրդների երաժշտ. առնչությունների բացահայտումը:

Ժող. երաժշտության նմուշներ գրառվել և ուսումնասիրվել են դեռևս հնում: Որպես գիտության ինքնուրույն ոլորտ՝ Ե. ա. ձևավորվել է XIX դ-ի 2-րդ կեսին: Հայ Ե. ա-յան հիմնադիրը *Կոմիտասն* է:

Հայ երաժշտարվ-ը հնագույն ժամանակներից եղել է պատմագիրների, բանաստեղծների և գեղագետների ուշադրության կենտրոնում: Միջնադարում գրառվել են և մշակվել բազմաթիվ ժող. երգերի խոսքեր, եղանակները ձայնագրվել են խազերով և օգտագործվել հոգևոր երաժշտության մեջ: Մանրանկարներում պահպանվել են ժող. պարերի, գործիքների, հանդեսների բազմաթիվ պատկերներ: Նոր ժամանակներում հայ ժող. երգեր ձայնագրել են Նիկողայոս Տիգրանյանը, Քրիստափոր Կարա-Մուրզան, Մակար Եկմալյանը, Կոմիտասը, Սպիրիդոն Մելիքյանը և ուր., որոշ նմուշներ՝ ռուս երաժիշտներ Ի. Վ. Դոբրովոլսկին, Մ. Ա. Բալակիրևը, Մ. Պ. Մուսորգսկին, Մ. Մ. Իպպոլիտով-Իվանովը և ուր.:

Գրկ. Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ. XIX–XX դդ., Ե., 1959: Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008: Атаян Р., Комитас-собиратель армянской народной песни, в кн.: VII международный конгресс антропологических и этнографических наук, М., 1964, т. 7, М., 1970; Tiersot J., Notes d'ethnographie musicale, v. 1–2, P., 1905–10; Sachs C., Vergleichende Musikwissenschaft, Lpz., 1930; Nettl B., Theory and Method of Ethnomusicology, [N. Y.], 1964.

Ընդ Ռոբերտ Աթայանի

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԿՆԹԱՐԹ, արտահայտչության անմիջականությամբ բնորոշվող, քնար. բնույթի գործիք. մանրանվագ՝ նման էքսպրոմտին: Դաշնամուր. Ե. ա-ներ են ստեղծել Ֆ. Շուբերտը, Ս. Վ. Ռախմանինովը և ուր.:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, երաժշտ. հնչյուններ արտաբերող և երաժշտության համար նախատեսված, ռիթմավորված աղմուկներ վերարտադրող գործիքներ: Ե. գ., ինչպես բոլոր գործիքներն ընդհանրապես, պատմ. երկարատև զարգացում են ապրել: Ըստ հնագիտ. ուսումնասիրությունների՝ Ե. գ-ի ստեղծումը պայմանավորված է եղել ոչ թե բուն արվ-ով, այլ հմայական և պաշտամունք. արարողություններով, ժող. այլ ծիսակատարություններով, աշխատանք. և պատերազմ. գործողություններով. դրանք հետագայում են մուտք գործել աստիճանաբար կազմավորվող երաժշտ. կենցաղ: Հագիտ. պեղումներով հայտնաբերված որոշ գործիքներ պատրաստված են բազմազան նյութերից (քար, ոսկոր, փայտ, լար, կաշի, կավ, մետաղ ևն): Հնագույն Ե. գ-ի մի մասը ժամանակի ընթացքում գործածությունից դուրս է եկել, մի քանիսը մինչև մեր օրերը պահպանվել են իրենց նախն. ձևով (կայրակ, եղջյուր ևն), մյուսները ենթարկվել են աննշան փոփոխությունների (Պանի ֆլեյտա, թմբուկներ ևն): Նախկին բազմաթիվ պարզագույն գործիքների կատարելագործված տեսակներից կազմավորվել են յուրատեսակ «գործիքային ընտանիքներ», որոնք կազմում են ժամանակակից երաժշտ. գործիքարանը:

Լարային գործիքներ

Ե. գ-ի զարգացումն ընթացել է երաժշտության, երաժշտակատարող. արվ-ի, նաև գործիքաշինության տեխնիկայի զարգացմանը զուգահեռ:

Ժող. կենցաղում լայնորեն գործածվող, հիմնականում պարզ կառուցվածքի այն գործիքները, որոնց նվագի տեխնիկային տիրապետելը, որպես կանոն, հատուկ մասնագիտացված ուսուցում չի պահանջում, ընդունված է անվանել ժող. Ե. գ.:

Ստեղնաշարային գործիքներ

Յուրաքանչյուր ժողովուրդ ստեղծել է իր ինքնատիպ գործիքարանը, աստիճան. հարստացումը պայմանավորվել է նրա երաժշտ. մշակույթի զարգացմամբ, նաև այլ ժողովուրդների հետ մշակութ. փոխգործակցությամբ: Պատմահամեմատ. երաժշտագիտությունն ի հայտ է բերել տարբեր ժողովուրդների Ե. գ-ի զարգացման ընդհանրությունները, պարզել, որ նրանց նույն գործիքները տարբերվում են տեսքով և անվանումներով: Ժամանակի ընթացքում ժողովրդականից առանձնացել են համեմատաբար բարդ կառուցվածքով, արտահայտչական առավել հարուստ հնարավորություններով պրոֆեսիոնալ Ե. գ., որոնց նվագի տեխնիկային

Փողային գործիքներ

տիրապետելը պահանջում է տևական մասնագիտ. ուսուցում:

Ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտ. գործիքարանն սկսել է կազմավորվել XV դ-ից: Յուրաքանչյուր երաժշտ. գործիք ունի ինքնատիպ հնչերանգ և հնչման ուժգնություն, որոշակի դիապազոն, նվագի տեխ. առանձնահատկություններ, սեփ. արտահայտչական հնարավորություններ: Բոլոր Ե. գ-ի ձայնարտադրման սկզբունքը նույնն է. նվագելիս տատանման մեջ դրվող մարմինն առաջացնում է օդի համապատասխան տատանումներ, որոնք ընկալվում են որպես երաժշտ. հնչյուններ: Ֆիզիկապես մարդու ձայն. ապարատը նույնպես յուրատեսակ երաժշտ. գործիք է:

Կատարող. արվ-ում, ըստ ձայնարտադրման միջոցների, Ե. գ. դասակարգում են 4 հիմնական խմբերում, որոնց ավանդ. դարձած անվանումները պայմանական են՝ լարային (տատանվում է լարը), փողային (տատանվում է փողի կամ փողակի մեջի պարունակվող օդի շիթը), հարվածային (հարվածից տատանվում են ձգված թաղանթը, մետաղե թիթեղիկները, փայտե տախտակիկները ևն) և էլեկտրական (տատանվում է էլեկտր. սարքերի միջոցով) գործիքներ:

Յուրաքանչյուր խումբ բաղկացած է ենթախմբերից, որոնք նշում են ձայնարտադրության միջոցի գործադրման որևէ եղանակ:

Լար. գործիքների խմբում տարբերում են աղեղնավոր (ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս, քամանչա, քաման ևն), կսմիթ. (տավիղ, քնար, կիթառ, քանոն, ուդ, սազ, թառ ևն), մուրճիկավոր (սանթուր, ցիմբալ ևն) և ստեղնային (դաշնամուր, կլավեսին, կլավիկորդ ևն) ենթախմբերը:

Փող. գործիքների խմբում են փողաբերանով (ֆլեյտա, բլուլ ևն), սուլիչավոր (շվի, թութակ, ֆլաժոլետ ևն), պարզ կամ կրկնակի լեզվակավոր եղեգնակով («պիպիչավոր»՝ կլառնետ, սաքսոֆոն, հոբոյ, ֆագոտ, դուդուկ, զուռնա ևն), մետաղե (բաժականման) ծվանով («մունդշտուկավոր»՝ գալարափող, շեփոր, փող, կոռնետ, տրոմբոն, տուբա, սաքսհոռն, բյուգելհոռն ևն) ենթախմբերը:

Հարված. գործիքների խմբում առանձնանում են որոշակի և անորոշ բարձրության գործիքների ենթախմբեր (տիմպան, զանգակներ, քսիլոֆոն, զանազան թմբուկներ, ծնծղաներ, եռանկյունի ևն): Հաճախ հատուկ խմբում են բոլոր օդհունչ (պնևմատիկ) գործիքները, որոնց հնչյունը արտաբերվում է, երբ մեխ. ուժով օդի հոսանքը խողովակների կամ լեզվակների

միջով անցնելիս առաջանում է տատանում (երգեհոն, ֆիսհարմոն, բայան, հարմոն, ակորդեոն, կոնցերտինո, բոլորը՝ ստեղնային, նաև պարկապզուկի զանազան տեսակներ ևն)։ Երբեմն, նկատի ունենալով նվագելու մեխանիզմը, մեկ խմբի մեջ են ընդգրկում բոլոր (լար., օդհունչ ևն) ստեղն. գործիքները։

Էլեկտր. գործիքների խումբը (էմիրիտոն, իոնիկա ևն) զարգանում և համալրվում է նոր նմուշներով (էլեկտրադաշնամուր, էլեկտրաջութակ, էլեկտրաերգեհոն ևն)։

Ե. գ-ի հնչողության որակը պայմանավորված է գործիքի պատրաստման համար օգտագործած նյութերի որակով և հաջող զուգորդումով, նաև դրա ձևի ու առանձին մասերի չափերի հարաբերությունների նպատակահարմարությամբ։ Բազմաթիվ երկրներում գոյություն ունի Ե. գ-ի զարգացած գործարան. արտադրություն, սակայն որոշ դեպքերում (մասնավորապես՝ ջութակի, ալտի, թավջութակի) առավել բարձրորակ են գործիքներ պատրաստող վարպետների ստեղծած նմուշները։

Հայաստանում Ե.գ-ի հիմնական տիպային խմբերը հայտնի են եղել դեռևս հնագույն ժամանակներում։ Դրանք զարգացել են կատարելագործման, նաև առանձին խմբերի լրացման եղանակներով։ Պեղումներով հայտնաբերված ամենահին գործիքները՝ բրոնզե զանգակներ, բոժոժներ, չխկչխկաններ (տարածվել են մ. թ. ա. 2-րդ հզ-ամյակի կեսերից), ծնծղաներ, դափ, թմբուկ, նաղարա, դհոլ ևն, օգտագործվել են ինչպես ծիսակատարությունների, այնպես էլ ռազմերթերի ժամանակ։

Կարևոր դեր են խաղացել նաև փողը և նրա տարատեսակները (ավազ փող, գալարափող ևն), որոնց մասին հիշատակել են Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը և ուր. պատմիչներ։

Արլ. գործիքների մասին տեղեկություններ կան միջնադար. Արևելքի գիտնականների ու բանաստեղծների երկերում (Ալ Ֆարաբի, Իբն Սինա, Նիզամի, Նավոի և ուր.)։ Մանրանկարներում հաճախ հանդիպում ենք հովվական սրնգի։ Լար. գործիքները (բամբիռ, տավիղ, վին, շեշթա, քանոն, սազ ևն) նույնպես հիշատակված են ձեռագրերում և մեծ մասամբ եղել են գուսանների, մթրուպների, աշուղների գործիք։

Ներկայում ՀՀ-ում ժող. երաժշտ. գործիքներից առավել գործածական են դուդուկը, զուռնան, պարկապզուկը, թութակը կամ շվին, բլուլը (փող.), սազը, թառը, ուդը, քանոնը, քամանչան (լար.), դափն ու դհոլը (հարված.)։ Նորաստեղծ լար. աղեղնավոր գործիք է բամբիռը։

Երևանում գործող ***երաժշտական գործիքների ֆաբրիկան*** թողարկել է դաշ-

Հարվածային գործիքներ

նամուր, էլեկտրակիթառ ու այլ երաժշտ. գործիքներ։

Հայտնի են նաև լար-աղեղնավոր գործիքներ պատրաստող մի շարք վարպետներ։

Գրկ. *Խանգադյան Է., Հայկական հին երաժշտական գործիքները, «Աշխատություններ Հայաստանի պետ. պատմ. թանգարանի», 1959, հ. 5։ Քոչարյան Ա., Երաժշտական գործիքները Հայաստանում (փողային խումբ), ՊԲՀ, 1963, № 3։ Նույնի, Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008։ Вертков К., Благодатов Г., Язовицкая Э., Атлас музыкальных инструментов народов СССР, М., 1963; Рогаль-Левицкий Д. Р., Современный оркестр, т. 1–4, М.–Л., 1953–1956; Лисициан С., Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, Е., 1958; Модр А., Музыкальные инструменты, М., 1959; Благодатов Г., История симфонического оркестра, Л., 1969; Berlioz H., Grand traité de 1'instrumentation et' orchestration modernes, P., 1844; Sachs C., The History of Musical Instruments, L., 1940.*

Ըստ Ռոբերտ Աթայանի, Լիլիթ Երնջակյան

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱ. Երևանի փորձարարական, հիմնադրվել է 1962-ին՝ որպես դաշնամուրի ֆաբրիկա։ 1970-ից արտադրել է նաև էլեկտրակիթառներ (12-լարանի, «Կոռնկ», «Կոռնկ 75 Մ»), «Կոմիտաս 74» մակնիշի դաշնամուր, էլեկտրամանդոլինա։ Գործել են նախապատրաստման, հավաքման, էլեկտր. և ստեղն. գործիքների ֆունկցիոնալ արտադրամասեր։ Արտադրությունը կատարելագործելու, աշխ-ը մեքենայացնելու համար ներդրվել են նոր հոսքագծեր, ժամանակակից սարքավորումներ։ Արտադրանքն իրացվել է ԽՍՀՄ-ում և արտերկրում (Հունաստան, Լեհաստան,



«Կոմիտաս» դաշնամուր

Հոլանդիա, ԳԴեմՀ)։ Ֆաբրիկան փակվել է 1990-ական թթ-ին։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, 1. նախն. գիտելիքներ երաժշտալեզվի մասին։ 2. Ուս. հաստատություններում երաժշտատես. տարրական դասընթացներ, որոնք ունեն տես. և գործն. բաժիններ (երաժշտ. երկերի տարրական վերլուծություններ, վարժություններ, տես. գիտելիքների ամրապնդում, լսողության զարգացում)։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, գեղագիտ. դաստիարակության ոլորտ, հաս-յան, երաժշտ. մշակույթի հետ անհատի հաղորդակցման գործընթաց։ Ե. դ-յան համակարգը հիմնված է ընդհանուր և մասնագիտ. երաժշտ. մանկավարժության համալիր մեթոդների վրա, որոնք նպաստում են երաժշտ. ունակությունների զարգացմանը։ Երաժշտության հետ երեխաների և դեռահասների հաղորդակցման հիմնական ձևը երաժշտ. գրկ-յանը ծանոթանալն է, կատարող. խմբերում (երգչախումբ, նվագախումբ ևն) ընդգրկվելը, երաժշտ. հեռուստառադիոհաղորդումներին մասնակցելը ևն։ Տարբերում են նախադպրոց., դպրոց. և արտադպրոց. (երաժշտ. ինքնագործունեություն) Ե. դ.։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԵԿԼԱՄԱՑԻԱ (գերմ.՝ Musikalische Deklamation, անգլ.՝ musical declamation), 1. լայն առումով՝ վոկալ ստեղծագործության մեջ բանավոր խոսքի և երաժշտության հարաբերակցությունը։ Վոկալ երաժշտությունն օժտված է բազմաթիվ հնարավորություններով՝ խոսքի ինտոնացիոն առանձնահատկությունները ճշգրիտ վերարտադրելու համար։ Ե. դ-ի համար որոշիչ նշանակություն ունեն ազգ. բանավոր լեզվի հատկանիշները, ռիթմիկան։ Ի տարբերություն երաժշտ. ինտոնացիայի՝ խոսքի ինտոնացիան զուրկ է ձայնակարգից, հետևաբար նրանց արտահայտչականությունները և կազմակերպման հնարավորությունները տարբեր են։

Խոսքի առավել ճշգրիտ վերարտադրման խնդիրը ծագել է վաղ ժամանակներում, սակայն առավել վառ արտահայտվել է XIX–XX դդ-ի կոմպոզիտորների (Ա. Ս. Դարգոմիժսկի, Ռ. Շուման, Դ. Դ. Շոստակովիչ, Կ. Դեբյուսի և ուր.) գործերում։ Դեկլամացիոն երգեցողության ժամանակակից ձևն օգտագործել են Ա. Շյոնբերգը և Ա. Բերգը։ Վոկալ ստեղծագործության բնագիր տեքստը այլ լեզվի թարգմանելու դեպքում հնարավոր են ճիշտ արտասանության շեղումներ, որից խուսափելու համար գոյություն ունի լիբրետտոյի, վոկալ-սիմֆ. երկի, ռոմանսի ևնի էկվիռիթմիկ. թարգմանություն։

2. Նույնն է, ինչ *մելոդեկլամացիան*։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՐԱՄԱ (իտալ.՝ dramma per la musica, dramma in musica), 1. օպերայի նախն. անվանումներից XVI–XVII դդ-ի սահմանագծին Իտալիայում։ Մինչև XVIII դ. օգտագործվել է «օպերա» եզրույթին զուգահեռ։

2. Հասկացություն, որն առաջադրվել է XIX դ-ի կեսին՝ պայմանավորված օպեր. պայմանականությունների դեմ պայքարով։

Նպատակը դրամատիկ. թատրոնի սկզբունքներն օպերա ներմուծելն էր։ Ե. դ-ի տես. խնդիրների վերամշակմամբ զբաղվել է Ռ. Վագները։ Նա առաջադրել է կարևոր սկզբունք, ըստ որի՝ դրաման նպատակն է, երաժշտությունը՝ նրա իրագործումը։ Իր օպերաներում ձգտել է հին օպեր. ձևերը վերափոխել Ե. դ-ի սկզբունքներով։ Նրա հայեցակարգը նպաստել է օպեր. արվ-ի զարգացմանը։ Ազգ. այլ դպրոցների կոմպոզիտորներ (Ջ. Վերդի, Ս. Վ. Ռախմանինով, Ա. Ս. Դարգոմիժսկի և ուր.) այդ խնդիրը լուծել են յուրովի։

3. Դրամատիկ. ստեղծագործություն, որտեղ առավել կարևորված է երաժշտությունը (վոկալ և գործիք.)։ Ե. դ-ի այդպիսի նմուշներ գոյություն են ունեցել աշխարհի հին և միջնադար. թատրոններում (լիթուրգ. դրաման՝ Եվրոպայում, երաժշտ. թատրոնը՝ Չինաստանում, ևն)։ «Ե. դ.» են անվանում նաև արվ. ասքերի հիման վրա ստեղծված երաժշտաբեմ. երկերը («Լեյլի և Մեջնուն», «Ֆարհադ և Շիրին», «Թահիր և Զոհրա» ևն)։

Հայկ. թատրոնում 1910–20-ական թթ-ին ռեժ. Հովսեփ *Ոսկանյանի* ջանքերով բեմադրվել են «Լեյլի և Մեջնուն» (Արմեն Տիգրանյանի երգերով), «Սայաթ-Նովա» (Սայաթ-Նովայի երգերով, Շարա Տալյանի կոմպոզիցիայով) ներկայացումները։

4. Եզրույթ, որով բնորոշվում է գերիշխող դրամատիկ. (ոչ կատակերգ., ոչ հեքիաթ.) բովանդակության օպեր. ժանրը (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», Ժ. Բիզեի «Կարմեն» ևն)։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ, արտահայտչամիջոցների և հնարքների համակարգ երաժշտաբեմ. արվ-ի ստեղծագործություններում (օպերա, բալետ,

օպերետ)՝ դրամատիկ. գործողությունը մարմնավորելու համար: Ե. դ-ի հիմքում դրամայի ընդհանուր օրենքներն են: Կոնֆլիկտը, որը բացահայտվում է գործողության և հակագործողության ընթացքում, դրամատիկ. մտահղացման (հանգույց, բարձրակետ, հանգուցալուծում) զարգացման հիմքն է, գլխ. թեմայի միջուկը:

Երաժշտաբեմ. արվ-ում գործածվում են ընդհանուր օրինաչափություններ, ընդ որում՝ երաժշտության դերը որոշվում է մի շարք առանձնահատկություններով, որոնք բնորոշ չեն գրական դրամային: Պատմ. զարգացման ընթացքում կազմավորվել են դրամատիկ. գործողությունը մարմնավորող մի շարք ձևեր. օպերայում՝ ասերգ, արիա, արիոզո, անսամբլի տեսակներ, խմբերգեր, բալետում՝ դաս. և բնութագր. պարեր, խորեոգրաֆիկ. անսամբլներ, որոնք աստիճանաբար փոփոխվում են և հեռանում կարգավորված դերակատարումներից ու վոկալ ձևերի կառուցվածքներից:

Ե. դ. օպերայում հարստանում է սիմֆ. զարգացման որոշ հնարքների օգնությամբ, որոնք մշակվել են գործիք. երաժշտության մեջ: Երաժշտաբեմ. երկերում հանդիպում են նյութի կառուցվածքի համար զուտ երաժշտ. սկզբունքների պարտադիր հատկանիշներ (վարիացիա, սոնատայնություն, ռոնդոյաձև), որոնք հանդես են գալիս առավել ազատ և ճկուն կերպով, քան գործիք. երաժշտության մեջ:

«Ե. դ.» հասկացությունը վերաբերում է նաև գործիք. ստեղծագործություններին, որոնք չեն առնչվում բեմ. գործողության կամ որևէ գրական ծրագրի հետ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մասնագետ երաժիշտների և երաժշտասերների միավորումներ. նպատակը երաժշտ. մշակույթի տարածումն է, երաժշտարվ-ի որոշ տեսակների ուսումնասիրությունը: Տարբերում են կատարող. (նվագախմբ., երգչախմբ., կամեր.), ստեղծագործ. (կոմպոզիտոր., երաժշտագիտ.), գիտ. և լուսավոր. Ե. ը.: Հիմնադրվել են XVI դ-ում Իտալիայում՝ «երաժշտական ակադեմիա» անվամբ, որոնք հիմնականում զբաղվել են երաժշտ. գործերի կատարմամբ: Գերմանիայում և եվրոպ. այլ երկրներում ստեղծվել են XVII դ-ում՝ որպես «երաժշտական կոլեգիումներ»:

XIX դ-ում կազմակերպվել են տղամարդկանց երգչախմբ. ընկերություններ Գերմանիայում (առաջինը՝ Բեռլինում, 1809), Ավստրիայում, Շվեյցարիայում, ավելի ուշ՝ Ֆրանսիայում (1835): Ռուսաստանում առաջին երաժշտ. ընկերությունը հիմնադրվել է XVIII դ-ի վերջին («Երաժշտական ակումբ», 1772, Ս. Պետերբուրգ): Կան նաև միջազգ. Ե. ը., որոնց մեծ մասը ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից միջազգ. երաժշտ. խորհրդի (հիմն.՝ 1949, Փարիզ) անդամ է:

Հայ իրականության մեջ առաջինն երաժշտ. ընկերությունը՝ «Քնար հայկականը», հիմնադրվել է 1862-ին Կ. Պոլսում: XX դ-ի սկզբին ստեղծվել են Ս. Պետերբուրգի հայ գեղ. (1903), Մոսկվայի հայ խմբերգ. (1910), Թիֆլիսի հայկ. խմբերգ. (1910), Արևելյան երաժշտ. (1907), «Երաժշտական լիգան» (1908), Հայոց երաժշտ. (1912), Հայ երաժշտ. տեսաբանների (1919) ևն ընկերությունները, խորհրդ. տարիներին՝ Հայաստանի պրոլետ. երաժիշտների ընկերակցությունը (1930), Հայաստանի երգչախմբ. (1958), Հայաստանի երաժշտ. (1987) և այլ ընկերություններ, անկախության տարիներին՝ «Հայ փոքրիկ երգիչներ» մանկ. միջազգ. ընկերակցությունը (1993) ևն:

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼԻԳԱ», հայկ. երաժշտ. ընկերություն: Հիմնադրել են Ռոմանոս ***Մելիքյանը*** և Ազատ ***Սանուկյանը*** 1908-ին Թիֆլիսում: Անդամները հիմնականում Թիֆլիսի հայկ. հանրակրթ. դպրոցների երգ-երաժշտության դասատուներն էին: Նպատակը դպրոցների համար պարզ ու մատչելի մանկ. երգեր ստեղծելն էր, երաժշտության դասավանդումը կանոնավորելը: Ընկերության ջանքերով ստեղծվել են դասագրքեր (Ռ. Մելիքյանի և Ա. Սանուկյանի «Երաժշտական այբբենարանը» ևն), մանկ. երգերի ժող-ներ (Ա. Սանուկյանի «Փնջիկ» տետրերը ևն): Մշակվել են նաև մեթոդ. ցուցումներ, անցկացվել ցուցադր. դասեր, աշակերտների մասնակցությամբ բեմադրվել են մանկ. օպերաներ, երաժշտ. տեսարաններ ևն: 1912-ին միավորվել է Թիֆլիսի հայոց երաժշտ. ընկերության հետ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ, մարդու՝ երաժշտ. ինչ-յունի առանձնահատկություններն ու նրանց միջև կապն ընկալելու ունակությունը: Ե. լ-յան տեսակներն են՝ բացարձակ (երաժշտ. ինչ-յունի բացարձակ բարձրությունը որոշելու ունակություն), հարաբերական (տարբեր բարձրության ինչ-յունների հարաբերութ-

յունները և նրանց ինտերվալը տարբերելու ունակություն) և ներքին (առանձին հնչյուններ և ամբողջ. երաժշտ. պիեսը մտավոր պատկերացնելու ունակություն): Ե. լ-յան զարգացմանը նպաստում են սոլֆեջջոյի պարապմունքները:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՒՄ, կատարող. միջոցներով երաժշտ. երկի վերարտադրության ստեղծագործ. գործընթաց: Երաժշտ. երկն իրականությունն արտահայտում է հնչյունների գեղ. կերպարներով և ունի վերարտադրման անհրաժեշտություն: Նոտագրված երաժշտ. երկն իրական հնչողություն է ձեռք բերում և

մարմնավորվում կատարման ու գեղ. մեկնաբանման միջոցով: Նոտ. տեքստի ինտոնավորումն ու մեկնաբանումը նույնպես ստեղծագործ. գործընթաց է:

Կատարման ինտոնավորումն իմպրովիզացիոն բնույթով տարբերվում է կոմպոզիտորականից: Նոտագրության մեջ կատարման չնշված արտահայտչամիջոցները (ինտոնացիոն նրբերանգները, ագոգիկ, դինամիկ ու տեմպ. շեղումները ևն) լրացնում են կոմպոզիտորի երաժշտալեզվի տարրերի համալիրը: Պայմանա-

վորված կատարողի ինտոնավորման ձևերով, ստեղծագործ. անհատականությամբ, երաժշտ. ընկալման զգայունությամբ՝ հնարավոր են կերպար. բովանդակության և հուզ. կառույցի զանազան բացահայտումներ, որոնք հանգեցնում են երաժշտ. երկի բովանդակության բազմազանությանը:

Ե. կ., որպես պրոֆեսիոնալ արվ., իր առանձնահատկություններով, գեղ. և տեխ. խնդիրներով պայմանավորված է երաժշտ. ժանրերի և ոճերի, նոտագրման, երաժշտ. գործիքների կատարելագործման փուլ. զարգացմամբ: Երաժշտ. կատարող. արվ-ը միջնադարում կայացել է առավելապես ժամանակի գերիշխող պաշտամունք. երաժշտության շրջանակներում: Եկեղեց. գաղափարախոսությունը սահմանափակել է երաժշտության արտահայտման հնարավորությունները՝ նպաստելով երգչական և գործիք. «ընդհանրացված» հնչողության մշակմանը, պայմանավորել երաժշտ. արտահայտչամիջոցների, կատարման հնարքների, ստատիկ ոճի առանձնահատուկ ընտրությունը: Պաշտամունք. երաժշտության բազմաձայն պոլիֆոնիկ շարադրանքը և նրա գրառման մոտավոր ձևերը (նախ՝ նևմային, խազ., ապա՝ մենզուր.) սահմանել են մասնավորապես խմբային կատարման (ա կապելլա) գերակայությունը և գործնականում կատարող. արվ-ի առանձնահատկությունները՝ պայմանավորված արձանագրված կանոններով ու պայմաններով:

Երաժշտ. կատարող. արվ-ը XVI–XVII դդ-ում Իտալիայում դրսևորվել է Վերածննդի դարաշրջանի հումանիստ. ավանդույթներով: Նոր գեղագիտ. սկզբունքները նպաստել են երաժշտարվ-ի արտահայտչականության մակարդակի բարձրացմանը: Երաժշտ. կատարող. արվ-ի վրա որոշակիորեն ազդել են օպեր. և լար. արվ-ները: Առաջատար գեղագիտ. միտումը գործիքի հնչողությունը մարդու ձայնի արտահայտչականությանը մոտեցնելն էր («Լավ նվագելու համար հակավոր է լավ երգել», Ջ. Տարտինի): Երգեհոնը, կլավեսինը (կամ լյութը), քնարն ու տավիղը, որոնց նվագը XVII–XVIII դդ-ում հասել էր տեխ. և գեղ. բարձր մակարդակի, կատարող. արվ-ի վրա այդպիսի ներգործություն չեն ունեցել: Հատկապես ջութակի տևական ու ծավալուն, մոդուլյացիոն նրբերանգներով հարուստ մեղեդայնությունը կարող է արտահայտել մարդու բազմազան հոգեբան. վիճակները, խթանել նոր գործիք. երաժշտ. ժանրերի զարգացումը: Դրանով սկզբնավորվել են մենանվագ կատարման զարգացման հիմքերը՝ հարստացնելով

կատարող. արտահայտչամիջոցները: Ձևավորվել է նաև բազմազան գիտելիքներով և ունակություններով օժտված երաժշտի նոր տեսակ, որը միավորել է կատարողին ու երաժշտություն ստեղծողին: «Նվագող կոմպոզիտորի» կատարող. գործունեությունը ավատատիր. հասարակարգում սահմանափակվել է ընտրյալ ունկնդիրների շրջանակում՝ ոչ մեծ սրահում (արիստոկրատ. սալոն, պալատ. դահլիճ, մասամբ՝ եկեղեցի): Իրականում դրանք կամեր. կատարումներ էին, որտեղ հստակ սահմանափակումներ չկային կատարողների և լսարանի միջև. բացակայել է բեմը, նրանց միավորել են զգացմունքների անմիջական վերապրումները: Երաժիշտը հաջողության է հասել ոչ այնքան նվագի կատարելությամբ, որքան երաժշտության վերարտադրման իմպրովիզացիոն արվ-ով: Վիրտուոզությունն ընկալվել է ոչ թե որպես կատարման տեխ. համալիր միջոցների կատարյալ տիրապետում, այլ գործիքի օգնությամբ լսարանի հետ «խոսելու» ունակություն:

XVII–XVIII դդ-ում գերակշռել են երաժշտության ոչ լրիվ ձևերի արձանագրումը (թեև հնգագծի նոտագրումը կամ նոր հայկական ձայնագրությունն ամրագրել են հնչյունի ճշգրիտ բարձրությունն ու տևողությունը), իմպրովիզացիոն վերարտադրման ավանդույթը գեներալ-բասում և զարդհնչյունները (օռնամենտիկա):

XVIII դ-ի վերջին դաս. սիմֆ. նվագախմբի ձևավորումը պայմանավորված էր սիմֆոնիայի ժանրի կայացմամբ, ավելի ուշ՝ նոր մենանվագ գործիքով՝ մուրճիկներով դաշնամուրով, որը նպաստել է դաս. սոնատի և կոնցերտի ձևերի զարգացմանը: Գեներալ-բասի համակարգի գեղ. իմպրովիզացիայի անկումից հետո, սենտիմենտալիզմի ազդեցությամբ, զարգացել է քնար. մեներգեցողությունը, գործիք. երաժշտությունը ձեռք է բերել հուզ. մեծ հագեցվածություն, դինամիզմ, հակադրություն, ձևավորվել է նվագախմբ. կատարող. արվ-ի նոր ոճ՝ նշանավորելով շրջադարձ կատարող. դինամիկայում: Բարոկկոյի դարաշրջանում գերիշխող, հիմնականում արխիտեկտոնիկ սկզբունքներով պայմանավորված դինամիկան փոխարինվել է սահուն, աստիճան. դինամիկ անցումներով, նուրբ «դինամիկ զգացումներով»:

Բարոկկոյի, ռոկոկոյի և սենտիմենտալիզմի ոճ. ազդեցություններից հետո երաժշտ. կատարող. արվ-ի վրա XVIII դ-ի վերջին ազդել են լարված սոցիալ. փոփոխությունները, որի շրջանում էլ ավարտվել են ազգ. կատարող. դպրոցների կազմավորման գործընթացները: Ֆրանս. մեծ հեղափոխության ազդեցությամբ դուրս են մղվել երաժշտ. կյանքի հին՝ «ներփակված» ձևերը, առաջացել նորերը: Նոր ձևերից էր հաս. համերգը (վճարման կարգով և նախապես պատրաստված ծրագրով)՝ լսարանի սոցիալ. արմատ. փոփոխություններին համապատասխան: Համերգասրահում երևան է եկել բեմը՝ էստրադան՝ հոետոր. ամբիոն, որն արտիստին առանձնացրել է ունկնդրից: Սիմֆ. և օպեր. նվագախմբերի տարածումն առաջացրել է մասնագետ կատարողների մեծ պահանջարկ:

Նոր հաս. հարաբերությունների շնորհիվ ձևավորվել է երաժշտի՝ «վիրտուոզ ստեղծագործողի» տեսակը: Տարբեր երկրների միջև առևտր. և մշակութ. կապերի զարգացումը փոխել է կատարողների գործունեության բնույթը. նրանց առավելապես հետաքրքրել է մեկենասի կամ եկեղեց. կուրիաների մասնագիտ. համերգ. գործունեությունը: Օպերայի նկատմամբ առավել հետաքրքրությունն իր տեղը զիջել է սիմֆ. երաժշտությանը, որը ձևավորել է ունկնդրի նոր տեսակ: Կատարող. գործունեության ծավալների ընդլայնումն առաջացրել է նոր մասնագետների՝ իմպրեսարիոների պահանջարկ, որոնք, ըստ պայմանագրի, կազմակերպել

են արտիստների ելույթները (առաջինը՝ Ն. Պագանինի): Ձևավորվել է Ե. կ-ման գեղագիտություն, որն ամբողջացել է «վիրտուոզ ստեղծագործողի» արվ-ում: XVII–XVIII դդ-ում վերջինիս և «կատա-

րող կոմպոզիտորի» միջև կային խորք. տարբերություններ. երկրորդի համար կատարող. արվ-ը միայն իր ստեղծագործ. ձգտումների արտահայտման միջոց էր, իսկ «վիրտուոզ ստեղծագործողի» համար՝ կոմպոզիտոր. արվ-ի միջոցով իր կատարման վարպետությունը ցուցադրելու հնարավորություն: Մեծ համերգասրահների ակուստիկան պահանջում էր երաժշտ. նոր արտահայտչաձևեր և տեխ. միջոցներ:

Երաժշտի դերասան. վերամարմնավորումները, արտահայտիչ շարժուձևը կարևոր տարրեր էին ռոմանտիզմի շրջանի երաժշտ. կատարող. արվ-ում: Կազմակերպվել են կատարողների «թատերականացված» ելույթներ. համերգ. խառը ծրագրով հանդես են եկել մեներգիչներ, մենակատարներ՝ նվագախմբի հետ: Ռոմանտիկ. կատարող. արվ-ի մի շարք ձեռքբերումներ, հատկապես՝ նվագի նոր՝ գունագեղ և վիրտուոզ միջոցներ,

ներմուծվել են գործն. երաժշտության մեջ:

XIX դ-ի կեսերին «ստեղծագործող վիրտուոզի» արվ-ի ոճ. ուղղվածության և երաժշտության ընդհանուր գեղ. միտումների զարգացման միջև հակասությունը հանգեցրել է ռոմանտիկ. կատարող. արվ-ի ճգնաժամի: Ձևավորվել է երաժշտի նոր՝ մեկնաբանի տեսակը (կոմպոզիտորի ստեղծագործության մեկնաբանողը): Տեղի է ունեցել համերգ. երկացանկի ոճ. արմատ. հեղաշրջում: Օպեր. թեմաներով ֆանտազիաների և վարիացիաների փոխարեն ի հայտ են եկել Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շուբերտի գործերը, վերածնվել են հնագույն վարպետների երկերը, զարգացել են նվագախմբ. քառյակների, դիրիժորության արվ-ները:

Երաժշտ. մեկնաբանման հիմնավորումը մեծապես ազդել է մի շարք նշանավոր երաժիշտների գործունեության վրա (Ֆ. Դավիդ, Յ. Յոախիմ, Ֆ. Ա. Հաբենեկ, Ֆ. Լիստ, Ա. Գ. Ռուբինշտեյն, Ս. Վ. Ռախմանինով, Հ. Բեռլիոզ, Ռ. Վագներ, Ա. Սպենդիարյան, Ա. Բաբաջանյան և ուր.): Մեկնաբանության արվ-ի զարգացմանը զուգահեռ ձևավորվել են երաժշտ. կատարող. դպրոցներ, ուղղություններ և ոճեր: Պայմանավորված կատարման խնդիրների տարբերություններով՝ առաջացել են հնագույն երաժշտության կատարման հիմնախնդիրներ, ստեղծվել մեկնաբանությունն ամրագրող ձևեր՝ կատարման խմբագրում և տրանսկրիպցիա:

XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին ձայնագրության գյուտի շնորհիվ գրառվել են ստեղծագործությունների կատարումներ: Ստուդիական ձայնագրության ժամանակ ձևավորվել է կատարման նոր տեսակ, որն իր գեղագիտ. օրինաչափություններով և առանձնահատկություններով տարբերվում էր համերգ. կատարումից: Ձայնագրությունը նաև առաջադրել է գեղագիտ., հոգեբան. և տեխ. նոր հիմնախնդիրներ՝ պայմանավորված երաժշտության կերպավորմամբ, հաղորդմամբ և ընկալմամբ: 1920–30-ական թթ-ին կատարող. արվ-ում ձևավորվել է ուրբանիստ. ոճը, որտեղ բացակայել է հուզականությունը, հոգեբանությունը, աչքի է ընկել տեխնիկայի ֆետիշացմամբ, կառուցվածք. չորությամբ և այլ հատկանիշներով: 1950-ական թթ-ից մեծացել է բուրժ. և կոմունիստ. «զանգվածային» մշակույթների ու երաժշտ. ավանգարդիզմի ազդեցությունը, որն իրարից հեռացրել է կատարողին և ունկնդրին: Այդ միտումներին հակազդել են խորհրդ. շրջանի կատարող. արվ-ի առաջադեմ ներկայացուցիչները, նաև ժամանակի խոշոր արտիստների (Բ. Վալտեր, Վ. Ֆուրտվենգլեր, Յ. Սիգետ, Պ. Կազալս, Դ. Դավիդյան, Հ. Նալբանդյան, Ա. Գաբրիելյան, Ժ. Տեր-Մերգերյան և ուր.) գործունեությունը. նրանք առաջնորդվել են ռեալիստ. և ռոմանտիկ. կատարող. արվ-ի ավանդույթներով:

Բարդ ինտոնացիոն և ռիթմիկ կառուցվածքով ժամանակակից երաժշտ. լավագույն նմուշները մեծապես նպաստել են կատարող. արտահայտչամիջոցների, համերգայնության սկզբունքների զարգաց-

մանը: Ժամանակակից երաժշտության մեջ մեծ դեր ունեն նաև գործիք. և վոկալ վիրտուոզ կատարման արտահայտչամիջոցները (ռիթմ, տեմբր ևն), որոնց շնորհիվ ունկնդիրը նորովի է ընկալում դաս. երաժշտությունը, «վերաինտոնավորում» նրա կերպարները:

Երաժշտ. կատարող. արվ-ի հիմնախնդիրներին իրենց աշխ-ներում անդրադարձել են Դ. Դիդրոն, Գ. Վ. Ֆ. Հեգելը, Դավիթ Անհաղթը, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը և ուր.: Երաժշտ. մշակույթի տարածուն զարգացումը հստակեցրել է կատարող. արվ-ի կարևորագույն դերը ժամանակակից հաս. կյանքում, նրա նշանակությունը՝ որպես գեղ. բարոյական հզոր ուժ, որը ներգործում է մարդու հոգևոր աշխարհի վրա: Ե. կ-ման գլխ. գեղագիտ. հիմնախնդիրներին զուգահեռ սկսվել է նրա համեմատ. ուսումնասիրությունը՝ հիմնված ձայնագրության վրա, որի շնորհիվ հնարավոր են նույն ստեղծագործության մեկնաբանությունների համադրումն ու վերլուծությունը: Ուսումնասիրվում են Ե. կ-ման ազդեցությունը և ընկալումը ձայնագրությամբ, ռադիոյով, հեռուստատեսությամբ ևն:

Ժամանակակից երաժշտագիտությունն զբաղվում է կատարող. արվ-ի տարաբնույթ խնդիրներով (վերահնչեցում, նվագելու տեխնիկայի և այլ միջոցների կիրառում ևն): Կատարող. արվ-ի պատմությանը, տեսությանն ու գեղագիտությանը վերաբերող աշխ-ներում երաժշտագետները ձգտում են բացահայտել Ե. կ-ման՝ որպես կենդանի խոսքի ռեալիստ. արվ-ի հումանիստ. և բարոյագիտ. նշանակությունը («Երաժշտական կատարողականություն», պր. 1–13, 1954–2009, «Արտասահմանյան երաժշտական կատարողական արվեստ», պր. 1–10, 1962–2010, Շ. Ափոյանի «Խորհրդային Հայաստանի դաշնամուրային երաժշտությունը», 1968, բոլորը՝ ռուս.): Հրատարակվել են նաև Յ. Զարգարյանի, Վ. Սարգսյանի, Ի. Զոլոտովայի և ուր. աշխ-ները: Կոնսերվատորիաներում հատուկ դասընթացներ են վարում երաժշտ. կատարող. արվ-ի պատմության և տեսության վերաբերյալ: 1971-ին ԵՊԿ-ում Շ. Ափոյանը հիմնադրել է կատարողականության պատմության, տեսության, մեթոդիկայի և մանկավարժության ամբիոն (1990-ից ղեկ.՝ Ի. Զոլոտովա, Շ. Ափոյանի, Ի. Զոլոտովայի «XX դարի դաշնամուրային մանկավարժության և կատարողական արվեստի պատմությունից», Քրեստոմատիա, ռուս., 1998):

Գրկ. *Բրուտյան Մ., Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր, Ե., 2001: Ափոյան Շ., Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն. 1850–1920 թթ., Ե., 2006: Արտեմյան Լ., XX դարի նոր կոմպոզիցիոն տեխնոլոգիաներով գրված հայկական դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները, Ե., 2015: Курбатов М., Несколько слов о художественном исполнении на фортепиано, М., 1899; Друскин М., К вопросу о стилях исполнениях, СМ, 1934, № 7; Коган Г., Вопросы пианизма, Избр. статьи, М., 1968; Баренбойм Л., Вопросы фортепианного исполнительства, Л., 1969; Кочнев В., Музыкальное произведение и интерпретация, СМ, 1969, № 12; Корыхалова Н., Интерпретация музыки, Л., 1979; Апоян Ш. А., Незабываемые имена: Очерки о пианистах армянах, Е., 2008; Маргарян Г., Фортепианный концерт и его разновидности в творчестве армянских композиторов. Тенденции развития /1950–1980 гг/. Некоторые вопросы интерпретации, Е., 2009; Золотова И., Пути развития пианизма в Армении (вторая половина XX века), Исследование, Е., 2010; Adorno T. W., Der detreue Correpetitor, Lehrschriften zur musikalischen Praxis, Fr./am M., 1963.*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱ, կատակերգ. հիմքով երաժշտաբեմ. ստեղծագործություն: Ընդհանրացնում է երաժշտաբեմ. ժանրերը (օպերա-բուֆֆ, օպերետ, կոմիկ. օպերա, կոմեդիա-բալետ, վոդևիլ, մյուզիքլ ևն): Միջնադարում «կոմեդիա» եզրույթով անվանել են առավելապես երջանիկ ավարտ ունեցող բեմ. ներկայացումները, XVII դ-ում՝ իտալ. բոլոր օպերաները՝ անկախ բովանդակությունից:

Որպես երաժշտ. թատրոնի ինքնուրույն ժանր՝ ձևավորվել է XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին: Ի տարբերություն օպերետի՝ Ե. կ-ի երաժշտությունը սերտորեն կապված չէ բովանդակության զարգացման հետ. նրա մեջ հազվադեպ են երաժշտ. ծավալուն՝ անսամբլի, մեներգերի, երգչախմբի հետ միահյուսված տեսարանները: Ե. կ. կարող է ընդգրկել երգի տարբեր ժանրեր և կենցաղ. պարեր: Ե. կ-ներ բեմադրվում են նաև ԵԵԿԹ-ում:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների յուրացման գործընթաց՝ համակարգված երաժշտ. գործունեության համար, նաև երաժշտ. ուս. հաստատություններում երաժշտության ուսուցումը կազմակերպելու համակարգ: Տարբերում են ընդհա-

նուր (սիրողների համար) և մասնագիտ. (պրոֆեսիոնալ գործունեության համար՝ ստեղծագործ., կատարող., գիտ., մանկավաժ.) Ե. կ.:

Դեռևս Հին աշխարհի երկրներում՝ Եգիպտոսում, Չինաստանում և այլուր, տաճար., պալատ., զինվոր. և այլ երաժիշտներ ստացել են մասնագիտ. ուսուցում: Հին Հունաստանում մասնավոր դպրոցներում ուսուցանել են կիֆարա նվագել և աեդոսների արվ-ը, որոնք պարտադիր էին պատանիների համար: Միջնադարում այն հիմնականում կապված էր եկեղեցու հետ: Վերածննդի շրջանում Ե. կ-յան զարգացմանը նպաստել է նոտագրության ի հայտ գալը: Մոտ XVI դ-ում ընդհանուր Ե. կ. առանձնացել է մասնագիտականից. միջնակարգ դպրոցներում այն դասավանդել են կանտորները: Ֆրանս. մեծ հեղափոխությունից հետո մի շարք եվրոպ. երկրներում բացվել են կոնսերվատորիաներ, երաժշտ. ակադեմներ, բարձրագույն դպրոցներ, քոլեջներ, որտեղ պատրաստել են հիմնականում կատարողներ:

Արդի ժամանակաշրջանում, բացի երաժշտ. պետ. հաստատություններից (դպրոց, ստուդիա, ուսումնարան, ***կոնսերվատորիա*** ևն), գործում են նաև մասնավոր կրթօջախներ:



«Երաժշտական Հայաստան» ամսագրի (1998) շապիկը

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», երաժշտ., մշակութ., գիտ., վերլուծ-տեղեկատվ. եռալեզու ամսագիր: Հրատարակում է ԵՊԿ 1998-ից: Հրատարակչ. խորհրդի անդամներ են Արմեն Սմբատյանը (հիմնադիր-նախագահ), Գոհար Շագոյանը (հիմնադիր-գլխ. խմբ.), Սերգեյ Սարաջյանը, Ժաննա Զուրաբյանը, Շահեն Շահինյանը, Արաքսի Սարյանը, Սվետլանա Սարգսյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, Միհեր Նավոյանը, Ռուբեն Տերտերյանը (Էկվադոր), Գրիգոր Փիթեճյանը (Նյու Յորք), Լիլիթ Երնջակյանը, Աննա Արևշատյանը և ուր.: Լուսաբանում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող երաժշտ. կարևոր իրադարձությունները, ԵՊԿ գործունեությունը մշակութ. կյանքում, հայ և օտարազգի ճանաչված երաժիշտների ելույթները ՀՀ-ի և աշխարհի բեմերում, տպագրում է մշակութ. կապերին, հոգևոր երաժշտությանը, արվ-ին վերաբերող տես., քննադատ. հոդվածներ, գրախոսություններ և այլ նյութեր:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, պատմ. երաժշտագիտության (նաև պատմաբանասիր. հնագրության) ոլորտ, երաժշտապատմ. գիտակարգ. ուսումնասիրում է երաժշտ. գրության հին համակարգերը, երաժշտ. նշանների զարգացման օրինաչափությունները, նրանց գծագր. ձևերի փոփոխությունները, նաև երաժշտ. գրության հին հուշարձանները՝ ըստ այնտեղ գործածված նոտ. համակարգերի բովանդակության և նրանց գրության ժամանակի ու վայրի: Հիմնական խնդիրը երաժշտ. գրության մոռացված համակարգերի վերծանումն է և նրանցով գրառված երաժշտության փոխադրությունը ժամանակակից գծային նոտագրության: Բուն հնագրության եղանակներից բացի՝ օգտագործվում են երաժշտատես. ու պատմ. հետազոտություններ, նաև վիճակագրության, տեղեկատվության տեսության ու այլ գիտությունների տես. վերլուծություններ:

Որպես ինքնուրույն գիտություն՝ ձևավորվել է XIX դ-ի կեսերին: Արևմտաեվրոպ. և բյուզ. նևմային գրության ուսումնասիրության և վերծանության ոլորտում մեծ ներդրում ունեն Է. Կուսմակերը, Հ. Ռիմանը, Օ. Ֆլայշերը, նոր ժամանակներում՝ Է. Վելեսը, Հ. Տիլյարդը, Կ. Հյոհեգը (փորձել են ամբողջությամբ վերծանել միջինբյուզ. նևմագրությունը): Ռուս. միջնադար. եկեղեց. երգարվ-ի («զնամեննի ռասպև») և կրյուկ. նոտագրության ուսումնասիրության մեջ նշանակալի են Ս. Վ. Սմոլենսկու, Վ. Մ. Մետալլովի, Ա. Վ. Պրեոբրաժենսկու, Վ. Մ. Բելյաևի, Մ. Վ. Բրաժնիկովի, Ն. Դ. Ուսպենսկու աշխ-ները:

Հայկ. խազ. նոտագրությունն ուսումնասիրել են բազմաթիվ եվրոպացի երաժիշտ-միջնադարագետներ, հայտնի են նաև Ե. Տնտեսյանի, Կոմիտասի, Ռ. Աթայանի և Ն. Թահմիզյանի աշխ-ները: Վերջին ժամանակներում նկատելի նվաճումներ կան մասնավորապես երաժշտ. հին ձեռագրերի հայտնաբերման, նրանց թվագրման, ընդհանրապես հայ Ե. հ-յան սկզբունքների մշակման, խազագրության համակարգերի պատմության, աստիճան. զարգացման ուսումնասիրման, նաև որոշ տես-հնագր. խնդիրների մշակման ոլորտում: Սակայն միջնադար. նոտագրության բոլոր համակարգերն էլ դեռևս վերջնականորեն վերծանված չեն:

Գրկ. *Տնտեսեան Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայցս եկեղեցւոյ, ԿՊ, 1874: Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Նոյնի, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, հ. 1, 2, Ե., 2005, 2007: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Թահմիզեան Ն., Արդի խազաբանութիւն, Փասատենա, 2003: Успенский Н., Древнерусское певческое искусство, 2 изд., М., 1971; Бражников М., Памятники знаменного распева, Л., 1974; Fleischer O., Neumen-Studien, t. 1–3, Lpz.–B., 1895, 1897, 1904; Tillyard H. J. W., Handbook of the Middle Byzantine Musical Notation, Copenhagen, 1935; Wellesr E., Eastern Elements in Western Shant, Boston, 1947; Ataian R., Armenische chazen, «Beiträge zeur Tusinwisslenschaft», B., 1968; Tahmizian N., Les anciens manuscrits musicaux armeniens..., «Revue des études arméniennes», 1970, t. VII.*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԵՎ, լայն առումով՝ երաժշտ. ստեղծագործություն, որպես ամբողջ. դինամիկ երևույթ՝ կոմպոզիցիոն հնարքների և երաժշտ. արտահայտչամիջոցների (մեղեդի, ռիթմ, հարմոնիա, կառուցվածք ևն) փոխկապակցված և փոխհարաբերված համալիր, որի միջոցով մարմնավորվում է երաժշտ. երկի գաղափարագեղ. բովանդակությունը: Առաջնայինը բովանդակությունն է, սակայն կարևոր է նաև ձևը, որն օժտված է ինքնուրույն ներունակ տրամաբանությամբ՝ պայմանավորված պատմ. զարգացման օրինաչափություններով: Կարևոր են մշակույթի ազգ. և սոցիալ. այն արմատները, որոնց հիման վրա կազմավորվում են ձևի կարևորագույն բաղադրամասի՝ երաժշտ. լեզվի նորմերը:

Երաժշտությունը ժամանակային արվեստ է. նրա զարգացման ընթացքը ձևակազմավորման գործընթաց է, որի առանձին փուլերը փոխհարաբերվելով՝ առաջացնում են յուրատեսակ հետագիծ-սխեմա, հետևաբար՝ Ե. ձ. նեղ առումով սխեմա-կառուցվածք է:

Երաժշտության պատմ. զարգացման ընթացքում գործնականորեն արմատավորվել են ձև-սխեմաների կայուն տիպ. տեսակներ՝ պարբերություն, քառյակ, երկմաս ձև (2 պարբերության միասնությունը AB սխեմայով), եռամաս ձև (ABA սխեմայով), ռոնդո, վարիացիա, ֆուգա, սոնատ. ձև ևն:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ, երաժշտ. ինչյունների և նրանց միջև պաուզաների հարաբեր. տևողությունը: Նոտագրության մեջ տարբեր տևողության ինչյունների արտացոլման գրառման սկզբունքը ներմուծել են Ֆրանկո Քյոլնեցին (Գերմանիա) և XIII դ–ի այլ տեսաբաններ: Երաժշտության արտահայտչականության համար հավասարապես առաջնային են ինչյունների տևողությունների և բարձրությունների տրամաբանված դասավորությունները: Տևողությունների բազմազան հարաբերություններն արտահայտվում են ռիթմում, չափակցվում մետրի հիման վրա, գրավոր դրսևորվում նոտաների և պաուզայի նշանների միջոցով: Միավոր համարվում է 1 ամբողջ տևողությունը, իսկ մյուսներն ստացվում են դրա բաժանումից և մասերի գումարից: Հիմնականն ամբողջի բաժանումն է զույգ մասերի՝ 2 կեսի, 4 քառորդի ևն: Գործածական են նաև զույգ տևողությունների բաժանումը կենտ մասերի (տրիոլ, կվինտոլ ևն): Նշված տևողությունները երաժշտ. երկի կատարման ժամանակ իրենց փաստացի տևականությունը հարաբերականորեն ձևավորում են ըստ կատարման արագության: Տես նաև ***Խազագրություն***, ***Նոր հայկական ձայնագրություն***:

Ըստ Ռոբերտ Աթայանի

Միաձայն գուգապարներ (ժայռապատկեր, Ուղտասար, մ. թ. ա. V–III հազարամյակ)

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, արվ–ի տեսակ. իրականությունն արտացոլում և մարդու վրա ներգործում է ինչյունների՝ հատուկ ձևով կազմակերպված իմաստավոր հաջորդականությունների միջոցով:

Հայ պրոֆեսիոնալ երաժշտարվ–ի արմատները հասնում են հազարամյակների խորքերը: Պահպանվել են երաժշտ. մշակույթին առնչվող բազմաթիվ նմուշներ՝ երաժշտ. գործիքներ, նաև ժայռերին (ժայռապատկեր) և որմերին արված պար. տեսարաններ, երգողների, նվագողների առանձին կամ խմբային պատկերներ:

Եղջերափող (Սևանի ավազան, մ. թ. ա. I հազարամյակի սկիզբ)

Մ. թ. ա. II հզ–ամյակի կեսից Հայկ. բարձրավանդակում կազմավորված երկրների պաշտամունք. ծիսակատարություններում իր տեղն է ունեցել նաև երգ–երաժշտությունը:

Ե. վերելք է ապրել հատկապես մ. թ. ա. I հզ–ամյակում. Սևանի ավազանում հայտնաբերված եղջերափողը (մ. թ. ա. I հզ–ամյակի սկիզբ), Կարմիր բլուրում՝ բրոնզե զույգ ծնծղաները (մ. թ. ա. VII դ.) վկայում են, որ ժամանակի քաղաքակրթությանը ծանոթ էին նաև մերձավորարև. և այլ երաժշտ. գործիքներ:

Վանի հայկ. թագավորության շրջանում զարգացել է պաշտամունք. և աշխարհիկ Ե.: Պաշտամունքայինը մշակվել է հեթա-

նոս. տաճարներում՝ հատուկ կրթություն ստացած քրմական դասի ջանքերով, իսկ աշխարհիկը ծագել է վիպասանների և գուսանների շնորհիվ:

Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում ծաղկել է թաղման ծեսի հետ կապված ողբը, որտեղ աստիճանաբար կարևորվել է վիպ. նախասկիզբը: Առաջացել է հայոց երաժշտաբանաստեղծ. ինագույն ձևերից մեկը՝ աստունքելով ու մեկընդմեջ երգելով պատմվող յուրատեսակ պոեմը, որն իր զարգացման ընթացքում նյութեր է քաղել հայոց հնագույն պատմությունից, առավելապես՝ դիցարան. գրույցներից ու առասպելներից: Այս արվ-ի վաղ նկարագրի վերաբերյալ տեղեկություններ կան Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ում: Նա, վերապատմելով Հայկի և Բելի, Արամի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Վահագն Վիշապաքաղի և Տորք Անգեղի մասին առասպելները, դրանք անվանել է «գրույց», «երգ», «առասպել» և «գուսանական»:



Մեսրոպ Մաշտոցի Ադամանդի անվան հնագիտության հարականներից՝ նոր հայկական (վերևում) և եվրոպական (ներքևում) ձայնագրությամբ



Մ. թ. ա. III դ-ից հայկ. մշակույթն աստիճանաբար մերձեցել է հելլեն. քաղաքակրթությանը և պայմանականորեն անվանվել «հելլենիստական»: Այդ հարյուրամյակին է վերաբերում Գառնիում հայտնաբերված 5-ձայնանոցքանի ոսկրե սրինգը:

Արտաշեսյան հարստության տիրապետության շրջանում, հատկապես՝ Տիգրան Մեծի ու Արտավազդ Բ-ի գահակալության տարիներին, հայ Ե-յան մեջ վերելք են ապրել ռազմ. և ծիս., մասնավորապես՝ հարսանեկան երգերը: Զարգացման նշանակալի ուղի են անցել «վէպ», «վիպասանք», «երգք վիպասանաց» ու «թուելեացն երգք» կոչվող վիպերգերը: Դրանց մի մասը՝ Սանատրուկին, Երվանդին, Արտաշես Ա-ին, Տիգրան Բ-ին և ուր. վերաբերող բանաստեղծ. դրվագները, Մովսես Խորենացու վկայությամբ, կատարել են Գողթն գավառի վիպասանները՝ աստունքելով ու մեկընդմեջ երգելով, պարի ու դիմաշարժության, փանդիռի նվագակցությամբ: Հեթանոս. Հայաստանում օգտագործել են նաև այլ լար., հարված., փող. երաժշտ. գործիքներ:

Հելլենիստ. Հայաստանում պրոֆեսիոնալ Ե. ներկայացրել են վիպասանները, գուսանները և վարձակները, տաճարային երգիչները՝ քրմերը, քրմուհիներն ու երգեցիկ խմբերը, նաև թատեր. երաժիշտները: Հայաստանում վաղ ավատատիր. շրջանում ձևավորված հայկ. քրիստ. եկեղեցին իր վերահսկողության տակ է առել նաև հայոց մշակութ., այդ թվում՝ Ե-յան զարգացման ընթացքը: Այդ շրջանի աշխարհիկ երգ-երաժշտության ոլորտում միակ պրոֆեսիոնալ ներկայացուցիչները գուսաններն էին, որոնց արվ-ը, սակայն, միատարր չէր. ուներ ներքին ճյուղավորումներ: Գուսանների, նվագածուների, երգիչ-դերասանների (գողթան երգիչներ), վարձակների և ուր. ջանքերով լուրջ տեղաշարժեր են կատարվել վիպերգության մեջ. ստեղծվել են «Պարսից պատերազմ» հայկ. ազգ. մեծ վեպը, «Տարոնի պատերազմը», որտեղ գովերգվում են Մամիկոնյան տան քաջարի զորավարների սխրանքները: Զարգացել է ձայն-գործիք. գուսան. Ե.:

Վաղ ավատատիր. շրջանում սկզբնավորվել է հայ հոգևոր երգաստեղծությունը, որը գրերի գյուտի շնորհիվ զարգացել և հասել է հայոց մասնագիտացված և արդեն գրական լեզվի վրա խարսխված, ազգայնացված երգարվ-ի մակարդակի:

Երաժշտապատմ. այդ ընթացքը ներառել է զարգացման 3 փուլ՝ IV–V դդ. (բարձրակետը՝ V դ.), VI–VIII դդ. (բարձրակետը՝ VIII դ–ի 1-ին քառորդ) և IX–X դդ., որոնք, ամփոփելով ողջ պատմաշրջանի նվաճումները, միաժամանակ նոր սկիզբ են նշանավորել: Գրերի գյուտից հետո Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և նրանց ավագ աշակերտների ջանքերով թարգմանվել են Աստվածաշունչն ու պաշտամունք. այլ մատյաններ (առաջին հերթին՝ Պատարագամատույցը), ծեսն ու արարողությունը հայացվել ու ճոխացվել են:

Աստվածաշնչից անջատվելով՝ առանձին գրքով շրջանառվել են Դավթի սաղմոսները, որոնցով ստեղծվել է հայոց Սաղմոսարանը, որին հավելելով մարգարեական օրհնությունները և նորաստեղծ աղոթքներն ու քարոզները՝ կազմավորվել է հնագույն ժամագիրքը: Ծեսի և արարողության Ե. կանոնակարգել են Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը՝ հիմքում դնելով հայոց ավանդ. ձայնեղանակները: Հայկ. ինքնուրույն երգի 2 նահապետներն էլ իրենց ջանքերն ուղղել են սկզբնապես թեև ոչ ծավալուն, սակայն մոնումենտալ ոճի երգի արմատավորմանը Հայաստանում: Մեսրոպ Մաշտոցը հորինել է ապաշխարության շարականները, Սահակ Պարթևը՝ Ավագ շաբաթվա հանդիսավոր երգասացությունները: Դավիթ Անհաղթն ու Դավիթ Քերականը խորապես մշակել են հայոց գեղագիտ. ու երաժշտատես. համակարգերը: Մովսես Խորենացին Ծննդյան շարականներով ինքնատիպ որակ ու հզոր շունչ է հաղորդել հայ պրոֆեսիոնալ Ե–յանը, իսկ Հովհաննես Ա Մանդակունին և Գյուտ Արահեզացին նոր մակարդակի են հասցրել մոնումենտալ ոճի հայ հոգևոր ինքնուրույն երգը (տես ***Հոգևոր երաժշտություն***):

Տեսության բնագավառում դեռևս V–VI դդ–ում, ի լրումն ձայնեղանակների կանոնակարգման, մշակվել են ձայնի և հարմոնիայի հենքի մասին ուսմունքները: VII դ–ում մոնումենտալ ոճը զարգացման բարձրակետին են հասցրել Կոմիտաս Ա Աղցեցին, Բարսեղ Շոնը, Անանիա Շիրակացին (Հարության շարականներով) և Սահակ Ա Զորափորեցին (խաչին ու եկեղեցուն նվիրված շարականներով): Տեսությունը հարստացվել է ինչյունականության (ակուստիկա) մասին ուսմունքով: Բարսեղ Շոնը կազմել է հոգևոր երգերի առաջին՝ պաշտոնապես վավերացված ժող–ը՝ «Շոնընտիրը»:

VIII դ–ի 1-ին քառորդում Ստեփանոս Սյունեցու ջանքերով սկզբունքորեն ընդունվել է եկեղեց. նույն տոնին վերաբերող 8–9 երգից բաղկացած «կանոնի» ժանրը, ծագել է խազագրության նախնական (ընթացքում լրացվել է երգչային նոր նշաններով) և բարեկարգվել ութձայն համակարգերը: Ծեսի և պաշտոներգության հարցերը իրենց աշխ–ներում նորովի են մեկնաբանել Հովհաննես Գ Օձնեցին և Խոսրով Անձևացին: Հեթանոս. շրջանին բնորոշ դիցաբան. ու բնապաշտ. պատկերացումներին փոխարինել են Դավիթ Անհաղթի, Դավիթ Քերականի և Ստեփանոս Սյունեցու աշխ–ներում առաջադրված ու երաժշտության բանական ըմբռնումը հիմնավորող գիտափիլ. հայացքները: Այս շրջանի հոգևոր երգաստեղծության մեջ, ըստ պատմ. և վարքագր. աղբյուրների, նկատելի ներդրում են ունեցել նաև Խոսրովիդուխտը, Սահակադուխտը և Գրիգոր Գոզիկը:

«Շարակնոցի» (1328, Մլոնդ., ձեռ. 1512–78ա) պատկերազարդ էջ

IX դ–ում Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսը կարգավորել է հայոց գլխ. ծիսարաններից մեկը՝ Մաշտոցը: Երգահաններից հիշատակելի է Համամ Արևելցին՝ իր զղջական «Հայր երկնավոր» շարականով: X դ–ում կարգավորվել են հայոց ծիս. մատյաններից ևս երկուսը՝ Տոնացույցն ու «Հռոմադիր» կոչվող Հայսմավուրքը: Նույն դարում նշանավորվել է միջնադար. հայկ. արվ–ի վերընթացի սկիզբը (մասնավորապես՝ Գրիգոր Նարեկացու երաժշտաբանաստեղծ. երկը): X դ–ի 20-ական թթ–ից՝ հայկ. իշխան. մի շարք տների հզորացման, Անիի, Վասպուրականի և Կիլիկիայի հայկ. թագավորությունների հիմնադրման ու ամրապնդման շրջանում, զարգացել է նաև հայ երաժշտ. մշակույթը, որի վերելքի շրջանը հասել է մինչև XV դ–ի սկիզբը: XII–XIV դդ–ում վերջնականապես ձևավորվել է հայ հոգևոր երաժշտարվ–ի ազգ. դիմագիծը, հնարավորինս հագեցել է ժող–աշխարհիկ առողջ կենսազգացողությամբ և հասել իր ժամանակի միաձայն արվ–ի համաշխ. գեղ. մակարդակին:

«Ծնունդ», մանրանկար (1418, Ավետարան, Մլոնդ., ձեռ. № 5512): Սրնգահար հովիվը ողջունում է Տիրոջ ծնունդը

X–XI դդ-ում հայ երաժշտ. կյանքի կարևորագույն առաջընթացը տաղային արվ-ի ծաղկումն էր: Ընդգրկելով մեղեդիների, սրբասացությունների, նաև ծանր ու ստեղի տիպի շարականների հորինումը՝ այն նորակերտ ստեղծագործությունների ուրույն ոլորտ էր, որի խորացմամբ և ընդլայնմամբ էլ նշանավորվել է այդ շրջանը: Հաստատվել և զարգացել է երաժշտ. նոր ոճ (որի նմանակը ճարտարապետության մեջ հայտնի է մոնումենտալ-դեկորատիվ անվամբ). ունեցել է բարգավաճման 3 փուլ՝ X–XI, XII–XIII և XIV–XV դդ.:

Առաջինը տաղային արվ-ի և, միաժամանակ, մոնումենտալ-դեկորատիվ ոճի ծաղկման շրջանն է, որի լավագույն օրինակներից են Գրիգոր Նարեկացու տաղերը, ավելի ուշ՝ Հովհաննես Սարկավագ վարդապետի երկերը: 2-րդ փուլը շարունակվում է Ներսես Շնորհալու ստեղծագործությամբ՝ տաղերով, ծանր ու ստեղի շարականներով և Պատարագի երգերով: Ընդհանրապես, Ներսես Շնորհալու ժառանգության մեջ գրեթե ավարտուն տեսք են ստացել Պատարագը (թվերգերի, մեներգերի և խմբերգերի հիմնական մասերով, նաև տաղերի, մեղեդիների, սրբասացությունների տոն. հատվածներով), Շարակնոցը, Ժամագիրքը, Մաշտոցը և այլ մատյաններ, երևան են եկել նոր տիպի ժող-ներ՝ Գանձարանը, Մանրուսումը և Տաղարանը: 3-րդ փուլը նշանավորվել է Ներսես Շնորհալուց հետո: Կիլիկիայում և Կենտր. Հայաստանում գործել են երաժիշտ-բանաստեղծներ Ներսես Լամբրոնացին, Խաչատուր Տարոնացին, Կոստանդին Սսեցին, Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Մխիթար Այրիվանեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին և ուր., որոնց շնորհիվ այս շրջանում զարգացման որոշակի աստիճանի են հասել նաև խազագրությունը (գործնականում) և խազագիտությունը:

Կիսախորան՝ երաժիշտների խմբով, մանրանկար (1588–90, Ավետարան, Սիոնի., ձեռ. № 5783)

X–XV դդ-ում կարևորվել են գուսան. երգն ու նվագը, ընդլայնվել է նրանց ներգործության շրջանակները: Ժանր. առումով այդ երգերը ներկայացրել են պանդխտության երգերից մինչև ժամանցի ստեղծագործություններ: Մեզ են հասել Հեթում Ա-ի որդու՝ Լևոնի գերության կամ «Մսրա թալանի» մասին հորինված երգերը, նաև նորագույն ժամանակներում Ակնում գրառված սիրո, ուրախության, գովքի, լացի, պանդխտության հայրենները կամ անտունիները: Բարձր զարգացման է հասել հայ ժող-քաղաք. ու գուսան. գործիք. նվագը:

Ֆրիկի աշխարհիկ տաղերի հորինման փորձը շարունակել են Հովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին և ուր.:

XII–XIII դդ-ում հին հայ գուսան. արվ-ը շարունակել է ապրել մասամբ գուսանների շնորհիվ, մասամբ էլ՝ ուսյալ մարդկանց ջանքերով, որոնք միջնադար. Տաղարաններում գրառել են գուսան. հայրենների շարքեր: XV դ-ում տակավին հիշատակվել են «գուսանները», և գրչագրերում եկեղեցականներին հորդորել են սովորել նրանցից:

XVI–XVII դդ-ում Պարսկաստանի հսում, Արմ. Հայաստանում, Այսրկովկասի հայ-թուրք. միջավայրում, քաղաքաբնակ արհեստավորների շրջանում երևան են եկել առաջին աշուղները (Նահապետ Քուչակն «աշըղ» է համարվում XVI դ-ում), իսկ հայ գաղթավայրերում և բազմալեզու քաղաքներում (Սպահան, Կ. Պոլիս, Թիֆլիս) ձևավորվել են հայ աշուղի (տես ***Աշուղական երաժշտություն***) և նոր տիպի քաղաք. երգիչ-նվագածուի՝ սազանդարի կերպարները:

XVIII դ-ում ստեղծագործել է ***Սայաթ-Նովան***՝ Այսրկովկասի ամենամեծ աշուղը: Նրա ժամանակակից հայ երաժիշտներից հայտնի է թամբուրահար Հարութինը: Հիշատակելի են նաև հայ անանուն երգիչները՝ ժող. ստեղծագործությունների (մասնավորապես՝ պանդուխտի երգերի) մշակողները: Հայ պանդուխտի երգն ինքնատիպ ձևով է դրսևորվել Մկրտիչ Նաղաշի ստեղծագործության մեջ: Շնորհիվ անանուն մշակների հավաք. ջանքերի՝ նոր իմաստ է ձեռք բերել «Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ» ժող. երգը:

Հայ տաղերգությունը զարգացման նոր աստիճանի է հասել XVII–XVIII դդ-ում: Այս շրջանի հեղինակներից հիշատակելի են Նաղաշ Հովնաթանը, Պաղտասար Դպիրն ու Պետրոս Ղափանցին: Նաղաշ Հովնաթանը, իր սիրո և խնջույքի երգերով զարգացնելով նախորդ շրջանի՝ XV–XVI դդ-ի քնարերգության ավանդույթները, միաժամանակ կրել է աշուղ. ստեղծագործությունից սերող որոշակի հովեր: Արլ. ձայնեղանակների ու աշուղ. արվ-ի

հանդեպ ունեցած վերաբերմունքով Նաղաշ Հովնաթանին մոտ է Պաղտասար Դպիրը, որը հաղորդակից է թուրքահայ աշուղ. արվ-ին: Պետրոս Ղափանցու շնորհիվ հայ տաղերգության մեջ զարգացել է հայկաբան ոճը: Նա «Գրքոյկ կոչեցեալ Երգարան»-ում չի հիշատակում թուրք. կամ առհասարակ արլ. երգերի եղանակներ: Այդ շրջանում աշխարհիկ տաղերի երգիչ-երաժիշտների թիվն ավելացել է, սակայն ոչ մեկի անունը հայտնի չէ:

XVII–XVIII դդ-ում հայ գիտնականները միջնադար. ինքնուրույն ու թարգման. մատենագրությունից բանաքաղելու միջոցով ստեղծել են ամբողջ. երաժշտատես. հոդվածներ: Նրանք իրենց գիտելիքները նորովի համալրելու նպատակով դիմել են և արլ. երաժշտագիտ. աղբյուրներին, և բյուզ. ձայնագրագիտությանը, և արևմտաեվրոպ. երաժշտության տեսությանը, որն արտացոլված է Ավետիք Պաղտասարյանի, Զեննե Պողոսի, Խաչատուր Էրզրումցու և Մխիթար Սեբաստացու աշխ-ներում: Գրիգոր Գապասաքալյանը, միջնադարին բնորոշ երաժշտատես. ու գեղագիտ. դրույթները ձևակերպելուն և դասակարգելուն զուգընթաց, փորձել է ստեղծել նոր ձայնագրության համակարգ՝ ճգնաժամ ապրող հայկ. խազագրության համակարգը համալրելով արլ. ու բյուզ. տարրերով: Չնայած Գապասաքալյանի փորձը չի հաջողվել, սակայն սկզբնավորել է հայ արդի խազաբան. գիտությունը՝ խթանելով հայկ. նոր ձայնագրության ստեղծումը, որի հեղինակը Համբարձում Լիմոնճյանն է:

Նորոգության շրջան: XVII–XVIII դդ-ում հայ երաժշտության մեջ դրական տեղաշարժերը պայմանավորվել են ազգ. ինքնագիտակցության վերելքով և տպագրության զարգացմամբ: 1664–65-ին Ամստերդամում Ոսկան Երևանցին հրատարակել է առաջին տպագիր Շարակնոցը, որտեղ ձեռագիր վստահելի աղբյուրներից ընդօրինակվել են ձայնեղանակ. նշումներն ու հոգևորականների մեծամասնության համար արդեն զուտ խորհրդանշ. իմաստ ունեցող խազային նշանները:

Քաղաք. կենցաղում կարևորվել է աշուղ. արվ-ը, որտեղ առաջնային էին խրատները, սիրո, սոցիալ. և հայրենասիր. թեմաները: Ժողովրդի գրեթե բոլոր խավերում տարածված էր ազգ-հայրենասիր. նոր տիպի քաղաք. երգը:

XIX դ-ում սկզբնավորվել է հայ երաժշտության զարգացման նոր փուլը: Մտավորականության ու հոգևորականության շրջանում հետզհետե հասունացել է հոգևոր երաժշտության նմուշների պահպանման, հետագա աղավաղումներից ու մոռացությունից փրկելու գաղափարը: Դրան առանձնապես նպաստել է 1813–15-ին Հ. Լիմոնճյանի ստեղծած նոր հայկ. ձայնագրության համակարգը, որը լավագույնս հարմարեցված էր ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ մոնոդիկ երաժշտության առանձնահատկությունները համարժեք արտահայտելուն և ձայնագրելուն: Հ. Լիմոնճյանը, Ե. Տնտեսյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Երանյանը, Հ. Չերչյանը և ուր. նոր համակարգով փորձել են ձայնագրել նախ Շարակնոցը, ապա՝ երաժշտածիս. այլ մատյաններ:

1866-ին Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսն Էջմիածին է հրավիրել նշանավոր երաժիշտ Նիկողայոս Թաշճյանին՝ տեղի ավանդ. եղանակները ձայնագրելու և բազմատեսակ հնչող հոգևոր երգերը միակերպելու համար, որին մասնակցել է նաև Մակար Եկմալյանը: 1866–1878-ին վավերացվել ու հրատարակվել են ժամանակի չափանիշներով հայկ. հոգևոր երգարանների առաջին գիտ. հրապարակումները՝ Պատարագի, Ժամագրքի և Շարակնոցի երգասացությունները, որոնք կարևոր դեր են խաղացել թե՛ գործնականում, թե՛ հոգևոր երաժշտության հետագա ուսումնասիրման համար:

XIX դ-ում Կ. Պոլսի եկեղեց. երաժիշտ-տեսաբանները (Հ. Լիմոնճյան, Ե. Տնտեսյան, Ն. Թաշճյան և ուր.) նշանակալի ներդրում ունեն շարականերգության, հոգևոր երգարվ-ի նմուշների հավաքագրման, ձայնագրման և աղավաղումներից փրկելու գործընթացում: 1874-ին գրեթե միաժամանակ լույս են տեսել Ն. Թաշճյանի «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց» և Ե. Տնտեսյանի «Նկարագիր երգոց Հայաստանեայցս եկեղեցւոյ...» աշխ-ները, որտեղ ամփոփված են նրանց ձայնագիտ. և շարականագիտ. բազմամյա հետազոտությունների արդյունքները:

Այս շրջանում բարձրացել է երգ-երաժշտության դասավանդման մակարդակը, հետզհետե տարածվել են հայկ. և արդի եվրոպ. ձայնագրագիտությունը, ստեղծվել ու հրատարակվել են դպրոց.,

Նիկողայոս Թաշճյանի «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց» գրքի (1874) շապիկը

Նիկողոս Թահմիզյանի «Երաժշտությունը Հին և միջնադարյան Հայաստանում» գրքի (1982) շապիկը

Սակար Եկմալյանի «Երգեցողութիւնք արդի Պատարագի Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ» գրքի (2017) շապիկը

ճեմարան. և առավել լայն շրջանակների համար նախատեսված երգարաններ:

Աշխուժացել է նաև հայկ. երաժշտահաս. ու համերգ. գործունեությունը: Հիմնադրվել են հայկ. երաժշտ. ընկերություններ, լույս են տեսել պարբ-ներ (Կ. Պոլիս, Թիֆլիս, Բաքու), կազմակերպվել են անսամբլներ, արլ. ու արմ. տիպերի նվագախմբեր ու երգչախմբեր: Արևմտաեվրոպ. Ե-յան ազդեցությունը հայկ. երաժշտարվ-ի վրա և նրա հետ հաղորդակցումը պայմանավորել են բազմաձայնության ներմուծման անհրաժեշտությունը: Կազմավորվել է նոր շրջանի հայկ. կոմպոզիտոր. դպրոցը, որը հայ երաժշտարվ-ը դարավոր մեկուսացումից դուրս է բերել զարգացման նոր և ընդարձակ ուղի:

Ե-յան հետագա զարգացումը կողմնորոշել են կոնսերվատորիական կրթություն ստացած ստեղծագործողներն ու կատարողները, շարունակել են արդյունավետորեն ստեղծագործել աշուղները, սազանդարները, եկեղեց. երաժիշտները: Աշուղ. արվ-ը խտացված և ընդհանրացված արտացոլվել է Շիրինի և Ջիվանու առանցք. նշանակություն ունեցող ժառանգության մեջ: Մասնավորապես Ջիվանու ստեղծագործությամբ հիմնավորապես հաստատվել է աշուղ. արվ-ի հայկ. ազգ. դպրոցը (ի

Տիգրան Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» օպերետի ներկայացման մասնակիցները (1875, Կ. Պոլիս)

տարբերություն նախորդ՝ պարսկահայ, թուրքահայ և վիրահայ դպրոցների):

Այս շրջանում զարգացման գագաթնակետին է հասել հայ սազանդարների՝ միջնադար. գուսանների հետևորդների արվ-ը: Վարպետությամբ աչքի են ընկել մի շարք կատարող-ստեղծագործող-ներ. Արևմտահայաստանում՝ սրնգահար Ջենոպն ու թամբուրահար Ալեքսանը, Արևելահայաստանում՝ թառահար Աղամալ Մելիք-Աղամալյանն ու քամանչահար Սաշա Օգանեզաշվիլին (Ալեքսանդր Օհանյան) և ուր., որոնք հարստացրել են արլ. դաս. երաժշտությունն ազգ. առանձնահատկություններով ու հայ արվ-ը տարածել Թուրքիայում, Պարսկաստանում, Այսրկովկասում, Ռուսաստանում և արաբ. ու եվրոպ. երկրներում:

Եվրոպայում երաժշտ. բարձրագույն կրթություն ստացած հայ կատարողների առաջնային խնդիրը եվրոպ. կատարող. արվ-ի դարավոր փորձը յուրացնելն էր և ի նպաստ հայ նոր Ե-յան զարգացման այն օգտագործելը: Հիշատակելի է դաշնակահարներ Վահրամ Սվաճյանի, Հեղինե ու Եվգինե Ադամյանների, Ստեփան Էլմասի, ջութակահարներ Դավիթ Դավթյանի ու Հովհաննես Նալբանդյանի, երգչուհիներ Նադեժդա Պապայանի, Նինա Դարիալիի (Նունե Ղորղանյան) ու Հեղինե Տերյան-Ղորղանյանի, երգիչներ Ներսես Շահլամյանի ու Բեգլար Ամիրջանյանի գործունեությունը: Հատկապես առանձնացել է Կոմիտասի երգչային-կատարող. արվ-ը՝ ազգ. ձևով ու բովանդակությամբ:

Հայ պրոֆեսիոնալ երաժշտարվ-ն սկզբնավորվել է Հին և միջնադար. Հայաստանում՝ որպես հոգևոր-ծիս. մշակույթի արտահայտություն, իսկ XIX դ-ի կեսին վերաձևակերպվել է կոմպոզիտոր. արվ-ի, որի առաջին նշանավոր ներկայացուցիչը Տիգրան Չուխաճյանն էր: Նա Եվրոպայում բարձրագույն մասնագիտ. կրթություն ստացած հայ (նաև արևելցի) առաջին կոմպոզիտորն էր, որ եվրոպ. կոմպոզիտոր. ավանդույթներով ստեղծել է վոկալ, դաշնամուր., նվագախմբ. և օպեր. մեծարժեք գործեր: Կոմպոզիտորի «Արշակ Երկրորդ» օպերան նշանավորել է հայկ. օպեր. արվ-ի զարգացման սկիզբն ու եվրոպ. պրոֆեսիոնալ արվ-ի ավանդույթների մուտքը հայ և ողջ Մերձ. Արևելքի Ե-յան մեջ: 1870-ական թթ-ին Տ. Չուխաճյանն ստեղծել է «Արիֆի խորամանկությունը», «Քեռսե Քեհյա» և «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» կոմիկ. օպերաները՝ հասնելով մեծ համբավի Թուրքիայում, Այսրկովկասում, Եգիպտոսում, Բալկանյան և արմ. այլ երկրներում (անվանել են «Հայկական Վերդի» և «Թուրքական Օֆֆենբախ»): Նա իր ստեղծագործություններում հմտորեն միաձուլել է եվրոպ. երաժշտարվ-ի արտահայտչամիջոցները հայ քաղաք-ժող. և ազգ-հայրենասիր. երգերի, նաև ընդհանուր արլ. երաժշտության ելևէջների հետ: Նա է գրել հայկ. առաջին հեքիաթ-օպերան՝ «Զեմիրեն», հայկ. ռոման-

սի, սիմֆ. և դաշնամուր. երաժշտության առաջին նմուշները:

XIX դ-ի վերջին քսանամյակում հայ երաժիշտները գիտակցում էին ազգ. հոգևոր և աշխարհիկ հնավանդ միաձայնությունը պրոֆեսիոնալ բազմաձայն արվ-ի զարգացման հուն տեղափոխելու, հայկ. հոգևոր և աշխարհիկ միաձայն երգերը բազմաձայնելու անհրաժեշտությունը: Այն ստանձնել են Ք. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը և Կոմիտասը: Ք. Կարա-Մուրզան հայաբնակ բազմաթիվ վայրերում ստեղծել է երգչախմբեր և կազմակերպել համերգներ: Ազգ. միաձայն երգերի քառաձայն մշակումներում նա բազմաձայնության պարզագույն միջոցներն օրգանապես միակցել է հայ գեղջկ., հոգևոր ու եվրոպ. երաժշտամտածողությանը:

Շրջադարձային էր Մ. Եկմալյանի «Պատարագի» բազմաձայն մշակումը, որի շնորհիվ հոգևոր երաժշտությունը հնչել է ոչ միայն եկեղեցիներում, այլև համերգ. դահլիճներում:

Հայ Ե-յան զարգացման, ուսումնասիրման և տարածման նոր փուլ է նշանավորվել XIX դ-ի վերջի և XX դ-ի սկզբի խոշորագույն երաժիշտ, հայ ազգ. կոմպոզիտոր. դպրոցի և հայ դաս. երաժշտության հիմնադիր Կոմիտասի ստեղծագործ., կատարող. և գիտ. գործունեությամբ: Հայաստանի տարբեր վայրերից հազարավոր երգեր հավաքելով և ուսումնասիրելով՝ նա հստակ ձևակերպել է հայկ. մշակույթի հիմնական առանձնահատկությունները: Բացառիկ նշանակություն ունի նաև հայ երաժշտամտածողության մասին նրա գիտականորեն հիմնավորած և ձևակերպած դրույթը: XIX–XX դդ-ի սահմանագծին դեռևս վիճահարույց էր հայկ. երաժշտության ինքնուրույնության հարցը. Կոմիտասը պաշտպանել է հայ երաժշտ. մշակույթի ինքնուրույնության գաղափարը («Հայն ունի ինքնուրոյն երաժշտութիւն», 1913, հոդված), որով դարձել է հայկ. երաժշտ. ազգագրության հիմնադիրն ու ցայսօր չգերազանցված ներկայացուցիչը:

Նա բացահայտել է հայ գեղջկ. ու հոգևոր երգերի կատարող. առանձնահատկությունների ազգ. արմատները, գագաթնակետին հասցրել հայկ. աշխարհիկ ու հոգևոր բազմաձայն երգեցողության արվ-ը, հայտնաբերել բազմաձայն երաժշտություն ստեղծելու նոր ձևեր, բազմաձայնություն կառուցելու մոնոդիկ (մեկ մեղեդու հիմքով ստեղծվող) եղանակը:

Կոմիտասը, սեփ. ժողովրդի արվ-ն ընկալելով ողջ խորությամբ՝ հնագույն շերտերով ու ենթաշերտերով, ստեղծել է ոչ միայն միջազգ. չափանիշներով բարձրարվ. գործեր (մեներգեր, խմբերգեր, դաշնամուր. երկեր և բազմաձայն «Պատարագը»), այլև ազգ. ոճ:

Հայկ. ազգ. դաշնամուր. երաժշտության հիմնադիրներից Ն. Տիգրանյանը դաշնամուր. երկերում բազմաձայնել է հայկ. ժող. գործիք. մեղեդիների, մասնավորապես՝ խմբապարերի և մենապարերի եղանակները: Ռ. Մելիքյանը մեծապես նպաստել է հայկ. ռոմանսի բյուրեղացմանը, ազգ. դաս. երաժշտությունը հարստացրել է «Աշնան տողեր» և «Զմրուխտի» երգաշարերով: Ա. Տիգրանյանն ստեղծել է հայկ. ազգ. առաջին օպերան՝ «Անուշը»: Ա. Սպենդիարյանը «Ալմաստ» հայկ. առաջին դաս. օպերայի հեղինակն է և հայկ. սիմֆ. երաժշտության առաջին նմուշների («Դրիմյան էսքիզներ») հիմնադիրը: Տես նաև ***Ժողովրդական երաժշտություն***:

Ըստ Նիկողոս Թահմիզյանի

Խորհրդային շրջանի երաժշտությունը: Նախախորհրդ. Հայաստանում երաժշտ. մշակույթի զարգացման հնարավորությունները սահմանափակ էին. չկային երաժշտ. դպրոցներ, օպեր. թատրոն, սիմֆ. նվագախումբ, մշտ. երաժշտ. կոլեկտիվներ ևն:

Խորհրդ. կարգերի հաստատումից (1920) հետո Կառավարության հրավերով հայրենիք են վերադարձել մի շարք նշանավոր կոմպոզիտորներ, կատարողներ, երաժշտ. գործիչներ՝ Ա. Սպենդիարյան, Ռ. Մելիքյան, Ս. Մելիքյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Ա. Գաբրիելյան, Շ. Տալյան, Հ. Դանիելյան և ուր.: 1921-ին Երևանում Ռ. Մելիքյանի նախաձեռնությամբ բացվել է երաժշտ. ստուդիա, որի հիման վրա ստեղծվել է կոնսերվատորիան (1923, 1946-ից՝ Կոմիտասի անվ.), ապա դրան կից՝ սիմֆ. նվագախումբ (ղեկ-ներ՝ Ա. Սպենդիարյան, Ա. Ադամյան) և երգչախումբ (ղեկ.՝ Ս. Մելիքյան): Ստեղծվել են նաև ժող. և գուսան. երաժշտության կոլեկտիվներ, ժող. գործիքների (1927, ղեկ.՝ Ա. Մերանգուլյան, 1967-ից՝ նրա անվ.), կամեր. (Կոմիտասի անվ. քառյակը, 1924, ևն) անսամբլներ, տպագրվել երաժշտ. գրա-

կանություն, հեռարձակվել են երաժշտ. ռադիոհաղորդումներ: Կանոնակարգվել և ծրագրվել է համերգ. կյանքը, որը ներառել է տեղի և հյուրեկ երաժիշտ-կատարողների ելույթները: 1925-ին Լենինականում բացվել է երաժշտ. ստուդիա, 1929-ին Երևանում՝ երաժշտ. դպրոց (այժմ՝ Ա. Սպենդիարյանի անվ.):

Խորհրդահայ երաժշտությունը պահպանել ու շարունակել է անցյալի ազգ. երաժշտ. մշակույթի լավագույն ավանդույթները, որտեղ մեծ ներդրում ունեին հատկապես այն կոմպոզիտորները, որոնք ստեղծագործել են նաև նախահեղ. շրջանում: Ա. Սպենդիարյանը մեծապես նպաստել է ազգ. սիմֆոնիայի ինքնատիպ ոճի հաստատմանը, կոմպոզիտոր. դպրոցի, նրա գեղագիտ. սկզբունքների, ոճ. առանձնահատկությունների ձևավորմանը, հայկ. երաժշտությունը հարստացրել է

ԵՕԲԹ դիրիժորները (ձախից)՝ Հակոբ Ոսկանյան, Արամ Քաթանյան, Ալեքսանդր Մելիք-Փաշայան, Սուրեն Չարեքյան, Դմիտրի Շիկանյան, Յուրի Դավթյան

նոր թեմաներով, ընդարձակել ժանրերը, արտահայտչամիջոցները: Նրա այս շրջանի ստեղծագործության մեջ նշանակալի են «Երևանյան էտյուդները» (1925, սիմֆ. նվագախմբի համար), որի հիմքում բուն ժող. մեղեդիներ են, և «Ալմաստ» օպերան (1928, ըստ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի): Օպերան աչքի է ընկնում մոնումենտալությամբ, երաժշտ. լեզվի հարստությամբ, կերպարների ռեալիստ. պատկերման խորությամբ, էպիկ. և հոգեբան. ժանրերի հատկանիշների զուգակցմամբ:

Ռ. Մելիքյանի ստեղծագործության մեջ գերակշռում են երգն ու ռոմանսը: Ազգ. ինքնատիպությամբ առանձնանում են նրա «Զմրուխտի» (հրտ.՝ 1928) և «Զառ-վառ» (հրտ.՝ 1949) վոկալ շարքերը, որոնք եզրափակում են հայկ. դաս. ռոմանսի ձևավորման շրջանը:

Ա. Տեր-Ղևոնդյանը «Սեդա» օպերայի (1922, ըստ Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի), ազգ. սյուժեով ծրագր. սիմֆ. առաջին երկերից՝ «Ախթամար» պոեմի (1923) հեղինակն է, գրել է նաև երգեր, խմբերգեր, ռոմանսներ:

Ս. Բարխուդարյանի նրբակերտ դաշնամուր. մանրանվագները նկատելիորեն հարստացրել են դաշնամուր. երաժշտությունը, գրել է նաև «Նարինե» (1938) բալետը, «Քեռի Քուչի» (1945) մանկ. օպերան, ռոմանսներ, մշակել ժող. և աշուղ. երգեր:

Հայկ. ազգ. դաշնամուր. երաժշտության հիմնադիրներից է Ն. Տիգրանյանը, որն առաջինն է ձայնագրել ու մշակել հայ աշուղների, դուդուկահարների և սազանդարների հորինած ու կատարած երգերը («Զախորդ օրեր» ևն), պարերը («Զուռնի տրնգի», «Ուզունդարա», «Վերվերի» ևն), նաև կատարել է մուղամների սիմֆոնիկացման հաջող փորձեր («Շահնազ», 1895, «Չարգյահ», 1896, ևն):

Աստիճանաբար հայկ. երաժշտություն մուտք են գործել խորհրդ. իրականությունն արտացոլող թեմաներ: Հրատարակվել են Ա. Սանուկյանի մշակած մի քանի երգեր (1917): Տարածված էին «Ինտերնացիոնալ», «Անվախ ընկեր», «Վարշավյանկա» և այլ երգեր, որոնք հնչել են տոնախմբությունների և հանդիսությունների ժամանակ: Նմանատիպ երգեր են ստեղծել նաև Ռ. Մելիքյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Կ. Զաքարյանը, Դ. Ղազարյանը:

1930-ական թթ-ին հիմնադրվել են երաժշտ. մշակույթի նոր կենտրոններ: 1933-ին «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ բացվել է ԵՕԲԹ (1939-ից՝ Ա. Սպենդիարյանի անվ., 1956-ից՝ ակադեմ.): Ազգ. օպեր. խաղացանկի ձևավորման համար կարևոր նշանակություն է ունեցել նաև Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի նոր, վերամշակված խմբագրությամբ բեմադրությունը (1935):

Օպեր. թատրոնի ստեղծման և առաջին հաջողությունների հետ է կապված երաժշտ. մշակույթի նշանավոր գործիչների՝ դիրիժորներ Գ. Բուդաղյանի, Վ. Փիրադյանի (Փիրադով), Կ. Սարաջևի, Մ. Թավրիզյանի (1938–57-ին՝ գլխ. դիրիժոր), Ս. Չարեքյանի, Ս. Շաթիրյանի, ռեժ-ներ Ա. Բուրջալյանի, Լ. Քալանթարի, Ա. Գուլակյանի, Գ. Հովհաննիսյանի, բալետմայստեր Ի. Արբատովի (Յաղուբյան), նկարիչներ Ս. Ալաջալովի, Մ.

Արուտչյանի, Պ. Անանյանի, Մ. Սարյանի, երգիչ-երգչուհիներ Հ. Դանիելյանի, Շ. Տալյանի, Լ. Իսեցկու (Տեր-Հովհաննիսյան), Ա. Կարատովի (Կարապետյան), Գ. Գաբրիելյանի, Ե. Ֆանարջյանի, Թ. Շահնազարյանի, Լ. Լազարևայի, բալետի մենապարողներ Լ. Վոինովա-Շիկանյանի, Պ. Բուռնազյանի, Ռ. Թավրիզյանի, Ս. Սարգսյանի, Գ. Գևորգյանի, Զ. Մուրադյանի և ուր. գործունեությունը:

Երաժշտ. կարևոր կենտրոն է դարձել Հայֆիլհարմոնիան (հիմն.՝ 1932): Կանոնավոր բնույթ են ստացել սիմֆ. համերգները (դիրիժորներ՝ Կ. Սարաջև, Ի. Խարաջանյան), ստեղծվել են նոր կոլեկտիվներ՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլը (1938, գեղ. ղեկ.՝ Թ. Ալթունյան), Հայաստանի էստրադ. նվագախումբը (1938, գեղ. ղեկ.՝ Ա. Այվազյան), Սայաթ-Նովայի անվ. հայկ. գուսան. երգի անսամբլը (1938, ղեկ.՝ Շ. Տալյան, 1942-ից՝ Վ. Սահակյան):

1930-ական թթ-ին երևան է եկել կոմպոզիտորների նոր սերունդ՝ Ա. Խաչատրյան, Հ. Ստեփանյան, Լ. Խոջա-Էյնաթով, Կ. Զաքարյան, Աշոտ Սաթյան, Վ. Տալյան, Ա. Այվազյան և ուր.: 1932-ին կազմակերպվել է ՀԿՄ:

Խորհրդահայ երաժշտության խոշորագույն երևույթներից է Արամ ***Խաչատրյանի*** արվ-ը: 1930-ական թթ-ի նրա առաջին ստեղծագործությունները հավաստել են հայկ. երաժշտարվ-ի զարգացման նոր շրջանը. Ա. Խաչատրյանը հայկ. երաժշտությունը հարստացրել է նոր բովանդակությամբ, ձևերով ու արտահայտչամիջոցներով, ընդլայնել ժանրային շրջանակները: Ստեղծել է ազգ. առաջին բալետը («Երջանկություն», 1939, 2-րդ խմբագրությամբ՝ «Գայանե», 1942), 1-ին սիմֆոնիան (1934, Հայաստանում խորհրդ. իշխանության հաստատման 15-ամյակին) և գործիք. կոնցերտները (դաշնամուրի՝ 1936, ջութակի՝ 1940, թավջութակի՝ 1946): Ստեղծագործության գլուխգործոցը «Սպարտակ» բալետն է (1954): Նա նաև հայկ. կինոերաժշտության հիմնադիրն է:

Ա. Խաչատրյանի արվ-ը սերտորեն առնչվում է հայկ. ժող., հոգևոր և աշուղ. երաժշտությանը: Ժող. երաժշտության տարրերի սիմֆոնիկացման շնորհիվ կոմպոզիտորը ճշմարտացիորեն արտահայտել է հայկ. ժող. երգին բնորոշ զգացմունքայնությունն ու մեղեդայնությունը:

Նրա ստեղծագործությունը շրջադարձային նշանակություն է ունեցել հայկ. երաժշտ. մշակույթի պատմության մեջ, մեծապես ազդել է հայ և Արևելքի ժողովուրդների երաժշտության վրա, համաշխ. ճանաչման արժանացրել հայ ազգ. երաժշտարվ-ը:

Կոմպոզիտոր Հարո ***Ստեփանյանի*** գործունեությունը նպաստել է երաժշտ. թատրոնի զարգացմանը: Ուշագրավ է նրա «Քաջ Նազար» (բեմ.՝ 1935) երգիծ. օպերան: «Սասունցի Դավիթ» էպիկ. օպերայում (1936) օգտագործել է հին գուսան. և հոգևոր երաժշտության տարրեր: Առավել ճանաչված է նրա «Լուսաբացին» (բեմ.՝ 1938)՝ ժամանակակից թեմայով հայկ. առաջին օպերան, որտեղ արտացոլված է հայ ժողովրդի պայքարը խորհրդ. իշխանության համար: Այդ տարիներին գրված օպերաներից են նաև Ա. Այվազյանի «Թափառնիկոսը» (բեմ.՝ 1937), Ա. Մայիլյանի «Սաֆան» (բեմ.՝ 1939, Բաքու), Կ. Զաքարյանի «Մարջանը» (բեմ.՝ 1941), բալետներից՝ Ս. Բարխուդարյանի «Նարինեն» (1938), Ա. Տեր-Ղևոնդյանի «Անահիտը» (բեմ.՝ 1940): Հայրենիքին, նոր կենցաղին, գյուղի կյանքին նվիրված երգեր են գրել Մ. Միրզոյանը, Կ. Զաքարյանը, Մ. Մազմանյանը,

Տեսարան Տիգրան Չոխաճյանի «Կարինե» օպերետի բեմադրությունից (1992, ԵՕԲԹ)

Ա. Սաթյանը, Վ. Տալյանը, Է. Կզարթմյանը, Ա. Այվազյանը: Նոր ռոմանսներ է ստեղծել Հ. Ստեփանյանը (Ա. Իսահակյանի խոսքերով վոկալ շարքեր): Ժող. երգերի խմբերգ. մշակումներ են կատարել Ա. Քոչարյանը, Թ. Ալթունյանը, Ք. Քուշնարյանը, Ս. Մելիքյանը, Մ. Աղայանը, Կ. Զաքարյանը և ուր.: Կամեր. անսամբլների համար առաջին գործերը գրել են Ա. Խաչատրյանը, Վ. Տալյանը (տրիոներ), Հ. Ստեփանյանը, Թ. Հովհաննիսյանը, Հ. Մելիքյանը, Ա. Սաթյանը (կվարտետներ), Ս. Ասլամազյանը (կվարտետ. մանրանվագներ):

Տեսարան Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրությունից (1935, ԵՕԲԹ). Անուշ՝ Հայկանուշ Դանիելյան, Սարո՝ Շարա Տալյան

ՀՄՊ-ի (1941–45) տարիներին ԵՕԲԹ-ում բեմադրվել են Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», Ու. Հաջիբեկովի «Քյոռօղլի», Ջ. Վերդիի «Օթելլո» (երեքն էլ՝ 1942), Զ. Փալիաշվիլու «Դաիսի» (1943) օպերաները, Ա. Սպենդիարյանի երաժշտությամբ՝ «Խանդութ» բալետը (1945): Կարևոր իրադարձություն էր հայկ. առաջին օպերայի՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդի» բեմադրությունը (1945):

1942-ին Երևանում բացվել է ԵԵԿԹ, որը մեծապես նպաստել է օպերետի զարգացմանը: Խորհրդահայ առաջին՝ «Ատամնաբույժն արևելյան» (բեմ.՝ 1944), «Երջանիկ օր» (բեմ.՝ 1945), «Քաջ Նազար» (բեմ.՝ 1948) և այլ օպերետների հեղինակը Ա. Այվազյանն է: Այդ և հետագա տարի-

Տեսարան Ջ. Վերդիի «Օթելլո» օպերայի բեմադրությունից (1995, ԵՕԲԹ)

ներին գրված երգերի շարքում առավել հայտնի է Ա. Սաթյանի «Մարտիկի երգը»: 1944-ին ստեղծվել է ՀԽՍՀ պետ. հիմնը (խոսք՝ Սարմենի, երաժշտություն՝ Ա. Խաչատրյանի): Հայրենասիրության թեման խորապես մարմնավորվել է սիմֆ. ստեղծագործություններում (Գ. Եղիազարյանի «Հայաստան» սիմֆ. պոեմը, 1942, Հ. Ստեփանյանի 1-ին սիմֆոնիան, 1944): 1943-ին Ա. Խաչատրյանը գրել է մոնումենտալ, պայքարի կոչող 2-րդ սիմֆոնիան (III մասի հիմքում ժող. «Ուրսկան ախպեր» երգն է): Այդ տարիներին է Ա. Տիգրանյանը գրել պատմահերոս. թեմայով «Դավիթ Բեկ» (բեմ.՝ 1950) օպերան, որը հաստատուն տեղ ունի ազգ. օպեր. խաղացանկում: Լ. Խոջա-Էյնաթովը քնարադրամատիկ. ժանրով գրել է «Նամուս» (բեմ.՝ 1945) օպերան: Ազգ. վառ երանգով, գեղ. կատարելությամբ աչքի է ընկնում Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի (1942) երաժշտությունը:

Հետպատերազմ. տարիներին երաժշտ. կյանքը զարգացել է բարդ ու բազմազան ձևերով, որակապես նոր աստիճանի է բարձրացել կատարող. արվ-ը: Հայֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի վերաստեղծմանը մեծապես նպաստել է դիրիժոր Մ. Մալունցյանը (1945–60 և 1966–67-ին՝ գլխ. դիրիժոր): Հետագայում նվագախմբի գործունեության նոր վերելքը խթանել է Դ. Խանջյանը (1974–81-ին՝ գլխ. դիրիժոր), որը մեծ տեղ է հատկացրել ժամանակակից երաժշտությանը (Ի. Ֆ. Ստրավինսկի, Բ. Բարտոկ և ուր.), ազգ. նվագացանկի ընդլայնմանը:

Հայաստանի պետ. երգչախմբի (կապելլա) կատարող. արվ-ի առաջընթացում մեծ ներդրում ունեն Ա. Տեր-Հովհաննիսյանը (1940–41 և 1954–61-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. խմբավար), Հ. Չեքիջյանը (1961-ից՝ գեղ. ղեկ.), որը հարստացրել է երգչախմբի երկացանկը, բարձրացրել գեղ. մակարդակը: Այդ շրջանում ճանաչման է արժանացել նաև Կոմիտասի անվ. քառյակը: Ստեղծվել են մի շարք նոր կոլեկտիվներ՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախումբը, Հայաստանի երգչախմբ. ընկերության Ա. Տեր-Հովհաննիսյանի անվ. երգչախումբը (երկուսն էլ՝ 1966), որոնք ընդլայնել են հայկ. սիմֆ. և խմբերգ. երաժշտության տարածման հնարավորությունները: Կազմակերպվել են Հայաստանի կամեր. անսամբլը (1962, հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Զ. Սահակյանց), Երևանի կամեր. նվագախումբը (1979, հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Զ. Վարդանյան), որոնց համար կամեր. գործեր են գրել հայ կոմպոզիտորները: Ճանաչման է արժանացել Հեռուստատեսության և ռադիոյի ջութակահարների անսամբլը (1970, հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Գ. Աճեմյան, 1998-ից՝ Գ. Աճեմյանի անվ.): Թ. Ալթունյանի ղեկավարությամբ Հայկ. երգի-պարի անսամբլը (1974-ից՝ Թ. Ալթունյանի անվ.) հասել է գեղ. բարձր մակարդակի, առանձնացել պարզ, ժող. արվ-ի ոգուն հարազատ կատարող. ուրույն ոճով: Վերակազմավորվել է Հեռուստատեսության և ռադիոյի ժող. գործիքների անսամբլը (1967-ից՝ Ա. Մերանգուլյանի անվ.), առանձնակի նշանակություն է ունեցել Հայաստանի պարի պետ. անսամբլի (1958, գեղ. ղեկ.՝ Է. Մանուկյան) ստեղծումը:

Ժող. երգի ու նվագի ճանաչված վարպետներից են երգիչներ Ա. Գյուլզադյանը,

Շ. Մկրտչյանը, Օ. Համբարձումյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Տեր-Աբրահամյանը, Հ. Բադալյանը, Ռ. Մաթևոսյանը, Վ. Խաչատրյանը, Վ. Սամվելյանը, դուդուկահարներ Մ. Մարգարյանը, Լ. Մադոյանը, Վ. Հովսեփյանը, Ձ. Գասպարյանը, Գ. Մինասյանը, թառահար Ս. Սեյրանյանը, քամանչահարներ Լ. Կարախանը, Գ. Միրզոյանը, Խ. Ներսիսյանը, քանոնահարներ Խ. Ավետիսյանը, Ա. Աթաբեկյանը և ուր.: Ժողովրդականություն են վայելել աշուղներ Շերամի, Հավասու, Շահենի, Աշոտի և ուր. երգերը: Նշանակալի առաջընթաց է ունեցել Հայաստանի էստրադ. նվագախումբը (1956, գեղ. ղեկ.՝ Կ. Օրբելյան), որը շարունակել է ժամանակակից ջազի, էստրադ. և ազգ. երաժշտության համադրման որոնումները: 1966-ին ստեղծվել է նաև Հեռուստատեսության և ռադիոյի էստրադ. նվագախումբը (գեղ. ղեկ.՝ Մ. Վարդազարյան, 1972-ից՝ էստրադ-սիմֆ., գեղ. ղեկ.՝ Մ. Մավիսակալյան, 1986-ից՝ Ե. Երզնկյան):

Հայկ. էստրադ. երաժշտության նոր ոճի հաստատման մեջ վճռորոշ էին Ա. Բաբաջանյանի, Կ. Օրբելյանի, Ռ. Ամիրխանյանի, Է. Բաղդասարյանի, Ա. Աճեմյանի, Մ. Վարդազարյանի, Ա. Սաթյանի, Ս. Շաքարյանի, Ռ. Գալստյանի և ուր. երգերն ու գործիք. պիեսները:

Ճանաչվել են երգիչներ Բ. Դարբինյանը, Ռ. Մկրտչյանը, Ն. Սարգսյանը, Ձ. Տոնիկյանը, Է. Յուզբաշյանը, Տ. Հովհաննիսյանը, Է. Մակարյանը, Ա. Ավետյանը, Գ. Մինասյանը և ուր.:

Միջազգ. և համամիութ. երաժշտ. մրցույթներում մեծ հաջողությունների են հասել դաշնակահարներ Յ. Հայրապետյանը, Ս. Նավասարդյանը, ջութակահարներ Ջ. Պետրոսյանը, Ա. Յիցիկյանը, Ռ. Ահարոնյանը, թավջութակահարներ Մ. Աբրահամյանը, Վ. Սարաջյանը, երգեհոնահար Վ. Ստամբոլցյանը և ուր.: Կամեր. երգեցողության բնագավառում համերգ. գործունեությամբ մեծ ճանաչման է արժանացել Ջ. Դոլուխանյանը, հոգևոր երգերի կատարմամբ՝ Լ. Ջաքարյանը, ժող. երգերով՝ Մ. Աբովյանը:

Հետպատերազմ. շրջանում ԵՕԲԹ երկացանկը հարստացել է ուշագրավ բեմադրություններով. ներկայացվել են (ԽՍՀՄ-ում՝ առաջին անգամ) Ի. Ֆ. Ստրավինսկու «Էդիպ արքա», Ջ. Կ. Մենոտտիի «Հյուպատոսը», Լ. Բեռնստայնի «Վեստսայդյան պատմություն», Վ. Բելլինիի «Նորմա» օպերաները: Բարձրարվ. կատարումներով է նշանավորվել Գ. Գասպարյանի, Տ. Սազանդարյանի, Պ. Լիսիցյանի, Ն. Հովհաննիսյանի, Մ. Երկաթի ստեղծագործ. ուղին: Օպեր. թատրոնի առաջատարներից էին նաև երգիչներ Ա. Պետրոսյանը, Դ. Պողոսյանը, Ա. Կարապետյանը, Ե. Խաչիկյանը, Գ. Գալաչյանը, Ա. Հարությունյանը, Է. Ուզունյանը, բալետի մենապարողներ Վ. Գալստյանը, Լ. Սեմանովան, Թ. Գրիգորյանը, Բ. Հովնանյանը, Է. Մնացականյանը, Վ. Խանամիրյանը, դիրիժորներ Ա. Քաթանյանը (1964–70 և 1974–82-ին՝ գլխ. դիրիժոր), Հ. Ոսկանյանը, Յ. Դավթյանը, ռեժ-ներ Ա. Գուլակյանը, Վ. Աճեմյանը, Հ. Ղափլանյանը, Վ. Բագրատունին, Տ. Լևոնյանը, բալետմայստերներ Ե. Չանգան, Մ. Մարտիրոսյանը, Վ. Գալստյանը, Ա. Ասատուրյանը, խմբավար Ռ. Այվազյանը:



Ռոբերտ Աթայանի «Գուսան Հավասի» գրքի (1963) շապիկը

Երաժիշտ-մասնագետներ պատրաստվել են երաժշտ. ուս. հաստատություններում: ԵՊԿ-ում սովորում և կատարելագործվում են նաև սփյուռքահայ և օտարազգի երիտասարդ երաժիշտներ: Կոնսերվատորիայում ստեղծվել է թավջութակահարների անսամբլ (1951, հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Գ. Թալալյան):

Արամ Քոչարյանը ձայնագրում է աշուղ Շերամի (աջից) երգերը

Հայաստանում բացվել են նաև բազմաթիվ երաժշտ. դպրոցներ:

Հանրապետության քաղաքներում կազմակերպվել են երգի տոներ, ստեղծվել են ժող. ֆիլհարմոնիաներ, ժող. կոնսերվատորիա, «Դպրոցականի ֆիլհարմոնիա», սիրող. կամեր. նվագախմբեր, կվարտետներ, էստրադ. անսամբլներ, ազգագր. խմբեր: 1958-ին հիմնադրվել է Հայաստանի երգչախմբ. ընկերությունը, որը նպաստել է նաև ինքնագործունեության զարգացմանը: Նշանակալի իրադարձություններ էին հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակները Մոսկվայում (1939, 1956), «Այսրկովկասյան գարուն» փառատոները (1958, 1965, 1975), Հայաստանի և այլ հանրապետությունների (Ռուսաստան, Ուկրաինա, Էստոնիա, Մոլդովա ևն) միջև փոխադարձ տասնօրյակները, արվ-ի և երաժշտության շաբաթները:

1960–70-ական թթ-ին երաժշտ. բազմաթիվ կոլեկտիվներ (ԵՕԲԹ, Կոմիտասի

անվ. քառյակը, Հայաստանի պետ. երգչախումբը, երգի-պարի, պարի անսամբլները, էստրադ. և կամեր. նվագախմբերը ևն) համերգներով հանդես են եկել բազմաթիվ երկրներում:

Հետպատերազմ. տարիներին հայ երաժշտարվ-ում ստեղծվել են տարբեր ժանրերի բարձրարվ. գործեր: Խորհրդ. շրջանի երաժշտության մեջ խոշորագույն ներդրում էին Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետը (1954), 3-րդ սիմֆոնիան (1947), նաև թավջութակի կոնցերտը (1946), ջութակի (1961), թավջութակի (1963) և դաշնամուրի (1967) կոնցերտ-ռապսոդիաները՝ նվագախմբի համար, դաշնամուրի սոնատը (1961), մենանվագ ջութակի (1975) և մենանվագ ալտի (1976) սոնատները: Էպիկ. շնչով, ազգ. վառ երանգով են օժտված Գ. Եղիազարյանի «Սևան» (բեմ.՝ 1956), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (բեմ.՝ 1982) բալետները, «Հրազդան» սիմֆոնիան (1960), «Արևածագին» սիմֆ. պատկերները (1952): Լուսավոր քնարականությամբ, մեղեդայնությամբ առանձնանում են Ա. Հարությունյանի «Հայրենիք» կանտատը (1948), դաշնամուրի կոնցերտինոն (1951), շեփորի և նվագախմբի կոնցերտը (1950), «Սայաթ-Նովա» (բեմ.՝ 1969) օպերան, մոնումենտալ Սիմֆոնիան (1957), «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆ. պոեմը (1961): Դրամատիկ երանգներ ունեն Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադը»՝ դաշնամուրի և նվագախմբի համար (1950), դաշնամուր. տրիոն (1952), ջութակի և դաշնամուրի սոնատը (1959), թավջութակի կոնցերտը (1962), «Վեց պատկերը» (1965), Դ. Շոստակովիչի հիշատակին նվիրված կվարտետը (1976):

Արամ Խաչատրյան և Կոնստանտին Սարաջև

Հոգեբան. խորությամբ, դրամատիկականի և քնարականի միաձուլմամբ առանձնանում են Է. Միրզոյանի կվարտետը (1947), սիմֆոնիան (1962), թավջութակի և դաշնամուրի սոնատը (1967): Է. Հովհաննիսյանի երկերին բնորոշ են թեմայի գաղ. հագեցվածությունը, ժող. երաժշտության չօգտագործված շերտերին դիմելը. «Հավերժական կուռք» (բեմ.՝ 1966), «Անտունի» (բեմ.՝ 1969) բալետները, «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը (բեմ.՝ 1976), 3 սիմֆոնիա (1957, 1982, 1983), դաշնամուր. կվինտետը (1955), 4 կվարտետ, կոնցերտ-բարոկկո ջութակի և կամեր. նվագախմբի համար (1983), «Էրեբունի» կանտատը: Արդիականության շունչն է զգացվում Ա. Տերտերյանի «Կրակե օղակ» (բեմ.՝ 1967) օպերայում, 6 սիմֆոնիաներում (1969–81), որոնք նոր ուղիներ են բացել հայկ. սիմֆոնիզմի զարգացման մեջ: Նրբագեղ և հնչյունային կոլորիտով են ստեղծվել Տ. Մանսուրյանի «Նահապետ Քուչակի չորս հայրենները» վոկալ շարքը (1967), «Գիշերային երաժշտությունը» (1980)՝ սիմֆ. նվագախմբի, Կրկնակի կոնցերտը՝ ջութակի, թավջութակի և լար. նվագախմբի համար (1978), «Թովեմ» կամեր. երկը՝ 15 մենակատարի համար (1979), կվարտետը (1984) ևն:

Այդ շրջանում հատկապես նշանակալի են հայ կոմպոզիտորների նվաճումները սիմֆոնիայի ժանրում, որը վկայում է հայկ. ժամանակակից երաժշտ. ստեղծագործության հասունության և պրոֆեսիոնալ բարձր մակարդակի մասին: Դրամատիկ. և կոնֆլիկտային են Լ. Խոջա-Էյնաթովի, Զ. Տեր-Թադևոսյանի, Բ. Փարսադանյանի, Է. Խաղագործյանի սիմֆոնիաները: Դրամատիկ. և էպիկ. սիմֆոնիզմի սկզբունքները զուգակցված են Գ. Հախինյանի, Լ. Աստվածատրյանի, Վ. Բաբայանի, Մ. Իսրայելյանի սիմֆոնիաներում:

Հայկ. սիմֆոնիզմի նվաճումներից են նաև Է. Միրզոյանի «Սիմֆոնիկ պարերը» (1945), «Տոնական նախերգանքը» (1947), Ա. Հարությունյանի «Տոնական նախերգանքը» (1949) և «Սիմֆոնիետը» (1966), Ղ. Սարյանի «Սիմֆոնիկ պատկերները» (1955) և «Հայաստան» (1966) սիմֆ. պանոն, Տ. Մանսուրյանի «Պրելյուդները» (1975), Է. Արիստակեսյանի «Հայաստանի լեռներում» (1976) սիմֆ. պատկերը, Մ. Վարդազարյանի «Նվիրում Բարտոկին» (1976) պոեմը, Ս. Շաքարյանի, Ե. Երկանյանի բալետ. սյուիտները:

Հայկ. ժամանակակից երաժշտության մեջ գործիք. կոնցերտի ժանրի գործեր են ստեղծել Լ. Խոջա-Էյնաթովը (դաշնամուրի), Ա. Հարությունյանը (դաշնամուրի, հոբոյի, շեփորի, ֆլեյտայի), Գ. Չթչյանը (ջութակի), Ա. Խուդոյանը (թավջութակի), Յ. Գևորգյանը (դուդուկի) և ուր.:

1950–80-ական թթ-ին ժողովուրդների բարեկամությանը նվիրված վոկալ-սիմֆ.

ստեղծագործություններ են գրել Մ. Մավիսակալյանը («Ձոն բարեկամության», 1977), Է. Արիստակեսյանը («Երգ եղբայրության», 1982), հայրենիքին՝ Գ. Չերոտարյանը («Հայաստան» պոեմ-կանտատը, 1947), Ռ. Ալթունյանը («Հայաստան աշխարհ», 1972), Տ. Մանասուրյանը («Նաիրյան երեք երգ», 1976), Ա. Սաթունցը («Վերածնված նաիրյան երկրի երգերը», 1979), Վ. Կոտոյանը («Իմ հայրենի երգերը», 1981, ևն)։ Պատմ. անցյալն արտացոլված է Գ. Հախինյանի «Թոնդրակեցիներ» (1966), Է. Հայրապետյանի «1915» (1977), Մ. Մավիսակալյանի «Ավարայրի ճակատամարտը» (1981) օրատորիաներում։ Նույն թեմաներով խմբերգ. ստեղծագործություններ են գրել Գ. Արմենյանը, Վ. Բալյանը, Յ. Բեքարյանը, Ե. Երկանյանը, Վ. Գրիգորյանը, Ռ. Պետրոսյանը, Ա. Շիշյանը և ուր.։ Հայտնի են նաև Աշոտ Սաթյանի, Է. Հովհաննիսյանի, Խ. Ավետիսյանի, Ա. Աճեմյանի, Վ. Կոտոյանի քնար. երգերը։

1950–70-ական թթ-ին գործիք. երկեր (կվարտետ, կվինտետ, տրիո, սոնատ) են ստեղծել Ա. Բաբաջանյանը, Է. Միրզոյանը, Է. Հովհաննիսյանը, Կ. Օրբելյանը, Ա. Փիրումովը, Լևոն Չաուշյանը և ուր., մանրանվագներ՝ Է. Բաղդասարյանը (դաշնամուրային 24 պրելյուդ), Հ. Ստեփանյանը, Գ. Չերոտարյանը, Ս. Նաղդյանը, Ա. Բոյամյանը։ Վոկալ-կամեր. երաժշտության մեջ առանձնանում են Գ. Չթչյանի, Է. Աբրահամյանի, Ա. Ոսկանյանի, Վ. Աճեմյանի ստեղծագործությունները։

1970-ական թթ-ի կեսից զարգացել է նոր ժանր՝ երաժշտություն կամեր. նվագախմբի համար. ինքնատիպությամբ աչքի են ընկել Ա. Քոհրաբյանի «Կոնցերտ-էլեգիան» (1980), «Կոնցերտ-սիմֆոնիան» (1982), Վ. Բաբայանի «Կամերային սիմֆոնիան» (1980), Մ. Իսրայելյանի «Սոնետների տետրը» (1980)՝ ձայնի և կամեր. նվագախմբի համար, թավջութակի կոնցերտը (1983), Հ. Մելիքյանի «Դաշնամուրի կոնցերտը» (1984) ևն։

Թեմայի նշանակությամբ, ժանր. և ոճ. բազմազանությամբ առանձնանում են Հ. Ստեփանյանի «Հերոսուհին» (1950), Ա. Բաբաևի «Արծվաբերդ» (բեմ.՝ 1957), Գ. Արմենյանի «Խորտակում» (բեմ.՝ 1968), Գ. Հախինյանի «Լեգենդի մարդը» (բեմ.՝ 1971), Յ. Ղազարյանի «Էռնեստ Հեմինգուեյ» (1983) օպերաները և Կ. Օրբելյանի «Անմահություն» (բեմ.՝ 1939), Գ. Եղիազարյանի «Անուրջների լիճը» (բեմ.՝ 1968) բալետները։

Հայ դասականների ստեղծագործությունների հիման վրա օպերաներ են գրել Ա. Տիգրանյանը («Դավիթ Բեկ», բեմ.՝ 1950), Վ. Տիգրանյանը («Սոս և Վարդիթեր», բեմ.՝ 1957), Ա. Այվազյանը («Պարոն Մինթոևը Փարիզում», բեմ.՝ 1963), Է. Հարությունյանը («Հեքիաթ մեծերի համար», բեմ.՝ 1970), Յ. Գևորգյանը («Վերք Հայաստանի», 1976), Վ. Աճեմյանը («Կիկոսի մահը», բեմ.՝ 1980), Ա. Տերտերյանը («Երկրաշարժ», 1984), բալետներ՝ Գ. Հախինյանը («Ախթամար», «Ռուբենի», «Լոռեցի Սաքոն», բեմ.՝ 1966), ըստ օտարազգի դասականների՝ Է. Արիստակեսյանը («Պրոմեթևս», բեմ.՝ 1967), Ա. Խաչատրյանը («Դիմակահանդես», երաժշտ. կոմպոզիցիան՝ Է. Հովհաննիսյանի, բեմ.՝ 1982), Վ. Բաբայանը («Պիգմալիոն», 1975), Ե. Երկանյանը («Օրեստես», 1974, «Էդիպ արքա», 1975), Ա. Տերտերյանը («Ռիչարդ III», 1979)։

«Հայկական հզոր խմբակը» (ձախից)՝ Ալեքսանդր Հարությունյան, Ղազարոս Սարյան, Առնո Բաբաջանյան, Ադամ Խուդոյան, Էդվարդ Միրզոյան

Ստեղծվել են մանկ. երաժշտության բազմաթիվ գործեր՝ գործիք. պիեսներ, երգեր, խմբերգեր ևն (Ա. Խաչատրյան, Է. Միրզոյան, Տ. Մանասուրյան, Ռ. Ամիրխանյան, Լ. Սաֆարյան, Ս. Սամվելյան, Գ. Չթչյան, Ա. Օհանյան, Ա. Լուսինյան, Ռ. Պետրոսյան, Է. Միհրանյան և ուր.)։ Հայտնի են Ա. Տեր-Ղևոնդյանի «Արեգակի ցոլքերում» (բեմ.՝ 1949), Յ. Գևորգյանի «Խարույկ» (բեմ.՝ 1959), Ս. Զրբաշյանի «Գիքոր» (բեմ.՝ 1974) օպերաները, Մ. Մազմանյանի «Ճուտիկ» (1974, վերջին խմբ.), Հ. Մելիք-Մուրադյանի «Կարմիր գլխարկը» (բեմ.՝ 1962), Բորիս Սակիլարիի «Չոփչոփիկը» (բեմ.՝ 1962, 2-րդ խմբ. բեմ.՝ 1981) բալետները ևն։

Մարգարիտ Հարությունյան

Նորագույն շրջանի երաժշտությունը: Անկախության հռչակումից (1991) հետո ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտ. ծանր պայմանները բացասաբար են ազդել նաև երաժշտարվ-ի զարգացման վրա: Առաջին տարիներին անհատ ստեղծագործողների և երաժշտ. խմբերի մի մասը, չդիմանալով պետ. հոգածություն, լուծարվել է: Սակայն իրավիճակն աստիճանաբար կարգավորվել է, որին նպաստել են նաև սփյուռքահայ արվեստագետները: Առաջիններից էր դիրիժոր և կոմպոզիտոր Լ. Ճգնավորյանը. 1989–2000-ին ղեկավարել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, կազմակերպել սիմֆ. երաժշտության փառատոներ («Աշխարհը և մենք», «Արամ Խաչատրյան-90», «Եղեռնից մինչև անկախություն...»), «Հոգևոր երաժշտության ժամ» համերգաշարը ևն: 1991-ին հիմնադրել է Գյումրիի մշակույթի կենտրոնը: 2000-ից Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղ. ղեկ. ու գլխ. դիրիժորը Է. Թոփչյանն է. նվագախումբը համերգներով հանդես է եկել ՀՀ-ում և արտերկրում: Հանրաճանաչ դիրիժոր Օհան Դուրյանը 1991–94-ին եղել է Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ-ը, 1999–2002-ին՝ ԵՕԲԹ գլխ. դիրիժորը և իր բարձր արվ-ով մեծապես նպաստել է թատրոնի առաջընթացին: Դիրիժոր և կոմպոզիտոր Ա. Ղարաբեկյանի ղեկավարությամբ (1997–2011) Հայաստանի կամեր. նվագախումբը հասել է կատարող. բարձր մակարդակի, աչքի ընկել ինքնատիպ մեկնաբանություններով:

Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը

Հաճախ են կազմակերպվում հնագույն և հոգևոր երաժշտության համերգներ («Տաղարան», 1981, 1994-ից գեղ. ղեկ.՝ Սեդրակ Երկանյան, «Շարական», 1991, հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Դանիել Երաժիշտ): ՀՀ Մ՚Ն-ին կից ստեղծվել է Հոգևոր երաժշտության կենտրոն (2007), որի նախաձեռնությամբ կազմակերպվում են հոգևոր երաժշտության համերգաշարեր:

Նորագույն շրջանում շարունակել են ստեղծագործել ավագ սերնդի ճանաչված կոմպոզիտորները: Է. Հովհաննիսյանը նոր իրականությունն իմաստավորել է իր խոհափիլ. երկերում («Գողգոթա», սիմֆ. պոեմ, 1993, «Գրիգոր Նարեկացի», օրատորիա, 1995):

Տ. Մանսուրյանի ստեղծագործությունը XX դ-ի եվրոպ. և հայ ազգ. երաժշտ. մշակույթի լավագույն ավանդույթների համադրումն է: 1990-ականների նոր գործերից են՝ «Գարնան երգեր» (1993, խոսք՝ Հ. Թումանյանի), Կոնցերտ՝ ալտի և նվագախմբի համար (1995), «Արվեստ Քերթության» (1997–99, խոսք՝ Ե. Չարենցի)՝ երգչախմբի համար, «Կտակարան» (2004)՝ լար. քառյակի համար, «Ռեքվիեմ» (2011) ևն:

Ուշագրավ են Ա. Հարությունյանի (կոնցերտ՝ տրոմբոնի և նվագախմբի համար, 1991, տրիո-սյուիտներ, 1992, 1998, ևն), Մ. Իսրայելյանի (կվարտետ, 1991, սոնատ՝ ջութակի և դաշնամուրի համար, 2002, ևն), Ա. Խուդոյանի («Արա լեռ», սիմֆոնիա, 1994, սոնատներ ևն), Վ. Բաբայանի («Դեպի Լույս», 1995, «Փոքրիկ իշխան», 1998, բալետներ, ևն), Գ. Հովունցի (Կոնցերտ՝ դաշնամուրի և նվագախմբի համար, 1997, դաշնամուր. մանրանվագներ ևն), Յ. Հարությունյանի (խմբերգ. ստեղծագործություններ), Ա. Սաթյանի («Լիլիթ», փոփ-օպերա, բեմ.՝ 2002, 2005, նաև կինոնկարը՝ 2011, ռեժ.՝ Ա. Սուքիասյան) և ուր. ստեղծագործություններ:

Այս շրջանի հայ երաժշտության մեջ նշանակալի ավանդ ունեն նաև կոմպոզիտորներ Ռ. Ամիրխանյանը, Ա. Զոհրաբյանը, Ռ. Սարգսյանը, Ա. Սաթյանը, Մ. Կոկժաևը, Լ. Չաուշյանը, Ե. Երկանյանը, Ս. Շաքարյանը, Վ. Աճեմյանը, Ս. Ազնաուրյանը, Ա. Կարապետյանը և ուր.:

Նոր ներկայացումներ են բեմադրվել ԵՕԲԹ-ում՝ Լ. Ճգնավորյանի «Օթելլո» (1993), Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ» (1999, երկուսն էլ՝ բալետմայստեր՝ Վ. Գալստյան), Ա. Խաչատրյանի «Հավերժություն» (2003, բալետմայստեր՝ Մ. Մարտիրոսյան), «Սպարտակ» (2009, բալետմայստեր՝ Յ. Գրիգորովիչ), Է. Հովհաննիսյանի «Վարդանանք» (2008), «Բախի կրքերը» (ըստ Յ. Ս. Բախի

երաժշտության, 2010, երկուսն էլ՝ բալետմայստեր՝ Ռ. Խառատյան) բալետները, Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս» (1993), Ռ. Լեոնկավալոյի «Հոպիտներ» (1996), Ջ. Վերդիի «Տրավիատա» (2000), «Աիդա» (2010), Վ. Բելլինիի «Նորմա», Ժ. Բիզեի «Կարմեն» (երկուսն էլ՝ 2001), Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» (2007), Ա. Տերտերյանի «Երկրաշարժ» (2008), Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» (2009) օպերաները նն:

Կատարող. արվ-ում ճանաչված են երգիչներ Գ. Գրիգորյանը, Բ. Թումանյանը, Հ. Պապյանը, Ա. Մխիթարյանը, Է. Պապիկյանը, Հ. Հացագործյանը, Ա. Դեմուրճյանը, Պ. Քարագյանը, Ս. Աղամալյանը, Վ. Մարգարյանը, Հ. Տիգրանյանը, Ն. Անանիկյանը, Թ. Դադոյանը, դաշնակահարներ Հ. Մելիքյանը, Ա. Աճեմյանը, Լ. Արտեմյանը, Ա. Առուշանյանը, Շ. Հովհաննիսյանը, Ա. Ավանեսովը, Ա. Ավետյանը, ջութակահարներ Կ. Շահգալդյանը, Ս. Երիցյանը, ալտահար Վ. Հովեյանը, թավջութակահարներ Կ. Քոչարյանը, Հ. Վարդանյանը, երգեհոնահար Հ. Մանուկյանը և ուր.:

Ինքնատիպ ստեղծագործություններով ու երաժշտ. կատարումներով հայտնի են Ռ. Հախվերդյանը, Ա. Մեսչյանը, Է. Զորիկյանը, Լ. Պիպոյանը և ուր.:

Նորագույն շրջանում առավել զարգացել են երաժշտ. նոր ձևերն ու ոճերը (փոփ, ռոք, ջազ ևն): Փոփ երաժշտության զարգացման մեջ մեծ ներդրում ունեն «Արձագանք» ստուդիան (1990), Հայաստանի երգի պետ. թատրոնը (1994), «Էմի-Բի» պրոդյուսեր. կենտրոնը (1999), նաև երգիչներ Ֆորշը (Վահան Գևորգյան), Արամոն (Արամ Գևորգյան), Էմմա Պետրոսյանը, Շուշան Պետրոսյանը, Նունե Եսայանը, Հայկոն (Հայկ Հակոբյան), ռեփերներ Միշոն (Միքայել Աբրահամյան), Հ. Տ. Հայկոն (Հայկ Մարգարյան) և ուր.:

Զարգացման նոր փուլում են նաև ջազը և ռոքը: 1990-ական թթ-ի սկզբին ստեղծված Արմեն (Չիկո) Թութունջյանի ջազ. խումբը՝ «Չիկոն և ընկերները», էապես խթանել է ջազի զարգացումը ՀՀ-ում: Հայտնի են էթնո-ջազ ուղղության «Թայմ Ռիփորթ» («Time Report»), «Կատուներ», «Ջեզլ» (փոփ-ջազ), «Ուլիխանյան հնգյակ», «Արտ Վոյսիս» և այլ խմբեր: Մեծ ճանաչում ունի Ա. Թունջբոյաջյանի «Արմինիան Նեյվի Բենդ» («Armenian Navy Band») խումբը, որի ստեղծագործության հիմքը հայկ. բանահյուսությունն է: 1998-ից կազմակերպվել են ջազ. երաժշտության մի շարք միջազգ. փառատոներ: Հայկ. ռոքի ինքնատիպ կատարողներից են Վ. Արծրունին, Ս. Մանուկյանը, Գ. Սուջյանը և ուր.: Ճանաչված են «Բամբիռ», «Ուստան հայոց», «Որդան կարմիր», «Նաիրի», «Էմփիրեյ», «Դորիանս» և այլ խմբեր:

Անկախության շրջանում են ստեղծվել «Սերենադ» կամեր. (1991–2011, հիմնադիր-գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Է. Թոփչյան), «Գոհար» (1997, գեղ. ղեկ.՝ Սեպուհ Աբգարյան), Երիտասարդական (2005, գեղ. ղեկ.՝ Ս. Սմբատյան) սիմֆ. նվագախմբերը, «Հովեր» կամեր. (1992, հիմնադիր-ղեկ.՝ Ս. Հովհաննիսյան), «Սպեղանի» մանկ. (1996, հիմնադիր-ղեկ.՝ Ս. Ավթանդիլյան), «Ավետիս» (2004, հիմնադիր-ղեկ.՝ Լ. Բարդակչյան) երգչախմբերը, «Սայաթ-Նովա» աշուղ. (1992, ղեկ.՝ Թ. Պողոսյան), «Վարպետներ» վոկալ (2000, հիմնադիր-ղեկ.՝ Ա. Մայիլյան), «Նազանի» ժողգործիքնե-

Վանաձորի «Որդան կարմիր» ռոք խումբը ելույթի պահին

րի (2004, հիմնադիր-ղեկ.՝ Ա. Գուլանյան) անսամբլները, «Հայ փոքրիկ երգիչներ միջազգ. ընկերակցությունը» (1993, հիմնադիր-նախագահ՝ Տ. Հեքեքյան, կազմում է նաև համանուն մանկ. երգչախումբը), «Սաղմոս» մշակութ. կենտրոնը (2000, հիմնադիր-ղեկ.՝ Ա. Մայիլյան), «Նարեկացի» արվ-ի միությունը (2004), «Գաֆեսճյան» արվ-ի կենտրոնը (2009) ևն:

«Հայ երիտասարդ կոմպոզիտորների ու կատարողների միավորումը» (2010, հիմնադիրներ՝ Քաջիկ Գրիգորյան, Արսեն Բաբաջանյան և ուր.) մայրաքաղաքի ու մարզերի կրթօջախներում կազմակերպում է համերգ-հանդիպումներ ավագ և կրտսեր սերնդի ժամանակակից հայ կոմպոզիտորների հետ՝ ներկայացնելով հիմնականում երաժշտ. ուս. ծրագրերում չներառված ստեղծագործություններ:

Թողարկվել են Կոմիտասի ծննդյան 140-ամյակին (ֆոնդային ողջ նյութը) և

Ա. Խաչատրյանի ծննդյան 100–ամյակին (կյանքն ու ստեղծագործ. ժառանգությունը) նվիրված տեսասկավառակներ ևն:

Ըստ Գեորգի Գյոդակյանի, Անի Մուշեղյան

Գրկ. *Գաբրիելյան Գ., Գիրք երաժշտական, ԿՊ, 1803: Տնտեսեան Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, ԿՊ, 1874: Հիսարլեան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց (1768–1909), ԿՊ, 1914: Մելիքյան Ս., Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Ե., 1935: Կոմիտաս, Հայ գեղջուկ երաժշտութիւն, Փարիզ, 1938: Նույնի, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Նույնի, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, հ 1, 2, Ե., 2005, 2007: Մուրադյան Մ., Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Ե., 1956: Նույնի, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970: Նույնի, Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության, Ե., 1989: Աղայան Մ., Հայ գուսանները և գուսանա-աշուղական արվեստը, Ե., 1959: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, XIX–XX դդ. (մինչսովետական շրջան), Ե., 1959: Ակնարկ հայ երաժշտության պատմության, Ե., 1963 (Ակնարկներ հայ արվեստի պատմության, հ. 1, Ք. Քուշնարյան, Մ. Մոսրադյան, Գ. Գյոդակյան): Տիգրանով Գ., Հայ երաժշտական թատրոնի 100 տարին. 1868–1968, Ե., 1968: Բրուտյան Յ., Սփյուռքի հայ երաժիշտները, Ե., 1968: Նույնի, Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Ե., 1982: Նույնի, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996: Մարյան-Հարությունյան Ա., Հայ քաղաքային ժող. երգարվեստը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», № 4, Ե., 1973: Թադևոսյան Ա., Էջեր Հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից (XIX դարի 2-րդ կես–XX դարի սկիզբ), Ե., 1977: Մազմանյան Ռ., Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1920–1945, Ե., 1979: Նույնի, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1946–1960, Ե., 1981: Նույնի, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901–1910, Ե., 2006: Թահմիզյան Ն., Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1982: Նույնի, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Նույնի, Կոմիտասը եւ հայ ժողովուրդի երաժշտական ժառանգութիւնը, Փասատենա, 1994: Նույնի, Արդի խազաբանութիւն, Փասատենա, 2003: Նույնի, Սայեաթ-Նովան եւ հայ գուսանա-աշուղական երգ-երաժշտութիւնը, Փասատենա, 1995: Արևշատյան Ա., «Սաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Նույնի, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Ե., 2003: Նույնի, Անիի երաժշտական մշակույթը, Ե., 2014: Նույնի, Չայնեղանակների ոսմունքը միջնադարյան Հայաստանում, Ե., 2013: Երնջակյան Լ., Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Ե., 1991: Նույնի, Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական առնչությունների համապատկերում, Ե., 2009: Նույնի, Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք–Արևմուտք մշակութային խաչուղիներում, Ե., 2015: Բարսամյան Ա., Հարությունյան Մ., Հայ երաժշտության պատմություն, Ե., 1996: Բրուտյան Մ., Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր, Ե., 2001: Նույնի, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, մաս 1, Գեղջկական երգ, Ե., 2004: Նավոյան Մ., «Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Ե., 2001: Նույնի, Դրվագներ հայ երաժշտության պատմության, Ե., 2009: Ափոյան Շ., Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն. 1850–1920, Ե., 2006: Ասատրյան Ա., Հայաստանի պետական երգչախումբ, Ե., 2007: Նույնի, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011: Նույնի, Հայաստանի կոմպոզիտորների միություն–85, Ե., 2017: Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008 (ռուս., 1958): Բաղդասարյան Ա., Կիրակոսյան Ա., Հայկական ժողովրդական նվագարաններ, Ե., 2008: Քոչարյան Ա., Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008: Գյոդակյան Գ., Էջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009: Սարյան Ա., Հայ քաղաքային ժողովրդական երգերի ընտրանի, Ե., 2010: Ջուրաբյան Ժ., Մինոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Ե., 2014: Արտեմյան Լ., XX դարի նոր կոմպոզիցիոն տեխնոլոգիաներով գրված հայկական դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները, Ե., 2015: Ամիրաղյան Գ., Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Ինդկահայոց երգվածքում, Ե., 2016: Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը, հ. 1 (պարեգիրք), Ե., 2016: Կոմիտասը և ավանդական երաժշտական մշակույթը, հ. 2 (պարեգիրք), Ե., 2017: Армянские композиторы, сост. Атаян Р., Мурадян М., Татевосян А., Е., 1956; Шавердян А., Комитас и армянская музыкальная культура, Е., 1956; Его же, Очерки по истории армянской музыки XIX–XX веков (досоветский период), М., 1959; Тигранов Г., Армянский музыкальный театр, т. 1–4, Е., 1956–88; Его же, Опера и балет Армении, М., 1966; Атаян Р., Армянская народная песня, М., 1965; Его же, Артисты. Спектакли. Музыка, Е., 1968; Апоян Ш., Фортепианная музыка Советской Армении, Е., 1968; Ее же, Незабываемые имена. Очерки о пианистах-армянах, Е., 2008; Тер-Симонян М., Камерно-инструментальная ансамблевая музыка Армении, Е., 1974; Мазманян Р., Кочинян Ж., Армянская советская литература о музыке: Библиогр. указ. ..., Е., 1974; Худабашян К., Армянская музыка на пути от монодии к многоголосию, Е., 1977; Ее же, Армянская музыка в аспекте сравнительного музыкознания, Е., 2011; Тагмизян Н., Теория музыки в Древней Армении, Е., 1977; Рухкян М., Армянская симфония. Исследовательские очерки, Е., 1980; Ее же, Портреты армянских композиторов. Очерки, Е., 2009; Григорян А., Армянская камерно-вокальная музыка, Е., 1982; Джагацпанян К.,*

Ритм национальной речи и музыки, Е., 1986; Ее же, По следам ритмов национальной музыки (историко-теоретическое исследование), Е., 1999; Ее же, Из жизни и творчества армянских композиторов (на рус. и арм. языках), Е., 2012; Апоян Ш., Золотова И., Из истории фортепианной педагогики и исполнительского искусства XX века: Хрестоматия, Е., 1998; Саркисян С., Армянская музыка в контексте XX века, М., 2002; Зурабян Ж., Интонационные истоки и национальное своеобразие тематизма в армянской симфонической музыке (1950–60 гг.), Е., 2002; Пахлеванян А., Вопросы армянской музыкальной фольклористики, Е., 2005; Геодакян Г., Пути формирования армянской музыкальной классики, Е., 2006; Маргарян Г., Фортепианный концерт и его разновидности в творчестве армянских композиторов. Тенденции развития (1950–1980). Некоторые вопросы интерпретации., Е., 2009; Золотова И., Пути развития пианизма в Армении (вторая половина XX века), Е., 2010; Fetis F., Historie generale de la musique, t. IV, P., 1874; Komitas (Keworkian), Die armenische Kirchenmusik, in «Sammelbande der internationalen Musikgesellschaft», H. I, Lpz., 1899; Komitas, La musique rustique armenienne, dans «Mercure musical», № 5, 1907; Wellesz E., Die armenische Messe und ihre Musik, in «Jahrbuch des Musikbibliothek Peters», I, Lpz., 1920; Poladian S., Armenian Folksongs, L.-A., 1942.

ԵՐԱՆՅԱՆ Գաբրիել Օհանի (12.07. 1827, Կ. Պոլիս–13.10.1862, Կ. Պոլիս), կոմպոզիտոր, հաս. գործիչ: Սովորել է Կ. Պոլսի Մայր վարժարանում, աշակերտել է ձայնագրագետ Արիստակես Հովհաննիսյանին: Դասավանդել է Խասգյուղի վարժարանում և ազգ. որբանոցի դպրոցում: Տիրապետելով նոր հայկ. ձայնագրությանը՝ ուսումնասիրել է նաև եվրոպ. երաժշտության տեսությունը:

Ա. Հովհաննիսյանի հետ 1857-ին հրատարակել է եվրոպ. նոտագրությամբ «Քնար արևելյան» երաժշտ. հանդեսը, տպագրել իրենց ձայնագրած արլ. երաժշտ. նմուշները: 1861-ին Նիկողայոս *Թաշճյանի* հետ լույս է ընծայել *«Քնար հայկական»* երաժշտ. երկշաբաթաթերթը. 1862-ին հիմնադրել է նույնանուն երաժշտ. ընկերությունը, խմբագրակազմում ներգրավել է Տիգրան Չուխաճյանին և իտալացի Կ. Ֆոսքինիին:

Հեղինակ է «Կիլիկիա» (խոսք՝ Ն. Ռուսինյանի), «Առ Հայաստան» («Հայաստան, երկիր դրախտավայր», խոսք՝ Հ. Միրզա Վանանդեցու), «Արիք հայկազունք» (խոսք՝ Հ. Սվաճյանի) և ժողովրդականություն վայելող ազգ-հայրենասիր. այլ երգերի:

Ըստ Սաթևոս Մուրադյանի

ԵՐԳ, երաժշտության մեջ՝ փոքրածավալ վոկալ ստեղծագործություն, որտեղ երաժշտությունն արտահայտում է գրական տեքստի ընդհանրացած կերպար. բովանդակությունը: Ե-ին բնորոշ են ցայտուն մեղեդայնությունը, արտահայտչամիջոցների պարզությունը, կառուցվածքի հստակությունը (մեծ մասամբ՝ տուն՝ կրկներգով կամ առանց կրկներգի): Առանձնանում են ժող. և պրոֆեսիոնալ (կոմպոզիտորական) Ե-երը, որոնք տարբերվում են ժանրերով, կառուցվածքներով, կատարման և այլ հատկանիշներով (հեղինակ. և կենցաղ., քնար. և ձոներգ, միաձայն և բազմաձայն, մեներգ կամ խմբերգ, նվագակցությամբ և առանց դրա ևն): Մի քանի լեզուներում «Ե.» եզրույթով (գերմ.՝ Lied, ֆրանս.՝ chanson, անգլ.՝ song) նշվում է նաև ռոմանսը:

ԵՐԳԱՐԱՆ, երգերի, երգվող բանաստեղծությունների (երբեմն՝ միայն բանաստեղծությունների) ձեռագիր կամ տպագիր ժող.: Գոյություն ունեն հոգևոր, ժող., կոմպոզիտոր., նաև ինքնուս ստեղծագործողների երգերից բաղկացած, ձայնանիշներով, առանց ձայնանիշների և խառը Ե-ներ: Պրոֆեսիոնալ Ե-ները կազմվում են՝ ըստ երգարվ-ի ճյուղերի (հեղինակ., զանգված., մանկ. ևն), ժանրի (աշխատանք., պանդխտության, ծիս., պատմ., քնար., երգիծ. ևն), թեմայի (հայրենասիր., սիրային, ռազմի ևն), նախատեսվող կատարողների (երիտասարդ., ուսանող., զինվոր. ևն), բանաստեղծի կամ կոմպոզիտորի: Ժող. Ե-ները կազմվում են՝ ըստ երգաստեղծության ճյուղերի (գեղջկական, քաղաք., աշուղ. ևն), ժանրի ստեղծման կամ տարածման վայրի, ազգ. պատկանելության ևն:

Ե-ների մասին ամենահին հիշատակումները եղել են Հին Չինաստանում մ. թ. ա. XI դ-ում: Արմ. Եվրոպայում առաջին Ե-ները երևան են եկել XVI դ-ում, Ռուսաստանում՝ XVII դ-ում:

Հայաստանում դեռևս VII դ-ում *Բարեղ Ճոնը* կազմել է պաշտոնապես վավերացված առաջին շարականների ժող-ը («Ճոն-ընտիր»): Ամբողջ. պահպանված, խազավոր ձեռագիր *Շարակնոցներից* հնագույնը թվագրվում է XIII դ-ով: Հայ հոգևոր երգաստեղծության մեջ *Գրիգոր Նարեկացու*՝ գանձերի ժանրի սկզբնավորումից հետո ձևավորվել են *Գանձարանները*, որոնք հայ միջնադար. երաժշտածիս. գրչագիր խազավոր մատյաններ են: Հայկ. ձեռագիր Ե-ների ակունքները XV–XVI դդ-ից պահպանված *Տաղարաններն* են: «Տաղարան է սայ հոգոյ եւ մարմնոյ» հայտնի հնագույն

Գաբրիել Երանյան

Պետրոս Ղափանցու «Գրքոյկ կոչեցեալ երգարան»-ի (1772, Կ. Պոլիս) տիտղոսաթերթը



«Հայնագրեալ ազգային երգարանի» (1882) էջ՝ «Սոխակն Աւարայրի» երգը՝ հայկական ձայնանիշներով

«Գրպանի երգարան»-ի 7-րդ հատորի (2011, Երևան, կազմ.՝ Ս. Հարոյան) շապիկը

Տաղարանը հրատարակել է Հակոբ Մեղապարտը 1513-ին Վենետիկում: Հայկ. ժող. երգերի առաջին ձեռագիր ժող-ը կազմել է Խաչատուր Կաֆայեցին 1608-ին Ղրիմում: Տպագիր Ե-ի հին նմուշներից են՝ «Տաղարան փոքրիկ Պաղտասար Դպրի, ասացեալ զանազան գունով» (1723), «Երգեցմունք հոգևորականք» (տիտղթ-ին՝ «Գրգուկս որ կոչի Երգեցմունք հոգեւորականք եկեղեցական դպրոց», 1736, 1751), Ղազար Ջահկեցու (1737, 1744), Մանուել Սրմաքեշ Կեսարյանի (1752), Պետրոս Ղափանցու (1772), Գ. Գապասաքալյանի «Գրքոյկս կոչեցեալ Երգարան» (1803), Ղևոնդ Ալիշանի կազմած «Հայոց երգք ռամկականք» (հայ., անգլ., 1852), Գամառ Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» (1856, նոտային հավելվածով), Մ. Միանսարյանցի «Քնար հայկական» (1868), Ե. Տնտեսյանի «Նոր երգարան հայոց» (1880), Տ. Փափազյանի հրատարակած «Երգարան թատերական» (1882), Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջներ» (1895), Ա. Մխիթարյանի «Տաղեր ու խաղեր» (1900), Վ. և Պ. Զարդարյան եղբայրների «Ընդարձակ հայկական երգարան» (հ. 1–3, 1909), Հ. Սարգսյանի «Կիլիկիա երգարան» (1921) ևն:

XIX դ-ում նոր հայկ. ձայնագրության երևան գալուց հետո լայնորեն տարածվել են նոտագրված ժող. Ե-ները: Նոտագրված երգերի առաջին ժող-ը ստեղծել է Ա. Բարխուդարյանը 1888-ին Մոսկվայում: Առանձին ճյուղ են աշուղ. ձեռագիր դավթարներն ու տպագիր ժող-ները՝ «Սայաթ-Նովա» (աշխատասիր.՝ Գ. Ախվերդյանի, 1852), «Նոր քնար Հայաստանի» ընդհանուր վերնագրով Ո. Տեր-Հովհաննիսյանի և Զ. Մսերյանի հրատարակած Ազբար Ադամի, Շիրինի, Նիրանու, Սեյադի «Երկասիրութիւնք ազգային երգչաց» (1855, 1858, 1859) գրքույկները: Հայկ. ձայնանիշներով ու եվրոպ. նոտագրությամբ հրատարակվել են Ե. Երզնկյանի «Ձայնագրեալ ազգային երգարան» (1882), Ս. Դեմուրյանի «Քնար: Ձայնագրեալ երգարան» (1907), նաև Սայաթ-Նովայի (1946), Շերամի (1948), Ջիվանու (1955), Աշոտի (1958), Հավասու (1961), Շահենի (1964) և այլ աշուղների Ե-ներ: Երգերի խոսքերով ու ձայնանիշներով Ե-ներում առանձնանում են Կոմիտասի «Հայ քնար» (1907, Փարիզ), «Հայ գեղջուկ երգեր» (1912, Լայպցիգ) վերնագրերով Ե-ները: Կազմվել են նաև ժող. երգերի գիտ. ժող-ներ [Կոմիտաս, «Շար Ակնայ ժողովրդական երգերի» (1895), Ս. Մելիքյան և Ա. Տեր-Ղևոնդյան, «Շիրակի երգեր» (1917), Ս. Մելիքյան և Գ. Գարդաշյան, «Վանա ժողովրդական երգեր» (1927–28), «Ազգագրական ժողովածու» (հ. 1, 2, 1931, 1950), Վ. Սամվելյան, «Հայ ժողովրդական երգեր. սովետական շրջան» (1961), Մ. Թումաճան, «Հայրենի երգ ու բան» (հ. 1–4, 1973–2005) ևն: Ե-ներ են կազմել ու հրատարակել նաև Ա. Տնինիկյանը, Մ. Սազմանյանը, Շ. Տալյանը, Վ. Չաքմիշյանը և ուր.:

Սփյուռքում նույնպես հրատարակվել են բազմաթիվ Ե-ներ՝ «Ծաղկեփունջ» (ձոնված հայ ազգ-ազատագր. պայքարի հերոսներին, 1907, Թիֆլիս), «Հայրենիք» (1908, Բոստոն), «Ընտրյալ երգեր» (1915, Բոստոն), «Արշալոյսի ձայներ» (1915, Թիֆլիս), նաև «Գանձարան հայկական երգերու» (1935–43), «Ժողովրդական երգարան», «Հայ ժողովրդական երգարան» (1940, Նյու Յորք), «Երգարան» (1948, 1956, 1960) ևն:

Վերջին շրջանում լույս են տեսել «Երգարան» (կազմ.՝ Վ. Չաքմիշյան, 1993), «Անմոռաց երգեր» (կազմ.՝ Հ. Մինասյան, 2002, 2011), «Կաքավիկ» (կազմ.՝ Ա. Շահնազարյան, 2008), «Մանկական երգարան» (կազմ.՝ Ս. Մուրադյան, 2009), «Հոգևոր երգարան» (2009), «Գրպանի երգարան» (կազմ.՝ Ս. Հարոյան, 2011), «Մանկական և քնարական երգեր» (կազմ.՝ Ռ. Ամարյան, 2012), «Հայոց ազատամարտը երգերում» (կազմ.՝ Ս. Սահակյան, 2014) և այլ Ե-ներ: 2015-ին Ս. Հարոյանը կազմել է Ե-ների պատմության մեջ ամենածավալուն՝ «Ազգային երգարան գրպանի» (հ. 1–21) ժող-ը (նոտային հավելվածով և խտասալիկով), որն ընդգրկում է հայ երգարվ-ի բոլոր ժանրերի շուրջ 700 երգ:

Հայկ. հին ձեռագիր և տպագիր, նաև ժամանակակից Ե-ները կարևոր նշանակություն ունեն թե՛ երգը տարածելու, թե՛ ազգ. երաժշտության պատմության ուսումնասիրության համար:

Գրկ. *Հայերեն երգարանների մատենագիտություն (1513–1921), աշխատասիր.՝ Կ. Հարոյանի, Ե., 2014:*

ԵՐԳԱՐՎԵՍՏ, վոկալ արվեստ, երգչաձայնին վարպետորեն տիրապետելու արվ-ը: Տարբերում են Ե-ի մենակատար., անսամբլ. և խմբային տեսակներ: Տարբեր ժողովուրդների Ե-ում

անդրադառնում են ժող. երաժշտության ձայնակարգ-ելևէջային ու ռիթմ. հատկանիշներին: Ազգ. երգեցողության ինքնատիպության մեջ կարևոր դեր ունի նաև լեզվի հնչյունակազմը, որը ներգործում է ձայնարտադրության վրա:

ԵՐԳԵՀՈՆ (լատ.՝ organum, < հուն. ὄργανον – գործիք), փող. օդհունչ ստեղնային երաժշտ. գործիք. ունի լայն դիապազոն, արտահայտչության հարուստ հնարավորություններ: Բաղկացած է ընդհանուր պատյանում տեղադրված տարբեր չափերի փողերից (փայտե և մետաղե), օդամուղ համակարգից (օդամղիչ սարք, օդատարներ) և նվագասեղանից, որտեղ, բացի ձեռքի (մանուալ) և ոտքի (ոտնակ) ստեղնաշարերից, կենտրոնացված են ռեգիստրներ միացնող ու անջատող, ստեղնաշարերը միմյանց միացնող լծակների բռնակներ և սարք՝ հնչողությունն ուժեղացնելու կամ թուլացնելու համար: Ունի ձեռքի 1–5 (յուրաքանչյուրում՝ 48–77 ստեղն) և ոտքի (սովորաբար՝ 32 ստեղնից) ստեղնաշարեր, ռեգիստրների բաժանված մի քանի հազար փողեր: Ռեգիստրների քանակը (1–150 և ավելի) պայմանավորված է գործիքի մեծությամբ, իսկ յուրաքանչյուր ռեգիստրի փողերի քանակը սովորաբար համապատասխանում է ձեռքի ստեղնաշարի ստեղների քանակին:

Մինչև XIX դ-ի վերջը ստեղների և փողերի հաղորդակցումը, նաև մյուս սարքերի աշխատանքն իրագործվել է ձգաննեբով, իսկ օդամղումը՝ փուքսերով (մեխ. Ե.): XX դ-ում ստեղծվել են պնևմատիկ և էլեկտրապնևմատիկ կառուցվածքներով, ապա՝ էլ. Ե-ներ: Հայաստանում առաջին Ե. տեղադրվել է 1969-ին Երևանում՝ Կոմպոզիտորների տան դահլիճում, 1971-ին՝ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում:

ԵՐԳԵՀՈՆԻԿ, շարմանկա (< գերմ. «Scharmante Katharine...» – «Համայիչ Կատարինե»), մեխ. փող. երաժշտ. գործիք, փոքրիկ շարժ. Ե. (առանց ստեղնային մեխանիզմի): Կազմված է արկղից, որտեղ զետեղված են հնչափողերը, փուքսը և գլանիկները, որոնք շարժման մեջ են դրվում բռնակը պտտեցնելով: Ե-ով կատարվող յուրաքանչյուր մեղեդի ունի իր գլանիկը:

Ի հայտ է եկել XVIII դ-ում Արմ. Եվրոպայում: Նվագել են թափառաշրջիկ երաժիշտները:

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, երաժշտ. երկի կատարումը երգչաձայնով, ստեղծագործության գաղափարակերպար. բովանդակությունը ձայնի արտահայտչամիջոցներով հաղորդելու արվ-ը: Սովորաբար զուգակցվում է խոսքի հետ: Կան նաև առանց խոսքի ստեղծագործություններ, որոնք գրել են երգելու համար: Ե. կարող է լինել ծորուն, թվերգ. (նմանվել խոսակց. լեզվի ելևէջներին) և կոլորատուր., որը բնույթով մոտ է գործիքի նվագին:

Երգեհոն

Ե-յան (անկախ նվագակցությունից) տեսակներն են՝ մեներգ., անսամբլ., խմբերգ., կամեր., նաև օպեր. (կապված է թատեր. ներկայացման դրամատուրգիայի հետ, ընդգրկում է Ե-յան բոլոր տեսակները):

ԵՐԳԱԽՄԲԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՏՈՒՆ Երևանում, հիմնադրվել է 1977-ին՝ Հայաստանի երգչախմբ. ընկերության (այժմ՝ ***Հայաստանի երաժշտական ընկերություն***) նախաձեռնությամբ: Կազմակերպում է հայկ., մանկ. երգերի մրցույթներ, երաժշտ. փառատոներ, ստուգատեսներ, համերգ-դասախոսություններ, հայ կոմպոզիտորների մեծարման հանդեսներ, հուշ-երեկոներ, համերգներ՝ արտերկրի պրոֆեսիոնալ ու ինքնագործ խմբերի մասնակցությամբ, և այլ միջոցառումներ:

Երգչախմբային արվեստի տունը

ԵՐԳԱԽՈՒՄԲ, երգիչների խումբ. բաղկացած է մի քանի ենթախմբերից, որոնցից յուրաքանչյուրը համատեղ երգեցողության ընթացքում կատարում է առանձին երգամաս: Ունի կայուն և ճշգրիտ լարվածք, օժտված է արտահայտչական հարուստ ու բազմազան հնարավորություններով: Հայ իրականության մեջ առաջին՝ ժող. Ե-երը հիմնադրել է (1885-ից) Ք. Կարա-Մուրզան: Բարձր մակարդակի Ե-եր են ստեղծել նաև Մ. Եկմալյանը՝

Երգեհոնիկ

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Կոմիտասը՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Կ. Պոլսում:

Համազգայինի «Գուսան» երգչախումբը (2015, Բեյրութ, խմբավար՝ Գրիգոր Ալոզյան)

Նոր ժամանակներում ճանաչված են ԵՊԿ, Հայֆիլհարմոնիայի, Հայաստանի պետ., Երգչախմբ. ընկերության, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի, «Հայ փոքրիկ երգիչներ», «Հովեր», «Սպեղանի», Հայաստանի կամեր., Երևանի կամեր. և այլ Ե-եր:

Արամ Երևյան

Ե-եր են հիմնադրվել նաև Սփյուռքում՝ «Արաքս» (Արգենտինա), «Երևան» (Բուլղարիա, ԱՄՆ), «Սիփան» (ԱՄՆ), «Գուսան» (Կ. Պոլիս, Լիբանան, Կանադա), «Կոմիտաս» (Բուլղարիա, Ռումինիա), «Զվարթնոց», «Քնար» (Սիրիա), «Կարկաչ» (ԱՄՆ), «Վարդավառ» (Հորդանան) ևն:

ԵՐԵՄՅԱՆ Արամ Գարեգինի (1898, Մարզվան–1972, Թեհրան), բանահավաք, երաժշտության տեսաբան, պատմաբան: Աշխ-ներում արտացոլել է իրանահայ գաղթավայրի երաժշտ. բազմազան իրադարձություններ: Հավաքել ու գրառել է ժող. երգեր, գրել գրախոսություններ, զբաղվել խմբագր. աշխատանքով: Հրա-

«Երևան» փողային նվագախումբը (2014)

տարակել է «Պարսկահայ աշուղներ» (1920, 1921, 1925, 1930), «Փշրանքներ ջուղահայ եւ հնդկահայ բանահիւսութիւնից» (1930), «Նոր Ջուղայի ԺԷ դարու որմնանկարչական յուշարձանը» (1942), «Միջնադարեան հայ կոմպոզիտորներ» (1958) աշխ-ները, նաև հոդվածներ՝ նկարիչներ Վ. Խոջաբեկյանի, Ալ. Սարուխանի, Ս. Պիծակի (1949, 1951, 1952) մասին:

«ԵՐԵՎԱՆ», խառը երգչախումբ Բուլղարիայում: Հիմնադրվել է 1933-ին Սոֆիայում՝ «Ալագյազ» անունով: 1937-ին լուծարվել է, վերակազմավորվել է 1944-ին և անվանվել «Ե.» (հիմնադիր-ղեկ.՝ Կ. Կիրկորով, 1952–60-ին): Երգացանկում՝ ժող., դաս. և ժամանակակից կոմպոզիտորների երգեր: Համերգներով հանդես է եկել Բուլղարիայի քաղաքներում, մասնակցել բուլղարահայ մշակույթի տասնօրյակին Հայաստանում (1967), Երգի տոնին Երևանում (1974):

Բուլղարիայի փառատոների մրց-ներ, «Կիրիլ և Մեֆոդի» շքանշան (1958), ոսկե մեդալ (1974):

«ԵՐԵՎԱՆ», հայկ. մշակութ. միություն Բուլղարիայում: Հիմնադրվել է 1944-ին՝ բուլղարահայ հակաֆաշիստների և առաջադեմ ուժերի նախաձեռնությամբ (կենտր. վարչության նախագահ՝ Գ. Գաբրիելով, քարտուղար՝ Մ. Խաչիկյան): Մասնաճյուղեր ունի Բուլղարիայի հայկ. համայնքներում: Միության երաժշտ. խմբերը (երգի, պարի, թատեր. ևն) տարածել են ազգ. մշակույթը: Աչքի են ընկել Կոլարով-գրադի երգի-պարի անսամբլը, Ռուսչուկի «Կոմիտաս», Պլովդիվի «Արամ Խաչատրյան», «Երևան» և այլ երգչախմբեր, որոնք մասնակցել են մրցույթների, արժանացել պարգևների:

Միությունը հրատարակում է «Երևան» հաս., քաղ. և մշակութ. թերթը:

«ԵՐԵՎԱՆ» պետական, փող. նվագախումբ: Հիմնադրվել է 1964-ին Երևանում. հիմնադիր-գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Հայկազ ***Մեսիայան***, 1988-ից՝ Լ. Մեսիյան, Վ. Փիրումյան, Հ. Լոգյան, Ս. Աբրահամյան, Հայկ Հովակիմյան (2000-ից): 1970-ին նվագախումբը կոչվել է Հայաստանի փող. նվագախումբ: Նվագացանկում՝ Յ. Ս. Բախի, Գ. Հենդելի, Յ. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ռ. Վագների, Է. Գրիգի, Ա. Դվորժակի, Պ. Ի. Չայկովսկու, Ջ. Գերշվինի, Մ. Եկմալյանի, Ա. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Հարությունյանի, Ա. Բաբաջանյանի, Է. Միրզոյանի, Ս. Բալասանյանի և ուր. երկերից: Նվագախմբի հետ համագործակցել են կոմպոզիտորներ Ա. Խաչատրյանը, Ա. Բաբաջանյանը, երգչուհիներ Գ. Գասպարյանը, Գ. Գալաչյանը, ջութակահար Ժ. Տեր-Մերգերյանը և ուր.:

«Ոսկե շեփոր» (ոսկե մեդալ, 1977, Կոլին, Չեխիա), Փող. նվագախմբերի (ոսկե մեդալ, դիպլոմ, 1985, Լյուքսեմբուրգ) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱՅԻ ԹԱՏՐՈՆ (ԵԵԿԹ), Հ ա կ ո բ Պ ա ր ո ն յ ա ն ի ա ն վ ա ն, առաջին պետ. օպերետ. թատրոնը Հայաստանում: Բացվել է 1942-ի հունիսի 22-ին՝ Ռ. Նելսոնի «Թագավորը զվարճանում է» օպերետի բեմադրությամբ: Թատրոնի հիմնադրման և հետագա գործունեության մեջ մեծ ավանդ ունեն Շ. Տալյանը, Ա. Տեր-Հովհաննիսյանը, Ա. Այվազյանը, Թ. Սարյանը և Հ. Դանզասը: Խաղացանկը կազմված էր Ա. Այվազյանի «Ուշ լինի, նուշ լինի» (ըստ Գ. Երիցյանի), «Ատամնաբույժն արևելյան» (ըստ Հ. Պարոնյանի), «Քաջ Նազար» (ըստ Դ. Դեմիրճյանի), Ի. Կալմանի «Սիլվա» և այլ երաժշտ. կատակերգություններից:

Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնը

Թատրոնը ստեղծագործ. վերելք է ապրել 1940-ական թթ-ի կեսերին. ռեժ. Վ. Աճեմյանի ղեկավարությամբ բեմադրվել են Ի. Օ. Դունաևսկու «Ազատաշունչ հողմը», Տ. Չուխաճյանի «Լերլերիջի» («Կարինե») օպերետները, Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ» (երաժշտությունը՝ Վ. Տիգրանյանի, 1949, ռեժ.՝ Վ. Աճեմյան) և այլ երաժշտ. ներկայացումներ: 1950–60-ական թթ-ին թատրոնի խաղացանկը հարստացել է հայ, ռուս և եվրոպացի հեղինակների ստեղծագործություններով՝ Գ. Սունդուկյանի «Բաղնիսի բոխչա», Ս. Ջրբաշյանի «Երազիկ», Ու. Հաջիբեկովի «Արշին Մալալան», Յ. Շտրաուսի «Գնչուների բարոնը», Լոպե դե Վեգայի «Այլոց համար հիմար, իրեն համար խելոք», «Պարերի ուսուցիչը», Վ. Շեքսպիրի «Կամակոր կնոջ սանձահարումը», «Ոչնչից մեծ աղմուկ» ևն: 1960–70-ական թթ-ի լավագույն բեմադրություններից են՝ Ի. Կալմանի «Սիլվա», Ֆ. Լոուի «Իմ չքնաղ լեդի», Դ. Մոդունիոյի «Սև վիշապ», Ա. Այվազյանի «Սեր աստղերի տակ», Գ. Տեր-Գրիգորյանի «Ախ, ներվեր, ներվեր», Ա. Պապայանի «Արտասահմանյան փեսացուն» ևն:

1989–93-ին (թատրոնի գեղ. ղեկ.՝ Ա. Էլբակյան) բեմադրվել են երաժշտ. տարբեր ժանրերի մեծածավալ ներկայացումներ՝ Ա. Ցագարելիի «Խանումի արարքները», Ա. Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան», Գ. Տեր-Գրիգորյանի «Շրջազգեստով տղամարդիկ կամ Ինչ է լինելու սրա վերջը», Մոլիերի «Ժլատը», «Ժորժ Դանդեն», Ա. Էլբակյանի «Ամենափրկիչ ջրհեղեղ», Ժ. Անանյանի «Թռչող ափսեից իջած մարդը», Բ. Բրեխտի «Արթուրո Ուիի կարիերան, որ պետք է կանխվեր» (Հանրապետ. փառատոնի 1-ին մրց.) ևն:

Թատրոնի ստեղծագործ. կյանքում շրջադարձային էր 1992-ը. 50-րդ թատերաշրջանը բացել են սեփ. շենքում՝ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» մյուզիքլով (ռեժ.՝ Ա. Էլբակյան, երաժշտությունը՝ Ս. Լուսիկյանի, Աբիսողոմ աղայի դերակատար՝ Շ. Ղազարյան):

1993-ից (գեղ. ղեկ.՝ Ե. Ղազանչյան) թատրոնի խաղացանկը հարստացել է շուրջ 50 բեմադրությամբ (Ա. Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան», 1993, 2002, Ա. Այվազյանի և Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի», 1995, 2009, 2015, ևն):

Տեսարան Ա. Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան» օպերետի բեմադրությունից (1951, ռեժ.՝ Վարդան Աճեմյան)

Ե. Ղազանչյանի ջանքերով առավել սերտացել է ստեղծագործ. համագործակցությունը կոմպոզիտորներ Ռ. Պետրոսյանի (Գ. Վոլչեկի «Արքայադուստրը և փայտահատը», 1995), Ս. Բաբաթորոսյանի (Գ. Ֆիգերեյդոյի «Եզոպոս», 1998), Ա. Սաթյանի (Ա. Շիրվանզադեի «Մորգանի խնամին», 2012, «Արտավազդ» մրց., Գ. Սունդուկյանի «Ձեր աստվածը փողն է»,

2015), Մ. Վարդազարյանի (Ե. Օտյանի «Ձվարճալի պատերազմ կամ Վտանգավոր օտարամոլություն», 2016), դիրիժորներ Վ. Չարչօղլյանի, Յ. Դավթյանի, Հ. Արզումանյանի և ուր. հետ:

2014-ին թատրոնում բեմադրվել է Տ. Չուխաճյանի «Կարինե» օպերետը («Լբլեբիջի Հոր-հոր աղա» կոմիկ. օպերան, ռեժ.՝ Ե. Ղազանչյան, դիրիժոր՝ Յ. Դավթյան, նկարիչ՝ Ռ. Էլիբեկյան, Կարինե՝ Լ. Պուլուզյան, Արմեն՝ Ա. Գևորգյան, Հոր-հոր

Տեսարան Բ. Բրևիպի «Երեք գրոշանոց օպերա» երաժշտ. կոմեդիայի բեմադրությունից (1966, ռեժ.՝ Մարատ Մարինոսյան)

աղա՝ Վ. Մարգարյան և ուր): Նվագախումբը Յ. Դավթյանի ղեկավարությամբ հնչում է գունագեղ, ներդաշնակ ու կուռ: Երգչախումբը (խմբավար՝ Շ. Հովհաննիսյան), նաև պար. տեսարանները (ղեկ.՝ Ա. Կարապետյան) նպաստում են գլխ. հերոսների երաժշտ. կերպարների բացահայտմանը և տարբեր իրավիճակների ստեղծմանը:

Թատրոնում հիմնադրման օրվանից գործում է նվագախումբ, որը տարբեր տարիների ղեկավարել են դիրիժորներ Արամ Տեր-Հովհաննիսյանը, Գուրգեն Կարապետյանը, Սուրեն Չարեքյանը, Գրիգոր Վարժապետյանը, Իսպիր Բաբաջանյանը, Դավիթ Երզնկյանը, Լևոն Աբրահամյանը, Վիլեն Չարչօղլյանը, Յուրի Դավթյանը, Հարություն Արզումանյանը (2018-ից):

Երգչախումբը ղեկավարել են խմբավարներ Լիդիա Պրոկոֆևան, Նադեժդա Արազովան, Վաղինակ Չաքմիշյանը, Գրիգոր Սանդալջյանը, Էդվարդ Եսայանը, Շուշանիկ Հովհաննիսյանը (2014-ից): Բալետի խումբն ունի պարուսույցներ և մենապարողներ: Թատրոնում պարեր են բեմադրել Իլյա Արբատովը, Սրբուհի Լիսիցյանը, Զարեհ Մուրադյանը, Անատոլի Լեբեդևը, Բաբկեն Օրդոյանը, Վանուշ Խանամիրյանը, Բորիս Օբուխովը, Նորայր Մեհրաբյանը, Բելլա Հովնանյանը, Գագիկ Կարապետյանը, Ռուդոլֆ Խառատյանը և ուր.:

Թատրոնի զարգացմանը նպաստել են դերասաններ Իզաբելա և Հայկ Դանզասները, Ալլա Անդրիասյանը, Կարպ Խաչվանքյանը, Սվետլանա Գրիգորյանը, Մելինե Համամջյանը, Իդա Մկրտչյանը, Լյուբա Լյուլեջյանը, Մերի Շահբազյանը, Ալեքսանդր Հովհաննիսյանը, Ստեփան Հարությունյանը, Մայիս Կարագյոզյանը, Սերգեյ Գնունին, Ժակ Ենգիբարյանը, Սաբրիամ Ղազարյանը, Բորիս Պեպանյանը, Ռոբերտ Ղամբարյանը, Վանիկ Մկրտչյանը, Ժասմենա Ասրյանը, Կարինե Բուռնազյանը, Սեդա Հունանյանը, Աբրահամ Սարգսյանը, Վալենտինա Ստեփանյանը, Կառլոս Սարտիրոսյանը և ուր.:

Գրկ. *Առաքելյան Մ., Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն-75, [Ալբոմ-ժող.], Ե., 2016:*

Աննա Աապրյան

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան (1930-ից), հիմնադրվել է 1929-ին Երևանում՝ ԵՊԿ տարրական բաժնի (60 աշակերտ) հիման վրա (տնօրեն՝ Օ. Տեր-Գրիգորյան, 1929–30): 1935-ից դպրոցը 7-ամյա էր, 1992-ից՝ 10-ամյա: Նպատակը՝ երաժշտ. մասնագիտ. ուսուցում, գեղագիտ. դաստիարակություն, երաժշտ. գրագետ լսարանի ձևավորում, մանկավարժ. կադրերի պատրաստում, ուսումնամեթոդ. ծրագրերի ստեղծում, գիտագործն. աշխատանքներ ևն: Գործում են դաշնամուրի, ժող.,

Երևանի Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոցը

լար., փող. գործիքների, դաս., ժող. և էստրադ. երգեցողության, կոմպոզիցիայի բաժիններ:

Դպրոցում հիմնադրվել են մանկ. լար. նվագախումբ (ղեկ.՝ Մ. Մալունցյան), երգչախումբ (ղեկ-ներ՝ Մ. Միրզոյան, Մ. Սազմանյան, ավելի ուշ՝ Տ. Հեքեքյան, Ն. Խոջամիրյան և ուր.) և այլ անսամբլներ: Լար. եռյակները և քառյակները ղեկավարել են Ռ. Ստեփանյանը, Գ. Ադամյանը, Ա. Չաուշյանը և ուր.: Դպրոցի շրջանավարտներից

են Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Ղ. Սարյանը, Ա. Խուդոյանը, Է. Հովհաննիսյանը, Ա. Աճեմյանը, Ռ. Ամիրխանյանը և ուր.: Դպրոցում դասավանդել են անվանի մանկավարժներ Ա. Մնացականյանը, Ա. Կոտլյարևսկին, Կ. Խիզանյանը, Դ. Սողոմոնյանը, Ա. Հախնազարյանը, Ի. Կարճիկյանը և ուր.: Դպրոցի մանկավարժ. կազմը համալրում են ԵՊԿ դասախոսները՝ Ի. Յավրյան, Է, Թադևոսյան, Ս. Զաքարյան, Զ. Բարսեղյան, Հ. Լեյլոյան, Ռ. Հակոբյանց, Հ. Հացագործյան և ուր.: Տնօրեններ՝ Լ. Հովսեփյան-Թոթովենց, Բ. Սարգսյան, Մ. Մազմանյան, Վ. Զաքարյան, Ս. Գասպարյան, Ս. Քեչեկ, Գ. Հախնազարյան, Մ. Սիմոնյան, Ս. Սահակյան, 2011-ից՝ Մ. Վարդանյան:

Երևանի Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը ելույթի պահին

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ Պ. Ի. Չայկովսկու անվան (1940-ից), հիմնադրվել է 1939-ին՝ ԵՊԿ-ին կից: Միակ կրթօջախն է, որտեղ երեխաները ստանում են բարձր մասնագիտ. երաժշտ. և միջնակարգ կրթություն: Դպրոցի բազմաթիվ շրջանավարտներ հանրապետ. և միջազգ. մրցույթների դափնեկիրներ են, գիտության և արվ-ի ականավոր գործիչներ, հմուտ մանկավարժներ, հաս. գործիչներ: Դպրոցում դասավանդում են ԵՊԿ անվանի երաժիշտներ, պրոֆեսորներ, մշակույթի գործիչներ:

Բաժիններում [դաշնամուր., լար., փող., վոկալ (դաս. և էստրադ.), հարված. գործիքներ, տեսություն] սովորում է շուրջ 600 աշակերտ: Դպրոցն ունի ջութակահարների, սիմֆ., փող. նվագախմբեր, երգչախումբ, ջազ-բենդ: Ժող. գործիքներից դասավանդվում են քանոն, շվի և դուդուկ: Տեսության բաժինը հրատարակում է ուս. ձեռնարկներ, կազմակերպում սեմինարներ, դասախոսություններ, անվանի երաժիշտների վարում են վարպետության դասեր: Հանրակրթ. առարկաները դասավանդում են հանրակրթ. դպրոցների ծրագրով, շրջանավարտներն ստանում են պետ. նմուշի ատեստատ և երաժշտ. վկայական (աշխատանքի իրավունքով): Ավագ դպրոցի աշակերտներն ստանում են կրթաթոշակ:

Հավատարիմ մնալով ավանդույթներին՝ դպրոցը շարունակում է մշակութ. կապերը եվրոպ. մի շարք երկրների հետ:

Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցը

Դպրոցը վերջին 3–4 տարիներին նախաձեռնել է ստեղծել հայ-ֆրանս., հայ-շվեյցար., հայ-լեհ. նվագախմբեր ու համերգ. փոխայցելություններ:

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ Ռոմանոս Մելիքյանի անվան (1954-ից), մինչև 2005-ը՝ ուսումնարան, հիմնադրվել է 1923-ին Երևանում՝ Ռ. Մելիքյանի նախաձեռնությամբ: Շրջանավարտներից են՝ կոմպոզիտորներ Ա. Հարությունյանը, Ա. Բաբաջանյանը, Գ. Հախինյանը, Գ. Արմենյանը, Տ. Մանսուրյանը, Ա. Սաթյանը, Դ. Բալասանյանը և ուր., երաժշտագետներ Ս. Սարգսյանը, Ա. Ասատրյանը, Ն. Սարգսյանը, Լ. Եփրեմյանը, Լ. Սահակյանը, Մ. Տիգրանյանը, Տ. Շախկուլյանը, Գ. Ամիրաղյանը և ուր., նաև երաժիշտ-կատարողներ: Ունի դաշնամուր., լար., վոկալ, փող., տես-կոմպոզիտոր., խմբավար. և ժող. գործիքների բաժիններ, սիմֆ. նվագախումբ, երգչախումբ, քանոնահարների և ժող. գործիքների անսամբլ:

Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական քոլեջը

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔՈԼԵՋ Առնո Բաբաջանյանի անվան (1986–ից), մինչև 2005-ը՝ ուսումնարան, հիմնադրվել է 1967-ին Երևանում: Գործունեության հիմնական

Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտական-կավարժական քոլեջը

նպատակներից են հաս-յան տարբեր ոլորտների համար կրտսեր երաժիշտ-մանանազետների պատրաստումը, ազգ. և համամարդկային արժեքներով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորումը ևն: Մանկավարժ. կազմը համալրվել է ԵՊԿ շրջանավարտներով և փորձառու դասախոսներով: Գործում են դաշնամուրի, լար., փող. և հարված., ժող. գործիքների, երաժշտատեսության, խմբավարության և դասական, ժող. և էստրադ. երգեցողության բաժիններ: Քոլեջում ստեղծվել են ժող. գործիքների

Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. քոլեջի սաները կլոյթի պահին

նվագախումբ, ուս. երգչախումբ և կամեր. անսամբլ: 1996-ից ուս. հաստատության նախաձեռնությամբ 2 տարին մեկ անցկացվում է պատանի և երիտասարդ դաշնակահարների Ա. Բաբաջանյանի անվ. հանրապետ. մրցույթ (2011, 2013 և 2015-ին), միջազգ. մրցույթ-փառատոներ (մասնակցել են 190-ից ավելի դաշնակահարներ ՀՀ-ից, ԼՂՀ-ից, Սիբիայից, Վրաստանից, Ղազախստանից, ՌԴ-ից, Ավստրալիայից) կազմակերպում է ստուգատեսներ, համերգ-երեկոներ և այլ միջոցառումներ:

Անվանի շրջանավարտներից են երգիչներ Գ. Գրիգորյանը, Է. Պապիկյանը, Ս. Սաֆարյանը, Մ. Գրիգորյանը, ջութակահարներ Ա. Հարությունյանը, Լ. Աղաբաբյանը, կոմպոզիտորներ Ա. Բաբայանը, Ս. Բաբաթորոսյանը, դիրիժոր Ռ. Ասատրյանը, դուդուկահարներ Կ. Սեյրանյանը, Մ. Կարապետյանը և ուր.:

Տնօրեններ՝ Մ. Չոլախյան (1967–79), Ա. Գրիգորյան (1979–93), Ա. Առաքելյան (1993–2008), Ա. Հարությունյան (2008-ից):

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ պետական, հիմնադրվել է 1997-ին (հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Ա. Մելիքսեթյան, մինչև 2006-ը, 2014–16-ին՝ գլխ. ռեժ.)՝ մանկ. երաժշտ. թատրոնի (1987-ից հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Դ. Զալյան) հիման վրա: 2006–14-ին՝ գեղ. ղեկ. և տնօրեն Դ. Հակոբյան, 2014–17-ին՝ Վ. Գրիգորյան, 2017-ից՝ Ե. Խերանյան: Բեմադրվել են Կ. Օրֆի «Բեռնաուերի դուստրը» (1997), Է. Լոյդ-Վեբերի «Կատուներ» (2000), «Քվազիմոդո և Էսմերալդա» (2002), «Բրոդվեյ-Բրոդվեյ» (2003) մյուզիքլները, Ա. Սաթյանի «Լիլիթ» (2004) փոփ օպերան, Բ. Բրիտտենի «Նոյյան տապան», Վ. Ա. Աճեմյանի «Կիկոսի մահը» (1998), Է. Սաղոյանի «Հեյ, ով կա այդտեղ» (2007, ըստ Վ. Սարոյանի) օպերաները, Ս. Լուսիկյանի «Ճպուռն ու մրջյունը», «Տարվա եղանակներ» (ըստ

Տևսարան «Գեղեցկուհին և հրեշը» պիեսի բեմադրությունից (2012, ռեժ.՝ Ս. Մարգարյան, Երևանի կամերային երաժշտական թատրոն)

Պ. Ի. Չայկովսկու) բալետները, Շ. Պեռոյի «Մոխրոտը» (2009), «Գեղեցկուհին և հրեշը» (2012, ըստ ֆրանս. ժող. հեքիաթի), Ա. Վ. Չուբարովայի «Խաղալիքների մոլորակը» երաժշտ., Կ. Ի. Չուկովսկու «Ճանճուլիկ, ոսկե փորիկ» (2017), Ս. Կոսյանի «Ուշացողները», «Կյանքը վանդակի կողքը», Ք. Բոյչևի ««Տիտանիկ» նվագախումբը», Ռ. Կունիի «Սեքսուալ խառնաշփոթ հյուրանոցում» թատեր. և այլ ներկայացումներ: Թատրոնի գործունեությանը

նպաստել են ռեժ-ներ Ա. Սարիբեկյանը, Ա. Մարգարյանը, Ս. Ստեփանյանը, Գ. Փոքրիկյանը, Վ. Ստեփանյանը, դերասաններ Տ. Ղազարյանը, Գ. Դավթյանը, Ա. Լուպենը, Ն. Գասպարյանը, Ա. Պետրոսյանը, Գ. Հովակիմյանը, Դ. Ամիրյանը և ուր.:

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, պետական (1979-ից), հիմնադրվել է 1975-ին Երևանում. հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Զավեն Վարդանյան (1979–90), գեղ. ղեկ.՝ Ա. Սաթյան (1991–94), գլխ. դիրիժոր՝ Է. Խաչատրյան: Նվագախմբում եղել են 25 երաժիշտ-կատարողներ: Երկացանկում՝ Ա. Վիվալդիի, Ա. Կորելլիի, Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի, Ի. Ֆ. Ստրավինսկու, Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Շյոնբերգի, Ա. Վեբեռնի, Յ. Քսենակիսի, Տ. Մանսուրյանի, Մ. Իսրայելյանի, Ա. Զոհրաբյանի և ուր. երկերից: Նվագախումբը մասնակցել է երաժշտ. փառատոների, համերգներով շրջագայել է արտերկրում: Ե. կ. ն-ի հետ ելույթներ են ունեցել Գ. Գասպարյանը, Ն. Գուտմանը, Օ. Կագանը, Ս. Նավասարդյանը, Ա. Լյուբիմովը, Ի. Մոնիգետտին և ուր.:

1997-ին միավորվել է Հայաստանի կամեր. նվագախմբի հետ: ՀԼԿԵՄ մրց. (1981):

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ (ԵՊԿ) Կոմիտասի անվան (1946-ից), երաժշտ. բարձրագույն կրթության հաստատություն: Կազմակերպվել է 1923-ին Երևանում՝ 1921-ից գործող երաժշտ. ստուդիայի հիման վրա: Նորաստեղծ կրթօջախում ուս. աշխ-ներն իրականացվել են 3 բաժնով՝ ստորին (3 տարի), միջնակարգ (4 տարի) և բարձր (2 տարի): 1920-ական թթ-ին Ե. կ-ում գործել են դաշնամուրի (Ա. Մնացականյան, Հ. Մադաթյան, Ե. Խանկալամյան, Ե. Խոսրովյան, Օ. Բաբասյան), ջութակի (Լ. Միրզա-Ավագյան, Ա. Գաբրիելյան, Հ. Օգանեզով, Դ. Սողոմոնյան), ալտի (Ա. Կոտլյարևսկի), թավջութակի (Ա. Այվազյան, Մ. Մալունցյան), վոկալ (Ա. Բաբայան, Ա. Աբրահամյան, Մ. Մելիքսեթյան, Մ. Գենջյան), փող. (Վ. Շպեռլինգ), երաժշտ-տես. առարկաների (Ռ. Մելիքյան, Մ. Միրզոյան, Օ. Տեր-Գրիգորյան, Ա. Տեր-Ղևոնդյան), երգչախմբի (Ռ. Մելիքյան, Ս. Մելիքյան) և մանկավարժ. դասարանները:

Կոնսերվատորիայի հիմնական նպատակը հայկ. պրոֆեսիոնալ երաժշտության զարգացմանը, երաժշտ. բարձրորակ կադրերի պատրաստմանը ևնի նպաստելն է:

1923-ին ԵՊԿ լար. քառյակի (Ա. Գաբրիելյան, Դ. Սողոմոնյան, Ա. Կոտլյարևսկի, Վ. Ավետիքյան) կատարմամբ Երևանում առաջին անգամ կատարվել են Յ. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Պ. Ի. Չայկովսկու և Ա. Կ. Գլազունովի կվարտետները՝ նշանավորելով Հայաստանում կամեր-անսամբլ. երաժշտության տարածման սկիզբը: Նույն թվականին կոնսերվատորիայում առաջին անգամ հնչել են փող. գործիքներ, Դ. Սողոմոնյանը սկզբնավորել է սիմֆ. համերգների ավանդույթը Երևանի գրոսայգիներում. մասնակցել են կոնսերվատորիայի դասախոսներից և ուսանողներից բաղկացած 3–6-հոգանոց անսամբլներ:

Երևանի պետական կոնսերվատորիան

Ա. Սպենդիարյանի առաջին հեղինակ. համերգին ելույթ է ունեցել ԵՊԿ դասախոսներից և ուսանողներից կազմված ոչ մեծ սիմֆ. նվագախումբ: Ա. Սպենդիարյանի և Ա. Ադամյանի ջանքերով կոնսերվատորիայում կազմակերպվել է հայկ. առաջին սիմֆ. նվագախումբը (առաջին համերգը՝ 1925-ին):

Երևանի պետական կոնսերվատորիայի ճեմասրահը

1927–28-ին հիմնադրվել է օպեր. ստուդիան (տնօրեն՝ Անուշավան Տեր-Ղևոնդյան, առաջին դիրիժոր՝ Սուրեն Չարեքյան), որը մեծապես նպաստել է պետ. օպեր. թատրոնի ստեղծմանը: Բեմադրել է հատվածներ Շ. Գունոյի «Ֆաուստ», Պ. Ի.

Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ջ. Վերդիի «Աիդա» օպերաներից:

Կոնսերվատորիայի ուսանողները ՀԽՍՀ-ի շրջաններում գրառել են ժող. երգեր, կազմակերպել երգչախմբեր և համերգներ: 1927-ին Ս. Մելիքյանի ղեկա-

Երևանի պետական կոնսերվատորիայի դահլիճը

վարած ուսանող. երգչախումբը 7 համերգով հանդես է եկել Մոսկվայում: 1937-ին երգչախմբի հիմքի վրա կազմավորվել է հայ երաժշտ. իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ՝ Հայաստանի պետ. երգչախումբը:

1930-ին հիմնադրված կոմպոզիցիայի բաժնի (Հ. Ստեփանյանի, Ս. Բարխուդարյանի և Վ. Տալյանի դասարաններ) շրջանավարտների գործունեությունը նպաստել է հայ երաժշտության կարևորագույն ոլորտների զարգացմանը, ազգ. երաժշտ. արվ-ի ոճ. սկզբունքների հաստատմանը, բազմաժանր երկերի ստեղծմանը, հայ երաժշտության համաշխ. ճանաչմանը:

Երևանի պետական կոնսերվատորիայի գրադարանը

Կոնսերվատորիայի շնորհիվ Հայաստանում դրվել է յոթնամյա և միջնակարգ մասնագիտ. երաժշտ. կրթության հիմքը: 1930-ին կոնսերվատորիայից առանձնացած ստորին բաժնի հիման վրա հանրապետությունում ստեղծվել է առաջին երաժշտ. դպրոցը (հետագայում՝ Ա. Սպենդիարյանի անվ.):

1935–36 ուս. տարում կոնսերվատորիային կից ստեղծված շնորհալի երեխաների խմբի հիման վրա 1939–40 ուս. տարում ձևավորվել է Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը, իսկ 1939-ին կոնսերվատորիայից առանձնացված միջին բաժնի՝ տեխնիկումի հիման վրա՝ Երևանի երաժշտ. ուսումնարանը (հետագայում՝ Ռ. Մելիքյանի անվ.):

1934-ին ստեղծված ԳՀ կաբինետը (հիմնադիր՝ Արամ Քոչարյան), 1938-ին անջատվելով կոնսերվատորիայից, դարձել է Ռ. Մելիքյանի անվ. ԳՀ կաբինետ: 1937-ին կոնսերվատորիայում բացվել է երաժշտագիտ. բաժանմունք [հիմնադիրներ՝ Ջ. Ղ. Վարդանյան, Ս. Գասպարյան (ռեկտոր՝ 1937–40), Կ. Մելիք-Վրթանեսյան]:

Մանկավարժ-մեթոդ. և կատարող. աշխ-ների համակարգման նպատակով 1939-ին ստեղծվել են մասնագիտ. դաշնամուրի (Ա. Մնացականյան), նվագախմբ. (Դ. Լեկգեր), կոմպոզիցիայի (Վ. Տալյան), դիրիժորության (Կ. Սարաջև), վոկալ (Ն. Կարդյան), պատմատես. (Կ. Մելիք-Վրթանեսյան) և ընդհանուր դաշնամուրի (Օ. Բաբասյան) ամբիոնները:

Կարևորել է նաև ուս. գործընթացում բարձր որակավորման պրոֆեսորների ներգրավումը: 1930-ական թթ-ի վերջին և ՀՄՊ տարիներին կոնսերվատորիայի մանկավարժ. կազմը համալրվել է Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաների հայ շնորհալի շրջանավարտներով (Ռ. Անդրիասյան, Հ. Բոգդանյան, Կ. Դոմբաև, Գ. Սարաջև), ԽՍՀՄ մշակութ. կենտրոններից ժամանակավորապես Երևան տեղափոխված նշանավոր երաժիշտներով (Կ. Իգումնով, Ք. Էրդելի, Ք. Քուշնարյան, Տ. Տեր-Մարտիրոսյան, Ա. Շահվերդյան):

Կոնսերվատորիայի մասնագիտ. որակավորման բարձրացմանը նպաստել է Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաների, ճանաչված երաժիշտների, մասնավորապես՝ Ա. Խաչատրյանի և Դ. Դ. Շոստակովիչի հետ ստեղծագործ. համագործակցությունը:

Հետպատերազմ. տարիներին և հատկապես 1960–70-ական թթ-ին Ե. կ. հասել է միութ. առաջատար կոնսերվատորիաների մակարդակին: Ուսանողներն ու շրջանավարտները պարբերաբար մասնակցել են կատարողների այսրկովկաս., միութ. և միջազգ. մրցույթների:

Որակյալ մասնագետներ կրթելու գործում մեծ ներդրում ունեն ԽՍՀՄ ժող.

արտիստներ Գ. Եղիազարյանը, Ղ. Սարյանը, Է. Հովհաննիսյանը, Է. Միրզոյանը, Ա. Հարությունյանը, Ա. Տերտերյանը, Հ. Դանիելյանը, Տ. Սազանդարյանը, Գ. Գասպարյանը, Պ. Լիսիցյանը և Հ. Չեքիջյանը, ՀԽՍՀ ժող. արտիստներ Գ. Սարաջևը, Գ. Արմենյանը, Յ. Հայրապետյանը, Ս. Նավասարդյանը, Է. Թադևոսյանը, Մ. Աբրահամյանը, Խ. Ավետիսյանը, Ա. Աթաբեկյանը, նաև Ռ. Աթայանը, Ս. Կոպտևը, Գ. Տիգրանովը, Է. Փաշինյանը, Մ. Հարությունյանը, Ա. Բարսամյանը, Թ. Շահնազարյանը, Տ. Մանսուրյանը, Ա. Սմբատյանը, Ս. Սարաջյանը, Շ. Շահինյանը և ուր.:

Կադրեր են պատրաստում նաև ասպիրանտուրայի բաժինը (1961) և միութ. նշանակության Որակավորման բարձրացման ֆակ-ը (1976–92):

1950-ական թթ. վերջերից կոնսերվատորիայում բարձրագույն կրթություն են ստանում նաև սփյուռքահայ և օտարազգի երիտասարդներ:

1969-ից գործում է ժող. ստեղծագործության կաբինետ, 1978-ից՝ ժող. գործիքների, 1987-ից՝ ժող. երգեցողության բաժինները, 1988-ից՝ հայկ. երաժշտ. բանագիտության ամբիոնը:

Կոնսերվատորիան ունի նաև երաժշտ. գրկ-յան հարուստ գրադարան և ձայնադարան՝ դաս. և ժամանակակից երաժշտության ձայնագրություններով, թանգարան ու արխիվ: Հրատարակում է «Երաժշտական Հայաստան» (1998-ից) ամսագիրը, «Երաժիշտ» (2005) ամսաթերթը, գործում է հրատարակչությունը (2004-ից), անցկացնում է Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. ամենամյա մրցույթը (2003): 2005-ին կազմակերպվել է Երիտասարդ. նվագախումբը (2008-ից՝ Հայաստանի պետ. երիտասարդ. նվագախումբ, 2018-ից՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախումբ, գեղ. ղեկ՝ Յ. Դավթյան, ապա՝ Ս. Սմբատյան):

Ե. կ-ի շրջանավարտները մանկավարժ. գործունեություն են ծավալում կոնսերվատորիայում, երաժշտ. ուսումնարաններում և դպրոցներում, համալրում են սիմֆ., կամեր., փող., ժող. գործիքների, էստրադ-ջազ. նվագախմբերը, երգչախմբերը, կամեր. անսամբլները, հանդես գալիս որպես մենակատարներ, ՀՀ-ում և արտերկրում ներկայացնում հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, մասնակցում միջազգ. հեղինակավոր մրցույթների ու փառատոների, ստեղծագործության ոլորտում զարգացնում հայ պրոֆեսիոնալ երաժշտությունը, ապահովում հայ երաժշտագիտ. մտքի առաջընթացը:

Կոնսերվատորիայի ռեկտորները՝ Ռ. Մելիքյան (1923–24), Ա. Ադամյան (1924–26), Ա. Տեր-Ղևոնդյան (1926–30), Ս. Մելիքյան (1930–31), Ս. Մնարյան (1931–32), Գ. Հովհաննիսյան (1932–33), Վ. Սամվելյան (1933–36), Կ. Սարաջև (1936–37 և 1940–54), Ս. Գասպարյան (1937–40), Գ. Եղիազարյան (1954–60), Ղ. Սարյան (1960–86), Է. Հովհաննիսյան (1986–92), Տ. Մանսուրյան (1992–95), Ա. Սմբատյան (1995–2002), Ս. Սարաջյան (2002–11), Շահեն Շահինյան (2011–18), 2018-ից՝ Սոնա Հովհաննիսյան (ժ. պ.):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1973):

1997-ից գործում է ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղը (հիմնադիր՝ Լորիս Ճգնավորյան)՝ 1991-ին ուխտագնացության ժամանակ հանգանակված գումարների շնորհիվ, որին աջակցել է նաև ՀԲԸՄ նախագահ Լուիզ Սիմոն Մանուկյանը:

Գործում են դաշնամուրի, վոկալ, տեսության և այլ բաժիններ:

Գրկ. *Բերկո Մ., Կոմիտասի անվան կոնսերվատորիա, Ե., 1973: Бударян А., Ереванская государственная консерватория имени Комитаса в фотографиях, документах и высказываниях:, 1923–2008, Е., 2008.*

Անահ Ասատրյան

ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, որպես յոթնամյա դպրոց կազմավորվել է 1940-ին Երևանում՝ Վարդուհի Զաքարյանի նախաձեռնությամբ 1934-ին ստեղծած ստուդիայի հիման վրա: 1959-ից գործում է նոր շենքում: Ունի դաշնամուրի, լար., ժող., փող. և հարված. գործիքների բաժիններ: 1970-ին ստեղծվել են ջութակահարների անսամբլը (ղեկ-ներ՝ Ռ. Պողոսյան, Գ. Ամեմյան, Ռ. Ալթունյան) և երգչախմբեր (ղեկ-ներ՝ Է. Արզումանյան, Ժ. Ալթուն-

Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցը

յան և ուր.), 2003-ին՝ սիմֆ. և փող. նվագախմբեր, «Ունիսոն» լար. անսամբլը (վերջին երեքի հիմնադիր՝ Տ. Հեքեքյան),

Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի սաները ելույթի պահին

3 երգչախումբ, 2006-ին՝ ժող-գործիքների նվագախումբը (առաջինը՝ ՀՀ-ում, ղեկ.՝ Ն. Զաքարյան, հյուրախաղեր՝ ԱՄՆ-ում), 2017-ին՝ լար. քառյակ (ղեկ.՝ Վ. Բրուտյան): Դպրոցի սաներից են Յ. Դավթյանը, Հ. Պապյանը, Է. Արիստակեսյանը, Տ. Հեքեքյանը, Ս. Խաչատրյանը, Է. Թոփչյանը, Ռ. Մաթևոսյանը և ուր.: Տնօրեններ՝ Վ. Զաքարյան, Ռ. Սարկիսովա, Ա. Ասլամազյան, Պ. Հայկազյան, 2003-ից՝ Տ. Հեքեքյան:

ԵՐԵՎԱՆԻ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆ (ԵՕԲԹ) Ալեքսանդր Սպենդիարյանի անվան (1939), ակադեմիական (1956), ազգային (1994), հիմնադրվել է 1932-ի մայիսի 13-ին Երևանում: Մինչ այդ՝ 1927-ին ԵՊԿ-ում (տնօրեն՝ Ա. Տեր-Ղևոնդյան) ստեղծվել էր օպեր. ստուդիա՝ իր երգչախմբով (Ռ. Մելիքյան, Ս. Մելիքյան), սիմֆոնիկ նվագախմբով (դիրիժոր՝ Ա. Ադամյան) և մեներգիչների կազմով: Բացվել է 1933-ին՝ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայով (Մ. Գորկու անվ. բանվ. թատրոնի շենքում, այժմ՝ Երևանի ռուս. դրամատիկ. թատրոն), ռեժ.՝ Արշակ *Բուրջալյան*, դիրիժոր՝ Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ Սամուել Ստոլերման: 1940-ից գործել է Ա. Թամանյանի նախագծով կառուցված շենքում՝ ձմեռ. (1500 տեղ) և ամառ. (1200) դահլիճներով: Վերջինը վերակառուցվել է Հայֆիլհարմոնիայի համերգ. մեծ դահլիճի և գործում է 1953-ից (1972-ից՝ Ա. Խաչատրյանի անվ.): Շենքը վերանորոգվել է 1978–80, 1981–83 և 2002–03-ին. երեսպատվել է գրանիտով, փոխվել են դահլիճների, նախասրահների, ճեմասրահների հարդարման շինանյութերը (մարմար, գրանիտ ևն): Ընդարձակվել են թատրոնի դահլիճը (1260 տեղ) և ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահը (1300 տեղ): 1992-ին բացվել է Մ. Թավրիզյանի անվ. «Հայելապատ սրահը», որտեղ ներկայացվում են օպեր. բեմադրություններ, կազմակերպվում համերգներ:

Առաջին թատերաշրջանում թատրոնն իր սկզբնական կազմով (օպեր. արտիստներ՝ 20, նվագախումբ՝ 40, երգչախումբ՝ 30, բալետի խումբ՝ 20) բեմադրել է Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Շ. Գունոյի «Ֆաուստ» օպերաները: Առաջին հաջողությունները պայմանավորված են դիրիժորներ Գ. Բուդաղյանի, Ս. Չարեքյանի, Կ. Սարաջևի, Մ. Թավրիզյանի, Ս. Շաթիրյանի, ռեժ-ներ Ա. Բուրջալյանի, Լ. Քալանթարի, Ա. Գուլակյանի, Վ. Վարդանյանի, խմբավար Վ. Նիկոլսկու, բալետմայստեր Ի. Արբատովի (Յաղուբյան), նկարիչներ Մ. Սարյանի, Մ. Արուտչյանի, Պ. Անանյանի, Ս. Ալաջալովի, Ա. Դանդուրյանի,

Երևանի օպերայի և բալետի թատրոնը

մեներգիչներ Հ. Դանիելյանի, Շ. Տալյանի, Լ. Իսեցկու (Տեր-Հովհաննիսյան), Ա. Կարատովի (Կարապետյան), Թ. Բեջանյանի, Ե. Ֆանարջյանի, Թ. Շահնազարյանի, Թ. Խաչատրյանի, Ա. Ավագյանի, Մ. Սեդմարի, Տ. Սազանդարյանի, Պ. Լիսիցյանի, բալետի արտիստներ Լ. Վոյնովա-Շիկանյանի, Ռ. Թավրիզյանի, Գ. Գեորգիանի, Ս. Սարգսյանի, Պ. Բուռնազյանի, Ջ. Մուրադյանի գործունեությամբ:

Թատրոնի ստեղծագործ. նվաճումներից է Ա. Տիգրանյանի «Անուշ» (1935) օպերայի բեմադրությունը: Բեմադրվել են նաև Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար» (1935), «Լուսաբացին» (1938), Ա. Այվազյանի կատակերգ. «Թափառնիկոս» (1937) օպերաները: 1935-ին, Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետի բեմադրությունից հետո, օպեր. թատրոնը վերանվանվել է ՕԲԹ.: Ներկայացվել են Ա. Խաչատրյանի՝ հայկ. առաջին՝ «Երջանկություն» (1939), Ա. Տեր-Ղևոնդյանի՝ երկրորդ՝ «Անահիտ» (1940) բալետները:

Տեսարան Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետի բեմադրությունից (1955, բալերմայստեր՝ Վ. Վարկովիցկի, Օդետտա՝ Միլվա Մինասյան, Զիգֆրիդ՝ Ֆրունզե Ելանյան)

1940-ական թթ-ին թատրոնը համալրվել է երգիչներով (Մ. Դենիսով, Ն. Սերդոբով, Վ. Սավելև-Դամուրին և ուր.), ազգ. խաղացանկը հարստացվել Կ. Զաքարյանի «Մարջան», Լ. Խոջա-Էյնաթյանի «Նամուս», Ա. Տեր-Ղևոնդյանի «Արեգակի ցոլքերում» օպերաներով ու «Խանդութ» բալետով (ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության):

Մ. Թավրիզյանի ղեկավարությամբ (1938-ից՝ գլխ. դիրիժոր, 1946–57-ին՝ գեղ. ղեկ.) իրականացվել են Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», Ջ. Վերդիի «Օթելլո» (երկուսն էլ՝ 1942), Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ», Ջ. Փալիաշվիլու «Դաիսի» (երկուսն էլ՝ 1943) օպերաների բեմադրությունները: Խոշոր իրադարձություն էին հայկ. առաջին՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայի նորովի խմբագրված և ամբողջ. (1945, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1946), Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի (1947) բեմադրությունները: Բեմադրվել են նաև արևմտաեվրոպ., ռուս. դաս. ու ժամանակակից օպերաներ և բալետներ: Թատրոնի առաջընթացին մեծապես նպաստել է Գ. Գասպարյանը, առաջատարներից էին երգիչներ Մ. Երկաթը, Ա. Թութունջյանը, Դ. Պողոսյանը, Ա. Պետրոսյանը, Լ. Լազարևան, Ն. Հովհաննիսյանը, Ա. Կարապետյանը, Վ. Միրաքյանը, Կ. Մարկոսյանը, բալետի արտիստներ Թ. Գրիգորյանը, Ֆ. Ելանյանը, Ս. Մինասյանը, Լ. Սեմանովան, Վ. Խանամիրյանը, Բ. Հովնանյանը, խմբավար Կ. Կարապետյանը և ուր.:

Ռեժ. հետաքրքիր մեկնաբանություններով հանդես են եկել Ա. Գուլակյանը, Վ. Աճեմյանը, Ի. Վոլչեկը, Գ. Մելքումյանը, Պ. Աֆեյանը, ավելի ուշ՝ Հ. Ղափլանյանը, Տ. Լևոնյանը (1977–91-ին՝ գլխ. ռեժ., 1991–99-ին՝ գեղ. ղեկ.), Վ. Բագրատունին, Ն. Սարգսյանը, դիրիժորներ Ս. Չարեքյանը, Ռ. Ստեփանյանը, Դ. Շիկանյանը, բալետմայստերներ Ի. Արբատովը, Վ. Վարկովիցկին, Ե. Չանգան, Ա. Ղարիբյանը, Մ. Մարտիրոսյանը, Ջ. Մուրադյանը, նկարիչներ Պ. Անանյանը, Ա. Միրզոյանը, Ա. Շաքարյանը, Կ. Մինասյանը, Մ. Ավետիսյանը:

Հանդես է եկել դիրիժորների նոր սերունդ՝ Ա. Քաթանյան (1964–69, 1974–82-ին՝ գլխ. դիրիժոր), Հ. Ոսկանյան (1988–93-ին՝ գեղ. ղեկ.), Յ. Դավթյան (1996–2000-ին՝ գլխ. դիրիժոր) և ուր.: 1982–87-ին թատրոնի գեղ. ղեկ-ը Հ. Չեքիջյանն էր, 1999–2001-ին՝ Օ. Դուրյանը (1991–94-ին՝ գլխ. դիրիժոր):

1950–60-ական թթ-ին բեմադրվել են Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», Հ. Ստեփանյանի «Հերոսուհի» (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951), Ա. Բաբաևի «Արծվաբերդ», Վ. Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր», Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան», «Խորտակում», Ա. Այվազյանի «Պարոն Մինթոևը Փարիզում», Ա. Տերտերյանի «Կրակե օղակ», Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» (ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1973) օպերաները, Գ. Եղիազարյանի «Սևան», «Անուրջների լիճը» (ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970), Է. Հովհաննիսյանի «Մարմար» (1957), «Հավերժական կուռք» (ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1967), «Անտունի», Է. Խաղագործյանի «Սոնա», Գ. Հախինյանի «Ախթամար», «Ռուբենի», «Լոռեցի Սաքոն» (1 գործողությամբ բալետներ), Է. Արիստակեսյանի «Պրոմեթևս», Կ. Ա. Օրբելյանի «Անմահություն» բալետները: Ուշագրավ էին Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի (բալետմայստեր՝ Ե. Չանգա), Ռ. Վագների «Տանհոյզեր» օպերայի բեմադրությունները:

Թատերախումբը համալրել են մենեգիչներ Ս. Դանիելյանը, Հ. Ալավերդյանը, Գ. Գալաչյանը, Ա. Հարությունյանը, Ե. Վարդանյանը, Ե. Միքայելյանը, Է. Ուզունյանը, Օ. Բաբայանը, Է. Չախոյանը, մենապարողներ Վ. Գալստյանը (1972–75, 1977–79-ին՝ բալետ. խմբի գեղ. ղեկ.), Ջ. Քալանթարյանը, Բ. Խուդինյանը, Է. Մնացականյանը, Ռ. Խառատյանը, Հ. Դիվանյանը, Դ. Ալեքսանյանը և ուր.: ԵՕԲԹ-ում (ԽՍՀՄ-ում առաջին անգամ) բեմադրվել են Լ. Բեռնստայնի «Վեստսայդյան պատմություն» (1963), Ի. Ֆ. Ստրավինսկու

Տեսարան Ժ. Բիզեի «Կարմեն» օպերայի բեմադրությունից (1934, ռեժ.՝ Ա. Բոդրյայան, Կարմեն՝ Տաթևիկ Սազանդարյան, Էսկամիլիո՝ Դավիթ Պողոսյան)

Տեսարան Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի բեմադրությունից (1961, բալետմայստեր՝ Եվգենի Չանգա)

«Էդիպ արքա» (1963), Ջ. Մենոտտիի «Հյուպատոսը» (1966), Վ. Բելլինիի «Նորմա» (1975) օպերաները:

Տեսարան Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» բալետի բեմադրությունից (2011, բալետմայստեր՝ Ռոդոլֆ Խառատյան)

1970–80-ական թթ-ի ներկայացումներից են Է. Հարությունյանի «Հեքիաթ մեծերի համար», Գ. Հախինյանի «Լեգենդի մարդը», Ս. Ջրբաշյանի «Գիքոր», Է. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» (օպերա-բալետ, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1979) և «Ճանապարհորդություն դեպի Արզրում», Ռ. Լեռնկավալյոյի «Պայացներ», Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», Ջ. Վերդիի «Տրուբադուր», Վ. Աճեմյանի «Կիկոսի մահը», Հ. Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ. սիմֆոնիան (մեներգիչների, երգչախմբի և նվագախմբի համար), Տ. Չուխաճյանի «Լերլերիջի» («Կարինե») և այլ օպերաներ, Գ. Եղիազարյանի «Արա Գեղեցիկ», Ա. Խաչատրյանի «Դիմակահանդես» (Է. Հովհաննիսյանի կոմպոզիցիայով), Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ», Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», Ի. Ֆ. Ստրավինսկու «Օրփեոս» բալետները, վերաբեմադրվել են Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»,

Տեսարան Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի բեմադրությունից (1950, ռեժ.՝ Գոհարինե Մելքոնյան), (ձախից)՝ Շահումյան՝ Արամ Սամվելյան, Դավիթ Բեկ՝ Նար Հովհաննիսյան, Սանթուր՝ Ավագ Պետրոսյան)

Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերաները, Ա. Խաչատրյանի «Սպարտակ», Է. Հովհաննիսյանի «Անտունի» բալետները: 1980–90-ական թթ-ին թատրոնն ունեցել է հյուրախաղեր և նոր բեմադրություններ՝ Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս», Ջ. Վերդիի «Օթելլո», «Տրավիատա», «Տրուբադուր», Վ. Բելլինիի «Նորմա», վերականգնել Տ. Չուխաճյանի «Լերլերիջի», Ա. Տիգրանյանի «Անուշ», համերգ. կատարումներով հնչեցրել Վ. Ա. Մոցարտի «Առևանգում հարեմից», Ա. Վիվալդիի «Տիգրան» օպերաները, Տ. Մանսուրյանի «Զյունե թագուհին», Լ. Ճգնավորյանի «Օթելլո», Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը», Ժ. Բիզե-Ռ. Շչեդրինի «Կարմեն-սյուիտը», Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ» բալետները: 1990-ական թթ-ից համալրվել է թատրոնի կազմը. մեներգիչներ՝ Ռ. Օջախյան, Է. Պապիկյան, Բ. Թումանյան, Հ. Հացագործյան, Հ. Պապյան, Ա. Մխիթարյան, Գ. Գրիգորյան, Ս. Թորոսյան, Մ. Մկրտչյան, Լ. Գրիգորյան, Վ. Խաչատրյան, Ա. Սարտիրոսյան, Ա. Դեմուրչյան, Ա. Սեյրանյան, Գ. Հակոբյան, Պ. Քարագյան, Լ. Ավետիսյան, դիրիժորներ՝ Հ. Ոսկանյան, Ա. Քաթանյան, Յ. Դավթյան, Վ. Չարչօղլյան, Օ. Դուրյան, Կ. Դուրգարյան, Ռ. Ասատրյան, Ա. Առաքելյան, Հ. Արզումանյան, գեղ. ղեկ-ներ՝ Տ. Լևոնյան (1990–99), Գ. Գրիգորյան (1999–2016՝ ընդմիջումով), Կ. Հ. Օրբելյան (2016-ից), գլխավոր խմբավարներ՝ Ռ. Այվազյան, Կ. Սարգսյան (1994-ից) և ուր.: Բեմադրվել են Ժ. Բիզեի «Կարմեն», Ջ. Վերդիի «Աիդա», «Տրավիատա», «Տրուբադուր», Վ. Բելլինիի «Նորմա», Ս. Վ. Ռախմանինովի «Ալեկո», Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ», Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա», Ա. Տերտերյանի «Երկրաշարժ», Մ. Մավիսակալյանի և Լ. Ճգնավորյանի «Սուրբ Հռիփսիմե և Տրդատ» օպերաները, Է. Հովհաննիսյանի «Վարդանանք», Ա. Պիացոլայի «Տանգո», Ա. Խաչատրյանի «Սպարտակ» (Յ. Գրիգորովիչի բեմադրությամբ) և «Գայանե», Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» բալետները ևն:

Թատրոնը հյուրախաղերով շրջագայել է Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Սոչիում, Թբիլիսիում, Բաքվում, Կիևում, Բեյրութում, Իսպանիայում, ԱՄՆ-ում:

Գրկ. *Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն (կազմ. և տեքստի հեղինակ՝ Կ. Սարկոյան), Ե., 1984: Առաքելյան Ս., Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ե., 2017: Тигранов Г., Армянский музыкальный театр, т. 1–4, Е., 1956–88.*

ԵՐՋՆԿՅԱՆ Երվանդ Դավթի (ծ. 19.06. 1947, Երևան), կոմպոզիտոր, դիրիժոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2006), ՀՀ ժող. արտիստ (2015): Ավարտել է ԵՊԻ կիբեռնետիկայի ֆակ-ը (1974), ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1983): Ուսանող. տարիներին նվագել է բաս կիթառ՝ ԵՊԻ «Երազողներ» վոկալ-գործիք. նվագախմբում, 1967-ից՝ «Պատանեկություն» անսամբլում, 1969–72-ին՝ Լ. Մալխասյանի, Ա. Զաքարյանի, Ա. Թութունջյանի հետ՝ ջազ. քառյակում: 1972–86-ին՝ Հայաստանի ռադիոյի էստրադ. սիմֆ. նվագախմբի բաս կիթառահար, 1986-ից՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1997-ից դասավանդում է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1997-ից), 2013-ից՝ ՀՊՄՀ-ում:

Գրել է «Մուսա լեռ» պոեմը, կոնցերտ՝ սիմֆ. նվագախմբի, ռոմանս՝ ձայնի և թավջութակի համար, սոնատներ, լար. կվարտետ, էստրադ. երգեր, կինոյի (գեղ.՝ «Ծովափնյա արձակուրդ», 1986, մուլտֆիլմ.՝ «Միլորակ 888», 1985, «Ո՞վ է ներկել կարմիր ծովը», 1985, «Պինգ-պոնգ», 1988) և թատրոնի երաժշտություն: Հյուրախաղերով շրջագայել է Հունգարիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում:

Հանրապետ. (1-ին մրց.՝ 1996, «Սայաթ-Նովա» երգի մրցույթի Գլխ. մրց.՝ 2003, Երևան), միութ. (1970, Կույբիշև, Հատուկ մրց.՝ 1988, 3-րդ մրց.՝ 1978, Մոսկվա) մրցույթների, փառատոների (1999, «Կոռունկ», Երևան, 2008, «Կարոտ», ոսկե մեդալ, Մոսկվա) դափնեկիր, ՀՀ ՄՆ (2007), ԵՊԻ (2008) ոսկե մեդալներ, Հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության հատուկ մրց. (2011, Երևան), Երևանի պատվավոր քաղաքացի (2015):

ԵՐԻՑՅԱՆ Հերմինե Դավթի (ծ. 05.06. 1950, Իրան), երգչուհի: Ավարտել է Թեհրանի կոնսերվատորիան (1971): Նույն թվականից՝ «Ռուդաքի» պետ. օպեր. թատրոնի մեներգչուհի. դերերգերից են՝ Պամինա, Սյուզան (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», «Ֆիգարոյի ամուսնությունը»), Նորինա (Յ. Հայդնի «Վարձատրված հավատարմություն»), Զրահարս (Ա. Դվորժակի «Զրահարս») ևն: 1974-ին Վիեննայում կատարելագործվել է երաժշտ. ակադ-ում: Երգել է Այզենշտադտի օպեր. թատրոնում, Վիեննայի ռադիոյի մի խմբի հետ համերգներով շրջագայել Լեհաստանում, Ռումինիայում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Հունաստանում, Իտալիայում: Մենահամերգով հանդես է եկել Զալցբուրգի «Մոցարտեում» ակադ-ում:

1981-ից ապրում է Փարիզում. եղել է ֆրանս. ռադիոյի կամեր. երաժշտության «Էպտակորդիո» նվագախմբի մեներգչուհի. երկացանկում՝ միջնադար. և Վերածննդի շրջանի երաժշտություն: Հիմնադրել է մասնավոր երաժշտ. դպրոց, որտեղ ուսուցանել է Վիեննայի դաս. դպրոցի երաժշտարվ-ի սկզբունքները: 2005-ին աչքի է ընկել Փարիզում անցկացված «Երաժշտական գարուն» փառատոնի եզրափակիչ համերգում՝ Մոցարտի «Թագադրման պատարագի» բարձրարվեստ կատարումով:

Երվանդ Երզնկյան

1989-ին բարեգործ. համերգներով հանդես է եկել Հայաստանում (Սպիտակի երկրաշարժից տուժած երեխաներին օգնելու նպատակով):

ԵՐԻՑՅԱՆՆԵՐ, վինագործների և երաժիշտների ընտանիքներ: Շահեն Տիգրանի Ե. (11.05.1902, Տրապիզոն–27.10.1975, Երևան), Հայաստանում ջութակագործության հիմնադիրը: Սովորել է հույն վարպետներից՝ Կորֆուում (1920–1925): 1925-ին Ե. Չարենցի աջակցությամբ Երևանում հիմնադրել է արհեստանոց, պատրաստել լար. գործիքներ (գործածվել են Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլուր), նպաստել նաև ժող. երաժշտ. գործիքների պատրաստմանը: Մասնակցել է ջութակի վարպետների համամիութ. մրցույթների (1956, 1966, 1970) և լար. գործիքների համամիութ. ցուցահանդեսների (1975, 1976), արժանացել պարգևների: Նրա պատրաստած գործիքներն աչքի են ընկնում տեմբրի գեղեցկությամբ և տեխ. բարձրորակությամբ:

Շահեն Երիցյան

Որդին՝ Մարտին Ե. (ծ. 31.01.1932, Երևան), վինագործ, ջութակահար: Ավարտել է ԵՊԿ (1958): Վինագործություն սովորել է հորից, կատարելագործվել Վ. Պիլարժի (Չեխիա), Ֆ. Գարինբերդիի (Իտալիա), Վ. Նիկողոսյանի (ԱՄՆ) արհեստանոցներում: 1994–2015-ին՝ ՀՀ ՄՆ աղեղնավոր երաժշտ. գործիքների պահպանող-վերականգնող: 1969-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1990-ից): Համերգներով շրջագայել է ԱՊՀ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Լեհաստա-

նում, Գերմանիայում և այլուր, որտեղ մասնակից երաժիշտները նվագել են նրա պատրաստած գործիքներով: Պատրաստել է ջութակներ (300), թավջութակներ (39), ալտեր (100-ից ավելի), 2 վիոլա պոմպոզա (Լոնդոն, Իսպանիա), 2 վիոլա դա-գամբա (Մոսկվա, «Մադրիգալ» հնագույն երաժշտության անսամբլ, Երևան), հայկ. վիոլաների ընտանիք՝ ջութակի, ալտի և թավջութակի դիապազոններով, 1 հայկ. տավիղ, 26 քանոն, 12 կիթառ, 1 ուդ (Մ. Ի. Գլինկայի անվ. թանգարան, Մոսկվա): 1990-ին՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. վինագործների միջազգ. մրցույթի հանձնախմբի փորձագետ (Մոսկվա): 2004-ին Հայ ավանդական երաժշտության անսամբլի համար պատրաստել է հայկ. տավիղ:

Ելիզավետա թագուհու անվ. (1969, Լիեժ, Բելգիա, որպես քառյակի 2-րդ ջութակ), Ա. Ստրադիվարիուսի անվ. (1988, Կրեմոնա, Իտալիա, թավջութակի համար) միջազգ., համամիութ. (1975–98, Մոսկվա) մրցույթների դիպլոմներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012): Մարտին Ե-ի որդիները. Տիգրան Ե. (ծ. 01.01.1958, Երևան), ալտահար: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի ջութակի (1976, դասատու՝ Պ. Հայկազյան), ԵՊԿ ալտի (1981, Ռ. Ալթունյանի դասարան) բաժինները: 1979–83-ին աշխատել է Երևանի կամեր., 1983–91-ին՝ Հայաստանի կամեր., 1991–97-ին՝ Մոսկվայի սիմֆ. նվագախմբերում: 1997-ից ապրում է Իսպանիայում. հանդես է գալիս Ֆիգերասի կամեր. նվագախմբում՝ որպես ալտերի կոնցերտմայստեր: Պատրաստել է ջութակներ, ալտեր, որոնք ճանաչված են Իսպանիայում, Ֆրանսիայում: Վինագործություն սովորել է հորից: Կարեն Ե. (05.01.1966, Երևան), ջութակահար: 1974–81-ին սովորել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում, ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1985, դասատու՝ Պ. Հայկազյան), ԵՊԿ (1992, Ա. Մկրտչյանի դասարան): 2000–2003-ին՝ Ա. Խաչատրյանի անվ. քառյակի ալտահար: 1994-ին Օբեռլին ք-ում (ԱՄՆ) մասնակցել է լար. երաժշտ. գործիքների վերանորոգման ամենամյա դասընթացներին (ստացել է դիպլոմ): 2005-ից՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի լար. երաժշտ. գործիքների պահպանող-նորոգող: Պատրաստել է ջութակներ, ալտեր, թավջութակներ:

Սարտին Երիցյան

Պ. Ի. Չայկովսկու անվ. վինագործների միջազգ. մրցույթի դիպլոմ (1990, Մոսկվա):

Հակոբ Գառնիկի Ե. (Յայլյան, 20.05.1915, Տրապիզոն–26.06.2002, Երևան), վինագործ: Աշակերտել է Շահեն *Երիցյանին*: 1930-ից՝ Հրատպետկոմի արհեստանոցի վարպետ (հայտնի էր որպես հմուտ մանդոլին պատրաստող): 1956-ին Մոսկվայի համամիութ. մրցույթում ներկայացրել է 1 ջութակ, արժանացել դիպլոմի: 1965–69-ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի լար. գործիքների վերանորոգման գործն. պարապմունքների ուսուցիչ: Առաջինն է քանոնի ձայնաշարը 24-ից հասցրել 26-ի: Պատրաստել է 20 ջութակ (առաջինը՝ 1938-ին), 10 ալտ, 100 քանոն, 80 մանդոլին, 30 սազ, 10 ուդ, 5 քամանչա, 3 թառ, 1 սանթուր. առանձնանում է ընկուզենու ամբողջ. փայտից պատրաստած սաղափապատ քամանչան:

Հակոբ Երիցյանն իր արվեստանոցում

Գործիքներն ուշագրավ են ոչ միայն ինչ-ողությամբ, այլև կատարման մանրանկարչ. վարպետությամբ: Նրա անունն ընդգրկվել է Բրյուսելում Կ. Լեբեի հրատարակած անթոլոգիայի 3-րդ հատորում (1985): ՀՀ ՄՆ պատվերով նրա պատրաստած քանոնը 1968-ին նվիրաբերվել է Յ. Ս. Բախի տուն-թանգարանին (ք. Այզենախ՝ Գերմանիա):

Որդին՝ Սամվել Ե. (ծ. 21.05.1950, Երևան), ջութակահար, վինագործ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2014): Ավարտել է Երևանի Տ. Չուխաճյանի անվ. երաժշտ. դպրոցի (1965, Է. Դայանի դասարան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1969), ԵՊԿ (1974, Հ. Բոգդանյանի դասարան) ջութակի բաժինները: 1973–95-ին՝ Հայաստանի ռադիոյի պետ. սիմֆ. նվագախմբի ջութակահար, ապա՝

կոնցերտմայստեր: 1974–75-ին դասավանդել է Կիրովականի Մ. Թավրիզյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (ջութակի դասատու):

Վինագործություն սովորել է հորից. 1974-ին պատրաստել է իր առաջին ջութակը: Վերապատրաստվել է Վ. Պիլարժի (Չեխոսլովակիա) ղեկավարությամբ (1986), կատարելագործվել է Լեհաստանում, մասնակցել է (1991, Օբեռլին՝ ԱՄՆ) Վահագն *Նիկողոսյանի* վարպետության դասերին: 1990–91-ին Փարիզում աշխատել է Մ. Գլադիոյի արվեստանոցում (1991–2002-ին կատարել է համատեղ վերականգնող. աշխատանք): 1993-ին փորձառություն է անցել Փարիզում՝ Է. Վատլոյի, Ա. Լևիի արվեստանոցներում: Արժանացել է ՀՀ ՄՆ երաժշտ. գործիքների փորձագետի որակավորման: 1994-ից՝ ՀՀ մշակութ. արժեքների պահպանման գործակալության լար. երաժշտ. գործիքների փորձագետ, 2013-ից՝ ՀՀ լար. երաժշտ. գործիքների հավաքածուի վերականգնող:

ՌԴ երաժշտ. լար. գործիքների վարպետների, վերականգնողների և Երաժշտարվ-ի գործիչների միջազգ. միությունների անդամ (2015-ից): Մասնակցել է Կրեմոնի Ա. Ստրադիվարիուսի 2-րդ (1979, դիպլոմ, հուշամեդալ, առաջին մասնակիցը Հայաստանից) միջազգ. մրցույթին: Առաջին հայ վարպետն է, որը Հ. Վենյավսկու անվ. ջութակի վարպետների միջազգ. (1981, Պոզնան՝ Լեհաստան), Համամիութ. V (1982, 1-ին և 2-րդ մրց-ներ, ջութակի և ալտի համար), VI (1986, 3-րդ մրց., թավջութակի համար) մրցույթներում արժանացել է դափնեկրի կոչման:

Ա. Ստրադիվարիուսի անվ. (1982, Իտալիա), Օ. Նեդբալի անվ. (1985, Չեխոսլովակիա), Հ. Վենյավսկու անվ. (1986) մրցույթների դիպլոմներ, անգլիացի վարպետ Հ. Համիլթոնի հայտարարած աշխ. մրցույթի հաղթող՝ 4 տարի ժամկետով (1994, Բրիստոլ՝ Անգլիա), մասնակցել է Փարիզի Musicora ցուցահանդեսին (1995), ՀՀ ՄՆ (2013) ոսկե մեդալ:

Երևանում հեղինակ. համերգ-երեկոներին (1988 և 2005) մասնակից երաժիշտները (Ռ. Ահարոնյան, Լ. Մուրադյան, Կ. Հարությունյան, Խ. Ամիրխանյան, Ի. Նայդին, Ա. Մկրտչյան, Կ. Օհանյան և ուր.) նվագել են նրա պատրաստած գործիքներով: Անունն ընդգրկվել է Բրյուսելում Կ. Լեբեի հրատարակած անթոլոգիայի 3-րդ հատորում (1985):

Սամվել Ե-ի դուստրերը. Կարինե Ե. (ծ. 04.04.1975, Վանաձոր), դաշնակահարուհի: Ավարտել է Վանաձորի Շ. Տայանի անվ. երաժշտ. դպրոցը (1989), Մ. Թավրիզյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1993, դասատու՝ Ն. Դանիելյան), ԵՊԿ (1998, Վ. Ահարոնյանի, Ի. Յավրյանի, Զ. Բարսեղյանի դասարաններ) և ասպիրանտուրան (2001, ղեկ.՝ Զ. Բարսեղյան): 2000-ից դասավանդում է Վանաձորի պետ. համալսարանի երաժշտության բաժնում (դաշնամուր, դոցենտ՝ 2010-ից):

Սամվել Երիցյան

Ելույթներ է ունեցել Հայաստանի պետ. սիմֆ., Երևանի կամեր. նվագախմբերի, ԵՕԲԹ մենակատար Ա. Ավետիսյանի հետ:

Ա. Բաբաջանյանի անվ. մրցույթի հատուկ (1986), Ա. Խաչատրյանի անվ. մրցույթի 3-րդ (1993), Երևանի սիմֆ. նվագախմբի մրցույթի 1-ին (1999) մրց-ներ, «Նոր անուններ» հանրապետ. մրցույթի դիպլոմ (1999):

Սյուզի Ե. (ծ. 18.04.1984, Երևան), ջութակահարուհի: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (2001, դասատու՝ Պ. Հայկազյան), ԵՊԿ (2006, Ա. Մկրտչյանի դասարան) և ասպիրանտուրան (2008, ղեկ.՝ Ա. Մկրտչյան): 2008-ից՝ Կոմիտասի անվ. քառյակի կազմում (2-րդ ջութակ): Ելույթներ է ունեցել Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ (դիրիժորներ՝ Գ. Սուրադյան, Վ. Խաչատրյան, Ռ. Ասատրյան, Լ. Գրոեն, Ն. Արման, Է. Սիֆեր): Մասնակցել է փառատոների, Կոմիտասի անվ. քառյակի կազմում, նաև մենահամերգներով հանդես է եկել եվրոպ. և արաբ. մի շարք երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում, Հվ. Ամերիկայում, Ճապոնիայում, Փարիզում (Ա. Կորտոյի անվ. համերգասրահ):

Ս. Երիցյանի պատրաստած ջութակներից (համամիութ. մրցույթի 2-րդ մրց., 1982, Մոսկվա)

Նվագում է հակոբ և Սամվել Ե-ների պատրաստած ջութակներով:

Կոցիանի անվ. պատանի ջութակահարների միջազգ. մրցույթի 1-ին (1997, Չեխիա), Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. մրցույթի 2-րդ (2005, Երևան) մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2018):

Գրկ. *Սիմոնյան Մ., Երիցյան վինագործներ, Ե., 2007:*

Միհրան Երկաթ

Մ. Երկաթը Արշակ Երկրորդի դերում (Տ. Չոխաճյանի «Արշակ Երկրորդ»)

Երվանդ Երկանյան

ԵՐԿԱԹ Միհրան Արմենակի (20.02.1921, Կ. Պոլիս–17.10.1986, Երևան), երգիչ (դրամատիկ. բարիտոն): ՀԽՍՀ (1953), ԽՍՀՄ (1977) ժող. արտիստ: Սովորել է Ալեքսանդրիայի Ջ. Վերդիի անվ. լիցեյում: 1942–47-ին՝ Ալեքսանդրիայի «Ալհամբրա» և Կահիրեի Թագավոր. օպեր. թատրոնների, 1947–86-ին՝ ԵՕԹ մեներգիչ: Լայնածավալ բարիտոնը, դրամատիկ. բազմակողմանի ձիրքը հնարավորություն են ընձեռել Ե-ին կատարելու տարբեր բնույթի դերերգեր՝ Արշակ Երկրորդ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», 1947), Թաթուլ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», 1948), Ռիգոլետտո (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», 1950, Մեծ թատրոնում՝ 1961), Գրյազնոյ (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն», 1966), Կամո (Գ. Հախինյանի «Մարդը լեգենդից», 1971) ևն:

Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

Գրկ. *Դարբինյան Գ., Միհրան Երկաթ, Ե., 1982:*

ԵՐԿԱՆՅԱՆ Երվանդ Վահանի (ծ. 05.11.1951, Լենինական), կոմպոզիտոր: Սեդրակ ***Երկանյանի*** եղբայրը, Աննա ***Արևշատյանի*** ամուսինը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): Պրոֆ. (2014): Ավարտել է ԵՊԿ լար. (Հ. Վարդանյանի դասարան) և կոմպոզիցիայի (Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները (1975) և ասպիրանտուրան (1978, ղեկ.՝ Գ. Եղիազարյան): 1975–95-ին և 2007-ից դասավանդում է ԵՊԿ-ում: 1987–94-ին՝ «Տաղարան» անսամբլի գեղ. ղեկ. և դիրիժոր, 1995-ից՝ Բեյրութի «Գուսան» երգչախմբի ղեկ., «Հայաստան» նվագախմբի, ջութակահարների «Մադրիգալ» անսամբլի հիմնադիր-ղեկ., 2000–07-ին՝ «Բարսեղ Կանաչյան» կոնսերվատորիայի տնօրեն:

Գրել է 7 սիմֆոնիա, «Շուշանիկ» (1981), «Կայսր» (2008) օպերաները, «Օրեստես» (1974), «Էդիպ արքա» (1976) բալետները, «Ավագ շաբաթ» օրատորիան, «Հաղթանակ» սիմֆ. պոեմը, կոնցերտներ, վոկալ և խմբերգ., կամեր. անսամբլ. երկեր, մշակել է հայ հոգևոր և աշխարհիկ երգեր: Ե-ի «Սոկաց Միրզա» (1978) ֆոլկ բալետ-օպերան թողարկվել է ձայնասկավառակով («Գոլդն Էյջ», Վաշինգտոն, 1983, «Մելոդիա», Մոսկվա, 1984): Գործերից կատարվել են ԽՍՀՄ-ում և արտերկրում:

ՀՀ Պետ. (2009), Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. մրցույթի 1-ին (1975, Մոսկվա), ՀԼԿԵՄ (1983), ԹՄՄ (2014), ՀԿՄ (2018) մրց-ներ, ՀՀ ՄՆ (2016) ոսկե մեդալ:

ԵՐԿԱՆՅԱՆ Սեդրակ Վահանի (ծ. 29.11.1954, Լենինական), խմբավար, դաշնակահար: Երվանդ ***Երկանյանի*** եղբայրը: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2012): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1978) և խմբավարության (1992) բաժինները: Մասնավոր դասեր է առել Ն. Ե. Պերելմանից և Վ. Վ. Նիլսենից (Լենինգրադ): 1978–2000-ին՝ Հայաստանի պետ. երգչախմբի գլխ. կոնցերտմայստեր, 1990–93-ին՝ «Խորան» կամեր. երգչախմբի գեղ. ղեկ., 1993–94-ին՝ «Զվարթնոց» երգչախմբի (Հալեպ), 1994-ից՝ «Տաղարան» անսամբլի գեղ. ղեկ. և դիրիժոր: Ղեկավարել է նաև Հայաստանի ֆիլհարմոնիկ, Վրաստանի, Լենինգրադի, Նովոսիբիրսկի, Օմսկի, Իրկուտսկի սիմֆ. նվագախմբերը:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009):

ԵՐԿՆԱՓԵՇՅԱՆ Սամվել Արտիկի (ծ. 1962, Երևան), սրնգահար, շվիահար: Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի ակորդեոնի բաժնում (դասատու՝ Ա. Համբարձումյան), ավարտել ԵՊԿ (1990, սրինգ, Ա. Պետրոսյանի, Ս. Թորոսյանի դասարաններ) և ասպիրանտուրան (1993, դիրիժորություն, ղեկ.՝ Հ. Ոսկանյան): 1978-ից նվագել է տարբեր պարախմբերում, 1985–86-ին՝ «Մարաթուկ» անսամբլում: «Ղարս» անսամբլի հետ հանդես է եկել Իրանում (1993), «Կակաչ» պարախմբի հետ՝ Լիբանանում (1995): Համերգներով շրջագայել է նաև Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում: Մասնակցել է մի շարք փառատոների՝ որպես մենակատար և նվագակցող: 1981-ից դասավանդում է երաժշտ. դպրոցներում, 2001-ից՝ ԵՊԿ-ում (շվի և սրինգ): Կազմել է «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ շվիի և սրնգի համար» (2008) ժող., համահեղինակ է «Երաժշտական և արվեստի դպրոցների ժողովրդական նվագարանների մասնագիտական ծրագրեր»-ի (2000):

Սայաթ-Նովայի անվ. հանրապետ. մրցույթի 3-րդ մրց. (1987, Երևան):

ԵՐՆՋԱԿՅԱՆ Լիլիթ Վարդգեսի (ծ. 08.02.1950, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (2004), պրոֆ. (2010): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): ՀԿՄ (1985-ից) անդամ: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկով-

սկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (դասատու՝ Մ. Մխիթարյան) և տեսության (1967), ԵՊԿ երաժշտագիտության (1973, Ռ. Աթայանի դասարան) բաժինները, ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (ղեկ-ներ՝ Ռ. Աթայան և Տ. Վիզգո): 1980-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող (2004-ից՝ առաջատար): 1982-ից դասավանդում է ԵՊԿ-ում: Կոնսերվատորիայի համար մշակել է «Արևելքի ավանդական երաժշտության հիմունքներ» դասընթացը, որի հիմնական դրույթները, որպես ծրագիր, հրատարակվել են 1989-ին: ԵՊԿ և Կոմիտասի թանգարան-ինստ-ի (2015-ից), գիտ. ժող-ների և ամսագրերի գիտ. խորհուրդների անդամ:

Ուսումնասիրությունները վերաբերում են Արևելքի ավանդ., դաս. երաժշտության, հայ հոգևոր և աշուղ. երաժշտարվ-ներին, հայ-իրան., հայ-թուրք. երաժշտ. փոխազդեցություններին, Արևելք-Արևմուտք մշակութաբան. հիմնախնդիրներին և ժամանակակից կոմպոզիտոր. արվ-ին: Զեկուցումներով և դասախոսություններով հանդես է եկել հանրապետ. և միջազգ. գիտաժողովներում, ներկայացրել հայ ավանդ., ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտությունը՝ կարևորելով հայ երաժիշտների ներդրումը Մերձ. և Միջին Արևելքի մշակույթում:

Երկ. *Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Ե., 1991: Հին Արևին: «Սահարին» հայ երաժշտական մշակույթում, Ե., 1998 (համահեղ.՝ Հ. Պիկիչյան): Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Ե., 2009: Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութային խաչուղիներում, Ե., 2015:*

ԵՓՐԵՄ ՎԱՐԴԱՊԵՏ, XVII դ-ի տաղասաց: Սովորել է Էջմիածնում, աշակերտել Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսին: Ադրիանուպոլսի հոգևոր առաջնորդ: Գրել է աշխարհիկ և հոգևոր տաղեր: Հայաբնակ վայրերից հավաքել է բազմաթիվ տաղեր և իր հեղինակածների հետ կազմել Տաղարան, որն արտագրել է տվել 1695-ին (Մտնդ., ձեռ. № 7717): Տաղարանի չափածո հիշատակարանում Ե. Վ. վկայում է, որ իր օրոք դեռևս գործածվել են խազերով երգելու և աշակերտներին սովորեցնելու միջնադար. ավանդույթները:

Գրկ. *Թահմիզյան Ն., Հայկական խազագրության հիմնական նշանների երկու ցուցակների մասին, ՊԲՀ, 1968, № 1:*

Սեդրակ Երկանյան

Լիլիթ Երջանկյան

Լիլիթ Եփրեմյան

ԵՓՐԵՄՅԱՆ Լիլիթ Կառլենի (ծ. 14.05. 1963, Երևան), երաժշտագետ, հոգեբան, սոցիոլոգ, լրագրող, թարգմանչուհի: Արվեստագիտ. թեկնածու (1995): ՀԿՄ (1999), ՀԳՄ (2016) անդամ: Միջազգ. հոգեբանների «Հայք» հիմնադրամի նախագահ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (1984, դասատու՝ Վ. Ումր-Շատ), երաժշտության տեսության (1984, դասատու՝ Ռ. Պետրոսյան), ԵՊԿ երաժշտության տեսության (1989, Ն. Դերոյանի դասարան) բաժինները, ԵՊՀ Պրակտիկ հոգեբանների կենտրոնը (2001), Լրատվամիջոցների Կովկաս. ինստ-ի տարածքագիտության բաժինը (2006), Ռուսաստանի Արվեստաբանության ինստ-ի ասպիրանտուրան (1993, Մոսկվա, ղեկ.՝ Ի. Յոլյան): 1989-ից՝ ԵՊԿ գրադարանի փոխտնօրեն (գիտ. գծով), 1996–98-ին՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստ-ի սոցիոլոգիայի բաժնի ավագ գիտաշխատող, 1996–2006-ին՝ «Նովոյե վրեմյա» թերթում: 1987-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2002-ից): Համահեղինակ է Հայաստանում երաժշտ. սոցիոլոգիայի առաջին ուս. ձեռնարկի (1991):

Երկ. *Эдвард Мирзоян в письмах и диалогах, Е., 2012.*

Զ

Դավիթ Զալյան

ԶԱԼՅԱՆ Դավիթ Տիգրանի (10.07. 1942, Երևան–06.02.2016, Երևան), խմբավար, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ խմբավարության (1965), դիրիժորության (1971) բաժինները: 1965–90-ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի երգչախմբի ղեկ. և խմբավարության դասատու, 1971–73-ին, միաժամանակ՝ Ա. Տեր-Հովհաննիսյանի անվ. երգչախմբի խմբավար (2000-ից՝ գեղ. ղեկ.), 1971-ից՝ Զայնի պահպանման վոկալ-երգչախմբ. դպրոցի հիմնադիր-տնօրեն, 1987–97-ին՝ երաժշտ. մանկ. պետ. թատրոնի (1997-ից՝ Երևանի կամեր. երաժշտ. թատրոն) հիմնադիր-գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 2001-ից՝ ԵՕԲԹ դիրիժոր: 1980-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2000-ից): Իրագործել է Վ. Աճեմյանի «Կիկոսի մահը», Է. Խաղագործյանի «Մի գլխարկի պատմություն», Բ. Բրիտտենի «Նոյյան տապան» օպերաների, Ս. Լուսիկյանի «Ճպուռն ու մրջյունը», «Ստարաթ Մաթեր» (ըստ Զ. Բ. Պերգոլեզիի) բալետների և այլ գործերի բեմադրություններ: 1995–2000-ին ղեկավարել է Կահիրեի հայկ. եկեղեցու և 2 վարժարանների երգչախմբերը:

Միջազգ., համամիութ., հանրապետ. մրցույթների դափնեկիր:

Զանգ (Հաղպատի վանք)

ԶԱՀՐԻ [Կարապետյան Կարապետ Հովհաննեսի, 1818, գ. Կեմ (Վանի նահանգ)–1888, Ալեքսանդրապոլ], աշուղ: Աշուղ *Խայաթի* հայրը: Աշուղ. արվ. սովորել է աշուղ Նեջմիից: Կ. Պոլսում մասնակցել է նշանավոր աշուղների մրցույթներին, արժանացել «Զահրի» (պարսկ.՝ թունավոր՝ սուր մտքի և խայթող լեզվի համար) աշուղ. տիտղոսի: Խուսափելով հավատափոխությունից՝ Թուրքիայից փախել է Ալեքսանդրապոլ: Մինչ այդ ստեղծագործել է թուրք., ապա գրել է հայ. երգեր («Ղոշմա», «Խնդիրըս առ, իմ սիրեկան, հոգի ջան...», «Սուխամմազ»): Հայկ. աշուղ. արվ-ում ստեղծել է նոր ժանրեր: Նրա արվ-ը բարձր է գնահատել *Ջիվանին*:

Գրկ. *Լևոնեան Գ., Հայ աշուղներ, Ալեքսպոլ, 1892:*

Երկ. *Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986, էջ 18–19:*

ԶԱՄԱՆ (Զամանյան) Սայաթ (ծ. 22. 10. 1972), դաշնակահար: Ավարտել է Քյոլնի բարձրագույն երաժշտ. դպրոցը: Երկացանկում՝ Յ. Ս. Բախի պրելյուդները, ֆուգաները, Լ. վան Բեթհովենի սոնատները, Ֆ. Շոպենի էտյուդները, մազուրկաները, վալսերը, նոկտյուռնները, Կ. Վեբերի, Ֆ. Լիստի, Կ. Դեբյուսիի, Ս. Վ. Ռախմանինովի, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Լ. Ճգնավորյանի, Ռ. Անդրիասյանի, Հ. Ստեփանյանի և ուր. ստեղծագործություններից: Հեղինակ է 2 ֆուգայի, կոնցերտի՝ 2 դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի համար, որտեղ նկատելի են հայ երաժշտության ավանդույթները: 1993-ին մենահամերգներով հանդես է եկել Երևանում (ընդարձակ երկացանկով), 1996-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ (դիրիժոր՝ Մ. Ավետիսյան):

Եվրոպայի երիտասարդ դաշնակահարների մրցույթի (1987, Ֆրանկֆուրտ) դափնեկիր:

ԶԱՆԳ, հարված. ազդանշան. երաժշտ. գործիք: Ներքևում կտրված սնամեջ տանձաձև մասում կախված է լեզվակը: Զուլվում է բրոնզից: Որոշակի բարձրության ձայն արտաբերելու համար ճոճում են (հարվածում են) կամ թափահարում լեզվակը: Զայնի արտաբերման 2-րդ եղանակը բնորոշ է ռուս. զանգահարությանը, որն ապահովում է հարվածի հավասարաչափությունը, հնարավորություն ընձեռում մեծ Զ-եր գործածելու համար: Ամենամեծ Զ-երը կշռում են մինչև 15 *տ*: Հնում օգտագործվել է բնակչությանը ժողովելու, տաճնապ ազդարարելու, զորք հավաքելու (ահազանգ) համար (օր.՝ Սարդարապատի ճակատամարտի ժամանակ): Զանգահարությունը X դ-ից հայ եկեղեց. ծիսակատարությունների անբաժան մասն է (Եվրոպայում՝ IX դ-ից): Կառուցվել են հատուկ զանգակատներ: Եվրոպայում Զ. ձուլել են IV–VI դդ-ում: Ռուսաստանում ստեղծվել են աշխարհում

ամենամեծ Զ-երը (35, 50 *կգ* և ավելի): Ամենամեծերից է «Ցար-զանգը» (200 *կգ*, Մոսկվայի Կրեմլ): Հայտնի զանգահար է եղել Կոնստանտին *Սարաջևը*:

ԶԱՆԳԱԿՆԵՐ, որոշակի բարձրության հնչյուններ արտաբերող հարված. երաժշտ. գործիք՝ իդիոֆոնների ընտանիքից: Ձևով նման է քսիլոֆոնին. տարբերվում է մետաղե ստեղներով, որոնք տուփի մեջ երկշար դասավորված տարբեր մեծության թիթեղիկներ են (դաշնամուրի ստեղների սկզբունքով)՝ թույլ ամրացված փայտե ձողիկների կամ մետաղե լարերի վրա: Հնչեցվում են մետաղե (երբեմն՝ փայտե, կաուչուկե) մուրճիկներով: Կան նաև ստեղնաշար. Զ., որոնք հնչում են ավելի թույլ, սակայն տեխնիկապես առավել շարժուն են. դրանցով կարելի է հնչեցնել ակորդներ: Ունեն զնգուն, մաքուր հնչողություն: Նոտագրվում է ջութակի բանալիով: Դիապազոնը 2–5 (c^2–c^5) և ավելի օկտավա է՝ պայմանավորված թիթեղիկների քանակով: Ըստ գրության՝ 1-ին օկտավայի դո-ից մինչև 3-րդ օկտավայի դո-ն հնչում է գրածից 1 օկտավա վեր (երբեմն լսվում է 2 օկտավա վեր): Պարտիտուրներում նվագաբաժինը գրվում է Զ-ից հետո: Զ. սիմֆ. նվագախմբում առաջին անգամ օգտագործել է Վ. Ա. Մոցարտը «Կախարդական սրինգ» օպերայում: Ընդգրկված են հիմնականում սիմֆ. մեծ նվագախմբերում (տեղադրվում են հատուկ հենակների վրա): Առավել տարածվել է XIX դ-ից [Լ. Դելիբի «Լակմե» օպերայում՝ «Զանգակներով արիան», Պ. Ի. Չայկովսկու «Իտալական կապրիչչո», Պ. Դյուկայի «Գուշակի աշակերտը» սիմֆ. սկերցո, Ս. Ս. Պրոկոֆևի դաշնամուրի և նվագախմբի 1-ին (Des-dur) կոնցերտ, Պ. Հինդեմիթի կլառնետի և նվագախմբի կոնցերտ]: Զ. օգտագործում են նաև ռոք և ֆոլք երաժշտության մեջ, որոշ ազգ. տոնակատարությունների ժամանակ (կախիչներով ամրացնում են երաժշտին, որպեսզի քայլելով կարողանա նվագել):



Զանգակներ

ԶԱՆԳԵՐ, հարված. երաժշտ. գործիքների հավաքածու: Կազմված է 12–18 խրոմատիկ լարվածքով գլանաձև փողերից, որոնք կախված են մետաղե կամ փայտե շրջանակից: Հնչյունն արտաբերվում է մուրճիկների հարվածով, դիապազոնը 1–1,5 օկտավա է: Օգտագործվում է օպեր. և սիմֆ. երաժշտության մեջ: Ա. Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիան անվանում են նաև «Զանգերով սիմֆոնիա»:

ԶԱՐԱՅՅԱՆ Հարրի Գևորգի (ծ. 19.06.1924, Ալեքսանդրիա), ալտահար: Ավարտել է Բոստոնի կոնսերվատորիան, Նյու Յորքի Ջուլիարդի բարձրագույն երաժշտ. դպրոցը: 1943-ից եղել է Բոստոնի, 1944-ից՝ Նյու Յորքի, 1954-ից՝ Ֆիլադելֆիայի սիմֆ. նվագախմբերի առաջին ալտահար: Մասնակցել է Բոստոնի (1953), Վերմոնտի (1964) Կազալսյան փառատոներին: Կազմակերպել է համերգներ. երկացանկում՝ հայ կոմպոզիտորների գործերից: 1969-ին հիմնադրել է հայ երաժիշտների քառյակ: Համերգներով շրջագայել է ԱՄՆ-ում, Կանադայում, Ճապոնիայում, Հվ. Ամերիկայում, Եվրոպայում, ԽՍՀՄ-ում:

ԶԱՐԲՀԱՆԵԼՅԱՆ Սիսակ, Ուդի Սիսակ, Արմեն Սեզան (1885, Կ. Պոլիս–1960, Բաղդադ), ուդահար: Տիրապետել է օսմ. պրոֆեսիոնալ երգարվ-ի դաս. ժանրին՝ շարքիներին, մասնավորապես՝ հայ վարպետների՝ Քեմանի, Թադևոսի, Աստիկի, Նիկողոս և Սեպուհ էֆենդիների և ուր. հորինածներին: Զ. ստեղծել է բազմաթիվ եղանակներ, ունեցել աշակերտներ: Հեղինակ է «Ուդի մեթոդ» ձեռնարկի, «Արևան ուղիներով» վեպի (նկարագրել է 1915-ի Մեծ եղեռնը):

Զանգեր

ԶԱՐԳԱՐ (Բաբայան Աբրահամ Մարտիրոսի, 1824, Շամախի–1874, Բաքու), աշուղ: Սովորել է ծննդավայրի գավառ. դպրոցում (1842–44): Հոր շնորհիվ դարձել է հմուտ ոսկերիչ (այստեղից՝ անունը՝ Զարգար – ոսկերիչ): 1858-ին մեկնել է Լենքորան, մտերմացել պարսկահայ աշուղ Մայիսի հետ, որի անունը հետագայում հիշատակել է իր բոլոր երգերում: Հորինել է հայ. և թուրք.: Գրել է բարոյախրատ., սիրային երգեր («Հոգու և մարմնի վեճը», «Այսօր ի փող, վաղն ի հող» ևն): Նրա «Փողի վրայ ասած», «Եկայք հայեր...» մուխամմազներն առանձնահատուկ տեղ են գրավում աշուղ. գրկ-յան մեջ:

Ըստ Շավիղ Գրիգորյանի

Յակով Ջարգարյան

ՋԱՐԳԱՐՅԱՆ Յակով Սերգեյի (ծ. 05.12.1925, Երևան), դաշնակահար, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. մանկավարժ (1967): Պրոֆ. (1989): Սովորել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցում, ավարտել Նիժնի Նովգորոդի կոնսերվատորիան (1954): Դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1988-ից՝ ԵՊԿ-ում (արտասահմանցի ուսանողների ֆակ-ի դեկան՝ 1989–2004-ին): Որպես մենակատար, նաև նվագախմբերի հետ ելույթներ է ունեցել Գորկիում, Մոսկվայում, Դոնի Ռոստովում, Դոնեցկում, Բաքվում, Թբիլիսիում, Իտալիայում: 1960–70-ին ԵՕԲԹ-ում կատարել է Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադ» և Զ. Գերշվինի «Ռապսոդիա բլյուզի ոճով» գործերը՝ բալետ. ներկայացումներում: Հեղինակ է դաշնամուրի դասավանդման մեթոդ. ձեռնարկների («Նշումներ դաշնամուրային մանկավարժության վերաբերյալ», ռուս., 1986, «Պիանիզմ. ճանապարհի սկիզբը», ռուս., 1998), հուշերի, էսսեների («Իմ Մինասը», 1995, «Հեռու և մոտ անցյալից», ռուս., 1995, «Այդ Իգիթյանը...», ռուս., 2001), հոդվածների:

Ունի պատկերազարդ փայտե, կավե, ապակե և մետաղե ձվերի հարուստ հավաքածու:

ՋԱՐԴՀՆՉՅՈՒՆՆԵՐ, օռնամենտիկա (լատ.՝ ornamentum – զարդարանք), մեղեդու հիմնական կառուցվածքից դուրս, սակայն նրա ամբողջ. արտահայտության համար նույնքան կարևոր, կարճ տևողության լրացուցիչ մեղեդիական դարձվածքներ՝ «զարդարող» հնչյուններ: Սերել են իմպրովիզացիայից: Ազգ. ոճը բնորոշող գործոններից են. առավել շատ և բազմազան են արլ. ժող. երաժշտության մեջ: Հայ ժող. երգ ու նվագում կարճ տևողության հնչյունները մեծ մասամբ մեղեդու հիմնական հնչյուններն են, ուստի Զ., չնայած թվացյալ հարստությանը, համեմատաբար սակավ են: Մասնագիտացված երաժշտության մեջ սկզբնապես «զարդարող» հնչյուններով մեղեդու հարստացումն իրագործել է կատարողը՝ որպես իմպրովիզացիա: Հետագայում առանձնացել են Զ-ի կայուն տիպեր՝ մելիզմներ, որոնք գրառել են կոմպոզիտորները՝ մանր նոտաներով (տակտի տևողության հաշվից դուրս) կամ պայման. նշումներով: Մեկ նշանով «զարդարող» դարձվածքներ նշելը գործածվել է դեռևս նևմերում, հինհայկ. նոտագրությունը ևս ունի հատուկ «զարդախազեր»: Զ-ով առավել հարուստ են XVIII դ-ի ֆրանս. կլավեսին. երկերը. գործածվել է որպես հնչյունները «երկարացնող» միջոց, այն դեպքերում, երբ գործիքի ձայնը շուտ է մարում: Վոկալ Զ. մեծապես զարգացել են օպերայում: Դաս. երաժշտության մեջ մելիզմներից գործածվում են ֆորշլագը, տրելը, մորդենտը, գրուպետտոն, նաև մի քանի ոչ հաստատուն տեսակներ՝ ֆակտուրան, կոլորատուրան են:

Ջարդհնչյուններ

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԶԱՐԻՖՅԱՆ Նարինե Կառլի (ծ. 11.10. 1958, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի (1973, Հ. Զառակյանի դասարան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1977, Ա. Աբրահամյանի դասարան) դաշնամուրի և տեսության (Է. Բաղդասարյանի դասարան), ԵՊԿ կոմպոզիցիայի (1984, Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (1993, ղեկ.՝ Ղ. Սարյան): ԽՍՀՄ ԿՄ (1986), ՀԿՄ (1992), «Կանայք երաժշտության մեջ» միջազգ. ընկերակցության (2014) անդամ: 1980–93-ին դասավանդել է Երևանի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցում, 1993–95-ին՝ Հալեպի Բ. Կանաչյանի անվ. արվ-ի քոլեջում, 1998-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2014-ից): 2012-ին հիմնադրել է «Զարիֆյան» քառյակը (նաև գեղ. ղեկ.): Ստեղծագործություններում համադրել է ակադեմ. երաժշտության ոճ. առանձնահատկություններ և ջազ., ժող., փոփ երաժշտության տարրեր:

Գրել է «Նա» փոփ-օպերան (ըստ Նար-Դոսի, 2014), «Ապրած և չապրած տարիներ» բալետը (ըստ Վ. Պետրոսյանի, 1984), սիմֆ. պոեմ (1985), «Տրիգոններ» (1989)՝ սիմֆ. նվագախմբի, «Կոնցերտ-էլեգիա» (2013)՝ կիթառի և կամեր. նվագախմբի, «Տանգո-ռապսոդիա» (2015)՝ ալտի և սիմֆ. նվագախմբի համար, «Ֆանտազիա՝ Սայաթ-Նովայի թեմաներով» (2000)՝ ժող. գործիքների քառյակի և սիմֆ. նվագախմբի համար, 2 սյուիտ, 2 կվարտետ (քամանչա, քանոն, կոնտրաբաս, դաշնամուր), «Հայկական էսքիզներ», «Ֆանտազիա՝ Սայաթ-Նովայի թեմաներով» (Սայաթ-Նովայի ծննդյան 150-ամյակին, 2012), «4 վոկալ շարք» (ըստ Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Վ. Տերյանի, 2000), դաշնամուր. ծրագր. պիեսների 2 շարք, «Հայկական էսքիզներ» (2012) կվինտետը (կիթառ, ակորդեոն, դաշնամուր, կոնտրաբաս, հրտ.՝ 2013), 15 բալլադ, խմբերգեր, էստրադ. երգեր, մանկ. խմբերգեր («Արև՛ արև՛, եկ-եկ», 2000, «Լորիկ», 2000, «Դու կապուտակ ծովով արի», 2000, ևն), երգեր («Չի կարելի», մանկ. Եվրատեսիլի 2-րդ մրց., 2013, ևն), ջազ. և այլ երկեր: Թողարկել է լազեր. ձայնասկավառակներ, տեսահոլովակներ:

ԹՄՄ, «Բարեկամների ձայներ» միջազգ. մրցույթ-փառատոնի Մեծ (Սոչի, 2000) և այլ մրց-ներ, ՀՀ «Սիվսես Խորենացի» մեդալ (2017):

Գոհար Շագոյան

ԶԱՔԱՐՅԱՆ (Զախարով) Գլախո (Գևորգ) Արշակի (26.04.1905, Թիֆլիս–28.02. 1992, Թբիլիսի), երգիչ: ՀԽՍՀ (1967), ՎԽՍՀ (1985) վաստ. արտիստ: 1926-ից՝ Վրաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի, 1930-ին՝ երկաթգծի ակումբին կից երգի-պարի ինքնագործ անսամբլի մեներգիչ: Հայ., վրաց. և ադրբ. կատարել է հայ աշուղների, հիմնականում՝ Սայաթ-Նովայի երգերից («Դուն էն գլխեն իմաստուն իս...» երգի Զ-ի կատարումը հնչում է հայկ. «Սայաթ-Նովա» հեռուստաֆիլմում, 1960): 1934-ին «Լեռնային արծիվներ» միասն. բազմազգ անսամբլի կազմում հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ բազմաթիվ քաղաքներում: 1939-ին Մոսկվայում մասնակցել է Վրաստանի արվ-ի և գրկ-յան տասնօրյակին: 1943–45-ին ղեկավարել է Վրաստանի երգի-պարի անսամբլին կից դուդուկահարների խումբը: Ելույթներ է ունեցել Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Վլադիվոստոկում, Միջին Ասիայի քաղաքներում: Թողարկվել են ձայնասկավառակներ: Երևանում Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված մրցույթում ճանաչվել է լավագույն կատարող: Թբիլիսիի փողոցներից մեկը կոչվել է Զ-ի անունով:

ԶԱՔԱՐՅԱՆ Լուսինե Հաբեթի (01. 06.1937, Ախալցխա–31.12.1992, Երևան, թաղված է Վաղարշապատի Սբ Գայանե եկեղեցու բակում), երգչուհի (քնար. սոպրանո): Խորեն ***Պապյանի*** կինը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1972): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1957), ԵՊԿ (1962, Մ. Հարությունյանի դասարան): 1965-ից՝ Հայֆիլհարմոնիայի, 1970–83-ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոյի մեներգչուհի: 1958-ից (շուրջ 30 տարի) երգել է Սբ Էջմիածնի Մայր տաճարի երգչախմբում: Համերգ. երգացանկում՝ հայ և համաշխ. դաս. կոմպոզիտորների ստեղծագործություններից, հայկ. ժող. և հոգևոր երգեր, նաև անգլո-ամերիկացի կոմպոզիտորների գործեր, մասնավորապես՝ հոգևոր երգեր: Ճանաչվել է հայ միջնադար. երգերի և շարականների անզուգական կատարումներով: Խորհրդ. տարիներին Զ. առաջինն է հայ հոգևոր երգերը հնչեցրել բեմից: Կատարման վարպետությամբ առանձնացել են Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Ա. Տիգրանյանի,

Նարինե Զարիֆյան

Գևահո Զաքարյան

Լուսինե Զաքարյան



Լուսինե Զաքարյանը ելույթի պահին

Կարո Զաքարյան



Սարգիս Զաքարյան

Բ. Կանաչյանի, Գ. Ալեմշահի, Հ. Պերպերյանի, Ա. Պարթևյանի և ուր. կոմպոզիտորների, հայ միջնադար. հեղինակների (Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Գիրգոր Նարեկացի և ուր.) ստեղծագործությունները, Զ. Վերդիի, Վ. Ա. Մոցարտի, Գ. Ֆորեի ռեքվիեմների սոպրանոյի երգամասերը, Զ. Բ. Պերգոլեզիի գործերից: Զ-ի կատարող. արվ-ին բնորոշ են ինտոնացիայի մաքրությունը, հուզ. ելևէջների հարստությունը, խոսքի և երաժշտության ներդաշնակությունը: Մենահամերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, արաբ. երկրներում և այլուր, ելույթներ է ունեցել Պերճ ***Ժամկոչյանի*** հետ: Նրա ձայնագրություններն ընդգրկվել են համաշխ. երաժշտության ձայնադարանում, որոշ երգեր՝ տարբեր հավաքածուներում, այդ թվում՝ Ռուսաստանում թողարկված «Ավե Մարիա» երաժշտ. ալբոմում: Ա. Բաբաջանյանն իր «Վոկալիզ» գործը գրել է Զ-ի համար: Նրան բանաստեղծություններ են ձոնել Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Մ. Մարգարյանը, Է. Մեժելայտիսը, Ա. Խիժնյակը, Մ. Լ. Մատուսովսկին: Զ-ի կատարող. արվ-ը բարձր են գնահատել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, բանաստեղծ Պ. Սևակը և ուր.: 2000-ից Երևանում գործում է «Լուսինե Զաքարյան» հիմնադրամը: ՀԼԿԵՄ (1967), ՀԽՍՀ Պետ. (1974) մրց-ներ:

Գրկ. *Դանիելյան Կ. Ա., Լուսինե Զաքարյան (կյանքն ու ստեղծագործական ուղին), Ե., 1981: Գևորգյան Լ., Պալյան Խ., Լուսինե [հուշագրություն], Ե., 1999: Մանվելյան Ս., Լուսինե Զաքարյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 2015:*

ԶԱՔԱՐՅԱՆ Կարո Հովհաննեսի (15.12.1895, Վան–11.05.1967, Երևան), կոմպոզիտոր, խմբավար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1960): Սուրեն ***Զաքարյանի*** հայրը: Սովորել է Պետրոգրադի կոնսերվատորիայի տեսության բաժնում (1916–18, Ս. Մ. Լյապունովի դասարան), ավարտել Թիֆլիսի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը (1924, Ն. Ն. Չերեպնինի, Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի դասարաններ): 1921–29-ին աշխատել է Թիֆլիսի Հայարտանը (խմբավար, մանկավարժ): 1929-ին տեղափոխվել է Երևան, դասավանդել ԵՊԿ-ում (խմբավարություն), գրառել է քրդ. ժող. երգեր: 1938–53-ին ղեկավարել է հայկ. ռադիոյի երգչախումբը:

Զ-ի ստեղծագործությունների հիմքում ընկած են ժող. երգայնության տարրեր: Գրել է «Գառնուկ ախպեր» (ըստ Հ. Թումանյանի, բեմ.՝ 1924, Թիֆլիս), «Մարջան» (1939, բեմ.՝ 1941, Երևան), «Աղասի» (ըստ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, 1954) օպերաները, «Պիոներիա» (1936) բալետը, «Երկիր հայրենի» (1943) կանտատը, «Պարտիզանական սյուիտ» (1941), «Պոեմ» (1944), ռոմանսներ (Հ. Հովհաննիսյանի և Վ. Տերյանի խոսքերով), դաշնամուրի և ջութակի սոնատ, թավջութակի և դաշնամուրի պիեսներ, դաշնամուր. տրիո, խմբերգեր (այդ թվում՝ «Հրազդան» պոեմը, 1955), խմբերգ. սյուիտներ, վոկալ շարքեր, կատարել ժող. երգերի խմբերգ. մշակումներ:

Դուստրը՝ **Զելինե Զ.** (07.06.1929, Երևան–2007, Երևան), դաշնակահարուհի, կոնցերտմայստեր, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1953, Գ. Սարաջևի դասարան): 1948–52-ին՝ ՀԽՍՀ ռադիոյի երգչախմբի, 1953–64-ին՝ ԵՊԿ լար. բաժնի, 1970–73-ին, միաժամանակ՝ Հեռուստատեսության և ռադիոյի ջութակահարների անսամբլի կոնցերտմայստեր: 1964–2007-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1994-ից): Համերգներով հանդես է եկել Ժ. Տեր-Մերգերյանի, Ռ. Ահարոնյանի, Մ. Աբրահամյանի, Ա. Չաուշյանի, Վ. Բարթիկյանի, Լ. Ալոյանի և ուր. հետ:

Գրկ. *Թոռոջյան Խ. Վ., Կարո Զաքարյան, Ե., 1962:*

ԶԱՔԱՐՅԱՆ Սարգիս Մկրտչի, գուսան Զաքարյան [27.12.1923, գ. Վահագնի (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–12.03.1995, Վանաձոր], գուսան: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (1983): Ավարտել է ԵՊՄԻ: Ստեղծագործել է վաղ տարիքից, նվագել է թառ: 1937-ից մասնակցել է հանրապետ. ժող. օլիմպիադաներին, գրավել 1-ին տեղ:

Զ-ի ճանաչված երգերից են՝ «Անմահ Թումանյան», «Ղարաբաղ», «Աննման եղնիկ», «Աղբյուր երազ», «Սայաթ-Նովա» ևն: 2013-ին լույս են տեսել նրա «Երգը հավետ կմնա» երգարանը և «Ամեն գիշեր ունի լուսաբաց» ժող-ը: Գրական ստեղծագործությունները տպագրվել են հանրապետ. մամուլում:

ԶԱՔԱՐՅԱՆ Սուրեն Կարոյի (ծ. 11.12.1956, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար: Կարո ***Զաքարյանի*** որդին: ՀԿՄ անդամ (1986-ից, վարչության անդամ՝ 2013-ից): Ավարտել է ՄՊԿ դաշնամուրի բաժինը (1981) և ասպիրանտուրան (1983), ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1985): 1987-ից

դասավանդում է ԵՊԿ-ում (մասնագիտ. դաշնամուրի ամբիոնի վարիչ՝ 2002-ից): Հեղինակ է սիմֆ., կամեր. ստեղծագործությունների, որոնք կատարվել են Հայաստանում, Ֆրանսիայում, Լեհաստանում, Ռուսաստանում, Իսրայելում և ԱՄՆ-ում:

Կոմպոզիտորների համամիութ. մրցույթի 2-րդ, 3-րդ (1985, Մոսկվա), Հ. Վենյավսկու անվ. միջազգ. մրցույթի 1-ին (1990, Լեհաստան) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2017):

ՋԱՔԱՐՅԱՆ Վաղարշակ Միքայելի (ծ. 29.11.1955, Երևան), կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊԿ (1983) և ասպիրանտուրան (1987, ղեկ.՝ Է. Միրզոյան): ՌԴ ԿՄ Մոսկվայի բաժանմունքի անդամ: 1990-ական թթ-ից ապրում է Մոսկվայում. «Պրակտիկա» հրատարակչության երաժշտ. բաժնի վարիչ, 2003–07-ին՝ «Մուզիկա» հրատարակչության փոխտնօրեն, «The Grove Concise Dictionary of Music» երաժշտ. բառարանի ռուս. հրատարակման հեղինակներից: Կազմակերպում է համերգներ անվանի երաժիշտների (Դ. Մացուև, Բ. Բրովցին և ուր.) մասնակցությամբ: Համագործակցել է Յ. Բաշմետի (ՄՊԿ-ի դահլիճում «Մոսկվայի սոլիստներ» նվագախմբի և Յ. Բաշմետի կատարմամբ հնչել է Ջ-ի «Ընծա և աղերս» երկի պրեմիերան, 2007), Ս. Խաչատրյանի («Ջութակի կոնցերտ», համաշխ. պրեմիերա, 2018, Երևան) հետ: Գրել է կամեր., սիմֆ. և այլ գործեր, երաժշտություն կինոյի և թատրոնի համար:

ՋԱՔԻՅԱՆ Քրիստափոր Արտեմի (ծ. 20.02.1929, Դոնի Ռոստով), հարված. գործիքներ նվագող, ֆիլատելիստ, նկարիչ, լուսանկարիչ: 1944–49-ին հարված. գործիքների դասեր է առել Ն. Խոխլովայից: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1955, դասատու՝ Լ. Մութաֆյան) և ԵՊԿ (1972, Հ. Ղասաբյանի դասարան) ֆլեյտայի բաժինները: 1944–49-ին՝ ԵՕՔԹ, 1951–67-ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբերի երաժիշտ (հարված. գործիքներ): 1955–60-ին դասավանդել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1957–63-ին՝ գիշերօթիկ, 1973–97-ին՝ Սայաթ-Նովայի անվ. (երկուսում էլ՝ հարված. գործիքների դասարանի և նվագախմբի հիմնադիր) երաժշտ. դպրոցներում, 1972–97-ին՝ ՀՊՄԻ-ում, 1963–66, 1970–72-ին՝ Ուլան Բատորի խորեոգրաֆիկ երաժշտ. դպրոցի հարված. գործիքների դասարանի հիմնադիր-դասատու: 1994–2003-ին՝ ՀՀ ԿՆ «Նամականիշ» կազմակերպության գեղ. խորհրդի նախագահ: Հեղինակ է «Նվագի դպրոց փոքր թմբուկի համար» (1986), «40 ռիթմիկ էտյուդներ» (1989), «Հայաստանի փոստը և փոստային նամականիշեր» (1988, համահեղ.), «Հայացք ժամանակի պրիզմայով» (2013, բոլորը՝ ռուս.), «Հայաստան: Փոստային նամականիշեր, զինանշանային նամականիշեր: Փոստային դրոշմանիշներ» (հայ., 2003) գրքերի և հոդվածների:

Մոնղոլիայի Պետ. մրց. (1971), Հայաստանի ֆիլատելիստների միության «Հեղինակության մրցանակ» (2009):

Սուրեն Ջաբարյան

ՋԱՔՅԱՆ Իրինա Ջավենի (ծ. 02.09.1965, Լենինական), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2017): Ավարտել է Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանը (1987), ԵՊԿ (1992) և ասպիրանտուրան (1995): 1991-ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ, 1995–98-ին՝ ԵՕՔԹ, Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախմբերի մենակատարուհի: «Սերենադ» կամեր. և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ մենահամերգներ է ունեցել ՀՀ-ում և արտերկրում (նաև Պոզնանում՝ հանրահայտ երգչուհի Մ. Կալլասի հիշատակին): Հանդես է եկել Ամելիայի, Դեզդեմոնայի (Ջ. Վերդիի «Սիմոն Բոկկանեգրա», «Օթելլո»), Միմիի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Նեդդայի (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ») և այլ դերերգերով: Առանձնապես բարձր է գնահատվել Մադամ Բատերֆլայի դերերգի (Ջ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ» կամ «Չիո-Չիո սան») կատարումը: Համերգներով շրջագայել է Իտալիայում, Իսպանիայում, Ավստրալիայում, ԱՄՆ-ում, Կիպրոսում, Լիբանանում, Ռուսաստանում, Թուրքիայում, Չինաստանում և այլուր: Համագործակցել է ճանաչված դիրիժորներ Օ. Դուրյանի, Հ. Չեքիջյանի, Վ. Միխնևսկու (Լեհաստան), Լ. Բոթսթայնի, Ջ. Նելսոնի (ԱՄՆ) հետ: Մասնակցել է «Բադ Ֆյուսինգ» (2000, Գերմանիա), «Wratislavia cantans» (2003, Լեհաստան), Բաալբեկի (2005, Լիբանան) միջազգ. փառատոներին:

Վաղարշակ Ջաբարյան

ՋԵՆՆԵ ՊՈՂՈՍ (1746, Կ. Պոլիս–1826, Կ. Պոլիս), երաժիշտ, մանկավարժ: Սովորել է Խասգյուղի (Կ. Պոլիս) հանրակրթ. դպրոցում, հմտացել հայ հոգևոր երաժշտության ոլորտում: Ունենալով հնչեղ և ազդու ձայն՝ երգեցողության մեջ

Իրինա Ջաբյանը ելույթի պահին

Կարպիս Զորյան

Կ. Զորյանը Ռադամեսի դերում (Ադդա՝ Ե. Խաչիկյան, Ջ. Վերդիի «Ադդա»)

Իրինա Զոլոտովա

հասել է բացառիկ հաջողության (որտեղից՝ թուրք. «Զեննե» – «Զայնեղ» անունը): Կ. Պոլսի Զինճիրլի-խանում բացել է դասարան, ուսուցանել եկեղեց. երաժշտություն: Ունեցել է բազմաթիվ աշակերտներ, այդ թվում՝ Համբարձում ***Լիմոնճյանը***: Ջ. Պ-ին է վերագրվում «Լոյս-զուարթ», Հռիփսիմյանց ԴԿ («Անձինք նուիրեալք») և այլ շարականների եղանակների ձայնագրությունը: Տիրապետել է հուն. եկեղեց. երգեցողության և նոտագրության արվ-ին, նկարագրել է գրքեր:

Ըստ Սաթևոս Մուրադյանի

ԶԻԼՃՅԱՆՆԵՐ, ծնծղա պատրաստող վարպետների ընտանիք (այստեղից՝ ազգանունը՝ թուրք. զիլ – ծնծղա): Գործել են XV–XVI դդ-ում: 1623-ին Ավետիս Ջ. Կ. Պոլսում մետաղների (անագ, պղինձ) որոշակի խառնուրդից ստացել է հատուկ համաձուլվածք՝ ծնծղա պատրաստելու համար, որը, որպես գաղտնիք, սերնդեսերունդ փոխանցվել է ընտանիքի անդամներին: Ջ-ի նշանավոր ներկայացուցիչ Քերովբե Ջ. (1838–1910) ապրել և գործել է Կ. Պոլսում, ունեցել է սեփ. գործատուն, որտեղ պատրաստված ծնծղաները դիմացկունությամբ և հնչյունի նրբությամբ գերազանցել են եվրոպ. ամենահայտնի մակնիշների արտադրանքին: XIX դ–XX դ-ի սկզբին նրա պատրաստած ծնծղաները եվրոպ. և ամերիկ. միջազգ. ցուցահանդեսներում արժանացել են շքանշանների ու պատվոգրերի (Լոնդոնում՝ 1851-ին, Փարիզում՝ 1862-ին, Չիկագոյում՝ 1893-ին, Բեռլինում՝ 1898-ին, Իտալիայում 1907-ին՝ Մեծ մրց., ևն): Մեծ եղեռնի ժամանակ Ջ-ի ընտանիքի ողջ մնացած անդամներին հաջողվել է տեղափոխվել ԱՄՆ: Նրանց արհեստանոցը Նորթ Քուինս ք-ում է (Մասսաչուսեթսի նահանգ): Ջ-ի ծնծղաները հայտնի են ԱՄՆ-ում և այլ երկրներում, օգտագործվում են նաև Հայաստանի նվագախմբերում:

Գրկ. *Թևոդիկ, Ամենուն տարեցոյցը, Ե տարի, ԿՊ, 1911, էջ 371: Տէր-Միքայելեան Ն., Յորդածների ժողովածու, Անթիլիաս, 1970, էջ 129–132:*

ԶՈՐՅԱՆ Կարպիս Արամի [24.05.1915, Քաստամունի (այլ տվյալներով՝ 1923, Գուլաց՝ Թուրքիա)–20.09.2002, Նյու Յորք], երգիչ (դրամատիկ. տենոր): Ռումինիայի վաստ. արտիստ (1963): Ավարտել է Բուխարեստի կոնսերվատորիան (1948): Տիմիշոարայի օպեր. թատրոնում իր առաջին՝ Կանիոյի դերերգից (Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ», 1948) հետո նրան հրավիրել են Բուխարեստի օպեր. թատրոն, որտեղ հանդես է եկել գլխ. դերերգերով՝ Կավարադոսի (Ջ. Պուչչինիի «Տոսկա»), Ռադամես, Օթելլո, Մանրիկո (Ջ. Վերդիի «Ադդա», «Օթելլո», «Տուրուբադուր»), Դոն Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն»), Տուրիդդու (Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ»), Գերման (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»), Սամսոն (Կ. Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա») ևն: Ելույթներ է ունեցել նաև համերգներով. երկացանկում՝ Ֆ. Շուբերտի, Ռ. Շումանի, Հ. Վոլֆի, նաև հայ, ռուս, ռումին կոմպոզիտորների երգեր: Ջ-ի կատարումներին բնորոշ էին ներքին դրամատիզմը, բացառիկ հուզականությունն ու անմիջականությունը, արտիստ. փայլուն կարողությունները: Հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, Երևանում (առաջին անգամ՝ 1956-ին): Ռումինիայի Պետ. մրց.:

ԶՈԼՈՏՈՎԱ Իրինա Լեոնիդի [ծ. 14.06.1947, ք. Դնեպրոպետրովսկ (Ուկրաինա)], դաշնակահարուհի, երաժշտ. քննադատ: Արվեստագիտ. դ-ր (2009): Պրոֆ. (1993): ԽՍՀՄ ԿՄ անդամ (1982-ից): Ավարտել է Օդեսայի կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը (1971), Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1974, դաշնամուր. արվ-ի պատմություն): 1974-ից դասավանդում է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1990-ից): Ուսումնասիրությունները վերաբերում են դաշնամուր. մանկավարժությանը («XX դարի դաշնամուրային մանկավարժության և կատարողական արվեստի պատմությունից», Քրեստոմատիա, համահեղ., ռուս., 1998), կոմպոզիտոր. ստեղծագործությանը, ընդհ. երաժշտ. դաստիարակությանը, կատարող., իմպրովիզացիայի արվ-ներին: Հեղինակ է տես. և մեթոդ., ուս. ձեռնարկների, հոդվածների:

Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2017):

Երկ. *Рубен Агаронян, Е., 1989; Детская музыка современных армянских композиторов, Е., 1991; Кетти Малхасян, Е., 1998; Пути развития пианизма в Армении (вторая половина XX века). Исследования, Е., 2010.*

ԶՈՀՐԱԲՅԱՆ Աշոտ Պատվականի (ծ. 29.01.1945, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2012): Պրոֆ.:

Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը, ԵՊԿ (1972, Գ. Եղիազարյանի դասարան): Դասավանդել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. մանկավարժ. ուսումնարանում (1972–2008), ԵՊԿ-ում (1992-ից): Գրել է «Խաղերի բումերանգ» լար. կվարտետը, սոնատներ՝ դաշնամուրի, նաև թավջութակի և դաշնամուրի, «Սերենադ»՝ 13 մենակատարի, «Parable»՝ 13 մենակատարի, «Էլեգիա»՝ կամեր. լար. նվագախմբի, «Նվիրում Մեծարենցին»՝ կամեր. նվագախմբի, ֆլեյտայի, 2 հորոյի, 2 եղջերափողի, «Shant matinale»՝ փող. կվինտետի, «Ritual»՝ 3 ֆլեյտայի, 4 գիշերերգ՝ սոպրանոյի և դաշնամուրի, «Knots»՝ երգեհոնի, «An der knaber Elis»՝ ձայնի, դաշնամուրի, թավջութակի և կլառնետի, կոնցերտ՝ ջութակի և լար. նվագախմբի համար, № 1 «Նարցիս» և № 2 լար. կվարտետները, «Նովելետ» դաշնամուր. կվինտետը և այլ գործեր, որոնք կատարվել են Ռուսաստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում, Բելառուսում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում, ԱՄՆ-ում և այլուր:

Ա. Խաչատրյանի անվ. մրց., Համաշխ. հայկ. կոնգրեսի մրցանակաբաշխության դափնեկիր, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

ԶՈՒԼԱԼՅԱՆ Ռոզ [10.09.1895, գ. Դերիկ (Դիարբեքիրի նահանգ)–28.07.1972, Բոստոն], երգչուհի (կոնտրալտո): 1899-ին ընտանիքի հետ տեղափոխվել է ԱՄՆ: Երիտասարդ տարիքից համարվել է ազգ. ժող. երգերի անզուգական կատարող: Կատարելագործվել է Բոստոնի Վենսան Հյուբարտի, նաև իտալ. և ֆրանս. օպեր. ստուդիաներում: Օժտված էր ձայնի ընդարձակ դիապազոնով, կոնտրալտոյի գեղեցիկ երանգով, տաք և թավ հնչյուններով, որոնց շնորհիվ հանդես է եկել և՛ որպես օպեր., և՛ որպես կամեր. երգչուհի. երգացանկում՝ Վ. Ա. Մոցարտի, Ռ. Շումանի, Ֆ. Շուբերտի, Յ. Բրամսի, Դ. Սկառլատտիի ստեղծագործություններից, նաև հայկ. երգեր: ԱՄՆ-ի օպեր. թատրոններում աչքի է ընկել Կարմենի (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ազուչենայի, Ամներիսի (Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Աիդա») և այլ դերերգերով: Առավել բարձր է գնահատվել Կարմենի դերերգի կատարումը: Նրա բազմաթիվ կատարումներ հնչել են մի շարք կինոնկարներում: Մենահամերգով հանդես է եկել Երևանում (1969):

ԶՈՒՌՆԱ, կրկնակի լեզվակավոր փող. երաժշտ. գործիք: Տարածված է Միջին Ասիայում, Իրանում, Կովկասում: Միջին երկ.՝ 28,2 *սմ*, լայն. վերևի մասում՝ 1,2 *սմ*, ներքևում՝ 4,8 *սմ*: Կովկաս., նաև հայկ. Զ. մի կողմում ունի 8, մյուսում՝ 1 ձայնանցք, վերևի մասում՝ ձայնավերարտադրման վերադիր սարք՝ պիպիչ: Պատրաստվում է ծիրանենու կամ տանձենու փայտից, պիպիչը՝ եղեգից: Հիմնական հնչյուն. կազմից բացի՝ օժտված է նաև օբերտոն. հնչյունաշարով: Դիապազոնը՝ մոտ 2 օկտավա: Զ. մենակատար և անսամբլ. գործիք է: Կովկաս. անսամբլներում սովորաբար ընդգրկում են 2 Զ. և 1 դհոլ: Զ-ներից մեկը կատարում է հիմնական եղանակը, մյուսը ձայնակցում է: Ունի սուր, ճչացող ձայն, օգտագործվում է հիմնականում բացօթյա հանդեսների ժամանակ:

Գրկ. *Քոչարյան Ա., Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008:*

ԶՈՒՐԱԲՅԱՆ Ժաննա Պետրոսի (ծ. 30.08.1941, Կիրովական), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (2014), պրոֆ. (1996): ՀԿՄ անդամ (1981-ից, 1982–2013-ին՝ վարչության անդամ, 1982–91-ին՝ երաժշտագիտ. բաժանմունքի ղեկ.): Ավարտել է ԵՊԿ (1966): 1963–80-ին դասավանդել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում, 1977-ից՝ ԵՊԿ-ում (գիտ. քարտուղար՝ 1992-ից): Հեղինակ է մենագրությունների, շուրջ 40 գիտ. (նվիրված է հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում ազգ. հատկանիշների դրսևորումներին), մի շարք հանրագիտ., հրապարակախոս. հոդվածների, հեղինակել և վարել է 200-ից ավելի ռադիո- և հեռուստահաղորդումներ («Հայկական ռոմանս», «Երաժշտական հանրագիտարան», «Դեմիրճյան-25», «Հայ կոմպոզիտորների նոր երկերը», «Ռուսական երաժշտության դասականները» ևն):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013), ՀԿՄ մրց.:

Երկ. *Ակեքսանդր Ամեմյան, Ե., 1997: Հայկական օպերա, Ե., 2005 (Երաժշտության աշխարհում, գիրք II, համահեղ.՝ Ռ. Եսայան): Մինոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Ե., 2014: Интонационные истоки и национальное своеобразие тематизма в армянской симфонической музыке (1950–60 гг.), Е., 2002.*

Աշոտ Զոհրաբյան

Ռոզ Զուլալյան

Զուռնա

Ժաննա Զուրաբյան

Է

Էլեկտրական երաժշտական գործիքներ

Էլեկտրակիթառ

Էմիրիտոն

Սինթեզատոր

Էլեկտրանվագարկիչ

ԷԼԲԱԿՅԱՆ Սարգիս Էդուարդի (ծ. 26.10.1961, Մոսկվա), երաժշտագետ: Մանկավարժ. գիտ. թեկնածու (2003), ՀՊՄՀ պրոֆ. (2016): Սովորել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. և Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցներում, ավարտել ԵՊԿ (1985): 1979–2007-ին դասավանդել է Հայաստանի երգչախմբ. ընկերության մանկ. երաժշտ. ստուդիայում (տեսություն և սոլֆեջջո), 1986-ից՝ ՀՊՄՀ-ում (2008–12-ին՝ երաժշտության տեսության և մեթոդիկայի, 2017-ից՝ մանկավարժության ամբիոնների վարիչ, 2012–15-ին՝ գեղ. կրթության ֆակ-ի դեկան): Ուսումնասիրությունները վերաբերում են հայ երաժշտության պատմությանն ու տեսությանը, երաժշտ. մանկավարժությանը, երաժշտատես. և երաժշտապատմ. առարկաների դասավանդման մեթոդիկային: Հեղինակ է «Երաժշտատեսական առարկաները ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց» (2007) մենագրության, գիտամեթոդ. և ուս. ձեռնարկների, կազմել է «Հարմոնիայի խնդիրների ժողովածու»-ն (2013):

ԷԼԵԳԻԱ, ե ղ ե ր ե ր գ (< հուն. ελεγεια – տրտունջ), թախծալի, խոհ. բնույթի վոկալ և գործիք. պիեսներ: Թախծոտ, քնարախոհ. երգ՝ Հին Հունաստանում և Հին Հռոմում: Որպես ինքնուրույն երաժշտ. ժանր՝ հայտնի է XVII դ-ից (նաև Հ. Պյորսելի սգո վոկալ Է-ները): XVIII դ-ի վերջ–XX դ-ի սկզբին ռուս. երաժշտության մեջ տարածվել են սիրո, թախծի, մենության մոտիվներով Է-ները (Ա. Պ. Բորոդին, Ս. Ի. Տանեև, Ն. Յ. Մյասկովսկի և ուր.): XIX դ-ի կեսերից զարգացել է գործիք. Է. (Ֆ. Լիստ, Է. Գրիգ, Գ. Ֆորե և ուր.), որին անդրադարձել են նաև ռուս կոմպոզիտորները: Է-ներ են գրել Ի. Ֆ. Ստրավինսկին, Բ. Բարտոկը, Է. Քշենեկը, Ա. Սպենդիարյանը («Էլեգիական երգ»՝ «Ղրիմի էսքիզներ»-ում), Ա. Բաբաջանյանը, Վ. Ղորղանյանը և ուր.:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, երաժշտ. գործիքներ (լար., փող. ևն), որոնց հնչյուններն ստեղծվում են էլ. ազդանշանները ձայն. ալիքների վերափոխմամբ (էլեկտրոն. սարքերի միջոցով): Բաժանվում են 2 խմբի. 1-ինի ձայնարտադրումը կատարվում է ձայնարկիչների, 2-ինը՝ միայն էլեկտրոն. սարքերի միջոցով (կատարող-երաժիշտների կառավարմամբ): Տարածվել են 1950-ական թթ-ին: Տարբերում են Է. ե. գ-ի միաձայն և բազմաձայն ստեղնային (երգեհոն, դաշնամուր, սինթեզատոր ևն), աղեղնային (ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս ևն), կսմիթ. (կիթառ, լազեր. տավիղ ևն) և այլ տեսակներ: ԽՍՀՄ-ում առավել տարածված տեսակներից էր էմիրիտոնը (դաշնամուրի տիպի ստեղնաշարով, դիապազոնը՝ 8 օկտավա, ունի 100 հնչերանգ). ստեղծվել է 1935-ին: Է. ե. գ. կիրառվում են էստրադ-ջազ. և այլ նվագախմբերում:

ԷԼԵԿՏՐԱՆՎԱԳԱՐԿԻՉ, ձայնապնակ նվագելու էլ. մեխ. սարք: Բաղկացած է էլ. շարժիչից (պտտում է ձայնապնակով սկավառակը) և ձայնահանիչից (ասեղի մեխ. տատանումները փոխարկում է էլեկտրականի, որոնք ուժեղացվում են բարձրախոսով):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, էլեկտրագեներացված հնչյունների համադրում: Է. ե. ստեղծող կոմպոզիտորի «պարտիտուրը» թվային աղյուսակն է, որը ծրագրված մտնելով էլեկտրոն. հաշվող. մեքենայի մեջ՝ թվային համադրումները տրանզիստոր. համակարգի միջոցով վերափոխում է հնչյունայինի: Ստացված երաժշտությունը հաղորդվում է բարձրախոսով, որը կարելի է գրանցել մագնիտոֆոնի ժապավենի վրա և տարածել ձայնասկավառակներով: Գյուտարարը գերմանացի ճարտարագետ Հ. Էյմերտն է: Այն տարբերվում է էլ. երաժշտ. գործիքներով (էլեկտրակիթառ, էլեկտրաերգեհոն, էլեկտրադաշնամուր ևն) հնչող երաժշտությունից: Է. ե-յան համար մշակվել է գրառման հատուկ համակարգ՝ ակուստիկ դիագրամներ, որի հնչյուն. բարձրության և հնչերանգի մակարդակը համակարգվում և ղեկավարվում է աճո-

ղականության համակարգով: Է. ե. հաճախ համադրում են ավանդ. պարտիտուրների հետ: Է. ե. ինչյուն. նոր էֆեկտներ ստեղծելու և ինչյունի բնույթն ուսումնասիրելու կարևոր միջոց է:

Երվանդ Երկանյան

ԷԼՄԱՍ Ստեփան Գևորգի (24.12.1864, Զմյուռնիա–11.08.1937, Ժնև), դաշնակահար, կոմպոզիտոր: Դաշնամուրի առաջին ուսուցիչը եղել է ծագումով հույն Մոզերը (Զմյուռնիայի լավագույն դաշնակահարը): Ուսումը շարունակել է Եվրոպայում, կյանքի մեծ մասն ապրել է Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, 1912-ից՝ Ժնևում: Սովորել է Վայմարում. աշակերտել է Ֆ. Լիստին (1879), Վիեննայում՝ Ա. Դորին և Ֆ. Քրիմին: Առաջին անգամ ելույթ է ունեցել 1885-ին Վիեննայում. երկացանկում՝ սեփ. ստեղծագործություններից (այդ թվում՝ 6 էտյուդ՝ նվիրված է Ֆ. Լիստին, 1882): Համերգներով հանդես է եկել է (1885–1912) Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլուր: Հարուստ երկացանկում առանձնահատուկ տեղ են գրավել ռոմանտիկ կոմպոզիտորների, մասնավորապես՝ Ֆ. Շոպենի երկերը, նաև դաս. երաժշտությունը (Յ. Ս. Բախ, Վ. Ա. Մոցարտ, Լ. վան Բեթհովեն) և իր գործերը: Գրել է 120-ից ավելի գործեր, հիմնականում՝ դաշնամուրի համար, այդ թվում՝ նոկտյուռններ, վալսեր, մազուրկաներ, բարկարոլաներ, պրելյուդներ, դաշնամուրի 4 սոնատ, 3 կոնցերտ՝ դաշնամուրի և նվագախմբի համար (առաջինը նվիրված է Ա. Գ. Ռուբինշտեյնին) և այլ գործեր: Նրա երկերում գերակշռում են քնար., քնարադրամատիկ., երբեմն նաև ողբերգ. կերպարները: 1984-ին Երևանում Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում դաշնակահար Է. Էլհասը (Բրազիլիա) Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ (ղեկ.՝ Ա. Սիրանոսյան, Ֆրանսիա) կատարել է Է-ի 1-ին կոնցերտը՝ դաշնամուրի և նվագախմբի համար: Հայաստանում նրա դաշնամուրի կոնցերտները նորովի է մեկնաբանել դաշնակահար Արմեն *Բաբախանյանը*:

Է-ի երկերը հրատարակել են Լայպցիգի «Շթայնգրեբեր» և այլ հրատարակչություններ: Երևանում անցկացվել են Է-ի անվ. դաշնակահարների ամենամյա մրցույթներ:

Մերի Գրիգորյան

ԷԼՄԱՍՅԱՆ-ՎԱՐԴՅԱՆ Զարուհի [Զաբի, 12.10.1906, ք. Լին (ԱՄՆ)–06.02.1990, Լոս Անջելես], երգչուհի (քնար. սոպրանո): Ֆրեզնոյում հաճախել է նախակրթարան, ապա քոլեջում յուրացրել իտալ., ֆրանս., գերմ. երգեր ու օպեր. արիաներ: Ավարտել է Հվ. Կալիֆոռնիայի երաժշտ. համալսարանը և Բոստոնի «Նյու Ինգլանդ» կոնսերվատորիան: Առաջին անգամ հանդես է եկել Լոս Անջելեսի «Գրանդ օպերայում»՝ Ֆրանկիտայի, Միքայելայի դերերգերով (Ժ. Բիզեի «Կարմեն»): Երգել է նաև Սան Ֆրանցիսկոյի, Նյու Յորքի, նաև Բոստոնի «Ամերիկայի երիտասարդություն» օպեր. խմբերի հետ: Դերերգերից են՝ Նորիան (Գ. Դոնիցետտիի «Դոն Պասկուալե»), Դեսպինա (Վ. Ա. Մոցարտի «Այդպես են վարվում բոլորը»), Նեդդա (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ») ևն: Հանդես է եկել նաև որպես կամեր. երգչուհի: Մեներգել է Լ. վան Բեթհովենի 9-րդ, Գ. Մահլերի 4-րդ, Է. Բլոխի «Իսրայել» սիմֆոնիաներում, ելույթներ ունեցել Լոս Անջելեսի սիմֆ. նվագախմբի հետ՝ անվանի դիրիժորներ Ա. Ռոձինսկու և Օ. Կլեմպերերի ղեկավարությամբ: 1940-ին Բոստոնում Է-Վ-ին նվագակցել է Ալան *Հովհաննեսը*: 1959-ին (ամուսնու՝ երգիչ և դերասան Սեդրակ Վարդյանի հետ) այցելել է Երևան, հայկ. ռադիոյում ձայնագրել Ռ. Մելիքյանի «Օրոր Նազիկին», Հ. Սամուելյանի «Վարդի պես սիրուն» ռոմանսները, «Վերադարձրու ինձ իմ քաղաքը» նեգր. և «Ինչպես մոռանամ սերս» իտալ. երգերը: Ղեկավարել է Լոս Անջելեսի Սբ Հակոբ եկեղեցու 60-հոգանոց երգչախումբը, կատարել աշխարհիկ, նաև հայկ. ժամանակակից երգեր: 1930-ից՝ Լոս Անջելեսում գործող Հայ արվեստագետների ընկերակցության նախագահ: Նրա կատարումները հնչել են ամերիկ. կինոնկարներում, նկարահանվել է «Խոլորձներ քեզ համար», «Հաղթական» ֆիլմերում:



Սրվեհան Էմմաս

ԷՆՀԱՐՄՈՆԻԶՄ (< հուն. én – մեջ և árμονία – ներդաշնակ), երաժշտ. համակարգում նույն բարձրության, սակայն տարբեր անվանումներով հնչյունների հավասարեցումն ու նույնացումը (1):

Գոյություն ունեն նաև էնհարմոնիկորեն հավասար ինտերվալներ (2), ակորդներ (3) և տոնայնություններ (4): Էնհարմոնիկորեն հավասար ինտերվալները (կամ ակորդները) երաժշտ. ստեղծագործությունից անջատ ինչում են միատեսակ, սակայն ստեղծագործության մեջ ձայնակարգ. որոշակի պայմաններում յուրաքանչյուրի բնույթը փոխվում և արտահայտում է նոր իմաստ: Է. օգտագործվում է մոդուլացման մեջ՝ երբեմն երաժշտ. գրությունը պարզեցնելու համար:

ԷՊԻԶՈԴ (հուն.՝ ἐπεισόδιον – հավելում, ներդիր), երաժշտ. ձևի միջակա մասը կամ բաժինը, որը սովորաբար հակադիր է երաժշտ. նյութի նախորդ թեմային: Եզրույթը գործածվում է բարդ եռամաս, կոնցերտ., սոնատ. ձևերում, ռոնդոյում, ռոնդո-սոնատում: Է. ֆուգայում երբեմն անվանում են *ինտերմեդիա*:

Միհրան Էսեկոլյան

ԷՊԻՏԱՖԻԱ (< հուն. ἐπιτάφιος – տապանագիր), գրություն շիրմաքարի վրա, սովորաբար՝ չափածո, որը, որպես ժանր, ձևավորվել է Հին Հունաստանում և Հին Հռոմում: 1883-ին Լիդիայում (Փոքր Ասիա) հայտնաբերվել է Է-ի հատված, որի տեքստը փորագրված է նոտ. նշանների (հինհուն. տառ. նոտագրություն) հետ: Նույնատիպ Է. նկատվել է նաև Զմյուռնիայում (այժմ՝ Իզմիր՝ Թուրքիայում): XIX–XX դդ-ում ստեղծվել են երաժշտ. երկեր՝ «Է.» անվանումով, որոնց բնույթը համապատասխանել է կոմպոզիտորի (Հ. Բեռլիոզ, Ֆ. Լիստ, Մ. Ռավել, Ի. Ֆ. Ստրավինսկի և ուր.) այդ ժանրի մասին պատկերացումներին՝ հուշեր, աղոթք, փիլ. մտորում ևն: Պոեմ-էպիտաֆիաներ են գրել նաև Է. Միրզոյանը, Է. Հովհաննիսյանը և ուր.:

«ԷՋՄԻԱԾԻՆ», երգչախումբ: Հիմնադրվել է 2015-ին Մայր աթոռ Սբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ տեսուչ Գարեգին վարդապետ Համբարձումյանի նախաձեռնությամբ: Հիմնադիր-խմբավարն է ճեմարանի դասատու Արթուր սարկավագ Վարդանյանը, 2018-ից՝ Արտաշես Բաբուրյանը: Խմբում ընդգրկված է ճեմարանի 16 սան. երկացանկում՝ հոգևոր, աշխարհիկ, նաև արևմտաեվրոպացի կոմպոզիտորների երգեր: Երգչախումբը հանդես է եկել Հայաստանի թեմերում, Երևանում, Մոսկվայում (Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի հիմնադրման 300-ամյակին), Զագրոսկում, Մինսկում: «Կոլոժսկի բլագովեստ»

«Էջմիածին» երգչախումբը ելույթի պահին

հոգևոր միջազգ. XVI փառատոնի 2-րդ մրց. (2017, ք. Գրոդնո՝ Բելառուս):

«Է.» թողարկել է «Արևագալի երգեր» վերնագրով տեսասկավառակ:

ԷՍԵԿՈՒԼՅԱՆ Միհրան (ծ. 1952, Կիպրոս), կոմպոզիտոր: Ավարտել է Նիկոսիայի Մելգոնյան կրթ. հաստատությունը (ջութակի դասատու՝ Վ. Պետելյան), ԵՊԿ (1978, Է. Միրզոյանի դասարան): Ուսման տարիներին Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի հիման վրա գրել է «Նարեկ» օրատորիայի 2 մասը: 1979-ից ապրում է Մոնրեալում, որտեղ ավարտել է օրատորիան (5-մասանոց, սոպրանո, բարիտոն, նաև սրինգ, տավիղ, հարված. գործիքներ, Ա. Խաչատրյանի անվ. 1-ին մրց., 1985, Նյու Յորք): 1980-ից ստեղծում է էլեկտրոն. և համակարգչ. երաժշտություն. հիշարժան են «Ձոն առ Կոմիտաս» (նվագախմբի համար), «Հայրեն մեկ» (ֆլեյտա, հոբոյ, տավիղ, 2 ջութակ, ալտ, թավջութակ) գործերը, գործիքավորել է նաև Կոմիտասի դաշնամուր. պարերը: 1989-ին Շվեդիայի Կառավարության կրթաթոշակով սովորել է Ստոկհոլմում, որտեղ գրել է «Ալլո, ես եմ, լավ ես» էլեկտրոն. երկը (ըստ շվեդ. երաժշտության), որը բազմիցս կատարվել է Շվեդիայում և Կանադայում: Դասավանդում է Քվեբեկի կոնսերվատորիայում և Մոնրեալի համալսարանում:

ԷՍՏՐԱԴԱ (ֆրանս.՝ estrade), 1. Էստրադային արվեստ, փոքր ձևերի արվեստ, բեմարվ–ի տեսակ, որը 1 ներկայացման մեջ (համերգում) համադրում է մի քանի արտիստների (ասմունքողներ, երգիչներ, երաժիշտներ, ճպարարներ, ակրոբատներ, պարողներ և ուր.) ելույթները: Կապված է թափառաշրջիկ դերասանների (Ֆրանսիայում՝ ժոնգլյորներ, Գերմանիայում՝ շպիլմաններ, Ռուսաստանում՝ սկոմորոխներ ևն) արվ–ի հետ: Է. բարձր մակարդակի է հասել ԽՍՀՄ–ում: Մոսկվայում, Լենինգրադում, Դոնի Ռոստովում, Նովգորոդում և այլուր բացվել են էստրադ. թատրոններ՝ մյուզիք–հոլլեր:

Հայաստանում հնում զարգացած էր գուսանների, վարձակների, ծաղրածուների, մնջկատակների արվ–ը, որոնց ավանդույթներն օգտագործվել են հայ առաջին պրոֆեսիոնալ թատրոն–կրկեսում՝ Կ. Պոլսի «Արամյան թատրոնում»: Թատրոնը միակն էր Մերձ. Արևելքում, որը համատեղել է միջնադար. խառն արվ–ի և XX դ–ի եվրոպ. դրամատիկ. թատրոնի առանձնահատկությունները. ներառել է ազգ. կրկեսի ձևերը եվրոպ. երանգավորմամբ, մնջկատակը, բալետը, ժամանակակից վոդևիլներն ու մելոդրամները ևն: Է. Հայաստանում զարգացել է խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո: Հիմնադրվել են Հայաստանի ջազ–նվագախումբը (1938, ղեկ.՝ Ա. Այվազյան, 1948–ից՝ Հայաստանի Էստրադ. նվագախումբ, 1956–ից՝ ղեկ. Կ. Օրբելյան), Հեռուստառադիոյի էստրադ. նվագախումբը (1967, ղեկ.՝ Մ. Վարդազարյան, 1972–ից՝ Էստրադ. սիմֆ. նվագախումբ, ղեկ.՝ Մ. Մավիսակալյան, 1987–ից՝ Ե. Երզնկյան): Հայկ. պրոֆեսիոնալ էստրադ. երաժշտության լավագույն նմուշներ են ստեղծել Ա. Այվազյանը, Ա. Բաբաջանյանը, Կ. Օրբելյանը, Ռ. Ամիրխանյանը, Մ. Մավիսակալյանը, Ս. Շաքարյանը, Դ. Ազարյանը, Կ. Պետրոսյանը, Ա. Սաթյանը և ուր.: Հայկ. էստրադ. կատարող. արվ–ի զարգացմանը նպաստել են երգիչներ Բ. Դարբինյանը, Գ. Մինասյանը, Ռ. Մկրտչյանը, Տ. Հովհաննիսյանը, Զ. Տոնիկյանը, Ն. Սարգսյանը, Է. Մակարյանը, Է. Յուզբաշյանը, Ս. Մարգարյանը և ուր.:

2. Տես *Բեմահարթակ*:

ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, *թեթև երաժշտության* բազմազան ժանրերի ստեղծագործություններ կատարող գործիք. անսամբլ: Նվագախմբում՝ հարված., լար. գործիքներ, սաքսոֆոններ, շեփորներ, տրոմբոններ, էլ. երաժշտ. գործիքներ: Վերջին շրջանում լայնորեն տարածվել են նաև էստրադ–սիմֆ. նվագախմբերը, որոնք, բացի նվագակցելուց, կատարում են նաև նվագախմբ. գործեր, փոխադրումներ և այլ ստեղծագործություններ: Հայտնի են Հայաստանի էստրադ., էստրադ–ջազ., Ռադիոյի էստրադ–սիմֆ. և այլ նվագախմբեր: Տես նաև *Նվագախումբ*:

ԷՏՅՈՒԴ (ֆրանս.՝ étude – ուսումնասիրում, վարժություն), երաժշտ. պիես՝ սկզբնապես նախատեսված կատարողի նվագի տեխնիկան կատարելագործելու համար: Ժանրը զարգացել է XIX դ–ից, երբ գրվել են Է–ներ դաշնամուրի (Ի. Բ. Կրամեր, Մ. Կլեմենտի, Մ. Շիմանովսկի, Ի. Մոշելես, Կ. Չեռնի և ուր.), ապա՝ ջութակի (Ռ. Կրոյցեր, Պ. Ռոդե), թավջութակի (Դ. Պոպեր) և այլ գործիքների համար: Ռոմանտիկ կոմպոզիտորների (Ն. Պագանինի, Ֆ. Լիստ, Ֆ. Շոպեն, Ռ. Շուման, Ֆ. Մենդելսոն, Յ. Բրամս և ուր.) գործերում Է. համարվել է կարևոր գեղ. երկ, մեկնաբանվել որպես վառ կոնցերտ. պիես կամ պրելյուդի տիպի մանրանվագ: Հետագայում կոմպոզիտորների գործերում այն դարձել է կատարող. արվ–ում որոշակի հմտություն ձեռք բերելու միջոց՝ պահպանելով նաև գեղ. ստեղծագործության նշանակությունը: Է–ներ են գրել նաև Ա. Խաչատրյանը, Վ. Ումր–Շատը, Ա. Աբրահամյանը, Ս. Սարաջյանը և ուր.:

Միշել Էքիզյան

ԷՔԻՋՅԱՆ Միշել Համբարձումի (ծ. 21.11.1955, Նյու Յորք), կոմպոզիտոր: Սովորել է Մանհեթենի երաժշտ. դպրոցում, Կոլումբիայի համալսարանում (դասատուներ՝ Ն. Ֆլոջենզո, Մ. Դավիդովսկի, Վ. Ուսաչևսկի և ուր.): Գրել է երգեր, խմբերգեր, կամեր., սիմֆ., օպեր., էլեկտրոն. երաժշտություն, որոնք կատարվել են համերգներում, մրցույթներում, փառատոներում (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, ԽՍՀՄ ևն), որոշ գործեր՝ Նյու Յորքի Սբ Վարդան եկեղեցում:

Է–ի երաժշտությունը սերում է հայկ. երաժշտարվ–ի ակունքներից (դաշնամուր. պիեսներ, «Հայկական պոեմներ», «Մուսա լեռ» սիմֆ. պատկեր, «Աղթամար»՝ 2 ջութակի, դաշնամուրի և հարված. գործիքների համար, ևն):

«Վիկտոր Հերբերտ», «Դևորա Նադ-վոռնի», Սենտ Պոլի կամեր. նվագախմբի, Լանկաստերի արվ-ների փառատոնի (1975–76), Ա. Խաչատրյանի անվ. (1985), «Ջոն Սիմոն Գուգենհայմ» հիմնադրամի (1986) և այլ մրց-ներ:

ԷՔՍԵՐՋՅԱՆ (Էքսերժան) Էդուարդ (ծ. 1942, Մարսել), երաժշտագետ, դաշ-նակահար: Սովորել է Էքս-ան-Պրովանսի համալսարանում: 1966-ին Նեապոլում արժանացել է դաշնակահարների մրցույ-թի դափնեկրի կոչման: Ելույթներ է ունե-ցել նաև Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Բելգիայում, Իտալիայում: Երաժշտագիտ. թեմայով դասախոսութ-յուններ է կարդացել մի շարք երկրներում: Համագործակցել է դաշնակահար Ֆ. Կորի հետ, թողարկել համատեղ ձայնապնակ (1981): Դասավանդել է Փարիզի կոնսեր-վատորիայում: Եղել է «Էտյուդ» թերթի երաժշտ. քննադատը:

Էդուարդ Էքսերջյան

ԷՔՍՊՈԶԻՑԻԱ (< լատ. exposito – շա-րադրում, ցուցադրում), երաժշտության մեջ. նեղ առումով՝ ֆուգայի, սոնատ., ռոնդո սոնատ. ձևերի առաջին մասի անվանումը, լայն առումով՝ յուրաքան-չյուր երաժշտ. ձևի մաս կամ բաժին, որն ընդգրկում է 1 կամ մի քանի թեմաների հիմնական նյութի նախն. շարադրանքը: Է. հակադիր է զարգացմանը (թեմայի ձևա-փոխում, մշակում): Նրան բնորոշ երաժշտ. առանձնահատկություններն ամփոփվում են «շարադրանքի էքսպոզիցիոն տեսակ» հասկացության մեջ:

ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻԶՄ (< ֆրանս. expression – արտահայտություն), ուղ-ղություն եվրոպ. գրկ-յան մեջ և արվ-ում XX դ-ի 1-ին քառորդում: Արտացոլել է եվրոպ. մտավորականության ողբերգ. աշխարհզգացողությունն ԱՀՊ (1914–18) նախաշեմին, պատերազմի և հետպա-տերազմ. տարիներին: Շեշտելով ողբեր-գականությունը՝ Է-ի ներկայացուցիչները ձգտել են ընդդիմանալ բուրժ. հաս-յան բարոյական նորմերին, սակայն նրանց աշ-խարհզգացողության խոր սուբյեկտիվիզ-մը, մի քանիսի ստեղծագործության միս-տիկ. նախահիմքը, ամենակործան ուժի մասին պաթետիկ հայտարարություններն այդ բողոքը դարձրել են տարերային: Փիլ. հիմնավորմամբ Է. առավել համահունչ է նորկանտականությանը, մասնավորապես՝ Է. Կասիրերի և Ս. Լանգերի՝ արվ-ի լեզվի խորհրդանշանականության և «էքսպրե-սիվ ձևերի» յուրօրինակ իմաստաբանութ-յան գաղափարներին: Էությունը, ըստ Է-ի, կարելի է արտահայտել միայն արվ-ին հատուկ լեզու ստեղծելու միջոցով:

Երաժշտական Է-ին բնորոշ են ծայրահեղ լարվածության արտահայ-տումը, հոգեբ. սուր վիճակները, բարդ ենթագիտակցական զգացողություններ հաղորդելու ձգտումը, դինամիկ դիապա-զոնի ընդարձակությունը, հարմոնիայի հետագա հագեցումը ալտերացիաներով, որը հանգեցնում է տոնային կայունութ-յան վերացմանը, ատոնալության (տես ***Ատոնալ երաժշտություն***), ավանդ. ձևերի ժխտմանը ևն: Է. առավել վառ դրսևորվել է Գերմանիայում և Ավստրիայում: Նրան բնորոշ հատկանիշներ նկատվել են դեռևս Ռ. Շտրաուսի և Գ. Մահլերի ստեղծագոր-ծություններում, ամբողջացել Ա. Շյոնբեր-գի, Ա. Բերգի և Ա. Վեբեռնի գործերում: XX դ-ի կոմպոզիտորները (Բ. Բարտոկ, Կ. Շիմանովսկի և ուր.) կրել են Է-ի ազ-դեցությունը:

ԷՔՍՊՐՈՄՏ (< լատ. expromtus – պատ-րաստի, ձեռքի տակ), իմպրովիզացիոն բնույթի գործիք., առավելապես՝ դաշ-նամուր. պիես: Առանձնանում է արտա-հայտման պոռթկուն և քնար. կերպարների անմիջականությամբ: Ձևավորվել է XIX դ-ի սկզբին (Յ. Վ. Վորժիշեկ, Հ. Մարշներ) և բնորոշ էր ռոմանտիկ կոմպոզիտորների ստեղծագործությանը: Է-ի դաս. նմուշ-ներ են ստեղծել Ֆ. Շուբերտը (1827), Ֆ. Շոպենը (1834), Ֆ. Լիստը (1852), նաև Ռ. Շումանը, Ա. Դվորժակը, Գ. Ֆորեն, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը, Պ. Ի. Չայկովսկին, Ա. Ն. Սկրյաբինը: Հայ երաժշտության մեջ Տ. Չուխաճյանը գրել է «Cascade de Couz» («Քուզի ջրվեժը») առաջին Է.: Է-ներ են ստեղծել նաև Կ. Զաքարյանը (1940), Վ. Կոտոյանը (1954), Ա. Բաբաջանյանը (1954), Ա. Տերտերյանը («Ինչ լավ է այս-տեղ»՝ ձայնի և դաշնամուրի համար, ըստ Ա. Ն. Տոլստոյի, 1956), Է. Աբրահամյանը (1957), Վ. Արարատյանը (1959), Ս. Ջրբաշ-յանը (Էքսպրոմտ-ֆանտազիա, 1960), Ս. Նաղդյանը (1960), Գ. Ղորղանյանը, Գ. Սարաջևը, Լ. Չաուշյանը (1964) և ուր.:

Է. սովորաբար գրվում է ազատ երաժշտ. ձևով (սոնատ., բարդ եռամաս, վարիա-ցիոն ևն): Գործածվում է նաև XX դ-ի վո-կալ-կամեր. երաժշտության մեջ:

ԷՖՐԻԿՅԱՆ Անջելո (Վահան) Հակոբի [20.10.1913, Տրևիզո (Իտալիա)–30.10.1982, Տրևիզո], ջութակահար, դիրիժոր, երաժիշտ-հետազոտող: Ջութակ նվագել է 6 տարեկանից: Երաժշտ. կրթությունը թողել է կիսատ: Ավարտել է Պադուայի համալսարանի իրավաբանության բաժինը: Որոշ ժամանակ Տրևիզոյում եղել է դատախազ, ապա՝ սոցիալ. ապահովագր. հիմնարկի փոխտնօրեն: Պարտիզան. խմբերի հետ մասնակցել է ԵՀՊ-ին: 1946-ից վերսկսել է երաժշտ. գործունեությունը: Ուսումնասիրել է Ջ. Պ. Պալեստրինայի և Յ. Ս. Բախի մի շարք ստեղծագործություններ: Հայտնաբերել է Ա. Վիվալդիի երկերը (452 կոնցերտ և մի քանի տասնյակ այլ երկեր), ճանաչվել դրանց լավագույն խմբագիրն ու մեկնաբաններից (կատարվել են Է-ի ղեկավարությամբ): Գրել է նաև երաժշտ. երկեր, վերծանել ու ներկայացրել Լ. Բոկկերինիի, Ջ. դա Վենոզայի, Յ. Պերիի, Բ. Գալուպպիի, Պ. Լոկատելլիի, Բ. Մարչելլոյի, Ա. Սկառլատտիի, Ա. Ստրադելլայի և ուր. գործերից (100-ից ավելի): Է-ին դասել են նշանավոր երաժիշտ-հետազոտողներ Ջ. Ֆ. Մալիպիերոյի, Ա. Շյոնբերգի և Ռ. Շտրաուսի շարքը: 1947-ին հիմնադրել է Իտալիայում առաջին կամեր. նվագախումբը: Եղել է Բոլոնիայի «Կոմունալե» օպեր. թատրոնի, «Ի ֆիլարմոնիչի» կամեր. նվագախմբերի դիրիժոր: Ներկայացումներ է ղեկավարել Միլանի «Լա Սկալա», Վենետիկի «Լա Ֆենիչե» օպեր. թատրոններում, սիմֆ. նվագախմբեր՝ Բրյուսելում, Հռոմում, Վիեննայում: 1960-ին հիմնադրել է «Ակրոֆոն» ձայնագրման ստուդիան, ձայնագրել է իր հայտնաբերած երկերը:

«Շառլ Կրոսի», Տոկիոյի «Աստ» մրցույթների մրց-ներ (5 անգամ, 1967–73):

Անջելո Էֆրիկյան

Թ

Ջավեն Թագակչյան

Թադեոս Էֆենդի

Ալեքսանդր Թադևոսյան

Էդուարդ Թադևոսյանը ելույթի պահին

ԹԱԳԱԿՉՅԱՆ Ջավեն Պետրոսի (ծ. 18.05.1944, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2009): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1963), ԵՊԿ (1969): 1966-ից՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի ժող. երաժշտության բաժնի աշխատող (1993-ից՝ ավագ գիտաշխատող), 1986-ից՝ Ա. Քոչարյանի անվ. ձայնադարանի վարիչ: 1971–72-ին դասավանդել է Կապանի երաժշտ., 1972–81-ին՝ Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարաններում: 1987–93-ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի «Հայասա», 1981-ից՝ Գեղագիտ. դաստիարակության հանրապետ. կենտրոնի «Գորանի» մանկ. երգի-պարի անսամբլների գեղ. ղեկ.:

Կազմել, ծանոթագրել ու խմբագրել է Մ. Թումաճանի «Հայ երգ ու բան» հավաքածուի 1–4-րդ հատորները (1972, 1983, 1986, 2005), «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի 3–9-րդ պրակները (2010–14): Մասնակցել է Ջավախքի՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի, ԵՊԿ և ՀԿՄ միացյալ (1967) և անհատ. գիտարշավների: Թ-ի ղեկավարությամբ 1985-ին ձայնագրվել է Թբիլիսիի, Մառնեուլի, Թեթրի Ծղարոյի և Բոլնիս-Խաչենի, Շահումյան ավանի հայաշատ վայրերում, 1987-ին՝ Արտաշատի շրջանի գյուղում գրառված ավանդ. երաժշտությունը: Հավաքել է շուրջ 2500 ժող. երգ ու նվագ, որոնց մեծ մասը վերծանել-նոտագրել ու հրատարակել է «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի պրակներում («Հայ երկրագործի աշխատանքային երգեր», 2009, «Վասպուրականի ավանդական երգեր և նվագներ», 2010, «Ջավախքի պարերգեր և պարեղանակներ», 2012, ևն), մի շարք հեղինակների գիտ. աշխ-ներում ու հոդվածներում: Հայ ավանդ. երաժշտարվ-ի, այդ թվում՝ գիտարշավների ընթացքում գրառած նորահայտ գիտ-գեղ. արժեք ունեցող նմուշներ է ներկայացրել համերգ-դասախոսություններում, վարել ռադիո- և հեռուստատես. հաղորդումներ:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2016):

ԹԱԴԵՈՍ ԷՖԵՆԴԻ (Էքսերճյան, 1858, Կ. Պոլիս–10.03.1913, Կ. Պոլիս), ջութակահար, երգերի հեղինակ: Բարձր կատարող. արվ-ի շնորհիվ հռչակվել է Քեմանի Թադեոս անունով: Նվագել սովորել է ջութակահար Մովսես Փափազյանից: Հորինել է շարքիներ, թուրքիներ, բեշրեֆներ, սեմայիներ (բոլորը՝ թուրք.): Նրա հորինած երգերից տպագրվել են երգարաններում, այդ թվում՝ Հովսեփ Էպեյանի «Նեշեի տիլ» ժող-ում (1908):

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Ալեքսանդր Գրիգորի (15.02.1914, Երևան–20.07.2001, Երևան), երաժշտագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1941): 1948–59-ին՝ ՀԿՄ պատասխանատու քարտուղար, 1964–89-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի ավագ գիտաշխատող: Աշխ-ները վերաբերում են հայ երաժշտության պատմությանը: Կազմել և խմբագրել է մի շարք ժող-ներ:

Երկ. *Մեծ Կոմիտասի անունով. Կոմիտասի անվան վաստակավոր կվարտետը, Ե., 1959: Գոհար Գասպարյան, Ե., 1959: Սպիրիդոն Մելիքյանը և հայ ժողովրդական երգը, Ե., 1964: Լևոն Խաեցկի, Ե., 1972: Բեգլար Ամիրջան, Ե., 1975: Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից (XIX դարի 2-րդ կես–XX դարի սկիզբ), Ե., 1977: Նադեժդա Պապայան, Ե., 1979:*

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Էդուարդ Զոհրաբի (ծ. 02.05.1947, Երևան), ջութակահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1984): Պրոֆ. (1996): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1965), ՄՊԿ (1970, Լ. Կոգանի դասարան), ՄՊԿ (1970), ԵՊԿ ասպիրանտուրան (1975): 1970-ին Ավետ *Գաբրիելյանը* Թ-ին հրավիրել է Կոմիտասի անվ. քառյակ՝ որպես 2-րդ ջութակ (1970–76, 1976-ից՝ 1-ին ջութակ և գեղ. ղեկ.): Մենահամերգներով, նաև սիմֆ. նվագախմբերի հետ շրջագայել է Գերմանիայում, Հոլանդիայում, Բուլղարիայում, Թայլանդում, Մալայզիայում, Իսպանիայում, Հունգարիայում, Չեխիայում, Սինգա-

պուրում, Ֆիլիպիններում և այլուր, քառյակի կազմում՝ շուրջ 50 երկրում: Մի շարք հայ կոմպոզիտորներ գործեր են նվիրել Թ–ին: 1977–ից դասավանդում է ԵՊԿ–ում (ամբիոնի վարիչ՝ 1988–96–ին, դեկան՝ 1996–ից): Եղել է բազմաթիվ հանրապետ. (նախագահ) և միջազգ. (Ա. Խաչատրյանի անվ. ջութակահարների 4–րդ մրցույթի նախագահ, 2012) մրցույթների հանձնախմբերի անդամ:

Երևանի պատվավոր քաղաքացի (2014):

Ջութակահարների այսրկովկաս. հանրապետ. (1–ին մրց., 1965), Հ. Վենյավսկու անվ. (4–րդ մրց., Պոզնան), Մ. Լոնգի և Ժ. Տիբոյի անվ. (5–րդ մրց., 1969, Փարիզ) մրցույթների դափնեկիր:

ՀՀ Պետ. մրց. (1989), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2010):

ԹԱԹԱ (Սիմոնյան Ալբերտ Ալբերտի, ծ. 05.12.1965, Երևան), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2006): Հեղինակ է «Ծաղիկներ», «Ճանապարհ», «Վերջին զանգ», «Քայլ առաջ» և այլ երգերի: Հանդես է եկել զուգերգերով՝ երգչուհիներ Լ. Ուսպենսկայայի, Ք. Օրբակայտեի, Ֆ. Պեպելյանի և ուր. հետ: Մենահամերգներով շրջագայել է ԱՄՆ–ում, Կանադայում, Ավստրալիայում, Հոլանդիայում, Բելգիայում, Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում, Գերմանիայում, ՌԴ–ում և այլուր: Թողարկել է «Ասպարեզ» (1996), «Թե աջ, թե ձախ» (1998), «Ով է նա» (1999), «Վախենում եմ, որ կասես չէ» (2000), «Շաբա–դաբա–դաշ» (2001), «Անձրև է եկել» (2003), «Երեկոն իջավ» (2003), «Թևավոր քամիներ» (2006), «Ամենալավը դու ես» (2009) ձայնասկավառակները, տեսահոլովակներ: Նկարահանվել է «Մեր բակը–1–3» (1996, 1998, 2005), «Աստղային սեր» (2009) ֆիլմերում:

ԹԱԹՈՒԼՅԱՆ Արամ Գևորգի (13.12.1915, Պյատիգորսկ–17.03.1974, Մոսկվա), դաշնակահար: Ավարտել է ՄՊԿ (1939): Եղել է Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար: 1939–ին Մոսկվայում մասնակցել է հայ արվ–ի և գրկ–յան տասնօրյակին: 1944–ից դասավանդել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ–ում (մասնագիտ. դաշնամուրի դասարան), 1955–57–ին՝ ՉԺՀ–ում:

Դաշնակահարների համամիութ. 1–ին մրցույթի 2–րդ մրց. (1938):

ԹԱԼԱԼՅԱՆ Արամ Գերոնտիի (ծ. 04.04.1971, Երևան), թավջութակահար, դիրիժոր: ՀՀ արվ. վաստ. արտիստ (2009): Գերոնտի ***Թալալյանի*** որդին: Ավարտել է ԱՄՆ Յեյլի համալսարանի մագիստրատուրայի (1995) և ասպիրանտուրայի թավջութակի բաժինները: 1997–ից դասավանդում է ԵՊԿ–ում: 1998–ից՝ հինավուրց և ժամանակակից երաժշտության նվագախմբի ղեկ., նաև «Traveling Notes», «Melodies of Piece» միջազգ. փառատոների սիմֆ. և Զապորոժիեի ակադեմ. սիմֆ. նվագախմբերի դիրիժոր: 2000–09–ին՝ Կոմիտասի անվ. քառյակի թավջութակահար: Հանդես է եկել նշանավոր երաժիշտներ Ք. Ֆրանկի, Յ. Յ. Մանի, Վ. Սպիվակովի, Յ. Շրյոդերի, Դ. Պոպպենի, Զ. Լևինի, Ք. Սթեմբրիջի,Է. Խաչատրյանի,Լ. Չիլինկիրյանիև ուր. հետ: Հայ և եվրոպացի կոմպոզիտորների թավջութակի, կամեր. և սիմֆ. նվագախմբերի համար գրված մի շարք ստեղծագործությունների առաջին կատարողը: Համերգներով շրջագայել է ԱՊՀ, Հս. և Հվ. Ամերիկայի, Եվրոպայի, Հեռավոր և Մերձ. Արևելքի երկրներում: «Երևանյան բարոկկո փառատոնի», «Ալտի–թավջութակի փառատոնի» հիմնադիր–գեղ. ղեկ., «Արս լունգա» (2009, դաշնակահար Ջուլիետա Վարդանյանի հետ) դուետի հիմնադիրը:

Մի շարք միջազգ. մրցույթների դափնեկիր է: ՀՀ ՄՆ (2008), Մոսկվայի ԿՄ (2012) ոսկե մեդալներ:

ԹԱԼԱԼՅԱՆ Գերոնտի Սեմյոնի (29.07.1926, Երևան–16.03.2000, Երևան), թավջութակահար: ՀՀ ժող. արտիստ (1987): Հենրիխ ***Թալալյանի*** եղբայրը, Արամ ***Թալալյանի*** հայրը: Ավարտել է ՄՊԿ (1951, Ս. Մ. Կոզոլուպովի, Գ. Ս. Կոզոլուպովայի դասարաններ): 1951–ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար, 1956–ից՝ ԵՕԹ թավջութակահարների խմբի կոնցերտմայստեր: 1951–2000–ին դասավանդել է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 1977–ից): Ղեկավարել է իր հիմնադրած (1951) թավջութակահարների անսամբլը, Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի սիմֆ., ԵՊԿ կամեր. նվագախմբերը:

ԹԱԼԱԼՅԱՆ Հենրիխ Սեմյոնի (18.04.1922, Երևան–20.05.1972, Մոսկվա), ալտահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1963): Գերոնտի ***Թալալյանի*** եղբայրը: Ավարտել է ՄՊԿ (1948, Մ. Տերյանի դասարան): 1948–72–ին դասավանդել է Մոսկվայի

Թաթան
Ելոյթի պահին

Արամ Թաթուլյան

Արամ Թալալյանը
Ելոյթի պահին

Գերոնտի Թալալյան

Հևորիկ Թալալյան

Նիկողոս Թահմիզյան



Ն. Թահմիզյանի «Կոմիտասը եւ հայ ժողովրդի երաժշտական ժառանգութիւնը» գրքի (1994) փիփղոսաթերթը

Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ում (պրոֆ.՝ 1972-ից): 1947–72-ին՝ Կոմիտասի անվ. քառյակի ալտահար: Թ-ին բնորոշ էին անսամբլ. նուրբ զգացողությունը, կատարող. փայլուն տեխնիկան: Ալտի, լար. նվագախմբի, քառյակի համար մշակել և փոխադրել է մի շարք ստեղծագործություններ: Հանդես է եկել նաև որպես դիրիժոր. ղեկավարել է Գնեսինների անվ. ինստ-ի կամեր. նվագախումբը:

Թ-ի անունով է կոչվել ՀՀ Գավառի երաժշտ. դպրոցը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1965):

Գրկ. *Մարկոսյան Ա., Կոմիտաս քառյակ: Չորս դիմանկար, Ե., 2006:*

ԹԱՀՄԻԶՅԱՆ Նիկողոս Կիրակոսի [ծ. 09.05.1926, Աթենք–30.08.2011, Փասադենա (Կալիֆոռնիա)], երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (1980), պրոֆ. (1987): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1984): Սովորել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունում: Հայրենադարձել է 1946-ին: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1950), ԵՊԿ (1956) և Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1960, ղեկ.՝ Ք. Քուշնարյան): 1947–56-ին՝ ԵՕԲԹ սիմֆ. նվագախմբի երաժիշտ (գալարափող), 1960–90-ին (1963-ից ավագ)՝ Մատենադարանի, նաև ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ժող. երաժշտության բաժնի գիտաշխատող: 1972–90-ին դասավանդել է ԵՊԿ-ում: 1990-ից ապրել է ԱՄՆ-ում:

Հայ երաժշտության պատմությանն ու տեսությանը, գեղագիտությանը վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններով մեծապես նպաստել է հայ երաժշտագիտության, մասնավորապես՝ միջնադարագիտության զարգացմանը: Հրատարակել է 200-ից ավելի գիտ. հոդվածներ և ուսումնասիրություններ (հայ., ռուս., անգլ., ֆրանս., գերմ. և լեհ.), հոդվածներ գրել Մոսկվայում հրատարակված «Երաժշտական հանրագիտարանի» (ռուս., հ. 1–6) և «Հայկական սովետական հանրագիտարանի» համար: Գիտ. զեկուցումներով հանդես է եկել Մեծ Բրիտանիայում (1978), Իտալիայում (1981), Ճապոնիայում (1985), Ֆրանսիայում (1986) և ԱՄՆ-ում (1990, 1993) գումարված միջազգ. գիտաժողովներում:

Երկ. Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Մակար Եկմալյան: Կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1981: Երաժշտությունը Հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1982: Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Կոմիտասը եւ հայ ժողովրդի երաժշտական ժառանգութիւնը, Փասատենա, 1994: Սայեաթ-Նովան եւ հայ գուսանա-աշուղական երգ-երաժշտութիւնը, Փասատենա, 1995: Տիգրան Չոխաճեան: Կեանքը եւ ստեղծագործութիւնը, Փասատենա, 1999: Արդի խազարանութիւն, Ե., 2003: Теория музыки в древней Армении, E., 1977; The Life & Works of Dikran Tchouhadjian, Pasadena, CA, 2001.

Աննա Ասատրյան

ԹԱՂԱԼՈՒ, տաղալու, թաղալո, հայկ. ժող. պարերգի տեսակ. տարածված էր պատմ. Հայաստանի բոլոր շրջաններում: Հիմնականում քնար., սիրային քառյակներ են, կատարվում են հարց ու պատասխանի ձևով (աղջիկները հարցնում են, տղաները՝ պատասխանում): Ունեն պարզ կառուցվածք և կատարվել են հիմնականում գյոնդերի (գովընդ) ժամանակ:

Գրկ. Лисициан С., Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, Е., 1958. Խաչատրյան Ժ., Պարը հայոց մեջ [հոդվածների ժող.], Ե., 2013:

Սարհաննա Տիգրանյան

ԹԱՄԱՐԱ ԽԱՆՈՒՄ [Պետրոսյան Թամարա Արտեմի, 16(29).03.1906, Ֆերգանա–29.06.1991, Տաշքենդ], պարուհի, երգչուհի, բալետմայստեր: Ուզբ. ԽՍՀ (1932), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: 1925-ին ավարտել է Մոսկվայի կենտր. թատեր. տեխնիկումը: 1926–28-ին՝ Տաշքենդի ազգագր. անսամբլի պարուհի, Ուզբ. երաժշտադրամատիկ. թատրոնի (1928) հիմնադիրներից, որին կից բացել է բալետի ստուդիա (1932): Մասնակցել է ժող. պարի համաշխ. 1-ին փառատոնին (Լոնդոն, 1935): 1936-ից՝ Ուզբ. ֆիլհարմոնիայի արտիստուհի, 1941–69-ին՝ երաժշտ. անսամբլի գեղ. ղեկ. և մենակատար: Բարեփոխել է կանանց ուզբ. պարի կատարող. ոճը, էստրադայի համար ստեղծել հատուկ ժանր: Համերգ. ծրագրերում՝ ԽՍՀՄ և աշխարհի ժողովուրդների երգեր (62 լեզվով) ու պարեր (մոտ 600), նաև սեփ. բեմադրությամբ: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, Ավստրիայում, Մեծ Բրիտանիայում, Հունգարիայում, Նորվեգիայում, Լեհաստանում, Չինաստանում, Չեխոսլովակիայում, Ֆրանսիայում և այլուր:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941), Աշխ. կարմիր դրոշի (1937, 1950, 1951, 1959, 1967), «Պատ-

վո նշան» (1939), Լենինի (1976), ՀՄՊ 2-րդ աստիճանի (1985) շքանշաններ:

Գրկ. *Широкая О., Тамара Ханум, [Альбом], Ташкент, 1973.*

ԹԱՄԲՈՒՐԻ ՀԱՐՈՒԹԻՆ, XVIII դ-ի 1-ին կեսի հայ երաժիշտ, սազանդարաշուղ, թամբուրահար, երգիչ, տեսաբան, մանկավարժ: 1730-ական թթ-ին նվագել է սուլթան Մահմուդ Ա-ի պալատում: Տիրապետել է մի քանի լեզուների: 1736-ին Թուրքիայի մեծ վեզիր Մուստաֆա փաշայի շքախմբի կազմում այցելել է Իրան: 2 տարի ծառայել է Նադիր շահին (ինդկ. արշավանքների տարիներին): Ունեցել է աշակերտներ: Գրել է «Պատմություն Թահմազ Ղուլու (Նադիր շահի պատմությունը)» և «Արևելյան երաժշտության ձեռնարկ» աշխ-ները (երկուսն էլ՝ հայատառ թուրք.): Վերադարձել է Կ. Պոլիս, շարունակել գործունեությունը:

Երկ. *Руководство по восточной музыке, пер. с турецкого, предисловие и комментарии Н. К. Тагмизяна, Е., 1968; Popescu-Judet E., Tambure Küçük Artin – A Musical Treatise of the Eighteenth Century, Istanbul, 2002.*

ԹԱՄԶԱՐԱ, հայկ. ժող. պարերգ. հնում ունեցել է ծիս. (հարսանիք) նշանակություն. աստիճանաբար կորցրել է այն և կատարվում է գրեթե բոլոր միջոցառումների ու խնջույքների ժամանակ: Անվանումը ենթադրաբար ծագել է բնակավայրի անունից (Թամզարա, Թամարզա, Թումարզա): Պատկանում է «երկու գնալ, երկու դառնալ» պարաքայլ ունեցող պարերի տեսակին, որն առանձնանում է իրեն բնորոշ շեշտված չափով՝ 9/8 (4/8 + 5/8): Ըստ Կոմիտասի՝ պարելիս հարսն անպայման պետք է կանգնած լիներ քավորի կողքին, իսկ գլխ. դերը վերապահված էր պարբաշուն (պարագլուխ) և պարպոչին: Ձեռքերը բռնում են մի քանի տարբերակով՝ ճկույթներով, ափերով (բարև բռնած), երբեմն՝ նաև ուսերից:

Գրկ. *Խաչատրյան Ժ., Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Ե., 2014: Лисициан С., Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, Е., 1958.*

Մարիաննա Տիգրանյան

ԹԱՄԻՐՕՂԼՅԱՆ Աննա Մամիկոնի (ծ. 24.02.1982, Լենինական), դաշնակահարուհի: Արվեստագիտ. թեկնածու (2016): Ավարտել է Գյումրիի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանը (2001), ԵՊԿ (2005, Ց. Մխիթարյանի դասարան) և ասպիրանտուրան (2008, ղեկ.՝ Ա. Բոգդանյան): 1998-ից՝ Գյումրիի № 8, 4 և 3 երաժշտ. դպրոցներում դաշնամուրի, կամեր. անսամբլի դասատու և կոնցերտմայստեր, 2005-ից՝ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի դասախոս և կոնցերտմայստեր: Հանդես է գալիս նաև համերգներով (մենակատար, կամեր. անսամբլում, կոնցերտմայստեր):

Մենահամերգներով շրջագայել է ՀՀ-ում, Թուրքիայում, Ավստրիայում և այլուր: Մասնակցել է մի շարք միջազգ. և հանրապետ. մրցույթների, մրցույթ-փառատոների ՀՀ-ում և արտերկրում (Բելգիա, Թուրքիա):

Ուսումնասիրությունները վերաբերում են ժամանակակից հայ դաշնամուր. երաժշտությանը:

Երկ. *Разработка методики композиционных и интерпретационных задач в сюите "Бюракан" для фортепианного дуэта Левона Аствацатряна, Е., 2017.*

Թամարա Խանում

ԹԱՄՐԱԶՅԱՆ Արուսյակ Հրաչյայի (ծ. 30.10.1980, Դիլիջան), երաժշտագետ, երգեհոնահար: Արվեստագիտ. թեկնածու (2016): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի բաժինը (1998, դասատու՝ Ս. Սարաջյան), ԵՊԿ երաժշտագիտության (2003) և երգեհոնի (2005, Ա. Ադամյանի դասարան) բաժինները, ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (2011, ղեկ.՝ Ա. Ասատրյան): 2004–09-ին հատուկ ծրագրով աշխատել է երեխաների հետ, հանդես եկել երգեհոն. մենահամերգներով, հրատարակել էսսեներ, հեքիաթների ժող. (2009):

2005-ից՝ Մատենադարանի արվ-ի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի գիտաշխատող: Ուսումնասիրության ոլորտները՝ հայ միջնադար. արվ-ի տեսություն, գեղագիտություն, խորհրդաբան. և մեկնող. համակարգ (մասնավորապես՝ նորպլատոն. գեղագիտ-իմացաբան. կատեգորիաները և միջնադար. արվ-ի տեսությունը), համապարփակ խորհրդաբանության արտացոլումը երաժշտության վերապրման և տեսության մեջ, խազագրություն, երաժշտածիս. Մանրուսման ձեռագրեր, Հովհաննես Պլուզ Երզնկացու, Ներսես Լամբրոնացու մեկնությունները, Գրիգոր Նարեկացու խորհրդաբանության որոշ հատկանիշներ ևն:

Երկ. *Էսսեներ և ուսումնասիրություններ, Ե., 2013:*

Թամարա Խանումը կղույթի պահին

Ռոզա Թանդիլյան

Սերժ Թանկյանը ելույթի պահին

Լյոսի Թաշճյան

ԹԱՆԴԻԼՅԱՆ Ռոզա Արմենի (ծ. 12.05.1931, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1983): Պրոֆ. (1991): Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցը, Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանը (դասատու՝ Օ. Բաբասյան), ԵՊԿ (1955, Ա. Բաբաջանյանի դասարան): 1955-ից դասավանդել է ԵՊԿ ընդհանուր, 1960-ից՝ մասնագիտ. դաշնամուրի բաժիններում (դոցենտ՝ 1985, ամբիոնի վարիչ՝ 1991–2000-ին), միաժամանակ եղել է կոնցերտմայստեր: Սաներից են՝ Արուս Աճեմյան, Լևոն Ջավադյան, Արեգ Սիմոնյան, Կարեն Սայադյան, Անի Այդինյան և ուր.: Նվագակցել է Մեդեա Աբրահամյանին, Գերոնտի Թալալյանին, Զոյա Պետրոսյանին և ուր: Մենահամերգներով և նվագախմբերի հետ շրջագայել է ԽՍՀՄ-ում և արտերկրում: Մի շարք կոմպոզիտորների (Ա. Տերտերյան, Է. Արիստակեսյան, Գ. Հախինյան, Գ. Մելիքյան և ուր.) ստեղծագործությունների առաջին կատարողն ու խմբագիրն է:

Համահեղինակ է «Օտարալեզու երաժշտական տերմինների բառարան»-ի (2004):

ԹԱՆԿՅԱՆ Սերժ (21.08.1967, Բեյրութ), ռոք երաժիշտ, երգերի հեղինակ: Ապրում է ԱՄՆ-ում: Հանրահայտ «System of a Down» այլընտրանք. մեթալ-ռոք խմբի հիմնադիրը: Ճանաչվել է աշխարհի 26-րդ լավագույն մեթալ վոկալիստը: Որպես մենակատար՝ ձայնագրել է «Elect the Dead» և «Imperfect Harmonies» ալբոմները: Առաջին «Sail» ռոք խումբն ստեղծել է 1990-ական թթ. Տարոն ***Մաղաքյանի*** հետ (ներառել), որը հետագայում վերանվանվել է «System of a Down»: 2011-ին «System of a Down» վերամիավորված խումբը համերգներով շրջագայել է ԱՄՆ-ում և Եվրոպայում: Ունի սեփ. ձայնագրման ստուդիա (Serjical Strike):

Թ. հանդես է գալիս անարդարությունն ու դաժանությունը դատապարտող ելույթներով: Ստեղծել է (Թոմ Մորելլոյի հետ) «Axis of Justice» ՀԿ-ն, որի նպատակը երիտասարդներին աջակցելն է՝ պաշտպանելու իրենց իրավունքները քաղաքականության ոլորտում: 2015-ին խմբի հետ հանդես է եկել Երևանում (Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին): ՀՀ այցելել է նաև 2018-ին:

ԹԱՇՃՅԱՆ Լյուսի Պետրոսի [20.02(05.03).1908, Ռեշտ (Իրան)–16.09.1997, Երևան], պատմաբան: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (1970): Ավարտել է Բաքվի պետ. համալսարանը (1943): 1931–54-ին աշխատել է Բաքվում (ԳԱ պատմության ինստ., պետ. թանգարան ևն): 1954–93-ին՝ Երևանի Հ. Թումանյանի տուն-թանգարանի գլխ. ֆոնդապահ, 1971-ին՝ Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի հիմնադիրներից: Կազմել է «Հովհաննես Թումանյանը երաժշտության մեջ: Տեղեկատու» (1999, 2-րդ լրց. և ուղղված հրտ., համահեղ., 2012), «Հովհաննես Թումանյանը ՍՍՀՄ ժողովուրդների և օտար լեզուներով: Մատենագիտություն (1893–1983)» (1983), «Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը: Ցուցահանդես դպրոցում» (1966) և այլ ժող-ներ:

Դուստրը՝ Դելսուզ Արշավիրի Թ. (ծ. 09.07.1935, Բաքու), բժշկուհի: Բժշկ. գիտ. թեկնածու (1976), դոցենտ (1989): 1998–2002-ին՝ Երևանի Հ. Թումանյանի թանգարանի գիտաշխատող: Կազմել է «Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ» (2006), «Վահան Տերյանը երաժշտության մեջ» (2008), «Հովհաննես Շիրազը երաժշտության մեջ» (2012) տեղեկատուները և այլ ժող-ներ:

ԹԱՇՃՅԱՆ Նիկողայոս (1841, Կ. Պոլիս–09.09.1885, Կ. Պոլիս), երաժշտագետ, կոմպոզիտոր, մանկավարժ: Սովորել է Կ. Պոլսի Խասգյուղի Ներսեսյան վարժարանում, աշակերտել Գաբրիել ***Երանյանին***, ուսումնասիրել է հայկ. և եվրոպ. երաժշտության տեսությունը, գրել հայրենասիր. երգեր (մի քանիսը հետագայում երգչախմբի համար բազմաձայնել են ***Կոմիտասը*** և Մակար ***Եկմալյանը***):

Մասնակցել է երաժշտարվ-ի տարածմանը պոլսահայության մեջ, «Քնար հայկական» հանդեսի հրատարակմանը (Գ. Երանյանի հետ), կարդացել հանրամատչելի դասախոսություններ: 1875-ին եղբոր՝ Հակոբ Թաշճյանի հետ լույս է ընծայել «Նվագք օսմանեան» կիսամյա թերթը: Պոլսահայ մամուլում հանդես է եկել ուսումնասիր. հոդվածներով («Ժամանակ», Կ. Պոլիս, 1864, № 34, 36): Դասավանդել է Սկյուտարի Մեզպուրյան և Սամաթիայի Արամյան վարժարաններում: 1871-ին Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը հրավիրել է Էջմիածին՝

դասավանդելու Գևորգյան ճեմարանում: 1879-ից՝ Մայր եկեղեցու երաժշտապետ:

Թ-ի կարևորագույն աշխ-ը հայկ. հոգևոր երգերի վերաձայնագրությունն է՝ համաբարձում *Լիմոնճյանի* նոր հայկ. ձայնագրության համակարգով: Նա այդ երգերը գրառել է 1873-ին Էջմիածնում՝ Մ. Եկմալյանի և Պ. Ճեպեճյանի օգնությամբ, որոնք հրատարակվել են «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (1874), «Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց… Հայաստանեայց» (1875) և «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ» (1877) ծավալուն հատորներով:

Ապացուցված է, որ Թ-ի գրառած բազմաթիվ եղանակներում խազ. նոտագրությունից շատ բան պահպանվել է առանց նկատելի փոփոխության: Այդ հատորներում ամփոփված է V–XV դդ-ի հայ պրոֆեսիոնալ մոնոդիկ երաժշտության պատկառելի մի բաժին՝ ժանրերի ու ձևերի բազմազանությամբ, և ունեն գիտ. ու գեղ. մեծ արժեք:

Նշանակալի է նաև Թ-ի «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց»-ը (1874), որտեղ հեղինակը, Հ. Լիմոնճյանի նոտագրության համակարգը շարադրելուց բացի, ամփոփում է նաև հայ երաժշտության հին տեսության հիմնական դրույթները, բացահայտում ձայնեղանակների համակարգի հատկանիշները: 1874-ին Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում պատրաստել է երաժիշտների մի խումբ, որոնք նոր հայկ. ձայնագրությունը և դրանով գրառված երաժշտությունը տարածել են տարբեր վայրերում: Կ. Պոլսում նրա աշակերտներից աչքի են ընկել Ա. Բժշկյանը, Գ. Մեհտերյանը, Ռ. Ճիվանյանը, Տ. Քերեսթեճյանը:

Գրկ. *Տ ն տ ե ս ե ա ն Ե., Նկարագիր երգոց…, ԿՊ, 1874: Հ ի ս ա ր լ ե ա ն Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան…, ԿՊ, 1914: Կ ո մ ի տ ա ս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Ա թ ա յ ա ն Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Թ ա հ մ ի զ յ ա ն Ն., «Արարատ»-ն ու երգ-երաժշտության հարցերը, «Էջմիածին», 1968, № 11–12, 1969, № 3–5: Ք ո ւ շ ն ա ր յ ա ն Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008:*

ԹԱՒՈ, լար. կնտնտոց. երաժշտ. մենակատար և անսամբլ. գործիք: Տարածված է Իրանում, Այսրկովկասում և Միջին Ասիայում: Թառի (պարսկ. – լար, թել) երկգավաթ իրանը փորված է թթենու փայտի ամբողջ. կտորից, որը ծածկված է կենդան. թաղանթ. մեմբրանով: Երկարավուն կոթը ականջակիր գլխամասում պատրաստված է ընկուզենուց: Կոթի վրա 22 աղիքե փարդաներ են և մետաղե լարերը: 1920-ական թթ-ին Վարդան *Բունին* ստեղծել է 4 տարբեր մեծության թառերի ընտանիք և գործածել իր հիմնադրած Արևելյան վերակառուցված սիմֆ. նվագախմբում: Թառի կատարող. արվ-ի զարգացմանը նպաստել են Բ. Մելիքյանը, Ա. Մելիք-Աղամալյանը, Թառույնին (Ն. Սազանդարյան), Ս. Սեյրանյանը, Հ. Դարբինյանը, Ա. Խաչատուրը և ուր.:

Մարիաննա Տիգրանյան

Նիկողայոս Թաշճյան

ԹԱՒՈՅՈՒՆԻ [Սազանդարյան Ներսես, 11.01.1867, գ. Խնձորեսկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–9.11.1927], գուսան: Հորինել է երգեր և կատարել թառի նվագակցությամբ (այստեղից էլ կեղծանունը՝ թառ և Սյունիք):

Հայտնի են Թ-ու «Սյունեցու կյանքից», «Լսեք, ով սիրելիք», «Քյոխվան մեծ խալխին», «Օրը մեկին» և այլ երգեր:

Երկ. *Սազանդարեան Ն., Նոր երգարան, Թ., 1898:*

Թառ

ԹԱՎԻՋՅԱՆ Տիրան [ծ. 18.02.1977, Սկոպիե (Հս. Մակեդոնիա)], դաշնակահար: Սովորել է երաժշտ. դպրոցի դաշնամուրի դասարանում, նվագել է հարված. գործիքներ, հետաքրքրվել ջազ. երաժշտությամբ: Հանդես է եկել «Թավիջյան եղբայրներ» (եղբոր՝ Գարոյի հետ) դուետում: 1995-ից նվագել է հոր հիմնադրած «Garo & Paramecium» խմբում (դաշնակահար, երգերի հեղինակ, գործիքավորող), որի հետ շուրջ 400 համերգներով շրջագայել է Եվրոպայում. հանդես է եկել նշանավոր երաժիշտների հետ (Ջ. Զավինուլ, Բ. Մարսալիս, Մ. Թայներ, Բ. Բրադրզ և ուր.): Մասնակցել է միջազգ. ջազ. փառատոների Գերմանիայում, Իտալիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Ավստրիայում, Էստոնիայում, Խորվաթիայում, Լեհաստանում, Հարավսլավիայում և այլուր:

Որպես գործիքավորող՝ համագործակցել է մի շարք հանրահայտ փոփ երգիչների հետ, մասնակցել երաժշտ. նախագծերի: Արժանացել է Մակեդոնիայի ՄՆ «Անկախ արտիստ» կոչման (2002): Եղբոր հետ ձայնագրել է «Tavitjan Brothers Trio» սկավառակը (Մեծ Բրիտանիայի «Սոնի» միջազգ. երաժշտ. մրցույթի 1-ին մրց., 2012, եղբոր հետ՝ «Մակեդոնիայի երաժշտութ-

Տիրան Թավիջյան

Թավջութակ

յան դեսպաններ» կոչում): Հեղինակ է կինոերաժշտության:

2013-ին եղբոր հետ Երևանում հանդես է եկել հայկ. ջազի 75-ամյակին նվիրված համերգում:

ԹԱՎՋՈՒԹԱԿ (իտալ.՝ violoncello), ջութակի ընտանիքի բաս-տենոր. ռեգիստրի աղեղնավոր երաժշտ. գործիք: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (մեծ օկտավայի դո և սոլ, փոքր օկտավայի ռե և լա): Մենակատար, անսամբլ. և նվագախմբ. գործիք է: Ստեղծվել է XV դ-ի վերջ–XVI դ-ի սկզբին: Թ-ի դաս. նմուշները պատրաստել են իտալացի վարպետներ Ա. և Ն. Ամատիները, Ա. Ստրադիվարիուսը, Ջ. Գվառներին XVII–XVIII դդ-ում: Թ-ի համար գրվել են սյուիտներ, սոնատներ, կոնցերտներ և այլ գործեր:

ԹԱՎՐԻԶՅԱՆ Միքայել Արսենի [14 (27).05.1907, Բաքու–17.10.1957, Երևան], դիրիժոր: ՀԽՍՀ (1944), ԽՍՀՄ ժող. (1956) արտիստ, ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ: Սովորել է Բաքվի կոնսերվատորիայում (1923–26, Ս. Բրիտանիցկու դասարան), ավարտել Լենինգրադի կոնսերվատորիայի ալտի (1932) և դիրիժորության (1934, Ա. Վ. Գաուկի դասարան) բաժինները: 1934-ին Թիֆլիսի օպեր. թատրոնում ղեկավարել է Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան», «Տոսկա», Շ. Գունոյի «Ֆաուստ» և այլ օպերաներ:

Միքայել Թավրիզյան

1935-ից՝ ԵՕԲԹ (1938-ից՝ գլխ.) դիրիժոր, 1946-ից՝ գեղ. ղեկ.: Ղեկավարել է Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն», Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», «Իոլանտա», Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Աիդա», «Օթելլո», Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ» և այլ օպեր. ներկայացումներ, որոնք նպաստել են թատրոնի գեղ. մակարդակի բարձրացմանը:

Թ. իրականացրել է Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ», Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Հ. Ստեփանյանի «Լուսաբացին», «Հերոսուհին», Ա. Այվազյանի «Թափառնիկոս», Ա. Բաբաևի «Արծվաբերդ» օպերաների առաջին բեմադրությունները: 1948-ին հանդես է եկել Մոսկվայի Մեծ թատրոնում («Ռիգոլետտո», «Իոլանտա»):

Թ-ի կատարմանը բնորոշ էին ռոմանտիկ. ոգեշնչվածությունը, մեղեդիական ճկունությունն ու ռիթմի սուր զգացողությունը, հուզ. լարվածությունն ու արտահայտչականության որոշակիությունը: Հանդես է եկել նաև որպես սիմֆ. դիրիժոր. նրա ղեկավարությամբ հնչել են Ա. Խաչատրյանի 2-րդ, Դ. Դ. Շոստակովիչի 7-րդ (Երևանի միացյալ սիմֆ. նվագախումբ) սիմֆոնիաները: 1956-ին հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակի օրերին Մոսկվայի Մեծ թատրոնում ղեկավարել է Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերան:

ԽՍՀՄ IV (1954–58), ՀԽՍՀ II և III (1947–55) գումարումների ԳԽ պատգամավոր: Վանաձորում գործում է Թ-ի անվ. արվ-ի պետ. քոլեջը, երաժշտ. դպրոց:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1951), Լենինի, Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

Գրկ. *Խանջյան Հ. Ս., Միքայել Թավրիզյան, Ե., 1957:*

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտություն թատեր. ներկայացումների համար: Դրամատիկ. թատրոնում այն չունի հիմնորոշ դեր, սակայն լրացնում, հարստացնում է թատեր. գործողության հուզ. բովանդակությունը, նպաստում դրամատիկ. բախումների բացահայտմանը, գործող անձանց բնութագրմանը: Օգտագործման չափն ու բնույթը պայմանավորված են՝ 1. դրամատուրգի ուղղակի նշումներով (օր.՝ Ուռենու երգը՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության մեջ, Անհույս սիրո երգը՝ Ա. Ն. Օստրովսկու «Անօժիտը» դրամայում, Կակուլիի, Կեկելի, Էփեմիայի երգերը՝ Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգության մեջ, հեռացող զինվոր. նվագախմբի քայլերգը՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր» դրամայում, ևն), 2. պիեսի բովանդակությամբ (օր.՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Հ. Իբսենի «Պեր Գյունտ», Շիրվանզադեի «Նամուս», Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» ևն), 3. ռեժ-ի մտահղացմամբ (օր.՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», երաժշտ.՝ Ա. Սպենդիարյանի, 1925, Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», երաժշտ.՝ Ս. Բարխուդարյանի, 1934, Դ. Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկոտյան», երաժշտ.՝ Ա. Սաթյանի, 1934, Ա. Արաքսմանյանի «Վարդեր և արյուն», երաժշտ.՝ Վ. Կոտոյանի, 1957, Պ. Յավորովի «Վիտոշի փեշերին», երաժշտ.՝ Մ. Վարդազարյանի, 1966, ևն):

Հայտնի են Թ. ե-յան նմուշներ, որոնք կատարվում են պիեսից և ներկայացումից

անկախ (օր.՝ Է. Գրիգի երաժշտությունը՝ Հ. Իբսենի «Պեր Գյունտ»-ի, Ա. Խաչատրյանի երաժշտությունը՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես»-ի, Գ. Եղիազարյանի երաժշտությունը՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ»-ի համար, ևն):

Պայմանավորված ամերիկ. դրամատիկ. թատրոններում երաժշտության ակնհայտ գերակշռությամբ՝ 1920–30-ական թթ-ին սկզբնավորվել է ***մյուզիքլ*** ժանրը:

Թ. ե. են գրել նաև Է. Խոջա-Էյնաթովը, Ս. Բալասանյանը, Կ. Զաքարյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Դոլուխանյանը, Գ. Եղիազարյանը, Է. Հովհաննիսյանը, Ա. Ածեմյանը, Զ. Տեր-Թադևոսյանը, Է. Բաղդասարյանը, Ա. Բաբաջանյանը, Ա. Սաթունցը, Ծ. Համբարձումյանը, Տ. Մանսուրյանը, Ա. Տերտերյանը, Ռ. Ամիրխանյանը, Ա. Սաթյանը, Ս. Լուսիկյանը և ուր.:

«ԹԱՏՐՈՆ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ», թատեր-երաժշտ. պատկերազարդ երկամսյա հանդես: Լույս է տեսել 1910–17-ին Բաքվում: Խմբ-հրատարակիչ՝ Անտոն ***Մանիյան***: Տպագրել է հայկ., ռուս., արևմտաեվրոպ. թատրոնին և երաժշտությանը վերաբերող ուսումնասիրություններ, գրական ստեղծագործություններ, կենսագրականներ, հուշեր, թարգմանություններ, նաև Պ. Ադամյանի նամակներից, Լեոյի «Հայ արվեստը» աշխ-ը: Հանդեսին աշխատակցել են Կոմիտասը, Գ. Չմշկյանը, Գ. Բաշինջաղյանը, Ա. Սանուկյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը և ուր.:

ԹԱՐԻՎԵՐԴԻԵՎ Միքայել Լևոնի (15.08.1931, Թբիլիսի–25.07.1996, Սոչի, թաղված է Մոսկվայում), կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1986): Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիային կից երաժշտ. դպրոցը, Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ի կոմպոզիցիայի բաժինը (1957, Ա. Խաչատրյանի դասարան), 1 տարի սովորել է նաև ԵՊԿ-ում (Գ. Եղիազարյանի դասարան): 8 տարեկանում գրել է դաշնամուր. մի քանի պիեսներ, 10 տարեկանում՝ սիմֆոնիա: 1947-ին նրա 1 գործողությամբ «Հարցաքննություն» բալետը բեմադրվել է Թբիլիսիի օպեր. թատրոնում:

Թ-ի ռոմանսները ՄՊԿ դահլիճում կատարել է Զարուհի *Դոլուխանյանը*:

Նրա բազմաժանր ստեղծագործության հիմնական ոլորտներն են երաժշտ. թատրոնն ու կամեր. երաժշտությունը: Գրել է «Ո՞վ ես» օպերան (ըստ Վ. Ակսյոնովի, 1966), «Կոմս Կալիոստրո» օպերա-բուֆը (ըստ Ա. Տոլստոյի, 1983, բեմ.՝ Մոսկվայի կամեր. երաժշտ. թատրոն), «Սպասում» մոնոօպերան (1985, Մոսկվայի կամեր. երաժշտ. թատրոն, Սոֆիայի ՕԲԹ, 1990, ԵՕԲԹ, 1992), «Ֆիգարենկոյի ամուսնությունը» երգիծ. օպերան (Բոմարշեի մոտիվներով, 1989–90), «Ծովափին», «Հարցաքննություն» (երկուսն էլ՝ 1947), «Պոեմ երջանկության» (1973–74), «Աղջիկը գնդի վրա» («Գեռնիկա», 1984), «Աղջիկն ու մահը» (ըստ Մ. Գորկու, 1987) բալետները, ջութակի 1-ին (1982) և 2-րդ (1992) կոնցերտները, կոնցերտ՝ ալտի և լար. գործիքների համար (1994, Յ. Բաշմետի պատվերով), դաշնամուրի, ջութակի և թավջութակի տրիոն, «Տրամադրություններ» դաշնամուր. շարքը (24 պիես), 2 երգ (Ն. Դոբրոնրավովի խոսքերով, 1963), 3 ռոմանս (Ս. Ի. Կիրսանովի խոսքերով, 1960), 3 ռոմանս (Ա. Իսահակյանի խոսքերով, 1955), «Զրանկարներ» վոկալ շարքը (միջնադար. ճապոնացի բանաստեղծների տեքստերով, 1957), վոկալ շարքեր (Վ. Վ. Մայակովսկու՝ 1958, Լ. Ն. Մարտինովի՝ 1962, Բ. Ա. Ախմադուլինայի՝ 1963, և ուր. խոսքերով), նաև երգեր ու ռոմանսներ՝ Մ. Յ. Լերմոնտովի, Ռ. Ս. Ռոժդեստվենսկու, Լ. Աշքենազիի, Ա. Ա. Վոզնեսենսկու, Մ. Ի. Յվետաևայի, Բ. Լ. Պաստեռնակի և ուր. տեքստերով:

Առանձնակի ուշադրություն է դարձրել երգեհոն. երաժշտությանը [«Կասանդրա» (1986) կոնցերտը, «Չեռնոբիլ» սիմֆոնիան (1988), «Պոլիֆոնիկ տետր» (1998) կոնցերտը, 4 պիես (1989), 10 խորալ (1995)]:

Առավել ճանաչվել է կինոերաժշտությամբ (շուրջ 130 ֆիլմ), որտեղ որոշիչ ու առանցքային է երգը՝ օժտված ներքին մենախոսության գործառույթով («Մնաս բարով», «Եղջերու արքան», «Տասնհինգերորդ գարուն», «Գարնան տասնյոթ ակնթարթ», «Կորած արշավախումբը», «Ճակատագրի հեգնանք կամ Բաղնիքդ անուշ», «Ոսկե գետակ», «Հսառճ կատակերգություն», «Ադամն ամուսնանում է Եվայի հետ», «Բժշկի աշակերտը» ևն):

Թ. սինթեզատորով փորձարարություններ կատարած խորհրդ. շրջանի առաջին կոմպոզիտորներից է (հայտնագործել է «ռինգտոն» կոչվող կարճ մեղեդիները):

Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միության կինոյի կոմպոզիտորների

«Թատրոն եւ երաժշտութիւն» հանդեսը (1916, № 1)

Միքայել Թարիվերդիև

գիլդիայի ղեկ.: 1988-ին «Կինոտավրոս» ռուս. կփ-ի հիմնական մրցույթի շրջանակներում սահմանվել է Թ-ի անվ. մրց. (լավագույն երաժշտության համար), 1999-ին կազմակերպվել է Ռուսաստանում անցկացվող երգեհոնահարների միակ միջազգ. մրցույթը (2 տարին մեկ, Կալինինգրադ):

Մոսկվայում գործում է «Միքայել Թարիվերդիևի ստեղծագործական ժառանգության բարեգործական հիմնադրամը»:

2008-ին Երևանում և ԼՂՀ-ում անցկացվել է «Միքայել Թարիվերդիևի երաժշտության օրերը» փառատոնը. կատարվել են Թ-ի «Սպասում» մոնոօպերան, կամեր. գործերը, վոկալ շարքերը և կինոերաժշտությունը: Երգեհոն. գործերով հանդես են եկել Թ-ի անվ. երգեհոնահարների միջազգ. մրցույթի դափնեկիրներ Եկատերինա Մելնիկովան (ՌԴ), Ժան-Պիեռ Ստայվերսը (Նիդեռլանդներ) և Հովհաննես Մանուկյանը (ՀՀ):

Միքայել Թարիվերդիև

ԽՍՀՄ Պետ. մրց. (1977), Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1978), ՀամԼԿԵՄ (1977), «Նիկա» (1991, 1994, 1997), միջազգ. 18 (Ամերիկ. երաժշտության ակադ-ի, 1975, ճապոն. «Վիկտոր» ձայնագրման ֆիրմայի, 1978, ևն) մրց-ներ:

Երկ. *Я просто живу: Автобиография, М., 2011.*

Գրկ. *Цукер А., Микаэль Таривердиев, М., 1985; Таривердиева В., Биография музыки, М., 2004.*

Անահա Աասպրյան

ԹԵԹԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (անգլ.՝ easy listening), ***փոփ*** երաժշտության եզրույթ. ներառում է պար., վոկալ, գործիք., նաև էստրադ., երաժշտ. թատրոնի (օպերետ, մյուզիքլ, շոու) ժանրերը, որոնց պարզ, հեշտությամբ ընկալվող մեղեդիները մատչելի են լայն զանգվածներին: Որպես կանոն՝ կատարվում են էստրադ. նվագախմբի նվագակցությամբ: Թ. ե-յան բազմաթիվ կոմպոզիցիաներ հայտնի հիթերի գործիք. մշակումներ են:

XIX դ-ում Թ. ե-յան դաս. նմուշներ են ստեղծել հայր և որդի Շտրաուսները, Ժ. Օֆֆենբախը, Յ. Լանները, Տ. Չուխաճյանը, Ա. Այվազյանը և ուր.: XX դ-ում տարածվել է ջազ. Թ. ե.: Կատարող. կազմը՝ կամեր., վոկալ-գործիք. անսամբլներ, սիմֆ., ջազ. նվագախմբեր:

1930-ական թթ-ին ժանրերի փոխներթափանցման հետևանքով ստեղծվել է սիմֆոջազը, էլեկտր. երաժշտ. գործիքների շնորհիվ ձևավորվել է սպառող. նշանակության ***փոփ*** երաժշտությունը:

Թ. ե-յան ոսկեդարը 1950–70-ական թթ-ին էր. ծաղկել է նվագախմբ. և ավանդ. էստրադ. երաժշտության «արտադրությունը»: 1950-ական թթ-ին նոր նվագախմբերն անդրադարձել են դաս. գործերի փոխադրման սկզբունքներին: Առավել ճանաչվել են Պ. Ֆեյտի, Ջ. Գլիսոնի, Ռ. Կոնիֆի, Պ. Մորիայի, Բ. Քեմփֆերտի, Ջ. Լաստի, Է. Վենտուրայի, Բ. Փոփսի, Ա. Այվազյանի, Մ. Վարդազարյանի, Ե. Երզնկյանի նվագախմբերը, երգիչներ Ֆ. Սինատրան, Պ. Կոմոն, Է. Ուիլյամսը, Է. Համբերդինքը, Բ. Մանիլոուն, Դ. Մարտինը, Ժ. Դուվալյանը, Կ. Տոնիկյանը, Գ. Մինասյանը, դաշնակահարներ Ռ. Օլդրիչը, Ֆ. Կրամերը, Բ. Ջոզեֆը, Ռ. Քլայդերմանը, Տ. Յանկովսկին, կիթառահարներ Չ. Աթքինսը, Ֆ. Գոյը, Լ. Պոլը, Ա. Շահբազովը և ուր.:

Թ. ե. բնույթով սովորաբար կենսուրախ և զվարճալի է՝ ոչ բարդ մեղեդայնությամբ ու ռիթմով: Նրան բնորոշ են քայլերգեր, ոչ մեծ նախերգանքներ, սյուիտներ, ռապսոդիաներ, պոպուրիներ, ֆանտազիաներ, կատակ. և փոփ երգեր: XX դ-ում տարածված ջազ. «Թ. ե.» եզրույթը հաճախ համընկնում է «լաունջ» եզրույթին, որին բնորոշ է ջազի ազդեցությունը՝ իմպրովիզացիան և կամերայնությունը:

ԹԵՄԱ (< հուն. θέμα – այն, ինչ դրված է հիմքում), երաժշտ. ստեղծագործության կառուցվածքի հիմնական բաղադրիչներից, որով բնութագրվում են նրա նկարագիրն ու միտքը: Լայն առումով՝ Թ. այն կարևոր բնորոշիչն է, որով առանձնանում է տվյալ ստեղծագործությունը: Պոլիֆոնիկ երկերում (մասնավորապես՝ ֆուգայում) սովորաբար կարճ է և միաձայն, հոմոֆոն ստեղծագործություններում՝ համեմատաբար տևական. կազմված է գլխ. մեղեդու և հարմոնիայի ձայների միասնությունից: Երբեմն Թ-ի նախանյութը որևէ ժող. մեղեդի է («Որսկան ախպեր» երգի մեղեդին՝ Ա. Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիայի 3-րդ մասի թեմայում, ևն): Կան, այսպես կոչված, «հավերժական» Թ-ներ (հայրենասիր., բնության, սիրո ևն), որոնք արտացոլված են բոլոր սերունդների արվ-ի ստեղծագործություններում:

ԹԵՅՄՈՒՐԱԶԱՆ Նիկոլայ Ալեքսանդրի [05(17).01.1884, գ. Հիլիս (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–28.07.1960, Երևան], դիրիժոր, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1939): Սովորել է Շուշիի ռեալ. դպրոցում, 1904–06-ին՝ Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանի կապելմայստեր. բաժնում (Զ. Փալիաշվիլու դասարան): 1907-ից Շուշիում դասավանդել է երգ-երաժշտություն: 1919-ին տեղափոխվել է Երևան: Հիմնադրել և ղեկավարել է փող. նվագախմբեր Երևանում, Լենինականում, Կիրովականում, Էջմիածնում, Աշտարակում: 1947-ին Երևանի հանրային գրադարանում (այժմ՝ Հայաստանի ազգ. գրադարան) հիմնադրել է նոտային գրկյան բաժին (ղեկ.՝ մինչև 1953-ը), ստեղծել արխիվ. փաստաթղթերի հարուստ հավաքածու: Փող. նվագախմբի համար ներդաշնակել է հայկ. ժող. մեղեդիներ, գրել քայլերգեր, կազմել և հրատարակել մատենագիտություններ («Քրիստափոր Կարա-Մուրզա», 1956, «Կոմիտաս», 1957, «Մակար Եկմալյան», 1959, «Տիգրան Չուխաջյան, 1964, «Հայ ականավոր երգիչներ», համահեղ., 1974, ևն):

ԹԵՐՋԱՆ Ալիսիա Հովհաննեսի [ծ. 01.06.1932, Կորդովա (Արգենտինա)], կոմպոզիտոր, դաշնակահարուհի, հաս. գործիչ: Ավարտել է Բուենոս Այրեսի ազգ. կոնսերվատորիայի դաշնամուրի (1954) և կոմպոզիցիայի (1959) բաժինները: 1962-ին Վենետիկի Սբ Ղազար կղզում ուսումնասիրել է հայ միջնադար. հոգևոր երգարվ-ը: Բուենոս Այրեսի կոնսերվատորիայի պրոֆ., «Կոլոն» օպեր. թատրոնի խորհրդատու, Արգենտինայի ԿՄ քարտուղար, Հվ. Ամերիկայի ժամանակակից երաժշտության ընկերության նախագահ, Հվ. Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների միջազգ. երաժշտ. խորհրդի ներկայացուցիչ ՅՈՒՆԵՍԿՕ-ում, «Հայ երաժշտական գործադրություն» ընկերության հիմնադիր:

Գրել է պիեսներ («Տոկատտա», «Կրիոլների պարը»)՝ դաշնամուրի, լար. քառյակի, երգեր՝ մենակատարի («Երեք նկար», շարք) և երգչախմբի («Գեղոններ»), մոտետներ՝ ձայնի և դաշնամուրի, երկեր՝ կամեր. անսամբլի, «Կերպարների տետր»՝ երգեհոնի համար, սիմֆոնիա («Նոկտյուռն»), ջութակի և նվագախմբի կոնցերտ, «Ատմոսֆերներ» դաշնամուրի զուգանվագը, որոնք կատարվել են մի շարք երկրներում: Ինքնատիպ գործերից են նաև «Աբ օվօ»-ն՝ լար. քառյակի, վիբրաֆոնի, ծնծղայի և մեցցո սոպրանոյի, «Երեք կենդանագրերը»՝ քառյակի և մեցցո սոպրանոյի համար, «Չորս մանկական երգերը»: Նրա ստեղծագործություններին բնորոշ են ժամանակակից երաժշտության ազատ դրսևորումները, հայկ. հնագույն տաղերի ինտոնացիոն ու ռիթմ. հնարքների, հայկ. ժող. և Հվ. Ամերիկայի ժողովուրդների ազգ. երաժշտության տարրերի համադրումը:

Նիկոլայ Թեյմուրազյան

Մենահամերգներով հանդես է եկել Հվ. Ամերիկայում, Մերձ. Արևելքի երկրներում, Իսպանիայում, բազմիցս՝ Հայաստանում (1972-ից): Երկացանկում՝ դաս. և ժամանակակից կոմպոզիտորների դաշնամուր. գործեր: «Gruppo Encuentros» (1978) ժամանակակից երաժշտության անսամբլի հիմնադիր-ղեկ. (2001-ին ելույթ է ունեցել Երևանում):

Հեղինակ է «Արգենտինյան երաժշտական մտքի զարգացումը» աշխ-յան:

Արգենտինայի ԿՄ (1971), ՄՆ Ազգ. 1-ին (1982), Ֆրանսիայի Կառավարության «Արմավենու ճյուղ» (1979), ՀԿՄ Կոմիտասի անվ. (1983) մրց-ներ, ՀԱԵ «Սբ Մեսրոպ-Սբ Սահակ» շքանշան (1988):

Ալիսիա Թերջան

ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ Ռուբեն Գրիգորի (1898, Վան–1942, Երևան), երաժշտագետ: ԱՀՊ (1914–18) ժամանակ գաղթել է Կովկաս, որպես ուսուցիչ աշխատել է Աշտարակում: 1919-ին մեկնել է Վիեննա, սովորել տեղի համալսարանում, ստացել երաժշտ. կրթություն: Սովորելու տարիներին արևմտահայ մամուլում հանդես է եկել Ք. Կարա-Մուրզայի և այլ կոմպոզիտորների մասին հոդվածներով: 1925-ից ապրել է Երևանում:



Ռուբեն Թերլեմեզյան

1933–36-ին ղեկավարել է Հայպետհրատի երաժշտության բաժինը, մասնակցել է Ք. Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Գ. Սյունու, Ն. Տիգրանյանի երկերի ժող-ների հրատարակմանը: Հեղինակ է «Կոմիտաս վարդապետ. կյանքը և գործունեությունը» (1924), «Քրիստափոր Կարա-Մուրզա» (1925), «Կոմիտաս» (հրտ.՝ 1992) աշխ-ների: Կազմել է «Կոմիտաս» (1930) հուշագրությունների և «Կոմիտաս. Հոդվածներ և ուսումնասիրություններ» (1941) ժող-ները:

ԹԵՔՈՒՄ, 1. ձայնակարգի տեսակ. բնորոշվում է I և III աստիճանների միջև մեծ (մաժոր) կամ փոքր (մինոր) տերցիա-

Ռուբեն Թերլեմեզյանի «Կոմիտաս» գրքի (1992) շապիկը

Թիֆլիս

Թմբուկ



Սուրեն Թովմասյան

յով, համապատասխանաբար տարբերում են Թ-ման մաժոր և մինոր տեսակները: Մաժոր Թ-ով ձայնակարգերին բնորոշ են պայծառ, լուսավոր, առույգ, մինոր Թ-ով ձայնակարգերին՝ թախծոտ, տխուր ինչերանգները:

2. Տետրախորդի և ձայնակարգի տեսակ հինհուն. երաժշտության մեջ. բնորոշվում է հնչյունաշարի աստիճանների միջև ինտերվալների մեծությամբ: Տարբերում են Թ-ման դիատոնիկ, խրոմատիկ և էնհարմոնիկ տեսակները:

ԹԻՖԼԻՍ [Մանուկյան Եղո, 1845, գ. Սուլդա (այժմ՝ Վրաստանի Ախալքալաքի շրջանում)–1923, Բաթում], աշուղ: Աշուղ. արվ. սովորել է Սիայուց: Հորինել է սիրո, նաև անարդարության դեմ բողոքի թեմաներով 200-ից ավելի երգեր, որոնք (նաև Սայաթ-Նովայի, Շիրինի և ուր. աշուղների գործեր) երգել և տարածել է Ջավախքում: Հայտնի են Թ-ի «Խնամի, օջախդ շեն է», «Եկել եմ բարի տեսության», «Ձեզ՝ բարի լույս» և այլ երգեր: Եղել է *Հավատու* ուսուցիչը: 1918-ի գաղթից հետո հաստատվել է Բաթումում: 2016-ին հրատարակվել է աշուղ Թիֆիլու երգերը:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գործել է 1912–21-ին Թիֆլիսում, ընդգրկել է *«Երաժշտական լիգա»*-ի անդամներին և այլ երաժիշտներին: Նպատակը հայկ. միջավայրում արմ. երաժշտարվ-ը տարածելն էր, հայկ. երգն ու երաժշտությունը հավաքելը, ներդաշնակելն ու զարգացնելը: Վարչության կազմում ընտրվել են Հովհաննես Սպենդիարյանը, Նիկոլայ Դոլուխանյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Գիսակ Վրույրը և ուր.: Նախագահներ՝ Հ. Սպենդիարյան (1912-ից), Հ. Տեր-Դավթյան (1914-ից), Ս. Մելիքյան (1917-ից):

Ընկերությունը կազմակերպել է մրցույթներ, հայ կոմպոզիտորների ստեղծագործ. երեկոներ, գիտ. արշավախմբեր՝ Հայաստանի շրջաններում ժող. երգեր ձայնագրելու համար: Այդ երգերն առաջին անգամ ձայնագրվել են ֆոնոգրամի գլանների վրա, որոնք հետագայում վերծանել և նոտագրել է Ս. Մելիքյանը և հրատարակել «Ժողովրդական երգեր» ժող-ում (հ. 1, «Շիրակի երգեր», 1917): Հայ գրերի գյուտի 1500-ամյակի և տպագրության 400-ամյակի առթիվ տպագրել է Ս. Մելիքյանի «Յունական ազդեցութիւնը հայ երաժշտութեան տեսականի վերայ» (1914) աշխ-ը: 1916-ին կազմակերպել է Ա. Սպենդիարյանի հեղինակ. համերգը, 1918-ին հիմնադրել է երաժշտ. դպրոց (ճեմարան):

ԹՄԲՈՒԿ, հարված. երաժշտ. գործիք: Տարածված է աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների մեջ: Գոյություն ունեն Թ-ի բազմաթիվ ձևեր՝ միակողմանի շրջանակաձև (դափ), երկկողմանի գլանաձև (դհոլ), կաթսայաձև 1 կամ 2 անոթներից բաղկացած (նաղարա կամ դիպլիպիտո) ևն: Հիմնականում ընդգրկված են անսամբլներում:

ԹՈՎՄԱՍՅԱՆ Նարեկ Վալենտինի (ծ. 13.11.1976, Երևան), երաժշտագետ: Վալենտին *Թովմասյանի* որդին: Արվեստագիտ. թեկնածու (2002): ՀԺՄ (1997), ՀԿՄ (2004) անդամ: Ավարտել է ԵՊԿ ջութակի (Կ. Դոմբաևի դասարան), երաժշտագիտության (1999, Ի. Տիգրանովայի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2002, ղեկ.՝ Ա. Սարյան), Զալցբուրգի Արվ-ի կառավարման միջազգ. ամառ. ակադ-ը (2003, Ավստրիա), մշակութ. քաղաքականության «Ամստերդամ-Մաաստրիխտ» ամառ. համալսարանը (2004, Նիդեռլանդներ): 1993–2000-ին՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ջութակահարների անսամբլի կազմում, 2001–03-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հաս-յան հետ կապերի և հրատարակչական աշխ-ների բաժնի պետ, 2003–05-ին՝ Հայաստանի երաժշտ. ընկերության երաժշտագետ-խորհրդատու, 2006-ից՝ Բրիտ. խորհրդի հայաստան. մասնաճյուղի ծրագրերի ղեկ., 2008–16-ին՝ «Բաց հասարակության ինստիտուտ» հիմնադրամի հայաստան. մասնաճյուղի խորհրդատու:

Դասավանդել է Ցինցինատիի համալսարանում (Օհայո՝ ԱՄՆ), Կ. Մ. ֆոն Վեբեռի կոնսերվատորիայում (Դրեզդեն՝ Գերմանիա), Կովկասի ինստ-տում, ԵԹԱԿԻ-ում, ԵՊԿ-ում, Հայ-ռուս. (Սլավոն.) համալսարանում:

ԹՈՎՄԱՍՅԱՆ Սուրեն Վարդանի (1924, Երևան–1999, Երևան), դուդուկահար: ՀՀ վաստ. արտիստ: 12 տարեկանից նվագել է Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների, հետագայում՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլներում: 1974-ին մասնակցել է Սախալինում (ՌԴ) հայ երաժշտության օրերին: Ձայնագրություններ ունի ՀՀ ռադիոյի և հեռուստատեսության ֆոնդերում:

Սարհաննա Տիգրանյան

ԹՈՎՄԱՍՅԱՆ Վալենտին Խաչիկի (ծ. 17.12.1937, Երևան–29.12.2017, Երևան), շեփորահար: Նարեկ ***Թովմասյանի*** հայրը: Արվեստագիտ. թեկնածու (2011): ՀԹԳՄ (1960), ՀԵԸ (1980), ՀԺՄ (1981) և ՀԿՄ (2015) անդամ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1958, դասատու՝ Ա. Կարապետյան), ԵՊԿ (1967, Մ. Խաչատրյանի դասարան): 1958–62-ին դասավանդել է Մեղրիի երաժշտ. դպրոցում, 1978–89-ին՝ ԵՊՄԻ-ում, 1992-ից՝ ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2004-ից): 1962–67-ին՝ Երևանի «Նաիրի» կինոթատրոնի ջազ., 1964–67-ին՝ «Երևան» փող., 1967–77-ին՝ Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի կամեր-սիմֆ. նվագախմբերի շեփորահար, 1977–2006-ին՝ ՀՀ ռադիոյի երաժշտ. հաղորդումների գլխ. խմբագրության երաժշտ. մենեջեր, խմբ. (4000-ից ավելի ռադիոհաղորդումներ, այդ թվում՝ «Վէմ» և Մոսկվայի «Օստանկինո» ռադիոկայանների համար), 2004-ից՝ «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար, ԵՊԿ հրտ-յան բաժնի վարիչ:

Հեղինակ է «Լորիս Ճգնավորյան. կյանքն ու ստեղծագործությունը» (1994), «Կյանքի ուրվագիծ. Միքայել Խաչատրյան» (2004), «Փողային և հարվածային գործիքներ փայտից և պղնձից» (2011) գրքերի, «Փայտյա, պղնձյա փողային և հարվածային գործիքների կատարողական արվեստի պատմություն» (2014), «Փայտյա, պղնձյա փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա» (2014) դասագրքերի:

ԹՈՐՈՍՅԱՆ Շողիկ Հովհաննեսի (ծ. 26.10.1974, Բեյրութ), երգչուհի (քնար. սոպրանո): Ավարտել է Բեյրութի «Բարսեղ Կանաչյան» կոնսերվատորիան (2007, այժմ՝ սոլֆեջջոյի դասատու, դիպլոմը նույն թվականին հավաստագրվել է ԵՊԿ-ում):

Երկացանկում՝ հայ հոգևոր, ժող. երգեր, նաև եվրոպացի, ռուս և հայ կոմպոզիտորների (Կոմիտաս, Ա. Բաբաջանյան, Ս. Շաքարյան, Է. Գյանջումյան, Գ. Սնանասյան և ուր.) ստեղծագործություններ, նաև ռոմանսներ (Ռ. Մելիքյան, Ն. Գալանդերյան, Բ. Կանաչյան և ուր.): 2009-ից հանդես է գալիս մենահամերգներով՝ ՄՏԿԿ «Շնորհալի» և Համազգայինի «Գուսան» երգչախմբերի հետ:

2015-ին համերգով հանդես է եկել Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին, 2016-ին (Հայաստանի ազգ. նվագարանների նվագախմբի հետ) և 2018-ին (Հայաստանի պետ. սիմֆոնիկ նվագախմբի հետ) մենահամերգներ է ունեցել Երևանում: Համերգներով շրջագայել է նաև արտերկրի հայաշատ համայնքներում (Մոնրեալ, 2018, ևն):

Թողարկել է «Փունջ մը շարականներ», «Մեղեդիներ, տաղեր, գանձեր» (Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի հովանավորությամբ) խտասալիկները:

ԹՈՓԻԿՅԱՆ Հարություն Ժիրայրի (ծ. 23.07.1951, Երևան), խմբավար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Ավարտել է ԵՊԿ (1973): 1979–84-ին՝ Հայկ. հեռուստառադիոյի հայ երգի, 1984–91-ին՝ ԵՊՀ «Կոմիտաս», 1991–94-ին՝ Բեյրութի «Գուսան» կամեր. երգչախմբերի հիմնադիր-ղեկ., 1996-ից՝ Երևանի կամեր. երգչախմբի գեղ. ղեկ. և խմբավար: Վերջինի հետ մասնակցել է «Երգի կամուրջներ» (1991, Տալլին, 1997, Ռավեննա՝ Իտալիա), Հայ մշակույթի օրեր (1998, 2000, 2002, Գերմանիա, 1999, Բերգեն՝ Նորվեգիա), «Սանկտ Պետերբուրգի պալատները», 2003, Ս. Պետերբուրգ) միջազգ. փառատոներին: ՀԼԿԵՄ մրց. (1982):

ԹՈՓՉՅԱՆ Էդուարդ Ստեփանի (ծ. 06.05.1971, Երևան), դիրիժոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2006): Ավարտել է ԵՊԿ (1990): 1991–2011-ին՝ «Սերենադ» կամեր. (հիմնադիր՝ Թ.), 2000-ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Իրականացրել է Ջ. Վերդիի «Աիդա», «Սիմոն Բոկկանեգրա», Ջ. Պուչչինիի «Բոհեմ», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ» օպերաների համերգ. կատարումները, 700-ից ավելի սիմֆ. համերգներ: 1998-ից հանդես է գալիս եվրոպ. հանրահայտ սիմֆ. նվագախմբերի հետ: Թողարկել է 6 ձայնասկավառակ՝ Ա. Վիվալդիի, Ա. Շյոնբերգի, Է. Միրզոյանի երկերի կատարումներով:

Վ. Բույչիի միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1995, Հռոմ), ՀՀ ՄՆ (2011), Երևանի քաղաքապետի ոսկե (2014), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016) մեդալներ, «Իտալիային մատուցած ծառայությունների համար» շքանշան (2013):

Վալենտին Թովմասյան



Շողիկ Թորոսյան

Հարություն Թոփիկյան

Էդուարդ Թոփչյանը կլոյթի պահին

Կառլեն Թոփչյան

Արման Թոքաթյանը Դոն Խոսեի դերում (Ժ. Բիզեի «Կարմենն»)



Թութակ

ԹՈՓՉՅԱՆ Կառլեն Խաչատուրի (14.02.1937, Լենինական–11.04.2017, Երևան), դաշնակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1977): Պրոֆ. (2002): Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (1951–54), ավարտել Գյումրու Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանի, ԵՊԿ (1960, Ռ. Անդրիասյանի դասարան) դաշնամուրի բաժինները: 1958–62-ին՝ կոնցերտմայստեր ԵՕԲԹ-ում, 1962–78-ին՝ Հայաստանի պետ. երգչախմբում: 1978–81-ին ապրել է Եգիպտոսում: 1981–2017-ին դասավանդել է ՀՊՄՀ-ում (գործիք. ամբիոնի վարիչ՝ 1986–2006-ին): Որպես կոնցերտմայստեր՝ Գ. Գասպարյանի, Պ. Լիսիցյանի, Զ. Դոլուխանյանի, Մ. Երկաթի, Մ. Բիեշուի, Ժ. Հեյնե-Վագներեի, Լ. Զաքարյանի և ուր. հետ շրջագայել է մի շարք երկրներում: Կազմել և հրատարակել է դաշնամուրի ձեռնարկներ («Երաժշտական երկերի քրեստոմատիա», 1998, համահեղ.՝Հ. Իսպիրյան, «Հայկական մեղեդիների մշակումներ և փոխադրումներ դաշնամուրի համար», 2008, «Դաշնամուրի ձեռնարկ երաժշտական դպրոցների I–VII դասարանների համար», 1998):

ԹՈՔԱԹՅԱՆ (Թոքաթլյան) Արման [17.07.1896, Պլովդիվ (Բուլղարիա)–12.06.1960, Լոս Անջելես], երգիչ (դրամատիկ. տենոր): 1904-ից ապրել է Եգիպտոսում. Ալեքսանդրիայում երգել է Կոմիտասի երգչախմբում (1911): Ձայնը մշակել է Միլանում (1919–22): 1922–47-ին՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա» թատրոնի մեներգիչ. դերերգերից են՝ Ալֆրեդ, Ռադամես (Զ. Վերդիի «Տրավիատա», «Աիդա»), Ֆիգարո (Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ֆաուստ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն»), Տուրիդդու (Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ»), Կավարադոսի, Ռուդոլֆ (Զ. Պուչչինիի «Տոսկա», «Բոհեմ»), Կանիո (Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ») ևն: Կատարել է նաև հայկ. երգեր:

ԹՎԵԼՅԱՅ ԵՐԳԵՐ, հայ հին ժող. բանահյուսության (վիպասանք) տեսակ: Անվանումը հայ բանահյուսության մեջ տարբեր կերպ են մեկնաբանել. այն համարել են ժամանակագր. (Մ. Էմին), թվացող, այլաբան. (Դ. Խալաթյան), թովելյաց, այսինքն՝ թովչական, հմայական երգեր (Ն. Մառ): Հավանականը Սանուկ Արեղյանի տեսակետն է, ըստ որի՝ «Թ. ե.» անվանումը ծագել է այդ երգերն ասել-պատմելու ձևից, որը կա «թիվ ասել» կապակցության մեջ: Դա սովորական պատմել-ասելն է՝ առանց եղանակի, արտասանելը՝ ցածր, խոսելը կամ ընթերցելը՝ բարձր ձայնով: Թ. ե-ի շարքն են դասվում Տիգրանին ու Աժդահակին, Արտաշեսին ու Սաթենիկին, Սանատրուկին ու Վաղարշին և ուր. նվիրված ժող. երգերը, նաև «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» վիպ. ստեղծագործությունները:

Գրկ. *Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Ե., 1968, էջ 118–119: Աբեղեան Մ., Հայ ժողովրդական առասպելները, Վաղ-պապ, 1899, էջ 56–70: Նույնի, Երկ., հ, 1, Ե., 1966: Միրիջանյան Լ., Հայ բանաստեղծության ակունքները, գիրք 1, Ե., 1977, էջ 152–155:*

ԹՎԵՐԳ, հայ հոգևոր երգեցողության կերպերից, ճարտասան. ոճի եղանակավոր արտասանություն (տես *Աաղթք*): Հենվում է գրաբարի նախադասության քերակ. և իմաստ. շեշտերի ու շարահյուս. կառուցվածքի վրա, հիմքում գրական բնագրեր են՝ սաղմոսներն ու մարգարեական գրքերը՝ Հին կտակարանից, և Ավետարանը: Թ-ի մեղեդիական բաղադրիչը երաժշտ. ուրույն կերտվածքի և ելևէջ. բազմազանության փոխարեն հենվում է մեղեդիական տիպական դարձվածքների ու հանգաձևերի ոճականորեն միասեռ, կուռ համակարգերի վրա: Երաժշտ. առումով՝ սերտորեն կապված է գրաբարի նախադասության ելևէջի և հայկ. ազգ-ժող. երգարվ-ում (մասնավորապես՝ վիպասանքում) բյուրեղացած ավետող-ազդարարող ու հանդիսավոր հերոս. բնույթի բանաձևերի հետ: Հոգևոր երգարվ-ում Թ-ի նշանակությունն առավել որոշակի է. այն առնչվում է սաղմոսերգության հետ, նաև նրա տեսակներից է (մյուսը սաղմոսասացությունն է):

Թ-ի նախապատմությանն են վերաբերում հայոց *թվելյաց երգերն* ու երգեցողության համապատասխան ձևերը հեթանոս. տաճարներում:

Թ. պատմականորեն զարգացել է V–XV դդ-ում, ընթացել մեղեդիական հարստացման ուղիով: Նրան հատուկ է նշանագրության մշակված համակարգ (տես *Խազագրություն*):

Թ-ի թվակիր ու ամբողջ. հնագույն օրինակները պահպանվել են IX–X դդ-ի հայկ. ձեռագիր մատյաններում («Մլքե թագուհու Ավետարան», 851, «Էջմիածնի Ավետա-

րան», 989, «Լազարյան Ավետարան», 887, «Սեբաստիայի Ավետարան», 1066, ևն):

Գրկ. *Կոմիտաս, Հայ եկեղեցական երաժշտություն, տես Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Թահմիզյան Ն., Կոմիտասի մտորումները դրոհության և առոգանության նշանների հարաբերության մասին, ԼՀԳ, 1970, № 8:*

ԹՈՒՄԱՆԿ, շվի, փող. երաժշտ. գործիք. սնամեջ, հիմնականում՝ եղեգնյա: Երեսին ունի 7 ձայնանցք, հակառակ կողմում՝ 1: Գլխամասը պատրաստվում է սուլիչի սկզբունքով: Երկ.՝ 32,2 *սմ*: Մենանվագ, երբեմն անսամբլ. գործիք է:

ԹՈՒՄԱՆՅԱՆ Արմեն Գրիգորի, Չիկո (28.01.1944, Երևան–08.06.2017, Երևան), ջազ. երաժիշտ, թմբկահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Արվեստագիտ. թեկնածու (2013): Հարված. գործիքներ նվագելու ակադ. ուսուցման հիմնադիրը Հայաստանում: Դասավանդել է ԵՊԿ-ում: 1986–92-ին՝ Հայաստանի էստրադ. նվագախմբի, 2009-ից՝ Վահագն Հայրապետյանի հիմնադրած եռյակի և քառյակի թմբկահար: 1992-ին ստեղծել է «Չիկոն և ընկերները» խումբը, որտեղ հանդես են եկել ՀՀ մի շարք հայտնի ջազ. երաժիշտներ: 1996-ից «Հայ FM» ռադիոկայանով վարել է «Սիրված երգիչներ» և «Ջազ», 1998-ից՝ «A1+», «Նոր ալիք», «Արարատ», 2011-ից՝ «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունների՝ «Ջազի ժամ» հաղորդումները:

Թողարկել է «The Quartet» (2001), «To my Friends with Love» (2009), «VEM–Session» (2010) ձայնասկավառակները: Հեղինակ է «Ռիթմ և շարժում» (2011) ձեռնարկի, «Ջազը Հայաստանում» (ռուս., 2014) մենագրության:

ԱՄՆ Պետդեպարտամենտի «Open Competition» մրցույթի (1994) դափնեկիր, Հայաստանի ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության Հատուկ մրց. (2008):

ԹՈՒՄԱՆՅԱՆ Արմինե Միհրանի (ծ. 04.01.1921, Կահիրե–22.12.2011, Երևան), երգչուհի (քնարադրամատիկ. սոպրանո): ՀՀ ժող. արտիստ (1967): Սովորել է Կահիրեի Նուպարյան վարժարանում, ապա՝ իտալ. դպրոցում, երաժշտության դասեր առել Թ. Արամյանից և Մ. Ֆելդմանից: 1944–47-ին աշխատել է Կահիրեի ռադիոյում, ունեցել մենահամերգներ: Հայրենադարձել է 1947-ին: Նույն թվականից՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Անուշ, Շուշան (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ»), Կարինե (Տ. Չուխաճյանի «Լերլերիջի Հոր-հոր աղա»), Չիո-Չիո սան (Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան»), Միքայելա (Ժ. Բիզեի «Կարմեն»), Նեդդա (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ») ևն: Համերգ. երգացանկում՝ հայ, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններից:

Հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ քաղաքներում:

ԹՈՒՄԱՆՈՎ Դավիթ Ֆեոդորի (ծ. 20.07.1940, Մոսկվա), կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1983), ՌԴ ժող. արտիստ (2000): Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ի կոմպոզիցիայի բաժինը (1963): Զորակոչվել է բանակ և ծառայել Ա. Ալեքսանդրովի անվ. երգի-պարի անսամբլում, ղեկավարել է նվագախումբը:

Արմեն Թումանյան

Գրել է երգեր («Որքան գեղեցիկ է աշխարհը», «Իմ հասցեն՝ Խորհրդային Միություն», «Հաղթանակի օրը», «Օլիմպիադա-80»), կանտատ (ըստ Ա. Տվարդովսկու, 1963), դաշնամուր. պիեսներ, «Իմ հիշողության ալիքներով» ռոք-սյուիտը, «Բաղդադի գողը» (1989) մյուզիքլը, «Լեգենդ Երմակի մասին» (2002) օրատորիան՝ մեծ երգչախմբի, մենակատարների և նվագախմբի համար, «Կայսրուհին» («Եկատերինա Մեծ», 2005, բեմ.՝ 2009, Ս. Պետերբուրգ, Մոսկվա) օպերան, երաժշտություն՝ թատրոնի և կինոյի համար: 2005-ից ապրում է Իսրայելում, ժամանակ առ ժամանակ՝ նաև Գերմանիայում և Ռուսաստանում:

Արմինե Թումանյանը Նեդդայի (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ») դերում

ՀամլԿԵՄ (1977), ՌԴ Պետ. (2003) մրցներ, Ժողովուրդների բարեկամության (1980), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» IV աստիճանի (2010) շքանշաններ:

Դավիթ Թումանովը ելույթի պահին

ԹՈՒՄԱՃԱՆ Միհրան Թովմասի [21.10.1890, Կյուրին (Թուրքիա)–28.01.1973, Երևան], երաժիշտ-ազգագրագետ: ***Կոմիտասի*** 5 սաներից է: Սովորել է Սեբաստիայի ամերիկ. դպրոցում, ապա՝ Մարզվանի քոլեջում, ավարտել Կ. Պոլսի համալսարանը (1913), 1920–22-ին Փարիզում շարունակել է երաժշտ. ուսումը: 1910–15-ին երգել է Կոմիտասի «Գուսան» երգչախմբում: 1918–19-ին Ալեքսանդրիայում և Ադանայում հիմնադրել է հայկ.



Հարված «Աղջիկան՝ փոթին կալոշ» (գրառումը՝ Մ. Թումանյանի) երգից

երգչախմբեր: 1923-ից ապրել է ԱՄՆ-ում. հիմնադրել է «Հայ երգ» խմբերգ. ընկերությունը, կատարել Կոմիտասի և Բ. Կանաչյանի խմբերգերը, հավաքել Արմ. Հայաստանի ժող. երգեր և բանահյուս. նյութեր: 1966-ին տեղափոխվել է Հայաստան, աշխատել ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ում: Հավաքած նյութերով կազմել է «Հայրենի երգ ու բան» (հ. 1–4, 1972–2005) ժող-ը:

Գրկ. *Միհրան Թումաճան, Յուշամատեան, Նյու Եորք, 1974:*



Բարսեղ Թումանյան

ԹՈՒՄԱՃԱՆՅԱՆ Էդուարդ Համազասպի (ծ. 04.02.1942, Բուխարեստ), երգիչ (բարիտոն): Ռումինիայի վաստ. արտիստ (1972): Ավարտել է Բուխարեստի կոնսերվատորիան (1968): 1968-ից՝ Բուխարեստի օպեր. թատրոնի մեներգիչ. դերերգերից են՝ Դոն Պիցարո (Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո»), Վոլֆրամ (Ռ. Վագների «Տանհոյզեր»), Ռիգոլետտո (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո»), Օնեգին (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին») ևն: Գլխ. դերերգերով հանդես է եկել Փարիզի, Ռուանի, Լիոնի, Լոզանի, Զալցբուրգի, Համբուրգի, Քյոլնի, Միլանի, Ամստերդամի, Վիեննայի, Նովոսիբիրսկի, Խարկովի և այլ օպեր. թատրոններում: Երգել է նաև Ջ. Վերդիի (10-ից ավելի), Շ. Գունոյի, Ժ. Բիզեի, Ջ. Պուչչինիի, Գ. Դոնիցետտիի, Վ. Ա. Մոցարտի, Մ. Պ. Մուսորգսկու, նաև ժամանակակից կոմպոզիտորների՝ Է. Վոլֆ Ֆեռարիի «Սադոննայի մանյակը», Պ. Բենտոյուսի «Համլետ» և այլ օպերաներում: Մենահամերգներով ելույթներ է ունեցել սիմֆ. նվագախմբերի հետ. երգացանկում՝ Յ. Ս. Բախի. Գ. Ֆ. Հենդելի, Յ. Հայդնի, Լ. վան Բեթհովենի, Բ. Բրիտենի, Գ. Ֆ. Տելեմանի, Կ. Օրֆի օրատորիաները, Ֆ. Շուբերտի, Յ. Բրամսի, Մ. Ռավելի, Ս. Վ. Ռախմանինովի, Ջ. Էնեսկուի, Օ. Ռեսպիգիի երկերից: Հանդես է եկել Մ. Կաբալիեի, Պ. Դոմինգոյի, Մ. Ֆրենիի, Խ. Կառերասի, Կ. Ռիչարելլիի և ուր. հետ:

Բ. Թումանյանը Նաղիր շահի դերում (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»)

Թ-ի կատարող. արվ-ն աչքի է ընկնում երգերի և դերերգերի նուրբ, ինքնատիպ մեկնաբանությամբ:

Միջազգ. մրցույթների (Փարիզ, 1972, Վիեննա, 1979, ևն) դափնեկիր:

ԹՈՒՄԱՆՅԱՆ Բարսեղ Ռոբերտի (ծ. 03.08.1958, Երևան), երգիչ (բաս): ՀՀ ժող. արտիստ (2006): Ավարտել է ԵՊԿ (1981, Ա. Կարապետյանի դասարան), ՄՊԿ ասպիրանտուրան (1985, ղեկ՝ Ե. Ե. Նեստերենկո), կատարելագործվել Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում (1982–83): 1980–2014-ին՝ ԵՕԲԹ, 2014-ից՝ Ղազախստանի «Աստանա-օպերա» թատրոնի մեներգիչ: Դերերգերից են՝ Դոն Բազիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Աթիլլա, Ռամֆիս, Ֆիլիպ թագավոր (Ջ. Վերդիի «Աթիլլա», «Աիդա», «Դոն Կառլոս»), Կոլիեն (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Մեֆիստոֆել (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Գերման (Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով»), Էսկամիլիո (Ժ. Բիզեի «Կարմեն»), Դավիթ Բեկ (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Նաղիր շահ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Արշակ Երկրորդ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Պասկևիչ (Է. Հովհաննիսյանի «Ճանապարհորդություն դեպի Արզրում») ևն:

1988-ին (Սպիտակի երկրաշարժից հետո) մասնակցել է Լոնդոնի «Քովենթ Գարդեն» օպեր. թատրոնում կազմակերպված համերգին (հեռարձակվել է Եվրոպայում). կատարել է Աթիլլայի դերերգը (Ջ. Վերդիի «Աթիլլա»): 1990-ական թթ-ին հանդես է եկել Լոնդոնում («Վիգմոր» դահլիճում, 1990) և եվրոպ. այլ քաղաքներում, Ավստրալիայում (Հատուկ մրց.՝ Մեֆիստոֆելի դերերգի համար), 2002–05-ին՝ ԱՄՆ-ում, Ավստրիայում, Կանադայում, Գերմանիայում, Չինաստանում, Ճապոնիայում: 2010-ին Երևանում հանդես է եկել Պ. Դոմինգոյի հետ: Թողարկել է ձայնասկավառակներ և տեսահոլովակներ:

Միլանի (1983), Գլենդելի (2005) պատվավոր քաղաքացի:

Միջազգ. մրցույթների (Հոլանդիայի Հերտոգենբոս ք-ի պատվավոր մրց.՝ 1982, ոսկե մեդալ՝ 1983, «Վերդիյան ձայներ», Պարմա, 2-րդ մրց.՝ 1986, Պ. Ի. Չայկովսկու անվ. 2-րդ մրց.՝ 1986, Մոսկվա, Մեծ մրց.՝ 1987, Ռիո դե Ժանեյրո, 1-ին մրց.՝ 1987, Վերոնա) դափնեկիր:

ԹՈՒՆՋԲՈՅԱՋՅԱՆ Արտո (ծ. 04.08.1957, Ստամբուլ, Ղալաթիա), երգիչ, թմբկահար: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2017): Ստեղծագործում է ավանգարդ-ֆոլկ ոճով, նվագում է մի քանի գործիք, գրում երգեր: Եղբոր՝ երաժիշտ, կոմպոզիտոր Օննո Թունջի հետ կատարել և ձայնագրել է անատոլիական երաժշտության բազմաթիվ նմուշներ: 1981-ին տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ համագործակցել է մի շարք անվանի երաժիշտների (Դ. Սալուզի, Ալ դի Միոլա, Մ. Ստեռն, Պ. Վինտեռն, Բ. Բեռգ և ուր.), ավելի ուշ՝ ուդահար Արա Դինքջյանի (1985, «Night Ark» քառյակի հիմնադիր) հետ: Ձայնագրել է «Tears of Dignity» (1994), «Onno» (1996) և այլ ձայնասկավառակներ: Թողարկել է «Every Day is a New Life» (2000), «Light Anatolian Music with Turkish Words with the Armenian Navy Band» (2001) և այլ ալբոմներ: 1998-ին Հայաստանում հիմնադրել է «Armenian Navy Band» խումբը (Վ. Հայրապետյան, Ա. Հյուսնունց, Ա. Արտուշյան, Ա. Հարությունյան, Դ. Նալչաջյան, Տ. Սուջյան, Ն. Քարտաշյան, Վ. Գրիգորյան, Ա. Ձալայան, Ա. Մանուկյան): Ձայնագրել է «Nefrete Kine Kasi» ալբոմը (2007), «Պստիկ զինվոր», «Նոր ծիրան», «Բնական սերմեր», «Մտքերի մեջ» և այլ երգեր, «Արարատ» (2008), «Երբեմն խելագար» (2009), «Ալա Բալանիցա» (2011) և այլ տեսահոլովակներ:

Արտո Թունջբոյաջյանը կլոյթի պահին

BBC-ի «Awards for World Music» մրցանակաբաշխության (2003), «Գրեմմի» (2011) մրց-ներ:

ԹՈՒՐԻՆՋ [Մարթաղյան Թորոս Օհանի, 8.09.1790, գ. Քարքանջ (Շամախու գավառ)–29.08.1875, Աստրախան], աշուղ: Ստեղծագործել է հիմնականում հայ. և թուրք.: Հետագայում տեղափոխվել է Աստրախան, զբաղվել է ոսկերչությամբ և փորագրությամբ, պատրաստել տապանաքարեր: Թ-ի երգերից մի քանիսը Ոսկան Հովհաննիսյանը հրատարակել է «Նոր քնար» (1859) ժող-ում: Մուհամմանները և թաջնիսները գրել է գրաբարախառն աշխարհաբարով, որոշ երգեր («Հայր մեր», «Ճշմարիտ սիրական»)՝ տողընդմեջ՝ հայ. և թուրք.:

Պահպանվել են Թ-ի 60-ից ավելի երգեր, որոնք տպագրվել են աշուղ. երգարաններում:

Գրկ. *Ախվերդյան Գ., Հայ աշուղներ, Թ., 1903 [Դուսանք, հ. 2]:*

Ժ



Ժամագրքի էջ (1642, Նոր Ջուղա, պատճառիչ՝ Խաչատուր Կեսարացի)

Ժամագրքի փիլոդոսաթերթ (1673, Մարսել, պատճառիչ՝ Ոսկան Երևանցի)

ԺԱՄԱԳԻՐՔ, Աղոթամատույց, եկեղեցածիս. մատյան՝ եկեղեցիներում ամենօրյա ժամերգությունների համար: Հայոց Ժ-ի կազմավորումը վերագրվում է V դ-ի սուրբ հայրերին՝ Սահակ Ա Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, Գյուտ Ա Արահեզացուն, Հովհաննես Ա Մանդակունուն, հետագա դարերի հեղինակներից՝ Ներսես Շնորհալուն: Ժ-ի որոշ հատվածներ պատկանում կամ վերագրվում են նաև Թովմա առաքյալին, Գրիգոր Ա Լուսավորչին, Գրիգոր Նարեկացուն, Հովհաննես Սարկավագին, Գրիգոր Տաթևացուն, Թովմա Մեծոփեցուն և ուր.:

Ժ. ընդգրկում է հոգևոր բանարվ-ի և երաժշտաբանաստեղծ. արվ-ի մի շարք ժանրեր՝ աղոթք, քարոզ, մաղթանք, ընթերցվածք (Ավետարանից), սաղմոս, փոխ, ալելու, կանոն, թագավոր, մեսեդի, օրհնություն, երգ ևն: Վերջիններիս թվում են համաքրիստ. 2 երգերը՝ «Փառք ի բարձունս» (Առավոտյան ժամերգություն) և «Լոյս զուարթ» (Երեկոյան ժամերգություն), նաև Ներսես Շնորհալու մի շարք երգեր, որոնցից հանրածանոթ են «Յիշեսցուք ի գիշերի», «Առաւօտ լուսոյ» (Գիշերային ժամերգություն), Արևագալի 4 երգերը ևն:

Ժ-ի կարևորագույն մասերից են նաև 8 սաղմոսականոնները (կամ Ժ-ի կանոնները), որոնք երաժշտ. առումով դասակարգված են ըստ 8 ձայնեղանակների (տես *Ութձայն*): Յուրաքանչյուր կանոն բաղկացած է 7 գուբղայից, որոնք էլ իրենց հերթին՝ 2–6 սաղմոսներից (քանակը պայմանավորված է սաղմոսների ծավալով):

Ժ-ի երգասացությունները բնորոշվում են պարզ, զուսպ ասերգայնությամբ, նաև ծանր, հանդիսավոր մեղեդիականությամբ:

Ժ. առաջին անգամ հրատարակել է Աբգար Դպիրը (1568, Կ. Պոլիս), իսկ Մայր Ժ.՝ Խաչատուր Կեսարացին (1642, Նոր Ջուղա): 1877-ին Նիկողայոս *Թաշճյանը* Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու հովանավորությամբ Վաղարշապատում տպագրել է հայկ. ձայնանիշներով գրանցված Ժ. («Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ»):

Գրկ. *Հացունի Վ., Պատմութիւն հայոց աղօթամատոյցին, Վնտ., 1965: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Պողարյան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Յորք, 1990:*

Միհր Նավոյան

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ժամակարգություն, ծեսի և աստվածապաշտության հիմնական բաժիններից, հանապազօրյա պաշտոներգություն՝ ըստ եկեղեց. օրվա տարբեր աղոթաժամերի: Ժ. նշանակում է ժամ երգել, այսինքն՝ կարգավորված (ժամակարգված) եկեղեց. արարողություն կամ պաշտամունք կատարել օրվա որոշ ժամերի: Ժող. լեզվով «ժամ» նշանակում է նաև եկեղեցի: Ժ-ների կարգավորությունը և դրանց հատուկ երգասացությունները (աղոթքներ, քարոզներ, հոգևոր երգեր՝ բացի *շարականներից*) պարունակում է *Ժամագիրքը*:

Ժ-ները բաղկացած են Տերուն. աղոթքից, սաղմոսից, մաղթանքից, քարոզից, աղոթքից, շարականից: Ժ-յան ժամանակ այս շարքը երբեմն լրիվ կամ մասնակիորեն կրկնվում է մի քանի անգամ:

Հայ միջնադար. մատենագրության մեջ կենցաղավարել են Ժ-յան մեկնություններ, որտեղ Ժ-ների աստվածաբան. բացատրություններն են: Մեկնություններ են գրել Ստեփանոս Սյունեցին, Հովհաննես Գ Օձնեցին, Խոսրով Անձևացին, Մովսես Երզնկացին: Ժամագրքի երգասացությունների հարստացմանը մեծապես նպաստել է *Ներսես Շնորհալին:*

Հայոց մեջ տարբեր դարերում և միջավայրերում Ժ-ների քանակը տարբեր էր (6, 7, 8), ի վերջո ընդունվել է 9 Ժ:: Գլխավորները 7-ն են. ըստ սաղմոսերգուի՝ «Օրվա մեջ յոթն անգամ քեզ պիտի օրհնեմ» (Սաղմ. 118. 164) խոսքերի, իսկ կանոնակարգով՝ 9-ը, քանի որ Ճաշու Ժ. իր հերթին բաժանվում է 3 մասի: Համաձայն Ժամագրքի՝ Հայ եկեղեցին ունի հետևյալ Ժ-ները.

1. Գիշերային Ժ., նվիրված է Հայր Աստծու փառաբանությանը: Կատարման ժամանակը կեսգիշերն է: Ունի հետևյալ իմաստը. քունն Աստծու շնորհած բարիք է. շնորհակալություն և գոհություն Աստծուն՝ այդ բարիքի համար: Խնդրանք առ Աստված, որ գիշերվա շարունակությունն անցնի խաղաղ, իսկ հաջորդ օրը՝ առանց մեղքի և փորձության:

2. Առավոտյան Ժ., նվիրված է Որդի Աստծու փառաբանությանը: Կատարվում է արշալույսին: Խորհրդանշում է Քրիստոսի երևալը Յուղաբեր կանանց՝ ամփոփելով Քրիստոսի Հարության և Փրկագործության խորհուրդները:

3. Արևագալի Ժ., նվիրված է Սուրբ Հոգուն: Նախկինում եղել է Առավոտյան Ժ-յան մաս: Խորհրդանշում է Քրիստոսի Հարությունը և աշակերտներին երևալը: Հաստատել է Ամենայն հայոց կաթողիկոս Եզր Ա Փառաժնակերտցին, ճոխացվել է Ներսես Շնորհալու երգերով: Կատարվում է արևածագին՝ նույնացնելով Քրիստոսի Հարությունը և արևի ծագումը:

4. Ճաշու Գ ժամի Ժ., ուղղված է Սուրբ Հոգուն: Խորհրդանշում է Եվայի՝ արգելված պտղից ճաշակելը և Քրիստոսով դատապարտումից ազատվելը: Նաև Քրիստոսի չարչարանքի հիշատակումն է: Կատարվում է ժամը 9-ին: Ապաշխարության խորհուրդ պարունակող արարողություն է:

5. Ճաշու Զ ժամի Ժ., ուղղված է Հայր Աստծուն: Քրիստոսի չարչարանքների և խաչելության խորհրդանշումն ու հիշատակումն է: Կատարվում է ժամը 12-ին: Այս Ժ-յամբ հավատացյալը Աստծուց օգնություն է խնդրում մարդկային իր տկար բնության համար:

6. Ճաշու Թ ժամի Ժ., ուղղված է Աստծու Որդուն: Խորհրդանշում է Քրիստոսի մահը, որով նաև մարդկության ազատումը դժոխքի իշխանությունից: Կատարվում է ժամը 15-ին:

7. Երեկոյան Ժ., ուղղված է Աստծու Որդուն: Խորհրդանշում է Քրիստոսի թաղումը: Կատարվում է մայրամուտից առաջ: Գիշերվա սեմին հավատացյալը, աշխատանքից հոգնած և օրվա հոգեկան ալեկոծություններից հետո, խնդրում է Աստծուն, որ իրեն պարգևի խաղաղ գիշեր և բարի քուն:

8. Խաղաղական Ժ., ուղղված է Հոգի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի դժոխք իջնելը և արդարների տանջանքների դադարեցումը: Կատարվում է մայրամուտից հետո: Նպատակը ամենօրյա մեղքերով ծանրաբեռնված մարդու հոգուն անդորրություն և խաղաղություն բերելն է:

9. Հանգստյան Ժ., ուղղված է Հայր Աստծուն: Խաղաղական Ժ-յան շարունակությունն է և որևէ այլ խորհուրդ չունի: Կատարվում է քնելուց առաջ:

Նախկինում, մասնավորապես՝ վանքերում, բոլոր Ժ-ները կատարվել են ամեն

Հատված Գիշերային ժամերգությունից

օր՝ իրենց ժամին: Այժմ ամեն օր Գիշերային և Առավոտյան Ժ-ները կատարվում են միասին՝ առավոտյան, և Երեկոյան Ժ.՝ երեկոյան: Մեծ պահքի օրերին (բացի շաբաթից և կիրակիից) կատարվում են նաև մյուս Ժ-ները հետևյալ կարգով՝ Գիշերային, Առավոտյան, Արևագալի՝ առավոտյան, Ճաշու 3 և Երեկոյան Ժ-նեըը՝ կեսօրին, Խաղաղականը՝ երեկոյան (երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի), Հանգստյանը՝ երեկոյան (չորեքշաբթի և ուրբաթ):

Գրկ. *Օրմանեան Մ., Ծիսագիտութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1977: Պողարեան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Յորք, 1990:*

Պերճ Ժամկոչյան

Տիգրան Ժամկոչյան

Նորայր Ժամհարյան

ԺԱՄԿՈՉՅԱՆ Պերճ (20.04.1930, Բոստոն–21.02.2004, Բոստոն), երգեհոնահար: Չիկագոյի կոնսերվատորիայի պատվ. դ-ր (1970): Ավարտել է Բոստոնի Նյու Ինգլանդի կոնսերվատորիան (1951): Ղեկավարել է Բոստոնի երաժշտ. քոլեջի երգեհոն. բաժինը: 1957-ից՝ Բոստոնի սիմֆ. նվագախմբի առաջին, ապա՝ Սբ Թերեզա եկեղեցու երգեհոնահարը: Առաջին ամերիկահայ երգեհոնահարն է, որը 1965-ին համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում: Հյուրախաղերով շրջագայել է նաև Կանադայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, պարբերաբար՝ Հայաստանում: Ելույթներ է ունեցել հանրահայտ սիմֆ. նվագախմբերի հետ (վերջին համերգը՝ 2003-ին Իտալիայում):

Նվագացանկում՝ Յ. Ս. Բախի, Գ. Ֆ. Հենդելի, Ջ. Ա. Ֆրեսկոբալդիի, Օ. Մեսսիանի, Ա. Վիվալդիի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի, ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայ միջնադար. երաժշտություն: Փոխադրել է Կոմիտասի («Խորհուրդ խորին», «Սուրբ, սուրբ», «Ամեն, Հայր երկնաւոր», «Տեր ողորմեա» ևն), Ե. Եկմալյանի («Հայր մեր», «Սուրբ, սուրբ», «Ամեն, Հայր սուրբ» ևն) երկերը երգեհոնի համար: Թողարկել է «Հայկական պատարագ» ձայնասկավառակը (1972): 1970-ին ստեղծել է «Կոմիտաս» երգեհոն. հիմնադրամը:

Կարդինալ Աղաջանյանի, Վազգեն Ա կաթողիկոսի, ՀՀ ԳԱԱ, ՎնտՄՄ, ՀՀ նախագահի շքանշաններ, Հոգևոր երաժշտության 1-ին կոնգրեսի (1957, Փարիզ), ՀԽՍՀ ՄՆ Պ. Ադամյանի անվ. (1983) մրց-ներ:

ԺԱՄԿՈՉՅԱՆ Տիգրան Հրանտի (ծ. 15.03.1938, Բեյրութ), երգիչ (բարիտոն): Ավարտել է Բեյրութի (1963), Վենետիկի (1965, վարպետի կոչումով) կոնսերվատորիաները, կատարելագործվել Միլանի կոնսերվատորիայում (1966–69): Օպեր. դերերգերով հանդես է եկել Ֆրանսիայում, Բելգիայում, Գերմանիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում, մենահամերգներով՝ Եգիպտոսում, նաև Ստամբուլում, Վենետիկում, Միլանում, Լոզանում, Ամստերդամում, Ստոկհոլմում, Նյու Յորքում, Մոսկվայում (երկացանկում՝ նաև հայկ. երգեր) և այլուր: Երևանում 1965-ին հանդես է եկել Հայաստանի սիմֆ. նվագախմբի հետ, նաև Ժերմոնի (Ջ. Վերդիի «Տրավիատա»), 1982-ին՝ Էսկամիլիոյի (Ժ. Բիզեի «Կարմեն»), 1963-ին Բեյրութում՝ Սարգարի (Տ. Չուխաճյանի «Լերլերիջի Հոր-հոր աղա»), 1968-ին Ստամբուլի օպեր. թատրոնում՝ Էնրիկոյի (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դե Լամերմուր»), 1966-ին Գերմանիայում՝ Դոն Ֆեռնանդոյի (Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո»), 1970-ին՝ Հերակլեսի (Գ. Հենդելի «Հերակլես», առաջին բեմ-ը, Վաշինգտոն) դերերգերով, մասնակցել է Վենետիկի ամառ. փառատոնին (1964–65, 1968): 1969-ին Ժ-ի կատարմամբ Ստամբուլի ռադիոյով առաջին անգամ հնչել է հայ. երգ (Ա. Խաչատրյանի «Կենաց երգ»-ը): Վաշինգտոնում հիմնադրել է «Տիգրան Ժամկոչյան» երգչախումբը (1971–81), «Ամերիկահայ բարեկամության հիմնարկը» (1973): Երևանում վարել է վարպետության դասեր (1981–82): ՀՀ ռադիոյի ոսկե ֆոնդում ունի ձայնագրություններ (40 երգ՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի հետ): Դասավանդել է Ինդիանայի «Բոլ Սթեյթ» (1970–71) և Մերիլենդի (1971–72) համալսարաններում: Մասնակցել է Երիտասարդ երգիչների միջազգ. մրցույթին (1966, 1968, Միլան):

ԺԱՄՀԱՐՅԱՆ Նորայր Ռուբենի (ծ. 1949, Երևան), սրնգահար: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2016): Ավարտել է ԵՊԿ ժող. նվագարանների բաժինը (1986, Խ. Ավետիսյանի դասարան), զուգահեռ սովորել նաև շվիի և դուդուկի բաժիններում (Ջ. Գասպարյանի դասարան): 1977–86-ին՝ Հայաստանի ժող. գործիքների նվագախմբում շրջագայել է բազմաթիվ երկրներում: Դասավանդել է Երևանի երաժշտ. դպրոցներում, 1994–2000-ին՝ ԵՊԿ-ում: 1986–99-ին՝ «Կռունկ» պարախմբի նվագախմբի մենակատար (դուդուկ, զուռնա, շվի, սրինգ), շրջագայել է Կանադայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Լյուքսեմբուրգում, Ավստրալիայում: Հեղինակ է երգերի («Իմ հասակը», «Գարուն է բացվել», «Հիսուն տարիս» ևն) և գործիք. երկերի: Հրատարակվել է Ժ-ի «Սիրտս» (1995) երգերի ժող-ը՝ նրա և այլ հեղինակների խոսքերով: Ժ-ի քնար. երգերը հայ ժող. երգարվ-ի լավագույն նմուշներից են: Գրել է նաև «Ախթամար» բալետը: Երևանում տեղի են ունեցել Ժ-ի հեղինակ. համերգները (1995, 1996): Ժող. գործիքների հանրապետ. մրցույթի դափնեկիր (1972):

ԺԱՆՐ (ֆրանս.՝ genre, < լատ. genus – տեսակ, սեռ), երաժշտության մեջ՝ հասկացություն, որը բնութագրում է երաժշտ. ստեղծագործության տեսակներն ու սեռերը՝ պայմանավորված նրանց ծագմամբ, կատարման և ընկալման պայմաններով: Արտացոլում է նաև երաժշտ. գործի ոչ երաժշտ. գործոնների (երաժշտության կապը խոսքի, պարի, այլ արվ-ների հետ) և նրա ներերաժշտ. բնույթի (երաժշտ. ձևեր, կոմպոզիտորի գրելաձևի տեսակներ) փոխադարձ կապը: Ժ. երաժշտության մեջ գեղ. ընդհանրացման կարևորագույն միջոցներից է: Ժ-ի դասակարգման ժամանակ անհրաժեշտ է նկատի առնել, թե հատկապես որ գործոնն է որոշիչ: Առանձնանում են կենցաղ. և ժող-կենցաղ. Ժ-երը, որոնք ունեն կենս-կենցաղ. գործառույթներ: Կենցաղ. մի շարք Ժ-եր ծագել են այն շրջանում, երբ երաժշտությունն ամբողջությամբ չէր առանձնացել արվ-ի այլ տեսակներից (պոեզիա, պար) և կիրառվել են աշխատանքի ընթացքում, ծիսակատարություններին: Ժ-ային հատկանիշները կարող են միահյուսվել և ստեղծել խառը (օր.՝ երգ-պարային) Ժ-եր: Ժող-կենցաղ., նաև կենս. բովանդակության այլ Ժ-երի դասակարգմանը զուգահեռ երևան է եկել նաև նրանց ածանցումը՝ ըստ բնույթի (օրորոց. երգեր, սերենադ, սգո, հաղթ. քայլերգեր ևն): Կենցաղ. Ժ-երը նպաստել են այլ տեսակների առաջացմանը. կենցաղ. պարերից ձևավորվել է գործիք. սյուիտը՝ դառնալով սիմֆոնիայի ստեղծման աղբյուր: Պայմանավորված սոցիալ-պատմ. իրավիճակով՝ երաժշտ. երկի ստեղծման տեղը, կատարման և կենցաղավարման պայմանները մեծապես նպաստել են նոր Ժ-երի ստեղծմանն ու աստիճան. զարգացմանը: Օր.՝ երբ XVII դ-ում օպերան ազնվական. պալատներից տեղափոխվել է հրապարակ. թատրոն, այն որպես Ժ. առավել բյուրեղացել է: XX դ-ում ձևավորվել են նոր՝ կինոերաժշտության, ռադիոերաժշտության, ժամանց. երաժշտության Ժ-եր: Երկար ժամանակ տներում կատարվող անսամբլ. և մենակատար. երաժշտ. ստեղծագործություններից ձևավորվել են բնույթով առավել խոր, երբեմն մտերմիկ քնարափիլ. ուղղվածության կամեր. Ժ-եր: Վոկալ Ժ-երը մեծ մասամբ երևան են եկել որպես երաժշտաբանաստեղծ. Ժ-եր, որտեղ խոսքն ու երաժշտությունն ստեղծվել են միաժամանակ: Նրանք բաժանվում են մենակատար. (երգ, ռոմանս, արիա), անսամբլ. և խմբերգ. տեսակների: Վոկալ երգերը, որոնց նվագակցում են 1 կամ մի քանի գործիքներ, անվանում են կամեր., իսկ նվագախմբի նվագակցությամբ կատարվողները՝ խոշոր վոկալ-գործիք. (օրատորիա, մեսսա, պասսիոն): Ռոմանտիզմի շրջանում գործիք. երաժշտության մեջ երևան են եկել բալլադի, պոեմի (դաշնամուր. և սիմֆ.), նաև քնար. մանրանվագի Ժ-երը: Ժ-ի ձևավորման վրա ազդել է նաև բովանդակության գործոնը՝ փոխառված գրկ-ից: Տարբերում են դրամատիկ., քնար. և էպիկ. Ժ-եր: Երաժշտության մեջ շարունակ ստեղծվում են նորանոր Ժ-եր (մասնավորապես՝ ժամանց. երաժշտության մեջ): Ժ-երի տեսությունը երաժշտագիտ-յան կարևորագույն բաժիններից է:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, երաժշտ. գործիքների համեմատաբար մեծաթիվ անսամբլ, որը պահպանում է ինչողության ազգ-ժող. երանգները. երկացանկում՝ առավելապես ժող. երաժշտության մշակումներ և այդ ոճով գրված ստեղծագործություններ: Լինում է միատարր (օր.՝ միայն լար. կամ փող. գործիքներից) և խառը: ԽՍՀՄ-ում հռչակված էին Վ. Վ. Անդրեևի անվ., Ն. Պ. Օսիպովի անվ. ռուս., Կուրմանհազիի անվ. ղազախ., Ուզբ. վերակառուցված գործիքների (հիմնադիր-ղեկ.՝ Ա. Պետրոսյանց) նվագախմբերը, Ուկր. բանդուրիստների կապելլան ևն: Հայկ. ժող. երաժշտության անսամբլ. կատարման ինագույն հիշատակությունը Փավստոս Բուզանդինն է. «Իբրև ընդ գինիս մըտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագն մատուցին արքային Պապայ, եւ առհասարակ թմբկահարք եւ սրնգահարք, քնարահարք եւ փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան»: XX դ-ի սկզբին հայկ. Ժ. գ. ն-եր են ստեղծել Գրիգոր *Յոհնին* (Պետրոգրադ), Անտոն *Սայիլյանը* (Բաքու) և ուր.: Ժ. գ. ն-ի

Ժողովրդական գործիքների նվագախումբ (XIX դ.- XX դ-ի սկիզբ)

«Հայ քաղաքային ժողովրդական երգերի հատընտիր» գրքի (2010) շապիկը

Մարգարիտ Բրուտյանի «Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր» գրքի (2014) շապիկը

զարգացմանը նպաստել է նոտ. ուսուցումը, որի առաջին փորձերն Այսրկովկասում ձեռնարկել է Սաշա *Օգանեզաշվիլին* 1914-ին՝ Բաքվում, 1924-ին՝ Թիֆլիսում, 1926-ին՝ Երևանում: Նշանակալի էր նաև բազմաձայնության ներդրումը [հայտնի էր Հովհաննես *Իոաննիսյանի* հիմնադրած Ադրբ. պետ. «քառաձայն» նվագախումբը Բաքվում (1920), որին մասնակցել են նաև երաժիշտ-կատարողներ Լևոն *Կարախանը*, Բալա *Մելիքյանը*, Սողոմոն *Սեյրանյանը* և ուր.]: Ստեղծվել են նաև գործիքների ռեգիստր. տարատեսակներ (Վարդան *Բունիի* կատարելագործած գործիքների Արևելյան սիմֆ. նվագախումբը, 1925–36): ՀՀ-ում գործում են Հայաստանի ժող. գործիքների, Հայաստանի ազգ. նվագարանների, Գյումրիի ժող. գործիքների նվագախմբերը, Հայաստանի գուսան. և ժող. երգի, Հայկ. ժող. երգի-պարի, Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլները ևն:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտական բանահյուսություն, ժող. ստեղծագործություն: Ժ. ե. հայկ. երաժշտարվ-ի այն շերտն է, որը պահպանել է նրա վաղ դրսևորումները, տիպ. առանձնահատկությունները և մտածողության հիմնական կերպը:

Բուն հայկ. Ժ. ե. սերնդեսերունդ փոխանցվել է բացառապես բանավոր հաղորդմամբ և դարձել ազգ. երգարվ-ի տեսակների և ճյուղերի ոճ. հիմքն ու սնուցող աղբյուրը: Ընդհանուր կերտվածքով միաձայն. (մոնոդիկ) է. բաղկացած է երգ. (մեներգ, զուգերգ, խմբերգ), գործիք. (մենակատարում և անսամբլ) և նվագերգ. տեսակներից: Տարածված են նաև մենապարին ու խմբապարին ուղեկցող երգեցողության ու նվագի տեսակներ, որտեղ իշխողը երգեցողությունն է:

Քաղ. ու տնտ. կյանքի փոփոխություններով պայմանավորված՝ Ժ. ե. հարստացել է առանձին ճյուղերով (գեղջկական երգ, գուսանաաշուղ. արվ., քաղաք. երգ), որոնք երևան են եկել որևէ ժամանակաշրջանում՝ որպես տարբեր խավերի գեղ. մտածողության արտահայտություն:

Վաղ շրջանի պրոֆեսիոնալ երաժշտության ճյուղերը (տաղ, հոգևոր երգ, մուղամաթ), սերելով գեղջկական երաժշտությունից, հաստատուն տեղ են գրավել ժող. երաժշտության մեջ, ձեռք բերել պրոֆեսիոնալ արվ-ի վառ անհատականացված հատկանիշներ:

Հայկ. ժող. երգերի բանաստեղծ. մի շարք բնագրեր ամփոփված են միջնադար. ձեռագիր *Տաղարաններում* և երբեմն կրում են խազագրության հետքեր: Բնագրերի կանոնավոր հավաքումն սկզբնավորվել է XIX դ-ի 2-րդ կեսից (Ղ. Ալիշան, Ռ. Պատկանյան, Մ. Միանսարյանց, Գ. Սրվանձտյան, Գ. Շերենց, Գ. Հովսեփյան, Ե. Լալայան, Ա. Մխիթարյան, Կոմիտաս, Մ. Աբեղյան և ուր.):

XIX դ-ի 2-րդ կեսից տարածվել են հայկ. նոտագրությամբ ժող. երգերի ձեռագիր երգարաններ: Եղանակների կանոնավոր հավաքումն ու գրառումն սկզբնավորվել են 1870-ական թթ-ից (Ս. Ամատունի, Ք. Կարա-Մուրզա, Ն. Տիգրանյան, Կոմիտաս, Ա. Բրուտյան, Ս. Դեմուրյան, Հ. Հարությունյան, Ս. Մելիքյան, Մ. Թումաճան, Ա. Քոչարյան և ուր.)՝ նախ՝ կատարողից, իսկ 1913-ից՝ նաև ձայնագրող սարքերով: Այս բնագավառում ամենամեծ երախտավորը Կոմիտասն է. նա հայ գեղջկական երաժշտությունը ներկայացրել է իր բազմատեսակությամբ ու գաղափարագեղ. ողջ խորությամբ: Հավաքված երգերը (տպագրվել է 2 հզ-ից ավելի նմուշ) թեև տարբեր ժամանակների ու ազգագր. շրջանների արգասիք են, սակայն ներկայացնում են հայ գեղջկական երգի ոճ. ամբողջականությունը: Գեղջկական երաժշտությունն սկզբնավորվել է հազարամյակներ առաջ և իր պատմության ընթացքում արձագանքել է ազգ. մշակույթի զարգացման բոլոր նշանակալի փուլերին: Գեղջկական երգի տեսակը պայմանավորված է բանաստեղծ. տեքստով, և յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունն ու երաժշտ. արտահայտչամիջոցը: Հայկ. գեղջկական երաժշտությունը բազմաժանր է՝ աշխատանքի, ծիս., լալիք, քնար., պատմ., պանդխտության (անտունիներ) երգեր, վիպերգեր, պարերգեր, կատակերգեր, օրորներ ևն: Նրա մեջ ժանր. հատկանիշները երևան են գալիս ինչպես բանաստեղծ., այնպես էլ երաժշտ. բնագրերում՝ ձայնակարգ. ու ռիթմական միջոցներով և համապատասխան երգ. ձևերով: Առանձնանում են հոգևոր բնույթի բանաստեղծություններով ժող. երգերը, տարբեր բովանդակության աշխարհիկ տաղերը ևն: Այս ժանրերից հայտնի են բազմաթիվ նմուշներ, որտեղ կան բացառիկ արժեքավոր ստեղծագոր-

ծություններ՝ երաժշտ. բանահյուսության համաշխ. չափանիշներով՝ Կոմիտասի գրառած Լոռու, Ղարաբաղի և Ապարանի հորովելները, Սանահինի և Լոռու կալերգերը, Իգդիրի, Վայոց ձորի և Ղազախի սայլերգերը, սոցիալ. թեմայով՝ «Ծիրանի ծառ, բար մի տա», «Կանչե, կռունկ», «Սիրտս նման է էն փլած տներ», բնությանը նվիրված՝ «Լուսնակն անուշ», «Բինգյոլ», սիրո քնար.՝ «Գարուն ա», «Չինար ես՝ կեռանալ մի», «Քելեր, ցոլեր իմ յարը», «Կուժն առա ելա սարը» և «Գնա, գնա, հետիդ եմ», հարսանեկան երգերի ամբողջ., Ակնա բազմաժանր երգերի շարքերը ևն:

Դարերի ընթացքում աստիճանաբար մշակվել ու կատարելագործվել է ժող. երգը (անհետացել են որոշ ժանրեր, ի հայտ են եկել նորերը):

Հայ գյուղ. գործիք. երաժշտությունը բնույթով մոտ է երգայինին. ընդգրկում է սազի, բլուլի և դուդուկի նվագակցությամբ երգեր: Առավել գործածական են փող. գործիքները, որոնցով կատարվում են հովվական, հանդարտ երգ. եղանակներ, աշխույժ պար., ավանդ., ծիս. (հարսանեկան, հուղարկավորության, ուխտագնացության, արևածագը դիմավորող ևն) նվագներ, նաև զանազան երգեր, ավանդ. պարեղանակներ՝ «Երանգի», «Մարալի», «Ռնաբի», «Հետ ու առաջ», «Շորոր» (Կարնո, Մշո ևն): Լար. գործիքներից ընդունված էր սազը: Քաղաք. մշակույթի ազդեցությամբ՝ գյուղ. երաժշտ. գործիքների շարքը համալրել են նաև այլ գործիքներ:

Հայկ. գեղջկական երաժշտությանը բնորոշ է սակավաթիվ ինչյուններով առավել խոր արտահայտչականություն դրսևորելու սկզբունքը (օր.՝ «Գարուն ա», «Կուժն առա ելա սարը» ևն):

Քաղաքային երաժշտությունը զարգացած էր հայկ. միջնադար. քաղաքներում, սակայն արդի երաժշտության մեջ (գրառված հայ քաղաք. երգերը և գործիք. եղանակներն անհամեմատ քիչ են) դժվար է առանձնացնել հատկապես հնագույն ժամանակներից պահպանված տարրերը: Քաղաք. երաժշտությունը սերում է գեղջկականից և աշուղականից, բնորոշ են նաև սազանդարների երաժշտության որոշ տարրեր ևն: Հիմնական ժանրերն են՝ սիրային-քնար., կենցաղ. (օրոր, սեղանի, զվարճական), մենապարի ու զուգապարի ևն: Առանձնանում են քնար. այն երգերը, որոնք արտահայտում են կարեկցանք և նորովի անդրադարձ գյուղ. երգի սոցիալ. թեմային: Մեծ բաժին են ազգ. հայրենասիր. երգերը, որոնք սկզբնավորվել են 1860-ական թթ-ից:

Հատված «Քաղհանի երգից» (գրառումը՝ Հ. Հարությունյանի)

Ազատագր. թեման արտացոլվել է ինչպես քնար., այնպես էլ քայլերգ. և մարտաշունչ երգերում: Հայրենասիր. երգերը մեծապես նպաստել են ժողովրդի ազգ. գիտակցության ձևավորմանը: Ընդհանուր առմամբ (գեղջկականի համեմատությամբ) քաղաք. երգերն ավելի մտերմիկ են և հուզ., նաև առանձնանում են կոմպոզիցիոն որոշ հատկանիշներով (մեղեդին զարգանում է առավել պարզ միջոցներով, ռիթմական կազմը և ձևային կառույցները նույնպես հստակ են): Համեմատաբար հին



Հատված «Սասուն նստեր անտեր կուլար» երգից (գրառումը՝ Սպիրիդոն Մելիքյանի)

երգերում ու պարեղանակներում դյուրին է ընկալվում նրանց տեղային (Երևանի, Ալեքսանդրապոլի, Վանի, Թիֆլիսի, Ղարաբաղի ևն) պատկանելությունը:

Գեղջկական երաժշտությունից խիստ տարբերվում են գրական լեզվով բնագրերը, որոնց հեղինակները մեծ մասամբ պրոֆեսիոնալ բանաստեղծներ են:

Հայ քաղաք. ժող. երգերի բնորոշ նմուշներից են՝ սիրային-քնար.՝ «Լուսնակ գիշեր, բոլորովին քուն չունեմ», «Սարերի

հովին մեռնիմ», «Դարդս լացեք, սարի սմբուլ», «Սիրուհիս, քեզ համար» և «Աղջիկ, դուն սիրուն», օրորոցային՝ «Քուն եղիր, պալաս», գյուղ.՝ «Սաճկալ ես, բեզարած ես», սոցիալ.՝ «Արազն եկավ լափին տալով», հայրենասիր-ազատագր.՝ «Մայր Արաքսի ափերով», «Արևն ելավ, զեյթունցիներ» և թեմատիկ այլ երգեր:

Միջնադար. երաժշտ. գործիքների մասին տեղեկանում ենք մանրանկարչությունից, պատմ. հիշատակություններից և հին գրություններից. այդ գործիքներից շատերը վերացել են, մի մասն էլ վերափոխվել է: Քաղաք. ժող. անսամբլների լար. գործիքները Մերձ. Արևելքում տարածվածների տեղային տարբերակներն են՝ քամանչա, քաման, ուդ, թառ, սազ, չոնգուր, քանոն, սանթուր, փողայինները՝ շվի, դուդուկ, զուռնա, հարվածայինները՝ դհոլ, դափ, նաղարա (գործածվում է հազվադեպ): Գործիք. մենանվագ կամ անսամբլ. երաժշտությունը, բազմատեսակ մենապարերից ու ծիս. եղանակներից բացի, ընդգրկում է ծավալուն իմպրովիզացիոն, դանդաղ, տարաբնույթ պիեսներից կազմված պոպուրիներ (սովորաբար՝ ռիթմավորված կրկնակներով):

Հարված «Թագվորի գովքը» երգից (գրառումը՝ Մարգարիտ Բրուտյանի)

Անսամբլում լայնորեն կիրառվում են դամը և իմպրովիզացիան: Շարունակվում է ինագույն գործիքների վերագտնելու, նորացնելու և «ընտանիքներ» ստեղծելու աշխատանքը: Քաղաք. ժող. գործիքների անսամբլները (լար., փող. կամ խառը) հաճախ առաջնորդվում են պրոֆեսիոնալ բազմաձայն կոմպոզիցիայի կանոններով: Առանձնահատուկ նշանակություն ունի հարված. գործիքը, որի նվագամասը տարբերակվում (վարիացիաներ) և ինքնուրույն զարգացվում է: Քաղաք. գործիք. երաժշտության բնագավառում հայտնի էին վիրտուոզ կատարողներ, որոնց համբավը տարածվել էր նաև արտերկրում (Սաշա Օգանեզաշվիլի, Լևոն Կարախան և ուր.):

Ժողովրդականից պրոֆեսիոնալ երաժշտություն են փոխանցվել գործիքների խմբավորման արվ-ը (լար., փող., հարված.), երաժշտ. զագացման տարբեր սկզբունքներ (պար., վոկալ, ասերգ-իմպրովիզացիոն), նրա զարգացման ու ծավալման բազմաթիվ միջոցներն ու հնարները (տարբերակում, կրկնողություն ևն):

Հայկ. ժող. երաժշտությունը հիմնարար նշանակություն ունի ազգ. պրոֆեսիոնալ (կոմպոզիտոր.) արվ-ի զարգացման մեջ: Պրոֆեսիոնալ երաժշտ. թատերարվ-ի նախադրյալները թաքնված են ժող. ծիս. երգերի թատերականացված կատարման մեջ, բազմաձայնության տարրերը՝ ժող. գործիք. արվ-ում:

Կոմպոզիտոր. ստեղծագործությունը սնվում է ժող. երգից. օգտագործում է նրա ինքնատիպ ինչերանգը, ճկուն ռիթմը, հարուստ ձայնակարգերը, նաև ժող. երգը ենթարկում է վերջն. ու կայուն մշակման (չի բացառվում նաև նույն երգի՝ այլ հեղինակի մշակումը): Սովորաբար, ժողովրդի մեջ նախ տարածվում են պրոֆեսիոնալ արվ-ի այն գործերը, որոնք հորինված են ժող. երգի ոգով ու ոճով, ապա բանավոր փոխանցվում են սերնդեսերունդ և տարբերակվում:

Ժողովուրդը պրոֆեսիոնալ երգը «սեփականացնում» է կամ ամբողջությամբ, այսինքն՝ թե՛ մեղեդին, թե՛ տեքստը (օր.՝ «Անուշ» օպերայի բազմաթիվ երգեր՝ «Համբարձում յայլա», «Ամպի տակից», Կ. Զաքարյանի «Սեղանի երգը», Ա. Տիգրանյանի «Սև աչերեն», Դ. Ղազարյանի «Ուռի» ևն), կամ իր մեղեդիների համար «ընտրում» է որևէ հայտնի բանաստեղծություն (օր.՝ Ա. Իսահակյան, «Մաճկալ ես», «Սիրեցի յարս տարան», Ղ. Աղայան, «Մանիր, մանիր, իմ ճախարակ» ևն):

Հայկ. ժող. երաժշտությունը տարբերվում է արև. այլ ժողովուրդների երաժշտությունից. ինչպես Կոմիտասն է նշում՝ «...բոլորովին այլ եռանդ, այլ զգացմունք և այլ միտք են պարունակում, քան մյուս արևելյան ազգերինը», որին համակարծիք են նաև օտարազգի երաժշտագետները: Գաղ-հուզ. բովանդակությամբ և երաժշտառճ. հատկանիշներով հայկ. ժող. երաժշտությունն աշխարհի բազմազգ բանահյուսությունը լրացրել ու բազմազանել է ազգ. վառ նկարագիր ունեցող ամբողջ. ու բարձրարժեք ստեղծագործություններով:

Հայկ. ժող. երաժշտությունը ժողովրդի կյանքի և մշակույթի պատմությունն է ու նրա բանավոր տարեգրությունը, ուստի կարևոր սկզբնաղբյուր է հայագիտության համար:

Ժող. երգի և նվագի զարգացմանն ու տարածմանը նպաստել են ճանաչված երգիչներ Ա. Շահմուրադյանը, Ա.Տեր-Աբրահամյանը, Ա. Գյուլզադյանը, Շ. Մկրտչյանը, Շ. Տալյանը, Հ. Բադալյանը, Հ. Մուրադյանը, Օ. Համբարձումյանը, Ռ. Մաթևոսյանը, Ֆ. Մարտիրոսյանը, Թ. Պողոսյանը, Ն. Իսպիրյանը, Ա. Գրիգորյանը (Սիրո), Գ. Հովհաննիսյանը, Ա. Գուլանյանը, դուդուկահարներ Կ. Եղոյանը, Մ. Մարգարյանը, Լ. Մադոյանը, Վ. Հովսեփյանը, Զ. Գասպարյանը, Գ. Մինասովը, Գ. Դաբաղյանը, շվիահարներ, սրնգահարներ Ի. Մինասյանը, Ե. Մարգարյանը, Ն. Ժամհարյանը, Ն. Քարտաշյանը, Լ. Թևանյանը, թառահարներ, սազահարներ Ա. Մելիք-Աղամալյանը, Ս. Կարապետյանը, Բ. Մելիքյանը, Վ. Բունին, Ս. Սերգեևը, Ս. Սեյրանյանը, Հ. Դարբինյանը, Հ. Սահակյանը, Ա. Խաչատուրը, քամանչահարներ, քամանահարներ Ս. Օգանեզաշվիլին, Լ. Կարախանը, Գ. Միրզոյանը, Ա. Մեջինյանը, Ն. Հովհաննիսյանը, Հ. Ավետիքյանը, Վ. Գրիգորյանը, բամբիռահարներ Ռ. Սարգսյանը, Խ. Գասպարյանը, Ա. Մնացականյանը, ուդահարներ Ուդի Սարգիսը, Ս. Ալթունյանը, Ուդի Հրանտը, Ս. Սամոյանը, Ա. Ղազարյանը, քանոնահարներ Գ. Խանիկյանը, Զ. Տերմենջյանը, Խ. Ավետիսյանը, Ա. Աթաբեկյանը, Հ. Լեյլոյանը, Ս. Թևանյանը, Ծ. Հովհաննիսյանը, դհոլահարներ Հ. Աբգարյանը, Հ. Ավոյանը, Գ. Հախվերդյանը, Ա. Օրդինյանը, սանթուրահարներ Պ. Հովակիմյանը, Ս. Պետրոսյանը, նաև «Սինանյան նվագախումբը», Հայաստանի ազգ. նվագարանների պետ., «Տկզար», «Վահագն», «Սիրո» նվագախմբերը, Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների, Հայկ. ժող. երգի-պարի, Հայաստանի գուսան. և ժող. երգի պետ., «Սայաթ-Նովա» աշուղ. երգի, «Շողակն», «Նարեկացի» և այլ անսամբլներ:

Հատված «Նազ մի անի» երգից (գրառումը՝ Կոմիտասի)

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ, բանահյուս-երաժշտ. ստեղծագործություն, ժող. ստեղծագործության առավել տարածված տեսակը: Ժ. ե-ի բազմաճյուղ և բազմաժանր բնույթը պայմանավորված է ստեղծման ու կենցաղավարման միջավայրի և կյանքի հետ ունեցած կապերի բազմազանությամբ: Քաղաք. Ժ. ե-ի առավել տարածված ժանրերն են՝ ազգ-ազատագր., կենցաղ., քնար., գեղջկականինը՝ աշխ. (հորովելներ, կալերգեր, սայլերգեր ևն), ծիս. (հարսանեկան, վիճակի, ուխտագնացության երգեր ևն), վիպապատմ., կենցաղ. (օրորոց. երգեր ևն), սիրային-քնար.: Ժ. ե-երում անդրադարձել են նաև ժողովրդի սոցիալ. կյանքի թեմաների՝ առաջացնելով սոցիալ. ժանրը (պանդխտության երգեր ևն): Երաժշտ. արտահայտչամիջոցների որևէ ընտրություն (ձայնակարգաելևէջ., ռիթմ. նախասիրություններ, կատարող. կերպեր ևն) լեզվաբանաստեղծ. հատկանիշների հետ որոշում են Ժ. ե-ի ազգ. պատկանելությունը: Հայկ. Ժ. ե. պատմ. երկարատև գոյության ընթացքում շարունակ զարգացել և նորացել է: Հնագույն և միջնադար. գուսան. երգերի տեքստերը գրավոր

պահպանվել են պատմիչների երկերում և Տաղարաններում: Բանավոր պահպանված և XIX դ–ի վերջերից գրառված գուսան. երգերից են «Սասնա ծռեր» էպոսի երգային հատվածները: Վիպաքնար. ժանրի լավագույն նմուշներից են «Մոկաց Միրզան», նաև ուշ միջնադարից պահպանված ***հայրեններն*** ու ***անպտունիները***: Սոցիալ. ժանրի օրինակներ են՝ «Ծիրանի ծառ», «Սիրտս նման էր», «Կռունկ», սիրային–քնար.՝ «Գարուն ա», «Քելեր, ցոլեր», «Ալագյազ սարն ամպել ա», կենցաղ.՝ «Ակնա օրորը»: Հայկ. ժ. ե–ի պահպանված ժանրերում կենս. փոփոխություններով պայմանավորված՝ նորացել է բանաստեղծաերաժշտ. կերպար. բովանդակությունը: Այս ամենը գոյատևում են և՛ ժող., և՛ պրոֆեսիոնալ վարպետների կատարումներով:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ–ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼ, երգիչների, պարողների և երաժիշտների խումբ, որը ժող. արվ–ի տարբեր ճյուղերի պատկանող ստեղծագործությունները (երգ, պար, գործիք. երաժշտություն) համադրում և ցուցադրում է որպես բաղադրյալ գեղ. ամբողջություն (որոշ դեպքերում այդ արվ–ներից որևէ մեկը կարող է դառնալ առաջնային): Ձևի և բովանդակության հիմքերը բուն ժող–ից են, որտեղ բնական հատկանիշ է արվ–ների համադրումը, իսկ անսամբլի ներկայացրած ժող. երգերը գեղարվեստորեն ոճավորված կամ էականորեն վերամշակված են պրոֆեսիոնալ արվ–ի արտահայտչամիջոցներով ու ձևերով: Անսամբլում հաճախ երգը միահյուսվում է ասմունքի կամ երկխոսության, նաև թատերականացված պար. բեմադրության հետ: Հայ իրականության մեջ ժող. երգի ու պարի համադր. բեմադրության առաջին փորձն արել է Քրիստափոր ***Կարա–Մուրզան***՝ ստեղծելով արդի ժ. ե–պ. ա–ի նախատիպը: 1930–ական թթ–ից հիմնադրվել են

«Սասուն» երգի–պարի անսամբլը (1988)

Արցախի «Մենք ենք, մեր սարերը» (2000) երգի–պարի անսամբլը

ազգ. ցայտուն նկարագրով անսամբլներ, այդ թվում՝ Հայկական ժող. երգի–պարի անսամբլը (1938), ավելի ուշ՝ Վանաձորի «Հորովել» (1958, 1972–ից՝ պետ.), Ստեփանակերտի «Ղարաբաղ» (1967), Երևանի «Ակունք» (1976), «Կարին» (2001), «Մարաթուկ», «Սասուն» և այլ անսամբլներ, որոնց նպատակը հայ ազգ. երգի ու պարի զարգացմանն ու տարածմանը նպաստելն է հայրենիքում և արտերկրում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐ, ժող. երգի տեսակ, հիմնականում՝ քառատող, նաև եռատող և երկտող: Մեծ մասամբ ունի դարձ կամ կրկնակ՝ բաղկացած մեկ կամ մի քանի բառից, տողից, անգամ՝ քառատողից: Կրկնակը պարզում է ժ. խ–ի իմաստը և ստեղծում երաժշտ. ամբողջություն: Կրկնակով են որոշվում նրա եղանակները: Ժ. խ. բաղկացած են 5–12–վանկանի նույնահանգ, զուգահանգ կամ 3–րդ անհանգ տողից: Ժ. խ. հիմնականում սիրային են, ծագումով և բովանդակությամբ՝ գեղջկական, որոնք արտացոլում են գյուղ. կյանքի պատկերներ: Գործածվում են որպես պարերգ, ծիս. վիճակահանության և սիրային երգ: Ժ. խ. ժող. երգերի ամենապարզ տիպն են:

Գրկ. Ա բ ե ղ յ ա ն Մ., Ժողովրդական խաղիկներ, երկ., հ. 2, Ե., 1940:

Ըստ Սարգարիտ Հարությունյանի

Ի

ԻԳՈՒՄՆՈՎ Կոնստանտին Նիկոլաևիչ [01.05.1873, Լեբեդյան (այժմ՝ ՌԴ Լիպեցկի մարզում)–24.03.1948, Մոսկվա, ռուս դաշնակահար, մանկավարժ: ՌԽՖՍՀ (1941), ԽՍՀՄ (1946) ժող. արտիստ: ՄՊԿ պրոֆ. (1899): Արվեստագիտ. դ-ր (1940): Ավարտել է ՄՊԿ (1894), աշակերտել է Ա. Ի. Զիլոտիին և Պ. Ա. Պաբստին: 1917-ից՝ ՌԽՖՍՀ լուսժողկոմատի երաժշտ. խորհրդի անդամ, մասնակցել է երաժշտ. կրթության բարեփոխմանը: 1918-ից դասավանդել է ՄՊԿ-ում (տնօրեն՝ 1924–29-ին), 1941–45-ին՝ ԵՊԿ-ում. սաներից են՝ Ա. Հարությունյանը, Ա. Բաբաջանյանը, Կ. Մալխասյանը, Մ. Ղամբարյանը, Ա. Ամբակումյանը, Մ. Մխիթարյանը: Համերգներով հանդես է եկել Երևանում. երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, Պ. Ի. Չայկովսկու, Ս. Վ. Ռախմանինովի, Ն. Կ. Մետների, Ս. Ի. Տանեևի գործերից: Հանդես է եկել նաև անսամբլներում: Կատարումներն առանձնացել են քնար. արտահայտչականությամբ, պլանոյում՝ նրբերանգների բացառիկ բազմազանությամբ:

1993-ից Լիպեցկի մարզում անցկացվում է պատանի դաշնակահարների Ի-ի անվ. համառուս. մրցույթ-փառատոն (հանձնախմբի նախագահ՝ Մ. Ղամբարյան):

Լենինի շքանշան (1945), ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ԻՄԻՏԱՑԻԱ (լատ.՝ imitatio – նմանակում, նմանեցում), երաժշտության մեջ՝ պոլիֆոնիկ կառուցվածքում որևէ մեղեդային դարձվածքի (թեմա, մոտիվ ևն) կրկնությունը մեկ այլ ձայնում: Առաջին ձայնը կոչվում է սկզբնական, սկսող կամ պրոպոստա (լատ.՝ proposta – առաջարկել), հաջորդը գրեթե միշտ պարունակում է միևնույն մեղեդային գիծը՝ դառնալով նմանակողը կամ ռիսպոստան (լատ.՝ risposta – առարկել, պատասխանել): Ի. պոլիֆոնիկ երաժշտության ամենաբնորոշ արտահայտչամիջոցներից է, որի վրա հիմնված են առավել զարգացած և ինքնուրույն պոլիֆոնիկ ձևերը: Եթե ձայների քանակը 2-ից ավելի է, ապա նմանակող ձայների քանակը նույնպես աճում է: Որպեսզի նմանակումը նպաստի պոլիֆոնիկ կերտվածքի ստեղծմանը, անհրաժեշտ է, որ պրոպոստան նմանակող ձայնի մուտքից սկսած շարունակի զարգացած հակադիր մեղեդային շարադրանք՝ զուգակցելով այն Ի-ի ձայնին՝ պարզ կոնտրապունկտի կանոններով: Մեղեդու այսպիսի շարադրանքն անվանում են «հակաշարադրանք»: Կիրառում են նաև այնպիսի Ի-ներ, երբ հակաշարադրանքը բացակայում է:

Կոնստանտին Իգումնով

Պոլիֆոնիկ երաժշտ. ձևերի կազմավորման համար առավել մեծ նշանակություն ունի կվինտա վեր (կամ վար) կատարվող Ի. (Ի. դոմինանտ. տոնայնությամբ), որը կարող է լինել ուղիղ շարժմամբ: Հնարավոր է նաև, որ նմանակող ձայնը մեղեդին շարադրի տարբերակված, ըստ որի՝ Ի-ի յուրաքանչյուր ձև ունի համապատասխան անվանում՝

ա. շրջված կամ հակառակ շարժմամբ (հայելաձև, հայելանման), որի դեպքում պահպանվում է մեղեդու ռիթմը, սակայն ինտոնացիոն քայլերը կատարվում են հակառակ ուղղությամբ՝ վերընթացները՝ վարընթաց, և հակառակը (ինչպես հայելու արտացոլումը):

Օր. 1.

բ. մեծացումով Ի-ի մեղեդին ձայնում շարադրվում է ուղիղ շարժմամբ՝ առավել մեծ տևողություններով, սովորաբար՝ 2 (կրկնակի մեծացում), հազվադեպ՝ 4 անգամ:

Օր. 2.



գ. փոքրացումով Ի–ի մեղեդին շարադրվում է ուղիղ շարժմամբ՝ առավել փոքր տևողություններով, սովորաբար՝ 2 (կրկնակի փոքրացում), հազվադեպ՝ 4 անգամ:

Օր. 3.



դ. խեցգետնաքայլ (խեցգետնաշարժ) կամ հետադարձ Ի–ի մեղեդին ձայնում շարադրվում է վերջից դեպի սկիզբ՝ պահպանելով ինտոնացիոն բոլոր քայլերը և ռիթմը:

Օր. 4.

ե. կոմբինացված կամ խառն Ի–ի դեպքում միաժամանակ հանդիպում են Ի–ի ձևերից մի քանիսը: Ձայնում մեղեդին շարադրվում է ուղիղ շարժմամբ, որի ժամանակ միավորվում են շրջվող և մեծացումով կամ փոքրացումով կամ խեցգետնաքայլ շրջվող ու մեծացումով և այլ Ի–ներ:

Օր. 5. Զուգակցված են հայելանման և մեծացումով Ի–ները:

զ. ազատ Ի–ի ձայնում մեղեդու ինտերվալ. քայլերը ենթարկվում են որոշ փոփոխման:

Օր. 6.

է. ազատ Ի–ի ձևերից է ռիթմիկ Ի., որի ձայնում փոփոխվում է միայն մեղեդու ռիթմը, իսկ ինտերվալ. քայլերը մեծ մասամբ չեն պահպանվում:

ը. նմանակման ազատ ձևերից է տոնայնական Ի. (տոնալ). կվինտա վեր (կամ վար) Ի–ի ձայնում կատարվում են որոշակի փոփոխություններ:

թ. ստրետտային Ի. սկսվում է մինչ մեղեդու ավարտը (այսինքն՝ ավելի շուտ, քան սովորական Ի., որն սկսվում է մեղեդու ավարտից անմիջապես հետո կամ քիչ անց): Ի–ները կարող են լինել նաև կրկնակի, երբ կրկնվում են միաժամանակ հնչող 2 տարբեր մեղեդիներ (եռակի և քառակի Ի–ները հազվադեպ են): Ի., որպես էպիզոդիկ միջոց, հաճախ օգտագործվում է նաև հոմոֆոնիկ երաժշտության մեջ: Տես նաև ***Կանոն, Հոմոֆոնիա, Ֆուգա***:

ԻՄՊՐԵՍԱՐԻՈ (իտալ.՝ impresario, < impresa – ձեռնարկում, ձեռնարկություն), հանդիսությունների, ներկայացումների և համերգների մասնավոր պրոֆեսիոնալ կազմակերպիչ, նաև տվյալ արտիստի կամ գեղ. խմբի գործակալ, տնօրեն, որը գործում է նրանց անունից: XVI–XVIII դդ–ի Իտալիայում թատերախմբի կազմակերպիչն էր, թատրոնի տնօրենը:

ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ (ֆրանս.՝ impressionisme, < impression – տպավորություն), երաժշտության մեջ՝ գեղ. ուղղություն, որն արվ–ի հիմնական նպատակը համարում է իրականության, երևույթների անմիջական արտացոլումն արվեստագետի վայրկենի. տպավորություններում, զգայական սուբյեկտիվ ընկալումնեերում: Առաջացել է 1880–90–ական թթ–ին Ֆրանսիայում (Կ. Դեբյուսի), ապա տարածվել այլ երկրներում: Աստիճանաբար հարստացել է գունահնչյուն. երանգապնակը, ընդլայնվել ձայնակարգ. և հարմոնիկ հիմքը: Ավանդ. բազմազան ձևերի ազատ մեկնաբանումը, քմահաճ, փոփոխ. ռիթմիկան, նվագախմբ. թարմ հնչերանգները, գուն. առկայծումները դարձել են բնորոշ երաժշտ. Ի–ի բազմաթիվ երկերի համար: Երաժշտ. ստեղծագործություններում իմպրեսիոնիստ կոմպոզիտորները փորձել են հասնել բնանկարի բանաստեղծ. պատկերման (Կ. Դեբյուսիի «Ֆավնի հետկեսօրյա հանգիստը», «Նոկտյուններ», «Ծովը», Մ. Ռավելի «Ջրի խաղը», «Դափնիս և Քլոյե» ևն): Այդ հատկանիշներն ինքնատիպորեն միահյուսվել են այլ կոմպոզիտոր. դպրոցների ազգ. առանձնահատկությունների հետ [Մ. դե Ֆալլա՝ Իսպանիա, Ա. Կազելա, Օ. Ռեսպիգի՝ Իտալիա, Ֆ. Դելիուս, Ս. Սկոտ՝ Անգլիա, Կ. Շիմանովսկի՝ Լեհաստան, Ի. Ֆ. Ստրավինսկի, Ն. Ն. Չերեպնին, Ս. Ս. Պրոկոֆև (վաղ շրջանի երկերը)՝ Ռուսաստան]: Ի. նպաստել է երաժշտ. արտահայտչամիջոցների հարստացմանը: Կ. Դեբյուսիի փոփոխությունները հարմոնիայում նպաստել են մաքուր հնչյունի ինքնուրույնությանը, յուրաքանչյուր հնչյունի, տեմբրի, ակոր-

դի նշանակությանը, որտեղ կարևոր են ակորդի տոնն ու գույնը: Նվագախումբը և նրա հարմոնիան ձեռք են բերել մեղմ գուներանգներ: Կ. Դեբյուսին անդրադարձել է նաև «գործիքի տեմբր» հասկացությանը, նվագախմբում նրա ինքնուրույնությանը, նաև մինչ այդ եղած գործիքների դերի և ֆունկցիոնալ պատկանելության փոփոխություններին: Նրա երաժշտությունն արտահայտում է իրավիճակ (ոչ թե ընթացք), պատկեր, ակնթարթ: Երաժշտ. Ի–ի մյուս ոլորտը ֆանտաստիկան է, որը սերել է անտիկ դիցաբանությունից կամ միջնադար. լեգենդներից ու Արևելքի ժողովուրդների էկզոտիկ աշխարհի պատկերներից: Ի–ի գեղագիտությունն ազդել է երաժշտ. բազմաթիվ ժանրերի վրա (օպերա, վոկալ և դաշնամուր. մանրանվագ, սիմֆ. էսքիզներ, պատկերներ): Յուրօրինակ թարմություն էր երգի, պարի ժանրերի օգտագործումը: Երաժշտ. Ի–ի վրա ներգործել են ռուս. «Հզոր խմբակի» կոմպոզիտորների նորովի մոտեցումը տեմբրին, ֆրանս., իսպ., նաև Արևելքի երկրների ժող. երաժշտությունը: Ի–ի որոշ դրսևորումներ արտահայտվել են Կոմիտասի, Ա. Խաչատրյանի (վաղ շրջան), Ռ. Մելիքյանի, Գ. Եղիազարյանի և ժամանակակից ուր. կոմպոզիտորների երկերում:

Գրկ. *Гаман Р., Импрессионизм в искусстве и жизни, пер. с немец., М., 1935; Каратыгин В., Избранные статьи, М.–Л., 1965; Музыка XX в. 1890–1945. Очерки, ч. 1, кн. 1, М., 1976; Яроциньский С., Дебюсси, импрессионизм и символизм, пер. с польск., М., 1978.*

ԻՄՊՐՈՎԻԶԱՑԻԱ. (ֆրանս.՝ improvisation, իտալ.՝ improvisatione, լատ.՝ impro-visus – անակնկալ, հանկարծակի), գեղ. ստեղծագործության տեսակ, որի մտահղացումները և մարմնավորումն իրականացվում են կատարման ընթացքում: Ի. մեծ նշանակություն ունի ժող. ստեղծագործության վոկալ ու գործիք. արվ–ում: Հնագույն շրջանից տարբեր ժողովուրդներ ունեցել են երգիչ–իմպրովիզատորներ (Հին Հունաստանում՝ աեդոսները, Հայաստանում՝ վիպասաններն ու գուսանները, գերմանախոս երկրներում՝ շպիլմանները, Ռուսաստանում՝ ասացողները, Ուկրաինայում՝ կոբզարները, Միջին Ասիայում՝ ակիները, ևն): Պրոֆեսիոնալ Ի–ի վաղ ձևերը Եվրոպայում դրսևորվել են միջնադար. վոկալ պաշտամունք. երաժշտության մեջ, քանի որ ձայնի գրառումը (հուն.՝ նևմեր, հայկ.՝ խազեր, ռուս.՝ կրյուկներ) մոտավոր էր, յուրաքանչյուր կատարող իր երգամասում պետք է օգտագործեր Ի.: XV–XVIII դդ–ում Ի. արտահայտվել է գեներալ–բասի համակարգում, պոլիֆոնիկ երաժշտության մեջ (ազատ Ի.՝ ֆուգաներում, պրելյուդներում, ևն), գործիք. պիեսներում (յուտնյայի, կլավիրի, ջութակի, ուդի ևն) և XVIII–XIX դդ–ի օպեր. կոլորատուր. երգամասերում: XVI–XVIII դդ–ում վոկալ և գործիք. դպրոցների երաժշտ. դրույթներում շարադրված են Ի–ի օրենքներն ու հնարքները, որոնք արտահայտված են զարդինչյուններում: XVIII դ–ի վերջից Ի. մեծ տեղ է գրավել պրոֆեսիոնալ վիրտուոզ կատարողների (նաև համերգ.) ծրագրերում, XIX դ–ի 1–ին կեսին՝ կոմպոզիտոր–դաշնակահարների՝ Լ. վան Բեթհովենի, Ն. Պագանինիի, Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի կատարումներում: Երաժշտ. մի շարք ժանրերի անվանումներ վկայում են նրանց կապը Ի–ի հետ (ֆանտազիա, էքսպրոմտ): Ժամանակակից երաժշտության մեջ գործնականում Ի. էական նշանակություն չունի՝ բացի ջազից և այն կամայականորեն օգտագործող որոշ մոդեռնիստ. հոսանքներից: Հնագույն ժամանակներից Ի. պարի անկապտելի մասն է: Ժող. բազմաթիվ պարերում (հայկ., վրաց. ևն) կատարողը շեղվում է պար. կայուն ձևերից: XX դ–ի 2–րդ կեսից Ի. դարձել է ժող. պարի պարտադիր բաղադրիչ, լայնորեն օգտագործվում հանդիսապարերում (չառլստոն, լիպսի, թվիստ, շեյք ևն):

ԻՆՎԵՆՑԻԱ. (< լատ. Inventio – հնարանք, գյուտ), իմիտացիոն ոճի երկձայն կամ եռաձայն պոլիֆոնիկ գործիք. ստեղծագործություն: «Ի.» եզրույթը շրջանառել է ֆրանսիացի կոմպոզիտոր Կ. Ժանեկենը, ապա գործածել են նաև ուրիշ կոմպոզիտորներ: Յ. Ս. Բախը «Ի.» է անվանել իր հայտնի 15 երկձայն (BWV 772–786) և 15 եռաձայն (BWV 787–801, «սիմֆոնիաներ») գործերը: Ինքնուրույն գեղ. արժեք ունեցող բոլոր Ի–ները գրվել են որպես ֆուգաներ՝ տեխ. նախապատրաստ. վարժություններ կատարելու համար: XX դ–ի կոմպոզիտորները լայնորեն կիրառել են պոլիֆոնիկ երաժշտության ժանրերը, մասնավորապես՝ Վերածննդի Ի., որը մեկնաբանվում է առավել ազատ: Ի–ների հեղինակ են Ա. Բերգը («Վոցցեկ» օպե-

րայի 3-րդ գործողությունը), Բ. Մարտինուն (նվագախմբի համար), Ա. Ժոլիվեն (12 Ի.՝ հոգևոր և լար. ինգյակի, շեփորի և տրոմբոնի համար), Ռ. Կ. Շչեդրինը («Պոլիֆոնիկ տետր»), Բ. Ի. Տիշչենկոն (12 Ի.՝ երգեհոնի համար), Ս. Ա. Գուբայդուլինան (դաշնամուրի համար), Ա. Խաչատրյանը («Ինվենցիա»՝ աղաջո «Գայանե» բալետից, 1947), Գ. Հովունցը (շարք՝ սիմֆ. նվագախմբի համար, №1 op. 3, 1968, №2 op. 5, 1970, №3 op. 6, 1971, 10 ինվենցիոն պիես՝ փայտե փող. գործիքների և դաշնամուրի համար, op. 4, 1969, 10 Ինվենցիոն պիես՝ լար. գործիքների և դաշնամուրի համար, op. 7, 1972, կոնցերտ. Ի-ներ՝ դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի համար, op. 8, 1974, 10 ինվենցիոն պիես՝ պղնձե փող. գործիքների և դաշնամուրի համար, op. 9, 1975, «Հնչյունի հարմոնիա» կոնցերտ. Ի-ներ՝ թավջութակի և սիմֆ. նվագախմբի համար, op. 10, 1976) և ուր.:

Գրկ. *Протопопов В.,История полифонии в ее важнейших явлениях [в. 2], М., 1965.*

ԻՆՏԵՐԼՅՈՒԴԻԱ (լատ.՝ interludium, < լատ. inter – միջև և ludus – խաղ, միջնախաղ), երաժշտ. ստեղծագործության 2 հիմնական մասերը միացնող (կամ անջատող) ոչ մեծ հատված՝ էպիզոդ (օր.՝ վարիացիաների կամ խորալի 2 տները, երբեմն՝ նաև ֆուգայի 2 անցումները):

ԻՆՏԵՐՄԵԴԻԱ (< լատ. intermedius – միջանկյալ, միջնախաղ), 1. սեքվենցիոն-իմիտացիոն բնույթի զարտուղող պոլիֆոնիկ միջանկյալ կառուցվածք ***ֆուգայի*** 3 մասերի, նաև նրանց թեմաների միջև, որը նախապատրաստում է մասերը և կապում միմյանց (երբեմն կոչվում է ***ինտերլյուդիա***): Հիմնական հատկանիշներից է թեմայի բացակայությունը, սակայն նրա հակաշարադրանքի որոշ (հատկապես՝ վերջին) դարձվածքներ (նաև կոդետան) Ի-ի կառուցվածքի հիմքն են և սեքվենցիոն-իմիտացիոն սկզբունքով փոխանցվում են վեր կամ վար (առավել հաճախ՝ սեկունդաներով, տերցիաներով): Ի-ներում թեմատիկ նյութի որոշ ինտոնացիաների մասնատումը և նրանց սեքվենցիոն զարգացումը ֆուգայի այս բաժիններին հաղորդում են մշակման բնույթ: Ի-ներում հաճախ կիրառվում է կանոնիկ սեքվենցիա (օղակը կազմված է տարբեր ֆունկցիաների ակորդների հաջորդականությունից). օժանդակ սեպտակորդների, դոմինանտների և սուբդոմինանտների շարքերը կիրառվում են թե՛ տոնայնական, թե՛ զարտուղող սեքվենցիաներում: Ի-ները լինում են կարճ կամ ծավալուն: Ֆուգաներին հիմնականում բնորոշ են սկզբում և վերջում փոքր, մշակման մասում՝ մեծ Ի-ները: Օգտագործվում են նաև ֆուգայի էքսպոզիցիայում (կոնտրէքսպոզիցիայում), միջին մասում և ռեպրիզում: 2. Կատակերգ. ոչ մեծ պիես կամ տեսարան (մնջախաղ, պար, երաժշտ. երկ), որն ուղեկցվում է երգով ու նվագով, կատարվում ներկայացման (դրամատիկ., օպեր., բալետ.) գործողությունների միջև: Սկզբնավորվել է XV դ-ում, տարածվել XVI–XVII դդ-ի եվրոպ. թատրոններում: Ժամանակակից թատրոնում Ի. ներկայացման մեջ ներդրված կոմիկ. կամ երաժշտ. տեսարան է:

Գրկ. Փաշինյան Է., Պոլիֆոնիայի դասագիրք, Ե., 1998:

ԻՆՏԵՐՄԵՑՑՈ (իտալ.՝ intermezzo, լատ.՝ intermedius – միջանկյալ), 1. միջանկյալ պիես (գործիք., նվագախմբ., խմբերգ.) օպերայում կամ այլ երաժշտ. ստեղծագործության մեջ: 2. Դաշնամուրի կամ նվագախմբի համար գրված տարաբնույթ և ինքնուրույն բովանդակության, ազատ ձևի պիեսներ:

Ի. առաջինը Ռ. Շումանն է օգտագործել իր դաշնամուր. պիեսների շարքում (op. 4, 1832): Ի-ի հեղինակներ են նաև Յ. Բրամսը, Ա. Կ. Լյադովը, Մ. Պ. Մուսորգսկին: 3. Ինքնուրույն նվագախմբ. էպիզոդ օպերայում (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով և ուր.):

Ի-ներ են գրել նաև Գ. Հախինյանը (շվիի և ժող. գործիքների նվագախմբի համար), Տ. Մանսուրյանը (Պարտիտ՝ սիմֆ. նվագախմբի համար, 3-րդ մաս, 1965) և ուր:

ԻՆՏԵՐՎԱԼ (< լատ. intervallum– միջոց, տարածություն), երկհնչյուն, հնչյունաշարի որևէ 2 աստիճանի կամ 2 հնչյունի բարձրությունների հարաբերակցությունը: Հաջորդաբար հնչող աստիճանների Ի. մեղեդիական է (մելոդիկ), միաժամանակ հնչողը՝ հարմոնիկ: Մեղեդիական Ի-ի արտահայտման համար որոշիչը հնչյունների (աստիճանների) հեռավորությունն է և նրանց հաջորդ. հնչման ուղղությունը (վերընթաց, վարընթաց, նույն հորիզոնականի վրա).

Հատված «Սոնա յար» երգից (գրառումը՝ Կոմիտասի)

Հարմոնիկ Ի. հանդես է գալիս որպես ինքնուրույն հնչյուն. միասնություն (երկհնչյուն) կամ ընդգրկվում ***ակորդի*** կազմում: Նրա արտահայտման համար էական է նաև հնչյունների զուգորդման բարդության և նրանց ձուլվածության սահմանը: Ի–ի ներքևի աստիճանը կոչվում է հիմք, վերևինը՝ գագաթ:

Հնչյունաշարի որևէ 2 աստիճանի հարաբերակցությունը բնութագրվում է նրանց միջև եղած աստիճանների թվով (Ի–ի աստիճանային մեծություն) և տոների քանակով (Ի–ի տոնային մեծություն): Ըստ աստիճանային մեծության՝ Ի–ներն անվանում են լատ. դաս. թվականներով՝ պրիմա, սեկունդա, տերցիա, կվարտա, կվինտա, սեքստա, սեպտիմա, օկտավա, նոնա, դեցիմա, ունդեցիմա, դուոդեցիմա, ևն: Ի–ների աստիճանային մեծությունը նշվում է նաև թվանշաններով (օր.՝ պրիման՝ 1, սեկունդան՝ 2, տերցիան՝ 3, ևն): Նույն աստիճանային մեծության 2 Ի–ները միմյանցից տարբերվում են տոնային (տոների և կիսատոների) մեծությամբ.



Ըստ տեսակի (կամ տոնային մեծության)՝ առանձնանում են Ի–ի մաքուր, մեծ, փոքր, մծցվ., փքցվ., կրկնակի մծցվ. և կրկնակի փքցվ. Ի–ները: Հնչյունաշարի որևէ հիմնական կամ ածանցված աստիճանից կառուցելիս անհրաժեշտ է որոշել Ի–ի գագաթը կազմող աստիճանը, և, հաշվի առնելով Ի–ի տեսակը, ալտերացիայի նշանը համապատասխանեցնել նրա տոներին ու կիսատոներին:

Մաքուր Ի–ներ են պրիման, կվարտան, կվինտան, օկտավան, ունդեցիման, դուոդեցիման, կվինտդեցիման:

Օկտավայի սահմաններում կազմված Ի–ներն անվանում են պարզ (պրիմա, սեկունդա, տերցիա ևն): Օկտավայից մեծ Ի–ները, որոնք կազմված են մաքուր օկտավայից (օկտավաներից) և համապատասխան պարզ Ի–ից, անվանում են բարդ կամ բաղադրյալ (նոնա, դեցիմա, ունդեցիմա, դուոդեցիմա ևն): Բաղադրյալ Ի–ները՝ իրենց համապատասխան պարզ Ի–ների նման, տրոհվում են պարզ, բարդ, մծցվ., փքցվ. և այլ տեսակների:

Երաժշտության տեսության մեջ բաղադրյալ Ի–ները կոչվում են նաև հիմնական կամ դիատոնիկ, քանի որ ձևավորվում են դիատոնիկ հնչյունաշարի աստիճանների միջև: Դիատոնիկ Ի–ները ևս բաժանվում են մաքուր, մեծ, փոքր, մծցվ., փքցվ. և այլ տեսակների: Միաժամանակ օգտագործելով խրոմատիկ հնչյունաշարի աստիճանները՝ դիատոնիկ Ի–ից ստացվում են խրոմատիկ (կամ ձևափոխված) Ի–ներ, որտեղ պահպանվում է համապատասխան դիատոնիկ Ի–ի աստիճանային կազմը, սակայն փոխվում են տոների քանակը և Ի–ի արտահայտչականությունը: Մծցվ. (մաքուր կամ մեծ Ի–ից խրոմատիկ կիսատոնով ավելի Ի.), փքցվ. (մաքուր կամ փոքր Ի–ից խրոմատիկ կիսատոնով պակաս Ի.), կրկնակի մծցվ. և կրկնակի փքցվ. Ի–ները խրոմատիկ են, մծցվ. կվարտան և փքցվ կվինտան՝ դիատոնիկ:

Մծցվ. Ի–ներ ստացվում են նաև մաքուր կամ մեծ Ի–ի հիմքը խրոմատիկ կիսատոնով բարձրացնելու կամ գագաթը կիսատոնով իջեցնելու, իսկ փքցվ.՝ նույն Ի–ների հիմքը խրոմատիկ կիսատոնով բարձրացնելու կամ գագաթը կիսատոնով իջեցնելու միջոցով:

Մեծ Ի–ներից՝ փքցվ., փոքրերից մծցվ. Ի–ներ ստանալու համար անհրաժեշտ է Ի–ի հիմքը և գագաթը միաժամանակ ածանցել՝ խրոմատիկ նշաններով մոտեցնելով կան հեռացնելով իրարից:

Որևէ հնչյունից մծցվ. կամ փքցվ. Ի. հեշտությամբ կառուցելու համար նպատակահարմար է այդ հնչյունից ստանալ նույնանուն մաքուր, մեծ կամ փոքր Ի., ապա այն մեծացնել կամ փոքրացնել վերոնշյալ ձևերով:

Մեծացված և փոքրացված որոշ ինտերվալների տոնային մեծությունը

Մեծացված պրիմա	½ տոն
Մեծացված սեկունդա	1 ½ տոն
Փոքրացված տերցիա	1 տոն
Փոքրացված կվարտա	2 տոն
Մեծացված կվարտա	3 տոն

Փոքրացված կվինտա	3 տոն
Մեծացված կվինտա	4 տոն
Մեծացված սեքստա	5 տոն
Փոքրացված սեպտիմա	4 ½տոն
Փոքրացված օկտավա	5 ½ տոն

Գործնականում առավել հաճախ հանդիպում են խրոմատիկ Ի-ների՝ մծցվ. պրիմա, մծցվ. սեկունդա, փքցվ. տերցիա, փքցվ. կվարտա, մծցվ. կվինտա, մծցվ. սեքստա, փքցվ. սեպտիմա, կրկնակի մծցվ. կվարտա, կրկնակի փքցվ. կվինտա, կրկնակի մծցվ. պրիմա, կրկնակի փքցվ. օկտավա և այլ տեսակներ:

Յուրաքանչյուր խրոմատիկ և դիատոնիկ Ի-ներ էնհարմոնիկորեն հավասար են. կազմված են հավասար քանակությամբ տոներից և կիսատոներից, ուստի այդ Ի-ների աստիճանային մեծությունները տարբեր են, իսկ տոնայինը՝ նույնը: Օր.՝ էնհարմոնիկորեն հավասար Ի-ներ են նույն հնչյունի վրա կառուցված մծցվ. սեկունդան և փոքր տերցիան, մծցվ. կվարտան և փքցվ. կվինտան, մծցվ. կվինտան և փոքր սեքստան, մծցվ. սեքստան և փոքր սեպտիման են:

Որոշ մեծացված ինտերվալների էնհարմոնիզմը



Որոշ փոքրացված ինտերվալների էնհարմոնիզմը



Էնհարմոնիկորեն հավասար Ի-ներն առանձին հնչում են միատեսակ, սակայն երաժշտ. ստեղծագործության մեջ տարբերվում են և՛ հնչողությամբ, և՛ նշանակությամբ:

Անհավասարաչափ տեմպերացված համակարգերում Ի-ներն ունեն 12-աստիճանանոց հավասարաչափ տեմպերացված հնչյունաշարի նույնանուն Ի-ներից զանազանվող երկրորդ. հատկանիշներ, որոնք նրանց հաղորդում են լրացուցիչ արտահայտչաերանգ: Այն բնորոշ է նաև հայկ. ժող. երաժշտությանը. օր.՝ մեծ սեկունդաներն ունեն նաև նեղ (փափուկ հնչող), իսկ փոքրերը՝ լայն (կոշտ հնչող) տեսակներ:

Հարմոնիկ Ի-ները լինում են կոնսոնանս (հնչյունները ձուլվում են միմյանց) և դիսոնանս (հնչյունները չեն ձուլվում միմյանց, այլ առաջացնում են տարահնչունություն, յուրատեսակ բախում): Կոնսոնանս են մաքուր Ի-ները, մեծ և փոքր տերցիաները, մեծ և փոքր սեքստաները, դիսոնանս՝ մեծ և փոքր սեկունդաներն ու սեպտիմաները, բոլոր մծցվ., փքցվ., կրկնակի մծցվ. և կրկնակի փքցվ. Ի-ները: Տարբերում են կոնսոնանս Ի-ների կատարյալ (մաքուր պրիմա, մաքուր օկտավա, մաքուր կվարտա և մաքուր կվինտա) և ոչ կատարյալ (անկատար՝ մեծ ու փոքր տերցիաներ և սեքստաներ) կոնսոնանս տեսակները:

Ի-ի հիմքի տեղափոխումն օկտավա վեր, կամ գագաթի տեղափոխումն օկտավա վար կոչվում է շրջում: Յուրաքանչյուր Ի. իր շրջվածքի հետ կազմում է մաքուր օկտավա (6 տոն):

Մաքուր Ի-ները շրջելիս առաջանում են մաքուր, մեծերը՝ փոքր, փոքրերը՝ մեծ, մծցվ-ները՝ փքցվ., փքցվ-ները՝ մծցվ., կրկնակի մծցվ-ները՝ կրկնակի փքցվ., կրկնակի փքցվ-ները՝ կրկնակի մծցվ. Ի-ներ:

Ի–ների տեսությունը ձայնագիտության հիմնական բաժիններից է, իսկ երաժշտագիտ–յան մեջ՝ ձայնակարգի, մելոդիկայի, հարմոնիայի և պոլիֆոնիայի ուսմունքների հիմքը:

Անկայուն կոնսոնանս և դիսոնանս Ի–ների գոյացումն ու լուծումը երաժշտ. մտքի զարգացման կարևոր միջոցներից է: Տարբերում են Ի–ի լուծման ձայնաբան. և ձայնակարգ. տեսակները: Ի–ները լուծվում են ըստ ***ձայնավարության*** ուղիղ, հակադիր և շեղ: Լուծման ձայնաբան. եղանակը վերաբերում է դիսոնանս Ի–ներին. լուծվում են ինչպես կայուն, այնպես էլ անկայուն Ի–ի մեջ (լուծումը կախված է տվյալ դիսոնանսից և նրանից բխող կոնսոնանսից):

Թեև դիսոնանս Ի–ները՝ որպես լարված, անկայուն երևույթներ դասվում են ձայնաբանականին, սակայն լուծվում են հիմնականում նրանից բխող կոնսոնանս Ի–ներում, ուստի՝ այդ 2 Ի–ների միջև ի հայտ է գալիս նաև ձայնակարգ. հարաբերություն (անցումը մեկից մյուսը ձեռք է բերում որոշակի ձայնակարգ. իմաստ):

Ձայնակարգ. եղանակը վերաբերում է ձայնակարգի անկայուն (անկախ դիսոնանս կամ կոնսոնանս լինելուց) Ի–ներին և հիմնված է տվյալ տոնայնության որևէ անկայուն Ի.՝ նույն տոնայնության կայուն Ի. լուծելու սկզբունքի վրա: Ձայնակարգ. եղանակով են լուծվում (ունեն մի քանի լուծում) անկայուն կոնսոնանսները. ձայնակարգի ձգողականության սկզբունքով՝ Ի–ի 1 կամ 2 անկայուն հնչյունները շարժվում են դեպի մոտակա կայունները:

Հաճախ ձայնաբան. լուծմանը հաջորդում է ձայնակարգայինը (կրկնակի լուծում): Երբեմն 2 եղանակները հանդես են գալիս միասնաբար (զուգորդված լուծում):

Զուգորդված է կոչվում դիսոնանս Ի–ի լուծումը նույն տոնայնության կայուն կոնսոնանս Ի–ի մեջ: Այս դեպքում՝ ձայնաբան. լուծումը միաժամանակ ձայնակարգային է (օր.՝ մաժոր և մինոր ձայնակարգերում IV աստիճանից կառուցված մեծ սեկունդայի և V աստիճանի փոքր սեպտիմայի լուծումները):



Ի–ի կրկնակի լուծումը դիսոնանս Ի–ի կրկնակի՝ ձայնաբան. և ձայնակարգ. լուծումն է: Դիսոնանս Ի. լուծվում է տվյալ տոնայնության անկայուն կոնսոնանսից, որը պահանջում է անկայուն Ի–ի լրացուցիչ (կայուն Ի–ի մեջ) լուծում:

Պարզ Ի–ի տեսակներն են.

պ ր ի մ ա (< լատ. prima – առաջին), 1. Ի., նույն բարձրության 2 հնչյունների միաժամանակյա (հարմոնիկ) կամ հաջորդ. (մելոդիկ կամ մեղեդիական) հնչումը: Պրիմայի պարզ, կատարյալ կոնսոնանս Ի. է, նշանակում են «1» թվանշանով: Տարբերում են պրիմայի մաքուր (կրճատ՝ մք. 1, կազմված է 0 տոնից), մծցվ. (մծցվ. 1՝ 0,5 տոնից), կրկնակի մծցվ. (կրկն. մծցվ. 1՝ 1 տոնից) տեսակները: Մաքուր, մծցվ., կրկնակի մծցվ. Պ–ները շրջելիս ստացվում են մաքուր, փքցվ., կրկնակի փքցվ. օկտավաներ: 2. Դիատոնիկ գամմայի I աստիճանը, ձայնակարգի հիմնական հնչյունը, ակորդի հիմնական տոնը:

Ս ե կ ո ւ ն դ ա (< լատ. secunda – երկրորդ), 1. դիատոնիկ գամմայի որևէ

հնչյունի և նրանից հաշված II աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «2» թվանշանով: Տարբերում են սեկունդայի մեծ (մ. 2, կազմված է 1 տոնից), փոքր (փ. 2՝ 0,5 տոնից), մծցվ. (մծցվ. 2՝ 1,5 տոնից), փքցվ. (փքց. 2՝ 0 տոնից, էնհարմոնիկորեն հավասար է մաքուր պրիմայի) տեսակները: Սեկունդան պարզ, դիսոնանս Ի. է: Մեծ և փոքր սեկունդաները դիատոնիկ Ի-ներ են, քանի որ կազմվում են դիատոնիկ ձայնակարգի հնչյունաշարի աստիճանների վրա: Մեծ և փոքր սեկունդաները լուծվում են տերցիայի մեջ. Ի-ի գագաթը մնում է տեղում, իսկ հիմքը դիատոնիկ քայլով իջնում է մեկ աստիճան (մեծ սեկունդայինը՝ մեկ կամ կես, իսկ փոքրինը՝ մեկ տոնով): Սեկունդայի շրջվածքները, համապատասխանաբար, մեծ և փոքր սեպտիմաներ են, իսկ փքցվ-ները և մծցվ-ները՝ խրոմատիկ: Մեծ, փոքր, մծցվ. և փքցվ. սեկունդաները շրջելիս ստացվում են փոքր, մեծ, փքցվ. և մծցվ. սեկունդաներ: 2. Հարմոնիկ երկհնչյուն. կազմված է երաժշտ. հնչյունաշարի 2 կից աստիճաններից: 3. Դիատոնիկ հնչյունաշարի II աստիճանը:

Տ ե ր ց ի ա (< լատ. tertia – երրորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված III աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «3» թվանշանով: Տարբերում են տերցիայի մեծ (մ. 3, կազմված է 2 տոնից), փոքր (փ. 3՝ 1,5 տոնից), մծցվ. (մծցվ. 3՝ 2,5 տոնից), փքցվ. (փքցվ. 3՝ 1 տոնից) տեսակները: Տերցիան պարզ, ոչ կատարյալ կոնսոնանս Ի. է: Մեծ և փոքր տերցիաները դիատոնիկ են, քանի որ կազմվում են դիատոնիկ ձայնակարգի հնչյունաշարի աստիճաններից, իսկ փքցվ-ներն ու մծցվ-ները՝ խրոմատիկ: Մեծ, փոքր, մծցվ. և փքցվ. տերցիաները շրջելիս ստացվում են փոքր, մեծ, փքցվ. և մծցվ. տերցիաներ: Տարբեր համակարգերում ձայնի հաճախությունները կարող են հարաբերվել տարբեր կերպ՝ Պյութագորասյան համակարգ՝ մեծ տերցիա՝ 64/81, փոքր տերցիա՝ 27/32, հավասարաչափ տեմպերացված լարվածքով մեծ տերցիա՝ $1:\sqrt[3]{2}$, փոքր տերցիա՝ $1:\sqrt[4]{2}$ (ժամանակակից երաժշտ. սարքերի մեծամասնության դեպքում), բնական համակարգում՝ մեծ տերցիա՝ 4/5, փոքր տերցիա՝ 5/6: 2. Դիատոնիկ հնչյունաշարի III աստիճանը: 3. *Ակորդի* տերցիային տոնի կրճատ անվանումը:

Կ վ ա ր տ ա (< լատ. quarta – չորրորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված IV աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «4» թվանշանով: Տարբերում են կվարտայի մաքուր (մք. 4, կազմված է 2,5 տոնից), մծցվ. (մծցվ. 4՝ 3 տոնից, կոչվում է նաև եռատոն), փքցվ. (փքցվ. 4՝ 2 տոնից), կրկնակի մծցվ. (կրկն. մծցվ. 4՝ 3,5 տոնից), կրկնակի փքցվ. (կրկն. փքցվ. 4՝ 1,5 տոնից) տեսակները: Կվարտան պարզ, կատարյալ կոնսոնանս Ի. է: Մաքուր և մծցվ. կվարտաները դիատոնիկ են, քանի որ կազմվում են դիատոնիկ ձայնակարգի հնչյունաշարի աստիճաններից, իսկ փքցվ., կրկնակի մծցվ. և կրկնակի փքցվ. կվարտաները՝ խրոմատիկ: Մաքուր, փքցվ., մծցվ., կրկնակի մծցվ., կրկնակի փքցվ. կվարտաները շրջելիս ստացվում են մաքուր, մծցվ., փքցվ., կրկնակի փքցվ., կրկնակի մծցվ. կվարտաներ: 2. Դիատոնիկ հնչյունաշարի IV աստիճանը:

Կ վ ի ն տ ա (< լատ. quinta – հինգերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված V աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «5» թվանշանով: Տարբերում են կվինտայի մաքուր (մք. 5, կազմված է 3,5 տոնից), փքցվ. (փքցվ. 5՝ 3 տոնից, կոչվում է նաև եռատոն), մծցվ. (մծցվ. 5՝ 4 տոնից), կրկնակի մծցվ. (կրկն. մծցվ. 5՝ 4,5 տոնից), կրկնակի փքցվ. (կրկն. փքցվ. 5՝ 2,5 տոնից) տեսակները: Կվինտան պարզ, կատարյալ կոնսոնանս Ի. է: Մաքուր և մծցվ. կվինտաները դիատոնիկ են, քանի որ կազմվում են դիատոնիկ ձայնակարգի հնչյունաշարի աստիճաններից, իսկ փքցվ-ները, կրկնակի մծցվ-ները, կրկնակի փքցվ-ները՝ խրոմատիկ: Մաքուր, փքցվ., մծցվ., կրկնակի մծցվ., կրկնակի փքցվ. կվինտաները շրջելիս ստացվում են մաքուր, մծցվ., փքցվ., կրկնակի փքցվ, կրկնակի մծցվ. կվինտաներ: 2. Դիատոնիկ հնչյունաշարի V աստիճանը: 3. Ակորդի կվինտային տոնի կրճատ անվանումը: 4. Ջութակի 1-ին (ամենաբարակ) լարի անվանումը (2-րդ օկտավայի մի):

Ս ե ք ս տ ա (< լատ. sexta– վեցերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված VI աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «6» թվանշանով: Տարբերում են սեքստայի մեծ (մ. 6, կազմված է 4,5 տոնից), փոքր (փ. 6՝ 4 տոնից), մծցվ. (մծցվ. 6՝ 5 տոնից), փքցվ.

(փքցվ. 6՝ 3,5 տոնից) տեսակները: Սեքստան պարզ, ոչ կատարյալ կոնսոնանս Ի. է: Մեծ և փոքր սեքստաները դիատոնիկ են, քանի որ կազմվում են դիատոնիկ ձայնակարգի հնչյունաշարի աստիճաններից, իսկ փքցվ-ները և մծցվ-ները՝ խրոմատիկ: Մեծ, փոքր, մծցվ. և փքցվ. սեքստաները շրջելիս ստացվում են փոքր, մեծ, փքցվ. և մծցվ. տերցիաներ: 2. Հարմոնիկ երկհնչյուն. կազմված է երաժշտ. հնչյունաշարի 2 տարբեր բարձրության հնչյուններից, որոնց միջև տարածությունը 6 աստիճան է: 3. Դիատոնիկ հնչյունաշարի VI աստիճանը:

Ս ե պ տ ի մ ա (< լատ. septima – յոթերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված VII աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «7» թվանշանով: Տարբերում են սեպտիմայի մեծ (մ. 7, կազմված է 5,5 տոնից), փոքր (փ. 7՝ 5 տոնից), փքցվ. (փքցվ. 7՝ 4,5 տոնից), մծցվ. (մծցվ. 7՝ 6 տոնից) տեսակները: Սեպտիման պարզ, դիսոնանս Ի. է: Մեծ և փոքր սեպտիմաները դիատոնիկ են, քանի որ կազմվում են դիատոնիկ ձայնակարգի հնչյունաշարի աստիճաններից, լուծվում են սեքստայի մեջ. Ի-ի հիմքը մնում է տեղում, իսկ գագաթը դիատոնիկ քայլով իջնում է մեկ աստիճան (փոքր սեպտիմայինը՝ մեկ կամ կես, իսկ մեծինը՝ մեկ տոնով): Փքցվ. և մծցվ. սեպտիմաները խրոմատիկ Ի. են: Մեծ, փոքր, մծցվ. և փքցվ. սեպտիմաները շրջելիս ստացվում են փոքր, մեծ, փքցվ. և մծցվ. սեկունդաներ: 2. Հարմոնիկ երկհնչյուն, կազմված է երաժշտ. հնչյունաշարի 2 տարբեր բարձրության հնչյուններից, որոնց միջև տարածությունը 7 աստիճան է: 3. Դիատոնիկ հնչյունաշարի VII աստիճանը: 4. ***Սեպտակորդի*** գագաթը:

Օ կ տ ա վ ա (< լատ. octavus– ութերորդ), 1. դիատոնիկ գամմայի 8-րդ հնչյունը: 2. Որևէ հիմնական տոնի ամենամոտ ***օկտավոնը***, որը տատանումների հաճախությամբ հիմնական տոնին հարաբերվում է 2:1:3: Երաժշտ. հնչյունաշարի որևէ հատված, որն ընդգրկում է նրա հիմնական աստիճանները կամ խրոմատիկ գամմայի 12 կիսատոները: Ամբողջ հնչյունաշարը՝ ցածրից բարձր, տրոհվում է 7 լրիվ (կոնտր, մեծ, փոքր, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ) և 2 թերի (սուբկոնտր և 5-րդ) օկտավաների: Յուրաքանչյուրն ընդգրկում է 7 սպիտակ և 5 սև (չունեն անուններ, անվանումները՝ ամենամոտ 7 հիմնական աստիճաններից) ստեղներ: 4. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված VIII աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «8» թվանշանով: Օկտավան պարզ, կատարյալ կոնսոնանս, դիատոնիկ Ի. է, քանի որ կազմվում է դիատոնիկ հնչյունաշարի աստիճանների վրա: Տարբերում են նրա մաքուր (մք. 8, կազմված է 6 տոնից), փքցվ. (փքցվ. 8՝ 5,5 տոնից), մծցվ. (մծցվ. 8՝ 6,5 տոնից), կրկնակի մծցվ. (կրկն. մծցվ. 8՝ 7 տոնից) տեսակները: Մաքուր, փքցվ. և մծցվ. օկտավաները շրջելիս ստացվում են մաքուր, մծցվ. և փքցվ. պրիմաներ:

Բարդ Ի-ի տեսակներն են՝

Ն ո ն ա (< լատ. nona – իններորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված IX աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «9» թվանշանով: Տարբերում են նոնայի փոքր (փ. 9, կազմված է 6,5 տոնից), մեծ (մ. 9՝ 7 տոնից), մծցվ. (մծցվ. 9՝ 7,5 տոնից), փքցվ. (փքց. 9՝ 6 տոնից, էնհարմոնիկորեն հավասար է մաքուր օկտավայի) տեսակները: Նոնան բաղադրյալ, դիսոնանս Ի. է՝ կազմված օկտավայից և սեկունդայից: Մեծ և փոքր նոնաները լուծվում են դեցիմայի մեջ. Ի-ի գագաթը մնում է տեղում, իսկ հիմքը դիատոնիկ քայլով իջնում է մեկ աստիճան (մեծ նոնայինը՝ մեկ կամ կես, իսկ փոքրինը՝ մեկ տոնով): 2. Դիատոնիկ հնչյունաշարի IX աստիճանը:

Դ ե ց ի մ ա (< լատ. decima – տասներորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված X աստիճանի հարաբերակցությունը: Նշանակում են «10» թվանշանով: Տարբերում են դեցիմայի մեծ (մ. 10, կազմված է 8 տոնից), փոքր (փ. 10՝ 7,5 տոնից), մծցվ. (մծցվ. 10՝ 8,5 տոնից), փքցվ. (փքցվ. 10՝ 7 տոնից) տեսակները: Դեցիման բաղադրյալ, ոչ կատարյալ կոնսոնանս Ի. է՝ կազմված օկտավայից և տերցիայից: 2. Դիատոնիկ հնչյունաշարի X աստիճանը:

Ո ւ ն դ ե ց ի մ ա (< լատ.undecima – տասնմեկերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված XI աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «11» թվանշանով: Տարբերում են ունդեցիմայի մաքուր (մք. 11, կազմված է 8,5 տոնից), մծցվ. (մծցվ. 11՝ 9 տոնից), փքցվ. (փքց. 11՝ 8 տոնից) տեսակները: Ունդեցիման բաղադրյալ, կատարյալ

կոնսոնանս Ի. է՝ կազմված օկտավայից և կվարտայից: 2. Դիատոնիկ հնչյունաշարի XI աստիճանը:

Դ ու ո դ ե ց ի մ ա (< լատ. duodecima – տասներկուերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված XII աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «12» թվանշանով: Տարբերում են դուոդեցիմայի մաքուր (մք. 12, կազմված է 9,5 տոնից), փքցվ. (փքցվ. 12՝ 9 տոնից), մնցվ. (մնցվ. 12՝ 10 տոնից) տեսակները: Դուոդեցիման բաղադրյալ, կատարյալ կոնսոնանս Ի. է՝ կազմված օկտավայից և կվինտայից: 2. Դիատոնիկ հնչյունաշարի XII աստիճանը:

Տ ե ր ց դ ե ց ի մ ա (իտալ.՝ terzodezima, < լատ. tertiadecima – տասներեքերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված XIII աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «13» թվանշանով: Տարբերում են տերցդեցիմայի մեծ (մ. 13, կազմված է 10,5 տոնից), փոքր (փ. 13՝ 9,5 տոնից), մնցվ. (մնցվ. 13՝ 11 տոնից), փքցվ. (փքցվ. 13՝ 9 տոնից) տեսակները: Տերցդեցիման բաղադրյալ, ոչ կատարյալ կոնսոնանս Ի. է՝ կազմված օկտավայից և սեքստայից: 2. Դիատոնիկ հնչյունաշարի XIII աստիճանը:

Կ վ ա ր տ ա դ ե ց ի մ ա (< լատ. quarta – decima– տասնչորսերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված XIV աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «14» թվանշանով: Տարբերում են փոքր (փ. 14՝ կազմված է 11 տոնից), մեծ (մ. 3՝ 11,5 տոնից), փքցվ. (փքցվ. 14՝ 10,5 տոնից), մնցվ. (մնցվ. 14՝ 12 տոնից) տեսակները: Կվարտադեցիման բաղադրյալ, դիսոնանս Ի. է՝ կազմված օկտավայից և սեպտիմայից: 2. Դիատոնիկ հնչյունաշարի XIV աստիճանը:

Կ վ ի ն տ ա դ ե ց ի մ ա (< լատ. quinta – decima– տասնհինգերորդ), 1. Ի., դիատոնիկ գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված XV աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է «15» կամ «16» (կրկնակի օկտավա) թվանշանով: Տարբերում են մաքուր (մք. 15, կազմված է 12 տոնից), մնցվ. (մնցվ. 15՝ 12,5 տոնից), փքցվ. (փքցվ. 15՝ 11,5 տոնից) տեսակները: Կվինտադեցիման բաղադրյալ, կատարյալ կոնսոնանս Ի. է՝ կազմված 2 օկտավայից: 2. Դիատոնիկ հնչյունաշարի XV աստիճանը:

Մնցվ., փքցվ., կրկնակի մնցվ., կրկնակի փքցվ. Ի-ները, որոնք առաջանում են դիատոնիկ Ի-ների հիմքը կամ գագաթը (կամ հիմքն ու գագաթը միաժամանակ) խրոմատիկ կիսատոնով կամ ամբողջ տոնով բարձրացնելու կամ իջեցնելու հետևանքով, կոչվում են խրոմատիկ: Բացառություն են մնցվ. կվարտան և փքցվ. կվինտան, որոնք դիատոնիկ Ի-ներ են:

Այն Ի-ները, որոնք խրոմատիկ ամբողջ տոնով մեծ են մաքուր և մեծ Ի-ներից (այլ կերպ՝ խրոմատիկ կիսատոնով մեծ են մնցվ. Ի-ներից) կոչվում են կրկնակի մնցվ.: Նշանակվում է՝ կվինտդեցիմա մնցվ., օր.՝ կվինտդեցիմա մնցվ. 2 (այսինքն՝ կրկնակի մնցվ. սեկունդա): Տեսականորեն կրկնակի մնցվ. կարող են լինել բոլոր Ի-ները. առավել գործածական են կրկնակի մնցվ. պրիման, կվարտան և օկտավան:

Տ ր ի տ ո ն (հուն.՝ τρίτονον, < τρί – բարդ բառերում՝ երեք, τόνος – տոն), ե ռ ա տ ո ն, դիսոնանս Ի., ձայնակարգում՝ 3 ամբողջ տոների հաջորդականություն, որի ծայրերի հնչյունների միջև մնցվ. կվարտա(ֆա–սի) կամ փքցվ. կվինտա (սի–ֆա) Ի. առաջացնում է սուր ձայնակարգ. ձգողականություն:

մնցվ. կվարտա

փքցվ. կվինտա

Տարբերում են մնցվ. կվարտայի ու փքցվ. կվինտայի դոմինանտ. (մնցվ. կվարտան կառուցվում է բնական մաժորի և հարմոնիկ մինորի IV և VII աստիճանների միջև՝ լուծվելով փոքր կամ մեծ սեքստայի մեջ, շրջվածքը՝ փքցվ. կվինտա՝ բնական մաժորի և հարմոնիկ մինորի VII և IV աստիճանների միջև՝ լուծվելով մեծ կամ փոքր տերցիայի մեջ) և սուբդոմինանտ. (մնցվ. կվարտան կառուցվում է հարմոնիկ մաժորի և բնական մինորի VI և II աստիճանների միջև՝ լուծվելով մեծ կամ փոքր սեքստայի մեջ, շրջվածքը՝ փքցվ. կվինտան՝ հարմոնիկ մաժորի և բնական մինորի II ու VI աստիճանների միջև՝ լուծվելով փոքր կամ մեծ տերցիայի մեջ) խմբերը:



Բնորոշ Ի-ներն առավել հատուկ են հարմոնիկ ձայնակարգերին. մնցվ. սե-

կունդան կառուցվում է հարմոնիկ մաժորի և մինորի VI ու VII աստիճանների միջև՝ լուծվելով մաքուր կվարտայի մեջ, փքցվ. սեպտիման (մծցվ. սեկունդա շրջվածքը)՝ հարմոնիկ մաժորի և մինորի VII ու VI աստիճանների միջև՝ լուծվելով մաքուր կվինտայի մեջ, մծցվ. կվինտան՝ հարմոնիկ մաժորի VI ու III և հարմոնիկ մինորի III



ու VII աստիճանների միջև՝ լուծվելով մեծ սեքստայի մեջ, փքցվ. կվարտան՝ հարմոնիկ մաժորի III ու VI և հարմոնիկ մինորի VII ու III աստիճանների միջև՝ լուծվելով փոքր տերցիայի մեջ:

Ըստ Ռոբերտ Աթայանի,
Անի Մուշեղյան

ԻՆՏՈՆԱՑԻԱ (լատ.՝ intonatio, < լատ. intono – բարձրաձայն արտաբերել երգելով), լայն իմաստով՝ մտքի, զգացմունքի արտահայտումը երաժշտ. հնչյուններով կամ երաժշտագեղ. կերպարի մարմնավորումը հնչողությամբ, նեղ իմաստով՝ արտահայտիչ հնչողության ելևէջ, մեղեդու ամենափոքր մասնիկը, որը բաղկացած է տարբեր ինտերվալ., ձայնակարգ. և ռիթմիկ հարաբերության՝ իրար հաջորդող 2 կամ մի քանի հնչյուններից: Որպես մեղեդու բաղադրիչ՝ երաժշտ. կերպարի ստեղծման կարևորագույն արտահայտչամիջոցներից է: 1. Երաժշտ. հնչյունի կամ ինտերվալի վերարտադրումը բացարձակ ճշգրիտ և մաքուր ինտերվալի՝ երգչաձայնի կամ գործիք. երաժշտության չամրագրված բացարձակ հնչյունի հնչողությամբ: Երաժշտության կատարումը ճշգրիտ է (մաքուր, ոչ կեղծ), եթե մեղեդու յուրաքանչյուր հնչյուն կամ ինտերվալ վերարտաբերվում է իր զոնայի սահմաններում: 2. Երաժշտ. գործիքի հնչյունաշարի յուրաքանչյուր տոնի հնչողության ճշգրտությունը և համահավասարությունը՝ ըստ բարձրության տեմբրի և ուժգնության: Երաժշտ. գործիքներ պատրաստող վարպետներն ու լարողները հնչման միակերպությունն ու ճշտությունն ապահովելու համար օգտագործում են տեխ. համակցված հնարքներ (գործիքի ինտոնավորում, դետոնացիա):

ԻՆՏՐԱԴԱ (իտալ.՝ intrada, իսպ.՝ entrada – մուտք, մուտք գործել), ոչ մեծ գործիք. պիես, որի կատարմամբ ազդարարվում է տարբեր հանդիսությունների կամ երաժշտ. երկի սկիզբը: Առավել տարածվել է XVI–XVII դ-ում: Կատարվում են փող. և լար. նվագախմբերով: Ավելի ուշ Ի., որպես սկզբնամաս, ներմուծվել է *սյուիտի* մեջ:

ԻՆՏՐՈԴՈՒԿՑԻԱ (լատ.՝ introductio – ներածություն, մուտք), 1. սովորաբար դանդաղ *փեմպի* փոքր *նախանվագ,* որը նախորդում է խոշոր ձևի ստեղծագործությանը *(սոնատ, սիմֆոնիա* ևն): 2. Փոքր ծավալի օպեր. կամ բալետ. նախերգանքի տեսակ, որն անմիջականորեն ձուլվում է հաջորդող երաժշտությանը: 3. Օպերայում՝ նախերգանքին հաջորդող վոկալ անսամբլը կամ խմբերգ. համարը: Լինում է տարբեր ծավալների, չունի հստակ ձև: Գործիք. երկերում հստակ ձևի նախանվագ է: Որոշ երկերում «Ի.» տերմինը ներառված է անվանման մեջ (Կ. Սեն-Սանսի «Ի. և Ռոնդո կապրիչչոզո», Ֆ. Շոպենի «Ինտրոդուկցիա և Պոլոնեզ», Ֆ. Շուբերտի «Ինտրոդուկցիա և Վարիացիաներ»՝ ջութակի և դաշնամուրի համար, Մ. Ռավելի «Ինտրոդուկցիա և Ալլեգրո» ևն): Հայ երաժշտության մեջ հայտնի է Է. Միրզոյանի «Ինտրոդուկցիա և Անընդհատ շարժում» ստեղծագործությունը: *Փոփ* երաժշտության մեջ Ա. Պուգաչովան իր համերգ. ծրագրերում («Երգչուհու մենախոսություններ», 1981–83, «Եկել եմ և ասում եմ», 1984–85, «Երազներ սիրո մասին», 2009–10) Ի. օգտագործել է որպես երաժշտ. կոմպոզիցիա:

Ժոզեֆ Իշխանյանը կիսոյթի պահին

ԻՇԽԱՆՅԱՆ Ժոզեֆ Եղիայի (ծ. 19.02.1931, Բեյրութ), կիթառահար, կոմպոզիտոր, մանկավարժ: Պրոֆ. (1990-ից), ԵՊԿ պատվավոր պրոֆ. (2002): Ավարտել է Մադրիդի թագավոր. կոնսերվատորիան (1963), ուսումը շարունակել Academia Chigiana-ում (Իտալիա): 1970-ից դասավանդում է Բեյրութի կոնսերվատորիայում (կիթառի դասարանի հիմնադիր): Դաս. կիթառի արվ-ի առաջին տարածողներից է Մերձ. Արևելքում: 1970-ին Լիբանանի կոնսերվատորիայում հիմնել է կիթառի դասարան: Մենահամերգներով հանդես է եկել Եվրոպայի և Մերձ. Արևելքի երկրներում: Հեղինակ է «Կիթառի ուսուցման արդի մեթոդներ» (1999) ձեռնարկի,

«Երաժշտական տերմինների բառարան»-ի (արաբ. և ֆրանս., 2000)։ 2002-ին 1-ին անգամ մենահամերգով հանդես է եկել Հայաստանում, վարպետության դասեր անցկացրել ԵՊԿ-ում։

Լյուսի Իշխանյանը ելույթի պահին

ԻՇԽԱՆՅԱՆ Լյուսի (1934, Նյու Յորք–20.04.2014, Նյու Յորք), դաշնակահարուհի։ Ավարտել է Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցը, սովորել Կոլումբիայի համալսարանում, ստացել հայագիտության և երաժշտագիտության դոկտորի աստիճան։ Հայ երաժշտությունը տարբեր երկրներում տարածելու համար նրան անվանել են «Հայ երաժշտության դեսպան»։ Երկացանկում՝ Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Ա. Հարությունյանի, Է. Բաղդասարյանի, Է. Միրզոյանի և ուր. ստեղծագործություններից։ Նյու Յորքի դաշնամուրի պրոֆեսորների կոնգրեսի կազմակերպած համերգում (1961, Նյու Յորք) կատարել է Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Ա. Հովհաննեսի, Ջ. Էնեսկուի և Է. Բլոխի գործերից։ 1963-ին մասնակցել է ԱՄՆ Կառ-յան կազմակերպած համերգ. շրջագայությանը (165 օր, Իրաք, Իրան, Պակիստան, Շրի Լանկա, Լիբանան, Սիրիա, Հորդանան, Հունաստան)։ 1971-ին համերգներով հանդես է եկել Նյու Յորքում (երկացանկում՝ նաև Ա. Խաչատրյանի «Մեծ սոնատը»), 1974-ին՝ Փարիզում։ Բազմիցս այցելել է Հայաստան (առաջինը՝ 1961-ին)։ Նրա նախաձեռնությամբ կապեր են հաստատվել Նյու Յորքի Ջուլիարդի բարձրագույն երաժշտ. դպրոցի և ԵՊԿ միջև, 1991-ին ստեղծել է հիմնադրամ՝ կոնսերվատորիայի լավագույն ուսանող-դաշնակահարների համար։ «Արմենիան Դայջեսթ» (1969–76) ամսագրի հիմնադիր-խմբագիրներից էր, «Արմենիան Թայմս» թերթի խմբ.։ Համերգներով շրջագայել է Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի երկրներում, ԽՍՀՄ-ում։

Ինդա Իոաննիսյան

1962-ին Մոսկվայում մասնակցել է Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթին։

Մ. դե Ֆալլայի «Գիշերներն Իսպանիայի պարտեզներում» կոնցերտի մրցույթի 1-ին մրց., Փարիզի Արվ-ի, գրկ-յան, գիտության ակադ. ընկերության ոսկե (1974), Փարիզ ք-ի արծաթե մեդալներ։

Լևոն Իսակյին Մեֆիստոֆելի դերում (Շ. Գունոյի «Ֆաուստ»)

ԻՈԱՆՆԻՍՅԱՆ Ինդա Սերգեյի (28.12.1922, Թիֆլիս), երաժշտագետ, մանկավարժ, հաս. գործիչ։ Սովորել է Բաքվի երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի, կոնսերվատորիայի տեսության (Ն. Չումակովայի դասարան) բաժիններում։ Դասավանդել է ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնում (պրոֆ.՝ 1988-ից)։ Հեղինակ է «Տաթևիկ Սազանդարյան» (1984), «Վալերի Գերգիև» (1989), «Ջեյմս Գյոզալյան» (1992), «Ի. Ա. Մուսին» (1993), «Տաղանդավորների ընտանիքը» (1998), «Անմիջական տպավորություններ» (2000), «Էմին Խաչատրյան» (2001) գրքերի, մի շարք հեռուստահաղորդումների սցենարների՝ նվիրված Է. Արիստակեսյանին, Ղ. Սարյանին և ուր.։

ԻՈԱՆՆԻՍՅԱՆ (Հովհաննիսյան) Հովհաննես Հայրապետի (1881, Շուշի–28.07.1938, Բաքու), դիրիժոր։ Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1938)։ Ավարտել է Շուշիի ռեալ. դպրոցը (1900), Նովոռոսիյսկի համալսարանի բժշկ. ֆակ-ը (1910)։ Շուշիում եղել է բժիշկ և զինվ. նվագախմբի կապելմայստեր։ 1920-ին Բաքվում հիմնադրել է ժող. գործիքների ադրբ. առաջին պետ. նվագախումբը, համերգներով հանդես եկել Այսրկովկասում և Ռուսաստանում։

ԻՍԵՅԿԻ (Տեր-Հովհաննիսյան) Լևոն Նիկոլայի [8(20).12.1888, Թիֆլիս–10.5.1946, Թբիլիսի], երգիչ (բաս)։ ՀԽՍՀ վաստ. (1934), ՎԽՍՀ ժող. (1943) արտիստ։ Ավարտել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանը (1915), աշխատել է օպեր. թատրոնում։ 1924-ին Հայկանուշ ***Դանիելյանի*** և Շարա ***Տալյանի*** հետ մասնակցել է Լենինականի օպերա-օպերետ. խմբի գործունեությանը։ 1926–28-ին կատարելագործվել է Միլանում, ելույթներ ունեցել Իտալիայում և Հոլանդիայում։ 1928-ից՝ Սարատովի, 1930-ից՝ Սվերդլովսկի, 1931-ից՝ Թիֆլիսի օպեր. թատրոնների մեներգիչ, վրաց. ազգ. օպերաների մի շարք գլխ. դերերգերի առաջին կատարողը (Աբիո, Ցանգալա՝ Ջ. Փալիաշվիլու «Աբեսալոմ և Էթերի», «Դախի», ևն)։ 1933-ից՝ ԵՕԲԹ, միաժամանակ՝ Թբիլիսիի օպեր. թատրոնի մեներգիչ։ Դերերգերից են՝ Նադիր շահ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Դոն Բա-

զիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Մեֆիստոֆել (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Կոնչակ (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր»), Գրեմին (Պ. Ի Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Ջրաղացպան (Ա. Ս. Դարգոմիժսկու «Ջրահարս») ևն: Ի. աչքի է ընկել զորեղ և հյութեղ ձայնով, արտիստ. հմայքով:

ԽՍՀՄ «Պատվո նշան», Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

Գրկ. *Թադևոսյան Ա., Լևոն Իսեցկի, Ե., 1972:*

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ Շուշանիկ (Սուսաննա) Արմենի (ծ. 09.09.1945, Երևան), երաժշտագետ, կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (1982-ից): Ավարտել է ԵՊԿ պատմատես. (1969, Ա. Բարսամյանի դասարան) և կոմպոզիցիայի (1980, Է. Միրզոյանի դասարան) բաժինները:

Գրել է «Մանկական ալբոմ» (1979), «Վարիացիաներ» (1980)՝ դաշնամուրի, «Պիես» (1981)՝ լար. քառյակի, «Պոեմ» (1988)՝ թավջութակի և դաշնամուրի, երկմասանի պիես («Մտորում», «Խաղ», 1989)՝ ջութակի և դաշնամուրի, սիմֆոնիետ (1991)՝ կամեր. նվագախմբի, «Ողջույն ազատ Հայաստանին» (1996, 2-րդ խմբ.՝ 2018, խոսք՝ Գ. Էմինի)՝ քառաձայն երգչախմբի, երգեհոնի և զանգակների, կոնցերտ-պոեմ (2001)՝ շեփորի և սիմֆ. նվագախմբի, կոնցերտ (2003)՝ գալարափողի և սիմֆ. նվագախմբի, կոնցերտ-ֆանտազիա (2007)՝ տրոմբոնի և սիմֆ. նվագախմբի համար, «Երգ խաղաղության մասին» (1988, խոսք՝ Ե. Պետրոսյանի) և այլ գործեր: 1967–94-ին դասավանդել է Երևանի Կ. Սարաջևի անվ. երաժշտ. դպրոցում, 1994–97-ին՝ էստրադ. և ջազ. արվ-ի քոլեջում:

ԻՍՊԻՐՅԱՆ Լևոն Հայկի [ծ. 02.06.1941, գ. Փոքր Խանչալի, Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդայի) շրջան՝ Վրաստան], երգիչ: Ավարտել է ԵՊԿ (1974): 1962–64-ին՝ Հայկ. գուսան. երգի անսամբլի (ղեկ.՝ Վ. Սահակյան), 1974–79, 1980–82-ին՝ Հայաստանի ժող. գործիքների նվագախմբի մեներգիչ: Հայկ. ժող., աշուղ., հատկապես՝ ***Ջիվանու*** («Ձախորդ օրեր», «Խելքի աշեցեք», «Հովիկ», «Քանքանավոր ընկեր» ևն) երգերի լավագույն կատարողներից է: Համերգներով շրջագայել է արտերկրում:

ԻՍՊԻՐՅԱՆ Ներսիկ Աղասու (ծ. 15.05.1963, Երևան), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2011): Ավարտել է ԵՊԿ (1992): Սովորելու տարիներին հանդես է եկել «Ակունք» ազգագր. անսամբլում: Հեղինակ է 30-ից ավելի հայրենասիր., Արցախյան ազատամարտին ու կամավորներին նվիրված երգերի. լավագույններից են՝ «Սուրբ մայրեր», «Հայոց երկիր», «Ամար աղջիկ», «Վայ Նարե յար», «Երթանք մեր երկիրը՝ Մուշ», «Հայ քաջեր», «Պիտի գնանք վաղ թե ուշ», «Լեռան լանջին», «Արծիվ, սլացի՛ր», «Հայոց էրգիր», «Ղարաբաղ», «Աշեցի եմ», «Երկիր հայրենի» ևն: Աշակել է աշուղ. երգեր: Համերգներով հանդես է եկել ՀՀ-ում, արտերկրում: Թողարկել է ձայնասկավառակներ:

Որդին՝ Արաբո Ի. (ծ. 28.04.1989, Երևան), երգիչ: Երգացանկում՝ «Տուն իմ հայրենի», «Պիտ պաշտպանեմ» (զուգերգ՝ հոր հետ), «Աննման» ևն: Հանդես է գալիս նաև հոր հետ:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Սարտուն Հովհաննեսի (ծ. 25.03.1938, Լենինական), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2010): ՀԿՄ անդամ (1969-ից), 1991–2013-ին՝ ՀԿԵՄ ստեղծագործ. մասնաճյուղի ղեկ.: Ավարտել է Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանը (1964, քանոն, երաժշտության տեսություն և կոմպոզիցիա), ԵՊԿ (1969, Գ. Եղիազարյանի դասարան): 1969–82-ին դասավանդել է Երևանի Ա. Տեր-Ղևոնդյանի անվ. երաժշտ. դպրոցում, 1982–87-ին՝ Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում, 1987-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1996-ից, ամբիոնի վարիչ՝ 1997–2001-ին): Գրել է Սիմֆոնիա (1981), «Կոնտրաստներ» (1967), «Երաժշտություն» (1969)՝ սիմֆ. նվագախմբի, «Տաղերի տետր» (ըստ Գրիգոր Նարեկացու, 1971)՝ ֆլեյտայի, կլառնետի, հարված. գործիքների և ձայնի համար, սոնատներ՝ թավջութակի, ջութակի և դաշնամուրի (2002), «Սոնետների տետր»՝ սոպրանոյի և կամեր. նվագախմբի (1981), կոնցերտներ՝ թավջութակի և կամեր. նվագախմբի (1983), ջութակի և կամեր. նվագախմբի (1985), «Աշնան երգերի տետր» (ըստ Վ. Տերյանի, 1986)՝ սոպրանոյի և սիմֆ. նվագախմբի համար, Սեպտետ (1973), «Հացին երգը» օրատորիան (ըստ Դ. Վարուժանի, 1985), հիմներ (1989, 1999), Կվարտետ (1991), կինոյի («Փարաջանով: Վերջին գարուն», 1992, ևն) և թատրոնի երաժշտություն:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2013):

Շուշանիկ Իսկանդարյան

Լևոն Իսպիրյան

Ներսիկ Իսպիրյանը կյոսթի պահին



Սարտուն Իսրայելյան

Լ

Լյուբով Լազարևա

Լ. Լազարևան Օլիմպիայի դերում (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»)

ԼԱԶԱՐԵՎԱ (Պրուդչենկո) Լյուբով Վիկտորովնա [17(30).10.1909, Ցարիցին (այժմ՝ Վոլգոգրադ)–05.09.1990, Երևան], ռուս երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ՀԽՍՀ ժող. արտիստ (1959): Արտեմի *Այվազյանի* կինը: Ավարտել է ԵՊԿ (1937): 1937–64-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Լավագույն դերերգերից են՝ Վիոլետտա, Զիլդա (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո»), Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Մյուզետտա, Տոսկա (Ջ. Պուչչինիի «Բոհեմ», «Տոսկա»), Իոլանտա (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա»), Ջուլիետ (Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ»):

ԼԱՄԵՆՏՈ (իտալ.՝ lamento – բողոք, ափսոսանք, ողբ, բողոքի երգ), թախծոտ երաժշտություն, սովորաբար՝ ավարտուն փոքրածավալ վոկալ-գործիք. ստեղծագործություն: XVII–XVIII դդ-ում Լ., որպես արիա կամ վոկալ տեսարան, հաճախ ընդգրկվել է օպերայում (Արիադնայի Լ.՝ Կ. Մոնտեվերդիի «Արիադնա» օպերայում, ևն): Վոկալ Լ. օգտագործվել է առավելապես XVII դ-ի մադրիգալում և կանտատում: Եզրույթը հանդիպում է նաև արևմտաեվրոպ. երաժշտության մեջ, որտեղ ունի նույն իմաստը, ինչ ֆրանս. «tombeau» (գործիք. պիես՝ մահացածի հիշատակին) անվանումը:

ԼԱՅՏՄՈՏԻՎ (գերմ.՝ Leitmotiv – առաջատար մոտիվ), որոշակի և ցայտուն երաժշտ. դարձվածք (երբեմն՝ ամբողջ. թեմա): XIX դ-ից լայնորեն օգտագործվում է օպերայում, բալետում, նաև ծրագր. երաժշտ. գործերում. բնութագրում է որևէ կերպար, գաղափար կամ երևույթ և կրկնվում է երաժշտ. մտքի զարգացմանը զուգահեռ: Լ. (անփոփոխ կամ փոփոխված) ուղեկցում է երկի գլխ. հերոսին կամ նրա մասին հիշողությանը (Ալմաստի Լ-ները՝ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում), հաստատում հիմնական գաղափարը (գլադիատորների ապստամբության Լ.՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետում): Օգտագործվում է նաև բնության որևէ երևույթ (ծովը՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Հեքիաթ Սալթան թագավորի մասին» օպերայում), նույնիսկ որոշ առարկաներ (սուրը, նիզակը՝ Ռ. Վագների «Նիբելունգների մատանին» օպերայում) պատկերելու համար ևն:

ԼԱՐ, լար. երաժշտ. գործիքներում (ջութակ, դաշնամուր, թառ, տավիղ, քանոն ևն) ձայն. տատանումներ առաջացնող ճկուն, առաձգական, պիրկ, ձգված թել: Լ-ի ձայնի տեմբրը որոշվում է սեփ. տատանումների սպեկտրով: Հնում պատրաստել են բուս. հյուսվածքներից, կենդանիների մազերից: Այժմ գործածում են հիմնականում մետաղե, երբեմն՝ ջիլե Լ-եր:

ԼԱՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, խորդոֆոններ, երաժշտ. գործիքներ, որոնց ձայնարտաբերման միջոցը ձգված լարն է: Լ. ե. գ-ի խումբը բաղկացած է կսմիթ., աղեղնավոր և հարված. գործիքներից: Կսմիթ. գործիքների (մանդոլին, դոմբրա, կիթառ, քանոն, քնար, թառ, սազ, տավիղ, բալալայկա ևն) ձայնարտաբերումն իրագործվում է մեդիատորի, մատների միջոցով, աղեղնավորներինը՝ աղեղով (ջութակի ընտանիքի գործիքներ, քամանչա, քաման ևն), հարվածայիններինը՝ մուրճիկներով, փայտիկներով կամ մատներով (կլավիկորդ, դաշնամուր, ցիմբալ, սանթուր ևն): Մեներգակատար. գործիքներ են, ընդգրկված են նաև անսամբլներում և նվագախմբերում (պատկերազարդումը տես ***Երաժշտական գործիքներ*** հոդվածում):

ԼԱՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, ընդգրկում է բացառապես աղեղն. երաժշտ. գործիքներ (1-ին և 2-րդ ջութակներ, ալտեր, թավջութակներ և կոնտրաբասեր): Անցյալում կոմպոզիտորները որպես տարբերվող կազմ չեն առանձնացրել սիմֆ. նվագախմբից, քանի որ XVII դ-ում և XVIII դ-ի 1-ին կեսին սիմֆ. նվագախմբի կազմը հաճախ սահմանափակվել է աղեղն. գործիքներով և կլավեսինով:

ժամանակակից Լ. ն. ձևավորվել է XIX դ-ի 2-րդ կեսին, երբ սիմֆ. նվագախմբի լար. գործիքների խումբը դիտարկվել է որպես ինքնուրույն կատարող. միավոր: Լ. ն-ին բնորոշ են թե՛ կամերայնությունը (կամեր. անսամբլին բնորոշ արտահայտման մտերմիկությունը), թե՛ սիմֆ. նվագախմբի հնչողության հագեցվածությունը: Լ. ն. օգտագործել են նվագախմբ. սյուիտներում: Ավելի ուշ մի շարք կոմպոզիտորներ ստեղծել են ինքնուրույն ցիկլ. ստեղծագործություններ (հաճախ՝ անցյալի երաժշտ. ժանրերի ոճավորումներ), որոնց վերնագրերում նշվել է Լ. ն-ի անվանումը (Պ. Ի. Չայկովսկու Սերենադը՝ լար. նվագախմբի համար, 1880, ևն): XX դ-ից Լ. ն-ի ժանրերի ծավալն ընդարձակվել է. նվագախմբի համար գրվել են սիմֆոնիաներ (Ն. Արզումանյանի՝ 1992, Է. Հայրապետյանի՝ 2013), կոնցերտներ (Վ. Շարաֆյանի Կոնցերտը՝ 1992, «Ջութակը և Դուդուկը» կոնցերտը՝ 2013), սիմֆոնիետներ, նոր տեսակի շարքեր ևն: Լ. ն-ի համար որոշ ստեղծագործություններում ընդգրկել են նաև դաշնամուր (Ն. Արզումանյանի «Հուշերի փունջ»՝ 2003), ջութակ (Մ. Կոկժաևի «Պարզ մեղեդի» և «Moonlighting»), շեփոր, հարված. գործիքներ (Է. Միրզոյանի սիմֆոնիան՝ Լ. ն-ի և լիտավրների համար, 1964), ձայն (Մ. Իսրայելյանի «Ռիթմեր»՝ 1992, «Մաշտոցի շարական»՝ 2008) ևն: Լ. ն-ի համար են նաև Վ. Բաբայանի «Ռեքվիեմ» (1983), «Այստեղ, այնտեղ և ամենուր» (2006), Է. Հայրապետյանի «Սիբելիուս–Երազ» (2011), «Բարի գալուստ» («Welcome»), Մ. Ուլիխանյանի «Յոթ մահացու մեղքեր» (2013) և այլ գործեր:

Անի Մուշեղյան

ԼԱՐՎԱԾՔ երաժշտական, 1. հնչյուն. համակարգում աստիճանների հաճախության մաթեմատիկորեն արտահայտված հարաբերությունը: Մ. թ. ա. տարբեր սկզբունքների Լ-ներ գործածել են Հին Չինաստանում, Հին Հնդկաստանում, Հին Եգիպտոսում և այլուր: Եվրոպայում հնագույն Լ. պյութագորասյանն է, որը կազմվում է հաջորդ. մաքուր կվինտաներով (2:3) ստացվող հնչյուններն օկտավայի սահմաններում ի մի բերելով: Մաքուր Լ-ում, կվինտաներից և օկտավաներից բացի, հաշվի է առնվում նաև մաքուր մեծ տերցիան (4:5):

Պյութագորասյան Լ.

c	d	e	f	g	a	h	c_1
1	8/9	64/81	3/4	2/3	16/27	128/243	1/2

Մաքուր Լ.

1	8/9	4/5	3/4	2/3	3/5	8/15	1/2

Այս հնչյունաշարերում, էնհարմոնիզմի բացակայության հետևանքով, օկտավայի մի շարք աստիճաններ հանդես են գալիս մի քանի տարբերակներով, ուստի դրանք գործածելի չէին որոշակի բարձրության հնչյուններ արտաբերող երաժշտ. գործիքներում: XVII դ-ից պրոֆեսիոնալ երաժշտության մեջ կիրառվում է էնհարմոնիզմի երևույթն օգտագործող 12-աստիճանանոց հավասարաչափ տեմպերացված լարվածք (տես ***Տեմպերացիա***): 2. Կամերտոնի հնչյունների համար չափանմուշ ընդունված բացարձակ բարձրությունը, որի հիման վրա լարում են երաժշտ. գործիքները (հիմքն օկտավայի լա-ն է, *վրկ*-ում՝ 440 տատանում): 3. Մի շարք լար. գործիքների բաց լարերով ստացվող հնչյունների բարձրությունների հարաբերությունը: Ջութակի, ալտի և թավջութակի Լ. կվինտաներով է, կոնտրաբասինը՝ կվարտաներով:

Ըստ Ռոբերտ Աթայանի

«ԼԱՐՔ», երաժշտ. ընկերություն Լոս Անջելեսում: Հիմնադրվել է 1991-ին՝ Վաչե Պարսումյանի նախաձեռնությամբ: Ունի երգչախումբ և ժող. գործիքների անսամբլ: Կազմակերպում է համերգներ (նաև հեղինակ.՝ Է. Միրզոյանի, Ա. Հարությունյանի և ուր.), մասնակցում փառատոների («Երևանյան հեռանկարներ») ևն: 2005-ին Դիլիջանում ընկերությունը հիմնադրել է «Կամերային երաժշտության համերգաշար» (գեղ. ղեկ.՝ Մովսես Պողոսյան) փառատոնը, որը նպաստում է հայկ. երաժշտարվ-ի տարածմանն ու զարգացմանը: Փառատոնին ներկայացված նոր ստեղծագործությունները կատարվել են նաև Լոս Անջելեսի «Զիփեր» համերգասրահում: Փառատոնում հանդես են եկել ալտահարներ Ք. Քաշքաշյանը, Ռ. Օ'Նիլը, երգիչ Վ. Չեռնովը, կլառնետահար Մ. Ջուկովսկին, ջութակահարներ Մ. Պողոսյանը, Վ. Սանվելյանը և ուր.:

ԼԱՅԵՐԳԵՐ, լալիք, գեղջկ. երգի տեսակ, առաջացել է ողբերի և կոծերի հիման վրա: Եթե սգո երգերը (ողբերգեր) կատարվում են հանգուցյալին հրաժեշտ

Միշել Լեգրան

տալու պահին և դիտարկվում թաղման ծեսի շրջանակում, ապա Լ. առնչվում են հարս տանելու, զինվոր գնալու, դժբախտ սիրո, պատմ. իրադարձությունների, նաև կենցաղ. խնդիրներ շոշափող թեմաների հետ: Ունեն ազատ կառուցվածք (իմպրովիզացիա): Ի տարբերություն սգո երգերի՝ համեմատաբար փոքրաձավալ ինչյունաշարի Լ. առավել երգային են, ունեն մեղեդու զարգացման հանդարտ ընթացք, հիմնականում ծավալվում են կվինտային հիմքով էոլական մինորում:

Սյուրիաննա Տիգրանյան

ԼԵԳՐԱՆ (Legrand) Միշել Ժան (24.02.1932, Փարիզ–26.01.2019, Փարիզ), կոմպոզիտոր, ջազ. դաշնակահար, դիրիժոր: Կոմպոզիտոր, դիրիժոր Ռայմոն Լ–ի (1908–1974) և Հայկանուշ–Մարսել Տեր–Միքայելյանի որդին: Սովորել է Փարիզի կոնսերվատորիայում (կոմպոզիցիա, դիրիժորություն, ղեկ.՝ Ն. Բուլանժե): «Ես սիրում եմ քեզ, Փարիզ» (1954) ձայնասկավառակով արժանացել է միջազգ. համբավի: 1957–ին մասնակցել է Մոսկվայի համաշխ. երիտասարդ. փառատոնին: 1958–ին Նյու Յորքում «Legrand Jazz» սկավառակի համար ձայնագրություններ է կատարել ժամանակակից ջազի նշանավոր կատարողների՝ Մ. Դևիսի, Ջ. Կոլտրեյնի և Բ. Էվանսի հետ: Հեղինակ է 2 օպերայի, 3 մյուզիքլի, շուրջ 200 ֆիլմերի երաժշտության (հոչակվել է «Շերբուրյան հովանոցներ» կինոնկարով, 1964): Թողարկել է շուրջ 100 ձայնասկավառակ: Բազմիցս այցելել է Երևան (առաջին անգամ՝ 1985–ին), «հիացել հայրենիքով», հանդես եկել համերգներով (2009–ին «Շերբուրյան հովանոցներ» խորագրով՝ Հայաստանի երիտասարդ. սիմֆ. նվագախմբի հետ): Երևանում գտել է հարազատներին (Նուբար Տեր–Միքայելյան և ուր.), ջերմ հիշողություններ ուներ Մեծ Եղեռնից փրկված պապի մասին: Համագործակցել է Շառլ *Ազնավուրի* (նրա հետ ձայնագրել է «Les moulins de mon coeur» ստեղծագործությունը), Ժորժ *Կառվարենցի* և ուր. հետ:

Դմիտրի Լևկզեր

«Օսկար» (3), «Գրեմմի» (5) և «Էմմի», «Սեզար» (3), «Ոսկե գլոբուս» (12) մրց–ներ, Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» (2005), ՀՀ «Պատվո նշան» (2009) շքանշաններ:

Քույրը՝ Քրիստին Լ. (ծ. 1930, Փարիզ), երգչուհի: Երգել է 1960–ական թթ–ից: Եղբոր հետ հանդես է եկել Երևանում (1986), կատարել նաև Սայաթ–Նովայի երգերից մեկը:

Աշոտ Լեյլի

ԼԵԿԳԵՐ Դմիտրի Նիկոլաևիչ [12.01.1896, Կրասնոուֆիմսկ (Եկատերինբուրգի մարզ՝ Ռուսաստան)–11.05.1980, Լվով], գերմանացի ջութակահար, մանկավարժ: Սովորել է Պոլտավայի ռեալ. և երաժշտ. (1910–12, ջութակ, դասատու՝ Գանգեր) ուսումնարանում: 1911–13–ին ջութակի դասեր է առել Մ. Գրեսսից, ավարտել Օդեսայի կոնսերվատորիայի ջութակի, կամեր. անսամբլի և քառյակի բաժինները (1917, Ֆ. Յ. Ստուպկայի դասարան): Դասավանդել է Վլադիկավկազում, Բաթումում և Յալթայում, 1927–ից՝ ԵՊԿ–ում (նվագախմբ. ամբիոնի վարիչ, պրոֆ.՝ 1934–ից), 1930–ական թթ–ին՝ Ա. Սպենդիարյանի անվ., Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում, 1940–48–ին՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. (նաև ջութակահարների անսամբլի հիմնադիրը) երաժշտ. դպրոցում: Մասնակցել է ՀԽՍՀ նոր երաժշտ. կրթօջախների և նվագախմբերի ստեղծմանը, հանդես է եկել որպես մենակատար, նաև կոնսերվատորիայի լար. քառյակում: Համագործակցել է հայ կոմպոզիտորների հետ, եղել նրանց ստեղծագործությունների առաջին կատարողն ու տարածողը: Երկացանկում՝ նաև Պ. Ի. Չայկովսկու, Ն. Պագանինիի, Ֆ. Շոպենի, Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի և ուր. երկերից: Սաներից են՝ Հ. Բոգդանյանը, Զ. Պետրոսյանը, Զ. Սահակյանցը, Լ. Մամիկոնյանը և ուր.: 1948–ից դասավանդել է Լվովի կոնսերվատորիայում (պրոֆ., ամբիոնի վարիչ՝ 1948–71–ին):

Ուկրաինայի տարվա լավագույն մանկավարժ (1961):

Գրկ. *Будагян А., Дмитрий Николаевич Лекгер, Е., 2012.*

ԼԵՅԼԻ [Եփրիկյան Լեյլի Սամվելի, ծ. 06.11.1942, գ. Ղաուրմա (ՎՀ Բոգդանովկայի, այժմ՝ Նինոծմինդայի շրջան)], աշուղ: 1964–ին տեղափոխվել է Հայաստան: Ավարտել է Կիրովականի մանկավարժ. ինստ–ի բանասիրության ֆակ–ը: Դասավանդել է դպրոցում, միաժամանակ ղեկավարել «Ձավախք» երգի–պարի անսամբլը: 1998–ին ընդունվել է Ջիվանու անվ. աշուղ. դպրոցը: 2003–ին «Սայաթ–Նովա» մշակութ. կենտրոնը և Հայ աշուղների միությունը նրան շնորհել են վարպետ աշուղի կոչում: Հեղինակ է 4000–ից ավելի բանաստեղծությունների

և 500-ից ավելի աշուղ. երգերի («Խաս բաղի մեջ», «Ով բախտ անարդար», «Արի ղարիբ ջան», «Եղնիկ յար», «Նաիրուհի» ևն), «Կարոտի թևով» (2004), «Ձավախքը իմ երգն է» (2005), «Խաս բաղի մեջ» (2009) երգարանների:

Աշուղ. երգի «Սայաթ-Նովա» փառատոնի մրց. (2000–02):

2004-ին աշուղի կոչում է շնորհվել նաև Լ-ի քրոջը՝ Ձարուհի Եփրիկյանին (աշուղ Հեզիկ, ծ. 1934): Հեղինակ է երգերի և բանաստեղծությունների 6 գրքի:

ԼԵՅԼՈՅԱՆ Հասմիկ Արարատի (ծ. 23.09.1954, Երևան), քանոնահարուհի, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (2013): Պրոֆ. (2004): Ավարտել է Երևանի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցը (1969), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1973), ԵՊԿ (1981, էքստեռն, Խ. Ավետիսյանի դասարան): 1981-ից դասավանդում է ԵՊԿ-ում: 1973-ից՝ Հայֆիլհարմոնիայի, Հայաստանի ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբի մենակատար: Նվագացանկում՝ արևմտաեվրոպացի և ռուս (Ա. Ա. Ալյաբև, Ի. Ալբենիս, Ն. Պագանինի, Կ. Սեն-Սանս, Ֆ. Լիստ, Ֆ. Շոպեն), հայ (Կոմիտաս, Ն. Տիգրանյան, Ա. Խաչատրյան, Ղ. Սարյան, Խ. Ավետիսյան, Ս. Բարխուդարյան, Գ. Չթչյան, Ե. Երկանյան, Խ. Ավետիսյան և ուր.) կոմպոզիտորների, աշուղների (Սայաթ-Նովա և ուր.) ստեղծագործություններից: 1983-ից հանդես է եկել մենահամերգներով. ծրագրի մեծ մասն ընթանում էր դաշնամուրի նվագակցությամբ, ստեղծել է նաև ինքնատիպ տրիո՝ քանոն, ուդ և դհոլ, դաս. գործերի կատարմանը նվագակցել է կիթառը: Նվագացանկում՝ նաև իր մշակումներն ու փոխադրումները (Պ. Սարասատեի «Գնչուական մեղեդիներ», «Հաբաներա», Ֆ. Լիստի «Հունգարական ռապսոդիա № 2», Ն. Պագանինիի «Վենետիկյան դիմակահանդես», Կ. Սեն-Սանսի «Ինտրոդուկցիա և Ռոնդո-կապրիչչիոզո», Ի. Ալբենիսի «Պրելյուդ» ևն): Հանդես է եկել Մինրեալի, Մարսելի, Սիդնեյի, Բեյրութի, Նյու Յորքի սիմֆ., Մոսկվայի ֆիլհարմոնիայի ժող. գործիքների և այլ նվագախմբերի հետ, համագործակցել Ա. Գևորգյանի, Կ. Դուրգարյանի, Ե. Երզնկյանի, Ա. Ղազարյանի, Դ. Դեքերի, Ռ. Բարաքի, Պ. Յուստալի և ուր. հետ: Մենահամերգներով շրջագայել է Հայաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Շվեդիայում, Հունաստանում, Կիպրոսում, Սիրիայում, Հորդանանում, Իսրայելում, Բենինում, Կանադայում, Արգենտինայում, Կուբայում, Ավստրալիայում և այլուր: Թողարկել է ձայնասկավառակներ, տեսահոլովակներ, ունի ֆոնդ. ձայնագրություններ: Հեղինակ է քանոնի ձեռնարկների, ժող-ների («Ընտիր երկեր», «Փոխադրություններ քանոնի համար», «Սիրված մեղեդիներ», «Համերգային ստեղծագործություններ քանոնի համար», «Գամմա, արպեջջո, վարժություններ և էտյուդներ»), «Քո հոգու երգը» (CD-ի հետ), «Քանոնի հայկական դպրոց» դասագրքերի:

Հասմիկ Լեյլոյան

Երիտասարդության և ուսանողության X միջազգ. փառատոնի (1-ին կարգի դիպլոմ և ոսկե մեդալ, Բեռլին), Երիտասարդ կատարողների համամիութ. մրցույթի (1-ին մրց. և ոսկե մեդալ, Մինսկ, երկուսն էլ՝ 1973) դափնեկիր, Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2014):

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՕՊԵՐԱ-ՕՊԵՐԵՏԱՅԻՆ ԽՈՒՄԲ, հիմնադրվել է 1923-ին (ելույթները՝ 1924-ից)՝ Շարա *Տալյանի* նախաձեռնությամբ: Խմբի անդամներից էին երգիչներ Լ. Իսեցկին, Հ. Դանիելյանը, Շ. և Հ. Տալյանները, Ս. Վենեցիանով-Իսահակյանը, Ն. Մազովեցկայան, Գ. Գյանջումյանը, Մ. Սեդմարը, Մ. Սանամյանը, Մ. Արարատյանը, Թ. Լիսիցյանը, Ա. Տեր-Աբրահամյանը, Հ. Դանզասը և ուր., բալետի արտիստներ Ի. Արբատովը, Ս. Սերգեևը, դիրիժոր Ա. Մելիք-Փաշաևը, ռեժ. Վ. Վալերիանով-Չիսլյանը, խմբավար Կ. Ձաքարյանը, նկարիչ Գ. Շարբաբչյանը: Ունեցել է նվագախումբ և երգչախումբ (20-ական հոգի), բալետի խումբ (8 հոգի): Խաղացանկում՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Ժ. Բիզեի «Կարմեն», Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դև», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Վ. Վ. Վալենտինովի «Հարեմի գաղտնիքները», Ջ. Ջոնսի «Գեյշա», Ի. Կալմանի «Սիլվա» գործերը: Առաջին ներկայացումները տեղի են ունեցել Թիֆլիսի օպեր. թատրոնում: Խումբը հանդես է եկել Երևանում, նպաստել ազգ. օպեր. թատրոնի հիմնադրմանը, որի կազմում ընդգրկվել են նաև այդ խմբի մի շարք անդամներ: Խմբի օպեր. կազմը գործել է 1924-ին, իսկ օպերետ. խումբը՝ մինչև 1926-ը:



Գարեգին Լևոնյան

Տիգրան Լևոնյան

Տ. Լևոնյանը Կանիոյի դերում (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», Նեդդա՝ Գոհար Գասպարյան)

ԼԵՎՈՆՅԱՆ Գարեգին Զիվանու [24.10(05.11).1872, Ալեքսանդրապոլ–28.09.1947, Երևան], գրականագետ, արվեստաբան: ***Զիվանու*** որդին: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1932): Սովորել է Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ում (1898–1901), Լայպցիգում (1906): Թիֆլիսում հիմնադրել և խմբագրել է «Գեղարվեստ» (1908–09, 1911, 1913, 1917, 1921-ին՝ 1–7 գիրք, տպագրվել է նաև Վենետիկում): 1910–11-ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1926–27-ին՝ Երևանի գեղ. տեխնիկումում, ապա՝ ԵԹԻ-ում և ԵՊՀ-ում (պրոֆ): Հեղինակ է «Հայ աշուղներ» (1892), «Հայոց պարբերական մամուլը 1794–1894» (1934), «Գառնիի հեթանոսական տաճարի առեղծվածը» (1941), «Էջեր հայ երաժշտության պատմության» (1945), «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (1958) և այլ աշխ-ների: Գիտ. հրատարակման է պատրաստել Սայաթ-Նովայի (1931), Զիվանու (1936) երգերի ժող-ները:

Երկ. *Երկ, Ե., 1963:*

ԼԵՎՈՆՅԱՆ (Խանդիկյան) Տիգրան Լևոնի (14.12.1936, Բեյրութ–25.06.2004, Երևան), երգիչ (դրամատիկ. տենոր), ռեժ.: ՀԽՍՀ ժող. արտիստ (1984): Գոհար ***Գասպարյանի*** ամուսինը: 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է ԵԹԻ (1958), Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ի օպեր. ռեժիսորության բաժինը (1977), կատարելագործվել Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում: 1962-ից՝ ԵՕԲԹ մեներգիչ, 1970–77-ին, միաժամանակ՝ ռեժ., 1977-ից՝ գլխ. ռեժ., 1991–2000-ին՝ նաև գեղ. ղեկ.: 1992-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ., ամբիոնի վարիչ՝ 1992-ից): Դերերգերից են՝ Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Տիրիթ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Մանրիկո, Օթելլո (Զ. Վերդիի «Տրուբադուր», «Օթելլո») ևն: Բեմադրել է Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ» (1978), Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (1981), Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» (1984, 1992), «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» (1988), Զ. Պուչչինիի «Չիո-Չիո սան» (1986), Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս» (1993), Ա. Տիգրանյանի «Անուշ» (1994), Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ» (1996), Զ. Վերդիի «Օթելլո» և այլ օպերաներ: Նկարահանվել է «Կարինե» կինոնկարում (1967, Մարգար, կատարել է նաև Արմենի դերերգը), «Անուշ» ֆիլմ-օպերայում (1983, Սարո): «Ալմաստ» (1985) և «Արշակ Երկրորդ» (1988, Արշակ Երկրորդի դերակատար) ֆիլմ-օպերաների բեմադրող-ռեժիսորն է և սցենարիստը: Հեղինակ է «Իմ «Անուշը»» (1995), «Սևեռում» (մտորումներ, 2006), «Առերեսում» (էսսեներ, արձակ էջեր մշակույթի մասին, 2009) և այլ գրքերի:

Տեսարան Զ. Դոնիցետտիի «Պողիկտոս» օպերայի բեմադրությունից (1993, ռեժ.՝ Տ. Լևոնյան)

ԼԻԲՐԵՏՏՈ (իտալ.՝ libretto – գրքույկ), երաժշտադրամատիկ. ստեղծագործությունների՝ օպերայի, օպերետի, անցյալում՝ նաև կանտատի, օրատորիայի, բալետի գրական տեքստը, նաև օպերայի, օպերետի, բալետի բովանդակության հակիրճ շարադրանքը: Լ. գրում են նաև մնջախաղի թատրոնի ներկայացումների համար: Լ-ի սյուժեները հիմնականում ստեղծում են ժող. պոեզիայի, լեգենդների, հեքիաթների, գեղ. գրկ-յան ևնի հիման վրա (օր.՝ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի Լ. ստեղծվել է ըստ Հ. Թումանյանի համանուն պոեմի): «Լ.» անվանումը կապված է XVII դ-ի վերջերից հրատարակվող օպեր. Լ-ների հետ, որոնք տպագրվել են փոքրիկ գրքույկներով՝ թատրոն այցելողների համար:

ԼԻՄՈՆՃՅԱՆ Համբարձում, Բաբա կամ Պապա Համբարձում (1768, Կ. Պոլիս–29.06.1839, Կ. Պոլիս), երաժիշտ-տեսաբան, կոմպոզիտոր, մանկավարժ: Սովորել է Կ. Պոլսի Չենգիրլի-խան թաղի հոգևոր դպրոցում, աչքի ընկել շարականների երգեցողությամբ: Երաժշտ. տեսություն սովորել է երաժշտագետ Օնոփրիոս Թաթավլեցուց (հմտացել է հուն. երաժշտության մեջ), հայ հոգևոր երաժշտություն՝ Զեննե Պողոսից: ***Նոր հայկական ձայնագրության*** հիմնադիրն է: Ունկնդրելով թուրք նշանավոր դերվիշներին՝ յուրացրել է նրանց կատարած դաս. երգերի ոճը: Ուսումնասիրել է նաև

եվրոպ. երաժշտության տեսությունը: Դասավանդել է Կ. Պոլսի Լուսավորչյան վարժարանում և Մայր եկեղեցու դպրանոցում: Աշակերտներից են Թամբուրի Ալեքսանը, Նեյզան Զենոբը (Լ-ի որդին), Հովհաննես Սյուհենտիայանը, Արիստակես Հովհաննիսյանը: Հայ բանաստեղծների խոսքերով գրել է վոկալ-մոնոդիկ երկեր, մասնավորապես՝ արլ. ոճի բեսթեներ, այդ թվում՝ Վարդանանց պատերազմին նվիրված «Ոհ, ի սկզբան պատերազմին» ևն: Ուշագրավ են «Յարեաւ Քրիստոս» խոսքերով 20-ից ավելի տաղերը՝ տարբեր ձայնակարգերում: Վարժ տիրապետել է թամբուրին, որի օգնությամբ բացատրություններ է տվել դասախոսությունների ընթացքում: Պեզճյան ամիրաների նյութ. աջակցությամբ եվրոպ. ձայնագրության նմանությամբ 1813–15-ին ստեղծել է հայկ. խազերով ձայնագրության համակարգ, որը հետագայում հարստացրել և զարգացրել են նրա աշակերտները (մասնավորապես՝ Հովհաննես Սյուհենտիայանը): Գրել է վոկալ ստեղծագործություններ («Ով ամենապայծառ», «Համեմատ քեզ ոչ նրա նման», «Վեհ Հմայակ», «Գործք քաջութեան», «Զարթիր, զարթիր» ևն):

Գրկ. *Հիսարլեան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց, ԿՊ, 1914: Աթայան Ռ., Ձեռնարկ հայկական ձայնագրության, Ե., 1950: Սիրունի Հ., Պապա Համբարձում, ԼՀԳ, 1972, № 10: Բաղդասարյան Ա., Հայկական նոտագրության ձեռնարկ, Ե., 2010:*

ԼԻՍԻՑՅԱՆ Իզաբելլա Նիկիտայի (09.03.1905, Գրոզնի–23.03.1941, Մոսկվա), երգչուհի (մեցցո սոպրանո): Ավարտել է Ս. Լիսիցյանի արտասանության, ռիթմի և պլաստիկայի ստուդիան, ապա սովորել Լենինգրադի երաժշտ. ուսումնարանի վոկալ բաժնում: Ձայն. բացառիկ տվյալների շնորհիվ 1927-ին (դեռևս՝ ուսանող) հրավիրվել է Լենինգրադի ՕԲԹ, 1929-ից երգել է Փոքր թատրոնում: Դերերգերից են՝ Պոլինա (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»), Լյուբաշա, Լել (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն», «Ձյունանուշ»), Սուզուկի (Ջ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ»), Հրեշտակ (Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դևը»), Մադալենա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո») ևն: 1937-ին տեղափոխվել է Երևան, 2 թատերաշրջան ԵՕԲԹ-ում հանդես եկել Ալմաստի (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Իշխանուհու (Ա. Ս. Դարգոմիժսկու «Ջրահարսը»), Ակսինիայի (Ի. Ի. Ձերժինսկու «Խաղաղ Դոն») և այլ դերերգերով: Նրա կատարող. արվ-ը բարձր են գնահատել դիրիժորներ Ս. Ա. Սամոսուդը, Ալեքսանդր *Մելիք-Փաշաևը*, Բ. Է. Խայկինը (Կոստանդին *Սարաջևի* աշակերտը) և ուր.:

ԼԻՍԻՑՅԱՆ Կարինե Պավելի (ծ. 28.10.1938, Երևան), երգչուհի (մեցցո սոպրանո), մանկավարժ: ՀԽՍՀ ժող. (1987), ՌԴ վաստ. (1997) արտիստ: Պրոֆ.: Պավել *Լիսիցյանի* դուստրը, Ռուզաննա և Ռուբեն *Լիսիցյանների* քույրը: Ավարտել է ՄՊԿ-ին կից կենտր. երաժշտ. դպրոցը (դաշնամուրի դասարան), Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ի երգեցողության բաժինը (Ն. Ա. Վերբովայի դասարան): 1965-ից՝ հնագույն երաժշտության «Սադրիգալ» անսամբլի մեներգչուհի, ապա Ռուզաննա Լիսիցյանի հետ հանդես է եկել համերգներով (մասնավորապես՝ զուգերգերով), արժանացել ճանաչման ԽՍՀՄ-ում և արտերկրում: Երգացանկում՝ 500-ից ավելի ստեղծագործություն: 1990-ից դասավանդել է Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ում (անսամբլ., ապա՝ ակադ. երգեցողություն): Ռուբեն և Ռուզաննա Լիսիցյանների հետ ստեղծել է «Պավել Լիսիցյան» բարեգործ. հիմնադրամը (2005), որի շրջանակում կազմակերպել են համերգներ, վարպետության դասեր, ստեղծագործ. սեմինարներ:

ԼԻՍԻՑՅԱՆ Պավել (Պողոս) Գերասիմի [24.10(06.11).1911, Վլադիկավկազ (այժմ՝ Օրջոնիկիձե)–06.07.2004, Մոսկվա], երգիչ (բարիտոն): Կարինե, Ռուզաննա և Ռուբեն *Լիսիցյանների* հայրը: ՀԽՍՀ (1945), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: Վաղ տարիքից երգել է քաղաք. երգչախմբում (գեղ. ղեկ.՝ Ա. Մանուկյան): 1927-ին տեղափոխվել է Բաթում, 1930-ին՝ Լենինգրադ: Ավարտել է Լենինգրադի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվ. երաժշտ. դպրոցը, սովորել երաժշտ. ուսումնարանում (1930–32, դասատու՝ Մ. Մ. Լևիցկայա), կոնսերվատորիայում (1932–35, Ջ. Ս. Դոլսկայայի դասարան), էքստեռն ավարտել ԵՊԿ (1960): 1935–37-ին՝ Լենինգրադի Փոքր օպեր. (այժմ՝ Միխայլովյան թատրոն), 1937–40 և 1941–43-ին՝ ԵՕԲԹ, 1940, 1944–66-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնների մեներգիչ, համարվել խորհրդ. օպեր. թատրոնի առաջատար երգիչներից: 1967–73-ին դասավանդել



Համբարձում Լիմոնճյան

Իզաբելլա Լիսիցյան

Ի. Լիսիցյանը Ամլետիսի դերում (Ջ. Վերդիի «Միդա»)



Կարինե Լիսիցյան

Պավել Լիսիցյան

Պ. Լիսիցյանը Մոսիի դերում (Ա. Տիգրանյանի «Անուշ»)

Պ. Լիսիցյանը Մազեպայի դերում (Պ. Ի. Չայկովսկու «Մազեպա»)

Ռուբեն Լիսիցյանը ելույթի պահին

է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1969-ից, պրոֆ.՝ 1970-ից): 1960-ին խորհրդ. շրջանի երգիչներից առաջինն է հանդես եկել Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա»-ում (Ամոնասրո՝ Ջ. Վերդիի «Աիդա», ներկայացումից հետո մեքենան, որի մեջ էր Լ., երկրպագուները ձեռքերի վրա տարել են մինչև հյուրանոց): Նրա լայնածավալ ճկուն ու գեղեցիկ ձայնն աչքի է ընկել հազվագյուտ թավշե տեմբրով: Կատարմանը բնորոշ էին մաքուր ինտոնացիան, կատարյալ առոգանությունը, կերպարի ռեալիստ. մեկնաբանումը:

Դերերգերից են՝ Օնեգին, Մազեպա, Ելեցկի և Տոմսկի, Ռոբերտ (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Մազեպա», «Պիկովայա դամա», «Իոլանտա»), Ժերմոն, Ամոնասրո (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Աիդա»), Էսկամիլիո (Ժ. Բիզեի «Կարմեն»), Գրյազնոյ (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Կոմս դը Նևեր (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ»), Կիազո (Ջ. Փալիաշվիլու «Դաիսի») ևն: Մեծ ներդրում ունի նաև հայ օպեր. արվ-ում՝ Թաթուլ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Արշակ Երկրորդ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Թովմաս (Ա. Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան»), Գրիգոր (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Մոսի (Ա. Տիգրանյանի «Անուշ») ևն: Մեծ թատրոնում եղել է Կազբիչի (Ա. Ն. Ալեքսանդրովի «Բելա»), Անդրեի (Ն. Գ. Ժիգանովի «Ջալիլ»), Նապոլեոնի (Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն») դերերգերի առաջին կատարողը:

Համերգ. երկացանկում՝ Ա. Ս. Արենսկու, Մ. Ա. Բալակիրևի, Ա. Պ. Բորոդինի, Ա. Կ. Գլազունովի, Մ. Ի. Գլինկայի, Ա. Ս. Դարգոմիժսկու, Ց. Ա. Կյուիի, Մ. Պ. Մուսորգսկու, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի, Ա. Գ. Ռուբինշտեյնի, Պ. Ի. Չայկովսկու, Ս. Վ. Ռախմանինովի, Ն. Յ. Մյասկովսկու, Դ. Բ. Կաբալևսկու, Դ. Դ. Շոստակովիչի, Տ. Ն. Խրեննիկովի, Վ. Մուրադելիի, նաև Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Դոլուխանյանի, Կ. Զաքարյանի, Ա. Խաչատրյանի և ուր. երգերն ու ռոմանսները: Լ. եղել է ժող. երգերի անզուգական մեկնաբան. կատարել է ինչպես հայկ., այնպես էլ ռուս., հուն., բուլղ., իրան., չեխ., հունգ., ինդոնեզ., իսլանդ., գերմ., ֆիննո. և ճապոն. երգեր՝ բնագրերի լեզուներով: Հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, Իրանում, Ֆինլանդիայում, Ավստրիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Դանիայում, Լեհաստանում, Հարավսլավիայում, Հունաստանում, Բելգիայում, Իտալիայում, Իսլանդիայում, Նիդեռլանդներում, Հնդկաստանում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Ինդոնեզիայում, Կանադայում: Թողարկել է ձայնասկավառակներ: «Իոլանտա» ֆիլմ-օպերայում (1963) կատարել է Ռոբերտի երգամասը: 2008-ին Մոսկվայում տեղի է ունեցել մեներգիչների Լ-ի անվ. փառատոն, 2011-ին Վլադիկավկազում՝ բարիտոնների՝ Լ-ի անվ. 1-ին միջազգ. մրցույթ-փառատոն:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1939, 1951), Ժողովուրդների բարեկամության (1976) շքանշաններ, Ռ. Շումանի անվ. մրց. (1985, Գերմանիա), «Ռուսաստանի հայերի միության I աստիճանի ոսկե խաչ» (2002), Ի. Կ. Արխիպովայի հիմնադրամի ոսկե մեդալ (2002):

Գրկ. *Պետրոսյան Մ., Պավել Լիսիցյան, Ե., 1973: Նույնի, Պավել Լիսիցյան. Նվիրում՝ ծննդյան 100-ամյակին, Ե., 2011: Յակովենկո Ս., Պավել Լիսիցյան. Դասեր մի կյանքից, Ե., 2012 (թարգմ.՝ ռուս-ից): Яковенко С. Б., Павел Герасимович Лисициан в искусстве и жизни: Факты, диалоги, размышления, М., 2001.*

ԼԻՍԻՑՅԱՆ Ռուբեն Պավելի (ծ. 09.05.1945, Մոսկվա), երգիչ (դրամատիկ. տենոր), մանկավարժ: ՌԴ վաստ. արտիստ (1992): Պրոֆ. (2002): Պավել ***Լիսիցյանի*** որդին, Կարինե և Ռուզաննա ***Լիսիցյանների*** եղբայրը: Սովորել է ՄՊԿ-ին կից կենտր. երաժշտ. դպրոցի (դասատու՝ Մ. Լ. Ռոստրոպովիչ), Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի անվ. երաժշտ. ուսումնարանի (1960–63, Վ. Ա. Բեռլինսկու դասարան) թավջութակի, վոկալ (1963–65, Դ. Ի. Վարշամովի դասարան), Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ի մեներգեցողության (1965–69, Դ. Ի. Վարշամովի դասարան) և կամեր. երգեցողության (Ն. Ի. Դելիցիևայի դասարան) բաժիններում: 1965-ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի, 1965–71-ին՝ «Մադրիգալ» անսամբլի մեներգիչ: Երգացանկում՝ ռուս. և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Գերմանա-ռուս. մշակութակրթ. ակադ-ի նախագահ (1997–2000-ին և 2002-ից): Սլավոն. երաժշտության միջազգ. (նախագահ, 2008, Մոսկվա), մեներգիչների «Երի-

տասարդ ձայներ» 1-ին համառուսաստան. (նախագահ, 2008–10, Աբական), Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի անվ. միջազգ. (2011, Մոսկվա) փառատոների հանձնախմբերի անդամ: Կարինե և Ռուզաննա Լիսիցյանների հետ ստեղծել է «Պավել Լիսիցյան» բարեգործ. հիմնադրամը (2005):

Ռ. Շումանի անվ. մեներգիչների մրցույթի (1969, Գերմանիա) դափնեկիր:

ԼԻՄԻՅԱՆ Ռուզաննա Պավելի (ծ. 09.05.1945, Մոսկվա), երգչուհի (սոպրանո), մանկավարժ: ՀԽՍՀ ժող. (1987), ՌԴ վաստ. (1997) արտիստ: Պրոֆ.: Պավել *Լիսիցյանի* դուստրը, Կարինե և Ռուբեն *Լիսիցյանների* քույրը: Սովորել է ՄՊԿ-ին կից կենտր. երաժշտ. դպրոցում (տավիղի դասարան), ավարտել Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի անվ. երաժշտ. ուսումնարանի վոկալ բաժինը (1965), Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ը (1969, Ն. Ա. Վերբովայի դասարան): 1965–73-ին երգել է հնագույն երաժշտության «Մադրիգալ» անսամբլում, ապա Կարինե Լիսիցյանի հետ զուգերգերով հանդես եկել Մոսկվայի ֆիլհարմոնիայում, հյուրախաղերով շրջագայել ԽՍՀՄ-ում և այլ երկրներում: 1996–2002-ին դասավանդել է Մոսկվայի երգչախմբ. արվ-ի ակադ-ում և Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում (պրոֆ.): Մի շարք երաժշտ. մրցույթների հանձնախմբերի անդամ է: Կարինե և Ռուբեն Լիսիցյանների հետ ստեղծել է «Պավել Լիսիցյան» բարեգործ. հիմնադրամը (2005):

Միջազգ. մրցույթի (1974, Նիդեռլանդներ) դափնեկիր:

ԼԻՏԱՎՐ (իտալ.՝ timpani, ֆրանս.՝ timbales, գերմ.՝ Pauken, հայ.՝ գոս, ենթադրվում է, որ ծագել է պարսկ. kos – մեծ թմբուկ բառից), արլ. հնագույն հարված. երաժշտ. գործիք: Եվրոպայում հայտնի է XV դ-ից: XVII դ-ից ընդգրկվել է նվագախմբերի կազմում: Լ-ի կաթսայաձև իրանը (պղինձ, արույր կամ ալյումին) պատված է կաշվով: Լարվածքը կարգավորվում է հատուկ պտուտակի կամ ոտնակ. սարքի միջոցով: Իրանի ներքևում ռեզոնատոր. բացվածքն է: Ունի թնդուն, որոտալի ձայն: Սովորաբար նվագում են թաղիքապատ կաշվե գլխիկներով 2 ձողերով: Նվագախմբում գործածում են 2–5 և ավելի Լ-ներ:

ԼՅՈՒՏՆՅԱ, 1. լար. կսմիթ. երաժշտ. գործիք (արաբ. al-ud անվանումից): Ունի ուռուցիկ ձվաձև իրան, կարճ, լայն վզիկ, հետ թեքված գլխիկ, 6–16 (երբեմն՝ մինչև 24) լար: Զայնարտաբերումը՝ մատներով կամ պլեկտրով: Լարերը խմբավորված են 1-ական (աջից՝ բասային լրացուցիչ, ձախից՝ ամենաբարձր մեղեդիական) և 2-ական (լարվածքը՝ ունիսոն կամ օկտավա) շարքերով: XVI դ-ից երևան են եկել Լ-ի կատարելագործված տեսակներ, նվագելու արվ-ը հասել է բարձր մակարդակի: XIX դ-ից դուրս է եկել գործածությունից, վերածնվել XX դ-ում: 2. Լար. երաժշտ. գործիքների ընդհ. անվանումը, որոնց կառուցվածքում պարտադիր տարրեր են ինչարկղը և լարակիրը: XVIII դ-ի 2-րդ կեսից փոխարինվել է *կիթառով*: Լարվածքը փոփոխական է (տարբեր հաջորդականության կվարտաներ և տերցիաներ):

ԼՈՒՍԻԿՅԱՆ Ստեփան Սարգսի (21.02.1956, Երևան–24.02.2001, Լոս Անջելես, թաղված է Երևանում), կոմպոզիտոր, դաշնակահար: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի և կոմպոզիցիայի բաժինները (1981): 1984–2001-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2000-ից): 1997-ին դասախոսություններ է կարդացել Մ. Լյութերի անվ. համալսարանում (Հալլե՝ Գերմանիա): 1992–98-ին՝ ՀՀ մշակույթի փոխնախարար, 1998–2001-ին՝ Հոգևոր երաժշտության կենտրոնի հիմնադիր-ղեկ.:

Գրել է «Ճպուռն ու մրջյունը» (բեմ.՝ 1990, ԵՕԲԹ) բալետը, դաշնամուր. կոնցերտներ, կամեր. սիմֆոնիա, լար. կվարտետ, վոկալ և գործիք. մանրանվագներ, երգեր (Վ. Տերյանի, Վ. Թեքեյանի, Ռ. Դավոյանի խոսքերով), թատեր. երաժշտություն:

Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. (1975–81, Մոսկվա), միջազգ. (1996, Գերմանիա) մրցույթների դափնեկիր:

Գրկ. *Դանիել Երաժիշտ, Ստեփան Լուսիկյան, Ե., 2012:*

ԼՈՒՍԻՆՅԱՆ Արեգ Հակոբի (ծ. 20.03.1935, Ախալցխա), կոմպոզիտոր, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): ՀՊՄՀ պրոֆ. (2005): ՀԿՄ անդամ (1966), ՀԿՄ վարչության պատասխանատու քարտուղար (1969–71): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1956, Է. Միրզոյանի դասարան), ԵՊԿ (1961, Գ. Եղիազարյանի, Ղ. Սարյանի դասարաններ) կոմպոզիցիայի բաժինները: 1953–2004-ին դասավանդել է Երևանի պետ. հումանիտար քոլեջում (ամբիոնի



Ռուզաննա Լիսիցյան

Լիտավր

Լյուտնյա

Ստեփան Լուսիկյան



Արեգ Լուսինյան

Սարուխան Լուսինյան

վարիչ՝ 1992–2003), 1962–64-ին, միաժամանակ՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1971-ից՝ ՀՊՄՀ-ում: Գրել է սիմֆոնիաներ (1962, 1988), «Ծիտը» մանկ. օպերան (ըստ Հ. Թումանյանի հեքիաթի), «Միշտ քեզ հետ» (1970) օպերետը, կվարտետներ (1958, 1960), տրիո (1959), դաշնամուր. մանրանվագներ, երգեր (Ս. Կապուտիկյանի, Սարմենի, Հ. Շիրազի, Ա. Իսահակյանի, Ա. Գրաշու խոսքերով), մանկ. երգեր («Երաժշտական այբուբեն», «Արևազօծ ծաղկանոց», «Լուսայգի երգեր», «Խաղերգեր» ևն): Լույս են տեսել «Փոքրիկ պատկերներ»՝ դաշնամուրի համար (1967), «Երգեր երեխաների համար» (1968), «Ուլիկը», «Երկինքը փուլ է գալիս» (խոսք՝ Հ. Թումանյանի, 1972), «Նաիրյան զանգակներ» (1972), «Այգաբացի ղողանջներ» (1981) մանկ. երգերի ժող-ները ևն: Հրատարակել է նաև «Ակորդեոնի ձեռնարկ» (2005), «Երաժշտություն: Ուսումնաօժանդակ ձեռնարկ» (2012), «Երաժշտությունը մանկապարտեզում» (2009), «Լույսը հաղթության» (մանկապատանեկան խմբերգ. ստեղծագործություններ, 2010), «Հայկական ժողովրդական մեղեդիների մշակումներ» մանկ. երկձայն երգչախմբերի համար (2010) ձեռնարկները, 5–7-րդ դասարանների երաժշտության դասագրքեր, «Լարային կվարտետ թիվ 1» (2010), «Աֆորիզմներ (ասույթներ) և փիլիսոփայական մտորումներ» (2012), «Քնարափիլիսոփայական մտորումներ…» (ռուս., 2013), «Հետաղարձ հայացք անավարտ կյանքից… Հուշեր» (2013) գործերը:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2010):

Գրկ. *Արեգ Լուսինյան, Կենսամատենագիտություն, Ե., 2016:*

ԼՈՒՍԻՆՅԱՆ Մարտին Քրիստափորի [08(20).02.1896, Նոր Նախիջևան (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով ք-ի շրջագծում)–27.01.1983, Կրասնոդար (ՌԴ)], դերասան: Հայկ. երաժշտ. կոմեդիայի թատրոնի հիմնադիրներից: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1960): Բեմ. գործունեությունն սկսել է 1911-ից՝ Նոր Նախիջևանի հայկ. թատերախմբում՝ որպես երաժիշտ, ապա՝ դերասան: 1916–20-ին աշխատել է Հս. Կովկասի դրամայի և օպերետի հայկ. թատերախմբում, 1920–25-ին՝ Դոնի Ռոստովի օպերետի թատրոնում, 1939–41, 1948-ին՝ Կրասնոդարի երաժշտ., 1941–44-ին՝ Դոնեցկի, 1944–47-ին՝ Լուգանսկի օպերետի թատրոններում, 1947-ից՝ ԵԵԿԹ-ում: Դերերից են՝ Պոպանդուպոլո (Բ. Ա. Ալեքսանդրովի «Հարսանիք Մալինովկայում»), Վոլյապյուկ, Պելիկան (Ի. Կալմանի «Սիլվա», «Կրկեսի արքայադուստրը»), Վոպաս-զադե (Ա. Այվազյանի «Աշուղ Սուրաղ»): Հյուրախաղերով հանդես է եկել Երևանում (1923, 1933): Կատարել է նաև մի շարք օպերետների թարգմանություններ (ռուս-ից՝ հայ.): Կրասնոդարի փողոցներից մեկը կոչվել է Լ-ի անունով:

Խ

ԽԱԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայ միջնադար. երաժշտ. նշանագրության արվ–ը: Ձևավորվել է VIII դ–ում: Գաղափարի ծագումն ու սկզբն. իրագործումը կապված են ***Սյունեցու*** անվան հետ: Խ–յան հետագա մշակմանն ու տարածմանը մասնակցել են Գրիգոր Գռզիկը (Այրիվանեցի), Անանիա Նարեկացին, Խաչատուր Տարոնացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Խուլը, Գևորգ Սկևռացին, Թովմա Մեծոփեցին, Գրիգոր Խլաթեցին և ուր.: Պահպանվել են գրչագիր խազավոր շուրջ 2000 գիրք (1000–ից ավելին՝ Մոնղոում) և բազմաթիվ պատառիկներ: Դրանք, սակայն, ցայսօր լրիվ ընթեռնելի չեն, քանի որ չի հայտնաբերվել Խ–յան սկզբունքը բացահայտող գրավոր շարադրված որևէ ամբողջ. ուսմունք: XVI–XVIII դդ–ում ***խազերը*** կարդալը հետզհետե մոռացվել է: XIX դ–ի սկզբին Խ. փոխարինվել է նոր հայկական ձայնագրությամբ:

Խ. ուսումնասիրել են եվրոպացի գիտնականներ Հ. Պետերմանը, Պ. Վագները, Յ. Շրյոդերը, Ֆ. Ֆետիսը, Շ. Վիյոտոն և ուր., նաև Գ. Գապասաքալյանը, Ե. Տատեսյանը, Կոմիտասը և մի շարք երաժշտագետներ:

Յուրաքանչյուր հաջորդ համակարգ նոր նշանակությամբ օգտագործել է նախորդի նշանները, և գրառվածը մեկնաբանելիս բոլոր համակարգերում ընդունվել է որոշ նորմերով կարգավորվող իմպրովիզացիոն ազատություն: Առոգանության Խ. (պահպանված հնագույն նմուշը՝ IX դ.) վերծանել է Կոմիտասը 1899–ին: Երաժշտ. Խ–յան նախն. համակարգը (պահպանված հնագույն նմուշը՝ IX դ.) սկզբունքով նման է վաղբյուզ. նևմագրությանը: Հաջորդ՝ Շարականների (պահպանված հնագույն նմուշները՝ X դ.) և Մանրուսման (XII դ.) համակարգերը համապատասխանում են միջինբյուզ. գրությանը, սակայն զարգացել են այլ՝ ինքնուրույն հունով: Մանրուսման համակարգում, որով գրառվել են նաև

Հատված առոգանության խազերի կոմիտասյան վերծանությունից (Ավետարան ըստ Հովհաննեսի, 20.15)

Պատարագի տաղերը, Գանձարանների ու Ճաշոցների երգերը, կիրառված են շարականների խազերի նոր զուգորդումներ և հաջորդականություններ:



Շարականների խազերի տախտակը (ըստ Ռոբերտ Աթայանի)



Հաագոյն երաժշտական խազեր (Սիոնղ., № 512 պատառիկից)



Շարականային մեղեդու տրոհումը խազային պարզագոյն հյուսվածքում (հորիզոնական գծիկները փոխարինում են խազ չկրող վանկերին)



Խազագրության հիմնական նշանների միակցությունը (ըստ Նիկողոս Թահմիզյանի) և տառային լրացուցիչ նշանները

Խ–յան զարգացած փուլը նկատի ունենալով՝ Կոմիտասը 1910–ին ամփոփել է «խազաբանության տարրերը»: Երաժշտ. Խ–յան արդի ուսումնասիրությունն ընթացել է հնագոյն գրչագրերում հայտնաբերվող տեղեկությունների պատմ. հետազոտության, Խ–յան ներքին օրինաչափությունների բացահայտման, ազգ. մոնոդիկ երաժշտության տարրերի էվոլյուցիայի վերականգնման, պահպանված հայ հոգևոր երաժշտության և միջնադար. երաժշտ. գրության այլ համակարգերի հետ համադրման ուղիներով: Պարզաբանվել են ստեղծման ժամանակը, զարգացման փուլերն ու անկման շրջանը, ճշգրտվել համակարգերն ու նշանները, հաստատվել է խազերով գրված երգերի և 1870–ական թթ–ին բանավոր կատարումից վերաձայնագրված նույն երգերի նկատելի համապատասխանությունը, լուսաբանվել Խ–յան հիմնական տարրերը, որոշ խազերի նշանակության ընդհանուր բնույթը, մեղեդիների չափակշռութ. կողմի և տրոհության գրանցումը, հաստատվել են երգերը վերարտադրելիս ավանդ. ձայնեղանակների որոշիչ նշանակությունը, իմպրովիզացիայի ազատության դերը նն: Խազերի վերծանումը կարևոր է ոչ միայն հայկ., այլև ողջ Մերձ. Արևելքի միջնադար. երաժշտության ու համաքրիստ. եկեղեց. երաժշտության ուսումնասիրման առումով:

Գրկ. Խաչատուր Էրզրումեցի, Համառօտական իմաստասիրութիւն..., հ. 2, Վնտ., 1711, էջ 529–535: Գաբրիելյան Գ., Գրքոյկ, որ կոչի Նոտագարան, ԿՊ, 1794: Տնտեսեան Ե., Տեսութիւնք Շարականի երգոց խազերուն, «Ժամանակ», 1864, № 45 (հավելված): Նույնի, Նկարագիր երգոց..., ԿՊ, 1874: Կոմիտաս, Շարականի խազերի նշանակությունը, տես նրա Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Թահմիզյան Ն., Խազագրության արվեստը իր պատմական զարգացման մեջ, ԲՄ, 1977, № 12: Նույնի, Արդի խազարանութիւն, Ե., 2003: Атаян Р., Армянская средневековая нотопись, «Музыка народов Азии и Африки», 2, М., 1973; Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977.

ԽԱԶԵՐ (խազ՝ գիծ, գիր), հայկ. միջնադար. երաժշտության գրության նշանները, որոնցով տարբեր համակարգերում տարբեր մանրամասնությամբ հաստատագրվել են հոգևոր, մասամբ՝ աշխարհիկ մեղեդիները: Բնույթով հարում են նևմային գրության նշաններին (տես ***Նևմեր***), սակայն ձևերով, անվանումներով և նշանակությամբ ինքնուրույն են: Գրվել են գրական տողից վեր՝ եթե մեկ վանկի Խ. մեկ–երկուսն են, և տողում, եթե դրանից ավելի են: Լայն առումով՝ Խ–ում ընդգրկվում են նաև հայ–ի առոգանության ու տրոհության նշանները, այբուբենի այն բաղաձայններն ու կիսաձայնը (երաժշտ. համակարգերում գործածվել են որպես լրացուցիչ նշումներ) և մոնոդիկ երաժշտության ձայնեղանակների տառային նշումները («բանալի խազեր»): Խ–ի քանակը, ձևերը, անվանումներն ու նրանց վերագրվող նշանակությունները ժամանակի ընթացքում փոփոխվել են (տես ***Խազագրություն***): Խ–ից մի քանիսն օգտագործվել են ***նոր հայկական ձայնագրության*** համակարգում:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԽԱԼԱԹՅԱՆ Հակոբ Ստեփանի (ծ. 18.08.1956, Երևան), քամանչահար, գեղանկարիչ, երաժշտ. գործիքներ պատրաստող վարպետ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի քամանչայի (1975, դասատու՝ Մ. Խաչատրյան), ԵՊԿ ժող. գործիքների (1986, Մ. Խաչատրյանի դասարան) բաժինները: 1977–78–ին՝ Հայաստանի ժող. գործիքների նվագախմբի, 1978–80–ին՝ Կիրովականի «Հորովել» երգի–պարի անսամբլի կոնցերտմայստեր, 1982–2002–ին և 2012–ից՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի քամանչահար, 1995–97–ին՝ Հայկ. երգի–պարի անսամբլի կոնցերտմայստեր, 2009–11–ին՝ մենակատար: 1983–89–ին դասավանդել է Երևանի Ա. Բաբաջանյանի

անվ. երաժշտամանկավարժ., 1987–2005-ին՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարան-ներում (քամանչա): 1992-ից պատրաստում է քամանչա, 2006-ից՝ ալտ, քաման («Հոբելյանական», պրիմա քաման «Անահիտ»), նաև գործիքների մանրակերտներ: Խ. առաջինն է քամանչայով նվագել խոշոր կտավի ստեղծագործություններ՝ Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտը, Է. Բաղդասարյանի «Ռապսոդիան» (փոխադրումներ՝ քամանչայի համար), Ռ. Ալթունյանի «Անտունի»-ն (փոխադրում՝ քամանչայի և կամեր. նվագախմբի համար): Իրեն նվիրված բազմաթիվ ստեղծագործությունների առաջին կատարողն է: Հանդես է եկել անսամբլների հետ: Կատարել է փոխադրումներ և մշակումներ քամանչայի, քամանի և փոքր կազմի անսամբլների համար (Կոմիտասի մշակումները, Է. Աբրահամյանի «Սկերցո»-ն՝ քամանչայի, թավջութակի և դաշնամուրի, Հ. Անասյանի «Ֆանտազիա՝ Ջիվանու երգի թեմաներով»՝ մենակատար քամանչայի և լար. քառյակի, Վ. Շարաֆյանի կվինտետ՝ մենակատար քամանչայի, լար. քառյակի, դհոլի և դաշնամուրի, Ռ. Ալթունյանի «Մաճկալ»՝ քամանչայի, ջութակի և դուդուկահարների քառյակի, Ն. Զարիֆյանի «Հայկական էսքիզներ»՝ քամանչայի, քանոնի, կոնտրաբասի, դաշնամուրի համար, ևն):

Գրել է «Բարի օր» (խոսք՝ Յ. Սահակյանի) երգը: Թողարկել է 2 լազեր. ձայնասկավառակ (2000, «Յարեն էրված իմ», «Ինձ մի խնդրիր», 2001), «Սայաթ-Նովա» տեսահոլովակը (2005), DVD (2006): Հայաստանի անկախության 20-ամյակի օրը (2011) նվագել է Արարատի գագաթին: Հեղինակ է շուրջ 500 գեղանկարչ. աշխ-ների, կազմակերպել է համերգ-ցուցահանդեսներ (2006–09, 2012–13):

Ժող. կատարողների 1-ին հանրապետ. մրցույթի դափնեկիր (1986, Բաքու):

ԽԱՉԱԳՈՐԾՅԱՆ (Խաղազորտյան) Էդուարդ Արամի (15.07.1930, Թիֆլիս–03.01.1983, Մոսկվա), կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1979): Ավարտել է ԵՊԿ (1955, Գ. Եղիազարյանի դասարան), ՄՊԿ ասպիրանտուրան (1965, ղեկ.՝ Ա. Խաչատրյան): 1971–83-ին՝ ԽՍՀՄ ԿՄ Մոսկվայի վարչության փոխնախագահ, 1972–83-ին, միաժամանակ՝ «Սովետսկի կոմպոզիտոր» հրտ-յան գլխ. խմբ-ի տեղակալ: Գրել է «Շունն ու կատուն» (1958, բեմ.՝ 1976, Մոսկվա, «Ականջներով գլխարկը»՝ ըստ Հ. Թումանյանի) մանկ. օպերաները, «Սոխակն ու վարդը» (բեմ.՝ 1956, Երևան), «Սոնա» (բեմ.՝ 1957, Երևան) բալետները, «Կարինե» երաժշտ. կատակերգությունը (1980), 6 սիմֆոնիա (1962–80), «Լենինն ու Ալին» (1958) սիմֆ. պոեմը, «Տոնական նախերգանք» (1970), «Հանդիսավոր ներբող» (1980), «Պարային սյուիտ» (1980), «Տասը կոնցերտային պիես» (1971)՝ փող. նվագախմբի համար, կլառնետի (1966), տավիղի (1970) կոնցերտներ, կամեր. անսամբլներ (3 լար. կվարտետ, 1949–78, դաշնամուր. կվինտետ, 1960, ևն), գործիք. պիեսներ, խմբերգեր, երգաշարեր, թատրոնի և կինոյի (շուրջ 60 ֆիլմ) երաժշտություն:

Երկ. *Статьи, воспоминания, М., 1987.*

ԽԱՂԻԿՆԵՐ, բանահյուս. ստեղծագործություններ, որոնք դարեր շարունակ փոխանցվել են բանավոր՝ երգի միջոցով: Հիմնականում քառատող են, երբեմն՝ եռատող («Գացի արտեր, բռնի լոր»): Տարբերում են սիրային, կատակ., աշխ., կենցաղ. և այլ Խ.: Կարող են ունենալ բազմաթիվ տարբերակներ՝ պայմանավորված բարբառի առանձնահատկություններով, ենթարկվել զանազան փոփոխությունների:

Ժող. երգաստեղծության մեջ «խաղ» բառը երբեմն փոխարինվում է «տաղ»-ով: Խ. սերտաճում են պարերգերի հետ. պատահական չէ, որ պարերգերը նախապես կոչվել են «խաղք երգոց»: Նրանք ճանաչվում են կամ սկզբնատողով, կամ կրկնվող տողով (եթե կա): Հաճախ հանդիպում են «թափառիկ» Խ., որոնք համապատասխան հանգերի քանակի դեպքում կարող են մի պարերգից մյուսն անցնել: Գ. Սրվանձտյանցի, Գ. Շերենցի, Մ. Աբեղյանի, Ա. Բրուտյանի, Կոմիտասի և ուր. ջանքերով գրառվել են Խ-ի բազմաթիվ օրինակներ:

Գրկ. Աբեղյան Մ., Ժողովրդական խաղիկներ, Ե., 1940:

ԽԱՅԱԹ (Զահրիյան Սուքիաս Կարապետի, 1850, Ալեքսանդրապոլ–1930, Երևան), աշուղ: Աշուղ. արվ. սովորել է հորից՝ *Զահրիից*: Գրել է սիրո, հայրենասիրության թեմաներով երգեր, անդրադարձել նաև սոցիալ. հակասություններին («Ուսում», «Անկիրթ մարդը», «Գարուն», «Բարեկենդան» ևն): Խ-ի ոտանավորներն ամփոփվել են «Անձայն կիթառ» (1889) ժող-ում: *Ջիվանու* և *Զամպոյ* հետ թուրք-ից փոխադրել և տպագրել է *«Քյոռօղլի»* ժող. ասքի ճյուղերից մեկը:

Երկ. *Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986, էջ 112–122:*

Հակոբ Խալաթյանը ելույթի պահին

Էդուարդ Խաղազործյան



Հրայր Խանեդանյան

Դավիթ Խանջյան

Դ. Խանջյանը ելույթի պահին

ԽԱՆԵԴԱՆՅԱՆ Հրայր Հրայրի (ծ. 06.06.1939, Կամենսկ-Շախտինսկի՝ ՌԴ Ռոստովի մարզ), երգիչ (տենոր): Ուկր. ԽՍՀ վաստ. (1969), Ուզբ. ԽՍՀ (1974), Հս. Օսիայի (1999) ժող. արտիստ: Ավարտել է Լվովի կոնսերվատորիան (1963, Ն. Վ. Շելյուժկոյի դասարան): 1961–63-ին՝ Լվովի, 1965–72-ին՝ Օդեսայի, 1972-ից՝ Տաշքենդի, 1980–87-ին՝ Վլադիկավկազի ՕԲԹ-ների, 1987-ից՝ Պերմի օպեր., 1995-ից՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնների մենակատար. դերերգերից են՝ Ռադամես, Դոն Կառլոս (Ջ. Վերդիի «Աիդա», «Դոն Կառլոս»), Կավարադոսի, Պինկերտոն (Ջ. Պուչինիի «Տոսկա», «Չիո-Չիո սան»), Կանիո (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ»), Գերման (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն») ևն: 1976-ից դասավանդել է Տաշքենդի կոնսերվատորիայում, 1979–80-ին՝ գեղ-թատեր. ինստ-ում, 1995-ից՝ Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (պրոֆ.):

Հեղինակ է օպերաների («Թամար և Դավիթ», 1987, «Կայեն», 1998, «Սոկրատես», 2001, «Եգիպտական գիշերներ», 2004, «Ադալմինայի մարգարիտը», 2010, մանկ., ևն), օպերա-բալլադների («Լենորա», 2012, «Անդրոնիկոս՝ Բյուզանդիայի կայսր», 2013), «Նարգիզ՝ գարնանային ծաղիկ» (1979) բալետի, «Ավիցեննա» (1980) օրատորիայի, 60-ից ավելի ռոմանսների, սիմֆ. և այլ երկերի:

1960-ից ստեղծել է նաև գեղանկարչական գործեր:

ԽԱՆՋՅԱՆ Վահան (ծ. 1942, Նյու Յորք), երգիչ (տենոր): Ավարտել է Բուֆալոյի համալսարանը և «Կյորտիս» երաժշտ. ինստ-ը: Լավագույն դերերգերով (Ջ. Պուչչինիի «Մանոն Լեսկո» ևն) հանդես է եկել Կանադայի և ԱՄՆ-ի մի շարք օպեր. թատրոններում: Օժտված է հարուստ և զորեղ ձայնով, կատարումները հուզիչ են և ներազդող: Համերգ. երկացանկում՝ նաև հայկ. երգեր («Հայաստան» ևն):

ԽԱՆՋՅԱՆ Դավիթ Հակոբի (30.07.1940, Երևան–14.03.1981, Երևան), դիրիժոր, կոմպոզիտոր: Հակոբ ***Խանջյանի*** և Տաթևիկ ***Սազանդարյանի*** որդին: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1977): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1963, Ռ. Անդրիասյանի դասարան) և դիրիժորության (1968, Մ. Մալունցյանի դասարան) բաժինները:

Որպես դիրիժոր՝ կատարելագործվել է Վիեննայում (1972–73, ղեկ-ներ՝ Հ. Սվարովսկի և Գ. Շերխ): 1970–81-ին դասավանդել է ԵՊԿ-ում: 1968–74-ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1974–81-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Նպաստել է նվագախմբի ազգ. երկացանկի հարստացմանը: Նրա ղեկավարությամբ կատարվել են Ռ. Շտրաուսի «Դոն Կիխոտ», «Մահ և պայծառացում», «Այսպես խոսեց Զրադաշտը» պոեմները, Գ. Մահլերի 1-ին և 5-րդ սիմֆոնիաները, Ի. Ֆ. Ստրավինսկու «Հրեղեն հավք», «Պետրուշկա», «Սրբազան գարուն» բալետ. սյուիտները, ջութակի կոնցերտը, Բ. Բարտոկի «Հրաշալի մանդարինը», Կ. Դեբյուսիի «Ծովը» և այլ երկեր: Մի շարք հայ կոմպոզիտորների երկերի առաջին մեկնաբանն էր (Ա. Տերտերյանի 1–4-րդ սիմֆոնիաները ևն): Նվագախմբի հետ համերգներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Մերձբալթ. երկրներում, Այսրկովկասի քաղաքներում, Չեխոսլովակիայում և այլուր:

ՀԽՍՀ Պետ. (հետմահու, 1981), ՀԼԿԵՄ (1971) մրց-ներ, Դիրիժորների համամիութ. 3-րդ մրցույթի դիպլոմ (1971):

ԽԱՆՋՅԱՆ Հակոբ Սեպուհի (1912, Վան–1968, Երևան), ջութակահար, երաժշտագետ: Տաթևիկ ***Սազանդարյանի*** ամուսինը, Դավիթ ***Խանջյանի*** հայրը: Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի ջութակի բաժինը (1937, Ի. Ա. Զելիխմանի դասարան): 1937–40-ին դասավանդել է ԵՊԿ ջութակի բաժնում: 1943-ից՝ Հայկ. ռադիոյին կից եռյակի ջութակահար, ԵՕԹ նվագախմբի փոխկոնցերտմայստեր, 1955–57-ին՝ տնօրեն, 1957–59-ին՝ ՀԽՍՀ ՆԽ-ին կից արվ-ի վարչության պետ, ապա՝ ԳԱԹ-ի գիտ. աշխատող: Հեղինակ է «Միքայել Թավրիզյան» (1957), «Երգը կանչում է. [Հայկական երգի-պարի պետ. անսամբլի հյուրախաղերը]» (1961), «Կարո Կարապետյան» (1965), «Հայկական ժողովրդական երգի-պարի վաստակավոր անսամբլ» (հայ., ռուս., 1973), «Պայծառ անուններ» գրքերի:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Աննա Վիկտորի (ծ. 11.12.1977, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2007), դոցենտ (2014): Վիկտոր ***Խաչատրյանի*** դուստրը: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության (1996), ԵՊԿ երաժշտագիտության (2001) բաժինները և ասպիրանտուրան (2004): 2002-ից դասավանդում է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. քոլեջում, 2005-ից՝ ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնում: Ուսումնասիրությունները վերաբերում են

համաշխ. դաս., նաև ժամանակակից և հայ երաժշտությանը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Արամ Եղիայի (Իլյիչ) [24.05(06.06).1903, Թիֆլիս–01.05.1978, Մոսկվա, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ, հայկ. կինոերաժշտության հիմնադիրը: ԽՍՀՄ (1954), ՀԽՍՀ (1955), ՎԽՍՀ (1963), Ադրբ. ԽՍՀ (1973) ժող. արտիստ: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1963): Արվեստագիտ. դ-ր (1965): Սոց. աշխ. հերոս (1973): Ավարտել է ՄՊԿ (1934, անունը ոսկե տառերով գրված է մարմարե պատվո տախտակին՝ Ս. Ի. Տանեևի, Ս. Վ. Ռախմանինովի, Ա. Ն. Սկրյաբինի, Ա. Կ. Մետների, Ռ. Մ. Գլիերի և ուր. անունների շարքում) և ասպիրանտուրան (1936, երկուսն էլ՝ ղեկ. Ն. Յ. Մյասկովսկի): 1957-ից՝ ԽՍՀՄ ԿՄ քարտուղար: 1950-ից դասավանդել է ՄՊԿ-ում և Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. մանկավարժ. ինստ-ում (պրոֆ.՝ 1952-ից): Սաներից են Ա. Վիերուն (Ռումինիա), Ա. Յ. Էշպայը, Ռ. Գ. Բոյկոն, Ն. Գաբունիան, Բ. Յ. Տրոցյուկը, Կ. Ե. Վոլկովը, Է. Հովհաննիսյանը, Մ. Թարիվերդիևը, Է. Խաղագործյանը և ուր.:

Ուսման տարիներին մշակել է հայկ., ռուս., հունգ. և այլ ժող. երգեր, գրել է «Պար»՝ ջութակի և դաշնամուրի (1929), «Պոեմ» (1929), «Տոկկատ» (1932)՝ դաշնամուրի, տրիո (1932)՝ դաշնամուրի, ջութակի և կլառնետի, «Պարային սյուիտ» (1933)՝ սիմֆ. նվագախմբի համար:

Հայ ազգ. մշակույթի հետ Խ-ի կապերի ամրապնդմանը նպաստել է Մոսկվայում Հայ մշակույթի տանը նրա ծավալած գործունեությունը: Հանդիպել է Ա. Սպենդիարյանի, Մ. Սարյանի, Շ. Տալյանի և այլ հայ արվեստագետների հետ, երաժշտություն է գրել Մոսկվայի հայկ. դրամատիկ. ստուդիայի (ղեկ.՝ Ռ. Սիմոնով) բեմադրած Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», «Ատամնաբույժն արևելյան», Գ. Սունդուկյանի «Խաթաբալա» պիեսների ներկայացումների (1926–28) համար:

Խ-ի երաժշտությունը նոր էջ է բացել համաշխ. երաժշտության պատմության մեջ: Ստեղծագործաբար ընդհանրացնելով իր նախորդների՝ հայ երաժշտության դասականների՝ Տ. Չուխաճյանի, Կոմիտասի և Ա. Սպենդիարյանի, նաև ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների գեղ. փորձը՝ նա հայ կոմպոզիտոր. դպրոցը բարձրացրել է որակապես նոր մակարդակի՝ այն դարձնելով համաշխ. մշակույթի անքակտելի մասը: Վարպետորեն համադրել է արլ. և արևմտաեվրոպ. երաժշտ. ավանդույթները (դեռևս XIX դ-ի 2-րդ կեսին Տ. Չուխաճյանը որոշակի քայլեր է արել այդ ուղղությամբ), նորովի բացահայտել արլ. ժող. երաժշտության հարուստ հնարավորությունները: Նրա նորարարություններն նպաստել են Այսրկովկասի և Միջին Ասիայի հանրապետությունների կոմպոզիտոր. դպրոցների զարգացմանը:



Արամ Խաչատրյան

Խ-ի երաժշտությունը նոր փուլ էր արլ. ժողովուրդների երաժշտ. մշակույթի զարգացման մեջ, պարտիտուրները՝ Արևելքի երկրների ժող. երաժշտության գեղ. կիրառման միանգամայն նոր մոտեցման հնարավորություններ: Նա նաև համարձակ նորարար էր: Լայնորեն օգտագործելով գեղջկական ու քաղաք. բանահյուսության նմուշները, աշուղ. արվ-ի ու մուղամաթի ավանդույթները՝ վարպետորեն բացահայտել է արլ. մոնոդիկ թեմատիզմի հնարավորությունները, համադրել սոնատ-սիմֆ. մտածողության ծավալներն ու երաժշտ. նյութի ազատ-իմպրովիզացիոն շարադրանքը: Նրա երաժշտ. ոճն առանձնանում է վառ ու գունեղ նվագախմբ. ներկապնակով, յուրօրինակ ու թարմ հարմոնիկ լեզվով: Բարձր գնահատելով Խ-ի ստեղծագործության դերն ու նշանակությունը համաշխ.

Ա. Խաչատրյանը Լոյոյթի պահին

Տեսարան Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի բեմադրությունից

երաժշտության համայնապատկերում՝ Դ. Դ. Շոստակովիչը խոստովանել է. «Եթե չլիներ Խաչատրյանի երաժշտությունը, ես երևի այլ կերպ կգրեի»:

Խ. ազգ. առաջին բալետի հեղինակն է («Երջանկություն», 1939, 2-րդ խմբագրությամբ՝ «Գայանե», 1942, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1943): Գրել է նաև սիմֆոնիաներ

(1-ին՝ 1934, 2-րդ՝ 1943, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1946, 3-րդ՝ 1947), գործիք. կոնցերտներ (դաշնամուրի և նվագախմբի՝ 1936, ջութակի և նվագախմբի՝ 1940, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1941, թավջութակի և նվագախմբի՝ 1946), դաշնամուրի, ջութակի, թավջութակի և նվագախմբի համար կոնցերտների, դաշնամուրի, ջութակի, թավջութակի և նվագախմբի կոնցերտ-ռապսոդիաներ, կամեր. գործիք. և վոկալ երկեր, մենակատարների, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, փող. նվագախմբի համար գործերի, թատրոնի (21 ներկայացում) և կինոյի (17 ֆիլմեր) երաժշտության, «Սպարտակ» բալետը: Նրա ստեղծագործ. ժառանգությունն ընդգրկում է երաժշտ. գրեթե բոլոր ժանրերը՝ բացառությամբ օպերայի:

Հատված Ա. Խաչատրյանի Ջութակի կոնցերտից

Խ-ի 1-ին սիմֆոնիան (e-moll) նրա դիպլոմ. աշխատանքն է, որտեղ հանրագումարի է բերել ուսումնառության շրջանի որոնումները, նշանավորել ստեղծագործ. հասունության նոր փուլ: Սիմֆոնիան նվիրված է Հայաստանում խորհրդ. իշխանության հաստատմանը, որտեղ վառ կերպով մարմնավորել է իր տաղանդի լավագույն հատկանիշները: Ինքնուրույն և համարձակորեն փորձել է լուծել բարդ, նորարար. խնդիր. ստեղծել սիմֆոնիա՝ հայ երաժշտության ազգ. ակունքների հիմքի վրա: Այն ոչ միայն հայ և ողջ խորհրդ. երաժշտ. մշակույթի կարևոր նվաճումներից է, այլև նշանակալի ներդրում համաշխ. երաժշտարվ-ի զարգացման մեջ: Առաջին անգամ կատարվել է 1935-ին ՄՊԿ Մեծ դահլիճում՝ Մոսկվայի (դիրիժոր՝ Է. Սենկար), 1936-ին՝ Լենինգրադի (դիրիժոր՝ Ֆ. Շտիդրի) ֆիլհարմոնիաների սիմֆ. նվագախմբերի կատարմամբ: Ունկնդրելով սիմֆոնիան՝ Դ. Դ. Շոստակովիչը գրել է. «Անկասկած, մեր արվեստ մուտք է գործել վառ, ինքնատիպ և ուժեղ տաղանդ, որին վիճակված է նոր հորիզոններ բացահայտել XX դ-ի երաժշտարվ-ում, ամենապատվավոր տեղերից մեկը գրավել արդի երաժշտության ականավոր արարողների շարքում»:

2-րդ սիմֆոնիայում (e-moll, 1943) հեղինակն արտահայտել է հաղթանակի հավատը ՀՄՊ-ում: Կատարել է ԽՍՀՄ Պետ. սիմֆ. նվագախումբը (դիրիժոր՝ Բ. Է. Խայկին) ՄՊԿ Մեծ դահլիճում: Նախաբանում և վերջում Խ. գործածել է զանգեր (Գ. Ն. Խուրովը կոմպոզիտորի համաձայնությամբ սիմֆոնիան անվանել է «Զանգերով սիմֆոնիա»), 2-րդ մասում՝ Andante-ում, «Որսկան ախպեր» ժող. երգի մեղեդին է: Ֆինալում (IV մաս) կյանքի հաստատման գաղափարը մարմնավորել է ինքնատիպ սիմֆ. ձոնում: Նոր խմբագրությամբ սիմֆոնիան կատարել է ԽՍՀՄ Պետ. սիմֆ. նվագախումբը 1944-ին:

1947-ին ավարտել է մեկմասանի 3-րդ սիմֆոնիան (Սիմֆոնիա-պոեմ, C-dur)՝ նվագախմբի եռակի կազմի, 15 մենակատար շեփորների և երգեհոնի համար, որտեղ իշխում են լուսավոր, հանդիսավոր տրամադրություններ: Այս երկն ուրախության ապոթեոզ է, աշխատանքի օրհներգ: Առաջին անգամ կատարել է Լենինգրադի ֆիլհարմոնիայի նվագախումբը (դիրիժոր՝ Ե. Ա. Մռավինսկի)՝ ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում 1947-ին, ապա՝ ՄՊԿ Մեծ դահլիճում:

Խ-ի կոնցերտը՝ դաշնամուրի և նվագախմբի համար (Des-dur) 1936-ին կատարվել է Մոսկվայում, ապա՝ 1937-ին Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Քլիվլենդում, Չիկագոյում, Սան Ֆրանցիսկոյում, Լոս Անջելեսում և այլուր:

Ջութակի (1940) և դաշնամուրի կոնցերտներով Խ. արժանացել է համաշխ. հռչակի:

Թավջութակի և նվագախմբի կոնցերտը (e-moll, 1946), ջութակի և նվագախմբի

(b-moll, 1961), թավջութակի և նվագախմբի (d-moll, 1963) կոնցերտ-ռապսոդիաները հնչել են մի շարք քաղաքներում: Խ-ի 3 խոշոր ստեղծագործությունները՝ թավջութակի կոնցերտը, կոնցերտ-ռապսոդիան և մենանվագ թավջութակի սոնատ-ֆանտազիան, արժեքավոր ներդրում են XX դ-ի թավջութակի նվագացանկում: Նա նշանակալիորեն հարստացրել է գործիքի տեխ. ու արտահայտչ. հնարավորությունները:

Գործիք. կոնցերտների շարքը եզրափակել է դաշնամուրի և նվագախմբի կոնցերտ-ռապսոդիայով (Des-dur, 1967), որի երաժշտությունը լուսավոր է, իմպուլսիվ ռիթմով, արտահայտում է նաև ժող. որոշ ինտոնացիաներ:

«Երջանկություն» բալետը բեմադրվել է 1939-ին ԵՕԲԹ-ում (բալետմայստեր՝ Ի. Արբատով)՝ հեղինակի ներկայությամբ:

1942-ին «Գայանե» բալետը (բալետմայստեր՝ Ն. Անիսիմովա) բեմադրվել է Լենինգրադի ՕԲԹ-ում, Մոսկվայի Մեծ թատրոնում (նոր խմբագրությամբ, լիբրետտոն՝ Բ. Պլետնյովի, բալետմայստեր՝ Վ. Վայնոնեն): Բալետն ընդգրկվել է նաև Երևանի, Կիևի, Սվերդլովսկի, Բեռլինի, Լայպցիգի, Վիսբադենի, Վայմարի, Բուդապեշտի, Բրատիսլավայի, Սոֆիայի, Ուլան Ուդեի, Տալլինի, Վորոնեժի, Սվերդլովսկի, Չելյաբինսկի, Նովոսիբիրսկի, Ռիգայի օպեր. թատրոնների խաղացանկերում, որոշ հատվածներ՝ համերգ. երկացանկերում: Բալետում հեղինակը լայնորեն օգտագործել է ժող. երաժշտության նմուշներ, աշխատանք. երգերի, կատակերգերի, քնար., հերոս. երգերի ու պարերի, նաև աշուղ. մեղեդիներ (հայկ., ռուս., ուկր., վրաց. ևն): Ըստ էության՝ «Գայանեն» հայ ժող. երաժշտության բարձրարժեք մշակման և սիմֆոնիկացման օրինակ է, ժող. մեղեդիների վրա հիմնված դրամատիզացված մեծածավալ երաժշտ. խորեոգրաֆիկ ռապսոդիա, հայկ. երաժշտախորեոգրաֆիկ արվ-ում առաջին ստեղծագործությունը՝ մեծ և լարված սիմֆ. զարգացմամբ:

1954-ին ավարտել է «Սպարտակ» բալետ-ողբերգությունը, որը 1956-ին բեմադրվել է Լենինգրադի ՕԲԹ-ում (բալետմայստեր՝ Լ. Յակոբսոն, դիրիժոր՝ Պ. Ֆելդտ), 1958-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնում (բալետմայստեր՝ Ի. Մոիսեև, դիրիժոր՝ Յ. Ֆայեր), 1961-ին՝ ԵՕԲԹ-ում (բալետմայստեր՝ Ե. Չանգա, դիրիժոր՝ Ա. Քաթանյան, Սպարտակ՝ Վանուշ Խանամիրյան, Վիլեն Գալստյան), նաև Կիևում, Մինսկում, Բաքվում, Տաշքենդում,

Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի բեմադրության էսքիզ (նկարիչ՝ Մինաս Ավետիսյան)

Խարկովում, Նովոսիբիրսկում, Լվովում, Օդեսայում, Ռիգայում, Վիլնյուսում, Սարատովում և ԽՍՀՄ այլ քաղաքներում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Մեծ Բրիտանիայում:

Խ-ի բալետները կարևոր տեղ ունեն XX դ-ի երաժշտախորեգրաֆիկ արվ-ում:

Նա նաև հայ կինոյի առաջին ինչուն. ֆիլմի՝ Հ. Բեկնազարյանի «Պեպո» (1935) կինոնկարի երաժշտության հեղինակն է: Կինոնկարում երաժշտության հոգեբան. առանցքը «Պեպոյի երգն» է (Ե. Չարենցի խոսքերով): Ուշագրավ է նաև «Զանգեզուր»

Տեսարան Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի բեմադրությունից (1961, բալետմայստեր՝ Եվգենի Չանգա)

ֆիլմի (1938) երաժշտությունը: Խ-ի ստեղծագործ. նվաճումներից են «Վ. Ի. Լենին» (1948), «Ստալինգրադյան ճակատամարտ» (1949, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1950) և այլ ֆիլմերի, «Վալենսիայի այրին» (1940), «Դիմակահանդես» (1941), «Մակբեթ» (1955), «Լիր Արքա» (1958) և այլ դրամատիկ ներկայացումների համար գրած երաժշտությունը:

Խ. ՀԽՍՀ պետ. օրհներգի երաժշտության (1944) հեղինակն է:

Արաքսյա Խաչատրյան



Էմին Խաչատրյան

Թուշիկ Խաչատրյանը Սարջանի դերում (Կ. Զաքարյանի «Սարջան»)

Նրա գործերում մեծ տեղ է գրավում կամեր. երաժշտությունը՝ դաշնամուրի (1961), մենանվագներ՝ թավջութակի (1974), ջութակի (1975), ալտի (1976) սոնատները, «Յոթ ֆուգա և ռեչիտատիվ» պոլիֆոնիկ շարքը (1928–70): 1950-ից ծավալել է դիրիժոր. գործունեություն. հեղինակ. համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ քաղաքներում և արտերկրում:

Խ-ի անունով են կոչվել Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճը (շենքի առջև՝ բրոնզաձույլ արձանը, 1999, քանդ.՝ Յ. Պետրոսյան), փողոց՝ Երևանում: 1984-ից գործում է ***Խաչատրյանի փոն-թանգարանը***, 1993-ին Երևանում անցկացվել է «Արամ Խաչատրյան-93» սիմֆ. երաժշտության փառատոնը, 2003-ից՝ երաժիշտ-կատարողների Խ-ի անվ. միջազգ. ամենամյա մրցանակաբաշխությունը, գործում են Խ-ի անվ. եռյակը և քառյակը: 1984-ին ՀԿՄ սահմանել է Խ-ի անվ. մրց. (2 տարին՝ մեկ):

ՀԽՍՀ (1947–51), ԽՍՀՄ (1958–62) ԳԽ պատգամավոր, Լատին. Ամերիկայի երկրների հետ բարեկամության և մշակութ. համագործակցության խորհրդ. ընկերակցության նախագահ (1958-ից), Խաղաղության պաշտպանության խորհրդ. կոմիտեի անդամ (1962-ից), Իտալիայի «Սանտա Չեչիլիա» երաժշտ. ակադ-ի պատվավոր անդամ (1960), Մեքսիկայի կոնսերվատորիայի պատվավոր պրոֆ. (1960), ԳԴեմՀ ԳԱ թղթ. անդամ (1961):

Լենինյան (1959), ԽՍՀՄ (1941, 1943, 1946, 1950, 1971), ՀԽՍՀ (1965) Պետ. մրց-ներ, Լենինի (1936, 1963, 1973), Աշխատանք. կարմիր դրոշի (1946, 1966), Հոկտ. հեղափոխության (1971), Բուլղարիայի «Կիրիլ և Մեֆոդի» I աստիճանի, ֆրանս. Արվ-ի և գրկ-յան» III աստիճանի շքանշաններ, Ֆ. Լիստի, Բ. Սմետանայի, Բ. Բարտոկի անվ. մեդալներ, Խաղաղության համաշխ. խորհրդի՝ Ժ. Կյուրիի անվ. մեդալ:

Երկ. *Собрание сочинений в двадцати четырех томах, М; Նամակներ (1928–78), կազմ.՝ Մ. Հարոությունյան, Գ. Հարոությունյան, Ե., 1983: Նամակներ (1934–1978), կազմ.՝ Մ. Հարոությունյան, Ե., 1995: Նամակներ, Ե., 2003: Նամակներ, կազմ.՝ Մ. Խաչատրյան, Ե., 2009: Արամ Խաչատրյանը և արդի աշխարհը (կազմ.՝ Ն. Ավետիսյան), Ե., 2014: Նամականի (կազմ.՝ Ա. Գրիգորյան), Ե., 2017: О музыке, музыкантах, о себе, [Сб. ст.], Е., 1980.*

Գրկ. *Խուրով Գ., Արամ Խաչատրյան, Ե., 1977: Հարությունյան Մ., Ա. Խաչատրյան, Ե., 1981: Տիգրանյան Գ., Արամ Խաչատրյան, Ե., 1983: Կարապետյան Ե., Արամ Խաչատրյանը իմ հուշերում, Ե., 2003: Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը [2003 թ. նոյեմբերի 17–30-ի միջազգային գիտաժողովի զեկուցումներ], Ե., 2003: Асафьев Б., Арам Хачатурян, в его кн.: Очерки об Армении, М., 1958; Шнеерсон Г., Арам Хачатурян, М., 1958; Карагюлян Э., Симфоническое творчество Арама Хачатуряна, Е., 1961; Арам Хачатурян. Жизнь и творчество. К 60-летию со дня рождения, М., 1963; Тигранов Г., Балеты А. Хачатуряна, 2 изд., М., 1974; Его же, Арам Ильич Хачатурян, М., 1987; Хубов Г., Арам Хачатурян, 2 изд., М., 1967; Чеботарян Г., Полифония в творчестве Арама Хачатуряна, Е., 1969; Арам Хачатурян. Сб. статей (сост., ред. и вступит. ст. Г. Геодакяна), Е., 1972; Тигранова И., Лирические образы в творчестве Арама Хачатуряна, Е., 1973; Хараджанян Р., Фортепианное творчество Арама Хачатуряна, Е., 1973; Арам Ильич Хачатурян. Сб. статей (сост. и ред. С. Рыбакова), М., 1975; Персон Д., Арам Хачатурян. Нотобиблиографический справочник, М., 1979; Арутюнов Д., А. Хачатурян и музыка Советского Востока, М., 1983; Микоян Н., Киномузыка Арама Хачатуряна, М., 1984; Юзефович В., Арам Хачатурян, М., 1990; Саркисян С., Арам Хачатурян, Е., 2004; Арам Хачатурян. Киномузыка (տեքստի հեղ.՝ Սարգսյան Ռոխկյան), Ե., 2005:*

Մննա Ասպրյան

ԽԱՉԱՏՐՅԱՆ Արաքսյա Արտավազդի (ծ. 17.11.1960, Երևան), խմբավար, մանկավարժ: Ավարտել է Երևանի մանկավարժ. ուսումնարանը (1984), ԵԿՄ խմբավարության բաժինը (1992, Ա. Վերանյանի, Դ. Ղազարյանի դասարաններ): 1992–2004-ին և 2012-ից՝ ՀՄՊՀ դասախոս: 2001-ին հիմնադրել է «Ձոլեր» կանանց քառաձայն երգչախումբը: 2004–12-ին՝ Թեհրանի հայ մշակութ. «Արարատ» կազմակերպության «Արարատ» տղամարդկանց և կանանց երգչախմբի գեղ. ղեկ. և խմբավար: Երգչախումբը մասնակցել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» (2008), «Իմ Հայաստան» (2012) համահայկ., «Կոմիտաս Վարդապետ» (2013), «Ֆաջր» միջազգ. (2014, 3-րդ մրց.՝ Իրան) փառատոներին:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Էմին Լևոնի (05.08.1930, Մոսկվա–03.08.2000, Երևան), դիրիժոր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1975): Արամ ***Խաչատրյանի*** եղբորորդին: Ավարտել է ՄՊԿ դաշնամուրի (1954, Լ. Օբորինի դասարան) և դիրիժորության (1958, Ա. Վ. Գաուկի դասարան) բաժինները: 1957–59-ին՝ Մոսկվայի մարզի սիմֆ. նվագախմբի, 1962–66-ին՝ Մեծ թատրոնի, 1959-ից՝ ԽՍՀՄ պետկինոյի սիմֆ. նվագախմբի դիրիժոր (1966–76 և 1986–90-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր), 1986–88 և 1990–91-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1991-ից՝ Երևանի կամեր. նվագախմբի գլխ. դիրիժոր: 1972–74-ին

դասավանդել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. մանկավարժ. ինստ-ում, 1990-ից՝ ԵՊԿ-ում (դիրիժորություն): Համերգներով հանդես է եկել ԱՊՀ-ում և արտերկրում, բեմադրություններ է ղեկավարել Լեհաստանի, Չեխոսլովակիայի օպեր. թատրոններում:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Թուշիկ Կոստանդինի [10 (23).08. 1905, Բաքու–11.11.1978, Երևան], երգչուհի (քնար. սոպրանո): ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): Երաժշտ. նախն. կրթությունն ստացել է Բաքվում: Ավարտել է ԵՊԿ վոկալ բաժինը (1932): 1933–58-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Դերերգերից են՝ Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Զիլդա (Զ. Վերդիի «Ռիգոլետտո»), Մարֆա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ») ևն: Կատարող. արվ-ին բնորոշ էին արտիստականությունը, ձայնի լայն դիապազոնը և գեղեցիկ տեմբրը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Իրինա Վալենտինի (ծ. 22.01.1976, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (2001-ից): Ավարտել է Երևանի Ս. Ասլամազյանի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի և կոմպոզիցիայի (1989, դասատու՝ Ս. Բաբաթորոսյան) բաժինները, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության (1994, դասատուներ՝ Բ. Սակիլարի և Ա. Ղազարյան), ԵՊԿ կոմպոզիցիայի (1999, Է. Հովհաննիսյանի և Մ. Իսրայելյանի դասարաններ) բաժինները և ասպիրանտուրան (ղեկ.՝ Մ. Իսրայելյան): 1999-ից դասավանդում է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. քոլեջում:

Գրել է սոնատներ՝ ֆլեյտայի և դաշնամուրի, ջութակի և դաշնամուրի, կլառնետի և դաշնամուրի, «Ինտերլյուդիա»՝ կամեր. նվագախմբի, «Էլեգիա»՝ սիմֆ. նվագախմբի, «Նվիրում»՝ հոբոյի, դաշնամուրի և լար. նվագախմբի համար, սիմֆոնիա, լար. կվարտետ, դաշնամուր. պիեսներ, «Երաժշտություն սիմֆոնիկ նվագախմբի համար», երգեր և գործիք. ստեղծագործություններ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Կարեն Սուրենի (19. 09.1920, Մոսկվա–19.07.2011, Մոսկվա), կոմպոզիտոր: ՌԴ ժող. արտիստ (1981): Արամ *Խաչատրյանի* եղբորորդին: Ավարտել է ՄՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1949, Վ. Յ. Շեբալինի, Դ. Դ. Շոստակովիչ, Ն. Յ. Մյասկովսկու դասարաններ) և ասպիրանտուրան (1952): 1952-ից դասավանդել է նույն կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1981-ից):

Գրել է «Չիպոլինո» բալետը (բեմ.՝ 1975), «Պարզ աղջիկը» օպերետը (բեմ.՝ 1959), «Պատմության մի ակնթարթ» (1971, հրտ.՝ 1973) օրատորիան, սիմֆոնիաներ (1956, 1968), կանտատներ, սիմֆ. նախերգանքներ, սյուիտներ, ջութակի և դաշնամուրի (1947), թավջութակի և դաշնամուրի (1966) սոնատներ, կվարտետ (1969), թատրոնի և կինոյի երաժշտություն: Սոմալիի պետ. օրհներգի (1972) երաժշտության հեղինակն է:

Ա. Խաչատրյանի անվ. մրցանակաբաշխության ժյուրիի նախագահ (2005, Երևան):

Համաշխ. փառատոնի 2-րդ (1947, Պրահա), ԽՍՀՄ Պետ. (1976) մրց-ներ:



Կարեն Խաչատրյան

ԽԱՉԱՏՐՅԱՆ Միքայել Վահանի [16(29).12.1915, գ. Շահրիար–15.01.2004, Երևան], շեփորահար, մանկավարժ, հաս. գործիչ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): Պրոֆ. (1976): Ավարտել է ԵՊԿ (1938), ՄՊԿ (1947): 1938–39-ին՝ «Հայաստանի ջազ», 1947–50-ին՝ Հայֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբերում, 1950-ից՝ ԵՕԲԹ-ում (1970–73-ին՝ գեղ. ղեկ. և տնօրեն): 1947–2004-ին դասավանդել է ԵՊԿ-ում (դեկան՝ 1960–67-ին, պրոռեկտոր՝ 1967–70 և 1973–85-ին, միաժամանակ՝ ամբիոնի վարիչ՝ 1981–92-ին): Խ. հարստացրել է շեփորի երկացանկը. կատարել է փոխադրումներ և մշակումներ շեփորի ու դաշնամուրի համար:

Միքայել Խաչատրյան

Համամիութ. մրցույթների հանձնախմբերի անդամ (1963, Լենինգրադ, 1980, Տալլին), Այսրկովկաս. մրցույթի հանձնախմբի նախագահ (1985, Բաքու):

Գրկ. *Թովմասյան Վ., Կյանքի ուրվագիծ: Միքայել Խաչատրյան, Ե., 2004:*



Սերգեյ Խաչատրյանը ելույթի պահին

ԽԱՉԱՏՐՅԱՆ Սերգեյ Վլադիմիրի (ծ. 05.04.1985, Երևան), ջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (2012): Սովորել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում (դասատու՝ Պ. Հայկազյան): 1993-ից ապրում է Գերմանիայում. սովորել է Վյուրցբուրգի կոնսերվատորիայում (Գ. Ժիսլինի դասարան), 1996-ից՝ Կառլսռուհեի երաժշտ. բարձրագույն դպրոցում (Յ. Ռիսսինի դասարան): Մենահամերգնեերով և նվագախմբերի (Ֆրանսիայի ազգ., Ֆրանկֆուրտի ռադիոյի սիմֆ., Բեռլինի, Ռոտերդամի, Լոնդոնի, Հայաստանի ֆիլ-



Վարդուհի Ա. Խաչատրյանը երույթի պահին

Վարդուհի Կ. Խաչատրյան

Վիկտոր Խաչատրյան

հարմոնիկ, Փարիզի, Սիեթլի, Նյու Յորքի, Բալթիմորի սիմֆ., Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի ևն) հետ հանդես է եկել բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում: Համագործակցել է դիրիժորներ Գ. Դուդամելի, Կ. Մազուրի, Վ. Գերգիևի, Յ. Տեմիրկանովի, Դ. Հարդինգի և ուր. հետ: Յ. Բրամսի սոնատներով հանդես է եկել բազմաթիվ քաղաքներում, երկացանկում՝ նաև Դ. Դ. Շոստակովիչի, Յ. Սիբելիուսի, Ա. Խաչատրյանի, Վ. Զաքարյանի գործերից: Եղել է նաև եռյակի կազմում (Նարեկ Հախնազարյան, Լուսինե Խաչատրյան):

Ֆ. Կրեյսլերի անվ. մրցույթի 1-ին, Լ. Շպորի անվ. 1-ին (2000), Պ. Սարասատեի անվ. 2-րդ, Յ. Սիբելիուսի անվ. 1-ին (2002) ջութակահարների միջազգ. մրցույթների, «Սիբելիուսի ջութակի կոնցերտի լավագույն կատարող», Ինդիանապոլսի մրցույթի 2-րդ (2002), Եղիսաբեթ թագուհու անվ. երաժշտ. մրցույթի 1-ին (2005) մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե (2005), ՀՀ «Սովսես Խորենացի» (2008) մեդալներ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Վարդուհի Ալբերտի (ծ. 1971, Երևան), երգչուհի (դրամատիկ. մեցցո սոպրանո): Ավարտել է Երևանի Չայնի պահպանման երաժշտ. դպրոցը, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (դասատու՝ Լ. Քարամյան), ԵՊԿ և ասպիրանտուրայի վոկալ (Ա. Հարությունյանի, Գ. Գասպարյանի դասարաններ) բաժինները: 1996-ից՝ ԵՕՖԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Փառանձեմ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Մոխրոտ (Ջ. Ռոսսինիի «Առաքինության հաղթանակը»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ազուչենա, Ամներիս (Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Այդա»), Ադալջիզա (Վ. Բելլինի «Նորմա») ևն: Իտալիայում (որպես հրավիրյալ) Մ. Կաբալիեի հետ կատարել է 2 թագուհիների զուգերգը (Գ. Դոնիցետտիի «Մարի Ստյուարտ»): Ապրում է Շվեյցարիայում: 2011-ին Ժնևում հիմնադրել է «Ավետիս» ընկերակցությունը: Միջազգ. մրցույթների և փառատոների դափնեկիր է:

Մ. Կալլասի անվ. Գլխ. մրց.:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Վարդուհի (Ռոզա) Կարապետի (04.09.1927, Լենինական–23.08.2015, Երևան), երգչուհի, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (1982): Ավարտել է Լենինականի երաժշտ. ուսումնարանի (դասատու՝ Ա. Յանկովսկայա), Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի (1948), ԵՊԿ (1987) վոկալ բաժինները: Դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1970-ից): Ն. Գալանդերյանի անվ. բեմարվ-ի մանկավարժ. համալսարանի պատվավոր պրոֆ. (1993-ից): 1947–50-ին՝ Թ. Ալթունյանի ղեկավարած երգչախմբի, 1950-ից՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի, 1970–93-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մեներգչուհի: 1970-ին հիմնադրել է «Վարդենի» անսամբլը: Երգացանկում՝ Կոմիտասի, Ն. Գալանդերյանի, Ռ. Մելիքյանի, Խ. Ավետիսյանի, Ա. Սաթյանի, Ա. Սայիլյանի երգերից, նաև գուսան. երգեր, հայկ. ռոմանսներ: 1957-ից համերգներով շրջագայել է շուրջ 50 երկրում: Հանդես է եկել ժող. գործիքների անսամբլի, սիմֆ. և փող. նվագախմբերի հետ:

Կատարող. արվ-ին բնորոշ էին զգացմունքայնությունը, հուզականությունը, ստեղծագործության մատուցման բարձր վարպետությունը: Խ-ի մի շարք ձայնագրություններ («Կռունկ», «Մախմուր աղջիկ», «Իմ անուշ տավիղ», «Ղարաբաղի եղնիկ», «Ծիծեռնակ», «Լուռ գնաց») հայ կատարող. արվ-ի ոսկե ֆոնդում են: Թողարկել է 7 ձայնասկավառակ (2-ը՝ ոսկե ֆոնդում): Համարվել է հայ ռոմանսի թագուհի (ոսկե մեդալ՝ Խ-ի դիմանկարով):

«Ոսկե կոկորդ» տիտղոս (1974, Վիեննա), «Պատվավոր վարպետ» կոչում (2009), Մեծ մրց. (1957, 1983, Փարիզ):

Երկ. Ռոզան Վարդուհու մասին..., [Հուշեր], Ե., 2001: Միայն դու կարող ես գրել իմ մասին, [Հուշեր, երգեր], Ե., 2005:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Վիկտոր Հարությունի (ծ. 07.04.1946, Երևան–24.01.2012, Երևան), ջութակահար, դիրիժոր: Աննա ***Խաչատրյանի*** հայրը: ՀՀ վաստ. արտիստ (1985): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1972), դիրիժորության (1996) բաժինները: 1974–90-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր, 1990–91-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժորի պաշտոնակատար, 1982–87-ին՝ Հայհամերգի մենակատար, 1988–93-ին՝ իր հիմնադրած «Իկար» կամեր. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1988–2012-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1998-ից, ամբիոնի վարիչ՝ 2005-ից): 2005-ից, որպես մենակատար և դիրիժոր, հանդես է եկել կամեր. և սիմֆ. նվագախմբերի հետ ՀՀ-ում և արտերկրում: Հայ կոմպոզիտորների մի շարք երկերի առաջին կատարողն

էր: Միջազգ. մրցույթների, փառատոների հանձնախմբերի անդամ: Նրա կատարումներով թողարկվել են բազմաթիվ ձայնապնակներ և ձայնասկավառակներ: Ձայնագրություններ ունի Հայաստանի և ԽՍՀՄ հեռուստառադիոյի ոսկե ֆոնդում:

Գրկ. *Հովհաննիսյան Թ., Վիկտոր Խաչատրյանի արվեստը. Ջութակահարի և դիրիժորի ստեղծագործական ճանապարհը, Ե., 2004:*

ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՌՅԱԿ, հիմնադրվել է 1999-ին՝ «Արսիկա» անունով, 2008-ից՝ Խաչատրյանի անվ.: Կազմում՝ Արմինե Գրիգորյան (դաշնամուր), Կարեն Շահգալդյան (ջութակ), Կարեն Քոչարյան (թավջութակ): Անսամբլը համերգներով շրջագայել է Շվեյցարիայում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Բուլղարիայում, ՀՀ-ում, ՌԴ-ում: Մասնակցել է փառատոների՝ «Schubertiade», նաև Լոզանում, Կոստա Ռիկայում, Մեքսիկայում: Անսամբլը վարպետության դասեր է վարում ՀՀ մարզերի երաժշտ. դպրոցներում, համագործակցում է ժամանակակից կոմպոզիտորների հետ: Մի շարք հայ կոմպոզիտորներ գրել են ստեղծագործություններ եռյակի համար:

Խաչատրյանի անվան եռյակը

ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՌՅԱԿ, պետական, հիմնադրել է Զարեհ *Սահակյանցը* 1982-ին (ղեկ.՝ մինչև 1985-ը) Երևանում, 1985-ից՝ ղեկ. Արտաշես Մկրտչյան: Մասնակցել է բազմաթիվ միջազգ. փառատոների ԱՄՆ-ում, ԱՊՀ երկրներում, Եվրոպայում, Աֆրիկայում և այլուր: 2004-ին քառյակը վերակազմավորել է Վաչե Հովեյանը (գեղ. ղեկ., նաև ալտահար), կազմում են նաև Մարի Մարգարյանը (1-ին ջութակ), Հայկ Վարդանյանը (2-րդ ջութակ), Արամ Թալալյանը (թավջութակ): Մասնակցել է միջազգ. փառատոների («Սպիտակ գիշերներ»՝ Ս. Պետերբուրգ, «Ալ-բուստան»՝ Լիբանան, «Վերբիե»՝ Շվեյցարիա, ևն): Հայաստանում հանդես է գալիս փառատոներում և համերգներում (Ա. Տերտերյանի, Է. Հովհաննիսյանի, Է. Միրզոյանի, Կոմիտասի և ուր. ստեղծագործություններին նվիրված հորելյան. միջոցառումներ): Երկացանկում՝ հայ և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններից: Քառյակը վարպետության դասընթացներ է վարում ՀՀ-ում, ԼՂՀ-ում և ԱՊՀ երկրներում: Հյուրախաղերով շրջագայել է Մերձ. Արևելքում, Կիպրոսում, Իտալիայում և այլուր:

Խաչատրյանի անվան քառյակը

ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, Արամ Խաչատրյանի տուն-թանգարան, հիմնադրվել է 1978-ին Երևանում՝ Արամ *Խաչատրյանի* առանձնատանը, որը կոմպոզիտորին հատկացրել էր ՀԽՍՀ Կառավարությունը: Առանձնատան կազմում է հուշատունը, որին համալրած երկհարկանի շենքի 1-ին հարկում ֆոնդադարանն է, գրադարանը, աշխատասենյակները, 2-րդ հարկում՝ 10 ընդարձակ և լուսավոր ցուցասրահները՝ նախատեսված մշտ. ցուցադրության համար, ձայնադարանն ու համերգասրահը: Առաջին ցուցադրությունը՝ 1984-ին՝ կոմպոզիտորի ծննդյան 80-ամյակի տոնակատարության օրերին:



Խաչատրյանի տուն-թանգարանը

Տուն-թանգարանի հավաքածուն ընդգրկում է ֆիլմեր Ա. Խաչատրյանի կյանքի և գործունեության մասին, հեղինակ. համերգների հայտագրեր, բուկլետներ, ծրագրեր, բազմաթիվ պարգևներ, դիպլոմներ, շքանշաններ, տարբեր ժամանակներում տպագրված ստեղծագործութ-

Խաչատրյանի տուն-թանգարանի ցուցասրահներից

յուններ (կոմպոզիտորի ընծայագրերով), արժեքավոր փաստաթղթեր, հոդվածներ, լուսանկարներ, գրքեր, բալետների ձևավորումների էսքիզներ, գեղանկարչ. գործեր, անձն. իրեր և այլ ցուցանմուշներ: Բացառիկ արժեք ունեն 20 ժ տևողությամբ ձայնագրությունները (Ա. Խաչատրյանի ձայնով), նրա ձեռագիր նամակները, գործերի ձեռագրերը, որոնք ընգրկվել են (2013) ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» միջազգ. ցանկում:

Թանգարանում կատարում են ԳՀ աշխատանքներ, հավաքում կոմպոզիտորի մասին նոր փաստեր և տեղեկատվություն, հրատարակում գրքեր, նրա ստեղծագործությունների փոխադրումների ժող-ներ ևն, կազմակերպում գիտաժողովներ, փառատոներ, հուշ-երեկոներ, ժամանակավոր ցուցադրություններ, զեկուցումներ, դասախոսություններ, համերգներ, իրագործում կրթ. ծրագրեր ևն:

2008-ին բացվել է նոր մշտ. ցուցադրություն, որը պարբերաբար համալրվում է նոր ցուցանմուշներով: Տնօրեններ՝ Գոհար Հարությունյան (նաև հիմնադիր, 1978–2004), Արմինե Գրիգորյան (2004-ից):

ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Կարնեցի (Առաքելյան, 1666, Կարին–30.04.1740, Վենետիկ, թաղված է Սբ Խաչ եկեղեցում), հանրագիտակ, աստվածաբան, փիլիսոփա, մշակույթի գործիչ, հայկ. կլասիցիզմի տեսության հիմնադիրներից: Սովորել է նախ Կարինում, ապա 1682-ից ուսումը շարունակել է Հռոմի Ուրբանյան վարժարանում: Ավարտելուց հետո ստացել է վարդապետ. աստիճան և 1696-ին, որպես քարոզիչ, հաստատվել Կ. Պոլսում: Չի անդամակցել Մխիթարյան միաբանությանը, սակայն մասնակցել է նրա գործունեությանը, աջակցել Մխիթար Սեբաստացուն (նաև դասավանդել է քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն): Գրել է 10-ից ավելի աշխ-ներ, որոնց մեծ մասը ժամանակին դարձել է դասագիրք («Գիրք քերականութեան», 1696, «Ճարտասանութիւն», 1713, «Համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցն Սողոմոնի», 1700, «Համառօտական իմաստասիրութիւն», հ. 1–2, 1711, «Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն, 1733, ևն): Խ. Է. զբաղվել է նաև արվ-ի տեսակների վերլուծությամբ. դրանք բաժանել է 2 խմբի՝ «ազատական», որը ներառում է բուն արվ-ներն ու գիտությունները, և «ծառայական», որն ընդգրկում է արհեստներն ու ճարտարապետությունը: Երաժշտ. գեղագիտության մեջ անդրադարձել է եվրոպ. ինչյուն. համակարգի շարադրմանը, գծային նոտագրությանն ու ձայների օկտավային դրությանը, որտեղից էլ հետևում է, որ հայկ. շրջանակներում եվրոպ. նոտագրության սկզբունքներին ծանոթ են եղել դեռևս XVIII դ-ի սկզբին:

Գրկ. *Թահմիզյան Ն., Խաչատուր Էրզրումցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսաբան, ԼՀԳ, 1966, № 11: Թադևոսյան Մ., Հայկական կլասիցիզմի տեսություն, Ե., 1977: Լաճիկյան Լ., Կլասիցիզմի հիմնական սկզբունքների արտացոլումը Խաչատուր Էրզրումեցու գեղագիտության մեջ, ԲԵՀ, 1993, №1:*

«Խաչատուր վարդապետ Էրզրումեցի», մանրանկար (1715, Ժող., Մշտնդ., ձեռ. № 2106)

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԱՑԻ, Հաղարծնեցի, XII դ-ի վերջի և XIII դ-ի սկզբի երաժիշտ, բանաստեղծ, գիտնական: XII դ-ի վերջին քառորդին և XIII դ-ի սկզբին եղել է Հաղարծնի վանահայրը: Գործել է Զաքարյանների օրոք՝ տնտ., քաղ. և մշակութ. վերելքի շրջանում, նպաստել վանքի հոգևոր բարենորոգմանը, բարձրացրել պաշտոներգության կատարման մակարդակը:

Խ. Տ-ու գործունեությունը նշանավորվել է միջնադար. մասնագիտացված երաժշտության մի շարք ոլորտներում: Վարդան Արևելցու և Հովհաննես Երզնկացի Պլուզի հետ կիլիկյան հայկ. երաժշտ. մշակույթի հարուստ ձեռքբերումները տարածել և արմատավորել է Հայաստանի շրջաններում: Որպես խազագետ-գիտնական՝ հենվել է Կիլիկիայում խմբագրված երգարանների վրա, զարգացրել խազա-

գրության արվ–ը հս–արլ. շրջաններում, մասնավորապես՝ Հաղպատում: Ստեղծել է զարգացած մեղեդիական կառուցվածքով գանձեր և տաղատիպ շարականներ:

Պահպանվել է Հայոց Պատարագի մեջ անցած նրա «Խորհուրդ խորին» ծանր ու տոն. շարականը («Յոյժ ծանր» նշումով), որը հայ երգաստեղծության բարձրարվ. նմուշներից է: Խ. Տ. այն երգել է XIII դ–ի սկզբներին՝ Զաքարե Բ Մեծ իշխանի հրամանով

Հատված Խաչատուր Տարոնացու «Խորհուրդ խորին» շարականից (ներդաշնակումը՝ Սիսակ Եկմալյանի)

մատուցված բացօթյա Պատարագի ժամանակ (Լոռու մերձակայքում). հայտնի է նաև որպես «Շարական զգեստավորման քահանայի», կատարում է Պատարագի նախերգի դեր և վիպ. հզոր շնչով, հուզականությամբ, զարդոլորումներով կրում է դարաշրջանին հատուկ մեղեդիական բարձր ճաշակի կնիքը: Առանձնանում է նաև երկ–եռամաս հազվագյուտ կառուցվածքով:

Գրկ. *Շամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: Թահմիզյան Ն., Խաչատուր Տարոնացին և Հայոց Պատարագի նախերգը, «Էջմիածին», 1975, № 11: Նույնի, Հաղարծնի վանքը և Խաչատուր Տարոնացի երաժիշտ վարդապետը, «Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու», 1976, № 2: Նույնի, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985:*

ԽԱՉԻԿՅԱՆ Եվգենյա Սերգեյի [03 (16).02.1915, Թիֆլիս–17.09.1991, Երևան], երգչուհի (քնարադրամատիկ. սոպրանո): ՀՀ ժող. արտիստ (1961): Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիան (1936): 1938–68–ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Ձայնն առանձնացել է վոկալ հարուստ հնարավորություններով, դրամատիզմով, հմայիչ պարզությամբ և մեղմ քնարականությամբ: Լավագույն դերերգերից են՝ Նատաշա (Ա. Ս. Դարգոմիժսկու «Ջրահարսը»), Արևիկ (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Չիո-Չիո սան, Տոսկա (Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան», «Տոսկա»), Շուշան (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Յարոսլավնա (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր»), Սաշա (Է. Ֆ. Նապրավնիկի «Դուբրովսկի»), Թամար (Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դև») ևն: Կատարել է նաև երգեր ու ռոմանսներ:

Երկար տարիներ դասավանդել է ԵՊԿ–ում:

ԽԱՐԱՋԱՆՅԱՆ Իսպիր Հովհաննեսի [25.09.1908, գ. Խաստուր (Բագրևանդի գավառ)–12.03.1997, Կիև], դիրիժոր: Բաֆֆի ***Խարաջանյանի*** հայրը: ՀՀ վաստ. արտիստ (1956): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի դիրիժորության բաժինը (1938) և ասպիրանտուրան (1941): 1941–46–ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի, 1946–60–ին՝ ԵՕԲԹ, 1960–82–ին՝ ԵԵԿԹ դիրիժոր: Ղեկավարել է Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետը, «Եվգենի Օնեգին», Ա. Կ. Գլազունովի «Ռայմոնդա», Շ. Գունոյի «Ֆաուստ», Ա. Տիգրանյանի «Անուշ» և այլ օպերաներ, նաև Ա. Այվազյանի «Սերը աստղերի տակ», Վ. Տիգրանյանի «Շիրակ, իմ սեր», Ս. Ջրբաշյանի «Երազիկ» և այլ օպերետներ: Խ–ի ղեկավարությամբ Երևանում առաջին անգամ կատարվել են Գ. Եղիազարյանի «Հայաստան», Հ. Ստեփանյանի 3–րդ, Պ. Ի. Չայկովսկու «Մանֆրեդ» սիմֆոնիաները, Ռ. Վագների «Նյուրնբերգյան մայստերզինգերներ» և «Տանհոյզեր» օպերաների նախերգանքները և այլ գործեր: Խ–ի արվ–ն աչքի է ընկել երկերի ոճային ճշգրիտ մեկնաբանմամբ, քնար. հուզականությամբ:

ԽԱՐԱՋԱՆՅԱՆ Բաֆֆի Իսպիրի (ծ. 27.02.1944, Երևան), դաշնակահար: Իսպիր ***Խարաջանյանի*** որդին: Արվեստագիտ. դ–ր (1994): Լատվիայի վաստ. արտիստ (1972): Լատվիայի ԿՄ անդամ (1975–ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1962, դասատու՝ Է. Ոսկանյան), Լենինգրադի կոնսերվատորիայի դաշնամուրի (1968, Պ. Ա. Սերեբրյակովի դասարան) բաժինները, ասպիրանտուրան (1973, ղեկ.՝ Լ. Բարենբոյմ, կատարող. արվ–ի պատմություն և տեսություն): 1970–ից դասավանդում է Լատվիայի Յ. Վիտոլի անվ. կոնսերվատորիայում (այժմ՝ Երաժշտ.

Եվգենյա Խաչիկյան

Ե. Խաչիկյանը Թամարի դերում (Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դև»)

Իսպիր Խարաջանյան

ակադ., 1978–ից՝ դոցենտ, 2002–13-ին՝ պրոֆ.): Նրա սաները Փարիզում, Տոկիոյում, Ս. Պետերբուրգում, Չեխիայում, Լեհաստանում, Լիտվայում և այլուր տեղի ունեցած միջազգ. մրցույթների դափնեկիր են:

Զբաղվել է նաև համերգ. գործունեությամբ: 1968–2009-ին լատիշ դաշնակահարուհի Ն. Նովիկի հետ («Riga Pioano duo»-ում) 1000-ից ավելի մենահամերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Իտալիայում: Դուետը ԽՍՀՄ-ում առաջիններից է կատարել սփյուռքահայ կոմպոզիտորներ Ա. Հովհաննեսի, Լ. Ճգնավորյանի և ուր. ստեղծագործություններից, 2008-ին հանդես եկել Երևանում: Հատուկ «Riga Pioano duo»-ի համար գործեր են գրել մի շարք կոմպոզիտորներ, այդ թվում՝ Լ. Աստվածատրյանը, Ա. Հարությունյանը, Ռ. Դավթյանը, Մ. Կոկժաևը:



Րաֆֆի Խարաջանյան

2010-ից Խ. ելույթներ է ունեցել որպես մենակատար և դաշնամուր. դուետներով՝ իր սաների և դաշնակահարուհի Արմինե Գրիգորյանի հետ: Դաշնամուր. դուետի համար կատարել է բազմաթիվ փոխադրումներ, որոնց մի մասը հրատարակվել է և ձայնագրվել:

Հոդվածները վերաբերում են կատարող. արվ-ին, կոմպոզիտոր. ստեղծագործությանը, նաև էթնոմշակույթին ևն:

Միջազգ. մրցույթների («Նորա Նովիկ», նաև Տոկիո, Ռիգա, Յուրմալա, Ս. Պետերբուրգ, Երևան, Գյումրի, Վոլգոգրադ, Կաունաս, Կլայպեդա ևն) հանձնախմբերի նախագահ և անդամ է:

«Երեք աստղ» շքանշան (Լատվիա, 2002), ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» մեդալ (2014):

Երկ. *Фортепианное творчество Арама Хачатуряна, Е., 1973; Пьесы латышских композиторов: Для фортепиано, Л., 1980.*

ԽԱՐՏԱԼՅԱՆ Սարգիս (1940–1983), ջութակահար: Ավարտել է Բեյրութի (Օ. Սյուրմելյանի, Լ. Աուերի դասարաններ), Փարիզի և Կոպենհագենի երաժշտ. ակադ-ները: 1961-ին տեղափոխվել է ԱՄՆ. կատարելագործվել է Իվան Գալամյանի դպրոցում և դարձել Սիեթլի սիմֆ. նվագախմբի մենակատարն ու կոնցերտմայստերը: Դասավանդել է «Քորնիշ» երաժշտ. քոլեջում: Մենահամերգներով և լավագույն նվագախմբերի (նաև Լոս Անջելեսի Հայ սիմֆ. երաժշտության մի-ության նվագախմբի) հետ հանդես է եկել Եվրոպայի և Մերձ. Արևելքի բազմաթիվ քաղաքներում. երկացանկում՝ Ա. Խաչատրյանի, Կ. Սեն-Սանսի, Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի և ուր. գործերից:

ԽԻՍՏ ՈՃ, խիստ ոճի գրելաձևի պոլիֆոնիա (գերմ.՝ klassische Vokalpoliphonie, լատ.՝ stylus a cappella ecclesiasticus), 1. պատմ. և ոճագեղ. հասկացություն: Ձևավորվել է XV–XVI դդ-ում, հիմքում՝ վոկալ երաժշտության ինտոնացիոն հնարավորությունները, դիատոնիկ ձայնակարգերը, պարզ հավասարակշռված մետրն ու ռիթմը, դիատոնիկից բխող ինտերվալ. մեղեդային քայլերը, կոնսոնանսության առաջնակարգ դերը, դիսոնանսների կախվածությունը կոնսոնանսներից:

Խ. ո-ի երաժշտությանը բնորոշ են դիատոնիկ եկեղեց. ձայնակարգերը, խուսափումը հարմոնիկ-ֆունկցիոնալ հարաբերություններից, չնախապատրաստված դիսոնանսներից ու խրոմատիզմից, համաչափ (հավասար տևողություններով) և սահուն ընթացքը, ռիթմիկ և ինտոնցիոն առումով պարզ մեղեդին, ընդհանուր հնչողականության հավասարակշռվածությունն ու բարեհնչունությունը: Այդ հատկանիշներն ապահովելու համար մշակվել են մի շարք կանոններ, որոնք խստորեն պահպանել են Խ. ո-ի ներկայացուցիչ կոմպոզիտորները: Խ. ո-ի կանոնները չափավորել են երաժշտի ստեղծագործ. երևակայությունը, մինչ նա ձեռք կբերեր բազմաձայնության մասին անհրաժեշտ գիտելիքներ, որից հետո դյուրությամբ և գիտակցված կտիրապետեր ազատ ոճին:

XVII դ-ից Խ. ո-ի առաջընթացը պայմանավորվել է գործիք. և վոկալ-գործիք. երաժշտության զարգացումով. կարևոր նշանակություն են ստացել ձայնահարմոնիկ ֆունկցիոնալ սկզբունքի աստիճանականացումը, մաժոր և մինոր կենտրոնացված ձայնակարգերի դրսևորումը: Այդ ոճի նշանավոր ներկայացուցիչներից են Պալեստրինան, Օ. դի Լասսոն և ուր.: 2. Պոլիֆոնիայի (կոնտրապունկտի) ուս. դասընթացի 1-ին բաժինը:

ԽՄԲԱՎԱՐ, խորմայստեր (< իտալ. coro – երգչախումբ և գերմ.՝ Meister –վարպետ, ղեկավար), երգչախմբի ղեկ., որը սեփական գեղ. ըմբռնումով երգչախմբին ուսուցանում և նրա կատարման միջոցով մեկնաբանում է խմբերգ. ստեղծագոր-

ծությունները՝ ապահովելով նրանց հնչման անսամբլ. ներդաշնակությունն ու տեխ. կատարելությունը: Խ. պետք է օժտված լինի երաժշտատես. ու կատարող. հմտությամբ և գեղ. խումբ կազմավորելու ունակությամբ:

ԽՄԲԵՐԳ, միաձայն, առավելապես՝ բազմաձայն ստեղծագործություն երգչախմբի համար: Օգտագործելով տարբեր կազմերի երգչախմբերի կատարող. հարուստ միջոցները՝ կոմպոզիտորները Խ-երում հասել են վառ արտահայտչության: Հայ երաժշտության մեջ Խ-ի ժանրի զարգացումը պայմանավորվել է Տ. Չուխաճյանի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Ք. Կարա-Մուրզայի, Բ. Կանաչյանի և ուր. ստեղծագործություններով:

ԽՄԲԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, խմբերգ. արվ., վոկալ երաժշտության կոլեկտիվ կատարում: Տարբերում են միաձայն (ունիսոն) և բազմաձայն (տես *Երգչախումբ*), նվագակցությամբ և առանց դրա (ա կապելլա) Խ-ները: Երաժշտ. կատարման հնագույն ձևերից է. ծագել է հաս-յան զարգացման վաղ շրջաններում, աշխ-ի ընթացքում, ապա դարձել է ժող. խաղերի, պարերի ու ծեսերի, նաև տաճար. արարողությունների ու պալատ. տոնախմբությունների անբաժան մաս: Տարածվել է դեռևս Հին Եգիպտոսում, Բաբելոնում, Հնդկաստանում, Պաղեստինում, առավելապես՝ Հին Հունաստանում: Կարևոր տեղ է գրավել նաև դրամայում (իտալ.՝ coro – երգչախումբ, < հուն. xopos. սկզբնապես նշանակել է երգով կատարվող պաշտամունք. շուրջպար, երգեցողությամբ պարողների խումբ և երգի-պարի հրապարակ):

Խ-յան անտիկ ձևերը մուտք են գործել քրիստ. ժամերգություն, ազդել Հռոմի և Բյուզանդիայի եկեղեց. երաժշտության ձևավորման վրա: Երգչախմբ. մոնոդիկ կատարումը (պահվող ձայնով) նշանակալիորեն զարգացել է նաև քրիստ. Արևելքի երկրներում (նաև Հայաստանում և Վրաստանում) և սլավոն. ժողովուրդների երաժշտ. մշակույթում:

Խ-յան բնորոշ տեսակը բազմաձայն երգեցողությունն է: Որոշ ժողովուրդների (օր.՝ վրացիների) ժող. երաժշտության մեջ այն գոյություն ունի բնականից, կրում է ազգ. հատկանիշներ (օր.՝ ենթաձայն. պոլիֆոնիան՝ ռուս. ժող. խմբերգում): Բազմաձայն Խ. Արմ. Եվրոպայում զարգացել է պոլիֆոնիայի երևան գալով (XI դ.) և երկար ժամանակ եղել է եկեղեցու մենաշնորհը:

Բազմաձայն երգեցողության նշանավոր կենտրոններ էին Հռոմի, Միլանի, Փարիզի, Ռուանի, Էյխենաուի, Սեն Հալլի տաճարներն ու վանքերը: XIV–XVI դդ-ում պոլիֆոնիստների հոգևոր և աշխարհիկ ստեղծագործության բուռն զարգացումը (Ժ. Դեպրե, Պալեստրինա, Լասսո) պայմանավորել է Խ-յան մեջ նոր հնարքների ներդրումը, որն առաջացրել է ձայնախմբերի ֆունկցիոնալ հստակ տարբերակում: XVII դ-ից վոկալ-գործիք. խոշոր ժանրերի ծաղկումը (Հ. Շյուտց, Յ. Ս. Բախ, Գ. Հենդել, Յ. Հայդն, Վ. Ա. Մոցարտ, Լ. վան Բեթհովեն) հանգեցրել է խմբերգ. տեխնիկայի աննախընթաց կատարելագործման, դիապազոնների ընդարձակման, հուզ-արտահայտչական հնարավորությունների ընդլայնման:

Խ. զարգացել ու մեծ տեղ է գրավել նաև օպերայում՝ հարստանալով մանավորապես ասերգի հնարքներով (Ժ-Բ. Լյուլլի, Ք. Գլյուկ, հետագայում՝ Ձ. Մեյերբեր, Ձ. Ռոսսինի, Ջ. Վերդի, Ռ. Վագներ, Մ. Պ. Մուսորգսկի, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով և ուր.): Ֆրանս. հեղափոխության շրջանում Խ. նոր, քաղաքաց. ուղղվածություն է ստացել (1794-ին Փարիզում երևան է եկել 2400 մասնակիցներով երգչախումբ): XIX դ-ում Արմ. Եվրոպայում ու Ռուսաստանում ստեղծվել են զանգված. խմբերգ. ընկերություններ: Նորագույն ժամանակներում Խ. նշանակալիորեն հարստացել է ժող. արվ-ների հնարքներով: Կոմպոզիտորների խմբերգ. երկերում այն առաջադիմել է հոգերան. արտահայտության խորացման, ուժային և տեմբր. նոր հնարավորությունների բացահայտմամբ:

Հայաստանում Խ. դարեր ի վեր եղել է միաձայն: Հայ խմբերգ. արվ-ն անցել է զարգացման երկար ու հետաքրքիր ճանապարհ: Խմբով (ունիսոն) երգելու մշակույթը հայ ժողովրդի մեջ տարածվել է վաղ ժամանակներից: Հայ երաժշտարվ-ի խոշոր գործիչներն իրենց գործունեության կարևոր ու անբաժան մասն են համարել բազմաձայն երգչախմբերի կազմակերպումը, խմբերգերի կատարումը և խմբերգ. երաժշտության տարածումը ժողովրդի մեջ, նաև ազգ. բազմաձայն երկացանկի ձևավորումը: XIX դ-ի 2-րդ կեսերից մինչև 1920-ական թթ. այդ երգչախմբերը հիմնականում սիրողական էին, քանի որ Հայաստանում չկային երաժիշտ կադրեր

Կոմիտասի «Խմբերգերի ընտրանի» գրքի (2001) կազմը

Լևոն Խոջա-Էյնաթով

«Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ Գ թագավոր և Խոսրովիդուխտ», մանրանկար (1596, Հայամավուրք, Սիրնդ., ձեռ. № 4681)

Եվգենյա Խոսրովյան

պատրաստող կրթօջախներ: Խմբերգ. երաժշտության առաջին ստեղծողներից էր Տ. Չուխաճյանը, որի խմբերգ. երաժշտությունը կարելի է բաժանել 2 մասի. «Օն մեր նախնի» խմբերգը, Հայոց Պատարագի երգերից մի քանիսի խմբերգ. մշակումները եռաձայն երգչախմբի համար՝ երգեհոնի նվագակցությամբ (Քրիստոս ի մեր մէջ, Հոգի Աստուծոյ, Հայր Մեր) և «Արշակ Երկրորդի» խմբերգ. տեսարանները: Ք. Կարա-Մուրզան ստեղծել է հայ իրականության մեջ առաջին քառաձայն երգչախումբը (առաջին համերգը՝ Թիֆլիսում 1885-ին): Համերգ. գործունեության ընթացքում 50 քաղաքներում կազմակերպել է շուրջ 90 երգեցիկ խմբեր, հանդես եկել 250-ից ավելի համերգներով: Մ. Եկմալյանը 1891-ին հրավիրվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց՝ որպես երաժշտության դասատու և երգեցիկ խմբի ղեկ.: Նրա պահանջով երաժշտության դասերը բոլոր դասարաններում դարձել են պարտադիր (շաբաթ. 2 ժամ), հիմնովին վերակազմել ու մեծացրել է տղաների երգեցիկ խումբն ու պարապմունքների ժամերը հասցրել շաբաթ. 6 ժամի: Դպրոցի քառաձայն երգեցիկ խումբն արագորեն հասել է պրոֆեսիոնալ բարձր մակարդակի, համբավը տարածվել է Այսրկովկասում ու նրա սահմաններից դուրս: Նրա ջանքերով բազմաձայնությունը մուտք է գործել ՀԱԵ («Պատարագ»):

Հայ խմբերգ. երաժշտության պատմության մեջ բացառիկ դեր ունի Կոմիտասը: 1899-ին Բեռլինի կոնսերվատորիան ավարտելուց հետո վերադարձել է Էջմիածին, ստանձնել Գևորգյան ճեմարանի երաժշտության ուսուցչի և երգչախմբի ղեկ-ի պարտականությունները: 1910-ին Կոմիտասը տեղափոխվել է Կ. Պոլիս. ստեղծել է 300-հոգանոց «Գուսան» երգչախումբը, որտեղ, որպես ազգ. երաժշտարվ-ի նվիրյալներ, ձևավորվել են նրա «հինգ սաները» (Բ. Կանաչյան, Վ. Սրվանձտյան, Վ. Սարգսյան, Մ. Թումաճան, Հ. Սեմերճյան), որոնք հետագայում շարունակել են իրենց ուսուցչի գործը: Կոմիտասի ստեղծագործ. ժառանգության կարևոր մասն են խմբերգերը և տղամարդկանց երգչախմբի համար բազմաձայնած «Պատարագը»:

Այդ շրջանում կարևոր դեր ունեին նաև սիրող. երգչախմբերը: Կոմպոզիտորներ Գ. Սյունին, Ե. Բաղդասարյանը, Ա. Մաիյանը, Դ. Ղազարյանը, Ս. Դեմուրյանը և ուր. քաղաքներում կազմակերպել են երգչախմբեր և հանդես եկել համերգներով: Խ-յան զարգացմանը նպաստել են նաև Ռ. Մելիքյանը, Ս. Մելիքյանը, Ա. Տեր-Հովհաննիսյանը, Թ. Ալթունյանը, Կ. Զաքարյանը, Մ. Մազմանյանը, Հ. Չեքիջյանը, Է. Ծատուրյանը, Ռ. Պետրոսյանը և ուր.: 1957-ից Երևանում գործում է Հայաստանի երգչախմբ. ընկերությունը:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԽՈՋԱ-ԷՅՆԱԹՈՎ (Խոջա-Էյնաթյան) Լևոն Ալեքսանդրի [10 (23).03.1904, Թիֆլիս–07.10.1954, Լենինգրադ (այժմ՝ Ս. Պետերբուրգ)], կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): 1926–27-ին Երևանում կոմպոզիցիայի դասեր է առել Ալեքսանդր *Սպենդիարյանից*: Ավարտել է Լենինգրադի կենտր. երաժշտ. ուսումնարանը (1932, դասատու՝ Պ. Բ. Ռյազանով): Եղել է Լենինգրադի դրամատիկ. թատրոնի դիրիժոր և երաժշտ. մասի ղեկ.: Գրել է «Շլյուզ» (1931), «Խռովություն» (բեմ.՝ 1938), «Ընտանիք» (բեմ.՝ 1940), «Երեք հանդիպում» (1943), «Նամուս» (բեմ.՝ 1945, ԵՕԲԹ) օպերաները, «Սիրելիս» օպերետը (1938, Մ. Յ. Ֆերկել-մանի հետ), պոեմ-կանտատ (1953), սիմֆոնիա (1954), «Էլեգիական պոեմը» (1953), սյուիտներ, նախերգանքներ, սիմֆ. պարեր (3 տետր, 1951–52), դաշնամուրի և նվագախմբի 3 կոնցերտ (1946–48), ֆանտազիա (1954), դաշնամուր. տրիո (Ա. Սպենդիարյանի հիշատակին, 1943), երգեր, ռոմանսներ, շուրջ 50 թատեր. ներկայացումների երաժշտություն ևն: Գործիքավորել է Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» և Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերաները:

Խ-Է-ի ստեղծագործությանը բնորոշ են ազգ. երաժշտության յուրօրինակ երանգավորումը, մեղեդիական ձայնակարգ. և ռիթմիկ հարստությունը, պարտիտուրները հագեցած են հյութեղ և թարմ գույներով:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

Գրկ. *Կարագյուլյան Է., Խոջա-Էյնաթյան: Կոմպոզիտորի կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1975: Друскин М., Л. А. Ходжа-Эйнатов, Л., 1956; Тигранов Г., Армянский музыкальный театр, т. 2, Е., 1960, с. 129–145.*

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ (ծ. և մ. թթ. անհտ), VIII դ-ի երաժիշտ: Ըստ ավանդության՝ եղբոր՝ Գողթնի իշխան Վահան Գողթնեցու նահատակության (737) կապակցությամբ հորինել է «Զարմանալի է ինձ» գովքը, որը Հայ եկեղեցին կանոնացրել է և ներմուծել Շարականոց: Գովքի բարձր արժանիքներն

ու մի շարք առանձնահատկություններ կրում են ժամանակի աշխարհիկ երգարվ-ի ազդեցությունը: Ի տարբերություն նախորդ շրջանի սաղմոսատիպ փոքրածավալ կցուրդների՝ Խ-ի գովքը հայ հոգևոր երգարվ-ում առաջին օրինակներից է, որն ունի ինքնատիպ երաժշտ. ձև, մեղեդու ազատ և ծավալուն զարգացում:

ԽՈՍՐՈՎՅԱՆ Եվգենյա Արկադիի (Արշակի) (1900, Թիֆլիս–1963, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1957): Ավարտել է Պետրոգրադի կոնսերվատորիան (1918, Մ. Ն. Բարինովայի դասարան): ՀԽՍՀ ռադիոկոմիտեի առաջին կոնցերտմայստերը (1927-ից): Հանդես է եկել նաև որպես մենակատար, նվագակցել Հ. Դանիելյանին, Ա. Բաբայանին, Լ. Իսեցկուն, Ա. Այվազյանին, Դ. Լեզկերին և ուր.: 1923–44-ին դասավանդել է ԵՊԿ-ում (նաև հիմնադիրներից է, դոցենտ՝ 1940-ից): Սաներից են Ա. Բաբաջանյանը, Ղ. Սարյանը, Հ. Փարաջանյանը, Յ. Զարգարյանը և ուր.:

ԽՐՈՄԱՏԻԶՄ (հուն.՝ χρώμα – գույն, երանգ), ձայնակարգի հիմնական հնչյունների կիսատոների իջեցումը կամ բարձրացումը, որի դեպքում հնչյունների հիմնական անվանումները մնում են անփոփոխ:

ԽՈՒԲՈՎ Գեորգի Մկրտչի [26.04 (09.05).1902, Կարս–05.11.1981, Մոսկվա], երաժշտագետ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1969): Ավարտել է ՄՊԿ (1930): 1952–57-ին՝ «Խորհրդային երաժշտություն» («Советская музыка») ամսագրի խմբ. և ԽՍՀՄ ԿՄ քարտուղար: Իր գործունեությամբ նշանակալիորեն նպաստել է խորհրդ. շրջանի երաժշտարվ-ի զարգացմանը:

Հեղինակ է «Ա. Պ. Բորոդին» (ռուս., 1933), «Սեբաստիան Բախ» (ռուս., 1936), «Երաժշտության և երաժիշտների մասին» (1959), «Արամ Խաչատրյան» (ռուս., 1962, 1967, հայ., 1977), «Մ. Պ. Մուսորգսկի» (1969) մենագրությունների և հոդվածների:

Երկ. *Музыкальная публицистика разных лет: Статьи, очерки, рецензии, М., 1976.*

ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ Կարինե Էմանուելի (07.07.1929, Թբիլիսի–17.11.2015, Երևան), երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Արվեստագիտ. թեկնածու (1970): ՀԿՄ անդամ (1968, 1975–81-ին՝ երաժշտ. բաժանմունքի նախագահ, 1979–98-ին՝ վարչության անդամ): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը, ԵՊԿ տես.-կոմպոզիտոր. ֆակ-ը (1952, Գ. Տիգրանովի դասարան), 1953-ից սովորել է Լենինգրադի կոնսերվատորիայում, ապա՝ ՀՀ ԳԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրայում (ղեկ.՝ Ք. Քուշնարյան): 1960-ից աշխատել է ՀՀ ԳԱ արվ-ի ինստ-ում (1984–2005-ին՝ ժող. երաժշտության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, գիտ. խորհրդի անդամ՝ 1985-ից): Կազմակերպել է 30 ազգագր. գիտարշավ Հայաստանի տարբեր շրջաններում: 100-ից ավելի հոդվածները (հայ. և ռուս.) վերաբերում են հայ կոմպոզիտորների ստեղծագործությանը, հայ երաժշտության պատմությանն ու տեսությանը: Եղել է «Հայ ավանդական երաժշտություն» բազմահատոր մատենաշարի հիմնադիր-գլխ. խմբ-ը: Մասնակցել է հանրապետ. և միջազգ. գիտաժողովների: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ավանդ. երաժշտության միջազգ. խորհրդի անդամ:

Երկ. *Գրիգոր Եղիազարյան, Ե., 1966: Армянская музыка на пути от монодии к многоголосию, Е.,1977; Армянская музыка в аспекте сравнительного музыкознания, Е., 2011.*

Գրկ. *Կարինե Էմանուելի Խուդաբաշյան (Հայ նշանավոր կին գիտնականներ. Նյութեր կենսագրության, №1), Ե., 1999:*

ԽՈՒԴՈՅԱՆ Ադամ Գեղամի (21.02.1921, Երևան–01.04.2000, Երևան, թաղված է Գեղանիստ գ-ում), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): Սովորել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցում, Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1945, Վ. Տալյանի դասարան), կատարելագործվել Մոսկվայի Հայ մշակույթի տանը կից ստուդիայում (1948, դասատու՝ Հ. Լիտինսկի): 1969–71-ին՝ ՀԿՄ պատասխանատու քարտուղար:

Գրել է հիմնականում սիմֆ. («Սևան», 1951, «Արա լեռ», 1994) և կամեր. (սիմֆ. պատկերներ, թավջութակի 3 կոնցերտ, ջութակի, թավջութակի մենանվագ սոնատներ, լար. կվարտետներ, պիեսներ՝ ջութակի, դաշնամուրի համար ևն) գործեր, նաև բալլադ՝ ձայնի և սիմֆ. նվագախմբի (Հ. Հովհաննիսյանի խոսքերով), ռոմանսների շարք՝ ձայնի և դաշնամուրի (Վ. Տերյանի խոսքերով) համար, «Պատանեկություն» սիմֆ. նախերգանքը, ռոմանսների շարք (Ե. Չարենցի խոսքերով), թատեր. երաժշտություն և այլ երկեր: Նրա գործերը հնչել են Ֆինլանդիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում և այլուր:

Երկ. *Воспоминания, Е., 2001.*

Գեորգի Խուբովի «Արամ Խաչատրյան» գրքի (1977) շապիկը

Կարինե Խուդաբաշյանի «Հայ երաժշտությունը համեմատական երաժշտագիտության տեսանկյունից» գրքի (ռուս., 2011) շապիկը

Ադամ Խուդոյան

Ծ

Էմմա Ծատուրյան

ԾԱՏՈՒՐՅԱՆ Էմմա Աղաբեկի (28.10.1920, Բաքու–23.12.1996, Կիև, թաղված է Երևանում), խմբավար, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967), ՀԽՍՀ ժող. արտիստ (1982): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1945, Ա. Տեր-Հովհաննիսյանի դասարան), ԵՊԿ (1951, Թ. Ալթունյանի դասարան) խմբավար. բաժինները: 1949–59-ին եղել է Հայաստանի պետ. երգչախմբի դիրիժոր-խմբավար, 1977–87, 1990–91-ին՝ Թ. Ալթունյանի անվ. հայկ. ժող. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ.: Կազմել է մանկ. խմբերգերի ժող-ներ (1964, 1968), նաև «Սովետահայ կոմպոզիտորների խմբերգերի ժողովածու»-ն (1974), «Հայկական խմբերգեր» (1978), «Հայ կոմպոզիտորների վոկալ

Է. Ծատուրյանը Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի հետ

ստեղծագործություններ» (1978, ժող.), հեղինակ է «Հայաստանի երգչախմբային ընկերության 25 տարին» գիրք-ալբոմի (1988), երաժշտ. հոդվածների (տպագրվել են հանրապետ. և միութ. մամուլում): 1958–82-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում (պրոֆ.՝ 1982-ից): Հայաստանի երգչախմբ. ընկերության հիմնադիրներից (1958-ից՝ քարտուղար, 1968-ից՝ նաև Ա. Տեր-Հովհաննիսյանի անվ. երգչախմբի գեղ. ղեկ.), 1975–87-ին՝ նախագահ, 1987-ից՝ Հայաստանի երաժշտ. ընկերության նախագահ: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, արտերկրում: Նրա ղեկավարությամբ առաջին անգամ բեմում հնչել է (1988-ի Սպիտակի երկրաշարժի զոհերին նվիրված) Մակար Եկմալյանի «Պատարագը»:

Ծնծղաներ

ՀԽՍՀ Պետ. (1985), Հոգևոր երաժշտության միջազգ. փառատոնի 1-ին (1994, Լեհաստան) մրց-ներ:

Գրկ. *Գրիգորյան Ք., Էմմա Ծատուրյան, Ե., 1987:*

«ԾԻԾԵՌՆԱԿ», «Երգ պանդուխտ պատանեկի», 1854-ին Դորպատում հորինել է Գևորգ Դոդոխյանը: Եղանակն առաջին անգամ տպագրվել է Ռ. Պատկանյանի «Ազգային երգարան հայոց»-ում (1856), որը, հեղինակի տվյալներով («Քնար հայկական», 1868), ծագում է բաշկիր. ժող. երգից: Բազմիցս մշակել են երգչախմբի (Ք. Կարա-Մուրզա, Գ. Էդնեսաքս և ուր.), ձայնի և դաշնամուրի (Կոմի-

Հատված «Ծիծեռնակ» երգից (ըստ Կոմիտասի)

տաս, Ա. Դոլուխանյան և ուր.), նաև սիմֆ. նվագախմբի (Մ. Մ. Իպոլիտով-Իվանով, «Հայկական ռապսոդիա», 1895) համար:

Ծ՛ՆԾՂԱՆԵՐ, նվագախմբ. հարված. երաժշտ. գործիք: Բաղկացած է մոտ 400 *մմ* տրամագծով 2 սկավառակից (պղնձի և անագի համաձուլվածք), որոնց կենտրոնում արտաքինից ամրացված են կաշեփոկեր: Հնչյուններն արտաբերվում են սկավառակները միմյանց (երբեմն՝ փայտիկով) հարվածելով: Գործածել են դեռևս Հին Եգիպտոսում, Հին Հայաստանում՝ հոգևոր ծեսերի ու

հանդեսների ժամանակ: Ծ. հայտնաբերվել են Կարմիր բլուրի պեղումներից: XV–XVI դդ–ից Ծ. պատրաստող վարպետներ են եղել Զիլճյան ընտանիքի անդամները:

ԾՈՎՅԱՆ [Ծովյան Գուրգեն Արշակի, 18.05.1916, գ. Սևքար (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–26.02.1987, Երևան], գուսան: Սովորել է Երևանի Վ. Վարդանյանի թատրոն-ստուդիայում (1934–35), ԵՊԿ թառի բաժնում (1935–38): Նվագել է նաև քամանչա: 1945–ին Ծ–ին տրվել է աշուղ-վարպետի կոչում: 1950–51–ին Սայաթ–Նովայի անվ. աշուղ. երգի անսամբլում եղել է երգիչ–թառահար: 1957–ին հիմնադրել է աշուղ. խումբ և շրջագայել համերգներով: Լույս են տեսել «Ծովյանն եմ սևքարեցի» (2001, 50 երգ), «Ոսկեմազ աղջիկ» (2017, 24 երգ և բանաստեղծություններ) ժող–ները: Հայտնի են Ծ–ի «Հայ աղջիկ», «Ո՞րն է իմ մեղքը, յար ջան», «Սևքար» և այլ երգեր:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, պատմող. կամ նկարագր. բնույթի գործիք. երաժշտության տեսակ, նաև երաժշտ. երկ, որն ստեղծվում է որոշակի սյուժետ. ծրագրով ու բովանդակությամբ: Ծ. ե. հայտնի է հնագույն ժամանակներից: Եզրույթը շրջանառել է Ֆ. Լիստը: Ստեղծագործության հիմքը որևէ գրական երկ է (կամ կերպար), պատմ. դեմք, եղելություն, անձն. կյանքի իրադարձություն, բնապատկեր ևն, որն առավելապես արտահայտվում է երկի վերնագրի միջոցով: Ծրագրայնությունը երաժշտության մեջ ունի որոշակի և ընդհանրացված դրսևորումներ: Ծրագիրը բացահայտում է այն, ինչը մատչելի չէ ունկնդրին երաժշտությամբ հաղորդելու համար: Ծ. ե–յան պարզագույն տեսակը պատկերայինն է (բնության, ժող. հանդիսությունների, ճակատամարտերի և այլ երաժշտ. պատկերներ): Ծ. ե–յան մեջ օգտագործվում են զարգացման եղանակներ, որոնց շնորհիվ հնարավոր է «հետևել» թեմային՝ չխախտելով բուն երաժշտ. օրինաչափությունները: Ծրագրայնությունը նպաստել է երաժշտ. երկի նոր արտահայտչամիջոցների հարստացմանն ու կերպարների շրջանակի ընդլայնմանը: Ծ. ե–յան նմուշներից են Մ. Պ. Մուսորգսկու «Պատկերներ ցուցահանդեսից», Ռ. Շումանի «Կառնավալ» դաշնամուր. շարքերը, Կ. Սեն–Սանսի «Կենդանիների կառնավալը» ֆանտազիան, մասամբ՝ Հ. Բեռլիոզի «Ֆանտաստիկ սիմֆոնիան», Պ. Ի. Չայկովսկու «Մանֆրեդ» սիմֆոնիան: Ընդհանրացված բնույթի երկերից են Վ. Ա. Մոցարտի «Յուպիտեր», Ֆ. Շուբերտի «Անավարտ» սիմֆոնիաները, Պ. Ի. Չայկովսկու «Ռոմեո և Ջուլիետ» նախերգանքը: Կան նաև երկեր, որոնց ծրագրայնությունն արտահայտում է ընդհանուր գաղափար (Լ. վան Բեթհովենի «Հերոսական» սիմֆոնիան ևն): XVIII դ–ի գործիք. երաժշտությանը բնորոշ է պատկեր. ծրագրայնությունը (Ա. Վիվալդիի «Տարվա եղանակները», Ֆ. Ռամոյի «Թռչունների ձայնարկությունը»): Ծ. ե. ռոմանտիզմի գեղագիտ. սկզբունքներն իրագործող կարևոր միջոցներից է. մասնավորապես առաջադրվել են երաժշտության մոնոթեմատիկ (Ֆ. Լիստ) և լայտմոտիվ. (Հ. Բեռլիոզ) զարգացման սկզբունքները: Իմպրեսիոնիստ կոմպոզիտորների գործերում ծրագրայնությունը հաճախ երևան է եկել որպես անձն. ապրումների դրսևորման միջոց (Կ. Դեբյուսիի «Երջանկության կղզին»՝ դաշնամուրի համար, «Ծովը» սիմֆ. էսքիզը): XX դ–ից Ծ. ե. շարունակում է մնալ կոմպոզիտորների ուշադրության կենտրոնում (Բ. Բարտոկի «Կոշուտ» սիմֆոնիա–պոեմը, Պ. Բուլեզի «Պոռթկում»–ը՝ նվագախմբի համար, Դ. Դ. Շոստակովիչի 7–րդ, 11–րդ սիմֆոնիաները ևն):

Հայ պրոֆեսիոնալ երաժշտության Ծ. ե–յան լավագույն նմուշներից են Ա. Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆ. պատկերը, Ա. Տեր–Ղևոնդյանի «Ախթամար» սիմֆ. պոեմը, Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադը», Ղ. Սարյանի «Հայաստան» սիմֆ. պաննոն (ըստ Մ. Սարյանի կտավների), Տ. Մանսուրյանի «Ներքող կանոնական»–ը, Հ. Դելլալյանի «Նվիրում Կոմիտասին» դաշնամուրի սոնատը, Ե. Երկանյանի «Հայկ և Բել» սիմֆոնիան, Վ. Բաբայանի «Համլետ» օպերան, «Անտունի» սիմֆ. պոեմը ևն:

Գրկ. *Чайковский П. И., О программной музыке. Избр. отрывки из писем и статей, М., 1952; Хохлов Ю., О музыкальной программности, М., 1963.*

Ծովյան

Կ

Իվան Գալամյան

ԿԱԴԵՆՑԻԱ (իտալ.՝ cadenza, < լատ. cadens, cadentis – վերջ, վերջավորություն), 1. երաժշտ. միտքը եզրափակող հարմոնիկ կամ մելոդիկ դարձվածք: Տեսակները որոշվում են Կ-ի ֆունկցիաների քանակով և նրանց հաջորդականությամբ: Երկու ***ֆունկցիա*** ունեցող Կ. կոչվում է պարզ (կամ թերի), երեքն ունեցողը՝ բարդ (կամ լրիվ): Սպասվող տոնիկայից խուսափող Կ. կոչվում է ընդհատված, տոնիկայով եզրափակվողը՝ կայուն, այլ աստիճանով եզրափակվողը՝ անկայուն: Տարբերում են կայուն Կ-ի կատարյալ (եզրափակող տոնիկան տակտի ուժեղ մասում է, կամ Կ-ի ակորդներն ունեն ֆունկցիոնալ բաս) և անկատար (նշված պայմաններից որևէ մեկը խախտվում է) տեսակներ: 2. Վիրտուոզ, ազատ իմպրովիզացիայով մենանվագ. հատված (սովորաբար՝ առանց նվագակցության)՝ կոնցերտ. ժանրի ստեղծագործություններում:

Գևորգ Կակոսյան

ԿԱԼԱՄՅԱՆ Իվան (Գալամյան Հովհաննես) Ալեքսանդրի (23.01.1903, Թավրիզ–14.04.1981, Նյու Յորք), ջութակահար, մանկավարժ: Երաժշտության դ-ր (1957): Պրոֆ. (1944): 1904-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Մոսկվա: Ավարտել է Մոսկվայի ֆիլհարմոնիկ ընկերության երաժշտ. ստուդիան (1919, ղեկ.՝ Կ. Մոստրաս): 1924-ին նվագել է Մեծ թատրոնի նվագախմբում: 1927-ին տեղափոխվել է Փարիզ, աշակերտել Է. Նադոյին, Լ. Կապեին: 1939-ից ապրել է Նյու Յորքում. 1946-ից Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցում վարել է ջութակի բաժինը, արմատավորել ռուս. և ֆրանս. երաժշտ. ավանդույթները: Դասավանդման դրույթները շարադրել է «Ջութակ նվագելու և դասավանդելու սկզբունքներ» և «Ժամանակակից ջութակի տեխնիկան» ձեռնարկներում (անգլ., 1962): Կ-ի սաներից են Ժ. Քանթարջյանը, Մ. և Վ. Գոճյանները, Հ. Բեղելյանը, Փ. Ունջյանը, Ս. Խարտալյանը, Մ. և Կ. Ավշարյանները, Ի. և Ա. Գավաֆյանները: Լ. Կապեի աղեղն. տեխնիկայի հիման վրա մշակել է ջութակ նվագելու սեփ. մեթոդ, որը հետագայում զարգացրել է նրա աշակերտը՝ Դ. Դիլեյը:

Գրկ. *Koob J. E., The Violin Pedagogy of Ivan Galamian, Illinois University, 1986.*

ԿԱԼԵՐԳ, երգի տեսակ, հայ ժող. ավանդ. աշխատանք. երգ. կատարվել է հացահատիկը կալսելիս՝ բանող անասուններին խրախուսելու և աշխ-ը թեթևացնելու համար, արտահայտել գյուղացու հույզերն ու ապրումները:

Հատված «Կալի երգ»-ից (մշակումը՝ Սրևևիան Գևորգյանի)

Որպես կանոն՝ հանպատրաստից հորինվող տեքստում կան «հոլ արա», «հոլ ել» և նման բացականչություններ, որոնք պայմանավորված են անասունների շրջանաձև պտույտով և նրանց անուն-անուն գովաբանող արտահայտություններով: Մեղեդիներին բնորոշ են հանդարտ, սահուն շարժումը, իմպրովիզացիան, ազատ կառուցվածքը, հոգեպարար անմիջականությունը:

Կ-երը երբեմն անվանվել են նաև «հորովելներ»: Կ-երի դաս. նմուշներից են Կոմիտասի ձայնագրած «Ոտիդ արա» և «Հոլ արա, եզո» երգերը: Երաժշտ. բովանդակությամբ ու կառուցվածքով Կ-երին մոտ են սայլերգերը:

ԿԱԿՈՍՅԱՆ Գևորգ Արայի (09.06.1942, Բեյրութ–25.11.1969, Կահիրե, թաղված է Բեյրութում), երգիչ (բաս): Ավարտել է Բեյ-

րութի ազգ. կոնսերվատորիան (1966), կատարելագործվել Հռոմի «Սանտա Չեչիլիա» ազգ. ակադ-ում (1966–68), Սիենայի «Կիջանա» երաժշտ. ակադ-ում: 1968–69-ին մենահամերգներով հանդես է եկել Երևանում. երկացանկում՝ հայ դաս. ու ժամանակակից (Կոմիտաս, Տ. Չուխաճյան, Ա. Տիգրանյան, Դ. Ղազարյան և ուր.), եվրոպացի (Լ. վան Բեթհովեն, Ռ. Շուման, Մ. Պ. Մուսորգսկի, Մ. Ռավել, Ջ. Էնեսկու և ուր.) կոմպոզիտորների օպեր. (Դոն Բազիլիո՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», ևն) և կամեր. երկերից:

Գրկ. *Գէորգ Կակոսեան, Հուշամատեան Գ. Կակոսեանի կեանքի եւ գործունէութեան մասին: Ալբում 1, Բեյրութ, 1973:*

ԿԱԿՈՖՈՆԻԱ (< հուն. κακός – տգեղ, այլանդակ և φωνή – ձայն, ինչյուն), անախորժ ձայների աններդաշնակ խառնաշփոթ, ոչ երաժշտ. ձայների քաոս. համադրում: Ժամանակակից ավանգարդ. երաժշտության տարրերի Կ. նպատակային են օգտագործել Հ. Քոուելը, Ջ. Քեյջը («ինչյունային կլաստերներ»), Ա. Տերտերյանը (ռոմաններում), Պ. Բուլեզի, Կ. Շտոկհաուզենի և ուր. գործերում ինչյունների խառնակույտ են: Եթե երաժշտության կառուցվածքը չի համապատասխանում ունկնդրի երաժշտ. փորձին, ապա դա կարող է Կ-ի տպավորություն ստեղծել: Օր.՝ տերցիային ակորդ. կառուցվածքին սովոր ունկնդիրը կարող է որպես Կ. ընկալել այլ մշակույթի կամ դարաշրջանի երաժշտությունը (օր.՝ յակուտների ժող. բազմաձայնությունը ևն):

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԱՆՍԱՄԲԼ, 1. երաժիշտ-կատարողների ոչ մեծ կոլեկտիվ, որի երկացանկում կամեր. երաժշտ. գործեր են (վոկալ կամ գործիք. դուետ, տրիո, կվարտետ, կվինտետ ևն): Առավել տարածված են լար. քառյակը և դաշնամուր. եռյակը: Երբեմն Կ. ա. են անվանում փոքր կազմով (առավելապես՝ լար.) նվագախմբերը, որոնք կատարում են կամեր. բնույթի երաժշտ. ստեղծագործություններ: 2. Երաժշտ. ստեղծագործություն (նաև որևէ գործիքի և դաշնամուրի համար սոնատները) Կ. ա-ի համար:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ, կազմավորվել է 2011-ին, ներառում է *Հայաստանի կամերային նվագախումբը, Հայաստանի կամերային երգչախումբը*, Երևանի կամեր., *«Հովեր»* երգչախմբերը, Մենակատարների պետ. և *«Տաղարան»* անսամբլները, *Կոմիտասի անվան քառյակը*: Գործում է *Կամերային երաժշտության փառը*: Տնօրեններ՝ Ս. Ծատուրյան, Վ. Հովեյան, Ն. Նազարյան (2018-ից):

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ Կոմիտասի անվան, կառուցվել է 1977-ին Երևանի Օղակաձև զբոսայգում

Կամերային երաժշտության փոնը

(ճարտ.՝ Ս. Քյուրքչյան): 2011-ից Կ. ե. տանը գործում է *Կամերային երաժշտության ազգային կենտրոնը*: Շենքի գեղ. լուծումը համահունչ է զբոսայգու պուրակ. ճարտարապետությանը, չափսերով հիշեցնում է եկեղեց. կառույց: Ունի հանդիսասրահ, բեմ, ճեմասրահ, նախասրահ: Ներսի որմնանկարների և ջահի հեղինակը նույնպես Ս. Քյուրքչյանն է: Դահլիճում (300 տեղ) և ճեմասրահում մշտապես կազմակերպվում են համերգներ (այդ թվում՝ երգեհոն.՝ անվճար), փառատոներ, հորելյան. երեկոներ, հանդիպումներ, էքսպոներ, շնորհանդեսներ և այլ միջոցառումներ:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ camera – սենյակ), երաժշտարվ-ի տեսակ, գործիք. կամ վոկալ ստեղծագործություն կատարողների ոչ մեծ կազմի համար (մենակատար, դուետ, տրիո, կվարտետ, կամեր. անսամբլ ևն): Նախապես սահմանվել է ունկնդիրների նեղ շրջանակի համար (կատարվել է սենյակում, որտեղից՝ անվանումը): Մինչև XVI դ-ի վերջը Կ. ե. են համարվել միայն վոկալ, XVII դ-ից՝ նաև գործիք. երաժշտությունը: XVI–XVIII դդ-ում «Կ. ե.» եզրույթը Իտալիայում օգտագործվել է վոկալ աշխարհիկ երաժշտության (ժամանակակից ժանրը՝ ռոմանս) մեջ՝ եկեղեցականից (կամեր. կանտատ) տարբերելու համար: Կ. ե-յան ձևավորմանը նպաստել է նրա անմիջական կապը կենցաղ. պար. երաժշտության և ժող. երաժշտ. ստեղծագործության հետ: Կամեր. գործիք. անսամբլների դաս. ձևերի

(սոնատ, տրիո, կվարտետ, կվինտետ ևն) զարգացմանը նպաստել են Յ. Հայդնը, Վ. Ա. Մոցարտը, Լ. վան Բեթհովենը: Ռոմանտիկ կոմպոզիտորներին (Ֆ. Շուբերտ, Ֆ. Մենդելսոն, Ռ. Շուման) բնորոշ են դաշնամուր. մանրանվագները, պիեսների շարքը, նոր գեղ. արտահայտչամիջոցներով երգի ժանրը, նաև գործիք. ու վոկալ անսամբլները: Դաշնամուրի համար Կ. ե-յան լավագույն նմուշներ են ստեղծել Ֆ. Շոպենը և Ֆ. Լիստը: Վոկալ և գործիք. Կ. ե-յան զարգացմանը մեծապես նպաստել են Մ. Ի. Գլինկան, Ա. Ս. Դարգոմիժսկին, Ա. Պ. Բորոդինը, Պ. Ի. Չայկովսկին, Մ. Պ. Մուսորգսկին, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը, Ս. Ի. Տանեևը, Ս. Վ. Ռախմանինովը, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Դ. Շոստակովիչը, Յ. Բրամսը, Է. Գրիգը, Ա. Դվորժակը, Կ. Դեբյուսին, Մ. Ռավելը, Ա. Շյոնբերգը, Ա. Բերգը, Ա. Վեբեռնը, և ուր.:

Կ. ե-յանը բնորոշ է արտահայտչամիջոցների նուրբ մանրամասնումը, որը քնար. հույզերի, հոգեվիճակների նրբին փոփոխությունները հաղորդելու մեծ հնարավորություններ է ընձեռում:

Վանաձորի կամերային նվագախումբը (2014, դիրիժոր՝ Ռոդոլֆ Վարդազարյան)

Հայաստանում դաշնամուրի և լար. գործիքների համար երկեր են գրել 1850-ական թթ-ից: 1920-ական թթ-ից երևան են եկել Կ. ե-յան բոլոր ժանրերը: Կ. ե-յան ձևավորման մեջ մեծ ավանդ ունեն Տ. Չուխաճյանը, Կ. Միկուլին, Ս. Էլմասը, Գ. Ղորղանյանը, Կոմիտասը, Ա. Սպենդիարյանը, Ն. Տիգրանյանը: Վոկալ երաժշտության զարգացմանը նպաստել են Ռ. Մելիքյանը, Հ. Ստեփանյանը, Կ. Զաքարյանը, հայտնի են նաև Ա. Խաչատրյանի դաշնամուրի և ջութակի պիեսները: Տարբեր գործիքների համար մանրանվագներ են գրել Ս. Բարխուդարյանը, Գ. Եղիազարյանը, Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Աբրահամյանը, Է. Բաղդասարյանը, Գ. Չերոտարյանը և ուր.:

Հայկ. գործիք. Կ. ե-յան առավել հարուստ ոլորտներն են սոնատը և կվարտետը:

Գրկ. *Апоян Ш., Фортепианная музыка Советской Армении, Е., 1968; Тер-Симонян М., Камерно-инструментальная ансамблевая музыка Армении, Е., 1974; Григорян А., Армянская камерно-вокальная музыка, Е., 1982.*

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, ի տարբերություն օպեր., վիրտուոզ-համերգ. և էստրադ. երգեցողության՝ Կ. ե. ակադեմ. երգեցողության այն ժանրն է կամ ձևը (եղանակ), որը սովորաբար պայմանավորված է դաշնամուրի նվագակցությամբ կատարվող ռոմանսի, երգի կամ վոկալ անսամբլի գեղ. մեկնաբանմամբ: Նրան բնորոշ են նուրբ, մանրամասն ֆրազավորումն ու դինամիկան, որոնք զուգակցվում են դերասան. խաղի որոշ տարրերի հետ (ձեռքերի շարժուձև, դիմախաղ ևն): Տես նաև *Երգեցողություն*:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, 12–20 երաժիշտ-կատարողներից բաղկացած փոքր նվագախումբ՝ գործիք. անսամբլ XVII–XVIII դդ-ում, որը հիմնականում կատարել է անսամբլ-նվագախմբ. երաժշտություն (կոնչերտո գրոսսոներ, նվագախմբ. սյուիտներ և մենանվագ գործիքների կոնցերտներ). կազմում՝ լար. (աղեղնավոր) գործիքների բոլոր տեսակները (ջութակներ, ալտեր, թավջութակներ,

Արցախի կամերային նվագախումբը ելույթի պահին

կոնտրաբասեր), մի քանի փող. (ֆլեյտա, հոբոյ ևն), երբեմն 1 կամ մի քանի հնագույն գործիքներ (կլավիչեմբալո ևն): XVII դ-ից փոքր կազմով Կ. ն-եր եղել են ազնվականների դղյակներում (օր.՝ Յ. Ս. Բախը 1703-ից Յոհան Էռնստ III-ի դղյակում նվագախմբի ջութակահարն էր): XIX դ-ից Կ. ն-երն աստիճանաբար փոխարինվել են սիմֆ. նվագախմբով: Կ. ն. առավել տարածվել է 1920-ական թթ-ին, որը, հավանաբար, պայմանավորված էր այդ տարիներին անսամբլ. ու նվագախմբ. հնագույն երաժշտության նկատմամբ առաջացած մեծ հետաքրքրությամբ, նաև արձագանք էր ուշ ռոմանտիկ շրջանի սիմֆ. նվագախմբերի հսկայական կազմերի դեմ (ընդլայնված նվագախմբ. կազմի համար երկեր են գրել Ռ. Վագները, Ա. Բրուքները,

Գ. Մահլերը, Ռ. Շտրաուսը, Ա. Սկրյաբինը և ուր.): XX դ–ում Կ. ն–ի համար գործեր են գրել Ա. Շյոնբերգը (1–ին կամեր. սիմֆոնիան), Ա. Հովհաննեսը («Անահիտ» ֆանտազիան, 6–րդ սիմֆոնիան), Ա. Շնիտկեն (3–րդ կոնցերտը՝ ջութակի և Կ. ն–ի համար) և ուր.: Ներկայում Կ. ն–երը կատարում են ոչ միայն արդի, այլև հնագույն շրջանի

Հայաստանի կամերային նվագախումբը

կոմպոզիտորների երկեր նվագախմբի այն կազմով, որի համար գրվել են: Հանրահայտ են Վիեննայի, Լիտվայի կամեր., «Մոսկվայի վիրտուոզներ», Կազանի, Հայաստանի և այլ Կ. ն–եր:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՍԻՄՖՈՆԻԱ, սիմֆոնիայի տեսակ. ձևավորվել է XX դ–ի սկզբին: Բնորոշ են փոքր ծավալը, «կամերային» երաժշտության գաղափարը, որոնցով էլ պայմանավորված է նվագախմբի կազմի նվազեցումը և ձևի կրճատումը (1, հազվադեպ՝ 2–մասանի, տևողությունը՝ 10–30 *ր*): Առանձնանում է խտացված երաժշտ. մտքով, պոլիֆոնիկ շարադրմամբ, նոր արտահայտչամիջոցների որոնմամբ: Բացի Ա. Շյոնբերգի, Ֆ. Շրեկերի, Մ. Լաբրոկիի և ուր. Կ. ս–ներից, ըստ էության, այդ ժանրին են պատկանում նաև որոշ ստեղծագործություններ, որոնց անվանել են սիմֆոնիա (Ա. Վեբեռնի սիմֆոնիան, Դ. Միյոյի 5 փոքր սիմֆոնիաները՝ փոքր նվագախմբի համար, ևն): Հետագայում որոշ նոր հատկանիշներով Կ. ս. նմանվել է սիմֆոնիետին և փոքր սիմֆոնիային (4–մասանի ցիկլ, զույգ կազմով նվագախմբ. ստեղծագործության տևողությունը հազվադեպ է գերազանցում 20–30 *ր*):

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՕՊԵՐԱ, մեկ գործողությամբ փոքրածավալ օպերա՝ սակավաթիվ գործող անձերով, նվագախմբի փոքր կազմով, երբեմն՝ փոքր երգչախմբով (Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովի «Մոցարտ և Սալիերի», 1897, ըստ Ա. Պուշկինի «Փոքրիկ ողբերգությունների», Բ. Բրիտտենի «Պտուտակի դարձը», 1954, ևն): Հայկ. նմուշներից են Է. Սադոյանի «Իշխանուհի Մարիա Վոլկոնսկայայի հուշագրերը» (1978, լիբրետտոն՝ Է. Սադոյանի), «Հեյ, ոմվ կա այդտեղ» (1982, ըստ Վ. Սարոյանի), Ս. Ազնաուրյանի «Հույս» (ըստ Զ. Գիպիուսի, 2004), «Արմենիա» (ըստ Օ. և Ն. Մանդելշտամների, 2006) ևն:

ԿԱՄԵՐՏՈՆ (գերմ.՝ Kammerton, < Kammer – սենյակ և Ton – ինչյուն), երկմատնյակ, U–աձև մետաղե կորավուն ձող է, ամրացվում է այնպես, որ ծայրերը (ոտնակները) ազատ տատանվեն: Առավել ինտենսիվ տատանումները պայմանավորված են ոտնակներով անցնող հարթությամբ: Ձայնի ճառագայթումն ուժեղացնելու համար ոտնակին երբեմն ամրացնում են դիաֆրագմա կամ Կ. զուգակցում են մի կողմից՝ բաց, հիմնականում՝ փայտե ուղղանկյուն ռեզոնանս. արկղիկի (որի վրա տեղավորում են Կ.) հետ: Վերջինիս չափերն այնպես են ընտրում, որ նրա մեջ օդի ծավալի և Կ–ի տատանումների հաճախությունները համընկնեն (տես *Ռեզոնանս*): Օգտագործվում են նաև լեզվակավոր և էլեկտրոն. Կ–ներ: Գոյություն ունեն Կ–ի փոփոխվող ու կարգավորվող հաճախությամբ հավաքածուներ՝ տարբեր տոնայնություններ որոշելու համար: Առավել տարածված են 1–ին օկտավայի լա լարվածքով Կ–ները, որոնց տատանման հաճախությունը երաժշտության պատմության ընթացքում փոփոխվել է (այժմ որպես չափօրինակ ընդունված է 440 *Հց*):

Կամերտոն

ԿԱՆԱՉՅԱՆ Բարսեղ [1885, Ռոդոստո (այժմ՝ Թեքիրդաղ՝ Թուրքիայում)–21.05.1967, Բեյրութ], կոմպոզիտոր, խմբավար, հաս. գործիչ: 1888–ից ապրել է Կ. Պոլսում, ստացել նախն. կրթություն: 1896–ին ընտանիքի հետ մեկնել է Վառնա (Բուլղարիա), աշակերտել է Նաթան *Ամիրխանյանին* (ջութակ, երաժշտության տեսություն): 1903–ից սովորել է Բուխարեստում (դաշնամուր, հարմոնիա): 1908–ին վերադարձել է Կ. Պոլիս, ստեղծել «Քնար» փող. նվագախումբը, դասավանդել, կատարել ստեղծագործ. առաջին փորձերը: 1910–ից երգել է Կոմիտասի «Գուսան» երգչախմբում: Հարմոնիայի ու խմբավարության դասեր է առել Կոմիտասից. (հանրահայտ «հինգ սաներից» է): 1919–ին Կոմիտասին նվիրված համերգում, որպես

Բարսեղ Կանաչյան

Բ. Կանաչյանը աշխատանքի պահին



Բարսեղ Կանաչյանի «Ձայնագրուած հայկական երգարան» (1909)

խմբավար, հանդես է եկել 400-հոգանոց միացյալ երգչախմբով, հայտնի չորս սաների հետ ներդաշնակել և հրատարակել է հայրենասիր. երգեր («Հայ գուսան» տետր): 1920-ից Փարիզում շարունակել է երաժշտ. կրթությունը, 1922-ից հայկ. գաղթավայրերում զբաղվել է խմբավարությամբ: 1926-ից դասավանդել է Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, 1933-ից՝ Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանում: 1936-ին Բեյրութում ստեղծել է մշտական երգչախումբ (Կոմիտասի երգչախմբի օրինակով անվանել է «Գուսան»), որի համար ինքնատիպ ոճով մշակել է հայկ. և արաբ. ժող. երգեր, հանդես եկել համերգներով: 1957–67-ին ապրել է Բաղդադում: Գրել է շուրջ 30 խմբերգ («Հոյնար», «Դալիլո», «Վարդերի հետ» ևն), 10 մեներգ՝ դաշնամուրի նվագակցությամբ, 20 մանկ. երգ, «Աբեղա» երգային օպերան (ըստ Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայի, բեմ.՝ 2017, ԱՄՆ, բազմաձայնել ՀՀ «Մեր հայրենիք» օրիներգը), Ռ. Պատկանյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Միրաքյանի և ուր. խոսքերով մեներգեր («Օրոր», «Ասում են ուռին», «Ալվարդի երազը» ևն), որոնք

Հարված Գայանե Չերուպարյանի «Չես հասնի» կանոնից («Պոլիֆոնիկ փեդրից»)

առանձնանում են մեղեդայնությամբ և վոկալի նուրբ զգացողությամբ:

Կ-ի ստեղծագործության մեջ առավել ուշագրավ է «Նանոր» վիպ-դրամատիկ. խմբերգ. ծավալուն պատկերը. այն, լինելով նկարագրական, նաև առանձնանում է զգացմունքայնությամբ, տրամադրությունների ցայտուն հակադրություններով, հագեցած լարվածությամբ, պատկերավոր ու կուռ բովանդակությամբ, որով էլ դարձել է հայ դաս. խմբերգ. արվ-ի նշանավոր երկերից: Հայտնի է նաև նրա՝ «Բամ, փորոտան» հայրենասիր. երգի մշակումը:

Կ-ի խմբերգերն ու մեներգերը մասամբ հրատարակվել են Բեյրութում (1946–48) և Երևանում (1969):

1998-ին խմբավար Հ. Թոփիկյանը Հայաստանի կամեր. երգչախմբի կատարմամբ լազեր. սկավառակի վրա ձայնագրել է Կ-ի խմբերգերը:

Կ-ի անունով է կոչվել Բեյրութի երաժշտանոցը և Երևանի արվ-ի դպրոցներից մեկը:

«Մայրիներ» (Լիբանան) և «Le palme d'Académie» (Ֆրանսիա) շքանշաններ:

Երկ. *Ձայնագրուած հայկական երգարան, ԿՊ, 1909: Մեներգեր, խմբերգեր, կազմ. և խմբ.՝ Ռ. Աթայան, Ե., 1969:*

Գրկ. *Քառասնամեայ յորելեան Բարսեղ Կանաչեանի երաժշտական գործունէութեան 1906–1946: Կենսագրական նոթեր, Բեյրութ, 1946: Տ ա գ է ս ե ա ն Ա., Բարսեղ Կանաչեան (1885–1967). Կեանքի մը երաժշտացումը, Բեյրութ, 2017:*

ԿԱՆՈՆ (հուն.՝ κανών – կանոն, տիպար), բազմաձայն պոլիֆոնիկ ստեղծագործություն, որի բոլոր ձայները (կամ մի մասը) հաջորդաբար շարադրում են միևնույն մեղեդին՝ անընդմեջ նմանակելով (իմիտացիա): Յուրաքանչյուր հաջորդող ձայն հանդես է գալիս մինչ նախորդող ձայնով սկսված մեղեդու ավարտը: Մեղեդին կարող է կրկնվել միևնույն կամ այլ հնչյունից՝ նույն կամ տարբեր ռիթմով: Մեղեդին շարադրող առաջին ձայնը կոչվում է պ ր ո պ ո ս տ ա (իտալ.՝ proposta – առաջարկ), նմանակող ձայները՝ ռ ի ս պ ո ս տ ա ն ե ր (իտալ.՝ risposta – պատասխան, առարկում): Գոյություն ունի կ ր կ ն ա կ ի (ե ռ ա կ ի ևն) Կ., որտեղ տարբեր ձայներով միաժամանակ շարադրվում են 2 (3 ևն) տարբեր մեղեդիներ: Կ-ի այն տեսակը, որն անընդհատ կրկնվում է բոլոր ձայներում՝ շաղկապելով մեղեդու վերջը նրա սկզբի հետ, կոչվում է ա ն վ ե ր ջ: Երբեմն

Կ. ունենում է հանելուկի ձև (հանելուկային Կ.). կատարողը պետք է որոշի մեղեդու նմանակման պայմանները: Ինքնուրույն ստեղծագործություն լինելուց բացի՝ Կ. երբեմն ընդգրկվում է որևէ ծավալուն երկի մեջ:

Ըստ Էդվարդ Փաշինյանի

ԿԱՆՏԱՏ (իտալ.՝ cantata, <լատ. cantare – երգել), վոկալ-գործիք. խոշոր ստեղծագործություն, սովորաբար՝ 1 կամ մի քանի մեներգիչների, երգչախմբի և նվագախմբի համար: Լինում է հոգևոր և աշխարհիկ (XVIII դ–ից դարձել է գերիշխող), նաև հանդիսավոր, քնար., թախծալի, ուրախալի, պատմող.: Սովորաբար բաղկացած է նախանվագից (սիմֆոնիա, պրելյուդ, նախերգանք ևն), արիաներից, ասերգերից և խմբերգերից: Կատարող. կազմով, կառուցվածքով, բեմ. գործողության բացակայությամբ նման է ***օրատորիային,*** սակայն տարբերվում է համեմատաբար փոքր ծավալով, առավել կամերայնությամբ, հաճախ՝ չունի թեմայի դրամատիկ. մշակում: Որոշ դեպքերում էլ այնքան են նմանվում, որ գրեթե անհնար է տարբերել միմյանցից: Կ. ձևավորվել է XVII դ–ի 1–ին կեսին Իտալիայում. նախապես այդպես են անվանել խոշոր վոկալ ստեղծագործությունները: Եզրույթն առաջինն օգտագործել է իտալացի կոմպոզիտոր Ա. Գրանդին («Cantate et Arie», 1620): Իտալ. առաջին Կ-ները մենակատար վոկալ պիեսներ էին, հիմնականում՝ աշխարհիկ: Հոգևոր Կ. ձևավորվել է Գերմանիայում, որի զարգացմանը նպաստել են Է. Նոյմայստերի կազմած Կ-ների տեքստերի ժող-ները (1704–14), որտեղ զուգակցել է աստվածաշնչյան թեմաներով տեքստեր, խմբերգ. ստրոֆներ (տներ), ասերգեր, արիաներ: Այդ տեսակի բազմաթիվ (պահպանվել են 200–ից ավելի) Կ-ներ է գրել Յ. Ս. Բախը. հեղինակ է նաև շուրջ 20 աշխարհիկ Կ-ների («Գեղջկական», «Ֆեբոս և Պան» ևն): Կ-ի զարգացման հաջորդ փուլը պայմանավորված է Վ. Ա. Մոցարտի ստեղծագործությամբ. մշակել է խմբերգ. ոճ, որը կատարյալ ձևերով ներկայացրել է իր «Ռեքվիեմ»-ում: Այդ ժանրին է պատկանում նաև Լ. վան Բեթհովենի «Ծովային լռություն և հաջող նավարկություն» (ըստ Յ. Վ.Գյոթեի բանաստեղծությունների) երկը: Նրա 9-րդ սիմֆոնիայի ավարտը՝ երգչախմբի և մեներգիչների մասնակցությամբ, ըստ էության, նույնպես Կ. է: Կ. Ռուսաստանում սկզբնավորվել է XVIII դ–ում. զարգացման բարձր փուլի են հասցրել Պ. Ի. Չայկովսկին, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Դ. Շոստակովիչը, Յ. Ա. Շապորինը, Ս. Վ. Ռախմանինովը և ուր.: XIX դ–ում, մասնավորապես ռոմանտիկ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ, Կ. մղվել է 2–րդ պլան: XX դ–ի եվրոպ. երաժշտության մեջ Կ–ին անդրադարձել են տարբեր ոճերի կոմպոզիտորներ՝ Ա. Վեբեռնը, Կ. Օրֆը, Պ. Բուլեզը, Ք. Պենդերեցկին և ուր.:

Կ. հայ պրոֆեսիոնալ երաժշտության ինքնուրույն ժանրերից է: Հայտնի են Մ. Եկմալյանի, Ա. Սպենդիարյանի, Ա. Տիգրանյանի, Հ. Ստեփանյանի, Է. Միրզոյանի, Ա. Հարությունյանի, Է. Հովհաննիսյանի, Գ. Հախինյանի, Ռ. Ամիրխանյանի և ուր. Կ-ները:

ԿԱՆՏԻԼԵՆԱ (իտալ.՝ cantilena, <լատ. cantilena – երգեցողություն), 1. վոկալ և գործիք. երգեցիկ մեղեդի: 2. Երաժշտության և նրա կատարման երգայնությունը, երգչաձայնի հնարավորությունը երգեցիկ մեղեդու կատարման համար: 3. Գրիգորյան խորալի երգեցիկ բաժինները: 4. Աշխարհիկ ոչ մեծ միաձայն (քնար., էպիկ., հումոր.) և բազմաձայն (առավելապես՝ սիրային–քնար.), պարերգ. (նաև նրանց գործիք. ձևերը) ստեղծագործություններ XIII–XV դդ–ում Արմ. Եվրոպայում: 5. Վոկալ բազմաձայն ստեղծագործություն XVI–XVII դդ–ում: 6. XVII դ–ի վերջից՝ երգ կամ ստեղծագործություն՝ երգեցիկ մեղեդիով:

ԿԱՆՑՈՆ (իտալ.՝ canzone – երգ), աշխարհիկ իմիտացիոն-պոլիֆոնիկ բազմաձայն պիես Վերածննդի դարաշրջանում: XV–XVI դդ–ում ժող. երգին մոտ, առավելապես՝ աշխարհիկ բովանդակության, պարզ բազմաձայն երգեր: Զարգացել է XVI դ–ում (սկզբում՝ որպես վոկալ Կ–ի փոխադրում): XVI դ–ի վերջից գրել են նաև գործիք. Կ-ներ: Հետագայում՝ հոմոֆոն երաժշտության զարգացման ընթացքում, տարածվել է միաձայն Կ.՝ գործիքի նվագակցությամբ: Այդ ձևը պահպանվել է XIX–XX դդ–ի գործիք. Կ–ում՝ իր երգուն մեղեդիով («երգ առանց խոսքի»): Երբեմն «Կ.» են անվանում վոկալ և գործիք. քնար. պիեսները (հատվածներ՝ օպերաներից, սիմֆոնիաների, կոնցերտների մասեր):

Ռոբերտ Ամիրխանյանի «Կանտատ սիրո» ստեղծագործության համերգի հայտագիրը (2013)

Կ-ի փոքր տեսակը կոչվում է կանցոնետ:

Հատված Ալեքսանդր Սպենդիարյանի «Կանցոնետ»-ից

ԿԱՊԵԼԼԱ (լատ.՝ capella, իտալ.՝ cappella – աղոթարան, մատուռ), երգչախումբ. կոչվել է եկեղեց. երգչախմբի համար նախատեսված կաթոլիկ և անգլիկան ճարտ. կառույցի (փոքր մատուռ կամ առանձնացված սենյակ եկեղեցում) անունով: Գործիք. երաժշտության զարգացմանը զուգընթաց Կ-ները սովորաբար միավորել են երգիչների և նվագածուների, դարձել խառն անսամբլներ: Անցյալում «Կ.»-ներ են կոչվել նաև պալատ., թատեր., քաղաք. և այլ նվագախմբեր:

Հատված Առնո Բաբաջանյանի «Կապրիչչո»-ից

ԿԱՊՐԻՉՉՈ (իտալ.՝ capriccio – քմայք, քմահաճույք), կապրիս (ֆրանս.՝ caprice), վիրտուոզ գործիք. պիես, որը հաճախ հարուստ է տրամադրությունների անսպասելի, քմահաճ փոփոխություններով: Նախապես եղել է ***մադրիգալի*** տիպի վոկալ, XVI–XVII դդ.-ում՝ պոլիֆոնիկ գործիք. պիես: Գրում են ազատ ձևով (ռիչերկարի, ֆանտազիայի նման)՝ տարբեր երաժշտ. գործիքների և նվագախմբերի համար: Հետագայում դարձել է մենանվագ ***կադենցիայի***, վիրտուոզ ***էտյուդի*** տեսակ (Ն. Պագանինիի «Մենանվագ ջութակի 24 կապրիս», Ռ. Շումանը և Ֆ. Լիստը մշակել են դաշնամուրի համար և անվանել էտյուդներ): Կլավիր. և դաշնամուր. Կ-ները մոտ են վառ կերպար. պիեսներին (Յ. Ս. Բախ, Յ. Բրամս, Ա. Բաբաջանյան): Ազգ. երանգավորումով նվագախումբ. Կ-ներ են գրել Պ. Ի. Չայկովսկին («Իտալական կապրիչչո»), Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը («Իսպանական կապրիչչո»), Ա. Հարությունյանը («Թեմա և 5 կապրիս»՝ ձայնի և նվագախմբի համար):

ԿԱՌՎԱՐԵՆՑ ժորժ (Տիրան) Գևորգի (01.04.1932, Աթենք–21.03.1993, Փարիզ), կոմպոզիտոր: Ադիդա ***Ազնավուրյանի*** ամուսինը: 1943-ից ապրել է Փարիզում: Ավարտել է Փարիզի կոնսերվատորիան (1952): Շառլ ***Ազնավուրի*** տեքստերով գրել է «Եվ սակայն», «Ժամադրություն Բրազիլիայում», «Փարիզն օգոստոսին», «Նրանք ընկան» և այլ երգեր: 1950-ական թթ-ից նրա մի շարք երգերի («Ամենագեղեցիկը պարելու համար», «Մակույկավարի թվիստը», «Փարիզի կամուրջները» ևն) առաջին կատարողները եղել են ֆրանս. էստրադայի նշանավոր երգիչներ Շ. Ազնավուրը, Դ. Ռոսը, Դալիդան, Ջ. Հոլիդեյը, Ս. Վարդանը, Ժ. Բեկոն, Մ. Մաթյոն, Ա. Ազնավուրյանը և ուր.: Հեղինակ է 500-ից ավելի երգերի, թողարկել է 40-ից ավելի ձայնասկավառակներ («Հսաոճ վայելքներ», 23 մլն տպաքանակով՝ 350 տարբերակով): 1974-ի ապրիլի 24-ին «Նրանք ընկան» երգը (Մեծ եղեռնի նահատակների հիշատակին) հնչել է Փարիզի «Փլեյել» համերգասրահում: 1988-ի Սպիտակի երկրաշարժին է նվիրված «Քեզ համար, Հայաստան» (խոսք՝ Շ. Ազնավուրի, «Ոսկե սուր» մրց., 1989, Փարիզ) երգը՝ Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի էստրադ. ճանաչված երգիչների կատարմամբ (թարգմանվել է

բազմաթիվ լեզուներով): Գրել է նաև կինոերաժշտություն («Որոնեցեք կուռքը», «Գիշատիչների խրախճանքը», «Երկնային ամպրոպ», «Սատանան և տասը պատվիրանները», «Թեհրան-43», «Սիրո պատմություն», «Մարկո Պոլո», «Սամարկանդ» ևն, վերջին երկուսում օգտագործել է հայկ. ժող. մեղեդիներ): Եղել է «Ֆրենչ մյուզիկ» երաժշտ. հրտ-յան տնօրենը: Այցելել է Հայաստան (1977, 1988):

Ֆրանս. Շանսոնիե ընկերության մրց. (1964):

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, երաժշտ. երկի հատվածներ, որոնք բաժանված են *ցեզուրայով*: Մի քանի հատվածներ միանալով՝ կազմում են ավելի մեծ Կ. (մոտիվ, ֆրազ, նախադասություն, պարբերություն): «Կ.» տերմինը հաճախ օգտագործվում է նաև այն դեպքերում, երբ հատվածն իր անավարտությամբ ու հարմոնիկ անկայունությամբ նման չէ նշված ոչ մի սովորական ձևի: Այդպիսի Կ-ներ հաճախ լինում են ստեղծագործության ներած., կապակցող, միջին և մշակման բաժիններում:

ԿԱՍԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ Անի (ծ. 1942, Կ. Պոլիս), դաշնակահարուհի: Նախն. երաժշտ. կրթությունն ստացել է ծննդավայրում. աշակերտել է Աշխեն Գավաֆյանին (տես *Գավաֆյան քույրեր*): 1949-ին Կ. Պոլսում համերգի ժամանակ հանրահայտ դաշնակահար Ա. Կորտոն, լսելով Կ-Ղ-ի կատարումը, առաջարկել է ուսումը շարունակել Փարիզում: Նույն թվականին ընդունվել է Ֆրանսիայի «Էքոլ Նորմալ» երաժշտ. դպրոցը (դասատու՝ Ժ. Ժանթիյի), ավարտել է Փարիզի կոնսերվատորիան (1955, 1-ին մրց.): 1963-ին Զալցբուրգում մասնակցել է մենակատարների միջազգ., Լեհաստանում՝ Ֆ. Շոպենի անվ. (արժանացել է մրց-ի) փառատոներին, ապա Վարշավայում՝ շոպենյան համերգներին: Համերգներով շրջագայել է Շվեյցարիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում, Թուրքիայում. նվագացանկում՝ Յ. Ս. Բախի Դո մինոր «Գավոտ», Լ. վան Բեթհովենի ֆա մաժոր «Սոնատին», Թ. Լաքի «Բալլադ», Պ. Ի. Չայկովսկու «Արտույտ» և այլ գործեր: 1970-ից՝ Ստոկհոլմի պետ. սիմֆ. նվագախմբի մենակատարուհի: ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանի պրոֆ. (1972–74):

ԿԱՎԱՏԻՆ (իտալ.՝ cavatina, < cavare – արտածել), մենակատար քնար. պիես օպերայում և օրատորիայում: XVIII դ-ում եղել է խոհ. բնույթի: Արիայից տարբերվել է փոքր ծավալով, երգանման պարզ կառուցվածքով, տեքստի կրկնություններով ևն: Սովորաբար կազմված է 1 տնից և գործիք. ոչ մեծ նախանվագից: Սկզբից մինչև վերջ պահպանվում է նույն տեմպը: 2. Ազատ կառուցվածքով և ծավալով արիային մոտ մեներգ (XIX դ-ի 2-րդ կես): 3. Գործիք., բնույթով երգային, փոքրածավալ պիես (Լ. վան Բեթհովենի op. 130 B-dur կվարտետից Adagiomoltoespressivo-ն, ևն):

ԿԱՏԱԿԵՐԳԵՐ, երգիծական երգեր, գեղջկական երգի տեսակ, որտեղ խարազանվում են հասարակության արատները, ամոթալի երևույթները, ծուլությունը, կաշառակերությունը, շատախոսությունը, մեծամտությունը, պարծենկոտությունը ևն: Հաճախ Կ-ի բաղկացուցիչներից են գռեհկաբանությունն ու հայհոյանքը: Հայ գեղջկական երգում ծաղրն ու երգիծանքը սովորաբար մեղմ ու զուսպ երանգ ունեն և հազվադեպ են հասնում սոցիալ. սրության: Կ-ին բնորոշ են

Ժորժ Կառվարենց

Հատված «Չեմ առնի, նանա ջան» կատակերգից (գրառումը՝ Սպիրիդոն Մելիքյանի)

շարժման պարբերությունը (ռիթմի դերը), փոքր ծավալը, կատարման կենսուրախ բնույթը, կրկնությունը, որոնք Կ. մերձեցնում են պարերգերի հետ: Հայտնի են՝ «Չէ, դադո, չէ, բաբո, չեմ առնի», «Աման, տերտեր, ամոթ ա», «Աղջիկան՝ փոթին կալոշ», «Էն դիզան» և այլ Կ.:

Գրկ. *Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Ե., 2014:*

Սարիաննա Տիգրանյան

«ԿԱՏՈՒՆԵՐ», ջազ. խումբ: Հիմնադրվել է 2004-ին Երևանում՝ «Վահագն Հայրապետյան և կատուներ» անվանումով. կազմում՝ Վահագն *Հայրապետյան* (ստեղնաշար. գործիք), Տ. Սուջյան (շեփոր),

Դ. Նալչաջյան (ալտ-սաքսոֆոն, 2009-ից՝ Ա. Գրիգորյան), Ա. Մանուկյան (բաս, թավջութակ, 2010-ից՝ Է. Սահակյան), Տ. Սանոյան (հարված. գործիքներ, 2006-ից՝ Ա. Ջալալյան), Ա. Հարությունյան (տրոմբոն, 2009-ից՝ Դ. Մինասյան), Ն. Քարտաշյան (փող., ֆոլք և հարված. գործիքներ): Երկացանկն առանձնանում է 1970-ական թթ-ի ջազ-ռոքի, 1980-ական թթ-ի ֆյուժնի, հայկ. ռիթմի ու մեղեդայնության համադրմամբ: 2005-06-ին ԱՄՆ-ում մասնակցել է Պետդեպարտամենտի կազմակերպած «Jazz Appreciation Month» ջազ., Երևանում՝

«Կատուններ» ջազային խումբը

ավանգարդ ֆոլք-երաժշտության 1-ին և 2-րդ, նաև «Երևան-2006» 3-րդ միջազգ. ջազ. և այլ փառատոների, ՀՀ-ում և արտերկրում՝ համերգների: Թողարկել է «Նորեվան» (2007) և «Red Sun» (2009) ձայնասկավառակները:

Ջազի մրցույթ-փառատոնի 1-ին (2008, Մոսկվա), Հայաստանի ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության «Տարվա լավագույն ջազ-նախագիծ» (2012) մրց-ներ:

Քրիսափոր Կարա-Մուրզա

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ, Քրիստափոր (Խաչատուր) Մարգարի [18.02 (02.03).1853, Կարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ՝ Ղրիմ)–27.03 (09.04).1902, Թիֆլիս], կոմպոզիտոր, խմբավար, հաս. գործիչ, բանահավաք, երաժիշտ-քննադատ: Ութ տարեկանից սովորել է դաշնամուր և ֆլեյտա նվագել: Ուսումնասիրել է երաժշտության տեսություն: Հիմնադրել է սիրող. դրամատիկ. և երաժշտ. խմբեր: 1882-ից ապրել է Թիֆլիսում և Բաքվում: 1885-ի մարտի 15-ին Թիֆլիսում՝ Գրիգոր Արծրունու թատրոնում, տղամարդկանց փոքրակազմ երգչախմբով հանդես է եկել առաջին խմբերգ. համերգով (երկացանկում՝ բազմաձայն հայրենասիր. երգեր), որը վերածվել է ազգ. տոնի: Կովկասի, Հվ. Ռուսաստանի հայաբնակ գրեթե բոլոր կենտրոններում ստեղծել է կանանց, տղամարդկանց և խառը ժող. երգչախմբեր (90-ից ավելի): Իր հավաքած ժող. երգերը քառաձայնել և ընդգրկել է համերգ. ծրագրերում: Առաջինն է բազմաձայնել Պատարագը, որը ներկայացրել է 1887-ին՝ Բաքվի Սբ Գևորգ եկեղեցում, 1892-ին՝ Սբ. Էջմիածնում՝ Թադեոս և Բարդուղեմիոս առաքյալների տոնին՝ հեղինակի և Կոմիտասի ներկայությամբ, 1890-ին Թաղիևի թատրոնում ղեկավարել է Շ. Գունոյի «Ֆաուստ» օպերայից հատվածների հայ. բեմադրությունը: Ապա մեկնել է Կ. Պոլիս, հավաքել ժող. նոր երգեր:

1892–93-ին աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1894-ին՝ Շուշիում (դերասան Հովհաննես Աբելյանի հետ), 1895-ին Բաքվում երգչախմբի և նվագախմբի հետ ներկայացրել է Խ. Գալֆայանի «Արշակ Բ» դրաման: Թիֆլիսում կազմակերպել է խմբավար. դասընթացներ, աշխատակցել «Մշակ» և «Մուրճ» ամսագրերին. հոդվածներում լուսաբանել է տեղի երաժշտ. և գեղագիտ. բազմաթիվ խնդիրներ:

Կ-Մ. իր համերգներով ձևավորել է գեղագիտորեն զարգացած ժող. նոր լսարան:



Ք. Կարա-Մուրզայի ինքնագիրը

Նրա երգչախմբերում են մասնագիտացել նշանավոր երգիչներ Ն. Շահլամյանը, Բ. Ամիրջանյանը, Մ. Վարդիկյանը, սանեերից էին Ա. Մանուկյանը, Ս. Դեմուրյանը և ուր.: Գրել է գործիք. պիեսներ, թատեր. երաժշտություն, «Շուշան» (ըստ Ատրպե-

տի) երգային օպերան (անավարտ), երգեր՝ հայ բանաստեղծների խոսքերով: Առավել ճանաչված են առանց նվագակցության (շուրջ 300) խմբերգերը. հրատարակել է գյուղ., քաղաք. («Ծիծեռնակ», «Դու զով խնդրես», «Անցար սարեր» ևն) և աշուղ. («Անի քաղաք», «Այծյամ», «Ընկերը» ևն) երգերի 25 մշակում («Խմբերգեր», 1978): Զգտելով առավել մատչելիության՝ Կ-Մ. դրանք բազմաձայնել է հոմոֆոն-ակորդ. կերտվածքով՝ արտահայտչական առաջնորդային դեր հատկացնելով մեղեդուն: Հարմոնիայում ավանդ. պարզագույն միջոցներին ու հնարներին զուգահեռ կիրառել է նաև կվինտային կամ միահնչյուն ակորդներ, բնական դոմինանտներ և նրանցով կատարվող տոնայն. անցումներ, պարզ ու կրկնակի ձայնառություն, որոնք ինքնատիպ երանգ են հաղորդել նրա մշակումներին՝ մոտեցնելով ժող. երաժշտության դիատոնիկ ոճին և դարձել ազգ. երաժշտության առանձնահատկությունները մարմնավորող, կոմպոզիտոր. անհատական գրելաձև մշակող տարրեր: Խմբերգերում ժող. կերպարն ինքնատիպորեն զարգացած է նաև հակադրության սկզբունքով՝ 2 կամ ավելի երգեր մեկ ամբողջության մեջ միավորելու միջոցով («Ալագյազ» և «Քեզի մեռնիմ», «Գացեք տեսեք», «Դե գնա, կիգամ» և «Խորոտիկ», «Ձինչ ու զինչ» և «Ձիմ վզի», «Լեպհո, լե, լե» և «Հոդալլո» ևն): Խմբերգերին միացրել է նաև ժող. պարեր՝ ստեղծելով ներկայի ժող. երգի-պարի անսամբլի նախատիպը: Կ-Մ. հայ երաժշտության մեջ ներդրել է բազմաձայնությունը և իր խմբերգերով նպաստել է ազգ. երաժշտ. լեզվի մշակմանը, կոմպոզիտոր. դպրոցի հիմնադրմանը:

Կոմպոզիտորի ծննդյան 160 ամյակին ներկայացվել է Պատարագի նոր մշակումը, որի ինքնագիրը ԳԱԹ-ում հայտնաբերել է Գրիգոր ***Փիթեճյանը***: Պարզվել է, որ Պատարագը Կ-Մ գրել է Հ. Լիմոնճյանի նոտագրությամբ: Այն փոխադրվել է եվրոպ. նոտագրության, խմբագրվել և բացահայտվել է հայ իրականության մեջ առաջին Պատարագի իսկական էությունը և ներկայացվել իր ամբողջ. մեկնությամբ: Նրա մասերից «Հայր մերը», «Սուրբ Սուրբը», «Տեր ողորմեան» իրենց մեղեդայնությամբ խիստ տարբերվում են համանուն հայտնի մեղեդիներից, որը մեկ անգամ ևս ապացուցում է հայ հոգևոր երգեցողության մեղեդիական հարստությունը:

Գրկ. *Կարապետեան Յ., Քրիստաֆոր Կարա-Մուրզա (Նրա կեանքն ու գործունէութիւնը), Թիֆլիս, 1904: Թէրլէմէզեան Ռ., Քրիստափոր Կարա-Մուրզա: Նրա կեանքը եւ գործունէութիւնը, Վնն, 1925: Մուրադյան Մ., Քրիստափոր Կարա-Մուրզա: Կյանքը և երաժշտական-հասարակական գործունեությունը, Ե., 1950: Նույնի, Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Ե., 1956: Նույնի, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970: Փիրէճեան Գ., Քրիստափոր Կարա-Մուրզա, Ե., 2013: Шавердян А., Очерки по истории армянской музыки XIX–XX веков, М., 1959; Худабашян К., Армянская музыка на пути от монодии к многоголосию, Е., 1977; Քրիստափոր Կարա-Մուրզա: Համառոտ բիբլիոգրաֆիա (կազմ.՝ Ն. Թեյմուրազյան), Ե., 1956:*

Ք. Կարա-Մուրզայի երգչախումբը Շուշիում (1894)

ԿԱՐԱԽԱՆ (Կարախանյան) Լևոն Արտեմի [24.03(05.04).1891, Թիֆլիս–27.08.1979, Թբիլիսի], քամանչահար: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1967): 1920-ին ստեղծել է Վրաստանի ժող. գործիքների պետ. անսամբլը, 1921-ին եղել Թիֆլիսի Արևելյան երաժիշտների կոմիտեի նախագահը: 1930–31-ին Իրանում ուսումնասիրել է մուղամաթի արվ-ը, հանդես եկել համերգներով: 1931–34-ին դասավանդել է Բաքվի (միաժամանակ՝ Ադրբեջանի պետ. ֆիլհարմոնիայի ժող. գործիքների նվագախմբի կոնցերտմայստեր), 1934–37 և 1940-ին՝ Թբիլիսիի կոնսերվատորիանեղում (նաև՝ ռադիոյի արվ. երաժշտության անսամբլի ղեկ.), 1937–40-ին՝ Երևանի և Լենինականի երաժշտ. ուսումնարաններում: 1939-ին մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին (Մոսկվա): Գրել



Լևոն Կարախան

Միխայիլ Կարակաշը Ֆիգարոյի դերում (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»)

Արշավիր Կարապետյան Տոմսկու դերում (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»)



Գուրգեն Կարապետյան

Էդնա Կարապետյան

է «Արևելյան ֆանտազիա», «Հայկական պարեղանակներ», «Թբիլիսյան էսքիզներ» և այլ երկեր:

ԿԱՐԱԿԱՇ Միխայիլ Նիկոլայի [1887, Կարակաշ դաստակերտ՝ Սիմֆերոպոլի մոտակայքում (Ղրիմ)–1937, Բուխարեստ], երգիչ (բարիտոն), ռեժիսոր, մանկավարժ: Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրության բաժինը, ապա՝ կոնսերվատորիան: 1911–21-ին երգել է Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնում. դերերգերից են՝ Եվգենի Օնեգին (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Ֆիգարո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Էսկամիլիո (Ժ. Բիզեի «Կարմեն»), Դև (Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դև»), Մերկուցիո (Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ»), Իշխան Իգոր (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր»): Հաճախ հանդես է եկել Ֆ. Շալյապինի խաղընկերությամբ: Շրջագայել է նաև համերգներով. երկացանկում՝ Ս. Վ. Ռախմանինովի, Ի. Ֆ. Ստրավինսկու, Ա. Տ. Գրեչանինովի և ուր. ստեղծագործություններից: 1919-ին Ալեքսանդր *Սպենդիարյանը* նրան նվիրել է «Հայաստան» ռոմանսը: 1921-ին տեղափոխվել է Իտալիա, ապա՝ Փարիզ: «Շանզ էլիզե» թատրոնում բեմադրել է Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր», Ա. Ս. Դարգոմիժսկու «Ձրահասը» օպերաները: Եղել է Բելգրադի օպեր. թատրոնի գլխ. ռեժիսոր, ապա ապրել է Ռումինիայում:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Արշավիր Գարեգինի (10.10.1929, Երևան–28.03.1987, Երևան), երգիչ (բարիտոն): ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): Ավարտել է ԵՊԿ (1957, Թ. Մելիք-Շահնազարյանի դասարան), կատարելագործվել Հռոմի «Սանտա Չեչիլիա» ակադեմիայում (1962–63, ղեկ.՝ Ջ. Ֆավարետտո): 1955–87-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ. դերերգերից են՝ Մոսի (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Օնեգին (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Էսկամիլիո (Ժ. Բիզեի «Կարմեն»), Դև (Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դև»), Ֆիլիպ, Ժերմոն, Ամոնասրո (Ջ. Վերդիի «Դոն Կառլոս», «Տրավիատա», «Աիդա»): Հյուրախաղերով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Բուլղարիայում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Կանադայում և այլուր: 1971-ից դասավանդել է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 1979-ից):

Գրկ. *Պլուզյան Վ., Կյանքում և բեմում: Ա. Կարապետյանի ստեղծագործական ողին, Ե., 1987:*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Գուրգեն Կարապետի (02.03.1921, Կիսլովոդսկ–01.12.1986, Դնեպրոպետրովսկ), դիրիժոր, կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ վաստ. (1958), Ուկր. ԽՍՀ ժող. (1976) արտիստ: Ավարտել է ԵՊԿ (1952, Կ. Սարաջևի դասարան): 1952–55-ին՝ Սամարայի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1948–52-ին՝ ԵԵԿԹ (ղեկավարել է «Երջանիկ օր», «Քաջ Նազար», «Մեծ հարսանիք», «Ազատաշունչ հողմը», «Կրկեսի իշխանուհին», «Մի քաղաք կա Վոլգայի ափին», «Կապույտ Դանուբի ափին» և այլ օպերետների առաջին բեմադրությունները), 1955–65-ին՝ Վորոնեժի, 1965–67-ին՝ Վլադիկավկազի, 1967–86-ին՝ Դնեպրոպետրովսկի սիմֆ. նվագախմբերի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: Ղեկավարել է Ե. Ֆ. Ստանկովիչի, Ի. Ֆ. Կարաբիցի և ուր. երկերի առաջին կատարումները: Գրել է մեներգ՝ սիմֆ. նվագախմբի, պոեմ՝ ջութակի և նվագախմբի համար, 5 ռոմանս (Ա. Իսահակյանի խոսքերով) և այլ գործեր:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Էդնա Մեյ (ծ. 28.05.1939, Ֆրեզնո), երգչուհի (մեցցո սոպրանո): Սովորել է Ֆրեզնոյի երաժշտ. քոլեջում: Կրթությունը շարունակել է ԱՄՆ-ի 4 մեծ համալսարանների երաժշտ. բաժիններում, աշակերտել նշանավոր երաժիշտներ Ա. Համլինին, Լ. Լեհմանին, Դ. Հարրիսին և Ռ. Պոնսելեին: Առաջին դերերգը (Սանտուցցա՝ Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ») 1964-ին՝ Նյու Յորքի քաղաք. օպեր. խմբի հետ: Այլ դերերգերով հանդես է եկել Կանզասի Քնար., Բալթիմորի քաղաք. օպեր. թատրոններում, Վաշինգտոնի օպեր. ընկերությունում: Նույն թվականին Սպիտակ տանը (Ջ. Քենեդու հիշատակին) հանդես է եկել Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայում: Երգել է Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Ռ. Վագների «Նիբելունգի մատանին» և այլ օպերաներում: 2000-ին հիմնադրել է Կալիֆոռնիայի օպերային ընկերակցությունը (գեղ. ղեկ.), 2005-ից՝ «Ոսկե դարպասներ» օպերայի հատուկ նախագծերի և բեմադրությունների գլխ. ռեժ.: Մասնակցել է մի շարք մրցույթների, արժանացել 10-ից ավելի մրց-ների:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Սերգեյ Իշխանի, Լալիկ (20.04.1933, Երևան–25.09.2015, Երևան), դուդուկահար: ՀՀ վաստ. արտիստ (1986): 1946–49-ին Արտեմ *Մեջինյանի* ղեկավարած ժող. գործիքների ինքնագործ խմբում եղել է դափահար և երգիչ, 1949-ին

հանդես է եկել Վարդան *Բունիի*, 1952-ին՝ Գուրգեն *Միրզոյանի* խմբերում, 1951–52-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների, 1964-ից (1978-ից՝ առաջին դուդուկահար և կոնցերտմայստեր)՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլներում: Նվագակցել է Օ. Համբարձումյանին, Հ. Բադալյանին, Ռ. Մաթևոսյանին, Ն. Մնացականյանին, Վ. Խաչատրյանին, Ռ. Հովհաննիսյանին և ուր.: 1979–89-ին դասավանդել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում. հիմնադրել է դուդուկի և շվիի դասարաններ: Ազգ. ռադիոյի ոսկե ֆոնդում ունի 5 *ժ* տևողության (1 *ժ* կլառնետ, 4 *ժ* դուդուկ, զուռնա) հանրահայտ մեղեդիների ձայնագրություն, թողարկել է ձայներիզներ, ձայնասկավառակներ (1987, Մոսկվա, 2003-ին՝ 3 լազեր.), տեսահոլովակներ: Մասնակցել է միջազգ. փառատոների, արժանացել մրց-ների:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2008):

ԿԱՐԱՏՈՎ (Կարապետյան) Ալեքսանդր Դանիելի [01(13).11.1882, Աստրախան–16.07.1956, Երևան], երգիչ (քնար. տենոր), հաս. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): Ավարտել է ՄՊՀ իրավաբանության ֆակ-ը (1909), ՄՊԿ (1911, Ռ. Մազետտիի դասարան): Հանդես է եկել Թիֆլիսի, Պերմի, Կիևի, Բաքվի, Սարատովի օպեր. թատրոններում, 1932–42-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ: Դերերգերից են՝ Ալմավիվա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ֆաուստ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Կոմս, Ալֆրեդ (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա»), Պինկերտոն (Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան»), Լենսկի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Լիկով (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Շեյխ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Նազար, Սարոյան (Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար», «Լուսաբացին»), Հայկազ (Կ. Զաքարյանի «Մարջան»): 1939-ին Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին: 1942–55-ին՝ Երևանի պարարվ-ի ուսումնարանի տնօրեն:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1939):

Գրկ. *Բալյան Վ., Ալեքսանդր Կարապետով, Ե., 1962:*

ԿԱՐԴՅԱՆ Նադեժդա Գրիգորի (14.04.1882, Աստրախան–20.09.1957, Երևան), երգչուհի (մեցցո սոպրանո), մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան (1913): Մինչև 1917-ը Ս. Պետերբուրգում հանդես է եկել որպես օպեր. և համերգ. երգչուհի, 1917–21-ին ձայնամշակում է դասավանդել Աստրախանի երաժշտ. դպրոցում, 1921–35-ին՝ ՄՊԿ-ին կից երաժշտ. ուսումնարանում, 1935–57-ին՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1939-ից): Կ-ին աշակերտել են Ս. Յ. Լեմեշևը, Լ. Վ. Լազարևան, Լ. Խաչատուրովը, Ե. Խաչիկյանը, Ա. Պետրոսյանը, Կ. Մարկոսյանը, Մ. Չմշկյանը, Ե. Միքայելյանը և ուր.:

«ԿԱՐԻՆ», ավանդ. երգի-պարի անսամբլ: Հիմնադրվել է 2001-ին Երևանում: Հիմնադիր-գեղ. ղեկ.՝ ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2011) Գագիկ Գինոսյան, խմբավար՝ Տաթևիկ *Շախկույան*, գործիք. մասի ղեկ.՝ Սևադա Իրիցյան: Բացի ավանդ. երգ ու պարից, երկացանկում ընդգրկված են նաև թեմատիկ ծրագրեր՝ «Հավերժի ճամփորդը» (2003), «Մեր հաղթանակը» (2004), «Հայոց երգի հայրիկը» (2007, համերգ-ներկայացում), «Վարք հայոց» (2009), «Դարձ յարմատս» (2012) ևն: Հանրապետ. մի շարք մրցույթների դափնեկիր:

«Կարին» երգի-պարի անսամբլը

«ԿԱՐՈՍ ԽԱՉ», Կարսի խաչ, հայկ. ինագույն ժող-կրոն. վիպերգ: Տարածված էր Մուշի, Մոկսի, Վանի շրջաններում: Հայտնի են վիպերգի 7 տարբերակ և 1 վերամշակված օրինակ: Մի քանիսը Վանի բարբառով են: Ամենաընդարձակ տարբերակը բաղկացած է շուրջ 200 բանատողից, որոնք (աննշան բացառությամբ) ավարտվում են «ին» հանգով, իսկ յուրաքանչյուր հատվածի վերջում կրկնվում է վիպերգին քնարականություն հաղորդող «Ծառա կըլնիմ Կարոս խաչին» տողը:

Ըստ Գ. Շերենցի գրառած տարբերակների՝ «Կ. խ.»-ի դեպքերը կատարվում են Մոկաց երկրում, հավանաբար՝ XIV–XVI դդ-ում: Ըստ Մ. Աբեղյանի՝ վիպերգի 1-ին մասը, որպես «անկախ կրոնական գրույց», ավանդվել է XIII դ-ում՝ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում,

Սերգեյ Կարապետյանը ելույթի պահին

Ալեքսանդր Կարապետով

Ա. Կարապետովը Նազարի դերում (Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար»)

Նադեժդա Կարդյան

որը հետագայում վերածվել է բանաստեղծության: Թեպետ Ստեփանոս Օրբելյանի հաղորդած ավանդությունը կապված էր Սիսականի Կնեվանքի անվան ծագման հետ, սակայն այն կրոն. բնույթով հավանաբար լայնորեն տարածված է եղել Հայաստանում, անգամ առնչվել է նշանավոր անձանց հետ: Այդ 2 տարբեր ավանդազրույցների հարակցումից ու բանաստեղծ. վերամշակումից էլ ստեղծվել է «Կ. խ.» վիպերգը: Վիպերգի՝ Մոկաց երկրում գրված լինելու մասին է վկայում պորտուգալ. աղբյուրներում XVI դ–ում գրավոր ավանդված մեկ այլ տեղեկություն, որը հայագիտությանը հայտնի է դարձել Ռ. Կյուլպենկյանի և Հ. Բերբերյանի շնորհիվ: XVI դ–ի պորտուգալացի ճանապարհորդ

Հարված «Կարոս խաչից» (գրաառումը՝ Սպիրիդոն Մելիքյանի)

Մեսրոպ Աֆոնսոն (եղել է Բիթլիսում, Խլաթում, Սասունում և այլուր) ներկայացնում է XVI դ–ի կեսերին Սասունում տարածված մի ավանդություն, որը տիպաբանորեն գրեթե նույնանում է «Կ. խ.»–ի 2–րդ անկախ մասի հետ, միայն թե վիպերգում այդ ամենը վերարտադրված է խիստ չափազանցումներով և կրոնաառասպել. գույների խտացումով: Թե՛ այդ ավանդության, թե՛ վիպերգի մեջ քուրդ իշխանը հափշտակում է խաչը՝ վերջինիս գերբնական զորությունից օգտվելու նպատակով, սակայն նա պատժվում է հենց այդ զորությամբ, որի համար զղջում է, խաչը վերադարձնում է եկեղեցուն և մատաղ խոստանում:

«Կ. խ.» սկզբնապես բաղկացած է եղել միմյանցից անկախ 2 մասերի վիպ. հարակցումից: 1–ին մասում հոտաղները դաշտում բողե բույսից խաչ են պատրաստում և երկրպագում: Խաչն օժտվում է գերբնական զորությամբ և թռչում մտնում է կարոսի (նեխուր) ածուի մեջ (որտեղից՝ վիպերգի անունը): Ալեգորիկ ընկալմամբ՝ իր հրաշագործությամբ խաչը «ցերեկը հով է անում աշխարհին, գիշերը կամար լույս կապում տաճարին»: 2–րդ մասում լուրը հասնում է գյուղի իշխանին՝ Քուրդ Պարոնին (կամ Պարսից խանին), որն իր մարդկանցով փորձում է տիրանալ խաչին, բայց խաչը թռչում է «մեծ քահանայի» գիրկը: Խաչի զորությամբ իշխանն ու նրա մարդիկ չարաչար պատժվում են, իսկ քահանան օրհնում է խաչը և մեծ թափորով տանում դնում է տաճարում:

Ըստ տարբերակներից մեկի՝ Պարոնի ուղարկած մարդը՝ Ալին, հայերից խլում է խաչը և տալիս Քուրդ Պարոնին, որից հետո Ալին, Պարոնը, նրա օրորոցի երեխան, կինը և գզիրը կատաղում են: Քուրդ Պարոնը զղջում է և 40–ական լծկան գոմեշ, անծին երինջ ու ոչխար, մի գյուգում (պղնձե աման) ոսկի մատաղ է խոստանում «Կ. խ.»–ին: Վիպերգի մի քանի տարբերակներում «Կ. խ.» մատաղը չի ընդունում, և Քուրդ Պարոնն ընդմիշտ մնում է պատուհասված:

Ենթադրվում է, որ «Կ. խ.»–ի 2–րդ մասի հիմքում Դավթի Սուրբ Նշանի (Խաչ Պատերազմի) մասին XVI դ–ի կեսերին Սասունում տարածված ավանդությունը կամ համանման այլ զրույցներն են:

Սուրբ զորությամբ օժտված խաչը ժողովուրդը համադրել է քրիստ. խորհրդանիշ խաչի հետ և այն դարձրել առավել զորավոր: Վիպերգում խաչը հայ ազգի փրկության ու հովանավորման նմուշ է, հայոց սրբավայրերն ու սրբությունները կողոպտող ու ավերող անհավատներին պատժող և պատուհասող մեծագույն զորություն:

Վիպերգը գրի են առել ժող. բանասացները XIX դ–ի 2–րդ կեսին և XX դ–ի սկզբին, երաժշտությունը՝ ***Կամիրաաը*** (Սողոմոն Փանոսյանի միջոցով, ըստ էության՝ Վասպուրականի շրջանի, բաղկացած է 9 տողից, ավելի քնարական է) և Սպիրիդոն ***Մելիքյանը*** (Վասպուրականի շրջանի մի շատախցուց, ավելի առնական է): Եղանակը բնորոշ է վիպ–ասերգ. պատումին: «Կ. խ.»–ի հետ սովորաբար երգում են Ս. Մելիքյանի գրառած «Շմոն խեծէ» զատ–

կական ալելուն, որոնք թեև ժանրերով տարբեր են, սակայն բովանդակությամբ շարունակում ու լրացնում են միմյանց:

Ա. Սեդրակյանցի, Դեբենցի, Մ. Աբեղյանի և Կոմիտասի տպագրած տարբերակների համադրությամբ՝ 1913-ին «Կ. խ.» գրառել է 80-ամյա կույր գուսան Պետրոսը (աշակերտել է Աշուղ Տալիբին և նրանից է սովորել վիպերգը):

1996-ին Ալինա *Փահլևանյանը* ԱՄՆ-ում հայտնաբերել, ուսումնասիրել և Կոմիտասի ու Ս. Մելիքյանի տարբերակների համադրությամբ 2004-ին հրատարակել է Պարսկաստանում գրառված Վասպուրականի շրջանի մի շարք երգերի ձեռագիր տարբերակներ, որոնց մեջ՝ նաև «Կ. խ.», վիպասաց Հայկ Ամեմյանի ձայնագրած սկավառակները (1961), որտեղ «Կ. խ.» պահպանված է ամբողջությամբ (երգերով և ընթերցումներով): «Կ. խ.» ուսումնասիրել և մշակել է Սեդրակ *Երկանյանը*:

Գրկ. *Աբեղյան Մ., Երկ., հ. 1, Ե., 1966, էջ 502–506: Հարությունյան Ս., «Կարոս խաչ» վիպերգի մի միջնադարյան պատում, ԼՀԳ, 1975, № 8: Կարոս խաչ: Ուսումնասիրություններ և ընտրված գրեր, կազմ. և խմբ.՝ Ս. Հարությունյան, Ժ. Խաչատրյան, Ե., 2000: Փահլևանյան Ա., «Կարոս խաչ» վիպական ասքի նորահայտ պատումները, Ե., 2004: Հայ վիպական երգեր (կազմ.՝ Ա. Քոչարյան), Ե., 2012:* Արթուր Վարդանյան

ԿԱՓՈՒՅՏ (գերմ.՝ Ventil – փական, < լատ. ventilo – փչում եմ), հարմարանք փող. մունդշտուկավոր երաժշտ. գործիքներում՝ փողի երկարությունը փոփոխելու համար: Դիատոնիկ և խրոմատիկ հնչյուններով լրացնում է բնական հնչյունաշարի տոների միջակա հատվածները: Աշխատում է պոմպային և պտտական համակարգերով: Ժամանակակից գործիքներն ունեն 4 Կ. (կվարտ–Կ.), որոնք լարվածքն իջեցնում կամ բարձրացնում են մաքուր կվարտայով:

ԿԵՂԾԱՁԱՅՆՈՒՄ, դետոնացիա, մեղեդու հնչյունների ոչ ճշգրիտ, կեղծ ձայն կատարումն ու վերարտադրումը: Հիմնական պատճառներն են վատ երաժշտ. լսողությունը, թույլ ամբուշյուրը, ձայնի ոչ ճիշտ դրվածքը:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, կենցաղում տարածված երաժշտություն. կատարվում և հնչում է համերգ. դահլիճներում, թատրոնում, բեմից դուրս: Ընդգրկում է գրեթե ողջ ժող. երաժշտությունը (աշխատանք., քաղաք., օրորոց. ևն): Բաղադրիչներն են նաև հանրամատչելի, տարածված, էստրադ. երգերն ու պար. երաժշտության զանգված. ձևերը, ներկայում՝ նաև թեթև երաժշտության զգալի հատվածը:

ԿԵՏԱԳԾՎԱԾ ՌԻԹՄ, ուժեղ և ավելի կարճ (3, 5 և ավելի անգամ) հաջորդականության ռիթմ՝ հիմնված տակտի թույլ մասում: Անվանումը պայմանավորված է նրանով, որ ուժեղ մասը սովորաբար նշագրվում է կետով (լատ.՝ punctum – կետ): Կ. ռ. հաճախ կիրառվում է քայլերգերում, ռազմերգերում հանդիսավոր բնույթի (հերոս., պաթետիկ ևն) երաժշտության մեջ, նաև բազմաթիվ պարերում և այլ պիեսներում:

Հայտված Կոմիտասի «Բամ, փորուրան» երգից

ԿԱԶԱԿԱԿԱԼ, ջութակի և ալտի հնչերեսի ներքևի մասում՝ նվագողի կզակի հենման տեղում ամրացվող հարմարանք, որի օգնությամբ նա պահում է գործիքը:

ԿԱԶԱՐԹՄՅԱՆ Էդուարդ Կարապետի [15(27).04. 1895, Թիֆլիս–26.02.1976, Կիրովական], կոմպոզիտոր, խմբավար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1964): Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1915), կոնսերվատորիան (1931): 1914-ից Այսրկովկասի բնակավայրերում հիմնադրել և ղեկավարել է երգչախմբեր, 1934-ին՝ Կիրովականում երաժշտ. դպրոց (1934–72-ին՝ տնօրեն, 1977-ից՝ Կ-ի անվ., նույն թվականին դպրո-

Կափույրային ամիսանիզմով շեփոր

Էդուարդ Կզարթման

Կիթառ

ցի առջև տեղադրվել է Կ-ի կիսանդրին), 1941-ին՝ երաժշտ. ուսումնարանը (1941–76-ին՝ տնօրեն): Հեղինակ է դաշնամուր. պիեսների, խմբերգերի: Մշակել է երգեր:

Գրկ. *Սթեփանյան Ռ., Էդուարդ Կզարթման (կյանքը և գործունեությունը), Ե., 1966:*

ԿԻԹԱՌ (իսպ.՝ guitarra, իտալ.՝ chitarra, անգլ.՝ guitar, ֆրանս.՝ guitare), լյուտնյայի ընտանիքի լար. կսմիթ. երաժշտ. գործիք: Ժամանակակից դաս. Կ. բաղկացած է 6 լարից, 19–24 մետաղե լադերով (լայնակի դասավորված շերտեր) գրիֆից (թիթեղիկ, որի վրա ձգված են լարերը), փայտե ռեզոնատորից, տափակ դեկաներից (ձայն. տատանումներն անդրադարձնող և ուժգնացնող մաս), լարերը պահող փայտե հենարանից: Լարվածքը՝ E–A–d–g–h–é, նոտագրվում է իրական հնչողությունից 1 օկտավա վեր: Հնչյունաշարը խրոմատիկ է, նվագում են պլեկտրով: Կ-ի ձայնն ուժեղ չէ, հրաշալի զուգակցվում է երգչաձայնի և գործիքների հետ: Գործածվում է որպես մենակատար և նվագակցող գործիք:

Եվրոպ. աղբյուրներում Կ-ին նման գործիքները հիշատակվում են XIII դ-ից: Հավանաբար արաբներն են դրանք բերել Իսպանիա, որտեղից էլ տարածվել են այլ երկրներում: Նախ ընդունված էր 4-լարանի, ապա տարածվել են 5-, 6- և 7-լարանի Կ-ները: XIX դ-ի վերջին երևան է եկել հավայան Կ., որը Հավայան կղզիներ են բերել ամերիկացները մոտ 1830-ին: Տեսակներից են նաև քնար–Կ. (IX դ., որպես նվագակցող գործիք օգտագործել են Փարիզում և Լոնդոնում 1780–1817-ին), ուկուլելեն (4-լարանի, XIX դ-ում եկվորները Հավայան կղզիներ բերել են Պորտուգալիայի Մադեյրա կղզուց):

Նոր ժամանակներում ջազ. և ժամանց. երաժշտության մեջ գործածում են էլեկտրակիթառ: Նրա վրա տեղադրված 1 կամ մի քանի ձայնարտաբերող մասերը (ադապտեր) մետաղ. լարերի տատանումները փոխակերպում են էլեկտր. ազդանշանների, որոնք անցնում են ուժեղացուցիչով: Տարբերում են սնամեջ (կիսաակուստիկ.) և ամբողջ. իրանով Կ-ներ: Ջազում երաժիշտները նախընտրում են սնամեջ, ռոքում՝ ամբողջ. Կ.: Լարվածքը՝ E–A–d–g–h–e: Արտադրվում է 1930-ից: Էլեկտրական բաս-Կ. (ստեղծել է Լ. Ֆենդերը) տարածվել է 1951-ից:

ԿԻՆԵՄԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտության տեսակ, կինոարտադրության բաղադրիչներից և կարևոր արտահայտչամիջոցներից է: Կ. զարգացել է համր և հնչուն կինոյի շրջաններում:

Համր կինոյում երաժշտություն հնչել է ֆիլմի ցուցադրման ժամանակ՝ դաշնամուրի նվագակցությամբ (եռյակ, երբեմն՝ նվագախումբ) և դարձել համր ֆիլմի մշտ. ուղեկիցը: Թողարկվել են ֆիլմերի ցուցադրման համար գրված երաժշտ. ստեղծագործությունների ալբոմներ: Կոմպոզիտորները ձգտել են կինոդրամատուրգիական երկին բնորոշ միակ և որոշակի երաժշտ. լուծումների: Ձայնագրման սարքի շնորհիվ յուրաքանչյուր ֆիլմի համար նախատեսված էր ֆոնոգրամա, որի հնչյունաշարում ընդգրկվել են խոսք և աղմուկներ:

Հնչուն կինոյի ստեղծումից հետո (1930-ական թթ-ից) տարբերում են Կ-ի ներկադրային (համապատասխանում է կադրում տեղի ունեցող տեսարաններին, գործողություններին) և արտակադրային («հեղինակային», «պայմանական») տեսակները:

Հայկ. Կ-յան հիմնադիրն Արամ *Խաչատրյանն* է («Պեպո», 1935, «Զանգեզուր», 1938): Կ. են գրել նաև Ս. Բարխուդարյանը («Կարո», 1937, «Քաջ Նազար», 1940, «Շունն ու կատուն», 1938, մուլտֆիլմ), Ա. Սաթյանը («Վեց համազարկ», 1937, «Լեռնային արշավ», 1939, «Գվարդիական կինը», 1942, «Դուստրը», 1943, «Դավիթ Բեկ» 1944, ևն), Հ. Ստեփանյանը («Լեռնային հեղեղ», 1939, ևն), Ա. Հարությունյանը («Ուրվականները հեռանում են լեռներից», 1955, «Սիրտն է երգում», 1956), Ս. Ձրբաշյանը («Ոսկե ցլիկ», 1955, ևն), Ղ. Սարյանը («Հովազաձորի գերիները», 1956, «01-99», 1959, ևն), Գ. Արմենյանը («Նվագախմբի տղաները», 1960, «Տերտերին ուխտը», 1964, ևն), Գ. Հախինյանը («Քաղաքավարության վնասները», 1964, ևն), Ա. Այվազյանը («Մոր սիրտը», 1957, «Ինչո՞ւ է աղմկում գետը», 1958, ևն), Ա. Բաբաջանյանը («Առաջին սիրո երգը», 1958, «Հարսնացուն հյուսիսից», 1975, ևն), Է. Միրզոյանը («Դժվար անցում», 1965, «Խաչմերուկի դեղատունը», 1987, ևն), Ս. Շաքարյանը («Մորգանի խնամին», 1970, ևն), Յ. Հարությունյանը («Խոշոր շահում», 1980, ևն), Է. Հովհաննիսյանը («Պատվի համար», 1956, «Ճանապարհ», 1961, ևն), Մ. Վարդա-

զարյանը («Բարև, ես եմ», 1965, «Սարոյան եղբայրներ», 1969, «Կարոտ», 1990, ևն), Տ. Մանսուրյանը («Մենք ենք, մեր սարերը», 1969, «Նռան գույնը», 1969, «Աշնան արև», 1977, «Կտոր մը երկինք», 1980, ևն), Ա. Տերտերյանը («Երևանյան օրերի խրոնիկա», 1972, «Ապրիլ», 1985, ևն), Ռ. Ամիրխանյանը («Հեղնար աղբյուր», 1970, «Հայրիկ», 1972, ևն), Խ. Ավետիսյանը, Վ. Աճեմյանը, Է. Բաղդասարյանը («Եռանկյունի», 1967, «Ձորի Միրոն», 1981, ևն), Կ. Օրբելյանը, Ե. Երզնկյանը, Ս. Լուսիկյանը, Գ. Հովունցը, Ա. Սմբատյանը, Հայկոն (Հայկ Հակոբյան), Թ. Հակոբյանը և ուր.:

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ [1270-ական թթ., Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառի Ագրակ (Ագարակ) ավան–1356, ամփոփվել է Երզնկայի Սբ Սարգիս եկեղեցում], վարդապետ, աստվածաբան, բանաստեղծ, մանկավարժ: Սովորել է Գլաձորի համալսարանում և Երզնկայում, որտեղ ծավալել է գիտամանկավարժ. գործունեություն: Կ. Ե. թողել է բազմաժանր գրական ժառանգություն՝ դավան., մեկնող. երկեր, խրատներ, ներբողներ, լուծմունքներ, չափածո գործեր, շարականներ, որոնք պահպանվել են բազմաթիվ ընդօրինակություններով: Զարգացրել է նախորդների, մասնավորապես՝ Հովհաննես Երզնկացու (Պլուզ) փիլ. հայացքներն ու տեսակետները: Կ. Ե. աշխ-ներում արժեքավոր տեղեկություններ է հաղորդել հայ և այլ ժողովուրդների կենցաղի, բարքերի, սովորույթների, օրենքների մասին: Շարունակելով իր դպրոցի ավանդները՝ նա պայքարել է հայոց միասնությունը պառակտող այլազգի և դավանափոխ հայ քարոզիչների դեմ («Թուղթ առ Կանեցիս», 1323–24, ևն):

Կ. Ե-ի չափածո գործերից քիչ են պահպանվել, սակայն նրանց բարձրարժեքության շնորհիվ հեղինակը հռչակվել է որպես մեծ շարականագիր: Երաժշտաբանաստեղծ. բարձրարվ. գործերից է Շարակնոցը եզրափակող, Աստվածածնի Վերափոխմանը նվիրված «Արևելք գերարփին...» շարականը, որն աչքի է ընկնում ավանդ. հնարքների (գրել է ակրոստիքոսի ձևով), բանաստեղծ. ներշնչման և մեղեդիական մարմնավորման ներդաշնակ համադրումով:

Կ. Ե. 1000-ամյա զարգացման ընթացք ունեցող հայ շարականերգության վերջին նշանավոր ներկայացուցիչներից է:

Գրկ. *Եւագր Պոնտացի, Վարք եւ մատենագրութիւնք, աշխատասիր. և ծնթգր.՝ Բարսեղ Սարգիսյանի, Վնտ., 1907: Դանիելյան Ա., Կիրակոս Երզնկացի, «Գանձասար», 6, 1996:*

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Անուշ Մեսրոպի (ծ. 14.12.1957, ք. Ալավերդի), քանոնահարուհի, մանկավարժ: Սովորել է Ալավերդու Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. դպրոցում (դասատու՝ Ն. Աղվանյան), ավարտել Վանաձորի Մ. Թավրիզյանի անվ. երաժշտ. (1975, դասատու՝ Է. Կոջոյան), Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. (1977, դասատու՝ Ձ. Միքայելյան) ուսումնարանները, ԵՊԿ ժող. գործիքների բաժինը (1990, Խ. Ավետիսյանի դասարան) և ասպիրանտուրան (1993, ղեկ.՝ Ա. Աթաբեկյան): 1990–2012-ին դասավանդել է ԵՊԿ-ում: Աշխատել է Հայկ. ժող. երգի-պարի (1979–88), Հայաստանի պարի պետ. (1992–93), Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների (1993–2009) անսամբլներում: Հիմնադրել է Երևանի զինվ. գնդի (1993–98, նաև ղեկ.), «Երևան» (2014–15) ժող. գործիքների անսամբլները: 2008-ից՝ Կ. Սարաջյանի անվ. երաժշտ. դպրոցի ժող. գործիքների անսամբլի ղեկ. (նաև դասատու): Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, Շվեյցարիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Մերձ. Արևելքում, Ֆրանսիայում, Թաիլանդում և այլուր: Կ-ի կատարումները ինչել են «Միսս Մարիա» (Իրան), «Արամ» (Ֆրանսիա, «Սահմկալ ես» ժող. երգի Կ-ի մշակումը) կինոնկարներում: Հեղինակ է «Անմար գոհարներ» (գիրք 1, 2, 2005, 2010), «Փոխադրումներ քանոնի համար» (2010), «Խաչատուր Ավետիսյանի կոնցերտային պիեսները քանոնի համար» (2010) դասագրքերի և հոդվածների: Փոխադրել և գործիքավորել է Ա. Սպենդիարյանի «Նազպարը», Թ. Ալթունյանի «Էշխեն էր» (երկուսն էլ՝ քանոնի համար), «Նուբարի բոյը չինար է», «Ալ այլուղս» (երկուսն էլ՝ ժող. գործիքների համար) և այլ գործեր:

«Կիրակոս և Մկրտիչ Երզնկացիները աշակերտների հետ», մանրանկար (Մեկնություն, 1334, Մխիթ., ձեռ. № 1379)

Անուշ Կիրակոսյանը ելույթի պահին

«Armenian Music Awards» մրցանակաբաշխության 1-ին մրց. (2000, Լոս Անջելես):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գայանե Բոգդանի [ծ. 13.06.1959, Բաթում (Վրաստան)], երաժշտագետ: ՀԿՄ անդամ (1996-ից): Ավարտել է Վանաձորի Մ. Թավրիզյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տես-կոմպոզիտոր. (1978), ԵՊԿ երաժշտագիտության (1983, Ռ. Ստեփանյանի դասարան)

Գայանե Կիրակոսյան

Կլառնետ

Կլավեսին

Կլավիկորդ

բաժինները: 1987–94-ին դասավանդել է Երևանի N 2 արվ-ի, 1994-ից՝ Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցներում, 1996–98-ին՝ Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում: 1997–99-ին՝ «Միր» հեռուստաընկերության թղթակից: Հեղինակ է երաժշտ. մանկավարժությանը, հայ, ռուս, վրացի ժամանակակից կոմպոզիտորներին վերաբերող հոդվածների, նաև ռադիոհաղորդումների՝ նվիրված հայկ., ռուս., վրաց. մշակույթին:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, գործնական երաժշտություն (գերմ.՝ Gebrauchsmusik, Funktionale Musik), ժանրեր և օպուսներ, որոնք նախատեսվում են որոշակի, այսպես կոչված, ոչ գեղ. գործառույթներ կատարելու համար: Հին կամ հնագույն (նաև բանահյուս.) մշակույթներում երաժշտությունը եղել է հիմնականում կիրառ. բնույթի. գործածվել է ծիս. արարողություններում, կոլեկտիվ աշխատանքներում (աշխատանք. երգեր ևն): Եվրոպ. ավանդ. մշակույթում երաժշտությունը կիրառ. խնդիրներ է լուծել եկեղեց. պաշտամունքում, նաև արարողություններում: XIX դ-ից Կ. ե-յան մեջ գերակշռել են ժամանց. ժանրերը (սալոն. պար. երաժշտություն, շլյագեր, գնչուական ռոմանս ևն): Ժամանց. պար. և ազդանշան. երաժշտությունից բացի՝ ժամանակակից Կ. ե-յանն են պատկանում նաև թատրոնի ու կինոյի երաժշտության որոշ տեսակներ, որոնք, չլինելով ինքնուրույն գեղ. երկեր, լուսաբանում են առանձնակի կարևորության խնդիրներ:

ԿԼԱՌՆԵՏ (իտալ.՝ clarinetto, < լատ. clarus – պարզ), փայտե փող. երաժշտ. գործիք: Կազմված է եռամաս փողից (590–680 *մմ*) և կտուցաձև ծվանից, որի վրա ամրացված է եղեգնյա պիպիչը: Ժամանակակից Կ. ունի մոտ 20 կափույր և 7 անցք: Ամենամեծ դիապազոն ունեցող (շուրջ 4 օկտավա) փայտե փող. գործիքն է: Տարբերում են՝ ա. մեծ կամ սոպրանո՝ սի բեմոլ (in B), լա (in A) կամ դո (in C), բ. փոքր կամ պիկկոլո՝ ռե (in D) կամ մի բեմոլ (in Es), գ. ալտ կամ տենոր (բասետհոռն՝ ֆա (in F), դ. բաս՝ սի բեմոլ (in B) լարվածքներով տեսակները: Գործածությունից դուրս է եկել լա (in A) լարվածքի բաս-Կ.: Տեխնիկապես ամենադինամիկ (ֆլեյտայից հետո) փայտե փող. գործիքներից է. ունի արտահայտիչ, հյութեղ և ջերմ, բարձր ռեգիստրում՝ վճիտ, պարզ, երբեմն՝ սուր, ցածրում՝ քիչ մռայլ, թախծոտ, թավ ձայն: Տոնայնափոխ գործիք է, նոտագրվում է ջութակի բանալիում: Մենակատար գործիք է, ընդգրկում են նաև նվագախմբերում և անսամբլներում:

Ստեղծվել է XVII դ-ի վերջին՝ սրնգից:

ԿԼԱՎԵՍԻՆ (ֆրանս.՝ clavecin), լար. կսմիթ. ստեղնավոր երաժշտ. գործիք, դաշնամուրի նախատիպերից: Հայտնի է XV դ-ից, առաջացել է Փսալտերիումից (Սաղմոսարան): Ստեղները սեղմելիս լարերը կսմիթվում են փետուրե ձողիկներով (հետագայում՝ կաշվե կնտնտոցով): Ձայնը գեղեցիկ է, սակայն՝ նվազ երգային: Նախապես ունեցել է քառանկյան, XVII դ-ից՝ եռանկյան ձև: Դիապազոնը 4–5 օկտավա է: Ունի մի քանի տեսակներ (կլավիցիտերիում՝ ունի ուղղաձիգ իրան ևն): XVIII դ-ից աստիճանաբար դուրս է եկել գործածությունից, վերածնվել է XX դ-ում: Կ-ի համար երաժշտություն են գրել Դ. Սկառլատտին, Ժ. Ֆ. Ռամոն, Ֆ. Կուպերենը և ուր.:

ԿԼԱՎԻԿՈՐԴ (լատ.՝ clavichordium, < լատ. claris – բանալի և chorda – լար), ստեղնավոր լար. հարված. երաժշտ. գործիք: Հիշատակվում է XV դ-ից, հնագույն պատկերը՝ XVI դ-ից: Տարածված էր Եվրոպայում: Ուներ քառանկյուն երկարավուն տուփի ձև, ստեղնաշարին զուգահեռ (երկայնական պատին) ձգված նույն երկարության լարեր, որոնք հնչում էին ստեղների ծայրերին ամրացված մետաղե բարակ թերթիկների (տանգենտներ) հարվածից. որքան ուժգին էր հարվածը, այնքան բարձր էր հնչում ձայնը: Երբ թերթիկը սեղմված էր լարին, կատարողը կարող էր փոփոխել հնչյունի բարձրությունը:

Հին Կ. եղել է դիատոնիկ, դիապազոնը՝ 3–3 ½ օկտավա, XVIII դ-ի սկզբին հասել է 5-ի: XIX դ-ում Կ. փոխարինվել է դաշնամուրով: XX դ-ում վերածնվել է. օգտագործվում է հնագույն երաժշտություն կատարելու համար:

ԿԼԱՎԻՐ (գերմ.՝ Klavier), 1. ստեղնաշար. երաժշտ. գործիքների (կլավիկորդ, կլավեսին, դաշնամուր) ընդհանուր անվանումը: 2. Երգեցողության և դաշնամուրի կամ միայն դաշնամուրի համար վոկալ-սիմֆ. ստեղծագործության (օպերա, օրատորիա, կանտատ ևն) պարտիտուրի, նաև բալետի պարտիտուրի փոխադրումը դաշնամուրի համար: Երբեմն կլավիր են

անվանում սիմֆ. կամ կամեր-անսամբլ. երկերի դաշնամուր. փոխադրությունը (2, 4 կամ 8 ձեռքի համար):

ԿՅՈՒՏԵՆՅԱՆ (Գյուտենյան) Հայկ Սարգսի (19.05.1886, Կեսարիա–2.05.1972, ԱՄՆ), ջութակահար, կոմպոզիտոր: Բրյուսելում աշակերտել է Մ. Թոմսոնին, Պրահայում՝ Օ. Շևչիկին (ջութակ), Վ. Նովակին (կոմպոզիցիա), Փարիզում՝ Վ. դ'Էնդիին (տեսություն): 1905-ից համերգներով շրջագայել է Եվրոպայի և Միջին Արևելքի երկրներում, 1908–09-ին՝ Թիֆլիսում և Կովկասի այլ քաղաքներում: 1918-ին Կ-ին հրավիրել են ԱՄՆ՝ փոխարինելու ջութակի վարպետ-մանկավարժ Է. Իզայիին, որտեղ աշխատել է երկար տարիներ: Կնոջ՝ դաշնակահարուհի Կ. Լոուի հետ ելույթները շարունակել է ԱՄՆ-ում, Անգլիայի (նշանավոր դիրիժոր Հ. Վուդի հրավերով), Ֆրանսիայի մի շարք քաղաքներում: Կ-ի կատարումները Փարիզում (1926) արժանացել են բարձր գնահատականի (բացառիկ տեխնիկա, հնչերանգների վարպետ, նուրբ ճաշակ, խոր հուզականություն): Գրել է ծրագր. սիմֆոնիաներ, երկեր՝ ջութակի («Հայկական մեղեդի», «Հայկական օրորոցային», «Աշուղ», «Արևելյան երեք պար», «Անցնող քարավան», «Հովիվ» ևն), ալտի, դաշնամուրի, ձայնի, նվագախմբի համար:

ԿՈԴԱ (իտալ.՝ coda – պոչ, հավելում), երաժշտ. որևէ ամբողջ. պիեսի լրացուցիչ, եզրափակիչ բաժինը: Կ-ին բնորոշ է կառուցվածք. ու հարմոնիկ կայունությունը (վերին ձայների վարընթաց մեղեդիական շարժում, ավարտող դարձվածքների կրկնություն և կոտորակում, տոնիկային ձայնառություն ևն): Դանդաղ տեմպով կատարվող պիեսներում Կ. սովորաբար դանդաղեցվում է, արագ պիեսներում՝ արագացվում:

ԿՈԴԵՏՏԱ (իտալ.՝ codetta – «պոչիկ»), *ֆուգայում* միմյանց կապում է թեմայի ավարտն ու սկսվող պատասխանը, սոնատ. ձևում մեկ անգամ ևս հաստատում է եզրափակիչ պարտիայի տոնայնությունը:

ԿՈՋԻԿՅԱՆ (Գոզիկյան) Վարուժան Ավետիսի [ծ. 07.01.1936, Կոնստանցա (Ռումինիա)], ջութակահար: Ավարտել է Բուխարեստի կոնսերվատորիան (1957, Կ. Ավագյանի դասարան): Առաջին անգամ ելույթ է ունեցել 1954-ին Բուխարեստում, 1958-ից՝ բազմաթիվ երկրներում (նաև ԽՍՀՄ-ում): 1959-ից՝ Բուխարեստի ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար, 1960-ից՝ կոնցերտմայստեր: Հանդես է եկել նաև համերգներով՝ անսամբլների կազմում: Դասավանդել է Բուխարեստի կոնսերվատորիայում (պրոֆ.): Նվագացանկում՝ Ա. Վիվալդիի, Լ. վան Բեթհովենի, Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի, Ռ. Շումանի, Պ. Ի. Չայկովսկու, Ի. Ֆ. Ստրավինսկու, Մ. Ռավելի, Ա. Խաչատրյանի, Կոմիտասի և ուր. երկերից: Մենահամերգով հանդես է եկել նաև Երևանում (1968):

Վարուժան Կոզիկյանը ելույթի պահին

Միջազգ. մրցույթների [Պ. Ի. Չայկովսկու անվ., Ջ. Էնեսկուի անվ., Ժնևի (1957–58) ևնլ դափնեկիր:

ԿՈԼՈՐԱՏՈՒՐԱ (իտալ.՝ coloratura – զարդարանք), վոկալ երաժշտության տեխնիկապես հագեցած վիրտուոզ. «զարդարուն» հատվածներ: Կ-ի հոմանիշը ֆիորիտուրան է (իտալ.՝ fioritura – «գունավոր»): XII դ-ից (սկզբնապես՝ իտալ. օպերայում) հանդես է եկել նոր նշանակությամբ՝ որպես արիայի բաղկացուցիչ մաս: Կ-ի օգտագործմամբ պայմանավորված՝ ձևավորվել է այլազան մեղեդիական «զարդարանքները» ազատ ու թեթև կատարող «կոլորատուրային ձայնի» (մասնավորապես՝ կոլորատուր. սոպրանո) հասկացությունը: Տես նաև *Զարդհնչյուններ*:

Հատված Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի կլավիրից

Միխայիլ Կոկժաև

Մ. Կոկժաևի «Երաժշտական փիլոսոփայի փեղա-գրություն» գրքի (ռուս., 2004) շապիկը

Կոմիտաս Ա. Աղցեցի

ԿՈԿԺԱԵՎ Միխայիլ (Կոկժայան Միքայել) Արտեմի (ծ. 20.05.1946, Բաքու), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2015): Արվեստագիտ. թեկնածու (2007), պրոֆ. (2012): Բնական գիտությունների եվրոպ. ակադ-ի ակադ. (2011): Ավարտել է Բաքվի կոնսերվատորիան (1971), կատարելագործվել Մոսկվայում (ղեկ.՝ Յ. Ա. Ֆորտունատով): 1989-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1998-ից): Գրել է սիմֆ., կամեր., խմբերգ., վոկալ, մանկ., ջազ. ստեղծագործություններ, 6 սիմֆոնիա (1971, 1974, 1982, 1987, 1989, 1998), ադաջո՝ «Նմանակելով Ալեքսանդր Հարությունյանին» (2008), «Garden of Stones-2» պարաֆրազ (ըստ Գ. Գուինոյի, 2010)՝ սիմֆ. նվագախմբի համար *ստեղծագործություններ՝ կամեր. նվագախմբի համար* («To the Temple»՝ 13 մենակատարներից բաղկացած կամեր. անսամբլի համար, 1990, «Հիշատակի օր»՝ երկրաշարժի զոհերի հիշատակին, 1990, «Նահատակներին»՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, 1991, «Սուրբ Գրիգոր Նարեկացու լուսավորումն ու ողբը», 2001, «Insomnia»՝ բարիտոնի և կամեր. նվագախմբի համար, ըստ Վ. Շեքսպիրի, 2011, «Concerto Grosso», 2004, Concerto Buff, 2006, «Մոխրոտիկի առաջին պարահանդեսը», 2010, «Պարզ մեղեդի»՝ ջութակի և լար. նվագախմբի համար՝ նվիրված Բ. Լիվշիցին, «Պավանա»՝ թավջութակի և լար. նվագախմբի համար, 2008, ևն), գործիք. կոնցերտներ, կվարտետներ, կվինտետներ, տրիոներ, սոնատներ, ստեղծագործություններ՝ գործիք. անսամբլների համար, ևն:

Կ-ի ստեղծագործությունները կատարվել են Երևանում, Թբիլիսիում, Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Ռիգայում, նաև Ֆրանսիայում, Հոլանդիայում, Գերմանիայում, Կանադայում և այլուր:

Ուսումնասիրությունները վերաբերում են երաժշտ. տարածության հիմնավոր օրինաչափություններին: Մշակել է երաժշտ. ստեղծագործությունների վերլուծության մեթոդիկան:

Ա. Խաչատրյանի անվ. մրցանակաբաշխության 1-ին մրց. (1993), ՀՀ Մ՚Ն ոսկե մեդալ (2011):

Երկ. *Квартеты советских композиторов, М., 1988; Топология музыкального пространства, М., 2004; Сильва Бунатян [О представителе армянской фортепианной школы], Е., 2005; Александр Арутюнян: особенности композиторского стиля, М., 2006; Полифония в музыке Александра Арутюняна, Е., 2012.*

ԿՈՄԵԴԻԱ-ԲԱԼԵՏ (ֆրանս.՝ comédie-ballet), ֆրանս. բեմարվ-ի ժանր. բնորոշ է XVII դ-ի կեսերին. միավորել է երկխոսություն, պար, մնջախաղ, գործիք., երբեմն՝ վոկալ արվ-ները, նաև կերպարվ-ը: Սկզբնավորել են Մոլիերը և Ժ. Բ. Լյուլլին՝ բալետմայստեր Պ. Քոշանի, ձևավորող Կ. Վիգարանիի հետ. բեմադրել են «Բռնի ամուսնություն», «Արքայադուստր Էլիդացին» (երկուսն էլ՝ 1664), «Սիցիլիացին կամ Սեր-գեղանկարիչը» (1667), «Ժորժ Դանդեն» (1668), «Հրաշալի սիրեկաններ», «Քաղքենին՝ ազնվական» (երկուսն էլ՝ 1670), Մոլիերի «Երևակայական հիվանդը» (ըստ Մ. Ա. Շերպանտիեի երաժշտության) և այլ Կ-բ-ներ: Կ-բ-ները մեծապես ազդել են ֆրանս. երաժշտ. թատրոնի զարգացման վրա. փոխել են նրա երաժշտ. ձևերն ու հնարները, որոնք Ժ. Բ. Լյուլլին օգտագործել է քնար. ողբերգություններում, իսկ XVIII դ-ում այն կիրառել են նաև կոմիկ. օպերայում:

ԿՈՄԻԿԱԿԱՆ ՕՊԵՐԱ (ֆրանս.՝ opéra comique), լայն առումով՝ կատակերգ. բովանդակության օպերա, մասնագիտ. առումով՝ ֆրանս. երաժշտ. թատրոնի տեսակ (երկխոսություններ՝ ընդմիջող երգերով ևն): Սկզբնավորվել է XVII դ-ում տոնավաճառներում (Սեն-Ժերմեն)՝ ֆարսից և պարոդիայից: Կ. օ-ի ինագույն ձևը հայտնի է «արիետտաներով կոմեդիա» անվամբ: XVIII դ-ի վերջին տարածվել է նրա «լալկան» տեսակը՝ «քաղքենիական դրամայի» ոգով: Ավելի ուշ Կ. օ-ի սատիրայի և երգիծանքի տարրերից ընդգրկվել են օպերետում: Հայտնի են նաև օպերա-բուֆ (Իտալիա), բալլադային օպերա (Անգլիա), տոնադիլա (Իսպանիա), զինգշպիլ (Գերմանիա, Ավստրիա) և այլ տեսակներ: XX դ-ում այդ ժանրի գործեր են գրել Ջ. Պուչչինին, Մ. Ռավելը, Ռ. Շտրաուսը, Պ. Հինդեմիթը, Ի. Ֆ. Ստրավինսկին, Ռ. Կ. Շչեդրինը, Տ. Ն. Խրեննիկովը և ուր.: Կ. օ-ին մասամբ մոտ են մյուզիքլը, երաժշտ. կինոկատակերգությունը, օպերետը և այլ երաժշտադրամատիկ. ժանրեր:

ԿՈՄԻՏԱՍ Ա. ԱՂՑԵՑԻ, Շինող [ծ. թ. անհտ, գ. Աղցք (Արագածոտն գավառ)–628, Դվին], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 613-ից: Տիզբոնում մասնակցել է Պարսից ժողովին, ներկայացրել Հայ

եկեղեցու Հավատո գիրը (Դավանության թուղթը), որտեղ դատապարտել է Քաղկեդոնի ժողովը, նաև նեստորականությունը: Ծավալել է շին. և հոգևոր-մշակութ. գործունեություն:

Կ. Ա. Ա. նաև բանաստեղծ-երաժիշտ էր, հայ շարականերգության նշանավոր ներկայացուցիչ: Հայտնի է նրա՝ Սբ Հռիփսիմյան կույսերի հիշատակին նվիրված կանոնի օրհնությունը՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը, որտեղ ազգ. հիմքի վրա առաջին անգամ գործածել է բյուզ. տաղաչափ. և կառուցվածք. առանձնահատկությունները: Այդ երկը գրական խոսքի և մեղեդային մտածողության յուրօրինակ դրսևորում է, որը դարեր շարունակ չափանմուշ է եղել հետագա շարականագիրների համար: Այդուհետ այբբեն. ծայրակապով հորինված շարականներն անվանել են «Անձինք»:

Գրկ. *Օրմանեան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Թահմիզյան Ն., Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, «ԼՀԳ», 1971, № 1:*

ԿՈՄԻՏԱՍ, Կոմիտաս վարդապետ [Սողոմոնյան Սողոմոն Գևորգի, 26.09(08.10).1869, Քյոթահիա (Կուտինա՝ Թուրքիա)–22.10.1935, Փարիզ, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], կոմպոզիտոր, երաժշտագետ, երգիչ, խմբավար, մանկավարժ: Հայկ. ազգ. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրը: 1881-ին Քյոթահիայի առաջնորդ. փոխանորդ Գևորգ վարդապետ Դերձակյանը որբացած պատանուն բերել է Էջմիածին և ուսման տվել Գևորգյան ճեմարանում, որտեղ գեղեցիկ ձայնի և երաժշտ. ցայտուն ունակությունների համար հատուկ ուշադրություն են դարձրել նրա երաժշտ. դաստիարակությանը:

Վաղ տարիքում Սահակ Ամատունու ղեկավարությամբ հիմնովին ուսումնասիրել է եկեղեց. երաժշտության տես. ու գործն. հիմունքները, հայկ. նոտագրությունը, հեղինակավոր աղբյուրներից գրառել հնագույն հոգևոր եղանակներ: Միաժամանակ հավաքել է ժող. երգեր, ուսումնասիրել և կատարել ստեղծագործ. փորձեր: Ճեմարանը ավարտելուց (1893) հետո նշանակվել է երաժշտության ուսուցիչ, եղել է նաև խմբավար Մայր տաճարում: 1894-ին ձեռնադրվել է աբեղա, 1895-ին՝ վարդապետ, ստացել է Կոմիտաս անունը՝ ի պատիվ *Կոմիտաս Ա. Աղցեցի* կաթողիկոսի: Նույն տարվա աշնանը Թիֆլիսում ուսանել է Մակար *Եկմալյանի* ղեկավարությամբ, 1896–99-ին ուսումը շարունակել և ավարտել է Բեռլինում՝ Ռ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և Արքուն. համալսարանում:

Միջազգ. երաժշտ. ընկերության հիմնադիր անդամներից էր. հավաքներում հանդես է եկել հայ երաժշտության մասին զեկուցումներով, ներկայացրել ժող. երգեր և իր մշակումները: 1899-ից Էջմիածնում շարունակել է գիտ., ստեղծագործ., մանկավարժ. աշխատանքը, ճեմարանի քառաձայն երգչախմբով ելույթներ ունեցել Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում և Բաքվում: 1906-ին Փարիզում ներկայացրել է (Ֆրանսիայի «Լամուրյո» համերգ. ընկերության երգչախմբով) իր մշակած հայ ժող. և հոգևոր երգերը: 1907-ին Ռ. Ռոլանի հրավերով Սոցիալ. գիտությունների բարձրագույն դպրոցում դասախոսություններ է կարդացել հայ երաժշտության մասին: Նույն թվականին Փարիզում տպագրվել է նրա ստեղծագործությունների առաջին ժող-ը (12 երգ): Համերգներով շրջագայել է Շվեյցարիայում (Յուրիխ, Ժնև, Լոզան), դասախոսել ՎնտՄՄ-ում: 1910-ին Էջմիածնից տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստեղծել է 300-հոգանոց «Գուսան» (1912-ից՝ «Հայ գուսան») բազմաձայն երգչախումբը, համերգներով հանդես եկել Կ. Պոլսում, Ադաբազարում, Պարտիզակում, Ալեքսանդրիայում, Կահիրեում և այլուր:

1913-ին Կ. Պոլսի «Ազատամարտ» հանդեսում տպագրվել է Կ-ի «Հայն ու նի ինքնուրույն երաժշտություն» հրապարակախոս. բարձրարժեք հոդվածը: 1914-ին Փարիզում հայկ. ժող. և հոգևոր երաժշտությանը նվիրված մի քանի զեկուցումներ է կարդացել միջազգ. երաժշտ. ընկերության համաժողովում, արժանացել Եվրոպայի առաջատար երաժշտագետների բարձր գնահատանքին:

Կոմիտաս

Կոմիտասի արձանը (1969, քանդ.՝ Ա. Հարությունյան, Երևան)

Կոմիտասի «Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» գրքի (1974, Անթիլիաս) կազմը

Մասնակցել է նաև թուրք. մշակութ. կյանքին. Ստամբուլի Բայազետ թաղի «Թուրք օջախ» մշակութ. կենտրոնի հրավերով դասախոսություններ է կարդացել 1915-ի ապրիլի 2-ի և 3-ի բացառիկ երեկույթներին, մեներգել և իր երգչախմբով կատարել իր ստեղծագործությունները, որոնք արժանացել են մեծ ընդունելության: 1915-ին թուրք. կառավարության կազմակերպած հայկ. կոտորածն ընդհատել է Կ-ի բեղմնավոր գործունեությունը: Եղեռնի սարսափներն ապրելով և կրելով աքսորի մղձավանջը՝ նա կորցրել է մտավոր հավասարակշռությունը և մինչև կյանքի վերջը մնացել հոգեբուժ. հիվանդանոցներում (1919-ից՝ Փարիզի): Հիվանդության առաջին տարիներին զգալիորեն տուժել է նաև նրա ձեռագիր ազգագր. և գիտ. ժառանգությունը:

Հատված Կոմիտասի Պատարագից

Կ-ի բազմակողմանի գործունեության մեջ առավել կարևոր են ստեղծագործությունը և հավաքչական ու գիտ. աշխ-ները: Ժող. երգերը հայտնաբերել է գեղջկական կենցաղի ընդերքից, գրառել ժողովրդի պատմության ու հոգեբանության գերազանց իմացությամբ, ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ և գիտնականի խոր վերլուծությամբ: Նրանք բազմաժանր են, հիմնովին երևան են բերում հայ ազգ. ոճն ու լեզուն, արտահայտչամիջոցների բազմազանությունն ու ինքնատիպությունը: Կ-ի՝ երաժշտ. բանահյուսության մի շարք հնագույն և բարձրարվ. նմուշների հայտնաբերումը (հորովելների եղանակները, «Սասունցի Դավիթ» և «Մոկաց Միրզա» հնագույն վիպերգերը, միջնադար. անտունիները, հոգևոր տաղերը) դիտարկվում է որպես պատմամշակութ. խոշոր հայտնագործություն: Նրա հավաքած հայ գեղջկական երգերն ամբողջությամբ ներկայացնում են հայ ժող. երգարվ-ի անթոլոգիա:

Նույնքան նշանակալի են Կ-ի ձայնագրած հայ հոգևոր երգարվ-ի նմուշները, որտեղ նա հանդես է եկել որպես հայ հոգևոր երաժշտության առանձնահատկությունների խոր գիտակ՝ իր ձայնագրություններում բացահայտելով հազվագյուտ և մեղեդիական գեղեցկությամբ ինքնատիպ կոթողներ: Ուշագրավ են Գրիգոր Նարեկացու «Հաւիկ», «Հաւուն-հաւուն», «Սայլն այն իջանէր», «Ահեղ ձայնս», Ներսես Շնորհալու «Ստեղծող մանկանց», «Աշխարհ ամենայն», Գրիգոր Գ Պահլավունու «Ով զարմանալի», Հովհաննես Երզնկացու «Այսօր ձայնն հայրական», Մխիթար Այրիվանեցու «Սիրտ իմ սասանի» տաղերի, նաև շարականների ու Պատարագի երգասացությունների ձայնագրությունները (հիմնականում ամփոփված են 1892-ին՝ Կոստինայում, 1893-ին Էջմիածնում կազմված և 1946-ին Փարիզում լույս տեսած «Տաղք եւ ալելուք Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ» ժող-ներում): Այս նմուշների մի մասը հետագայում նաև դաշնավորել է:

Իր տես. աշխ-ներով փաստորեն դրել է հայ երաժշտ. բանագիտության և միջնադարագիտության հիմքերը՝ կարևորելով ինչպես գեղջկական երգի, այնպես էլ հոգևոր երաժշտության քննությունը: Նկարագրել է ժող. երգաստեղծագործության բուն զարգացումը, վերլուծել հայ ժող. երգի տեսակներն ու հորինվածք. հատկանիշները: Հոգևոր երաժշտությանը վերաբերող ուսումնասիրություններում անդրադարձել է հոգևոր երգարվ-ի կազմավորմանն ու պատմ. զարգացման պարբերացմանը, ժանրերին, հայ եկեղեց. ձայնեղանակների տեսությանը, մանրուսման արվ-ին և խազաբանությանը: Սկզբունքորեն կարևոր է

նաև Կ–ի՝ ժող. և հոգևոր երաժշտության հիմքերի միասնության բացահայտումը:

Նրա ստեղծագործությունը, որն առավելապես մեներգային և խմբերգային է, ամբողջովին սերում է ժող. կամ հոգևոր երգարվ–ի ակունքներից: Նրանք քնար. սրտառուչ պատումներ են («Գարուն ա», «Քելեր, ցոլեր» ևն), երկրագործ. աշխատանքը փառաբանող հիմներ («Լոռու գութաներգ», «Կալերգ», սայլերգեր ևն), սոցիալ. բնույթի երգ–մենախոսություններ («Ծիրանի ծառ», «Անտունի» ևն), հայրենի բնությունը կամ ավանդ. ծեսերը գեղարվեստորեն վերարտադրող ծավալուն տեսարաններ («Լուսնակն անուշ», «Արարատյան գիշեր», հարսանեկան, պարերգ. և այլ շարեր): Կոմպոզիտորն անդրադարձել է նաև այլ ժանրերի. եզակի են նրա «Դաշնամուրային պարերը», որտեղ գործածել է տվյալ դարաշրջանի համաշխ. երաժշտության համար նոր և խիստ ինքնատիպ միջոցներ ու հնարներ:

Պահպանվել են Կ–ի՝ «Քաղաքավարության վնասներ» կատակերգության (ըստ Հ. Պարոնյանի), «Անուշ» պոեմի (ըստ Հ. Թումանյանի) և «Սասնա ծռեր» էպոսի

Կոմիտասի երգչախումբը Թիֆլիսում (1905)

հիման վրա գրած որոշ երաժշտ. հատվածներ, օպեր. էսքիզներ և այլ գործեր:

Բացառիկ հետաքրքիր են Կ–ի հոգևոր գործերը՝ բազմաթիվ տարբերակներով, և հատկապես տղամարդկանց խմբի համար գրած վեհաշուք «Պատարագը», որը, ըստ էության, ազգ. պրոֆեսիոնալ երաժշտության կանտատ–օրատորիալ ժանրի առաջին դաս. նմուշներից է: Նրանց մեջ ցայտուն կերպով դրսևորվել են հոգևոր նյութի նկատմամբ ստեղծագործողի անհատականության զորեղ ներգործությունը, հարմոնիայում և մասնավորապես պոլիֆոնիայում մշակված ազգ. երաժշտության և ժամանակի եվրոպ. երաժշտագրության արտահայտչամիջոցների յուրօրինակ համադրումը: Կ–ի ստեղծագործությունն ու կոմպոզիտոր. մեթոդը լայն հեռանկարներ են բացել ազգ. երաժշտարվ–ի զարգացման համար՝ դնելով այն համաշխ. երաժշտության հունի մեջ, նաև նկատելի ազդեցություն ունեցել արլ. այլ ժողովուրդների երաժշտության զարգացման վրա:

Կ–ի եղեռնական ճակատագրին է նվիրված Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» (1959) պոեմը:

Կ–ի անունով են կոչվում ԵՊԿ, Երևանի կամեր. երաժշտության տունը, լար. քառյակ, պողոտա, զբոսայգի, Ստեփանակերտի երաժշտ. դպրոցը ևն: 2015–ին Երևանում բացվել է ***Կոմիտասի թանգարան–ինստիտուտը***:

Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» (1959) պոեմի պատկերազարդումներից (նկարիչ՝ Գրիգոր Խանջյան)

Երկ. Երկ. ժող., հ. 1–14, Ե., 1960–2006: Հոդվածներ և ուսումնասիրություններ (հավաքեց՝ Ռ. Թերլեմեզյանը), Ե., 1941: Բանաստեղծություններ, Ե., 1969: Նամականի, Կոմիտաս (կազմ., առաջաբան, ծնթգր.՝ Ց. Բեքարյանի), 2 լրց. հրտ., Ե., 2007: Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, աշխատասիր.՝ Գ. Գասպարեանի, Մ. Մուշեղեանի, հ. 1, 2, Ե., 2005, 2007: Նամականի, ժող., աշխատասիր.՝ Գ. Գասպարյանի, Ե., 2009: Հազար ու մի խաղ: Ժողովրդական երգերի ժող., Ե., 2015: Կոմիտաս (Կոմիտաս վարդապետ), կազմ.՝ Ղ. Միրզոյան, Ա. Մխիթարյան, Ե., 2015: Komitas: Armenian Sacred and Folk Music (trans. by E. Gulbekian), Great Britain, Curzon Press, 1998. Կոմիտաս (Մատենագիտություն), կազմ.՝ Ն. Թեյմուրազյան, Ե., 1957: Կոմիտաս վարդապետ: Մատենագիտական ժողովածու, կազմ.՝ Ս. Հարոյան, Ե., 2013:

Գրկ. Չոպանեան Ա., Դէմքեր, Փարիզ, 1924: Յովսէփեան Գ., Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդութիւնը Եւրոպայում, «Արարատ», 1907, № 3: Կոմիտաս, կազմ.՝ Ռ. Թերլեմեզյան, Ե., 1930: Ազատեան Թ., Կոմիտաս վարդապետ, ԿՊ, 1931: Պերպերեան Շ., Կոմիտաս վարդապետ, Բոսթոն, 1936: Գասպարյան Ս., Կոմիտաս, Ե., 1947: Աթայան Ռ., Ժողովրդական երգի ներդաշնակման սկզբունքը Կոմիտասի մոտ, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1949, № 9: Շահվերդյան Ա., Ակնարկներ հայ երաժշտության պատմության, Ե., 1958: Յոլյան Ի., Կոմիտաս, Ե., 1969: Կոմիտասական, հ. 1, 2, Ե., 1969, 1981: Բրուտյան Յ., Կոմիտաս (կյանքն ու գործունեությունը), Ե., 1969: Կոմիտաս (1869–1969): Ատյաններ, քաղվածքներ և մատենագիտական տեղեկություններ, կազմ.՝ Ա. Շահազիզյան, Ե., 1969: Կոմիտաս Վարդապետ: Անձը եւ գործը (Հ. Ասպետեանի և Ս. Սանոսեանի խմբ.), Նիւ Յորք, 1969: Կոմիտաս (Մեթոդամատենագիտական նյութերի ժող.), կազմ.՝ Ռ. Ղազարյան, Ե., 1984: Թերլեմեզյան Ռ., Կոմիտաս, Ե., 1992: Գրական նշխարք Կոմիտաս

վարդապետի բեղուն գրչէն, աշխատասիր.՝ Արել վրդ. Օղլուգեանի, Մինուեայ, 1994: Թահմիզյան Ն., Կոմիտասը եւ հայ ժողովուրդի երաժշտական ժառանգութիւնը, Փասատենա, 1994: Ասատուրեան Հ., Կոմիտաս Վարդապետի հետ: Հայ երգի արահետներով (առաջաբանը՝ Վազգեն Ա Կաթողիկոսի), Թենըֆլայ, 1994: Մաֆարյան Խ., Կոմիտաս աքանչելագործ, Ե., 1999: Գյոդակյան Գ., Կոմիտաս, Ե., 2000 (ռուս., 1969, անգլ., 2014): Մանուկեան Թ., Կոմիտասի հանճարը իր պատարագին մէջ, Երուսաղէմ, 2003: Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում (հրտ–յան պատրաստեց՝ Գ. Դասպարյանը), Ե., 2009: Կոմիտաս Վարդապետ, [Կյանքն ու գործունեությունը], առաջաբանը և աշխատասիր.՝ Գ. Դասպարյան, 2 լրց. հրտ., Ե., 2014: Սահակյան Լ., Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Ե., 2010: Բադիկյան Խ., Կոմիտասը՝ ինչպիսին եղել է, [գիտական կենսագրություն], Ե., 2013: Շախկուլյան Տ., Կոմիտասի ստեղծագործական վաղ շրջանը (1891–1899), Ե., 2014: Շահնազարյան Ա., Կոմիտաս, Ե., 2015: Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն (կազմ՝. Խ. Սամվելյան, հայ. և անգլ.), Ե., 2015: Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը. Տարեգիրք, Ե., 2016: Կոմիտասը և ավանդական երաժշտական մշակույթը, Ե., 2017: Шаверdян А., Комитас и армянская музыкальная культура, Е., 1956; Нуйнի, Комитас, М., 1989.

Ըստ Ռոբերտ Աթայանի
Աննա Արևշատյան

«ԿՈՄԻՏԱՍ», երաժշտ. ընկերություն Թիֆլիսում: Հիմնադրվել է 1919–ին՝ Ֆոմա Հարթմանի նախաձեռնությամբ: Նպաստել է Կոմիտասի ստեղծագործությունների տարածմանը Այսրկովկասի հայաբնակ վայրերում, կազմակերպել է համերգներ, դասախոսություններ, հուշ–երեկոներ, միջոցներ հանգանակել Փարիզում բուժվող Կոմիտասին օգնելու համար: «Կ.»–ի գործունեությանը մասնակցել են Թիֆլիսում ստեղծագործող հայ երաժիշտներ Ռ. Մելիքյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Այվազյանը, Ա. Բաբալյանը, Մ. Բարաթովան, Մ. Տիգրանովա–Տեր–Մարտիրոսյանը և ուր., հաճախ՝ նաև բանաստեղծներ Հ. Թումանյանը, Ս. Գորոդեցկին: Գործել է մինչև 1922–ը:

«ԿՈՄԻՏԱՍ», հայկ. խառը երգչախումբ Բուխարեստում: Հիմնադրվել է 1926–ին: Ղեկավարել են Մ. Բոթեզը, 1937–1959–ին՝ Կ. Հարությունյանը, ապա՝ Արա Մանաշը: Համերգներ է ունեցել (առաջինը՝ 1926–ին) Ռումինիայի քաղաքներում, մասնակցել մրցույթների, արժանացել մրց–ների: Երգացանկում՝ հայ, ռումին և այլ ժողովուրդների երգեր, դաս. երաժշտության նմուշներ, նաև Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի համերգ. կատարումը: Երգչախմբում իրենց գործունեությունն են սկսել Բուխարեստի օպեր. թատրոնի մեներգիչներ Արաքս Սվաճյանը, Շաքե Շիշմանյանը, Անահիտ Քերփիզյանը, Եղիա Փափազյանը:

«ԿՈՄԻՏԱՍ», հայկ. խառը երգչախումբ Ռուսեում (Բուլղարիա): Հիմնադրվել է 1932–ին, հիմնադիրներ՝ Ա. Բերբերյան, Է. Սաֆարյան, ղեկ.՝ Մ. Անգելով: Առաջին համերգը՝ 1934–ին: «Կոմիտաս» և «Հայ գուսան» երգչախմբերը միավորվել են «Երևան» մշակութ. միության (1944) մեջ: 1948–ից խմբավարն էր Կ. Կարապետյանը, 1952–ից՝ Խ. Միհրանյանը: 1958–ին նշվել է երգչախմբի հիմնադրման 25–ամյակը: Համերգներ է ունեցել Բուլղարիայի քաղաքներում, մասնակցել փառատոների, մեծապես նպաստել է հայ երգի տարածմանը: Երկացանկում՝ հայ, բուլղար և այլ ժողովուրդների երգեր, դաս. երաժշտության լավագույն նմուշներ, նաև օպեր. ներկայացումների համերգ. կատարումներ:

Կիրիլի և Մեֆոդիի 1–ին աստիճանի շքանշան (1960, Բուլղարիա):

«ԿՈՄԻՏԱՍ», Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի քառաձայն երգչախումբ, հիմնադրվել է 1975–ին (Կոմիտասի անվ.՝ 1990–ին): Խմբավարներ՝ Մովսես Փա–

Նոր Ջուղայի «Կոմիտաս» երգչախումբը

նոսյան, Պարթև Շահվալադյան, Վրեժ Մելիքյան, Ռադիկ Մելիքյան, Համիկ Ալեքսանդրյան, Արմեն Ամիրխանյան (2008–ից): Մասնակցել է Նոր Ջուղայի հայոց եկեղեցիներում տեղի ունեցող արարողություններին, պարբերաբար հանդես է գալիս նաև համերգներով. երգացանկում՝ հայկ. ժող., գուսան., հոգևոր, դաս. և ժամանակակից երգեր: 2008–ին Երևանում մասնակցել է Հայաստանի երգչախմբ. ընկերության 50–ամյակի տոնակատարությանը, 2010–ին՝ Գերմանիայի Ֆրայբուրգ քաղաքի միջազգ. երաժշտ. փառատոնին:

«ԿՈՄԻՏԱՍ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1996-ին Երևանում, հիմնադիր-տնօրեն և գլխ. խմբ.՝ Ռուզան Եսայան: Առաջին ոչ պետ. մասնագիտացված երաժշտ. հրատարակչությունը ՀՀ-ում: Հրատարակում է հիմնականում հեղինակ. գործեր, դասագրքեր, մեթոդ. ձեռնարկներ, ժող-ներ (մշակումների, փոխադրումների ևն) ևն: Տպագրվել են Ռ. Եսայանի կազմած «Ա. Հարությունյան. Ինչ են պատմում լուսանկարները» (2014) ալբոմը, Վ. Սարգսյանի, Կոմիտասի, Ռ. Մելիքյանի երգերը, Ա. Սպենդիարյանի ստեղծագործությունների փոխադրումները՝ դաշնամուրի, Լ. Չաուշյանի Տրիոն՝ ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար» (2002), Ռ. Սարգսյանի «Քրոնիկոն» սիմֆոնիան (2005), Դ. Ղազարյանի «Մեներգերի ընտրանի»-ն (2009), Է. Ադամյանի «Դաշնամուրային զուգանվագները» (2010) ևն:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՔԱՌՅԱԿ, պետական (1931-ից), Կոմիտասի անվան (1932-ից), վաստ. (1934-ից): Ստեղծվել է Մոսկվայում 1924-ին (առաջին համերգը՝ 1925-ին)՝ տեղի կոնսերվատորիայի հայ ուսանողներ Ավետ Գաբրիելյանի (1-ին ջութակ), Լևոն Օհանջանյանի (2-րդ ջութակ), Միքայել Տերյանի (ալտ) և Սերգեյ Ասլամազյանի (թավջութակ) նախաձեռնությամբ (ղեկ.՝ Ե. Գուզիկով): Քառյակի գործունեությունը բարձր են գնահատել Մ. Մ. Իպոլիտով-Իվանովը, Կ. Իգումնովը, Ս. Վասիլենկոն, Ռ. Գլիերը, Կ. Սարաջևը: 1932-ից համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում: 1933-ին՝ որպես 2-րդ ջութակահար, հանդես է եկել Գ. Սարաբյանը, 1938-ից՝ Ն. Բալաբանյանը: Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին (1939, 1956), հանդես եկել ռուս., եվրոպ. և հայ երաժշտության երկերի բարձրարվ. կատարումներով: 1953-ից հյուրախաղերով շրջագայել է Գերմանիայում, Անգլիայում, Հոլանդիայում, Նորվեգիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Կանադայում և այլուր: Քառյակի հետ ելույթներ են ունեցել Ա. Գոլդենվեյզերը, Կ. Իգումնովը, Հ. Նեյհաուզը, Ս. Ռիխտերը, Դ. Դ. Շոստակովիչը, Է. Գիլելսը, Վ. Մերժանովը, Մ. Գրինբերգը, Ս. Կնուշևիցկին: Քառյակի կազմում հանդես են գալիս Էդվարդ Թադևոսյանը (1976-ից՝ 1-ին ջութակ, 1970–76-ին՝ 2-րդ ջութակ), Սյուզի Երիցյանը (2010-ից՝ 2-րդ ջութակ), Ալեքսանդր Կոսեմյանը (1990-ից՝ ալտ), Անժելա Սարգսյանը (2016-ից՝ թավջութակ):

Կոմիտասի անվան քառյակի առաջին կազմը (1925–33). ձախից՝ Սերգեյ Ասլամազյան (թավջութակ), Ավետ Գաբրիելյան (1-ին ջութակ), Լևոն Օհանջանյան (2-րդ ջութակ), Միքայել Տերյան (ալտ)

Տարբեր տարիների քառյակում գործել են Ավետ Գաբրիելյանը (1925–76)՝ 1-ին ջութակ, Լևոն Օհանջանյանը (1925–33), Գրիգորի Սարաբյանը (1933–38), Նիկիտա Բալաբանյանը (1938–47), Ռաֆայել Դավիդյանը (1947–70), Հակոբ Մեքինյանը (1976–84), Սուրեն Հախնազարյանը (1984–2008)՝ 2-րդ ջութակ, Միքայել Տերյանը (1925–36 և 1938–47), Նիկիտա Բալաբանյանը (1936–38, 1938–47-ին՝ 2-րդ ջութակ), Հենրիկ Թալալյանը (1947–1972), Գրիգորի Մարկազյանը (1972–76), Յակով Պապյանը (1976–90)՝ ալտ, Սերգեյ Ասլամազյանը (1925–68), Արմեն Գեորգիանը (1968–72), Դավիթ Գրիգորյանը (1972–76), Ֆելիքս Սիմոնյանը (1976–2000), Արամ Թալալյանը (2000–10), Հասմիկ Վարդանյանը (2010–16), Անժելա Սարգսյանը (2016-ից)՝ թավջութակ:

Կոմիտասի անվան քառյակի կազմը (2016). ձախից՝ Էդուարդ Թադևոսյան (1-ին ջութակ), Սյուզի Երիցյան (2-րդ ջութակ), Ալեքսանդր Կոսեմյան (ալտ), Անժելա Սարգսյան (թավջութակ)

ԽՍՀՄ (1946), ՀՀ (1965, 1985) Պետ. մրց-ներ:

Գրկ. *Թադևոսյան Ա., Մեծ Կոմիտասի անունով Կոմիտասի անվան վաստակավոր կվարտետը, Ե., 1959: Նվիրում: Կոմիտասի անվան քառյակի 90-ամյակը, [Գիրք-ալբոմ], կազմ.՝ Խ. Դադյան, Ե., 2015: Квартет им. Комитаса. Альбом-монография, Е., 1974; Давидян Р., Квартет имени Комитаса, Е., 1974.*

ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ, հիմնադրվել է 2015-ին, գործում է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգում կառուցած շենքում (ճարտարապետ՝ Արթուր Մեսչյան): Ունի համերգասրահ, 8 մշտական (հեղինակ-համադրող՝ Վարդան Կարապետյան, ձևավորող-նկարիչ՝ Ալբերտո Տորսելլոն) և ժամանակավոր

ցուցադրություններ, գործում են նաև ԳՀ կենտրոն, երաժշտ. ստուդիա, գրադարան,

Կոմիտասի թանգարան-ինստիտուտը

հրատարակչություն: Նպատակը կոմիտասագիտության զարգացմանը, Կոմիտասի ստեղծագործ. ժառանգության հետազոտ-

Կոմիտասի դաշնամուրը թանգարան-ինստիտուտում (Ա. Սանթալչանի նվերը 1907-ին)

ման ու տարածմանը նպաստելն է: 2016-ից հրատարակում է «Տարեգիրք»: Տնօրեն՝ Նիկոլայ Կոստանդյան:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի սրահներից

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ (լատ.՝ compositor – կազմող, կառուցող, հորինող), երաժշտություն ստեղծող երաժիշտ, երաժշտ. ստեղծագործության հեղինակ: Պրոֆեսիոնալ Կ., բնատուր օժտվածությունից բացի, պետք է կրթություն ստանա երաժշտ. ուս. հաստատությունների (ուսումնարան, քոլեջ, կոնսերվատորիա ևն) կոմպոզիցիայի բաժիններում:

ԿՈՄՊՈԶԻՑԻԱ (լատ.՝ compositio – ստեղծագործություն, հորինվածք, կառուցվածք), 1. ավարտուն երաժշտ. ստեղծագործություն: 2. Երաժշտ. ստեղծագործության կառուցվածքը, բաղկացուցիչ մասերի հարաբերակցությունը, երաժշտ. ձևը: 3. Երաժշտության հորինման ընթացքը, որն ուսուցանում են երաժշտ. ուս. հաստատությունների (հատուկ դպրոցներ, ուսումնարաններ, կոնսերվատորիա) կոմպոզիցիայի դասարաններում:

ԿՈՆԿՐԵՏ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ֆրանս.՝ musique concrete), երաժշտության տեսակ, որի նյութը ոչ թե երաժշտ. հնչյուններն են, այլ ժապավենի վրա ձայնագրած բնական աղմուկները, ձայները (ջրի ընկնող կաթիլի, գնացքի, թռչունների ևն): Նրանց կարող են գումարվել նաև երաժշտ. գործիքների ու երգչաձայների հնչյուններ:

Կ. ե. արդի արևմտաեվրոպ. երաժշտության մոդեռնիստ. հոսանքներից է: Ծագել է 1940-ական թթ-ին Ֆրանսիայում: Սկզբնավորել է ֆրանսիացի ճարտարագետ-ձայնագետ Պիեռ Շեֆֆերը, որը Կ. ե-յան առաջին նմուշը գրել է 1948-ին: Լավագույն օրինակներից են նաև Պ. Շեֆֆերի «Աղմուկների կոնցերտ», «Սև էտյուդ», Պ. Անրիի «Օրփեոսի առագաստը», Պ. Բուլեզի «Էտյուդ մեկ հնչյունով» և այլ գործեր: Կ. ե. կիրառում են ներկայացումների և կինոնկարների երաժշտ. ձևավորումներում:

ԿՈՆՉԵՐՏՈ ԳՐՈՍՍՈ (իտալ.՝ concerto grocco – մեծ կոնցերտ), ***կոնցերտի*** տեսակ: XVII–XVIII դդ-ում անսամբլ-նվագախմբ. երաժշտության ժանր՝ հիմնված մենանվագ երաժշտ. գործիքների (կոնցերտինո) և ողջ անսամբլի կամ նվագախմբի (ռիպիենի, տուտտի) հակադրության վրա: Ձևավորվել է XVII դ-ում Իտալիայում՝ մենանվագ կոնցերտի հետ գրեթե միաժամանակ: Նախապես կոնցերտինոն ընդգրկել է 2 ջութակի ու թավջութակի նվագամասերը և գեներալ բասը (տրիոսոնատի կազմը): Կ. գ-ները բաղկացած էին քանակապես տարբեր (4–7) մասերից, հետագայում լար. գործիքների հետ օգտագործել են նաև փողայինները, հաստատվել է եռամաս (արագ-դանդաղ-արագ) ձևը: Կ. գ-ներ են գրել Ա. Կորելլին, Ջ. Տորելլին, Ա. Վիվալդին, Գ. Ֆ. Տելեմանը, Յ. Ս. Բախը, Գ. Ֆ. Հենդելը: Հինավուրց ժանրի վերածնման նմուշներ են Մ. Ռեգերի, Է. Կշենեկի, Ի. Ֆ. Ստրավինսկու Կ. գ-ները (XX դ.): Ա. Խաչատրյանի անվ. 4-րդ միջազգ. փառատոնին (2015) «Արամ Խաչատրյան» համերգասրահում կատարվել է Քշիշտով ***Պենդերեցկու*** Կ. գ.՝ 3 թավջութակի և նվագախմբի համար:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ (իտալ.՝ conservatorio, նախնական նշանակությամբ՝ ապաստարան, < լատ. conservo – պահպանել), երաժշտ. բարձրագույն ուս. հաստատություն, որտեղ կրթվում են մասնագետ կատարողներ (նվագողներ, երգիչներ, խմբավարներ, դիրիժորներ), կոմպոզիտորներ, երաժշտագետներ: XVI դ–ում Կ. են անվանել որբանոցները, որտեղ երեխաները սովորել են արհեստներ (առաջինը՝ Նեապոլում 1537–ին): XVII դ–ից որբանոցներում ուսանել են երաժշտություն: XVIII դ–ում իտալ. Կ–ները մեծ դեր են ունեցել երաժիշտների ու կոմպոզիտորների կրթության մեջ: Պրոֆեսիոնալ երաժիշտների պահանջարկից առաջացել է հատուկ երաժշտ. բուհեր ստեղծելու անհրաժեշտությունը. առաջինը Փարիզի Ազգ. երաժշտության ինստ–ն էր (1793), որի հիման վրա 1795–ին կազմավորվել է Երաժշտության և դեկլամացիայի Կ.: XIX դ–ում Կ–ներ ստեղծվել են Եվրոպայի, ապա՝ Ամերիկայի բազմաթիվ քաղաքներում, XX դ–ում՝ Ասիայի ու Աֆրիկայի մի շարք երկրներում: Արտերկրում Կ–ի տիպի որոշ հաստատություններ կոչվում են ակադ–ներ, երաժշտ. բարձրագույն դպրոցներ, երաժշտության ինստ–ներ, քոլեջներ, լիցեյներ ևն: Մի քանի երկրներում (օր.՝ Չեխիայում) նրանք միջնակարգ ուս. հաստատություններ են: Ռուսաստանում առաջին Կ–ները ստեղծվել են Ս. Պետերբուրգում (1862) և Մոսկվայում (1866): Խորհրդ. իշխանության տարիներին Կ–ներ են բացվել միութ. հանրապետություններում, որոնք պետ. երաժշտ. բարձրագույն հաստատություններ են: Ունեն տես–կոմպոզիտոր., վոկալ, դաշնամուրի, նվագախմբի, ժող. գործիքների, դիրիժորության, նաև երաժշտագիտության ֆակներ: Բացի մասնագիտ. առարկաներից՝ դասավանդում են նաև հասարակագիտ. առարկաներ:

Հայաստանում ժամանակակից նշանակության Կ. ունի իր նախապատմությունը: Երաժշտ. կրթության առաջին օջախներն ստեղծվել են վաղ միջնադարում: Նշանավոր վանքերին կից դպրոցներում և համալսարաններում առանձնակի ուշադրություն են դարձրել երաժշտության ուսուցմանը: VII դ–ում գործել են Շիրակի դպրեվանքում կրթություն ստացած մասնագետները: Հետագայում առանձնացել են Սյունյաց, Այրիվանքի (Գեղարդի) և Մաքենյաց վանքերի վարդապետանոցները: X–XI դդ–ում Սանահինի, Տաթևի, Անիի, Նարեկի և այլ բարձրագույն դպրոցներում պատրաստվել են երաժշտատես. և վոկալ–կատարող. բարձր պատրաստություն ունեցող գործիչներ (Ստեփանոս Ասողիկ, Գրիգոր Նարեկացի, Դանիել Երաժիշտ, Գրիգոր Մագիստրոս, Թեոդորոս Ալախոսիկ, Պետրոս Գետադարձ կաթողիկոս, Հակոբ վարդապետ Սանահնեցի, Հովհաննես Սարկավագ և ուր.): XII–XIII դդ–ում ծավալվել է Նոր Գետիկի, Գլաձորի և Տաթևի դպրոցների գործունեությունը, որի շնորհիվ երևան են եկել «փիլիսոփա» կոչվող երաժիշտ–կատարողներ, ստեղծագործողներ, գիտնականներ ու դասախոսներ: Նշանավոր են նաև Երուսաղեմի հայ վան. կենտրոնը, Հայկ. Կիլիկիայի Սկևռայի, Արքակաղնիի, Դրազարկի, Ակների, Սսի, Հռոմկլայի ու Կարմիր վանքի դպրոցները: Այս շրջանի երաժիշտ–ստեղծագործողներից են Գրիգորիս Գ Պահլավունին, Ներսես Շնորհալին, Հակոբ Կլայեցին, Ներսես Լամբրոնացին և ուր.:

Մինչև XIX դ. երաժշտ. կրթության գործը Հայաստանում դադարել է: XIX դ–ի վերջին քառորդում այս ուղղությամբ բացառիկ դերակատարություն են ունեցել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: XX դ–ի 2–րդ տասնամյակում Թիֆլիսի հայոց երաժշտ. ընկերությունը հիմնել է երաժշտ. ստուդիա: Հայաստանում 1921–ին Ռոմանոս ***Մելիքյանի*** նախաձեռնությամբ ստեղծվել է Երևանի երաժշտ. ստուդիան, որը 1923–ին վերակազմվել է Կ–ի (տես ***Երևանի պետական կոնսերվատորիա***):

Ըստ Մաթևոս Մուրադյանի

ԿՈՆՍՈՆԱՆՍ ԵՎ ԴԻՍՈՆԱՆՍ (ֆրանս.՝ consonance, < լատ. consonantia – համահնչունություն, ներդաշնակ հնչողություն և ֆրանս.՝ dissonance, < լատ. dissonantia – աններդաշնակություն, անհնչողություն), հակադիր հասկացություններ երաժշտության տեսության մեջ. միաժամանակ լսվող 2 կամ ավելի հնչյունների մասնակի տոների որևէ հարաբերության արդյունք, որը լսողությամբ ընկալվում է որպես համահնչունություն կամ տարահնչունություն:

Կոնսոնանսը հնչյունների միաձուլումն է (միաձույլ համահնչյուն), որը տեղի

է ունենում, եթե նրանց կազմում առկա է գոնե 1 լավ լսելի ընդհանուր մասնակի տոն: Հնչյունների տատանման հաճախությունների թվային հարաբերությունները պարզ են. 1:1–ին հարաբերությունն առաջացնում է մաքուր պրիմա երկհնչյունը, 2:1–ին՝ օկտավա, 3:2–ին՝ կվինտա, 4:3–ին՝ կվարտա, 5:3–ին՝ մեծ սեքստա, 5:4–ին՝ մեծ տերցիա, 6:5–ին՝ փոքր տերցիա, 8:5–ին՝ փոքր սեքստա:

Դիսոնանսը հնչյունների չմիաձուլումն է՝ «անբարեհնչյունությունը», որտեղ լավ լսելի մասնակի տոները միմյանց հակասում են, չեն ձուլվում, այլ առաջացնում են բաբախում: Հաճախությունների հարաբերությունները համեմատաբար բարդ են. 7:5–ին առաջացնում է եռատոն, 9:5–ին կամ 16:9–ին՝ փոքր սեպտիմա, 9:8–ին կամ 10:9–ին՝ փոքր սեպտիմա, 9:8–ին կամ 10:9–ին՝ մեծ սեկունդա, 15:8–ին՝ մեծ սեպտիմա, 16:15–ին՝ փոքր սեկունդա:

Չայնաբանության առումով՝ կոնսոնանսի և դիսոնանսի տարբերությունը քանակային է, մեկից մյուսին անցման սահմանը՝ պայմանական (թույլ դիսոնանսն ինչ–որ չափով կոնսոնանս է, և հակառակը):

Կոնսոնանս–դիսոնանս հարաբերությունը դարեր շարունակ եղել է երաժշտ. մտածողության հիմքում, նրանց տրամաբանված հաջորդումը՝ երաժշտ. մտքի դինամիկ. զարգացման կարևոր միջոցներից: Արտահայտության առումով՝ կոնսոնանսը հնչում է փափուկ, արտահայտում համեմատաբար հանգիստ և կայուն վիճակ, իսկ դիսոնանսը սուր է և արտահայտում է անկայուն, լարված վիճակ: Այդ ընկալումը նույնպես պայմանական է. կախված է երաժշտության իմաստի համոզիչ լինելու և միջավայրի լսող. ընկալման աստիճանից: Նոր ժամանակների երաժշտության մեջ դիսոնանսը դարձել է ինքնուրույն, սակայն նրա և կոնսոնանսի արտահայտչական տարբերությունը պահպանվում է:

ԿՈՆՏՐԱԲԱՍ (իտալ.՝ contrab(b)asso, անգլ.՝ doublebass), 1. ջութակի ընտանիքի ամենամեծ (երկ.՝ մոտ 2 *մ*) և ամենացածր հնչողության երաժշտ. գործիքը: Նվագում են կանգնած կամ բարձր աթոռակին նստած՝ թավջութակի նման սրածայր հենափայտը հատակին հենած: Ունի 4 (երբեմն՝ 5) լար, որոնք լարվում են կվարտաներով (5–րդ լարը՝մեծ օկտավայի դո, 4–րդը՝ կոնտրօկտավայի մի, 3–րդը՝ կոնտրօկտավայի լա, 2–րդը՝ մեծ օկտավայի ռե, 1–ինը՝ մեծ օկտավայի սոլ): Դիապազոնը՝ 4 օկտավա՝ կոնտրօկտավայի դո–ից (ռե–ից) մինչև փոքր օկտավայի լա–ն (սի բեմոլ–ը): Նոտագրվում է իրական հնչուցից 1 օկտավա վեր՝ բասի, տենորի և ջութակի բանալիներով:

Տարածվել է XVI–XVIII դդ–ում, հաջորդել է կոնտրաբաս. վիոլա դա գամբային: Հիմնականում անսամբլ. և նվագախմբ. գործիք է (XVIII դ–ից՝ նաև մենակատար), ջազ. անսամբլներում հաճախ հանդես է գալիս ինքնուրույն մեկնաբանմամբ: XIX դ–ից Կ–ի նվագամասն առանձնացել է:

2. Բաս. ռեգիստրով մի շարք գործիքների անվան կցորդ (Կ–բալալայկա, Կ–դոմրա, Կ–տրոմբոն, Կ–տուբա ևն): Կ–ի համար ստեղծագործություններ են գրել Յ. Հայդնը, Պ. Հինդեմիթը, Ռ. Գլիերը, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Միյոն, Ս. Ա. Գուբայդուլինան և ուր.: Ժամանակակից հայ կոմպոզիտոր. արվ–ում երաժշտառճ. ու ժանր. առումով հարուստ և ուշագրավ երկեր են ստեղծել Գագիկ Հովունցը, Վահրամ Բաբայանը, Ռուբեն Ալթունյանը, Միխայիլ Կոկժաևը, Էդուարդ Հայրապետյանը և ուր.:

Կոնտրաբաս

ԿՈՆՏՐԱԼՏՈ (իտալ.՝ contralto), կանանց ցածր երգչաձայն: Բնորոշ է թավ, արտահայտիչ կրծքային դիապազոնը (մինչև 1–ին օկտավայի սի բեմոլ): Կ–ի համար գրված օպեր. դերերգերից են՝ Սադալենա (Զ. Վերդիի «Ռիգոլետտո»), Օլգա (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Կոնչակովնա (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր»), Փառանձեմ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ») ևն: Կոմպոզիտորները հաճախ Կ. դերերգեր են գրել դեռահասների և պատանիների համար՝ Վանյա (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին»), Ջիբել (Շ. Գունոյի «Ֆաուստ») ևն:

ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (գերմ.՝ Kontrapunkt,լատ.՝punctus contra punctum – կետ՝ կետի դիմաց, այսինքն՝ նոտա՝ նոտայի դիմաց, հետագայում՝ մեղեդի՝ մեղեդու դիմաց), 1. երաժշտագիտության մեջ՝ ուսմունք հարմոնիկ ամբողջականության մի քանի ինքնուրույն մեղեդիների միաժամանակյա զուգակցման մասին: Ըստ մեղեդիների զուգակցման հնարավոր ձևերի՝ Կ. լինում է պարզ և բարդ: Պարզի դեպքում բացառվում է 2 կամ ավելի մեղեդիների զուգակցումից ստանալ նորը, բարդի դեպքում հնարավոր են անփոփոխ մեղեդի-

ների (փոխվում են նրանց ***ինտերվալային*** կամ ***ռիթմիկ*** հարաբերակցությունները) նոր ածանցյալ հարաբերակցություններ: Տարբերում են բարդ Կ-ի շարժուն և հակադարձ (կամ հայելանման) տեսակները:

Շարժուն բարդ Կ-ում մեղեդիների նոր զուգակցումը կատարվում է մեղեդիների տեղափոխմամբ: Տարբերում են շարժուն Կ-ի ուղղաձիգ-շարժուն և հորիզոնական-շարժուն (փոխվում է զուգակցվող մեղեդիների սկզբն. զուգակցման համեմատությամբ, մեկը մուտք է գործում փոքր-ինչ շուտ կամ ուշ) ենթատեսակներ:

Ուղղաձիգ-շարժուն Կ-ում մեղեդիները տեղափոխվում են՝ ներքևինը՝ օկտավա, դուոդեցիմա կամ դեցիմա (հազվադեպ՝ նաև այլ ինտերվալով) վեր, կամ վերևինը՝ ներքև: Ըստ մեղեդիների քանակի՝ Կ. լինում է կրկնակի, եռակի, քառակի ևն, նաև հորիզոնական, կրկնակի շարժմամբ և շրջվող:

Առավել գործածական տեսակներից է կրկնակի ուղղաձիգ-շարժուն Կ., որի յուրաքանչյուր մեղեդի կարող է լինել թե՛ վերևի (առաջին), թե՛ ներքևի (երկրորդ) ձայնում: Տեսականորեն հնարավոր է յուրաքանչյուր ինտերվալով կրկնակի Կ., սակայն գործնականում կիրառելի են օկտավային, դուոդեցիմայի և դեցիմայի կրկնակի Կ-ները:

Եռաձայնում կիրառված ուղղաձիգ-շարժուն Կ. կոչվում է եռակի, եթե նրա մեջ զուգակցված 3 մեղեդիներից յուրաքանչյուրն օկտավային տեղափոխման միջոցով կարող է լինել թե՛ վերևի (առաջին), թե՛ միջին (երկրորդ), թե՛ ներքևի (երրորդ) ձայնում:

Քառաձայն ուղղաձիգ-շարժուն Կ-ում զուգակցված 4 մեղեդիներից յուրաքանչյուրն օկտավային տեղափոխման միջոցով կարող է հանդես գալ թե՛ վերևի (առաջին), թե՛ միջին (երկրորդ և երրորդ), թե՛ ներքևի (չորրորդ) ձայնում: Եռաձայն և քառաձայն ուղղաձիգ-շարժուն Կ-ները նվազ գործածական են:

Շարժուն Կ., որտեղ ուղղաձիգ-շարժուն և հորիզոնական-շարժուն Կ-ներն ստացվում են միաժամանակ, կոչվում է կրկնակի շարժուն Կ.:

Հակադարձ (կամ հայելանման) է բարդ Կ-ի այն տեսակը, որտեղ մեղեդիների (ինտերվալ. հաջորդականությունը և ռիթմը մնում են անփոփոխ) նոր զուգակցումը ստացվում է հակաշարժումով:

Շարժուն կոնտրապունկտ



2. Թեմայի հետ հնչող մեղեդի պոլիֆոնիկ երկերում, նաև բազմաձայնություն,

որը բաղկացած է մի քանի ինքնուրույն մեղեդիների միաժամանակյա հնչողությունից: Տես նաև ***Պոլիֆոնիա***:

ԿՈՆՏՐԱՖԱԳՈՏ (իտալ.՝ contrafagotto, ֆրանս.՝ centrebasson, գերմ.՝Kontrafagott), փող. երաժշտ. գործիք, ***ֆագոտի*** կոնտրաբաս. տեսակը: Փողի երկ.՝ մոտ 500–593 ***սմ***, դիապազոնը՝ սուբկոնտր օկտավայի լա-ից կամ սի բեմոլ-ից մինչև փոքր օկտավայի ֆա-ն կամ սոլ-ը (A_2 կամ B_2–f կամ g): Կան Կ-ներ, որոնց դիապազոնը կոնտր օկտավայի դո-ից մինչև փոքր օկտավայի ֆա-ն է (C_1–f): Խփասարքերն ունեն ֆագոտի դասավորությունը, նոտագրվում է բասի բանալիում՝ իրական հնչումից մեկ օկտավա վերև: Ստեղծել է գերմանացի վարպետ Գ. Շրայբերը (XIX դ-ի սկիզբ), կատարելագործել գերմանացի կոնստրուկտոր Վ. Հեկելը (XX դ-ի սկիզբ): Օգտագործվում է սիմֆ. և փող. նվագախմբերում:

Կոնտրաֆագոտ

ԿՈՆՑԵՐՏ (գերմ.՝ Konzert, իտալ.՝ concerto – համերգ, հարմոնիա, համաձայնություն, < լատ. concerto – մրցել), դաս. երաժշտության տարածված ժանր, երաժշտ. ստեղծագործություն, որտեղ երաժշտ. գործիքների կամ ձայների փոքր մասը հակադրված է մեծ մասին կամ անսամբլին՝ առանձնանալով երաժշտ. նյութի թեմատիկ պարզորոշության, հնչման գունեղության, տեխ. հնարավորությունների լայնորեն օգտագործման շնորհիվ: Առավել տարածված է մենակատար գործիքի Կ.՝ նվագախմբի հետ: Տեսակներից են՝ կոնչերտո գրոսսո, կոնցերտ. սիմֆոնիան, Կ.՝ 1 գործիքի համար (առանց նվագախմբի), Կ. ձայնի համար՝ նվագախմբի հետ, Կ.՝ ա կապելլա երգչախմբի համար: Հիմնական հատկանիշներն են փայլուն, վիրտուոզ մենանվագը կամ մեներգը, մենակատարի մրցումը նվագախմբի հետ:

Կոնցերտինա

Պոլիֆոնիկ կերտվածքի վոկալ-գործիք. Կ. ծագել է Իտալիայում XVI–XVII դդ-ի սահմանագլխին: Գործիք. Կ-ի առաջին նմուշները երևան են եկել XVII դ-ում Իտալիայում: XVIII դ-ում նրա ձևավորմանը մեծապես նպաստել են Ա. Վիվալդին և Յ. Ս. Բախը: Գործիք. Կ-ի դաս. տիպն ստեղծել են Յ. Հայդնը, Վ. Ա. Մոցարտը և Լ. վան Բեթհովենը: Այն եռամաս ցիկլ է, որտեղ, ի տարբերություն սովոր. սոնատ-սիմֆ. ցիկլի, բացակայում է սկերցոն (կամ մենուետը): XIX–XX դդ-ում երևան են եկել նաև 2-, 4-, 5-, ապա՝ նաև 1-մասանի Կ-ներ: Դաշնամուրի Կ-ի վառնմուշներ են ստեղծել Ֆ. Լիստը, Ռ. Շումանը, Ֆ. Շոպենը, Յ. Բրամսը, Է. Գրիգը, Պ. Ի. Չայկովսկին, Ս. Վ. Ռախմանինովը, Ս. Ս. Պրոկոֆևը, ջութակի՝ Ն. Պագանինին, Ֆ. Մենդելսոնը, Յ. Բրամսը, Ա. Խաչատրյանը, թավջութակի՝ Ա. Դվորժակը: Կ-ներ են գրել նաև Ա. Բաբաջանյանը (թավջութակի, ջութակի, դաշնամուրի), Ա. Հարությունյանը (դաշնամուրի, ձայնի, շեփորի, գալարափողի, հոբոյի), Ղ. Սարյանը (ջութակի), Է. Հովհաննիսյանը (սաքսոֆոնի) և ուր.:

ԿՈՆՑԵՐՏԱՅԻՆ ՍԻՄՖՈՆԻԱ (իտալ.՝ simfonia concertante), նվագախմբ. երաժշտության ժանր. տարածվել է XVIII դ-ի վերջ–XIX դ-ի սկզբին: Բազմամաս (մեծ մասամբ՝ 2 կամ 3) ստեղծագործություն՝ նվագախմբի մի քանի (սովորաբար՝ 2–4) մենակատար գործիքների համար: Կ. ս. ավելի մոտ է ***կոնցերտին***, քան ***սիմֆոնիային***: Այդ ժանրի երկերի մեծ մասը երաժշտության կենսուրախությամբ և թեթևությամբ մոտ է ***դիվերտիմենտին***: 1770–80-ական թթ-ին առավել տարածվել է Փարիզում (Ֆ. Ժ. Գոսեկ, Ֆ. Դևիեն, Ջ. Կամբինի և ուր.): Ժանրի տարածմանը նպաստել են նաև Ք. Կաննաբիխը և Կ. Ստամիցը: Լոնդոնում Կ. ս-ներ են գրել Յ. Ք. Բախը, Վիեննայում՝ Գ. Ք. Վագենզեյլը, Յ. Բ. Վանհալը, Կ. Դ. ֆոն Դիտերսդորֆը, Իտալիայում՝ Լ. Բոկկերինին: Կ. ս-ի ամենավառ նմուշներն ստեղծել են Վ. Ա. Մոցարտը (ջութակի, ալտի և նվագախմբի համար, 1779) և Յ. Հայդնը (հոբոյի, ֆագոտի, ջութակի, թավջութակի և նվագախմբի համար, 1792): XX դ-ի որոշ կոմպոզիտորներ «Կ. ս.» եզրույթն օգտագործել են մեծածավալ երկերում՝ մենակատար գործիքն ու մեծ նվագախումբը նշելու համար:

ԿՈՆՑԵՐՏԻՆ (իտալ.՝ concertina), օդհունչ երաժշտ. գործիք, հարմոնի տեսակ՝ խրոմատիկ հնչյունաշարով (առանց պատրաստի ակորդների): Ստեղծել է անգլիացի ֆիզիկոս Չ. Ուիթսթոնը XIX դ-ի 1-ին կեսին (արտոնագիրը՝ 1844-ին): Տարածվել է Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլ երկրներում: Ունի 6 տեսակ՝ պիկոլոյից մինչև կոնտրաբաս (ամենատարածվածը Կ-պրիման է): Կ-ի իրանը 6- կամ 8-նիստանի է, դիապազոնը՝ 2–4 օկտավա: Օգտագործվում է որպես մենակատար և նվագախմբ. գործիք:

ԿՈՆՅԵՐՏԻՆՈ (իտալ.՝ concertino – փոքր կոնցերտ), 1. ստեղծագործություն մենակատարի և նվագախմբի համար (Մ. Տարենտելյան և ուր.): Կոնցերտից տարբերվում է փոքր ծավալներով (մեկմասանի է կամ ունի կարճատև մասեր՝նվագախմբի փոքր կազմով, օր.՝ լարային): Մեկմասանի Կ. հաճախ կոչվում է ***կոնցերտիզպյուկ***: 2. Մենանվագ երաժշտ. գործիքների խումբը ***կոնչերտո գրոսսոյում*** և կոնցերտ. սիմֆոնիայում:

ԿՈՆՅԵՐՏՄԱՅՍՏԵՐ (գերմ.՝ Konzertmeister), 1. նվագախմբի 1-ին ջութակահարը, որը կատարում է ջութակի մենանվագը և երբեմն փորձերի ժամանակ փոխարինում դիրիժորին: XVIII դ-ում գործիք. կապելլաներում կատարել է դիրիժորի դեր: 2. Նվագախմբի լար. խմբերից (ալտեր, թավջութակներ, կոնտրաբասեր) որևէ մեկի առաջին կատարողը: 3. Դաշնակահար, որը համերգների ժամանակ նվագակցում է երգիչներին, օգնում նաև դերերգը սերտելիս:

ԿՈՆՅԵՐՏՇՏՅՈՒԿ (գերմ.՝ Konzertstück – կոնցերտային պիես), 1. մեկմասանի կոնցերտ՝ մեներգչի (մեներգիչների) և նվագախմբի համար: Այդ նշանակությամբ իրար մոտ են գերմ. «Կ.» և իտալ. «կոնցերտինո» եզրույթները: 2. Համերգ. կատարման համար նախատեսված խոշոր ձևի մենակատար ստեղծագործություն: Կ. են համարվում նաև մի շարք կոնցերտ. ստեղծագործություններ, որոնք չեն կրում այդ անվանումը:

ԿՈՊՏԵՎ Սերգեյ Վլադիմիրովիչ [18.02.1913, Լոմժա՝ Լեհաստան)–12.04.1992, Երևանի, ռուս երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի պատմատես. բաժինը (1940, Յ. Ն. Տյուլինի դասարան): 1940-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1979-ից): Գիտ. աշխ-ները վերաբերում են հիմնականում հայկ. և ռուս. սիմֆ. երաժշտության տեսությանը: Հեղինակ է «Հայաստանի սիմֆոնիկ երաժշտությունը և գործիքային կոնցերտը» (1960, 1973, 1985), «Ալեքսանդր Հարությունյան» (1962), «Պոլիտոնայնության հարցերի շուրջ» (1967), «Հայաստանի սիմֆոնիկ երաժշտությունը 1955–65 թվականներին» (1974) և այլ աշխ-ների:

ԿՈՌՆԵՏ (ֆրանս.՝ cornet, < լատ. cornu – եղջյուր), պղնձե փող. մունդշտուկավոր երաժշտ. գործիք: Կազմված է միմյանց կցված, լայնվածքով ավարտվող գլանաձև և կոնաձև արույրե փողերից, կափույրների մեխանիզմից, դնովի մունդշտուկից: Իրանի երկ. (առանց մունդշտուկի)՝ 295–320 *մմ*: Տարածվել է XIX դ-ից: Հնչյունաշարը խրոմատիկ է, ձայնածավալը՝ e–c³: Կ. ընդգրկված է օպեր., սիմֆ., փող. նվագախմբերում:

Կոռնետ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Մարտուն Ալեքսանդրի (ծ. 21.01.1980, Երևան), ջութակահար: Արվեստագիտ. թեկնածու (2015): Նիկոլայ *Կոստանդյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊԿ լար. ֆակ-ը (1999, Ս. Հախնազարյանի դասարան) և ասպիրանտուրան (2000, ղեկ.՝ Է. Թադևոսյան), Լովրանի (Խորվաթիա) կոնսերվատորիան (2000, ասպիրանտասիստենտ): 1994–98-ին՝ «Սերենադ» կամեր. նվագախմբի կազմում: 2000-ից դասավանդում է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում (փոխտնօրեն՝ 2005-ից, տնօրեն՝ 2010-ից), 2010-ից՝ ԵՊԿ-ում: Հայ-ֆրանս. մանկ. նվագախմբի (2015) հիմնադիր: Հեղինակ է միջազգ. մի շարք նախագծերի, գիտ. հոդվածների, որոնք վերաբերում են Տ. Չուխաճյանի սիմֆ. ստեղծագործությանը: Որպես մենակատար՝ հանդես է եկել համերգներով:

ՀՀ Մ՚Ն ոսկե մեդալ (2014), Ռոման ք-ի «Պատվո նշան» շքանշան (2016, Ֆրանսիա):



Մարտուն Կոստանդյան

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Նիկոլայ Ալեքսանդրի (ծ. 23.01.1983, Երևան), ալտահար: Արվեստագիտ. թեկնածու (2017): Մարտուն *Կոստանդյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊԿ լար. ֆակ-ը (2003, Ա. Կոսեմյանի դասարան), Ս. Պետերբուրգի արտաքին տնտ. կապերի, տնտեսագիտության և իրավունքի ինստ-ի իրավաբանության ֆակ-ը (2007, բակալավր, 2008, մագիստրոս), ՀՀ պետ. կառավարման ակադ-ը (2013, հանր. կառավարում): 2015-ից՝ Կոմիտասի թանգարան-ինստ-ի տնօրեն: Հեղինակ է ազգ. և միջազգ. մշակութ. նախագծերի, գիտ. հոդվածների: Ուսումնասիրությունները վերաբերում են նոր և նորագույն շրջանների հայ երաժշտությանը:

Նիկոլայ Կոստանդյան

ԿՈՍՏԱՆՅԱՆ Անահիտ Կոնստանտինի (ծ. 10.02.1963, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ (1991-ից), «Կանայք երաժշտության մեջ» ընկերության (2004-ից) անդամ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի երաժշտության տեսության և կոմպոզիցիայի (1989, դասատու՝ Լ. Չաուշյան), ԵՊԿ կոմպոզիցիա-

Արշակ Կոստանյան

Կարեն Կոստանյան



Անդրեյ Կոտլյարևսկի

Վաղարշակ Կոտոյան

յի (1988, Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (1990, ղեկ.՝ Է. Հովհաննիսյան): 1990–91-ին դասավանդել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում, 1992–2000-ին՝ Ա. Ադեմյանի անվ., 2001-ից՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցներում: Հեղինակ է բալետ. սյուիտի, կվարտետների, վոկալ-փող. կվինտետի (ըստ Մ. Մեծարենցի)՝ ձայնի և փայտե փող. գործիքների, լար. կվարտետի, երգաշարերի (ըստ Ն. Զարյանի և Պ. Սևակի)՝ երգչախմբի համար, «Հայրենասիրական երգեր»-ի, «Ժողովրդական պար»-ի, «Այբբենարան» մանկ. մյուզիքլի, մանկ. երգերի, դաշնամուր. գործերի (սոնատին, պիեսներ՝ պատանի դաշնակահարի համար) ևն:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ա. Խաչատրյանի հուշամեդալ (2007), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

ԿՈՍՏԱՆՅԱՆ Արշակ Սիմոնի (26.11.1865, Շուշի–12.01.1920, Մոսկվա), երգիչ (քնարադրամատիկ. տենոր): Սովորել է Կազանի համալսարանում, 1892-ին աշակերտել է Նինա *Ղորղանյանին*: 1893-ից երաժշտ. կրթությունը շարունակել է Իտալիայում: Երգել է Վորոնեժի, Խարկովի, Իրկուտսկի, Կազանի, Սարատովի և այլ ք-ների օպեր. թատրոններում, 1903-ից՝ Մոսկվայի Սոլոդովնիկովի օպեր. խմբում:

Կ-ին բնորոշ էր գրավիչ և անկաշկանդ կատարումը: Դերերգերից են՝ Կոմս, Ալֆրեդ (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա»), Ֆաուստ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Ալմավիվա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Տուրիդդու (Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ»), Գերման (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»), Վլադիմիր Իգորևիչ (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր»), Եֆիմ, Մարկուս (Ա. Գ. Ռուբինշտեյնի «Վաճառական Կալաշնիկով», «Ներոն»):

ԿՈՍՏԱՆՅԱՆ Կարեն Արամի (16.10.1922, Երևան–24.04.1986, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1965): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1973): Ավարտել է ՄՊԿ ջութակի բաժինը (Կ. Գ. Մոստրասի դասարան): 1950-ից դասավանդել է ԵՊԿ-ում, 1961-ին հիմնադրել է կամեր. անսամբլի ամբիոնը (վարիչ՝ 1961–74-ին, պրոֆ.՝ 1978-ից): Որպես մենակատար՝ հանդես է եկել համերգներով, նաև երկյակում (Մ. Մխիթարյանի հետ, 1954–86): Համահեղինակ է «Մեթոդաբանական մեկնաբանություններ Բեթհովենի ջութակի սոնատների կատարման համար» (1987, Գ. Կուզանովի հետ) աշխ-յան:

Գրկ. *Карен Костанян: Музыкант, учитель, друг: Творческий путь, документы, воспоминания современников о скрипаче-исполнителе (сост.-ред. А. Будагян), Е., 2008.*

ԿՈՍՏԼՅԱՐԵՎՍԿԻ Անդրեյ Անտոնովիչ [11.10.1880, Խարկով (Ուկրաինա)–1954, Յալթա], ռուս ջութակահար, ալտահար, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1939): Ավարտել է Խարկովի երաժշտ. ուսումնարանը (1890-ական թթ.): 1890–1922-ին նվագել է Ռուսաստանի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի սիմֆ. նվագախմբերում: 1922–23-ին դասավանդել է Թիֆլիսի 2-րդ կոնսերվատորիայում, 1923–38-ին՝ ԵՊԿ-ում (վարել է ջութակի, ալտի, կամեր. անսամբլի դասարանները, վերջին երկուսի հիմնադիրը, դոցենտ՝ 1934-ից): 1924–25-ին՝ ԵՊԿ, 1933–46-ին՝ ԵՕԹ նվագախմբերի ալտերի խմբի կոնցերտմայստեր, 1924–31-ին՝ կոնսերվատորիայի քառյակի ալտահար: Ստեղծել է ուսանող. քառյակներ. երկացանկում՝ Յ. Հայդնի, Ֆ. Շուբերտի, Ա. Պ. Բորոդինի, Վ. Ա. Մոցարտի և ուր. կվարտետներից: Սաներից են Ս. Խաչատրյանը, Է. Ղազարյանը, Գ. Ադամյանը, Հ. Վարդանյանը, Ս. Զաքարյանը, Հ. Թալալյանը, Ռ. Ստեփանյանը, Հ. Բոգդանյանը և ուր.:

Գրկ. *Будагян А., Андрей Антонович Котляревский, Е., 1984.*

ԿՈՏՈՅԱՆ Վաղարշակ Ահարոնի (24.08.1921, Թիֆլիս–07.06.1992, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1963): Ավարտել է ԵՊԿ (1950), կատարելագործվել Մոսկվայի Հայ մշակույթի տանը (1953): Գրել է 9 օպերետ («Փեսացուներ», 1954, «Սիրո հովիտ», 1956, «Ոսկե ապարանջան», 1958, ևն), որոնք խորհրդ. շրջանի օպերետ. արվ-ի լավագույն նմուշներից են, նաև 2 վոկալ-սիմֆ. սյուիտ, դաշնամուր. գործեր (3 կոնցերտ՝ դաշնամուրի և նվագախմբի համար, էքսպրոմտ, 1951, պրելյուդներ, 1956, ևն), օրատորիա (Ե. Չարենցի խոսքերով), պար. սյուիտ, ռոմանսներ, երգեր («Իմ Երևան», «Անծանոթ աղջկան», «Սավառնորդի սերը» «Կենաց երգ» ևն), կինոերաժշտություն («Շրթներկ №4», 1964, «Երևան» ստուդիա, ևն):

ԿՈՐԻՖԵՅ (< հուն. κορῦφαῖος – պարագլուխ), հինհուն. ողբերգության մեջ երգչախմբի պարագլուխը, նրա առավել որակյալ մասնակիցը, երգչախմբին դե-

րասանների հետ կապող օղակը. ունեցել է անուղղակի կապ հիմնական դերակատարների հետ: 2. Կորդեբալետի առաջատար արտիստ:

ԿՈՐՌԵՊԵՏԻՏՈՐ (< լատ. cor – միասին, repeto – կրկնում եմ), օպեր. թատրոնի դաշնակահար, դիրիժորի օգնական, որը պարապում է մենակատարների (երգիչներ, պարողներ) հետ պարտիաները յուրացնելու համար: Տես նաև ***Կոնցերտմայստեր***:

«ԿՈՒՌՆԿ», ուշ միջնադարի անհայտ հայ հեղինակի երգ: Այն ժողովրդականացել է, դարձել հայրենիքի կարոտի և հայրենասիրության խորհրդանիշ: Բանաստեղծ. բարձրարվ. տեքստը պահպանվել է XVII դ–ի Տաղարաններում, թարգմանվել և տպագրվել է բազմաթիվ լեզուներով: Ազատ իմպրովիզացիոն շարադրանքով հավաք ձևում ինչող մեղեդին, որ ներկայացնում է հայ միջնադար. աշխարհիկ տաղերի ժանրը, ունի բազմաթիվ գրառված տարբերակներ ժող. կատարումներից: Հավանաբար ծագել է Ակնա երգարվ–ից, որպես ժող. արվ–ի կատարյալ նմուշ՝ արժանացել է համաշխ. ճանաչման: Բազմիցս մշակվել է ձայնի և դաշնամուրի համար. առաջիններից է Ն. Կլենովսկու մշակումը,



Հատված «Կռունկ» երգից

որը կատարվել է 1893–ին Մոսկվայում՝ 1–ին ազգագր. համերգում: Առավել տարածված է և գեղ. մեծ արժեք ունի Կոմիտասի մշակումը (XIX դ–ի վերջ)՝ երգչախմբի, ջութակի, թավջութակի համար: «Կ.»–ի մեղեդին օգտագործվում է հայ կոմպոզիտորների սիմֆ. երկերում, կինոյում և թատրոնում: «Կ.»–ի կատարումը հաճախ գնահատվում է որպես հայ երգի կատարող. վարպետության չափանիշ:

Գրկ. *Նազարյան Շ., «Կռունկ» երգը և նրա պատմությունը, Ե., 1977:*

ԿՎԻՆՏԱՅԻՆ ՇՐՋԱՆ, երաժշտության մեջ՝ բեմոլավոր և դիեզավոր մաժոր կամ մինոր տոնայնությունների շրջանաձև (պարուրաձև) դասավորությունը կվինտաներով, որոնցից յուրաքանչյուրը բանալու



Դիեզային տոնայնությունների կվարտա–կվինտային շրջան



Բեմոլային տոնայնությունների կվարտա–կվինտային շրջան

1 նշանով տարբերվում է նախորդ կամ հաջորդ տոնայնությունից: Կ. շ. կիրառվում է տոնայնությունների բանալու նշանները յուրացնելիս և տոնայնությունների ազգակցականությունն ուսումնասիրելիս: Մի շարք տեսաբաններ Կ. շ. անվանում են միայն դիեզավոր տոնայնությունների շրջանաձև շարքը, բեմոլավորները՝ կվարտային, երկուսը միասին՝ կվարտա–կվինտային շրջան:

ԿՐԿՆԱԿԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, երգչախումբ՝ բաղկացած 2 մասից, որոնցից յուրաքանչյուրը լրիվ կազմի խառը երգչա-

խումբ է: Կատարում են ութձայն խմբերգեր՝ 1-ին և 2-րդ սոպրանոների, 1-ին և 2-րդ ալտերի, 1-ին և 2-րդ տենորների, 1-ին և 2-րդ բասերի համար (Կոմիտասի «Սոնա յար» խմբերգը ևն): Կ. ե. կարող է ընդգրկել տարբեր կազմերի ուրույն հնչողականության մի շարք երգչախմբեր՝ խառը քառաձայն, տղամարդկանց քառաձայն, կանանց քառաձայն, մանկ. քառաձայն, նաև տարակազմ՝ երկձայն, եռաձայն, հինգ, վեց և ավելի ձայներով: Տես նաև *Երգչախումբ*:

ԿՐԿՆԵՐԳ, քառյակ. երգի մաս. կատարվում է յուրաքանչյուր քառյակի վերջում: Ի տարբերություն նախերգի՝ Կ-ի գրական տեքստը սովորաբար անփոփոխ է, զանգված. երգերում հաճախ արտահայտում է ստեղծագործության ընդհանուր գաղափարը և կատարվում է 2 անգամ: Նախերգ–կրկներգ փոխհարաբերությունն առկա է նաև գործիք. երաժշտության մեջ՝ երկմասանի, ռոնդո կամ ռոնդոյակերպ ձևերում:

Կ-երն իրենց բովանդակությամբ ու նշանակությամբ բազմազան են հատկապես ժող. երաժշտության մեջ: Հայ գեղջկական երգերում Կոմիտասը տարբերում է Կ-ի 5 տեսակ. 1. պարզագույն՝ ինքնուրույն իմաստ չունեցող միավանկ բացականչություններ (լե՛, լո՛, նա՛յ ևն), որոնք լրացնում են երաժշտ. նախադասությունը կամ բանավոր տաղաչափությունը: 2. Միավանկ կամ երկվանկ իմաստավոր բառեր (վա՛յ, վո՛յ, ա՛խ, վա՛խ, հո՛պ-պա, զը՛նգը ևն), որոնք ի հայտ են գալիս ըստ երգի զգացմունքայնության և պատկերավորման: 3. Ոտանավոր տող («Արոտով, արոտով, յարիս կարոտով», «Սարերի վրով գնաց» ևն), որը երգի հիմնական տեքստում դառնում է միջանկյալ նախադասություն և բացատրում կամ լրացնում է նրա միտքը: Երգի տեքստում բանաստեղծ. և երաժշտ. ինքնուրույնություն չունեցող այս հավելումները Կոմիտասն անվանել է կ ր կ ն ա կ, որոնք հանդիպում են երգի և՛ սկզբում, և՛ մեջտեղում, և՛ վերջում: 4. Բուն Կ., ավարտուն բանաստեղծությամբ, տարբեր եղանակով ամբողջ. երգ է՝ մշտապես կապված հիմնական երգին («Երթամ Ստամբոլ» կրկներգը՝ «Յոթն օր, յոթ գիշեր» երգում): 5. Ամբողջ. երգ, որ գոյություն ունի նաև հիմնական երգից անկախ և նրա հետ միանում է հակադրության սկզբունքով, սովորաբար՝ դանդաղահոս երգի արագ կրկներգ («Կուժն առա, ելա սարը» և «Գնա, գնա, հետիդ եմ», «Զուրն առա, ելա դարը» և «Պիլիբի» ևն):

Ժող. երգերը հաճախ անվանում են կրկնակների կամ կրկներգերի անուններով («Ա՛խ, մարալ ջան», «Հոյ Նազան իմ», «Հո դալլո», «Հավար Զուլո» ևն): Որևէ երգում Կ-ի և կրկնակի տեսակները հաճախ հանդիպում են միաժամանակ՝ նրա տաղաչափ. ձևը դարձնելով խիստ յուրօրինակ ու գրավիչ:

Ամպել ա, ձուն չի գալի,
Շողեր ջան,
Սարիցը փուն չի գալի.
Շողեր ջան.
Դու շորորա, դուն օրորա,
Շողեր ջան,
Ամպի տակին ձուն կերևա,
Շողեր ջան...

Կ-երը սովորաբար կրում են բանաստեղծ. և հատկապես երաժշտահուզ. մեծ բեռնվածք: Ըստ Կոմիտասի՝ կրկնակն ու Կ. դառնում են երգի իսկական քնար. մասը: Լոռու գութաներգի վերաբերյալ նա գրել է. «Կարծեք շինականն իր ամբողջ հոգին ձուլել է մեն մի կրկնակի հետ, կարծեք իր ամբողջ կյանքը զոհելու պատրաստ է ջան-գոմշուկին ու գութանավոր աշխատակցին» (Կոմիտաս, «Հոդվածներ և ուսումնասիրություններ», 1941, էջ 93):

Ըստ Ռոբերտ Աթայանի

ԿՅՈՒՐԴ, կ ց ո ր դ, հայ հոգևոր երգի ինագույն տեսակ: Անվանումն առաջացել է աստվածաշնչյան սաղմոններին ու օրհնություններին կցված լինելու և որպես դրանց հավելված կատարվելու համար: Ծագել է IV–V դդ-ում՝ որպես ասոր. madhrâšē-ի և հուն. roparion-ի հայկ. դրսևորում: IV դ-ի որոշ նմուշներ մինչև գրերի գյուտը հարատևել են բանավոր ավանդությամբ: Գրերի գյուտից անմիջապես հետո սկսվել է Կ-ների բուռն զարգացման շրջանը: Առաջին Կ-ները հիմնականում 3-ական տնից բաղկացած փոքր երգեր էին՝ հորինված դավթյան սաղմոնների, մարգարեական օրհնությունների, նաև ավետարան. պատումների հարասությամբ: Կ-ների առաջին հեղինակները՝ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, մեկը՝ Հին կտակարանի, մյուսը՝ Նոր կտակարանի հայ. թարգմանություններին հատուկ բանաստեղծ. կերպարներն ու լեզվաոճ. հարստությունները զարգացնելուց բացի՝ նախաձեռնել են նաև հայ հոգևոր նո-

բաստեղծ երգը պատմ. կարճ ժամանակամիջոցում ասորականի և հունականի տեխ-գեղ. մակարդակին բարձրացնելու գաղափարը, որը հաջողությամբ իրագործել են նրանց աշակերտները, նաև հետագա դարերի բանաստեղծ-երաժիշտները: Հետզհետե շատանալով՝ Կ-ներն ամփոփվել են կ ց ու ր դ ա ր ա ն կոչվող ժող-ում: Պատմ. զարգացման ընթացքում նրանք ձևով ու բովանդակությամբ դարձել են առավել անկախ, ինքնուրույն և ծավալուն՝ պահպանելով Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի շրջանից ուրվագծված կերպար. 2 միմյանց լրացնող ոլորտներին բնորոշ հատկանիշները: IX–X դդ-ից Կ-ները կոչվել են շարական, իսկ կցուրդարանը՝ *Շարակնոց*: Կ-ներն անցյալում երբեմն նույնացվել են «կցորդ» անվանմանը (հայ հին մատենագրության մեջ ոչ հազվադեպ հանդիպում է կցորդ-սաղմոս ձևով): Կ-ի հետ չպետք է շփոթել նաև կ ա ց ու ր դ ը, որը նշանակում է ակրոստիքոսով գրված տոնական մեծ երգ (հաճախ ընկալվում է որպես հուն. χουτάχιου-ի հայկ. նմանակը, որը երբեմն անվանվում է նաև ուղղակի կ ո ն դ ա կ):

Ըստ Նիկողոս Թահմիզյանի

ԿՈՒԶԱՆՈՎ Գևորգ Ստեփանի (07.07.1934, Լենինական–2001, Երևան), դաշնակահար, կոնցերտմայստեր, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (Ռ. Անդրիասյանի դասարան) և երաժշտագիտության (1962, Ա. Ս. Կոպտևի դասարան) բաժինները: Դասավանդել է ԵՊԿ-ում (երաժշտատես. առարկաների և կամեր. անսամբլի դասընթացներ, պրոֆ.՝ 1993-ից): Որպես կոնցերտմայստեր՝ աշխատել է մի շարք ուս. հաստատություններում: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ շուրջ 300 քաղաքում՝ Գ. Թալալյանի, Հ. Բոգդանյանի, Ժ. Տեր-Մերգերյանի, Յ. Բալյանի, Լ. Զաքարյանի, Գ. Գասպարյանի և ուր. հետ: Համահեղինակ է «Մեթոդաբանական մեկնաբանություններ Բեթհովենի ջութակի սոնատների կատարման համար» (1987, Կ. Կոստանյանի հետ) աշխ-յան, կազմել է «Հայ կոմպոզիտորների կամերային անսամբլներ» (1988) ժող-ը:

ԿՈՒՋԻԿՅԱՆ Արշակ Գրիգորի (ծ. 21.05.1983, Երևան), երգիչ (բաս-բարիտոն): Երևանում հաճախել է Չայնի պահպանման հատուկ մասնագիտացված դպրոց, երգել Արարատյան հայրապետ. թեմի «Մանկունք» երգչախմբում: Ավարտել է ԵՊԿ (2005, Մ. Հովակիմյանի դասարան), վերապատրաստվել Վալերի *Հարությունյանի* ղեկավարությամբ (2008), սովորել է Շոտլանդիայի թագավոր. կոնսերվատորիայում (2013–15, Ս. Քոնսոնի դասարան), Ուելսի Չայնի միջազգ. ակադ-ում (2015–16, Դ. Օ'Նիլի դասարան): 2008–13-ին՝ ԵՕԲԹ կոնսերվատորիայի օպեր. ստուդիայի մեներգիչ. դերերգերից են՝ Կոլլին (Զ. Պուչչինիի «Բոհեմ»), Մոսի (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Դուլկամարա (Գ. Դոնիցետտիի «Սիրո ըմպելիք»), Ֆիգարո (Զ. Ռոսսինիի «Ֆիգարոյի ամուսնություն»), Ծեր գնչու (Ս. Վ. Ռախմանինովի «Ալեկո»), Պուբլիո (Վ. Ա. Մոցարտի «Տիտոսի գթությունը»), Ռամբալդո (Զ. Պուչչինիի «Ծիծեռնակ») ևն: 2013-ից գործել է Գլազգոյում, Կարդիֆում, 2016-ից ապրում է Լոնդոնում: Հանդես է գալիս համերգներով, մասնակցում է փառատոների, միջազգ. մրցույթների:

Արշակ Կուզիկյանը Կոլլինի դերում (Զ. Պուչչինիի «Բոհեմ»)

Պ. Լիսիցյանի և Տ. Սազանդարյանի անվ. մեներգիչների հանրապետ. (2011, Երևան), «Լես Ազուրիալես» միջազգ. (1-ին, 2015, Ֆրանսիա), «Անկախ օպերա» (2015, Անգլիա) մրցույթների մրց-ներ:

ԿՈՒԼԻՍ (ֆրանս.՝ coulisse, < couler – սահել), բեմի կողքերի ուղղաձիգ, հարթ, փայտից շինված և փափուկ կտորի մեջ առնված բեմ. հարդարանքի մնայուն մասերը: Հանդիսատեսից թաքցնում են 2 կողմերի աշխատանք. տարածությունը, վերնաբեմի հետ կազմում է «բեմի հագուստը»: 2. Վարագույրի հետևի բեմ. տարածությունը, որտեղ կողմնակի անձանց մուտքն արգելվում է:

Հ

Հազիր



Դավիթ Հալաջյան



Գրիգոր Հախինյան

ՀԱՋԻՐ [Աբրահամյան Աբրահամ, 1845, Շուլավեր (Շահումյան ավան՝ Վրաստան)–1922], գուսան: Ապրել է Թիֆլիսում, ստեղծագործել հայ. և վրաց.: Նվագել է քամանչա, եղել աշուղների համքարության ուստաբաշի: Նախընտրել է աշուղ. երգի ղոշմա, դիվանի, թեջնիս, դուբեյթ, մուխամմազ ձևերը: Նրա երգերից մի քանիսի թեմային անդրադարձել և զարգացրել է ***Ջիվանին*** («Ամեն կողմով տկար մարդը», «Աստված մեկ է, փառքն անթիվ» ևն):

Հ–ի երգերն առանձին գրքերով լույս են տեսել հայ. («Աշըղ Հազիրի երգերը», 1892) և վրաց.: 1892–1914–ին Հ–ի ստեղծագործությունների 10 ժող. (հայ. և վրաց.) տպագրվել է Մոսկվայում և Թիֆլիսում: Թբիլիսիի փողոցներից մեկը կոչվել է Հ–ի անունով:

ՀԱՋԻԲԻ (Աթոյան Համբարձում, 10.02.1840, Ալեքսանդրապոլ–1.11.1876, Ալեքսանդրապոլ), գուսան: Գրել է երգեր՝ առավելապես բարոյախրատ. և կրոն. թեմաներով, օգտագործել աշուղ. երգարվ–ի դիվանի, թեջնիս, մուխամմազ, ղալանդարի, սեմայի և այլ բարդ ձևեր: Նրա մուհամմա–հանելուկներից մի քանիսը տպագրվել են 1878–ին Բաքվում՝ «Սոխակ Հայաստանի» երգարանում:

Գրկ. *Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986:*

ՀԱԼԱՋՅԱՆ Դավիթ Մարատի (ծ. 07.02.1962, Երևան), կոմպոզիտոր, խմբավար: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի, ԵՊԿ կոմպոզիցիայի (Է. Հովհաննիսյանի դասարան), դիրիժորության (Հ. Ոսկանյանի դասարան) բաժինները (1989) և ասպիրանտուրան (1991, ղեկ.՝ Է. Հովհաննիսյան): Սովորելու տարիներին աշխատել է ՀԽՍՀ հեռուստառադիոյում (երաժշտ. խմբագիր, «8:30» հաղորդաշարի հեղինակ): Գրել է ստեղծագործություններ Հայաստանի ռադիոյի կամեր., «Երևան» կանանց («Ստաբատ Մատեր», 1–ին մրց., Արեցցո՝ Իտալիա) երգչախմբերի համար: Հիմնադրել է (Ռոբերտ *Մլքեյանի* հետ) ԵՊԿ երգչախումբը (գրել է 3 երգ՝ Բաղդասար Դպիրի խոսքերով, 1986, «Հիշատակի Պատարագ», 1987): 1991–ին տեղափոխվել է Շվեյցարիա. սովորել է Բազելի երաժշտ. ակադ–ում (Թ. Քեսլերի դասարան) և Յուրիխի կոնսերվատորիայում: Հանդես է գալիս որպես խմբավար, մասնակցում փառատոների և համերգների, դասավանդում է Յուրիխի կոնսերվատորիայում (Զ. Բեննեթի դասարան): Յուրիխում հիմնադրել է «Գլորիա» կամեր. երգչախումբը (1993): Հ–ի «Լույսի Պատարագ» մեծակտավ գործը ՀՀ–ում կատարվել է Տիգրան Հեքեքյանի (1997), Արամ Ղարաբեկյանի (2000), ապա՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ: Գրել է սոնատ (1983)՝ թավջութակի և դաշնամուրի, կանտատ՝ «Մեսրոպ Մաշտոց» (1986)՝ մեներգիչների, երգչախմբի և նվագախմբի, կոնցերտ (2001)՝ ջութակի, լար. նվագախմբի և հարված. գործիքների, «Շեքսպիրի սոնետները» (2001)՝ երգչախմբի (ա կապելլա), «Մաշտոցի շարական» (2008)՝ սոպրանոյի և լար. նվագախմբի, «Դեռ ինչում է իմ երգը» (2014)՝ կամեր. անսամբլի, «Օ, Երկնային թագավոր» (2011)՝ ձայնի, խառը երգչախմբի և թավջութակի համար, լար. կվարտետներ (1984, 1985), «Աշնանային ինչյուններ» (2015) ջութակի կոնցերտը և այլ գործեր, որոնք կատարվել են ՀՀ–ում, Գերմանիայում, Իսպանիայում, Հոլանդիայում, Իտալիայում, ԱՄՆ–ում, ՌԴ–ում, Շվեյցարիայում և այլուր, նաև փառատոներում: Թողարկել է ձայնասկավառակներ:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2012), ՄՆ ոսկե (2012), «Գրիգոր Նարեկացի» (2013) մեդալներ:

ՀԱԽԻՆՅԱՆ Գրիգոր Մուշեղի (20.04.1926, Ղարաքիլիսա–06.03.1991, Երևան), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1972), ՀՀ ժող. արտիստ (1990): Ավարտել է ԵՊԿ (1957, Գ. Եղիազարյանի դասարան): 1961–76–ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ.

ուսումնարանում, 1970-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1989-ից): 1974-ից՝ Երաժշտ. հիմնադրամի հայկ. բաժանմունքի վարչության նախագահ:

Գրել է օպերաներ («Մարդը լեգենդից», 1970, «Ծովինար», 1973, ևն), բալետներ («Ախթամար», 1961, «Լոռեցի Սաքոն», 1961, «Ռուբենի», 1963), երաժշտ. կոմեդիա («Գլխի գինը 50 միլիոն», 1967), խորեոգրաֆիկ պատկեր («Սրերից խոփեր ձուլենք», 1970), կանտատներ («Սայաթ-Նովա», 1963, «Հայաստան», 1983, «Մեծ հաղթանակ», 1985), օրատորիա («Թռնդրակեցիներ», 1966), «Պարային սյուիտ»՝ ժող. գործիքների նվագախմբի համար (1957), սիմֆոնիաներ (1969, 1975, 1978, 1966), ջութակի և սիմֆ. նվագախմբի (1977), քանոնի և ժող. գործիքների (1987), դուդուկի և ժող. գործիքների (1988) կոնցերտներ, գործիք., վոկալ երկեր, թատրոնի և կինոյի երաժշտություն («Տերն ու ծառան», 1962, «Մայո ժակը և ուրիշները», 1964, «Սովի տարիներից», 1966, «Ձոն Հայաստանին», 1967), մշակել է ժող. և աշուղ. երգեր:

Հ-ի անվամբ Վանաձորում կոչվել է երաժշտ. դպրոց:

Երկ. *Իմ երգը: Դաշնամուրի նվագակցությամբ, Ե., 1987:*

Գրկ. *Արազյան Թ., Գրիգոր Հախինյան, Ե., 1974:*

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Նարեկ Սուրենի (23.10.1988, Երևան), թավջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (2017): Սուրեն *Հախնազարյանի* որդին, Տիգրան *Հախնազարյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊԿ (2001, Ջ. Սահակյանցի դասարան), ՄՊԿ (2006, Ա. Սելեզնյովի դասարան): Ստացել է ՌԴ ՄՆ, Ռուս-հայկ., «Նոր անուններ», բարեգործ. «Ռուս կատարողական արվեստ», «Արամ Խաչատրյան», «Մստիսլավ Ռոստրոպովիչ» հիմնադրամների կրթաթոշակ: Փասադենայի (ԱՄՆ) սիմֆ. նվագախմբի մենակատար: Ելույթներ է ունեցել Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի, Չիկագոյի, Տոկիոյի, Լոնդոնի, «Նոր Ռուսաստան» ռուս. ազգ. սիմֆ., Ռոտերդամի ֆիլհարմոնիկ, Ջ. Վերդիի անվ. և այլ հայտնի նվագախմբերի հետ՝ Վ. Տ. Սպիվակովի, Ջ. Մեսթերի, Հ. Վոլֆի, Վ. Գերգիևի, Մ. Յուրովսկու և այլ հանրաճանաչ դիրիժորների ղեկավարությամբ: Երկացանկում՝ հայ և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների գործերից:

Նյու Յորքի «Young Concert Artists» մրցույթի 9 Հատուկ մրց. (2008), Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. մրցույթի 1-ին մրց. և ոսկե մեդալ (2006, Երևան), Պ. Ի Չայկովսկու անվ. XIV մրցույթի ոսկե մեդալ (2011), ՀՀ նախագահի մրց. (2007), «Մովսես Խորենացի» (2013), ՄՆ ոսկե (2017) մեդալներ:

Նարեկ Հախնազարյանը կլոյթի պահին

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Սուրեն Հայրապետի (ծ. 13.11.1949, Երևան), ջութակահար: Նարեկ և Տիգրան *Հախնազարյանների* հայրը: Ավարտել է ԵՊԿ (1972), ՄՊԿ ասպիրանտուրան (1974): 1985-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2003-ից): 1956-ից՝ ՀԽՍՀ հեռուստառադիոյի ջութակահարների անսամբլի, 1984-ից՝ Կոմիտասի անվ. քառյակի (2-րդ ջութակ) կազմում: «Հախնազարյան» եռյակի հիմնադիրներից է (1995), հանդես է գալիս նաև որպես մենակատար:

Սուրեն Հախնազարյան

Այսրկովկաս. մրցույթի 1-ին (1969), ՀՀ Պետ. (1985) մրց-ներ:

Կինը՝ Գայանե Արայի Հ. (ծ. 26.08.1951, Երևան), դաշնակահարուհի: Ավարտել է ԵՊԿ (1974, Է. Գ. Մամաևի դասարան): 1982–2001-ին դասավանդել է ԵՊԿ-ում, պրոֆ.՝ 1996-ից, 2000-ից՝ ՄՊԿ կից երաժշտ. քոլեջում: «Հախնազարյան» եռյակի հիմնադիրներից է: Մենահամերգներով շրջագայել է Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, Ավստրիայում, Ճապոնիայում, Չինաստանում և այլուր: Հեղինակ է մեթոդ. ձեռնարկների, «Բախից մինչև մեր օրերը» (փոխադրություններ 2 դաշնամուրի համար, 2016) ժող-ի:

Որդին՝ Լևոն Հ. (ծ. 22.10.1973, Երևան), դաշնակահար: Ավարտել է ԵՊԿ (1996, Յ. Հայրապետյանի դասարան) և ասպիրանտուրան (1998, ղեկ.՝ Գ. Հախնազարյան): 1996–97-ին վարպետության դասեր է առել Մ. Վերեռից (Գերմանիա): 1998–2002-ին դասավանդել է ԵՊԿ-ում: 2002-ից ապրել է ՌԴ-ում, 2010-ից՝ Գերմանիայում:

Տիգրան Հախնազարյան

Դաշնակահարների հանրապետ. մրցույթի 2-րդ մրց. (1986):

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Տիգրան Սուրենի (ծ. 13.03.1978, Երևան), ջութակահար, դիրիժոր: Սուրեն *Հախնազարյանի* որդին, Նարեկ *Հախնազարյանի* եղբայրը: Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի (1999, Ի. Ա. Մուսինի դասարան), ԵՊԿ դիրիժորության (2000, Է. Խաչատրյանի

Ռուբեն Հախվերդյանը ելույթի պահին

«Հակոբ կաթողիկոս Կայացի և Հովհաննես Երզնկացի Պլուզ», մանրանկար (1741, Մեկնություն, Մխիթ., ձեռ. № 6396)

«Հակոբ Ղրիմեցի», գծանկար (1756, «Տոմարի մեկնություն», Մխիթ., ձեռ. № 2013)

դասարան), ջութակի (2001, Ս. Հախնազարյանի դասարան) բաժինները: Վարպետության դասեր է առել Կ. Սազուրից (2004, Լեհաստան): 2003–04-ին՝ Բաշկորտոստանի սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր, 2013–16-ին՝ Խարարովսկի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 2016-ից՝ Սախալինի կամեր. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրժոր, 2018-ից՝ նաև Սախալինի երիտասարդ. սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ.: Որպես դիրիժոր՝ շրջագայել է Ճապոնիայում, Չինաստանում, Մալթայում և այլուր:

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Ռուբեն Լևոնի (ծ. 3.12.1950, Երևան), ռեժ., երգահան: Ավարտել է ԵԳԹԻ (1975): Հեղինակ. երգի սկզբնավորողներից է ՀՀ-ում: 1968–87-ին՝ հայկ. հեռուստատեսության ռեժ.: Բեմադրություններից են՝ Ի. Շտոկի «Սատանայի ջրաղացը» (1975, հեռուստաներկայացում, հայկ. առաջին գունավոր տեսագրությունը, երգերի հեղինակ՝ Հ.), Մ. Մետեռլինկի «Սուրբ Անտոնիոսի հրաշագործությունը» (Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն), «Կայարան» (ըստ Հ. Մաթևոսյանի, ԵԴԹ):

Լավագույն երգերից են՝ «Նավակ», «Ձյուն», «Շները», «Սա Երևանն է», «Երևանի գիշերներում» ևն: Թողարկել է ձայնասկավառակներ («Սիրո և հույսի երգեր», 1985, Փարիզ, «0–100 տարեկան երեխաներին», 2005, ԹՄՄ «Մանկական լավագույն ստեղծագործության» մրց.՝ 2008, ևն), ձայներիզների, «Իմ տունն անիվների վրա» համերգ-ներկայացման (1996):

Իր ստեղծագործությունների լավագույն կատարողներից է: Համերգներով հանդես է եկել Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հարավսլավիայում, Իտալիայում, Լիբանանում և այլուր: Նկարահանվել է կինոյում («Քամին ունայնության», 1989, գեղ. ֆիլմ), գրել կինոերաժշտություն («Գտնված երազը», 1976, «Գյուտարար գորտը», 1982, «Ընտրություններ», 1994, երեքն էլ՝ մուլտֆիլմ, Հայֆիլմ):

Երկ. *Խոսքեր, Ե., [ա. թ.]: 0–100 տարեկան երեխաներին [Մանկական սիրված երգեր], Ե., 2002:*

Գրկ. *Ռուբեն Հախվերդյան, [Երգահանի անցած ուղու մասին], կազմ., խմբ.՝ Շ. Արզաքանյան, Ե., 2011:*

ՀԱԿՈԲ Ա ԿԼԱՅԵՑԻ, Տարսոնացի, Սսեցի (1200-ական թթ.–12.02.1286, Հռոմկլա), գիտնական, հռետոր, մեծ վարդապետ, մեկնիչ և բանաստեղծ: Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1268-ից: Առաջին հայրապետն էր, որը որպես կոնդակ օգտագործել է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»: Հայտնի է նաև որպես շարականագիր: Հեղինակ է Շարականոցը բացող, Սբ Աստվածածնի ծննդյանը ձոնված առաջին կանոնի՝ «Երգեցեք որդիք Սիոնի», որը հորինված է հայ շարականագության ավանդ. և նոր՝ կիլիկյան դպրոցի լավագույն ձեռքբերումների հմուտ համադրումով:

Գրկ. *Թահմիզյան Ն., Երաժշտությունը Հայկական Կիլիկիայում, Ե., 1989:*

ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑԻ [1360-ական թթ., Սուրխաթ (այժմ՝ Ստարի Կրիմ՝ Ղրիմ)–1426, Ցիպնավանք՝ Արծկե կղզում], տոմարագետ, մեկնիչ, մանկավարժ, երաժշտագետ: Նախն. կրթությունն ստացել է Սուրխաթում, ապա սովորել Երզնկայի դպրոցում: 1410-ից՝ Մեծոփավանքի դպրոցի րաբունապետ. դասավանդել է տոմարագիտություն, իմաստասիրություն, գրչարվ., երաժշտություն: Խմբագրել է և լրացրել Գրիգոր Տաթևացու երկհատոր «Քարոզգիրքը» (1415):

Հ. Ղ-ի «Մեկնութիւն տոմարի» (1416) մեծարժեք երկը երկար ժամանակ եղել է քառյակ գիտությունների՝ թվաբանության, երկրաչափության, երաժշտության և աստղաբաշխության ուս. ձեռնարկ: Երաժշտ. գեղագիտության մեջ ընդունել է գործիք. երաժշտության ինքնուրույնությունն ու գեղագիտ. նշանակությունը, երաժշտությունը դիտարկել որպես գիտելիք և արվ-ի ձև:

Երկ. *Տոմարագիտական աշխատություններ (աշխատասիր.՝ Ջ. Էյնաթյանի), Ե., 1987:*

ՀԱԿՈԲ ՆԵՏՐԱԲԵՆՑ, Հակոբ Արծկեցի [ծ. թ. անհտ, ք. Արծկե (Տուրուբերանի Բզնունյաց գավառ)–1501], գրիչ, բանաստեղծ: Նախն. կրթությունն ստացել է հոր՝ Ներսես քահանայի մոտ, ապա՝ Արծկեի վարդապետ. դպրոցում: 1467-ից Արծկեի Սքանչելագործ Սբ Նշան վանքում ընդօրինակել է Ավետարաններ ու Գանձարաններ (պահպանվել են մի քանիսը): Հիշատակելի է Մնդ-ի ձեռ. № 5438 Գանձարանը (1491, եղբոր՝ Ղազարի աշխատակցությամբ):

Գրել է 13 չափածո երկ, որոնք ազգեկեղեց. և տերուն. թեմաներով գանձեր ու տաղեր են, չափածո վարքեր, եղբոր՝ Ղազարի հիշատակին նվիրված մի ողբ, նաև վարդի ու սոխակի այլաբան. սերը, բնության զարթոնքն ու մարդու հրճվանքն

արտահայտող երգեր (մի քանիսի հեղինակ. պատկանելությունը վիճելի է): Հ. Ն-ի բանաստեղծությանը հատուկ են ակրոստիքոսի հորինվածքը, տաղաչափ. բազմազանությունը, ավանդ. արտահայտչամիջոցները:

Գրկ. *Ակինեան Ն., Յակոբ Նեփրարենց եպիսկոպոս Արծկէի. հայ բանաստեղծ մը ԺԵ դարու երկրորդ կէսէն, տես նրա «Մատենագրական հետազօտութիւններ», հ. 4, Վնն., 1938:*

ՀԱԿՈԲՅԱՆ Գևորգ Ասատուրի [ծ. 31.07.1981, ք. Մեծամոր (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)], երգիչ (բարիտոն): ՀՀ վաստ. արտիստ (2011): Ավարտել է ԵՊԿ (2004, Ս. Դանիելյանի դասարան): 2003-ից՝ ԵՕԲԹ մեներգիչ: 2010-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2015-ից): Առաջին ելույթը՝ 2004-ին (Մոսի՝ Ա. Տիգրանյանի «Անուշ»): 2008-ից հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի լավագույն օպեր. բեմերում, համագործակցել հանրահայտ երաժիշտների և դիրիժորների (Լ. Մաազել, Վ. Գերգիև, Մ. Յուրովսկի, Ա. Վեդերնիկով, Ռ. Աբադո, Պ. Դոմինգո, Մ. Գուլեգինա, Զ. դել Մոնակո, Է. Նեկրոշիուս) հետ: 2008-ին Կալիարի ք-ի (Իտալիա) «Լիրիկո» օպեր. թատրոնում հանդես է եկել Ֆյոդոր Պոյարոկի (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ասք անտեսանելի Կիտեժ քաղաքի և Ֆեվրոնյա կույսի մասին»), Եվգենի Օնեգինի, 2014-ին՝ Բեսի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Չերևիչկի»), 2009-ին՝ Ալֆիոյի (Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ»), Տոնիոյի (Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ») դերերգերով:

Դիրիժոր Լ. Մաազելի ղեկավարությամբ երգել է 20 օպերայում (Շարպլես՝ Զ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ», Ալֆիո՝ Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ», Ամոնասրո՝ Զ. Վերդիի «Աիդա», ևն):

2013-ին փոխարինել է Պ. Դոմինգոյին (Ֆրանչեսկո Ֆոսկարի՝ Զ. Վերդիի «Երկու Ֆոսկարի»), 2014-ին դերերգով հանդես եկել վերջինիս հետ՝ Զ. Վերդիի «Սիմոն Բոկկանեգրա» օպերայում (Սոֆիա թագուհու արվ-ների պալատ, Վալենսիա՝ Իսպանիա): Վ. Գերգիևի ղեկավարությամբ մասնակցել է Ֆ. Շալյապինի անվ. 31-րդ օպեր. փառատոնի եզրափակիչ գալա-համերգին (2013, Կազան): 2013-ին Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնում հանդես է եկել Նաբուկկոյի (Զ. Վերդիի «Նաբուկկո», 2013) և Բարոն Սկարպիայի (Զ. Պուչչինիի «Տոսկա», 2015, Մ. Գուլեգինայի խաղընկերությամբ) դերերգերով, 2014–15-ին՝ Քիլի (Գերմանիա) (Շարպլես՝ Զ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ», Նաբուկկո՝ Զ. Վերդիի «Նաբուկկո», ևն), 2016-ին՝ Տուրինի (Պաոլո Ալբիանի՝ Զ. Վերդիի «Սիմոն Բոկկանեգրա») օպեր. թատրոններում:

2008-ին Մոսկվայի Մեծ թատրոնի կազմում նկարահանվել է Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ասք անտեսանելի Կիտեժ քաղաքի և Ֆեվրոնյա կույսի մասին» օպերայում:

«Արտավազդ» (2011, Երևան), Armenian Music Awards մրցանակաբաշխության «Ոսկե ձայն» (2011, Մոսկվա), ՀՀ նախագահի (2007) մրց-ներ, մեներգիչների Պ. Լիսիցյանի անվ. միջազգ. մրցույթի 1-ին մրց. և ոսկե մեդալ (2008, Մոսկվա) ևն:

ՀԱԿՈԲՅԱՆ Էդվարդ Ստեփանի [07.03.1920, Ֆայյում (Եգիպտոս) – 20.02.2004, Կահիրե], խմբավար, կոմպոզիտոր, հաս. գործիչ: Ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգ. և ֆրանս. վարժարանները, Փարիզի «Ցեզար Ֆրանկ» կոնսերվատորիան (1954): 1955-ից երգեցողություն է դասավանդել Կահիրեի Գալուստյան և Նուբարյան ազգ. վարժարաններում, ղեկավարել է «Շնորհալի», «Թաթուլ Ալթունյան» (նաև հիմնադիր), «Ազատ Մանուկյան» երգչախմբերը, հանդես եկել համերգներով և դասախոսություններով:



Գևորգ Հակոբյանը Ամոնասրոյի դերում (Զ. Վերդիի «Աիդա»)

Գրել է լար. տրիո, սիմֆ. պատկեր, սիմֆ. սյուիտ, «Պաստորալներ»՝ ձայնի և նվագախմբի համար, «Քնարական երգեր» (Ա. Իսահակյանի խոսքերով), «Քուչակյան տաղեր», «Սիրո երգեր» երգաշարերը, «Հայկական պատարագի տաղեր եւ մեղեդիներ եվրոպական ձայնագրութեամբ» (1963), «Սրբազան տաղեր» (1980) ժող-ները, «Ազգային հայրենասիրական և ազատագրական պայքարի երգեր», Ներսես Շնորհալու «Սրբազան երգեր» պրակները (1991), որոնց բնորոշ են ազգ. մտածողությունն ու ոգին, նրբակերտությունը, հենքի մեղեդիական և հարմոնիկ գունագեղությունը: Հեղինակ է նաև մանկ. երգերի, որոնք ամփոփված են «Հայաստան, ապրիր հավիտյան» (1981), «Դպրոցի ճամփան» պրակներում, նաև «Ժամանակակիցները Կոմիտասին հմայքին տակ» (1979) գրքի: 1969 և 1983-ին Երևանում հանդես է եկել հեղինակ. համերգներով:

ՀԱԵ «Սբ Ներսես Շնորհալի» շքանշան:



Լևոն Հակոբյան

Նելլի Հակոբյանը ելույթի պահին

Միփսան Հակոբյանը ելույթի պահին

ՀԱԿՈԲՅԱՆ Լևոն Հովհաննեսի (ծ. 09.09.1953, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (1996): ՌԴ ԿՄ անդամ: Ավարտել է ԵՊՀ (1975), ԵՊԿ (1981, Տ. Մանսուրյանի դասարան): 1980–93-ին՝ ԳԱԱ արվ-ի ինստ-ի երաժշտության բաժնի աշխատող. գրել է հայ միջնադար. խազ. նոտագրության վերծանման խնդրին վերաբերող առաջին գիտ. հոդվածներն ու ուսումնասիրությունը: 1993-ից ապրում է Մոսկվայում, 1995-ից՝ ՌԴ Արվեստագիտության պետ. ինստ-ի գիտաշխատող (երաժշտության տեսության բաժանմունքի վարիչ):

Աշխ-ները վերաբերում են հիմնականում XX դ-ի երաժշտության պատմությանն ու տեսությանը (մասնավորապես՝ Դ. Դ. Շոստակովիչի ստեղծագործությանը): Ռուս. երաժշտագիտության մեջ երաժշտ. երկի նոր ոճի մեկնաբանման սկզբնավորողն է, որտեղ հատկապես կարևորել է հեղինակի անհատականությունը: Նրա «XX դարի երաժշտությունը» հանրագիտարան. ժանրի՝ մեկ հեղինակի ստեղծած բացառիկ նմուշ է: Կատարել է ռուս. թարգմանություններ գերմ-ից (Կ. Գ. Յունգ, «Ոգի և կյանք», 1996, «Ժամանակակից առասպելների մասին», 1994, Կ. Յասպերս, «Ընդհանուր հոգեախտաբանություն», 1997), անգլ-ից (Գռոուվեի երաժշտական բառարան, 2001, 2-րդ հրտ. լրց.՝ 2007, Ե. և Պ. Բուդուր Սկոդներ, «Մեկնաբանություն Մոցարտի», 2011), լեհ-ից (Մ. Տոմաշևսկի, «Շոպեն. մարդ, ստեղծագործություն, արձագանք», 2011), գրաբարից («Շարական: Հայ եկեղեցու կանոններն ու հիմները», 2017):

Երկ. *Мелодические структуры средневековых армянских духовных песнопений и их отражение в хазовом письме, 1987; Анализ глубинной структуры музыкального текста, М., 1995; Дмитрий Шостакович: Опыт феноменологии творчества, СПб, 2004; Моцарт. Путеводитель, М., 2006; Музыка XX века, Энциклопедический словарь, М., 2010; Music of the Soviet Age, 1917–1987, Stockholm, 1998; Music of the Soviet Era, L. and New York, 2017.*

Անահիտ Արևշատյան

ՀԱԿՈԲՅԱՆ Նաիրա Սարգսի (ծ. 07.05.1967, Երևան), դաշնակահարուհի: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1985, դասատու՝ Ն. Ահարոնյան), ԵՊԿ (1990, Ա. Ամբարձումյանի դասարան) և ասպիրանտուրան (1998): 1990-ից՝ կոնցերտմայստեր: 1999-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2015-ից): Ելույթներ է ունեցել ՀՀ-ում, Վրաստանում, Բելառուսում, Ղազախստանում, ՌԴ-ում (Նովոսիբիրսկ), Վիեննայում և այլուր:

Հեղինակ է ուսումնամեթոդ. հոդվածների («Ա. Ն. Սկրյաբին. Ստեղծագործական ուղու սկիզբը: Առաջին երեք սոնատները», «Երգիչ-կատարողի կայացման որոշ տեսակները» ևն):

«Լավագույն կոնցերտմայստեր» մրց. [մեներգիչների Ա. Իսահակյանի անվ. (1995), Տ. Սազանդարյանի անվ. (2006), Տ. Սազանդարյանի և Պ. Լիսիցյանի անվ. (2011), միջազգ. Դելփյան խաղեր (Ղազախստան, 2012]:

ՀԱԿՈԲՅԱՆ (Հակոբյան-Տամարինա) Նելլի Սուրենի (05.01.1941, Մոսկվա), դաշնակահարուհի: Ավարտել է Մոսկվայի Կենտր. երաժշտ. դպրոցը (դասատու՝ Ա. Սմբատյան), ՄՊԿ (1964, Դ. Ա. Բաշկիրովի, Ա. Գոլդենվայզերի դասարաններ) և ասպիրանտուրան (1966, ղեկ.՝ Դ. Ա. Բաշկիրով): Սովորելու տարիներից հանդես է եկել համերգներով. երկացանկում՝ հիմնականում Ռ. Շումանի գործերից: Ճանաչվել է նաև Ֆ. Շոպենի և Յ. Բրամսի ստեղծագործությունների լավագույն մեկնաբաններից: 1970-ական թթ-ին Հ. մեկնել է Պրահա (զբաղվել է մանկավարժ. գործունեությամբ), ապա Մեծ Բրիտանիայում վերսկսել է համերգ. գործունեությունը: Երկարատև ընդմիջումից հետո 2002-ին հանդես է եկել Մոսկվայում, 2006-ին՝ Կիևում:

Ռ. Շումանի անվ. միջազգ. մրցույթի դափնեկիր (1963, 1974, Գերմանիա):

ՀԱԿՈԲՅԱՆ (Օլահ) Սիփան (ծ. 04.06.1990, Երևան), երգիչ (տենոր), դաշնակահար, դիրիժոր: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի վոկալ-տես. (2007, դասատու՝ Լ. Ստեփանյան), ԵՊԿ դիրիժորության (2013, Դ. Ղազարյանի դասարան) բաժինները, ապա՝ մագիստրատուրան, սովորել Լոնդոնի Թագավոր. երաժշտ. ակադ-ի վոկալ (2012–14, Ֆ. Դոգհանի դասարան) բաժնում: 2007–10-ին՝ Հայ հոգևոր երաժշտության կենտրոնի վոկալ քառյակի երգիչ և խմբավար, 2011–13-ին՝ Լոնդոնի ֆիլհարմոնիկ երգչախմբի երգիչ, 2011–17-ին՝ Սբ Սարգիս եկեղեցու երգչախմբի դիրիժոր (նաև՝ սարկավագ), 2013–16-ին՝ ԹՄՄ

գեղ. ղեկ.: 2013-ին Լոնդոնում հիմնադրել է «Քլինգեն» (նախապես՝ «Կոմիտաս») երգչախումբը, որի գեղ. ղեկավարն ու դիրիժորն է. 30-ից ավելի համերգներով հանդես է եկել մի շարք ճանաչված համերգասրահներում, եկեղեցիներում և այլուր՝ տարածելով հայկ. երաժշտությունը: Մենահամերգներով շրջագայել է ՀՀ-ում, Ավստրիայում, Գերմանիայում, ՌԴ-ում, Մալթայում և այլ երկրներում: 2012-ին՝ Անգլիայում, 2013-ին ՀՀ-ում ղեկավարել է Գ. Հենդելի «Մեսսիա» և Ց. Հայդնի «Աշխարհի արարումը» օրատորիաների խմբերգ. հատվածները: Հանդես է եկել Ա. Տիգրանյանի «Անուշ», Գ. Հենդելի «Ռոդելինդա» օպերաներում: 2018-ին Մալթայում ղեկավարել է երգչախումբ. երկացանկում՝ Կոմիտասի խմբերգերից:

Հանրապետ. մշակութ. փառատոնի 1-ին մրց. և ոսկե մեդալ (2007):

ՀԱԿՈԲՅԱՆՑ Ռաֆայել Հակոբի (11.08.1942, Բաքու–06.02.2014, Երևան), ջութակահար, երգիչ (բարիտոն), մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (դասատու՝ Վ. Սոկացյան), ԵՊԿ ջութակի (1967, Հ. Բոգդանյանի դասարան), երգեցողության (1973, Ի. Այդինյանի, Գ. Գասպարյանի դասարաններ) բաժինները, ԽՍՀՄ ՄՆ երկամյա դասընթացը (1986, փորձաշրջանը՝ Մոսկվայի Մեծ թատրոնում): 1963–69-ին՝ Հայաստանի պետ., ապա՝ ռադիոյի և հեռուստատեսության սիմֆ. նվագախմբերի ջութակահար: 1970–91-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ: Դերերգերից են՝ Սազետտո (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Ֆիորելլո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Տոնիո (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ»), Ամոնասրո (Ջ. Վերդիի «Աիդա»), Եպիսկոպոս (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Սպանդարատ, Օհան ախպեր (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», «Անուշ») ևն: 1979–84-ին դասավանդել է ՀՄՊԻ-ում, 1988–2014-ին՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2009-ից):

Հանդես է եկել նաև համերգներով. երգացանկում՝ օպեր. և կամեր. գործեր, եղել է Դ. Դ. Շոստակովիչի, Դ. Բ. Կաբալևսկու, Գ. Վ. Սվիրիդովի, Ա. Մելիք-Փաշաևի գործերի առաջին կատարողը Հայաստանում:

Հ-ի նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվել են «Վերդիանա» (1988, 2013, հատվածներ Ջ. Վերդիի օպերաներից), «Զարթոնք» փառատոները, թեմատիկ համերգներ, հուշ-երեկոներ: Սաներից Ա. Փահլևանյանը, Լ. Ավետիսյանը, Ա. Սողոմոնյանը, Կ. Խաչատրյանը, Թ. Զարյանը, Թ. Գևորգյանը և ուր. միջազգ. մրցույթների դափնեկիրներ են:

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Աննա Վալերիի (ծ. 17.05.1978, Վանաձոր), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (2004): Ավարտել է Վանաձորի Մ. Թավրիզյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության (1998), ԵՊԿ կոմպոզիցիայի (2003) բաժինները և ասպիրանտուրան (2005, վերջին երկուսը՝ Ա. Զոհրաբյանի դասարան):

Գրել է «Exodus» (2003)՝ սիմֆ. նվագախմբի և խառը երգչախմբի, «Տաղ անանձնական» (2013)՝ տերեմինի և լար. նվագախմբի, կամեր. երկեր՝ «Կոնցերտշտյուկ» (1996)՝ շեփորի և դաշնամուրի, պիես (1998)՝ լար. քառյակի համար, «Sonata Classic» (2000)՝ ջութակի և դաշնամուրի, «Anthem» (2002)՝ մենակատարների անսամբլի (ֆլեյտա, հոբոյ, կլառնետ, ալտ սաքսոֆոն, դաշնամուր) և լար. կվինտետի, «Images and Shadows» (2004)՝ ֆլեյտայի, կլառնետի, ջութակի, թավջութակի և դաշնամուրի, «The Labirinthes of Memory» (2005)՝ լար. քառյակի, «Նամեր» (2007)՝ ֆլեյտայի և կլառնետի, «A une Dame creole» (2010)՝ սոպրանոյի, ֆլեյտայի, 2 ջութակի, ալտի, թավջութակի և դաշնամուրի համար, վոկալ շարքեր («Ցողակաթիլներ», ըստ Հ. Սահյանի, 2002, «Երեքնուկ», ըստ Վ. Դավթյանի, 2004), խմբերգ. («Լուսնի երգը», 1998, «Չայները», ըստ Ռ. Դավոյանի, 1999, «Աղոթք Երրորդության», ըստ Ներսես Շնորհալու, 2002, «Տեր ողորմեա», 2008, «Ագնուս դեյ», 2011), դաշնամուր. («Կապույտ լապտերիկ», 1997, վարիացիաներ, 1998) և այլ երկեր:

Բ. Բրիտտենի անվ. երիտասարդ կոմպոզիտորների մրցույթի 3-րդ մրց. (2003): Համաշխ. հայկ. կոնգրեսի մրցանակաբաշխության դափնեկիր (2009):

ՀԱՃՅԱՆ Գևորգ Իգնատիոսի [ծ. 1971, Այնճար (Լիբանան)], երգիչ (տենոր): Նախն. կրթությունն ստացել է «Հառաջ-Գալուստ Կյուլպենկյան» վարժարանում: 1984-ին ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Զարեհյան» դպրեվանք (1989-ին՝ սարկավագ, 1992-ին՝ դպրեվանքի բարձրագույն վկայական):

Ռաֆայել Հակոբյանց

Ռ. Հակոբյանցը Սազետտոյի դերում (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», Յերլինա՝ Է. Ուզունյան)

Աննա Հակոբջանյան

Գևորգ Հաճյան

Հաճախել է Լիբանանի «Բարսեղ Կանաչյան» երաժշտ. քոլեջի խմբավարության դասընթացներին (ղեկ.՝ Հ. Թոփիկյան): 2005-ին տեղափոխվել է Երևան: Ավարտել է ԵՊԿ խմբավարության բաժինը (2009, Ի. Վարդանյանի դասարան), միաժամանակ մեներգեցողության դասեր է առել Բարսեղ ***Թումանյանից***: 2006-ին՝ «Շարական» անսամբլի մեներգիչ: 2011-ին Հռոմում մասնակցել է օպեր. երգիչների Օ. Զիննոյի անվ. X միջազգ. մրցույթ-փառատոնին. ընդգրկվել է 1-ին տասնյակում: 2012-ին «Օպերա թեաթր Բուր Դու» ընկերությունը Հ-ին հրավիրել է Մարսել՝ վարելու վարպետության դասընթացներ, մասնակցել է նաև Ժ. Մասնեի «Վերթեր» օպերայի բեմադրությանը՝ Վերթերի դերերգով: Նույն թվականին Մոսկվայում հանդես է եկել Կոմիտասի երգերի կատարմամբ:

Ձայնագրել է «Կոմիտասյան երախայրիք», «Քեզ օրհնեմք», «Հայաստանը երգերում», «Կոմիտասյան Հայաստան» ձայնասկավառակները:

ՀԱՄԱՀՆՉՅՈՒՆ, տարբեր բարձրությունների մի քանի հնչյունների միաժամանակյա համադրումը, հնչյուն. միասնություն՝ զուտ հարմոնիկ գունային հատկանիշներով, երաժշտ. արտահայտչ. միջոց: Հիմնական տեսակներն են՝ միևնույն կամ տարբեր բարձրությունների 2 հնչյունի (տես ***Ինտերվալ***) և տարբեր տերցիային հարաբերության 3, 4, 5 հնչյունների համադրումները:

Ծովակ Համբարձումյան

ՀԱՄԱՄ ԱՐԵՎԵԼՅԻ, Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ, Համամ Գրիգոր, IX դ-ի մատենագիր, մեկնիչ: Ըստ աղբյուրների՝ սերում է Բագրատունյաց տոհմից. եղել է իշխան, Աղվանից թագավոր, գահից հրաժարվել է և զբաղվել հոգևոր և մշակութ. գործունեությամբ:

Հ. Ա-ու անվամբ հայտնի է «Կարգաւորութիւն Սաղմոսաց» խորագրով երաժշտաբնագրագիտ. աշխ-ը, որտեղ հեղինակը ճշգրտել է սաղմոսների կիրառման սահմանները եկեղեց. ծեսում և կարգավորել եկեղեց.ժամերգությունը: Հեղինակ է նաև «Հայր երկնաւոր, անկանիմ առաջին անոխակալ գթութեանդ» սկսվածքով անվան. ակրոստիքոսով շարականի:

Գրկ. *Կոստանեանց Կ., Համամ Արեւելցի, Վաղ-պապ, 1896:*

ՀԱՄԱՍՅԱՆ Տիգրան Կարապետի (ծ. 07.06.1987, Գյումրի), դաշնակահար, կոմպոզիտոր: Ավարտել է Երևանի Մ. Միրզոյանի անվ. երաժշտ. դպրոցը: 2003-ից ապրում է Լոս Անջելեսում: Հանդես է եկել սեփ. խմբի և ջազ. նշանավոր երաժիշտների հետ:

2015-ին նախաձեռնել է «Լույս ի լուսո» երաժշտ. նախագիծը (100 համերգ՝ 100 եկեղեցում)՝ Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին: Նախագծի շրջանակներում Երևանի պետ. կամեր. երգչախմբի հետ կատարել է Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Պահլավունու, Ներսես Շնորհալու, Մխիթար Այրիվանեցու, Խաչատուր Տարոնեցու, Մակար Եկմալյանի և Կոմիտասի երկերից: Հեղինակ է «Entertain Me», «The Poet», «The Awakening of Mher», «Կարս 1», «Կարս 2», «Կաքավիկ»,

Տիգրան Համասյանը ելույթի պահին

«Ամոան գիշեր» և այլ ջազ. կոմպոզիցիաների: Թողարկել է ձայնասկավառակներ («Red Hail», 2008, «A Fable», 2010, «Ծաղրամարտ», 2015, «For Gyumri», 2018, ևն), ալբոմներ (2001, 2013, ևն):

Մոնքի անվ. միջազգ. ջազ. (2006), «Vilcek Prize Creative Promise in Contemporary Music» (2013), «ECHO Jazz Awards» (2016) մրցույթների դափնեկիր, «Գրեմմի» մրց. (2011), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ծովակ Բագրատի (17.08.1923, Թիֆլիս–15.05.2001, Երևան), կոմպոզիտոր, մանկավարժ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. աշխատող (1983): Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1946): Երևանի պարարվ-ի ուսումնարանի կոնցերտմայստեր, 1972–88-ին՝ Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն, ԵՕՔԹ խմբագիր: 1985-ից դասավանդել է ԵՊԿ-ում:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայկ. բանահյուս. և քաղաք. պարին,

հայկ. ժող. գործիքների կատարող. արվ-ի պատմությանը:

Երկ. *Օրդոյան եղբայրներ, Ե., 1979: Դիմանկարներ և հուշեր, Ե., 2004: Վոկալ ստեղծագործություններ, Ե., 2013:*

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Օֆելյա Կարապետի (09.01.1925, Երևան–13.06.2016, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. պանթեոնում), երգչուհի: Տաթևիկ *Հովհաննիսյանի* մայրը: ՀՀ ժող. արտիստ (1959): Հաճախել է Երևանի պիոներ-դպրոցականների պալատի երգի-պարի խմբակը (դասատու՝ Մ. Ճաղարյան): Առաջին կատարումը՝ «Մաճկալ» երգը: Ձայնամշակման դասընթացն անցել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: 1944-ից՝ Հայաստանի ռադիոյի (1957–96-ին՝ հեռուստատեսության և ռադիոյի) ժող. գործիքների անսամբլի մեներգչուհի, որտեղ Շարա *Տալյանի* և Շողիկ *Մկրտչյանի* շնորհիվ ձևավորվել է Հ-ի կատարող. ոճը: Երգեցողությանը բնորոշ էր ազգ. արտահայտիչ երանգավորումը: Երգացանկում՝ հայ ժող., գուսան. և աշուղ., կոմպոզիտոր., նաև այլ ժողովուրդների երգեր: Ստեղծագործության մեջ առանձնանում են Սայաթ-Նովայի երգերի («Չկա քիզի նման», «Քամանչա» ևն) կատարումները: Աշուղներ Ֆարհադի, Միսկին Բուրջիի, Ջիվանու, Շերամի, Հավասու, Աշոտի, Շահենի մի շարք երգերի առաջին կատարողն էր: Հ-ի համար երգեր են գրել Վ. Բալյանը, Խ. Ավետիսյանը, Աշոտը («Օջախում», «Դու ծաղկավառ Զանգեզուրի» ևն), Շահենը («Էլինար» պոեմ): Նրա՝ «Օջախում», նաև Ա. Իսահակյանի խոսքերով գրված մի շարք երգերի կատարումներ մնում են չգերազանցված:

1956-ին Մոսկվայում մասնակցել է Հայաստանի գրկ-յան և արվ-ի տասնօրյակին: Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Լիբանանում, Սիրիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլուր:

ՌԴ Մ. Լոմոնոսովի անվ. (2008), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2011) շքանշաններ:

Գրկ. *Օֆելյա Համբարձումյան: Ալբոմ-ժող. (կազմ.՝ Ս. Առաքելյան), Ե., 2006:*

ՀԱՄԵՐԳ, ն վ ա գ ա հ ա ն դ ե ս, ե ր գ ա հ ա ն դ ե ս, արտիստների հրապարակ. ելույթները՝ նախապես կազմված որոշակի ծրագրով: Տարբերում են ե ր ա ժ շ տ ա կ ա ն (սիմֆ., կամեր., դաշնամուր. ևն), գ ր ա կ ա ն (ասմունք), է ս տ ր ա դ ա յ ի ն (վոկալ և գործիք. թեթև երաժշտություն, կրկես. համարներ ևն) տեսակները, որոնց կարող են մասնակցել 1 (մենակատար. Հ.) կամ մի քանի կատարողներ:

Հ-ները կազմակերպում են հյուրախաղ. համերգ. միավորումները (Գոսկոնցերտ, Սոյուզկոնցերտ ևն), հանրապետ. և մարզ. ֆիլհարմոնիաները (Հայհամերգ, Հայֆիլհարմոնիա ևն), երաժշտ. կամ համերգ. ընկերությունները, նաև մասնավոր ձեռնարկատերերը (իմպրեսարիոներ, մենեջերներ, պրոդյուսերներ): Վճարովի հրապարակ. Հ-ներ առաջին անգամ կազմակերպել է Ջ. Բանիստերը 1672-ին Լոնդոնում: Մինչ այդ Հ-ները տեղի են ունեցել արքունիքներում և ազնվականների ապարանքներում՝ հատկապես հրավիրված անձանց համար:

«ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ», անսամբլ: Հիմնադրվել է 1927-ին Երևանում՝ Շարա *Տալյանի* ղեկավարությամբ. կազմը՝ երգիչներ Հ. (Շ. Տալյանի եղբայրը) և Շ. Տալյաններ, Հ. Տրդատյան, թառահար Ս. Թարիվերդյան, քամանչահար Վ. Խշտոյան, համերգներին մասնակցել է նաև երգչուհի Մարիաննա *Մեդմարը*:

«Հ. ա.»-ի հիմնադրմանը և գործունեությանը նպաստել է Գարեգին *Լևոնյանը*. սովորեցրել է երգեր, համերգներին հանդես եկել ներածական խոսքով: Անսամբլի երկացանկում՝ Սայաթ-Նովայի, Շիրինի, Ջիվանու, Խայաթի, Շերամի և ուր. աշուղների երգերից (մի մասը ձայնագրվել է սկավառակի վրա՝ Սայաթ-Նովայի «Դուն էն գլխեն», Խայաթի «Սարի աստղիկ» և Փիլոյի «Անուշ յար»): Հյուրախաղերով հանդես է եկել Մոսկվայում, Թիֆլիսում, Բաքվում, Խարկովում և այլուր: Գործել է մինչև 1934-ը:

Գրկ. *Տալյան Շ., Դեպքեր, դեմքեր, մտքեր..., Ե., 1973:*

Օֆելյա Համբարձումյան

Օ. Համբարձումյանը ելույթի պահին

«Հայ աշուղներ» անսամբլի հիմնադիր կազմը

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ-ՏԵՍԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1919-ին Թիֆլիսում: Դասախոսությունների, համերգների և երաժշտ. միջոցառումների, հայկ. դպրոցներում երաժշտ. կրթությունն առավել տարածելու միջոցով նպաստել է հայ երաժշտարվ-ի զարգացմանը: Գործունեությանը նպաստել են Ս. Մելիքյանը, Ա. Ադամյանը, Ք. Քուշնարյանը, Ս. Բարխուդարյանը, Գ. Սյունին և ուր., պատվավոր անդամ էր Ա. Սպենդիարյանը: 1921-ին ընկերությունն ընդգրկվել է Թիֆլիսի Հայարտան երաժշտ. մասնաճյուղում:

Հայաստանի ազգային նվագարանների նվագախումբը

«ՀԱՅ ԵՐԳ», ամերիկահայ երաժշտ. միություն, երգչախումբ: Հիմնադրել և ղեկավարել է Միհրան *Թումաճանը* 1925-ին Նյու Յորքում: Երգչախումբը նպաստել է ազգապահպանմանն ամերիկահայ գաղթավայրում, հայ երգարվ-ի զարգացմանն ու նրա փոխանցմանը երիտասարդ սերնդին: Երգացանկում՝ Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Է. Մանասի, Բ. Կանաչյանի, Վ. Սրվանձտյանի, Մ. Թումաճանի հայ հոգևոր և ժող. երգերի մշակումներից և այլ գործեր:

Երգչախումբն ընդմիջումներով գործել է մինչև 1934-ը:

«ՀԱՅ ԵՐԳ», իրանահայ երաժշտ. ընկերություն՝ 1961–65-ին Թեհրանում: Հիմնադիրներ՝ Լյուդվիգ *Բազիլ* (նաև երգչախմբի ղեկ.), Ա. Աղաբեկյան, Վ. Խոջայան: Նպատակը հայ ժող. և դաս. երաժշտությունը տարածելն էր, երիտասարդ երաժիշտներ պատրաստելն ու հովանավորելը: Կազմակերպել են երաժշտ. դասընթացներ (երգ, ջութակ, դաշնամուր, կոմպոզիցիա, հայ երաժշտության տեսություն), համերգներ (մասնակցել են ընկերության երաժիշտ անդամները, մենակատարներն ու երգչախումբը)՝ նվիրված Կոմիտասին, Սայաթ-Նովային, Մ. Եկմալյանին, հրատարակել հանրամատչելի գրկ-յուն («Հայ դասական երաժշտություն», 1961, «Հայոց եկեղեցական եղանակներ», 1962, ևն):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական: Հիմնադրվել է 2005-ին Երևանում՝ Արա *Գևորգյանի* և Նորայր *Դավթյանի* (գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ նույն թվականից) նախաձեռնությամբ: Նվագախմբի նպատակը հայկ. ժող. նվագախմբ. կատարող. արվ-ի ավանդույթները պահպանելն ու զարգացնելն է: Կազմը՝ 40 երաժիշտ-կատարող (թառ, քամանչա, ուդ, դուդուկ, բլուլ, շվի, քանոն, սանթուր, դհոլ ևն): Համագործակցում է ժող., էստրադ. ճանաչված և սկսնակ երգիչ-երգչուհիների հետ: Երկացանկում՝ հայկ. ժող. և աշուղ. մեղեդիների ժամանակակից մշակումներ, հայ կոմպոզիտորների գործիք., նաև եվրոպացի դասականների (Ժ. Բիզե, Յ. Բրամս և ուր.) ստեղծագործություններ:

Համերգներով շրջագայել է ՀՀ-ում և ԼՂՀ-ում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՆՍԱՄԲԼ պետական, հիմնադրվել է Երևանում 1983-ին: Հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Ռուբեն *Ալթունյան* (1983–87 և 1991–97-ին), դիրիժոր՝ Գրիգոր Սանդալջյան, գեղ. ղեկ-ներ՝ Գ. Առաքելյան (1997–98), Աշոտ Լեյլոյան (1998–2000), Գևորգ Մանասյան (1987–91-ին և 2000-ից): Նպատակը հայ ժող. և գուսան. երգի զարգացնելն ու տարածելն է: Երկացանկում՝ ժող. ու գուսան. (Սայաթ-Նովա, Շերամ, Ձիվանի, Շիրին և ուր.), ժամանակակից կոմպոզիտորների (Գ. Մանասյան և ուր.) երգեր, կատակերգեր, երգաշարեր, ժող. երգերի մշակումներ, ազգ. ծեսերի բեմադրություններ («Թագավորագովք», «Նավասարդ»): Անսամբլում տարբեր տարիների հանդես են եկել դուդուկահար Գեորգի Մինասովը, քամանչահար Գագիկ Մուրադյանը, երգիչներ Էդիկ Բեգլարյանը, Սեյրան Ավագյանը, Մարգարիտ Շահինյանը, այժմյան կազմում են՝ երգչուհիներ Լաուրա Մամյանը, Գայանե Սիմոնյանը, Եվա Եգանյանը, երգիչ Մարգար Եղիազարյանը, շվիահար Մնացական Չալիկյանը, քամանչահար Աշոտ Վարդանյանը (կոնցերտմայստեր) և ուր.:

Անսամբլը համերգներով շրջագայել է ՀՀ-ում, Արցախում, Ջավախքում,

Թբիլիսիում, նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Սիրիայում և այլուր: Մասնակցել է երաժշտ. փառատոների, տոնակատարությունների և այլ միջոցառումների:

1987-ին անամբլը ճանաչվել է Հայաստանի «Լավագույն կոլեկտիվ»:

Հայապրանի գրասանական և ժողովրդական երգի անսամբլը

Ազգ. արվ-ի (Իրաք, 2000), «Սայաթ-Նովա-275» (ՅՈՒՆԵՍԿՕ, ՀՀ, 1997) միջազգ. մրցույթների դափնեկիր, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2013):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ստեղծվել է Երևանում 1987-ին՝ Հայաստանի երգչախմբ. ընկերության (հիմնական՝ 1958) հիման վրա. միավորում է հանրապետության խմբերգ. արվ-ի գործիչներին, օժանդակում երգչախմբերի ստեղծմանն ու կատարելագործմանը, խմբերգ. գրկ-յան տարածմանը, սեմինարների, երգի տոների, մրցույթների անցկացմանը: Երգչախմբ. ընկերության հիմնադիր՝ Թաթուլ *Ալթունյան* (1958–74-ին՝ նախագահ), նախագահության անդամներ՝ Մարտին *Մնացականյան* (1958–77-ին՝ փոխնախագահ), Ա. Տեր-Հովհաննիսյան, Կ. Զաքարյան, Ե. Սահառունի, Է. Կզարթմյան, Հ. Վերանյան, Ջ. Գյոզալյան, Ռ. Աթայան, Է. Ծատուրյան, Հ. Չեքիջյան, Ն. Մնգրյան, Լ. Զեյթաղյան, Է. Էլբակյան և ուր.: Ունեցել է բաժանմունքներ Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, Կապանում, Արմավիրում, Վաղարշապատում, Արտաշատում, Եղեգնաձորում, ընդգրկել է 68 ինքնագործ, 7 պրոֆեսիոնալ և բազմաթիվ մանկ. երգչախմբեր:

Նախագահ՝ Դավիթ *Ղազարյան* (1996-ից): Հ. ե. ը. գործում է *Երգչախմբային արվեստի տունը*:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԻ ԹԱՏՐՈՆ պետական, երաժշտ., մշակութ. կրթօջախ: Հիմնադրվել է 1994-ին Երևանում, հիմնադիր-ղեկ.՝ Արթուր *Գրիգորյան*: Թատրոնում են իրենց երաժշտ. ուղին սկսել երգիչների մի քանի սերունդներ՝ Շ. Պետրոսյան, Գ. Աղախանյան, Ա. Մանուկյան, Է. Պետրոսյան, Արամո, Ֆորշ, Ջ. Բաբայան, Վ. Վարդանյան, Ա. Սաֆարյան, Անդրե, Ա. Լևոնյան, նաև «Կանաչ գոտի» և «Արցախի ձայնը» նախագծի մասնակիցները: Խաղացանկում՝ բազմաբովանդակ բեմավորումներ, համերգներ և այլ միջոցառումներ: Թատրոնին կից գործում է թատրոնստուդիա, որի նպատակը փոփ և էստրադ. երգիչներ պատրաստելն է:



Հայապրանի երգի թատրոնում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, տես *Հայապրանի ջազային նվագախումբ*:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, կազմակերպվել է 1977-ին Երևանում (1977–80-ին՝ հիմնադիր-գլխ. դիրիժոր, գեղ. ղեկ. Կառլեն *Միրզոյան*, 1981–86-ին՝ գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ. Վլադիլեն *Բալյան*, 1987-ից՝ Հենրի *Մանգասարյան*): Կազմում՝ հայկ. ժող. գործիքներ, նաև երգիչ-երգչուհիներ: Նվագացանկում՝ հայկ. ժող., գուսան., հայրենասիր. երգեր, հայ դաս. և արդի կոմպոզիտորների երկերի փոխադրումներ, այլ ժողովուրդների (ռուս, վրացի, ուզբեկ ևն) մեղեդիներ: Համերգներով շրջագայել է ՌԴ-ում, Սիրիայում, Սենեգալում, Գերմանիայում:

1998-ին միավորվել է *Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի* հետ:

Բանահյուս. երաժշտության միջազգ. փառատոնի (Մեծ մրց., 1984, Վիսբադեն, 1992, Բաբելոն) դափնեկիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳԱՉԱԽՈՒՄԲ պետական (2008-ից), հիմնադրվել է 2000-ին Երևանում՝ «Վաչե և Թամար Մանուկեան» բարեգործ. միության հովանավորությամբ, գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Ռոբերտ *Մլքեյան*: Երգչախումբը կազմված է 35 երաժիշտներից. երգացանկում՝ Յ. Ս. Բախի, Յ. Բրամսի, Կ.

Դեբյուսիի, Բ. Բրիտտենի, Ֆ. Պուլենկի, Ռ. Կ. Շչեդրինի, Ա. Գ. Շնիտկեի, Կոմիտասի, Տ. Մանսուրյանի, Է. Հայրապետյանի, Ե. Երկանյանի, Դ. Հալաջյանի և ուր. ստեղծագործություններից: Կատարումներից առանձնանում են Տ. Մանսուրյանի «Ars Poetica» երգչախմբ. կոնցերտը (ըստ Ե. Չարենցի 10 բանաստեղծությունների), որի ձայներիզը 2006-ին ընդգրկվել է «The Gramophone» հեղինակավոր երաժշտ. կատալոգի մեջ: Երգչախումբը հյուրախաղերով շրջագայել է Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Լիբանանում, Հունաստանում, Տորոնտոյում, Ս. Պետերբուրգում, Լոնդոնում, Ստրասբուրգում:

Հայապրանի կամերային երգչախումբը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, հիմնադրվել է 1962-ին Երևանում՝ որպես անսամբլ: Հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Զարեհ *Սահակյանց* (1962–75): 1975–83-ին՝ գեղ. ղեկ. Կ. Բաղդասարյան, 1983–97-ին՝ Ռուբեն *Ահարոնյան*: Նվագախմբի հիմքը լար. գործիքների խումբն է. պայմանավորված ստեղծագործության բնույթով՝ ընդգրկվում են նաև փայտե և պղնձե փող. գործիքներ: Նվագացանկում՝ բարոկկոյի վարպետների, եվրոպացի և հայ կոմպոզիտորների երկեր, հայկ. ժող. երգերի ու միջնադար. մեղեդիների մշակումներ, փոխադրումներ ևն: Նվագախմբի համար գործեր են գրել Ա. Հարությունյանը, Է. Հովհաննիսյանը, Ա. Աճեմյանը, Է. Խաղագործյանը, Ռ. Սարգսյանը և ուր.: Կատարող. արվ-ին բնորոշ են պրոֆեսիոնալ բարձր մակարդակը, երկերի ինքնատիպ մեկնաբանությունը: Նվագախմբի հետ ելույթներ են ունեցել հայ և այլազգի անվանի երաժիշտ-կատարողներ Գ. Գասպարյանը, Լ. Զաքարյանը, Շ. Արծրունին, Ա. Գավաֆյանը, Ժ. Տեր-Մերգերյանը, Վ. Սպիվակովը, Յ. Բաշմետը և ուր.: Նվագախումբը համերգներով շրջագայել է ԱՊՀ-ում, ԱՄՆ-ում, Կանադայում, Մերձբալթ. երկրներում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում, Ֆիլիպիններում, Թաիլանդում և այլուր: 1997-ին նվագախումբը միավորվել է *Երևանի կամերային նվագախմբի* հետ, վերակազմավորվել Արամ *Ղարաբեկյանի* (գեղ. ղեկ. և դիրիժոր՝ 1997-ից, 2011-ից՝ Վահան Մարտիրոսյան) ղեկավարությամբ: Թողարկել է ձայնասկավառակներ, ունի ֆոնդ. ձայնագրություններ:

Հայապրանի կամերային նվագախումբը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԿՄ), ստեղծվել է 1932-ին. միավորում է Հայաստանի պրոֆեսիոնալ կոմպոզիտորներին և երաժշտագետներին:

ՀԿՄ համագումարները, պլենումները, նրա կազմակերպած հայ երաժշտության տասնօրյակները, փառատոները, մրցանակաբաշխությունները, ստեղծագործ. երեկոները, նոր ստեղծագործությունների քննարկումներն ու այլ միջոցառումներ, նաև ՀԿՄ «Դիլիջան» ստեղծագործ. տան Բեթհովենի անվ. համերգ. դահլիճը (1984) նպաստել են հանրապետության երաժշտ. կյանքի զարգացմանն ու ժամանակակից հայ երաժշտության տարածմանը: ՀԿՄ համագործակցում է ՀՀ առաջատար երաժշտ. կոլեկտիվների և մենակատարների, փոխադարձ համերգներ, երաժշտության օրեր, հեղինակ. համերգհանդիպումներ կազմակերպում ՌԴ կոմպոզիտոր. միավորումների հետ: Միության անդամներն արտերկրում մասնակցում են կոնֆերանսների, հեղինակ. համերգների, համաժողովների, մշակույթի օրերի, հանդիպումների, հյուրախաղերի, փառատոների, մրցույթների և այլ միջոցառումների: Հայ կոմպոզիտորների գործերը կատարվել են տարբեր երկրներում, արժանացել միջազգ. ճանաչման: ՀԿՄ հյուրընկալել է արտերկրի իր գործընկերներին:

Կառուցվել են ՀԿՄ 1-ին և 2-րդ շենքերն ու «Դիլիջան» ստեղծագործ. տունը (2013-ից՝ Է. Միրզոյանի անվ.):

ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի համագործակցությամբ ՀԿՄ գումարել է գիտ. նստաշրջաններ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգ.

Հայաստանի կոմպոզիտորների միության շենքը

հանձնաժողովի հետ համատեղ կազմակերպել հանրապետ. և միջազգ. գիտաժողովներ:

Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործություններին նվիրվել են ՀԿՄ պլենումները (1966, 1979, 1990), նրանց ստեղծագործությունների փառատոներ (2014, 2015, 2016, 2017): ՀՀ ՄՆ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ իրագործվել են Է. Միրզոյանի անվ. պատանի կոմպոզիտորների հանրապետ. մրցույթները (2014, 2015, 2016, 2017, 2018), որոնց նպատակը պատանի տաղանդներին բացահայտելն ու սատարելն է:

Միության աշխ-ները ղեկավարել են Ա. Ոսկերչյանը, Մ. Աղայանը, Հ. Ստեփանյանը, Ա. Սաթյանը, Գ. Եղիազարյանը, Ղ. Սարյանը, Է. Միրզոյանը, Ռ. Ամիրխանյանը, Արամ ***Սաթյանը*** (2013-ից):

Գրկ. *Ա ա թ ր յ ա ն Ա., Հայաստանի կոմպոզիտորների միության-85, Ե., 2017:*

Աննա Աապրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, կապելլա, ակադեմիական (1969-ից), վաստակավոր կոլեկտիվ (1975-ից), ազգային (2012-ից): Հիմնադրվել է 1937-ին Երևանում՝ որպես Հայֆիլհարմոնիայի կոլեկտիվ (25–30-հոգանոց): Հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Թաթուլ ***Ալթունյան*** (1937–40, 1947–49), որի գործունեության առաջին իսկ տարիները նշանավորվել են ազգ. դաս. երգարվ-ի լավագույն ավանդույթների զարգացմամբ, 1939-ին Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի ու գրկ-յան առաջին տասնօրյակին, ապա հյուրախաղերով հանդես եկել Լենինգրադում և Բաքվում:

Երգչախմբի ստեղծագործ. առաջընթացին, պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը, երկացանկի հարստացմանը մեծապես նպաստել է Արամ ***Տեր-Հովհաննիսյանը*** (գեղ. ղեկ. և գլխ. խմբավար՝ 1940–41, 1955–60): Նրա ղեկավարությամբ հնչել է Վ. Ա. Մոցարտի «Requiem»-ը (1941), Երևանում առաջին անգամ՝ Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան, իրագործվել Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա» օպերայի համերգ. կատարումը:

1955-ից սկսվել է երգչախմբի ստեղծագործ. նոր շրջանը. 1956-ին Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին, երկացանկը հարստացվել է Հ. Ստեփանյանի, Ա. Հարությունյանի, Ա. Քոչարյանի, Է. Հովհաննիսյանի, Կ. Զաքարյանի, Մ. Մազմանյանի, Վ. Արաբատյանի լավագույն խմբերգերով, Է. Բաղդասարյանի և Ս. Զրբաշյանի «1905 թվական» վոկալ սիմֆոնիկ պոեմով, ռուս դաս. և ժամանակակից կոմպոզիտորների խմբերգ. մի քանի գործերով: Ա. Տեր-Հովհաննիսյանը պատրաստել է համերգ. նոր ծրագիր՝ ներառելով հայ դաս. երաժշտության՝ համերգասրահներում դեռևս չհնչած լավագույն նմուշներ՝ Կոմիտասի ու Մ. Եկմալյանի հոգևոր երկերը: Երգչախումբը համերգներով հանդես է եկել Լենինականում, Կիրովականում, հանրապետության շրջաններում:

Աննա Աապրյանի «Հայ կոմպոզիտորների միության-85» գրքի (2017) կազմը

1950-ին երգչախմբի խմբավարը Լ. Տումաշևն էր, 1951-ին՝ Էմմա ***Ծատուրյանն*** ու Զեյմս ***Գյոզալյանը***, 1952-ին՝ Ա. Աբգարյանը, Է. Ծատուրյանն ու Զ. Գյոզալյանը, իսկ 1953–54-ին՝ Ա. Աբգարյանն ու Է. Ծատուրյանը, 1957-ին՝ Նուբար ***Մակրյանը***:

Հովհաննես Չեքիջյանը ելույթի պահին

Երգչախմբի ստեղծագործ. առաջընթացի առավել նշանակալի շրջանն սկսվել է 1961-ից՝ գեղ. ղեկ. և գլխ. խմբավար Հովհաննես ***Չեքիջյանի*** ղեկավարությամբ: Շարունակելով հայ դաս. խմբերգ. երաժշտության լավագույն ավանդույթները՝ երգչախումբը հասել է հայ խմբերգ. արվ-ի չգերազանցված մակարդակի, դարձել հայկ. և համաշխ. դաս. խմբերգ. երաժշտության լավագույն մեկնաբանը. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Գ. Հենդելի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շուբերտի, Վ. Բելլինիի, Զ. Ռոսսինիի, Զ. Վերդիի, Ռ. Վագների, Ֆ. Մենդելսոնի,

Յ. Բրամսի, Հ. Բեռլիոզի, Շ. Գունոյի, Գ. Ֆորեի, Բ. Սմետանայի, Ջ. Գերշվինի, Մ. Ի. Գլինկայի, Ա. Պ. Բորոդինի, Մ. Պ. Մուսորգսկու, Պ. Ի. Չայկովսկու, Ս. Ի. Տանեևի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Ք. Կարա-Մուրզայի, Բ. Կանաչյանի, Տ. Չուխաճյանի, Ա. Տիգրանյանի, Ա. Սպենդիարյանի, նաև ժամանակակից հեղինակների՝ Դ. Դ. Շոստակովիչի, Տ. Ն. Խրեննիկովի, Գ. Վ. Սվիրիդովի, Դ. Բ. Կաբալևսկու, Ռ. Կ. Շչեդրինի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Ա. Հարությունյանի, Ա. Հովհաննեսի, Է. Միրզոյանի, Է. Հովհաննիսյանի, Գ. Հախինյանի, Ա. Սաթյանի և ուր. ավելի քան 700 (այդ թվում՝ շուրջ 40 խոշոր կտավի) ստեղծագործություն (15-ը ԽՍՀՄ-ում կատարվել են առաջին անգամ՝ Հ. Բեռլիոզի «Ռեքվիեմը», 1967, Երևան, Մոսկվա, «Տե Դեում», 1977, Լենինգրադ, «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ. սիմֆոնիան, 1983, Մոսկվա, Գ. Ֆորեի «Ռեքվիեմը», 1971, Երևան, Մոսկվա, Շ. Գունոյի «Մահ և կյանք» օրատորիան, 1971, Մոսկվա, Ջ. Վերդիի «Ազգերի հիմնը», Կ. Լամբերտի «Ռիո Գրանդե»-ն, վերջին երկուսը՝ 1982, Լենինգրադ, ևն)։ Երգչախումբը երգում է 27 լեզվով։

Հայաստանի պետական երգչախումբը ելույթի պահին

Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Լիբանանում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Հունաստանում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Շվեյցարիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Սիրիայում, Թուրքիայում, Արգենտինայում, Ավստրալիայում։ Հանդես է եկել աշխարհի բազմաթիվ լավագույն նվագախմբերի, այդ թվում՝ ԽՍՀՄ պետ. ակադեմ., Մոսկվայի Մեծ թատրոնի և Պետ. ֆիլհարմոնիայի ակադեմ., Լենինգրադի, Բուդապեշտի, Վրոցլավի ֆիլհարմոնիաների, Մարսելի օպերայի սիմֆ. նվագախմբերի հետ։

Երգչախմբի համերգներին մասնակցել են երգիչներ Ի. Արխիպովան, Ե. Օբրազցովան, Ե. Նեստերենկոն, Վ. Ատլանտովը, Մ. Բիեշուն, Մ. Կասրաշվիլին, Հ. Վագները, Պ. Լիսիցյանը, Կ. Զարինշը, Ջ. Սոտկիլավան, Պ. Բուրչուլաձեն, Ն. Իսակովան, Յ. Տատիշվիլին, Ա. Վեդերնիկովը, Լ. Իսակաձեն, Ն. Պետրովը, Գ. Ապավանիչյուտեն, նաև Գ. Գասպարյանը, Գ. Գրիգորյանը, Գ. Գալաջյանը, Ա. Կարապետյանը, Լ. Զաքարյանը, Օ. Գաբայանը, Վ. Միրաքյանը, Հ. Պապյանը, Է. Չախոյանը, Վ. Հարությունյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Ներսիսյանը, Ա. Նշանյանը, Ն. Հակոբյանը և ուր., խմբավարներ Խ. Մեյխանեջյանը, Ա. Վերանյանը, Լ. Զեյթաղյանը, Ջ. Շեկունցը, Հ. Օդաբաշյանը, Կ. Ալեքսանյանը, կոնցերտմայստերներ Կ. Թոփչյանը, Ս. Երկանյանը, Ա. Տուրաբյանը։

Երգչախումբը համաշխ. խմբերգ. արվում միակն է, որը բեմում երգում է առանց նոտաների։

Թողարկել է ձայնասկավառակներ Ռուսաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում, ԱՄՆ-ում։ Ձայնագրություններից մեկն արժանացել է ֆրանս. «Charles Gros» ակադ-ի Մեծ մրց. (1970, Փարիզ), երգչախումբը՝ Շվեյցարիայի «Montreux» միջազգ. փառատոնի մրց. (1999)։

Գրկ. Բրուտյան Մ., Թաթոյ Ալթունյան, Ե., 1962: Բրուտյան Յ., Արամ Տեր-Հովհաննիսյան, Ե., 1962: Հովհաննիսյան Ա., Հովհաննես Չեքիջյան, Ե., 1984: Դավթյան Ս., Հովհաննես Չեքիջյան. արվեստագետն ու քաղաքացին, Ե., 2000: Ասատրյան Ա., Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Ե., 2007: Նույնի, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Ե., 2009: Բախչինյան Ֆ., Մաեստրոն, Ե., 2007: Առաքելյան Ս., Հովհաննես Չեքիջյան, Ալբոմ-ժող., Ե., 2014: Հովհաննես Չեքիջյան-85, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին (26–27 սեպտեմբերի, 2014), Նստաշրջանի նյութեր, Ե., 2014: Заслуженный коллектив государственная академическая хоровая капелла Армении, Е., 1989.

Աննա Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋԱԶԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, կազմավորվել է 1997-ին (գեղ. ղեկ. և դիրիժոր՝ Արմեն *Մարտիրոսյան*՝ 1997–2010-ին, երաժշտ. ղեկ.՝ Արմեն *Հյուսնունց*՝ 1997-ից, գեղ. ղեկ.՝ 2010-ից)՝ Հայաստանի էստրադ. նվագախմբի հիման վրա և ավանդույթներով։ Վերջինս հիմնադրվել է 1938-ին Երևանում (մինչև 1948-ը՝ Հայաստանի ջազ-նվագախումբ)՝ Արտեմի *Այվազյանի* (գեղ. ղեկ.), Յոլակ *Վարդազարյանի* (դիրիժոր, 1938–42), Ա. Մարտիրոսյանի (ռեժ.) նախաձեռնությամբ։ Մինչև 1956-ը նվագախմբի դիրիժորներ են եղել նաև Մ. Թաղևոսյանը

(1942–49), Կ. Ա. Օրբելյանը (1949–52), Գ. Խաչատրյանը (1954–56): Առաջին մենակատարներից էին երգիչներ Լ. Լազարևան, Ա. Սամվելյանը, Ս. Փերիյանցը, Մ. Հովհաննիսյանը, Ռ. Բեյբութովը, Կ. Տոնիկյանը, Բ. Մավիսակալյանը, պարողներ Բ., Լ. և Գ. Օրդոյան եղբայրները, Գ. Այվազյանը, թմբկահար Ռ. Յոլչյանը, պարուհի-երգչուհի Ա. Մալխասյանը: 1956–92-ին գեղ. ղեկ. Կ. Օրբելյանը գործիքավորման ոճի փոփոխություններով նվագախմբի կատարող. արվ-ը հասցրել է նոր մակարդակի: Տարբեր տարիների նվագախմբում հանդես են եկել երգիչ-երգչուհիներ Է. Կարապետյանը, Ժ. Դուվալյանը, Ժ. Թաթյանը, Ա. Ավետյանը, Բ. Դարբինյանը, Ռ. Մկրտչյանը, Լ. Խոմյանցը, Զ. Տոնիկյանը, Տ. Հովհաննիսյանը, Ն. Սարգսյանը, Ս. Մարգարյանը, Գ. Հովհաննիսյանը, Լ. Դոլինան, կլառնետահար Հ. Անսուրյանը, ստեղն. գործիքներ նվագող Թ. Մաղաթյանը, փողհար Հ. Պետրոսյանը, պարուհի Ա. Հարությունյանը և ուր.: Նվագացանկում՝ հայկ. ժող., ջազ., դաս. և արդի կոմպոզիտորների գործերից: Նվագախումբը շրջագայել է ԽՍՀՄ-ում, Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Լեհաստանում, Բուլղարիայում, Հունգարիայում, Գերմանիայում, Հաբրավսլավիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլուր: Գործել է մինչև 1992-ի վերջը: Երկացանկում գերակշռում են մի շարք ստեղծագործությունների ժամանակակից մշակումներ և գործիքավորումներ, ընդգրկում է նաև թեմատիկ ծրագրեր: Մասնակցել է «Երևան-2000» միջազգ. 2-րդ, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատան կազմակերպած «Jazz Appreciation Month» (2000, Երևան) փառատոներին: Շրջագայել է ԱՄՆ-ում (2000, 2001), ՌԴ-ում (2001, 2006): Թողարկել է 3 ալբոմ («Mauntain Dance», Հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության մրց., 2001, «Armenian Big Band», «Mosisamba»):

Հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության «Տարվա լավագույն ջազ-նվագախումբ» մրց. (2008, Երևան):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ-ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, հիմնադրվել է 1972-ին Երևանում՝ Հեռուստատեսության և ռադիոյի էստրադ. նվագախմբի (1966–72, հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Մարտին *Վարդազարյան*) հիման վրա, որը ստեղծվել էր գործիք. հնգյակի (հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Կոնստանտին *Օրբելյան*, 1954–1956, 1956–67-ին՝ գեղ. ղեկ.Էդվարդ *Բաղդասարյան*) վերակազմավորումից՝ որպես հեռուստատեսության և ռադիոյի էստրադ. սիմֆ. նվագախումբ (1972–86-ին գեղ. ղեկ.՝ Մելիք *Մավիսակալյան*, 1986–87-ին՝ գեղ. ղեկ. և դիրիժոր Ստեփան *Շաքարյան*, 1987-ից՝ գեղ. ղեկ. Երվանդ *Երզնկյան*, 1989-ից՝ դիրիժոր Մ. Վարդազարյան):

Հայաստանի ջազային նվագախումբը ելույթի պահին

Գործիք. կազմում՝ 4 շեփոր, 4 տրոմբոն, 5 սաքսոֆոն, ֆլեյտա, դաշնամուր, սինթեզատոր, կիթառ, բաս-կիթառ, տավիղ, հարված. և լար. գործիքներ: Նվագացանկում՝ Ա. Այվազյանի, Ա. Բաբաջանյանի, Ա. Աճեմյանի, Է. Բաղդասարյանի, Ա. Հեքիմյանի, Կ. Օրբելյանի, Ռ. Ամիրխանյանի, Ս. Շաքարյանի և ուր. երկեր:

Հայաստանի ռադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը

Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, արտերկրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ԺՈՂՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՆՍԱՄԲԼ Արամ Մերանգույանի անվան (1967-ից), պետական վաստակավոր (1956-ից), հիմնադրվել է 1926-ին Երևանում՝ որպես ռադիոյի ժող. գործիքների նվագախումբ, 1957–96-ին՝ Հեռուստատեսության և ռադիոյի ժող. գործիքների անսամբլ (1997-ից՝ ներկայի անվանումը): Գեղ. ղեկ-ներ՝ Ա. Մերանգույան (1927–67), Ս. Ջրբաշյան (1967–71),

Ա. Մանդակունյան (1971–73), Մ. Բեգլարյան (1974–95), Ռ. Մաթևոսյան (1996–ից), դիրիժորներ՝ Մ. Բեգլարյան, Ա. Պետրոսյան: Երկացանկում՝ հայկ. ժող., աշուղ. և

Հայաստանի ռադիոյի ժողովրդական գործիքների անսամբլը (1965, գեղ. ղեկ. Արամ Մերանգույան)

գուսան. երաժշտության, հայ և այլազգի պրոֆեսիոնալ ու ինքնուս կոմպոզիտորների ստեղծագործություններ: Տարբեր տարիների անսամբլի մենակատարներ են եղել դուդուկահարներ Մ. Մարգարյանը,

Անսամբլի ելույթը Ազգային երգի և երաժշտության 36-րդ միջազգային փառատոնում (2015, Կրակով՝ Լեհաստան)

Լ. Մադոյանը, Վ. Հովսեփյանը, Ս. Կարապետյանը, Ա. Գրիգորյանը, Հ. Հովսեփյանը, թառահարներ Ս. Սեյրանյանը, Ա. Գասպարյանը, Ա. Նիկողոսյանը, Հ. Դարբինյանը, քանոնահարներ Ա. Ֆիրջուլյանը, Զ. Տերմեջյանը, Ն. Ոսյանը, Ա. Աթաբեկյանը, Ա. Կիրակոսյանը, քամանչահարներ Ա. Մեջինյանը, Ն. Հովհաննիսյանը, Խ. Ներսիսյանը, ուդահարներ Ս. Ալթունյանը,

Հայաստանի ռադիոյի ջութակահարների անսամբլը

Կ. Արիստակեսյանը, Մ. Դեմիրճյանը, Ա. Սարգսյանը, թմբկահար Հ. Կարապետյանը, երգիչ-երգչուհիներ Ա. Գյուլզադյանը, Շ. Մկրտչյանը, Օ. Համբարձումյանը, Վ. Խաչատրյանը, Ֆ. Խորենյանը, Ա. Տեր-Աբրահամյանը, Գ. Գալոյանը, Հ. Բադալյանը, Ռ. Մաթևոսյանը, Ն. Մնացականյանը, Ռ. Հովհաննիսյանը և ուր.: Անսամբլը ելույթներ է ունեցել ՀՀ-ում, արտերկրում:

1997-ին անսամբլի գործիք. խումբը Բելգիայում մասնակցել է բանահյուս. երաժշտության «Դրանութեր» միջազգ. փառատոնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, հիմնադրվել է 1979-ին Երևանում՝ որպես Հեռուստատեսության և ռադիոյի կամեր. երգչախումբ (1997-ից՝ ներկայի անվանումով): 1979–84-ին՝ գեղ. ղեկ. Է. Հովհաննիսյան, խմբավար՝ Հ. Թոփիկյան, 1984–2002-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր Տ. Հեքեքյան: Երգացանկում՝ հայկ. և արևմտաեվրոպ. միջնադար., հոգևոր, դաս., նաև ջազ. և փոփ երաժշտություն, ժող. երգերի մշակումներ, ժամանակակից կոմպոզիտորների երկեր:

Բազմաթիվ ստեղծագործությունների առաջին կատարողն է: Է. Հովհաննիսյանը երգչախմբի համար գրել է 20 խմբերգ (խոսք.՝ Վ. Տերյանի), կատարել 40 ժող. երգերի մշակումներ ևն: Համերգներով հանդես է եկել ԱՊՀ-ում և արտերկրում: Երգչախմբի կատարմամբ թողարկվել են 4 մեծ ձայնասկավառակներ, 3 խտասալիկ, 2 ձայներիզ: 1991-ից՝ «Եվրոպա Կանտատ» եվրոպ. երգչախմբերի միջազգ. դաշնության անդամ: Գործել է մինչև 2002-ը:

Միջազգ. մրցույթների (1991, Առնհեմ՝ Հոլանդիա, 3-րդ մրց., 1992, Տակարացկա՝ Շապոնիա, ոսկե մեդալ և Գլխ. մրց.) և փառատոների (1990, Գորի՝ Վրաստան, 1991, Ակկո՝ Իսրայել, 1991, Վիտորիա՝ Իսպանիա, 1992, Արդեշ՝ Ֆրանսիա, 1993, Սինթրյո՝ Շվեյցարիա) դափնեկիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ՋՈՒԹԱԿԱՀԱՐՆԵՐԻ ԱՆՍԱՄԲԼ, կազմակերպվել է 1970-ին՝ Երևանում 1958-ին ստեղծված Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի ջութակահարների անսամբլի հիման վրա (երկուսն էլ՝ հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Գևորգ *Ամեմյան*, 1998-ից գեղ. ղեկ.՝ Անահիտ *Ամեմյան*)՝ որպես Հեռուստատեսության և ռադիոյի ջութակահարների անսամբլ (1997-ից՝ ներկայի անվանումով,

1998-ից՝ Գ. Ածեմյանի անվ.): Երկացանկում՝ հայ, ռուս, արևմտաեվրոպացի դաս. և ժամանակակից կոմպոզիտորների (Ա. Խաչատրյան, Ա. Բաբաջանյան, Ս. Ս. Պրոկոֆև, Դ. Դ. Շոստակովիչ, Գ. Հենդել, Յ. Ս. Բախ, Ա. Վիվալդի և ուր.) երկեր: «Մելոդիա» ֆիրման անսամբլի կատարմամբ թողարկել է ձայնասկավառակներ (1971, 1978): Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում:

ՀԼԿԵՄ մրց. (1971):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ Օհան Դուրյանի անվան (1999-ից), ստեղծվել է 1966-ին (հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Օհան *Դուրյան*, 1967–74 և 1994), գործել է 1967–2003-ին Երևանում՝ որպես հեռուստատեսության և ռադիոյի սիմֆ. նվագախումբ. գլխ. դիրիժոր՝ Յուրի *Դավթյան* (1966–68 և 1992–94), դիրիժոր՝ Ռաֆայել *Մանգասարյան* (1969–90, 1974-ից, միաժամանակ, ընդհատումով՝ գեղ. ղեկ.), գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Էմին *Խաչատրյան* (1986–88, 1990–91): Նվագացանկում՝ հայ, ռուս և արևմտաեվրոպացի դաս. և արդի կոմպոզիտորների երկեր: Նվագախմբի կատարումներով «Մելոդիա» ֆիրման թողարկել է ձայնասկավառակներ: Նվագախմբի հետ ելույթներ են ունեցել անվանի երաժիշտ-կատարողներ Ա. Խաչատրյանը, Մ. Մալունցյանը, Գ. Գասպարյանը, Օ. Թաքթաքիշվիլին, Լ. Չուքասզյանը, Լ. Ամարան, Ս. Ֆրանսուան, Դ. Վարժապետյանը և ուր.: Համերգներով հանդես է եկել Մոսկվայում, Թբիլիսիում, Ռիգայում, Տալլինում, Կիևում, 1995-ին՝ Կաննում, Մարսելում և այլուր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական (2008-ից), հիմնադրվել է 2005-ին Երևանում (գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Սերգեյ *Սմբատյան*)՝ որպես Հայաստանի երիտասարդ. նվագախումբ, 2018-ից՝ ներկայի անվանումով: 2007-ից՝ Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. մրցույթի պաշտոն. նվագախումբը: Երկացանկում՝ հայ, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների գործերից: Համերգներով շրջագայել է Գերմանիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Բելգիայում, Նիդեռլանդներում և այլուր: Համագործակցում է նշանավոր երաժիշտներ Վ. Գերգիևի, Վ. Թ. Սպիվակովի, Մ. Վենգերովի, Դ. Մացուևի, Վ. Ռեպինի, Գ. Ժիսլինի, Ք. Պենդերեցկու, Վ. Պապյանի, Բ. Բերեզովսկու և ուր. հետ: 2010-ից նվագախմբի նախաձեռնությամբ անցկացվում է հայ կոմպոզիտոր. արվ-ի փառատոն:

Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐ», երգչախումբ: Ստեղծվել է 1992-ին Երևանում՝ «Հայ փոքրիկ երգիչներ» մանկ. միջազգ. ընկերակցությանը կից: Գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Տիգրան *Հեքեքյան*. կազմում՝ Երևանի և հարակից շրջանների երաժշտ. դպրոցների 11–16 տարեկան 70 երեխա: Երգացանկում՝ հայ հոգևոր, ժող., դաս., ժամանակակից, նաև եվրոպ. ու ամերիկ. դաս., ժամանակակից և ջազ. ստեղծագործություններ: 1995-ին «Խաղաղություն աշխարհին» համերգ. ծրագրով (նվիրված էր ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի 50-ամյակին) շրջագայել է Եվրոպայում և ԱՄՆ-ում, մասնակցել Բազելի միջազգ. փառատոնին (ճանաչվել է լավագույնը), «Գոլդն Գեյթ» միջազգ. մրցույթում (Սան Ֆրանցիսկո՝ ԱՄՆ) նվաճել է Գլխ. մրց-ը, ոսկե և արծաթե մեդալներ: 1996-ին համերգներով շրջագայել է Եգիպտոսում, 1997-ին՝ Հունաստանում: Երևանի

«Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը

քաղաքապետարանի հետ անցկացրել է մանկ. երգչախմբերի մրցույթ-փառատոն (1996): Միջազգ. մրցույթներում մեդալների և մրց-ների են արժանացել մի շարք մենակատարներ (Ն. Օջախյան, Վ. Ղազարյան, Լ. Կուրոյան և ուր.): 1995-ին «Հայ փոքրիկ

երգիչներ» ընկերակցության մասնաճյուղ և մանկ. երգչախումբ է ստեղծվել Լոս Անջելեսում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, վաստակավոր, ազգային (2014-ից), մինչև 1991-ը՝ Հայաստանի սիմֆ. նվագախումբ: Հիմնադրվել է 1941-ին Երևանում (գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Կոստանդին ***Սարաջև***՝ 1941–45-ին, դիրիժոր՝ Իսպիր ***Խարաջանյան***՝ 1941–46-ին): Նվագախմբի պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման և գեղ. սկզբունքների ձևավորմանը մեծապես նպաստել է Կ. Սարաջևը: Նվագախումբը ղեկավարել են նաև Մ. Մալունցյանը (1945–60, 1966–67), Օ. Դուրյանը (1960–1965, 1970-ին), Մ. Տերյանը (1965–66-ին), Ռ. Վարդանյանը (1967–70), Ա. Քաթանյանը (1970–73), Դ. Խանջյանը (1974–81), Վ. Գերգիևը (1981–85), Ռ. Մանգասարյանը (1985–86), Մ. Ներսիսյանը (1986–87), Վ. Պապյանը (1987–89), Լ. Ճգնավորյանը (1989–98 և 1999–2000), Մ. Ավետիսյանը (1998–99), 2000-ից՝ Էդվարդ ***Թոփչյանը***, կոնցերտմայստերներ՝ Կարմեն Թոսունյան, Արամ Ասատրյան, Անահիտ Ասլանյան, Աիդա Նալբանդյան, Արմեն Մեսրոպյան, Կարեն Խաչատրյան, Տիգրան Գևորգյան, Աշոտ Գալստյան, Վյաչեսլավ Մանուչարյան, Անդրանիկ Քոչարյան, Մերուժան Տեր-Մինասյան, Շահեն Գևորգյան, Արիստակես Մարտիրոսյան, Վաղարշակ Պեպանյան, Հարություն Մկրտչյան, Ժաննա Հովհաննիսյան:

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը

Նվագացանկում՝ հայ, ռուս, արևմտաեվրոպացի դաս. և արդի կոմպոզիտորների երկերից:

Նվագախմբի հետ ելույթ են ունեցել ճանաչված երաժիշտներ Դ. Օյստրախը, Ս. Ռիխտերը, Մ. Ռոստրոպովիչը, Է. Գիլելսը, Ռ. Բրուզոնը, Ս. Իսերլիսը, Մ. Մայսկին, Ս. Նակարյակովը, Բ. Բերեզովսկին, Ն. Գուտմանը, Զ. Զակոմինին, Ի. Ֆաուստը, Զ. Ֆիշերը, Պ. Յուկերմանը, Գ. Կրեմերը, Յ. Բաշմետը, Պ. Դոմինգոն, Ս. Խաչատրյանը, Ք. Քաշքաշյանը, Ս. Բաբայանը, Ի. Բայրաքդարյանը, Ն. Հախնազարյանը և ուր.:

Նվագախմբի ելույթները ղեկավարել են Ա. Մելիք-Փաշայանը, Վ. Ֆեռերոն և ուր., համագործակցել են Գ. Ղանչելին, Ս. Գուբայդուլինան և Ռ. Կ. Շչեդրինը, հեղինակ. համերգներով հանդես են եկել Ա. Խաչատրյանը, Դ. Բ. Կաբալևսկին, Ք. Պենդերեցկին և այլ կոմպոզիտորներ:

Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Կանադայում, Մեքսիկայում, Սլովակիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Ավստրիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Լյուքսեմբուրգում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Հունաստանում, Կիպրոսում, Իրանում, Լիբանանում, Թուրքիայում, Ռուսաստանում, ԱՄԷ-ում, Ճապոնիայում և այլուր: Մասնակցել է Իտալիայի՝ Ռիմինիի, Չիտտա դե Կաստելլո, Մերանո և Ռավելլո ք-ների (2014), Ս. Պետերբուրգի «Սպիտակ գիշերների աստղերը» (2016) փառատոներին:

Նվագախումբն անցկացնում է Երևանյան միջազգ. երաժշտ. ամենամյա փառատոնը (գեղ. ղեկ-ներ՝ Է. Թոփչյան և Ա. Չաուշյան):

Թողարկել է 40-ից ավելի ձայնասկավառակ:

Գրկ. *Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ-80, Ե., 2006:*

ՀԱՅԱՐՏՈՒՆ, հայ արվեստի տուն, գրական-մշակութ. հաս. կազմակերպություն 1920–30-ական թթ-ին: Ստեղծվել են հիմնականում ՀԽՍՀ-ից դուրս՝ հայաշատ քաղաքներում. նպատակը տեղի հայ գրողների, նկարիչների, երաժիշտների, դերասանների ստեղծագործության տարածմանը, հայ բնակչության գեղագիտ. դաստիարակությանը նպաստելն էր, հայ մշակույթի հետ նրանց կապելը: Առաջին Հ. (Վ. Տերյանի անվ.) հիմնադրվել է Թիֆլիսում 1921-ին (նախագահ՝ Հ. Թումանյան): Մասնաճյուղերի ղեկ-ներ՝ Դ. Դեմիրճյան (գրական), Ռ. Մելիքյան (երաժշտ.), Գ. Շարբաբչյան (նկարչ.), Ս. Քափանակյան (թատեր., դրամատիկ. ստուդիայի ղեկ.՝ Ա. Բուրջալյան): Կազմակերպվել են քննարկումներ, դասախոսություններ, համերգներ, ներկայացումներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ: Հ. Թումանյանի

առաջարկով նույն թվականին Հ. ստեղծվել է նաև Կ. Պոլսում: Առաջին նիստում ընտրել են 34 անդամ, 40 թղթ. անդամ՝ արտերկրից (ընդհանուր ատենապետ՝ Ե. Օտյան, ապա՝ Վ. Թեքեյան): Մասնաճյուղերը ղեկավարել են Կ. Զարյանը (գրական), Գ. Սյունին (երաժշտ.), Ա. Շահխաթունին (թատեր.), Աստ. Խաչատրյանը (քննախոս):

1923-ին բացվել է Բաթումի Հ. (վարչության նախագահ՝ Ս. Մելիք-Սահակյան): Մասնաճյուղի ղեկ-ներ՝ Գ. Գրիգորյան (գրական), Դ. Ղազարյան (երաժշտ.), Տ. Տեր-Մինասյան (նկարչ.), Մ. Սաֆարյան (թատեր.): Մասնաճյուղերն ունեցել են նաև ստուդիաներ: 1925–30-ական թթ-ին գործել է Բաքվի Ա. Մարտունու (Մյասնիկյանի) անվ. Հ.՝ գրական, թատեր. (ստուդիայի ղեկ.՝ Պահարե, 1926–27, ապա՝ Լ. Քալանթար), երաժշտ. (ստուդիայի ղեկ.՝ Ա. Մայիլյան), նկարչ. մասնաճյուղերով և ստուդիաներով: Հ-ի գործունեությանը նպաստել են նկարիչ Մ. Սաղյանը, դերասաններ Ե. Դուրյան-Արմենյանը, Վ. Փափազյանը, գրողներ և ուր.: Հրատարակել է «Հայարտուն» հանդեսը (1925): Տես նաև ***Մոսկվայի հայ մշակույթի տուն***:

ՀԱՅԿԱԶՅԱՆ Պետրոս Ասատուրի (19.12.1924, Լենինական–05.03.2018, Երևան), ջութակահար, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ (1950, Կարպ ***Դումբաևի*** դասարան): 1950-ից դասավանդել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. և Պ. Ի. Չայկովսկու անվ. (1967–2003-ին՝ տնօրեն) երաժշտ. դպրոցներում: Նրա ղեկավարությամբ Սայաթ-Նովայի անվ. դպրոցը դարձել է ՀԽՍՀ առաջատար երաժշտ. կրթօջախներից, ամրապնդել է կապերը Մոսկվայի, Թբիլիսիի և ԽՍՀՄ այլ քաղաքների երաժշտ. դպրոցների հետ: Կրթել և դաստիարակել է տասնյակ ջութակահարների, որոնք աշխատում են ՀՀ և արտերկրի սիմֆ. ու կամեր. նվագախմբերում, լար. քառյակներում և այլ անսամբլներում, վարում են մենակատարի և մանկավարժի գործունեություն: Նրա սաներից են ջութակահարներ, միջազգ. մրցույթների դափնեկիրներ Վիկտոր ***Խաչատրյանը***, Սերգեյ ***Խաչատրյանը***, Տիգրան Տողրամաջյանը, Սյուզի ***Երիցյանը***, Էմանուել ***Ճգնավորյանը*** և ուր.:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2004), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2014), Երևանի քաղաքապետի ոսկե (2014) մեդալներ:

ՀԱՅԿԱԶՈՒՆ (Նազարյան Գագիկ Ստեփանի, ծ. 20.04.1951, ք. Արտաշատ), գուսան: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2010): Ավարտել է Երևանի շինարար. տեխնիկումը: Արցախյան ազատագր. պատերազմի մասնակից: «Հայկազունք» երաժշտ. անսամբլի գեղ. ղեկ.: Մարտի դաշտում գրել է բազմաթիվ երգեր, որոնցից 10-ը ՀՀ ՊՆ ընդունել է որպես բանակ. քայլերգ («Հայե՛ր, միացե՛ք», «Գետաշե՛ն», «Հպա՛րտ գնացեք», «Մուսալեռ», «Վերականգնվի՛ր, Կիլիկիա՛», «Պիտի գնանք», «Մաղավուզի Կարոյի երգը», «Պարի՛ր, արցախցի՛», «Մինթե Մելքոնյան», «Սասնա ծռեր»): Անսամբլի (գեղ. ղեկ.՝ Հ.) հետ համերգներով շրջագայել է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, արտերկրում: Հանդես է գալիս իր երգերի կատարումներով: ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2001):

Հայկազուն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՆՍԱՄԲԼ Սայաթ-Նովայի անվան (1943-ից), պետական (1946-ից՝ վաստակավոր), հիմնադրվել է 1938-ին Երևա-

Հայկական գուսանական երգի անսամբլը (1963)

նում՝ ռադիոկոմիտեի ժող. գործիքների անսամբլի հիման վրա՝ Շարա ***Տալյանի*** ղեկավարությամբ. կազմում՝ երգիչներ Հ. Տալյան, Հ. Քոչարյան, Վաղարշակ ***Սահակյան*** (ղեկ.՝ 1942-ից): Համերգներով հանդես է եկել ՀԽՍՀ-ում, ԽՍՀՄ-ում: 1939 և 1956-ին Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին: Մշակել է կատարող. ոճ, մեներգեցողությունը զուգորդել է միաձայն խմբերգով և նվագով, որոշակիորեն անդրադարձել է մեղեդիացված արտասանությանը: Երկացանկում՝ Բաղդասար Դպիրի, Սայաթ-Նովայի, Միսկին Բուրջիի, Ջիվանու, Շերամի, Հավասու, Աշոտի, կոմպոզիտորներ Ա. Հարությունյանի, Ա. Բաբաևի, Ա. Քոչարյանի և ուր. երգերից: Ուշագրավ էին գուսան Գյուլգազյանի «Սմբատ և Սոֆիա», Աշոտի



Պետրոս Հայկազյան

«Աստղատուր և Աստղանուշ» երգախառն հեքիաթների կատարումները: Անսամբլը գործել է մինչև 1969-ը:

Տես նաև «*Սայաթ Նովա» պետական անսամբլ*:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ, հիմնադրվել է 1994-ին Երևանում: Հիմնադիր-նախագահ՝ Լևոն *Չաուշյան*, հիմնադիր-անդամներ՝ Վահրամ *Բաբայան*, Մարտին *Վարդազարյան*, Երվանդ *Երկանյան*, Ռուբեն *Սարգսյան*, Մարգարիտա *Ռուխկյան*: Միավորում է հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորներին, երաժշտագետներին և կատարողներին, նպատակը հայ արդի դաս. երաժշտության զարգացմանն ու տարածմանը նպաստելն է: Կազմակերպել է համերգներ ՀՀ-ում, Բելգիայում (1999), Վրաստանում (2001), ԱՄՆ-ում (2003), Հունգարիայում (2004), Բուլղարիայում (2009), ՌԴ-ում:

Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը

Համաժողովի նախաձեռնությամբ (Բելգիայի «Ամադեուս» հայկ. կազմակերպության հետ) տեղի են ունեցել Ա. Խաչատրյանի անվ. պատանի կոմպոզիտորների հանրապետ. (1996), Ա. Բաբաջանյանի անվ. երիտասարդ կոմպոզիտորների և Ա. Խաչատրյանի ծննդյան 95-ամյակին նվիրված «Ամադեուս-98» (1998), Լ. Չիլինկիրյանի անվ. ջութակահարների 1-ին՝ հանրապետ. (2000), և 2-րդ՝ համահայկ. (2001), Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. (2001), Երիտասարդ կոմպոզիտորների գործիք. ստեղծագործությունների (2013), Երիտասարդ կոմպոզիտորների խմբերգ. ստեղծագործությունների համահայկ. (2016) և այլ մրցույթներ: Կազմակերպել է նաև փառատոներ՝ նվիրված Ա. Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին (2003), ՀՀ անկախության 20-ամյակին (2011):

Հրատարակել է Մ. Ռուխկյանի «Հայ կոմպոզիտորների դիմանկարներ» (ռուս., 2009) մենագրությունը, որտեղ ընդգրկված են կազմակերպության հիմնադիր-անդամների ստեղծագործ. դիմանկարներ, 30-ից ավելի ժող-ներ: Թողարկել է հայ ժամանակակից կոմպոզիտորների երկերի ձայնագրությունների 9 խտասալիկ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ-ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼ, Թաթուլ Ալթունյանի անվան հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլ, հիմնադրվել է 1938-ին Երևանում. կազմը՝ գործիք. և պար. խմբեր, երգչախումբ, մենակատարներ (սկզբում՝ 85–90 հոգի): Հիմնադիր՝ Թաթուլ *Ալթունյան* (1938–70-ին՝ գեղ. ղեկ., 1974-ից՝ նրա անվ.), գործիք. մասի ղեկ.՝ Ալեքսանդր *Ալեքսանդրյան*, պարերի բեմադրող՝ Էդվարդ *Սանոսյան*: Բեմադրություններին մասնակցել են Ի. Արբատովը, Զ. Սիուրադյանը, զգեստները ձևավորել են Մ. Սարյանը, Խ. Եսայանը, Մ. Պետրոսյանը, Ռ. Էլիբեկյանը և ուր.: Անսամբլը ինքնատիպ բեմավորմամբ միավորել է երգը, պարը, նվագը, խմբերգը, խաղը, տարազը ևն: Երկացանկում՝ հայկ. ժող. և հայ կոմպոզիտորների երգեր: Անսամբլում ձևավորվել են ժող. երգի մշակման և գործիքավորման ինքնատիպ սկզբունքներ (երգի զարգացում՝ տարբերակ. կրկնություններով, առավելապես՝ ենթաձայն. պոլիֆոնիայի տարրերի օգտագործում, ևն)՝ պահպանելով հայկ. ժող. երգի կերպար. և լեզվ. առանձնահատկությունները: Անսամբլում ձևավորվել է երգչուհիներ Լ. Քոշյանի, Ա. Քամալյանի, դուդուկահար Զ. Գասպարյանի, պարողներ Ա. Շահնաբաթյանի, Վ. Ռաշիդյանի և ուր. արվ-ը: Համերգներով շրջագայել է ՀՀ-ում, ԽՍՀՄ-ում, Ալբանիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Լիբանանում, Սիրիայում և այլուր: Անսամբլի գեղ. ղեկ-ներ՝ Է. Հովհաննիսյան (1970–74), Խ. Ավետիսյան (1974–77), Է. Ծատուրյան (1977–87, 1990–91), Ռ. Ալթունյան (1987–90), Մ. Մավիսակալյան (1991–97), Հ. Մանգասարյան (1998–2004), 2004-ից՝ Ժիրայր *Ալթունյան*:

Գրկ. *Խանջյան Հ., Երգը կանչում է [Հայկական երգի-պարի պետական անսամբլի հյուրախաղերը], Ե., 1969: Նույնի, Հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլ, Ե., 1973: Բալյան Վ., Խոսք Թաթուլ Ալթունյանի մասին, Ե., 1977:*

«ՀԱՅՀԱՄԵՐԳ», Արվեստի միջազգային կենտրոն, համերգ-հյուրախաղ. միավորում: Գործել է 1976–89-ին

Երևանում՝ ՀԽՍՀ ՄՆ համակարգում: Գլխ. տնօրեն և ռեժ.՝ Գ. Ասատրյան: Նպատակը հանրապետության պրոֆեսիոնալ երաժշտ. կոլեկտիվները միավորելն էր, համերգները ծրագրված և ծավալուն դարձնելը: Բացի համերգ. գործունեությունից՝ կազմակերպել է համերգ-ներկայացումներ, թատերականացված տոնահանդեսներ, որտեղ ելույթ են ունեցել կինոյի, թատրոնի և էստրադայի նշանավոր մենակատարներ ու խմբեր (նաև արտերկրից): Միավորումն ընդգրկել է Հայկ. ժող. երգի-պարի անսամբլը, Հայաստանի սիմֆ. նվագախումբը (այժմ՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ), Կոմիտասի անվ. քառյակը, Հայաստանի կամեր. նվագախումբը, վոկալ-գործիք. և այլ անսամբլներ:

ՀԱՅՈՑ ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1917-ին Թիֆլիսում՝ Սպիրիդոն *Մելիքյանի* նախաձեռնությամբ (1917–21-ին՝ գեղ. ղեկ. և դիրիժոր, 1921-ին՝ Կարո *Զաքարյան*): Կոչվել է նաև «Երգեցիկ ընկերություն», ունեցել է հաստատված կանոնադրություն: Նպատակը հաս-յան մեջ բազմաձայն երաժշտություն տարածելն էր, երգիչների մասնագիտ. ուսուցմանն աջակցելը: Կազմակերպել է երգչախմբեր. երկացանկում՝ հայկ. ժող., հոգևոր երգեր, հայ և ռուս կոմպոզիտորների խմբերգ. գործեր: Գործել է մինչև 1921-ը:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Էդվարդ Գրիգորի (ծ. 05.09.1949, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ (1976-ից) անդամ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1968, դասատու՝ Գ. Հախինյան), ԵՊԿ (1973, Գ. Եղիազարյանի դասարան):

Գրել է բալետ, 2 սիմֆոնիա, կոնցերտներ՝ ջութակի, ալտի, թավջութակի, ֆլեյտայի, հորոյի, կլառնետի, ֆագոտի, կրկնակի կոնցերտ՝ ջութակի և ալտի, «Կորուսյալ օդապարիկը»՝ կամեր. նվագախմբի համար, գործիք. սոնատներ, երգաշար, վոկալ և այլ գործեր:

Մասնակցել է միջազգ. փառատոների (Բուդապեշտ, 1986, Շվեյցարիա, 1992, Հունաստան, 1998, Օդեսա, 1998, 1999), Զագրեբի երաժշտ. բիենալեին (1991):

ՀՀ Պետ. (2017), ՀԿՄ Ա. Խաչատրյանի անվ. (1993), ԹՄՄ (2008), ՀԿՄ (2009) մրցներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Կարո (Կարապետ) Պետրոսի (22.02.1942, Երևան–10.10.1997, Երևան), ջութակահար: Վահագն *Հայրա-*

պետյանի հայրը: Երաժշտ. կրթություն (ջութակ) ստացել է Մոլդովայում: Ռաբիս ոճի առաջատար կատարողներից էր. առաջինն է ջութակն օգտագործել այդ ոճում: Թողարկել է «Համերգ Հայաստանում» (1990), «Կախարդական ջութակ» (1994), «Հիշողություններ» (1996), «Կարո Հայրապետյանի լավագույն ընտրանին» (1996), «Երաժշտական պալատ» (1998) ալբոմները: Նկարահանվել է «Երջանկության մեխանիկա» (1982, Հայֆիլմ) ֆիլմում:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Մարատ Վիգենի (ծ. 18.03.1985, Երևան), երգիչ, կոմպոզիտոր, դիրիժոր: Արվեստագիտ. թեկնածու (2010): Ավարտել է Երևանի Մ. Միրզոյանի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (2001, դասատու՝ Ջ. Ներսիսյան), ԵՊԿ կոմպոզիցիայի (2006, Մ. Իսրայելյանի դասարան), դիրիժորության (2007, Յ. Դավթյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2009, ղեկ.՝ Մ. Իսրայելյան): Սովորել է «Evans Community Audit School»-ում (2007, ԱՄՆ), «Los Angeles Valla College»-ում (2008): 2010–14-ին՝ ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական:

Գրել է «Հայ շինարար», «Զինվորի նամակը», «Մայրիկ», «Հայուհի», «Տես, չայրես», «Կարծեցի թե», «Love for Infinity» («Անվերջ սեր»), «Առաջ, առաջ», «Ո՛չ, չեն մեռնում հերոսները», «Երգ ոստիկանի», «Իմ Երևան», «Լավ ընկեր», «Գարեգին Նժդեհին», «Սերդ՝ որպես թալիսման», «Հայ սպաներ», «Զինվորի երդումը» և այլ երգեր, պիեսներ՝ հորոյի, ջութակի, ալտի, թավջութակի, ֆլեյտայի, կլառնետի և ֆագոտի, դուետ ֆուգատո՝ կլառնետի և ֆագոտի, ֆուգա՝ լար. քառյակի համար, «Օր» դաշնամուր. պիեսների շարքը («Առավոտ», «Կեսօր», «Երեկո», «Գիշեր») և այլ գործեր: Թողարկել է ձայնասկավառակներ, նկարահանել է «Տես, չայրես», «Կարծեցի, թե հյուր ես եկել...», «Սերդ՝ որպես թալիսման...», «Հայուհի», «Հայ շինարար», «Ապավինենք մեր բազկին» տեսահոլովակները:

Տարվա լավագույն ինտերնացիոնալ երգիչ (2008) և վոկալիստ (2009): «Պատվո մրցանակ» (2012, ԱՄՆ):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Յուրի Սուրենի (ծ. 22.10.1933, Երևան), դաշնակահար, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1976): Ավարտել է ՄՊԿ (1956) և ասպիրանտուրան (1960, ղեկ.՝ Յ. Վ. Ֆլիեր): 1956–88-ին՝ Մոսկոնցերտի, 1988–91-ին՝ Հայֆիլհար-

Էդվարդ Հայրապետյան

Կարո Հայրապետյանը ելույթի պահին



Մարատ Հայրապետյան

Յորի Հայրապետյան

մոնիայի մենակատար: 1960–94-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1978-ից), 1994-ից՝ ՄՊԿ-ում: Նվագացանկում՝ հայ, ռուս, արևմտաեվրոպացի դաս. և արդի կոմպոզիտորների երկերից: Մենակատարությունները բնորոշ են մտքի պարզությունը, կատարման ավարտվածությունը: Համերգներով հանդես է եկել ԱՊՀ մի շարք քաղաքներում, Չեխիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Հոլանդիայում, Իրանում, Պորտուգալիայում, ԱՄՆ-ում:

Երիտասարդության և ուսանողների համաշխ. V փառատոնի (1955, Վարշավա), Ֆ. Լիստի անվ. (1956, Բուդապեշտ), Եղիսաբեթ թագուհու (1960, Բրյուսել) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վահագն Կարապետի (ծ. 30.08.1968, Երևան), դաշնակահար, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Կարո ***Հայրապետյանի*** որդին: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի, ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինները: Սովորել և կատարագործվել է Նյու Յորքում (ջազ. երաժշտություն)՝ հանրահայտ ջազ. երաժիշտներ Բ. Հարրիսի և Ֆ. Հյուիթի ղեկավարությամբ, համագործակցել մի շարք անվանի երաժիշտների հետ: 1998-ից՝ «Armenian Navy Band» խմբի դաշնակահար: Հիմնադրել է «Կատուներ» ջազ. խումբը (2005): Ջազ. երաժշտություն է դասավանդել Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Երևանում: Հյուրախաղերով հանդես է եկել բազմաթիվ երկրներում՝ իր եղբոր և հանրահայտ երաժիշտների հետ: Մասնակցել է Լեհաստանի «Jazz Jamboree», Ս. Պետերբուրգի, Մոսկվայի (1997–99), Նոր Օռլեանի, Մոնրեալի և այլ միջազգ. ջազ. փառատոների, նաև Կիպրոսում ԱՄՆ-ի դեսպանատան կազմակերպած ամենամյա «Ապագայի ջազ» ծրագրին (ելույթ է ունեցել ճանաչված կոնտրաբասահար Ա. Ռոլանդի ու նրա խմբի հետ): Թողարկել է «Love for Sale», «Trip to New Orleans», «Bop it up» (Նոր Օռլեան), «Singin and Swingin» ձայնասկավառակները: Գրել է կինոերաժշտություն («Խճճված զուգահեռներ», «Եթե բոլորը ...» ևն):

Վահագն Հայրապետյանը ելույթի պահին

Ջազ փառատոնի մեծ (1983, Վիլնյուս), Հայաստանի ազգ. կինոկենտրոնի «Հայակ» (2013, Երևան) մրց-ներ:

Տատյանա Հայրապետյան

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Տատյանա Բագրատի (10.05.1924, Երևան–12.08.2016, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. մանկավարժ (1960): Արմեն ***Մկրտչյանի*** մայրը: 1930-ական թթ-ին սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1940-ական թթ-ին՝ ՄՊԿ-ում (1948, Յ. Ռաբինովիչի և Ա. Գաբրիելյանի դասարաններ): 1948-ից դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում (1958-ից՝ ուսմասվար, 1978–2005-ին՝ տնօրեն, 2005-ից՝ տնօրենի խորհրդական և լար. բաժնի դասատու):

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1986), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2010):

Երկ. *Мелодии моих воспоминаний... [Ст. и воспоминания], ред., сост. З. Тер-Казарян, М., 2005.*.

ՀԱՅՐԵՆ, հայ հին ժող. քնարերգության մեջ տարածված երգատեսակ: Անվանումը ծագել է «հայերեն» բառից: Հայկ. տաղաչափ. ինքնատիպ կառուցվածքով ոտանավոր է. բաղկացած է 7- և 8-վանկանի մեծավերջ-մեծատանջ (յամբանապաստյան) ոտքերով երկտող տներից: Առաջին տողն սկսվում և վերջանում է երկվանկ, 2-րդը՝ եռավանկ ոտքով: Հ-ների չափը X դ-ի բանահյուսությունից անցել է գրավոր բանաստեղծություն, որն օգտագործել են Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Մկրտիչ Նաղաշը և ուր.:

Հ-ների՝ ժող. քնարերգության, մասնավորապես՝ «լալյաց» բանաստեղծության տեսակ լինելու առաջին վկայությունը պահպանվել է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում: Սակայն նրա, ապա՝ Ներսես Շնորհալու Հ-ների չափով գրված բնության և աստված. սիրո թեմայով տաղերն անուղղակիորեն վկայում են, որ հնում այդ չափով հորինվել են ոչ միայն սգերգեր, այլև սիրո երգեր: Հ-ների հատուկենտ նմուշները, որ երևան են եկել XIII դ-ից, առավելապես սիրո, ուրախության և խրատ. երգեր են: Առաջին 2 նմուշները, ըստ Մ. Աբեղյանի, միջնադար. քաղաքներում հորինել են գուսաններն ու վարձակները. կատարվել են խնջույքներում՝ գործիքի նվագակցությամբ:

Հ-ները հորինել են միջին հայ-ով, ավանդվել է բանավոր՝ նույն երգի բազմաթիվ տարբերակներով: Հ-ները ոճ. ընդհանրություններ ունեն XIX–XX դդ-ում գրառված ժող. երգերի հետ. բազմաթիվ տարբերակներ բանաստեղծ. միևնույն չափով (կամ

փոփոխված) առկա են ուշ շրջանի ժող. երգերում: XIII դ–ից, կյանքի և գրկ–յան աշխարհականացմանը զուգընթաց, առաջացել է հաս. հետաքրքրություն սիրո երգերի նկատմամբ: XV–XVIII դդ–ի գրիչները Հ–ների ամբողջ. տաղաշարեր են գրառել և ներմուծել Տաղարաններ: Հ–ները հարատևել են նաև ժող. ավանդության մեջ՝ հասնելով XIX–XX դդ.: Ակնում, Խարբերդում, Վանում և այլուր գրառվել են նաև Հ–ների հնավանդ նմուշներ, որոնք դեռևս XVII դ–ի մի Տաղարանում (ապա՝ նաև ժողովրդի մեջ) անվանվում են ***անպոնի***:

Երաժշտ. առումով՝ Հ–ները միջնադար. հայ գուսան. քնար. երգերի հիմնական տեսակն են, որոնց մեղեդիները ծորերգային են և կոչվում են նաև քաշհարեն (ի տարբերություն պարերգ. մեղեդիների ևն): Հ–ներն առանձնանում են համեմատաբար պարզ ու թեթև կառուցվածքով, զուսպ զարդարանքով, հուզ. խորությամբ և անմիջականությամբ, երգելիս ընդմիջվել են ասերգ. բնույթի արտահայտիչ կրկնակներով, կրում են խոր ավանդականության և յուրատեսակ վեհության կնիք: Դարերի ընթացքում Հ–ներից ճյուղավորվել են հոգևոր տաղերին մոտիկ, առավել զարդարուն, «քաղցրանվագ» անտունիները, մասամբ էլ ժողովրդականանալով՝ խառնվել են աշխարհիկ տաղերին կամ լուծվել ժող. քնար. ծորուն երկերում: Հին Տաղարաններում Հ–ները հաճախ անվանվում են «տաղեր»: Երբեմն հանդիպում են նաև եղանակի խազերով գրառումներ: Նոտագրված սակավաթիվ Հ–ներ կան Կոմիտասի գրառած Ակնա երգերում (Ազգագրական ժողովածու 1, 1931, էջ 76) և Մ. Թումաճանի գրառումներում («Աղբարս ի պախճան», «Յալեմ, յալեմ» երգերը՝ «Հայրենի երգ ու բան» ժող–ում, հ. 1, 1972, էջ 71):

Գրկ. *Չոպանեան Ա., Հայրէններու բոլորապտոյտը, Փարիզ, 1940: Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Աբեղյան Մ., Հայրենների հայտնությունը և անպոնիներ, Երկ., հ. 2, Ե.,1967: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրություն, Ե., 1959: Հայրեններ, աշխատասիր.՝ Ա. Մնացականյանի, Ե., 1995:*

ՀԱՅՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ պետական, երաժշտ. համերգ. կազմակերպություն: Հիմնադրվել է 1932–ին (գործել է մինչև 1991–ը, վերաբացվել է 1996–ին) Երևանում (1976–89–ին՝ ***Հայհամերգ***): Նպատակն ազգ. և համաշխ. դաս. ու ժամանակակից երաժշտ. և կատարող. արվ–ների տարածումն է: Սկզբում կազմակերպել է դրսից հրավիրված ճանաչված երաժիշտների և երաժշտ. խմբերի համերգները (դաշնակահարներ Գ. Նեյհաուզի, Յ. Ֆլիերի, Լ. Ն. Օբորինի, Ս. Տ. Ռիխտերի, երգչուհի Վ. Բարսովայի, թավջութակահարներ Մ. Լ. Ռոստրոպովիչի, ջութակահար Դ. Օյստրախի, ասմունքի վարպետ Ս. Քոչարյանի և ուր.): 1930–ական թթ–ից հիմնադրվել են Հ–ի կատարող. խմբերը՝ Հայաստանի պետ. երգչախումբ, Հայկ. ժող. գործիքների նվագախումբ, Հայկ. ժող. երգի–պարի անսամբլ, Հայաստանի պետ. սիմֆ. նվագախումբ (1991–ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ), Հայաստանի ջազ. նվագախումբ (1938–91–ին՝ Հայաստանի էստրադ.), Կոմիտասի անվ., Ա. Սպենդիարյանի անվ. քառյակներ, Հայկ. գուսան. երգի անսամբլ ևն: Այդ տարիներին համերգները կազմակերպվել են Հ–ի ներկայի փոքր դահլիճում (հիմնական՝ 1921–ին, Երևանի մշակույթի տուն): Այդ խմբերի առաջին նշանակալի ելույթները ՀԽՍՀ–ից դուրս տեղի են ունեցել 1939–ին Մոսկվայում՝ հայկ. արվ–ի և գրկ–յան տասնօրյակին: Հայրեն. մեծ պատերազմի (1941–45) ժամանակ ռազմաճակատում հանդես են եկել երաժշտ. կոլեկտիվներ և մենակատարներ (Շ. Տալյան, Ա. Ավդալբեգյան, Հ. Ասլանյան և ուր.):

Տեսարան «Ոսկե աշուն» համերգային ծրագրից (1985, Երևանի «Հրազդան» մարզադաշտ)

Հետպատերազմ. տարիներին հիմնադրվել են Հայաստանի պարի պետ. անսամբլը (1958), Հայաստանի կամեր. անսամբլը (1962), 1960–70–ական թթ–ին՝ Հ–ին կից ժող. և էստրադ. մի շարք անսամբլներ: 1950–ական թթ–ից համերգ. մեծ դահլիճում (հիմն.՝ 1953–ին, 1979–ից՝ Ա. Խաչատրյանի անվ.) կազմակերպվում են համերգ–դասախոսություններ, 1964–ից գործել է «Դպրոցականի ֆիլհարմոնիան», ընդարձակվել են փոխադարձ կապերն արտերկրի ֆիլհարմոնիկ կազմակերպությունների հետ: Տարբեր տարիների Հայաստանի երգի–պարի և կամեր. անսամբլները, սիմֆ. և էստրադ. նվագախմբերը, նաև մի շարք մենակատարներ հանդես են

«Հայրեններ» գրքի (1995, աշխատասիր.՝ Ա. Մնացականյանի) շապիկը

եկել Մերձ. և Միջին Արևելքի երկրներում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Արգենտինայում և այլուր: Հայաստանում հյուրախաղերով հանդես են եկել դիրիժոր Կ. Դեկկին (Իտալիա), դաշնակահարներ Վ. Կլայբեռնը (ԱՄՆ), Ա. Ֆիշերը (Ֆրանսիա), երգեհոնահար Պ. Ժամկոչյանը, ջութակահար Ի. Ստեռնը (ԱՄՆ), երգչուհիներ Մ. Ռոբենը (Ֆրանսիա), Լ. Ամարան, Լ. Չուգասզյանը (ԱՄՆ), երգիչներ Ժ. Բրելը, Շ. Ազնավուրը (Ֆրանսիա), ջութակահար Լ. Չիլինգիրյանը (Անգլիա), երաժշտ. կոլեկտիվներ՝ Քլիվլենդի սիմֆ., Միչագանի համալսարանի փող. նվագախմբերը, «Լիդիան» լար. քառյակը (ԱՄՆ) ևն:

Տեսարան «Էրեբունի-Երևան» փոնակատարությունից (1968)

Հ-ի գործունեությանը մեծապես նպաստել են Գ. Դոմբաևը, Գ. Ասատրյանը, Ն. Մակեդոնսկին, Լ. Մովսիսյանը, կոմպոզիտորներ Ա. Հարությունյանը, Է. Հովհաննիսյանը, դիրիժորներ Ա. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Մալունցյանը, Ա. Այվազյանը, Կ. Օրբելյանը, Զ. Սահակյանցը, Օ. Դուրյանը, Լ. Ճգնավորյանը, մենակատար-երաժիշտներ Ժ. Տեր-Մերգերյանը, Զ. Պետրոսյանը, Մ. Աբրահամյանը, Յ. Հայրապետյանը, Ա. Յիցիկյանը, Գ. Ադամյանը, երգիչներ Պ. Լիսիցյանը, Զ. Դոլուխանովան, Լ. Զաքարյանը, ասմունքողներ Ս. Քոչարյանը, Թ. Դեմուրյանը և ուր.: Համերգ. մեծ դահլիճում երգեհոն տեղադրելուց (1971) հետո ավանդաբար ելույթներ են ունեցել Վ. Ստամբոլցյանը և հրավիրված այլ երգեհոնահարներ:

Հարություն Հանեսյան

Հ. կարևորում է նաև համերգ. գործունեությունը մարզերում. կազմակերպում է փառատոներ («Կամերային երաժշտություն», «Ոսկե աշուն», «Էրեբունի-Երևան», «Համահայկական խաղեր» ևն), աշխարհի ժողովուրդների երաժշտության տասնօրյակներ, ստուգատեսներ, մրցույթներ ևն: 1960-ական թթ-ից հիմնադրվել են նոր խմբեր՝ Հայաստանի փող., Երևանի կամեր. նվագախմբերը, Հայաստանի գուսան. և ժող. երգի անսամբլը, Երևանի լար. քառյակը, «Տաղարան» անսամբլը, «Տկզար» նվագախումբը, «Բարեկամություն» պարի անսամբլը: Միջոցառումներն անցկացվել են նաև Երևանի կամեր. երաժշտության տանը (1977-ից) և մարզահամերգ. համալիրում (1984-ից):

1991-ին Հ. լուծարվել է. նրան պատկանող խմբերը դարձել են ինքնավար (սեփ. տնտեսվարկով) պետ. մարմիններ՝ ՀՀ ՄՆ-ին առընթեր: 1993–94-ին հիմնադրվել է Հայաստանի ֆիլհարմոնիկ պետ. գործակալությունը՝ որպես հյուրախաղեր կազմակերպող օղակ: Հ-ի գրեթե բոլոր երաժշտ. կոլեկտիվները համերգների և փորձերի համար ամրակցվել են Երևանի տարբեր համերգ-բեմ. կենտրոնների (Մեծ և Փոքր դահլիճներ, Կամեր. երաժշտության տուն, ԵՕԲԹ, ՀԿՄ):

2002-ին վերակազմավորվել է Հայաստանի պետ. ֆիլհարմոնիայի, որի նպատակը ազգ., համաշխ., դաս. և ժամանակակից ստեղծագործությունների տարածումն է: Ծրագրերից է «Դպրոցականի ֆիլհարմոնիան», որի շրջանակներում կազմակերպվում են դաս. և ազգ. երաժշտության համերգներ: Ֆիլհարմոնիայի կազմում է գործում նաև «Ֆոլկ-մոդեռն» ժող. գործիքների անսամբլը: Տնօրեններ՝ Լաերտ Մովսիսյան, Գագիկ Մանասյան (2007-ից):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1956):

ՀԱՆԵՍՅԱՆ Հարություն (1913–1989), ջութակահար, դիրիժոր, կոմպոզիտոր: Ջութակի դասեր է առել Հարություն Սինանյանից: Ստեղծագործել է Կ. Պոլսում: Եղել է «Թեատռոնիա» նվագախմբի առաջին ալտահարը: Հանդես է եկել նաև անսամբլներում և կոնսերվատորիայի սիմֆ. նվագախմբում: Որպես ալտահար՝ համերգներով ելույթներ է ունեցել քրոջ՝ դաշնակահարուհի Ա. Հանեսյանի (ծ. թ. անհտ–1987) հետ: Ջութակի, ալտի, դաշնամուրի, լար. քառյակի համար փոխադրել, ներդաշնակել է հայկ. ժող. երգեր, գրել երգեր:

Հրատարակվել են Հ-ի մենուետը, նոկտյուռնը, էլեգիան, ռոմանսը, անդանտինոն, պաստորալը, ռոնդոն, պրելյուդը, կապրիսը և այլ գործեր: Գրել է կադենցիաներ՝ Յ. Ստամիցի, Գ. Հենդելի, Գ. Տելեմանի և ուր. ալտի կոնցերտների համար, որոնք կատարվում են Եվրոպայում և ԱՄՆ-ում, ներառված են ՄՊԿ ալտի դասընթացում:

Թողարկել է ձայնասկավառակ («Հայկական այուիտ», «Նոկտյուռն», «Ռապսոդիա», «Տեսիլք», «Պյուրլեքս»՝ կամեր. նվագախմբի կատարմամբ, դիրիժոր՝ Հ.): Հեղինակ է նաև ջութակի մեթոդ. ձեռնարկի:

ՀԱՊԱՂՈՒՄ, նախորդ ակորդի տոնը (կամ տոները), որը, շարունակելով հնչել հաջորդ ակորդի ժամանակ, նրա հետ կազմում է ոչ ակորդ. դիսոնանսող հնչյուն և լուծվում սեկունդա վար (հազվադեպ՝ վեր)՝ հաջորդ ակորդի համապատասխան ակորդ. տոնի մեջ: Հ. գործածում են տակտի ուժեղ մասերում: Տարբերում են Հ-ման նախապատրաստված և չնախապատրաստված տեսակներ: Նախապատրաստված Հ. ընթանում է 3 փուլով՝ նախապատրաստում (նախորդ ակորդում հապաղող տոնի կամ տոների առկայությունը), Հ. (ակորդի հանդես գալը նախորդ ակորդից մնացած ակորդ. հնչյունի հետ, որը նոր ակորդում դառնում է ոչ ակորդ. դիսոնանս) և լուծում (դիսոնանսող՝ հապաղող հնչյունի անցումը նոր ակորդի համապատասխան ակորդ. տոնին): Չնախապատրաստված Հ-ման մեջ հապաղող հնչյունը նախորդ ակորդում կարող է հանդես գալ մեկ այլ ձայնում կամ ընդհանրապես չլինել, այսինքն՝ տակտի ուժեղ մասերի յուրաքանչյուր ոչ ակորդ. հնչյուն, եթե անցողիկ կամ օժանդակ չէ, կարելի է դիտել որպես չնախապատրաստված Հ.: Հ. կիրառվում է նաև 2, 3, հազվադեպ՝ 4 ձայներում միաժամանակ:

ՀԱՎԱՍԱՐԱՁԱՓ ՏԵՄՊԵՐԱՑՎԱԾ ԼԱՐՎԱԾՔ, լարվածք, որտեղ օկտավան բաժանվում է 12 հավասար կիսատոների: Տվյալ լարվածքում պյութագորաս. կոմման հավասարապես բաժանված է օկտավայում ընդգրկված 12 հնչյունների միջև, որի հետևանքով 12-րդ կվինտան դեպի վեր՝ սի դիեզը, դեպի վար՝ ռե դուբլ-բեմոլը համընկնում են դո-ի հետ, համընկնում են նաև բոլոր դիատոնիկ և խրոմատիկ կիսատոները՝ էնհարմոնիկ հնչյունները (ֆա-ֆա դիեզը և ֆա-սոլ բեմոլը հավասար կիսատոներ են, քանի որ այդ լարվածքում ֆա դիեզը էնհարմոնիկորեն հավասար է սոլ բեմոլ-ին): Հ. տ. լ-ում նույնանուն ինտերվալները (օր.՝ մեծ տերցիաները կամ փոքր սեքստաները) հավասար են, միայն օկտավան է լարված մաքուր (ինչպես բնական հնչյունաշարում), մնացած ինտերվալները «տեմպերացված» են. աննշան փքցվ. կամ մծցվ. են (օր.՝ կվինտաները փքցվ. են ամբողջ տոնի 1/059463 մասով, կվարտաները՝ նույնքան մծցվ.), ըստ որում՝ տեմպերացված հնչյունները շատ քիչ են տարբերվում բնականներից (անգամ լավ լսողության դեպքում ընկալելի չեն, երաժշտ. առումով՝ միանգամայն ընդունելի): Հ. տ. լ. ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության մեջ համեմատաբար կատարյալ ու միակ լարվածքն է, որը հնարավորություններ է ընձեռել երաժշտարվ-ի զարգացման համար:

Հավասի

ՀԱՎԱՍԻ [Սարկոսյան Արմենակ Պարսամի, 06.01.1896, գ. Այազմա (այժմ՝ ՎՀ Ծալկայի շրջանում)–24.02.1976, Երևան], աշուղ, ժող. բանաստեղծ, երգիչ: Ժամանակակից աշուղ. արվ-ի դաս. ներկայացուցիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): ՀԳՄ և ՀԿՄ անդամ էր: Աշակերտել է *Թիֆլիսին*: Ստեղծագործել է 1914-ից Ախալքալաքում: Ասմունքել է, նվագել է թառ, սազ: 1946-ից ապրել է Երևանում: Իր երգերի կատարումներով շրջագայել է Վրաստանում, Ադրբեջանում, Սիսկվայում:

Հատված Հավասու «Ինչ ասեմ յարիս» երգից

Գրել է սիրային, բարոյախոս., վիպ. և հայրենասիր. թեմաներով շուրջ 3600 աշուղ. բանաստեղծություններ, 2000 քառյակ, 150 եղանակավոր երգ, երգախառն հեքիաթ-

ներ, որոնց բնորոշ են լավատեսությունն ու ոգեշնչվածությունը: Ստեղծագործություններում օգտագործել է աշուղ. դաս. տաղաչափության 40-ից ավելի (ստեղծել է դրանց տարբերակները), նաև ժող. բանաստեղծության ձևեր ու չափեր: Հ-ու մեղեդիներն ընդգծված ազգային են. ելևէջ. հատկություններով սերում են գեղջկական երգերից, ձևերով՝ հարում աշուղ. երգին: Մեղեդիական հնարքները, ջերմ հուզականությունը, ռիթմի և կառուցվածքի թարմությունն ու ընդհանուր արտահայտչականությունը բնորոշ են նրա լավագույն երգերին՝ «Կոլխոզի չորան», «Ի՞նչ ասեմ յարիս», «Զուր կերթաս», «Եղնիկի պես», «Ինչո՞ւ սիրեցիր», «Հյուսիսային արև» հեքիաթի երգերը: Հ-ու երգերից կոմպոզիտորները մշակել են ձայնի և դաշնամուրի, երգչախմբի, վոկալ քառյակի, ժող. երգի-պարի անսամբլի համար:

Լույս են տեսել նրա «Բուրմունք» (1950), «Երգեր» (1958), «Իմ քնարը» (նոտագրված, 1961), «Քառյակներ» (1966), «Հասմիկ» (1975), «Երգեր առանց նվագակցության» (1983) երգերի ժող-ները:

Գրկ. *Ա թ ա յ ա ն Ռ., Գուսան Հավասի (Կյանքը և ստեղծագործությունը), Ե., 1963: Գուսան Հավասի-100, Ե., 1996:*

Հարմոն

ՀԱՎԵՍԻ (Հովհաննիսյան Թադևոս, 1831, Գյումրի–մ. թ. անհտ), աշուղ: Ալեքսանդրապոլում աշակերտել է Մալուլին և Ղեյրաթին: Աշուղ. արվ-ը կատարելագործել է Կ. Պոլսում, Իզմիրում: Երկար ժամանակ ապրել է Էրզրումում, ապա վերադարձել է հայրենիք: Գրել է շուրջ 200 հայ. երգեր՝ ըստ բանասեր Ա. Մխիթարյանի, որն էլ դրանցից հավաքել է մի փունջ և Հ-ի կենսագրականով հրատարակել «Սոխակ Հայաստանի» երգարանում (հ. 4):

Գրկ. *Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986, էջ 30–33::*

ՀԱՐԹՈՒՆ ՕՂԼԻ [Հովհաննես, մոտ 6.03.1760, գ. Ասդաբադ (Իրանի Չհարմահալ գավառ)–12.08.1840, գ. Մամուռան (Չհարմահալ գավառ)], աշուղ: Աշակերտել է պարսկահայ աշուղ Ղուլ Հովհաննեսին (մոտ 1740–1834): Կատարելագործվելու համար շրջագայել է Էջմիածնում, Վանում, Վարագում, Աղթամարում, Մուշում և այլուր: Ծանոթ էր հայ մատենագրությանը, Արևելքի դասականների (Ֆիրդուսի, Սաադի, Հաֆեզ) ստեղծագործություններին:

Գրականագետ Ա. Երեմյանը հայտնաբերել է Հ. Օ-ու դավթարը և հրատարակել («Աշուղ Հարթուն Օղլի», Նոր Ջուղա, 1920), 1946-ին Թեհրանում «Փշրանքներ աշուղական գրականությունից» գրքում վերահրատարակվել են աշուղի 36 հայ. և 9 թուրք. երգերը, նաև «Արի դիլբար» և «Ծամերդ աբրեշում» երգերի նոտագրությունը, որոնք հարազատ են հայկ. երգարվ-ի ոճին:

Գրականագետ Հ. Սահակյանը վերահրատարակել է Հ. Օ-ու 32 երգ և տեղեկություններ նրա մասին («Հայ աշուղներ. 17–18-րդ դդ.», 1961):

ՀԱՐՄՈՆ, հ ա ր մ ո ն ի կ ա, մետաղե լեզվակներով օդհունչ ժող. երաժշտ. գործիք: Ձեռքի առաջին Հ. ստեղծել է գերմանացի վարպետ Կ. Ֆ. Լ. Բուշմանը 1822-ին: Ռուսաստանում արտադրվել է 1830–40-ական թթ-ին (Տուլա): Ռուս վարպետները ստեղծել են 2 հիմնական տիպի Հ-ներ. 1-ինում փուքսը սեղմելիս և ընդարձակելիս յուրաքանչյուր կոճակ առաջացնում է տարբեր հնչյուններ [Տուլայի, Սարատովի, Ս. Պետերբուրգի (բայանի նախօրինակը), մարիականի], 2-րդում փուքսի ընդարձակումը և սեղմումը չի փոխում հնչյունի բարձրությունը [«ռուսյանկա», «լիվենկա», Ելեցի դաշնամուր. (ակորդեոնի նախօրինակը), սիբիրյան, ազգ. Հ-ներից՝ թաթարական, կուբոս, փշինե, կոմուզ]: Ռուսաստանում միաժամանակ օգտագործել են գերմ. և վիեննա., միաշարք և երկշարք Հ-ները:

ՀԱՐՄՈՆԻԱ, ն ե ր դ ա շ ն ա կ ու թ յ ու ն, 1. երաժշտ. արտահայտչամիջոց. միավորում է ձայնակարգ. ակորդների, նաև ամբողջ. ձայնակարգ-տոնայնությունների տրամաբանված հաջորդականությունից առաջացող դինամիկան ու երանգավորությունը: Դինամիկայի աղբյուրը ակորդների տարբեր բնույթն է ձայնակարգում (կոչվում է ձայնակարգ-հարմոնիկ ֆունկցիա, տես *Ձայնակարգ*), տոնիկայի կոնսոնանս ակորդն արտահայտում է կայունություն (տոնիկային ֆունկցիա), ձայնակարգի մյուս կոնսոնանս և դիսոնանս ակորդները ձայնակարգ-հարմոնիկ ձգտողականության հիման վրա առաջացնում են անկայունություն (սուբդոմինանտ., դոմինանտ. և փոփոխ. ֆունկցիաներ) և, ըստ այդմ, հաջորդականությունը շարունակելու պահանջ:

Ակորդների օպտիմալ դարսվածքը քառաձայնն է (բխում է ձայնաբան. նախադրյալներից, նաև երգչախմբում երգչաձայների հիմնական տեսակների հարաբերությունից), հաջորդականությունը կարգավորվում է մի ակորդի տոներից

մյուսի տոներին օրինաչափ անցումներով (տես ***Զայնաչարադրություն***): Այդպիսի դեր են կատարում (բարձր մակարդակի վրա) երաժշտ. երկի գլխ. և կողմնակի (սուբդոմինանտ. և դոմինանտ.) ձայնակարգ–տոնայնությունները և դրանց հաջորդականությունը, որը կարգավորվում է մոդուլացման նորմերով:

Դինամիկա առաջացնում են նաև ոչ ակորդ. (տվյալ ակորդի հետ հնչող, բայց նրա նորմատիվ կազմի մեջ չմտնող) հնչյունները, ալտերացիան, սեքվենցիան, հարմոնիկ տարբերակումը, ձայնառությունը ևն: Գունեղության աղբյուրներն են ակորդների բնական երանգավորությունը (կոչվում է ֆոնիզմ, կախված է նրանց տոնային կազմից և տոների փոխդասավորվածությունից, տես ***Տոն***), ապա՝ նույն ձայնակարգ. ալտերացիան (օր.՝ «նեապոլյան» ակորդները), ոչ ակորդ. տոների առանձնահատուկ կիրառումը (օր.՝ «տրիստանյան» ակորդը՝ Ռ. Վագների «Տրիստան և Իզոլդա» օպերայի սկզբում), ակորդների և տոնայնությունների հաջորդականության յուրատեսակությունը (օր.՝ «շուբերտյան հարմոնիան», Ֆ. Լիստի և Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովի երկերում մաժոր կամ մինոր եռահնչյունների տերցիային շարքերը, որոնցից առաջացել են ամբողջատոն և տոն–կիսատոն գամմաները) ևն: Երաժշտ. երկում Հ. իր դինամիկայով ու գունեղությամբ հանդես է գալիս այլ արտահայտչամիջոցների (մեղեդի, ռիթմ, մետր ևն) հետ համատեղ, մասնակցում նաև ձևակառուցմանը:

Պրոֆեսիոնալ ստեղծագործությանը համընթաց՝ Հ. նույնպես անցել է երկարատև ու նշանակալի զարգացման ուղի: Յ. Ս. Բախի, Գ. Ֆ. Հենդելի և Վիեննայի դասականների երկերում կատարյալ է մաժոր և մինոր ձայնակարգերի արտահայտչական հնարավորությունները լայնորեն երևան բերող, խրոմատիզմն ու մոդուլացումը լիարժեք օգտագործող, ֆունկցիոնալ առումով՝ հստակ և ռացիոնալ կազմակերպված Հ. (XVIII դ., XIX դ–ի 1–ին քառորդ): Հետագա զարգացումը կապվել է մաժոր–մինոր համակարգի, ալտերացիայի հարստացման և ոչ ակորդ. հնչյունների առավել ազատ օգտագործման միջոցով Հ–ի դինամիկ. ու գունային ֆունկցիաների մեծացման (XIX դ., ռոմանտիկներ), ապա՝ Հ–ի բոլոր տարրերը գերազանցապես գունային նպատակներին ենթարկելու (XIX դ–ի վերջ, XX դ–ի սկիզբ, իմպրեսիոնիստներ) հետ: Հ–ի յուրաքանչյուր նոր ոճ առաջանում է ինի ընդերքում, որոնք սովորաբար գոյակցում են: Ժող. ոճ օգտագործող մշակույթներում (ռուս., նորվեգ., հունգ. ևն) դաս. Հ. որոշ չափով արտացոլել է նաև ժող. երաժշտության ձայնակարգ. առանձնահատկությունները: Խոշոր կոմպոզիտորների Հ–ին հատուկ են նաև անհատ. ոճ. հատկանիշներ: XX դ–ի մոդեռնիստ. երաժշտության մեջ տեղի է ունեցել դիսոնանսի նոր մեկնաբանում (դիսոնանսը՝ որպես գեղագիտորեն ինքնակա կատեգորիա՝ անկախ կոնսոնանսից), ձայնակարգի ապակենտրոնացում, գոյացել են «հավասարազոր» 12–աստիճանանոց համակարգեր (տես ***Դոդեկաֆոնիա***), բարդ հնչյունային զուգորդումներ, որոնց հետևանքով փոխվել է Հ–ի բուն արտահայտության կերպը: Միաժամանակ առաջացել են դաս. ոճերի, մասնավորապես՝ միջնադար. ձայնակարգերի «մոդալ» Հ–ի տարրերի նորովի օգտագործման երևույթներ (***նեոկլասիցիզմ***):

Խորհրդ. շրջանի երաժշտ. ստեղծագործությանը ընորոշ են արտահայտչամիջոցների (նաև Հ–ի շարունակական թարմացումը), ժամանակակից Հ–ի համընդհանուր նվաճումների օգտագործմամբ ռեալիստ. գեղ. կերպարներ ստեղծելը ևն:

Հայ դաս. Հ. ձևավորվել ու զարգացել է մաժոր–մինոր համակարգի Հ–ի և հայկ. ժող. երաժշտության ձայնակարգերի առանձնահատկությունների օրգան. համադրմամբ և այդ ձայնակարգերի հատկանիշներին համապատասխան հարմոնիկ ինքնատիպությամբ (օր.՝ ժող. երաժշտության ձայնակարգ. հատկանիշներ առաջացնող յուրատեսակ ակորդներն ու հաջորդականությունները Կոմիտասի երկերում): Անհատ. գրելաձևով արտահայտվող ազգ. հատկանիշներ առկա են նաև խորհրդ. շրջանի կոմպոզիտորների Հ–ում:

2. Ուսմունք երաժշտության տեսության մեջ՝ եռահնչյունների հիմնական տեսակի՝ ակորդների, նրանց կառուցվածքի, ֆունկցիոնալ փոխհարաբերությունների, որևէ ձայնակարգում գրված դիրքի, միացման կանոնների ևնի մասին:

Գրկ. Ա թ ա յ ա ն Ռ., Ժողովրդական երգի ներդաշնակության սկզբունքը Կոմիտասի մոտ, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1949, № 9: Կոմիտասական (հոդվածների ժողովածու), հ. 1, Ե., 1969: Փ ա շ ի ն յ ա ն Է., Հարմոնիայի դասագիրք

(Ներդաշնակագիտություն), Ե., 1987: Հարմոնիայի ինդիրների ժողովածու (կազմ.՝ Ա. Էլբակյան Ս.), Ե., 2013: Шевалье М., История учений о гармонии, пер. с франц., М., 1932; Арутюнов Д., О роли гармонии и фактуры в музыке А. Хачатуряна, в сб. Теоретические проблемы музыки XX века, вып. 1, М., 1967; Мазель Л., Проблемы классической гармонии, М., 1972; Ханбекян А., О диссонирующих аккордах у А. Хачатуряна, в сб. Музыка народов Азии и Африки, в. 2, М., 1973; Скребков С., Художественные принципы музыкальных стилей, М., 1973; Курт Э., Романтическая гармония..., М., 1975; Schönberg A., Harmonielehre, Wien, 1911; Structural Functions of Harmony, New York, London, 1969.

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՀԱՐՄՈՆԻԶԱՅԻՆ, ներդաշնակում, *հարմոնիայի* միջոցներով մեղեդու բազմաձայնումը, որի շնորհիվ այն ձեռք է բերում լրացուցիչ արտահայտչություն, լիահնչություն, դինամիկ. լարվածություն և նոր երանգ: Որպես կանոն՝ անդրադարձնում է մեղեդու ձայնակարգ-ելևէջ. հատկանիշները, նաև ներդաշնակող հեղինակի անհատ. ոճը: Ժող. եղանակների Հ. նպաստել է ազգ. երաժշտ. ոճերի զարգացմանը:

Ըստ Ռոբերտ Աթայանի



Ալեքսանդր Հարությունյան

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ, ժող. ինագույն ավանդ. ծեսի՝ հարսանիքի որոշ դրվագների համար նախատեսված երգերի ու պարերգերի շարք: Տարբեր ժողովուրդների Հ. ե-ի առանձնահատկությունները պայմանավորված են պատմ. կենցաղով ու սովորույթներով: Ըստ Կոմիտասի՝ հայկ. Հ. ե-ի շարքն ընդգրկում է 100 միավոր: Փեսային ու հարսին, նրանց ծնողներին, ընկերներին ու ընկերուհիներին, ծեսի մյուս մասնակիցներին, հանդիսականներին և ուր. վերաբերող երգերի տեքստերը բազմազան են (օր.՝ «հարսանեկան ծառի» օրհնումը): Առավել հետաքրքրական են *ծաղկոց* երգերը, որոնք երգում են հարսնացուի ընկերուհիները՝ պսակի նախընթաց գիշերվանից մինչև լույս՝ նրան զուգելու, զարդարելու ժամանակ: Հ. ե-ի հուզ. տրամադրությունների շրջանակն ընդարձակ է՝ ջերմեռանդ աղոթքից ու ծանրաբարո բարեմաղթանքներից մինչև սրամիտ կատակ, խորունկ վշտից (հարսի՝ հայր. տնից բաժանվելու կապակցությամբ) մինչև ուրախություն ու խրախճանք: Այդ երգերը միմյանցից տարբերվում են նաև կառուցվածք. միջոցներով և կատարող. տեխնիկայով. ընդգրկում են ասերգ. և եղանակավոր մեներգեր, մեներգչի և խմբի հարցուպատասխանի զուգերգեր ևն: Առանձնանում են հարսին գովերգող ու մխիթարող «Վարդ, զքե չըմ սիրի» և նրա հրաժեշտի՝ «Դուն հալալ մերիկ», փեսային ու նրա ծնողներին վերաբերող «Մեր թագվորն էր խաչ» և «Գացեք բերեք թագվորամեր» երգերը, հումորով՝ «Էն դիզան, տեսեք էն որն ի» երգ-հանելուկը ևն: Հարսանիքի երաժշտությունն ընդգրկում է նաև նրա որոշ դրվագներին վերաբերող պարերգեր և գործիք. եղանակներ (օր.՝ «Կալոսի պոկեն» զուռնայի հանդիսավոր եղանակը): Հայկ. Հ. ե., որոնք ունեն բազմաթիվ տեղային տարբերակներ, դեռևս ամբողջ. հավաքված և գրառված չեն: Կոմիտասը Հ. ե-ից կազմել է 2 երգաշար (սյուիտ), մշակել ա կապելլա երգչախմբի համար: Տես նաև *Ժողովրդական երգ*:

Գրկ. *Կոմիտաս, Հայ գեղջուկ երգերու համառօտ ամփոփումը, ԿՊ, 1913: Նույնի, Հարսանեկան խմբերգեր և զանազան մեներգեր, Փարիզ, 1937: Նույնի, Ցօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական արվեստագործություն, Ե., 1983: Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008: Атаян Р., Армянская народная песня, М., 1965.*

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, երաժշտ. գործիքներ, որոնց հնչյուններն արտաբերվում են հարվածելով կամ հարվածին մոտ շարժումներով: Իդիոֆոնների հնչյունի աղբյուրն ամուր իրանն է, մեմբրանոֆոններինը՝ մեմ-

Հարվածային երաժշտական գործիքներ

բրանը, խորդոֆոններինը՝ լարերը: Հ. ե. գ. տարբերվում են որոշակի (լիտավրներ, զանգակներ, քսիլոֆոններ ևն) և անորոշ (թմբուկներ, դափեր, եռանկյուններ, կաստանիետներ ևն) բարձրություններով:

Գրկ. *Քոչարյան Ա., Երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008:*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ալեքսանդր Գրիգորի (ծ. 23.09.1920, Երևան–28.03.2012, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1956), ՀՀ (1962), ԽՍՀՄ (1970) ժող. արտիստ: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի (Ս. Բարխուդարյանի և Վ. Տալյանի դասարաններ) և դաշնամուրի բաժինները (Օ. Բաբայանի դասարան, 1941), 1946–48-ին կատարելագործվել է Մոսկվայի հայ մշակույթի տան ստուդիայում (դասատուներ՝

Գ. Լիտինսկի, Ն. Պեյկո, Վ. Յակերման): 1954–91-ին՝ Հայֆիլհարմոնիայի գեղ. ղեկ.: 1970–2008-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1977-ից):

Հեղինակ է տարբեր ժանրերի երգերի՝ «Հայրենիք» կանտատի (խոսք՝ Ա. Գրաշու և Սարմենի, 1948, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1949), որն առանձնանում է ազգ. դաս. երաժշտության, գեղջկական և գուսան. երգերի հետ սերտ կապով, մեղեդիական լայն շնչով, «Տոնական նախերգանքի» (1949), «Շեփորի կոնցերտի» (1950), «Հայկական ռապսոդիայի»՝ 2 դաշնամուրի համար (Առնո *Բաբաջանյանի* հետ, 1950): Հայկ. սիմֆոնիզմի զարգացման մեջ կարևոր նշանակություն է ունեցել դրամատիզմով հագեցած կոթող. սիմֆոնիան (1957), որտեղ միահյուսված են ազգ. սիմֆ. երաժշտության ավանդույթներն ու դաս. սիմֆոնիզմի առանձնահատկությունները: «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆ. պոեմը (1961) խոշոր ներդրում է ժամանակակից երաժշտության մեջ: «Սայաթ-Նովա» օպերայում (1966–68, բեմ.՝ 1969, Երևան, 1973, Բաքու, ՀՀ Պետ մրց.՝ 1973) Հ. ստեղծագործաբար օգտագործել է մեծ աշուղի մի քանի երգեր: Սիմֆոնիետում (1966) նոր դաս. սկզբունքներն արտահայտել է ինքնատիպ միջոցներով:

Փոքր կտավի երկերից են «Հայրենիքիս հետ» (խոսք՝ Հ. Թումանյանի, 1969) երգ-կանտատը, «Հուշարձան մայրիկիս» (խոսք՝ Հ. Շիրազի, 1969) վոկալ շարքը՝ ձայնի և դաշնամուրի համար, դաշնամուր. մանրանվագները: Ուշագրավ են նաև «Թեմա և վարիացիաներ շեփորի և նվագախմբի համար» (1974), թավջութակի և նվագախմբի պոեմը (1974), ալտի և դաշնամուրի (1983), ջութակի և դաշնամուրի, դաշնամուրի (երկուսն էլ՝ 1985) սոնատները, ջութակի և նվագախմբի ռապսոդիան (1990), տրոմբոնի և նվագախմբի (1991), տուբայի և նվագախմբի (1992) կոնցերտները, տրիոյի (կլառնետ, ջութակ, դաշնամուր) սյուիտները (1992, 1998) և այլ գործեր: Գրել է նաև կինոերաժշտություն («Սիրտն է երգում», 1956, «Իմ ընկերոջ մասին», 1958, «Լուսաբացից մեկ ժամ առաջ», 1973, «Նահապետը», 1977, գեղ., բոլորը՝ Հայֆիլմ):

Հ-ի գործերը կատարվել են Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում և այլուր:

Երևանի պատվավոր քաղաքացի (1987):

ՀՀ Պետ. (1970, 1986), Ա. Խաչատրյանի անվ. (1986, Մոսկվա) մրց-ներ, Ա. Ալեքսանդրովի անվ. ոսկե (1977, Մոսկվա), ՀՀ «Մովսես Խորենացի» (1998) մեդալներ, «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2001), «Պատվո» (2011), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2004) շքանշաններ են:

Հատված Ա. Հարությունյանի «Շեփորի կոնցերտից» (փոխադրումը՝ հեղինակի)

Երկ. *Հուշեր (կազմ. և խմբ.՝ Ա. Բուդաղյան), Ե., 2000:*

Գրկ. *Կոպտև Ս., Ալեքսանդր Հարությունյան, Ե., 1962: Еолян И., Александр Арутюнян, М., 1962; Кокжаев М., Александр Арутюнян: Особенности композиторского стиля, М., 2006; Его же, Полифония в музыке Александра Арутюняна, Е., 2012; Едигарян В., Фортепианное творчество Александра Арутюняна, Е., 2011.*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Անժելա Երվանդի (18.06.1926, Գրոզնի–05.09.2004, Երևան), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): Ստեփան *Զորյանի* կինը: ՀՀ ժող. արտիստ (1977): Ավարտել է Բաքվի երաժշտ. ուսումնարանը, ԵՊԿ (1956, Թ. Շահնազարյանի դասարան) և ասպիրանտուրան (1967, ղեկ.՝ Տ. Սազանդարյան):

Անժելա Հարությունյանը Միքայելայի դերում (Ժ. Բիզեի «Կարմեն»)

Էրիկ Հարությունյան

1971–ից դասավանդել է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 1991–ից): 1958–88–ին՝ ԵՕԲԹ մենակատարուհի. դերերգերից են՝ Դեզդեմոնա (Ջ. Վերդիի «Օթելլո»), Դոննա Աննա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Մարֆա (Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Տոսկա (Ջ. Պուչչինիի «Տոսկա»), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Մագդա Սորել (Ջ. Կ. Մենոտտիի «Հյուպատոսը»), Վեներա (Ռ. Վագների «Տանհոյզեր»), Միքայելա (Ժ. Բիզեի «Կարմեն»), Իոլանտա (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Շուշան (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ») ևն: Համերգ. երկացանկում՝ դաս. և ժամանակակից ստեղծագործություններ (Ֆ. Շուբերտ, Ռ. Շուման, Մ. Պ. Մուսորգսկի, Վ. Ա. Մոցարտ, Է. Գրիգ, Ա. Կ. Գլազունով, Ռ. Մելիքյան, Կոմիտաս, Ա. Սպենդիարյան և ուր.): Հյուրախաղերով շրջագայել է Լեհաստանում, Գերմանիայում, Հունգարիայում, Իսլանդիայում, Կանադայում, ԱՄՆ–ում, Ալժիրում:

Մ. Պ. Մուսորգսկու անվ. համամիութ. մրցույթի 2–րդ մրց. (1964, Մոսկվա):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Աննա Պետրոսի (ծ. 05.07.1968, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2009): Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. (դաշնամուր, 1984), Պ. Ի. Չայկովսկու անվ. (տեսություն, 1987) երաժշտ. դպրոցները, ԵՊԿ երաժշտագիտության և կոմպոզիցիայի (1992, Ս. Լուսիկյանի դասարան) բաժինները: 1993–ից դասավանդում է Ա. Սպենդիարյանի անվ., 2004–ից՝ Սայաթ–Նովայի անվ. երաժշտ. դպրոցներում, 2003–ից՝ ՀՊՄՀ–ում (2012–ից՝ դոցենտ, ամբիոնի վարիչ):

Ուսումնասիրությունները վերաբերում են նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության պատմությանը, տեսությանը, երաժշտության դասավանդման մեթոդիկային: Հեղինակ է ուսումնամեթոդ. ձեռնարկների («Սոլֆեջիո», 2010, 2013), երաժշտ. դպրոցների աշակերտների համար աշխ. տետրերի (1–7–րդ դասարաններ, 2013–17):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Էրիկ Երվանդի (09.09.1933, Թիֆլիս–14.12.2009), կոմպոզիտոր: Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիան (1957, Ս. Բարխուդարյանի, Ա. Բալանչիվաձեի դասարաններ): 1957–ից դասավանդել է ԵՊԿ–ում:

Գրել է «Հեքիաթ մեծերի համար», «Մի կաթիլ մեղրը» (ըստ Հ. Թումանյանի, բեմ.՝ 1970) օպերաները, 5 սիմֆոնիա, «Հայրենիք» օրատորիան (խոսք՝ Գ. Բանդուրյանի), կոնցերտ–պոեմ՝ ջութակի և նվագախմբի, կոնցերտ–ֆանտազիա՝ դաշնամուրի և նվագախմբի, շեփորի և նվագախմբի, գալարափողի և նվագախմբի, գործեր՝ էստրադ–սիմֆ. նվագախմբի համար, ռոմանսներ, գործիք., խմբերգ. երկեր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լիաննա Սամվելի [28.07.1975, ք. Մեծամոր (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)], երգչուհի (սոպրանո): Ավարտել է Մեծամորի երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1989), ԵՊԿ երգեցողության (1996, Ս. Դանիելյանի դասարան) բաժինները, Փարիզի «Բաստիլ» օպերայի երիտասարդ երգիչների վերապատրաստման ակադ–ը (2002): Վարպետության դասեր է առել նշանավոր երգիչներ Ռ. Սկոտոյից (սոպրանո), Ք. Լյուդվիգից (մեցցո սոպրանո), Լ. Ալվանից (տենոր), Ե. Ե. Նեստերենկոյից (բաս): 2002–ից հանդես է եկել

Լիաննա Հարությունյանը Վիոլետտայի դերում (Ջ. Վերդիի «Տրավիատա»)

Լոնդոնի «Քովենթ Գարդեն», Բիլբաոյի «Աբաո–Օլբե», Նեապոլի «Սան Կառլո», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Սան Ֆրանցիսկոյի, Մադրիդի թագավոր., Մելբուռնի, Բրյուսելի, Յուրիխի, Ֆրանկֆուրտի և այլ օպեր. թատրոններում. դերերգերից են՝ Դեզդեմոնա, Լեոնորա, Վիոլետտա (Ջ. Վերդիի «Օթելլո», «Տրուբադուր», «Տրավիատա»), Չիո–Չիո սան, Միմի, Տոսկա (Ջ. Պուչչինիի «Չիո–Չիո սան», «Բոհեմ», «Տոսկա»), Իոլանտա (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա»), Ադրիանա (Ֆ. Չիլեայի «Ադրիանա Լեկուվրյոր»), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ») ևն: Կատարել է նաև Ջ. Վերդիի «Ռեքվիեմ»–ի և Ա. Դվորժակի «Ստաբատ Մատեր»–ի սոպրանոյի երգամասերը:

Ջ. Արագալի անվ. (Իսպանիա), Վ. Բելլինիի անվ. (Իտալիա), «Վերդիական

ձայներ» (Բուսետտո՝ Իտալիա) և այլ մրցույթների դափնեկիր:

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Արտենյան) Հակոբ Պողոսի [11(23).12.1888, գ. Խաստուր (Արմ. Հայաստանի Ալաշկերտի գավառակ)–1943], փիլիսոփա, երաժշտագետ, մանկավարժ, գրականագետ, լեզվաբան: Փիլ. գիտ. դ-ր (1919): Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1901–10-ին), աշակերտել է ***Կոմիտասին***: 1912–19-ին Բեռլինի, Լայպցիգի, Յուրիխի համալսարաններում սովորել է փիլիսոփայություն, գրականագիտություն, երաժշտության տեսություն: 1927–40-ին դասավանդել է ԵՊՀ-ում, 1928–32-ին, միաժամանակ՝ ՀՊՄԻ-ում: 1935–37-ին՝ Արմֆանի արվ-ի բաժնի վարիչ: Հեղինակ է «Կոմիտասի գեղարվեստական ուրվանկարը» («Խորհրդային գրականություն», 1939, № 8–9), «Մանյակ» (ժող. երգերի ժող., 1958) և այլ աշխ-ների, երաժշտության ու լեզվի դասավանդման մեթոդիկայի մասին հոդվածների: Թարգմանել է Հեգելի «Դասախոսություններ էսթետիկայի մասին» գիրքը (1939), Գյոթեի բանաստեղծությունների ընտրանին (1946) ևն: Անհիմն բռնադատվել է (1941), մահացել չբացահայտված հանգամանքներում:

Գրկ. *Մահակյան Ս., Հակոբ Հարությունյան, Ե., 1985: Ղուկասյան Վ., Հակոբ Հարությունյան, Ե., 1999:*

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հասմիկ Հայկի (ծ. 12.04.1963, Լենինական), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2005): Ավարտել է Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանը (1982), ԵՊԿ (1987): 1987–2004-ին՝ Գյումրիի «Կումայրի» պատմաճարտ. արգելոց-թանգարանի գիտաշխատող, 1997-ից՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտ. հետազոտությունների կենտրոնի ազգագրության բաժնի աշխատակից, 2005-ից՝ կենտրոնի գիտ. քարտուղար: 1990–2004-ին դասավանդել է Գյումրիի Ն. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցում (երաժշտության տեսության բաժնի վարիչ), 1997–2013-ին՝ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում, 2019-ից՝ տնօրեն (ժ. պ.), 2012-ից, միաժամանակ՝ Հառիճավանքի Թորքանճյան ընծայարանում:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ հոգևոր երաժշտության պատմությանն ու տեսությանը (մասնավորապես՝ հայ միջնադար. երաժշտության աղբյուրագիտությանը), հայ էթնոերաժշտագիտությանը (Շիրակ գավառի ժող., ժող. պրոֆեսիոնալ արվ-ներին):

Երկ. *Երաժշտությունը V–XV դդ. հայ մատենագրության մեջ, Ե., 2010:*

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարգարիտ Գաբրիելի (08.10.1921, Երևան–07.02.1997, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): ԽՍՀՄ ԿՄ, ՀԿՄ անդամ: Ավարտել է ԵՊԿ (1944): Նույն թվականից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1981-ից, ամբիոնի վարիչ՝ 1962–74 և 1982–96-ին):

Մշակել է հայ երաժշտության պատմության դասընթացը, հեղինակ է հայ երաժշտության պատմության առաջին ուս. ձեռնարկի, կազմել է հայ երաժշտության քրեստոմատիայի բաժիններից մեկը: Աշխ-ները վերաբերում են երաժշտության պատմությանը: Հոդվածներ է գրել հայկ., ուկր. հանրագիտարանների համար:

Հեղինակ է «Կոմիտաս» (1969), «Արամ Խաչատրյան» (1981), «Արամ Խաչատրյանի նամակները» (ռուս., հ. 1, 2, 1983, կազմ. և խմբ.՝ Գ. Հարությունյանի և Զ. Տեր-Ղազարյանի հետ), «Հայկանուշ Դանիելյան» (ռուս., 1988), «Արամ Խաչատրյան. նամակներ» (կազմ. և խմբ.՝ Գ. Հարությունյանի և Զ. Տեր-Ղազարյանի հետ, 1995), «Հայ երաժշտության պատմություն» (Ա. Բարսամյանի հետ, 1996) աշխ-ների, նաև հեռուստա- և ռադիոհաղորդումների:

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարիաննա Հարությունի (12.12.1923, Թիֆլիս–06.07.2012, Երևան), դաշնակահարուհի, երգչուհի, մանկավարժ: Հայկանուշ ***Դանիելյանի*** դուստրը: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1967): Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է Թիֆլիսում: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1948) և մեներգեցողության (1953) բաժինները: 1948-ից՝ ԵՊԿ կոնցերտմայստեր, 1952–59-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի (Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Ռոզինա՝ Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ» ևն): Կատարել է Ա. Խաչատրյանի դաշնամուր. կոնցերտները: 1963-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1985-ից): Հ-ի սաներից են Մելանյա Աբովյանը, Անահիտ Ներսիսյանը, Ջուլիետա Գալստյան-Էվերտը, Օլգա Գաբայանը, Նարինե Օջախյանը և ուր.: Համագործակցել է Զ. Դոլուխանովայի, Մ. Կասրաշվիլու (Ռուսաստան), Մ. Բարիքյանի (Անգլիա),

Հասմիկ Հարությունյան

Մարգարիտ Հարությունյան

Մարիաննա Հարությունյանը Ռոզինայի դերում (Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»)



Յուրի Հարությունյան

Վաղարշակ Հարությունյան

Վալերի Հարությունովը Ռայմոնդի դերում (Գ. Դոնիցետիի «Լյուչիա դի Լամերմուր»)

Տ. Ժամկոչյանի (Իտալիա), Լ. Չուգասզյանի (ԱՄՆ), Դ. Վարժապետյանի (Կանադա), Լ. Զաքարյանի, Մ. Աբրահամյանի, Գ. Գալաչյանի, Վ. Միրաքյանի և ուր. հետ: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Իրաքում, Սիրիայում և այլուր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Յուրի Արշակի [ծ. 25.03.1944, Կիրովաբադ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)], կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊԿ (1971, Է. Միրզոյանի դասարան): 1967-ից՝ Հայֆիլմի կոմպոզիտոր-ձևավորող, երաժշտ. գլխ. խմբ., 1997-ից՝ ՀԿՄ «Բրևիս» ձայնագրման կենտրոնի ղեկ.:

Գրել է սիմֆոնիա (1984), «Արաբեսկներ» (սիմֆ. պատկերներ), «Գովք խաղողին, գինուն և գեղեցիկ դպրությանը» կանտատը (Ե. Չարենցի խոսքերով, 1970), գալարափողի կոնցերտ (2000), լար. կվարտետներ (1968, 1970), վոկալ շարքեր՝ «3 իրիկնային երգ» (Լի Բոյի, Վ. Տերյանի, Մ. Մեծարենցի խոսքերով), 3 խմբերգ (Ա. Իսահակյանի խոսքերով), «Տողեր Դավթի սաղմոսներից»՝ ասմունքողի և հարված. գործիքների անսամբլի, երաժշտություն՝ թատրոնի և կինոյի («Մարդն Օլիմպոսից», 1974, «Սիրամարգի ճիչը», 1982, «Որտեղ էիր, մարդ Աստծո», 1992, ևն) համար:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վաղարշակ Վիդոկի (ծ. 26.06.1961, Երևան), դաշնակահար, մանկավարժ: ԵՊԿ պրոֆ. (2011): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1979), ԵՊԿ (1984) դաշնամուրի բաժինները և ասպիրանտուրան (1991, երեքն էլ՝ ղեկ.՝ Ս. Բարսեղյան): Հանդես է եկել որպես մենակատար, նաև սիմֆ. նվագախմբերի ու անսամբլների հետ: 1981–93-ին՝ ԵՕԲԹ նվագախմբի մենակատար, 1995–96-ին՝ ՀՀ ռադիոյի երաժշտ. ծրագրերի տնօրեն, 1993–2011-ին՝ Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. քոլեջի դաշնամուրի բաժնի վարիչ: 1987-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոռեկտոր՝ 2011-ից): 2000-ից վարպետության դասեր է վարում Փարիզի, Սոնրեալի, Բեյրութի («Բարսեղ Կանաչյան»), Սալոնիկի կոնսերվատորիաներում և այլուր: Մենահամերգներով շրջագայել է Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Լվովում, Ալմաթիում, Գրոզնիում, Աթենքում, Փարիզում, Սոնրեալում, Վիսբադենում, Բեյրութում և այլուր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ Վալերի Ապրեսի (ծ. 08.10.1941, Բաքու–22.04.2017, Երևան), երգիչ (բաս), մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1982): Ավարտել է Բաքվի երաժշտ. ուսումնարանը (1969), ԵՊԿ (1974, Թ. Շահնազարյանի դասարան): 1969-ին՝ Բաքվի օպեր. թատրոնի մեներգիչ, 1969–2009-ին՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի երգչախմբի մենակատար: 1974–2017-ին դասավանդել է Երևանի Մանկ. ձայնի պահպանման դպրոցում, 1992-ից՝ Ղ. Սարյանի անվ. արվ-ի դպրոցում (2017-ից վոկալ բաժինը՝ Հ-ի անվ.), 1974-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1992-ից): Հ-ի մի շարք սաներ (Ա. Քոչարյան, Ս. Աղամալյան, Գ. Հարությունյան, Ա. Միքայելյան, Գ. Բավեյան, Ա. Կուզիկյան, Գ. Սալնազարյան և ուր) միջազգ. և հանրապետ. մրցույթների դափնեկիրներ են:

1972–99-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ. Բարտոլո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Կալիստեն, Ռայմոնդ (Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս», «Լյուչիա դի Լամերմուր»), Օրոֆեզ (Վ. Բելլինիի «Նորմա»), Եգիպտոսի թագավոր, Ինկվիզիտոր, Ֆեռանդո, Զաքարիա (Ջ. Վերդիի «Աիդա», «Դոն Կառլոս», «Տրուբադուր», «Նաբուկկո»), Մեֆիստոֆել (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Ռենե թագավոր (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա»), Ներսես (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Նադիր շահ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Կոմս Բեկենդորֆ (Է. Հովհաննիսյանի «Ճանապարհորդություն դեպի Արզրում», ըստ Ա. Ս. Պուշկինի) ևն: Մեներգել է Վ. Ա. Մոցարտի, Ջ. Վերդիի, Գ. Ֆորեի ռեքվիեմներում, Ջ. Ռոսսինիի «Ստաբատ Մատեր»-ում, Հ. Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիայում: Ունի ֆոնդ. ձայնագրություններ ՀՀ ռադիոյում:

Համերգներով շրջագայել է Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իսպանիայում, Ռուսաստանում, Մոլդովայում, ԱՄՆ-ում և այլուր:

Երիտասարդ կատարողների այսրկովկաս. մրցույթի 1-ին մրց. (1972, Բաքու), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2011), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Սեսրոպ» շքանշան (2011):

ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ Հասմիկ Գաբրիելի (ծ. 15.07.1957, Երևան), երգչուհի (սոպրանո), դաշնակահարուհի: ՀՀ վաստ. արտիստ (2003): Ելենա ***Միքայելյանի*** դուստրը: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1981), մեներգեցողության (1983) բաժին-

ները: 1985-ից դասավանդում է նույն կոնսերվատորիայում: Սիմֆ. նվագախմբում հանդես է եկել որպես դաշնակահարուհի. երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Պ. Ի. Չայկովսկու, Ա. Խաչատրյանի և ուր. ստեղծագործություններից: 1983-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Հնչեղ և նրբերանգներով հարուստ ձայնը Հ-ին հնարավորություն է ընձեռել կատարելու բազմաբնույթ դերերգեր՝ Դեզդեմոնա, Վիոլետտա (Ջ. Վերդիի «Օթելլո», «Տրավիատա»), Միմի, Տոսկա (Ջ. Պուչչինիի «Բոհեմ», «Տոսկա»), Պաոլինա (Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս»), Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Փառանձեմ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ») ևն:

Միջազգ. մրցույթների (Մեծ մրց., 1989, Բրազիլիա, Վ. Բելլինիի անվ. 2-րդ մրց., 1990, Իտալիա, Լ. Տոդիի անվ. 1-ին մրց., 1991, Պորտուգալիա) դափնեկիր:

ՀԵՔԵՔՅԱՆ Տիգրան Արտյոմի (ծ. 17.08.1959, Երևան), խմբավար, մանկավարժ: ՀՀ վաստ. մանկավարժ (2010): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցը, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի խմբավարության բաժինը (1982), ԵՊԿ (1984) և ասպիրանտուրան (1987): 1985-ից դասավանդում է նույն կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1999-ից), 2003-ից՝ Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի տնօրեն: Հիմնադրել և ղեկավարել է Ա. Սպենդիարյանի անվ. դպրոցի (1982–88), Երիտասարդ. կազմակերպությունների կոմիտեի (1986–88), Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության կամեր. (1984–2002, նաև գլխ. դիրիժոր), «Հայաստանի փոքրիկ երգիչներ» (1992-ից, նաև գլխ. դիրիժոր) երգչախմբերը: 1993-ին հիմնադրել է «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգ. ընկերակցությունը (նաև նախագահ): Արտերկրում վարել է վարպետության դասեր, մասնակցել միջազգ. մրցույթների՝ որպես հանձնախմբի անդամ և խմբավար, ելույթներ ունեցել երգչախմբերի հետ: Համերգներով շրջագայել է ՌԴ-ում, Մերձբալթյան երկրներում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Դանիայում, Իսրայելում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Չինաստանում և այլուր:

Բնական գիտ-ների եվրոպ. (Հանովեր), Բնության և հաս-յան մասին գիտ-ների միջազգ. ակադ-ների ակադ., Խմբերգ. արվ-ի համաշխ. (1990-ից), «Եվրոպա կանտատ» եվրոպ. երգչախմբերի (1991-ից), Մանկ. կատարող. արվ-ի (1999-ից) միջազգ., Մանկ. և երիտասարդ. երգչախմբերի եվրոպ. (2001-ից) ֆեդերացիանեի անդամ: «Աշտարակ-93», «Երևան-96», «Երգող Հայաստան», «Միանանք երգով», «Երգի միասնություն» և այլ միջազգ. ու հանրապետ. մրցույթների, փառատոների հիմնադիր-ղեկ.: Հրատարակել է «Բարսեղ Կանաչյանի ստեղծագործություններիի լիակատար ժողովածուն», թողարկել «V–XX դարերի հոգևոր երաժշտություն», «Եղիցի լույս» ժող-ը (3 խտասալիկ), «Ֆուրուսատո» (ԱՄՆ, 2012), «Հեքիաթային 20 տարի» (ԱՄՆ, 2013), «Բենջամին Բրիտտեն-խմբերգեր մանկական երգչախմբի համար» (Շվեյցարիա, 2016) և «Արիգատո» (Ճապոնիա, 2017) խտասկավառակները:

Եվրամիության երգչախմբերի կազմակերպության «Եվրոպայի մշակույթի դեսպան» պատվավոր տիտղոս (2001): Երգչախմբերի միջազգ. մրցույթների (1991, Արնհեմ՝ Հոլանդիա՝ 3-րդ մրց., 1992, Տակարակա, Ճապոնիա՝ մեդալ և Գլխ. մրց., 1995, Սան Ֆրանցիսկո՝ ոսկե մեդալ) դափնեկիր, ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), ՀՀ ԿԳՆ ոսկե (2010) մեդալներ:

ՀԵՔԻՄԲԱՇՅԱՆ Ալիսա Արամի (ծ. 14.01.1943, Թավրիզ), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո), ռեժ.: ՀՀ վաստ. արտիստ (2007): Դոցենտ (2007):

Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը, ԵՊԿ մեներգեցողության բաժինը (1970, Ն. Գուլաբյանի դասարան), ԵԹԱԿԻ ռեժ. ֆակ-ը (2000): 1974-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի, 1992-ից՝ ռեժ.: Դերերգերից են՝ Անուշ, Շուշան (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ»), Օլիմպիա, Կարինե (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», «Լեբլեբիջի»), Մարո (Ջ. Փալիաշվիլու «Դահիճ»), Ցերլինա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Զիլդա, Վիոլետտա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա»), Մյուզետտա (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Բրիգիտա (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա»), Ֆրասկիտա (Ժ. Բիզեի «Կարմեն»), Նատալյա, Սասնա հարս (Է. Հովհաննիսյանի «Ճանապարհորդություն դեպի Արզրում», «Սասունցի Դավիթ»): Հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղագործությունների առաջին կատարողն է:

Հասմիկ Հացագործյանը Դեզդեմոնայի դերում (Ջ. Վերդիի «Օթելլո»)

Տիգրան Հեքեքյան

Ալիսա Հեքիմբաշյանը Մարոյի դերում (Ջ. Փալիաշվիլու «Դահիճ»)

Համերգ. երգացանկում՝ Կոմիտասի, Տ. Մանսուրյանի, Է. Միրզոյանի, Ա. Հարությունյանի, Վ. Բաբայանի, Գ. Չթչյանի և ուր. ստեղծագործություններից:

1974–2007-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1997-ից՝ ԵՊԿ-ում: Հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ-ում և արտերկրում:

Երիտասարդ կատարողների այսրկովկաս. մրցույթի (1969), ՀԼԿԵՄ (1971) մրց-ներ:

ՀԵՔԻՄՅԱՆ Ալեքսեյ Գուրգենի (10.05.1927, Բաքու–24.04.1982, Մոսկվա, թաղված է Երևանում), միլիցիայի գեն-մայոր, երգերի հեղինակ: Դաղստանի (1973) և ՀԽՍՀ (1981) արվ. վաստ. գործիչ: Ավարտել է ԽՍՀՄ ՆԳՆ բարձրագույն դպրոցը (1955): 1970–73-ին՝ Մոսկվայի մարզ. խորհրդի գործկոմի ՆԳ վարչության պետի տեղակալ:

Ալեքսեյ Հեքիմյան

Գրել է ժող-քաղաք. երգեր. առավել տարածված են՝ «Ինչու», «Բարի արագիլ», «Երգիր ինձ համար», «Ղարաբաղի եղնիկ», «Իմ Հայաստան», «Ղարաբաղ», «Գարուն է գալիս»:

Երևանում Հ-ի անունով կոչվել է երաժշտ. դպրոց:

Երկ. *Կռունկ, բարով դառնաս. 50 երգ դաշնամուրի նվագակցությամբ, Ե., 1979: Իմ Ղարաբաղ: Երգեր դաշնամուրի նվագակցությամբ, Ե., 1990: Солнечный дождь, М., 1982. Բարի արագիլ: Երգեր դաշնամուրի նվագակցությամբ, Ե., 1973:*

ՀՅՈՒՄՆՈՒՆՑ Արմեն Լեոնիդի (ծ. 28.12.1966, Երևան), սաքսոֆոնահար, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի, ԵՊԿ սաքսոֆոնի բաժինները: 1987-ից դասավանդել է Երևանի երաժշտ. դպրոցներում, էստրադ. և ջազ. արվ-ի պետ. քոլեջում, 2004–06-ին՝ ԵՊԿ-ում: 1988-ից՝ Ա. Քարթալյանի ջազ. քառյակի, 1988-ից՝ Հայաստանի պետ. ջազ. (1997-ից՝ երաժշտ. տնօրեն, 2010-ից՝ գեղ. ղեկ. և դիրիժոր), 1990-ից՝ Հեռուստատեսության և ռադիոյի սիմֆ. ջազ. նվագախմբերի սաքսոֆոնահար: Հիմնադրել է (Խ. Սահակյանի հետ) «Time Report» էթնիկ ջազ-կվինտետը, «Armenian Navy Band» խումբը (1988, Ա. Թունջբոյաջյանի հետ), «ԱրտաՍաքս» քառյակը (2000): Համերգ. ծրագրերով շրջագայել է բազմաթիվ երկրներում, մասնակցել միջազգ. փառատոների, թողարկել ալբոմներ: Հանդես է եկել անվանի երաժիշտներ Չ. Կորիայի, Ա. Դոնելյանի, Ջ. Զավինուլի հետ:

Արմեն Հյուսնունցը ելույթի պահին

ՀՆՉՅՈՒՆ (անգլ.՝ sound, ֆրանս.՝ son), երաժշտ. ստեղծագործության նվազագույն տարրը: Հիմնական հատկանիշներն են բարձրությունը, ուժգնությունը, տևողությունը և տեմբրը: Բարձրությունը կարող է լինել C_2-ից մինչև c^5-d^6 (16-ից մինչև 4000–4500 *Հց*, առավել բարձր Հ-ները համակարգ մտնում են որպես օբերտոններ): Ուժգնությունը տարածքում պետք է լինի աղմուկից ավելի՝ չգերազանցելով ցավի շեմը: Տևողությունը տատանվում է 0,015–0,02 *վ*-ից մինչև մի քանի *ր*: Դժվար է որոշակիորեն նշել տեմբրի սահմանները, քանի որ տեմբրը բնորոշող բաղադրիչների համադրումները բազմազան ու բազմաթիվ են: Գործնականում Հ-ները կազմում են համակարգ: Յուրաքանչյուր օկտավայում գործածում են 12 տարբեր բարձրության, կես տոն հեռավորության Հ-ներ:

Հ-ները բնութագրող գեղագիտ. ընդհանուր կանոնները պայմանավորված են պատմականորեն և ընդհանուր գեղագիտ. ընկալումների փոփոխություններով, որոնք նույնպես փոփոխվում, նորացվում են:

ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, երաժշտական համակարգ, երաժշտ. հնչյունների՝ ըստ բարձրության կազմակերպման համակարգ, որը տվյալ ժամանակաշրջանի մտածողության հիմքում է:

Ժամանակակից Հ. հ. ընդգրկում է բարձրությամբ որոշակի հարաբերակցության մոտ 100 հնչյուն և բաժանված է օկտավային հատվածների: Համակարգը մշակվել է երաժշտ. մտածողության բազմադարյան զարգացման ընթացքում, տոների տարբերակման, քանակի ավելացման, հարաբերակցությունների կարգավորման, կապերի ամրապնդման միջոցով: Յուրատեսակ չափանիշ է յուրաքանչյուր ժողովրդի երաժշտության մեջ՝ Հ. հ-ի որոշակի առանձնահատկություններ (օր.՝ տեմպերացիայի յուրակերպությունը) ճանաչելու և գնահատելու, նաև համակարգի տոների միջև նոր, առավել նուրբ հարաբերակցություններ ու կապեր ստեղծելու համար:

ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ, կինոնկարահանող ստեղծագործ. խմբի անդամ: Ըստ սցենարիստի և կինոռեժ-ի ընդհանուր մտահղացման՝ իրագործում է ֆիլմի հնչյուն. ձևավորումը և պատասխանատու է նրա հնչունության գեղ. ու տեխ.

որակի համար: Գրառում է դերասանների փորձն. ձայնը, հետևում նկարահանման միջավայրի, դեկորների հնչականության պայմանները, մասնակցում միզանսցենների (բեմավիճակների) մշակմանը, կատարում սինխրոն ձայնագրում, մոնտաժման համար ընտրում ձայնագրված նյութը:

ՀՆՉՅՈՒՆԱՇԱՐ, 1. հնչյուն. որևէ համակարգի բոլոր հնչյունների կամ հիմնական աստիճանների վերընթաց կամ վարընթաց հաջորդականությունը: Հ-ի հիմնական աստիճանները 7-ն են, որոնք ունեն վանկ. անվանումներ և տառ. նշումներ: Հնչյունները վանկերով ու տառերով նշել են դեռևս Հին Հունաստանում՝ օգտագործելով այբուբենի տառերը՝ զանազան դիրքերով: Այժմ ընդունված է կիրառել լատ. այբուբենով նշումները: Վանկային անվանումները (նույնպես լատ.) գործածել է իտալացի երաժիշտ-տեսաբան Գվիդո դ'Արեցցոն (մոտ 990-ական թթ.–1050)՝ ըստ վաղմիջնադար. մի հիմնի (նվիրված Սբ Հովհաննուն՝ երգիչների հովանավորին): Հ-ի հիմնական աստիճանների (հնչյունների) վանկ. անվանումներն են՝ դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի (նախապես՝ ուտ, ռե, մի, ֆա, սոլ, լա, հետագայում սի վանկն ավելացվել է, իսկ ուտը՝ փոխարինվել երգելու համար առավել հարմար դո-ով), տառ. նշումները՝ c, d, e, f, g, a, h:

2. Ձայնակարգի աստիճանների հաջորդականությունը:

3. Օբերտոնների հաջորդ. շարքը՝ սկսած հիմնական հնչյունից:

4. Որևէ երաժշտ. գործիքի կամ երգչաձայնի կատարման համար մատչելի հնչյունների հաջորդականությունը: Ամբողջ տոներով կառուցված Հ., որը կազմված է 6 հնչյունից, կոչվում է ամբողջատոն հնչյունաշար:

ՀՈԲՈՅ, սրափող (գերմ.՝ Oboe, < ֆրանս. hautbois – բառացի՝ բարձր ծառ), փայտե փող. լեզվակավոր երաժշտ. գործիք: Ստեղծվել է XVII դ-ի 2-րդ կեսին Ֆրանսիայում՝ միջնադար. շալմեա գործիքից: Արդի Հ. փայտե ուղիղ փող է՝ վերևի ու ներքևի հանգույցներով և փողալայնուկով: Ունի 25 անցք (22–23-ը փակված են կափույրներով): Պիպիչը կրկնակի է՝ պատրաստված հատուկ տեսակի եղեգից: Գոյություն ունեն Հ-ների գերմ. և ֆրանս. տեսակներ: Տարածված է ֆրանսիականը, որն առանձնանում է կափույրների կատարյալ մեխանիզմով, ինտոնացիայի մաքրությամբ: Հ. կարևոր տեղ ունի սիմֆ. և օպեր. նվագախմբերի փայտե փող. գործիքների խմբում, օգտագործվում է նաև որպես մենակատար և անսամբլ. գործիք: Տեսակներից է նաև ալտային Հ. (անգլ. եղջերափող):

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, արևելաքրիստ. աշխարհի երաժշտ. մշակույթի հնագույն ճյուղերից. ձևավորվել է IV–V դդ-ում: Լինելով բացառապես միաձայն (մոնոդիկ) և կազմավորվելով Արևելքի ու Արևմուտքի հինավուրց բազմահարուստ երաժշտ. ավանդույթների խաչմերուկում՝ դարերի ընթացքում ձեռք է բերել ինքնատիպ հատկանիշներ, որոնք պայմանավորվել են եկեղեց. ձայնեղանակների ուրույն համակարգով (տես ***Ութձայն***) և ունեցել ընդհանուր ակունքներ ժող. ու գուսան. արվ-ի հետ: Զարգանալով հազարամյակի ընթացքում (V–XV դդ.)՝ Հ. ե. մշտապես եղել է ազգ. մշակույթի անվանի դեմքերի ուշադրության կենտրոնում և հարստացել է նրանց ստեղծագործություններով:

Հոբոյ

Քրիստոնեության ընդունումը որպես պետ. կրոն (301) և գրերի գյուտը (405) էապես խթանել են նաև հոգևոր երգարվ-ի ու պաշտոներգության զարգացումը: Թարգմանվել և աստիճանաբար ազգ. դիմագիծ են ձեռք բերել ՀԱԵ հիմնական երաժշտածիս. մատյանները՝ Խորհրդատետր-Պատարագամատույցը և Սաշտոցը: Աստվածաշնչից առանձնացած դավթյան սաղմոսների հիման վրա ձևավորվել է հայոց հնագույն Սաղմոսարան-Ժամագիրքը՝ իր ութմասնյա սաղմոսականոններով, երգեցիկ քարոզներով և նրանց հարող աղոթքներով:

Հ. ե-յան ձևավորման սկզբն. փուլում պաշտոներգության հիմքը՝ սաղմոսերգությունը և երգեցիկ ընթերցանությունը պայմանավորել են նոր գեղագիտ. պահանջներով թելադրվող ելևէջային սահմանափակ տիպական եղանակների շրջանակը: Առաջին ինքնուրույն հոգևոր երգերի՝ կցուրդների (տես ***Շարական***) առաջացմամբ (V դ.) պայմանավորվել է ազգ. շարականերգության սկզբնավորումը: Կցուրդների ստեղծումն ավանդաբար վերագրվել է Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Ա Պարթևին, Մովսես Խորենացուն և Հովհաննես Ա Մանդակունուն: Ըստ շարականագիրների պահպանված միջնադար.

«Սբ Աթանաս Ալեքսանդրացին Պատարագ մատուցելիս», մանրանկար (1356, Պատարագամատույց, Սիրնդ., ձեռ. № 3046)

«Մեռոնի օրհնություն», մանրանկար (1471, Սաշփոց, Սիոնդ., ձեռ. № 5702)

Մանրուսում ժող-ի (1273) 2 էջ

ցուցակների՝ Մեսրոպ Մաշտոցը հորինել է ապաշխարության վշտագին-քնար. շարականները, Սահակ Ա Պարթևը՝ Ավագ շաբաթվա հանդիսավոր երգասացությունները, Մովսես Խորենացին՝ Ծննդյան և Աստվածահայտնության հզոր շնչի վիպաքնար. երգերն ու ավետիսները, Հովհաննես Ա Մանդակունին՝ Առաքելոց և Տապանակի մի շարք խստաշունչ կցուրդներ:

Այդ շրջանում կազմավորվել են հայ շարականերգությանը հատուկ կերպարային արտահայտչականության հիմնական ոլորտները, աստվածաշնչ. նյութի բանաստեղծ. մշակման հնարքները, հայ եկեղեց. երգեցողության հիմնական տիպերը՝ հորդոր, չափավոր-միջակ և ծանր երգերը, որոնց մեջ շարժումը (տեմպը) պայմանավորել է նաև գրական խոսքի հնչյունավորման կերպը: Երգեցողության այդ տիպերի մշակումը կապված է նաև պաշտոներգության մեջ նրանց տեղով, այսինքն՝ ծիս. կիրառությամբ:

Ամենօրյա ժամերգությունների համար նախատեսված երգասացությունները, բնականաբար, ունեն պարզ և մնայուն նկարագիր. կատարում է դպրաց դասը: Կիրակի օրերին և եկեղեց. մեծ տոների ժամանակ օրվա հանդիսավորությունն ընդգծելու համար կատարվող երգասացությունները ծավալով առավել մեծ են, բնույթով՝ ծորերգ-զարդոլորուն (կանտիլեն-մելիզմատիկ), որոնք հնչյունավորում են մենակատար հմուտ երգեցողները: Ապաշխարանքի, մարդու մեղսավորության գաղափարի և Վերջին դատաստանի սպասում արտահայտող շարականների կողքին քիչ չեն պատմող. և մեկնող. բովանդակության, նաև լուսավոր, բերկրալի, քնար. զգացումներ արտահայտող փառաբան. երգերը:

V դ-ի պատմիչների (Փավստոս Բուզանդ, Ագաթանգեղոս, Կորյուն, Եղիշե, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի) աշխ-ներում վկայված է առնվազն 3 ժանրի կիրառություն՝ սաղմոս, օրհնություն (հասկացվում են հինկտակարան. մարգարեական երգեցիկ օրհնությունները) և հոգևոր երգը՝ կցուրդները:

VII–VIII դդ-ում Հ. ե-յան մեջ կարևոր տեղաշարժեր են կատարվել պաշտոներգության բարեկարգմամբ, նոր երաժշտաբանաստեղծ. տեսակների ներմուծմամբ և ութձայն համակարգի կիրառմամբ: Հանդես են եկել նոր շարականագիրներ՝ Կոմիտաս Ա Աղցեցի, Անանիա Շիրակացի (Հարության շարականներով), Սահակ Գ Զորոփորեցի (խաչին և եկեղեցուն նվիրված շարականներով), Բարսեղ Ճոն, Ստեփանոս Սյունեցի, Հովհաննես Գ Օձնեցի և ուր., որոնց շարականները նկատելիորեն ընդլայնել են Հ. ե-յան սահմանները: Վեհ տրամադրությամբ, մեծակերտ ոճով և մեղեդային նկարագրի մաքրությամբ ու նրբակերտությամբ աչքի ընկնող այդ օրհներգերն ունեն գեղ. ընդհանրացման առավել բարձր աստիճան:

Տվյալ ժամանակաշրջանի չափանմուշ. կոթող է Կոմիտաս Ա Աղցեցու՝ Հռիփսիմյանց կույսերին ձոնված «Անձինք նուիրեալք» շարականը՝ գրված այբբեն. ծայրակապով, որտեղ յուրովի կիրառվել են բյուզ. կոնդակիոնին բնորոշ հատկանիշներ:

Հայ իրականության մեջ, ստանալով «կացուրդ» անվանումը, երաժշտաբանաստեղծ. այդ տեսակը լայնորեն տարածվել է հետագա դարերի հեղինակների ստեղծագործություններում: Այդուհետ այբբեն. ծայրակապով գրված շարականները կոչվել են նաև «Անձինք»: Նույն ժամանակաշրջանում, Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի հանձնարարությամբ, Բարսեղ Ճոնը կազմել է հոգևոր ինքնուրույն երգերի պաշտոնապես վավերացված առաջին ժող-ը՝ «Ճոնընտիրը», որը դարձել է ապագա Շարակնոցի հիմքը:

Հ. ե-յան մեջ մեծ դեր ունի Ստեփանոս Սյունեցին, որի անվան հետ են կապված կանոն ժանրի ներմուծումը, Հարության Ավագ օրհնությունների ստեղծումը, ութձայն համակարգի բարեկարգումը, նաև խազագրության նախն. կիրառումը: Տվյալ շրջանի շարականերգության ցայտուն օրինակ է Խոսրովիդուխտի «Զարմանալի է ինձ» նշանավոր ողբը (գովքը), որը ձոնել է նահատակ եղբոր՝ Վահան Գողթնացու հիշատակին:

Այդ շրջանի հոգևոր երգաստեղծության մեջ, ըստ պատմ. և վարքագր. աղբյուրների, նկատելի ներդրում ունեն նաև Ստեփանոս Սյունեցու քույրը՝ միանձնուհի Սահակադուխտը, և Գրիգոր Գոզիկ Այրիվանեցին: IX դ-ում Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսը կարգավորել է հայոց

ծիսարանը՝ Մաշտոցը: Երգահաններից հիշատակելի է Համամ Արևելցին՝ իր զղջական «Հայր երկնավոր» պարականոն շարականով:

Հ. ե. աննախադեպ վերելք է ապրել X–XIV դդ–ում: Այդ շրջանի Հայաստանի երաժշտ. մասնագիտացված մշակույթը քրիստոնյա աշխարհի եկեղեց. երգարվ–ի առավել նշանակալի երևույթներից է: X–XIV դդ–ի երաժշտածիս. մատյաններում արտացոլվել է հոգևոր մոնոդիայի՝ շարականի, գանձի, տաղի, սրբասացության տեսակների բուռն զարգացումը: Առավել նշանակալի էր մեծակերտ–զարդոլորուն (մոնումենտալ–մելիզմատիկ) երգաոճը, որը գերակշռել է մի շարք շարականագիրների և տաղերգուների ստեղծագործություններում: Այդ ժամանակաշրջանում են վերջն. տեսք ու գեղագիտորեն կատարյալ ձև ստացել Շարակնոցը, Ժամագիրքը, Պատարագամատույցը, Մաշտոցը: Երևան են եկել նոր տիպի ժող–ներ՝ Գանձարանը, Մանրուսումը և Տաղարանը:

Հատուկ տեղ է գրավել Անիի երաժշտ. մշակույթը, որի կազմավորման վրա ներազդել են հայ միջնադար. երաժշտարվ–ին առնչվող գործիչներ Սարգիս Ա Սևանցի և Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսները, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագը, որոնք պատմության մեջ մտել են նաև որպես շարականագիրներ: Անիում գործած շարականագիրների՝ Շարակնոցում վավերացված հոգևոր երգերում խտացրել են V–VIII դդ–ի հայ հիմներգության լավագույն նվաճումները և ընդլայնել ավանդ. թեմաների շրջանակը: Նրանց գործերում առանձնակի հնչողություն է ստացել հայրենասիր. թեման (Պետրոս Ա Գետադարձի՝ Վարդանանց հիշատակին նվիրված «Արիացեալք առ հակառակսն» երկարաշունչ մանկունքը կամ Հովհաննես Սարկավագի՝ Ղևոնդյանց կանոնի «Պայծառացան այսօր» գողտրիկ ճաշուն)՝ պայմանավորված ժամանակի իրողություններով և ազգ–ազատագր. պայքարով: Այդ շարականագիրները նկատելիորեն նախապատրաստել են հետագա մեծ թռիչքը Կիլիկյան Հայաստանի հեղինակների ստեղծագործության մեջ:

Առանձին փայլուն էջ է Գրիգոր Նարեկացու տաղարվ–ը: Նրա՝ մեղեդիներով պահպանված «Հաւուն, հաւուն», «Հաւիկ», «Ահեղ ձայնս», «Սայլն այն իջանէր», «Աչքըն ծով ի ծով» տաղերը որակապես նոր մակարդակի են հասցրել երաժշտաբանաստեղծ. արվ–ը՝ այն հագեցնելով մեղեդային վառ կերպարներով, հորինվածք. նորարար հնարքներով, որոնք նոր հորիզոններ են բացել հայ երաժշտ. մշակույթում:

Հատված Վարդան Արևելցու «Ամենասուրբ Երրորդության» շարականից

Կարևոր նշանակություն ուներ նաև Կիլիկիայի հայկ. թագավորության երաժշտ. մշակույթը. երկարատև զարգացման ընթացքում ծաղկել է աշխարհիկ և հոգևոր երգարվ–ը, վանքերին կից վարդապետարաններում մեծ տեղ է հատկացվել երգ–երաժշտության դասավանդմանը, քննարկվել են երաժշտության տեսության ու գեղագիտության հարցեր, ստեղծվել և ընդօրինակվել են բարձրարժեք երաժշտածիս. մատյաններ:

Ներսես Շնորհալու և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության նշանակությունը դուրս է եկել զուտ ազգ. շրջանակներից: Ներսես Շնորհալու շնորհիվ Հայաստանում պաշտոներգությունը բարձրացել է նոր մակարդակի: Նրա կարգադրությամբ և անմիջական մասնակցությամբ իրագոր-

ծվել է երաժշտածիս. գրքերի՝ միջնադարի չափանիշներով ամենաածավալուն բարեփոխումը, որի ընթացքում դրանք զտվել են հնացած երգասացություններից ու համալրվել Ներսես Շնորհալու բազմաթիվ գործերով, որոնցից են Պատարագի մի շարք գեղեցկակազմ այլ սրբասացություններ և մեծ քարոզը, ժամագրքում ընդգրկված «Յիշեսցուք ի գիշերի», «Զարթիք փառք իմ», «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», Արևագալի երգերը մեղեդային ոճի անհատականությամբ և բանաստեղծ., տաղաչափ. վարպետությամբ աչքի

Հատված «Տէրունական աղօթք»-ից (մշակումը՝ Խորէն Մկրտիչեանի)

են ընկնում բազմաթիվ շարականներ ու տաղեր: Ներսես Շնորհալու բազմաթիվ երգեր դեռևս միջնադարում ունեցել են չափանմուշ. նշանակություն, հաճախ հիշատակվել որպես մեղեդի-նմուշ: Նման ժողովրդականությանը մեծապես նպաստել է նաև այն, որ Ներսես Շնորհալին իր ստեղծագործություններում հմտորեն կիրառել է ժող. երաժշտարվ-ի բազմապիսի տարրեր, որոնցով հոգևոր երգարվ-ը հագեցրել է ժողովրդին հոգեհարազատ եղևէջներով և մատչելի ձևերով:

Ներսես Շնորհալու ստեղծագործ. ավանդույթները խորապես ազդել են հետագա շարականագիրների և տաղերգուների վրա. բուն Հայաստանում հատկապես հիշատակելի են Խաչատուր Տարոնացին (Պատարագի նախերգը՝ քահանայի զգեստավորման «Խորհուրդ խորին» շարականը), Հովհաննես Երզնկացին (Գրիգոր Ա Լուսավորչին և Ներսես Ա Մեծին նվիրված շարականները, Զրօրհնեքի «Այսօր ձայնն հայրական» տաղը), Վարդան Արևելցին (Սրբոց թարգմանչաց նվիրված «Որք զարդարեցին» և «Որք թագաւորաց» երգերը), Մխիթար Այրիվանեցին (Ոտնլվայի «Սիրտ իմ սասանի» դրամատիկ. տարրերով հագեցած գանձը), իսկ կիլիկեցի հեղինակներից՝ Ներսես Լամբրոնացին, Հակոբ Ա Կլայեցին, Գրիգոր Սկևռացին և ուր.:

Սակայն XIII դ-ի վերջին շարականի ժանրի զարգացումը գրեթե միանգամից դադարել է: Միջնադարի վերջին Կիրակոս Երզնկացու՝ Աստվածածնի ննջման «Արևելք գերարփի» շարականով եզրափակվել է Շարակնոցը: Ժամակարգությունը փակվել է, և նրա կանոնի մեջ նոր երգեր այլևս չեն ընդունվել:

XIII դ-ի կեսից քաղ. անբարենպաստ պայմանները, ապա հայկ. պետականության կորուստը բուն Հայաստանում և Կիլիկիայում խաթարել են արվ-ի, նաև Հ. ե-յան բնականոն զարգացումը, թեև վանքերում շարունակվել են, ի թիվս այլ մատյանների, երաժշտածիս. ժող-ների ընդօրինակման, խմբագրման և լրացման աշխատանքները: Հիշատակելի են Շարակնոցի, մասնավորապես՝ Գևորգ Սկևռացու և Գրիգոր Խուլի խմբագրությունները: Ուշ միջնադարում Հ. ե. այնուհանդերձ կրել է որոշ փոփոխություններ. մի շարք հին երգերի երաժշտ. բաղկացուցիչը վերանայվել է՝ ըստ նոր ժամանակների ճաշակի: Սակայն ընդհանուր առմամբ այն բնորոշվել է աստիճան. անկումով, միջավայրի շեշտակի մահմեդականացման հետևանքով հայ ավանդ. եղանակների կատարող. մեկնաբանման «արևելականացմամբ», Հ. ե-յան ժանրերի աշխարհականացմամբ:

XV–XVIII դդ-ում լայնորեն տարածվել են Տաղարանները և խառը տիպի ժող-ներ, որոնք ամփոփել են հոգևոր և աշխարհիկ տաղեր, գանձեր, ողբեր ևն:

Այդ ժամանակաշրջանում կարևոր դեր են կատարել հայկ. նորաստեղծ գաղթավայրերը Մերձ. Արևելքում, Եվրոպայում, Հնդկաստանում, որտեղ հետզհետե աշխուժացող մշակութ. կյանքը բավական

նպաստել է անցյալի ժառանգության, նաև Հ. ե-յան ավանդույթների պահպանմանը: Նորոգության շրջանում (XVII–XVIII դդ.) մի շարք դրական տեղաշարժեր պայմանավորվել են ազգ. ինքնագիտակցության վերելքով, մշակութ. ժառանգության պահպանմամբ, տպագրության զարգացմամբ: Ոսկան Երևանցու ջանքերով 1664–65-ին Ամստերդամում հրատարակվել է առաջին տպագիր Շարակնոցը, որտեղ ձեռագիր վստահելի աղբյուրներից ընդօրինակվել են ձայնեղանակ. նշումներն ու հոգևորականների մեծամասնության համար արդեն զուտ խորհրդանշ. իմաստ ունեցող խազային նշանները:

XIX դ-ից մտավորականության և հոգևորականության շրջանում աստիճանաբար հասունացել է Հ. ե-յան նմուշների պահպանման, հետագա աղավաղումներից և մոռացությունից փրկելու գաղափարը, որին մեծապես նպաստել է 1813–15-ին Համբարձում Լիմոնճյանի ստեղծած նոր հայկ. նոտագրությունը: Այդ համակարգով Հ. Լիմոնճյանը, Եղիա Տնտեսյանը, Արիստակես Հովհաննիսյանը, Համբարձում Չերչյանը և ուր. փորձել են ձայնագրել նախ Շարակնոցը, ապա՝ երաժշտածիս. մատյանները: 1866-ին Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին էջմիածին է հրավիրել ժամանակի նշանավոր երաժիշտ Նիկողոս Թաշճյանին՝ տեղի ավանդ. եղանակները ձայնագրելու, բազմատեսակ հնչող հոգևոր երգերը միակերպելու նպատակով, որին մասնակցել է նաև Սակար Եկմալյանը: 1866–78-ին վավերացվել ու հրատարակվել են Պատարագի, Ժամագրքի և Շարակնոցի երգասացությունները: Ժամանակի չափանիշներով դրանք հայկ. հոգևոր Երգարանների առաջին գիտ. հրապարակումներն էին, որոնք կարևոր դեր են խաղացել գործնականում և Հ. ե-յան հետագա ուսումնասիրության համար:

Արևմտաեվրոպ. երաժշտության ազդեցությունը և հայ երաժիշտների հաղորդակցումը նրա հետ պայմանավորել են բազմաձայնության ներմուծման անհրաժեշտությունը: Շրջադարձային էր Մ. Եկմալյանի Պատարագի բազմաձայն մշակումը, որի շնորհիվ Հ. ե. կատարվել է ոչ միայն եկեղեցիներում, այլև համերգասրահներում:

Հ. ե-յան զարգացման, ուսումնասիրման և տարածման նոր փուլ է նշանավորել Կոմիտասի ստեղծագործ., կատարող. և գիտ. գործունեությունը: Նրա Պատարագը, հոգևոր այլ երգերի խմբերգ. մշակումները հիմնվել են միջնադար. երգարվ-ի առանձնահատկությունների խոր իմացության, նաև XIX դ-ի վերջի և XX դ-ի սկզբի եվրոպ. երաժշտությանը բնորոշ միտումների ու հորինվածք. միջոցների ինքնատիպ զարգացման վրա, որոնք աշխարհիկ գեղջկական և քաղաք. երգերի մշակումների հետ դարձել են հայ մասնագիտացված կոմպոզիտոր. դպրոցի հիմքը: Մ. Եկմալյանի և Կոմիտասի Պատարագները նոր ժամանակների խմբերգ. դաս. երաժշտության առաջին մեծակտավ ստեղծագործություններն են:

Հ. ե. մեծապես ազդել է 1960–90-ական թթ-ի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների վրա: Ազգ. երաժշտության մեջ նեոկլասիցիզմի դրսևորումներ կարելի է համարել ժամանակակից հայ կոմպոզիտորների բազմաթիվ բարձրարժեք գործերը (սիմֆ., խմբերգ., վոկալ-գործիք. կամեր. ևն), որտեղ արտացոլվել և ստեղծագործաբար մարմնավորվել են Հ. ե-յան հարուստ ավանդույթներ (Է. Հովհաննիսյան, Լ. Աստվածատրյան, Ս. Աղաջանյան, Տ. Մանսուրյան, Մ. Իսրայելյան, Ե. Երկանյան և ուր.):

Հայաստանի անկախացումից (1991) հետո փոխվել է վերաբերմունքը Հ. ե-յան նկատմամբ: Կազմակերպվում են Հ. ե-յանը նվիրված փառատոներ, մրցույթներ և գիտաժողովներ: Լույս են տեսնում գիտ. նոր հրատարակություններ՝ «Գանձասար» աստվածաբան. կենտրոնի «Շարակնոց»-ը (հ. 1, 1997, խմբ.՝ Ս. Ռոստոմյան) և Հայ հոգևոր երաժշտության կատարման, ուսումնասիրության և վավերագրման պետ. կենտրոնի Հ. ե-յան ուսումնասիրման հարցեր լուսաբանող «Մանրուսում» տարեգիրքը (հ. Ա, 2002, հ. Բ, 2005, հ. Գ., 2009, հ. Դ, 2013, պատ. խմբ. և կազմ.՝ Ա. Արևշատյան):

Տեսության բնագավառում դեռևս V–VI դդ-ում մշակվել են եկեղեց. ձայնեղանակների (առաջինը, ըստ Հայսմավուրքի, կարգավորել է Սահակ Ա Պարթևը), ձայնի և ներդաշնակության հենքի մասին (Դավիթ Անհաղթ) ուսմունքները: Երաժշտության՝ որպես արվ-ի տեսակի ճանաչող., դաստիարակչ. և զգայաէթիկ. ներգործության ու դասակարգման խնդիրներն իրենց աշխ-ներում արծարծել են Դավիթ Ան-

Շարակնոցի (1743, Կ. Պոլիս) Բ տիպոդրագրությունը («Հայնպաղ շարական»)

«Շարակնոցներ» գրքի (2010) տիպոդրագրությունը

հաղթը, Դավիթ Քերականն ու Ստեփանոս Սյունեցին: VII դ–ի սկզբին տեսությունը հարստացել է ակուստիկայի մասին ուսմունքով (Անանիա Շիրակացի): VIII դ–ում Ստեփանոս Սյունեցու ջանքերով կիրառվել է խազագրության նախն. համակարգը, որը հիմնված էր առոգանության և տրոհության նշանների վրա: Հ. ե–յան տեսության մյուս մասն ընդգրկում է տարաբնույթ գրվածքների և պատառիկների ամբողջությունը՝ շարականագիրների միջնադար. ցուցակներ, ձայնեղանակների մեկնություններ, ավելի ուշ՝ Մանրուսման մեջ զետեղված մանրուսման եղանակների ցուցակները և «Անուանք» խազից կոչվող հատվածները: Առավել արժեքավոր է «Մեկնութիւնք ձայնից»–ը: Դրանք համաքրիստ. մշակույթի չափանիշներով ինքնատիպ երևույթներ են, որոնք յուրովի են արտացոլել ձայնեղանակների մասին ուսմունքի աստվածաբան., երաժշտ., տեսագեղագիտ. և ծիս. գործնական ոլորտների հետ կապված հայ միջնադար. մտածողների փորձը: Սկսվես Քերթողը, Անանիա Շիրակացին, Ստեփանոս Սյունեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին, Թովմա Մեծոփեցին և ուր. իրենց մեկնություններում և երկասիրություններում արտացոլել են հայկ. եկեղեց. ձայնեղանակների զարգացման տարբեր փուլերը և դրանց հետ կապված ժամանակների՝ սկսած հեթանոս. շրջանի աշխարհիկ երաժշտ. տեսության և գեղագիտության վերապրուկներից մինչև միջնադար. մտածողությանը հատուկ աստվածաշնչ. հայեցակարգի դաս. դրսևորումները: Այդ մեկնությունները վկայում են միջնադարում հայկ. ութձայնի տեսագեղագիտ. և գործն. մշակվածության մակարդակի մասին:

Հարված Ներսես Շնորհալու «Նորահրաշ» շարականից

Շարականագիտության, ձայնեղանակների տեսության, հոգևոր և աշխարհիկ (վոկալ և գործիք.) երաժշտության փոխհարաբերության խնդիրներն արծարծվել են նաև Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք»–ում, Վարդան Արևելցու «Ժղլանք»–ում և Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»–ում: Ուշագրավ է Հովհաննես Երզնկացու (Պլուզ)՝ հայ եկեղեց. ձայնեղանակների և պարսկ–արաբ. ավանդ. եղանակների համեմատ. մեկնությունը «Մեկնութիւն քերականին» ձեռնարկում: Ավետարանի նկարագարդման մեջ օգտագործվող հիմնական գույների և եկեղեց. ձայնեղանակների համադրման եզակի մեկնություն է Թովմա Մեծոփեցու «Մեկնութիւնք ձայնից»–ը:

Տեսության առանձին բաժին է մանրուսման՝ որպես զարդոլորուն, նրբակերտ երգեցողության արվ–ը, որն իր զարգացման բարձրակետին է հասել Կիլիկյան Հայաստանում: Դրանով հատուկ զբաղվել է Ներսես Շնորհալին՝ խազ. նշանների մինչ այդ կիրառվող համակարգը հարստացնելով նոր՝ 23 նշաններով, որոնք, ի տարբերություն շարականի խազերի, անվանվել են մանրուսման խազեր: Սակայն ուշ միջնադարի պայմաններում, ինչպես արվ–ն ընդհանրապես, հայ միջնադար. երաժշտ. տեսագեղագիտ. միտքը նույնպես անկում է ապրել: Այդ բնագավառում նոր փուլ և որոշ աշխուժություն է նկատվել XVII–XVIII դդ–ում: Ժամանակի գիտնականներն աշխատել են հավաքել միջնադար. ինքնուրույն և թարգման. մատենագրության մեջ սփռված երաժշտատես. գրվածքները և նույնիսկ բանաքաղելով՝ ստեղծել ամբողջ. հոդվածներ: Իրենց գիտելիքները նորովի

համալրելու համար օգտագործել են և՛ արլ. երաժշտագիտ. աղբյուրները, և՛ բյուզ. ձայնագրագիտությունը, և՛ արևմտաեվրոպ. երաժշտության տեսությունը (Ավետիք Պաղտասարյան, Ջեննե-Պողոս, Խաչատուր Էրզրումեցի, Մխիթար Սեբաստացի): Գրիգոր Գապասաքալյանը, միջնադարին բնորոշ հայկ. երաժշտատես. ու գեղագիտ. դրույթները ձևակերպելուն և դասակարգելուն զուգընթաց, փորձել է ճգնաժամ ապրող խազ. հին նշանագրության փոխարեն ստեղծել նոր համակարգ՝ հայկ.՝ ընդհանուր արլ. և բյուզ. նոտագրության տարրերով շաղախված: Այդ համակարգն էականորեն խթանել է նոր հայկ. ձայնագրության ստեղծումը, որի հեղինակը Հ. Լիմոնճյանն է. նա նոր հայկ. ձայնագրությունը լավագույնս հարմարեցրել է հոգևոր և աշխարհիկ մոնոդիական երաժշտության առանձնահատկությունները համարժեք արտահայտելուն և ձայնագրելուն:

XIX դ-ի Կ. Պոլսի եկեղեց. երաժիշտ-տեսաբանները (Հ. Լիմոնճյան, Ե. Տնտեսյան, Ն. Թաշճյան և ուր.) կարևոր ներդրում ունեն շարականագիտության, հոգևոր երգարվ-ի նմուշների հավաքագրման, ձայնագրման և աղավաղումներից փրկելու մեջ: 1874-ին գրեթե միաժամանակ լույս են տեսել Ն. Թաշճյանի «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց» և Ե. Տնտեսյանի «Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ եւ յաւելուած բովանդակութիւն երգոց ըստ ութ ձայնից» գրքույկները, որտեղ հեղինակներն ամփոփել են իրենց ձայնագիտ. և շարականագիտ. բազմամյա որոնումների արդյունքը:

Հ. ե-յան ուսումնասիրությունը նոր աստիճանի է հասել Կոմիտասի հետազոտությունների շնորհիվ, որտեղ արծարծվել են շարականների կառուցվածքի, տաղաչափության, պատմ. զարգացման, Հ. ե-յան տեսակների, եկեղեց. ձայնեղանակների տեսության և Մանրուսման գրքերի ուսումնասիրման հարցերը, որոնք առաջին անգամ են ներկայացվել եվրոպ. գիտ. հանրությանը:

Նոր փուլ են նշանավորել խորհրդ. շրջանի և արդի գիտնական-երաժշտագետների՝ Հ. ե-յանը վերաբերող ուսումնասիրությունները: Ք. Քուշնարյանը, Ռ. Աթայանը, Ն. Թահմիզյանը, Ա. Արևշատյանը, Մ. Նավոյանը և ուր. իրենց աշխ-ներում բազմակողմանիորեն լուսաբանել և քննել են Հ. ե-յան պատմության, տեսության, գեղագիտության, որոշ հեղինակների ստեղծագործության խնդիրները՝ մեծապես նպաստելով Հ. ե-յան և հայ երաժշտ. միջնադարագիտության միջազգ. ճանաչմանը: Հ. ե. ուսումնասիրում են Մատենադարանում, ԳԱԱ արվ-ի ինստ-ում, ԵՊԿ-ում, Հայ հոգևոր երաժշտության կատարման, ուսումնասիրության ու վավերագրման պետ. կենտրոնում և Կոմիտասի թանգարան-ինստ-ում:

Գրկ. *Գապասաքալեան Գ., Գիրք երաժշտական..., ԿՊ, 1803: Աւետիքեան Գ., Բացատրութիւն շարականաց, Վնտ., 1814: Տնտեսեան Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, ԿՊ, 1874: Հիսարլեան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւն երաժիշտ ազգայնոց (1714–1909), ԿՊ, 1914: Մելիքյան Ս., Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Ե., 1935: Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրություն, Ե., 1959: Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Ե., 1973: Նույնի, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Նույնի, Կոմիտասը և հայ ժողովրդի երաժշտական ժառանգությունը, Փասադենա, 1993: Նույնի, Արդի խազաբանութիւն, Փասադենա, 2003: Արևշատյան Ա., «Սիաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Նույնի, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Ե., 2003: Նույնի, Չայնեղանակների ռամունքը միջնադարյան Հայաստանում, Ե., 2013: Նույնի, Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը, Ե., 2013: Նույնի, Անհի երաժշտական մշակույթը, Ե., 2014: Նույնի, Գրիգոր Սագիպտրոսը շարականագիր և գեղագետ, Ե., 2015: Հոգևոր երգեր, Ե., 1998, 2011: Նավոյան Մ., Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մանանագիրացված երգարվեստում, Ե., 2001: Григор Гапасакалян. Книга о музыке, пер. с грабара, введение и прим. А. С. Аревшатян, Е., 2017. Fétis F., Histoire générale de la musique, t. IV, P., 1874; Ataian R., Les chants des maitres arméniens du Moyen age, "Musica antiqua", 2, Bydgoszcz, 1962; Essays on Armenian Music (R. Ataian, S. Poladian, N. Tahmizian and others), L., 1978; Arevchatian A., Deux textes arméniens médiévaux sur l'Interpretation des modes musicaux; Les traités arméniens médiévaux sur l'Interpretation des modes musicaux et leurs parallels au Proche Orient, "Revue des études arméniennes", 26, P., 1996–97, pp. 339–355, 357–366; Ibid, La typologie du genre des šarakans dans le contexte de l'hymnographie de l'Orient chrétien, "Revue des études arméniennes", 28, P., 1999–2000.*

Մննա Արևշատյան

Ժամագրքի (1734, Կ. Պոլիս) էջ

Կոռնելիա Հոլոշի

ՀՈԼՈՇԻ (Hollósy) Կոռնելիա (1827, Սամոշույվար–1890), հունգարահայ երգչուհի (մեցցո սոպրանո): Կատարելագործվել է Իտալիայում, արժանացել կոմպոզիտոր Գ. Դոնիցետտիի դրվատանքին: Բուդա-



Վլադիմիր Հոշովսկի

պեշտի օպեր. թատրոնի առաջատար մեներգչուհի (Մելինդա՝ Ֆ. Էրկելի «Բանկ բան», 1861) և նշանավոր կամեր. երգչուհի: Ժամանակի հունգար. ազգ. օպերաների և թատրոնի կատարող. արվ-ների գեղ. մակարդակի բարձրացումը պայմանավորվել է նաև Հ-ի արվ-ով: Հյուրախաղերով հանդես է եկել Վիեննայում, Բուխարեստում, Վարշավայում, Փարիզում և այլուր: Մերժել է ֆրանսիացի կոմպոզիտոր Ջ. Մեյերբերի՝ Փարիզի «Գրանդ օպերա»-ում երգելու հրավերը՝ մնալով Բուդապեշտի օպեր. թատրոնում: Նրան բարձր են գնահատել կոմպոզիտորներ Ֆ. Լիստը, Գ. Դոնիցետտին: Հ-ին անվանել են «Հունգարիայի սոխակ»: Բեմը թողել է 1865-ին:

Գրկ. *Բրուտեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996:*

ՀՈՄՈՖՈՆԻԱ (< հուն. ὁμός – հավասար, միանման և φωνή – ինչյուն, ձայն), նախն. նշանակությամբ՝ ունիսոն երգեցողություն, ժամանակակից ընկալմամբ՝ բազմաձայնության տեսակ, որտեղ ձայներից մեկն առաջատար է, մյուսները՝ երկրորդական (լրացուցիչ, «ուղեկցող»):

«Հ.» հասկացությունը ծագել է Հին Հունաստանում. նշանակել է մեղեդու ունիսոն (կամ օկտավային) կատարում ձայնով և գործիքով (ցայսօր հանդիպում է բազմաթիվ ժողովուրդների երաժշտության մեջ): XVII դ-ից պրոֆեսիոնալ երաժշտարվ-ում Հ. դարձել է գերիշխող գրելաձև և մի ողջ պատմաշրջանի (XVII–XIX դդ.) ոճ. որոշիչ հատկանիշ: Ջարգացման բարձր մակարդակի է հասել Վիեննայի դաս. դպրոցի կոմպոզիտորների արվ-ում: Յ. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի երաժշտության մեջ խտացել են Հ-ի արժեքավոր գծերը (մեղեդիական և հարմոնիկ հարստություն, ճկունություն, ձևի կառուցիկություն):

Վաչե Հովհաննեսյանը ելույթի պահին

XX դ-ում Հ. կորցրել է մենիշխանությունը: Նրա զարգացմանը զուգընթաց (Մ. Ռավել, Բ. Բարտոկ, Ս. Ս. Պրոկոֆև)՝ աճել է հետաքրքրությունը պոլիֆոնիայի հանդեպ (Պ. Հինդեմիթ, Ի. Ֆ. Ստրավինսկի, Դ. Դ. Շոստակովիչ): Հ-ի իրագործման որոշակի ձևերը բազմազան են (տես *Ֆակտուրա*), որոնք երբեմն դառնում են կոմպոզիտորի անհատականությունը կամ երկի ազգ. հատկանիշները դրսևորող տարր (նվագակցությունը՝ Կոմիտասի մեներգերում, ևն):

ՀՈՇՈՎՄԿԻ Վլադիմիր Լեոնիդովիչ (25.09.1922, Ուժգորոդ–30.12.1996, Լվով), ուկրաինացի բանագետ, էթնոերաժշտագետ: Կիբեռնետիկ. երաժշտագիտության հիմնադիրը: Արվեստագիտ. թեկնածու (1972): Ավարտել է Լվովի կոնսերվատորիան (1953): 1961–69-ին դասավանդել է Լվովի կոնսերվատորիայում (դոցենտ): 1975–86-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող, 1975–81-ին, միաժամանակ՝ ԵՊԿ ժող. ստեղծագործության կաբինետի աշխատակից:

Երկ. *Украинские песни Закарпатья, М., 1968; У истоков народной музыки славян, М., 1971; "Горани". К типологии армянской песни [опыт исследования с помощью ЭВМ], Е., 1983.*

ՀՈՎՀԵՍՅԱՆ Վաչե Հովիկի (ծ. 31.03.1982, Երևան), ալտահար: Արվեստագիտ. թեկնածու (2007): Վարդ ***Մանուկյանի*** որդին: Սովորել է Նյու Յորքի «Մաննես» բարձրագույն երաժշտ. քոլեջում (1999–2001), ավարտել է ԵՊԿ (2002): 2004-ին վերահիմնադրել է Ա. Խաչատրյանի անվ. լար. քառյակը (նաև ալտահարը և գեղ. ղեկ-ը): 2006-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2007-ից): 2013–15-ին՝ ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական, 2015–18-ին՝ Կամեր. երաժշտության կենտրոնի տնօրեն: Դասեր է առել Ք. Քաշքաշյանից, Ն. Մադոյանից, Պ. Յուկերմանից, Մ. Թրիից և Յ. Բաշմետից: Մասնակցել է միջազգ. մրցույթների («Պրեմիո Վալենտինո Բուքի», Լ. Չիլինգիրյանի անվ. հանրապետ. լարային մրցույթ): Ելույթներ է ունեցել ՀՀ-ում, նաև Եվրոպայի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Վրաստանի հեղինակավոր համերգասրահներում (Նյու Յորքի «Քառնեգի Հոլլ», Լոնդոնի «Դարթմութ Հոլլ») և լավագույն նվագախմբերի հետ (Հայաստանի ֆիլհարմոնիկ, ԵՕԲԹ, Կովկաս. կամեր., «Նյու Ջերսի Լիրիկ», Վուրտեմբերգի կամեր., Սոֆիայի ֆիլհարմոնիկ): Հանդես է եկել (դուետ, տրիո, կվարտետ) Ա. Գավաֆյանի (ԱՄՆ), Յ. Բաշմետի (ՌԴ), Ա. Չաուշյանի (Մեծ Բրիտանիա), Վեյ Յի Վանգի (Չինաստան), Ս. Խաչատրյանի (Գերմանիա) հետ: Հայ մի շարք կոմպոզիտորների ալտի համար գրած երկերի առաջին կատարողն է:

«ՀՈՎՀԵՐ», կամեր. երգչախումբ, պետական (2009-ից): Հիմնադրել է Սոնա ***Հովհաննիսյանը*** (նաև գեղ. ղեկ.) 1992-ին Երևանում: Հանդես է եկել վոկալ-սիմֆ., օպեր., կամեր. ավանդ. և փորձարար.

նախագծերով (Կոմիտասի պարերգերի բեմադրություն, «6 առակ», «Զուգահեռ» խմբերգ. ներկայացումներ, «Ապարանյան երգերի ոչ ավանդական մշակումներ»՝ Վ. Հայրապետյանի ղեկավարած եռյակի հետ, Արցախյան ամենամյա նախագծեր, համերգներ մարզերում ևն): Համագործակցում է Հայաստանի ֆիլհարմոնիկ, կամեր., երիտասարդ. և այլ նվագախմբերի, «Երևանյան հեռանկարներ», «Ոսկե ծիրան», Ա. Խաչատրյանի անվ. փառատոների հետ: Իրականացրել է Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ջ. Պուչչինիի «Տոսկա», «Մադամ Բատերֆլայ», Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ», Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ», Ա. Բաբաևի «Արծվաբերդ» և այլ օպերաների համերգ. կատարումներ:

Երգչախումբը հայ կոմպոզիտորների (Վ. Շարաֆյան, Ա. Ավանեսով, Ա. Ազիզյան, Ե. և Ս. Երկանյաններ, Ս. Բաբաթորոսյան և ուր.) մի շարք գործերի առաջին կատարողն է: Մասնակցել է գեղ. ֆիլմերի երաժշտ. ձևավորման աշխատանքներին («Արարատ», ռեժ՝ Ա. Էգոյան, «Արտույտների ագարակը», ռեժ-ներ՝ Տավիանի եղբայրներ, «Նամուս»՝ «Arte» ստուդիայի վերականգնած տարբերակը, «Թևանիկ», ռեժ՝ Ջ. Ավետիսյան, ևն): Երգացանկում՝ Ս. Գուբայդուլինայի, Ռ. Կ. Շչեդրինի, Ք. Պենդերեցկու, Գ. Ղանչելիի և ուր. կոմպոզիտորների երկերից:

Մասնակցել է մի շարք միջազգ. խմբերգ. մրցույթ-փառատոների, պրոֆեսիոնալ երգչախմբերի ստուգատես-փառատոների: Հանդես է եկել “Teatro Dal Verme” (Իտալիա), “Le Quartz” (Ֆրանսիա), “Strathmore Hall”, “Քառնեգի Հոլլ” (ԱՄՆ) և այլ հեղինակավոր համերգասրահներում:

Համերգներով շրջագայել է Իտալիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Սլովենիայում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Թայվանում, Լիբանանում և այլուր: Թողարկել է 7 ձայնասկավառակ:

Արեցցոյի (1997, Իտալիա), Տուրի (1999, Ֆրանսիա) պոլիֆոնիկ միջազգ. խմբերգ. մրցույթ-փառատոների դափնեկիր, Լինցի (2000, Ավստրիա) համաշխ. I խմբերգ. օլիմպիադայի ոսկե մեդալ, խմբերգ. ներկայացման (ըստ Վարդան Այգեկցու առակների) սկավառակի համար (երաժշտ.՝ Ս. Բաբաթորոսյան)՝ «Լավագույն խմբերգային ալբոմ» (2003), «Լավագույն խմբերգային օպերա» (2006, երկուսն էլ՝ ԱՄՆ), «Ծիծեռնակ» մրցանակաբաշխության «Լավագույն նախագիծ» (2017) մրց-ների, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012):

«Հովեր» կամերային երգչախումբը

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ալան [Չաքմաքչյան Ալան Հարությունի, 08.03.1911, Սոմերվիլ (ԱՄՆ-ի Մասսաչուսեթսի նահանգ)–21.06.2000 Սիեթլ (ԱՄՆ-ի Վաշինգտոնի նահանգ)], կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: Առաջին օպերաները գրել է 14 տարեկանում: Սովորել է Բոստոնի «Նյու Ինգլենդ» կոնսերվատորիայում: 1937-ին գրել է «Exile» («Աքսոր») 1-ին սիմֆոնիան՝ նվիրված Մեծ եղեռնին: Ուսումնասիրել է արլ., մասնավորապես՝ հայկ. երաժշտությունը, կազմել հոգևոր երգերի ժող. (1940-ական թթ.): Նույն շրջանում է ստեղծել «Հայկական ռապսոդիաներ», «Էջմիածին», «Խրիմյան Հայրիկ», «Զահակիր», «Անահիտ» ֆանտազիան, «Էլիբրիս» և այլ երկեր: Հիմնադրել է նվագախումբ, որը կատարել է նրա հայկ. ստեղծագործությունները: Ստեղծագործել է զանազան ոճերով, շրջագայել Արևելքի երկրներում, ուսումնասիրել նրանց դաս-ավանդ. երաժշտությունը: Մասնակցել է Մադրասի երաժշտ. ակադ-ի փառատոներին:

Ալան Հովհաննես

Վաղ շրջանի գործերը կրել են Յ. Սիբելիուսի ազդեցությունը: Գրել է «Վառվող տուն» (1962), «Պիղատոս» (1964) օպերաները, սիմֆոնիաներ («Սուրբ Հեղինե լեռը», «Անի», «Խորհրդավոր լեռը» ևն), կոնցերտներ, կամեր-դաշնամուր., վոկալ, վոկալ-սիմֆ. գործեր, հոգևոր երգեր [մի շարք վոկալ երկեր, «Շնչական թմբուկ» (1962)՝ երաժշտաբալետ. դրամա, գրական տեքստերը՝ Հ-ի]: Արլ. ոճի սիմֆ. և կամեր. երկերը հիմնված են հնդ., ճապոն., կորեական, Հավայան կղզիների ժողովուրդների հնագույն երաժշտ. ավանդույթների վրա՝ «Նագուրան» (հվ-հնդ. ազգ. հնագույն երաժշտ. գործիքների համար), «Արջունա» սիմֆոնիան (№ 8, 1947), «Մադրաս-

յան սոնատը» (1961), «Կոկե Նո Նիվան» («Մամոռոտ այգի», 1961), «Ֆանտազիա ըստ ճապոնական փայտագրություննե-րի» 15-րդ, «Արծաթե ուխտագնացութ-յուն» 16-րդ սիմֆոնիաները (երկուսն էլ՝ 1963), դաշնամուր. կվինտետը և այլ գոր-

Հատված Ալան Հով-հաննեսի «Ջահակիր» (ալտի համար) երկից

ծեր առանձնանում են ձայնակարգերի ինքնատիպ համադրությամբ, երաժշտ. նյութի շարադրման ուրույն իմպրովիզա-ցիոն սկզբունքներով, ձայնակառուցվածք. առանձնահատկություններով: Հեղինակ է նաև օս., ղրղզ., քրդ. մոտիվներով փոք-րածավալ գործերի:

50-ից ավելի հայկ. ոճի գործերը հայ երաժշտարվ-ի արժեքավոր էջերից են, որտեղ յուրովի է կիրառել ու մեկնաբանել հայկ. ժող., աշուղ. և հոգևոր երաժշտութ-յան ավանդույթները [«Սուրբ Վարդան» (1950), «Արարատ» № 14 (1960) և Երրորդ սիմֆոնիաները, «Անահիտ» ֆանտազիան (1946)], սակավաթիվ տարրեր օգտագործել ժող. ու հոգևոր երաժշտությունից (2-րդ «Հայկական ռապսոդիայում»՝ «Քրիստոս փառաց թագավորն» մեղեդին՝ տաղ Տե-առընդառաջի, նաև ժող. 2 մեղեդի, 3-րդ «Հայկական ռապսոդիան» հիմնված է «Սիրտ իմ, սասանիր» հոգևոր մեղեդու և «Պաղ աղբյուրի մոտ» գուսան. երգի վրա, ևն): Կամեր-գործիք. երկերից ուշագրավ են «Վանա լճի սոնատ», «Ախթամար», «Լու-սածագ», «Վարագ», «Արևագալ», «Արթիկ» (գալարափողի համար), «Թալին» (ալտի համար) կոնցերտները, 12 հայկ. ժող. եր-գերի մշակումները՝ դաշնամուրի համար:

«Սր Հովհաննես Մանդակունի», մանր-անկար (XIV դ., ժող., Մլոնդ., ձեռ. № 8029)

Գրել է նաև «Պերիկլես» (1975), «Էջմի-ածին» և այլ օպերաներ, «Հիսուսի ճանա-պարհը» (1974) օրատորիան: ԱՄՆ-ի անկա-խության հռչակման 200-ամյակին նվիրված հիմնի հեղինակն է: Ուդի և լար. քառյակի համար «Խորհուրդ նահատակաց» երկը (Մեծ եղեռնի զոհերի հիշատակին) առա-ջին անգամ կատարվել է Նյու Յորքում (1972): 1991-ին «Քառնեգի Հոլլում» նշվել է Հ-ի ծննդյան 80-ամյակը. գալա համերգին նրա ղեկավարությամբ տեղի է ունեցել նոր՝ «Արցախ» 65-րդ սիմֆոնիայի համաշխ. պրեմիերան: 1965-ին այցելել է Հայաստան, հանդես եկել իր երկերի կատարմամբ:

Հ-ի ստեղծագործություններն արլ. և արմ. երաժշտ. մշակույթների բազմազան տարրերի համադրման և ինքնատիպ փոխ-ներթափանցման նմուշներից են: Գրկ-յան և արվ-ի ամերիկ. ակադ-ի (1977), Ամերիկ. համալսարանների և այլ գիտաուս. հաս-տատությունների երաժշտության պատվա-վոր դ-ր: Ամերիկ. արվ-ի ազգ. ինստիտուտի (1951), ՀԿՄ «Կոմիտաս» (1985) մրց-ներ:

Գրկ. Երնջակյան Լ., Ալան Հովհաննես, ՍՍ, 1975, № 12: Նույնի, Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութա-յին հաչտողիներում, Ե., 2015: Բրուտյան Յ., Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Ե., 1982: Նույնի, Հայ երաժշտական մշակույթի աշխար-հասփիւռ ընձիւղները, Ե., 1996:

Լիլիթ Երնջակյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, Սուրբ Հովհան Մանդակունի [մոտ 403, գ. Ծախնոտ (Արշարունյաց գավառ)–490], Ամենայն հայոց կաթո-ղիկոս՝ 478-ից: Աշակերտել է Սահակ Ա Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին: Կարևոր դեր է ունեցել ծիսամատյանների կազմ-ման գործում: Ժամագրքում հեղինակ է «Զարուցեալքս ամենէքեան» քարոզի, «Զքէն գոհանամք» աղոթքի, Մաշտոցում՝ մկրտության, պսակ, խաչ, եկեղեցի, հիմ-նարկեք, ավազան, սկիհ, մաղզմա, գիրք և պաշտամունքի հանդերձ, ժամահար, նաև սարկավագ, քահանա, եպիսկոպոս օրհնե-լու կարգերի: Նրա անունով պահպանված «Խրատ վանականաց միանձանց» երկում հավաքված են նաև «Ի սուրբ վկայսն Քրիս-տոսի», «Կոչումն ապաշխարհութեան» մա-տենագր. միավորները և կանոններ: Նրան են վերագրվում նաև թարգմանական եր-գեր՝ «Պատարագամատույցը» (Աթանաս Ալեքսանդրացու անունով), երեկոյան ժա-մերգության «Լոյս զուարթ» օրհներգությու-նը, Հիմնանց («Գովեա» կոչված) երգերը, Տիրոջ տապանակի, Հովհաննես Մկրտչի նշխարների («Այսօր ցնծան դասք») կա-նոնները, նաև Թարգմանչաց և Առաքելոց կանոնների հնագույն շարականները: Հե-ղինակ է նաև բազմաթիվ շարականների, առավել հայտնի է ճառերով, քարոզներով:

Երկ. *Յաղագս սիրոյ եւ սրբութեան, որով պղտաբերին արարածք, աշխատասիր.՝ Գ. Տէր-Մկրտչեանի, Վաղ-պատ, 1903:*

Գրկ. *Տէր-Մկրտչեան Կ., Յովհան Մանդակունի եւ Յովհան Մայրագոմեցի, Շողակաթ,*

Վաղ-պապ, 1913: Կանոնագիրք Հայոց, հ. 1, Ե., 1964: Ա ր ե ղ յ ա ն Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 3, գիրք 1, Ե., 1968:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ ՕԶՆԵՑԻ, Սուրբ Հովհաննես Օձնեցի, Հովհան Իմաստասեր [ծ. թ. անհտ, գ. Օձուն (Գուգարքի Տաշիրք գավառ, այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–728, գ. Արդվի, ամփոփված է եկեղեցու բակում], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 717-ից: ՀԱԵ տոնելի սուրբ:

Հ. Գ Օ. ժամանակի անվանի շարականագիրներից էր: Նրան են վերագրում «Գիրք թղթոց» ժող-ի խմբագրումը, նաև 4 Ավագ տոների երգասացությունների մեծագույն մասը, Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի կանոնը (ունի 5 շարական՝ Օրհնութիւն՝ «Յաղթող գտաւ», Հարց՝ «Մեղաք յամենայնի», Ողորմեա՝ «Անսկիզբն Աստուած», Տէր երկնից՝ «Երդուաւ Տէր», Մանկունք՝ «Օրհնեցէք զենէր»), Ստեփանոս Նախավկայի կանոնը (7 շարական, որից 2-ը՝ Օրհնութիւն, մնացածը՝ Հարց, Ողորմեա, Տէր երկնից, Մանկունք, Ճաշու), Պետրոս և Պողոս առաքյալների կանոնը (6 շարական՝ Օրհնութիւն՝ «Յնծայ այսօր եկեղեցի», Հարց՝ «Որ խոստացար տալ», Ողորմեա՝ «Ամոլք հավատոյ», Տէր երկնից՝ «Երանի սուրբ առաքեալքն», ստեղի Մանկունք՝ «Որ արփիահրաշ», ստեղի Համբարձի՝ «Որ անստորագիրն է»), Որոտման որդիների կանոնը (5 շարական՝ Օրհնութիւն՝ «Որ էն էութեան», Հարց՝ «Որ զամենայնըն յոչընչէ արարեր», Ողորմեա՝ «Որդիքն Որոտման», Տէր երկնից՝ «Հոգի իմ կանխէ առ քեզ, Աստուած», ստեղի Մանկունք՝ «Որ յանատուեր ի լուսոյն»): Շարականներն առանձնանում են աստվածաբան. և դավանաբան. խորությամբ, լեզվի գեղեցկությամբ:

Գրկ. *Ա թ ա յ ա ն Ռ., Հայկական հազային նոտագրությունը, Ե., 1959: Պ ա լ յ ա ն Խ., Հովհան Օձնեցուն վերագրվող շարականները, Էջմիածին, 1984, № 11–12: Թ ա հ մ ի զ յ ա ն Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դարերում, Ե., 1985:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ Պլուզ [1220/30, Մեծ Հայքի Եկեղյաց գավառ, հավանաբար՝ Երզնկա–1293, Կիլիկիա, Ակների վանք (շիրիմը՝ Երզնկայի Սբ Նշան եկեղեցու առաջնորդ. աթոռի տակ)], հանրագիտակ, փիլիսոփա, աստվածաբան, տիեզերագետ, բնագետ, մեկնիչ, քերական, գեղագետ, բանաստեղծ, երաժիշտ, մանկավարժ: Վարդապետ՝ 1268-ից: Հեղինակ է մի շարք աշխ-ների, խրատների, արձակ (մեծ մասն ամփոփված է ժող-ներում. Մտնդ., ձեռ. № 2173, 2854, 2992) և չափածո գործերի: Գրել է տաղեր, ներբողներ, մեղեդիներ, շարականներ, ողբեր և այլ քերթվածներ:

Հովհաննես Գ Օձնեցի

Հ. Ե. երաժշտարվ-ը համարել է մարդկային իմացության ձևերից, որն անմիջապես կապված է «լսողական»՝ ձայն. աշխարհի հետ: Նորովի է մեկնաբանել մարդու վրա երաժշտության ներգործության մասին հինավուրց դրույթները, տեսականորեն հիմնավորել միջնադար. Հայաստանում երաժշտության օգնությամբ հիվանդներին բուժելու տարածված փորձը: Յուրովի լրացնելով երաժշտարվ-ի եռակի բաժանման մասին Դավիթ Քերականի մտքերը («բարու», «չարի» և «միջակի»)՝ առաջադրել է երկակի բաժանում՝ «աստվածային» (կատարվում է տաճարներում) և «մարդկային» (կատարվում է «ուրախական» հանդեսներում, խրախճական ժողովներում):

Հ. Ե. ստեղծել է ուսմունք երաժշտի գիտակցության մեջ ծագող «անմարմին» ելևէջների և կատարման ընթացքում մարմնավորող «մեծ ու փոքր», «ծանր ու թեթև»,

Հատված Հովհաննես Երզնկացու «Այսօր ձայնն հայրական» հորդորակից

«սուր ու բութ», «սուղ և երկար» ֆիզ. երևույթի, տեսակների ու երաժշտության ձայնի տարբերիչ հատկանիշների մասին: Կազմել է ձայների տեսակների հարուստ աղյուսակ, որտեղ պատշաճ տեղ է գրավում «չափ» ու «կշռով» աչքի ընկնող «արուեստաւորս»՝ երաժշտ. ձայնը, խորացրել է տաղարվ-ի աշխարհականացման ընթացքը՝ միաժամանակ կարևոր ավանդներ մուծելով հոգևոր երաժշտության զարգացման մեջ: Օժտված էր գեղեցիկ ձայնով և կատարման հազվագյուտ

«Հովհաննես Երզնկացի և Ապոց իշխան», մանրանկար (1644, ժող., Մլոնդ., ձեռ. № 7046)

Հովհաննես Սարկավագ

Հովհաննես Սարկավագի «Տաղեր և հոգևոր երգեր» գրքի (2017) շապիկը

ձիրքով: Նրան անվանել են «քաղցրիկ», «քաղցրաձայն» և «պիւլպիւլ» վարդապետ: Գործերը հրատարակվել են Շարականոց (1664, 1665, Ամստերդամ) ժող-ներում:

Գրկ. *Թահմիզյան Ն., Չայնի մասին ռամունքը հին և միջնադարյան Հայաստանում, ԲՄ, 1962, № 6: Նույնի, Էջեր միջնադարի հայկական երաժշտական գեղագիտությունից, Էջմիածին, 1963, № 11:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ (մոտ 1750-ական թթ., Կարին–1820-ական թթ-ի սկիզբ, Կարին), տաղասաց, գրիչ, մանկավարժ: Առաջին տաղերը գրել է 1770-ական թթ-ի սկզբներին, վերջին թվակիր գործը՝ 1819-ին: 1799-ին ճանաչված մանկավարժ էր՝ Արդար վարժապետ անունով:

Հեղինակ է 5 վկայաբան-էպիկ. պոեմների, որտեղ անդրադարձել է պատմ. որոշակի դեպքերի («Յաղագս ումեմն Մլըսր կոչեցէալ Սահակ մանկան...», 1788, «Յաղագս Վառվառ անուն ումեմն արիասիրտ աղջկան...», 1810, ևն): Նրանից պահպանվել է շուրջ 130 տաղ, որոնց մեծ մասը աշխարհիկ սիրո թեմայով է, և գրել է երգելու համար («Տաղ սիրոյ», «Ի սէր սիրելոյդ», «Տապ սիրոյ քոյ այս տոչորեաց», «Հայիմ սէրս, որ ճեմս առեալ...» ևն): Այս երգվող տաղերը տարածված էին Կարինում և նրա շրջակայքում:

Գրել է նաև ժող. խաղերին և ջանգյուլումներին նման քառյակներ ու հոգևոր երգեր: Ունի հայատառ թուրք. տաղեր: Կատարել է թարգմանություններ հայ-ից թուրք. և հակառակը: Թուրք. է թարգմանել նաև Կոմիտաս կաթողիկոսի շարականները, Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ» տաղը:

Գրկ. *Հայոց նոր վկաներ, աշխատությամբ՝ Հ. Սանանդյանի և Հ. Ամատունու, Վաղ-պապ, 1903: Հովհաննես Կարնեցի, Տաղարան (աշխատասիր.՝ Շ. Նազարյանի), Ե., 1962:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿ ԽԼԱԹԵՑԻ (ծ. թ. անհտ–1438), գուսան: Վաղ տարիքից նվիրվել է երաժշտությանը, անցել գուսան. արվ-ի հիմնավոր դպրոց: Օժտված է եղել հազվագյուտ ձայնով, երգել է հայկ. և թուրք. աշխարհիկ, նաև հայ. հոգևոր երգեր: Մասնակցել է գուսանների հրապարակ. մրցույթների և միշտ հաղթել: Սպանվել է երիտասարդ տարիքում՝ կրոնափոխությունը մերժելու համար:

Գրկ. *Հայոց նոր վկաներ, աշխատությամբ՝ Հ. Սանանդյանի և Հ. Ամատունու, Վաղ-պապ, 1903: Թահմիզյան Ն., Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԼՀԳ, 1971, № 9:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ, Հովհաննես Իմաստասեր, Սոփեստոս, Պոետիկոս (1045–50-ի միջև, Արցախի Փառիսոս գավառ–1129, Հաղպատ, ամփոփվել է Հաղպատի վանքի Սբ Աստվածածին եկեղեցու զանգակատանը), աստվածաբան, փիլիսոփա, տոմարագետ, մատենագիր, մանկավարժ, երաժշտագետ-տեսաբան, երգաստեղծ: Սովորել է Հաղպատի վանքում, ապա աշակերտել է Ուռճացի վարդապետին: Հեղինակ է աստվածաբան-դավանաբան., մեկնող., հակաճառ., պատմ., տոմար., տիեզերագիտ., փիլիսոփայական, գեղագիտ. և այլ բնույթի երկերի, նաև շարականների, տաղերի, ներբողների, աղոթքների:

Աշակել է արվ-ի ընդհանուր տեսություն: Նրա գեղագիտ. ուսմունքը հիմնականում շարադրված է «Բան իմաստութեան ի պատճառս...» 188-տողանոց պոեմում: Հեղինակը երաժշտության և բանաստեղծության աղբյուրը դիտարկում է բնության մեջ. մարդը բնությունից է ստանում իր տաղանդը, հետևաբար նրա մեջ երաժշտության և բանաստեղծության ձիրքերը բնածին են: Նա նպաստել է Անիի և Հաղպատի գիտագեղ. ավանդույթների զարգացմանը: Իր աշակերտներին՝ հոգևորականներին սովորեցրել է նաև խազագրություն, ծիս. մատյանների երաժշտանշանագրային բովանդակությունը վերծանելու-ընթերցելու սկզբունքները: Մեծ ներդրում ունի սաղմոսերգության նորոգման մեջ, ճշտումներ է արել Սաղմոսարանում: Մասնակցել է ամենօրյա ժամերգություններին և կիրակնօրյա պատարագներին, հսկել է նրանց անթերի կատարումը: Կուտակել է Գանձարանի նյութերը և էապես հարստացրել շարականների հորինման վերսկսված փորձը: Ղևոնդյանց հիշատակին նվիրված նրա «Անճառելի բանդ Աստուած» մանկունքը, զարգացնելով Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականի լավագույն հատկանիշները, նախապատրաստել է Ավարայրի ճակատամարտի հերոսներին ոգեկոչող Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» ստեղծագործությունը:

Գրկ. *Թահմիզեան Ն., Յովհաննէս Սարկավագ Իմաստասէրը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը, Բազմավէպ, 1978, № 3–4: Արևշատյան Ա., Անիի երաժշտական մշակույթը, Ե., 2014:*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Անուշ Հովհաննեսի (ծ. 08.11.1986, Երևան), երգչուհի (սոպրանո)։ Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցը, ԵՊԿ (2008, Ն. Փիրումովայի դասարան) և ասպիրանտուրան (2010), Շոտլանդիայի թագավոր. կոնսերվատորիան (2013)։ 2007–10-ին՝ ԵՊԿ օպեր. ստուդիայի, 2013–15-ին՝ Լոնդոնի «Քովենթ Գարդեն» օպեր. թատրոնի և նրա «Լիբլրի» ստուդիայի երգչուհի։ Դերերգերից են՝ Դոննա Էլվիրա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Վիոլետտա (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Ֆրասկիտա (Ժ. Բիզեի «Կարմեն») ևն։

«Նոր տարվա երաժշտական փառատոնի» (Հատուկ մրց., 2018, Գլխատ՝ Շվեյցարիա), Է. Հելֆինգերի անվ. (1-ին մրց., 2014), «Դելֆյան խաղեր» (արծաթե մեդալ, 2010) միջազգ., Տ. Սազանդարյանի անվ. հանրապետ. (Հատուկ մրց., 2006) մրցույթների դափնեկիր։

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արամ Ռոբերտի (ծ. 15.08.1984, Երևան), կոմպոզիտոր։ ՀԿՄ անդամ։ Սովորել է ԵՊԿ կոմպոզիցիայի (2003, Լ. Չաուշյանի դասարան) և ֆլեյտայի (2003, Ե. Նոնինյանի դասարան) բաժիններում։ 2018-ից՝ ԵՊԿ պրոռեկտոր։ Հիմնադրել է (Ա. Ավանեսովի հետ) ժամանակակից երաժշտության «AUS» անսամբլը (2001)։ 2003-ին տեղափոխվել է Շվեյցարիա։ Ավարտել է Ժնևի կոնսերվատորիան (2008, Մ. Ժարրելի դասարան)։ Վարպետության դասեր է առել կոմպոզիտորներ Տ. Մյուրայից և Պ. Էտվըշից։ Շվեյցարիայի ԿՄ անդամ։ «International Composer Pyramid» մրցույթ-փառատոնի ընտրյալ 10 կոմպոզիտորներից է (2011, Ֆրանսիա-Անգլիա)։ Նրա ստեղծագործությունները հնչել են մի շարք միջազգ. նախագծերում և փառատոներում։ Համագործակցել է ճանաչված անսամբլների և երաժիշտների հետ։

Կոմպոզիտորների «Pre-Art» միջազգ. (1-ին մրց., 2005, Յուրիխ), «Fluchtwege» (1-ին մրց.), արվեստագետների «Kiefer-Hablitzel» (երկուսն էլ՝ 2011, Բեռն) և այլ մրցույթների դափնեկիր։

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արիստակես (7.10.1812, Կ. Պոլիս –27.02.1878, Կ. Պոլիս), երաժիշտ, ձայնագրագետ։ Համբարձում ***Լիմոնճյանի*** աշակերտը։ Կ. Պոլսի Գում Գափուի եկեղեցու դպիրը։ Երաժշտություն է դասավանդել Պեզճյան մայր վարժարանում։ Լրացրել է նոր հայկ. ձայնագրության տևողության նշանները, սահմանել անունները, արագության չափերը։ Գաբրիել ***Երանյանի*** հետ հրատարակել է եվրոպ. նոտագրությամբ հայ առաջին երաժշտ. ***«Քնար արևելյան»*** հանդեսը (1857)։ Գրել է հոգևոր երգեր, «Լևոն Առաջին իշխան Կիլիկիո և որդի նորին կույր Ռուբեն» երգախառն թատերագրության երաժշտությունը (բեմ.՝ 1872), գրառել շարականներ։

Անուշ Հովհաննիսյան

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գայանե Մեսրոպի (ծ. 08.06.1953, Երևան), երգչուհի։ ՀՀ վաստ. արտիստ (2010)։ Ավարտել է ԵՊՄԻ մշակույթի ֆակ-ի գեղագիտության բաժինը (1974)։ Սովորելու տարիներին երգել է «Սերպանտին» անսամբլում, 1974–87-ին՝ Հայաստանի պետ. ջազ. նվագախմբի մենակատարուհի. երգացանկում՝ էստրադ., ժող. երգեր (Ռ. Ամիրխանյանի «Իմ սեր», Ա. Գրիգորյանի «Իմ Հայաստան», Ռ. Գալոյանի «Աերոֆլոտ», Ա. Սաթյանի «Արդյոք հիշո՞ւմ ես դու» ևն)։ Նվագախմբի հետ համերգներով շրջագայել է Հայաստանում, ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում, Լեհաստանում, Գերմանիայում, Նիդեռլանդներում և այլուր։ 1987–90-ին աշխատել է Սիրիայում, Լիբանանում, 1994–95-ին՝ Մարսելում, 1996–2006-ին՝ Վիեննայում։ Մենահամերգներով հանդես է եկել Լոնդոնում (1991), Կիպրոսում, Ժնևում (1992) և այլուր։ 2006-ից դասավանդում է Հայաստանի երգի պետ. թատրոնում։ 2011-ից մասնակցում է «Երգում է 70-ականների Երևանը» համերգ. ծրագրին։



Արամ Հովհաննիսյան

«Երիտասարդ ձայներ» հանրապետ. երաժշտ. մրցույթի 2-րդ մրց. (1972, Երևան), Երիտասարդ կատարողների միջազգ. երաժշտ. փառատոնի (1973, Բեռլին), «Տաշիր» հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության (2010, Մոսկվա) դափնեկիր։

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գայանե Սիմոնի (ծ. 12.05.1962, Երևան), դաշնակահարուհի։ Սիմոն ***Հովհաննիսյանի*** դուստրը։ Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1980), ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1985, Ռ. Շուգարովի դասարան) և ասպիրանտուրան (1987, ղեկ-ներ՝ Կ. Կոստանյան, Լ. Մամիկոնյան)։ 1984–2014-ին՝ կոնցերտմայստեր՝ տարբեր երգչախմբերում։ 1988-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2002-ից)։ Մենահամերգներով (նաև որպես երգչախմբի

Գայանե Մ. Հովհաննիսյանը ելույթի պահին

Գոհար Հովհաննիսյան

Դավիթ Հովհաննիսյան

Դ. Հովհաննիսյանը Էդիպի դերում (Ջ. Էնեսկոյի «Էդիպ»)

կոնցերտմայստեր) ելույթներ է ունեցել ՀՀ-ում, ՌԴ-ում, Լիտվայում, Լատվիայում, Բելառուսում, Վրաստանում:

Երգչախմբերի միջազգ. փառատոնի (1990, Մինսկ), «Վերածնունդ» միջազգ. V մրցույթ-փառատոնի (2013, Գյումրի) դափնեկիր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գոհար Կարապետի (ծ. 23.03.1982, Երևան), երգչուհի: 1989-ից հաճախել է Երևանի «Ջորավար Անդրանիկ» մանկ. անսամբլ, 1995-ից՝ «Դո-ռե-մի» վոկալ ստուդիա, ավարտել է Ջիվանու անվ. աշուղ. դպրոցը (2001), Ջազ. էստրադ. քոլեջի ժող. երգեցողության բաժինը (2005, դասատու՝ Ռ. Սաթևոսյան): 2003–08-ին՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի, «Հայ երգասաններ» խմբի մեներգչուհի: 2006-ից (Ա. Իսպիրյանի և Ռ. Սասունցու հետ) համերգներով հանդես է եկել բազմաթիվ երկրներում. երգացանկում՝ հայկ. ժող., աշուղ., հայրենասիր. և այլ երգեր: Ունի 2 ձայնասկավառակ:

«Ոսկե աստղ» մրցանակաբաշխության «Տարվա ժողովրդական երգչուհի» մրց. (2008, ԱՄՆ):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Դավիթ Բարսեղի (ծ. 06.01.1927, Բուխարեստ–2007, Բուխարեստ), երգիչ (բարիտոն): Ռումինիայի վաստ. արտիստ (1952): 1947-ին սովորել է Բուխարեստի Չ. Պորումբեսկու անվ. կոնսերվատորիայում, ավարտել Կլուժ Նապոկայի «Գ. Դիմա» կոնսերվատորիան (1952): 1950-ից՝ Կլուժ Նապոկայի, 1958-ից՝ Բուխարեստի, 1968–77-ին (միաժամանակ)՝ Համբուրգի օպեր. թատրոնների մեներգիչ: Օժտված էր ընդարձակ դիապազոնի թավ, տպավորիչ ձայնով: Կատարել է շուրջ 50 բաս-բարիտոն. դերերգեր՝ դրսևորելով ոչ միայն բարձրարվ. երգչական և արտիստ. ունակություններ, այլև կերպարների ինքնատիպ մեկնաբանություններ:

Աշխարհի լավագույն օպեր. թատրոնները (Լիոն, Թուլուզ, Ցյուրիխ, Բեռլին, Աթենք, Ստոկհոլմ, Վիսբադեն, Փարիզ, Լենինգրադ, Մոսկվա, Վիեննա ևն) հրավիրել են նրան՝ հանդես գալու տարբեր դերերգերով, երգելու աշխարհահռչակ երգիչների հետ՝ անվանի դիրիժորների ղեկավարությամբ: Ռումինիայի օպեր. թատրոններում շուրջ 30 տարի եղել է Էդիպի դերերգի (Ջ. Էնեսկուի «Էդիպ») լավագույն կատարողը: Բարձր է գնահատվել նաև Թելրամունդի դերերգը (Ռ. Վագների «Լոենգրին», բեմադրել է Ռ. Վագների թոռը՝ Վ. Վագները, դիրիժոր՝ Մ. Պ. Քունցշ, Համբուրգ): Դերերգերից են՝ Տոնիո (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ»), Մեֆիստոֆել (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Ռիգոլետտո, Ամոնասրո (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Աիդա»), Սկարպիա (Ջ. Պուչչինիի «Տոսկա»), Բորիս Գոդունով (Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով»), Օնեգին (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Ֆիգարո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Մոսի (Ա. Տիգրանյանի «Անուշ», համերգ. կատարում՝ «Կոմիտաս» երգչախմբի և նվագախմբի հետ, Սարո՝ Կարպիս Զորյան, Անուշ՝ Արաքս Սվաճյան, դիրիժոր՝ Կ. Հարությունյան, 1962): 1958-ից պարբերաբար ելույթներ է ունեցել Երևանում:

Ռումինիայի Պետ. (1952), Մեծ (1974, Փարիզ) և 1-ին (1976, վերջին երկուսը՝ «Էդիպ» ձայնապնակի համար) մրց-ներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Էդգար Սերգեյի (14.01.1930, Երևան–27.12.1998, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1962): ՀՀ (1972), ԽՍՀՄ (1986) ժող. արտիստ: Սովորել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցում, Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ (1953, Գ. Եղիազարյանի դասարան), ՄՊԿ ասպիրանտուրան (1957, ղեկ.՝ Ա. Խաչատրյան): 1962–68-ին՝ ԵՕԲԹ տնօրեն, 1970–74-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի, 1979–84-ին՝ ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոյի կամեր. երգչախմբի գեղ. ղեկ., 1986–91-ին՝ ԵՊԿ ռեկտոր: Հայ երաժշտության զարգացմանը նպաստել է նոր, համարձակ ստեղծագործ. լուծումներով: Նրա ստեղծագործության հիմնական մոտիվներն են ժողովուրդը, նրա պատմությունն ու արդի կյանքը, որը ներկայացրել է խստաշունչ վիպականությամբ, հերոսականությամբ, սուր դրամատիզմով, նուրբ քնարականությամբ, հոգեբան-փիլիսոփայական կերպարներով:

Հ-ի ստեղծագործության մեջ կարևոր տեղ ունեն բալետները: 1950-ական թթ-ի կեսերին, կամեր-գործիք. երկերին զուգահեռ, գրել է «Մարմար» բալետը (1957, լիբրետտոն՝ Հ. Ղուկասյանի, Ի. Արբատովի, Վ. Վարկովիցկու)՝ հիմք դնելով երաժշտ. թատերարվ-ին: Բալետում ժող. երաժշտության ավանդույթների օգտագործումը վկայում է բալետ. երաժշտության մեջ սեփ. երաժշտալեզվի հաստա-

տումը: «Երկնագույն նոկտյուռն» (1964, լիբրետտոն՝ Վ. Շահնազարյանի) մեկ գործողությամբ բալետը դրամատուրգ. առումով ունի կուռ կառուցվածք: «Հավերժական կուռք»-ի (1966, լիբրետտոն՝ Մ. Մնացականյանի) բովանդակության առանցքը չարի ու բարու պայքարն է, ազնվության ու հավատարմության մեծարումը, «մշտնջենական սիրո» գովերգումը, հեթանոսականի ու առասպելականի ինքնատիպ միաձուլումը: Երաժշտության ռիթմական սուր ու ընդգծված գծանկարն առավել պատկերավոր է հարված. և պղնձե փող. գործիքների միասնության շնորհիվ: «Անտունի»-ում (1969, լիբրետտոն՝ Մ. Մարտիրոսյանի) օգտագործել է Կոմիտասի մշակած ժող. մեղեդիները, զարգացրել չափի նուրբ զգացումով, գործիքավորել երաժշտաբեմ. արվ-ի ժամանակակից միտումներին համահունչ:

Խորհրդ. շրջանի հայ երաժշտության մեջ առաջիններից է անդրադարձել բալետ-օպերայի ժանրին. բազմաժանրհամադր. ստեղծագործության ցայտուն օրինակ է «Սասունցի Դավիթ» (1976) բալետ-օպերան, որի երաժշտաբեմ. բարդ հյուսվածքը պայմանավորված է պարողների, մեներգիչների, ասմունքողի և երգչախմբի փոխգործակցությամբ: «Դիմակահանդես» բալետ-կոմպոզիցիայում (1982, ըստ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի համար Ա. Խաչատրյանի գրած երաժշտության) հեռու մնալով ոճավորումից՝ Հ. ձգտել է արտահայտչամիջոցների ողջ համակարգը ենթարկել Ա. Խաչատրյանի ինքնատիպ ոճին: «Ճանապարհորդություն դեպի Արզրում» (ըստ Ա. Ս. Պուշկինի, 1987) օպերան մեծածավալ, գեղ. բարձրարժեք գործ է:

Հ-ի կամեր. և սիմֆ. ստեղծագործությունն առանձնանում է բարոյափիլ. ընդհանրացումներով: Լայնախոհությունը, դինամիզմը, ազգ. լեզվի նորացումը բնորոշ են դաշնամուր. կվինտետին (1955), սիմֆոնիաներին (1957, 1983, 1984), «Գողթան» (1993) սիմֆ. պոեմին, «Գրիգոր Նարեկացի» (1995) օրատորիային, կվարտետներին (1950, 1958, 1964, 1981), թավջութակի սոնատ-էպիտաֆիային (1975), կամեր. նվագախմբի կոնցերտ-բարոկկոյին (1984): Սիմֆ. և կամեր. երկերում ավանդ. ցիկլ. ձևերը զուգակցել է Արևելքի երաժշտությանը բնորոշ արձակ-պատմողականությանը (սիմֆոնիա, կվարտետ № 2, թավջութակի մենանվագ սոնատ):

Հայ ժող. երաժշտ. մշակույթի տարբեր շերտերին անդրադառնալը Հ-ի ստեղծագործության մեջ, որպես կանոն, իմաստավորված է երկի որոշակի բովանդակությամբ (Ա. Իսահակյանի խոսքերով ժող. երգերի օգտագործումը բանաստեղծին նվիրված № 2 կվարտետում, «Կռունկ» երգը՝ «Անտունի» բալետում, Սասունցի Դավիթ» էպոսի երգվող հատվածները՝ համանուն բալետ-օպերայում, միջնադար. «Հավիկ» տաղի սիմֆոնիկացումը դարձրել է երաժշտաբեմ. ընդարձակ պատումի՝ սիմֆոնիայի հիմք):



Էդգար Հովհաննիսյան

Ազգ. խմբերգ. գրկ-յան մեջ երաժշտատեխ. և հոգեբան. կերպար. կարևոր նյութ

Տեսարան Է. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» բալետ-օպերայի բեմադրությունից (1976, ԵՕԲԹ)

են Հ-ի խմբերգերը (ժող. երգերի հիման վրա՝ 40, Վ. Տերյանի խոսքերով՝ 20): Վոկալ-սիմֆ. և խմբերգ. երկերին բնորոշ է լայնաշունչ մեղեդիականությունը: Գրել է նաև «Երկու ափ» պոեմը (1952, ցիկլ)՝ ա կապելլա երգչախմբի համար, «Էրեբունի-Երևան» (հետագայում՝ Երևան ք-ի օրհներգ), «Սարդարապատ» (երկուսի

Տեսարան Է. Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» բալետի բեմադրությունից (1966, ԵՕԲԹ)

խոսքերն էլ՝ Պ. Սևակի), «Արփա-Սևան» (խոսք՝ Յ. Սահակյանի) երգերը, նուրբ քնար. ռոմանսներ (ըստ Վ. Արամունու «Գիշեր էր կես» ևն), կինոերաժշտություն [«Պատվի համար», 1956, «Հյուսիսային ծիածան», 1960, «Արտակարգ հանձնարարություն», 1965, «Կամոյի վերջին սխրան-

քը», 1973, «Հուսո աստղ» («Միսիթար սպարապետ», 1978) ևն):

Հ–ի նախաձեռնությամբ ԵՕԲԹ–ում իրականացվել են մի շարք ներկայացումներ (Ի. Ֆ. Ստրավինսկու «Էդիպ», Լ. Բեռնստայնի «Վեստսայդյան պատմություն», Ռ. Վագների «Տանհոյզեր» ևն): Նպաստել է Հայկ. ժող. երգի–պարի անսամբլի պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը, երկացանկի հարստացմանը: Հիմնադրել է Հայկ. հեռուստառադիոյի կամեր. երգչախումբը, կազմակերպել կամեր. երաժշտության փառատոներ:

Թամար Հովհաննիսյան

Հեղինակ է հրապարակախոս. և արդի հայ երաժշտության զարգացմանը վերաբերող հոդվածների:

ՀԽՍՀ ԳԽ (1962–71), ԽՍՀՄ ժող. (1989–1991) պատգամավոր: Տիտոգրադի և Երևանի (1998) պատվավոր քաղաքացի: Երիտասարդության և ուսանողների համաշխ. փառատոնի (1957, Մոսկվա) դափնեկիր, ՀՀ (1967), ԽՍՀՄ (1979) Պետ., Ա. Խաչատրյանի անվ. (1984) մրց–ներ, ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

Երկ. *Կյանքս հուշերում, կազմ.՝ Ծ. Մովսիսյան, Ե., 1998:*

Գրկ. *Գասպարյան Ի., Էդգար Հովհաննիսյան, Ե., 1969: Մովսիսյան Ծ., Էդգար Հովհաննիսյանի կամերային–գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները, Ե., 2012: Генина Л., Эдгар Оганесян, М., 1959; Тигранов Г., Армянский музыкальный театр, кн. 3, Е., 1975.*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Էդինա–Բեատրիս [15.03.1927, Բաղդադ–07.07.2008, Բլումինգտոն (ԱՄՆ)], դաշնակահարուհի: Սովորել է Իրաքի Գեղեցիկ արվ–ների ինստ–ի դաշնամուրի բաժնում, Լոնդոնի թագավոր. երաժշտ. ակադ–ում (ղեկ.՝ Մաքս), Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցում: Առաջին մենահամերգը տեղի է ունեցել «Քառնեգի Հոլլ» համերգասրահում: Վերադառնալով Բաղդադ՝ նշանակվել է Իրաքի Գեղեցիկ արվ–ների ինստ–ի դաշնամուրի բաժնի վարիչ, արտերկրում մասնակցել վարպետության դասընթացների և երաժշտ. սեմինարների: 1961–91–ին՝ Իրաքի ազգ. սիմֆ. նվագախմբի դաշնակահարուհի: 1969–72–ին դասավանդել է Մինեսոթայի համալսարանում և «Մակալեստերա» քոլեջում (ԱՄՆ): Առաջին կին կոմպոզիտորն է Իրաքում, նաև առաջին դաշնակահարուհին, որը հանդես է եկել մենահամերգներով: Իրան–իրաքյան պատերազմի ժամանակ, որպես «մշակույթի դեսպան», ելույթներ է ունեցել քաղ. լարված իրադրությամբ վայրերում: Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը Հ–ին նվիրել է «Steinway» մակնիշի դաշնամուր: 1994–ին տեղափոխվել է ԱՄՆ: Համագործակցել է մշակույթի բազմաթիվ կենտրոնների հետ, նաև որպես երգեհոնահար նվագել է Լոնդոնի, Ժնևի, Բաղդադի և այլ հայկ. եկեղեցիներում:

Էդինա–Բեատրիս Հովհաննիսյանը ելույթի պահին

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Թամար Ստեփանի (ծ. 14.04.1948, Երևան), դաշնակահարուհի, երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1987): ՀԿՄ անդամ (1991–ից): Ավարտել է Երևանի Պ. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1966, դասատու՝ Է. Ոսկանյան), ԵՊԿ (1971, Ե. Աբաջյանի դասարան) դաշնամուրի բաժինները: 1971–76–ին դասավանդել է Երևանի № 10 երաժշտ. դպրոցում: 1976–80–ին՝ «Հայհամերգ»–ի, 1992–2007–ին՝ ԵԴԹ մենակատար, 1982–88–ին՝ Հայկ. հեռուստառադիոյի երաժշտ. խմբագրության, 1988–97–ին՝ Հայկ. հանրագիտարանի խմբագրության արվ–ի բաժնի ավագ գիտխմբ., 1997–2000–ին՝ «Ազգ» թերթի մշակույթի բաժնի պատասխանատու, 2004–ից՝ Բեյրութի «Ազդակ» թերթի մշակույթի բաժնի Հայաստանի ներկայացուցիչ:

Որպես մենակատար՝ մասնակցել է ԽՍՀՄ–ում և արտերկրում անցկացվող «Հայ մշակույթի օրեր», «Հայկական երաժշտության տասնօրյակ» փառատոներին, ելույթներ ունեցել Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի հետ: Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ–ում, Ֆրանսիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Սիրիայում, Լիբանանում և այլուր: Հ–ի կատարումներով թողարկվել են ձայնասկավառակ (1976), լազեր. սկավառակներ (2000, 2003), ձայնագրություններից պահվում են ՀՀ ռադիոյի ոսկե ֆոնդում:

Հեղինակ է «Հարություն Դելլալյան. կյանքի և ստեղծագործության ուրվագիծ» (1992), «Սիրո առեղծվածը. Էջեր կոմպոզիտորի կյանքից» (1999), «Արաքս Սանասարյան» (1993, անգլ.՝ 2000), «Կոմպոզիտորը և նրա աշխարհը» (ռուս., 2004), «Դիրիժորը: Ռուբեն Ասատրյան. արվեստագետի դիմանկար» (2003), «Վիկտոր Խաչատրյանի արվեստը» (2004) գրքերի, նաև գիտ. հոդվածների:

Գրկ. *Թամար Հովհաննիսյան. ստեղծագործության վավերագիր, կազմ.՝ Ս. Գալստյան, Ե., 2005:*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Թունիկ (Հարություն) Սարգսի [1908, Բոլնիս Խաչեն (այժմ՝ գ. Բոլնիս՝ Վրաստանի Բոլնիսի շրջանում)–24.12.1941, ՀՄՊ-ում, Յամ Իժորա՝ Լենինգրադի մարզ (ՌԴ), թաղված է Կոլպինոյի եղբայրական գերեզմանատանը], կոմպոզիտոր: Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1939, Ք. Քուշնարյանի դասարան): Գրել է սիմֆոնիա, լար. կվարտետ, «Դաշնամուրային վարիացիաներ», օրորոցային՝ դաշնամուրի և ջութակի, պոեմ՝ կլառնետի համար, երգեր (Ս. Տարոնցու, Խ. Դաշտենցի և ուր. խոսքերով), ռոմանսներ (Ե. Չարենցի «Հիշո՞ւմ ես, դու» բանաստեղծության խոսքերով ևն): Նվագախմբի համար փոխադրել է Լ. վան Բեթհովենի սոնատը, Պ. Ի. Չայկովսկու, Ռ. Շումանի երգերից և ռոմանսներից:

Գրկ. *Կարագյուլյան Է., Թունիկ Հովհաննիսյան, Ե., 1974:*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ծովինար Միսակի (ծ. 1965, Լենինական), քանոնահարուհի: Ավարտել է Լենինականի Շերամի անվ. երաժշտ. դպրոցը (դասատու՝ Լ. Մելիքյան), Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանը (1985, դասատու՝ Ռ. Գևորգյան), ԵՊԿ քանոնի (Ա. Միրզոյանի դասարան), դիրիժորության (Կ. Աթանեսյանի դասարան) բաժինները (1990) և ասպիրանտուրան (1993, ղեկ.՝ Խ. Ավետիսյան): 1993–95-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի կազմում: Աթենքի «Հայաստան» մշակութ. կենտրոնի աջակցությամբ հիմնադրել է ժող. գործիքների և էստրադ. անսամբլներ (2002–03), որոնց հետ համերգներով շրջագայել է Հունաստանում (ուշագրավ է «Եղեռնից մինչև վերածնունդ» ծրագիրը), հայ երեխաների համար վարել դասընթացներ: 1989-ից համերգներով հանդես է եկել ՀՀ-ում, ՌԴ քաղաքներում, Ֆրանսիայում և այլուր:

1993-ից դասավանդում է ԵՊԿ-ում: Քանոնի դաս. դպրոցի հետևորդ-նորաբարներից է, մշակել է քանոն նվագելու տեխ. նոր ձևեր: Հեղինակ է 24 էտյուդի, պիեսների, պոեմի, 3 բալլադի, 2 ռապսոդիայի, 3 կոնցերտի (1996, 2003, 2006-ին՝ 2 քանոնի համար), որոնք ընդգրկվել են 6 ժող-ներում (մեկը՝ «Երգեր»՝ ձայնի և դաշնամուրի համար): Թողարկել է լազեր. ձայներիզ (2003), ձայնասկավառակ («Ծովինար և Լիանա», 2005), CD (2009, 2010): Հրատարակել է «Կոնցերտներ և ռապսոդիա քանոնի համար» (պր. 2, 2004), «Պիեսների ժողովածու» (2004), «Դպրոցական ալբոմ» (պր. 7, 2008), «Իմպրովիզներ» (պր. 8, 2009) ևն, նաև «Վարժությունների մեթոդական ձեռնարկ քանոնի համար» (2010):

Երկ. *Անժելա Աթաբեկյան, Ե., 2007:*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կամո Գեղեոնի (ծ. 23.09.1945, Երևան), ջութակահար: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2004): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1966), ԵՊԿ (1972): 1966–67-ին դասավանդել է Դիլիջանի երաժշտ. դպրոցում, 1977–82-ին՝ Երևանի № 10, 1982–99-ին՝ Ա. Գաբրիելյանի անվ. երաժշտ. դպրոցների տնօրեն և ջութակի դասատու: 1999–2014-ին՝ ԵՕԲԹ տնօրեն, 2014–18-ին՝ ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական:

Մասնակցել է միջազգ. հյուրախաղերի, համապետ. միջոցառումների, ընդգրկվել պետ. հանձնաժողովների կազմում: Հ-ի ղեկավարությամբ ընդլայնվել է ԵՕԲԹ խաղացանկը, բեմադրություններով հանդես են եկել հանրահայտ ռեժ-ներ և բալետմայստերներ (Յ. Գրիգորովիչ և ուր.), ստեղծվել են Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ», Տ. Չուխաջյանի «Արշակ Երկրորդ», Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա», Ա. Խաչատրյանի «Գայանե», Ջ. Վերդիի «Աիդա», «Տրավիատա», «Տրուբադուր», Վ. Բելինիի «Նորմա», Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», Ս. Վ. Ռախմանինովի «Ալեկո» և այլ օպերաների, նաև բալետների բեմադրություններ:

ՀՀ ՄՆ (2011), Երևանի քաղաքապետի (2013) ոսկե, ՀՀ «Մովսես Խորենացի» (2013) մեդալներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հակոբ Միսաքի [18(30).01.1888, Կարս–07.12.1947, Թբիլիսի], երաժշտագետ, հաս. գործիչ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1907), աշակերտել Մակար *Եկմալյանին*, Գրիգոր *Սյունուն*: 1907–08-ին երաժշտություն է դասավանդել Բաթումի, 1908–35-ին՝ Թիֆլիսի հայկ. դպրոցներում:

«Երաժշտական լիգայի», Թիֆլիսի հայոց երաժշտ. ընկերության անդամ, Հա-

Թունիկ Հովհաննիսյան

Ծովինար Հովհաննիսյանը կլույթի պահին

Կամո Հովհաննիսյան

Նար Հովհաննիսյան

Ն. Հովհաննիսյանը Նադիր շահի դերում (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»)

Ն. Հովհաննիսյանը Դոն Բազիլիոյի դերում (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»)

յարտան երաժշտ. մասնաճյուղի հիմնադիրներից: Երաժշտագիտ. հոդվածներով հանդես է եկել Թիֆլիսի և Երևանի մամուլում: Հեղինակ է «Հայ երաժշտության պատմություն», «Հայ ժողովրդական երգի մասին» (անտիպ) աշխ-ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Նար Միքայելի [30.03(12.04.).1913, Թիֆլիս–25.12.1995, Երևան], երգիչ (բաս): ՀՀ (1954), ԽՍՀՄ (1969) ժող. արտիստ: Գրող Նար-Դոսի որդին է: ՀՄՊ (1941–45) մասնակից: Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիան (1941): 1931–37-ին երգել է Թբիլիսիի ՕԲԹ երգչախմբում (1945–51-ին՝ մեներգիչ), 1951-ից՝ ԵՕԲԹ մեներգիչ: 1954–64-ին դասավանդել է ԵՊԿ-ում:

Հնչեղ, հյութեղ, հարուստ երանգավորումներով ձայնի և դերասան. վառ անհատականության շնորհիվ կերտել է բազմաբնույթ օպեր. կերպարներ՝ Դոն Բազիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Մեֆիստոֆել (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Օրովիզ (Վ. Բելլինիի «Նորմա»), Կոնչակ (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր»), Կոչուբեյ (Պ. Ի. Չայկովսկու «Մազեպա»), Դավիթ Բեկ (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Նադիր շահ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Հոր-հոր աղա (Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի»), Ցանգալա (Ջ. Փալիաշվիլու «Դահսի»), Թորոս (Ա. Բաբաևի «Արծվաբերդ») ևն: Ելույթներ է ունեցել ԱՊՀ, Սիբիայի, Լիբանանի, Բելգիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների օպեր. թատրոններում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Շողեր Հովիկի (ծ. 16.02.1991, Երևան), դաշնակահարուհի: Առաջին մենահամերգը՝ 8 տարեկանում, 15-ում ելույթ է ունեցել Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Ավարտել է ԵՊԿ (2012, Ի. Յավրյանի դասարան), մագիստրատուրան (2014), վարպետության բարձրագույն դասընթացները (2016, ղեկ.՝ Ա. Բաբախանյան): Մասնակցել է Ս. Նավասարդյանի, Ջ. Շպայդելի, Վ. Սամիկոնյանի, Վ. Դելահանթի, Բ. Բերեզովսկու, Յ. Բաշմետի վարպետության դասընթացներին: Ընդունվել է Գերմանիայի Հանովեր-ի մենակատար դաշնակահարների միջազգ. "Neue Sterne" ակադ-ը (Ա. Մամրիևի դասարան):

ՀՀ նախագահի մրց. (2014), միջազգ. (ՀՀ, Ուկրաինա, Ֆրանսիա) և հանրապետ. մրցույթների դափնեկիր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սարգիս Էմիլի (ծ. 29.08.1958, Երևան), երաժշտագետ, տրոմբոնահար, կոմպոզիտոր: Արվեստագիտ. թեկնածու (2012): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (Է. Ապրեսովայի և Ա. Ջաքարյանի դասարաններ) և տեսության (1976, Ս. Քյոսայանի դասարան), ԵՊԿ երաժշտագիտության (1981, Ռ. Աթայանի դասարան) բաժինները, ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1988): Սովորելու տարիներին կոմպոզիցիայի դասեր է առել Է. *Միրզոյանից*: 1983–94-ին՝ Երևանի Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող-էքսկուրսավար, 1994–2004-ին՝ ՀՀ ՋՈՒ ԳԾ Հատուկ զինվ. նվագախմբի տրոմբոնահար, ավագ երաժիշտ-հրահանգիչ: 2003-ից դասավանդում է ԵՊԿ-ում, 2005-ից՝ նաև Երևանի № 13 հատուկ երաժշտ. գիշերօթիկ դպրոցում (տրոմբոն):

Գրել է «Երիտասարդական վալս» (1979), «Գարունն Արցախի» (վալս, 1995), «Գրանդ մարշ-Դեֆիլե» (քայլերգ, 1997), «Շքերթային շեփոր» (1999), «Սպորտային քայլերգ» (2003), «Նվագախմբային սյուիտ» (2008), «Անդանտե և ծաղիկների պար» (2000–16), «Մեհրաբի գնդի քայլերգը» (2015), «Հինգ պատկեր» (նկարիչ Է. Սունկի մոտիվներով, 2010)՝ ֆլեյտայի, հոբոյի, ֆագոտի, «Դարերի խորքից» (2012)՝ փող. անսամբլի, «Պաստորալ» (2012)՝ գալարափողի, 3 տրոմբոնի և տուբայի, «Հին պատեֆոն» (1981) վալս-բոստոն՝ սաքսոֆոնի և դաշնամուրի, «Meditation» (2013)՝ սաքսոֆոնի (կամ վիբրաֆոնի) և դաշնամուրի համար, «Նոկտյուռն» (1987), «Նվիրում և օրորոցային» (1987), «Ռոմանս» (1983), «Զոն հայրենիքին» (խոսք.՝ Հ-ի), «Ave Maria» (2011)՝ երգչախմբի և ընդլայնված սիմֆ. նվագախմբի, Սուրբ Ծննդյան վոկալիզ (2012)՝ երգչախմբի համար, երգեր, փող. նվագախմբի համար մշակել է հայ. և օտարազգի կոմպոզիտորների գործերից:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սիմոն Պարգևի (ծ. 16.01.1940, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1990): Գայանե Ս. *Հովհաննիսյանի* հայրը: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցը (1958), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1961, Է. Բաղդասարյանի դասարան), ԵՊԿ (1966, Է. Միրզոյանի

դասարան), ԵՊՀ պատմ. ֆակ-ը (1963): 1963–76-ին՝ Հայաստանի կույրերի միավորման հրատարակչության երաժշտ. խմբ., 1976-ից՝ նույն միավորման երաժշտ. կոլեկտիվների գլխ. տնօրեն և գեղ. ղեկ.:

Գրել է սիմֆոնիկ պատկերներ (1965), «Կոմիտաս» (1969) սիմֆ. պոեմը, «Requiem»՝ Կոմիտասի հիշատակին (խոսք՝ Ե. Չարենցի), «Կոչնակներ» (նվիրված Ա. Խաչատրյանին), սիմֆոնիետ (Ա. Իսահակյանի հիշատակին, 1975), սիմֆ. նախերգանք (1993), 4 կվարտետ, սյուիտ՝ ֆլեյտայի և դաշնամուրի (1999), սոնատներ դաշնամուրի, ջութակի, ալտի, թավջութակի, ֆագոտի, «Պրելյուդ և ֆուգա»՝ լար. նվագախմբի, պիեսներ՝ ֆլեյտայի և հոբոյի, «Ձոն ազատարար զինվորին» (խոսք՝ Թ. Ջաքիյանի)՝ սիմֆ. նվագախմբի և երգչախմբի համար, խմբերգներ (Ս. Կապուտիկյանի, Մ. Հակոբյանի, Ա. Սահակյանի խոսքերով), ռոմանսներ և երգեր (Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Գ. Սարյանի, Հ. Հովհաննիսյանի, Վ. Դավթյանի, Յ. Սահակյանի և ուր. խոսքերով), հայկ. մանրանվագներ, դաշնամուր. պիեսների շարք և այլ գործեր: Ստեղծագործությունները կատարվել են ՀՀ-ում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Չեխոսլովակիայում, Շոտլանդիայում, Ճապոնիայում, Սիրիայում, Լատվիայում, Վրաստանում և այլուր:

Հրատարակվել են «Պոեմ»՝ դաշնամուրի, «Սոնատ»՝ ալտի, «Սիմֆոնիետ»՝ լար. նվագախմբի, «Սոնատին»՝ դաշնամուրի, «Պիեսներ»՝ ֆլեյտայի և հոբոյի համար, «Կվարտետ № 4», «Հոր խոսքը» բալլադը, «Մայր-Հայրենիք» խմբերգը և այլ գործեր: Թողարկել է ձայնապնակ (1982, «Մելոդիա», Մոսկվա):

Երիտասարդ կոմպոզիտորների III մրցույթի դափնեկիր (1969, Մոսկվա), Կոմպոզիտորների միջազգ. IV մրցույթի 1-ին մրց. (1988, Մարիանսկե-Լազնե՝ Չեխոսլովակիա), ՀՀ «Մովսես Խորենացի» (2010), ՄՆ ոսկե (2010) մեդալներ:

Գրկ. *Մանուկյան Մ., Սիմոն Հովհաննիսյան, Ե., 2000:*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սոնա Հովհաննեսի (ծ. 29.03.1963, Երևան), խմբավար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2010): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1984), ԵՊԿ (1989, Ռ. Մանգասարյանի դասարան) և ասպիրանտուրան (1992): 1996-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ, ռեկտորի ժպ՝ 2018-ից): Երևանի № 119 դպրոցի մանկ. «Հայրեն» և այլ երգչախմբերի խմբավար:

Հ-ի և կոնսերվատորիայի ուսանողների նախաձեռնությամբ հիմնադրվել է *«Հովեր»* կամեր. երգչախումբը (1992, գեղ. ղեկ. և խմբավար՝ Հ.), որն առաջին անգամ Հայաստանում կատարել է Ա. Հոնեգերի, Բ. Բրիտտենի, Յ. Ս. Բախի, Լ. Բազիլի, Ս. Բաբաթորոսյանի խմբերգ. երկերը: Բեմադրել է Կոմիտասի երգերի 2 շարք, մի քանի ժամանակակից և ամերիկ. խմբերգեր: Հայկ. «Շողակաթ» հեռուստաընկերության հետ նկարահանել է Կոմիտասի «Առավոտուն բարի լուս» խմբերգի անիմացիոն տեսահոլովակը: Թողարկել է 5 ձայնասկավառակ:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007):

Սիմոն Հովհաննիսյան

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Տաթևիկ Նորայրի (ծ. 03.06.1955, Երևան), երգչուհի: Օֆելյա *Համբարձումյանի* դուստրը: Առաջին ելույթը՝ 11 տարեկանում (Մարտին *Վարդազարյանի* անսամբլի հետ)՝ հայկ. ռադիոյով: 1965-ին Երևանում մասնակցել է «Երիտասարդ ձայներ» մրցույթին: Սովորել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում, ավարտել Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի խմբավարության բաժինը (1976): 1976-ից՝ Հայֆիլհարմոնիայի ջազ. նվագախմբի մեներգչուհի, ջազ. երաժշտության առաջատարներից է ԽՍՀՄ-ում (9 տարի անընդմեջ արժանացել է «Ձազի թագուհի» տիտղոսի): 1980–1989-ին դասավանդել է Երևանի էստրադ. ջազ. քոլեջում:

Սոնա Հովհաննիսյան

1989-ից ապրում է Նյու Յորքում. դասավանդում է ԱՄՆ ճանաչված ջազ. քոլեջներից մեկում, մասնակցում երաժշտ. փառատոների: Համագործակցում է անվանի երգիչների և երաժիշտների հետ (Լ. Ուիլս, Ձ. Ուիլյամս, Մ. Ձոնսոն, Բ. Դանիելյան, Վ. Պոնոմարյով, Ձ. Բաբոյան, Ա. Թունջբոյաջյան և ուր.): Հ-ի համար երգեր է գրել Միշել Լեգրանը: Մասնակցել է նաև Եվրոպայի, Ավստրալիայի, Մոսկվայի (2008, «City-jazz») ջազ. փառատոների: Համերգներով շրջագայել է Մոնրեալում, Պրահայում, Ձակարտայում, Բելգրադում, Տալլինում, Մոսկվայում, Վինձորում և այլուր: 1998, 2008 և 2018-ին մենահամերգներով հանդես եկել Երևանում: Երգացանկում՝ ամերիկ., բրազիլ. և էթնիկ

Տաթևիկ Հովհաննիսյանը ելույթի պահին

Վաչե Հովսեփյան



Գագիկ Հովոնց

հայկ. ջազ. կատարումներ, նաև Կոմիտասի, Սայաթ-Նովայի, հայկ. ժող. երգերի ջազ. մշակումներ: Թողարկել է մի շարք ձայնասկավառակներ, 5 ալբոմ («Լսեք իմ սիրտը», «Սևծովյան բալլադներ», «Դարպասներ», «Երազի օր», «Համերգ-ձայնի և նվագախմբի համար»):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մարգարիտ Իվանի (ծ. 24.07.1955, Կրասնոդար), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ԵՊՀ պրոֆ.: Ավարտել է Կրասնոդարի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (դասատու՝ Մ. Ռիբիցկայա), մեներգեցողության (1974, դասատու՝ Մ. Կոստանյան-Սահաթչյան), Դոնի Ռոստովի կոնսերվատորիայի մեներգեցողության (1980, Ա. Բելյաևայի դասարան) բաժինները, ԵՊԿ ասպիրանտուրան (1993, ղեկ.՝ Ա. Սարաջևա): 1977-ից՝ Դոնի Ռոստովի, Կրասնոդարի ֆիլհարմոնիաների մեներգչուհի:

1985-ից՝ Հայաստանի պետ. երգչախմբի, ապա՝ ԵՕՔԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Ջիլդա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո»), Շամախանի թագուհի (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ»), Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ֆրասկիտա (Ժ. Բիզեի «Կարմեն») ևն: Հանդես է եկել մենահամերգներով. երգացանկում՝ Ա. Հարությունյանի, Լ. Չաուշյանի, Կ. Զաքարյանի, Վ. Բաբայանի, Է. Միրզոյանի, Գ. Չթչյանի, Մ. Պ. Մուսորգսկու, Ս. Մ. Սլոնիմսկու և ուր. երգաշարեր: Ֆ. Պուլենկի «Մարդկային ձայն» և Ս. Ազնավուրյանի «Հույս» (նվիրված է Հ-ին) մոնոօպերաների առաջին կատարողն է Հայաստանում: Համերգներով շրջագայել է Ս. Պետերբուրգում, Մոսկվայում, Կրասնոդարում և այլուր: Միջազգ. Muzika klassica մրցանակաբաշխության Մեծ մրց. (Մոսկվա-Ռազա, 2012):

Երկ. *Հեպք ամրողջ կյանքում, Ե., 2005: Խոսքի նշանակությունը երաժշտագեղարվեստական կերպարի ստեղծման մեջ (Ուսումնամեթոդական աշխ-ների ժող., № 5), Ե., 2008:*

ՀՈՎՍԵՓՅԱՆ Վաչե Արտաշեսի (17.09.1925, Երևան-01.12.1978, Երևան), դուդուկահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1977): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1951): 1945-ից՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար. նվագացանկում՝ հայկ. ժող. և գուսան. մեղեդիներ («Հովերն ընկան», «Ինձ մի խնդրիր», «Որսկան ախպեր», «Դուն էն գլխեն» ևն): Կատարող. արվ-ն աչքի է ընկել ազգ. ոճի հստակությամբ, հուզականությամբ, վարպետությամբ:

Գրել է պարեղանակներ, երգեր՝ «Վերադարձիր» (խոսք՝ Վ. Տերյանի), «Իրիկնամուտին» (խոսք՝ Ս. Կապուտիկյանի), «Երեքնուկ» (խոսք՝ Պ. Սևակի), «Երանի թե», «Հայաստանի աղջիկներ», «Հավատա ինձ» ևն: Համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Եգիպտոսում, Հունաստանում, Թուրքիայում, ԱՄՆ-ում: Ունի բազմաթիվ ձայնագրություններ, ձայնապնակներ:

ՀՈՎՈՒՆՑ (Հովհաննիսյան) Գագիկ Գեղեոնի (ծ. 01.03.1930, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1984): ԽՍՀՄ ԿՄ (1957), ՀԿՄ (1991) անդամ: Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. (1946, դասատու՝ Վ. Ախշարումյան), Պ. Ի. Չայկովսկու անվ. (1954, դասատու՝ Կ. Դոմբաև) երաժշտ. դպրոցները, ԵՊԿ ջութակի (1954, Կ. Դոմբաևի դասարան), կոմպոզիցիայի (1957, Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները: 1964-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1990-ից):

Գրել է լար. կվարտետ (1960), պրելյուդ՝ դաշնամուրի, ինվենցիոն պիեսների 3 շարք՝ սիմֆ. նվագախմբի, 10 ինվենցիոն պիեսներ՝ փայտե փող. գործիքների և դաշնամուրի, «Հնչյունի հարմոնիա» կոնցերտ. ինվենցիաներ՝ թավջութակի և նվագախմբի, կոնցերտ՝ ջութակի և նվագախմբի (1980), սոնատ-դուետ՝ ջութակի և թավջութակի, սոնատ № 2՝ դաշնամուրի, «Կոնտրաստ»՝ ֆլեյտայի և դաշնամուրի, 10 պիես-մոնոգրամ՝ դաշնամուրի, սոնատ՝ ջութակի և դաշնամուրի, տրիո՝ ջութակի, թավջութակի և դաշնամուրի, Memoris-պիես՝ ջութակի և դաշնամուրի, «Հայրենիք»՝ երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, «Largo»՝ կլառնետի և դաշնամուրի, «Թեմա»՝ ֆլեյտայի և դաշնամուրի համար (երկուսի փոխադրումները՝ Հ-ի), սիմֆ. սյուիտ (խորեոգրաֆիկ պատկերներ, 1992), դաշնամուր. մանրանվագներ, «Իմ նախնիների կանչը»՝ ա կապելլա, կինոերաժշտություն և այլ գործեր: Հեղինակ է «Մտքեր հարմոնիայի մասին» (1995) աշխ-յան: Ձայնագրել է 4 ձայնապնակ («Մելոդիա» ֆիրմա, Մոսկվա, 1978–85), 2 ձայնասկավառակ (Suoniecolori, Փարիզ, 2008, 2013):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2013):

ՀՈՐԴՈՐԱԿ, աշխույժ, արագ ընթացքով (տեմպով) կատարվող երգ: Մոտավորապես համապատասխանում է եվրոպ. Allegro-ին (միջնադար. ըմբռնմամբ): Սերում է «հորդոր» բառից:

Հ-ի ժանրը ձևավորվել է հայ հին գուսան. և քաղաք. երգ-երաժշտության մեջ, որտեղ «ծանր» կամ «քաշ» երգերին հաջորդող և աշխույժ կշռույթով ու զվարթ տրամադրությամբ կերպար. հակադրություն ստեղծող հատվածն է: Հ. կենցաղավարում է նաև արդի քաղաք. երաժշտության մեջ. «Սիրուհիս, քեզ համար» ծորերգին հետևում է «Աղջիկ դու սիրուն» աշխույժ ու արագ հատվածը: Հայ հոգևոր երգարվում Հ. կարող է ավարտել 1–4, երբեմն՝ ավելի հատվածներից բաղկացած երգաշարը: Գանձարաններում ամփոփում է գանձ-տաղ-մեղեդի շարքը: Հայ եկեղեց. երաժշտության մեջ լավագույն նմուշներից է Հովհաննես Երզնկացի Պլուզի ջրօրհնեքի «Այսօր ձայնն հայրական» Հ.:

ՀՈՐՈՎԵԼ, հ ո ռ ո վ ե լ, գ ու թ ա ն ե ր գ, հայ գյուղացու հողագործ. աշխ-ի ավանդ. երգը (նաև հիմնական երգատեսակը). հնչել է գութանով վար անելիս, բանող անասուններին, նաև հոտաղներին ոգևորելու և աշխ-ը թեթևացնելու ու խթանելու համար: Արտահայտել է գյուղացու սոցիալ. բողոքը, անձն. հույզերն ու ապրումները:

Անվանումն առաջացել է **առավել** բառից, որը նշել է 2 արտի սահմանագիծը՝ չհերկվող հողաշերտը: Գութանավորը, ձգտելով շուտ հասնել առավելին, այն միացրել է **հո՛** բացականչությանը, որից էլ առաջացել են հոռովել կապակցությունը և նրա կրճատ ըռավել, ռավել, ռոլ, հոռոլ, հոռոլո և այլ տարբերակներ՝ դառնալով գութաներգին բնորոշ բացականչություններ: Երգի կատարումն անվանել են «առավել ասել» կամ «առավել տալ»:

Հ. անվան տակ սովորաբար հասկացվել են նաև կալերգը և սայլերգը, որոնք ինքնուրույն երգատեսակներ են, Հ-ի հետ ունեն ընդհանուր հատկանիշներ: Հ-ները աշխատանքի ընթացքում հանպատրաստից ստեղծվող երգեր են (հիմնական թեման աշխատանքն է, հացը, բնությունը)՝ հիմնված գյուղացու՝ ավանդաբար մշակված-յուրացված խոսք. և ելևէջ. պաշարի վրա: Մեծ տեղ են գրավում բացականչություններն ու ձայնանմանեցումը, կան նաև աղոթքի ու հեթանոս. հավատալիքի տարրեր: Մեղեդիական առումով՝ Հ-ներն ասերգի և եղանակավոր երգեցողության սերտ զուգորդումն են, որտեղ ցայտուն կերպով արտահայտվել են գեղջուկի իմպրովիզացիայի մեծ կարողությունն ու ստեղծագործ. փորձը, դրսևորվել են նաև առանձին տեղավայրերի երաժշտության հատկանիշներ (հուզ. արտահայտման կերպը, արտասանության ռիթմն ու ինտոնացիան, նախասիրած ելևէջները ևն): Վարի աշխատանքի յուրաքանչյուր օղակ, որպես կանոն, արտացոլվել է Հ-ի

Հատվածներ Լոռու հորովելից (գրառումը՝ Կոմիտասի)

երաժշտության մեջ, որը խոշոր կառուցվածքի ժող. հորինվածք է՝ բաղկացած ինքնուրույն համադիր (երբեմն՝ հակադիր) բաժիններից՝ նախաբան, անընդմեջ զարգացող բուն Հ., զարգացման բարձրակետ և վերջաբան:

Պայմանավորված աշխատանքի ծավալով ու մասնակիցների թվով՝ երգեցողությունն ընդունել է պարզ կամ բարդ ձև. երկրորդում երևան են եկել բազմաձայնության տարրեր (զարգացած անտիֆոն, նմանակող բազմաձայնում, բազմատոն զուգահեռ երգեցողություն):

Նախահեղ. Հայաստանում ձայնագրող սարքեր չլինելու պատճառով Հ-ների երաժշտությունը գրառվել է կրճատ (ոչ թե աշխատանքի երաժշտ. ողջ ընթացքը, այլ հիմնական եղանակային հատիկը): Բարդ կազմությամբ Հ-ի համեմատաբար լրիվ նմուշ է Կոմիտասի գրառած «Լոռու



Հատված գութաներգից (գրառումը՝ Սպիրիդոն Մելիքյանի)

գութաներգը»՝ Վարդաբլուր գ-ի ոճով: Հայաստանի տարբեր շրջանների Հ-ներ են գրառել նաև Ս. Մելիքյանը, Ա. Քոչարյանը և ուր.:

Կոմիտասը բազմաձայն երգչախմբի համար մշակելով Հ-ներ՝ ստեղծել է աշխատանքը գովերգող վեհաշունչ հիմ-

«Հորովել» երգի-պարի անսամբլը (Վանաձոր)

ներ («Լոռու գութաներգ», Ղարաբաղի «Ձիգ տու, քաշի» ևն): Հայ կոմպոզիտոր. ստեղծագործության մեջ նաև ձևավորվել է ժող. երգի ոճավորման երգատեսակ (Հ. Ստեփանյանի, Կ. Զաքարյանի Հ-ները՝ ձայնի և դաշնամուրի համար, Ա. Տիգրանյանի Հ.՝ «Դավիթ Բեկ» օպերայում, ևն): Հ. Թումանյանի «Գութանի երգը» և «Դժար տարի» սրտառուչ բանաստեղծություններով ստեղծվել են Հ-ներ:

Գրկ. *Կոմիտաս, Ժողովրդական երգեր. Ազգագրական ժող. 1, Ե., 1931: Նույնի, Լոռու գութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով, տես նրա Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Ղանալանյան Ա., Հայ շինականի աշխատանքի երգերը, Ե., 1937: Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Ե., 1983: Атаян Р., Армянская народная песня, Е., 1965.*

«ՀՈՐՈՎԵԼ», երգի-պարի անսամբլ, պետական (1996-ից), Գրիգոր Հախինյանի անվան (2012-ից): Ստեղծվել է 1958-ին Վանաձորում՝ քաղաք. մշակույթի տան ժող. գործիքների անսամբլի, պար. և վոկալ խմբերի հիման վրա: Համերգներով շրջագայել է Սիբիրում, Հս. Կովկասում, Միջին Ասիայի, ԽՍՀՄ բազմաթիվ ք-ներում, մասնակցել հանրապետ. և միջազգ. փառատոների (ոսկե մեդալ, 1967, Լեհաստան, 1-ին կարգի մրց., 1968, Բեռլին, դիպլոմ, 1968, Քիշնև, 1-ին կարգի դիպլոմ, 1969, Մոսկվա, ևն): Անսամբլի կայացմանը նպաստել են Գ. Հախինյանը (հիմնադիր-գեղ. ղեկ.), Վ. Կոտոյանը, Լ. Մկրտչյանը, Լ. Սարգսյանը և ուր., պարեր են բեմադրել Խ. Մարգարյանը (գլխ. բալետմայստեր՝ 1972–94-ին), Վ. Խանամիրյանը («Լոռվա հարսանիք», «Քոչարի», «Հավերժական կրակ» ևն), Ա. Ղարիբյանը, Թ. Գրիգորյանը: Տարբեր տարիների անսամբլում են աշխատել Ս. Ռոստունին (գեղ. ղեկ.), Գ. Թովմասյանը (1997–2000), Լ. Աբրահամյանը (2003–06, երկուսն էլ՝ գլխ. բալետմայստեր) և ուր.: 2006-ից՝ տնօրեն և գեղ. ղեկ.՝ Արմեն Ներսիսյան, երաժշտ. մասի ղեկ.՝ Էլմիրա Կոռյան, գլխ. բալետմայստեր՝ Արայիկ Գևորգյան:

Կատարողներից առավել հայտնի են երգիչ-երգչուհիներ Ստեփան Դալլաքյանը (ՀՀ վաստ. արտիստ), Սուրեն Թորոսյանը, Ամալյա Պողոսյանը, Ազատ Ճուղուրյանը, երաժիշտներ՝ Արտավազդ Տեր-Հովհաննիսյանը (դուդուկ, ՀՀ մշակույթի վաստ. գործիչ), Սարգիս Չալյանը (ուդ), Հովհաննես Պողոսյանը (հարված. գործիքներ) և ուր.:

Անսամբլը համերգներով շրջագայել է Թեհրանում (2013), մասնակցել միջազգ. փառատոների (1975, 1980–81, 2006-ին՝ Ֆրանսիա, 1998-ին՝ Իտալիա, 2002-ին՝ Իրաք, 2003-ին՝ Հունաստան, 2011-ին՝ Բաթում, ևն):

ՀՐԿԵԶ [Ալոյան Սիսական, 1876, գ. Երանոս (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–1943, գ. Երանոս], գուսան: Հորինել է հիմնականում խոհախրատ., հայրենասիր. թեմաներով երգեր («Արբեցություն», «Հայրենիք», «Երևան», «Սիրելիք, ես գիտեմ» ևն): Գրել է նաև մուհամմաներ (հանելուկներ), դաստաններ, ուշ շրջանի գործերում պատկերել է գյուղի սոցիալ. կյանքը:

ՀՈՒՄՈՐԵՍԿ (գերմ.՝ Humoreske, < լատ. humor – հումոր), կատակային, քնար. բնույթի փոքրածավալ երաժշտ. պիես՝ անսամբլի, նվագախմբի կամ գործիքի համար: Սոտ է ***ակերցոյին***: Դաշնամուր. երաժշտության մեջ պիեսի այդ տեսակն ստեղծել է Ռ. Շումանը (op. 20, 1839): Հետագայում Հ. բնույթով դարձել է առավել բազմազան: Ժանր-կենցաղ. Հ-ներ է գրել Է. Գրիգը (4, op. 6), քնար.՝ Ա. Դվորժակը (8, op. 101), սկերցո-պար.՝ Պ. Ի. Չայկովսկին (op. 10, № 2), գրոտեսկ.՝ Ս. Ս. Պրոկոֆևը, Ռ. Կ. Շչեդրինը, Օ. Թաքթաքիշվիլին (կամեր. նվագախմբի համար):

Հ-ի ինքնատիպ նմուշներ են ստեղծել նաև Ա. Բաբաջանյանը, Գ. Չթչյանը, Ս. Միքայելյանը և ուր.:

Հատված Առնո Բաբաջանյանի «Հումորևսկ»-ից

Զ

Ձայնի հնչակա-նության (ակուստի-կայի) տարրեր.



«Արամ Խաչատրյան» համերգասրահ

ՁԱՅՆ երաժշտական, 1. մարդու՝ երաժշտ. հնչյուններ արտաբերելու, ձայն. ապարատի շնորհիվ երգելու ունակությունը: Երգչաձայնը մարդն օգտագործում է պայմանավորված իր երաժշտ. զարգացման աստիճանով: Տարբերում են կենցաղ. և պրոֆեսիոնալ երգչաձայներ: Զ-ի բնութագրող հատկանիշներն են տեմբրի գեղեցկությունը, հնչյունները երկարատև պահելու ուժն ու ունակությունը: Երգչաձայնը մեծ դահլիճում պետք է ունենա առավելագույն լսելիություն, որը պայմանավորված է Զ-ի սպեկտրում օբերտոնների խմբի առկայությամբ: Տղամարդու երգչաձայնն ունի կրծք. և ֆալցետ., իսկ կնոջը՝ կրծք., կենտր. և գլխ. ռեգիստրներ: Տարբերում են երգչաձայնի 6 հիմնական տեսակներ. տղամարդկանց՝ ***կոնտրալտո, բարիտոն, բաս,*** կանանց՝ ***սոպրանո, մեցցո սոպրանո, կոնտրալտո:***

2. Բազմաձայն երաժշտ. հյուսվածքում՝ յուրաքանչյուր մեղեդիական գիծը: Զ-գծերի ամբողջությունը կազմում է ստեղծագործության ***ֆակտուրան:*** Հոմոֆոնիկ երաժշտության մեջ, որպես կանոն, Զ-երից մեկը (հաճախ՝ վերևինը) առաջատարն է, պոլիֆոնիկ երաժշտության մեջ բոլոր Զ-երը համազոր են: 3. Նվագախմբ. կամ երգչախմբ. պարտիտուրում՝ յուրաքանչյուր գործիքի նվագամասը կամ ձայնախմբի երկամասը: 4. Հայ հոգևոր երաժշտության տեսության մեջ նույնն է, ինչ ***ձայնեղանակը:***

Կամերային երաժշտության դահլիճ

ՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ձայնագիտության ոլորտ. ուսումնասիրում է երաժշտության օբյեկտիվ ֆիզ. օրինաչափությունները՝ պայմանավորված երաժշտության ընկալմամբ և կատարմամբ: Հետազոտում է երաժշտ. հնչյունների բարձրությունը, ուժգնությունը, տեմբրը և տևողությունը, կոնսոնանսն ու դիսոնանսը, երաժշտ. համակարգերը, երգչաձայները, երաժշտ. գործիքները, լսողությունը են: Հիմնված է ֆիզ. ձայնագիտության վրա և սերտորեն կապված է լսողության ֆիզիոլոգիայի, երաժշտության ընկալման հոգեբանության, ճարտ. ձայնագիտության հետ: Ուսումնասիրում է նաև հարմոնիայի, գործիքաշինության հետ կապված խնդիրներ: Որպես երաժշտության տեսության բաժին՝ ձևավորվել է Հին Հունաստանում (Պյութագորասյան դպրոց), Չինաստանում (Լյույ Բու Վեյ), Միջին Ասիայում (Ավիցեննա): Հետագայում զարգացրել են Զ. Յաուլինոն, Ա. Վերկմայստերը, Ժ. Ֆ. Ռամոն, Լ. Էյլերը, Հ. Հելմհոլցը, Է. Խլադնին և ուր.: Կ. Շտումպֆի և Վ. Քյոլերի աշխ-ների շնորհիվ Զ. ե-ում ձևավորվել է ուսմունք ձայն. տատանումների օբյեկտիվ հատկանիշների արտացոլման մեխանիզմների մասին: XX դ-ից ընդարձակվել է Զ. ե-ի հետազոտությունների շրջանակը: Ժամանակակից բաժիններից են՝ երգչաձայնի, էլ. երաժշտ. գործիքների ևն: Երաժշտագետ և մանկավարժ Ն. Ա. Գարբուզովի աշխ-ներում պարզաբանված են ձայնակարգերի և համահնչյունների բազմահիմնության, երաժշտ. տոների ազգակցության, լսող. ընկալման հետ կապված խնդիրներ: Տես նաև ***Ձայնագիտություն ճարտարապետական***:

Գրկ. *Гарбузов Н. А., Музыкальная акустика, М., 1954; Применение акустических методов исследования в музыкознании, Сб. ст., М., 1966.*

ՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ, շինությունների հնչականություն, ձայնագիտության ոլորտ. ուսումնասիրում է ձայն. ալիքների տարածումը կառույցներում, դրանց անդրադարձումն ու մարումը մակերեսների միջոցով, անդրադարձած ալիքների ազդեցությունը խոսքի և երաժշտության լսելիության վրա: Նպատակը թատեր., համերգ., ռադիոստուդիաների և այլ դահլիճներում նախատեսված լսելիությունն ապահովող նախագծերի ստեղծումն է: Ձայնի աղբյուրի երկարատև հնչման ժամանակ անդրադարձող ուշացած ձայները, միանալով հիմնական ձայնին, ուժեղացնում են այն, սակայն միաժամանակ մե-

ծացնում են գվվոցը, որը նվազեցնում է խոսքի հստակությունն ու երաժշտության ընկալման որակը: Այդ պատճառով էլ Ձ. ճ-ի կարևոր խնդիրներից է նաև շինության ներսում հիմնական և անդրադարձող ձայների բաշխման հաշվարկումը: Առավել նպաստավոր պայմանները տարբեր են ոչ միայն խոսքի և երաժշտության, այլև տարաբնույթ երաժշտ. ստեղծագործությունների (կամեր., էստրադ., սիմֆ. ևն) համար: Դրանով պայմանավորված՝ համերգասրահների հնչականության նախագծումը (ձևի ընտրությունը, ունկնդիրների տեղավորումը, կախովի անդրադարձիչների օգտագործումը ևն) պահանջում է փոխզիջում. լուծումներ: Մեծ համերգասրահներում լսելիության պայմանները կարելի է բարելավել ուժեղացնող էլեկտրաակուստիկ. համակարգերի և արհեստ. ռեներբերացիայի (ձայնի աստիճան. մարման)

Դիոնիսոսի բացօթյա թատրոնը Աթենքում (մ. թ. ա. V դ.)

միջոցով: Ձ. ճ-ի մեթոդն օգտագործում են նաև շինությունների մեջ աղմուկի դեմ պայքարելու համար: Շինության մեջ հնչականության մասին իմացությունների օգտագործման լավագույն օրինակներից են Հին Հունաստանի և Հռոմի բացօթյա թատրոնները: Շինությունների հնչականության փորձարկումները հիմնվում են շենքում միկրոֆոնով ընդունվող ձայն. ազդանշանի էլ. չափումների վրա և ավարտվում տարածության մեջ ձայնի բաշխման հավասարաչափության որոշմամբ, արձագանքի աստիճան. մարման ուսումնասիրությամբ: Ձայնակլանման տեսությունն ու նրա չափման եղանակները նույնպես Ձ. ճ-ի ուսումնասիրման առարկաներն են:

Գրկ. *Ганус К., Архитектурная акустика, пер. с нем., М., 1963.*

ՁԱՅՆԱԳՐՈՂ ՍԱՐՔ, ձայնի գրանցման գործիք, որն ապահովում է ֆոնոգրամի ստացումը ձայնակրիչի վրա: Հիմնական մասերն են ձայնակրիչը շարժող մեխանիզմը և գրառող բաղադրիչը: Սարքի կառուցվածքը պայմանավորված է ձայնագրման եղանակով (մեխ., լուսանկարչ., մագնիս.):

ՁԱՅՆԱԳՐՈՒՄ, խոսքի, երաժշտության, աղմուկի գրանցման ընթացքը հատուկ տեխ. սարքերի օգնությամբ՝ հետագա պահպանման և վերարտադրման նպատակով: Մինչև 1970-ական թթ-ի վերջը Ձ. կատարվել է անալոգ. սկզբունքով՝ մեխ. (տես ***Մեխանիկական ձայնագրում***), մագնիս. և լուսանկարչ. առավել տարածված եղանակներով: Ձ. հիմնված է գրամոֆոն. ձայնասկավառակի, մագնիս. ժապավենի, կինոժապավենի տարբեր մասերի ֆիզ. վիճակի կամ ձևի փոփոխման վրա: Գրառման տարրը (կրիչ, լուս. ճառագայթ կամ մագնիս. դաշտ) ձայն. տատանման հետքը (ձայն. ակոս կամ ֆոնոգրամ) թողնում է շարժվող ձայնակրիչի վրա: 1970-ական թթ-ից տարածվել է Ձ-ման առավել կատարելագործված՝ թվային եղանակը: 1980-ական թթ-ի վերջին երևան են եկել թվային մագնիտոֆոնները (DAT՝ digital audio tape recorder), 1990-ական թթ-ին՝ թվային բազմաֆունկցիոնալ սկավառակները (DVD՝ digital versatile disc), որոնց վրա կարելի է գրանցել մեծածավալ ձայն. (աուդիո) և տեսող. (վիդեո) տեղեկույթ: Լայնորեն տարածված խտասկավառակների շնորհիվ տնային պայմաններում հնարավոր է առանց կորստի ստանալ թվային ձայնագրություններ: Տես նաև ***Էլեկտրոնային երաժշտություն***, ***Կոնկրետ երաժշտություն***:

Ձայնագրող սարք

Համակարգչային ձայնագրում

ՁԱՅՆԱԿԱՐԳ, լադ (համաձայնեցվածություն, կարգավորվածություն), հնչյունների բարձրությունների և նրանց որակապես համադր. հարաբերությունների աստրահված համակարգը: Գործնականորեն արտահայտվում է նրանց շարքի միջոցով, որի աստիճաններից մեկին՝ որպես կայուն հենակետի (տոնիկա), ձգտում են մնացած անկայուն և համեմատաբար կայուն աստիճանները (երևույթը կոչվում է Ձ-ային ձգտողականություն): Աստիճանների փոխներգործությամբ որոշակիանում է յուրաքանչյուրի Ձ-ային չկրկնվող ֆունկցիան: Հարմոնիայի վրա հիմնված

երաժշտության մեջ Ձ-ային ֆունկցիաների կրողները Ձ-ի համահնչյուններն են (ըստ որի առաջանում է Ձ-ային-հարմոնիկ ձգտողականություն): Երաժշտ. երկի ընդհանուր բնույթը պայմանավորված է նրա հիմքում ընկած Ձ-ի արտահայտչականությամբ, որը դրսևորվում է Ձ-ի դինամիկ. (լարվածության ալիքներ գոյացնելու) և գուն. (երաժշտությունը որևէ կերպ «երանգավորելու») պոտենցիալ կարողություններով: Ձ. ձևավորվել է երաժշտության վրա հանրային երաժշտ. գիտակցության ներգործությամբ և կատարելագործվել նրա զարգացմանը զուգընթաց: Ձ-երի զարգացումը հնչյունների նորանոր հարաբերություններ հայտնաբերելու ընթացք է, որը տեղի է ունենում համակարգում ընդգրկված միավորների քանակի ավելացման և նրանց համա-



Ձայնակարգի ձգտողականության օրինակներ

ձայնեցվածության ձևերի բարդացման միջոցով: Ձ-ի զարգացման շարժիչ ուժը երաժշտության ինտոնացիոն կարգի անխուսափելի նորացումն է ժամանակի ընթացքում: Ժող. և պրոֆեսիոնալ երաժշտության մեջ Ձ-ի տեսակները բազմազան են, սակայն դրանք հիմնված են հնչյուն. նյութի (դիատոնիկ շարքի) օգտագործման մի քանի գլխ. սկզբունքների (անհեմիտոն կամ անկիսատոն և հեմիտոն, օկտավ. և ոչ օկտավ., խրոմատիկ և միկրոխրոմատիկ՝ կիսատոնից փոքր տարածություններով) վրա: Սահմանափակ են օկտավ. շարքի ոչ դիատոնիկ (5 կամ 7 համեմատաբար հավասար մասերի) բաժանման դեպքերը (Արլ. Ասիայի ժողովուրդների երաժշտության մեջ): Ժող. երաժշտության Ձ-երի տեղային (ազգ.) ինքնատիպության համար էական է նաև հնչյունաշարերի տեմպերացիայի յուրահատկությունը: Արևմտաեվրոպ. երաժշտության Ձ-ային զարգացման գլխ. փուլերն են (հինհուն. Ձ-երի կատարելագործումից հետո) միջնադար. Ձ-երը, մաժորն ու մինորը՝ առանձին և միավորված համակարգերով: Նրանք բարձր զարգացման են հասել, համապատասխանաբար, Վերածննդի շրջանի պոլիֆոնիկ արվ-ում և XVII–XIX դդ-ի դաս. երաժշտության մեջ: XIX դ-ի վերջից գործածվում են խրոմատիկ շարքի հնչյունների ինքնուրույնացման տոնայն. և ատոնալ սկզբունքները: Ձ-երի կառուցվածք. և արտահայտչական հատկանիշների տեսությունն սկզբնավորվել է Հին աշխարհի երկրներում և մշտապես եղել է երաժշտության տեսության ուսումնասիրման գլխ. թեմաներից: Այդ առումով նշանակալի նվաճումների են հասել խորհրդ. շրջանի երաժշտագետները:

Հայ մոնոդիկ երաժշտության մեջ գործում է բազմադարյան ավանդույթով և մանրամասնորեն մշակված ոչ օկտավ. Ձ-երի բազմաճյուղ համակարգ, որն իրենց աշխ-ներում մեկնաբանել են Հ. Լիմոնճյանը, Ն. Թաշճյանը, Կոմիտասը, Ք. Քուշնարյանը և ուր.: Հայկ. ժող. երաժշտության մեջ միջնադար. երաժշտության Ձ-երի անվանումների օգտագործումը պայմանական է, քանի որ անգամ հնչյունաշարերի արտաքին նմանության դեպքում Ձ-ային զարգացման ներքին օրինաչափությունները (հետևաբար նաև մեղեդու ինտոնացիոն ծավալման տրամաբանության ընթացքը) էապես տարբերվում են: Հայկ. ժող. երաժշտության Ձ-ային համակարգին բնորոշ օրինաչափություններից են Ձ-ային հնչյունաշարի կառուցման շղթայական սկզբունքը (յուրաքանչյուր նախորդ տետրախորդի վերջին հնչյունը նաև հաջորդի սկիզբն է), նրանց դիատոնիզմը (հայկ. ժող. երաժշտության մեջ խրոմատիզմը բացառված է, քանի որ անգամ ցածր հնչյունների դեպքում որևէ հնչյունի բարձր կամ ցածր տեսակները չեն հաջորդում միմյանց), անհավասարաչափ տեմպերացված ակուստիկ լարվածքը (ի տարբերություն եվրոպականի՝ հայկ. ժող. երաժշտության մեջ 7 հիմնական հնչյունների և նրանց ալտերացված ձևափոխումների միջև կան նաև միջնակյալ՝ այսպես կոչված ցածր հնչյուններ, որոնք հարստացնում են ժող. երաժշտության հնչյունաշարը, նպաստում ազգ. ինչողության գունեղությանն ու հարստությանը), Ձ-երի ոչ օկտավ. կառուցվածքը [ժող. երաժշտության Ձ-երը միատոնիկային (ունեն 1 տոնիկա, որը չի կրկնվում Ձ-ում) ու կենտրոնաձիգ (Ձ-ի

աստիճանները ձգտում են տոնիկայի)] են և նրանց մեջ օժանդակ հենակետի (կամ անտիթեզիս. այն ինչյունն է, որն առավելապես հանդիպում է տակտի ուժեղ կամ համեմատաբար ուժեղ մասերում, ունի համեմատաբար մեծ տևողություն, առանձնանում է ռիթմական կամ մետրական շեշտով, ենթարկվում է տոնիկային) առկայությունը, փոքր ու փքցվ. ինտերվալների գերակայությունը, մծցվ. ինտերվալների ինքնատիպ լուծումը (ժող. երաժշտության Չ-երի ինչյունաշարերում թե՛ փոքր ու փքցվ. ինտերվալների գերակշռությունը, թե՛ մծցվ. ինտերվալների յուրօրինակ լուծումը կարևոր դեր ունեն ազգ. երանգ ու ինքնատիպություն ստեղծելու համար), մեդիանտների ձգտողականությունն ավարտներում (կադանս. դարձվածքներում նրանք ձգտող են, որը նպաստում է մեղեդին ավարտող տոնիկայի կայունությանը):

Հայկ. ժող. երաժշտության մեջ Չ-երը (գամմաները միջնադար. Չ-երն են) սկսվում և ավարտվում են իրենց V աստիճաններով՝ պահպանելով նախկին կայուն աստիճանները (հիպո Չ-եր): Հիպո Չ. առաջանում է հիմնական Չ. կազմող տետրախորդների տեղադրումից (երբեմն Չ-ի հիմքը կվինտա-կվարտային է, երբեմն էլ հիպո Չ-ում՝ կվարտա-կվինտային), որի հետևանքով Չ-ի տոնիկան հանդես է գալիս կենտրոնում:

Հիպոփռյուգիական-լոկրիական ինչյունաշարում Չ-ի տոնիկ. տետրախորդը փռյուգիական է, իսկ տոնիկ. կվինտան՝ լոկրիական: Հիպոդորիական-էոլական ինչյունաշարում տոնիկ. տետրախորդը էոլական է, և որոշ Չ-երում այն զուգորդվում է տոնիկ. մեծ կամ դորիական սեքստայի հետ: Հարմոնիկ տետրախորդով է (հարմոնիկ դեկախորդի հիմքը) պայմանավորված ինչյունաշարի հարմոնիկ անվանումը:

Հիպոիոնական-միքսոլիդիական դեկախորդն իր անվանումն ստացել է տոնիկ. իոնական և տոնիկ. փոքր կամ միքսոլիդիական սեպտիմայից:

Այս 4 ինչյունաշարերով արտահայտված ժող. երաժշտության մեջ առանձնանում են 3 տարաբնույթ Չ-եր. մինոր Չ-երն արտահայտվում են հիպոփռյուգիական-լոկրիական և հիպոդորիական-էոլական, մաժորները՝ հիպոիոնական-միքսոլիդիական, մաժոր-մինորները՝ հարմոնիկ դեկախորդների միջոցով:

Չայնակարգերի հիմնական ինչյունաշարերը

Որևէ երաժշտ. համակարգի դիատոնիկ ինչյունաշարի աստիճաններով կառուցվող Չ-երը, որտեղ արտացոլված են տվյալ համակարգի հատկանիշները (ինչյունաշարի տեմպերացիա, կառուցման սկզբունք, աստիճանների ինտերվալ.հարաբերություններ են), անվանում են բ ն ա կ ա ն: Բնական Չ-երում հարևան աստիճանների միջև տարածությունը, որպես կանոն, մեծ և փ2 է, որոնցից տարբերվում են ալտերացված (մծցվ. 2 պարունակող) Չ-երը: Նրանք աստիճանների քանակով, կառուցվածք. ու արտահայտչական յուրահատկություններով բազմատեսակ են, սակայն անվանումը հաճախ վերցվում է դաս. երաժշտության դիատոնիկ շարքի ինչյուններից կազմված յոթնաստիճան հայ ժող. երաժշտության բնական Չ-երի հիմնական ինչյունաշարերի Չ-երից, որոնց անվանումներն առնված են հինհուն. երաժշտության տեսությունից:

Մոդալ Չ-երը կոչվում են սիմետրիկ, եթե նրանք կազմվում են օկտավան հավասար մասերի բաժանելու (12 կիսատոն) և նրա հետևանքով ստացված միավորների միանման (սիմետրիկ) լրացման սկզբունքով: Մոդալ Չ-երի տիպը պայմանավորված է նրանց յուրաքանչյուրի գլխ. տարրով՝ 1. ամբողջատոն Չ. (ամբողջատոն վեցահնչյուն՝ 12:6), 2. փքցվ. Չ. (փքցվ. սեպտակորդ՝ 12:4), 3. մծցվ. Չ. (մծցվ. եռահնչյուն՝ 12:3), 4. եռատոն Չ. (կամ երկակի Չ., եռատոն՝ 12:2): Ի տարբերություն բնական Չ-երի՝ մոդալ Չ-երն արհեստական են և հանդես են գալիս միայն հավասարաչափ տեմպերացված լարվածքում: Մոդալ Չ-երն արտացոլված են Ֆ. Շոպենի, Ֆ. Լիստի, Կ. Դեբյուսիի, Մ. Ի. Գլինկայի, Ա. Ն. Սկրյաբինի, Վ. Ֆ. Ստրավինսկու, Ս.

Ս. Պրոկոֆևի և ուր. երկերում: Տեսությունը մշակել են Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը, Բ. Լ. Յավորսկին, Օ. Մեսսիանը և ուր.:

Ձայնապնակներ

Ձ-ի անկայուն աստիճանների բարձրացումը կամ իջեցումը կես տոնով (ձգտողականությունը դեպի կայուն աստիճանները առավել սրելու համար) անվանում են Ձ-ի ալտերացիա: Մաժոր Ձ-ում II աստիճանը կարող է բարձրացվել կամ իջեցվել, IV-ը՝ բարձրացվել, VI-ը՝ իջեցվել, մինոր Ձ-ում IV-ը՝ բարձրացվել և իջեցվել, VII-ը՝ բարձրացվել, II-ը՝ իջեցվել: Մելոդիկ մինորում կարող է բարձրացվել նաև VI աստիճանը՝ հարմոնիկ VII-ի միջոցով տոնիկա անցնելու համար:

Գրկ. *Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008: Мазель Л. А., Рыжкин И. Я., Очерки по истории теоретического музыкознания, в. 1–2, 1934–39; Грубер Р. И., История музыкальной культуры, т. 1, ч. 1, М., 1941; Проблемы лада, Сб. ст., М., 1972.*

Ընդ Ռոբերտ Աթայանի

Ձայնապնակավառակ

ՁԱՅՆԱՊՆԱԿ (հուն.՝ δίσκος – «կլոր ափսե»), պլաստմասսայե տափակ սկավառակներ (XIX դ-ի վերջից), որոնց վրա գրանցել են երաժշտությունը, օգտագործել գրամոֆոնի, պատեֆոնի, հետագայում՝ նաև նվագարկիչների վրա: Երաժշտ. ձայնագրությունները Ձ-ի 2 կողմերում են՝ պարուրաձև, արտաքին եզրից դեպի ներս պտտվող ակոսիկի խազերի մեջ: Ձայնագրությունը հնչյունների է վերածվում պտտվող Ձ-ի վրա դրվող ասեղի միջոցով, որն «ընթերցում» է այդ խազերը: Ձ-ները հիմնականում լինում են փոքր (18 *սմ*), միջին (25 *սմ*) և մեծ (30 *սմ*) չափերի: Նախքան ***ձայնապակավառակի (CD)*** հայտնագործումը՝ Ձ. ամենատարածված աուդիոկրիչն էր: Այժմ դրանք գործածվում են հազվադեպ, հիմնականում՝ դիսկո ակումբներում:

Ձ. ստեղծել է ամերիկացի հրեա ճարտարագետ Էմիլ Բեռլինները 1887-ին:

ՁԱՅՆԱՌՈՒԹՅՈՒՆ, հիմնական մեղեդուն ուղեկցող պահված ձայն, որը, առաջացնելով տարրական երկձայնություն, մեծացնում է հնչող մեղեդու ներգործությունը: Հայ պրոֆեսիոնալ մոնոդիկ երաժշտության մեջ հայտնի է վաղ միջնադարից՝ հավանաբար ժող. գործիք. երաժշտության միջնորդությամբ: «Ձ.» անվանումը և «ձայն առնել», «ձայն բռնել», «ձայնառ» արտահայտությունները հաստատվել են հոգևոր երաժշտության հին տեսության մեջ: Միահնչյուն Ձ. (կամ ձայնառ ձայնը) տվյալ մեղեդու ձայնակարգի տոնիկան է, երկհնչյուն Ձ-յան մեջ մասնակցում է նաև նրա օժանդակ հենակետը: Հոգևոր վոկալ մոնոդիկ երաժշտության մեջ կատարվում է գերազանցապես առանց խոսքի, բաց բերանով կամ ռնգային (օր.՝ «Ընտրեալդ Աստուծոյ» մեղեդու և «Յայս յարկ» շարականի սկզբները), ժող. անսամբլ. նվագում՝ երաժշտ. գործիքով (կամ գործիքներով), մենանվագում՝ առանձին լարով (կամ լարերով), պարկապզուկում՝ լրացուցիչ փողով, երգեհոնում՝ երաժշտ. բազմաձայն հյուսվածքում շարունակաբար պահվող (կամ կրկնվող) գերազանցապես ստորին ձայնը, որի ֆոնին հնչում են ինքնուրույն մեղեդիներ կամ փոփոխվող համահնչյուններ (երգեհոնի կետ): Ձ. կարող է լինել միալար ձգվող կամ կտրտված, կիրառվում է նաև մի քանի տարբեր հնչյուններից կազմված կրկնվող ֆրազով: Ժող. արտահայտությամբ՝ Ձ. անվանում են դ ա մ (այստեղից՝ նաև դամ պահել, քաշել, դամ քաշող, դամքաշ): Ձ. բյուզ. և նորհուն. հոգևոր երգեցողության մեջ կոչվում է ի ս ո ն (ἴσον, հինհուն.՝ ἴσος – ուղիղ, միանման, անշարժ):

Արթուր Վարդանյան

ՁԱՅՆԱՍԿԱՎԱՌԱԿ, օպտիկ. թվային կրիչ, որտեղ տվյալների գրանցումը և ընթերցումը կատարվում են լազերի միջոցով: Ձ-ների հետագա զարգացումով պայմանավորվել է թվային տեսասկավառակի (DVD) ստեղծումը: Սկզբնապես Ձ. ստեղծվել է ձայնահետագծերը թվային տեսքով պահպանելու համար (CD audio), սակայն հետագայում լայնորեն կիրառվել է որպես կրիչ տարբեր տեսակի տվյալների (նշոցների) պահպանման համար: Հետագայում ի հայտ են եկել սեղմաս-

կավառակներ (floppy) ոչ միայն տվյալներն ընթերցելու, այլև դրանց գրանցման և վերագրանցման հնարավորությամբ (CD-R, CD-RW): CD-ROM-ի տվյալների և ձայն. սեղմասկավառակների գրանցման ձևաչափերի տարբերության հետևանքով սովոր. նվագարկիչը չի կարող վերծանել նրա մեջ պահպանվող տվյալները՝ պահանջելով հատուկ սարք (առկա են համակարգիչներում): 1980-ին մշակել են «Philips» և «Sony» ընկերությունները: 1982-ից Ձ-ների զանգված. արտադրությունն սկզբնավորվել է Գերմանիայում:

Գոհար Շագոյան

ՁԱՅՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, բազմաձայն երաժշտության մեջ՝ ձայներից յուրաքանչյուրի շարժման ուղղությունը՝ որոշակի սկզբունքներով և կանոններով: Տարբերում են ձայների համատեղ շարժման ուղիղ (2 ձայները շարժվում են նույն ուղղությամբ վեր կամ վար, սակայն տարբեր ինտերվալներով), զուգահեռ (2 ձայները շարժվում են նույն ուղղությամբ և նույն ինտերվալներով), շեղ (ձայներից մեկն անշարժ է, մյուսը շարժվում է վեր կամ վար), հակառակ (ձայները շարժվում են հակառակ ուղղություններով՝ մեկը՝ վեր, մյուսը՝ վար) տեսակները: Ձ-ի այն տեսակը, որի ժամանակ 2 հարևան ակորդների տարբեր ձայներում առաջանում է խրոմատիկ քայլ, կոչվում է հակասում: Հակասումը հաճախ թողնում է կեղծ հնչողության տպավորություն, որը հարմոնիայի դասընթացում համարվում է արգելված քայլ և գրեթե չի գործածվում:



ՁԱՅՆԵՂԱՆԱԿ, հայկ. մոնոդիայի տեսակ. բնութագրվում է կոմպոզիցիոն հատկանիշներով՝ ձայնակարգով, ելևէջ. կազմավորումներով, ձևակազմությամբ ևն: Ձայնակարգը Ձ-ի կարևորագույն բացահայտիչն է: Ձ-ները և նրանց ձևաստեղծման նշանակությունը բնորոշ են թե՛ հոգևոր, թե՛ ժող., գուսան. և աշուղ. երգարվ-ին: Տես նաև *Ութձայն*:

Գրկ. *Արևշատյան Ա., Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Ե., 2013: Кушнарев Х., Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958.*

Աննա Արևշատյանի «Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում» գրքի (2013) կազմը

ՁԱՅՆԵՐԻՁ, մագնիս. ժապավեն (լայն.՝ 3,81 *մմ*, հաստ.՝ 9–27 *մկմ*), որի վրա մագնիսական եղանակով գրանցվում է երաժշտությունը, ապա վերարտադրվում մագնիտոֆոնի վրա: Մագնիս. ժապավենի վրա ձայնի և տեսանյութի գրանցման սարքերը կոչվում են համապատասխանաբար՝ մագնիտոֆոն և տեսամագնիտոֆոն, համակարգչային տվյալների պահպանման սարքը՝ ստրիմեր:

Ձ-ի հայտնագործության շնորհիվ հնարավոր է դարձել ուղիղ հաղորդումները (ռադիո- և հեռուստատես.) փոխարինել նախապես գրանցված ծրագրերով: Գործածվում է նաև թվային տեղեկատվության պահպանման համար:

Մագնիս. ժապավենի վրա առաջին ձայնագրությունը կատարվել է 1929-ին և տարածվել ԵՀՊ-ից հետո: Հայտնի էին AGFA, BASF և TDK Ձ-ները, ներկայում՝ ձայնագրման ստուդիաներում, նաև կենցաղում առավելապես օգտագործում են SM 900, SM 911, SM 468, LPR 35 և LPR 90 մակնիշի Ձ-ները:

Ձայներիզ

Ղ

Երվանդ Ղազանչյան

ՂԱԶԱՆՉՅԱՆ Երվանդ Խաչատուրի (ծ. 02.06.1937, Երևան), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1974), ՀՀ ժող. արտիստ (2004): Պրոֆ. (1982): ՀԹԳՄ նախագահ (1995–2007): Ավարտել է ԵԳԹԻ դերասան. (1958), ռեժ. (1966) ֆակ-ները, Լենինգրադի ռեժ. բարձրագույն դասընթացները (1968): 1968–86-ին (ընդհատումով) Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի ռեժ. (1984–86-ին՝ նաև տնօրեն), 1970–77-ին՝ Լենինականի դրամատիկ. թատրոնի գլխ. ռեժ., 1977–78-ին՝ ԵԴԹ տնօրեն և գլխ. ռեժ., 1980–84 և 1986–93-ին՝ ԵՊՀԹ, 1978–80-ին՝ ԵԵԿԹ (1993-ից՝ գեղ. ղեկ., 1993–2002-ին՝ նաև տնօրեն) գլխ. ռեժ.: 1975-ից դասավանդում է ԵԹԱԿԻ-ում: Բեմադրություններից են՝ «Ապուշը» (ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու), Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն», Կ. Գոցցիի «Թագավոր եղջերուն», Ժ. Անանյանի «Ես եմ, եկել եմ», Տ. Չուխաճյանի «Կարինե», Շիրվանզադեի «Մորգանի խնամին», «Զվարճալի պատերազմ կամ Վտանգավոր օտարամոլություն» (ըստ Ե. Օտյանի), Ա. Այվազյանի և Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» ևն:

Տևսարան Տ. Չուխաճյանի «Կարինե» օպերետի բեմադրությունից (2015, ռեժ.՝ Ե. Ղազանչյան)

Երևանի պատվավոր քաղաքացի (2005): ՀՀ Պետ. (1985), ՀՀ նախագահի (2015) մրց-ներ, ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2008), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2017):

Գրկ. *Առաքելյան Ս., Երվանդ Ղազանչյան (ալբոմ-ժող.), Ե., 2005:*

ՂԱԶԱՆՉՅԱՆ Սիրվարդ (ծ. 1944, Ադիս Աբեբա), կոմպոզիտոր, երգչուհի: Նախն. կրթությունն ստացել է ծննդավայրում: Առաջինը՝ «Ձարդ Հայաստանի» ստեղծագործությունը գրել է 16 տարեկանում, հրատարակել «Փյունիկ» ամսագրում: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1968, Գ. Եղիազարյանի դասարան), որպես ավարտ. աշխատանք ներկայացրել է «Մուսա լեռան 40 օրը» սիմֆ. պոեմը: Ձայնը մշակել է Լոզանի կոնսերվատորիայում, ապա հանդես է եկել համերգներով: Ղ.-ի բազմաժանր սիմֆ. և կամեր. ստեղծագործություններին բնորոշ է ծրագրայնությունը: Գրելաոճում գերակշռում է դասականը, որի հիմքում ազգայինն է՝ հարմոնիաների թարմությամբ, թեմաների զարգացման հմտությամբ: Հիշարժան են Ղ.-ի «Հրաժեշտ», «Բացակայություն», «Վերադարձ» (Վ. Թեքեյանի խոսքերով) երգերը, «Սիրո երգեր»-ի (Ռ. Ռիլկեի, Գ. Լորկայի և ուր. խոսքերով), «Հայրենիքիս» դաշնամուր. պիեսների (Մեծ եղեռնի 60-ամյակին, Վիոտտիի անվ. միջազգ. մրցույթի մրց., Իտալիա) շարքերը, «Յոթ սաղմոսը», դաշնամուր. տրիոն, երգեհոնի և 2 ջութակի տրիոն, կվարտետը, ֆլեյտայի սոնատը և այլ երկեր: ՀՀ ՄՆ պատվոգիր (2012):

ՂԱԶԱՐՅԱՆ Աշոտ Բեգլարի (ծ. 26.07.1961, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ (1991-ից) վարչության անդամ, հայ երիտասարդ կոմպոզիտորների մասնաճյուղի ղեկ. (2013-ից): Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի (ղեկ.՝ Ա. Հարությունյան), դաշնամուրի (ղեկ.՝ Ի. Մելիքսեթյան) բաժինները (1985) և ասպիրանտուրան (1996, ղեկ.՝ Ա. Զոհրաբյան): 1998-ից դասավանդում է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (տնօրենի ժ.պ.՝ 2018-ից): Գրել է կոնցերտ (1985)՝ դաշնամուրի և նվագախմբի, 3 դիվերտիսմենտ (1987), ֆանտազիա (1986)՝ սիմֆ. նվագախմբի, «Ռեչիտատիվ» (1983)՝ թավջութակի և

նվագախմբի, սոնատ (1982)՝ ֆլեյտայի և դաշնամուրի, 5 պիես (1991)՝ 2 կլառնետի, սոնատ (1986)՝ ֆագոտի, պոեմ-սոնատ (2013)՝ մենանվագ ջութակի, հոգևոր երգեր (1986–2014)՝ երգչախմբի և նվագախմբի, 9 հայրեն (Նահապետ Քուչակի խոսքերով, 1988)՝ սոպրանոյի, տենորի և կամեր. կազմի, 4 խմբերգ (Մ. Մեծարենցի խոսքերով, 1982), օրհներգ՝ երգչախմբի (քրիստոնեությունը Հայաստանում պետ. կրոն հռչակման 1700-ամյակին, 2001), «Ալելուիա» (1997)՝ երգչախմբի, «Խելահեղ երազներ» (անգլ., 1996)՝ մանկ. երգչախմբի և նվագախմբի համար, մանկ. երգեր և խմբերգեր (1986–2014), «Երաժշտություն 20 լարայինների համար» (1994), լար. (1984), փայտե փող. (1986) կվարտետներ:

ԹՄՄ մրցույթի Գլխ. մրց. (1998), «Երևան քաղաքի մշակույթի պատվավոր գործիչ» հուշամեդալ (2017):

ՂԱԶԱՐՅԱՆ Դանիել Ավագի (17.05.1883, Շուշի–14.12.1958, Երևան), կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ: Հայկ. ռոմանսի հիմնադիրներից է: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1944), արվ. վաստ. գործիչ (1945): Ավարտել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանի վոկալ (1911) և կոնսերվատորիայի ստեղծագործության (1921, Զ. Փալիաշվիլու դասարան) բաժինները: Դասավանդել է Այսրկովկասի հայկ. շրջաններում, հիմնադրել երաժշտ. ստուդիաներ Բաթումում (1922, հետագայում՝ ժող. կոնսերվատորիա), Լենինականում (1924, հետագայում՝ երաժշտ. դպրոց), Երևանում (1937): 1933-ից Երևանում զբաղվել է խմբավարությամբ և մանկավարժությամբ:

Ղ. իր ստեղծագործությամբ և երաժշտահաս. գործունեությամբ մեծապես նպաստել է հայ պրոֆեսիոնալ երաժշտության և խմբերգ. արվ-ի զարգացմանը: Գրել է ռոմաններ, խմբերգեր, շուրջ 300 մանկ. երգեր («Սիրուն թիթեռ», «Սագիկ-մագիկ», «Էծիկ» ևն), երաժշտ. պատկերներ («Պապն ու շաղգամը», «Փիսիկի գանգատը») և մանկ. 5 օպերա («Հաղթված բազեն», «Գայլը», «Անգործ մանուկը», «Տիկնիկի պսակը», «Փոքրիկ կառուցողները»), երաժշտություն՝ դրամաների («Սոս և Վարդիթեր», «Գիքոր») համար, նվագախմբ. ու դաշնամուր. գործեր: Ստեղծագործության հիմնական ժանրը երգն է. առավել ճանաչված են Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ա. Ծատուրյանի, Շ. Կուրղինյանի, Գ. Սարյանի, Սարմենի, Վ. Միրաքյանի, Հ. Հայրապետյանի, Մ. Կորյունի, Վ. Աղասյանի խոսքերով գրած երգ-ռոմանսները («Ուռին», «Լանջեր մար-

Հատված Դ. Ղազարյանի «Քույր իմ նազելի» երգից

Աշոտ Ղազարյան

Դանիել Ղազարյան

ջան», «Սար դարդեր», «Աշնան գիշեր», «Անուշ գարուն», «Քույր իմ նազելի» ևն): Գործունեության 50 տարիների ընթացքում Երևանում, Լենինականում, Կիրովականում, Նոր Բայազետում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում, Դիլիջանում, Կարսում, Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, Խարկովում, Ռոստովում, Նոր Նախիջևանում, Արմավիրում, Կրասնոդարում, Վլադիկավկազում, Նովոռոսիյսկում,

Նոտիփի մանկ. երգեցիկ խումբը (հիմնադիր՝ Դ. Ղազարյան, 1914)

Բաթումում, Սուխումում, Բորժոմում, Սոչիում, Ախալցխայում, Ախալքալաքում, Աշխաբադում, Գանձակում, Շուշիում, Ստեփանակերտում, Կաղզվանում, Նուխիում և այլուր հիմնադրել է շուրջ 250

Դավիթ Ղազարյան

Հայրիկ Ղազարյան



Սոնա Ղազարյանը Վիոլետտայի դերում (Ջ. Վերդիի «Տրավիատա»)

երգեցիկ խմբեր, հանդես եկել 1000-ից ավելի համերգներով (նաև կույրերի քառաձայն երգեցիկ խմբով): Կազմակերպել է նաև ինքնագործ երգչախմբեր Երևանի ուսուցչի տանը, «Հաղթանակ» զբոսայգում, Կարմիր բանակի տանը: Շուրջ 50 տարի երգ-երաժշտություն է դասավանդել հանրակրթ. դպրոցներում, կազմել մեթոդ. ծրագրեր, դպրոց. երգարաններ են: 1933-ին Երևանի պիոներների պալատում Ղ-ի նախաձեռնությամբ կրկին գործել է մանկ. օպերան (բեմադրվել են նաև Ղ-ի «Հաղթված բազեն», «Գայլը» օպերաները):

1997-ից Շուշիում գործում է Ղ-ի անվ. երաժշտ. միջնակարգ մասնագիտ. գիշերօթիկ դպրոց, որտեղ գործում են փող. նվագախումբ և երգչախումբ:

Ղ-ի անունով է կոչվում նաև Արթիկի մանկ. երաժշտ. դպրոցը:

Երկ. *Ընտիր երգեր, Ե., 1973:*

Գրկ. *Տոնիկյան Ա. Ա., Դանիել Ղազարյան, Ե., 1977: Խաչատրյան Ն. Տ., Դանիել Ղազարյան. հայ երաժշտական մշակույթի ավիրյալը, Ե., 2018:*

Անահտ Ասատրյան

ՂԱԶԱՐՅԱՆ Դավիթ Գարսևանի (ծ. 13.10.1939, Երևան), խմբավար, մանկավարժ, հաս. գործիչ: ՀՀ մշակույթի վաստ. աշխատող (1985): Ավարտել է ՀՊՄԻ (1965), ԵՊԿ խմբավարության բաժինը (1971): 1970-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դեկան՝ 1995–2015-ին, պրոֆ.՝ 2002-ից): Ղ-ի սաներից շատերը հանրապետ., համամիութ. և միջազգ. մրցույթների, փառատոների դափնեկիրներ են: 1987-ից՝ Հայաստանի երաժշտ. ընկերության փոխնախագահ, 1996-ից՝ նախագահ: Նպաստել է խմբերգ. արվ-ի զարգացմանն ու տարածմանը, կազմակերպել է երգչախմբ. մրցույթներ, փառատոներ, երգի տոներ: 1987–96-ին՝ Հայաստանի երաժշտ. ընկերության երգի-պարի մանկ. անսամբլի գեղ. ղեկ. (համերգներով շրջագայել է Հայաստանում, ԱՊՀ երկրներում, Հունաստանում, Մեծ Բրիտանիայում): Ղ. պարբերաբար եղել է հանրապետ., միջազգ. մրցույթների, փառատոների հանձնախմբերի անդամ, նախագահ: Կազմել և խմբագրել է «Հայկական խմբերգեր» խոտաթ, (1986), «Հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների խմբերգերի ընտրանի» (2007), «Հոգևոր երգեր և խմբերգեր» (2004), Կոմիտասի «Հոգևոր տաղեր, երգեր, մեներգեր» (2006), Կոմիտասի «Խմբերգերի ընտրանի» (2001, 2009) և այլ ժող-ներ: ՀՀ պետ. մրց-ներ շնորհող երաժշտության հանձնախմբի անդամ (2001-ից), նախագահ՝ 2013-ից:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2007), «Ծաղկիր իմ Հանրապետություն» փառատոնի (1985), ՀՀ ՄՆ (2008), ԿԳՆ (2009) ոսկե, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016) մեդալներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Հայրիկ Սիրականի, երգիչ Հայրիկ, [04.04.1922, Զորագյուղ (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–08.07.1995, Զորագյուղ], երգերի հեղինակ, մանկավարժ: Ավարտել է ՀՊՄԻ: Շուրջ 50 տարի դասավանդել է Զորագյուղի դպրոցում (2014-ից՝ Ղ-ի անվ.): Գրել է 100-ից ավելի երգեր. հայտնի են «Զայն տուր, Տղմուտ», «Անդրանիկ փաշա», «Արմենիա, լողա», «Գնացել են անդարձ», «Իմ մայր Զորագյուղ», «Ինչ լուր ես բերել», «Սևքարի Սաքո», «Ես կուգամ», «Իմ Հայաստան», «Արարատ լեռան սուգը», «Մշո աղջիկ», «Հատը մեկ ոսկի», «Գարեգին Նժդեհ», «Երդում», «Անի», «Ուր կերթաս», «Լուր բերեք» և այլ երգեր, որոնք հայրենասիր. երգերի լավագույն նմուշներից են: Ղ. ստեղծագործել է աշուղ-գուսան. ավանդ. տաղաչափությամբ, խոսքն ու մեղեդին ասերգային են և ինքնատիպ: Երգերը կատարում են «Սայաթ-Նովա» աշուղ. անսամբլը, «Գոհար» սիմֆ. նվագախումբ-երգչախումբը, երգիչներ Ս. Հակոբյանը, Թ. Պողոսյանը, Ռ. Սարիբեկյանը, Ս. Գալստյանը, Գ. Հակոբյանը, Մ. Շահինյանը, Գ. և Դ. Խաչատրյանները և ուր.: Լույս են տեսել «Մշո հավքեր» (1991) երգերի նոտագրված ժող-ը, «Երգարանը» (1993):

ՂԱԶԱՐՅԱՆ Սոնա (ծ. 02.09.1945, Բեյրութ), երգչուհի (սոպրանո): 4 տարեկանից դաշնամուր է նվագել, 7-ից հանդես եկել մենահամերգներով: Ավարտել է Բեյրութի ազգ. կոնսերվատորիան, հոգեբանություն ուսումնասիրել Բեյրութի Ամերիկ. համալսարանում, կատարելագործվել Հռոմի «Սանտա Չեչիլիա» և Սիենայի «Chigiana» երաժշտ. ակադ-ներում (Պատվո վկայական): Ելույթներ է ունեցել Նյու Յորքի «Քառնեգի Հոլլում», «Մետրոպոլիտեն օպերա», Միլանի «Լա Սկալա», 1973-ին՝ Փարիզի «Շանզ Էլիզե», 1975-ից՝ Վիեննայի («Օսկար» մրց.) օպեր. թատ-

րոններում: Համագործակցել է ճանաչված դիրիժորների՝ Հ. ֆոն Կարայանի, Կ. Բյոմի, Ժ. Կրիպսի, Հ. Զվարովսկու և ուր. հետ: Կատարել է 700-ից ավելի դերերգեր. լավագույններից են՝ Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Վիոլետտա (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր») ևն: Հանդես է գալիս կամեր. ծրագրով. երկացանկում՝ նաև հայ կոմպոզիտորների գործերից: 1989 և 1990-ին (ամուսնու՝ Գերհարդ Սքոֆի մասնակցությամբ) Մոսկվայում ակադեմ. սիմֆ. նվագախմբի հետ (դիրիժոր՝ Մ. Էրմլեր) բարեգործ. համերգներ է ունեցել՝ ի նպաստ 1988-ի Սպիտակի երկրաշարժից տուժածների և հաշմանդամ երեխաների: Ապրում և ստեղծագործում է Վիեննայում:

Միջազգ. մրցույթների (Հերտոգենբոշ՝ Հոլանդիա, 1970, Թուլուզ՝ Ֆրանսիա) դափնեկիր:

ՂԱԶԱՐՅԱՆ3 (Գազարով) Էդուարդ Երվանդի [23.05.1936, Բաքու–10.09.1996, ք. Կիրյատ-Գատ (Իսրայել)], կոմպոզիտոր, ակորդեոնահար, մանկավարժ: Ավարտել է Բաքվի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը (1959): 1979–85-ին՝ ԼՂԻՄ երգի-պարի պետ. անսամբլի գեղ. ղեկ.: 1982–90-ին դասավանդել է Ստեփանակերտի երաժշտ. ուս. հաստատություններում, 1990-ից՝ ԽՍՀՄ ԿՄ ԼՂԻՄ բաժանմունքի, 1991–95-ին՝ ԼՂՀ ԿՄ նախագահ: Գրել է 3 սիմֆոնիա, «Արցախի դուստր՝ Ռուզան» բալետը (1986), «Պոեմ Գյումրու մասին» (1988, խոսք՝ Գ. Վանյանի)՝ սիմֆ. նվագախմբի և մեներգիչների համար, կանտատներ, քնար. երգեր, խմբերգեր, գործիք. պիեսներ, թատեր. երաժշտություն:

Էստրադայի արտիստների միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1968, Սոֆիա):

ՂԱԶԱՐՈՍՅԱՆ Գոհարիկ (21.12.1907, Կ. Պոլիս–29.10.1967, Փարիզ), կոմպոզիտոր, դաշնակահարուհի: Սկզբն. կրթությունն ստացել է Կ. Պոլսի Եսայան վարժարանում, դասեր առել հունգար և ռուս ուսուցիչներից (դաշնամուր), Էդգար *Մանասից* (երաժշտության տեսություն): Հետագայում ուսումը շարունակել է Փարիզի կոնսերվատորիայում, աշակերտել Լ. Լևիին (դաշնամուր), Պ. Դյուկային և Ժ. Ռոժե-Դյուկասին (ստեղծագործություն): Որպես դաշնակահարուհի՝ 1934-ին համերգներով հանդես է եկել Փարիզի «Սալ Շոպեն» համերգասրահում, 1936-ին՝ Կ. Պոլսում, 1947–49-ին՝ Ամերիկայում, Ֆրանսիայում. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Ֆ. Շոպենի և ուր. ստեղծագործություններից: Գրել է դաշնամուր. 2 կոնցերտ, մանրանվագներ, գործիք. անսամբլներ (ջութակի և դաշնամուրի, թավջութակի և դաշնամուրի, կվինտետ ևն), երգեր, խմբերգեր, բալետ (ըստ Հ. Անդերսենի պոեմի՝ «Մոր մը պատմությունը»), պրելյուդներ, ժող. թեմաներով վարիացիաներ ևն, մշակել Կոմիտասի գործերից: Ղ-ի արվ-ի հիմքում հայկ. ժող. և հոգևոր երգերն են: «Կտակ», «Սիրերգ», «Եկեսցե» խմբերգերն առանձնանում են երաժշտ. լեզվի ինքնատիպությամբ: Լույս են տեսել նրա դաշնամուր. 24 էտյուդները, աշուղ. երգերի մշակումներ ևն: Համերգներով հանդես է եկել Եվրոպայի և ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում:

Էդուարդ Ղազարյանցը ելույթի պահին

ՂԱՄԲԱՐՅԱՆ Մարիա Ստեփանի (ծ. 01.10.1925, Երևան), դաշնակահարուհի, կլավեսինահարուհի, մանկավարժ: ՀՀ (1966), ՌԴ (2005) վաստ. արտիստ: Ավարտել է ՄՊԿ-ին կից երաժշտ. դպրոցը (1937), ՄՊԿ (1948, Կ. Ն. Իգումնովի դասարան) և ասպիրանտուրան (1951, Հ. Գ. Նեյհաուզի և Լ. Ն. Օբորինի դասարաններ): 1953–55-ին դասավանդել է Լենինգրադի կոնսերվատորիայում, 1960-ից՝ Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. մանկավարժ. ինստ-ում (այժմ՝ Ռուսաստանի երաժշտ. ակադ., պրոֆ.): 1991-ին վարպետության դասեր է վարել Իսպանիայում: 1951-ից համերգներով շրջագայել է Մոսկվայում, Լենինգրադում, Դոնի Ռոստովում, Կիևում, Ռիգայում, Տալլինում, նաև Իսպանիայում, Ճապոնիայում, Գերմանիայում, Հարավսլավիայում, Հվ. Կորեայում և այլուր. նվագացանկում՝ Ֆ. Շոպենի, Ռ. Շումանի, Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Լիստի, Ա. Վ. Սկրյաբինի, Լ. վան Բեթհովենի, Մ. Ռավելի, նաև հայ, ռուս կոմպոզիտորների ստեղծագործություններից: Ի նպաստ 1988-ի Սպիտակի երկրաշարժից տուժածների՝ բարեգործ. համերգներով հանդես է եկել Մոսկվայում (1988), Ճապոնիայում (1994): 1995-ին Ղ-ի նախաձեռնությամբ Մոսկվայում առաջին անգամ կատարվել են դրվագներ Կոմիտասի «Պատարագից»: Նրա խմբագրութ-

Գոհարիկ Ղազարոսյան

Մարիա Ղամբարյանը ելույթի պահին

Արամ Ղարաբեկյան



Հրաչյա Ղափլանյան

յամբ լույս են տեսել Ֆ. Շոպենի 3 պիես (1974), «Մուզիկա» ձեռնարկը:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2016):

ՂԱՐԱԲԵԿՅԱՆ Արամ Վաչիկի (04.07.1955, Թեհրան–11.01.2014, ԱՄՆ, թաղված է Երևանում), դիրիժոր, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2007): Սովորել է Թեհրանի (1965–73), Բոստոնի (1973–77), Նյու Ինգլենդի (1977–79, դաշնամուր) կոնսերվատորիաներում: Որպես դիրիժոր՝ մասնագիտացել է Իտալիայում (1979–80, ղեկ.՝ Ֆ. Ֆեռարա), Գերմանիայում (1979–82, ղեկ.՝ Ս. Չելիբիդակե), միաժամանակ սովորել է Մայնցի համալսարանում (1980–82, երաժշտ. ֆենոմենոլոգիա), կատարելագործվել ԱՄՆ-ում՝ Բերկշիրի «Թենգլվուդ» երաժշտ. կենտրոնում (ղեկ-ներ՝ Զ. Դրաքմեն և Լ. Բեռնսթայն): Հիմնադրել և ղեկավարել է Բոստոնի «Սիմֆո Նովա» կամեր. նվագախումբը (1988–90), հանդես եկել համերգներով ԱՄՆ-ի լավագույն համերգասրահներում. երկացանկում՝ եվրոպ. դաս., ռոմանտիկ, նորագույն երաժշտության, նաև ամերիկացի ժամանակակից կոմպոզիտորների երկերից (մի մասը գրվել է «Սիմֆո Նովա»-ի համար): ԱՄՆ-ում Ղ. առաջինն է կատարել Հ. Դելլայանի «Տոպոֆոնո»-ն (1986), Է. Միրզոյանի «Էպիտաֆիա»-ն (1988), Տ. Մանսուրյանի թավջութակի կոնցերտը (1989), ղեկավարել Ա. Հովհաննեսի 75-ամյակին նվիրված հեղինակ. համերգը (1983): Որպես հրավիրյալ դիրիժոր՝ հանդես է եկել Զագրեբի ֆիլհարմոնիկ, Միունխենի «Սիմֆոնիետտա», Ուկրաինայի ազգ. սիմֆ., օպերայի և բալետի, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ: 1991–97-ին՝ Ուկրաինայի ազգ. սիմֆ., 1996–97-ին՝ նաև Ուկր. ռադիոյի և հեռուստատեսության սիմֆ. նվագախմբերի գլխ. դիրիժոր, 1997-ից՝ ***Հայաստանի կամերային նվագախմբի*** գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1999-ին 6 երկրների երաժիշտներից կազմված նվագախմբով հանդես է եկել նոր հազարամյակին նվիրված համերգ. ծրագրով, Չինաստանի Հանչժոու ք-ում ներկայացրել Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան: Գրել է «Վի մոդալ էտյուդներ»՝ դաշնամուրի, «Քուանթում»՝ 2 ֆլեյտայի, «Մեդիտասիոն»՝ երգչախմբի և կամեր. նվագախմբի համար, և այլ գործեր: Ղ.-ի արվ-ին բնորոշ էին կատարվող երկի ոգու ինքնատիպ բացահայտումն ու մեկնաբանությունը:

Բերկշիրի երաժշտ. կենտրոնի (1977), Լ. Վուլվսինի (1989, ԱՄՆ) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

ՂԱՓԼԱՆՅԱՆ Աշոտ Գևորգի (25.09.1946, Լենինական–22.03.2003, Երևան), խմբավար, մանկավարժ: ԽՍՀՄ ԺՄ անդամ (1976-ից): Սովորել է Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ խմբավարության բաժինը (1969): 1964–69-ին դասավանդել է Ղափանի, Լենինականի, 1970-ից՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. (1980-ից՝ փոխտնօրեն, 1990–2003-ին՝ տնօրեն) երաժշտ. ուսումնարաններում, միաժամանակ եղել է Հեռուստառադիոպետկոմի երաժշտ. խմբագրության ավագ խմբ., համագործակցել «Ծիածան» ռադիոկայանի հետ: Հիմնադրել և վարել է «Հայ հնագույն երգի ակումբ» հաղորդաշարը (1976), որն առաջին անգամ հեռուստատեսությամբ ներկայացրել է հայկ. բանահյուսության լավագույն նմուշներից:

ՂԱՓԼԱՆՅԱՆ Հրաչյա Մկրտչի [14.11.1923, գ. Գարգառ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–14.08.1988, Երևան], ռեժ., դերասան: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): ՀԽՍՀ (1966), ԽՍՀՄ (1971) ժող. արտիստ: Ավարտել է Երևանի թատեր. ուսումնարանը (1940), վերապատրաստվել ՄԳԹ-ում

Տեսարան Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան» օպերայի բեմադրությունից (1960, ռեժ.՝ Հ. Ղափլանյան)

(1952–53): 1938–52-ին՝ ԵՊՀԹ դերասան և ռեժ. (1953–58-ին՝ գլխ. ռեժ., 1960–62-ին՝ նաև տնօրեն), 1962–65-ին՝ ԵՕԲԹ, 1977–79, 1985–88-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի գլխ. ռեժ., 1969–77, 1980–85-ին՝ ԵԴԹ (1990-ից՝ Ղ.-ի անվ.) գեղ. ղեկ. և տնօրեն: 1975-ից դասավանդել

է ԵԳԹԻ-ում (պրոֆ.՝ 1986-ից): Բեմադրել է Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք» (1955), Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III» (1972), «Կորիոլան» (1978, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1981), Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ» (1985, Մոսկվայի Փոքր թատրոն) և այլ պիեսներ, Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան» (1960), Ի. Ֆ. Ստրավինսկու «Էդիպ», Լ. Բեռնսթայնի «Վեստսայդյան պատմություն», Ա. Այվազյանի «Պարոն Մինթոևը Փարիզում» (երեքն էլ՝ 1963), Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» (1964) օպերաները, «Թերթելով էջերը» (1963) թատեր. համերգը: ՀԽՍՀ (1975, 1979), ԽՍՀՄ (1978) Պետ. մրց-ներ:

ՂԵՅՐԱԹԻ (Հովհաննես, 1824, Էրզրում–1848, Ալեքսանդրապոլ), աշուղ: Ղ.-ի ընտանիքը 1831-ին գաղթել է Ախալցխա, 1838-ից ապրել է Ալեքսանդրապոլում, որտեղ հիմնադրել է սրճարան («Ղեյրաթու ղայֆե») և իր շուրջ հավաքել ժամանակի անվանի աշուղներին (***Մալուլ, Զահրի, Հավեսի***), որի շնորհիվ Ալեքսանդրապոլը ճանաչվել է «աշուղների ոստան»: 1870-ական թթ-ից աշուղ. երգը հնչել է միայն հայ.: Նա նույնպես հորինել է հայ. երգեր, շրջագայել Կովկասի հայաբնակ վայրերում: Ղ.-ից պահպանվել են սակավաթիվ երգեր՝ Կարնո բարբառով:

Երկ. *Շիրակի հայ աշուղները, [ժող.], Ե., 1986, էջ 28:*

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Կորգանով) Գենարիոս Հովսեփի [30.04(12.05).1858, գ. Ղվարելի (Վրաստանի Կախեթի շրջան)–23.02(07.03).1890, Դոնի Ռոստով], կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ: Հեղինե, Մարիամ, Նինա ***Ղորղանյանների*** եղբայրը: Թիֆլիսում աշակերտել է Է. Էպշտեյնին: 1874–76-ին սովորել է Լայպցիգի (դաշնամուր, դասատու՝ Է. Ռայնեկե), 1877–78-ին՝ Ս. Պետերբուրգի (դաշնամուր, դասատու՝ Լ. Բրասսեն) կոնսերվատորիաներում: 1879-ից ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում: 1889-ին Պ. Ի. Չայկովսկու խորհրդով կոմպոզիցիայի դասեր է առել Ս. Ի. Տանեևից: Գրել է ռոմանսներ Ա. Ս. Պուշկինի, Ա. Ն. Տոլստոյի, Ա. Ն. Մայկովի, Ա. Ա. Ֆետի բանաստեղծությունների տեքստերով, դաշնամուր. երկեր («Բայաթի», «Նոր բայաթի», «Հայկական ռապսոդիա», «Կովկասյան ռապսոդիա»), որոնց մի մասում օգտագործել է հայկ. ժող. երգեր ու պարեղանակներ: Մշակել է աշուղ. («Պաղ աղբյուրի մոտ»), ժող. («Լորիկ», «Սիրուհիս») երգեր: Նրա դաշնամուր. էտյուդներն ընդգրկվել են Լայպցիգի կոնսերվատորիայի ուս. երկացանկում: Ղ.՝նպաստել է հայկ. պրոֆեսիոնալ երաժշտաձևերի զարգացմանը:

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Տերյան-Կորգանովա) Հեղինե Հովսեփի [1864, Թիֆլիս–25.03.1937, Նիս (Ֆրանսիա)], երգչուհի (կոլորատուր., ապա՝ քնարադրամատիկ. սոպրանո), մանկավարժ: Մարիամ, Նինա, Գենարիոս ***Ղորղանյանների*** քույրը: Երգեցողություն սովորել է Փարիզում (ղեկ.՝ Պ. Վիարդո-Գարսիա): Երգել է Եվրոպայի մի շարք քաղաքների, 1884-ից՝ Թիֆլիսի, Մոսկվայի, 1899-ից՝ Խարկովի օպեր. թատրոններում: Դերերգերից են՝ Ռոզինա (Ջ. Ռոսսինի «Սևիլյան սափրիչ»), Աիդա (Ջ. Վերդիի «Աիդա»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Հուդիթ (Ա. Ն. Սերովի «Հուդիթ»), Վալենտինա (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ»), Լիզա (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա») ևն: Հանդես է եկել նաև որպես կամեր. երգչուհի: 1904-ից Մոսկվայում անցել է մանկավարժ. գործունեության, նկատելի հետք է թողել ռուս. վոկալ արվ-ի պատմության մեջ: Նշանավոր սաներից են երգչուհիներ Ք. Դերժինսկայան (սոպրանո), Ե. Կատուլսկայան (քնարակոլորատուր. սոպրանո), Ա. Մատովան (քնարադրամատիկ. սոպրանո):

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Սվետադե) Մարիամ Հովսեփի, XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբի երգչուհի (մեցցո սոպրանո), մանկավարժ: Նինա, Հեղինե, Գենարիոս ***Ղորղանյանների*** քույրը: Երաժշտ. կրթությունն ստացել է Փարիզում: Եղել է Եվրոպայի և ԱՄՆ-ի մի շարք օպեր. թատրոնների մեներգչուհի: 1905-ին Թիֆլիսում բացել է երգեցողության դասընթացներ:

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Դարիալի) Նինա (Նունե) Հովսեփի (1852–24.02.1896), երգչուհի (մեցցո սոպրանո), մանկավարժ: Մարիամ, Հեղինե, Գենարիոս ***Ղորղանյանների*** քույրը: Սովորել է Ս. Պետերբուրգի Բեստուժևյան դասընթացներում: Երաժշտ. կրթությունն ստացել է Փարիզում (դասատու՝ Պ. Վիարդո-Գարսիա), ապա՝ Միլանում (դասատուներ՝ Լամպերտի, Բուցի): Որպես օպեր. և կամեր. երգչուհի՝ հանդես է եկել Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Մադրիդում, Ս. Պե-

Գենարիոս Ղորղանյան

Հեղինե Ղորղանյան

Նինա Ղորղանյան

Վասիլ Ղորղանյան

Վ. Ղորղանյանի «Կովկասյան երաժշտություն» ժող-ի (ռուս., 1908) շապիկը

տերբուրգում և այլուր, 1880-ական թթ-ից՝ Թիֆլիսում: Հիվանդության պատճառով 1885-ին թողել է բեմը և զբաղվել մանկավարժությամբ, դարձել վոկալ արվ-ի լավագույն դաստատուներից Ռուսաստանում: 1891-ին երաժշտության դասընթացներ է բացել (երգչուհի Մ. Ն. Կլիմենտովա-Մուրոմցևայի հետ) Մոսկվայում: Ղ-ի սաներից է նաև Արշակ ***Կոստանյանը***:

Գրկ. *Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970: Թադևոսյան Ա., Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից, Ե., 1977:*

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Կորգանով) Վասիլ Դավթի [22.01(03.02).1865, Թիֆլիս–06.06.1934, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. պանթեոնում], երաժշտագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1934): Աշակերտել է Է. Էպշտեյնին (դաշնամուր), Կոստանդին ***Ալիխանովին*** և Գենարիոս ***Ղորղանյանին*** (երաժշտության տեսություն): Ավարտել է Ս. Պետերբուրգի ռազմաճարտարագիտ. ուսումնարանը: 1880-ական թթ-ի վերջերին աշխատել է Սարիղամիշում, 1888-ից Թիֆլիսում ծավալել է հաս., հրապարակախոս. գործունեություն, հանդես եկել տեղի մամուլում, թղթակցել Մոսկվայի և Ս. Պետերբուրգի երաժշտ. հանդեսներին: 1890-ական թթ-ին մեկնել է Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա, Իտալիա, ծանոթացել Յ. Բրամսի, Ժ. Մասնեի, Կ. Սեն-Սանսի, Զ. Վերդիի հետ: 1891–1901-ին՝ Ռուս. երաժշտ. ընկերության Թիֆլիսի բաժանմունքի վարչության անդամ: 1900-ին հիմնադրել է Այսրկովկասում առաջին ռուս. «Կավկազսկի վեստնիկ» («Кавказский вестник») գիտագրական ամսագիրը (հրտ. և խմբ.՝ մինչև 1902-ը): 1900–04-ին՝ Միջազգ. երաժշտ. ընկերության կովկաս. բաժանմունքի տնօրեն: Կովկասի երաժշտության մասին զեկուցումներ է կարդացել Բեռլինում (1904), Վիեննայում (1909): 1921-ից գործել է Երևանում: 1925–30-ին՝ Պետհրատի երաժշտ. բաժանմունքի նախագահ, կոնսերվատորիայի պրոֆ-խորհրդատու: Հեղինակ է արևմտաեվրոպ. և ռուս. երաժշտության նշանավոր ներկայացուցիչների մասին աշխ-ների, հոդվածների: Հավաքել, ուսումնասիրել և համակարգել է Լ. վան Բեթհովենի կյանքին վերաբերող փաստ. հարուստ նյութ, 1888-ին Թիֆլիսում հրատարակել է գրքույկ նրա մասին, 1900 և 1904-ին՝ նամականին (1300 նամակ) և մեծածավալ մենագրություն («Կենսագրական էտյուդ», 1909): Հեղինակ է նաև «Երաժշտական կրթությունը Ռուսաստանում» (1899), «Պուշկինը երաժշտության մեջ» (1899), «Մոցարտ» (1900), «Շիլլերը երաժշտության մեջ» (բոլորը՝ ռուս.) աշխ-ների: Ուսումնասիրել է հայկ. և վրաց. երաժշտությունը, հավաքած նյութերն ընդհանրացրել է «Կովկասյան երաժշտություն» ժող-ում (1901), որտեղ Ղ-ի թարգմանությամբ (գերմ-ից) ընդգրկվել են նաև Կոմիտասի «Հայկական եկեղեցական երաժշտություն» և «Հայ գեղջուկ պարերգեր» աշխ-ները: Գրել է ռոմանսներ (6-ը տպագրվել են), «Էլեգիա» (եղել է Ֆ. Ի. Շալյապինի երգացանկում), «Իսպանական ֆանտազիա»՝ լար. նվագախմբի համար: Իր հարուստ գրադարանի մի մասը նվիրել է Թբիլիսիի կոնսերվատորիային, մյուսը՝ Երևանի հանր. գրադարանին (այժմ՝ ՀԱԳ):

Երկ. *Статьи, воспоминания, путевые заметки, биобиблиография, Е., 1968.*

Գրկ. *Թադևոսյան Ա., Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից, Ե., 1977, էջ 202–215:*

ՂՈՒԿ ԷԳԱԶ, Էգազ Նորջուղայեցի (09.02.1650–06.08.1734, Նոր Ջուղա), աշուղ: Նոր Ջուղայի աշուղ. դպրոցի հիմնադիր (Արզունի ***Նորջուղայեցու*** հետ): Նրա դավթարը հայտնաբերված չէ, սակայն 1823-ից հանդեսներում և բանասիր. աշխ-ներում հրատարակվել են Ղ. Է-ի որոշ երգեր և կենսագր. տեղեկություններ: Ա. Երեմյանի «Պարսկահայ աշուղներ» (գիրք 1–3, 1920–25) ժող-ում զետեղվել են աշուղի բանավոր փոխանցմամբ պահպանված 6 երգի տեքստերը, Հ. Սահակյանի «Հայ աշուղներ» (1961) գրքում՝ նրա մասին տեղեկություններն ու մատենագրությունը, վերահրատարակվել են երգերը (պահպանվել է 8 խաղ), նաև իր հայտնաբերած (Մտնդ., ձեռ. № 5954) 3 և Գ. Թարվերդյանի հայտնաբերած 1 երգերը: Ղ. Է-ի երգերի մեղեդիները չեն պահպանվել: Ստեղծագործել է Նոր Ջուղայի բարբառով:

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԿԱՐՆԵՑԻ երգիչ [1781/86, Կարին–1841, Վարևան (այժմ՝ Վրաստանի Ախալքալաքի շրջանում)], երգիչ, աշուղ, բանաստեղծ: Նախն. կրթությունն ստացել է Պարսկաստանում, ապա

սովորել Լիբանանի Անտոնյաց վանքում: Որպես պալատ. թարգմանիչ, խորհրդատու և գրագիր՝ ծառայել է Եգիպտոսի Իբրահիմ փաշայի պալատում: 1828-ին տեղափոխվել է Ղրիմ, ապա՝ Թիֆլիս: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Ախալքալաքի Վարևան գ-ում, որտեղ զբաղվել է մանուկների կրթությամբ: Ղ. Կ-ու երգերի հիմնական թեման մարդու բարդ ներաշխարհն է, պանդխտությունը, գաղթը, կորուսյալ հայրենիքի ողբերգությունը, Սբ Կույսի գեղեցկությունը, մաքրությունն ու անարատ հոգին: Լեզվին բնորոշ են ժող. մտածելակերպն ու ոգին: Գրել է նաև տաճկ., արաբ., պարսկ.: Նրա գերեզմանին կառուցված Սբ Ղուկիանոս մատուռը դարձել է ուխտատեղի:

Երկ. *Ղուկիանոսի ընծան, Ե., 1995:*

Գրկ. *Поэзия Арменuи..., под ред. В. Брюсова, 2 изд., Е., 1973.*

Ղուկիանոս Կարնեցի

Ճ

ՃԱՆԻԿՅԱՆ Հովսեփ [12.02.1840, ք. Ակն (Խարբերդի նահանգ)–14.02.1902, Վաղարշապատ], բանահավաք-ազգագրագետ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Կյանքի վերջին տարիներին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Նրա «Հնութիւնք Ակնայ» (1895) ժող-ը հարուստ նյութ է պարունակում Ակնա ազգագրության, բանահյուսության և բարբառի վերաբերյալ: Ժող-ին կցված են Կոմիտասի ձայնագրած և հայկ. ձայնանիշերով նոտագրած Ակնա 25 ժող. երգեր: Ճ. «Դժոխք» (հ. 1, 2, 1897, 1900) գիրքը գրել է Ջ. Միլթոնի «Դրախտ կորուսյալ» և Ա. Դանտեի «Դժոխք» երկերի նմանողությամբ:

Գրկ. *Երեմեան Ս., Ազգային դէմքեր: Գրագէտ հայեր (երկրորդ շարք), Վնտ., 1913, էջ 179–219:*

ՃԳՆԱՎՈՐՅԱՆ Լորիս Հայկազի (ծ. 13.10.1937, ք. Բորուջերդ՝ Իրան), դիրիժոր, կոմպոզիտոր: Սովորել է Թեհրանի կոնսերվատորիայում (1950–54, ջութակ), ավարտել Վիեննայի երաժշտ. ակադ-ը (1961, ջութակ, կոմպոզիցիա), կատարելագործվել Զալցբուրգի «Մոցարտեում»-ում (1963–1964, Կ. Օրֆի դասարան) և Միչիգանի համալսարանում (1965–66): 1970–75-ին՝ Իրանի Մ՚Ն ժող. երաժշտության արխիվի տնօրեն և ներկայացուցիչ-կոմպոզիտոր, օպեր. թատրոնի գլխ. դիրիժոր, «Փեհլևի» մշակութ. հիմնադրամի գլխ. երաժշտ. տնօրեն: 1975-ից ապրել և աշխատել է Վիեննայում, Նյու Յորքում, Լոնդոնում, հանդես եկել անգլ. «Ռոյալ ֆիլհարմոնիկ», «Ռոյալ Լիվերպուլ», «Լոնդոն ֆիլհարմոնիկ», «Հելսինկի ֆիլհարմոնիկ», Անգլիայի կամեր. և այլ նվագախմբերի հետ: 1975–85-ին RCA (Ամերիկայի ռադիոկորպորացիա) ֆիրմայում ձայնագրել է սիմֆ. երաժշտության բազմաթիվ ձայնասկավառակներ: 1978-ին Լոնդոնում հիմնադրել է Հայ երաժշտության ինստ. (սատարում է հայ ավանդ. երաժշտության ուսումնասիրությանն ու տարածմանը Եվրոպայում), դրել հայ հոգևոր երաժշտության նմուշների խոշորագույն հավաքածուի հիմքը: 1989–2000-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր. նպաստել է նվագախմբի կատարող. մակարդակի բարձրացմանը, բարեփոխել համերգ. գործունեությունը, ընդլայնել դաս. երաժշտություն ունկնդրողների շրջանակը: 1992-ից Երևանում պարբերաբար կազմակերպել է սիմֆ. երաժշտության փառատոներ («Աշխարհը

Լորիս Ճգնավորյան

Լ. Ճգնավորյանը ելույթի պահին

և մենք», «Արամ Խաչատրյան-90», «Եղեռնից մինչև անկախություն...» ևն), «Հոգևոր երաժշտության ժամ» համերգաշարը և այլ միջոցառումներ: 1991-ին կատարել է ուխտագնացություն Գյումրի, որտեղ հիմնադրել է մշակույթի կենտրոն (1992-ից՝ սիմֆ. նվագախմբի պատվ. գեղ. ղեկ.): 1991-ին Երևանում կազմակերպել է Երիտասարդ. սիմֆ. նվագախումբը, 1994-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ երգչախումբը: 2010-ից՝ Գլենդելի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

Գրել է «Աղավնու վանքը» (1961), «Ռոստամ և Զոհրաբ» (1962–64), «Փարդիս և Փարիսա» (1972) և այլ օպերաներ, «Ֆանտաստիկ» (1958–61), «Սիմորգ» (1975), «Օթելլո» (1984) և այլ բալետներ, նաև օրատորիաներ, սիմֆոնիաներ, կոնցերտներ, գործիք. անսամբլներ, նվագախմբ. սյուիտներ, խմբերգեր, կինոերաժշտություն, որոնց բնորոշ են հայկ. ազգ. մտածողությամբ արև. ու եվրոպ. գրելաոճերի տարրերի միահյուսումը:

Ճչանակ

«Հոմայուն» (1971, Իրան), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (1978) շքանշաններ, ՀՀ «Սիվսես Խորենացի» (1996), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» II աստիճանի (2012), Ավստրիայի նախագահի ոսկե մեդալներ: Երևանի պատվավոր քաղաքացի (1991):

Որդին՝ Էմանուել Ճ. (ծ. 22.04.1996, Վիեննա), ջութակահար: Նվագել է 5 տարեկանից: 2005-ին արժանացել է Վ. Թ. Սպիվակովի անվ. հիմնադրամի կրթաթոշակի: Համերգներով հանդես է եկել Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվ. համերգասրահում և ՄՊԿ Մեծ դահլիճում: Ավարտել է Վիեննայի համալսարանի երաժշտության և կատարող. արվ-ի բաժինը (Գ. Շուլցի դասարան), «Sacred Heart» վարժարանը (2014):

Ջութակահարների Յ. Բրամսի անվ., Վիեննայի երիտասարդ. կատարողների (2012–13), «Stefanie Hohl» (2013, 1-ին մրց.), «Ֆրից Կրայսլեր» (2014, 3-րդ մրց.), «Casinos Austria Rising Star Award» (2014), Յ. Սիբելիուսի անվ. (2015, 2-րդ մրց.) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՃՉԱՆԱԿ, ռուս. ժող. հարված. երաժշտ. գործիք: Ծագել է XII դ-ում: Բաղկացած է պարանին շարած 18–20 փայտե թիթեղիկներից (երկ.՝ 16–18 *սմ*): Նվագողը բռնում է պարանի ծայրերից և թափահարում, որի հետևանքով արտաբերվում են չոր, շրխկան հնչյուններ: Օգտագործվում է ժող. պարերի ռիթմիկ նվագակցության համար, տարածված է տարբեր ժողովուրդների երաժշտության մեջ:

Մ

ՄԱԳՆԻՏՈՖՈՆ, մագնիս. ժապավենի կամ լարի վրա ձայն. ազդանշանների գրառման և վերարտադրման սարք: Գրառումը սովորաբար կատարվում է տարատեսակ մագնիս. ժապավենների վրա: Մ–ի հիմնական հանգույցներն են ժապավենը ձգելու սարքը (էլեկտր. շարժիչի հետ), մագնիս. գլխիկները (ջնջող, գրառող և վերարտադրող), բարձր հաճախության հոսանքի գեներատորը, ձայն. հաճախության էլեկտր. տատանումների ուժեղացուցիչը, ակուստիկ համակարգը, սնուցման բլոկը: Տարբերում են Մ–ի պրոֆեսիոնալ (ստուդիական, ռեպորտաժ. ևն), կենցաղ. (կոճով, կասետային), մոնոֆոն և ստերեոֆոն տեսակները:

ՄԱԴՈՅԱՆ Լևոն Մանուկի (10.08.1909, Ալեքսանդրապոլ–19.09.1964, Երևան), դուդուկահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): Ավարտել է Լենինականի առաջին երաժշտ. դպրոցը: 1923–39–ին՝ Հայֆիլհարմոնիայի Լենինականի բաժանմունքի արվ. գործիքների անսամբլի կազմում: 1939–ին Երևանում հիմնադրել է Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների անսամբլը, 1952–ից՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Նվագացանկում՝ հայկ. ժող. և աշուղ. երգեր, պարեղանակներ, արվ. մուղամներ, հայ կոմպոզիտորների գործիք. ստեղծագործություններ: Վերականգնել է Շիրակի բազմաթիվ մոռացված երգեր ու պարեղանակներ: Կատարող. բարձր վարպետությամբ հայտնի են «Հովվի կանչը», «Մաճկալ», «Որսկան ախպեր», «Դուն էն գլխեն» երգերի գործիք. մեկնաբանությունները: Համերգներով հանդես է եկել Հայաստանում, Մոսկվայում, Թբիլիսիում, Բաքվում, Տաշքենդում, Դոնի Ռոստովում և այլուր:

Գրկ. *Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ, Ե., 1988: Գիրակոսյան Ա., Հայ ժողովրդական նվագարանային արվեստ, Ե., 2011:*

ՄԱԴՈՅԱՆ Նիկոլայ Ալեքսանդրի (ծ. 01.06.1973, Երևան), ջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (2004): Ջութակի դասեր է առել Է. Գեսելևայից (Նուրագյան) և Հրաչյա *Բոգդանյանից*: Ավարտել է Նովոսիբիրսկի կոնսերվատորիան (1989, Զ. Բրոնի դասարան), Լյուբեկի (Գերմանիա) բարձրագույն երաժշտ. դպրոցը (1995), ԵՊԿ ասպիրանտուրան (1999): 1999–ից դասավանդում է ԵՊԿ–ում: Համերգներով հանդես է եկել եվրոպ. մի շարք երկրներում, Ռուսաստանում, Չինաստանում, Ճապոնիայում, Կանադայում, ԱՄՆ–ում:

Գինեսի ռեկորդակիր է. 2017–ին Երևանի կամեր. երաժշտության տանը 33 *ժ* 2 *ր* 41 *վ*–ում նվագել է 59 ստեղծագործություն, որոնք կրկնվել են 8 անգամ, սակայն Մ. յուրաքանչյուրը մատուցել է նոր մեկնաբանությամբ:

Երիտասարդ կատարողների Պ. Ի. Չայկովսկու անվ. համամիութ. (1–ին մրց., 1988), ջութակահարների միջազգ. (Հ. Վենյավսկու անվ.՝ 1988, Գ. Կլենկամպֆի անվ.՝ 1991, Քյոլն, 1–ին մրց.՝ 1992, Տոկիո) մրցույթների դափնեկիր:

ՄԱԴՐԻԳԱԼ [ֆրանս.՝ madrigal, իտալ.՝ madrigale, լատ.՝ matricale (< լատ.mater–մայր)], Վերածննդի դարաշրջանի աշխարհիկ երաժշտաբանաստեղծ. ժանր: Որպես հովվերգ երգվող բանաստեղծություն՝ սկզբնավորվել է իտալ. ժող. ստեղծագործությունից (հովվական երգից): XIV դ–ից հայտնի է իտալ. պրոֆեսիոնալ պոեզիայում և երաժշտության մեջ (Զ. դա Ֆիրենցե, Յ. դա Բոլոնիա, Ֆ. Լանդինո, Յ. Չիկոնիա):

Վաղ շրջանի Մ. 2–3–ձայնանի քառյակ. կառուցվածքի վոկալ–գործիք. ստեղծագործություն էր (կրկներգով), առավելապես՝ սիրային–քնար., նաև կենցաղ., դիցաբան. և այլ բովանդակությամբ: XV դ–ում Մ–ի ժանրը վերացել է, XVI դ–ում վերածնվել է որպես 4–5–ձայնանի վոկալ ստեղծագործություն՝ առանց նվագակցության (ա կապելլա), որը հենվել է պոլիֆոնիայի «խիստ ոճի» ընդհանուր կանոնների վրա (ըստ Ֆ. Պետրարկայի, Զ. Բոկաչչոյի, Տ. Տասսոյի և ուր. քնար. բանաստեղծությունների): XVII–XVIII դդ–ում հաճոյախոս–սիրային բանաստեղծութ–

Լևոն Մադոյան

Լ. Մադոյանը ելույթի պահին

Նիկոլայ Մադոյանը ելույթի պահին

Սարգիս Սազմանյան

Ռուզաննա Սազմանյան



Ռոբերտ Սաթևոսյան

յունն էր, XVIII դ–ում և XIX դ–ի սկզբին՝ սալոն–ալբոմ. ոտանավոր:

XX դ–ի կոմպոզիտորները կրկին անդրադարձել են Մ–ին [Պ. Հինդեմիթ, Ի. Ֆ. Ստրավինսկի, Բ. Մարտին, Տ. Մանսուրյան (Մ–ների շարք՝ ձայնի և գործիք. եռյակի համար) և ուր.]:

ՄԱԶՄԱՆՅԱՆ Սարտին (Սարտիրոս) Սարգսի [24.12.1899 (05.01.1900), Թիֆլիս– 08.05.1987, Երևան], կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հաս. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1965): Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1921), սովորել է ՄՊԿ–ում (1922–24, հորոյ և խմբավարություն), Թիֆլիսի կոնսերվատորիայում (1926–30, կոմպոզիցիա, Ս. Բարխուդարյանի դասարան), ավարտել է ԵՊԿ (1931): 1950–54–ին՝ Հայֆիլհարմոնիայի տնօրեն և գեղ. ղեկ., 1954–62–ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տնօրեն: 1961–77–ին դասավանդել է ԵՊԿ–ում (խմբավարություն): Հայաստանի մի շարք քաղաքներում, նաև Թբիլիսիում, Մոսկվայում հիմնադրել և ղեկավարել է երգչախմբեր:

Գրել է «Ճուտիկ» մանկ. օպերան, սիմֆ. («Սամե և Աշե», «Հաղթանակի պոեմ»), կամեր–գործիք. երկեր, խմբերգեր (1970), ռոմաններ, մեներգեր (1973), ստեղծագործություններ՝ մանուկների համար: Հեղինակ է մեթոդ. ձեռնարկների, «Խմբավարական արվեստ» (1980) գրքի, նաև երաժշտության դասագրքերի:

Գրկ. *Տոնիկյան Ա., Սարգիս Սազմանյան, Ե., 1962:*

ՄԱԶՄԱՆՅԱՆ Ռուզաննա Միքայելի (16.12.1933, Երևան–31.03.2006, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1974): ՀԿՄ անդամ (1984–89): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (1953, դասատու՝ Ռ. Անդրիասյան), ԵՊԿ երաժշտագիտության (1958, Ա. Բարսամյանի դասարան) բաժինները: 1958–59–ին դասավանդել է Երևանի Տ. Չուխաճյանի անվ. երաժշտ. դպրոցում, 1959–ից՝ ՀՀ ԳԱ արվ–ի ինստ–ի գիտաշխատող:

Հեղինակ է «Նիկողայոս Տիգրանյան» (ռուս., 1978), «Սովետահայ մատենագիտական գրականությունը 1966–1973 թվականների երաժշտության մասին» (1974, համահեղ.), «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1920–1945» (1979), «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1946–1960» (1986), «Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901–1910» (2006) աշխ–ների: Կազմել և ծանոթագրել է Ն. Տիգրանյանի «Հոդվածներ, հուշեր ու նամակներ» ժող–ը (1981):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Լուիզա Ավետիքի (ծ. 19.09.1947, Բաքու), երաժշտագետ, ջութակահար, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու (1989): Լենինգրադի կոնսերվատորիայի դոցենտ (2003): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1970, Վ. Մոկացյանի դասարան) բաժինը: 1990–ից դասավանդում է ԵՊԿ–ում: 1972–75–ին՝ ՀԽՍՀ ՄՆ մեթոդկաբինետի լար. գործիքների դասավանդման մեթոդիստ: Ուսումնասիրությունները վերաբերում են լար. կատարող. արվ–ի հիմնախնդիրներին, մեթոդաբանությանը, դասավանդման մեթոդիկային, երաժիշտ–կատարողների ստեղծագործությանը, հայ կոմպոզիտորների ջութակի կոնցերտներին:

Երկ. *Вопросы методики работы над скрипичными концертами армянских композиторов, Е., 1987.*

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ռուբեն Սացակի (ծ. 12.01.1942, Սպիտակ), երգիչ (տենոր): ՀՀ ժող. արտիստ (1978): Պրոֆ. (1996–ից): Հայ երգարվ–ի միության նախագահ (1999–ից): Ավարտել է ԵՊՀ բանասիր. ֆակ–ը և ԵՊԿ երգեցողության բաժինը (1967, Թ. Շահնազարյանի դասարան): 1961–92–ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի երգիչ (1996–ից՝ գեղ. ղեկ.), 1992–96–ին՝ «Աստղեր» անսամբլի գեղ. ղեկ. և մեներգիչ: 1986–ից դասավանդում է Երևանի էստրադ. և ջազ. արվ–ի քոլեջում, 1990–ից՝ ԵՊԿ–ում: Մ–ի երգեցողությունն առանձնանում է հուզականությամբ, քնար. հագեցվածությամբ. երգացանկում՝ հայկ. ժող., աշուղ., ժամանակակից հայ կոմպոզիտորների երգեր և ռոմաններ («Սարի աղջիկ», Սայաթ–Նովայի «Դուն էն գըլխեն», Ջիվանու «Ձախորդ օրեր», «Առ նազելին», Շերամի «Պարտեզում վարդեր բացված», «Փնջլիկ–մնջլիկ», «Դու իմ մուսան ես», «Օլոր–մոլոր», «Մի բալա է էս իմ յարը», Աշոտի «Հայրիկ», Դ. Ղազարյանի «Քույր իմ նազելի», Ա. Սաթունցի «Իմ հայրենի Զանգեզուր», Ա. Բաբաջանյանի «Ձքնաղ երազ», Վ. Բալյանի «Գյումրի–Լենինական», Գ. Արմենյանի «Դու իմ հպարտ հայ աղջիկ», Խ. Ավետիսյանի «Սիրուս

կսպասեմ», «Ով հայոց սարեր», Ա. Հեքիմյանի «Բարի արագիլ», «Յասամանի ծառի տակ», «Իմ սիրտը», «Ղարաբաղցին» ևն):

Համերգներով հանդես է եկել արտերկրում: Նկարահանվել է «Եռանկյունի» (1967, գեղ.), «Սայաթ-Նովա» (1963, վավերագր.), «Ո՞վ է կոտրել ձայնասկավառակը» (1971), «Շերամ» (երկուսն էլ՝ հեռուստատես.), «Մեր բակը» (1996) ֆիլմերում: Երևանի պատվավոր քաղաքացի (2015):

Շերամի երգերի լավագույն կատարողների հանրապետ. մրցույթի 1-ին մրց. (1961, Երևան), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2011):

Գրկ. *Առաքելյան Ս., Դարի ձայնը, Ե., 2016:*

ՄԱԺՈՐ (ֆրանս.՝majeur, իտալ.՝ maggiore, < լատ.major –մեծ, նաև dur, < լատ. durus– ամուր), ձայնակարգ, որի հիմքում մեծ եռահնչյուն է: Ունի լուսավոր երանգ, հակադիր է ***մինորին***, որը երաժշտության մեջ գեղ. կոնտրաստ ստեղծող կարևոր արտահայտչամիջոցներից է: Մ. ձայնակարգի հնչյունաշարի ինտերվալ. կառուցվածքն է՝ մեկ տոն, մեկ տոն, կիսատոն, մեկ տոն, մեկ տոն, մեկ տոն և կիսատոն:

Մ. ձայնակարգում կայուն հնչյուններն են ձայնակարգի I (առավել կայունը), III և V, անկայունը (յուրաքանչյուր անկայուն հնչյուն ձգտում է մոտակա կայուն աստիճանին)՝ II, IV, VI, VII (առավել անկայունը) աստիճանները: Մ. դաս. տեսք է ստացել XVIII դ-ում (ֆունկցիոնալ հարմոնիայի դարաշրջանում):

Մ. և մինոր ձայնակարգերի զարգացման ընթացքում տեղի են ունեցել նրանց աստիճանների փոխներթափանցում, որի հետևանքով ձևավորվել են այդ ձայնակարգերի հարմոնիկ (բնական Մ-ի համեմատությամբ VI աստիճանը խրոմատիկ կիսատոնով իջեցված և նմանեցված է բնական մինորի նույն աստիճանին, որի հետևանքով VI և VII աստիճանների միջև առաջանում է բնորոշ՝ մնծգվ. 2 ինտերվալ), մելոդիկ (բնական Մ-ի համեմատությամբ VI և VII աստիճանները խրոմատիկ կիսատոներով իջեցված և նմանեցված են բնական մինորի նույն աստիճաններին. հանդիպում է հազվադեպ) և կրկնակի հարմոնիկ (բնական Մ-ի համեմատությամբ իջեցված են II և VI աստիճանները, հայտնի է նաև գնչուական կամ հունգ. «Մինոր գամմա» անվամբ) տեսակներ:

Արդի Մ. ձայնակարգը զարգացել է միջնադար. իոնական ձայնակարգից. կառուցվածքով Մ. են նաև լիդիական և միքսոլիդիական ձայնակարգերը: XIX դ-ի կեսերից Մ. և մինոր ձայնակարգերի փոխներթափանցման հետևանքով գոյացել է մաժոր-մինոր համակարգը:



Ռ. Մաթևոսյանը ելույթի պահին

ՄԱԼԽԱՍՅԱՆ Լևոն Պարույրի (Մալխաս, ծ. 01.01.1945, Երևան), դաշնակահար, կոմպոզիտոր: ՀՀ ժող. արտիստ (2013): Ավարտել է ԵՌՕԼՄԻ (1967): 1967–80-ին աշխատել է «Կռունկ», «Սերպանտին», «Ծիծեռնակ» և այլ անսամբլներում: 1963-ին Երևանում հիմնադրել է առաջին ջազ. եռյակը, 1966-ին՝ ջազ. քառյակը (համերգներով հանդես են եկել ԽՍՀՄ-ում, մասնակցել փառատոների), 1975-ին կազմակերպել է «Ջազային համայնապատկեր» փառատոնը: 1983-ից՝ «Հայաստանի ջազ-ակումբի» (1998-ից՝ «Ջազ-Արտ» ընկերության) հիմնադիր-նախագահ: 1998-ին ընկերությունը նախաձեռնել և անցկացրել է 1-ին միջազգ. «Երևան-98», 2000-ին՝ 2-րդ (մասնակցել է Չիկ Կորիան՝ իր «Origin» խմբի հետ), 2005-ին՝ 3-րդ ջազ. փառատոները: 2003-ին թողարկել է առաջին ձայնասկավառակը: 2006-ին Երևանում բացվել է «Մալխաս» ջազ. ակումբը, որը կազմակերպում է ջազ. երաժշտության համերգներ: Մ. մասնակցել է միջազգ. ջազ. փառատոների և համերգ-

Լևոն Մալխասյանը ելույթի պահին

Կեսրի Սալխասյան

Միքայել Սալոնցյան

ների ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլուր: Երևանի պատվավոր քաղաքացի (2003):

«Լավագույն դաշնակահար» մրց. (1968, Երևան, 1972, Կույբիշև), ՀՀ «Սիվսես Խորենացի» մեդալ (2003):

ՄԱԼԽԱՍՅԱՆ Կեսրի (Եկատերինա) Աշոտի (17.03.1919, Թիֆլիս–28.07.2001, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1961), արվ. վաստ. գործիչ (1967): Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է Թիֆլիսում: Ավարտել է Թբիլիսիի Վ. Սարաջիշվիլու անվ. կոնսերվատորիայի (1936, Լ. Լ. Տրուսկովսկու դասարան), ՄՊԿ (1941, Կ. Ն. Իգումնովի դասարան) դաշնամուրի բաժինները: 1942–47-ին դասավանդել է Թբիլիսիի №1 երաժշտ. ուսումնարանում, միաժամանակ եղել Վրաստանի ֆիլհարմոնիայի մենակատարուհի: 1947-ից ապրել է Երևանում, դասավանդել ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1950–58-ին, պրոֆ.՝ 1968-ից): Սաներից Գ. Այվազյանը, Ռ. Ամիրբեկյանը, Ս. Դադյանը, Ռ. Շուգարովը, Վ. Սարգսյանը և ուր. համամիութ., այսրկովկաս., միջազգ. մրցույթների դափնեկիրներ են:

Մ. եղել է Հայֆիլհարմոնիայի մենակատար, ելույթներ է ունեցել Կոմիտասի անվ. քառյակի, Հայաստանի սիմֆ. և կամեր. նվագախմբերի հետ. երկացանկում՝ Դ. Սկառլատիի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շուբերտի, Ֆ. Շոպենի, նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից (մեծ մասի առաջին կատարողը): Համերգներով հանդես է եկել Հայաստանում, ԽՍՀՄ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում: Թողարկել է 3 ձայնասկավառակ: Ձայնագրություններից պահվում են Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության ֆոնդում:

Գրկ. *Золотова И., Кетти Малхасян, Е., 1998.*

ՄԱԼՈՒԼ (Սարգսյան Գալուստ, 04.09.1823, Կարս–30.03.1887, Ալեքսանդրապոլ), աշուղ: Նվագել է ջութակ: Գրել է բազմաթիվ երգեր՝ աշուղ. արվ-ի բոլոր ժանրերով, որոնց թեման աշխատավորի անապահով վիճակն է, աշխարհում տիրող անարդարությունն ու բռնությունը: Մեծ չարիք է համարել ծուլությունը, երկչոտությունն ու անտարբերությունը, գովերգել է աշխատանքը:

Հորինել է հիմնականում թախծոտ երգեր, գրել է գրական հայ-ով: Գործերի մեծ մասը չի պահպանվել: 1884-ին հրատարակել է «Սիոնի երգեր» ժող-ը: Նրա ժառանգությունը կարևոր աղբյուր է աշուղ. դաս. արվ-ի կանոնների և տաղաչափության ուսումնասիրման համար:

Գրկ. *Հիրակի հայ աշուղները, [ժող.], Ե., 1986, էջ 20–27:*

ՄԱԼՈՒՆՑՅԱՆ Միքայել Մովսեսի [25.04 (08.05).1903, Բաքու–20.02.1973, Երևան], դիրիժոր, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): Պրոֆ. (1962-ից): Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիայի թավջութակի (1925, Կ. Մինյարի դասարան), ՄՊԿ դիրիժորության (1925, Լ. Մ. Գինզբուրգի դասարան) բաժինները: 1927–31 և 1945–73-ին դասավանդել է ԵՊԿ-ում, 1934–45-ին՝ ՄՊԿ-ում: 1932-ին՝ Մոսկվայի համամիութ. ռադիոյի և սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1945–60, 1966–67-ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Նպաստել է հայ կոմպոզիտորների սիմֆ. գործերի տարածմանը:

Մ-ի արվ-ին բնորոշ էին գեղ. ճշմարտացիությունը, արտիստ. զսպվածությունը, անսամբլ. կատարելությունը: Սաներից են Ռ. Մանգասարյանը, Դ. Խանջյանը և ուր.:

Երևանի № 2 արվ-ի դպրոցը կոչվում է Մ-ի անունով:

Գրկ. *Պետրոսյան Մ., Երեքը հայ դիրիժորներից, Ե., 1976:*

ՄԱԿԱՐՅԱՆ Էդմոնդ Էդուարդի (ծ. 25.07.1987, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (2013-ից): Ավարտել է ՀՊՃՀ (2007), ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (2012, Ա. Սաթյանի դասարան): 2013–18-ին՝ ՀԿՄ տեղեկատվ., 2018-ից՝ կազմակերպչական բաժինների ղեկ.:

Էդմոնդ Մակարյանը ելույթի պահին

Գրել է սիմֆ., կամեր. երկեր,երգեր, կինոերաժշտություն:

Հանրապետ. և միջազգ. մրցույթների դափնեկիր է, Է. Միրզոյանի անվ. պատանի կոմպոզիտորների հանրապետ. մրցույթի գեղ. ղեկ-ը:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

ՄԱԿԱՐՅԱՆ Էլվինա (16.08.1947, Երևան–09.07.2007, Լոս Անջելես), երգչուհի: Սովորել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցում, ավարտել Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի, ԵՊԿ դաշնամուրի բաժինները: 1961-ից՝ «Կռունկ» վոկալ-ջազ., 1966-ից՝ Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբերի, ապա՝ Հայաստանի ռադիոյի էստրադ. սիմֆ. նվագախմբի մեներգչուհի: 1989-ին Շառլ ***Ազնավուրի*** հրավերով աշխատել է Ֆրանսիայի «Անտեն-2» երաժշտ. ստուդիայում:

Ֆրանս. մամուլը, նաև ժամանակի ճանաչված երաժիշտներ Ա. Խաչատրյանը, Դ. Դ. Շոստակովիչը, Մ. Լ. Ռոստրոպովիչը, Մ. Թարիվերդիևը, Շ. Ազնավուրը, Ռ. Չարլզը և ուր. բարձր են գնահատել նրա արվ-ը (անվանել են «Խորհրդային Միության Պիաֆ»):

1990-ական թթ-ին գրել է մի քանի հիթեր («Յարո ջան», «Երևան» ևն): Նույն թվականների վերջից ապրել և ստեղծագործել է ԱՄՆ-ում, ունեցել սեփ. երաժշտ. ստուդիա:

Հեղինակ է շուրջ 600 երգի, թողարկել է 3 լազեր. ձայնասկավառակ, նկարահանել երաժշտ. տեսահոլովակներ: Մենահամերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Կանադայում, Իտալիայում, Սիրիայում և այլուր:

«Ժողովրդական երգ» մրցույթ-փառատոնի արծաթե մեդալ (1964), Համամիութ. «Երիտասարդ ձայներ» երգի փառատոնի Գլխ. մրց. (1973, Մոսկվա), Համաշխ. XII փառատոնի «Երգի կատարման լավագույն վարպետ» Գլխ. մրց. (1973, Բեռլին):

ՄԱԿԱՐՅԱՆ Սոնա Այվազի (ծ. 26.11.1972, Երևան), երգչուհի: Արվեստագիտ. թեկնածու (2015): Ավարտել է ԵՊԿ երգեցողության բաժինը (1997, Հ. Բաղալյանի դասարան), «Կատարողական և ստեղծագործական բարձրագույն վարպետության» հայ երգեցողության լրացուցիչ կրթության դասընթացը (2013, ղեկ.՝ Ա. Ոսկանյան): 1994–2000-ին երգեցողություն է դասավանդել Գեղագիտ. ազգ. կենտրոնի, 2000–03-ին՝ Երևանի № 23, 2007–11-ին՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ., 2007-ից՝ Բ. Կանաչյանի անվ. արվ-ի դպրոցներում, 2014-ից՝ ԵԹԿՊԻ-ում: 2015-ից՝ «Ջնար» ավանդ. երաժշտության անսամբլի մեներգչուհի: Միջազգ. (ՀՀ, ՌԴ, Վրաստան) և հանրապետ. մրցույթների դափնեկիր: Մասնակցել է բազմաթիվ միջազգ. փառատոների, համերգներով և մենահամերգներով հանդես եկել ՀՀ-ում և արտերկրում: Ուսումնասիրությունները վերաբերում են հայ երգիչների և դիրիժորների կատարող. արվ-ին: Հեղինակ է «Ամեն ինչ վոկալ արվեստի մասին» (2013) դասագրքի:

Ա. Իսահակյանի անվ. երիտասարդ կատարողների և ստեղծագործությունների մրցույթ-փառատոնի 1-ին կարգի (1994), 2-րդ կարգի (1997) մրց-ներ:

Երկ. Հայ ավանդական երաժշտության երախտավորը. թառահար և դիրիժոր Հովիկ Սահակյան, Ե., 2016:

Էլվինա Մակարյան

ՄԱՀՈՒԲԻ (Մանուկյան) Գևորգ Մանուկի [1857, գ. Ղարաբուլաղ (այժմ՝ գ. Երնջատափ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–1935, գ. Երնջատափ, աշուղ: Աշուղ. նոր դպրոցի վերջին ներկայացուցիչը: Աշակերտել է աշուղ Մահջուբին, որից ստացել է «Մահուբի» (արաբ. – ուշիմ) անունը: Երգել է ինքնաշեն ջութակի նվագակցությամբ, շրջել հայրենի գավառներում, նաև Արմ. Հայաստանում:

Սոնա Մակարյանը կլույթի պահին

Ստեղծագործել է աշուղ. արվ-ի գրեթե բոլոր ժանրերով: Երգերը գրել է հիմնականում ընկերասիրության, ժողովուրդների բարեկամության, հայրենիքի թեմաներով, որտեղ գովաբանում է արդար վաստակով ապրող աշխատավորին, դատապարտում տգետներին, պորտաբույծներին, ուրացողներին: Հայտնի են «Անցավոր աշխարհ», «Գործ չունիս», «Հայրենիք», «Աշխարհս երազ է», «Բախտ» և այլ երգեր: Պահպանվել է երգերի մի մասը:

Մ-ի գործերն առաջին անգամ լույս են տեսել 1912-ին Թիֆլիսում՝ «Մահուբի Գևորգի գլխի անցքերը և խրատական երգերը» (կազմ.՝ Ե. Խաչատրյան) վերնագրով: Ծննդյան 100-ամյակի կապակցությամբ հրատարակված «Ջութակ» (կազմ.՝ Ա. Սահակյան, 1957) ժող-ն առավել համահավաք է և ճշգրտված:

Մահուբի Գևորգ

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Լևոն Մանվելի (ծ. 27.07.1932, Երևան), ջութակահար, մանկավարժ: Վարդան ***Մամիկոնյանի*** հայրը: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1973): Պրոֆ. (1978-ից): Ավարտել է ԵՊԿ (1956, Կ. Դոմբաևի դասարան), Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1960, ղեկ-ներ՝ Մ. Վայման և Լ. Ռաաբեն): 1961–93-ին դասավանդել է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1974–93-ին): 1963–76-ին՝

Հայհամերգի լար. քառյակի 1-ին ջութակ: Հեղինակ է անսամբլ. մեթոդիկային վերաբերող ուսումնասիրությունների: 1993-ից ապրում է Ֆրանսիայում:

Գրկ. *Սարյան Ա., Ջութակահար Լևոն Սամիկոնյանի կյանքը և ստեղծագործական ողին, Ե., 2009:*

Վարդան Սամիկոնյանը ևոյթի պահին

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Վարդան Լևոնի (ծ. 27.08.1970, Երևան), դաշնակահար: Լևոն ***Սամիկոնյանի*** որդին: Դաշնամուրի 1-ին ուսուցիչը եղել է հայրը: 7 տարեկանում ունեցել է 1-ին մենահամերգը: Ավարտել է ՄՊԿ Կենտր. երաժշտ. դպրոցը (1988), «Պիանիստիկա» ակադ-ը (Իտալիա, 1995), սովորել է ՄՊԿ-ում (1988–91, Վ. Կոստելկոլու դասարան): Համերգներով շրջագայել է ՀՀ-ում, ՌԴ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Արգենտինայում և այլուր: Մ-ի արվ-ին բնորոշ են կատարող. վարպետությունը, երաժշտ. ստեղծագործությունների ինքնօրինակ մեկնաբանումը: 1991-ից ապրում է Ֆրանսիայում: 2008-ին Յ. Ս. Բախի, Յ. Բրամսի, Պ. Ի. Չայկովսկու, Ա. Բաբաջանյանի դաշնամուրային ստեղծագործությունների կատարմամբ հանդես է եկել Բեյրութում:



Լաուրա Սամյանը ևոյթի պահին

Վիլնյուսի համամիութ. մրցույթի 1-ին մրց. (1981): Ի. Լֆերբյուրի անվ. (Մեծ մրց., 1990, Փարիզ), «Դաշնամուրի վարպետներ» (1-ին մրց., 1992, Մոնակո) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԱՄՅԱՆ Լաուրա Գուրգենի (ծ. 22.05.1963, Վանաձոր), երգչուհի, խմբավար: Հրաչիկ ***Նազարյանի*** կինը: Ավարտել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանի (1989), ԵՊԿ (2015) վոկալի բաժինները: 2008-ից դասավանդում է Տ. Չուխաճյանի անվ. երաժշտ. դպրոցում (վոկալ բաժնի վարիչ): 1984-ից՝ Հայաստանի գուսան. և ժող. երգի անսամբլի մեներգչուհի, խմբավար: Հայտնի է հայ ժող. և գուսան. երգերի ինքնատիպ կատարումներով. առավել տարածված են նրա «Քանի վուր ջանիմ» (Սայաթ-Նովա), «Յարը մարդուն յարա կուտա» (Հավասի), «Ով դու գուսան» (Գուսան Աշոտ), «Դարդս տվի հովերին» (երաժշտ.՝ Գևորգ Մանասյանի) ևն: Հեղինակ է «Իմ եղբայրը», «Գարնան օրեր», «Չեմ լռելու» և այլ երգերի (նաև տեքստի):

Պավել Սամոյով

Համերգներով հանդես է եկել մի շարք երկրներում:

Դաս. երգեցողության ուսանող. հանրապետ. մրցույթի 1-ին կարգի դիպլոմ (1987), ՅՈՒՆԵՍԿՕ-ի Սայաթ-Նովային նվիրված աշուղ. արվ-ի կովկաս. միջազգ. փառատոնի դափնեկիր (2005), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2008):

ՄԱՄՈՒԼՈՎ (Սամույան) Պավել Բոգդանի (1881, Վլադիկավկազ–06.07.1929), կոմպոզիտոր, դաշնակահար, բանահավաք, խմբավար: Սովորել է Վլադիկավկազի ռուս. գիմնազիայում և Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում, աշակերտել է Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովին: Եղել է խմբավար Թերեքի կազակ. զորամասերում, համերգներով հանդես է եկել իր ղեկավարած երգչախմբերով: Գրառել և մշակել է օս. բազմաթիվ երգեր (նաև «Տաուչե», «Բիտարոն» կատակերգերը) և պարեղանակներ: Համարվում է օս. պրոֆեսիոնալ երաժշտության հիմնադիրը (Վ. Ի. Դոլիձեի հետ):

Գրել է «Օսեթական էսքիզներ» սիմֆոնիան, երգեր (օս բանաստեղծ Կ. Խետագուրովի խոսքերով), նաև հայկ. թեմաներով երաժշտ. գործեր:

ՄԱՅԻԼՅԱՆ Աննա Լեոնիդի (ծ. 23.10.1970, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2008): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1992, դասատու՝ Թ. Համբարձումյան), ԵՊԿ (1996, Ա. Սարաջևայի դասարան) և ասպիրանտուրան: Կատարելագործվել է «Մոցարտեում» (1997–98, ղեկ-ներ՝ Ե. Բլասովա, Ա. Սաց, Ա. Նիկոլետ, Լեհաստան), «Հարիկլեա Դարկլե» (2000, Ռումինիա), «Վիլեկրոզ» (2001, ղեկ.՝ Ա. Ռեյնոլդս, Գերմանիա) ակադ-ներում: 1995-ից՝ ՀՀ Կոտայքի մարզի Սբ Կաթողիկե եկեղեցու մեներգչուհի: 1999-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2010-ից):

2000-ին Երևանում հիմնադրել է «Սաղմոս» մշակութ. կենտրոնը, նույն թվականից՝ «Վարպետներ» վոկալ-անսամբլի, 2006-ին՝ «Էթնո» վոկալ եռյակի հիմնադիր-ղեկ.: Երկացանկում՝ արևմտաեվրոպ. հնագույն երաժշտության նմուշներ, գերմ. դաս. և ռոմանտիկ., ֆրանս. իմպրեսիոնիստ., իտալացի և ռուս, նաև ժամանակակից հայ կոմպոզիտորների երկերից, հայկ. ժող., հոգևոր և ազգ. երգեր: Թողարկել

է ձայնասկավառակներ: Համերգներով շրջագայել է Եվրոպայի, ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում:

Կոմիտաս-125 (2-րդ մրց., 1994), Ավստրո-գերմ. և Հայ երգի հանրապետ. (1-ին մրց., 1996, երկուսն էլ՝ Երևան), Հ. Դարկլեի անվ. (ոսկե մեդալ, 2000, Ռումինիա), «ԻԲԼԱ-Գրանդ փոայզ» (Հատուկ մրց., 2002, Իտալիա) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր, Հայաստանի ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության «Տարվա լավագույն ժողովրդական ալբոմ», «Տարվա լավագույն ժողովրդական երգչուհի» մրցներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2003):

ՄԱՅԻԼՅԱՆ Անտոն Սարգսի [16(28). 03.1880, Թիֆլիս–20.04.1942, Բաքու], կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հաս. գործիչ: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1930): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, աշակերտել է Մ. Եկմալյանին, երգել Ք. Կարա-Մուրզայի երգչախմբում: Ավարտել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանը (1904, դասատուներ՝ Ն. Կլենովսկի, Ն. Նիկոլան): Ղեկավարել է Բաքվի Հայարտան երաժշտ. բաժանմունքը, հիմնադրել թատերաերաժշտ. ստուդիա, երգչախմբեր, համերգներով հանդես եկել Այսրկովկասի հայաշատ քաղաքներում: 1910–17-ին Բաքվում խմբագրել և հրատարակել է «Թատրոն եւ երաժշտութիւն» հանդեսը:

Գրել է «Սաֆա» օպերան (1933, լիբրետտոն՝ Մ-ի, բեմ.՝ 1939, Բաքվի ՕԲԹ), երաժշտ. կոմեդիաներ, բալետ, սիմֆոնիա, վոկալ-սիմֆ., կամեր-գործիք. երկեր, մանկ. օպերաներ («Գյուլնազ տատի հեքիաթը», ըստ Ղ. Աղայանի, 1906, «Չարաճճի Միկիչը», ըստ Հ. Թումանյանի, 1926), ռոմանսներ, երգեր, մշակել ժող. երգեր ևն: Մ-ի դուստրը՝ Էլզա Մ. (ծ. 21.10.1926, Թիֆլիս), կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ:

Գրկ. *Մանուկյան Մ., Անտոն Մայիլյան, Ե., 1965: Атаян Р., Мурадян М., Татевосян А., Армянские композиторы, Е., 1956.*

ՄԱՅԻԼՅԱՆ Գարրի Գեորգիի (ծ. 04.04.1956, Թբիլիսի), ֆագոտահար, մանկավարժ: Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիայի ֆագոտի բաժինը (Զ. Ալավիձեի դասարան): 1979–94-ին՝ Թբիլիսիի երաժշտ. կոմեդիայի թատրոնի և Վրաստանի պետ. սիմֆ. նվագախմբի տրոմբոնահար, Վրաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի մենակատար: 1994-ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ, 2006–12-ին (միաժամանակ)՝ ԵՕԲԹ-ի նվագախմբի տրոմբոնահար: 1997-ից դասավանդում է ԵՊԿ ֆագոտի և կամեր. փող. անսամբլի դասարաններում (2012-ից՝ պրոֆ.): Հեղինակ է «Ֆագոտը Հայաստանում» (2009), համահեղ.՝ «Վիլհելմ Շպեռլինգ» (2016) գրքերի:

Այսրկովկաս. մրցույթների դափնեկիր:

ՄԱՆԱՍ Էդգար (12.04.1875, Կ. Պոլիս–1964, Կ. Պոլիս), կոմպոզիտոր: Երաժշտ. կրթությունն ստացել է Պադուայում (Իտալիա): 1905-ից Կ. Պոլսում ղեկավարել է «Գաղիա» («Gallia») երգչախումբը (հանդես է եկել համերգներով, Ֆրանսիայի Կառավարության «Ակադեմիայի ասպետ» տիտղոս), ապա՝ «Քնար», «Արվեստասեր» միությունների երգչախմբերը, նվագախմբեր: 1923-ից դասավանդել է Կ. Պոլսի կոնսերվատորիայում. սաներից են Արա ***Պարթևյանը***, Գոհարիկ ***Ղազարոսյանը***:

Գրել է լար. կվարտետ, սյուիտ, պրելյուդներ, ֆուգաներ, «Արևելյան ռապսոդիա», «Սիմֆոնիկ ալլեգրո», երգեր, խմբերգեր և այլ գործեր: Մ-ի «Իշխանաց կղզիները» դաշնամուր. սյուիտների ժող-ը հրատարակվել է 1927-ին Փարիզում: Արժեքավոր և առավել ազգային է նրա բազմաձայն «Պատարագը» (1910–12, վերջին խմբ.՝ 1948-ին), որն առաջին անգամ կատարվել է 1961-ին Կ. Պոլսում:

ՄԱՆԱՍՅԱՆ Գևորգ Յոլակի (ծ. 02.06.1953, Ախալցխա՝ Վրաստան), կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: ՀԿՄ անդամ (1991-ից): Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի կոմպոզիցիայի և տեսության (1968–72, դասատու՝ Է. Բաղդասարյան), ԵՊԿ կոմպոզիցիայի (1972–75, Ա. Հարությունյանի դասարան), ապա՝ դաշնամուրի և դիրիժորության (Է. Աբրահամյանի, Հ. Ոսկանյանի դասարաններ) բաժիններում: 1978–83-ին՝ Հայկ. երգի-պարի անսամբլի գործիք. մասի ղեկ., 1983–86-ին՝ Ե. Սահառունու անվ. երգի-պարի, 1987–91-ին և 2000-ից՝ Հայաստանի գուսան. և ժող. երգի, 1994–97-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1996–98-ին՝ «Հին Երևան» վոկալ-գործիք. անսամբլի գեղ. ղեկ. և դաշնակահար, 2011-ից՝ «Վարպետներ»

Աննա Մայիլյանը կլոյթի պահին

Անտոն Մայիլյան



Գարրի Մայիլյան

Էդգար Մանաս

Գևորգ Սանասյան



Լյուդմիլա Սանասյանը ելույթի պահին

Հենրի Սանգասարյան

Ռաֆայել Սանգասարյան

անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1984-ից՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի ժող. գործիքների բաժնի և նվագախմբի ղեկ.: 1996-ից դասավանդում է ԵՊԿ-ում:

Գրել է «Դաշնամուրային տրիո» (1972), «Հայաստան» (1975) սիմֆոնիետը՝ սիմֆ. նվագախմբի, «Սարդարապատ» (1976, խոսք՝ Գ. Էմինի) կանտատը՝ երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, «Կոնցերտ-պոեմը» (1977)՝ դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի, «Աշնանային անուրջներ» (2009)՝ դաշնամուրի և էստրադ-սիմֆ. նվագախմբի, «Նվիրում» (2009)՝ մենանվագ սաքսոֆոնի համար, «Ախալցխայի պար» (բեմ.՝ Ա. Ղարիբյանի), «Ռեքվիեմ» պար. սյուիտը (1989, բեմ.՝ Վ. Խանամիրյանի), «Հայաստան» երգ-բալլադը (2010, խոսք.՝ Հ. Հովեյանի), 9 էստրադ. և ժող. երգեր (2010, խոսք.՝ Օ. Օքրոյանի), «Եկան օրեր ու անցան», «Հուշեր», «Իմ դարդերս, դարդերս», «Ախ, ուր ես, ուր ես», «Տոնական Երևան», «Իմ Երևան» երգերը, կինոերաժշտություն («Ջավախք – հոս կապրինք», 2003, վավերագր.), մշակել է ժող., աշուղ. (Սայաթ-Նովա, Ջիվանի, Աշոտ, Շերամ) երգեր: Թողարկել է «Կարոտի կանչ» լազեր. 4 սկավառակ (2002–04):

Հանրապետ. մրցույթի 1-ին մրց. (2003):

ՄԱՆԱՍՅԱՆ Լյուդմիլա Արտաշեսի (ծ. 24.11.1954, Բաքու), երգչուհի (սոպրանո): Ուկրաինայի վաստ. արտիստ (1999): Ավարտել է Բաքվի կոնսերվատորիան (1984): Բաքվի ֆիլհարմոնիայի երգչուհի, 1989-ից՝ Լուգանսկի մարզի (Ուկրաինա) ֆիլհարմոնիայի մեներգչուհի: 1991-ից դասավանդում է Լուգանսկի երաժշտ. ուսումնարանում, ապա՝ Մշակույթի և արվ-ի պետ. ակադ-ում: Հանդես է եկել կամեր., սիմֆ. նվագախմբերի հետ, ստեղծագործ. հաշվետու համերգներով (1995, 1999, 2001, 2003)՝ Կիևում. երկացանկում՝ Ջ. Ռոսսինիի «Իտալական տարանտելլան», Լ. Դելիբի «Իսպանական բոլերոն», ուկր. ռոմանսներ, նաև Լ. Ն. Կոլոդուբի, Ն. Վ. Լիսենկոյի, Մ. Ժերբինի և ուր. գործերից: «Ալմա-Մատեր» խմբի (Խարկով) հետ նրա կատարմամբ Ուկրաինայում առաջին անգամ հնչել է Է. Լլոյդ-Ուեբերի «Ռեքվիեմը», Լուգանսկի սիմֆ. նվագախմբի հետ՝ Գ. Մահլերի 3-րդ և 4-րդ սիմֆոնիաները:

2000-ին մասնակցել է «Կիևյան միջազգային երեկոներ» IV միջազգ. փառատոնին: Լուգանսկի մարզի սիմֆ. նվագախմբի հետ համերգներով հանդես է եկել Վիեննայում (2004, 2005), մենահամերգներով՝ Ուկրաինայում, ՌԴ-ում, Բելառուսում և այլուր:

«Ոսկե տրեմբիտներ» միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1996, Իվանո-Ֆրանկովսկ՝ Ուկրաինա):

ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ Հենրի Վիլենի (21.08.1947, Երևան–29.12.2003, Երևան), դիրիժոր: Ավարտել է ԵՊԿ (1974): Դասավանդել է ԵՊԿ-ում և ՀՊՄԻ-ում: 1980–87-ին՝ Հայաստանի ժող. գործիքների անսամբլի դիրիժոր, 1987-ից՝ գեղ. ղեկ., 1996-ին՝ Թեհրանի «Արարատ» ժող. և էստրադ. վոկալ-գործիք. խմբի ղեկ.:

Գրել է երգեր, նվագախմբ. երկեր, մշակել ժող. և աշուղ. երգեր: «Սայիսյան խաղեր» միջազգ. (արծաթե մեդալ, Վիսբադեն՝ Գերմանիա), Բաբելոնյան (Մեծ մրց., Իրաք), ժող. գործիքների նվագախմբերի (Ֆրանսիա), «Սայաթ-Նովա» համահայկ. երգի (1-ին մրց., 2000, Երևան) փառատոների դափնեկիր:

ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ Ռաֆայել Արամի (01.01.1927, Թիֆլիս–31.10.1997, Երևան), դիրիժոր: ՀՀ ժող. արտիստ (1979): Պրոֆ. (1977): Ավարտել է ԵՊԿ լար. (1951, Կ. Դոմբաևի դասարան) և դիրիժորության (1963, Մ. Մալունցյանի դասարան) բաժինները: 1951-ից դասավանդել է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1993-ից): 1966–90-ին (ընդհատումներով) ղեկավարել է Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախումբը (1966-ից՝ դիրիժոր, 1969-ից՝ գլխ. դիրիժոր, 1974-ից՝ գեղ. ղեկ.): 1981-ին վերաստեղծել է ԵՊԿ-ին կից օպեր. ստուդիան, մինչև 1991-ը ղեկավարել նրա սիմֆ. նվագախումբը: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, Չեխոսլովակիայում (Պոդեբրադ ք-ի պատվավոր քաղաքացի, 1970): ՀՀ Պետ. մրց. (1983):

Հայրը՝ Արամ Սահակի Մ. (1895–1980), տրոմբոնահար: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1946): Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիան: 1923–60-ին դասավանդել է ԵՊԿ-ում:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ պետական, հիմնադրվել է 1988-ին Երևանում՝ Զայնի պահպանման և երգչախմբ. երգեցողության երաժշտ. մասնագիտ. դպրոցի հիման վրա: Հիմնադիր-գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Դավիթ ***Զայան***, ռեժ.՝ Ա. Մելիքսեթյան, դիրիժոր՝

Ա. Առաքելյան, նկարիչ՝ Ա. Միքայելյան: Նպատակը հայ, արևմտաեվրոպացի, ռուս դաս. և ժամանակակից կոմպոզիտորների, հիմնականում՝ մանկ. երգերի տարածումն էր, մանուկների գեղագիտ. ճաշակի դաստիարակումը: Առաջին ներկայացումը՝ Է. Խաղագործյանի «Մի գլխարկի պատմություն» օպերան էր (1988, «Ականջներով գլխարկը», ըստ Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» լեգենդի, դիրիժոր՝ Դ. Զալյան, ռեժ.՝ Ա. Մելիքսեթյան, նկարիչ՝ Ռաֆ. Խաչատրյան, պարերի բեմադրող՝ Ա. Գրիգորյան): Խաղացանկում՝ Վ. Աճեմյանի (1990 «Կիկոսի մահը», ըստ Հ. Թումանյանի), «Տարվա եղանակները» (ըստ Պ. Ի. Չայկովսկու երաժշտության, 1990), Ս. Լուսիկյանի «Ճպուռն ու մրջյունը» (1991), Բ. Բրիտտենի («Նոյյան տապան», 1994, դիրիժոր՝ Դ. Զալյան, ռեժ.՝ Ա. Մելիքսեթյան, պարուսույց՝ Հ. Դիվանյան, խմբավար՝ Կ. Առաքելյան) օպերաները, «Դիվերտիսմենտ» (1992, բալետի երեկո՝ 2 մասով, ռեժ.՝ Մ. Մարտիրոսյան) և այլ գործեր: Թատրոնը գործել է մինչև 1998-ի վերջերը:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, մանուկների ունկնդրման կամ կատարման համար նախատեսված երաժշտություն: Լավագույն նմուշներն առանձնանում են որոշակիությամբ, բանաստեղծ. աշխույժ բովանդակությամբ, պատկերավորությամբ, պարզությամբ, ձևակառուցման հստակությամբ: Ժանրերը բազմազան են՝ երգ, խմբերգ, կանտատ, գործիք. և նվագախմբ. երկեր, օպերա, բալետ ևն: Գործիք. Մ. ե-յանը բնորոշ են ծրագրայնությունը, պար., քայլերգ. բնույթը, երաժշտ. ֆակտուրայի պարզությունը ևն: Մանկ. երկերի հիմքը հաճախ ժող. հեքիաթներն են, բնության տեսարանները, կենդան. աշխարհի կերպարները ևն: Մանուկների կատարման համար գրված գործերը համապատասխանում են նրանց կատարող. հնարավորություններին: Վոկալ գործերում կարևորում են ձայնի դիապազոնը, հնչյունաստեղծման և առոգանության առանձնահատկությունները, գործիք. պիեսներում՝ տեխ. դժվարության աստիճանը ևն: Պատանիների ունկնդրման համար հայտնի են Մ. Ի. Գլինկայի, Պ. Ի. Չայկովսկու, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շոպենի և ուր. գործերը:

Դեռևս Հին Հունաստանում տարածված էին մանկ. ժող. երգերը, մասնավորապես՝ օրորոցայինները:

XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին Հայաստանում Մ. ե. ազգ. պրոֆեսիոնալ երաժշտ. դպրոցի ստեղծման և զարգացման ուղիներից էր: Կոմիտասը, կարևորելով Մ. ե., ստեղծել է ժող. երգերի մշակումների պարզեցված տարբերակներ (նախատեսված են պատանիների համար), հորինել է նաև մանկ. երգեր: XX դ-ի սկզբին Մ. ե. ստեղծող կոմպոզիտորները նաև մանկավարժներ էին:

Հատված «Զան գառնուկ» երգից (գրառումը՝ Կոմիտասի)

Մ. ե-յան զարգացմանը մեծապես նպաստել են Ռ. Մելիքյանը, Ս. Մելիքյանը, Ա. Մանուկյանը, Մ. Միրզոյանը, Ա. Մայիլյանը, Ս. Բարխուդարյանը, Դ. Ղազարյանը, Հ. Ստեփանյանը, Վ. Տալյանը, Ա. Խաչատրյանը, Մ. Գալիկյանը, Ս. Զրբաշյանը, Գ. Չթչյանը, Գ. Չերոտարյանը, Վ. Ումր-Շատը, Է. Միհրանյանը, Ռ. Ամիրխանյանը, Ա. Լուսինյանը, Ա. Սաթյանը, Ե. Երկանյանը, Ս. Լուսիկյանը, Ռ. Հախվերդյանը և ուր.:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳՉԱԶԱՅՆԵՐ, պրոֆեսիոնալ երգչախմբերում սոպրանոների և ալտերի երգամասերը կատարող 8–14 տարեկան տղաների՝ դիսկանտ և ալտ երգչաձայները: Իրենց յուրօրինակ տեմբրով, կատարող. լայն հնարավորություններով Մ. ե. կարևոր դեր ունեն խմբերգ. արվ-ում: Երևանում գործում է Զայնի պահպանման և երգչախմբ. երգեցողության երաժշտ. դպրոցը (1973, հիմնադիր՝ Դ. Զալյան), որտեղ երեխաներն

Արաքս Մանսուրյանը Լեոնորայի դերում (Ջ. Վերդիի «Տրուբադուր»)



Տիգրան Մանսուրյան



Արաքս և Տիգրան Մանսուրյաններ

ստանում են մասնագիտ. կրթություն: Դպրոցի ստեղծման հիմնական նպատակը երեխաների ձայնն աճման շրջանում տեղի ունեցող փոփոխությունների (մուտացիա) բացասական ազդեցությունից հնարավորինս պահպանելն է:

ՄԱՆՍՈՒՐՅԱՆ Արաքս Եղիայի (ծ. 01.08.1946, Բեյրութ), երգչուհի (սոպրանո): Տիգրան ***Մանսուրյանի*** քույրը: Շուշան ***Պետրոսյանի*** մայրը: Ընտանիքի հետ հայրենադարձել է 1947-ին: Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ (1977): 1977–92-ին՝ ԵՕԲԹ, 1992-ից՝ Սիդնեյի օպեր. թատրոնի մեներգչուհի: Ձայնի գեղեցիկ տեմբրի, դիապազոնի և երաժշտաբեմ. տվյալների շնորհիվ երկացանկում ընդգրկված են հայկ., ռուս. և արևմտաեվրոպ. օպերայի ամենաբարդ ստեղծագործությունները: Լավագույն դերերգերից են՝ Աիդա, Լեոնորա, Էլիզաբեթ դել Վալուա, Դեզդեմոնա, Ամելիա (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», «Դոն Կառլոս», «Օթելլո», «Պարահանդես-դիմակահանդես»), Անուշ, Շուշան (Ա. Տիգրանյանի «Անուշ», նաև Թբիլիսիում, ԱՄՆ-ում՝ 1989-ին, «Դավիթ Բեկ»), Նեդա (Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ»), Լիու, Տոսկա, Միմի (Ջ. Պուչչինիի «Տուրանդոտ», «Տոսկա», «Բոհեմ»), Էլիզաբեթ, Կունդրի, Իզոլդա (Ռ. Վագների «Տաննհոյզեր», «Պարսիֆալ», «Տրիստան և Իզոլդա») ևն:

Դասավանդում է Սիդնեյի կոնսերվատորիայում, ուսանողներին ծանոթացնում է նաև հայ երգարվ-ին: Մ-ի շնորհիվ բազմաթիվ երիտասարդ երգիչների երկացանկերում ընդգրկվել են Կոմիտասի, Բ. Կանաչյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Սպենդիարյանի և ուր. հայ կոմպոզիտորների գործերից:

Մենահամերգներով շրջագայել է ՀՀ-ում, ԽՍՀՄ-ում, Բուլղարիայում, Շվեդիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Կանադայում, ԱՄՆ-ում. երգացանկում՝ Կոմիտասի, հայ միջնադար., նաև դաս. ու ժամանակակից եվրոպացի կոմպոզիտորների գործերից:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2015):

Գրկ. *Հովհաննիսյան Թ., Արաքս Մանսուրյան, Ե.–Մ, 1993:*

ՄԱՆՍՈՒՐՅԱՆ Տիգրան Եղիայի (ծ. 27.01.1939, Բեյրութ), կոմպոզիտոր: Պրոֆ. (1993): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1984), ՀՀ ժող. արտիստ (1990): Արաքս ***Մանսուրյանի*** եղբայրը: Ընտանիքի հետ հայրենադարձել է 1947-ին: Ավարտել է ԵՊԿ (1965, Ղ. Սարյանի դասարան): 1967–95-ին դասավանդել է ԵՊԿ-ում (ռեկտոր՝ 1992–95-ին):

Մ-ի ստեղծագործությունը XX դ-ի համաեվրոպ. երաժշտության նվաճումների և ազգ. երաժշտ. մշակույթի լավագույն ավանդույթների միաձուլման ցայտուն օրինակ է: Նա գեղագիտ. նոր հիմքի վրա վերածնել է կոմիտաս. սկզբունքները: Գրել է «Ձյունե թագուհին» (ըստ Հ. Ք. Անդերսենի, 1988, բեմ.՝ 1990) բալետը, «Պարտիտ» (1965), «Պրելյուդներ» (1975), «Գիշերային երաժշտություն» (1980), կոնցերտներ՝ երգեհոնի և լար. նվագախմբի (1964), թավջութակի և նվագախմբի (1976, 1981, 1983), ջութակի և լար. նվագախմբի (1981), ալտի և կամեր. նվագախմբի (1995), «Արվեստ Քերթության» (խոսք՝ Ե. Չարենցի, 1997–99)՝ երգչախմբի, 5 բագատել (1985)՝ դաշնամուր. տրիոյի, վոկալ-կամեր. մադրիգալների շարք՝ ձայնի և տրիոյի, «Հավատով խոստովանիմ» (1999, աղոթքների շարք ըստ Ներսես Շնորհալու)՝ ձայնի, ալտի և տղամարդկանց երգչախմբի համար, «Թովվեմ»՝ 15 մենակատարի համար (1979), լար. կվարտետներ, սոնատներ, վոկալ շարքեր՝ «4 հայրեն Նահապետ Քուչակից» (1967), «Մայրամուտի երգեր» (խոսք՝ Հ. Սահյանի, 1983), «Երկիր Նահիրի» (խոսք՝ Վ. Տերյանի, 1984), «Գարնան երգեր» (խոսք՝ Հ. Թումանյանի, 1993), «Զուգահեռ երգեր: Ձայնի, դաշնամուրի և լարային նվագախմբի համար» (2014), խմբերգեր, կինոյի («Նռան գույնը», «Կտոր մը երկինք», «Մենք ենք, մեր սարերը», «Սգավոր ձյունը», «Հին օրերի երգը», «Մեր մանկության տանգոն, «Ճերմակ անուրջներ» ևն) և թատրոնի (Վ. Շեքսպիրի «Ձոն արքա», Ն. Զարյանի «Հացավան», Պ. Զեյթունցյանի «Մեծ լռություն» ևն) երաժշտություն:

Արթիկի մշակույթի կենտրոնը կոչվում է Մ-ի անվամբ (2017):

ՀԼԿԵՄ (1967), ՀՀ Պետ. (1981, 1985, 2013), Ա. Խաչատրյանի անվ. (1993) մրցներ, ՀՀ «Պատվո» (2011), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2004), ՄՏԿԿ «Ասպետի կարգ» (2019) շքանշաններ:

Գրկ. *Հովհաննիսյան Հ., Ուր ես գնում Տիգրան Մանսուրյան: Ջրույցներ, Ե., 1996: Տիգրան Մանսուրյան. Կենսամատենագիտություն, կազմ.՝ Ռ. Թումանյան, Ա. Վարդանյան, Ե., 2014:*

ՄԱՆՏԻԿՅԱՆ Արտա Գրիգորի [01.09.1924, Իզմիր (Թուրքիա)–08.11.2009, Աթենք], երգչուհի (սոպրանո): Ավարտել է Աթենքի կոնսերվատորիան, աշակերտել Է. դը Հիդալգոյին, Ա. Թրիանտիին: Առաջին ելույթը՝ 1942-ին Աթենքում: Դերերգերից են՝ Պիդոնե (Հ. Բեռլիոզի «Տրոյացիներ»), Ֆլորա (Բ. Բրիտտենի «Պտուտակի շրջադարձ»), Սյուզետ (Ջ. Պուչչինիի «Բոհեմ») ևն: Նա առաջինն է ներկայացրել բյուզ. երաժշտության հիման վրա ստեղծված ռեցիտալները, հուն. դաս. 6 ստեղծագործություններ, Անգլիայում հնչեցրել հին հուն. դաս., այսպես կոչված, դելֆիի տաղերը (1896-ին վերծանել է Թ. Ռայնախը) երաժշտության պատմության ձայնասկավառակի համար: 1957-ին Մ. Թեոդորակիսի հետ ձայնագրել է «Սեր և մահ» և «Շրջանակ» ալբոմները: Աթենքի համերգասրահի «Երաժշտության բարեկամներ» կազմակերպության կենտր. խորհրդի անդամ (1974–80), «Մարիա Կալլաս» կրթաթոշակի հիմնադրամի նախագահ, վոկալ երաժշտության միջազգ. բազմաթիվ մրցույթների հանձնախմբերի անդամ: Համերգներով շրջագայել է Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում, նաև Սոսկվայում և Երևանում:

ՄԱՆՐԱՆՎԱԳ, համեմատաբար փոքր *պիես*՝ որևէ երաժշտ. գործիքի (առավելապես՝ դաշնամուրի), անսամբլի կամ նվագախմբի համար: Սովորաբար բնութագրվում է յուրատեսակ գեղեցկությամբ, գունեղությամբ և ցայտուն արտահայտչականությամբ: Տարբերում են պարզ (2 և 3 մաս), ռոնդոյանման ձևերը: Թեև Մ. ինքնուրույն պիես է, սակայն հանդես է գալիս նաև ցիկլերում, միավորվում շարքերում: Ծաղկել է ռոմանտիզմի շրջանում (Ֆ. Շուբերտ, Ֆ. Մենդելսոն, Ռ. Շուման, Ֆ. Շոպեն), լայնորեն տարածված է արդի արևմտաեվրոպ., ռուս., հայկ. երաժշտության մեջ (Կ. Պետրոսյան և ուր.):

ՄԱՆՐՈՒՍՈՒՄ, մանրուսմունք, հայ միջնադար. երգչածիս. մատյան, խազգիրք: Մ-ման ժող-ները տարածվել են մասնավորապես XII դ-ից Կիլիկյան Հայաստանում՝ Ներսես Շնորհալու անմիջական նախաձեռնությամբ: Որպես առավել բարդ, զարդոլորուն ոճի հոգևոր երգերին վերաբերող ձեռնարկներ՝ սերտորեն առնչվել են եկեղեց. երգեցողության և խազագիտության գործն. ուսուցման հետ:

Կոմիտասը «Մանրուսում» անվանումը բացատրել է որպես «ուսումն եկեղեցական երգերի, եղանակների և խազերի մասին»: Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում քահանաների համար պարտադիր է համարել Մ-ման արվ-ի տիրապետումը: Մ-ման երգերի (մեղեդիներ, ալելուներ, ժամամուտներ, փառքեր, եղիցիներ, Պատարագի սրբասացություններ ևն) խազավորումն աչքի է ընկնում խիտ և հարուստ հյուսվածքով, որի համար այդ ժող-ները կոչվել են նաև «խազգրքեր»: Մ-ման խազերի նկարագրերը տարբերվում են շարականի խազերից:

Ըստ տվյալների՝ Ներսես Շնորհալին է նոր, ածանցյալ բնույթի և բարդ նկարագրով խազերի խումբը ներմուծել այդ ժող-ների մեջ:

Մ. ամենաքիչ հետազոտված միջնադար. երաժշտ. մատյանն է. հիմնական պատճառը հայ միջնադար. խազ. նոտագրության վերծանման խնդիրն է, թեև Մ-ման մի քանի մասեր հնարավոր է վերականգնել՝ ըստ Ժամագրքի և Խորհրդատետր-Պատարագամատույցի հետ ունեցած ընդհանուր բաժինների: Մ. ընդհանրություններ ունի բյուզ. «Փսալտիկոն» և «Պապադիկի» կոչվող երգչական մատյանների հետ: Մ-ման երգերի զգալի մի հատված դուրս է եկել գործածությունից ուշ միջնադարում:

Ներկայում Մ. պահպանում է իր նշանակությունը՝ որպես խազագրության ուսումնասիրման կարևորագույն աղբյուրներից մեկը:

Ազգ. հավաքածուներում պահվում են բազմաթիվ ընտիր գրչագիր Մ-ման գրքեր, որտեղ զետեղված են նաև Մ-ման ձայնեղանակների անվանացուցակները, որոնց առաջինն անդրադարձել և հրապարակել է Ղ. Ալիշանը: Մ-ման խազերի և ձայնեղանակների հետազոտմամբ հատուկ զբաղվել է Կոմիտասը: Նա դասակարգել է դրանք ըստ ութձայնի և հաշվարկել ձայնեղանակների ընդհանուր քանակը (XII–XIV դդ-ում՝ 152 չափանմուշ եղանակ):

Գրկ. *Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873, էջ 448: Նույնի, Միտեան, Վնտ., 1885, էջ 154: Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941, էջ 112–125: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրություն, Ե.,*

Արտա Մանտիկյան

Գրիգոր Սոսթասանցի Մանրուսան (1352) էջ

«Մանրուսում» պարեգրքի (2013, հ. IV, խմբ. և կազմ.՝ Ս. Արևշատյան) կազմը

Վարդի Մանուկյան

Ազատ Մանուկյան

Անդրանիկ Մանուկյանը կրույթի պահին

1959, էջ 82–83, 89–92: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Ե., 1973, էջ 12–15: Նույնի, Երաժշտությունը Հայկական Կիլիկիայում, Ե., 1989, էջ 24–25: Մանրուսում: Հոգևոր երաժշտության պատմության, տեսության և գեղագիտության հարցեր, կազմ.՝ Ա. Արևշատյան, Ե., 2002: Аревшатян А., Сборник «Манрусум» и монастырская певческая традиция XII–XIV вв. Киликийской Армении, сб. "Монастырские певческие традиции в древнерусской музыке" (к 600-летию Кирилло-Белозерского монастыря), СПб, 1997.

Աննա Արևշատյան

ՄԱՆՈՒԿՅԱՆ Վարդի [ծ. 1970, Պլովդիվ (Բուլղարիա)], ջութակահարուհի: Մեվսես *Պողոսյանի* կինը: Սովորել է Պլովդիվի «Պերկով» երաժշտ. դպրոցում, ավարտել Բուլղարիայի երաժշտ. ակադ-ը (Սոֆիա) և Քլիվլենդի երաժշտ. ինստ-ը (Դ. Վայլերշտեյնի դասարան): Ապրում և ստեղծագործում է Գլենդելում. 2004-ից՝ Լոս Անջելեսի ֆիլհարմոնիայի «Դետրոյտ» սիմֆ. նվագախմբի մենակատարուհի: Կամեր. գործերի կատարումներով մասնակցել է «Մալբորո», «Էլ Պասո», «Օլիմպիական», «Էփլ Հիլ», «Սերազո» երաժշտ. փառատոներին: Շրջագայել է համերգ. ծրագրերով (ԱՄՆ, Բուլղարիա, ԽՍՀՄ, Լեհաստան, Իսպանիա, Իտալիա) և մենահամերգներով՝ ճանաչված սիմֆ. նվագախմբերի հետ: Լոս Անջելեսի երաժշտ. կազմակերպության «Ութնյակի» անդամ է: 2016-ին ամուսնու հետ Երևանում նվագել է Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբում (դիրիժոր՝ Է. Թոփչյան): Դասավանդում է Քոլբուրնի երաժշտ. ակադ-ում:

Ա. Կոձիանի անվ. (1977, Չեխոսլովակիա), Հ. Վենյավսկու անվ. (1985, Լեհաստան), Քոնեքթիքութի (1991) ջութակահարների միջազգ. մրցույթների դափնեկիր, Բրայան միջազգ. փառատոնի 1-ին մրց. (1993, ԱՄՆ):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ազատ Մինասի [03(15).12.1878, գ. Մեծ Ագարակ (Երզնկայի գավառ)–07.05.1958, Երևան], կոմպոզիտոր, մանկավարժ, խմբավար: ՎԽՍՀ (1936), ՀԽՍՀ (1952) արվ. վաստ. գործիչ: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1952): ՀԽՍՀ աշխատանքի հերոս (1935): Թիֆլիսում սովորել է Ք. Կարա-Մուրզայի խմբավարության (1899), Ս. Պետերբուրգում՝ պալատ. երգչախմբի տես. (1903–05) դասընթացներում: Որպես մանկավարժ և խմբավար՝ աշխատել է Թիֆլիսի և Երևանի հայկ. դպրոցներում: 1908-ին Ռոմանոս *Մելիքյանի* հետ Թիֆլիսում հիմնադրել է *«Երաժշտական լիգան»*: 1923-ին ղեկավարել է Երևանի կենտր. բանվոր. ակումբի առաջին երգչախումբը, 1923–25-ին Հս. Կովկասի քաղաքներում կազմակերպել է հայ երգի երեկոներ:

Գրել է մանկ. երգեր Ղ. Աղայանի, Ա. Իսահակյանի, Խնկո-Ապոր, Հ. Թումանյանի և ուր. խոսքերով («Ծիտիկի օրորը», «Ծիծեռնակը բույն էր շինում», «Ողջո՛ւյն քեզ, դպրոց», «Երջանիկ մանուկներ», «Ջնծաղիկը» ևն) և խմբերգեր (ամփոփված են «Փնջիկ»-ի 10 ժող-ներում), «Չարի վերջը» (ըստ Հ. Թումանյանի, բեմ.՝ 1936), «Ոսկե ձկնիկի հեքիաթը» (ըստ Ա. Ս. Պուշկինի, բեմ.՝ 1937), «Սասունցի մանուկ Դավիթ» (ըստ Վ. Մանվելյանի, 1939), «Համառ գորտը» (1946), «Կամակոր Նունիկը» (ըստ Վ. Մխիթարյանի, 1952) մանկ. օպերաները: Կազմել և հրատարակել է «Ա. Ս. Պուշկինը դպրոցական երգերում» (1937) և «Դպրոցական երգարան» (1940):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և Լենինի շքանշաններ:

Գրկ. *Մուրադյան Մ., Ազատ Մանուկյան, Ե., 1977: Атаян Р., Мурадян М., Тадевосян А., Армянские композиторы, Е., 1956.*

ՄԱՆՈՒԿՅԱՆ Անդրանիկ Քյարամի [Անդրանիկ սարկավագ Մանուկյան, 01.05.1966, գ. Ներքին Բազմաբերդ (ՀՀ Արագածոտնի մարզ)], երգիչ: «Սասուն» ազգագր. երգի-պարի անսամբլի հիմնադիր-ղեկ. (1988-ից): Երկացանկում՝ ազգագր. երգեր, նաև ազգ. ծեսերի բեմադրություններ («Զատիկ», «Վարդավառ», «Վարդանանք», «Տարոն աշխարհի հարսանեկան ծես», «Դրդո») ևն (նկարահանվել են տեսաֆիլմեր): Թողարկել է «Բարեշնորհ հայ», «Արաբո» և այլ տեսաերիզներ: 2012-ին անսամբլը Լեհաստանի Զակոպանե քաղաքում Բանահյուս. միջազգ. փառատոնում արժանացել է «Հանրային համակրանք» Գլխ. և այլ մրց-ների: ՀՀ երախտագիտության մեդալ (2017):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Արտյոմ Արմենի (ծ. 28.06.1983, Երևան), թավջութակահար, բաս-կիթառահար: Ավարտել է Երևանի Ս. Զրբաշյանի անվ. երաժշտ. դպրոցի (1998), ԵՊԿ (2005, Մ. Աբրահամյանի, Ա. Թալալյանի դասարաններ) թավջութակի բաժինները: Կոնտրաբաս և բաս-կիթառ նվագել սովորել է ինքնուրույն: 2005-ից հանդես է եկել «Armenian Navy Band» և «Կատուներ» ռոք-խմբերում, որոնց հետ

մասնակցել է հեղինակավոր ջազ-փառատոների: 2006-ից համագործակցել է Ինգա և Անուշ *Արշակյանների*, 2009-ից՝ Ռուբեն *Հախվերդյանի* հետ, 2010-ից (Վահագն *Հայրապետյանի* հետ)՝ «Night Ark» խմբի անդամ: 2011-ից ապրում է Լոս Անջելեսում: Մասնակցել է մի շարք մրցույթների և փառատոների Գերմանիայում, Հունաստանում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում և այլուր, արժանացել մրց-ների: Հանդես է գալիս ճանաչված երաժիշտների (Ք. Վաշինգտոն, Մ. Գարդո, Պ. Էրսկին, Տիգրան *Համասյան* և ուր.) ու խմբերի հետ, նաև հեռուստաշոուներում և ակումբներում: Մ-ի կատարումները ինչել են «Սիրելի սպիտակամորթներ», «Հրեշները և մարդիկ», «Կանաչ գիրքը» (2018, ռեժ.՝ Պ. Ֆարելլի, «Օսկար» մրց.՝ 2019) ֆիլմերում: Թողարկել է ձայնասկավառակներ և ալբոմներ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Իրինա Էդուարդի (22.08.1948, Մոսկվա–03.05.2004, Մոսկվա), կոմպոզիտոր: ՌԴ արվ. վաստ. գործիչ (2002): ՌԴ ԿՄ անդամ: Ավարտել է ՄՊԿ (1973, Ս. Բալասանյանի դասարան): 1974-ից աշխատել է Մոսկվայի մարզի ֆիլհարմոնիայում, 1975-81-ին՝ Դ. Բ. Կաբալևսկու լաբորատորիայում (մշակվել են երաժշտության դասավանդման ձեռնարկներ): Դասավանդել է Մոսկվայի Ի. Օ. Դունաևսկու անվ. երաժշտ. դպրոցում (կոմպոզիցիա):

Գրել է երկեր՝ մեծ սիմֆ. նվագախմբի, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, կամեր. սիմֆ. անսամբլի համար, կվարտետներ, վոկալ շարքեր և դաշնամուր. մանրապատկեր, «Պաթետիկ կանտատը» (Ե. Չարենցի խոսքերով)՝ մենակատարի, երգչախմբի և մեծ սիմֆ. նվագախմբի, «Նահրյան առավոտը» կանտատը՝ երգչախմբի և նվագախմբի համար, «Սիրո երգեր» վոկալ շարքը (Նահապետ Քուչակի խոսքերով), մանկ. երգեր (Ի. Պ. Տոկմակովայի խոսքերով): Նրա ստեղծագործությունները Ռուսաստանում և արտերկրում կատարել են Ռուզաննա և Կարինե *Լիսիցյանները*:

Հեղինակ է «Կոմպոզիցիայի փորձնական ծրագիր մանկական երաժշտական դպրոցներում սովորողների համար», «Կոմպոզիցիայի դասավանդման առանձնահատկությունները մանկական երաժշտական դպրոցներում», «Կոմպոզիցիայի հոգեբանական դրսևորումների մասին» երաժշտագիտ. մեթոդաբան. ձեռնարկների, հանրագիտարան. հոդվածների:

Կոմպոզիտորների միջազգ. փառատոնի դափնեկիր (1990, Տոկիո):

Գրկ. *Ашинянц Р., Сладкое бремя: Жизнь и творчество композитора Ирины Манукян, М., 2007.*

ՄԱՆՈՒԿՅԱՆ Հովհաննես Կոնստանտինի (ծ. 10.07.1984, Երևան), կոմպոզիտոր, երգեհոնահար: ՀԿՄ անդամ (2007-ից): Արվեստագիտ. թեկնածու (2009): «Հայաստան» համահայկ. հիմնադրամի հատուկ կրթաթոշակակիր (2005): Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի (2006, Է. Միրզոյանի դասարան), երգեհոնի (2006, Ա. Ադամյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2009, ղեկ-ներ՝ Է. Միրզոյան, Վ. Ստամբոլցյան): 2009–13-ին աշխատել է ԵՊԿ-ում (ասիստենտ): 2013-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող: 2016-ից՝ Հայ-ամերիկ. կամեր. նվագախմբի գլխ. կլավեսինահար:

Արտյում Մանուկյանը ելույթի պահին

Գրել է «Օվսաննա-Օվսաննա բարձյալի որդուն» (2004) սոնատը՝ երգեհոնի, «Հայտնություն» (2006)՝ սիմֆ. նվագախմբի, «Gloria in Excelsis» (2007) տրիոն՝ ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար, «Եղիր փառավորված, Տեր մեր Հիսուս Քրիստոս»՝ 2 կոնցերտ-սիմֆոնիան (1-ինը՝ թավջութակի, կանանց երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, 2009, 2-րդը՝ դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի համար, 2010), «Հիսուս Քրիստոսը մեր փրկիչն է» (2009) օկտետը՝ 4 ջութակի, 2 ալտի, թավջութակի և կոնտրաբասի, Սաղմոսներ (2009)՝ թավջութակի, դաշնամուրի և ֆոնոգրամի, «Երկնային ուղերձ» (1-ինը՝ մենանվագ թավջութակի համար, 2010, 2-րդը՝ մենանվագ գալարափողի համար, 2012), «Նա հարություն է առել» (2011)՝ ջութակի և լար. նվագախմբի, «Ես, Հիսուսը, լույսն եմ աշխարհին» (2012)՝ խառը երգչախմբի և դաշնամուրի, «Եկեք ինձ մոտ, և դուք կժառանգեք իմ արքայությունը երկնքում» (2013)՝ կոնցերտ մարիմբաֆոնի և լար. նվագախմբի, «Արարատից՝ Սիոն» (2015)՝ ջութակի և կամեր. նվագախմբի, «Իմ նոր Երուսաղեմը» (2014)՝ երգեհոնի, «Ալելույա» (2015)՝ ալտ-սաքսոֆոնի և երգեհոնի, «Լսեք իմ քայլերը» (2015)՝ մարիմբաֆոնի և դաշնամուրի համար: Հեղինակ է գիտ.

Իրինա Մանուկյան

Վարդ Մանուկյան

1457-ի Մաշտոցի էջ (Մատեն., ձեռ. № 9694)



Առաջին տպագիր Մաշտոցի (1667, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի, Ամստերդամ) տիտղոսաթերթը

հոդվածների, ուսումնասիրությունները վերաբերում են հայ երգեհոն., նաև ժամանակակից երաժշտությանը:

Միջազգ. (ՌԴ, ՀՀ) և հանրապետ. մրցույթների դափնեկիր:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մանուկ Թորոսի (05.06.1924, Բուխարեստ–11.12.2010, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու (1969): Հայրենադարձել է 1948-ին: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1953), ԵՊԿ (1958): 1958–59-ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի երաժշտության խմբ., 1959–80-ին՝ ԳԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող (1982-ից՝ ավագ): 1956–80-ին մասնակցել է երաժշտ. բանահավաքչական գիտարշավների, միաժամանակ դասավանդել է Երևանի երաժշտ. ուսումնարաններում, 1982–2008-ին՝ ՀՊՄՀ-ում (ամբիոնի վարիչ՝ 1982–87, պրոֆ.՝ 1985-ից): Հեղինակ է հեռուստատես. և ռադիոյի հաղորդաշարերի՝ նվիրված Շերամին, Հավասուն, Սայաթ-Նովային, Շահենին և ուր.:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ երաժշտության պատմությանը, ժող. և աշուղ. երգարվ-ին:

Երկ. *Անդրն Մայիյան (Կյանքն ու գործունեությունը), Ե., 1965: Ժողովրդական ավետիսներ, Էջմիածին, 1995: Ջիվանի. Ձայնագրյալ երգարան, աշխատասիր.՝ Մ. Մանուկյանի, Ե., 1998: Սիմոն Հովհաննիսյան, Ե., 2000: Гусаны Армении, М., 1977.*

ՄԱՆՈՒԿՅԱՆ Վարդ (Ռոզա) Գևորգի (ծ. 12.01.1955, ք. Էջմիածին), կոմպոզիտոր: Վաչե *Հովհյանի* մայրը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2017): Պրոֆ. (2008): ՀԿՄ անդամ (1985): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1974), ԵՊԿ (1979, Գ. Եղիազարյանի դասարան): 1984–86-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում, 1989-ից՝ ԵՊԿ-ում:

Գրել է «Սիրկահավ» (խոսք՝ Վ. Տերյանի, համամիութ. մրցույթի 2-րդ մրց., 1978), «Հաղթական» (խոսք՝ Վ. Հովհաննիսյանի, հանրապետ. մրցույթի 3-րդ մրց., 1986) պոեմները, Կրկնակի կոնցերտ (2014)՝ ջութակի, ալտի և լար. նվագախմբի, կվինտետ՝ ձայնի և անսամբլի, տրիպտիխ՝ ձայնի և լար. քառյակի, «Վահագնին» օրատորիան՝ սիմֆ. նվագախմբի, երգչախմբի և մենակատարների (խոսք՝ Ե. Չարենցի և Կոմիտասի, համամիութ. մրցույթի 3-րդ մրց., 1980), Սյուիտ՝ լար. քառյակի, Էլեգիա (2017)՝ ալտի և նվագախմբի, սոնատ՝ թավջութակի և դաշնամուրի, ռապսոդիա՝ ալտի և դաշնամուրի համար, «Խոստովանություն» (2012) սիմֆոնիան, «Նվիրում Սայաթ-Նովային» (2015), փող. կվինտետ, վոկալ շարքեր («Դու չկաս», խոսք՝ Պ. Սևակի, համամիութ. մրցույթի 2-րդ մրց., 1978), էստրադ. երգեր՝ «Հայաստան աշխարհ», «Աշնանային», «Անուրջներ» և այլ գործեր: Աշակել է ձայնի և դաշնամուրի համար միջնադար. տաղեր:

Հեղինակ. համերգներով հանդես է եկել Փարիզում (1995): Լույս են տեսել Մ-ի վոկալ խմբերգ. ստեղծագործությունները (հ. Ա, «Անուրջներ», հ. Բ, «Ղողանջներ», 2006):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Վարդան (ծ. 1936, Բաղդադ), ջութակահար: Ավարտել է Փարիզի ազգ. կոնսերվատորիան և Նյու Յորքի Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցը, 1963–68-ին կատարելագործվել է Իվան *Կալամյանի* ղեկավարությամբ: Որպես մենակատար և երգչախմբերի հետ հանդես է եկել աշխարհի լավագույն բեմերում, եղել է նաև կամեր. և սիմֆ. նվագախմբերի կոնցերտմայստեր: Մասնակցել է Պուերտո Ռիկոյի, Սիենայի (Իտալիա), Ինդիանապոլսի (ԱՄՆ) և այլ միջազգ. փառատոների և արժանացել մրց-ների: 1988-ին հանդես է եկել Երևանում. երկացանկում՝ ֆրանսիացի, բելգիացի և իսպանացի անվանի կոմպոզիտորների գործերից: Դասավանդել է Բլումինգտոնի և Ինդիանապոլսի համալսարաններում (պրոֆ.):

ՄԱՇՏՈՑ, Հայ եկեղեցու ծիսարան-ժող.: Պարունակում է քրիստ. ծիսակարգի կանոններ, նաև հատուկ աղոթքներ, օրհնություններ: Անվան ծագումը, ըստ ավանդության, կապվում է Մեսրոպ Մաշտոցի, Կիրակոս Գանձակեցու կարծիքով՝ Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի անվան հետ (հայագիտության մեջ առավել հավանական է համարվում 2-րդ վկայությունը): Ձևավորվել է IV–V դդ-ից՝ պահպանելով հեթանոս. Հայաստանում տարածված մի շարք ինագույն ծեսերի հետքեր՝ նվիրված կյանքի հիմնական հանգուցակետերին (մկրտություն, պսակ, թաղում), ջրի պաշտամունքին (ջրօրհնեք, խաչալվա, ոտնլվա, ջրհորի օրհնություն), բուսականության և պտղաբերության (սերմ, կալ, հնձան ևն), ընտանիքի (տան, սեղանի, աղի ևն) պաշտամունքներից բխող օրհնություններ: Ընդգրկում է նաև

սկզբնապես հմայական ու ոգեկոչման գործողությունների հետ կապված ծեսեր (դիվահարի, լուսնոտի, մատաղի, հացի օրհնությունները ևն):

Ժող–ի կազմավորմանն ու հարստացմանը մասնակցել են Գրիգոր Ա Լուսավորիչը, Սահակ Ա Պարթևը, Հովհաննես Ա Սանդակունին, Մաշտոց Ա Եղիվարդեցին, Գրիգոր Բ Վկայասերը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին և ուր.: Ծիսարան են ներմուծվել նաև Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզանցու, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Երուսաղեմացու ամբողջ. կանոնների, որոշ քարոզների և աղոթքների թարգմանություններ, հայ հեղինակների ծիս. բովանդակության ինքնուրույն նյութեր: Լինում են Փոքր կամ Առձեռն (բովանդակում է քահանայի խորհուրդներն ու արարողությունները՝ մկրտություն, դրոշմ ևն), Մայր (եպիսկոպոս. արարողություններ՝ ձեռնադրություն, գավազանի ընծայություն, եկեղեցու օծում ևն), Հայր (կաթողիկոսին պատկանող արարողություններ՝ կաթողիկոսի օծում, մյուռոնօրհնեք ևն) Մ–ներ:

Հարուստ և բազմազան է Մ–ի երաժշտ. բաղադրիչը, որը պայմանավորված է երաժշտածիս. գրքերի կենցաղավարման համակարգում նրա առանձնահատուկ դերով: Ի տարբերություն այլ եկեղեց. գրքերի՝ Մ. սկզբնապես նախատեսվել է նաև արտաեկեղեց. կենցաղավարման համար: Ձեռագիր Մ–ներում կանոնների ընթերցվող նյութերում ընդմիջարկվում են խազագրված սաղմոսներով, շարականներով, գանձերով ու տաղերով: Ուշ միջնադարում երևան են եկել խառը տիպի ժող–ներ՝ Մ–Գանձարաններ, Մ–Տաղարաններ, որտեղ աշխարհականացման ոգին դրսևորված է ոչ միայն երաժշտաբանաստեղծ. նյութի առավել շեշտադրումով, այլև աշխարհիկ և ժող. տաղերի ու ողբերի երևան գալով: Կանոնագրված և չկանոնագրված երգասացությունների առկայությունը Մ–ի երաժշտ. շարքերում, դրանց «բաց ձևի» միտումը ժող–ի հիմնական տարբերություններն են այլ երաժշտածիս. գրքերից:

Հայ գրիչներն ստեղծել են մի շարք Մ–ներ, որոնցից հիշատակելի են Սնդ–ի № 1001, Վենետիկի Սբ Ղազար վանքի մատենադարանի № 457, Երուսաղմի Սբ Հակոբյանց վանքի մատենադարանի № 2027 ձեռագրերը ևն: Առաջին տպագիր Մ. լույս է տեսել 1667–ին Ամստերդամում՝ Ոսկան Երևանցու նախաձեռնությամբ:

Գրկ. *Պողարեան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990: Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Conybeare Fr., Rituale Armenorum, Oxf., 1905.*

Աննա Արևշատյան



Մաշտոցի (1905) տիտղոսաթերթ

ՄԱՎԻՍԱԿԱԼՅԱՆ (Մելիք–Մավիսակալյան) Մելիք Բաբկենի (ծ. 23.09.1937, Երևան), դիրիժոր, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1982), ժող. արտիստ (2012): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1961) և կոմպոզիցիայի (1967, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1970–72–ին՝ ՀԿՄ պատասխանատու քարտուղար, 1957–60–ին՝ Հայաստանի ռադիոյի գործիք. կվինտետի մենակատար, 1960–62–ին՝ Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի էստրադ. նվագախմբի գեղ. ղեկ., 1964–65–ին՝ Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբի տնօրեն, 1972–86–ին՝ Հայաստանի ռադիոյի էստրադ. սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և դիրիժոր, 1991–97–ին՝ Հայկ. ժող. երգի–պարի անսամբլի գեղ. ղեկ.: 1985–2005–ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում (կոմպոզիցիա):

Մելիք Մավիսակալյան

Գրել է 4 կանտատ, օրատորիա, «Ռեքվիեմ» (Մեծ եղեռնի զոհերի հիշատակին), կոնցերտներ՝ շեփորի և նվագախմբի, ջութակի և նվագախմբի համար, լար. կվարտետներ, սոնատներ, խմբերգեր, մանկ. և էստրադ. երգեր, «Մեծ նվեր» (1971) օպերետը, «Սիմֆոնիկ պարեր»(1975), «Կոնցերտ–ֆանտազիա» (1968), կինոերաժշտություն («Ախթամար», 1969, «Բաղդասարը բաժանվում է կնոջից», 1976, Ա. Բաբաջանյանի հետ, «Համեստ մարդը», 1981, բոլորը՝ Հայֆիլմ): Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. մրցույթների (1969, 1971, Մոսկվա) դափնեկիր, Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2015):

«ՄԱՐԱԹՈՒԿ», ժող. երգի–պարի անսամբլ: Հիմնադրվել է 1983–ին Երևանում՝ Հովհաննես Մկրտիչ (Մգրո) Սարգսյանի (1945–1989) նախաձեռնությամբ (1993–ից՝ Մ. Սարգսյանի անվ.): Անսամբլի գեղ. ղեկ–ներ են եղել նաև Ալքեսանդր Կարապետյանը (նաև խմբավար), Երվանդ Թորոսյանը (1993–ից), պարուսույց՝ Արտյուշա Կարապետյան (ՀՀ ժող. արտիստ 2007), խմբավար՝ Արա Ավագյան: Տարբեր տարիների անսամբլի կազմում են երգել Սահակ Սահակյանը, Սուսաննա

Հովհաննես Մկրտիչ Սարգսյան («Մարաթուկ» անսամբլի հիմնադիր–գեղ. ղեկ.)

Անահիտ Սարգարյանը կլույթի պահին

Սիրադեղյանը, Ալեքսանդր Քոչարյանը, Ռադիկ Ալավերդյանը, Վարյա Մայլյանը, Մարգարիտա Մելքոնյանը և ուր.: Երգացանկում՝ «Հանինա», «Բոբիկ ջուր մի երա», «Խորոտ յար», «Համբարձման երկուշաբթին», «Սուրբ Կարապետ վանքին մոտիկ», «Գևորգ Չաուշի հիշատակին», «Քաջ Նժդեհ», «Ի զեն հայեր», «Բիթլիս քաղաք շատ լեռնային», «Ձայն տուր ով ֆեդա» և այլ երգեր:

Համերգներով հանդես է եկել ԱՄՆ-ում, Սիրայում, Լիբանանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Հոլանդիայում և այլուր:

2014-ից «Մ.»-ից առանձնացել է «Մարաթուկցիներ» անսամբլը (խմբավար՝ Արա Ավագյան, հիմնադիր-անդամներ՝

«Մարաթուկ» ժող. երգի-պարի անսամբլը

Գառնիկ Մելքոնյան, Ռաֆիկ Հակոբյան, Լևոն Մկրտչյան, Համբարձում Ղազանչյան, Արամայիս Դավթյան) և գործում է ինքնուրույն:

ՄԱՐԱԿԱ (իսպ.՝ maraca), հնդկացի տաինո ցեղախմբի հնագույն հարվածաղմկային երաժշտ. գործիք: Ձայնարտաբերումը՝ թափահարելով: Նվագողը, որպես կանոն, օգտագործում է 1 զույգ Մ.՝ յուրաքանչյուր ձեռքում՝ մեկը: Տարածված է լատինամերիկ. և եվրոպ. երկրներում:

Պատրաստում են գառլյանկա ծառի պտուղներից, դդմիկից, ժամանակակից Մ.՝ նաև ուռենու ճյուղերից, կոկոսից, կաշվից:

Մարակա

XX դ-ից կիրառվում է ժող. և թեթև գործիք. երաժշտության մեջ: Մ. սիմֆ. նվագախումբ են ներմուծել Ս. Ս. Պրոկոֆևը («Ռոմեո և Ջուլիետ», բալետ, «Ալեքսանդր Նևսկի», կանտատ), Գ. Եղիազարյանը («Արա Գեղեցիկ», բալետ), Ա. Տերտերյանը (Սիմֆոնիա № 1), Ն. Ձարիֆյանը («Violin Dance»՝ 2 ջութակի, զուռնայի, ստեպ պար. խմբի և սիմֆ. նվագախմբի, «Solea»՝ ձայնի, սաքսոֆոնի, կիթառի և սիմֆ. նվագախմբի համար):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Անահիտ Երվանդի (ծ. 12.08.1988, Երևան), դաշնակահարուհի: Ավարտել է ԵՊԿ դաշնամուր. ֆակ-ի բակալավրիատը (2008), մագիստրատուրան (2009, երկուսն էլ՝ Գ. Մարգարյանի դասարան) և ասպիրանտուրան (2013, ղեկ.՝ Ա. Ասատրյան): Մասնակցել է միջազգ. և հանրապետ. փառատոների և մրցույթների (դափնեկիր), համերգներով և մենահամերգներով հանդես եկել ՀՀ-ում և արտերկրում: Հայաստանի հանր. հեռուստաընկերությունում 2008-ից վարել է «Դասական ալիք», ապա՝ «Վերնասրահ» հաղորդաշարերը: Հեղինակ է «Վերածնունդ» միջազգ. երաժշտ. մրցույթ-փառատոնի (նաև խմբ. և վարող), Ա.Խաչատրյանի անվ. միջազգ. երաժշտ. մրցույթի հեռուստատես. օրագրերի (նաև վարող և սցենարիստ), «Աստղային ուղի» (2009), ««Գայանեն» հյուսիսային Վենետիկում» (2014), «Երաժշտության հայկական էլեմենտները «ՄԻԴԵՄ»-ում» (2015), ՅՈՒՆԵՍԿՕ-ում ներկայացված «Քոչարի» (2016) երաժշտ. ֆիլմերի (նաև վարող): 2011-ից՝ «Շողակաթ» հեռուստաընկերությունում «Ձայնագիր» երաժշտ. լրատվականի պատասխանատու: «Հանրագիտարան» հեռուստատես. ֆիլմերի սցենարիստներից:

Ուսումնասիրությունները վերաբերում են XX դ-ի 2-րդ կեսի հայ դաշնամուր. երաժշտությանը, կատարող. արվ-ին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Գայանե Սարգսի (ծ. 20.05.1963, Ալմա Աթա), դաշնակահարուհի: Արվեստագիտ. թեկնածու (2007), պրոֆ. (2011): Սովորել է Թբիլիսիի № 6 երաժշտ. դպրոցում, ավարտել Երևանի Ա.Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1982), ԵՊԿ (1987, Ա. Ամբակումյանի դասարան) դաշնամուրի բաժինները: 1990–2004-ին աշխատել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի բաժնում, 1993-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2009-ից): 2009-ից՝ Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի բաժնի վարիչ: Հայ-ռուս. (Սլավոնական) համալսարանի պրոֆ.՝ 2008-ից: Ուսումնասիրությունները վերաբերում են համաշխ. դաս., ժամանակակից և հայ երաժշտությանը, մշակութաբանությանը: Հեղինակ է ուսումնամեթոդ. ձեռնարկի:

Երկ. *О педализации. В помощь педагогу-музыканту, Е., 2004; Фортепианный концерт и его разновидности в творчестве армянских композиторов: Тенденции развития (1950–1980-е гг.). Некоторые вопросы интерпретации, Е., 2009.*

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մարգար Ավետիսի (4.10.1894, Վաղարշապատ–20.11.1941, Երևան), դուդուկահար: Նվագել է արլ. գործիքների անսամբլում, Վարդան *Բուռնա* ղեկավարած Արևելյան սիմֆ. նվագախմբում, 1926-ից՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլում: Երկացանկում՝ հայկ. ժող. ու աշուղ. երգերի գործիք. փոխադրումներ, մուղամներ: 1939-ին Մոսկվայում մասնակցել է հայկ. արվ-ի և գրկ-յան տասնօրյակին: Կատարումները, որոնց բնորոշ էին հուզ. հագեցվածությունը և ազգ-ժող. ցայտուն երանգավորումը, օգտագործվել են հայկ. կինոնկարներում («Պեպո», 1935, «Զանգեզուր», «Սևանի ձկնորսները», երկուսն էլ՝ 1938):

Նրա կատարումներով թողարկվել են ձայնապնակներ: Զբաղվել է նաև գործիքների կատարելագործմամբ, ստեղծել է դուդուկի «in d» տարատեսակը:

Ժող. գործիքների երաժիշտ-կատարողների համամիութ. ստուգատեսի 3-րդ մրց. (1939, Մոսկվա):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Սյուզաննա Համլետի (ծ. 06.10.1961. Երևան), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2003): Ավարտել է Երևանի էստրադ-ջազ. քոլեջի վոկալ (1981), ԵԳԹԻ դերասան. (1988) բաժինները: 1977-ից՝ «Սերպանտին» վոկալ-գործիք. անսամբլի, 1980-ից՝ Հայաստանի պետ. էստրադ., 1990-ից՝ ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբերի մենակատար. երկացանկում՝ Ռ. Ամիրխանյանի, Ա. Սաթյանի, Ե. Երզնկյանի, Ռ. Գալստյանի, Է. Գյանջումյանի և ուր. գործերից, նաև ժող. և գուսան. երգերի մշակումներից («Սերն անցավ», «Մայրամուտ», «Մեր փողոցում» ևն): Թողարկել է «Սիրո մեղեդի» (1991), «Հանդիպում» (2001), «Տարիների լավագույնները» (2002) ձայնասկավառակները, նկարահանել տեսահոլովակներ: Հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Բելգիայում, Եգիպտոսում և այլուր:

«Յունոստ Բալտիկի» միջազ. մրցույթ-փառատոնի (1981, Պալանգա), «Կռունկ» էստրադ. երգի ամենամյա փառատոնի (2001, Երևան) դափնեկիր, Ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության (2004, Երևան), «Տաշիր-2007» (2007, Մոսկվա) Հատուկ մրց-ներ:

Դուստրը՝ Սիրուշո (Հարությունյան Սիրանուշ Հրաչյայի, ծ. 07.01.1987, Երևան), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2017): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի բաժինը: Առաջին ելույթը՝ 1995-ին: Թողարկել է մի շարք ձայնասկավառակներ. առաջինը՝ 2000-ին, 2-րդը՝ 2005-ին («Շերամ», «Տարվա լավագույն երգչուհի», «Տարվա լավագույն ալբոմ» մրց-ներ): 2008-ին «Քելե, քելե» երգով մասնակցել է «Եվրատեսիլ» երգի միջազգ. մրցույթին (4-րդ տեղ): 2009-ին սերը երգչուհի Է. Տոմաշևիչի և հրեա երգիչ Բ. Սաուդայի հետ ձայնագրել է «Time to Pray» երգը (Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի խոսքերով): 2010-ին հիմնադրել է «Սիրուշո» պրոդյուսեր. կենտրոնը: 2012-ին նրա «Պոե-Գոմեշ» երգը գրավել է հիթ-շքերթների առաջին տեղերը (նաև «Լավագույն երգ», «Լավագույն տեսահոլովակ»): Թողարկել է «Տարիներ» (Հարութ *Փամբուկչյանի* հետ), «Կգա մի օր» (2015, նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին) երգերի տեսահոլովակները:

Մանկ. հեղինակ. երգի (1-ին մրց., 1996, Երևան), Մանկապատանեկան երգի (Մեծ մրց., 1997, Երևան) մրցույթների դափնեկիր, Լոս Անջելեսի հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության «Հայ երգի թագուհի» (2014) և այլ մրց-ներ:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Արա Նորայրի (ծ. 19.08.1949, Երևան), դիրիժոր: Ավարտել է ԵՊԿ օպեր-սիմֆ. դիրիժորության բաժինը (1974, Մ. Մալունցյանի, Դ. Խանջյանի դասարաններ): 1975-ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբում: Հանդես է եկել նաև Մոսկվայի, Դոնի Ռոստովի, Սարատովի, Խարկովի, Դնեպրոպետրովսկի, Տաշքենդի, Կազանի և այլ քաղաքների ֆիլհարմոնիաների սիմֆ. նվագախմբերի հետ: 1982-ից՝ ԵՊԿ-ին կից օպեր. ստուդիայի, ապա՝ ԵՕԲԹ դիրիժոր, 1995–96-ին՝ Բուրյաթիայի օպեր. թատրոնի գլխ. դիրիժոր (Վ. Բելլինիի «Նորմա», Գ. Դոնիցետտիի «Սիրո ըմպելիք», Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», «Ռիգոլետտո», Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա», Ս. Վ. Ռախմանինովի «Ալեկո», Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի» ևն):

Մարգար Մարգարյան

Սյուզաննա Մարգարյանը ելույթի պահին

Սիրուշոն ելույթի պահին

Արա Սարկոյան

Սերգեյ Սարկոյան

Արմեն Սարտիրոսյան

1999-ին Մոսկվայի Կամերային երաժշտության թատրոնում (Բ. Ա. Պոկրովսկու հետ ռեժ., գեղ. ղեկ.) որպես բեմադրող-դիրիժոր իրականացրել է Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը», Օ. Նիկոլաիի «Վինձորի զվարճասեր կանայք» և այլ օպերաների բեմադրություններ, ղեկավարել է Մ. Պ. Մուսորգսկու «Սորոչինյան տոնավաճառ» և Գ. Հենդելի «Հուլիոս Կեսար» օպերաների առաջին ներկայացումները ևն: Հյուրախաղերով շրջագայել է Գերմանիայում, Ավստրիայում, Շվեդիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, Դանիայում, Լեհաստանում, Իսպանիայում և այլուր:

1991-ին Ֆրանսիայի կինեմատոգրաֆի պատվերով հատվածաբար ձայնագրել է Կոմիտասի «Պատարագը»: 2010-ից համագործակցում է Ճապոնիայի միջազգ. «Օչի» բալետ. կենտրոնի հետ (Նագոյա), որտեղ իրականացրել է Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհին» և «Կարապի լիճ» բալետների բեմադրությունները: Մոսկվայի «Ամառային բալետային թատերաշրջաններ» փառատոնում (2014) ղեկավարել է Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ», Ս. Ս. Պրոկոֆևի «Սիխրոտը» և Ա. Ադանի «Ժիզել» բալետները:

Մոսկվայում ստեղծել է «Նավակատիք» կամեր. նվագախումբը (2014). երկացանկում՝ նաև հայ դաս., ժամանակակից կոմպոզիտորների գործերից:

Կազմել է «Արևիկ Ավդալբեկյան. Հուշագրական նոթեր, հոդվածներ» (2012) և այլ ժող-ներ:

Երկ. *Կոմիտաս քառյակ: Չորս դիմանկար, Ե., 2007:*

Լիլիթ Երնջակյան

ՄԱՐԿՈՍՅԱՆ Սերգեյ Գրիգորի [22.11.1946, գ. Թբղլու (ԼՂՀ Մարտակերտի շրջան)–05.03.2018, Մոսկվա], կոմպոզիտոր, երաժշտագետ-բանագետ: ՀԿՄ (1989), ՌԴ ԿՄ (1999) անդամ: Սովորել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. ուսումնարանի ժող. գործիքների բաժնում (1962–65), ավարտել ԵՊԿ խմբավարության (1972, Է. Զաքարյանի դասարան), երաժշտագիտության (1981, Ա. Բուդաղյանի դասարան), կոմպոզիցիայի (1984, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1965–93-ին աշխատել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1987–94-ին՝ ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստ-ի Արցախի բաժանմունքի գիտ. աշխատող: ԼՂՀ հեռուստառադիոյում վարել է երաժշտ. հաղորդումներ, «Զրույցներ արվեստի մասին» հաղորդաշարը: Գրառել և նոտագրել է ժող. գործիք. երաժշտության 150-ից ավելի նմուշ, գրառել է զրույցներ, սրամիտ պատումներ, անեկդոտներ ևն: Հեղինակ է երգերի, ռոմանսների, մանրանվագների, ժող. երգերի մշակումների, սոնատների, մասնագիտ. հոդվածների և ուսումնասիրությունների: Գրել է լար. (1990), մեծ սիմֆ. (1992) նվագախմբերի համար, «Ասք Արցախի մասին» (3 մասից, 1993) սիմֆոնիաները, «Սարդարապատի զանգերը» վոկալ-սիմֆ. պոեմը (1984, խոսք.՝ Է. Մեժելայտիսի), «Սգո երգ» (1992, Արցախի զոհերի հիշատակին), կվարտետներ (1975, 1990, 1993), դաշնամուր. կվինտետ (1991), դաշնամուր. տրիո (1980), վոկալ շարքեր (5 երգ՝ Ա. Իսահակյանի խոսքերով, 1975, 5 երգ՝ Զ. Միլիչի խոսքերով, 1993, 8 խմբերգ՝ մանկ. երգչախմբի համար, 1991, ևն), դաշնամուր. պիեսների շարք՝ 4 աֆորիզմ (1981–82), «Արցախյան տեսիլքներ» (1993), «Հայրենի տիեզերքի մեղեդիներ» (2003), «Կոնցերտ-ռապսոդիա» (1994)՝ 2 դաշնամուրի, «Երկխոսություններ» (սոնատ՝ 3 մասից, 1999)՝ թավջութակի և դաշնամուրի համար ևն: Կազմել է «Փողային գործիքների համար հայ կոմպոզիտորների գրած ստեղծագործությունների անվանացանկը» (1986), «Արցախյան անեկդոտներ» (2004), «Արցախի ժողովրդական երաժիշտներ» (2004), «Արցախյան դեմքեր և դեպքեր» (2012) ժող-ները, հեղինակ է «Լեռնային Ղարաբաղի հայկական երգի-պարի պետական անսամբլ» (2010) գրքի:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Արմեն (ծ. 25.02.1963, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2007): Սովորել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցում (1970–75), ավարտել ԵՊԿ (1985, Է. Միրզոյանի դասարան): 1985–90-ին աշխատել է Երևանի գեղագիտության կենտրոնում: 1991–92-ին՝ Հայաստանի պետ. ջազ. նվագախմբի երաժշտ. ղեկ., 1997–2011-ին՝ գեղ. ղեկ. և դիրիժոր, 1995–97-ին՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի գործիքավորող: 1991–95-ին ստեղծագործել է Շվեյցարիայում (դաշնակահար, կոմպոզիտոր և գործիքավորող): Դասավանդում է ԵՊԿ-ում

(պրոֆ.՝ 2002-ից): Գործերից հայտնի են՝ «Mauntain Dance», «Masisamba», «Eastern Blues» ևն: Հեղինակ է «Եվրատեսիլ» երգի միջազգ. մրցույթում (2006, 2010) ՀՀ ներկայացնող «Without Your Love» և «Apricot Stone», նաև «Կարմիր, կապույտ, ծիրանագույն», «Հայաստանը դու ես», «Կիլիկիա» և այլ երգերի, կինոյի («Տեր Ողորմեա»), թատրոնի («Խաթաբալադա» ևն) երաժշտության: Համագործակցել է երաժիշտներ Ա. Ջարուի, Շ. Ազնավուրի, Չ. Կորիայի, Ջ. Գասպարյանի, Հ. Հենքոքի և ուր. հետ: 2010-ից ապրում է Կանադայի Վանկուվեր ք-ում. ղեկավարում է սեփ. ստուդիան:

ՀՀ ՄՆ ոսկե (2007), ՀՀ «Մովսես Խորենացի» (2008) մեդալներ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հայկ Արմանի (ծ. 18.04.1972, Երևան), երգիչ (բաս): Տիգրան *Մարտիրոսյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊԻ (1993), Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ակադ-ը (1996): 1994–96-ին՝ Մոսկվայի «Նոր օպերա», 1996-ից՝ Մեծ թատրոնների մեներգիչ: Գլխ. դերերգերով հանդես է գալիս Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Սիմոն Բոկկանեգրա», «Մակբեթ», Ջ. Պուչչինիի «Նորմա», «Տուրանդոտ», Գ. Դոնիցետտիի «Մարի Ստյուարտ», Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա», «Եվգենի Օնեգին», Մ. Պ. Մուսոգորսկու «Բորիս Գոդունով», «Խովանշչինա», Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Զյունանուշիկը», Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» և այլ օպերաներում: Հյուրախաղերով շրջագայել է բազմաթիվ երկրներում: Իսպանիայի (2-րդ և Հատուկ մրց-ներ, 1995, Բարսելոն), Ե. Օբրազցովայի անվ. (1-ին մրց.), Վ. Գերգիևի (Հատուկ մրց., Ս. Պետերբուրգ, երկուսն էլ՝ 2000), Սոնյա թագուհու անվ. (3-րդ մրց., 2000, Օսլո) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Տիգրան Արմանի (ծ. 02.06.1970, Երևան), երգիչ (բաս): Հայկ *Մարտիրոսյանի* եղբայրը: Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ակադ-ը (1995): Սովորելու տարիներին՝ Մոսկվայի «Նոր օպերա», 1995-ից՝ Մեծ թատրոնների մեներգիչ. դերերգերից են՝ Ռամֆիս (Ջ. Վերդիի «Աիդա»), Ռենե թագավոր (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա»), Ռայմոնդո (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Պիմեն (Մ. Պ. Մուսոգորսկու «Բորիս Գոդունով»), Իշխան Գալիցկի (Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր») ևն: Հյուրախաղերով հանդես է եկել Միլանի «Լա Սկալա», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Հյուսթոնի «Մեծ օպերա», Լոնդոնի «Քովենթ Գարդեն» և այլ թատրոններում:

Ռուս. երաժշտության 1-ին մրց. (Մոսկվա, 1993), Պ. Ի. Չայկովսկու անվ. (10-րդ մրց. և Հատուկ դիպլոմ, 1994, Մոսկվա), Բ. Խրիստովի անվ. (2-րդ մրց., 1996, Սոֆիա), Մ. Անդերսոնի անվ. (2-րդ մրց., 1999, Շիզուոկա՝ Ճապոնիա), Պ. Դոմինգոյի «Օպերալիա» (եզրափակիչ մասի մասնակից, 2000, Լոս Անջելես) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ֆլորա Արտաշեսի (05.02.1957, Լենինական–20.11.2012, Լոս Անջելես, թաղված է Երևանում), երգչուհի: ՀՀ ժող. արտիստ (2011): Ավարտել է Լենինականի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցը, ԵՊԿ: Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Լավագույն կատարումներից են՝ «Դլե յաման», «Ծովաստղիկը», «Լանջեր Մարջան» և այլ երգեր: Համերգներով շրջագայել է 60-ից ավելի երկրներում: 1991-ից (ընդհատումներով) ապրել և ստեղծագործել է Լոս Անջելեսում:

1997–2007-ին՝ Երևանի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցի տնօրեն: 2002-ին ԱՄՆ-ում հիմնադրել է Կոմիտասի անվ. երաժշտ. դպրոցը, 2007-ին՝ «Artists for Peace» բարեգործ. հիմնադրամը (Մ. Սթոունի հետ), որտեղ ընդգրկվել են աշխարհահռչակ երգիչներ, հոլիվուդյան աստղեր: Հիմնադրամը գործել է «Այլևս երբեք» կարգախոսով՝ ընդդեմ ցեղասպանությունների: 2011-ին Լոս Անջելեսի «Գիբսոն» համերգասրահում տեղի է ունեցել Մ-ի առաջին համերգը՝ Ս. Ռաանդերի, Չ. Կաանի, Է. Բենների, Բ. Բրաունի և ուր. մասնակցությամբ:

Ըստ հոլանդ. «Մետրոս» ԳՀ կենտրոնի՝ Մ-ի անունն ընդգրկվել է յուրահատուկ ձայն ունեցող համաշխ. աստղերի ցանկում:

Թողարկել է ձայնասկավառակներ, կատարել ֆոնդ. ձայնագրություններ:

«Գարուն-73» երգի մրցույթի (1-ին մրց., 1973), միջազգ. փառատոնի (1978, Համբուրգ) դափնեկիր, Հատուկ պատվոգիր (2011, ԱՄՆ):

Հայկ Մարտիրոսյանը ելույթի պահին

Տիգրան Մարտիրոսյանը Ռամֆիսի դերում (Ջ. Վերդիի «Աիդա»)

Ֆլորա Մարտիրոսյանը ելույթի պահին

Աղամալ Մելիք-Աղամալյան

Բալա Մելիքյան

Հրաչյա Սպիրիդոնի Մելիքյան

Գրկ. Հայ երգի դիցուհին: Ֆլորա Մարտիրոսյան, Ե., 2018:

ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼՅԱՆ Աղամալ Սիմոնի (21.02.1830, Երևան–11.02.1906, Ալեքսանդրապոլ), թառահար: Նվագել է նաև քամանչա, սրինգ, դափ: Սովորել է Երևանի գավառ. դպրոցում, աշակերտել Խ. Աբովյանին: Վաղ տարիքից ստացել է երաժշտ. կրթություն, հմտացել մերձավորարվ., մասնավորապես՝ իրան. երաժշտության մեջ, իր մրցակիցներին գերազանցել է մուղամների ու դաստգահների իմացությամբ և դրանք վարպետորեն ունկնդրին հաղորդելու ունակությամբ: Որպես ժամանակի վիրտուոզ թառահար՝ արժանացել է Իրանի շահի պարգևին (թառի՝ պալատ. հավաքածուից): Նիկողայոս ***Տիգրանյանը*** Մ-Ա-ի կատարումներից գրառել և դաշնամուր. մշակումով հրատարակել է «Բայաթի-Քուրդ», «Բայաթի-Շիրազ», «Հեյդարի», «Շահնազ», «Չարգյահ», «Նովրուզ-Արաբի», «Նավա», «Սեգյահ», «Շյուշթար» և այլ մուղամներ ու դաստգահներ, որոնք Արևելքի ժող. պրոֆեսիոնալ երաժշտության՝ տվյալ ժանրի առաջին նոտագրումներից են:

ՄԵԼԻՔՅԱՆ (Մելիքով) Բալա Գրիգորի (31.11.1888, Շուշի–22.05.1935), թառահար: Սաննագիտ. կրթություն չի ստացել. նրա երաժշտ. ճաշակն ու ունակությունները ձևավորվել են Շուշիի ժող-երաժշտ. միջավայրում՝ հոր՝ ճանաչված թառահար Գրիգոր Մելիքովի (1859–1929) ազդեցությամբ: 19 տարեկանում Մ. արդեն ճանաչված թառահար էր և իր գործունեությամբ կապված էր նաև Բաքվի, Երևանի, Թիֆլիսի երաժշտ. կենտրոնների հետ: Եղել է մուղամների վիրտուոզ կատարող: Հիմնադրել է գործիք. անսամբլներ և համերգներով շրջագայել (որպես մենակատար և նվագակցող) նաև Մոսկվայում, Լենինգրադում և այլուր:

ՄԵԼԻՔՅԱՆ Հայկ Ավետիքի (ծ. 29.11.1980, Երևան), դաշնակահար, կոմպոզիտոր: ՀՀ վաստ. արտիստ (2013): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (Ա. Գուրգենովի դասարան), կոմպոզիցիայի (Վ. Ա. Աճեմյանի դասարան) բաժինները: Հայ և օտարազգի կոմպոզիտորների մի շարք ստեղծագործությունների առաջին կատարողն է (մեծ մասը գրել են Մ-ի համար): 2007-ից նրա կատարումները թողարկվել են սոլո ալբոմով, նաև հավաքածուներում: Հյուրախաղերով հանդես է եկել Եվրոպայի, Ասիայի, Հս. և Հվ. Ամերիկայի երկրներում:

Մ-ի նախաձեռնությամբ 2009-ին Երևանում իրագործվել է «XX դարի և ժամանակակից համաշխարհային երաժշտության համերգաշար» նախագիծը: Մասնակցել է մի շարք միջազգ. փառատոների («Festival de Valmagne». Ֆրանսիա, «Geneva Piano Festival», Շվեյցարիա, «Nuovi Spazi Musicali Festival», Իտալիա, ևն):

Դաշնակահարների միջազգ. մրցույթի Հատուկ (1999, Իտալիա), Ս. Ֆրանսուայի և Ա. Բուկորեշտլիևի անվ. (2008, 2012,

Հայկ Մելիքյանը եզույթի պահին

Օռլեան՝ Ֆրանսիա) մրց-ներ, «Premio Valentino Bucchi» միջազգ. մրցույթի 2-րդ տեղ (2000, Հռոմ) ևն:

ՄԵԼԻՔՅԱՆ Հրաչյա Սպիրիդոնի (02.11.1913, Թիֆլիս –11.08.1941, Մոգիլյով՝ Բելառուս), կոմպոզիտոր: Սպիրիդոն ***Մելիքյանի*** որդին: Սովորել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. տեխնիկումում (1933–35, դասատու՝ Մ. Ֆ. Գնեսին), ավարտել ՄՊԿ (1941): Դասավանդել է ԵՊԿ-ում:

Մ-ի ստեղծագործությունը սերտորեն կապած է ժող. երաժշտությանը: Գրել է «Սասունցի Դավիթ» սիմֆ. պոեմը, լար. կվարտետ, դաշնամուր. պրելյուդներ, պիեսներ, սոնատներ, երգեր: Զոհվել է ՀՄՊ-ում:

ՄԵԼԻՔՅԱՆ Հրաչյա Սուրենի (08.05.1947, Երևան–06.03.2006, Երևան), կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊԿ (1971, Է. Միրզոյանի դասարան): 1995–2001-ին՝ ՀԿՄ պատասխանատու քարտուղար:

Գրել է «Աբսուրդի վերջը կամ Օտար արյուն» օպերան, «Ամբոխները խելագարված» (ըստ Ե. Չարենցի), «Ձոն սիրուն» վոկալ-սիմֆ. պոեմները, կոնցերտներ՝ ջութակի և նվագախմբի (1987), թավջութակի և կամեր. նվագախմբի (1989, 1993), դաշնամուրի և կամեր. նվագախմբի (1985)

համար, փող. կվինտետներ (1984, 1988), փող. կվարտետ (1978), 4 լար. կվարտետներ, տրիոներ (կլառնետի, ջութակի և դաշնամուրի համար, Դ. Դ. Շոստակովիչի հիշատակին, 1984, ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար, Ա. Բաբաջանյանի հիշատակին, 1989), «Հեքիաթների աշխարհում» (24 պիես՝ դաշնամուրի համար), «12 նազանքներ»՝ ֆագոտի, 12 պիես՝ թավջութակի և դաշնամուրի, 3 կոնցերտ՝ թավջութակի և նվագախմբի համար, սոնատներ, անսամբլներ, կինո-երաժշտություն («Երկնագույն առյուծ», 1979, «Ձնծաղիկներ և էդելվեյսներ», 1981, «Մենք դեռ կհանդիպենք», 1984, երեքն էլ՝ գեղ., «Հսարամիտ գյուղացին», 1984, մուլտֆիլմ, ևն):

Կոմպոզիտորների համամիութ. մրցույթի (1969, Մոսկվա) դափնեկիր, ՀՀ Պետ. մրց. (2005):

ՄԵԼԻՔՅԱՆ Ռոմանոս Հովակիմի [19.09(01.10), 1883, Ղզլար՝ Դաղստան–30.03.1935, Թիֆլիս, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հաս. գործիչ: Հայկ. դաս. ռոմանսի սկզբնավորողը: Արուս ***Բաբայանի*** ամուսինը: Սկզբն. կրթությունն ստացել է Ղզլարում: Ավարտել է Նոր Նախիջևանի թեմ. դպրոցը (1902, երաժշտության առաջին ուսուցիչը՝ Գ. Չորեքչյան), սովորել Դոնի Ռոստովի երաժշտ. ուսումնարանում (1902–05): 1905-ին մեկնել է Մոսկվա. սովորել է Լազարյան ճեմարանում, ղեկավարել երգչախումբը: 1906-ին ընդունվել է Մոսկվայի ժող. կոնսերվատորիա (Բ. Յավորսկու և կոմպոզիտոր Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի դասարաններ): 1908–10-ին երաժշտություն է դասավանդել Թիֆլիսի Հովնանյան դպրոցում, 1908-ին (Ազատ ***Մանուկյանի*** հետ) հիմնադրել է «Երաժշտական լիգան», կազմակերպել է երաժշտ. երեկոներ, հրատարակել մանկ. երգերի ժող-ներ: 1910–14-ին սովորել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (Վ. Կալաֆատիի՝ պոլիֆոնիայի, Մ. Շտեյնբերգի՝ գործիքավորման դասարաններ): 1912-ին «Էսքիզներ» վերնագրով հրատարակել է իր մշակած ժող. երգերից մի քանիսը («Կոտ ու կես», «Լուսնյակն անուշ»): 1915-ին վերադարձել է Թիֆլիս, զբաղվել մանկավարժ. և հաս. գործունեությամբ: 1916-ին, հատուկ պատվիրակության կազմում, Արմ. Հայաստանի ազգաբնակչությանն օգնելու նպատակով մեկնել է Վանի նահանգ: 1921-ին կառավարության հրավերով տեղափոխվել է Երևան, նույն թվականին բացել է երաժշտ. ստուդիա (1923-ից՝ կոնսերվատորիա, տնօրեն՝ Մ., 1923–24):

1920-ական թթ-ին Մ. Հայաստանում հիմնադրել և ղեկավարել է ինքնագործ երգչախմբեր (նաև մանկ.):

Մ-ի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում երգն ու ռոմանսը: Հայ կոմպոզիտորներից առաջինն է ազգ. վոկալ երաժշտության մեջ օգտագործել հայ ժամանակակից դաս. պոեզիայի լավագույն նմուշներ (Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան և ուր.), մշակել է ազգ. ռոմանս-դեկլամացիոն մելոդիկայի բնորոշ հատկանիշները:

Ժող. երգից սերող Մ-ի մեղեդիական ոճն աչքի է ընկնում անհատականությամբ, երաժշտ. և ժամանակակից ազգ. բանաստեղծ. խոսքի ինտոնացիաների մերձեցմամբ:

Հայկ. ռոմանսի ձևավորումը Մ-ի ստեղծագործության մեջ պայմանավորված է նաև դաշնամուր. նվագակցության դերի նորովի մեկնաբանմամբ, դրա հոգեբան. և նկարագր. առավել հագեցվածությամբ:

Հանրահայտ են նրա վաղ շրջանի «Վարդը» և «Աշունը» երգերը, «Ուռենի» զուգերգը, «Անջատում» ռոմանսը: Մ-ի «Աշնան տողեր» (1908–14) երգաշարի քնար. ռոմանսների հիմքը քաղաք. երաժշտ. բանահյուսությունն է՝ հուզականորեն վառ, հոգեբանորեն հագեցած, ներքին բախումով և դրամատիզմով, իսկ «Զմրուխտի» (1916–18, հրտ.՝ 1928) և «Զառ-վառ» (1922, հրտ.՝ 1949) վոկալ շարքերի ինտոնացիոն հիմքը՝ հայ ժող-գեղջկ. երգն ու գուսան. ստեղծագործությունը: «Զմրուխտի» երգաշարին բնորոշ է սրտառուչ քնարականության և փիլ. խոր ընդհանրացումների զուգորդումը: «Զառ-վառ»-ում գերակշռում են ծանր նկարագր. մոտիվները (հայրենի բնության, ժող. կենցաղի ուրվանկարներ): Հարմոնիայում և ինչյուն. երանգավորման մեջ Մ-ի նորարարությունները նպաստել են մինչ այդ ազգ. երաժշտությանն անծանոթ ինչյուն. վառ ու գունեղ երանգապնակի ստեղծմանը:

Նա մեծապես նպաստել է նաև հայկ. զանգված. երգի ստեղծմանը: 1929 և 1930-



Հրաչյա Սուրենի Մելիքյան



Ռոմանոս Մելիքյան

Ռ. Մելիքյանի «Զմրուխտի» ժող-ի (1916–18) կազմը

Սպիրիդոն Մելիքյան

Ս. Մելիքյանի «Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը» գրքի (1932) տիտղոսաթերթը

Կոստանդին Մելիք-Վրթանեսյան

ին Մ–ի խմբագրությամբ լույս են տեսել «Պիոներական» և «Կարմիր բանակային» երգերի ժող–ները: Այդ ոլորտում նրա նշանակալի գործը «Նոր օրերի երգեր» շարքն է, որտեղ ընդգրկել է մարդու հարուստ ներաշխարհը բացահայտող քնար. ու աշխատանք. երգեր:

Երևանի երաժշտ. ուսումնարանը կոչվել է Մ–ի անվամբ:

Երկ. *Ռոմանոս Մելիքյան: Հոդվածներ, նամականներ, հուշեր, ժող., կազմ.՝ Ք. Գրիգորյան, Ե., 1977: Ռոմանաններ, կազմ. և առաջաբանը՝ Գ. Գյոդակյանի, Ե., 2009:*

Գրկ. *Գյոդակյան Գ., Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1960: Թոոջյան Խ., Ռոմանոս Մելիքյան, Ե., 1960:*

ՄԵԼԻՔՅԱՆ Սպիրիդոն Ավետիսի [18(30).11.1880, Վաղարշապատ–04.05.1933, Երևան], երաժշտագետ, կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1933): Հրաչյա ***Մելիքյանի*** հայրը: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1902), որտեղ դասավանդել է 1902–05–ին, եղել ***Կոմիտասի*** օգնական–խմբավարը: 1905–08–ին Բեռլինում Ռ. Շմիդտի ղեկավարությամբ ուսումնասիրել է երաժշտության տեսություն և պատմություն, մշակել ձայնը, սովորել խմբավարություն, ավարտել է նաև «Ֆրիդրիխ Վիլհելմ» համալսարանի փիլիսոփայության բաժինը (1908): 1908–09–ին դասավանդել է Շուշիի թեմ. դպրոցում (երգեցողություն, խմբավարություն), 1909–21–ին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում նկատելիորեն բարձրացրել է երաժշտ. ուսուցման և խմբերգեցողության մակարդակը: Մասնակցել է Թիֆլիսի հայոց երաժշտ. ընկերության աշխ–ներին (1913–ից՝ վարչության փոխնախագահ, 1917–21–ին՝ նախագահ), կարդացել դասախոսություններ, հրատարակել երաժշտ. դասագրքեր:

1917–ին Թիֆլիսում հիմնադրել և ղեկավարել է Հայոց երգչախմբ. ընկերությունը: 1921–ից աշխատել է Խորհրդ. Հայաստանի դպրոցներում, 1924–33–ին՝ ԵՊԿ–ում (ռեկտոր՝ 1930–31–ին, ուս. մասի վարիչ՝1931–32–ին): 1927–ին կոնսերվատորիայի երգչախմբով հաներգներով հանդես է եկել ԽՍՀՄ ժողովուրդների արվ–ի ցուցահանդեսում (Մոսկվա): 1926–ից՝ ՀԽՍՀ գիտության և արվ–ի ինստ–ի իսկ. անդամ, զբաղվել է նաև ժող. երգեր հավաքելով:

Գրել է «Ախթամար» (ըստ Հ. Թումանյանի) բալլադը՝ երգչախմբի և սիմֆ. նվագախմբի համար, երգեր՝ Ա. Իսահակյանի խոսքերով (անտիպ), մշակել է ժող. երգեր. («Թխկոնդա», «Պիլիբի», «Ծամթել», «Քելեր, ցոլեր» ևն): Հեղինակ է հայ երաժշտության վերաբերյալ գիտ. աշխ–ների («Յունական ազդեցութիւնը հայ երաժշտութեան տեսականի վերայ», 1914, «Հայ ժողովրդական յերգի գամմաները», 1930, «Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը», 1932, «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության», 1935): Ստեղծագործության մեջ կարևոր են նրա հավաքած ժող. երգերի՝ «Շիրակի երգեր» (հրտ.՝ 1917, հավաքել է 1914–ին՝ Ա. Տեր–Ղևոնդյանի մասնակցությամբ) և «Հայ ժողովրդական երգեր ու պարեր» (հ. 1, 2, Ե., 1949, 1952) ժող–ները: 1904–ին Կոմիտասի բնագրից (հեղինակի հանձնարարությամբ) արտագրել է և Հայկ. ձայնագրությունից եվրոպականի փոխադրել ժող. երգեր, կազմել (իր առաջաբանով և դիտողություններով) ու հրատարակել «Ազգագրական ժողովածուն» (1931): Մ–ի առաջաբանով լույս է տեսել նաև նրա աշակերտ Գ. Գարդաշյանի գրառած «Վանա ժողովրդական երգեր» ժող–ը (պր. 1, 2, 1927, 1928):

Մ–ի երաժշտ. ազգագր., կատարող. և մանկավարժ. գործունեությունն էականորեն ազդել է հայ երաժշտության զարգացման վրա:

Երկ. *Մեներգեր և խմբերգեր, Ե., 1955: Հոդվածներ, հուշեր, նամականներ, փաստաթղթեր (կազմ.՝ Ս. Մելիքյան, Ա. Թադևոսյան), Ե., 1964:*

Գրկ. *Թադևոսյան Ա., Սպիրիդոն Մելիքյանը և հայ ժողովրդական երգը, Ե., 1964: Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970:*

ՄԵԼԻՔ–ՎՐԹԱՆԵՍՅԱՆ Կոստանդին Եփրեմի [11.01.1899, գ. Ալիղամարլու (Սուրմալուի գավառ)–30.03.1970, Երևան], երաժշտագետ, հաս. գործիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1934): 1936–45 և 1957–70–ին դասավանդել է ԵՊԿ–ում (1937–40 և 1958–67–ին՝ նաև փոխտնօրեն): 1936–38–ին, միաժամանակ՝ կոնսերվատորիային կից շնորհալի երեխաների խմբի ղեկ., 1940–41–ին՝ Հայֆիլհարմոնիայի գեղ. ղեկ., 1942–44–ին՝ տնօրեն:

Հեղինակ է «Արմեն Տիգրանյան» (ռուս., 1939), «Պյոտր Իլյիչ Չայկովսկի» (1940) աշխ–ների, համահեղինակ՝ «Երաժշտական բացատրական բառարանի» (1989):

Կինը՝ Մարիամ Արշակի Տոնյան (ծ. 29.08.1919, Թիֆլիս), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀՀ վաստ. ուսուցիչ (1960): Ավարտել է Երևանի երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (1936, դասատու՝ Ա. Մնացականյան), ԵՊԿ (1956) դաշնամուրի (Ա. Մնացականյանի դասարան) և տեսության (Ռ. Աթայանի դասարան) բաժինները: 1937-ից՝ Երևանի Երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի, 1938-ից՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. դպրոցի տես. առարկաների դասատու, տեսության բաժնի վարիչ (1958–2008-ին): Սաներից են Մ. Աբրահամյանը, Զ. Պետրոսյանը, Ժ. Տեր-Մերգերյանը, Ռ. Ահարոնյանը, Է. Թադևոսյանը, Վ. Պապյանը և ուր: Համահեղինակ է «Երաժշտության բացատրական բառարանի» (1989):

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱԵՎ (Մելիք-Փաշայան) Ալեքսանդր Շամիլի [10(23).10.1905, Թիֆլիս–18.06.1964, Մոսկվա], դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1951): Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է տանը՝ աշակերտելով պրոֆ. Ֆ. Հարտմանին (տեսություն) և Շվեյգերին (դաշնամուր): 1928–30-ին սովորել է Լենինգրադի կոնսերվատորիայի դիրիժորության (Ն. Մալկոյի և Ա. Գաուկի դասարաններ) և տեսության (Ք. Քուշնարյանի և Վ. Վ. Շչերբաչովի դասարաններ) բաժիններում: 1921–31-ին (ընդհատումներով)՝ Թիֆլիսի ՕԲԹ կոնցերտմայստեր, ապա՝ դիրիժոր. ղեկավարել է Վ. Ի. Դոլիձեի «Լեյլա» օպերան (1926): 1924-ին Լենինականի օպերա-օպերետ. խմբում վարել է հայ. ներկայացումներ (Շ. Գունոյի «Ֆաուստ», Ժ. Բիզեի «Կարմեն», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»): 1929 և 1932-ին սիմֆ. համերգներով հանդես է եկել Երևանում: 1931–53-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի դիրիժոր, 1953–62-ին՝ գլխ. դիրիժոր: Ղեկավարել է ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների 50-ից ավելի օպեր. բեմադրություններ: Առավել հաջողված են մոնումենտալ դրամատիզմով և սիմֆ. լայն շնչով հագեցած ներկայացումները (Զ. Վերդիի «Աիդա», «Օթելլո», «Ֆալստաֆ», Ժ. Բիզեի «Կարմեն», Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո», Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն»): Ստեղծագործ. նվաճումներից են նաև Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր», Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», «Չերեվիչկի» (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1942), Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Զ. Ռոսսինիի «Վիլհելմ Թել» (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1943), Զ. Փալիաշվիլու «Աբեսալոմ և Էթերի», Զ. Պուչչինիի «Չիո-Չիո սան» օպերաների բեմադրությունները: Մ-Փ-ի արվ-ին բնորոշ են հարազատությունը հեղինակի մտահղացմանը, ոճի՝ նուրբ զգացողությունը: Որպես դիրիժոր-դրամատուրգ՝ խոր զգացողությամբ է վերարտադրել երկի ներդաշնակ ամբողջությունն ու յուրաքանչյուր մանրամասնի գեղ. արտահայտչականությունը: Նա դիրիժոր. կատարյալ տեխնիկան զուգորդել է կատարվող երկի զգացմունք. վառ մեկնաբանման հետ: 1939-ին՝ Մոսկվայում հայկ. արվ-ի առաջին տասնօրյակի երաժշտ. ղեկ., 1956-ին՝ երկրորդի խորհրդատու: 1958-ին Մեծ թատրոնի խմբի հետ հյուրախաղերով հանդես է եկել Երևանում. երկացանկում՝ Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր» օպերաները, Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան: 1950–60-ական թթ-ին ներկայացումներ է ղեկավարել նաև Պրահայի, Օստրավայի, Լոնդոնի, Բուդապեշտի և այլ քաղաքների օպեր. թատրոններում: Գրել է «Տասներկուերորդ գիշեր» (ըստ Վ. Շեքսպիրի) օպերան, սիմֆոնիա, ռոմանսներ՝ Ա. Ս. Պուշկինի և Ի. Էրենբուրգի խոսքերով:

Ալեքսանդր Մելիք-Փաշաև

Ա. Մելիք-Փաշաևը ելույթի պահին

Արտաշատի երաժշտ. դպրոցը կոչվել է Մ-Փ-ի անվամբ:

Ֆրանսիայի Մեծ (1953՝ Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր», 1962՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և Խաղաղություն»), Ամերիկայի արվ-ների ակադ-ի (1964՝ Մ. Պ. Մուսոգորսկու «Բորիս Գոդունով» օպերաների ձայնագրությունների համար) մրց-ներ:

Գրկ. *Мелик-Пашаев А. Ш, Воспоминания. Статьи. Материалы, М., 1976 (сост. Р. В. Глезер и др.); Мелик-Пашаев А. А., Звучание жизни: Творческая биография дирижора А. Ш. Мелик-Пашаева, М., 1989.*

ՄԵԼՈԴԵԿԼԱՄԱՑԻԱ (< հուն. μέλος – երգ և լատ.՝ declamatio – արտասանություն), բեմարվ-ի տեսակ. երաժշտությամբ ընթացող գեղ. ընթերցանությունը (ասմունք), նաև երգեր, որոնք ստեղծվում են գրական երկի (բանաստեղծ. ու դրամատիկ.) և երաժշտության համադրությամբ: Զևավորվել է Հին Հռոմում I–II դդ-ում՝ որպես պալատում գրական երկի ընթերցման

եղանակ՝ տավիղի նվագակցությամբ: Գործածվել է նաև միջնադարի դպրոց. դրամայում:

Մելոդրամայի ազդեցությամբ XVIII դ-ում Եվրոպայում երևան են եկել բեմ. ստեղծագործություններ, որոնք ամբողջապես հիմնվել են Մ-ի վրա (հետագայում հաճախ օգտագործել են օպերայում՝ Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո», Կ. Վեբերի «Ազատ նետաձիգը» ևն, և դրամատիկ. պիեսներում): Ստեղծվել է նաև Մ-ի ինքնուրույն ժանր, որն ընդգրկվել է համերգ. ծրագրերում (գեղ. ընթերցանությունն ուղեկցվել է դաշնամուրի, հազվադեպ՝ նվագախմբի նվագակցությամբ):

Մ-ի վաղ շրջանի նմուշներ են ստեղծել Ֆ. Շուբերտը, Ռ. Շումանը, Ֆ. Լիստը, Ռ. Շտրաուսը: Ռուսաստանում Մ., որպես համերգ-էստրադ. ժանր, լայնորեն տարածվել է 1870-ական թթ-ից (Գ. Ե. Լիշին, Է. Բ. Վիլբուշևիչ, ավելի ուշ՝ Ա. Մ. Արենսկի, Ա. Սպենդիարյան և ուր.):

Մելոդիկա

ՄԵԼՈԴԻԿԱ (հուն.՝ μελωδίχσς – մեղեդիական, երգային), 1. երաժշտության բաժին՝ ուսմունք մեղեդու մասին: 2. Մեղեդիական առանձնահատկությունների օրինաչափությունը և որոշակի հատկանիշները, որոնք արտահայտված են առանձին երկերում, ստեղծագործության որոշակի ոլորտում կամ կոմպոզիտորի ողջ ստեղծագործության մեջ, նաև որևէ ստեղծագործ. դպրոցի երկերում, ժող. երաժշտ. արվ-ի որևէ բնագավառում: 3. Հարմոնների ընտանիքի լեզվակավոր երաժշտ. գործիք: Օդը դեպի լեզվակներ մղվում է մունդշտուկային փողի միջոցով: Ունի դաշնամուր. ստեղնաշար (26–36 ստեղն):

Դավիթ Մկրտչյան

ՄԵԼՈԴՐԱՄԱ (< հուն. μέλος – եղանակ, երգ և δρᾶμα – գործողություն, դրամա), երաժշտաթատեր. ժանր. ձևավորվել է Իտալիայում և Ֆրանսիայում (XVIII դ-ի վերջ – XIX դ-ի սկիզբ), տարածվել Եվրոպայում ու Ռուսաստանում: Մ-ում գործող անձանց մենախոսություններն ու երկխոսություններն ուղեկցվել են երաժշտությամբ, որն ընդմիջվել է տեքստով, երբեմն երկուսն էլ կատարվել են միաժամանակ:

Մ-ի ծագումը պայմանավորված էր Լուսավորության դարաշրջանի գեղագիտ. սկզբունքներով. ձգտել են հասնել երաժշտության բնական արտահայտչականության՝ սերտորեն կապված դրամատիկ. մտքի զարգացման հետ: Մ-ի վաղ նմուշներից են՝ Ժ. Ժ. Ռուսոյի «Պիգմալիոն» (բեմ.՝ 1770, երաժշտ.՝ Օ. Կունաիեի, Օվիդիոսի «Մետամորֆոզ»-ի թեմաներից), Յ. Քենդայի «Արիադնեն Նաքսոսում» (1774), «Մեդեա» (1775) ևն: Ռուսաստանում այդ ժանրով գրել է Յ. Բ. Կնյաժինը («Օրփեոս», երաժշտ.՝ Ֆ. Տորելլիի՝ 1781, Է. Ի. Ֆոմինի՝ 1792): Ստեղծագործության մեջ ներմուծել են երգչախումբ, բալետ. տեսարան: Աստիճանաբար Մ. կորցրել է ինքնուրույն նշանակությունը, և նրա սկզբունքները, որպես արտահայտչամիջոցներ, անցել են օպերային, նաև թատեր. երաժշտությանը (Ռ. Շումանի «Մանֆրեդ», Ժ. Բիզեի «Առլեզանուհին», Է. Գրիգի «Պեր Գյունտ» ևն):

Մ-ի ժանրի պիեսներ խաղացել են նաև XIX դ-ի հայ թատրոնում (Ժ. Մ. Սոնվելի «Վանքի զոհերը», Լամարտերիերի «Ռոբերտ ավազակապետը»), որտեղ հանդես են եկել դերասաններ Մ. Մնակյանը, Թ. Ֆասուլաճյանը, Պ. Ադամյանը, Սիրանույշը և ուր.:

ՄԵԼՈՍ (հուն.՝ μέλος), Հին Հունաստանում (Հոմերոսի ժամանակներից) նշանակել է մեղեդի, եղանակ, նաև քնար. բանաստեղծություն (ի տարբերություն վիպականի և եղերերգականի) երգելով կատարելու համար: Երաժշտագիտության մեջ Մ. երաժշտության ինտոնացիոն էության (ի տարբերություն ռիթմականի), նրա մեղեդիական նախասկզբի ընդհանրացված հասկացությունն է:

Մ-ին առնչվել են հարմոնիկա (harmonics) և մելոպե (melopocia) ուսմունքները: Եզրույթը Ռ. Վագների ժամանակներից երևան է եկել երաժշտագիտ. գրկ-յան մեջ («Նոր Բեթհովենյան մելոսը» բաժինը՝ «Դիրիժորության մասին» աշխ-յան մեջ, ևն): Մի շարք հասկացություններ է ներմուծել գերմանացի երաժշտագետ Վ. Դանկերտը: Հատկապես տարածվել է 1910–20-ական թթ-ին [Բ. Վ. Ասաֆևը 1917–18-ին հրատարակել է երաժշտագիտ. աշխ-ների 2 ժող.՝ «Melos» վերնագրով (իր և Պ. Պ. Սուվչինսկու խմբագրությամբ)]:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Դավիթ Հրանտի (ծ. 27.10.1991, Երևան), սաքսոֆոնահար: Արվեստագիտ. թեկնածու (2017): Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ.

երաժշտ. դպրոցը (2008), ԵՊԿ (2014, Ա. Մանուկյանի դասարան) և ասպիրանտուրան (2017, ղեկ.՝ Ա. Ասատրյան): Ակադեմ. երաժշտությանը զուգահեռ՝ պատանի տարիքից զբաղվել է ջազ. երաժշտությամբ և իմպրովիզացիայով: 2010–11-ին՝ Հայաստանի ռադիոյի էստրադ-սիմֆ., 2012-ից՝ Հայաստանի պետ. ջազ. նվագախմբերի սաքսոֆոնահար:

Միջազգ. և հանրապետ. մրցույթների դափնեկիր և դիպլոմակիր: Երիտասարդ ջազ կատարողների միջազգ. VIII մրցույթի 1-ին մրց. (2012, Դոնի Ռոստով):

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Գոհարինե Կարամանի (1905, Թիֆլիս–1971, Երևան), երգչուհի, ռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիան (1922): 1922–36-ին՝ Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. օպեր.

Տևսարան Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի բեմադրությունից (1950, ռեժ.՝ Գ. Մելքումյան)

թատրոնի (սովորել է նաև ռեժ. արվ.), 1936-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի (Տոսկա՝ Զ. Պուչչինիի «Տոսկա», Դաշա՝ Ի. Ի. Զերժինսկու «Խաղաղ Դոն», Նատաշա՝ Ա. Ս. Դարգոմիժսկու «Ձրահարսը», Արևիկ՝ Հ. Ստեփանյանի «Լուսաբացին», ևն): 1941–71-ին՝ ռեժ.: Բեմադրել է Կ. Զաքարյանի «Մարջան» (1941), Զ. Փալիաշվիլու «Դաիսի» (1943), Զ. Պուչչինիի «Բոհեմ» (1946), «Տոսկա» (1948), «Չիո-Չիո սան» (1950), Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դևը» (1946), Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», Կ. Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա» (երկուսն էլ՝ 1950), Է. Նապրավնիկի «Դուբրովսկի» (1951), Բ. Սմետանայի «Վաճառված հարսնացուն» (1953), Գ. Դոնիցետտիի «Դոն Պասկուալե» (1954), Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» (1955), Զ. Վերդիի «Տրուբադուր» (1957), «Տրավիատա» (1958), Յ. Գևորգյանի «Խարույկ» (1959) օպերաները: Դասավանդել է ԵՊԿ-ում, վարել օպեր. դասարանը:

ԽՍՀՄ Աշխ. արիության համար մեդալ (1939):

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԴԱՇՆԱՄՈՒՐ, դաշնամուր, որի մեջ տեղադրված կամ մոնտաժված է սարք՝ երաժշտության վերարտադրման համար: Երևան են եկել 1860-ական թթ-ին (ոտնակային պատկերով): Ձայնագրման (սորաժապավենի վրա) և վերարտադրման սարքը հայտնագործել է Ժ. Կարպենտիեն 1880-ական թթ-ին. նախ եղել է որպես կցորդ, ապա տեղադրվել է դաշնամուրի մեջ: Մ. դ-ներ թողարկվել են տարբեր վերափոխումներով և անվանումներով՝ պիանոլա, ֆոնոլա, վելտե-մինիոն ևն: Ավտոպիանո տեսակում համադրված են կատարման մեխ. և սովոր. հնարքները: XIX և XX դդ-ի սահմանագծին հայտնի էլեկտրամեխ. դաշնամուրներն ունեցել են կատարող., նույնիսկ ստեղծագործ. մեծ նշանակություն:

Գոհարինե Մելքումյան

Գործածությունից դուրս է եկել 1930–1940-ական թթ-ից:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, տեխ. հարմարանքներով գործիքներ՝ երաժշտ. երկն առանց կատարող երաժշտի վերարտադրելու համար: Հնչյունների աղբյուր են փողերը (մեխ. երգեհոն, շարմանկա ևն), լարերը (կսմիթային՝ մեխ. սպինետ, լարային՝ մեխ. ջութակ, հարվածային՝ մեխ. դաշնամուր ևն): Մ. ե. գ-ում հազվադեպ են մեմբրանոֆոնները: Երաժշտ. երկի ամրագրումն ու վերարտադրումը կատարվում են գլանի, մետաղե սկավառակի և թղթե սորաժապավենի օգնությամբ, որոնք շարժման մեջ են դրվում հիդրավլիկ, պնևմատիկ, մեխ., էլեկտր. և այլ միջոցներով: Մ. ե. գ-ի նախատիպերը այն գործիքներն են, որոնք հնչել են քամու (զանգակներ ևն) և ջրի շարժման հետևանքով առաջացած էներգիայի (անտիկ հիդրավլոս) օգտագործմամբ: Մեխ. սպինետը և թմբուկները վերափոխել է Լեոնարդո դա Վինչին XV դ-ի վերջին:

Մեխանիկական դաշնամուր

Մ. ե. գ-ի հիմնական տեսակները կատարելագործվել են XVIII դ-ում և XX դ-ի սկզբին: Այդ գործիքների համար երկեր են գրել Յ. Հայդնը, Վ. Ա. Մոցարտը, Լ. վան Բեթհովենը, Ի. Ֆ. Ստրավինսկին և ուր.:

Մ. ե. գ. դուրս են եկել գործածությունից 1930-ական թթ-ին՝ պայմանավորված ձայնագրման զարգացմամբ:

Մեխանիկական երաժշտական գործիքներ

Սիմֆոնիոն

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒՄ, ձայն. հաճախության էլեկտր. ազդանշանների գրառման համակարգ, որը հիմնված է մեծ ազդեցության ազդանշանակրի (սկավառակի) ձևի փոփոխության վրա: Սովորաբար Մ. ձ. կատարվում է սկավառակի եզրից դեպի կենտրոն, ուստի ձայնաշառավիղը պարուրաձև է: Մոնոֆոն ձայնագրման տեսակներն են՝ 1. լայնական, երբ գրառող տարրի (կտրիչի) մեխ. տատանումները տեղի են ունենում սկավառակի ուղղությամբ, 2. խորքային, երբ կտրիչը տատանվում է սկավառակի մակերևույթին ուղղահայաց: 3. Միկրոձայնագրում՝ փոքր ամպլիտուդի տատանումներով լայնական ձայնագրում: Ստերեոֆոնիկ ձայնագրման դեպքում կտրիչը տատանվում է սկավառակի մակերևույթի նկատմամբ 45° անկյուն ունեցող 2 փոխուղղահայաց ուղղություններով (լայնական-խորքային ձայնագրում):

Երաժշտական գարդատուփ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ (< լատ. intepretatio – պարզաբանում, բացատրում), ինչյունների հնչեցման (կատարման) ընթացքը՝ ըստ նոտային տեքստի: Պայմանավորված է երաժշտ. տվյալ դպրոցի կամ ուղղության գեղագիտ. սկզբունքներով, որի հետևորդն է նաև երաժիշտ-կատարողը՝ անհատ. կարողություններով ու գաղափարագեղ. մտահղացմամբ: Մ-ման ընթացքում կարևոր են կատարողի ստեղծագործ. սկզբունքները՝ հեղինակի գեղ. մտահղացումը մարմնավորելու համար: Մինչև XIX դ. Մ-ման արվ-ը սերտորեն կապված էր կոմպոզիտոր. ստեղծագործության հետ, քանի որ, որպես կանոն, կոմպոզիտորներն են կատարել սեփ. գործերը: Մ-ման զարգացմանը մեծապես նպաստել է ակտիվ համերգ. գործունեությունը:



Կոմպոնիում

Որպես ինքնուրույն արվ.՝ առավել կարևորվել է 1820–30-ական թթ-ին: Կատարող. արվ-ում հաստատվել է երաժիշտ-մեկնաբանողի նոր տեսակ, որը կատարել է այլ կոմպոզիտորների գործեր (Ֆ. Լիստ, Ա. Գ. Ռուբինշտեյն, Ս. Վ. Ռախմանինով և ուր.): Զուգահեռ շարունակվել է նաև հեղինակ. կատարումը: XIX դ-ի կեսերից ձևավորել է Մ-ման տեսությունը, որն ուսումնասիրում է կատարող. դպրոցների բազմազանությունը, Մ-ման գեղագիտ. սկզբունքները, կատարողականության տեխ. խնդիրները: XX դ-ի սկզբին այն դարձել է ***երաժշտագիտության*** բաժիններից:

ՄԵՀՐԱԲՅԱՆ Հարություն (19.05.1886, Թիֆլիս–1961, Նյու Յորք), կոմպոզիտոր, խմբավար: Երաժշտության դասեր է առել Մակար ***Եկմալյանից***, ապա սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Դոնի Ռոստովի կոնսերվատորիայում և ՄՊԿ-ում: 1919-ին մեկնել է Կ. Պոլիս:

1923-ից ապրել է Նյու Յորքում: Ստեղծել է մեծ երգչախումբ (Գրիգոր ***Սյունու*** հետ), հանդես եկել Նյու Յորքում, Դետրոյտում, Ֆիլադելֆիայում և այլ քաղաքներում:

Գրել է երգեր, որոնցից ճանաչված են՝ «Խնձորի ծառի տակին», «Դու նստել ես աղբրա ափին», «Արևի պես սիրուն Զարոս», «Սարերի աղջիկ», «Գնչուհու երգը» ևն: Երաժշտագիտ. հոդվածներով հանդես է եկել ամերիկահայ մամուլում:

ՄԵՂԵԴԻ (հուն.՝ μελῳδία – երգ, երգեցողություն), բարձր կազմակերպված մեկձայնանի ինտոնացիոն-ռիթմական կառուցվածք, որն օժտված է կերպարային-արտահայտչական բովանդակությամբ և երաժշտության կարևորագույն սկզբնատարրն է: Ընդգրկում է երաժշտ. լեզվի գրեթե բոլոր արտահայտչամիջոցները՝ ***ձայնակարգի*** հիման վրա կազմակերպվող ինչյուն. բարձրությունների և մետրի հիման վրա ընթացող հարաբերությունների հետ՝ նաև որոշակի ուժգնություն, տեմբր, կատարման կերպ, ներդաշնակ կառուցվածք ևն: Մ-ու շարժումը լինում է վերընթաց, վարընթաց, միևնույն բարձրության պահպանումով, ավելի հաճախ՝ ալիքաձև: Բոլոր շարժումների դեպքում առավել բնորոշ է աստիճան. ընթացքը, որը սովորաբար ընդմիջվում է այս կամ այն լայնքի թռիչքներով: Մ-ային գծի շարժման վերելքների և անկումների մեջ արտացոլվում է հուզականության սաստկացումը և մարումը, լարումը և պարպումը, որի շնորհիվ էլ Մ. դրսևորվում է որպես երաժշտության հուզական-կերպար. բովանդակության կրող, մասնակցում նրա ձևակառուցման ընթացքին: Բազմաձայն երաժշտության մեջ պարզորոշ առանձնանում է ընդհանուր շարժումից և ընկալվում որպես որոշակի երաժշտ. միտք, որի

առավել վառ (քան ընդհանուր շարժումը) արտահայտչականությունը պայմանավորված է անհատականացված երաժշտ. նյութի շարժման յուրահատուկ տրամաբանությամբ: Ոչ մեղեդային շարժման հետ համեմատած, Մ. (անկախ երաժշտության ոճից և ժանրից), առավել հագեցված լինելով կոմպոզիցիոն հնարքներով, տվյալ ընդհանուր շարժման խտացված, ընդհանրացված ձևն է: Սակայն մեղեդիական և ոչ մեղեդիական շարժումների միջև գոյություն չունի խիստ անջրպետ: Վոկալ երաժշտության մեջ Մ. բնորոշվում է երգայնությամբ, ցայտուն ներդաշնակ կերտվածքով ու ճկունությամբ և, այդ առումով, մոտ է մարդկային խոսքի ելևէջ. բնույթին: Գործիքային երաժշտության մեջ Մ. զերծ է երգչ. ձայնի հնարավորությունների որոշ՝ բնական սահմանափակումներից, նրանում, վոկալ երաժշտությանը հատուկ հնարքների հետ, օգտագործվում են նաև որևէ երաժշտ. գործիքի տեխ. հնարավորությունները (այստեղից՝ ստորաբաժանումը վոկալ և գործիք. Մ–ների): Մ–ու բնույթը, ձևը, տեսակը, նաև կառուցվածք. առանձնահատկություններն ու ծավալը մի շարք հատկանիշներով պայմանավորված են նաև ստեղծագործության ժանր. պատկանելությամբ, երաժշտության ազգ. երանգով ու ոճով: Միաժամանակ, գոյություն չունի այնպիսի «օրինակելի» Մ., որը հավասարապես բավարարի տարբեր դարաշրջանների երաժշտ. ուղղություններին բնորոշ մտածելակերպի պահաջներին: Ուստի Մ., որպես բովանդակային կատեգորիա, հարաբերական է: Միաձայն երաժշտության մեջ Մ. ավարտված ամբողջ. երաժշտ. կերպար է: Այս առումով բնորոշ են տարբեր ժողովուրդների ժող. երգերի մեղեդիները: Հայ ժող. և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության ճյուղերը (գյուղ., քաղաք., գուսան., աշուղ., հոգևոր ևն) հարուստ են հնագույն ժամանակներից պահպանված ու հղկված վոկալ և գործիք. Մ–ների բազմազան նմուշներով (տես *Մինոդիա*), որտեղ մեղեդիակերտման վարպետությունը հասցված է բարձրագույն մակարդակի:

Գրկ. *Тох Э., Учение о мелодии, пер. с нем., М., 1928; Беляева-Экземплярская С., Яворский Б., Структура мелодии, М., 1929; Мазель Л., О мелодии, М., 1952.*

Ըստ Նովալիա Դերոյանի

ՄԵՂՄՈՑ, սուրդին (ֆրանս.՝ sourdine, իտալ.՝ sordina, < լատ. surdus – խուլ, խուլ հնչող), երաժշտ. գործիքների հնչյունի ուժգնությունը մեղմացնելու և տեմբրը փոփոխելու հարմարանք: Լար. աղեղնավոր գործիքների համար փայտե, մետաղե կամ պլաստմասսայե սեղմիչ, որն ամրացվում է «իշուկի» (հենարանի) վրա, պղնձե փող. գործիքների համար՝ մետաղե, փայտե կամ ստվարաթղթե տանձաձև անոթ, որը տեղադրվում է փողաբերանում:

Մեղմոց՝ փողային երաժշտ. գործիքների համար

ՄԵՆԱԿԱՏԱՐ, 1 ձայնի կամ 1 երաժշտ. գործիքի համար գրված ստեղծագործություն, նաև օպերայում՝ դերերգեր, բալետում՝ դերապարեր կատարող արտիստ:

ՄԵՆԱՀԱՄԵՐԳ, համերգ, որի ընթացքում ելույթ է ունենում 1 կատարող (դաշնակահար, ջութակահար, երգիչ, պարող ևն), ըստ որում՝ նկատի չեն առնվում նվագակցող երաժիշտները (կոնցերտմայստեր, անսամբլ կամ նվագախումբ):

ՄԵՆԱՆՎԱԳ, 1. մեկ կատարողի նվագ (նվագակցությամբ կամ առանց դրա): 2. Երաժշտ. ստեղծագործություն 1 կատարողի համար (նվագակցությամբ կամ առանց դրա):

Մեղմոց՝ աղեղնավոր երաժշտ. գործիքների համար

ՄԵՆԵՆԿԻՉՅԱՆ Մանվել, Մանուել (ծ. 1941, Բեյրութ), երգիչ: Փարիզում երգի դասեր է առել Դ. Սքոթից և Շառլ *Ազնավուրից*: 1950-ական թթ-ի վերջերից հանդես է եկել Լիբանանում, ապա՝ մի շարք երկրներում: Առաջին ձայնապնակն ընդգրկել է «Խնդրում եմ» և «Երդվում եմ» երգերը: 1963-ին ելույթ է ունեցել Փարիզում: Համերգներով շրջագայել է ԱՄՆ-ում, Դամասկոսում և այլուր, 1967-ին՝ Երևանում. երգացանկում՝ «Մարտից հետո», «Երբ չվում են արագիլները», «Թամի, ինչո՞ւ ես գնում», «Երջանկության արցունքները» ևն: Երգել է ֆրանս., արաբ., անգլ., հայ.: 1990-ական թթ-ից ապրում է Լոս Անջելեսում: 2005-ին հայկ. երաժշտ. 2-րդ մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է 1960-ական թթ. լավագույն երգչի կոչման: Էստրադ. երգարվ-ի միջազգ. մրցույթի (1964, Բեյրութ, 1969, Աթենք) դափնեկիր է:

Մանվել Մենենկիչյանը ելույթի պահին

ՄԵՆԵՐԳ, փոքրածավալ վոկալ ստեղծագործություն, հեղինակ. երգ՝ մենակատարման համար (ի տարբերություն խմբերգի)՝ առավելապես նվագակցությամբ: Օպերայի, կանտատի կամ օրատորիայի

մասերից է: Մոտ է արիային, կամեր. երգարվ–ում՝ ռոմանսին, որոնցից տարբերվում է համեմատաբար պարզ բովանդակությամբ, ժանր. բազմազանությամբ և քառյակ. կառուցվածքով: Մ–ի նմուշներից են՝ Իշխան Տոմսկու (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»), Շեյխի (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», երկուսն էլ՝ օպերա), Սոլվեյգի (Է. Գրիգի «Պեր Գյունտ» սյուիտի, ըստ Հ. Իբսենի դրամայի), Մոր (Դ. Կաբալևսկու Ռեքվիեմ), «Օրորոցային» (Ա. Հարությունյանի «Հայրենիք» կանտատը), նաև Լ. վան Բեթհովենի «Հեռավոր սիրուհուն» շարքի երգերը, Ֆ. Շուբերտի, Յ. Բրամսի, Ֆ. Լիստի և ուր. վոկալ–կամեր. այն գործերը, որոնք ունեն երգի ու ռոմանսի միջանկյալ ձև, նաև Կոմիտասի մշակած ժող. երգերը («Հով արեք», «Գարուն ա», «Քելեր, ցոլեր» ևն)՝ ձայնի և դաշնամուրի համար:

ՄԵՆԶՈՒՐԱ (< լատ. mensura – չափ), 1. ***մենզուրային նոտագրության*** կարևորագույն հասկացություն, ռիթմիկ տևողությունների բաժանման որոշակի տեսակ: Մ–ային երաժշտության մեջ կիրառվել է Մ–ի 2 հիմնական տեսակ՝ ե ռ ա մ ա ս (լատ.՝ perfecte – կատարյալ) և ե ր կ մ ա ս (լատ.՝ imperfecte – անկատար): Հետագայում «Մ.» և «տակտ» հասկացությունները դարձել են համարժեք: Արդի իտալ–ում, ֆրանս–ում «տակտ» եզրույթին համապատասխանում է նույն՝ «Մ.» , իսկ անգլ–ում՝ bar եզրույթը:

2. Երաժշտ.գործիքների հնչաղբյուրի չափման մեծությունները որոշելու հաշվետվյալները: Հիմնականում լար. գործիքների Մ–ային չափանիշները վերաբերում են տրամագծին, երկարությանը և լարերի ձգվածությանը, փողայիններինը՝ հատվածքին, օդանցքի տրամագծին ու երկարությանը, լեզվակավորներինը՝ լեզվակի լայնությանը և երկարությանը: Լար. կսմիթ. և աղեղնավոր երաժշտ. գործիքներում Մ. է կոչվում սովորաբար լարի երկարության աշխատանք. մասը [վերին շեմիկի և տակդիրի (նաև հենարան կամ լարակալ) առանցքի միջև], լար. հարված. և ստեղնաշար. հարված. գործիքներում, բացի վերը նշվածներից, նաև մուրճիկի հարվածի գծի (լարի գրգռման) տեղը: Փող. գործիքներում Մ. է կոչվում փողանցքի միջին դիապազոնի և նրա երկարության հարաբերակցությունը (այստեղից էլ՝ լայն, միջին և նեղ Մ.): Մ–ին են վերաբերում նաև լարերի դասավորությունը՝ դաշնամուրի կամ ռոյալի իրանի (հնչարկղի) կամ նվագակոթի (գրիֆի) լայնությամբ, փող. գործիքների կողանցքերի պատերի և լար. գործիքների լադերի տեղաբաշխումը: 3. Միջնադար. բազմաձայն երաժշտության մեջ՝ ռիթմիկ տևողությունների որոշումը:

ՄԵՆԶՈՒՐԱՅԻՆ ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ mensura – չափ, համաչափ նոտագրություն), ***նոտագրության*** համակարգ XIII–XVI դդ–ի միջնադար. Եվրոպայում: Ի տարբերություն ավելի վաղ հուն. նևմային, հայկ. խազային (նշվել է մեղեդու շարժումը) և խմբերգ. (նշվել է միայն հնչյունի բարձրությունը) նոտագրության՝ Մ. ն. հնարավորություն է ընձեռել արձանագրելու հնչյունների և՛ բարձրությունը, և՛ հարաբեր. տևողությունը: Նրա անհրաժեշտությունը պայմանավորվել է բազմաձայն երաժշտության զարգացմամբ, քանի որ մոտետներում հնարավոր չէր պահպանել տեքստի յուրաքանչյուր վանկի արտասանությունը միաժամանակ բոլոր ձայներում:

Մ. ն. մշակել և նկարագրել են Յ. դե Գաոլանդիան, Ու. Օդինգտոնը (XIII–XIV դդ.), Ֆ. Քյոլնեցին, Ֆ. դե Վիտրին, Յ. դը Մուրիսը, Մ. Պադուացին (XIV դ.), Յ. Տինքտորիսը (XV–XVI դդ.), Ֆ. Գաֆֆուրիուսը (XV–XVI դ.) և ուր.:

XIII դ–ի վերջին հնչյունների և պաուզաների տևողության նշագրման համար օգտագործել են Մ. ն–յան հետևյալ նշանները (տրված է տևողությունների նվազման կարգով, բոլոր տերմինները լատ. են).



Մ. ն–յան զարգացումն պայմանականորեն բաժանել են 2 փուլի. առաջինում (1250–1450) առավել տարածված էին

սևացված նոտ. նշանները («սև» նոտագրություն)՝ մաքսիման (կրկնակի լոնգա), լոնգան, բրևիսը, սեմիբրևիսը: Տևողության և պաուզայի յուրաքանչյուր ռիթմ. բաժանում (***մենզուրա***) ուներ իր անվանումն ու նշանը: XIII դ-ում տևողությունների չափման միավորը ընդունված էր լոնգան, XIV դ-ից՝ ժամանակի արագացմանը համապատասխան՝ բրևիսը:

Երկրորդ փուլում (1450–1600) սևացված նոտ. նշանները փոխարինվել են սևով ուրվագծված սպիտակ նշաններով («սպիտակ» նոտագրություն), բացառությամբ՝ ամենափոքր տևողության նշանների: «Սպիտակ» նոտագրությունն ստեղծվել է առանձին նոտ. նշաններից, լիգատուրից (2 կամ ավելի նոտաներ միավորող նշան), նաև պաուզաներից: Նոտաների տևողությունները լիգատուրներում որոշվել են հատուկ կանոններով, ըստ որի՝ նոտ. առանձին նշանների տևողությունների բաժանումը պայմանավորվել է բրևիսով, սեմիբրևիսով, նաև շրջակա այլ նոտաներով:

Այսպես՝ մենզուրա բրևիսն ունի tempus perfectum (տեմպուս պերֆեկտում, բաժանում 3 սեմիբրևիսի) և tempus imperfectum (տեմպուս իմպերֆեկտում, բաժանում 2 սեմիբրևիսի), իսկ սեմիբրևիսը՝ prolatio major (պռոլաթիո մաժոր, perfecta, բաժանում 3 մասի) և prolatio minor (պռոլաթիո մինոր, imperfecta, բաժանում 2 մասի) տեսակներ: Որպես տարբերակիչ՝ օգտագործել են նաև tempus (կետի) նշանը, որով էր նշանակվում է ժամանակին կիրառվող տևողությունների բոլոր 4 հիմնական տեսակները.

1. brevis և semibrevis՝ եռամաս, այսինքն՝ tempus perfectum, prolatio major (համապատասխանում է ժամանակակից $^{9}/_{4}$, $^{11}/_{8}$ չափերին),

2. brevis՝ եռամաս, semibrevis՝ երկմաս, այսինքն՝ tempus perfectum, prolatio minor (համապատասխանում է ժամանակակից $^{3}/_{4}$, $^{3}/_{8}$ չափերին),

3. brevis՝ երկմաս, semibrevis՝ եռամաս, այսինքն՝ tempus imperfectum, prolatio major (համապատասխանում է ժամանակակից $^{6}/_{4}$, $^{6}/_{8}$ չափերին),

4. brevis՝ երկմաս, semibrevis՝ երկմաս, այսինքն՝ tempus imperfectum, prolatio minor (համապատասխանում է ժամանակակից $^{2}/_{4}$, $^{4}/_{4}$ չափերին):

Դեռևս XIV դ-ում հաճախ են կիրառել կլորացված նոտ. գրառումը, որը XVI դ-ում անցել է նոտ. տպագրության: XVI դ-ի վերջին ամենուր գերակշռել է տևողությունների համաստորադասումը՝ 1:2 հարաբերությամբ. այն նշանակում էր հրաժարում Մ. ն-ից և անցում ժամանակակից նոտագրության համակարգին:

ՄԵՋԻՆՅԱՆ Արտեմ Մարգարի [29.11.1913, գ. Կոթի (այժմ՝ գ. Շավարշավան՝ ՀՀ Տաուշի մարզում)–12.06.1998, Երևան, թաղված է Տավուշի մարզի Սևքար գ-ում], քամանչահար: ՀՀ ժող. արտիստ (1986): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1941): 1937–46-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների նվագախմբի մենակատար, 1946–92-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար և կոնցերտմայստեր:

Արտեմ Մեջինյան

Գրել է ժող. երաժշտության ոճով երգեր, որոնք զետեղվել են «Սրտի ձայնով» (իր հեղինակած, 1981) և «Ժողովրդական քնար» (1986) երգարաններում: Համերգներով ելույթներ է ունեցել արտերկրում:

Ժող. գործիքների կատարողների այսրկովկաս. օլիմպիադայի (1934, Թիֆլիս) և Համամիութ. մրցույթի (1939, Մոսկվա) դափնեկիր:

ՄԵՍԵԳԻ (հուն.՝ μεσίτης – միջնորդ, հաշտարար, այստեղ՝ միջանկյալ սաղմոս), հոգևոր երգի տեսակ, երեկոյան սաղմոսերգության կցուրդ. զարգացել է VIII–XV դդ-ում: Հորինվել են առաջին սաղմոսատների հիման վրա: Մ-ների մի քանի շարքեր պահպանվել են միջնադար. «Մանրուսում» գրքերում: Մ-ի առաջին հեղինակը հավանաբար Գրիգոր Գոզիկն է:

ՄԵՍԻԱՅԱՆ Հայկազ Կոսմոսի (08.01.1917, ք. Սեբաստիա–17.01.2004, Երևան), փողհար, դիրիժոր, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1962): Ավարտել է ՄՊԿ շեփորի բաժինը (1947, Մ. Ի. Տաբակովի դասարան): 1938–42 և 1945–47-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի և Համամիութ. ռադիոյի սիմֆ-ջազ., 1947–60-ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի, ԵՕԲԹ մենակատար, 1964–88-ին՝ «Երևան» փող. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1966-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1983-ից):

Հայկազ Մեսիայանը ելույթի պահին

ԽՍՀՄ և համամիութ. մրցույթի 1-ին կարգի դիպլոմ (1941, Մոսկվա):

ՄԵՍՉՅԱՆ Արտաշես (Արթուր) Ստեփանի (ծ. 03.03.1949, Երևան), ճարտարապետ: Հեղինակ. երգի և հայկ. ռոք երաժշտության սկզբնավորողներից, իր գործերի լավագույն կատարողներից: Ավարտել է ԵՊԻ (1972): 1981–89-ին՝ Հայպետնախագիծ ինստ-ի հատուկ արվեստանոցի հիմնադիր-ղեկ.: 1996–97-ին, 2018-ից՝ Երևանի գլխ. ճարտ.: Մ-ի նախագծերով Երևանում կառուցվել են ՀԽՍՀ Նախարարների խորհրդի ընդունելությունների տունը (1985), Մատենադարանի ստորգետնյա գրապահոցը (1988–89, համահեղ.), նոր մասնաշենքը (2013), Կոմիտասի թանգարան-ինստ-ի շենքը (2015), Մոսկվայում

Արտաշես Մեսչյանը ելույթի պահին

վերակառուցվել է Հայ մշակույթի տունը (1981–84, ղեկ. և համահեղ.) ևն:

Հիմնադրել և ղեկավարել է «Առաքյալներ» խումբը (1967–71): Հեղինակ է «Ո՞ւր էիր, Աստված» (ըստ Գրիգոր Նարեկացու), «Ռեքվիեմ-1915» և այլ երկերի, թատրոնի և կինոյի երաժշտության, նկարահանվել է կինոյում: 1990–2004-ին բնակվել է Բոստոնում. հիմնադրել է «Առաքյալներ-90» խումբը, ստեղծել «Խելակորույս ջութակահարի մենախոսությունը» հայկ. առաջին ռոք-օպերան (1992):

ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2011), ՀՀ Պետ. մրց. (2013):

ՄԵՍՍԱ (իտալ.՝ messa, < ուշ լատ. missa, լատ.՝ mitto – հղել, ներել), վոկալ –խմբերգ. (հաճախ՝ մեներգիչներով) կամ վոկալ-գործիք. բազմամաս երաժշտ. ստեղծագործության ժանր, լիթուրգիայի՝ կաթոլիկ. եկեղեցու ընդունած անվանումը (համապատասխանում է ուղղափառ եկեղեցու ***Պատարագին***):

«Սբ Մեսրոպ Մաշտոց», մանրանկար (1713, Հայամավուրք, Սիոնի., ձեռ. № 7391)

Մ-ի կազմն ու արարողակարգը ձևավորվել են դարերի ընթացքում: Խորհրդանշ. իմաստը կապված է հացն ու գինին Հիսուսի մարմին ու արյուն դարձնելու ծեսի հետ: Նախապես եղել է միաձայն, XIV դ-ից՝ բազմաձայն (Գ. դե Մաշո) և ցիկլային: Մասերի քանակն ու հաջորդման կարգը հաստատվել է Տրիդենտի տիեզեր. ժողովում (1545–63): Վատիկանի 2-րդ տիեզեր. ժողովը (1962–65) թույլատրել է արարողությունը վարել ոչ միայն լատ., այլ նաև մայրենի լեզուներով: Մ-ի հիմնական մասերն են՝ «Kyrie eleison» («Տեր ողորմեա»), «Gloria» («Փառք ի բարձունս»), «Credo» («Հավատամք»), «Sanctus» («Սուրբ»), «Benedictus» («Օրհնեալ է») և «Agnus Dei» («Գառն Աստծո»):

Տարբերում են կարճ Մ. (missa brevis՝ 2–3 մաս) և հանդիսավոր Մ. (missa solemnis), որի մասերը բաղկացած են առանձին, այդ թվում՝ Քրիստոսի մարմնառությանը («Et incarnatus»), խաչելությանը («Crucifixus»), հարությանը («Et resurrexit») վերաբերող և այլ բաժիններից:

Վերածնության դարաշրջանում Մ. երաժշտ. ստեղծագործության առավել մոնումենտալ ժանրն էր: Մ-ներ են գրել Գ. Դյուֆային, Ժոսքեն Դեպրեն, Օ. Լասսոն, Ջ. Պալեստրինան: Առավել բարձրարժեք են Յ. Ս. Բախի «Բարձր Մ.» (սի մինոր, 24 մասից), Վ. Ա. Մոցարտի «Մեծ Մ.» (դո մինոր, 18 մասից), Լ. վան Բեթհովենի «Հանդիսավոր մեսսա» («Missa solemnis», ռե մաժոր): Այս գործերում Մ-ի ժանրը հեռացել է կրոն-հոգևոր երաժշտությունից և ձեռք է բերել խորապես աշխարհիկ բովանդակություն: Հոգեհանգստյան Մ. կոչվում է ***ռեքվիեմ***:

Գրկ. Иванов-Борецкий М., Очерк истории мессы, М., 1910; Фишман Н., «Торжественная месса» Бетховена, в изд.: Л. Бетховен. Торжественная месса, М., 1970; Друскин М., Пассионы и мессы И. С. Баха, Л., 1976; Wagner P., Geschichte der Messe, Bd 1, 2, Lpz., 1913.

Ըստ Միքայել Տերյանի

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, Սուրբ Մեսրոպ Մաշտոց [մոտ 360, գ. Հացեկաց (Տարոն գավառ)–17.02.440, Վաղարշապատ, թաղված է Օշականում], հայկ. գրի ստեղծողը, հայոց դպրության հիմնադիրը, հայ ինքնուրույն գրկ-յան (Սահակ Ա Պարթևի հետ) և Թարգմանչաց շարժման սկզբնավորողը, քրիստոնեության քարոզիչ, վարդապետ, ՀԱԵ տոնելի սուրբ:

Ծնվել է կիսաազնվականի ընտանիքում, հուն. կրթություն ստացել է Տարոնում: Մոտ 389-ին հաստատվել է Վաղարշապատում: 395-ին թողել է աշխարհիկ կյանքը և մտել միայնակեցության կարգի մեջ: Իր աշակերտներին ուսուցանել է Ավետարանը: Նրանց ուղեկցությամբ

շրջել և քրիստոնեություն է քարոզել Հայաստանի բազմաթիվ վայրերում:

Գողթնում քարոզչության ժամանակ համոզվել է, որ անկարելի է «կյանքի խոսքը» (Կորյուն) սերմանել օտար՝ անհասկանալի լեզվով և հանգել է հայ. գիր ու գրականություն ունենալու անհրաժեշտությանը:

Մ. Մ. հայ. դպրության գաղափարը Սահակ Պարթևի ու իր աշակերտների հետ իրագործել է 405-ին, որից հետո երկրում ծավալվել է Թարգմանչաց շարժումը: Նա իր աշակերտների հետ Հայաստանում բացել է դպրոցներ, հիմնադրել վանքեր, որոնք դարձել են ուսման, գրչության և գիտության կենտրոններ, նշանակել եպիսկոպոս-տեսուչներ:

Նրանց հիմնադրած թարգմանչաց դպրոցում նախ հայ. է թարգմանվել Աստվածաշունչը, որը համարվում է «թարգմանությանց թագուհի»: Կազմել են Հայ եկեղեցու Խորհրդատետր-Պատարագամատույցի, ժամագրքի նախնական տարբերակները: Մ. Մ-ի անունով պահպանվել են թուղթ, շարականներ, քարոզներ, ճառեր, թարգման. և խմբագր. մի շարք երկեր, որոնց մեծ մասի վավերականությունը հաստատված չէ: Ըստ մատենագր. աղբյուրների՝ նա իր կյանքի ճգնավոր. շրջանից սկսած հորինել է հոգևոր երգեր ու բանաստեղծություններ:

Գրերի գյուտից հետո, երբ ծառացել է Հայ եկեղեցու արարողակարգի և պաշտոներգության հայացման խնդիրը, եկեղեցին ընդունել է Մ. Մ-ի երգերը, որոնք հետագայում մտել են Շարակնոցի մեջ: Շարականագիրների միջնադար. ցուցակների հեղինակները «Ապաշխարության» երգերը (շուրջ 130 միավոր) վերագրում են Մ. Մ-ին: Դրանք մեսրոպյան տառերով գրված առաջին չափածո երկերն են, որոնց շնորհիվ Մ. Մ. դարձել է հայ գրավոր բանաստեղծության հիմնադիրը: Դրանք նաև հայ հոգևոր երգարվ-ի առաջին նմուշներն են, քանի որ «Ապաշխարության» երգերը մշտապես գործածվել են ժամերգության մեջ. երգվում են քառասնորդական պահոց շրջանում, շաբաթպահքերին՝ երկուշաբթիից ուրբաթ, բոլոր չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ բացառությամբ Ծննդյան շաբաթվա (հունվ. 6–13) և Սբ Զատկից մինչև Համբարձում ընկած շաբաթների չորեքշաբթի և ուրբաթ օրերը, որոնք պահոց օրեր չեն:

Մաշտոցյան «Ապաշխարության» երգերի մեծ մասին բնորոշ են ազգ. շարականերգության նախնական շրջանի (V–VI դդ.) հատկանիշները: Դրանք 3–4 տնից բաղկացած սաղմոսատիպ, մատչելի լեզվով գրված, խորապես քնար. և հեղինակի բանաստեղծ. ներշնչանքի կնիքը կրող կցուրդներ են: Մեղեդիները հիմնականում աչքի են ընկնում պարզ դիատոնիկ կառուցվածքով, որը պայմանավորված է հայ հոգևոր երգարվ-ի ատաղձով՝ ավանդ. ութ ձայնեղանակներով (տես ***Ութձայն***): «Ապաշխարության» շարականների երաժշտաբանաստեղծ. արժանիքները խորապես ազդել են հետագա դարերի հեղինակների (Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի և ուր.) ստեղծագործության վրա: Մ. Մ-ի «Ապաշխարության» երգերի մի մասը, մասնավորապես՝ ծանր տիպի երգերը, ակնհայտորեն վերաեղանակավորվել են X–XIV դդ-ում: Շարակնոցում հանրաճանաչ է Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի (478–490) և XIII դ-ի պատմագիր, աստվածաբան Վարդան Արևելցու անուններով պահպանված Սրբոց թարգմանչաց կանոնը, որի մանկունքը («Նմանեալ Մովսէսի») հատկապես նվիրված է Մ. Մ-ին:

Մեսրոպ Մաշտոց

Հատված Մեսրոպ Մաշտոցի «Ծով կենցաղոյս» շարականից



Մեսրոպ Մաշտոցի «Շարականներ» գրքի (2014) շապիկը

Ավետիս Մեսումենց

Ա. Մեսումենցի «Յիսուն մեներգներ և հինգ զուգերգներ» գրքի (1973) տիտղոսաթերթը

Մետալոֆոն

Մ. Մ-ի երգերը, բացի Շարականոցից, ընդգրկվել են Մաշտոցում և Ժամագրքում:

Մ. Մ., լինելով հայ-ի առաջին ուսուցիչը, հայ դպրության, հոգևոր երաժշտության սկզբնավորողը, նաև հայ մանկավարժության հիմնադիրն է: Աշակել է հայոց լեզվի, հայ երաժշտության և հայկ. նորաստեղծ դպրոցներում ուսուցանվող այլ առարկաների դասավանդման սկզբունքները, որոշել հայկ. դպրոցի լեզվ. հիմունքը՝ դասավանդումն սկսել մայրենի լեզվի՝մեսրոպ. տառերի, և հայ-ի ուսուցմամբ, առարկաները դասավանդել հայ., օտար լեզուները՝ հայոց լեզվի հիման վրա: Մաշտոց. այդ սկզբունքը հետագայում հայկ. դպրոցներում դարձել է ավանդույթ:

Մ. Մ. սրբացվել է և դասվել ՀԱԵ սրբերի կարգը: Հայսմավուրքում նրա անունը հիշատակվում է 3 տոներում, բոլորն էլ՝ շարժական: Հետագա սերունդները Մ. Մ-ին անվանել են «Երկրորդ Լուսավորիչ»: 1962-ից Մատենադարանը կոչվում է Մ. Մ-ի անվամբ: 1978-ին ՀԱԵ սահմանել է «Սբ Սահակ-Սբ Մաշտոց» շքանշանը, 1993-ին ՀՀ-ում, որպես պետ. պարգև, հիմնադրվել է «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը: Մ. Մ-ի անունով Երևանում կան համայնք, պողոտա, համալսարան ևն:

Գրկ. *Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1995: Կարապետ Սանուցի, Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Մ. Վարդապետին Մեսրոպայ, Վաղ-պատ, 1897: Թահմիզյան Ն., Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, ԲՄ, № 7, 1964: Մարտիրոսյան Ա., Մաշտոց, Ե., 1982: Ամաոյան Հ., Հայոց գրերը, Ե., 1984: Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991:*

Արփաշեհ Սարտիրոսյան, Անահ Արևշատյան

ՄԵՍՐՈՊՅԱՆ Մեսրոպ Տիգրանի [01.07.1920, ք. Այնթապ (Կիլիկիա)–10.01.1983, Երևան], խմբավար: Սովորել է Այնթապի Կրթասիրաց վարժարանում: 1941–1946-ին՝ Դամասկոսի ռադիոյի մենակատար (երգիչ, կիթառահար, խմբավար): 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1949), ԵՊԿ (1955): 1958–83-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում, նաև «Ծաղկեփունջ» կամեր. երգչախմբի հիմնադիր-խմբավարը, 1978–83-ին, միաժամանակ՝ Ե. Սահառունու անվ. ժող. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

Համամիութ. (1967, 2-րդ կարգի դիպլոմ, Մոսկվա), Հանրապետ. (1967, ոսկե մեդալ), Հայաստանի երիտասարդ. 1-ին (1968, արծաթե մեդալ) փառատոների, Կոմիտասի 100-ամյակին նվիրված մրցույթի (1969, ոսկե մեդալ) դափնեկիր:

ՄԵՍՈՒՄԵՆՑ Ավետիս Գևորգի (06.01.1905, ք. Արաբկիր՝ Արմ. Հայաստան–12.10.1981, Փարիզ), կոմպոզիտոր, բանահավաք: Ավարտել է Լիոնի կոնսերվատորիան (1930): 1946-ին տեղափոխվել է Փարիզ, ղեկավարել «Սայաթ-Նովա» ազգագր. անսամբլը:

Գրել է մեներգեր, զուգերգեր, խմբերգեր, կամեր. երկեր, բալետ, օպերաներ («Անուշ», ըստ Հ. Թումանյանի): Մ-ի «Նաիրյան» 4 ծրագր. սիմֆոնիաները նվիրված են հայ ժողովրդի պատմությանն ու վերածննդին: Հեղինակ է նաև «Մեսրոպյան լեզու» կանտատի (խոսք՝ Պ. Սևակի, 1-ին մրց.՝ 1962, Բեյրութ), «Եղերական համանվագի» (1-ին մրց.՝ 1965, Բեյրութ): Հավաքել, գրառել և դաշնավորել է բազմաթիվ ժող. երգեր՝ Արաբկիրից («Նարոտ»), Չմշկածագից («Հարսանեգաղայ»), Տարոնից («Նուռցք»), Շապին-Գարահիսարից («Ուռ երգ»), Եդեսիայից («Չորս երգ») և այլ տարածաշրջաններից:

ՄԵՏԱԼՈՖՈՆ (< հուն. μέταλλου – մետաղ և φωυή – ինչյուն), 1. մետաղե ինքնահունչ երաժշտ. գործիքների ընդհանուր անվանումը:

2. Քսիլոֆոնի տիպի երաժշտ. գործիքներ, որոնք մետաղե (պողպատ, դյուրալյումին) թիթեղների հավաքածու են: Թիթեղները փայտե արկղում դասավորված են ջիլե լարերի կամ փափուկ լարանների վրա: Հնչյունաշարը խրոմատիկ է: Նվագում են փայտե մուրճիկներով: Տարատեսակը ստեղնային Մ-ն է՝ դաշնամուրի տիպի ստեղնաշարով:

ՄԵՏՐ (< հուն. μέτρον – չափ, չափս), երաժշտության ռիթմի կազմակերպման համակարգը: Գոյանում է ժամանակի շեշտված («ուժեղ») և անշեշտ («թույլ») մասերի ցիկլ. հավասարաչափ բաբախումից, որը տևողությունների միասն. չափման ու նրանց բազմազան հարաբերությունների հիմքն է: Յուրաքանչյուր ցիկլ կազմում է 1 տակտ: Տարբերում են պարզ (երկմաս և եռամաս), բարդ (միանման պարզ բաղկացուցիչներից կազմված), խառը (տարբեր բաղկացուցիչներից կազմված), պարբերաբար և ոչ պարբերաբար հաջորդափոխվող ու անկանոն Մ-եր կամ տակտեր (տես *Չափ*):

«Մ.» հասկացությունը ծագել է անտիկ արվ–ում: Սկզբն. դերը բանաստեղծության ու մեղեդու իրենց միասնությունը ժամանակ. համամասնականության գեղագիտ. սկզբունքին ենթարկելն է: Որոշիչը եղել է խոսքի Մ. (երկար և կարճ ձայնավորներով շեշտված և անշեշտ վանկեր): Չափանմուշը, որին բազմապատիկ են եղել վանկ. բոլոր տևողությունները, կոչվել է պրոտոս խրոնոս (πρῶτος χρόνος – առաջնային, հիմնական ժամանակ):

Մ. երաժշտության արտահայտչամիջոց է, ենթարկված է ռիթմին և գործում է նրա հետ: Ունի նաև սեփ. արտահայտչականություն. օր.՝ երաժշտ. երկի հնչյունները միմյանց հարաբերվում են նաև յուրատեսակ Մ–ական ֆունկցիայով (տակտ. ուժեղ մասերում առանձնահատուկ ընդգծվում են ևն), երկմաս Մ. ընդհանուր առմամբ առաջացնում է առավել պարզ, բնական (կենս. երևույթներում մի շարք նմանակներ ունեցող) շարժման զգացողություն, եռամաս Մ. «սահուն» է, «հոսուն»՝ ավելի «պարային», քան «երթային», խառը Մ–երը, նաև տարբեր Մ–երի միաժամանակյա զուգորդումը (այսպես կոչված բազմամետրը) ստեղծում են լրացուցիչ դինամիկա ևն: Որոշ պարատեսակների հատուկ է որոշակի Մ., որի դեպքում բնորոշ ռիթմական բանաձևերի հետ Մ. հանդես է գալիս նաև որպես ժանր. տարր: Խառը, հաջորդափոխվող և անկանոն Մ–երն առավել տարածված են արլ. ժողովուրդների երաժշտության մեջ:

Հայ ժող. երգերում և պարերում հանդիպում են ներքին տարբեր կառուցվածքով հնգամաս (2 + 3, 3 + 2), յոթնամաս (2 + 2 + 3, 2 + 3 + 2, 3 + 2 + 2), ութնամաս (3 + 3 + 2 ևն), իննամաս, տասնամաս և այլ, խառը Մ–եր, որոնք այդ երաժշտության գրավիչ առանձնահատկություններից են:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՄԵՏՐԻԿԱ (հուն.՝ μετρική – չափին վերաբերող), 1. ուսմունք ***մետրի*** մասին:

2. Մետրի որոշակի դրսևորումների միակցությունը երաժշտ. ստեղծագործության մեջ:

ՄԵՏՐՈՆՈՄ (< հուն. μέτρον – չափ և νόμος – օրենք), չ ա փ ա հ ա ր , մեխ. սարք, որի ճոճանակը լսելի համաչափ զարկերով չափում է ժամանակը և հնարավոր դարձնում տեմպի ճշգրիտ արագության նշումը: Ճոճանակի շարժման արագությունը պայմանավորված է նրա վրա շարժվող ծանրակի տեղով. որքան վերև է այն, շարժումն այնքան դանդաղ է, և հակառակը: Ճոճանակի կամ առանձին ցուցանակի վրա նշված թվերը (սովորաբար՝ 40–208) ցույց են տալիս զարկերի քանակը 1 *ր*–ում: Կան Մ–ներ, որոնց զանգի զնգոցով հնարավոր է նշել յուրաքանչյուր տակտի ուժեղ մասը: Մ–ի ցուցիչը նշվում է երաժշտ. ստեղծագործության սկզբում, տեմպից հետո և ներսում (լատ. MM տառերով, այսինքն՝ Մելցելի մետրոնոմ), որից հետո նշվում է, թե տրված տևողությունը րոպեի որ մասն է կազմում: Ստեղծվել է XVII դ–ի վերջին, 1816–ին կատարելագործել է վիեննացի վարպետ Յ. Մելցելը:

Մետրոնոմ

Ներկայում կան տարբեր կառուցվածքներով (մասնավորապես՝ գրպանի ժամացույցի ձևի և էլեկտր.) Մ–ներ:



Արամ Մերանգուլյան

ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆ Արամ Հարությունի [08.06.1902, գ. Յղնա (Նախիջևանի Օրդուբադի շրջան)–17.11.1967, Երևան], կոմպոզիտոր, դիրիժոր, թառահար, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1959): Սովորել է ԵՊԿ ժող. գործիքների (1926–28, թառ, Ս. Օգանեզաշվիլու դասարան), կոմպոզիցիայի (1937–42, Վ. Տալյանի դասարան) բաժիններում: 1927–ին հիմնադրել է Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլը (ղեկավարել է մինչև 1967–ը, 1967–ից՝ Մ–ի անվ.): 1931–33–ին դասավանդել է ԵՊԿ–ում,

Հայաստանի ռադիոյի ժողովրդական գործիքների անսամբլը (գեղ. ղեկ.՝ Ա. Մերանգուլյան 1950–ական թթ.)

1933–40–ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում:

Գրել է վոկալ («Խաչատուր Աբովյան», խոսք՝ Սարմենի, «Լեռներ հայրենի», խոսք՝ Վ. Արամունու, Հ. Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» պոեմի համար՝ «Դու ինձ համար», «Ամ գառներ», «Երազիս մեջ», «Ամ աղբյուր» ևն), գործիք. (քառամաս «Պարային սյուիտ», «Հարսանեկան պար», «Վարդերով պար», «Անահիտ պար» ևն) ստեղ-

Վիկտոր Մերժանով

ծագործություններ, մշակել է ժող. երգեր ու պարեղանակներ, որոնցով նպաստել է այդ ոլորտում տիրապետող ոճի ձևավորմանը:

Մշակել է «Սայաթ-Նովա» (1960) հեռուստաֆիլմի երգերը: Մ-ի որոշ գործեր հրատարակվել են առանձին, 1972-ին՝ նաև «Մեներգեր, խմբերգեր» ժող-ում: Հեղինակ է «Թառի ուսուցման դպրոց» ձեռնարկի (1983): Իր ղեկավարած անսամբլով Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին (1939, 1956):

ՀԽՍՀ «Պատվո նշան» շքանշան (2):

ՄԵՐԺԱՆՈՎ Վիկտոր Կարապետի (15.08.1919, Տամբով – 20.12.2012, Մոսկվա), դաշնակահար, մանկավարժ, հաս. գործիչ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1965), ՌԽՖՍՀ (1977), ԽՍՀՄ (1990) ժող. արտիստ: Նախն. երաժշտ. կրթությունն ստացել է Տամբովի Ս. Վ. Ռախմանինովի անվ. երաժշտ. ուսումնարանում (դասատուներ՝ Ա. Ֆ. Լանդովսկայա, Ս. Մ. Ստարիկով և Ա. Ա. Պոլտորացկի), ավարտել ՄՊԿ դաշնամուրի (Ս. Ե. Ֆայնբերգ), երգեհոնի (Ա. Ֆ. Գեդիկե) բաժինները (1941) և ասպիրանտուրան (1947, ղեկ.՝ Ս. Ե. Ֆայնբերգ): Մասնակցել է ՀՄՊ-ին (1941–45):

Որպես դաշնակահար՝ միջազգ. ճանաչման է հասել 1945-ից (Մոսկվայի երաժիշտ-կատարողների համամիութ. մրցույթի 1-ին մրց.՝ կիսել է Ս. Ռիխտերի հետ): Նույն թվականից համերգներով հանդես է եկել Ռուսաստանում, Եվրոպայի, Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի երկրներում: Համագործակցել է նշանավոր դիրիժորների և նվագախմբերի հետ: 1946-ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար: 1950-ից ելույթներ է ունեցել ջութակահար Ա. Գաբրիելյանի և Կոմիտասի անվ. քառյակի հետ:

Էդուարդ Միանասարով

1947-ից դասավանդել է ՄՊԿ-ում (պրոֆ.՝ 1964-ից, դաշնամուրի ամբիոնի վարիչ՝ 2007-ից), 1973–78-ին՝ Վարշավայի կոնսերվատորիայում: Սաներից Ա. Ներսիսյանը, Վ. Բունին միջազգ. մրցույթների դափնեկիրներ են:

Վարպետության դասեր է վարել մի շարք երկրներում: Մ-ի ստեղծած դասընթացները 20 տարուց ավելի դասավանդվում են Տամբովի երաժշտամանկավարժ. ինստ-ում (պատվավոր պրոֆ.՝ 2012-ից):

Թողարկել է ձայնասկավառակներ ԱՄՆ-ում, Իտալիայում, Ճապոնիայում և ԽՍՀՄ-ում:

Ռուսաստանի Ռախմանինովյան ընկ-յան նախագահ:

ՄԵՅՅԱ ՎՈՉԵ (իտալ.՝ mezza voce – կիսաձայն, կես ձայնով), կատարող. արվ-ի հնարք, որի ժամանակ մեղմ երգեցողությունը կատարվում է կիսաձայն: Մ. վ. երգչից տեխ. վարպետություն պահանջող ձև է, որպես երանգ օգտագործում են նաև նվագող երաժիշտները:

ՄԵՅՅՈ ՍՈՊՐԱՆՈ (իտալ.՝ mezzo-soprano, < mezzo – միջին), կանանց երգչաձայն՝ սոպրանոյի և կոնտրալտոյի միջև: Տարբերում են սոպրանոյին մոտ՝ բարձր (քնար.) և կոնտրալտոյին մոտ՝ ցածր (դրամատիկ.) Մ. ս-ներ: Դիապազոնը՝ a (b)–a^2 (b^2): Մ. ս-ի համար գրված օպեր. դերերից են՝ Ամներիս (Ջ. Վերդիի «Աիդա»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Մարֆա (Մ. Պ. Մուսորգսկու «Խովանշչինա»), Լյուբաշա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Ալմաստ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Փառանձեմ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ») ևն:

ՄԻԱԳԻՆ, ի տարբերություն հնագագծի՝ 1 հորիզոն. գիծ (պարտիտուրներում, պարտիաներում), որի վրա նոտագրում են որոշակի բարձրության հարված. երաժշտ. գործիքների նվագամասերը:

ՄԻԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ, երաժշտ. ստեղծագործության կառուցվածք (նաև շարադրման եղանակ), որն ընդգրկում է միայն 1 ձայն, 1 մեղեդի (ի տարբերություն բազմաձայնության): Բնորոշ է բազմաթիվ ժողովուրդների ժող. երաժշտությանը (մեներգեր, խմբային ունիսոն երգեր, գործիք. մենակատար և խմբային ունիսոն նվագներ): Երբեմն հակադրություն ստեղծելու համար հատվածաբար գործածվում է նաև բազմաձայն ստեղծագործության մեջ:

ՄԻԱՆՍԱՐՈՎ Էդուարդ Արսենի (ծ. 24.10.1933, Երևան), դաշնակահար: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1996): Սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. և Բելառուսի կոնսերվատորիային կից երաժշտ. դպրոցներում, ավարտել ՄՊԿ (1958) և ասպիրանտուրան (1963, ղեկ.՝ Լ. Ն. Օբորին): 1959-ից համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում և արտերկրում: Նվագացանկում՝ Ռ. Շումանի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շուբերտի, Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, Յ. Բրամսի, Ա. Ն. Սկրյաբինի, Պ. Ի. Չայկովսկու, Ս. Ս. Պրոկոֆևի, Դ. Դ. Շոստակովիչի, Ս. Վ. Ռախմանինովի, Գ. Վ. Սվիրիդովի, Ռ. Կ. Շչեդրինի, Ա. Խա-

չատրյանի, Ա. Բաբաջանյանի ստեղծագործություններից: Առանձնանում են Ֆ. Լիստի «Իսպանական ռապսոդիայի», «Մեֆիստովալսի», Լ. վան Բեթհովենի սոնատների, Ֆ. Շոպենի բազմաթիվ պիեսների, Ռ. Շումանի «Սիմֆոնիկ էտյուդի», «Կառնավալի», «Ֆանտազիայի» կատարումները:

Մ–ի արվ–ին բնորոշ են կատարող. բարձր վարպետությունը և դաշնամուր. տեխնիկայի ձևերի տիրապետումը:

Պ. Ի. Չայկովսկու անվ. կատարողների միջազգ. 1–ին մրցույթի դափնեկիր (1958, Մոսկվա):

Գրկ. *Григорьев Л., Платек Я., Современные пианисты, М., 1990.*

ՄԻԼՏՈՆՅԱՆ Շուշանիկ (Սուսաննա, ծ. 2.06.1940, Վենետիկ), տավղահարուհի: Ավարտել է Վենետիկի «Բենեդետո Մարչելլո» կոնսերվատորիան (1959, Մ. Չիկոնյարիի դասարան): Տավղահարների 1–ին մրցույթի դափնեկիր (1959, Թել Ավիվ), որից հետո նրան հրավիրել են «Բենեդետո Մարչելլո» կոնսերվատորիա (պրոֆ.): 1965–ից ապրում է Բրյուսելում (կոնսերվատորիայի պրոֆ. և սիմֆ. նվագախմբի մենակատարուհի): Համերգներով շրջագայել է մի շարք երկրներում (1969–ին՝ Երևանում): 1972–ին Նյու Յորքում մասնակցել է հայ մշակույթի փառատոնին:

Փարիզի ազգ. կոնսերվատորիայի (1962), Ժնևի (1964), Բրյուսելի (1965), Մ. Տուրնիեի անվ. (1971, Փարիզ) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԻԿՈՒԼԻ (Աքսինյան) Կարոլ [20.09.1821, Չեռնովիցի (այժմ՝ Չեռնովցի՝ Ուկրաինայում) –21.05.1897, Լվով, թաղված է հայկ. եկեղեցու բակում], կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ: Սերում է XIX դ–ի սկզբին Մոլդովայից Բուկովինա գաղթած հայ ազնվական Մ. տոհմից: Դասեր է առել դաշնակահար Ֆ. Կոլբերգից: Ավարտել է Վիեննայի համալսարանի բժշկության բաժինը (1844), 1844–48–ին Փարիզում աշակերտել է Ֆ. Շոպենին: 1848–ից հյուրախաղերով հանդես է եկել Ավստրիայի քաղաքներում, նաև Բուխարեստում, Քիշնևում, Լվովում, Կիևում, Յասսիում, Մոսկվայում: 1858–88–ին՝ Գալիցիայի երաժշտ. ընկերության նախագահ (նվագախմբի և երգչախմբի դիրիժոր), Լվովի կոնսերվատորիայի տնօրեն և պրոֆ. (դասավանդել է կոմպոզիցիա, հարմոնիա, կոնտրապունկտ, ղեկավարել դաշնամուրի դասարան), միաժամանակ շարունակել է համերգ. և ստեղծագործ. գործունեությունը: Ստեղծել է դաշնամուր. կատարող. ինքնատիպ դպրոց. տեխ. լավագույն ավանդույթները միավորել է երգի խոր մեկնաբանման, ոճ. առանձնահատկությունների հետ: 1887–ին հիմնադրել է սեփ. երաժշտ. դպրոց:

Որպես դաշնակահար՝ եղել է Ֆ. Շոպենի երկերի լավագույն մեկնաբաններից: Նրա դաշնամուր. գործերում նկատելի է Ֆ. Շոպենի և Ռ. Շումանի ոճերի ազդեցությունը: Հեղինակ է ֆրանս. երգերի, գերմ., լեհ., ռում., մոլդ. ժող. երգերի բազմաթիվ ներդաշնակումների: Գրել է նաև «Պատարագ»՝ Չեռնովիցիի ռում. կոստյոլի համար, մի շարք հոգևոր երգեր, բազմաթիվ գործիք. երկեր՝ վալսեր, մազուրկաներ, սոնատներ, սկերցինո՝ 3 ջութակի, սերենադ՝ դաշնամուրի և կլառնետի համար: «Armenien» ստեղծագործության մեջ օգտագործել է Լվովի հայերի երգերի մեղեդիները: Գործերի նշանակալի մասն ընդգրկվել է Եվրոպայի և Ռուսաստանի կոնսերվատորիաների դաշնամուր. դասընթացների ծրագրերում:

Երկերը հրատարակվել են Լվովում, Վիեննայում, Լայպցիգում: Ֆ. Շոպենի երկերի ամբողջ. հրատարակության (հ. 1–17, 1879) խմբագիրն է: Հավաքել, ձայնագրել է ռում. ժող. մեղեդիներ (աիրներ) և հրատարակել 4 հատորով («Ռումինական ազգային 48 մեղեդիներ», ֆրանս., 1850–54):

Շուշանիկ Միլտոնյանը ելույթի պահին

Կարոլ Միկուլի

ՄԻՀՐԱՆ, XVII–XVIII դդ–ի աշուղ–բանաստեղծ: Գրել է հայ. և թուրք. խաղ–ոտանավորներ, որոնցից պահպանվել են 59–ը՝ բանահավաք Եղիա Մուշեղյան Կարնեցու գրառմամբ՝ նրա կազմած «Գիրք խաղից» (1721) ձեռագիր ժող–ում (պահվում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի «Հայաստանի հետ Ռուսաստանի հարաբերությունների ֆոնդում», թղթապանակ № 3): Խաղերում անդրադարձել է հիմնականում պանդխտության ու սիրո թեմաներին:

Գրկ. *Հովհաննիսյան Բ., XVII դարի անհայտ բանաստեղծը, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1957, № 6:*

ՄԻՀՐԱՆՅԱՆ Էմմա Վարդանի (04.01.1940, Երևան–08.12.1992, Երևան), կոմպոզիտոր, մանկավարժ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի (դասատու՝ Է. Բաղդասարյան), ԵՊԿ (1968, Գ. Եղիազարյանի դասարան) կոմպոզիցիայի բաժինները:

Էմմա Միհրանյան

Գրել է հիմնականում մանկ. երաժշտություն (այդ թվում՝ «Մանկական երգեր՝ դաշնամուրի նվագակցությամբ», 1983): Ուշագրավ են «Բարի գիշեր, երեխաներ» հեռուստահաղորդման համար գրած երաժշտությունը և Մանկ. պատկերասրահի տպավորությամբ ստեղծած «Մանուկների աչքերով» սիմֆ. սյուիտը: Տիկնիկ. ներկայացումների համար գրել է «Թզուկի երգը», «Ուլիկների նոր արկածները», «Փչան Թորոսը», «Խիպիլիկը» և այլ գործեր: Հեղինակ է դաշնամուրի սոնատինի (1977), նաև կինոերաժշտության («Անուշ մայրիկը», «Ծերունին ու քամին», գեղ., «Կոնդ», «Սպիտակ քաղաք», վավերագր.): Մ-ի մեծածավալ ստեղծագործությունները «Պատանեկան» սիմֆոնիան է (կատարել են նաև Սևաստոպոլի և Յալթայի սիմֆ. նվագախմբերը) և ալտի կոնցերտը: Կազմել է «Պիեսներ և սոնատիններ: Դաշնամուրի համար» (1985) նոտ. ժող-ը: ՀԿՄ մանկապատանեկան գեղագիտ. դաստիարակչության հանձնաժողովի նախագահ: Վարել է «Աղբյուր» հեռուստահաղորդաշարը, «Երաժշտական աշխարհ» ռադիոհաղորդաշարը:

Գայանե Սահակյան

Գեորգի Մինասյանը ելույթի պահին

ՄԻՆԱՍՅԱՆ Գեորգի Արտավազդի (27.03.1942, Սոչի–28.06.2004, Երևան), երգիչ (տենոր): ՀՀ վաստ. արտիստ (2001): Սովորել է Բաքվի կոնսերվատորիայում (1959–63), ավարտել Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ի օպերետի բաժինը (1966): 1966–67-ին՝ Սոչիի ֆիլհարմոնիայի, 1967–1972-ին՝ Ռոսկոնցերտի, 1972-ից՝ Հայաստանի ռադիոյի էստրադ. սիմֆ. նվագախմբի, 1977-ից՝ Հայհամերգի մենակատար: Հանդես է եկել նաև Հայաստանի էստրադ. պետ. նվագախմբի հետ: «Ուրարտու» (1976), ապա՝ «Պոպուլյար» էստրադ. անսամբլների հիմնադիր և գեղ. ղեկ.: Երգացանկում՝ Ա. Աճեմյանի, Ռ. Ամիրխանյանի, Ա. Հեքիմյանի, Կ. Օրբելյանի և այլ կոմպոզիտորների երգեր (մեծ մասի առաջին կատարողը): Ձայնագրել է 200-ից ավելի էստրադ. երգեր: Առավել ճանաչվել է «Արևիկ», «Գալիս ես», «Երևան», «Ոսկե տանգո», «Հայաստան իմ չքնաղ», «Այ սև աչքերով աղջիկ», «Ներիր ինձ», «Փառք մեր ազգությանը» և այլ երգերի կատարումներով:

Իլյա Մինասյանը ելույթի պահին

1991–2001-ին ապրել և ստեղծագործել է ԱՄՆ-ում, համագործակցել Կոնստանտին Հ. *Օրբելյանի* հետ:

«Մելոդիա» ֆիրման թողարկել է Մ-ի կատարումների ձայնասկավառակներ (1973, 1976՝ «Ուրարտու» խմբի հետ, 1978, 1984՝ «Մոռացում չկա», 1984՝ «Սիրո երգեր», 1990՝ «Սիրո աշխարհ»), խտասկավառակ («Սերը չի ծերանում», ԱՄՆ, 2000):

Նկարահանվել է կինոյում («Միայն սիրո մասին», ֆիլմ-համերգ, 1979, «Երջանկության մեխանիկա», 1982, «Հարսնացուն Ձերմուկից», 1997, «Օդից թեթև», 2000, գեղ.):

ԱՄՆ-ի հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության ամենամյա փառատոնի «Տարվա լավագույն երգիչ» մրց.:

ՄԻՆԱՍՅԱՆ Իլյա (Իլյիչ) Հմայակի (28.08.1929, Երևան–2009, Երևան), շվիահար: ՀՀ վաստ. արտիստ (1961): Պրոֆ. (1996): Դուդուկ նվագել սովորել է ինքնուրույն, ապա աշակերտել է Լևոն ***Մադոյանին***: Ավարտել է ԵՊՀ տնտեսագիտության (1963), էքստեռն՝ ՀՊՄԻ մշակույթի (1979, նաև ժող. գործիքների բաժնի հիմնադիրներից) բաժինները: 1980-ից դասավանդել է ԵՊԿ-ում: 1947–91-ին՝ Հայֆիլհարմոնիայի, 1991-ից՝ Երևանի կամեր. երաժշտության տան մենակատար: Նվագացանկում՝ հիմնականում հայկ. և աշխարհի ժողովուրդների մեղեդիներ: Հայկ. շվին առաջինն է ներկայացրել արտերկրում (76 երկիր):

Մ-ի կատարող. արվ-ին բնորոշ էին հուզականությունը, արտահայտչամիջոցների բազմազանությունը: Կատարման վարպետությամբ առանձնացել են «Կռունկ», «Երազ» երգերը, Վ. Ա. Մոցարտի «Ռոնդոն», Ա. Խաչատրյանի «Սուսերով պարը» և այլ գործեր: Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Բելգիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ֆինլանդիայում, Կանադայում, Մեքսիկայում, Չիլիում, Չինաստանում և այլուր:

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի (1957, Մոսկվա), ժող. գործիքներ նվագողների (1957, Մոսկվա), Էստրադ. արտիստների (1958, Մոսկվա) համամիութ. մրցույթների 1-ին մրց-ներ:

ՄԻՆԱՍՅԱՆ Վազգեն Հարությունի (ծ. 24.03.1940, Լենինական), ֆլեյտահար, մանկավարժ, հաս. գործիչ: Հոգեբան-մանկավարժ. գիտ-ների համահայկ. ակադ-ի ակադ.: Ավարտել է ԵՊԿ ֆլեյտայի բաժինը (1966, Հ. Ղասաբյանի դասարան): 1960–67-ին՝ ԵԵԿՄԹ, 1964–86-ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբերի ֆլեյտահար:

1976-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում (դոցենտ՝ 2004-ից): 2002-ից՝ «Կարին» հայրենակց. միության նախագահ: 2007-ից ԵՊԿ-ում վարել է «Երաժշտական զրուցակից» համերգաշարը: Հեղինակ է մի շարք ուսումնամեթոդ. ձեռնարկների, ժող-ների և փոխադրությունների («Փոխադրումներ և մշակումներ շվիի համար. մեթոդական ցուցումներով», 2004, ևն): ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ (2015):

ՄԻՆԱՍՅԱՆ Վահագն (1905, Կարին–1979, Սան Պաուլո), կոմպոզիտոր, խմբավար: Երգել է եկեղեցում, ապա՝ Կարինի Սանասարյան և Հոիփսիմյան վարժարանների մանկ. երգչախմբերում: 1927-ից ապրել է Բրազիլիայում:

Հիմնադրել և ղեկավարել է «Գուսան», «Կոմիտաս», «Արմենիա» երգչախմբերը: 1957-ին երգչախմբի ելույթին ներկա է եղել Արամ *Խաչատրյանը*, որը բարձր է գնահատել Մ-ի գործունեությունը:

Նրա մեներգերն ու խմբերգերը խարսխված են Կարնո գավառի ժող. երաժշտության վրա:

Հեղինակ է նաև «Արտաշես և Սաթենիկ», «Զեյթուն», «Հին աստվածներ», «Հովվիվը», «Կարին» երաժշտ. դրամաների, «Թախիծ», «Ակրոպոլիս», «Աշնան օրեր», «Հովվական արշալույս» սիմֆ. պոեմների, ջութակի համար պիեսների:

ՄԻՆԱՍՈՎ (Մինասյան) Գեորգի Վարդանի (ծ. 18.07.1933, Բաքու), դուդուկահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (2007): Մանկուց նվագել է մանդոլին, քամանչա: Դուդուկի առաջին ուսուցիչը եղել է հորեղբայրը՝ Ա. Մինասովը: Ավարտել է Բաքվի Ա. Զեյնալիի անվ. երաժշտ. ուսումնարանը (1966): Նվագել է Ադրբեջանի երգի-պարի անսամբլում, 1972–81-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների նվագախմբի մենակատար: 1963–83-ին դասավանդել է Բաքվի Ս. Շահումյանի անվ. երաժշտ. դպրոցում: 1983–2006-ին՝ Հայաստանի գուսան. և ժող. երգի անսամբլի մենակատար: 1990-ից դասավանդում է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում:

Հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ում, Կանադայում, Ռուսաստանում, Հունաստանում, Բելգիայում, Սիրիայում, Լիբանանում, Իրաքում և այլուր: Ընդլայնել է դուդուկի կատարող. հնարավորությունները, ստեղծել է դուդուկի 3 տեսակ (1992–2001)՝ բաս, տենոր, բարիտոն (արտոնագրվել են 2001-ին): 1998-ին հիմնադրել և ղեկավարում է «Դուդուկներ» քառյակը (ապա՝ հնգյակ): Մ-ի կատարմամբ ձայնագրվել է 7 հիմնական մուղամ:



Վազգեն Մինասյան

Հեղինակ է «Դուդուկ» (1988, 2-րդ վերամշկ. և լրց. հրտ.՝ 2004) ձեռնարկի և դասագրքի («Քրեստոմատիա դուդուկի համար դաշնամուրի նվագակցությամբ», 2017):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2013):

Գրկ. *Սանթոյան Վ., Դուդուկի կանչը ըստ Մինասովի, Ե., 2014:*

ՄԻՆՈՐ (իտալ.՝ minore, <լատ. minor–փոքր, նաև moll, <լատ. mollis – փոքր), ձայնակարգ, որի հիմքում փոքր (մինոր) եռահնչյուն է: Ունի թախծոտ երանգ, հակադիր է *մաժորին*, որը երաժշտության մեջ գեղ. կոնտրաստ ստեղծող կարևոր արտահայտչամիջոցներից է: Մ. ձայնակարգի հնչյունաշարի ինտերվալ. կառուցվածքն է՝ 1 տոն, կիսատոն, 1 տոն, 1 տոն, կիսատոն, 1 տոն, 1 տոն:



Գեորգի Մինասով

Մ. ձայնակարգում կայուն հնչյուններն են I (առավել կայունը), III և V, իսկ անկայունը (յուրաքանչյուր անկայուն հնչյուն ձգտում է դեպի մոտակա կայուն աստիճանին)՝ II, IV, VI, VII (առավել անկայունը) աստիճանները: Մ. դաս. տեսք է ստացել XVIII դ-ում (ֆունկցիոնալ հարմոնիայի դարաշրջանում):

Մ. և մաժոր ձայնակարգերի զարգացման ընթացքում տեղի են ունեցել դրանց աստիճանների փոխներթափանցում, որի հետևանքով ձևավորվել են այդ ձայնակարգերի հարմոնիկ (բնական Մ-ի համեմատությամբ VII աստիճանը խրոմատիկ կիսատոնով բարձրացված է և նմանեցված հարմոնիկ մաժորի նույն աստիճանին, որի հետևանքով VI և VII աստիճանների միջև առաջանում է բնորոշ՝ մծցվ. 2 ինտերվալ), մելոդիկ (բնական Մ-ի համեմատությամբ՝ VI և VII աստիճանները խրոմատիկ կիսատոներով բարձրացված են և նմանեցված բնական մաժորի նույն աստիճաններին, հանդիպում է առավել հազվադեպ) և կրկնակի հարմոնիկ (բնական Մ-ի համեմատությամբ՝ բար-

ձրացված են IV և VII աստիճանները, որի հետևանքով ձայնակարգի III–IV և VI–VII աստիճանների միջև ի հայտ են գալիս մծցվ. սեկունդաներ) տեսակները:

Արդի Մ. զարգացել է միջնադար. էոլական ձայնակարգից. կառուցվածքով Մ. են նաև դորիական և փռյուգիական ձայնակարգերը: XIX դ–ի կեսերից Մ. և մաժոր ձայնակարգերի փոխներթափանցման հետևանքով գոյացել է մինոր–մաժորային միավորված համակարգը:



ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԱՅՆԱԿԱՐԳԵՐ, ժող. երաժշտությունից առնված յոթաստիճան բնական մոնոդիական ձայնակարգերի համակարգը, որը եղել է վաղ միջնադարից մինչև XVI դ–ի լատ. մասնագիտացված (նախ՝ միաձայն, ապա՝ բազմաձայն) երաժշտության հիմքը (կոչվում են նաև եկեղեց. ձայնակարգեր): Համակարգը կրել է բյուզ. ութձայնի որոշակի ազդեցությունը, պատմականորեն զարգացել (X դ–ում ձայնակարգերի թվային անվանումները փոխարինվել են հինհուն. տեսությունից առնված հատուկ անուններով) և Վերածննդի դարաշրջանում հասել է ավարտուն վիճակի: Տարբերում են հիմնական (արևմտաեվրոպ. երաժշտության տեսության մեջ՝ «ավտենտիկ») և ածանցյալ («պլագալ») ձայնակարգեր:

Արմեն Միրաքյան

1547–ին շվեյցարացի երաժիշտ–տեսաբան Հ. Գլարեանը համակարգի ձայնակարգերի քանակը 8–ից հասցրել է 12–ի (հավելել է էոլական ու հոնիական ձայնակարգերը՝ ածանցյալներով): 1571–ին իտալացի Զ. Ցառլինոն, հաջորդականությունն սկսելով հոնիականից, ձայնակարգ. տոնիկաները դասավորել է դիատոնիկ շարքի դո–ից մինչև լա–ն, պարզաբանել ձայնակարգերի արտահայտչության հատկանիշները, որոնք լայնորեն դրսևորվել են «խիստ ոճի» պոլիֆոնիայում: XVII դ–ից հոնիական և էոլական ձայնակարգերը արտահայտչական առավելագույն հնարավորությունների շնորհիվ առանձնացվել, կատարելագործվել են՝ դառնալով դաս. մաժոր–մինոր հարմոնիկ համակարգի հիմնական ձայնակարգերը: Հետագայում Մ. ձ. իրենց նշանակությունը պահպանել են, սակայն գործածվել են միայն «դիպվածաբար» (Յ. Ս. Բախ, Գ. Հենդել, Լ. վան Բեթհովեն, Ֆ. Շոպեն, Յ. Բրամս): XX դ–ի 1–ին կեսին կոմպոզիտորները, ձգտելով երաժշտության ձայնակարգ. հիմքի նոր զարգացման, հաճախ դիմել են Մ. ձ–ին, քանի որ նրանք ներկայում էլ տարածված են մի շարք ժողովուրդների ժող. երաժշտության մեջ:

Ընդ Ռոբերտ Աթայանի

ՄԻՍԿԻՆ–ԲՈՒՐՋԻ [7.07.1810, Նախիջևան –2.11.1847, գ. Ասկերան (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)], աշուղ: Ապրել և ստեղծագործել է հիմնականում Գանձակում և նրա շրջակայքում: Հորինել է հայ. և թուրք. երգեր, հանդես եկել գյուղերում, նաև տիկնիկներ է խաղացրել: Կազմել է «Դավթար» (1832–ից): Նրա որոշ երգերի տեքստեր հրատարակվել են մամուլում, ընդգրկվել ժող–ներում: Պահպանվել են մի քանիսի մեղեդիները, որոնք կատարվում են, հրատարակվել են Արամ Քոչարյանի «Հայ գուսանական երգեր» (1976) ժող–ում:

ՄԻՐԱՔՅԱՆ Արմեն Վահանի (14.11.1962, Երևան–12.06.2013, Երևան), երգիչ (տենոր): Վահան ***Միրաքյանի*** որդին: Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ (1994, Մ. Հարությունյանի դասարան): 1998–ից՝ ԵՕԲԹ մեներգիչ (Առլեկին՝ Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», ևն): Հայաստանի պետ. երգչախմբի հետ կատարել է «Ազգերի հիմն» ստեղծագործությունը (1998):

Հանդես է եկել նաև մենահամերգներով. երկացանկում՝ ռուս., իտալ., նեապոլ., հայկ. երգեր, օպեր. և կամեր. ստեղծագործություններ:

Կոմիտասի անվ., իտալ. ռոմանս «Բելկանտո» (երկուսն էլ՝ 1996), Սայաթ–Նովա համահայկ. (2000, Գլխ. մրց., երեքն էլ՝ Երևան) մրցույթների դափնեկիր:

ՄԻՐԱՔՅԱՆ Վահան Օնիկի (27.04.1936, Երևան–07.05.2014, Լոս Անջելես), երգիչ (քնարադրամատիկ. տենոր): Արմեն *Միրաքյանի* հայրը: ՀՀ ժող. արտիստ (1976): Ավարտել է ԵՊԿ (1961, Թ. Շահնազարյանի դասարան), կատարելագործվել Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում (1964–67, ղեկ.՝ Ջ. Բարի): «Լա Սկալա» և Պարմի արքայական (Իտալիա) թատրոններում հանդես է եկել համերգ. մեծ ծրագրով: 1961–64 և 1967–80-ին՝ ԵՕԹԹ մեներգիչ: Դերերգերից են՝ Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Սայաթ-Նովա (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա»), Լենսկի (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Դուքս, Ալֆրեդ, Ռադամես (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Աիդա»), Ռուդոլֆ, Կավարադոսի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ», «Տոսկա»), Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն»):

1981–2005-ին ապրել է Ավստրիայում. դասավանդել է Վիեննայի կոնսերվատորիայում: 1983-ին երգչուհի Մ. Կաբալիեի հետ հանդես է եկել Վ. Բելլինիի «Նորմա» օպերայում (Պոլիոնի դերերգ): Օպեր. և կամեր. երկացանկով ելույթներ է ունեցել Վիեննայում, Համբուրգում, Միլանում, Նյու Յորքում և այլուր: Երևանում 2002-ին հանդես է եկել համերգով (որդու հետ), 2004-ին նշվել է նրա ստեղծագործ. գործունեության 45-ամյակը:

Թողարկել է 2 ձայնասկավառակ, 6 ձայներիզ: 2005-ից ապրել և ստեղծագործել է ԱՄՆ-ում:

ՄԻՐՋՈՅԱՆ Ալեքսանդր (ծ. 07.12.1984, Երևան), թավջութակահար: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (2002), ԵՊԿ (2007, Մ. Աբրահամյանի դասարան): 2007–08-ին համերգներով հանդես է եկել Իրանում. համագործակցել է Իրանի պետ. սիմֆ. նվագախմբի հետ: 2008–09-ին՝ «Ալան Հովհաննես» կամեր. նվագախմբի, 2009–10-ին՝ «Libero» լար. քառյակի, 2012-ից՝ «Բյութիֆայ Փրոջեքթ» ռոք խմբի թավջութակահար: Մասնակցել է «Շչեդրինի օրեր Հայաստանում» 9-րդ (2008, Երևան), «FADJR» 26-րդ (2011, Թեհրան) միջազգ. երաժշտ. փառատոներին:

Թողարկել է ձայնասկավառակ («Poem», 2012):Համերգներով հանդես է եկել Իրանում, ՌԴ-ում, Վրաստանում, Ավստրիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում:

«Վերածնունդ» միջազգ. մրցույթ-փառատոնի դափնեկիր (2011, Գյումրի), «Տարվա լավագույն հայ կոմպոզիտորի կատարող» Հատուկ մրց. (2011):

ՄԻՐՋՈՅԱՆ Գուրգեն Լևոնի [12(25).01.1911, Թիֆլիս–21.04.1975, Երևան], քամանչահար, մանկավարժ: Շողիկ *Մկրտչյանի* ամուսինը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): Սովորել է Թիֆլիսի Հայարտան երաժշտ. ստուդիայում (դասատու՝ Ս. Օգանեզաշվիլի): 1927–29-ին՝ Ադրբեջանի ռադիոյի մենակատար և ժող. գործիքների նվագախմբի կոնցերտմայստեր, ֆիլհարմոնիայի արլ. գործիքների նվագախմբում, 1929–31-ին՝ Հայաստանի արլ. սիմֆ. նվագախմբի, ռադիոյի ժող. գործիքների անսամբլի կոնցերտմայստեր և մենակատար, 1935–58-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների անսամբլի ղեկ., 1959–61-ին՝ Հայֆիլհարմոնիայի գեղ. ղեկ. (ստեղծել է մի շարք ինքնագործ խմբեր): 1933–37-ին դասավանդել է ԵՊԿ-ում (միաժամանակ սովորել նաև կոմպոզիցիայի բաժնում), 1945–51-ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում:

Գրել է «Կոնցերտինո», պիեսներ, մշակել երգեր ևն:

ՀԽՍՀ «Պատվո նշան» շքանշան (2):

ՄԻՐՋՈՅԱՆ Գուրգեն Հովհաննեսի [20.05(01.06).1892, Թիֆլիս–27.11.1976, Երևան], կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1950): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (աշակերտել է Գ. *Սյունուն*), ավարտել երաժշտ. ուսումնարանի (1911), կոնսերվատորիայի (1924, Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի, Ք. Քուչնարյանի դասարաններ) կոմպոզիցիայի բաժինները: Երաժշտություն է դասավանդել Տաշքենդի, Բաքվի, Թիֆլիսի հայկ., ռուս. և ադրբ. դպրոցներում, Գանձակի երաժշտ. տեխնիկումում (նաև տնօրեն): Թիֆլիսում հիմնադրել է երաժշտ. դպրոց (տնօրեն, դասատու): 1937–39-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների նվագախմբի ղեկ.: Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին (1939): 1941–43 և 1950–58-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (1950–52-ին՝ ուս. մասի վարիչ), որտեղ հիմնադրել է արլ. գործիքագիտության և գործիքավորման դասընթաց:

Գրել է սիմֆ. («Էսքիզ», «Սյուիտ», 1944), դաշնամուր. («Մինիատյուրներ», 1948, «Պրելյուդներ», 1949) երկեր, լար.

Վահան Միրաքյան



Վ. Միրաքյանը Ալֆրեդի (Ջ. Վերդիի «Տրավիատա») դերում

Ալեքսանդր Միրզոյանը ելույթի պահին

Գուրգեն Լ. Միրզոյան

Գուրգեն Հ. Միրզոյան

Էդվարդ Միրզոյան

կվարտետ (1950), կոնցերտ (1954)՝ թառի, ֆանտազիա (1956)՝ քամանչայի, ստեղծագործություններ՝ ժող. գործիքների նվագախմբի համար, երգեր (այդ թվում՝ մանկ.), խմբերգեր: Հեղինակ է մեթոդ. ձեռնարկների («Մանկական երգեր: Դաշնամուրի նվագակցությամբ» (2002) ևն:

ՀԽՍՀ «Պատվո նշան» շքանշան:

Գրկ. *Թոդջյան Խ., Գուրգեն Միրզոյան, Ե., 1970:*

ՄԻՐԶՈՅԱՆ Էդվարդ Միքայելի [12.05.1921, Գորի (Վրաստան)–05.10.2012, Երևան], կոմպոզիտոր, մանկավարժ, հաս. գործիչ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1958), ՀՀ (1963), ԽՍՀՄ (1981) ժող. արտիստ: Պրոֆ. (1965): Միքայել ***Միրզոյանի*** որդին: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1941, Վ. Տալյանի դասարան), կատարելագործվել Մոսկվայի Հայ մշակույթի տան երաժշտ. ստուդիայում (1946–48, դասատուներ՝ Գ. Ի. Լիտինսկի, Ն. Ի. Պետկո, Ն. Պ. Ռակով): 1948-ից դասավանդել է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1972–87-ին): Սաներից են Ջ. Տեր-Թադևոսյանը, Կ. Ա. Օրբելյանը, Ա. Տերտերյանը, Ս. Ջրբաշյանը, Խ. Ավետիսյանը, Ռ. Ամիրխանյանը, Լ. Չաուշյանը և ուր.: ՀԿՄ (1951–91), Հայաս-

Հատված Է. Միրզոյանի թավջութակի և դաշնամուրի սոնատից

տանի խաղաղության հիմնադրամի (1977-ից, 2009-ից՝ պատվավոր) վարչության, ՀԿՄ պատվավոր (1994-ից) նախագահ, Երևանի պատվավոր քաղաքացի (2001):

Վաղ շրջանի երկերից առանձնանում են «Ասում են, թե…» (1939) և «Երազ տեսա» (1941) ռոմանսները (երկուսն էլ՝ խոսք Ա. Իսահակյանի), «Հայրենիքն է կանչում» (1941) խմբերգը: «Հայրենական պատերազմի հերոսներին» (1944) սիմֆ. պոեմը՝ նվագախմբի համար, «Պարային սյուիտ» («Սիմֆոնիկ պարեր», 1945), «Տոնական նախերգանք» (1947) գործերը գույների հյութեղությամբ և վառ դինամիկայով մոտ են Ա. Խաչատրյանի երաժշտ. ոճին: Մ-ի լար. կվարտետը (1947) դրամատիկ. բնույթի առաջին նշանակալի երկն է հայ կամեր. երաժշտության մեջ: Ուշագրավ են նաև հայրենասիր. թեմայով կանտատները («Հայաստան», 1948, «Տոնական կանտատ», 1949, «Սովետական Հայաստան», 1951, ևն): Վարպետությամբ և հոգերան. խորությամբ առանձնանում են թավջութակի և դաշնամուրի սոնատը (1967), պոեմը (1971)՝ դաշնամուրի, միջազգ. ճանաչման արժանացած սիմֆոնիան (1956–62)՝ լար. նվագախմբի և լիտավրների, «Ինտրոդուկցիա և Անընդհատ շարժում»-ը (1957)՝ ջութակի և նվագախմբի, պոեմ-էպիտաֆիան (1988, ՀԿՄ Ա. Խաչատրյանի անվ. մրց.)՝ կամեր. նվագախմբի համար: Գրել է նաև կինոերաժշտություն («Երբ քեզ հետ են ընկերներդ», 1956, «Փլուզում», 1959, «Քաոս», 1973, «Այսօր արևոտ օր է», 1975, «Հեղկոմի նախագահը», 1977, «Աքսորական համար 011», 1978, «Խաչմերուկի դեղատունը», 1987, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

2013-ին Մ-ի անունով է կոչվել Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործ. տունը, գործում է նաև Մ-ի անվ. լար. քառյակ: 2013-ից Երևանում անցկացվում է Մ-ի անվ. պատանի ստեղծագործողների ամենամյա փառատոն:

ԽՍՀՄ «Պատվո նշան» (1956), Վ. Ի. Լենինի (1971), «Կիրիլ և Մեֆոդի» 2-րդ աստիճանի (1971, Բուլղարիա), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2001), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2001), «Պետրոս Մեծ» (2005, Գերմանիա) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» (1998), ԳԱԱ ոսկե (2006), Լ. դա Վինչիի անվ. միջազգ. (2006), Եկատերինա II-ի (2006, ՌԴ) մեդալներ:

Երկ. *Վոկալ ստեղծագործություններ, Ե., 2009:*

Գրկ. *Արազյան Թ., Էդվարդ Միրզոյան, Ե., 1963: Սանթրյան Վ., Էդվարդ Միրզոյան. խղճի և ճաշակի ասպետը [հուշապատում], Ե., 2013: Ինչ են պատմում լուսանկարները, [Ալբոմ], կազմ.՝ Ռ. Եսայան, Ե., 2014: Աստրյան Ա., Հայաստանի կոմպոզիտորների միություն-85, Ե., 2017; Тер-Симонян М., Эдвард Мирзоян, М., 1969: Епремян Л., Эдвард Мирзоян в письмах и диалогах, Е., 2012.*

Աննա Աստրյան

ՄԻՐՋՈՅԱՆ Կառլեն Գալուստի (ծ. 21.09.1937, Երևան), դիրիժոր, բանահավաք, թառահար: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1956), ԵՊԿ (1965): 1952–56-ին նվագել է Վ. Գ. Բունիի լար. քառյակում, 1957–60-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների նվագախմբում: 1969–72-ին Տաշքենդի կոնսերվատորիայում ուսումնասիրել է ուզբ. ժող. երաժշտ. գործիքները, եղել է դիրիժորի պաշտոնակատար Տաշքենդի պետ. ժող. գործիքների նվագախմբում: 1972–76-ին՝ Հայաստանի պարի պետ. անսամբլի երաժշտ. մասի ղեկ.: 1977-ին հիմնադրել է Հայաստանի ժող. գործիքների նվագախումբը (մինչև 1980-ը՝ գլխ. դիրիժոր), 1982-ին՝ «Տկզար» անսամբլը (մինչև 2001-ը՝ գեղ. ղեկ. և դիրիժոր), 2001-ից՝ Լոս Անջելեսի «Հայ քնար» ազգ. երաժշտ. գործիքների անսամբլի ղեկ.:

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի (1957, Մոսկվա) դափնեկիր:

Երկ. *Անդրադարձ հայ ազգային նվագարանների պատմափաստագրությանը և «Տկզար» համույթի գործունեությանը, Ե., 2017:*

ՄԻՐՋՈՅԱՆ (Միրզայան) Միքայել Հովհաննեսի (21.08.1888, Թիֆլիս–26.01.1958, Երևան), կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1939): Էդվարդ ***Միրզոյանի*** հայրը: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1908), սովորել երաժշտ. ուսումնարանում, ապա՝ կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում (1921, Ն. Ն. Չերեպնինի դասարան): 1921-ին Թիֆլիսում մասնակցել է Հայ երաժշտ. ընկերության հիմնադրմանը: 1928–58-ին՝ Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցի ուս. մասի վարիչ: Նրա նախաձեռնությամբ Երևանում հիմնադրվել է մանկ. երաժշտ. թատրոն (1926–28):

Գրել է 300-ից ավելի ստեղծագործություն՝ գործիք. երկեր, ռոմաններ, էստրադ. երգեր, խմբերգեր, քայլերգեր, մանկ. երաժշտ. պատկերներ («Ծիտն ու սազը», «Ճպուռն ու մրջյունը», «Մկների ժողովը», «Տատի հավերը» ևն), «Սասունցի Դավիթ» էպիկ. բալլադը, քնար. («Խոհեր», «Կուզեմ լինեմ», «Սիրերգ» ևն), զանգված. («Ծիլե արտս», «Սարի աղջիկ», «Գեղջկուհու երգը», «Բերքի երգը»), հայրենասիր. («Բանակ եմ գնում», «Բարի երթ», «Հայրենիք և սեր») երգեր: Հեղինակ է «Դպրոցական երգարանի» (1935), «Նոտային գրագիտության դասագրքի» (1935), «Երաժշտական գրագիտության և երգի ձեռնարկի» (1955): Հրատարակվել է Մ-ի «Երգեր և ռոմաններ» (1966, կազմ.՝ Ռ. Աթայան, Է. Միրզոյան) ժող-ը:

Երևանում գործում է Մ-ի անվ. երաժշտ. դպրոց:

«Պատվո նշան» շքանշան:

Գրկ. *Գրիգորյան Ք., Միքայել Միրզայան, Ե., 1969:*

ՄԻՐԻՄԱՆՈՎԱ (Միրիմանյան) Մարգարիտա Հովհաննեսի (12.12.1894, Թիֆլիս–20.08.1985, Փարիզ), դաշնակահարուհի: Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում, ապա սովորել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1910–12), կատարելագործվել Վիեննայում (աշակերտել է Լ. Գոդովսկուն): 1910-ական թթ-ին համերգներով շրջագայել է Ս. Պետերբուրգում, Թիֆլիսում, Բաթումում, բարեգործ. համերգով՝ Երևանում: 1921-ից ապրել է արտերկրում (1945-ից՝ Փարիզում): Մտերիմ է եղել անվանի երաժիշտներ Մ. Ռավելի, Մ. Դյուպրեի և ուր. հետ: Հանդես է եկել մենահամերգներով և սիմֆ. նվագախմբերի հետ՝ դիրիժորներ Բ. Փաումգարտների, Վ. Շալկի և ուր. ղեկավարությամբ: Նվագացանկում՝ հիմնականում Ֆ. Շոպենի, Ֆ. Շուբերտի, Ա. Սկրյաբինի, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի երկերից: 1969-ին Բեռլինում Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնակատարությանը կատարել է նրա «Պարերը»:

«Կոլումբիա» ֆիրման Մ-ի կատարմամբ թողարկել է ձայնասկավառակ:

Բոլոնիայի ֆիլհարմոնիկ ակադ-ի դիպլոմ (1930):

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ելենա Հակոբի (12.04.1925, Լենինական–09.03.2017, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1969): Հասմիկ ***Հացագործյանի*** մայրը: Ավարտել է ԵՊԿ (1953): Նույն թվականից՝ ԵՕԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Աիդա, Լեոնորա (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր»), Մարո (Ա. Բաբաևի «Արծվաբերդ»), Տատյանա (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին») ևն: Հանդես է եկել համերգներով, եղել է մի շարք հայ կոմպոզիտորների (Հ. Ստեփանյան, Գ. Արմենյան և ուր.) երկերի առաջին կատարողը:



Կառլեն Միրզոյան

Միքայել Միրզոյան

Ելենա Միքայելյանը Արևիկի դերում (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»)



Ռոբերտ Մլքեյանը ելույթի պահին

Մխիթար Այրիվանեցու «Գանձեր և տաղեր» գրքի (2005) կազմողը

ՄԼՔԵՅԱՆ Ռոբերտ Գրիշայի (ծ. 21.06.1961, Երևան), խմբավար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Ավարտել է ԵՊԿ խմբավարության (1989), դիրիժորության (1991) բաժինները: Կոնսերվատորիայի կոմպոզիցիայի և երաժշտագիտ. բաժինների ուսանողների երգչախմբի (Հանրապետ. մրցույթի Մեծ մրց.) ղեկ., 1992–2000-ին՝ Գյումրիի սիմֆ. նվագախմբի և կամեր. երգչախմբի, 2000-ից՝ Հայաստանի կամեր. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1995-ին հիմնադրել է «Հայ ֆոլկ» վոկալ խումբը, մասնակցել մրցույթների և փառատոների: Հյուրախաղերով հանդես է եկել Թբիլիսում, Մոսկվայում, նաև Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Սիրիայում, ԱՄՆ-ում և այլուր: Եղել է «Էքսպո-2000» համաշխ. ցուցահանդեսի հայաստան. օրերի երաժշտ. մասի գեղ. ղեկ. (Հանովեր):

ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» (2016) մեդալներ, «Սայաթ-Նովա» համահայկ. երգի փառատոնի 1-ին մրց. (2000, Երևան):

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ (1230/35, Երևան–1297/1300, Այրիվանք, թաղված է իր ճգնարան-քարայրի շեմին), մատենագիր, պատմիչ, մանկավարժ, վարքագիր, բանաս-

Հատված Մխիթար Սեբաստացու «Աղաչեմ զքեզ» տաղից

տեղծ, երաժիշտ: 1265–75-ին սովորել է Խոր վիրապի վարդապետարանում, ապրել և գործել է Օրբելյաններին ենթակա հոգևոր կենտրոններում, մինչև 1289-ը ղեկավարել է Պռոշյանների հոգևոր կենտրոնների եկեղեց. գործերը: 1253–73-ին գրել է գանձեր, աղոթքներ, վարքեր, որոնք տեղ են գտել համապատասխան ծիս. ժող-ներում:

Մ. Ա. կազմել է վարդապետ. բարձրագույն դպրոցներում եռյակ գիտությունների տես., իմաստասիր., աստվածաբան. առարկաների դասավանդման համար գրկ-յան ուս. ծրագիր, որը գիտ. աշխարհում հայտնի է «Կարգադրութիւն գրոց սրբոց...» վերնագրով և թարգմանվել է մի քանի լեզուներով: 1283-ին ի մի է բերել այդ գրկ-յունը՝ իր ընդօրինակությամբ, ըստ որի՝ կազմել է 2000-էջանոց ժող-ձեռնարկ քրեստոմատիա (Ճառընտիր, Մոնդ., ձեռ. № 1500): Այն եզակի արժեք ունի հայ, նաև միջնադար. համաշխ. գրական հուշարձանների շարքում: Մ. Ա-ու հեղինակ. հոգևոր երգերի չափածո ժող-ն՝ Գանձարանը (1268), արժանացել է մեծ ճանաչման: Ժող-ի հիմնական խմբում ամփոփված են 2 գանձ, 2 երգ և չափածո ինքնագիր հիշատակարան (Մոնդ., ձեռ. № 4011, 6529):

Նա նաև եղանակավորել է իր հեղինակած գանձերը, գրել է Ստեփանոս Սյունեցուն նվիրված շարական (տեղն անհայտ է): Էլեոնորա Հարությունյանի աշխատասիրությամբ լույս է ընծայվել Մ. Ա-ի «Գանձեր և տաղեր» գիրքը (2005):

Գրկ. *Յովսէփեան Գ., Մխիթար Այրիվանեցի: Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 1931: Հարությունյան Է., Մխիթար Այրիվանեցի, Ե., 1985:*

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ (07.02.1676, Սեբաստիա–27.04.1749, Վենետիկ), հաս., գիտության, մշակույթի, եկեղեց. գործիչ, Մխիթարյան միաբանության հիմնադիրը: 1685– 91-ին սովորել է ծննդավայրի Սբ Նշան, 1691–92-ին՝ Էջմիածնի, Սևանի, Կարինի վանքերում: 1696-ին ձեռնադրվել է քահանա, 1699-ին՝ վարդապետ: 1700-ին Կ. Պոլսում իր շուրջը համախմբել է մոտ 15 աշակերտ և գաղտնի, խուսափելով լուսավորչական եկեղեցու հալածանքներից, կաթոլիկություն քարոզել նրանց: 1701-ին համախոհների և աշակերտների հետ հիմնել է միաբանություն: Խուսափելով թուրք. հարձակման վտանգից՝ Մ. Ս-ու միաբանությունը 1715-ին տեղափոխվել է Վենետիկ և 1717-ին ծերակույտի արտոնագրով հաստատվել Ս. Ղազար կղզում: Հաջողությամբ զբաղվել է նաև գիտամատենագիտ. աշխատանքներով, ղեկավարել իր սանների բանասիր. հետազոտությունները, ուղենշել նրանց հետագա գիտ. գործունեությունը,

կատարել թարգմանություններ, հրատարակել գրքեր:

Մ. Ս-ու հայագիտ. խոշոր ներդրումը «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1–2, 1749–69) մեծածավալ աշխ-ն է (ավելի քան 100 հզ. բառահոդված):

Մ. Ս-ու մյուս ուշագրավ ստեղծագործությունը «Տաղարանն» է («Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» գրքում, 1727), որտեղ ամփոփված ոտանավորները թեպետ առավելապես կրոն. բովանդակություն ունեն, սակայն ժամանակի հայ քնարերգության մեջ ուրույն տեղ են գրավում: Դրանց մի մասը որպես շարականներ երգվում են առ այսօր (երաժշտությունը՝ Մ. Ս-ու): Մ. Ս. գրել է նաև կրոնաաստվածաբան., կանոնական, մեկնաբան. բնույթի մի քանի երկեր:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Անահիտ Հարությունի (ծ. 04.03.1965, ք. Էջմիածին), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2003): Սովորել է Էջմիածնի երաժշտ. դպրոցի, ապա՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի բաժիններում, ավարտել ԵՊԿ վոկալ բաժինը (1990, Գ. Գասպարյանի դասարան): 1998-ից դասավանդում է ԵՊԿ-ում: 1991-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի.

Ա. Մխիթարյանը Դեզդեմոնայի դերում (Ջ. Վերդիի «Օթելլո»)

դերերգերից են՝ Կարինե, Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա», «Արշակ Երկրորդ»), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Պաոլինա, Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս», «Լյուչիա դի Լամերմուր»), Դեզդեմոնա, Վիոլետտա (Ջ. Վերդիի «Օթելլո», «Տրավիատա»), Կոնստանցա (Վ. Ա. Մոցարտի «Առևանգում հարեմից»), Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա») ևն: Համերգ. երգացանկում՝ Կոմիտասի, նաև եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններից, հայ հոգևոր երգեր:

Վոկալիստների Ֆ. Վինյասի անվ. [1990, Բարսելոն (Իսպանիա)], Վ. Բելլինիի անվ. [1991, Սիցիլիա (Իտալիա)], «Գայարե-Կարերաս» (1996, Իսպանիա) միջազգ. մրցույթների Մեծ և 1-ին մրց-ներ, ոսկե մեդալներ, Կատալոնիայի կառավարության Հատուկ մրց. (1990):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Մարջան Սամիկոնի (07.04.1918, Երևան–12.05.1999, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: Ռոբերտ *Աթայանի* կինը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1983): Սովորել է ԵՊԿ-ում, ավարտել ՄՊԿ (1947, Կ. Ն. Իգումնովի դասարան): 1947-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1985-ից): Հանդես է եկել մենահամերգներով և սիմֆ. նվագախմբերի հետ, եղել պար. ստեղծագործությունների ճանաչված կատարող: Պար. երաժշտությունը միավորել է ամբողջ., ներդաշնակ շարքում, որտեղ բացառել է դինամիկ. տեմպերի կտրուկ փոփոխությունները: Գործիք. ձայնառիթմերն իրագործել է վարպետորեն, տեմբրը, ռեգիստրները ներդաշնակել է այլ տարրերի հետ: Կատարել և ձայնագրել է Կոմիտասի դաշնամուր. բոլոր ստեղծագործությունները:

2003-ին Երևանում անցկացվել է Ռ. Աթայանի և Մ. Մխիթարյանի անվ. պատանի դաշնակահարների 1-ին մրցույթը:

Գրկ. *Бабаян Ш., Марджан Мхитарян, Е., 2002.*

ՄԿՐՏՉՅԱՆ Արտաշես Աշոտի (ծ. 18.04.1951, Երևան), ջութակահար, մանկավարժ: ԵՊԿ պրոֆ. (1996): Սովորել է Երևանի Պ.Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում (1958–65), ավարտել Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ դպրոցի (1965), ԵՊԿ (1974) ջութակի բաժինները և ասպիրանտուրան (1974, ղեկ.՝ Ժ. Տեր-Մերգերյան): 1975-ից՝ ֆիլհարմոնիայի մենակատար, 1978-ից՝ Երևանի կամեր. նվագախմբի կոնցերտմայստեր, 1982–2002-ին՝ Ա. Խաչատրյանի անվ. քառյակի գեղ. ղեկ. և 1-ին ջութակ: Որպես մենակատար և քառյակի կազմում, սիմֆ. և կամեր. նվագախմբերի հետ շրջագայել է Ֆրանսիայում, Նորվեգիայում, Գերմանիայում, Անգլիայում, Շվեյցարիայում, Հարավսլավիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Սիրիայում և այլուր: Գրել է 14 պիես՝ ջութակահարների անսամբլի համար, կադենցիաներ,



Միխթար Սեբաստացի

Մարջան Միխթարյան

Արտաշես Մկրտչյանը ելույթի պահին

Ելենա Մկրտչյան

Կարինե Մկրտչյանը ելույթի պահին

Շողիկ Մկրտչյան

խմբագրել է հայ կոմպոզիտորների մի շարք գործեր՝ կվարտետներ, կոնցերտներ, սոնատներ, պիեսներ ևն: Մասնակցել է միջազգ. փառատոների Պրահայում, Ս. Պետերբուրգում, Վենետիկում և այլուր:

Ձութակահարների այսրկովկաս. (1969), ջութակահարների (1972), Ա. Պ. Բորոդինի անվ. (1983) քառյակների համամիութ. փառատոների դափնեկիր:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2011), Մ՚Ն ոսկե (2011) մեդալներ:

ՄԿՐՏՉՅԱՆ Ելենա (Լինա) Վարդանի (Վլադիմիրի) (ծ. 1955, Օդեսա), երգչուհի (կոնտրալտո): Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ը (1977), ՄՊԿ մեներգեցողության բաժինը (1979), Մոսկվայի Թատերարվ-ի պետ. ինստ-ը (1982): Ձայնի եզակի դիապազոնն ընդգրկում է ամենացածր կոնտրալտոյից մինչև ամենաբարձր սոպրանոյի նոտաները: Երգացանկում՝ XIII դ-ի իտալ. և հոգևոր երգերից մինչև ժամանակակից կոմպոզիտորների 800-ից ավելի գործեր:

Մ. ռուս. հոգևոր երգեցողությունը ներկայացրել է Վատիկանում, Գերմանիայում մասնակցել է «Շուբերտիանա» ազգ. փառատոնին: Բարեգործ. համերգներով հանդես է եկել Գերմանիայում, Շվեյցարիայում, Լեհաստանում, Իտալիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Հոլանդիայում: 1996-ին Մոսկվայի «Նոր օպերա» թատրոնի նվագախմբի հետ, «Ընդհատված սրինգ» բարեգործ. ակցիայի շրջանակում, հանդես է եկել Նյու Յորքի «Քառնեգի Հոլլ» համերգասրահում (ի նպաստ Սպիտակի 1988-ի երկրաշարժից տուժածների): Նրա համերգները Փարիզում (1998) բարձր են գնահատել ֆրանսիացի երաժշտաքննադատները և համեմատել ռուս ճանաչված երգիչ Ֆ. Ի. Շալյապինի փարիզյան առաջին ելույթի հետ: Մասնակցել է Ա. Տերտերյանի հիշատակին նվիրված վոկալ երաժշտության երեկոներին: Վարում է «Վերադարձ հայրենիք» հոգևոր-լուսավորչ. հեղինակ. հաղորդաշարը («Սուրբ Սերաֆիմ Սարովսկու հանրագիտարան» հիմնադրամի մեդալ):

«Հայրենական մշակույթին անշահախնդիր և անձնուրաց ծառայության համար» Պուշկինի Յարսկոսելոյան մրց. (1996):

ՄԿՐՏՉՅԱՆ Կարինե Թաթոսի (ծ. 19. 08. 1954, Լենինական), երգչուհի (սոպրանո), մանկավարժ: Ավարտել է Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. ուսումնարանի (1976, դասատու՝ Վ. Աթոյան), ԵՊԿ (1981, Ա. Սարաջյանի դասարան) երգեցողության բաժինները: 1981–97-ին դասավանդել է Ք. Կարա-Մուրզայի անվ. ուսումնարանում (վոկալ բաժնի վարիչ՝ 1988–97-ին), 1997–2006-ին՝ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում (ամբիոնի վարիչ՝ 2003–2005-ին), 2005-ից (միաժամանակ)՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2016-ից), 2007-ից (միաժամանակ)՝ Երևանի Ռ. Անդրեասյանի անվ. երաժշտ. դպրոցում: Մենահամերգներով հանդես է եկել Գյումրիում, Վանաձորում, Երևանում, Թբիլիսիում, Գյումրիի կամեր. նվագախմբի հետ՝ Մերձբալթ. երկրներում (1986): 1982-ին Լենինականում հանդես է եկել Անուշի դերերգով (Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրման 70-ամյակին): Համերգ. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Հ. Գ. Հենդելի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Շուբերտի, Ֆ. Մենդելսոնի, Ռ. Շումանի, Յ. Բրամսի, Ջ. Վերդիի, Վ. Բելլինիի, Պ. Ի. Չայկովսկու, Ս. Վ. Ռախմանինովի, Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Է. Միրզոյանի, Գ. Չթչյանի և ուր. ստեղծագործություններից: 2008-ին ՀՀ և սփյուռքահայ կոմպոզիտորներին նվիրված համահայկ. համերգին կատարել է իրանահայ կոմպոզիտոր Վ. Վահրամյանի ստեղծագործությունները: 2008-ին վարպետության դասեր է վարել Կապանի ու Գյումրիի երաժշտ. դպրոցներում: Սանեերից են Հ. Կարապետյանը, Ս. Ասմանգուլյանը, Մ. Գրիգորյանը, Գ. Թումանյանը, Լ. Առաքելյանը և ուր.: Մասնակցել է երաժիշտ-կատարողների այսրկովկաս. VII (1981, դիպլոմ) և Մ. Ի. Գլինկայի անվ. մեներգիչների համամիութ. (1981, Մինսկ, 1983, Երևան) մրցույթներին:

Հեղինակ է «XX դարի արտասահմանյան կոմպոզիտորների երգեր և ռոմանսներ» (սոպրանոյի համար, 2008), «Ջ. Վերդի. արիաներ սոպրանոյի համար» (2015) նոտ. ժող-ների:

ՄԿՐՏՉՅԱՆ Շողիկ Հովնանի [23. 09.1911, գ. Ընձակ (Վանի նահանգի Գյավաշ գավառ)–03.07.2000, Երևան], երգչուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): Գուրգեն Լ. *Միրզոյանի* կինը: Ավարտել է Երևանի երաժշտ. ուսումնարանը (այժմ՝ Ռ. Մելիքյանի անվ.), ԵՊԿ վոկալ բաժինը (1931): 1926-ից՝ հայկ. ռադիոյի առաջին, 1937–72-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների

անսամբլի մեներգչուհի: Երգացանկում՝ ժող., աշուղ. («Հայոց աղջիկներ» ևն) երգեր. կատարումներն աչքի են ընկել խոր հուզականությամբ, ազգ. վառ շեշտվածությամբ, ինքնատիպ մեկնաբանությամբ:

Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ բազմաթիվ քաղաքներում և արտերկրում: Մասնակցել է Մոսկվայում հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակներին (1939, 1956):

Այսրկովկաս. (1934) և ԽՍՀՄ (1936) ժողովուրդների ստեղծագործության ստուգատեսների 1-ին մրց-ներ, Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

Գրկ. *Պետրոսյան Մ., Շողիկ Մկրտչյան [կյանքն ու ստեղծագործությունը], Ե., 1991:*

ՄԿՐՏՉՅԱՆ (Սարգսյան) Ռաիսա Հրանտի (ծ. 25.02.1942, ք. Սևան), երգչուհի: ՀՀ ժող. արտիստ (2006): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1968): 1969-ից դասավանդում է Ա. Բաբաջանյանի անվ.

Ռ. Մկրտչյանը ելույթի պահին

երաժշտամանկավարժ. ուսումնարանում (այժմ՝ քոլեջ, դաշնամուր), 2002-ից՝ ԵՊԿ ջազի բաժնում (էստրադ. երգ): 1968-ից՝ Հայաստանի ռադիոյի էստրադ. սիմֆ. նվագախմբի մեներգչուհի: Հանդես է եկել նաև «Երիտասարդություն», ապա՝ «Կոռունկ» անսամբլներում. երգացանկում՝ Ա. Բաբաջանյանի, Ա. Աճեմյանի, Կ. Օրբելյանի, Վ. Բալյանի, Խ. Ավետիսյանի, Մ. Մավիսակալյանի և ուր. ստեղծագործություններից: Համագործակցել է ռուս, ուկրաինացի, վրացի կոմպոզիտորների (Ե. Գ. Մարտինով, Մ. Միրկով, Ի. Վ. Յակուշենկո, Վ. Միգուլիա, Մ. Պարցխալաձե, Մ. Կաժլաև և ուր.) հետ:

Ձայնագրել է 400-ից ավելի երգեր, որոնց զգալի մասը պահվում է հայկ. ռադիոյի ոսկե ֆոնդում («Ազգ փառապանծ», «Հայ աստղեր», «Մեր սիրելի Երևան», «Ջյունաթափ» ևն): Հյուրախաղերով շրջագայել է բազմաթիվ երկրներում, հանդես եկել Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա»-ում, «Քառնեգի Հոլլ», Բուենոս Այրեսի «Կոլոն» և այլ համերգասրահներում: Համագործակցել է ճանաչված երաժիշտների հետ (Յ. Վ. Սիլանտև, Դեռբեկ, Բարխեն, Բաբիչ), թողարկել բազմաթիվ ձայնասկավառակներ: Երևան ք-ի պատվ. քաղաքացի (2015):

Ռաիսա Մկրտչյան

Միջազգ. փառատոների դափնեկիր և մրցանակակիր (Երևան, Սոչի, 1967, Մոսկվա, Մինսկ, 1971, «Սոպոտ» միջազգ. մրցույթ, 1975, Լեհաստան): ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

ՄՅՈՒԶԻՔԼ (անգլ.՝ musical), երաժշտաբեմ. ստեղծագործություն՝ առավելապես կատակերգ. բնույթի, որտեղ օգտագործվում են էստրադ. և կենցաղ. երաժշտության, օպերայի և օպերետի, խորեոգրաֆիայի արտահայտչամիջոցներ: Մ-ի բնորոշ գծերից է ընկալման համար ոչ բարդ գեղ. միջոցներով դրամատուրգիական լուրջ խնդիրներ լուծելու միտումը: Սկզբնավորվել է ԱՄՆ-ում XIX դ-ի վերջին, լայնորեն տարածվել ԱՀՊ-ից հետո: Ճանաչված են Ջ. Գերշվինի «Քեզ եմ երգում» (1931), Ռ. Ռոջերսի «Օկլահոմա» (1943), «Երաժշտության հնչյուններ» (1959), Է. Բեռլինի «Վերցրու հրացանը, Էննի» (1946), Ֆ. Լոուի «Իմ չքնաղ լեդի» (1956), Լ. Բեռնստայնի «Վեստսայդյան պատմություն» (1957), Լ. Բարտի «Օլիվեր», «Մեզգի Մեյ» (1960-ական թթ.) Մ-ները:

Հովհաննես Մյուհենտիսյան

Հայ կոմպոզիտորներից Մ-ներ են գրել Ռ. Ամիրխանյանը («Ատամնաբույժն արևելյան», ըստ Հ. Պարոնյանի, 1976, «Շախ և մատ»), մանկ. «Դինգ-դոնգ» (1979), Ս. Ալեքսանյանը («Մոխրոտը», ըստ Շ. Պեռոյի), Վ. Աճեմյանը («12-րդ գիշեր», ըստ Վ. Շեքսպիրի) և ուր.:

ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ Հովհաննես Գևորգի [21.02(04).03.1810, Կ. Պոլիս–17 (29).11.1891, Կ. Պոլիս], տպարանատեր-հրատարակիչ, հայկ. նոր տպատառերի ստեղծող: Ավարտել է Կ. Պոլսի Սկյուտարի վարժարանը: Ստացել է երաժշտ. կրթություն, նվագել է դաշնամուր, աշակերտել է Համբարձում *Լիմոնճյանին*, նրա ղեկավարությամբ ուսումնասիրել է արլ. և հայ երաժշտության տեսությունը, տիրապետել նոր հայկ. ձայնագրությանը: Ստեղծել է Հ. Լիմոնճյանի նոտ. համակարգի նշանների տպագր. ձևերը, ձուլել կաղապարներ: Ա. Հովհաննիսյանի հետ պաշտպանել ու տարածել է Հ. Լիմոնճյանի համակարգը:



«Շարական հոգևոր երգոց...» գրքի (1853, հրատարակիչ՝ Հ. Մյուհենտիսյան) տիտղոսաթերթը

Գրել է ուսումնասիրություն արմ. նոտագրության մասին (մի հատված տպա-

Ալեքսանդր Մնացականյան

Աննա Մնացականյան

Ռաֆայել Մնացականյան

գրվել է Թեոդիկի «Ամենուն տարեցոյց»-ում, 1914): Ծրագրել էր հայկ. եկեղեց. երաժշտությունը տպագրել հայկ. տառերով, պատրաստել է տառամայրեր (մատրիցա):

1839-ին՝ Սկյուտարի ճեմարանի տպարանատերը, 1844–45-ին հիմնադրել է սեփ. տպարան, ապա՝ գրաձուլարան, որտեղ տպագրվել են նաև ժամանակի երաժշտ. գրականության հրատարակություններ:

Գրկ. *Թեոդիկ, Տիպ ու պատ, ԿՊ, 1912, էջ 73–80: Հիսարլեան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց. 1768–1909, ԿՊ, 1914, գլուխ Բ.:*

ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ Վահրամ Գրիգորի (1895, Կ. Պոլիս–1952, Կ. Պոլիս), ջութակահար, մանկավարժ: Սշակել է ջութակի ուսուցման ուրույն մեթոդ (հրտ.՝ «Études d'extensions» վերնագրով), որով շուրջ 30 տարի դասավանդել է Կ. Պոլսում: Հիմնադրել և 20 տարի ղեկավարել է սիմֆ. նվագախումբ, հանդես եկել բազմաթիվ համերգներով. երկացանկում՝ եվրոպացի անվանի կոմպոզիտորների (Լ. վան Բեթհովենի և ուր.) ստեղծագործություններից:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ալեքսանդր Դերենիկի (03.09.1936, Երևան–08.01.2013, Ս. Պետերբուրգ), կոմպոզիտոր, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1984): Պրոֆ. (1988): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը, 1961-ին՝ Լենինգրադի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (Օ. Ա. Եվլախովի դասարան) և նվագախմբ. (ջութակ, Յ. Ի. Էյդլինի, Բ. Լ. Գուտնիկովի դասարաններ) բաժինները, ասպիրանտուրան (1964, ղեկ.՝ Դ. Դ. Շոստակովիչ): 1965-ից դասավանդել է նույն կոնսերվատորիայում (1973-ից՝ դեկան, ապա՝ ամբիոնի վարիչ):

Գրել է պոեմ՝ ջութակի և դաշնամուրի (1954), սյուիտ (1955)՝ 2 ջութակի, ալտի և թավջութակի, 2 պրելյուդ (1955)՝ դաշնամուրի, անդանտե (1955)՝ լար. նվագախմբի, սոնատ՝ ֆլեյտայի և դաշնամուրի, «Ստրոֆաներ»՝ կլառնետի, պոեմ (1961)՝ նվագախմբի համար, վարիացիաներ (1956), սյուիտ (1957), կվարտետներ, «Պասսակալիա» (1962), 3 սիմֆոնիա (1-ինը՝ 1963, 2-րդ խմբ., 1966, 2-րդը՝ 1964, 2-րդ խմբ., 1968, 3-րդը՝ 1971), «Կոնտրաստներ»՝ Դ. Դ. Շոստակովիչի թեմաներով (2005), երգեր (Յ. Ս. Գոլյակովի և ուր. խոսքերով), խմբերգեր (Հ. Թումանյանի խոսքերով), կինոերաժշտություն («Երկու տոմս ցերեկային սեանսի համար», «Շրջան», «Ստիկանության սերժանտը», «Հավերժության նշան», «Ձյունը կանաչ դաշտերի վրա», «Հիշողություն», «Լյուդմիլա», «Սինոմախի գլխարկը», «Կար-չկար մի բժիշկ» ևն):

Դ. Դ. Շոստակովիչի անվ. մրցույթի դափնեկիր:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Աննա Միքայելի [03(15).10.1884, Բաքու–01.06.1951, Երևան], դաշնակահարուհի, մանկավարժ: Ավարտել է Ժնևի կոնսերվատորիան (1907, Վ. Վիբերգի դասարան, ոսկե մեդալ), կատարելագործվել Շտեռնի (Բեռլին) կոնսերվատորիայում (1907–10, Մ. Կրաուզի դասարան), հաճախել է նաև Ժնևի համալսարանի գրկ-յան պատմության դասընթացներին:

1911–20-ին դասավանդել է Կրոնվելդի դասընթացներում, Բաքվի ժող., ապա՝ պետ. կոնսերվատորիաներում: 1921-ին հրավիրվել է Երևան, մասնակցել երաժշտ. ստուդիայի, ապա՝ կոնսերվատորիայի հիմնադրման աշխատանքներին (1923):

1923–51-ին դասավանդել է ԵՊԿ-ում (1938-ից՝ դաշնամուրի ամբիոնի առաջին վարիչը, պրոֆ.՝ 1934-ից), միաժամանակ՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում և Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում:

Նրան աշակերտել են Մ. Ղամբարյանը, Վ. Սարգսյանը, Վ. Ահարոնյանը, Ա. Զաքարյանը, Գ. Չթչյանը, Ն. Խանզադյանը, Ա. Ավդալբեգյանը, Վ. Չախմախսազյանը: Թեմատիկ համերգներով ելույթներ է ունեցել կոնսերվատորիայում, կամեր. անսամբլների հետ: Հանդես է եկել նաև Ե. Խոսրովյանի հետ (4 ձեռքով). երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի սիմֆոնիաների փոխադրումներից:

Գրկ. *Будагян А., Анна Мнацаканян в документах, высказываниях и фотографиях, Е., 2017.*

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ռաֆայել (ծ. 1952, Թեհրան), դաշնակահար: Նախն. երաժշտ. կրթությունն ստացել է Թեհրանում, ապա կատարելագործվել Լոս Անջելեսում, Նյու Յորքում, Լոնդոնում, Իտալիայում: Պատանեկան տարիներից համերգներով հանդես է եկել Իրանում, ԱՄՆ-ում, Լոնդոնում, Փարիզում և այլուր: Արժանացել է մրց-ների («Sion Air»-ի մրց.՝ 1973, Շվեյցարիա, ևն): 1976-ին Թեհրանում Առնո *Բաբաջանյանի* հետ համերգում կատարել է Բաբաջանյան-Հարությունյանի «Հայկական ռապսոդիան» (2 դաշնամուրի համար): Մ., որպես դաշնակահար, հանդես է եկել նաև եռյա-

կի կազմում (ջութակահար՝ Խ. Բաբայան, թավջութակահար՝ Ա. Զահիրեդդին). երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Ա. Դվորժակի, Յ. Բրամսի և ուր. երկերից: 2016-ին Յ. Ա. Բախի, Ֆ. Շուբերտի, Ֆ. Շոպենի ստեղծագործությունների կատարումով հանդես է եկել Ֆրանս. «Ֆաջր» միջազգ. երաժշտ. փառատոնում:

ՄՆԴՈՅԱՆՅ Ալեքսանդր Աշոտի (ծ. 17.08.1949, Երևան), դաշնակահար, մանկավարժ: ՌԴ վաստ. արտիստ (1991): Պրոֆ. (2004): 1960-ին ընդունվել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոց, ապա տեղափոխվել է ՄՊԿ-ին կից Կենտր. երաժշտ. դպրոց (դասատու՝ Ե. Պ. Խովեն), որն ավարտել է 1968-ին, ապա՝ ՄՊԿ (1973, Բ. Մ. Դավիդովիչի դասարան): 1973–76-ին ՄՊՀ կոնցերտմայստեր, այնուհետև փորձաշրջան է անցել Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ում (1976, ղեկ.՝ Ա. Լ. Յոխելես):

Մ-ի կատարումները (մեծակտավ դաշնամուր. գործերից մինչև մանրանվագներ) առանձնանում են մեկնաբանության խորությամբ և լրջությամբ: Որպես մենակատար, նաև նվագախմբերի հետ հյուրախաղերով շրջագայել է արտերկրում: Համագործակցել է դիրիժորներ Վ. Ա. Գերգիևի, Դ. Ի. Կախիձեի, Ֆ. Շ. Մանսուրովի, Վ. Ժորդանիայի, Ա. Ի. Ռուդինի և ուր., Պ. Ի. Չայկովսկու անվ. քառյակի, «Մոսկվայի վիրտուոզներ» անսամբլի հետ: Երկացանկում՝ Մ. Պ. Մուսորգսկու, Ս. Ս. Պրոկոֆևի, Ս. Վ. Ռախմանինովի, Ա. Ն. Սկրյաբինի, Պ. Ի. Չայկովսկու, Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Խաչատրյանի, Ա. Գ. Շնիտկեի և ուր. երկերից: 1991-ից դասավանդում է ՄՊԿ-ում:

Վ. Կլայբեռնի անվ. դաշնակահարների միջազգ. մրցույթի դափնեկիր (1977, ԱՄՆ):

ՄՆՋԱԽԱՂ, թատեր. ներկայացման տեսակ, որն ընթանում է երաժշտությամբ, գեղ. կերպարներն ստեղծվում են առանց խոսքի՝ արտահայտիչ շարժումների, ժեստերի, դիմախաղի միջոցով: Հայտնի է եղել Հին Եգիպտոսում և Հին Հունաստանում, մեծ ժողովրդականություն ունեցել Հին Հռոմում: Ներկայացմանը մասնակցել են երգչախումբ և գործիք. անսամբլ:

Մ. տարածվել է նաև առաջավորասիական երկրներում և IV–VII դդ-ում դարձել պրոֆեսիոնալ թատրոնի հիմնական տեսակներից Կապադովկիայում, Բյուզանդիայում, Ասորիքում, Հայաստանում: Վերածննդի դարաշրջանում, մասնավորապես՝ Իտալիայում տարածվել են այլաբան. բովանդակության Մ-եր, որոնք ընդգրկվել են պալատ. հանդիսավոր ինտերմեդիաներում, ավելի ուշ՝ թատեր. ներկայացումներում՝ դառնալով օպերայի և բալետի ձևավորման հիմքերից: Օգտագործվել են նաև ժող. թատրոնում՝ միստերիաներում, կոմեդիա դել արտեում, տոնավաճառ. ներկայացումներում ևն:

Տեսարան Յուրի Կուպրանյանի «Գահի ոգին» (2015) ներկայացումից

Հնում բոլոր ժողովուրդների թատրոնները (առհասարակ թատեր. բանահյուսությունը) հարուստ էին Մ-ի տարրերով: Նոր ժամանակներում Մ. թատեր-էստրադ. ժանր է:

1972-ից գործում է Երևանի մնջախաղի պետ. թատրոնը:

ՄՇԱԿՈՒՄ երաժշտության մեջ, 1. երաժշտության զարգացման տեսակ, որը կապված է թեմայի առանձին տարրերի մասնատման ու դրանց ազատ վերափոխման հետ: 2. Սոնատ. ձևի միջին բաժինը, որտեղ գերակշռում է զարգացման մշակուն տեսակը: 3. Երաժշտ. ստեղծագործության նոտային տեքստի բնօրինակի յուրաքանչյուր փոփոխություն, որն ունի որոշակի նպատակներ (հարմարեցում սիրողների կատարման, ուսուցողական-մանկավարժության մեջ օգտագործելու համար ևն):

Ալեքսանդր Մնդոյանց

XIX–XX դդ-ում կարևորվել է ժող. մեղեդիների Մ., որը մեծ մասամբ եղել է այդ մեղեդիների ներդաշնակումը: Ժող. մեղեդիներ են մշակել Յ. Հայդնը, Լ. վան Բեթհովենը, Յ. Բրամսը, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը, Ա. Կ. Լյադովը, Ք. Կարա-Մուրզան, Ն. Տիգրանյանը և ուր.: Երաժշտ. նյութի այնպիսի օգտագործումը, երբ կոմպոզիտորը ցուցաբերում է ստեղծագործ. եռանդուն միջամտություն և հիմնովին հարստացնում է սկզբնաղբյուրի կերպար. բովանդակությունը, ապա այն դուրս է գալիս սովորական Մ-ան սահմաններից

Միքայել Մոդրեկիլի ժող-ի (994–1001) 1 էջ

(օր.՝ Կոմիտասի՝ ժող. սկզբնաղբյուրներից սերած ստեղծագործությունները):

ՄՈԴԵՌՆԻԶՄ (ֆրանս.՝ modernisme, < moderne – նորագույն, ժամանակակից), XX դ–ի գեղ. հոսանք, որի հիմնական հատկանիշը դաս. արվ–ի գիտ. գեղ. չափանիշներից և սկզբունքներից որոշակիորեն նահանջելն է: XX դ–ի սկզբին «Մ.» եզրույթը կիրառվել է ուշ երաժշտ. ռոմանտիզմի (Մ. Ռեգեր, Գ. Մահլեր, Ռ. Շտրաուս) և իմպրեսիոնիզմի նշանակությամբ՝ նրանց հատուկ տոնայնական հարմոնիայի, դաս. ձևերի, ավանդ. մետրի, ռիթմի ննի հետ: Ռոմանտիկ ավանդույթների օգտագործմանը զուգահեռ մշակվել է սեփ. ոճ. համակարգ: Ավելի ուշ Մ. դարձել է «նոր երաժշտություն» (ներմուծել է Պ. Բեքերը, 1919) և «երաժշտական ավանգարդիզմ» հասկացությունների հոմանիշը, ըստ որի ենթադրվում էր նրա սկզբունք. խզումը ավանդույթների հետ:

Մ–ին բնորոշ՝ կոմպոզիցիայի ձևային մեթոդների և հնարքների արագ փոփոխման ձգտումը, 1970–ական թթ–ին ձևավորել է հոսանքներ, որոնք ձգտել են արտասովոր կերպով նորոգել ռոմանտիզմը:

Մ., որպես գաղափարագեղագիտ. հոսանք, արտահայտել է XX դ–ի մշակույթի և հաս–յան առանձնահատկությունները: Երաժշտությունը Մ–ի գեղագիտության մեջ գնահատվում է ապագա զարգացման տեսանկյունից: Ի տարբերություն ռեալիզմի՝ Մ. չի ընդգրկում իրական սոցիալ. ուժերի հետ կապված այն արժեքները, որոնք դիմակայում են հաս. և մշակույթի ճգնաժամերին: Սակայն Մ–ին ձգտող խոշոր արվեստագետները ստեղծել են գեղ. անվիճելի արժեքներ, որոնք արտացոլում են մարդու գիտակցության բարդությունն ու հակասությունը ժամանակակից իրականության մեջ:

Շուկֆանիա Մոդուան

Գրկ. *Современные проблемы реализма и модернизма, М., 1965; Модернизм. Анализ и критика основных направлений, М., 1980; Куликова И., Философия и искусство модернизма, М., 1980.*

ՄՈԴՐԵԿԻԼԻ Միքայել, X դ–ի Վրաստանի գրական–երաժշտ. գործիչ, վանական: Տայքի վրացադավան հայերից: Հավաքել է բուն վրաց. և հուն–ից թարգմանված եկեղեց. հիմները, համակարգել և ամփոփել ժող–ում, որն արտագրվել է 994–1001–ին Տայքում: Պահպանվել է 272 թերթ. հրապարակվել է 2 հատորով՝ ֆաքսիմիլ. և ժամանակակից տպատառերով արտագրված տեսքով («Հիմներ», հրտ.՝ 1978): Հիմների 2/3–ը պարունակում են նոտագրության նշաններ, որոնք արտաքուստ նման են XI դ–ի հայկ. խազերին, սակայն գործածված են ինքնատիպ եղանակով: Թեև բավարար չափով ուսումնասիրված չեն Մ–ի նոտագր. համակարգը և ժող–ը, սակայն ակնհայտ է վերջինիս բացառիկ արժեքը վրաց միջնադար. փոքրաքանակ երաժշտ. ձեռագրերի շարքում: Ժող–ը նաև կարևոր աղբյուր է ընդհանուր արևելաքրիստոնեական բանաստեղծ. երաժշտ. մշակույթի ուսումնասիրման համար: Բնագրում որոշ հիմների վերջին բառերից հետո կան հայ. նշումներ, որոնց մի մասն այդ բառերի թարգմանությունն է, մյուսը՝ ժող–ի գրիչների՝ Մուսեսի և Ստեփանի հիշատակագրությունները:

Գրկ. *Արուլաձե Ի., 10–րդ դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար, ԲՄ, 1958, № 4:*

ՄՈԴՈՒԼԱՑՈՒՄ (լատ.՝ modulation – համաչափություն, < modus – չափ, իտալ.՝ modulazion – ելևէջ, գեղգեղանք), երաժշտ. երկի մեջ անցումը մեկ տոնայնությունից մյուսը, որը ծառայում է երաժշտ. մտքի զարգացմանը: Տես նաև ***Զարգացում:***

ՄՈԼԴՈՎԱՆ (Անգելեսյան) Շտեֆանիա [24.08.1931, Բիստրիցա–Նեսեուդ օկրուգ (Ռումինիա)–12.07.2012, Բուդապեշտ], հունգարահայ երգչուհի (կոլորատուր. սոպրանո): Ավարտել է Հունգարիայի երաժշտ. ակադ–ը (1953): Երգել է Սեգեդի օպեր. թատրոնում, 1961–ից գլխ. դերերգերով հանդես է եկել Բուդապեշտի օպեր. թատրոնում: Համերգներով (երկացանկում՝ նաև օպեր. դերերգեր) շրջագայել է Ռումինիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, ԱՄՆ–ում, ԽՍՀՄ–ում: 1969–ին Կոմիտասի ծննդյան 100–ամյակի կապակցությամբ Բուդապեշտի հայկ. ակումբում կազմակերպված երեկոյին Մ. հանդես է եկել Կոմիտասի երգերով: Մոսկվայում նրա ելույթները (1959) բարձր է գնահատել ռուս. մամուլը (թավշյա սոպրանո, գեղ. նուրբ ճաշակ, դրամատիկ. տաղանդ, ձայն. մեծ հնարավորություններ ևն):

Հունգարիայի «Ֆերենց Լիստ» շքանշան (1959):

«ՄՈԿԱՑ ՄԻՔԱԱ», ժող. միջնադար. վիպաքնար. երգ, բալլադ (ըստ Կոմիտասի՝ դյուցազներգ), որը տարածված էր Մոկսում: Պահպանվել է երգի 4 տարբերակ (Մոկաց բարբառով): Գրառել և հրատարակել են Ա. Սեդրակյանը, Գ. Հովսեփյանը, Ս. Հայկու–

նին, Հ. Ամեմյանը: Երգում պատմվում է Մոկաց Միրզայի եղեր. մահվան մասին. Կոլոտ փաշան (մի տարբերակում՝ քուրդ, մյուսում՝ հայ) իշխան Մոկաց Միրզային հրավիրել է Զեզիրե ք. և թունավորել՝ նրա հարսնացու Նազլուխանին տիրանալու համար: Մոկաց Միրզային թաղել են Մալաքավա ք-ում: Հետաքրքրական է, որ դա եղելություն է, քանի որ հանդիպում են պատմ. տեղանուններ (Զեզիրե, Մալաքավա, Ջիբրաշեն ևն):



Հատված «Մոկաց Միրզա» (գրառումը՝ Կոմիտասի) երգից

Երգի եղանակը գրառել է ***Կոմիտասը***, ապա՝ Սպիրիդոն ***Մելիքյանը***: Ելևէջ. առումով «Մ. Մ.» մոտ է «Սասնա ծռեր» վիպերգի մեղեդիներին ու հին շարականներին, միաժամանակ ասերգ. (պատմող.), ծորերգ. (քնար.) հատվածների հակադրումով, ձայնակարգով և մեղեդիական կառուցվածքով խտացնում է գուսան. վիպաքնար. և պատմ. երգերի առանձնահատկությունները: Երգիչն իր վերաբերմունքն է արտահայտում դեպքերի և դեմքերի նկատմամբ («Հազար ափսոս Մոկաց Միրզեն», «Բեմուրազ կենար Կոլոտ Խոջեն»): Պահպանվել է երգի ձայնապնակը՝ Կոմիտասի կատարմամբ: Հայ կոմպոզիտորների մի շարք երաժշտ. թեմաների համար դարձել է նախակերպար:

Գրկ. *Մեդրակեան Ա., Քնար Մշեցւոց եւ Վանեցւոց, Վաղ-պատ, 1874: Յովսէփեան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից, Թ., 1892: Ամէմեան Վ., Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան, Վաղպատ, 1917: Կոմիտաս, Երկ. ժող., հ. 1, Ե., 1960:*

Ըստ Արտաշես Նազինյանի, Ռոբերտ Աթայանի

ՄՈԿԱՅԱՆ Վիլլի Հովհաննեսի (22.10.1932, Երևան–26.01.1997, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1974): Պրոֆ. (1980): Սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, ավարտել ՄՊԿ (1956, Հ. Բոգդանյանի դասարան) և ասպիրանտուրան (1966): Դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1958–97-ին՝ ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1978–94-ին): 1961–65-ին՝ ԵՊԿ-ին կից եռյակի 1-ին ջութակը: 1974–76-ին աշխատել է Կուբայում. դասավանդել է Հավանայի արվ-ի դպրոցում: Ա. Բաբաջանյանն իր ջութակի կոնցերտը նվիրել է Մ-ին, որը կոմպոզիտորի՝ ջութակի մասնակցությամբ գործերի միակ կատարողն էր Հայաստանում: Հանդես է եկել մենահամերգներով և սիմֆ. նվագախմբի հետ, ԵՊԿ դաշնամուր. եռյակի և լար. քառյակի (1-ին ջութակ) կազմում:

Թողարկել է ձայնապնակներ («Մելոդիա» ֆիրմա, Մոսկվա):

Այսրկովկաս. 1-ին մրցույթի (1960, Բաքու, 2-րդ մրց.) դափնեկիր: Ջութակահարների համամիութենական մրցույթի խրախուս. մրց. (1861):

Երևանի Նուբարաշեն համայնքում Մ-ի անունով կոչվել է երաժշտ. դպրոց (2015):

Գրկ. *Будагян А., Вилли Мокацян, Е., 2002.*

Վիլլի Մոկացյան

ՄՈՆՈԴԻԱ (հուն.՝ μονῳδία – մեներգեցողություն), հինհուն. երաժշտության մեջ մեներգեցողությունը, նաև 1 երգչի երգեցողությունը՝ ավլոսի, կիֆարայի կամ քնարի նվագակցությամբ: «Մ.» է կոչվել նաև XVI դ-ում Իտալիայում ձևավորված մեներգեցողության ոճը: Լայն առումով «Մ.» են անվանում ընդհանրապես միաձայն երգեցողությունը կամ այդ ոճով հորինված միաձայն գործիք. նվագը:

Հայ երաժշտության մեջ Մ. երաժշտ. այն ձևն է, որը հիմնված է զուտ մեղեդիական (ոչ հարմոնիկ, ակորդ.) գործոնի վրա: Հայկ. ժող., հոգևոր և գուսանա-աշուղ. (նաև արլ. բազմաթիվ ժողովուրդների) երաժշտությունը Մ-ական ոճի կատարյալ կրողներ են:

Գրկ. *Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008: Զուրաբյան Ժ., Մոնոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Ե., 2014: Худабашян К., Армянская музыка на пути монодии к многоголосию, Е., 1977.*

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՒԼԵԿՏԻՎ, հիմնադրվել է 1922-ին Մոսկվայի հայ մշակույթի տանը՝ Գևորգ *Բուդաղյանի* (նախագահ), Մարտին *Մազմանյանի*, Լ. Խաչատրյանի (քարտուղար), Գեղարիկի (Գ. Տեր-Գաբրիելյան), Ա. Տոնիկյանի նախաձեռնությամբ: Պատվավոր նախագահ՝ Կոստանդին *Սարաջև*: Նախապես կոչվել է Մոսկվայի հայ երաժշտ. խմբակցություն, 1925-ից՝ Մ. հ. ե. կ.: Նպատակը Մոսկվայում ապրող, սովորող ու աշխատող հայ երաժիշտներին համախմբելն էր, նրանց երաժշտ. կրթության կազմակերպմանն ու գիտելիքների խորացմանն աջակցելը, հայկ. երաժշտության լավագույն նմուշները տարածելը, ՀԽՍՀ երաժշտ. գործիչների հետ կապ հաստատելը ևն: Կազմակերպվել են համերգներ. երկացանկում՝ Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ս. Բարխուդարյանի և ուր. երկերից, որտեղ հանդես են եկել անվանի կատարողներ, ՄՊԿ լար. քառյակը (հետագայում՝ Կոմիտասի անվ.): Կոլեկտիվին անդամակցել են Մ. Միսկարյանը, Գ. Մելքումյանը, Ն. Չեմբերջին, Գ. Խուբովը, Մ. Աղայանը, Ա. Քոչարյանը և ուր.: Հրատարակել է «Կյանք և երաժշտություն» (1 համար, 1924) հանդեսը: Գործել է շուրջ 10 տարի:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրել է կոմպոզիտոր և խմբավար Եղիշե *Բաղդասարյանը*՝ 1909-ին Մոսկվայում ստեղծված և 1910-ից հայկ. եկեղեցու հովանավորությամբ գործող հայկ. ինքնագործ խմբի հիման վրա: Երկացանկում՝ հոգևոր երաժշտություն, նաև Կոմիտասի, Ք. Կարա-Մուրզայի, Մ. Եկմալյանի, Ա. Մայիլյանի, Ե. Բաղդասարյանի և ուր. աշխարհիկ երգերից: Ընկերությունը գործել է մինչև 1916-ը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ, հիմնադրվել է 1921-ին Մոսկվայում՝ ՌԽՖՍՀ Կենտգործկոմի որոշմամբ՝ նախկին Լազարյան ճեմարանի շենքում: 1999-ին տրվել է ՀՀ-ի տնօրինությանը: Մշակույթի տունը ստուդիական ուսուցման միջոցով դերասան., ռեժ., օպերա-օպերետ., պարարվ-ի, երաժշտ., կերպարվ-ի կադրեր է պատրաստել ՀԽՍՀ-ի համար, հոգացել հայ մշակույթի գործիչների կատարելագործման, ստեղծագործ. մակարդակի բարձրացման համար: Մ. հ. մ. տ-անը ամենատևականը գործել են Մոսկվայի հայ երաժշտ. կոլեկտիվը և Հայկ. դրամատիկ. ստուդիան: Մշակույթի տանը կազմակերպվել են համերգներ, ստեղծագործ. երեկոներ, ներկայացումներ, գեղ. ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ, նշվել են հոբելյաններ: Մ. հ. մ. տ-անը սովորել են կոմպոզիտորներ Ա. Հարությունյանը, Ա. Բաբաջանյանը, Է. Միրզոյանը, Է. Բաղդասարյանը, Ա. Խուդոյանը, երգիչներ Ս. Դավթյանը, Ֆ. Օհանյանը, Ս. Գալստյանը և ուր., նաև բալետմայստերներ, բալետի արտիստներ, դերասաններ, գրողներ, նկարիչներ և ուր.: Մշակույթի տունը 1952–86-ին չի գործել, 1987-ին վերսկսել է գործունեությունը՝ «Հյուսիսային ծիածան» մշակութ. կենտրոն անվամբ՝ նույն շենքում (հիմնովին վերանորոգված է), այժմ՝ ՌԴ-ում ՀՀ դեսպանության նստավայրն է:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմահայր, Քերթողահայր [մոտ 410, գ. Խորոնք (Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառ)–մոտ 490], պատմիչ, քերական, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր, աստվածաբան, երաժիշտ: Աշակերտել է *Մեսրոպ Մաշտոցին* և *Սահակ Պարթևին*, ուսումը շարունակել է Ալեքսանդրիայի դպրոցում (մոտ 430– 440):

Հատված Մովսես Խորենացու «Որ ի լերինն այլակերպեալ» Վարդավառի շարականից

Երկասիրությունների գլուխգործոցը «Պատմութիւն Հայոց»-ն է, որը գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով (մոտ 480-ին):

Մ. Խ. նշանավոր երաժիշտ-բանաստեղծ է և շարականագիր: Նա «Պատմութիւն Հայոց»-ում նկարագրել և բնորոշել է վիպասաններին՝ գուսաններին, նրանց

օգտագործած երաժշտ. գործիքները, Հին Հայաստանում կենցաղավարող երաժշտ. սինկրետիկ տեսակները, հեթանոս վիպերգերի կատարման կերպը: Նրան են վերագրվում շուրջ 100 հոգևոր երգեր: Գրել է բազմաթիվ շարականներ, մի շարք երգեր՝ նվիրված Հովհաննես Մկրտչին և Գրիգոր Լուսավորչին: Առավել հայտնի են «Խորհուրդ մեծ և սքանչելի», «Ծագումն հրաշալի», «Ուրախացիր, սրբուհի» երգերը, որոնց բնորոշ են հանդիսավոր տոնական, քնար. ջերմ զգացմունքների արտահայտությունը և վիպերգ. շունչը: Մ. Խ–ու անունով պահպանված երգասացություններում կան կցուրդներ, ավետիսներ: Մեծարժեք են Աստվածամորը նվիրված «Մեծացուսցէ» կոչվող ձոներգերը (57), որոնք գեղ. արժեքով և մեղեդիների ինքնատիպությամբ հետագայում դարձել են հայ եկեղեց. երաժշտության զարգացման հիմքը: Գանձարաններում Մ. Խ–ու անունով վավերացվել են Գրիգոր Լուսավորչին և Տրդատ Գ Մեծին նվիրված 1–ական խազագրված մեղեդիներ:

Գրկ. *Թահմիզյան Ն., Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը, «Էջմիածին», 1979, № 5–6: Ա ր և շ ա տ յ ա ն Ա., Մովսես Խորենացու հիմներգական ժառանգությունը, «Բազմավեպ», 1992, № 1–4:*

Աննա Արևշատյան

ՄՈՎՍԵՍՅԱՆ Գեորգի Վիկտորի [02.08.1945, Խարկով (Ուկրաինա)–08.11.2011, Մոսկվա], կոմպոզիտոր, երգիչ: ՌԴ մշակույթի վաստ. գործիչ (1995), ՌԴ ժող. արտիստ (2001): Խորհրդ. բանակում ծառայության տարիներին եղել է զինվոր. նվագախմբի ակորդեոնահար (Դավիթ *Թուխմանովի* հետ), միաժամանակ ստեղծագործել է: Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանը (1964, ակորդեոնի բաժին): 1969–ից՝ Մոսհամերգի մենակատար և կոնցերտմայստեր: Համագործակցել է «Յունոստ» (ռուս.) ռադիոկայանի հետ, գրել գործեր՝ սիմֆ. նվագախմբի համար: Ճանաչվել է «Կեչի» և «Ինձ վստահեք երգը» (խոսք՝ Լ. Օշանինի, առաջին անգամ հնչել է «Երգ–77»–ում՝ ռուս. հեռուստատես. երգի մրցույթին):

1970–ական թթ–ին ստեղծել է երիտասարդ., հրապարակախոս., քաղաքաց. ժանրի («Դա ասում ենք մենք», «Բարի գալուստ Մոսկվա, Օլիմպիադա» ևն), 1980–ական թթ–ին՝ քնար. («Սիրո հրաժեշտ», խոսք՝ Մ. Տանիչի) և զինվոր. երգեր: Գրել է բազմաթիվ երգեր Բ. Ս. Բախնյուկի, Ա. Ա. Զեմլյանսկու, Ռ. Ի. Ռոժդեստվենսկու և ուր. խոսքերով («Ճանապարհներ», «Իմ տարիները՝ իմ հարստությունը» ևն): Իր երգերի լավագույն կատարողներից էր: Մ–ի երգերը կատարել են նաև Ա. Գերմանը, Վ. Կիկաբիձեն, Ի. Դ. Կոբզոնը, Լ. Վ. Լեշչենկոն, Մ. Վ. Կրիստալինսկայան և ուր.:

Հեղինակ է նաև կինոերաժշտության («Տղամարդիկ և մնացած ամենը», 1986, «Չեմ ուզում ամուսնանալ», 1993):

ՀամԼԿԵՄ մրց. (1983):

ՄՈՎՍԻՍՅԱՆ Ծովինար Հրայրի (ծ. 17.07.1966, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2011): Ավարտել է ԵՊԿ (1989, ղեկ.՝ Ա. Բուդաղյան) և ասպիրանտուրան (1994, ղեկ.՝ Ի. Յոլյան): 1989–92–ին՝ «Արվեստ» ամսագրի երաժշտության բաժնի խմբ., 2002–07–ին (ընդհատումով) Հայկ. հանրագիտարանի գիտ. խմբ., 2018–ից՝ ԵՊԿ պրոռեկտոր: 1994–ից դասավանդում է ԵՊԿ–ում (դոցենտ): Կազմել է Է.Հովհաննիսյանի «Կյանքս հուշերում» (1998) գիրքը, Ն. Դերոյանի «Երկեր» (2015) ժող–ը:

Երկ. *Էդգար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները, Ե., 2012: Յուրի Հարությունյան. կյանքի զուգահեռականներ, Ե., 2014:*

ՄՈՏԵՏ (լատ.՝ movere – շարժվել, ֆրանս.՝ motet, < mot – բառ, դարձվածք, պատվիրան), բազմաձայն վոկալ երաժշտության ժանր: Ծագել է XII դ–ում Ֆրանսիայում: Նախ եղել է 2–3 ձայնանի ստեղծագործություն, որտեղ լատ. տեքստով երգվող կաթոլիկ. խորալին (ներքևի ձայնում) զուգակցվել են ֆրանս. խոսակց. լեզվով, հաճախ սիրային երգեր կամ կատակերգեր (վերևի ձայներում): Կաթոլիկ եկեղեցին, չընդունելով Մ–ի այդ տիպը (Յոհան XXII պապի դեկրետը, 1322), հակադրել է (XV դ–ից) այլ տեսակ՝ միասնական լատ. տեքստով: XV դ–ից Մ. են անվանել երգի համեմատությամբ առավել զարգացած, հանդիսավոր վոկալ ստեղծագործությունը: XVI դ–ում Օ. Լասսոն, Ջ.Գաբրիելլին, Ջ. Պալեստրինան իրենց Մ–ներում մշակել են ա կապելլա երգեցողության պոլիֆոնիկ ոճը: Իտալիայում XVII դ–ում սկզբնավորվել է մենակատար (գործիք. նվագակցությամբ) Մ.: Ժանրի զարգացման գլուխգործոցները Յ. Ս. Բախի խմբերգ. Մ–ներն են, որոնք տեսակով մոտ են *կանտատին*:

Գեորգի Մովսեսյան



Ծովինար Մովսիսյան



Ծ. Մովսիսյանի «Էդգար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները» գրքի (2012) կազմը

ՄՈՏԻՎ (գերմ.՝ Motive, < լատ. moveo – շարժում եմ), 1. երաժշտության կառուցվածք–իմաստ. փոքրագույն տարրը: 2.Այլ նշանակությամբ՝ մեղեդի, եղանակ: Տես նաև *Պարբերություն:*

ՄՈՐՈԶՈՎ Նիկիտա (Մորոզյան Մկրտիչ Սեմյոնի, 1864, Նովոչերկասկ–1925, Մոսկվա), երաժշտագետ, մանկավարժ: Նախն. կրթությունն ստացել է Նովոչերկասկի գիմնազիայում, ավարտել է ՄՊՀ ֆիզմաթ. (1887), ապա՝ ՄՊԿ դաշնամուրի և կոմպոզիցիայի (Ա. Ս. Արենսկու դասարան) բաժինները (1891): Կոմպոզիցիայի դասեր է առել նաև Ս. Ի. Տանեևից: 1893–1923-ին դասավանդել է ՄՊԿ-ում (պրոֆ.՝ 1899-ից): Եղել է Ա. Ն. Սկրյաբինի և Ս. Վ. Ռախմանինովի մտերիմներից. վերջինը նրան է նվիրել իր «Գարուն» կանտատը (1902):

Նիկիտա Մորոզովը (կանգնած), Սերգեյ Ռախմանինովի հետ (աջում)

Գրել է երաժշտագիտ. աշխ-ներ, հուշեր, որոնք պահվում են Մոսկվայի Մ. Ի. Գլինկայի անվ. արվ-ի թանգարանում: Հեղինակ է երաժշտատես. աշխ-ների, «Ալեկո» օպերայի (1892, ըստ Ա. Ս. Պուշկինի), դաշնամուր. պիեսների, ռոմանսների ևն: Թարգմանել է «Երաժշտության պատմության կատեխիզիս» գիրքը (մաս 1–2, 1895–96):

Կինը՝ Վերա Մինինա (1870–1954), ժամանակի ճանաչված դաշնակահարուհիներից էր:

ՄՄԼՅԱՆ Աստրա Երվանդի (ծ. 1932, Կահիրե), դաշնակահարուհի: Երաժշտ. կրթությունն ստացել է Կահիրեում, ապա ավարտել է Փարիզի կոնսերվատորիան (1951): Համերգներով շրջագայել է Եգիպտոսում, Եթովպիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում: Երկացանկում՝ նաև հայ կոմպոզիտորների, առավելապես՝ Ա. Խաչատրյանի և Ա. Բաբաջանյանի գործերից: 1957-ից (շուրջ 10 տարի) ընտանիքով ապրել է Հայիթիում (հանդես է եկել համերգներով), 1970-ական թթ-ից՝ Գերմանիայում. ելույթներ է ունեցել մի շարք քաղաքներում:

ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, երաժիշտների (անհատ կատարողների, խմբերի, կոմպոզիտորների, գործիք պատրաստող վարպետների) մրցույթներ, որոնք սովորաբար անցկացվում են նախապես հայտարարված ծրագրի համաձայն: Յուրաքանչյուր մրցույթ ընդգրկում է 2–4 ունկնդրում-մրցաշրջան: Ելույթները գնահատում է մասնագիտ. հանձնախումբը: Լավագույններին շնորհվում են մրց-ներ, դափնեկրի կոչում:

Գեղ. մրցույթները հայտնի էին դեռևս Հին Հունաստանում, ավանդույթը շարունակվել է Հին Հռոմում. հաղթողները կոչվել են դափնեկիրներ (պարգևատրվել են դափնեպսակով):

Միջնադարում լայնորեն տարածվել են տրուբադուրների, տրուվերների, մայստերզինգերների և միննեզինգերների մրցույթները: Վերածննդի դարաշրջանից մրցույթներն ընդգրկել են իմպրովիզացիոն արվ. (երգեհոն, կլավեսին, ավելի ուշ՝ դաշնամուր, ջութակ): XVIII–XIX դդ-ում դրանց մասնակցել են Յ. Ս. Բախը, Գ. Ֆ. Հենդելը, Ա. Սկառլատտին, Վ. Ա. Մոցարտը, Մ. Կլեմենտին, Ջ. Վիոտտին, Յ. Յոախիմը և ուր.:

Մերձ. Արևելքի երկրներում, նաև Հայաստանում տարածված էին աշուղների մրցույթները: 1803-ից Փարիզի Գեղեցիկ արվ-ների ակադ-ը սահմանել է ամենամյա, այսպես կոչված, հռոմ. մրց.՝ լավագույն ստեղծագործության համար, որին արժանացել են Հ. Բեռլիոզը, Ժ. Բիզեն, Կ. Դեբյուսին: Լայնորեն տարածված էին ազգային (մասնակցում էին 1 երկրի երաժիշտներ) և միջազգային (մասնակցում էին տարբեր երկրների երաժիշտներ) մրցույթները: Առաջին ազգ. մրցույթը տեղի է ունեցել 1803-ին Ֆրանսիայում: 1890-ին Ս. Պետերբուրգում Ա. Գ. Ռուբինշտեյնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել առաջին կանոնավոր միջազգ. մրցույթը (մինչև 1910-ը): Հայտնի են դաշնակահարների՝ Ֆ. Շոպենի անվ. (1927-ից, Վարշավա), դաշնակահարների և ջութակահարների՝ Մ. Լոնգի և Ժ. Տիբոյի անվ. (1943-ից, Փարիզ), ջութակահարների, դաշնակահարների, կոմպոզիտորների՝ Բելգիայի Եղիսաբեթ թագուհու անվ. (1951-ից, Բրյուսել), ջութակահարների՝ Ն. Պագանինիի անվ. (1954-ից, Ջենովա), դաշնակահարների, ջութակահարների, թավջութակահարների, մեներգիչների՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. (1958-ից, Մոսկվա), դաշնակահարների և մեներգիչների՝ Ռ. Շումանի անվ. (1956-ին և 1960-ին՝ Բեռլին, 1963-ից՝ Յվիկաու), դիրիժորների և երիտասարդ. նվագախմբերի՝ Հ. Ֆոն Կարայանի անվ. (1969-ից, Արևմտյան Բեռլին), ստեղծագործողների՝ Ա. Դվորժակի անվ. միջազգ. և այլ խոշոր մրցույթներ:

Խորհրդ. երաժիշտները միջազգ. մրցույթներին մասնակցել են 1927-ից:

1957-ին ստեղծվել է Միջազգ. մրցույթների ֆեդերացիա (նստավայրը՝ Ժնև), որն անցկացնում է ամենամյա համաժողովներ, թողարկում տեղեկատուներ: 1971-ից ԽՍՀՄ-ն այդ ֆեդերացիայի անդամ էր: Համամիութ. 1-ին մրցույթը տեղի է ունեցել 1933-ին Մոսկվայում: Մրցույթի համակարգն ընդգրկել է նաև հանրապետ. և տարածաշրջան. մրցույթները: Երևանում, Թբիլիսիում, Բաքվում անցկացվել են Այսրկովկաս. մրցույթներ (1-ինը՝ 1960-ին և 4-րդը՝ 1972-ին Բաքվում, 2-րդը՝ 1965-ին և 5-րդը՝ 1977-ին՝ Թբիլիսիում, 3-րդը՝ 1969-ին, և 6-րդը՝ 1981-ին Երևանում):

1960-ական թթ-ին զանգվածային են դարձել էստրադ. երգի մրցույթները Սոպոտում (Լեհաստան), «Ոսկե Օրփեոս» (Բուլղարիա), «Բրատիսլավական գարուն» (ՉԽՍՀ), Ռոստոկում (ԳԴՀ), Սոչիում (ԽՍՀՄ) ևն:

Միջազգ. և համամիութ. մրցույթի դափնեկիրներ են Կոմիտասի անվ. քառյակը, դիրիժորներ, դաշնակահարներ, ջութակահարներ, թավջութակահարներ, երգիչներ, կլառնետահարներ, ֆագոտահարներ և ուր.: Մ. ե-ները ներառված են նաև երիտասարդության և ուսանողների համաշխ. փառատոների ծրագրերում:

ՀՀ-ում անցկացվում են Ա. Խաչատրյանի անվ. դիրիժորների (բոլոր անվանակարգերում), Պ. Լիսիցյանի և Տ. Սազանդարյանի անվ. մեներգիչների հանրապետ., Ա. Բաբաջանյանի անվ. պատանի և երիտասարդ դաշնակահարների միջազգ., Է. Միրզոյանի անվ. պատանի կոմպոզիտորների հանրապետ., Գ. Գասպարյանի անվ. մեներգիչների «Հայաստանի սոխակ» հանրապետ., ՀԿՄ էստրադ. ու հայրենսիր. երգի և այլ մրցույթներ, երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգ. (2007) մրցույթ-փառատոնը ևն:

ՄՈՒԹԱՖՅԱՆ Գևորգ (ծ. 31.05.1982, Հալեպ), երգիչ (դրամատիկ. տենոր): Ավարտել է ԵՊԿ (2010): 2009-ից՝ ԵՕԲԹ մեներգիչ (Մազետտո՝ Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», Քյոխվա՝ Ա. Տիգրանյանի «Անուշ»), 2008-12-ին՝ ԵԵԿԹ երգիչ և դերասան: 2012-13-ին հանդես է եկել Բեյրութում, 2013-ից՝ Պալմա Ջումեյրայի (ԱՄԷ) «Մյուզիք Հոլլ»-ում, 2012-ին մենահամերգով՝ Դամասկոսի օպեր. թատրոնում:

ՄՈՒՂԱՄ, համարժեք է մակամին, մակոմին, մուկամին, ռագային, օգտագործվում է Մ-ձայնակարգ և Մ-ժանր հիմնական իմաստներով: Տարածված է Մերձ. և Միջին Արևելքի ժողովուրդների երաժշտության մեջ: Նախկինում հայտնի բազմաթիվ ձայնակարգերից ներկայումս օգտագործվում են «Ռաստ», «Շուր», «Սեգյահ», «Չարգյահ», «Բայաթի-Շիրազ», «Հումայուն», «Շուշթար»՝ հիմնական, «Սերենջ», «Շահնազ», «Բայաթի Քուրդ», «Հիջազ» և այլ օժանդակ ձայնակարգերը: Կառուցվում են տարբեր տետրախորդների միացման որոշակի սկզբունքներով՝ շղթայված, կցված և միջանկյալ տոնի միջոցով անջատված: Հնչյունաշարի զանազան աստիճաններ (հիմնականում՝ IV և V) կարող են ձեռք բերել ժամանակավոր հիմնաձայնի նշանակություն՝ ստեղծելով առանձին ձայնակարգ. ոլորտներ՝ շորբե: Յուրաքանչյուր ձայնակարգ կապվում է որոշակի տրամադրության կամ հոգեվիճակի արտահայտման հետ. օրինակ՝ «Ռաստը»՝ ուրախության, «Չարգյահը»՝ խանդավառության, «Շուշթարը»՝ թախծի ևն: Ժանրի առումով Մ. իմպրովիզացիոն բնույթի վոկալ-գործիք. կամ գործիք. ստեղծագործություն է՝ հիմնված նույնանուն ձայնակարգի վրա. կարող է դառնալ ավելի խոշոր ցիկլ. կոմպոզիցիայի՝ դաստգահի հիմքը: Դաստգահում Մ-ները միմյանց են հաջորդում ձայնակարգ. դիապազոնի աստիճան.

ընդարձակման և բնորոշ ինտոնացիոն-թեմային դարձվածքների տարբերակ. զարգացման սկզբունքով. Մ-ներին սովորաբար հաջորդում են երգ. կամ պար. չափավորված հատվածներ՝ թեսնիֆներ և ռանգեր: Մ-ները կատարվում են գործիքի նվագակցությամբ կամ մենակատար գործիքով (թառ, քամանչա ևն): Որպես խոսք. տեքստ՝ օգտագործվում են Արևելքի դաս. բանաստեղծների քնար. ստեղծագործությունները: Հայ իրականության մեջ կենցաղավարում է բացառապես գործիք. Մ., կատարող. երկարատև պրակտիկայում մշակվել են դրանց տեղական, սովորաբար՝ հակիրճ տարբերակներ, որոնց մեջ օգտագործված են ժող. պար. եղանակներ ևս: Նշանավոր կատարողներից են եղել Ա. Մելիք-Աղամալյանը, Բ. Մելիքյանը (թառ), Ս. Օգանեզաշվիլին

Գևորգ Մութաֆյանը ելույթի պահին

Հատված մուղամից («Չարգյահ», մշակումը՝ Նիկողայոս Տիգրանյանի)



Ասպուհի Մուշեղյան

Իրինա Մուսայելյան

Նինա Մուսինյան

(Ա. Օհանյան), Լ. Կարախանը (քամանչա), Դ. Եգանյանը, Մ. Մարգարյանը, Լ. Մադոյանը, Գ. Մինասովը (դուդուկ) և ուր.: Մ-ների առաջինն նոտագրողը եղել է Նիկողայոս *Տիգրանյանը:* Մ. հասկացությունը ենթադրում է նաև երաժշտ. մտածելակերպի որոշակի տեսակ և երաժշտության ձևակառուցող. որոշակի միջոցներ, որոնց կարևորագույն տարբերիչ հատկանիշը իմպրովիզացիայի սկզբունքն է:

Լիլիթ Երնջակյան

ՄՈՒՇԵՂՅԱՆ Աստղիկ Ալբերտի (ծ. 05.03.1959, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2005): ՀԿՄ անդամ (2018): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի տեսության (1976, Մ. Տոնյանի դասարան), ԵՊԿ երաժշտագիտության (1981, Գ. Գյոդակյանի դասարան) և դաշնամուրի (1985, Ա. Ներսիսյանի դասարան) բաժինները: 1982-ից՝ Մատենադարանի (2005-ից՝ ավագ), 2000-ից՝ «Հայ հոգևոր երաժշտության կենտրոնի» գիտաշխատող: Հեղինակ է «Արմաշի դպրեվանքի երաժշտական ավանդույթները» («Արմաշի դպրեվանքը», 1998, մաս Բ) մենագրության, որտեղ անդրադարձել է հայ հոգևոր երգարվ-ի պատմությանն ու տեսությանը: Մի շարք աշխ-ների (Ք. Քուշնարյան, Գ. Գյոդակյան, Ա. Բաղդասարյան և ուր.), ժող-ների («Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», «Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի», Մ. Եկմալեանի «Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի») և դասագրքերի խմբագիր է: Կազմել և խմբագրել է ձայնասկավառակների հավաքածուներ (Կոմիտասի ծննդյան 145-ամյակին, Ա. Խաչատրյանի ևն):

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ Իրինա Բորիսի (ծ. 08.01.1951, Բաքու), երգչուհի, խմբավար, մանկավարժ: ՌԴ ժող. արտիստ: Ավարտել է Մոսկվայի Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի անվ. պետ. ուսումնարանի դաշնամուրի, Մոսկվայի պետ. մանկավարժ. համալսարանի վոկալի և խմբավարության բաժինները, կատարելագործվել ԵՊԿ-ում (Գ. Գասպարյանի դասարան): 1977-ից երգեցողություն է դասավանդել Մոսկվայի մանկավարժ. համալսարանում, 1985-ից՝ «Լենկոմ» թատրոնում, 1996-ից՝ Ռուսաստանի թատերարվ-ի ակադ-ում, 2003-ից՝ «Et cetera» թատրոնում: «Լենկոմ»-ում, որպես երաժշտ. մասի ղեկ., մասնակցել է «Խելահեղ օր կամ Ֆիգարոյի ամուսնություն», «Թագավորական խաղեր», «Խաբեություն», «Բարբարոսն ու Հերետիկոսը» ներկայացումների բեմադրություններին (մի քանիսում՝ որպես մեներգչուհի): Երգել է նաև Մոսկվայի կամեր. երգչախմբում:

1994-ին ստեղծել է (կոմպոզիտոր և դիրիժոր Ա. Վ. Լավրովի հետ) երաժշտ. ներկայացման նոր ժանր՝ կլասիկ-սեյշն: 1996-ին թողարկել է «Ավե Մարիա» ձայներիզը, որի բեմ. տարբերակը՝ «Վիա Դոլորես» ներկայացումը, բարձր է գնահատվել Ա. Պ. Չեխովի անվ. թատեր. փառատոնում, ներկայացվել է նաև ՀՀ-ում՝ քրիստոնեությունը պետ. կրոն հռչակման 1700-ամյակի կապակցությամբ (գլխ. դերում՝ Մ.): Մենահամերգներով հանդես է եկել Կիևում, Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Բոգոտայում:

Գ. Գասպարյանի անվ. մրց-ի դափնեկիր:

ՄՈՒՍԻՆՅԱՆ Նինա Մկրտչի (10.05.1910, Երևան–1995, Մոսկվա), դաշնակահարուհի, մանկավարժ: Դոցենտ (1958): Ավարտել է ՄՊԿ դաշնամուրի բաժինը (1931, Ա. Պ. Օստրովսկու դասարան) և ասպիրանտուրան (1936, ղեկ՝ Կ. Ն. Իգումնով): 1937–41-ին՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի և Համառուս. համերգահյուրախաղ. միավորման մենակատարուհի, հանդես է եկել նաև անսամբլների հետ, եղել կոնցերտմայստեր (նաև ամուսնու՝ Դ. Բ. Շաֆրանի): Հյուրախաղերով շրջագայել է ԽՍՀՄ-ում և արտերկրում: Մասնակցել է երաժիշտ-կատարողների համամիութ. մրցույթներին («Լավագույն կատարող» մրց., 1937–38, Մոսկվա):

ՄՈՒՐԱԴԵԼԻ Վանո (Հովհաննես) Եղիայի [24.03(06.04).1908, ք. Գորի (Վրաստան)–14.08.1970, Տոմսկ, թաղված է Մոսկվայում], կոմպոզիտոր, դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1968): Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (Ս. Բարխուդարյանի դասարան) և դիրիժորության (Մ. Մ. Բագրինովսկու դասարան) բաժինները (1931), կատարելագործվել ՄՊԿ-ում (1934–38, ղեկ՝ Ն. Յ. Մյասկովսկի): 1931–34-ին՝ ՎԽՍՀ դրամատիկ. թատրոնների դերասան և դիրիժոր, 1942–44-ին՝ ԽՍՀՄ ՌԾՆ կենտր. անսամբլի գեղ. ղեկ., 1939–48-ին, միաժամանակ՝ ԽՍՀՄ երաժշտ. ֆոնդի, 1959–70-ին՝ ՌԽՖՍՀ ԿՄ Մոսկվայի բաժանմունքի նախագահ:

Մ-ի երաժշտ. տարբեր ժանրերի լավագույն երկերը տոգորված են հայրենա-

սիրությամբ, նվիրված են արդի հրատապ խնդիրներին: Գրել է հեղ. իրաղարձություններին նվիրված «Մեծ բարեկամություն» (1947, բեմ.՝ Դոնեցկում, Մոսկվայում), «Հոկտեմբեր» (1962, բեմ.՝ Մոսկվայում) օպերաները, ժամանակակից իրականության՝ «Մոսկվա–Փարիզ–Մոսկվա» օպերետը (1968), 2 սիմֆոնիա (1938, 1945), սյուիտներ, խմբերգեր («Հիմն Մոսկվային», «Ուսանողների միջազգային միության հիմն», «Բուխենվալդյան ահազանգ» ևն), երգեր, ռոմանսներ (Ա. Իսահակյանի, Հ. Թումանյանի, Ս. Կապուտիկյանի, Ա. Ս. Պուշկինի և ուր. խոսքերով), թատրոնի և կինոյի երաժշտություն:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1951), Լենինի, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

Գրկ. *Сеженский К., Вано Мурадели, М., 1962.*

ՄՈՒՐԱԴՅԱՆ Արգար Գուրգենի (03.04.1944, Երևան–30.10.2010), կլառնետահար, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. (1985), ԼՂՀ ժող. (2017) արտիստ: Պրոֆ. (2004): Ավարտել է ԵՊԿ (1971): 1966–90-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ., 1990–92-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի և կլառնետահարների խմբի կոնցերտմայստեր: 1970-ից դասավանդել է Երևանի № 1 արվ-ի դպրոցում, 1967–89-ին, միաժամանակ՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1986-ից՝ ԵՊԿ-ում: Հայ արդի կոմպոզիտորների երկերի առաջին կատարողներից է:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Գևորգ (ծ. 01.03.1947, Երևան), դիրիժոր: ԼՂՀ ժող. արտիստ (2017): Ավարտել է ԵՊԿ օպեր. և սիմֆ. դիրիժորության բաժինը (1973, Մ. Մալունցյանի դասարան), Վիեննայի երաժշտ. ակադ-ի ասպիրանտուրան (1987, ղեկ.՝ Կ. Օստերայխեր): 1974–90-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ. (իրագործել է հայ կոմպոզիտորների մի շարք ստեղծագործությունների ֆոնդ. ձայնագրություններ), 1991-ից՝ Երևանի սիմֆ. նվագախմբերի դիրիժոր, 1995-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ երգչախմբի ղեկ. և դիրիժոր: 1994–2000-ին ղեկավարել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի՝ «Հոգևոր երաժշտության ժամ» համերգաշարը, նաև Սբ Էջմիածնի Մայր տաճարի և Սբ Գևորգ եկեղեցու երգչախմբերը: Դասավանդել է ԵՊԿ-ում:

2004-ից՝ Արցախի պետ. կամեր. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Համերգներով հանդես է եկել ՌԴ-ում, Գերմանիայում, Նորվեգիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Կիպրոսում, Հունաստանում, Իրանում և այլուր:

Դիրիժորների համամիութ. V մրցույթի դափնեկիր (1983, Մոսկվա):

Անահտ Արևշատյան

ՄՈՒՐԱԴՅԱՆ Լևոն Հայրիկի (ծ. 10.07.1959, Երևան), թավջութակահար, մանկավարժ: Հայրիկ ***Մուրադյանի*** թոռը: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1977, դասատու՝ Ա. Չաուշյան), ՄՊԿ և ասպիրանտուրան (1986, երկուսն էլ՝ ղեկ.՝ Մ. Խոմիցեր), սովորել է ԵՊԿ-ում (1977–79, Ա. Չաուշյանի դասարան): 1960 և 1963-ին Հայաստանի սիմֆ. նվագախմբի հետ (դիրիժոր՝ Դավիթ ***Խանջյան***) կատարել է Պ. Ի. Չայկովսկու Ռոկկոկո-վարիացիաները:

1989-ից ապրում է Պորտուգալիայում: 1990-ից՝ Լիսաբոնի «Կյուլպենկյան» սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր, «Solistas» լար. քառյակի թավջութակահարը: 1996-ից դասավանդում է Էվորայի (Պորտուգալիա) Արվ-ի համալսարանում, 2015-ից՝ Լիսաբոնի կոնսերվատորիայում: Վարպետության դասեր է վարում Ջորջիայի (ԱՄՆ) համալսարանում, Կալիֆոռնիայի երաժշտության ինստ-ում, նաև «Valle De Arlanza», «La nueva generacion musical», «Viana do Castelo» միջազգ. փառատոներում (թավջութակ և կամեր. երաժշտություն):

Որպես մենակատար՝ հանդես է եկել դիրիժորներ Վ. Գերգիևի, Վ. Բ. Դուդարովայի, Գ. Ն. Ռոժդեստվենսկու, Զ. Կախիձեի, Լ. Ֆոստերի, Ա. Բիրոնի, նաև Ռ. Ահարոնյանի, Վ. Պապյանի, Գ. Վ. Կոստինի, համերգներով՝ Ս. Խաչատրյանի, Լ. Համբարձումյանի, Դ. Չանգի, Կ. Վինսենսի, Գ. Ռապսի, Թ. Լինդերի, Յ. Ե. Ժիսլինի, Աշոտ Տանիայի, Դ. Ռոլանդի, Հ. Մելիքյանի և ուր. հետ՝ Սյունխենի, Տալլինի, Ս. Պետերբուրգի, Բուրգոսի, Սաղեյրայի, Սինտրայի և այլ հայտնի փառատոներում: «Դելլայան եռյակի» հիմնադիր-թավջութակահարն է: Համերգներով շրջագայել է ՌԴ-ում, Իսրայելում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Բրազիլիայում, ԱՄՆ-ում, Կորեայում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, Կիպրոսում, ՀՀ-ում և այլուր:

Դանիացի կոմպոզիտոր Վ. Քվագը (թավջութակի սոնատ) և անգլիացի կոմպոզիտոր Ի. Մուդին (թավջութակի կոնցերտ) երկեր են նվիրել Մ-ին: Նվագում է Ա. Ստրադիվարիուսի թավջութակներով:

«Clave Records»-ը թողարկել է ձայնասկավառակներ:

Վանո Մուրադելի

Արգար Մուրադյան

Գևորգ Մուրադյան

Լևոն Մուրադյան

Հայրիկ Մուրադյան



Մաթևոս Մուրադյանի «Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության» (1989) գրքի տիտղոսաթերթը

Վազգեն Մուրադյան

Համամիութ. (3-րդ մրց., 1981, Թբիլիսի), Պ. Կազալսի անվ. միջազգ. (2-րդ մրց., 1985, Բուդապեշտ), Պ. Ի. Չայկովսկու անվ. (1986, Մոսկվա), «Ջուլիո Կարդոնա» (1-ին մրց., 1997, Կովիլ՝ Պորտուգալիա) մրցույթների դափնեկիր:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հայրիկ Մանուկի [03.05.1905, գ. Ձնուկ (Վանի նահանգի Շատախի գավառ)–22.12.1999, Երևան), երգիչ-բանահավաք, ազգագրագետ: Լևոն *Մուրադյանի* պապը: 1915-ին ապաստանել է Երևանում: Ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակ-ը (1948): Սոռացումից փրկել և իր բարձրարվ. կատարումներով վերականգնել է Շատախի հայկ. ժող. երգերն ու պարեղանակները, հավաքել նորերը, ներկայացրել Շատախի տոհմիկ երգասացների պարզ, հանդարտ ու առինքնող երգաոճով (1960-ական թթ.):

Հիմնադրել և ղեկավարել է «Վան», «Զարթոնք», «Զվարթոնք» ազգագր. խմբերը, եղել դստեր՝ Մարո Մուրադյանի հիմնադրած *«Ակունք»* անսամբլի խորհրդատուն:

Մ-ի կատարմամբ պահպանվել է շուրջ 200 երգ՝ Հայաստանի ազգ. ռադիոյի ձայնադարանում, նաև «Հայրենի երգեր» (1980, 2007, կազմ. և նոտագրումը՝ Ա. Փահլևանյանի) ժող-ում, «Աշխարհի ժողովուրդների ֆոլկլորը» ձայնասկավառակների անթոլոգիայում (1971, Փարիզ):

Հեղինակ է հայ ազատագր. պայքարի և հերոսամարտերին նվիրված գրքերի:

Թողարկվել է Մ-ի լազեր. սկավառակը («Երաժշտական մասունքներ Հայաստանի», 2000):

1996-ից գործում է «Հայրիկ Մուրադյան» երգի-պարի մանկ. անսամբլը (գեղ. ղեկ.՝ Հ. Հարությունյան):

Գրկ. *Հուշեր, Ե., 2005:*

ՄՈՒՐԱԴՅԱՆ Մաթևոս Հովհաննեսի [05.05.1911, գ. Տղասպար (Վանի նահանգի Շատախի գավառ)–27.02.1987, Երևան], երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (1972): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): 1915-ին ընտանիքի հետ գաղթել է Վան, ապա՝ Միջագետք, 1921-ին հայրենադարձել են: 1930-ից աշխատել է որպես գրաշար, միաժամանակ գրել ու հրատարակել բանաստեղծություններ: Ավարտել է Երևանի երաժշտ. ուսումնարանը (1937), ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (1946): 1946–58-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի պատմության ու տեսության բաժանմունքի գիտաշխատող, ապա՝ արվ-ի ինստ-ի գիտքարտուղար, 1958–66-ին՝ երաժշտության, 1966–81, 1983–84-ին՝ հայ ժող. երաժշտության բաժանմունքների վարիչ: Երկար տարիներ եղել է արվ-ի ինստ-ի գիտ. խորհրդի անդամ:

Երկ. *Քրիստափոր Կարա-Մուրզա, Ե., 1950: Արմեն Տիգրանյան (համահեղ.՝ Ռ. Աթայան), Ե., 1955: Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Ե., 1956: Ավնարկ հայ երաժշտության պատմության, Ե., 1963 (Ավնարկներ հայ արվեստի պատմության, հ. 1, համահեղ.՝ Ք. Քուշնարյան, Գ. Գյոդակյան): Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, տես Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, հ. 2, Ե., 1970: Ազատ Մանուկյան, Ե., 1977: Սամսոն Գասպարյան (կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը), Ե., 1980: Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դ. և XX դարասկիզբ), Ե., 1989: Կոմիտասը և հայ դասական երաժշտության ձևավորումը, Տորոնտո, 2004: Армянские композиторы (соавторы Р. Атаян, А. Татевосян), Е., 1956; Армянская советская музыкальная культура, Е., 1957.*

Մննա Ասատրյան

ՄՈՒՐԱԴՅԱՆ Վազգեն Գրիգորի (17.10.1921, Աշտարակ – 18.02.2018, Նյու Յորք), կոմպոզիտոր, ջութակահար: Պրոֆ. (1948): Ավարտել է Վենետիկի «Բենեդետտո Մարչելլո» կոնսերվատորիայի ջութակի (Լ. Ֆերրոյի դասարան) և կոմպոզիցիայի (Գ. Բիանելիի դասարան) բաժինները (1948): 1946–50-ին դասավանդել է Վենետիկի Մուրատ Ռափայելյան վարժարանում (ջութակ և երաժշտատես. առարկաներ): 1950-ին տեղափոխվել է Նյու Յորք, ծավալել երաժշտ. բազմակողմանի գործունեություն: ԱՄՆ-ի կոմպոզիտորների և հեղինակ. կատարողների միության անդամ:

Որպես մենակատար (վիոլա դ'ամուր, վերջին միակ հայ մասնագետն աշխարհում)՝ ելույթ է ունեցել Նոր Օռլեանի սիմֆ. նվագախմբում:

Գրել է 57 սիմֆոնիա, 68 կոնցերտ (35 գործիքների համար), 15 սյուիտ, սոնատներ, մենուերգեր, խմբերգեր, գործիք. կոնցերտներ՝ ջութակի (op. 52), վիոլա դ'ամուրի (op. 23), հոբոյի (op. 25) և նվագախմբի, 6 սոնատ՝ մենանվագ ջութակի, սոնատ՝ վիոլա դ'ամուրի համար, վոկալ շարքեր (Վ. Շեքսպիրի, Վ. Գյոթեի, Ա. Դանտեի, Վ. Հյուգոյի տեքստերով) ևն: Հեղինակ է երաժշտության տեսության և լար. գործիքների մասին հոդվածների ու աշխ-ների: 1993-ին Երևանում կայացել է նրա հոբելյան. երեկոն:

«Թեքեյան» կենտրոնի մրց. (1962, Բեյրութ):

Յ

ՅԱԿՈԲՈՎԻՉ (Քոչարյան) Զուլիետա Անտոնի [ծ. 20.01.1935, գ. Քելբենդ (Ադրբեջանի Իսմայիլի շրջան)], երգչուհի (կոլորատուր. սոպրանո): Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ (1978): Ավարտել է Բաքվի կոնսերվատորիան (1963): 1963–92-ին եղել է Լուգանսկի մարզ. (Ուկրաինա) ֆիլհարմոնիայի մեներգչուհի (Վիոլետտա՝ Զ. Վերդիի «Տրավիատա», 1971, Ռոզինա՝ Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», 1974): 1988-ից դասավանդում է Լուգանսկի Տ. Շևչենկոյի անվ. ազգ. մանկավարժ. համալսարանին առընթեր մշակույթի և արվ-ների ինստ-ում (պրոֆ.), ղեկավարում է համալսարանի օպեր. ստուդիան (նաև հիմնադիրներից է): Համերգներով շրջագայել է Բելառուսում, Հայաստանում, Ադրբեջանում, Լիտվայում, Լատվիայում, Հունգարիայում, Գերմանիայում, Անգլիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում: Եղել է հանրապետ. և միջազգ. բազմաթիվ մրցույթների (Ն. Լիսենկոյի, Մ. Գլինկայի անվ., «Ոսկե աշուն», «Երիտասարդ գվարդիա» ևն) հանձնախմբերի անդամ, Ֆ. Շալյապինի անվ. ամենամյա միջազգ. փառատոն-մրցույթի (Յալթա, Ղրիմ) հանձնախմբի նախագահ:

Կրասնոդոնի (1968), Լուգանսկի (2000) պատվավոր քաղաքացի: Ռուսաստանի Զայնի հաս. ակադ-ի անդամ: Յ-ի անունը գրանցվել է «Ուկրաինայի ոսկե գիրք-2000»-ում:

Ուկրաինայի «Շախտյորսկայա սլավա» 3-րդ աստիճանի պատվո նշան, «Աշխատանքային արիության համար» մեդալ:

ՅԱՂՋՅԱՆ Հայկ [19.09.1924, Դետրոյտ (ԱՄՆ)–15.03.1965], դիրիժոր: Վաղ տարիքից գրել է երաժշտ. գործեր, նվագել ջութակ և տրոմբոն: Սովորել է Դետրոյտի երաժշտ. ինստ-ում: 1945-ին եղել է Դետրոյտի օպեր. ընկերության համերգների և ներկայացումների դիրիժորի օգնական, 1954-ից՝ Ֆրեզնոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադիր-գլխ. դիրիժոր, 1959-ից՝ Ցինցինատիի (Օհայո նահանգ), 1963-ից՝ Պիտսբուրգի սիմֆ. նվագախմբերի դիրիժոր: 1962-ին ղեկավարել է Դետրոյտի սիմֆ. նվագախումբը. երկացանկում՝ Ա. Խաչատրյանի, Ա. Հովհաննեսի, Ռ. Ցարդումյանի, Ս. Վ. Ռախմանինովի, Գ. Հենդելի, Ֆ. Շոպենի, Յ. Հայդնի և ուր. ստեղծագործություններից: 1964-ին հանդես է եկել Երևանում: Ա. Հովհաննեսն իր «Սգո օդա» երկը նվիրել է Յ-ին: Երիտասարդ դիրիժորների միջազգ. մրցույթի դափնեկիր (1958, Լիվերպուլ):

ՅԱՄԲ, մեծավերջ, երկվանկ ոտք, 2-րդ վանկի շեշտումով՝ շարժում տակտի թույլ մասից դեպի ուժեղը:

ՅԱՆԲԵԿՅԱՆ Գևորգ (ծ. 1923, Կիպրոս), խմբավար, կոմպոզիտոր: Սովորել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունում: 1943-ին տեղափոխվել է Եգիպտոս, որտեղ հիմնադրել է «Սպենդիարյան» լար. նվագախումբը և «Ալագյազ» երգչախումբը, հանդես եկել համերգներով: Ղեկավարել է նաև «Կոմիտաս» երգչախումբը: 1952-ին մեկնել է Փարիզ, հաճախել «Էքոլ նորմալ» կոնսերվատորիայի դասընթացներին: Կազմակերպել է «Նաիրի» մեծ երգչախումբը, որը Յ-ի ղեկավարությամբ պարբերաբար մասնակցել է Սորբոնի համալսարանում անցկացվող «Ժողովուրդները երգում են» ամենամյա փառատոնին: Երգչախումբը մեծապես նպաստել է հայ երաժշտության զարգացմանը Ֆրանսիայում: 1958-ից դասավանդել է Մխիթարյան վարժարանում, եղել երգչախմբի ղեկ-ը: Երգչախմբի համար մշակել է «Ես լսեցի մի անուշ ձայն», «Կիլիկիա», «Արևն ելավ» և այլ երգեր: Երգչախմբի կատարումներով թողարկվել են ձայնապնակներ: Գրել է երգեր՝ Մ. Զարիֆյանի, Վ. Թեքեյանի, Վ. Վահյանի և ուր. խոսքերով:

ՅԱՎՐՅԱՆ Իգոր Սարտինի (14.10.1943, Թբիլիսի–16.06.2017, Երևան), դաշնակահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2014): Ավարտել է ՄՊԿ (1967, Լ. Ն. Վլասենկոյի դասարան), ԵՊԿ ասպիրանտուրան (1984, ղեկ.՝

Զուլիետա Յակոբովիչ

Հայկ Յաղջյան

Իգոր Յավրյան



Սեդրակ Յավրույան

Ռիչարդ Յարդումյան

Իզաբելա Յոլյան

Յ. Հայրապետյան): 1969–72-ին՝ Սուխումի երաժշտ. ուսումնարանում դաշնամուրի դասատու, 1970–72-ին՝ Աբխազիայի պետ. ֆիլհարմոնիայի մենակատար և կոնցերտմայստեր: 1972-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1996-ից, 2002–03, 2012–17-ին՝ մասնագիտ. դաշնամուրի ամբիոնի վարիչ, 2003–12-ին՝ դաշնամուրի ֆակ-ի դեկան): Որպես մենակատար՝ հանդես է եկել Թբիլիսիի, Երևանի, Յալթայի, Վորոշիլովգրադի, Սուխումի, Կազանի սիմֆ. նվագախմբերի, համատեղ ելույթներ ունեցել Ս. Իսեռլիսի, Ս. Նավասարդյանի, Ա. Դավթյանի, Հ. Հարությունյանի, Մ. Աբրահամյանի, Բ. Թումանյանի, Ս. Սարտիրոսյանի, Յ. Բալյանի, Ա. Մուրադյանի և ուր. հետ, դաշնամուր. տրիոյի կազմում (Ձ. Գևորգյան, Ա. Բոգդանյան և ուր., հետագայում՝ Լ. Մամիկոնյան) շրջագայել Իսպանիայում, Ավստրիայում, Ռուսաստանում և Գերմանիայում: Եղել է հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների (40-ից ավելի) առաջին կատարողը: Ստեղծել է «դաշնամուրային դպրոց», դասավանդման սեփ. մեթոդ: Բազմիցս եղել է հանրապետ. և միջազգ. երաժշտ. մրցույթների և փառատոների հանձնախմբերի նախագահ:

ՅԱՎՐՈՒՅԱՆ Սեդրակ (17.03.1931, Կ. Պոլիս–21.10.2006, Սյուրեն՝ Փարիզի մերձակայքում), դաշնակահար: Կ. Պոլսում աշակերտել է դաշնակահար, մանկավարժ Ստեփան Բաբելյանին: 1948-ին տեղափոխվել է Փարիզ, ավարտել է պետ. կոնսերվատորիան (1953): 1955-ից՝ Փարիզի հեռուստառադիոյի մենակատար: Նույն թվականին համերգներով շրջագայել է Կ. Պոլսում, Բուդապեշտում, Պորտուգալիայում, Անգլիայում, Իսպանիայում: 1959-ին «Ժեռնես մյուզիքլ ֆրանսեզ» խմբի հետ հանդես է եկել Ֆրանսիայում՝ տարածելով ռուս. դաս. երաժշտությունը: Երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շոպենի, Կ. Դեբյուսիի, Ա. Ն. Սկրյաբինի, Մ. Պ. Մուսորգսկու, Ս. Վ. Ռախմանինովի, Ս. Ս. Պրոկոֆևի, Մ. Ա. Բալակիրևի, Ա. Խաչատրյանի և ուր. գործերից: Առաջինն է ձայնագրել Ժ. Բիզեի դաշնամուր. ստեղծագործությունները:

ՅԱՐԴՈՒՄՅԱՆ (Յարդըմյան) Ռիչարդ Հայկի [05.04.1917, Ֆիլադելֆիա (ԱՄՆ)–15.08.1985, Ֆիլադելֆիա], կոմպոզիտոր: Փենսիլվանիայի «Մերվիլ» (1972) և «Ուիդեներ» (1978) քոլեջների պատվ. դ-ր: Մասնագիտացել է ինքնակրթությամբ: Գրել է «Հայկական սյուիտ» (1937, 4 մասանոց, «Վերջաբանը»՝ 1954), «Պատարագ» (1967), «Աբրահամի պատմությունը» (1973)՝ երգչախմբի և նվագախմբի, 2 խորալ. պրելյուդ (1976)՝ նվագախմբի, «Նարեկ» (1983)՝ կոնտրալտոյի, տավիղի, գալարափողի, «Հրաշափառը» (1985)՝ երգեհոնի, երգչախմբի, նվագախմբի համար, ջութակի, դաշնամուրի պիեսներ և այլ գործեր, որոնց բնորոշ են միջնադար. ձայնակորդ. համակարգերի, դողեկաֆոնիայի, նաև իմպրեսիոնիստ. արտահայտչամիջոցները:

ՅՈԼՅԱՆ Իզաբելա Ռուբենի (12.03.1928, ք. Գորիս–13.02.1996, Մոսկվա), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (1986): Պրոֆ. (1989): Ավարտել է ԵՊԿ (1948): 1952-ից դասավանդել է ՄՊԿ-ում: 1972-ից՝ ՌԴ արվեստագիտ-յան ԳՀԻ Ասիայի և Աֆրիկայի երկրների արվ-ի բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունները վերաբերում են հիմնականում Միջին և Մերձ. Արևելքի երաժշտ. մշակույթին:

Երկ. *Կոմիտաս, Ե., 1969: Александр Арутюнян, М., 1962; Григор Егиазарян, М., 1968; Очерки арабской музыки, М., 1977; Традиционная музыка Арабского Востока, М., 1990.*

ՅՈԼՉՅԱՆ Ռոբերտ Ալեքսանդրի (03.05.1917, Թիֆլիս–06.04.2001, Երևան), հարված. գործիքների կատարող, մենակատար: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1950): 1939-ից՝ Հայաստանի պետ. ջազ. նվագախմբում: Հանդես է եկել նաև քաղաք.

Ռոբերտ Յոլչյանը ելույթի պահին

(«Աղջի, հագինդ չիթ ա» ևն), ժող. և հատուկ իր համար գրված («Թմբկահարի երգը» ևն) երգերով, վարել համերգներ: Յ-ին բնորոշ էր կատարող. վարպետությունը: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում,

Ֆրանսիայում, Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում և այլուր:

ՅՈՐԳԱՆՑ Մարթեն (ծ. 24.06.1946, Ստամբուլ), երգիչ: Սովորել է Ստամբուլի Մխիթարյան վարժարանում: Կիսատ թողելով ուսումը՝ հրապուրվել է երաժշտությամբ: Ելույթներ է ունեցել 1965-ից: Ապրում և ստեղծագործում է Ֆրանսիայում: 1973-ին Առնո *Բաբաջանյանի* հրավերով եկել է Հայաստան: Հայկ. երգացանկի առաջին երգերի հեղինակը Ա. Բաբաջանյանն է: Երգացանկում ընդգրկել է նաև իր գրած հայ. («Այբ, բեն, գիմ», «Ճկույթիկ», «Հայի աչքեր», «Սիրում եմ քեզ», «Գարուն ես միշտ, Երևան» ևն), իտալ. և ֆրանս. երգեր: 1977-ին հանդես է եկել Փարիզի «Օլիմպիա» համերգասրահում, 1978-ին «Մոր» նվագախմբի հետ՝ Մոնրեալում: Թողարկել է ձայնասկավառակներ («Յորգանցը երեխաների համար», 1992, «Հայաստան 2006», 2006, «Լավագույնը», 2007, ևն): Յ-ի մանկ. երգերն առանձնանում են ինքնատիպ թեմաներով, բանաստեղծ. մեղեդայնությամբ: 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո հանդես է եկել «100 երգ հայ երեխաների համար» նախագծով: Մենահամերգներով եղել է Երևանում, Գյումրիում, Արցախում (Ստեփանակերտ, Շուշի, Մարտակերտ):

Բալկանյան երգի փառատոնի «Ոսկե միկրոֆոն» մրց. (1967), «Կարոտ» փառատոնի ոսկե մեդալ (2008, Մոսկվա):

ՅՈՐԵՆՑ Անի Ներսեսի (ծ. 04.10.1984, Ախալցխա), երգչուհի (սոպրանո): Ավարտել է Երևանի Ղ. Սարյանի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի և մեներգեցողության (1999), ԵՊԿ մեներգեցողության (2006, Գ. Գալաչյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2008), Մայնի Ֆրանկֆուրտի երաժշտության և կատարող. արվ-ների ակադ-ը (2011): Վարպետության դասեր է առել Հ. Ֆասսենբեդերից, Ի. Կոտրուբաշից, Կ. Մոլլից, Մոնա *Ղազարյանից*: 2005–08-ին՝ Ղ. Սարյանի անվ. օպեր. ստուդիայի (Մագդա, Ջորջետտա, Լաուրետտա՝ Ջ. Պուչչինիի «Ծիծեռնակ», «Թիկնոցը», «Ջիաննի Սկիկկի»), 2012-ից՝ Կասելի (Գերմանիա) պետ. օպեր. թատրոնի մեներգչուհի. դերերգերից են՝ Պամինա, Սյուզան (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», «Ֆիգարոյի ամուսնությունը»), Նինետտա (Ս. Ս. Պրոկոֆևի «Սեր առ երեք նարինջներ»), Լիու (Ջ. Պուչչինիի «Տուրանդոտ»), Ջուլիետ (Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ») ևն: Համագործակցել է կոմպոզիտորներ Է. Միրզոյանի, Տ. Մանսուրյանի հետ:

Մեներգիչների «Ռոմանսիադա» (2002, «Հուսո» մրց., Երևան), Կամեր. երգեցողության (2004, Կալինինգրադ՝ ՌԴ) միջազգ., Թ. Շահնազարյանի անվ. (3-րդ մրց., 2004, Երևան), Տ. Սազանդարյանի անվ. (2-րդ մրց., 2006, Երևան) հանրապետ. մրցույթների, «Schlossoper Hedenstein» փառատոնի (1-ին մրց., 2009, Գերմանիա) դափնեկիր:

Մարթեն Յորգանցը ելույթի պահին

ՅՈՒԲԻԼՅԱՅԻԱ (< լատ. jubilatio – ցնծություն), պաշտամունք. երաժշտության մեջ ցնծություն արտահայտող զարդինչյուն-իմպրովիզացիաներ. երգում են մեներգիչները՝ եղանակավորելով գրիգորյան խորալում «ալելու» բառի վերջին վանկը: Քրիստ. եկեղեցին Յ-ները փոխառել է հուդայական պաշտամունքից: Յ-ները հիշելը հեշտացնելու համար Սանկտ Գալլենի վանքի վանական Նոթկերը (830–912) յուրաքանչյուր նոտային համապատասխանեցրել է տեքստ. 1 վանկ:

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Էռնա Նիկոլայի (ծ. 16.12.1958, Երևան), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2015): Վաղ տարիքում ընտանիքի հետ տեղափոխվել է Բաքու: Ավարտել է Բաքվի պետ. երաժշտ. ուսումնարանի դիրիժոր-խմբավարության բաժինը (1979): 1974-ից՝ «Գայա» պետ. ջազ. քառյակի, 1980-ից Երևանում՝ «Սերպանտին» վոկալ-գործիք. անսամբլի, 1982–84-ին՝ Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբի, 1991-ից՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի մեներգչուհի: 1988-ից դասավանդել է Երևանի պետ. ջազ. քոլեջում: Համագործակցել է Ռոբերտ *Ամիրխանյանի* հետ: Հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ քաղաքներում, Ուկրաինայում, Մոլդովայում և այլուր: 1994-ին տեղափոխվել է ԱՄՆ. երգել է ակումբներում, համագործակցել տեղի հայ երաժիշտների ու երգիչների հետ: Մենահամերգներով հանդես է եկել Երևանում, Գյումրիում, Ստեփանակերտում (2010, 2015): Ձայնագրել է սինգլներ («Ժպտա», «Երջանկության հարյուր ժամ», «Հեռանում են ընկերներն ու սիրելիները» ևն), ալբոմներ («Սգո գիշեր», 2011, «Լավագույնը», 2015), նկարահանել տեսահոլովակներ («Ինչպես մի աստղ», «Մեղեդի», «Գիտեմ» ևն), «Սիրո երգեր» (1983, երաժշտաֆիլմ) ևն: «Տարվա



Անի Յորենցը ելույթի պահին

Էռնա Յուզբաշյանը ելույթի պահին

Յուրի Յուզբաշյան

երգ» (1986), «Մեսամ» միջազգ. (3-րդ տեղ, 1987, Բելգրադ) մրցույթների դափնեկիր, ՀԼԿԵՄ մրց. (1989):

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Յուրի Վաղարշակի (ծ. 11.09.1935, ք. Գորիս), խմբավար, մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (1991): ՀՀ վաստ. մանկավարժ (2003): ՀՀ ՄԳԱ անդամ (1998): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1959), ԵՊԿ (1964) խմբավարության բաժինները: 1956–79-ին (ընդհատումով) աշխատել է Երևանի հանրակրթ. դպրոցներում (երգի դասատու, երգչախմբի ղեկ.), 1960–96-ին՝ Երևանի քաղժողկրթբաժնի մեթոդ կաբինետում, 1964–1970-ին՝ Ուսուցիչների կատարելագործման Երևանի քաղաք. ինստ-ում (երաժշտության կաբինետի վարիչ): 1965-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում (1973–87-ին՝ գեղ. դաստիարակության և տարրական ուսուցման մեթոդիկայի, 2001–10-ին՝ խմբավարության և ձայնադրման ամբիոնների վարիչ, 1987–98-ին՝ գեղ. դաստիարակության ֆակ-ի դեկան):

Հեղինակ է հանրակրթ. դպրոցների 1–8-րդ դասարանների երաժշտության 26 դասագրքի, մեթոդ. ձեռնարկների, երաժշտության ծրագրերի և գիտամեթոդ. հոդվածների:

Նյու Յորքի միջազգ. ակադ-ի պատվավոր անդամ (1998):

Հայաստանի երիտասարդության առաջին փառատոնի դափնեկիր, Խ. Աբովյանի անվ. (1986), ՀՀ «Մովսես Խորենացի» (2015) մեդալներ, Կոմիտասի անվ. հուշամեդալ (2009), Ամերիկ. կենսագր. ինստ-ի «Տարվա մարդ» (1994, 2009), «Ձեռքբերումների ոսկե սկավառակ» մրց. (1996):

ՅՈՒՇԱՐԻ (Նահատակյան Խաչատուր, 1850, Ալեքսանդրապոլ–1922, Ալեքսանդրապոլ), աշուղ: Նվագել է թառ: Իր հորինած երգերով գրավել է վարպետ աշուղների ուշադրությունը, որոնք նրան անվանել են «Յուշարի» (արթուն, ուշիմ): Հորինել է մուհամմաներ (հանելուկներ), մրցել անվանի աշուղների հետ: 1892–95-ին երգել է ***Ջիվանու*** խմբում, շրջագայել Կովկասի հայաբնակ վայրերում: Նրա դավթարը չի պահպանվել. հայտնի են մի քանի երգեր ու մուհամմաներ, որտեղ Յ. արձագանքել է ժամանակի հուզող խնդիրներին, բողոքել անարդարության և բռնության դեմ: Հիշարժան է հայկ. դպրոցների փակման (1885) կապակցությամբ նրա հորինած «Երկդիմի երգը»: Հորինել է նաև սիրային և խրատ. երգեր:

Երկ. *Շիրակի հայ աշուղները, [ժող.], Ե., 1986, էջ 104–105:*

Ն

ՆԱԶԱՆԻ (Տեր-Մարտիրոսյան Հովհաննես), Թառլանյան Թորոս, Հովհաննես Տերենց (30.12.1870, Ալեքսանդրապոլ–6.11.1912, Ալեքսանդրապոլ), գրող, աշուղ: Ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանության ֆակ-ը (1895): Աշխատել է Ալեքսանդրապոլում՝ որպես իրավաբան և կրթության գործիչ: Լույս են տեսել նրա «Սրտի խօսքեր» (1892), «Սիրոյ տաղեր» (1913) բանաստեղծությունների ժող-ները, «Մեր խալֆան» (1906) վիպակը: Առավել հայտնի է աշուղ. երգերով. ճանաչված են «Ես մի խոնաւակ թառ ունեի», «Տերն, աչքերիդ ատլաս փայլից», «Ո՞ւր ես, ուր ես, ազիզ աղջիկ», «Յար, քեզ հետ խոսելիք ունեմ» և այլ երգեր:

Գրկ. *Լևոնյան Գ., Սայաթ-Նովայի համալսարանական աշակերտը – Հովհաննես Տերենց, «Զիթենի», ժող., Թ., 1915:*

ՆԱԶԱՐՅԱՆ Հրաչիկ Հարությունի (ծ. 27.03.1952, Երևան), կլառնետահար, մանկավարժ: Լաուրա *Սամյանի* ամուսինը: 1980-ից դասավանդում է ԵՊՄՀ (պրոֆ.՝ 2012-ից): Փարիզի գիտությունների միջազգ. ակադ-ի անդամ (2016):

Ավարտել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանը (1971), ԵՊԿ (1979): 1972–79-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ. նվագախմբի կլառնետահար, 1979-ին՝ Հայաստանի ժող. գործիքների նվագախմբի առաջին դուդուկահար, 1980–82-ին՝ «Տկզար» անսամբլի դուդուկահար և դիրիժոր, 1982–85-ին՝ Գեղագիտ. կենտրոնի դիրիժոր, 1983-ից՝ Հայաստանի ժող. և գուսան. երգի պետական անսամբլի դուդուկահար (1991–2011-ին՝ տնօրեն): Հեղինակ է «Դուդուկի ձեռնարկ», «Մենանվագներ դուդուկի համար», «Երկեր դուդուկի ու դաշնամուրի համար» (բոլորը՝ 2008), «Ստեղծագործություններ կլառնետի և դաշնամուրի համար» (2013), «Գամմաներ կլառնետի համար», «Էտյուդներ կլառնետի համար», «Կոմիտաս. երկեր կլառնետի և դաշնամուրի համար» (բոլորը՝ 2012) ձեռնարկների:

Պ. Ի. Չայկովսկու անվ. (1-ին մրց. և ոսկե մեդալ, 1967, Սիմֆերոպոլ), Սևծովյան երկրների միության (2008, Քոբուլեթի) միջազգ. մրցույթների դափնեկիր, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012):

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Հովհաննես (Իոհաննես) Առաքելի, Ռոմանովիչ [15(27).09.1871, Սիմֆերոպոլ (Ղրիմ)–23.02.1942, Տաշքենդ], ջութակահար, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1937): Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան (1894, Լ. Մ. Առուերի դասարան), կատարելագործվել Բեռլինի բարձրագույն երաժշտ. դպրոցում (1895, ղեկ.՝ Յ. Յոախիմ): 1895–1942-ին դասավանդել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1908-ից), ղեկավարել լար. քառյակի դասարանը: Նրա մանկավարժ. գործունեության շնորհիվ կապ է ստեղծվել Լ. Մ. Առուերի և խորհրդ. կատարող. դպրոցների միջև:

Ստեղծագործության կարևորագույն փուլը համերգ. գործունեությունն էր. շրջագայել է Ս. Պետերբուրգում, Կիևում, Վիլնոյում, Ռիգայում, Բեռլինում, Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում և այլուր: Վիրտուոզ ստեղծագործություններից բացի՝ նվագել է նաև կամեր. գործեր:

Կատարումներն առանձնացել են տոնի գեղեցկությամբ, վստահ և ճկուն, բազմազան տեխնիկայով, ցայտուն ֆրազավորմամբ: Ընդ որում՝ աջ և ձախ ձեռքերի տեխնիկան զարգացած էր հավասարապես: Թեև ուներ կատարման բացառիկ տեխնիկա, այնուամենայնիվ, նրա նվագը գրավում էր ոչ այնքան վիրտուոզությամբ, որքան կանտիլենայով: Ն. դաս. ստեղծագործությունների լավագույն մեկնաբաններից էր. նվագացանկում՝ Յ. Ս. Բախի 2 ջութակի d-moll, № 2, Վ. Ա. Մոցարտի ջութակի և նվագախմբի № 6 Es-dur կոնցերտները, Ֆ. Մենդելսոնի, Պ. Ի. Չայկովսկու (առաջին կատարողը), Ա. Կ. Գլազունովի ջութակի, Ա. Վիյոտանի ջութակի № 2, № 4 և № 5, Լ. Շպորի ջութակի 8-րդ, Մ. Բրուխի ջութակի 2-րդ,

Հրաչիկ Նազարյան

Հովհաննես Նալբանդյան

Հ. Նալբանդյանը (ձախից) Ալեքսանդր Սպենդիարյանի հետ

Տիգրան Նալբանդյան

Գևորգ Նալբանդյան

Ա. Գ. Ռուբինշտեյնի ջութակի սոլ մաժոր, Ն. Պագանինիի D-dur, Յ. Կոնյուսի e-moll կոնցերտները, Յ. Բրամսի սոնատը՝ դաշնամուրի և ջութակի համար, Ֆ. Շումանի լա մինոր սոնատը, նաև Պ. Սարասատեի, Յ. Յոախիմի, Հ. Վենյավսկու ստեղծագործություններից: Նրան են նվիրված Յ. Վիտոլի «Լատիշական ֆանտազիան», Ս. Մ. Լյապունովի ջութակի կոնցերտը, Լ. Վ. Նիկոլաևի ջութակի և դաշնամուրի սոնատը, Ա. Սպենդիարյանի ջութակի և դաշնամուրի ռոմանսը, «Կանցոնետը», Պոգոժևի «Նոկտյուռնը», որոնց առաջին կատարողն էր:

Հետևելով աշխարհահռչակ ջութակահար-վիրտուոզների ավանդույթներին՝ Ն. նույնպես գրել է գործեր (պիեսներ) ջութակի համար և կատարել իր համերգներում: Մեծ հաջողություն են ունեցել նաև նրա G-dur ռոմանսը, A-dur, G-dur էտյուդները, «Արևելյան կապրիսը», “Le Tourment”-ը, G-dur պրելյուդը, «Հեքիաթը»՝ մենակատար ջութակի համար, քայլերգը, նոկտյուռնը, «Ֆանտազիան», “Mélancolic”-ը, “Orinetale”-ը և այլ գործեր:

Բազմիցս մասնակցել է բարեգործ. համերգների, եղել համամիութ. երաժշտ. մրցույթների հանձնախմբերի անդամ (1932, 1935, 1937):

Գրկ. *Գևորգյան Գ., Հովհաննես Նալբանդյան, կենսագրական ակնարկ, Ե., 1962: Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970, էջ 376–380: Յիցիկյան Ա., Հայկական աղեղնային արվեստը, Ե., 1977: Թադևոսյան Ա., Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից (XIX դարի 2-րդ կես–XX դարի սկիզբ), Ե., 1977, էջ 124–131: Ադամյան Ա., Հայերը Սանկտ Պետերբուրգի գեղարվեստական կրթօջախներում (XIX–XX դդ.), Ե., 2004: Ադամյան Ա., Ամատրյան Ա., Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար–XX դարի սկիզբ), Ե., 2015, էջ 93–205: Налбандян С., Памяти Иоаннеса Романовича Налбандяна. Малоизвестные страницы истории консерватории. Санкт Петербург, вып. XV, стр. 69–73.*

Աննա Ամատրյան

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Տիգրան Հովհաննեսի [14(26).03.1878, Վան–07.09.1954, Երևան], երգիչ (քնար. տենոր), մանկավարժ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1890–96, աշակերտել է Սակար *Եկմալյանին*), Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում (1897–98), Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1898–1906), կատարելագործվել Միլանում (1907–08): Համերգներով շրջագայել է Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում. երգացանկում՝ եվրոպացի, ռուս և հայ կոմպոզիտորների ռոմանսներ, հայկ. ժող. և աշուղ. երգեր: 1913–18-ին՝ Թիֆլիսում, 1918–21-ին Աստրախանում և Արմավիրում հիմնադրել և ղեկավարել է ժող. կոնսերվատորիաներ: 1922-ից դասավանդել է Երևանի երաժշտ. ստուդիայում, 1926-ից՝ Բաքվի Հայարտան երաժշտ. դպրոցում, հայկ. դրամատիկ. թատրոնին կից երաժշտ. ստուդիայում, ֆիլհարմոնիայում, երաժշտ. ուսումնարանում և կոնսերվատորիայում, 1949-ից՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (սաներից են Արթուր *Այդինյանը*, Հովհաննես *Բադալյանը*, Բելլա *Դարբինյանը*):

ՆԱԼԲԱՆԴՅԱՆՆԵՐ, երաժիշտների տոհմ: Գևորգ Ն. (1887, Այնթապ–1963, Ադիս Աբեբա), դիրիժոր: Հակոբ Ն-ի եղբայրը: Նվագել է ջութակ, քանոն, մի շարք փող. գործիքներ: Կ. Պոլսում երաժշտության դասեր է առել *Կոմիտասից*: 1919-ից Հալեպում զբաղվել է մանկավարժ. գործունեությամբ: 1924-ին Եթովպիայի ապագա թագավոր Խայլե Սելասիե I-ը, Երուսաղեմում տպավորվելով 40 հայ որբերից կազմված փող. նվագախմբի ելույթից (ղեկ.՝ Գևորգ Ն.), խնդրել է Հայոց պատրիարքարանին նվագախումբը տալ իր երկրին: Նվագախումբն իր գործունեությունը շարունակել է Ադիս Աբեբայում՝ դառնալով Եթովպ. պրոֆեսիոնալ երաժշտարվ-ի սկզբնավորման և զարգացման հիմքը: Գրել է Եթովպիայի ազգ. օրհներգը (կատարվել է մինչև 1992-ը, Գևորգն արժանացել է լորդի տիտղոսի), նաև 50-ից ավելի եթովպ. երգեր, հիմնադրել է փող. նվագախմբեր, երգչախմբեր, քաղաք. թատերախումբ: Հեղինակ է հաբեշ. պիեսների («Կապրե Մարիամ», «Ատելի պատերազմը», «Հեղափոխականները», «Աթո Մանալլը», «Հովիվ Թասֆարրա»):

Հակոբ Ն. (1901, Այնթապ–1979), ջութակահար, դիրիժոր: Գևորգ Ն-ի եղբայրը: Հեռակա ավարտել է Փարիզի կոնսերվատորիան: Ջութակի դասեր է տվել Բեյրութում և Հալեպում: 1944-ից ապրել է Ադիս Աբեբայում. ղեկավարել է եղբոր՝ Գևորգի հիմնադրած զինվ. նվագախումբը, պրոֆեսիոնալ երաժշտ. դպրոց, նպաստել եթովպ. ազգ-ժող. արվ-ի զարգացմանը: 1944-ին զինվոր. նվագախմբի դիրիժորությամբ

հանձնել է եղբորը Հակոբին և զբաղվել միայն ստեղծագործ. աշխատանքով:

Ներսես Ն. (1915–1977), ջութակահար, խմբավար, դիրիժոր: Գևորգ Ն-ի որդին: 1938-ից ապրել է Ադիս Աբեբայում: Ընտրվել է հայկ. եկեղեցու երգչախմբի ղեկ.: 1939-ին ստեղծել է «Մուրադյան» երգչախումբը, որն աչքի է ընկել պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, հանդես է եկել համերգներով. երկացանկում՝ հայկ. և եթովպ. երգեր: 1970-ական թթ-ին բեմադրել է «Սոս և Վարդիթեր» (ըստ՝ Պ. Պռոշյանի) մյուզիքլը (խաղացվել է շուրջ 20 տարի): Նվագել է դաշնամուր և ջութակ, դասավանդել է կոնսերվատորիայում, ղեկավարել պետ. թատրոնի նվագախումբը: Ներսես Ն-ի երգերը, խմբերգերը, փող. նվագախմբ. երկերը, քայլերգերը հարստացրել են եթովպ. պրոֆեսիոնալ երաժշտությունը, ընդգրկվել սփյուռքահայ երաժշտարվ-ի պատմության գանձարանում:

Ներսես Նալբանդյան

ՆԱԽԱՆՎԱԳ, նախաբան, երաժշտ. ստեղծագործության կամ նրա որևէ մասի ներած. բաժինը, որով կանխազգացվում է նրանց բնույթը կամ հակադրության սկզբունքով ընդգծում նրանց մուտքը: Պարզագույն դեպքերում (դաս. ռոմանսներում ու երգերում են) բաղկացած է կատարողին և ունկնդրին «տրամադրող» ներած. (հաճախ՝ միայն հարմոնիզացված) 1 ֆրազից: Առանձնահատուկ դեպքերում պարունակում է ինքնուրույն թեմա, որը նույնպես նպաստում է ստեղծագործության (կամ մասի) ընդհանուր զարգացմանը (Պ. Ի. Չայկովսկու 4-րդ սիմֆոնիայի 1-ին մասը ևն): Երբեմն Ն. ավարտված պիես է՝ հաջորդող հիմնական հատվածի թեմայով կամ նրանից անկախ (Ժ. Բիզեի «Կարմեն» օպերայի Ն. կոչվում է նաև պրելյուդ, գործողությունների միջև կատարվող Ն-ները՝ ա ն տ ր ա կ տ): Խոշոր ստեղծագործության ընդհանուր գաղափարը կամ հայեցակարգն ամփոփ վերարտադրող Ն. կոչվում է նաև ***նախերգանք*** (Ռ. Վագների «Լոհենգրին» օպերայում ևն):

Հատված Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի նախերգանքից

ՆԱԽԵՐԳԱՆՔ, ուվերտյուր (ֆրանս.՝ ouverture, < ouvrir – բացել), 1. օպերայի, բալետի, օրատորիայի, դրամայի, ֆիլմի նվագախմբ. նախաբանը, որի հիմքում սովորաբար ստեղծագործության հիմնական բովանդակությունն անդրադարձնող թեմաներ են: Այն կենտրոնացնում է ունկնդրի ուշադրությունը, նրան հոգեբանորեն նախապատրաստում հետագա գործողություններն ընկալելու համար: Առաջին նմուշներից է Կ. Մոնտեվերդիի «Օրփեոս» օպերայի նախաբանը (1607):

Ն. կարող է թեմատիկորեն կապված լինել օպերայի հետ (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», «Ռուսլան և Լյուդմիլա») կամ ընդհանրացված արտահայտել նրա հիմնական բնույթը (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը», Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»): Լինելով կերպար. բովանդակությամբ նշանակալի, նաև ավարտուն՝ օպերայի կամ դրամայի Ն-ները հաճախ դառնում են ինքնուրույն գործ և ընդգրկվում համերգ. ծրագրերում (Լ. վան Բեթհովենի «Էգմոնտ»-ի և «Կորիոլան»-ի Ն-ները՝ Գյոթեի և Գ. ֆոն Կոլլիի համանուն դրամաների համար գրված երաժշտությունից, Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի վոկալ-սիմֆ. Ն. ևն): 2. Ծրագր., դրամատիկ., նկարագր. և այլ բնույթի 1-մասանի նվագախմբ. պիես՝ գրված մեծ մասամբ սոնատ. ալեգրոյի ձևով (Պ. Ի. Չայկովսկու «Ռոմեո և Ջուլիետ» ֆանտազիա-Ն., Ա. Կ. Գլազունովի «Հանդիսավոր», Ա. Հարությունյանի «Տոնական» Ն-ները ևն):

Սրեֆանի Նակաշյանը ելույթի պահին

ՆԱԿԱՇՅԱՆ Ստեֆանի Սամուելի (ծ. 29.08.1954, Վաշինգտոն), երգչուհի: Սովորել է Հյուսիսարևմտյան համալսարանում (տնտեսագիտություն), ստացել բակալավրի, ապա՝ մագիստրոսի աստիճան: Մինչև 1981-ն աշխատել է Նյու Յորքի և Չիկագոյի խոշորագույն բանկերում՝ որպես ֆինանս. խորհրդատու: 1980-ական թթ-ից հանդես է եկել անվանի երաժիշտ Ջ. Հենդրիկսոնի ջազ. խմբում, դարձել առաջատարներից,

Նահապետ Քուչակ (1975, նկարիչ՝ Միհրան Սոսոյան)



Նահապետ Քուչակի «Հայրենի կարգավ» գրքի (1957) կազմը

Նաղաշ Հովնաթան

ամուսնացել խմբի դաշնակահար Օ'Բրայենի հետ: ԱՄՆ-ի ջազ. երաժշտության կենսագր. բառարանում Ն-ին համարում են հանրահայտ ջազ. երգչուհի Էլլա Ֆիցջերալդի ժառանգորդը և լավագույններից մեկն աշխարհում: Համագործակցել է ջազի բազմաթիվ հայտնի երաժիշտների հետ: Ձ. Կալումի «Դիքսիլենդ» խմբի հետ մշտապես մասնակցել է «River Walk», նաև այլ փառատոների: Թողարկել է «Thrush Hour: a Study at the Great Ladies of Jazz» (2006) ալբոմը, ձայներիզներ, 3 ոսկե, 2 պլատինե ձայնասկավառակներ: Ելույթներ է ունեցել ԱՄՆ-ի, Եվրոպայի, Ճապոնիայի և այլ երկրների ռադիոյով և հեռուստատեսությամբ: Երաժշտ. խմբերին դասավանդում է վոկալ արվ., դպրոցներում անցկացնում գործն. պարապմունքներ: Հեղինակ է ջազ. երգեցողության մասին գրքի:

«Գրեմմի» մրց. (2):

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ, Նահապետ վարպետ աշըղ Քուչակ, Չիչակ, Վանեցի կամ Վանլի Քոչակ [XV դ-ի վերջ – XVI դ-ի սկիզբ, հավանաբար՝ գ. Խառակոնիս (Վանի նահանգ)–29.03.1592, թաղվել է Խառակոնիսի Սբ Թեոդորոս եկեղեցու գերեզմանատանը], հայ առաջին աշուղ-երգիչներից: Եղել է սիրված երգիչ և աշուղ: Նրա անունով գրավոր ու բանավոր պահպանվել են շուրջ 10 (7-ը՝ հայատառ թուրք.) կրոն., բարոյախրատ. և սիրային երգեր: 1880-ական թթ-ին նրան են վերագրվել նաև միջնադար. հայրեններ: Վերագրման աղբյուրը բանասեր Ա. Տևկանցի «Հայերգ» ժող-ն է (1882), որին հետևել են այլ բանասեր-գրականագետներ: Թեև 1920-ական թթ-ին Մանուկ Աբեղյանն ապացուցել է վերագրման անհիմն լինելը, սակայն ավանդաբար Ն. Ք. համարվում է հայրենների հեղինակ, նրա անունով հրատարակվել և բազմաթիվ լեզուներով թարգմանվել են այդ երգերը: Այդ առումով Ն. Ք. դարձել է պայման. և հավաք. անուն, որով հայտնի է հայ միջնադար. քնարերգության մեծ և հարուստ ժառանգությունը:

Երկ. *Հայրենի կարգավ (նախաբանը և ծնթգր.՝ Ա. Ղուկասյանի), Ե., 1957, Հարյուր ու մեկ հայրեն, կազմ. և առաջաբանը՝ Լ. Մկրտչյանի, Ե., 1976: Песня любви, пер. А. Амбарцумян, СПБ, 1904; Стихотворения, пер. Ал. Степанэ, предисл. М. Мкряна, Е., 1941.*

Գրկ. *Չոպանեան Ա., Նահապետ Քուչակի դիւանը, Փարիզ, 1902: Աբեղյան Մ., երկ., հ. 2, Ե., 1967: Մնացականյան Ա., Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, ՊԲՀ, 1958, № 2: Եգանյան Օ., Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն պաղերը, ԲՄ, № 5, 1960:*

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ [1661, գ. Շոռոթ (այժմ՝ Նախիջևանի ԻՀ-ում)–28.10.1722, գ. Շոռոթ], գրիչ, նկարիչ, բանաստեղծ, աշուղ: Նրա կյանքի մասին տեղեկությունների հիմնական աղբյուրը բանաստեղծություններն են և մահվան անմիջական տպավորությամբ որդու՝ նկարիչ և բանաստեղծ Նաղաշ Հակոբի գրած «Ողբամ արտասուօք, կոծով տխրութեան» բանաստեղծությունը: Նախն. կրթությունն ստացել է հոր՝ Հովհաննես (Յոհան) քահանայից, ապա սովորել Ագուլիսի Սբ Թովմա վանքի դպրոցում: Ագուլիսում ընդօրինակել և ծաղկել է ձեռագրեր (Մտնդ., ձեռ. № 3628), Երնջակում, Շոռոթում որմնանկարել (ենթադրվում է) եկեղեցիներ, ապարանքներ և եկեղեցիներ է ձևավորել Վրաստանում, Պարսկաստանում: Ստեղծել է նաև հաստոց. և գեղանկարչ. գործեր: Ճանաչվել է որպես հմուտ նկարիչ, վաստակել «Նաղաշ» (արաբ. – զարդանկարիչ) տիտղոսը: 1679-ի մեծ երկրաշարժից հետո հրավիրել են Երևան, որտեղ նկարազարդել է Սբ Պողոս-Պետրոս, Սբ Անանիա և Կաթողիկե եկեղեցիները, գրել «Գովասանութիւն Երևանայ քաղաքին» տաղը: XVII դ-ի վերջին և XVIII դ-ի սկզբին հրավիրվել է Վրաստան. Թիֆլիսում ունեցել է արվեստանոց, աշակերտներ, եղել է Քարթլիի Վախթանգ VI թագավորի պալատ. երգիչն ու նկարիչը, ձևավորել է նորակառույց պալատը, գրել «Գովեմ սրտիվ ուրախական» երգը: 1710-ական թթ-ից Էջմիածնում նկարազարդել է Մայր տաճարը (ավարտել է 1720-ին):

Ն. Հ. XVII դ-ի հայ աշուղ. պոեզիայի հիմնադիրն է: Աշուղ. խաղերում, նաև սիրո, ուրախության, խնջույքի, խոհախրատ. բանաստեղծություններում քարոզել է ստեղծագործ. աշխատանք, մարդկային մաքուր ու ազնիվ հարաբերություններ, բողոքել չարիքի և անարդարության դեմ, դրվատել գիտությունն ու արվ-ը: Գրել է նաև կրոնածիս. տաղեր: Նա ներդաշնակել է ազգ. ավանդ. տաղաչափ. ձևերը և աշուղ. բանարվ-ի նվաճումները, ստեղծել նորատիպ երգեր: Իր բանաստեղծությունների համար ընտրել կամ հորինել է եղանակներ և ինքն էլ երգել ու նվագել դրանք:

Երկ. *Բանաստեղծություններ, Ե., 1951:*

Գրկ. *Չոպանեան Ա., Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարի-*

չը, Փարիզ, 1910: Յովսէփեան Գ., Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պր. Ե, Անթիլիաս, 1951: Մկրտչյան Մ., Նաղաշ Հովնաթան, Ե., 1957:

ՆԱՂԱՐԱ (արաբ. – գոչյուն, աղաղակ), ժող. թմբուկի տեսակ: Գործածվում է սազանդար. անսամբլներում: Կազմված է կավե մեծ ու փոքր թաղարներից՝ վերևից ձգված կաշվե թաղանթով: Նվագում են փայտե թակիչներով: Հայաստանում անվանում են նաև տմբլա (այստեղից՝ տմբլաչի): 1925-ին Վարդան *Բռնին* իր հիմնադրած Արևելյան սիմֆ. նվագախմբում օգտագործել է պտուտակավոր սարքով, կվարտ. հարաբերությամբ բացարձակ բարձրության հնչյուններ արտաբերող Ն.: Այժմ Հայաստանում լայն կիրառություն չունի:

Նաղարա

ՆԱՄԻՆ Ստաս (Միկոյան Անաստաս Ալեքսեյի, ծ. 08.11.1951, Մոսկվա), կոմպոզիտոր, կիթառահար: Ավարտել է Մոսկվայի Ա. Վ. Սուվորովի անվ. ռազմ. ուսումնարանը (1969), սցենար-ռեժ. բարձրագույն դասընթացները (1983): Ստեղծել է «Կախարդներ» (1964), «Աղբյուր» (1967), «Ծաղիկներ» (1969, 1980-ից՝ «Ստաս Նամինի խումբ») ռոք երաժշտ. խմբերը, 1969-ին եղել «Ցոլքեր» խմբի առաջին կիթառահարը: Նրա ղեկավարությամբ 1999-ին Մոսկվայում հիմնադրվել է երաժշտության և դրամայի թատրոնը: Որպես մենակատար՝ շրջագայել է բազմաթիվ երկրներում, ռոք երաժշտության միջազգ. մրցույթներում արժանացել մրց-ների: Թողարկել է ձայնապնակներ և տեսաերիզ: 1981-ին Երևանում կազմակերպել է ռոք և փոփ, 1989-ին Մոսկվայում՝ ռոք երաժշտության փառատոներ: 1989-ին Նեշվիլի Վանդեր Բիլթի համալսարանում (ԱՄՆ) ստեղծել է «Հայաստանի երեխաներ» հիմնադրամը: Հեղինակ է մի շարք հիթերի («Վաղ է հրաժեշտ տալը», «Հիմն Արեգակին», «Մենք երջանկություն ենք ցանկանում ձեզ» ևն), կինոերաժշտության: Ն-ի հետ համագործակցել են նշանավոր երաժիշտներ Պ. Գաբրիելը, Ֆ. Զապան, Յ. Օնոն, Բ. Ջոնսը, Օ. Օզբոռնը և ուր.:

2016-ին Երևանում տեղի է ունեցել Ն-ի երաժշտության փառատոն, կատարվել նրա Centuria S-Quark սիմֆոնիան (դիրիժոր՝ Ս. Սմբատյան):

Մայրը՝ Նամի Արտեմի Միկոյան, Պրիկալոնսկայա Քսենյա (ծ. 21.11. 1928, Թիֆլիս), երաժշտագետ: Ավարտել է ԵՊԿ (1951) դաշնամուրի և երաժշտագիտ. բաժինները: 1973-ից՝ Համամիութ. երաժշտ. իրավունքի գործակալության փորձագետ, «Ստաս» ամսագրի երաժշտ. խմբագիր:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Սվետլանա Հովհաննեսի (ծ. 29.10.1946, ք. Ալավերդի), դաշնակահարուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1984): Սովորել է ԵՊԿ-ում (1965–68, Վ.Ռւմր-Շատի դասարան), ավարտել ՄՊԿ (1971, Յ. Զակի դասարան): 1974-ից դասավանդում է ԵՊԿ-ում (1981-ից՝ դոցենտ): Նվագացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ռ. Շումանի, Պ. Հինդեմիթի, Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Խաչատրյանի, Գ. Հովունցի, Տ. Մանսուրյանի և ուր. ստեղծագործություններից: Կատարումներն աչքի են ընկնում ուրույն մեկնաբանությամբ, մասշտաբայնությամբ, դրամատիկ հագեցվածությամբ:

Սվետլանա Նավասարդյանը ելույթի պահին

Այսրկովկաս. 2-րդ (1965, Թբիլիսի) և միջազգ.՝ Ֆ. Շումանի անվ. (1966, 2-րդ մրց., Յվիկաու), Յ. Ս. Բախի անվ. (1968, 3-րդ մրց., Լայպցիգ), Եղիսաբեթ թագուհու անվ. (1972, 5-րդ մրց., Բրյուսել), Սիդնեյի (1977, 2-րդ մրց.) մրցույթների դափնեկիր: ՀԼԿԵՄ մրց. (1970): ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2003):

Շուշանիկ Ափոյան

ՆԱՎՈՅԱՆ Մհեր Ռաֆիկի [ծ. 02. 03.1971, գ. Լանջաղբյուր (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2012): Արվեստագիտ. դ-ր (2017), պրոֆ. (2013): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1988), ԵՊԿ նվագախմբ. (1993, Ա. Մուրադյանի դասարան), վոկալ-տես. (1994, Ա. Բուդաղյանի դասարան) ֆակ-ները: 1995-ից դասավանդում է նույն կոնսերվատորիայում (գիտ. գծով պրոռեկտոր՝ 2011-ից), վարել է «Հայ երաժշտության պատմություն», «Արևելքի դասական երաժշտության հիմունքներ», «Հայ հոգևոր երաժշտություն», «Համաշխարհային երաժշտության պատմություն» (XIX դ-ի կեսի և XX դ-ի սկզբի եվրոպ. երաժշտության պատմություն), ԵՊՀ-ում (2002–11)՝ «Երաժշտական արվեստի պատմություն» և «Մշակութաբանություն» դասընթացները: 2000-ից ԵՊԿ-ում ղեկավարում է երաժշտագիտ. մասնագիտ. դասարան:



Սրաա Նամինը ելույթի պահին

Միհր Նավոյան

Մ. Նավոյանի «Դրվագներ հայ երաժշտության պատմության» գրքի (2009) կազմը

2001–ից՝ *«Գեղարդ»* երգեցիկ խմբի գեղ. ղեկ., 2005–ից՝ ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ի ժող. երաժշտության բաժնի վարիչ (2016–ից՝ առաջատար գիտաշխատող): 2004–11–ին՝ «Հայ հոգևոր երաժշտության կենտրոնի» տնօրեն, 2015–ից՝ Կոմիտասի թանգարան–ինստ–ի գիտ. խորհրդի նախագահ:

Զեկուցումներով ու դասախոսություններով հանդես է եկել Կենտր. եվրոպ. համալսարանում (CEU, Բուդապեշտ, 2000), Փարիզի արվ. լեզուների ինստ–ում (2003), Աշխարհի մշակույթների տանը (2009), Հելսինկիի, Յոենսուի համալսարաններում (2005), Յ. Սիբելիուսի անվ. երաժշտ. ակադ–ի եկեղեց. երաժշտության բաժանմունքում (ք. Կուոպիո՝ Ֆինլանդիա, 2005), Յ. Գրոտովսկու անվ. ինստ–ում (Վրոցլավ՝ Լեհաստան, 2008), «Հումբոլդտ», Թյուբինգենի համալսարաններում, Մարկտոբերդորֆի երաժշտ. ակադ–ում (2012, երեքն էլ՝ Գերմանիա), Շերեմետևի պալատում (Ս. Պետերբուրգ, 2014), «Միդեմում» (Կաննի՝ Ֆրանսիա, 2015), «Լարք» կրթ. հաստատությունում (Լոս Անջելես, 2015):

Ուսումնասիրությունները վերաբերում են հայ երաժշտության, մասնավորապես՝ հայ միջնադար. երաժշտաբանաստեղծ. արվ–ի (հայ հոգևոր երաժշտություն) պատմությանն ու տեսությանը («Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում», 2001, «Դրվագներ հայ երաժշտության պատմության», 2009, ուս. ձեռնարկ):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» II աստիճանի մեդալ (2017):

ՆԱՏԻՐԻ, Նազարեթ Պոհճալյան (1845–1904), աշուղ: Տասը տարեկանից հորինել է երգեր, որոնք կատարել են նաև այլ երգիչներ: Կեսարիայի քաղաքապետը, Ն–ի ձայնով հմայված, նրան անվանել է «Ն.» (թուրք.՝ անզուգական): Հետագայում նա մեկնել է Երուսաղեմ, ապա՝ Կ. Պոլիս: Գրել է բանաստեղծություններ, երգեր (հիմնականում՝ խրատ.), ընդարձակ մի դաստան՝ 1895–ի ջարդերի մասին: Երգերից տպագրվել են Ա. Ալպոյաճյանի «Պատմութիւն հայ Կեսարիոյ» գրքի Բ հատորում:

ՆԵՈԿԼԱՍԻՑԻԶՄ, արվ–ում և մասամբ գրկ–յան մեջ ընդունված եզրույթ, որով նշվում են XIX դ–ի վերջի և XX դ–ի սոցիալ. ուղղվածության և գաղ. բովանդակության գեղ. երևույթներ, որոնց բնորոշ է դաս. արվ–ի, Վերածննդի շրջանի կամ կլասիցիզմի (երաժշտության մեջ՝ նաև բարոկկոյի շրջանի) արվ–ների ավանդույթներին անդրադառնալը:

XX դ–ի երաժշտության հոսանքներից է, որի ներկայացուցիչները ձգտել են վերածնել վաղ դաս. և մինչդաս. երաժշտության ոճական հատկանիշները: Առավելապես զարգացել է համաշխ. 2 պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում: 1920–ին կոմպոզիտոր, երաժշտագետ Ֆ. Բուզոնին հրատարակել է երաժշտագետ Պ. Բեքերին ուղղված բաց նամակ («Նոր կլասիցիզմ»), որը դարձել է այդ ուղղության մանիֆեստը: 1924–ին Ի. Ֆ. Ստրավինսկին առաջադրել է «Հետ դեպի Բախը» կարգախոսը, որի իմաստը Յ. Ս. Բախի երաժշտ. ձևի կառուցման ու զարգացման սկզբունքները և երաժշտ. լեզվի ժամանակակից արտահայտչամիջոցները միավորելն էր: Ն–ի գեղ. իդեալը «կարգ ու կանոնն է», գեղ. ամբողջության տարրերի կայունությունը, հավասարակշռվածությունը: Այդ ներդաշնակությունը, սակայն, հասկացվում է ոչ որպես պայքարի արդյունք, իրական կենս. հակասությունների հաղթահարում, այլ սկզբնապես գոյություն ունեցող, հավերժ ու անփոփոխ ինչ–որ բան:

Ն–ին իր վերջին ստեղծագործություններում հարել է կոմպոզիտոր Մ. Ռեգերը: Արտաքին ոճավորման առումով Ն–ի միտումներ կան Ռ. Շտրաուսի գործերում («Վարդերի ասպետը», օպերա, 1910): Գերմ. երաժշտության մեջ Ն. գլխավորել է Պ. Հինդեմիթը, որն իր երկերում անդրադարձել է XVI դ–ի լինեար (գծային) պոլիֆոնիային և բարոկկոյի դարաշրջանին բնորոշ գործիք. երաժշտության ձևերին: 1920–ական թթ–ին այդ հոսանքին որոշակիորեն տուրք է տվել Ի. Ֆ. Ստրավինսկին («Էդիպ արքա», օպերա–օրատորիա, 1927, «Պուլչինելլա», 1919, «Ապոլլոն Սիւսագետ», 1927, «Փերու համբույրը», 1928, բալետներ, «Սաղմոսների սիմֆոնիա», 1930, օկտետ, 1923, ևն): Ն–ի միտումներ մասամբ արտահայտվել են ֆրանս. «Վեցյակի» ներկայացուցիչների (Դ. Միյո, Ա. Հոնեգեր, Ֆ. Պուլենկ և ուր.), նաև Մ. Ռավելի, Օ. Ռեսպիգիի որոշ գործերում: Իտալ. Ն–ի ներկայացուցիչներից են Ի. Պիցցետտին,

է. Մալիպիեռոն, Ա. Կազելլան: Ն-ի բնույթի ստեղծագործությունները մոտ են ոճավորմանը, նրանց մեջ հնագույն երաժշտության ընդօրինակումը զուգակցվում է երաժշտ. լեզվի արդիականացման (արխաիկին զուգահեռ) ժամանակակից արտահայտչամիջոցների օգտագործման հետ: Լայն առումով՝ Ն-ի միտումներն էությամբ հակասական են. վերածնված պարզությանը, կազմակերպվածությանը, երաժշտ. հին ոճերի տրամաբանությանը զուգահեռ՝ Ն. հանգեցրել է սառը, ձևական ընդօրինակման, հնացած ոճաձևերի արհեստ. վերածնման: ԵՀՊ-ից հետո Ն. դադարել է եվրոպ. երաժշտության առաջատար ուղղություն լինելուց, սակայն նրա որոշ տարրեր պահպանվել են զաղ-գեղ. տարրեր դիրքորոշման կոմպոզիտորների երկերում:

Գրկ. *Колпинский Ю., Фашизм и монументальное искусство, "Искусство", № 4, М., 1934; Дурус А., К вопросу о художественной политике немецкого фашизма, там же, 1934, № 5; Михайлов М., О классицистских тенденциях в музыке XIX начала XX века, в кн.: Вопросы теории и эстетики музыки, вып. 2, Л., 1963; Смирнов В., Возникновение неоклассицизма и неоклассицизм И. Стравинского, в кн.: Кризис буржуазной культуры и музыка, вып. 2, М., 1973; Denis M., Théories. 1890–1910..., 3 ed., P., 1913; Նույնի, Nouvelles thèories. 1914–1921, P., 1922; Stuckenschmidt H., Neue Musik, B., 1951; Hitchcock A., Architecture: Nineteenth and Twentieth Centuries, Harmondsworth (a. o.), 1958; Austin W., Music in the 20th Century, N. Y., 1966.*

ՆԵՐԲՈՂ, ձ ո ն, գ ո վ ե ր գ, քնար. բնույթի հանդիսավոր կամ փառաբան. երգ՝ նվիրված որևէ նշանավոր անհատի կամ իրադարձության: XVII դ-ից Ն. արևմտաեվրոպ. երկրներում նշանակել է նաև պալատ. հանդիսությունների համար գրված վոկալ-գործիք. երաժշտ. ստեղծագործություն՝ որևէ պալատականի պատվին: Տարածվել են նաև երգ-Ն-ներ՝ նվագակցությամբ (Գ. Ֆ. Տելեման, Ֆ. Է. Բախ, Ք. Վ. Գլյուկ): Հետագայում ստեղծվել են գործիք. Ն-ներ: Ավելի ուշ «Ն.» են անվանել տարբեր ձևերի և կատարող. կազմերի համար գրված հանդիսավոր, հիմնի բնույթի երկերը: Ն-ներ են գրել Լ. Քերուբինին, Ֆ. Լիստը, Ժ. Բիզեն, Ի. Ֆ. Ստրավինսկին, Ս. Ս. Պրոկոֆևը, Ա. Խաչատրյանը («Ներբող Վ. Ի. Լենինի հիշատակին», «Ուրախության ներբող»), Ա. Հարությունյանը («Ձոն Լենինին»), Մ. Մավիսակալյանը («Ձոն բարեկամության»), Վ. Կոտոյանը («Ձոն կուսակցությանը»), Ա. Տերտերյանը (6-րդ սիմֆոնիա, նվիրված է Ի. Տիգրանովային), Ս. Հովհաննիսյանը («Հայ-ռուսական բարեկամության ձոներգ») և ուր.:

Հատված Ա. Տիգրանովայի «Հյուգիա»-ից

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ (ավազանի անունը՝ Սմբատ, 1153, Լամբրոն–14.07.1198, Սկևռայի վանքի Սբ Աստվածածին եկեղեցի), աստվածաբան, մեկնիչ, մատենագիր, հրապարակախոս, բանաստեղծ, շարականագիր: Սովորել է Սկևռայի վանքում, ապա՝ Հռոմկլայի կաթողիկոսարանի բարձրագույն դպրոցում՝ Գրիգոր Գ Պահլավունու և Ներսես Շնորհալու հովանավորությամբ: Եղել է քահանա, ապա՝ արքեպիսկոպոս (1175): Հայտնի է նաև որպես երաժիշտ. հորինել է 20-ից ավելի շարականներ և երգել: Շարականոցում զետեղված են նրա՝ Զատկի («Այսօր յարե-

«Ներսես Լամբրոնացի», մանրանկար (1651, Հայամավորք, Սիոնդ., ձեռ. № 1502)

Ներսես Լամբրոնացու «Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի» գրքի (1842) տիտղոսաթերթը

աւ»), Նոր կիրակիի («Նորոգեալ կըղզիք»), Համբարձման («Համբարձաւ Տէրն մէր»), Գրիգոր Լուսավորչի որդիների և թոռների («Որ ըզլոյս աստուածային») կանոնները: Հայտնի են նաև «Համբարձումն Տեառն» և «Գալուստ Հոգւոյն Սրբոյ» ներբողյանները:

Գրկ. *Թահմիզյան Ն., Երաժշտությունը Հայկական Կիլիկիայում, Ե., 1989:*

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Ներսես Դ Կլայեցի, Սբ Ներսես Շնորհալի, Երգեցող [մոտ 1100, Ծովք բերդ (Ծոփաց նահանգի Անձիտ գավառ)–13.08.1173, Հռոմկլա], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1166-ից: ՀԱԵ տոնելի սուրբ, մատենագիր, բանաստեղծ, երաժիշտ, քաղ. գործիչ: Հիմնավոր կրթություն է ստացել Կարմիր վանքի դպրոցում, աշակերտել Ստեփանոս Սանուկ եպիսկոպոսին: 1116-ից ապրել և ստեղծագործել է Կոմմագենեի Տլուք գավառի Ծովք դղյակում, 1150-ից՝ Հռոմկլայում:

Ն. Շ., որպես երաժիշտ և շարականագիր, թողել է բազմաժանր երաժշտ. ժառանգություն՝ Տերունական, պահոց օրերի, սրբերին նվիրված, դավան., վարքագր., ազգ-հայրենասիր. բազմաթիվ շարականներ, տաղեր, գանձեր, մեղեդիներ: Մեծ ժողովրդականություն են վայելել գիշերային ժամի «Առաւօտ լուսոյ»-ն, «Յիշեսցուք»-ը, «Զարթիք»-ը, «Աշխարհ ամենայն»-ը, առավոտյան ժամի «Նորաստեղծեալ»-ը, «Արարչական»-ը (ըստ շաբաթվա 6 օրերի), արևագալի ժամի երգերը՝ «Յարևելից մինչև ի մուտս», «Ճգնաւորք Աստուծոյ», «Լոյս, արարիչ լուսոյ», «Անեղանելիդ Աստուած», «Ճանապարհ եւ ճշմարտութին», ճաշու կամ երրորդ ժամի «Օրինեմք զքեզ»-ը,

Հատված Ներսես Շնորհալու «Նոր ծաղիկ» տաղից

«Նահապետին Աբրահամու»-ն, խաղաղական ժամի «Նայեաց սիրով»-ը, «Ի քէն հայցեմք»-ը: Ն. Շ-ուն են պատկանում նաև Համբարձումից մինչև Հոգեգալուստ պահք պահելու, Վարդավառի, Հոգեգալստյան և Վերափոխման տոները երեքօրյա և բազմօրյա դարձնելու հրահանգը և այդ տոներին նվիրված շարականները: Ուշագրավ են նաև Աբգար թագավորին, Տրդատ Գ Մեծին և Աշխեն թագուհուն, Սբ Գևորգ և Սբ Սարգիս զորավարներին, Ավարայրի հերոսներին, Ղևոնդյանց նահատակներին, Վարդանանց նվիրված «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք» շարականները:

Նրա երգերի ու շարականների զգալի մասն սկսվում է իր անվան սկզբնատառով՝ կազմելով «Ներսէսի երգ»:

Ն. Շ. հայ երաժշտության կիլիկ. դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչն է և առհասարակ միջնադար. Հայաստանի խոշորագույն բանաստեղծ-երաժիշտը: Նրա արվ-ը խորությամբ, տարողությամբ ու արժեքով համաքրիստ. (մանավանդ՝ արևելաքրիստ.) քաղաքակրթության խոշոր երևույթներից է: Պահպանված գրական ու երաժշտ. բազմաթիվ նյութեր, ձեռագր. փաստեր վկայում են, որ նա եղել է ոչ միայն բեղուն երգահան, այլև ժամանակի լավագույն երգիչ-կատարողներից, նաև գեղագետ, տեսաբան, ուսուցիչ: Հորինել է հոգևոր (եկեղեց.) արտապաշտամունք., ամենայն հավանականությամբ՝ նաև աշխարհիկ երգեր: Արտապաշտամունք. կոչվում են այն ստեղծագործությունները, որոնք թեև ստեղծվել են կրոն. ներշնչմամբ, սակայն նախատեսվել են ոչ թե պաշտոներգություն ներմուծելու, այլ կենցաղում կատարելու համար: Ն. Շ-ու արտապաշտամունք. գործերից «Յիսուս Որդի» պոեմն եղանակավոր (ասերգի ձևով) պատմվել ու մի շարք հատվածներում էլ նաև երգվել է, ինչպես «Սաննա ծոեր» էպոսը: Նա հոգևոր երաժշտության մեծ բարենորոգիչ է՝ իր բուն ստեղծագործությամբ և պաշտոներգության ծիս. կողմի բարեկարգությամբ: Կարգավորել է հայոց՝ մինչ այդ աղավաղված, աղքատացած պաշտոներգությունը, բարեձևություն ու միակերպություն հաղորդել դրան, բազմապիսի ստեղծագործություններով հարստացրել, միաժամանակ մաքրել է XII դ-ի համար արդեն հնացած մասերից

ու ձևերից՝ երկար ու ձիգ սաղմոսասացությունների փոխարեն զետեղելով իր գործերը: Վերանայել է հայկ. միջնադար. ծիս-երաժշտ. բոլոր գրքերը, որոնցից մի քանիսը լրացրել է հիմնովին: Միջնադար. ձեռագրերում ցրված Ն. Շ-ու երգերը դիտարկվում են ըստ գրական խոսքի կառուցվածքի (տաղաչափության), ձայնեղանակների նշման ու գործն. կիրառման և խազավորման (խազագրերի հյուսվածքի) սկզբունքների: Բացի այդ՝ նույն երգերի մի ստվար մասն Էջմիածնում է՝ XIX դ-ի հայկ. ձայնագրության նոր համակարգի նշաններով ձայնագրված ժող-ներում: Վերջիններս, ներկայացնելով հայոց հոգևոր երգարվ-ի, մասնավորապես՝ երգեցողության ուշմիջնադար. պատկերը, միաժամանակ անդրադարձնում են այդ արվ-ի հին ու հնագույն բազմաթիվ շերտեր, որով և համեմատելի են միջնադար. գրչագիր համապատասխան մատյանների հետ: Այդ ժող-ներում Ն. Շ-ու 200-ից ավելի ստեղծագործություններ (շարականներ և Պատարագի ու ժամագրքի երգեր) հնարավորություն են ընձեռում գաղափար կազմելու նրա երաժշտաբանաստեղծ. արտահայտման կերպի գլխ. առանձնահատկությունների մասին, տարբերելու այդ ստեղծագործության ժանր-ոճ. հիմնական ոլորտները և խորամուխ լինելու նրա արվ-ի փիլիսոփայության մի քանի էական հատկանիշների մեջ, այն է՝ ձգտումը գեղ. կատարելության, որը հոգևոր երգարվ-ում բարձրացնում է երաժշտության գեղագեղայական ներգործության ուժը, արլ. ու արմ. մասնագիտացված արվ-ների, նաև հայ ժողովրդի աշխարհիկ երգ-երաժշտության կենսունակ տարրերի համարձակ օգտագործումը (նոր առումներ է հաղորդում հոգևոր երգին), մեղեդիական ազատ, զարդոլորուն ոճի զարգացումը: Ն. Շ. հայկ. միջնադարի այն մեծերից է, որը Գրիգոր Նարեկացու, Մանուել և Տրդատ ճարտարապետների, Թորոս Ռոսլինի և Սարգիս Պիծակի նման եզակի արվեստագետների հետ մեծ և արժեքավոր ավանդ ունի Վերածննդի շրջանում ու դրան հատուկ հումանիզմի շարժումը նախապատրաստելու գործում:

Երկ. *Յիսուս Որդի, ԿՊ, 1824: Բանք չափաւ, Վնտ., 1830: Նամականի, Վնտ., 1838: Թուղթք ընդհանրական, Էջմիածին, 1865: Յաղագս երկնի եւ զարդուց նորա. Հանելուկներ, Ողբ Եղեսիոյ, Ե., 1968: Ողբ Եղեսիոյ, Ե., 1973: Վիպասանութիւն, Ե., 1981: Տաղեր և գանձեր, Ե., 1987: Արևագալ, Ս. Էջմիածին – Վնտ., 1991: Տաղեր և շարականներ, Ե., 2003: Поезия Армении с древнейших времен до наших дней, под ред. В. Брюсова, М., 1916; Армянская средневековая лирика, сост. Л. Мкртчян, М., 1972.*

Գրկ. *Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873: Օրմանեան Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912: Աբեղյան Մ., Երկ., հ. 4, Ե., 1970: Հակոբյան Գ., Ներսես Շնորհալի, Ե., 1964: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Ներսես Շնորհալի (հոդվածների ժող.), Ե., 1977: Զեքիյան Լ., Համամիութենական տրամախոսութիւն մը ԺԲ դարու: Բանակցութիւն ս. Ներսէս Շնորհալիի եւ կայսերական նվիրակ Թեորիանոսի միջև..., Վնտ., 1978: Մնացականյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ, Ե., 1980: «Էջմիածին», 1973, № 12 (համարը նվիրված է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին):*

«Սր Ներսես Շնորհալի», մանրանկար (1352, Մանրուսում, Սիրնդ., ձեռ. № 591)

ՆԵՐՍԻՍՅԱՆ Անահիտ Սերգեյի (ծ. 16.06.1954, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (2007): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի բաժինը (1972, դասատու՝ Ե. Ոսկանյան), ՄՊԿ (1977) և ասպիրանտուրան (1980, երկուսն էլ ղեկ.՝ Վ. Մերժանով): 1977-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2003-ից): 1981-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար. Տ. Մանսուրյանի, Գ. Հովունցի, Լ. Չաուշյանի, Ա. Սաթյանի, Է. Արիստակեսյանի, Է. Հովհաննիսյանի երկերի առաջին կատարողն է: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ քաղաքներում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Կանադայում, Ճապոնիայում, Ֆինլանդիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում և այլուր: Համագործակցել է ճանաչված դիրիժորներ Է. Խաչատրյանի, Վ. Այվազյանի, Ռ. վան Գրիստենի (Նիդեռլանդներ), Ֆ. Մանինոյի (Իտալիա), Շ. Շտոյի (Շվեյցարիա), Վ. Սինայսկու (Լատվիա) և ուր. հետ: Մոսկվայի «Մելոդիա» ֆիրմայում ձայնագրել է Յ. Ս. Բախի ստեղծագործություններից (1982) և Դ. Դ. Շոստակովիչի 24 պրելյուդները (1985), թողարկել է ձայնասկավառակներ՝ հայ կոմպոզիտորների գործերի կատարումներով (1994, ԱՄՆ, 2001, Ճապոնիա), Գ. Սարաջևի գործերով և հայ կոմպոզիտորների մանկ. պիեսներով (2011-12): Եղել է հանրապետ. (Ա. Բաբաջանյանի, Գ. Սարաջևի), միջազգ. (Յ. Ս. Բախի՝ Գերմանիա, Ս. Վ. Ռախմանինովի՝ Ռուսաստան) մրցույթների հանձնախմբերի անդամ: Վարպետության դասեր է վարում Լեհաստանի և Ճապոնիայի կոնսերվատորիաներում:



Ներսես Շնորհալու «Տաղեր և գանձեր» գրքի (1987) կազմը

Անահիտ Ներսիսյան

Խաչատուր Ներսիսյան

Մարտին Ներսիսյան

Վահագն Նիկողոսյան

Այսրկովկաս. IV միջազգ. փառատոնի 2-րդ մրց. (1972, Բաքու), Յ. Ս. Բախի անվ. միջազգ. փառատոնի ոսկե մեդալ, 1-ին մրց. (1980, Լայպցիգ), Հայաստանի երիտասարդ. փառատոնի դափնեկիր (1985):

ՆԵՐՍԻՍՅԱՆ Անդրանիկ (ծ. 1977, Աթենք), դաշնակահար: Ավարտել է Աթենքի Արդի երաժշտության վարժարանը (դասատու՝ Յ. Զոնգր): Է. Գրիգի դաշնամուրի կոնցերտով հանդես է եկել նաև Երևանում: 1994-ից կատարելագործվել է Նյու Յորքի Զուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցում (ղեկ.՝ հունգար դաշնակահար Գ. Շանդոր), ապա՝ Լոնդոնի թագավոր. երաժշտ. քոլեջում (ղեկ.՝ Զ. Բարսթոու): Արժանացել է քոլեջի «Էրիկ Հարիսոն» և «Փավոր» մրց-ների: Համերգով հանդես է եկել Բեյրութում: 1994-ին Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ կատարել է Ս. Վ. Ռախմանինովի 2-րդ, 1995-ին՝ Լ. վան Բեթհովենի 3-րդ կոնցերտները: Երկացանկում՝ Կոմիտասի, Ա. Հովհաննեսի, Լ. Բազիլի, Ռ. Յարդումյանի, Լ. Ճգնավորյանի, Ա. Բաբաջանյանի, Ա. Խաչատրյանի և ուր. երկերից:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Խաչատուր Ռուբենի [24.12.1923, ք. Արմավիր (ՌԴ Կրասնոդարի երկրամաս)–12.11.2001, Երևան], քամանչահար, երգահան: ՀԽՍՀ վաստ. ատիստ (1977): Ավարտել է Երևանի երաժշտ. ուսումնարանը (1941), ուսանել կոնսերվատորիային կից Արևելյան ստուդիայում: Մասնակցել է ՀՄՊ-ին (1941–45). ղեկավարել է գնդի ժող. գործիքների անսամբլը: Սովորելու տարիներին և 1945-ից՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Մասնակցել է արլ. մուղամին նվիրված միջազգ. գիտաժողովների (1975, Սամարղանդ, 1977, Տաշքենդ), համերգներով շրջագայել արտերկրում: Գրել է երգեր («Կարոտի երգ», «Սեր չտվիր», «Ելեք հայեր, ելեք քաջեր», «Կռունկները շարան-շարան» ևն), ստեղծագործություններ՝ քանոնի («Էքսպրոմտ», «Գարնանային ղողանջներ»), դուդուկի («Սիրո անուրջներ», «Պոեմ նահատակների հիշատակին»), շվիի (Ռապսոդիա «Վայք», Կոնցերտային սկերցո), թառի («Խոհեր», «Կոնցերտինո») և այլ գործիքների համար, պար. մեղեդիներ: Պարերը («Զանգեզուր», «Եղեգնաձորցիներ», «Արցախ», «Սպասում» ևն) բեմադրվել են պետ. և ինքնագործ. անսամբլներում: Սայաթ-Նովայի անվ. համահայկ. երգի մրց. (2000):

Թողարկվել է Ն-ի 9 ձայնասկավառակ (156 ստեղծագործություն, 2004):

Վայք ք-ի արվ-ի դպրոցը կոչվել է Ն-ի անունով (2005):

Գրկ. *Պլուզյան Վ., Խաչատուր Ներսիսյան, Ե., 2005:*

ՆԵՐՍԻՍՅԱՆ Մարտին Սահակի (13.05.1926, Երևան–14.06.1996, Մոսկվա), դիրիժոր: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1970): Ավարտել է ԵՊԿ լար. (1949) և Լենինգրադի (1959) կոնսերվատորիայի դիրիժորության բաժինները: 1946–54-ին՝ Հայֆիլհարմոնիայի, 1959–65-ին՝ Մինսկի սիմֆ. նվագախմբերի դիրիժոր, 1965–70-ին՝ Սարատովի մարզ. ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1970–82-ին՝ ԽՍՀՄ պետկինոյի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1982–86-ին՝ գլխ. դիրիժոր: 1973–74-ին Կահիրեում հիմնադրել է սիմֆ. նվագախումբ, դասավանդել Կահիրեի կոնսերվատորիայում: Ելույթներ է ունեցել Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Վահագն Արամի (14.02.1910, Ստամբուլ–30.09.1997, Նյու Յորք), վինագործ: Աշակերտել է հորը՝ Արամ Նիկողոսյանին (լար. գործիքների պատրաստման առաջին արհեստանոցի հիմնադիրը Թուրքիայում): Առաջին ջութակը պատրաստել է 15 տարեկանում: 1929-ին մեկնել է Փարիզ, աշակերտել ջութակի ճանաչված վարպետ Մ. Վատլոյին («Էքոլ Նորմալ» երաժշտ. բարձրագույն դպրոցի ջութակ պատրաստողը): Այդ ընթացքում պատրաստել է 4 ջութակ, 1 թավջութակ (1933-ին ցուցադրվել են Փարիզի քանդակի թանգարանում): 1936-ին վերադարձել է Թուրքիա, հիմնադրել ջութակի պատրաստման, վերանորոգման և վերականգնման արհեստանոց: 1958-ին տեղափոխվել է ԱՄՆ, 10 տարի աշխատել Ռ. Վաթլիթզերի արհեստանոցում, 1964–1968-ին եղել է ջութակի իտալացի վարպետ Ս. Ֆ. Սակկոնիի օգնականը: Հետագայում Նյու Յորքում բացել է «Անտոնիո Ստրադիվարիուս» արհեստանոցը: Հիմնականում վերականգնել է դաս. երաժշտ. գործիքներ, կարևորել նրանց հնչողության ուժգնությունը: Հայտնի էր նաև որպես աղեղների հմուտ վերանորոգող: Ջութակի և աղեղի պատրաստման վարպետների միջազգ. միության և ֆեդերացիայի անդամ: Ն-ի ամենամյա դասընթացներին մասնակցել են

վարպետներ Սամվել *Երիցյանը*, Մարտին *Երիցյանը*, Աշոտ Վարդանյանը:

ՆԻԿՈՐՈՎԻՉ Յուզեֆ [02.04.1827, Զբիյսկ (Լվովի մոտակայքում)–06.01.1890, Խիրովո], կոմպոզիտոր: Սերել է Լվովում հայտնի հայկ. տոհմից, որը XVIII դ-ում հաս-քաղ. նշանակալի դեր է ունեցել Բուկովինայում: Կոմպոզիցիայի դասեր է առել Լվովում՝ պրոֆ. Ռ. Շվարցից, ապա՝ Վիեննայում՝ Նետենքոմից: Երկար տարիներ դասավանդել է Լվովի կոնսերվատորիայում: Գրել է բազմաթիվ երգեր, դաշնամուր. վալսեր, մազուրկաներ, պոլոնեզներ: Ն-ի լեհ. երգերից մի քանիսը Մ. Պ. Մուսորգսկին օգտագործել է «Զորապետը» ստեղծագործության մեջ: Ն-ի մեղեդիներից մեկի համար Կ. Ույեյսկին 1846-ին (հեղ. իրադարձությունների ազդեցությամբ) գրել է «Հրդեհների ծխով» բանաստեղծությունը, որը դարձել է լեհ. ազգ. երգ. հետագայում Կարոլ *Միկուլին* այն վերածել է խմբերգի՝ դաշնամուրի նվագակցությամբ:

ՆԻՐԱՆԻ (Շահրամանյան Հովհաննես, 1822, Վաղարշապատ–մ. թ. անհտ), աշուղ: Կրթություն ստացել է Մեսրոպ Թաղիադյանի ղեկավարությամբ, սովորել հայ., պարսկ., թուրք.: Հետագայում աշակերտել է Հովհաննես արքեպիսկոպոս Շահխաթունյանին: Զբաղվել է ոսկերչությամբ, միաժամանակ հետևել աշուղ. արվ-ին: 1835-ից հորինել է հայ. և թուրք. երգեր, որոնք կատարել է սազի, ապա՝ չոնգուրի նվագակցությամբ: Նրա հայ. երգերից մի քանիսը զետեղված են «Նոր քնար Հայաստանի» Տետրակ Գ-ում (1856), Մ. Միանսարյանի «Քնար հայկական» (1868) և Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» (1903) ժող-ներում:

Երկ. *«Զանազան երգք պարոն Յովհաննիսի Շահրամանեանց Նիրանի մականուանելոյ» (Մ., 1856, «Նոր քնար Հայաստանի» մատենաշար, Տետրակ Գ):*

ՆՇԱՆՅԱՆ Աննա (Փափազյան Աննա Սահակի, ծ. 12.12.1931, Կահիրե), երգչուհի (սոպրանո): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1970): Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է Կահիրեում: 13 տարեկանում կատարել է Անուշի դերերգը (Ա. Տիգրանյանի «Անուշ»): 1953-ին ձայնը մշակել է իտալացի պրոֆ. Բոջոլինոյի և Փարիզի «Գրանդ օպերայի» մեներգչուհի Մ. Սուլոնի ղեկավարությամբ: 1958-ին Կահիրեի երգի փառատոնում իտալ. օպեր. երգչախմբի հետ կատարել է Միմիի դերերգը (Ջ.Պուչչինիի «Բոհեմ»): Ավարտել է ԵՊԿ (1963): Մենահամերգներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Երևանում, նաև Եվրոպայի, Միջին Արևելքի, Ավստրալիայի բազմաթիվ քաղաքներում: 1963–80-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Վիոլետտա, Դեզդեմոնա (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Օթելլո»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Անուշ, Շուշան (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ»), Աննա (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա») ևն: Նկարահանվել է կինոյում («Մայո ժակը և ուրիշներ», 1964, «Քաղաքավարության կանոնները», 1964, Հայֆիլմ): 1980-ից ապրում և ստեղծագործում է ԱՄՆ-ում. հիմնադրել է «Անահիտ» երգի անսամբլը:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2013):

Երկ. *Երգը յուշերում..., Լոս Անճելըս, 2003:*

ՆՈԿՏՅՈՒՌՆ (ֆրանս.՝ nocturne – գիշերային, իտալ.՝ notturno), ցայգերգ, ցայգանվագ, տարատեսակ երաժշտ. ստեղծագործություններին տրվող անվանում: XVIII դ-ում և XIX դ-ի սկզբին իտալ. notturno տերմինով նշել են դիվերտիսմենտի տեսակներից մեկը, գործիք. սերենադին կամ կասացիային մոտ բազմամաս ստեղծագործությունը՝ հիմնականում փող. կամ լար. և փող. գործիքների համար (սովորաբար՝ գիշերը բացօթյա կատարման համար, Վ. Ա. Մոցարտի և Յ. Հայդնի Ն-ները ևն): XIX դ-ում ձևավորվել է Ջ. Ֆիլդի ստեղծագործության մեջ՝ որպես էլեգիական բնույթի երգ., քնար.

Հատված Առնո Բաբաջանյանի «Նոկտյուռն»-ից

Յուզեֆ Նիկորովիչ

Աննա Նշանյանը Օլիմպիայի դերում (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»)

1-մասանի դաշնամուր. պիես, հիմնականում՝ եռամաս-ռեպրիզ. ձևով: Ֆ. Շոպենի 21 դաշնամուր. Ն-ները ժանրի զարգացման բարձրակետն են, որոնք աչքի են ընկնում բովանդակության խորությամբ և հարստությամբ: Ն-ների հեղինակներ են նաև Ռ. Շումանը, Կ. Դեբյուսին, Պ. Հինդեմիթը, Մ. Ի. Գլինկան, Ա. Պ. Բորոդինը, Պ. Ի. Չայկովսկին, Ա. Ն. Սկրյաբինը, Մ. Եկմալյանը, Ա. Խաչատրյանը, Է. Բաղդասարյանը, Ա. Բաբաջանյանը և ուր.: Ն-ներ գրել են նաև գործիքների, անսամբլների, նվագախմբերի և երգեցողության համար:

ՆՈՎԵԼԵՏ (իտալ.՝ novelletta – բառացի՝ փոքրիկ պատմվածք, < novella – նովել, պատմվածք), քնար-պատմող., դրամատիկ կամ ժանր. փոքրածավալ գործիք. (առավելապես՝ դաշնամուր.) երաժշտ. ստեղծագործություն: Եզրույթը կիրառել է Ռ. Շումանը (8 Ն. դաշնամուրի համար, op. 21, 1838). անվանումը՝ անգլիացի նշանավոր երգչուհի Կլարա Նովելլոյի ազգանունից: Ն-ի լավագույն նմուշներ են ստեղծել Ն. Գադեն, Յ. Պ. Է. Հարթմանը, Կ. Ռեյնեկեն, Զ. Ֆիբիխը, Ֆ. Պուլենկը (2 Ն. դաշնամուրի համար), Մ. Ա. Բալակիրևը, Ա. Կ. Գլազունովը, Ա. Կ. Լյադովը, Ա. Ն. Չերեպնինը և ուր.:

Հայկական նոտագրություն խազերով. XII դ. ձեռագիր

ՆՈՏԱ, ձայնանիշ (< լատ. nota – բառացի՝ գրավոր նշան), պայմ. գրաֆիկ. նշան՝ երաժշտությունը գրառելու համար: Տես նաև ***Նոտագրություն***:

ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գրաֆիկ. նշանների համակարգ՝ երաժշտությունը գրառելու համար, նաև երաժշտության բուն գրառումը: Սկզբնավորվել է հեռավոր անցյալում: Դեռևս Հին Հունաստանում գոյություն է ունեցել հնչյունները նշելու տառ. համակարգ, որն արձանագրում էր միայն նրանց բարձրությունը, ոչ թե տևողությունը: Երաժշտ. պրակտիկայում պահպանվել է մինչև X դ., երբ հուն. տառերը փոխարինվել են լատինականով (այդ տարբերակը XX դ-ից գործածվում է առանձին հնչյուններ և տոնայնություններ նշելու համար): Միջին դարերում տարածվել է նևմային Ն.: Հատուկ նշանները՝ նևմերը, գրառվել են խոսք. տեքստում՝ երգեցողության մեղեդիները հիշեցնելու համար: Ավելի ուշ հնչյունների բարձրությունն առավել ստույգ նշելու համար կիրառել են հորիզոն. գծեր:

XI դ-ում իտալացի երաժշտ. տեսաբան Գվիդո դ'Արեցցոն ներմուծել է 4 նոտային գծերի համակարգը, որը ժամանակակից հնգագծի նախատիպն էր: Գծերի սկզբում տեղադրել է լատ. տառեր, որոնք նշում էին գծերի վրա գրառված հնչյունների բարձրությունները, նրանք նաև ժամանակակից բանալիների նախատիպերն էին: Հետագայում գծերի թիվը հասցվել է 5-ի (կիրառվում են նաև լրացուցիչ՝ «օժանդակ» գծեր, որոնք գրվում են գծերից վերև կամ ներքև), իսկ նևմային նշանները փոխարինվել են քառակուսի գլխիկներով նոտաներով: Այդ համակարգը լայնորեն կիրառվել է Գրիգորյան խորալի գրառման համար (խորալ. Ն.): Հաջորդ փուլը մենզուրային Ն. էր, որն արձանագրում էր հնչյունների բարձրությունն ու տևողությունը:

XV–XVII դդ-ում միաժամանակ գոյություն է ունեցել տառային կամ թվային համակարգ (***տաբուլատուրա***) և գործածվել գործիք. երաժշտությունը գրառելու համար: XVII–XVIII դդ-ում ակորդները գրառվել են բաս. ձայնի նոտաների վրա գրվող թվանշանների միջոցով (այսպես կոչված՝ գեներալ-բաս): Ժամանակակից Ն. նշում է նոտաների ձայնի բարձրության դրությունը և նրանց մետրառիթմ. փոխհարաբերությունը: Տեմպ., դինամիկ, արտահայտչ. և այլ լրացուցիչ նշումների զարգացած համակարգի հետ հնարավորություն է տալիս ճշգրիտ արձանագրելու երաժշտ. ստեղծագործության նոտ. տեքստը:

XX դ-ի ավանգարդ երաժշտ. ուղղությունների ներկայացուցիչները ներմուծել են կատարող. նոր նշումներ, որոնք, սակայն, քիչ գործածական են: Որոշ կոմպոզիտորներ, հեռանալով Ն-յան ավանդ. ձևերից, նոտ. գրառման մեջ թողել են միայն ակնարկներ, որոնք իրագործում է կատարողը: Գոյություն ունի Ն-յան հատուկ համակարգ կույրերի համար: Տես նաև ***Ալտերացիա, Ատիճան, Խազագրություն, Նոր հայկական ձայնագրություն, Պաուզա***:

Գրկ. *Нюрнберг М., Нотная графика, Л., 1953; Wolf J., Handbuch der Notationskunde, Bd 1–2, Lpz., 1913–19; Floros, C. Die Universale Neumen Kunde, Kassel, 1970.*

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Համբարձումյան նոտագրություն, Լիմոնճյանի համակարգ, Հայկական նոտագրություն: Ստեղծել է Համբարձում ***Լիմոնճյանը*** (1813)՝ վերաձայնագրման միջոցով հայ մոնոդիկ երաժշտությունը օտար ազդեցություններից զերծ պահելու նպատակով: Փոխարինել է միջնադար. ***խազագրությա-***

նը: Սկզբունքով մոտ է տառ. նոտագրությանը: Հիմնված է օկտավ. ինչյունաշարի վրա, սակայն համաձայնեցված է հայ մոնոդիկ երաժշտության տեմպերացիայի առանձնահատկություններին: Բարձրության 7 նշանները, որոնց գծագրությունն ու անվանումներն առնված են խազերից, արձանագրում են 2 կցված մաժոր տետրախորդ՝ հավասարաչափ տեմպերացվա-

ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ



ծից փոքր–ինչ ցած III աստիճանով, որոնք կազմում են յուրատեսակ միքսոլիդիական գամմա: Այդ նշաններն ունեն օկտավ. ձևափոխումներ: Բացարձակ բարձրության առումով, հիմնական ինչյունաշարի մեկնաբանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, հին ձայնագրություններում այն համապատասխան է ռե–ից սկսվող միքսոլիդիական գամմային:

Ռիթմի գրանցման համար որպես հիմք ընդունված է տևողությունների զույգ բաժանումը: Տևողության նշանները դրվում են բարձրության նշաններից վերև, իսկ դադարը՝ նրանց կողքին:

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ

Նոտաները խմբավորվում են՝ ըստ մեղեդու մետր. միավորի. միևնույն տևողության նոտաներից կազմված խմբում տևողության նշանը դրվում է նրանցից միայն առաջինի վրա: Ալտերացիայի միակ նշանն արձանագրում է ինչյունաշարի հիմնական աստիճանների բարձրացումը կիսատոնով

Ալտերացիայի օրինակներ

(որոշ դեպքերում՝ կիսատոնից փոքր–ինչ պակաս) և կոչվում է կ ի ս վ ե ր: Իջեցված աստիճանները գրելիս փոխարինվում են նրանցից սեկունդա ցած՝ բարձրացված աստիճաններով, որի դեպքում նույն նշանը կոչվում է կ ի ս վ ա ր:

Այսպիսով՝ ալտերացիայի նշան ունեցող յուրաքանչյուր ձայնանիշ կարող է կարդացվել 2 ձևով: Նրա բուն նշանակությունը հեշտորեն որոշվում է համատեքստից, քանի որ խրոմատիզմը բացառված է: Որպես մանրամասնորեն մշակված և գործն. համակարգ՝ Ն. հ. ձ. լայնորեն գործածվել է XIX դ–ում և XX դ–ի սկզբին հայկ., նաև թուրք. երաժշտության մեջ:

ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Գրկ. *Թաշճեան Ն., Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղ–պապ, 1874: Բրուտեան Ա., Դասագիրք հայկական եկեղեցական ձայնագրութեան, Վաղ–պապ, 1890: Աթայան Ռ., Ձեռնարկ հայկական ձայնագրության, Ե., 1950: Բաղդասարյան Ա., Հայկական նոտագրության ձեռնարկ, Ե., 2010: Кушнарев Х., Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958; Popescu-Judet E., Dimitrie Cantemir et la musique Turque, Studia et Acta Orientalia, VII, Bucarest, 1968, p. 209–210.*

ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, օ ր կ ե ս տ ր (հուն.՝ ὀρχήστρα, ὀρχέομαι – պարել, անտիկ թատրոնում՝ բեմի առջևի հարթակը, որտեղ երգչախումբը ռիթմիկ շարժվելով կատարել է իր երգամասը), տարբեր գործիքներ նվագող և տվյալ կազմի համար գրված ստեղծագործությունը կատարող երաժիշտների խումբը (առօրեական հասկացողությամբ՝ օրկեստր է կոչվում նաև երաժշտ. թատրոնի նախաբեմի առաջնամասում հատուկ կահավորված փոսը): Միատարր կամ տարբեր կազմերի երաժշտախմբեր հայտնի էին դեռևս հնում, հատկապես լայնորեն տարածվել են միջնադարում և Վերածննդի դարաշրջանում: Նրանք ունեցել են կիրառ. գործառույթ (հանդես են եկել տոնախմբությունների, ռազմ., մարմնամարզ. խաղերի ժամանակ). լինելով պատահական միավորումներ՝ նվագել են հիմնականում միաձայն, զուրկ էին գործիք. բազմազանությունից, առանձին ենթախմբերի ֆունկցիոնալ և երանգ. անհատականացումից:

Նվագախումբ (մանրանկար, XVI–XVII դդ.)

Ժամանակակից ընկալմամբ՝ Ն–ի ձևավորվելը պայմանավորված է XVI–XVII դդ–ի սահմանագծին հոմոֆոն երաժշտության նոր ժանրերի՝ օպերայի, օրատորիայի, կոնցերտի սկզբնավորմամբ:

Գոյություն ունի Ն–երի դասակարգման մի քանի սկզբունք. ըստ գործիք. կազմի՝ լինում են միատարր (նույն գործիք. խմբին պատկանող միավորումներ)՝ լարային, փողային, հարվածային գործիքներից կազմված (տարածված են Աֆրիկայում, Հվ. Ամերիկայում), խառը (տարբեր խմբերի պատկանող գործիքներից), և ըստ գործն. նշանակության (զինվ., էստրադ. ևն): Ընդունված է նաև կամերային Ն., որն ունի փոքր կազմ, հիմնականը լար. գործիքների խումբն է՝ ավելացված փոքրաքանակ փող. գործիքներ, հին դաս.

Կամերային նվագախումբ

երաժշտության դեպքում՝ նաև կլավեսին (կատարում է գեներալ–բասի նվագամասը): Ն. բնութագրվում է ոչ միայն կազմով, այլև կատարման կամեր. ոճով, յուրատեսակ ինչողությամբ (տես ***Կամերային երաժշտություն***): Ն–ի բարձրագույն ձևը սիմֆոնիկ Ն. է, որի կազմում կան լար., փայտե փող., պղնձե փող., կսմիթ–ստեղնավոր և հարված. գործիքներ: Լ. վան Բեթհովենի պարտիտուրներում հաստատվել է Ն–ի «դասական» կամ «բեթհովենյան» կազմը. լար. հնգյակ (1–ին, 2–րդ ջութակներ, ալտեր, թավջութակներ, կոնտրաբասեր), փայտե փողայիններ (2 ֆլեյտա, 2 հոբոյ, 2 կլառնետ, 2 ֆագոտ), պղնձե փողայիններ (2–3, երբեմն՝ 4 գալարափող, 2 փող), հարվածայիններ (2 լիտավր, երբեմն՝ փոքր, զինվ. թմբուկ): 5–րդ սիմֆոնիայի ֆինալում առաջին անգամ օգտագործել է տրոմբոններ: Այս կազմը կոչվել է կրկնակի կամ փոքր սիմֆ. Ն.: 9–րդ սիմֆոնիայով (1824) Լ. վան Բեթհովենն սկզբնավորել է եռակի կամ մեծ Ն.:

Ժողովրդական գործիքների նվագախումբ

Ն–ի հնարավորությունների ընդարձակմանը նպաստել է Հ. Բեռլիոզը: «Ֆանտաստիկ սիմֆոնիայում» (1830) նա ընդլայնել է լար. խումբը՝ պարտիտուրում նշելով կատարողների անհրաժեշտ քանակը, ներմուծել մի շարք նոր գործիքներ (անգլ. եղջերափող, փոքր կլառնետ, օֆիկլեիդ, տավիղ, զանգեր ևն), նորովի կիրառել որոշ գործիքների հնարավորությունները՝ առաջատար նվագամասեր հանձնարարելով նախկինում երկրորդ. դեր կատարած գործիքներին (տրոմբոններ, ալտ, լիտավրներ): Ն–ի պատմության մեջ մի ողջ դարաշրջան պայմանավորված է Ռ. Վագների անվամբ: Երաժշտ. դրամաներում նա նկատելիորեն մեծացրել է պղնձե փողայինների խումբը:

Ժամանակակից սիմֆ. Ն–ի նորովի ինչողության և կատարող. հնարավորությունների ընդլայնման մեջ մեծ ավանդ ունեն XX դ–ի կոմպոզիտորներ Գ. Մահլերը, Կ. Դեբյուսին, Մ. Ռավելը, Ռ. Շտրաուսը, Բ. Բարտոկը, Ի. Ֆ. Ստրավինսկին, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Դ. Շոստակովիչը, Ա. Սպենդիարյանը, Ա. Խաչատրյանը, Վ. Լյուտոսլավսկին, Ք. Պենդերեցկին, Կ. Շտոկհաուզենը, Լ. Բերիոն և ուր.:

Ժամանակակից Ն. զարգանում է 2 ուղղությամբ՝ ինչողության հզորացման՝ Ն–ի կազմը մեծացնելու, նոր գործիքներ ներմուծելու, նաև համերգների և օպերաբալետ. ներկայացումներում նախապես ձայնագրված երաժշտ. հատվածների համատեղ կատարման հաշվին: Հնչերանգ. հնարավորություններն ընդարձակվում են ժող. գործիքների ներմուծմամբ (մանդոլին, կիթառ, բայան, բալալայկա, թառ, քամանչա, դուդուկ, դափ, դհոլ ևն): Գործիքների անհատականությունն ընդգծելու համար ստեղծում են Ն–ի համեմատաբար փոքր, անսամբլ. միավորումներ:

Առաջին սիմֆ. Ն. Հայաստանում հիմնադրվել է 1924–ին՝ ԵՊԿ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ: Առաջին սիմֆ. համերգը տեղի է ունեցել 1924–ի դեկտ. 10–ին՝ Ա.Սպենդիարյանի ղեկավարությամբ:

ՀՀ-ում գործում են սիմֆ., կամեր., էստրադ., փող., էստրադ-սիմֆ., ժող. գործիքների և այլ Ն-եր:

Գրկ. *Рогаль-Левицкий Д. Р., Беседы об оркестре, М., 1961; Барсова И. А., Книга об оркестре, М., 1969; Благодатов Г. И., История симфонического оркестра, Л., 1969; Левин С. Я., Духовые инструменты в истории музыкальной культуры, Л., 1973; Еременко К. А., О перспективах развития симфонического оркестра, Киев, 1974.*

Ըստ Գևորգ Արմենյանի

ՆՎԱԳԱԿՑՈՒԹՅՈՒՆ, հոմոֆոն երաժշտ. հյուսվածքում այն ամենը, որն ուղեկցում է ստեղծագործության գլխ. մեղեդուն՝ բացահայտելով նրա հարմոնիկ և ռիթմ. կառույցը: Կարող է լինել լիահնչություն ստեղծող ակորդների շարք (ժող. երաժշտության մեջ պարզագույն ձևերից են դամը, հարված. գործիքների ռիթմ. ֆոնը ևն), սակայն, մեծ մասամբ, Ն. բազմաթիվ հարմոնիաների և լրացուցիչ մեղեդիական ձայների բարդ համակցություն է, որը գլխ. մեղեդու հետ արտահայտչ. նկատելի բեռնվածք է կրում, հոգեբանորեն խորացնում երկի բովանդակությունը, երբեմն նաև նկարագր. ֆոն ստեղծում: Արևմտաեվրոպ. երաժշտության մեջ, որպես կոմպոզիցիոն միջոց, ձևավորվել է XVI դ-ի վերջին (գրվել է գեներալ-բասի ձևով): Ն-յան արտահայտչականությունը մեծ է Վիեննայի դաս. դպրոցի (XVIII դ.–XIX դ. սկիզբ) և ռոմանտիկ կոմպոզիտորների երկերում, որտեղ այն հաճախ հոգեբանորեն անհատականացված է, և կարևորությամբ հավասարվում է երկի գլխ. ձայնին: Երաժշտ. հյուսվածքի «տրոհումը»՝ գլխ. ձայնի և Ն-յան, հաճախ կարող է լինել սոսկ պայման., իսկ պոլիֆոնիայում «Ն.» հասկացությունն ընդհանրապես բացառված է: Մեներգչին կամ մենանվագողին կարող է նվագակցել 1 գործիք (դաշնամուր, երգեհոն, կիթառ ևն) կամ անսամբլ, նվագախումբ, երգչախումբ ևն: Գեղ. Ն. կատարող. արվ-ի կարևոր և բարդ ճյուղերից է:

ՆՎԱԳԱՄԱՍ, պարտիա, գործիքանսամբլ. (կամ վոկալ-գործիք.) երկի բաղկացուցիչ մասը, որը նախատեսվում է առանձին գործիքով կամ գործիքների խմբով նվագելու համար (թավջութակի Ն.՝ լար. կվարտետում, թավջութակներինը՝ սիմֆոնիայում, մենակատարի Ն.՝ գործիք. կոնցերտում, ևն):

ՆՐԲԵՐԱՆԳ, նյուանս (ֆրանս.՝ nuance), խոսքի ելևէջների, բառի իմաստի, գույների ևնի նուրբ, հազիվ նկատելի այլակերպությունը, երանգը: «Ն.» տերմինը երաժշտության մեջ լայնորեն կիրառվում է կատարող. արվ-ում՝ նշելով ինչողության ինտենսիվության (ուժգնություն, լարվածություն, ցայտունություն, խորություն ևն), կատարման արագության և ձայնարտադրման կերպի նրբին տարբերակումներ, որոնք երկին հաղորդում են աշխուժություն, գեղարվեստականություն: Ն-ները բխում են տվյալ երկի բովանդակությունից (ընույթից, արտահայտող տրամադրություններից): Գլխ. Ն-ները նոտաներում նշում են հեղինակները, մեծ մասամբ՝ իտալ. բառերով (dolce – քնքուշ, martellato – շեշտակի, secco – չորությամբ ևն): Շատ բան էլ պայմանավորված է կատարողի ստեղծագործ. նախաձեռնությամբ, նրա անհատ. մեկնաբանմամբ: Ն-ների միագումարն անվանում են նրբերանգավորում: Նոտաներում նշվում է նաև ինչման հուզ. ընդհանուր բնույթը (cantabile – երգուն, appassionato – խանդավառ, agitato – բորբոքուն, ևն), որը լայն առումով նույնպես կարող է վերաբերել երանգավորմանը: Տես նաև ***Դինամիկա***, ***Ագոգիկա***, ***Տեմպ***:

Ըստ Ռոբերտ Աթայանի

Օլյա Նուրիջանյան

ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ Օլյա Յուրիկի (ծ. 21.04.1978, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2011): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի տեսության (1996), ԵՊԿ վոկալ-տեսության ֆակ-ի երաժշտագիտության (2001, ղեկ.՝ Զ. Տեր-Ղազարյան) բաժինները և ասպիրանտուրան (2004, գիտ. ղեկ.՝ Ա. Արևշատյան), Երևանի հեռուստա- և ռադիոհաղորդավարների դպրոցը (2006, ղեկ.՝ Ս. Ալեքսանյան): 2001–05-ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 2001-ից աշխատել ԵՊԿ ձայնադարանում, գրադարանում, 2004-ից (2018-ից՝ գիտքարտուղար) երաժշտության պատմության ամբիոնում վարում է «Արտասահմանյան երաժշտության պատմություն», «Վոկալ արվեստի պատմություն», «Հայ վոկալ արվեստի պատմություն» դասընթացները, 2006-ից՝ «ՎԷմ» ռադիոկայանում (2008–13-ին՝ երաժշտ. խմբագիր) «Հայ կոմպոզիտորներ և կատարողներ» հեղինակ. հաղորդաշարը (ուղիղ եթերում՝ 2014-ից): 2011-ին կատարելագործվել է «Deutsche Welle» – Akademie-ում: Հեղինակ է մի շարք հոդվածների:

Շ



Սերգեյ Շաթիրյան

Տաթևիկ Հախկուլյանի «Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը» գրքի (2014) շապիկը

Արփեմի Շահգալդյան

ՇԱԳՈՅԱՆ Գոհար Կառլենի (ծ. 29.04.1958, Երևան), երաժշտագետ, լրագրող-խմբագիր, հրատարակիչ: ՀԺՄ (1995), ՀԿՄ (1997) անդամ, Փարիզի «Արարատ» միջազգ. ակադ-ի թղթակից անդամ (2017): Ավարտել է Երևանի Կ. Սարաջյանի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1973), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի երաժշտության տեսության (1978), ԵՊԿ երաժշտագիտության (1983, Ն. Թահմիզյանի դասարան) բաժինները և եռամյա դասընթացը (1980, ղեկ.՝ Խ. Պալյան): ՄՊԿ-ում անցել է ստաժավորման եռամյա դասընթաց (1987, ղեկ.՝ Մ. Ե. Տարականով), ապա նույնի հայցորդ (2002–04): 1998-ից՝ «Երաժշտական Հայաստան» ամսագրի գլխ. խմբագիր, 2005-ից՝ ԵՊԿ «Երաժիշտ» պաշտոնաթերթի հիմնադիր և թողարկման պատասխանատու, 2017-ից՝ ՀԿՄ «Հայ կոմպոզիտոր» ամսագրի հիմնադիր-պատասխանատու քարտուղար, ԵՊԿ հրատարակչության տնօրեն, գլխ. խմբագիր: 1985–94-ին դասավանդել է ԵՊՄԻ-ում, 2004–08-ին՝ «Գլաձոր» կառավարման համալսարանում: Կազմել և խմբագրել է գիտ. և նոտ. ժող-ներ, համահեղինակ է «Կոստանդին Սարաջյանի անվան երաժշտական դպրոց» (2002) գրքի:

Ա. Խաչատրյանի 100-ամյակի հուշամեդալ (2003, ՅՈՒՆԵՍԿՕ):

ՇԱԹԻՐՅԱՆ Սերգեյ Ալեքսանդրի (20.03.1907, Ալեքսանդրապոլ–18.10.1959, Լենինգրադ), կոմպոզիտոր, դիրիժոր: Ավարտել է ԵՊԿ գալարափողի բաժինը (1928), միաժամանակ դասեր առել Ա. Սպենդիարյանից (գործիքավորում, ձևի վերլուծություն), սովորել է Լենինգրադի կոնսերվատորիայի գալարափողի (1928–31, Մ. Մ. Բույանովսկու դասարան) և դիրիժորության (1931–34, Ա. Վ. Գաուկի, Ս. Վ. Ելցինի դասարաններ) բաժիններում: 1924–28-ին՝ ԵԴԹ, 1934–36-ին՝ ԵՕԲԹ, 1937–41-ին՝ Լենինգրադի ռադիոյի նվագախմբերի դիրիժոր, 1946–47-ին՝ Քիշնևի, 1947–48-ին՝ Երևանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի գլխ. դիրիժոր, 1937–41, 1948–1959-ին՝ Լենինգրադի գիտահանրամատչելի ֆիլմերի ստուդիայի երաժշտ. խմբագիր: 1934–36-ին դասավանդել է ԵՊԿ-ում (տես. դասընթաց, գալարափող), 1950–59-ին՝ Լենինգրադի կոնսերվատորիայում (դիրիժորություն): Գրել է «Բուլղարական սյուիտ» (1950)՝ մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար, սիմֆ. 4 սյուիտ (1931, հայկ. թեմաներով, 1936, 1949, 1958), լար. կվարտետ (1928), կվարտետ. վարիացիաներ (Կոմիտասի թեմաներով, 1933), ռոմանսներ, 2 սյուիտ՝ էստրադ. նվագախմբի, ֆանտազիա՝ ջութակի և նվագախմբի (1953), երաժշտություն՝ թատրոնի (Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», 1927, Գ. Սարյանի «Երեք երգ», 1935, ևն), մշակել հայկ. երգեր (1937)՝ ձայնի և քառյակի համար: Եղել է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի առաջին ամբողջ. բեմադրության (1935, ԵՕԲԹ) երաժշտ. ղեկ.:

Արմեն Բուդաղյան

ՇԱԽԿՈՒԼՅԱՆ Տաթևիկ Ռաֆայելի (ծ. 02.04.1980, Ալավերդի), երաժշտագետ, խմբավար: Արվեստագիտ. թեկնածու (2010): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության (1999), ԵՊԿ երաժշտագիտության (2004) և խմբավարության (2005) բաժինները, ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (2010, ղեկ.՝ Մ. Նավոյան): 2006–17-ին ղեկավարել է Երևանի Ս. Ջրբաշյանի անվ. երաժշտ. դպրոցի երգչախումբը, 2004–08-ին երգել «Հովեր» երգչախմբում: 2009-ից՝ «Կարին» ավանդ. երգի-պարի անսամբլի խմբավար: 2010-ից՝ ԵՊԿ երաժշտության տեսության ամբիոնի դասախոս: 2014–15-ին Գրացի (Ավստրիա) համալսարանի «Սիստեմատիկ երաժշտագիտության կենտրոնում» զբաղվել է հետազոտ. աշխատանքով: 2012–16-ին՝ ԳԱԱ արվ-ի ինստ-ի սփյուռքահայ արվ-ի և միջազգ. կապերի բաժնի գիտաշխատող, 2016-ից՝ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, 2015-ից՝ Կոմիտասի թանգա-

րան-ինստ-ի գիտ. բաժնի ղեկ., 2016-ից՝ Տարեգրքի պատասխանատու խմբ.: ՀԲՀՄ Հայկ. վիրտուալ համալսարանի «Հայկական երաժշտական ֆոլկլոր» դասընթացի հեղինակն է (Ալինա Փահլևանյանի հետ), Ավանդ. երաժշտության միջազգ. խորհրդի (ICTM) հայաստան. ներկայացուցիչը, Ճապոնիայի Կոմիտասի երաժշտության ընկերության, «Կայթ» արվ-ի զարգացման կրթամշակութ. հիմնադրամի խորհրդական: Ուսումնասիրությունները վերաբերում են կոմիտասագիտությանը, երաժշտ. բանահյուսությանը, հայ և համաշխ. երաժշտարվ-ի տեսությանն ու պատմությանը, XX դ-ի արևմտաեվրոպ., ռուս. և հայկ. երաժշտության պոլիֆոնիայի հարցերին:

ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության (2011), Գյումրիի երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգ. մրցույթ-փառատոնի (III կարգ՝ 2013, I կարգ՝ 2016) դափնեկիր:

Երկ. *Կոմիտասի ստեղծագործական վաղ շրջանը (1891–1899), Ե., 2014:*

ՇԱՀԳԱԼԴՅԱՆ Արտեմի Գրիգորի [17(30).04.1910, գ. Պրոխլադնի (այժմ՝ ՌԴ Կաբարդինա-Բալկարիայի Հանրապետությունում)–26.05.1985, Նալչիկ], ջութակահար, դիրիժոր: Կաբարդինա-Բալկարիայի ժող. արտիստ (1964): Սովորել է ՄՊԿ-ում (1930–31), կատարելագործվել Լենինգրադի (1951) կոնսերվատորիայում: 1932–42-ին՝ Նալչիկի ռադիոյի սիմֆ. նվագախմբի ղեկ., 1947–67-ին՝ Նալչիկի ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1957–67-ին՝ Կաբարդինա-Բալկարիայի երգչախմբ. ընկերության նախագահ: 1967–70-ին՝ երաժշտ. թատրոնի գլխ. դիրիժոր: 1942–47-ին՝ ԵԵԿՄ ջութակահար-կոնցերտմայստեր, ապա՝ դիրիժոր: Հեղինակ է 40-ից ավելի երաժշտ. գործերի (առավելապես՝ երգեր):

Վաղարշակ Չաքմիշյան

ՇԱՀԳԱԼԴՅԱՆ Կարեն (ծ. 22.12.1976, Մոսկվա), ջութակահար: Ավարտել է ՄՊԿ (Վ. Վ. Տրետյակովի դասարան) և ասպիրանտուրան (2003, ղեկ.՝ Մ. Ս. Գլեզարովա): Մասնակցել է Յ. Մենուհինի, Վ. Թ. Սպիվակովի, Գ. Ե. Ժիսլինի վարպետության դասերին: 1998–2002-ին հանդես է եկել «Մոսկվայի վիրտուոզներ» նվագախմբում (ղեկ.՝ Վ. Սպիվակով), 2003–05-ին՝ որպես մենակատար՝ տարբեր նվագախմբերի հետ (Ա. Ստրադիվարիուսի ջութակով): 1999-ից՝ Ա. Խաչատրյանի անվ. եռյակի հիմնադիր անդամ: 1997-ին՝ «Դավիդ Օյստրախ», «Յուրի Յանկելևիչ», «Մստիսլավ Ռոստրոպովիչ» հիմնադրամների կրթաթոշակառու: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Շվեդիայում, Հվ. Կորեայում, ՀՀ-ում և ՌԴ-ում:

Պ. Սարասատեի անվ. միջազգ. մրցույթի դափնեկիր (1999, Իսպանիա):



Կարեն Շահգալդյանը ելույթի պահին

ՇԱՀԵՆ [Սարգսյան Շահեն Եղիազարի, 14. 09. 1909, գ. Ղուրդուբուլաղ (այժմ՝ գ. Կրասար՝ ՀՀ Շիրակի մարզում)–17.12.1990, Երևան], գուսան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): ԽՍՀՄ ԳՄ (1970) անդամ: 1938–41-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի մենակատար (նաև հիմնադիրներից): 1945-ից՝ «Շահենի քնարը», «Երևան», «Շիրակ» անսամբլների ղեկ.: 1982-ին Լենինականում հիմնադրել է աշուղ. դպրոց:

Գրել է 500-ից ավելի քնար. երգեր, «Էլինար» պոեմը, «Հերիքնազ» երաժշտ. պատկերը, «Սառա» սիրավեպ-երգաշարը, «Սասնա Դավթի ու Մսրա Մելիքի մենամարտը» դյուցազներգությունը: Առավել

Հատված Շահենի «Ալմաստը շողում է» երգից

ճանաչված են «Սասնա ծուռ», «Ալմաստը շողում է», «Խոռված էր», «Թուխ մազերուդ», «Անծանոթ սեր», «Նաիրյան դալար բարդի», «Անցա գնացի», «Կոմիտաս», «Ղուկասյան» և այլ երգեր: Նրա երգերը

Շահեն

կատարել են Հ. Բադալյանը, Օ. Համբարձումյանը, Ռ. Մաթևոսյանը, Վ. Սամվելյանը, Բ. Դարբինյանը և ուր.:

Շ-ի ստեղծագործությունը հիմնված է Շիրակի ժող. երգարվ-ի հարուստ ավանդույթների վրա: Երաժշտ. լեզուն առանձնանում է ազատ իմպրովիզացիայով, ասերգայնությամբ, ռիթմիկ պատկերների ճկուն փոփոխականությամբ, երգ. ու պար. տարրերի զուգորդմամբ: Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին (1939, 1956): ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1939):

Երկ. *Դասան Հայապատի, հ. 1, 2, Ե., 1964, 1977: Անցա-գնացի (ժող.), Ե., 2009:*

Գրկ. *Մանուկյան Մ. , Սովետահայ գրաանական արվեստը, ՊԲՀ, 1963, № 2: Նույնի, Гусаны Армении, М., 1977; Շահեն Է., Շահեն – Դասան Հայապատի, ժող., Ե., 2006: Նույնի, Շահենի հուշամատյանը, Ե., 2011:*

Սարգարիտ Շահինյան

ՇԱՀԻՆՅԱՆ Մարգարիտ Գուրգենի [ծ. 10.01.1957, գ. Սարուխան (ՀՀ Գեղարքունիքի մարզ)], երգչուհի: Ավարտել է ԵՊԿ (1984, Ա. Ոսկանյանի դասարան) և ասպիրանտուրան (1992): 2010-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2016-ից), Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. քոլեջում: 1972-ից՝ Ե. Սահառունու անվ., 1976–79-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի, 1983–89-ին՝ Հայաստանի գուսան. և ժող. երգի, 1990–92-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների, 1992–2000-ին՝ «Սայաթ-Նովա» աշուղ. երգի անսամբլների, 1989–2000-ին՝ Հայֆիլհարմոնիայի մենակրչուհի:1989–2000-ին հանդես է եկել նաև «Տաղարան», «Շարական», «Ֆյունիկ», «Սրինգ» անսամբլների հետ:

1994-ին՝ Կոմիտասի ծննդյան 125-ամյակին, Շ-ի նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք հեռուստատես. և համերգ. ծրագրեր (այդ թվում՝ 2 կինոհամերգ), 1999-ին՝ 130-ամյակին, հանդես է եկել մենահամերգով (երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի նվագակցությամբ): Համերգներով շրջագայել է ԱՄՆ-ում, Կանադայում, Իրանում, Բելգիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, ՌԴ-ում, Ուկրաինայում և այլուր: 2003–06-ին հրավերով աշխատել է Լոս Անջելեսի «Մաշտոց» ազգ. համալսարանում («Սուրբ Մաշտոց» շքանշան, 2006): 2005–10-ին Լոս Անջելեսում գործել է Շ-ի հիմնադրած «Հայ երգարվեստի կենտրոնը»: 2013-ին ԵՊԿ-ում ստեղծել է «Մարգարիտներ» ավանդ. երգի-պարի անսամբլը («Evro Folk-2014» միջազգ. փառատոնի ոսկե մեդալ, Պրահա):

Շահեն Շահինյան

Հեղինակ է ուսումնամեթոդ. ձեռնարկների, ունի ֆոնդ. ձայնագրություններ: 2 ձայներիզներն արժանացել են Հայկ. երաժշտ. մրցանակաբաշխության 1-ին կարգի՝ «Անուշ» մրց-ի (2001):

ՀՀ ՄՆ ոսկե (2012), ՄՆ «Կոմիտաս» (2012) մեդալներ:

ՇԱՀԻՆՅԱՆ Շահեն Հակոբի (ծ. 05.11.1963, Երևան), ջութակահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2016): Պրոֆ. (2011): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1981), ԵՊԿ (1987) և ասպիրանտուրան (2002, երեքն էլ՝ Հ. Բոգդանյանի դասարան): 1982–88-ին՝ ԵՊԿ օպեր. ստուդիայի (1991–92-ին՝ տնօրեն), 1984–85-ին՝ Հայկ. հեռուստատեսության և ռադիոյի, 1985–87-ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբերի ջութակահար, 2005–07-ին՝ Ա. Խաչատրյանի անվ. քառյակի 1-ին ջութակահար: 1991-ից դասավանդում է ԵՊԿ-ում (նվագախմբ. ֆակ-ի դեկանի տեղակալ՝ 2003–08-ին, ուս. գծով պրոռեկտոր՝ 2008–11-ին, ռեկտոր՝ 2011–18-ին):

Շ-ի նախաձեռնությամբ ԵՊԿ 2012-ին անդամագրվել է Եվրոպ. կոնսերվատորիաների ընկերակցությանը: Նույն թվականին Եվրախորհրդարանի համաժողովում ներկայացրել է Հայաստանի պետ. երիտասարդ. նվագախումբը, որի օրինակով ստեղծվել է եվրոպ. համանման նվագախումբ (2013):

Որպես մենակատար՝ համերգներով հանդես է եկել ԵՊԿ սիմֆ. (2001, Երևան) և «Վերածնունդ» կամեր. (2007, Դուբայ) նվագախմբերի, Լիսաբոնի պետ. թատրոնում դաշնամուր. եռյակի (2001), «Արամ Խաչատրյան» լար. քառյակի (2006, ՀՀ) հետ: Հեղինակ է մենանվագների՝ ջութակի և ալտի համար, նոտաների ժող-ի (կազմող և մասնագիտ. խմբ., 2004), փոխադրել է շարականներ և այլ երկեր:

ՇԱՀԻՐ ԹԱՋԱՏՈՒՐ [Շահնազարյան, 1846, գ. Դերբենդ (Տրապիզոնի նահանգ)–1890, գ. Դերբենդ], աշուղ: Ապրել և ստեղծագործել է Դերբենդում: Հորինել է սոցիալ-քաղ. («Ով մարդ», «Չի կարելի ոչինչ անել», «Արի ետ կաց», «Էս ինչ տեսակ աշխարհ ա»), բարոյախրատ. («Մարդ, խելոք, լավ մտածիր», «Կենացս մեջ ես

որքան», «Թե կուզես») և սիրային («Այստեղ քո պատկերն տեսա», «Մի հատ ես աշխարհումն», «Սիրական») թեմաներով երգեր: Եղել է հարուստ ընտանիքի զավակ, սակայն նշավակել է ունևորների դասի արատները («Խաչատուրն եմ արծաթատյաց»), ջատագովել լուսավորությունն ու առաջադիմությունը: Թիֆլիսում հրատարակվել է Շ. Խ-ի «Ծաղիկ ժամանակի» երգերի (1889) ժող-ը:

ՇԱՀԼԱՄՅԱՆ Ներսես Գերասիմի (1860, Թիֆլիս–02.05.1904, Ս. Պետերբուրգ), երգիչ (տենոր): Նախն. կրթությունն ստացել է Թիֆլիսում: 1880-ից ղեկավարել է իր հիմնադրած կանանց քառաձայն երգչախումբը, ապա միավորել է Քրիստափոր ***Կարա-Մուրզայի*** երգչախմբի հետ և, որպես մենակատար, մասնակցել համերգների: Ս. Պետերբուրգում 1888-ին հանդես է եկել հայկ. երեկույթում և արժանացել արքուն. թատրոնների տնօրինության ուշադրությանը, որի կրթաթոշակով կատարելագործվել է Միլանում (1889–92):

Շ-ի առաջին ելույթն օպերայում 1891-ին էր Մալթայի արքուն. թատրոնում (Մանրիկո՝ Ջ. Վերդիի «Տրուբադուր»): Մերժելով Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնի մշտ. աշխատանքի հրավերը՝ վերադարձել է Ռուսաստան. 1892–93-ին երգել է Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնում (Էնցո՝ Ա. Պոնքիելլիի «Ջոկոնդա»): 1893-ից զբաղվել է համերգ. գործունեությամբ. երկացանկում՝ արևմտաեվրոպ. և ռուս. օպերաների արիաներ, ռուս կոմպոզիտորների երգեր ու ռոմաններ, հայկ. ժող. և հայրենասիր. երգեր:

1893-ին Նադեժդա ***Պապայանի*** և Բեգլար ***Ամիրջանյանի*** հետ համերգներով շրջագայել է Թիֆլիսում և Աստրախանում, ապա՝ Շուշիում, Դոնի Ռոստովում, Երևանում և այլուր: Մասնակցել է նաև Պանաևի (Մոսկվա) օպեր. թատրոնի ներկայացումներին, հանդես եկել Թիֆլիսի օպեր. թատրոնում:

ՇԱՀՄԻՐՅԱՆ Ալիս Գեղամի (ծ. 02.09.1937, Մարսել), երգչուհի (մեցցո սոպրանո): Օհան ***Դուրյանի*** կինը: Սովորել է Մարսելի կոնսերվատորիայի երգեցողության բաժնում, ապա կատարելագործվել երգիչ Ժ. Գոմբի ղեկավարությամբ: 1962-ից համերգներով շրջագայել է Ավինիոնում, Փարիզում, Մարսելում, Նիսում, Լիոնում, Վալանսում, Ժնևում, Գերմանիայում, ԽՍՀՄ-ում, Իրանում. երգացանկում՝ Հ. Բեռլիոզի, Մ. Ռավելի, Կ. Դեբյուսիի, Գ. Ֆորեի, Ա. Դյուպարկի և ուր. ստեղծագործություններից: 1966-ից գլխ. դերերգերով (Մարգարիտ, Մարիամ՝ Հ. Բեռլիոզի «Ֆաուստի դատապարտումը», «Քրիստոսի մանկությունը», Շառլոտա՝ Ժ. Մասնեի «Վերթեր», Մինիոն՝ Ա. Թոմայի «Մինիոն», Կարմեն՝ Ժ. Բիզեի «Կարմեն», Էբոլի՝ Ջ. Վերդիի «Դոն Կառլոս», ևն) երգել է Մարսելի, Նիսի, Թուլոնի, Առլի և այլ օպեր. թատրոններում: Ձայնի ընդգրկուն դիապազոնի և ճկուն գուներանգների շնորհիվ կատարել է նաև սոպրանոյի դերերգեր: 1970–75-ին Մարսելում, Փարիզում, Երևանում հանդես է եկել Անուշի դերերգով (Ա. Տիգրանյանի «Անուշ»): 1974-ին թողարկել է հայկ. երգերի ձայնասկավառակ, համերգներով շրջագայել Իրանում (Թեհրան, Շիրազ, Թավրիզ, Աբադան, Սպահան), Լիբանանում (Բեյրութ): 1977-ին ելույթ է ունեցել Պալերմոյի սիմֆ. նվագախմբի հետ՝ Օ. Դուրյանի ղեկավարությամբ: 1991-ից ապրում է Երևանում. զբաղվում է բարեգործությամբ. աջակցում է որբ երեխաներին ու ազատամարտիկներին:

Ներսես Շահլամյան

Ալիս Շահմիրյան

ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ Արմենակ Սարգսի (1878, Մուշ–14.09.1939, Փարիզ), երգիչ (տենոր): 8 տարեկանից Մուշում երգել է եկեղեցում, սովորել թաղային վարժարանում, Սբ Կարապետ վանքի ժառանգավորաց դպրոցում, 1890–93-ին՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Քրիստափոր ***Կարա-Մուրզայի*** երգչախմբում եղել է մեներգիչ: Շուրջ 2,5 տարի աշակերտել է ***Կոմիտասին***: Աշակերտ. խռովություններին մասնակցելու համար հեռացրել են ճեմարանից: 1893–97-ին սովորել է Ներսիսյան դպրոցում, եղել Մակար ***Եկմալյանի*** երգչախմբի մեներգիչ և խմբավարի օգնական, ապա նշանակվել է եկեղեցու երգչախմբի ղեկ.: 1897-ին մասնակցել է արդուլհամիդ. ջարդերի դեմ թիֆլիսահայության բողոքի ցույցին, ձերբակալվել և բանտարկվել է Մետեխի բանտում, ապա, որպես թուրքահպատակ, հանձնվել թուրք. կառավարությանը: Երաշխավորությամբ ազատվել է բանտարկությունից:



Արմենակ Շահմուրադյան

1898–1900-ին դասավանդել է Մշո Սբ Կարապետ վանքի ժառանգավորաց, 1900–1904-ին՝ Կարինի ազգ. վարժարաններում, եղել է նաև եկեղեցու դպրապետ: 1904-ին մեկնել է Փարիզ, մասնակցել Սբ Հովհաննես Մկրտիչ հայկ. եկեղեցու օծմանը,

Ա. Շահմուրադյանը Ֆաուստի դերում (Շ. Գունոյի «Ֆաուստ»)



Արթուր Շահնազարյանի «Կոմիտաս» գրքի (2015) կազմը

Թամար Շահնազարյան

նշանակվել է դպրապետ, ղեկավարել եկեղեցու երգչախումբը: 1904–06-ին սովորել է Վենսան դ'Էնդիի «Scola Cantorum»-ում, անվճար վոկալի դասեր առել նշանավոր երգչուհի Պոլինա Վիարդոյից (համարել է իր երկրորդ մայրը), 1906–10-ին՝ Փարիզի կոնսերվատորիայում. ավարտելուց հետո հրավիրվել է «Գրանդ օպերա» (առաջին դերերգը՝ Ֆաուստ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», 1911): Փարիզի մամուլի և հասարակության պահանջով օպերան ներկայացվել է 1 ամիս շարունակ: Նրան անվանել են «Հայկական Կառուզո», «Ֆրանսիայի ամենաթովիչ տենոր»:

1912-ին հեռացել է օպեր. թատրոնից, զբաղվել համերգ. գործունեությամբ. ելույթներ է ունեցել Կահիրեում, Թիֆլիսում, Բաքվում, Կ. Պոլսում և այլուր: 1914-ին մասնակցել է Միջազգ. երաժշտ. ընկերության համաժողովի՝ Կոմիտասին նվիրված համերգին, ապա համերգներով շրջագայել մի շարք երկրներում՝ տարածելով հայկ. ժող., ազգ-հայրենասիր. և հոգևոր երգեր, հռչակվել որպես «Տարոնի սոխակ»: Կ. Պոլսում Կոմիտասի մշակած երգերը («Հայաստան, երկիր դրախտավայր», «Բամ փորոտան», «Կռունկ», «Հով արեք սարեր», «Արորն ու տատրակը», «Անտունի», «Խորհուրդ խորին», «Քրիստոս պատարագյալ» ևն) ձայնագրվել են Շ-ի կատարմամբ և հեղինակի նվագակցությամբ (1914):

1919-ին մեկնել է ԱՄՆ, համերգներով հանդես եկել հայաշատ ք-ներում (Ֆրեզնո, Նյու Յորք, Դետրոյտ), 1926–30-ին՝ Լոնդոնում, Ժնևում, Յուրիխում, Բրյուսելում և այլուր: Ձայնագրել է 20-ից ավելի երգեր («Կանչե կռունկ», «Կիլիկիա», «Սիրուհիս», «Տեր կեցո» ևն): 1930-ական թթ-ի սկզբներին ապրել է ԱՄՆ-ում, ապա՝ Փարիզում:

Շ-ի երգեցողությունն առանձնացել է կատարման մաքրությամբ, հստակ արտասանությամբ, անկեղծ հուզականությամբ և Կոմիտասի երգչական դպրոցի առանձնահատկությունների յուրացմամբ:

Գրկ. *Արմենակ Շահմուրադյան (կյանքն ու գործը), կազմ.՝ Խ. Սաֆարյան, Ե., 1998: Համբարձումյան Ռ., Սոխակ Տարոնա: Վավերագրական վիպակ, Ե., 2001:*

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Արթուր Միհրդատի [ծ. 16.07.1958, գ. Վահագնի (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում], կոմպոզիտոր, երաժշտագետ, խմբավար: Ավարտել է ԵՊԿ խմբավարության, կոմպոզիցիայի, տեսության բաժինները (1986): 1988–94-ին՝ ԵՊԿ ժող. ստեղծագործության կաբինետի վարիչ, 1998–99-ին՝ ՀՀ ՄՆ ազգ. մշակույթի պահպանման, զարգացման և տարածման վարչության պետ, 2016-ից՝ «Ակունք» ժող. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ.: 1985–2007-ին (ընդհատումներով) դասավանդել է Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում: 1993–2016-ին համերգ-դասախոսություններով հանդես է եկել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Դանիայում, Ռումինիայում և Հունգարիայում: 2014-ին «Մշակութային վերածնունդ» կազմակերպության «Հայկական ազգային երաժշտության գանձարան» նախագծի շրջանակում, որպես գլխ. երաժշտ. խմբագիր, երգչախմբի և մեներգիչների հետ ձայնագրել է հայ ժող. ու հոգևոր երաժշտության ոսկե ֆոնդը (80 մեղեդի և շուրջ 500 երգ):

Շ-ի աշխ-ները վերաբերում են մշակութաբանությանը, հայկ. խազաբանությանը, ժող. ստեղծագործությանը և այլ հարցերի. «Երգ ու բան» (1989), «Երգ ու հաց» (1990), «Կաքավիկ» (2008), «Խնկի ծառ» (2008, չորսն էլ՝ ժող.), «Միջնադարյան խազարվեստը հայ երաժշտական մշակույթի համակարգում» (հ. 1–5, 1990–2016), «Խազերի կոմիտասյան վերծանության հայտնությունը» (2001), «Է արար» (2011), «Կոմիտաս» (2015) ևն: Հրատարակել է նաև Կոմիտասի անտիպ երաժշտագիտ. նյութերը և կրթ. մի շարք ծրագրեր: Գրել է գործեր՝ դաշնամուրի (կվինտետ, սեքստետ ևն), վոկալ շարք՝ ձայնի և դաշնամուրի, «Տաղ»՝ լար. նվագախմբի, «Ռեքվիեմ» (ըստ Ռ. Դավոյանի)՝ երգչախմբի և նվագախմբի համար, «Զանգի» երգչախմբ. պոեմը (խոսք՝ Խ. Աբովյանի), «Եղծ աղանդոց» կանտատը (ըստ Եզնիկ Կողբացու), խմբերգեր (ըստ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի), «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը և այլ գործեր, մշակել ժող. երգեր (երգչախմբի համար):

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (Մելիք-Շահնազարյան) Թամար Կոստանդինի [04(17).01.1901, Բաքու–06.10.1978, Երևան], երգչուհի (մեցցո սոպրանո), մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Սովորել է Երևանի երաժշտ. ստուդիայում (Ա. Բաբալյանի դասարան), ավարտել է ԵՊԿ (1931, Հ. Կագարյանի դասարան): 1932–48-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Ալմաստի (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ») դերերգի առաջին հայ

կատարողն է: Դերերգերից են՝ Անուշի մայր (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Մարիամ (Լ. Խոջա-Էյնաթովի «Նամուս»), Կոմսուհի, Լարինա (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», «Եվգենի Օնեգին»), Ամներիս (Ջ. Վերդիի «Աիդա»), Ջիրել (Շ. Գունոյի «Ֆաուստ») ևն: 1945–78-ին դասավանդել է ԵՊԿ-ում [պրոֆ.՝ 1961-ից, 1953–77-ին (ընդմիջումներով)՝ մեներգեցողության ամբիոնի վարիչ], ստեղծել է վոկալ մանկավարժության դպրոց: Սաներից են Գ. Գալաչյանը, Ա. Կարապետյանը, Ի. Այդինյանը, Ա. Գույումջյանը, Ե. Վարդանյանը, Ա. Հարությունյանը, Ռ. Բաբուրյանը, Հ. Կավազյանը, Ֆ. Խորենյանը, Ս. Կոլոսարյանը, Վ. Հարությունովը, Ա. Դեղեյանը:

Հեղինակ է ձայնամշակման և մանկ. ձայնի պահպանման խնդիրների մասին գիտամեթոդ. աշխ-ների, «Կոմիտասի տասը պատվիրանները երգչին» գիտ. հոդվածի («Կոմիտասական», 2, 1981), «Վոկալ-մանկավարժական երկացանկ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից» (1968) և այլ ուսումնամեթոդ. ձեռնարկների:

Ըստ Կառլոս Սարկոսյանի

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Նոնա (Նելլի) Գրիգորի (09.01.1924, Մախաչկալա–02.10.2016, Մոսկվա), երաժշտագետ: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1995): Արվեստագիտ. դ-ր (1988), պրոֆ.: Սերում է Արցախի Մելիք-Շահնազարյանների տոհմից: Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է Մախաչկալայում: Ավարտել է ՄՊԿ դաշնամուրի բաժինը (1950) և ասպիրանտուրան (երաժշտ. գեղագիտություն): Աշխատել է ՄՊԿ-ում, ՌԽՖՍՀ ՄՆ-ում, «Մուզգիզ» հրտ-յան խմբագրությունում, 1960-ից՝ Մոսկվայի արվեստագիտության ինստ-ում:

Ուսումնասիրությունները վերաբերում են ժամանակակից երաժշտ. գեղագիտությանը, երաժշտ. պրոֆեսիոնալիզմի տիպերին ու դրսևորումներին, ավանդույթ–արդիականություն, Արևելք–Արևմուտք երաժշտ. փոխհարաբերություններին, եվրոպ. և ոչ եվրոպ. երաժշտ. ավանդույթների փոխազդեցությանը:

Երկ. *Интонационный «словарь» и проблема народности, М., 1966; О национальном в музыке, 2 изд., испр., М., 1968; Сергей Баласанян, М., 1972 (համահեղ.); Проблемы музыкальной эстетики в теоретических трудах Стравинского, Шенберга, Хиндемита, М., 1975; Музыка Востока и музыка Запада, М., 1983; Проблема народности в советском музыкальном искусстве на современном этапе, М., 1987; Художественная традиция в музыкальной культуре XX века, М., 1997; Парадоксы советской музыкальной культуры. 30-е годы, М., 2001; Феномен национального в зеркале композиторского творчества (Россия–Армения). Очерки, М., 2007.*

ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ (Մարտիրոսյան) Ժենյա (1900, Կ. Պոլիս–1952, Ֆրեզնո), երգչուհի, դաշնակահարուհի: Երաժշտ. կրթությունն ստացել է Կ. Պոլսում: 1920-ական թթ-ի սկզբներին ամուսնու՝ թառահար Ժորժ ***Շահպարոնյանի*** հետ մեկնել է Փարիզ, որտեղ զբաղվել է բեմ. գործունեությամբ: Մասնակցել է Փարիզի հայ թատերախմբերի ներկայացումներին՝ որպես երգչուհի և դաշնակահարուհի: Գլխ. դերերով հանդես է եկել Միշա Ազնավուրյանի, նաև «Սուրաբյան» թատերախմբերի (օպերա-օպերետ.) ներկայացումներում («Արշին մալ-ալան», «Ուշ լինի, նուշ լինի», «Ղարաբաղի մելիքները», «Աշուղ Ղարիբ» ևն): Հետագայում տեղափոխվել է ԱՄՆ, մասնակցել հայ. ներկայացումներին:

Թ. Շահնազարյանը Արմասպի դերում (Ա. Սպենդիարյանի «Արմասպ»)

ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ Ժորժ [1897, Գանձակ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–1956, Լոս Անջելես], թառահար: Փոքր տարիքից նվագել է թառ, հանդես եկել երաժշտ. միջոցառումներում: 1919-ից նվագել է «Սուրաբյան թատերախմբում», որի հետ շրջագայել է Հս. Կովկասում, Կ. Պոլսում: 1920-ական թթ-ի սկզբներին կնոջ՝ Ժենյա ***Շահպարոնյանի*** հետ մեկնել է Փարիզ: Նվագել է Միշա Ազնավուրյանի օպերետ. խմբում, եղել գեղ. ղեկ.: 1927-ին կնոջ հետ տեղափոխվել է ԱՄՆ. շուրջ 25 տարի ապրել են Նյու Յորքում, ապա՝ Լոս Անջելեսում: Հանդես են եկել համերգներով, արժանացել բարձր գնահատականի: Կատարել է իր հորինած մեղեդիները:

Նոնա Շահնազարյան

ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ Վարդուհի (09.11.1905, Թիֆլիս–13.12.1979, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1954): Ավարտել է Թիֆլիսի Գայանյաց օրիորդաց դպրոցը (1922), կոնսերվատորիայի երգեցողության բաժինը (1929): 1936-ից ԵՕԲԹ-ում հանդես է եկել բազմաթիվ դերերգերով (Տոսկա՝ Ջ. Պուչչինիի «Տոսկա», ևն): 1941–48-ին՝ ՀԽՍՀ ռադիոյի և Հայֆիլհարմոնիայի մենակատար: 1948-ից ԵԿԿԹ-ում եղել է դաս. ու ազգ. օպերետների ու երաժշտ. կատակերգությունների հերոսուհիների հիմնական մարմնավորողը. լավագույններից են՝ Սո-

Վարդուհի Շահսուվարյանը Տոսկայի դերում (Ջ. Պուչչինիի «Տոսկա»)

Ալեքսանդր Շահվերդյան



Ա. Շահվերդյանի «Հայ երաժշտության պատմության անկնարկներ» գրքի (1959) փիրտոսաթերթը

Արամ Շամշյան

ֆի (Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան»), Չիպրա (Յ. Շտրաուսի «Գնչուների բարոն»), Շողիկ (Ա. Այվազյանի «Ուշ լինի, նուշ լինի»), Մագթաղինե (Շիրվանզադեի «Մորգանի խնամին»), Օդետա, Սիլվա, Մարիցա (Ի. Կալմանի «Բայադերա», «Սիլվա», «Մարիցա»), Զահան Խանում (Ու. Հաջիբեկովի «Արշին մալ-ալան») ևն: Ձայնն առանձնացել է գունագեղությամբ, ջերմությամբ, քնքշությամբ, դրամատիկ. հագեցածությամբ: Նկարահանվել է «Մանրուք» (1954), «Պատվի համար» (1956), «Մոր սիրտը» (1957) հայկ. կինոնկարներում:

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ Ալեքսանդր Իսահակի [22.06(05.07).1903, Սղնախ (Վրաստան)–02.03.1954, Մոսկվա], երաժշտագետ-պատմաբան, քննադատ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): 1916-ից ապրել է Թիֆլիսում, դաշնամուրի դասեր առել Հովսեփ ***Տեր-Դավթյանից***, կոնսերվատորիայում աշակերտել է Քրիստափոր ***Քուշնարյանին***: Սովորել է Լենինգրադի կոնսերվատորիայում (1924–26), ավարտել ՄՊԿ (1931), որտեղ դասավանդել է 1931–34-ին: 1930–37-ին, որպես խմբագիր, աշխատել է Համամիութ. ռադիոյում, 1937–46-ին՝ «Մուզիկա» («Музыка») և «Սովետսկոյե իսկուստվո» («Советское искусство») թերթերի խմբագրություններում: 1946–50-ին ղեկավարել է ԽՍՀՄ ԿՄ երաժշտագիտության և երաժշտ. քննադատության հանձնաժողովը:

Շ-ի քննադատ. մեթոդն առանձնանում է տրամաբ. հիմնավորվածությամբ և գաղափար-գեղ. որոշակի վերլուծությամբ: Ուսումնասիրությունները վերաբերում են Կոմիտասի արվ-ին, հայ դաս. ու ժամանակակից երաժշտությանը, որոնց բնորոշ են նյութերի լայն ընդգրկումը, կշռադատված համակարգումը, պատմավերլուծ. մոտեցումը: 1939-ին Մոսկվայում մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակի նախապատրաստմանը, հանդես եկել հոդվածներով, խմբագրել նոտաների ժող-ներ: Եղել է Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայի առաջին բեմադրության խմբ-ը:

Երկ. *Հայ երաժշտության պատմության ակնարկներ, XIX–XX դդ., Ե., 1959: Ալեքսանդր Սպենդիարյան, Ե., 1971: “Борис Годунов”: Опера М. Мусоргского (критич. разбор.), М., 1931; “Травиата”: Опера Дж. Верди, М., 1935; Большой театр Союза ССР, М., 1952; Комитас и армянская музыкальная культура, Е., 1956; Избр. статьи, М., 1958; Комитас, 2 изд. доп., М., 1989.*

ՇԱՄԼՅԱՆ Զոհրապ (ծ. 1941, Հալեպ), կոմպոզիտոր: Սովորել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, Անթիլիասի դպրոցում և Էջմիածնի հոգևոր ճեմարանում, զուգահեռ հետևել ԵՊԿ դասընթացներին, ավարտել է Լոնդոնի թագավոր. երաժշտ. ակադ-ի դաշնամուրի և ստեղծագործության բաժինները (աշակերտել է կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր Ալան Բուշին):

Գրել է լար. կվարտետ, սոնատ և պիեսներ՝ դաշնամուրի համար, երգեր՝ Մ. Մեծարենցի խոսքերով: Երկերում օգտագործել է հայկ. հնագույն տաղերի մեղեդաոճ. կառուցվածքներ, նրանց հաղորդել ժամանակակից հոգեբ. ապրումներին համապատասխան նոր ռիթմաինտոնացիոն տարրեր՝ համադրելով բազմաձայնության և հարմոնիայի նոր կառուցվածքներ:

ՇԱՄՇՅԱՆ Արամ Հովհաննեսի (18.04.1925, Լենինական–17.01.2010, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1965): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1974): Ավարտել է Խարկովի և Մոսկվայի կոնսերվատորիաները: 1951-ից դասավանդել է ԵՊԿ-ում (1966–96-ին՝ դեկան, պրոֆ.՝ 1976-ից, 1996-ից՝ պրոռեկտոր), 1965-ից վարել է նվագախմբ. բաժինը: Մանկավարժությանը զուգահեռ հանդես է եկել որպես մենակատար ջութակահար, եղել հայ արդի կոմպոզիտորների (Է. Հովհաննիսյան, Գ. Հովունց, Ս. Նաղդյան և ուր.) որոշ երկերի առաջին կատարողը:

Հեղինակ է մեթոդ. ուսումնասիրությունների 2 ուս. ձեռնարկների՝ սկսնակ ջութակահարների համար, ջութակի և դաշնամուրի մանրանվագների: Ջութակի համար նրա մի շարք մշակումներ և փոխադրումներ կատարվում են նաև արտերկրում: Շ-ի երաժշտ. գործերից ընդգրկվել են ուս. ծրագրերում:

Ունի ֆոնդ. ձայնագրություններ:

ՇԱՄՉԻ ՄԵԼՔՈ (Գուլքանյան Մելքիսեդեկ Բեժանի, 1750-ական թթ., Թիֆլիս–1821-ից հետո), աշուղ, բանաստեղծ: Հորինել է հայ., վրաց., թուրք. երգեր: Տիրապետել է աշուղ. արվ-ի հիմնական ձևերին: Երգերում անդրադարձել է ժողովրդի կենցաղին, վարք ու բարքին, արհեստավորների սովորույթներին, մարդկային արատներին: Որպես ականատես՝ նկարագրել է Թիֆլիսի ավերումը (1795)

Աղա Մահմեդ-խանի աշավանքի ժամանակ («Ի վերայ աւերման Տփխիս քաղաքի գալստեամբ Աղա Մահմեդ-խանի»):

Շ. Մ-ից պահպանվել են 15 հայ. և 8 վրաց. երգեր: Հայ. երգերի մեծ մասը երգիծ. բնույթի է («Անգամ արա գովքըդ ասիմ», «Խարազ Զալի՛, իմ տաս շահին ի՞նչ արիր», «Էստղանց գնացի Մառնեուլ»): Ունի նաև ձոներ և ներբողներ («Ով սրբազան Յոսէփ, մինձ կաթողիկոս», «Ավալի Բաշտան, քիզ գովիմ»): Սիրային երգերում («Դուն աննման իս», «Քու էշխեմեն հիւանդացա, այ գոզալ» ևն) նկատելի է Սայաթ-Նովայի ազդեցությունը:

Գրկ. *Ա ա ռ ա տ ո ւ ր Գ., Շամչի-Մելքո, «Տեղեկագիր ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի», 1938, № 1: Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ Լ., Շամչի-Մելքոն և նրա հայերեն խաղերը, Ե., 1958:*

ՇԱՇԻԿՅԱՆ Ենոք (Բաղդիկ) Համբարձումի [23.11.1922, գ. Աբուլ (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–24.02.2001, Սուխում], մանկավարժ, երգերի հեղինակ, հաս. գործիչ: Աբխազիայի մշակույթի վաստ. աշխատող (1983): 1944-ից Աբխազիայի հայկ. դպրոցներում դասավանդել է երաժշտություն: Սուխումի մշակույթի, ժող. ստեղծագործության հանրապետ. տներին ու ֆիլհարմոնիային կից կազմակերպել և ղեկավարել է ժող. երգի-պարի ինքնագործ անսամբլներ, որոնք համերգներով հանդես են եկել նաև ՌԴ Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում, Վրաստանում, Հայաստանում:

Հեղինակ է մի շարք երգերի («Հայաստան», «Երգ Սուխումի մասին», «Երևան», «Շոթա Ռուսթավելի», «Աբխազուհի սիրուն աղջիկ», «Սայաթ-Նովա», «Մեսրոպ Մաշտոց», «Արարատ», «Ծխախոտագործ աղջիկ» ևն):

ՇԱՊՈՇՆԻԿՈՎ Իլյա (Փափախյան Եղիա) Գալուստի [22.12.1895 (03.01.1896), Դոնի Ռոստով–17.01.1953, Դոնի Ռոստով], կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1952): Ավարտել է Կիևի կոնսերվատորիայի ստեղծագործության (1920) և Դոնի Ռոստովի համալսարանի հաս. գիտությունների (1924) բաժինները: Կատարելագործվել է Մոսկվայում՝ կոմպոզիտոր Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի ղեկավարությամբ: 1925–1935-ին՝ Դոնի Ռոստովի ռադիոյի, 1938–1940 և 1944–53-ին՝ ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբերի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1937-ից դասավանդել է Դոնի Ռոստովի երաժշտ. ուսումնարանում, 1941–46-ին՝ Զինվ. երաժիշտների դպրոցում: 1944–53-ին՝ ՌԽՖՍՀ ԿՄ Ռոստովի բաժանմունքի վարչության նախագահ:

Ստեղծագործություններում օգտագործել է հայկ., մոլդ., տաջիկ., թաթար., Դաղստանի ժողովուրդների, Դոնի կազակների երաժշտության տարրեր: Գրել է «Բախչիսարայի շատրվանը» օպերան (1937, հաղորդվել է ռադիոյով), «Երեք բարեկամ» (1952) երաժշտ. կոմեդիան, 2 սիմֆոնիա (1920, 1943), նվագախմբ. նախերգանքներ, սյուիտներ, ռապսոդիաներ, «Նախիջևանյան էսքիզներ», «Երևանյան էսքիզներ», «ՍՍՀՄ ժողովուրդների պարեր» շարքը, դաշնամուրի 2 կոնցերտ (1-ինը՝ 1924, 2-րդը՝ 1944, հայկ. թեմաներով), դաշնամուր. տրիո, ռոմաններ, երաժշտություն՝ դրամատիկ. ներկայացումների համար:

Իլյա Շապոշնիկով

Արմեն Բոդաղյան

ՇԱՐԱԿԱՆ (շար, մեկնվել է նաև երբ. šir – երգ, ասոր. šahrā – հսկում, հսկման երգ բառերից, հետագայում նույնացվել է հուն. ‘ειρμός – շարքին), պաշտոնապես ընդունված և եկեղեց. Տոնացույցի որևէ օրվա համապատասխան ժամին կատարվող հոգևոր երգ կամ հոգևոր երգերի ամբողջ. շարք (հոմանիշները՝ կանոն, կարգ, սարք), նաև այդ երգաշարերն ընդգրկող ժող.՝ Շարակնոց: Առաջին գրավոր հիշատակությունը IX–X դդ-ի երկաթագիր հնագույն Մաշտոցներում է:

Հոգևոր երգը, որպես ինքնուրույն երաժշտաբանաստեղծ. ձև (սաղմոսներից և մարգարեական օրհնություններից տարբերվող), հիշատակված է Պողոս առաքյալի թղթերում: V դ-ի առաջին հոգևոր երգերը՝ Շ-ները, կոչվել են կցուրդ կամ կցորդ: Կցուրդները փոքրածավալ, 3–4 տնից բաղկացած, պարզագույն սաղմոսատիպ երգեր էին, որոնք, լինելով Աստվածաշնչի տարբեր դրվագների և Քրիստոսի տնօրինությունների մատչելի վերաշարադրումը կամ մեկնությունը, հարասացություններին ձևով կցվել են սաղմոսին կամ մարգարեական օրհնությանը: Կցուրդները ծավալվում են ութձայնի եղանակներում՝ հետևելով նրա «խիստ ոճի» օրենքներին: Այդ տեսակի ընդերքում (սաղմոսերգությանը զուգընթաց) մշակվել են Հայ եկեղեցու երգեցողության հիմնական տիպերը՝



«Հայնագրեալ Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» գրքի (1981) շապիկը

հորդոր, չափավոր–միջակ և ծանր երգերը, որոնց տեմպով պայմանավորվել է նաև գրական խոսքի հնչյունավորման կերպը: Երգեցողության այդ տիպերը մշակվել են ըստ պաշտոներգության մեջ նրանց գրաված տեղի, ծիս. կիրառության: Հնագույն շրջանի կցուրդներում որոշակիորեն կազմավորվել են հայ շարականերգությանը բնորոշ կերպար. արտահայտչականության հիմնական ոլորտները, աստվածաշնչ. նյութի բանաստեղծ. մշակման հնարքները: Ճգնավորության, ապաշխարանքի, մարդու մեղսավորության և Վերջին դատաստանի սպասումն արտահայտող Շ–ների



Հատված Մեսրոպ Մաշտոցի «Անկանիմ առաջի քո» Պահոց շարականից

կողքին քիչ չեն նաև պատմող., մեկնող. բովանդակության և փառաբան. օրհներգ. բնույթի երգերը, որոնք արտահայտում են լուսավոր, բերկրալի, քնար. զգացողություններ: Հնագույն կցուրդները տաղաչափության առումով հիմնականում ազատ էին, որոնք ավանդաբար վերագրվում են Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Ա Պարթևին, Մովսես Խորենացուն և Հովհաննես Ա Մանդակունուն: Տվյալ շրջանի Շ–ների բանաստեղծ. ոճի բնորոշ նմուշներից են ապաշխարության բազմաթիվ հարցերը, որոնք, լինելով հնոցի մեջ նետված 3 մանուկների աղոթքի կցուրդներ, գրեթե ամբողջապես կազմված են Հին կտակարանից քաղված բառ. բանաձևերից:

VII–VIII դդ–ում հանդես են եկել նոր շարականագիրներ՝ Կոմիտաս Ա Աղցեցի, Անանիա Շիրակացի, Սահակ Գ Զորափորեցի, Բարսեղ Ճոն, Հովհաննես Գ Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի և ուր.: Բյուզ. «կոնտակիոն» ձևի ազդեցությամբ առաջացել է Շ–ի առավել ընդարձակ ձև՝ կացուրդը: Տվյալ ժամանակաշրջանի չափանմուշ. կոթող է Կոմիտաս Ա Աղցեցու «Անձինք նուիրեալք» Շ. (Հռիփսիմյանց կույսերի հիշատակին): Ի տարբերություն հնագույն կցուրդների՝ այն վիպաքնար. բնույթի լայնածավալ ներբող է (36 քառատող տուն)՝ ընդգծված պատկերավոր ու դրամատիկ. տարրերով: Բյուզ. նմուշների օրինակով գրել է զուտ շեշտ. տաղաչափությամբ և այբբեն. ակրոստիքոսի սկզբունքով: Այդ երաժշտաբանաստեղծ. տեսակը մեծապես տարածվել է հետագա դարերում: Այբբեն. ծայրակապով գրված Շ–ներն ստացել են նաև «Անձինք» անվանումը:

VII–VIII դդ–ի հեղինակների Շ–ներում նախորդ շրջանի խստաշունչ սաղմոսատիպ կցուրդներից անցել են ծավալուն, ծորերգ. ոճի երգերի, որոնք առանձնանում են երաժշտ. ռիթմի ձերբազատմամբ, իմպրովիզացիոն զարգացումով, մեղեդային մանրամասների նրբակերտությամբ և գեղ. ընդհանրացման առավել բարձր աստիճանով: Ցայտուն նմուշներից են Սահակ Գ Զորափորցու, Անանիա Շիրակացու, Բարսեղ Ճոնի ծանր տիպի Շ–ները, նաև Խոսրովիդուխտի հայտնի ողբը (կամ գովքը)՝ իր նահատակ եղբոր՝ Վահան Գողթնացու հիշատակին:

Շ–ի զարգացման նոր փուլը նշանավորվել է Ստեփանոս Սյունեցուն (VIII դ.) վերագրվող Հարության Ավագ օրհնությունների 8 շարքերի՝ կանոնների ստեղծմամբ, որոնց հիմքը Հին կտակարանի 10 մարգարեական օրհնություններն են: Որոշակի հաջորդականությամբ և տրամադրությամբ հորինված երգերի շարքը, որպես ցիկլ. ստեղծագործության տեսակ, նոր հնարավորություններ է ընձեռել շարականագիրներին նոր որակ ստեղծել հոգևոր երգարվ–ում: Սկզբնապես կանոնները կազմվել են ժամասացության մեջ կիրառվող կցուրդներից և կացուրդներից, սակայն աստիճանաբար ստեղծվել են նոր կանոններ: Կանոնի ներմուծումը սերտորեն պայմանավորվել է ութձայն համակարգի կիրառությամբ: Հնագույն օրհներգերում գերակշռող դիալեկտիկ. հակադրումների համակարգը փոխարինվել է զուգորդ. կապերի համակարգով, որը հնարավորություն է ընձեռել

կանոնի 8 մասերում (Օրհնություն, Հարց, Մեծացուսցէ, Ողորմեա, Տեր երկնից, Մանկունք, Ճաշու, Համբարձի) բացահայտելու իրադարձությունների ներքին հարազատությունը և սրբազան պատմությունը ներկայացնելու որպես ինքնամփոփ, անփոփոխ ամբողջություն: Կանոնի երգերում առավել արտահայտիչ են տվյալ տոնի իմաստ-կերպար. հիմքի հետ կապված քնար. երանգները: Յուրաքանչյուր մաս սովորաբար կազմված է 3 տնից. 1-ինը համապատասխան նմուշի բովանդակության շարադրանքն է՝ քրիստոսաբան. տարրերով, 2-րդը՝ Քրիստոսի Խաչելության և Հարության տեսիլքը, 3-րդը նվիրված է Աստվածածնին:

IX–XI դդ-ում ընդլայնվել և համալրվել են Շարակնոցում ընդգրկված եկեղեց. տարվա մի քանի կարևոր շրջաններին վերաբերող խոշոր շարքերը՝ Պահքի, Հարության, Հոգեգալստյան, նաև Խաչի, Համորեն մարտիրոսաց, Ննջեցեալոց և այլ կանոններ: Նկատելի ներդրում ունեն Պետրոս Ա Գետադարձը, Հովհաննես Սարկավագը, Սարգիս Ա Սևանցին, Ստեփանոս Ապարանցին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին և ուր.: Նրանք, զարգացնելով V–VIII դդ-ի շարականերգության լավագույն ձեռքբերումները, ընդլայնել են Շ-ի ավանդ. թեմաների շրջանակը (առանձնապես կարևորվել է հայրենասիր. թեման): Շ-ներում արտացոլվել են ոչ միայն համաքրիստ. գաղափարները, այլև հայ ժողովրդի պատմության, հաս. կյանքի կարևորագույն իրադարձությունները (հեթանոսության դեմ պայքարի և առաջին քրիստոնյա նահատակների շրջանը, քրիստոնեության հաստատման և ազգ. նոր մշակույթի ջատագովությունը, համաժող. դիմադրությունը պարսից մազդեականության ու արաբ. տիրապետության դեմ): Կանոն. արվ-ի շնորհիվ հայ շարականագիրներն իրենց երկերը հագեցրել են կենս. հնչողությամբ, կրոն. և բանաստեղծ. խոր ապրումներով:

Շ. աննախադեպ վերելք է ապրել X–XIV դդ-ում: Նոր երաժշտաբանաստեղծ. տեսակների ծնունդը (գանձ, տաղ) նկատելիորեն հարստացրել է կանոնի բաղադրիչների կերպարաելևէջ. նկարագիրը: Կարևոր են մասնավորապես Կիլիկիայի շարականագիրների ստեղծագործությունները: Նշանակալի է Ներսես Շնորհալու ներդրումը. նրան է պատկանում Շարակնոցի երգերի առնվազն 1/3-ը: Շ. բարձր մակարդակի է հասցրել Ստեփանոս Սյունեցու սկզբնավորած զուգորդ. բանաստեղծ. ոճը: Հիրաժարվելով «հին» օրինակերգերի «արձակ բանաստեղծությունից»՝ Ներսես Շնորհալին միաժամանակ Շ. հարստացրել է վանկ. և վանկաշեշտ. տաղաչափության զանազան նմուշներով, իսկ ավանդ. ութձայնը՝ բազմաթիվ զարտուղի, դարձվածքանման և ստեղիատիպ եղանակներով: Մի շարք Տերունի տոներին նվիրված կանոնները լրացնելուց բացի՝ նա ներմուծել է սրբերին և ազգ.

Հատված Մովսես Խորենացու «Մարմնացեալդ ի կուսէն» Տեառնընդառաջի շարականից

հերոսներին նվիրված նոր՝ «մանկունք» տիպի մեկական երգեր:

XII–XIII դդ-ում հանդես են եկել մի շարք խոշոր շարականագիրներ: Բուն Հայաստանում առավել նշանավոր էին Հովհաննես Երզնկացին (Պլուզ), Խաչատուր Տարոնացին, Վարդան Արևելցին, Կիլիկիայում՝ Գրիգոր Գ Պահլավունին, Հակոր Ա Կլայեցին, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Սկևռացին և ուր.: Ուշագրավ են Հովհաննես Երզնկացու՝ Գրիգոր Լուսավորչին և Ներսես Ա Մեծին նվիրված Շ-ները, Խաչատուր Տարոնացու՝ քահանայի զգեստավորման «Խորհուրդ խորին» տաղատիպ Շ., Հակոր Կլայեցու՝ Աստվածածնի ծննդյան, Վարդան Արևելցու՝ սրբոց թարգմանչաց կանոնները: Մեզ հասած Շարակնոցն ամփոփված է առավել ուշ ապրած հեղինակի՝ Կիրակոս Երզնկացու (XIV–XV դդ.)՝ Աստվածածնի ննջմանը նվիրված «Արևելք

Շարակնոցի (1664–65, Ամստերդամ) էջ

Շարակնոցի (1736, Կ. Պոլիս) էջ



«Չայնբաղ շարական»-ի (1888) փիլոլոգաթերթը

գերարփի» այբբեն. ակրոստիքոսով գրած Շ-ով: Նույն շրջանում Շ-ի զարգացումը կասեցվել է արտաքին ու ներքին պատճառներով: Արտաքին պատճառներից են ուշ միջնադարին բնորոշ ընդհանուր քաղտնտ. ճգնաժամն ու մշակույթի աստիճան. անկումը: Բացի այդ՝ գործածվող Շ-ների աճը չէր համապատասխանում ժամակարգության պահանջներին. այն սահմանափակվել է՝ Շարակնոցի վերջնական խմբագրությունից դուրս թողնելով բազմաթիվ պարականոն (անվավեր) Շ-ներ: Ներքին պատճառը պայմանավորված էր միջնադար. սխոլաստիկ գեղագիտ. աշխարհայացքի նահանջով. Վերածնության գաղափարների ազդեցությունը շարականերգությունը վերածել էր նրբին, անհատականացված երաժշտաբանաստեղծ. արվ-ի: Զարգացման այս միտումն աննկատելիորեն խաթարել է քարոզի ընկալումը և աստիճանաբար հանգեցրել փակուղու՝ սպառելով Շ-ի՝ որպես արվ-ի կենդանի ձևի հնարավորությունները: Այդուհանդերձ, Շ. միջնադար. հայ հոգևոր մշակույթի հարուստ ոլորտներից է, որի բազմակողմանի ուսումնասիրությունը կարևորվել է XIX դ-ից, ինչպես հայ հոգևոր երաժշտության, այնպես էլ արևելաքրիստ. այլ եկեղեցիների երաժշտության հետ ունեցած տարբեր առնչությունների հետազոտման տեսանկյունից:

Գրկ. *Ա ւ ե տ ի ք ե ա ն Գ., Բացատրութիւն շարականաց..., Վնտ., 1814: Շարական հոգեւոր երգոց սուրբ եւ ողղափառ..., ԿՊ, 1834: Չայնագրեալ շարական հոգեւոր երգոց, Վաղ-պատ, 1875: Ա մ ա տ ո ւ ն ի Ս., Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղ-պատ, 1911: Տ ն տ ե ս ե ա ն Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, 2 տպագր., Սպահան, 1933: Շարական հոգեւոր երգոց, Յերուսաղէմ, 1936: Կ ո մ ի տ ա ս, Յոդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Ա ր ե ւ ե ա ն Մ., Երկ., հ. 3, Ե., 1968, էջ 526–563: Թ ա հ մ ի զ ե ա ն Ն., Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Ե., 1973: Ն ո ւ յ ն ի ն, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5–15-րդ դարերում, Ե., 1985: Հ ա կ ո բ յ ա ն Գ., Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V–XV դդ.), Ե., 1980: Ա ր գ ա ր յ ա ն Ա., Հիմներգության ժանրը (Հայ միջնադարյան գրականության ժանրերը), Ե., 1984: Հ ա կ ո բ յ ա ն Լ., Շարակնոցի երգերի եղանակները և նրանց պտորաբաժանումները, «Էջմիածին», 1992, № 4: Ա ր ե ւ շ ա տ ե ա ն Ա., Սովէէ Խորենացու հիմներգութիւնը, «Բազմավէպ», 1992, № 1–4: Ն ո ւ յ ն ի ն, Անիի երաժշտական մշակույթը եւ նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավէպ», 1995, № 1–4: Ք յ ո ս ե յ ա ն Հ., Հայ եկեղեցու ապտվածաբանություն շարականներում և տաղերում, տես հեղինակի «Դրվագներ հայ միջնադարյան արվեստի ապտվածաբանության», Ս. Էջմիածին, 1995: Շարական հոգեւոր երգոց..., Անթիլիաս, 1997: Շարական, հ. 1, Ե., 1997: Шаракан. Богослужебные каноны и песни армянской восточной церкви, 2-е изд., М., 1914; Шаракан. Из армянской поэзии V–XV вв., Е., 1980; Шаракан. Каноны и гимны Армянской церкви, пер. с древнеарм., вступ. ст. и коммент. Л. Акопяна, Е., 2017; Ter-Mikaelian N., Das armenische Hymnarium, Lpz., 1905; Conybeare Fr. C., The Hymnal of the Armenian Church, "The Journal of Theological Studies", 7, 1906; Hakobyan L., The Versification of Sharakan – hymns, "Revue des études arméniennes", t. 24, 1993; Arevšatyan A., La typologie du genre des šarakan dans le système de l'hymnographie chrétienne Orientale, "Revue des Études arméniennes", t. 28, 2001–02.*

Անահ Արևշատյան, Լևոն Հակոբյան

«ՇԱՐԱԿԱՆ», Հայաստանի հանր. ռադիոյի հնագույն երաժշտության անսամբլ: Ստեղծվել է 1991-ին Երևանում (գեղ. ղեկ. և դիրիժոր՝ ***Դանիել Երաժիշտ***): Անսամբլի կազմում են՝ Արմենուհի Սեյրանյան (սոպրանո), Գոհար Դանիելյան (ջութակ), Նաիրա Կաժոյան (ֆլեյտա), Ժասմեն Դանիելյան (երգեհոն, դաշնամուր) և ուր.: Երկացանկում ընդգրկված են հայկ. միջնադար. մեղեդիների, շարականների, հոգևոր ու աշխարհիկ երգերի մշակումներ, Կոմի-

«Շարական» անսամբլը

տասի, Մ. Եկմալյանի, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ, որոնք ձայնագրվել են ռադիոյի ֆոնդի համար, նաև լազեր. սկավառակների վրա (ԱՄՆ, Ֆրանսիա):

ՇԱՐԱԿՆՈՑ, հայ միջնադար. երաժշտաձիս. մատյան, ***շարակնների*** ժող.: Հավանաբար ձևավորվել է VII–VIII դդ-ում: Շ-ի «Կցորդարան» անվանումը վկայում է նրա ծագման հնագույն փուլը: Հոգևոր ինքնուրույն երգերի կարգավորման առաջին փորձը կատարել է ***Բարսեղ Ճոնը*** (VII դ.): Նրա «Ճոնընտիր» ժող-ը դարձել է Շ-ի հիմքը: Շ-ի ձևավորմանը մեծապես նպաստել է Ստեփանոս Սյունեցին, որը շարքերի (տես ***Կանոն***) մեջ միավորել է և դասակարգել ըստ ութձայն համակարգի գոյութ-

յուն ունեցող բազմաթիվ հոգևոր երգեր (կցուրդներ և կացուրդներ), Շ. համալրել իր հեղինակած Ավագ օրհնություններով և այլ երգերով: Շ-ի բարեկարգման մեջ նշանակալի ավանդ ունի ***Ներսես Շնորհալին***, ում պատկանում է Շ-ի պահպանված երգերի գրեթե 1/3-ը: Հավաքածուներում պահվում են բազմաթիվ խազագիր Շ-ներ, որոնցից հնագույններն են Զմմառի վանքի (ձեռ. № 64, 1187) և Մտնդ-ի (ձեռ. № 9838, 1193) ժող-ները: Հատկանշական է ***Գրիգոր Խոպի*** խմբագրած Շ. (XIII դ-ի 1-ին քառորդ):

Շ-ում երգերը դասավորված են՝ ըստ եկեղեց. տոնակարգի կամ ձայնեղանակների («Զայնաքաղ Շարական»):

Խազագիր առաջին Շ. տպագրվել է 1664–65-ին Ամստերդամում, նոր հայկ. նոտագրությամբ՝ 1875-ին Վաղարշապատում (աշխատասիր.՝ Ն. Թաշճյանի), 1934-ին՝ Կ. Պոլսում (աշխատասիր.՝ Ե. Տնտեսյանի), 1954–76-ին՝ Վենետիկում (աշխատասիր.՝ Ղ. Տայյանի):

Գրկ. *Զայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Վաղ-պապ, 1875: Պողարեան Ն., Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 27–40: Շարական, հ. 1, Ե., 1997: Шаракан. Каноны и гимны Армянской церкви, пер. с древнеарм., вступ. ст. и коммент. Л. Акопяна, Е., 2017.*

ՇԱՐԱՖՅԱՆ Վաչե Ռոբերտի (ծ. 11.02.1966, Երևան), կոմպոզիտոր: Ավարտել է ԵՊԿ (1990) և ասպիրանտուրան (1992, ղեկ.՝ Է. Միրզոյան): 1992–96-ին դասավանդել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում (նաև դաշնակահար), 1997-ից՝ ԵՊԿ-ում: 2001-ից՝ «The Silk Road Project»-ի պաշտոն. կոմպոզիտորը (թավջութակահար Յո-Յո Մայի ընտրությամբ), 2002-ից համագործակցում է BMI երաժշտ. միջազգ. ընկերության հետ, 2011-ին դասավանդել է Կալիֆոռնիայի պետ. համալսարանում:

Գրել է «Աբգար թագավոր» օպերան (2010), «Երկրորդ լուսին» բալետը (2013), սիմֆոնիա՝ 2 «կոնցերտային» դուդուկի և սիմֆ. նվագախմբի (2007, Բոստոնի ժամանակակից սիմֆ. նվագախմբի պատվերով), «Զարթիք փառք իմ» կոնցերտը՝ ալտի, դուդուկի, դիսկանտի, բարիտոնի և նվագախմբի համար (նվիրված՝ Յ. Բաշմետին, 2005), «Պոեմ» (1987), կոնցերտ (1992)՝ լար. նվագախմբի, «Կոնցերտ-սերենադ» (1998)՝ ջութակի և լար. նվագախմբի, կոնցերտ-սոնատ (2000)՝ ալտ սաքսոֆոնի, դաշնամուրի և լար. նվագախմբի, Concerto grosso (2002)՝ 9 լար. գործիքների և 2 դաշնամուրի, «Հրավառություն» (2016)՝ սիմֆ. նվագախմբի, «Ակացիաների երգի առավոտյան բուրմունքը» (2001)՝ դուդուկի և լար. քառյակի, կոնցերտ՝ տենոր սաքսոֆոնի և սիմֆ. նվագախմբի (2003), սյուիտ՝ ալտի և նվագախմբի (2010), թավջութակի և նվագախմբի (2010), եռակի կոնցերտ՝ դաշնամուրի, ջութակի, թավջութակի և նվագախմբի (2016) համար: Մշակել և փոխադրել է հոգևոր երգեր՝ դուդուկի և լար. գործիքների համար: Շ-ի ստեղծագործությունները կատարվել են նաև ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Կանադայում, եվրոպ. մի շարք երկրներում, Իսրայելում, Թայվանում, Ճապոնիայում, Լիբանանում և այլուր:



Վաչե Շարաֆյան

ՇԱՔԱՐՅԱՆ Ստեփան Գրիգորի (ծ. 23.10.1935, Բաքու), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008), ժող. արտիստ (2017): ՀԿՄ անդամ (1965-ից): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1964): 1986–90-ին՝ ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոյի մենակատարների ջազ-անսամբլի հիմնադիր-ղեկ.: 1992-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1998-ից):

Ստեփան Շաքարյան

Գրել է կոնցերտ՝ սիմֆ. նվագախմբի համար (1964), «Խորեոգրաֆիկ սիմֆոնիա» (1968), «Նախանձ» (1966), «Աղավնավանք» (1996) բալետները, սյուիտ՝ կամեր. նվագախմբի (1985), 2 սոնատ՝ դաշնամուրի համար, «Կոմիտասի հիշատակին» պոեմը (1965), «Հայաստան» սիմֆ. պոեմը (1993), սիմֆ. նախերգանք (1995), 3 սիմֆոնիա, նախերգանքներ, վոկալ և գործիք. ստեղծագործություններ, երաժշտություն՝ թատրոնի ու կինոյի համար, ջազ., էստրադ. և այլ երկեր: Թողարկել է ձայնասկավառակ («Լուսինը սարերի վրա», 2009):

Ս. Շաքարյանը ելույթի պահին

ՀՀ «Ծիծեռնակ» մրցանակաբաշխության մրց. (2017), ՀՀ ՄՆ (2008), Երևանի քաղաքապետի (2015) ոսկե մեդալներ:

Երկ. *Хореографическая симфония, М., 1986. Ամերիկյան տրիո (վարիացիաներ ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար), Ե., 1999: Ֆրանսիական կվինտետ («Ռեպրո»), դաշնամուրի, երկու ջութակի, ալտի և թավջութակի համար, Ե., 2002: Խմբերգեր, Ե., 2004: Դաշնամուրային սրճեղծագործություններ, Ե., 2006: Սրճեղծագործություններ կամերային նվագախմբի համար, Ե., 2010:*

Շերը կլույթի պահին

ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ Սերգիուս (Մե-տաքսյան Սարգիս, 1871, Երևան–08.11.1929, Վարշավա), երգիչ (բարիտոն, դրամատիկ. տենոր)։ Երաժշտ. կրթությունն ստացել է Ելիզավետպոլում, Մոսկվայում, Ս. Պե-տերբուրգում։ 1904-ին Վարշավայի օպեր. թատրոնում հանդես է եկել Ռ. Լեոնկավալ-լոյի «Պայացներ» օպերայում, դարձել այդ թատրոնի մեներգիչ (տնօրեն՝ 1907–24-ին)։ 1927-ից՝ լեհ. «Բագատել» թատրոնի ղեկ.։ Լավագույն դերերգերից են՝ Էսկամիլիո (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ժերմոն, Ռիգոլետ-տո, Ամոնասրո (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Աիդա»), կոմս դե Նևերա (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ»), Անջելոտի (Ջ. Պուչչինիի «Տոսկա») ևն։ Մասնակցել է ԱՀՊ-ին։ 1924-ից հանդես է եկել համերգ-ներով. երգացանկում՝ նաև հայկ., վրաց., գնչուական և այլ երգեր։

ՇԵՐ (Լապիեր-Սարգսյան Շերիլին Ջո-նի, ծ. 20.05.1946, Էլ Սենտրո՝ Կալիֆոռնիա), երգչուհի, կինոդերասանուհի։ 1963-ից ապ-րել է Լոս Անջելեսում, խաղացել թատրո-նում։ 1970–75-ին ամուսնու՝ երգիչ, երգերի հեղինակ Սանի Բոնոյի հետ հանդես է եկել «Սանի ընդ Շեր» ռոք երկյակում, որը մեծ հռչակ է վայելել և մնայուն հետք թողել ռոքի պատմության մեջ, թողարկել ձայնա-սկավառակներ։ 1989-ին Շ-ի ալբոմն ստա-ցել է եռակի պլատինե կարգավիճակ, իսկ «Believe» ալբոմը (1998)՝ 7 շաբաթ աշխարհի 23 երկրներում եղել է առաջին տեղում։ 1996-ին թողարկել է «Սա տղամարդկանց աշխարհն է» ձայնասկավառակը։ Նկա-րահանվել է «Լավ ժամանակներ» (1967), «Սիլքվուդի գաղտնիքը» (1983, «Օսկար» մրց.՝ 1984), «Դիմակ» (1984, Կաննի միջազգ. կինոփառատոնի «Արմավենու ճյուղ» մրց.՝ 1984), «Իսթվիքի վհուկները» (1987), «Լուս-նով հմայվածները» (1987, «Օսկար» մրց.՝ 1988), «Հավերժահարսերը» (1990), «Եթե պատերը խոսել կարողանային» (1995) և այլ ֆիլմերում։

1993-ին բարեգործ. առաքելությամբ այցելել է Հայաստան։

Հեղինակ է «Միշտ լավ կազմվածքով» գրքի։ Նրան են նվիրված Ռ. Տարաբորել-լիի «Շեր» (1986), Ն. Գուդալի «Շերն իր իսկ խոսքերով» (1992) գրքերը։

1985-ին հռչակվել է «Տարվա կին», 1998-ին անունը գրվել է Հոլիվուդի «Աստղերի ծառուղիում», 2007-ին գրանցվել է Գին-նեսի ռեկորդների գրքում։

Շեփոր

ՇԵՐԱՄ (Տայան Գրիգոր Կարապետի (20.03.1857, Ալեքսանդրապոլ–03.07.1938, Երևան), աշուղ։ Կարսեցի հայտնի աշուղ Քյամալու թոռն է, Վարդգես ***Տայանի*** հայրը։ Ժող. անունը՝ «ուստա Գոքոր»։ Տասը տարեկանում զրկվել է հորից, եղել է ատաղձագործի, ապա՝ հյուսնի աշա-



Շերամ

կերտ, պատրաստել է իր առաջին սազը, թառը և ինքնուրույն սովորել նվագել։ 12–13 տարեկանից հորինել է երգեր։ Հայտնի քամանչահար Չունգուր Հագոյի (Մանուկ-յան Հակոբ) եռյակի կազմում շրջագա-յել է Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Աստրախանում, Շուշիում, Կարսում և այլ

Հատված Շերամի «Դու իմ մռսան ես» երգից

հայաբնակ վայրերում։ Շ. ունեցել է նաև իր խումբը։ Նրա առաջին՝ «Պարտիզում վարդեր բացված» երգը լույս է տեսել Ա. Մխիթարյանցի կազմած ու խմբագրած «Տաղեր ու խաղեր» (1900) ժող-ում։ 1902-ին տպագրվել է «Երգիչ Գրիգոր Տալիեան-

ցի քնարը», 1905-ին՝ «Գանգատի շանթեր» գրքույկը, որն ամփոփում է Շ-ի հայրենասիր. երգերը («Անդրանիկին», «Փութանք առաջ» ևն): 1905-ին Շ-ին Էջմիածնում լսել է Կոմիտասը և նոտագրել նրա «Ալ ու ալվան ես հագել» երգը: 1914-ին բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը նրան, որպես «մետաքսի նման» նրբին երգեր հորինողի, անվանել է «Շերամ»: 1915-ին լույս է տեսել աշուղի «Անզուսպ արշավ» ժող-ը, որտեղ ամփոփված են «Անենծք Վիլհելմին», «Անդրանիկի կոչը», «Լինենք եղբայրներ» և այլ երգեր:

1915–35-ին Շ. ապրել է Թիֆլիսում: Այդ շրջանի լավագույն երգերից են՝ «Սարեր կաղաչեմ», «Նա մի նազ ունի», «Քեզանից մաս չունիմ», «Էլի երկինս ամպել է»: Սիրային-քնար. երգերից առավել ժողովրդականություն են վայելում «Պարտիզում վարդեր բացված», «Սիրուններ», «Շորորա», «Դու իմ մուսան ես», «Աննման փերի», «Թառը դոշիս» ևն:

1935-ին Շ. տեղափոխվել է Երևան:

Շ. նախընտրել է ժող. տաղաչափությունը, հիմնադրել աշուղ. երգ-երաժշտության և տաղաչափության զարգացման նոր ուղղություն: Զարգացրել է քնար. եղանակավոր երգայնությունը, եղանակների գունեղությունն ու հուզականությունը:

Շ-ի երգերի մեղեդիները նոտագրվել և հրատարակվել են («Երգեր», 1959):

Երկ. *Սէր եւ կոիւ, Ալեքսանդրապօլ, 1907: Անջոր պարտէզ, Ալեքսանդրապօլ, 1913: Երգեր (կազմ. և ծնթգր.՝ Վ. Տալյան), Ե., 1969: Աստվածատրյան Լ., Շերամ: Տխուր անցյալ (Սիրո երգեր), Ե., 1981: Տաղարան սիրո: Երգեր, Ե., 1991:*

Գրկ. *Երեմեան Ա., Աշուղ Գրիգոր Տալեան (Շերամ), Վնտ., 1930: Շերամ (ժող., առաջաբանը՝ Գ. Լևոնյանի), Ե., 1945: Մանուկյան Մ., Գռասան Շերամ, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1962, № 8: Նույնի, Гусаны Армении, М., 1977. Տալյան Վ., Շերամ: Վեպ-վավերապատում, Ե., 1986:*

Ըստ Շավիղ Գրիգորյանի և Մանուկ Մանուկյանի

ՇԵՓՈՐ, ազդանշան. մունդշտուկավոր փող. երաժշտ. գործիք (առանց կափույրների): Արտաբերում է միայն բնական հնչյունաշարի տոները: Օգտագործվում է բանակում (նախկինում՝ նաև պիոներ. ջոկատներում): Տարբերում են հետևակային, հեծելազոր. ազդափոխնակներ տեսակները:

ՇԻԿԱՆՅԱՆ Դմիտրի Ազարիայի [11(24).11.1901, Բաքու–01.06.1986, Երևան], բալետի արտիստ, դիրիժոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1950): Ավարտել է Թիֆլիսի Պերինիի բալետի ստուդիան (1920), կոնսերվատորիայի դիրիժորության բաժինը (1938): 1921–36-ին՝ Թբիլիսիի ՕԲԹ մենապարող, 1936–41-ին՝ դիրիժոր, 1941–71-ին՝ ԵՕԲԹ դիրիժոր: 1971–75-ին դասավանդել է Երևանի երաժշտամանկավարժ. ուսումնարանում:

Դմիտրի Շիկանյան

Ղեկավարել է Ա. Խաչատրյանի «Գայանե», «Խանդութ» (ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության), Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Լ. Դելիբի «Կոպելիա», Բ. Վ. Ասաֆևի «Կովկասի գերուհին», Ռ. Գլիերի «Պղնձե հեծյալը», «Կարմիր կակաչ» և այլ բալետներ, Վ. Դոլիձեի «Քեթո և Կոտե» օպերան (նաև պարերի բեմադրող):

ՇԻՐԱԿՅԱՆ Խաչատուր Միհրանի (28.01.1931, Երևան–09.02.2001, Երևան), քամանչահար: ՀՀ վաստ. արտիստ (1982): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի ժող. գործիքների բաժինը (1957): 1947–95-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների, 1995–2001-ին՝ «Վերածնունդ» անսամբլների քամանչահար: Երկացանկում՝ Է. Միրզոյանի «Ֆանտազիա», Ա. Հարությունյանի «Պիես», նաև Դ. Ղազարյանի, Սայաթ-Նովայի երգերից: Եղել է Ա. Մերանգուլյանի ստեղծագործությունների առաջին կատարողը:



Խաչատուր Շիրակյան

Համերգներով շրջագայել է շուրջ 30 երկրում: Համամիութ. և հանրապետ. փառատոների դափնեկիր:

ՇԻՐԻՆ [Կարապետյան Հովհաննես Կարապետի, 11.06.1827, գ. Կողբ (Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, այժմ՝ Թուրքիայում)–30.07.1857, Վաղարշապատ], աշուղ: Կուրացել է 2 տարեկանում: Աշակերտել է ալեքսանդրապոլցի աշուղ Բավեին, սովորել քամանչվագել: Կատարելագործվել է Կարինում՝ աշուղ Էսպիի մոտ, ստացել վարպետի կոչում: Սրտառուչ ձայնի շնորհիվ նրան անվանել են «Շիրին» (թուրք.՝ քաղցր): Ապրել է Վաղարշապատում, հանդես եկել նաև Երևանում, Թիֆլիսում, Նոր Բայազետում և այլուր:

Շիրին

Շ-ից պահպանվել են 40 հայ., 100-ից ավելի թուրք. երգեր: Առաջին երգերը տպագրվել են 1850-ին՝ Գ. Պատկանյանի «Արարատ» թերթում, ապա՝ «Բազմավէպում»: Երգերի 1-ին ժող-ը լույս է տեսել 1856-ին, 2-րդը՝ 1891-ին՝ «Նոր քնար» վերնագրով: Շ. հորինել է սիրո, բարոյախրատ., խոհափիլ., երգիծ., պատմահայրենասիր. թեմաներով երգեր՝ աշուղ. ամենաբարդ երգատեսակներով (թեջնիս,

բահրիթավիլ, ղալանդարի, սեմայի, մուհամմազ)։ Նրա երգերը տպագրվել են նաև հետմահու՝ մամուլում և երգարան-ժողովներում («Քնար հայկական», «Նոր քնար Հայաստանի», «Սոխակ Հայաստանի»), իսկ առավել ամբողջ. ժող-ը՝ 1966-ին՝



Հատված Շիրինի «Այգեպան» երգից

թուրք. երգերի թարգմանություններով։ Առավել ճանաչված են նրա «Այգեպան», «Ակնարկյա», «Կորած յափնջին» երգերը։

Շ-ին երգեր են ձոնել աշուղներ Զիվանին, Նիրանին և Սեյադը։ Նրա երգերն առանձնանում են բանաստեղծ. տեքստերի տաղաչափ. հղկվածությամբ, պատկերավորությամբ, մեղեդիների արտահայտիչ երգայնությամբ։

«Շնորհալի» երգչախումբը

Շ-ի ստեղծագործությունը պատմ. առումով կապող օղակ է հայ աշուղ. երգարվ-ի զարգացման 2 ժամանակաշրջանների համար։

Երկ. *Տաղարան, Ե., 1966։*

Գրկ. *Լևոնեան Գ., Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1892։ Մանուկյան Մ., Աշուղ Շիրինի երգերի մեղեդիները, «ՊԲՀ», 1976, № 3։*

ՇԻՐԻՆԻ ՕՀԱՆ, XIX դ-ի աշուղ։ Հորինել է և սազի նվագակցությամբ կատարել հայ. ու թուրք. սիրային, կենցաղ. երգեր։ Աչքի է ընկել առավելապես թուրք. երկիմաստ բառախաղերով, որի համար նրան մեղադրանքով հաճախ թուրք. դատարան են կանչել, սակայն սրամիտ բացատրությունների շնորհիվ ազատ է արձակվել։ Նրա երգերից և բառախաղերից ընդգրկված են Տ. Մկունդի «Ամիտայի արձագանգներ» (1950) գրքում։

ՇԻՐԻՆՅԱՆ Գոհարիկ (1860, Կ. Պոլիս–մ. թ. անհտ), դերասանուհի։ Բեմ. գործունեությունն սկսել է Կ. Պոլսում 1874-ից՝ Հակոբ ***Վարդովյանի*** «Օսմանյան թատրոնում», հանդես է եկել թե՛ հայ., թե՛ թուրք. ներկայացումներում։ Օժտված լինելով կատակերգակ դերասանի տվյալներով՝ խաղացել է թարգմ. պիեսներում, առավելապես՝ Մոլիերի կատակերգությունններում։ Մասնակցել է նաև օպերետ. ներկայացումների։ Կատարել է Շ. Լեքոկի «Ժիրոֆլե Ժիրոֆլյա», «Մադամ Անգոյի դուստրը», Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա», «Արիֆի խորամանկությունը» և այլ օպերաների գլխ. դերերգեր։ Հետագայում խաղացել է Սերովբե ***Պենկլյանի*** օպերետ. խմբում, 1878-ից նրա հետ շրջագայել է Զմյուռնիայում, Ադրիանապոլսում, Աթենքում, Սալոնիկում, Ալեքսանդրիայում և այլ քաղաքներում։ Համարվել է Ֆաթիմեի («Լեբլեբիջի Հոր-հոր աղա») լավագույն դերակատարներից հայ բեմում։

«ՇՆՈՐՀԱԼԻ», խառը երգչախումբ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության։ Հիմնադրվել է 1973-ին՝ Զարեհ վարդապետ Ազնավուրյանի և Գևորգ Գանտահարյանի ջանքերով՝ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի կապակցությամբ։ Կազմում՝ 45 երգիչ, ջութակահարների և թավջութակահարների խումբ, խմբավարներ՝ Զավեն արեղա Նաջարյան, Թորգոմ վարդապետ Տոնոյան, կոնցերտմայստեր՝ Մարիա Փափազյան։ Եկեղեց. տոներին և հանդիսավոր օրերին կատարում է Սբ Պատարագի երգասացությունը, հանդես է գալիս նաև համերգներով. երկացանկում՝ հայ ազգ. և հոգևոր երգեր։ 2019-ի հունվարին Բեյրութի Սբ Ժոզեֆ համալսարանում ներկայացրել է հատվածներ Ա. Տիգրանյանի «Անուշ» և «Դավիթ Բեկ» օպերաներից։

ՇՊԵՌԼԻՆԳ Վիլհելմ (01.01.1874, Քյոնիգսբերգ–1944), գերմանացի դիրիժոր-կապելմայստեր, նվագել է փող. և լար. գործիքներ։ 1914-ին տեղափոխվել

է Հայաստան. 1914–27-ին ղեկավարել է Երևանի կայազորի և ռուս. արական գիմնազիայի փող. նվագախմբերը: Նրա զինվոր. նվագախումբը մեծապես նպաստել է եվրոպ. փող. երաժշտության տարածմանը Հայաստանում: 1923-ին Ռոմանոս *Մելիքյանը* Շ-ին հրավիրել է նորաստեղծ ԵՊԿ, որտեղ նա հիմնադրել է փող., ապա՝ կոնտրաբասի բաժինները և ղեկավարել փող. գործիքների բոլոր դասարանները:

Որպես կազմակերպիչ և կատարող (կոնտրաբասահար, ֆագոտահար)՝ մասնակցել է Ա. Սպենդիարյանի հեղինակ. սիմֆ. համերգին (1924) և ԵՊԿ սիմֆ. նվագախմբի (1925) գործունեությանը. վերջինս դարձել է ՀԽՍՀ-ում ապագա բոլոր նվագախմբերի ստեղծման և սիմֆ. երաժշտության սկզբնավորման հիմքը: Խորհրդ. կարգեր հաստատվելու օրերին (1920) Շ. իր նվագախմբով դիմավորել է Կարմիր բանակի մուտքը Հայաստան: Նրա կերպարը մարմնավորվել է «Նվագախմբի տղաները» ֆիլմում (1960, ռեժ՝ Հ. Մալյան, Հ. Մարգարյան, Հայֆիլմ): 1931-ին Շ-ին անհիմն մեղադրանքով 5 տարով աքսորել են Միջին Ասիայի համակենտրոնացման ճամբար: Կալանքից հետո հաստատվել է Տաշքենդում. եղել է կրկեսի դիրիժոր, մասնակցել երաժշտ. դրամաների ստեղծմանը (ներդաշնակում, գործիքավորում), 1944-ին հրավիրել են Բուխարա, ճանապարհին չպարզված հանգամանքներում Շ. անհետացել է: Գրել է «Սգո քայլերգ» (Ա. Սպենդիարյանի հիշատակին, հրտ.՝ 1930), հայկ. 2 երգ (հրտ. 1931)՝ հոբոյի, անգլ. եղջերափողի և նվագախմբի, տրիո՝ ֆլեյտայի և 2 գալարափողի, ֆանտազիաներ՝ տրոմբոնի և դաշնամուրի, փողի և դաշնամուրի, «Փայլուն կոնցերտ»՝ տրոմբոնի և դաշնամուրի համար, ևն:

Գրկ. *Будагян А., Маилян Г., Вильгельм Шперлинг, Е., 2016.*

ՇՎԻ, 1. նույնն է, ինչ պ ե պ ու կ ը: Կավե, ձևավոր (սովորաբար՝ թռչնանման) երաժշտ. գործիք-սուլիչ՝ 2 փողով (երկ.՝ մինչև 10 և 12 *սմ*) և 2 ձայնանցքով: Այժմ գործածվում է որպես խաղալիք: 2. Նույնն է, ինչ *թութակը*: Գործածվում են ռեգիստր. տարբեր տեսակներ, որի շնորհիվ Շ-թութակի դերը, որպես մենակատար և անսամբլ. գործիք, նկատելիորեն մեծացել է:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՇՏԵՅՆԲԵՐԳ Մաքսիմիլիան Օսեևիչ [22.06(04.07).1883, Վիլնո (այժմ՝ Վիլնյուս)–06.12.1946, Լենինգրադ], ռուս կոմպոզիտոր, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1934): Ուզբ. ԽՍՀ ժող. արտիստ (1944): Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1908, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի դասարան) բաժինը: 1908-ից դասավանդել է նույն կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1915-ից):

Հեղինակ է «Մետամորֆոզներ» (1913), «Թիլ Ուլենշպիգել» (1936) բալետների, սիմֆոնիաների (1906, 1909, 1928, 1933, 1942), ջութակի կոնցերտի (1946), 2 լար. կվարտետի, ռոմանսների, «Հայաստանում» կապրիչչոյի: Գործիքավորել է Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի IV գործողությունը (1930, Մոսկվա, 1933, Երևան), գրել է նաև 1939-ի բեմադրության (Երևան, Մոսկվա) հեղինակի նյութերով լիբրետտոյում ավելացված հատվածների երաժշտությունը:

Գրկ. *Богданов-Березовский В., Максимилиан Штейнберг, М., 1947.*

ՇՏԻԿՅԱՆ Հրանտ Համայակի (ծ. 28.04.1937, Երևան), ջութակահար, մանկավարժ, լար. գործիքների վարպետ: Ավարտել է ԵՊԿ (1963): 1966–69-ին՝ Երևանի Տ. Չուխաճյանի անվ. երաժշտ. դպրոցի ջութակի դասատու, փոխտնօրեն, 1969–87-ին՝ Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնարանի լար. բաժնի վարիչ, ջութակի դասատու, 1987-ից՝ ԵՊԿ լար. գործիքների վարպետ: Պատրաստել է ջութակներ, ալտեր, թավջութակներ, վերականգնել միջնադարում գործածված եվրոպ. լար. գործիքներ՝ վիոլա դ՝ ամուր, վիոլա դ՝ գամբա, միջնադար. հայկ. լար. գործիքներ՝ քաման, բամբիռ, ստեղծել նոր հնչողության լար. գործիքներ:

ՇՐԹՀԱՐՄՈՆ, փող. լեզվակավոր երաժշտ. գործիք: Բաղկացած է 2 ծայրերին ամրացված մետաղե լեզվակներից և նրան կից փայտե (կամ պլաստմասսայե) թիթեղից, որի վրայի անցքերով օդը մղվում է դեպի լեզվակները: Լեզվակները տատանվում են և՛ ներշնչվող, և՛ արտաշնչվող օդով: Տարբերում են դո, ֆա, սոլ մաժոր, լա մաժոր հնչյունաշարով Շ-ների տեսակները: Տարածված են «Ռիխտեր» համակարգի (դիապազոնը՝ ոչ լրիվ 3 օկտավա), կնիտլինգենյան (ձայները հնչում են օկտավ. կամ երկօկտավ. կրկնապատկումներով)

Վիլհելմ Շպեռլինգ

Շվի

Մաքսիմիլիան Շտեյնբերգ

Շրթհարմոն

և վիեննական (ունի ձայնը «դողդոջուն» հնչեցնելու հարմարանք) Շ-ները: Կան նաև 1 օկտավ., նաև «կրկնակի» (տարբեր լարվածքի 2 գործիք համատեղող) տեսակներ: «Խրոմոնիկա» տեսակն ունի հնչյունաշարը կես տոն բարձրացնելու հարմարանք, իսկ «Մելոդիկան» ստեղնավոր է: Շ. երևան է եկել XIX դ-ի կեսերին, առավել տարածվել Կենտր. Եվրոպայում, Ամերիկայում և այլուր:

ՇՈՒԺՈՒՆՅԱՆ Պետրոս (ծ. 1957, Լենինական), կոմպոզիտոր, ջութակահար: Նախն. երաժշտ. կրթությունն ստացել է

Պետրոս Շուժունյանը ելույթի պահին

Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. ուսումնարանում (ջութակի դասարան): Տասնմեկ տարեկանում գրել է առաջին գործերը՝ ջութակի պիես և սյուիտ, որոնք կատարվել են 1975-ին: 1976-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Կանադա, ավարտել Մոնրեալի կոնսերվատորիան (1982): Հանդես է եկել նաև որպես դիրիժոր և խմբավար (ղեկավարել է Մոնրեալի Համազգ. հայ մշակութ. միության «Քնար» երգչախումբը):

Շուշաննա

Հեղինակ է բազմաժանր ստեղծագործությունների (մենանվագ, մեներգ, տրիո, կվարտետ ևն): «Ախ, Թամար» սիմֆ. պատկերում, «Արաքս» լար. կվարտետում, «Ձեզ» պոեմում (դաշնամուր և հարված. գործիքներ), «№ 1 մենախոսության» (ալտի համար) մեջ ակնհայտորեն դրսևորվել են հեղինակի մտածողությունն ու ճաշակը. ազգայինից սերող երաժշտ. կառուցվածքները զարգացրել է նորարար. սկզբունքներով, օգտագործել պոլիֆոնիկ և հոմոֆոնիկ միջոցներ:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առթիվ գրել է «Պատարագ», որը կատարվել է Մոնրեալի Սան Բատիստ եկեղեցում: 2016-ին այցելել է Հայաստան:

ՇՈՒՇԱՆՆԱ (Մարտիրոսյան-Վարդանյան Շուշան Պարգևի, ծ. 18.11.1968, Երևան), ջութակահարուհի, երգչուհի: Սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, միաժամանակ նվագել ջութակահարների «Ունիսոն» անսամբլում: 1978-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Մարսել: 14 տարեկանում արժանացել է Մարսելի կոնսերվատորիայի 1-ին մրց-ի, 17 տարեկանում՝ ոսկե մեդալի: 3 տարի սովորել է Ժ. Տեր-Մերգերյանի դասարանում, ապա կատարելագործվել Փարիզի կոնսերվատորիայում (ղեկ.՝ Դ. Էրլի): 1985–87-ին դասավանդել է Առլի երաժշտ. դպրոցում: 1989-ին մասնակցել է Շ. Ազնավուրի «Քեզ համար Հայաստան» երգի ձայնագրմանը: Մենահամերգներով հանդես է եկել Ֆրանսիայում, Բելգիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Հայաստանում (1990, ջութակահար Կ. Հայրապետյանի հետ զուգանվագով՝ Երևանում, Գյումրիում, Ամասիայում): Համագործակցել է երաժիշտներ Ժ. Պ. Լանգի, Ֆ. Բեռնեիմի, Ֆ. Լեի, Ս. Ասուսի և ուր. հետ: Թողարկել է «Իմ ջութակի լարերը» (1987), «Շրջել երկրագունդը» (1988) ձայնասկավառակները, ձայնագրել ալբոմ (13 ստեղծագործություն, 2000):

Ո

ՈՂԲ, ողբերգ, ձայնարկութ, հայ ժող. երաժշտության մեջ ծիս. երգի տեսակ, որը կապված է հուղարկավորության, հարսանիքի, նաև կենցաղ. այլ հանգամանքներում լացի արարողության հետ: Ո-ները որոշակի դեպքի ազդեցությամբ, որպես վշտի ու կսկիծի արտահայտություն, հորինել են ողբացող հարազատները (մայրը, կինը, քույրը, եղբայրը ևն) և ողբասաց կանայք («մասնագետ-սգացողներ», հրավիրվել են թաղման ծեսին և վարձատրվել)՝ մեռնողի կորուստը սգալու, հուղարկավորության լացի ու կոծի համար:

Ծեսի անբաժան մասն են եղել երգն ու պարը (երբեմն նույնիսկ տարբեր երաժշտ. գործիքներ)՝ կսկիծն առավել արտահայտիչ դարձնելու համար: Պահպանված ինագույն տեղեկությունները վերաբերում են V դ-ի պատմիչներ Մովսես Խորենացուն և Փավստոս Բուզանդին:

Ո. հիմնված է ավանդ. խոսք. և մեղեդիական բանաձևերի հանպատրաստից տարբերակման վրա: Սանուկ Աբեղյանը Ո. անվանում է «լալյաց բանաստեղծություն», իսկ ողբասաց կանանց՝ ձայնարկու: Հնում նշանավոր մարդկանց, թագավորների ու զորավարների թաղումը կատարվել է մեծ բազմությամբ և հանդիսավորությամբ: Կանայք և տղամարդիկ հուղարկավորությանը մասնակցել են լալով, երգելով, նվագելով, ծափ տալով և կաքավելով:

Հնում հայ իրականության մեջ, եթե մեռնողը դյուցազն, ժող. հերոս կամ օրինակելի և ճանաչված մարդ էր, ապա ողբասացի հորինած Ո-ի բովանդակությունը առավել հարուստ էր:

Ո-ի բուն ժող. տեսակն ավելի կենցաղ. երևույթ է, քան ծիս., որը գոյատևում է ցայսօր: Դրանք հիմնված են որոշակի ելևէջ. պաշարի վրա, թեև իմպրովիզացիայի սկզբունքով զարգացող մեղեդիական դարձվածքներ են, որոնք միավորվում և դառնում են ավարտուն երգ. ձև: Նկատելի է ասերգ-արտասան. տարրը, որի ռիթմը պայմանավորված է խոսք. տեքստով, հուզականությունը չափավոր է: Այլ բնույթի են հարսանիքի ժամանակ հարսի կամ նրա մոր հրաժեշտի տխուր երգերը, որոնք արարողության հիմնական տարրերից են:

Ո-երը թեմատիկայով աղերսվում են ժող. երգաստեղծության տարբեր ժանրերի՝ դյուցազներգերի, օրորների, որոշ դեպքերում՝ նաև պանդխտության ու պատմ., հարսանեկան երգերի և սգերգերի հետ:



Հատված «Արփեն ջան» երգից (գրառումը՝ Սպիրիդոն Մելիքյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի)

Ո-երն իրենց բնույթով իմպրովիզացիոն-պատմողական են ու ինքնապարփակ, չունեն որոշակի կառուցվածք, չեն ենթարկվում կոմպոզիցիոն որևէ օրենքի: Կարող են լինել ծավալուն և հակիճ: Կառուցվածք. ազատությունը բխում է Ո-երին բնորոշ անկանոն պատմողականությունից, քանի որ ողբացողը, վշտից խելակորույս, երբեմն արտահայտում է մեկը մյուսի հետ կապ չունեցող մտքեր. դրանք բորբոքվում են հատկապես ցավակցողների երևալով, որոնցից յուրաքանչյուրը ողբացողի մեջ արթնացնում է մի նոր հիշողություն, որը պատմում է՝ «համեմված» ափսոսանքներով, վիշտ արտահայտող և այլ բացականչություններով (վա՛յ, վո՛ւյ, օ՛յ, ամմա՛ն ևն):

Պայմանավորված խոսակցական-արտասան. հարուստ տարրերով՝ Ո-երը ժող. երգի այլ ժանրերի համեմատությամբ առատ են երաժշտ. «զարդարանքներով» (ֆորշլագներ, մելիզմատիկ բնույթի ռիթմական պատկերներ ևն), որոնք նպաստում են արտասան. ինտոնացիաների և այլ ելևէջների արտահայտմանը: Խոսակցական-արտասան. տարրերի առկայությունը հավաստում է, որ Ո-երը ծնունդ են առել խոսակց. լեզվի ինտոնացիաներից:

Ո-երի ձայնակարգը հիմնականում տերցիային հիմքով փոյուգիական մինորն է, որն «ինքնամփոփ» բնույթով, տրիխորդ. առաջնային կառուցվածքով հնչում է «մոայլ»՝ Ո-երում արտահայտված վշտալի տրամադրություններին համապատասխան: Ո-երը նպաստել են էպիկ. և քնար-լալագին բնույթի երգերի զարգացմանը՝ պահպանելով իրենց բնորոշ հատկանիշները:

Գրկ. *Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր, Ե., 1969: Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Ե., 1944: Հովհաննիսյան Հ., Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Ե., 1978: Արևշատյան Ա., «Մնաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991:*

Հատված «Ջողրմի»-ից («Սասնա ծռեր» էպոսից, գրառումը՝ Արամ Քոչարյանի)

ՈՂԲԱՍԱՅ, *ողբ* ասող, նոխազերգակ, ձայնարկու, ողբերգ. տաղեր, մեղեդիներ ու պարեր հորինող և կատարող: Հայ մատենագրության մեջ հիշատակվում է «ձայնարկու գուսանք» բնորոշմամբ: Հնում ողբերգությունը նոխազերգությունն էր՝ ծիսակատարություն, որը կատարվել է հուն. դիցաբանության մեջ գինու, գինեգործության, բանաստեղծության, խմբապարերի ու շվայտանքի աստծուն՝ Դիոնիսոսին (Բաքոսին, հայկ. Սպանդարամետին) նվիրված տոնախմբությունների (Դիոնիսականք) ժամանակ: Խմբապարերին մասնակցող կանայք (բաքոսուհիները՝ Բաքոսի հետ շրջող կանայք) երգել ու պարել են զոհասեղանի շուրջը, որտեղ զոհաբերվել է նոխազը՝ այծը: Հետագայում այդ ծիսակատարությունը հաստատվել է որպես եղերերգություն՝ սգո հիշատակություն ու թաղման ծեսերի հետ կապվող գործողություն, որի ժամանակ լալկան կանանց գլխավորել է եղերամայրը և դարձել պարագլուխ: Ո. կանայք երգերը հորինել են նախապես, որոնցով թաղման ծեսին վշտահար հարազատներին սփոփել են՝ փառաբանելով հանգուցյալին: Հուղարկավորության ծեսի թափորն առաջնորդել է ժողովրդի մեջ հարգանք վայելող սևազգեստ կինը՝ հաճախ շրջապատված 40 Ո-ներով, որոնք կսկիծն առավել վառ արտահայտելու համար պատառոտել են իրենց հագուստները, կատարումներն ուղեկցել երգով, պարով (երբեմն նույնիսկ երաժշտ. գործիքով), հեկեկոցներով, վիշտ արտահայտող աղեկտուր բացականչություններով են:

Ո-ների մասին պահպանված տեղեկությունները վերաբերում են V դ-ին:

Ո-ով է պայմանավորվել ողբերգ. թատրոնի ձևավորումը:

Տես *Ողբ* հոդվածի գրկ-ը:

ՈՂՈՐՄԻ, երգային-բանաձևային նախերգ, որով սկսվում է «Սասնա ծռեր» ժող. վեպը, Մոկաց տիպարան. խմբի պատումները: Ո-ները վիպաքնար. մաղթանքի երգեր են, որտեղ հիշվում են վեպում գործող Սասնա հերոսների անունները՝ նրանց հիշատակն օրհնող ողորմության մաղթանքի կրկնվող բանաձևերով՝ որպես անցյալում ապրած և գործած իրական անձանց: Ո-ների վերջում երբեմն ողորմության մաղթանք է ուղղվում նաև վեպն ունկնդրողների նախնիների հիշատակին: Ո-ները գաղափարով կապվում

են նախնիների պաշտամունքի հետ, ունեն շեշտված ծիս. բնույթ, երգում են ծանր ու հանդիսավոր մեղեդիով, որը նման է «Սասնա ծռերի» երգ. մյուս հատվածների եղանակին:

Ըստ Սարգիս Հարությունյանի

ՈՃ երաժշտական, արվեստաբանության և գեղագիտության հասկացություն. սահմանում է արտահայտչամիջոցների համակարգը: Երաժշտ. գեղագիտության մեջ Ո. երևան է եկել XVI դ–ի վերջին՝ պայմանավորված պրոֆեսիոնալ երաժշտության բովանդակության շերտավորմամբ, նաև դրանից բխող ստեղծագործության և նրա արտահայտչամիջոցների տարբերակման անհրաժեշտությամբ: XVI–XVII դդ–ում «Ո.» հասկացությունը ենթադրել է ժանրի և ազգ. դպրոցների, XVIII դ–ում՝ պատմ. ժամանակաշրջանի ոճ. բնույթը, XIX դ–ում՝ կոմպոզիտորի անհատ. գրելաձևը: XIX դ–ի 2–րդ կես–XX դ–ի սկզբին Ո–ի ամբողջ. ձևավորումը դրսևորվել է միայն սահմանափակ ոլորտում (Ռ. Վագների երաժշտ. դրամայում ևն): XX դ–ում Ո–ի ծաղկումով պայմանավորվել է ոճ. լուծումների բազմազանությունը՝ որպես գեղ. մշակույթի հիմնական օրինաչափություն: Գեղագիտ. առումով՝ Ո. վկայում է ստեղծագործության հայեցակարգ. ուղղվածությունը: Ամրագրելով բովանդակ. որոշակի զուգորդումներ՝ XIX դ–ի, մասնավորապես՝ XX–XXI դդ–ի երաժշտության մեջ ոճ. հատկանիշները կարող են հանդես գալ որպես «երկրորդ լեզու», որով խոսվում է «առաջինի» մասին, այսինքն՝ ժամանակաշրջանի գաղափարհուզ. արժեքների մասին, որոնք մարմնավորված են ոճավորված լեզվ. նորմերում: Պատմ. առումով՝ Ո. երաժշտ. լեզվի համակարգի տիպաբան. առանձնահատկություն է՝ որպես արվ–ի զարգացման ընդհանուր գործընթացի կամ առանձին ճյուղի փուլ: Ո–ի մասին օրինաչափորեն խոսվում է նաև կատարող. արվ–ում, որի ոճ. հատկանիշները դժվար է առանձնացնել, քանի որ երկի մեկնաբանությունը պայմանավորված է ոչ միայն նոտային տեքստով, այլև մեկնաբանող երաժշտի սուբյեկտիվ չափանիշներով և տվյալ ժամանակաշրջանի ոճ. միտումներով:

ՈՍԿԱՆՅԱՆ Արզաս Գրիգորի (ծ. 02.01.1947, Դիլիջան), կոմպոզիտոր, երգիչ, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Սովորել է Վանաձորի երաժշտ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ վոկալ և կոմպոզիցիայի (Է. Միրզոյանի դասարան) բաժինները (1976): 1973–ից՝ Հայհամերգի մենակատար: 1975–78–ին դասավանդել է ՀՊՄԻ–ում, 1976–ից՝ ԵՊԿ–ում (ամբիոնի վարիչ՝ 1992–ից, պրոֆ.՝ 1996–ից): Հավաքել և մշակել է հայկ. ժող. երգեր ու մեղեդիներ:

Հեղինակ է «Նարեկացու աղոթքը», «Քուչակի սերը», «Սևակի լույսը» օպեր. ևերգության, «Սուրբ Պատարագի»՝ խառը երգչախմբի, «Հայկական որմեր» (խոսք՝ Ա. Իսահակյանի)՝ կանանց երգչախմբի և լար. նվագախմբի, «Հայաստան աշխարհ»՝ մենակատարի, տղամարդկանց երգչախմբի և փող. նվագախմբի, «Ծիրանի ծուխ» (խոսք՝ Պ. Սևակի) և «Խնջույքի երգեր» (խոսք՝ Գ. Էմինի)՝ երգչախմբի, կոնցերտներ՝ ջութակի և սիմֆ. նվագախմբի, հոբոյի և սիմֆ. նվագախմբի, կվարտետներ՝ շեփորների և կլառնետների, սոնատներ՝ թավջութակի և դաշնամուրի, մենանվագ՝ ալտի, թավջութակի համար ևն, վոկալ շարքեր (Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի և ուր. խոսքերով)՝ տարբեր գործիքների նվագակցությամբ, երգեր, խմբերգեր, մանրանվագներ և այլ գործեր: Հանդես է գալիս նաև ժող. և հոգևոր երգերի կատարումներով:



Արզաս Ոսկանյան

ՀՀ Պետ. (2003), Սայաթ–Նովայի անվ. հանրապետ. մրցույթի 1–ին (1981) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2008), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2017):

Երկ. *Ակնա ժողովրդական երգաշար, Ե., 2013:*

Գրկ. *Կիրակոսյան Ա., Արզաս Ոսկանյան. Մանկավարժը և հայ երգեցողության դպրոցը, Ե., 2008:*

Էլեոնորա Ոսկանյան

ՈՍԿԱՆՅԱՆ Էլեոնորա Սերգեյի (06.09.1921, Խարկով–24.09.1999, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1964): Սովորել է Խարկովի կոնսերվատորիայում (1938–41), ավարտել ԵՊԿ (1945): 1945–ին՝ Հայֆիլհարմոնիայի դաշնակահար, 1946–48–ին՝ ԵԵԿՄ կոնցերտմայստեր, Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցի դասատու: 1945–99–ին դասավանդել է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 1982–ից): Հանդես է եկել որպես մենակատար և նվագակցող. համագործակցել է Ավետ *Տարխիելյանի*, Գոհար *Գասպարյանի* և ուր. հետ:

Հակոբ Ոսկանյան

Լուիզ Ոսկերչյան

Գեղամ Ոսկյանը Վարժապետի դերում (Գ. Հախինյանի «Գլխի գինն է 50 միլիոն»)

ՈՍԿԱՆՅԱՆ Հակոբ (Տեր-Ոսկանյան Յակով) Մկրտչի (20.07.1924, Թիֆլիս–09.04.1993, Երևան), դիրիժոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1977): Ավարտել է ՄՊԿ (1947, զինվ. դիրիժորների ֆակ.), ԵՊԿ (1952, Կ. Սարաջևի դասարան): 1947–50, 1955–57-ին և 1984-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1989-ից), 1956–77-ին՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1980-ից՝ ՀՊՄԻ-ում: 1958-ից՝ ԵՕԲԹ դիրիժոր (1988–91-ին՝ նաև տնօրեն, գեղ. ղեկ.): Ղեկավարել է Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Ա. Ադանի «Ժիզել», Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ս. Ս. Պրոկոֆևի «Սոխրոտը», «Ռոմեո և Ջուլիետ», Ա. Սպենդիարյանի «Երեք արմավենի», Ա. Խաչատրյանի «Գայանե» (նաև Գդանսկում, 1976), «Սպարտակ» (1973, Վրոցլավ), «Դիմակահանդես», Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադ», Է. Հովհաննիսյանի «Անտունի», «Երկնագույն նոկտյուռն», Կ. Օրբելյանի «Անմահություն», Բ. Վ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը» (1966, Կահիրե), Է. Արիստակեսյանի «Պրոմեթևս» (1969, Կատովիցե), Ա. Կրեյնի «Լաուրենսիա» (1971, Կատովիցե) և այլ բալետներ, Է. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը, «Ճանապարհ դեպի Արզրում», Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ» օպերաները նն:

Գրկ. *Գրիգորյան Ք., Հակոբ Ոսկանյան [Անվանի դիրիժորի ստեղծագործական գործունեությունը], Ե., 1982:*

ՈՍԿԵՐՉՅԱՆ Լուիզ [09.11.1922, ք. Ուոթերթաուն (ԱՄՆ)–13.03.2000, ք. Էքտոն (ԱՄՆ)], դաշնակահարուհի: Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է ծննդավայրում, ավարտել Բոստոնի «Նյու Ինգլանդ» կոնսերվատորիան (1945, Գ. Օնդրիսեկի դասարան): Ուսման տարիներին մենահամերգներով հանդես է եկել Բոստոնում: 1949-ին կատարելագործվել է Փարիզի կոնսերվատորիայում (ղեկ.՝ Ն. Բուլանժե), հաճախել նաև ստեղծագործության դասարանի պարապմունքներին: Ծանոթացել է ժամանակակից ֆրանս. երաժշտ. դպրոցի կատարող. սկզբունքներին, երկերի մեկնաբանման առանձնահատկություններին, հակադիր ինչյունների փոխանցումների վարպետությանը: Կատարող. երկացանկը հարստացրել է ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններով: 1956-ին վերադարձել է ԱՄՆ. դասավանդել է Բրանդեյսի համալսարանում, 1959–90-ին՝ Հարվարդի համալսարանի երաժշտության ֆակ-ում (պրոֆ.՝ 1971-ից): 1958-ից մի քանի անգամ հանդես է եկել Բոստոնի (դիրիժոր՝ Շ. Մյունշ), Նյու Յորքի սիմֆ. նվագախմբերի հետ, մենահամերգներով շրջագայել ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ա. Կրաֆտի, Զ. Կոդայի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի և ուր. ստեղծագործություններից:

ՈՍԿՅԱՆ Գեղամ Վարդանի [1915, Ռուսե (Բուլղարիա)–1977, Երևան], դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1977): Փոքր տարիքում ընտանիքի հետ տեղափոխվել է Ռումինիա: 1946-ին հայրենադարձել է: Նույն թվականից՝ ԵԵԿԹ դերասան: Երաժշտ. ներկայացումներում հանդես է եկել Թովմասի (Ա. Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան»), Արթին աղայի (Ե. Օտյանի և Մ. Կյուրճյանի «Չարշըլը Արթին աղա»), Կարապետի (Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ»), Օհանի (Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի»), Վարժապետ (Գ. Հախինյանի «Գլխի գինն է 50 միլիոն»), Զուպանի (Յ. Շտրաուսի «Գնչուների բարոն»), Ալբերտոյի (Լոպե դե Վեգայի «Պարերի ուսուցիչը») և այլ դերերով:

Չ

ՉԱԼԻԿՅԱՆ Մնացական Հակոբի (ծ. 05.03.1959, Երևան), կլառնետահար, շվիահար: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1976, դասատու՝ Ս. Շինդյան), ԵՊԿ (1981, Մ. Թուլակյանի դասարան) կլառնետի բաժինները: Շվի նվագել է ինքնուրույն՝ 5 տարեկանից (հաճախել է նաև Երևանի պիոներների պալատի ժող. գործիքների նվագախումբ, ղեկ.՝ Հ. Արաբյան): 1971–81-ին աշխատել է Հայաստանի ժող. գործիքների նվագախմբում, 1982-ին՝ «Տկզար» անսամբլում, 1983-ից՝ Հայաստանի գուսան. և ժող. երգի անսամբլում (շվիահար): 1987-ից դասավանդում է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. քոլեջում և Բ. Կանաչյանի անվ. արվ-ի, 1992-ից (միաժամանակ)՝ Ս. Ջրբաշյանի անվ. երաժշտ. դպրոցներում, 2000–13-ին՝ ՀՊՄՀ-ում (շվիի դասարան): Հյուրախաղերով շրջագայել է արտերկրում:

Փող. գործիքների Յ. Ս. Բախի անվ. միջազգ. մրցույթի (կլառնետ, 1975, Բեռլին), փող. նվագախմբերի մրցույթի (շվի, 1981, Թբիլիսի) 1-ին մրց-ներ, Այսրկովկաս. մրցույթի (կլառնետ, 1985, Բաքու) դափնեկիր:

Գրկ. *Հարությունյան Ա., Հայ ժողովրդական նվագարանային կատարողական արվեստ, Ե., 2011, էջ 57–58:*

ՉԱԽՈՅԱՆ Էլլադա Անդրանիկի (ծ. 26.10.1946, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1984): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1970, Ռ. Անդրիասյանի դասարան), մեներգեցողության (1972, Գ. Գասպարյանի դասարան) բաժինները, կատարելագործվել Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում (1977–78): 1972–87-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ջիլդա, Վիոլետտա, Աիդա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Աիդա»), Միմի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Շամախանի թագուհի (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»): Մենահամերգներով հանդես է եկել ԽՍՀՄ տարբեր քաղաքներում և բազմաթիվ այլ երկրներում: Երգացանկում՝ Ա. Ֆալկոնիերիի, Ա. Վիվալդիի, Ա. Սկառլատտիի, Գ. Ֆ. Հենդելի, Վ. Բելլինիի, Ֆ. Մենդելսոնի, Մ. Ի. Գլինկայի, Գրիգոր Նարեկացու, Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Գ. Ալեմշահի և ուր. գործերից:

1988-ից ապրում է ԱՄՆ-ում, որտեղ բացել է ձայնամշակման ստուդիա:

Երիտասարդ կատարողների այսրկովկաս. IV (1972), Մ. Ի. Գլինկայի անվ. համամիութ. (II մրց., 1973), Մ. Կալլասի անվ. միջազգ. (2-րդ մրց., 1981, Աթենք) մրցույթների դափնեկիր:

Մնացական Չալիկյան

ՉԱԽՈՅԱՆ Սուսաննա Վալերիի [ծ. 14.05.1974, Բելայա Ցերկով (Ուկրաինա)], երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): Ուկրաինայի վաստ. արտիստ (2009): Սովորել է Բելայա Ցերկովի Պ. Ստոլյարսկու անվ. երաժշտ. դպրոցում, ավարտել Օդեսայի կոնսերվատորիայի դաշնամուրի (1997, Լ. Գինզբուրգի դասարան), Կիևի կոնսերվատորիայի երգեցողության (2000, Ե. Միրոշնիչենկոյի դասարան) բաժինները: Կատարելագործվել է Ֆրանսիայում (դաշնամուր) և Գերմանիայում (երգեցողություն): 1999-ից՝ Ուկրաինայի ազգ. օպեր. թատրոնի մեներգչուհի. դերերգերից են՝ Ջիլդա, Վիոլետտա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տիավիատա»), Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Ջուլիետ (Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ»), Մյուզետտա (Ջ. Պուչչինիի «Բոհեմ») ևն:

Էլլադա Չախոյանը Վիոլետտայի դերում (Ջ. Վերդիի «Տրավիատա»)

Սուսաննա Չախոյանը Ռոզինայի դերում (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»)

Սուրեն Չարևթյան

Ուկրաինայի ազգ. սիմֆ. նվագախմբի և «Դումկա» երգչախմբի հետ համերգներով ելույթներ է ունեցել Իտալիայում, շրջագայել նաև Ֆրանսիայում, Հոլանդիայում, Ավստրիայում և այլուր: Հանդես է գալիս նաև ուկր. ժող. գործիքների անսամբլի հետ. երգացանկում՝ ուկր., հայկ. («Ծիծեռնակ» ևն) ժող. երգեր:

Մեներգիչների 5-րդ միջազգ. մրցույթի 2-րդ մրց. (2000, Բուդապեշտ), «Բելվեդեր» (Ավստրիա, 2004), «Չիտտա դի Ալկամո» (2008, Իտալիա) միջազգ. մրցույթների դափնեկիր, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012):

ՉԱԿՈՆԱ (իսպ.՝ chacona, իտալ.՝ ciaccona), նախապես՝ վարիացիաներով աշխույժ ժող. պար Իսպանիայում և Իտալիայում (XVII դ.): Չափը՝ եռամաս, մաժոր ձայնակարգում, տեմպը՝ դանդաղ: Հաճախ ֆրանսիացի կոմպոզիտորները (ժ. Բ. Լյուլլի և ուր.) օգտագործել են իրենց օպերաներում, իսկ անգլիացի և գերմանացի կոմպոզիտորները (XVII դ.–XVIII դ-ի սկիզբ)՝ գործիք. ստեղծագործություններում: Չ-ի թեմաները մեծ չեն (4–8 տակտ), ունեն պարզ տաղաչափ. հիմք: XX դ-ից նույնացել է պասսակալիայի հետ: Չ-ի ժանրին անդրադարձել են Ջ. Ֆրեսկոբալդին, Յ. Ս. Բախը, Ֆ. Բուզոնին, Ռ. Կ. Շչեդրինը, Լ. Չոպանյանը, Գ. Չերոտարյանը և ուր.:

Հատված Գայանե Չերոտարյանի «Հետաքրքրող միտք» չակոնայից

ՉԱՆԳՐՅԱՆ Սոնիկ (ծ. 1960, Հալեպ), ջութակահարուհի: 1967-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Իտալիա: Տասը տարեկանում ելույթներ է ունեցել հեռուստատեսությամբ: Ավարտել է Վենետիկի «Բենեդիտո Մարչելլո» կոնսերվատորիան: Հետագայում ջութակի դասեր է առել Սանուկ *Բարիբյանից* և Ն. Միլշտեյնից: Մենահամերգներով և հանրահայտ սիմֆ. նվագախմբերի հետ ելույթներ է ունեցել Իտալիայում և այլուր: Չ-ի կատարմանը բնորոշ են մեկնաբանման թարմ արտահայտչամիջոցները:

Ջութակահարների Ն. Պագանինիի անվ. միջազգ. մրցույթի 3-րդ մրց. (1980, Ջենովա), «Հանրային հատուկ մրցանակ» (1981, Մյունխեն):

ՉԱՐԵՔՅԱՆ Սուրեն Գաբրիելի [22.01(04.02).1901, Թիֆլիս–12.08.1979, Երևան], դիրիժոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956), Ուզբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1944): Պրոֆ. (1971): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1932): 1932–79-ին (ընդհատումներով)՝ Երևանի (1957–64-ին՝ գլխ. դիրիժոր), 1934–36-ին՝ Թիֆլիսի ՕԲԹ-ների դիրիժոր, 1936–44-ին՝ Տաշքենդի ՕԲԹ-ի գլխ. դիրիժոր: 1927–79-ին դասավանդել է (ընդմիջումներով) ԵՊԿ-ում: Ղեկավարել է բազմաթիվ օպերաներ, իրականացրել է Լ. Խոջա-Էյնաթյանի «Նամուս» (1945), Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան» (1960), Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի» (1951) և ուզբ. մի քանի օպերաների առաջին բեմադրությունները:

Գրկ. *Պետրոսյան Մ., Երեքը հայ դիրիժորներից, Ե., 1976:*

ՉԱՐՉՈՂԼՅԱՆ Վիլեն Վարդգեսի (08.02.1934, Իջևան–15.03.2016, Երևան), ջութակահար, դիրիժոր: ՀՀ վաստ. արտիստ (1972), ՀՀ արվ. վաստ. գործիչ (1982): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1956, Կ. Ս. Դոմբաևի դասարան), դիրիժորության (1981, Ա. Քաթանյանի դասարան) բաժինները: 1958-ից՝ ԵՕԲԹ կոնցերտմայստեր, 1981-ից՝ դիրիժոր, 2006-ից՝ ԵԵԿՄԹ գլխ. դիրիժոր: 1987-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.):

ՉԱՈՒՇՅԱՆ Ալեքսանդր Լևոնի (ծ. 09.12.1977, Երևան), թավջութակահար: Լևոն *Չաուշյանի* որդին: Ավարտել է Լոնդոնի Ե. Մենուհինի (1995, Մ. Ֆելպսի դասարան),

Գիլդհոլլի երաժշտության և դրամայի (1999, Օ. Կոգանի դասարան), Բեռլինի Հ. Այսլերի անվ. բարձրագույն երաժշտ. (2005) դպրոցները, Լոնդոնի թագավոր. երաժշտ. ակադ-ը (2003): Դասավանդում է Լոնդոնի թագավոր. երաժշտ. քոլեջում: «Փարոս» կամեր. երաժշտության (Կիպրոս) և «Երևանյան» միջազգ. երաժշտ. փառատոնների գեղ. ղեկ.: Որպես մենակատար՝ ելույթներ է ունեցել Անգլիայի թագավոր. ֆիլհարմոնիկ, Վիեննայի, Լոնդոնի («Mozart Players») կամեր., Անգլիայի, Շվեյցարիայի, Բելգիայի սիմֆ. նվագախմբերի հետ, հանդես եկել ճանաչված համերգասրահներում («Քառնեգի Հոլլ», «Թագուհի Եղիսաբեթ» ևն), համագործակցել Յ. Բաշմետի, Յ. Վանգի, Ջ. Ֆիշերի և ուր. հետ: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ թողարկել է «Հայկական ռապսոդիա» (2011, դիրիժոր՝ Էդվարդ *Թոփչյան*) ձայնասկավառակը: Արժանացել է միջազգ. մրց-ների և պարգևների:

ՉԱՈՒՇՅԱՆ Ալեքսանդր Հակոբի (05.07.1917, Դիլիջան–07.02.1991, Երևան), թավջութակահար, մանկավարժ: Լևոն *Չաուշյանի* հայրը: ՀՀ վաստ. ուսուցիչ (1960), ՀՀ արվ. վաստ. գործիչ (1983): Սովորել է Թբիլիսիի կոնսերվատորիայում (1937–41, Կ. Ա. Մինչար-Բելորուչևի դասարան), ավարտել ԵՊԿ լար. բաժինը (1942, Ա. Գաբրիելյանի դասարան): 1944-ից դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1949-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1984-ից): Սաներից են՝ միջազգ. և համամիութ. մրցույթների դափնեկիրներ Վ. Սարաջյանը, Լ. Մուրադյանը, Վ. Բարթիկյանը, Ռ. Նանյանը, Ն. Հարությունյանը և ուր.: Հանդես է եկել դաշնամուր. տրիոյի կազմում (Գ. Սարաջև, Հ. Աբաջյան) և մենահամերգներով: Հեղինակ է «Թավջութակի ձեռնարկի» (հրտ.՝ 1968, 1985, 2014):

Կինը՝ Զ ա ք ա ր յ ա ն Շաքե Արամի (05.03.1919, Հալեպ–29.10.2014, Երևան), դաշնակահարուհի, կոնցերտմայստեր, մանկավարժ: ՀՀ վաստ. ուսուցիչ (1972): Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը (Ի. Այսբերգի դասարան): 1943–2008-ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում (1950-ին հիմնադրել է կոնցերտմայստեր. բաժին): Համերգներով հանդես է եկել Վ. Սարաջյանի, Է. Թադևոսյանի, Վ. Բարթիկյանի, Լ. Մուրադյանի և ուր. հետ:

Գրկ. *Բ ու դ ա դ յ ա ն Ա., Ալեքսանդր Չաուշյան, Ե., 1995:*

ՉԱՈՒՇՅԱՆ Լևոն Ալեքսանդրի (ծ. 10.05.1946, Երևան), կոմպոզիտոր: Պրոֆ. (2003): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Ալեքսանդր Հ. *Չաուշյանի* որդին, Ալեքսանդր Լ. *Չաուշյանի* հայրը: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի (1969), դաշնամուրի (1970, Գ. Սարաջևի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (1973, ղեկ.՝ Է. Միրզոյան): 1973-ից դասավանդում է ԵՊԿ-ում: 1979–85-ին՝ ՀԿՄ վարչության քարտուղար, 1985–91-ին՝ փոխնախագահ, 1995-ից՝ Հայկ. երաժշտ. համաժողովի հիմնադիր-նախագահ: Գրել է «Անհայտ զինվորին» սիմֆոնիան (1984, հանրապետ. մրցույթի 1-ին մրց., 1985, Երևան), 2 սիմֆ. պոեմ [1969 (համամիութ. մրցույթի 2-րդ մրց., 1971), 1970], կոնցերտներ՝ դաշնամուրի և սիմֆ. (1964, 1973), ջութակի և սիմֆ. (1971, 2-րդ խմբ. ՝ 2016), ֆլեյտայի և կամեր. (1979) նվագախմբերի համար, 6 կվարտետ [1980, 1983 («Տրիբունա – ՅՈՒՆԵՍԿՕ»-ի «Տարվա լավագույն ստեղծագործություն» մրց.՝ 1983, Փարիզ), 1988, 1994, “Remember 1915”՝ Եղեռնի զոհերի հիշատակին, 2015], դաշնամուր. տրիո (2000), գործիք. սոնատներ (3 դաշնամուր., ջութակի և դաշնամուրի, թավջութակի ևն], 6 սոնատին՝ դաշնամուրի համար, ռոմանսներ (Ա. Իսահակյանի խոսքերով), վոկալ շարքեր, խմբերգեր:

ՀԼԿԵՄ մրց. (1985), Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2017):

ՉԱՓ, *մետրի* թվային արտահայտությունը: Նշվում է երաժշտ. ստեղծագործության սկզբում՝ բանալու նշաններից հետո՝ ուղղաձիգ դասավորված 2 թվանշանով, որոնցից վերևինը ցույց է տալիս մետր. միավորի 2, 3, 4 և ավելի մասերից բաղկացած լինելը, ներքևինը (երբեմն չի նշվում)՝ տակտի յուրաքանչյուր մասը գրավոր արտահայտելու համար ընդունված պայման. տևողությունը՝ 1/16, 1/8, 1/4 կամ 1/2, 4/4: Չ. նշվում է նաև լատ. C տառով: Ազատ ռիթմով հնչող (ժող. ծորերգ. կամ ասերգ. ևն) ստեղծագործություններում հաճախ տակտի բաժանում չի կատարվում, հետևաբար որևէ Չ. չի նշվում: Տարատեսակ մետրերի և տակտերի նմանությամբ՝ տարբերում են պ ա ր զ, բ ա ր դ, խ ա ռ ը և այլ Չ-եր:

Վիլեն Չարչօղլյան

Ալեքսանդր Լ. Չաուշյանը ելույթի պահին

Ալեքսանդր Հ. Չաուշյան

Լևոն Չաուշյան

Գայանե Չերուդարյան

Նիկողայոս Չեմբերջի

Երաժշտությունը կատարելիս Չ. ցույց են տալիս ձեռքի 2, եռամասը՝ 3, քառամասը՝ 4, վեց ութերորդը՝ 6 շարժումներով:

Արագ տեմպով ստեղծագործություններում Չ. ցույց են տալիս 2 շարժումով (ինչպես 2/4 Չ.), յուրաքանչյուր շարժումով կատարվում է տակտի կեսը: Երբեմն 4/4 Չ. նույնպես ցույց են տալիս ձեռքի 2 շարժումով: Այսպիսի Չ. նշվում է լատ. ¢ տառով և կոչվում է ալա բրեվե (< լատ. Alla breve – կրճատ):

ՉԵԲՈՏԱՐՅԱՆ Գայանե Մովսեսի (08.11.1918, Դոնի Ռոստով–16.01.1998, Մոսկվա), կոմպոզիտոր, դաշնակահարուհի, երաժշտագետ, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1943, Ք. Քուշնարյանի դասարան) և դաշնամուրի (Մ. Յ. Խալֆինի դասարան) բաժինները: 1947-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1977-ից): Գրել է «Հայաստան» պոեմ-կանտատը (1947)՝ սիմֆ. նվագախմբի և երգչախմբի, վարիացիաներ ժող. թեմայով (1939)՝ դաշնամուրի, ստեղծագործություններ՝ ձայնի և դաշնամուրի համար, «Տոնակատարություն» սիմֆ. պատկերը (1950), դաշնամուրի կոնցերտ (1980), դաշնամուր. տրիո (1945), սոնատ (1943), պրելյուդներ (1948), կոնցերտ. էտյուդներ (1963), «Պոլիֆոնիկ ալբոմ պատանեկության համար» (1972), «Պրելյուդների և ֆուգաների շարք՝ հայկական ժողովրդական երաժշտության ձայնակարգերում» (1979, 1986), լար. 2 կվարտետ (1988, 1989), խմբերգեր, մշակել է ժող. երգեր: Չ-ի՝ մտահղացման պարզությամբ, կոմպոզիցիայի հստակությամբ աչքի ընկնող ստեղծագործություններում քնարականությունն ու մեղեդիական արտահայտչականությունը զուգակցված են խիստ և լակոնիկ մտածողության հետ:

Մշակել է «Պոլիֆոնիան հայ երաժշտության մեջ» դասընթացը:

Երկ. *Полифония в творчестве Арама Хачатуряна, Е., 1969; Х. С. Кушнарев: Очерк жизни и творчества, Л., 1990.*

Գրկ. *Гилина Е., Гаянэ Чеботарян: Очерк жизни и деятельности, Е., 1979.*

Կարինե Խուդաբաշյան

ՉԵՄԲԵՐՋԻ Նիկողայոս Կարապետի [11(24).08.1903, Յարսկոյե Սելո (այժմ՝ ք. Պուշկին՝ ՌԴ-ում)–22.04.1948, Մոսկվա], կոմպոզիտոր: Բաշկիր. ԻԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1944): Ստեղծագործության առաջին դասատուն եղել է մորեղբայրը՝ Ալեքսանդր ***Սպենդիարյանը***, որը նաև օգնել է նրան նոտագրելու իր առաջին երկերը (սոնատին, պրելյուդներ, 2 քայլերգ ևն): Ավարտել է ՄՊԿ (1928, Ա. Ն. Ալեքսանդրովի դասարան): Ուսման տարիներին գրել է 2 լար. կվարտետ, կվինտետ՝ փող. գործիքների և դաշնամուրի, կոնցերտ՝ ջութակի, սյուիտներ՝ «Պիոներիա»՝ շեփորի և դաշնամուրի, «Հայաստան»՝ ձայնի և դաշնամուրի համար: ՄՊԿ-ում ստեղծված «Արտադրական կոլեկտիվի» («Պրոկոլլ») կազմակերպիչներից է: 1936–37-ին՝ Մոսկվայի ԿՄ վարչության նախագահ, 1942–45-ին՝ պատասխանատու քարտուղար: «Կառլուգաս» («Ծիծեռնակ», 1941) բաշկիր. առաջին օպերայի հեղինակն է: Գրել է նաև «Տաջիկական սյուիտ» (1932), «Ուզբեկական սյուիտ» (1938), «Ռուսական նախերգանք» (1936), «Պարային սյուիտ» (1940)՝ սիմֆ. նվագախմբի (օգտագործել է հայկ. ժող. երաժշտության տարրեր), հայկ. երգեր (1945)՝ ձայնի և լար. քառյակի համար, 3 լար. կվարտետ (1926–43, 3-րդը՝ ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1946), «Դրյոմովի երազը» (1943) մանկ. բալետը, «Հայաստան» (1944, հրտ.՝ 1961) սիմֆոնիա-պոեմը, սիմֆոնիետ: Մշակել է ռուս., հայկ., ուզբ., տաջ., մոլդ. ու բաշկիր. ժող.երգեր:

Գրկ. *Поляновский Г. Н., К. Чемберджи, М–Л., 1947.*

ՉԵՈՄԿԼԵՃՅԱՆ Արշակ, Ուդի Արշակ (1880, Կ. Պոլիս–1930, Կ. Պոլիս), ուդահար, երաժիշտ: Աշակերտել է ժամանակի նշանավոր կատարողների: Նվագել է նաև քամանչա և քանոն, աչքի ընկել իր կատարումներով: Երկար տարիներ երաժշտություն է դասավանդել թուրք. և հայկ. դպրոցներում: Հորինել է սեմայիներ և փեշրեֆիներ:

ՉԵՈՄԿԼԵՃՅԱՆ Պետրոս (1785, Կ. Պոլիս–1840, Կ. Պոլիս), ջութակահար: Մասնագիտ. դասեր է առել Համբարձում ***Լիմոնճյանից***. եղել է նրա լավագույն սաներից: Որպես ջութակահար՝ արժանացել է մեծ համբավի: Նվագել է պալատում, հայ ամիրների խնջույքներում: Ունեցել է արվեստանոց և բազմաթիվ աշակերտներ:

Հետագայում ղեկավարել է Սկյուտարի Սբ Խաչ եկեղեցու դպրաց դասը, ուսուցանել հայկ. խազերը, Հ. Լիմոնճյանի ***նոր հայկական ձայնագրությունը***:

ՉԵՐՉՅԱՆ Համբարձում (1828, Կ. Պոլիս–1901, Կ. Պոլիս), երաժշտագետ, մշակույթի գործիչ: Մանկագիտ. դասեր է առել երաժշտագետ Արիստակես Հովհաննիսյանից: Հմտացել է մասնավորապես արլ. և հայկ. եկեղեց. երաժշտության մեջ: 1843–48-ին եղել է Կ. Պոլսի Բերա թաղամասի հայկ. եկեղեցու երաժշտապետը: Հետագայում նաև այլ եկեղեցիներում և դպրոցներում կրթել է բազմաթիվ երաժիշտների: Երկար տարիներ պաշտոնավարել է գավառ. քաղաքներում, նպաստել եկեղեց. երաժշտության տարածմանը:

Համբարձում Չերչյան

ՉԵՔԻՋՅԱՆ Հովհաննես Հարությունի (ծ. 23.12.1928, Ստամբուլ), խմբավար, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ: ՀՀ Ազգ. հերոս (2017): ՀԽՍՀ (1967), ԽՍՀՄ (1978) ժող. արտիստ: ՀՀ ԳԱԱ պատվավոր դ-ր (2018): Սովորել է Ստամբուլի Մխիթարյան և ֆրանս. «Սեն Միշել» վարժարաններում, ավարտել կոնսերվատորիայի դիրիժոր. ֆակ-ը (1951) և ասպիրանտուրան (1961), կատարելագործվել Փարիզի “Ecole normale de musique”-ում (1951–53): Ստացել է նաև տեխ. կրթություն (ինժեներ-քիմիկոս): 1944–51-ին ղեկավարել է Ստամբուլի հայկ. եկեղեցու «Դուրյան» և այլ երգչախմբեր, 1947-ին՝ սիմֆ. նվագախումբ, 1957–61-ին՝ իր հիմնադրած «Չեքիջյան» հայկ. երգչախումբը: 1946–51, 1954–60-ին՝ Թուրքիայի միակ պրոֆեսիոնալ երգչախմբի՝ Ստամբուլի պետ. կապելլայի գլխ. դիրիժորի օգնական, 1960–61-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1958–61-ին, միաժամանակ՝ օպեր. թատրոնի երաժշտ. ղեկ.: 1961-ին հայրենադարձել է, նշանակվել Հայաստանի պետ. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1962-ին երգչախմբի հետ մենահամերգով հանդես է եկել Գոհար *Գասպարյանը*, նաև կատարվել է Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմը»: 1982–87-ին՝ ԵՕԲԹ տնօրեն, գեղ. ղեկ.:

Հովհաննես Չեքիջյան

Չ. ներկայացրել է Հ. Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ. սիմֆոնիան (1982)՝ մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար (մասնակցել են Հայաստանի պետ., Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի մանկ. երգչախմբերը, երգիչներ Ն. Իսակովան, Կ. Զարինը, Մ. Երկաթը, Վ. Հարությունովը, բալետի արտիստներ Է. Մնացականյանը, Ս. Բարանովը, բալետմայստեր Վ. Գալստյանը և ուր.): Բեմադրություններից են՝ նաև Պ. Ի. Չայկովսկու «Թեմա վարիացիաներով» (1983, բալետմայստեր՝ Ա. Ասատրյան), Վ. Գանելինի «Սատանայի ջրաղացը» (1984, բալետմայստեր՝ Վ. Բրազդիլիս), Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ» (1985) բալետները, Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» (1985), Ջ. Պուչչինիի «Բոհեմ» (1986), «Չիո-Չիո սան» (1986), Ջ. Փալիաշվիլու «Դաիսի» (1985) օպերաները:

1973–77-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում, 1975-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1982-ից): Հրաշալի տիրապետելով դաս. և ժամանակակից խմբերգ. արվ-ին՝ Չ. աչքի է ընկել գեղ. ինքնատիպ մտածողությամբ, կատարող. բարձր վարպետությամբ, արտիստականությամբ: Նրա ղեկավարությամբ Հայաստանի պետ. երգչախումբն ստեղծել է բազմազան ու հարուստ երկացանկ (800-ից ավելի) հայ և օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործություններից, նաև հայկ. ժող. երգեր, հատվածներ օպերաներից: Բազմաթիվ համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Լիբանանում, Սիրիայում, ԱՄՆ-ում և այլուր: Ղեկավարել է 69 նշանավոր սիմֆ. նվագախմբեր (ԽՍՀՄ պետ. ակադ., Մեծ թատրոնի, Լենինգրադի ակադեմ., Վրոց-

Հ. Չեքիջյանը ելույթի պահին

լավի սիմֆ., Մոսկվայի, Բուդապեշտի ֆիլհարմոնիաների, Մարսելի օպեր. թատրոնի ևն): Գրել է «Ազատության ղողանջներ» (1963, Ս. Կապուտիկյանի խոսքերով, Ա. Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին), «Գարնանային անուրջներ» (1975, Վ. Տերյանի խոսքերով) վոկալ սիմֆ. պոեմները՝ մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար (կատարվել են Երևա-

նում, Լենինգրադում, Մոսկվայում, Փարիզում), հարսանեկան խմբերգեր (15 մաս), ժող. երգեր («Կոտուկես») և այլ գործեր:

ԵՊԿ սահմանել է Չ-ի անվ. կրթաթոշակ:

Կոմիտասի անվ. 1-ին միջազգ. փառատոնի հանձնախմբի պատվավոր նախագահ (2011):

ԽՍՀՄ (1975), ՀԽՍՀ (1979) Պետ., Ֆրանսիայի «Charles Gros» ակադ-ի, «Կարոտ» միջազգ. հայկ. փառատոնի Մեծ (2008, Մոսկվա), Երաժշտական փառատոնի «Լեգենդ Հովհաննես Չեքիջյան» (2014, Մոսկվա), «Նաիրի» համահայկ. երաժշտ. փառատոնի Գլխ. (2017, Երևան) մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2010), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (1999, 2010) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի «Օրմանիե» (2017) մեդալներ, ՀՀ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի (2017), ՄՏԿԿ Ասպետի կարգի (2017, Անթիլիաս) շքանշաններ ևն: Երևանի պատվավոր քաղաքացի (2001):

Գեղունի Չթչյան

Գրկ. *Հովհաննիսյան Ա., Հովհաննես Չեքիջյան [Կյանքն ու գործունեությունը], Ե., 1984: Դավթյան Ս., Հովհաննես Չեքիջյան: Արվեստագետն ու քաղաքացին: Սոցիոլոգիական վերլուծություն, Ե., 2000: Ասատրյան Ա., Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Ե., 2007: Նույնի, Ամենայն հայոց մաեստրոն.Հովհաննես Չեքիջյան, Ե., 2009: Առաքելյան Ս., Հովհաննես Չեքիջյան: Ալբոմ ժող., Ե., 2014: Հովհաննես Չեքիջյան – 85: Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին (26–27 սեպտեմբերի, 2014): Նստաշրջանի նյութեր, Ե., 2014: Заслуженный коллектив государственная академическая хоровая капелла Армении, Е., 1989.*

Աննա Ասատրյան

ՉԹՉՅԱՆ Գեղունի Հովհաննեսի (ծ. 30.08.1929, Լենինական), կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ, հաս. գործիչ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1980), ՀՀ ժող. արտիստ (2011): ՀԿՄ անդամ (1955): Ավարտել է Երևանի Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի և կոմպոզիցիայի (1947), ԵՊԿ կոմպոզիցիայի (1953, Գ. Եղիազարյանի դասարան) բաժինները: 1953-ից դասավանդում է Երևանի Կ.Սարաջյանի անվ. երաժշտ. դպրոցում (կոմպոզիցիայի դասարանի հիմնադիր-ղեկ.), 1971-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1990-ից): Չ-ի արվեստն աչքի է ընկնում ձևի ու ոճի գերազանց զգացողությամբ, պատկերավոր ու ինքնատիպ մտածողությամբ, ազգայինի և արդիականի բնական միաձուլմամբ: Գրել է սիմֆ. գործեր՝ «Սիմֆոնիա լարայինների համար՝ Ա. Խաչատրյանի հիշատակին» (1988), «Բալետային սյուիտ» (1955), 3 կոնցերտ՝ ձայնի (1963), ջութակի (1976), դաշնամուրի և նվագախմբի («Պատանեկան», 1984) համար, «Բարի լույս» նախերգանք (1967, Համամիութ. փակ մրցույթի 1-ին մրց., 1968), «Յոթ մանկական սիմֆոնիկ պատկերներ» (1965) ևն, որոնք կատարվել են ԱՄՆ-ում, Եվրոպայում: Խմբերգ. գործերից են՝ «Իմ Հայաստան» (1959) և «Տարվա եղանակներ» (1973) կանտատները, «Անհայտ զինվորը» պոեմ-ռեքվիեմը (1975, ըստ Ս. Մուրադյանի, Հանրապետ. 1-ին մրց.), «Հայոց ծառը» պոեմ (1980),

Հատված Գ. Չթչյանի «Պրելյուդ»-ից

«Երեք աղոթք» (2000, խոսք՝ Մուշեղ Իշխանի), «Մթնաձորում» և «Ու՞ր ես» (2014, խոսք՝ Ե. Չարենցի, բոլորը՝ ա կապելլա), «Երևան» (1984, խոսք՝ Ս. Մուրադյանի, Հանրապետ. 1-ին մրց.), «Հայոց աշխարհ, հայոց հող» (1985, խոսք՝ Ս.Կապուտիկյանի), «Lamento» (1994, խոսք՝ Յ.Սահակյանի, Հանրապետ. մրց.), «Հայ արի զինվոր» (1993, խոսք՝ Ս.Մուրադյանի, Հանրապետ. մրց., բոլորը՝ նվագակցությամբ) ևն: Հեղինակ է նաև կամեր. երկերի՝ լար. կվարտետ (1949), կվինտետ (1988)՝ 4 ֆլեյտայի և ալտ ֆլեյտայի համար, «Էստամպներ» (2012, միջազգ. մրց.՝ 2013)՝ դաշնամուր. տրիո, սոնատներ՝ թավջութակի (1951), շեփորի (1979) ալտի (1986), ուդի (1980),

կլառնետի (2006) և դաշնամուրի, սոնատ-մենանվագ (1983)՝ թավջութակի համար, «Հայկական խորաքանդակներ» դաշնամուր. շարք (1972), 8 կոնցերտ. պիեսներ շեփորի, «Ժանյակներ»՝ ֆլեյտայի (2008), «Դաշնամուրային անսամբլներ»՝ 4 ձեռքի, «Պիեսներ» (1988)՝ փայտե փող. և գալար-փող. կվինտետի, պոեմ-մենանվագ թառի (1990) համար ևն: Կամեր. երկերի մեծ մասը պատվիրել և հրատարկել է Շվեյ-ցարիայի «BIM» հրատարակչությունը և կատարվում է արտերկրում: Գրել է 9 վո-կալ շարք Հ. Շիրազի (1952), Ե. Չարենցի (1957), Ս.Կապուտիկյանի (1960), Պ.Սևակի (1964), Ա.Իսահակյանի (1975), Վ.Դավթյա-նի (1980), Հ.Սահյանի (1990), Ս.Սաֆարյա-նի (1993), արք. Ն. Պոզապալյանի (1995) խոսքերով, 20 ռոմանս՝ «Գարուն» (1960, խոսք՝ Ս. Կապուտիկյանի, համամիութ. մրց.), «Երգդ է ինչում» (1969, խոսք՝ Հ.Սահ-յանի, միջազգ. մրց.), 50-ից ավելի երգեր, որոնցից 15-ը («Աղավնիներ», «Առավոտ» ևն) արժանացել են համամիութ. և հան-րապետ. մրց-ների: Չ-ի մանկ. բազմաժանր երկերը 200-ից ավելի են, որոնց մի մասը ներգրավվել է տարբեր երկրների ուսումն. ծրագրերում («Ձոն գրքին», 1986, խոսք՝ Ս. Մուրադյանի, կառավար. մրց. և «Տարվա լավագույն երգ»): Հեղինակ է դասագրքի (համահեղ.), ուս. ձեռնարկների: Որպես դաշնակահար՝ իր երկերի կատարմամբ հանդես է եկել ԱՄՆ-ում, Կանադայում, Անգլիայում, Ռուսաստանում, Լեհաստա-նում, Բուլղարիայում և այլուր, ունեցել է սիմֆ. և կամեր. հեղինակ. համերգներ Երևանում, Սան Ֆրանցիսկոյում, Վիլնյու-սում, Գլենդելում, Մոսկվայում: ՀՀ Կանանց խորհրդի հիմնադիր անդամ (1981-2010):

ՀՀ «Մովսես Խորենացի», ՄՆ ոսկե (երկուսն էլ՝ 2009), ՀԵԸ «Կոմիտաս», ՅՈՒ-ՆԵՍԿՕ-ի «Արամ Խաչատրյան» (2003) մեդալներ ևն:

Գրկ. *Սիմոնյան Յ., Գեղունի Չթչյանը մանուկներին, Ե., 1973: Գեղունի Չթչյան, Մատե-նագիտություն (կազմ.՝ Լ. Մուսիկյան), Ե., 2004: Ավագյան Ս., Նշանավոր հայտնիներ, էջ 238, Ե., 2006: Վարդանյան Գ., Գոմրի, էջ 147-149, Ե., 2009: Шагинян М., Дневник писателя., ст. 77, М., 1953; Аматуни С., Жизнь и творчество Гегуни Читчян, Е., 2003.*

ՉԻԹՈՒՆԻ (Չիթչյան, Չթչյան) Տիգ-րան Հարությունի (22.04.1881, Վան-19.10. 1960, Փարիզ), բանահավաք-բանա-սեր, գրող: Ավարտել է Վանի Երամյան վարժարանը (1898): 1910-ին Կ. Պոլսում հիմնադրել է «Հայագիտում» հրատա-րակչությունը: 1940-ական թթ-ից ապրել է Փարիզում: Ուշագրավ է նրա «Արևելյան խաղաշխարհ» (հ. 1-2, 1919, Հ. Իզմիրյան մրց.՝ 1907) տոհմիկ խաղերի և ժամանցնե-րի ժող-ը: Սպարկերտցի և կարկառցի բա-նասացներից գրառել է «Սասնա ծռեր»-ի 4 տարբերակ, համեմատել հրատարակված-ների հետ, տպագրել «Սասունական» (հ. 1, 1942) վերնագրով: Չ-ի հավաքած Վանի ժող. երգերից գրառել է *Կոմիտասը*:

Լևոն Չիլինգիրյան

ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ Լևոն Նորայրի (ծ. 24.05.1948, Նիկոսիա), ջութակահար: 1960-ից ապրում է Լոնդոնում: Ավարտել է Լոն-դոնի թագավոր. երաժշտ. քոլեջը (1969), ապա դասավանդել: 1969-ին արժանացել է BBC-ի Լ. վան Բեթհովենի անվ. և 1971-ին՝ Մյունխենի զուգանվագի մրցույթների 1-ին մրց-ներին (դաշնակահար Ք. Բենսոնի հետ): 1971-ին համակուրսեցիների հետ հիմնադրել է «Չիլինգիրյան» քառյակը: Որպես մենակատար՝ համերգներով շրջա-գայել է բազմաթիվ երկրներում (տարեկան 60-80 համերգ)՝ լավագույն նվագախմբերի

«Չիլինգիրյան» քառյակը

հետ, նաև քառյակի կազմում. երկացան-կում՝ արևմտաեվրոպացի կոմպոզիտոր-ների, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյա-նի, Տ. Մանսուրյանի, Ա. Հովհաննեսի, Ա. Ասլամազյանի և ուր. ստեղծագործութ-յուններից: 1996-ից ղեկավարում է շվեդ. «Կամարատա Ռոման» լար. նվագախում-բը: 1989-ից համերգներով պարբերաբար հանդես է եկել ՀՀ-ում: 2000-ին Երևանում կազմակերպել է երիտասարդ ջութակա-հարների հանրապետ. 1-ին մրցույթը:

ՉԻՖԹՉՅԱՆ Արթո [ծ. 1949, Պլովդիվ (Բուլղարիա)], դիրիժոր: 1970-ից սովորել է Սոֆիայի պետ. երաժշտ. ակադ-ում (ղեկ.՝ Կ. Իլև): 1972-ին Բուլղարիայի կամեր. նվա-գախմբի հետ Գերմանիայում մասնակցել է Երիտասարդ. միջազգ. փառատոնի

Սարիա Չմշկյան

Մ. Չմշկյանը Էմիլիայի դերում (Ջ. Վերդիի «Օթելլո»)

Լորիս Չոպանյան

համերգներին, հաճախել Է. Լայնսդորֆի ղեկավարած դիրիժոր. վարպետության դասընթացներին: Ավարտ. համերգով հանդես է եկել Պլևենի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, արժանացել բարձր գնահատականի: 1978-ին, որպես հրավիրյալ դիրիժոր, Ռուզի օպեր. թատրոնում ղեկավարել է Ռ. Շտրաուսի «Ղոջիկը» ներկայացումը, որով սկսվել է նրա դիրիժոր. գործունեությունն այդ թատրոնում: Ղեկավարել է նաև Ջ. Վերդիի «Տրավիատա», «Տրուբադուր», Օ. Նիկոլաիի «Վինձորի զվարճասեր կանայք» և այլ օպերաներ, Մ. Գոլեմինովի «Նեստինարկա» բալետը և այլ բեմադրություններ: Չ. նաև Պլովդիվի Երիտասարդ. սիմֆ. նվագախմբի հիմնադիր-դիրիժորն է, որի հետ համերգներով շրջագայել է Անգլիայում, Գերմանիայում, Հունաստանում, Ռուսաստանում և այլուր:

ՉՄՇԿՅԱՆ Սարիա Ռուբենի (17.07.1918, Թիֆլիս – 28.02.2005, Երևան), երգչուհի (մեցցո սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (1956): Ավարտել է Երևանի ռիթմի, պլաստիկայի և պարի տեխնիկումը (1932), ԵՊԿ մեներգեցողության բաժինը (1945): Ուսման տարիներին երգել է Հայֆիլհարմոնիայի երգչախմբում, 1945-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Ալմաստ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Սարոյի մայր (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Ռուզան, Փառանձեմ (Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա», «Արշակ Երկրորդ»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Դալիլա (Կ. Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա»), Լյուբաշա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Թամար (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Շուշան (Ա. Բաբաևի «Արծվաբերդ»), Սարո (Վ. Դոլիձեի «Քեթո և Կոտե»), Ազուչենա (Ջ. Վերդիի «Տրուբադուր»), Լակմե (Լ. Դելիբի «Լակմե») ևն: Հանդես է եկել նաև համերգներով. երգացանկում՝ հայ (Ա. Սպենդիարյան, Ռ. Մելիքյան, Ա. Սաթյան, Ա. Հարությունյան), ռուս և եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններից: 1956-ին Մոսկվայում մասնակցել է հայկ. արվ-ի և գրկ-յան տասնօրյակին: 1971-ից դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ երաժշտ. քոլեջում:

ՉՈՊԱՆՅԱՆ Լորիս Հովհաննեսի [ծ. 17.04.1933, Մոսուլ (Իրաք)], երգիչ, կիթառահար, կոմպոզիտոր: Ժող. երգերով հանդես է եկել Բաղդադի «Կոմիտաս» երգչախմբում: Ավարտել է Բաղդադի երաժշտ. քոլեջը, ԱՄՆ-ում՝ Լուիզիանայի, ապա՝ Միչիգանի համալսարանների երաժշտ. բաժինները (կոմպոզիցիայի դասարաններ), Փարիզում կիթառի դասեր է առել Ժակ Չաքրյանից: Ապրում է ԱՄՆ-ում:

Չ-ի ստեղծագործության մեջ գերակշռում են հայկ. թեմաներով գործերը («Նահատակաց ապրիլ 24-ի», 1965՝ սիմֆոնիա, «Հայկական ռապսոդիա», 1960՝ դաշնամուրի և ջութակի, «Հայկական պարեր», 1975՝ փող. նվագախմբի, «Երգեր Արարատին», 1983՝ 3 կիթառի համար, հայկ. պարերի նվագախմբ. փոխադրություններ, 1977, «Չորս հայկական մեղեդիների փունջ», 1989, ևն): Հայկ. ոգով գրել է նաև մենանվագներ, զուգանվագներ, տրիոներ, կվարտետներ և այլ գործեր: «The Gift – A Christmas Ballet»-ում (1977) Քրիստոսի մանկությունը պատկերող հատվածում օգտագործել է հայկ. մանկ. երգեր: Ուշագրավ են նաև սիմֆոնիետը՝ թավջութակի և կամեր. նվագախմբի, «Կապրիչչոն»՝ դաշնամուրի և փող. նվագախմբի, «Soliloquy – Testament of a Madman» (Մեծ եղեռնի զոհերի հիշատակին)՝ բարիտոնի և կամեր. նվագախմբի համար և այլ գործեր: Կիթառի համար գրել է զուգանվագ, «Սոնիքս» կվարտետը, «Խրոմատիկ չակոնա» և այլ գործեր: 1992-ին այցելել է Հայաստան, որի տպավորությամբ գրել է «Վերածնունդ» սիմֆ. երկը. բաղկացած է «Խոր վիրապ», «Սևանա լիճ», «Արարատ» պոեմներից:

Մասնակցել է մի շարք երաժշտ. մրցույթների, արժանացել մրց-ների:

ՉՈՒԳԱՍԶՅԱՆ Լիլի Վահանի (01.08.1920, Չիկագո–12.04.2012, Չիկագո), երգչուհի (կոնտրալտո): Մանկուց երգել է հայկ. եկեղեցիներում և դպրոց. երգչախմբերում: Չայնը մշակել է հայտնի երաժիշտ Ֆ. Մանուելի երաժշտ. ստուդիայում: 1959-ին արժանացել է ճանաչման «Լիթլ ռոքի» (Արկանզասի նահանգ՝ ԱՄՆ) օպեր. թատրոնում: 1960-ից երգել է Բալթիմորի թատրոնում (մեներգչուհի), 1961-ին հրավիրվել է Սպոլետտոյի (Իտալիա) փառատոնին, ապա որպես մենակատար՝ Նյու Յորքի ֆիլհարմոնիայի նվագախումբ: 1962-ից՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա» թատրոնի մեներգչուհի: Կատարել է 90-ից ավելի դերերգեր՝ Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Լա Սիեկա (Ա. Պոն-

քիելլիի «Զոկոնդա»), Ամներիս, Ազուչենա, Ալրիկա (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», «Պարահանդես-դիմակահանդես»), Դալիլա (Կ. Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա»), Ֆլորա (Ջ. Մենոտտիի «Մեդիում») ևն: Հանդես է եկել աշխարհի լավագույն նվագախմբերի և անվանի դիրիժորների (Հ. ֆոն Կարայան, Լ. Ստոկովսկի, Լ. Բեռնսթայն և ուր.) հետ՝ կատարելով կոնտրալտոյի երգամասեր Յ. Ս. Բախի պասսիոններում, Սի մինոր մեսսայում, Լ. վան Բեթհովենի «Հանդիսավոր մեսսա»-ում, 9-րդ սիմֆոնիայում, Վ. Ա. Մոցարտի «Մեծ մեսսա»-ում, Ջ. Ռոսսինիի «Ստաբատ մատեր»-ում, «Հանդիսավոր մեսսա»-ում, Ջ. Վերդիի «Ռեքվիեմ»-ում, Գ. Մահլերի 2-րդ, 3-րդ, 8-րդ սիմֆոնիաներում, Ա. Շյոնբերգի «Գուրիների երգեր»-ում, Ս. Ս. Պրոկոֆևի «Ալեքսանդր Նևսկի» կանտատում: Հարուստ և բազմազան է կամեր. երկացանկը, որտեղ ընդգրկել է նաև հայկ. երգեր («Կռունկ», Ա. Սպենդիարյանի «Օրորոցային» ևն): 1967-ին ԵՕԲԹ-ում հանդես է եկել Ամներիսի (Ջ. Վերդիի «Աիդա»), Փառանձեմի (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ») դերերգերով, մենահամերգներով: 1978-ին Վաշինգտոնում՝ Սպիտակ տանը, երգել է հայ.:

Չ. օժտված էր բացառիկ դիապազոնի բազմերանգ և հարուստ ձայնով, բեմ. ինքնատիպ ձիրքով:

ՀԽՍՀ ՄՆ Պետրոս Ադամյանի անվ. մրց. (1981), Սանֆորդի համալսարանի մեդալ (2002):

Գրկ. *Բրուտեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996, էջ 364–376:*

ՉՈՒԽԱՃՅԱՆ Հայկ (1878, Կեսարիա–1944), դերասան: 1890-ական թթ-ի վերջերից խաղացել է Կ. Պոլսում՝ Արշակ ***Պենկլյանի*** թատերախմբում, ճանաչվել Իրիշի (Տ. Չուխաճյանի «Քեոսե Քեհյա») դերակատարմամբ: Հետագայում հանդես է եկել տարբեր խմբերում: 1923-ից ապրել է ԱՄՆ-ում: Կալիֆոռնիայում հիմնադրել է օպերետ. խումբ, բեմադրել Տ. Չուխաճյանի օպերետները: 1933-ից Փարիզում ներկայացրել է Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» և այլ օպերետներ, աչքի ընկել Հոր-հոր աղայի դերակատարմամբ:

ՉՈՒԽԱՃՅԱՆ (Չուխաջյան, Չուհաճյան) Տիգրան Գևորգի [1837, Կ. Պոլիս–23.10.1898, Զմյուռնիա (այժմ՝ Իզմիր՝ Թուրքիա)], կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ, հայկ. օպեր. արվ-ի հիմնադիրը: Հայ դաս. երաժշտության մեջ արմատավորել է օպեր. մի քանի ժանրեր (պատմառոմանտիկ.՝ «Արշակ Երկրորդ», կոմիկ. օպերաների եռյակը՝ «Արիֆի խորամանկությունը», «Քեոսե Քեհյա» և «Լեբլեբիջի Հոր-հոր աղա», հայրենասիր.՝ «Ինդիանա» օպերան, «Զեմիրե» հեքիաթ-օպերան), հայ իրականության մեջ դարձել երաժշտ. թատրոնի առաջին կազմակերպիչը:

Չ-ի գործունեությունը համաարվ. երևույթ էր. նա նաև մերձավորարվ. երաժշտ. թատրոնի հիմնադիրն է: Չ. Արևելքի երաժիշտներից առաջինն էր, որը, ստանալով մասնագիտ. երաժշտ. կրթություն և կատարելապես տիրապետելով եվրոպ. կոմպոզիտոր. տեխնիկային, մշակել է Արևելքի ու Արևմուտքի երաժշտ. մշակույթների մերձեցման ուղիները, արվ. երաժշտության մեջ արմատավորել օպեր., սիմֆ. և կամեր. երաժշտության ժանրերը:

Դպրոց. տարիներին Չ-ի երաժշտ. հակումների ձևավորմանը նպաստել է Գաբրիել ***Երանյանը***, իսկ դաշնամուրի և տես. առարկաների կանոնավոր պարապմունքները ղեկավարել է պոլսաբնակ իտալացի մանկավարժ Չ. Մանձոնին:

Պատանեկության ու երիտասարդության տարիները համընկել են հայ ժողովրդի զարթոնքի ու վերածնության փայլուն շրջաններից մեկին, երբ վերելք են ապրել գրկ-ը, թատրոնն ու երաժշտությունը: Նա կապեր է հաստատել հայկ. թատեր. աշխարհի հետ, գրել է հայրենասիր. երգեր՝ ներկայացումների համար, ղեկավարել Խասգյուղի թատրոնի երաժշտ. մասը, մասնակցել «Քնար հայկական» երաժշտ. ընկերության աշխատանքներին: Չ. Մանձոնիի խորհրդով 1861–64-ին կատարելագործվել է Միլանում. յուրացրել է մասնագիտ. խոր գիտելիքներ, հաղորդակցվել արևմտաեվրոպ. երաժշտության, մասնավորապես՝ Ջ. Վերդիի օպեր. արվ-ին: 1864-ին վերադարձել է Կ. Պոլիս, զբաղվել մանկավարժությամբ, կարդացել դասախոսություններ, ղեկավարել սիմֆ. համերգներ, երաժշտություն գրել Արևելյան և Վարդովյան թատրոնների համար (Պ. Դուրյանի «Վարդ և Շուշան», Տ. Գալեմճյանի «Արա Գեղեցիկ կամ Սեր և հայրենիք», Թ. Թերզյանի «Սանդուխտ», Ս. Թղլյանի «Մեծն Տրդատ» ևն): Հեղինակ է նաև հայրենա-

Լիլի Չուգասզյան

Լ. Չուգասզյան Ամներիսի դերում (Ջ. Վերդիի «Աիդա»)

Տիգրան Չուխաճյան

սիր. ու ազատասիր. երգեր, որոնցից առավել հայտնի է «Զեյթունցիների քայլերգը» (1862): Մ. Եկմալյանը քայլերգի հիման վրա տղամարդկանց երգչախմբի համար գրել է «Կեցցե Զեյթուն» ա կապելլա խմբերգը, Ա. Հարությունյանն օգտագործել է «Մեր հին երգերը» ռապսոդիայում, Գ. Կազազենկոն՝ «Հայկական սյուիտում», Մ. Մ. Իպոլիտով-Իվանովը՝ «Կովկասյան էսքիզներ» № 1 սիմֆ. սյուիտի 1-ին շարքում:

Չ-ի երաժշտ. ձևավորումները մեծապես նպաստել են թատեր. ներկայացում-

Հատված Տ. Չուխաճյանի «Արևն ելավ զեյթունցիներ» երգից

ների հաջողությանը, արևմտահայ թատրոնի առաջընթացին:

Չ. հայկ. առաջին՝ «Արշակ Երկրորդ» օպերան (1868) գրել է թատեր. գործիչ, դրամատուրգ, բանաստեղծ Թովմաս Թերզյանի լիբրետտոյի հիման վրա, որը, որպես գրական երկ, հրատարակվել է Կ. Պոլսում (1871): Օպերան բեմադրվել է 1869-ին Կ. Պոլսում (3 ներկայացում):

Նրա՝ հայկ. առաջին կոմիկ. օպերան՝ «Արիֆի խորամանկությունը» (ըստ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզորի»), բեմադրվել է 1872-ին Կ. Պոլսում, որով սկզբնավորվել է երաժշտ. թատրոնը Թուրքիայում: Այն նաև առաջին պրոֆեսիոնալ օպերան էր Մերձ. Արևելքում: Պրեմիերային գլխ. հերոսուհի Մերիեմի դերերգը կատարել է թուրք. բեմի առաջին դերասանուհիներից Շազիկ Քյոյլոյանը, Արիֆինը՝ Հովհաննես Աճեմյանը (նաև լիբրետտոյի հեղինակը):

«Քեռոս Քեհյա» օպերայի (լիբրետտոն՝ Գարեգին *Ոշկոնու*) պրեմիերան տեղի է ունեցել 1875-ին: 1968-ին Բեյրութում «Քեռոս Քեհյայի» հայացված տարբերակը՝ «Զվարթը», բեմադրել են «Վահրամ Փափազյան թատերախումբը» և Հայկ. երաժշտ. ընկերության երգչախումբը:

«Լեբլեբիջի Հոր-հոր աղան» (1875, լիբրետտոն՝ Թագվոր Նալյանի) ներկայացվել է բազմաթիվ լեզուներով (թուրք., հուն., գերմ., հայ., ռուս., բուլղ., ֆրանս.) Լիբանանում, Սիրիայում, Այսրկովկասում (Բաքու և Թիֆլիս), Ֆրանսիայում, Հունաստանում, Կիպրոսում, Բուլղարիայում, Ռումինիայում, Եգիպտոսում, ԱՄՆ-ում, Կանադայում, Թուրքիայում և Հայաստանում:

Չ-ի «Ինդիանա» հայրենասիր. օպերան (լիբրետտոն՝ Հովսեփ Եազըճյանի, ըստ Ա. Համիդի «Հնդկուհին» ստեղծագործության) չի բեմադրվել:

Չ-ի հայկ. առաջին հեքիաթ-օպերան՝ «Զեմիրեն» (լիբրետտոն՝ Տիգրան Գալեմճյանի), բեմադրվել է Կ. Պոլսում (1891-ին՝ ֆրանս., 1894-ին՝ իտալ.), 2008-ին՝ ԱՄՆ-ում: 1966-ին Երևանում Յուրի *Դավթյանի* նախաձեռնությամբ ձայնագրվել է «Զեմիրեն» (տարվա լավագույն ձայնագրություն, ԽՍՀՄ Համամիութ. ռադիոյի մրց.):

Չ. հայկ. ռոմանսի առաջին նմուշների («Գարուն», «Լոռա» ևն) հեղինակն է, նրա անվամբ է պայմանավորված նաև հայկ. դաշնամուր. երաժշտության սկզբնավորումը: Գրել է «Mouvement Perpétuel»՝ դաշնամուրի և նվագախմբի համար, «Արևելյան ֆանտազիա», «Արևելյան պար», «Քայլերգ շնորհակալության», «Մեծ պարսկական քայլերգ», «Մեծ պոպուրի» («Լեբլեբիջի Հոր-հոր աղա» օպերայի մոտիվներով), «Պոպուրի» («Էբուդիա և Զեմիրե» օպերայի մոտիվներով), «Զեմիրե» ֆանտազիան, «Հայկական

Տեսարան Տ. Չուխաճյանի «Կարինե» օպերետի բեմադրությունից (2015, ռեժ.՝ Ե. Ղազանչյան, ԵԵԿԹ)

«Լեբլեբիջի» օպերետի բեմադրության (1951, ԵՕՔԹ) ազդագիրը

եղանակ», «Մեղեդի», «Քայլերգ»՝ սիմֆ. նվագախմբի համար և այլ երկեր, որոնցով դրվել է հայկ. սիմֆ. երաժշտության հիմքը: Չ-ի 4 քայլերգերը իր ղեկավարությամբ հնչել են Կ.Պոլսի զբոսայգիներում:

Չ-ի և Տ. Գալեմճյանի ղեկավարությամբ ստեղծված «Օսմանյան օպերային թատերախումբը» հայ իրականության մեջ բացառապես հայ արտիստներից կազմված առաջին երաժշտ. թատերախումբն էր (առաջինը՝

Մերձ. Արևելքում), որին տրվել է երաժշտ. ներկայացումներ բեմադրելու մենաշնորհը:

Չ. մեծապես նպաստել է նաև թուրք. երաժշտության զարգացմանը. նա երաժշտ. թատրոնի, մեներգ., խմբերգ. ու նվագախմբային գրության եվրոպ. սկզբունքների արմատավորողն է Թուրքիայում: Նրա դաշնամուր. գործերից երկուսը՝ «Fantaisies orientale sur des motifs turc» (№ 1, № 2) թուրք. պրոֆեսիոնալ գործիք. երաժշտության առաջին նմուշներն են:

Չ. նոր շրջանի հայկ. երաժշտության մեծերից է (Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի հետ), նրա ստեղծագործությունը դարակազմիկ նշանակություն է ունեցել ինչպես ազգ., այնպես էլ ընդհանուր արվ. արվ-ի զարգացման համար:

Երևանում գործում է Չ-ի անվ. երաժշտ. դպրոց, «Տիգրան Չուխաճյան» հիմնադրամը (2002-ից), Փարիզում՝ «Տիգրան Չուխաճեան» կենտրոնը:

Երկ. *Ստեղծագործութիւններ նուագախումբի համար (ներածութիւնը՝ Հ. Աւագեանի), Կահիրէ, 2005:*

Գրկ. *Հիւսնլեան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց (1768–1909), ԿՊ, 1914: Շարաճան, Թրքահայ բեմը եւ իր գործիչները (1850–1908), ԿՊ, 1914: Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, XIX–XX դդ. (մինչսովետական շրջան), Ե., 1959: Սրեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Ե., 1962: Պետիկեթաշլեան Ն., Թատերական դէմքեր, Անթիլիաս, 1969: Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970: Գյոդակյան Գ., Տիգրան Չուխաջյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Ե., 1971: Նույնի, Լջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009: Փափազեան Հ., Տիգրան Չուխաճեան: Կեանքը եւ գործը, Իսթանպուլ, 1986: Մուրադյան Մ., Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դ. և XX դարասկիզբ), Ե., 1989: Հարությունյան Մ., Բարսամյան Ա., Հայ երաժշտության պատմություն (հնագույն շրջանից մինչև մեր օրերը), Ե., 1996: Հովհաննիսյան Հ., Արևմտահայ թատրոնի պատմություն. XIX դ., Ե., 1996: Թահմիզեան Ն., Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Փասադենա, 1999: Ասատրյան Ա., «Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան, Ե., 2006: Նույնի, «Զեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, Ե., 2009: Նույնի, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011: Ադամյան Ա., Տիգրան Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործությունը, Ե., 2015: Տիգրան Չուխաջյան: Մատենագիտություն, կազմ.՝ Ն. Թեյմուրազյան, Զ. Մեմոնովա, Ե., 1964: Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը. գիտական նստաշրջանի նյութեր, Ե., 2015: Тигранов Г., Армянский музыкальный театр. Очерки и материалы, т. 1, Е., 1956; Геодакян Г., Пути формирования армянской музыкальной классики, Е., 2006; Tuglaci P., Turkish Bands of Past and Present, Istanbul, 1986; Tahmizian N., The Life & Works of Dikran Tchouhadjian, Pasadena, CA, 2001.*

Աննա Ասատրյան

Աննա Ասատրյանի «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը» գրքի (2011) տիտղոսաթերթը

Պ

Խորեն Պալյան

Խ. Պալյանը և Լ. Զաքարյանը ելույթի պահին

ՊԱԼՅԱՆ Խորեն Հարությունի [10.03.1935, Տրիպոլի (Լիբանան)–19.01.2007, Երևան, թաղված է Էջմիածնի Սբ Գայանե եկեղեցու բակում], շարականագետ, խմբավար: Լուսինե *Զաքարյանի* ամուսինը: 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1955), ԵՊՀ բանասիր. ֆակ-ը (1968): 1961-ին ձեռնադրվել է կուսակրոն վարդապետ, 1962-ին պաշտպանել է վարդապետ. ավարտաճառ: 1965-ին կարգալույծ է եղել: 1968-ից դասավանդել է ԵՊՀ հայոց լեզվի պատմության, 1995–2005-ին՝ աստվածաբանության ֆակ-ներում (դոցենտ), 1978–2004-ին, միաժամանակ՝ Գևորգյան ճեմարանում և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում: 1991-ից ղեկավարել է ԵՊՀ բանասիր. ֆակ-ի «Հայ տոհմիկ» երգչախումբը: 1989-ից ամենամյա համերգ-դասախոսություններով ներկայացրել է հայ հոգևոր երգը Հայաստանի մարզերում, Արցախում, Լոս Անջելեսում, Հելսինկիում: Հեղինակ է հեռուստատես. հաղորդաշարերի, «Ժամանակագրութիին Հայաստանեաց եկեղեցւո» (2005) ուս. ձեռնարկի, համահեղ.՝ «Լուսինե» (1999) հուշագրության, «Դասական գրաբարի հատընտիր» դասագրքի (2003), «Շարականների ընտրանի» (2004) ժող-ի: ՀԱԵ «Սբ Ներսես Շնորհալի» շքանշան (2006):

ՊԱՅԾԱՌԵ (Տրդատյան Վարշամ, 08.09.1859, Ալեքսանդրապոլ–23.01.1904, Ալեքսանդրապոլ), աշուղ: Եղել է *Ջիվանու* դպրոցի աշուղներից: Հանդես է եկել նախ որպես սիրերգակ բանաստեղծ, առավել ճանաչվել է հայրենասիր. ու սոցիալ. թեմաներով երգերով («Խոսեք, Հայաստանի լեռներ», «Առ սոխակն վանդակված» ևն), որոնք մեծ ժողովրդականություն են վայելել Հայաստանում և հայաբնակ այլ վայրերում: Երգերում բողոքել է 1880-ական թթ-ին ցարիզմի վարած հայահալած քաղաքականության դեմ, նպաստել է հայ ժողովրդի ազատագր. պայքարին: Նրա գազելները, դաստանները, մուհամմանեները, հրապարակախոս. երգերն առանձնանում են լեզվի մաքրությամբ, պարզ ոճով: Պ-ի երգերը ձայնագրել են Նիկողայոս *Տիգրանյանը*, Արշակ *Բրուտյանը* և ուր.:

Հատված Պայծառեի «Սիրելիս, ոչ ոքից դու մի նեղանա» երգից

Երկ. *Երգեր, հ. 1, Թ., 1895: Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986, էջ 123–139:*

Գրկ. *Լ ևոնյան Գ., Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1892:*

ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ, հայկ. ժող. երգերի ժանր. ինքնուրույն բաժին. ստեղծվել է բանաստեղծ. բովանդակության և երաժշտակոմպոզիցիոն որոշակի հատկանիշների շնորհիվ: Բանաստեղծությունները պայմանականորեն բաժանում են 2 խմբի՝ պանդխտության մասին կողմնակի

Հատված «Կանչև, կռունկ» երգից (գրառումը՝ Կումիտասի)

պատումների (գրված առավելապես հայրենի չափով) և պանդխտի (կամ տանը մնացած հարազատի) ապրումներն ու հույզերն արտահայտող մենախոսությունների: Պահպանված ու գրառված սակավաթիվ եղանակները կամ հանդարտ պատմող.

բնույթի են (Կոմիտասի գրառած պանդխտի անտունիները), կամ ներթափանցված են անմիջական, խոր հուզականությամբ:



Հատված «Կռունկ» երգից (գրառումը՝ Քրիստափոր Քոշնարյանի)

Երկրորդ խմբի բուն Պ. ե-ի հնչյունաշարը սովորաբար ծավալուն է, եղանակները՝ անկաշկանդ հոսող, ունեն ազատ ձևակառուցվածք, ասերգ. տարրերով անհատականացված ելևէջ (դաս. նմուշներից է *«Կռունկը»*):

Պ. ե. հայ միջնադար. ժող. երաժշտ. ժառանգության բացառիկ արժեքավոր մասերից է:

ՊԱՆՅԱՆ Արեգ Հրանտի (ծ. 12.03.1981, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (2013): Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցի դաշնամուրի (1995), ԵՊԿ կոմպոզիցիայի (2004, Վ. Ա. Աճեմյանի դասարան) բաժինները: 2004–07-ին աշխատել է «Արևիկ» երաժշտ. խմբագրությունում, 2007–10-ին՝ «Nikita Mobile» ընկերության, 2010–12-ին՝ «Ֆորտե» գիտամշակութ. կենտրոնի գլխ. հնչյուն. ռեժ.: 2011-ից, որպես գործիքավորող, համագործակցել է երաժշտ. խմբերի հետ: 2013-ին հիմնադրել և ղեկավարում է «Aegeon Music» երաժշտ. խումբը, 2017-ին՝ «Արմկո» ռադիոկայանը, որով հեռարձակվում է հիմնականում դաս. երաժշտություն:

Հեղինակ է սիմֆոնիայի (2006)՝ երգեհոնի, դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի, դաշնամուր. պոեմի (1995)՝ դաշնամուրի և փոքր սիմֆ., «Flight Over Mountains»-ի (2008)՝ դուդուկի, զուռնայի և էլեկտրասիմֆ. նվագախմբերի, ռապսոդիայի (1999)՝ 2 դաշնամուրի և ջութակի, սեքստետի (2000, ըստ Վ. Տերյանի)՝ ձայնի, հոբոյի, վիբրաֆոնի, ջութակի, կոնտրաբասի և բոնգերի համար, փող. կվինտետի (1999), 2 լար. կվարտետի (երկուսն էլ՝ 2003), «Սիմֆոնիկ պար»-ի (2004), կոնցերտների [3 դաշնամուր. (2000, 2001, 2004), ջութակի, լիտավրների և լար. նվագախմբի համար (2007)], դաշնամուր. էքսպրոմտի (2008), պիեսների («Պար», 2004, ևն), ռոմանսների, «Անուրջներ» (2003) նոկտյուռնի, ջութակի սկերցոյի (2003), կինոերաժշտության, նաև ռոք, փոփ և այլ գործերի:

«Նարեկացի» երիտասարդ ստեղծագործողների մրցույթի 1-ին մրց. (2006, Երևան), Երիտասարդ կոմպոզիտորների կամեր. երաժշտության 1-ին փառատոնի դիպլոմ (2006, Երևան):

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, կրոն. պաշտամունքի հետ կապված գերազանցապես վոկալ երաժշտությունը: Տես *Եկեղեցական երաժշտություն, Հոգևոր երաժշտություն, Տաճարային երաժշտություն*:

Արեգ Պանյան

ՊԱՊԱՅԱՆ Նադեժդա Համբարձումի [19.01(22).1868, Աստրախան (Ռուսաստան)–19.01.1906, Աստրախան], երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո), առաջին հայ օպեր. երգչուհին: Անվանել են «Վերդիի և Չայկովսկու սոխակ»: Սկզբն. երաժշտ. կրթությունն ստացել է Աստրախանում: Սովորել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1886–90, Վ. Ռաաբի դասարան), Փարիզում՝ Մ. Մարքեզիի դպրոցում, մինչև 1896-ը կատարելագործվել է Միլանում (1890–93): Ս. Պետերբուրգում ուսանելու տարիներին ելույթներ է ունեցել Ա. Գ. Ռուբինշտեյնի և Է. Ֆ. Նապրավնիկի ղեկավարությամբ: 1888-ին հանդես է եկել առաջին դերերգով (Նատալյա՝ Պ. Ի. Չայկովսկու «Օպրիչնիկ»): 1891-ից երգել է Նեապոլի «Սան Կառլո» և Միլանի «Ալհամբրա» թատրոններում, 1893-ին՝ Այսրկովկասում (Բեգլար *Ամիրջանյանի* հետ): 1893–94-ին Թիֆլիսի օպեր. թատրոնում կատարել է գլխ. դերերգեր՝ Շ. Գունոյի «Ֆաուստ» (Մարգարիտ՝ Պ., Մեֆիստոֆել՝ Ֆ. Ի. Շալյապինի), Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», Ժ. Բիզեի «Կարմեն», Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ», Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ», Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա» և այլ օպերաներում: 1897–98-ին համերգներով հանդես է եկել Թիֆլիսում, 1898-ին երգիչ Ս. Եղիազարյանի հետ՝ Անգլիայում, Փարիզում մասնակցել է Մ. Մարքեզիի սաների ցուցադր. ներկայացումներին, 1899-ին երգել Պավլովսկում (Ս. Պետերբուրգի արվարձան): 1900–04-ին՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի

Նադեժդա Պապայան

Էմմա Պապիկյանը Գիշերային թագուհու դերում (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ»)

Հասմիկ Պապյան

Հ. Պապյանը Նորմայի դերում (Վ. Բելլինիի «Նորմա»)

մեներգչուհի. կատարել է գլխ. դերերգեր նաև առաջին անգամ բեմադրված օպերաներում՝ Մարֆա, Սերվիլիա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն», «Սերվիլիա»): Մասնակցել է Ս. Պետերբուրգի ֆիլհարմոնիկ ընկերության 100-ամյակին նվիրված համերգին (1902, Լ. վան Բեթհովենի «Հանդիսավոր մեսսա», դիրիժոր՝ Ա. Նիկիշ), 1904–05-ին հանդես եկել Փարիզի «Օպերա կոմիկ» թատրոնում: Համերգ. երկացանկում՝ նաև Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Ք. Կարա-Մուրզայի, Բ. Կանաչյանի ստեղծագործություններից: Պ. օժտված էր լայն դիապազոնի գեղեցիկ ձայնով, դրամատիկ. խոշոր դերասանուհու առանձնահատկություններով: 1905-ին Աստրախանում կողոպտելու նպատակով մտել են Պ-ի բնակարանը, սպանել հորը և մահացու վիրավորել երգչուհուն:

Գրկ. *Սամվելյան Վ., Նաղեժդա Պապայան, [Երգչուհու ստեղծագործական ուղին], Ե., 1955: Թադևոսյան Ա., Նաղեժդա Պապայան, Ե., 1979: Марков А., Надежда Папаян, Астрахань, 2014.*

ՊԱՊԻԿՅԱՆ Էմմա Թորգոմի (ծ. 22.04.1964, Երևան), երգչուհի (սոպրանո, 5 օկտավա): ՀՀ վաստ. արտիստ (2005): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի վոկալ-ռեժ. բաժինը (1988), վերապատրաստվել Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում (1988–90): Հայաստանից առաջին երգչուհին է, որը հրավիրվել է երգելու «Լա Սկալայում»: 1988–2007-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Դերերգերից են՝ Վիոլետտա, Ջիլդա, Դեզդեմոնա, Աիդա (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Օթելլո», «Աիդա»), Գիշերային թագուհի (Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ»), Լակմե (Լ. Դելիբի «Լակմե»), Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Շամախանի թագուհի (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղը») ևն: Համերգ. երկացանկում՝ Ջ. Վերդիի և Վ. Ա. Մոցարտի ռեքվիեմների, Ա. Բրուքների «Տե Դեում» և այլ երկերի սոպրանոյի երգամասերը, միջնադար. հոգևոր, արևմտաեվրոպացի, բրազիլացի, ռուս, հայ դաս. և արդի կոմպոզիտորների գործերից: Հանդես է եկել աշխարհի 40-ից ավելի թատրոններում (Մոսկվայի Մեծ, Միլանի «Լա Սկալա», Նյու Յորքի, Համբուրգի, Սան Ֆրանցիսկոյի, Փարիզի, Լոս Անջելեսի, Պերմի ևն): Համաշխ. ճանաչման է հասել ձայնի բացառիկ հնարավորությունների, կատարող. բարձր վարպետության շնորհիվ: Վարպետության դասեր է վարել Երևանի, Փարիզի, Լոնդոնի, Միլանի, Համբուրգի կոնսերվատորիաներում: Ապրում և ստեղծագործում է Փարիզում: «Պապէմ» միջազգ. վոկալ ընկերակցության հիմնադիր-նախագահ (1999, Փարիզ):

Մ. Ի. Գլինկայի անվ. վոկալիստների համամիութ. (1984, Երևան) և միջազգ. (1988–1989, Իտալիա) մրցույթների դափնեկիր:

ՊԱՊՅԱՆ Հասմիկ Հարությունի (ծ. 02.09.1961, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀՀ ժող. արտիստ (2004): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1983), մեներգեցողության (1984, Մ. Հարությունյանի դասարան) բաժինները: 1978–87-ին երգել է Հայաստանի պետ. երգչախմբում, 1984–92-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Դերերգերից են՝ Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Օլիմպիա, Կարինե (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», «Լերլերիջի Հոր-հոր աղա»), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Դոննա Աննա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Միմի, Տոսկա (Ջ. Պուչչինիի «Բոհեմ», «Տոսկա»), Միքայելա (Ժ. Բիզեի «Կարմեն») ևն: Կատարել է Ջ. Վերդիի շուրջ 14 օպերաների գլխ. դերերգերը: 1992-ին՝ Վարշավայի, 1993–96-ին՝ Բոննի օպեր., 1996-ից՝ Վիեննայի «Շտատսօպերա» թատրոնների մեներգչուհի: Ելույթներ է ունեցել աշխարհի բազմաթիվ օպեր. թատրոններում (Միլանի «Լա Սկալա», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Մոսկվայի Մեծ, Փարիզի «Բաստիլ», Ս. Պետերբուրգի Մարիինյան, Լոնդոնի «Քովենթ Գարդեն», Հռոմի «Սանտա Չեչիլիա», Տոկիոյի, Սանտյագոյի, Թել Ավիվի ևն): Հանդես է գալիս նաև մենահամերգներով. երկացանկում՝ Վ. Ա. Մոցարտի, Ջ. Վերդիի, Գ. Ֆորեի, Յ. Բրամսի ռեքվիեմների սոպրանոյի երգամասերը, արևմտաեվրոպացի, ռուս և արդի, նաև հայ դաս. (Կոմիտաս, Բ. Կանաչյան, Է. Միրզոյան, Տ. Մանսուրյան, Ա. Տերտերյան) կոմպոզիտորների երկերից: Այսրկովկաս., 4 միջազգ. (Թուլուզ, Սոֆիա, Մոսկվա, Վիեննա) մրցույթների դափնեկիր: ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2005):

ՊԱՊՅԱՆ Վահագն Անաստոլիի (ծ. 05.06.1956, Երևան), դիրիժոր, դաշնակահար: Ավարտել է ՄՊԿ դաշնամուրի (1978, Մ. Ս.

Վոսկրեսենսկու դասարան), Լենինգրադի կոնսերվատորիայի դիրիժորության (1987, Ի. Ա. Մուսինի դասարան) բաժինները: 1984-ից՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1987–89-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1990-ից ապրում է Իսրայելում:

Որպես հրավիրյալ դիրիժոր՝ ղեկավարել է Անգլիայի կամեր. նվագախումբը (Լոնդոն), Նոր ճապոն., Նոր ռուս., Բելգրադի, Տրոնդհայմի (Նորվեգիա) սիմֆ., Իսրայելի «Սիմֆոնիետա Բեեր Շեվա», Հայֆայի Հյուսիսային և այլ նվագախմբեր: 2006-ից՝ Աշդոդի (Իսրայել) սիմֆ., 2008–2013-ին, միաժամանակ՝ Ղազախստանի պետ. ակադ. սիմֆ. նվագախմբերի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: Համագործակցել է Վ. Գերգիևի, Դ. Խվորոստովսկու, Վ. Տրետյակովի, Օ. Կոգանի և այլ նշանավոր երաժիշտների հետ: Եռյակի կազմում հանդես է եկել ջութակահար Մ. Վենգերովի հետ: Որպես դիրիժոր և դաշնակահար (երկացանկում՝ Վ. Ա. Մոցարտ և ուր.)՝

Վահագն Պապյանը եղույթի պահին

շրջագայել է շուրջ 50 երկրում, հանդես եկել նաև հանրահայտ նվագախմբերի հետ: 1990-ից դասավանդում է Թել Ավիվի համալսարանին կից «Յ. Բուշման–Զ. Մեխտա» երաժշտ. դպրոցում, վարպետության դասեր է վարում Շլեռնի (Իտալիա) երաժշտ. փառատոնում, Սոֆյա թագուհու երաժշտ. դպրոցում (Իսպանիա), «Queen's College»-ում (Նյու Յորք):

Դաշնակահարների «Վիանա դա Մոտա» միջազգ. մրցույթի 2-րդ մրց. (1977, Լիսաբոն):

ՊԱՄԿԵՎԻՉՅԱՆ Սասուն Թադևոսի (ծ. 05.10.1939, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ ժող. արտիստ (2014): Ավարտել է ԵՊԻ շին. ֆակ-ը (1962): 1977–80-ին՝ Հայաստանի ռադիոյի էստրադ. սիմֆ. նվագախմբի տնօրեն: Պ-ի երգերը («Դու հեռացար», «Հայր իմ», «Ներիր ինձ, մայրիկ», «Ամեն տեսակ երգ երգեցի», «Մինչև էգուց», «Դու երկու տառ», «Աշուղ Սայաթ-Նովի նման», «Կարոտի պահին», «Նարինե», «Մայրս», «Արագիլները», «Ես չգիտեմ, թե ինչու» ևն) կատարել են Հ. Բադալյանը, Օ. Համբարձումյանը, Ռ. Մաթևոսյանը, Ֆ. Մարտիրոսյանը, Բ. Դարբինյանը, Ռ. Մկրտչյանը, Լ. Խոմյանցը, Ա. Ավետիսյանը, Գ. Մինասյանը և ուր.: 1980–2004-ին ապրել է Լոս Անջելեսում («Սևան» երկշաբաթաթերթի խմբագրի տեղակալ), հիմնադրել «Հայաստան» հեռուստաընկերությունը և մշակութ. կենտրոնը (1988–2004): Համագործակցել է Հայկ. միացյալ և «Հայաստան» համահայկ. հիմնադրամների հետ: Թողարկել է ձայնասկավառակներ («Հայր իմ», 1978, «Կարոտ», 1980, «Մայրս լիներ», «Դու հեռացար», 1982):

Սասուն Պամկևիչյան

ՊԱՍՍԱԺ (ֆրանս.՝ passage – անցում), 1. երաժշտ. (նաև գրական) ստեղծագործության հատված, որն օժտված է ներքին ամբողջականությամբ՝ պայմանավորված շարադրման որոշակի հնարքով:

2. Արագ շարժվող հնչյունների հաջորդականություն (XVI դ.): Տարբերում են գամմայաձև, ակորդային և խառը Պ-ներ: Վիրտուոզ պիեսներում Պ. սովորաբար թեմատիկորեն չեզոք է, սակայն որոշ կոմպոզիտորների (Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի էտյուդներում) ստեղծագործություններում ունի նշանակալի մեղեդային բովանդակություն:

ՊԱՍՍԱԿԱԼԻԱ (իտալ.՝ passacaglia, իսպ.՝ pasacalle, < իսպ. pasar – անցնել, քայլել և calle – փողոց), իսպ. ծագման երգ (ավելի ուշ՝ պար). նախապես կատարել են փողոցում՝ կիթառի նվագակցությամբ: XVII դ-ում տարածվել է եվրոպ. մի շարք երկրներում (որպես պար՝ դուրս է եկել գործածությունից) և դարձել գործիք. երաժշտության կարևորագույն ժանրերից: Պ. առանձնանում է հանդիսավորությամբ, դանդաղ տեմպով, եռամաս չափով, մինոր. ձայնակարգով, կոմպոզիցիայի առանձնահատկություններով (basso ostinato-ի վրա հիմնված պոլիֆոնիկ վարիացիայի տեսակներից): Պ-ին բնորոշ է միաձայն թեմայի շարադրանքը բասով: Հնագույն Պ-ի թեման սկսվում է եռամաս տակտից, հենվում ձայնակարգի կայուն աստիճանների վրա: Պ-ներն ստեղծվել են որպես

ինքնուրույն պիեսներ, նաև ընդգրկվել այլ ժանրերում (Ժ–Բ. Լյուլլիի «Ացիս և Գալաթեա» օպերայում, Յ. Ս. Բախի երգեհոնի դո մինոր Պ., Գ. Հենդելի կլավիրի սոլ մինոր սյուիտում, Յ. Բրամսի 4–րդ սիմֆոնիայի IV մասը, Դ. Դ. Շոստակովիչի 8–րդ սիմֆոնիայի IV մասը, դաշնամուր. տրիոյի III մասը, Ք. Քուշնարյանի երգեհոնի Պ. և ֆուգա, Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի Պ., Ա. Մնացականյանի երգեհոնի Պ., Է. Հովհաննիսյանի «Անտունի» բալետում «Կռունկ» երգի թեմայով Պ., թավջութակի սոնատի 2–րդ մասը ևն:

Հատված Քրիս–տափոր Քուշնարյանի «Պասսակալիա»–ից

ՊԱՍՏՈՐԱԼ (ֆրանս.՝ pastorale, < լատ. pastoralis – հովվական), 1. օպերա, մնջախաղ կամ բալետ, որոնց սյուժեն կապված է գեղջկական կյանքի իդեալականացված պատկերման հետ: Սկզբնավորվել է գրական Պ–ի ազդեցությամբ, առավել տարածվել XVII–XVIII դդ–ի Իտալիայի և Ֆրանսիայի պալատ. արվ–ում: Պ–ային թեման մշակվել է անգլ. և իտալ. մադրիգալներում: Այդ թեմայով օպերաներ են գրել Ք–Վ. Գլյուկը, Վ. Ա. Մոցարտը, Ժ–Բ. Լյուլլին, Ժ. Ֆ. Ռամոն, Գ. Ֆ. Հենդելը և ուր.: Պ–ի մոտիվները պահպանվել են XIX–XX դդ–ի երաժշտարվում (Ռ. Շտրաուսի «Դափնե», Մ. Ռավելի «Դափնիս և Քլոե» ևն): Ոճավորված Պ–ի օրինակներից է «Հովվուհու անկեղծությունը» ինտերմեդիան Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայում:

2. Բնության կամ գեղջկական կյանքի տեսարաններ պատկերող վոկալ կամ գործիք. ստեղծագործություն: Գործիք. Պ–ին բնորոշ է մեղեդու սահուն, հանգիստ շարժումը, հաճախ՝ կրկնապատիկ տերցիայով, չափը՝ 6/8, 12/8: Այն ստեղծվել է որպես ինքնուրույն գործ կամ դարձել է կոնչերտո գրոսսոյի մաս: Գործիք. Պ–ներ են գրել Ա. Վիվալդին, Դ. Սկառլատտին, Ֆ. Կուպերենը, Յ. Ս. Բախը, Ջ. Ֆրեսկոբալդին և ուր.: Սիմֆ. երաժշտության մեջ Պ. հանդիպում է որպես ցիկլ. ստեղծագործության առանձին մաս («Տեսարան դաշտերում»՝ Հ. Բեռլիոզի «Ֆանտաստիկ սիմֆոնիա»–ից), ամբողջ. ցիկլ (Լ. վան Բեթհովենի 6–րդ՝ «Հովվերգական» սիմֆոնիա) կամ կոնցերտների շարք (Ա. Վիվալդիի «Տարվա եղանակները»):

ՊԱՏԱՐԱԳ (պահլ.՝ patarag, զենդ.՝ paitiragayami – նվեր, ընծա), քրիստ. գլխ. աստվածապաշտ. արարողությունը, Հաղորդության խորհրդի ծեսի և արարողությունների ամբողջ. մշակված համակարգը: Պ. տարբեր ձևերով ընդունված է քրիստ. բոլոր դավանանքներում: Պ. բառին համապատասխանում են հուն. λειτουργία (հաս. պարտավորվածություն), իտալ.՝ messa, ուշ լատ.՝ missal, լատ.՝ mitto (հղել, ներել) արտահայտությունները:

Պ. Հայ եկեղեցում սկզբնավորվել է I դ–ում և անցել զարգացման երկարատև շրջան: Հայոց Պ–ի գրական տեքստը ձևավորվել է հիմնականում Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու (IV դ.) Պ–ների տեքստերի հիման վրա, երաժշտությունը հայկական է: Բաղկացած է ծիսաարարողակարգ. տարբեր բովանդակության, սակայն ներդաշնակորեն փոխկապակցված 4 անընդմեջ ծավալվող մասերից՝ 1. Պատրաստութիւն, 2. Երախայից (չմկրտվածների) Պ. կամ Ճաշու պաշտոն, 3. Հաւատացելոց կամ Բուն Պ., 4. Արձակում կամ Օրհնութիւն:

Պ. նաև երաժշտ. երկ է, որն իր արտասանվող ու երգվող հատվածներով ստեղծվել է որպես ամբողջ. եկեղեց–ծիսակատար. ստեղծագործություն: Ժամանակի ընթացքում հարստացվել է (նախապես

կարդացվող որոշ հատվածների եղանակավորում), լրացվել նոր երգերով, վերախմբագրվել է, որտեղ նշանակալի դեր է ունեցել հատկապես ***Ներսես Շնորհալին***:

Խազագիր Պ-ի որոշ պատառիկներ պահպանվել են XI–XII դդ-ից, ամբողջականը՝ XIII դ-ից գրառած Մանրուսման գրքերում և այլ ժող-ներում: Խազերի գործածությունից դուրս գալուց հետո, բանավոր հաղորդվելով, Պ-ի երաժշտությունը փոփոխվել է, առաջացել են տեղային տարբերակներ:

Պ-ի երգերը վերստին գրառելու մի շարք փորձեր են արվել. առավել ամբողջականն ու արժանահավատը Նիկողայոս ***Թաշճյանի*** գրառումն է նոր հայկ. ձայնագրությամբ (հիմնականում՝ Գևորգ IV Կոստանդնուպոլսեցու երգածից), որին մասնակցել է նաև Մակար ***Եկմալյանը***: Հրատարակվել է 1874-ին, լրացումներով՝ 1878-ին Վաղարշապատում՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի» վերնագրով: Լրացված հրատարակությունը պարունակում է Պ-ի բուն երգերը՝ մասնակիցների լրացուցիչ ֆրազներով (ռեպլիկ), արարողության մեջ ընդգրկվող սրբասացությունները, մեղեդիները, տաղերը և այլ երգեր, կան նշումներ՝ առոգանությամբ կատարվող հատվածների (սաղմոսներ ևն) համար, գրված է 4 տարբերակով՝ նախատեսված կիրակի կամ լի օրերի, եկեղեց. հատուկ տոների համար ևն: Եղանակները բազմազան են՝ մեղեդիական ոճով և հուզ. տրամադրությամբ՝ սաղմոսերգ-վանկաչափականից մինչև ծորուն-զարդարունը, տխուր-խոհականից՝ հանդիսավոր-քայլերգայինը, ընթանում են բնական և ալտերացված զանազան ձայնակարգերում:

Բուն Պ-ի երգերը, նրա տեքստ. բովանդակության հիմնական բաժիններին համապատասխան, խմբվում են «Սուրբ Աստուած», «Սուրբ, սուրբ», «Հայր մեր» և «Միայն սուրբ» գլխ. եղանակների շուրջ, որոնց ինտոնացիաները թափանցում են համապատասխան բաժինների այլ երգեր, քարոզներ, աղոթքներ ևն: Որոշ երգեր ներկայացված են 2 կամ ավելի տարբերակով, կան նաև «անկախ» եղանակներ. օր.՝ բազմաթիվ «Տէր, ողորմէ այ»-ները: Ընդհանուր առմամբ Պ-ի երաժշտությունը (Ն. Թաշճյանի գրառումով) երգ. բազմազան ձևի մեղեդիներից կառուցված ծավալուն ամբողջություն է, որը հայ միջնադար. երգահանների վարպետության բարձրարժեք արգասիքն է:

Պ. սկզբում կատարվել է առանց երաժշտ. գործիքների նվագակցության (որոշ միավորների դեպքում կիրառվել են ծնծղաներ կամ քշոցներ): Հայ եկեղեցում երգեհոնը գործածվել է 1923-ից՝ Գևորգ V Ամենայն հայոց կաթողիկոսի արտոնությամբ: Պ-ի երաժշտությունը երգչախմբի համար բազմաձայնելու մի շարք փորձեր

Հատված Մակար Եկմալյանի Պատարագից («Հայր մեր»)

են արել ուկրաինացի Լ.Մ.Կրապիվնիցկին (1873, Աքքերման), իտալացի Պ.Բիանկինին (հրտ.՝ 1877, Վենետիկ, Մխիթարյան միաբանությանն ավանդված եղանակները), Ա. Այտընյանը, Ք. Կարա-Մուրզան (1885–86), Է. Աբգարը (հրտ.՝ 1896 և 1920, Կալկաթա, օգտագործված են իրանահայերի և հնդկահայերի եղանակները), Լ. Չիլինկիրյանը (եռաձայն, հրտ.՝ 1898, Զմյուռնիա), Կլաժինյանը և ուր.:

Ոճ. և գեղ. արժանիքների շնորհիվ այժմ ընդունված են Մ. Եկմալյանի (հրտ.՝ 1896, Լայպցիգ-Վիեննա) և Կոմիտասի (հրտ.՝ 1933, Փարիզ) բազմաձայն Պ-նե-

Վազգեն վրդ. Պալճյանի «Մեր պատարագը» գրքի (2008) շապիկը

Աշոտ Պապմազրյանի «Երաժշտարան» դասագրքի (1937) շապիկը

րը, որտեղ ընտրությամբ և խմբագրված օգտագործված են Ն. Թաշճյանի գրառած եղանակները՝ էջմիածնում պահպանված որոշ հատվածների հավելմամբ: Երկուսն էլ կառուցված են դրամատուրգիական որոշակի ծրագրով. 1-ինը՝ հիմնականում հոմոֆոն, 2-րդը պոլիֆոնիկ ոճերի վիպաքնար. բնույթի (դրամատիկ. տարրեր պարունակող) երաժշտ. խոշոր երկեր են:

XIX դ-ի 2-րդ կեսից Պ. ընկալվում է նաև ծիսաարարողակարգից անջատ՝ որպես յուրօրինակ բազմամաս երաժշտ. ստեղծագործություն, որի որոշ հատվածներ հնչում են համերգ. կատարմամբ: XX դ-ում Պ-ի գրական տեքստով Պ-ներ են գրել Ա. Պարթևյանը (Մեծ եղեռնի զոհերի հիշատակին՝ մեսսա-օրատորիա՝ մեներգիչների, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի համար), Խ. Մեյխանեջյանը, Ա. Ոսկանյանը և Դ. Հալաջյանը: Կաթողիկոս. սրբատառ կոնդակ են ստացել միայն Մ. Եկմալյանի և Խ. Մեյխանեջյանի Պ-ները:

Գրկ. *Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւն ի կարգս եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վնտ., 1847: Խոսրով Անձևացի, Մեկնութիւն աղօթից Պատարագին, Վնտ., 1869: Գաթրճեան Յ., Սրբազան Պատարագամատոյց Հայոց..., Վնն., 1897: Վարդապետութիւն ԺԲ առաքելոց, ԿՊ, 1898: Հացունի Վ., Սուրբ Պատարագի օրերն, տեսակք եւ ժամեր Հայ եկեղեցւոյ մէջ, Վնտ., 1899: Կոմիտաս, Երգեցողութիւնք Ս. Պատարագի... ի ձեռն Մ. Եկմալեանի, տես նրա Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Նույնի, Մակար Եկմալյան. կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1981: Աթայան Ռ., Մակար Եկմալյան, ՊԲՀ, 1981, № 1–2: Իգնատիոսեան Վ., Մեր Ս. Պատարագը, Մարսէյլ, 1991: Աջապահյան Մ., Քրիստոնեական պատարագի նախադրյալները, «Գանձասար», 1, 1992: Ներսոեան Տ., Համառօտ մեկնութիւն Պատարագամատոյցի, Փարիզ, 1999: Ներսես արեղա Պոզապալյան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Պատարագը, Էջմիածին: Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր Պատարագը, Էջմիածին, 2008: Զայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Ե., 2012: Եկմալյան Մ., Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական եկեղեցիոյ, Ե., 2017: Петровский А., Апостольские литургии Восточной Церкви, СПБ, 1897; Лебедев А.П., Наука о богослужении Православной Церкви, М., 1904; Худабашян К., Армянская музыка на пути от монодии к многоголосию, Е., 1977; Мень А., Православное Богослужение, М., 1991.*

Արթուր Վարդանյան

ՊԱՏԿԵՐ, երաժշտաբեմ. ստեղծագործության արարի առանձին, ավարտուն մասը: Դրամատիկ., օպեր., բալետ. ներկայացումներում Պ-ները միմյանցից անջատվում են կարճ ընդմիջումներով, որոնց ընթացքում հանդիսականը մնում է հանդիսասրահում, իսկ բեմում դեկորները փոփոխվում կամ մնում են նույնը:

ՊԱՏՄԱԳՐՅԱՆ Աշոտ Արիստակեսի (20.05.1898, Թավրիզ–28.04.1982, Բեյրութ), խմբավար, մանկավարժ, կոմպոզիտոր, երաժշտագետ: Պատվավոր դ-ր (1954), պրոֆ.: Ռոզ *Պատմագրյանի* ամուսինը: Պատմիչ Առաքել Դավրիժեցու տոհմից է: Նախն. կրթությունն ստացել է Թավրիզի Արամյան վարժարանում, ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1918), Բեռլինի «Շտեռնշես» մասնավոր կոնսերվատորիան (1926): Ճեմարանում սովորելու տարիներին հիմնադրել է իր առաջին երգչախումբը: 1918-ից դասավանդել է Թավրիզի Արամյան վարժարանում, միաժամանակ ղեկավարել Սբ Աստվածածին եկեղեցու երգչախումբը, գրել և բեմադրել է օպերետներ («Տերն ու ծառան», «Շունն ու կատուն», «Բրուտ ապերը» ևն): 1926-ին Փարիզում հիմնադրել է «Գուսան» երգչախումբը (սիմֆ. նվագախմբի հետ համերգը հնչել է Էյֆելյան աշտարակի ռադիոկայանից): 1948-ից Երուսաղեմում աշխատել է մանկավարժ, գրող Հակոբ Օշականի, բանաստեղծ Եղիվարդի (Եղիշե վարդապետ Տերտերյան), «Օհան Դուրյան» քառյակի հետ: Գրել է երգեր («Իմ գարուն», «Օրոր», «Սիրտս», «Փափագ», «Ցնորք», «Սիրերգ» ևն), խմբերգեր, ռոմաններ, դաշնամուրի սյուիտ, «Հայկական օրատորիա», մանկ. օպերետներ և այլ երկեր, մշակել հայկ. ժող. երգեր («Յար գյուլա», «Դուդուլ», «Դիլբար», «Սարերի հովին մեռնեմ», «Լյուսնակը ցոլաց, գնաց» ևն): Կազմել և հրատարակել է «Երաժշտաղարան» դասագիրքը (1937), «Գանձարան հայ երգերու» (7 պրակ, 1938-ից, ՀԲԸՄ մշակույթի մրց.՝ 1945), «Ռոմաններ» (1964) ժող-ները, հրատարակել է «Ժողովրդական արվեստի տարրերի գործածությունը հայ եկեղեցական երգի մեջ ԺԲ դարում» ուսումնասիրությունը (1954, Քեմբրիջ, Արևելագետների XXIII միջազգ. համաժողով, զեկուցում, հրտ.՝ հայ., ֆրանս., անգլ., Փարիզ) և «Հայ երգը դարերի միջից» (1973) հայ երաժշտագիտ. հանրագիտարանը: 1967-ից ապրել է Բեյրութում, որտեղ դասավանդել է, հրատարակել «Իմ հուշերից» (1978) գիրքը:

Մշակել է նաև սոլֆեջջոյի դասավանդման ուղեցույց դպրոցների համար:

«Էլմի» (1943, Իրան), ՀԱԵ «Սբ Ներսես Շնորհալի» (1958) շքանշաններ:

Գրկ. *Քառասնամեայ յոբելեան Աշոտ Պապմազրեանի, Բեյրութ, 1962:*

ՊԱՏՄԱԳՐՅԱՆ Ռոզ [մոտ 1900, Թավրիզ (Պարսկաստան)–25.08.1959, Փարիզ], երգչուհի: Աշոտ *Պապմազրյանի* կինը: 1914-ին՝ Առաջին աշխարհամարտի օրերին ծնողները գաղթել են Թիֆլիս, որտեղ սովորել է Հովնանյան վարժարանում, միաժամանակ երգեցողության դասեր առել կոնսերվատորիայի վոկալ բաժնում: 1921-ին ընդունվել է Պետրոգրադի (այժմ՝ Ս. Պետերբուրգ) կոնսերվատորիան (պրոֆ. Երշովի դասարան), ավարտելուց հետո վերադարձել է Թիֆլիս: 1925-ին ամուսնու հետ բնակություն է հաստատել Փարիզում: Բեմելը՝ 1926-ին «Սառա Բեռնար» համեգասրահում, որտեղ հետագայում կատարել է Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի, Վ. Ա. Մոցարտի Ռեքվիեմի սոպրանոյի երգամասերը, նաև Պ. Ի. Չայկովսկու. Մ. Պ. Մուսորգսկու ստեղծագործությունները: Փարիզում՝ Ֆ. Ի. Շալյապինի հիմնադրած Ռուսական օպերայում, Պետրոգրադի և Մոսկվայի վոդևարանդի լավագույն երգիչ-երգչուհիների հետ հանդես գալու հրավեր է ստացել նաև Պ.: Նա ամուսնու հետ հայ երգարվեստը ներկայացնող ու տարածողներից էր ոչ միայն ֆրանսահայ իրականության մեջ, այլև ողջ Սփյուռքում:

Ռոզ Պապմազրյան

ՊԱՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, լայն առումով՝ պարին նվագակցող երաժշտություն, նաև նրանից ածանցվող երաժշտ. ստեղծագործություն, որն ունի ինքնուրույն գեղ. արժեք: Նեղ առումով՝ թեթև երաժշտություն, որն ուղեկցում է տարածված կենցաղ. պարերին: Յուրաքանչյուր պարի համար (վալս, մազուրկա ևն) ստեղծվում են տարաբնույթ երաժշտ. պիեսներ, որոնց ռիթմ. բանաձևն ու տեմպը համապատասխանում են տվյալ պարի շարժումներին: Ժող.Պ.ե.լինում է վոկալ (առավելապես՝ խմբերգ.)՝ գործիքների նվագակցությամբ (կամ առանց դրա) և գործիք.: Ժող. հենքով պրոֆեսիոնալ Պ. ե. հիմնականում գործիքային է: Պարերը (հանդիսապարեր ևն) թեթև, ջազ. երաժշտության բաղկացուցիչ մասերից են (տես *Ջազ*): Հնուց պարերը հաճախ որոշակի սյուժեով միավորվել են պար. ներկայացման մեջ: XVIII–XX դդ-ում Պ.ե-յան կարևոր ճյուղերից են ունկնդրման (ոչ թե պարերին նվագակցող) համար նախատեսված երկերը:

Պ.ե.բալետ. երաժշտության ձևերից է: Մի քանի պար. պիեսների միավորումով կազմավորվել է գործիք. հնագույն սյուիտը: Պար. պիեսը՝ որպես մաս, մտել է սոնատ-սիմֆ. ցիկլի մեջ: Պար. ռիթմերը հաճախ օգտագործվում են դաս. սիմֆոնիաների և այլ ցիկլ. գործիք. երկերի վերջաբաններում: XIX դ-ից որոշ պար. պիեսների բովանդակությունը խորացվել, բանաստեղծականացվել է, հասցվել համերգ. կատարման բարձրարվ. երկի մակարդակի (Ֆ. Շոպենի վալսերը, մազուրկաները, պոլոնեզները)՝ երբեմն ձեռք բերելով ծրագր. բնույթ (Կ. Մ. Վեբերի

Հատված «Շուշիկի» պարից (Կոմիտասի «Դաշնամուրային պարեր» շարքից)

«Պարի հրավեր», Ֆ. Լիստի «Մեֆիստովալս» ևն): Տարածված են նաև ժող. պարերի բազմազան մշակումներ (Յ. Բրամսի «Հունգարական պարերը», Է. Գրիգի «Նորվեգական պարերը», Տ. Չուխաճյանի մազուրկաները, պոլկաները, գավոտները և «Մեծ ֆանտաստիկ» վալսը, Կոմիտասի դաշնամուր. պարերը ևն): Ժող. պարի հի-

ման վրա ստեղծվել են ծավալուն երաժշտ. երկեր (Մ. Ի. Գլինկայի «Կամարինյան»-ը՝ նվագախմբի համար, ևն):

XX դ-ից Պ. ե. առավել տարածվել և դարձել է երաժշտարվ-ի հանրամատչելի տեսակներից (դիսկո, փոփ ևն):

ՊԱՐԱՖՐԱԶ (< հուն. παράφρασις – շարադրանք, վերապատում), 1. գործիք. կոնցերտ. պիես՝ առավելապես դաշնամուրի համար՝ հիմնված հանրահայտ երգերի, օպերաների արիաների ևնի վրա: Այդ թեմաները հաճախ վերակազմավորվում և հանդես են գալիս նոր հարաբերակցություններով: Պ. լայնորեն տարածվել է XIX դ-ում, դաս. նմուշներ է ստեղծել Ֆ. Լիստը՝ Վ. Բելլինիի, Ջ. Վերդիի, Ռ. Վագների, Պ. Ի. Չայկովսկու և ուր. օպերաների թեմաներով:

2. Եզրույթ, որը գործածվել է XIII–XVI դդ-ի երաժշտության մեջ (օր.՝ մեսսա-Պ-ները նիդեռլանդ. դպրոցի կոմպոզիտորների գործերում)՝ միաձայն մեղեդու (լիթուրգ. կամ աշխարհիկ) պոլիֆոնիկ մշակումը նշելու համար:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ, պարբերույթ, երաժշտության մեջ՝ մտքի բարձր կազմակերպված, հարաբերականորեն

Կրկնվող պարբերության օրինակ

ինքնուրույն և ավարտված էքսպոզիցիոն շարադրանք: Բաղկացած է 2 (կամ ավելի) խոշոր մասերից՝ նախադասություններից: Երկու նախադասությունները կարող են ունենալ տարբեր թեմատիկ կազմ, սակայն գործնականում ավելի հաճախ հանդիպում են Պ-ներ, որտեղ 2 նախադասությունների սկզբն. տակտերը նույնն են:

Պ-ում հատվածների ներքին միասնությունը պարտադիր է, որն առաջանում է թեմատիկ, կառուցվածք., այնպես էլ հարմոնիայի ոլորտներում:

Դաս. երաժշտության մեջ լայնորեն կիրառվում են քառակուսի Պ-ներ՝ տակտային հետևյալ փոխհարաբերություններով՝ 8 (4 + 4), հազվադեպ՝ 4 (2 + 2) կամ 16 (8 + 8) ևն:

Թեմատիկ նյութով նման նախադասություններ ունեցող Պ-ները կոչվում են կրկնվող կառուցվածքով, որտեղ 2-րդ նախադասությունը 1-ինի ճշգրիտ կամ որոշ փոփոխություններով կրկնությունն է, իսկ կադանսները տարբեր են:

Չկրկնվող կառուցվածքով Պ-ում 2-րդ նախադասությունը, չնայած 1-ինի հետ ունեցած որոշ ընդհանրություններին, տարբերվում է նրանից, իսկ որոշ դեպքերում նրա պատասխան կառուցվածքն է:

Ըստ տոնայնության՝ Պ-ները լինում են միատոնայնական (կամ փակ) և մոդուլացվող (կամ բաց, առաջանում է նոր տոնայնություն), ըստ կառուցվածքի՝ պարզ և բարդ: Պարզում նախադասությունների թիվը կարող է անցնել 2-ից, սակայն, բոլոր դեպքերում նրանց թերավարտվածությունն ամբողջանում է Պ-յան մեջ: Գրկ-յան մեջ սակավ հանդիպող բարդ Պ. կազմված է 2 և ավելի նախադասություններից, որոնցից յուրաքանչյուրի ավարտվածությունը դրանց հաղորդում է Պ-յանը բնորոշ հատկանիշներ: Նախադասությունները թե՛ թեմատիկ, թե՛ կառուցվածք. առումով միմյանց մոտ են, որոշ դեպքերում նույնիսկ 2-րդը 1-ինի տարբերակն է:

Պ-յան այն տեսակը, որը չի բաժանվում նախադասությունների, կոչվում է միավորյալ:

Պ-յան մեջ նախադասությունները միշտ չէ, որ կառուցվում են զույգ բաժանման սկզբունքով. հնարավոր է նաև, որ կազմված լինի կենտ տակտեր ընդգրկող 2 նախադասությունից:

Ոչ կանոնավոր Պ-յան մեջ խախտումները վերաբերում են հատկապես 2-րդ նախադասության կառուցվածքին. նրա ծավալի փոքրացումով առաջանում է, այսպես կոչված, կրճատ Պ.: Եթե 2-րդ նախադասության վերջում (Պ-յան ավարտից հետո) կատարվում է ընդլայնում (2 կամ ավելի տակտերի սահմաններում), որն ամրապնդում է վերջինի՝ լրիվ կադանսը, կոչվում է արտաքին ընդլայնում (կամ լրացում): Սեքվենցիաների, շեղումների և մոտիվ. զարգացման շնորհիվ 2-րդ նախադասության մեջ կատարվող խոշորացումը կոչվում է ներքին: Նման դեպքերում Պ-յան արտաքին ծավալները մեծանալով՝ առաջացնում են ոչ քառակուսի կառուցվածքներ, որոնք կազմված են 9, 11 և այլ կենտ թվով տակտերից:

Պ.՝ որպես բաղկացուցիչ մաս, հիմնականում բնորոշ է խոշոր կտավի ստեղծագործություններին, սակայն հանդիպում է նաև ինքնուրույն ձևով (փոքր ձևի գործերում՝ պրելյուդ, պար, երգ ևն):

Վոկալ երաժշտության մեջ Պ. հաճախ օգտագործում են, այսպես կոչված, քառյակային ձևում, որտեղ երաժշտ. նյութն անընդհատ կրկնվում է նույնությամբ կամ որոշ տարբերակումներով, իսկ տեքստն ամեն անգամ փոխվում է:

Որպես երաժշտ. մտքի կառուցվածք. տարր՝ Պ. առաջացել է ժող. ստեղծագործության մեջ, որտեղ ցայսօր պահպանվում է հատվածների հարաբերության, տևականության և մեղեդիական նյութի կրկնման ու հանգավորման սկզբունքներով ավելի ազատ և բազմազան ձևերով: Հայ գեղջկական երաժշտության մեջ Պ. հաճախ ամբողջ. երգն է՝ բաղկացած մի դեպքում՝ մեղեդիապես նման, սակայն տարբեր հանգավորվող նախադասություններից, այլ դեպքում՝ միանման հանգավորվող տարբեր նախադասությունների հաջորդականությունից: Բնորոշ է անհավասարաչափությունը: Աշուղ. և հոգևոր մոնոդիկ երաժշտության մեջ հանդիպում են համեմատաբար բարդ կառուցվածքի բազմահատված Պ-ներ:

Ըստ Նովպիա Դերոյանի

ՊԱՐԵԳԱՆԱԿ, պարելու համար գրված մեղեդիական երաժշտություն, որտեղ արտահայտված են յուրաքանչյուր պարին բնորոշ ռիթմ, տեմպ, շարժումներ: Յուրաքանչյուր Պ. ունի ռիթմային գծապատկեր, որն անընդհատ կրկնվում կամ տարբերակվում է: Պ. հիմնականում գործիք. ստեղծագործություն է: Ժող. կենցաղում տարածված են նաև պարերգերը, որոնք կատարվում են նվագակցությամբ կամ առանց դրա: Պարում են նաև միայն հարված. երաժշտ. գործիքների նվագակցությամբ (դափ, դհոլ, կաստանիետ, ծափազարկ): Պ-ները նպաստել են գործիք. երաժշտության ձևավորմանը: Բազմաթիվ սյուիտներ ստեղծվել են տարաբնույթ Պ-ներից:

ՊԱՐԵՐԳԵՐ, գեղջկական ժող.երգեր, որոնք կատարվում են շուրջպարի ուղեկցությամբ կամ ուղեկցում են շուրջպարին: Հնում ունեցել են ծիս. նշանակություն, որպես կանոն, վերածվելով երգի բովանդակության դրամատիկ. խաղարկման, ապա, աստիճանաբար ծեսից անջատվելով, դարձել են գեղջկական ժող.համադրական արվ-ի ամենատարածված տեսակը:

Մի շարք Պ., այնուամենայնիվ, պահպանել են իրենց երբեմնի ծիս. բնույթն ու նշանակությունը: Պարը և նրան ուղեկցող երգը մշտապես փոխադարձաբար համաձայնեցված են: Սովորական ծորուն երգերում մեղեդու կառուցման սկզբունքն առավելապես հոսուն երգայնությունն է, որն իրագործվում է միմյանցից տարբերվող ռիթմ. դարձվածքների միավորումով: Հայ գեղջկական Պ., ըստ ռիթմ. պատկերների, տեմպի, հուզ. երանգի, բնույթի ու բովանդակության, բնորոշ է ծանրկեկ ու թեթև, հանդարտ ու եռանդուն, նազանի և առնական, կատակ. ու հերոս., նաև քնար., աշխատանք., ծիս. և վիպ. հատկանիշներով: Պահպանված ավանդ. բանահյուս. նյութում գերակշռում են քնար. Պ., որտեղ գերիշխողը սիրո գովքն ու կատակն են՝ համեմված բնության պատկերների նկարագրությամբ և գովերգումով: Նրանց եղանակների ռիթմ. պատկերները, նաև մետրն ու մոտիվային կառուցվածքը բազմազան են:



Հատված «Գորանի» պարերգից (գրառումը՝ Սարգարիտ Բրուտյանի)

Սովորական պարզ և բարդ, կենտ և զույգ կանոնավոր մետրերի հետ մեծ տեղ են գրավում նաև ներքին տարբերակումներով խառը չափերը: Եղանակը հաճախ կազմված է անհավասարաչափ մոտիվներից, որոնք էլ մեծացնում են ներքին դինամիկան: Որպես կանոն՝ Պ. (թե՛ խոսքը, թե՛ եղանակը) ամեն անգամ հորինվում է հանպատրաստից (որոշողը բուն պարի տեսակն է՝ պայմանավորված պարախմբի կազմով՝ աղջիկներ, տղաներ, մեծահասակներ կամ խառը): Խոսքի ու եղանակի իմպրովիզացիան հիմնվում է բանաստեղծ-կերպար., դարերով ամբարված հարուստ երաժշտ. պաշարի վրա: Բազմաթիվ նմուշներ, դիմանալով «ժամանակի քննությանը», դարձել են հաստատուն և կրկնվում են գրեթե նույնությամբ:

Արա Պարթևյան



Պարկապզուկ

Վարդգես Պարոնյան

Հայկ.ժող.Պ. բնորոշվում են նաև հնությամբ (հին, ավանդ. կամ նոր) և տեղ. հատկանիշներով (Արարատյան, Արևմտահայաստանի գավառների ևն): Հայ երաժիշտ-բանահավաքները գրառել են գեղջկական Պ-ի բազմաթիվ բարձրարժեք նմուշներ (Կոմիտասի «Ղարսա բերդը բլիլ է», «Ալագյազ», «Հոդալլո ջան» ևն): Հայկ.Պ-ի տեսակ է պարողի երգեցողությամբ կատարվող մենապարը («Տասնչորսը» ևն), որն ավելի շուտ քաղաք. ժող. մշակույթի տարր է:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՊԱՐԹԵՎՅԱՆ Արա Միհրանի (1903, Կ. Պոլիս–1986, Փարիզ), կոմպոզիտոր, դիրիժոր, խմբավար: 1924-ից ապրել է Փարիզում: Ավարտել է «Schola cantorum»-ը (1933): 1920-ին հրատարակվել է նրա «Նոր երգեր» շարքը, ապա՝ բազմաթիվ մեներգեր՝ Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի և ուր. խոսքերով, խմբերգեր, ռոմանսներ: Գրել է նաև «Տատրագոմի հարսը» (ըստ Կ. Զարյանի) օպերան, գործեր՝ սիմֆ. նվագախմբի համար («Ռապսոդիա», «Գեղջկական համերգ», «Կովկասյան սիմֆոնիա», «Անտառի մեջ, նոյեմբերին» պոեմը ևն): Առանձնանում է նրա «Պատարագ» մեսսա-օրատորիան (Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, 20-մասանոց, մեներգիչներ, երգչախումբ՝ սիմֆ. նվագախմբի նվագակցությամբ, ձայնապնակը՝ 1981, Փարիզ): Ստեղծագործություններին բնորոշ են ինքնատիպ ոճը, ազգ. մեղեդային հատկանիշների և ֆրանս. դաս. երաժշտության ու իմպրեսիոնիստ. որոշ արտահայտչաձևերի համադրումը: Ազգայինի մեջ օգտագործել է քաղաք. բանահյուսության նմուշներ և արտահայտչաձևեր: Շուրջ 40 տարի Փարիզում ղեկավարել է հայկ. երգչախումբ: 1932-ից, որպես դիրիժոր, հանդես է եկել Ֆրանսիայի քաղաքներում, Կ. Պոլսում. երկացանկում՝ եվրոպացի և հայ կոմպոզիտորների (Ա. Սպենդիարյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Հ. Ստեփանյան և ուր.), նաև սեփ. գործերից: Հեղինակ. համերգներով հանդես է եկել Հայաստանում (1963, 1979):

ՀԽՍՀ Մ՝Ն Պ. Ադամյանի անվ. մրց. (1986):

ՊԱՐԿԱՊԶՈՒԿ, պ ա ր կ ա պ կ ու, տիկ, ժող. փող. լեզվակավոր երաժշտ. գործիք: Բաղկացած է կաշվե պարկից, օդամուղ փողակից և եղեգնյա պարզ կամ կրկնակի լեզվակավոր մի քանի նվագափողերից (Հայաստանում կոչվում է պկու կամ պզուկ, գործածվում է նաև առանց օդամուղ պարկի, փչում են բերանով), որոնցից 1–2-ը ձայնանցքով են՝ մեղեդին կատարելու, 1–2-ը (կամ ավելի)՝ առանց ձայնանցքերի, բասային՝ դամ պահելու համար: Նվագողը նախապես օդով լցրած և թևատակին դրած պարկը սեղմում է մարմնին, պարկի օդն անցնում է նվագափողերը և տատանում լեզվակները: Միաժամանակ՝ նա օդափողակով մերթընդմերթ պարկում լրացնում է օդի պաշարը: Աշխարհում ամենատարածված ժող. երաժշտ. գործիքն է, ազգ. տեսակներն ունեն տարբեր ինչյունաշարեր և դիապազոն: Շոտլանդիայում օգտագործում են նաև զինվ. նվագախմբում: Հայաստանում ընդունված Պ-ի պարզագույն տեսակը բաղկացած է ձայնանցքեր ունեցող 2 նվագափողից:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՊԱՐՈՆՅԱՆ Վարդգես (1933, Բելգրադ–1993, Բելգրադ), կոմպոզիտոր: Ավարտել է Բելգրադի երաժշտ. ակադ-ը (1963): Հարավսլավիայի ռադիոյի և հեռուստատեսության երաժշտ. հաղորդումների տնօրեն, «Nota» երաժշտ. ամսագրի խմբագիր, Հարավսլավիայի ԿՄ քարտուղար: Ստեղծագործություններում մշակել է ինքնատիպ երաժշտ. լեզու՝ համադրելով ավանդ. բազմաձայն շարադրանքն ու առավել ժամանակակից հարմոնիաները: Այս սկզբունքներով ստեղծած գործերից են՝ 1-ին սիմֆոնիան, լար. կվարտետը, կոնցերտը՝ սիմֆ. նվագախմբի, սոնատը՝ սաքսոֆոնի, ալտի և դաշնամուրի, «Վարիացիաներ և ֆուգա»-ն՝ դաշնամուրի համար, «Փոքրիկ սյուիտը», սոնատը և պրելյուդները: Նվագախմբ. «Դիվերտիսմենտ»-ը միջազգ. փառատոնում արժանացել է 1-ին մրց-ի (1965, Խորվաթիա): Համագործակցել է հունգ. և շվեդ. ջազ. միությունների հետ, գրել այդ ոճի երաժշտություն թատեր. և հեռուստատես. ներկայացումների համար: 1987-ին Մոսկվայում մասնակցել է Երիտասարդ. միջազգ. փառատոնին: 1990-ին այցելել է Հայաստան:

ՊԱՐՏԻՏ (իտալ.՝ partita – մասերի բաժանված, լատ.՝ partire – բաժանել, բաշխել), XVII–XVIII դդ-ի երաժշտության մեջ՝ խորալ. մեղեդու երգեհոն. վարիացիաների, նաև հիմնականում պար. պիեսներից

Հատված Տիգրան Մանսուրյանի «Պարտիտ»-ից

բաղկացած գործիք. սյուիտի տեսակ (Յ. Ս. Բախի մենանվագ ջութակի, կլավիրի Պ-ները ևն): Նույն նշանակությամբ գործածել են նաև XXI դ-ում (Ա. Կազելլա, Լ. Դալլապիկկոլա, Տ. Մանսուրյան և ուր.):

ՊԱՐՏԻՏՈՒՐ (իտալ.՝ partitura – բաժանում, բաշխում, < լատ. partire – բաժանել, բաշխել), բազմաձայն երաժշտ. ստեղծագործության (գործիք., խմբերգ. կամ վոկալ- գործիք.) բոլոր ձայների համատեղ նոտագրումը, որտեղ յուրաքանչյուր նվագամասին կամ երգամասին հատկացվում է առանձին տող: Նվագամասերը որոշակի կարգով դասավորվում են մեկը մյուսից վար այնպես, որ տակտի համապատասխան մասերը լինեն մեկ ուղղաձիգի վրա, և հեշտացվի ձայների համադրումից գոյացող համահնչյունների տեսող. ընկալումը: Այդպիսի Պ. երևան է եկել XVI դ-ի կեսերից Իտալիայում և ժամանակի ընթացքում դարձել բազմաձայն երաժշտ. ստեղծագործության նոտագրման հիմնական ձև: Կատարման համար արտագրվում (հրատարակվում) են առանձին կատարողների երգամասերն ու նվագամասերը, իսկ դիրիժորը (կամ խմբավարը) երկն ուսումնասիրելիս առաջնորդվում է Պ-ով:

Աստիճանաբար Պ-ում հաստատվել է ձայների դասավորման որոշակի կարգ: Վոկալ (խմբերգ.) Պ-ում ձայները դասավորվում են վերից վար՝ ըստ տեսիտուրայի ցածրացման (սոպրանո, ալտ, տենոր, բաս): Սիմֆ. նվագախմբի համար Պ-ում նվագամասերը դասավորվում են ըստ խմբերի (վերից վար)՝ փայտե փող., պղնձե փող., հարված. գործիքներ, տավիղ (եթե պահանջվում է), լար. գործիքներ, յուրաքանչյուր խմբում՝ ըստ ինչողության բարձրության: Նվագախմբի հետ մենակատար գործիքների, վոկալ ձայների, երգչախմբի պարտիաները տեղավորվում են տավիղի և աղեղն. գործիքների միջև:

Հատված Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետի «Լեզգինկա» պարի պարտիտուրից

ՊԱՈՒԶԱ (լատ.՝ pausa, < հուն. pausis – դադար, ընդհատում), դադար, ձայն առհաստ, 1. երաժշտ. երկը ինչելիս մեկ, մի քանի կամ բոլոր ձայների ժամանակավոր ընդհատումը որոշակի տևողությամբ. կիրառվում է գեղ. արտահայտչականության նպատակով: Պ. գրառվում է հարաբեր. տևողություն արտահայտող հատուկ նշաններով: Որևէ անսամբլի բոլոր ձայների միաժամանակյա Պ. կոչվում է գեներալ-Պ.:



Քշիշտոֆ Պենդերեցկի

Արշակ Պենկյան

Սերովբե Պենկյան

ՊԵՆԴԵՐԵՑԿԻ (Penderecki) Քշիշտոֆ [ծ. 23.11.1933, Դեմբիցա (Լեհաստան)], լեհ կոմպոզիտոր, դիրիժոր: Հայուհու թոռ է: Ավանգարդիզմի նշանավոր ներկայացուցիչ Արլ. Եվրոպայում:: Ավարտել է Կրակովի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը (1958, Ա. Մալյավսկու, Ս. Վեխովիչի դասարաններ): Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի (2007), ԵՊԿ (2008) պատվավոր պրոֆ.: 1958–ից դասավանդել է Կրակովի կոնսերվատորիայում (ռեկտոր՝ 1972–87–ին), 1966–68–ին՝ Էսսենի (Գերմանիա) երաժշտ. բարձրագույն դպրոցում, ապա՝ Յեյլի համալսարանում (1972–78–ին՝ երաժշտության պրոֆ.):

Գրել է «Լյուդռնի դևերը» (1969), «Կորուսյալ դրախտ» (1978), «Սև դիմակ» (1986), «Ուբու թագավորը» (1991) օպերաները, «Պատարագ» (Հիրոսիմայի զոհերի հիշատակին, 1960), երկեր՝ երգչախմբի (նաև մեներգիչների), նվագախմբի և գործիք. անսամբլի համար՝ «Դավթյան սաղմոսներ» (1958), «Ստաբատ մատեր» (1962), «Չարչարանքներ ըստ Ղուկասի» (1965), «Կոսմոգռնիա» (1970), «Սողոմռնի Երգ երգոց» (1972), «Տե Դեում» (1979), «Լեհական ռեքվիեմ» (1980–84), «Ագնուս Դեի» (1995), «Երուսաղեմի յոթ դարպասները» (1996), «Credo» (1998), լար. կվարտետներ (1960, 1968), տրիո (1991), կոնցերտներ, կինոյի ու թատրոնի երաժշտություն և այլ գործեր: Հանդես է եկել նաև որպես դիրիժոր:

2008, 2014, 2018–ին այցելել է ՀՀ (կատարվել են նրա գործերից):

Երիտասարդ կոմպոզիտորների մրցույթի 1–ին (1959, Վարշավա), «Գրեմմի» (1988) և այլ մրց–ներ, Գերմանիայի «Արժանյաց շքանշանի» մեծ խաչ, ՀՀ «Պատվո նշան» շքանշան (2009), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2013):

Գրկ. *Ивашкин А., Кшиштоф Пендерецкий: Монографический очерк, М., 1983.*

ՊԵՆԿԼՅԱՆ (Պենլյան, Խաչատրյան) Արշակ Խաչատուրի (30.06.1867, Կ. Պոլիս–10.04.1923, Կ. Պոլիս), թատեր. գործիչ, դերասան, ռեժ.: Բեմ. գործունեությունն սկսել է 1882–ին Կ. Պոլսում: Վայելել է Սերովբե *Պենկյանի* մտերմությունն ու հովանավորությունը, կրել նրա ազգանունը: 1880–ական թթ–ին աշխատել է Ռումինիայում, Բուլղարիայում (ներկայացրել է թուրք. ժող. թատերախաղեր), եղել Վառնայի «Վեսելո» թատերախմբի ղեկ–ներից (խաղացել է նաև դրամատիկ. դերեր): 1908–ից Կ. Պոլսում հանդես է եկել հիմնականում թուրք. և թուրք–ի թարգմանած օպերետներում («Փեմբե գըզ», Ֆ. Հերվեի «Մադմուազել Նիտուշ» ևն): Խաղացանկում՝ Տ. Չուխաճյանի «Արիֆ», «Քեռսե Քեհյա», Ե. Օտյանի և Մ. Կյուրճյանի «Չարշըլը Արթին աղա» (թարգմ.՝ Արշակ Ուզումճյանի) և այլ օպերետներ: Պ–ի ռեժ. և դերասան. վարպետության գլուխգործոցը Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր–հոր աղա» (Հոր–հոր աղայի դերակատար՝ Պ.) օպերետն է: Իր թատերախմբերի հետ շրջագայել է Բուլղարիայում, Եգիպտոսում, Հունաստանում, Լոնդոնում, Փարիզում և այլուր:

ՊԵՆԿԼՅԱՆ (Պենլյան) Սերովբե Հակոբի [29.06(11.07).1838, Կ. Պոլիս–28.02.1903, Ալեքսանդրիա], դերասան, ռեժ., թատեր. գործիչ: Սովորել է Կ. Պոլսի Բերայի ազգ. վարժարանում: Բեմ. գործունեությունն սկսել է 1857–ին, խաղացել է նաև թուրք., ֆրանս., իտալ.: 1861–ից մասնակցել է «Արևելյան թատրոնի» ներկայացումներին: 1863–ից՝ Ս. Էքշյանի (Զմյուռնիա) և այլ թատերախմբերի, 1868–ից՝ Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնի» դերասան: 1878–ին հիմնադրել է պրոֆեսիոնալ օպերետ. խումբ, բեմադրել հայկ. և թարգմ. օպերետներ, որոնց մասնակցել են դերասաններ Սիրանույշը, Վ. և Ե. Գարագաշյանները, Մ. Մնակյանը, Դ. Թրյանցը, Գ. Շիրինյանը, Մ. Չափրաստը և ուր.: Թատերախումբը հյուրախաղերով շրջագայել է Թուրքիայի, Հունաստանի, Եգիպտոսի մի շարք քաղաքներում: Լավագույն դերերից են՝ Բել (Ռ. Սետեֆճյանի «Հայկ դյուցազն»), Մերզուկ (Շ. Լեկոքի «Ժիրոֆլե Ժիրոֆլյա»), Արիֆ, Հոր–հոր աղա (Տ. Չուխաճյանի «Արիֆ», «Լեբլեբիջի Հոր–հոր աղա») ևն:

ՊԵՆՏԱՏՈՆԻԿԱ (< հուն. πέντε – հինգ և τόνος – տոն), հնգաստիճան ձայնակարգ. բաղկացած է 5 տարբեր բարձրության հնչյուններից՝ օկտավայի Պ–ի հնչյունաշարի սահմաններում: Տարբերում են Պ–ի հեմիտոնային (կիսատոներով) և ոչ հեմիտոնային (առանց կիսատոների) տեսակները: Ոչ հեմիտոնային Պ. (առավել տարածված) անվանում են նաև չին. կամ շոտլանդ. ձայնակարգ, թեև այդ ձայնակարգերն ունեն և լայնորեն գործածում են բազմաթիվ այլ ժողովուրդներ (մոնղոլներ,

կորեացիներ, իռլանդացիներ, հունգարներ ևն): Ճապոնիայում դրան զուգահեռ օգտագործում են նաև հեմիտոնային Պ.:

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ (ծ. թ. անհտ–1058, Սեբաստիա, ամփոփվել է Սբ Նշան վանքի բակում), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1019-ից. օծվել է Անիում: 1022-ին բյուզ. Վասիլ II կայսրի հետ կնքել է պայմանագիր, ըստ որի՝ Անիի թագավորությունը Գագիկ Ա-ի որդու՝ Հովհաննես-Սմբատի մահից հետո անցնելու էր կայսրությանը: Պայմանագիրը մեծ զայրույթ է առաջացրել Անիում. Պ. Ա Գ. ստիպված անցել է Սեբաստիա, վերադարձել է 1026-ին: Ըստ ավանդության՝ Տրապիզոնում Զրօրհնեքի ժամանակ Պ. Ա Գ-ի օրհնությունից հետո գետի հոսքը կանգ է առել, ապա հետ դարձել (այստեղից՝ Գետադարձ մականունը):

Պ. Ա Գ. եղել է ժամանակի ուսյալ և ամենազարգացած մարդկանցից, հայ հոգևոր երգարվ-ի երախտավորներից: Շարականագիրների միջնադար. ցուցակների հեղինակները նրա վաստակն են համարում Ննջեցեալոց և Մարտիրոսաց կարգերի բազմաթիվ շարականները: Առավել հայտնի է նրա Սբ Վարդանանց կանոնի «Արիացեալք առ հակառակն» մանկունքը, որն աչքի է ընկնում մեղեդիական հարուստ և ինքնատիպ նկարագրով:

Գրկ. *Արևշատյան Ա., Անիի երաժշտական մշակույթը, Ե., 2014:*

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ [ծ. թ. անհտ–20.03.1784, Նիկոմեդիա (այժմ՝ Իզմիր՝ Թուրքիա)], բանաստեղծ, երաժիշտ: 1753–1756-ին եղել է Էջմիածնի միաբան, որպես նվիրակ աշխատել է Կ. Պոլսում, Ադրիանապոլսում, Արմաշում, Ռումելիում, Ղրիմում, վերջնականապես հաստատվել է Կ. Պոլսում: 1780-ին նշանակվել է Նիկոմեդիայի թեմի առաջնորդ: Նրա «Գրքոյկ կոչեցեալ Երգարան» (1772) ժող-ն ընդգրկում է շուրջ 110 երգ-բանաստեղծություն: 36 եղանակավոր երգերի մեծ մասը («Ծիլ-ծիլ ոսկի են վարդի թերթերն», «Լուսաբեր զտրօնքն ի վարդի» ևն) զետեղվել է ժող. երգարաններում (մի մասը երգվում է ցայսօր):

Պ. Ղ. առաջին բանաստեղծն է, որ վարդի ու սոխակի այլաբանությամբ արտահայտել է հայ ժողովրդի քաղ. ազատության գաղափարը:

Գրկ. *Քիւրտեան Հ., Անծանօթ գրաւչափ մը, «Կոչնակ Հայասրանի», 1920, № 25: Նագարյան Շ., Պետրոս Ղափանցի, Ե., 1969:*

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ավագ Գեղամի [16(29). 03.1912, գ. Կամարիս (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզում)–05.11.2000, Երևան], երգիչ (դրամատիկ. տենոր): ՀՀ (1956), Ադրբ. ԽՍՀ (1962) ժող. արտիստ: Սովորել է ԵՊԿ-ում (1936–39, Ն. Կարդյանի դասարան, ավարտել է 1942-ին), ՄՊԿ-ում (1940–41, Ք. Ն. Դոռլիակի դասարան): 1934-ից՝ Հայաստանի պետ. երգչախմբի երգիչ (1939-ից՝ մեներգիչ), 1941–89-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ: Ազգ. օպերաներում մի շարք դերերգերի՝ Սանթուր (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Տիրիթ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Կարո (Ա. Բաբաևի «Արծվաբերդ»), Սոս (Վ. Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր»), Վահան (Հ. Ստեփանյանի «Հերոսուհին»), Սեյրան (Լ. Խոջա-Էյնաթյանի «Նամուս») առաջին կատարողն էր: Դերերգերից են՝ նաև Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Աշուղ և Շեյխ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Ռաղամես, Մանրիկո (Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր») ևն:

Պ. հանդես է եկել նաև համերգներով, եղել հայ, ռուս և արևմտաեվրոպացի դաս. կոմպոզիտորների՝ Պ. Ի. Չայկովսկու, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի, Ս. Վ. Ռախմանինովի, Յ. Ս. Բախի, Գ. Հենդելի, Ք. Վ. Գլյուկի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Շուբերտի, Է. Գրիգի, Ջ. Պուչչինիի, Կ. Սեն-Սանսի, Ռ. Լեոնկավալլոյի, Կոմիտասի («Չինար ես», «Ծիրանի ծառ», «Քելե-քելե»), Ռ. Մելիքյանի («Մի լար»), Մ. Միրզոյանի, Գ. Ալեմշահի («Կուզեի»), Բ. Կանաչյանի, Գ. Եղիազարյանի («Սարի աղբյուր»), Ա. Սաթյանի («Սարտիկի երգը», «Արարատյան հովտի երգեր», վոկալ-սիմֆոնիկ շարք, «Աղբյուրի մոտ») երգերի ու ռոմանսների լավագույն մեկնաբաններից:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951), Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

Գրկ. *Ասատրյան Ա., Պետրոսյան Ա., Ավագ Պետրոսյան–100, [Գիրք-ալբոմ], Ե., 2012:*

Որդին՝ Արա Պ. (ծ. 27.07.1952, Երևան), դաշնակահար, դիրիժոր: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1966), ԵՊԿ դաշնամուրի (1976), դիրիժորության (1991) բաժինները և ասպիրանտուրան (1985), Ժնևի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1998), կատարելագործվել Լենինգրադի (1988–90) և Լիոնի (1989–90) կոնսերվատորիաներում: «Արմենիա» սիմֆ. նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր (1989–94):

Պետրոս Ա Գետադարձ

Ավագ Պետրոսյան

Ա. Պետրոսյանը Աշուղի դերում (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերա)

Զոյա Պետրոսյանը ելույթի պահին

Էմմա Պետրոսյանը ելույթի պահին

Կոնսպրանտին Պետրոսյան

Համերգներով շրջագայել է արտերկրում: 1994–98-ին դասավանդել է Ժնևում, 2004-ից՝ հրավիրյալ դիրիժոր:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արուսյակ Մարկի (ծ. 24.12.1954, Երևան), երաժշտագետ: ՀԿՄ անդամ (2009-ից): Մարկ ***Պետրոսյանի*** դուստրը: Ավարտել է ԵՊԿ վոկալ-տեսության ֆակ-ը (1979), ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1983): 1984-ից՝ նույն ինստ-ի գիտաշխատող: Մասնակցել է «Հայ ավանդական երգերի համակարգչային քարտարանի» ստեղծման աշխատանքներին, նաև գիտարշավների՝ Հայաստանի շրջաններում: 1997–2015-ին դասավանդել է ԵՊԿ-ում: Հեղինակ է «Գերոնտի Թալալյան. կյանքն ու գործունեությունը» (ռուս., 1995) աշխ-յան:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Զոյա Սահակի (ծ. 09.08.1929, Երևան), ջութակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1963): Պրոֆ. (1983-ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (դասատու՝ Դ. Լեկգեր), ՄՊԿ (1953, Դ. Օյստրախի դասարան): 1953-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: 1962-ից դասավանդում է ԵՊԿ-ում: Մենահամերգներով և սիմֆ. նվագախմբերի հետ ելույթներ է ունեցել ռադիոյով և հեռուստատեսությամբ, շրջագայել Ռուսաստանում, Ուկրաինայում, Միջին Ասիայում, Մերձբալթյան երկրներում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Ֆրանսիայում, Կանադայում, Գերմանիայում, Նորվեգիայում, Սիրիայում. նվագացանկում՝ տարբեր ժամանակաշրջանների և ոճերի ստեղծագործություններ՝ դաս. շրջանի կոմպոզիտորներից մինչև Կ. Դեբյուսիի, Ս. Ս. Պրոկոֆևի, Ջ. Էնեսկուի, նաև հայ կոմպոզիտորների (Կոմիտաս, Ա. Սպենդիարյան, Ն. Տիգրանյան, Ա. Խաչատրյան, Ե. Բաղդասարյան) գործեր: Պ-ի անհատականությանը մոտ են Յ. Ս. Բախի, Գ. Հենդելի ստեղծած վեհ կերպարները, Յ. Բրամսի և Է. Գրիգի ռոմանտիկ պոռթկումները, Դե Ֆալլայի, Դ. Միյոյի և Ռ. Կ. Շչեդրինի գունեղ պիեսների կերպար. սուր բնորոշումները:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Էմմա Ալբերտի (ծ. 09.10.1965, Երևան), երգչուհի: ***Արամոյի*** կինը: ՀՀ վաստ. արտիստ (2017): Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցը (1980), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1984), ԵՊԿ (1990, Հ. Սմբատյանի դասարան) և ասպիրանտուրայի (1994, ղեկ.՝ Վ. Սամիկոնյան) ջութակի բաժինները, էստրադ-ջազ. ստուդիան (1990): 1997-ից դասավանդում է ԵՊԿ-ում (ջազ-վոկալ բաժին, դոցենտ՝ 2009-ից): 1989–91-ին՝ Հայաստանի ռադիոյի սիմֆ., 1991–92-ին՝ ֆիլհարմոնիկ նվագախմբերի կազմում, 1994–97-ին՝ Հայաստանի երգի պետ. թատրոնի երգչուհի (նաև հիմնադիրներից): Երգացանկում՝ Ռ. Ամիրխանյանի, Ա. Սաթյանի, Կ. Օրբելյանի, Ս. Շաքարյանի և ուր. գործերից: Հեղինակ է «Մոլորակ», «Օրորոցային», «Մայրիկիս», «Ռոմանս», «Երևանին», «Որդուս» և այլ երգերի, «Սև դառը շոկոլադ» (2013, բեմ.՝ 2014) պիեսի: 2008-ին մենահամերգով հանդես է եկել Հայաստանի կամեր. նվագախմբի հետ: Համերգներով շրջագայել է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, Եվրոպայում, Ամերիկայում, Լիբանանում, Սիրիայում և այլուր: Թողարկել է «Սև և սպիտակ» (2000), «Վերադարձ դեպի տուն» (2010, երկուսն էլ՝ Արամոյի հետ), «Աղոթք» (2008) ձայնասկավառակները, նկարահանել «Բարդիներ» (2001), «Կտավ» (2002), «Անավարտ գարուններ» (2004), «Էստոնական» (2006) և այլ տեսահոլովակներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Կոնստանտին Հրանտի (ծ. 12.08.1946, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1965, դասատու՝ Է. Բաղդասարյան), ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1973, Գ. Եղիազարյանի դասարան): 1976–85-ին դասավանդել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: 1965–70-ին՝ Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի նվագախմբի գեղ. ղեկ., 1973–76-ին՝ ՀԽՍՀ ՄՆ ժող. ստեղծագործության տան գեղ. ղեկ. և փոխտնօրեն, 1976–80-ին՝ Հայաստանի ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբի խմբավար (1990-ից՝ գեղ. խորհրդի անդամ), 1985–90-ին՝ ՀԿՄ երաժշտ. կենտրոնի ղեկ., 1990–93-ին՝ Հայաստանի խաղաղության հիմնադրամի փոխնախագահ: ՀԿՄ (1976-ից) և Հայկ. երաժշտ. համաժողովի անդամ (2003-ից), ՀԿՄ արտ. հանձնաժողովի համանախագահ (2013-ից):

1984 և 2003-ին հեղինակ. համերգներով հանդես է եկել Երևանում, 1991-ին Նյու Յորքում ղեկավարել է Հայաստանի անկախության հռչակմանը նվիրված

առաջին համերգը: 1997-ից՝ Ռոդ Այլնդի Հայկ. երաժշտ. փառատոնի գեղ. ղեկ., 2000-ից՝ Մասսաչուսեթսի նահանգի Մեծ Վուստերի Հայկ., 2008-ից՝ Բոստոնի «Երևան» երգչախմբերի հիմնադիր-ղեկ. և գլխ. դիրիժոր: Իր ստեղծագործությունների կատարումներով հանդես է եկել տարբեր երկրներում, ԱՄՆ-ում Նյու Յորքի «Քառնեգի Հոլլում»՝ 1990, 1997, 2013): 2012-ին Նյու Յորքի «Լինքոլն» կենտրոնի «Մերկել» համերգասրահում ղեկավարել է Ռոդ Այլնդ նահանգի ֆիլհարմոնիկ նվագախմբի և մենակատարների «Վերածնունդ» խորագրով համերգը: 2015-ին կազմակերպել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված 8 համերգ (Նյու Յորքում, Բոստոնում, Փրովիդենսում, Նյու Ջերսիի և Մասսաչուսեթսի նահանգներում): 2006-ին ՄԱԿ-ում ղեկավարել է համերգ. երկացանկում՝ հայ միջնադար. և ժամանակակից երաժշտություն, 2007-ին Մոնրեալում՝ տեղի սիմֆ. նվագախմբի մասնակցությամբ:

Գրել է լար. կվարտետ (1967), սիմֆ. պոեմ (1971), «Մտորումներ» (1964)՝ սաքսոֆոնի և մեծ բենդի, «Ռեչիտատիվ» (1972)՝ սիմֆ. նվագախմբի, կոնցերտներ՝ լար. նվագախմբի (1973), ձայնի և նվագախմբի (1986), «Ռապսոդիա» (1999)՝ լար. նվագախմբի, «Բալլադ» (1980)՝ կիթառի և նվագախմբի, «Էլեգիա» (1992)՝ դաշնամուրի և նվագախմբի, «Հայրենի ղողանջներ» խմբերգերի շարք (2003)՝ կանանց ա կապելլա երգչախմբի, «Մեր նոր Հայաստան» (2011, խոսք՝ Ա. Սահակյանի)՝ երգչախմբի և նվագախմբի, 4 մանրանվագ (1990)՝ լար. քառյակի, «Երեք պիեսներ» (1990), «Նոկտյուռն» (2014)՝ ջութակի և դաշնամուրի, վոկալ շարքեր՝ «Կարոտի կանչ» (1976, խոսք՝ Ս. Կապուտիկյանի)՝ սոպրանոյի և դաշնամուրի, «Տաղեր» (1984, խոսք՝ Պ. Դուրյանի)՝ բարիտոնի, թավջութակի, դաշնամուրի, հարված. գործիքների, «Մենախոսություն» (1985, խոսք՝ Ռ. Դավոյանի)՝ սոպրանոյի և դաշնամուրի համար, սոնատներ (1965, 1985), սյուիտներ (1979, 1989), երգեր, գործիք. երկեր: Թողարկել է «Հայրենի ղողանջներ» ձայներիզը (2005, 10 ժող. երգերի մշակումներ կանանց երգչախմբի համար):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2015), Կոմիտասի անվ. մրց.:

Հայրը՝ Հրանտ Եղիշի Պ. (1922–1997), շեփորահար: 1947–63-ին՝ Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբի դիրիժոր և մենակատար, ապա՝ Հայաստանի ռադիոյի էստրադ-սիմֆ., Հայաստանի փող. նվագախմբերի, նաև «Հայհամերգի» մենակատար: Ստեղծել է նաև երաժշտ. գործեր («Սերենադ» ձայնասկավառակ, 2009): Նրա համար երկեր են գրել Արտեմի ***Այվազյանը***, Առնո ***Բաբաջանյանը***, Գրիգոր ***Հախինյանը*** և ուր.:

Գրկ. *Ռուխկյան Մ., Կոնսթանտին Պետրոսյանի աշխարհը, Ե., 2018:*

Լիլիթ Արտեմյան

Հրանտ Պետրոսյանը էլույթի պահին

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մարկ Հովհաննեսի (21.08.1931, Երևան–05.08.2013, Երևան), հեռուստալրագրող, թավջութակահար: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2006): ՀԿՄ անդամ: Արուսյակ ***Պետրոսյանի*** հայրը: Ավարտել է ԵՊԿ թավջութակի բաժինը (1956): Աշխատել է Հայաստանի հեռուստատեսությունում՝ որպես հնչյուն. ռեժ., ապա՝ խմբ., երաժշտ. հաղորդումների գլխ. խմբ. (մոտ 30 տարի), սցենարիստ, պրոդյուսեր, 1973–76-ին՝ Հայկ. հանրագիտարանի խմբագրությունում: Հեղինակ է բազմաթիվ երաժշտ. հաղորդումների, տեսաժապավենների: Պ-ի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ նկարահանվել են բացառիկ նախագծեր՝ «Ոսկե էկրան» և «Դասական ալիք» հաղորդաշարերը, Ա. Սպենդիարյանի 100-ամյակին նվիրված հոբելյան. ֆիլմ, Սայաթ-Նովայի ծննդյան 275-ամյակին նվիրված հոբելյան. հաղորդում, Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսությունների շարքը, երաժշտ. շաբաթներ, փառատոներ, տասնօրյակներ ևն: Մի շարք ֆիլմերի սցենարիստն է և ռեժիսորը՝ «Երգող ձեռքեր» (Օհան Դուրյան), ֆիլմաշար նվիրված Ա. Խաչատրյանի հոբելյաններին (7 ֆիլմ՝ 90-ամյակին, 5 ֆիլմ՝ 100-ամյակին), «Պավել Լիսիցիան», «Տիգրան Լևոնյանի «Օթելլոն»», «Մեր Առնոն», «Մեր օրերի դասականը՝ Ա. Հարությունյան», «Շերամ», «Էդվարդ Միրզոյան» ևն: 1990-ին հիմնադրել է «Տաղ» ստեղծագործ. միավորումը՝ ազգ. ու դաս. երաժշտությունը տարածելու նպատակով:

Մարկ Պետրոսյան

Հեղինակ է «Պավել Լիսիցյան» (1973), «Երեքը հայ դիրիժորներից» (1976), «Շողիկ Մկրտչյան» (1991), «Հեռուստալրագրողի ժպիտներ» (1998), «Սիրելիներս եթե-

Մ. Պետրոսյանի «Երեքը հայ դիրիժորներից» գրքի (1976) կազմը

Շուշան Պետրոսյանը ելույթի պահին



Րաֆֆի Պետրոսյան

Աշոտ Պետրոսյանց

րում» [Հուշեր] (2001), «Չհորինված պատմություններ» [Հուշագրություն] (2005), «Պավել Լիսիցյան: Նվիրում՝ ծննդյան 100-ամյակին» (2011) գրքերի:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Շուշան Սամվելի (ծ. 23.09.1967, Երևան), երգչուհի: Արաքս *Սանասուրյանի* դուստրը: ՀՀ վաստ. արտիստ (2006): Ավարտել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվ-ի ուսումնարանի գեղանկարչության (1987), ԵԳԱ գրաֆիկայի (1993) ֆակ-ները: Առաջին ելույթը՝ 1989-ին (Փարիզ, հեռուստածրագիր), 1994–97-ին՝ Հայաստանի երգի պետ. թատրոնում: 1996-ից հանդես է գալիս որպես մենակատար: Նկարահանվել է տեսահոլովակներում (Շ. Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան», Դ. Հալաջյանի «Շնորհակալություն աշխարհին», «Ձոն Սպարապետին» ևն): Մասնակցել է «Այո» (1994, Գլխ. մրց., Երևան) երաժշտ. ծրագրին, «Միսս Սոուլ» (1992, Մեծ մրց., Երևան), «Բրավո, Հայաստան» (1994, ԱՄՆ), «Էքսպո-2000» (Հաննովեր), «Իստ-Օստ» (2000, Ֆրանսիա), «Կռունկ» («Անկախ Հայաստանի լավագույն ձայն» մրց., 2004), երգի ամենամյա («Դիվա» մրց., ԱՄՆ) և այլ փառատոների:

Գլխ. (1993, «Շարմ շոու» միջազգ. փառատոն), «20-րդ դարի հայ աստղ» (2000, «Աստղ» փառատոն), «Տարվա լավագույն երգչուհի» (1996, «Ասուպ» մրցանակաբաշխություն), «Լավագույն կին կատարող» (2000, «Անուշ» մրցանակաբաշխություն, ԱՄՆ) և այլ մրց-ներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Րաֆֆի Սերգեյի (ծ. 17.07.1925, Փարիզ), դաշնակահար, դիրիժոր: Ավարտել է Փարիզի կոնսերվատորիան: Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ քաղաքներում, մի շարք երկրներում, Երևանում (1956–57) և այլուր: Կատարող. արվ-ն առանձնացել է վարպետությամբ, տարբեր ոճերի երկերի խորք. և ինքնատիպ մեկնաբանություններով, նրբերանգների կատարյալ տիրապետմամբ: Նվագել է ճանաչված մի շարք սիմֆ. նվագախմբերի, համագործակցել աշխարհահռչակ դիրիժորների (Ժան Ֆուռնե, Անդրե Ամել և ուր.) հետ: Պ-ին երաժշտ. գործեր են նվիրել կոմպոզիտորներ Մ. Բեյարը, Պ. Լոնտրեն, Ա. Կուգելը և ուր.: 1970-ական թթ-ին եղել է «Իլ դը Ֆրանս» սիմֆ. նվագախմբի դիրիժոր, միաժամանակ՝ Փարիզի Քաշան արվարձանի կոնսերվատորիայի տնօրեն: Նվագացանկում՝ Յ. Ս. Բախի, Դ. Սկառլատիի, Է. Գրիգի, Կ. Դեբյուսիի, Ս. Վ. Ռախմանինովի, Ա. Խաչատրյանի գործերից:

Մեծ ներդրում ունի հայ-ֆրանս. երաժշտարվ-ների փոխհարաբերությունների ամրապնդման և ստեղծագործ. փոխհարստացման մեջ:

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ Աշոտ Հովհաննեսի [27.04(10.05).1910, Մարի (Թուրքմենստան)–19.07.1978, Տաշքենդ], կոմպոզիտոր, երաժշտագետ, դիրիժոր, գործիքագետ: Ուզբ. ԽՍՀ արվ. (1950), Կարակալպակ. ԻԽՍՀ մշակույթի (1973) վաստ. գործիչ: Ավարտել է Տաշքենդի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1943), ժող. գործիքների և դիրիժորության (1954) բաժինները: 1936–49-ին ղեկավարել է Հ. Համզայի անվ. երաժշտ. ուսումնարանի ժող. գործիքների բաժինը (սկզբնավորել է նոտայով ուսուցումը): Եղել է Ուզբեկստանի ֆիլհարմոնիայի ժող. գործիքների առաջին պրոֆեսիոնալ նվագախմբի հիմնադիրներից (գեղ. ղեկ.՝ 1938–41, գլխ. դիրիժոր՝ 1943–58): 1943-ին կոնսերվատորիայում հիմնադրել է ժող. գործիքների փորձարար. լաբորատորիա (ղեկ.՝ մինչև 1958-ը, հավաքել է 800-ից ավելի արլ. երաժշտ. գործիքներ), 1948-ին՝ ժող. գործիքների ֆակ., 1949-ին՝ ամբիոն, 1953-ին՝ դիրիժոր. բաժին (պրոֆ.՝ 1970-ից): 1935-ից կատարելագործել է ուզբ., ղրղզ., թուրքմ. և կարակալպակ. 7 գործիք՝ իրենց տարբերակներով (78 գործիք), որոնց շնորհիվ միջինասիական գործիք. երաժշտության մեջ ներդրվել է բազմաձայնություն: Փոխադրել, գործիքավորել է 100-ից ավելի երաժշտ. ստեղծագործություններ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951), Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՊԵՐՊԵՏՈՒՈՒՄ ՄՈԲԻԼԵ (< լատ. perpetuum mobile – հավերժական շարժիչ), «հավերժական շարժում», վիրտուոզ գործիք. պիես, որի մեղեդին ծավալվում է միանման փոքր տևողություններով (սովորաբար՝ տասնվեցերորդականներով)՝ թողնելով անընդմեջ հնչյուն. հոսքի տպավորություն: Ծագել է XIX դ-ում: Ճանաչված են Ֆ. Մենդելսոնի (դաշնամուրի համար, op. 119), Ն. Պագանինիի (ջութակի և նվագախմբի համար, op. 11) Պ. մ. անվանումով պիեսները, Է. Միրզոյանի «Ինտրոդուկցիա և Անընդհատ շարժում» («Ինտրոդուկցիա

Հատված Էդվարդ Միրզոյանի «Ինտրոդուկցիա և Պերպերտում մոբիլե»-ից

և Պ. մ.»)՝ ջութակի և նվագախմբի, Խ. Ավետիսյանի «Պերպետում մոբիլե»-ն՝ քանոնի համար, ևն:

ՊԵՐՊԵՐՅԱՆ (Բերբերյան) Համբարձում Պաղտասարի (25.05.1905, Ադանա–13.03.1999, Բոստոն, թաղված է Ուոթըր Թաունում), կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: Ավարտել է Աթենքի կոնսերվատորիան (1930): Մերձ. Արևելքի երկրներում, 1963–ից ԱՄՆ–ում ծավալել է երաժշտ., հաս. գործունեություն: 1970–ից՝ ԱՄՆ–ի և Կանադայի հայ գաղթավայրերի ՀԲԸՄ ընդհանուր երաժշտ. ղեկ. ու տնօրեն: Գրել է 4 օպերա («Շողիկ» ևն), «Արեգնազան», «Մեր ուխտը» (ըստ Հ. Թումանյանի) օպերա–կանտատները, «Թիթեռ» մանկ. օպերա–բալետը, «Խորհուրդ Վարդանանաց», «Աղոթք վաղվա օրվա սեմին», «Եկեղեցին հայկական» օրատորիաները, «Ռեքվիեմ»՝ Կոմիտասի հիշատակին, խմբերգեր, երգեր («Կանձրևե, տղաս» ևն), ջութակի, թավջութակի կոնցերտներ ևն: Պ–ի «Հարություն» կանտատը, «Խաչը» օրատորիան (երկուսն էլ՝ 1996) ստացել են Հռոմի պապ Հովհաննես Պողոս II–ի օրհնությունը: Հեղինակ. համերգներով այցելել է Հայաստան (1961, 1978, 1982):

ՀԿՄ Կոմիտասի անվ. մրց. (1981):

ՊԵՐՊԵՐՅԱՆ Շահան Ռեթեոսի [01.01(13.01).1891, Կ. Պոլիս–09.10.1956, Փարիզ], մանկավարժ, երաժշտագետ, խմբավար, հոգեբան, փիլիսոփա: Օննիկ ***Պերպերյանի*** եղբայրը: Ավարտել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանը (1906), 1908–ից հետևել է Սորբոնի համալսարանի փիլ–յան և արվ–ների մասնաճյուղերի դասընթացներին: 1911–22–ին՝ Պերպերյան վարժարանի տնօրեն: 1918–ին ընտրվել է Կ. Պոլսի Հայ ուսուցչ. միության կենտրոն. վարչության ատենապետ, 1919–ին՝ կեդրոն. ուս. խորհրդի անդամ, Կ. Պոլսի Հայ արվ–ի տան հիմնադրման մասնակից և նախագահ: Հրապարակախոս. ելույթներ է ունեցել պոլսահայ մամուլում, մասնակցել «Բարձրավանք» (1922) գրական–գեղ. հանդեսի հրատարակմանը: 1922–ի աշնանան մեկնել է Դրեզդեն, ուսումնասիրել պարարվ–ը (1922–24): Օ. Պերպերյանի հետ վերաբացել է Պերպերյան վարժարանը, 1924–ին տեղափոխել է Կահիրե: 1934–ին հրավիրվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան, որտեղ Հ. Օշականի հետ հիմնադրել է Հայ մշակութ. միությունը (1940–47): Հիմնադրել և ղեկավարել է Կահիրեի Պերպերյան վարժարանի (1924–34) և Հայ գեղարվեստասիրաց

Համբարձում Պերպերյան

Հատված Շ. Պերպերյանի «Քայլերգ»-ից

Շահան Պերպերյան

Հռիփսիմե Պիկիչյան

Պիկկոլո



Վարուժան Պլուզյան

միության (1932–34) երգչախմբերը: Հեղինակ է երաժշտ. ստեղծագործությունների, երաժշտագիտ. հոդվածների, «Կոմիտաս վարդապետ. անձը և գործը» (1936), «Երկու ժամանակներ» (1943) և այլ աշխ-ների:

Գրկ. *Տէր-Խաչատուրեան Ա., Շահան Ռ. Պէրպէրեան (1891–1956), Պէյրութ, 1969:*

ՊԵՐՊԵՐՅԱՆ Օննիկ Ռեթեոսի (11.11.1888, Կ. Պոլիս–26.03.1959, Փարիզ), կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ: Շահան *Պերպերյանի* եղբայրը: Ավարտել է Լոնդոնի համալսարանը (1909): 1909–11-ին՝ Կ. Պոլսի Պերպերյան վարժարանի տնօրեն: Փարիզում աշակերտել է Վ. դ'Էնդիին (1912): 1922-ից ապրել է Կահիրեում, 1938-ից՝ Փարիզում: Գրել է 8 բալետ, սիմֆ. երկեր՝ «Հայրենիք» (սիմֆոնիա), «Հայկական սիմֆոնիա», «Նարեկ», «Հայկական պատարագ», գործիք. կոնցերտներ և պիեսներ, մեներգեր, խմբերգեր, լար. նվագախմբի համար կատարել է Կոմիտասի խմբերգերի փոխադրումներ: Հանդես է եկել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Արևելքի երկրներում. կատարել է հիմնականում հայ կոմպոզիտորների (Կոմիտաս, Ա. Տիգրանյան, Ա. Սաթյան, Շ. Պերպերյան) և իր երկերից:

ՊԻԿԻՉՅԱՆ Հռիփսիմե Վահրամի (ծ. 28.02.1952, Երևան), էթնոերաժշտագետ, թանգարանագետ: Պատմ. գիտ. թեկնածու (2006), դոցենտ (2009): Ավարտել է Երևանի երաժշտամանկավարժ. ուսումնարանի քանոնի բաժինը (1972), ԵՊՀ բանասիրության ֆակ-ը (1976): 1970–73-ին դասավանդել է Արարատի, 1973–78-ին՝ Մասիսի երաժշտ. դպրոցներում: 1978-ից՝ Հայաստանի ազգագրության պետ. թանգարանի գիտաշխատող, հաս. կենցաղի և հոգևոր մշակույթի բաժնի (1984–86) վարիչ, 1985–1993-ին՝ ՀՀ ՄՆ «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (1988-ից՝ «Մշակույթ») հանդեսի գիտ. խմբ., 1988-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ժող. երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, ՀՊՄՀ մշակույթի ֆակ-ի թանգարանագիտության ամբիոնի դասախոս (2000–09), ԵՊՀ պատմության ֆակ-ի մշակութաբանության ամբիոնի դոցենտ (2007-ից), «Հայ ավանդական երաժշտության մատենաշարի» գլխ. խմբ-ի տեղակալ (2008-ից), «Թանգարան» հանդեսի գլխ. խմբ. (2009–12): Ուսումնասիրությունները վերաբերում են ավանդ. ծիս-տոն. կյանքի արդի փոխակերպումներին, ավանդ. երաժշտ. գործիքներին, քաղաք. երաժշտ. մշակույթին և թանգարանագիտությանը: Կատարել է բանահյուս. տեքստերի վերծանություններ: Թանգարանների աշխատողների և բարեկամների ընկերակցության նախագահ (2003-ից):

Վերծանել է բանահյուս. տեքստեր («Հայ երկրագործի աշխատանքային երգեր», 2009, «Ձավախքի երգեր և պարեղանակներ», 2012):

Համահեղինակ է «Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ» (2007) ուս. ձեռնարկի:

Երկ. *Հին արևին: «Սահարին» հայ երաժշտական մշակույթում (համահեղ., հայ., անգլ.), Ե., 1998: Երաժշտությունը հայոց ավանդական առօրյին և տոնածիսական կյանքում, Ե., 2012:*

ՊԻԿԿՈԼՈ (< իտալ.՝ piccolo – փոքր), 1. յուրաքանչյուր երաժշտ. գործիքի համեմատաբար ամենափոքր չափսերի և առավել բարձր հնչողության տարատեսակի անվանումը (հեկելֆոն-Պ., դոմրա-Պ. ևն): 2. Ֆլեյտա-Պ-ի կարճ անվանումը:

ՊԼՈՒՋՅԱՆ Վարուժան Արփիարի (10.11.1938, Երևան–16.07.2018, Երևան), երգիչ, երաժշտագետ, ռադիոհաղորդավար: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2015): Ավարտել է ԵՊԿ (1967): 1969-ից հայկ. ռադիոյում վարել է երաժշտ. հաղորդումներ, որոնց զգալի մասը պահվում է ոսկե ֆոնդում: Հեղինակ է «Յուրի Դավթյան» (1980), «Արշավիր Կարապետյան» (1987), «Հենրիկ Ալավերդյան» (1989), «Խաչատուր Ներսիսյան» (2005), «Այսօր ձայնըն հայրական» (2016) գրքերի:

ՊՂՆՁԵ ՓՈՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, արույրից կամ այլ մետաղներից պատրաստված շրթնային երաժշտ. գործիքներ, որոնք ընդգրկված են սիմֆ., փող., էստրադ., ջազ. և այլ նվագախմբերում, անսամբլներում՝ սաքսոֆոն, կոռնետ, փող, գալարափող, ալտ, տենոր, բարիտոն, տրոմբոն, հելիկոն, նաև մի շարք ազդանշան. երաժշտ. գործիքներ՝ շեփոր, հեծելափող, հրետանափող ևն:

ՊՈԵՄ (ֆրանս.՝ poeme – հորինվածք), 1. ազատ կառուցվածքով քնարապատմող. կամ քնարադրամատիկ. բնույթի *պիես* (Ա. Խաչատրյանի ջութակի, Ա. Բաբաջանյանի դաշնամուրի Պ-ները ևն)՝ որևէ երաժշտ. գործիքի համար:

2. Մեծ մասամբ ծրագր. բովանդակության 1-մասանի խոշոր ստեղծագործություն՝ նվագախմբի (սիմֆ. պոեմ) կամ մենակա-

տարի և նվագախմբի (Վ. Աճեմյանի «Տաղ գարնան և սիրո» Պ.՝ սոպրանոյի և լար.



Հատված Առնո Բաբաջանյանի «Պոեմից»

նվագախմբի համար՝ ըստ Գրիգորիս Աղթամարցու տաղերի, 2000) համար:

3. Վոկալ կամ վոկալ-սիմֆ. ստեղծագործություն (Դ. Դ. Շոստակովիչի «Տասը պոեմ երգչախմբի համար», «Ստեպան Ռազինի մահապատիժը»՝ բասի, երգչախմբի և նվագախմբի համար, Ա. Խաչատրյանի «Վոկալ-սիմֆոնիկ պոեմ», ևն):

Պղնձե փողային երաժշտական գործիքներ

ՊՈՋԱՊԱԼՅԱՆ Լուիզա (Եղիայան Անահիտ) Եղիայի (24.03.1936, Մարսել–06.05.1998, Շտուտգարտ), երգչուհի (սոպրանո): Բեյրութում երգել է Բարսեղ *Կանաչյանի* «Գուսան» երգչախմբում: Ավարտել է տեղի կոնսերվատորիան (1960), կատարելագործվել Միլանի կոնսերվատորիայում, «Լա Սկալա» օպեր. թատրոնում: 1964-ից՝ Բրյուսելի, 1966-ից՝ Համբուրգի, 1988-ից՝ Շտուտգարտի օպեր. թատրոնների մեներգչուհի: 1988-ից դասավանդել է Շտուտգարտի պետ. կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1988-ից): 1968-ից ելույթներ է ունեցել Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Լոնդոնի «Քովենթ Գարդեն», Փարիզի «Գրանդ օպերա» օպեր. թատրոններում, նաև Հռոմում, Մոսկվայում, Երևանում և այլուր: Լավագույն դերերգերից են՝ Դոննա Աննա, Դոննա Էլվիրա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Լեոնորա (Ջ. Վերդիի «Տրուբադուր»), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Միմի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ»), Ենուֆա (Լ. Յանաչեկի «Ենուֆա») ևն: Կատարել է սոպրանոյի երգամասեր Յ. Ս. Բախի, Յ. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Ջ. Վերդիի, Գ. Ֆորեի, Ա. Դվորժակի, Ջ. Բ. Պերգոլեզիի, Ֆ. Պուլենկի, Ջ. Ռոսսինիի, Յ. Բրամսի և ուր. վոկալ-սիմֆ. երկերում: Կամեր. երկացանկում՝ Ջ. Սկառլատիի, Հ. Պյորսելի, Ք. Վ. Գլյուկի, Կ. Մ. ֆոն Վեբերի և ուր. գործերից, հայկ. համերգաշարերում՝ Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Բ. Կանաչյանի, Գ. Ալեմշանի, Ա. Սաթյանի և ուր. շուրջ 100 երգ:

Լ. Պոզապալյան

Համերգներով շրջագայել է Ավստրիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Բելգիայում, Լիբանանում, Գերմանիայում, Անգլիայում, Հունաստանում և այլուր: 1968-ին Երևանում հանդես է եկել համերգ. մեծ ծրագրով, նաև Դեզդեմոնայի դերերգով (Ջ. Վերդիի «Օթելլո»):

Ջ. Վիոտտիի անվ. (1961, Վերչելլի՝ Իտալիա), Եղիսաբեթ թագուհու անվ. (1962, Բրյուսել), «Վերդիական ձայներ» (1963, Բուսսետո՝ Իտալիա) միջազգ. մրցույթների դափնեկիր, «Մայրիներ» (Լիբանան, 1969):

Լ. Պոզապալյանը Դոննա Աննայի դերում (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»)

ՊՈԼԻՖՈՆԻԱ (հուն.՝ πολυφωνία – բազմաձայնություն), բազմաձայնության տեսակ, որի հիմքում միասն. ամբողջականության՝ փոխադարձաբար զուգակցված մի քանի ինքնուրույն մեղեդիների հնչողությունն է: «Պ.» հասկացությունը համընկնում է լայն իմաստով կիրառվող «կոնտրապունկտ» հասկացության հետ: Պոլիֆոնիկ կառուցվածքի կարևորագույն



Արմեն Պողոսյան

առանձնահատկությունը երաժշտ. մտքի հոսունությունն է, որն ստեղծվում է միմյանց հաջորդող մեղեդային կառուցվածքների միջև ընկած ցեզուր. սահմանագծերի քողարկման, հաղթահարման միջոցով: Պոլիֆոնիկ բազմաձայնության ծավալման անընդհատությանը նպաստում է նաև այն, որ առանձին մեղեդային գծերում կաղանս. պահերը, բարձրակետերը տարաժամանակ են և չեն համընկնում:

Տարբերում են Պ–ի իմիտացիոն, կոնտրաստային և ենթաձայնային տեսակները. հանդիպում են նաև նրանց զուգորդումները: Իմիտացիոն Պ. հիմնվում է նմանակման վրա (տես ***Իմիտացիա***): Կոնտրաստ. Պ–ում զուգակցված են ռիթմաինտոնացիայով հակադիր մեղեդիներ: Ենթաձայն. Պ. հիմնական մեղեդու և նրա տարբերակների՝ «ենթաձայների» միասնությունն է: Տարբեր դարաշրջաններում աստիճանաբար զարգացել են մեղեդիների կազմավորման և միաժամանակյա զուգակցման օրինաչափությունները:

Ուս. դասընթացներում ընդունված են խիստ (XV–XVI դդ.) և ազատ (XVII դ–ից) ոճերի Պ. հասկացությունները՝ այդ ոճերին բնորոշ ընդհանուր օրինաչափություններով: Սակայն այստեղ չեն ընդգրկվում այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են XVIII–XX դդ–ի եվրոպ. երաժշտության որոշ ուղղություններին և տարբեր ժողովուրդների պոլիֆոնիկ մտածելակերպին: Պատմականորեն Պ. զարգացել է երաժշտ. ստեղծագործության որոշակի ձևերով ու ժանրերով (ֆուգա, ֆուգետտա, կանոն, պոլիֆոնիկ վարիացիաներ, մոտետ, մադրիգալ, ռիչերկար, պասսակալիա, չակոնա ևն), որտեղ կիրառվել են երաժշտ. մտքի զարգացման տարբեր միջոցներ (նմանակում, հակադրում, զուգակցման տարբեր ձևեր): Պոլիֆոնիկ ձևերն ու զարգացման միջոցներն աստիճանաբար ներթափանցել են հոմոֆոնիկ երաժշտության մեջ (սոնատ. ձևի մշակման մասում՝ ֆուգա, ֆուգատո, սոնատ. ֆինալը՝ ֆուգա, վարիացիաներում՝ կանոն, ֆուգա, ևն), ընդհուպ մինչև սոնատ. ձևի լրիվ պոլիֆոնիկացում:

Պ. երաժշտ. արտահայտչության հզոր միջոց է, կարևոր դեր ունի ձևակառուցման, գեղ. կերպարների մարմնավորման, զարգացման և առավել խոր բացահայտման մեջ: Լայնորեն օգտագործվում է բոլոր ժողովուրդների պրոֆեսիոնալ–կոմպոզիտոր. երաժշտարվ–ում:

Հայկ. մոնոդիկ երաժշտության բազմաձայն մշակման առաջին փորձերը կատարվել են XIX դ–ի 2–րդ կեսին: Կոմիտասը առաջինն էր այդ խնդիրը լուծել ենթաձայն–իմիտացիոն Պ–ի տեսանկյունից՝ կիրառելով բազմապլան–բազմատոնալ պոլիֆոնիկ կերտվածք:

Հրատարակվել են Գ. Չերոտարյանի «Պոլիֆոնիայի քրեստոմատիա» (1982), Է. Փաշինյանի «Պոլիֆոնիայի դասագիրք» (1998), Գ. Մելիքսեթյանի «Պոլիֆոնիա» (2001, 2003) ուս. ձեռնարկները:

Գրկ. *Փաշինյան Է., Կոմիտասի խմբերգերում բազմաձայնության կազմավորման որոշ սկզբունքների մասին, տես Կոմիտասական 2, Ե., 1981: Кушарев Х., О полифонии, Сб. статей, М., 1971.*

Ըստ Էդուարդ Փաշինյանի

ՊՈԼԻՖՈՆԻԿ ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ, վարիացիաներ, որտեղ թեմայի յուրաքանչյուր անցկացման ժամանակ առաջադրվում է նոր պոլիֆոնիկ ֆակտուրա: Պ. վ–ի տեսակներ են ***չակոնան*** և ***պասսակալիան***, որոնք հիմնված են բասսո օստինատոյի վրա: Տես նաև ***Վարիացիաներ***:

ՊՈՂՈՍՅԱՆ Արմեն Կառլենի (ծ. 19.04.1965, Երևան), կոնտրաբասահար, դիրիժոր, կոմպոզիտոր, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (2006): Նուներ ***Պողոսյանի*** ամուսինը: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի թավջութակի (1980, դասատուներ՝ Ա. Չաուշյան, Ռ. Նանյան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի կոնտրաբասի (1984, դասատուներ՝ Լ. Նալյան, Վ. Թերզյան) բաժինները, ՄՊԿ զինվ. դիրիժորության ֆակ–ը (1990, Ք. Խախանյանի, Վ. Սոսկվիչովի դասարաններ): 1984–85–ին՝ ԵՕՔԹ նվագախմբի կոնտրաբասահար, 1990–91–ին՝ ԽՍՀՄ ՋՈւ զորամասի նվագախմբի դիրիժոր, I դեսանտագրոհ. գնդի նվագախմբի (1992) հիմնադիր և դիրիժոր, 2009–ից՝ ԳԾ ռազմանվագախմբ. բաժնի գլխ. զինվ. դիրիժոր: 2004–ին հիմնադրել և դասավանդում է ԵՊԿ զինվ. դիրիժորության բաժնում: 2010–ին հիմնադրել է ՀՀ ՋՈւ երգի–պարի անսամբլը, 1992–ից ղեկավարել բազմաթիվ պետ., գերատեսչական, զանգված. և այլ միջոցառումներ:

Գրել է «Ադաջո հին ոճով»՝ սիմֆ. և փող. նվագախմբի, «Տանգո «Մարիան–

նա»՝ կամեր. նվագախմբի և կիթառի, կոնցերտ՝ սիմֆ. նվագախմբի և կիթառի, «Լուսնային վալս»՝ սիմֆ. նվագախմբի, «Վալս»՝ սաքսոֆոնի և փող. նվագախմբի, «Փարիզյան տրամադրություն»՝ էստրադ-սիմֆ. նվագախմբի համար, քայլերգեր («Դիմավորման քայլերգ», «Մայրաքաղաքային քայլերգ»), փող. նվագախմբ. գործեր («Տուրք», «Ձոն հայրենիքին», «Հայկական պար» ևն), երգեր («Պատիվ ունեմ», «Ընկերների երգը», «Ելիր ի զեն», «Իմ հայկական բանակ», «Ի զեն, ի զեն», «Երկու փոքրիկ», «Մարդկության հավատք» ևն), ջութակի և կիթառի պիեսներ և այլ երկեր: Կիթառահարների եռյակի համար մշակել է Կոմիտասի «Խնկի ծառ», «Նուբար-Նուբար», «Քելե-քելե», «Կաքավիկ», Ռ. Մելիքյանի «Վարդ», հայկ. ժող. «Քոչարի» և այլ գործեր:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ (2011) և 1-ին (2015) աստիճանների, ՄՆ (2013), Երևանի քաղաքապետի ոսկե (2015) մեդալներ:

ՊՈՂՈՍՅԱՆ Դավիթ Միքայելի [09.(22).09.1911, Թիֆլիս–08.09.2004, Երևան], երգիչ (բաս): ՀԽՍՀ ժող. արտիստ (1947): Պրոֆ. (1992-ից): Ավարտել է ԵՊԿ (1972, էքստեռն, Թ. Շահնազարյանի դասարան): 1932–88-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ: 1961-ից դասավանդել է ԵՊԿ-ում: Դերերգերից են՝ Սիմոն բիձա (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Նադիր շահ և Ռուբեն (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Հոր-հոր աղա (Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա»), Մոսի (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Գրեմին (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Ամոնասրո (Ջ. Վերդիի «Աիդա»), Դոն Բազիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ») ևն: Հանդես է եկել նաև համերգ. ծրագրով. երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի, Վ. Ա. Մոցարտի Ռեքվիեմի բասի երգամասերը, նաև հայ, ռուս, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների երգեր և ռոմանսներ: Նկարահանվել է «Սայաթ-Նովա» հեռուստաֆիլմում (1960):

Գրկ. *Ղ ա ր ի բ յ ա ն Գ., Դավիթ Պողոսյան, [Կյանքն ու գործը], Ե., 1990:*

ՊՈՂՈՍՅԱՆ Թովմաս Գևորգի [ծ. 18.01.1954, գ. Սարչապետ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], երգիչ, բանահավաք, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (2011): Բանասիր. գիտ. դ-ր (2014), պրոֆ. (2004): Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1972–1973), ավարտել Կիրովականի մանկավարժ. ինստ-ը (1977), ԵՊԿ ժող. երաժշտ. գործիքների և երգեցողության բաժինը (1985, Ա. Ոսկանյանի դասարան): 1987-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2001-ից): 1971–72-ին երգել է Սայաթ-Նովայի անվ. աշուղ. երգի անսամբլում (գեղ. ղեկ.՝ Վ. Սահակյան): 1973–77-ին՝ Կիրովականի «Հորովել», 1980–95-ին՝ Հայաստանի ժող. երգի-պարի անսամբլների մեներգիչ, 1987–92-ին՝ «Գանձասար» ժող. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ.: 1992-ին հիմնադրել է ***«Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլը***, 1995-ին՝ համանուն մշակութ. միությունը, 1997-ին՝ Ջիվանու անվ. աշուղ. դպրոցը և Հայ աշուղների միությունը, 2001-ին՝ աշուղագիտ. կենտրոնը:

Դավիթ Պողոսյան

Գրառել է ժող. և աշուղ. երգեր: Պ-ի կատարումները համահունչ են հայ աշուղ. արվ-ի ոգուն: Համերգներով շրջագայել է Հայաստանում, Շվեյցարիայում, Իրանում, Սիրիայում, Հունաստանում, Հոլանդիայում, Կանադայում, Նոր Զելանդիայում, Ավստրալիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և այլուր: Կազմել է «Ջիվանի-150. Անհայտ երգեր» (1996), «Աշուղ Ջիվանի. Անհայտ երգեր» (2009, 400-ից ավելի անհայտ երգերի տեքստեր), «Աշուղ Ջիվանու բանաստեղծական աշխարհը» (2013) ժող-ները: Նրա աշխատասիրությամբ «Սայաթ-Նովա» մշակութ. միությունը լույս է ընծայել «Գանձարան հայ աշուղական երգերի» մատենաշարի 5 հատորները՝ «Սայաթ-Նովա. Խաղեր» (2012), «Սայաթ-Նովա. Խաղեր» (երկրորդ վերանայված հրտ., 2015), «Սայաթ-Նովան աշուղների խաղերի մեջ» (2013), «Աշուղ Սազայի. Անհրավ աշխարհ» (2014), «Աշուղ Ջիվանի. Հոգսերով լի» (2016): Հեղինակ է բազմաթիվ գիտ. հոդվածների:

Դ. Պողոսյանը Հոր-հոր աղայի դերում (Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի»)

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2014):

ՊՈՂՈՍՅԱՆ Մովսես (ծ. 16.08.1967, Երևան), ջութակահար: Վարդի ***Սանուելյանի*** ամուսինը: Ավարտել է ԵՊԿ (Լ. Զորյանի, Վ. Մոկացյանի դասարաններ) և ՄՊԿ (Վ. Ա. Կլիմովի, Լ. Կրասների դասարաններ): ԽՍՀՄ ջութակահարների ազգ. (1985) և Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. (1986) մրցանակաբաշխություններում հաղթելուց հետո հանդես է եկել Մոսկվայի, ապա՝ Բրանդենբուրգի սիմֆ.

Թովմաս Պողոսյանը ելույթի պահին

Մովսես Պողոսյան

Նունե Պողոսյան

Պապին Պողոսյանը ելույթի պահին

նվագախմբերում, ԱՄՆ տեղափոխվելուց հետո՝ «Boston Pops»-ի հետ (Պ. Ի. Չայկովսկու կոնցերտ)։ Համերգներով շրջագայել է Գերմանիայում, Կիպրոսում, Հայաստանում և այլուր, համագործակցել մի շարք ճանաչված կոմպոզիտորների և կատարողների հետ։ Հրավիրվել է Լոս Անջելեսի կամեր. նվագախմբի 2016–17-ի համերգաշրջանի բացմանը (Տ. Մանսուրյանի ջութակի 2-րդ կոնցերտ)։ «Դիլիջան» (ԱՄՆ) կամեր. երաժշտության համերգաշարի գեղ. ղեկ., Կալիֆոռնիայի համալսարանի «Herb Albert» երաժշտ. դպրոցի պրոֆ.։ Նոր երաժշտության առաջատարներից է։ Թողարկել է խտասալիկներ։ Պ. կնոջ հետ բազմիցս այցելել է Հայաստան, հանդես եկել (և՛ առանձին, և՛ միասին) Լորիս *Ճգնավորյանի* և Էդուարդ *Թոփչյանի* ղեկավարությամբ։

ՊՈՂՈՍՅԱՆ Նունե Էդուարդի (ծ. 21.05.1964, Երևան), կիթառահար, մանկավարժ։ Պրոֆ. (2017)։ Էդուարդ *Բաղալյանի* դուստրը, Արմեն *Պողոսյանի* կինը։ Ավարտել է Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի ջութակի բաժինը (1976, դասատու՝ Ի. Մելիքյան), Չայնի պահպանման վոկալ-երգչախմբ. մասնագիտ. դպրոցը (1981, էքստեռն), «Հայհամերգի» էստրադ. քոլեջը (1984, դասատու՝ Ս. Պետրոսյան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1985, դասատու՝ Է. Բաղալյան), ԵՊԿ կամեր. երգեցողության (1999, էքստեռն, Մարգարիտ Հարությունյանի դասարան), կիթառի (2003, էքստեռն) բաժինները։ Եղել է «Հայհամերգի» մենակատար։ Դասավանդել է (կիթառ) Երևանի Ա. Տեր-Ղևոնդյանի անվ., Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցներում, 1999-ից՝ ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2012-ից), 2003-ից՝ ՀՊՄՀ-ում։ 1996-ին Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում բացել է կիթառի դասարան։ «Հայ լար» կիթառահարների եռյակի հիմնադիր-գեղ. ղեկ.։

Հեղինակ է դաս. կիթառի դասավանդման ձեռնարկի (2014), «Դասական կիթառ» (2015), «Կիթառի և կիթառի կատարողական արվեստի պատմություն» (2017) դասագրքերի։ Կիթառի համար գրել է թեմա և վարիացիաներ, 6 էտյուդ, 9 պիես, 5 անսամբլ. ստեղծագործություն, կատարել 14 մշակում (նաև անսամբլ.)։ Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. Վայսի, Ֆ. Սոռի, Ի. Ալբենիսի, Ա. Լաուրոյի, Է. Վիլլա-Լոբոսի, Ա. Մ. Իվանով-Կրամսկոյի և ուր. գործերից։

ՊՈՂՈՍՅԱՆ Պապին [ծ. 02.01.1952, գ. Գեղհովիտ (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], երգիչ։ Ավարտել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտական-կավարժ. ուսումնարանը (1970-ական թթ.)։ 1978–95-ին՝ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության անսամբլի մենակատար։ Անսամբլի հետ 100-ից ավելի ձայնագրություններ պահվում են ՀՀ ռադիոյի ոսկե ֆոնդում։ Համագործակցել է Բոստոնի «Երևան» երգչախմբի և Հայաստանի ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբի հետ։ 1995-ին ստեղծել և ղեկավարել է «Վերածնունդ» ժող-էստրադ. անսամբլը։ Եղել է հայ աշուղների և կոմպոզիտորների մի շարք երգերի առաջին կատարողը։ Հյուրախաղերով շրջագայել է բազմաթիվ երկրներում. երգացանկում՝ «Ալվան վարդ», «Անջիգյար», «Դու օրորա», «Հայ աղջիկ», «Կուզես լինեմ», «Մայրիկիս», «Տույ-տույ» ևն։ Թողարկել մի շարք ձայնասկավառակներ, տեսահոլովակներ («Երևանի սիրուն աղջիկ», «Ասա ընկեր» ևն)։ 2006-ից ապրում է Լոս Անջելեսում։

«Սայաթ-Նովա» երգի մրցույթի (1967), ՀՀ ՄՆ (2016) ոսկե մեդալներ, «Ոսկե սկավառակ» մրց. (1997, 2001, Մոսկվա)։

ՊՈՊՈՒՐԻ (< ֆրանս. pot-pourri – բառացի՝ խառը կերակուր, խառնուրդ), գործիք. պիես՝ կազմված հանրածանոթ որևէ օպերայի, բալետի, նաև կոմպոզիտորի տարբեր գործերի մեղեդիներից, ժող. երգերից, պարերից, քայլերգերից ևն։ Պ-ում սովորաբար մեղեդիները չեն զարգանում, այլ մոդուլացիաները և թեմատիկ փոփոխումներն իրագործող կարճ կապերով հետևում են միմյանց։ «Պ.» եզրույթը երաժշտության մեջ շրջանառվում է 1711-ից։ Տարածվել է XIX դ-ից։ Գրվում են գործիք. տարբեր կազմերի, առավել հաճախ՝ էստրադ. և փող. նվագախմբերի համար։ Վերջին շրջանում Պ. օգտագործվում է հայ ժող. և էստրադային երաժշտության մեջ։

ՊՈՍՏԼՅՈՒԴ (< լատ. post – հետո, ludo – նվագում եմ), հ ե տ ն վ ա գ, երաժշտ. ստեղծագործության վերջում ինքնուրույն, համեմատաբար փոքր երաժշտ. հավելում (սովորաբար՝ երգեցողությունից հետո գործիք. եզրափակում)։ Հայտնի են Ղ. Սարյանի դաշնամուր. 3 Պ-ները (1990)։

Հատված Ղազարոս Սարյանի «Պոպյուռդ»-ից

ՊՐԵԼՅՈՒԴ (< լատ. prae – նախքան, ludus – խաղ, նվագ), նախանվագ, նախապես՝ երաժշտ. որևէ պիեսի նախորդող ներած. իմպրովիզացիոն ստեղծագործություն, որով կատարողը (ջնարահար, կլավեսինահար, երգեհոնահար) նախապատրաստում, համապատասխան տրամադրություն է ստեղծում Պ-ին հաջորդող ստեղծագործությունն ունկնդրելու համար: Հետագայում (XVII–XVIII դդ-ում)՝ փոքրածավալ գործիք. պիես, որը, որպես նախանվագ, ընդգրկվել է մի քանի ցիկլ. ստեղծագործություններում (սյուիտ, ֆուգա ևն):

Հատված Էդուարդ Բաղդասարյանի «Պրելյուդ»-ից

Պ-ին բնորոշ են երաժշտ. մտքի ազատ իմպրովիզացիոն զարգացումը և շարադրության միասն. հյուսվածքը: Տարածված էր «Պրելյուդ և ֆուգա» երկմաս «փոքր շարքը», որը որոշ դեպքերում (Յ. Ս. Բախ, Դ. Դ. Շոստակովիչ և ուր.) ընդգրկվել է բոլոր 24 տոնայնություններով գրված Պ-ների և ֆուգաների «մեծ շարքում»: XVIII դ-ից Պ-ները նաև ինքնուրույն գործիք. պիեսներ են, որոնք հաճախ միավորված են բոլոր տոնայնություններն ընդգրկող ամբողջ. շարքերում կամ ժողոներում (Ֆ. Շոպենի, Ա. Ն. Սկրյաբինի, Ս. Վ. Ռախմանինովի, Դ. Դ. Շոստակովիչի, Դ. Բ. Կաբալևսկու, Է. Բաղդասարյանի, Է. Աբրահամյանի, Գ. Հովունցի դաշնամուր. Պ-ները ևն):

Արմեն Բոդաղյան

ՊՈՒԱՆՏԻԼԻԶՄ (ֆրանս.՝ pointillisme, <point – կետ՝ կետայնացում), սերիական տեխնիկայի տարատեսակ, XX դ-ի 2-րդ կեսի երաժշտության կոմպոզիցիայի մեթոդներից. երաժշտ. միտքը շարադրվում է ինտոնացիոն և ռեգիստր. առումով միմյանցից հեռու, պաուզաներով անջատված, կարճատև մեկուսի տևողության հնչյունների միջոցով: Կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր հնչյունի գունատեմբր. երանգավորումը, նաև աղմկային էֆեկտները: Սերիական տեխնիկայում և դոդեկաֆոնիայում յուրաքանչյուր հնչյունի ինքնուրույնությունը Պ-ում հասնում է առավելագույնի: Պ-ում բացառվում է կապակցված մեղեդու (լեգատո) կատարումը:

Եզրույթը գործածվում է XX դ-ի 2-րդ կեսից: Երաժշտ. ոճի հիմնադիրը ավստրիացի կոմպոզիտոր Ա. Վեբեռնն է: Այդ ոճով ստեղծագործել են Կ. Շտոկհաուզենը, Լ. Նոնոն, Պ. Բուլեզը և ուր.: 1960-ական թթ-ի վերջերից Պ-ի որոշ հնարքներ օգտագործել են նաև մի շարք հայ կոմպոզիտորներ (Տ. Մանսուրյան, Ա. Տերտերյան, Մ. Իսրայելյան, Ե. Երկանյան և ուր):

Գրկ. *Պավլիշին Ս., Արևմտյան ժամանակակից երաժշտության զարգացման ուղիների մասին, Ե., 1981: Когоутек Ц., Техника композиции в музыке XX века, М., 1976, с. 182–184.*

Աննա Արևշատյան

Ջ

ՋԱԶ (անգլ.՝ jazz), ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության ժանր, ձև: Հիմքում ամերիկ. նեգրերի հոգևոր (սպիրիչուելս) և աշխարհիկ (բլյուզ) երգերն են: Ջ-ի առանցքն անընդմեջ, փոքր-ինչ «ճոճվող» ռիթմն է, հարմոնիկ հենքը՝ 8–12–16

Հայաստանի ջազային անսամբլի հիմնադիր կազմը (կենտրոնում՝ գեղ. ղեկ.՝ Արտեմի Այվազյան)

տակտանոց բլյուզը: Առաջացել է ԱՄՆ-ի հվ. նահանգներում 1880-ական թթ-ին: Սկզբն. շրջանում՝ հիմնականում, մեր օրերում՝ մասնավորապես, Ջ. կատարող. արվեստ է, որտեղ դրսևորվում են տրված թեմայի և հարմոնիայի շուրջ կատարողի հանպատրաստից ստեղծագործելու ունակությունն ու անհատականությունը: Առանձնահատկությունները սինկոպանե-

Յոլակ Վարդազարյանը ելույթի պահին

րով հարուստ կայուն ռիթմիկ բաբախումն է (անգլ.՝ beat), մաժոր ձայնակարգում III, V, VII աստիճանների իջեցումը (անգլ.՝ blue notes – երկնագույն նոտաներ), հաճախ կրկնվող մեղեդային և ռիթմիկ կառույցները, երաժշտ. գործիքի տեմբր. խտացված տարբեր ձուլվածքները, ծայրահեղ ինչյունների օգտագործումը, իմպրովիզացիայի ընթացքում ռիթմիկ ու կառուցվածք. փոփոխումների ազատությունը ևն:

«Ջ.» հասկացությունն ի սկզբանե կապվում է Նյու Օռլեանի, հետագայում Չիկագոյի գիշեր. պանդոկներում ու տոնավաճառներում հանդես եկող բազմաթիվ, այսպես կոչված, ***ջազ-բենդների*** գործունեության հետ, որոնք ընդգրկում էին ռիթմսեկցիա (բանջո կամ կիթառ, կոնտրաբաս կամ փող. բաս, հարված. գործիքներ և դաշնամուր) և փող. գործիքներ (կլառնետ, շեփոր, տրոմբոն): Հիմնական մեղեդին կատարել է շեփորը, մելոդիկ զարդանվագը՝ կլառնետը, հարմոնիկ ուրվագիծն ընդգծել է տրոմբոնը: Հետագայում ներմուծվել է տենոր սաքսոֆոնը:

Ջ-ի պատմության մեջ մտել է դիքսիլենդ ուղղությունը, որի անվանի ներկայացուցիչներից են շեփորահար և երգիչ Լ. Արմսթրոնգը, կլառնետահարներ Ջ. Դոդսը, Ջ. Նունը, տրոմբոնահար Ք. Օրին, դաշնակահար Ջ. Ռ. Մորտոնը և ուր.: Առաջին ձայնասկավառակները ձայնագրել են նեգր. կատարող. ոճը կրկնօրինակող սպիտակամորթ երաժիշտների «Օրիջինալ դիքսիլենդ ջազ-բենդ», նեգր. «Կրեոլական ջազ-բենդ» խմբերը: 1920–30-ական թթ-ին առաջացել է նյույորքյան Ջ.՝ սուինգի (անգլ.՝ swing – ճոճել, ճոճվել) ուղղությունը, որը, անհատ. կամ խմբային իմպրովիզացիայից բացի, պահանջում էր հեղինակ. ստեղծագործ. մտահղացմանը համապատասխան գործիքավորում, նոտագր. գրագիտություն և նվագախմբի մեծ կազմ՝ բիգ-բենդ: Սուինգի զարգացմանը նպաստել են Դ. Էլլինգտոնը, Ֆ. Հենդերսոնը, Ու. Ք. Բեյսին, Չ. Ուեբբը, հետագայում՝ Բ. Գուդմենը, Գ. Միլլերը, Թ. և Ջ. Դորսիները և ուր.: 1940-ական թթ-ին առաջացել է «բի-բոփ» կամ «բոփ» ոճը, որին բնորոշ էին կատարող. բարձր տեխնի-

կան, սուր, աննպասելի ռիթմիկ և հարմոնիկ դարձվածքները, սրընթացությունը, իմպրովիզացիայի անզուսպ հոսքը (սաքսոֆոնահար Չ. Պարկեր, դաշնակահար Թ. Մոնկ, շեփորահար Ջ. Դ. Գիլլեսպի, կիթառահար Չ. Քրիսչեն, կոնտրաբասահար Ջ. Բլենթոն, հարվածող Ք. Քլարք և ուր.): Այդ ուղղությանը հակադրվել է «սառը Ջ.» (անգլ.՝ cool – սառը), որի հիմնադիրը փողհար Մ. Դեվիսն է: Յուրաքանչյուր նոր ուղղություն, ստեղծելով նոր ձուլվածքներ, հարստացրել է Ջ-ի ընդհանուր գանձարանը: Գոյություն ունեն վոկալ (Է. Ֆիցջերալդ, Լ. Արմսթրոնգ, Ջ. Ուիլյամս, Ֆ. Սինատրա, Ս. Վոհան, Ռ. Չառլզ, Ք. Լեյն և ուր.), նվագախմբ. (Գ. Էվանս, Բ. Ռիչ և ուր.), դաշնամուր. (Ջ. Շեյինգ, Օ.Պիտերսոն, Բ. Էվանս, Է. Գառներ և ուր.), տարբեր գործիքների մենակատարների և անսամբլ. զուգակցումների Ջ. (Դ. Բրուբեկի քառյակ, Մոդեռն ջազ քառյակ), սիմֆոջազ՝ լար. և փայտե փող. գործիքների ընդգրկմամբ: Ջ-ի ճյուղավորումներից են ռիթմէնդբլյուզը (անգլ.՝ rhythm-and-blues, նեգր. բլյուզ. երգեցողության ակտիվ ռիթմի առկայությամբ), սոուլը (անգլ.՝ soul – ոգի, նեգր. հոգևոր երգեցողության աշխարհիկ տարբերակ). նրանց համադրումը գեղջկական մեղեդայնության հետ առաջացրել է պար. ռոք-ն-ռոլլ, հետագայում՝ բիգ բիթ (անգլ.՝ big beat – մեծ կամ ուժեղ հարված), որից էլ առաջացել է փոփ երաժշտությունը, ինքնատիպ ջազ-ռոք (անգլ.՝ jazz-rock) ազատ ձևը (Հ. Հենքոք, Չ. Կորեա): Արդի պար. երաժշտության դիսքո ոճը նույնպես պարունակում է ջազ. տարրեր: Ջ-ի որոշ արտահայտչամիջոցներ են օգտագործել Կ. Դեբյուսին, Մ. Ռավելը, Ի. Ֆ. Ստրավինսկին, Ջ. Գերշվինը, Դ. Միյոն, Ս. Վ. Ռախմանինովը, Է.Քշենեկը, Դ. Դ. Շոստակովիչը, Ա. Խաչատրյանը, Ռ.Կ. Շչեդրինը և ուր.:

ԽՍՀՄ-ում Ջ.տարածվել է 1930-ական թթ-ից:

Հայաստանում առաջին ջազ. նվագախմբերը հիմնադրվել են 1935-ին: Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում 1936-ից գործել է ջազ. նվագախումբ, որը ղեկավարել է Ռոբերտ *Աթայանը*, 1937-ին՝ Յոլակ *Վարդազարյանը*: 1938-ին Արտեմի *Այվազյանը* հիմնադրել և ղեկավարել է նոր նվագախումբ (1956-ից ղեկ.՝ Կոնստանտին *Օրբելյան*): 1960–70-ական թթ-ին հայկ. ջազ. արվ-ը ճանաչվել է նաև արտերկրում. հայ երաժիշտները հյուրախաղերով շրջագայել են եվրոպ. երկրներում և ԱՄՆ-ում, մասնակցել միջազգ. փառատոների:

1954-ին Կ. Օրբելյանի հիմնադրած գործիք. նվագախմբի (5 հոգի) հիման վրա ստեղծվել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության էստրադսիմֆ. նվագախումբը (երկացանկում՝ սուինգ ջազ. ուղղության գործեր), որը ղեկավարել են Մարտին *Վարդազարյանը* (1954–72), Մելիք *Մավիսակյանը* (1972–86), Երվանդ *Երզնկյանը* (1986-ից):

Լևոն Սալխասյանը և Ալ Ջեռոն

1980-ական թթ-ին հանրահայտ էր Դ. Ազարյան (դաշնամուր), Գ. Բալաղյան (հարված. գործիքներ), Գ. Գևորգյան (կոնտրաբաս) ջազ. եռյակը: Կոմպոզիտոր, դաշնակահար Ա. Քարթալյանի եռյակի, ապա՝ քառյակի ստեղծագործության կորիզը բանահյուսությունն էր, որն էլ հետագայում դարձել է հայկ. ֆոլք-ջազի ձևավորման հիմքը: Այդ տարիներից հայկ. Ջ-ում մեծ ներդրում ունեն դաշնակահար, կոմպոզիտոր Ա. Մարտիրոսյանը, գործիքավորող Տ. Սահակյանը, դաշնակահարներ Վ. Հայրապետյանը, Տ. Համասյանը, կոնտրաբասահարներ Ա. Բակունցը, Ս. Դոլմազյանը, Ն. Վարդանյանը, թմբկահարներ Ռ. Յոլչյանը, Ա. Թութունջյանը, Վ. Բունիաթյանը, Ա. Աղամյանը և ուր., սաքսոֆոնահարներ Ա. Ջաքարյանը, Ա. Հյուսնունցը, երգիչներ Տ. Հովհաննիսյանը, Է. Մակարյանը, Արամոն և ուր.:

Արմեն Թութունջյանը ելույթի պահին

1990-ական թթ-ի սկզբին ստեղծված Ա. Թութունջյանի՝ «Չիկոն և ընկերները» ջազ. խումբը, նպաստել է հայկ. Ջ-ի զարգացմանը (երկացանկում՝ դաս. ջազի գործեր): Դաս. ստեղծագործությունների ջազ. մշակումներով հանդես է գալիս «Ուլիխանյան հնգյակը», հայտնի էր նաև էթնո-ջազ ուղղության «Թայմ Ռիփորթ» («Time Report») հնգյակը՝ սաքսոֆոնահար Ա. Հյուսնունցի և կոմպոզիտոր, դաշնակահար Խ. Սահակյանի ղեկավարությամբ: Ճանաչված է Ա. Թունջբոյաջյանի «Արմենիան Նեյվի Բենդ» («Armenian Navy Band») խումբը, որի ստեղծագործության հիմքը հայկ. բանահյուսությունն է:

Տաթևիկ Հովհաննիսյանը ելույթի պահին

Ջազ. խմբեր են գործում նաև Գյումրիում, Կապանում, Իջևանում և այլուր: 2005-ին Արցախում ստեղծվել է ջազ. նվագախումբ (գեղ. ղեկ. և դիրիժոր՝ Տ. Լալայանց):

Գայանե Ջաղացպանյան

1998-ին Երևանում կազմակերպվել է ջազ. երաժշտության առաջին միջազգ. փառատոնը՝ «Ջազ Արտ»-ը («Jazz Art»)՝ ակումբի ղեկ. Լ. Մալխասյանի և պրոդյուսեր Ա. Ասատրյանի ջանքերով: 2000-ին փառատոնի հյուրն էր ամերիկացի նշանավոր դաշնակահար Չ. Կորիան, որի հետ իր առաջին ելույթն է ունեցել 13-ամյա Տիգրան *Համասյանը*:

2005-ից Երևանում անցկացվում են Ջ-ի ամենամյա փառատոներ:

Գրկ. *Мысовский В., Фейертаг В., Джаз, Л., 1960; Конен В., Пути американской музыки, 3 изд. перераб., М., 1977; Teather L., The Encyclopedia of Jazz, in the Sixties, N. Y., 1966. Тутунджян А., Джаз в Армении, Е., 2014.*

Սյուրմին Վարդազարյան

ՋԱԶ-ԲԵՆԴ (անգլ.՝ jazz-band), ջազ. նվագախումբ. կատարում է ջազ. երաժշտություն: Սովորաբար կազմված է 3–6 սաքսոֆոնից, 2–4 փողից, 2–3 տրոմբոնից, հավասան կիթառից (այժմ՝ էլեկտրակիթառ), դաշնամուրից, մի շարք հարված. գործիքներից: Տարբերում են Ջ-բ-ի մեծ և փոքր տեսակներ:

Կարինե Ջաղացպանյան

ՋԱՂԱՅՊԱՆՅԱՆ Գայանե Ազատի (ծ. 15.01.1945, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: Կարինե *Ջաղացպանյանի* քույրը: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1967): 1968–92-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում (այժմ՝ քոլեջ), 1969–92-ին՝ նաև ԵՊԿ-ում: Ջ. ճանաչվել է որպես ժամանակակից կոմպոզիտորների դաշնամուր. գործերի լավագույն կատարող-մեկնաբան, որին հեղինակները ստեղծագործություններ են նվիրել: Նվագացանկում՝ Ա. Խաչատրյանի, Է. Միրզոյանի, Լ. Չաուշյանի, Ա. Հարությունյանի, Ա. Բաբաջանյանի, Տ. Մանսուրյանի, Հ. Դելալյանի և ուր. ստեղծագործություններից: 1993-ից ապրում է Բուդապեշտում: 2001-ին մենահամերգներով հանդես է եկել Երևանում: Ջ-ի կատարող. արվ-ին բնորոշ են ինտոնացիոն բազմազանությունը, ստեղծագործության գաղափարի յուրատիպ, նորովի բացահայտումները, հուզ. արտահայտչականությունը:

Ջամալի

Այսրկովկաս. մրցույթի «Լավագույն կոնցերտմայստեր» մրց. (1977, Թբիլիսի), Պ. Կաղուշայի անվ. միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1984, Բուդապեշտ), Լենինգրադի (1988), Կիսլովոդսկի (1989), Բուդապեշտի (2004, 2005) միջազգ. փառատոների դափնեկիր:

ՋԱՂԱՅՊԱՆՅԱՆ Կարինե Ազատի (ծ. 06.02.1943, Երևան), երաժշտագետ: Գայանե *Ջաղացպանյանի* քույրը: Ար-վեստագիտ. դ-ր (2001): Պրոֆ. (1995): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): ՀԿՄ (1977-ից), 1998–2013-ին՝ վարչության անդամ: Ավարտել է ԵՊԿ (1968, Ս. Կոպտևի դասարան), Մոսկվայի Արվեստագիտության ԳՀԻ ասպիրանտուրան (1980, ղեկ.՝ Մ. Ե. Տարականով): Դասավանդել է Երևանի Ա. Տիգրանյանի անվ. (1965–69), Պ. Ի. Չայկովսկու անվ. (1969–81) երաժշտ. դպրոցներում, 1981-ից՝ ԵՊԿ-ում: Հավաքել և կազմել է Հայաստանի մասին երաժշտ. հոդվածների, հարցազրույցների և լուսանկարների հավաքածու («Музыкальная академия», №1, 2005): Աշխ-ները վերաբերում են արդի հայ երաժշտության տեսությանն ու կոմպոզիտոր. արվ-ին («Երաժշտության վրա խոսքի ներգործությունը որպես ազգայինի դրսևորում», 1979, «Ժամանակակից վոկալ ասերգությունը և նրա ազգային ակունքները», 1985, հոդվածներ): Հայաստանում առաջինն է գիտ. մենագրություն գրել խոսքի և ռիթմի փոխկապակցվածության առանձնահատկությունների, ռիթմի ազգ. յուրօրինակությունների մասին:

Ա. Խաչատրյանի անվ. ոսկե մեդալ (2003), ՌՀՄ երաժշտագիտ. լավագույն աշխ-ների մրցանակաբաշխության դափնեկիր (2009):

Երկ. *Ритм национальной речи и музыки: Исследование, Е., 1986; По следам ритмов национальной музыки: Историко-теоретическое исследование, Е., 1999; Из жизни и творчества армянских композиторов, Е., 2012.*

ՋԱՄԱԼԻ (Տալյան Մկրտիչ Հովհաննեսի, 1848, Ալեքսանդրապոլ–1922, Թիֆլիս, թաղված է Խոջիվանքի գերեզմանատանը), աշուղ: Շարա *Տալյանի* հայրը: Սովորել է Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցներից մեկում, ապա զբաղվել ինքնակրթությամբ: Տիրապետել է գրաբարին, պարսկ-ին, արաբ-ին, թուրք-ին, հուն-ին: Քրոջ ամուսնու՝ *Ջիվանու* հետ շրջագայել է Կովկասի հայաբնակ վայրերում: Հետևել է հաս-քաղ. իրադարձություններին, նպաստել ուսման ու գիտության տարածմանը, խարազանել ագահությունը, սուտը, կեղծիքը, քծնանքն ու նենգությունը: Նրա խրատ., բարոյախոս. երգերը համեմված են ժող. բառ ու բանով, թևավոր խոսքերով, որտեղ նկատելի է նաև սոցիալ. շեշտադրումը. մասնավորապես 1905-ի ռուս.

հեղափոխությունից հետո նա վստահ էր, որ ազատության հասնելու համար անհրաժեշտ է համախմբված պայքար: Գրել է սիրային բանաստեղծություններ՝ անթերի գրական հայ-ով, որոնք նպաստել են գրական աշխարհաբարի զարգացմանը: Քարոզել է հայրենասիրություն, հայրենի հողը լքելը համարել չարիք: Ջ. մուհամմանների (հանելուկներ) վարպետն է հայ բանարվ-ում, որոնք լուծելու համար մրցել են բազմաթիվ աշուղներ: Նրա երգերն առաջին անգամ հրատարակվել են 1878-ին՝ «Սոխակ Հայաստանի» երգարանում: Ունի նաև անտիպ երգեր:

Երկ. *Երգիչ Ջամալու քնարական երգերը, Ալէքսանդրապօլ, 1892: Ժամանակակից երգեր, Թ., 1915: Բանաստեղծություններ, Ե., 1967: Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986, էջ 96–102:*

ՋԱՎԱԴՅԱՆ Լևոն Սերգեյի (ծ. 1971, Երևան), դաշնակահար: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. (1986, դասատու՝ Ս. Խաչատրյան), Պ. Ի. Չայկովսկու անվ. (1989, դասատու՝ Ռ. Թանդիլյան) երաժշտ. դպրոցները, էստոն. երաժշտության և թատրոնի ակադ-ը (1997): 1997-ին ստաժավորվել է Հելսինկիի Յ. Սիբելիուսի անվ. ակադ-ում: 1996–97-ին՝ Տալլինի «Էստոնիա» օպեր. թատրոնի, 1997–2011-ին՝ ԵՊԿ վոկալ բաժնի, Հայաստանի պետ. երգչախմբի, 2007-ից՝ ֆիլհարմոնիկ նվագախմբի (նաև մենակատար) կոնցերտմայստեր, 2003-ից՝ ԵՕԲԹ գլխ. կոնցերտմայստեր, 2014-ից՝ գլխ. պրոդյուսեր, 2016-ից՝ երիտասարդ. օպեր. մենակատարների ծրագրի ղեկ.: 1999-ից դասավանդում է ԵՊԿ-ում: Մասնակցել է մի շարք հանրապետ. և միջազգ. մրցույթների:

Դաշնակահարների Է. Գրիգի անվ. (արծաթե մեդալ, 1995, Բերգեն՝ Նորվեգիա), Վոկալիստների Ի. Վիգոլի անվ. («Լավագույն կոնցերտմայստեր», 1996) միջազգ. մրցույթների դափնեկիր, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

ՋԻՎԱՆԻ [Լևոնյան Սերոբ Ստեփանի, 1846, գ. Կարծախ (Ախալքալաքի գավառ–05.03.1909, Թիֆլիս], աշուղ, ժող. երգիչ: Գարեգին *Լևոնյանի* հայրը: Վաղ մանկությունից համբավավոր աշուղ Սիայից (Ղարա Ղազար) յուրացրել է աշուղ. երգի կանոնները, սովորել քաման և ջութակ նվագել, հորինել է թուրք. ու հայ. երգեր: 1866-ին Կարծախ է եկել երիտասարդ աշուղ *Սազային*, որի հետ մտերմանալով՝ Ջ. 1867-ի գարնանը մեկնել է Թիֆլիս: 1868–95-ին ապրել է Ալեքսանդրապոլում, ապա՝ Թիֆլիսում: Ալեքսանդրապոլում նշանավոր աշուղներ *Ջամալին*, *Ջահրին*, *Մալուլը*, *Ղեյրաթին*, *Ֆիզահին* հոգատարությամբ են շրջապատել նրան: Որոշ ժամանակ անց Ջ. ընտրվել է «ուստաբաշի» (գլխ. վարպետ): Մինչև 1880-ական թթ. նրա երգերը տպագրվել են տարբեր պարբ-ներում և «Սոխակ Հայաստանի» երգարանում: 1870–90-ական թթ-ին հաս. մտքի և ազգ-ազատագր. շարժման վերելքի տարիներին Ջ. սիրային, քնար. երգերը փոխարինել է բողոքի և ըմբոստության երգերով, որտեղ արտացոլել է ժամանակի հայ իրականության հոռի բարքերը՝ անարդարությունն ու բռնությունը, բողոքել դրանց դեմ, խարազանել աշխատավոր ժողովրդի իրավունքը ոտնահարողներին: Նրա բոլոր երգերը տոգորված են ազատախոհությամբ, բազմաթիվ գաղափարներ աշուղն արտահայտել է այլաբանորեն («Այծեամ», «Սիրուն հաւ», «Ես մի ծառ եմ ծիրանի», «Հոյ տառը», «Քաջ բազե» ևն): Ջ. քարոզել է հետևել լուսավորությանն ու գիտությանը, սիրել հայրենիքն ու ընտանիքը, հանապազօրյա հաց վաստակել աշխատանքով, երբեք չհուսահատվել, քանի որ «ձախորդ օրերը կուգան ու կերթան»: Նրան խորթ են ազգ.և կրոն. խտրությունները. երգել է համերաշխություն, եղբայրություն, հայրենիք, մաքուր ու անաղարտ

Լևոն Ջավադյան

Ջիվանի

Հատված Ջիվանու «Ղևակեր» երգից

սեր («Պաղ աղբյուրի մոտ», «Նազելույս ամպ է իջել» ևն): Ջ. հրապարակախոս է, փիլիսոփա, բարոյագետ. նրա իմաստուն խրատներն ու խորհուրդները տարածվել են ժողովրդի մեջ և դարձել աֆորիզմներ:

Ջ. XIX դ-ի ամենամեծ աշուղն է հայ իրականության մեջ. ստեղծել է իր դպրոցը, որը հայ բանագիտության մեջ իրավամբ կոչվում է ազգ.: Նա աշուղ. երգը մաքրել

«Ջիվանու քնարը» գրքի (1959) տիտղոսաթերթը



Ռաֆայել Ջրբաշյան

է արլ. ճոռոմաբանությունից, օտար բառերից, ստեղծել բանաստեղծ. պարզ ու անպաճույճ լեզու: Մեծապես նպաստել է գրական աշխարհաբարի զարգացմանը: Պահպանվել է Ջ-ի շուրջ 800 երգ:

Աշուղը սովորաբար հանդես է եկել 3 կամ 4 հոգուց բաղկացած խմբով, նվագել ծնկին դրվող ջութակ (նաև քաման), երգել զորավոր ու զգայուն ձայնով: Հետևել և խորացրել է Նաղաշ Հովնաթանից սկզբնավորված և Սայաթ-Նովայի զարգացրած ավանդույթը՝ որևէ երգի համար հորինել նրան բնորոշ եղանակ («Քո փափագով», «Ընկերը», «Այծեամ», «Զախորդ օրերը» ևն): Օգտվել է նաև ավանդ. աշուղ. եղանակներից, դրանք շարադրել յուրովի:

Ջ. հայ աշուղ. երգի ելևէջ. ոճը հարստացրել է բուն ժող. (գեղջկ.) երաժշտության տարրերով և ստեղծել իր անհատ. գրելաձևը: Առավել բնորոշ երգերում խոսք. և վոկալ ինտոնացիաները միաձուլված են, զգացմունքի խորությունը զուգորդված է արտահայտման վիպականության հետ («Զախորդ օրերը», «Փորձը մարդուն», «Սաթի եղնիկ», «Սպիտակ մազեր», «Ազգ իմ», «Ավարայրի դաշտը» ևն): Եղանակները կենսահաստատ են, լավատես., ձայնակարգ. հիմքը հարուստ է, ռիթմը՝ բազմազան: Ջ.ասերգի խոշոր վարպետ է («Խելքի աշեցեք» ևն): Վիպականորեն հանդարտ ու ծավալուն «պատմողականությամբ» միջնադար. տաղերին է հարում նրա «Առավոտյան քաղցր հովիկը», քաղաք. ժող. ոճի օգտագործման նմուշ է «Քույրերիս մեջ» երգը, որի եղանակը նույնպես սերում է հին, միջնադար. մի նախօրինակից: Ջ. կատարել է նաև այլ հեղինակների գործեր, դրանց համար հարմարեցրել կամ հորինել եղանակներ («Անի քաղաք»):

Թուրք-ից փոխադրել է «Աշըղ Ղարիբի հեքեաթը» (1887), «Քեարամի եւ Ասլիի հեքեաթը» (1888), «Շահ Իսմայէլի հեքեաթը» (1895), «Մելիք-Շահի հեքեաթը» (1898):

Ջ-ու երգերը հեղինակից գրառել են Ք. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը, Կոմիտասը, առավել հիմնովին՝ Ա. Բրուտյանը, հետագայում (այլ աշուղների երգածից)՝ Ս. Դեմուրյանը, Ռ. Մելիքյանը և ուր.: Գրառումների մի մասը՝ պահպանված այլ նմուշների հետ, զետեղված են Մ. Աղայանի և Շ. Տալյանի կազմած ու խմբագրած ժող-ում (1955): Ջ-ու երգերի կատարման ոճը պահպանել են Շ. Տալյանը, ապա՝ Վ. Սահակյանը: Նրա երգերը երգչախմբի համար մշակել են Ք. Կարա-Մուրզան և Մ. Եկմալյանը, դաշնամուրի համար՝ Ն. Տիգրանյանը, սիմֆ. նվագախմբի համար՝ կոմպոզիտոր և դիրիժոր Գ. Ա. Կազաչենկոն, ձայնի և դաշնամուրի (նաև փող. նվագախմբի) համար՝ բազմաթիվ կոմպոզիտորներ: Կոմիտասը «Քո փափագով» երգի եղանակն օգտագործել է իր «Անուշ» անավարտ օպերայում, «Անի քաղաքի» եղանակը (բացի Ք. Կարա-Մուրզայի երգչախմբ. մշակումից)՝ Ա. Տեր-Ղևոնդյանը, մասամբ՝ Կոմիտասը և Ա. Խաչատրյանը: Ջ-ու երաժշտ. ստեղծագործությունը հայ աշուղ. արվ-ը բարձրացրել է նոր մակարդակի, բարերար ազդեցություն գործել հայ աշուղների հետագա սերունդների վրա: 2016-ից Կարծախում գործում է Ջիվանու տուն-թանգարանը:

Երկ. *Երգեր, Ալեքսանդրապոլ, 1882: Ջիվանու քնարը, հ. 1, 2, Թ-Վաղ-պապ, 1900, 1904: Երգերի ժող., Ե., 1936: Երգեր (նոտագրված, կազմ.՝ Մ. Աղայան, Շ. Տալյան), Ե., 1955: Ջիվանու քնարը (առաջաբանը՝ Ա. Սահակյանի), Ե., 1959: Երգեր (առաջաբանը, ծնթգր.՝ Ա. Սահակյանի), Ե., 1959, 1988: Անհայտ երգեր (150 անտիպ բանաստեղծություններ), Ե., 1996: Տիրանի ծառ, Հայրենատիր, Ե., 1996: Ձայնագրյալ երգարան (Ջիվանի), Ե., 1998: Անհայտ երգեր (Աշուղ Ջիվանի), աշխատասիր.՝ Թ. Պողոսյանի, Ե., 2009: Հոգևերով լի, Ե., 2016 (աշխատասիր., առաջաբանը՝ Թ. Պողոսյանի):*

Գրկ. *Սահակյան Ա., Հայրենաշունչ քնար (Աշուղ Ջիվանու կյանքը և ստեղծագործությունը), Ե., 1965: Ջիվանի-150 (Աշուղի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժող.), Ե., 1996: Գրիգորյան Շ., Իմ Ջիվանին, Ե., 1997: Պողոսյան Թ., Աշուղ Ջիվանու բանաստեղծական աշխարհը, Ե., 2013:*

ՋՐԲԱՇՅԱՆ Ռաֆայել Քրիստափորի (02.06.1923, Կիսլովոդսկ – 16.01.2019, Երևան), ռեժ., մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1985), ՀՀ ժող. արտիստ (2008): Ավարտել է ԵԹԻ (1949): 1956-ից

Տեսարան Ա. Սպադավեկիայի «Բողբ» օպերայի բեմադրությունից (1961, ռեժ.՝ Ռ. Ջրբաշյան)

դասավանդել է ԵԹԿԻ-ում (1984–98-ին՝ ամբիոնի վարիչ, 1994–98-ին՝ պրոռեկտոր, պրոֆ.՝ 1986-ից): 1955–69-ին՝ ԵՕԹ-ի

ռեժ., 1971–72-ին՝ Վանաձորի, 1975–77-ին՝ Արտաշատի թատրոնների գեղ. ղեկ.: Բեմադրել է Վ. Շեքսպիրի «Մակբեթ», Ա. Ն. Օստրովսկու «Անտառ», Դե Ֆիլիպոյի «Ծննդյան տոնը սինյոր Կուպիելլոյի տանը» և այլ պիեսներ, Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ» (1959), Ա. Է. Սպադավեկիայի «Բոռը» (1961), Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դևը» (1965), Ա. Ն. Խոլմինովի «Լավատեսական ողբերգություն» (1966), Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» (1969, 1985) օպերաները:

ՋՐԲԱՇՅԱՆ Ստեփան Խաչատուրի (10.03.1917, Բաքու–10.10.1973, Երևան), կոմպոզիտոր: Անժելա *Հարությունյանի* ամուսինը: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիայի լար. (1943), ԵՊԿ կոմպոզիցիայի (1952) բաժինները, կատարելագործվել

Տևսարան Ս. Ջրբաշյանի «Երազիկ» օպերետի բեմադրությունից (1960, ԵՕԹԹ)

Մոսկվայի հայ մշակույթի տանը (1952–53, ղեկ-ներ՝ Հ. Ի. Լիտինսկի, Յ. Ա. Ֆորտունատով): Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում ղեկավարել է կոմպոզիցիայի դասարանը, դասավանդել ԵՊԿ-ում (1963–70, կամեր. անսամբլ, խմբավարություն): 1956–62-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի երաժշտ. ղեկ., 1962-ից՝ գլխ. դիրիժոր, 1967–71-ին՝ գեղ. ղեկ.:

Գրել է «Գիքոր» օպերան (ըստ Հ. Թումանյանի, 1973, բեմ.՝ 1974), սոնատ՝ թավջութակի և դաշնամուրի (1951) համար, դաշնամուր. կվինտետ (1953), գործիք. և անսամբլ. երկեր (սկերցո՝ փողի համար, դաշնամուր. էքսպրոմտ-ֆանտազիա), «Տոնական» (1957), Ռապսոդիա՝ ջութակահարների (1963), էքսպրոմտ՝ թավջութակահարների (1967) անսամբլների, ստեղծագործություններ՝ սիմֆ., էստրադ. ու ժող. գործիքների նվագախմբերի, նաև մանուկների համար, երգեր, ռոմանսներ, խմբերգեր, կինոերաժշտություն, կատարել ժող. երգերի և պարեղանակների 100-ից ավելի մշակումներ:

Նշանակալի ներդրում ունի նաև հայկ. օպերետի և երաժշտ. կոմեդիայի զարգացման մեջ («Երազիկ», բեմ.՝ 1960, «Չառլեի մորաքույրը», 1961, «Ծաղիկների աշխարհում», 1962, «Ես, հարսնացուս և...», 1963, «Մարսեցի փեսացուն», 1966): Ջ-ի երաժշտ. լեզուն պարզ է, արտահայտիչ և սերտորեն կապված է ժող. ավանդույթներին: Ջ-ի անունով է կոչվել Երևանի № 8 երաժշտ. դպրոցը (հիմն.՝ 1965):

Գրկ. *Иоанисян И., Семья одаренных, Е., 1998.*

Ըստ Ռոբերտ Աթայանի

Ստեփան Ջրբաշյան

ՋՈՒԹԱԿ (իտալ.՝ violino), լար. աղեղնավոր երաժշտ. գործիք, ջութակների ընտանիքում՝ ռեգիստրով ամենաբարձրը: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (փոքր օկտավայի սոլ, 1-ին օկտավայի ռե, լա, 2-րդ օկտավայի մի): Ձայնարտաբերման հիմնական միջոցը լարերի վրայով աղեղը սահեցնելն է (arco), նվագելու հատուկ հնարներից է պիցիկատոն: Ամենատարածված մենակատար գործիքներից է: Սերել է VIII դ-ում արաբների՝ Արմ. Եվրոպայի երկրներ բերած աղեղնավոր երաժշտ. գործիքներից, ըստ այլ տեսակետների՝ միջնադար. կրոտայից ու վիելայից: Ջ-ի դաս. տեսակը մշակվել է XV–XVI դդ-ում Իտալիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում: XVI–XVIII դդ-ում Հս. Իտալիայում՝ Բրեշայում (Գ. դա Սալո, Ջ. Մաջինի) և Կրեմոնում (Ա. և Ն. Ամատիներ, Ջ. Գվառների, Ա. Ստրադիվարիուս), ձևավորվել են Ջ-ի վարպետների խոշորագույն դպրոցներ: Վերջնականապես հաստատվել է նրա կառուցվածքը, մշակվել յուրահատուկ տեմբրը: Կրեմոնի Ջ-ները գործածվում են ցայսօր և համարվում են չգերազանցված:

Երաժշտարվ-ի պատմության մեջ մեծ է Ջ-ի դերը՝ որպես մենակատար համերգ. գործիք: XVII–XVIII դդ-ում գործիք. երաժշտության նոր ժանրեր են (մենանվագ սոնատ և կոնցերտ) ստեղծվել Ջ-ի համար: XVII– XVIII դդ-ում ընդարձակվել է Ջ-ի երկացանկը: XIX–XX դդ-ում նրա կատարող. արվ-ի զարգացումը պայմանավորվել է Ն. Պագանինի, Ջ. Բ. Վիոտտիի,

Ջութակ

Ռ. Կրոյցերի, Ա. Վիյոտայի, Է. Իզայիի, Հ. Վենյավսկու, Յ. Կուբելիկի, Ֆ. Կրայսլերի, Ջ. Էնեսկուի և ուր. գործունեությամբ: Ճանաչված ջութակահարներ են Դ. Օյստրախը, Լ. Կոգանը, Ի. Մենուհինը, Ի. Ստեռնը, Հ. Շերինգը, Վ. Թ. Սպիվակովը, Յ. Հայֆեցը, Ի. Պեռլմանը, Վ. Ռեպինը, Ս. Լուկան, Պ. Յուկերմանը և ուր.: Հայ իրականության մեջ Ջ-ի մասին առաջինը հիշատակել է Գրիգոր Նարեկացին («Մատեան ողբերգության»)՝ որպես անորոշ տեսակի լար. գործիք: Ջ-ի հայկ. դպրոցի զարգացմանը նպաստել են Ի. Կալամյանը, Ա. Ցիցիկյանը, Գ. Վրույրը, Գ. Ադամյանը, Գ. Աճեմյանը, Կ. Ավագյանը, Մ. Բարիքյանը, Ժ. Տեր-Մերգերյանը, Հ. Բոգդանյանը, Ռ. Ահարոնյանը, Ռ. Դավիդյանը, Է. Թադևոսյանը, Վ. Կոզիկյանը, Ն. Մադոյանը, Ս. Խաչատրյանը, Կ. Կարապետյանը, Ս. Հախնազարյանը, Է. Ճգնավորյանը և ուր.:

Ռ

ՌԱՊՍՈԴԻԱ (հուն.՝ ῥαψῳδία – վիպերգություն, հագներգություն), ժող. էպիկ. ոճով (ժող. թեմաներով գրված) բազմաբնույթ դրվագներով ազատ ձևի վոկալ կամ գործիք. ստեղծագործություն: Ժանրի սկզբնավորողներից է գերմանացի կոմպոզիտոր Ք. Ֆ. Դ. Շուբարտը («Ռապսոդիա», երգերի և դաշնամուր. պիեսների շարք, 1786): Դաշնամուր. Ռ-ի բարձրարվ. նմուշներ են ստեղծել Ֆ. Լիստը («Իսպանական ռապսոդիա», 19 «Հունգարական ռապսոդիաներ») և Յ. Բրամսը: Հայտնի են նաև Ռ-ներ նվագախմբի (Ա. Դվորժակի «Սլավոնական ռապսոդիաներ», Մ. Ռավելի «Իսպանական ռապսոդիա»), ձայնի, երգչախմբի և նվագախմբի (Յ. Բրամս), դաշնամուրի և նվագախմբի (Ս. Վ. Ռախմանինովի «Պագանինիի թեմայով ռապսոդիա», Ջ. Գերշվինի «Բլյուզի ոճով ռապսոդիա»), ջութակի և նվագախմբի (Է. Լալոյի «Նորվեգական ռապսոդիա», Մ. Ռավելի «Գնչուհի») համար ևն: Ռ-ներ են գրել նաև Ա. Բաբաջանյանը՝ «Պոեմ-ռապսոդիա» (1954)՝ նվագախմբի, «Հայկական ռապսոդիա» (1950, Ա. Հարությունյանի հետ)՝ 2 դաշնամուրի, Է. Բաղդասարյանը՝ ջութակի և նվագախմբի (1958), Ա. Զրբաշյանը ջութակահարների անսամբլի (1963), Ա. Հարությունյանը՝ «Մեր հին երգերը» (1975)՝ դաշնամուրի և նվագախմբի, շեփորի և նվագախմբի (1990), Ե. Երկանյանը՝ «Հերոսական ռապսոդիա» (2011)՝ խառը երգչախմբի և սիմֆ. նվագախմբի համար, Ա. Խաչատրյանը՝ ջութակի (1961), թավջութակի (1963, ՀԽՍՀ

Հատված Ալեքսանդր Հարությունյանի և Առնո Բաբաջանյանի «Հայկական ռապսոդիա»-ից

Պետ. մրց., 1965) և դաշնամուրի (1968) կոնցերտ. Ռ-ներ (եռերգությունը՝ ԽՍՀՄ Պետ. մրց., 1971) և ուր.:

ՌԵԱԼԻԶՄ, իրապաշտություն, երաժշտության մեջ Ռ-ի մասին օրինաչափորեն խոսվում է այն դեպքում, երբ կոմպոզիտորը, խոսքի, բեմ. գործողության կամ կենցաղ. ու համադր. ժանրերով պայմանավորված, տեսող. ու իմաստ. զուգորդումների միջոցով հատակեցնում է երաժշտ. կերպարները: Ռ-ի միտումները (բնության և կենցաղի կենդանի, ակնհայտ պատկերներ, մարդկային բնավորությունների հոգեբանորեն որոշակի ուրվանկարներ) երևան են եկել Վերածննդի դարաշրջանում, զարգացել բարոկկոյի և կլասիցիզմի շրջանների երաժշտության մեջ, XVIII դ-ում վառ կերպով դրսևորվել իտալ., ֆրանս., ռուս. կոմիկ. օպերայում և գերմ. զինգշպիլում: XIX դ-ի 2-րդ կեսին Ժ. Բիզեն («Կարմեն»), Ջ. Վերդին («Օթելլո», «Ֆալստաֆ»), մասամբ՝ Ռ. Վագները («Նյուրնբերգյան մայստերզինգերներ») և այլ հեղինակներ ստեղծել են սոցիալապես տիպականացված, հոգեբ. բազմաշերտ կերպարներ, որով արևմտաեվրոպ. երաժշտության մեջ նշանավորվել է Ռ-ի ձևավորումը: Ավելի վաղ այդ մեթոդը (որպես քննադատ. Ռ.) հաստատվել է ռուս. երաժշտության մեջ (Ա. Ա. Դարգոմիժսկու ռոմանսներն ու «Ջրահարսը» օպերան), որի նախապատրաստմանը մեծապես նպաստել է Մ. Ի. Գլինկան («Իվան Սուսանին» ևն): Երաժշտության մեջ Ռ-ի առավել բարձրարվ. գործերից են «Հզոր խմբակ»-ի կոմպոզիտորների՝ Մ. Պ. Մուսորգսկու, Ա. Պ. Բորոդինի, մասամբ՝ ռոմանտիզմի գծերը պահպանող Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի և Պ. Ի. Չայկովսկու երկերը:

Հայ երաժշտության մեջ Ռ-ի միտումներն ի հայտ են եկել դեռևս հայրեններում, անտունիներում, տաղերում, «Սասնա ծռեր» էպոսի երաժշտ. հատվածներում, ավելի ուշ՝ Ք. Կարա-Մուրզայի, Ե. Բաղդասարյանի, Գ. Սյունու և ուր. ժող. երգերի մշակումներում: Կոմիտասը Ռ. որպես ստեղծագործ. մեթոդ փայլուն կերպով կիրառել է իր ստեղծագործության մեջ: Ռ-ի հատկանիշներ դրսևորվել են նաև Ա. Խաչատրյանի, Հ. Ստեփանյանի, Ա. Տիգրանյանի, Ռ. Մելիքյանի և ազգ. կոմպոզիտոր. դպրոցի ուր. ներկայացուցիչների երկերում:

ՌԵԳԻՍՏՐ (< լատ. registrum – ցուցակ, ցանկ), ձայնաստահման, 1. երգչաձայնի հնչյունների շարք, որոնք արտաբերվում են նույն եղանակով և ունեն միասն. տեմբր: Տարբերում են կրծքայինը, գլխայինը և խառը Ռ-ներ: Տղամարդկանց ձայները, մասնավորապես՝ տենորները, կարող են արտաբերել նաև ֆալցետ. Ռ-ի հնչյուններ:

2. Տարբեր երաժշտ. գործիքների դիապազոնի հատվածներ, որոնք բնորոշվում են միասն. տեմբրով: 3. Հնչյունի ուժն ու տեմբրը փոխելու հարմարանք լար. ստեղնավոր երաժշտ. գործիքներում (մասնավորապես՝ կլավեսինում): 4. Միանման կառուցվածքի և տեմբրի, սակայն տարբեր բարձրության փողերի շարքը երգեհոնում:



Դաշնամուրի ռեգիստրները. 1. սուբկոնտրօկտավա, 2. կոնտրօկտավա, 3. մեծ օկտավա, 4. փոքր օկտավա, 5. առաջին օկտավա, 6. երկրորդ օկտավա, 7. երրորդ օկտավա, 8. չորրորդ օկտավա, 9. հինգերորդ օկտավա

ՌԵԶՈՆԱՆՍՈՂ ԼԱՐԵՐ, ձայնադարձիչ լարեր, լրացուցիչ լարեր, որոնք տատանվում են ոչ թե անմիջական հպումից, այլ հիմնական լարերի տատանման ազդեցությամբ, որի հետևանքով ուժգնանում է ընդհանրական հնչողությունը և հարստանում գործիքի տեմբրը: Ռ. լ. սովորաբար տեղավորված են հիմնական լարերի (երբեմն՝ գրիֆի) տակ կամ կողքը (վին, սիթար, արդինգֆելեհ, վիոլա դ'ամուր, որոշ դաշնամուրների վերին ռեգիստրում ևն):

ՌԵԶՈՆԱՏՈՐ (< լատ. resono – արձագանքում եմ), ձայնադարձիչ, երաժշտ. գործիքի կամ «գործիք-կատարող» համակարգի բաղադրիչ, որն ուժգնացնում և

1. Կիթառի ռեզոնատոր 2. Ռեզոնանսող անցքեր

անդրադարձնում է ձայնի տատանումները: Փող. գործիքներում և երգեհոնի փողերում Ռ-ին փոխարինում է օդի սյունը, լար. գործիքներում՝ իրանը, դաշնամուրում և կլավեսինում՝ դեկան, երգեցողության մեջ՝ կրծքավանդակը, ըմպանը, կոկորդը, բերանը:

ՌԵԺԻՍՈՐ (ֆրանս.՝ régisseur, < լատ. regare – ղեկավարել) երաժշտական թատրոնում (*օպերա*, *օպերետ*), ներկայացումն ստեղծելու ամբողջ ընթացքի ստեղծագործ. ղեկ-ը, որը, ըստ իր մտահղացման, բացահայտում է երաժշտ. երկի գաղափարը՝ բեմ. բազմազան արտահայտչամիջոցներով: Ռ. համադրում է նաև տեսող. և լսող. արվ-ների տարրեր՝ որպես ինքնուրույն գեղ. ամբողջություն:

ՌԵՊՐԻԶ (ֆրանս.՝ reprise, < reprendre – վերսկսել), երաժշտ. որևէ հատվածի անփոփոխ կամ տարբերակ. կրկնությունը: Անփոփոխ կրկնությունն անվանում են ստատիկ Ռ. (նշվում է 𝄇 նշանով կամ da capo եզրույթով), իսկ տարբերակայինը՝ դինամիկ: Ռ. ձևակազմավորման կարևորագույն սկզբունքներից է և նպաստում է ստեղծագործության ամբողջացմանը: Ռ-ային ձևերում (եռամաս, ռոնդո, ֆուգա, սոնատ. ձև ևն) երաժշտ. նյութը փոխակերպվում է ձայնակարգտոնային., ինտոնացիոն, ռիթմ., ֆակտուր. և այլ միջոցներով, նաև կառուցվածքի սեղմումով (կրճատ Ռ.) կամ ընդարձակումով (ընդլայնված Ռ.): Տարբերում են Ռ-ի թերի (բացակայում է կամ գլխ., կամ

Հատված «Բաղի պարր դդում ա» խմբերգից (գրառումը Կոմիտասի)

օժանդակ պարտիան), հայելանման (շարադրվում է նախ օժանդակ, ապա՝ գլխ. պարտիան), կոնտրապունկտային (գլխ. և օժանդակ պարտիաները շարադրվում են միաժամանակ) տեսակները: Սոնատ. ձևում առավել գործածական են հայելանման Ռ-ները: Տես նաև *Արբրևիատուրա*:

ՌԵՔՎԻԵՄ (լատ.՝ «Requiem aeternam dona eis, Domino» – «Հավերժ հանգիստ տուր նրանց, Տեր» տեքստի առաջին բառերից), սգո հոգեհանգստի մեսա: Կաթոլիկ. հանդիսավոր մեսայից տարբերվում է որոշ մասերի («Gloria», «Credo») բացակայությամբ, որոնց փոխարինում են նախ «Requiem», ապա՝ «Dies irae» («Ցասման օրը»), «Tuba mirum» («Հրաշագործ եղջյուրը»), «Lacrimosa» («Արտասվագին») և այլ հատվածներով: 1570-ին Հռոմ. եկեղեցին խստորեն կանոնակարգել է Ռ-ի կազմը: Ռ-ներ գրել են Յ. Օկեգեմը (XV դ.), Օ. Լասսոն, Ջ. Պալեստրինան (XVI դ.), Ֆ. Կավալլին, Ա. Լոտտին, Ֆ. Դուրանտեն, Ն. Յոմելլին (XVII–XVIII դդ.): XVIII դ-ում Ռ. կորցրել է ծիս. նշանակությունը և կատարվել է համերգներում: Ժանրի գլուխգործոցներից է Վ. Ա. Մոցարտի Ռ. (1791): XIX դ-ում Ռ-ի ժանրին անդրադարձել են Լ. Քերուբինին, Ռ. Շումանը, Ֆ. Լիստը, Ա. Բրուքները, Ա. Դվորժակը, Կ. Սեն-Սանսը, Գ. Ֆորեն: Առավել ճանաչված են Հ. Բեռ-

Հատված Ավետաանդր Հարությունյանի «Ռեքվիեմ»-ից

լիոզի (1837), Ջ. Վերդիի (1874) Ռ-ները, Յ. Բրամսի «Գերմանական ռեքվիեմը» (1868, տեքստը՝ գերմ.՝ ավանդ. լիթուրգ. լատ-ի փոխարեն): XX դ-ում այդ ժանրով գրված երկերից առանձնանում է Բ. Բրիտտենի «Ռազմական ռեքվիեմը», որտեղ լիթուրգ. տեքստը զուգակցված է Ու. Օուենի բանաստեղծությունների հետ:

Ռ-ներ են գրել նաև Լ. Խոջա-Էյնաթյանը, Ա. Հարությունյանը, Ա. Ամեմյանը, Ս. Հովհաննիսյանը (Կոմիտասի հիշատակին, 1966), Գ. Չթչյանը («Անհայտ զինվորը»,

պոեմ–Ռ., 1975), Վ. Բաբայանը («Ռեքվիեմ»՝ լար. նվագախմբի համար, 1983, «Սգացող Հայաստանին», սիմֆոնիա–Ռ՝ ա կապելլա երգչախմբի համար, 1989), Ա. Բաբայանը (ԵՀՊ հաղթանակին և զոհերի հիշատակին, 1984), Ա. Լուսինյանը (Սիմֆոնիա–Ռ., 1988), Վ. Բալյանը (Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին, 1989), Գ. Մանասյանը (պար. սյուիտ՝ երկրաշարժի զոհերի հիշատակին, 1989), Տ. Մանսուրյանը (Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, 2011), Ա. Շահնազարյանը (երգչախմբի և լար. նվագախմբի համար, 2015), Յ. Հարությունյանը, Մ. Մավիսակալյանը (Մեծ եղեռնի զոհերի հիշատակին) և ուր.:

Գրկ. *Schnerich A., Messe und Requiem seit Haydn und Mozart, Wien–Lpz., 1909; Fox Ch. W., The Polyphonic Requiem before about 1615, «Bulletin of the American Musicological Society», 1943, v. 7.*

Մ. Տերյան

ՌԵՖՐԵՆ (ֆրանս.՝ refrain), 1. *կրկներգ*: 2. Գործիք. կամ վոկալ երկի թեմա, որը կրկնվում է նվազագույնը 3 անգամ և ամբապնդում նրա կոմպոզիցիոն ամբողջությունը: Բնորոշ է ռոնդոյին և ռոնդոյակերպ ձևերին: Տես նաև *Լայտմոտիվ*:

ՌԻԹՄ (հուն.՝ ῥυθμός – համաչափություն, կառուցիկություն՝ շարժման մեջ, < ῥέω– հոսել), հնչյուն. տևողությունների տրամաբանված հաջորդականությունը: Որպես արտահայտչամիջոց՝ այլ միջոցների հարաբերակցությամբ ձևակառուցման կարևոր գործոններից է: Երաժշտության մեջ տոների բարձրությունների հարաբերությունները, որպես կանոն, իմաստավորվում, հուզ. լիցք են ստանում, երբ նրանք տևողության առումով նույնպես տրամաբանորեն կարգավորված են: Մեղեդիական շարժումը Ռ–ական առանձին դարձվածքների (կամ Ռ–ական պատկերների) հաջորդականություն է, որոնք անվերջանալիորեն բազմազան են: Տարբերում են Ռ–ի համեմատաբար պարզ (գոյանում է պարզ տևողություններից, ունի ընդգծված մետրական հիմք, բնորոշ է քայլերգերին, պարերին ևն) և բարդ (գոյանում է բարդ ու բազմազան տևողությունների հարաբերակցություններից, տակտային մասերն ընդգծված չեն, բնորոշ է լայնածոր եղանակ. ստեղծագործություններին) տեսակները: Առավել բնորոշներից են՝ «գումարման» (2 հավասարատև հնչյունների ու նրանց գումարի հաջորդականությունը), «կետագծային» (շեշտված երկար ու անշեշտ կարճ հնչյունների հաջորդականությունը տևողական միավորի սահմաններում), «շրջված կետագծային» կամ լոմբարդյան (անշեշտ կարճ ու շեշտված երկար հնչյունների հաջորդականությունը) Ռ–երը, սինկոպան (տևողությունների այն հաջորդականությունը, որտեղ ռիթմական և մետրական շեշտերը չեն համընկնում) ևն: Ռ–ի պարզագույն տարրերը միմյանց հետ հարաբերվում են նաև իրենց մետրական ֆունկցիայով, ուստի երաժշտությունը «հոսում» է մետրական և ռիթմական շեշտերի համընկնումով կամ մեկը մյուսին «հաղթահարելով»:

Մետրառիթմական հասկացությամբ բնութագրվում է Ռ–ի և մետրի հարաբերակցությունը, որը երևան է գալիս տևողությունների միասնական չափման միջոցով՝ հիմնված ժամանակի հավասարաչափ բաժանման, ուժեղ և թույլ մասերի կանոնավոր հաջորդականության վրա: Տարբերում են երաժշտության ընդհանուր Ռ–ային կերտվածքի 3 հիմնական տեսակներ, որոնց պայմանականորեն անվանում են՝ պարային (միմյանց համադրվող

Հատված Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից («Տղամարդկանց պար»–ից)

հավասարատև ու կարճաշունչ Ռ–ական դարձվածքներ, Ռ–ական ու մետրական շեշտերը համընկնում են, նմանվում է չափածոյի Ռ–ին), երգային (անհավասար ու երկարաշունչ դարձվածքներ, շեշտերը չեն համընկնում, համեմատելի է արձակի հետ) և ասերգային–իմպրովիզացիոն (մետրական շեշտերը չեզոքացված են, աննկանոն հաջորդականությամբ անհավասար դարձվածքներով ազատ շարադրում): Այսպիսի կերտվածքների զուգադրումներն ու փոխներթափանցումները, Ռ–ի կոտորակումն ու խտացումը, ընդհանրապես Ռ–ական տարբերակու-

Գարեգին Ռշտունի

մը, նաև տարբեր Ռ–ական պատկերների միաժամանակյա զուգադրումը երաժշտ. մտքի զարգացման, կերպար. վերաիմաստավորման, հակադիր իրավիճակներ արտահայտելու զորեղ միջոցներ են: Երաժշտ. ստեղծագործության Ռ–ական էության ու նրա ընկալման (նաև գրավոր անդրադարձումը) պատմ. զարգացումն ընթացել է անտիկ դարաշրջանի մեղեդիական Ռ–ից (ֆրազավորման հետ կապված ազատ, անհամաչափ Ռ., առանց հաստատուն տևող. միավորի) մինչև Ռ–ի որոշակիացումը, նրա նշանակության մեծացումն և գրավոր դրսևորման ճշգրտումը: Դաս. երաժշտության շեշտական Ռ–ում մեծացել է մետրի և տակտի դերը (ռոմանտիկ երաժշտության մեջ, հակառակը, կոմպոզիտորները ձգտել են չեզոքացնել մետրի ազդեցությունը), ավելացել են Ռ–ի միջոցներով երաժշտ. մտքի զարգացման եղանակները: XX–XXI դդ–ի որոշ ոճերում Ռ. դարձել է առաջնային՝ հիմնված ոչ պարբերականության, անհամաչափության վրա: Ի հայտ են եկել Ռ–ական թեմատիզմ, պոլիֆոնիա, սերիա, նաև տակտի լիակատար փոփոխականություն (կամ մետրի լիակատար բացակայություն): Առավել տարածված ժանրերում տակտային համակարգը, Ռ–ական պարբերականությունն ու շեշտա-



Հատված «Վարսո ջան» երգից (գրառումը՝ Սպիրիդոն Մելիքյանի և Անուշական Տեր-Ղևոնդյանի)

վորությունը պահպանել են իրենց նշանակությունը: Յուրաքանչյուր ժողովրդի երաժշտության Ռ–ական առանձնահատկությունները հաճախ երևան են գալիս որպես ազգի բնութագրման գործոն:

Հայկ. ժող. երաժշտության մեջ կիրառված են երաժշտության ընդհանուր Ռ–ային կերտվածքների բոլոր տեսակները՝ պար. (Կոմիտասի գրառած «Ալագյազ», «Խնկի ծառ»), երգ. («Ես քեզ տեսա, սիրտս ելավ»), ասերգ–իմպրովիզացիոն («Սիրտս նման է էն փլած տներ»): Ռ–ային կերտվածքներն ունեն նաև մասնավոր առանձնահատկություններ (օր.՝ պար. կերտվածքով Ռ.՝ հայկ. ժող. երաժշտության մեջ):

ՌԻԹՄԻԿԱ (< հուն. rhythmikós – ռիթմին վերաբերող), 1. ուսմունք բանաստեղծ. կամ երաժշտ. ***ռիթմի*** մասին: 2. Որևէ ժողովրդի լեզվի, բանաստեղծի կամ կոմպոզիտորի ստեղծագործությանը, բանաստեղծ. կամ երաժշտ. որևէ ժանրի, ոճի բնորոշ ռիթմային ընդհանուր հատկանիշների հավաքականությունը (օր.՝ հայկ. ժող. երաժշտության Ռ.): 3. Ֆիզ. պլաստիկ վարժույթների համակարգ (սովորաբար՝ երաժշտության ուղեկցությամբ), որը զարգացնում է ռիթմի զգացողությունը: 1913–ին հիմնադրել է շվեյցարացի կոմպոզիտոր և մանկավարժ Է. Ժակ–Դալկրոզը: ՀՀ–ում Ռ. ընդգրկված է Պ. Ի. Չայկովսկու անվ. դպրոցի և ԵՊԿ (մեներգիչների ուսուցում) ծրագրերում:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՌՇՏՈՒՆԻ Գարեգին (1840, Բուխարեստ–15.11.1879, Սալոնիկ), դերասան, երգիչ: Կատակերգության և վոդևիլի վարպետ, կատակերգերի հեղինակ և կատարող: Հայ կատակերգ. արվ–ի առաջին ներկայացուցիչներից, որին ժամանակակիցները համարել են եվրոպ. բեմի պարծանք: Վաղ տարիքում ծնողների հետ տեղափոխվել է Կ. Պոլիս, սովորել Նարեկյան, Սբ Փրկչի հիվանդանոցի ազգ. վարժարաններում: 1868–ից հանդես է եկել Հակոբ ***Վարդովյանի*** թատրոնում, եղել խմբի առաջին կատակերգակը (Թիբո՝ Ա. Մանասյանի «Զրաղացպանի աղջիկը», Փուրսոնյակ, Արգան, Հարպագոն, Ժորժ Դանդեն՝ Սոլիերի «Պարոն դը Փուրսոնյակ», «Երևակայական հիվանդ», «Ագահը», «Ժորժ Դանդեն», ևն): 1875–76–ին խաղացել է Տ. Չուխաճյանի թատերախմբում: Նրանց համագործակցությամբ ստեղծվել է «Քեռսե Քեհյա» («Ճաղատ տանուտեր») կոմիկ. օպերան (լիբրետտոն՝ Ռ–ի): 1877–ին Թ. Ֆասուլաճյանի խմբի հետ մեկնել է Բրուսա, Զմյուռնիա, Սալոնիկ: Խումբը քայքայվելուց հետո Ռ. Չափրաստի, Սիրանույշի և Աստղիկի հետ հանդես է եկել Ռոդոսթոյում:

Կատարել է իր հեղինակած (նաև տեքստերը) երգերը: Նրա «Կրամբամբուլին» երգը հասել է մինչև մեր օրերը: Ստեղծել է նաև պարեր, բեմադրել խմբապարեր՝ բալետ. տեսարաններ, որոնք ներկայացրել են Հ. Վարդովյանի թատերախմբի պարուհիները: Մեծ հաջողություն է ունեցել «Պար Վենետիկեանը»՝ դերասանուհի Վերգինե

Գարագաշյանի կատարմամբ: Հեղինակ է նաև վոդևիլների, որտեղ հանդես է եկել գլխ. դերերով:

Գրկ. *Շարաման, Թրքահայ բեմը եւ իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 99–105: Պեշիկթաշլեան Ն., Թատերական դէմքեր, Անթիլիաս, 1969, էջ 205–227: Մրմիանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 2, Ե., 1969, էջ 114–117: Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Ե., 2010, էջ 340–345: Ասատրյան Ա., Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011, էջ 216–225:*

Աննա Ասատրյան

ՌՈՄԱՆՍ (իսպ.՝ romance, < ուշ լատ. romanice – ռոմաներեն, այսինքն՝ իսպաներեն), կամեր. երաժշտաբանաստեղծ. ստեղծագործություն ձայնի համար՝ գործիքի նվագակցությամբ (նշանակությամբ հաճախ հավասարվում է ձայնին): Ի տարբերություն երգի՝ Ռ–ի երաժշտությունը, բանաստեղծության ընդհանուր տրամադրություն արտահայտելուց բացի, հետևում է տեքստի յուրաքանչյուր մանրամասնին, բացահայտում հույզերի նրբին անցումները:

«Ռ.» եզրույթը ծագել է Իսպանիայում՝ դեռևս միջնադարում, և նախապես նշանակել է աշխարհիկ երգ՝ գրված ոչ թե լատ. (հոգևոր երգերի լեզուն), այլ իսպ. («ռոմաներեն»): Ժանր. տեսակներից են բալլադը, եղերերգը, բարկարոլը ևն: Ռ–ի բանաստեղծությունը զուրկ է ժանր. հաստատուն հատկանիշներից, սովորաբար՝ հանգավոր, տների բաժանված, երգուն, քնար. ոչ մեծ ստեղծագործություն է: Ռ., որպես երաժշտաբանաստեղծ. համադր. ժանր, զարգացել է XVIII դ–ի 2–րդ կեսին Գերմանիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում: XIX դ–ից նրա զարգացմանը մեծապես նպաստել են Յ. Վ. Գյոթեի, Հ. Հայնեի, Ա. Ս. Պուշկինի, Մ. Յ. Լերմոնտովի, Ա. Ա. Ֆետի և ուր. ստեղծագործությունները: Նոր տեսակի Ռ–ի հիմնական թեման մարդու հոգեկան ապրումներն են՝ իրենց նրբերանգներով: Կազմավորվել են Ռ–ի ավստրո–գերմ. (հիմնադիր՝ Ֆ. Շուբերտ, նաև Ռ. Շուման, Յ. Բրամս, Հ. Վոլֆ), ֆրանս. (Հ. Բեռլիոզ, Շ. Գունո, Ժ. Բիզե, Ժ. Մասնե), ռուս. (Մ. Ի. Գլինկա, Ա. Ս. Դարգոմիժսկի, Մ. Ա. Բալակիրև, Մ. Պ. Մուսորգսկի, Ա. Պ. Բորոդին, Ն. Ա. Ռիմսկի–Կորսակով, Պ. Ի. Չայկովսկի, Ս. Վ. Ռախմանինով) դպրոցները:

Դաս. Ռ–ին զուգահեռ զարգացել է նաև կենցաղ. Ռ. (Ռուսաստանում՝ նաև գնչուական Ռ.), որը, նախատեսված լինելով սիրող երգիչների համար, առավել պարզ ու մատչելի էր, ոճ. առումով՝ երգին ավելի մոտ: Կոմպոզիտորները հաճախ մի քանի Ռ. միավորում են 1 շարքում՝ հիմք ընդունելով գաղափարի և կերպարի ընդհանրությունը, կամ 1 բանաստեղծի գործերը համակողմանի ընդգրկելու նպատակ: Ռ–ի առաջին շարքի հեղինակը Լ. վան Բեթհովենն է («Հեռավոր սիրուհուն», 1816): XIX դ–ի 2–րդ կես–XX դ–ի սկզբին Ռ–ներ են գրել նաև չեխ., լեհ., ֆիննա., նորվեգ. ազգ. դպրոցների կոմպոզիտորները: Խորհրդ. շրջանում Ռ. առանձնացել է դաս. կամերվոկալ ժանրերով (Ա. Ն. Ալեքսանդրով, Ն. Յ. Մյասկովսկի, Յ. Ա. Շապորին) և վառ արտահայտված երգայնությամբ, դրանց նորացմամբ (Գ. Վ. Սվիրիդով) կամ դեկլամացիոն, բնութագր. (Ս. Ս. Պրոկոֆև, Դ. Դ. Շոստակովիչ) սկզբունքների զարգացմամբ: Երբեմն Ռ. են անվանում ջութակի, թավջութակի և այլ գործիքների համար գրված երգուն բնույթի գործիք. պիեսները, նաև երաժշտություն չունեցող,

Հատված Ռոմանոս Մելիքյանի «Վարդը» ռոմանսից

բայց Ռ–ային տեքստերին բնորոշ նույն ինտոնացիոն հնարքների համակարգով կառուցված քնար. բանաստեղծությունները (Վ. Պ. Ժուկովսկու «Ցանկություն», Պ. Վեռլենի «Ռոմաններ առանց խոսքի», ժող–ներ):

Հայկ. երաժշտության մեջ Ռ. սկզբնավորվել է XIX դ–ի 2–րդ կեսին: Առաջին Ռ–ները գրել են Տ. Չուխաճյանը («Գարուն», «Լոռա»), Գ. Երանյանը («Հայաստան», «Կիլիկիա»), Գ. Ղորղանյանը: Հայկ. Ռ–ի զարգացմանը մեծապես նպաստել են Ա. Սպենդիարյանը (կերպար. բովանդակության հարստացում, ժանրի և երաժշտ. ձևի բազմազանություն), Ռ. Մելիքյանը (ազգ. ոճի բյուրեղացում): Ռ–ի ժանրին անդրադարձել են Կոմիտասը, Դ. Ղազարյանը, Հ. Ստեփանյանը, Կ. Զաքարյանը, Մ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Ա. Խուդոյանը, Ս. Բալասանյանը, Է. Աբրահամյանը, Գ. Չթչյանը և ուր., կենցաղ. Ռ–ներին՝ Ե. Բաղդասարյանը («Մի լար, բլբուլ»), Ա. Մայիլյանը («Ծովի երգը», «Ինձ մի խնդրիր»), Ա. Տիգրանյանը («Սև աչեր» ևն) և ուր.:

Հատված Գաբրիել Երանյանի «Կիլիկիա» երգից

ՌՈՄԱՆՏԻԶՄ (ֆրանս.՝ romantisme), գաղափար., գեղ. ուղղություն եվրոպ. և ամերիկ. հոգևոր մշակույթում (XVIII դ–ի վերջ–XIX դ–ի 1–ին կես): Երաժշտության մեջ որպես ուղղություն ձևավորվել է 1820–ական թթ–ին, նրա զարգացումն ավարտող շրջանը՝ *նեոռոմանտիզմը*, ընդգրկել է XIX դ–ի վերջին տասնամյակները: Երևան է եկել Ավստրիայում (Ֆ. Շուբերտ), Գերմանիայում (Է. Թ. Ա. Հոֆման, Կ. Մ. Վեբեր, Լ. Շպոր, Ֆ. Մենդելսոն, Ռ. Շուման, Ռ. Վագներ և ուր.), Իտալիայում (Ն. Պագանինի, Վ. Բելլինի, Ջ. Վերդի և ուր.), ավելի ուշ՝ Ֆրանսիայում (Հ. Բեռլիոզ, Դ. Ֆ. Օբեր, Ջ. Մեյերբեր և ուր.), Լեհաստանում (Ֆ. Շոպեն), Հունգարիայում (Ֆ. Լիստ): Յուրաքանչյուր երկրում այն ստացել է ազգ. երանգ, երբեմն նույն երկրում ձևավորվել են ռոմանտիկ. տարբեր հոսանքներ (լայպցիգյան և վայմարյան դպրոցները՝ Գերմանիայում):

Ռ., չլինելով ամբողջ. և ինքնուրույն ուղղություն, դրսևորվել է մի շարք կոմպոզիտորների (Ա. Ա. Ալյաբև, Ա. Ն. Վերստովսկի, վաղ շրջանում՝ Մ. Ի. Գլինկա, Ն. Ա. Ռիմսկի–Կորսակով և ուր., «Հզոր խմբակի» անդամները, Պ. Ի. Չայկովսկի, Ա. Ն. Սկրյաբին, Բ. Սմետանա, Ա. Դվորժակ, Է. Գրիգ, Տ. Չուխաճյան, Ա. Սպենդիարյան և ուր.) ստեղծագործություններում: Ավստրիայում և Գերմանիայում Ռ–ի կարևոր հատկանիշները զարգացել են Յ. Բրամսի, Ա. Բրուքների, Ռ. Շտրաուսի և ուր. գործերում: Ռ–ի երաժշտ. երկերում վերակերտվել են բազմաթիվ ժող. ասքեր, առասպելներ, հավատալիքներ, ժող. երգը դիտարկվել է որպես պրոֆեսիոնալ երաժշտարվ–ի նախահիմք: Էապես նորացվել են արտահայտչամիջոցները. մեղեդին դարձել է առավել անհատականացված, ամենանուրբ հոգեվիճակներն արտահայտող, հարմոնիան և գործիքավորումը՝ հարուստ, վառ, գունագեղ, կարևորվել է բազմաբնույթ դրվագների ազատ համադրման նշանակությունը: Մեծապես զարգացել է վոկալ–գործիք. բալլադը, կազմավորվել և բարձր մակարդակի են հասել երգաշարերը: Գործիք. երաժշտության մեջ առաջատար ժանրերից էին սիմֆոնիան, կամեր–գործիք. անսամբլը, գործիք. սոնատը: Սոնատում և սիմֆոնիայում երգայնության առավել մեծ նշանակությունը պայմանավորվել է

Ըստ Աննա Բարսամյանի

ընդհանուր քնարականությամբ: Ի հայտ են եկել ժանր. նոր տեսակներ (սիմֆոնիկ պոեմը, որտեղ միահյուսված են սոնատ. ձևի և սոնատ. սիմֆ. ցիկլի հատկանիշները): Ծրագրայնությունը կարևորվել է ոչ միայն սիմֆ., այլև գործիք. երաժշտության այլ տեսակներում:

Հայկ. երաժշտության մեջ Ռ., չլինելով ամբողջ. և ինքնուրույն ուղղություն, ի հայտ է եկել 1860-ական թթ-ից: Կ. Պոլսում Գաբրիել *Երանյանն* ստեղծել է մեծ ժողովրդականություն վայելող ազգ-հայրենասիր. Ռ-ի ոգով երգեր՝ «Կիլիկիա», «Առ Հայաստան» («Հայաստան, երկիր դրախտավայր»), «Արիք Հայկազունք» ևն: Ռոմանտիկ. այդ ալիքն իր բարձրակետին է հասցրել Տ. Չուխաճյանը՝ «Արևելյան թատրոնի» ներկայացումների, հատկապես՝ Ռ. Սետեֆճյանի «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» պատմ. ողբերգության (բեմ.՝ 1867, Մ. Նալբանդյանի մահվան տարելիցի կապակցությամբ) համար գրած ազատասիր. պաթոսով երգերով, երաժշտությամբ: Նա Մ. Պեշիկթաշլյանի խոսքերով ստեղծել է «Գարուն» հայկ. առաջին լավագույն ռոմանսներից մեկը, երաժիշտ-ռոմանտիկներին ներհատուկ մղումով՝ արաբ. հեքիաթի հիման վրա՝ «Զեմիրե» օպերա-կախարդապատկերը և այլ երկեր՝ այդ ամենը պսակելով իր գլուխգործոցով՝ հայկ. առաջին պատմառոմանտիկ. *«Արշակ Բ»* օպերայով: Ռ-ի գեղագիտ. կարևոր սկզբունքներն արտացոլվել են Ալեքսանդր *Սպենդիարյանի* «Այ վարդ» երգ-ռոմանսում (խոսք՝ Ա. Ծատուրյանի, 1894), «Զկնորսն ու փերին» (ըստ. Մ. Ա. Գորկու, 1902) բալլադում՝ բասի և նվագախմբի համար, «Երեք արմավենի» սիմֆ. պատկերում (ըստ Մ. Յ. Լերմոնտովի, 1905), «Բեդան՝ քարոզիչ» (ըստ Յ. Պոլոնսկու) լեգենդում, «Այնտեղ, այնտեղ, դեպ վեհ այն դաշտը» հերոս. երգում (Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մոտիվներով, 1914)՝ տենորի և նվագախմբի համար, «Առ Հայաստան» կոնցերտ. արիայում (խոսք՝ Հ. Հովհաննիսյանի, 1915), «Ալմաստ» օպերայում ևն: Ռ. բազմակերպ երևակվել է Գ. Ղորղանյանի ռոմանսներում, Ա. Տեր-Ղևոնդյանի «Ախթամար» սիմֆ. պոեմում, Ս. Բարխուդարյանի մանրանվագներում ևն: Երաժշտակատարող. արվ-ում վիրտուոզ-ռոմանտիկ. թևի ներկայացուցիչներ են ջութակահար Գ. Վրույրը, Սինանյան ընտանիքի անդամները, դաշնակահար Հ. Տեր-Դավթյանը և ուր.:

ՌՈՅԱԼ (< ֆրանս. royal – թագավորական), լար. հարված-ստեղնավոր երաժշտ. գործիք, դաշնամուրի տեսակ: Դեկան, լարերը և մեխանիզմը դասավորված են հորիզոն. դիրքով: Ունի թևավոր իրան, որը պատրաստում են փայտի սոսնձված շերտերից (մինչև 22 շերտով՝ «Սթեյնուեյ և եղբայրներ» ֆիրմայում, ԱՄՆ): Ռ-ները տարբերվում են ստեղնաշարի չափերով և ծավալով («մինիոն» և սենյակային Ռ-ները՝ 7, համերգայինները՝ 7 ¼ օկտավա): Առավելագույն դիապազոն (8 օկտավա) ունեն «Բյոզենդորֆեր» ավստր. ֆիրմայի Ռ-ները:

Առաջին անգամ «Ռ.» եզրույթն օգտագործել է գործիքների վարպետ Յ. Վագները 1774-ին (clavecin royale): Ռ. արտադրող խոշորագույն ֆիրմաներից են՝ «Բեխշթայն», «Բլյութներ», «Բեքեր», «Շրոյդեր» (բոլորը՝ Գերմանիա), «Պետրով» (Չեխիա), «Յամահա», «Կավաի» (երկուսն էլ՝ Ճապոնիա), «Սթեյնուեյ» (ԱՄՆ) ևն:

Ռոյալ

Հատ. Աննա Բարսամյանի

ՌՈՆԴՈ (իտալ.՝ rondo, ֆրանս.՝ rondeau, < rond – շրջան), 1. երաժշտ. ստեղծագործության կառուցվածքի ձև, որտեղ թեման կրկնվում է նվազագույնը 3 անգամ, իսկ կրկնությունների միջև անցնում են նոր նյութեր (ABACA) կամ թեմայի տարբերակներ (AA_1AA_2A): Թեման կոչվում է ռեֆրեն կամ գլխ. թեմա և ամեն անգամ հնչում է հիմնական տոնայնությամբ: Միջին հատվածներն անվանում են էպիզոդ (BCD), որոնք հնչում են հիմնականում այլ տոնայնություններով:

Ռ-ի ձևը ծագել է ժող. շուրջպարերից, որտեղ անընդհատ փոփոխվող երաժշտ. նյութը (էպիզոդները կամ նախերգ) փոխընդմեջ վերադառնում է հիմնական անփոփոխ թեմային: Տարբերում են Ռ-ի պարզ (մասերը չունեն կապող հատվածներ ու զարգացման միասնական գիծ, գործածել են առավելապես ֆրանսիացի կլավեսինահարները և անվանել մոնոթեմատիկ) և բարդ (ունեն կապող հատվածներ ու զարգացման միասնական գիծ, գործածել են առավելապես կլասիցիզմի դարաշրջանի կոմպոզիտորները) տեսակներ:

Պրոֆեսիոնալ երաժշտության մեջ առաջին անգամ օգտագործել են XVII–

XVIII դդ-ի ֆրանսիացի կլավեսինահարների երգ-պար. մանրանվագներում և անվանել հնագույն կամ քառյակային Ռ.: Վիեննական դաս. Ռ-ում ռեֆրենն ընդլայնված է. նրա և էպիզոդների միջև հանդիպում են կապող հատվածներ, մասերի միջև առաջացող հակադրությունը ձևը դարձնում է դինամիկ և հաճախ հանգեցնում եզրափակող մասի՝ կոդայի: Երբեմն Ռ. ընդունում է սոնատ. ձևի հատկանիշներ (Ռ-սոնատ): Ռոմանտիզմի դարաշրջանում առաջացել են բազմամաս Ռ-ներ: Ռ-ի հետագա զարգացումը (XX դ-ից) բնորոշվում է ձևի ազատ մեկնաբանմամբ, հնարավոր է ռեֆրենի հիմնովին փոփոխված կրկնությունը:

Ռ-ի ձևով գրվել են ինքնուրույն ստեղծագործություններ, հաճախ՝ դրանց առանձին մասեր, նաև օպեր. կամ բալետ. երաժշտության պատկերներ:



Ստեփան Ռոպրոմյան

ՌՈՆԴՈ ՍՈՆԱՏԱՅԻՆ ՁԵՎ, ռոնդոյի և սոնատ. ձևի նշանները համատեղող խառը երաժշտ. ձև, ունի էքսպոզիցիա, ռեպրիզայինABA C AB (A) կոդա: Տարբերում են Ռ. ս. ձ-ի կենտրոն. էպիզոդով (ABA C ABA) և մշակման բաժնով (ABA կամ AB_1 A) տեսակներ: Ռ. ս. ձ-ում ռեֆրենն անցկացվում է նվազագույնը 3 անգամ՝ գլխ. տոնայնությամբ: Ռոնդոյի ռեֆրենը և առաջին էպիզոդը համապատասխանում են սոնատ. ձևի գլխ. և օժանդակ պարտիաներին (առաջին էպիզոդն էքսպոզիցիայում անցկացվում է օժանդակ տոնայնությամբ, իսկ ռեպրիզում՝ գլխ. տոնայնությամբ), որտեղ կարող է ընդգրկվել նաև կապող մասը: Միջին (երկրորդ) էպիզոդը հաճախ փոխարինվում է մշակումով: Ռեպրիզին սովորաբար հաջորդում է կոդան: Ռ. ս. ձ., որպես ցիկլի կոմպոզիցիոն ամբողջականությունը եզրափակող ձև, հանդիպում է սոնատ. սիմֆ. ցիկլի ֆինալում:

ՌՈՍՏՈՄՅԱՆ Ստեփան Արզումանի (ծ. 04.04.1956, Վանաձոր), կոմպոզիտոր: ՀԿՄ, ԱՄՆ-ի ԿՄ (1999) անդամ: Մանկավարժ. (2003), Եվրոպ. միջազգ. գիտությունների (2006) ակադ-ների անդամ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2009): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի ջութակի, ԵՊԿ կոմպոզիցիայի (1980, Ղ. Սարյանի և Ա. Տերտերյանի դասարաններ) բաժինները: 1980–84-ին՝ Հայաստանի պետ. երգչախմբի երաժշտ. խորհրդատու, 1990–92-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի երաժշտ. ղեկ., 1994–2002-ին՝ «Գանձասար» աստվածաբան. կենտրոնի շարականագիտության բաժնի ղեկ. և երաժշտ. խմբագիր, 1997-ից՝ հայ ժամանակակից երաժշտության կենտրոնի ղեկ., 1999-ից՝ հայ երաժշտության լրատվ. կենտրոնի նախագահ, 2000-ից՝ «Երևանյան հեռանկարներ» միջազգ. երաժշտ. փառատոնի հիմնադիր-ղեկ., 2000–02-ին՝ «ՎԷմ» ռադիոկայանի տնօրեն, 2001–02-ին՝ «Քեզ՝ Քրիստոնյա Հայաստան» և «Համաքրիստոնեական մշակույթ» միջազգ. դաս. և հոգևոր երաժշտության փառատոների գեղ. ղեկ.: 1989–90-ին դասավանդել է Գլազգոյի «Շոտլանդիա» համալսարանում, միաժամանակ՝ ԵՊԿ-ում (2000-ից՝ պրոֆ.): Հեղինակ է «Մուտք» օպերայի (2002, սիմֆ. նվագախմբում՝ նաև դուդուկ, զուռնա, պկու, պարկապզուկ, դիջիրիդու), 4 սիմֆոնիայի (1-ինը՝ 1980, հանրապետ. մրց., 2-րդը՝ կամեր. նվագախմբի, երգչախմբի, 2 մենակատարների և եկեղեց. զանգերի համար,1986, 3-րդը՝ կամեր. անսամբլի և ֆոնոգրամների համար, 1989, 4-րդը՝ 1998), սիմֆ. («Էսքիզներ»՝ սիմֆ. նվագախմբի համար, 1980), կամեր. (լար. կվարտետ՝ 1978, տրիո՝ ջութակի, կլառնետի, դաշնամուրի համար, 1979, փող. կվինտետներ՝ 1980, 1989, ևն) գործերի, «Թանկա» վոկալ շարքի (հին ճապոնացի բանաստեղծների տեքստերով, 1983), «Տաղ Հրեշտակային»՝ ֆլեյտայի, հոբոյի, ջութակի, թավջութակի, դաշնամուրի և սոպրանոյի համար (2001), «Տաղ Ավետման» (2008), «Տաղ Սուրբ Երրորդության» (2012), թատրոնի և կինոյի երաժշտության («Խոր վիրապ», 2000):

«Լեոնարդո դա Վինչի» (2007, Իտալիա), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2017) շքանշաններ, ՀՀ ՄՆ (2006), Երևանի քաղաքապետարանի (2014) ոսկե, «Ալբերտ Շվեյցեր» (2005, Հաննովեր), ՌԴ «Պետրոս I» (2006) մեդալներ:

ՌՈՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (< անգլ. rock – օրորել, ճոճել և music – երաժշտություն), հանրամատչելի երաժշտության մի շարք ուղղությունների ընդհանրացված անվանումը:

Սերել է բլյուզից, որից առանձնացել են ռոք-ն-ռոլ և ռոքաբիլլի ժանրերը: Առաջին ենթաժանրերը (ֆոլք, քանթրի,

սքիֆֆլ, մյուզիք-հոլլ) առաջացել են՝ պայմանավորված ժամանակի ժող. և ժամանց. երաժշտությամբ: Փորձեր են արվել Ռ. ե. համադրել երաժշտության բոլոր հնարավոր տեսակների հետ (ակադեմ. երաժշտություն, ջազից մինչև ֆոլք):

Ռ. ե. սովորաբար կատարում է ռոք խումբը, որը բաղկացած է մեներգչից, կիթառահարից (որպես կանոն՝ էլ. կիթառ), բաս-կիթառահարից և թմբկահարից, երբեմն՝ ստեղնահարից: Բաս-կիթառը, հարված. գործիքները և ռիթմ-կիթառը (ոչ բոլոր խմբերում) կազմում են ռիթմ. սեկցիան: Մենակատար գործիքը մշտապես էլեկտրակիթառն է:

Ռ. ե. առաջացել և զարգացել է հիմնականում ԱՄՆ-ում և Արմ. Եվրոպայում (հատկապես՝ Մեծ Բրիտանիայում): Հիմնադրվել են «Դիփ Փարփլ», «Ռոլինգ Սթոունս», «Ացեդեցե», «Իգլս» և այլ հանրահայտ խմբեր: Երգերի տեքստերի մեծ մասն անգլերեն էր: Ավելի ուշ ազգ. Ռ. ե. ի հայտ է եկել բոլոր երկրներում:

Հայկ. Ռ. ե. երևան է եկել 1960-ական թթ-ին. ստեղծվել են տասնյակ խմբեր, որոնց զգալի մասն աչքի է ընկել կատարող. բարձր մակարդակով:

1967-ին հայկ. ռոք շարժման հիմնադիր Արթուր ***Մեսչյանը*** հիմնադրել է «Առաքյալներ» խումբը, որի երաժշտությունը հաճախ զուգորդվում է «հայկական ռոք» հասկացության հետ: Խումբն առաջիններից էր, որ սեփ. խոհափիլ. տեքստերով երգերը կատարել է հայ., ներկայացրել նաև արտերկրում: Կազմում էին կիթառահար Լ. Միքայելյանը և հարված. գործիքներ նվագող Գ. Նալբանդյանը: Գործել է մինչև 1976-ը:

1978-ին Գագիկ Բարսեղյանը Գյումրիում ստեղծել է «Բամբիռ» խումբը, որը հանդես է եկել հայկ. ազգ. երաժշտության ժամանակակից գործիքավորումներով, Կոմիտասի ու միջնադար. երաժշտության յուրովի մեկնաբանություններով, նաև հեղինակ. կատարումներով: Երաժշտ. մրցույթ-փառատոնում արժանացել է մրց-ի՝ «Ֆոլք Մյուզիք» անվանակարգում (1982, ք. Լիդա՝ ԲԽՍՀ): Թողարկել է 12 ձայնասկավառակ (1999–2015):

Ժանրի զարգացմանը նպաստել են ԽՍՀՄ-ում առաջին քաղաք. Ռ. ե-յան փառատոները (Երևանում՝ 1968-ից):

1981-ին (ԽՍՀՄ-ում՝ առաջին անգամ) Երևանում անցկացվել է միջազգ. փոփ-ռոք փառատոն (կազմակերպիչ՝ Ստաս ***Նամին***), որը տևել է շուրջ 14 *ժ* և ունեցել մեծ հաջողություն («Թայմս» ամսագիրն այն անվանել է «Երևանյան Վուդսթոք»):

«Առաքյալներ» ռոք խումբը (1967)

Երևանյան փառատոնից հետո Ռ. ե-յան հետապնդումների նոր ալիք է բարձրացել: Իշխանությունների մտավախությունը ըստ երևույթին պայմանավորված էր ոչ միայն հանրահայտ երաժիշտ-մասնակիցներով, այլև փառատոնի օրերին տեղի ունեցած բազմաթիվ հակահասարակական երևույթներով: Հայկ. Ռ. ե-յան հիմնադիրների ստեղծագործության մեջ (ի տարբերություն արմ. երաժիշտներից շատերի) չկային դևիանտ տարրեր (թմրանյութի օգտագործում, այսպես կոչված «սեռական հեղափոխության», դիվապաշտության կոչեր ևն): Հայ երաժիշտների արվ-ում հաճախ արծարծվել են ազգ. ինքնության պահպանման, սոցիալ. և պատմ. արդարության վերականգնման հարցեր:

«Էմիիտոյ» ռոք խումբը (1993)

1982-ին ստեղծվել է «հևիմեթալ» ուղղվածության «Ասպարեզ» խումբը. կազմում՝ երաժշտ. ղեկ.՝ Յ. Մայիլյան, երաժիշտներ՝

«Էլիպս» ռոք խումբը (1986)

Ա. Թոռոյան՝ կիթառ, Վ. Դեմուրչյան՝ սոլո կիթառ, Գ. Թոռոյան՝ բաս կիթառ, Դ. Օհանջանյան՝ թմբուկ, Գ. Մարտիրոսյան՝ վոկալ, Ա. Միտինյան՝ ստեղնաշար. գործիքներ: Մասնակցել է Տալլինի «Ռոք-համայնապատկեր-87» և «Heavy Summer» փառատոներին:

1989-ին «Մելոդիա» ֆիրման թողարկել է «Ասպարեզի» «Նզովք» ալբոմը: Հետագայում Ա. Միտինյանն ստեղծել է «Այաս» խումբը, որը համադրել է ծանր ռոքի և հայկ. հոգևոր երաժշտության ավանդույթները:

Սերժ Թանկյանը ելույթի պահին

1986-ին Ա. Նազարյանի «Ոստան հայոց» խումբը (Հովհաննես Կուրղինյան՝ վոկալ, Արեգ Նազարյան՝ բաս-կիթառ, Դավիթ Մուշեղյան՝ կիթառ, Լևոն Հախվերդյան՝ հարված. գործիքներ) դարձել է ազգ. շարժման ակտիվ մասնակիցներից: Իրենց ստեղծագործություններում կիրառել են ազգ. երաժշտության մոտիվներ, հարդ-ռոքի և արթ-ռոքի արտահայտչամիջոցներ: Թողարկել է «Զարթիր որդյակ» (1991), «Քիմերներ» (2000) ձայնասկավառակները:

1980-ական թթ-ին ստեղծվել են մի շարք նոր ռոք խմբեր՝ Արա ***Գևորգյանի*** «Ռալլի»-ն (1983, փոփ-ռոք), «Վան» (ջազ-ռոք), «Տեսիլք» (1983, դաս. ռոք), «Էլիպս» (1986, հարդ-ռոք) ևն: 1993-ին երգիչ Սարգիս Մանուկյանը և կիթառահար Կարեն Արզումանյանը հիմնադրել են հարդ-ռոք ուղղվածության «Էմփիռեյ» խումբը (առաջին սկավառակը՝ 2006-ին, հաղթող է ճանաչվել «Armenian National Music Awards» փառատոնի «Լավագույն ռոք խումբ» անվանակարգում):

Վահան Արծրունին ելույթի պահին

1996-ին Վանաձորում հիմնադրվել է «Լավ էլի» այլընտրանք. ռոք խումբը (հիմնադիրներ՝ Միհր Մանուկյան, Գոռ Մխիթարյան):

Հեղինակ-կատարողներից առանձնանում է ռոք երաժիշտ Վահան ***Արծրունու*** ինքնատիպ արվ-ը:

«Dorians» ռոք խումբը

2001-ը հայկ. ռոքի զարգացման պատմության մեջ նշանավորվել է «Գրիգոր Լուսավորիչ» (երաժշտությունը՝ Ա. Էլբերտի, սցենարի հեղ. և ռեժ.՝ Ա. Սուքիասյան) առաջին հայկ. ռոք-օպերայի պրեմիերայով:

2000-ական թթ-ին երևան են եկել «Որդան կարմիր» (Վանաձոր), «The Beautified Project» (2005), «Նաիրի» (2007), «Դոգմա» (2008), «Woo Doo», «Ռահվիրա», «In Coma» (երեքն էլ՝ 2011), 2010-ից՝ հայկ. ռոքի նոր ժանրեր ներկայացնող «Arbor Mortis» (Black Metal), «Pantheon of Despair» (Death, Black/Death Metal), «Kill Them All» (Trash Metal), «Werewolf» (Punk/Horror Punk), «Naqhsh Band» (Indie), «Acid Trace of Suicide» (Death Core), «Doctor at Large» (Indie), «Creepptown» (Grunge) և այլ խմբեր:

Արտերկրում ճանաչված են հայազգի ռոք երաժիշտներ Սերժ ***Թանկյանը***, Տ. Մալաքյանը, Յ. Քուրթը («Սպիտակ դելֆին» խմբի հիմնադիր), Դ. Շիրինյանը, Կ. և Գ. Հարությունյանները, Դ. Պետրոսյանը և ուր.:

ՌԴ «Крематорий» խմբի առաջատար վոկալիստն ու երգերի հեղինակն Արմեն Գրիգորյանն է:

1970-ական թթ-ից հայ և արտերկրի ռոք երաժիշտների համագործակցությունը շարունակվում է նաև հետխորհրդ. շրջանում («Deep Purple» խմբի մեներգիչ Յ. Գիլանի և հայ ռոք երաժիշտների համատեղ ելույթները, Սպիտակի երկրաշարժից տուժածների օգտին կազմակերպված բարեգործ. համերգը, «Rock Aid of Armenia» ձայնասկավառակի թողարկումը ևն):

Հայկ. «Dorians» ռոք խումբը 2013-ին մասնակցել է «Եվրատեսիլ» փառատոնին (18-րդ հորիզոնական):

2000-ական թթ-ից ՀՀ-ում կազմակերպվել են բազմաթիվ ռոք փառատոներ («Fire Wall», «Mind Power», «Love Summer», «Rock Confest», «Arm Rock Fest», «River Fest», «Sound Against War»):

Էդգար Գյանջումյան

ՌՈՒԼԱԴԱ (ֆրանս.՝ roulade, < rouler – սահել հետ ու առաջ), գեղգեղանք, երգեցողության մեջ՝ վերընթաց կամ վարընթաց վիրտուոզ պասսաժ՝ կառուցված գամմայի (դիատոնիկ կամ խրոմատիկ) կամ արպեջոյի վրա: Սովորաբար Ռ-ով է պայմանավորված պահված հնչյունի շեշտվածությունը:

ՌՈՒԽԿՅԱՆ Մարգարիտա Աշոտի (ծ. 07.11.1937, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (2005): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): ԽՍՀՄ ԿՄ (1972-ից), ՀԿՄ վարչության (2013-ից) անդամ: Ավարտել է ԵՊԿ (1962), ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի աս-

պիրանտուրան (1969, ուսումնառությունն անցկացրել է Մոսկվայի Արվեստագիտության համամիութ. ինստ-ում, ղեկ.՝ Վ. Ա. Վասինա-Գրոսման): 1962–65-ին՝ Հայկ. հեռուստառադիոյի երաժշտ. խմբ., բազմաթիվ հաղորդումների հեղինակ, 1969-ից՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի երաժշտության բաժնի գիտաշխատող, 2006–09-ին՝ երաժշտության, 2009–16-ին՝ սփյուռքահայ արվ-ի (այժմ՝ սփյուռքահայ արվ-ի և միջազգ. կապերի), 2016-ից՝ երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող:

1994-ից՝ Հայկ. երաժշտ. համաժողովի, նաև Հանրապետության նախագահի մրցանակների շնորհման արվ-ի հանձնախմբի անդամ:

Ուսումնասիրությունները վերաբերում են հայկ. սիմֆ., արդի հայ երաժշտության խնդիրներին:

Բ. Վ. Ասաֆևի անվ. (1983, Մոսկվա), ՀԿՄ «Տարվա լավագույն ստեղծագործություն – 2016» մրց-ներ, ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2008):

Երկ. *Армянская симфония. Исследовательские очерки, Е., 1980; Авет Тертерян. Творчество и жизнь (отв. ред. А. А. Пахлеванян), Е., 2002; Арам Хачатурян. Письма. Составление и предисловие, Е., 2003; Портреты армянских композиторов. Очерки, Е., 2009; Театр звука Вардана Аджемяна, Е., 2015.*

Գրկ. *Մարգարիտ Ռոխկյան, Ե., 2017 (Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն, №5, ներածականը՝ Աննա Ասպրյանի):*

Աննա Ասպրյան

Մարգարիտա Ռոխկյան

Ս

ՍԱԴՈՅԱՆ Էդուարդ Դրաստամատի (22.08.1938, Երևան–21.02.2018, Երևան), կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (1979): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Ավարտել է Երևանի ժող. կոնսերվատորիան (1966), ԵՊԿ (1976, երկուսն էլ՝ Ա. Հարությունյանի դասարան): ՄՊԿ-ում, որպես ազատ ունկնդիր, հաճախել է Արամ Խաչատրյանի և Սերգեյ Բալասանյանի կոմպոզիցիայի դասընթացներին (1969–71):

Գրել է «Իշխանուհի Մարիա Վոլկոնսկայայի հուշագրերը» (1978), «Կենաց ծառ» (1985) մոնոօպերաները, «Հեյ, ո՞վ կա այստեղ» (ըստ Վ. Սարոյանի, 1982) կամեր. օպերան, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» (2003), «Մաշտոց» (2014) և այլ օպերաներ, «Նարեկացի՝ ձայն առ Աստված» (2008), «Հրաշքների երազ» (2012, մանկ.) բալետները, սիմֆոնիաներ (1976, 1982), «Բիդստրուպի ծաղրանկարներ» (1984)՝ կամեր. նվագախմբի և մնջախաղի, «Երեք խոսք Հայաստանի մասին» (1971, խմբ.՝ 1987) սիմֆոնիետը, կոնցերտ (1981)՝ ֆլեյտայի և կամեր. նվագախմբի, պարտիտ (1972)՝ լար. նվագախմբի, դաշնամուրի և հոբոյի, «Պրելյուդ և սկերցո» (1975)՝ թավջութակի համար, լար. կվարտետներ (1968, 1978, 2013), խմբերգեր («Անդաստան», ըստ Դ. Վարուժանի, 1979), սոնատներ (ջութակի՝ 1977, 1987, ջութակի և թավջութակի՝ 1981, կլառնետի՝ 1989, 2 ջութակի՝ 1987, «Սոնատ-մենախոսություն»՝ դաշնամուրի համար, «Նվիրում Արշիլ Գորկուն» սոնատը՝ դաշնամուրի և հարվածայինների համար, վերջին երկուսը՝ 2011), վոկալ-գործիք. (շարք՝ ձայնի և դաշնամուրի, ըստ Ս. Կապուտիկյանի, 1973, «Սիրո հայրեններ»՝ 1982, սոպրանոյի և դաշնամուրի կամ նվագախմբի, ըստ Նահապետ Քուչակի, «Շահանե», 1984, պոեմ՝ տենորի և դաշ-

Էդուարդ Սադոյան

Սազ

Սազայի

Տաթևիկ Սազանդարյան

նամուրի համար) և այլ գործեր: Կազմել է «Իմ Սիւսա լեռ. Երգարանը» (1994):

ՍԱԶ, լար. կսմիթ. ժող. երաժշտ. գործիք: Տարածված է Կովկասում, Մերձ. և Միջին Արևելքում: Պատրաստում են թթենու կամ տանձենու փայտից: Տանձաձև իրանի բարակ կափարիչին անցքերն են, կոթին՝ փարդաները: Մետաղե լարերը բաժանված են 3 կամ 4 երկանդամ (կամ եռանդամ) ունիսոն խմբերի: 1-ին խումբն ունի մեղեդիական, 2-րդը՝ ձայնառության, 3-րդը՝ լրացուցիչ հարմոնիկ (մասամբ՝ մեղեդիական) նշանակություն: Սովորաբար լարվածքը կվարտակվինտային է, փարդաների օգնությամբ ստացվող հնչյունաշարը՝ դիատոնիկ: Նվագում են կնտնտոցով (ոսկրե կամ եղջյուրե)՝ հարվածելով բոլոր լարերին միաժամանակ, որի շնորհիվ մեղեդին ուղեկցվում է ներդաշնակ գունեղ ֆոնով: Տեմբրը գրնգուն է, սակայն փափուկ:

Հայաստանում Ս. հիմնականում աշուղ. գործիք է. նվագել են ***Շիրինը, Զիվանին, Սազային, Հավասին*** և ուր. աշուղներ: 1925-ին Վարդան ***Բունին*** իր Արևելյան սիմֆ. նվագախմբի համար ստեղծել է Ս-ի ընտանիք՝ ջուռա, չոնգուր, Ս-բարիտոն և բաս:

Գործիքի մասին հիշատակվում է «Սասնա ծռեր» էպոսում: Ս-երի ունիսոն խումբը (կանանց) կիրառվել է Հայկ. ժող. երգիպարի անսամբլում մինչև 1957-ը: Այժմ Ս. ընդգրկված է «Սայաթ-Նովա» աշուղ. երգի անսամբլում:

ՍԱԶԱՅԻ [Աղաջան Առաքելի Փարոյան, երբեմն հիշատակվում է մոր անունով՝ Փառոյի Աղաջան, 29.10.1848, գ. Ղշլաղ (այժմ՝ գ. Արծվաքար՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–29.12.1917, գ. Ղշլաղ], աշուղ: Հորինել և երգել է հայ., նվագել ջութակ: Աշակերտել է աշուղ Գյովաթարուն (Սարգիս): Հաստատվել է Թիֆլիսում. երկար ժամանակ երգել է Կարապետ Սոնանյանցի հայտնի սրճարանում: Ջավախքում շրջագայության ընթացքում Կարծախ գ-ում հանդիպել է երիտասարդ Զիվանուն, միասին մեկնել են Թիֆլիս և աշխատել 2 տարի: Ս. ունեցել է հիանալի ձայն, տիրապետել է աշուղ. վոկալ-գործիք. կատարող. արվ-ին: 1867–74-ին հանդես է եկել Ալեքսանդրապոլում: 1874-ից ստեղծագործել է ծննդավայրում:

Ստեղծել է շուրջ 300 խոհ., խրատ., հայրենասիր. և քնար. երգեր: Գրառել է, հայ. փոխադրել և հրատարակել «Մելիք Աբով և Ղամար Սուլթան», «Ամրահ և Սալվի», հորինել «Արտաշես և Սաթենիկ», «Ծառուկ և Ծաղիկ», «Գառնիկի հեքիաթը» երգախառն հեքիաթները: Ս-ի երգերի զգալի մասը կատարվում է ցայսօր (գրառված են Սևանի շրջակա գյուղերում և պահվում են ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ձայնադարանում):

Երկ. *Ռ՛վ Հայապտան, աշխատասիր.՝ Շ. Գրիգորյանի, Ե., 2000: Անիրավ աշխարհ, աշխատասիր.՝ Թ. Պողոսյանի, Ե., 2014:*

ՍԱԶԱՆԴԱՐ, 1. սազ կամ որևէ այլ ժող. գործիք նվագող երաժիշտ Այսրկովկասում: 2. ժող. գործիքներից կազմված անսամբլ: Տարածված է Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Իրանում, Մերձ. և Միջին Արևելքում: Կատարում է ժող. և աշուղ. երգեր և պար. ստեղծագործություններ, մուղամներ: Բաղկացած է նվազագույնը 3 երաժշտից (հաճախ՝ թառ, քամանչա և դափ): Երգիչը նվագածուներից մեկն է (մեծ մասամբ՝ դափ զարկողը):

Սազանդարների խումբ

ՍԱԶԱՆԴԱՐՅԱՆ Տաթևիկ Տիգրանի [20.08(02.09).1916, գ. Խնձորեսկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–06.10.1999, Երևան], երգչուհի (մեցցո սոպրանո): ՀԽՍՀ (1947), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: Հակոբ ***Խանջյանի*** կինը, Դավիթ ***Խանջյանի*** մայրը: Մանկությունն անցել է Բաքվում. 10 տարեկանում եղել է դպրոց. երգչախմբի (ղեկ.՝ Ա. Մայիլյան) մենակատար: 1929-ին երգել է Մոսկվայի ինքնագործ Արևելյան անսամբլում, 1933-ից սիմֆ. նվագախմբի հետ հանդես է եկել համերգներով: Ավարտել է Մոսկվայի հայ մշակույթի տան երաժշտ. (դասատու՝ Ս. Բարխուդարյան) և դրամատիկ. (ղեկ.՝ Ռ. Սիմոնով, երկուսն էլ՝ 1937) ստուդիաները, ԵՊԿ (1960, էքստեռն): 1961-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1970-ից, ամբիոնի վարիչ՝ 1977–99-ին), 1972–77-ին՝ ԵԳԹԻ-ում:

Մասնակցել է Ռ. Սիմոնովի բեմադրություններին, որոնք նպաստել են երգչուհու

դրամատիկ. ձիրքի կատարելագործմանը: 1937–69-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: 1939-ին Մոսկվայում հայ արվ-ի տասնօրյակին հանդես է եկել Ալմաստի (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ») դերերգով և արժանացել համընդհանուր ճանաչման: Ելույթն աչքի է ընկել երգեցողության և դրամատիկ. խաղի օրգան. միասնությամբ:

Ս-ի համար են գրվել Թամարի (Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ»), Շուշանի (Ա. Բաբաևի «Արծվաբերդ»), Նազելիի (Հ. Ստեփանյանի «Հերոսուհին», ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951), Բերբերոյի (Ա. Տեր-Ղևոնդյանի «Արեգակի ցոլքերում») դերերգերը: Փառանձեմի (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Ալմաստի (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Աննայի (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա») դերերգերի, Ա. Սաթյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Ղ. Սարյանի, Ս. Զրբաշյանի և ուր. մի շարք վոկալ ստեղծագործությունների առաջին կատարողն էր: Լավագույն դերերգերից են՝ նաև Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ամներիս (Ջ. Վերդիի «Աիդա»), Իոկաստե (Ի. Ֆ. Ստրավինսկու «Էդիպ արքա»), Լյուբաշա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Օլգա (Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին») ևն: Հնչեղ և արտահայտիչ ձայնը, բեմ. հրաշալի կեցվածքը, վերամարմնավորման տաղանդը նրա կերպարներին հաղորդել են դրամատիկ ինչողություն: Հանդես է եկել նաև որպես կամեր. երգչուհի. երգացանկում՝ Ջ. Վերդիի, Կ. Սեն-Սանսի, Ա. Պ. Բորոդինի, Պ. Ի. Չայկովսկու, Կոմիտասի, հայ աշուղների և ժամանակակից կոմպոզիտորների գործերից (շուրջ 450): Կոմիտասի («Ալագյազ», «Ծիրանի ծառ» ևն), Սայաթ-Նովայի, Շերամի երգերի, Ռ. Մելիքյանի ռոմանսների կատարումներն աչքի են ընկել հստակությամբ և քնարականությամբ:

Հյուրախաղերով շրջագայել է Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Բելգիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Հունգարիայում, Շվեդիայում, Չեխոսլովակիայում, Թունիսում և այլուր:

1999-ից Երևանում անցկացվում է մեներգիչների Ս-ի և Պ. Լիսիցյանի անվ. հանրապետ. մրցույթ: ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1997):

Գրկ. *Սիմոնյան Կ., Հարությունյան Վ., Տաթևիկ Սազանդարյան, Ե., 1959: Տաթևիկ Սազանդարյան, կազմ.՝ Ջ. Սրեփանյան, Ի. Իոնիայան, Ե., 1984: Տաթևիկ Սազանդարյան, կազմ.՝ Ի. Իոնիայան, Ե., 2006:*

ՍԱԹՅԱՆ Աշոտ Մովսեսի [05(18).01.1906, ք. Մերվ (այժմ՝ ք. Մարի՝ Թուրքմենստանում)–30.09.1958, Երևան], կոմպոզիտոր, դիրիժոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1947): Արամ ***Սաթունցի*** եղբայրը: Սովորել է Բաքվի Հայարտան երաժշտ. ստուդիայում (1926–30), ավարտել ԵՊԿ կոմպոզիցիայի (Հ. Ստեփանյանի, Ս. Բարխուդարյանի դասարաններ) և դիրիժորության (Կ. Սարաջևի դասարան) բաժինները (1936): 1930–39-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի երաժշտ. մասի վարիչ և դիրիժոր, 1939–47-ին՝ Հայկինոյի երաժշտ. մասի ղեկ., 1947–52-ին՝ ՀԿՄ վարչության նախագահ, ԽՍՀՄ ԿՄ վարչության անդամ: Ս-ի ինքնատիպ երգային ոճը պայմանավորվել է հայկ. ժող. և աշուղ. երգերի կառուցվածք. առանձնահատկություններով: Երգերը (առանց նվագակցության, զանգված., խմբերգ. կրկնակով երգեր, զուգերգեր, խմբերգեր, ժող. գործիքների, ժող. երգի ու պարի անսամբլների, սիմֆ. նվագախմբերի նվագակցությամբ՝ գործիք. մասի նշանակալի դերով) առանձնանում են մեղեդիական ծորուն եղանակավոր, ասերգ-պատմող., պար., զարդարուն-կոլորատուր. կերտվածքով, հուզականությամբ, քնարականությամբ («Մարտիկի երգը», «Սիրո երգ», «Աղբյուրի մոտ»), վիպականությամբ («Լավ լսեք ինձ», «Աշխատանքի երգ», «Կենաց երգ» ևն), ելևէջ. թարմությամբ, վառ պատկերավորությամբ:

Գրել է նաև խոշոր կտավի երկեր՝ վոկալ սիմֆ. «Արարատյան հովտի երգեր» (1950, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1952) և «Լեռների երգեր» (1958) շարքերը, «Գայանեի արիան»՝ սոպրանոյի և սիմֆ. նվագախմբի (ըստ Ա. Իսահակյանի բանաստեղծության), «Գարնան երգ» կոնցերտ. վալսը՝ կոլորատուր. սոպրանոյի, երգչախմբի ու սիմֆ. նվագախմբի համար և այլ գործեր: Հեղինակ է նաև հայկ. անսամբլ. առաջին երկի՝ լար. կվարտետի (1936), «Զանգեզուրի լեռներում» սիմֆ. պատկերների (1952), քայլերգերի (այդ թվում՝ «Զաքիյանի դիվիզիայի քայլերգ»-ի, 1942), թատրոնի և կինոյի երաժշտության («Դավիթ Բեկ», 1944, «Անահիտ», 1947, «Ում է ժպտում կյանքը», 1952, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

«Սովետական Հայաստան» վավերագր. ֆիլմի (1950) երաժշտ. ձևավորման համար արժանացել է «Կաոլովի Վարիի» միջազգ. կփ-ի մրց-ի (1951, Չեխոսլովակիա): Գորիսի

Տ. Սազանդարյանը Ալմաստի դերում (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»)

Տ. Սազանդարյանը Աննայի դերում (Հ. Հարությունյանի «Սայաթ-Նովա»)

Աշոտ Սաթյան

№1 երաժշտ. դպրոցը կոչվում է Ս–ի անվամբ: ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1939):

Երկ. *Երգեր և ռոմանսներ, Ե., 1960: Ընտիր երկեր, Ե., 1962:*

Գրկ. *Թաշչյան Ս., Աշոտ Սաթյան, Ե., 1965: Թադևոսյան Ա., Սովետական Հայաստանի երաժշտությունը, հոդվածների ժող., Ե., 1973: Աշոտ Սաթյան. ծննդյան 100-ամյակի առթիվ, կազմ.՝ Շ. Դավթյան, Ե., 2007: Вартанян З., Песни Ашота Сатяна, «Советская музыка», 1950, №7:*

Արամ Սաթյան

ՍԱԹՅԱՆ Արամ Արամի (ծ. 23.05.1947, Երևան), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): ԽՍՀՄ (1991-ից՝ ՌԴ) ԿՄ (1970-ից), ՀԿՄ անդամ (2013-ից՝ նախագահ): Արամ ***Սաթունցի*** որդին, Աշոտ ***Սաթյանի*** եղբորորդին, Դավիթ ***Սաթյանի*** հայրը: Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցը (1961), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1965), ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1970, Ա. Հարությունյանի դասարան) և ասպիրանտուրան (1984, ղեկ.՝ Է. Միրզոյան), կատարելագործվել է ՄՊԿ-ում: 1986-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1997-ից): 1973–86-ին՝ Հայկ. հեռուստառադիոյի երաժշտ. խմբ., 1994–97-ին՝նույնի երաժշտ. ծրագրերի ու խմբերի տնօրեն և գեղ. ղեկ., 1980–86-ին՝ Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնարանի երաժշտության տեսության բաժնի վարիչ, 1990–94-ին՝ Երևանի կամեր. նվագախմբի գեղ. ղեկ.:

Գրել է հայկ. առաջին «Լիլիթ» (1983, բեմ.՝ 2002, 2005, Երևան), «Փոքրիկ Ցախեսը» (2013) փոփ օպերաները, «Մանեկենն» (2016) բալետը, «Մենք դաշնամուր ենք նվագում» (հրտ.՝ 2007, վերահրտ.՝ 2014), 4 սիմֆոնիա, կոնցերտներ, «Համլետ» (2007), «Մակբեթ» սիմֆ. պոեմները, «Դրվագ կյանքից» (Մ. Ռավելի հիշատակին, 2009-10) վալսը, կվարտետներ, «Խաղեր» (1991)՝ կամեր. նվագախմբի, սոնատ (1994)՝ թավջութակի համար, 300-ից ավելի երգեր («Առաջին սիրո հեքիաթն իմ», «Արդյոք հիշո՞ւմ ես», «Հուսո աղոթք», «Սերն անցավ», «Գարնան խոստում» ևն), ռոմաններ, կինոյի [«Վերադարձի ուղին», 1979 («Ամենալավ մարդը», ժող.), «Մեր բակի աստղերը», 1980 («Բոլոր տարիքներն են սիրո ենթակա», ժող.), «Սիրո փոքրիկ պատմություն», 1981 («Ծերունին և արևը» , ժող.), «Գտնված երազը», համահեղ., 1976, ևնյ ու թատրոնի (Շիրվանզադեի «Մորգանի խնամին», 2012, «Ձեր աստվածը փողն է…», ըստ Գ. Սունդուկյանի, 2015) երաժշտություն:

Դավիթ Սաթյան

Ս–ի նախաձեռնությամբ կազմակերպվել են Հայ ժամանակակից երաժշտության I–IV (2014–17), Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների (2014–17) փառատոները: «Համագործակցություն» նախագծի շրջանակներում կազմակերպվել են հայ և ռուս երիտասարդ կոմպոզիտորների, հայ-վրաց. և հայ-չին. ժամանակակից երաժշտության փոխադարձ համերգներ, նաև համերգաշարեր ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և այլուր, Է. Միրզոյանի անվ. պատանի կոմպոզիտորների հանրապետ. մրցույթները (2014–17), որոնց մասնակցել են 8–18 տարեկան պատանի ստեղծագործողներ ՀՀ-ից, ԼՂՀ-ից և Սփյուռքից: Թողարկել է ձայնապնակներ, ձայներիզներ ՀՀ-ում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Արգենտինայում, ունի ֆոնդ. ձայնագրություններ:

Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. ստուգատեսի 1-ին (1969, Մոսկվա), ՀԹԳՄ «Արտավազդ», ՀԼԿԵՄ (1980) մրցներ, ՀՀ ՄՆ ոսկե (2007), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2017) մեդալներ:

Գրկ. *Ասատրյան Ա., Հայաստանի կոմպոզիտորների միություն - 85, Ե., 2017:*

Աննա Ասատրյան

ՍԱԹՅԱՆ Դավիթ Արամի (ծ. 17.08.1979, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար: ՀԿՄ անդամ (2013): Արամ ***Սաթյանի*** որդին: Ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. (1993), Ա. Սպենդիարյանի անվ. (1996) երաժշտ. դպրոցների դաշնամուրի, ԵՊԿ կոմպոզիցիայի (2001, Ա. Սաթյանի դասարան) բաժինները, կատարելագործվել «Maastricht» երաժշտ. ակադ-ում (2002–04, Զ. Սլանգենի դասարան, Հոլանդիա), Լոնդոնի «King's College» համալսարանի ասպիրանտուրայում (2009, ղեկ-ներ՝ Զ. Բենջամին, Ս. Միլստայն): Հեղինակ է «Երեք ակնթարթ» նվագախմբ. կոնցերտի, «In Memoriam»-ի՝ ջութակի և նվագախմբի, «Non Stop» և «Pass» (մաս 1, 2, 2003, 2007) փող. նվագախմբի, դաշնամուրի և կոնտրաբասի համար, կվարտետների (№1, «Duplex», «Tango à la Modern»), դաշնամուր., անսամբլ. («Տարօրինակ ժամանակներ»՝ 15 մենակատարի համար ևն), ջազ. և այլ գործերի:

Ջազ. դաշնակահարների «Լեյդենի ջազային մրցույթի» 1-ին (2003, Հոլանդիա), ՀԿՄ Հատուկ (1998), Ջազ. դաշնակահար-

ների մրցույթի 2-րդ (2008, Շվեյցարիա) մրց-ներ, «Ամադեուս» միջազգ. մրցույթի ոսկե մեդալ (1996):

ՍԱԹՈՒՆՑ (Սաթյան) Արամ Մովսեսի [05(18).02.1913, ք. Մերվ (այժմ՝ ք. Մարի՝ Թուրքմենստանում)–06.06.1990, Երևան], կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1975), ՀԽՍՀ ժող. արտիստ (1985): Աշոտ *Սաթյանի* եղբայրը, Արամ *Սաթյանի* հայրը: Ավարտել է Բաքվի երաժշտ. տեխնիկումի կոմպոզիցիայի բաժինը (1938): Սովորելու տարիներին միաժամանակ եղել է Ադրբեջանի ռադիոյի մենակատար, ապա՝ լար. նվագախմբի ղեկ. ու երաժշտ. խմբ.: 1938-ին Գրոզնիում ստեղծել է ժող. գործիքների անսամբլ: Նույն թվականից սովորել է Բաքվի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում (Բ. Զեյդմանի դասարան):

Գրել է ռոմաններ (այդ թվում՝ Մ. Յ. Լերմոնտովի խոսքերով), «Օրորոցային», «Ինտրոդուկցիա և պար», «Պարային» պիեսները, երաժշտություն՝ դրամատիկ. ներկայացումների համար (հիմնականում՝ Բաքվի հայկ. թատրոնի համար), մշակել հայկ., չեչեն., ինգուշ. ժող. երգեր, 1938-ին հայկ. թատրոնը բեմադրել է նրա «Ատամնաբույժն արևելյան» (ըստ Հ. Պարոնյանի) երաժշտ. կոմեդիան: 1940-ին Բաքվում հրատարակվել է Ս-ի՝ ռուս. երաժշտ. գործիքների համար պիեսների և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունների փոխադրությունների առաջին ժող-ը (1940): Մասնակցել է ՀՄՊ-ին (1941–45):

1945-ին տեղափոխվել է Երևան, ավարտել ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1947, Վ. Տալյանի դասարան): 1945–50-ին՝ «Հայֆիլմ» կինոստուդիայի երաժշտ. բաժնի վարիչ, 1949–61-ին՝ ՀԽՍՀ ռադիոյի և հեռուստատեսության երաժշտ. խմբագրության գլխ., 1961–74-ին՝ երաժշտ. ձևավորումների խմբագրության պատասխանատու խմբ.:

Գրել է «Զանգեզուր» (1942), «Հավերժ հիշողություն» (1988) սիմֆ. պոեմները, «Հայկական ֆանտազիա» (1960), «Ռապսոդիա» (1960), 2 վալս (1967), «Լուսնի շողերը» (1988) խորեոգրաֆիկ պատկերները, քայլերգեր (1961), «Տոնական» (1967) սյուիտը, «Վերածնված Նաիրյան երկրի երգերը» (1979) վոկալ-սիմֆ. շարքը, «Ժողովրդի սխրանքն անմահ է» (1980) կանտատը՝ մենակատարների, երգչախմբի և սիմֆ. նվագախմբի, «Երեք պրելյուդ»՝ դաշնամուրի, «Ինտրոդուկցիա և պար»՝ ջութակի համար, «Զանգեզուրյան պար» (1937), դաշնամուր. տրիո (1937), «Թեմա վարիացիաներով» (1938), սոնատ-պոեմ (1946)՝ դաշնամուրի, «Էլեգիա» և «Վալս-կապրիս» (1968)՝ 2 ջութակի և դաշնամուրի համար:

Անդրադարձել է նաև ժող. երաժշտությանը՝ «Բարեկամության պար» և «Մարտական պար» (1963)՝ ժող. գործիքների նվագախմբի, «Տոնական Հայաստան» (1970) սյուիտ՝ խառը երգչախմբի և ժող. գործիքների անսամբլի, «Կոնցերտինո» (1987)՝ քանոնի և ժող. գործիքների նվագախմբի, «Նոկտյուռն» (1963)՝ թառի համար: Գրել է նաև երգեր՝ «Սիրո վալս», «Բուժքույր», «Իմ հայրենի Զանգեզուր», «Իմ Ղարաբաղ», «Փառք Սովետական բանակին», «Հայրենիքիս առավոտը», «Քեզ եմ սպասում», «Կատակերգ յոթ քույրերի մասին», «Երիտասարդական վալս», «Օրորոցային», «Իրիկնային ռոմանս», «Սիրո բալլադ», երաժշտություն՝ թատրոնի և կինոյի («Երկիր հայրենի», 1945, «Դարեր և տարիներ», 1956, երկուսն էլ՝ վավերագր., «Դավիթ Բեկ», 1949, «Լեռնային լճի գաղտնիքը», 1954, երկուսն էլ՝ գեղ., ևն) համար: Կազմել և խմբագրել է մանկ. երգերի ժող-ներ: Լույս են տեսել Ս-ի երգերի (1969, 1975, 1981), «Երգիր, Նաիրյան իմ երկիր» (1980) ժող-ները, կազմել է «Երգիր, զինվոր (հայրենասիրական երգեր)» (1978) ժող-ը:

Երկ. *Քառական երգեր և ռոմաններ, Ե., 1986: Երգեր, Ե., 2013:*

Մննա Աասպրյան

Արամ Սաթունց

ՍԱԿԿԻԼԱՐԻ Բորիս Վլադիմիրի (23.08.1920, Երևան–16.06.1992, Երևան), հույն ալտահար, ջութակահար, կոմպոզիտոր: ՀՀ վաստ. արտիստ (1963): Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1949, Ա. Տեր-Ղևոնդյանի դասարան): 1947–92-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1965–92-ին՝ ԵՊԿ-ում: 1940–44-ին՝ Հայֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի, 1944–66-ին՝ ԵՕԲԹ նվագախմբի ջութակահար, ալտահար:

Հեղինակ է «Չոփչոփիկ» (1962, ըստ Կ. Ի. Չուկովսկու) մանկ. բալետի, կանտատների (1947, 1951), 4 սիմֆոնիայի, պարտիտների (1983), սյուիտների («Պիոներական սյուիտ», 1954, «Մանկական երաժշտություն», 1980՝ 2 տետր, «Մանկական պատկերներ», 1985՝ դաշնամուրի և

Բորիս Սակկիլարի



Սահակ Ա Պարթև (նկարիչ՝ Ստեփանոս Ներսիսյան, 1882)

սիմֆ. նվագախմբի համար), կոնցերտների (1987)՝ կլառնետի և նվագախմբի համար, կվարտետների (1944, 1974, 1976, 1980), սոնատների (դաշնամուրի, 1970, դաշնամուրի և ջութակի, 1972), դաշնամուր. մանրանվագների, պոեմի և այլ գործերի:

Գրկ. *Խուրշուդյան Ա., Նիկոլայիդի Ն., Սակկիլարի. Ըստ արխիվային նյութերի, պատմական փաստերի, ժամանակակիցների հիշողությունների, Ե., 2016:*

ՍԱՀԱԿ Ա ՊԱՐԹԵՎ, Իսահակ Պարթև, Մեծն Սահակ, Սուրբ Սահակ (29.09.348, Կեսարիա–07.09.439, գ. Բլուր՝ Բագրևանդ գավառ), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 387-ից: ՀԱԵ տոնելի սուրբ: Երկար տարիներ սովորել է Կեսարիայի, Ալեքսանդրիայի և Կ. Պոլսի դպրոցներում: Ձեռնադրվելով եպիսկոպոս՝ իր 60

Հատված Սահակ Պարթևի «Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան» շարականից

աշակերտների հետ կրոնավորել է Սբ Էջմիածնի վանքում: Իր տեղապահ Մեսրոպ Սաշտոցի հետ խթանել է ազգ. կրթության և լուսավորության նոր վերելքը: Հայոց նոր գրերի ստեղծումից (405–406) հետո նրա հրամանով ուսուցանվել են նոր գրերը, թարգմանվել աստվածաբան., փիլիսոփայական, պատմ. երկեր:

Ս. Ա. Պ. կարգավորել է հայկ. տոնացույցը, գրել բազմաթիվ կանոններ, շարականներ (նաև եղանակավորել), Պատարագամատույց, ծիս. աղոթքներ, նպաստել Աստվածաշնչի թարգմանությանը հուն–ից, նաև կանոնացմանը: Ս. Ա. Պ. կարևոր ներդրում ունի Հայ եկեղեցու պաշտոներգության, երաժշտածիս. գրքերի կայացման և ձևավորման մեջ: Հայ հոգևոր ինքնուրույն երգերի սկզբնավորողն է (Մեսրոպ Սաշտոցի հետ): Նրա անունով հայտնի են Ժամագրքում զետեղված գիշերային ժամի 4 երգեցիկ քարոզները, բազմաթիվ շարականներ՝ Ղազարի հարության, Ծաղկազարդի կանոնները, երկրորդ Ծաղկազարդի հին կանոնի երգերը և Ավագ շաբաթվա բոլոր օրերի կանոնների երգերի մեծ մասը: Գանձարաններում պահպանված է նաև նրա «Պարագրի անպարագրելի բանն» սկզբնատողով տաղը:

Ս. Ա Պ–ին են վերագրվում հայոց եկեղեց. ձայնեղանականների՝ ութձայնի առաջին կարգավորումը:

Գրկ. *Արևշատյան Ա., Քարոզի ժանրը հայ հոգևոր երգապատեղծության մեջ, ՊԲՀ, 1992, № 2–3: Նույնի, Սահակ Պարթևի Կանոնագիրքը որպես Հայ եկեղեցու պաշտոներգության ձևավորման պատմագիտական աղբյուր, Էջմիածին, 2003, № 1: Նույնի, La proclamation mélodisée (k'aroz) dans le chant sacré arménien, Revue des Études Arméniennes, t. 24, 1993, p. 129–151.*

Անահտ Արևշատյան

ՍԱՀԱԿ Գ ՋՈՐՈՓՈՐԵՑԻ, Զորոփորցի [ծ. թ. անհտ, գ. Արքունաշեն (Գուգարքի Զորոփոր գավառ)–703, Խառռանի, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 677-ից: Աշակերտել է մատենագիր, աստվածաբան Թեոդորոս Քռթենավորին: Ուտիքի Ռոտ Պարսյան գավառի եպիսկոպոս: Բյուզանդիայի Հուստինիանոս II կայսրը, արշավելով Հայաստան, Ս. Գ Զ–ուն, որպես պատանդ, 693-ին տարել է Կ. Պոլիս՝ Հայ եկեղեցուն և նրան քաղկեդոնականություն պարտադրելու նպատակով: Կայսրի գահընկեցությունից հետո վերադարձել և շարունակել է աթոռակալությունը: 702-ին նրան ձերբակալել է Հայաստանի առաջին արաբ ոստիկանը՝ Աբդալլահը, և ուղարկել Դամասկոս: Ոստիկանի ջոկատի պարտությունից հետո Ս. Գ Զ. մեկնել է Խառան՝ կանխելու Մուհամմեդ իբն Օկբայի արշավանքը Հայաստան:

Հայ ամենաճանաչված շարականագիրներից է: Գրել է խաչին և եկեղեցուն

նվիրված մի շարք, նաև Շողակաթի, Նավակատյաց և Վերացման ութ օրերի, Վարագա Սբ Խաչի և Գյուտ Խաչի կանոնների (շուրջ՝ 60 երգ) շարականների, որոնք աչքի են ընկնում բանաստեղծականությամբ, լեզվի հարստությամբ, ձևի կատարելությամբ և մեղեդիական հղկվածությամբ: Դրանցից «Էջմիածինն ի Հօրէ», «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի», «Որ նշանաւ ամենայաղթ», «Ի Ս. Խաչն», «Այսօր ուրախացեալ» և այլ գործեր հետագայի հեղինակների համար ունեցել են չափանմուշի նշանակություն: Հեղինակ է նաև ծիս. կանոնների և ճառերի (առավել հայտնի է Ծաղկազարդին ձոնած «Ճառ Արմավենյացը»):

Հատված Սահակ Գ Զորափորեցու «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականից

Գրկ. *Թահմիզյան Ն., Սահակ Զորափորեցին և Խաչի ու Եկեղեցու շարականները, Էջմիածին, 1980, № 11:*

ՍԱՀԱԿԱԴՈՒԽՏ, Սահակդուխտ Սյունեցի (ծ. և մ. թթ. անհտ, թաղված է Գառնիի ձորում), VIII դ–ի երաժիշտ: Դվինի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի դուստրը, Ստեփանոս Սյունեցու քույրը: Ցմահ ճգնել է Գառնիի կիրճի անձավներից մեկում: Հորինել է հոգևոր երգեր, միաժամանակ ուսուցանել (վարագույրի հետևից) մանուկներին, ավանդել է նաև երաժշտարվ.:

Հեղինակ է Ծննդյան և փոխման բազմաթիվ «քաղցրեղանակ» մեղեդիների և կցուրդների, «Սա աբար տաղս բազումս եւ մեղեդիս եւ կցուրդս ծննդեան եւ փոխմանն, յորոց մի է Սրբուհի Մարիամն» երգի (անհամաչափ տաղաչափությամբ, ակրոստիքոսով՝ տների առաջին տառերով կազմված է հեղինակի անունը): Երգի մասին հիշատակել է նաև Ստեփանոս Օրբելյանը, իսկ առաջին տան մի տարբերակ հրատարակել է Ղևոնդ Ալիշանը: Երգի ամբողջ. բնագիրը հայտնաբերել և 1951–ին «Հասկ» ամսագրում հրատարակել է Նորայր Պողարյանը:

ՍԱՀԱԿՅԱՆ Լուսինե Զավենի (ծ. 25.07.1972, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու (2007): Դոցենտ (2009): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի դաշնամուրի (1990), ԵՊԿ երաժշտագիտության (1995, ժ. Զուրաբյանի դասարան) բաժինները և ասպիրատուրան (2000, ղեկ.՝ Ա. Սարյան):

1995–97–ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում, 1995–ից՝ ԵՊԿ–ում (ամբիոնի վարիչ՝ 2014–ից):

Երկ. *Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Ե., 2010:*

Գոհար Շագոյան

ՍԱՀԱԿՅԱՆ Հովիկ Սաշայի [ծ. 20.04.1956, ք. Վարդենիս (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], թառահար: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2014): Ավարտել է Վարդենիսի երաժշտ. դպրոցի, Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի (1979) թառի, ԵՊԿ թառի, դիրիժորության (1984) բաժինները: 1976–79–ին՝ Հայաստանի, ՀՊՄԻ ժող. գործիքների նվագախմբերի ղեկ. և դիրիժոր: 2008–15–ին՝ «Նարեկացի» արվ–ի միության համանուն մանկապատանեկան ժող. գործիքների անսամբլի ղեկ., 2015–ից՝ «Նովա» ժող. գործիքների անսամբլի գեղ. ղեկ., «Ձնար» ավանդ. երաժշտ. անսամբլի հիմնադիր: 2005–ից դասավանդում է Երևանի Բ. Կանաչյանի անվ. (նաև նվագախմբի ղեկ.), 2006–ից, միաժամանակ՝ Ս. Զրբաշյանի (նաև նվագախմբի ղեկ.) երաժշտ. դպրոցներում: Ֆրանսիայում գործող «Գուսան» անսամբլի հետ (գեղ. ղեկ.՝ Գ. Մուրադյան) մասնակցել է «Հայ մշակույթի օրեր Ֆրանսիայում» փառատոնին: Կազմել է «Հայկական ժողովրդական մեղեդիներ ժողովրդական նվագարանների համույթների համար» (2013), «Թառ» (2016) ուս. ձեռնարկները:

Հայաստանի անկախության 25–ամյա հոբելյանին նվիրված ՀՀ նվագախմբերի մրցույթ – փառատոնի Գլխ. մրց. (2016):

Գրկ. *Մակարյան Ս., Հայ ավանդական երաժշտության երախտավորը. Թառահար և դիրիժոր Հովիկ Սահակյան, Ե., 2016:*

Մարիաննա Տիգրանյան

Սահակ Գ Զորափորեցի

Սահակադուխտ

Լուսինե Սահակյանի «Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ» գրքի (2010) կազմը

Հովիկ Սահակյանը ելույթի պահին

Վաղարշակ Սահակյան

Զարեհ Սահակյանց



Երվանդ Սահառունի

ՍԱՀԱԿՅԱՆ Նարինե Ալեքսանդրի (ծ. 16.09.1984, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2011): Ավարտել է Երևանի № 1 արվ-ի դպրոցի դաշնամուրի բաժինը (1999, դասատու՝ Ի. Ղազարյան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության (2003, դասատուներ՝ Է. Փաշինյան, Ռ. Պետրոսյան), ԵՊԿ երաժշտագիտության (2007, Ա. Սարյանի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (2011, ղեկ.՝ Ա. Սարյան): 2007–12-ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. քոլեջի կոնցերտմայստեր, 2012–13-ին՝ ԵՊԿ ասիստենտ (ղեկ.՝ Ա. Սարյան), 2013-ից՝ դասախոս, 2012-ից, միաժամանակ՝ Երևանի Ա. Տեր-Ղևոնդյանի անվ. երաժշտ. դպրոցի փոխտնօրեն:

ՍԱՀԱԿՅԱՆ Ռուբեն Ռաֆիկի (ծ. 26.03.1947, Երևան), երգիչ (տենոր): ՀՀ վաստ. արտիստ (2009): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1967), ԵՊԿ (1972, Տ. Սազանդարյանի դասարան): 1972–77-ին՝ ԵՕԲԹ (Սարո, Սանթուր՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ», ևն), 1977–98-ին՝ Հայաստանի ժող. գործիքների նվագախմբի, 1993–2003-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մեներգիչ, 2003–07-ին՝ Երևանի № 13 հատուկ դպրոցի տնօրեն: 2003–07-ին դասավանդել է ԵՊԿ-ում: Հեղինակ է երգերի («Աշխարհ ման եկա», «Կգա օրը», «Ղարաբաղ՝ հեքիաթ աշխարհ» ևն): Համերգներով շրջագայել է արտերկրում:

Մեներգիչների հանրապետ. (1974), Ա. Իսահակյանի անվ. (1975), հայրենասիր. երգերի (2000) մրցույթների դափնեկիր, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007):

ՍԱՀԱԿՅԱՆ Վաղարշակ Համբարձումի [15.09.1906, գ. Փայաջուկ (Սալմաստի գավառ՝ Իրան)–24.04.1978, Երևան], երգիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): Նախն. կրթությունն ստացել է Թիֆլիսում, ապա սովորել է Լենինականի երաժշտ. ստուդիայում. աշակերտել է Նիկողայոս *Տիգրանյանին*, Դանիել *Ղազարյանին*: 1933-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար, 1938-ից՝ Սայաթ-Նովայի անվ. հայկ. գուսան. երգի անսամբլի երգիչ (1942-ից՝ ղեկ.): Տիրապետել է հայ աշուղ. երաժշտության տարբեր ոճ. ուղղությունների: Կատարումները նվագակցել է սազով: Ճանաչվել է Բաղդասար Դպիրի, Նաղաշ Հովնաթանի, Շիրինի, Միսկին-Բուրջիի, Սայաթ-Նովայի, առավելապես՝ Ջիվանու արտասան. բնույթի երգերի ինքնատիպ մեկնաբանություններով:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

ՍԱՀԱԿՅԱՆՑ Զարեհ Հայկի (11.11.1933, Դոնի Ռոստով–06.01.1986, Երևան), ջութակահար, ալտահար, դիրիժոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1973): Պրոֆ. (1983-ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1952, Կ. Դոմբաևի դասարան), ՄՊԿ ջութակի (1958, Յ. Ի. Յանկելևիչի դասարան), ԵՊԿ դիրիժորության (1982, Յ. Դավթյանի դասարան) բաժինները: 1957–58-ին՝ Մոսկվայի կամեր. նվագախմբի ջութակահար, 1960–63-ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի ջութակահար-կոնցերտմայստեր, 1962–75-ին՝ իր հիմնադրած Հայաստանի կամեր. նվագախմբի գեղ. ղեկ.: 1962–86-ին դասավանդել է ԵՊԿ-ում, 1975–77-ին՝ Կահիրեի կոնսերվատորիայում:

Այսրկովկաս. մրցույթի 2-րդ (1960, Բաքու), ՀԼԿԵՄ (1970) մրց-ներ:

ՍԱՀԱՌՈՒՆԻ (Տեր-Հակոբյան) Երվանդ Մկրտչի (Իվանի, 16.04.1894, Տրապիզոն– 20.06.1967, Երևան), կոմպոզիտոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1964): Ավարտել է Էրզրումի Սանասարյան վարժարանը (1912), որտեղ սովորել է նաև ջութակ նվագել: Ուսումը շարունակել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում, Լենինգրադում դասեր է առել ջութակահար Հովհաննես *Նալբանդյանից*: 1923-ից, հիմնականում՝ որպես խմբավար, գործել է Դոնի Ռոստովում, դասավանդել տեղի մանկավարժ. տեխնիկումում: 1930-ին ստեղծել է Հս. Կովկասի 1-ին ազգագր. արլ. անսամբլը (հետագայում՝ Դոնի Ռոստովի ռադիոկոմիտեի ժող. գործիքների անսամբլ), 1938-ից ղեկավարել է Հս. Կովկասի ժողովուրդների երգի-պարի անսամբլը (Կիսլովոդսկ): 1942-ից ապրել է Երևանում: Կազմակերպել է պրոֆեսիոնալ և ինքնագործ երաժշտ. խմբեր Երևանում (Աշխատանք. ռեզերվների մշակույթի տան երգի-պարի անսամբլը, 1967-ից՝ Ս-ու անվ., ևն), Լենինականում, Կիրովականում:

Գրել է վոկալ-գործիք. սյուիտներ («Հայրենիք», «Բերքի տոն», «Երիտասարդական», «Գարնանային» ևն), երգեր («Քայլենք խիզախ», «Շարմաղ աղջիկ», «Մի գնա յար», «Մայրիկիս», «Սայաթ-Նո-

վա» ևն), մշակել է ժող. երգեր («Թալիշու ճամփեն դուզ ա», «Ալ վարդ», «Կանչում եմ յար արի») ու պարեղանակներ:

Գրկ. *Մրև փ ան յ ան Ռ., Երվանդ Սահառունի, Ե., 1962:*

ՍԱՂՄՈՍ (< հուն. ψαλμός, երբ.՝ միզմօր – նվագ կամ երգ, որը հարմար է երգել նվագակցությամբ), քնար. չափածո բանաստեղծություն՝ հոգևոր երգ: Ըստ բնույթի և բովանդակության՝ առանձնանում են ընդհանուր կրոնաբարոյական, Եհովայի գովաբանման, եղեր., զղջումի, զոհաբան. և պատմ. Ս-ներ: Մեծ մասն ունի վերնագիր, որը մատնանշում է հեղինակին, հորինման առիթը, հաճախ՝ երգի եղանակը կամ չափը, նվագակցող երաժշտ. գործիքը և այլ մանրամասներ: Ըստ երբ. ավանդության՝ Ս-ները հորինել և վերնագրել է Դավիթ թագավորը՝ Սողոմոնի հայրը: Սակայն Ս-ներում, Դավթից բացի, որպես հեղինակներ հիշատակվում են նաև Մովսեսը, Սողոմոնը, Ասափը և ուր.:

Ս-ներից 15-ը (119–133) կոչվում են օրհնություն աստիճանաց, հայ-ում՝ ելից օրհնություն կամ երգ:

Ս-ների առաջին հավաքողն ու դասակարգողն է Եզրասը (մ. թ. ա. V դ-ի կես), նա դասակարգել է նաև Հին կտակարանի բոլոր գրքերը:

Ս-ները լայնորեն գործածվել են քրիստ. եկեղեցիների պաշտամունք. արարողություններում: IV դ-ից Հայոց եկեղեցին նույնպես Ս-ները գործածել է ժամասացությունների ընթացքում. Ս-ներից հարասվել կամ կցորդվել են նաև հայ առաջին հոգևոր երգերը (V դ.), որոնք վերագրվել են ***Մեսրոպ Մաշտոցին*** (տես ***Սաղմոսարան***), նույնիսկ հայկ. ժամերգություններից մեկը հնում կոչվել է սաղմոսերգություն: Կատարման նախն. ձևը մեներգային էր, այնուհետև՝ Ս-ի թիվ-ընթերցումը և երգչախմբի միաձայն «կրկներգը», ապա՝ 2 խմբերի նույնպիսի փոխներգեցողությունը: XV դ-ի ավանդ. եղանակները բազմաձայնել են, ավելի ուշ երևան են եկել այդ եղանակների վրա հիմնված երկխմբային ու բազմախմբային կոմպոզիցիաներ և, ավանդ. եղանակներից անկախ, ինքնուրույն բազմաձայն Ս-ներ (Ժ. Դեպրե), սաղմոսատիպ մոտետներ (Օ. Լասսո):

XVI–XVII դդ-ի Ս-ներում կիրառվել է կոնցերտ. ոճ, Ս-ի խոսքերով մեներգիչների (կամ վոկալ անսամբլի), երգչախմբի և նվագախմբի համար հոգևոր կանտատներ են ստեղծել Հ. Շյուցը, Յ. Ս. Բախը: XIX դ-ում նույն տեքստերով տարբեր ձևերի ու ժանրերի (մեծ մասամբ՝ հոգևոր, երբեմն էլ՝ աշխարհիկ) ընդարձակ ստեղծագործություններ են գրել Ֆ. Շուբերտը, Ֆ. Մենդելսոնը, Ֆ. Լիստը, Շ. Գունոն, Ա. Բրուքները, Յ. Բրամսը, Մ. Ռեգերը, Ա. Շյոնբերգը, Ի. Ֆ. Ստրավինսկին՝ «Սաղմոսների սիմֆոնիա»: Կոմիտասի՝ հայրենասիր. մղումներով հորինած «Առ գետս Բաբելացւոց» (երգչախումբ, մեներգիչներ, երգեհոն) Ս. կոմպոզիցիայով հարում է մոտետին, արտահայտչամիջոցներով՝ վաղ ռոմանտիկ. երաժշտությանը (օգտագործված են հայկ. քաղաք. ժող. երգերի եղանակներ): Նույն տեքստով (հատվածաբար) Մ. Եկմալյանը գրել է քնար. երգչախմբ. պատկեր՝ դաշնամուրի նվագակցությամբ:

XIX դ-ի վերջին քառորդում գործնական ինչողությունից նոր հայկ. նոտագրությամբ գրավոր Ս-ները (Ն. Թաշճյանի «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց», 1877) հիմնված են հայկ. ութձայնի վրա, ելևէջ. կազմը ազգ. թվերգության և պարզագույն շարականների ելևէջ. սահմաններում է, մեծ տեղ է գրավում ասերգ. ոճը (1 վանկը՝ գլխավորապես 1 հնչյունով, հավասարաչափ ռիթմով), թեև կան նաև բուն եղանակավոր Ս-ներ:

Գրկ. *Չ ա մ չ ե ա ն Մ., Մեկնութիւն սաղմոսաց, հ. 1–10, Վնտ., 1815–23:*

Ըստ Խորեն Պալյանի

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ (երբ.՝ Թեհիլլիմ – փառաբանություն, < հուն. ψαλτήριον), Սաղմոսաց գիրք, Հին կտակարանի ամենատարածված գրքերից. բաղկացած է 150 գլխից (ըստ հուն. և սլավոն. Աստվածաշնչի՝ 151): Քնար. այս օրհնությունները երբայեցիները երգել են քնարի կամ տավղի նվագակցությամբ, որտեղից՝ «Ս.» բառի երկիմաստությունը՝ սաղմոսներ պարունակող գիրք և նվագարան: Աստվածաշնչի 12 մարգարեները պատկերվել են քնարով, որը խորհրդանշել է սաղմոս: Հայ իրականության մեջ միջնադարից Ս. օգտագործել են որպես դասագիրք:

Ս-ի մեկնությանն անդրադարձել են Դավիթ Անհաղթը, Գրիգոր Նարեկացին: Ըստ էության՝ Սաղմոսաց գրքի մեկնությամբ առաջինն զբաղվել է Ներսես Լամբրոնացին, ապա՝ Վարդան Բարձրբերդցին: Նահապետ Ագուլեցու խնդրանքով Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին


ԵՐԳԱՐԱՆ
ՈՐ ԿՐ ՊԱՐՈՒՆԱԿԻ
ՍԱՂՄՈՍՆԵՐ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ
ՎԵՑԵՐՈՐԴ ՏԻՊ
1879

«Երգարան որ կը պարունակէ սաղմոսներ եւ հոգեւոր երգեր» գրքի (1879) տիտղոսաթերթը



Առաջին տպագիր սաղմոսարանի էջ (1565–66, տպագրիչ՝ Աբգար Թոխաթեցի)

Նինա Սաղյան

Սոֆյա Սամվելյան



Վալյա Սամվելյանը եղույթի պահին

1686-ին հավաքել է Ս-ի հայ. մեկնութ-յունները և հրատարակել բնագրի հետ: Ամենածավալուն մեկնությունը Մխիթար Սեբաստացու հանձնարարությամբ կատարել է Միքայել Չամչյանը («Մեկնութիւն սաղմոսաց», հ. 1–10, 1815–23): Միջնադարում Ս. ընդօրինակել են մի շարք հայ գրիչներ: Մտնդ-ում պահվում են 150-ից ավելի ձեռագիր Ս-ներ (հնագույնը՝ ձեռ. № 6473, 1298, գրիչ՝ Գրիգոր): Հայ. Ս. առաջինը տպագրել է Աբգար Թոխաթեցին Վենետիկում 1565-ին: Մինչև 1800-ը Ս. ունեցել է 115 հայ. հրատարակություն:

Ըստ Խորեն Պալյանի

ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒԹՅՈՒՆ, սաղմոսասացություն, համաքրիստ. երգարվ-ի արտահայտություն, երգաձև, որն ունի պարզ, ասերգային և զարգացած երաժշտ. նկարագիր: Ս-յանը հիմնականում բնորոշ է ասերգային ոճը, որով պայմանավորված՝ խոսքային տեքստի (չափածո կամ արձակ) կառուցվածք. և շեշտային հատկանիշները ելակետային ու վճռորոշ են սաղմոսի երաժշտ. մարմնավորման համար:

Մինչև գրերի գյուտը Հայ եկեղեցում երգասացությունը դրսևորվել է սաղմոսների միջոցով. IV դ-ից սաղմոսները լայնորեն գործածվել են ժամասացությունների ժամանակ: Հայ հոգևոր մշակույթի համատեքստում Ս-յան հիմքը (երաժշտ. առումով) նախապես հայկ. երաժշտության տարբեր դրսևորումներն են, հատկապես՝ ժող. երգը և վիպական ասերգը: Ըստ Կոմիտասի՝ հայ իրականության մեջ սաղմոսները երգվել են «հավանաբար ժողովրդական հին եղանակներով», որոնք դասակարգվել են ըստ կանոնների ու ձայնեղանակների (տես ***Ութձայն***) և զետեղվել ժամագրքում: Լինելով ժամերգության կարևոր բաղկացուցիչներ՝ սաղմոսները դարձել են կցուրդների ձևավորման հիմքը (տես ***Շարական***):

Հայ եկեղեցին առանձնացնում է Ս-ի՝ սաղմոսասացություն և թվերգություն (տես ***Թվերգ***) ճյուղերը: Ս-յամբ մատուցվում են սաղմոսները, օրհներգությունները, աղոթքները, քարոզը, Աստվածաշունչը (Հին կտակարանից և Ավետարանից քաղված հատվածները), որոնք միմյանցից տարբերվում են արձակ կամ չափածո տեքստերով, թույլ կամ ցայտուն արտահայտված երաժշտ. և այլ հատկանիշներով:

Գրկ. ***Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977.***

Միհր Նավոյան

ՍԱՂՅԱՆ Նինա Գրիգորի [13(26).12.1906, Բաքու–15.12.1993, Երևան], դաշնակահարուհի, կոնցերտմայստեր, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1967): Պրոֆ. (1981): Ավարտել է ԵՊԿ (1932, Ա. Մնացականյանի դասարան), կատարելագործվել ՄՊԿ-ում (1933): 1944-ից դասավանդել է ԵՊԿ մեներգեցողության և ընդհանուր դաշնամուրի, 1957-ից՝ դաշնակահար-կոնցերտմայստեր. բաժիններում, 1950–62-ին վարել է նաև կամեր. երգեցողության դասարանը: 1933–44-ին ԵՕՔԹ-ում մասնակցել է արմ., ռուս. և հայկ. խաղացանկի 20-ից ավելի օպերաների բեմադրություններին: Նվագակցել է երգիչներ Հ. Դանիելյանին, Շ. Տալյանին, Տ. Սազանդարյանին, Պ. Լիսիցյանին և ուր.: Մոսկվայում մասնակցել է հայ գրկ-յան և արվ-ի տասնօրյակին (1939): Սաներից են Լ. Զաքարյանը, Ա. Հարությունյանը, Ի. Այդինյանը, Ռ. Բաբուրյանը:

ՍԱՄՎԵԼՅԱՆ Սոֆյա Վարդանի (01.06.1927, Երևան–20.06.1982, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահարուհի, մանկավարժ: Սովորել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցում, ապա դաշնամուրի և կոմպոզիցիայի դասերի հաճախել ԵՊԿ-ին կից շնորհալի երեխաների հատուկ խմբակում: Ավարտել է ԵՊԿ (1951, Է. Միրզոյանի դասարան): 1949–59-ին դասավանդել է Երևանի պարարվ-ի ուսումնարանում, միաժամանակ, 1951–66-ին՝ Ա. Սպենդիարյանի անվ., 1963-ից՝ Սայաթ-Նովայի անվ. երաժշտ. դպրոցներում:

Գրել է նվագախմբ. («Անտառային հեքիաթ», 1949, ևն), գործիք. («Վարիացիա», 1948, «Պիես», 1949, «Մանկական պիես», 1954, «Վեց էտյուդներ», 1960, «Երկու պիես», 1963) երկեր, երգեր, ռոմանսներ (Ա. Գրաշու, Ա. Իսահակյանի, Սարմենի և ուր. խոսքերով), մշակել գուսան. և ժող. երգեր: Համահեղինակ է «Սոլֆեջո» ժող-ի (1977):

ՍԱՄՎԵԼՅԱՆ Վալյա Վարդանի (12.08.1937, Երևան–03.12.1990, Երևան), երգչուհի: Արա ***Գևորգյանի*** մայրը: 1956-ին՝ Երևանի ավտոդողերի գործարանի երգի-պարի ինքնագործ, 1964-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի, 1965-ից՝ Հայկ. հեռուստառա-

դիոյի ժող. գործիքների անսամբլների մեներգչուհի. երգացանկում՝ Շերամի, Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Խ. Ավետիսյանի, Ա. Հեքիմյանի, Վ. Հովսեփյանի, Աշոտի և ուր. ստեղծագործություններից: Համերգներով հանդես է եկել Հայաստանի շրջաններում, ԽՍՀՄ-ում, Ֆրանսիայում, Հունաստանում, Սիրիայում, Բուլղարիայում և այլուր: Ս-ի երգեցողության մեջ միահյուսված են ստեղծագործ. երևակայությունն ու կատարող. տեխնիկան, ազգ. երգասացության բովանդակությունն ու ձևը:

Թողարկվել են Ս-ի «Թողեցիր այսպես» (1992, «Մելոդիա»), «Անուշիկ իմ քույրիկ» (2000, ԱՄՆ) ձայնասկավառակները:

Երիտասարդության և ուսանողների համաշխ. 1-ին փառատոնի ոսկե մեդալ (1957, Մոսկվա):

ՍԱՄՎԵԼՅԱՆ Վարդան Տիգրանի [05(18).01.1901, Վաղարշապատ–04.08.1956, Երևան], բանահավաք, երգիչ, երաժշտագետ: Ավարտել է ԵՊԿ (1936): 1933–36-ին՝ ԵՊԿ, 1937–38-ին՝ Հայֆիլհարմոնիայի, 1940–41-ին՝ Մոսկվայի հայ մշակույթի տան, 1941–43-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի տնօրեն, 1943-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար, 1949–56-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի պատմության և տեսության բաժնի գիտաշխատող: Հավաքել է հայկ. ժող. երգեր, զբաղվել երաժշտաազգագր. ԳՀ ուսումնասիրությամբ: Հեղինակ է հայ երաժշտության պատմության, տեսության, հայկ. երաժշտ. գործիքների մասին հոդվածների, կազմել է «Երգարան» (1948, 4-րդ հրտ.՝ 1956), «Հայ ժողովրդական երգեր. սովետական շրջան» (1961) ժող-ը:

Երկ. *Նադեժդա Պապայան, Ե., 1955:*

ՍԱՄՈՒԵԼՅԱՆ Արամ Հարությունի (28.09.1908, Ախալցխա–01.10.1991, Երևան), երգիչ (դրամատիկ. տենոր): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1956): Ավարտել է Բաթումի երաժշտ. ուսումնարանի (1939), ԵՊԿ (1945) վոկալ բաժինները: 1939-40-ին՝ Հայաստանի պետ. ջազ. նվագախմբի, 1944–59-ին՝ ԵՕՔԹ մեներգիչ: Դերերգերից են՝ Պինկերտոն, Կավարադոսի (Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան», «Տոսկա»), Սամսոն (Կ. Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա»), Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Տիրիթ (Ա. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Գերման (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»), Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ռադամես, Մանրիկո (Ջ. Վերդի «Աիդա», «Տրուբադուր»), Դուբրովսկի (Յ. Ա. Շապրինի «Դուբրովսկի»): ԵԵԿՄԹ հիմնադիրներից է (1942), 1959-ից՝ մեներգիչ: Հանդես է եկել օպերետներում՝ Արքայազն Ռաջամի, Էդվին, Տասիլո, Լյուսիեն (Ի. Կալմանի «Բայադերա», «Սիլվա», «Մարիցա», «Կրակի քրմուհին»), Արմեն (Տ. Չուխաճյանի «Կարինե») ևն:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1956), Մ՚Ն ոսկե մեդալ:



Վարդան Սամվելյան

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ (Արութին, Հարություն, 14.06.1712, 1717/22, Թիֆլիս–22.09.1795, Թիֆլիս), բանաստեղծ-աշուղ: Մանկությունն ու պատանեկությունն անցել են Թիֆլիսում: Նախն. կրթությունը սահմանափակվել է գրաճանաչությամբ, ապա զարգացել է ինքնակրթությամբ: 12 տարեկանում սովորել է ջուլհակություն, դարձել հմուտ արհեստագործ:

Արամ Սամուելյան

Ենթադրվում է, որ, դեռևս պատանի, գերեվարել են, և մինչև 19 տարեկանը դեգերել է Արևելքի որոշ երկրներում, որպես երգիչ-նվագածու՝ մասնակցել Նադիր Շահի Հնդ. արշավանքին (1738–39): Նրան փրկագնել է Վրաց արքայազն Հերակլը և 1742-ին ընդունել արքունիք՝ որպես երգիչ-երաժիշտ:

Ս-Ն. մինչև 30 տարեկանը կատարելագործվել է աշուղ. արվ-ում, սովորել եղանակներ, պարզ ու խառը չափեր, հորինել խաղեր՝ հարմարեցնելով հատուկ մեղեդիներ և կատարել ժող. հավաքույթների ժամանակ: Արժանանալով համընդհանուր ճանաչման՝ մկրտվել է Սայաթ-Նովա (պարսկ.՝ «երգի որսորդ») անվամբ:

Ս-Ն-ի ուսումնառությանը որոշակիորեն նպաստել են Այսրկովկասի հայ աշուղների և ուշ միջնադարի հայ տաղերգուների, առավելապես՝ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունները և աշուղ Դոստիի խաղերը: Ստեղծագործել է նախ՝ թուրք., ապա՝ հայ. ու վրաց.: Ս-Ն-ից պահպանվել են մոտ 70 հայ., 120-ից ավելի թուրք., շուրջ 30 վրաց. խաղեր (երգեր), որոնք զետեղված են իր ձեռքով գրած, որդու՝ Օհանի կազմած ու արտագրած և Վրաց թագավորի գրագիր Պենդելենց Հովանեի վավերացրած դավթարներում, բանահյուս. ժող-ներում, ժողովրդի հիշողության մեջ, մյուսներն էլ աստիճանաբար գրառվել ու հրատարակվել են:

Սայաթ-Նովա (նկարիչ՝ Հրաչյա Ռոսխկյան)

Հայ. և վրաց. խաղերը հրատարակվել են ամբողջությամբ, իսկ թուրք–ը՝ կիսով չափ: Հայ. թարգմանվել են Ս–Ն–ի վրաց. բոլոր երգերը: Նրա հայտնի ամենավաղ թվակիր խաղը «Ծովեն ելած թանգ մարգարիտ ու մարջան...»–ն (1742) է: Պահպանվածների մեջ հավանաբար կան նաև ավելի վաղ հորինվածներ: Ծանոթ վերջին՝ «Աշխարըս մե փանջարա է...» խաղը թվագրված է 1759–ի ապրիլին:

Հատված Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգից

Ըստ տաղաչափ. առանձնահատկությունների՝ նրա խաղերում հանդիպում են աշուղ. բազմազան ու բարդ չափերի գործեր՝ թեջնիաներ (բառախաղեր), ղազալիներ (գազելներ), թասլիբներ, վարսաղներ, բեյթ ու դուբեյթներ, բայաթիներ (քառյակներ), այբբենականներ, զինջիլլամաներ (շարակապներ), յարանաներ (սիրահարականներ), օգուտլամաներ (խրատականներ), իլահիներ (աստվածայիններ), հոգևոր խորհրդապաշտ. երգեր, բարիթավուրներ (ալիքավորվողներ), ուչլամաներ (երիցս կրկնություններ), որոնք վկայում են նրա՝ աշուղ. արվ–ին գերազանց տիրապետելը: Բազմաթիվ խաղերի մեղեդիներ մոռացվել են և ընդմիշտ կորսվել: Հայտնի է, որ մի մասը երգվել է ինչպես Նաղաշ Հովնաթանի, Դոստիի և ուր. երգերի եղանակներով, այնպես էլ իր հորինած մեղեդիներով («Դիբա և Ենգիդունիա» և «Գու լիս անգին»):

Ս–Ն. հայ և վրաց աշուղ. բանաստեղծության մեջ հեղաշրջում է կատարել. մասնավորապես՝ լեզվի առումով նա առաջինն է հորինել ու երգել վրաց. խաղեր՝ օգտագործելով պարսկ. բանաստեղծության ձևերը (այս նորարարության համար հրավիրվել է Վրաց պալատ):

Աշուղի կյանքը խաղաղ չի անցել. նրա դեմ դավեր են նյութել, հեռացնել տվել պալատից (ըստ որոշ ուսումնասիրողների՝ 1753–ին, վերջնականապես՝ 1759–ին): Որպես սիրերգու Ս–Ն. գեղեցիկի ու կատարյալի երկրպագու է, ամենանվիրական ու նրբին զգացմունքների արտահայտիչ: Նրա սիրային երգերին բնորոշ են նաև խոր դրամատիզմն ու բախումները, որոնց պատճառը ոչ միայն բանաստեղծի ողբերգ. սերն է, այլև կյանքի ու իրականության անլուծելի հակասությունները, սոցիալ. անհավասարությունը, գեղեցիկի ոտնահարումը:

Ս–Ն. հաճախ է անդրադարձել մարդու բարոյական կատարելությանն ու գեղեցկությանը, դարի ու ժամանակի հոռի բարքերին («Աշխարըս՝ մե փանջարա է...», «Արի, ինձ անգամ կալ...», «Արի համով ղուլուղ արա...», «Առանց քիզ ինչ կոնիմ...» ևն)՝ ստեղծելով գունագեղ պատկերներ: Նրա խաղերը, անգամ տխուր ու հուսահատ, մե՛րթ խաղաղություն են բերում մարդու հոգուն, մե՛րթ էլ բոցավառում նրա երևակայությունը՝ վերստեղծելով ամենակատարյալ մտապատրանք:

Ս–Ն–ի լեզուն արլ. փոխառություններով և ժող. մտածողության կենդանի արտահայտություններով հարուստ թիֆլիսահայ խոսվածքն է:

Նրա ստեղծագործությունը հայ գուսան., ժող., քնարերգության բարձրակետն է: Բնությունից օժտված արվեստագետը վերածնել է գուսան. արվ-ը, դրել նոր հունի մեջ՝ հեղաշրջելով XVI դ-ում սկզբնավորված աշուղ. բանաստեղծության ձևն ու բովանդակությունը: Կովկասում և Մերձ. Արևելքի երկրներում լայնորեն տարածված թափառական երգիչ-նվագածուների թուրքալեզու խաղերին Ս-Ն. հակադրել է հայալեզու երգերը և կամրջել միջնադար. բանաստեղծությունն ու ձևավորվող նոր քերթությունը, ժող. խաղն ու քնարերգությունը: Նա հաստատուն տեղ ունի նաև վրաց քնարերգության պատմության մեջ:

Ս-Ն. գրկ-յան մեջ նորարար է, սիրո և արդարության քարոզիչ: 1759-ին Հերակլ VI-ի հարկադրանքով ձեռնադրվել է քահանա: Նախապես հովվել է Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի ք-ում, որտեղ գրչագրել է 1 «Նարեկ» (1761): Մի քանի տարի անց Զաքաթալայից ուղարկվել է Կախի ավան (եղել է քահանա), որտեղ ընդօրինակել է 1 ձեռագիր ժող. (երկուսն էլ՝ Սինդ.):

1768-ին մահացել է կինը՝ Մարմարը՝ թողնելով 4 անչափահաս զավակ (Հովհաննես, Մելիքսեթ, Սառա և Մարիամ): Նույն կամ հաջորդ տարվանից Ս-Ն. տեղափոխվել է վանք, ծառայել Թիֆլիսում հաստատված Հաղպատի միաբանության առաջնորդարանում, ապա եղել է Հաղպատի վանքի Սբ Նշան եկեղեցու լուսարարը (հետագայում միաբանության հետ վերադարձել է Թիֆլիս):

Ս-Ն-ի երգերը թեև արտաքին կառուցվածքով արևելյան են, սակայն բովանդակության խորքով, պատկերահամակարգով, իմաստի արտահայտման եղանակներով ու գաղափարներով տարբերվում են արլ. պոեզիայից և առավել հարազատ են հայ ազգ. մշակույթի ոգուն: Նրա ստեղծագործությունն ունի որակ. և գեղագիտ. տարբեր մակարդակներ. վրաց. երգերում որոշ տուրք է տվել վրաց. արքունիքում իշխող ներքող. ոճին, իսկ թուրք. խաղերը գրել է առավելապես աշուղ. բանարվ-ի կաղապարներով և մեծ մասամբ ստեղծել է աշուղ. մրցավեճերի համար: Հայ. խաղերի գույները շենշող ու շլացուցիչ են, զգացմունքները՝ անմիջական, խրատ. խոսքը զերծ է ձանձրալի խրատաբանությունից: Նրա եռալեզու ստեղծագործությունն ունի հոգևոր-մշակութ. հարուստ հիմք, որը ներառում է հայ բազմադարյան բանահյուսությունը, եկեղեց. գրկ-ը, միջնադար. հայ տաղերգությունը, ժող-գուսան. քնարերգությունը, վրաց բանահյուսությունն ու գրկ-ը, աշուղ. բանարվ-ը, ընդհանուր արլ. բանահյուսությունն ու գրկ-ը: Ս-Ն. մեծ մարդասեր և մարդերգու էր, որոնք էլ նրա անմահության գաղտնիքն են («Աշխարհումս ախ չիմ քաշի…», «Մե խոսկ ունիմ իլթիմազով…», «Առանց քիզ ինչ կոնիմ…», «Մեջլումի պես կորավ յարս…», «Թամամ աշխարի պտուտ էկա…»):

Յուրացնելով նախորդ սիրերգակների լավագույն գեղ. ավանդույթները հարստացրել և կատարելության է հասցրել կնոջ արտաքին և ներքին գեղեցկության գովքը, որն իրապես փառաբանություն և օրհներգ է՝ ուղղված մարդուն, նրա գեղեցկությանը: Խոհախրատ. երգերում («Աշխարհիս՝ մե փանջարա է…», «Թաքավոր իս, դիվանս արս», «Դուն էն գլխեն իմաստուն իս…» ևն) քարոզել է բարին ու գեղեցիկը, մարդասիրությունը, արձագանքել նաև կրթ-լուսավոր. շարժմանը («Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե» ևն):

Հատված Սայաթ-Նովայի «Թամամ աշխար պտուտ էկա» երգից

Սայաթ-Նովայի «Հայերեն խաղեր» ժող-ի (1941, ձևավորումը՝ Հակոբ Կոջոյանի) շապիկը

Ս-Ն-ի եղանակները հիմնված են հայ մոնոդիկ երաժշտության վրա (ժող., գուսան., աշուղ. երգ, միջնադար. տաղեր, քաղաք. գործիք. նվագ), իսկ մեղեդիների ձևակառուցման գլխ. գործոնն այդ երաժշտության հնչերանգներն են և նրանցով բացահայտվող ձայնակարգերը՝ իրենց էական հատկանիշներով: Նրա երգարվ-ը ներառել է նաև որոշ տարրեր Թիֆլիսի կենցաղ. երաժշտությունից, որը միավորել է մերձարլ. երաժշտության բազմազան ազգ. ավանդույթներ: Օգտագործած և սեփ. եղանակները վերաձուլվել և վերարտադրվել են մեկ միասն. ոճում, որն անվանում են ս ա յ ա թ ն ո վ յ ա ն: Երբեմն Ս-Ն-ի մեղեդիները հոսում են տարբեր ձայնակարգերի բարդ զուգորդումներով («Բլբուլի հիդ...»): Մեղեդիական նույնակառույց տարբերակումներով գոյանում են ընդարձակ կառուցվածքներ («Դուն էն գլխեն իմաստուն իս»-ի եղանակը՝ չարգյահի ձայնակարգում, ավանդաբար սերում է Բաղդասար Դպիրի «Ի ննջմանեդ արքայական...» տաղից): Որոշ մեղեդիներում («Մե խոսկ ունիմ...» երգի 2-րդ տարբերակը) օգտագործել է միջնադար. այլ տաղերի և գուսան. գործիք. երաժշտության տարրեր:

Սայաթ-Նովայի հուշաղբյուրը Երևանում (1963, քանդ.՝ Արա Հարությունյան)

Ուշագրավ են նրա մետրական առանձնապես դինամիկ հիմքով նմուշները («Էշխն վառ կրակ...»-ում 8/8 և 7/8 խառը չափերի զուգորդումն է), պար. ռիթմական կերտվածքով եղանակներում միևնույն մետրի տարբեր (երկմաս և եռամաս) մեկնաբանումը («Պատկիրքտ ղալամով քաշած...»), բանաստեղծության չափի, ռիթմի և շեշտականության ճշգրիտ երաժշտականացումը («Փահրադն միռած...», «Քանի վուր ջան իմ...» ևն): Բոլոր երգերը հուզառատ են, հատկապես ասերգ. նմուշներում խոսքն արտաբերվում է վառ արտահայտչականությամբ («Առանց քիզ ինչ կոնիմ...» ևն): Պահպանվել են սակավաթիվ երգեր, սակայն նրանք ընդգրկում են հայ աշուղ. երգի ռիթմաինտոնացիոն և ձևային բոլոր կարևորագույն տեսակները: Ս-Ն. եղել է նաև նշանավոր կատարող, ունեցել է «քաղցր ձայն», երգը նվագակցել է սազի, ապա՝ թամբուրի և չոնգուրի, նաև քամանչայի վարպետ նվագով: Ս-Ն-ի արվ-ը մեծապես նպաստել է Այսրկովկասի աշուղ. արվ-ի զարգացմանը, նկատելիորեն ազդել նաև կոմպոզիտոր. ստեղծագործության վրա: Հայ կոմպոզիտորներից շատերը Ս-Ն-ի երգերը մշակել են դաշնամուրի, անսամբլ., սիմֆ. նվագակցությամբ մենակատարելու, երգչախմբով ա կապելլա կատարելու համար, նաև դարձել են նրանց երկերի հիմքը:

Ա. Սպենդիարյանն իր «Երևանյան էտյուդների» (1925) 1-ին մասի՝ «Էնզելիի» դանդաղ նախաբանի համար օգտագործել է «Դուն էն գլխեն իմաստուն իս» երգի մեղեդու, ինտոնացիաները՝ Ա. Խաչատրյանը «Գայանե» բալետում («Լուսաբաց» պատկեր), Ա. Բաբաջանյանը դաշնամուր. «Էլեգիայում» (1978)՝ «Քանի վուր ջան իմ» երգի մեղեդին:

Անսալով Ա. Խաչատրյանի հորդորներին՝ Ա. Հարությունյանը գրել է «Սայաթ-Նովա» օպերան (1968, լիբրետտոն՝ Հ. Խանջյանի, բեմ.՝ 1969, ԵՕԲԹ):

Ս-Ն-ի երգերը մեծապես նպաստել են 1940-ական թթ-ի սկզբներին խորհրդ. շրջանի հայկ. դաշնամուր. տրանսկրիպցիայի ժանրի ձևավորմանն ու զարգացմանը. ուշագրավ են Ռ. Անդրիասյանի տրանսկրիպցիաները («Ինչ կոնիմ», «Քամանչա» և «Ես մի ղարիբ բլբուլի պես»), Գ. Սարաջևի մշակումը («Քամանչա») ևն:

XIX դ-ի կեսից Գևորգ *Ախվերդյանի* շնորհիվ սկզբնավորվել է սայաթնովագիտությունը: Հ. Թումանյանի և նկարիչ Գ. Բաշինջաղյանի ջանքերով 1913-ին նշվել է Ս-Ն-ի ծննդյան 200-ամյակը: Այդ ժամանակից (որոշ ընդմիջումներով) ամեն տարվա մայիսի վերջին կիրակի օրը Թբիլիսիում տոնվում է նաև Վարդատոնը (նրա հիշատակին): Աշուղի կերպարն արտացոլվել է բազմաթիվ գրական երկերում, կերպարվ-ում, երաժշտարվ-ում, թատերարվ-ում և կինոարվ-ում («Նռան գույնը», 1969, ռեժ.՝ Ս. Փարաջանով): Նրա երգերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: 1976-ին Մերկուրիի խառնաբաններից մեկը կոչվել է Ս-Ն-ի անվամբ: Երևանում գործում է Ս-Ն-ի անվամբ երաժշտ. դպրոցը, որի հարևանությամբ տեղադրված է հուշաղբյուր-հուշարձան՝

Ս–Ն–ի բարձրաքանդակով (1963, քանդ.՝ Ա. Հարությունյան):

Երկ. *Սայեաթ–Նովայ, աշխատասիր.՝ Գ. Ախվերդյանի, Մ., 1852: Հայերեն խաղերի լիակատար ժող., ներած. տեսությունը, ծնթգր. և խմբ.՝ Գ. Լևոնյանի, առաջաբանը՝ Պ. Սևակինցյանի, Ե., 1935: Երգեր, մշակումը՝ Ս. Բարխուդարյանի, Ե., 1935: Երգեր, երաժշտ. ժող., կազմ.՝ Մ. Աղայան, Շ. Տալյան, Ե., 1946: Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժող., կազմ., խմբ. և ծնթգր.՝ Մ. Հասրաթյանի, Ե., 1963: Խաղեր (Դավթարի նմանահանությունը), Ե., 1963: Խաղեր, կազմ. և խմբ.՝ Ս. Պայազատի, Ե., 1969: Հայերեն խաղեր, աշխատասիր.՝ Հ. Բախչինյանի, Ե., 1984: Խաղեր, կազմ., առաջաբանը և ծնթգր.՝ Հ. Բախչինյանի, Ե., 1987: Խաղեր: (Լիակատար ժող.), աշխատասիր.՝ Հ. Բախչինյանի, երաժշտ. խմբ.՝ Ա. Լուսինյանի, Ե., 2003: Խաղեր, աշխատասիր.՝ Թ. Պողոսյանի, Ե., 2012, 2015: Հայերեն խաղեր: Բառաքննական մեկնաբանություններով, աշխատասիր.՝ Վ. Զարգարյանի, Ե., 2017:*

Գրկ. *Ա ս ա տ ո ւ ր Գ., Սայաթ–Նովայի ձեռագիր մատյանը, Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, Վաղ–պատ, 1921–22: Հ ա ս ր ա թ յ ա ն Մ., Սայաթ–Նովայի Դավթարը, Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, 1963, № 10–11: Ք ո չ ո յ ա ն Ա., Սայաթ–Նովայի հայերեն խաղերի բառարան, Ե., 1963: Մ և ա կ Պ., Սայաթ–Նովա, Ե., 2016: Բ ա խ չ ի ն յ ա ն Հ., Սայաթ–Նովա. Կյանքը և գործը, Ե., 1988: Սայաթ–Նովա: Կենսամատենագիտություն, Ե., 2013: Թ ա հ մ ի զ և ա ն Ն., Սայեաթ–Նովան եւ հայ գուսանա–աշուղական երգ–երաժշտութիւնը, Փասատենա, 1995: Sayat–Nova, An 18th – Century Troubadour, A Biografical and Litterary Study, Lovanii, 1997. Սայաթ–Նովա – 300: Հոբելյանական գիտական նստաշրջան՝ նվիրված Սայաթ–Նովայի ծննդյան 300–ամյակին: Զեկուցումների ժողովածու, խմբ.՝ Ա. Ասատրյան, Ե., 2012:*

«ՍԱՅԱԹ–ՆՈՎԱ», երգչախումբ, ստեղծվել է Ստամբուլում 1972–ի ապրիլի 24–ին՝ Բոյաջը գ–ի Սբ Երից մանկանց եկեղեցում՝ որպես դպրաց դաս երգչախումբ: 1990–ից ունի նաև մանկ. երգչախումբ, 1992–ից՝ նվագախումբ: Խմբավար՝ Մելիքջան Զաման (մանկ. երգչախմբի նախկին սաներից): Երգչախումբը հավաքում, ուսումնասիրում և ներկայացնում է Սիփանից՝ Սուսալեռ, Ստամբուլից՝ Բինգյոլ տարածքներում ապրած հայերի երգն ու երաժշտությունը:

2008–ին հյուրախաղերով հանդես է եկել Երևանում և Վանաձորում՝ «Քարդեշ Թյուրքուլար» թուրք. երգչախմբի հետ (Հրանտ Դինքի հիշատակին), 2017–ին՝ Երևանում և Գյումրիում (17– հոգանոց կազմով)՝ «Երգում ենք Կոմիտաս» ծրագրով:

«ՍԱՅԱԹ–ՆՈՎԱ», խառը երգչախումբ (60– հոգանոց), հիմնադրվել է Լոս–Անջելեսում 2005–ին՝ Համազգ. հայ կրթ. և մշակութ. միության հովանավորությամբ: Խմբավար՝ Գայանե Բաղդասարյան, ատենապետուհի՝ Միշել Սաֆարյան: Նպատակը Սփյուռքի հայերին (մասնավորապես՝ ԱՄՆ–ի) հաղորդակից դարձնելն է հայկ. երաժշտ. մշակույթին, նաև վերջինիս ավանդույթների պահպանումն ու տարածումը: Երկացանկում՝ ազգ–հայրենասիր., ժող. երգեր, ժամանակակից հայ և այլազգի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Սրտամբուխի «Սայաթ–Նովա» երգչախումբը

2012–ից ունի սիմֆ. նվագախումբ (դիրիժոր՝ Միքայել Ավետիսյան): Հանդես է գալիս հիմնականում Համազգայինի «Անի» պարախմբի (ղեկ–ներ՝ Եղիա Հոշոլյան, Սյուզի Դարբինյան), երգիչ Գառնիկ ***Սարգսյանի*** հետ:

2018–ին Փասադենայի Փահասլ եկեղեցու սրահում մեծ համերգով նշել են Հայաստանի առաջին հանրապետության 100–ամյակը:

Լոս Անջելեսի «Սայաթ–Նովա» երգչախումբը սիմֆոնիկ նվագախմբի հետ

«ՍԱՅԱԹ–ՆՈՎԱ» ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԻԱՆՄԱՐԼ, Հայաստանի Հանրային ռադիոյի և հեռուստատեսության, վաստակավոր: Հիմնադրել է Թովմաս ***Պողոսյանը*** (նաև գեղ. ղեկ.) Երևանում 1992–ին: Գործիք. մասի հիմնադիր–ղեկ.՝ Արտեմ ***Խաչատուր***, համերգավար–ասմունքող Սամվել Միքայելյան (1992–98): Նվագախմբի կազմում՝ թառ, սազ, քամանչա, սանթուր, քաման, բաս քանոն, դափ (ղեկ.՝ ՀՀ վաստ. արտիստ Վարդան Բաղդասար–

յան)։ Անսամբլում տարբեր տարիների աշխատել են երգիչ–երգչուհիներ՝ Արուս Գուլանյան, Մարգարիտ Շահինյան, Սուշեղ Հարությունյան, Սամվել Գալստյան, Գևորգ Գրիգորյան (աշուղ Գևորգ), Գրիգոր Սաֆարյան, երաժիշտներ՝ Մխիթար Քեթցյան (քամանի), Ռաֆիկ Հակոբյան (քամանչա)

«Սայաթ–Նովա» աշուղական երգի անսամբլը (գեղ. ղեկ.՝ Թովմաս Պողոսյան)

և ուր.։ Երգացանկում՝ հայ աշուղների 500–ից ավելի երգեր, 2005–ին համալրվել է իրանահայ (փերիահայ) աշուղների 14 ստեղծագործություններով։ Տարբեր տարիների անսամբլում հանդես են եկել թառահար Արտեմ Խաչատուրը (գործիք. մասի ղեկ.), Մխիթար Քեթցյանը, Ռաֆիկ Հակոբյանը (երկուսն էլ՝ քամանչահար, երգիչ), երգիչ–երգչուհիներ Արուս Գուլանյանը, Մարգարիտ Շահինյանը, Գրիգոր Սաֆարյանը, Գևորգ Գրիգորյանը (աշուղ Գևորգ), Սուշեղ Հարությունյանը, Սամվել Գալստյանը և ուր.։

Անսամբլը հետևում և զարգացնում է «Հայ աշուղներ» (1927) և Հայկ. գուսան. երգի (1938, երկուսն էլ հիմնադիր՝ Շարա *Տալյան*) անսամբլների ավանդույթները։ Հյուրախաղերով շրջագայել է Իրանում, Սիրիայում, Լիբանանում, ՌԴ–ում, Վրաստանում, Շվեդիայում, Ավստրալիայում, ԱՄՆ–ում և այլուր։ Թողարկել է 2 ձայնասկավառակ՝ Սայաթ–Նովայի 31 գործերով։

Սանթուր

ՍԱՆԹՈՒՐ, բազմալար հարված. երաժշտ. գործիք։ Տարածված է Անդրկովկասում, Մերձ. Արևելքում։ Ունի փայտե տափակ սեղանաձև իրան, որի վերին կափարիչին ձայնադարձիչ անցքեր են։ Մետաղե լարերը ձգված են «սեղանի» հիմքերին զուգահեռ, ցածր ռեգիստրում՝ միայնակ, բարձրում՝ երկ– և եռանդամ ունիսոն խմբերով։ Լարվածքը՝ խրոմատիկ։ Նվագում են ծնկներին կամ հատուկ հենարանին դրած, մետաղե կամ փայտե մուրճիկներով։ Ձայնն ընդհատող հարմարանք չունենալու հետևանքով, Ս–ի զրնգուն նվագն ուղեկցվում է հարվածվող բաց լարերին զոյացող միալար խուլ աղմուկով, որը նրա տեմբրային առանձնահատկությունն է։ Նախկինում գործածվել է հիմնականում նվագակցելու համար, քաղաք. սազանդար. և աշուղ. խմբերում (Զիվանու խմբի սանթուրահարը աշուղ ***Զամալին*** էր)։ Ընդգրկվել է նաև Շարա ***Տալյանի*** և Վաղարշակ ***Սահակյանի*** աշուղ. անսամբլներում։ Մենակատար և անսամբլ. գործիք է։ Այժմ օգտագործվում է ժող. պրոֆեսիոնալ երաժշտության մեջ, անսամբլներում։

Ս–ին նման է Արլ. Եվրոպայում տարածված ցիմբալը։

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ», «Սասունցի Դավիթ», հայ ազգ. էպոս։ Վիպասացները և բանահավաքներն անվանել են նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն» ևն։

«Ս. ծ.» պահպանվել է բանավոր. 1873–ին Մշո Առնիստ գ–ում հայտնաբերել է բանահավաք, ազգագրագետ Գ. Սրվանձտյանը, գրառել տարոնցի Կրպոյից և հրատարակել է Կ. Պոլսում («Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ», 1874)։ 2–րդ տարբերակը 1886–ին Էջմիածնում գրառել է բանագետ, լեզվաբան Սանուկ Արեղյանը՝ Նախո քեռի Մոկացուց և հրատարակել Շուշիում («Դաւիթ եւ Մհեր», 1889)։ Ավելի ուշ գրառվել են նաև նոր տարբերակներ։ Էպոսի գրական մշակումներն սկսվել են 1890–ական թթ–ից (Հ. Ճաղարբեգյան, Գ. Բալասանյանց, Հ. Թումանյան, Ե. Չարենց, Ա. Իսահակյան և ուր.)։

Էպոսում կարևոր տեղ է գրավում երաժշտությունը։ Գուսանները երաժշտ. գործիքներով (սազ, թամբուր, փող, թմբուկ ևն), երգով ու նվագով մասնակցում են գործողություններին. Սասունցի Դավիթը նույնպես երգում ու նվագում է, անդրադարձ կա նաև Մեծ Մհերի սազին և այլ գործիքների։ Էպոսի մի շարք հատվածներ հորինվել են որպես երգեր, որոնք կցված հավելումներ չեն, այլ նրա կառուցվածքի օրգան. բաղադրիչներից են. վիպասացը պատմելուց սահունորեն անցնում է երգին և հակառակը։ Ըստ հայ գուսան. կատարող. արվ–ի մասին պահպանված հնագույն տեղեկությունների (V դ.)՝ ենթադրվում է, որ ժամանակին մասնագետ վարպետների վերարտա–

դրությամբ «Ս. ծ.»-ը «ձայնով է ասվել», երբ (ըստ Մ. Աբեղյանի) խոսքի մեջ որոշ բառերի վրա զորեղ շեշտեր դնելով՝ երկարացվել է վանկի տևողությունը և ասացվածքին հաղորդել ռիթմ ու եղանակավորություն: Երգվող հատվածների խոսք. տեքստերը, որպես կանոն, չափածո են և հաճախ շարադրված են ժող-երգային ձևով.

Ախ-վախ, ախ-վախ, հազար ափսոս,
Ափսոս, հազար ափսոս Քուռկիկ Ձալային,
Ա՛խ, հալա Քուռկիկ Ձալային,
Ափսոս, հազար ափսոս Թամքը Սադաֆին,
Ա՛խ, հալա Թամքը Սադաֆին...

Վեպում երգեր ունեն գրեթե բոլոր հերոսները, առավելապես՝ Դավիթը. եղանակով են ասվել նաև վեպի բաժիններին նախորդող «ողորմիները»: Երգերի տեքստերը տարբերվում են ժանրերով, բովանդակությամբ և հուզ. երանգների տաղաչափ. կառուցվածքով: Էպոսի եղանակավոր հատվածներից հայտնի են Կոմիտասի, Ա. Մելիքյանի, Ա. Քոչարյանի և ուր., հատկապես՝ Մոկաց խմբի պատումներից գրառված 30-ից ավելի կտորներ (նույն երգի տարբերակներ են), որոնք առանձնանում են վառ արտահայտչականությամբ և կերպարայնությամբ: Ընդհանուր հատկանիշներից են՝ երաժշտության պատմող. բնույթը, հնչյունաշարերի կցված-կվարտային հենքը, մեղեդիների ձևագոյացման ու կատարման իմպրովիզացիոն սկզբունքը, խոսքի և երաժշտության միասնականությունը: Սակայն նույն հատվածները նաև տարբերվում են ձայնակարգ. հիմքի և մեղեդիական գծի զարգացածությամբ, դիապազոնով, կոմպոզիցիայով և այլ հատկանիշներով: Էպոսի երաժշտության մեջ ավանդ. հատկանիշները համադրվել են վիպասացների նորարարությունների հետ:

«Ս. ծ.»-ի երաժշտ. հատկանիշները, որոնք սերում են հայ հնագույն վեպերից, հետագայում ներթափանցել են ժողովրդավիպ. ստեղծագործությունների մեջ («Մոկաց Միրզա», ուխտագնացության երգեր են): Ուստի մինչ այժմ հայտնաբերված հատվածները կարևոր դեր ունեն ազգ. մոնոդիկ երաժշտության և հոգևոր երգասացությունների ձևավորման ու զարգացման պատմության ուսումնասիրության համար: Դրանք նաև արտացոլվել են կերպարվ-ում (Հ. Կոջոյան, Ե. Քոչար, Մ. Աբեղյան, Է. Իսաբեկյան, Ա. Հովսեփյան և ուր.), կինոյում («Ճանապարհ դեպի «Սասունցի Դավիթ», ռեժ.՝ Գ. Գյարդուշյան, 1987, գեղ., «Սասնա ծռեր», ռեժ.՝ Ա. Մանարյան, 2009, մուլտֆիլմ), ասմունքում (Ժ. Էլոյան, Ս. Քոչարյան), ռադիոթատրոնում («Սասնա ծռեր», ռեժ.՝ Մ. Ռաֆայելյան), երաժշտության մեջ («Խանդութ», բալետ՝ ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության,

Հատվածներ «Սասնա ծռեր» էպոսի «Ղողոլմի» երգամասից

Է. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ», բալետ-օպերա):

Գրկ. *Մահակյան Ա., «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի պատումների համեմատական քննություն, Ե., 1975: Մահակեան Ա., Փահլեւանեան Ա., «Սասնայ ծռեր» դիւցազնավէպ: Առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ, Փասատենա, 1996:*



Վասիլի Սավելև-Դամոսրին

ՍԱՎԵԼԵՎ-ԴԱՄՈՒՐԻՆ Վասիլի Յակովլևիչ (1886–1965), ռուս երգիչ (դրամատիկ. տենոր): ՀԽՍՀ ժող. արտիստ (1947): Ավարտել է Օդեսայի թատեր. դպրոցը (1926): Աշխատել է ժող. օպեր. թատրոնում, մասնակցել համերգների: 1926–40-ին երգել է Լենինգրադի, Մոսկվայի, Բաքվի, Պերմի օպեր. թատրոններում, 1940–53-ին՝ ԵՕԲԹ մենակատար: Տիրապետել է ֆրազավորման արվ-ին, որն առավել արտահայտվել է դրամատիկ. արիաներում: Դերերգերից են՝ Սուսանին (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին»), Գերման, Վոդեմոն (Պ. Ի. Չայկովսկու

«Պիկովայա դամա», «Իոլանտա»), Օթելլո, Ռադամես (Ջ. Վերդիի «Օթելլո», «Աիդա»), Վալտեր (Ռ. Վագների «Նյուրնբերգյան մայստերզինգերներ»), Ռաուլ (Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ»), Կանիո (Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ»), Աշուղ (Լ. Կ. Կնիպեր-ի «Հյուսիսային քամի»), Խոսե (Ժ. Բիզեի «Կարմեն») ևն:



Գևորգի Սարաջև

ՍԱՐԱՋԵՎ Գեորգի Վարդի (15.09.1919, Մոսկվա–04.05.1986, Երևան), դաշնակահար, մանկավարժ, կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1974): Պրոֆ. (1966): Աննա ***Սարաջևայի*** ամուսինը, Սերգեյ և Վահրամ ***Սարաջյանների*** հայրը: Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1942) և ասպիրանտուրան (1944): 1944–86-ին դասավանդել է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1964–74-ին, դեկան՝ 1974–77-ին): Հանդես է եկել Հայֆիլհարմոնիայի դաշնամուր. եռյակի կազմում, նաև մենահամերգներով և սիմֆ. նվագախմբի հետ:

Գրել է դաշնամուրի համար գործեր (պիեսներ, տրիո, «Էքսպրոմտ», «Երգեր առանց խոսքի»՝ 2 դաշնամուրի համար, ևն), մշակել հայկ. ժող. և աշուղ. երգեր, Սյուիտ աշուղական թեմաներով: Համահեղինակ է «Դաշնամուրի ձեռնարկի» (մաս 1, 2, 1973, 1978):

Կոնստանտին Կ. Սարաջև

Գրկ. *Бабаян Ш., Георгий Сараджев, Е., 1997.*

ՍԱՐԱՋԵՎ Կոնստանտին Կոստանդինի (25.03.1900, Մոսկվա–1942, Մոսկվա), երաժշտության տեսաբան, կոմպոզիտոր: Կոնստանդին ***Սարաջևի*** որդին: Ունեցել է բացառիկ լսողություն. 1 օկտավայում 12 կիսատոների փոխարեն տարբերել է շուրջ 1700 նրբագույն ելևէջներ, որը դարձել էր ժամանակի գիտ. ուսումնասիրության առարկա: Եկեղեցում եղել է ժամհար (1914–30), ուսումնասիրել է եկեղեց. զանգերի ղողանջները, որոնք վերածել է յուրատեսակ «ղողանջների համերգների»: Առաջադրել է յուրաքանչյուր զանգի անկրկնելիության տեսություն, եկեղեց. զանգերի կատարյալ համալիր ստեղծելու գաղափար. ևն: Կիրառել է զանգերը գործադրելու նոր միջոցներ և հնարքներ՝ օգտագործելով ոտնակների ստեղնաշար, ձեռքի մատների, անգամ արմունկների շարժումներ: 1930-ին Հարվարդի համալսարանը (ԱՄՆ) Ս-ին հրավիրել է համալսարանի աշտարակը զանգակատան վերածելու և Ռուսաստանից գնված զանգեր տեղադրելու համար: Հեղինակ է 13-ից ավելի ղողանջների կոմպոզիցիաների, նաև գծագրերի ու նախագծերի (Մոսկվայի Երաժշտարվ-ի պետ. թանգարան):



Կոստանդին Ս. Սարաջև

Գրկ. *Цветаева М., Сараджев Н., Мастер волшебного звона, М., 1988 (վերհրտ.):*

ՍԱՐԱՋԵՎ (Սարաջյան) Կոստանդին Սողոմոնի [27.09(09.10).1877, Դերբենդ (Դաղստան)–22.07.1954, Երևան], դիրիժոր, ջութակահար, մանկավարժ, հաս. գործիչ: Խորհրդ. շրջանի դիրիժոր. դպրոցի հիմնադիրներից: Կիրա ***Սարաջևայի*** և Կոնստանտին ***Սարաջևի*** հայրը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): Աշխատանքի հերոսի պատվոգիր (1921): Ավարտել է ՄՊԿ ջութակի բաժինը (1898, Ի. Վ. Գրժիմալիի դասարան, կոնտրապունկտ ուսումնասիրել Ս. Ի. Տանեևի ղեկավարությամբ), կատարելագործվել Պրահայում (1900, ղեկ.՝ ջութակահար Օ. Շևչիկ): 1900-ին՝ Մոսկվայի մասնավոր ռուս. օպեր. թատրոնի նվագախմբի կոնցերտմայստեր: 1905–06-ին Լայպցիգում դիրիժորության դասեր է առել Ա. Նիկիշից: 1908-ից Մոսկվայում հանդես է եկել որպես մենակատար-ջութակահար, նվագել կամեր. գործիք. անսամբլներում, դասավանդել ժող. կոնսերվատորիայում (ջութակ, երաժշտ. գրագիտություն), ղեկավարել հանրամատչելի սիմֆ. համերգներ Սոկոլնիկիում (1908, 1910, 1911), օպեր. ներկայացումներ՝ Սերգիև-Ալեքսեևյան ժող. տանը (1911–12), գլխավորել է «Ազատ թատրոնի» երաժշտ. մասը (1913–14):

Ս. դաս. երաժշտության գիտակ էր և լավագույն մեկնաբան: Նրա ղեկավարությամբ առաջին անգամ կատարվել են Ն. Յ. Մյասկովսկու, Ս. Ս. Պրոկոֆևի, Դ. Դ. Շոստակովիչի մի շարք սիմֆ. երկեր:

1918–19-ին Սարատովում ղեկավարել է սիմֆ. համերգներ, եղել իր հիմնադրած «Խորհրդային օպերա» թատրոնի գլխ. դիրիժորը, դասավանդել կոնսերվատորիայում: Դոնի Ռոստովում հիմնադրել է սիմֆ. նվագախումբ և օպեր. թատրոն, եղել է Ազով-Սևծովյան նավատորմի նվագախմբի դիրիժոր, կամեր. գործիք. անսամբլի հիմնադիրը:

1922-ից ապրել և ստեղծագործել է Մոսկվայում: Դասավանդել է ՄՊԿ-ում (պրոֆ.՝ 1922–35-ին), վարել է նվագախմբ., խմբավար., օպեր. դասարանները, դասավանդել երաժշտատես. առարկաներ ևն: Սաներից են Գևորգ ***Բուդաղյանը***,

Արամ ***Քաթանյանը***, Լ. Մ. Գինզբուրգը, Մ. Ի. Պավերմանը, Բ. Է. Խայկինը և ուր.: 1922–24-ին՝ Մոսկվայի թատերարվ-ի պետ. ինստ-ի ռեկտոր, 1924–35-ին՝ սիրող. սիմֆ. նվագախմբի ղեկ. (1926-ից՝ Ս-ի անվ.): Խորհրդ. շրջանի կոմպոզիտորների երկերից ներկայացրել է Վիեննայում և Պրահայում (1927):

Ս-ի կատարող. արվ-ն աչքի է ընկել վառ արտիստականությամբ:

1935-ից ապրել է Երևանում: 1935–39-ին՝ ԵՕԲԹ գլխ. դիրիժոր. մասնակցել է Ա. Ս. Դարգոմիժսկու «Ձրահարսը» (1938) օպերայի, Բ. Վ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը» (1939), Ա. Խաչատրյանի «Երջանկություն» (1939), «Գայանե» (1947) բալետների բեմադրություններին: 1941-ից՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: 1936–54-ին դասավանդել է ԵՊԿ-ում (ռեկտոր՝ 1936–37, 1940–54-ին, պրոֆ.՝ 1936-ից): Սաներից են Հակոբ ***Ոսկանյանը***, Յուրի ***Դավթյանը***: Ս-ի ղեկավարությամբ առաջին անգամ հնչել են Ա. Խաչատրյանի, Ա. Սպենդիարյանի, Հ. Ստեփանյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի և ուր. երկերից: Երևանի № 4 երաժշտ. դպրոցը կոչվել է (1954) Ս-ի անվամբ:

Լենինի (2) և այլ շքանշաններ:

Գրկ. *Տիգրանյան Գ., Կոպանդին Սարաջյան (կենսագրական ակնարկ), Ե., 1961: Նույնի, Ծառայություն բարձր արվեստին, Ե., 1979: К. С. Сараджев. Статьи, воспоминания, М., 1962.*

ՍԱՐԱՋԵՎԱ Աննա Միքայելի [07.08.1920, ք. Տագանռոգ (ՌԴ)–2016, Երևան], երգչուհի, մանկավարժ: Գեորգի ***Սարաջևի*** կինը, Սերգեյ և Վահրամ ***Սարաջյանների*** մայրը: Սովորել է Տագանռոգի և Լենինգրադի երաժշտ. ուսումնարաններում, Լենինգրադի կոնսերվատորիայում: Ավարտել է ԵՊԿ երգեցողության բաժինը (1948, Հ. Դանիելյանի դասարան): 1950–60-ին՝ Հայֆիլհարմոնիայի մեներգչուհի, 1960-ից դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (երգեցողության բաժնի ղեկ.), ԵՊԿ-ում (պրոֆ.):

Ս-ի ստեղծած դպրոցն առանձնանում է դասավանդման մեթոդով, որը սովորողներին հնարավորություն է ընձեռում լավագույնս դրսևորելու իրենց երաժշտ. տվյալները, խորապես յուրացնելու երգարվ-ի ակունքները, ծանոթանալու նրա բազմազան ուղղություններին (գերմ. ռոմանտիզմ, ֆրանս. իմպրեսիոնիզմ, բարոկկո, օպեր. ժանր, իտալ. վերիզմ ևն), նաև խորապես զգալու ազգ. երգը (Կոմիտաս, տաղեր, շարականներ ևն):

ՍԱՐԱՋԵՎԱ Կիրա Կոստանդինի [15(28).08.1910, Մոսկվա–2003, Մոսկվա], տավղահարուհի, մանկավարժ: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1958): Կոստանդին ***Սարաջևի*** դուստրը: Կոնստանտին ***Սարաջևի*** քույրը: Սովորել է Մոսկվայի երաժշտ. դպրոցում, ավարտել ՄՊԿ տավիղի բաժինը (1930, Ն. Գ. Պարֆյոնովի դասարան): Սովորելու տարիներին, որպես մենակատար, հանդես է եկել համերգներով: 1932-ից՝ ԽՍՀՄ համամիութ. պետ. ռադիոյի, 1934-ից՝ Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի անվ. երաժշտ. թատրոնի, 1936–71-ին՝ Մեծ թատրոնի նվագախմբերի առաջին տավղահարուհի և մենակատար: 1937–39-ին դասավանդել է Մոսկվայի երաժշտ. դպրոցում, 1937–41-ին, միաժամանակ՝ Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանում, 1945–53-ին՝ ՄՊԿ-ին կից Կենտր. երաժշտ. դպրոցում, 1954–90-ին՝ Գնեսինների անվ. երաժշտ. ակադ-ում (պրոֆ.՝ 1970-ից): Տավիղի համար գործիքավորել է մի շարք կոմպոզիտորների ստեղծագործություններ: Հեղինակ է «Տավղահարի կատարողական վարպետության մասին» (ռուս., 2001) գրքի:

Աննա Սարաջևա

Կիրա Սարաջևա

Քույրը՝ Ադա Ս. (Էլդարովա, 25.11.1908, Մոսկվա–26.12.1996, Մոսկվա), տավղահարուհի: Մոսկվայի Մեծ թատրոնի նվագախմբի մենակատարուհի: Թոռնուհին՝ Էլդարովա Օլգա Ալեքսանդրովա (ծ. 08.10.1956, Մոսկվա), տավղահարուհի: 2 միջազգ. մրցույթների դափնեկիր: Կիրա և Ադա Ս-ների զարմուհին՝ Պոպովա Նատալյա Իվանովնա (29.06.1924, Մոսկվա–20.04.2014, Մոսկվա), տավղահարուհի: ՀՀ վաստ. արտիստ: ԵՕԲԹ նվագախմբի մենակատարուհի: 1975–88-ին դասավանդել է ԵՊԿ-ում:

Աննա Սարաջյանը հոյթի պահին

ՍԱՐԱՋՅԱՆ Աննա Սերգեյի (ծ. 1977, Երևան), դաշնակահարուհի: Սերգեյ ***Սարաջյանի*** դուստրը: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը: Մեկ տարի սովորել է ԵՊԿ-ում (դաշնամուրի դասարան), ավարտել Նյու Յորքի Ջուլիարդի բարձրագույն երաժշտ. դպրոցը, Լոնդոնի թագավոր. երաժշտ. ակադ-ի ասպիրանտուրան (2005, ղեկ.՝ Հ. Միլն): Դասավանդել է ԵՊԿ-ում:

Սերգեյ Սարաջյան

Վահրամ Սարաջյան

Ալբերտ Սարգսյանը

Առաջին ելույթը՝ 1997-ին՝ «Քառնեգի Հոլլի» փոքր դահլիճում. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Շոպենի, Կ. Դեբյուսիի, Ա. Խաչատրյանի և ուր. գործերից: Ելույթներ է ունեցել նաև անսամբլների հետ:

Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Իտալիայում (Սիցիլիա), Շվեյցարիայում, Կիպրոսում, Հնդկաստանում, ՀԱՀ-ում: 2005-ից ապրում է Սինրեալում:

ՍԱՐԱՋՅԱՆ Սերգեյ Գեորգիի (ծ. 12.02. 1945, Երևան), դաշնակահար, մանկավարժ: Պրոֆ. (2003): Լեհաստանի մշակույթի վաստ. գործիչ: Գեորգի և Աննա ***Սարաջյանների*** որդին, Վահրամ ***Սարաջյանի*** եղբայրը, Աննա ***Սարաջյանի*** հայրը: Ավարտել է ԵՊԿ (1969): 1969-ից, որպես մենակատար (նաև Վ. Սարաջյանի հետ) ելույթներ է ունեցել արտերկրում. երկացանկում՝ արդի հայ կոմպոզիտորների գործերից: 1970-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դեկան՝ 1994–2002-ին, ռեկտոր՝ 2002–11-ին, ամբիոնի վարիչ՝ 2011-ից): Նրա օրոք հիմնադրվել է Կոնսերվատորիայի հրատարակչությունը և հրատարակվել «Երաժիշտ» (2005-ից) թերթը: 2002-ից վարպետության դասընթացներ է վարում Խորվաթիայի Լոկրան ք-ի երաժշտ. ակադ-ում: Հեղինակ է մեթոդ. ձեռնարկների:

Միջազգ. փառատոնի դիպլոմ (1977, Բրատիսլավա), ՀՀ ԿԳՆ ոսկե (2005), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2011) մեդալներ:

ՍԱՐԱՋՅԱՆ Վահրամ Գեորգիի (ծ. 15. 07.1948, Երևան), թավջութակահար, մանկավարժ: Գեորգի և Աննա ***Սարաջյանների*** որդին, Սերգեյ ***Սարաջյանի*** եղբայրը: Հյուսթոնի (ԱՄՆ) համալսարանի պրոֆ.: Ավարտել է ՄՊԿ (1971): Մենահամերգներով հանդես է եկել Լոնդոնում, Փարիզում, Միլանում, Ժնևում, Վիեննայում, Յուրիխում, Մադրիդում, Բուենոս Այրեսում, Նյու Յորքում և այլուր: Համագործակցել է անվանի դիրիժորներ Վ. Գերգիևի, Օ. Դուրյանի, Ե. Սվետլանովի, Յ. Խ. Տեմիրկանովի, կատարողներ Բ. Վենգերովի, Դ. Գերինգասի, Ե. Կիսինի, Դ. Ֆիլիպսի և ուր. հետ: Մասնակցել է «Սպիտակ գիշերների աստղեր» (Ս. Պետերբուրգ), Դ. Դ. Շոստակովիչի անվ. (Հյուսթոն), Բրատիսլավայի, Պրահայի, Իտալիայի միջազգ. երաժշտ. փառատոներին:

1991-ից ապրում է ԱՄՆ-ում: Դասավանդել է Օբեռլինի (ԱՄՆ), Քոնեքթիքութի, Ա. Քոփլենդի (Նյու Յորք) երաժշտ. քոլեջներում:

ՍԱՐԳԻՍ, VII դ-ի երգիչ-գուսան: Ճանաչված էր Հայաստանում, Մերձ. Արևելքում և Պարսկաստանում: Հանդես է եկել պարսկ. արքունիքում, մասնակցել է երաժշտ. մրցույթների: Տիզբոնում եղել է արլ. երաժշտության տեսագեղագիտ. սկզբունքները կարգավորող և վավերացնող երաժիշտներից:

Գրկ. *Թահմիզյան Ն., Քնարական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԼՀԳ, 1971, № 1:*

ՍԱՐԳԻՍ ԱՊՈՒՀԵԽՑԻ, Սարգիս Ակնեցի, XVII դ-ի վերջ–XVIII դ-ի սկզբի տաղասաց, երաժիշտ: Նրա կյանքի և ստեղծագործության մասին միակ աղբյուրը Մատենադարանի ձեռագիր Տաղարանն է (1765, ձեռ. № 4426, գրիչ՝ Հայրապետ Ագուլեցի), որտեղ Նաղաշ Հովնաթանի, Հակոբ Նաղաշի և այլ տաղերգուների գործերից բացի՝ ընդգրկված են նաև Ս. Ա-ու «Տաղ Ակընցի գուղէն Ապուչեխցի տիրացու Սարքիսէ զարդարեալ վասն սիրոյս» վերնագրով 18 տաղերը և 1 ակրոստիքոս: Հետևել է հայ միջնադար. տաղերգության ավանդույթներին՝ միահյուսելով ժող. և աշուղ. բանաստեղծության մոտիվները: Գրել է նաև հոգևոր երգեր:

Գրկ. *Մկրտչյան Մ., Սարգիս Ապուչեխցի, Ե., 1971:*

ՍԱՐԳՍՅԱՆ Ալբերտ Մկրտչի (24. 03.1938, Լենինական – 2007, Երևան), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (1981): Սովորել է Լենինականի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. ուսումնարանում և դրամատիկ. թատրոնի ստուդիայում: Ելույթներ է ունեցել Լենինականի պիոներների պալատում, ապա՝ Սևյանի անվ. մշակույթի պալատի երգի-պարի անսամբլում (ղեկ.՝ Աղասի ***Շարոյան***), 1955-ից՝ նաև ռադիոյով: ՀԽՍՀ-ում և միութ. հանրապետություններում մասնակցել է ստուգատեսների, փառատոների (ՀԽՍՀ 1-ին փառատոնի ոսկե մեդալ, 1957): 1965-ից՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի մենակատար, ապա՝ Գյումրիի Սևյանի անվ. մշակույթի տան երգի-պարի անսամբլի ղեկ.: Երգացանկում՝ հայկ. ժող., գուսան., հայ և օտարազգի կոմպոզիտորների երգեր: Առանձնանում են «Հովվի երգը», «Համիդ մատաղ», «Դարդս տվի հովերին» և այլ երգերի կատարումները: 1969-ին ելույթ է ունեցել Փարիզում:

Նկարահանվել է «Շիրակի մեղեդիները» ֆիլմ-համերգում՝ քավորի դերում (1965):

Կարթագենի (Թունիս) միջազգ. փառատոնի 1-ին կարգի դիպլոմ (1973):

ՍԱՐԳՍՅԱՆ Էմմա Տիգրանի (ծ. 23.05.1935, Վորոնեժ), երգչուհի (մեցցո սոպրանո): ՌԴ ժող. արտիստ (2001): Ռուսաստանի թատերարվ-ի ակադ-ի պրոֆ.: Ավարտել է Վորոնեժի երաժշտ. ուսումնարանը, ՄՊԿ (1960, Ա. Լ. Դոլիվոյի դասարան): 1960–91-ին հանդես է եկել Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի անվ. երաժշտ. թատրոնում (Օլգա՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Կարմեն՝ Ժ. Բիզեի «Կարմեն»), 1991-ից՝ «Նոր օպերա» թատրոնում (Լյուչիա՝ Պ. Մասկանիի «Գեղջկական պատիվ», Ջիովաննա՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», Կլոտիլդա՝ Վ. Բելլինիի «Կլոտիլդա», Դայակ՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Նաինա՝ Մ. Ի. Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա», ևն): Մենահամերգներով շրջագայել է ՌԴ-ում և արտերկրում: 2007-ին մասնակցել է Զալցբուրգի փառատոնին, 2008-ին ելույթ է ունեցել Սանհայմի Ազգ. թատրոնում:

«Պրահայի գարուն» միջազգ. փառատոնի 1-ին կարգի դիպլոմ (1959), Ջ. Էնեսկուի անվ. միջազգ. մրցույթի 1-ին մրց. և ոսկե մեդալ (1961, Բուխարեստ):

ՍԱՐԳՍՅԱՆ Կարեն Աշոտի (ծ. 12.09.1952, Կապան), խմբավար: ՀՀ վաստ. արտիստ (2006): Ավարտել է ԵՊՄԻ և ԵՊԿ օպեր-սիմֆ. դիրիժորության բաժինները: 1972–80-ին՝ ԵՊՀ, միաժամանակ՝ Էջմիածնի Սբ Հռիփսիմե եկեղեցու երգչախմբերի ղեկ.: 1989-ին ստեղծել է «Տղամարդկանց երգչախումբը» և համերգներով շրջագայել ԳԴեմՀ-ում (1989–93): 1993-ին՝ Սիդնեյի «Կոմիտաս» երգչախմբի, նաև սիմֆ. նվագախմբի դիրիժոր: 1994–2011-ին և 2017-ից՝ ԵՕԲԹ երգչախմբի գլխ. խմբավար: Հյուրախաղերով հանդես է եկել Մոսկվայում (1995), ԱՄՆ-ում (1999), Իսպանիայում (1999–2000), Լիբանանում (2001) և այլուր: Ղեկավարել է Ջ.Վերդիի «Օթելլո», «Տրուբադուր», «Տրավիատա», «Աիդա», Գ.Դոնիցետտիի «Պողիկտոս», Ռ.Լեոնկավալլոյի «Պայացներ», Ա. Տիգրանյանի «Անուշ», Տ.Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Ա. Տերտերյանի «Երկրաշարժ», Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերաների բեմադրությունները: 1995-ից պարբերաբար ելույթներ է ունեցել Հալեպում, ձայնագրել է Սբ Պատարագի ամբողջ. տարբերակը, 2016-ին Նյու Յորքում՝ Խ. Մեյխանեջյանի Սբ Պատարագը՝ հեղինակի հետ: 2014-ից՝ Երևանի Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու և Էջմիածնի հոգևոր ճեմարանի երգչախմբերի ղեկ.:

Կարեն Սարգսյանը ելույթի պահին

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2018):

ՍԱՐԳՍՅԱՆ Մարգարիտ Ալֆրեդի (ծ. 22.02.1969, Երևան), դաշնակահարուհի: Պրոֆ. (2011): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1987), ԵՊԿ դաշնամուրի (1992) և ասպիրանտուրայի նվագակցության (1995, Ա. Հակոբյանի դասարան) բաժինները, կոմպոզիցիայի դասեր առել Էդվարդ *Միրզոյանից* (1987–88), կատարելագործվել Պրետորիայի «Մոցարտ» ակադ-ում (1997–99, ղեկ-ներ՝ Ի. Թոման, Ա. Զաց), նվագակցել Ք. Մայերի, Է. Բլահովայի, Մ. Լետիեկի և ուր. դասարաններում: 1992-ից՝ կոնցերտմայստեր, դասավանդում է նաև ԵՊԿ-ում (նվագակցություն): Համերգնեերով շրջագայել է ՌԴ-ում, Լեհաստանում, Հունգարիայում, Չեխիայում, Իտալիայում, Կանադայում, Իսրայելում, Պարսկաստանում, Կիպրոսում, Ստամբուլում և այլուր: Ունի ֆոնդ. ձայնագրություններ (Վ. Հարությունովի, Ա. Մայիլյանի, Դ. Հարությունյանի, Ն. Անանիկյանի և ուր. հետ): Մշակել է Ն. Գալանդերյանի շուրջ 30 մեղեդի (2015): Հեղինակ է «Տասը վոկալիզներ» (2005, երգիչների համար), «Տասնհինգ վոկալիզներ» (2008) ժող-ների:

Էմմա Սարգսյան

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

ՍԱՐԳՍՅԱՆ Նադեժդա Վիգենի (17.10.1954, Երևան–02.07.2018, Երևան), երգչուհի: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2010): Ավարտել է Հայֆիլմի կինոդերասանի ստուդիան (1971), Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ը (1992): 1973–78-ին՝ «Սերպանտին» վոկալ-գործիք. անսամբլի, 1978–87-ին՝ Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբի մեներգչուհի, 1988–92-ին՝ «Հայեր» անսամբլի և մշակութ. կենտրոնի հիմնադիր-գեղ. ղեկ., 1999–2007-ին՝ «Էմի Բի» պրոդյուսեր. կենտրոնի նախագահ, 2003-ից՝ Երևանի մշակույթի պետ. քոլեջի տնօրեն:

Սարգարիտ Սարգսյանը ելույթի պահին

Նաղաշժդա Սարգսյանը կույթի պահին



Նազենիկ Սարգսյան

Ռոբեն Սարգսյան

1993-ից «Հայեր» անսամբլի հետ համերգներով շրջագայել է ՌԴ-ում, Բելառուսում, Լիբանանում, Սիրիայում, Կիպրոսում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում, Էստոնիայում, Գերմանիայում: Հայաստանում մասնակցել է բազմաթիվ մրցույթների և փառատոների, արժանացել մրց-ների: 1997-ին հիմնադրել է «Դո-Ռե-Մի» հանրապետ. և միջազգ. մանկապատանեկան երգի մրցույթը:

Հայաստանի հանրային հեռուստատեսության «Տարեմուտի երեկո» (2008), «Երկու աստղ» (2009) և այլ նախագծերի, 2008–09-ին՝ «Մանկական Եվրատեսիլ» և «Նոր ալիք» երգի միջազգ. մրցույթների Հայաստանը ներկայացնող պրոդյուսեր: Հյուրախաղերով հանդես է եկել շուրջ 40 երկրում. երգացանկում՝ Կ. Օրբելյանի, Ռ. Ամիրխանյանի, Մ. Մավիսակալյանի, Ա. Սաթյանի, Ս. Շաքարյանի և ուր. երգերից:

Համամիութ. մրցույթի (1976, Ռիգա), միջազգ. փառատոնի (1977, Սոչի) դափնեկիր, Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2016):

ՍԱՐԳՍՅԱՆ Նազենիկ Գագիկի (ծ. 14.06.1954, Երևան), երաժշտագետ, պարագետ, հոգեբան: Կարինե *Խուդաբաշյանի* դուստրը: Արվեստագիտ. դ-ր (2017): Սովորել է Երևանի պարարվ-ի ուսումնարանում, ավարտել Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1975), ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (1980, Ռ. Ստեփանյանի դասարան), ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1983, ղեկ.՝ Գ. Տիգրանով), ԵՊՀ հոգեբանության ֆակ-ը (2002): 1984-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստում. 2017-ից՝ առաջատար գիտաշխատող: Հիմնադրել է երաժշտության և պլաստիկայի մանկ. խումբը (1986), բեմադրել մի շարք օպեր. և պլաստիկ ներկայացումներ: Խումբը մասնակցել է մանկ. երաժշտ. թատրոն-ստուդիաների (1991, Բելգորոդ), «Երկիր, թատրոն, երեխաներ» (1991, Եվպատորիա) միջազգ. փառատոներին (արժանացել դիպլոմների), հյուրախաղերով հանդես է եկել Շվեյցարիայում:

1992-ից Մոսկվայում՝ որպես պար. հոգեթերապիայի, ապա՝ հոգեթերապևտիկ այլ մեթոդների մասնագետ՝ մշակել է պար. թերապիայի համակարգ:

Գործնական պարապմունքներ է անցկացրել Մոսկվայի պետ. համալսարանի հոգեբանության բաժնում:

Երկ. *Ашот Асатурян - хореограф последней трети XX века, Е., 2011.*

ՍԱՐԳՍՅԱՆ Ռուբեն Սուրենի (22.11.1945, Երևան–06.04.2013, Երևան), կոմպոզիտոր: Իրինա *Զոլոտովայի* ամուսինը: ՀԿՄ (1972-ից) անդամ: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1972, Ղ. Սարյանի դասարան): 1973–85-ին դասավանդել է Երևանի Ք. Քուշնարյանի անվ. երաժշտ. դպրոցում, 1987–2013-ին՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2004-ից): Հայկ. երաժշտ. համաժողովի հիմնադիր-անդամներից (1994):

Գրել է «Անտեսանելի մարդը» (2000, ըստ Հ. Ուելսի) ռոք-բալետը, 3 սիմֆոնիա (1-ինը՝ 1986, 2-րդը՝ "Ironica"՝ 1989, 3-րդը՝ «The Chronicle»՝ 2003), 2 կամեր. սիմֆոնիա (2-րդը՝"In modo passacaglia"), կոնցերտներ՝ թավջութակի և սիմֆ. նվագախմբի (1977, 1979, 1980, 1994), ջութակի և կամեր. նվագախմբի (1983, 1984, 1989, 2001), ալտի և նվագախմբի (1992), սոնատներ՝ դաշնամուրի (1980), ջութակի (1976, 1978), թավջութակի (1977) համար, գործիք. պիեսների շարքեր («Հայկական գրաֆիկա», «Ընծայում Կոմիտասին», երկուսն էլ՝ դաշնամուրի համար), 3 լար. կվարտետներ (3-րդը՝ «Վերջաբան», նվիրված է Է. Միրզոյանին, 2012), վոկալ շարքեր («Մայակովսկու սերը», «6 պատմվածք անցյալից»՝ Կ. Զարյանի, Ա. Իսահակյանի, Մ. Մեծարենցի խոսքերով, «Բառեր»՝ Ս. Ա. Եսենինի, Է. Վերհառնի և Ռ. Մ. Ռիլկեի, «Սիրո մասին»՝ չին և հին եգիպտացի բանաստեղծների տեքստերով) ևն: Ստեղծագործությունները հնչել են մի շարք միջազգ. փառատոներում:

ՀՀ Պետ. (2007), «Տարվա լավագույն ստեղծագործություն» (1978), «Սիմֆոնիկ նվագախմբի համար լավագույն ստեղծագործություն» (1993) մրց-ներ:

Գրկ. *Берко М., Трудный путь познания (творческий портрет Р. Саркисяна), «Советская музыка», 1978, № 4; Аревшатян А., Монодия и поэзия в творчестве современных армянских композиторов, ԼՀԳ, 1978, № 12; Նույնի, Музыка для камерно-оркестровых составов (1970–80 гг.), «Армянское советское искусство на современном этапе», Е., 1987; Рухкян М., Портреты армянских композиторов, Е., 2009; Arakelyan O., Świat Rubena Sarkisjana, "Kraj Rad", 1979, № 31.*

Աննա Արևշատյան

ՍԱՐԳՍՅԱՆ Սվետլանա Կոլյունի (ծ. 24.01.1945, Թբիլիսի), երաժշտագետ, մանկավարժ, քննադատ: Արվեստագիտ. դ-ր

(1999)։ ՀՀ (2009), Լեհաստանի (2013) մշակույթի վաստ. գործիչ։ ՀԿՄ (1975), Միջազգ. երաժշտ. գործիչների միության (2004) անդամ։ Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (1962), ԵՊԿ երաժշտագիտության (1969, ղեկ.՝ պրոֆ. Ռ. Աթայան) բաժինները, Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1974, ղեկ.՝ Գ. Տիգրանով)։ Հաճախել է որակավորման դասընթացների ՄՊԿ-ում (1978, 1988)։ 1974-ից դասավանդում է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 2001-ից)։ Դասախոսություններ է կարդացել Վիլնյուսի (1986), Լվովի (2000) երաժշտ. ակադ-ներում, Ս. Պետերբուրգի (1984, 1997, 1998), Մոսկվայի (1988) կոնսերվատորիաներում։ ՀՀ ՄՆ 1992–97-ի «New Musical Initiatives»-ի կազմակերպիչ։ Ուսումնասիրությունները վերաբերում են 19-րդ դ. հայ երաժշտության զարգացման առանձնահատկություններին, ժամանակակից կոմպոզիտորների արվ-ին ու ստեղծագործություններին։ Հեղինակ է երաժշտագիտ. ընդհանուր և հատկապես տես. վերլուծ. բազմաբնույթ 500-ից ավելի գիտ., հայ կոմպոզիտորների և երաժշտության մասին հանրագիտարան. հոդվածների։ Կազմել և խմբագրել է շուրջ 10 մենագրություն և գիտ. հոդվածների ժող-ներ։

«International Book of Honor» (1998, ABI, USA), «International Woman of the Year» (1994–95, IBC, England), ՀԿՄ (1966) մրցանքներ, ՀՀ Գիտության պետ. կոմիտեի ոսկե մեդալ (2015)։

Երկ. *Արամ Խաչատրյան. գիտական տեղեկատու (ռուս., հայ., անգլ.), Ե., 2004: Armenian Music and Composers, L.–Y., 2004. Вопросы современной армяеской музыки: 60-е годы, Е., 1983; Армянская музыка в контексте XX века, М., 2002; Арам Хачатурян: Науч. справ. изд., Е., 2004; На рубеже веков: Музыка и её сферы. Избранные статьи, М., 2014.*

Գոհար Շագոյան

ՍԱՐԳՍՅԱՆ Վարդան Սարգսի (02.05.1892, Կ. Պոլիս–30.10.1978, Մարսել), խմբավար, կոմպոզիտոր։ Կոմիտասի «հինգ սաներից»։ 1910–15-ին աշակերտել է Կոմիտասին, երգել նրա երգչախմբում։ 1911-ին Սկյուտարում ստեղծել է «Ռաֆֆի» միության երգչախումբը։

Գրել է երգեր (3-ը տպագրվել են Փարիզում, 1937) Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի համար, որը, որպես երգախառն դրամա, մինչև 1920-ը մի քանի անգամ ներկայացվել է Կ. Պոլսում։ 1923-ին Բրյուսելում հիմնադրել է «Արմենիա» երաժշտ. ընկերությունը։ 1931–39-ին Մարսելում ղեկավարել է իր հիմնադրած հայկ. երաժշտ. ընկերությունը, 1945-ից մշտապես ապրել է այնտեղ, հանդես եկել երգչախմբ. համերգներով։ Գրել է մեներգեր և խմբերգեր, մշակել հայկ. ժող. երգեր («Հոյնար» պարերգը՝ ձայնի և դաշնամուրի համար, ևն)։ Նրա ձայնագրած և դաշնակած «Արևագալի երգերը» (հրտ.՝ 1958) մեծ նշանակություն ունի ազգ. երաժշտարվ-ում։ Բացառիկ արժեքավոր է «Սրբազան երգեցողությունն Հայաստանեայց եկեղեցւոյ» (500 էջ) աշխ-ը, որն ամփոփում է հայ հոգևոր երաժշտության բազմաթիվ տեսակներ։ Փարիզում մասնակցել է Կոմիտասի մի շարք անտիպ գործերի, այդ թվում՝ 47 մեներգերի և խմբերգերի, նաև «Պատարագի» բեկորների հավաքման, լրացման և տպագրության պատրաստման աշխ-ներին։

Սվետլանա Սարգսյան

ՍԱՐԳՍՅԱՆ Վիլլի Վահանի (ծ. 31.12.1930, Երևան), դաշնակահար, մանկավարժ։ ՀԽՍՀ վաստ. արտիստ (1978)։ Պրոֆ. (1986-ից)։ Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1948, դասատու՝ Ռ. Անդրիասյան),ԵՊԿ երաժշտագիտության (1954, Ա. Բարսամյանի դասարան) և դաշնամուրի (1958, Կ. Մալխասյանի դասարան) բաժինները։ 1954–63-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1964-ից՝ ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1992–2000-ին), 1963–99-ին, միաժամանակ՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում։ Կազմակերպել է բացառիկ համերգաշարեր (Յ. Ս. Բախի 48 պրելյուդներ և ֆուգաներ, հնագույն կլավիր. երաժշտություն, հայ կոմպոզիտորների դաշնամուր. երկերի առաջին կատարումներ)։



Վարդան Սարգսյան

Հեղինակ է երաժշտատես., գեղագիտ. հոդվածների, ուսումնասիրությունների և դաշնամուր. փոխադրումների։ Կազմել և խմբագրել է Ա. Ադամյանի «Հոդվածներ գեղագիտության մասին» (ռուս., 1967) ժող-ը։

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի (1957, Մոսկվա), Երաժիշտ կատարողների այսրկովկաս. մրցույթի (1960, Բաքու, 1-ին մրց.) դափնեկիր։

Որդիները՝ Վահան Ս. (ծ. 11.08.1965, Երևան), դաշնակահար, մանկավարժ։ Ավարտել է ԵՊԿ (1991, Վ. Սարգսյանի



Վիլլի Սարգսյան

Լեյլա Սարիբեկյանը երույթի պահին

Արաքսի Սարյան

դասարան) և ասպիրանտուրան (1993): Դասավանդում է Փիթսբուրգի «Դյուքսյն» համալսարանում (ԱՄՆ): Արեգ Ս. (ծ. 30.11.1976, Երևան), դաշնակահար, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ (1999, Վ. Սարգսյանի դասարան) և ասպիրանտուրան (2001): 2004-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ): Դավիթ Ս. (ծ. 08.04.1979, Երևան), ջութակահար, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ (2001, Ջ. Սարգսյանի դասարան) և ասպիրանտուրան (2003): 2009-ից՝ Լոս Անջելեսի «Royal Academia» դպրոցի ղեկ.:

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Լեյլա Անդրանիկի (ծ. 16.07.1963, Թբիլիսի), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2007): Ավարտել է ՀՄՊԻ երաժտության ֆակ-ը (1986): Ղեկավարել է «Վարուժնակ» վոկալ անսամբլը, մասնակցել բարեգործ. համերգների, երաժշտ. նախագծերի: Գրել է «Միասնության շուրջպար», «Հայոց աշխարհ», «Հայրենի հող» և այլ երգեր: Թողարկել է «Հայի ուժը» (2005), «Մի բաժանվեք սիրուց երբեք» (2008) ձայնասկավառակները, Ս. Պասկևիչյանի «Ինձ բացակա չդնեք» (խոսք՝ Հ. Սահյանի), «Արիացիր սիրտ իմ» (խոսք՝ Վ. Տերյանի), «Հայրենիք» (խոսք՝ Պ. Սևակի, բոլորը՝ 2015) սինգլները, նկարահանել տեսահոլովակներ: Հյուրախաղերով շրջագայել է ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Շվեյցարիայում, Բելգիայում, Իրանում և այլուր:

«Սայաթ-Նովա» երգի համահայկ. մրցույթ-փառատոնի Հատուկ (2000), 1-ին (2001), Կահիրեի երգիչների միջազգ. փառատոնի 2-րդ (2002) մրց-ներ:

ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐԴԱԿՑԻ, Բերդակացի, XVI դ-ի հայ տաղերգու: Եղել է կրոնավոր, հավանաբար Բերդակցի է անվանվել ծննդավայրի՝ Բերդակ գ-ի անունով: XVI–XVII դդ-ի այն գործիչներից է, որոնք ձգտել են նպաստել ժողովրդի հոգևոր վերելք-զարթոնքին՝ ստեղծելով ուշմիջնադար. տաղերգությանը բնորոշ սիրո, բնության, գինու, ուրախության երգեր: Նրանից պահպանվել է «Գովասանութիւն խաղողոյ, բաժակի, այլև վասն ուրախութեան» տաղը (Մտնդ., ձեռ.№ 3081): Նրան է վերագրվել «Թագուհի մը ես տեսայ» սկսվածքով ժողերգը (որոշ տարբերակներ հայտնի են Կիրակոս Երեցի, Քուչակ Վանեցու և ոմն Սարկավագի անունով), նաև (որ անհավանական է) Ֆրիկի «Գանգատ»-ի տարբերակներից մեկը (վերնագրված՝ «Սարկաւագ վարդապետի ասացեալ մարտ ընդ Աստուծոյ»):

Գրկ. *Փափազյան Վ., Պատմութիւն հայոց գրականութեան, Թ., 1910, էջ 251-252: Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956: Սահակյան Հ., Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, Ե., 1975:*

Ընդ Ա.Ղազինյանի

ՍԱՐՅԱՆ (Հարությունյան) Արաքսի Արծրունու (17.08.1937, Լենինական–26.09.2013, Երևան), երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Արվեստագիտ. թեկնածու (1969): Ղազարոս *Սարյանի* կինը: Սովորել է Լենինականի Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ պատմատես. բաժինը (1961), ապա՝ ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստ-ի ասպիրանտուրան (ղեկ.՝ Ռ. Աթայան): Դասավանդել է Երևանի Տ. Չուխաճյանի, Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցներում, 1968-ից՝ ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1995–2013-ին): 2004-ից՝ ՀՀ պետ. մրցանակների երաժշտ. ոլորտի հանձնաժողովի նախագահ:

Հեղինակ է «Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստ (XIX–XX դդ.)», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (1973), «Մեղեա Աբրահամյան» (համահեղ.՝ Ա. Բարսամյան, 2000), «Երաժշտությունը՝ կյանքի ուղեկից: «Թաթուլ Ալթունյանը և հայ երգն ու պարը» (2008), «Ջութակահար Լևոն Սամիկոնյանի կյանքը և ստեղծագործական ուղին» (2009) մենագրությունների, կազմել է «Ղազարոս Սարյան. նամակներ ռազմաճակատից» (2005), «Հայ քաղաքային ժողովրդական երգերի հատընտիր» (2010), «Ղազարոս Սարյանը և նրա ժամանակը» (2013) ժող-ները: Լույս է տեսել «Արաքսի Սարյան. Հոդվածներ, զեկուցումներ, հաղորդումներ» ժող-ը (2015):

ՍԱՐՅԱՆ Ղազարոս (Լազր) Մարտիրոսի [30.09.1920, Նոր Նախիջևան (այժմ՝ Դոնի Ռոստովի շրջագծում)–27.05.1998, Երևան], կոմպոզիտոր, մանկավարժ, հաս. գործիչ: ՀԽՍՀ (1972), ԽՍՀՄ (1991) ժող. արտիստ: ՀԿՄ նախագահ (1955–56): Արաքսի *Սարյանի* ամուսինը: Սովորել է ԵՊԿ-ին կից շնորհալի երեխաների խմբում (Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի և Ալեքսանդր Հարությունյանի) հետ, ԵՊԿ-ում (1934–38, Վ. Տալյանի և Ս. Բարխուդարյանի դասարաններ),

Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանում (1939, դասատու՝ Վ. Յ. Շեբալին), ավարտել ՄՊԿ (1950, Դ. Բ. Կաբալևսկու, Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Վ. Ալեքսանդրովի դասարաններ)։ ՀՄՊ-ի տարիներին ծառայել է բանակում, ղեկավարել զորագնդի ինքնագործ խումբը, նվագել բայան, երգեր գրել։ 1950-ից դասավանդել է ԵՊԿ-ում (ռեկտոր՝ 1960–86-ին, ամբիոնի վարիչ՝ 1986–98-ին, պրոֆ.՝ 1972-ից)։ Սաներից են Տ. Մանսուրյանը, Ռ. Ալթունյանը, Ռ. Սարգսյանը, Ս. Լուսիկյանը, Վ. Ա. Աճեմյանը և ուր.։

Հատված Ղազարոս Սարյանի սիմֆոնիկ պոեմի պարտիտուրից

Առավել ճանաչվել է «Սիմֆոնիկ պատկերներ» (1955), «Հայաստան» (1966, սիմֆ. պաննո՝ հոր՝ Մարտիրոս Սարյանի 4 բնանկարի հիման վրա), ջութակի և սիմֆ. նվագախմբի կոնցերտ (1973), սիմֆոնիա (1980) ստեղծագործություններով։ Գրել է նաև «Խաղաղության օրը» (1953) վոկալ-սիմֆ. սյուիտը, թեմա՝ վարիացիաներով (1947), պոեմ (1950), «Հանդիսավոր նախերգանք» (1957), սերենադ (1958), աղաջո և պար (1960)՝ սիմֆ. նվագախմբի, արիա և տոկկատ (1965)՝ ջութակի և դաշնամուրի համար, թավջութակի և դաշնամուրի 2 սոնատ (1948, 1989), լար. կվարտետներ (1949, 1986), երգեր, կինոերաժշտություն։

Ս-ի կյանքի վերջին շրջանի դրամատիկ իրադարձությունները յուրովի վերաիմաստավորվել են դաշնամուրի 3 պոստլյուդներում (1990), սիմֆ. նվագախմբի պասսակալիայում (1995), ջութակի և կամեր. նվագախմբի «Անդանտե և պրեստո»-ում (1997)։ Երևանի № 1 մանկ. արվ-ի դպրոցը կոչվում է Ս-ի անվ.։

ՀՀ Պետ. մրց. (1983), ԽՍՀՄ Կարմիր աստղի (1944), Ժողովուրդների բարեկամության (1986) շքանշաններ։

Գրկ. *Ղազարոս Սարյան. նամակներ ռազմաճակատից, կազմ. և խմբ.՝ Ա. Սարյան, Ե., 2005: Ղազարոս Սարյանը և նրա ժամանակը, կազմ. և խմբ.՝ Ա. Սարյան, Ե., 2013: Берко М., Лазарь Сарьян, Е., 1994; Ղազարոս Սարյան. Կենսագրություն, Ե., 1999:*

Ղազարոս Սարյան

ՍԱՔՍՀՈՌՆ (Saxhorn, ստեղծողի՝ բելգիացի վարպետ Ա. Սաքսի ազգանունից և գերմ.՝ Horn – եղջյուր), պնդձեռ փող. մունդշտուկավոր գործիքների ընտանիք։ Բաղկացած են լայն մենզուրայով կոնաձև փողից, ոչ մեծ փողաբերանից և ուսաձև մունդշտուկից։ Մեխանիզմը կափույրային է։ Ունեն տարբեր ռեգիստրների մի շարք տեսակներ՝ սոպրանինոյից մինչև սուբկոնտրաբաս։ Առավել տարածված են ալտը և տենորը։ Սոպրանոն և սոպրանինոն ձևով հիշեցնում են կոռնետ-ա-պիստոնը։ Ս- բասը և Ս-կոնտրաբասն ունեն լայն կոնաձև փող, ձևով նման են հելիկոնին և տուբային։ Հնչյունակարգը խրոմատիկ է՝ մոտ 2 ½ օկտավայով։ Տարբեր ձևափոխումներով օգտագործում են փող. նվագախմբերում։

Սաքսհոռն

ՍԱՔՍՈՖՈՆ (saxophone, ստեղծողի՝ բելգիացի վարպետ Ա. Սաքսի ազգանունից և հուն.՝ φωνή – ինչյուն), լեզվակավոր մետաղե փող. գործիք։ Ստեղծվել է 1840–1845-ին, արտոնագրվել է 1846-ին։ Ունի կոնաձև փող, ընդլայնված և դեպի վեր թեքված փողաբերան, կտցաձև մունդշտուկ՝ 1 պիպիչով (ինչպես կլառնետը), 18–21-ձայնանոց։ Ապլիկատուրան ազգակից է հոբոյին և ֆլեյտային։ Ս-ների ընտանիքը բաղկացած է 7 հիմնական տեսակներից՝ սոպրանինո, սոպրանո (երկուսն էլ՝ ուղիղ փողով), ալտ, տենոր, բարիտոն, բաս, կոնտրաբաս (բոլորը՝ S-աձև փողով)։ Օգտագործում են ջազում, նաև փող., օպեր., սիմֆ. նվագախմբերում, կամեր. անսամբլներում։ Որպես մենակատար՝ առավել տարածված է ալտ Ս.։ Առանձնանում է թավ, հյութեղ, ինքնատիպ տեմբրով և ավելի մոտ է փայտե փող. գործիքներին։ Հայտնի են Կ. Դեբյուսիի ռապսոդիան, Ա. Գլազունովի, Է. Հովհաննիսյանի կոնցերտները՝ Ս-ի համար։

Սաքսոֆոն

Լուսյա Սաֆարյան



Սուսաննա Սաֆարյանը կլույթի պահին

ՍԱՖԱՐՅԱՆ Գրիգոր Ռուբենի (ծ. 20.05.1952, ք. Ախալցխա), երգիչ-մանկավարժ: Երևանի պատվավոր մանկավարժ (2017): Ավարտել է Ախալցխայի երաժշտ. դպրոցը (1968), ԵՊՄԻ (1973):

1971–75-ին՝ Հայկ. (անսամբլի կազմում մասնակցել է Կարթագենի միջազգ. մրցույթին), 1975–94-ին՝ Ե. Սահառունու անվ. (մասնակցել է միջազգ. մրցույթների՝ 1990, 1993, 1994, Ֆրանսիա, Բելգիա) երգի-պարի, 1992–2007-ին՝ «Սայաթ-Նովա» աշուղ. անսամբլներում, 2005-ից համագործակցում է Հայաստանի ժող. նվագարանների պետ. նվագախմբի հետ, 2017-ից՝ ժող. երաժշտության ազգ. կենտրոնի աշխատակից, 1992-ին Երևանի Պ. Յավորովի անվ. դպրոցում (տնօրեն՝ 1982–2017) հիմնադրել է «Էդգար Հովհաննիսյան» երգչախումբը: Երկացանկում՝ «Կիլիկիա», «Զախորդ օրեր», «Մաճկալ ես» ևն: Թողարկել է ձայնասկավառակներ:

ՍԱՖԱՐՅԱՆ (Սարգսյան) Լուսյա Արիսի [27.03.1903, ք. Ռեշտ (Պարսկաստան)–24.12.1993, Երևան], կոմպոզիտոր: Ավարտել է Թիֆլիսի 1-ին գիմնազիան (1921), Ռիթմի և պլաստիկայի ինստ-ը (1925), միաժամանակ սովորել է կոնսերվատորիայի դաշնամուրի բաժնում (1924–25, Ն. Ծատուրովայի դասարան): 1928-ին տեղափոխվել է Երևան, ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1941, Ս. Բարխուդարյանի և Վ. Տալյանի դասարաններ): 1942–48-ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում:

Գրել է «Պարային սյուիտ», «Սոնատ», «Էտյուդ», «Երեք պատկեր», դաշնամուր. երկեր, մանկ. երգեր և խմբերգեր (շուրջ 70): Տարածված են «Օդաչու», «Մեղու», «Տոնածառ», «Ճուտիկ» երգերը, «Մայիսի 1-ը» երաժշտ. պատկերը, որոնք աչքի են ընկնում մեղեդայնությամբ, ձևի հստակությամբ և թեմատիկայով: Լույս են տեսել «Երեք մանկական երգ» (1940), «Երկու մանկական երգ» (1951), «Մանկական երգեր» (1972), «20 մանկական երգ» (1977) երգերի ժող-ների:

ՍԱՖԱՐՅԱՆ Սուսաննա Ամբիկի (ծ. 05.07.1955, Վեդի), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2008): Սովորել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում (Վ. Հովհաննիսյանի դասարան), ավարտել է ԵՊԿ (1992, Ա. Ոսկանյանի դասարան): 1976-ից՝ Հայաստանի ժող. գործիքների, 1990-ից՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների, 1995-ից՝ «Սայաթ-Նովա» աշուղ. անսամբլների մեներգչուհի:

Հայտնի են Ս-ի «Պանդխտության երգեր», «Հույզի մեղեդի», «Հավերժող կրակ», «Հայկական օրորներ», «Մայրս» և այլ համերգաշարեր: Երգացանկում ընդգրկել է նաև իր հեղինակած երգերից: Գրառել, մշակել ու ձայնագրել է մի շարք երգեր: Համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Իրաքում, Կիպրոսում, Սիրիայում և այլուր:

ՀԼԿԵՄ (1988), «Սայաթ-Նովա» հանրապետ. մրցույթի (1-ին մրց.) դափնեկիր:

ՍԱՖԱՐՅԱՆՑ Սարիա Սարգսի (ծ. 13.12.1955, Լենինգրադ), ջութակահարուհի: ՌԴ վաստ. արտիստ (2006): Կոնստանտին Հ. *Օրբելյանի* կինը: Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի նվագախմբ. բաժինը (1980): 1978–87-ին հանդես է եկել Լենինգրադի ֆիլհարմոնիկ նվագախմբում: «Լենինգրադի մենակատարներ», «Սանկտպետերբուրգյան եռյակ» (1990) անսամբլների հիմնադիրներից է: 1990–95-ին, որպես մենակատար և կոնցերտմայստեր, համագործակցել է «International d'Italia» նվագախմբի հետ: Համերգ. մեծ ծրագրով շրջագայել է բազմաթիվ երկրներում. երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Վ. Ա. Մոցարտի, Գ. Ֆ. Հենդելի, Պ. Ի. Չայկովսկու, Ա. Կ. Գլազունովի ստեղծագործություններից:

Սարիա Սաֆարյանցը կլույթի պահին

1990–2004-ին՝ «Յարսկոյե Սելոյի աշուն» փառատոնի տնօրեն, 1997-ից՝ «Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգ. երաժշտ. փառատոնի գեղ. ղեկ. և փառատոնի հիմնադրամի նախագահ:

«Յարսկոյե Սելոյի» (1999), «Պետրոպոլ» (2003), «Օլիմպիա» ազգ. մրցույթների դափնեկիր, «Կայսերական մեդալ» (2013), «Եկատերինա Մեծի» շքանշան (2013, 2014):

ՍԳՈ ԵՐԳԵՐ, հանգուցյալին ուղղված ողբի երգեր. կոչվում են նաև լացի (լալիքի) ու կոծի երգեր, մահերգեր, բանահյուս. ծիսերգ. բանաստեղծություններ: Սովորաբար կառուցված են քնար. վիպ. երկտող տներից: Ողբասացները Ս. ե. նախապես կամ հանպատրաստից հարմարեցրել են հանգուցյալի անհատականությանը, վերարտադրել նրա կյանքի դրվագները, մահվան պատճառները ևն, գովերգել են նրան դիմելու եղանակով, ավանդ. կայուն բանաձևերով, երգային կայուն կրկնակներով և մեղեդիներով, պատկերավոր համեմատություններով:

Հնագույն Ս. ե. ստեղծվել են հայրենի չափով: Ողբասացները հիմնականում եղել են կանայք. գլխավորին անվանել են «մայր ողբոց» կամ «եղերամայր», նրան ձայնակցողներին՝ «ձայնարկուներ» կամ «բանահիւս կանայք լալկանք» (Գրիգոր Նարեկացի), «լալկան կանայք»: Նրանց հրավիրել են մեռելատուն, որոնք վարձատրությամբ կատարել են Ս. ե.: Քրիստ. եկեղեցին արգելել է Ս. ե., սակայն նրանք որոշ մեղմացումներով հասել են մեր օրերը: Տես նաև *Ողբ*:

Գրկ. *Աբեղյան Մ., Երկեր, հ. 1, Ե., 1966:*

ՍԵԴՄԱՔ (օրիորդ. ազգանունը՝ Բոյախչիևա) Մարիաննա Գրիգորի [12(24).06.1899, Թիֆլիս–24.01.1958, Երևան], երգչուհի (մեցցո սոպրանո): Շարա ***Տալյանի*** կինը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1950): ԵՕԲԹ և ԵԵԿԹ հիմնադիրներից: Սովորել է Թիֆլիսի կոնսերվատորիայում (Բ. Բ. Կորսովի դասարան): Առաջին անգամ ելույթ է ունեցել 1919-ին Բաթումում՝ որպես օպերետի դերասանուհի: 1924-ից մասնակցել է Լենինականի օպերա-օպերետ. խմբի ներկայացումներին, «Հայ աշուղներ» անսամբլի ելույթներին: 1933-ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Նանի (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Մարթա (Ա. Այվազյանի «Թափառնիկոս»), Սոնա (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Շուշան (Կ. Զաքարյանի «Մարջան»), Շպպանիկ (Լ. Խոջա-Էյնաթյանի «Նամուս»), Բարթոլե (Վ. Դոլիձեի «Քեթո և Կոտե»), Կարմեն (Ժ. Բիզեի «Կարմեն»), Կոմսուհի (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա»):

ՍԵԴՐԱԿՅԱՆ Լուիզա Պետրոսի (ծ. 16.06.1938, Երևան), քանոնահար: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի քանոնի (1960, դասատուներ՝ Խ. Ավետիսյան, Ա. Աթաբեկյան), ՀՊՄԻ մշակույթի ֆակ-ի գեղագիտության (1979) բաժինները: 1960–62-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի քանոնահարուհի: Խ. Ավետիսյանի հիմնադրած քանոնահարների անսամբլի կազմում մասնակցել է Հանրապետ. 1-ին փառատոնին (ոսկե մեդալ, 1957): 1963–75-ին դասավանդել է Երևանի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցում (քանոնի բաժնի հիմնադիր, քանոնահարների անսամբլի ղեկ.), 1968–2008-ին՝ Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում: 1968-ին Ալմա Աթայում հիմնադրել է քանոնահարների անսամբլ (Համամիութ. փառատոնի Գլխ. մրց.):

ՀԽՍՀ ժող. գործիքների հանրապետ. մրցույթի 1-ին մրց. (1966), Երիտասարդության և ուսանողության համաշխ. 6-րդ փառատոնի դափնեկիր և ոսկե մեդալ (1957, Մոսկվա):

Մարիաննա Սեդմար

ՍԵԴՐԱԿՅԱՆ Մերի Ռոբերտի (ծ. 19.11.1958, Սան Ֆրանցիսկո), երգչուհի, դերասանուհի, երգուսույց: Երգեցողություն սովորել է Սթենֆորդի համալսարանի երաժշտության բաժնում, ապա կատարելագործվել Բոստոնի կոնսերվատորիայում, մասնավոր դասեր է առել մանկավարժներ Ֆ. Կյորտեյնից և Ջ. Հելլերից: Ապրում և ստեղծագործում է Նյու Յորքում (վերջին 20 տարիների ամերիկ. մյուզիքլի աստղ): Բրոդվեյի և Մանհեթենի թատրոններում խաղացել է 20-ից ավելի ներկայացումներում («Ողջույն, սիրունիկ», «Օպերայի ուրվականը», «Դորիան Գրեյ», «Էվիտա», «Իոլանտա» ևն): Առավել ճանաչվել է «Նյույորքյան սիրավեպ» և «Հելլո, Դոլլի» մյուզիքլներում (1997): Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ-ում, Կանադայում, Լատ. Ամերիկայի, Եվրոպայի երկրներում, Ավստրալիայում, Ճապոնիայում: Երգեցողություն է դասավանդել Ս. Բեթսոնի դերասան. ստուդիայում. սաներից են՝ դերասաններ Ն. Քիդմանը, Ժ. Բինոշը, Դ. Մուրը և ուր.: Երգեցողության դասընթացներ է բացել Հռոմում և Միլանում:

Լուիզա Սեդրակյան

ՍԵԴՐԱԿՅԱՆ Սեդրակ Արշավիրի (23.11.1938, Հալեպ – 27.11.2013, Բեյրութ), կոմպոզիտոր, դաշնակահար: Ավարտել է Հալեպի երաժշտ. դպրոցը (1960), Լիբանանի (1962), Դամասկոսի (1964) ազգ. կոնսերվատորիաները, վերապատրաստվել ԵՊԿ-ում (1971–72): 1966–70-ին դասավանդել է Սիրիայի, 1974–99-ին՝ Լիբանանի

Մերի Սեդրակյանը ելույթի պահին

Արմենուհի Սեյրանյանը Օլիմպիայի դերում (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»)

Կամո Սեյրանյանը ելույթի պահին

քոլեջներում, ՄՏԿԿ Աստվածաբան. ճեմարանում, Բեյրութի Բ. Կանաչյանի անվ. երաժշտ. վարժարանում (1987–99-ին՝նաև տնօրեն, պրոֆ.): Երկացանկում՝ Կոմիտասի, Ա. Խաչատրյանի, Ս. Ս. Պրոկոֆևի, Մ. Ռավելի. Ռ. Շումանի և ուր. գործերից: Համերգներով հանդես է եկել Բեյրութում, Աթենքում, Մոսկվայում և այլուր:

Ս–ի սիմֆ. երկերը (400–ից ավելի) առանձնանում են քնարականությամբ, մեղեդայնությամբ: Հեղինակ է օրատորիաների, սիմֆոնիաների (այդ թվում՝ լար. նվագախմբի համար), ռապսոդիաների, սոնատների («Ֆանտաստիկ սոնատ»), ֆուգաների՝ կիթառի, երգչախմբի, երգեհոնի («Ուրախ լեր») համար, ջազ. ու դաս. երկերի մշակումների և այլ գործերի: Թողարկել է 13 լազեր. սկավառակներ:

ՄՏԿԿ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1994):

ՍԵՅԱՊ (պարսկ. – որսորդ, Մադաթյանց Պետրոս Տեր–Հովսեփի, 30.03.1810, Շամախի–27.11.1876, Կ. Պոլիս), աշուղ: Եղել է ռուս. բանակի սպա, տիրապետել է ռուս–ին, թուրք–ին, վրաց–ին, պարսկ–ին: Հորինել է բացառապես հայ. երգեր, որոնք արլ. աշուղների խաղերից հիմնովին տարբերվում են հայկ. հանգերով և բովանդակությամբ: Երգերում խարազանել է անարդարությունը, անհավասարությունը («Վասն աշխարհի»), ամբարտավանությունն ու տգիտությունը, անհավատարմությունը, սուտն ու կեղծիքը («Վաղնջուց ժամանակաց նկարագիր»): Ս–ի սիրո, վայելքի և խրախճանքի երգերից առավել տարածված են «Էդ կարմիր վարդ թուշիդ», «Շահնազ հայերեն», «Ով սիրուն թառ...», «Մատռվակ, գինի տուր» ևն: Աշուղ. արվում առանձնանում է «Արի Նազելի» մուհամմազը:

Ս–ի առաջին ժող–ը՝ «Զանազան երգք պ. Պետրոսի Տ. Հովսեփյան Մադաթյանց Շամախեցվոյ Սեյադ մականուանելոյ» վերնագրով, լույս է տեսել Մոսկվայում 1857–ին (ընդգրկում է 71 երգ): Տպագրվել են նաև «Երկասիրութիւն «Սէյեադի» կապիտան Պետրոս–բեգի Մադաթեանց » (մաս Ա., Բ., Գ., 1884) գրքերը: Ս–ի երգերից զետեղված են նաև «Քնար հայկական» (1868), «Հայ աշուղներ» (1903) և այլ երգարաններում, «Սոխակ Հայաստան»–ի հատորներում: Նա կատարելագործել է աշուղ. տաղաչափության մի շարք ձևեր, ստեղծել նորերը:

ՍԵՅՐԱՆՅԱՆ Արմենուհի Արմենի (ծ. 22.04.1967, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2015): Ավարտել է Երևանի № 17 երաժշտ. դպրոցը, Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը, ԵՊԿ և ասպիրանտուրան: 1996–ից՝ ԵՕԲԹ մեներգչուհի. դերերգերից են՝ Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Վիոլետտա (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ») ևն: 1998–ից դասավանդում է ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 2016–ից): 1990–ից՝ «Շարական» անսամբլի մեներգչուհի, որի հետ ելույթներ է ունեցել Վիեննայում, Լյուբլյանայում: Համագործակցել է հայկ. մի շարք կամեր. և սիմֆ. նվագախմբերի, նաև ֆրանս. «Գզերեմիա» անսամբլի և արտերկրի անվանի մենակատարների, նաև կոմպոզիտորներ Ա. Սաթյանի, Տ. Մանսուրյանի, Վ. Մանուկյանի, դիրիժոր Օ. Դուրյանի, երգեհոնահար Վ. Ստամբոլցյանի և ուր. հետ:

Ձայնագրվել է Իրանում նկարահանված «Սուրբ կույս Մարիամ» ֆիլմում: Թողարկել է հոգևոր երգերի 3 լազեր. սկավառակներ (մեկը՝ ամերիկ. «Celestial Harmonies» ընկերությունը 1996–ին): Մենահամերգներով շրջագայել է Իտալիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Սլովենիայում, Սիրիայում, Հնդկաստանում, Կորեայում, Վրաստանում, Արցախում և այլուր:

Մեներգիչների միջազգ. մրցույթ–փառատոնի Գլխ. մրց., ոսկե գավաթ և մեդալ (Հս. Կորեա):

ՍԵՅՐԱՆՅԱՆ Կամո Համլետի (ծ. 05.02.1979, ք. Չարենցավան), դուդուկահար: ՀՀ վաստ. արտիստ (2012): Սովորել է Չարենցավանի երաժշտ. դպրոցի դուդուկի և շվիի բաժիններում (դասատու՝ Գ. Խաչատրյան), Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (դասատու՝ Մ. Կարապետյան), ավարտել ԵՊԿ դուդուկի բաժինը (2002) և ասպիրանտուրան (2006, երկուսն էլ ղեկ.՝ Գ. Դաբաղյան): 2003–ից դասավանդում է ԵՊԿ–ում: Մենահամերգներով հանդես է եկել Իրանում, Դուբայում, Թուրքիայում, Ավստրիայում, Ավստրալիայում, Ֆրանսիայում, Ուկրաինայում, ՌԴ–ում, ԱՄՆ–ում և այլուր: Առաջին ձայնասկավառակը՝ «Սարեր կաղաչեմ» (1999): Մասնակցել է Շանհայի «EXPO–2010»–ի հայկ. տաղավարում կազմակերպված համերգին, «Armenian Music Awards» (ԱՄՆ) մրցանակաբաշխությանը:

Հայաստանի ազգ. ռադիոյի դուդուկահարների փառատոնի 1-ին (1997), «Թոփ տասնյակ»(2008)և «Տաշիր» (2011) մրցանակաբաշխության մրց-ներ:

Մարիաննա Տիգրանյան

ՍԵՅՐԱՆՅԱՆ (Սեյրանով) Սողոմոն Գաբրիելի [03(16).09.1907, գ. Նորշեն (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում)–06.05.1974, Երևան], թառահար, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): Նվագել սովորել է ինքնակրթությամբ: 1926-ից՝ Ադրբեջանի ժող. գործիքների անսամբլի մենակատար և կոնցերտմայստեր, Բաքվի ֆիլհարմոնիայի և ռադիոկոմիտեի մենակատար, ղեկավարել է նաև պրոֆեսիոնալ և ինքնագործ անսամբլներ, նվագակցել հայտնի երգիչների, դասավանդել կոնսերվատորիայում: 1944-ից (ընդհատումով՝ 1956–59-ը) ապրել է Երևանում: 1944–48-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների անսամբլի ղեկ., 1948–56 և 1959–74-ին՝ ռադիոկոմիտեի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Արլ. երաժշտության գիտակ-տեսաբան էր, աչքի է ընկել վիրտուոզ կատարումներով, տիրապետել է թառի առավելագույն հնարավորություններին: Երկացանկում՝ գործիք. պիեսներ, մուղամներ, նաև ժող., քաղաք. և կոմպոզիտոր. երգերի գործիք. տարբերակներ: Մասնակցել է ՀԽՍՀ մշակույթի օրերին Մոսկվայում (1956), Մոլդովայում (1969), Տաջիկստանում (1972): Ս-ի կատարումները ինչում են «Սայաթ-Նովա» (1960, հեռուստաֆիլմ), «Կամոյի վերջին սխրանքը» (1973), «Նռան գույնը» (1969, երկուսն էլ՝ գեղ.) հայկ. ֆիլմերում:

ԼՂՀ Նորշենի երաժշտ. դպրոցը կոչվել է Ս-ի անվամբ:

Ժող. գործիքների համամիութ. մրցույթի (1939, Մոսկվա) դափնեկիր:

Գրկ. *Դարբինյան Հ., Հայ թառահարներ, Ե., 2004, էջ 20-21: Կիրակոսյան Ա., Հայ ժողովրդական նվագարանային կատարողական արվեստ, Ե., 2011, էջ 81:*

ՍԵՎՈՒՄՅԱՆ (Սևումյան-Արզումանյան) Լյուսի (օրիորդ. անուն-ազգանունը՝ Լուսաբեր Խանդանյան, 1892, Ալեքսանդրապոլ–13.09.1969, Միլան), դերասանուհի, երգչուհի: Ռեժիսոր՝ Օվի Սևումյանի կինը: 1911-ից՝ Թիֆլիսի Հայոց դրամատիկ. ընկերության թատերախմբի դերասանուհի (Սեդա՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Դեզդեմոնա, Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ», ևն): 1922-ին մեկնել է Միլան՝ ձայնը մշակելու: 1924–27-ին հանդես է եկել Եգիպտոսում. գրող, բանասեր Թեոդիկը նրան անվանել է «բուրգերի երկրի սոխակ»: Օպեր. դերերգերով և համերգներով ելույթներ է ունեցել նաև Կիպրոսում, Լիբանանում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում: 1930–40-ին՝ Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնի մեներգչուհի. ճանաչվել է Մանոնի (Ժ. Մասնեի «Մանոն»), Էլզայի (Ռ. Վագների «Լոենգրին»), Միմիի, Չիո-Չիո սանի (Ջ. Պուչչինիի «Բոհեմ», «Չիո-Չիո սան»), Դեզդեմոնայի (Ջ. Վերդիի «Օթելլո»), Մարգարիտի (Շ. Գունոյի «Ֆաուստ») և այլ դերերգերով:

Սողոմոն Սեյրանյան

ՍԵՐԳՈՅԱՆ Ժիրայր Նշանի (14.07.1922, Կ. Պոլիս–08.02.2004. Լա-Կադիեր դ'Աղյուար՝ Ֆրանսիա), երգիչ (բաս): 1948-ին՝ Նիսի, 1949-ին՝ Լիոնի, 1950-ին՝ Ստրասբուրի օպեր. թատրոնների երգիչ, 1952-ից՝ Փարիզի «Գրանդ օպերայի» մեներգիչ: Դերերգերից են՝ Սպարաֆուչիլե (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո»), Մեֆիստոֆել (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Պիմեն (Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով»), Լեպորելլո (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան»), Բրոն (Ֆ. Հալևիի «Հրեուհին»), Ֆիլիպ, Ամոնասրո (Ջ. Վերդիի «Դոն Կառլոս», «Աիդա»), Դոն Բազիլիո (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Օրովեզո (Վ. Բելլինիի «Նորմա»), Նիլականտա (Լ. Դելիբի «Լակմե») ևն: Երկար տարիներ երգել է նաև «Օպերա կոմիկ»-ում: Հյուրախաղերով շրջագայել է բազմաթիվ երկրներում: 1974 և 1976-ին Ֆիլիպի, Դոն Բազիլիոյի, Մեֆիստոֆելի դերերգերի փայլուն մեկնաբանությամբ հանդես է եկել ԵՕԲԹ-ում, Լենինգրադի, Տաշքենդի, Սվերդլովսկի օպեր. թատրոններում: Համերգ. երկացանկում՝ դաս. գործեր և հայկ. երգեր:

Ժիրայր Սերգոյան

Ս-ի կատարումներն առանձնացել են կերպարների ինքնատիպ մեկնաբանություններով, որտեղ գերիշխել են հոգեբան. խորությունը, ճշմարտացիությունը, հոգեկան դինամիկայի բացահայտումը:

Գրկ. *Բրուտեան Յ., Հայ երաժշտական մշակոյթի աշխարապիւռ ընձիւղները, Ե., 1996:*

ՍԵՐԵՆԱԴ (ֆրանս.՝ sérénade, իտալ.՝ serenata, < sera – երեկո, գիշերային երգ), ցայգերգ, գիշերերգ, 1. նախապես՝ որևէ անձի պատվին, նրա լուսամուտի տակ երեկոյան (կամ գիշերը) բացօթյա կատարվող վոկալ կամ գործիք. ստեղծա-

Ժ. Սերգոյանը Արկելի դերում (Կ. Դերյուսիի «Պելեաս և Մելիզանդա»)

գործություն: 2. Հիմնականում՝ սիրային երգեր, որոնք առավելապես տարածված էին Իտալիայում և Իսպանիայում, կատարվել են լյուտնյայի, կիթառի կամ մանդոլինի նվագակցությամբ: 3. Սյուիտի կամ դիվերտիսմենտի տիպի բազմամաս գործիք. ստեղծագործություն՝ անսամբլի կամ փոքր նվագախմբի համար: 4. Հովվերգ. կանտատ: 5. XIX դ–ում վոկալ և գործիք. Ս–ները դարձել են կոնցերտ. ժանրի ստեղծագործություններ (Ֆ. Շուբերտի Ս.՝ ձայնի համար, Լ. վան Բեթհովենի Ս–ները՝ գործիք. անսամբլների, Պ. Ի. Չայկովսկու Ս.՝ լար. նվագախմբի համար, ևն): Ս–ներ գրել են նաև Ղ. Սարյանը («Սերենադ շեփորի և դաշնամուրի համար»):

«ՍԵՐԵՆԱԴ», կամեր. նվագախումբ: Ստեղծվել է 1991–ին Երևանում (հիմնադիր–գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Էդուարդ *Թոփչյան*): Մասնակցել է միջազգ. փառատոների Իտալիայում, Հունաստանում, Շվեյցարիայում, Ավստրիայում: «Ս.»–ի հետ համագործակցել են անվանի երաժիշտներ Ս. Իսեոլիսը, Տ. Վարգան, Ք. Քաշքաշյանը, Ա. Բ. Լյուբիմովը և ուր.: Նվագախմբի համար գործեր են գրել Դ. Հալաջյանը՝ «Missa di Lumine» («Լույսի մեսսա»), Լ. Չաուշյանը՝ «Սերենադ», Վ. Շառաֆյանը՝ ջութակի կոնցերտ, ևն: Ունի ձայնասկավառակներ՝ Ա. Շյոնբերգի, Ա. Վիվալդիի, Ֆ. Շուբերտի, Գ. Մալերի, Է. Միրզոյանի ստեղծագործությունների կատարումներով: Կամեր. նվագախմբերի «Վալենտինո Բուչչիի» անվ. միջազգ. մրցույթի 1–ին մրց. (1995, Հռոմ): Գործել է մինև 2011–ը:

ՍԵՐԻԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ստեղծվում է 12 խրոմատիկ հնչյունների շարքի՝ սերիայի տարբերակման վրա: Դոդեկաֆոնիայից սերող հնչյունները չկրկնելու սկզբունքը Ս. ե–յան մեջ տարածվել է բոլոր արտահայտչամիջոցների վրա՝ ռիթմ, տեմբր, դինամիկա, տեմպ ևն՝ հանգեցնելով համապարփակ՝ տեղային սերիականության, որի գաղափարը Ա. Վեբեռնինն է:

Ս. ե. տարածվել է 1940–ական թթ–ի 2–րդ կեսից, տեսականորեն և ստեղծագործաբար զարգացրել են Օ. Մեսսիանը, Պ. Բուլեզը, Կ. Շտոկհաուզենը, Ա. Բաբաջանյանը, Ա. Զոհրաբյանը, Մ. Իսրայելյանը և ուր.:

Հատված Առնո Բաբաջանյանի «Վեց պատկեր» շարքից («Տոկկատին»)

Գրկ. *Պավլիշին Ս., Արևմտյան ժամանակակից երաժշտության զարգացման ուղիների մասին, Ե., 1981: Когоутек Ц., Техника композиции в музыке XX века, [пер. с чеш.], М., 1976.*

Աննա Արևշատյան

Դորա Սերվիարյան–Կյոնը կլույթի պահին

ՍԵՐՎԻԱՐՅԱՆ–ԿՅՈՒՆ Դորա Ալբերի (ծ. 10.08.1936, Բեյրութ), դաշնակահարուհի: 13 տարեկանում արժանացել է Բեյրութի ամերիկ. համալսարանի երաժշտության բաժնի մրց–ին: Աշակերտել է Ա. Կուգելին: 16 տարեկանում արժանացել է կրթաթոշակի և կատարելագործվել է ԱՄՆ–ում (ղեկ.՝ Խ. Էզանիս): 1962–ից ապրում է ԱՄՆ–ում:

Համերգներով հանդես է եկել աշխարհի լավագույն բեմահարթակներում. երկացանկում՝ Ֆ. Շոպենի բոլոր երկերը, Լ. վան Բեթհովենի գրեթե բոլոր սոնատները, նաև Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Լիստի, Յ. Բրամսի, Կ. Դեբյուսիի, Մ. Ռավելի, Ա. Խաչատրյանի, Ս. Բարխուդարյանի և ուր. երկերից: 1992–ին Երևանում կատարել է Ա. Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտը, որն առանձնացել է գեղագիտ. իմաստի և հնչյունի մարմնավորման բացառիկ խորությամբ ու հմայքով:

Ա. Խաչատրյանի երաժշտությամբ վավերագր. ֆիլմ է նկարահանել կոմպոզիտորի մասին, որը Հոլիվուդի 2003–ի փառատոնում արժանացել է լավագույն վավերագր. ֆիլմի մրց–ի:

ՍԵՔՎԵՆՑԻԱ (ուշ լատ.՝ sequentia, < լատ. sequare – հետևել), 1. միջնադար. կաթոլիկ. մոնոդիկ երգասացություն. կատարվել է Պատարագի ընթացքում՝ ալելուից

հետո (մինչև Ավետարանի ընթերցումը)՝ որպես նրա ընդարձակում, նախապես՝ առանց գրական տեքստի (վոկալիզ), IX դ–ից՝ տեքստով: Տրիդենտի տիեզեր. ժողովի (1545–63) վավերացրած 5 Ս–ից մեկը «ահեղ դատաստանի» գաղափարն արտացոլող Dies irae–ն է՝ խստաշունչ–ողբերգ. բնույթի արտահայտիչ եղանակով (ժող. ծագում ունի), որը XIX–XXI դդ–ի կոմպոզիտորները (Հ. Բեռլիոզ, Պ. Ի. Չայկովսկի, Ս. Վ. Ռախմանինով, նաև Ա. Խաչատրյանը՝ 2–րդ սիմֆոնիայում, Է. Միրզոյանը՝ «Ինտրոդուկցիա և անընդհատ շարժում»–ում) օգտագործել են որպես ողբերգ. խորհրդանիշ:

2. Երաժշտության տեսության մեջ՝ հարաշար, որևէ մեղեդիական մոտիվի կամ հարմոնիկ դարձվածքի ճշգրիտ, նաև որևէ ձևով փոփոխվող կրկնությունը տարբեր աստիճանների վրա: Երաժշտ. մտքի զարգացման գործուն միջոց է. վերընթաց Ս. սովորաբար առաջացնում է լարվածության աճ, վարընթացը՝ պարպում: Հայկ. ժող. երգերում լայնորեն կիրառվում է գլխավորապես հանգուցալուծման համար:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՍԻՄՈՆՅԱՆ Կոնստանտին Սիմոնի (ծ. 30.08.1945, Բուխարեստ), երգիչ (բարիտոն): Մանիկ *Գրիգորյանի* ամուսինը: ՀՀ վաստ. արտիստ (2003): Հայրենադարձել է 1948–ին: 1949–ին ընտանիքով աքսորվել են ՌԴ Ալթայի երկրամաս, վերադարձել 1958–ին: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1976), ԵՊԿ (1976, Թ. Շահնազարյանի դասարան): 1966–ից՝ Սբ Էջմիածնի Մայր տաճարի, 1968–85–ին՝ ԵՕՐԹ, 1973–85–ին՝ Հայաստանի երգչախմբ. ընկերության երգչախմբերի երգիչ, 1985–2011–ին՝ ԵՕՐԹ մեներգիչ, 2002–06–ին՝ Էկվադորի ազգ. կոնսերվատորիայի մեներգեցողության ամբիոնի վարիչ: 1990–ից դասավանդում է ԵՊԿ–ում: Երգել է Գ. Գասպարյանի, Է. Ուզունյանի, Գ. Գալաչյանի, Գ. Գրիգորյանի, Հ. Պապյանի, Բ. Թումանյանի, Ա. Մխիթարյանի, Հ. Հացագործյանի, Ե. Օբրազցովայի, Մ. Բիեշուի, Մ. Գուլեգինայի և ուր. հետ:

Դերերգերից են՝ Արշակ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Թաթուլ (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»), Մոսի (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Տոմսկի, Օնեգին (Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», «Եվգենի Օնեգին»), Ժերմոն (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Էսկամիլիո (Ժ. Բիզեի «Կարմեն») ևն: Ս–ի սաներից Գ. Հակոբյանը, Լ. Ավետիսյանը, Մ. Դեհնյանը, Դ. Բաբայանցը և ուր. արժանացել են միջազգ. ճանաչման: Հյուրախաղերով շրջագայել է Մոսկվայում, Բուխարեստում, Բեյրութում, Պեկինում, Իսպանիայի և ԱՄՆ–ի մի շարք քաղաքներում:

ՀԼԿԵՄ (1972), ԽՍՀՄ ՄՆ Հատուկ (1989) և այլ մրց–ներ: ՀԹԳՄ Գ. Գասպարյանի անվ. պատվավոր (1997), ՄՆ ոսկե (2011) մեդալներ:

Կոնսպանսպին Սիմոնյան

ՍԻՄՈՆՅԱՆ Նադեժդա (Շողակաթ) Սեմյոնի (Սիմոնի, 26.02.1922, Դոնի Ռոստով–07.06.1997, Ս. Պետերբուրգ), կոմպոզիտոր: Սովորել է Դոնի Ռոստովի երաժշտ. դպրոցում, ապա՝ Լենինգրադի կոնսերվատորիային կից երաժշտ. ուսումնարանում, ավարտել է նույն կոնսերվատորիայի դաշնամուրի (1950, Պ. Սերեբրյակովի դասարան), կոմպոզիցիայի (1953, Վ. Վ. Պուշկովի դասարան) բաժինները և ասպիրանտուրան (1953):

Գրել է բալետներ՝ «Մարգարիտ» (բեմ.՝ Լենինգրադի ՕԲԹ, 1965), «Ծերունի Խոտաբիչը» (բալետ–ֆեերիա, բեմ.՝ Լենինգրադի Փոքր թատրոնում, 1970), «Արքայազնը և աղքատը» (1978, հեռուստաբալետ), նաև «Վարիացիաներ արևելյան թեմաներով»՝ դաշնամուրի, «Սևանա լիճը» (1950) կանտատը՝ մենակատար երգիչների, ստեղծագործություններ՝ երգչախմբի և նվագախմբի համար, ռոմանսներ (Ա. Իսահակյանի խոսքերով), թատրոնի և կինոյի («Գիշերային հյուրը», «Փողոցը լի է անակնկալներով», «Մի ունեցիր հարյուր ռուբլի», «Հորիզոն», «Երջանկության օրը», «Ձյունե թագուհին», «Շնիկով տիկինը», վերջին երկուսը՝ Կաննի կփ–ի 1–ին մրց., «Ծերունի Խոտաբիչը»՝ Սորենտոյի կփ–ի 1–ին մրց., ևն) երաժշտություն:

Կ. Սիմոնյանը Ժերմոնի դերում (Ջ. Վերդիի «Տրավիատա»)

ՍԻՄՈՆՅԱՆ Նարինե Ժորայի (ծ. 18.12.1961, Լենինական), երգեհոնահար: Ավարտել է Լենինականի երաժշտ. ուսումնարանը (1981), ԵՊԿ դաշնամուրի (1986), երգեհոնի (1989) բաժինները, կատարելագործվել է Փարիզի Ռուել–Մալմեզոնի ազգ. կոնսերվատորիայում (1991–94, երգեհոն՝ Մ. Ք. Ալանի, կլավեսին՝ Յ. Դրեյֆուսի դասարաններ): 1986–91–ին՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: Համերգներով շրջագայել է մի շարք երկրներում, նվագել Ցյուրիխի Սբ Մագթաղինե, Բեռլինի Մեծ, Փարիզի Աստվածամոր տաճարներում, Գյումրիի Սբ Աստվածածին («Յոթ վերք»,

Նադեժդա Սիմոնյան

Նարինե Սիմոնյանը ելույթի պահին

Ֆելիքս Սիմոնյանը ելույթի պահին

Սագդալինա Սիմոնյան-Գալուպովա

1997, 2001) և այլ եկեղեցիներում: Ձայնագրել է 5 լազեր. ձայնասկավառակ:

«Մենդելսոն-Լիստ-Սորե» երգեհոն. միջազգ. մրցույթի Մեծ (1994, Շվեյցարիա), «Իլ դը Ֆրանս» ազգ. մրցույթի 1-ին (1995, Փարիզ) մրց-ներ, «Վիրտուոզ կատարող» դիպլոմ (1996):

ՍԻՄՈՆՅԱՆ Ֆելիքս Լյուդվիգի (ծ. 27.04.1942, Երևան), թավջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (1984): Աշակերտել է թավջութակահար Մ. Լ. Ռոստրոպովիչին: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1960), ԵՊԿ: 1976–89-ին՝ Կոմիտասի անվ. քառյակի թավջութակահար: Մենահամերգներով և քառյակի կազմում շրջագայել է արտերկրում, հանդես է եկել հանրահայտ համերգասրահներում (Փարիզի «Gaveau Halls», Վիեննայի պետ. թատրոն, Զալցբուրգի «Մոցարտեում», Ստոկհոլմի թագավոր., Վենետիկի Դոժերի պալատ, Բուենոս Այրեսի «Կոլոն» ևն). երկացանկում՝ Ֆ. Շուբերտի, Լ. վան Բեթհովենի, նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից: Ս-ի համար գրել են 60-ից ավելի երկեր:

Հեղինակ է երաժշտ. գործերի, որոնք կատարվել են Հայաստանում, Ռուսաստանում, Մոլդովայում, Վրաստանում, Հունաստանում, Շվեդիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Ֆրանսիայում և այլուր: ՀՀ Պետ. մրց.:

ՍԻՄՈՆՅԱՆ-ԳԱԼՈՒՊՈՎԱ Մագդալինա Ալեքսեյի [14.08.1925, Դոնի Ռոստով (ՌԴ)–21.04.2002, Երևան], երգչուհի (դրամատիկ. սոպրանո): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1964): Պրոֆ. (1984): Ավարտել է Դոնի Ռոստովի Ա. Վ. Լունաչարսկու անվ. երաժշտ. ուսումնարանի (1949, դասատու՝ Գորբաննևսկայա), ԵՊԿ (1955) մեներգեցողության բաժինները, կատարելագործվել Թամար *Շահնազարյանի*, Նադեժդա *Կարդյանի* ղեկավարությամբ: 1959-ին փորձաշրջան է անցել ԵՕԲԹ-ում: 1960-ից դասավանդել է ԵՊԿ-ում: Համերգներով շրջագայել է Դոնի Ռոստովում, Վոլգոգրադում, Աստրախանում, Թբիլիսիում, Ալմա Աթայում և այլուր:

Հեղինակ է «Վոկալ մեթոդիկայի հիմունքները» (1964, գիրք I) ձեռնարկի, եռահատոր դասագրքի (2-րդը և 3-րդը՝ ձեռագիր):

ՍԻՄՈՆՈՎ Ռուբեն Նիկոլայի [20.03 (01.04).1899, Մոսկվա–05.12.1968, Մոսկվա], դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1946): Նախն. կրթությունն ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա ավարտել է Ա. Ռոստովցևի մասնավոր գիմնազիան (1917), ընդունվել է ՄՊՀ (1918), փոխադրվել Ֆ. Շալյապինի դրամատիկ. ստուդիա (1919): 1920-ից աշխատել է ՄԳԹ 3-րդ ստուդիայում (ղեկ.՝ Ե. Վախթանգով), ապա՝ Ե. Վախթանգովի անվ. թատրոնում (դերասան, 1924-ից՝ ռեժ., 1939-ից՝ գլխ. ռեժ.): Դերերից են՝ Տրուֆալդինո, Պանտալոնե (Կ. Գոցցիի «Արքայադուստր Տուրանդոտ»), Բենեդիկտ (Վ. Շեքսպիրի «Ոչնչից մեծ աղմուկ») ևն, բեմադրել է Ա. Ե. Կոռնեյչուկի «Ռազմաճակատ», «Ֆոմա Գորդեև» (ըստ Մ. Գորկու), Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ», Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն» և այլ գործեր: 1923-ից՝ Մոսկվայի 1-ին, 2-րդ, 3-րդ հայկ. ստուդիաների ղեկ. (Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», «Քանդած

Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայի բեմադրությունից (1956, ռեժ.՝ Ռ. Սիմոնով, ԵՕԲԹ)

օջախ» ևն): Օպեր. բեմադրություններից են՝ Զ. Փալիաշվիլու «Աբեսալոմ և Էթերի» (1939), Պ. Ի. Չայկովսկու «Չերևիչկի» (1941), Ժ. Բիզեի «Կարմենն» (1945), Շ. Գունոյի «Ֆաուստ» (1961, բոլորը՝ Մոսկվայի Մեծ թատրոն), «Պիկովայա դամա» (1956, ԵՕԲԹ) օպերաները, որոնք առանձնանում էին արտահայտչամիջոցների ինքնատիպությամբ, տոն. տրամադրությամբ ու երփներանգությամբ:

ԽՍՀՄ Պետ. (1943, 1947, 1950), Լենինյան (1967) մրց-ներ:

Երկ. *С Вахтанговым, М., 1959; Творческое наследие. Статьи и воспоминания о Р. Н. Симонове, М., 1981.*

Գրկ. *Ա ճ ե մ յ ա ն Վ., Ռուբեն Սիմոնովը մոտիկից-հեռվից, ՍՄ, 1969, № 2: Брутян Л., Радость творчества, Е., 1979.*

ՍԻՄՖՈՆԻԱ (< հուն. συμφωνία – ներդաշնակություն, համահնչյունություն), սիմֆ. երաժշտության կարևորագույն ժանրերից, սիմֆ. նվագախմբի համար նախատեսված, սոնատ. ցիկլի ձևի (տես *Սո-*

նապային ձև) ընդգրկուն գաղափարներով և բազմազան բովանդակության երաժշտ. ստեղծագործություն: Երբեմն Ս. ներմուծվում են նաև երգչախումբ ու մեներգիչներ: Կան Ս-ներ նաև այլ կազմերի (լար., փող., ժող. գործիքների նվագախմբեր, երգչախումբ ևն) համար: Սովորաբար բաղկացած է 4 հակադիր և միմյանց լրացնող մասերից. 1-ինը սոնատ. ձևի է, 2-րդը՝ դանդաղ քնար., 3-րդը՝ մենուետ կամ (XIX դ-ից) սկերցո (սովորաբար՝ եռմաս), 4-րդը (ֆինալ)՝ արագ, հաճախ՝ ռոնդոյաձև:

Հին Հունաստանում «Ս.» նշանակել է որոշակի ինտերվալներ, երաժշտ. գործիքներ, ավելի ուշ Արմ. Եվրոպայում՝ կոնսոնանս, ընդհանրապես՝ երաժշտություն, երգեցողություն: Միայն XVI դ-ում այն կիրառել են առանձին՝ սկզբնապես վոկալ-գործիք. ստեղծագործությունների համար: XVII դ-ից հաճախ Ս. են անվանել սյուիտի, կանտատի և, հատկապես, օպերայի գործիք. նախերգանքը: Այդ ժանրի ձևավորման ընթացքում նշանակալի փուլ էր Մանհայմի դպրոցի (Յ. Ստամից, Ֆ. Ռիխտեր, Յ. Ք. Կաննաբիխ), նաև իտալացի (Ջ. Սամարտինի), ֆրանսիացի (Ֆ. Գոսսեկ), ավստրիացի (Գ. Վագենզայլ), գերմանացի (Յ. Ք. Բախ) կոմպոզիտորների գործունեությունը:

Ս-ի դաս. տեսակը ստեղծել են Վիեննայի դաս. դպրոցի կոմպոզիտորները: Յ. Հայդնի ստեղծագործության մեջ (հեղինակ է 104 Ս-ի) այն անցել է զարգացման երկարատև ուղի՝ սյուիտին և դիվերտիսմենտին մոտ Ս-ներից մինչև «լոնդոնյան» 12 մեծ Ս-ները (1791–95), որոնք առանձնանում են ցիկլի և նրա որոշ մասերի ուրույն կառուցվածքով (կարևորվել է թեմատիկ զարգացումը): Վ. Ա. Մոցարտը (մոտ 50 Ս.) Ս. է ներմուծել դրամատիզմ, քնարականություն, վեհություն: Լ. վան Բեթհովենն իր Ս-ներում (9) հերոսականության հատկանիշներով հարստացրել է Ս-ի բովանդակությունը, ընդլայնել մասշտաբները, դրամատուրգիան դարձրել առավել դինամիկ: Հատկապես առանձնանում են նրա 3-րդ՝ «Հերոսական», 5-րդ, 6-րդ՝ «Հովվերգական», 7-րդ և 9-րդ Ս-ները (վերջինի ֆինալում ներգրավված են մեներգիչներ և երգչախումբ): Ռոմանտիկ կոմպոզիտորները պահպանել են ցիկլի ավանդ. սխեման՝ լրացնելով նոր բովանդակությամբ: Նրանց մեջ կարևոր տեղ ունի քնար. Ս.՝ Ֆ. Շուբերտի (8) սի մինոր, Ֆ. Մենդելսոնի Ս-ները (5): Ծրագր. Ս-ներ են ստեղծել Հ. Բեռլիոզը (5)՝ «Ֆանտաստիկ սիմֆոնիա» ևն, Ֆ. Լիստը՝ «Faուստ», «Դանտե»: Ս-ներ են գրել նաև Ռ. Շումանը (4), Յ. Բրամսը (4), Ա. Բրուքները (9), Յ. Ֆրանկը (1), Կ. Սեն-Սանսը (3), Ժ. Բիզեն

Հատված Էդվարդ Միրզոյանի լարայինների և լիպավրների սիմֆոնիայի պարտիտուրից

(1): XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին Ս-ի խոշորագույն վարպետներից էր Գ. Մահլերը (9): Ուշագրավ են նոր ազգ. դպրոցների ներկայացուցիչների՝ Ա. Դվորժակի (Չեխիա), Կ. Շիմանովսկու (Լեհաստան), Է. Էլգարի և Ռ. Վոան-Ուիլյամսի (Անգլիա), Յ. Սիբելիուսի (Ֆինլանդիա) Ս-ները: Նորարար. հատկանիշներով են առանձնանում ֆրանսիացի կոմպոզիտորներ Ա. Հոնեգերի, Դ. Միյոյի Ս-ները: Բարձրարժեք են ռուս կոմպոզիտորներ Ա. Պ. Բորո-

դինի (3, 2-րդը՝ «Դյուցազնական», 3-րդը՝ անավարտ), Պ. Ի. Չայկովսկու (6, 6-րդը՝ «Պաթետիկական», ծրագր.՝ «Մանֆրեդ»), Ա. Ն. Սկրյաբինի (3), Ս. Վ. Ռախմանինովի (3), Ն. Յ. Մյասկովսկու (27), Ս. Ս. Պրոկոֆևի (7), Դ. Դ. Շոստակովիչի (15), Ա. Խաչատրյանի (3) Ս-ները:

Հայկ. առաջին Ս. գրել է Հ. Եղիազարովը (1933): Սակայն հայկ. Ս-ի՝ որպես ազգ. ինքնատիպ երևույթի հետագա զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեն Ա. Խաչատրյանի Ս-ները (1-ինը՝ 1934, 2-րդը՝ 1943, 3-րդը՝ Սիմֆոնիա-պոեմ՝ 1947): Բազմաբնույթ Ս-ների (3) հեղինակ է Հ. Ստեփանյանը (1944, 1945, 1953): Հետպատերազմ. շրջանում գրված հայկ. բազմաթիվ Ս-ներ արմատներով սերտորեն կապված են հայ ժողովրդի պատմության, կյանքի և մշակույթի հետ. Լ. Խոջա-Էյնաթյանի քնարադրամատիկ. (1954), Գ. Եղիազարյանի քնարաէպիկ. ծրագր. «Հրազդան» (1960), Ա. Հարությունյանի դրամատիկ. (1957), Զ. Տեր-Թադևոսյանի (1957, 1962, 1965), Է. Միրզոյանի (1962)՝ լար. նվագախմբի և լիտավրների և Է. Հովհաննիսյանի էպիկադրամատիկ. (1957, 1961) Ս-ները: 1960–70-ական թթ-ին՝ հայկ. Ս-ի ծաղկուն շրջանում են գրել իրենց Ս-ները Ա. Ադեմյանը, Կ. Օրբելյանը, Է. Խաղագործյանը, Գ. Հախինյանը, Է. Արիստակեսյանը, Լ. Աստվածատրյանը, Է. Հարությունյանը և ուր.: Նորարարությամբ աչքի են ընկնում Ա. Տերտերյանի և Դ. Սարյանի Ս-ները: Երգչախմբի համար Ս-ներ են ստեղծել Ս. Բալասանյանը, Ա. Հարությունյանը և ուր.:

Հայկ. Ս-ներն առանձնանում են նոր թեմաների ընդգրկումներով, նորարարություններով, դաս. ազգ. ավանդույթների և արդի գրելաձևի համադրությամբ, սկզբունքների և ձևակառուցման բազմազանությամբ:

Հատված Ա. Հարությունյանի սիմֆոնիայից

Գրկ. *Կոպտև Ս., Տերյան Մ., Սիմֆոնիկ երաժշտություն և գործիքային կոնցերտ, տես Սովետական Հայաստանի երաժշտությունը, Ե., 1973: Беккер П., Симфония от Бетховена до Малера, [пер. с нем.], Л., 1926; Попова Т., Симфония. Пояснение, М.–Л., 1951; 55 советских симфоний, Л., 1961; Конен В., Театр и симфония, 2 изд., М., 1975; Рухкян М., Армянская симфония. Исследовательские очерки, Е., 1980; Вгенет М., Histoire de la symphonie à orchestre..., P., 1882.*

Ըստ Միքայել Տերյանի

ՍԻՄՖՈՆԻԵՏ (իտալ.՝ sinfonietta – փոքր սիմֆոնիա), սիմֆոնիայի տեսակ՝ ցիկլի մասերի ավելի փոքր մասշտաբներով, կատարողների փոքրաթիվ կազմով (փոքր սիմֆ., կամեր. նվագախմբեր կամ անսամբլ) և համեմատաբար պարզ երաժշտ. բովանդակությամբ: Առաջացել է XIX դ-ի 2-րդ կեսին, առավել տարածվել XX դ-ում: Ս-ներ են գրել Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը, Մ. Ռեգերը, Պ. Հինդեմիթը, Բ. Բրիտտենը, Ն. Յ. Մյասկովսկին, Ս. Ս. Պրոկոֆևը, Կ. Խաչատրյանը, Ա. Հարությունյանը, Ա. Ադեմյանը, Է. Արիստակեսյանը և ուր.:

Ըստ Միքայել Տերյանի

ՍԻՄՖՈՆԻԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտություն սիմֆ. նվագախմբի համար: Կարևորագույն ժանրերից են սիմֆոնիան, նախերգանքը, կոնցերտը, սյուիտը, սիմֆ. պոեմը, ֆանտազիան ևն: Ս. ե. են նաև օպերաների նվագախմբ. հատվածները (սիմֆ. պատկերներ, ինտերմեցցո), երգչախումբ, մեներգիչներ ներառող այնպիսի ստեղծագործություններ, որտեղ գերիշխում է նվագախումբը: Սիմֆ. նվագախմբի տեմբրային և դինամիկ հատկանիշների հարստությունն ու բազմազանությունը, դիապազոնի ընդարձակությունը հնարավորություն են ընձեռում խոշոր ձևերում

(սիմֆոնիա, կոնցերտ, նախերգանք, սիմֆ. պոեմ, ֆանտազիա, սյուիտ ևն) նշանակալի, գաղափարազգացմունք. բովանդակության, փոքր ձևերում (պար, քայլերգ, ընդհանրապես զվարճանքի, կենցաղ., կիրառ. երաժշտություն) համեմատաբար սահմանափակ, գեղ-ստեղծագործ. մտահղացումներ արտահայտելու համար:

Ս. ե-յան առաջացման նախադրյալները XVI դ-ի և XVII դ-ի սկզբին գործիք. անսամբլների (անպայման կլավեսինով և երգեհոնով) ժանրերն էին՝ սյուիտ, կոնչերտո գրոսսո, դիվերտիսմենտ, գործիք. կոնցերտ (տարբեր կազմի անսամբլների նվագակցությամբ) ևն:

Ս. ե. առաջացել է XVIII դ-ի կեսերին, երբ նվագախմբում կլավեսինը և երգեհոնն աստիճանաբար փոխարինվել են լար. գործիքներով, ներմուծվել են փող. գործիքներ, և ձևավորվել է նորմատիվ սիմֆ. նվագախումբը: Դրան մեծապես նպաստել է Մանհայմի (Յ. Ստամից, Ֆ. Ռիխտեր, Յ. Ք. Կաննաբիխ և ուր.) և, հատկապես, Վիեննայի դաս. (Յ. Հայդն, Վ. Ա. Մոցարտ, Լ. վան Բեթհովենը) դպրոցները: Այդ շրջանում են երևան եկել Ս. ե-յան կարևորագույն ժանրերը՝ սիմֆոնիան, մենակատար գործիք. կոնցերտը (նվագախմբի հետ), նախերգանքը՝ որպես ինքնուրույն ժանր, ևն:

XVIII դ-ի վերջին և XIX դ-ի սկզբին Ս. ե-յան բարձրակետը Լ. վան Բեթհովենի ստեղծագործությունն էր (սիմֆոնիաներ, կոնցերտներ, նախերգանքներ), որտեղ ամբողջ. և բազմակողմանիորեն արտացոլվել են դարաշրջանի առաջադեմ գաղափարները:

XIX դ-ի 1-ին քառորդից երաժշտության մեջ նոր՝ ռոմանտիկ. ուղղության կազմավորմամբ պայմանավորված՝ ստեղծվել են ծրագր. սիմֆոնիաներ, սիմֆ. պոեմներ, պատկերներ, ֆանտազիաներ և այլ գործեր (Հ. Բեռլիոզ, Ֆ. Մենդելսոն, Ֆ. Լիստ, Ս. Ֆրանկ և ուր. (տես ***Ծրագրային երաժշտություն***):

Նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև ազգ. երաժշտ. դպրոցների ձևավորումը, որտեղ նկատելի տեղ է գրավել նաև Ս. ե. (Բ. Սմետանա, Ա. Դվորժակ, Յ. Սվենսեն, Է. Գրիգ, Յ. Սիբելիուս և ուր.): Ս. ե-յան մեջ առավել մեծ է Գ. Մահլերի ստեղծագործության նշանակությունը: Ս. ե-յան բազմազան ժանրերի և ձևերի զարգացմանը մեծապես նպաստել են XIX դ-ի և XX դ-ի սկզբի ռուս կոմպոզիտորները (Մ. Ի. Գլինկա, Ա. Գ. Ռուբինշտեյն, Մ. Ա. Բալակիրև, Ա. Պ. Բորոդին, Պ. Ի. Չայկովսկի, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով, ավելի ուշ՝ Ս. Ի. Տանեև, Ա. Կ. Գլազունով, Ս. Վ. Ռախմանինով, Ա. Ն. Սկրյաբին, Վ. Ս. Կալինինիկով, Ի. Ֆ. Ստրավինսկի և ուր.):

Ս. ե-յան զարգացման նոր փուլ էր խորհրդ. շրջանի բազմազգ կոմպոզիտորների ստեղծագործությունը (Ն. Յ. Մյասկովսկի, Ս. Ս. Պրոկոֆև, Դ. Դ. Շոստակովիչ, Ա. Խաչատրյան և ուր.):

Հայկ. առաջին սիմֆ. ստեղծագործությունների հեղինակը Տիգրան ***Չուխաճյանն*** է, հիմնադիրը՝ Ալեքսանդր ***Սպենդիարյանը*** («Երեք արմավենի», 1905, «Վրիմի էսքիզներ», 1903 և 1912, սիմֆ. 2 սյուիտ և «Դավաճանություն» սիմֆ. պատկերը «Ալմաստ» օպերայից, 1923–24, «Երևանյան էտյուդներ», 1925, ևն), միաժամանակ սիմֆ. երկեր է ստեղծել նաև Ա. Տեր-Ղևոնդյանը («Ախթամար» սիմֆ. պոեմ, 1923, ևն): Հայկ. Ս. ե-յան զարգացման մեջ նշանակալի ներդրում են Ա. Խաչատրյանի սիմֆոնիաները (1934, 1943, 1947), կոնցերտները (դաշնամուրի՝ 1936, ջութակի՝ 1940, թավջութակի՝ 1946), կոնցերտ-ռապսոդիաները (դաշնամուրի, ջութակի, թավջութակի), սիմֆ. պոեմը (երգչախմբով, 1938), բալետ. սյուիտները («Երջանկություն», 1939, «Դիմակահանդես», 1941, «Գայանե», 1942, «Սպարտակ», 1954) և այլ ստեղծագործություններ, որոնք ազգ. Ս. ե. դուրս են բերել համաշխ. ասպարեզ, կարևոր դեր խաղացել Այսրկովկասի, Միջին Ասիայի հանրապետությունների

Հատված Ալեքսանդր Սպենդիարյանի «Երևանյան էտյուդներ»-ից

ազգ. դպրոցների Ս. ե-յան զարգացման և Միջին Արևելքի ժողովուրդների պրոֆեսիոնալ կոմպոզիտոր. ստեղծագործության (մասնավորապես՝ սիմֆ.) ձևավորման ու զարգացման մեջ: Հ. Ստեփանյանը, Գ. Եղիազարյանը, Լ. Խոջա-Էյնաթյանը, Ս. Բալասանյանն անդրադարձել են Ս. ե-յան տարբեր ժանրերի և ձևերի: Հայ ազգ. Ս. ե-յան հետագա զարգացումն իրենց ստեղծագործություններով խթանել են Ա. Հարությունյանը, Ղ. Սարյանը, Է. Միրզոյանը, Ա. Բաբաջանյանը, Զ. Տեր-Թադևոսյանը, Է. Հովհաննիսյանը և ուր., հաջորդ սերնդի կոմպոզիտորներից՝ Ա. Աճեմյանը, Ա. Տերտերյանը, Գ. Հախինյանը, Է. Խաղագործյանը, Լ. Աստվածատրյանը, Է. Արիստակեսյանը, Տ. Մանսուրյանը, Ս. Շաքարյանը և ուր.:

Գրկ. *Կոպտև Ս., Տերյան Մ., Սիմֆոնիկ երաժշտություն և գործիքային կոնցերտ, տես Սովետական Հայաստանի երաժշտությունը (հոդվածների ժող.), Ե., 1973: Հարությունյան Մ., Բարսամյան Ա., Հայ երաժշտության պատմություն (հնագույն շրջանից մինչև մեր օրերը), Ե., 1996: Рухкян М., Армянская симфония. Исследовательские очерки, Е., 1980; Նույնի, Авет Тертерян. Творчество и жизнь, Е., 2002.*

Ըստ Սերգեյ Կոպտևի

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, լար. աղեղնավոր, փող. և հարված. գործիքներ նվագող երաժիշտների մեծ խումբ, որը միավորված է երաժշտ. ստեղծագործություններ համատեղ կատարելու համար: «Ս. ն.» են անվանում նաև խմբի գործիքների հավաքածուն: Տես նաև *Նվագախումբ*:

Սիմֆոնիկ նվագախումբ

ՍԻՄՖՈՆԻԿ ՊԱՏԿԵՐ, սիմֆ. երաժշտության ժանր, սովորաբար՝ 1-մասանի ծրագր. ստեղծագործություն. բնորոշ են ազատ, մեծ մասամբ վարիացիոն ձևը, դանդաղ պատմողականությունը, գեղանկարչ. մանրամասների առատությունը: Ս. պ-ի կերպարները հաճախ կապված են բնապատկերների ժանր-կենցաղ., հեքիաթ-երևակայական և մարտանկարչ. տեսարանների հետ: Ս. պ-ներ են գրել Ա.

Հատված Ավետիս Բերբերյանի «Հերոսապատում-Grosso» սիմֆոնիկ պատկերից

Գ. Ռուբինշտեյնը, Մ. Պ. Մուսորգսկին, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը, Ա. Սպենդիարյանը («Երեք արմավենի», 1905, ըստ Մ. Յ. Լերմոնտովի), Ա. Սաթյանը («Զանգեզուրի լեռներում», 1952), Է. Միրզոյանը (1973, «Քառս», 1977, «Հեղկոմի նախագահը» ֆիլմերի երաժշտությունից) և ուր.: Ս. Վ. Ռախմանինովը ստեղծել է դաշնամուր. պատկերի ժանրը («Էտյուդներ-պատկերներ»): Ս. պ-ները, որպես ինքնուրույն գործիք. հատվածներ, հանդիպում են օպերաներում և բալետներում:

ՍԻՄՖՈՆԻԿ ՖԱՆՏԱԶԻԱ, 1-մասանի երաժշտ. ստեղծագործություն սիմֆ. նվագախմբի համար: Ունի որոշակի սյուժե և հաճախ ներառում է ֆանտաստիկ տարրեր: Ս. ֆ-ին բնորոշ է երաժշտ. ավանդ. ձևերի ազատ օգտագործումը (ազգակից է սիմֆ. պոեմին): Հաճախ ***ֆանտազիա*** կամ Ս. ֆ. են անվանում նաև սիմֆ. նվագախմբի համար գրված 1-մասանի ստեղծագործությունը, որը հիմնված է առավելապես ժող. մեղեդիների լայն և ազատ մշակման վրա: Ս. ֆ-ի լավագույն նմուշներից են Պ. Ի. Չայկովսկու «Փոթո-

րիկը», «Ֆրանչեսկա դա Ռիմինին», Ս. Վ. Ռախմանինովի «Քարափը» և այլ գործեր:

ՍԻՆԱՆՅԱՆՆԵՐ, երաժիշտների ընտանիք Կ. Պոլսում: Հավանաբար սերում է ճարտարապետ Սինանի տոհմից: Ավագ ներկայացուցիչը՝ Գրիգոր Ս. (1836, Կ. Պոլիս–24.12.1914, Կ. Պոլիս), ջութակահար, հաս. գործիչ: Ինքնակրթությամբ սովորել է ջութակ նվագել: Ազգ. ժող. լավագույն հատկանիշները համադրել է եվրոպ. երաժշտարվ–ի զարգացման սկզբունքներին, որի շնորհիվ ճանաչվել է ժամանակի առաջավոր պրոֆեսիոնալ երաժիշտ: Նա, թերևս, ջութակի հայկ. կատարող. արվ–ում պրոֆեսիոնալիզմի սկզբնավորողն է: Կ. Պոլսում հիմնադրել է եվրոպ. տիպի առաջին երաժշտ. դպրոցը, որտեղ կես դար կրթվել են դաշնակահարներ, լար. ու փող. գործիքներնվագողներ, ստացել նաև երաժշտ. գիտելիքներ: Միաժամանակ հայկ. առաջին սիմֆ. նվագախմբի (տես *«Սինանյան նվագախումբ»*) հիմնադիրն է: Գրիգոր Ս–ի զավակները՝ Վերոնիկան և Թագուհին, դաշնակահարներ էին, Անտոնը՝ ջութակահար, Հովսեփը՝ թավջութակահար, Հարությունը (1872, Կ. Պոլիս–1939)՝ ջութակահար, դաշնակահար, երգեհոնահար, կոմպոզիտոր, դիրիժոր, հաս. գործիչ: Շարունակել է հոր սկզբնավորած գործը, եղել «Սինանյան նվագախմբի» ղեկ- դիրիժորը: Որպես ջութակահար՝ հանդես է եկել Թուրքիայում, Եգիպտոսում, Անգլիայում, Ֆրանսիայում: Աշակերտել է Տիգրան *Չուխաճյանին*, հետևել նրա ստեղծագործ. սկզբունքներին:

Հարություն Ս–ի երաժշտության վրա որոշակիորեն ազդել է ծանոթությունը *Կամիլ Սեն-Սանսի* հետ, որին նվիրել է «Ազգային երգեր» և «Մեսրոպյան քայլերգ» գործերը: Գրել է շուրջ 70 պիես՝ ջութակի, դաշնամուրի, մոնդոլինի համար, վալսեր, մազուրկաներ, քայլերգեր («Միխիթար քայլերգ», «Միրաքյան քայլերգ»), ֆանտազիաներ («Մեծ ֆանտազիա ջութակի համար» ևն), ներդաշնակել հայկ. երգեր: 1926–ից՝ Կ. Պոլսի երաժշտ. խորհրդի պատվավոր անդամ, «Հայկական արվեստի տան» հիմնադիրներից: Դասավանդել է Կ. Պոլսի վարժարաններում, հեղինակ է մանկավարժ–մեթոդ. հոդվածների, որոնք մեծապես նպաստել են սերունդների երաժշտ. դաստիարակությանը:

Գևորգ Անտոնի Ս. (1906, Կ. Պոլիս–01.01.1987, Նյու–Յորք), ջութակահար, կոմպոզիտոր: Աշակերտել է հորը և հորեղբորը՝ Հարություն Ս–ին: Ավարտել է Փարիզի կոնսերվատորիան (1928, 1–ին մրց.), դասեր է առել նաև Է. Նադոյից և Մ. Վեոյից: Որպես ջութակահար՝ 1928–38–ին համերգներով շրջագայել է Ֆրանսիայում, Բելգիայում, Ավստրիայում, Մերձ. Արևելքում, ապա հաստատվել է ԱՄՆ–ում: Երկացանկում՝ Մ. Ռավելի, Ն. Պագանինիի, Ա. Վիվալդիի, Ֆ. Մենդելսոնի, Ա. Վ. Սկրյաբինի, Ս. Ս. Պրոկոֆևի, նաև հայ կոմպոզիտորների գործերից: Նրա կատարող. արվ–ն առանձնացել է երաժշտ. երկի մեկնաբանության ինքնատիպությամբ, տեխ. կատարելությամբ, ընդգծված երաժշտականությամբ:

Գրիգոր Սինանյան

Գրել է պիեսներ (էտյուդներ, վարիացիաներ, ֆանտազիաներ ևն)՝ ջութակի, ալտի, կոնտրաբասի համար, որոնք հիմնված են ազգ. երաժշտարվ–ին բնորոշ արտահայտչամիջոցների վրա: Նվագել է Ս–ի ընտանիքի անդամներից կազմված լար. քառյակում:

Վերոնիկա, Անտոն, Հարություն և Հովսեփ Սինանյաններ

Գրկ. *Տիրացուեան Ն., Յարութիւն Սինանեան, Բազմավէպ, 1904, № 2: Ներսէս Խ., Գեւորգ Սինանեան, Վնտ., 1923: Բրուսյան Յ., Սփյուռքի հայ երաժիշտները, Ե., 1968: Նույնի, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996: Յիցկյան Ա., Հայկական աղեղնային արվեստը, Ե., 1977: Մուրադյան Մ., Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դ. և XX դարասկիզբ), Ե., 1989:*

«ՍԻՆԱՆՅԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ», Հայկական նվագախումբ, հիմնադրել է Գրիգոր *Սինանյանը* 1861–ին Կ. Պոլսում: Նախապես կազմը անսամբլային

«Սինանյան նվագախումբը»

էր՝ 2 ջութակ, կոնտրաբաս, ֆլեյտա, կլառնետ, 2 տրոմբոն: Ավելի ուշ նվագախումբն ընդգրկել է 15, իսկ 1888–ից՝ 40 երաժիշտ (դիրիժոր՝ Հարություն *Սինանյան*):

«Ս. ն.» հայկ. առաջին խոշոր սիմֆ. նվագախումբն է, թեև պոլսահայ իրակա-

Ալեքսանդր Սիրանոսյան

նության մեջ դրան նախորդել է «Արամյան թատրոնի» նվագախումբը (ղեկ.՝ Կարապետ ***Փափազյան***): Նվագացանկում՝ հատվածներ իտալ. օպերաներից և ֆրանս. օպերետներից, հայկ., հուն., թուրք. երգերի ու պարեղանակների նվագախմբ. փոխադրումներ, նաև Լ. վան Բեթհովենի, Վ. Ա. Մոցարտի, Տ. Չուխաճյանի, Հ. Սինանյանի սիմֆ. ստեղծագործություններից: Գործել է մինչև 1896-ը:

Գրկ. *Տիրացուեան Ն., Յարութիւն Սինանեան, Բազմավէպ, 1904, № 2: Թեոդիկ, Ամենուն տարեցոյց, Վնտ., 1922: Մտեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Ե., 1962: Յիցիկյան Ա., Հայկական աղեղնային արվեստը, Ե., 1977:*

ՍԻՆԿՈՊԱ (հուն.՝ συγκοπή – կտրատում, կրճատում), տևողությունների հաջորդականություն տակտում, երբ ռիթմ. շեշտը նրա ուժեղ (կամ համեմատաբար ուժեղ) մասից փոխադրված է թույլ մաս, որի հետևանքով ռիթմ. և մետր. շեշտերը չեն համընկնում: Ս. ռիթմ. դինամիկ միջոց է. հանդիպում է ինչպես հարևան 2 տակտերի միջև, այնպես էլ 1 տակտում: Առավել բնորոշ է, երբ տակտի թույլ մասում սկսված հնչյունը շարունակվում է հաջորդ՝ նրանից ուժեղ (կամ համեմատաբար ուժեղ) մասում (այսինքն՝ որպես մեկ տևողություն՝ թույլ մասի հնչյունը միացված է հաջորդ ուժեղ մասի նույն բարձրության նոտայի հետ), որի հետևանքով թույլ մասում առաջացած ռիթմ. շեշտը գերազանցում է ուժեղ մասի մետր. շեշտին (տեղի է ունենում մետր. շեշտի կարծեցյալ զեղչում):

Գոյություն ունեն նաև Ս-ի տեսակներ. 1. տակտի թույլ մասում սկսված հնչյունի տևողությունն ավելի մեծ է, քան նախորդի ուժեղ մասում սկսված նոտան (կամ ***պառզան***):

2. Տակտի թույլ մասում սկսված նոտայի վրա դրվում են շեշտեր:

Մեղեդու մոտիվ. կառուցվածքի և տակտ. բաժանման հակադրումը նպաստում է մեղեդիական գծի միաձուլմանը: Ս. լայնորեն կիրառվում է ժամանակակից և ջազ. երաժշտության մեջ:

Սիրանույշ

ՍԻՐԱՆՈՍՅԱՆ Ալեքսանդր Սարգսի (ծ. 24.06.1939, Լիոն), դաշնակահար, դիրիժոր: Ավարտել է Լիոնի (Ֆրանսիա) և Ժնևի (Շվեյցարիա) ազգ. կոնսերվատորիաները: 1968–2007-ին՝ Ռոմանի (Ֆրանսիա) երաժշտության ազգ. կոնսերվատորիայի ղեկ. (դուդուկի դասարանի հիմնադիր), 1973–2007-ին՝ Դրոմի նվագախմբի և գործիք. անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Շվեյցարիայում սովորելու տարիներին հայթայթել է կոմպոզիտոր Ստեփան ***Էլմասի*** մոռացված արխիվը, շարադրել նրա կենսագրությունը: Ռոմանի մշակութ. կյանքի զարգացմանը իրենց այցելություններով նպաստել են Ա. Բաբաջանյանը, Է. Միրզոյանը, ջութակահար Թ. Վարգան, թավջութակահար Ա. Նավարան և ուր.: Թավջութակահար Ա. Պուլեի հետ համերգներով շրջագայել է Եվրոպայում և Վենեսուելայում: Հայտնաբերել է և տարածել Պ. Բյուսոյի, Գ. Ժունիհոնի, Ս. Էլմասի, Տ. Մանսուրյանի, Դ. Հալաջյանի, Կ. Միկուլիի, Ա. Մեսումենցի և ուր. ստեղծագործության քիչ հայտնի և անհայտ երկերը, 2005-ին Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ ներկայացրել է Վ. դ'Էնդիի «Իտալական սիմֆոնիա»-ի (1972) համաշխ. պրեմիերան: Կատարող. գործունեությանը զուգահեռ զբաղվում է նաև հետազոտ. աշխատանքներով:

Հեղինակ է մի շարք հոդվածների և ցուցահանդեսի կատալոգների: Թողարկել է Ս. Էլմասի դաշնամուրի 1-ին, 2-րդ և 3-րդ կոնցերտների (Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ, մենակատար՝ Արմեն ***Բաբախանյան***), Ասլամազյան-Կոմիտասի «Հայկական մանրանկարների», Խ. Ռոդրիգոյի «Արանխուես» կոնցերտի (վերջին երկուսը՝ «Սերենադ» նվագախումբ, Հայաստան), Դ. Միյոյի «Բոպե» օպերայի («Արս-Նովա» նվագախումբ, Փարիզ) խտասալիկները:

ՀՀ «Մովսես Խորենացի», ՀՀ ՄՆ «Կոմիտաս» մեդալներ:

Դուստրերը՝ Շուշան Ս. (ծ. 1976), ջութակահարուհի: Շվեյցարիայի «Սենտ Գալլա» նվագախմբի կազմում: 2 անգամ հանդես է եկել Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Աստղիկ Ս. (ծ. 1978), թավջութակահարուհի:

ՍԻՐԱՆՈՒՇ (Գանթարճյան Մերոպե Սահակի, 25.05.1857, այլ տվյալներով՝ 1862, Կ. Պոլիս–10.06.1932, Կահիրե), դերասանուհի, երգչուհի (կոլորատուր. սոպրանո): Սկզբն. կրթությունն ստացել է Կ. Պոլսում. հաճախել է հայկ. դպրոց, 2 տարի սովորել ֆրանս. Սենտ Էսպրի վանքում: Առաջին անգամ բեմ է բարձրացել 1872–73-ի թատերաշրջանում (Կ. Պոլիս)՝

«Հորթանսի դեղձանիկը» կատակերգության մեջ՝ աղախնի դերում (Ամիրա Հակոբ Պալյանը նրա համար գրել է «Թռչնիկ» բանաստեղծությունը, երաժշտությունը՝ Տիգրան *Չուխաճյանը*): Ս. իր զրնգուն և հմայիչ ձայնով ցուցադրել է երգչուհու ակնհայտ ունակություններ: Այդ շրջանում խաղացել է հիմնականում սուբրետ դերեր (աղախին, երիտասարդ աղջիկներ), որոնց աշխուժություն և թարմություն է հաղորդել իր երգերով: Ձայնը մշակել է Տ. Չուխաճյանի և իտալացի կոմպոզիտորների ղեկավարությամբ՝ ի հայտ բերելով բարձրակարգ երգչական տվյալներ: 1875-ից հանդես է եկել Ժ. Օֆֆենբախի «Գեղեցկուհի Հեղինե», Շ. Լեկոքի «Ժիրոֆլե Ժիրոֆլյա» օպերետներում, Տ. Չուխաճյանի «Արիֆի խորամանկությունը», «Լերլերիջի Հոր-հոր աղա» (առավել ճանաչվել է Ֆաթիմեի դերով) կոմիկ. օպերաներում: 1878-ին Ս. Պենկլյանի օպերետ. խմբի հետ հանդես է եկել Ադրիանապոլսում, 1882-ին՝ Հունաստանում, Եգիպտոսում: Դրամատիկ. թատրոնում խաղացել է շուրջ 300 դեր. Մարգարիտ Գոթիե (Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը»), Թերեզա (Լ. Կամոլետտիի «Քույր Թերեզա»), Ֆեդրա (Ժ. Ռասինի «Ֆեդրա»), Զեյնաբ (Ա. Յուժին-Սումբատովի «Դավաճանություն»), Արծվիկ (Է. Ռոստանի «Արծվիկ»), Համլետ (Վ. Շեքսպիրի «Համլետ»), Ռուզան (Սուրացանի «Ռուզան»), Իշխանուհի (Լ. Շանթի «Հին աստվածներ») ևն:

Ս. հայ թատերարվ-ի այն հզոր անհատներից է, որոնցով պայմանավորվել է թատրոնի պատմության մի ողջ դարաշրջան:

Գրկ. *Զարյան Ռ., Միրանույշ (1857–1932), Ե., 1957: Սփեփանյան Գ., Միրանույշ, Ե., 1957: Զապիկյան Ս. (Բոգեմակի), Միրանույշ, Ե., 1961: Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Ե., 2010:*

ՍԿԵՐՑԻՆՈ (իտալ.՝ scherzino), փոքր ***սկերցո***, ինքնուրույն երաժշտ. պիես (հաճախ՝ պիեսների շարք)՝ դաշնամուրի կամ մենակատար գործիքի (ջութակ, թավջութակ ևն) և դաշնամուրի համար: Սոնատներում Ս. հանդես է գալիս որպես ցիկլիկ ստեղծագործության մաս: Առավել ճանաչված են Ռ. Շումանի «Վիեննական կառնավալ»-ից № 3 դաշնամուր. (op. 26), Կ. Միկուլիի դաշնամուր., Ա. Սպենդիարյանի ջութակի, ալտի և թավջութակի (1897) Ս-ները:

Երբեմն «Ս.» են անվանում փոքրիկ պիեսները:

Հատված Ալեքսանդր Սպենդիարյանի սկերցինոյից

ՍԿԵՐՑՈ (իտալ.՝ scherzo – կատակ), 1. XVI–XVII դդ-ում Իտալիայում կատակ., կայտառ բնույթի տեքստով, տարբեր գործիքների համար գրված միաձայն և բազմաձայն վոկալ պիեսների տարածված անվանում (Կ. Մոնտեվերդիի «Scherzi musicali», 1607, Ա. Բրունելլիի «Arie,scherzi, canzonette, madrigali»): XVII դ-ից կապրիչչոյին մոտ գործիք. պիես է: Հաճախ՝ գործիք. սյուիտի, իսկ XVIII դ-ի վերջից սոնատ. սիմֆ. ցիկլի

Հատված Էդուարդ Բաղդասարյանի ջութակի և դաշնամուրի սկերցոյից

(սիմֆոնիայի, սոնատի, կվարտետի, երբեմն՝ կոնցերտի) մասերից է՝ սովորաբար 3-րդը (փոխարինել է նախկին մենուետին):

Արմեն Սմբատյան

Ս-ին բնորոշ են եռամաս չափը, արագ տեմպը, երաժշտ. մտքերի ազատ հաջորդումը: Հաճախ հումորային է, անգամ՝ գրոտեսկային: Գրում են ռեպրիզ. եռամաս ձևով, ավելի հանդարտ միջին մասով՝ տրիոյով: Ս-ի դաս. տեսակը հաստատվել է Լ. վան Բեթհովենի ստեղծագործության մեջ, Ֆ. Շուբերտը, Ֆ. Մենդելսոնը, Ա. Բրուքները, Պ. Ի. Չայկովսկին, Ն. Յ. Մյասկովսկին, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Դ. Շոստակովիչը լայնորեն գործածել են սոնատասիմֆ. ցիկլերում: Ռոմանտիզմի դարաշրջանի երաժշտության մեջ Ս. կրկին դարձել է ինքնուրույն երաժշտ. պիես (Ռ. Շուման, Ֆ. Շոպեն, Յ. Բրամս և ուր.): Նվագախմբի համար Ս-ներ են գրել Ֆ. Մենդելսոնը, Պ. Դյուկան, Մ. Պ. Մուսորգսկին և ուր.: Հայտնի են նաև Ա. Սպենդիարյանի դաշնամուրի (1894), Է. Բաղդասարյանի ջութակի և դաշնամուրի, Գ. Չթչյանի կոնցերտ. և այլ Ս-ներ:



Գագիկ Սմբատյան

ՍՄԲԱՏՅԱՆ Արմեն Բագրատի (ծ. 17.11.1954, Երևան), կոմպոզիտոր, մանկավարժ: Տատյանա ***Հայրապետյանի*** որդին, Սերգեյ ***Սմբատյանի*** հայրը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1987): Պրոֆ. (1994): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1980, Ի. Մելիքսեթյանի դասարան), կոմպոզիցիայի (1981, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1981–2002-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոռեկտոր՝ 1988–95-ին, ռեկտոր՝ 1995–2002-ին, կառավարման խորհրդի նախագահ՝ 2006-ից): Միաժամանակ, 1982–88-ին՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմի երաժշտ. ծրագրերի գլխ. տնօրեն, 1996–98-ին՝ ՀՀ մշակույթի նախարար, 1997-ից՝ Արտասահման. երկրների հետ բարեկամության և մշակութ. կապերի ընկերության նախագահ, 1998-ից՝ «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-տնօրեն, 2002–10-ին՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան ՌԴ-ում, 2010–14-ին՝ ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետ. հիմնադրամի գլխ. տնօրեն, 2014–18-ին՝ ՀՀ նախագահի խորհրդական: Արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտ. կոչում (2003):

Հենրիկ Սմբատյան

Գրել է «Լիլիթ» բալետը (միջազգ. փառատոնի մրց., Մադրիդ), «Մագաղաթ» սիմֆոնիան, սիմֆ. պոեմ, դաշնամուրի կոնցերտ, դաշնամուր. տրիո, երգեր («Հայաստան», «Կախարդական ծաղիկ», «Երազ»), երաժշտություն՝ թատրոնի և կինոյի համար, կամեր., ջազ., սիմֆ. և այլ գործեր:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

ՍՄԲԱՏՅԱՆ Գագիկ Յոլակի (ծ. 18.02.1949, Երևան), ջութակահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2015): Ավարտել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. երաժշտ. դպրոցը (1964, դասատու՝ Գ. Հարությունյան), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1968), ԵՊԿ (1974) և ասպիրանտուրան (1978, երեքն էլ՝ ղեկ.՝ Հ. Սմբատյան): 1974–1976-ին դասավանդել է Ա. Սպենդիարյանի երաժշտ. դպրոցում և Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1976–80-ին՝ Սենեգալի ազգ. կոնսերվատորիայում, 1980-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1994-ից, ամբիոնի վարիչ՝ 1997-ից) և Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում: Համերգներով շրջագայել է Ուկրաինայում, Վրաստանում, Հունաստանում, Սենեգալում, Գամբիայում և այլուր: Ա. Սաթյանի, Ռ. Սարգսյանի, Վ. Բաբայանի, Հ. Մելիքյանի, Ա. Յոլչյանի, Հ. Դելլալյանի և ուր. ջութակի համար գրված բազմաթիվ ստեղծագործությունների առաջին կատարողն է:

Երիտասարդ կատարողների IV այսրկովկաս. մրցույթի 1-ին մրց. (1972, Բաքու), Երիտասարդ ջութակահարների համամիութ. մրցույթի Հատուկ պատվոգիր (1972, Երևան):

ՍՄԲԱՏՅԱՆ Հենրիկ Համազասպի (05.12.1934, Երևան–05.09.2015, Երևան), ջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (1974): Նելլի ***Ավետիսյանի*** ամուսինը, Ռուբեն ***Սմբատյանի*** հայրը: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը, ԵՊԿ (1956, երկուսն էլ՝ Հ. Բոգդանյանի դասարան), ՄՊԿ ասպիրանտուրան (1961, ղեկ.՝ Դ. Յիգանով): 1962-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1982-ից, վոկալ-տես. ֆակ-ի դեկան՝ 1981–94-ին, պրոռեկտոր՝ 1995–2011-ին, ասպիրանտուրայի բաժնի ղեկ.՝ 2011–15-ին), Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում և Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում: Համերգներով հանդես է եկել Հայաստանում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Ֆրանսիայում և այլուր: Ս-ի նախաձեռնությամբ Կապանում և Գավառում բացվել են երաժշտ. ուսումնարաններ:

Հեղինակ է ուս., մեթոդ. ձեռնարկների, նոտ. ժող-ների («Ադաջիո», 1988, «Պատանի ջութակահար», 2008, «Հայ կոմպոզիտորների պիեսների ժողովածու», 2008, ևն), հրատարակել է Ե. Երկանյանի

ջութակի մենանվագ պիեսների շարքը, Է. Բաղդասարյանի «Ստեղծագործություններ ջութակի համար» (2012), «Կոմիտաս-Ասլամազյան» (2012) լար. քառյակի համար մշակումների ժող-ը: Կատարել է նաև մշակումներ, փոխադրումներ ջութակի և դաշնամուրի համար:

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի 3-րդ մրց. (1957, Մոսկվա), Ն. Պագանինիի անվ. միջազգ. մրցույթի (1963, Ջենովա՝ Իտալիա) դիպլոմ:

ՍՄԲԱՏՅԱՆ Ռուբեն Հենրիկի (ծ. 25.01.1980, Երևան), ջութակահար: Հենրիկ ***Սմբատյանի*** և Նելլի ***Ավետիսյանի*** որդին: Արվեստագիտ. թեկնածու (2004): ՀԿՄ անդամ (2009-ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1996), ԵՊԿ (2001, Հ. Սմբատյանի դասարան) և ասպիրանտուրան (2004, ղեկ.՝ Գ. Գյոդակյան): 2004-ից դասավանդում է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 2007-ից, ասպիրանտուրայի բաժնի վարիչ՝ 2015-ից): Հեղինակ է երաժշտագիտ. հոդվածների, հրատարակել է «Ընտիր էջեր Ա. Խաչատրյանի «Գայանե» և «Սպարտակ» բալետներից. փոխադրումներ ջութակի և դաշնամուրի համար» (2003), «Մոռացված էջեր» (2004) նոտ. ժող-ները, «Ջութակ» (համահեղ., 2005) ձեռնարկը:

ՍՄԲԱՏՅԱՆ Սերգեյ Արմենի (ծ. 23.09.1987, Երևան), դիրիժոր, ջութակահար: Արվեստագիտ. թեկնածու (2009): ՀՀ վաստ. արտիստ (2016): Արմեն ***Սմբատյանի*** որդին: Ավարտել է ԵՊԿ նվագախմբ. և վոկալ-տես. (2009, սիմֆ. դիրիժորություն՝ Յ. Դավթյանի, ջութակ՝ Բ. Վարդանյանի դասարաններ), ՄՊԿ լար. (2010, ջութակ՝ Ս. Կրավչենկոյի դասարան) ֆակ-ները և Լոնդոնի թագավոր. երաժշտ. ակադ-ի ասպիրանտուրան (2012, ղեկ-ներ՝ Ք. Դևիս, Ք. Մեթերս): Վարպետության դասեր է առել Զ. Բրոնից, Գ. Ժիսլինից, Ռ. Մուտիից, Ռ. Ռիչչիից և ուր.: 2006-ից՝ Հայաստանի երիտասարդ. նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Ելույթներ է ունեցել Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի, Մոսկվայի, Դրեզդենի, Վարշավայի ֆիլհարմոնիկ, Բեռլինի, Մյունխենի սիմֆ., Կորեայի կամեր. (2015, Նյու Յորքի «Քառնեգի Հոլլ» համերգասրահ) նվագախմբերի հետ: 2017-ին Ս-ի ղեկավարությամբ Համահայկ. նվագախումբը ելույթ է ունեցել դաս. երաժշտության «Գրամոֆոն» մրցանակաբաշխությանը: Համագործակցել է հանրահայտ երաժիշտներ Պ. Յուկերմանի, Մ. Վենգերովի, Դ. Մացուևի, դերասան Զ. Մալկովիչի և ուր. հետ: Հայ կոմպոզիտոր. արվ-ի (2010), Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. (2013) փառատոնների, «Անկախության սերունդ» համահայաստան. երգչախմբի և նվագախմբի (2016), «24/04» համաշխ. (2015), ՅՈՒՆԻՍԵՖ մանկ. (2009) նվագախմբերի հիմնադիր:

Սերգեյ Սմբատյանը ելույթի պահին

Ֆրանսիայի արվ-ի և գրկ-յան շքանշան (2015, Ֆրանսիայի մշակույթի և կապի նախարարություն):

ՍՅՈՒԻՏ (ֆրանս.՝ suite – շարք, հաջորդականություն), շ ա ր ա ն վ ա գ, գործիք. երաժշտ. հիմնական ցիկլային ձևերից: Բաղկացած է ընդհանուր գեղ. մտահղացմամբ միավորված մի քանի ինքնուրույն, սովորաբար՝ հակադիր մասերից: Ի տարբերություն սոնատի և սիմֆոնիայի՝ Ս-ին



Հատված Ռոմանոս Մելիքյանի ջութակի և դաշնամուրի սյուիտի 4-րդ մասից («Վեր-վերի»)

բնորոշ են մասերի առավել ինքնուրույնությունը, փոխհարաբերության ոչ խիստ օրինաչափությունը, նաև անմիջական կապը երգի, պարի հետ, պատկեր. նկարագրության կիրառումը: Ս-ի նախատիպը XVI դ-ին բնորոշ դանդաղ (պավանա) և արագ (գալյարդա) պարերի համադրումն է:

Հնագույն պար. Ս-ի դաս. տեսակը ստեղծել է Յ. Յ. Ֆրոբերգերը XVII դ-ի կեսին: Հիմնական մասերից են ա լ ե մ ա ն դ ա ն (չափավոր արագ տեմպով հնագույն պար Եվրոպայում XVI դ-ից, երաժշտ. չա-

Գրիգոր Սյունի

փը՝ 2/4, 4/4, U-ում ընդգրկվել է XVII դ-ից. հիմնականում 1-ին մասն է), կուրանտան (հնագույն արքուն. սալոն. աշխույժ պար Եվրոպայում XVI–XVII դդ-ում, երաժշտ. չափը՝ 2/4, 3/4, ընդգրկվել է XVIII դ-ից՝ որպես 2-րդ մաս), սարաբանդան (իսպ. ժող. հնագույն պար XV–XVII դդ-ում, XVII–XVIII դդ-ում օգտագործվել է բալետում, XIX դ-ից՝ U-ում), ժիգան (անգլ. հնագույն ժող. արագ պար, երաժշտ. չափը՝ 3/8, 3/4, 6/8, 6/4) ևն: XVII–XVIII դդ-ում՝ հանդիսապար. ընդգրկվել է U-ում՝ որպես 4-րդ մաս: XVII–XVIII դդ-ում U-ում ընդգրկվել են նաև մենուետը (ֆրանս. հնագուն ժող. պար, երաժշտ. չափը՝ 3/4, XVII դ-ից օգտագործվել է U-ում), գավոտը (ֆրանս. հնագույն ժող. պար, երաժշտ. չափը՝ 4/4 կամ 2/2, ընդգրկվել է XVIII դ-ից), բուռեն (ֆրանս. գեղջկ. պար, երաժշտ. չափը՝ 2/2, տարածվել է XVI դ-ի կեսից, ընդգրկվել է XVIII դ-ից), պասպիեն (ֆրանս. հնագույն պար, XVIII դ-ից՝ պալատ. պար, երաժշտ. չափը՝ 3/4 կամ 3/8): U-ում ընդգրկվել է նրա հիմնական մասերի՝ սարաբանդայի և ժիգայի միջև, պոլոնեզը (լեհ. պար, XVIII դ-ում տարածվել է Եվրոպայում, երաժշտ. չափը՝ եռամաս, XVIII դ-ում ընդգրկվել է U-ում), ոչ պար. պիեսներ՝ պրելյուդ, նախերգանք, արիա, ռոնդո ևն: Բոլոր մասերը, որպես կանոն, գրվել են նույն տոնայնությամբ, կատարվել են լյուտնյայով, կլավեսինով, նվագախմբով: Դաս. U-ի բարձրակարգ նմուշներ են ստեղծել Յ. Ս. Բախը և Գ. Ֆ. Հենդելը: XIX–XX դդ-ում գրվել են առավելապես ոչ պար. նվագախմբ. U-ներ, որոնք երբեմն ներառել են նաև պար. որոշ ձևեր (Պ. Ի. Չայկովսկի և ուր.): Այդպիսի U-ները հաճախ ծրագրային էին (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Շահիրազադե» ևն), կարևոր տեղ են գրավել նաև թատեր. ներկայացումների, օպերաների, բալետների երաժշտությունից (Է. Գրիգի «Պեր Գյունտ», Պ. Ի. Չայկովսկու, U. U. Պրոկոֆևի, Ա. Խաչատրյանի բալետ. U-ները), կինոերաժշտությունից կազմված U-ները: «U.» եզրույթը նշանակում է նաև մի քանի պարերից կազմված երաժշտախորեոգրաֆիկ կոմպոզիցիա: Հայտնի են նաև ժող. պար. ավանդույթների հետ կապված U-ներ (Ն. Ի. Պեյկոյի «Մոլդավական սյուիտը» ևն): Առանձնանում են U-ի վոկալ և խմբերգ. տեսակները:

ՍՅՈՒՆԻ (Միրզայան) Գրիգոր Հովհաննեսի [10.09.1876, քտա Գետաբեկ (Գանձակի գավառ)–18.12.1939, Ֆիլադելֆիա], կոմպոզիտոր, խմբավար: Պապը աշուղ Դադասին է, հայրը՝ ժող. բանաստեղծ-երգիչ, մանրանկարիչ: Սերժ *Սյունու* պապը: 1878-ից ընտանիքի հետ ապրել է Շուշիում: 1891-ից սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, հետևելով Ք. Կարա-Մուրզային և Կոմիտասին՝ հավաքել և ներդաշնակել է ժող. երգեր: 1895-ին Շուշիում հիմնադրել է երգչախումբ (երգացանկում՝ նաև U-ի բազմաձայնած երգերը): Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան (1904, ղեկ-ներ՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով, Ա. Կ. Գլազունով, Ա. Կ. Լյադով), ղեկավարել տեղի հայկ. եկեղեցու երգչախումբը, ներդաշնակել հոգևոր, մշակել ժող. երգեր, գրել մեներգեր և պոլիֆոնիկ երկեր: 1905–07-ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Գրել է «Արեգնազան» օպերետը, «Ասլի և

Հատված «Սարերը ման եմ ելել» երգից (մշակումը՝ Գ. Սյունու)

Քյարամ» երգախառն դրաման, որոնք բեմադրել է Հայոց դրամատիկ. ընկերության միջոցով:

1908-ից զբաղվել է համերգ. գործունեությամբ. շրջագայել է հայաբնակ վայրերում (Տրապիզոն, Կարին, Թիֆլիս, Թեհրան, Կ. Պոլիս, 1923-ից՝ ԱՄՆ), հավաքել ժող. մեղեդիներ (օգտվել է նաև Կոմիտասի գրառումներից), որոնք ներդաշնակել է և ընդգրկել իր ստեղծած երգչախմբերի երկացանկերում՝ նպաստելով բազմաձայն երգեցողության տարածմանը: Հեղինակ է նաև հայ քաղաք. ժող. երաժշտ. ոճով՝ դաշնամուրի նվագակցությամբ ինքնուրույն, արտահայտիչ մեղեդիներով մեներգերի («Ինձ մի խնդրիր», խոսք՝ Հ. Թումանյանի, «Ախ ալ վարդի», խոսք՝ Ա. Իսահակյանի), որոնք նկատելիորեն նպաստել են ազգ. ռոմանսի ձևավորմանը: Նրա ստեղծագործության մեջ առավել արժեքավոր են

գեղջկական երգերի խմբերգ. մշակումները, որոնցից լավագույնները («Սարերի հովին մեռնեմ», «Սարերը հովել ա», «Ալագյազ» ևն) հայ խմբերգ. երաժշտության դաս. ժառանգության կարևոր մասերից են:

ԱՄՆ-ում ապրելու տարիներին զանգված. երգերի օրինակով (1930-ական թթ.) հորինել և կատարել է «Նոր կյանքի երգեր» շարքը:

Երկ. *Հայ ժողովրդական երգեր, Պետերբուրգ, 1904: Ժողովրդական երգեր և խմբերգեր, Ե., 1935: Հայ երգ-փունջ, տետր 1–4, Ֆիլադելֆիա, 1940–47: Խմբերգեր, կազմ.՝ Ա. Շեկունց, Ե., 1985: Հայ երաժշտութիւն, [երաժշտագիտական ուսումնասիրություն, կենսագրական նոթեր], հայ. և անգլ., Ե., 2005: Խմբերգեր. գիտական հրատարակություն ըստ բնագրերի (խմբ., նախաբանի և վերլուծ. դիտողությունների հեղինակ՝ Ռ. Աթայան), Ե., 2013:*

Գրկ. *Գուիւմճեան Յ., Գրիգոր Մ. Սիւնի: Երաժշտագէտը եւ մարդը, Ֆիլադելֆիա, 1943: Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Ե., 1959: Բրուտյան Յ., Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Ե., 2000:*

ՍՅՈՒՆԻ Սերժ Լևի (ծ. 14.08.1930, Նյու Յորք), դաշնակահար, կոմպոզիտոր: Լև *Տեր-Օգանովի* որդին, Գրիգոր *Սյունու* թոռը: Որպես դաշնակահար՝ մենահամերգով հանդես է եկել 17 տարեկանում Նյու Յորքում, ապա՝ ԱՄՆ-ի այլ քաղաքներում: Սովորել է Ջուլիարդի երաժշտ. բարձրագույն դպրոցում (1954–60): Վարել է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի ներկայացումը (1960, Նյու Յորք, տեղի հայ առաջնորդարանի նախաձեռնությամբ): Համերգ. ծրագրում՝ Յ. Ս. Բախի մի մինոր տոկկատը, Վ. Ա. Մոցարտի սոլ մաժոր, Լ. վան Բեթհովենի 21-րդ դո մաժոր, Ս. Ս. Պրոկոֆևի 3-րդ, Պ. Հինդեմիթի սոնատները, Ֆ. Լիստի «Պետրարկայի սոնետները», «Մեֆիստո վալսը», Կ. Դեբյուսիի պրելյուդներից, Ֆ. Շոպենի պոլոնեզներից, վալսերից և այլ գործեր: Հեղինակ է դաշնամուր. պիեսների, երգերի, խմբերգերի: Նրա դաշնամուրի տոկկատն ատոնալ երաժշտության նմուշ է՝ այդ ժանրին համապատասխան ռիթմ. հստակ և զորեղ կառուցվածքով, որտեղ նկատելի է հայկ. շունչը: Դասավանդել է Նյու Յորքի երաժշտ. քոլեջում: Լոնգ Այլենդի ԿՄ անդամ:

ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ Օննիկ (1905–1994), ջութակահար, դիրիժոր, մանկավարժ: Տրապիզոնից մեկնել է Կ. Պոլիս, ապա՝ Սիրիա և Իրան, 1939-ին հաստատվել է Բեյրութում: Ավարտել է Վիեննայի երաժշտ. ակադ-ի ջութակի բաժինը (1926), նվագել սիմֆ. նվագախմբերում: Բեյրութի կոնսերվատորիայի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, ջութակի դասարանի հիմնադիր-ղեկ. (պրոֆ.): Բեյրութում հիմնադրել է «Կոմիտաս» քառյակը և «Լիբանանյան» եռյակը, որոնց հետ համերգներով շրջագայել է Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Իրանում, Հվ. Ամերիկայում և այլուր. երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Ռ. Շումանի, Ֆ. Մենդելսոնի, Պ. Ի. Չայկովսկու, Ա. Տ. Գրեչանինովի, Ա. Ս. Արենսկու, Ա. Խաչատրյանի, Գ. Ալեմշահի, Գ. Չերոտարյանի և ուր. ստեղծագործություններից: Ս. դաստիարակել է ջութակահարների մի քանի սերունդ (հայ, արաբ, հույն, հրեա), լավագույններից են Մ. և Վ. Գոճայանները, Ս. Խարտալյանը և ուր.:

ՄՆԿՐՅԱՆ Նուպար (Նուբար) Կարապետի (19.05.1922, Ռոդոսթո–07.02.2006, Երևան), խմբավար, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1958): Պրոֆ. (1992):

Երևանի Էլեկտրամեքենաշինական գործարանի տղամարդկանց երգչախումբը (ղեկ.՝ Ն. Մակրյան)

Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան վարժարանը (1943), ԵՊԿ խմբավարության բաժինը (1954): 1946-ին հայրենադարձել է: 1946–48-ին՝ Հայկ. ռադիոկոմիտեի, 1957–61-ին՝ Հայաստանի պետ. երգչախմբերի խմբավար: Ղեկավարել է նաև ինքնագործ երգչախմբեր. այդ թվում՝ 1955–82-ին՝ Երևանի էլեկտրամեքենաշին. գործարանի տղամարդկանց երգչախումբը (Երիտասարդության և ուսանողության համաշխ. VI փառատոնի դափնեկիր, 1957, Մոսկվա), որի հետ համերգներով շրջագայել է ԽՍՀՄ քաղաքներում, Լեհաստանում, Բուլղարիայում: 1974-ից դասավանդել է ԵՊԿ-ում (խմբավարություն):

ՍՈԼՄԻԶԱՅԻԱ (սոլ և մի ինչյունների անվանումից), մասնավորապես՝ երգեցողություն ուսուցանելու մեթոդ. XI դ-ում առաջադրել է Գվիդո դ'Արեցցոն՝ ինչյունաշարի աստիճանների միջև ինտերվալ. հարաբերությունների իմաստավորման և

Սոլմիզացիա

Ռոբերտ Աթայանի և Միքայել Տերյանի «Սոլֆեջիո» գրքի (1965) շապիկը

Սաթեյ Սոկոր

հատկապես մեծ ու փոքր սեկունդաների միջև լսող. տարբերությունը պարզաբանելու համար: Նա վեցահնչյուն հաջորդականության (հեքսախորդի) աստիճաններին վանկային անուններ է տվել՝ ըստ Ս. Հովհաննուն նվիրված հիմնի, որի խոսքերի յուրաքանչյուր տողը սկսվում է հնչյունաշարի նոր, հաջորդ. աստիճանից և երգվում նոր վանկով:

Այդ վանկերն են՝ ուտ, ռե, մի, ֆա, սոլ, լա: Մի–ֆա հաջորդականությունը դարձել է կիսատոնի(փոքր սեկունդայի), մյուսները՝ ամբողջ տոնի (մեծ սեկունդայի) արտահայտիչ, խոսքային անվանումների և լսողական պատկերացումների ասոցիացիայի միջոցով հեշտացել է հնչյունաշարի աստիճանների ինտերվալային հարաբերությունների յուրացումը: Հետագայում VII աստիճանի համար ավելացվել է սի վանկը, ուտ–ը փոխարինվել է առավել բարեհնչուն դո–ով: Ավելի ուշ վանկային անունների ողջ շարքը (նախապես բացարձակ բարձրություն չէր արտահայտում) կոչվել է հնչյունաշարի որոշակի աստիճանների անուններով, ձեռք բերել բացարձակ բարձրության արժեք: Լայն առումով՝ Ս. է կոչվում ընդհանրապես նոտաները անվանելով երգելը, որը *սոլֆեջոյի* բաժիններից է:

Գրկ. *Ливанова Т., История западноевропейской музыки до 1789 г., М.–Л., 1940.*

Հայր Սերգեյ Կոպրևի

ՍՈԼՈ (իտալ.՝ solo, < լատ. solus – մեկ, միակ, մենակ),1. բազմաձայն երկի նվագամաս, երգամաս կամ դրվագ, որը կատարում է մենակատարը, մեներգիչը (մենանվագ, որոշ դեպքերում՝ նաև մի քանի երաժիշտ):

2. Մեկ կատարողի համար գրված (առանց նվագակցության կամ նվագակցությամբ) գործիք. պիես:

ՍՈԼՖԵՋՋՈ (իտալ.՝ solfeggio, սոլ և ֆա հնչյունների անվանումից), երաժշտատես. գործնական առարկա. զարգացնում է սովորողների մեղեդիական հարմոնիկ, պոլիֆոնիկ և տեմբրային լսողությունը, ռիթմի զգացումն ու երաժշտ. հիշողությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում ներքին լսողությանը՝ նոտային տեքստը սոսկ նայելով՝ երաժշտությունը ներքուստ լսելու և ըմբռնելու ունակության զարգացմանը: Ուսուցանվում է երգեցողության, թելադրության և վերլուծ. ունկնդրության միջոցով՝ որպես նյութ գործածելով նպատակ. վարժություններ և երաժշտ. գրկ–ից ընտրված հատվածներ: Երաժշտ. հաստատություններում ընդունված է Ս–ի ձայնակարգ. հիմքով ուսուցման մեթոդը (ի տարբերություն ինտերվալայինի): Հայաստանում երգիչների լսող. կարողության դաստիարակումը կարևորվել է դեռևս միջնադար. երաժշտակրթ. համակարգում (մասնավորապես՝ ***Ներսես Շնորհալու*** ժամանակաշրջանում): Այդ նպատակով օգտագործել են ***Մանրուման*** որոշ բաժիններ: Ուսուցումը համատեղել են մոնոդիկ երաժշտության ձայնակարգ–մեղեդիական հատկանիշների յուրացման հետ: Գոյություն ունեն հայկ. ժող. և կոմպոզիտոր. երաժշտության հիման վրա գիտամեթոդ. ժամանակակից սկզբունքներով կազմված մասնագիտ. ձեռնարկներ (Ռ. Աթայան և Մ. Տերյան, Յ. Բեքքարյան և Յ. Գևորգյան ու ուր.): Հանում Ս. է կոչվել նաև ***սոլմիզացիան:***

ՍՈԿՈՐ (Sokor) Սաթեյ Էմմանուիլի (1908–1980), հայազգի ռուս. կոմպոզիտոր, դիրիժոր: ՌՍՀ արվ. վաստ. գործիչ (1951), ՌՍՀ ակադ–ի թղթ. անդամ (1952): Սովորել է Բուխարեստի (1927–29), կատարելագործվել Լայպցիգի (1930–33) կոնսերվատորիաներում: 1945–52–ին՝ Բուխարեստի ռադիոկոմիտեի, 1949–54–ին՝ Ռումինիայի ԿՄ նախագահ:

Ռումինիայի պետ. հիմնի (կատարվել է 1953–77–ին) հեղինակն է: Գրել է նաև «Պարոն Լեոնիդա» (1978, ըստ Յ. Կարաջալեի) օպերան՝ մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար, «Մայր» (1949, ՌՍՀ Պետ. մրց.՝ 1951) և «Խաղաղության երգ» (1960) պոեմները, «Բորգեշտի կաղնին» (1966, խոսք՝ Դ. Դեշլիուի) օրատորիան, «Կելուշ և Սիրբա» (1952, ըստ ժող. պարերի) նվագախմբ. երկը, ռապսոդիա, ջութակի (1955), կլառնետի, գալարափողի և թավջութակի (1939) կոնցերտները, կամեր–գործիք. անսամբլներ, երգեր ու

խմբերգեր: Պարգևատրվել է Ռումինիայի պետ. շքանշաններով:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Դավիթ Հովհաննեսի [1885, ք. Ղզլար (Դաղստան)–12.08.1935, Երևան], ջութակահար, մանկավարժ: Ավարտել է Դոնի Ռոստովի երաժշտ. ուսումնարանը (1907): 1922–23-ին դասավանդել է Երևանի երաժշտ. ստուդիայում, 1923-ից՝ ԵՊԿ-ում (լար. քառյակի 2-րդ ջութակ, ղեկավարել սիմֆ. նվագախմբի ելույթները): 1920-ական թթ-ին Երևանում կազմակերպել է առաջին «Ամառային սիմֆոնիկ համերգաշրջանները»:

Գրկ. *Գևորգյան Գ., Դավիթ Սողոմոնյան, Ե., 1971:*

ՍՈՆԱՏ (իտալ.՝ sonata, < լատ. sonare – հնչել), կամեր-գործիք. երաժշտության հիմնական ժանրերից: Դաս. ավարտուն Ս. սովորաբար եռամաս ցիկլ. ստեղծագործություն է՝ ծայրերի արագ մասերով (առաջինը՝ սոնատ. ձևի) և դանդաղ միջին մասով: Երբեմն ցիկլում ընդգրկվում է նաև մենուետ կամ սկերցո: «Ս.» եզրույթը հայտնի է XVI դ-ից: Նախապես նշանակել է գործիք. պիես՝ ի տարբերություն վոկալ պիեսի (կանտատի): XVII դ-ի սկզբին ձևավորվել են Ս-ի եկեղեցականը (sonata da chiesa) և կամերայինը (sonata da camera) տեսակները: Եկեղեցականը քառամաս ցիկլ է՝ մասերի տեմպերի որոշակի հաջորդականությամբ (դանդաղ, արագ, դանդաղ, արագ կամ արագ, դանդաղ, արագ, արագ): XVII դ-ում տարածվել են տրիո-սոնատները՝ 2 կամ 3 կատարողների համար՝ գեներալ-բասի նվագակցությամբ: Կարևորագույն տեղ են գրավել նաև 1 ջութակի և գեներալ-բասի համար Ս-ները (Ա. Վիվալդի, Ա. Կորելլիի և ուր.): Կլավիրի հարուստ, զարգացած նվագամասով ջութակի Ս-ներ է ստեղծել Յ. Ս. Բախը: Վաղ դաս. շրջանում (XVIII դ-ի կես) սկզբնավորվել է դաս. Ս. (Կ. Ֆ. Է. Բախի և Դ. Սկառլատտիի դաշնամուրի Ս-ները), որը վերջնականապես ձևավորել են Վիեննայի դաս. դպրոցի կոմպոզիտորներ Յ. Հայդնը, Վ. Ա. Մոցարտը և Լ. վան Բեթհովենը: Ս-ի զարգացման բարձրակետը Լ. վան Բեթհովենի Ս-ներն են: Ռոմանտիկ կոմպոզիտորները դաս. Ս. հարստացրել և վերաիմաստավորել են: Զարգացմանը մեծապես նպաստել են նաև Ֆ. Շոպենը, Ռ. Շումանը, Ֆ. Լիստը, Յ. Բրամսը, Է. Գրիգը և ուր., որոնց Ս-ներում շեշտվել է ժանրի սիմֆ. մեկնաբանման միտումը, խորացել կերպարների հակադրությունը: Ցիկլի միասնականացման ձգտումը հանգեցրել է միամաս Ս-ների ստեղծմանը (Ֆ. Լիստի դաշնամուրի 2 Ս-ները): XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին նորացման միտումներ դրսևորվել են Գ. Ֆորեի, Պ. Դյուկայի, Մ. Ռավելի, Կ. Դեբյուսիի, Ա. Ն. Սկրյաբինի, Ն. Մետների Ս-ներում: XX դ-ից Ս. երաժշտ. առաջատար ժանրերից մեկն է: Ժամանակակից երաժշտության աչքի ընկնող նմուշներ են Ս. Ս. Պրոկոֆևի, Դ. Դ. Շոստակովիչի, Պ. Հինդեմիթի, Բ. Բարտոկի Ս-ները:

1950–70-ական թթ-ին «Ս.» եզրույթը, ինչպես հեռավոր անցյալում, երբեմն հասկացվում էր որպես գործիք. պիեսի նշում (Ք. Պենդերեցկու Ս.՝ թավջութակի և նվագախմբի համար):

Հայ երաժշտության մեջ Ս-ի ժանրի առաջին դրսևորումներից են Մ. Եկմալյանի (1880-ական թթ.), Ն. Տիգրանյանի (1969), Ս. Բարխուդարյանի (1915) դաշ-

Հատված Արամ Խաչատրյանի դաշնամուրի սոնատից

նամուր. Ս-ները: Ջութակի առաջին Ս-ի հեղինակը Օվսաննա Տեր-Գրիգորյանն է (3 սոնատներից պահպանվել է 3-րդը՝ 1918, 1 մասանի):

Ժանրին անդրադարձել են նաև Ա. Խաչատրյանը, Հ. Ստեփանյանը, Վ. Տալյանը, Կ. Խաչատրյանը, Ա. Բաբաջանյանը, Ա. Փիրումովը, Տ. Մանսուրյանը, Է. Միրզոյանը, Ռ. Սարգսյանը, Ա. Սաթյանը, Գ. Հովունցը, Ս. Շաքարյանը, Գ. Չթչյանը, Ա. Ղազարյանը և ուր.:

Դավիթ Սողոմոնյան

ՍՈՆԱՏԱՅԻՆ ՁԵՎ, գործիք. երաժշտության ամենազարգացած ոչ ցիկլ. ձևը: Պատմ. զարգացման ընթացքում XVIII դ–ի վերջին Վիեննայի դպրոցի ներկայացուցիչները՝ Յ.Հայդնը,Վ. Ա. Մոցարտը և Լ. վան Բեթհովենը, բյուրեղացրել են կոմպոզիցիոն խիստ չափանիշները: Ս. ձ. բաղկացած է էքսպոզիցիա, մշակում և ռեպրիզ բաժիններից: Էքսպոզիցիան ներառում է գլխավոր, կապող, օժանդակ և եզրափակիչ պարտիաները: Գլխավորի մեջ հիմնական տոնայնությամբ շարադրվում է 1–ին թեման: Կապողը հաճախ կառուցվում է գլխ. պարտիայի թեմատիկ նյութի վրա, և մոդուլացիոն անցումով նախապատրաստում՝ գլխ. պարտիային հակադրվող հաջորդ՝ օժանդակ պարտիայի տոնայնությունն (դոմինանտ. կամ զուգահեռ) ու թեման: Կապող պարտիան կարող է ունենալ ինքնուրույն մեղեդիական նշանակություն: Օժանդակ պարտիային հաջորդում է եզրափակիչը՝ նոր ամփոփիչ թեմա կամ մոտիվների և ֆրազների շարք, որը հիմնականում ամապնդում է օժանդակ պարտիայի տոնայնությունը:

Ս. ձ–ի էքսպոզիցիայի վերջում հաստատվում է տոնայն. անկայունություն՝ պայմավորված հիմնական տոնայնությունից դոմինանտ. կամ զուգահեռ մաժոր անցումով:

Ս. ձ–ի մշակման բաժնում զարգանում և մշակվում է էքսպոզիցիայի թեմատիկ նյութը, միմյանց հաջորդում են մի շարք տոնայնություններ: Հատկապես նախերգանքներում այս բաժինը կարող է բացակայել:

Ռեպրիզում կրկին էքսպոզիցիայի նյութն է, սակայն գլխ. և օժանդակ պարտիաները շարադրվում են նույն (հիմնական) տոնայնությամբ: Ս. ձ–ում հաճախ հանդիպում են նաև ոչ պարտադիր բաժիններ՝ նախաբան և կոդա (ընդհանուր եզրափակում):

Ս. ձ. պատմ. զարգացման ընթացքում որոշակիորեն փոփոխվել է, սակայն 3 բաժինները, 2 կամ ավելի թեմաների հակադրման սկզբունքը մնում են որպես կարևորագույն հատկանիշներ: Ս. ձ. գործածվում է ցիկլ. ստեղծագործությունների (սիմֆոնիա, սոնատ, տրիո, կվարտետ ևն) 1–ին մասերում, նաև ինքնուրույն երկերում (նախերգանք,պոեմ ևն):

ՍՈՆԱՏԱՅԻՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՑԻԿԼ, հոմոֆոն–հարմոնիկ, բազմամաս (հիմնականում ինքնուրույն մասերից կազմված՝ քառամաս կամ եռամաս, կարող է լինել նաև հնգամաս, յոթամաս, հազվադեպ՝ երկմաս), միասնական գաղ–հուզ. բովանդակությամբ միավորված երաժշտ. ստեղծագործության (գործիք. սոնատներ, կոնցերտներ, տրիոներ, կվարտետներ, կվինտետներ, սիմֆոնիաներ ևն)առավել զարգացած և կատարյալ ձևը:Ձևավորվել է XVI–XVIII դդ–ում: Հնագույն նմուշները դժվար է հստակորեն տարբերել սյուիտից կամ ցիկլ. այլ ձևերից (պարտիտ, տոկկատ, կոնչերտո գրոսսո): Գործիք. երաժշտության հին ձևերին առավել բնորոշ էին ցիկլի իրար հակադիր, առանձին մասերը. առաջին մասում (հիմնված էր մի թեմայի զարգացման սկզբունքի վրա) բացակայում էր կերպար. և թեմատիկ հակադրությունը: Նոր ցիկլում, որը բյուրեղացել և ցիկլ. այլ ձևերից հստակորեն անջատվել է Վիեննայի դաս. դպրոցի ներկայացուցիչների և նրանց անմիջական հետևորդների (Ֆ. Է. Բախ, Մանհայմի դպրոցի հիմնադիրներ, Ժ. Ֆ. Ռամո, Ֆ. Ժ. Գոսեկ և ուր.) արվ–ում. հակադրությունն առկա է ոչ միայն մասերի, այլև 1–ին մասի թեմաների միջև, որի վրա էլ հիմնվում են սոնատ. ալլեգրոյի ձևն ու սկզբունքները:

Ս. ս. ց–ում մասերի քանակը պայմանավորված է ժանրով (սոնատ, կոնցերտ, տրիո, կվարտետ, կվինտետ, սիմֆոնիա ևն), կատարողների կազմով ու քանակով (հիմնականում՝ 4, երբեմն՝ 3, հազվադեպ՝ 2 մաս):

Ս. ս. ց–ի 1–ին՝ արագ մասը, բաղկացած է 3 կամ 4 մասերից. հիմնականում գրվում է ***սոնատային ձևով*** (այստեղից էլ՝ անվանումը): Բնորոշ են աշխուժությունը, ակտիվությունը, լինում է կատակ., դրամատիկ, հերոս., կոնֆլիկտ. բնույթի: 1–ին մասի տրամադրությամբ սովորաբար պայմանավորվում է ցիկլի հուզ. շերտը:

Ցիկլի 2–րդ մասը դանդաղ է, հիմնականում արտահայտում է մարդու հույզերն ու խոհերը, ներաշխարհը, մեծ մասամբ քնար., մեղեդ., հայեցողական է: Մասի ժանր. հիմքերն են երգը, արիան, խորալը:Կոմպոզիցիոն կառուցվածքի առումով 2–րդ մասում գործածվում են պարզ կամ բարդ (կոնտրաստ. կամ մշակման միջին մասով) եռամաս, վարիացիոն (իրար հա–

ջորդող վարիացիաները նպաստում են մասի հիմքում կերպարի համակողմանի բացահայտմանը), սոնատ. ալլեգրո (բացակայում է մշակման բաժինը, բնույթով խիստ հակադիր է 1-ին մասին, օր.՝ Լ. վան Բեթհովենի op. 59 №1 լար. կվարտետը), հազվադեպ՝ ռոնդո կամ երկմաս ձևերը:

Ցիկլի 3-րդ մասը [Յ. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի (հիմնականում՝ մենուետ), Լ. վան Բեթհովենի (սկերցո) երկերում, երբեմն՝ Հ. Բեռլիոզի, Պ. Ի Չայկովսկու սիմֆոնիաներում (վալս) կապված է կենցաղում տարածված երաժշտ. ժանրերի հետ: Հաճախ շարժուն, աշխույժ բնույթի է, գրվում է հիմնականում բարդ եռամաս ձևով (da capo). 1-ին մասում պարզ եռամաս ձևով շարադրված հիմնական թեմային հաջորդում է միջին մասը՝ նոր թեմայի վրա կառուցված համանուն կամ այլ (երբեմն՝ միևնույն) տոնայնությամբ տրիոն, որին հաջորդում է da capo նշանը:

4-րդ մասը՝ ֆինալը, ստեղծագործության կերպար., բովանդակ. ամփոփումն է: Սովորաբար աչքի է ընկնում ուրախ, աշխույժ տրամադրությամբ, արագ տեմպով և ընդգրկում է պար., երգ. տարրեր: Գրվում է ռոնդո (միևնույն թեմայի անփոփոխ կրկնությամբ, որին հաջորդում են կոնտրաստ. էպիզոդները), հազվադեպ՝ ռոնդո-սոնատ., սոնատ., վարիացիոն ձևերով:

Եռամաս ստեղծագործությունների դեպքում հիմնականում բացակայում է 3-րդ՝ պար. մասը (ներառում է սոնատ. ալլեգրոն, դանդաղ մասը և ֆինալը), որի բնույթը հաճախ շարադրվում է ֆինալում (օր.՝ Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտի 3-րդ մասը): Ս. ս. ց-ում մասերի հաջորդականությունը կարող է փոփոխվել, նաև ներմուծվել նոր մասեր:

Ցիկլի պատմ. զարգացումը պայմանավորվել է մի շարք ազգ. դպրոցներով: XVIII դ-ի կոմպոզիտորների ստեղծագործություններում 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը միավորվել են մեկ, իսկ 2-րդ (դանդաղ) մասը՝ սուբդոմինանտ., դոմինանտ., զուգահեռ մինոր կամ մաժոր և այլ տոնայնություններով:

XIX դ-ից Ս. ս. ց-ում բարդացել է մասերի տոնայն. համամասնությունը: Ցիկլի գաղ. և կերպար. միասնականությունը պայմանավորել է նաև մեղեդայինտոնացիոն, ռիթմահարմոնիկ և այլ երևույթներով:

ՍՈՆԱՏԻՆ (իտալ.՝ sonatina, սոնատի նվազականը), ոչ ծավալուն, տեխնիկապես ոչ բարդ սոնատ-ցիկլային ստեղծագործություն, որտեղ առաջին՝ առաջատար մասը գրված է ***սոնատային ձևով***: Լինում են նաև միամաս Ս-ներ: Ս. հաճախ գործածվում է ուսումնամանկավարժ. պրակտիկայում (Մ. Կլեմենտիի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի և ուր. Ս-ները): XX դ-ում Մ. Ռավելը (դաշնամուրի Ս. ևն) և ուր. գրել են Ս-ներ, որոնք լիարժեք գեղ. ստեղծագործություններ են:

XIX դ-ում «Ս.» եզրույթով հաճախ նշվել են առանց մշակման բաժնի սոնատ. ձևով գրված պիեսները:

Ս-ի յուրատիպ նմուշներ են ստեղծել Ա. Փիրումովը, Է. Միհրանյանը, Ե. Երկանյանը, Մ. Իսրայելյանը, Գ. Չթչյանը, Ռ. Սարգսյանը, Դ. Բալասանյանը և ուր.:

ՍՈՊՐԱՆՈ (իտալ.՝ soprano, < sopra – վեր), 1. կանանց երգչական ամենաբարձր ձայնը: Հիմնական տեսակներն են՝ դրամատիկ., քնար. և կոլորատուր., տարբերում են նաև քնարադրամատիկ. և քնարակոլորատուր. Ս-ները: Ս-ին բնորոշ է գլխային ռեգիստրի գերակշռությունը գրեթե ողջ դիապազոնի ընթացքում (c^1–c^3): Ս-ի համար գրված դերերգերից են՝ Անուշ, Շուշան (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Նորմա (Վ. Բելլինիի «Նորմա»), Սարֆա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն») ևն: 2. Տղանեղի (դիսկանտների) և աղջիկների բարձր ձայներ: 3. Երգչախմբում՝ ամենաբարձր երգամասը: 4. Երաժշտ. որոշ գործիքների՝ ռեգիստրով բարձր տարատեսակներ:

«Սպեղանի» երգչախումբը կլույթի պահին

«ՍՊԵՂԱՆԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, հիմնադրվել է 1996-ին Երևանում (հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Սարինա Ավթանդիլյան), անդամները՝ Արցախ. ազատագր. պատերազմում զոհված մարտիկների զավակները: 2007-ից երգչախմբում գործում են մանկ. և երիտասարդ. խմբեր: Վերջինը

Ալեքսանդր Սպենդիարյան

բաղկացած է աղջիկներից, որոնք ԵՊԿ շրջանավարտներ կամ ուսանողներ են (կամ երգել են մանկ. խմբում): Երկացանկում՝ հոգևոր, ազգ., նաև ժամանակակից կոմպոզիտորների երկերից:

Երգչախմբի կատարմամբ ձայնագրվել և խտասալիկով թողարկվել է Կոմիտասի «Պատարագը»: Խումբը նպաստում է արդի խմբերգ. արվ-ի զարգացմանը, հետևում հայկ. երգչախմբ. ավանդույթներին, յուրացնում նաև այլ դպրոցների մեթոդներ: Համերգներով շրջագայել է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, ՌԴ-ում, Լիբանանում, Լիտվայում, Իտալիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, մասնակցել միջազգ. փառատոների, արժանացել մրց-ների («Հոգևոր երաժշտություն», «Ազգային երաժշտություն» անվանակարգերում՝ 1-ին մրց-ներ, «Ժամանակակից երաժշտություն» անվանակարգում՝ Հատուկ մրց., 2010, Ս. Պետերբուրգ):

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ (Սպենդիարով) Ալեքսանդր Աֆանասիի (Ստեփանոսի) [20.10(01.11).1871, ք. Կախովկա (Ուկրաինայի Խերսոնի մարզ)–07.05.1928, Երևան, թաղված է ԵՕՔԹ մերձակա պուրակում], կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1926): Հայ երաժշտության դասական: Ավարտել է ՄՊՀ իրավաբ. ֆակ-ը (1895): Կոմպոզիցիայի տեսություն է ուսումնասիրել Ն. Ս. Կլենովսկու (1892–94, Մոսկվա), Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի (1896–1900, Ս. Պետերբուրգ) ղեկավարությամբ: Ապրել է Ղրիմում, ծավալել դիրիժոր. և ստեղծագործ.

Տեսարան Ա. Սպենդիարյանի «Երեք արմավենի» բալետի բեմադրությունից (1964, ռեժ.՝ Եվգենի Չանգա, ԵՕՔԹ)

գործունեություն: Որպես կոմպոզիտոր՝ ձևավորվել է ռուս. և հայկ. մշակույթների համատեղ ազդեցությամբ: 1894-ին գրել է «Այ վարդ» ռոմանսը (Ա. Ծատուրյանի խոսքերով), 1902-ին՝ «Չկնորսն ու փերին» բալլադը՝ բասի և նվագախմբի համար, 1911-ին՝ «Էդելվեյս» մելոդեկլամացիան (Մ. Գորկու տեքստերով): Մտերիմ էր ժամանակի առաջադեմ մտավորականների՝ Մ. Սարյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ա. Թամանյանի, Վ. Սուրենյանցի, Ռ. Մելիքյանի, Ն. Տիգրանյանի, Ա. Կ. Լյադովի, Ա. Կ. Գլազունովի և ուր. հետ: 1905-ին հանդես է եկել բաց նամակով՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովին Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր. կազմից հեռացնելու դեմ: Ձգտել է ծրագրային, վառ պատկերավոր երաժշտության՝ հիմնված ժող. ստեղծագործության վրա: Գործերն աչքի են ընկնում մեղեդային և ռիթմ. հարստությամբ, հարմոնիկ և նվագախմբ. արտահայտչամիջոցների ցայտունությամբ, ազգ. հատկանիշներով, բանաստեղծականությամբ և քնարականությամբ: Ստեղծել է ժող. կյանքի վառ պատկերներ, նուրբ բնապատկերներ: Ս-ի «Այնտեղ, այնտեղ, դեպ վեհ այն դաշտը» հերոս. երգը (1914, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մոտիվներով)՝ տենորի և նվագախմբի համար, «Առ Հայաստան» կոնցերտ. արիան (1915, Հ. Հովհաննիսյանի խոսքերով) ևն տոգորված են սոցիալ. անարդարության դեմ բողոքով, ազատության համար պայքարի կոչով: «Երեք արմավենի» (1905, ըստ Մ. Լերմոնտովի) սիմֆ. պատկերի, «Բեդա քարոզիչը» (1907, Յ. Պոլոնսկու խոսքերով) լեգենդի և «Մենք կհանգստանանք» (1910, Ա. Պ. Չեխովի

Հատված Ա. Սպենդիարյանի «Մենուետ»-ից

«Քեռի Վանյա» պիեսից Սոնյայի մենախոսության տեքստով) մելոդեկլամացիայի համար Ս. արժանացել է Մ. Գլինկայի անվ. մրց-ի (1908, 1910, 1912):

1917-ի Հոկտ. հեղափոխությունից հետո Ղրիմում ղեկավարել է ինքնագործ երգչախմբեր և նվագախմբեր, օժանդակել երաժշտ. դպրոցի կազմակերպմանը, մշակել ժող., նաև հեղ. երգեր («Վարշավյանկա», «Անվախ ընկեր» ևն), Մոսկվայում, Պետրոգրադում և այլուր հանդես եկել հեղինակ. համերգներով: 1924-ից ապրել է Երևանում. մասնակցել է գիտ-յան և արվ-ի ինստ-ի, ԵՊԿ աշխատանքներին, սիմֆ. նվագախմբի, երաժշտ. հրատարակչության կազմակերպմանը, հանդես եկել որպես դիրիժոր: Ստեղծագործության ծաղկման շրջանում կոմպոզիտորն զբաղվել է 1916-ին մտահղացած հերոսահայրենասիր. «Ավմաստ» օպերայի ավարտման աշխատանքով (ըստ՝ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի, լիբրետտոն՝ Ս. Պարնոկի): Ռուս. դաս. օպերայի ավանդույթներով գրված օպերան առանձնանում է հայկ. վառ ազգ. ինքնատիպությամբ, ամփոփում է ծավալուն զանգված. տեսարաններ (խմբերգեր, պարեր), գործող անձանց արտահայտիչ բնութագրեր, դրամատիկորեն հագեցած դրվագներ: Ստեղծագործարար օգտագործելով բուն ժող. երաժշտության նմուշներ՝ Ս. դրանց հիման վրա ստեղծել է օպեր. մեծ ձևեր՝ միջանցիկ սիմֆոնիկ զարգացումով և լայտմոտիվների զարգացած համակարգով:

Ս. մեծ ներդրում ունի հայկ. ազգ. կոմպոզիտոր. դպրոցի, նրա գեղագիտ. սկզբունքների, ոճական առանձնահատկությունների ձևավորման մեջ: Հենվելով ռուս դաս. երաժշտության ավանդույթների վրա՝ հայկ. երաժշտությունը հարստացրել է նոր թեմաներով, ընդարձակել ժանրերը, արտահայտչամիջոցները, հիմք դրել հայկ. ազգ. սիմֆոնիզմին: Նրա «Ղրիմի էսքիզները» (2 սյուիտ, 1903, 1912), «Երևանյան էտյուդները» (1925) և այլ սիմֆ. գործեր հայկ. սիմֆ. երաժշտության դաս. նմուշներ են: Երևանում գործում են Ս-ի տուն-թանգարանը, նրա անվան ԵՕԲԹ և երաժշտ. դպրոցը:

Երկ. *Ալեքսանդր Սպենդիարյան, ԵԼԺ, հ. 1–11, Գ. Բոդաղյանի խմբ., Ե., 1943–84:*

Գրկ. *Գասպարյան Ս., Ալեքսանդր Սպենդիարով, Ե., 1951: Գրիգորյան Ք., Ալեքսանդր Սպենդիարով, Ե., 1951: Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին, կազմ.՝ Ա. Գ. Թադևոսյան, Ե., 1960: Սպենդիարովա Մ., Սպենդիարով, Ե., 1966: Թահմիզեան Ն., Կարեւոր նկատողութիւններ Ալեքսանդր Սպենդիարեանի կեանքի եւ գործի մասին (ծննդեան 125-ամեակին առթիւ), Փասատենա, 1996: Ալեքսանդր Սպենդիարյանը և ժամանակը. Հոդվածներ և գիտաժողովի նյութեր, Ե., 2011: Спендиарова М., Летопись жизни и творчества А. А. Спендиарова, Е., 1975; Тигранов Г., Александр Афанасьевич Спендиаров, 2 изд., исп. и доп., М., 1971; Слово о Спендиарове, Е., 1971; Александр Спендиаров, Статьи и исследования [сб.], Е., 1973; Будагян Г., Со Спендиаровым. Страницы воспоминаний, Е., 1999.*

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՌՅԱԿ, ստեղծվել է 1932-ին Մոսկվայի կոնսերվատորիայում՝ պրոֆ. Ե. Մ. Գուզիկովի քառյակի դասարանի հայ ուսանողներ Հրաչյա ***Բոգդանյանի*** (1-ին ջութակ), Ա. Գրիգորյանի (2-րդ ջութակ), Ա. Ազատյանի (ալտ), Գուրգեն ***Ադամյանի*** (թավջութակ) նախաձեռնությամբ: 1934-ից կոչվել է Ա. Սպենդիարյանի անվ., 1935-ից՝ ՀԽՍՀ պետ. քառյակ: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ քաղաքներում (Մոսկվա, Լենինգրադ ևն), շրջագայել է Արկտիկայում:

Սպենդիարյանի անվան քառյակը (1932). ձախից՝ Ա. Ազատյան (ալտ), Հ. Բոգդանյան (1-ին ջութակ), Ե. Մ. Գուզիկով (ղեկ.), Ա. Գրիգորյան (2-րդ ջութակ), Գ. Ադամյան, (թավջութակ)

1942–45-ին քառյակի կազմում ընդգրկվել են Հ. Աբաջյանը (2-րդ ջութակ), 1947-ից՝ Բ. Քեչեջյանը (2-րդ ջութակ) և Ս. Խաչատրյանը (ալտ): Քառյակը նպաստել է մասնավորապես ՀԽՍՀ-ում կամեր. երաժշտության տարածմանը: Քառյակի հետ ելույթներ են ունեցել Հ. Դանիելյանը, Գ. Գասպարյանը, Ս. Ռիխտերը: Գործել է մինչև 1956-ը:

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1963-ին Երևանում, ստեղծվել աշխ. խումբ՝ Վլադիլեն ***Բալյանի*** ղեկավարությամբ: Գործում է 1967-ի նոյեմբ. 25-ից, որտեղ Ա. Սպենդիարյանն ապրել է 1926–28-ին: Թանգարանի հիմնադրմանն աջակցել են կոմպոզիտորի դուստրերը՝ Մ. և Տ. Սպենդիարովանե-

Սպենդիարաֆոն

րը: Նախապես հավաքածուն ընդգրկել է 400 ցուցանմուշ՝ Մ. Սպենդիարովայի նվիրատվությունը և կոմպոզիտորի արխիվի զգալի մասը (պահվել է ԳԱԹ-ում):

Սպենդիարյանի տուն-թանգարանը

Հետագայում համալրվել է և դարձել 1300 միավոր (2015): Ցուցասրահներում ներկայացված են Ա. Սպենդիարյանի կյանքին և

Տուն-թանգարանի ցուցասրահներից

ստեղծագործությանը վերաբերող նյութեր, անձնական և այլ իրեր: Բաժիններից մեկը նվիրված է նրա ստեղծագործության երևանյան շրջանին (1924–28). ներկայաց-

Ա. Սպենդիարյանի աշխատասենյակը տուն-թանգարանում

ված են ինքնագրերը, դիմակը, կիսանդրին (երկուսն էլ՝ քանդ. Ա. Սարգսյան), աշխատասենյակը, որտեղ գործիքավորել է «Ալմաստ» օպերան, 1983-ի բեմադրության ձևավորման մանրակերտը (բեմանկարիչ՝ Ս. Արուտչյան), նկարիչ Ա. Գրիգորյանի «Ալմաստ» կոմպոզիցիան (1971), տարբեր քաղաքներում բեմադրությունների, դիրիժորների, դերակատարների լուսանկարներ, ազդագրեր ևն: Թանգարանում է նաև յուրատեսակ ինչողությամբ սպենդիարաֆոնը (անվանումը՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի) կոչվող գործիքը, որը պատրաստվել է 1905-ին՝ կոմպոզիտորի պատվերով՝ «Երեք արմավենի» սիմֆ. ստեղծագործության համար: Բաղկացած է կաշվե գոտուց, 12 զանգակներից և նման է բուրենին: Թանգարանի շենքը վերանորոգվել է 2011-ին: Թանգարանում պարբերաբար կազմակերպվում են համերգներ, դասախոսություններ, ավանդաբար ամեն տարվա սեպտ. 25-ին տեղի են ունենում սպենդիարյանական օրեր: Տնօրեններ՝ Ծ. Համբարձումյան (1972–88), Հ. Գևորգյան (1988–96), 1996-ից՝ Մարինե *Օթարյան*:

Գրկ. *Հայաստանի առաջին երաժշտական թանգարանը. Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան–50, Ե., 2017:*

Մարինա Սպենդիարովա

ՍՊԵՆԴԻԱՐՈՎԱ Մարինա Ալեքսանդրի (10.08.1903, Յալթա–01.08.1982, Երևան), երաժշտագետ, երգչուհի, գրող, մշակութ. գործիչ: Ալեքսանդր *Սպենդիարյանի* դուստրը: ՀԿՄ անդամ (1971): ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1972): Սովորել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանի երաժշտագիտ., ապա՝ երգեցողության բաժիններում (1928–30), ավարտել ՄՊԿ երգեցողության բաժինը (1934) և ասպիրանտուրան (1938): 1938-ից աշխատել է Մոսկվայի ֆիլհարմոնիայում, համերգներով հանդես եկել Մոսկվայում և այլ քաղաքներում:

Ս-ի ջանքերով 1940-ական թթ-ին գրավված Ղրիմից հոր ձեռագրերը, կյանքին ու գործունեությանը վերաբերող փաստաթղթերի մեծ մասը, անձնական իրերը ուղարկվել են Երևան:

1945-ին ենթարկվել է բռնաճնշումների և մինչև 1956-ն անցկացրել աքսորավայրերում:

Ս. մեծապես նպաստել է Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի ստեղծմանը Երևանում (1967):

Երկ. *Սպենդիարով, Ե., 1966: Երաժշտի կյանքը, Ե., 1971: Летопись жизни и творчества А. А. Спендиарова, Е., 1975.*

ՍՎԱՃՅԱՆ Վահրամ (1871–1943), կոմպոզիտոր, դաշնակահար: Ստեղծագործության մեջ գերակշռում են դաշնամուր. երկերը՝ պրելյուդներ, նոկտյուռններ, վարիացիաներ, որոնք աչքի են ընկնում ֆրանս. իմպրեսիոնիզմի ոճ. արտահայտչական առանձնահատկություններով, իսկ 22 պարերը՝ ազգ. ժող. երաժշտության տարրերի ինքնատիպ օգտագործմամբ: Եվրոպացի և հայ բանաստեղծների խոսքերով գրած ռոմանսներն արտահայտչաձևերի հոգեբան. խորությամբ, ինչերանգների թարմությամբ, նվագակցության դրամատուրգ. ամբողջականությամբ ուշագրավ էջ են բացել հայ երգարվ-ում:

Գրել է նաև տրիո, կվարտետ, կվինտետ, պոեմ՝ նվագախմբի համար, և այլ գործեր:

ՍՎԱՃՅԱՆ-ԳԱՐԱԳԱՇՅԱՆ Արաքս Հակոբի [1909, Պլովդիվ (Բուլղարիա)–1997, Նյու Յորք], երգչուհի (քնար. սոպրանո): Մինչև 1925-ն ապրել է Կ. Պոլսում, ապա՝ Բուխարեստում, 1964-ից՝ ԱՄՆ-ում: Ավարտել է Բուխարեստի կոնսերվատորիայի կամեր. և օպեր. երգեցողության բաժինները (1937): Նույն թվականից՝ տեղի օպեր. թատրոնի մեներգչուհի. դերերգերից են՝ Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Սյուզան (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»), Սոֆյա, Մանոն (Ժ. Մասնեի «Վերթեր», «Մանոն Լեսկո»), Վիոլետտա (Ջ. Վերդիի «Տրավիատա»), Չիո-Չիո սան (Ջ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ»), Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ») ևն: Համերգ. երկացանկում՝ Ֆ. Շուբերտի, Ռ. Շումանի, Ֆ. Լիստի, Յ. Բրամսի գործերից: Բուխարեստի «Կոմիտաս» երգչախմբում կատարել է Կոմիտասի, Ա. Տիգրանյանի, Բ. Կանաչյանի, Հ. Ստեփանյանի, Ա. Դոլուխանյանի և ուր. երկերից:

Ռում. երգարվ-ի ստեղծագործությունների լավագույն մեկնաբաններից էր:

Մենահամերգով հանդես է եկել Երևանում (1957):

ՍՏԱԲԱՏ ՄԱՏԵՐ (լատ.՝ Stabat mater dolorosa – Կանգնած էր մայրը վշտագին), կաթոլիկ. պոեմ [տեքստը՝ 20 x 3 տող, ոտանավոր՝ aab-ccb կառուցվածքով (վերագրվում է ֆրանցիսկյան միաբան., բանաստեղծ իտալացի Յ. դա Տոդիին (1228–1306)], որտեղ խաչված Որդու տառապանքը սգացող Տիրամայրը մարմնավորում է ընդհանրապես որդեկորույս մոր վիշտն ու հուսահատությունը: XIV դ-ում հորինվել է եղանակ, ապա Ս. Մ. գոյատևել է որպես *սեքվենցիա:* Կատարվել է «Տիրամոր յոթ վշտերը» կոչվող տոնին (սեպտ. 15), հետագայում՝ Ավագ ուրբաթին և այլ տոների: Գրական տեքստը (երբեմն՝ նաև մեղեդին) XV դ-ից նյութ է դարձել մի շարք նշանավոր կոմպոզիտորների ստեղծագործության համար: Համանուն երկեր են գրել Ժ. Դեպրեն, Պալեստրինան (ա կապելլա քառաձայն 2 երգչախմբի կոմպոզիցիա), Ջ. Բ. Պերգոլեզին (1735, սոպրանոյի ու ալտի և լար. կվարտետի համար՝ երգեհոնի նվագակցությամբ), Ջ. Ռոսսինին (1842, 4 մեներգչի, երգչախմբի և նվագախմբի համար), Ջ. Վերդին (1897, վոկալ-սիմֆ. պոեմ), XVIII դ-ում՝ Ա. Սկառլատտին և Յ. Հայդնը, XIX դ-ում՝ Ֆ. Շուբերտը, Ա. Դվորժակը, XX դ-ում՝ Կ. Շիմանովսկին, Ֆ. Պուլենկը, Ք. Պենդերեցկին և ուր.: Ս. Մ. դուրս է եկել հոգևոր երաժշտության սահմաններից և աշխարհականացել: Ս. Մ-ի սկզբն. հատվածին խոսքային տեքստով հարազատ է հայկ. միջնադար. նշանավոր «Տիրամայրն» տաղը, որն առանձնանում է տեքստի (հայտնի է միայն 1-ին տունը) ընդգծված ժող. արտահայտություններով՝

Տիրամայրն հանդէպ որդւոյն ի խաչին
կայր տրըտմագին // Եւ, լըսելով զծարաւին, հառաչմամբ լայր ցաւագին, // Ի փուշ պըսակըն դիտելով, ողբ, կոծ, վայ տայր իւր անձին. // –Աչացըս լոյս, որդեակ Յիսուս, // Ես ընդ քեզ մեռանիմ:

Մեղեդին պահպանվել է առնվազն 2՝ Ն. Թաշճյանի (Երգեցողութիւնք ս. Պատարագի, 1874, էջ 186) և Կոմիտասի (Ձեռագիր արխիվ) գրառումներով: «Տիրամայրն» տաղը երբեմն վերագրվել է Գրիգոր Նարեկացուն: Սակայն, եթե մեղեդին (Կոմիտասի հայտնաբերածը) իր խոր բովանդականությամբ և ոճ. այլ հատկանիշներով մոտ է Գրիգոր Նարեկացու այլ տաղերին, ապա խոսքերը՝ լեզվառճ. և տաղաչափ. հատկանիշներով, հավանաբար, փոքր-ինչ ուշ ժամանակի արգասիք են: «Տիրամայրն» յուրատեսակ հայկ. Ս. մ. է:

Ըստ Ռոբերտ Աթայանի

Արաքս Սվաճյան-Գարագաշյան

ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ Վահագն Պարույրի (19.04.1931, Երևան–05.07.2011, Երևան), երգեհոնահար, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (2006): Սովորել է ԵՊԿ դաշնամուրի բաժնում (Ա. Բաբաջանյանի դասարան), ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1957, Յ. Վ. Բրյուշկովի դաշնամուրի և Ի. Ա. Բրաուդոյի երգեհոնի դասարանները): Նույն թվականից, որպես մենակատար-երգեհոնահար, հանդես է եկել Լենինգրադում և մերձբալթ. քաղաքներում: 1964-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: 1964-ից դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1966-ից՝ ԵՊԿ-ում (բացել է երգեհոնի դասարան, 1970–85, նաև ՀՊՄԻ-ում, պրոֆ.՝ 1990-ից, երգեհոնի ամբիոնի վարիչ՝ 1997-ից):



Ա. Սվաճյան-Գարագաշյանը կյոլթի պահին

Ս. նպաստել է երգեհոն. արվ-ի տարածմանը Հայաստանում: Նվագացանկում՝ մինչդաս. կոմպոզիտորների, նաև Յ. Ս. Բախի, Գ. Ֆ. Հենդելի, Ք. Քուշնարյանի,

Հ. Ստեփանյանի, Տ. Մանսուրյանի և ուր. երկերից: Առաջինն է երգեհոնով կատարել Ներսես Շնորհալու, Խաչատուր Տարոնացու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու շարականները (Կոմիտասի, Մ. Եկմալյանի մշակմամբ և Ս–ի փոխադրությամբ): 1965–ի ապրիլի 24–25–ին Ս–ի և Լուսինե *Զաքարյանի* մասնակցությամբ հոգևոր երաժշտության համերգ. ծրագրով նշվել է Մեծ եղեռնի տարելիցը:

Ս–ի կատարող. արվ–ն առանձնացել է գունեղ ինչողությամբ, ոճ. ճշգրիտ մեկնաբանությամբ: Համերգներով շրջագայել է ԽՍՀՄ–ում, նաև Լոնդոնում, Փարիզում, Նյու Յորքում և այլուր: Նրա շնորհիվ հայ հոգևոր երգն ընդգրկվել է եվրոպացի բազմաթիվ երգեհոնահարների ծրագր. կատարումների ցանկում:

Վահագն Սրամբոլցյան

Հանրապետ., համամիութ., միջազգ. փառատոների, մրցույթների հանձնախմբերի անդամ և նախագահ: «Երգեհոնային գրքույկ: Հայ հոգևոր երգեր» (2005) կազմողներից է:

ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2009):

ՍՏԵՂԻ, ձայնեղանակ հայկ. մոնոդիայում. առանձնանում է բազմաճյուղ ձայնակարգային հիմքով: Հայ հոգևոր երաժշտության ութձայնի համակարգում Ս–ները անվանապես այդ համակարգից «դուրս», «լրացուցիչ» ձայնեղանակներ են՝ խարսխված Չորրորդ կողմ (Դկ) և Երկրորդ կողմ (Բկ) հիմնական ձայնեղանակների [ըստ Ս. Մալխասյանցի՝ դրանց «ճյուղավորումներն» են, այդ պատճառով էլ Ս. (ճյուղ) են կոչվում] վրա: Սակայն, ըստ էության, դրանք նույնպես ինքնուրույն ձայնեղանակներ են և, որպես այդպիսին, տեսականորեն յուրացվել են դարձյալ վաղ միջնադարում՝ բուն ութձայնի համակարգի հետ միաժամանակ ու համատեղ:

«Ս.» նշում պարունակող խազագրության պահպանված հնագույն օրինակը Մոնդ–ի № 1378 պատառիկն է (ընդգրկում է «Ուրախացիր, պըսակ կուսից» շարականը. ընդօրինակություն է X դ–ի բնագրից):

Մեզ հասած երաժշտության մեջ Ս. ձայնեղանակներում ծավալվող շարականները (տես *Շարական*) ունեն ծանր տեմպ, զարդարանք ու բազմազան ռիթմ, ազատ զարգացող, ծորուն մեղեդիներ, որոնք նաև ներառել են ժող. գործիք. երաժշտության ելևէջային տարրեր: Դրանցից յուրաքանչյուրում համադրվում կամ, մոդուլացվելով, փոխհաջորդվում են մինչև 7–8 տարբեր ձայնակարգային հնչյունաշարեր. գեղեցիկ թարմություն է առաջացնում «հարմոնիկ» քառալար պարունակող հնչյունաշարի միջամտությունը (հաճախ՝ ժող. «Կռունկ» տաղի ելևէջներով): Բկ–ի Ս. եղանակները հիմնականում Դկ–ի Ս. եղանակների կվարտա վեր հնչող տարբերակներ են: Նման ընդհանրություններ հայտնաբերվել են նաև նույն եղանակների խազագրություններում, և ենթադրվում է, որ սկզբնապես Դկ–ի և Բկ–ի Ս. եղանակների տարբերությունը միայն դրանց համեմատական բարձրության մեջ էր: Խազագրված շարականներում երբեմն հանդիպում են նաև Չորրորդ ձայնի (Դձ), իսկ մանրուսման երգերում՝ Առաջին կողմի (Ակ) Ս–ներ:

Անցյալում կատարվել են փորձեր ութձայնի համակարգը լրացնելու բոլոր 4՝ Ա–Դ ձայների Ս–ներով:

Ս. եղանակները հայկ. շարականներում մեղեդիական խոշոր կառույցի առավել զարգացած նմուշներից են:

Գրկ. *Թաշճեան Ն., Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղ–պատ, 1874: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրություն, Ե., 1959: Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977.*

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՍՏԵՂՆ, ստեղն. երաժշտ. գործիքներում՝ լծակ, որին հարվածելիս ձայն է արտաբերվում: Սովորաբար պատրաստում են փայտից. մի մասը երեսպատում են սպիտակ, մյուսը՝ սև ոսկրով կամ թաղանթանյութով: Լեզվակավոր օդհունչ ստեղնավոր երաժշտ. գործիքներում (հարմոն ևն) օգտագործում են նաև մետաղե Ս–եր:

ՍՏԵՂՆԱՇԱՐ, ստեղների որոշակիորեն դասավորված համակարգ, որի միջոցով ստեղն. գործիքներում (լար., պնևմատիկ., էլեկտր. ևն) գործում է լծակավոր մեխանիզմը կամ էլեկտրոն. կառավարումը: Մինչև XIII դ. Ս. գրեթե եղել է դիատոնիկ. (առաջին՝ C ստեղնից սկսած)՝ բացի միակ խրոմատիկ D ստեղնից, որով կատարվել են փոխադրություններ, նաև կանտուս պլանուսի (միաձայն երգեցողություն քրիստ. եկեղեցում) դիապազոնը նեղացվել և հասցվել է 2 օկտավայից փոքր ծավալի: XIV դ–ի սկզբին պոլիֆոնիայի

զարգացման շնորհիվ Ս–ի դիապազոնն ընդարձակվել է. երևան են եկել ստեղներ, որոնք համապատասխանել են խրոմատիկ աստիճաններին: XV դ–ում ստեղները (դիեզներով և բեմոլներով) դասավորվել են 2 շարքով (վերևինում՝ II և III աստիճանավորմամբ):

Ավելի ուշ ստեղն. գործիքների մեծ մասի համար Ս. դարձել է միօրինակ: XVII դ–ից ընդարձակվել է դիապազոնը՝ հասնելով 5 օկտավայի: Ժամանակակից ռոյալների դիապազոնը սովորաբար 7 օկտավա է, երգեհոններինը՝ 5 (հազվադեպ՝ ավելի): XIX–XX դդ–ում Եվրոպայում ստեղն. գործիքները գործնականում առաջատար էին. ստեղծվել են նաև նորերը (ֆիսհարմոն, ակորդեոն ևն): Փորձել են փոփոխել նրանց ձևն ու ստեղների դասավորությունը (համասեռ խրոմատիկ, աղեղնաձև ևն), սակայն Ս–ի սև ու սպիտակ ստեղներով տեսակը մնացել է անփոփոխ: Երգեհոնը և որոշ այլ ստեղն. գործիքներ (նաև



XVIII–XIX դդ–ի դաշնամուրի որոշ տեսակներ) ունեն նաև **ոտնաստեղնաշար**՝ ոտնակային (կատարող. վահանի ներքևի մասում է՝ կատարողի ոտքերի տակ, ունի 32 ստեղն): Ակորդեոնի Ս. կոճակներով է: **Մանուալ** Ս. (ձեռքի համար) տեղադրված է ոտնաստեղնաշարի հակառակ մասում: Երգեհոններն ունեն մինչև 7, կլավեսինը՝ մինչև 3, ֆիսհարմոնը՝ 2–ից ոչ ավելի Ս.: Սովորաբար տարբերվում են ռեգիստրների բարձրությամբ և տեմբրով:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ Սայաթ–Նովայի անվան (1963–ից), հիմնադրվել է 1961–ին Ստեփանակերտում, մինչև 1996–ը՝ ուսումնարան: 1972–88–ին Շուշիում գործել է մասնաճյուղ (1980–88–ին՝ ինքնուրույն կրթօջախ): Քոլեջը մինչև 2000–ը տվել է շուրջ 1200 շրջանավարտ (Այսրկովկաս. մրցույթի դափնեկիրներ Շ. Գևորգյան, Վ. Գրիգորյան, նաև ԵՕԲԹ մեներգչուհի Լ. Օվչյան, ԼՂՀ ժող. արտիստ Ն. Ալավերդյան, կոմպոզիտորներ Ս. Մարկոսյան, Մ. Մնասյան, Ա. Նասիբյան, Է. Ղազարյան, մասնագետ–մանկավարժներ և ուր.): Քոլեջում

գործում են դաշնամուրի, լար., փող., ժող. գործիքների, խմբավարության, մեներգեցողության, երաժշտության տեսության և

Ստեփանակերտի երաժշտական քոլեջը

այլ բաժիններ, ժող. գործիքների նվագախումբ, երգչախումբ: Քոլեջին կից բացվել է արվ–ի վարժարան (1998):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հարո Լևոնի [13(25). 04.1897, Ելիզավետպոլ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–09.01.1966, Երևան], կոմպոզիտոր, հաս. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1960): 1939–47–ին՝ ՀԿՄ նախագահ: Սովորել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. տեխնիկումում (1923–26), ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1930): Հայաստանի երաժշտ. մշակույթի զարգացման գործի կազմակերպիչներից էր: 1930–34–ին դասավանդել է ԵՊԿ–ում:

Հարո Ստեփանյան

Ս–ի երկերն աչքի են ընկնում արտահայտիչ մեղեդայնությամբ, կերպարների ճշգրիտ մեկնաբանմամբ: Ստեղծագործության հիմնական թեման Հայաստանն է, բնությունը, ժողովրդի պատմ. ճակատագիրը: Գրել է «Քաջ Նազար» (1934), «Սասունցի Դավիթ» (1936), «Լուսաբացին»

Տեսարան Հ. Ստեփանյանի «Հերոսուհի» օպերայի բեմադրությունից (1950, ռեժ.՝ Վարդան Մ. Ամեմյան)

(1938), «Նունե» (1947), «Հերոսուհի» (1950, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951) օպերաները: Հայ առաջին կոմպոզիտորներից է, որը հայկ. ժող. երաժշտության ինտոնացիաների

Ռաֆայել Սթեփանյան

Ռոբեն Սթեփանյան

հիման վրա ստեղծել է մեծ կտավի սիմֆ. երկեր: Նրա 3 սիմֆոնիաներից (1944, 1945, 1953) առանձնանում է առաջինը:

Ս-ի կամեր-գործիք.՝ 4 լար. քառյակ, դաշնամուրի, ջութակի, թավջութակի սոնատներ, դաշնամուր. պիեսներ ևն, նաև վոկալ երկերում կարևոր տեղ են գրավում հոգերան., փիլ., քնար., բնության բանաստեղծ. կերպարները: Ռոմաններ և երգեր է գրել Նահապետ Քուչակի, Մկրտիչ Նաղաշի, Նաղաշ Հովնաթանի («Միջնադարյան քնարերգությունից»), Դ. Վարուժանի («Հացին երգը»), Վ. Տերյանի, Գ. Սարյանի, Ա. Իսահակյանի, Հ. Շիրազի, Սարմենի, նաև Արևելքի բանաստեղծների տեքստերով: Ս-ի երաժշտությունն ունի ազգ. վառ նկարագիր: Հեղինակ է նաև «Լուրդա-լուր» (ըստ Վրթ. Փափազյանի, 1944) սիմֆ. պոեմի, «Պարային սյուիտի» (1951), դաշնամուրի կոնցերտի (1959), ռապսոդիայի (1962)՝ դաշնամուրի և նվագախմբի համար, «Մեծ եղեռն» (1964) օրատորիայի, նաև «Ղարղադիլը և ուրիշները» (1961), «Հին ծանոթներ» (1974) պատմվածքների ժող-ների և այլ գործերի:

2017-ին ԵՕԲԹ-ում, նաև Շուշիում (նախագծի հեղինակ՝ Սարինա *Ավթանդիլյան*) ինչել է Ս-ի «Սասունցի Դավիթ» օպերայի վերախմբագրված տարբերակի համերգ. կատարումը:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (2) և «Պատվո նշան» շքանշաններ:

Գրկ. *Քաջախյան Մ., Հարո Սթեփանյան, Ե., 1962: Тиграно в Г., Аро Степанян. Очерк жизни и творчества, М., 1967.*

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ռաֆայել Հովհաննեսի (02.12.1926, Երևան–31.08.1987, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1970): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի տես-կոմպոզիցիայի բաժինը (1957): 1957–60-ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1969–72-ին՝ Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանում (տեսության բաժնի հիմնադիր-ղեկ.), 1972–87-ին՝ ԵՊԿ-ում (պրոֆ.): 1961-ից՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող: Հեղինակ է մի շարք գիտ. հոդվածների («Հարմոնիայի ազգային ինքնատիպության մասին», «Ստեղծագործության ցնծություն», «Կվինտակորդներն ու կվարտակորդները Կոմիտասի ստեղծագործության մեջ», «Արամ Խաչատրյանի հարմոնիայի մի քանի առանձնահատկությունները» ևն, բոլորը՝ ռուս.):

Երկ. *Երվանդ Սահառունի, Ե., 1962:*

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ռուբեն Գերասիմի [16(29).12.1902, Բաքու–08.03.1984, Մոսկվա], դիրիժոր, կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1931, Դ. Լեկգերի դասարան), դիրիժորության (1936, Կ. Սարաջևի դասարան) բաժինները: 1938–65-ին՝ ԵՕԲԹ դիրիժոր: Ղեկավարել է Ա. Տեր-Ղևոնդյանի «Անահիտ» (1940), Ա. Խաչատրյանի «Գայանե» (1947), Գ. Եղիազարյանի «Սևան» (1955), Է. Հովհաննիսյանի «Մարմար» (1957), Է. Խաղագործյանի «Սոնա» (1957) բալետների, Յ. Գևորգյանի «Խարույկ» օպերայի (1959) առաջին բեմադրությունները:

Գրել է սիմֆոնիաներ («Սիմֆոնիա-պոեմ», 1942, 1952), սիմֆ. պոեմ (1945), կամեր-գործիք. անսամբլներ (լար. կվարտետներ, 1940, 1965, ևն), խմբերգեր, ռոմաններ, երգեր և այլ ստեղծագործություններ: 1965–66-ին դասավանդել է Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտամանկավարժ. ինստ-ում:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ռուզաննա Վաչիկի (ծ. 01.04.1973, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2004), դոցենտ (2006): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության (1992), ԵՊԿ վոկալ-տես. ֆակ-ի երաժշտագիտության (1997) բաժինները և ասպիրանտուրան (2002, երկուսն էլ՝ ղեկ.՝ Է. Փաշինյան): 1997-ից դասավանդում է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1998-ից՝ ԵՊԿ-ում: Ուսումնասիրությունները վերաբերում են հայ և համաշխ. երաժշտության տեսությանը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ Առաջին, V դ-ի բանաստեղծ-երաժիշտ: Սյունաց եպիսկոպոս: Հայկ. Շարականոցում պահպանվել են նրա 80 երգերը (ութ շարքով), յուրաքանչյուր ձայնեղանակում՝ 10 երգ: Հնագույն և հազվադեպ գեղեցկությամբ աչքի ընկնող այդ երգերը կոչվում են «Յարութեան աւագ օրհնութիւնք» և կատարվում են Զատկին և առհասարակ բոլոր կիրակիներին (Սբ Հարությունը խորհրդանշող օրերին): Ստեղծվել են հայոց հնագույն Սաղմոսարան-Ժամագրքում ընդգրկված մարգարեական 10 օրհնությունների հարաասությամբ և սկզբնապես երգվել են վերջիններին կից՝

որպես կցուրդներ: Հորինվել են հայ հոգևոր ինքնուրույն երգի զարգացման վաղ շրջանում (ոչ ուշ քան V դ-ի կեսը): Բոլոր 80 երգերի ձայնակարգ. հիմքը պարզ է. ոչ մեկը բազմաձայուղ-ստեղի կամ զարտուղի եղանակով նմուշ չէ: Զարտուղություն չկա նաև դարձվածք տիպի (2 շարքում) ձայնեղանակներում: Երգերի ընթացքը միջակ է կամ չափավոր, եղանակները փոքրաձավալ, սակայն աչքի են ընկնում մոնումենտալ ոճով և հնչյունների իմաստավոր փոխհարաբերությամբ: Նկատելի են նաև երգերի զուտ գեղ. արժանիքները՝ տրամադրության խորություն, խոհականություն, ապրումների անկեղծություն, արտահայտության անմիջականություն: Նրանց մի շարք նմուշներ շփման եզրեր ունեն Սահակ-Մեսրոպյան այն երգերի հետ, որոնք զերծ են հետսամույծ ակնհայտ փոփոխություններից: Ս. Ս. ստեղծագործաբար կիրառել է իր մեծ ուսուցիչների երաժշտաբանաստեղծ. արվ-ի լավագույն ավանդույթները: Որոշ հետազոտողներ Ս. Ս. Առաջինին նույնացնում են ***Սյունեցի*** Երկրորդի հետ:

Գրկ. *Թահմիզյան Ն., Սյունիքի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնութիւնները, Էջմիածին, 1973, № 2:*

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ, Ստեփանոս Քերթող, Ստեփանոս Սյունեցի Երկրորդ (660/670, Դվին–21.07.735, թաղված է Թանահատի վանքում), մատենագիր, աստվածաբան, քերական, թարգմանիչ, բանաստեղծ, երաժիշտ: Սովորել է Դվինի կաթողիկոսարանի, Մաքենյաց վանքի դպրոցներում, Սյունիքի վարդապետարանում: Կ. Պոլսում սովորել է հուն. և լատ., ուսումնասիրել աստվածաբանություն, փիլիսոփայություն, երաժշտություն ևն, ուսումը կատարելագործել է Աթենքում: Դվին վերադառնալուց որոշ ժամանակ անց ձեռնադրվել է Սյունիքի եպիսկոպոս:

Նրա «Ի խորհուրդ Եկեղեցւոյ», «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ» և այլ աշխ-ներ ուշագրավ են եկեղեց. արարողակարգին առնչվող պատարագների տես. բովանդակության ուսումնասիրման, եկեղեց. ճարտարապետության առանձին մասերի բացատրության համար:

Որպես բանաստեղծ-երաժիշտ՝ հիշատակվել է միջնադար. աղբյուրներում: Նրան են վերագրվում շարականների



Հատվածներ Սրեփանոս Սյունեցի Առաջինի «Յարութեան աւագ օրհնութիւնք» շարքից

ամբողջ. շարքեր («Մարտիրոսաց և ննջեցելոցը» ևն), Հարության Ավագ օրհնությունները, Սբ Խաչին նվիրված տաղեր ևն, նաև Հինանց և Պահոց ստողոգիական սաղմոսները, որոնք հետագայում ընդգրկվել են Մանրուսում ժող-ներում:

Ս. Ս. որպես նշանավոր երաժիշտ-տեսաբանի անվան հետ են կապվել մի շարք կարևոր տեղաշարժեր և բարեփոխումներ. ութձայն համակարգի տես. իմաստավորումն ու բարեկարգումը, կանոնի ժանրի վավերացումը, խաղերի կիրառման նախն. փորձեր (տես ***Խազագրություն***): Դիոնիսոս Թրակացու «Մեկնութիւն քերականին» երկում Ս. Ս. ի մի է բերել V–VII դդ-ի երաժշտ. գեղագիտությանը վերաբերող Դավիթ Անհաղթի, Դավիթ Քերականի և իր ուսուցիչ Սովսես եպիսկոպոս Սյունեցու ձեռքբերումները՝ հարստացնելով այդ ոլորտն իր դիտարկումներով

Վաղարշակ Սրվանձտյան

և դատողություններով: Աշխ-յան մեջ անդրադարձել է նաև երաժշտարվ-ի դասակարգմանը, գեղ. կերպարի ստեղծման ձևերին ու հնարքներին, գուսան. և հոգևոր երաժշտության փոխհարաբերության և այլ խնդիրների:

Գրկ. *Զահուկյան Գ., Քերականական և ողղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV դդ.), Ե., 1954: Հակոբյան Գ., Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V–XV դդ.), Ե., 1980: Քյոսեյան Հ., Խորհրդանշանը Ստեփանոս Սյունեցու եկեղեցաբանական ժառանգության մեջ, Էջմիածին, 1998, № 10–11: Արևշատյան Ա., Չայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Ե., 2013: Նույնի, Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ), «Հայ արվեստի հարցեր», 2, Ե., 2009, էջ 23–34: L'identité de Step'anos Siwnec'i, REArm, t. 30, 2005–07, pp. 401–410.*

ՍՐԻՆԳ, երկայնական-ֆլեյտային տիպի երաժշտ. գործիքների ընդհանուր անվանումը: Հոմանիշ է հուն. սիրինգսին: Ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»՝ երկուսն էլ (հավանաբար) փոխառություններ են «փոյուգականից»: Հին Հունաստանում «սիրինգս» անվանել են ոչ միայն հովվական միափող գործիքը, այլև բազմափող «Պանի ֆլեյտան» («Իլիական», X, 13):

Սրինգ

Հայ-ում «Ս.» բառը լայնորեն գործածվել է դեռևս Աստվածաշնչի թարգմանություններում: Կոմիտասն այդ անվանումը մասնավորեցրել է ժող. *բլուլ* գործիքին:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՍՐՎԱՆՁՏՅԱՆ Վաղարշակ Միքայելի (1891, Վան–16.04.1958, Ֆրեզնո), կոմպոզիտոր, բանահավաք: 1907-ից ապրել է Կ. Պոլսում: 1910-ից աշակերտել է ***Կոմիտասին***: 1919-ից, որպես կատարող-երաժիշտ, կատարելագործվել է Փարիզում, ապա՝ Բեռլինում: Մի քանի տարի աշխատել է Եգիպտոսում: 1928-ից հաստատվել է Բոստոնում, 1948-ից՝ Ֆրեզնոյում: ԱՄՆ-ի քաղաքներում կազմակերպել է երգչախմբեր, հանդես եկել համերգներով:

Սոբդոմինանտային անպտղակորդ դո մաժորում

Գրել է նվագախմբ., գործիք., վոկալ և այլ երկեր: Զբաղվել է ժող. երգերի գրառմամբ, ուսումնասիրությամբ, մշակմամբ («Հայ գեղջուկ երգեր», «Հոգու ձայներ», «Նոր երգեր»): Նրա հրատարակած երգերն ամփոփվել են «Հայ երգեր», «Հոգիի ձայներ», «Նոր երգեր», «Հայ պարեր» և այլ ժող-ներում:

Ըստ Յիցիլիա Բրուսյանի

ՍՈՒԲԴՈՄԻՆԱՆՏ (լատ.՝ sub – ներքևի ***դոմինանտ***), 1. մաժոր և մինոր լադերի գլխ. աստիճաններից մեկի՝ IV աստիճանի անվանումը, նշանակվում է լատ. S տառով կամ IV թվանշանով: 2. Երեք հիմնական ֆունկցիաներից մեկը, որին պատկանում

Սոբդոմինանտային եռահնչյուն, անբարակորդ և կվարտսեքստակորդ

են նաև II և VI աստիճանների վրա կառուցված ակորդները:

ՍՈՒԲԱՔՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ, դրամա-օպերետ. խումբ: Հիմնադրվել է 1923-ին ԱՄՆ-ում: Թատերախմբի հիմնական անդամները դերասաններ Սեդրակ և Մաշա Սուրաբյան ամուսիններն էին: Ս. Սուրաբյանը (Բաղդասարյան, 1896–1956) բեմ. գործունեությունն սկսել է 1912-ին Թիֆլիսի Հայոց դրամատիկ. խմբում: Մ. Սուրաբյանը (Դավթյան, 1899–1978) առաջին անգամ հանդես է եկել 1918-ին Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար): Երաժշտ. կրթությունն ստացել է Մոսկվայում: Միասին գործել են 1918-ից՝ Կովկասում, 1919-ից՝ Կ. Պոլսում, 1923-ից՝ ԱՄՆ-ում: Խաղացանկում՝ հայկ., թարգման. դրամաներ և օպերետներ՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Շիրվանզադեի «Նամուս», Ա. Տիգրանյանի «Անուշ», Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի», Ի. Կալմանի «Սիլվա» ևն: Հյուրախաղերով շրջագայել են Ֆրանսիայում, Անգլիայում, Հվ. Ամերիկայում: Գործել է մինչև 1955-ը:

Գրկ. *Սուրաբյան Ս., Կյանք և թատրոն, Ե., 1969:*

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ստեփան Մանուկի (ծ. 03.03.1946, Լենինական), գալարափողահար, երաժշտագետ, կոմպոզիտոր: ՀԿՄ անդամ (2013-ից): Ավարտել է Լենինականի Ք. Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանի (1963), ԵՊԿ գալարափողի (1969), երաժշտագիտության (1976, Ռ. Ստեփանյանի դասարան) և կոմպոզիցիայի (1990, Ղ. Սարյանի դասարան) բաժինները: 1966–72-ին՝ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության սիմֆ. նվագախմբում, 1972–81-ին դասավանդել

է Երևանի երաժշտ. դպրոցներում, 1989-ից՝ ԵՊԿ-ում (պրոռեկտոր՝ 1992–2011-ին), Գեղագիտության ազգ. կենտրոնում կազմակերպել է մանկ. ֆիլհարմոնիա (1981–84): 1984–88-ին՝ Լենինականի Ք.Կարա-Մուրզայի անվ. երաժշտ. ուսումնարանի տնօրեն:

Հեղինակ է սիմֆ., կամեր., վոկալ-գործիք., երգչախմբ. ստեղծագործությունների («Խմբերգեր մանկական երգչախմբի համար», 2010, ևն):

ՀՀ ԹՄՄ (2008), Միջազգ. երաժշտ. փառատոնի Հատուկ (2012, Հալլե) մրց-ներ:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Տիգրան (ծ. 1936, Նոր Ջուղա՝ Իրան), երգիչ, խմբավար: Վաղ տարիքում նվագել է մանդոլին և ջութակ, շեփորի դասեր է առել Սհամմադ Նիքնամից: Երգել է եկեղեցում (երգեցողության դասեր է առել Ներսես քահանա Դավթյանից), 1953-ին՝ Նոր Ջուղայի Հայուհյաց բարեգործականի (գեղ. ղեկ.՝ Վ. Պարթև), 1957-ին՝ Նոր Ջուղայի (ղեկ.՝ Գ. Բարխուդարյան) երգչախմբերում: 1956-ին դասավանդել է դպրոցում, հիմնադրել դպրոց. երգչախումբ, ելույթներ ունեցել հանդիսություններում, տոնախմբություններում:

1958-ին տեղափոխվել է Թեհրան, հաճախել պետ. կոնսերվատորիայի երեկոյան դասընթացներ (տեսություն, սոլֆեջջո, հարմոնիա, շեփոր): Ձայնավարժության և խմբավարության դասեր է առել երգչուհի Է. Բաղչեբանից: Որպես մեներգիչ՝ հանդես է եկել Թեհրանի կոնսերվատորիայի, օպեր. թատրոնի, «Կոմիտաս» երգչախմբերում: Հիմնադրել և ղեկավարել է «Հ. Թովմասյան» դպրոցի խառը մանկապատանեկան (1975), Հայ մշակութ. «Սիփան» միության, «Կոմիտաս» (1978), «Արաքս» օրիորդաց դպրոցի (1980–90), «Անահիտ» միության «Զվարթնոց» մանկապատանեկան (1982), Թեհրանի «Փարոս» երաժշտ. ուսումնարանի քառաձայն (2006) և «Սամին» երգչախմբերը, Հայ համալսարանականների ընդհանուր միության «Նարեկ» անսամբլը (1993): 2002-ից դասավանդում է Թեհրանի երաժշտ. ուսումնարաններում:

Թողարկել է «Ալագյազ» (ազգ., ժող. երգեր), «Լեռ Սրբազան» (իր հեղինակած մեներգ, զուգերգ, քառաձայն) ձայնասկավառակները: Նրա երգերը հնչել են նաև Հայաստանում՝ «Կիլիկիա» երգչախմբի կատարմամբ:

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, հայ երաժշտության կարևորագույն բաղկացուցիչներից, որով ամբողջանում են հայ երաժշտարվ-ի պատմ., գեղագիտ., ոճ. արժեքներն ու բնութագիրը: Չնայած տարբեր ազգ. մշակույթների ազդեցությանն ու ոճ. բազմազանությանը՝ Սփյուռքի հայ ստեղծագործողներն իրենց արվ-ը խարսխել են ազգ. երաժշտարվ-ի հիմնական միտումներին, նորովի օգտագործել հայ ժող., ինագույն երաժշտության լավագույն նմուշները, հետևել Կոմիտասի ավանդույթներին, Ա. Խաչատրյանի ստեղծագործ. սկզբունքներին, անդրադարձել Հայաստան երկրին, նրա անցյալին ու ներկային, դիմել հայ քնարերգությանը ևն:

Սրեփան Սոքիասյան

ԱՄՆ-ում XX դ-ի 1-ին տասնամյակից համախմբվել է հայ երաժիշտ- ստեղծագործողների մի խումբ, որի առաքելությունն ազգ. պրոֆեսիոնալ երաժշտությունն օտար ափերում պահպանելն էր: Հայ երաժշտարվ-ի զարգացման նախաքայլերից էր խմբերգ. արվ-ի տարածումը: Առաջին կոմպոզիտորներից էր Գ. Գալֆայանը. 1913-ից գրել է հիմնականում հայրենասիր. երգեր («Ապրիր, Հայաստան», «Ալեչարչար», «Մինչև երբ» ևն), հայտնի է նաև նրա «Պատարագը»: Բացառիկ գործունեություն է ծավալել Գրիգոր *Չոլոյին*. հավաքել, ձայնագրել ու մշակել է ժող. երաժշտության բազմաթիվ նմուշներ, գրել է մեներգեր ու խմբերգեր («Հայ երգ-փունջ», տետր 1–4), ստեղծել երգչախմբեր:



Յիցիլիա Բրուտյանի «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները» գրքի (1996) փիլդոսաթերթը

Կոմիտասի սաներից Վաղարշակ *Սրվանձտյանը* հավաքել ու մշակել է մի շարք ժող. (նաև մանկ.) երգեր, խմբերգեր և օպերաներ:

Համբարձում *Պերպերյանի* բազմաժանր ստեղծագործությունն աչքի է ընկնում ազգ. ինքնատիպությամբ, հնչերանգային և ռիթմական ինքնատիպ համադրումով:

Նշանավոր կոմպոզիտոր Ալան *Հովհաննեան* ուսումնասիրել է արլ. և հայկ. հնագույն երաժշտությունը, մշակել համամարդկայինին առնչվող հոգեբան. հնչերանգային ու ռիթմական խոր ընդհանրացումներ: Մեծ եղեռնի զոհերի հիշատակին է նվիրված նրա «Խորհուրդ նահատակաց» երկը՝ ուդի և լար. քառյակի համար:

Ռիչարդ *Յարդումյանի* գործերից հանրահայտ են դաշնամուրի կոնցերտը, «Հայ-

Կոմպոզիտոր Տան Եապան (ԱՄՆ)

կական սյուիտը» (4 մաս), 2 սիմֆոնիան, «Պատարագը» և այլ երկեր:

Հրանտ ***Բեկլարյանը*** գրել է «Սիմֆոնիկ դիվերտիմենտ», «Յոթ բլուրների արձագանքը» կանտատը, կոնցերտներ, երգաշարեր և այլ գործեր:

Լորիս ***Չոպանյանի*** ստեղծագործությունն առանձնանում է հայկ. թեմաներով գրված գործերով՝ «Հայկական ռապսոդիա», «Նահատակաց ապրիլ 24-ի» սիմֆոնիան, «Հայկական պարեր», «Երգեր Արարատին» ևն: ԱՄՆ-ում հանրաճանաչ են նաև կոմպոզիտորներ Պ. Գալաջյանը, Հ. Բոյաջյանը, Վազգեն ***Մուրադյանը***, Շառլ ***Ամիրխանյանը***, Միշել Էքիզյանը, Ռ. Շաքարյանը և ուր.:

Հայկ. երաժշտության պահպանմանն ու տարածմանը նպաստում են նաև երաժիշտ-կատարողները: Ամերիկահայ գաղթավայրի ամենավաղ շրջանի երգիչներից է Պաոլո ***Մանանյանը***, որը երկար տարիներ երգել է «Մետրոպոլիտեն օպերա»-ում՝ հռչակավոր երգիչներ Բ. Ջիլլիի և Տ. Սկիպայի հետ:

«Չոպալ» (Երազ Սարգարյան, Անահիտ Թեքերյան, Թենի Արեյան) վոկալ եռյակը (2002, ԱՄՆ)

Նույն թատրոնի առաջնակարգ երգիչներից էր Արման ***Թոքատյանը***, որին ամերիկ. մամուլը համարել է Է. Կառուզոյի հաջորդը: «Մետրոպոլիտեն օպերա»-ի հանրահայտ երգչուհիներից էին Լուսին ***Ամարան*** և Լիլի ***Չուգասզյանը***. համերգ. երկացանկում՝ նաև հայկ. երգարվ-ի լավագույն նմուշներից: Երգարվ-ի բացառիկ մեկնաբաններից են Քեթի ***Բերբերյանը***, Ա. Դարյանը, Արա ***Բերբերյանը***, Ա. Թերզյանը,

Լոս Անջելեսի Իրանահայ միության երգչախումբը (2014, խմբավար՝ Միքայել Ավետիսյան)

Ռոզ ***Զուլալյանը***, Շաքե ***Վարդենիսյանը***, Զ. Արամը, Մ. Քրմոյանը, Ն. Կազանչյանը և ուր.:

Ամերիկահայ գաղթավայրում 1920-ական թթ-ից գործել է դաշնակահարների մի քանի սերունդ. ճանաչված են Ս. Արփին, Հ. Այճյանը, Լ. Շիրինը, Անահիտ ***Ամեմյանը***, Լյուսի ***Իշխանյանը***, Ֆ. Թագակչյանը, Լուիզ ***Ոսկերչյանը***, Շահան ***Արծրունին***, Փ. Բեկլյանը և ուր.:

Ջութակահարների ավագ սերնդից է Գիսակ ***Վրույրը***, որը նաև անվանի մանկավարժ էր. Լոս Անջելեսում հիմնադրել է «Կոմիտաս» (1928) երգչախումբը: Նրա ժամանակակիցն էր ջութակահար Հայկ ***Կյուրենյանը***, որն ԱՄՆ-ում 1919-ից որպես մանկավարժ փոխարինել է բելգիացի հռչակավոր ջութակահար Է. Իզաիին: Հայտնի են նաև Իվան ***Գալամյանը***, Աիդա և Անի ***Գավաֆյանները***, Անի Աճեմյանը, Վ. Գանթարջյանը, Փ. Ունջյանը, Նորայր ***Արմանը***, Վարուժան և Միհրան ***Գոճայանները,*** Սիվսես ***Պողոսյանը***, Վարդի ***Սանուելյանը*** և ուր., նոր սերնդից՝ երգիչներ Ադիս Հարմանդյանը, Գառնիկ Սարգսյանը, Փոլ Բաղդատյանը, Հարութ Բալյանը, Սեպուհ Սիմոնյանը, Ենովք Տեր-Հակոբյանը, Ռոս ***Բաղդասարյանը***, Գրեմմիի մրցանակակիր Արմեն Չաքմաքչյանը, Սերգեյ Բաբայանը:

Ճանաչված են հանրահայտ ռոք երաժիշտ Սերժ ***Թանկյանը***, ալտահար Քիմ ***Քաշքաշյանը***, թավջութակահարներ Վ. Պերպերյանը, Հ. Թաթյանը, Ն. Դերյանը, երգեհոնահարներ Պերճ ***Ժամկոչյանը***, Հ. Մարտիրոսյանը, Զ. Մեմլին, Մ. Սարյանը, տավղարահարուհի Կ. Կարագյոզյանը, ֆլեյտահարուհի Ս. Մուղալյանը, հարված. գործիքներ նվագողներ Զ. Դոլմայանը, Պ. Մուրադյանը, Է. Խաչատրյանը, կիթառահար Տարոն Մալաքյանը և ուր.: Ամերիկահայ նշանավոր դիրիժորներից էր Ալեքսանդր ***Ասլանովը***. ռուս կոմպոզիտոր Ս. Ս. Պրոկոֆևն իր 2-րդ կոնցերտը նվագել է նրա ղեկավարությամբ (1913): Հայտնի են նաև Հ. Փափազյանը, Զորջ ***Փեհլիվանյանը***, Օ. Մինասյանը, Հ. Բեկյանը, Վ. Ալանյանը, Հենրիկ և Արմեն (նաև ջութակահար) ***Անասյանները***, Արամ ***Ղարաբեկյանը*** և ուր.:

Ամերիկահայ երաժշտարվ-ի զարգացման ընթացքը պայմանավորվել է նաև խմբերգ. արվ-ով. ստեղծվել են «Կոմիտաս», «Պրո-Կոմիտաս», «Արաքս», «Անի», «Քնար», «Սիփան», Նյու Յորքի Սրբոց նահատակաց եկեղեցու և այլ երգչախմբեր: Գործում են նաև «Անդրանիկ», «Վահագն», «Սարդարապատ», «Սևան», «Հայրենիք» և երգի-պարի այլ անսամբլներ:

Ֆրանսիան սփյուռքահայ երաժշտարվ-ի զարգացման գլխ. կենտրոններից է: Ելնելով տեղի ազգ. կյանքի առանձնա-

հատկություններից՝ այստեղ մասնավորապես կոմպոզիտորները միաժամանակ ծավալել են խմբավար-կատարող., երաժշտագիտ. և գրական-հաս. գործունեություն: Դաշնակահար Վահրամ ***Սվաճյանը*** գրել է դաշնամուր. պրելյուդներ, նոկտյուռններ, բազմաթիվ ռոմաններ և այլ գործեր: Կոմպոզիտոր և ջութակահար Օնիկ ***Պերպերյանը*** հայտնի է հատկապես սիմֆ. երաժշտության ոլորտում: Վարդան ***Սարգսյանը*** Մարսելում կազմակերպել է Հայ երաժշտ. միությունը, Փարիզում ղեկավարել «Սիփան-Կոմիտաս» երգչախումբը: Կոմպոզիտոր Գուրգեն ***Ալեմշահի*** ինքնատիպ ստեղծագործությունն աչքի է ընկնում բացառիկ երգայնությամբ. իր մեղեդիներին բնորոշ արլ. երանգն ու իմպրովիզացիան համադրել է հայկ. հոգևոր և բուն ժող. երաժշտության տարրերի հետ: Ա. Դարբինյանի գործերից ուշագրավ են «Նոր երգեր» շարքը (շուրջ 30 մեներգ և 20-ից ավելի խմբերգեր, խոսք՝ Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Պ. Դուրյանի և ուր.): Սիմֆ. երկերից են՝ «Կովկասյան սիմֆոնիա», «Գեղջկական համերգ» ևն: Կոմպոզիտոր և երգեհոնահար Րաֆֆի Ուռկանճյանը գրել է 3 պիես՝ շեփորի և թավջութակի համար, «Մահվան երգը» (ըստ Ֆ. Գառնիեի)՝ ֆլեյտայի, ալտի և տամ-տամի, «Վարիացիաներ»՝ երգեհոնի համար, ևն: Ավետիս ***Մեսումենցն*** ստեղծել է 4 սիմֆոնիա, 3 օպերա, բալետ, 3 օպերետ, կամեր. երկեր, մեներգեր ու խմբերգեր:

Ժորժ ***Կառվարենցը*** գրել է երգեր (հիմնականում՝ Շ. Ազնավուրի խոսքերով՝ «Փարիզի կամուրջները», «Սերը», «Լույսը» ևն) և կինոերաժշտություն («Երկնային ամպրոպ», 1965, «Սամարղանդ», «Թեհրան-43», 1981, և այլ ֆիլմերի համար):

Իր երաժշտության հայկ. շնչով հայտնի է կոմպոզիտոր Միշել Լեգրանը: Ֆրանսահայ կատարող. արվ-ը բազմազան է ժանրերով, կատարման եղանակներով, ազգ. ու օտար երկացանկով: Գաղթավայրի երաժշտ. կյանքում առանձնանում է Արմենակ ***Շահմուրադյանի*** արվ-ը. ***Կոմիտասի*** ազգ. երգարվ-ի սկզբունքները նա ամրապնդել է նաև ֆրանսահայ երաժշտության մեջ: Հիշարժան է Մարգարիտ և Շուշանիկ ***Բարայանների*** գործունեությունը. Մարգարիտը ճանաչված երգչուհի էր և լավագույն մանկավարժներից: Շուշանիկը մշտապես մասնակցել է Կոմիտասի կազմակերպած համերգներին՝ մասնավորապես մեկնաբանելով նրա դաշնամուր. պարերը: Ֆրանսիայի օպեր. թատրոններում են երգել Ա. Գավուքչյանը, Թ. Թումանովան, Հ. Թորոսյանը, Ա. Քարրոն (Մուրադ Ամիրխանյան) և ուր.: Ժիրայր ***Մերգոյանը*** մոտ 30 տարի երգել է Փարիզի «Գրանդ օպերայում»: Ս. Նիկողոսյանը կատարել է 20-ից ավելի օպեր. դերերգեր, համերգ. ծրագրերում՝ նաև հայկ. երգեր: Ճանաչված են երգչուհիներ Ծ. Տեր-Պետրոսյանը, Ալիս ***Շահմիրյանը***, Լին ***Դուրյանը***, դաշնակահարներ Րաֆֆի ***Պետրոսյանը***, Մարգարիտ ***Միրիմանովան***, Անի ***Կասեր-Ղազարյանը***, Էժենի ***Ակեյանը***, Ա. Աճեմյանը, Ա. Մանուկյանը, դիրիժորներ և խմբավարներ Ա. Սիրանոսյանը, Կ. Ափրիկյանը, Գ. Յամբեկյանը, թավջութակահար Ն. Ալալեմճյանը, ջութակահարներ Ժան ***Տեր-Մերգերյանը***, Ի. Միրիմանովան և ուր.: Էստրադայում համաշխ. ճանաչում ունի Շառլ ***Ազնավուրը***. իր արվ-ում օգտվել է ֆրանս. շանսոնի արտահայտչամիջոցներից, ներդրել է նաև տարրեր հայ միջնադար. տաղերից և Սայաթ-Նովայի ասերգ. ոճից: Հայտնի են նաև Ադիդա ***Ազնավուրյանը***, Սիլվի ***Վարդանը***, Մարթեն ***Յորգանցը***, Ռոզի ***Արմենը***, Ժ. Դուվալյանը, Լ. Սարյանը, Ա. Սարգիսը, Գ. Գնթունին, Պատրիկ ***Ֆիորին***, Ե. Ալթունյանը և ուր.: Ֆրանս. ջազում ճանաչված են Գ. Քելեկյանը, Ս. Մալումյանը, Ա. Էքյանը, ռոք-նռոլում՝ Դ. Ժերարը:

Ժորժ Կառվարենց (ձախից) և Շառլ Ազնավուր

Նիսի «Սայաթ-Նովա» երգչախումբը (խմբավար՝ Խաչիկ Յրմագյան)

Ֆրանսիայում գործում են «Սիփան-Կոմիտաս», «Կոմիտաս», «Սահակ-Մեսրոպ», «Սայաթ-Նովա», «Ակն», «Գարուն» (մանկ.) և այլ երգչախմբեր, նաև «Քատրա»-ն (Հայ արվ-ի զարգացման միություն), Ա. Խաչատրյանի երաժշտ. հիմնադրամը: Պարախմբերից հայտնի են «Կալինկան», «Հայկական կովկասյան պարախումբը», «Նավասարդը», պարողներից՝ Ա. Վար-

Դաշնակահար Անդրե Մանոկյան

Կոմիտասը սաների հետ Կ. Պոլսում (1914)



Արամ Անդոնյանի «Գանձարան» գրքի (1920, Կ. Պոլիս) շապիկը

գասը, Ա. Թարոնը, Գ. Սոմճյանը, Ա. Ավետիսյանը, Է. Բոլիկյանը և ուր.:

Կոստանդնուպոլիսը հայկ. ազգ. երաժշտարվ–ի զարգացման, միջնադար. նշանակալի ձեռքբերումների վերածնման և պահպանման ինքնատիպ կենտրոններից էր: Այստեղ է ստեղծվել հայ նոր նոտագրությունը (Հ. Լիմոնճյան, 1813–15) և գրառվել ինչպես ժող., այնպես էլ հոգևոր (Ն. Թաշճյան) երաժշտության նմուշներ: Կոմպոզիտոր և դիրիժոր Կարապետ Փափազյանի ջանքերով ստեղծվել են 1–ին երաժշտ. խմբերը, որի շնորհիվ զգալիորեն բարձրացել է երաժշտության դերն օսմանյան և հատկապես արևմտահայ հաս–յան մեջ: 1850–60–ական թթ–ին հայկ. երաժշտության առաջընթացին նպաստել են «Քնար արևելյան» և «Քնար հայկական» (1862) երաժշտ. ընկերությունները: Կ.Պոլսում է ստեղծագործել կոմպոզիտոր և դիրիժոր Տիգրան ***Չուխաճյանը,*** որը հայ դաս. երաժշտարվ–ի ամենախոշոր ներկայացուցիչներից է, հայ օպեր. արվ–ի հիմնադիրը. գրել է «Արշակ Երկրորդ» (հայկ. առաջին օպերան), «Արիֆի խորամանկությունը», «Քեոսե Քեհյա», «Լերլերիջի Հոր–հոր աղա», «Զեմիրե», «Ինդիանա» օպերաները, հայկ. առաջին ռոմանսները, դաշնամուր. և սիմֆ. ստեղծագործություններ:

Մինանյանների տոհմը նշանակալի ավանդ ունի սփյուռքահայ երաժշտության մեջ, իսկ տոհմի նահապետը՝ Գրիգոր Սինանյանը, արևմտահայ երաժշտ. մշակույթի հիմնադիրներից է: Սինանյանների երաժշտ. ընտանիքը Կ. Պոլսում հիմնադրել է (1861) ***Մինանյան ակագախումբը***: Կոմպոզիտոր Էդգար ***Մանասի*** ստեղծագործության մեջ առանձնանում է «Պատարագը», հեղինակ է նաև սիմֆոնիայի, օրատորիայի, դաշնամուր. պիեսների և այլ գործերի:

Պոլսահայ երաժշտ. մշակույթի երևելի դեմքերից էր կոմպոզիտոր և դաշնակահար Գոհարիկ ***Ղազարոսյանը***. ստեղծել է մեներգեր, խմբերգեր, դաշնամուր. պրելյուդներ և պիեսներ, բալետ և այլ գործեր: Ս. Գարամանուկյանի արժեքավոր գործերից են «Ընտիր երգերը» և «Մանկական երգերը»: Հայկ ***Կյուրենյանի*** ստեղծագործության մեջ ուշագրավ են ջութակի, ալտի, ձայնի, դաշնամուրի և սիմֆ. նվագախմբի համար գրած երկերը. նա նաև վիրտուոզ ջութակահար էր: Հայտնի են նաև կոմպոզիտորներ Հարությունը, Տ. Ալեքսանյանը, Ա. Բոյաջյանը և ուր.:

Հովհաննես ***Ամեմյանը*** Կ. Պոլսի առաջին պրոֆեսիոնալ երգիչներից էր. հանդես է եկել հիմնականում Տ. Չուխաճյանի օպերաներում: Մ. Լ. Գարագաշը երգել է նաև Միլանի «Լա Սկալա» և Փարիզի օպեր. թատրոններում: Կ. Պոլսի պետ. օպեր. թատրոնի մեներգչուհի Ա. Քիթապճյանը բազմաթիվ ելույթներ է ունեցել Վիեննայում, Յուրիխում, Փարիզում, Երուսաղեմում և այլուր: Հայտնի են դաշնակահարներ Վ. Մազլումյանը, Մ. Ոսկանը, Ա. Գավաֆյանը, երգեհոնահար Ա. Գավաֆյանը, ջութակահարներ Հ. Հանեսյանը, Բ. Աթմաճյանը, Պ. Սինանյանը և ուր.:

Կ. Պոլսի երգչախմբերից են «Կոմիտասը», «Նարեկացին», «Լուսավորիչը», «Դուրյանը», «Սայաթ–Նովան» ևն:

Թուրքիայում և մասնավորապես Արմ. Հայաստանում XIX դ–ի կեսերին

«Մարալ» անսամբլը ելույթի պահին (Սրտամբույ)

վերածնվել է հայկ. երաժշտահաս. կյանքը. հրատարակվել են երգերի ժող–ներ և երաժշտ. պարբ–ներ (Գ. Երանյան, Ա. Հովհաննիսյան, Ե. Տնտեսյան), ստեղծվել երաժշտության դասագրքեր: Աշխուժացել է նաև համերգային կյանքը. աշուղների, մենակատար երաժիշտների կողքին ստեղծվել են գործիք. անսամբլներ և սիմֆ. նվագախմբեր, գրվել ազգ. հայրենասիր. երգեր: Մինչև դաս. բալետի մուտքը արլ. պարերով հանդես են եկել հայ կատարողները. 1890–ական թթ–ին հայտնի էր պարուհի Շամիրամ Հանըմը: Թուրք. և հայկ. ներկայացումներում պարել է Զիպան (Վիկտորիա Խաչիկյան): 1950–ական թթ–ին արևելյան պարերով հանդես է եկել Ն. Մինղոլը (Ա. Սիմոնյան): Թուրքիայում բալետի սկզբնավորումը կապվում է պրուսույց Լ. Արզումանյանի անվան հետ:

Ճանաչված են բալետի պարողներ Ե. Նանասովան, Ա. Գևորգյանը, Ն. Պալը, Օ. Կառվարյանը, Թոթոն (Ի. Ֆելեքյան), Ս. Լիրը (Քնարյան), Հ. Շահինյանը, Դ. Ասլանյանը, բալետմայստերներ Մ. Էպեյանը, Գ. Շապճնը (Շապճյան) և ուր.:

Իրանի հայ երաժիշտները նշանակալի ներդրում ունեն ոչ միայն ազգ., այլև իրան. ժող. և պրոֆեսիոնալ երաժշտության մեջ: XVIII դ-ում ժող. երգարվ-ի զարգացմանը նպաստել են հայ աշուղներ Հարություն Օղլին, Ղուլ Սարգիս Շիրիշկանցին, Միսկին Մատթեոսը, Միսկին Ստեփանը, Մ. Մանուկյանը և ուր.: Իրան. երաժշտ. մշակույթի պատմության մեջ կարևոր դեր ունի երգիչ Սարգիսը (VII դ.), որի համբավը տարածված էր նաև Հայաստանում ու Մերձ. Արևելքում: Իրանահայ երգարվ-ի ճանաչված դեմքերից է Նիկոլ ***Գալանդերյանը***. գրել է ռոմանսներ (շուրջ 700), մանկ. երգեր, օպերաներ և այլ

Թեհրանի «Միհան» միության «Կոմիտաս» երգչախումբը (2014, խմբավար՝ Լուսինե Միքայելյան)

գործեր: Պրոֆեսիոնալ երաժշտության ներկայացուցիչներից է Արամ ***Տեր-Հովհաննիսյանը***. XIX դ-ի վերջին Թեհրանում ստեղծել է երաժշտասերների միություն և լար. նվագախումբ: Հայտնի է Գրիգորյանների տոհմը, հատկապես՝ ջութակահար, խմբավար Լևոն ***Գրիգորյանը***, որը Թեհրանում կազմակերպել և ղեկավարել է «Գուսան» երգչախումբը: Որդին՝ կոմպոզիտոր և խմբավար Ռ. Գրիգորյանը, պարսկ. ժող. երգերի առաջին գրառողն էր:

Ճանաչված դաշնակահարներից են Է. Մելիք-Ասլանյանը, Տ. Հարությունյանը, Ռ. Սահիդխանյանը, Հ. Մակարյանը, ջութակահարներ Լ. Ավագյանը, Հ. Մանուկյանը, երգիչ-երգչուհիներ Ա. Հովհաննիսյանը, Ս. Աղաբաբյանը, Թ. Փիլոսյանը, Մ. Սանոսյանը, Հ. Վարդանյանը, Հ. Դավթյանը, խմբավար Գ. Սովսիսյանը: Երգչախմբերից են «Գուսանը», «Անուշը», «Արազը», «Հայ երգը», «Անին» ևն: 1920-ական թթ-ին Ե. Ավետիսյանը Թավրիզում հիմնադրել է բալետի առաջին ստուդիան (1945-ից՝ Թեհրանի պարարվ-ի դպրոց), 1939-ին պարուսույց Ա. Ջամբազյանը Թեհրանում՝ բալետի դպրոց: Թեհրանում գործել է նաև «Պապիկյան-Բալե» խումբը: Հայտնի են Թեհրանի «Արարատ», «Կարապ», «Զարթոնք», «Կարավան» պարախմբերը:

Լիբանանը նույնպես սփյուռքահայ երաժշտ. մշակույթի կարևոր օջախներից է: Կոմպոզիտոր և խմբավար Բարսեղ ***Կանաչյանը***, բացի Բեյրութից, գործել է նաև Մերձ. Արևելքի այլ երկրներում, Կ. Պոլսում, Բուլղարիայում և Ֆրանսիայում: 1936-ին Բեյրութում ստեղծել և ղեկավարել է «Գուսան» երգչախումբը: Գրել է հիմնականում մեներգեր ու խմբերգեր, որոնք աչքի են ընկնում վոկալի նուրբ զգացողությամբ:

Երաժիշտ-մանկավարժ Գ. Հեպոյանը

Համազգայինի Բեյրութի մասնաճյուղի «Կարկաչ» երգչախումբը (2017, խմբավար՝ Զաքար Քևշիշյան)

հեղինակ է դպրոց. երգերի, դաշնամուր. պիեսների: Կոմպոզիտոր-խմբավար Մ. Գանգրունին երաժշտագիտ. և քննադատ. հոդվածներ է հրապարակել տեղի մամուլում, գրել է ֆուգաներ, սոնատներ, կվարտետ, սիմֆ. պոեմ, մանկ. երգեր և այլ գործեր: Մանկավարժ և ջութակահար Օ. Սյուրմելյանը Բեյրութում հիմնադրել է «Կոմիտաս» քառյակը (նաև ջութակահարը) և «Լիբանանյան եռյակ» անսամբլները: Երգչուհի և դաշնակահարուհի Մ. Ավետյանը համերգներով շրջագայել է Մերձ. Արևելքի խոշոր քաղաքներում: Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ այցելել է Հայաստան: Դաշնակահարուհի Ս. Վարդապետյան-Ահարոնյանը, բացի համերգ. գործունեությունից, զբաղվել է նաև մանկավարժությամբ. 1950-ին Բեյրութում բացել է երաժշտ. դպրոց: Բեյրութում է ծավալել իր գործունեությունը դաշնակահար և մանկավարժ Ա. Այնթապլյանը:



Երգիչ Ադիս Հարմանդյան (Լիբանան)

Արա Սալիքյանը ևլոյթի պահին (Լիբանան)

Երգիչ Լևոն Գաթրճյան

Ճանաչված են երգչուհի Արմինե ***Փեհլիվանյանը***, դուստրը՝ երգչուհի և դաշնակահարուհի Էլիզաբեթը: Հայտնի են նաև երգչուհիներ Ս. և Ս. Մինասյան քույրերը, Շողիկ ***Թորոսյանը***, դաշնակահարուհի Ս. Խաչատրյանը, ջութակահարներ Ս. Չանգրյանը, Ա. Մալիքյանը, կիթառահար Վ. Մազմանյանը, քամանչահար Ռ. Գարախանյանը, դիրիժոր Հարություն ***Ֆազլյանը*** և ուր.: Էստրադ. երաժշտության բնագավառում մեծ ավանդ ունեն Ա. Հարմանտյանը, Մանուել ***Մենենկիչյանը***, Լ. Գաթրճյանը (հետագայում տեղափոխվել է ԱՄՆ), Վ. Անթոյանը և ուր.: Մի շարք հայ երաժշտագետներ դասավանդում են «Բարսեղ Կանաչյան» և «Թեքեյան» կոնսերվատորիաներում: Լիբանանում հիմնադրվել են «Ալեմշահ», «Գարուն», «Կոմիտաս», «Կռունկ», «Նաիրի», «Շահմուրադյան» երգչախմբերը, «Քնար» պարախումբը ևն:

Սիրիայում նույնպես հայ երաժիշտներն աշխույժ գործունեություն են ծավալել: Հիշարժան են «Առնո Բաբաջանյան», «Զվարթնոց», «Նարեկացի», «Քնար», «Մեսրոպ Մաշտոց» երգչախմբերը, «Ասլամազյան լարային քառյակը», «Սարդարապատ», «Ազատ Ղարիբյան»

«Զվարթնոց» երգչախումբը ելույթի պահին (Սիրիա)

պարախմբերը ևն: Վ. Դեմիրճյանն ստեղծել է ժամանակակից երաժշտության «Թայջերս» (1968) խումբը, հեղինակ է կինոերաժշտության: Պ. Աբաջյանը դասավանդել է Դամասկոսի կոնսերվատորիայում, ղեկավարել երգչախմբեր: Երգչախմբեր է ղեկավարել նաև Ժ. Իսկենյանը, նվագախումբ՝ Վ. Պլքյանը: Անվանի դաշնակահարուհիներ են Ա. Ատուրյանը, Լ. Սերայտարյանը, երգիչ-երգչուհիներ Հ. Թեմիզյանը, ժ. Վարդանը, Լ. Վարդանյան-Պողոսյանը, Կ. Տաղտևիրենյանը, Գ. Ջանգյոզյանը, Փ. Բաղդատլյանը, Տ. Հովհաննիսյանը, դիրիժոր Ա. Սիմոնյանը և ուր.: Հալեպում գործում է Լիբանանի «Բարսեղ Կանաչյան» կոնսերվատորիայի մասնաճյուղը:

«Կարոտ» երգի-պարի անսամբլը (Սիրիա)

Արգենտինայում հայ արվեստագետները մեծ ներդրում ունեն ազգ. երաժշտության և պարարվ-ի պահպանման ու զարգացման մեջ: Ճանաչված կոմպոզիտոր Ալիսիա ***Թերզյանը*** 1968-ին կազմակերպել է «Միջազգային հանդիպումների փառատոնը», ավելի ուշ՝ նվագախումբ: Բուենոս Այրեսի «Կոլոն» օպեր. թատրոնի ճանաչված երգիչներից են Մ. Հալպերյանը, Շ. Թորոսյանը, Ն. Գասաբյանը, հայտնի դաշնակահարներ են Ա. Ահարոնյանը, Ի. Միսակյանը, ջութակահարներ Ր. Զմրուխտյանը, Ռ. Ափրիկյանը, դիրիժորներ Վ. Մինասյանը, Զ. Էլմեսեգյանը, ժան ***Ամուհյանը*** և ուր.: Նոր սերնդից հայտնի են երգչուհիներ՝ Սոլանի Մեդինյանը, Վալերիա Չերեքյանը և ուր., դուդուկահար Գագիկ Գասպարյանը: Հիմնադրվել են «Կոմիտաս» (1929), «Արաքս» (1957), «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» (1958), «Շնորհալի» (խմբավար՝ Դիանա Գաբրիելյան-Սաֆարյան, 1980) և այլ երգչախմբեր: Պարարվ-ի զարգացմանը նպաստել են պարուհիներ Է. Աբրահամովան, Ն. Մորան, Լ. Սիրույանը (նաև պարուսույց) և ուր.:

Հայտնի են «Գայանե» (1960), «Նաիրի» (1978), «Մասիս» (1993) պարախմբերը:

Բրազիլիայում ճանաչված են օպեր. երգչուհի Հ. Կայծակյանը, երաժիշտներ Ս. Ավետիսյան-Մոմջյանը, Ա. Գյուլհաջյանը և ուր.:

Բուլղարիայում XIX դ-ի վերջից հայտնի են «Դայլայլիկ» և «Մեղեդի» (Պլովդիվ), Վ. Մանուելյանի, Բ. Կանաչյանի (Վառնա), «Կոմիտաս» (Ռուսե), «Քնար», «Երևան» (Սոֆիա) և այլ երգչախմբեր: Դիրիժոր և կոմպոզիտոր Նաթան ***Ամիրխանյանը*** Սոֆիայի օպեր. թատրո-

նի (նաև դիրիժոր), Վառնայի «Գուսլա» երաժշտ. ընկերության հիմնադիրներից է, գրել է օպերաներ: Ճանաչված են նաև կոմ-

Սոֆիայի «Երևան» երգչախումբը

պոզիտոր Սարգիս ***Բալթայանը***, դաշնակահարուհիներ Զ. Սարյանը, Հ. Ասատուրը, Մ. Խաչատրյանը, ջութակահարներ Կ. Բալթայանը, Ս. Խանջյանը, Հ. Աղասյանը, դիրիժոր Վ. Գազազյանը, թավջութակահարուհի Ս. Բալթայանը, երգչուհիներ Ա. Բաղդասարյանը, Բ. Բոյաջյանը, Մ. Գրիգորյանը և ուր.:

Ռումինիայում հայերը երաժշտության բնագավառում ունեցել են ականառու հաջողություններ: Ռում. երաժշտագիտության պատմության հիմնադիրը Ռումինիայի ԳԱ ակադ. (1877-ից) հայազգի Թեոդոր Բուրանդան է, որը նաև ռում. առաջին երաժշտ. բառարանի հեղինակն է և ազգ. էթնոերաժշտագիտության հիմնադիրներից: XX դ-ի նշանավոր կոմպոզիտորներից են Մաթեյ ***Սոկորը*** և Մ. Ժորան: XIX դ-ի 2-րդ կեսի հայտնի ջութակահարներ էին Ա. և Հ. Պլոյյանները: Կատարող. արվ-ում ավելի ուշ ճանաչվել են ջութակահար Կ. Ավագյանը, Վ. Կոզիկյանը, երգիչներ Արաքս ***Սվաճյանը***, Կարպիս ***Զորյանը***, Դավիթ ***Հովհաննիսյանը***, Շ. Շիշմանյանը, Մ. Էքմեքչյանը, Էդուարդ ***Թումաճանյանը*** և ուր.: Ժամանակակից երաժշտության հայտնի դեմքերից են Ա. Կարուգարյանուն, Հ. Դավիդյանը: Երաժշտագիտ. աշխ-ներ են գրել Մ. Նիկոլաեն, Չ. Էմանուիլը և ուր.: 2008-ից գործում է «Գյուրջիև» ժող. գործիքների նվագախումբը (գեղ. ղեկ.՝ Լևոն Էսքինյան):

Նվագախումբը 2013-ին մասնակցել է «Նարեկացի» արվ-ի փառատոնին, ելույթ ունեցել Երևանի կամեր. երաժշտության տանը: Երգացանկում՝ նաև Կոմիտասի, Զիվանու, Սայաթ-Նովայի և ուր. ստեղծագործություններից: Թողարկել է «Գյուրջիևի երաժշտությունը» ձայնասկավառակը (2011, լավագույնը՝ «Edison Jazz/12 Word» մրցանակաբաշխությունում, 2012):

«Գյուրջիև» ժող. գործիքների նվագախումբը ելույթի պահին (Ռումինիա)

Լեհաստանում XVIII դ-ի սկզբից հայ հոգևոր երաժշտությունը կրել է լատ. և լեհ. եկեղեց. երաժշտության ազդեցությունը. հայկ. եկեղեցիներում տեղադրվել են երգեհոններ, երգչախմբերը դարձել են խառը: Լեհահայերի ընտանեկան ինքնությունն ու տոնակատարություններն ուղեկցվել են ազգ. երգերով ու պարերով: XIX դ-ում հայերը մեծապես նպաստել են լեհ. երաժշտության զարգացմանը: Հանրաճանաչ էր կոմպոզիտոր Յոզեֆ ***Նիկորովիչը***, որը գրել է մի շարք սոնատներ: Նրա բազմաձայն խորալը դարձել է Լեհաստանի օրհներգը: Ֆ. Շոպենի աշակերտն ու հետևորդն էր դաշնակահար, կոմպոզիտոր Կ. Միկուլին, իսկ կոմպոզիտոր Ս. Մոնյուշկոն (սերում էր Մաջարյանցների տոհմից) լեհ. ազգ. օպերայի հիմնադիրն է:

Իտալիայում հայտնի են կոմպոզիտոր Ա. Նազարյանը, դիրիժոր Անգելո ***Էֆրիկյանը***, երգիչներ Լյուսի ***Սևումյանը***, Սեդա ***Բալուլյանը***, Լ. Գիրեյանը, Կ. Բոյաջյանը, դաշնակահարուհի և երգչուհի Մ. Բոդուրյանը, տավղահարուհի Շուշանիկ ***Միլրոնյանը*** (1968-ին հանդես է եկել Հայաստանում) և ուր.:

Կանադայում հայկ. երաժշտության պահպանման և զարգացման մեջ

Տորոնտոյի սիմֆոնիկ նվագախումբը (2014, դիրիժոր՝ Փիթր Ունջյան)

մեծ դեր են ունեցել հատկապես երգչախմբերն ու պարախմբերը. հայտնի են «Քնար» (1946, Մոնրեալ), «Հայաստան»

(1968), «Անի» (1975, երկուսն էլ՝ Տորոնտո) երգչախմբերը, «Նուբար» (Մոնրեալ) պարախումբը, նաև խմբավարներ Ե. Ալեքսանյանը, Դավիթ ***Վարժապետյանը*** և ուր.: Մշակութ. միջոցառումները տեղի են ունենում «Հայ տանը»: Ճանաչված են կոմպոզիտորներ Պետրոս ***Շուժունյանը***, Գ. Անտոնյանը, դաշնակահար Րաֆֆի ***Արմենյանը***, Ն. Արթինյանը, դիրիժոր Հ. Ֆազլյանը, երգչուհի Ալին ***Գութանը*** և ուր.:

Իրաքում Միջին Արևելքի հռչակավոր երաժիշտներից էր ուդահար Սիսակ ***Զարրհանեկյանը***: Հեղինակ է «Ուդի մեթոդ» ձեռնարկի, «Արյան ուղիներով» (1915–18-ի Հայոց ցեղասպանության մասին է) վեպի: Ճանաչված են դաշնակահարուհի

«Սայաթ-Նովա» երգի-պարի անսամբլը (Իրաք)

և մանկավարժ Բ. Օհաննիսյանը, ջութակահարներ Հ. Պալյանը, Ա. Պապուխյանը, Վ. Մանուկյանը, Ա. Զառացյանը, երգիչ Ա. Աղաբաբյանը և ուր.: Երաժշտ. խմբերից հայտնի են Բաղդադի Հայ երիտասարդաց միության «Կոմիտաս», կանանց, «Թարգմանչաց», «Սվաճյան» երգչախմբերը, ՀԲԸՄ «Սայաթ-Նովա» երգի-պարի անսամբլը, աշուղ. խումբը ևն:

Հորդանանի համայնքում վերջին տարիներին նկատելիորեն զարգացել է

Մելգոնյան կրթական հաստատության երգչախումբը (ղեկավար՝ Սեպուհ Աբգարյան, Կիպրոս)

հայ մշակութ. կյանքը: 2012-ին Ամմանում հիմնադրվել է «Սպիտակ» պարախումբը, 2015-ին՝ «Երևան», 2016-ին՝ «Վարդավառ» երգչախմբերը (երկուսն էլ՝ ղեկ.՝ Վարդուհի Թորոյան-Ներսեսյան), որը ՀՀ-ում մասնակցել է «Կոմիտաս» փառատոնին: Ստեղծվել է նաև Ամմանի ՀՕՄ-ի մասնաճյուղի «Արազ» պարախումբը (ղեկ.՝ Անի Գարաշյան-Գիզիրյան):

Հունաստանում հայտնի են երգչուհի Ա. Մադիկյանը, կիթառահարներ Հ. Ղուկասյանը և Հ. Քոլանյանը (երկուսն էլ հյուրախաղերով հանդես են եկել Երևանում), դաշնակահարներ Ք. Ա. Թոկալղյանը, Ա. Ներսիսյանը և ուր.:

Գերմանիայի Մյունխեն ք-ում է ստեղծագործել դիրիժոր Ռ. Ակոբը, որը համերգներով հանդես է եկել Եվրոպայի և Արևելքի մի շարք երկրներում: 1965-ից Մյունխենում է ապրել նաև ջութակահար և կոմպոզիտոր Լյուդվիգ ***Բազիլը***. գրել է ինքնատիպ մեներգեր ու խմբերգեր, հիմնադրել է «Մուզիքան» եռյակը: Մեծ

Մյունխենի «Շողեր» երգչախումբը

համբավ ունեն երգչուհի Լուիզ ***Պոզապալյանը*** (երգել է Մյունխենի և Համբուրգի օպեր. թատրոններում), ջութակահարներ Սերգեյ ***Խաչատրյանը***, Ս. Հովհաննիսյանը, դաշնակահար Ա. Բեկճյանը, թավջութակահար Կ. Աթմաճյանը և ուր.: Հայտնի են Քյոլնի «Էրերունի» պարախումբը և «Նոր ձայն» նվագախումբը, Բեռլինի հայկ. երգչախումբը և հայ եկեղեց. նվագախումբը, Սայնի Ֆրանկֆուրտի հայկ. նվագախումբը (ղեկ.՝ Ժ. Հախնազարյան), Մյունխենի «Շողեր» երգչախումբը (2012-ից, ղեկ.՝ Ա. Բաբայան) ևն: Դորտմունդում գործում է Ա. Խաչատրյանի անվ. (2019-ից), Ուննայում՝ Կոմիտասի անվ. (2015-ից, երկուսի էլ հիմնադիր՝ դաշնակահար, կոմպոզիտոր Ա. Ղուլոյան) երաժշտ. դպրոցները:

Ավստրիայում հանրաճանաչ են դաշնակահարներ Ս. Դանիելը, Ա. Գույումջյանը, երգչուհիներ Սոնա ***Ղազարյանը***, Հասմիկ ***Պապյանը*** և ուր.:

Եգիպտոսի հայ երաժիշտները մեծ ներդրում ունեն ազգ., նաև արաբ. երաժշտարվ-ում: 1862-ին Մ. Մերկերյանը՝ Կահիրեում, ապա Ս. Խաչատրյանը Կահիրեում և Ալեքսանդրիայում հիմնադրել են կոնսերվատորիաներ: XX դ-ի

վաստակաշատ կոմպոզիտորներից է Է. Հակոբյանը. ազգ. ոգով աչքի են ընկնում նրա «Քնարական երգեր» (Ա. Իսահակյանի խոսքերով), «Քուչակյան տաղեր», «Սիրո երգեր» շարքերը: Արժեքավոր են նաև «Հայկական Պատարագի տաղեր և մեղեդիներ» (1963) ու «Սրբազան տաղեր» (1980) ժող-ները, նաև «Սրբազան երգեր» ու «Ազգային հայրենասիրական և ազատագրական պայքարի երգեր» (երկուսն էլ՝ 1991) պրակները:

Կատարող. արվ-ում հայտնի են դաշնակահարներ Ա. Բաբլանյանը, Է. Փափազյանը, Շ. Իփեկյանը, ջութակահար Ժ. Քանթարջյանը, ուդահար Զ. Գասպարյանը, երգչուհիներ Հ. Կարապետյանը, Անուշկան, նաև «Ալեքսանյան», «Կոմիտաս», «Թաթուլ Ալթունյան», «Ազատ Մանուկյան», «Արաքս», «Արցախ» երգչախմբերը:

Բելգիայում գործում է «Ամադեուս» հայկ. երաժշտ. հաստատությունը, որի նպատակը շնորհաշատ պատանիների ու աղջիկների մասնագիտ. ուսումնառությունը կազմակերպելն է: Ճանաչված են երաժիշտներ Ս. Քեշիշյանը, Ս., Է. և Ա. Գույումջյանները, դուդուկահար Վ. Հովհաննիսյանը, ջութակահարներ Դ. Նազարյանը, Կ. Հարությունյանը, Տ. Մահտեսյանը, երաժշտագետներ Հ. Քալանթարյանը, Պ. Ալահայդոյանը և ուր.:

Կիպրոսի երաժշտ. մշակույթում մեծ ներդրում ունի Բ. Կանաչյանը (Մելգոնյան վարժարանում հիմնադրել է երգչախումբ), ճանաչված են ջութակահար-խմբավարներ Վ. Պեդեյանը, Ա. Ոսկանյանը, խմբավար Ս. Աբգարյանը, դաշնակահարուհիներ Ք. Կեպենյանը, Ս. Բեդելյանը, մանդոլինահար Զ. Մաքսուդյանը և ուր.:

Անգլիայում ճանաչված է ջութակահար Մանուկ *Բարիքյանը*. նվագել է առաջնակարգ նվագախմբերի հետ՝ Հ. ֆոն Կարայանի, Ա. Տոսկանինիի և ուր. ղեկավարությամբ: Այցելել է Հայաստան (1962, 1965): Անվանի ջութակահար է նաև Մ. Բարիքյանի քրոջ որդին՝ Լևոն *Չիլինգիրյանը*, որը Լոնդոնում ստեղծել է «Չիլինգիրյան» քառյակը (1971): Մ. Բարիքյանի սաներից է Հ. Բեդելյանը: Հայտնի են նաև «Վարդուկյան» քառյակը, երգիչ Խաչատուր *Փիլիկյանը* և ուր.:

Ուրուգվայի մշակութ. կյանքն աշխուժացնում են «Կոմիտաս» (1935), «Կռունկ» երգչախմբերը, «Գայանե» (ղեկ.՝ Ռ. Չաքճյան), «Շիրազ» (ղեկ.՝ Գ. Սերոբյան) պարախմբերը, «Երևան-50», «Արամ Խաչատրյան» (ղեկ.՝ ջութակահար Ա. Մոմջյան) նվագախմբերը, նաև դաշնակահարներ Մ. Բայասլյանը, Ք. Բեկլիկյանը, ջութակահար Ա. Կարամանուկյանը, երգիչներ Կ. Գրագիրյանը, Պ. Ավշարյանը, Ա. Սանթուրյանը, Հ. Բոյաջյանը և ուր.:

Շվեյցարիայի հայ գաղութը հարուստ ավանդույթներ ունի երաժշտարվում: 1907-ին տարբեր քաղաքներում համերգներով ու դասախոսություններով հանդես է եկել Կոմիտասը: Երաժշտ. կյանքում մեծ ավանդ ունեն դաշնակահարուհիներ Հեղինե և Եվգինե *Ադամյան* քույրերը: Ժնևում է ստեղծագործել նշանավոր դաշնակահար և կոմպոզիտոր Ստեփան *Էլմասը*, որը Ֆերենց Լիստի սաներից էր: Հայտնի են նաև դաշնակահար-դիրիժորներ Ա. Սիրանոսյանը, Լյուկ Ա. *Բաղդասարյանը* (հանդես է եկել նաև Երևանում), երգչուհի և կոմպոզիտոր Ս. Գազանճյանը, երգիչներ Գ. Բոյաջյանը, Հայ Վարդանը: Գործում են «Անի» պարախումբը և «Արաքս» երգչախումբը:

Աշուղ Ալիք-Զավախք

Թիֆլիսը XVIII դ-ի սկզբից հայ երաժշտ. մշակույթի կենտրոն էր, որտեղ կազմավորվել է վիրահայ աշուղ. դպրոցը՝ *Սայաթ-Նովա*, Շամչի Մելքո, Բուդաղ Օղլան, Քիչիկ-Նովա, Ֆրեյդուն, *Հազիր* և ուր.: Կյանքի վերջին շրջանում Թիֆլիսում է ստեղծագործել նաև *Զիվանին*: XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին նկատելիորեն զարգացել է հայ պրոֆեսիոնալ երաժշտությունը: 1885-ին հայկ.

Վիրահայոց թեմի «Հայարտյան» «Սուրբ Ներսես Շնորհալի» երգչախումբը

առաջին խմբերգ. համերգով հանդես է եկել Քրիստափոր *Կարա-Մուրզան*: Հիմնադրվել են երաժշտ. դպրոց (1876), ուսումնարան (1886), Ներսիսյան դպրոցում ստեղծվել են երգչախմբեր (ղեկ.՝ Մ. Եկմալյան), համերգ. գործունեությանը նպաստել են Գենարիոս և Վասիլ *Դոր-*

«Սոխակ Հայաստանի» երգարանի (h. 3, 1876, Բաքու) փիփղոսաթերթը

Իգոր Սարոխանովը ելույթի պահին

ղանայանները: 1907-ին ստեղծվել է Արևելյան երաժշտ. ընկերությունը, 1912-ին՝ Թիֆլիսի հայոց երաժշտ. ընկերությունը, 1917-ին՝ Հայոց երգչախմբային ընկերությունը, 1919-ին՝ հայ երաժիշտ-տեսաբանների «Կոմիտաս» ընկերությունը:

Թիֆլիսում են ստեղծագործել նշանավոր երաժիշտներ Ա. Ադամյանը, Կարո *Զաքարյանը*, Ազատ *Սևանուկյանը*, Վանո *Մուրադելին*, Անուշավան *Տեր-Ղևոնդյանը*, Վարդգես *Տալյանը*, Միքայել *Միրզոյանը*, Վաչե *Ումր-Շատրը*, Բեգլար *Ամիրջանյանը*, Սաշա *Օգանեզաշվիլին* և ուր.: «Հայարտան» երաժշտ. մասնաճյուղին (հիմնադիրներ՝ Ա. Տիգրանյան, Ս. Բարխուդարյան, նախագահ՝ Ռ. Մելիքյան) կից ստեղծվել է մանկավարժ. ստուդիա (1927-ից՝ ուսումնարան): Թբիլիսիի ՕԲԹ-ում են աշխատել երգիչներ Լևոն *Իսեցկին*, Հայկանուշ *Դանիելյանը*, դիրիժորներ Դմիտրի *Շիկանյանը*, Սուրեն *Չարեքյանը*, պարուհի Լ. Վոինովա-Շիկանյանը և ուր.: 2010-ին հիմնադրվել է ՀԱԵ Վիրահայոց թեմի «Հայաստան» կենտրոնի «Սուրբ Ներսես Շնորհալի» մանկ. անսամբլը (2015-ին՝ հյուրախաղ Երևանում):

Ախալքալաքում գործում է երգի-պարի ինքնագործ անսամբլ, որի երկարամյա գեղ. ղեկավարն է աշուղ Ալիք-Ջավախքը (Ալիկ Քսպոյան):

Բաքուն XIX դ-ի վերջից հայ մշակույթի կենտրոններից էր, որտեղ հայ երաժշտարվ-ում կարևոր դեր են ունեցել աշուղները: Հայտնի աշուղներ Փարսին (XVI դ.), Դոնին (աշուղների ուսուցիչը, XVIII դ.), Ղազարը (XIX դ.) երգել են թուրք. և մասնակցել աշուղ. մրցույթներին: XIX դ-ում ապրել և հայ-ով ստեղծագործել է աշուղ *Սեյադը* (Պետրոս Սադաթյան): 1885-ին Բաքվում իր երգչախմբով ելույթ է ունեցել Ք. Կարա-Մուրզան, 1886-ին Մ. Եկմալյանը հայկ. եկեղեցում ղեկավարել է իր «Պատարագը», 1908-ին դասախոսություններով և համերգով ելույթ է ունեցել Կոմիտասը: Կոմպոզիտոր Անտոն *Մայիլյանի* նախաձեռնությամբ և խմբագրությամբ հրատարակվել է «Թատրոն և երաժշտություն» հանդեսը (1910–17): 1920-ական թթ-ին կազմակերպել է բանվոր. առաջին երգչախմբերը, մանկ. երաժշտ. թատեր. ստուդիան՝ հայկ. և ադրբ. բաժանմունքներով, ելույթներ ունեցել համերգներով: Երկար տարիներ Բաքվում է ստեղծագործել կոմպոզիտոր և խմբավար Ստեփան *Դեմուրյանը*. ղեկավարել է բազմաթիվ դպրոց. երգչախմբեր, հանդես եկել համերգներով: 1934–38-ին Բաքվի կոնսերվատորիայի տնօրենը կոմպոզիտոր Ա. Տեր-Ղևոնդյանն էր:

Բաքվում է ապրել և ստեղծագործել կոմպոզիտոր Անդրեյ *Բաբաևը*: Թառահարներից և քամանչահարներից հայտնի են Բալա *Մելիքովը*, Գրիգորի տղա Մելիքովը, Ա. Յարամիշևը, Ա. Սողոմոնովը, Վ. Մելքումովը, Թ. Հարությունյանը, Սողոմոն *Սեյրանյանը*, Լևոն *Կարախանը*, Ս. Օգանեզաշվիլին և ուր.: Վերջինս հիմնադրել է Բաքվի Արևելյան երաժշտության առաջին դասընթացները (1914): Կոմպոզիտոր Հովհաննես *Իոաննիսյանը* Բաքվում հիմնադրել է (նաև ղեկ.) Ադրբ. ժող. գործիքների պետ. առաջին (1920), կանանց ժող. գործիքների (1925) նվագախմբերը, դասավանդել է երաժշտ. տեխնիկումում:

Ղրիմի հայերը մեծ ներդրում ունեն հայ երաժշտության մեջ: Հայկ. ժող. երգերի առաջին ձեռագիր ժող-ը կազմել է Խաչգոռուզը, որի շնորհիվ XVI–XVII դդ-ում տարածվել են հայկ. ժող. երգերը: Կոմպոզիտոր Ալեքսանդր *Սպենդիարյանն* ապրել և ստեղծագործել է Ղրիմում, որտեղ գրել է իր լավագույն գործերից մի քանիսը («Ղրիմի էսքիզներ», «Երեք արմավենի», «Առ Հայաստան» ևն): Կոմպոզիտոր Ք. Կարա-Մուրզան առաջիններից է սկսել հայկ. ժող. երգերի հավաքման, ձայնագրման և քառաձայն մշակման գործը, իսկ Անդրեաս *Քաղցածյանը* մեծ ներդրում ունի նոտագրման ոլորտում: Վերջինս նաև մանկավարժ. գործունեություն է ծավալել Ղարասուբազարում, Սիմֆերոպոլում, Սևաստոպոլում: Երաժիշտ-մանկավարժներ էին Հ. և Մ. Ուզունյանները, Գ., Մ. և Մ. Նալբանդյանները, Կ. Խանբեկյանը, Հովհաննես *Նալբանդյանը* (նաև ջութակահար):

Ռուսաստանում կարևոր կրթօջախներ են եղել Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Մոսկվայի և Ս. Պետերբուրգի կոնսերվատորիաները, որտեղ սովորել են նաև հայ երաժիշտներ՝ երգիչներ Սոֆյա *Ակիմովան*, Նադեժդա *Պապայանը*, Բ. Ամիրջանյանը, Մագդալենա *Գենջյանը*, Ա. Կոստանյանը, ջութակահար Հ. Նալբանդյանը և ուր.: XIX դ-ի 2-րդ կեսին և

XX դ–ի սկզբին Ք. Կարա–Մուրզան, Ա. Սպենդիարյանը, Մ. Եկմալյանը, Ռոմանոս ***Մելիքյանը***, Գ. Սյունին, Նիկողայոս ***Տիգրանյանը*** և ուր. օգտագործել են ռուս. օպեր. ստեղծագործության փորձը: Կոմպոզիտորներ Ն. Կլենովսկին, Ե. Իպպոլիտով–Իվանովը և ուր. ձայնագրել, մշակել և իրենց երկերում օգտագործել են հայկ. ժող., ազգ–հայրենասիր. և գուսան. երգեր: Ռուս բանաստեղծների խոսքերով վոկալ ստեղծագործություններ են գրել Գ. Ղորղանյանը և Ա. Սպենդիարյանը: Այդ շրջանում Ռուսաստանի և Եվրոպայի տարբեր երկրների բեմերում հանդես են եկել երգիչներ Ն. Պապայանը, Տ. Նալբանդյանը, Ա. Շահմուրադյանը, Մ. Բաբայանը, Բ. Ամիրջանը, Կոնստանտին, Հովհաննես, Նունե և Մարո Կորգանովները, դաշնակահարներ Ս. Էլմասյանը, Կարել Միկուլին, Ադամյան քույրերը, դիրիժոր Ալեքսանդր Ասլանովը (1912–18–ին ղեկավարել է Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի նվագախումբը), ջութակահարներ Դ. Դավթյանը, Հ. Նալբանդյանը և ուր.:

Մոսկվայի հայ մշակույթի տան (1921) երաժշտ. ստուդիան մեծապես նպաստել է հայ երաժշտության տարածմանը և կադրերի պատրաստմանը. այստեղ են սովորել կոմպոզիտորներ Ա. Հարությունյանը, Ա. Բաբաջանյանը, Է. Միրզոյանը, Է. Բաղդասարյանը, Ա. Խուդոյանը, բալետմայստերներ Մ. Մարտիրոսյանը, Ա. Ղարիբյանը, բալետի արտիստներ Թ. Գրիգորյանը, Վ. Խանամիրյանը, երգիչներ Ս. Դավթյանը, Ս. Գալստյանը և ուր.:

1910–16–ին գործել է Մոսկվայի հայ խմբերգ. ընկերությունը (հիմնադիր՝ Ե. Բաղդասարյան), 1922–ին ստեղծվել է Հայ երաժշտ. կոլեկտիվը (նախագահ՝ Գևորգ ***Բուդաղյան***): 1924–ին կազմակերպվել է լար. քառյակը (1932–ից՝ Կոմիտասի անվ.), որն իր գործունեությունը շարունակում է Երևանում: Քառյակի հետ ելույթներ են ունեցել դաշնակահարներ Ս. Ռիխտերը, Է. Գիլելսը, կոմպոզիտոր, դաշնակահար Դ. Շոստակովիչը և ուր.: Մոսկվայում են ստեղծագործել դիրիժոր Ալեքսանդր ***Մելիք–Փաշաևը***, կոմպոզիտորներ Ա. Բաբաջանյանը, Միքայել ***Թարիվերդիևը***, Դավիթ ***Թուխմանովը***, Արամ, Կարեն և Էմին ***Խաչատրյանները***, Սերգեյ ***Բալասանյանը***, Էդուարդ ***Խաղագործյանը***, Ալեքսանդր ***Փիրումովը***, Գեորգի ***Գարանյանը***, երգիչներ Պավել, Ռուզան, Կարինե և Ռուբեն ***Լիսիցյանները***, Զ. Դոլուխանյանը, Սարատովի, Սվերդլովսկի օպեր. թատրոններում է երգել Լ. Իսեցկին: Ռուսաստանում են ապրել և ստեղծագործել Ն–Շ. Սիմոնյանը, Ա. Մնացականյանը, Ա. Աղաբաբովը և ուր.: Ռուս. էստրադայի երգիչներից են Ի. Սարուխանովը, Ռ. Բաբայանը, Ի. Օտիևան, Ի. Ալեգրովան, Վ. Դոբրինինը և ուր.:

Ռոբաննա Բաբայան

Ուզբեկստանում է ծնվել ու ստեղծագործել երգչուհի և պարուհի ***Թամարա Խանումը.*** երկացանկում՝ աշխարհի ժողովուրդների երգեր ու պարեր: Հայտնի էր նաև երաժշտ. գործիքների վարպետ Ս. Պետրոսյանցը, որը կատարելագործել է ուզբ. ժող. գործիքները, պատրաստել նորերը:

Թուրքմենստանում ազգ. պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման մեջ մեծ դեր ունեն հայ երաժիշտները: Աշխաբադի երաժշտ. ընկերության (1893) հիմնադիրներից է Մ. Նասիբյանցը: Կոմպոզիտոր Գ. Բեդրոսովը գրել է թուրքմ. պարային երաժշտություն: Գ. Առաքելյանը հիմնադրել և ղեկավարել է թուրքմ. առաջին սիմֆոնիկ նվագախումբը, մշակել ժող. մեղեդիներ կամեր. և ժող. գործիքների անսամբլների համար: Ա. Շապոշնիկովը (Փափախյան) թուրքմ. պրոֆեսիոնալ երաժշտարվ–ի հիմնադիրներից է, առաջին ազգ. և այլ օպերաների հեղինակ: Ջութակահար և դիրիժոր Դ. Ախշարումովը կրթել է բազմաթիվ բարձրակարգ երաժիշտ–կատարողների:

Սարիամ Մերաբովա

1990–ական թթ–ից փոխադարձ հյուրախաղերով, միացյալ ծրագրերով հանդես են գալիս ՀՀ և Սփյուռքի ստեղծագործ. և կատարող. արվ–ի ներկայացուցիչներ, երգչախմբեր, պարախմբեր ու նվագախմբեր:

Գրկ. *Բրուտյան Յ., Սփյուռքի հայ երաժիշտներ, Ե., 1968: Նույնի, Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Ե., 1982: Նույնի, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996: Ասատրյան Ա., Երաժշտություն. Սփյուռքահայ մշակույթը XX դարում, տես Հայոց պատմություն, հ. 4, Ե., 2016, էջ 571–576: Ասատրյան Ա., Լիբանանահայ երաժշտություն. Արոտյակ Այնթապյան, Ե., 2012:*

Ըստ Յիցիլիա Բրուտյանի

Վ



Նաիրա Վահանյան

Մարտին Վարդազարյան

«ՎԱՀԱԳՆԻ ԵՐԳԸ», «Վահագնի ծնունդը», հայկ. դիցաբանության մեջ պատերազմի, քաջության և հաղթանակի գերագույն աստծուն՝ Վահագնին նվիրված ձոներգ, հայ հնագույն առասպելաբան. երգ: Գրառել և ավանդել է Մովսես Խորենացին (V դ., «Պատմություն Հայոց»): Բաղկացած է 3 եռատող տներից. 1-ինն արտացոլում է հին հայերի վաղնջական պատկերացումը աշխարհի ուղղահայաց եռամաս կառուցվածքի մասին (երկինք, երկիր, ծով), 2-րդը՝ տիեզ. այդ կառույցում աստծու ծնունդը՝ երկնքի (հայր) և երկրի (մայր) երկունքից՝ ծիրանագույն ծովում, ծխով ու բոցով բռնկված եղեգնի փողից, 3-րդում նկարագրված է նորածին աստծու արտաքինը (հրեղեն մազեր, բոց մորուք, արեգակնատիպ աչքեր): Ըստ Մովսես Խորենացու՝ երգը նվիրվել է հին հայկ. առասպելավիպ. շարքի «Տիգրան և Աժդահակ» վեպի հերոս Տիգրանի որդուն՝ Վահագնին:

«Վ. ե.» ինդեվրոպ. առասպելաբանաստեղծ. համակարգում դիցածնման հնագույն հիմներգերից է:

ՎԱՀԱՆՅԱՆ Նաիրա Յուրայի (ծ. 01.05. 1966, ք. Վանաձոր), դաշնակահարուհի, մանկավարժ: Ավարտել է Վանաձորի Է. Կզարթմյանի անվ. երաժշտ. դպրոցի (1982), Մ. Թավրիզյանի անվ. երաժշտ. ուսումնարանի (1986), ԵՊԿ (1991, Է. Ապրեսովայի դասարան) դաշնամուրի բաժինները: Դասավանդել է Վանաձորում, 1995–96-ին՝ Մոսկվայի N 138 դպրոցում, նաև Ի. Օ. Դունաևսկու անվ. (դասատու, կոնցերտմայստեր), 1996-ից՝ Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. (դասատու, ապա՝ դաշնամուրի բաժնի վարիչ), 2011-ից, միաժամանակ՝ Ա. Տիգրանյանի անվ. (դաշնամուրի բաժնի վարիչ) երաժշտ. դպրոցներում, 2012-ից՝ Տ. Չուխաճյանի անվ. երաժշտ. դպրոցի տնօրեն: 2007-ից՝ «Առնո Բաբաջանյանի հիշատակի միջազգային հիմնադրամի» անդամ, 2016-ից՝ փոխնախագահ, 2017-ից՝ «Էդվարդ Միրզոյանի հիշատակի հիմնադրամի» տնօրեն:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013), ՌԴ «Լավագույն ուսուցիչ» մեդալ (2015):

ՎԱՆԱՁՈՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ պետական, Միքայել Թավրիզյանի անվան (1971-ից), մինչև 2005-ը՝ երաժշտական ուսումնարան): Հիմնադրվել է 1951-ին Վանաձորում՝ Էդուարդ *Կզարթմյանի* նախաձեռնությամբ՝ իր ստեղծած երաժշտ. դպրոցի հիման վրա: 1971-ից՝ նոր շենքում: Գործում են գործիքկատարող. արվ-ի, վոկալ, խմբավարության, երաժշտության տեսության, գեղանկարչության և այլ բաժիններ: Ուսումնարանի շրջանավարտներից են՝ կոմպոզիտորներ Գ. Հախինյանը, Ս. Ռոստոմյանը, Ա. Ոսկանյանը, երգիչներ Հ. Քարաջյանը, Վ.

Վանաձորի արվեստի քոլեջը

Միրաքյանը, Բ. Դարբինյանը, քանոնահար Ն. Կազազյանը, դաշնակահարուհի Ն. Արդամանյանը և ուր.: Քոլեջում համերգներով հանդես են եկել Կոմիտասի անվ. քառյակը, թավջութակահարուհի Մ. Աբրահամյանը, դաշնակահարուհի Ս. Նավասարդյանը, «Կադանս» անսամբլը, «Փոքրիկ երգիչներ» մանկ. երգչախումբը ևն:

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Մարտին Յոլակի (ծ. 04.04.1938, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար: Յոլակ *Վարդազարյանի* որդին: Պրոֆ. (2013): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1989), ՀՀ ժող. արտիստ (2011): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1961, Գ. Սարաջևի դասարան) և կոմպոզիցիայի (1970, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1966–72-ին՝ Հեռուստատեսության և ռադիոյի էստրադ.

նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ., 1972–1989-ին՝ ԵՒԹ երաժշտ. մասի, 1981–83-ին՝ Հայֆիլհարմոնիայի էստրադ. բաժնի վարիչ: 1974-ից՝ ՀԿՄ տան գեղ. ղեկ.: 1983-ից դասավանդում է ԵՊԿ-ում:

Գրել է սիմֆոնիա, «Մակբեթ», «Նվիրում Բարտոկին» սիմֆ. պոեմները, գործիք. կոնցերտներ, սոնատներ, կվարտետ, պիեսներ, խմբերգեր, մանկ. երգեր ևն: Առավել հայտնի են «Հին հեքիաթ», «Խոստովանություն», «Քո լավ աչքերից», «Այս ինչ կատարվեց», «Մոռացված վալս», «Խաչմերուկ», «Տեմպ, ռիթմ, մեղեդի» և այլ ջազ. ու էստրադ. երկեր: Հեղինակ է նաև 140-ից ավելի դրամատիկ. ներկայացումների (համագործակցել է ռեժ-ներ Վ. Աճեմյանի, Հ. Ղափլանյանի, Ա. Գրիգորյանի, Ն. Սարգսյանի, Մ. Ռաֆայելյանի, Զ. Տատինցյանի, Ա. Էլբակյանի, Ս. Սարգսյանի, Հ. Գասպարյանի և ուր. հետ), շուրջ 40 մուլտիպլիկացիոն («Սխալ արտահայտություն», 1973, «Սովորական վտանգավոր արկածներ», 1987, ևն), վավերագր. («Պրելյուդ», 1968), գեղ. («Բարև ես եմ», 1965, «Սարոյան եղբայրներ», 1968, «Երկունք», 1976, «Վերջին նետումը», 1966, «Չախ-Չախ թագավոր», 1969, «Ապրեցեք երկար», 1979, «Մենավոր ընկուզենի», 1986, «Կարոտ», 1990, ևն) ֆիլմերի համար երաժշտության:

Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. (1968, Մոսկվա), խմբերգ. երաժշտության հանրապետ. (1972, 1980, 1981, 1985, 1987, Երևան) մրցույթների դափնեկիր, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2007), ՄՆ ոսկե (2008), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» I կարգի (2017) մեդալներ:

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Յոլակ Մարտիրոսի [01.04.1911, Քալալօղլի (այժմ՝ Ստեփանավան)–12.04.1944, Երևան], փողհար, դիրիժոր: Մարտին ***Վարդազարյանի*** հայրը: Ավարտել է Երևանի երաժշտ. ուսումնարանը (1932), սովորել ՄՊԿ-ում (1932–36, Մ. Տարակովի դասարան): 1936-ից դասավանդել է ԵՊԿ-ում, ղեկավարել Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի ջազ. նվագախումբը, 1937-ին՝ ԵՕԲԹ նվագախմբի մենակատար, 1942-ից՝ ԵԵԿԹ դիրիժոր: 1938-ին (Արտեմի ***Այվազյանի*** հետ) հիմնադրել է Հայաստանի ջազ. նվագախումբը (նաև մենակատար և դիրիժոր): ՀՄՊ-ի (1941–45) ժամանակ կազմակերպել է անսամբլներ և ելույթներ ունեցել ՀԽՍՀ-ում և մերձճակատ. շրջաններում:

Երաժիշտ-կատարողների համամիութ. մրցույթի դափնեկիր (1941, Մոսկվա), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1939):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ջավեն Ղևոնդի [8(21). 01.1907, գ. Հաջիվար (այժմ՝ Նախիջևանի ԻՀ-ում)–25.04.1977, Մոսկվա], կլառնետահար, երաժշտագետ, մանկավարժ: Ռուբեն ***Վարդանյանի*** հայրը: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1940): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի կլառնետի (Ա. Վ. Բերեզինի դասարան) և պատմատես. (Ռ. Ի. Գրուբերի դասարան) բաժինները (1936): 1936–48-ին դասավանդել է ԵՊԿ-ում (դոցենտ՝ 1940-ից): 1938–41-ին՝ Հայֆիլհարմոնիայի տնօրեն, 1942–47-ին՝ ՀԽՍՀ ՆԽ-ին առընթեր Արվ-ի գործերի, 1956-ից՝ ԽՍՀՄ ՄՆ ուս. հաստատությունների վարչությունների, 1958-ից՝ Երաժշտ. հիմնարկների բաժնի (1963-ից՝ վարչություն) պետ:

Մ. Վարդազարյանը ելույթի պահին

Հեղինակ է երաժշտագիտ. հոդվածների, համահեղ.՝ Ա. Բաբաևի «Արծվաբերդ» և «Պաղտասար աղբար» օպերաների լիբրետտոների:

Համամիութ. մրցույթի դափնեկիր (1935, Մոսկվա):

Յոլակ Վարդազարյան

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ջավեն Նազարեթի (ծ. 15.01.1945, Հալեպ), դիրիժոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2009): 1947-ին ընտանիքի հետ հայրենադարձել է: Ավարտել է ԵՊԿ լար. (1970, Ա. Շամշյանի դասարան) և դիրիժորության (1974, Մ. Տերյանի դասարան) բաժինները: 1975–79-ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժորի օգնական, 1979–90-ին՝ Երևանի կամեր. նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ. և դիրիժոր, 1994–2000-ին՝ ԵՕԲԹ դիրիժոր, 2000–03-ին՝ ՀՀ ՄՆ Հայ հոգևոր երաժշտության կատարման և հետազոտման կենտրոնի տնօրեն, 2000–06-ին՝ Բախյան և Շեքսպիրյան ընկերությունների հիմնադիր-նախագահ: 1992–94-ին դասավանդել է ԵՊԿ-ում (նաև օպեր. ստուդիայի գեղ. ղեկ.):

Ջավեն Ղ. Վարդանյան

Վ.-ի նախաձեռնությամբ Երևանում առաջին անգամ տեղի են ունեցել Բախի երաժշտությանը (1980, 1981, 1985), Երեխաների միջազգ. օրվան (1983–90), Ծննդյան տոներին նվիրված հոգևոր երգերի (1983–87), հոգևոր երաժշտության (1999-ից, նրա ղեկավարությամբ հնչել են նաև Յ. Ս. Բախի «Չարչարանքներ ըստ

Ջավեն Ն. Վարդանյանը ելույթի պահին

Հասմիկ Վարդանյանը ելույթի պահին

Ռոբեն Վարդանյան

Հովհաննու», 1999, «Չարչարանքներ ըստ Մատթեոսի», 2000, պասսիոններ), «Շեքսպիրյան օրեր» (2000) փառատոները: Վ.-ի մեկնաբանությամբ համերգ. կատարումով ներկայացվել են Վ. Ա. Մոցարտի «Բաստիեն և Բոստիենա» (1981), «Առևանգում հարեմից» (1995), «Կախարդական սրինգ» (1996), Ջ. Ռոսսինիի «Մոխրոտը» (2016) օպերաները, նաև հայ արդի կոմպոզիտորների մի շարք երկեր:

Այսրկովկաս. մրցույթի դափնեկիր (1969, Երևան), ՀԼԿԵՄ մրց. (1982), Հանրապետ. մրցույթի (1969), ՀՀ ՄՆ (2015) ոսկե մեդալներ, «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի հուշամեդալ (2015):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Հակոբ Արմենակի (29.07.1928, Կրասնոդար–17.02.1981, Երևան), ջութակահար: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1963): Պրոֆ. (1980): Ավարտել է ԵՊԿ (1952, Կ. Դոմբաևի դասարան): 1953–81-ին դասավանդել է նույն կոնսերվատորիայում (ղեկավարել է լար. քառյակը): Խմբագրել է հայ կոմպոզիտորների ջութակի և անսամբլ. երկեր, եղել առաջին կատարողը: 1950-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: Մենահամերգներով և նվագախմբի հետ հանդես է եկել արտերկրում՝ դիրիժորներ Ա. Խաչատրյանի, Կ. Սարաջևի, Մ. Մալունցյանի, Օ. Դուրյանի, Ա. Ստասևիչի, Ս. Պոպովի և ուր. ղեկավարությամբ:

Կինը՝ **Կոստանյան** Իրինա Նիկոլայի (ծ. 06.01.1930, Երևան), դաշնակահարուհի, կոնցերտմայստեր, մանկավարժ: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի բաժինը (1953, Գ. Սարաջևի դասարան): 1950–59-ին՝ Հայաստանի պետ. երգչախմբի, Հայֆիլհարմոնիայի, ԵՊԿ լար. ամբիոնների կոնցերտմայստեր: 1970-ից դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1994-ից): Նվագակցել է Հ. Վարդանյանին, Պ. Լիսիցյանին, Է. Բաղդասարյանին, Մ. Աբրահամյանին, Ջ. Պետրոսյանին և ուր.:

Գրկ. *Будагян А., Скрипач Акоп Вартанян, Е., 1998.*

ՎԱՐԴԱՆՅԱՆ Հասմիկ Վարդանի (ծ. 13.12.1988, Հրազդան), թավջութակահարուհի: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը, ԵՊԿ (Ա. Մեսրոպյանի դասարան), Հյուսթոնի համալսարանի «Մուրս» երաժշտ. դպրոցը: 2005-ից, որպես մենակատար և նվագախմբի կոնցերտմայստեր, հանդես է եկել միջազգ. բեմերում: Հայաստանի երիտասարդ. նվագախմբի կազմում շրջագայել է Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և Բելառուսում: 2009–10-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբում, 2010–16-ին՝ Կոմիտասի անվ. քառյակում (համերգներով շրջագայել է Խորվաթիայում, Մոլդովայում, ԼՂՀ-ում):

«Վերածնունդ» միջազգ. մրցույթ-փառատոնի 1-ին (2009, Երևան), Ա. Խաչատրյանի անվ. թավջութակահարների միջազգ. մրցույթի 2-րդ (2010, Երևան), Շլեռնի միջազգ. մրցույթի 1-ին (2011, Իտալիա), ՀՀ նախագահի (2012) մրց-ներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռուբեն Ջավենի [03.06.1936, Լենինգրադ–08.05.2008, Առլինգտոն (ԱՄՆ)], դիրիժոր: Ջավեն Ղևոնդի ***Վարդանյանի*** որդին: Ավարտել է ՄՊԿ (1960, Ն. Պ. Անոսովի, Կ. Բ. Պտիցայի դասարաններ) և ասպիրանտուրան (1964, ղեկ.՝ Ն. Պ. Անոսով), կատարելագործվել Հ. ֆոն Կարայանի ղեկավարությամբ (1963–1964, Վիեննա): 1964–67-ին՝ Մոսկվայի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր-ասիստենտ, 1967–70-ին՝ Հայաստանի պետ., 1970–76-ին՝ Բոլիվիայի ազգ., 1992–2008-ին՝ Առլինգտոնի սիմֆ., 1993–2008-ին՝ Ուիլյամսբուրգի կամեր. նվագախմբերի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վավիկ (Անուշավան) Տիգրանի [28.12.1900 (10.01.1901), ք. Ղուբա (Ադրբեջան)–07.11.1967, Երևան], դերասան, ռեժ., թատեր. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1950): Ավարտել է Մոսկվայի հայկ. դրամատիկ. ստուդիան (1925): 1951–55-ին՝ ՀԽՍՀ ԳԽ նախագահության նախագահի, 1953–54-ին՝ մշակույթի նախարարի

Տևսարան Վարդան Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր» օպերայի բեմադրությունից (1957, ռեժ.՝ Վ. Վարդանյան)

տեղակալ, 1952–55, 1959–65-ին՝ ՀԹԸ (այժմ՝ ՀԹԳՄ) վարչության նախագահ: 1918–20-ին ղեկավարել է Աստրախա-

նի գեղ–թատեր. ստուդիան, 1920–26–ին՝ Ստավրոպոլի հայկ. թատրոնը, 1928–ից՝ Երևանի Առաջին պետ. թատրոնի (այժմ՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի) դերասան (1936–ից՝ նաև ռեժ.): 1944–ից դասավանդել է Երևանի թատեր. ինստ–ում (հիմնադիր–առաջին տնօրեն, պրոֆ.՝ 1946–ից): Բեմադրել է «Գևորգ Մարզպետունի» (ըստ Մուրացանի, 1941), Կ. Մ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» (1942), «Ռուսական հարց» (1947) և այլ պիեսներ: 1954–58–ին՝ ԵՕԲԹ գլխ. ռեժ., բեմադրել է Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ» (1955), Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» (1956), Վ. Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր», Ա. Բաբաևի «Արծվաբերդ» (երկուսն էլ՝ 1957) օպերաները:

Վ–ի ռեժ. արվ–ին բնորոշ են արդիականության խոր զգացողությունը, գաղափարականի ու հուզականի համադրումը և տպավորիչ բեմավիճակների ստեղծումը:

Երկ. *Ջրույց բեմական արվեստի մասին, Ե., 1939: Արևմտյան Եվրոպայի թատրոնի մասին, պր. 1, Ե., 1946: Անտիկ թատրոն: Գրիբոյեդովը և հայ թատրոնը, Ե., 1955: Ռուսական առաջավոր թատերական կուլտուրայի դերը հայ թատրոնի զարգացման մեջ, Ե., 1958: Չեխովը և հայ թատրոնը, Ե., 1960:*

Գրկ. *Ռիգաև Ս., Վավիկ Վարդանյան, Ե., 1962:*

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վարդուհի Ռուբենի (27.06.1976, Երևան–15.10.2006, Երևան): Ավարտել է Հայաստանի երգչախմբ. ընկերության Զայնի պահպանման և երգչախմբ. երգեցողության երաժշտ. դպրոցը (1990), ԵՊԿ ջազ–էստրադ. բաժինը (2003): Առաջին ելույթը 1994–ին՝ «Ասուպ» երաժշտ. մրցույթում, նույն թվականից՝ Երևանի Երգի պետ. թատրոնի երգչուհի, 2004–ից դասավանդել է թատրոնին կից ստուդիայում: Մասնակցել է մի շարք մրցույթների և փառատոների: 2003–ին Մոսկվայում «Ֆեստո» փառատոնի 10–ամյակին նվիրված փառատոնում ընդգրկվել է 35 լավագույնների ցանկում: Հյուրախաղերով շրջագայել է ԱՄՆ–ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Մակեդոնիայում, Լիբանանում, Իրանում և այլուր: Նկարահանել է 10–ից ավելի տեսահոլովակներ, թողարկել «Խառնաշփոթ», «Միայն դու» ձայնասկավառակները:

«Ջոլոտոյ շլյագեր» (1–ին մրց., 1999), «Սլավյանսկի բազար» (2–րդ մրց., 2000, երկուսն էլ՝ Բելառուս), «Դիսքավերի» (Մեծ մրց., 2000, Բուլղարիա), Մակեդոնիայի (Մեծ և 1–ին մրց–ներ, 2000), «Մորե դրուզեյ» (2–րդ մրց., 2002, Յալթա), Մոսկվայի (1–ին մրց., 2002) մրցույթների, Բուլղարիայի ջազ–փոփ փառատոնի (1–ին մրց., 2001) դափնեկիր:

ՎԱՐԴՈՎՅԱՆ Հակոբ Բաղդասարի (18.01.1840, Կ. Պոլիս–02.02.1898, Կ. Պոլիս), թատեր. գործիչ, ռեժ., դերասան: 1861–ից՝ հայ առաջին պրոֆեսիոնալ թատերախմբի՝ Արևելյան թատրոնի դերասան: Աչքի է ընկել «հակառակորդ» ամպլուայի դերերով (Ռոդեն՝ Է. Սյուի «Թափառական հրեա», Արտաշես՝ Պ. Դուրյանի «Արտաշես աշխարհակալ», ևն):

Վավիկ Վարդանյան

1868–ին Կ. Պոլսում հիմնադրել է «Վարդովյան թատրոնը», բեմադրել հայ. և թուրք. ներկայացումներ (Վ. Հյուգոյի «Էռնանի», Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Մոլիերի «Ակամա բժիշկ», նաև Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի գրեթե բոլոր ողբերգությունները): Համարվում է թուրք. թատրոնի հիմնադիրը:

1872–ից բեմադրել է օպերետներ, որի համար թատերախումբը համալրել է երգիչ–երգչուհիներով, երաժիշտ–կատարողներով: Առաջինը Ա. Մանասյանի «Պամելա կամ Բարեկենդանի գիշերները» երգախառն պիեսն էր (երաժշտությունը՝ Ա. Մանասյանի), ապա՝ Տ. Չուխաճյանի «Արիֆի խարդախությունը» օպերետը: Վ. բեմադրել է նաև Շ. Լեքոկի «Մադամ Անգոյի աղջիկը», «Ժիրոֆլե Ժիրոֆլյա», Ժ. Օֆֆենբախի «Գեղեցկուհի Հեղինե», «Օրփեոսը դժոխքում» օպերետները, որոնց հիման վրա ստեղծվել է հայ երաժշտ. թատրոնը:



Վարդուհի Վարդանյանը ելույթի պահին

Գրկ. *Սպենդիարյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 3, Ե., 1969: Պեշիկթաշլյան Ն., Թատերական դէմքեր, Անթիլիաս, 1969: Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Ե., 2010:*

ՎԱՐԹԵՆԻՍՅԱՆ Շաքե [22.09.1924, Բեյրութ–27.06.2003, Բերգեն (ԱՄՆ–ի Նյու Ջերսի նահանգ)], երգչուհի (սոպրանո): Զայնը մշակել է Բեյրութի կոնսերվատորիայում: Ուսանելու տարիներին հանդես է եկել հյուրախաղերով. կատարել է հայ և այլ ժողովուրդների երգեր: Կրթությունը շարունակել է ԱՄՆ–ում. ավարտել է Բալթիմորի Փիբոդի երաժշտ. ինստ–ը:

Հակոբ Վարդովյան

Մասնակցել է մի շարք մրցույթների, արժանացել 11 մրց–ի: Համերգներով շրջագայել է ԱՄՆ–ի խոշոր քաղաքներում, հայաշատ համայնքներում. երգացանկում՝ հայկ. ժող., նաև Կոմիտասի, Վ. Կոտոյանի, Բ. Կանաչյանի, Ա. Դոլուխանյանի և ուր. կոմպոզիտորների երգեր: Հրավիրվել

Շաքե Վարթենիայան

Գրիգոր Վարժապետյան

է Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոններ, կատարել գլխ. դերերգեր: Սպոլետոյի միջազգ. փառատոնում (Իտալիա) հանդես է եկել Լեդի Մակբեթի (Ջ. Վերդիի «Մակբեթ») դերերգով (շահել է մրց.), ապա՝ Ֆրանսիայում՝ Էքս-ան-Պրովանսի միջազգ. երաժշտ. փառատոնին՝ Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան» օպերայում: Բազմիցս ելույթներ է ունեցել հանրահայտ երգիչ Տիտո Գոբիի հետ: Ջ. Վերդիի անվ. ոսկե շքանշան (1963):

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ Գրիգոր Սիմոնի (18.06.1905, Էրզրում–09.11.1960, Երևան), դիրիժոր: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1945): Ավարտել է ԵՊԿ փող. (1932, տրոմբոն) և դիրիժորության (1937) բաժինները: 1937-ից՝ ԵՕԲԹ փոխտնօրեն (1940-ից՝ տնօրեն) և դիրիժոր, 1951-ից՝ ԵԵԿԹ գլխ. դիրիժոր (1952-ից՝ նաև տնօրեն): Ղեկավարել է Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ», Ժ. Բիզեի «Կարմեն», Ջ. Պուչչինիի «Չիո-Չիո սան» օպեր., Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Շահրիզադե», «Խանդութ» (ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության) բալետ. (բոլորը՝ ԵՕԲԹ), Ի. Կալմանի «Բայադերա», «Կապկազ թամաշա» (ըստ Ե. Չարենցի), Վ. Կանդելակիի «Ծղնեթցի Մայան» թատեր. (երեքն էլ՝ ԵԵԿԹ) ներկայացումները:

Վրաստանի թատեր. ընկերության և ԿՄ Հատուկ մրց. (1958):

ՎԱՐԻԱՑԻԱ (< լատ. variatio – փոփոխություն), 1. երաժշտ. թեմայի, նրա մեղեդու, նվագակցության կամ այլ տարրերի (երբեմն՝ միաժամանակ մի քանիսի) փոփոխությունը: Երաժշտ. կերպարի փոփոխման, զարգացման միջոց: 2. Կոմպոզիցիայով՝ ծավալուն, սովորաբար՝ տեխնիկապես բարդ, ոչ մեծ դաս. մենապար բալետում:

ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ (< լատ. variatio – փոփոխություն), երաժշտ. ստեղծագործություն, նաև երաժշտ. ձև՝ հիմնված ավարտուն երաժշտ. թեմայի և նրա բազմակի տարբերակվող կրկնությունների վրա (5–6-ից մինչև մի քանի տասնյակ): Կոչվում է նաև թեմա և Վ., քանի որ թեմայի յուրաքանչյուր փոխակերպված, ձևափոխված կրկնությունն անվանում են ***վարիացիա:*** Առանձին Վ-ում բացահայտվում են թեմայի երաժշտ. կերպարի տարբեր հատկանիշներ, կամ ստեղծվում են նոր կերպարներ՝ մեկ ընդհանուրի հիման վրա: Վ-ում հաջորդաբար տարբերակվում, փոփոխվում են թեմայի գրեթե բոլոր առանձնահատկությունները՝ ֆակտուրան, մեղեդին, նվագակցությունը, ռիթմը, ձայնակարգը, տոնայնությունը, տեմպը, չափը, այդուհանդերձ, բոլոր Վ-ում թեման մնում է ճանաչելի: Վ. հայտնի են ժող. և պրոֆեսիոնալ երաժշտության մեջ: XVII–XVIII դդ-ում Վ-ում ավելի շատ ընդգծվել է կատարող. վիրտուոզային հատկանիշը, որի շնորհիվ առավել զարգացել, մշակվել է թեմայի ֆակտուրան՝ շարադրման կերպը: Կարևորելով այդ հատկանիշը՝ հաճախ Վ. են գրվել այլ կոմպոզիտորի

Հատված Էմին Արիստակեսյանի «Ֆանտաստիկ վարիացիաներ»-ից

ստեղծագործության թեմաներով: Ավելի ուշ կոմպոզիտորները ձգտել են Վ. միավորել ընդհանուր զարգացող բովանդակությամբ, որն էլ պահանջում է թեմայի առավել աճող ձևափոխումներ (ծավալի, բնույթի)՝ Վ-ի միավորման, նրանց սահմանագծերի հարթեցման միջոցով: Վ. կարող են լինել ինքնուրույն ստեղծագործություն (թեմա և Վ.), նաև խոշոր ձևի ստեղծագործության (սոնատ, սիմֆոնիա ևն) մաս:

Այն Վ., որոնց թեմայի հիմնական հատկանիշներն էականորեն չեն փոփոխվում, կոչվում են խ ի ս տ (դաս. երաժշտություն), մեծ փոփոխությունների դեպքում՝ ա զ ա տ (ռոմանտիկ. և ավելի ուշ դարաշրջանների երաժշտություն): Ազատ Վ. են Ռ. Շումանի «Սիմֆոնիկ էտյուդները», Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադը», Է. Միրզոյանի

լար. կվարտետը, Է. Արիստակեսյանի «Ֆանտաստիկ վարիացիաները» ևն: Միմյանց հաջորդող 2 թեմայի հիման վրա գրված Վ. անվանվում են կրկնակի, որի դեպքում Վ.-ում փոխընդմեջ տարբերակվում են 1-ին, ապա՝ 2-րդ թեմաները:

Վարիացիոն զարգացման սկզբունքներից է նաև որևէ ձայնում անփոփոխ կրկնվող թեմայի ուղեկցումը նոր մեղեդիներով: Եթե այդպիսի Վ.-ում անընդմեջ կրկնվող թեման շարադրվում է ներքևի ձայնում՝ բասում, ձևը կոչվում է Վ.՝ օստինատո բասի հիման վրա (Վ. basso ostinato) (տես ***Պասակալիա***, ***Չակոնա***), եթե կրկնվող մեղեդին շարադրվում է վերևի ձայնում՝ սոպրանոյում՝ Վ.՝ օստինատո սոպրանոյի հիման վրա (Վ. soprano ostinato): Վերջինի ցայտուն օրինակներից է Մ. Ի. Գլինկայի «Կամարինյանը»:

Գրկ. ***Протопопов Вл., Вариационные процессы в музыкальной форме, М., 1967; Դևրոյան Վ., Երաժշտական ստեղծագործության վերլուծություն, Ե., 1985:***

ՎԱՐՈՍՅԱՆ Ասյա Աղասու (ծ. 03.02.1926, Լենինական), տավղահարուհի: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1977): Պրոֆ. (1985-ից): 1940-ից ապրել է Լենինգրադում: Սովորել է Լենինգրադի կոնսերվատորիային կից հատուկ երաժշտ. դպրոցում, ավարտել կոնսերվատորիան (1948) և ասպիրանտուրան (1951, ղեկ.՝ Ե. Ա. Սինիցինա): 1945–48 և 1987–99-ին դասավանդել է Լենինգրադի կոնսերվատորիային կից երաժշտ. դպրոցում, 1949–2007-ին՝ կոնսերվատորիայում (տավղահարների կամեր. անսամբլի, 1972-ից՝ նաև տավղահարների մասնագիտ. դասարանների ղեկ.): Սաներից շատերը միջազգ. մրցույթների դափնեկիրներ են, երաժշտ. անվանի խմբերի առաջատար կատարողներ, ճանաչված մանկավարժներ: 1947–86-ին, որպես մենակատար, հանդես է եկել Լենինգրադի ՕՖԹ սիմֆ. նվագախմբում (տավիղ), նաև բազմաթիվ նվագախմբերի և առաջատար մեներգիչների հետ: Երկացանկում՝ Ս. Ս. Պրոկոֆևի, Դ. Դ. Շոստակովիչի, Պ. Ի. Չայկովսկու, Ա. Կ. Գլազունովի, Ռ. Մ. Գլիերի, Ա. Խաչատրյանի և ուր. ստեղծագործություններից:

Հեղինակ է բազմաթիվ փոխադրությունների (տավիղի համար), նաև մեթոդ. ձեռնարկների:

Երիտասարդ կատարողների 2-րդ փառատոնի 1-ին մրց. (1957, Լենինգրադ):

ՎԱՐՈՒԺՅԱՆ Սոնյա Հակոբի [ծ. 1973, ք. Էպսոմ (Մեծ Բրիտանիա)], երգչուհի: Երգել է վաղ տարիքում, նվագել կիթառ, դաշնամուր, գրել երգեր, 15 տարեկանում մասնակցել է երգի մրցույթների: Հիմնադրել է «Raindance» երաժշտախումբը, համագործակցել պորտուգալացի և թաիլանդցի երաժիշտների հետ: Ելույթներ է ունեցել Նյու Յորքի հայտնի համերգասրահներում, մասնակցել ամերիկ. «Long Island» և հայկ. երաժշտության փառատոներին: Թողարկել է «All in All» ձայնասկավառակը (1991, Լոնդոն), կիթառի և ստեղնաշար. գործիքների նվագակցությամբ ինքնատիպ հեղինակ. երգերի, «Seven» (1998, Նյու Յորք), «Confession» (2000) ալբոմները: Երգերը հնչել են ռադիոկայաններով (92,7 WORE և WHRU 88,7): Նկարահանվել է Նյու Յորքի PBS հեռուստաընկերության «The Armenian Americans» («Ամերիկայի հայերը») փաստագր. ֆիլմում (ընդգրկված են նաև նշանավոր այլ հայեր): Համերգներով հանդես է եկել Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, բարեգործ. համերգներով՝ ՀՀ-ում (2005): Առաջին անգամ հայ-ով երգեր է գրել 2006-ին, թողարկել է «Ճանապարհ» ձայնասկավառակը (12 երգ):

Ասյա Վարոսյան

Սոնյա Վարուժյան

ՎԱՐՈՒՆՑ Վիկտոր Փայլակի (26.08.1945, Թբիլիսի–06.09.2003, Վաշինգտոն, թաղված է Թբիլիսիում), երաժշտագետ-պատմաբան, մանկավարժ: Արվեստագիտ. դ-ր (1995): Պրոֆ. (1996): Ավարտել է Թբիլիսիի 2-րդ երաժշտ. ուսումնարանի դաշնամուրի (1966), ՄՊԿ երաժշտության պատմության (1972) բաժինները: Փորձաշրջան է անցել Բազելում՝ Պ. Զախերի ֆոնդում (1992–93, 1997), Փարիզում (1997), Լոնդոնում (1998): 1976-ից դասավանդել է ՄՊԿ-ում (ասպիրանտուրայի վարիչ՝ 1979–97-ին): Կազմել, խմբագրել և ծանոթագրել է «Ն. Պ. Անոսով: Գրական ժառանգություն, նամակագրություն, հուշեր ժամանակակիցների մասին» (1978), «Ստրավինսկի՝ հրապարակախոս և զրուցակից» (1988), «Ի. Ֆ. Ստրավինսկի: Նամակագրություն ռուս թղթակիցների հետ: Կենսագրական նյութեր (հ. 1–3, 2000–2003), «Պրոկոֆևը Պրոկոֆևի մասին» (1991, բոլորը՝ ռուս.) ժող-ները:

Վիկտոր Վարունց

Վերդի

Վերդիի «Հայ աշուղներ» գրքի (1937) տիտղոսաթերթը

ՎԵՐԴԻ, Թաւերդեան Գեղամ Գևորգի [15.03.1884, գ. Չիգդամլու (այժմ՝ Գ. Ազատավան՝ ՀՀ Արարատի մարզում)–16.02.1959, Երևան], բանահավաք, աշուղագետ: Հորինել է նաև աշուղ. երգեր: 1934-ից աշխատել է Հայաստանի մշակույթի պատմության ինստ-ում: Շրջագայել է Հայաստանում, գրառել ժող., բանահյուս. և աշուղ. երգեր, որոնց հիման վրա կազմվել են «Հայ աշուղներ» (1937), «Հայկական խորհրդային ֆոլկլորը» (1938), «Հեքիաթներ և զրույցներ» (1957) և այլ ժող-ներ: Առանձնանում են Վ-ի գրառած «Լենին փաշան» (առանձին հրտ.՝ 1967, ասացող՝ Գարո Բարձումյան) վիպերգը և «Քյոռ-օղլի» (1941) ժող. վեպի հայկ. պատումները:

ՎԻԲՐԱՏՈ (իտալ.՝ vibrato, < լատ. vibro – տատանվել), հնչյունի բարձրության (հաճախակի Վ.) կամ ուժգնության (ամպլիտուդ. Վ.) պարբեր. փոփոխությունը. օգտագործվում է երգեցողության մեջ, լար. աղեղնավոր, փող. երաժշտ. գործիքներ և էլեկտր. երգեհոն նվագելիս: Վ. հնչյունի տեմբրին հաղորդում է նոր հատկանիշներ, դարձնում հուզականորեն լարված, դինամիկ: Հնչյունի այդ հատկանիշները կարող են ձևափոխվել աննշան փոփոխությունների միջոցով (օր.՝ հաճախությունը և տատանումը): Երգեցողության մեջ Վ-ի նորմալ հաճախությունը 5–7 Հց է: Նվազ հաճախության Վ. ընկալվում է որպես ձայնի տատանում (ճոճում), մեծը՝ թրթռոց:

ՎԻՀԱԿԻ ԵՐԳԵՐ, ջանգյուլումներ, հայ ժող. խաղիկների ծիս. տեսակ. բաղկացած է քառատող, եռատող, երկտող տներից՝ հատուկ իմաստով կրկնակների հետ հարակցված: Երգել են դեռատի աղջիկներն ու երիտասարդ կանայք վիճակահանության ժամանակ՝ Սբ Համբարձում կամ Ծաղկամոր տոնին: Ծեսը կատարվել է բնության մեջ: Բախտագուշակման խորհրդավոր արարողությունը կապվել է բնության զարթոնքի, պտղաբերության, ջրի և բույսերի պաշտամունքի հետ: 7 աղբյուրից նախօրոք առնված ջուրը 7 ծաղիկներով զարդարված կժով դրվել է աստղալից երկնքի տակ: Ծեսի յուրաքանչյուր մասնակից, որպես իր բախտի նշան, որևէ իր է գցել ջրամանի մեջ, որի եզրին ամրացված «վիճակը» (կնոջ տեսքով տիկնիկ) ներկաները հերթով համբուրել են, ապա ամանն ու տիկնիկը դրել յոթնամյա աղջկա առջև, ծածկել կարմիր քողով և երգել Վ. ե.: Դեռատի աղջիկը՝ «վիճակի հարսը», երգի ժամանակ ամանից հանել է որևէ իր, որի տիրոջ բախտը որոշվել է երգի կամ արտասանված քառյակի բովանդակությամբ:

Վ. ե-ի բանաձևած կայուն կրկնակներից հայտնի են. I ու III տողից հետո՝ «Ձան գյուղում, ջան, ջան», II ու IV տողից հետո՝ «Ձան ծաղիկ, ջան, ջան», և երգի յուրաքանչյուր տնից հետո՝ «Հարս, հան վիճակդ ի բարին, // Աստված իր սրտի մուրազ կատարի» կրկնակները: Վիճակահանությունը երգառատ ծես է: Բացի բուն «բախտագուշակ» քառյակներից, որոնք արտասանում են, սակայն առավել հաճախ մեներգում խմբային կրկներգով: Ծեսը, հարսանեկանի նման, ընդգրկել է

Հատված «Ծաղիկ ունեմ նարնջի» խմբերգից (գրառումը՝ Կոմիտասի)

նաև իր առանձին դրվագներին հարմարեցված հատուկ երգ. հատվածներ ու պարերգեր. դրանցից են աղջիկների նախատոն. գիշերվա «հ ա կ ո ւ մ ի» երգը (հսկում են, որպեսզի տղաները բաց երկնքի տակ թաքցված ջրամանը չգողանան), Ը՛ սկլա, ըսկլա՛, պատին տամ, Հավկուրը շուռ տամ, Վախենամ քնեմ, քունս տանի, Չիքիլըս տանել տամ..., որը, կնոջ հանդերձանքի տարրերի հաջորդ. թվարկումով և տարբերակվելով, կրկնվում է պարի ուղեկցությամբ (տես Կոմիտասի «Վիճակի երգեր» շարքում 1-ին՝ «Երկնքի աստղերը» խմբերգը, Երկ. ժող., հ. 3, 1969), վիճակահանության առավոտվա, բուն ծեսի հանդիսավոր ու երկարատև նախերգանքը՝ փոխ առ փոխ հնչող երգերով ու ընդհա-

նուր խմբապարերով (նույն շարքում՝ «Հե՛յ, գյուլ եմ»), խմբային հաստատուն ռեֆրենը, որը ինչում է յուրաքանչյուր վիճակ հանելուց հետո (նույն շարքում՝ «Ծաղիկ ունեմ նարնջի», Երևանի տարբերակ, ըստ Կոմիտասի՝ կրկնակը «Ձմե՛ն, ծաղիկ, ջմե՛ն, վիճակ...») են: Ընդհանուր առմամբ, ծեսի «երաժշտական ձևավորումը»՝ բաղկացած տարբեր բնույթի ու տրամաբանության երգերի համադրման և հակադրման հաջորդումներից, ներկայացրել է ծավալուն ու բազմերանգ ժող-երաժշտ. պատկեր: Երգերի մեղեդիներում անդրադարձված են տվյալ վայրերի ժող. երաժշտության ոճից բխող ելևէջ. ու կառուցվածք. (կամ երաժշտաբարբառ.) հատկանիշներ, այստեղից՝ Վ. ե-ի մեղեդիական բազմազան տարբերակների առկայությունը:

Շարականոցում Համբարձման կանոնը, որի հեղինակը Ներսես Լամբրոնացին է, 2 պատկեր ունի. մեկը՝ «Համբարձաւ Տէրըն մեր» (7 մաս), մյուսը՝ «Ծագումն Միածնի»՝ 2 հարց և 2 «Տէր երկնից» ունեցող 9 միավորից բաղկացած պատկեր: Համբարձման տոնին նվիրված բազմաթիվ երգեր են ստեղծվել. մի քանիսը («Այսօր անդրանիկ», «Եւ ի յերկինս վերացեալ» են) պահպանվել են մեղեդիների հետ, և ցայսօր երգում են եկեղեցում:

Գրկ. *Աբեղյան Մ., Երկ., հ. 7, Ե., 1975, էջ 54–58: Տեր-Մկրտչյան Գ., Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք 1, Ե., 1979: Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1999:*

ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ, ժող. բանահյուսությանը վերաբերող չափածո երգային ստեղծագործություններ. հորինվել են առասպելաբան., կրոն. թեմաներով, պատմ. անձանց և իրադարձությունների մասին: Հնագույն տեսակն առասպելաբան. Վ. ե. են՝ նվիրված աստվածներին և դյուցազուններին, ամենատարածվածը՝ պատմականը (կոչվում է նաև վ ի պ ե ր գ), որը կապված է որոշակի պատմ. անձանց արարքների և իրական դեպքերի հետ: Պահպանվել են Արտաշեսի և Սաթենիկի ամուսնության երգի հատվածները, «Լևոնի երգը»՝ ստեղծված XIII դ-ի Կիլիկյան Հայաստանի Հեթում Ա թագավորի որդուն գերելու կապակցությամբ, «Մոկաց Միրզա» են: Բազմաթիվ են XIX–XX դդ-ի ռուս-թուրք. պատերազմի (Լորիս-Մելիքով, Տեր-Ղուկասով, Հասան Ղալա և ուր.) և ազգ-ազատագր. պայքարի հերոսների (Աղբյուր Սերոբ, Արաբո, Քեռի, Գևորգ Չաուշ, Անդրանիկ և ուր.) մասին պատմահերոս. և պատմաողբերգ. երգերը: Ստեղծվել են նաև պատմակենցաղ. երգեր: Կան Վ. ե., որոնց մեջ միաձուլվել են կրոնաառասպելաբան., պատմ. ու կենցաղ. մոտիվներ, այուժեներ, կերպարներ («Ասլան աղա», «Մեռավ էն, ինչ շատ մալ ուներ» են): Ավելի ուշ ստեղծվել են Հիսուս Քրիստոսին, սրբերի և սրբազան այլ անձանց կյանքին ու գործունեությանը նվիրված Վ. ե. («Նարեկացի», «Կարոս խաչ» են):

Երաժշտության մեջ Վ. ե. ավանդ. երաժշտ. բանահյուսության մի բաժինն են: Անվանումը ներառում է ոչ միայն վիպ. բովանդակության ինքնուրույն երգեր, այլև էպոսի ու սիրային-հերոս. պատում-

Հարված «Սասնա ծռեր» էպոսի «Ախտաանք»-ից (գրառումը՝ Վ. Սամվելյանի)

ների եղանակավոր դրվագներ: Վիպ. պատումների կատարումն ուղեկցվել է յուրատեսակ վիպ. շնչի երգեցողությամբ (նաև նվագակցությամբ): Պահպանվել են ազգ. պատումներ, որտեղ հանդիպում է մեղեդիական-ասերգ. դարձվածքներով տեքստի եղանակավոր արտասանություն: Պատմ. երգերը պարունակում են նաև հերոս-քայլերգ. տարրեր:

Հայ հին Վ. ե-ից պահպանվել են «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելին վերագրվող «Ծամթելի և լողորդի» մասին մի շարք երգերի եղանակներ, «Սասունցի Դավիթ»-ից պահպանված շուրջ 30 երգվող հատվածներ (տես *«Սասնա ծռեր»*), *«Քյոռօղլի»* ավանդության հայկ. տարբերակի երգերը են: Համեմատաբար նոր են ստեղծվել բազմաթիվ պատմ. ու պատմակենցաղ. երգ-պատումներ, որոնք սովորաբար դրամատիկ. բնույթի են: Կան նաև ազատագր. կռիվների հերոսներին նվիրված պատմող. և քայլերգ. երգեր:

Գրկ. *Աբեղյան Մ., Երկ., հ. 1, Ե., 1966: Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք 1, Ե., 1972:*

ՎԻՊԱՍԱՆ, հեթանոս. շրջանում և միջնադարում հայ ժող. ավանդավեպերի՝ ***վիպասանքի*** մշակող և կատարող: Վ. անվանումն ընդհանրական է Գողթան երգիչների, գուսանների և ասացողների համար: Նոր ժամանակներում «Վ.» անվանում են վեպի հեղինակին:

ՎԻՊԱՍԱՆՔ, հայ ժող. պատմավիպ. երկերի (էպոս, վիպերգ) ընդհանրական անվանումը: Վ. պատմել և երգել են ժող. երգիչ գուսանները՝ փանդիռի և այլ երաժշտ. գործիքների նվագակցությամբ: Վ-ի հնագույն նմուշները գրառել է Մովսես Խորենացին «Պատմություն Հայոց» երկում: «Վ.» են կոչվել նաև վիպ. երկերի մշակող-կատարողները: Տես նաև ***Գողթան երգեր***, ***Թվելյաց երգեր***, ***Վիպասան***:

ՎՈԿԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երգեցողության համար նախատեսված երաժշտություն: Ձայնի համար ստեղծագործություններն առանձնանում են ըստ կատարող. կազմի՝ մենակատար, անսամբլ., խմբերգ., նվագակցությամբ կամ առանց դրա, ըստ երաժշտ. կառուցվածքի՝ միաձայն կամ բազմաձայն, հոմոֆոն-հարմոնիկ կամ պոլիֆոնիկ: Ժանրերից են՝ երգ, ռոմանս, կանտատ, օրատորիա, օպերա ևն: Վ. ե-յան ստեղծագործություններում առաջատարը երգչի ձայնն է: Վ. ե., բացառությամբ որոշ տեսակների (տես ***Վոկալիզ***), կապված է խոսքի, բանաստեղծ. տեքստի հետ:

Գիսակ Վրույր

ՎՈԿԱԼԻԶ (ֆրանս.՝ vocalise, < լատ. vocalis – ձայնավոր հնչյուն, հնչող, երգող), առանց բառերի երաժշտ. ստեղծագործություն՝ երգելու համար: Երգում են որևէ ձայնավորով կամ նոտայի անվանումով՝ վոկալ տեխնիկան զարգացնելու համար: Բազմաթիվ Վ. վարժություններ, էտյուդներ, պիեսներ գրված են ձայնի արտահայտչականությունը և երգչային վարպետությունը զարգացնելու համար: Կան նաև ինքնուրույն գեղ. արժեք ունեցող Վ-ներ, որոնք գրված են համերգ. կատարման համար (օր.՝ Ս. Վ. Ռախմանինովի «Վոկալիզը», Մ. Ռավելի «Հաբաներայի ձևով գրված վոկալիզը», Ն. Մետների «Սյուիտ-վոկալիզը», Ռ. Գլիերի ձայնի և նվագախմբի կոնցերտը, Ա. Բաբաջանյանի «Վոկալիզը», Ա. Խաչատրյանի դաշնամուր. «Վոկալիզը» ևն):

ՎՈԿԱԼԻԶԱՑՈՒՄ (ֆրանս.՝ vocalisation), երգեցողություն առանց խոսքի, միայն ձայնավոր հնչյուններով: Պարզ տեսակը 2 կամ ավելի հնչյուններով որևէ ձայնավորի կամ վանկի, բարդը՝ կոլորատուր. պասսաժներ երգելն է: Լինում են ամբողջ. ստեղծագործություններ (կամ մասեր), որտեղ սկզբից մինչև վերջ երգվում են որևէ բառի վանկեր. օր.՝ «ալելու» (Վ. Ա. Մոցարտի «Ալելու»), «Փառք» (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայի վերջաբանում): Տես նաև ***Վոկալիզ***:

Հատված Առնո Բաբաջանյանի «Վոկալիզ»-ից

ՎՐՈՒՅՐ Գիսակ Եղիայի (3.11.1884, Կ. Պոլիս–1.11.1972, Լոս Անջելես), ջութակահար: Ավարտել է Բրյուսելի կոնսերվատորիան (ղեկ.՝ Ս. Թոմսոն), դարձել նույն կոնսերվատորիայի պրոֆ.: 1911–14-ին համերգներով հանդես է եկել Այսրկովկասում, Թիֆլիսում ընտրվել է Հայոց երաժշտ. ընկերության վարչության անդամ: Հյուրախաղերով շրջագայել է Բելգիայում, Հոլանդիայում, 1923-ին՝ ԱՄՆ-ում: Լոս Անջելեսում նվագել է «Մետրո Գոլդուին Մայեր» կինոընկերության նվագախմբում: Հիմնադրել է նաև դպրոց-ստուդիա, որտեղ շուրջ 50 տարի դաստիարակել է ջութակահարների մի քանի սերունդ:

Գրել է ուս. ձեռնարկներ, որոնք հրատարակվել են 100 հզ. տպաքանակով: Հեղինակ է նաև երաժշտ. երկերի (կատարվել են իր համերգներին): Լոս Անջելեսում հիմնադրել է «Կոմիտաս» երգչախումբը (ղեկ.՝ 1928–32): Ստեղծել է նաև գեղանկարներ (ցուցադրվել են Լոս Անջելեսում, արժանացել ոսկե մեդալների):

Տ

ՏԱԲՈՒԼԱՏՈՒՐԱ (< լատ. tabula – տախտակ, աղյուսակ), գործիք. երաժշտության գրառման տառային կամ թվանշանային հնագույն համակարգ: Օգտագործվել է XV–XVII դդ-ում՝ հետզհետե իր տեղը զիջելով ավելի պարզ՝ նոտաների օգնությամբ երաժշտության գրառման եվրոպ. համակարգին:

ՏԱԼՅԱՆ Շարա Մկրտչի [16(28). 07.1893, Թիֆլիս–07.11.1965, Երևան], երգիչ (տենոր, ապա՝ բարիտոն), հաս. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1939): ***Զամալու*** որդին: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1901–13), աշակերտել Գրիգոր ***Սյունուն*** և Սպիրիդոն ***Մելիքյանին***: Վաղ տարիքից երգել է դպրոցի երգչախմբում, 1911-ից հանդես եկել մենակատարումներով: 1912-ին Ալեքսանդրապոլում Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի առաջին ներկայացմանը կատարել է Սարոյի դերերգը՝ մնալով այդ դերի լավագույն կատարողներից: 1913–16-ին, որպես երգեցողության ուսուցիչ և խմբավար, աշխատել է Սուրբ Խաչ ք-ում (այժմ՝ Բուդյոնովսկ՝ ՌԴ Ստավրոպոլի երկրամասում): Սովորել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում (1916–17, Ս. Ի. Գաբելի դասարան), երգել տեղի հայկ. եկեղեցու երգչախմբում: Թիֆլիսի, Բաթումի, Երևանի ու Այսրկովկասի այլ քաղաքների հայ թատեր. փոքր, երբեմն նաև իր հիմնադրած խմբերում հանդես է եկել որպես երգիչ-դերասան: 1924-ին ստեղծել և ղեկավարել է Լենինականի հայկ. օպերա-օպերետ. խումբը (Հ. Դանիելյանի, Լ. Իսեցկու, Ա. Մելիք-Փաշաևի մասնակցությամբ): 1927-ից ապրել է Երևանում, ստեղծել «Հայ աշուղներ» անսամբլը (1927): Մասնակցել է Երևանի օպեր. և երաժշտ. կոմեդիայի թատրոնների հիմնադրմանը, եղել հայկ. գուսան. երգի անսամբլի հիմնադիր-ղեկ-ը (1938–41): Նպաստել է հայ ազգ. երգեցողության զարգացմանը: Լինելով աշուղ. տոհմից (աշուղ Զամալու որդին, Քամալիի թոռնորդին, Շերամի հորեղբոր թոռը)՝ մանկուց դաստիարակվել է համբավավոր վարպետների, նաև հորաքրոջ ամուսնու՝ աշուղ ***Զիվանու*** ստեղծագործ. միջավայրում: Մեծ ներդրում ունի հայ աշուղ. երգերը և նրանց կատարման ոճը սերունդներին փոխանցելու մեջ: Նա Մուշեղ ***Աղայանի*** հետ գրառել, կազմել ու խմբագրել է Սայաթ-Նովայի (1946, 1963), հավաքել և կազմել է Զիվանու (1955) երգերի առաջին նոտ. ժող-ները: Սայաթ-Նովայի, Շիրինի, Զիվանու և ուր. դաս. երգերի նրա կատարումներն առանձնանում են հայ աշուղ. ոճի բանաստեղծ. բառի ու բովանդակության վառ դրսևորումով, բազմաբնույթ մեղեդիների ցայտուն ինչ-ողությամբ ու հուզականությամբ: Նույնքան բնորոշ ու արտահայտիչ են Տ-ի՝ հայ ժող. երգերի, միջնադար. տաղերի, նաև խորհրդ. շրջանի հայ կոմպոզիտորների երգերի կատարումները, որոնք նշանակալի տեղ են գրավել նրա երգացանկում: 1933–54-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ: Հանդես է եկել նաև մենահամերգներով: Հիմնովին տիրապետել է եվրոպ. վոկալ արվ-ին և բեմ. վարպետությանը: Ունենալով լայն դիապազոնի հնչեղ ու ճկուն ձայն՝ 1924-ին Լենինականում հաջողությամբ կատարել է Շ. Գունոյի «Ֆաուստ», Ժ. Բիզեի «Կարմեն», Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դևը» օպերաների և մի շարք դաս. օպերետների տենոր. դերերգերը (հայ. թարգմանությամբ): ԵՕԲԹ-ում լավագույն կատարումներից էին Սարոյի, Մոսիի և Դավիթ Բեկի (Ա. Տիգրանյանի «Անուշ» և «Դավիթ Բեկ»), Արշակի (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», ԽՍՀՄ Պետ. մրց., 1946), Գրիգորի (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Կիազոյի (Զ. Փալիաշվիլու «Դաիսի»), Քյոռօղլու (Ու. Հաջիբեկովի «Քյոռօղլի»), Ֆաուստի (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Դոն Խոսեի (Ժ. Բիզեի «Կարմեն»), Ալմավիվայի (Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ժերմոնի, Ռիգոլետտոյի, Ամոնասրոյի (Զ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Աիդա»), Օնեգինի, Ելեցկու (Պ. Ի. Չայ-

Շարա Տալյան

Սարո՝ Շ. Տալյան, Անուշ՝ Հայկանուշ Դանիելյան (Ա. Տիգրանյանի «Անուշ»)

Շ. Տալյանը Արշակ Երկրորդի դերում (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»)

Վարդգես Տալյան

կովսկու «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա») դերերգերը: Լենինի, Աշխ. կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններ:

Երկ. *Դեմքեր, դեպքեր, մրքեր..., Ե., 1973:*

Գրկ. *Բրուտյան Յ., Անաստյան Ա., Շարա Տալյան, Ե., 1956:*

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՏԱԼՅԱՆ Վարդգես Գրիգորի [03(15).07.1896, Ալեքսանդրապոլ–01.07.1947, Երևան], կոմպոզիտոր, մանկավարժ: *Շերամի* որդին: Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը (1926, Ս. Բարխուդարյանի դասարան), Դոնի Ռոստովի համալսարանի բժշկ. ֆակ-ը (1924): 1924–27-ին դասավանդել է Թիֆլիսի Հայարտան երաժշտ. ստուդիայում, 1927–34-ին՝ երաժշտ. տեխնիկումում (1933-ից՝ նաև տնօրեն): 1933–34-ին՝ Վրաստանի ԿՄ հայկ. բաժանմունքի նախագահ: 1934-ից ապրել է Երևանում: Դասավանդել է ԵՊԿ-ում, ղեկավարել ստեղծագործության դասարանը (1945-ից՝ պրոֆ-ի պաշտոնակատար): Կոմպոզիցիայի դասավանդման հայ խորհրդ. դպրոցի հիմնադիրն է. հատկապես նրա ջանքերով ուսուցումն ընթացել է ազգ. երաժշտության հիմքով: Սաներից են Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Ղ. Սարյանը, Ա. Մերանգուլյանը, Ռ. Աթայանը, Ա. Խուդոյանը: Ստեղծագործել է տարբեր ժանրերով. ուշագրավ են լար. կվարտետը (1935), ջութակի սոնատը (1944), դաշնամուր. տրիոն (1946), «Ռուշանի քարափը» օպերան (ըստ Ն. Զարյանի, անավարտ, 1938), մանկ. ժանր. երգերի շարքը՝ դաշնամուրի նվագակցությամբ (1943), «Գյուլիզար» երաժշտ. դրաման (ներկայացվել է Թիֆլիսում, 1920), «Կոլխոզական» («Լիություն») վոկալ-սիմֆ. պատկերը (1942), «Հայաստան» երգը՝ երգի-պարի անսամբլի համար: Գրել է նաև նոր կենցաղի թեմաներով զանգված. երգեր, ռոմանսներ («Վոկալ ստեղծագործություններ», 1987), խմբերգեր, կամեր. գործիք. երկեր, մշակել ժող. և աշուղ. երգեր: Տ-ի ստեղծագործությանը բնորոշ են ժող-ազգ. հենքը, վառ արտահայտված մեղեդայնությունը, երգ. տարերքի գերիշխանությունը, ազգ. երաժշտությունից բխող հյութեղ հարմոնիան:

Գրկ. *Բրուտյան Մ., Վարդգես Տալյան, Ե., 1978:*

Ըստ Մարգարիտ Բրուտյանի

ՏԱԿՏ, XVII դ-ից՝ մետրի հիմնական միավորը և երաժշտ. ստեղծագործության այն հատվածը, որն սկսվում է մետր. ուժեղ շեշտից: Տ-ի չափը կոտորակի կամ հատուկ նշանի ձևով (C=4/4) դրվում է ինգագծի սկզբում և չափի յուրաքանչյուր փոփոխությունից առաջ: Տ-երը միմյանցից անջատվում են ուղղաձիգ գծերով (Տ-ի գծեր, Կոմիտասն անվանել է տրոհակ): Տարբերում են Տ-ի պարզ, բարդ և խառը տեսակները:

Պարզ Տ. ունի միայն 1 ուժեղ մաս. լինում է երկմաս (1-ին մասն ուժեղ է, 2-րդը՝ թույլ) և եռամաս (1-ին մասն ուժեղ է, 2-րդն ու 3-րդը՝ թույլ):

Երկմաս տակտի օրինակ

Եռամաս տակտի օրինակ

Պարզ երկմաս տակտի չափեր. $\frac{2}{4}$ և $\frac{2}{2}$

Պարզ եռամաս տակտի չափեր. $\frac{3}{8}$, $\frac{3}{4}$ և $\frac{3}{2}$

Բարդ Տ-երում միավորված են 2 (կամ ավելի) միանման (երկմաս կամ եռամաս) պարզ Տ-եր: Բարդ Տ-երում, բացի սկզբի ուժեղ մասից, կան նաև հարաբեր. ուժեղ մասեր, որոնք համընկնում են նրա մեջ միավորված պարզ Տ-երի ուժեղ մասերի հետ (օր.՝ 4/4 չափով Տ. միավորում է զույգ 2/4 պարզ Տ-եր, բացի 1-ին՝ ուժեղ մասից, 3-րդ մասը նույնպես շեշտված է և հարաբեր. ուժեղ):

Բարդ Տ-երով չափեր



Խառը S-երում միավորված են 2 կամ ավելի (երկմաս և եռամաս) պարզ S-եր: Խառը S-ում կան նաև հարաբեր. ուժեղ մասեր, որոնք համընկնում են նրա մեջ միավորված պարզ S-երի ուժեղ մասերի հետ.

$\frac{5}{8} = (\frac{2}{8}+\frac{3}{8})$ կամ $(\frac{3}{8}+\frac{2}{8})$
$\frac{5}{4} = (\frac{2}{4}+\frac{3}{4})$ կամ $(\frac{3}{4}+\frac{2}{4})$
$\frac{7}{8} = (\frac{2}{8}+\frac{2}{8}+\frac{3}{8})$ կամ $(\frac{2}{8}+\frac{3}{8}+\frac{2}{8})$ կամ $(\frac{3}{8}+\frac{2}{8}+\frac{2}{8})$
$\frac{8}{8} = (\frac{3}{8}+\frac{2}{8}+\frac{3}{8})$ և այլն
$\frac{9}{8} = (\frac{2}{8}+\frac{2}{8}+\frac{2}{8}+\frac{3}{8})$ և այլն

Խառը S-երի ներքին կառուցվածքը ճիշտ և հեշտ կարդալու համար նրա պարզ S-երը երբեմն միմյանցից անջատում են կետագծով (Ռ. Մելիքյանի «Սև կաքավիկ» ևն): Խառը S-երը հատկապես բնորոշ են հայ ժող. երաժշտությանը:

Խառը S-երի օրինակներ

Երբեմն նույն ստեղծագործության մեջ միմյանց անընդհատ հաջորդում են տարբեր չափերի S-եր, որոնց կանոնավոր հաջորդականությունը կոչվում է մ ե ջ ն ադ մ ի ջ վ ո ղ: Ի տարբերություն մյուս S-երի՝ փոփոխվող չափն ամեն անգամ նշվում է տողի սկզբում (կամ միմյանց հաջորդող տարբեր չափերը միանգամից գրվում են հատվածի սկզբում):

Տարբեր չափերով իրար անկանոն հաջորդող S-երը կոչվում են փ ո փ ո խ ա կ ա ն:

Վերջին օրինակում («Մաճկալ ես») 6/8 S-երի ներքին կառուցվածքն է՝ (2/8+2/8+2/8), իսկ 7/8-ը՝ (3/8+2/8+2/8):



ՏԱՂ, 1. չափածո ստեղծագործություն, բանաստեղծություն: Հայ մատենագրության մեջ «տաղ» բառն ավանդվել է V դ-ի 2-րդ կեսից՝ քերական., փիլ., ճարտասան. բնույթի մի քանի հուն. երկերի հայ. թարգմանություններում՝ որպես բնագրերում հանդիպող εποϛ (էպոս) և երբեմն էլ στιχοϛ (ստիքոս) բառերի համարժեք: Այդ թարգմանություններում (Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արուեստ», Փիլոն Ալեքսանդրացու «Ի լինելիութեանն», «Յաղագս վարուց կենաց տեսարանի», Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց», Պլատոնի «Պաշտպանութիւն Սոկրատայ», «Յաղագս օրինաց եւ օրէնսդրութեանց», «Ի Մինովս եւ յաղագս օրինի») «տաղ» բառը գործածվել է ինչպես գրական, այնպես էլ ոչ գրական նշանակությամբ՝ պայմանավորված բնագրային «էպոսի» և «ստիքոսի» նշանակությամբ: Գոյությունանալով որպես տերմին՝ S. հայ մտածողների (Դավիթ Քերական, Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, Ներսես Շնորհալի և ուր.) երկերում ըմբռնվել ու մեկնաբանվել է միայն գրական նշանակությամբ՝ որպես ռիթմիկ կառուցված չափածո խոսք:

Հայ գրկ-յան մեջ S-ի պահպանված հնագույն նմուշներն ստեղծվել են X դ-ում՝ Գանձարանի կազմավորման պահանջով՝ որպես ժող-ի առանձին մասերը ներկայացնող կանոնների բաղկացուցիչներ: Քանի որ այդ կանոնները կոչված էին զարդարելու ազգ. եկեղեց. տոների հանդիսությունները, ուստի նրանց մեջ ընդգրկվող S-ային միավորներն անհրաժեշտաբար պետք է ունենային հոգևոր բովանդակություն: Հետևաբար՝ պահպանված հնագույն S-երը հոգևոր ստեղծագործություններ են:



Գրիգոր Նարեկացու «Տաղեր» գրքի (2013) կազմը

Պահպանված առաջին հոգևոր Տ-երը հորինել է Գրիգոր Նարեկացին, որի գրական ավանդները հետագայում զարգացրել է Ներսես Շնորհալին: Գրիգոր Նարեկացին իր «Տաղ Յարութեան», «Տաղ յօրինել ջրոյն», «Տաղ Ծննդեան», «Տաղ Վարդավառի», «Մեղեդի Ծննդեան» և այլ գործերում հոգևոր գաղափարներն ու զգացմունքներն արտացոլել է իրականությունից առնված պատկերներով, իսկ Ներսես Շնորհալին իր Տ-երում՝ նրբագեղ ու կանոնիկ արտահայտչաձևերով:

Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու գործը շարունակել են Հովհաննես Երզնկացին, Խաչատուր Կեչառեցին, Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Առաքել Սյունեցին, Առաքել Բաղիշեցին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աղթամարցին և ուր.՝ ոչ սոսկ Գանձարաններ կազմելու շարժառիթով, այլ եկեղեց. կանոններից դուրս տարաբնույթ բովանդակության Տ-եր ստեղծելու նպատակով:

Հայված Գրիգոր Նարեկացու «Հաւուն, հաւուն» տաղից

Տերուն. տոներին նվիրված Տ-երում Ավետարաններից վերցված նյութը հաճախ, պակաս հուզականությամբ, վերաշարադրվել է: Մինչդեռ առավել քնարական են Աստվածածնին նվիրված Տ-երը, որոնք բաժանվում են 3 խմբի՝ ա. Աստվածածնի գովեստներ, բ. Աստվածամորն ուղղված պաղատագին դիմումներ, գ. մայր. սրտի մորմոքները պատկերող ողբեր: Գովեստներն աչքի են ընկնում կանոնիկ փոխաբերությունների գործածությամբ, որոնք դեռևս VI դ-ում մեկնության հատուկ առարկա են դարձել Պետրոս Սյունեցու «Գովեստ ի Սուրբ Աստուածածինն» գրվածքում:

Աստվածամորն ուղղված աղաչանքներում իշխում է նրա միջնորդությամբ թողության արժանանալու գաղափարը («Զքեզ ունիմ միջնորդ, կենաց ճար եւ յոյս», «Ի նեղութեան ժամոյն օգնեա՛ եղկելոյս»): Աստվածածնի ողբերն արտացոլում են որդու կրած տառապանքների նկատմամբ սիրող մոր անհուն վիշտն ու կսկիծը («Սիրտըս խոցեալ կըսկըծի, Աղիք ծնօղիս գալարի, Զքեզ տեսնեմ ծարաւի Արբեալ քացախ և լեղի»): Կան Տ-եր, որոնք 3 մոտիվներն էլ ընդգրկում են միաժամանակ:

Ըստ արծարծվող նյութի՝ Տ-ում արտահայտվում են հոգու և մարմնի հարաբերության, աշխարհի ունայնության, մեղքի և ապաշխարանքի հարցեր: Տ-երը նաև չափածո վկայություններ են ու տեսիլներ:

Ժանր. առումով՝ հոգևոր Տ-երն օրհնություն են, գովեստ, ողբ, աղաչանք, խրատ: Հոգևոր Տ-երի օրինակով և հետևությամբ միջնադար. Հայաստանում աստիճանաբար ձևավորվել ու հաստատվել են աշխարհիկ բովանդակության Տ-եր:

2. Հայկ. միջնադար. երգարվ-ի դրսևորում: Ունեցել է 2 հիմնական նշանակություն՝ լայն իմաստով՝ երգ (նաև չափածո տեքստով), նեղ իմաստով՝ երաժշտաբանաստեղծ. ժանր: Դրսևորվել է և՛ աշխարհիկ (առավել հակիրճ ծավալով), և՛ հոգևոր (զարգացած և ծավալուն նկարագրով) բովանդակությամբ: Հոգևոր երգաստեղծության մեջ Տ-երն առաջացել են հանդիսավոր ծեսի անհրաժեշտությամբ՝ զերծ մնալով կանոնացումից, որը նպաստել է Տ-երի առավել ազատ և բուռն զարգացմանը: Այս ժանրում (զարգացման որոշակի ժամանակահատվածում) հաղթահարվել է ձայնեղանակ. մտածողությունը:

Տ. երաժշտաբանաստեղծ. զարգացած հատկանիշներով մոտենում է տարբեր ժանրերի (վոկալ կամ գործիք. արիաներ ևն): Կոմիտասը Տ. համարել է ներբող, որը բովանդակում է Քրիստոսի, քրիստ. սրբերի կյանքի ամենաազդեցիկ դրվագները: Ըստ Կոմիտասի՝ Տ-ի ժանրը ծագել է V դ-ում, նախ՝ ժող. երգարվ-ում: Սակայն զարգացել ու բուռն վերելք է ապրել թերևս Գրիգոր Նարեկացու (X դ.) շնորհիվ: Իրենց եղանակներով բանավոր ավանդմամբ (XIX դ-ի 2-րդ կեսին հայկ. նոտագրությամբ գրառված) պահպան-

ված Գրիգոր Նարեկացու մի քանի Տ-երը վկայում են հայկ. միջնադար. երաժշտաբանաստեղծ. արվ-ի հզոր զարգացման և գեղ. աննախադեպ բարձր մակարդակի մասին: Նրանք արտացոլում են սերտ առնչությունները հայ երգարվ-ի մյուս ճյուղերի (գուսան. ևն) հետ: Ակնհայտ է, որ, ի տարբերություն համաքրիստ. երգարվ-ում զուգահեռներ ունեցող հոգևոր երգաժանրերի, Տ-երը ձևավորվել են հատկապես տեղ. (նախաքրիստ.) երգաստեղծ. մշակույթի հիման վրա և նրա թելադրած հատկանիշներով:

Տ-երը, լինելով հայկ. միջնադար. մասնագիտացված երգարվ-ի ամենազարգացած ժանրերից, արտացոլել են ժամանակի գաղափարատես., գեղ. համամշակութ. ամենավառ դրսևորումները: Այս ժանրում երաժշտ. լեզվաոճի հզոր զարգացումն ազդել է նաև հոգևոր այլ երգաժանրերի վրա: Տ-ի շուրջ առաջացել է որոշակի ընդհանրություններով պայմանավորված ժանրերի լայն ոլորտ՝ «տաղային արվեստ» անվանումով: Հետագայում առաջ են մղվել աշխարհիկ Տ-երը (թեև ձևականորեն ներառել են հոգևոր բնույթի որոշ ձևակերպումներ):

Նշանավոր տաղերգուներ են Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Գ Պահլավունին, Ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին (Պլուզ) և ուր.:

Մեղեդիական հնչողությամբ մեծարժեք են Գրիգոր Նարեկացու «Հաւուն, հաւուն», «Ահեղ ձայնս» կամ «Ես ձայն զառիւծուն ասեմ», «Սայլն այն իջանէր», «Հաւիկ մի պայծառ տեսի» (նախկինում վերագրվել է այլ հեղինակի), անեցի Անանուն հեղինակի «Տիրամայրն» (հավանաբար՝ XI–XII դդ.) և այլ Տ-եր: Գրիգոր Նարեկացու հիշյալ Տ-երը («Սայլն այն իջանէր»-ը՝ մասնակիորեն) վերականգնել է Կոմիտասը:

Գրկ. *Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Ե., 1941: Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Ե., 1981: Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, Ե., 1987: Աթայան Ռ., Հայկական տաղերը պատմական անցյալում և մեր օրերում, «Ժողովրդական արվեստը և պրոֆեսիոնալ արվեստը», Գիտ. աշխ-ների միջբուհ. ժող., Ե., 1985: Նույնի, Жанр тагов, как носитель гуманистического начала..., Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում: Զեկուցումների ժող., հ. 3, Ե., 1981: Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985: Արևշատյան Ա., «Սաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991: Նավոյան Մ., Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Ե., 2001: Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008:*

Միհր Նավոյան

ՏԱՂԱԼՈՒ, թաղալու, թաղալո, հայկ. ժող. պարերգի տեսակ: Տարածված է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Հիմնականում քնար. բովանդակության քառյակներ են, երգվում են հարց ու պատասխանի ձևով (1 կամ 2 աղջիկ հարցնում են, 1 կամ 2 տղա պատասխանում): Տ-ները կատարվում են միայն պարզ պարաձևերի՝ գյոնդերի հետ:

ՏԱՂԱՐԱՆ, հոգևոր, հետագայում՝ նաև աշխարհիկ բովանդակության չափածո ստեղծագործությունների (տաղ, առհասարակ՝ բանաստեղծություն) ժող.՝ ձեռագիր մատյան կամ տպագիր գիրք: Ձուտ հոգևոր երգերի Տ. ընդգրկում է եկեղեցում երգվող խազագրված և նոտագրված երգեր (տես *Գանձարան*, *Շարակնոց*), մյուսներում՝ նաև եկեղեցուց դուրս արտասանվող կամ երգվող բանաստեղծություններ:

Հայ հնագույն ձեռագիր Տ-ներ չեն պահպանվել: Առաջին Տ. հրատարակվել է 1512-ին Վենետիկում՝ Հակոբ Մեղապարտի հիմնադրած տպարանում: Տպագրվելուն զուգընթաց կազմվել են ձեռագիր Տ-ներ (պահպանվել են 1512-ից հետո կազմված ձեռագիր Տ-ներ): Աշխարհիկ բովանդակության և ժող. երգեր ընդգրկող պահպանված հնագույն Տ. կազմել է Խաչատուր Կաֆայեցին (Խաչգռուզ) 1620–58-ին Ղրիմում: Այն պահպանվել է Մտնդ-ի №7709 ձեռագրում: Տ-ներ կազմում են նաև մեր օրերում:

Գևորգ Արգարյան

Առաջին տպագիր «Տաղարանի» (1513, տպագրիչ Հակոբ Մեղապարտ) տիտղոսաթերթը

«ՏԱՂԱՐԱՆ», հնագույն երաժշտության անսամբլ, մինչև 1985-ը՝ «Շարական», 1988-ից՝ պետական: Հիմնադրել է

«Տաղարան» անսամբլը

Դանիել Երաժիշտը (գեղ. ղեկ.՝ մինչև 1985-ը) 1981-ին Երևանում: 1985–87-ին գործել է առանց գեղ. ղեկ-ի, 1987–95-

ին ղեկավարել է Երվանդ *Երկանյանը*, 1995-ից՝ Սեդրակ *Երկանյանը*: Գործիք. խումբը բաղկացած է 2 ֆլեյտայից, հոբոյից, ֆագոտից, լար. քառյակից, ուդից, երգեհոնից (կամ կլավեսին, դաշնամուր): Երկացանկում՝ հայկ. միջնադար. մեղեդիների, շարականների, հոգևոր և աշխարհիկ երգերի, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների երկերի, նեգր. մեղեդիների մշակումներ և գործիքավորումներ: Համերգներով հանդես է եկել մի շարք երկրներում:

Ղևոնդ Տայյանի «Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» գրքի (հ. 1, 1952) կազմը

ՏԱՃԱՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, պաշտամունք. երաժշտություն. ուղեկցում է ժամասացությանը և կրոն. ծեսերին: Քրիստ. եկեղեցու Տ. ե. եկեղեց. երաժշտությունն է: Տես նաև *Հոգևոր երաժշտություն*:

ՏԱՅՅԱՆ Ղևոնդ [30(31).07.1884, Պարտիզակ (Թուրքիա)–12.09.1968, Սբ Ղազար (Վենետիկ)], երաժշտագետ: Վ.ՏՄՄ անդամ: Սովորել է Վ.ՏՄՄ-ում (1890-ից): Հռոմում ուսումնասիրել է գրիգորյան երգեցողություն և երաժշտ. ինագրություն (1911–14): Երկար տարիներ զբաղվել է մանկավարժությամբ, եղել «Բազմավէպի» խմբ. (1921–27): Կոմիտասը բարձր է գնահատել նրա կարողությունները և կանխատեսել հայ երաժշտության ուսումնասիրության մեջ Տ-ի ապագա հարուստ գործունեությունը: Նա մեծապես նպաստել է հայ երաժշտ. ազգագրագիտության հարստացմանը և երաժշտ. տես. մտքի զարգացմանը: Ճանաչվել և մեծ հեղինակություն է վայելել միջազգ. երաժշտագիտության ոլորտում հայ եկեղեց. երաժշտության ուսումնասիրության, բազմաթիվ շարականների վերծանման, հրատարակման համար: Հայ երաժշտության մասին հոդվածներ է գրել 3 իտալ. և 2 գերմ. հանրագիտարանների համար: Հռոմում և Վիեննայում մասնակցել է միջազգ. համաժողովների (1942, 1950, 1954, 1956): Զայնային հարուստ տվյալների համար Սբ Ղազարի աբբահայր Իգնատիոս Կյուրեղյանի աջակցությամբ կատարելագործվել է Հռոմի կոնսերվատորիայում (1911–14, ղեկ-ներ՝ Լորենցո Պերոզի, Ռեֆիջե, Ռաֆայելե Կազիմիրի): Վերադառնալով Սբ Ղազար՝ շարունակել է հայ եկեղեց. երաժշտության ուսումնասիրությունը: Նա շարականները գրառել է եվրոպ. նոտագրությամբ՝ 25 տարում ամբողջացնելով Շարակնոցի, Մաշտոցի և Տաղարանի վերաձայնագրումները: Քանի որ եվրոպ. ձայնանիշներով հնարավոր չէր ճշգրիտ վերծանել հայ երգի ձայնակարգաինտոնացիոն, ելևէջ. ողջ մանրամասերը, Տ. ստեղծել է քառորդաձայն ձայնանիշներ՝ moneris, triesis, bemollet, bemollon: Այս նորարարությունը «Տայյանի համակարգ» (“Sistème Dayans”) անվամբ ընդունվել է միջազգ. երաժշտ. տեսության մեջ (1933): Նույն համակարգով հրատարակել է «Եկայք հաւատացեալք»-ը (հարակից ուսումնասիրություն՝ հայ., ֆրանս.), նաև «Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ»-ը (հ. 1–8, 1954–76), որով աշխարհին ներկայացրել է հայկ. երաժշտության գանձերը: Տ. հեղինակ է նաև բազմաթիվ հայրենասիր. երգերի (երկուսը նվիրված են Գրիգոր Նարեկացուն և Ղևոնդ Ալիշանին), «Պատարագի»՝ Սբ Ղազարում հավաքած ավանդ. եղանակների հիման վրա: Որպես ուսուցիչ՝ մեծապես նպաստել է Սփյուռքի երիտասարդ սերնդի երաժշտ. կրթությանը: Հեղինակ է նաև «Եղիշէի չորս յեղանակներ հնագոյն գրչագրի մը մէջ» (1911), «Կոմիտաս վարդապետ» (1936) և այլ աշխ-ների:

Տավիղ

ՏԱՎԻՂ, արֆա (իտալ.՝ arpa, ֆրանս.՝ harpe, գերմ.՝ Harfe, անգլ.՝ harp), լար. կսմիթ. երաժշտ. գործիք: Բաղկացած է իրանից և վզիկից, որոնք միանում են երկուսի միջև ձգված լարերով: Տարբերում են անկյունային (եռանկյան ձևով) և սոխաձև (շրջանագծի սեգմենտի ձևով) տեսակները: Ժամանակակից եվրոպ. Տ. բաղկացած է ռեզոնատորից (դեկայի հետ) և այունիկներից, որտեղ տեղավորված են լարվածքը փոփոխելու լծակները, վերևում՝ դրանք իրար միացնող վզիկը և ոտնակային մեխանիզմի սկավառակները: 44–47 լարերը ($G–g^4$) ձգվում են այունիկների և դեկայի միջև: Տ-ի հիմնական լարվածքը դիատոնիկ է (Ces-dur), որը փոփոխվում է 7 ոտնակների օգնությամբ՝ կրկնակի գործողությամբ (գյուտարար՝ Ս. Էռար, 1801): Նվագում են նստած՝ 2 ձեռքի 4 մատներով: Նվագախմբ. (XVII դ-ից) և անսամբլ. մենակատար (XVIII դ-ից) գործիք է: Ճանաչված տաղվահարուհիներ են Կիրա Սարաջևան, Ասյա Վարոսյանը, Ժաննա Հովհաննիսյանը, Կարինե Ջուլֆանյանը, Սոնյա Ենգիբարյանը և ուր.:

ՏԱՎԻՏՅԱՆ Կևորկ (Դավիդյան Գևորգ, ծ. 1968, Ստամբուլ), երգիչ (բարիտոն)։ Ավարտել է Ստամբուլի կոնսերվատորիան (1996)։ Եղել է երգչախմբի, ապա՝ օպեր. թատրոնի խմբավար։ 2015-ից՝ Ստամբուլի ՕՔԹ տնօրեն։ Որպես մենակատար՝ հանդես է եկել Փարիզի, Մյունխենի, Մոնրեալի, Պլովդիվի, Հաննովերի, Պեկինի, Շանհայի օպեր. թատրոններում։ Մի շարք մրցույթների դափնեկիր է։

ՏԱՐԵՆՏԵԼՅԱՆ (Տարանտելյան) Միհրան (1889, Կ. Պոլիս–1980, Փարիզ), ջութակահար, մանկավարժ։ Երաժշտ. կրթությունն ստացել է Կ. Պոլսում. ջութակի դասեր է առել Հարություն Սինանյանից։ Հայ. թարգմանել և հրատարակել է Ա. Լավինյակի «Երաժշտական դաստիարակութիւն» աշխ-ը (1919)։ 1932-ից ապրել է Փարիզում, կատարելագործվել որպես ջութակահար։ Շուրջ 50 տարի նվագել է սիմֆ., օպեր., էստրադ. նվագախմբերում, 1938-ից՝ “Scola cantorum” լար. քառյակի և նվագախմբի ալտահարը, 1950-ից՝ քաղաքապետարանի արտիստ. միության նվագախմբի անդամ (“Officier d’académie” գեղ. պատվո նշան, 1951)։ Հեղինակ է դաշնամուրի սոնատի, ջութակի և դաշնամուրի ֆուգաների, կոնցերտինոյի, երգերի և այլ գործերի։

ՏԵՄԲՐ (ֆրանս.՝ timbre), հնչերանգ, ինչյունի որակ. հատկանիշ, երաժշտ. ինչյունի այն հատկությունը, որով զանազանվում են տարբեր աղբյուրներից ստացվող ինչյունները, եթե անգամ նրանք ունեն նույն բարձրությունն ու ուժգնությունը։ Ձայնագիտ. առումով՝ Տ. պայմանավորված է ձայնի սպեկտրի օբերտոնների քանակով, կազմով, համեմատ. ինտենսիվությամբ, որոնք էլ իրենց հերթին՝ հնչյուն արտաբերող մարմնի (երաժշտ. գործիքի տատանող. համակարգի կամ մարդու, կենդանու ձայն. ապարատի) ձայն-ձայնաբան. հնարավորություններով՝ նյութի որակով (տատանման կարողությամբ), գործիքի ձևով և կառուցվածքով (օր.՝ ձայնի անդրադարձման կարողությամբ), ձևաչափերի առկայությամբ (տվյալ գործիքին հատուկ ենթահնչյուններ արտաբերելու կարողությամբ) են։ Որևէ գործիքի Տ. փոփոխվում է՝ պայմանավորված հնչման բացարձակ ուժգնությամբ, ռեգիստրով, ձայնարտադրության եղանակով, զարկումների երևույթով, հնչման միջավայրով և ռիթմի հետ Տ. նույնպես արտահայտչականության գործոն միջոց է։ Երաժշտ. ստեղծագործություններում Տ. խոսքերով նշվում է XVII դ-ից, որի համար գործածիան։ Գործիքների և երգչաձայնի Տ. բնութագրվում է զգայարան. տպավորությունների համեմատությամբ (օր.՝ փայլուն կամ խավար, արծաթահնչուն, ապակե կամ թավշե, ջերմ կամ պաղ, հյութեղ)։ Տ. երաժշտության արտահայտչականության կարևորագույն միջոցներից է երաժշտ. մտքի զարգացման մի շարք ոլորտներում և երաժշտության գեղագիտության ձևավորման մեջ։

Ըստ Ռոբերտ Աթայանի

Կևորկ Տավիտյան

ՏԵՄՊ (իտալ.՝ tempo, < լատ. tempus – ժամանակ), երաժշտության մեջ՝ ստեղծագործության կատարման արագության աստիճանը, փաստորեն՝ մետրի մասերի հաջորդման հաճախությունը։ Որևէ ստեղծագործության բնույթն ու տրամադրությունը հաղորդելիս Տ., նաև նրա բացահայտ (հաճախ՝ կոնտրաստ.) փոփոխություններն ու նրբին, «աննկատ» տարբերակումներն ունեն նշանակալի դեր։ Ուստի ձայնակարգահնտոնացիայի

Դանդաղ տեմպեր

Գրվում է	Կարդացվում է	Նշանակում է
Largo	Լա’րգո	Շատ դանդաղ, լայնորեն
Larghetto	Լարգե’տո	Largo-ից մի փոքր արագ
Adagio	Ադա’ջո	Դանդաղ, հանգիստ
Lento	Լե’նտո	Դանդաղ, ձգված
Grave	Գրա’վե	Ծանր, ծանրաշուք

Չափավոր տեմպեր

Andante	Անդա’նտե	Հանդարտ, գնայուն
Andantino	Անդանտի’նո	Andante-ից մի փոքր արագ
Moderato	Մոդերա’տո	Չափավոր
Sostenuto	Սոստենո’ւտո	Զուսպ, զսպված
Allegretto	Ալեգրե’տո	Բավական աշխույժ, զվարթ

Արագ տեմպեր

Allegro	Ալե’գրո	Արագ, աշխույժ, կենսուրախ
Vivace	Վիվա’չե	Աշխույժ
Veloce	Վելո’չե	Արագ
Presto	Պրե’ստո	Շատ արագ, փութկոտ
Prestissimo	Պրեստի’սիմո	Չափազանց արագ

վում են գլխավորապես իտալ. տերմիններ (աղաջո, ալլեգրո, անդանտե, մոդերատո, պրեստո ևն), որոնք ցույց են տալիս կատարման մոտավոր արագությունը երբեմն՝ նաև ընդհանուր բնույթը: Տ–ի արագացումը նշվում է accelerando, դանդաղեցումը՝ ritardando, Տ. վերականգնելը կամ սկզբն. Տ–ին վերադառնալը՝ a tempo կամ tempo primo, Տ. խստիվ չպահպանելը (ազատ Տ–ով կատարելիս)՝ tempo rubato («գողացված» Տ.) կամ a piacere (ըստ ցանկության): Տ. նշել են նաև այլ լեզուներով (Ռ. Շումանը՝ գերմ., Կ. Դեբյուսին՝ ֆրանս., Կոմիտասը՝ հայ., ևն):

Հայկ. խազագրության մեջ մեղեդու կատարման անհրաժեշտ արագությունը հասկացվել է բուն խազագրերից ու նրանց հաջորդականությունից: XIX դ–ում նոր հայկ. ձայնագրության մեջ սահմանված էին Հույժ ծանր, Ծանր, Չափավոր, Միջակ, Հորդոր նշումները և նրանց զուգորդումները, ժող. և հոգևոր բազմաթիվ երգեր, անկախ արագության նշումից, կատարվում են ազատ Տ–ով: Երբեմն Տ–ի նշումներն օգտագործվել են որպես ստեղծագործության կամ նրա մասի վերնագիր (Բ. Բարտոկի դաշնամուր. «Ալլեգրո բարբարո» պիեսը կամ Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետից «Ադաջոն»): Տ. ճշգրիտ նշելու և վերարտադրելու համար օգտագործում են ***մետրոնոմը***:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՏԵՄՊԵՐԱՅԻԱ (< լատ. temperatio – ճիշտ հարաբերակցություն, համաչափություն), երաժշտ. լարվածքի տարբեր աստիճանների վրա կառուցվող համանուն ինտերվալների հնչյունաբարձրական հարաբերակցությունների հավասարեցումը: Տ–ի, նաև տարբեր «արհեստական» լարվածքների երևան գալը պայմանավորված էր բազմաձայնության ինտենսիվ զարգացման հետևանքով երաժշտ. լսողության պահանջներով, երաժշտ. նոր ժանրերի, ձևերի, երաժշտ. գործիքների առաջացմամբ, նոր արտահայտչամիջոցների հարստացմամբ: Եվրոպ. երաժշտության մեջ մինչև XVII դ. գերիշխող «բնական» լարվածքներում համակարգի տարբեր աստիճանների վրա կառուցվող էնհարմոնիկ հնչյուններն ու ինտերվալները չէին համընկնում, որը կասեցնում էր ձայնակարգատոնայնական և հարմոնիկ համակարգերի ձևավորումը, բացառում հեռավոր տոնայնությունների միջև հարաբերակցություն ստեղծելու հնարավորությունը: 12–աստիճանի հավասարաչափ Տ–ի առավել ճշգրիտ տարբերակի հեղինակը Մ. Մերսենն է (XVII դ.). նա օկտավան բաժանել է 12 հավասար մասերի, որի հետևանքով բոլոր նույնանուն ինտերվալները հավասարվել են: Այդպիսի Տ–ի օգտագործման վառ օրինակ է Յ. Ս. Բախի «Լավ տեմպերացված կլավիրը» (մաս 1, 1722): Հետագայում Տ–ի համընդհանուր կիրառումը (XIX–XX դդ.) ապահովել է ամբողջ. մաժոր–մինոր. խրոմատիկ տոնայնական համակարգի ինտենսիվ զարգացումը:

Ըստ Սերգեյ Կոպրևի

ՏԵՆՈՐ (իտալ.՝ tenore, < լատ.tenero – ուղղություն տալ, պահել), 1. տղամարդու բարձր երգչաձայն: Միջնադարում (XII դ.– XVIII դ–ի սկիզբ) եվրոպ., հատկապես՝ հոգևոր խմբերգերում Տ. հիմնական մեղեդու երգամասն է (կանտուս ֆիրմուս՝ ուղղորդող եղանակ), ըստ որի գրվել են մյուս ձայների երգամասերը: Տեսակներն են՝ Տ–ալտինո, քնար., դրամատիկ., քնարադրամատիկ.: Առանձնանում են նաև «բնութագրական Տ.» («հերոսական» Տ.) և «երկրորդ Տ.» հասկացությունները, որոնք ստեղծվել են ըստ երգչախմբում և բեմում Տ–ի գրաված տեղի և ամպլուայի: Եթե Տ–ի պարտիան նոտագրվում է ջութակի բանալիով, այն հնչում է 1 օկտավա վեր, իսկ եթե տենորի կամ բասի բանալիով՝ այնպես, ինչպես գրված է (տես ***Երգչախումբ***): Տ–ի համար գրված դերերգերից են՝ Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Տիրիթ (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Մանրիկո (Զ. Վերդիի «Տրուբադուր»), Ռուդոլֆ (Զ. Պուչչինիի «Բոհեմ») ևն: 2. Պղնձե փող. երաժշտ. գործիք՝ սի բեմոլ (In B) լարվածքով, դիապազոնը՝ մեծ օկտավայի մի–ից մինչև առաջին օկտավայի սի բեմոլը: Նոտագրվում է ջութակի բանալիով և հնչում մեծ նոնա վար: Հիմնականում նվագակցող գործիք է, եթե, ըստ պարտիտուրի, չի կատարում 1–ին տենորի նվագամասերը: 3. Նվագախմբ. մի շարք երաժշտ. գործիքների տեսակների անվանման կցորդ՝ Տ–դոմրա, Տ–սաքսոֆոն, Տ–տրոմբոն ևն: 4. Հարմոնիայի ուսմունքում՝ քառաձայնի վերևից 3–րդ ձայնը:

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Արմենակ Եփրեմի [16(28).09.1898, Թիֆլիս–11.12.1957, Երևան], երգիչ (տենոր), օպերետի արտիստ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1908–10), երգել Սպիրիդոն ***Մելիքյանի*** ղեկավարած երգչախմբում: Ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիան (1920), կատարելագործվել Մոսկվայի Հայ մշակույթի տան մեներգեցողության ստուդիայում (1936–37): ԵՊԿ երգչախմբի (մասնակցել է Ալեքսանդր ***Սպենդիարյանի*** ղեկավարած սիմֆ. համերգներին), 1937–41-ին՝ ԵՕԲԹ մեներգիչ: Հանդես է եկել Սարոյի (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Սեթոյի (Հ. Ստեփանյանի «Լուսաբացին»), Լիստնիցկու (Ի. Ի. Զերժինսկու «Խաղաղ Դոն») դերերգերի կատարմամբ: Եղել է ԵԵԿԹ հիմնադիր-արտիստներից (1942-ից), 1941–52-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մեներգիչ: Տ-Ա-ի կատարումները հնչում են մի շարք հայկ. կինոնկարներում («Պեպո», «Զանգեզուր», «Քաջ Նազար», «Սևանի ձկնորսները», «Անահիտ»): Նրա ձայնն առանձնացել է հուզականությամբ, արտահայտչականությամբ, թավշե քնքշությամբ, կատարումները՝ անմիջականությամբ, բնականությամբ, զգացմունք. ազատությամբ: Վարպետությամբ և հմայքով է կատարել հայկ. ժող. ու գուսան. («Ես սարեն կուգայի», «Պաղ աղբյուրի մոտ», «Առ սիրուհիս»), Կոմիտասի «Կռունկ», «Ախ մարալ ջան», «Անտունի», «Ծիրանի ծառ» երգերը: ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

Ըստ Արաքսի Սարյանի

ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ Վահան Խաչատուրի [24.08(05.09).1883, գ. Մալիշկա (այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում)–02.05.1941, Ուխտա (ՌԴ Կոմի ԻՀ)], երգիչ (տենոր), թարգմանիչ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1901–05), աշակերտել ***Կոմիտասին***: Աչքի է ընկել գեղեցիկ ձայնով ու երաժշտ. փայլուն ընդունակություններով, արժանացել Կոմիտասի գնահատանքին: 1905-ից մասնակցել է նրա երգչախմբերի համերգներին Թիֆլիսում, Երևանում, Բաքվում: 1908-ին դասավանդել է Գևորգյան ճեմարանում: 1909-ին տեղափոխվել է Ս. Պետերբուրգ, սովորել կոնսերվատորիայում և համալսարանում, ապա երգել Մարիինյան թատրոնում և հայկ. եկեղեցու երգչախմբում: Մասնակցել է ԱՀՊ-ին:

1921-ից ապրել է Թիֆլիսում. դասավանդել է, աշխատել տարբեր խմբագրություններում, մասնակցել Հայարտան աշխատանքներին: Թիֆլիսում, Երևանում և Լենինականում հանդես է եկել համերգներով. երկացանկում՝ Կոմիտասի, Ռ. Մելիքյանի, Սայաթ-Նովայի երգերից: 1927-ին ԵՊԿ երգչախմբի հետ (ղեկ.՝ Ս. Մելիքյան), որպես մեներգիչ, մասնակցել է Մոսկվայում տեղի ունեցած համերգներին: 1928-ին Սաշա ***Օգանեզաշվիլու*** հետ Մայնի Ֆրանկֆուրտում հանդես է եկել միջազգ. երաժշտ. ցուցահանդեսում:

Տ-Ա-ի կատարող. արվ-ը հիմնվել է դաս., նաև ժող. երգարվ-ի ոճ. առանձնահատկությունների վրա: Գրել է պատմվածքներ, առակներ և բանաստեղծություններ, արժեքավոր հուշեր Կոմիտասի մասին («Անհիշաչար մարդը», «Կոմիտաս», 1931, ժող-ում), կատարել թարգմանություններ:

1937-ին անհիմն բռնադատվել է, աքսորվել Ուխտա, հետմահու՝ արդարացվել (1957): Երևանի քաղաք. գերեզմանատանը դրված է խորհրդանշ. մահարձան:

Սբ Աննայի IV, III, II աստիճանների, Սբ Ստանիսլավի III, II աստիճանների շքանշաններ:

Երկ. *Վահան Տեր-Առաքելյան (նյութերի ժող.), կազմ.՝ Խ. Սաֆարյան, Ե., 1998:*

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ (Հովհաննիսյանց) Ոսկան (25.06.1820, Երևան–3.03.1910, Երևան), բանասեր-աշուղագետ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որտեղ հետագայում դասավանդել է: Հավաքել է, ուսումնասիրել և «Նոր քնար Հայաստանի» վերնագրով, առանձին պրակներով 1855–59-ին լույս է ընծայել հայ աշուղների՝ Ազբար Ադամի, Շիրինի, Նիրանու, Սեյադի և ուր. ստեղծագործությունները:

ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ Հովսեփ Գևորգի (29.10.1862, Թիֆլիս–30.05.1938, Թբիլիսի), դաշնակահար, մանկավարժ, հաս. գործիչ: Ավարտել է ՄՊԿ (Պ. Պաբստի դասարան): 1894-ից ապրել է Թիֆլիսում. համերգներով շրջագայել է Այսրկովկասի քաղաքներում, տարածել հայ կոմպոզիտորների (Ս. Բարխուդարյան, Ն. Տիգրանյան, Ա. Մայիլյան, Կ. Զաքարյան և ուր.) դաշնամուր. երաժշտությունը: Թիֆլիսում

Արմենակ Տեր-Աբրահամյան

Ա. Տեր-Աբրահամյանը Գոսանի դերում (Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար»)

Վահան Տեր-Առաքելյան



Հովսեփ Տեր-Դավթյան

Զիվան Տեր-Թադևոսյան



Արամ Տեր-Հովհաննիսյան

բացել է մանկավոր երաժշտ. դպրոց. նրան աշակերտել են Ս. Մելիքյանը, Մ. Մազմանյանը, Ս. Գալիկյանը, Օ. Բաբասյանը, Ա. Աբալյանը և ուր.: 1914–17-ին՝ ***Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության*** նախագահ:

Գրկ. *Ափոյան Շ., Նրանք առաջիններն էին, «ՍՍ», 1966, № 10:*

ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Զիվան (Զոն) Գուրգենի (14.09.1926, Երևան–27.06.1988, Երևան), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1980): ԵՊԿ պրոֆ. (1985): Ավարտել է ԵՊԿ ջութակի (1952, Վ. Պ. Պորտուգալովի դասարան), կոմպոզիցիայի (1961, Է. Միրզոյանի դասարան) բաժինները: 1952–59-ին՝ Երևանի Կ. Սարաջևի անվ. երաժշտ. դպրոցի տնօրեն և դասատու: 1959-ից ապրել է Մոսկվայում: Հայկ. սիմֆ. երաժշտության մեջ նկատելի ներդրում են Տ-Թ-ի սիմֆոնիաները (1957, 1959, 1963, 1984, 1987), որտեղ ինքնատիպորեն մարմնավորել է ազգ. ավանդույթները: Գրել է նաև սիմֆոնիետ (1983), ջութակի և նվագախմբի կոնցերտ (1977), լար. կվարտետներ (1955, 1967, Մ. Շոլոխովի «Մարդու ճակատագրի» ընթերցումով», 1983, 1984), սիմֆ. պոեմներ («Լիրիկական», 1953, «Ե. Չարենցի հիշատակին», 1963, ևն), սիմֆ. սյուիտներ՝ արլ. (1956), արաբ. (1968) և

Հատված Զ. Տեր-Թադևոսյանի ալտի սոնատից

բուրյաթ. (1975) թեմաներով, «Օթելլո» (1970), գործիք. պիեսներ, երաժշտություն՝ կինոյի և թատրոնի համար:

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արամ Արտեմի [13(25).01.1886, Թիֆլիս–20.12.1970, Երևան], դիրիժոր-խմբավար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, յուրացրել ազգ. երաժշտության տեղի ավանդույթները: Երգել է Ք. Կարա-Մուրզայի ու Ա. Մանուկյանի խմբերում: 1905–07-ին սովորել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում, աշակերտել Ն. Նիկոլաևին (կոմպոզիցիա), Զ. Փալիաշվիլուն (երաժշտության տեսության և երգչախմբ. դասարան), Հ. Տեր-Դավթյանին (դաշնամուր), նաև մշակել է ձայնը: Ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի տեսության բաժինը (1913–18, Վ. Կալաֆատիի, Ն. Ն. Չերեպնինի, Յ. Վիտոլի, Մ. Շտեյնբերգի դասարաններ), հեղինակել է դաշնամուր. սոնատ և այլ գործեր (արժանացել են Ա. Կ. Գլազունովի հավանությանը), կատարելագործվել դիրիժոր. արվ-ում: Երգել է Ս. Պետերբուրգի հայկ. եկեղեցու երգչախմբում (1914–18-ին՝ ղեկ., փոխարինել է Ռ. Մելիքյանին), հանդես եկել համերգներով (երկացանկում՝ հայկ. խմբերգեր): 1918–37-ին՝ Լենինգրադի Փոքր թատրոնի դիրիժոր (մինչև 1928-ը՝ նաև ստուդիայի ղեկ.). ղեկավարել է Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», «Մազեպա», Ա. Պ. Բորոդինի «Իշխան Իգոր», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Սոցարտ և Սալիերի», Ջ. Վերդիի «Աիդա» և այլ օպեր. ներկայացումներ: 1929-ին Զանգեզուրում մասնակցել է Ք. Քուշնարյանի բանահավաքչական գիտարշավներին: 1931, 1936 և 1937-ին հրավիրվել է Թիֆլիս և Հայարտան երգչախմբի հետ հանդես եկել համերգներով (երկացանկում՝ Կոմիտասի գործերից): 1940–41 և 1954–61-ին՝ Հայաստանի պետ. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. խմբավար: Հայկ. դաս. և ժամանակակից խմբերգ. երաժշտության ծրագրերից բացի՝ Հայաստանում իրականացրել է Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմ»-ի, Լ. վան Բեթհովենի «Իններորդ սիմֆոնիա»-ի և այլ գլուխգործոցների առաջին կատարումները: ԵԵԿԹ-ում պատրաստել ու ղեկավարել է արևմտաեվրոպ. ու հայկ. դաս. օպերետ. ներկայացումներ (Տ. Չուխաճյանի «Կարինե» ևն), 1956-ին հանդես է եկել Մոսկվայում՝ հայ արվ-ի տասնօրյակին: 1969-ից՝ Հայաստանի երգչախմբ. ընկերության երգչախմբի (այժմ՝ Տ-Հ-ի անվ., շենքի ճակատին տեղադրված է նրա

բրոնզե դիմաքանդակ-հուշատախտակը) գեղ. խորհրդատու: Նախապատրաստել է հայ ինագույն շարականների (ինչել են Արլ. Եվրոպայի ինագույն երաժշտության փառատոնին, Լեհաստան, 1969) և Կոմիտասի «Հայր մեր» ստեղծագործության (Կոմիտասի 100-ամյա հոբելյանին) առաջին կատարումները: Դասավանդել է Լենինգրադում և Երևանի Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում: 1945–47-ին՝ Ֆրունզեի օպեր. թատրոնի գլխ. դիրիժոր. նպաստել է ղրղզ. օպերայի զարգացմանը: Խորհրդահայ խմբերգ. արվ-ում սկզբնավորել է կատարող-ոճ. նոր ուղղություն. հիմքում առավել երգային, խոսքային, երաժշտության կատարման կենդանի, արտահայտիչ, բարձրարվ. չափանիշներով ու խստորեն տրամաբանված մեկնաբանումներ են: Նրան բնորոշ էին գեղ. նուրբ ճաշակը, կատարման դաս. ավանդույթների պահպանումը, միաժամանակ՝ պահանջկոտությունն ու համարձակ նորարարությունը: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

Գրկ. *Բրուտյան Յ., Արամ Տեր-Հովհաննիսյան, Ե., 1962:*

Ըստ Ռոբերտ Աթայանի

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ Զարուհի (Զարա) Հայկի (17.04.1951, Երևան–25.09.2013, Ժնև), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1984): ՀԿՄ (1985-ից, վարչության՝ 1998-ից) անդամ: Ավարտել է ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (1973, Մ. Հարությունյանի դասարան): 1973–75-ին դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1975–85-ին՝ ԵԳԹԻ-ում (երաժշտության պատմություն), 1975-ից՝ ԵՊԿ-ում (1994-ից՝ պրոֆ.): Հեղինակ է երաժշտագիտ. հոդվածների: Մասնակցել է մի շարք փառատոների (Երևան, Թբիլիսի, Կիև, Ժնև), ներկայացրել հայկ. ժամանակակից երաժշտությունը: Կազմել և խմբագրել է Տ. Հայրապետյանի «Իմ հուշերի մեղեդիները» (ռուս., 2005) գիրքը:

Երկ. *Հանապարհ դեպի Պառնաս (համահեղ.), Ե., 1991: Արևմտաեվրոպական երաժշտության պատմություն: Հին աշխարհից մինչև ԺԹ դար, Ե., 2014:*

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Անուշավան Գրիգորի [24.02(08.03).1887, Թիֆլիս–06.06.1961, Երևան], կոմպոզիտոր, մանկավարժ: Հեղինե *Տեր-Ղևոնդյանի* հայրը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1953): Սովորել է Թիֆլիսի գիմնազիայում և երաժշտ. ուսումնարանում, ավարտել Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբ. ֆակ-ը և կոնսերվատորիան (1915, Ա. Կ. Լյադովի, Ա. Կ. Գլազունովի, Վ. Կալաֆատիի, Մ. Շտեյնբերգի, Յ. Վիտոլի դասարաններ): 1914-ին Սպիրիդոն *Մելիքյանի* հետ գրառել է Շիրակի ժող. երգեր և պարեր, որոնց հիման վրա ստեղծել է հայ երաժշտության սիմֆ. առաջին գործերից մեկը՝ «Շիրակի էտյուդները» (1916): Ստեղծագործաբար յուրացրել և զարգացրել է հայ ժող. և պրոֆեսիոնալ, ռուս. դաս. երաժշտության ավանդույթները:

Հատված «Նորահարսի հրաժեշտի երգից» (գրառումը՝ Անուշավան Տեր-Ղևոնդյանի և Սպիրիդոն Մելիքյանի)



Տ-Ղ-ի ստեղծագործություններին բնորոշ է դյուցազներգ-քնար. շունչը: Հեղինակ է «Սեդա» (ըստ Լ. Շանթի, 1922), «Արեգակի ցոլքերում» (բեմ.՝ 1949, ԵՕԲԹ) օպերաների, «Հրո հարսը» (ըստ Զ. Զաբարյու, 1936), «Անահիտ» (ըստ Ղ. Աղայանի, բեմ.՝ 1940, ԵՕԲԹ) բալետների, Սիմֆոնիայի (1942), «Ախթամար» սիմֆ. (1923), «Վահագնի ծնունդը» վոկալ-սիմֆ. (1923) պոեմների, խմբերգերի, ռոմանսների, երգերի («Երգեր և ռոմանսներ», 1956, «Ընտիր վոկալ ստեղծագործություններ», 1972): Երաժշտատես. առարկաներ և գործիքավորում է դասավանդել Թիֆլիսի (1917–25), Երևանի (1926–34-ին և 1938-ից, 1926–30-ին՝ նաև տնօրեն, 1934-ից՝ պրոֆ., 1948–59-ին՝ երաժշտության պատմության, տեսության և կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ) և Բաքվի (1934–1938, նաև տնօրեն) կոնսերվատորիաներում: Հանդես է եկել որպես խմբավար, դիրիժոր, ղեկավարել իր ստեղծագործությունները: Գրել է «Ռիխարդ Վագներ» (1933) գրքույկը և «Երաժշտության տարրական թեորիայի դասագիրք» (2-րդ հրտ., 1934):

Զարուհի Տեր-Ղազարյանի «Արևմտաեվրոպական երաժշտության պատմություն» գրքի (2014) կազմը

Անուշավան Տեր-Ղևոնդյան

Գրկ. *Գիլինա Ե., Անուշավան Տեր-Ղևոնդյան, Ե., 1962: Тигранов Г., Армянский музыкальный театр, т. 2, Е., 1960, с. 7–28.*

Ըստ Սարգարիտ Հարությունյանի

Հեղինե Տեր-Ղևոնդյան

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Հեղինե Անուշավանի (24.09.1918, Թիֆլիս–26.03.1999, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: Անուշավան ***Տեր-Ղևոնդյանի*** դուստրը: ՀՀ վաստ. արտիստ (1959): Պրոֆ. (1977): Ավարտել է ՄՊԿ (1946, Մ. Վ. Յուդինայի և Կ. Ն. Իգումնովի դասարաններ): 1946-ից՝ հայֆիլհարմոնիայի դաշնակահար-կոնցերտմայստեր: 1953–99-ին դասավանդել է ԵՊԿ-ում (1971-ից՝ ամբիոնի վարիչ): Որպես նվագակցող՝ Տ. Սազանդարյանի, Ն. Հովհաննիսյանի, Է. Ուզունյանի, Ա. Կարապետյանի և ուր. հետ հյուրախաղերով շրջագայել է Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Կանադայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Ռումինիայում, Հունգարիայում և այլուր: Մասնակցել է հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին (Մոսկվա, 1956), «Պրահայի գարուն» միջազգ. փառատոնին (1967): 2005-ին ԵՊԿ-ի և Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի նախաձեռնությամբ Հայաստանում առաջին անգամ տեղի է ունեցել Տ-Ղ-ի անվ. կոնցերտմայստեր. արվ-ի փառատոն:

Միքայել Ն. Տերյան

ՏԵՐ-ՄԵՐԳԵՐՅԱՆ (Տեր-Մերկերյան) Ժան Երվանդի (5.10.1935, Մարսել–29.09.2015, Մարսել), ջութակահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1971): Ջութակի առաջին դասերն առել է հորից և Գաբրիել Ռեյից: 11 տարեկանում ավարտել է Մարսելի կոնսերվատորիան (1946): 1947-ին Մարսելում տեղի է ունեցել նրա առաջին մենահամերգը. երկացանկում՝ Ֆ. Մենդելսոնի և Ա. Վիվալդիի ջութակի կոնցերտները: Նույն թվականին հայրենադարձել է: Հանդես է եկել Ֆ. Մենդելսոնի և Է. Լալոյի կոնցերտներով (նրան անվանել են «փոքրիկ հրաշք»): Սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, ԵՊԿ-ում (1954–58, Կ. Դոմբաևի դասարան), ավարտել ՄՊԿ (1960, Դ. Օյստրախի դասարան): 1964–79-ին դասավանդել է ԵՊԿ-ում: 1981-ից ապրել է Մարսելում, 1982-ից դասավանդել տեղի կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1984-ից), հանդես եկել մենահամերգներով: Դիրիժոր Միքայել ***Մալունցյանի*** ղեկավարությամբ կատարել է Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի, Յ. Սիբելիուսի, Բ. Բարտոկի, Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Խաչատրյանի, Ս. Ս. Պրոկոֆևի և ուր. կոնցերտները: 1988-ից համերգներով հանդես է եկել ՀՀ-ում, մասնակցել «Վերածնունդ» փառատոնին:

Ժան Տեր-Մերգերյանը ելույթի պահին

Եղել է Ն. Պագանինիի (Իտալիա), Պ. Սարասատեի (Իսպանիա), Պ. Ի. Չայկովսկու (Մոսկվա), Ա. Խաչատրյանի (Հայաստան) անվ. միջազգ. մրցույթների հանձնախմբերի անդամ:

Յ. Սլավիկի և Ֆ. Օնդրժիչեկի (Պրահա, 1956, 2-րդ մրց.), Պ. Ի. Չայկովսկու (Մոսկվա, 1958, 1-ին կարգի դիպլոմ), Մ. Լոնգի և Ժ. Տիբոյի (Փարիզ, 1961, 1-ին մրց.), Եղիսաբեթ թագուհու անվ. (Բրյուսել, 1963, 9-րդ մրց.) միջազգ. մրցույթների դափնեկիր: ՀԽՍՀ Պետ. մրց. (1977), ՀՀ «Պատվո նշան» շքանշան (2015):

Գրկ. *Ժան Տեր-Մերկերյան, [Ջութակի հոգին], կազմ.՝ Է. Սանոսկյան, Շ. Խաչատրյան, Ե., 2012:*

ՏԵՐՅԱՆ (Տեր-Մարտիրոսյան) Միքայել Արտեմի (17.12.1908, Ս. Պետերբուրգ–12.04.2004, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: Արվեստագիտ. թեկնածու (1955): Պրոֆ. (1990): Ավարտել է ՄՊԿ դիրիժոր. բաժինը (1946): 1947–2004-ին դասավանդել է ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1949–1956-ին): Ուսումնասիրությունները վերաբերում են հայ պրոֆեսիոնալ երաժշտության զարգացմանը. «Սպենդիարյանի սիմֆոնիկ ստեղծագործությունները» (1954), «Հայկական սիմֆոնիկ երաժշտությունը և գործիքային կոնցերտը» (1960), «Կոմիտասի խմբերգային ստեղծագործությունը» (1982): Համահեղինակ է սոլֆեջոյի դասագրքերի (1961, 1965):

ՏԵՐՅԱՆ Միքայել Նիկիտայի (01.07.1905, Մոսկվա–13.10.1987, Մոսկվա), ալտահար, դիրիժոր, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): Ավարտել է ՄՊԿ լար. բաժինը (1929, Կ. Մոստրասի դասարան): ***Կոմիտասի անվան քառյակի*** հիմնադիրներից է և ալտահարը (1924–36, 1938–47): 1935-ից դասավանդել է ՄՊԿ-ում (ալտի, լար. քառյակի, նվագախմբի դասարաններ, դիրիժոր. ամբիոնի ղեկ., պրոֆ.՝ 1944-ից), հիմնադրել է կամեր. նվագախումբ, որի հետ շրջագայել է մի շարք երկրներում: 1948–53-ին՝ Մոսկվայի մարզային ֆիլհարմոնիայի սիմֆ., 1965–66-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

ԽՍՀՄ Պետ. (1946), Հ. ֆոն Կարայանի անվ. միջազգ. մրցույթի 1-ին (1970) մրց-ներ:

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ Պարգև Սահակի [14.03.1907, Մերսին (Թուրքիա)–06.08.1995, Լոս Անջելես], երգիչ, ուդահար: «Ժողովրդական ստեղծագործող» (1960): 1915-ին ապաստանել է Հալեպի ամերիկ. որբանոցում. հիվանդացել և կորցրել տեսողությունը: Հալեպում ուդի դասեր է առել Ուդի Սիսակից, 1940-ին հաճախել է Համբարձում *Պերպերյանի* հարմոնիայի և կոմպոզիցիայի դասընթացներին: 1940-ին ընկերների հետ հիմնադրել է «Դո, ռե, մի» սրճարանը, ապա՝ երաժշտ. քառյակ, որի հետ հանդես եկել համերգներով: Նվագել է նաև ճումբուշ (բանջոյի և մանդոլինի զուգորդված տեսակը) երաժշտ. գործիքը: Գրել է «Ծաղիկների պարը» մանկ. օպերետը, «Խոստացիր», «Պարտեզի մեջ», «Մի խենթ կարոտ», «Կույր երգիչը», «Տղաների պար», «Օրորոցային», «Սայաթ-Նովա» և այլ երգեր: 1947-ին հայրենադարձել է: 1949–80-ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի կազմում, ապա աշխատել է Կույրերի միավորման մշակույթի տանը: 1967–71-ին՝ ԵՊԿ-ին առընթեր Հայաստանի ժող. կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնի ազատ ունկնդիր (Մ. Տերյանի, Ռ. Աթայանի, Ա. Աճեմյանի դասարաններ): 1982-ից ապրել և ստեղծագործել է Լոս Անջելեսում:

ՏԵՐ-ՍԱՐԳՍԵՆՅ (Տ և կ ա ն ց) Արիստակես (6.02.1844, Վան–8.06.1896, Վարագ), հոգևորական, բանահավաք: Նախն. կրթությունն ստացել է Վանում, ապա ավարտել Վարագավանքի ժառանգավորաց դպրոցը: 1884-ին կարգվել է Նարեկավանքի, 1894-ին՝ Վարագավանքի վանահայր, 1890-ին եղել է Տրապիզոնի հայոց հոգևոր առաջնորդ: Տպագրել է «Պանդուխտ վանեցին: Նամակներ, երգեր, առածներ, առեղծուածներ» (1875) և «Հայերգ» (1882) ժող-ները, որոնք ընդգրկում են հայկ. ժող. երգարվ-ի լավագույն նմուշներ, նաև Ֆրիկի, Նահապետ Քուչակի, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու և ուր. տաղեր, ժող. կենցաղին վերաբերող նյութեր:

ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ Սարգարիտ Պողոսի (ծ. 24.02.1928, Թիֆլիս–2006, Երևան), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1990): Ավարտել է ԵՊԿ տեսության բաժինը (1951): 1951–60-ին՝ Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի երաժշտ. խմբագիր, 1960–91-ին՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ավագ գիտաշխատող: 1992-ից ապրել է ԱՄՆ-ում: Հեղինակ է «Սարգիս Բարխուդարյան» (1968), «Էդվարդ Միրզոյան» (ռուս., 1969), «Կամերային-գործիքային անսամբլային երաժշտությունը Հայաստանում» (ռուս., 1974), «Արամ Քաթանյան» (1990) գրքերի:

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՈՎԱ (Տեր-Ստեփանյան) Թամար Իսահակի (14.06.1874, Թիֆլիս–31.03.1934, Լենինգրադ), դաշնակահարուհի, մանկավարժ: Երաժշտության մասնավոր դասեր է առել Ի. Մատկովսկուց: Սովորել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում, ավարտել ՄՊԿ (1898, Պ. Պաբստի դաշնամուրի դասարան), կատարելագործվել Բեռլինում՝ Շտեռնի կոնսերվատորիայում (1909–11): Թիֆլիսում, Բաքվում և Այսրկովկասի այլ քաղաքներում հանդես է եկել որպես մենակատար, նաև անսամբլներում: Դասավանդել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում (1917-ից՝ կոնսերվատորիա, պրոֆ.՝ 1918-ից): Աշակերտներից են Ա. Ն. Չերեպնինը, Ա. Դոլուխանյանը և ուր.:

ՏԵՐ-ՕՀԱՆՈՎ Լև Գասպարի (Տեր-Օհանյան Լևոն) (1889, Թիֆլիս–մ. թ. անհտ), երաժիշտ-մանկավարժ, դաշնակահար: Սերժ *Յունու* հայրը: Նյու Յորքի ռուս. փաստաբան. ակադ-ի անդամ: Ավարտել է Թիֆլիսի ճեմարանը, կոնսերվատորիան, Ս. Պետերբուրգի Շլեսինգերի մանկավարժ. դպրոցը և իրավաբան. վարժարանը: 1915–21-ին եղել է Ռուս. փաստաբան. ակադ-ի անդամ: Դասավանդել է Բաքվի կոնսերվատորիայում, 1921–23-ին՝ Կ. Պոլսում, հանդես է եկել համերգներով: 1923-ից ապրել է Նյու Յորքում, որտեղ հիմնադրել է սեփական դպրոց:

ՏԵՐՄԵՆՎՈՒՔ (< գյուտարարի ազգանունից և լատ.՝ vox – ձայն), միաձայն էլեկտր. երաժշտ. գործիք, որով առաջին անգամ էլեկտրականության միջոցով հնչեցվել են տարբեր ձայներ և երաժշտություն: Ստեղծել է Լ. Ս. Տերմենը 1920-ին: Տ. կատող. լամպերով փոքրիկ սարք է՝ ուղղաձիգ ալեհավաքով ու մետաղե կամարով, չունի լարեր, ստեղներ: Նվագում են աջ ձեռքն ալեհավաքին մոտեցնելով և հեռացնելով, իսկ մետաղե կամարի վրա պահված ձախ

Պարգև Տեր-Պողոսյան

Սարգարիտ Տեր-Սիմոնյանի «Կամերային-գործիքային անսամբլային երաժշտությունը Հայաստանում» գրքի (ռուս., 1974) շապիկը

Տերմենվոքս



Ավետ Տերտերյան

Ա. Տերտերյանի դիմաքանդակը (1978, քանդ.՝ Դավիթ Բեջանյան)

Ռուբեն Տերտերյան

ձեռքի շարժումներով փոխում են ձայնի ուժգնությունը: Հայաստանում միակ նվագողը Սաթենիկ Հակոբյան-Ուլիխանյանն է, որը նաև ստեղծագործություններ է գրում Տ-ի համար:

ՏԵՐՏԵՐՅԱՆ Ավետ (Ալֆրեդ) Ռուբենի (29.07.1929, Բաքու–11.12.1994, Եկատերինբուրգ, թաղված է Երևանում), կոմպոզիտոր, մանկավարժ: Ռուբեն ***Տերտերյանի*** հայրը, Իրինա ***Տիգրանովայի*** ամուսինը: ՀԽՍՀ (1984), ԽՍՀՄ (1991) ժող. արտիստ: 1960–63-ին՝ ՀԿՄ քարտուղար: Ավարտել է ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1957) և ասպիրանտուրան (1967, երկուսն էլ ղեկ.՝ Է. Միրզոյան): 1970–94-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1985-ից):

Ստեղծագործություններում միահյուսվել է ազգ. երաժշտության հնագույն ավանդույթներն ու արևմտաեվրոպ. երաժշտության նորագույն տեխ. հնարքները: Գրել է «Կրակե օղակ» (1967), «Երկրաշարժ» (ըստ Հ. ֆոն Քլիյստի, 1984, 1-ին բեմ.՝ Սյունխեն, 2003, Վ. Էբերմանի մրց.՝ 2004) օպերաները, «Ռիչարդ III-ի մենախոսությունները» (1979) բալետը, «Հայրենիք» (1957) և «Հեղափոխություն» (1960) վոկալ-սիմֆ. շարքերը, 2 լար. կվարտետ, թավջութակի և դաշնամուրի սոնատ: Առավել հայտնի են Տ-ի 8 սիմֆոնիաները, որոնք առանձնանում են ձևի, բովանդակության, երաժշտ. լեզվի, շարականների ավանդույթների փոխակերպման նորաբար. հնարքներով: Սիմֆոնիաներում ինքնատիպ արտահայտչամիջոցներով է մեկնաբանել տիեզ. ներդաշնակության, մարդու և բնության փոխհարաբերության հավիտեն. խնդիրները: Հեղինակ է նաև բազմաթիվ ռոմանսների («Սոխակ և վարդ»՝ ըստ Ա. Ս. Պուշկինի, «Ամեն գիշեր իմ պարտեզում», «Գետակի վրա»՝ ըստ Ա. Իսահակյանի, ևն), երգերի («Օրորոցային իմ քաղաքի», «Աշնանային բլյուզ»՝ ըստ Ա. Վերդյանի, ևն): Նրա գործերը ղեկավարել են ճանաչված դիրիժորներ Գ. Ն. Ռոժդեստվենսկին, Ա. Ն. Լազարևը, Ջ. Կախիձեն, Դ. Խանջյանը, Է. Կլեմը, Մ. Աննամամեդովը, Ռ. Ասատրյանը և ուր.: Գրել է նաև կինոյի («Երևանյան օրերի խրոնիկա», 1972, «Քամի ունայնության», 1989, «Ձայն բարբառոյ…», 1991, «Հին աստվածներ»՝ ըստ Լևոն Շանթի, 1993, «Վերջին կայարան», 1994, գեղ., «Երազահան», 1989, մուլտիպլիկացիոն, բոլորը՝ Հայֆիլմ, «Անվերջ ձգվող դասամիջոց», «Հայր մեր», «Ցասման հացը», վավերագր., երեքն էլ՝ 1996, «Երևան» ստուդիա, ֆիլմերի) և թատրոնի («Յոթ կայարան»՝ ըստ Ս. Կապուտիկյանի, 1971, Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III», 1972, «Ավերված քաղաքի առասպելը», ըստ Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» վեպի, 1975) երաժշտություն:

Եկատերինբուրգում (1994, 1995, 1999, 2002 և 2005), Նիժնի Նովգորոդում (1999) և ՀՀ-ում (գ. Հայրավանք, 2015, 2017) անցկացվել են Տ-ի երաժշտության փառատոներ: ՀԿՄ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգ. հանձնաժողովի հետ կազմակերպել է «Ավետ Տերտերյան – 75. ավանդույթ և նորարարություն» միջազգ. գիտաժողով-փառատոնը (2005): Երևանում գործում է Տ-ի անվ. արվ-ի դպրոց:

ՀԽՍՀ Պետ. (1977), Ա. Խաչատրյանի անվ. (1993) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

Տեսարան Ա. Տերտերյանի «Կրակե օղակ» օպերայի բեմադրությունից (2014, Շուշի)

Գրկ. *Тертерян Р., Авет Тертерян (Беседы, исследования, высказывания), Е., 1989; Նույնի, Авет Тертерян. Диалоги, Е., 2010; На пути духовного единения: Авет Тертерян в кругу друзей, Сб. статей, Нижний Новгород, 2000; Пушкова Л., Стиль симфоний Авета Тертеряна, Нижний Новгород, 2000; Рухкян М., Авет Тертерян. Творчество и жизнь, Е., 2002; Тертерян Р. А., Тертеряны: История рода, М., 2004.*

ՏԵՐՏԵՐՅԱՆ Ռուբեն Ավետի (ծ. 03.07.1959, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: Ավետ ***Տերտերյանի*** և Իրինա ***Տիգրանովայի*** որդին: Արվեստագիտ. թեկնածու (1986): ՀԿՄ անդամ (1991-ից): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1974), ԵՊԿ երաժշտագիտության (1982, Ռ. Ստեփանյանի դասարան), ԽՍՀՄ ՄՆ արվ-ի ԳՀԻ տեսության (1986, ղեկ.՝ Մ. Ե. Տարասով) բաժինները: 1982–94 և 2011–14-ին դասավանդել է ԵՊԿ-ում (նաև պրոռեկտոր)՝ երաժշտության պատմություն և տե-

ություն: 1985–88-ին՝ Հայֆիլհարմոնիայի փոխտնօրեն, 1989–93-ին՝ Հայհամերգին կից «Դերասան» համերգների կազմակերպչական կոոպերատիվի տնօրեն: 1994–2003-ին ապրել է Արգենտինայում (1995–2000-ին՝ Բուենոս Այրեսի Հայ կենտրոնի թատերախմբի երաժշտ. ձևավորող), 2003–11-ին և 2014-ից՝ Էկվադորում: 2003–10-ին դասավանդել է Կուենկայի համալսարանի արվ-ի ֆակ-ում, 2004–08-ին, միաժամանակ՝ նույն համալսարանի երաժշտ. բաժնի, Կուենկայի (2008–10) և Կիտոյի (2009–10) համալսարանների երաժշտ. կրթության մագիստրատուրայի տնօրեն:

Հեղինակ է «Ավետ Տերտերյան. գրույցներ, ուսումնասիրություններ, ասույթներ» (ռուս., 1989), «Երաժշտական դրամատուրգիա» (ռուս., 1989), «Ավետ Տերտերյան. Երկխոսություններ» (2010, վերահրտ. ռուս.՝ 2014, անգլ.՝ 2015) գրքերի, պոլիֆոնիայի 2 դասագրքի (2012, Օսկար Վանեգասի հետ), գիտ., քննադատ., հրապարակախոս. հոդվածների (տպագրվել են ՀՀ, ՌԴ, Արգենտինայի, Էկվադորի, ԳԴՀ պարբ-ներում և ժող-ներում):

ՏԵՐՑԵՏ (իտալ.՝ terzetto, < լատ. tertius – երրորդ), 1. տես ***Անսամբլ***, 2. օպերայում, օպերետում, օրատորիայում և կանտատում հաճախ հանդիպող վոկալ անսամբլ՝ սիմֆ. նվագախմբի նվագակցությամբ:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Արմեն Տիգրանի [14(26).12.1879, Ալեքսանդրապոլ–10.02.1950, Թբիլիսի, թաղված է Երևանում], կոմպոզիտոր, խմբավար, հաս. գործիչ: Վարդան ***Տիգրանյանի*** հայրը: ՀԽՍՀ (1935), ՎԽՍՀ (1936) արվ. վաստ. գործիչ: Տ-ի երաժշտ. ճաշակի ձևավորմանը մեծապես նպաստել է Շիրակի, մասնավորապես՝ Ալեքսանդրապոլի երաժշտ. կենցաղը, հայկ. ժող. և աշուղ. երաժշտության առանձնահատկությունների բազմակողմանի ուսումնասիրությունը: 1894-ից ապրել է Թիֆլիսում: Ավարտել է տեղի երաժշտ. ուսումնարանի տեսության (դասատու՝ Ն. Ս. Կլենովսկի) և ֆլեյտայի (երկուսն էլ՝ 1902) բաժինները: Կոմպոզիցիայի դասեր է առել Մակար ***Եկմալյանից***: 1902-ին վերադարձել է Ալեքսանդրապոլ, հիմնադրել քառաձայն երգչախումբ, որի հետ համերգներով շրջագայել է Կարսում, Թիֆլիսում, Բաքվում՝ տարածելով հայկ. ժող. երաժշտությունը: Այդ շրջանում է գրել «Հովերն առան սար ու դարեր», «Ախ իմ ճամփեն», «Սև աչերեն» (1903, 1906, 1907, երեքն էլ՝ Ա. Իսահակյանի խոսքերով), ***«Անուշ»*** հայկ. ազգ. առաջին օպերան (1908–12): «Անուշ»-ից որոշ հատվածներ ներկայացվել են Թիֆլիսում (1908), իսկ առաջին ամբողջ. բեմադրությունը՝ Ալեքսանդրապոլում (1912)՝ սիրողների մասնակցությամբ: ԵՕԹԹ-ում բեմադրվել է 1935-ին, Մոսկվայում՝ 1939-ին (հայ արվ-ի և գրկ-յան տասնօրյակին): 1913-ից ապրել է Թիֆլիսում: Մասնակցել է Հայոց երաժշտ. ընկերության աշխատանքներին, դասավանդել Հովնանյան դպրոցում, իր ստեղծագործություններով հանդես եկել համերգներով: Գրել է երաժշտություն՝ «Լեյլի և Մեջնուն» դրամայի (1915, բեմ.՝ 1918, Թիֆլիս), «Արևելյան պար»՝ սիմֆ. նվագախմբի, «Կանտատ Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեդարձին»՝ սիմֆ. նվագախմբի և երգչախմբի (1936, խոսք՝ Գ. Սարյանի) համար, «Արյունոտ գիշեր» կանտատը (1936, Բաքվի 26 կոմիսարների հիշատակին, ըստ Վ. Ալազանի), դաշնամուր. պիեսներ՝ սյուիտ՝ հայկ. պարերից, «Շիրակ զմրուխտի» ֆանտազիան, խմբերգեր, զանգված. երգեր («Գյուղ», «Հեյ

Արմեն Տիգրանյան

Հատված Ա. Տիգրանյանի «Գյումրվա կլոր պար»-ից

ջան, ջան», «Գարնանացան» ևն), մշակել ժող. երգեր, հիմնականում զբաղվել է «Անուշ» օպերայի մշակմամբ: ՀՄՊ-ի տարիներին ստեղծել է մի շարք հայրենասիր. երգեր, «Պարային սյուիտ»՝ նվագախմբի համար, նաև պատմահայրենասիր. «Դավիթ Բեկ» օպերան (ըստ Րաֆֆու, 1941–50), որը գաղափար. հագեցվածությամբ, երաժշտ. լեզվի ժողովրդայնությամբ, մեղեդիական ոճով նորություն էր ազգ. օպեր. արվ-ում: Օպերան խմբագրել է Գ. Բուդաղյանը, գործիքավորել Լ. Խոջա-Էյնաթյանը: Առաջին բեմադրությունը՝ 1950-ին ԵՕԲԹ-ում:

Տևսարան Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի բեմադրությունից (1950, ռեժ.՝ Գոհարի-նա Մելքումյան)

Տ. խորհրդ. շրջանի հայ կոմպոզիտորների ավագ սերնդի նշանավոր ներկայացուցիչներից է, որի ստեղծագործությունն առանձնահատուկ տեղ ունի հայ երաժշտարվ-ում: Ստեղծագործ. և հաս. գործունեությամբ մեծապես նպաստել է ազգ. երաժշտության վերելքին: Գրել է երաժշտություն նաև դրամատիկ. ներկայացումների համար («Գիքոր», ըստ Հ. Թումյանյանի, «Անահիտ», ըստ Ղ. Աղայանի, «Նամուս», ըստ Ա. Շիրվանզադեի, «Դավիթ Բեկ», «Սամվել», երկուսն էլ՝ ըստ Րաֆֆու): Հայերեն է թարգմանել Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», Ժ. Բիզեի «Կարմեն» օպերաների լիբրետտոները: Լենինի շքանշան:

Նիկողայոս Տիգրանյան

Երկ. *Հոդվածներ, նամակներ, հուշեր, կազմ.՝ Ա. Թադևոսյան, Ե., 1981:*

Գրկ. *Աթայան Ռ., Մուրադյան Մ., Արմեն Տիգրանյան: Կյանքը, երաժշտական-հասարակական գործունեությունը և ստեղծագործությունը, Ե., 1955: Տիգրանյան Է., Սնաքառման և արարման ուղիներով: Արմեն Տիգրանյանի կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը, Ե., 2004: Мелик-Вртанесян К., А. Т. Тигранян, М.–Л., 1939.*

ՏԻԳՐԱՆՅԱՆ Մարիաննա Ալբերտի (ծ. 23.06.1971, Երևան), երաժշտագետ, բանագետ: Արվեստագիտ. թեկնածու (2016): Ավարտել է Երևանի Զայնի մշակման և պահպանման երաժշտ. դպրոցը, Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանի (1990), ԵՊԿ (1995) երաժշտագիտության բաժինները և ասպիրանտուրան (2005, ղեկ.՝ Ա. Փահլևանյան): Հայաստանի ազգ. ռադիոյի «Հայաստանի ձայն» խմբագրությունում (1994–95) վարել է հեղինակ. հաղորդաշար (հայ., ռուս.) հայկ. ժող. երգաստեղծության ժանրերի մասին: Դասավանդել է Արմավիրի արվ-ի ուսումնարանում (1995–2005, բաժնի վարիչ), Եղվարդի երաժշտ. դպրոցում (1997–98), ԵՊԿ-ում (2004-ից): 2010-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ժող. երաժշտ. բաժնի գիտաշխատող, 2016-ից՝ ավագ գիտաշխատող: Հեղինակ է հայ բանագիտությանը վերաբերող գիտ. հոդվածների:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Նիկողայոս Թադևոսի [Նիկոլայ Ֆադեևիչ, 19(31).08.1856, Ալեքսանդրապոլ–17.02.1951, Երևան], կոմպոզիտոր, բանահավաք, դաշնակահար, հաս. գործիչ: Մարիամ ***Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյանի*** եղբայրը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1933): Աշխատանքի հերոս (1936): Հայկ. ազգ. դաշնամուր. երաժշտության հիմնադիրներից: 9 տարեկանում կուրացել է: Սովորել է Վիեննայի կույրերի ինստ-ում: Դաշնամուր նվագել և տես. առարկաներ սովորել է Վիեննայի կոնսերվատորիայում (ղեկ.՝ Վ. Շեններ): 1893-ին Ն. Ֆ. Սոլովյովի ղեկավարությամբ կատարելագործվել է (կոմպոզիցիա, տեսություն) Ս. Պետերբուրգում: Ալեքսանդրապոլում հիմնադրել է կույրերի դպրոց, եղել տնօրենը, դասավանդել երաժշտատես. առարկաներ: 1894-ից Այսրկովկասի, Կովկասի, Ռուսաստանի, Արմ. Եվրոպայի քաղաքներում հանդես է եկել որպես դաշնակահար, կարդացել դասախոսություններ, հրապարակել արլ. երաժշտությանը վերաբերող հոդվածներ: 1934-ից ապրել է Երևանում: Հայ կոմպոզիտորներից առաջինն է ձայնագրել ու մշակել (դաշնամուրի և կամեր. անսամբլի համար) հայ աշուղների, դուդուկահարների, սազանդարների հորինած և կատարած երգերը («Քո փափագով», 1887, «Տուն արի», 1890, «Զախորդ օրեր», 1896, «Լուսնյակ գիշեր», 1896, ևն), պարերը («Դյուզ պար», 1887, «Ֆինջան», «Ֆատեն կիտամ», «Թարս պար», «Զուռնի տրնգի», «Ուզունդարա»,

«Դոյ-դոյ», «Վեր-վեր», 1890, «Ռանգի», «Քյանդրբազ», «Վարդ կոշիկս», «Շավալի», 1896, ևն), մուղամներն ու դաստգյահները («Բայաթի քուրդ», 1888, «Բայաթի Շիրազ», 1889, «Հեյդարի», 1894, «Շահնազ», 1900, «Նավա», 1902, «Չորբան բայաթի», 1904, «Շյուշտար», 1904, ևն), որոնք 1887-ից հրատարակվել են Մոսկվայում և Ս. Պետերբուրգում, բազմիցս վերահրատարակվել Հայաստանում: 1934–46-ին իր ստեղծագործությունների մի մասը մշակել է փող., սիմֆ. և կամեր. նվագախմբերի համար: Պահպանվել են նրա՝ XIX դ-ում և XX դ-ի սկզբին Այսրկովկասի քաղաքներում կենցաղավարող հայկ., պարսկ., քրդ. ժող. և ժող-պրոֆեսիոնալ երաժշտության բազմաթիվ նմուշների գրառումներ: Տ-ի գրառած մեղեդիներն օգտագործել են Ա.

Հատված «Չարգյահ»-ից (մշակումը՝ Ն. Տիգրանյանի)

Սպենդիարյանը, Մ. Մ. Իպոլիտով-Իվանովը, Գ. Ա. Կազաչենկոն, Ռ. Մ. Գլիերը, Ա. Տիգրանյանը, Ս. Բարխուդարյանը, Ա. Այվազյանը, Ա. Խաչատրյանը և ուր.:

Իր մշակումներում ձգտել է պահպանել բնագրի ոգին, հաղորդել ժող. գործիք. ինչողություն և բազմաձայնություն, ժող. մեղեդիների ձայնակարգերի առանձնահատկությունները, ժող. պարերի եղանակների ճկունությունը: Ժող. մեղեդիների գրառման և մշակման Տ-ի հայտնաբերած հնարքները, նաև դաշնամուր. մանրանվագներում և բազմամաս կոմպոզիցիաներում կիրառվող ձևակառուցման սկզբունքները հետագայում զարգացրել են մի շարք հայ կոմպոզիտորներ:

Փարիզի համաշխ. ցուցահանդեսի բրոնզե մեդալ (1900):

Երկ. *Հոդվածներ, հուշեր, նամակներ, կազմ., ծնթգր. և առաջաբանը՝ Ռ. Մազմանյանի, Ե., 1981:*

Գրկ. *Թերլեմեզյան Ռ., Նիկողայոս Տիգրանյան, Ե., 1936: Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, տես Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, հ. 2., Ե., 1970, էջ 239–246: Մազմանյան Ռ., Նիկողայոս Տիգրանյանի մշակած մողամներ, «ԼՀԳ», 1972, № 11: Նույնի, Ն. Տիգրանյանի մշակած հայկական ժողովրդական պարերը, նույն տեղում, 1973, № 8: Гюмрецци, Николай Фадеевич Тигранов и музыка Востока, Л., 1927; Шаверdян А., Очерки по истории армянской музыки XIX и XX вв., М., 1959, с. 124–126; Апоян Ш., Фортепианная музыка Советской Армении, Е., 1968, с. 23–33; Худабашян К., Лады и гармония в произведениях Никогайоса Тиграняна, «ԼՀԳ», 1968, № 11: Նույնի, Армянская музыка на пути от монодии к многоголосию, Е., 1977; Мазманян Р., Никогайос Тигранян. Очерк жизни и творчества, Е., 1978.*

ՏԻԳՐԱՆՅԱՆ Վարդան Արմենի [21.12.1906 (3.1.1907), Ալեքսանդրապոլ–07.08.1974, Երևան], կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Արմեն ***Տիգրանյանի*** որդին: Սովորել է ԵՊԿ-ում (1930–32, Հ. Ստեփանյանի դասարան), ավարտել Լենինգրադի կոնսերվատորիան (1941, Ք.

Տեսարան Վ. Տիգրանյանի «Աղբյուրի մոտ» երաժշտական կատակերգությունից (1949, ԵԵԿԹ)

Քուշնարյանի դասարան): Ստեղծագործության մեջ առավելապես անդրադարձել է երաժշտաբեմ. ժանրերին: Գործերն աչքի են ընկնում վառ մեղեդայնությամբ, երաժշտ. լեզվի պարզությամբ: Գրել է «Սոս և Վարդիթեր» օպերան (1957, բեմ.՝ ԵՕԲԹ, 2-րդ խմբ.՝ 1964), «Մեծ հարսանիք» (1945), «Շիրակ, իմ սեր» (1970) օպերետները, «Աղբյուրի մոտ» երաժշտ. կատակերգությունը (1949, բոլորը՝ ԵԵԿԹ), «Հանդիսավոր կանտատ» (1942), «Պարային սյուիտ» (1943)՝ նվագախմբի, զուգանվագ՝ կլառնետի և դաշնամուրի համար, դաշնամուր. պիեսներ, խմբերգեր, ռոմանսներ, երգեր, թատեր. երաժշտություն, մշակել է գուսան. և աշուղ. երգեր:

Վարդան Տիգրանյան

Մարիամ Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյան

ՏԻԳՐԱՆՅԱՆ-ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Մարիամ Թադևոսի (Տիգրանովա-Տեր-Մարտիրոսյան Մարիա Ֆադեևնա, 25.05.1882, Ալեքսանդրապոլ–31.07.1947, Թբիլիսի), դաշնակահարուհի: Նիկողայոս ***Տիգրանյանի*** քույրը: Ս. Պետեր-

Գևորգ Տիգրանով



Գ. Տիգրանովի «Արամ Իլյիչ Խաչատրյան» գրքի (ռուս, 1987) կազմը

Իրինա Տիգրանովա

բուրգում ավարտել է Ե. Պ. Ռապհոֆի բարձրագույն երաժշտ. դասընթացները (1911, Ե. Պ. Ռապհոֆի դասարան): Հանդես է եկել որպես մենակատար, նաև անսամբլներում՝ երգիչներ Վ. Տեր-Առաքելյանի, Հ. Դանիելյանի, Վ. Արծրունու, ջութակահար Հ. Նալբանդյանի հետ: Եղել է Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ն. Տիգրանյանի, Ս. Բարխուդարյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի և ուր. կոմպոզիտորների մի շարք ստեղծագործությունների առաջին կատարողը:

ՏԻԳՐԱՆՈՎ (Տիգրանյան) Գևորգ Գրիգորի [25.03 (07.04).1908, Ս. Պետերբուրգ–05.02.1991, Լենինգրադ], երաժշտագետ, մանկավարժ: Իրինա ***Տիգրանովայի*** հայրը: Արվեստագիտ. դ-ր (1947): Պրոֆ. (1947): ՀԽՍՀ (1945), ՌԽՖՍՀ (1979) արվ. վաստ. գործիչ: Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի պատմատես. ֆակ-ը (1934), աշակերտել Բ. Վ. Ասաֆևին, Ս. Լ. Գինզբուրգին, Ռ. Ի. Գրուբերին: 1935–41-ին և 1946-ից դասավանդել է Լենինգրադի կոնսերվատորիայում, 1940-ից՝ նաև ԵՊԿ-ում: Հեղինակ է եվրոպ., ռուս և հայ երաժշտությանը վերաբերող աշխ-ների («Հայկական երաժշտական թատրոնը», ռուս., հ. 1–4, 1956–89, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1979, ևն): Կազմել և խմբագրել է Բ. Վ. Ասաֆևի «Ակնարկներ Հայաստանի մասին» (1958), «Կ. Ս. Սարաջև. Հոդվածներ, հուշեր» (1962), «Լենինգրադի կոնսերվատորիան հուշերում» (1962), «Սովետական սիմֆոնիան 50 տարում» (1967) և այլ ժող-ներ (ռուս.):

Երկ. *Կոնստանտին Սարաջյան (կենսագրական ակնարկ), Ե., 1961: Հայ երաժշտական թատրոնի 100 տարին. 1868–1968, Ե., 1968: Արամ Խաչատրյան, Ե., 1983: А. Спендиаров. По материалам писем и воспоминаний, Е., 1953; Опера и балет Армении, М., 1966; Аро Степанян, М., 1967; Александр Афанасьевич Спендиаров, 2 изд., испр. и доп., М., 1971; Балеты А. Хачатуряна, Л., 1974; Жизнь, отданная искусству. Очерк жизни и творчества С. В. Акимовой [1887–1972], Е., 1978; Балеты Эдгара Оганесяна, Е., 1981; Артисты. Спектакли. Музыка, Е., 1983; Музыка в борьбе за гуманизм и прогресс, Л., 1984; Арам Ильич Хачатурян, М., 1987.*

Գրկ. *Худабашян К., Первое систематическое исследование, «Советская музыка», 1978, №3; Будагян А., Человек интересной, счастливой судьбы, Նույն տեղում, №11: Тигранов Георгий Григорьевич – 100, Е., 2008.*

ՏԻԳՐԱՆՈՎԱ Իրինա Գևորգի (19.03.1936, Լենինգրադ–16.03.2011, Երևան), երաժշտագետ: Գևորգ ***Տիգրանովի*** դուստրը, Ավետ ***Տերտերյանի*** կինը, Ռուբեն ***Տերտերյանի*** մայրը: Արվեստագիտ. թեկնածու (1970): «Ավետ Տերտերյան» հիմնադրամի նախագահ: Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1960, Ա. Ամբակումյանի դասարան), տես-կոմպոզիցիայի (1961, Ա. Բարսամյանի դասարան) բաժինները, ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1968, ղեկ.՝ Գ. Տիգրանով): 1961–66-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1967-ից՝ ԵՊԿ-ում: Հեղինակ է «Երաժշտությունն իմ կյանքն է. Ա. Ա. Ամբակումյանի ստեղծագործական ուղին» (ռուս., 1994) աշխ-յան, նաև Ա. Խաչատրյանի, Ա. Ադամյանի, Հ. Ստեփանյանի, Ա. Տերտերյանի, Ղ. Սարյանի ստեղծագործությունների ոճ. առանձնահատկությունների, Տ. Սազանդարյանի, Վ. Բարսովայի, Ե. Խաչիկյանի, Ա. Ամբակումյանի ստեղծագործությանը վերաբերող հոդվածների: Մասնակցել է հանրապետ. և միջազգ. գիտաժողովների Ս. Պետերբուրգում, Բաքվում, Թբիլիսիում, ունեցել 500-ից ավելի ելույթներ, համերգ-դասախոսություններով շրջագայել է ՀՀ-ում, ՌԴ-ում, Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում, ԳԴՀ-ում:

«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ», Տիրամայր Հայաստանի Պողոսյան կրթահամալիրի երգչախումբ: Հիմնադրվել է 2005-ին Գյումրիում՝ կրթահամալիրի ղեկ., Անարատ Հղության հայ քույրերի միաբանության ընդհանուր մեծավորուհի մայր Արուսյակ Սաճոնյանի և Ռոբերտ Մլքեյանի նախաձեռնությամբ: 2015-ին Հռոմի Սբ Պետրոս տաճարում մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված Ֆրանցիսկոս պապի, 2016-ին՝ Գյումրու Վարդանանց հրապարակում մատուցած պատարագներին:

Հյուրախաղերով հանդես է եկել Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Բելգիայի, Լիբանանի քաղաքներում:

«ՏԿԶԱՐ», Հայաստանի հնագույն փող. և հարված. ժող. երաժշտ. գործիքների նվագախումբ: Հիմնադրվել է Երևանում 1982-ին (հիմնադիր-գեղ. ղեկ. և դիրիժոր՝ Կառլեն ***Միրզոյան***՝ 1982–2002-ին և 2012-ից, 2002–2012-ին՝ Արմինե Մեսրոպյան): Նվագախմբում ընդգրկված են պարկապզուկ, դուդուկ, սրինգ (երբեմն՝ նաև դհոլ, քանոն և սանթուր): Երկացանկում՝ հայկ.

ժող. և հայրենասիր. երգեր, մեղեդիներ, պարերգեր ևն:

«Տկզար» նվագախումբը

Գրկ. *Միրզոյան Կ., Անդրադարձ հայ ազգային նվագարանների պատմափաստագրությանը և «Տկզար» համույթի գործունեությանը, Ե., 2017:*

ՏՆՏԵՍՅԱՆ Եղիա [29.03(10.04).1834, Կ. Պոլիս–23.04(05.05).1881, Կ. Պոլիս], երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, տպագրիչ: Սովորել է Կ. Պոլսի Միջագյուղ թաղի դպրոցում: 1848-ից եղել է տպագրիչի աշակերտ «Սրապյան» տպարանում: Հետագայում Հովհաննես ***Մյուհենդիսյանի*** ղեկավարությամբ մասնագիտացել է նաև հայկ. և եվրոպ. նոտատպության մեջ: 1862-ից աշխատել է Հաճնում՝ որպես ուսուցիչ, դասախոսություններով մասնակցել «Քնար հայկական» ընկերության միջոցառումներին: Երուսաղեմում և Էջմիածնում ուսումնասիրել է երգվող շարականները և նրանց խազագրությունը: 1864-ին Կ. Պոլսում հրատարակել է «Բովանդակութիւն նուագաց Հայաստանեայցս ս. եկեղեցւոյ» «տետրը», որտեղ եվրոպացի հեղինակների (Յ. Շրյոդեր, Գ. Վիլլոտո, Հ. Պետերման) հրապարակումներից հետո առաջին անգամ խորությամբ ներկայացրել է շարականների սկսվածքները (ձայնակարգ-ելևէջ. խտացված բանաձևերը) և հատընտիր շարականներ: Մասնակցել է ազգ. հոգևոր երաժշտությունը վերաձայնագրելու, կարգավորելու հետագա խեղաթյուրումներից զերծ պահելու աշխատանքներին: 1869–71-ին հայկ. նոտաներով գրառել է Շարակնոցն ամբողջությամբ, կազմել հայկ. նոտագրության համառոտ ձեռնարկ՝ «Տարերք երաժշտութեան» (տպագրվել են 1933-ին և 1934-ին՝ որդու՝ Լևոն Տ-ի ջանքերով): Մինչկոմիտաս. շրջանի հայ երաժշտագիտության կարևորագույն նվաճումներն է ամփոփել «Նկարագիր երգոց Հայաստանեայցս եկեղեցւոյ...» (1874) գրքում: Հրատարակել է նաև «Նուագք հայկականք» պարր-ը (1879):

Տ. իր գործունեությամբ նշանակալի հետք է թողել հայ երաժշտության տեսության մեջ: Հատկապես կարևոր են հոգևոր երաժշտության մոնոդիկ (մեներգեցողության) էության ընկալումն ու հետազոտումը՝ պայմանավորված այդ երաժշտության հնչյունաշարի տեմպերացիայի առանձնահատկություններով և հայկ. ձայնեղանակ. համակարգի (տես ***Ութձայն***) ամբողջականությամբ: Տ-ի գիտահետազոտ. և գործն. ձեռնարկումները նպաստել են ազգ. երաժշտության ինքնուրույնության ու ինքնատիպության հաստատմանն ու պահպանմանը:

1880-ական թթ-ին Արմ. Հայաստանում ծավալված աբդուլհամիդյան բռնությունների առաջին զոհերից է: «Նոր երգարան հայոց» (1880) ժող-ում Մ. Նալբանդյանի «Ազատություն» և ազատախոհ. այլ բանաստեղծություններ, նաև ֆրանս. «Մարսելյեզը» տպագրելու համար բանտարկվել է, բանտում էլ մահացել է:

Գրկ. *Հիսարլեան Ա., Պատմութիւն հայ ձայնագրութեան..., ԿՊ, 1914: Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959: Тагмизян Н., Теория музыки в Древней Армении, Е., 1977.*

Ըստ Ռոբերտ Աթայանի

Եղիա Տնտեսյան

ՏՈԿԿԱՏ (իտալ.՝ toccata, < toccare – ձեռք տալ, դիպչել), արագ տեմպով և հստակ ռիթմով վիրտուոզ երաժշտ. պիես՝ առավելապես ստեղնավոր գործիքների համար: Ստեղծվել է XVI դ-ում, որի շնորհիվ երաժշտության մեջ առանձնացվել են երգեհոն. և կլավիր. ժանրերը: Վաղ շրջանի Տ-ները իմպրովիզացված պրելյուդներ էին, որոնք օգտագործվել են եկեղեց. արարողության ժամանակ, նաև որպես նախաբան և նվագակցություն՝ երգեհոն. մեսաների համար: XVII դ-ի 2-րդ կեսին Տ. կորցնելով լիթուրգ. բնույթը՝ վերածվել է ինքնուրույն ժանրի, ընդգրկվել աշխարհիկ ցիկլ. երկերում, մասնավորապես՝ հնագույն սյուիտներում: Հնագույն Տ-ի ժանրով գեղ. բարձրարժեք գործեր է ստեղծել Յ. Ս. Բախը (8 կլավիր., 5 երգեհոն. Տ-ներ): Դաշնամուր. Տ-ներ են գրել Ռ. Շումանը, Ֆ. Մենդելսոնը, Կ. Դեբյուսին, Մ. Ռավելը, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Դ. Շոստակովիչը, Ա. Խաչատրյանը, Ա. Բաբաջանյանը, Գ. Չթչյանը, Մ. Կոկժաևը,

Տ. Համբարյանը, Գ. Հովհաննիսյանը, Ժ. Շահրիմանյանը և ուր.:

Հատված Արամ Խաչատրյանի «Տոկկատ»-ից

ՏՈԿԿԱՏԻՆ (իտալ.՝ toccatina, ***տոկկատի*** նվազականը), փոքր տոկկատ, վիրտուոզ երաժշտ. պիես (առավելապես ստեղնավոր գործիքների համար)՝ կառուցվածքով պարզ ու սեղմ, արագ տեմպով և հստակ ռիթմով, որտեղ գերիշխում է կատարման «հարվածային» տեխնիկան:

Դաշնամուր. Տ-ներ են գրել Ռ. Կ. Շչեդրինը, Դ. Բ. Կաբալևսկին, Ս. Մ. Մայկապարը, Ռ. Ն. Կոտլյարևսկին, Ե. Դ. Դոգան, Յ. Յ. Թամուլենիսը, Ե. Սահառունին, Ա. Բաբաջանյանը, Է. Փաշինյանը, Ս. Զրբաշյանը, Ս. Հովհաննիսյանը և ուր.:

Անի Մուշեղյան

ՏՈՆ (< հուն. τόνος – լարվածություն, ձգվածություն, այլ նշանակություններից են՝ քերական. շեշտ, բանաստեղծ. չափ, երաժշտ. հնչյուն, հնչյունի բարձրություն, ռեգիստր, տոնայնություն, ձայնակարգ ևն), երաժշտ. ձայնագիտության մեջ՝ պարբեր. տատանումներից առաջացող հնչյուն. սպեկտրի որևէ բաղկացուցիչը, ամբողջ. (ելակետ.) տատանումների արդյունքը կոչվում է հիմնական, պարզագույն, սինուսոիդ. տատանումներինը՝ մասնակի Տ. (տես ***Օբերտոն***): Հնչյունների փոխգործակցությունից առաջանում են համընկնման և զուգակցման Տ-եր: Որպես երաժշտատես. եզրույթ՝ գործածվում է բազմազան նշանակություններով. 1. որոշակի բարձրության բարդ (հիմնական և մասնակի Տ-երի խառնուրդ) հնչյուն: 2. Որևէ հնչյունաշարի առանձին, բնորոշ աստիճան (հայ ժող. երաժշտության հնչյունաշարի միքսոլոդիական, էոլական և լոկրիական, լրիվ հնչյունաշարի դիատոնիկ և խրոմատիկ Տ-երը ևն): 3. Հնչյունների բարձրությունների հարաբեր. չափման միավոր՝ հավասարաչափ տեմպերացված շարքում մաքուր օկտավայի 1/6 մասը (ամբողջատոն, հավասար է 200 ցենտի): 4. Դիատոնիկ շարքում հարևան աստիճանների հարաբերությունը: 5. Ակորդի յուրաքանչյուր հնչյունը, նաև ակորդում չընդգրկված, սակայն նրա հետ հնչող «ոչ ակորդային» հնչյունը: 6. Միջնադար. կաթոլիկ եկեղեց. երաժշտության ձայնակարգերի ընդհանուր անվանումը՝ հոնիական, փռյուգիական, դորիական Տ-եր: 7. Երաժշտ. գործիքի կամ երգչաձայնի հնչողության որևէ հատկանիշը բնութագրող արտահայտություն (նուրբ, փափուկ, հստակ, պայծառ, կոշտ, կոպիտ, անմաքուր, խավար Տ.ևն):

Գրկ. *Աթայան Ռ., Տեր-Մարտիրոսյան Տ., Երաժշտության տարրական տեսություն, Ե., 2006: Սպասորին Ի. Վ., Երաժշտության տարրական տեսություն, Ե., 1987: Музыкальная акустика (общая ред. Н. А. Гарбузова), [2 изд.], М., 1954.*

ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ֆրանս.՝ tonalité, գերմ.՝ Tonart, < հուն. toros–լարվածություն), ձայնակարգի հնչյունաշարի բացարձակ բարձրությունը, դիրքը՝ ըստ բացարձակ բարձրության: Անվանում են նաև ձայնակարգ-տոնայնություն: Հավասարաչափ տեմպերացված համակարգում գոյություն ունեն 12 մաժոր և 12 մինոր Տ-ներ: Անհավասարաչափ տեմպերացված (ժող.) համակարգերում յուրաքանչյուր ձայնակարգ սովորաբար կապված է հնչյունաշարի որևէ աստիճանի հետ, ուստի դիատոնիկ հնչյունաշարի յուրաքանչյուր աստիճանից սկսվում է նոր ձայնակարգ. տոնայնություն:

Հայկ. ժող.երաժշտության մեջ դիատոնիկ հնչյունաշարի սահմաններում նույն ձայնակարգը կարող է ունենալ մաքուր կվարտա հեռավորության տարբեր Տ-ներ: Դաս. ստեղծագործությունն սկսվում և ավարտվում է մեկ՝ գլխ. Տ-յամբ, որով էլ հաճախ անվանվում է: Մաժոր և մինոր Տ-ները, որոնք ունեն նույն տոնիկան (սի մաժոր–սի մինոր, մի մինոր–մի մաժոր ևն) կոչվում են համանուն: Ստեղծագործության ընթացքում փոխհաջորդվում են այլ՝ երկրորդ. Տ-ներ (տես ***Մոդուլացում***): XX դ–ի երաժշտության մեջ Տ.միավորում է երաժշտ. ստեղծագործության ձայնաբարձրական կազմակերպման բազմաթիվ նոր տարրեր և օրինաչափություններ: Ժամանակակից երաժշտության մեջ Տ-յան նոր մեկնաբանումը հաճախ գոյատևում է հին, դաս. մեկնաբանման հետ:

Գրկ. *Աթայան Ռ., Տեր-Մարտիրոսյան Տ., Երաժշտության տարրական տեսություն, Ե., 2006: Ретти Р., Тональность в современной музыке, [пер. с англ.], Л., 1968; Курс теории музыки, Л., 1984.*

Ռուբերտ Աթայանի

ՏՐՈՄԲՈՆ (իտալ.՝ trombone – մեծացնել, < tromba – փող, գերմ.՝ Posaune), պղնձե փող. երաժշտ. գործիք: Բաղկացած է երկար մենզուրայից, լայնացող կոնաձև փողաբերանից (նեղ մասում միացած է շարժ. սարքին), մունդշտուկից: Կափույրիկներով միջին մասը շարժ. (այսպես կոչված՝ ցուգտրոմբոն) և Տ. ստեղծվել է XIX դ–ի 1–ին կեսին: Շարժ. սարքը ապահովում է խրոմատիկ հնչյունաշարը (առաջանում է բնական հնչյունաշարի տոները 6 կիսատոն ցած տեղափոխելիս): XVI դ–ում ձևավորվել են Տ–ի սոպրանո, դիսկանտ, ալտ, տենոր, բաս, կոնտրաբաս տեսակները: Ընդգրկված է սիմֆ., փող. և էստրադ. նվագախմբերում, նաև մենակատար և անսամբլ. գործիք է:

Տրոմբոն

ՏՈՒԲԱ (լատ.՝ tuba – փող, խողովակ), ամենացածր հնչողության նվագախմբ. պղնձե փող. երաժշտ. գործիք: Բաղկացած է գլանաձև և կոնաձև փողերից, մունդշտուկից, կափույրիկների մեխանիզմից, ավարտվում է փողալայնակով: Տ–ի որոշ տեսակներ հնչյունների բարձրությունը կարգավորելու (ճշտելու) համար ունեն 5 կամ 6 կափույրիկ: Փող. և սիմֆ. նվագախմբերում գործածվում են բաս–Տ. (մի բեմոլ լարվածքով, կոնտրօկտավայի սոլ–ից մինչև առաջին օկտավայի մի բեմոլը) և կոնտրաբաս–Տ. (սի բեմոլ լարվածքով, սուբկոնտրօկտավայի սի բեմոլից կամ կոնտրօկտավայի դո–ից մինչև փոքր օկտավայի սի բեմոլը) տեսակներ: Նոտագրվում է բասի բանալիով՝ ըստ իրական հնչողության:

Տուբա

Ց

ՑԵԶՈՒՐԱ (լատ.՝ caesura – հատում), շարահյուս. սահման՝ համեմատաբար ավարտուն երաժշտ. կառուցվածքների միջև: Ապահովում է երաժշտ. խոսքի և ձևի իմաստ. մասնատումը: Արտահայտվում է ***պառզայով***, շնչառության փոփոխությամբ, ավելի կամ նվազ տևական կանգառով ևն:

ՑԻԿԼԱՅԻՆ ՁԵՎԵՐ, երաժշտ. ձևեր, որոնք բաղկացած են տարաբնույթ (տեմպ, կառուցվածք) մի քանի առանձին երաժշտ. ստեղծագործություններից կամ մասերից՝ միավորված ընդհանուր մտահղացմամբ: Գործիք. Ց. ձ. են սյուիտը, պարտիտը, պրելյուդների, մանրանվագների, երգերի (Ֆ. Շուբերտի «Գեղեցկուհի ջրաղացպանուհին», «Ձմեռային ճանապարհը», Ռ. Շումանի «Պոետի սերը», Մ. Պ. Մուսորգսկու «Մանկասենյակ», Դ. Դ. Շոստակովիչի «Հրեական ժողովրդական պոեզիայից», Ռ. Մելիքյանի «Ձմրուխտի», «Ջառ-վառ», Ա. Սաթյանի «Արարատյան դաշտի երգեր», Ռ. Ամիրխանյանի «Հուշ», «Քարը», Տ. Մանսուրյանի «Մայրամուտի երգեր», «Երկիր Նաիրի» ևն), ռոմանսների, խմբերգերի (Ե. Երկանյանի «Նշանների երկիր», «Սեզամ, բացվիր», ևն), գործիք. (Ռ. Շումանի «Կառնավալ», Ա. Բաբաջանյանի «Վեց պատկեր», Վ. Բալյանի «Երեք էջ կնոջ օրագրից», «Գարունը անտառներում», ևն) և այլ շարքեր, երկմասանի պրելյուդ-ֆուգան (Յ. Ս. Բախ, Դ. Դ. Շոստակովիչ և ուր.), սոնատ. և սոնատ-սիմֆ. ցիկլ. ձևերը, որոնցով գրում են սոնատներ, սիմֆոնիաներ, կոնցերտներ, կվարտետներ, կվինտետներ և այլ անսամբլ. ստեղծագործություններ: Ց. ձ. կարելի է համարել նաև կանտատը:

Անահիտ Ցիցիկյանը ելույթի պահին

ՑԻՑԻԿՅԱՆ Անահիտ Միքայելի (26.08.1926, Լենինգրադ–02.05.1999, Երևան), ջութակահար, մանկավարժ, երաժշտագետ: ՀՀ վաստ. արտիստ (1967): Արվեստագիտ. թեկնածու (1970): Պրոֆ. (1982): Ջութակ նվագել է 6 տարեկանից: Աշակերտել է դաշնակահար, մանկավարժ Գ. Ռ. Գինզբուրգին և ջութակահար, մանկավարժ Լ. Մ. Յեյտլինին: Ավարտել է ԵՊԿ (1950, Կ. Դոմբաևի դասարան), ՄՊԿ ասպիրանտուրան (1954, Կ. Գ. Մոստրասի դասարան): 1950-ից դասավանդել է ԵՊԿ-ում: Հիմնադրել և մշակել է աղեղն. գործիքների հայ կատարող. արվ-ի և պատմության, մանկավարժ. գործն. դասընթացներ: 1961-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: Նվագացանկում առանձնահատուկ տեղ են գրավել հայ կոմպոզիտորների երկերը, որոնց մեծ մասի առաջին մեկնաբանն ու խմբագիրն էր: Հյուրախաղերով հանդես է եկել ԽՍՀՄ-ում և արտերկրում: Ունի 60 ֆոնդ. ձայնագրություններ, 4 ձայնասկավառակ («Մելոդիա», Մոսկվա), 2 ձայներիզ (ԱՄՆ): Հեղինակ է շուրջ 300 գիտ. հոդվածների: Ուսումնասիրությունները վերաբերում են աղեղն. գործիքների կատարող. արվ-ին, գործիքագիտությանը, երաժշտ. հնագիտությանը: Ց-ի անունով Երևանում կոչվել է երաժշտ. դպրոց:

Երկ. *Հայկական աղեղնային արվեստը, Ե., 1977:*

Գրկ. *Շամախյան Ն., Անահիտ Ցիցիկյան. Կենսամատենագիտական ժող., Ե., 2011:*

ՈՒ

ՈՒԴ (արաբ.՝ al-ud – փայտ), լար. կսմիթ. երաժշտ. գործիք: Պարսկ. բարբաթ (բարբութ) գործիքի կատարելագործված տեսակն է. դարձել է արաբ. ավանդ. երաժշտության տոնայն. համակարգը ներկայացնող և տեսականորեն բացատրող հիմնական գործիքներից: Հնագույն ժամանակներից տարածվել է Մերձ. Արևելքում, Միջին Ասիայում և Հայաստանում: XIV դ-ում մուտք է գործել Իսպանիա և Սիցիլիա, դարձել եվրոպ. լյուտնյայի նախատիպը: Ուռուցիկ ձվաձև իրանը սոսնձված է կոր փայտաշերտերից, հարթ ծածկի վրա ձևավոր ձայնանցքերն են:

Հայկ. Ու. 6-լարանի է (առաջին 5-ը՝ զույգ-զույգ), լարվածքը՝ կվարտա-սեկունդային (փոքր օկտավայի՝ մի, լա, սի, 1-ին օկտավայի՝ մի, լա, 2-րդ օկտավայի՝ ռե): Արլ. երկրներում Ու-ի նվագացանկում ընդգրկված են ավանդ. մեղեդիներ, մակամներ, ռանգեր, գազելներ, թաքսիմներ ևն: Հայկ. երկացանկը հայ կոմպոզիտորները հարստացրել են ազգ. ինչողության ստեղծագործություններով:

Ուդերի մեծ հավաքածու ունի ստամբուլաբնակ Բելգին Զենգիզը (ամենահինը պատրաստվել է 1828-ին, վարպետ՝ Արմեն Խալֆյան): Հայտնի վարպետներ են եղել նաև Արտակի Զանդան, Սարը Օնիկը, Սերոբեն, Միրիջան Հակոբյանը և ուր.: Ճանաչված են ուդահարներ ***Ուդի Հրանտը, Ուդի Սարգիսը, Պարգև Տեր-Պողոսյանը***, Լիլիթ Կարապետյանը և ուր.:

ՈՒԴԻ ՀՐԱՆՏ (Քենքուլյան Հրանտ, Էմրե Հրանտ, 1901, Ադաբազար–29.08.1978, Կ. Պոլիս), ուդահար: Եղել է կույր: 1915-ից Իկոնիայում երգել է եկեղեցու երգչախմբում, ծանոթացել եկեղեց. երաժշտությանը, սովորել ուդ նվագել: 1918-ին տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ սովորել է նշանավոր երաժիշտներ Քեմանի Հակոբոս Այվազյանի, Տիգրան Քացախյանի և Ուդի Գրիգոր Բերբերյանի ղեկավարությամբ: 1950-ին մեծահարուստ մի հույնի հրավերով մեկնել է Նյու Յորք (աչքերը բուժելու նպատակով), որտեղ (նաև Բոստոնում, Դետրոյտում, Լոս Անջելեսում, Ֆրեզնոյում) հանդես է եկել մենահամերգներով, նաև դասավանդել է ուդ: Նյու Յորքում տպագրվել է նրա «Արուեստագէտի մը կեանքը» (անգլ., 1950) գիրքը: Վերադառնալով Ստամբուլ՝ շարունակել է դասավանդել ուդ և երգեցողություն, հիմնադրել է երգչախումբ, ելույթներ ունեցել ռադիոյով: 1963-ին համերգներով շրջագայել է Փարիզում, Բեյրութում, Հունաստանում և Ամերիկայում: 1966-ին Երևանում նշվել է Ու. Հ-ի ծննդյան 65-ամյակը: Նրա վերջին մենահամերգը 1977-ին էր՝ Ստամբուլում:

Ուդ

ՈՒԴԻ ՍԱՐԳԻՍ (Գըլճյան Սարգիս Կարապետի, 1891, Կ. Պոլիս–1950, Երևան), երգիչ, ուդահար: Նախն. կրթությունն ստացել է Գում Գափուի մայր եկեղեցու վարժարանում, ուսումը շարունակել է «Ռոբերտ» քոլեջում (կիսատ է թողել): Նվագել է ուդ և քանոն, եղել եկեղեց. երգչախմբի երգիչ և դպիր: Համբարձում ***Լիմոնաջյանի*** ղեկավարությամբ սովորել է հայկ. և եվրոպ. նոտագրություն: Կ. Պոլսում հիմնադրել է արլ. երգչախումբ, որի հետ ելույթներ է ունեցել նաև այլ քաղաքներում: Համերգ. գործունեություն ծավալել է հիմնականում ***Թադեոս Էֆենդիի*** հետ: Նրանք նվագել են Ռեշադ V-ի պալատում, երաժշտություն և նոտագրություն դասավանդել պալատականներին: Սուլթանը Ու. Ս-ին անվանել է «Փոքրիկ Սարգիս» (պալատում տարիքով ավելի մեծ Ուդի Սարգիս է եղել):

Ուդի Հրանտ

Ու. Ս. ճանաչված երաժիշտ էր նաև Հունաստանում և Եգիպտոսում (հյուրախաղեր՝ 1922–23-ին): 1908-ից եղել է դերասան և թատեր. գործիչ Մ. Մնակյանի թատրոնի արլ. երաժշտախմբի ղեկ-ը՝ մինչև հույն-թուրք. պատերազմը: Հուն. բանակի հետ Ու. Ս. մեկնել է Հունաստան, մանկավարժ. և համերգ. գործունեություն ծավալել Սալոնիկում և Աթենքում: 1946-ին հայրենադարձել է: Նույն թվականից եղել է Հայաստանի ժող. գործիքների նվագախմբի ուդահար-մենակատար: Քրիս-

Ուդի Սարգիս

տափոր *Քուշնարյանի* առաջարկով սկսել է Հ. Լիմոնճյանի նոտագր. համակարգով գրառված շարականները վերածել եվրոպականի, սակայն վերահաս մահվան պատճառով գործը չի ավարտել: Երևանի Ե. Չարենցի անվ. գրկ-յան և արվ-ի թանգարանում պահվում է ձեռագիր ժող., որտեղ 600 մեծագիր էջերի վրա նոտագրված են մոտ 700 մուղամ և գործիք. պիեսներ. ենթադրվում է, որ կազմողը Ու. Ս. է և իր հետ էլ բերել է հայրենիք:

Էլվիրա Ուզունյան

ՈՒԶՈՒՆՅԱՆ Էլվիրա Գրիգորի (ծ. 06.12.1934, Թիֆլիս), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ՀԽՍՀ (1978), ՎԽՍՀ (1985) ժող. արտիստ: Ավարտել է Թբիլիսիի մանկավարժ. ինստ-ի պատմության ֆակ-ը (1956), կոնսերվատորիան (1963, Ն. Բախութաշվիլի-Շուլգինայի դասարան): 1962–91-ին՝ ԵՕԲԹ մեներգչուհի: Կատարող. ոճն առանձնացել է կերպարների վոկալ երաժշտ. և բեմ. հղկվածությամբ: Դերերգերից են՝ Անուշ (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Օլիմպիա (Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ»), Մարո (Զ. Փալիաշվիլու «Դախի»), Մարֆա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Ռոզինա (Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Վիոլետտա, Ջիլդա (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո»), Յերլինա (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան») ևն: Հանդես է եկել ԽՍՀՄ-ի, Բուլղարիայի օպեր. թատրոններում, մենահամերգներով՝ Գերմանիայում, Եգիպտոսում, Կանադայում, Լեհաստանում, ԱՄՆ-ում և այլուր: Նկարահանվել է կինոյում («Սպիտակ ափեր», 1975, «Եվս հինգ օր», 1978, «Մասնավոր դեպք», 1983, ևն, բոլորը՝ Հայֆիլմ): 1992-ից ապրում է ԱՄՆ-ում, հանդես է գալիս հայ կոմպոզիտորների (նաև ամերիկահայ Հ. Բոյաջյանի և ուր.) երկերի կատարումներով, մոնոներկայացումներով, դասախոսություններով:

Է. Ուզունյանը Ռոզինայի դերում (Զ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»)

Այսրկովկաս. մրցույթի դափնեկիր (1965, Թբիլիսի):

Երկ. Երգեր և ռոմանսներ Էլվիրա Ուզունյանի երկացանկից, Ե., 2011:

Գրկ. Туманян Т., Эльвира Узунян, Е., 1997.

ՈՒԹՋԱՅՆ, ավանդ. *ձայնեղանակների* համակարգ միջնադար. քրիստ. երաժշտարվ-ում: Կապված է Հին աշխարհի մի շարք ժողովուրդների, նաև հայերի մեջ խոր անցյալում ձևավորված տիպ. ձայնեղանակների մասին ուսմունքի հետ: Վերջինը մինչև IV դ-ի սկիզբը քրիստ. պաշտամունք. երաժշտության մեջ վերաձևավորվել է որպես Ու.՝ իրականում միավորելով 8-ից ավելի հիմնական և օժանդակ ձայնեղանակներ:

Որպես կազմավորված համակարգ՝ Ու. կիրառվել է IV դ-ից: Այն արտացոլող և գիտությանը հայտնի ինագույն մատյանները երկուսն են՝ V դ-ի սկզբին (Աստվածաշնչի հայ. թարգմանությունից հետո) կազմված հայոց ինագույն Սաղմոսարան-ժամագիրքը՝ 8 կանոններով (յուրաքանչյուրին համապատասխանել է 1 ձայնեղանակ), և VI դ-ի սկզբին Սևերիոս Անտիոքացի պատրիարքի կազմած հոգևոր ինքնուրույն երգերի ժող-ը՝ 8 ձայնեղանակներն ընդգրկող ներքին հատուկ բաժանումով:

Սկզբն. շրջանում Ու-ի տես. հիմունքները որոշ չափով ընդհանուր են եղել քրիստոնյա ժողովուրդների համար (հատկապես՝ Մերձ. Արևելքում): Ժամանակի ընթացքում նախ առանձնացել են արմ. և արլ. քրիստոնյա մշակույթներին բնորոշ Ու-երը, ապա արլ. քրիստ. երաժշտարվ-ի սահմաններում տարանջատվել են մի շարք ազգ. Ու-եր (XV դ-ում ձևավորվել է նաև ռուս-ը ևն):

Արլ. քրիստ. երաժշտության պատմ. զարգացման դաս. շրջանում (մինչև XV դ-ի կեսերը) մեղեդիական մեծ հնարավորություններով և ազգ. վառ հատկանիշներով բյուզանդականի կողքին արժանի տեղ է գրավել հայկ. Ու.: Դեռևս հեթանոս. Հայաստանում տես. միտքը տարբերել է 4 հիմնական ձայնեղանակներ՝ տիպ. մյուս մեղեդիները որոշակիորեն խմբելով դրանց շուրջ: Քրիստոնեությունը որպես պետ. կրոն ընդունումից և գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը վերանայել են ձայնեղանակների մասին հայկ. հին ուսմունքը, վերակարգավորել հատկապես աստվածաշնչ. երգերի (սաղմոսներ, մարգարեական օրհնություններ և տիրամոր օրհնություն) բնագրերի հետ զուգորդվող տիպ. մեղեդիները՝ խմբագրելով հայկ. Ու-ի առաջին խոշոր հատվածը (4 բուն, 4 կողմ և 2 ստեղի եղանակներով, որն արդեն իսկ դուրս է գալիս 8-ի սահմաններից): Այս շրջանում, երբ սկսվել է նաև հայկ. հոգևոր ինքնուրույն երգերի (հետագայում՝ *շարական*)՝ կցուրդների հորինումն ու

եկեղեցում ազատ կատարումը (հրապարակումը), Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի նախաձեռնությամբ կազմվել է հայկ. Ու-ի 2-րդ (ավելի փոքրաչափ) հատվածը՝ այսպես կոչված սկսվածքների համակարգը, որը կարևորվել է պաշտոներգության մեջ: Սկսվածքների գրության միջոցով դպիրները տիրապետել են գործն. երգեցողությանն ու տեսությանը: Ավելի ուշ ստեղծվել են հայկ. միջնադար. երաժշտածիս. հիմնական մատյաններին (այստեղ ընդգրկված երգի տեսակներին) վերաբերող Ու-ի նոր հատվածներ:

Շարականոցի նյութերի ընտրության, խմբագրման և համապատասխան ձայնեղանակների զատորոշման խնդիրներով VII դ-ում զբաղվել է ***Բարսեղ Ճոնը***՝ ստեղծելով «Ճոնընտիր» ժող-ը: VIII դ-ի սկզբին ***Ստեփանոս Սյունեցի*** Երկրորդը կանոնացրել է ընտրված կցուրդ-շարականները և խմբագրել նրանց կապված Ու.՝ բաղկացած հիմնական 8 եղանակներից, 8 «դարձվածքներից» և նրանց շուրջ խմբված մոտ 40 տիպ. մեղեդիներից: XII դ-ում ***Ներսես Շնորհալին*** տեսականորեն իմաստավորել է «ծանր» (նոր տիպի), «ստեղի» և «զարտուղի» կոչված ձայնեղանակները:

XIII–XIV դդ-ում Կիլիկիայում և Կենտր. Հայաստանում կարևորվել են նաև ***Գանձարան*** ժող-ի բաղադրիչները: XIV դ-ի վերջին և XV դ-ի սկզբին Տաթևի համալսարանի երաժշտ. մասնաճյուղում Գրիգոր Տաթևացու ղեկավարությամբ ի մի են բերվել հայկ. Ու-ի տեսությանն ու գործնականին վերաբերող դրույթները, որից մի հակիրճ հատված հասել է մինչև Գ. Գապասաքալյանի, Հ. Լիմոնճյանի, Ն. Թաշճյանի ու նաև մեր օրերը: Հայկ. Ու. մշակվել է միջնադար. վանքերին կից դպրոցներում և համալսարաններում: Այն խմբագրել են երաժիշտ-վարդապետներ, որոնց գլխ. մտահոգությունը հայ եկեղեց. երաժշտությունն էր ու նրա կարգավորումը: Հայ եկեղեցին, հիմնական ձայնեղանակները սկզբնապես (նաև հետագայում) փոխառելով սեփ. ժողովրդի աշխարհիկ (գյուղ., քաղաք., գուսան.) երգարվ-ից, իր տես. նվաճումներով առարկայորեն ընդհանրացրել է հայ ժող-ազգ. երաժշտության ելևէջներին բնորոշ ոճ. օրինաչափությունները:

Գրկ. *Աթայան Ռ., Հայկական հազային նոտագրությունը, Ե., 1959: Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Նույնի, Հաւարակ օրերի կանոնագլուխները, «Էջմիածին», 1971, № 4: Նույնի, Հանդիսավոր օրերի կանոնագլուխները, «Էջմիածին», 1971, № 9, 11: Նույնի, Ութձայնի սկսվածքները, «Էջմիածին», 1972, № 2, 3, 4, 5: Արևշատյան Ա., Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Ե., 2003: Նույնի, Ձայնեղանակների ռամունքը միջնադարյան Հայաստանում, Ե., 2013: Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Ե., 2008: Тагмизян Н., Теория музыки в древней Армении, Е., 1977.*

Ըստ Նիկողոս Թահմիզյանի



ՈՒԹՈՒՀՃՅԱՆ Հայկ Արիսի (ծ. 1966, Նիկոսիա), դիրիժոր: Սովորել է Կիպրոսի «Նարեկ» ազգ. վարժարանում (1972–78), Անգլիայի Սասեքսի համալսարանում (1985–88), Լոնդոնի կայսեր. քոլեջում (1988–89), ավարտել է Քեմբրիջի համալսարանը (1994), Լոնդոնի «Գիլդհոլ» երաժշտության և դրամայի ակադ-ը (1995): 2000-ին ձեռնադրվել է սարկավագ: 1988–92-ին՝ Սասեքսի կամեր. նվագախմբի գլխ. դիրիժոր, 1992–95-ին՝ «Դյուպարկ» անսամբլի գեղ. ղեկ., 1991–95-ին՝ Բեթհովենյան ընկերության սիմֆ. նվա-

Հայկ Ութուճյանը ելույթի պահին

գախմբի և երգչախմբի երաժշտ. տնօրեն: 1999–ից ապրում է Չեխիայում: 1999–2000-ին՝ Լաբեմի Ուստի ք–ի օպեր. թատրոնի դիրիժոր, 2000-ից՝ Հս. Բոհեմիայի կամեր. նվագախմբի գլխ. դիրիժոր, 2001-ից, միաժամանակ՝ Պրահայի տնտեսագիտ–յան համալսարանի նվագախմբի գործադիր և գեղ. տնօրեն, Բերուան ք–ի երգչախմբի գլխ. խմբավար: Հյուրախաղերով հանդես է եկել Մեծ Բրիտանիայում, Կիպրոսում, Բելգիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, ՀՀ–ում (2003):

Միջազգ. մրցույթների («Ռիկորդի» դիրիժորության, «Բոր Հարդինգ» երիտասարդ դիրիժորների մրց–ներ) դափնեկիր:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ, հայ ժող. երաժշտության մեջ ընդհանուր առմամբ ժող. նույնանուն ծեսի տարբեր պահերն արծարծող ***բնաբական երգերի***



Հատված «Սուրբ Կարապետն երզան-երգան» երգից (գրառումը՝ Կոմիտասի)

ամբողջությունը, որը ծիս. ժանրի բաժիններից է. երգում են քնար. բնույթի եղանակներով: Մասնավորապես՝ ուխտատեղիների նկարագրության և գովքի երգերն են, որոնք վիպ. ժանրի բաժիններից են: Այս բաժնում կարևոր տեղ են զբաղեցնում «մուրազատու» Մշո սուլթան Սբ Կարապետ վանքին նվիրված երգերը (Սբ Կարապետի երգեր), որտեղ արտացոլվել է ազատ և բարեկեցիկ կյանքի համար աշխատավոր ժողովրդի երազանքը: Ունեն մեղեդիական մարմնավորման 2 տեսակ՝ 1. հանդարտ պատմող. բնույթի կարճաշունչ եղանակով, որը, տարբերակվելով, շարունակ կրկնվում է (պարզ մեղեդիացված արտասանություն), շարունակում է հայկ. հնագույն փոքրածավալ վիպերգերի («Կարոս խաչ» ևն) մեղեդիական ոճը: 2. Տուն-տուն կառուցված վիպ. բնույթի անհատականացված եղանակով՝ սկզբի պատմողանկարագր. մասում՝ ասերգ. ոճի գերակշռությամբ, կրկնակում՝ լայնաշունչ երգային: Ու. ե–ի (մասնավորապես՝ Սբ Կարապետի երգերի) տեքստերը բազմիցս հրատարակվել են (Ա. Սեդրակյանի «Քնար մշեցւոց եւ վանեցւոց», 1874, էջ 6–9): Եղանակները հայտնաբերել է Կոմիտասը: Կան նաև ուխտագնացության պարեր (Կոմիտասի գրառած ու մշակած «Մշո շորորը» ևն):

Ու. ե. հայկ. գեղջկական և հին գուսան. երգաստեղծության լավագույն նմուշներից են: Նրանց լավատես. բովանդակությունը ոգեշնչել է Բ. Կանաչյանին՝ ժող. խոսքերով գրված «Նանոր» խմբերգ. երաժշտադրամատիկ. պատկերն ստեղծելու համար:

Վաչե Ումր-Շատ

ՈՒՄՐ–ՇԱՏ Վաչե Վահանի (13.03.1922, Թիֆլիս–01.04.1998, Երևան), մանկավարժ, դաշնակահար: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1962): Ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիան (1948), կատարելագործվել ՄՊԿ–ում (ղեկ.՝ Ա. Բ. Գոլդենվեյզեր): 1949–52-ին դասավանդել է Լենինականի, 1952–98-ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. (դաշնամուր. բաժնի ղեկ.) երաժշտ. ուսումնարաններում, 1963–98-ին՝ ԵՊԿ–ում (պրոֆ.՝ 1992-ից): 1960-ից միաժամանակ ղեկավարել է ՀԽՍՀ ՄՆ մեթոդ. կաբինետի դաշնամուր. բաժինը: Ստեղծել է դաշնամուրի դասավանդման դպրոց. նրա բազմաթիվ սաներ ունեն միջազգ. ճանաչում (Ս. Նավասարդյան, Շ. Թադևոսյան և ուր.): Համահեղինակ է «Դաշնամուրի ձեռնարկի» (1973):

ՈՒՆԻՍՈՆ (իտալ.՝ unisono, < լատ. unus – մեկ և sonus – ինչյուն), միահնչունություն, 1. միևնույն բարձրության 2 կամ ավելի ինչյունների միաժամանակյա ինչումը: 2. Նույն երաժշտության (երգեցողություն, նվագ կամ երկուսը միասին)՝ մի քանի երաժիշտների միաժամանակյա կատարումը:

ՈՒՐԿԱՆՃՅԱՆ Րաֆֆի (ծ. 1937, Բեյրութ), երգեհոնահար, կոմպոզիտոր: Վեց տարեկանից դաշնամուրի դասեր է առել Բեյրութում: 1950-ից ապրում է Փարիզում ավարտել է տեղի կոնսերվատորիայի երգեհոնի (1961, ղեկ.՝ Ժ. Ժ. Գրյունենվալդ), կոմպոզիցիայի (ղեկ.՝ Է. Պարես, ապա՝ Օ. Մեսիան) բաժինները: Հանդես է եկել համերգներով. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Գ. Հենդելի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Լիստի, Ժ. Ժ. Գրյունենվալդի, Օ. Մեսիանի և ուր. գործերից:

Ու. իմպրովիզացիայի խոշոր վարպետներից է Եվրոպայում: Գրել է երգեր («Լույսի անիվը», «Ժադի կշեռքը» ևն), 3 պիես՝

շեփորի և հարված. գործիքների (1971), «Մեծ ճանապարհ»՝ թավջութակի (1973), «Մահվան երգը» (ըստ Ֆ. Գառնիեի պոեմի, 1975)՝ ֆլեյտայի, ալտի և տամ-տամի, «Վարիացիաներ»՝ մեծ երգեհոնի համար, «Ձոն Յ. Ս. Բախին», «Արարիչը» և այլ երկեր: Հայկ. թեմաների առավել անմիջական կիրառումը նկատելի է «Եռամաս պատարագ» և «Ձարդ» (Մեծ եղեռնի 50-ամյակին) երգեհոն. ստեղծագործություններում, որոնք ոճ. առումով էքսպրեսիոնիստական են՝ ժամանակակից երաժշտության միտումների խտացմամբ: «Ձարդն» ընդգրկվել է խմբավար, կինոռեժ. Արշամ Ճիգմեճյանի հեռուստատես. ակնարկում և բազմիցս ցուցադրվել է ֆրանս. հեռուստատեսությամբ:

Յ. Ս. Բախի անվ. (1964, Փարիզ), Մագադինոյի միջազգ. (1964–65, 1969), Լոնդոնի Վեստմինստերյան տաճարի (1966), Բորդոյի (1966), Օքսֆորդի (1967), Լոզանի (1967), Լիսաբոնի «Գյուլբենկյան» և այլ փառատոների դափնեկիր է:

Փարիզի կոնսերվատորիայի կոնտրապունկտի, երաժշտ. ձևակառուցման վերլուծության, երաժշտ. փիլիսոփայության և երգեհոն. իմպրովիզացիայի, «Լաք մաժոր» (Շվեյցարիա) միջազգ. մրցույթի, «Երգեհոնի բարեկամների միության» (Փարիզ) 1-ին մրց-ներ:

Բաֆֆի Ուրկանճյան

Փ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ Ալինա Աշոտի (ծ. 18.10.1936, Երևան), երաժշտագետ, բանագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Արվեստագիտ. թեկնածու (1989): ՀԿՄ անդամ (1976): Ավարտել է ԵՊԿ դաշնամուրի (1960, Գ. Սարաջևի դասարան), երաժշտագիտության (1961, Մ. Հարությունյանի դասարան) բաժինները, ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ասպիրանտուրան (1967, ղեկ.՝ Ն. Թահմիզյան): 1968–78-ին՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող, 1972–74-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի, 1981–85-ին՝ ՀԽՍՀ ռադիոյի և հեռուստատեսության պետ. կոմիտեի Հայ երգի կամեր. երգչախմբի բանագետ-խորհրդատու: 1970-ից դասավանդում է ԵՊԿ-ում (բանագիտության ամբիոնի վարիչ՝ 1992-ից, պրոֆ.՝ 1996-ից): Ուսումնասիրությունները վերաբերում են երաժշտ. բանագիտության տեսությանը: 1979–94-ին՝ ՀՀ ՄՆ ստեղծագործության և ակումբ. հաստատությունների վարչության երկացանկ-խմբագր. կոլեգիայի երաժշտ. բաժանմունքի նախագահ, Երևանի ճարտարագիտ. համալսարանի ժող. երգի-պարի ամենամյա փառատոնի կազմկոմիտեի անդամ և հանձնախմբի նախագահ (1984-ից), ՀՀ հանրային ռադիոյի երաժշտ. բաժնի գեղ. (1999–2001), ՀՀ ՄՆ հրտչ. (2007–16) խորհուրդների, «Երաժշտական Հայաստան» (1998-ից) և «Հայ կոմպոզիտոր» (2017-ից) ամսագրերի խմբագր. խորհուրդների անդամ:

Հեղինակ է ««Կարոս խաչ» վիպական ասքի նորահայտ պատումները» (2004), «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության խնդիրներ» (ռուս., 2005) աշխ-ների, Հայրիկ Մուրադյանի կատարումներից վերծանել և կազմել է «Հայրենի երգեր» ժող-ը (1980, 3-րդ հրտ.՝ 2018), «Հայկական ժողովրդական երգեր և նվագներ. Թալին» (1984, 2-րդ հրտ.՝ 2012, համահեղ.), «Հայրենական Մեծ պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում» (1995, համահեղ.) ժող-ները, հրատարակվել է ««Սասնա ծռեր» դյուցազնավեպ»-ը (1996, համահեղ.), «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարը («Ապարան», I պր., 2009, «Ապարան – 1948», VIII

Ալինա Փահլևանյան



Ա. Փահլևանյանի ««Կարոս խաչ» վիպական ասքի նորահայտ պատումները» գրքի (2004) շապիկը

Հարութ Փամբուկչյանը ելույթի պահին

Փայտե փողային երաժշտական գործիքներ

Փանդիռ

պր., 2013, X պր., 2014), «Հայ երաժշտական ֆոլկլորի ռիթմիկայի առանձնահատկությունները» (2014, դասագիրքը): Հեղինակ է նաև հանրակրթ. դպրոցի երաժշտության դասագրքերի (I–VII դասարան) և մեթոդ. ձեռնարկների: Ռուս–ից թարգմանել, խմբագրել և կազմել է «Ա. Խաչատրյան. Նամակներ» (2003) ժող–ը:

ՓԱՄԲՈՒԿՉՅԱՆ Հարութ Եսայու, Չախ Հարութ (ծ. 01.06.1950, Երևան), երգիչ, կիթառահար: ՀՀ վաստ. արտիստ (2015): Ավարտել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվ. ուսումնարանը (1968): Ինքնուրույն սովորել է նվագել կիթառ, սազ, դհոլ, դաշնամուր: Հանդես է եկել իր ստեղծած «Էրեբունի» խմբով. երկացանկում՝ ռոք և ռաբիս երաժշտություն, շանսոն և երգի այլ տեսակներ: 1971–ին մեկնել է Բեյրութ, 1972–ից ապրում է Լոս Անջելեսում: Մենահամերգներով հանդես է եկել հանրահայտ համերգասրահներում: Համերգներով շրջագայել է մի շարք երկրներում, բազմիցս՝ ՀՀ–ում. երգացանկում՝ «Տարիներ անցան», «Հեռացած ընկեր», «Գետի այն ափին», «Առավոտից իրիկուն», «Մինչև էգուց», «Հայ աչքեր», «Հայ բալիկներ», «Գնաս բարով» և այլ երգեր: Թողարկել է ալբոմներ և տեսահոլովակներ:

ՀՀ վարչապետի հուշամեդալ (2015):

ՓԱՅՏԵ ՓՈՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, փող. գործիքներ, որոնց

մեջ օդի տատանում առաջացնում են փողի (ֆլեյտա, բլոկֆլեյտա ևն) կամ պիպիչի (հոբոյ, կլառնետ, սաքսոֆոն, ֆագոտ ևն) միջոցով: Պատրաստում են նաև էբոնիտից, մետաղից (պղինձ ևն), փղոսկրից ևն: Կատարողը, բացելով և փակելով գործիքի ձայնանցքերը (որով փոփոխվում է օդի տատանվող սյան երկարությունը), առաջացնում է տարբեր բարձրության հնչյուններ: Սիմֆ. նվագախմբում Փ. ե. գ–ից ընդգրկում են ֆլեյտա (նաև պիկոլո և ալտ. ֆլեյտա), հոբոյ (նաև անգլ. եղջերափող), կլառնետ (նաև փոքր կլառնետ և բաս կլառնետ), ֆագոտ (նաև կոնտրֆագոտ):

ՓԱՆԴԻՌ փանդեռն, բամբիռն, լար. կսմիթային երաժշտ. գործիք Հին և միջնադար. Հայաստանում: Փ–ի մասին հնագույն տեղեկություններ են հաղորդել Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին: Նվագել են հայ վիպասանները. նվագակցել են իրենց երաժշտաարտասան. բնույթի պատումները՝ վեպերը, և «ցցոց ու պարուց» երգերը: Հայ հին թարգման. գրկ–յան մեջ հանդիպում են «փանդեռնահարութիւն» և «փանդեռներգութիւն» բառերը:

Փ. հայտնի էր նաև Կիլիկիայում. հիշատակված է Գրիգոր Դ Տղայի «Ողբ Երուսաղեմի» քերթվածում: Ըստ միջնադար. որոշ ձեռագրերի՝ հայ իրականության մեջ «Փ.» անվան տակ հասկացվել են նաև այլ գործիքներ: Ուշ միջնադարում (XVI դ.) այն դուրս է եկել գործածությունից:

Փ–ի կիրառման եղանակի, լարերի քանակի և լարվածքի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Ենթադրվում է, որ եղել է 4 կամ առնվազն 3–լարանի, լարվածքը՝ c^1–f^1–g^1–c^2 կամ c^1–f^1–g^1: Այսպիսի գործիքով վիպասանները շեշտաչափել են իրենց երաժշտաարտասան. պատումները՝ նվագակցելով կվարտա–կվինտ. կառուցվածքի համահնչյուններով: Այս ենթադրությունը հաստատում է այն փաստը, որ սազ նվագող հայ աշուղները ցայսօր կիրառում են c–f–g տիպի լարվածք, ուստի ժամանակակից աշուղների այդ հնարքը «փանդեռնահարության» հնագույն արվ–ի արձագանքներից է:

Գրկ. *Թահմիզյան Ն., Ներդաշնակության հենքի ոսմունքը միջնադարյան Հայաստանում (V–VI դդ.), ՊԲՀ, 1966, № 1: Նույնի, Теория музыки в Древней Армении, Е., 1977.*

ՓԱՆՈՍՅԱՆ Զաբել Արամի (1893, ք. Պարտիզակ–1986, Նյու Յորք), երգչուհի (սոպրանո): Աշակերտել է երգչուհի Գերթրուդ Դեհենային, կատարելագործվել Իտալիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում: 1907–ից ապրել է Բոստոնում: 1919–ին ելույթներ է ունեցել Արմենակ *Շահմուրադյանի* հետ. երգացանկում՝ Կոմիտասի «Քելեր, ցոլեր», «Հով արեք», «Կռունկ», «Անտունի», «Ես սարեն կուգայի», «Իմ չինարի յարը» և այլ երգեր: Բոստոնի օպեր. թատրոնում 1920–ին հանդես է եկել Աբիշիայի դերերգով (Լ. դել Կաստիլոյի «Ընտրյալ թագավորը»): Նույն թվակա–

նին կատարելագործվել է Միլանի, Հռոմի, Փարիզի, Ժնևի կոնսերվատորիաներում. համերգներով հանդես է եկել այդ քաղաքներում, շրջագայել նաև Մանչեստրում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, կատարել Կոմիտասի երգերից (1920-ին Փարիզում ծանոթացել է Կոմիտասի հետ): 1923-ին Հռոմում կատարել է Ռոզինայի (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Ջիլդայի (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո») դերերգերը:

Հանդես է եկել նաև Ջ. Պուչչինիի, Ժ. Բիզեի օպերաներում: Երգացանկում ընդգրկել է Ֆ. Շուբերտի, Ռ. Շումանի, Ք. Վ. Գլյուկի, Կ. Մոնտեվերդիի ստեղծագործություններից:

ՓԱՇԻՆՅԱՆ Էդուարդ Ռուբենի (24.04.1923, Թիֆլիս–04.11.2004, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ: Արվեստագիտ. թեկնածու (1968): Ավարտել է ԵՊԿ (1951), Երևանի բժշկ. ինստ-ը (1954): 1951–2001-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1961-ից՝ ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1984-ից): Հայ երաժշտության մեջ մշակել է համապարփակ գերձայնակարգ. համակարգի տեսությունը, ձայնակարգերում՝ ժամանակակից հարմոնիայի դասընթացներ: Գրել է գործիք, անսամբլային կամեր. ստեղծագործություններ: Հեղինակ է հարմոնիայի, պոլիֆոնիայի դասագրքերի, մեթոդ. ձեռնարկների:

ՓԱՌԱՏՈՆ, ֆեստիվալ (ֆրանս.՝ festival – տոնական տարություն, < լատ.festivus – ուրախ, տոնական), զանված. տոնակատարություն, որտեղ ներկայացվում են երաժշտության, թատրոնի, կինոյի, էստրադայի, կրկեսի նվաճումներ: Սկզբնավորվել է հնագույն ժամանակներից՝ որպես տարաբնույթ տոնակատարություն-մրցույթ, ստուգատես, օլիմպիադա:

Երաժշտական Փ-երը համերգների և երաժշտ. ներկայացումների շարքեր են, որոնք միավորված են ընդհանուր անվանումով, միասն. ծրագրով, տարբերվում են տևողությամբ (մի քանի օրից մինչև կես տարի) և բովանդակությամբ: Լինում են մենագրական (միևնույն կոմպոզիտորի երաժշտությանը նվիրված), թեմատիկ (որոշակի ժանր, դարաշրջան կամ ոճ. ուղղություն), կատարող. արվ-ին նվիրված Փ-եր: Կազմակերպում են պետ. և տեղ. իշխանությունները, ֆիլհարմոնիաները, երաժշտ. ընկերությունները, նաև ֆիրմաներն ու մասնավոր անձինք: Անցկացվում են կանոնավոր կերպով (ամենամյա, 2–4 տարին 1 անգամ) կամ որևէ հանդիսավոր իրադարձության առթիվ: Սովորաբար կազմակերպվում են երաժշտ. ավանդույթներով հայտնի կամ նշանավոր երաժիշտների կյանքին ու գործունեությանն առնչվող քաղաքներում:

Երաժշտ. Փ-երը սկզբնավորվել են Մեծ Բրիտանիայում (Լոնդոն, 1709): XVIII դ-ի 2-րդ կեսից կազմակերպվում են Կենտր. Եվրոպայի երկրներում, գլխավորապես՝ Գերմանիայում: Տարածվել են XX դ-ում, հատկապես՝ 1940-ական թթ-ի կեսից: Երբեմն Փ-երի շրջանակներում անցկացվում են միջազգ. երաժշտ. մրցույթներ:

Առավել հայտնի են Զալցբուրգի և «Վիեննական երաժշտական շաբաթներ» (Ավստրիա), Էդինբուրգի (Մեծ Բրիտանիա), «Բուդապեշտի երաժշտական շաբաթներ» (Հունգարիա), Բայրոյթի և «Բեռլինի փառատոնային օրեր» (Գերմանիա), Դանիայի թագավոր. երաժշտ., «Ֆլորենցիայի երաժշտական մայիս», «Երկու աշխարհների փառատոն» (Իտալիա), Նիդեռլանդների երաժշտ., «Վարշավայի աշուն» (Լեհաստան), Ջ. Էնեսկուի անվ. (Ռումինիա), «Սիբելիուսի շաբաթ» (Ֆինլանդիա), Բեզանսոնի (Ֆրանսիա), «Պրահայի գարուն» (Չեխիա) և միջազգ. այլ երաժշտ. Փ-եր:

1960–80-ական թթ-ին Եվրոպայում տարածվել են էստրադ. արվ-ի և երգի Փ-երը: ԽՍՀՄ-ում երաժշտ. Փ-եր առաջին անգամ կազմակերպվել են 1930-ական թթ-ին Լենինգրադում, առավել տարածվել 1950-ական թթ-ի վերջից: 1962-ից անցկացվել են ԽՍՀՄ-ում առաջին ժամանակակից երաժշտության համամիութ. (ք. Գորկի), 1964-ից՝ «Մոսկովյան աստղեր», «Ռուսական ձմեռ» (Մոսկվա), «Սպիտակ գիշերներ» (Լենինգրադ), նաև հանրապետ. և տեղ. երաժշտ. Փ-եր:

Զարեհ Փանոսյան

Էդուարդ Փաշինյան

«Գութան» ժողովրդական երգի-պարի փառատոնի բացումը (2018)

«Կոմիտաս» փառատոնի ազդագիրը (2015)

ՀՀ-ում անցկացվում են «Կամերային երաժշտության» (1976-ից, ամենամյա), «Ժամանակակից երաժշտության» (1980-ից), «Հնագույն երաժշտության» (1984-ից, 2 տարին 1 անգամ), «Հենրիկ և Գերոնտի Թալալյանների անվան ալտի և թավջութակի» (2009-ից՝ ամենամյա), «Հայ կոմպոզիտորական արվեստի» (2010-ից, ամենամյա), «Առնո Բաբաջանյանի անվան պատանի դաշնակահարների» մրցույթ-Փ. (2011), «Գութան» ազգ-ավանդ. երգիպարի (2013-ից), «Կոմիտաս» (2014-ից), «Շարական» (2016-ից), «Հայ ժամանակակից երաժշտության» (2014-ից), «Հայ երիտասարդ կոմպոզիտորների կամերային երաժշտության» (2014-ից), «Երիտասարդ կոմպոզիտորների հայ-ռուսական» (2014) հանրապետ., «Երևանյան հեռանկարներ» (2000-ից, մինչև 2010-ը՝ «XXI հեռանկարներ»), «Ազգային պատկերասրահ» (2005-ից), «Վերադարձի» (2007-ից), Արամ Խաչատրյանի անվ. (2007-ից), «Երևանյան» (2007-ից) միջազգ. և այլ Փ-եր:

Գոհար Շագոյան

Օնիկ Փարաջանյան

ՓԱՐԱՋԱՆՅԱՆ Օնիկ (Հովհաննես) Հայկազի (01.06.1917, Թիֆլիս–31.05.1996, Երևան), դաշնակահար, մանկավարժ: Պրոֆ. (1984): ՀՀ վաստ. արտիստ (1964): Ավարտել է ԵՊԿ (1940): 1946-ից դասավանդել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում, 1970-ից՝ ԵՊԿ-ում (ամբիոնի վարիչ՝ 1996-ին): Հանդես է եկել որպես մենակատար և նվագակցող, եղել հայ արդի կոմպոզիտորների մի շարք դաշնամուր. ստեղծագործությունների առաջին կատարողը: Հյուրախաղերով շրջագայել է Մոսկվայում, Կիևում, Թբիլիսիում, Բաքվում և այլուր:

Բորիս Փարսադանյան

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ (Փարսադանով) Բորիս Քրիստափորի [ծ. 14.05.1925, Կիսլովոդսկ (ՌԴ Կրասնոդարի երկրամաս)–14.05.1997, Տալլինի, կոմպոզիտոր, ջութակահար: Էստ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Սովորել է Մոսկվայի Հայ մշակույթի տան երաժշտ. ստուդիայի կոմպոզիցիայի բաժնում (1948–53, դասատու՝ Հ. Ի. Լիտինսկի), ավարտել Մոսկվայի Գնեսինների անվ. երաժշտ. ուսումնարանի ջութակի (1950), Տալլինի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1959, Հ. Էյնոյի դասարան բաժինները): 1950–53-ին՝ Մոսկվայի Էստրադ. նվագախմբի կոնցերտմայստեր, 1953-ից՝ Էստոնիայի ռադիոյի նվագախմբի ջութակահար, 1967-ից՝ ԽՍՀՄ կենտր. հեռուստատեսության երաժշտ. գլխ. խմբագրության խմբ-ի տեղակալ, 1975–88-ին՝ Էստոնիայի ֆիլհարմոնիայի գեղ. ղեկ.: Գրել է «Սասունցի Դավիթ» սիմֆ. պոեմը (1950), 8 սիմֆոնիա (1958–81, այդ թվում՝ սիմֆոնիա-կոնցերտ՝ ջութակի համար, 1977), «Ապրեցեք դարերով» ռեքվիեմը (1962), «Աղ» օպերան (ըստ Ի. Բաբելի, 1972), ջութակի (1955), ֆլեյտայի (կամեր. նվագախմբի հետ, 1978) կոնցերտներ, կամեր-գործիք. անսամբլներ, սոնատներ (ջութակի՝ 1971, 2 ջութակի, ջութակի և թավջութակի, երկուսն էլ՝ 1974, ալտի՝ 1978, համար) և այլ գործեր:

ՓԱՓԱԶՅԱՆ Արթուր (Հարություն) Կարապետի (ծ. 25.05.1954, Երևան), դաշնակահար: Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցը (1972, Յ. Զարգարյանի դասարան), ԵՊԿ (1977, Գ.

Արթուր Փափազյանը կոյթի պահին

Սարաջյանի դասարան), սովորել ՄՊԿ-ում (Յ. Ի. Միլշտեյնի դասարան): 1984–2005-ին ապրել է ԱՄՆ-ում: Ամերիկայի (1985, 1995-ին՝ «Կառնեգի Հոլլում») և Եվրոպայի երկրներում (Ավստրիա, Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Ճապոնիա, Շվեդիա, Իտալիա ևն) հանդես է եկել մենահամերգներով. նվագացանկում՝ Դ. Սկառլատտիի, Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, Ս. Վ. Ռախմանինովի, Ս. Ս. Պրոկոֆևի, Կ. Դեբյուսիի գործերից, Կոմիտասի մանրանվագներից: Կատարող. արվ-ին բնորոշ են քնարականությունը, նուրբ ճաշակը, ինչերանգի բազմազանությունը: Ունի ձայնագրություններ (Լեհաստան):

Դաշնակահարների IV այսրկովկաս. (1-ին մրց., 1972, Բաքու), Բ. Սմետանայի անվ. միջազգ. (2-րդ մրց., 1974, Գրադեց-Կրալով՝ Չեխիա), Վ. դա Մոտտայի անվ. (1-ին մրց., 1979, Պորտուգալիա), Ֆ. Շոպենի անվ. (2-րդ մրց., 1980, Լեհաստան) մրցույթների դափնեկիր:

ՓԱՓԱԶՅԱՆ Էժեն [1887, Իզմիր (Թուրքիա)–1963, Ալեքսանդրիա (Եգիպտոս)], դաշնակահար, հաս. գործիչ: 1895-ին տեղափոխվել է Ալեքսանդրիա, ստացել երաժշտ. կրթություն: 12 տարեկանում հանդես է եկել մենահամերգով: Ավարտել է Փարիզի «Էքոլ նորմալ» երաժշտ. բարձրագույն դպրոցը (դասատու՝ Ա. Կորտո): Աշակել է նոտագրության նորարար.՝ 6-տող համակարգ՝ ձերբազատվելով ալտերացիայի նշանների ավելորդ ծանրաբեռնվածությունից, որը համարվել է նմանօրինակ մտահղացումներից լավագույնը: 1911-ից դասավանդել է Ալեքսանդրիայի կոնսերվատորիայում (բազմաթիվ սաներ դարձել են անվանի դաշնակահարներ): Հանդես է եկել նաև որպես կոնցերտմայստեր, կազմակերպել համերգներ: Հեղինակ է ջութակի, դաշնամուրի, խմբերգ. և այլ ստեղծագործությունների: Փ-ի նախաձեռնությամբ հիմնադրվել է Եգիպտոսի երաժշտ. ընկերակցությունը:

ՓԱՓԱԶՅԱՆ Կարապետ (ծ. և մ. թթ. անհտ, Կ. Պոլիս), XIX դ-ի առաջին կոմպոզիտորներից և դիրիժորներից: 1846–66-ին աշխատել է հայկ. առաջին պրոֆեսիոնալ թատրոն-կրկեսի՝ Կ. Պոլսի «Արամյան թատրոնի» հիմնադիր Հովհաննես Գասպարյանի հետ, ստեղծել է այդ թատրոնի նվագախումբը: Թատեր. ներկայացումներում օգտագործել է իր գրած քայլերգները և այլ ստեղծագործություններ, որոնք չեն պահպանվել: 1849–51-ին թատրոնի հետ հյուրախաղերով շրջագայել է Թիֆլիսում, Նախիջևանում, Թավրիզում, Երևանում, Էջմիածնում: Ներկայացումների համար տեղի երաժիշտներից ստեղծել է երաժշտախմբեր:

ՓԵՀԼԻՎԱՆՅԱՆ Արփինե [24.04.1934, Լիբանան–16.03.2004, Լոնգ Բիչ (ԱՄՆ)], երգչուհի, դաշնակահարուհի: Լիբանանում քաղաքաց. պատերազմի ժամանակ տեղափոխվել է ԱՄՆ: Ավարտել է Լիբանանի ազգ. կոնսերվատորիայի դաշնամուր. բաժինը: Որպես երգչուհի՝ հանդես է եկել 1956-ից. երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Ռ. Շումանի, Ժ. Մասնեի, Կոմիտասի, Գ. Ալեմշահի, Ա. Սաթյանի, Ա. Տիգրանյանի երգերից: Ճանաչվել է նաև Անուշի և Շուշանի (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ») դերերգերի ինքնատիպ մեկնաբանություններով: Երկար տարիներ դասավանդել է Բեյրութի կոնսերվատորիայում (պրոֆ.): 1957-ից ապրում է Լոնգ Բիչում: 1960-ական թթ-ին մի քանի անգամ հյուրախաղերով հանդես է եկել Երևանում:

ՄՏԿԿ «Սուրբ Մեսրոպ» (1970), «Կիլիկյան Մեծ Խաչի ասպետի» Ա կարգի (1977), Սիրիայի ԿՆ ոսկե (1971) շքանշաններ:

Որդին՝ Ջորջ Փ. (ծ. 22.04.1964, Բեյրութ), դիրիժոր, ջութակահար: Ջութակ նվագել է 6 տարեկանից (Լիբանանի ազգ. 1-ին մրց.): Ավարտել է Կալիֆոռնիայի (1987) և Ինդիանայի համալսարանները: Հանդես է եկել որպես մենակատար, Ինդիանայի «Պրո Մյուզիք» նվագախմբի կոնցերտմայստեր, ապա՝ դիրիժոր: 1991-ին Բեզանսոնում (Ֆրանսիա) արժանացել է երիտասարդ դիրիժորների միջազգ. մրցույթի 1-ին մրց-ի: Որպես դիրիժոր՝ հանդես է եկել 1987-ից, ղեկավարել է Փարիզի, Մոնտե Կառլոյի, Ս. Պետերբուրգի, Մոսկվայի, Չիկագոյի ֆիլհարմոնիկ նվագախմբերը: 1992-ից բազմիցս ելույթներ է ունեցել Երևանում. ղեկավարել է ֆիլհարմոնիկ (Պ. Ի. Չայկովսկու 4-րդ սիմֆոնիան, սյուիտ՝ Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետից, Ֆ. Մենդելսոնի ջութակի կոնցերտը, մենակատար՝ Վիկտոր Խաչատրյան, ևն) և Հայաստանի երիտասարդ. սիմֆ. (Լ. վան Բեթհովենի 7-րդ սիմֆոնիան, դաշնամուրի 3-րդ կոնցերտը, մենակատար՝ Անահիտ Չաուշյան, Ջ. Վերդիի «Ճակատագրի ուժը» օպերայի նախերգանքը ևն) նվագախմբերը: 1995-ին Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ շրջագայել է Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և այլուր. երկացանկում՝ Ա. Վիվալդիի, Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Յ. Բրամսի, Պ. Ի. Չայկովսկու, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի և ուր. գործերից:

Դուստրը՝ Էլիզաբեթ Փ. (ծ. 23.04.1957, Բեյրութ), երգչուհի, դաշնակահարուհի: Երաժշտության դասեր է առել նաև մորից: Ճանաչվել է հայ, նաև այլ ժողովուրդների ավանդարդ երաժշտության լավագույն մեկնաբանություններով: Հանդես է եկել նաև Գ. Դոնիցետտիի, Գ. Ֆ. Հենդելի օպերաներում: Համերգներով շրջագայել է ԱՄՆ-ի, Կանադայի քաղաքներում:

ՓԻԹԵՃՅԱՆ Գրիգոր Պետրոսի [ավազանի անունը՝ Հակոբ, ծ. 17.08.1935, Ալեքսանդրիա (Եգիպտոս)], խմբավար, երաժշտագետ, կոմպոզիտոր, հաս. գործիչ,

Էժեն Փափազյան

Արփինե Փեհլիվանյան

Ջորջ Փեհլիվանյան

Էլիզաբեթ Փեհլիվանյան

Գրիգոր Փիթեճյան

Խաչատուր Փիլիկյանը ելույթի պահին

Քևսրիկ Փիլոյան

մանկավարժ: ՀԿՄ անդամ (2008): ԵՊԿ պատվավոր պրոֆ.: Ավարտել է ՄՏԿԿ դպրեվանքը (1957, դասատուներ՝ Հ. Պերպերյան, Գ. վարդապետ Ճերեճյան, Անթիլիաս), Բեյրութի պետ. կոնսերվատորիան (1961), Նյու Յորքի «Mannes» կոնսերվատորիայի խմբավարության (1970, բակալավր) և «Hanter» բարձրագույն քոլեջի երաժշտագիտության (1975, մագիստրոս) բաժինները: Ուսմանը զուգընթաց դասավանդել է Դպրեվանքում՝ 1956–57-ին՝ դասապետ, 1957–62-ին՝ դպրապետ, ստեղծել է 30-հոգանոց տղամարդկանց երգչախումբ (1957–1961), եղել է նաև Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարի երաժշտության պատասխանատուն: 1973–80-ին դասավանդել է Նյու Յորքի պետ. վարժարանում: 1969–70-ին՝ «Mannes» կոնսերվատորիայի երգչախմբի փոխղեկ., Նյու Յորքի Հայ մշակութ. միության հիմնադիր-անդամներից, 1970–81-ին՝ Նյու Ջերսիի Հայ ամենօրյա վարժարանի տնօրեն, 1980–85-ին՝ Սբ. Վարդան եկեղեցու իր հիմնադրած երգչախմբի խմբավար: Մ. Թումաճանի աջակցությամբ ստեղծել է «Գուսան» երգչախումբը, 1964-ին (պարուսույց Ն. Համբարյանի հետ)՝ 120-հոգանոց երգի-պարի անսամբլ:

Հեղինակ է երաժշտ. գործերի (հոգևոր և ազգ-հեղ. երգերի մշակումներ ու փոխադրումներ ևն), որոնք կատարվել են նաև ՀՀ-ում: Գիտ. երկերի հիմնական թեմաներն են միջնադարագիտությունը, հայ հոգևոր և եկեղեց. երաժշտությունը, կոմիտասագիտությունը, գրելաոճին հատուկ է մանրակրկիտ վերլուծ. միտքը:

1969-ին Հայաստանում մասնակցել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումներին: 2009-ին Հայաստանի ազգ. գրադարանում կազմակերպվել է Փ-ի 3 գրքի և ձայնասկավառակի շնորհանդեսը, 2010-ին նշվել է ծննդյան 75 և գործունեության 50-ամյակները:

Իր գործունեությամբ և երաժշտ. բազմակողմանի մասնագիտ. կարողություններով նպաստել է հայ մշակութ. կյանքի զարգացմանը թե՛ Նյու Յորքում, թե՛ ՀՀ-ում:

Փ. արժանացել է դիրիժոր. ոսկեզօծ փայտիկի (1990, Նյու Յորք):

ՀԱԵ «Սբ Ներսես Շնորհալի» շքանշան (2007), ՀԿՄՄ ոսկե մեդալ (2008):

Երկ. *Հայ յեղափոխական երգերուն պեղը հայ երաժշտության պատմության մեջ, Նյու Յորք, 1998: Գրիգոր Նարեկացի հարականագիր, 1999: Անձինք նոտիրեալք շարականը, Նյու Յորք, 2003: Քրիստափոր Կարա-Մուրզա, Ե., 2013: Հայ եկեղեցւոյ երաժշտութիւնը, Նյու Յորք, 2015: Հեղինակային ստեղծագործությունների, մշակումների նոտային ժողովածու, Ե., 2016: Հայ պանդխտության երգերը, Ե., 2019:*

ՓԻԼԻԿՅԱՆ Խաչատուր [ծ. 1937, Մոսուլ (Իրաք)], երգիչ, երաժշտագետ: 1952-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Բեյրութ, որտեղ ստացել է համակողմանի կրթություն: 1957–70-ին կատարելագործվել է Իտալիայում, 1970–76-ին՝ ԱՄՆ-ում. 1975-ին Բլումինգտոնի համալսարանում արժանացել է երաժշտության դ-րի կոչման («Հայ մշակույթի ժառանգությունը» ուսումնասիրության համար): 1976-ից ապրում է Լոնդոնում:

Երկերում («Այվազովսկին և Թյոռնեը», «Կոմիտասի փիլիսոփայությունը», «Հայերը և օպերան» ևն) կարևորել է ազգ. և միջազգ. արվ-ների առնչությունները, հիմնավորել դրանք: Երգացանկում՝ XVI–XVII դդ-ի իտալացի, հետագա դարերի արևմտաեվրոպացի դասականների, նաև ժամանակակից կոմպոզիտորների երգերից, գերակշռել են Մեսրոպ Մաշտոցի շարականները, «Սասունցի Դավիթ» էպոսի երգվող հատվածները, Կոմիտասի երգերը:

ՓԻԼՈՅԱՆ Քնարիկ Անդրանիկի (ծ. 02.10.1948, Երևան), երաժշտագետ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2013): ՀԿՄ անդամ (1996): Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտ. ուսումնարանի երաժշտության տեսության (1969), ԵՊԿ վոկալ-տեսության ֆակ-ի երաժշտագիտության (1974, ղեկ.՝ Ա. Սարյան) բաժինները: 1974–79-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում և 1969–74-ին՝ Չարենցավանի № 12 երաժշտ. դպրոցում, 1990-ից՝ ԵՊԿ-ում (դոցենտ՝ 1998-ից): 1979-ից միաժամանակ աշխատում է Հայաստանի հանր. հեռուստատեսությունում (1992–94-ին՝ երաժշտ. հաղորդումների գլխ. խմբ.): Վարել է «Երաժշտական կյանք» (1979–81) և «Հայ երգի ակումբ» (1981–95) հեղինակ. հաղորդաշարերը, գրել երաժշտ. ֆիլմերի, հոբելյան. երեկոների, ֆիլմ-դիմանկարների սցենարներ: 1988-ին Մոսկվայում մասնակցել է հեռուստատես. վերապատրաստման բարձրագույն դասընթացին (հայ միջնադար. երաժշտություն), «Նիկա» հեռուստաընկերության հաղորդաշարերին, գործուղվել Մերձ. Արևելք՝ որպես հե-

ռուստալրագրող: Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2017):

ՓԻՐԱԴՅԱՆ (Փիրադով) Վլադիմիր Իոսիֆի [Հովսեփի, 02(14).02.1892, Վարշավա– 20.04.1954, Կիև], դիրիժոր, կոմպոզիտոր: Էլեոնորա ***Փիրադովայի*** հայրը: Պրոֆ. (1950): Ղազախ. ԽՍՀ (1943), Ուկր. ԽՍՀ (1947) ժող. արտիստ: Սովորել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում (1910–14): Թբիլիսիի, Բաքվի, Տաշքենդի, Ալմա Աթայի, Մոսկվայի օպեր. թատրոնների դիրիժոր, 1934-ին՝ ԵՕԲԹ գլխ. դիրիժոր, 1936–41-ին (1950–54-ին՝ գլխ.) Կիևի ՕԲԹ դիրիժոր, 1944–47-ին՝ Խարկովի, 1948–50-ին՝ Մինսկի ՕԲԹ-ների գլխ. դիրիժոր: 1936-ից դասավանդել է Կիևի կոնսերվատորիայում: Ղեկավարել է Ժ. Բիզեի «Կարմեն» (1934), Զ. Փալիաշվիլու «Դաիսի» (1938), Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին» (1939), Կ. Ֆ. Դանկևիչի «Բոգդան Խմելնիցկի» (1953) և այլ օպերաներ:

ՓԻՐԱԴՈՎԱ (Փիրադյան) Էլեոնորա Վլադիմիրի (11.06.1929, Թիֆլիս–11.07.2012, Կիև), դաշնակահարուհի, կոնցերտմայստեր: Վլադիմիր ***Փիրադյանի*** դուստրը: Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ (1998): Ավարտել է ՄՊԿ (1953, Գ. Գինզբուրգի դասարան): 1952-ին Կիևում Վ. Փիրադյանի ղեկավարությամբ կատարել է Ա. Խաչատրյանի դաշնամուր. կոնցերտը: 1953-ից՝ Կիևի ֆիլհարմոնիայի մենակատար, ապա՝ կոնցերտմայստեր. նվագակցել է ուկրաինացի նշանավոր երգիչներ Դ. Գնատյուկին, Ա. Սոլովյանենկոյին, Ա. Մոկրենկոյին, Վ. Տիմոխինին, Լ. Կոնդրաշևսկայային, Ե. Միրոշնիչենկոյին և ուր.: Ելույթներ է ունեցել Ֆինլանդիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Ֆրանսիայում, Կանադայում, Իտալիայում, Հարավսլավիայում և այլուր, 1976-ին՝ Հայաստանում (ուկրաինացի երաժիշտների հետ):

Մ. Պ. Մուսորգսկու անվ. (1964, «Լավագույն նվագակցության համար»), Ս. Գուլակ-Արտեմովսկու անվ. (1996), «Սլավյանե» (1997) փառատոների դափնեկիր, ԽՍՀՄ «Պատվո նշան» (1976), Աշխ. կարմիր դրոշի (1982), «Իշխանուհի Օլգա» (2003) շքանշաններ:

ՓԻՐՈՒՄՈՎ Ալեքսանդր Իվանի (06.02.1930, Թիֆլիս–20.07.1995, Մոսկվա), կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1983): Պրոֆ. (1984): Սովորել է ԵՊԿ-ում (1950–52, Է. Միրզոյանի դասարան), ավարտել ՄՊԿ (1956, Դ. Բ. Կաբալևսկու դասարան): 1962-ից դասավանդել է ՄՊԿ-ում (կոմպոզիցիա, պոլիֆոնիա): Գրել է 5 սիմֆոնիա (1956–80, 5-րդը՝ «Երգասացությունների համանվագ Սայաթ-Նովայի թեմաներով»), 4 լար. կվարտետ (2-րդում օգտագործել է Գրիգոր Նարեկացու «Հաւիկ» տաղի թեման), երգեհոն. պրելյուդներ (1967), «Հոկտեմբերի օրերը» (ըստ Ջոն Ռիդի, 1967) օրատորիան, «Ռեքվիեմ մարտիկ եղբորս հիշատակին» (1975), խմբերգեր (Ա. Ս. Պուշկինի, Մ. Յ. Լերմոնտովի, Վ. Վ. Մայակովսկու, Գ. Էմինի և ուր. խոսքերով), ռոմանսներ, երգաշարեր, կոնցերտ-վարիացիաներ (1972)՝ դաշնամուրի և նվագախմբի համար, դաշնամուր. սոնատ, սոնատիններ, «Պոլիֆոնիկ տետր» (12 պրելյուդ և ֆուգա, 1983), «Պրելյուդ և տոկկատ» (1962), «Սկերցո» (1974), մանկ. երաժշտություն, կինոերաժշտություն ևն:

Փ-ի ստեղծագործությունն առանձնանում է երաժշտ. լեզվի նորարարությամբ ու հնարամտությամբ, ձևի խիստ տրամաբանվածությամբ:

Գրկ. *Лахути А., Александр Пирумов, М., 1960.*

ՓՈԼԱԴՅԱՆ Սիրվարդ (16.06.1908, Մարաշ–26.12.1970, Նյու Յորք), երաժշտագետ: Ավարտել է Բերկլիի համալսարանի (Կալիֆոռնիա) արվեստագիտության բաժինը (1935), կատարելագործվել Կոլումբիայի (1942) և Կոռնելի (1943), 1946–48-ին դասավանդել Ֆլորիդայի, 1953–68-ին՝ Նյու Յորքի համալսարաններում: Ուսումնասիրել է Բրազիլիայի, Պերուի, Չիլիի, Բոլիվիայի, Էկվադորի ժող. երաժշտությունը: Հեղինակ է «Հայկական ժողովրդական երգեր» (անգլ., 1942), «Կոմիտաս վարդապետը և նրա ներդրումը երաժշտական ազգագրության մեջ» (անգլ., 1972) աշխ-ների:

ԱՄՆ Կանանց ազգ. ընկերակցության անդամ (1944-ից):

ՓՈՒԽ, Գանձարաններում և միջնադար. հայկ. երգչական այլ մատյաններում հաճախ հանդիպող եզրույթ, որով նշանակվել են ծավալուն տաղերի, սաղմոսների ամբողջ. այն հատվածները, որտեղ անհրաժեշտ է եղել փոխել ձայնեղանակը:

ՓՈԽԵՐԳ, երգ, որը վերարտադրվում է երկդաս երգեցիկ խմբով՝ տուն առ տուն՝ փոխեփոխ կատարմամբ: Տես նաև *Ալելու*:



Վլադիմիր Փիրադյան

Էլեոնորա Փիրադովա

Ալեքսանդր Փիրումով

ՓՈՂ, 1. պղնձե փող. մունդշտուկավոր, մենակատար և նվագախմբ. երաժշտ. գործիք: Կազմված է կրկնակի կորացված գլանակոնաձև փողից (տրամագիծը՝ 11 *մմ*, երկ.՝ մոտ 1500 *մմ*), որն ավարտվում է փողալայնուկով: Հայտնի է հնագույն ժամանակներից: Փ. (առանց կափույրների) օպեր. նվագախումբ է ներմուծել Կ. Մոնտեվերդին XVII դ–ում: 1816–ին կափույրներով Փ–երը փոխարինել են նախկին Փ–երին: Հայտնի են Փ–ի փոքր կամ պիկկոլո, ալտ. (ներմուծել է Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովը), բաս. (ներմուծել է Ռ. Վագները) տեսակները:

Ջ. Վերդիի նախաձեռնությամբ պատրաստվել են եգիպտ. (1 կափույրով, երկարավուն) Փ–եր (օգտագործել է «Աիդա» օպերայում): Փ–ի համար կոնցերտներ են գրել Գ. Տելեմանը, Յ. Հայդնը, Ա. Ժոլիվեն, Ա. Ն. Պախմուտովան, Ա. Հարությունյանը և ուր.:

2. Երաժշտ. գործիքի մաս, որտեղ ձայնն առաջանում է օդի տատանումների շնորհիվ: Ունի անցքեր, որոնք բացել–փակելով՝ փոփոխվում է օդի ընթացքի ճանապարհը և գործիքի ռեգիստրը:

ՓՈՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, աերոֆոններ, երաժշտ. գործիքների տեսակ, որոնց ձայնարտադրման աղբյուրն օդի հոսանքի տատանումն է: Լինում են պղնձե և փայտե՝ ֆլեյտա, հոբոյ, կլառնետ, սաքսոֆոն, ֆագոտ, փող, գալարափող, տրոմբոն, կոռնետ, շվի, դուդուկ, զուռնա, թութակ ևն: Որոշ փող. գործիքների հնչյունաշարը բնական է, չունեն փողը մեխանիկորեն երկարացնելու կամ կարճացնելու հարմարանք: Տարբերում են նաև լեզվակավոր Փ. ե. գ–ի խումբ: Հայտնի է Փ. ե. գ. պատրաստող վարպետ Ռուբեն Ռուշանյանը (ծ. 1935):

Փողային երաժշտական գործիքներ

ՓՈՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտություն փող. երաժշտ. գործիքների համար: Սովորաբար «Փ. ե.» եզրույթը նշանակում է փող. նվագախմբով կատարվող երաժշտություն: Առավել լայն առումով՝ Փ. ե–յանն են պատկանում նաև կամեր. փող. անսամբլների և յուրաքանչյուր փող. երաժշտ. գործիքի համար գրված ստեղծագործությունները:

ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, նվագախումբ, որի կազմում ընդգրկված են փող. (պղնձե և փայտե կամ միայն պղնձե) և հարված. երաժշտ. գործիքներ: Ձևավորվել է XVII դ–ում Եվրոպայում: Խմբի կազմն աստիճանաբար կատարելագործվել է: Ըստ կատարողների թվի՝ տարբերում են Փ. ն–երի փոքր (20), միջին (30) և մեծ (42–56) կազմեր: Մեծում ընդգրկված են ֆլեյտաներ, հոբոյներ (նաև ալտ.), կլառնետներ (փոքր, ալտ. և բաս), ֆագոտներ (նաև կոնտրաֆագոտ), գալարափողեր, փողեր, տրոմբոններ, կոռնետներ, ալտեր, տենորներ, բարիտոններ, բասեր (պղնձե տուբաներ և աղեղնավոր կոնտրաբասեր) և հարված. գործիքներ:

Փողային նվագախումբ

ՓՈՓ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (անգլ.՝ pop music, < popular music – հանրահայտ, հանրամատչելի երաժշտություն), հասկացություն, որը հիմնականում ընդգրկում է XX դ–ի ժամանց. երաժշտության տարբեր ոճեր և ժանրեր: Անհրաժեշտ է Փ. ե. լայն առումով տարբերել հանրամատչելի երաժշտությունից, այսինքն՝ առավել հայտնի, համերգ. ծրագրերում հաճախ հնչող ստեղծագործությունների ամբողջությունից:

1950–ական թթ–ից շրջանառվող «Փ. ե.» եզրույթով նախապես նշվել է ռոք երաժշտությունը, այժմ՝ նաև շլյագերը: Փ. ե–յան տարածման հիմնական միջոցը գրամոֆոն ձայնագրություններն են (ռոք–ալբոմ ևն): Սպառման շուկան կարգավորում են աշխարհում հայտնի մի շարք ձայնագրման կոնցեռններ, որոնք սերտորեն համագործակցում են ռադիոյի և հեռուստատեսության, համերգ. կազմակերպությունների, մամուլի, երաժշտ. խանութների, դիսկոտեկների ևնի հետ:

Ք

ՔԱԹԱՆՅԱՆ Արամ Գրիգորի (10.03.1926, Երևան–22.12.1998, Երևան), դիրիժոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1976): Մարինա *Բերկոյի* ամուսինը: Ավարտել է ԵՊԿ (1951, Կ. Սարաջևի դասարան):1951–57-ին՝ Սվերդլովսկի ռադիոյի սիմֆ.նվագախմբի, 1958-ից՝ ԵՕԲԹ դիրիժոր (1964–70-ին՝ գլխ. դիրիժոր, 1974–82-ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր), 1970–73-ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: 1968–98-ին դասավանդել է ԵՊԿ-ում (պրոֆ.՝ 1987-ից):

Ք-ի ղեկավարությամբ Երևանում իրականացվել են Ի. Ֆ. Ստրավինսկու «Էդիպ արքա» օպերա-օրատորիայի (1963), Լ. Բեռնսթայնի «Վեստսայդյան պատմություն» երաժշտ. դրամայի (1963), Ջ. Մենոտտիի «Հյուպատոս» (1966), Վ. Բելլինիի «Նորմա» (1975, բոլորը՝ առաջին անգամ ԽՍՀՄ-ում), Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» (1960), Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» (1969), Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան» (1979), Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ» (1984) և այլ օպերաների, Ա. Խաչատրյանի «Սպարտակ» (1961), Ռ. Վագների «Տանհոյզեր» (1965), Է. Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» (1966), Գ. Եղիազարյանի «Անուրջների լիճը» (1968), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (1982) և այլ բալետների բեմադրություններ:

ՔԱԼԱՆԹԱՐ Լևոն Ալեքսանդրի [04(16).01.1891, Թիֆլիս–29.10.1959, Երևան], ռեժ., թատերագետ, թատեր. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): Հայ նորագույն պրոֆեսիոնալ թատրոնի ռեժ. արվ-ի սկզբնավորողներից, պրոֆեսիոնալ թատերագիտության հիմնադիրը, հոգեբան. ռեալիզմի հետևորդ: Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի արլ. լեզուների ֆակ-ը (1916): 1944-ից դասավանդել է ԵԳԻ-ում (պրոֆ.՝ 1946-ից): 1928–30-ին՝ Բաքվի հայկ. թատրոնի, 1930–31-ին՝ Հայֆիլմ ստուդիայի ռեժ., 1931–36-ին՝ Երևանի բանվ. թատրոնի հիմնադիր-գլխ. ռեժ., 1937–43, 1957–59-ին՝ ԵՌԹ գլխ. ռեժ., 1954–57-ին՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի ռեժ.: Բեմադրություններում հետևել է ավանդ. ակադեմ. ձևերին, ստեղծել նաև նոր, յուրատեսակ արտահայտչամիջոցներ՝ Հ. Իբսենի «Նորա» (1922), Մ. Գորկու «Հատակում» (1929), Վ. Շեքսպիրի «Օթելլո» (1956), Շիրվանզադեի «Չար ոգի» (1959) ևն: ԵՕԲԹ-ում բեմադրել է Ջ. Պուչչինիի «Բոհեմ», Ջ. Վերդիի «Տրավիատա» (երկուսն էլ՝ 1986), Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» (1937), Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» (1938) օպերաները:

Գրկ. *Սամվելյան Լ., Լևոն Քալանթար, Ե., 1965:*

Արամ Քաթանյան

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Ռուբինա Ռուբենի (ծ. 01.05.1925, Երևան), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. (1974), ՌԴ ժող. (1995) արտիստ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանը (1944, դասատու՝ Վ. Արծրունի), Լենինգրադի կոնսերվատորիան (1955): Երևանում աշխատել է Հայկ. ժող. երգի-պարի անսամբլում, մասնակցել ԵՊԿ օպեր. ներկայացումներին: Հանդես է եկել Լենինգրադի Փոքր թատրոնում: Լավագույն դերերգերից են՝ Սյուզան (Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»), Ջիլդա (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո»), Ռոզինա (Ջ. Պուչչինիի «Սևիլյան սափրիչ»), Մարֆա (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն») ևն: Մենահամերգներով («Ռուսական ռոմանսի երեկո», «Ես միևնույն կերպ սիրում եմ իմ Երևանը, իմ Լենինգրադը», «Հայաստանն իմ սերն է ու իմ ցավը», «Դասական ռոմանսի երեկոներ» ևն) շրջագայել է ԽՍՀՄ-ում (նաև Երևանում), արտերկրում: Երգել է մի քանի լեզվով: 1991-ից՝ ԽՍՀՄ համերգ. գործիչների միության անդամ, նոր ծրագրի ստեղծողներից (МИР–Милосердие, искусство, религия – գթասրտություն, արվ., կրոն, որի շրջանակում աշակերտների հետ կազմակերպել է բարեգործ. համերգներ, իրականացրել նաև «Բազմազգ Պետերբուրգ» բարեգործ. ծրագիրը: 1992-ից՝ Ս. Պետերբուրգի հա-

Լևոն Քալանթար

Ռուբինա Քալանթարյան

մերգ. գործիչների միությանը կից վոկալ ստուդիայի ղեկ.: Աշակույթի, գիտության և արվ–ի համաշխ. ակադ–ի անդամ:

«Պետերբուրգի ոսկե ձայն» (1998), Ս. Պետերբուրգի կառավարության մրց. (2000), ՌԴ, ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2005) շքանշաններ:

Ռ. Քալանթարյանը ելույթի պահին

ՔԱԼԱՆԹԱՐՈՎԱ (Քալանթարյան) Օլգա Քալանթարի [21.03(02.04).1877, Թիֆլիս–08.11.1952, Լենինգրադ], դաշնակահարուհի, մանկավարժ: Նախն. կրթությունն ստացել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում (դասատու՝ Ա. Միզանդարի), ավարտել Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան (1902, Ա. Ն. Եսիպովայի դասարան): 1903–50–ին դասավանդել է նույն կոնսերվատորիայում (պրոֆ.՝ 1926–ից): Հանդես է եկել կոնսերվատորիայում կազմակերպած համերգներին՝ որպես մենակատար և եռյակի կազմում (Լ. Ս. Աուերի և Ա. Վ. Վերժբիլովիչի հետ): Զարգացրել է Ա. Ն. Եսիպովայի դաշնամուր. դպրոցի սկզբունքները (կատարման ճշգրտություն, տեմբրի բազմազանություն ևն): Դաշնակահարների 1–ին համամիութ. մրցույթի հանձնախմբի անդամ:

Օլգա Քալանթարովա

ՔԱՂՅԱԾՅԱՆ (Գոլոդով) Անդրեաս [13.02.1809, Ղարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ՝ Ղրիմում)–18.08.1856, Սևաստոպոլ], կոմպոզիտոր: Ինքնուրույն սովորել է նվագել ֆլեյտա, դաշնամուր, երգեհոն և այլ երաժշտ. գործիքներ: 1842–44–ին սովորել է Բերդիչև ք–ում (Ուկրաինա), ապա վերադարձել ծննդավայր: Գրել է երաժշտություն ինքնագործ թատեր. ներկայացումների (նաև մասնակցել է) համար: 1852–ին տեղափոխվել է Սևաստոպոլ, եղել Պ. Ս. Նախիմովի Սևծով. նավատորմի փող. նվագախմբի կապելմայստեր, որի համար գրել է «Սինոպյան քայլերգը» (տպագրվել է Ս. Պետերբուրգում), «Չու հաճույս Խարասու–բազարի» քայլերգը (երկուսի դաշնամուր. փոխադրումները տպագրվել են «Բազմավէպ»–ում, 1881, № 1): Մյուս ստեղծագործությունները կորել են:

Ք. Կարա–Մուրզան իր համերգներում ընդգրկել է նաև Ք–ի երգերից («Չու հաղթանակի», «Պատերազմի նեղ օրերուն», «Առավոտյան երգ», «Զարթիր, սիրտ իմ», «Պանծասցին փառոք» ևն):

ՔԱՂՅՐԻԿՅԱՆ Զեմմա Մնացականի (ծ. 17.05.1950, Գյումրի), երգչուհի, խմբավար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Ավարտել է Գյումրիի Ք. Կարա–Մուրզայի անվ. երաժշտ. դպրոցի վոկալ և խմբավարության, ԵՊԿ խմբավարության (1978) բաժինները, ԵՊԿ մասնագիտ. որակավորման դասընթացը (1986): Գյումրիի Խ. Աբովյանի անվ. № 12 միջնակարգ դպրոցի երգերաժշտության դասատու և խմբավար, 1973–ից՝ ՀԵԸ Գյումրիի բաժանմունքի մեթոդիստ, Զայնի պահպանման ստուդիայի սոլֆեջջոյի դասատու: Դասավանդել է Ն. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցում, Գյումրիի մանկավարժ. ինստ–ում, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում (դոցենտ): 1989–

Զեմմա Քաղցրիկյանը ելույթի պահին

ից՝ Գյումրիի ժող. գործիքների նվագախմբի երգչուհի, 2001–ից՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, «Գոհար», Հայ կաթողիկե եկեղեցու երգչախմբերի խմբավար: Հիմնադրել է Գյումրիի երաժշտ. դպրոցների տղաների, նաև դասատուների «Արագած» մարզամշակութ. կենտրոնի «Նարեկ» քառաձայն (դարձել է Լորիս Ճգնավորյանի ստեղծած երգչախմբի հիմքը) երգչախմբեր:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012), ՀԵԸ «Կոմիտաս» հուշամեդալ (2016):

ՔԱՄԱԼՅԱՆ Աստղիկ Արշակի (26.02.1926, Երևան–20.01.1991, Երևան), երգչուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1978): 1944–79–ին՝ Հայկ. ժող. երգի–պարի անսամբլի մենակատար, 1963–68–ին, միաժամանակ՝ Երևանի պիոներների պալատի երգի–պարի անսամբլի գեղ. ղեկ.: Կատարմանը բնորոշ էին նուրբ քնարականությունը, հուզ.

անմիջականությունը, ժող. երգի ինքնատիպ մեկնաբանությունը. երգացանկում՝ հայկ. ժող., գուսան. («Հերոս տղին», «Չկա մեկը», «Եկ, ինձնից մի փախչիր», «Որքան ցանկացա», «Հարսի գանգատը…» ևն) և արդի կոմպոզիտորների երգեր:

ՔԱՄԱՆ, քամանի, ժող. լար. աղեղնավոր երաժշտ. գործիք: Իրանն ուղղանկյուն է՝ փայտե ծածկով և կարճ կոթով: Նվագում են ծնկի վրա՝ ուղղաձիգ դիրքում: 3 (հաճախ՝ 4) մետաղե լարերը լարվում են հիմնական կվարտաներով: Ք-ի առանձնահատկությունը տակից անցնող ձայնադարձիչ լարերն են, որոնք լարվում են հիմնականներին ունիսոն կամ նրանցից օկտավա բարձր (այս դեպքում դրանք բարակ են): Ք. եղել է հայ աշուղների (Ջիվանի, Շիրին) նախասիրած գործիքներից: Տարածված է Հայաստանում, Մերձ. Արևելքի երկրներում:

ՔԱՄԱՆՉԱ, ժող. լար. աղեղնավոր երաժշտ. գործիք: Իրանը գնդաձև է՝ ծածկված թաղանթե մեմբրանով: Կլոր կոթից իրանի միջով անցնում է որպես «ոտք» ծառայող մետաղե կաղապարաձողը: Նվագում են ծնկի վրա՝ ուղղաձիգ դիրքում: Տարածված է Հայաստանում, Այսրկովկասում, Իրանում, Թուրքիայում և այլ երկրներում:

Այսրկովկասում օգտագործվող Ք. XX դ-ից քառալար է (մետաղե). 4-րդ լարն ավելացրել և լարվածքը (փոքր օկտավայի լա, առաջին օկտավայի մի, լա, երկրորդ օկտավայի մի) վերջնականապես հաստատել է Սաշա *Օգանեզաշվիլին*: Մենանվագ և անսամբլ. գործիք է: 1920-ական թթ-ի վերջերին Վարդան *Բունին* ստեղծել է կվինտային լարվածքով Ք-ների ընտանիք (պրիմա, ալտ, բաս և կոնտրաբաս), որն ընդգրկել է Երևանում իր հիմնադրած «Արևելյան վերակառուցված սիմֆոնիկ նվագախմբում»: Հայ իրականության մեջ իրենց բարձր կատարող. արվ-ով առանձնանում են քամանչահարներ Ս. Օգանեզաշվիլին, Լևոն *Կարախանը*, Արտեմ *Մեջինյանը*, Խաչատուր *Ներսիսյանը*, Հակոբ *Խալաթյանը*, Վլադիմիր *Գրիգորյանը* և ուր:

ՔԱՅԼԵՐԳ, երաժշտ. ժանր: Բազմաթիվ մարդկանց միաժամանակյա և միանման շարժումը (զորաշարեր, երթեր ևն) սովորաբար ուղեկցվում է Ք-ով: Առանձնանում է համաչափ տեմպով և հստակ ռիթմով: Չափը՝ սովորաբար 2/2, 4/4, 2/4, 6/8 ևն:

Ք-ին բնորոշ է պարզ կամ բարդ եռամաս ռեպրիզ. ձևը: Սկզբում և վերջում երաժշտությունն աշխույժ է և ակտիվ, միջին մասում՝ երգային: Զինվոր. երաժշտության հիմնական ժանրերից է: Տեսակներից են՝ շարայինը, ռազմերթի, հանդիպակաները, թաղման կամ սգո:

Դեռևս զարգացման վաղ փուլում, կիրառ. խնդիրներ իրականացնելուց բացի, դարձել է նաև բեմ. (օպերա, բալետ), կոնցերտ. և կենցաղ. երաժշտության ժանր՝ հարստանալով բովանդակության և ձևակառուցվածք. արտահայտչամիջոցներով:

ՔԱՆԹԱՐՋՅԱՆ Ժիրայր Գրիգորի (ծ. 01.10.1931, Եգիպտոս), ջութակահար: Առաջին համերգը՝ 1938-ին Կահիրեում, որտեղ աշակերտել է Ա. Մենաշին, Իտալիայում՝ Վ. Պրշինոդային: 1949-ին համերգներով հանդես է եկել Իտալիայում և Շվեյցարիայում: 1953-ից ապրում է ԱՄՆ-ում. ջութակի դասեր է առել Իվան *Գալամյանից:* 1982–89-ին հանդես է եկել Տորոնտոյի կամեր. նվագախմբերում: 1973–76-ին՝ «Արարատյան» եռյակի ջութակահար (դաշնակահար՝ Րաֆֆի Արմեն, թավջութակ՝ Գիզելա Դեպկատ): Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Ն. Պագանինիի, Հ. Վենյավսկու, Կ. Խաչատրյանի ստեղծագործություններից: Հետագայում՝ Տորոնտոյի (Կանադա) սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր: 1984-ից դասավանդել է Տորոնտոյի համալսարանում, 1988-ից՝ Օրֆորդի արվ-ի կենտրոնում: Հիմնադրել է լար. եռյակ: 1989-ին ձայնագրել է Ֆ. Շուբերտի և Ֆ. Մենդելսոնի ստեղծագործություններից:

Ֆիլադելֆիայի «Երիտասարդական ունկնդրություն» (1955), Բելգիայի Եղիսաբեթ թագուհու անվ. մրցույթի (1959) մրց-ներ:

ՔԱՆՈՆ, ժող. լար. կսմիթային գործիք Հայաստանում: Ունի սեղանաձև իրան՝ փայտե ծածկով, ուղղանկյուն մասում՝ կենդ. թաղանթով երեսպատված: 24 եռակի աղելարերը լարվում են մաժոր դիատոնիկ շարքով՝ «ռե» տոնայնությամբ և շարժ. հատուկ բռնակների միջոցով (յուրաքանչյուր լարախմբի համար՝ 2 բռնակ), բանալու օգնությամբ կարող են կես տոն բարձրացվել կամ իջեցվել: Նվագում են ձախ ոտքին դրած՝ 2 ձեռքերի մեծ, միջին ու ցուցամատներով, միաձայն և բազմաձայն (գերազանցապես՝ երկձայն): Ցուցամատ-

Ասպղիկ Քամալյանը կլոյթի պահին

Քաման

Քամանչա



Քանոն

ներին հագցնում են կնտնտոցներ, որոնք հատուկ մատնոցների միջոցով սեղմվում են մատներին: Մենակատար և անսամբլ. գործիք է, կան նաև Ք-ների երկյակ, եռյակ և քառյակ անսամբլներ: Ունի մանդալներ, ականջներ և հենակ: Կատարումն առանձնանում է հարուստ և զանազան տեխ. եղանակներով (գլիսանդո ևն): Տարածված է նաև Մերձ. և Միջին Արևելքում և հայտնի է քանուն (պարսկ.) անունով:Ճանաչված քանոնահարներ են Խ. Ավետիսյանը, Ա. Աթաբեկյանը, Հ. Լեյլոյանը, Մ. Գրիգորյանը, Ծ. Հովհաննիսյանը և ուր.:

Գրկ. *Ավետիսյան Խ., Քանոնի ձեռնարկ, մաս 1, 2, Ե., 1968, 1986: Հովհաննիսյան Ծ., Վարժությունների մեթոդական ձեռնարկ քանոնի համար, Ե., 2010: Հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ընտրանի քանոնի համար, Ե., 2007: Հայ կոմպոզիտորների կոնցերտների և ռապսոդիաների ժողովածու քանոնի համար, Ե., 2008: Քանոնի համար գրված և փոխադրված ստեղծագործությունների ժողովածու, Ե., 2008:*

ՔԱՇՔԱՇՅԱՆ Քիմ [ծ. 31.08.1952, Դետրոյտ (ԱՄՆ)], ալտահարուհի: Երաժշտ. կրթություն ստացել է Բալթիմորի Փիբոդի կոնսերվատորիայում, Ֆիլադելֆիայի երաժշտ. ակադ-ում: 2000-ից դասավանդում է Բոստոնի «Նյու Ինգլանդ» կոնսերվատորիայում: Բացառիկ երաժշտ. տաղանդով օժտվածներին օժանդակող ամերիկ. «Պրո Մյուզիք» հիմնադրամի հովանավորությամբ 1982-ին մենահամերգներով հանդես է եկել Կալիֆոռնիայի «Շյոնբերգ» դահլիճում: Մասնակցել է«Mostly Mozart Festival» (Նյու Յորք), Սպոլետոյի «Երկու աշխարհի» երաժշտ. փառատոներին (արժանացել է մրց-ների), համերգներով շրջագայել ԱՄՆ-ում:

Քիմ Քաշքաշյանը ելույթի պահին

Բ. Կոլբի 3 ստեղծագործություն («Related Characters» ևն) փոխադրել է ալտի համար (արժանացել է մրց-ի): Համերգ. ծրագրում ընդգրկել է Պ. Հինդեմիթի ալտի սոնատը, նաև Ա. Դվորժակի g-moll ռոնդոյի՝ թավջութակի և դաշնամուրի համար, Յ. Բրամսի կլառնետի սոնատի և այլ գործերի փոխադրումներ ալտի համար:

Շուրջ 10 տարի (դաշնակահար Ռ. Լևինի հետ) համերգներով հանդես է եկել Բեռլինում, Փարիզում, Միլանում, Հռոմում, որպես մենակատար՝ Նյու Յորքի, Վիեննայի, Լոնդոնի, Միլանի, Տոկիոյի ճանաչված նվագախմբերի հետ: 1990-ին Երևանում Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ կատարել է Բ. Բարտոկի ալտի կոնցերտը, Վ. Ա. Մոցարտի «Կոնցերտային սիմֆոնիան» (Էդուարդ *Թադևոսյանի* հետ): Համագործակցել է կոմպոզիտորներ Ք. Պենդերեցկու, Գ. Ղանչելիի, Դ. Կուրտագի, Տ. Մանսուրյանի, Ա. Ավանեսովի և ուր. հետ: Թողարկել է ձայնասկավառակներ:

Լ. Թերթիսի անվ. ալտահարների միջազգ. մրցույթի 2-րդ (1980, Մեծ Բրիտանիա), «Էդիսոն» (2003, Նիդեռլանդներ), Cannes Classical Award (2001, Ֆրանսիա), «Գրեմմի» (Լոս Անջելես, 2013) մրց-ներ:

ՔԱՌԵՐԳՈՒԹՅՈՒՆ, 4 ինքնուրույն ավարտուն գործերից (սիմֆոնիա, սոնատ ևն) կազմված երաժշտաբեմ. ստեղծագործությունների շարք, որոնք միավորված են ընդհանուր մտահղացմամբ (հաճախ՝նաև բովանդակությամբ և սյուժեով): Առավել հայտնի են օպեր. Ք-ները (Ռ. Վագների «Նիբելունգների մատանին»՝ «Հռենոսի ոսկին», «Վալկիրիա», «Զիգֆրիդ», «Աստվածների վախճանը»):

ՔԱՌՈՐԴՏՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, քառորդտոնային գամմա, միկրոխրոմատիկ. տեսակ, որտեղ օկտավան բաժանվում է 24 մասի, յուրաքանչյուր կիսատոն՝ 2 քառորդտոնի: Ք. հ-ի ինտերվալները տարածված էին հնագույն ժամանակներում, որպես գեղ. փորձ՝ վերածնվել է XVI դ-ում, կիրառվել է նաև XX դ-ից:

ՔԱՐԱՋՅԱՆ Պերճ Նազարի (ծ. 14.04.1978, Երևան), երգիչ (տենոր): ՀՀ վաստ.

Պերճ Քարաջյանը Էդգարդոյի դերում (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»)

արտիստ (2015): 1982-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Հալեպ, որտեղ ավարտել է «Լազար Նաջարյան-Գալուստ Կյուլպենկյան» երկրորդ. վարժարանը (1995), ապա՝ ԵՊԿ (2000, Տ. Սազանդարյանի դասարան) և ասպիրանտուրան (2003): 2004-ից՝ ԵՕԲԹ մեներգիչ: Դերերգերից են՝ Սայաթ-Նովա (Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա»), Սարո (Ա. Տիգրանյանի «Անուշ»), Երիտասարդ գնչու (Ս. Ս. Ռախմանինովի

«Ալեկո») ևն: Ա. Իսահակյանի (1997), Տ. Սազանդարյանի (2006) անվ. հանրապետ. և այլ մրցույթների դափնեկիր:

ՔԱՐԹԱԼՅԱՆ Արտաշես Նուբարի (ծ. 06.04.1961, Երևան), կոմպոզիտոր, դաշնակահար: Սովորել է Երևանի Հ. Դանիելյանի անվ. երաժշտ. դպրոցի կոմպոզիցիայի բաժնում (1969–79, դասատու՝ Ա. Պալյան), ավարտել Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի երաժշտության տեսության և կոմպոզիցիայի (1980, դասատու՝ Է. Բաղդասարյան), ԵՊԿ (1985, Է. Միրզոյանի դասարան) և ասպիրանտուրայի կոմպոզիցիայի (1988) բաժինները: 1981–91-ին՝ Երևանի կամեր. թատրոնի երաժշտ. ղեկ.:

Հիմնադրել է «Քարթալյան» ջազ-քառյակը, որի հետ ելույթներ է ունենում: 1989-ից ապրում է Լոս Անջելեսում, որտեղ ղեկավարում է իր հիմնադրած ավանդ. ջազ. երաժշտության երեկոները: 1989–91-ին դասավանդել է Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (ջազ. երաժշտության ամբիոնի վարիչ), 1996-ից՝ «Լարք» երաժշտ. դպրոցում (Լոս Անջելես): Համերգներով հանդես է եկել բազմաթիվ երկրներում: Գրել է սիմֆ. պոեմ, սիմֆ. պատկերներ, խմբերգ., կամեր., գործիք., վոկալ, ջազ., էստրադ. ստեղծագործություններ, երաժշտություն կինոյի («Ժամկետը՝ յոթ օր», 1991, ևն) և թատրոնի համար:

Թողարկել է ջազ. ստեղծագործությունների ձայնապնակ (1987, Մոսկվա, «Մելոդիա»), լազեր. սկավառակներ (2000, 2001, ԱՄՆ):

Կոմպոզիտորների (2-րդ մրց., 1985,1-ին մրց., 2000), Էստրադ. արտիստների VIII (2-րդ մրց., 1987, Մոսկվա) համամիութ. և այլ մրցույթների դափնեկիր:

ՔԱՐՏԱՇՅԱՆ Նորայր Գրիգորի [ծ. 18.09.1967, գ. Այգեձոր (ՀՀ Տավուշի մարզ)], սրնգահար: 1979–88-ին սովորել է Դիլիջանի Ա. Բաբաևի անվ. երաժշտ. դպրոցի կլառնետի դասարանում, ավարտել Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժ. ուսումնարանի դուդուկի բաժինը (1986, դասատուներ՝ Ռ. Հարությունյան, Գ. Բաղդասարյան): 1986-ին մասնակցել է երաժշտ. ուսումնարանների հանրապետ. մրցույթին (սրինգ, 1-ին կարգի դափնեկիր): 1988–92-ին աշխատել է Տավուշի մարզում, երաժշտ. դպրոցում բացել և ղեկավարել է դուդուկի, սրինգի դասարաններ: 1992–96-ին դասավանդել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում՝ որպես դուդուկի և շվիի ուսուցիչ:

Թողարկել է «Hot Sax» (1993, սաքսոֆոնի կատարումներ), «Melodies from Antiquity» (2004, սրինգի կատարումներ) ձայներիզները: Ք. (ընկերների հետ) 2000-ին հիմնադրել է «Կատուներ» խումբը, որի «Norewan» ձայներիզը թողարկվել է 2007-ին: Կատարումներով մասնակցել է «Navy Band» խմբի «Որքան է քոնը» ձայներիզի ստեղծմանը, որը BBC-ի «Music Awards» մրցանակաբաշխությունում ճանաչվել է լավագույնն աշխարհում: Ք-ի «Ծառաստան» անհատ. ալբոմը (2010) ընդգրկում է 12 ստեղծագործություն: 1999-ից համագործակցում է «Armenian Navy Band» խմբի և Արտո *Թունջբոյաջյանի* հետ: Ղեկավարում է «Վան» նվագախումբը (առաջին ելույթը՝ 2011-ին Երևանում):

Արտաշես Քարթալյան

ՔԱՅԱԽՅԱՆ Հեղինե Գրիգորի (01.01.1908/09, Թիֆլիս–13.09.1986, Երևան), երաժշտագետ, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1960): Կատարելագործվել է Ա. Սպենդիարյանի ղեկավարությամբ (1924–25, տեսություն և կոմպոզիցիա): Ավարտել է Երևանի երաժշտ. ստուդիայի դաշնամուրի (1927, դասատու՝ Ա. Մնացականյան), ԵՊԿ մանկավարժության (1931), երաժշտագիտության (1946, Վ. Տալյանի և Ս. Կոպտևի դասարաններ) բաժինները: 1929–86-ին դասավանդել է Հայաստանի առաջին քառամյա մասնագիտ. երաժշտ. դպրոցում (այժմ՝ Ա. Սպենդիարյանի անվ., ուսմասվար՝ 1953–86-ին, նաև երգչախմբի խմբավար), 1946–69-ին, միաժամանակ՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում:

Նորայր Քարտաշյան

Հեղինակ է «Երաժշտ. գրականություն» դասագրքի, սոլֆեջջոյի հայկ. առաջին գործն. դասընթացի (1–7 դասարաններ) և թելադրությունների ձեռնարկների:

ԽՍՀՄ «Պատվո նշան» (1971), Լենինի (1971) շքանշաններ:

Գրկ. *Հարությունյան Ն., Ակնարկ երաժշտագէտ-մանկավարժ Հեղինէ Քացախեանի կեանքի եւ գործունէութեան, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 2010, էջ 613–623:*

Հեղինե Քացախյան

ՔԵՉԵԿ Սերգեյ Կոստանդինի (ծ. 09.10.1941, Երևան), մանկավարժ: Պրոֆ. (2006): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2012): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1959, դասատուներ՝ Է. Ոսկանյան, Կ. Մալխասյան), ԵՊԿ

(1964, Ռ. Անդրիասյանի, Յ. Հայրապետյանի դասարաններ) դաշնամուր. բաժինները: 1963–64-ին դասավանդել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվ. (1982–95-ին՝ նաև տնօրեն), 1964–82-ին՝ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1967–70-ին՝ Կ. Սարաջևի անվ. (նաև տնօրեն), 2015-ից՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցներում, 1967–85-ին և 1987-ից՝ ԵՊԿ-ում:

Կազմել է «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային անսամբլներ» (1982) ձեռնարկը, խմբագրել և գրախոսել է Յ. Զարգարյանի «Դաշնամուրային մանկավարժություն» (1989) գիրքը, «Երաժշտական մտքի ռիթմիկ գործոնը» (1994) մեթոդ. ձեռնարկը, խմբագրել «Պիանիզմի սկիզբը» (1997) աշխ-ը, գրախոսել «Դաշնամուրի մեթոդիկա» (2001) ձեռնարկը:

Սերգեյ Քեչեկ

Երևանի քաղաքապետարանի (2009), ՀՀ ՄՆ (2011), Ա. Բաբաջանյանի հիմնադրամի (2012) ոսկե մեդալներ:

ՔԵՐԵՄԹԵՃՅԱՆ Գեղամ (06.07.1892, Կ. Պոլիս–12.04.1981, Փարիզ), երաժշտագետ: Կ.Պոլսում աշակերտել է Հովսեփ և Հարություն Սինանյաններին, երգել Կոմիտասի «Գուսան» երգչախմբում: 1922-ին տեղափոխվել է Փարիզ, մասնագիտացել երաժշտության տեսության, կոմպոզիցիայի և գեղագիտության մեջ: Ծավալուն հոդվածներում, գրախոսություններում լուսաբանել է հայ երաժշտարվ-ի բազմազան խնդիրներ, իրադարձություններ, երևույթներ, նպաստել հայ երաժշտ. մտքի զարգացմանը Սփյուռքում: Հեղինակ է Սփյուռքի հայ երաժիշտների, եվրոպ. նորագույն երաժշտության (Ա. Շյոնբերգ, Բ. Բարտոկ, Ի. Ֆ. Ստրավինսկի և ուր.) գեղագիտ-յան մասին վերլուծ. բազմաթիվ հոդվածների: 1964 և 1969-ին այցելել է Հայաստան, մասնակցել Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսություններին:

ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ Երեմիա Սարտիրոսի, Երեմիա Չելեպի, Երեմիա Բյուզանդացի, Երեմիա Կոստանդնուպոլսեցի (23.05.1637, Կ. Պոլիս–15.07.1695, Կ. Պոլիս), երաժիշտ, պատմագիր, բանաստեղծ: Սկզբն. կրթությունն ստացել է Կ. Պոլսի Սբ Սարգիս եկեղեցու վարժարանում, ապա հմտացել մատենագիտության, երաժշտության մեջ, գրչարվում, տիրապետել է լատ-ին, պարսկ-ին, արաբ-ին, թուրք-ին, երբ-ին, ֆրանս-ին և գերմ-ին: 1676-ին Կ. Պոլսում հիմնադրել է տպարան: Նրա գրական ժառանգությունը պահվում է Երևանի, Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի և այլ գրապահոցներում:

Հեղինակ է «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» (2-րդ հրտ.՝ 1982), «Օրագրութիւն» (հրտ.՝ 1939), «Տարեգրական պատմութիւն» (հրտ.՝ 1692–93), «Աշխարհագրութիւն» (կրած), «Հայոց պատմութիւն» և այլ երկերի: Գրել է նաև ուղերձներ, գանձեր, ողբեր, պոեմներ, տաղեր, մշակել ժող. երգեր («Տաղ ջրի վրա է ասացեալ» շարքը ևն), հայ-ից թուրք. է թարգմանել Նոր կտակարանը, «Դավթի սաղմոսները», «Հայսմավուրքը», Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ը և այլ երկեր:

Գրկ. *Ակինեան Ն., Երեմիա Չէլէպի Քէօմուրճեան, Վնն., 1933: Օշական Հ., Երեմիա Չէլէպի, «Սիոն», 1939–40: Սահակյան Հ., Երեմիա Քյոմուրճյան, Ե., 1964:*

ՔՅՈՅԼՈՒՅԱՆ Շազիկ (Սըվաճեան, Լուսնակ Սարգսի Քյոյլույան, 1854, Կ. Պոլիս–06.09.1905, Կ. Պոլիս), դերասանուհի, երգչուհի (սոպրանո): Ստացել է թերի կրթություն, զբաղվել ձեռագործությամբ: Ռեժ. Պետրոս Մաղաքյանը, ծանոթանալով Ք-ի բեմ. ու ձայն. տվյալներին, նրան հրավիրել է «Վարդովյան թատերախումբ», սովորեցրել գրել-կարդալ և դերասան. արվ., իսկ Տ. Չուխաճյանը մշակել է ձայնը՝ հասցնելով կատարելության: Առաջին անգամ հանդես է եկել 1872-ին՝ Տ. Չուխաճյանի «Արիֆի խորամանկությունը» կոմիկ. օպերայում, ապա աննախադեպ հաջողությամբ կատարել է նաև նրա մյուս կոմիկ. օպերաների գլխ. դերերգերը (Գյուլի, Ֆաթիմե՝ «Քեռսե Քեհյա», «Լերլերիջի Հոր-հոր աղա»):

Պ. Մաղաքյանի ղեկավարությամբ խաղացել է մի քանի սուրբեռ դերեր, ապա հանդես է եկել նաև արևմտաեվրոպացի կոմպոզիտորների կոմիկ. օպերաներում, որտեղ հասել է պրոֆեսիոնալ մակարդակի, արժանացել բարձր գնահատականի: Եղել է նաև Տ. Չուխաճյանի և Տիգրան Գալեմճյանի հիմնադրած «Օսմանյան օպերային թատերախմբի» հիմնական անդամներից: Տ. Չուխաճյանի և Ա. Պենկլյանի օպերետ. խմբում ելույթներ է ունեցել Կ. Պոլսում և Ադրիանապոլսում: Գլխ. դերերգերով հանդես է եկել նաև այլ օպե-

րետներում («Զեյբեկներ», «Բարեկենդանի հարսը» ևն) և երգախառն վոդևիլներում:

Գրկ. *Շ ա ր ա մ ա ն, Թրքահայ բեմը եւ իր գործիչները, ԿՊ, 1914: Պ ե շ ի կ թ ա շ լ ե ա ն Ն., Թատերական դէմքեր, Անթիլիաս, 1969: Մ կ ր տ չ ի ա ն յ ա ն Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 2, Ե., 1979, էջ 246–247:*

«ՔՅՈՈՒՕՂԼԻ», «Քյոոօղլու», վիպ., բանահյուս. հուշարձան: Տարածված է Մերձ. Արևելքում և Միջին Ասիայում: Ձևավորվել է XVIII դ-ում: «Ք.»-ի պատումները բաժանում են 2 խմբի՝ 1. արմ. (թուրք., հայկ., վրաց., քրդ.), 2. արլ. (թուրքմ., ուզբ., ղազախ., տաջիկ.): Արմ. տարբերակներում հերոսը ժող. վրիժառու է, բանաստեղծ, աշուղ, որի նպատակը հորը կուրացրած բռնապետներից վրեժ լուծելն է (որտեղից՝ անունը՝ Ք.– կույրի որդի): Այդ խմբի պատումներն էպիկ. և քնար. երգերով շաղախված պատմություններ են, երգերի հորինողը համարվում է Ք.:

Հայ իրականության մեջ պահպանվել են մի շարք պատմ. տեղեկություններ, վկայություններ, գրական մշակումներ և փոխադրություններ: Պատմիչ Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ հիշատակել է նաև Ք-ու անունը: Հայտնի են «Ք.»-ու հայ. բազմաթիվ տարբերակներ. 1912-ին մի ամբողջ. պատմություն գրառել է բանահավաք-աշուղագետ *Վ. Վերդին*, մյուսներն անտիպ են (ՀՀ ԳԱԱ արխիվ): Ռ. Պատկանյանի «Քյոոօղլի» պոեմը, Ղ. Աղայանի «Քյոոօղլին ջրաղացպան», «Քյոոօղլին կալանավոր» և «Քյոոօղլու թուրը» երգախառն դրվագները, Ջամալու («Քյոոօղլու հեքիաթը», մաս 1, 2, 1898, 1904), Խաչատի («Պոլիբեկ-Քյոոօղլու հեքիաթներից մեկը», 1900) փոխադրությունները «Ք.»-ի գրական-գեղ. մշակումներից են:

«Ք.»-ի հայ. պատումները պարունակում են եղանակավոր երգեր, որոնք, ըստ Ղ. Աղայանի, ունեն որոշակի եղանակ: Լայնորեն տարածված է «Այ Քյոոօղլի, ջան Քյոոօղլի» երգի եղանակը, որը հենց Ղ. Աղայանի միջոցով հասել է նոր ժամանակներ. նրա որդու՝ Սուշեղ Աղայանի երգածից գրառել է Շարա Տալյանը: Երգը մշակել են Ս. Բարխուդարյանը՝ ձայնի և դաշնամուրի, Մ. Սազմանյանը՝ ձայնի և սիմֆ. նվագախմբի համար: Նույն երգի մեղեդու հիման վրա Ա. Խաչատրյանն ստեղծել է «Պեպո» (1935) կինոնկարի նախանվագը, իսկ երգը հնչում է նաև որպես վերջաբան (կատարող՝ Մ. Աղայան): «Ք.»-ի թեմայով Ք. Քուշնարյանը գրել է «Քյոոօղլին գերության մեջ» ծավալուն խմբերգը, Ա. Տիգրանյանը՝ «Քյոոօղլի» անավարտ օպերան (լիբրետտոն՝ Ա. Տիգրանյանի, 1936):

ՔՆԱՐ, 1. (հուն.՝ λύρα – լիրա), լար. կսմիթ. երաժշտ. գործիք: Ունի փայտե կլոր, տափակ իրան, կաշվե (կամ փայտե) մեմբրան, իրանի 2 կողմերում՝ կորաբեկ եղջյուրներ, որոնց վրա ամրացված է լարերի (նախապես՝ 4, ապա՝ մինչև 11) մի ծայրը պահող փոքր տախտակ: Նվագել են ձախ ձեռքով՝ գործիքը պահելով ուղղաձիգ կամ թեք դիրքով: Ք-ով նվագակցել են քնար. բանաստեղծությունների արտասանությունը (այստեղից՝ քնարերգություն՝ լիրիկա անվանումը): Հնագույն նմուշները պատկանում են մ. թ. ա. III հզ-ամյակին: Որոշ տեսակներ հայտնի էին Մերձ. Արևելքի երկրներում, որոնցից մի քանիսը հիշատակված են Հին կտակարանում: Ամենատարածված լար. գործիքն էր (կիֆարայի հետ) Հին Հունաստանում և Հին Հռոմում: Ըստ դից-յան՝ առաջին Ք. կրիայի զրահից պատրաստել է հուն. աստված Հերմեսը և նվիրել Ապոլոնին: Ք-ի տիպի գործիքներ այժմ գործածում են Եթովպիայում:

«Քյոո-օղլի» գրքի (1941) շապիկը

2. Արլ. մի շարք ժողովուրդների լեզուներում տարբեր տառադարձությամբ գործածված անվանում, որը նշանակել է որևէ տեսակի երաժշտ. լար. գործիք: Հին և միջնադար. Հայաստանում տարածված և պատմիչների երկերում հիշատակված գործիք է, որը երբեմն նույնացվել է ջնարի, տավղի և այլ երաժշտ. գործիքների հետ, անունը գործածվել է նաև որպես լար. կսմիթային գործիքների սեռը բնութագրող ընդհանուր անվանում:

Քնար

3. Երգային բանաստեղծությունների կամ նոտագրված երգերի ժող. (Ա. Սեդրակյանի «Քնար մշեցւոց եւ վանեցւոց», 1874, Կոմիտասի «Հայ քնար», 1907, ևն):

«ՔՆԱՐ», Դամասկոսի Հայ կաթողիկե միության երգչախումբ: Հիմնադրվել է 1962-ին՝ Հայր Անդրանիկ Կռանյանի ջանքերով: Խմբավարներ՝ Պողոս Աբաջյան, Անտուան Քեշիշյան, Սարգիս Քեշիշյան, Ժիրայր Ալթունյան, Գայանե Բաղդասարյան, Շանթ Քեշիշյան (2003-ից): Կիրակի և տոն օրերին Հայ կաթողիկե եկեղեցում մասնակցում է Պատարագին: Հանդես է գալիս նաև համերգներով. երգացանկում՝ հայկ. ժող. երգեր: Հյուրախաղերով

ելույթներ է ունեցել Հալեպում, Բեյրութում, Քեսաբում, 2004-ին՝ ՀՀ-ում (մասնակցել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկ. փառատոնին):

«Քնար» երգչախումբը ելույթի պահին

«ՔՆԱՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ», առաջին երաժշտ. պարբերաթերթը Թուրքիայում: Լույս է տեսել 1857–58, 1863-ին Կ. Պոլսում (հրատարակիչներ՝ Արիստակես Հովհաննիսյան և Գաբրիել Երանյան): Օսման. կայսրությունում առաջին պարբերաթերթն է եվրոպ. նոտաներով:

«Քնար հայկական» (1862)

«ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ», առաջին հայկ. երաժշտ. ընկերությունը: Հիմնադրվել է Կ. Պոլսում 1862-ի մարտին՝ Գաբրիել ***Երանյանի*** նախաձեռնությամբ: Ընկերությանն անդամակցել են երաժիշտներ Գ. Երանյանը, Տ. Չուխաճյանը, Ե. Տնտեսյանը, Ն. Թաշճյանը, Հ. Չերչյանը, Գ. Խանջյանը, Գ. Սինանյանը, Ռ. Փափազյանը և ուր., գրողներ, գրականագետներ, թատեր. ու քաղ. գործիչներ Մ. Պեշիկթաշլյանը, Գ. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Հ. Սվաճյանը, Գ. Աղաթոնը, Ս. Հեքիմյանը և ուր.: Հիմնական նպատակը ժողովրդի մեջ երաժշտ. ոգին արթնացնելն էր՝ ***«Քնար հայկական»*** հանդեսի, անվճար դասախոսությունների, եվրոպ. նոտագրություն և նոր հայկ. ձայնագրություն սովորեցնելու ննի միջոցով: Հիմնադրել են 35-հոգանոց սիմֆ. նվագախումբ (դիրիժոր՝ Գրիգոր ***Միանյան***), հանդես եկել համերգներով. երկացանկում՝ հիմնականում եվրոպացի դաս. կոմպոզիտորների գործերից: Ստեղծել ու տարածել են նաև ազգ-հայրենասիր. երգեր, պարերգեր, թատեր. երաժշտություն: Գ. Երանյանը և Տ. Չուխաճյանը գրել են նոր ազգ-հայրենասիր. երգեր («Կիլիկիա», «Եղբայր եմք մեք», «Ոհ, ինչ անուշ» ևն): Ընկերությունը նպաստել է ազգ. ինքնագիտակցության զարթոնքին, ժողովրդի հաս-քաղ., գեղագիտ. դաստիարակությանը: 1863-ից չի գործել:



Հատված «Արշակն ելավ» քնար. երգից (գրառումը՝ Սարգարիտ Բրուսյանի)

«ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ», երաժշտ. կիսամսյա, ապա՝ վեցամսյա հանդես: ***«Քնար հայկական»*** երաժշտ. ընկերության պաշտոն. հրտ-յուն: Լույս է տեսել 1861–64-ին Կ. Պոլսում: Նախաձեռնել և խմբագրել է Գաբրիել ***Երանյանը*** (Տիգրան ***Չուխաճյանի*** և Նիկողայոս ***Թաշճյանի*** մասնակցությամբ): Հանդեսում ներկայացվել են եվրոպ. նոտագրության (վարել է Գ. Երանյանը) և նոր հայկական ձայնագրության (Հ. Լիմոնճյանի համակարգ, վարել է Հ. Չերչյանը) դասընթացները, հայ ճանաչված կոմպոզիտորների, նաև ազգ-հայրենասիր. երգեր՝ Տ. Չուխաճյանի «Երգ թատերական. Օն մեր նախնի», Կ. Ֆոսքինիի «Եղբայր եմք մեք» (Մ. Պեշիկթաշլյանի խոսքերով) և այլ գործեր: «Ք. հ.» կիսամսյա երաժշտագիտ. հանդես հրատարակել է նաև Ահարոն Մսրյանը 1908-ին Կ. Պոլսում:

ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ, ավանդ. երաժշտ. բանահյուսության բաժին, որի գործերում առավել անմիջականորեն և հստակորեն են դրսևորվում երաժշտ. հերոսի զգացմունքները, հուզ. վերաբերմունքն իրականության նկատմամբ: Լայն առումով՝ Ք. ե. ընդգրկում են մարդկանց սոցիալ. կացության բոլոր երևույթների անդրադարձները, նաև կյանքի փիլ. ընկալման խոհերն ու բնության պատկերումները: Քնարականությունը դրսևորված է նաև մի շարք թեմատիկ երգախմբերում, որոնք սովորաբար դիտարկում են առանձին՝ ըստ կենցաղ. գործառության (պանդխտության, օրորոց. երգեր, հորովելներ ևն): Նեղ առումով՝ Ք. ե. անվանում են միայն սիրո թեմայով երգերը, որոնք ամենամեծ խումբն են:

Հայկ. ժող. երաժշտության մեջ քնարականությունը զարգացման բարձր մակարդակի է հասել միջնադարում: Հայկ. Ք. ե-ին բնորոշ է արտահայտման զսպվածությու-

նը, որը գրական տեքստերում դրսևորվում է մտքի խտացմամբ, հերոսի հուզաշխարհի և բնության պատկերների զուգահեռներով կամ հակադրություններով ևն, մեղեդիներում՝ «զուսպ» արտահայտչամիջոցներով: Կոմիտասի գրառած «Գարուն ա, ձուն ա արել», «Կուժն առա, ելա սարը» խորապես հուզ. երգերում մարմնավորված են ընդամենը 4-ական տարբեր ինչյուններ՝ ամենապարզ ռիթմերի միջոցով:

Փոքրաձավալ Ք. ե. Կոմիտասը երբեմն անվանել է «խաղեր»: Կան նաև ծավալուն երգեր և մի քանի երգերից կազմված ամբողջություններ («Հով արեք», «Ծիրանի ծառ», «Ալագյազ աչերդ», «Յոթն օր, յոթ գիշեր» ևն):

ՔՈՉՅԱՆ Լուսիկ (Լյուսյա) Գևորգի (02.04.1921, Բաքու–26.10.1984, Երևան), երգչուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): 1938–61-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի, 1961–84-ին՝ Հայֆիլհարմոնիայի մեներգչուհի: Կատարող. վարպետությունը ձևավորվել է Թաթուլ ***Ալթունյանի***, բալետմայստերներ Իլյա ***Արբատովի*** և Էդվարդ ***Մանուկյանի*** ղեկավարությամբ: Ք-ի պարզ, զուլալ բնատուր ձայնը, կատարման մտերմիկ ոճն առանձնացել են քնարականությամբ: Համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ-ում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հունգարիայում, ԱՄՆ-ում և այլուր: Մասնակցել է հայ գրկ-յան և արվ-ի տաղանդավորների օրերին (Մոսկվա): Երկացանկում՝ 60-ից ավելի ժող. երգեր ու պարեր: Առավել ճանաչված են «Չեմ ու չեմ», «Ձաղացս պատիկ-պատիկ», «Սարի սիրուն յար», «Լուսնյակ գիշեր», «Հմայակ», «Բինգյոլ», «Ես պուճուր եմ» և այլ ժող. ու գուսան. երգեր:

ՔՈՉԱՐՅԱՆ Արամ Կարապետի [01(14).10.1903, Վաղարշապատ–05.09.1977, Երևան], կոմպոզիտոր, երաժշտագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): Սկզբն. կրթությունն ստացել է Երևանի գիմնազիայում, ավարտել Ռ.Մելիքյանի հիմնադրած ստուդիան (Երևան), ԵՊԿ (1945), սովորել Մոսկվայի Մ. Ի. Գլինկայի անվ. երաժշտ. ուսումնարանի տեսության և կոմպոզիցիայի բաժնում (1925–29), ՄՊԿ-ում (1929–31): 1931-ին բանտարկվել է և աքսորվել Ալթայի երկրամաս, որտեղ մինչև 1934-ն աշխատել է Լեռնային Ալթայի ԻՄ-ում. Գոռնո-Ալթայսկի մանկավարժ. տեխնիկումին կից ստեղծել է երաժշտ. բաժին, ձայնագրել ալթայցիների (օյրոթներ), խականների, տելեուտների երգեր, կազմել համակարգված ժող. (գիտ. առաջաբանով): 1934-ին աքսորից վերադարձել է Հայաստան: Ձայնագրել է «Սասունցի Դավիթ» էպոսի երաժշտ. ասքեր, աշուղ. սիրավեպեր, հայկ. ժող., քրդ. երգեր (շուրջ 2000 նմուշ, պահպանվել են 1000-ը): ԵՊԿ-ում հիմնադրել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ԳՀ կաբինետ և հայ երաժշտության պատմության ամբիոն (1934): 1936-ից գլխավորել է երաժշտագիտ. արշավախմբեր: Հեղինակ է երաժշտագիտ. աշխատանքների: Գրել է «Տերն ու ծառան» օպերան (ըստ Հ. Թումանյանի, 1970), «Կանտատ խաղաղության, բարեկամության և աշխատանքի» (1955), այուիտ, ռոմաններ, երգեր, խմբերգեր («Նախշուն-աքիր» ևն), պիեսներ՝ հոբոյի, ջութակի, թավջութակի համար: Ժող. և աշուղ. երգերի նրա մշակումներին բնորոշ է ազգ. երաժշտ. լեզվի ու եվրոպ. կոմպոզիտոր. տեխնիկայի համադրումը: «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարով հրատարակվել են Ք-ի կազմած «Հայ վիպական երգեր» (2012), «Աշուղական սիրավեպեր» (2014) նոտաների ժող-ները:

Լուսիկ Քոչյանը ելույթի պահին

Արամ Քոչարյան

Հատված «Հորովել»-ից (Շամշադինի փոփոխակ, գրառումը՝ Արամ Քոչարյանի)

Երկ. *Հայ գուսանական երգեր, Ե., 1976: Երաժշտական գործիքները Հայաստանում, Ե., 2008: Сборник песен для ойротских школ, Ойрот-Тура, 1931; Армянская народная музыка, М.-Л., 1939.*

Գրկ. *Քոչարյան Արամ: Ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2004:*

Քսիլոֆոն



Մայքլ Քրմոյանը կլույթի պահին

Քրիստափոր Քուշնարյան



Ք. Քուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտություն. պատմություն և տեսություն» գրքի (անգլ., 2016) շապիկը

ՔՍԻԼՈՖՈՆ (< հուն. ξύλον– փայտ և φων– ինչյուն), հարված. երաժշտ. գործիք: Ծագումը հայտնի չէ: Մի շարք տեսակներ,այլ անվանումներով, լայնորեն տարածված են բազմաթիվ երկրներում, առավելապես՝ Լատ. Ամերիկայում, Հվ-արլ. Ասիայում, Աֆրիկայում: Որպես պրոֆեսիոնալ երաժշտ. գործիք՝ Եվրոպայում օգտագործվում է XIX դ–ից (նվագախմբերում, անսամբլներում,նաև մենակատար): Ք–ի տիպի գործիքի մասին ամենավաղ գրավոր հիշատակությունը վերաբերում է XIV դ–ին (Կենտր. Աֆրիկա): Առավել բարդ կառուցվածքով Ք–ներն ունեն շրջանակում ամրացված փայտե սալիկների (49) հավաքածու (2 ուղղաձիգ շարքով) և ռեզոնատորներ, որոնք տարբեր մեծության պղնձե պարկուճներ են և համապատասխանում են հավաքածուի երկարությանը: Դիապազոնը՝ մինչև 4 օկտավա (C^1–ից): Տեսակներից են մարիմբան և տուբաֆոնը:

ՔՐՄՈՅԱՆ Մայքլ (Գեղամ, 29.11.1922, Ֆրեզնո–21.09.1994, Նյու Յորք), երգիչ (բաս): Սովորել է Սան Ֆրանցիսկոյի կոնսերվատորիայում, ապա՝ Լոս Անջելեսի համալսարանի օպերայի և դրամայի բաժնում: Ապրել է հիմնականում Նյու Յորքում. տարբեր խմբերի հետ շրջագայել է ԱՄՆ–ի նահանգներում և քաղաքներում, Եվրոպայի երկրներում: «Գիլդ», «Մետրոպոլիտեն օպերա» թատրոններում կատարել է Վ. Ա. Մոցարտի «Առևանգում հարեմից», «Ֆիգարոյի ամուսնությունը», Շ. Գունոյի «Ֆաուստ», Ջ. Վերդիի «Սիմոն Բոկկանեգրա» և այլ օպերաների գլխ. դերերգերը՝ ինքնատիպ մեկնաբանություններով: Հանդես է եկել «Օկլահոմա», «Եվ հասկանալի, և զարմանալի», «Անապատի երգը» և այլ մյուզիքլներում, Բրոդվեյի երաժշտ. դրամաներում, նկարահանվել հեռուստաֆիլմերում: Շրջագայել է համերգներով. երկացանկում՝ դաս., հայկ., ռուս., նեգր., ամերիկ. և այլ երգեր (2 մենահամերգ՝ Երևանում, 1971):

ՔՈՀՇՆԱՐՅԱՆ (Քուշնարյով) Քրիստափոր Ստեփանի [23.05(04.06).1890, Սիմֆերոպոլ–25.01.1960, Լենինգրադ], կոմպոզիտոր, երաժիշտ–տեսաբան, մանկավարժ: ՀԽՍՀ (1939), Ուզբ. ԽՍՀ (1943) արվ. վաստ. գործիչ: Սովորել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանում (ջութակ), 1918–23–ին դասավանդել է տեղի երաժշտ. ինստ–ում: Ավարտել է Պետրոգրադի համալսարանի բնագիտության (1916), Լենինգրադի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի (1925, Ա. Մ. Ժիտոմիրսկու դասարան) բաժինները: 1925–ից Լենինգրադի կոնսերվատորիայում դասավանդել է կոմպոզիցիա և հարմոնիա (պրոֆ.՝ 1939–ից): Խորհրդ. երաժշտ. ուս. հաստատություններում մշակել է տես. առարկաների ծրագրերի նորացման և ուսուցման նոր մեթոդներ: 1927 և 1929–ին ղեկավարել է Լենինգրադի թատրոնի և երաժշտության ինստ–ի՝ Հայաստանում ժող. երգեր հավաքելու գիտարշավները: 1944–48–ին՝ ՀԽՍՀ ԳԱ երաժշտության պատմության և տեսության բաժանմունքի վարիչ, միաժամանակ դասավանդել է ԵՊԿ–ում: Ք. պոլիֆոնիկ երաժշտության ոճերի և արլ. երաժշտության մեծ գիտակ էր: Հետազոտել է Վերածննդի շրջանի երաժշտության ոճ. հատկանիշները, զարգացրել ձայնակարգի և պոլիֆոնիայի մասին ուսմունքները, մշակել մոնոդիայի տեսությունը, պարզաբանել մոնոդիկ երաժշտության ծագման ու զարգացման ընթացքը, ուսումնասիրել Մերձ. Արևելքի այլ հին ժողովուրդների մշակույթների հետ կապերը, հայկ. մոնոդիայի որոշ ճյուղերի կոմպոզիցիոն ու ոճ. ընդհանուր հատկանիշները: Հետևելով Կոմիտասի տեսությանը՝ լուսաբանել է հայկ. մոնոդիայի ձայնակարգ. հիմքը՝ դիտարկելով այն որպես պատմականորեն ձևավորված տրամաբան. համակարգ:

Հեղինակ է սոնատի, պասսակալիայի և ֆուգայի՝ երգեհոնի համար, թավջութակի սոնատի, խմբերգերի և թատեր. երաժշտության: Ք–ի անունով Երևանում կոչվել է արվ–ի դպրոց (1970–ից):

Երկ. *Հայ երաժշտությունը ծագումից մինչև XIX դ., տես «Ակնարկ հայ երաժշտության պատմության» գրքում, Ե., 1963: Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958 (հայ.՝ 2008, անգլ.՝ 2016); О полифонии, сб. ст., М., 1971.*

Գրկ. *Քրիստափոր Քուշնարյան. Հոդվածներ և ուսումնասիրություններ, կարծիքներ, հուշեր, Ե., 2003: Х. С. Кушнарев: Статьи. Воспоминания. Материалы, М., 1971; Чеботарян Г., Х.С.Кушнарев. Очерк жизни и творчества, Л., 1990.*

Օ

ՕԲԵՐՏՈՆՆԵՐ (գերմ.՝ Oberton, < ober – վերևի, բարձր և Ton – տոն), մասնակի հնչյուններ (տոներ), որոնք մտնում են երաժշտ. հնչյունի սպեկտրի մեջ և հնչում հիմնական տոնից բարձր: Առաջանում են ձայնարտադրող մարմնի մասերի (լարեր, տարբեր ձևերի թիթեղիկներ ևն) տատանումներից: Հնչյունների քանակն ու բաշխումը, ըստ բարձրության, պայմանավորված են մարմնի ձևով, տատանումների ուժգնությամբ, ֆիզ. հատկություններով ևն: Օ. միմյանց հաջորդում են շարունակ փոքրացող ինտերվալների շարքով (կոչվում է նաև բնական հնչյունաշար) վեր, հաջորդականությունը միշտ հաստատուն է:

Ընդունված է Օ. համարակալել հիմնական հնչյունից: Համարները ցույց են տալիս, թե յուրաքանչյուր Օ-ի հաճախությունը քանի անգամ է մեծ հիմնական հնչյունի տատանումների հաճախությունից:



Տեսականորեն Օ-ի շարքը կարելի է անվերջ շարունակել, իսկ գործնականում նրանց առատությունն ու հարաբեր. ուժգնությունը, պայմանավորված հնչյուն առաջացնող մարմինների ֆիզ. հատկանիշներով, տարբեր են: Լսվող հնչյունը հիմնական և լրացուցիչ բարձր հնչյունների խառնուրդ է. լրացուցիչ հնչյունների (որևէ մեկի) ինտենսիվությունը տեմբրի ստեղծման կարևոր գործոններից է: Երաժիշտը նվագելիս զանազան հնարքներով ուժգնացնում կամ թուլացնում է Օ., որի շնորհիվ փոխում է հնչյունի գույներանգը՝ հասնելով հնչողության առանձնահատուկ արտահայտչականության:

ՕՀԱՆԵՋԱՇՎԻԼԻ Սաշա [Օհանյան Ալեքսանդր Արշակի, 17.05.1889, գ. Սողանլուղ (այժմ՝ Փոնիջարլա գ-ի շրջագծում՝ Թիֆլիսի մոտակայքում)–31.05.1932, Թիֆլիս], քամանչահար, հաս. գործիչ, մանկավարժ: Մասնակցել է հոր և այլ սազանդար. խմբերին, նվագել դիպլիպիտո, դուդուկ, քամանչա, նաև երգել է: Եղել է Ա. Մայիլյանի «Արևելյան նվագախմբի» (Բաքու) մենակատար, հաճախ հանդես եկել աշուղ Հազիրիի խմբում (Թիֆլիս): 1905-ին համերգներով շրջագայել է Այսրկովկասում, Միջին Ասիայում, Իրանում, Գերմանիայում: Ուսումնասիրել է արլ. լեզուներ և ժող. երաժշտություն, մասնագիտացել մուղամաթի արվ-ում: Կատարելագործել է քամանչան. եռալարը դարձրել է քառալար, որով ընդլայնել է դիապազոնը և տեխ. հնարավորությունները: 1909-ից Այսրկովկասի և Իրանի քամանչահարները Օ-ուց փոխառել են նաև քամանչայի լարվածքը:

Հեղինակ է «Ֆարհադ և Շիրին» երգային օպերայի (1910), որը ժող. գործիքների նվագակցությամբ կատարվել է Բաքվում (1911): 1912-ին «Սպորտ-ռեկորդ» ֆիրման ձայնագրել է նրա «Չարգահ», «Ռաստ», «Հիջազ» և այլ մուղամների, հայկ. ժող. («Կռունկ», «Մայր Արաքսի ափերով» ևն) և քրդ. «Դլո» երգերի կատարումները: 1914-ին Բաքվում վարել է արլ. երաժշտության դասընթացներ, առաջին անգամ Մերձ. Արևելքում ձեռնամուխ եղել արլ. գործիքների նոտային ուսուցմանը, ստեղծել դասավանդման ձեռնարկ, ուսուցանել նաև թառ, քանոն, ուդ, սազ և այլ գործիքներ:

Սայաթ-Նովայի երգերի փայլուն կատարող-մեկնաբան էր. տիրապետել է պարսկ-ին, արաբ-ին, վրաց-ին, թուրք-ին, տեքստաբան. ճշգրտումներ է կատարել աշուղի բանաստեղծություններում: 1920-ին հիմնադրել է Բաքվի Արևելյան կոնսերվատորիան, 1924-ից մասնակցել է Թիֆլիսի Հայարտան աշխ-ներին: 1926-ին ԵՊԿ-ում հիմնադրել է արլ. ֆակ-ը, դասավանդել արլ. երաժշտության տեսություն և ժող. գործիքներ. սաներից են Արամ *Մերանգույանը*, Գուրգեն Լ. *Միրզոյանը*: Ստեղծել է նվագախումբ, ղեկավարել ՀԽՍՀ Ռադիոյի ժող. գործիքների ան-

Սաշա Օհանևաշվիլի



Մարինե Օթարյան

սամբլը: 1927-ին խորհրդ. երաժիշտների խմբում մասնակցել է Մայնի Ֆրանկֆուրտի համաշխ. երաժշտ. ցուցահանդեսին, մի քանի ամիս աշխատել Բեռլինի արխիվում, դասախոսություններ կարդացել արլ. երաժշտության մասին: 1928-ին Լենինգրադում մասնակցել է հայկ. և պարսկ. երաժշտության համերգներին:

Հեղինակ է Այսրկովկասի և Իրանի մոնոդիկ երաժշտության վերաբերյալ հոդվածների:

Գրկ. Գևորգյան Գ., Սաշա Օգանեզաշվիլի, Ե., 1973:

Լիլիթ Երնջակյան

ՕԳԱՆԵԶՈՎ Լևոն (Լեոնտի) Սարգսի (ծ. 25.12.1940, Մոսկվա), դաշնակահար, կոմպոզիտոր: ՌԴ ժող. արտիստ (2010): Ավարտել է ՄՊԿ դաշնամուրի բաժինը (1967): 1959-ից աշխատում է Մոսկոնցերտում: Նվագակցել է անվանի արտիստներ Վ. Վինոկուրին, Ա. Միրոնովին, Ի. Կոբզոնին, Պ. Լիսիցյանին, Յ. Օսինին, Մ. Գալկինին, Կ. Շուլժենկոյին, Վ. Տոլկունովային, Լ. Գոլուբկինային և ուր., հանդես եկել նաև մենահամերգներով: Վարել է հեռուստածրագրեր («Սպիտակ թութակ», «Բարի երեկո Իգոր Ուգոլնիկովի հետ», «Միայնություն ռոյալի շուրջ», «Կյանքը սքանչելի է»), հանդես եկել ներկայացումներում («Մնաս բարով, կոնֆերանսիե» ևն): Գրել է մյուզիքլներ: Ստեղծել է շարժ. ստեղնաշարով էլեկտր. երաժշտ. գործիք (2007, Ալեքսանդր Խիմինսկու հետ), որն օգտագործել են և՛ աջլիկ, և՛ ձախլիկ կատարողները: Նկարահանվել է կինոյում («Էստրադայում Վլադիմիր Վինոկուրն է», 1982, «Անձրևի հետքը», 1991, «Վաճառվում է ամառանոց», 2005, ևն):

Լևոն Օգանեզով

ՌԴ «Ոսկե Օստապ» մրց. (1998):

ՕԶԳՅԱՆ Պետեր (Պետրոս, 1932–1979), կոմպոզիտոր: Ավարտել է Բելգրադի երաժշտ. ակադ-ը (1959, Ս. Ռիստեկի անվ. մրց.): Դասավանդել է երաժշտատես. առարկաներ: Գրել է ազգ. ինչերանգներով հագեցած գործիք. և նվագախմբ. երկեր, որտեղ օգտագործել է ատոնալ, պոլիտոնալ, սերիական երաժշտ. համակարգերի տարրեր, ստեղծել ինքնատիպ արտահայտչամիջոցներ:

1973-ին այցելել է ՀԽՍՀ. ՀԿՄ դահլիճում կատարվել են նրա կվարտետը, դաշնամուր. կոնցերտը, սիմֆոնիետը, դաշնամուր. վարիացիաները, սյուիտը՝ ֆլեյտայի և լար. նվագախմբի համար: Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանին է նվիրել սերբ. Պատարագի ձայնագրությունը:

Նոնան Օկանտյան

ՕԹԱՐՅԱՆ Մարինե Իսահակի (ծ. 08.11.1969, ք. Սպիտակ), կոմպոզիտոր: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2012): Ավարտել է ԵՊԿ վոկալ-տես. ֆակ-ի կոմպոզիցիայի բաժինը (1997, Ս. Լուսիկյանի դասարան): Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն (1996-ից), գիտ. խորհրդի նախագահ: Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանում Օ-ի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ իրականացվել են 50-ից ավելի ժամանակավոր ցուցադրություններ, «Ալեքսանդր Սպենդիարյանը և ժամանակը» գիտաժողովը (2011), մի շարք գիտակրթ. ծրագրեր, մշակութ. միջոցառումներ, թողարկվել է «Ալեքսանդր Սպենդիարյան. Ռոմանս» ձայնասկավառակը (2006): Կազմել է (Տ. Սարգսյանի հետ) Ա. Սպենդիարյանի ծննդյան 140-ամյակին նվիրված «Հուշեր» (2012) գիրքը: Զեկուցումներով հանդես է եկել գիտաժողովներում, Ա.Սպենդիարյանի կյանքն ու ստեղծագործ. ժառանգությունը ներկայացրել Հայաստանում, ԱՄՆ-ում, Լիբանանում և այլուր: Գրել է Սպիտակ քաղաքի օրհներգը՝ «Իմ հին ու նոր Սպիտակ» (1998):

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

Երկ. Հայաստանի առաջին երաժշտական թանգարանը. Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան - 50, Ե., 2017:

ՕԿՍԵՆՏՅԱՆ Նունե (Նինա) Հովհաննեսի [29.10.1916, ք. Նոր Նախիջևան (այժմ՝ Դոնի Ռոստովի շրջագծում՝ ՌԴ) – 23.03.2017, Ս. Պետերբուրգ], երգեհոնահար: ՌԴ ժող. արտիստ (2007): Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան (1947) և ասպիրանտուրան (1950, երկուսն էլ՝ Ի. Բրաուդոյի դասարան): Դասավանդել է նույն կոնսերվատորիայի երգեհոնի և կլավեսինի բաժիններում (1985-ից՝ պրոֆ.): 1950-ից համերգներով շրջագայել է ԽՍՀՄ-ում և արտերկրում: Համագործակցել է երգիչներ Բ. Ռ. Գմիրյայի, Ի. Պ. Բոգաչևայի, Մ. Բիեշուի, Ժ. Հեյնե-Վազների, Գ. Ա. Կովալյովայի, Վ. Լևկոյի, դիրիժորներ Կ. Զաղեղինգի, Ն. Գ. Ռախլինի, Վ. Ա. Չեռնուշենկոյի, նաև երգչախմբերի հետ:

Երգեհոնի համար կազմել է «Խորհրդային կոմպոզիտորների ստեղծագործութ-

յունները» (1982), «Ժամանակակից պետերբուրգյան կոմպոզիտորների երգեհոնային երաժշտություն» (2003), «Երեք դարյա պետերբուրգյան երգեհոնային երաժշտություն» անթոլոգիաները: Ունի 10-ից ավելի ձայներիզներ՝ նաև XVII–XX դդ-ի կոմպոզիտորների երկերից:

ՕՀԱՆՅԱՆ Դավիթ [ծ. 1945, Քոննեքթիքութի նահանգ (ԱՄՆ)], գալարափողահար: 15 տարեկանում հրավիրել են նվագելու Նյու Հեվնի և Հարվարդի սիմֆ. նվագախմբերում: 1961-ին արժանանալով Լ. Բուլանժեի կրթաթոշակի՝ կատարելագործվել է Ֆոնտենբլոյում (Ֆրանսիա)՝ շեփորահարներ Պ. Դյումոնի և Ժ. Դևենիի ղեկավարությամբ, տեսության և հարմոնիայի դասեր առել Ն. Բուլանժեից: Ավարտել է Նյու Ինգլանդի կոնսերվատորիան (1963): 1963–65-ին՝ Թենգլվուդ երաժշտ. կենտրոնի գիտաշխատող: 1996-ին հաճախել է Բերքշիրի երաժշտ. կենտրոնի («Ռոզենվարդ» մրց.) դասընթացներին: Բոստոնի սիմֆ. նվագախմբի (առաջին), ապա՝ Քեմբրիջի փող. և ֆիլհարմոնիայի «Հուդվիդ» կվինտետների գալարափողահարը, 2000-ից՝ «Տրանս Ատլանտիկ» փող. կվարտետի գալափողահարը: Ելույթներ է ունեցել Լ. Բեռնստայնի, Կ. Աբբադոյի, Է. Լայնսդորֆի և ուր. հետ:

ՕՀԱՆՅԱՆ Կարինե Ռոբերտի (ծ. 01.07.1952, Երևան), դաշնակահարուհի, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1987): Պրոֆ. (1994): Սովորել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցում (դասատու՝ Է. Թանդիլյան), ավարտել ՄՊԿ (1975) և ասպիրանտուրան (1978, երկուսն էլ՝ ղեկ.՝ Լ. Ն. Վլասենկո): 1978-ից դասավանդում է ԵՊԿ-ում: Հանդես է եկել մենահամերգներով և սիմֆ. ու կամեր. նվագախմբերի հետ. երկացանկում՝ եվրոպ., ռուս. և հայկ. դաս. ստեղծագործություններ: Հյուրախաղերով շրջագայել է ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Կանադայում, Իտալիայում, Բրազիլիայում, Արգենտինայում և այլուր:

Կատարող. արվ-ն առանձնանում է գեղագիտ. ինքնատիպ մեկնաբանությամբ:

Մասնակցել է միջազգ. երաժշտ. փառատոների: Թողարկել է 2 ձայնասկավառակ, ունի ֆոնդ. ձայնագրություններ:

Դաշնակահարների միջազգ. մրցույթի 1-ին (1976, Վերչելլի՝ Իտալիա), ՀԼԿԵՄ (1978, Երևան) մրց-ներ:

ՕՊԵՐԱ (իտալ.՝ opera – երկ, < լատ. opera – աշխատանք, ստեղծագործություն), երաժշտ. դրամատիկ. արվ-ի ժանր: Գրական հիմքը լիբրետտոն է, որն առավելապես մարմնավորվում է երաժշտ. դրամատուրգիայի և վոկալ երաժշտության ձևերով: Օ. համադր. ժանր է. միասն. թատեր. գործողության մեջ միավորում է արվ-ի տարբեր տեսակներ՝ դրամատուրգիա, երաժշտություն, կերպարվեստ (դեկորացիաներ, զգեստներ), խորեոգրաֆիա (բալետ):

Դավիթ Օհանյան

Պատմականորեն ձևավորվել են օպեր. երաժշտության պատմաերոս., պատմառոմանտիկ., հերոս-էպիկ., երաժշտադրամատիկ, քնար., հեքիաթ-ֆանտաստիկ, կոմիկ., ժող-կենցաղ. և այլ տեսակներ: Դաս. Օ-ի վոկալ ձևերը բազմազան են: Հերոսների բնութագրերն առավել ամբողջ. բացահայտվում են մենակատար. համարներում (արիա, արիոզո, արիետտա, կավատինա, մենախոսություն, բալլադ, երգ):

Կարինե Օհանյան

Օ-ում ասերգը հաճախ երաժշտ. դրամատուրգիայի գործուն տարրերից է: Բախում. իրավիճակների և գաղափար. ընդհարումների, գործողության զարգացման հնարավորություններ են ընձեռում անսամբլները (դուետ, տրիո, կվարտետ ևն): Օ-ում երգչախումբը կարող է հանդես գալ որպես ֆոն, գործողության յուրօրինակ մեկնաբան և ներկայացնել ժող. կյանքի մոնումենտալ տեսարաններ ևն: Երաժշտ. դրամատուրգիայում մեծ նվագախումբը նպաստում է կերպարների առավել ամբողջ. բացահայտմանը: Օ-ում կարևոր են նաև ինքնուրույն սիմֆ. դրվագները՝ նախերգանքն ու առանձին գործողությունների նախաբանը (անտրակտ):

Տեսարան Ժ. Բիզեի «Կարմեն» օպերայի բեմադրությունից (1934, ռեժ.՝ Արշակ Բորջալան, ԵՕԲԹ)

Օ., որպես ինքնուրույն ժանր, ձևավորվել է XVI դ-ի վերջին և XVII դ-ի սկզբին Իտալիայում: Առաջին Օ-ներն են՝ «Դափնե»-ն (1598) և «Եվրիդիկե»-ն (1600), որոնց երաժշտությունը գրել է Յ. Պերին, տեքստը՝ Օ. Ռինուչչինին: XVIII դ-ի կեսից

Հարո Սրեփանյանի «Քաջ Նազար» օպերայի բեմադրության էսքիզ (1935, նկարիչ՝ Սարգիս Սարյան)

ժանրը տարածվել է Ֆրանսիայում, Իսպանիայում, Գերմանիայում, Անգլիայում, Ռուսաստանում և եվրոպ. այլ երկրներում:

Օ-ի արվ. ծաղկել է XIX դ-ում. Ջ. Ռոսսինին, Ջ. Վերդին, Ռ. Վագները, Ժ. Բիզեն, Պ. Ի. Չայկովսկին և ուր. կոմպոզիտորներ գրել են իրենց նշանավոր օպերաները:

Օ. շուրջ 400-ամյա պատմության ընթացքում հասնելով զարգացման բարձրակետին, երբեմն ունեցել է նաև ճգնաժամ. փուլեր. ժանրում խախտվել է խոսքի ու երաժշտության հարաբերակցությունը, որի վերականգնմանը նպաստել են բարե-

Ռ. Լեռնկավալլոյի «Պայացներ» օպերայի ազդագիրը (1996, ռեժ.՝ Տիգրան Լևոնյան)

նորոգիչներ Ք. Վ. Գլյուկը, Վ. Ա. Մոցարտը, Ռ. Վագները, Ջ. Վերդին, Ա. Բերգը, Ա. Տերտերյանը:

Հայկ. առաջին Օ.՝ «Արշակ Երկրորդ»-ը, ստեղծել է Տիգրան Չուխաճյանը (1868):

Օ-ի ժանրին անդրադարձել են նաև Կոմիտասը (պահպանվել են «Անուշ», «Վարդան», «Սասնա ծռեր», «Քաղաքավարության վնասները» Օ-ների ուրվագրումները) և Ք. Կարա-Մուրզան («Շուշան», անավարտ): 1912-ին Ալեքսանդրապոլում ցուցադրվել է Ա. Տիգրանյանի «Անուշ» Օ. (ըստ Հ. Թումանյանի): XX դ-ի սկզբին այդ ժանրի գործեր են ստեղծել Վ. Սարգսյանը («Անուշ»), Ե. Բաղդասարյանը («Անուշ»), Գ. Միրզոյանը, Ս. Դեմուրյանը և ուր.: Երևանի, Թիֆլիսի, Բաքվի դպրոցներում կատարվել են Ա. Սանուկյանի «Չարի վերջը», Մ. Միրզոյանի «Ճպուռն ու մրջյունը», Ե. Բաղդասարյանի «Գյուլնազ տատի հեքիաթները», Ա. Մայիլյանի «Չարաճճի Միկիչը», «Բախտի կորիզ», Դ. Ղազարյանի «Հաղթված բազեն», «Գայլը» և այլ մանկ. Օ-ների համերգ. կատարումները:

1927-ին ԵՊԿ-ում կազմակերպվել է օպեր. դասարան: 1920-ական թթ-ին նոր Օ-ներ են գրել Ա. Տեր-Ղևոնդյանը («Սեդա», 1921), Ա. Սպենդիարյանը («Ալմաստ», 1928), Կ. Զաքարյանը («Գառնիկ ախպեր», 1924), Մ. Մազմանյանը («Ճուտիկ», 1926, վերջին երկուսը՝ մանկ.):

Հայկ. Օ-ի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»-ը, որով 1933-ին բացվել է ԵՕԲԹ: Թատրոնի առաջնային խնդիրներից էր ազգ. խաղացանկի ստեղծումը: 1935-ին բեմադրվել է Ա. Տիգրանյանի «Անուշ»-ը՝ նոր խմբագրությամբ: 1930-ական թթ-ին թատրոնի խաղացանկը լրացրել են Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար» (1935), Ա. Այվազյանի «Թափառնիկոս» (1938, կոմիկ.) Օ-ները: Երաժշտաբեմ. արվ-ում հայկ. հերոս. էպոսի արտացոլման արժեքավոր փորձ էր Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ»-ը (1936): Հեղափոխության թեմայով հայկ. առաջին Օ-ներն են Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» (1938), Կ. Զաքարյանի «Մարջան» (1941):

Հայ կոմպոզիտորներն օգտագործել են նաև այլ ժող-ների կյանքից ու գրկ-ից վերցված թեմաներ՝ Լ. Խոջա-Էյնաթյանի «Շլյուզ» (1931), «Խռովություն» (1938), «Ընտանիք» (1940), Ս. Բալասանյանի «Վոսեի ապստամբությունը» (1939), «Դարբին Կովան» (1941) ևն:

ԵՕԲԹ-ում բեմադրվել են Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Լ. Խոջա-Էյնաթյանի «Նամուս» (երկուսն էլ՝ 1945), Ա. Տեր-Ղևոնդյանի «Արեգակի ցոլքերում» (1949), Հ. Ստեփանյանի «Հերոսուհի» (1950) Օ-ները: Նույն տարիներին Կ. Զաքարյանը ստեղծել է «Աղասի», Հ. Ստեփանյանը՝ «Նունե», Ա. Տիգրանյանը՝ հայրենասիր. «Դավիթ Բեկ» Օ-ները: 1950-ական թթ-ի

վերջին և 1960-ական թթ-ին բեմադրվել են հայ կոմպոզիտորների մի շարք նոր Օ-ներ՝ Վ. Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր» (1957), Ա. Բաբաևի «Արծվաբերդ» (1957), Յ. Գևորգյանի «Խարույկ» (1959), Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան» (1960), «Խորտակում» (1968), Ա. Տերտերյանի «Կրակե օղակ» (1967), Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» (1969) ևն: 1970-80-ական թթ-ին Է. Հարությունյանը գրել է «Հեքիաթ մեծերի համար» (բեմ.՝1970), Գ. Հախինյանը՝ «Լեգենդի մարդը» (բեմ.՝ 1970), «Ծովինար» (1973), Վ. Բաբայանը՝ «Օտարականը» (1970), «Բեթհովենի նամակները» (1977), Ս. Ջրբաշյանը՝ «Գիքոր» (բեմ.՝ 1974), Է. Հովհաննիսյանը՝ «Սասունցի Դավիթ» (օպերա-բալետ, բեմ.՝ 1976), Յ. Գևորգյանը՝ «Հյուսիսափայլ» (ըստ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, 1976), Ե. Երկանյանը՝ «Մոկաց Միրզա» (ֆոլք օպերա-բալետ, 1977), «Շուշանիկ» (1980), «Կայսրը» (2008), Է. Սադոյանը՝ «Մարիա Վոլկոնսկայայի օրագրերը» (1978), «Հէյ, ով կա այդտեղ» (ըստ Վ. Սարոյանի, 1982), «Կյանքի ծառը» (1985), Վ. Աճեմյանը՝ «Կիկոսի մահը» (բեմ.՝ 1980), Յ. Ղազարյանը՝ «Էռնեստ Հեմինգուեյ» (1983), Ա. Տերտերյանը՝ «Երկրաշարժ» (1984), Ա. Ոսկանյանը՝ «Նարեկացու աղոթքը, Քուչակի սերը, Սևակի լույսը» (1991) և այլ Օ-ներ:

XXI դ-ում օպերաներ են գրել Վ. Բաբայանը՝ «Liramlarum» (ըստ Կ. Յոնի, 2002), «Մուսա լեռան 40 օրը» (ըստ Ֆ. Վերֆելի, 2004), Վ. Հայրապետյանը՝ «Ցայգալույս» (2003), Ա. Սաթյանը՝ «Լիլիթ» (2002) և «Փոքրիկ Ցախեսը» (2013), Ս. Ազնաուրյանը՝ «Հույս» (ըստ Զ. Գիպպիուսի, 2004), «Համլետ» (ըստ Վ. Շեքսպիրի, 2007, մոնոօպերաներ), «Հայաստան» (կամեր. Օ., ըստ Օ. և Ն. Մանդելշտամների, 2007), Վ. Շարաֆյանը՝ «Աբգար թագավոր» (2010), Ա. Միտինյանը՝ «Ես և նա» (ռոք-Օ., 2014), «Ալ կարմիր առագաստներ» (2016), Է. Սադոյանը՝ «Մաշտոց» (ըստ Ա. Արաքսմանյանի, 2014) և ուր. կոմպոզիտորներ:

Հայկ. Օ-ին արվ-ն աչքի է ընկնում տեսակների (մոնումենտալ պատմ., հերոսաէպիկ., կամեր-քնար., կենցաղ. ևն), ձևերի բազմազանությամբ և երաժշտ. լեզվի ինքնատիպությամբ:

Գրկ. *Ամատրյան Ա., Տիգրան Չուխաջյանի երաժշտական թատրոնը, Ե., 2011: Ролан Р., Опера в XVII веке в Италии, Германии, Англии, пер. с франц., М., 1931; Ля Лоранси Л. де, Французская комическая опера XVIII века, пер. с франц., М., 1937; Асафьев Б. В., Опера, в сб.: Очерки советского музыкального творчества, т. 1, М.-Л., 1947; Ярустовский Б., Драматургия русской оперной классики, М., 1952; Նույնի, Очерки по драматургии оперы XX века, М., 1971; Тигранов Г. Г., Армянский музыкальный театр, т. 1–4, Е., 1956–85; Ewen D., Encyclopedia of the Opera, N. Y., 1955.*

ՕՊԵՐԱ-ԲԱԼԵՏ (ֆրանս.՝ opera-ballet), երաժշտաթատեր. ժանր: Ձևավորվել է Ֆրանսիայում XVII–XVIII դդ-ի սահմանագծին: Սերել է XVI դ-ի պալատ. և ժ. Բ. Լյուլլիի կատակերգ. բալետներից: Ժանրն առավել վառ դրսևորվել է Ա. Կամպրի, Ա. Կ. Դետուշի, Ժ. Մուրեի և ուր. ստեղծագործություններում: Օ-բ. առանձնանում է գունեղությամբ և դեկորատիվությամբ: Սովորաբար ունենում է առաջաբան և 3–4 պատկեր (բովանդակությամբ գրեթե չկապված), որտեղ պար. տեսարաններին հաջորդում են ասերգերը, արիաները, անսամբլները և օպեր. այլ ձևեր:

Օ-բ-ի լավագույն նմուշներ են ստեղծել Ժ. Ֆ. Ռամոն («Նրբակիրթ Հնդկաստանը», 1735, ևն), Ա. Ս. Դարգոմիժսկին («Բաքոսի տոնախմբությունը», 1848), Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը («Մլադա», 1890), Մ. Ռ. Ռաուհվերգերը («Ձյունե թագուհին», 1965), Է. Հովհաննիսյանը («Սասունցի Դավիթ», 1975), Ե. Երկանյանը («Մոկաց Միրզա», ֆոլկ. Օ-բ., 1977), Ա. Շահնազարյանի («Սասունցի Դավիթ», 2010) և ուր.:

Տեսարան Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրությունից (1950). Անուշ՝ Գոհար Գասպարյան, Սարո՝ Ավագ Պետրոսյան

Տեսարան Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետի բեմադրությունից (1976, ԵՕԲԹ, ռեժ. և Դավթի դերակատար՝ Վիկեն Գալստյան, Ձմշկիկ՝ Բելլա Հովհաննիսյան)

ՕՊԵՐԵՏ (իտալ.՝ operetta, ֆրանս.՝ opérette – բառացի՝ փոքր օպերա), երաժշտադրամատիկ. արվ-ի տեսակ (օպերայի տարատեսակ՝ խոսակցական երկխոսություններով). համադրում է վոկալ և գործիք. երաժշտությունը, պարը, բալետը: Օ-ի երաժշտ. դրամատուրգիայի հիմքում սովորաբար քառյակային երգն ու պարն է: Որպես կանոն՝ տեսարանի զարգացման բարձրակետը տվյալ ժամանակաշրջանում տվյալ երկրում հանրաճանաչ

Տեսարան Ի. Կալմանի «Միկվա» օպերետի բեմադրությունից (1942, ռեժ.՝ Հայկ Դանգլա). Բոնի՝ Հայկ Դանգլա, Սրտասի՝ Իզաբելլա Դանգլա

պարն է (կանկանը և գալոպը՝ Ժ. Օֆֆենբախի, վալսը, պոլկան և մազուրկան՝ Յ. Շտրաուս-որդու, չարդաշը՝ Ի. Կալմանի Օ-ներում, ևն), որով հաճախ պայմանավորվում է ներկայացման երաժշտ. ողջ մթնոլորտը: Թեև Օ-ում օգտագործվում են օպեր. արվ-ին բնորոշ վոկալ և գործիք. երաժշտության ձևեր (արիա, դուետ, անսամբլ, խմբերգ), սակայն դրանք ավելի պարզ են և ունեն երգ-պար. բնույթ: Վոկալ-երաժշտ. և խորեոգրաֆիկ համարները նպաստում են գործողության զարգացմանը, ստեղծագործության գաղափարի հաստատմանը՝ կազմելով ամբողջություն: Երաժշտությունն Օ-ում կատարում է օժանդակ, դիվերտիսմենտ. դեկորատիվ դեր, որով էլ այն տարբերվում է վոդևիլից և երաժշտ. կոմեդիայի ու դրամայի այլ տեսակներից:

Օ. սկզբնավորվել է երաժշտակատակերգ. ավանդ. ներկայացումներից. նրա պատմ. նախորդներն են կոմիկ. օպերան, ֆրանս. վոդևիլը և գերմ. զինգշպիլը: Մինչև XIX դ-ի կեսը Օ. է կոչվել ոչ մեծ օպերան: Որպես ինքնուրույն ժանր՝ ծագել է 1850-ական թթ-ին Ֆրանսիայում: 1860-ական թթ-ին ի հայտ են եկել ավստր., 1870-ական թթ-ին՝ անգլ., 1880-ական թթ-ին՝ ամերիկ. Օ-ները: Ֆրանսիայում զարգացել է հիմնականում Օ-ի պարոդիական տեսակը, որի հիմնադիրներն են Ֆ. Էրվեն և Ժ. Օֆֆենբախը: 1920-ական թթ-ին խորհրդ. շրջանի Օ. սկզբնավորել են Ի. Օ. Դունաևսկին և Ն. Մ. Ստրելնիկովը, զարգացրել Բ. Ա. Ալեքսանդրովը, Յ. Ս. Միլյուտինը, Վ. Պ. Սոլովյով-Սեդոյը, Կ. Յ. Լիստովը, Օ. Բ. Ֆելցմանը, Ա. Գ. Նովիկովը, Տ. Ն. Խրեննիկովը, Վ. Ե. Մուրադելին և ուր.: Օ-ին անդրադարձել են նաև Դ. Դ. Շոստակովիչը, Դ. Բ. Կաբալևսկին, Գ. Վ. Սվիրիդովը: Ստեղծվել են պատմականացաղ. Օ-ներ, երաժշտ. կատակերգություններ երեխաների համար, մյուզիքլներ:

Տեսարան Տիգրան Չուխաճյանի «Գարին» օպերետի բեմադրությունից (1992, ռեժ.՝ Տիգրան Լևոնյան)

Հայկ. առաջին Օ-ները՝ «Արիֆի խրամանկությունը» (1872), «Քեռսե Քեհյա» (1874), «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» (1876), գրել է Տ. Չուխաճյանը (բեմադրվել են Կ. Պոլսում և այլուր): XX դ-ի սկզբին Այսրկովկասի հայաշատ վայրերում Օ-ի ժանրի տարածմանը նպաստել է Հ. Ոսկանյանի ղեկավարած թատերախմբի գործունեությունը, որը ներկայացրել է Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի», Ա. Այվազյանի «Ուշ լինի, նուշ լինի» և այլ Օ-ներ: Հայաստանում Օ-ի ժանրի զարգացմանը նպաստել են Լենինականի օպերա-օպերետ. խումբը (1923) և հատկապես ԵԿԹ (1942):

Այս ժանրում առավել հայտնի է Ա. Այվազյանը՝ իր «Ատամնաբույժն արևելյան»

Տեսարան Վարդան Տիգրանյանի «Մեծ հարսանիք» օպերետի բեմադրությունից (1946, ռեժ.՝ Թադևոս Սարյան). Սուրեն՝ Կարպ Խաչվանքյան, Նազիկ՝ Սեդա Սարյան

(ըստ Պարոնյանի, բեմ.՝ 1944), «Աշուղ Մուրադ», «Երջանիկ օր» (երկուսն էլ՝ բեմ. 1945), «Քաջ Նազար» (ըստ Դ. Դեմիրճյանի, բեմ.՝ 1948), «Մեր աստղերի տակ» (բեմ.՝ 1969) և այլ Օ-ներով: Օ-ի հետագա հաջողությունները կապված են Վ. Տիգրանյանի («Մեծ հարսանիք», «Շիրակ, իմ սեր»), Ս. Զրբաշյանի («Երազիկ», «Չաուշի մորաքույրը», «Ծաղիկների աշխարհում», «Ես, հարսնացուս և...», «Մարսեցի փեսացուն»), Վ. Կոտոյանի («Փեսացուներ», «Սիրո հովիտ» ևն) ստեղծագործությունների հետ:

1960-ական թթ-ին և հետո ստեղծված Օ-ներից ուշագրավ են Է. Հարությունյանի «Քո ժպիտը միլիոն արժե» (1961), Յ. Գևորգյանի «Շշմեցուցիչ հարված» (1961), Է. Բաղդասարյանի «Հրաշալի օր» (1963), Գ. Հախինյանի «Գլխի գինն է 50 միլիոն» (1967), Կ. Խաչատրյանի «Վինձորի զվարճասեր կանայք» (ըստ Շեքսպիրի, 1968), Ա. Սաթունցի «Ճարպիկ կինը» (1972), Մ.

Վարդազարյանի «Արտասահմանյան փեսացուն» (1972), Ռ. Ամիրխանյանի «Քաղքենին ազնվական» (1973), Յ. Ներսիսյանի «Բախտավոր մարդիկ» (1986), Ա. Քարթալյանի «Քաջ Նազար» (1988), Վ. Ադեմյանի «Տասներկուերորդ գիշեր» (ըստ Շեքսպիրի, 1999) ևն:

Օ-ին աղերսվում է մյուզիքլը (սկզբնավորվել է XIX դ-ի վերջին ԱՄՆ-ում): ՀՀ-ում մյուզիքլներ են գրել Ռ. Ամիրխանյանը («Ատամնաբույժն արևելյան», բեմ.՝ 1976, մանկ.՝ «Դինգ-դոնգ», 1979, «Շախ և մատ», 1986, ևն), Ա. Գրիգորյանը և ուր.:

Գրկ. *Սփենդիարյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 2, Ե., 1969: Янковский М., Оперетта. Возникновение и развитие жанра на Западе и в СССР, М.–Л., 1937; Орелович А., Что такое оперетта, М.–Л., 1966; Grun B., Kulturgeschichte der Operette, [2 Auf.], B., 1967.*

ՕՊՈՒՍ (լատ.՝ opus – «գործ», «արարում», կրճատ՝ op.), երկ, ստեղծագործություն (երաժշտ.): Մասնագիտ. առումով՝ ստեղծագործության կամ ստեղծագործությունների ժող-ի հերթական համարը (օր.՝ Լ. վան Բեթհովենի Mecca op. 86, ևն): Օ-ի համարների հաջորդականությունը հաճախ համապատասխանում է ստեղծագործությունների հրատարակման ժամանակագր. կամ նրանց ստեղծման կարգին:

ՕՋԱԽՅԱՆ Նարինե Օնիկի (ծ. 26.5. 1981, Երևան), երգչուհի (սոպրանո): Ավարտել է ԵՊԿ (2003), Լոնդոնի թագավոր. երաժշտ. ակադ-ի երգեցողության (2005) և օպեր. (2006) բաժինները: 1992-ից՝ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի մենակատար: Հանդես է եկել նաև օպեր. դերերգերով՝ Լյուչիա (Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր»), Ռոզինա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Իոլանտա (Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա»), Նելլա (Ջ. Պուչչինիի «Ջաննի Սկիկի») ևն: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի կազմում հյուրախաղերով հանդես է եկել եվրոպ. մի շարք երկրներում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում և այլուր:

ՕՐԱՏՈՐԻՈ (իտալ.՝ oratorio, < լատ. oratorium – աղոթարան, լատ.՝ oro – ասում եմ, աղոթում եմ), մեծակտավ, սովորաբար բազմամաս երաժշտ. ստեղծագործություն՝ մեներգիչների, երգչախմբի և նվագախմբի համար, որը, որպես կանոն, ունի դրամատիկ. սյուժե, սակայն նախատեսված է համերգ. կատարման համար:

Օ. մոտ է կանտատին, որից տարբերվում է առավել մեծ ծավալով և որոշակի սյուժեով: Ծագել է Իտալիայում XVI–XVII դդ-ի սահմանագծին: Օ-ի ձևավորմանը նպաստել են օպերան և մադրիգալը: Լատ. տեքստով Օ. (Ջ. Կարիսիմի, Ա. Սկառլատտի) կազմավորվել է որպես մի քանի լիթուրգ. մոտետների միավորում, իտալ. տեքստով Օ. (Բ. Պասկուինի, Ֆ. Մ. և Ա. Վերաչինիներ, Ջ. Գաբրիելլի, Ջ. Լեգրենցի, Ա. Ստրադելլա և ուր.) զարգացել է դրամատիկ. երկխոս. լաուդանեբից: XVIII դ-ի իտալ. Օ-ում առավել մեծ նշանակություն են ստացել մենակատար հատվածները՝ ռեչիտատիվները և da capo արիաները: Օ. մոտեցել է օպերային: XVIII դ-ում Օ-ներ են գրել կոմպոզիտորներ Ա. Սկառլատտին, Ջ. Պերգոլեզին, Դ. Չիմառոզան, Բ. Գալուպպին, Ջ. Պաիզիելլոն, Ա. Սալիերին և ուր.: Ձևավորվել և զարգացել են գերմ., ավստր., ֆրանս. Օ-ները: Ժանրի զարգացմանը նպաստել են Գ. Հենդելի Օ-ները: Օ-ի զարգացման կարևոր փուլն են Յ. Հայդնի Օ-ները («Աշխարհի ստեղծումը», «Տարվա եղանակները»), որոնք կրում են գործիք-սիմֆ. մտածողության ազդեցությունը և նախատեսված են ոչ թե եկեղեցու, այլ համերգ. կատարման համար: XIX դ-ում Օ-ներ են գրել Ֆ.Մենդելսոնը, Հ. Բեռլիոզը, Ֆ. Լիստը, Ռ. Շումանը, Կ. Սեն-Սանսը, Ժ. Մասսենե, Ս. Ֆրանկը, Է. Էլգարը, Ռ. Վոան-Ուիլյամսը, XX դ-ում՝ Ա. Հոնեգերը, Պ. Հինդեմիթը, Յ. Ս. Շապորինը, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Դ. Շոստակովիչը, Գ. Վ. Սվիրիդովը, Ա. Գ. Շնիտկեն և ուր.:

Օ-ի ժանրը հայկ. երաժշտության մեջ զարգացել է 1960-ական թթ-ից: Բ. Փարսադանյանը ստեղծել է «Ապրեցեք դարերով» օրատորիա-ռեքվիեմը (1964), Վ. Կոտոյանը՝ «Դեպի ապագան» (1964), Հ. Ստեփանյանը՝ «Մեծ եղեռն» (1964), Գ. Հախինյանը՝ «Թոնդրակեցիներ» (1966) Օ-ները:

Գրկ. *Ширинян Р., Оратория и кантата, М., 1960.*

ՕՐԲԵԼՅԱՆ Կոնստանտին Աղապարոնի [29.07.1928, ք. Արմավիր (ՌԴ)–24.04.2014, Լոս Անջելես, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: Կոնստանտին Հ. *Օրբելյանի* հորեղբայրը: ԽՍՀՄ ԿՄ անդամ (1957): ՀԽՍՀ (1974), ԽՍՀՄ (1979) ժող. արտիստ: Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ.



Նարինե Օջախյանը ելույթի պահին

Կոնսպանտին Օրբելյան

Կոնստանտին Հարրիի Օրբելյան

երաժշտ. ուսումնարանում, ավարտել ԵՊԿ կոմպոզիցիայի բաժինը (1961, Է. Միրզոյանի դասարան): Սովորել է Բաքվի կոնսերվատորիային կից տաղանդավոր երեխաների համար նախատեսված երաժշտ. հատուկ դպրոցում: 1942-ին՝ ավիացիոն կորպուսի ջազ. խմբի դաշնակահար, 1949–52-ին՝ Հայաստանի էստրադ. նվագախմբի դիրիժոր, 1956–92-ին՝ գեղ. ղեկ.: 1992-ից ապրել է ԱՄՆ-ում:

Ստեղծագործություններում ինքնատիպորեն վերաիմաստավորվել են հայ երաժշտության ձայնակարգ. ինտոնացիոն և ռիթմական առանձնահատկությունները, ժամանակակից սիմֆոնիզմի և ջազ. արվ-ի նվաճումները: Ճանաչված են Օ-ի լար. կվարտետը (1956, Երիտասարդության

Կ. Ա. Օրբելյանը նվագախմբի հետ

և ուսանողների համաշխ. VI փառատոնի ոսկե մեդալ, 1957, Մոսկվա), սիմֆոնիան (1961, Համամիութ. մրց.), «Անմահություն» (բեմ.՝ 1969 և 1975, Երևան) խորեոգրաֆիկ սիմֆոնիան, «Հուշարձան» (1955) և «Դեպի թռիչք» (1956) խորեոգրաֆիկ պատկերները, «Տոնական նախերգանքը» (1967) և «Զանգեզուր» (1973) սիմֆ. պոեմը: Գրել է նաև էստրադ. երգեր՝ «Սիրում եմ քեզ, դու իմ Մոսկվա» (Երգի միջազգ. փառատոնի մրց., Բուդապեշտ, 1967), «Երևանյան մեղեդի», «Ռեքվիեմ», «Կեչիների աղմուկը», «Արևիկ», «Սերը չի ծերանում», «Գալիս ես» (Չեխոսլովակիայի և ԳԴՀՀ միջազգ. փառատոնների մրց-ներ), «Փառք մեր ազգության», պիեսներ, «Պոլիֆոնիկ պրելյուդ»՝ 4 տրոմբոնի և էստրադ. նվագախմբի համար (Ջազ. երաժշտության միջազգ. փառատոնի մրց., Պրահա, 1966), ջազ. կոմպոզիցիաներ, թատրոնի (Ա. Արաքսմանյանի «Քո հոգու կրակը», բեմ.՝ 1959, Մոսկվայի Լենինյան կոմերիտմիության անվ. թատրոն) և կինոյի («Սիրտն է երգում», 1956,

Կ. Հ. Օրբելյանը ելույթի պահին

Ալեքսանդր *Հարությունյանի* հետ, «Թռիչք անդունդի վրայով», 1959, «Փառքի օղակներ», 1962, «Ճանապարհ դեպի կրկես», 1963, «2-Լեոնիդ-2», 1970, բոլորը՝ Հայֆիլմ) երաժշտություն:

Թողարկվել են Օ-ի երկերի ձայնապնակներ: Երևանում գործում է Օ-ի անվ. արվ-ի դպրոց (2017):

ՀՀ «Պատվո շքանշան» (2012):

Երկ. *Сто часов счастья. Песни, М., 1990.*

Գրկ. *Берко М., Константин Орбелян, Е., 1990.*

ՕՐԲԵԼՅԱՆ Կոնստանտին Հարրիի (ծ. 25.08.1956, Սան Ֆրանցիսկո), դաշնակահար, դիրիժոր: ՌԴ վաստ. արտիստ (2004): Կոնստանտին Ա. *Օրբելյանի* եղբորորդին: Ս. Պետերբուրգի արվ-ի և գիտությունների ակադ-ի ակադ. (2000): Ավարտել է Նյու Յորքի Ջուլիարդի բարձրագույն երաժշտ. դպրոցը (1980): Դաշնամուրի դասեր է առել Սան Ֆրանցիսկոյի կոնսերվատորիայի մանկ. բաժնում (1960, Կ. Զեյմսի դասարան):

Որպես դաշնակահար՝ առաջին ելույթն ունեցել է 11 տարեկանում՝ Սան Ֆրանցիսկոյի սիմֆ. նվագախմբի հետ: 1991–2009-ին՝ ՌԴ պետ. կամեր. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 2010-ից՝ Մոսկվայի Պ. Սլոբոդկինի թատերահամերգ. կենտրոնի կամեր. նվագախմբի ղեկ., 2013-ից՝ Վոլգոգրադի «Ցարիցինյան օպերա» պետ. թատրոնի երաժշտ. ղեկ., դիրիժոր և գլխ. պրոդյուսեր, 2014-ից՝ Կաունասի սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր, 2016-ից՝ ԵՕԲԹ գեղ. ղեկ.: Որպես դաշնակահար հանդես է եկել Բոստոնի, Դետրոյտի, Ս. Պետերբուրգի, Մոսկվայի ֆիլհարմոնիկ, Բուդապեշտի, Վիեննայի, Հելսինկիի կամեր. սիմֆ. և այլ նվագախմբերում: Համերգներով շրջագայել է Եվրոպայի երկրներում, Ճապոնիայում, Կորեայում և այլուր: «Ս. Պետերբուրգի պալատներ» միջազգ. երաժշտ. փառատոնի հիմնադիր-ղեկ., Մոսկվայի «Կրեմլի թանգարանների երաժշտական գանձերը» համերգաշարի հիմնադիր: Ձայնագրություններ ունի Ավստրալիայի ռադիոյում և հեռուստատեսությունում: 1987-ին Շոտլանդիայի ազգ. սիմֆ. նվագախմբի հետ (դիրիժոր՝ Ն. Յարվի) ձայնագրել է Ա. Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտը («Տարվա լավագույն ձայնագրություն» մրց.): Համագործակցել է երգիչ Դ. Խվորոստովսկու հետ

(«Որտեղ եք, իմ եղբայրներ» և «Մոսկովյան գիշերներ», ձայնագրություններ):

Էլիս Այլանդի Պատվո մեդալ (2001, ԱՄՆ), «Բարեկամության շքանշան» (2011, ՌԴ, 2015, ՀՀ), ՀԳԹՄ «Արտավազդ» (2019) մրց.:

ՕՐՀՆԵՐԳ, պ ե տ ա կ ա ն, պետ. խորհրդանիշներից հանդիսավոր երաժշտական կամ երաժշտա-պոետիկ ստեղծագործություն, որը կատարվում է օրենքով նախատեսված կարգով: ՀՀ պետ. Օ.՝ «Մեր հայրենիք»-ը սահմանել է ՀՀ ԳԽ 1991-ին՝ հիմք ընդունելով Հայաստանի առաջին հանրապետության (1918–20) Օ., որն ընդունվել է 1919-ին: Տեքստը Միքայել Նալբանդյանի փոխադրած (1861) «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունն է (1854, հեղինակը հայտնի չէ), որը մասամբ փոխվել է (անփոփոխ են 4 քառատողից վերջին 3-ը): Մեղեդին ժողովրդական է: Բազմաձայնել է Քրիստափոր *Կարա-Մուրզան.* համերգներն սկսել և վերջացրել է այդ խմբերգով: Վերադաշնակել է և 1919-ին նոտագրել Բարսեղ *Կանաչյանը*: Հայաստանի երկրորդ հանրապետության (1920–91) Օ-ի տեքստի հեղինակը Սարմենն է, երաժշտությանը՝ Արամ *Խաչատրյանը*:

ՕՐԻԵՆՏԱԼԻԶՄ (< լատ. orientālis – արևելյան), ա ր և ե լ ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն, եվրոպացի արվեստագետների ստեղծագործ. հետաքրքրությունը Արևելքի ժողովուրդների պատմության, նյութ. և հոգևոր հուշարձանների, գրկ-յան և Արևելքի նկատմամբ: Ե ր ա ժ շ տ ո ւ թ յ ա ն մեջ Օ. ունեցել է մի քանի շրջան. առաջինը պայմանավորվել է հին և միջին դարերում Եվրոպայի և Ասիայի, Հս. Աֆրիկայի ժողովուրդների միջև սկզբնավորված առևտր. և քաղ. կապերով: Հետաքրքրությունը Արևելքի հանդեպ նոր վերելք է ապրել Վերածննդի շրջանում, որն առավել վառ արտահայտվել է օպեր. ժանրում: XVII–XVIII դդ-ում ստեղծվել են մի շարք օպերաներ Արևելքի ժողովուրդների կյանքին վերաբերող թեմայով:

Հայ ժող-ի պատմության որոշ դրվագների թեմաներով օպերաներ են գրել իտալացի և գերմանացի կոմպոզիտորները (Տ. Ալբինոնիի «Տիգրանը՝ Հայաստանի թագավոր», Մ. Բոնոնչինիի, Ա. Սկառլատտիի, Ք. Գլյուկի «Տիգրան», Գ. Հենդելի «Ռադամիստ» ևն):

Օ-ի զարգացման նորագույն շրջանում՝ XIX դ-ից ընդլայնվել է Արևելքի թեմաների



Հատված «Մեր հայրենիքը» օրհներգից

Հատված ՀԽՍՀ օրհներգից

արտացոլման շրջանակը. կոմպոզիտորներ Մ. Ի. Գլինկան, Մ. Ա. Բալակիրևը, Ա. Պ. Բորոդինը, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը և ուր. ձգտել են յուրացնել ու կիրառել արլ. երաժշտությանը բնորոշ արտահայտչամիջոցներ:

Արևմտաեվրոպացի կոմպոզիտորներից Օ-ի գործեր են ստեղծել առավելապես ֆրանսիացի կոմպոզիտորները (Ժ. Բիզե, Ս. Ֆրանկ, Մ. Ռավել, Ա. Ռուսսել, Ա. Հոնեգեր, Օ. Մեսիան և ուր.): Արլ. երաժշտության տես. խնդիրներ են ուսումնասիրել Կ. Զաքսը (Գերմանիա), Հ. Ֆարմերը (Անգլիա), նաև Վ. Վինոգրադովը, Ի. Յոյանը և ուր.: Օ-ին տուրք են տվել Տիգրան Չուխաճյանը, Գենարիոս Ղորղանյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը և ուր.:



Հատված Բարսեղ Կանաչյանի «Օրոր» երգից

Գրկ. *Դիլ Շ., Արևելեան արուեստին ազդեցութիւնները Արեւմուտքի մէջ, Պևևեն-Ժնև, 1929: Соколова Т., У истоков русского ориентализма, «Вопросы музыкознания», Сб. ст., т. 3, М., 1960.*

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳ, օրորոցային, օրորերգ, օրոր, 1. ժող. ստեղծագործության քնար. երգի տեսակ. կոչվել է նաև հայրուր, լուրիկ, ճոր-ճոր, դանդան, նեննի, նանար: Բաղկացած է երկտող, եռատող, քառատող կամ բազմատող տներից: Ունի նաև կրկնակներ, որոնք երգին հաղորդում են ռիթմ-երաժշտ. բազմազանություն: Ավանդ. (կայուն) Օ. ե-ին հաճախ հավելել են հանպատրաստից հորինված մասեր: Օ. ե-երում գերիշխող մանկանն ուղղված գովքը, բարեմաղթությունը և այլ մոտիվներ զուգորդվել են նաև երգող մոր անձն. ապրումների թեմայի հետ: Այդ երգերն ունեն պատմաճանաչող. արժեք, քանի որ արտահայտում են ժողովրդի կյանքի սոցիալ-պատմ. առանձնահատկություններ և ընտանեկան-կենցաղ. հարաբերություններ, հավատալիքներ ու պատկերացումներ: Օրորները հիմնականում հանպատրաստից հորինված հանդարտահոս եղանակներ են, պարզ օրինակներում բառը եղանակավորող ռիթմաինտոնացիոն դարձվածքի կրկնումներ են, առավել զարգացած նմուշներում՝ համեմատաբար ձայնածավալ իմպրովիզացիոն կառուցվածքներ: Հայկ. ժող. օրորների զարգացած օրինակները բանաստեղծաերաժշտ. ձևով և բովանդակությամբ լիովին կազմավորված որոշ նմուշներ ազգ. ավանդ. քնար. երգարվ-ի կարևոր ժանրերից են, որոնց բնորոշ են տեղային-ոճ. հատկանիշները: Լավագույններից են՝ Կոմիտասի գրառած Ակնա (հայրենի չափով) և Վաղարշապատի (Ռ. Պատկանյանի «Քուն եղիր, բալաս» խոսքերով), Գ. Սյունու Կարնո, Մ. Թումաճանի Ակնա և Բութանիայի, Հ. Հարությունյանի Վանա և այլ Օ. ե-եր:

2. Վոկալ կամ գործիք. հանդարտահոս քնար. (երբեմն՝ նաև դրամատիկ. բնույթի պահերով) պիես՝ ստեղծված ժող. օրորի ոճավորմամբ կամ ժող. կերպարների բանաստեղծ. վերաիմաստավորմամբ:

Որպես երաժշտ. պրոֆեսիոնալ ժանր՝ ձևավորվել է XVIII դ-ի վերջին: Զայնի և դաշնամուրի համար Օ. ե-եր են գրել Վ. Ա. Մոցարտը, Ֆ. Շուբերտը, Յ. Բրամսը, Հ. Վոլֆը, Մ. Պ. Մուսորգսկին, Պ. Ի. Չայկովսկին, ջութակի և դաշնամուրի համար՝ Մ. Ռավելը, նվագախմբի համար՝ Ի. Ֆ. Ստրավինսկին, դաշնամուրի համար՝ Ֆ. Շոպենը և ուր.: Օրորներ հանդիպում են նաև օպերաներում (Գ. Հենդելի «Ռոլանդ», Ձ. Գերշվինի «Պորգի և Բես»), բալետներում (Ի. Ֆ. Ստրավինսկու «Հրեղեն հավք» ևն): Հայ կոմպոզիտորներից օրորների հեղինակներ են Կոմիտասը (ձայն և դաշնամուր, մեներգիչ և երգչախումբ), Գ. Սյունին (խմբերգ), Բ. Կանաչյանը (մեներգ դաշնամուրով, նաև նվագախմբով), Ա. Սպենդիարյանը (սիմֆ. պիես), Ա. Հարությունյանը («Հայրենիք» կանտատում) և ուր.:

Գրկ. *Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Ե., 1970: Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, 4-րդ լրց. և բրփխ. հրտ., Ե., 2014:*

Ֆ

ՖԱԳՈՏ (իտալ.՝ fagotto – խուրձ, հանգույց, անգլ.՝ bassoon, գերմ.՝ Fagott), փայտե փող. երաժշտ. գործիքների բաս տեսակը, լեզվակավոր գործիք: Ստեղծվել է 1520–30-ական թթ-ին՝ բոմբարդայի և այլ բաս գործիքների կատարելագործմամբ: Ֆ-ի փողաբերանը նեղ է, որի հետևանքով հնչյունները խուլ են և ռնգային՝ օժտված թավշե հնչերանգով, դիապազոնը՝ B_1 – d^2: Գոյություն են ունեցել ֆագոտինո (օկտավա բարձր հնչողության փոքր Ֆ.), տենոր, ալտ Ֆ-ներ: Ֆ-ի տեսակներից գործածվում են B^1–e^1 դիապազոնով Ֆ. և ***կոնտրաֆագոտը***: Ընդարձակ դիապազոնի, տեխ. հարուստ հնարավորությունների և տեմբր. բազմազանության շնորհիվ Ֆ. ամենաարտահայտիչ և անփոխարինելի նվագախմբ. գործիքներից է: Նվագախմբերում ընդգրկվել է XVIII դ-ի կեսերից: Գործածվում է նաև որպես մենակատար գործիք (Ա. Հարությունյանի Ֆ-ի համար կոնցերտը նն):

Գրկ. *Маилян Г., Фагот в Армении, Е., 2009.*

ՖԱՋԼՅԱՆ Հարութ Պերճի (ծ. 29.06. 1962, Բեյրութ), դիրիժոր: 1976-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Մինրեալ: Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի խմբավար. (1978) և ԵՊԿ դիրիժոր. (1990) բաժինները: Վերադառնալով Մինրեալ՝ զբաղվել է համերգ. գործունեությամբ: Մասնակցել է դիրիժորների միջազգ. մրցույթին Չեխոսլովակիայում (1-ին մրց., 1992): 1997-ին վերադարձել է Լիբանան, հիմնադրել առաջին սիմֆ. նվագախումբը: 1999-ից՝ Լիբանանի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր, ապա՝ գլխ. դիրիժոր: Կասլիկի Սբ Հոգի և Հայկազյան (երաժշտ. բաժնի հիմնադիրը, 2004) համալսարանների երաժշտության պրոֆ.:

2006-ին Ֆրանկոֆոն երկրների միջազգ. կոմիտեի պատվերով երաժշտություն է գրել Նադիա Թուենիի բանաստեղծությունների հիման վրա: 2007-ին (լիբանանցի բանաստեղծ Անրի Զուղեյպի գործակցությամբ) արաբ. է թարգմանել Վ. Ա. Մոցարտի «Բաստիեն և Բաստիենա» օպերայի լիբրետտոն և ղեկավարել համաշխ. պրեմիերան՝ Լիբանանի ազգ. սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: 2010-ին Մարոկկոյի «Ասիլլա Արթ» արվ-ի փառատոնին ներկայացրել է Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Շեհերեզադե» սիմֆ. սյուիտը՝ իր մեկնաբանությամբ. եվրոպ. դաս. գործիքների հետ նվագախմբում ներառել է նաև մերձավորարլ. ավանդ. գործիքներ՝ ստանալով նոր գույներ ու հնչյուններ: 2011-ին Բաալբեկի միջազգ. փառատոնին մասնակցել է «Սալահէտտինի օրերը» (առաջին անգամ Լիբանանում երաժշտ. պիեսը ներկայացվել է նվագախմբի մասնակցությամբ), 2012-ին Beiteddine-ի արվ-ի փառատոնին՝ «Քարաքալլա» պար. թատրոնի հետ՝ «Once Upon a Time» պար., 2015-ին՝ «For You Baalbeck» ներկայացումներով: 2014-ին Բիբլոսի միջազգ. փառատոնին ներկայացրել է Մարսել Խալիֆէի համերգը՝ Լիբանանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

Համագործակցում է լիբանանցի նշանավոր երգչուհիներ Ջուլիա Բութրոսի (2000-ից) և Ֆեյրուզի (2010-ից) հետ:

Ֆրանսիայի Մ՚Ն արվ-ի և գրկ-յան ասպետի շքանշան (2015):

ՖԱԼՑԵՏ (իտալ.՝ falsetto, < falso – կեղծ), տղամարդու երգչաձայնի ամենաբարձր ռեգիստրը, որը դուրս է նրա սովորական դիապազոնի սահմաններից. բնորոշ են հնչյունների պակաս ուժգնությունը, ինքնատիպ փափկությունը և օբերտոնների նվազ քանակությունից բխող՝ տեմբրի «կեղծությունը»: Ֆ. հնչյուններ արտաբերելիս կիրառվում է հիմնականում գլխ. ռեզոնատորը, ձայնալարերը տատանվում են ոչ թե ողջ լայնքով, այլ միայն ծայրերով: Մինչև XIX դ. Ֆ. գործածել են տենոր-երգիչներն առավելապես բարձր հնչյուններ ստանալու, ժամանակակից օպեր. և համերգ. երգեցողության մեջ՝ նաև հնչողությանը յուրահատուկ տեմբրային գունավորում հաղորդելու նպատակով:

Ֆագոտ



Հարութ Ֆազլյանը ելույթի պահին

ՈՂԲԵՐՆ ՈՒ ՀԱՌԱՉՆԵՐԸ

Երգիչ Ֆահրադի «Ողբերն ու հառաչները» գրքի (1907, Ալեքսանդրապոլ) տիտղոսաթերթը

ՖԱԿՏՈՒՐԱ (լատ.՝ factura – մշակում, կառուցվածք), երաժշտ. հյուսվածք, շարադրանքի տարրերի (հիմնական մեղեդի, այլ մեղեդիական ձայներ, ակորդներ, ֆիգուրացիա, զարդհնչյուններ ևն) ամբողջությունը, որից առաջանում է երաժշտ. երկի հնչյուն. հյուսվածքը: Պարտադիր բաղադրիչներն են տեմբրը, ռեգիստրը, ձայնատարությունը: Ֆ. առավել հարուստ է հոմոֆոն-հարմոնիկ. երաժշտության մեջ (պահված հնչյուններ, կրկնակի, կոնտրապունկտող ձայներ ևն), ընդգրկում է ֆիգուրացիայի տարբեր տեսակներ ու կրկնություններ և նրանց զուգակցումները: Ֆ-ի որոշակիությունը պայմանավորված է ժամանակի երաժշտագեղագիտ. նորմերով, կատարողների կազմով, ժանրով, կոմպոզիտորի անհատ. ոճով, տվյալ երկի մտահղացմամբ: Ֆ-ի պատմ. զարգացման միտումներն այն առավել ինքնատիպ դարձնելն է, թեմատիկ տարրերով հագեցնելը, ձևում նրա դերի մեծացումը: Տարբերում են հոմոֆոնիկ, պոլիֆոնիկ և հետերոֆոնիկ Ֆ-ներ, գործածվում են նաև «խիտ», «թափանցիկ», «բազմաձայն», «կիսաձայն» տեսակները:

ՖԱՀՐԱՏ [Գևորգյան Խաչատուր, 1867, գ. Դիրաքլար (այժմ՝ գ. Կառնուտ՝ ՀՀ Շիրակի մարզում)–1921, Ալեքսանդրապոլ], աշուղ: Ալեքսանդրապոլի աշուղ. դպրոցի վերջին նշանավոր ներկայացուցիչը: Կուրացել է 3 տարեկանում: 1880-ից Ալեքսանդրապոլում աշակերտել է աշուղ *Ֆիզահուն*, որից սովորել է սազ ու ջութակ նվագել, հմտացել աշուղ. արվ-ում, հորինել իր առաջին երգերը (հայ. և թուրք.): Ժամանակի ճանաչված աշուղները՝ Զիվանին, Զահրին և Զամալին, 1884-ին Ֆ-ին շնորհել են վարպետի կոչում: Շրջագայել է Արմ. Հայաստանում, Կ. Պոլսում, ներկայացրել Րաֆֆու, Խ. Աբովյանի, Ծերենցի, Մուրացանի պատմավեպերը՝ հարմարեցնելով համապատասխան երգեր: Ազատագր. պայքարի և այլ թեմաներով հորինել է հերոսապատում ասքեր, որտեղ ձգտել է բարձրացնել ժողովրդի ազգ. ոգին: Ֆ-ի երգերը գրական հայ-ով են՝ համեմված կենդանի լեզվի բառ ու բանով: Նրա թուրք. երգերը մոռացվել են:

Երկ. *Երգիչ Ֆահրադի ողբերն ու հառաչները, Ալեքսանդրապոլ, 1907: Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986, էջ 168–172:*

ՖԱՆՏԱԶԻԱ (< հուն. φαντασία – երևակայություն), գործիք. պիես, որտեղ կարևորվում է երաժշտ. մտքի ազատ զարգացումը, իմպրովիզացիան: XVI դ-ում կիթառի, լյուտնյայի և ստեղնավոր երաժշտ. գործիքների համար ստեղծվել են պոլիֆոնիկ Ֆ-ներ՝ նման ռիչերկարին և տոկկատին: XVII–XVIII դդ-ում հաճախ կիրառվել է որպես ֆուգայի, երբեմն՝ սոնատի նախանվագ (Վ. Ա. Մոցարտի դո մինոր Ֆ. և սոնատը ևն): XIX դ-ում Ֆ. մոտեցել է սոնատին (Լ. վան Բեթհովենի դաշնամուրի «Quasi una fantasia» 2 սոնատը, այդ թվում՝ «Լուսնի սոնատը», ևն): Հաճախ Ֆ-ները ստեղծվում են որպես սոնատ. ձևի ազատ տարբերակներ (Ռ. Շումանի, Ֆ. Շոպենի դաշնամուրի Ֆ-ները), երբեմն էլ կառուցվածքով մոտ են սիմֆ. պոեմին (Ֆ. Շուբերտի «Թափառաշրջիկը» դաշնամուրի Ֆ. ևն): Միաժամանակ տարածվել է վիրտուոզ պիեսի ձևով Ֆ.՝ հիմնված օպերաների, բալետների թեմաների (Ֆ.


Концерт-фантазия

Հարված Մելիք Սավիսակյանի «Կոնցերտ-ֆանտազիա»-ի պարտիտուրից

Լիստի դաշնամուրի Ֆ.՝ Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան» օպերայի թեմաներով, ևն), ժող. երգերի մշակումների վրա: Հայ կոմպոզիտորները նույնպես անդրադարձել են այդ ժանրին: Առավել ճանաչված են Տ. Մանսուրյանի 2 Ֆ-ները՝ դաշնամուրի և լար. նվագախմբի (2003), Ե. Երկանյանի Ֆ.՝ դաշնամուրի (2015), Վ. Ադեմյանի «Սոնատ-ֆանտազիան»՝ թավջութակի և դաշնամուրի (1993), կոնցերտ-Ֆ.՝ ֆլեյտայի և նվագախմբի (1996), «Ֆանտազիան»՝ տուբայի և դաշնամուրի (1998), սոնատ-Ֆ.

(սոնատ № 2)՝ դաշնամուրի (1999), Մ. Մավիսակալյանի կոնցերտ-Ֆ.՝ շեփորի և նվագախմբի, կոնցերտ-Ֆ.՝ ջութակահարների անսամբլի և դաշնամուրի (Ա. Խաչատրյանի հիշատակին), Ա. Բաբայանի «Սիրիուս» կոնցերտ-Ֆ.՝ 2 թավջութակի և նվագախմբի (1995), Ս. Ազնաուրյանի Ֆ.՝ կոնտրաբասի և կամեր. նվագախմբի (1984), Զ. Փարեմուզյանի «Պոեմ-ֆանտազիան»՝ կլավեսինի և երգեհոնի համար, ևն:

ՖԱՐՍ (ֆրանս.՝ farce, < լատ. farcio – սկսել. միջնադար. միստերիաներն «սկսվել են» զավեշտախաղերով), 1. ժող. թատրոնի և գրկ-յան տեսակ XIV–XVI դդ-ի արևմտաեվրոպ. երկրներում: Առանձնացել է կոմիկ., հաճախ՝ երգիծ. ուղղվածությամբ, ռեալիստ. որոշակիությամբ, կենսուրախ ազատախոհությամբ: Անհատականությունից զուրկ դիմակ-կերպարները (հիմար ամուսին, կռվազան կին, բութ դատավոր, խաբեբա ևն) եղել են սոցիալ. տիպեր ստեղծելու նախափորձեր:

Ֆ-երը հագեցված են եղել բուֆոնադով: Հանրահայտ են ֆրանս. Ֆ-երը (XV դ., «Փաստաբան Պատլենը» ևն): Ժող. Ֆ-ի ավանդույթները մեծապես ազդել են ֆրանս. դերասան. արվ-ի ժողովրդավար. ուղղության զարգացման, Մոլիերի ստեղծագործության վրա: Իտալ. Ֆ-ի ավանդույթները դարձել են կոմեդիա դել արտեի հիմքը, անգլ. Ֆ-երը կիրառվել են Վ. Շեքսպիրի կատակերգություններում, իսպ. Ֆ-երը՝ Լ. դե Ռուեդայի մեկ գործողությամբ պիեսներում, Մ. Սերվանտեսի ինտերմեդիաներում, գերմ. Ֆ. (ֆաստնախտշպիլ)՝ Հ. Սաքսի երկերում: Ֆ. մասամբ վերածնվել է XIX դ-ի վերջին և XX դ-ում՝ Ա. Ժարիի, Բ. Բրեխտի երգիծ. պիեսներում: Ֆ-ային բուֆոնադի հնարքները պահպանվել են կրկեսում՝ ծաղրածուների ելույթներում:

2. XIX–XX դդ-ի ժող. ավանդույթների հետ կապ չունեցող շահութաբեր թատրոնի ժանր, անբովանդակ, հաճախ՝ անվայելուչ կատակերգություններ՝ կառուցված արտաքին կոմիկ. հնարքների վրա:

3. Կոմիկ. ***ինտերմեդիաներ*** կամ եզրափակիչ դիվերտիսմենտներ՝ XVIII դ-ի իտալ. օպերաների լիբրետտոներում:

ՖԻԳՈՒՐԱՑԻԱ (< լատ. figuratio – կերպար, ձև, կերպար. շարադրանք), երաժշտ. նյութի մշակման եղանակ, որը ֆակտուր. միջոցներով նպաստում է նյութի դինամիկ զարգացմանը: Տարբերում են Ֆ-ի մեղեդիական, հարմոնիկ և ռիթմական ձևերը: Մեղեդիական Ֆ. մոնոդիկ և պոլիֆոնիկ երաժշտության մեջ մեղեդիական գծերի տարբերակային ձևափոխումն է՝ առավելապես ի հաշիվ հիմնական հնչյունների շրջազարդման: Հոմոֆոնիայում մեղեդիական Ֆ. յուրաքանչյուր ձայնում ոչ ակորդ. տոների (անցողիկ, օժանդակ, հապաղում, կանխիկ) գործածումն է: Հարմոնիկ Ֆ. ձայներից մեկի շարժումն է ակորդ. տոներով: Ռիթմական Ֆ. թե՛ մեղեդիում, թե՛ ուղեկցող ձայներում հիմնական ռիթմական ֆիգուրի տարբերակային ձևափոխումն է: 3 ձևերն էլ առավել բնորոշ են ուղեկցող ձայներին, թեև կարող են գործածվել մեղեդու (առավելապես՝ մեղեդիական Ֆ.), նաև ժող. և պրոֆեսիոնալ ստեղծագործության մեջ՝ ինքնուրույն կամ փոխներգործության ձևով:

ՖԻՋԱՀԻ (Կարապետյան Գևորգ, 21.11.1847, Ալեքսանդրապոլ–14.04.1918, Ալեքսանդրապոլ), աշուղ: Ինը տարեկանում աշակերտել է աշուղ ***Զահրիին***, սովորել սազ ու ջութակ նվագել, հմտացել աշուղ. արվ-ում: Տիրապետել է գրական թուրքին: Իր ուսուցչի հետ շրջագայել է Արմ. Հայաստանի հայաբնակ վայրերում, երգել հայ. և թուրք. երգեր, գրել առաջին բանաստեղծությունները: Ստացել է վարպետի կոչում, մասնակցել աշուղների մրցույթների: Ստեղծագործել է աշուղ. արվ-ի գրեթե բոլոր ժանրերով: Երգերում քարոզել է ազնվություն, աշխատասիրություն, հայրենասիրություն ևն: Բացի երգերից՝ հայտնի են նաև նրա դաստանները: Եղել է ***Ֆահրափի*** ուսուցիչը: Ֆ-ի թուրք. երգերը չեն պահպանվել:

Ալեքսանդրապոլցի «Աշըգ Ֆիզահու երգերը» գրքի (1901, Թիֆլիս) տիտղոսաթերթը

Երկ. *Աղէքսանդրապօլցի «Աշըգ Ֆիզահու երգերը», 2-րդ տպ., Թ., 1901: Շիրակի հայ աշուղները (ժող.), Ե., 1986, էջ 87–95:*

ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ. (< հուն. phileo – սիրել և harmonia – ներդաշնակություն), համերգ. կազմակերպություն: XIX դ-ում Եվրոպայի և Ամերիկայի մի շարք քաղաքներում (Ս. Պետերբուրգ, Մոսկվա, Լոնդոն, Բեռլին, Նյու Յորք ևն) հիմնադրվել են ֆիլհարմոնիկ ընկերություններ, որոնք տարածել են առավելապես սիմֆ. երաժշտություն: Նման ընկերություններ ստեղծվել են նաև XX դ-ում: ԽՍՀՄ-ում և Եվրոպայի սոց. երկրներում Ֆ-ները պետ. կազմա-

Ֆիսհարմոն

Պատրիկ Ֆիորի

Ֆլեյտա

կերպություններ էին, որոնց նպատակը երաժշտ. ստեղծագործությունների և կատարող., նաև էստրադ. արվ-ի տեսակների (պար, աստունք ևն) տարածումն էր: Առաջին Ֆ-ներն ստեղծվել են Պետրոգրադում (1921) և Մոսկվայում (1922): Այդ կազմակերպությունները նպաստում են երիտասարդ կատարողների, երաժշտ. խմբերի գեղ. մակարդակի զարգացմանը, այլ երկրների նման ընկերությունների հետ համագործակցությանը: Ֆ-ի կազմում ընդգրկված են մշտ. պետ. մեծ երաժշտ. կոլեկտիվներ (սիմֆ., կամեր. նվագախմբեր, երգչախմբեր ևն), անհատ կատարողներ: Տես նաև *Հայֆիլհարմոնիա*:

ՖԻՆԱԼ (իտալ.՝ finale, < լատ. finis – եզրափակում, վերջ), երաժշտաբեմ. (օպերա, բալետ) կամ գործիք. բազմամաս ստեղծագործության եզրափակիչ մասը, որն իմաստ. առումով ավարտում և ամփոփում է նախորդ մասի զարգացումը: Օպերայի Ֆ. մեծ անսամբլ. (կամ երգչախմբ.) տեսարան է, որը եզրափակում է ողջ օպերան կամ նրա որևէ գործողությունը: Առաջին նմուշները երևան են եկել քնար. ողբերգության մեջ, վերջնականապես ձևավորվել XVIII դ-ի իտալ. օպերա-բուֆֆում:

Ֆ., որպես սոնատ-սիմֆ. ցիկլի վերջին մաս, հիմնավորվել է Յ. Հայդնի և Վ. Ա. Մոցարտի գործիք. կամեր. և սիմֆ. ստեղծագործություններում: Որպես կանոն՝ Ֆ. առանձնացել է արագ տեմպով, աշխույժ, ուրախ, պար. բնույթով, տիպ. ձևերով (ռոնդո, ռոնդո-սոնատ, հազվադեպ՝ վարիացիաներ, ևն)՝ երբեմն բանահյուս. նյութի օգտագործմամբ կամ ծրագր. հիմքով: XIX դ-ից Ֆ. ստացել է նոր, ոչ ավանդ. լուծումներ (խմբերգ. Ֆ.՝ Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայում, ևն):

ՖԻՈՐԻ Պատրիկ (Պատրիկ Ժան-Ֆրանսուա Շուշանյան, 23.09.1969, Մարսել), երգիչ: Երգել է 12 տարեկանից: Հանդես է եկել Մարսելի օպեր. թատրոնում (առաջին ելույթը՝ «La Legende des Santonniers» ներկայացման մեջ), մասնակցել է «Les habits du dimanche» հեռուստատես. շոուին: Ճանաչվել է Ֆերուսի դերերգով (Ռ. Կոչչանտեի «Փարիզի Աստվածամոր տաճարը» մյուզիքլ), երգացանկում՝ «Mon amant de St Jean», «Les Montagnes d'Arménie», «Դլե Յաման», «Նունե» (Նունե Եսայանի հետ) ևն: Շրջագայել է Բելգիայում, Շվեցարիայում, Կանադայում, ՀՀ-ում և այլուր: Ֆ-ի հեղինակած երգերը կատարել են Պ. Կասսը, Լ. Ֆաբիանը, Է. Սեգարան և ուր.: Ֆ. 1993-ին «Mama Corsica» երգով Ֆրանսիան ներկայացրել է «Եվրատեսիլ» երգի մրցույթում (Միլսթրիթ՝ Իռլանդիա): «Ֆրանսիական երգ» մրցույթի Գլխ. մրց. (1992, Պերպինյան):

Թողարկել է ալբոմներ («Puisque c'est l'heure», 1994, «Chrysalide», 2000, «Promesse», 2017, ևն):

ՖԻՈՐԻՏՈՒՐԱ (իտալ.՝ fioritura – ծաղկում, զարդարում), մեղեդու համալրումը տարատեսակ մելիզմներով, արագընթաց պասաժներով, տրելներով, ֆորշլագներով ևն: Եզրույթն առավելապես կիրառվել է վոկալ (հավասարազոր է իտալ. կոլորատուրային), հազվադեպ՝ գործիք. երաժշտության մեջ:

Ֆ-ի արվ-ը ծաղկել է XVIII դ-ի իտալ. օպերայում:

ՖԻՍՀԱՐՄՈՆ (գերմ.՝ Physharmonika), հարմոնիում, օդահունչ ստեղնավոր երաժշտ. գործիք: Ձայնն արտաբերվում է փուքսից մղված օդի հոսանքի ազդեցությամբ՝ մետաղե լեզվակների թրթռոցի շնորհիվ: Փուքսերը գործի են դրվում 2 ոտնակի սեղմումով: Ունի 1–2 ստեղնաշար, 6–20 ռեգիստր, որոնք հնչողությամբ հիշեցնում են երգեհոնի որոշ ռեգիստրներ: Դիապազոնը մինչև 5 օկտավա է:

Ժամանակակից Ֆ. արտաքուստ նման է դաշնամուրին (կատարելագործել է Ա. Ֆ. Դերեն 1948-ին): Ֆ-ի ստեղծողը համարվում է ֆրանսիացի Գ. Ժ. Գրենիեն (Փարիզ, 1810): Անվանումը 1818-ին ներմուծել է վիեննացի վարպետ Ա. Հեքլը՝ գործիքը կատարելագործելուց հետո: «Կրկնակի արտահայտչականության» («double expression») Ֆ-ի արտոնագիրը (1854) պատկանում է ֆրանսիացի վարպետ Վ. Մյուստելին:

Գրկ. *Rieh m W., Das Harmonium, sein Bau und seine Behandlung, B., 1897.*

ՖԼԵՅՏԱ (< գերմ. Flöte, իտալ.՝ flauto, անգլ.՝ flute), փայտե փող. երաժշտ. գործիք: Պատմ. նախատիպը «Պանի ֆլեյտան» է, նաև տարատեսակ սուլիչներ (մոտ XI դ.): Մինչև XVII դ. օգտագործվել են ուղղաձիգ պահվող, XVII դ-ից՝ հորիզոն. Ֆ-ները: 1832-ին գերմանացի կոմպոզիտոր, ֆլեյտահար, երաժշտ. գործիքների վարպետ Թ. Բյոմը ստեղծել է կափույրներով ժամանակակից Ֆ. (պատրաստել է

նաև մետաղից), բարելավել հնչերանգը: Ֆ-ի փողը բաղկացած է 3 մասից. վերին մասում (գլխիկ) օդամղիչ անցքն է, միջին և ստորին մասերում՝ մյուս ձայնանցքերն ու կափույրները: Բնական լարվածքը՝ ռե մաժոր: Մենանվագ, անսամբլ. և նվագախմբային գործիք է: Տեսակներն են՝ փոքր (Ֆ. պիկկոլո), ալտ, բաս Ֆ-ներ: Կափույրներով Ֆ-ի ստեղծումը նպաստել է մենանվագ կատարող. արվ-ի զարգացմանը (XIX դ-ի կեսեր):

ՖԼԵՔՍԱՏՈՆ (գերմ.՝ Flexaton, < լատ. flexus – կոր և հուն.՝ τόνος – տոն), հարված. երաժշտ գործիք: Վիբրատորը լեզվակն է՝ պողպատե բարակ երկարավուն կոր թիթեղը, որի լայն վերջավորությունը սեղմվում է փայտե ագուցարանով, իսկ նեղին ամրացված են փայտե գնդիկներ՝ զսպանակավոր պողպատե առանցքների վրա: Ֆ. բռնակների օգնությամբ պահելով ձեռքում՝ մեծ մասով սեղմում են թիթեղիկի նեղ վերջավորությունը, որով կարգավորում են հնչյունի բարձրությունը: Օգտագործում են առավելապես կիրառ. երաժշտության մեջ, նաև Ա. Շյոնբերգի, Ա. Խաչատրյանի, Հ. Վ. Հենցեի, Դ. Դ. Շոստակովիչի և ուր. պարտիտուրներում:

ՖԼՅՈՒԳԵԼՀՈՌՆ (գերմ.՝ Flügelhorn), եղջերափող, պղնձե փող. երաժշտ. գործիք: Արտաքուստ նման է ***փողին***, սակայն առանձնանում է մենզուրայով և փողի կոնաձև հատվածքով (սկսած մունդշտուկից): Ունի 3–4 կափույր: Օգտագործվում է ջազ. անսամբլներում, հազվադեպ՝ փող. նվագախմբերում:

ՖՈՐԾ (Գևորգյան Վահան Գեորգիի, ծ. 25.05.1967, Երևան), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2011): Ավարտել է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի (1985), ԵՊԿ (1992) ջութակի բաժինները: 1990–96-ին՝ Երևանի «Մետրո» թատրոնի դերասան. գրել է երաժշտություն ներկայացումների համար («Հեթում արքա», «Ապերախտ տղամարդիկ» ևն): Նկարահանվել է ֆիլմերում: Գրել է 50-ից ավելի երգեր: 1994-ին հիմնադրել է «Ռե մինոր» խումբը, որի հետ համերգներով շրջագայել է ՀՀ-ում և արտերկրում: 2008-ին Ֆ-ի ստեղծած «Ֆորշ և ընկերներ» կազմակերպությունը Սևանի ափին կազմակերպել է «Երաժիշտներ հանուն խաղաղության» միջազգ. փառատոնը: Նկարահանել է 20-ից ավելի տեսահոլովակ, թողարկել «Բարև, իմ սեր», «Գիշեր», «Խենթ աղջիկ», «Այսպես էլ ապրում ենք», «The Best», «Երևանը մենք ենք» և այլ ալբոմներ:

ՖՐԱԶ (< հուն. φράσις – արտահայտություն), 1. երաժշտ. ձևի շարահյուս. տարր, հարաբերականորեն ինքնուրույն կառուցվածք. միավորում է 2 կամ մի քանի (սովորաբար՝ նախադասությունից ոչ մեծ) մոտիվ: Դաս. ձևերում Ֆ-ները միավորված են նախադասության էքսպոզիցիոն բաժիններում, առավել խոշոր անկայուն զարգացող բաժիններում:

2. Ֆրազավորման հետևանք. մեղեդու համեմատաբար ավարտուն դարձվածք, որը համընկնում է (կամ չի համընկնում) Ֆ-ի՝ երաժշտ. ձևի տարրի հետ:

ՖՐԱԶԱՎՈՐՈՒՄ (գերմ.՝ Phrasierung), գեղ-իմաստային սահմանափակում, ֆրազի որոշակի առանձնացումը երաժշտ. երկի կատարման ժամանակ: Բնորոշ է երաժշտ. մտքի զարգացման տրամաբանությանը: Գործածվում է ստեղծագործության կերպարային բովանդակության առավել վառ, արտահայտիչ և ճշգրիտ բացահայտման համար: Անհատ. ինքնատիպ Ֆ. կատարող. ոճը բնութագրող գլխ. տարրերից է. պայմանավորված է ստեղծագործողի անհատականությամբ՝ նվագի կամ երգեցողության ձևով: Նոտագրության մեջ Ֆ. երբեմն նշվում է լիգաներով, որոնք պետք է տարբերել արտիկուլյացիայի լիգաներից:

ՖՈՒԳԱ (իտալ. և լատ.՝ fuga – վազք, փախուստ), բարդ իմիտացիոն պոլիֆոնիկ երաժշտ. ձև. հիմնված է բոլոր ձայներում 1 կամ մի քանի թեմաների հաջորդաբար ու բազմակի անցկացումների և զարգացման վրա: Ֆ-ին բնորոշ է երաժշտ. մտքի անընդմեջ, հոսուն զարգացումը, որով այն տարբերվում է հոմոֆոն ձևերից: Ֆ. լինում է պարզ (1 թեմայով) և բարդ՝ 2 (կրկնակի Ֆ.) կամ 3 (եռակի Ֆ.) թեմաներով: Ֆ-ի ձևն առավելապես զարգացել է Յ. Ս. Բախի և Գ. Ֆ. Հենդելի ստեղծագործություններում, լայնորեն գործածվել արևմտաեվրոպացի, ռուս դասականների, XX դ-ի կոմպոզիտորների՝ Պ. Հինդեմիթի, Դ. Դ. Շոստակովիչի և ուր. երկերում: Ֆ-ի ձևն օգտագործել են նաև Տ. Չուխաճյանը, Ա. Սպենդիարյանը, Ա. Խաչատրյանը, Ք. Քուշնարյանը, Ա. Բաբաջանյանը, Ա.

Ֆլեքսատոն

Ֆլյուգելհոռն

Ֆորշը ելույթի պահին

Հատված Գայանե Չերոտարյանի «Ֆուգա»-ից («Պոլիֆոնիկ փետր»)

Հարությունյանը, Է. Միրզոյանը, Գ. Հախինյանը, Գ. Չերոտարյանը և ուր.:

ՖՈՒԳԱՏՈ (իտալ.՝ fugato – ֆուգայանման, ֆուգայաձև), խոշոր ձևի հոմոֆոնիկ երաժշտ. ստեղծագործության մեջ պոլիֆոնիկ շարադրման միջոց, իմիտացիոն պոլիֆոնիայի սկզբունքով և հոմոֆոնիկ շարադրմամբ երաժշտ. ձև, որտեղ ձայները մուտք են գործում ինչպես էքսպոզիցիայում, որին հաջորդում է հոմոֆոնհարմոնիկ սկզբունքով շարադրանքը (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայի IV գործողությունը, Լ. վան Բեթհովենի № 6 դաշնամուրի սոնատի ֆինալը, Գ. Չերոտարյանի «Պոլիֆոնիկ ալբոմից» № 11-ը ևն): Ֆ-ները կարող են ունենալ 1 կամ մի քանի թեմաներ և, համապատասխանաբար, կոչվել պարզ կամ բարդ, ըստ թեմաների քանակի՝ կրկնակի, եռակի Ֆ-ներ (Պ. Ի. Չայկովսկու № 6 սիմֆոնիայի 1-ին մասի մշակման բաժնի սկիզբը ևն): XIX–XX դդ-ում մի շարք կոմպոզիտորներ Ֆ., որպես զարգացման միջոց, օգտագործել են ցիկլ. (սոնատ. ձևի որևէ մասում), վարիացիոն (վարիացիաներից մեկը) ձևերում: Մեծապես տարածվել է բոլոր ազգերի, նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում:

Հատված Էդուարդ Փաշինյանի «Ֆուգատո»-ից

ՖՈՒԳԵՏՏԱ (իտալ.՝ fugetta, *ֆուգայի* նվազականը), կառուցվածքով ոչ մեծ և ոչ բարդ ֆուգա, որտեղ զարգացումը որոշ դեպքերում փոխարինվում է ինտերմեդիայով (առանց թեմայի նոր անցկացումների): Լայնորեն օգտագործել են արևմտաեվրոպացի, ռուս և հայ կոմպոզիտորները:

Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի նախերգանքի պարտիտուրի 1-ին էջի ձեռագիրը

Հանրագիտարանում ընդունված հապավումները, համառոտագրությունները

Հապավումներ

ԱՀՊ – Առաջին համաշխարհային պատերազմ
ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ – Անկախ Պետությունների Համագործակցություն
ԲՄ – «Բանբեր Մատենադարանի»
ԳԱ – Գիտությունների ակադեմիա
ԳԱԱ – Գիտությունների ազգային ակադեմիա
ԳԱԹ – Գրականության և արվեստի թանգարան
ԵԵԿԹ – Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոն
ԵՀՊ – Երկրորդ համաշխարհային պատերազմ
ԵՊԿ – Երևանի պետական կոնսերվատորիա
ԵՏԹ –Երևանի տիկնիկային թատրոն
եփ – երաժշտական փառատոն
ԵՕԲԹ – Երևանի օպերայի և բալետի թատրոն
ԹՄՄ – Թեքեյան մշակութային միություն
ԼՂԻՄ – Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ
ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԿԳՆ – կրթության և գիտության նախարարություն
ԿՄ – կոմպոզիտորների միություն
ՀԱԵ – Հայ առաքելական եկեղեցի
ՀԲԸՄ – Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՀԵՄ – Հայ երիտասարդաց միություն
ՀԽՍՀ – Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ՀԿՄ – Հայաստանի կոմպոզիտորների միություն
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
ՀՄՊ – Հայրենական մեծ պատերազմ
ՀՊՄՀ – Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
ՄՆ – մշակույթի նախարարություն
ՄՊԿ – Մոսկվայի պետական կոնսերվատորիա
ՄՏԿԿ – Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն
ՅՈՒՆԵՍԿՕ (անգլերեն՝ UNESCO – United Nations Educational and Cultural Organization – Միավորված ազգերի կրթական և մշակութային կազմակերպություն)
ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն
ՌԽՖՍՀ–Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն
ՍՆ – Սփյուռքի նախարարություն
ՎՀ – Վրաստանի Հանրապետություն
ՕԲԹ– օպերայի և բալետի թատրոն

Համառոտագրություններ

ադրբ. – ադրբեջանական, ադրբեջաներեն
ազգ. – ազգային
ակադ. – ակադեմիա, ակադեմիկոս (անվան հետ)
անգլ.– անգլերեն, անգլիական
անվ. – անվան
աշխ. – աշխատություն
արաբ. – արաբերեն, արաբական
արլ. – արևելյան, արևելք
արմ. – արևմտյան, արևմուտք
արվ. – արվեստ
արվ. վաստ. գործիչ – արվեստի վաստակավոր գործիչ
բեմ. – բեմական
բրիտ. – բրիտանական
բուլղ. – բուլղարական, բուլղարերեն
գ. (անվան հետ)– գյուղ
գեղ. – գեղարվեստական
գերմ. – գերմաներեն, գերմանական
գիտ. – գիտական
գիտ. դ–ր – գիտությունների դոկտոր
գլխ. – գլխավոր
գրկ. – գրականություն
դ., դդ. – դար, դարեր
դեկտ. – դեկտեմբեր
դից. – դիցաբանական, դիցաբանություն
դ–ր – դոկտոր
եբր. – եբրայերեն, եբրայական
թարգմ.– թարգմանական, թարգմանություն
թղթ. անդամ – թղթակից անդամ
թուրք. – թուրքերեն, թուրքական
ժող. – ժողովածու, ժողովրդական,
ինստ. – ինստիտուտ
իսպ. – իսպաներեն, իսպանական
իտալ. – իտալերեն, իտալական
լատ. – լատիներեն, լատինական
խմբ. – խմբագիր
ծ. – ծնվել է
ծ. և մ. թթ. անհտ – ծննդյան և մահվան թվականներն անհայտ են
Կ. Պոլիս – Կոստանդնուպոլիս
կենտր.– կենտրոնական
կմծցվ.– կիսամեծացված
կփքցվ. – կիսափոքրացված
հ. – հատոր (մատենագիտ.)
համահեղ. – համահեղինակ

համաշխ. – համաշխարհային
հայ. – հայերեն
հաս. – հասարակական
հիմն. – հիմնադրվել է
հոկտ. – հոկտեմբեր
հռոմ. – հռոմեական
հս – հյուսիս
հվ – հարավ
հուն. – հունարեն, հունական
հունգ. – հունգարերեն, հունգարական
հունվ. – հունվար
ձեռ.– ձեռագիր
ղեկ.– ղեկավար
մ. թ. – մեր թվականության
մ. թ. ա. – մեր թվականությունից առաջ
միութ. – միութենական
մծցվ. – մեծացված
Մտնդ. – մատենադարան
մրց. – մրցանակ
նոյեմբ. – նոյեմբեր
պարսկ. – պարսկերեն, պարսկական
պր. – պրակ (մատենագիտ.)
պրոֆ. – պրոֆեսոր
ռեժ. – ռեժիսոր, ռեժիսորական
ռում. – ռումիներեն, ռումինական
ռուս. – ռուսերեն, ռուսական
սեպտ. – սեպտեմբեր
սիմֆ. – սիմֆոնիկ
վաստ. – վաստակավոր
վրաց. – վրացերեն, վրացական
ուկր. – ուկրաիներեն, ուկրաինական
ուս. – ուսումնական
փետր. – փետրվար
փքցվ. – փոքրացված
ք. (անվան հետ) – քաղաք
քրդ.– քրդերեն, քրդական
քրիստ. – քրիստոնեական
և ուր. – և ուրիշներ
ևն – և այլն
օգոստ. – օգոստոս
օսմ. – օսմանյան
օր. –օրինակ
ֆակ. – ֆակուլտետ
ֆիզ. – ֆիզիկական
ֆրանս. – ֆրանսերեն, ֆրանսիական

Համառոտագրված են նաև –ական (օրինակ՝ ծիս., հայկ., պաշտոն., պետ. ևն, պետք է կարդալ՝ ծիսական, հայկական, պաշտոնական, պետական), –ային (անսամբլ., գործիք., լար., պար., ջազ., փող. ևն, պետք է կարդալ՝ անսամբլային, գործիքային, լարային, պարային, ջազային, փողային), –յան (միջնադար. ևն, պետք է կարդալ միջնադարյան) ածանցներով բառերը:

Մատենագիտություն

ա. թ. – առանց թվականի
Բ. – Բեյրութ
«ԲՄ» – «Բանբեր Մատենադարանի»
բրփխ. – բարեփոխված
Գրկ. – գրականություն
Ե. – Երևան
ԵԺ – երկերի ժողովածու
ԵԼԺ – Երկերի լիակատար ժողովածու
Երկ. – երկեր
Երկ. ժող. – երկերի ժողովածու
Թ. – Թբիլիսի, Թիֆլիս
թարգմ. – թարգմանական, թարգմանություն
ժող. – ժողովածու
«ԼՀԳ» – «Լրաբեր հասարակական գիտությունների»
ծանոթագր. – ծանոթագրություն, ծանոթագրություններ
կազմ. – կազմեց, կազմող
ԿՊ – Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս
հ., հհ. – հատոր, հատորներ
հրտ. – հրատարակություն, հրատարակիչ, հրատարակեց
ձեռ. – ձեռագիր
Մ. – Մոսկվա
«ՊԲՀ» – «Պատմա-բանասիրական հանդես»
պր. – պրակ
«ՍԱ» – «Սովետական արվեստ»
ՍՊր – Սանկտ Պետերբուրգ
Վաղ-պատ – Վաղարշապատ
վերահրտ. – վերահրատարակություն
Վնն. – Վիեննա
Վնտ. – Վենետիկ
Փ.– Փարիզ

Е. – Ереван
Изд. – издание, издатель, издательство
Л. – Ленинград
М. – Москва
СПб – Санкт-Петербург

B. – Berlin
L. – London
P. – Paris

Հ 240 ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ
Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան
(գլխ. խմբագիր) և ուրիշ.–712 էջ:

АРМЯНСКАЯ МУЗЫКАЛЬНАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ
Ред. колл. – О. М. Айвазян (гл. ред.) и др. –
712 с., на армянском языке

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, Ե., 2019
Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի 15

ИЗДАТЕЛЬСТВО: АРМЯНСКАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ, Е., 2019
Ереван 0015, ул. Григора Лусаворича 15

Հանձնված է շարվածքի 01.02.2015: Ստորագրված է տպագրության 13.05.2019:
Չափսը՝ 60x84 1/8, թուղթը՝ օֆսեթ կավճապատ: Տառատեսակը՝ «GHEA Narek Serif»,
44.5 տպագր. մամ.: Տպաքանակը՝ 500: Պատվեր՝ 1495:

ISBN 978-5-89700-047-0

Գիրքը տպագրվել է
«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ» տպարանում

Ընկերության խորհրդի նախագահ՝ Վ. Վ. Մարկոսյան, գլխավոր տնօրեն՝ Տ. Լ. Քոթանջյան,
գլխավոր տնօրենի տեղակալ՝ Լ.Վ. Հարոյան, գլխավոր ճարտարագետ՝ Ս. Ռ. Իսրայելյան,
տպագրական արտադրամասի պետ՝ Գ. Գ. Ազատյան,
կազմարարական արտադրամասի պետ՝ Ա. Բ. Հովհաննիսյան, տպագրիչ՝ Ա. Ա. Խուրշուդյան